

ОГМИК САРКИСЯН  
РУЗАННА САРКИСЯН

**ТРЕХЪЯЗЫЧНЫЙ  
ЭНЦИКЛОПЕДИЧЕСКИЙ  
СЛОВАРЬ ГЕОЛОГИЧЕСКИХ  
ТЕРМИНОВ**

РУССКО–АРМЯНСКО–АНГЛИЙСКИЙ



**ZANGAK**  
PUBLISHING HOUSE

ЕРЕВАН 2014

ՀՈՂՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ  
ՌՈՒՋԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ  
ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԵՌԱԼԵԶՈՒ  
ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ**

ՌՈՒՍԵՐԵՆ—ՀԱՅԵՐԵՆ—ԱՆԳԼԵՐԵՆ



**ԶԱՆԳԱԿ**  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Կ Ա Ն 2 0 1 4

HOGHIK SARGSYAN  
RUZANNA SARGSYAN

**THREE–LANGUAGE  
ENCYCLOPEDIA DICTIONARY  
OF GEOLOGICAL TERMS**

RUSSIAN–ARMENIAN–ENGLISH



**ZANGAK**  
PUBLISHING HOUSE

Y E R E V A N 2 0 1 4

ՀՏԴ 55(038)=82=919.81=20  
ԳՄԴ 26.3g2+81.2Ռ+81.2Հ+81.2Անգլ  
Ս 259

Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետի խորհուրդը

### Խմբագիրներ՝

#### Պ. ԱԼՈՅԱՆ

Երկրաբանական գիտությունների դոկտոր,  
ՀՀ ճարտարագիտական ակադեմիայի ակադեմիկոս

#### Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Երկրաբանական գիտությունների թեկնածու

#### Է. ԽԱՐԱԶՅԱՆ

Երկրաբանական գիտությունների թեկնածու

#### Ռ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

Երկրաբանական գիտությունների թեկնածու

Սարգսյան Հ. Հ.

Ս 259 Երկրաբանական տերմինների եռալեզու անոթագրության բառարան: Ռուսերեն–հայերեն–անգլերեն/ Հ. Հ. Սարգսյան, Ռ. Հ. Սարգսյան.— Եր.: «Զանգակ» հրատ, 2014.— 672 էջ:

Բառարանն ընդգրկում է մասնագիտական գրականության մեջ, բուհական դասագրքերում հանդիպող առավել գործածական տերմիններն ու բառակապակցությունները, տալիս է նրանց ստուգաբանությունը, ռուսերեն, հայերեն, անգլերեն տերմինաբանությունը և բացատրությունը: Նախատեսված է երկրաբանության բնագավառի աշխատողների, երկրաբանության հետ առնչվող մասնագետների, ինչպես նաև լայն հասարակայնության համար: Այն կարող է գիտաուսումնական ձեռնարկ ծառայել բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների համար:

Բառարանն առաջին անգամ հրատարակվել է 2007 թվականին:

ՀՏԴ 55(038)=82=919.81=20  
ԳՄԴ 26.3g2+81.2Ռ+81.2Հ+81.2Անգլ

ISBN 978–9939–68–330–0

© Սարգսյան Հ., 2014 թ.  
© Սարգսյան Ռ., 2014 թ.  
© «Զանգակ–97» ՍՊԸ, 2014 թ.

## ԱՌԱՋԱԲԱՆ

Երկրաբանական տերմինների լիարժեք բառացանկն ու երկրաբանության բոլոր բնագավառներն ընդգրկող հայերեն բացատրական բառարանի կարիքը վաղուց էր զգացվում, բայց մինչև սույն բառարանի առաջին հրատարակումն (2007) այն գոյություն չուներ: Վերջին տարիներին օտարալեզու, հատկապես անգլերեն երկրաբանական մասնագիտական գրականության լայն օգտագործումն ավելի հրատապ դարձրեց այնպիսի բառարանի օգտագործումը, որն ընդգրկում է նաև անգլերեն տերմինները:

Բառարանի պահանջարկը խիստ մեծ էր և առաջին հրատարակությունն արագ սպառվեց: Դրանից հետո բառարանի վերահրատարակման խնդրանքով մեզ են դիմել երկրաբանական արտադրական և գիտահետազոտական ձեռնարկությունների, աշխարհագրության բնագավառի բազմաթիվ աշխատակիցներ, բուհերի դասախոսներ ու ուսանողներ, անգլերենի թարգմանիչներ: Սրանով է պայմանավորված բառարանի վերահրատարակումը, որում կատարվել են բազմաթիվ լրացումներ:

Ընդհանրապես հայկական երկրաբանական բառարանագիտության պատմությունը բավականին աղքատիկ է: Դրա առաջին փորձը 1900 թ. Վենետիկում Սիմեոն Երեմյանի հրատարակած «Նոր հանքաբանություն, նկարագրական և պատմական» աշխատությունն է: Այն ընդգրկում է այն ժամանակվա արևմտահայերենի երկրաբանական բառապաշարը, պարունակում է տերմինների մի շարք հաջող թարգմանություններ: Ջ. Հացագործյանի «Հայկ. ՍՍՀ քարային շինանյութեր (տերմինարան)» (1976) բառարանը, 1957 թ. կազմված ու 1988 թ. վերահրատարակված «Ռուս–հայերեն պոլիտեխնիկական բառարանը», Գ. Խաչատրյանի «Լեռնատեխնիկական տերմինների ռուս–հայերեն բացատրական բառարանը» (1985) ընդգրկում են փոքրաքանակ երկրաբանական տերմիններ: Հայերեն երկրաբանական տերմինաշինության գործում զգալի ներդրում էր Զ. Սարգսյանի «Երկրաբանական տերմինների ռուս–հայերեն բառարանի» հրատարակումը (1984), որի շնորհիվ գործածության մեջ մտան բազմաթիվ նոր տերմիններ: Մայրենի լեզվով երկրաբանական տերմինաբանության մշակման գործում զգալի դեր խաղացին «Հայկական սովետական հանրագիտարանի» (1974–1987), Վ. Ավետիսյանի, Պ. Բոշնալյանի, Դ. Դավթյանի «Ջրաերկրաբանական և ինժեներաերկրաբանական ռուս–հայերեն բացատրական բառարանի» (1995), ՀՀ տերմինաբանական կոմիտեի տեղեկատուների հրատարակումները:

Մասնագիտական տերմինների եռալեզու հանրագիտական բառարան կազմելու գործն աշխատատար և ծանր է: Տերմինացանկը կազմված է թարգմանական և մասնագիտական տասնյակ բառարանների, ինչպես նաև հեղինակների կողմից գրականությունից հավաքած բառապաշարի հիման վրա: Լինելով առաջին փորձն իր տեսակի մեջ՝ բառարանը, բնականաբար, անթերի չէ. բառացանկի լրացման, տերմինների թարգմանության և բովանդակության ճշգրտման վերաբերյալ դիտողություններն ու լրացումներն օգտակար կլինեն հետագայում նման բառարաններ կազմելիս:

Բառարանի հեղինակներն իրենց երախտագիտությունն են հայտնում խմբագիրներ Վ. Ավետիսյանին, Պ. Ալոյանին, Ռ. Միրիջանյանին, Է. Խարազյանին, գրախոսներ Կ. Մուրադյանին, Խ. Նազարյանին, մեկենասներ Կ. Հ. Վարդանյանին, Յու. Գևորգյանին, Ռ. Առաքելյանին, Ս. Մարտիրոսյանին, Հ. Մկրտչյանին:

Սույն առաջաբանը ցանկանում ենք ավարտել մի հույն փիլիսոփայի ասույթով.

«Ես արեցի այն, ինչ կարող էի. թող ուրիշներն անեն ավելի լավ»:

*Հեղինակներ*

## ԲԱՌԱՐԱՆԻ ՏԵՐՄԻՆԱՑԱՆԿԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

Բառարանն ընդգրկում է 4200 տերմին և բառակապակցություն, այդ թվում՝ մոտ 300 հայերեն նոր տերմիններ: Բառարանում զետեղված են նաև այլ գիտությունների (աշխարհագրություն, կենսաբանություն, քիմիա, լեռնային գործ)՝ երկրաբանության հետ առնչվող տերմիններ:

Տերմինները զետեղված են այբբենական կարգով: Նախ տրվում է ռուսերեն տերմինը, դիմացը՝ ստուգաբանությունը, հայերեն համարժեքը, անգլերեն անվանումը, այնուհետև՝ իմաստային բացատրությունը, երբեմն՝ հոմանիշները: Յուրաքանչյուր տերմինի դիմաց կա տառային-թվային ցուցիչ, որն անհրաժեշտ է բառարանի վերջում բերված տերմինների հայերեն բառացանկից օգտվելու համար:

Բառարանում յուրաքանչյուր տերմինի բացատրության մեջ գլխաբառը լրիվ կրկնելու փոխարեն նշված է գլխաբառի (գլխաբառերի) սկզբնատառը (սկզբնատառերը):

Բառարանի կազմման հիմնական խնդիրներից մեկը միջազգային տերմինները նույնությամբ ընդունելու, անպայման հայերեն թարգմանելու կամ հայացնելու ճանապարհին ծայրահեղությունների մեջ չընկնելն է: Եթե հայերեն թարգմանված կամ թարգմանվող տերմինը ճիշտ է արտահայտում նրա իմաստը, ընդունված է կամ հեշտությամբ կընդունվի, դյուրին արտասանելի է, համահունչ է հայոց լեզվին, լայնորեն օգտագործվում է կամ կարող է հեշտությամբ օգտագործվել, ապա այդպիսի տերմինը անպայման պետք է թարգմանվի, հակառակ պարագայում գերադասելի պետք է համարել միջազգայինը: Այստեղ հնարավոր են հետևյալ տարբերակները.

1. Տերմիններ, որոնք ունեն միջազգային լայն ճանաչում ու կիրառություն, բայց չունեն հայերեն համարժեքներ: Չնայած դրանք բառացի կարելի է թարգմանել, բայց գերադասելի է թողնել միջազգայինը: Օրինակ՝ **Гранит** (իտալ. granito, լատ. granum-ից – հատիկ) – բառացի կարելի է թարգմանել հատաքար, բայց նպատակահարմար է թողնել միջազգայինը՝ գրանիտ, **Базальт** (լատ. basaltus, հուն. básanos-ից – փորձաքար) – հայերեն գրվում է սևակուճ, բայց ճիշտ է թողնել միջազգայինը՝ բազալտ, **Динозавр** (հուն. deions – անսովոր, սարսափելի և sauros – մողես) – դինոզավր (կարելի է՝ մեծամողես, հրեշամողես):

2. Որոշ տերմինների դեպքում ճիշտ կլինի զուգահեռաբար տալ և՛ միջազգայինը, և՛ հայերենը՝ ընտրությունը թողնելով ժամանակին: Օրինակ՝ **Кальцит** (լատ. calx, սեռ. հոլով calcis – կիր) – կալցիտ, կրասպաթ, **Карбонат** (լատ. carbo, սեռ. հոլով carbonis – ածուխ) – կարբոնատ, ածխատ, **Кварц** (գերմ. Quarz) – քվարց, որձաքար, **Лава** (իտալ. lava, լատ. labes-ից – փլուզում, անկում) – լավա, հրահոսք, **Колчедан**

– հրաքար, կոլչեդան, **Пирит** (հուն. pyritēs lithos – բառացի՝ հարվածով կայծ հանող քար) – պիրիտ, ծծմբահրաքար, **Алевролит** (հուն. áleuron – ալյուր և lithos – քար) – ալկրոլիթ, ալրաքար, **Перлит** (ֆրանս. perlite, perle-ից – մարգարիտ) – պեռլիտ, մարգարտաքար, **Оолит** (հուն. ὄον – ձու և lithos – քար) – օոլիթ, ձվաքար, **Антиклиналь** (հուն. anti – ընդդեմ, klinō – կռանում են) – կամարածալք, անտիկլինալ և այլն:

3. Միջազգային լայն կիրառություն ունեցող տերմիններ, որոնք ունեն հայերեն համարժեքներ, անվերապահորեն պետք է թարգմանվեն, քանզի դրանք կարող են հեշտությամբ օգտագործվել և լայն կիրառություն ստանալ: Օրինակ՝ **Акварин** (լատ. aqua marina – ծովաջուր) – ծովակն, ծովաքյուրեղ, **Агломерат** (լատ. agglomerato – կուտակում են, դիզում են) – շեղաքար, **Аргиллит** (հուն. árgylos – կավ և lithos – քար) – կավաքար, **Брекчия** (իտալ. breccia – ջարդել) – փշրաքար, **Литосфера** (հուն. lithos – քար և spháira – գունդ) – քարոլորտ, **Нефть** (թուրք. neft, պարսկ. – նեֆտ, անգլ. petroleum, mineral oil) – քարյուղ, **Опал** (լատ. onalus, հուն. opállios, սանսկ. ուպալա-թանկարժեք քար) – ծիածանաքար, արևակն, **Орогенез** (հուն. óros – լեռ և génesis – ծագում) – լեռնագոյացում, **Оникс** (հուն. ónyx – եղունգ) – եղնգնաքար, **Стратиграфия** (լատ. stratum – փռվածք, շերտ, հուն. grápho – գրում են) շերտագրություն:

4. Ռուսերեն տերմիններ, որոնք չեն թարգմանվում, բայց կարող են հայացվել: Օրինակ՝ **Минералогия** – միներալաբանություն, **Магматизм** – մագմայականություն և այլն:

5. Տերմիններ, որոնք ունեն միջազգային կիրառում, ռուսականացվել են և հայերեն գրվում են նույնակերպ՝ չունենալով հայերեն համարժեքը: Օրինակ՝ լատիներեն facies, ռուսերեն **фация**, հայերեն՝ ֆացիա և այլն:

6. Տերմիններ, որոնք չի կարելի ռուսերենից բառացի թարգմանել: Օրինակ՝ լայնորեն օգտագործվող **Горная порода** տերմինը հաճախ թարգմանվում է լեռնային ապար կամ լեռնապար: Առաջին դեպքում լեռնային բառն ավելորդ է, իսկ երկրորդ դեպքում կարելի է հասկանալ ոչ միայն ապար, այլև լեռնաշղթա, հետևաբար պետք է թարգմանել ուղղակի՝ ապար: **Мощность** տերմինը հաճախ բառացի թարգմանվում է հզորություն, որն անհաջող է, այն պետք է թարգմանել հաստություն, որովհետև բնորոշում է շերտերի և այլ երկրաբանական մարմինների հաստությունը: **Месторождение** տերմինը երբեմն բառացի թարգմանվում է ծննդավայր, որը չի կարող ընդգրկել բոլոր հանքակուտակները: Կան մի շարք հանքակուտակներ (նավթ, գազ, ոսկու ցրոններ և այլն), որոնք այժմ տեղաբաշխված են իրենց ծննդավայրերից տասնյակ կամ հարյուրավոր կիլոմետրեր հեռու, հետևաբար ճիշտ է այդ տերմինը փոխարինել հանքավայր տերմինով: **Концентрат** տերմինը ավելի ճիշտ է թարգմանել ոչ թե խտանյութ, այլ խտահանք, քանի որ այդ տերմինի տակ հասկացվում է հանքանյութի խտությունը, հարստությունը:

7. Տերմիններ, որոնք ունեն հայերեն մի քանի համարժեքներ և երբեմն տարբեր իմաստներ: Այդ դեպքում բառարանում առաջինը նշված է առավել կիրառելի և ընդունելի թարգմանությունը: Օրինակ՝ **Мантия Земли** (միջին հուն. mantion – ծածկոց, թիկնոց) – երկրի միջնապատյան, երկրի միջնոլորտ, երկրի թիկնոց, թիկնոցապատյան: **Опробование** – նմուշահանում, նմուշարկում, նմուշառում: **Регион** – երկրաշրջան, ռեգիոն: **Самоцвет** – բնագունեղ քար, բնագույն քար, փայլաքար: Ռուսերեն տերմինի՝ մեկից ավելի և միևնույն իմաստն արտահայտող հաջող ու գործածական թարգմանությունները բերված են փակագծերի մեջ և ունեն մեկ բացատրություն:

## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

անգլ. – Անգլիա, անգլերեն	հս-արլ. – հյուսիս-արևելյան
արդյ. – արդյունաբերական	հր. – հարավային
աշխ. – աշխարհագրական	հր-արլ. – հարավ-արևելյան
արաբ. – արաբերեն	հր-արմ. – հարավ-արևմտյան
արմ. – արևմտյան	հուն. – հունարեն
բառ. – բառացի	մ – մետր
գերմ. – Գերմանիա, գերմաներեն	մեխ. – մեխանիկական
գլխ. – գլխավորապես, գլխավոր	մկ – միկրոն
գ. – գրամ	մլն. – միլիոն
դմ – դեցիմետր	մլդ. – միլիարդ
եզ. – եզակի	ջրաերկրք. – ջրաերկրաբանական
երկրք. – երկրաբանական, երկրաբանութուն	ռուս. – ռուսերեն, ռուսական
երկրծ. – երկրաձևաբանական	սեռ. հ. – սեռական հոլով
երկրք. – երկրաքիմիական	սնսկ. – սանսկրիտերեն
երկրՖ. – երկրաֆիզիկական	ստր. – ստորերկրյա
կենսբ. – կենսաբանական	տ. – տարի
կենտ. – կենտրոնական	տեկտ. – տեկտոնական
կգ – կիլոգրամ	տեխ. – տեխնիկական
կմ – կիլոմետր	ք. – քաղաք
հ. – հոլով	քիմ. – քիմիական
հազ. – հազար	օգտ. հնծ. – օգտակար հանածո
հնաշխ. – հնաշխարհագրական	օր. – օրինակ
հնատեկտ. – հնատեկտոնական	Ֆիզ. – ֆիզիկական
հնքվ. – հանքավայր	Ֆիզաշխ. – ֆիզիկաաշխարհագրական
հոգ. – հոգնակի	Ֆիզմեխ. – ֆիզիկամեխանիկական
հոմ. – հոմանիշ	Ֆիզքիմ. – ֆիզիկաքիմիական
հս. – հյուսիսային	Ֆրանս. – Ֆրանսիա, ֆրանսերեն

8. Տերմիններ, որոնց անվանումը ճշտման կարիք է զգում: Օրինակ՝ Երկրի հնագույն խոշոր ծովային ավազանի անվանումը գրականության մեջ գրվում է Թետիս, Տետիս, Տեթիս և Թեթիս, ընդունվում է Տեթիսը, չշփոթելու համար Աքիլլեսի մայր Թետիսի հետ: Ռուսերեն **лит-**ով վերջացող բազմաթիվ տերմիններում մերք գրում են **տ**, մերթ՝ **թ**: Եթե այդ վերջավորությունը առաջանում է հուն. lithos – քար բառից, ապա հայերենում **th-**ն տառադարձվում է **թ-**ի և գրվում է լիթ:



## A

- A-1. АА–ЛАВА (гавайс.) – ԱՎ–ԼՎԱ (ԱՎ-ՅՐԱՅՈՍՔ) (հավայ.), AA-LAVA,** բազալտային լավայի հոսքի տեսակ՝ խորդուբորդ խարամային մակերևույթով: Բաղկացած է խարամի առանձին եռակալված կտորներից և ավելի հոծ լավայի ավելի խոշոր (մինչև 1 մ) անկյունավոր բեկորներից: Չաճախ հանդիպում է ալիքավոր լավայի հետ համատեղ, որից տարբերվում է մեծ հաստությամբ (մինչև 4.5-6 մ) և շարժունակությամբ: Բնորոշ է Չավայան կղզիների, Իսլանդիայի և այլ հրաբխային մարզերին:
- A-2. ААЛЕНСКИЙ ЯРУС, ААЛЕН** (Բադեն-Վյուրտենբերգ Երկրի Աալեն, Aalen, ք-ի անունից, Գերմ.) – **ԱՍԼԵՆԻ ՅԱՐԿ, ԱՍԼԵՆ, ААЛЕНИАН,** յուրայի համակարգի միջին բաժնի ներքևից առաջին հարկ:
- A-3. АББЕВИЛЬ, АБВИЛЬ** (Սոմա դեպարտամենտի Աբվիլ, Abbeville, ք-ի անունից, Ֆրանս.) – **ԱՐԵՎԻԼ, ԱՐՎԻԼ, АBBEVILLIAN,** վաղ պալեոլիթի հնագիտական մշակույթ: Առաջին անգամ առանձնացված է Ֆրանսիայում:
- A-4. АБИОТИЧЕСКИЕ ФАКТОРЫ** (հուն. a-ժխտ. մասնիկ և biōtikós – կենսական) – **ՈՉ ԿԵՆՍԱԿԱՆ (ԱՆԿԵՆՍԱԿԱՆ) ԳՈՐԾՈՆՆԵՐ, ABIOTIC FACTORS,** միջավայրի գործոններ՝ պայմանավորված անկենդան բնության ազդեցությամբ (օր.՝ կլիմա, լեռնագրություն և այլն):
- A-5. АБИССАЛЬ** (հուն. abyssos – անհատակ) – **ԽՈՐԱՋՐՅԱ, ԽՈՐՔԱՅԱՍԱԿ (ԱՐԻՍՍԱԼ), АBYSSAL,** օվկիանոսների հատակի 2500-ից մինչև 6000 մ խորությունն ընդգրկող մասը: Բնորոշվում է ջրի համեմատաբար թույլ շարժմամբ, կայուն ցածր ջերմաստիճանով՝ 0°C-ից ցածր, արևի լույսի բացակայությամբ, յուրահատուկ կենդանական աշխարհով: Խորջրյա մարզի կրճատ անվանումն է:
- A-6. АБИССАЛЬНАЯ ОБЛАСТЬ – ԽՈՐՋՐՅԱ (ԽՈՐՔԱՅԱՍԱԿԱՅԻՆ, ԱՐԻՍՍԱԼ) ՄԱՐԶ, АBYSSAL AREA,** օվկիանոսների ու ծովերի 2500մ-ից մինչև 6000 մ խորություններն ընդգրկող էկոլոգիական մարզ: 6000մ-ից ավելի խոր մասն առանձնացվում է որպես գերխորջրյա մարզ:
- A-7. АБИССАЛЬНАЯ РАВНИНА – ԽՈՐՋՐՅԱ (ԽՈՐՔԱՅԱՍԱԿԱՅԻՆ, ԱՐԻՍՍԱԼ) ՅԱՐԹՎԱԿՅՐ, АBYSSAL PLAIN,** խորջրյա հարթավայրի տեսակ՝ տեղաբաշխված օվկիանոսի հատակի գոգավորություններում և անցողիկ զոնայի եզրային ծովերի իջվածքներում: Ըստ ձևաբանական հատկանիշների՝ առանձնացնում են հարթ կամ ենթահորիզոնական և բլրավոր խ. հ.:
- A-8. АБИССАЛЬНЫЕ ОТЛОЖЕНИЯ – ԽՈՐՋՐՅԱ (ԽՈՐՔԱՅԱՍԱԿԱՅԻՆ, ԱՐԻՍՍԱԼ) ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, АBYSSAL DEPOSITS, DEEP SEA DEPOSITS,** խորջրյա մարզում կուտակված ժամանակակից ու հին ծովային նստվածքներ (գլխ. կարբոնատային և սիլիցիումային տիղմ, կարմիր կավ): Գոյանում են պլանկտոն օրգանիզմների կմախքներից, ցամաքից քամիներով ու ծովային հոսանքներով բերված միներալային մասնիկներից, հրաբխային ու տիեզերական փոշուց:

- A-9. АБИССОФИЛЬНЫЕ МИНЕРАЛЫ** (հուն. àbyssos – անհատակ և filco – սիրում են) – **ԽՈՐՔԱՍԵՐ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, ABYSSOPHILE MINERALS**, խորքային գործընթացներին բնորոշ միներալներ ու միներալային խմբակցություններ, որոնք անկայուն են փոքր խորություններում:
- A-10. АБИССОФОВНЫЕ МИНЕРАЛЫ** (հուն. àbyssos – անհատակ և fobeo – ստում են) – **ԽՈՐՔԱԽՈՒՅՍ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, ABYSSOPHOBE MINERALS**, խորքային գործընթացներին ոչ բնորոշ միներալներ և միներալային խմբակցություններ, որոնք անկայուն են մեծ խորություններում:
- A-11. АБЛЯЦИЯ** (հին լատ. ablatio – հեռացում, նվազում, լատ. aufero-ից – տանում են) – **ԱՐԼՅԱՑԻԱ, ABLATION**, 1) սառցակույտի զանգվածի նվազում հալման, գոլորշիացման և մեխ. քայքայման հետևանքով, 2. երկրծ. «Денудация» (լերկացում) և «Поверхностный смыл» (մակերևութային ողողատարում) տերմինների հոմ.:
- A-12. АБРАЗИВНЫЕ МАТЕРИАЛЫ – ԶԿԱՆՅՈՒԹԵՐ, ABRASIVE MATERIALS**, բարձր կարծրության մանրահատիկ կամ փոշեկերպ նյութեր, որոնք օգտագործվում են ապարների, միներալների և այլնի մեխ. մշակման համար: Օրկայծքար, զմռնիտ (նաժդակ), նոնաքար, չեչաքար (պեմզա), կորունդ, ավաաստ, տրեպել: 19-րդ դարի վերջից օգտագործվում են արհեստական հղկանյութեր:
- A-13. АБРАЗИОННАЯ АРКА – ԱՓՔԵՐՄԱՆ (ԱԼԵՅԱՐՄԱՆ) ԿԱՄԱՐ, ABRASION ARCH**, ափի նեղ ժայռային ելուստ, որում ալեբախման հետևանքով առաջացել է միջանցիկ անցք:
- A-14. АБРАЗИОННАЯ РАВНИНА – ԱՓՔԵՐՄԱՆ (ԱԼԵՅԱՐՄԱՆ) ՀԱՐԹԱՎԱՅՐ, PLAIN OF ABRASION**, ափաքերման հետևանքով առաջացած հարթավայր: Ժամանակակից Ա. հ-երը իրենցից ներկայացնում են ալեհարման ստորջրյա լանջ, տե՛ս Бечя:
- A-15. АБРАЗИОННАЯ ТЕРРАСА – ԱՓՔԵՐՄԱՆ (ԱԼԵՅԱՐՄԱՆ) ԴԱՐՎԱՆԴ, ABRASION TERRACE, STRANDFLAT, WAVECUT TERRACE**, ափաքերման (ալեհարման) հետևանքով առաջացած ծովային կամ լճային դարավանդ:
- A-16. АБРАЗИОННЫЙ БЕРЕГ – ԱՓՔԵՐՄԱՆ (ԱԼԵՅԱՐՄԱՆ) ԱՓ, ABRASION SHORE, CLIFFED COAST, STEEP COAST**, ալեբախությանը քայքայվող (ծովի, լճի) բարձր ուղղաբերձ ափ: Ա. ա-ի ռելիեֆի հիմնական ձևերն են՝ ստորջրյա լանջը (բենջ), ափային սանդղավանդը (քլիֆ), ալեբախության խորշը և ստորջրյա կուտակման դարավանդը:
- A-17. АБРАЗИЯ** (լատ. abrasio – քերում) – **ԱՓՔԵՐՈՒՄ (ԱԼԵՅԱՐՈՒՄ, ԱՐԱՁԻԱ), ABRASION**, ծովի, լճի, խոշոր ջրավազանների ափի քայքայում՝ ալիքների, ալեկրծության գործունեության հետևանքով:
- A-18. АБСОЛЮТНАЯ ВЛАЖНОСТЬ – ԲԱՅԱՐՁԱԿ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ, ABSOLUTE HUMIDITY**, օդում ջրային գոլորշիների խտությունը՝ արտահայտված գ/մ<sup>3</sup>-ով:
- A-19. АБСОЛЮТНАЯ ВЫСОТА – ԲԱՅԱՐՁԱԿ ԲԱՐՉՐՈՒԹՅՈՒՆ, ABSOLUTE HEIGHT**, երկրակեղևի կետի բացարձակ բարձրություն, հեռավորությունը (սովորաբար մետրերով) ուղղաձիգով՝ օվկիանոսի մակերևույթի միջին մակարդակից մինչև երկրի մակերևույթի կետը:
- A-20. АБСОЛЮТНАЯ ГЕОХРОНОЛОГИЯ – ԲԱՅԱՐՁԱԿ ԵՐԿՐԱԺԱՄԱՆԱԿՎՐՈՒԹՅՈՒՆ, ABSOLUTE GEOCHRONOLOGY**, ապարների բացարձակ հասակի որոշման պրոբլեմներն ընդգրկող երկրաժամանակագրության բաժին, օգտագործում է տարրերի ճառագայթակտիվ տրոհման օրինաչափությունները: Դրա հիման վրա սահմանվում են ընդհանուր շերտագրական ստորաբաժանումների սահմանները, տևողությունը, տեկտոնամագմայական իրադարձությունների հասակը և այլն, նույնն է՝ Ядерная геохронология:

- A-21. АБСОЛЮТНЫЙ ВОЗРАСТ, РАДИОМЕТРИЧЕСКИЙ ВОЗРАСТ, РАДИОЛОГИЧЕСКИЙ ВОЗРАСТ – ԲԱՑԱՐՉԱԿ ՀԱՍԱԿ, ABSOLUTE AGE, ՃԱՌԱԳԱՅԹԱՉԱՓԱԿԱՆ ՀԱՍԱԿ, ՌԱԴԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՀԱՍԱԿ, RADIOMETRIC AGE,** ապարների հասակ՝ որոշված որոշ տարրերի ( $^{40}\text{K}$ ,  $^{235}\text{U}$ ,  $^{238}\text{U}$ ,  $^{87}\text{Rb}$ ) ճառագայթակտիվ տրոհման արդյունքների կուտակման հիման վրա, որն ընթանում է կայուն արագությամբ (հաշվվում է տարիներով, սովորաբար մլն. տարիներով), նույնն է՝ *Изотопный возраст*:
- A-22. АБСОРБЦИЯ** (լատ. absorbeo – կլանում են) – **ԿԼԱՆՈՒՄ (ԱՐՍՈՐՐՈՒՄ), ABSORPTION**, շրջապատող միջավայրից գոլորշիների, գազերի և լուծված նյութերի կլանումը կարծր մարմինների և հեղուկների կողմից:
- A-23. АВАНДЕЛЬТА – ԱՎԱՆԴԵԼՏԱ, AVANDELTA**, գետի դելտայի ընդջրյա մաս:
- A-24. АВАНТЮРИН – ԱՎԱՆՏՅՈՒՐԻՆ, AVENTURINE**, քվարցի ոսկեդեղին կամ գորշ-կարմրավուն երանգով նրբահատիկ ագրեգատ (զանգված)՝ հեմատիտի, փայլարի և այլ ներփակվածքների ոսկեգույն փայլուքներով:
- A-25. АВГИТ** (հուն. *augē* – փայլ, ըստ բյուրեղի միատերի և հերծման հարթությունների բնորոշ փայլի) – **ԱՎԳԻՏ, ՅՐՍ, AUGITE**, միներալ պիրոքսենների խմբից, կալցիումի, մագնեզիումի և երկաթի սիլիկատ՝ այլումինի բարձր պարունակությամբ: Բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է: Առաջացնում է կարճ հատվածակողմային բյուրեղներ, հաճախ ներփակվածքներ (լավաներում), հատիկավոր ագրեգատներ: Գույնը՝ կանաչ, գորշից մինչև սև, կարծրությունը՝ 5-6: Բազալտների, դոլոմիտների և գաբրոների ապարակազմիչ միներալ է: Հանդիպում է ալկալիական ապարներում, հազվադեպ՝ ուլտրաբազիտներում, դիորիտներում:
- A-26. АВЛАКОГЕН** (հուն. *áulax*, սեռ. հ., *áulakos*-ակոս և *genēs* – ծնող) – **ԱՎԼԱԿՈՒԳԵՆ, AULACOGENE**, բեկվածքներով սահմանափակված ներպլատֆորմային գծային, շարժունակ զոնա: Ունի խոր, նեղ, երկարությամբ ձգված, բեկվածքներով սահմանափակված ճկվածքի տեսք: Ա-ում երբեմն արտահայտվում է բազալտային և ալկալիաբազալտային մագմայականություն, և հաճախ կուտակվում են մեծ հաստության աղաբեր և ածխաբեր ապարաշերտեր:
- A-27. АВСТРАЛОПИТЕКИ** (լատ. *australis* – հարավային և հուն. *pithēkos* – կապիկ) – **ԱՎՍՏՐԱԼԱՊԻԹԵԿՆԵՐ, AUSTRALOPITHECUSES**, բրածո բարձրակարգ պրիմատների խումբ, որը գոյություն է ունեցել ուշ պլիոցենում և չորրորդական ժամանակաշրջանի սկզբում: Ոսկորները հայտնաբերվել են Հր. Աֆրիկայում (1924 թ.): Շարժվել են երկու ոտքով, զարգացած տեսակներն ունակ են եղել քարի արհեստական մշակման արվեստին: Ավելի մոտ են մարդուն, քան գորիլան ու շիմպանզեն:
- A-28. АВТОБРЕКЦИЯ** (հուն. *autós* – ինքն և իտալ. *bressia*) – **ԻՆՔՆԱՓՇՐԱՔԱՐ (ԱՎՏՈՐՐԵԿՉԻԱ), AUTOBRECCIA**, փշրաքարային կազմության հրաբխային ապար, որն առաջացել է լավային հոսքի պնդացած մասի ջարդման հետևանքով, ներսում դեռևս հեղուկ լավայի ճնշման տակ և ցեմենտացել է նույն լավայով:
- A-29. АВТОГЕОСИНКЛИНАЛЬ** (հուն. *autós* – ինքն և *gē* – երկիր և սինկլինալ) – **ԻՆՔՆԱԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԼ (ԻՆՔՆԱԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԼ), AUTOGEOCYNCLINE**, պլատֆորմի ներսում գոյացած և լեռնազանգվածներով սահմանափակված իջվածք:
- A-30. АВТОКЛАСТЫ** (հուն. *autós* – ինքն և *klastós* – ջարդված) – **ԻՆՔՆԱՋԱՐԳՎԱԾՔՆԵՐ, AUTOCLASTS**, մայրական ապարների տեղում մեխանիկական փշրման հետևանքով առաջացած բեկորային ապար:
- A-31. АВТОМЕТАМОРФИЗМ** (հուն. *autós* – ինքն և *metamorphóomai* – ենթարկվում են կերպարանափոխության, փոխակերպվում են) – **ԻՆՔՆԱՓՈՒՆԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, ԻՆՔՆԱՓՈՒՆԱԿԵՐՊՈՒՄ, AUTOMETAMORPHISM**, ապարների միներալային կազմը

փոխող ֆիզքիմ. գործընթացների ամբողջությունը՝ պայմանավորված այն լուծույթների ու ֆլուիդների ազդեցությամբ, որոնք ծագումնաբանորեն կապված են ձևավորված ապարների հետ: Այդ ընթացքում կարող են տեղի ունենալ ինչպես միներալների վերաբյուրեղացում, այնպես էլ մետասոմատիկական փոփոխություններ:

**A-32. АВТОМИГМАТИТ** (հուն. *autós* – ինքն և *migma* – սեռ. *h. migmatos* – խառնում, խառնուրդ) – **ԻՆՔՆԱՄԻԳՄԱՏԻՏ (ԱՎՏՈՄԻԳՄԱՏԻՏ), AUTOMIGMATITE**, միզմատիտ՝ առաջացած ապարի մետասոմատիկական փոփոխության գործընթացում: Քիչ օգտագործվող տերմին է:

**A-33. АВТОМЕТАСОМАТОЗ (АВТОМЕТАСОМАТИЗМ)** (հուն. *autós* – ինքն, *metá* – հետո և *sóma* – մարմին) – **ԻՆՔՆԱՄԵՏԱՍՈՍԱՏՈՉ (ԻՆՔՆԱՄԵՏԱՍՈՍԱՏԻՉՍ) (ԻՆՔՆԱՄԻՆԵՐԱԼԱՏԵՂԱՎԱԼՈՒՄ), AUTOMETASOMATOSIS (AUTOMETASOMATISM)**, ապարի մետասոմատիկական կերպափոխություն՝ կապված ինքնափոխակերպության գործընթացների հետ: Այդ փոփոխությունները հանդիսանում են ապարների պնդացման ընթացքում մազմայական և հետմազմայական գործունեության հետևանք և արտահայտվում են քվարցացմամբ, կարբոնատացմամբ, գրեյզենացմամբ և այլն:

**A-34. АВТОПНЕВМАТОЛИЗ** (հուն. *autós* – ինքն, *pnēumatos* – փչել, քամի և *lysis* – տարրալուծում) – **ԻՆՔՆԱՊՆԵՎՄԱՏՈԼԻՉ (ԱՎՏՈՊՆԵՎՄԱՏՈԼԻՉ), AUTOPNEUMATOLYSIS**, հրային ապարի բյուրեղացման վերջնական փուլում նոր միներալների պնևմատոլիզ գոյացման գործընթաց՝ մազմայում պարունակվող միներալիզատորների ազդեցության տակ՝ ի հաշիվ նախօրոք անջատված միներալների:

**A-35. АВТОХТОННАЯ ГЛИНА** (հուն. *autóchtōn* – տեղային, բնիկ) – **ՏԵՂԱՅԻՆ ԿԱՎ, AUTOCHTHONOUS CLAY**, տե՛ս Глины аутигенные:

**A-36. АВТОХТОННАЯ РЕКА** (հուն. *autóchtōn* – տեղային, բնիկ) – **ՏԵՂԱՅԻՆ ԳԵՏ, AUTOCHTHONOUS RIVER**, գետ, որի ավազանը ամբողջովին տեղաբաշխված է մեկ ֆիզաշխ. տարածաշրջանում (ռեգիոնում): Իր ռեժիմով արտացոլում է միայն այդ տարածաշրջանին բնորոշ առանձնահատկությունները:

**A-37. АВТОХТОНЫ** (հուն. *autóchtōn* – տեղային, բնիկ) – **ԲՆԻԿՆԵՐ, ՏԵՂԱՑԻՆԵՐ, ԱՎՏՈՆԹՈՆՆԵՐ, AUTOCHTHONS**, օրգանիզմներ, որոնք էվոլյուցիայի ընթացքում առաջացել են տվյալ վայրում և այժմ էլ ապրում են այդտեղ:

**A-38. АГАТ** (հուն. *achatēs* – Սիցիլիա կղզու Ագատես, այժմ Դիրիլլո գետի անունից) – **ԱԳԱՏ, AGATE**, միներալ, քաղկեդոնի նուրբ շերտավոր կամ զոլավոր տարատեսակ, գույնը՝ երկնավուն-մոխրագույն, սպիտակ: Առաջացնում է նշանման, գնդանման մարմիններ արտաժայթքային ապարներում, ժեղոներ՝ նստվածքային ապարներում: Կիսաթանկարժեք քար է:

**A-39. АГЕНТЫ ДЕНУДАЦИИ** (լատ. *agentis* – գործող և *denudation* – մերկացում) – **ԼԵՐԿԱՑՄԱՆ (ՂԵՆՈՒՂԱՑԻԱՅԻ) ԱԶՂԱԿՆԵՐ, AGENTS OF DENUDATION, AGENTS OF EROSION**, ձևագոյացման (մորֆոգենեզի) արտածին գործոններ, որոնք հանգեցնում են հողմահարման արդյունքների տեղափոխման՝ ծանրության ուժի, ջրի, քամու, սառույցի ազդեցության տակ, տե՛ս Агенты морфогенеза:

**A-40. АГЕНТЫ МОРФОГЕНЕЗА** (լատ. *agentis* – գործող, հուն. *morphē* – ձև, տեսք և *genesis* – ծագում, գոյացում) – **ՉԵՎԱԳՈՅԱՑՄԱՆ (ՄՈՐՖՈԳԵՆԵԶԻ) ԱԶՂԱԿՆԵՐ, AGENTS OF MORPHOGENESIS**, ռելիեֆի առաջացման գործընթացների տարաբնույթ արտահայտություններ, որոնք հանգեցնում են ինչպես ռելիեֆի հակադիր ձևերի առաջացմանը, այնպես էլ հարթեցմանը: Տարբերում են՝ 1) Ձ-ման ակ-

տիվ ազդակներ՝ ա) ներծին (տեկտ., երկրաշարժական շարժումներ, հրաբխականություն), բ) արտածին (ծգողական շարժումներ, հոսանուտ ջրերի, ստր. ջրերի, ձյան, սառույցի, ալեկոծման, քանու, օրգանիզմների աշխատանք), գ) ստորջրյա (ծանրահակ շարժումներ, պղտոր հոսքեր, հոսանքներ, օրգանիզմների գործունեություն): 2) Ձ-ման պասիվ ազդակներ՝ երկրբ. կառուցվածք (քարաբանություն, ապարների տեղադրում), բնապատկերային (լանդշաֆտային) գոտիականություն:

**A-41. АГЕНТЫ ПЕРЕНОСА (ТРАНСПОРТИРОВКИ) – ՏԵՂԱՓՈՒՍԱՆ ԱՉՂԱԿՆԵՐ, AGENTS OF TRANSPORTATION**, ազդակներ, որոնք երկրի մակերևույթում նստվածքակուտակման գործընթացում պայմանավորում են նստվածքային նյութի տեղափոխումը: Տ. ա. են՝ ցամաքում՝ ջրային հոսքերը, քամին, ծովերում՝ հոսանքները, պղտոր հոսքերը, օրգանիզմները:

**A-42. АГЛОМЕРАТ** (լատ. agglomero – միացնում են, կուտակում են, դիզում են) – **ՇԵՂՁԱՔԱՐ (ԲԵԿՈՐԱՇԵՂՁ, ԱՎՈՍԵՐԱՏ), AGGLOMERATE**, առավելապես հրաբխային ծագման (տուֆեր, տուֆափշրաքարեր), ինչպես նաև նստվածքային ծագման, սովորաբար չմշակված խոշոր բեկորանյութերի փուխր քառասյին կուտակումներ:

**A-43. АГЛОМЕРАТ ВУЛКАНИЧЕСКИЙ – ԶՐԱԲԽԱՅԻՆ ՇԵՂՁԱՔԱՐ, VOLCANIC AGGLOMERATE**, շեղջաքար, որը ներկայացված է ջրով չմշակված կոպիտ հրաբխային նյութի քառասյին կուտակումով: Առաջանում է ինչպես հրաբխաերախում, այնպես էլ հրաբխի լանջերում՝ հրաբխապայթման և խառնարանի պատերի քայքայման հետևանքով:

**A-44. АГЛОМЕРАТ ЖЕРЛОВЫЙ – ԶՐԱԲԽԱԵՐԱԽԱՅԻՆ (ՓՈՂԱԲԵՐԱՆԱՅԻՆ) ՇԵՂՁԱՔԱՐ (ԲԵԿՈՐԱՇԵՂՁ), VENT AGGLOMERATE**, հրաբխի փողաբերանը լցնող շեղջաքար:

**A-45. АГЛОМЕРАТ ШЛАКОВЫЙ – ԽԱՐԱՍԱՅԻՆ ՇԵՂՁԱՔԱՐ (ԲԵԿՈՐԱՇԵՂՁ), SLAGGY AGGLOMERATE**, շեղջաքար՝ բաղկացած ծակոտկեն խարամանման հրաբեկորային նյութից:

**A-46. АГЛОМЕРАТОВЫЙ ПОТОК – ՇԵՂՁԱՔԱՐԱՅԻՆ (ԲԵԿՈՐԱՇԵՂՁԱՅԻՆ) ԶՈՍՔ, AGGLOMERATE STREAM**, լավային բեկորների, շիկացած մեծաբեկորների, ավազի, մոխրի, հրաբխային գազերի դյուրաշարժ գանգված, որն առաջանում է մածուցիկ լավայով հրաբուխներում՝ ուղղորդված հզոր պայթումների դեպքում: Պայթման հետևանքով հրաբխային կառույցը քայքայվում է, և առաջացած ձեղքով Շ. հ. դուրս է հորդում:

**A-47. АГЛОМЕРАЦИЯ – ՇԵՂՁԱՔԱՐԱՑՈՒՄ (ԲԵԿՈՐԱՇԵՂՁԱՑՈՒՄ), AGGLOMERATION**, փոշեկերպ ապարների, հանքանյութերի, հարստանյութերի մետաղապարունակ թափոնների ջերմային հատիկավորում:

**A-48. АГРЕГАТ БУРОВОЙ** (լատ. aggrero – միացնում են) – **ԶՈՐԱՏԱՆ ԱԳՐԵԳԱՏ, DRILLING AGGREGATE**, հորատման հաստոցի, պոմպի և շարժիչի ամբողջություն:

**A-49. АГРЕГАТЫ КРИСТАЛЛИЧЕСКИЕ** (լատ. aggrero – միացնում են և հուն. krystallos – սկզբնապես՝ սառույց, հետագայում՝ լեռնաբյուրեղ) – **ԲՅՈՒԲԵՂԱՅԻՆ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ, CRYSTALLINE AGGREGATES**, բյուրեղների սերտաճվածքներ, տարբերում են նույն նյութի և տարբեր նյութերի Բ.ա-ի օրինաչափ, կիսաօրինաչափ և անօրինաչափ սերտաճվածքներ:

**A-50. АГРОНОМИЧЕСКИЕ РУДЫ – ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՆՔԱՆՅՈՒԹԵՐ, AGRONOMIC ORES**, հանքանյութեր, որոնք օգտագործվում են պարարտանյութերի ստացման կամ հողերի բարելավման համար:

- A-51. АДАМЕЛЛИТ** (Տիրուլում Ադամելլո լեռան անունից) – **ԱԴԱՄԵԼԻԹ, ADAMEL-LITE**, տարբեր հասակի ներժայթքային (ինտրուզիվ) ապարներ, որոնք միջակա են գրանիտների ու գրանոդիորիտների միջև և հանդիսանում են ռիոլիտադացիտների ներժայթքային նմանակները:
- A-52. АДАПТАЦИЯ** (հին լատ. adaptatio – հարմարում, հարմարեցնել) – **ՀԱՐՄԱՐՎՈՂԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ (ԱԴԱՊՏԱՑՈՒՄ), ADAPTATION**, միջավայրի պայմաններին օրգանիզմների հարմարվելու գործընթաց:
- A-53. АДЕРГНЕЙС** (գերմ. Ader – երակ և Gneis – գնեյս) – **ԵՐԱՎԱԿՈՐ (ՋՂՈՏ) ԳՆԵՅՍ (ԳՂՁԱՔԱՐ), ADERGNEISS, VEINED GNEISS**, թերթաքարեր՝ ներարկված գրանիտի բարակ երակիկների խիտ ցանցով:
- A-54. АДСОРБЦИЯ** (լատ. ad – մոտիկ, կից և sorbere – կլանում) – **ՍԱԿԱՎԼԱՆՈՒՄ, ԱԴՍՈՐԲՈՒՄ, ADSORPTION**, տե՛ս Абсорбция:
- A-55. АДУЛЯР** (Շվեյցարիայում գտնվող Ադուլա, Adular, լեռնազանգվածի անունից) – **ԱՂՈՒԼՅԱՐ, ADULAR**, միներալ, օրթոկլազի ձևաբանական թափանցիկ տարատեսակ: Տիպական է ալպյան տիպի քվարցային երակներին, հանդիպում է պեգմատիտներում, հանքային երակներում՝ կարճ հատվածակողմային շեղանիստ բյուրեղների տեսքով: Թափանցիկ է և կիսաթափանցիկ: Օգտագործվում է ապակու և խեցեղենի արտադրությունում:
- A-56. АЗИМУТ** (արաբ. աս-սումատ, հոգ. աս-սամթ – ուղղություն, ուղի) – **ԱԶԻՄՈՒՏ, AZIMUTH**, տվյալ կետով անցնող միջօրեականի և այդ կետով տարված գծի ուղղության հորիզոնական պրոյեկցիայի միջև կազմված անկյուն՝ հաշված միջօրեականի հյուսիսային ծայրից՝ ժամացույցի սլաքի շարժման ուղղությամբ:
- A-57. АЗИМУТ МАГНИТНЫЙ**, տե՛ս Магнитный азимут:
- A-58. АЗИМУТ ПАДЕНИЯ** – **ԱՆԿՍԱՆ ԱԶԻՄՈՒՏ, DIRECTION OF DIP, TRUE DIP DIRECTION**, անկյունը տվյալ կետի միջօրեականի և հորիզոնական հարթության վրա (շերտի, վերնետքի, երակի մակերևույթի) անկման գծի պրոյեկցիայի միջև:
- A-59. АЗИМУТ ПРОСТИРАНИЯ** – **ՏԱՐԱԾՍԱՆ ԱԶԻՄՈՒՏ, STRIKE AZIMUTH**, անկյունը տարածման գծի (շերտի, երակի, վարնետքի մակերևույթի) և տեղանքի միջօրեականի միջև:
- A-60. АЗИМУТАЛЬНОЕ НЕСОГЛАСИЕ** – **ԱԶԻՄՈՒՏԱՅԻՆ ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ, AZIMUTHAL UNCONFORMITY**, ապարների երկու, աններդաշնակության մակերևույթով անջատված, սովորաշերտերի անկման, տարածման ազիմուտների տարբերություն:
- A-61. АЗОТ, N** (Niatrogenium) – **ԱԶՈՏ, NITROGEN**, Մենդելեևի պարբերական համակարգի V խմբի քիմ. տարր, հայտնաբերվել է 1772 թ. անգլիացի Դ. Ռեզերֆորդի կողմից: Սովորական պայմաններում անգույն և անհոտ գազ է:
- A-62. АЗУРИТ** (ֆրանս. azur – կապույտ, արաբ. lazaward – լաջվարդ – կապույտ բառից) – **ԱԶՈՒՐԻՏ, ԽԱԺԱՔԱՐ, AZURITE**, միներալ կարբոնատների դասից,  $Cu_2Cu[CO_3]_2(OH)_2$ , պարունակում է 55.3% Cu: Բյուրեղանում է մոնոկլինային համակարգում, ρ բյուրեղները՝ աղյուսածև կամ սյունածև: Գույնը՝ կապույտ, կարծրությունը՝ 3.5-4: Պղնձի սուլֆիդային հանքավայրերի օքսիդացման զոնային բնորոշ միներալ է, հետագա օքսիդացումից անցնում է մալաքիտի: Պղնձի երկրորդային հանքային միներալ է և կապույտ գույնի հումք:
- A-63. АКАНТИТ** (հուն. ákantha – մախաթ, ասեղ՝ ըստ բյուրեղների ձևի) – **ԱԿԱՆ-ԹԻՏ, ACANTHITE**, միներալ սուլֆիդների դասից,  $Ag_2S$ -ի ձևափոխություն (մոդիֆիկացիա), պարունակում է 87% Ag, ինչպես նաև Cu-ի, Fe-ի, Zn-ի, Sb-ի խառ-

նուրդ: Բյուրեղանուն է մոնոկլինային համակարգում: Առաջացնում է թաղանթներ, հողանման ագրեգատներ, համատարած զանգվածներ, հազվադեպ՝ մանր բյուրեղներ: Գույնը՝ երկաթի սևից մինչև կապարի մոխրագույն, փայլը՝ մետաղի, կարծրությունը՝ 2-2,5: Ա. ջրաջերմային կամ վերնածին միներալ է: Արծաթի արժեքավոր հանքանյութ է:

**A-64. АКАУСТОБИОЛИТ** (հուն. ákaustos – չիրկիզվող, հրակայուն, bios – կյանք և lithos – քար) – **ՉՅՐԿԻԶՎՈՂ ԿԵՆՍԱՔԱՐ (ԱՆԿԻԶԱԿԵՆՍԱՔԱՐ), АСАUSTOBI-OLITH**, օրգանիզմներից կամ դրանց մնացորդներից բաղկացած չայրվող ապար (օր. կավիճ, դիատոմիտ):

**A-65. АКВАМАРИН** (լատ. aquamarina – ծովաջուր) – **ԾՈՎԱԿՆ, ԾՈՎԱՔՅՈՒՐԵՂ, ԱՔՎԱՍԱՐԻՆ, AQUAMARINE**, միներալ, բերիլի թափանցիկ կապտականաչ կամ երկնագույն տարբերակ, թանկարժեք քար:

**A-66. АКВАТОРИЯ** (լատ. aqua – ջուր և տարածք) – **ՋՐԱՏԱՐԱԾՔ, WATER SURFACE**, օվկիանոսի որևէ շրջանի որոշակի սահմաններ ունեցող ջրատարածք:

**A-67. АКВИТАНСКИЙ ЯРУС, АКВИТАН** (հին հռոմեական Աքվիտանիա գավառի անունից) – **ԱՔՎԻՏԱՆՅԱՆ ՅԱՐԿ, ԱՔՎԻՏԱՆ, AQUITANIAN**, ստորին միոցենի ստորին հարկ:

**A-68. АККРЕЦИЯ** (լատ. accretio – մակաճում, ավելացում) – **ԱՃԱՆՍՍՎԱԾՔ, ACCRETION**, անօրգանական ծագման մարմնի չափի մեծացման գործընթաց՝ կապված մակաճման հետ:

**A-69. АККУМУЛЯТИВНАЯ ТЕРРАСА – ԿՈՒՏԱԿՈՒՄԱՅԻՆ ԴԱՐԱՎԱՆԴ, AGGRADATIONAL TERRACE**, գետաբերուկային, ծովային կամ լճային նստվածքների կազմված դարավանդ:

**A-70. АККУМУЛЯТИВНЫЕ ГОРЫ – ԿՈՒՏԱԿՈՒՄԱՅԻՆ ԼԵՌՆԵՐ, ACCUMULATION MOUNTAINS**, լեռներ, որոնք առաջացել են երկրի ընդերքից կամ այլ շրջաններից բերված նյութի կուտակումից (լցովի հրաբխային կոներ, ցեխահրաբուխներ և այլն):

**A-71. АККУМУЛЯТИВНЫЕ РАВНИНЫ – ԿՈՒՏԱԿՈՒՄԱՅԻՆ ՅԱՐԹԱՎԱՅՐԵՐ, AGGRADED PLAINS, CONSTRUCTIONAL PLAINS**, փխրուն նստվածքների կուտակումից առաջացած հարթավայրեր: Տարբերում են ներծին (հրաբխային հարթավայրեր) կամ արտածին (ծովային, գետաբերուկային, լճային, սառցադաշտային և այլն): Տարբերվում են նաև բարդ ծագման Կ. հ. (լճագետաբերուկային, դելտածովային, գետաբերուկ-հեղեղաբերուկային և այլ հարթավայրեր), ինչպես նաև ստորջրյա Կ. հ. (օր.՝ աբիսալ հարթավայրեր):

**A-72. АККУМУЛЯТИВНЫЙ БЕРЕГ – ԿՈՒՏԱԿՈՒՄԱՅԻՆ ԱՓ, ACCUMULATIVE COAST**, ծովի (լճի) ափ՝ կազմված ալիքների և ալեկոծության բերվածքների կուտակումից:

**A-73. АККУМУЛЯТИВНЫЙ РЕЛЬЕФ – ԿՈՒՏԱԿՈՒՄԱՅԻՆ ՌԵԼԻԵՖ, ACCUMULATIVE RELIEF**, երկրի մակերևույթի ռելիեֆ՝ առաջացած ծովային, լճային, գետային, էոլյան և այլ նստվածքների կուտակման, ինչպես նաև հրաբուխների արտավիճման (մոխիր, լավա և այլն) ու մարդու տնտեսական գործունեության հետևանքով: Տարբերում են Կ. ռ-ի ջրակուտակման, սառցադաշտակուտակման և այլ ծագումնային տեսակներ: Չայտնի է նաև ցամաքային և ստորջրյա Կ. ռ.:

**A-74. АККУМУЛЯЦИЯ** (լատ. accumulatio – հավաքում, կուտակում) – **ԿՈՒՏԱԿՈՒՄ (ԱԿՈՒՄՈՒԼՅԱՅԻԱ), ACCUMULATION, AGGRADATION**, երկրի մակերևույթին փխրուն նյութի կամ օրգանական մնացորդների կուտակում: Տարբերում են հրաբխային և նստվածքային Կ., որը կարող է ընթանալ ինչպես ջրավազաններում (սուբակվալ Կ.), այնպես էլ ցամաքում (սուբաէրալ Կ.):

- A-75. АККУМУЛЯЦИЯ БЕРЕГОВАЯ – ԱՓԱՅԻՆ ԿՈՒՏԱԿՈՒՄ, COAST ACCUMULATION**, ջրաբերուկների կուտակում ալիքների գործունեության և դրանց ուղեկցող հոսանքների հետևանքով:
- A-76. АККУМУЛЯЦИЯ ЛЕДНИКОВАЯ – ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ԿՈՒՏԱԿՈՒՄ, GLACIER ACCUMULATION**, սառցադաշտային նստվածքների կուտակում ցամաքում և սառցադաշտային ու մերձսառցադաշտային ջրավազաններում:
- A-77. АККУМУЛЯЦИЯ ПОДВОДНАЯ – ՍՍՈՐՉՐՅԱ ԿՈՒՏԱԿՈՒՄ, SUBMARINE ACCUMULATION**, նստվածքակուտակում կամ նստվածքային նյութի վերանստեցում ստորջրյա արտածին ռելիեֆային ազդակների կողմից (ալեկոծություն, հոսանքներ, ստորջրյա սողանքներ, հատակաբնակ օրգանիզմներ):
- A-78. АКТИВИЗАЦИЯ ТЕКТОНИЧЕСКАЯ** (լատ. activus – գործունյա) – **ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԱՎՏԻՎԱՑՈՒՄ, TECTONIC ACTIVATION**, երկրակեղևի նախկինում կայունացած տեղամասերում (պլատֆորմներ, հին ծալքավոր մարզեր) ուժգին տեկտ. շարժումների վերսկսում, որը նորից ստեղծում է հակադիր լեռնային ռելիեֆ և սովորաբար ուղեկցվում է մագմայականությամբ:
- A-79. АКТИВИЗАЦИЯ ТЕКТОНО-МАГМАТИЧЕСКАЯ – ՏԵԿՏՈՆԱՍԱԳՄԱՅԱՎԱՆ ԱՎՏԻՎԱՑՈՒՄ, TECTONO-MAGMATIC ACTIVATION**, համեմատական տեկտ. հանգստի փուլին հաջորդող տեկտ. շարժումների ու մագմայականության ուժգնության բարձրացման գործընթաց: Մի շարք դեպքերում ուղեկցվում է լեռնագոյացման վերսկսմամբ: Բնորոշվում է ծալքավորաշարժային տեկտ. ձևախախտումներով, ռիֆտագոյացմամբ, հրաբխականությամբ, գրանիտների ու ալկալիական ապարների ճեղքային ներժայթքվածքների առաջացմամբ, հազվադեպ՝ ռեզիոնալ փոխակերպությամբ:
- A-80. АКТИВИЗИРОВАННАЯ ПЛАТФОРМА – ԱՎՏԻՎԱՑԱԾ ՊԼԱՏՖՈՐՄ, ACTIVATED PLATFORM**, պլատֆորմը կամ դրա մի մասը, որը երկարատև բնականոն պլատֆորմային զարգացումից հետո ձեռք է բերել բարձր շարժունակություն, սովորաբար լեռնային ռելիեֆի առաջացմամբ (Տյան-Շան, Ալթայ, Սայաններ և այլն):
- A-81. АКТИВНЫЕ ГАЗЫ – ԱՎՏԻՎ ԳԱԶԵՐ, ACTIVE GASES**, հանքահորի օդի գազանման բաղադրամասեր, որոնք փոխում են օդափոխիչ հոսքի դիֆուզիոն հատկությունները:
- A-82. АКТИВНЫЙ УГОЛЬ, АКТИВИЗИРОВАННЫЙ УГОЛЬ – ԱՎՏԻՎ ԱՑՈՒԽ, ԱՎՏԻՎԱՑՎԱԾ ԱՑՈՒԽ, ACTIVATED COAL**, ծակոտկեն գազեր ու գոլորշիներ կլանելու և պահելու բարձր հատկություններ ունեցող ածուխ:
- A-83. АКТИВНОСТЬ ГИДРОДИНАМИЧЕСКАЯ – ԶՐԱԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ ԱՎՏԻՎՈՒԹՅՈՒՆ, HYDRODYNAMIC ACTIVITY**, նստվածքակուտակման ավազանում ջրի շարժունակության որակական, հազվադեպ՝ քանակական բնութագիր: Արտահայտում է նստվածքակուտակման գործընթացում ջրի շարժման տարբեր տեսակների (ալեկոծություն, հոսանքներ) գումարային ուժգնությունը:
- A-84. АКТИВНОСТЬ ОПОЛЗНЕВОГО ПРОЦЕССА – ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԱՎՏԻՎՈՒԹՅՈՒՆ, ACTIVITY OF LANDSLIDE PROCESS, LANDSLIDE PROCESS ACTIVITY**, սողանքային գործընթացի զարգացման արագությունը ժամանակի ընթացքում և սողանքային մարմնի ձևափոխությունների ռեժիմը: Ակտիվ (շարժվող) սողանքի ցուցանիշներից են՝ շարժման թարմ հետքերը, եզրամասերում աստիճանների ու բաց ճեղքերի առկայությունը, սողանքային մարմնի խորդուբորդ ռելիեֆը, ծառաբների թեքվածությունը, շինությունների ձևախախտումներն ու փլուզումները:
- A-85. АКТИВНОСТЬ ФИЛЬТРАЦИОННАЯ – ԾՃԱՆՑՄԱՆ ԱՎՏԻՎՈՒԹՅՈՒՆ, FILTERING ACTIVITY**, ապարի սեփական բևեռացման էլեկտրական դաշտ ստեղծե-



լու ունակություն, որը պայմանավորված է ապարի ծակոտիների միջով հեղուկի ծծանցման պոտենցիալների տարբերությամբ:

**A-86. АКТИВНЫЙ ЛЕДНИК – ԱՎՏԻՎ ՍԱՌՑԱՂԱՇՏ, ACTIVE GLACIER,** շարժվող սառցադաշտ, որը կապ ունի սնման մարզի հետ, որտեղից անընդմեջ ներառում է սառույց:

**A-87. АКТИНИЙ, Ас – ԱՎՏԻՆԻՈՒՄ, ACTINIUM,** պարբերական համակարգի III խմբի ճառագայթաակտիվ քիմ. տարր:

**A-88. АКТИНОЛИТ** (հուն. aktis – ճառագայթ և lithos – քար) – **ԱՎՏԻՆՈԼԻԹ (ՃԱՌԱԳԱՅԹԱՔԱՐ), ACTINOLITE,** ամֆիբոլների խմբի ապարակազմիչ միներալ, տրեմոլիթ-ֆեռոակտինոլիթ իզոմորֆ շարքի միջանկյալ անդամ: Բյուրեղանուն է մոնոկլինային համակարգում: Առաջացնում է ճառագայթավոր, ծողածև և ասբեստանման թելավոր ագրեգատներ: Գույնը՝ կանաչի տարբեր երանգներ: Կարծրությունը՝ 5,5-6: Տիպական մետասոմատիկական միներալ է: Լայնորեն տարածված է ռեզիոնալ փոխակերպության ցածր աստիճանի թերթաքարերում, հիպերբազիտների փոփոխման զոնաներում, սկառներում: Օգտագործվում է ռետինի արդյունաբերության մեջ՝ որպես լցանյութ:

**A-89. АКТИНОЛИТ-АСБЕСТ – ԱՎՏԻՆՈԼԻԹ-ԱՍԲԵՏ (ՃԱՌԱԳԱՅԹԱՔԱՐ-ԿՏԱՎԱՔԱՐ, ՃԱՌԱԳԱՅԹԱՔԱՐ-ԱՆԿԻՉԱՔԱՐ), ACTINOLITE-ASBESTOS,** ակտինոլիթի թելավոր տարատեսակ, FeO-ի պարունակությունը 3-8%, հանդիպում է փոխակերպված հիպերբազիտներում, հիմքային արտաժայթքումներում, հրաքարային հանքամարմիններում:

**A-90. АКТУАЛИЗМ** (հին լատ. actualis – գործող, ներկա, ժամանակակից) – **ԱՐԴԻԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ (ԱՅԺՄԵԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ), ACTUALISM,** երկրբ. ուսումնասիրությունների պատմահամեմատական մեթոդ, ըստ որի, ժամանակակից երկրբ. գործընթացների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս դատելու անցյալի մամանտիպ հնագույն գործընթացների մասին: Օգտագործվում է՝ հաշվի առնելով երկրի զարգացումը և երկրբ. իրադրությունների փոփոխվածությունը:

**A-91. АКТУОПАЛЕОНТОЛОГИЯ** (հին լատ. actualis – ժամանակակից, արդիական և հնէաբանություն) – **ԱՎՏՈՒԱՅՆԵԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ (ԱՐԴԻԱՅՆԵԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ), ACTUOPALEONTOLOGY,** հնէաբանության բաժին, որն ուսումնասիրում է ժամանակակից օրգանիզմների մահվան առանձնահատկությունները և դրանց հետագա փոփոխությունները (տեղափոխում, քայքայում, տեսակավորում)՝ մինչև նստվածքների տակ թաղվելը:

**A-92. АКЦЕССОРНЫЕ МИНЕРАЛЫ** (ուշ լատ. accessorius – հավելյալ, կողմնակի, լրացուցիչ) – **ՈՒՂԵԿԻՑ (ԱՎՑԵՍՈՐԱՅԻՆ) ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, ACCESSORY MINERALS,** աննշան քանակությամբ (փոքր 1%-ից) ապարի կազմի մեջ մտնող օրինաչափ բաղադրամաս կազմող միներալներ, ունեն կարևոր նշանակություն շատ ապարների որակական կազմի և առաջացման պայմանների որոշման համար:

**A-93. АКЧАГЫЛЬСКИЙ БАССЕЙН – ԱԿՉԱԳԻԼՅԱՆ ԱՎԱՉԱՆ, АКЧАГHYLIAN BASIN,** ուշ պլիոցենում ժամանակակից Կասպից ծովի տեղում գոյություն ունեցած և դրա չափերը գերազանցող ծովային ավազան:

**A-94. АКЧАГЫЛЬСКИЙ ЯРУС, АКЧАГЫЛ** (Կրասնովոդսկ թերակղզում գտնվող Ալչազիլ բնակավայրի անունից, Թուրքմենիա) – **ԱԿՉԱԳԻԼԻ(ՅԱՆ) ՅԱՐԿ, ԱԿՉԱԳԻԼ, АКЧАГHYLIAN,** Սևծովկասպիական ավազանի վերին պլիոցենի հարկ:

**A-95. АЛДАНСКИЙ ЯРУС** (Ալդան գետի անունից) – **ԱԼԴԱՆԻ(ՅԱՆ) ՅԱՐԿ, ALDANIAN,** քեմբրիի համակարգի ստորին բաժնի ստորին հարկ:

- A-96. АЛЕБАСТР** (հուն. alabastros) – **ԱԼԵՐԱՍՏՐ, ԼՍՆԱԿՈՒԵ (ԱԼՍՐԱՍՏՐ), ALABASTER, ALABASTRITE**, 1) միներալ, գիպսի սպիտակ, նրբահատիկ մարմարանման տարատեսակ, 2) գիպսի ջերմային մշակման արդյունք:
- A-97. АЛЕВРИТ** (հուն. áleuron – ալյուր) – **ԱԼԵՎՐԻՏ, ALEURITE, SILT**, փխրուն մանրահատիկ նստվածքային ապար, բաղկացած է գլխ. միներալային հատիկներից (քվարց, դաշտասպաթ, փայլար և այլն): Ըստ կազմի՝ միջանկյալ տեղ է զբաղում ավազների ու կավերի միջև, հատիկների չափերը՝ 0.01-0.1 մմ, այլ տվյալներով՝ 0.005-0.05 մմ: Օգտագործվում է ցեմենտի արտադրությունում և շինարարական խեցեգործությունում:
- A-98. АЛЕВРИТОВАЯ ГЛИНА** – **ԱԼԵՎՐԻՏԱՅԻՆ ԿԱՎ, ALEURITIC CLAY**, զգալի քանակով ալերիտային մասնիկներ պարունակող կավ:
- A-99. АЛЕВРИТОВЫЕ ЧАСТИЦЫ** – **ԱԼԵՎՐԻՏԱՅԻՆ ՄԱՍՆԻԿՆԵՐ, ALEURITE PARTICLES**, բեկորային ապարի կազմում ալերիտային չափի (0.01-0.1 մմ կամ 0.005-0.05 մմ) միներալային մասնիկներ:
- A-100. АЛЕВРОЛИТ** (հուն. áleuron – ալյուր և lithos – քար) – **ԱԼԵՎՐՈԼԻԹ, ԱԼՐԱՔՐՈԼ, ALEUROLITE, SILTSTONE**, ցեմենտացած նստվածքային ապար՝ բաղկացած ավելի քան 50 % ալերիտային մասնիկներից՝ 0.01-0.1 մմ կամ 0.005-0.05 մմ: Օգտագործվում է ցեմենտի և կերամզիտի արտադրության մեջ՝ որպես հումք:
- A-101. АЛЕВРОЛИТ (И ПЕСЧАНИК) ОЛИГОМИКТОВЫЙ** (հուն. oligos – քիչ, սակավ և miktós – խառը) – **ՍԱԿԱՎԱԽԱՆՆ (ՕԼԻԳՈՄԻԿՏԱՅԻՆ) ԱԼԵՎՐՈԼԻԹ (ԵՎ ԱՎԱԶԱՔՐՈԼ), OLIGOMICTIC ALEUROLITE (AND SANDSTONE)**, կազմված է հիմնականում երկու միներալների հատիկներից և կոչվում է օր.՝ քվարց-դաշտասպաթային:
- A-102. АЛЕВРОЛИТ (И ПЕСЧАНИК) ПОЛИМИКТОВЫЙ** (հուն. polys – շատ, բազմաթիվ և miktós – խառը) – **ԽԱՌՆԱԿԱԶՍ (ՊՈԼԻՄԻԿՏԱՅԻՆ) ԱԼԵՎՐՈԼԻԹ (ԵՎ ԱՎԱԶԱՔՐՈԼ), POLYMICTIC ALEUROLITE (AND SANDSTONE)**, ըստ կազմի՝ անհամասեռ ալերոլիթ (ավազաքար)՝ կազմված տարբեր ապարների (մազմայական, նստվածքային, փոխակերպային) բեկորային հատիկներից:
- A-103. АЛЕКСАНДРИТ** (ռուս. կայսր Ալեքսանդր 2-րդի անունով) – **ԱԼԵՔՍԱՆԴՐԻՏ, ՈՍԿԵՐՅՈՒՐԵՆ, ALEXANDRITE**, միներալ, քրիզոբերիլի հազվագյուտ թափանցիկ տարատեսակ. ցերեկային լույսում՝ կանաչ գույնի տարբեր երանգներով, արհեստական լուսավորությունում՝ մանուշակագույն կամ բալի կարմիր: Բյուրեղագիտական համակարգը օրթոռոմբային է, բյուրեղները աղյուսածն են: Կարծրությունը՝ 8.5: Հանդիպում է զմրուխտաբեր բիոտիտ-ֆլուգոպիտային փայլարներում՝ փոխակերպված գերիիմքային ապարների մեջ: 2-րդ կարգի թանկարժեք քար:
- A-104. АЛЛИТИЗАЦИЯ** – **ԱԼԻԹԱՑՈՒՄ, ALLITIZATION**, ապարների քիմ. հողմահարման տեսակ, հատուկ է խոնավ արևադարձային և մերձարևադարձային երկրներին, բնորոշվում է սիլիկատների քայքայմամբ, ալկալիական, հողալկալիական տարրերի ու սիլիկահողի դուրսբերմամբ և ալյումինի, երկաթի ու տիտանի օքսիդների կուտակմամբ:
- A-105. АЛЛИТЫ** (ալյումին և հուն. lithos – քար) – **ԱԼԻԹՆԵՐ, ALLITES**, 1) հողմահարման արդյունքներ՝ բաղկացած գլխ. ալյումինի ջրօքսիդներից, 2) կավային ապարներ, որոնցում կավահողի պարունակությունը գերազանցում է սիլիկահողի և երկաթի օքսիդների պարունակությանը:
- A-106. АЛЛОФАН** (հուն. allophanês – ուրիշ, թվացող, նման է պղնձի որոշ միներալների, սխալմամբ այդպիսին է ընդունվում) – **ԱԼՈՖԱՆ, ALLOPHANE**, միներալ, ալյումինի անկայուն կազմի ջրային սիլիկատ,  $m\text{Al}_2\text{O}_3 \cdot n\text{SiO}_2 \cdot p\text{H}_2\text{O}$ : Ըստ կազմի՝ մոտ է հալուազիտին, որին հաճախ անցնում է փոփոխվելիս և բյուրեղանալիս:

Անբյուրեղակազմ (ամորֆ) է: Գույնը՝ երկնագույն, կանաչավուն, դեղնավուն, գորշ, լինում է նաև անգույն և սպիտակ: Կարծրությունը՝ մոտ 3: Շատ փուխը է: Առաջանում է հողմահարման կեղևում, մետաղական հնքվ-երի օքսիդացման զոնայում:

**A-107. АЛЛОХТОН** (հուն. állos – այլ, ուրիշ և chithōn – հող) – **ՏԱՐԱԲԵՐՈՒԿ, ԱԼՈՒԹՈՆ, ALLOCHTHON** (երկրբ.), 1) ծալքավոր կառույցի մաս, որը վրաշարժվել է չտեղախախտված ավտոխթոն կառույցի վրա՝ տեկտ. ծածկույթի տեսքով: 2) Ապարների համալիր, որն իր նախասկզբնական տեղադրման վայրից թեք, հաճախ ալիքավոր մակերևույթով տեղաշարժվել է և ներկայացնում է ծածկութային կառույցի գլխ. մասը:

**A-108. АЛЛОХТОННЫЕ ГЛИНЫ – ՏԱՐԱԲԵՐՈՒԿ(ԱՅԻՆ) (ԱԼՈՒԹՈՆԱՅԻՆ) ԿԱՎԵՐ, ALLOCHTHONOUS CLAYS**, կավեր, կավային միներալներ, որոնք գոյանում են տարբեր նստվածքային ապարների քայքայման ու հողմահարման կեղևի կավային նյութի վերանստեցման հետևանքով:

**A-109. АЛЛОХТОННЫЕ ИЗВЕСТНЯКИ – ՏԱՐԱԲԵՐՈՒԿ(ԱՅԻՆ) (ԱԼՈՒԹՈՆԱՅԻՆ) ԿՐԱՔԱՐԵՐ, ALLOCHTHONOUS LIMESTONES**, բաղկացած են տարբեր (օրգանածին, կարբոնատային բեկորներ, օլիթներ) կարբոնատային նյութից, որը S. կ-ի կուտակման ու քարացման (լիթիֆիկացիայի) վայր է բերվել այլ տեղամասերից:

**A-110. АЛЛОХТОНЫ** (կենսաբ.) – **ԱԼՈՒԹՈՆՆԵՐ, ALLOCHTHONES**, կենդանիների ու բույսերի տեսակներ, որոնք էվոլյուցիայի գործընթացում առաջացել են ոչ այնտեղ, որտեղ այժմ ապրում են:

**A-111. АЛЛЮВИАЛЬНАЯ ДОЛИНА – ԳԵՏԱԲԵՐՈՒԿԱՅԻՆ (ԱԼՅՈՒՎԻԱԼ) ՅՈՎԻՏ, AGGRADED VALLEY, ALLUVIAL VALLEY**, հովիտ, որի հատակը լցված է գետաբերուկներով (ջրաբերուկներով):

**A-112. АЛЛЮВИАЛЬНАЯ ТЕРРАСА – ԳԵՏԱԲԵՐՈՒԿԱՅԻՆ (ԱԼՅՈՒՎԻԱԼ) ԴԱՐԱՎԱՆԴ, ALLUVIAL TERRACE**, գետի դարավանդ՝ կազմված գետային (ալյուվիալ) նստվածքներից:

**A-113. АЛЛЮВИАЛЬНЫЕ ОТЛОЖЕНИЯ – ԳԵՏԱԲԵՐՈՒԿԱՅԻՆ (ԱԼՅՈՒՎԻԱԼ) ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, ALLUVIAL DEPOSITS, FLUVIAL DEPOSITS**, նույնն է՝ **АЛЛЮВИЙ**:

**A-114. АЛЛЮВИАЛЬНЫЕ ПОЧВЫ, ПОЙМЕННЫЕ ПОЧВЫ – ԳԵՏԱԲԵՐՈՒԿԱՅԻՆ (ԱԼՅՈՒՎԻԱԼ) ՅՈՎԵՐ, ALLUVIAL SOILS**, ողողահունային հողեր, որոնք առաջանում են գետային ողողահուներում և դելտաներում՝ պարբերական հեղեղումների ու ջրաբերուկների կուտակման պայմաններում, հաճախ ունեն բարձր բերրություն:

**A-115. АЛЛЮВИАЛЬНЫЕ РАВНИНЫ – ԳԵՏԱԲԵՐՈՒԿԱՅԻՆ (ԱԼՅՈՒՎԻԱԼ) ՅԱՐԹԱՎԱՅՐԵՐ, ALLUVIAL PLAINS, FLUVIAL PLAINS**, հարթավայրեր, որոնք առաջանում են խոշոր գետերի կուտակումային գործունեության հետևանքով, հատկապես լայնատարած են թափառող գետերի Գ. հ.՝ տեկտ. իջեցումների մարզերում (օր.՝ Գանգես, Խուանխե գետերի):

**A-116. АЛЛЮВИАЛЬНЫЙ ПЛАЩ – ԳԵՏԱԲԵՐՈՒԿԱՅԻՆ (ԱԼՅՈՒՎԻԱԼ) ԾԱԾԿՈՒՅԹ (ԹԻՎՆՑ), ALLUVIAL MANTLE**, 1) տղմային ջրաբերուկներ՝ կուտակված խոշոր գետերի վարարման գոտում, 2) ավելի խոշոր ջրաբերուկների շերտ՝ կուտակված արտաբերման կոնների մակերևույթում՝ լեռնային գետերի տեղատարափի ընթացքում:

**A-117. АЛЛЮВИЙ, АЛЛЮВИАЛЬНЫЕ ОТЛОЖЕНИЯ** (լատ. alluvio – ջրաբերուկ, տղմալցում, ողողալցում) – **ԳԵՏԱԲԵՐՈՒԿ, ԱԼՅՈՒՎԻ, ԳԵՏԱԲԵՐՈՒԿԱՅԻՆ (ԱԼՅՈՒՎԻԱԼ) ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, ALLUVIUM, ALLUVIAL DEPOSITS, FLUVIAL DEPOSITS**, 1) գետահովիտներում (կայուն) ջրային հոսանքների նստվածքներ: Տարբերում են լեռնային ու հարթավայրային գետերի Գ., իսկ ըստ կուտակման պայմանների՝ հունային, ողողահունային և հնահունային ֆացիաներ, 2) չորրորդական համակարգի ժամանակակից (հոլոցենի) նստվածքների հնացած անվանում:

- A-118. АЛМАЗ** (թուրք. ալմաս, հուն. adámas – անխորտակելի, անընկճելի, բառ՝ ամրագույն) – **ԱԼՄԱՍՍ, DIAMOND**, միներալ, բնածին ածխածնի բյուրեղային խորանարդային ձևափոխություն, բնության մեջ հայտնի նյութերից ամենակարծրն է, կարող է լինել անգույն, ինչպես նաև տարբեր աստիճանի գունավորված՝ դեղին, շագանակագույն, վարդագույն-բաց մանուշակագույն, կանաչ, երկնագույն, կապույտ, կաթնասպիտակ, մոխրագույնից մինչև սև: Բնորոշ է ուժեղ փայլը: Արդյունաբերական կուտակումներով հանդիպում է քիմբեռլիթներում և դրանցից առաջացած ցրոնային հնքվ-երում, առավելապես՝ հին պլատֆորմներում ու վահաններում: Բաժանվում է ոսկերչական (ադամանդների պատրաստման համար) և տեխնիկական (արժեքավոր հղկանյութ է):
- A-119. АЛМАЗОНОСНАЯ ТРУБКА** – **ԱԼՄԱՍԱՐԵՐ ՓՈՂՐԱԿ, DIAMOND PIPE**, պայթման փողրակ՝ լցված ալմաստակիր ապարով (քիմբեռլիթով): Լայնորեն հայտնի են Քիմբեռլի քաղաքի շրջանում (ՅԱՄ), Յակուտիայում (ՌՖ):
- A-120. АЛУНИТ** (ֆրանս. alunite, alun-ից, լատ. alumen – պաղլեղ, շիբ), **КВАСЦОВЫЙ КАМЕНЬ** – **ԱԼՈՒՆԻՏ (ՊԱՂԵՂԱՔԱՐ, ՇԻՔԱՔԱՐ), ALUNITE, ALUMSTONE**, միներալ, կալիումի և ալյումինի սուլֆատ, առաջացնում է բաց գունավորված պինդ կամ հողանման զանգված, ըստ ծագման՝ գլխ. թթու սուլֆատային լուծույթների միջոցով սիլիկատային ապարների փոփոխման արդյունք է, լինում է նաև ջրաջերմային և վերնածին (հիպերգեն): Շիբի և կավահողի ստացման հումք է:
- A-121. АЛУНИТОВАЯ РУДА** – **ԱԼՈՒՆԻՏԻ (ՊԱՂԵՂԱՔԱՐԻ, ՇԻՔԱՔԱՐԻ) ՀԱՆՔԱՔԱՐ, ALUM ROCK, ALUNINE ORE**, բնական միներալային գոյացություններ՝ բաղկացած գլխ. ալումինիտից (30-55%), քվարցից, քաղկեդոնից և օպալից (գունարային 40-50%), կավային միներալներից և փոքր քանակով երկաթի օքսիդներից, իլմենիտից, ցիրկոնից: Հնքվ-երը գոյանում են թթու արտաժայթքային ապարների ջրաջերմային վերամշակման հետևանքով: Հումք է արգնահողի, կալիումի սուլֆատի և ծծմբաթթվի արտադրության համար:
- A-122. АЛУНИТИЗАЦИЯ** – **ԱԼՈՒՆԻՏԱՑՈՒՄ (ՊԱՂԵՂԱՔԱՐԱՑՈՒՄ), ALUNITIZATION**, ալյումասիլիկատային (գլխ. հրաբխային) ապարների մետասոմատիկական (միներալատեղակալման), առավելապես ջրաջերմային փոփոխություններ, որոնց հետևանքով առաջանում են ալումին (պաղլեղաքար) և կցորդվող միներալներ (քվարց, ռուտիլ, Fe-ի սուլֆիդներ, հեմատիտ, ծծումբ):
- A-123. АЛЬБИТ** (լատ. albus – սպիտակ) – **ԱԼԲԻՏ, ALBITE, SODACLASE, SODA FELDSPAR**, միներալ դաշտասպաթների խմբից, նատրիումի կարկասային ալյումասիլիկատ,  $Na[AlSi_3O_8]$ , պլագիոկլազների իզոմորֆ շարքի վերջին անդամ, առաջացնում է բաց գունավորված բյուրեղներ, հատիկավոր, թիթեղաձև, հաճախ շաքարանման ագրեգատներ: Հաճախակի են կրկնաբյուրեղները: Փայլը՝ ապակու, կարծրությունը՝ 6-6,5: Փոխակերպային թերթաքարերի, պեգմատիտների, ալկալիական ապարների, որոշ գրանիտակերպերի ու արտաժայթքվածքների ապարակազմիչ միներալ է: Հողմահարվելիս առաջացնում է կավային միներալներ:
- A-124. АЛЬБИТОФИР** (ալբիտ և պորֆիր, ծիրանաքար) – **ԱԼԲԻՏՈՖԻՐ, ALBITOPHYRE**, հնատիպ արտաժայթքային պորֆիրային ապար՝ խոշոր դաշտասպաթային ներփակվածքներով: Հիմնական պորֆիրային անջատվածքներն ու միկրոլիթները բաղկացած են գլխ. ալբիտից, նույնն է՝ Кератофир:
- A-125. АЛЬБСКИЙ ЯРУС, АЛЬБ** (ֆրանս. Օբլո գետի լատ. Alba, Ալբա անունից) – **ԱԼԲՅԱՆ ՀԱՐԿ, ԱԼԲ, ALBIAN**, կավճի համակարգի ստորին բաժնի վերին հարկ:
- A-126. АЛЬМАНДИН** (ֆրանս. Almandine, ուշ լատ. almandina, alabandina, Փ. Ասիայի Ալաբանդա հին քաղաքի աղավաղված անունից) – **ԱԼՄԱՆԴԻՆ, ALMANDINE**,

միներալ, երկաթաալյունիմային նոնաքար,  $Fe_3Al_2[SiO_4]_3$ : Անընդմեջ իզոմորֆ շարքերով կապված է պիրոպի ու սպեսարտինի հետ: Առաջացնում է արմակարմիր բյուրեղներ, համատարած հատիկավոր զանգվածներ: Կարծրությունը՝ 7-7,5: Հանդիպում է փայլարային թերթաքարերում, պեզմատիտներում, գրանիտներում, ցրոններում: Հղկանյութ է, թափանցիկ բյուրեղները թանկարժեք քար են (IV կարգի):

**A-127. АЛЬМИНСКИЙ ЯРУС** (Ղրիմի Ալմա գետի անունից) – **ԱԼՄԱՅԻ ՀԱՐԿ, ALMINEAN**, Ղրիմ-կովկասյան մարզի էոցենի վերին հարկ:

**A-128. АЛЬПИДЫ** – **ԱԼՊԻՊՆԵՐ, ALPIDES**, ալպյան ծալքավոր մարզեր:

**A-129. АЛЬПИЙСКАЯ СКЛАДЧАТАЯ ОРОГЕННАЯ ОБЛАСТЬ, АЛЬПИЙСКО-ГИМАЛАЙСКАЯ СКЛАДЧАТАЯ ОРОГЕННАЯ ОБЛАСТЬ** – **ԱԼՊԱՆ ԾԱԼՔԱՎՈՐ ԼԵՈՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՄԱՐԶ, ԱԼՊ-ՀԻՄԱԼԱՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐ ԼԵՈՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՄԱՐԶ, ALPINE FOLDED OROGENIC AREA**, Միջերկրածովյան գոտու ամենաերիտասարդ մաս, երկրակեղևի շարժունակ տեղամաս, որը տեղաբաշխված է Եվրասիայի, Հս. Աֆրիկայի, Արաբական և Հնդկաստանյան մայրցամաքային սալերի միջև և ակտիվորեն զարգացել է մեզոզոյում ու կայնոզոյում: Մարզի զարգացմանը նախորդել է պալեոզոյի վերջում հին պալեոզոյան օվկիանոսային ավազանի՝ հին Տեթիսի վերացումը և հերցինյան ծալքավոր համակարգի առաջացումը: Տրիասի վերջում սկսվել է երկրակեղևի կոտրատում, ռիֆտագոյացում և օվկիանոսային կեղևով Տեթիսի ավազանի ձևավորում: Յուրայի վերջում սկսվել է Աֆրիկայի, Արաբական, այնուհետև Հնդկաստանյան և Եվրասիական սալերի մոտեցում, Տեթիսի մակերեսի կրճատում, իսկ էոցենի վերջում՝ նշված սալերի բախում: Այդ գործընթացներն ուղեկցվել են ուժգին ծալքավոր ու վրաշարժային ձևախախտումներով: Օլիգոցենում-միոցենում ձևախախտումներն ընդգրկում են նաև երկրակեղևի խոր հորիզոնները՝ առաջացնելով ժամանակակից ալպյան լեռնային համակարգերը (Պիրենեյներ, Անդալուզյան լեռներ, Ատլաս, Ապենիններ, Ալպեր, Կարպատներ, Դինարյան լեռներ, Բալկաններ, Կովկաս, Թուրքիայի և Իրանի, Հր. Աֆղանստանի լեռներ, Հիմալայներ): Այդ լեռնային համակարգերի առավել ուժգին բարձրացում սկսվել է ուշ միոցենում և շարունակվում է մինչև այժմ: Միաժամանակ տեղի է ունեցել ծովային ավազանների (Միջերկրական, Սև, Կասպից, Էգեյան, Ազովի, Ադրիատիկ), նախալեռնային և միջլեռնային իջվածքների ձևավորում:

**A-130. АЛЬПИЙСКАЯ СКЛАДЧАТОСТЬ** – **ԱԼՊԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ALPINE FOLDING**, կավճի վերջում և կայնոզոյան դարաշրջանում տեղի ունեցած ծալքավորության, լեռնագոյացման և գրանիտացման գործընթացների համախմբություն, որը գլխ. դեր է խաղացել երիտասարդ ծալքավոր լեռնային կառույցների ձևավորման գործում (օր.՝ Ալպեր, Կարպատներ, Կովկաս, Հիմալայներ, Ատլասի լեռներ, Պոնտոսի, Տավրոսի լեռներ և այլն):

**A-131. АЛЬПИЙСКИЙ ЛЕДНИК** – **ԱԼՊԱՆ ՍԱՌՑԱՂԱՇՏ, ALPINE GLACIER**, ժամանակակից խոշոր լեռնահովտային սառցադաշտերի ամենատարածված տեսակ:

**A-132. АЛЬПИЙСКИЙ РЕЛЬЕФ** – **ԱԼՊԱՆ ՌԵԼԻԵՖ, ALPINE TYPE OF RELIEF**, լեռնային ռելիեֆի տեսակ, որն ընդգրկված է ժամանակակից լեռնային սառցապատումներով կամ կրել է զգալի սառցապատումներ չորրորդական ժամանակաշրջանում: Խիստ կտրտված է, բնորոշվում է սառցադաշտային ձևերի լայն տարածմամբ, ժայռոտ լանջերով, ջրբաժանների ու գագաթների սրությամբ և ատամնավորմամբ (օր.՝ Ալպեր, Կովկաս, Հիմալայներ և այլն):

**A-133. АЛЮМИНИЕВЫЕ РУДЫ** – **ԱԼՅՈՒՄԻՆԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, ALUMINIUM ORES**, բնական միներալային գոյացություններ, որոնք պարունակում են ալյումին այնպիսի միացություններում և այնպիսի պարունակություններով, որոնց արդյ. օգտագործումը տեխնիկապես հնարավոր և տնտեսապես նպատակահարմար է: Որպես

այլումինի հումք՝ ամենալայն տարածում ունեն բոքսիտները, բացի դա, այլումինի հանքանյութեր են ալումինիտային և նեֆելինապատիտային հանքաքարերը:

**A-134. АЛЮМИНИЙ, Al** (լատ. alumen – պաղլեղ, շիբ) – **ԱԼՅՈՒՄԻՆ (ՊԱՂԼԵՂԱԾԻՆ), ALUMINIUM**, Մենդելեևի պարբերական համակարգի III խմբի քիմ. տարր: Արծաթավուն-սպիտակ մետաղ է: Երկրակեղևում ամենալայն տարածում ունեցող (թթվածնից և սիլիցիումից հետո) տարրերից մեկն է՝ 8,8 % (ըստ զանգվածի): Առավելագույն տարածում ունի նստվածքային ապարներում՝ 10,45 % (ըստ զանգվածի):

**A-135. АЛЮМОСИЛИКАТЫ – ԱԼՅՈՒՄԱՍԻԼԻԿԱՏՆԵՐ, ALUMOSILICATES**, բնական սիլիկատների դասի միներալների խոշոր խումբ, որոնց մոտ սիլիկատաթթվածնային տետրաէդրերի հետ միասին բյուրեղային կառուցվածքում մասնակցում են և այլումաթթվածնայիններ: Առավել տարածված են դաշտասպաթները, ֆելդսպաթիդները, ցեոլիթները, փայլարները, քլորիտները և այլն: Կազմում են երկրակեղևի հիմնական մասը: Ա. հողմահարվելով՝ առաջացնում են կավ, երբեմն՝ բոքսիտ:

**A-136. АЛЯСКИТ** (Ալյասկա թերակղզու անունից, որտեղ հայտնաբերվել է առաջին անգամ) – **ԱԼՅԱՍԿԻՏ, ALASKITE**, սպիտակավուն (լեյկոկրատ) գրանիտ՝ կազմված ալկալիական դաշտասպաթից (65 %) և քվարցից (35 %), պարունակում է 5 %-ից ոչ ավել մուգավուն միներալներ: Սովորաբար կազմում է գրանիտային զանգվածների ներաժթքային վերջին փուլը, հազվադեպ՝ ինքնուրույն ներժայթքային համալիր:

**A-137. АМАЗОНИТ (АМАЗОНСКИЙ КАМЕНЬ)** (Ամազոն գետի անունից, որտեղ առաջին անգամ հայտնաբերվել է) – **ԱՄԱՋՈՆԻՏ, ԱՄԱՋՈՆԱՔՐ, AMAZONITE**, միներալ, միկրոկլինի տարբերակ, գույնը՝ վառ կանաչ, երկրագույն-կանաչ, փայլը՝ ապակու մինչև սադափյա: Ա. գեղեցիկ արհեստագործական քար է:

**A-138. АМГИНСКИЙ ЯРУС** (Արլ. Յակուտիայի Անգա գետի անունից) – **ԱՄԳԱՅԻ ՉԱՐԿ, AMGAIAN**, քեմբրիի համակարգի միջին բաժնի ստորին հարկ:

**A-139. АМЕТИСТ** (ֆրանս. améthyste, հուն. améthystos, բառ՝չհարբեցնող, ըստ հին հավատալիքի՝ Ա. կանխել է հարբածությունը) – **ԱՄԵԹԻՍ, ՄԵՂԵՍԻԿ, AMETHYST**, միներալ, քվարցի թափանցիկ երկնագույն-մանուշակագույն, ծիրանամանուշակագույն տարատեսակ: Գունավորման տարածումը սովորաբար անհավասարաչափ է՝ զոնայական է կամ բծավոր: Առաջացնում է կարծ հատվածակողմային բյուրեղներ, բյուրեղաբույլեր՝ գրանիտներում, սիենիտներում, պեզմատիտներում, քվարցային երակներում, նստվածքային ապարների առձգումներում և այլն: Խոշոր, գեղեցիկ գունավորված բյուրեղները թանկարժեք քարեր են:

**A-140. АМИКТИЧЕСКОЕ ОЗЕРО** (հուն. ámiktos – չխառնված, մաքուր) – **ԱՄԻԿՏԱՅԻՆ ԼԻՃ, AMICTIC LAKE**, սառույցով մշտապես ծածկված լիճ:

**A-141. АММОНАЛЫ – ԱՄՈՆԱԼՆԵՐ, AMMONALES**, պայթուցիկ նյութ, օգտագործվում է բաց և ստորգետնյա պայմաններում պայթեցումներ կատարելու համար:

**A-142. АММОНИТЫ** [Ammonoidea, լատ. cornu Ammonis, բառ.՝ Ամոնի (հին եգիպտական աստված) եղջյուր, որը պատկերացվում է նման ոչխարի ոլորված եղջյուրներին, դա հիշեցնում է շատ Ա-ի պարուրածն ոլորված խեցիներին] – **ԱՄՈՆԻՏՆԵՐ, AMMONITES**, մահացած գլխոտանի փափկամարմինների ենթադաս, ունեցել են արտաքին կրային հարթ-պարուրածն (մինչև 2 մ տրամագծով) կամ տարածն խեցի: Գոյություն են ունեցել դեռևս մինչև կավիճ:

**A-143. АМОРФНОСТЬ** (հուն. amorfos – անձև) – **ԱՄՈՐՖՈՒԹՅՈՒՆ, AMORPHOUS STATE**, պինդ նյութերի վիճակ՝ մասնիկների (մոլեկուլ, ատոմ, իոն) անկանոն տեղաբաշխմամբ: Այս հասկացությունը բյուրեղային վիճակի հակադիրն է:

- A-144. АМПЛИТУДА СКЛАДКИ** (լատ. *amplitudo* – լայնարձակություն) – **ԾԱԼՔԻ ԼԱՅՆՈՒՅԹ, FOLD AMPLITUDE**: “Высота складки” տերմինի հոմ.:
- A-145. АМПЛИТУДА СМЕЩЕНИЯ ВЕРТИКАЛЬНАЯ – ՏԵՂԱՇԱՐԺԻ ՈՒՂԱՁԻԳ ԼԱՅՆՈՒՅԹ, VERTICAL AMPLITUDE OF DISPLACEMENT**, տեղախախտման լայնությի պրոյեկցիան՝ ուղղաձիգ հարթությունում, տե՛ս *Высота сброса вертикальная*:
- A-146. АМПЛИТУДА СМЕЩЕНИЯ ГОРИЗОНТАЛЬНАЯ – ՏԵՂԱՇԱՐԺԻ ՅՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԼԱՅՆՈՒՅԹ, HORIZONTAL AMPLITUDE OF DISPLACEMENT**, տե՛ս *Ширина сброса горизонтальная*:
- A-147. АМПЛИТУДА СМЕЩЕНИЯ СТРАТИГРАФИЧЕСКАЯ – ՏԵՂԱՇԱՐԺԻ ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ԼԱՅՆՈՒՅԹ, STRATIGRAPHIC AMPLITUDE OF DISPLACEMENT**, խզվածքային խախտման տարբեր թևերում բնորոշիչ շերտի հեռավորությունը: Չափվում է ըստ շերտերի ուղղահայացի:
- A-148. АМФИБИИ (Amphibia)** (հուն. *amphibios* – կրկնակի կյանք վարող) – **ԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐ, AMPHIBIANS**, տե՛ս *Земноводные*:
- A-149. АМФИБИОНТЫ – ԱՄՖԻԲԻՈՆՏՆԵՐ, AMPHIBIOUS ORGANISMS**, օրգանիզմներ, որոնք ապրում են և՛ ցամաքային, և՛ ջրային միջավայրում:
- A-150. АМФИБОЛ-АСБЕСТ – ԱՄՖԻԲՈԼ-ԱՍԲԵՍ, ԱՄՖԻԲՈԼ-ԿՏԱՎԱՔԱՐ, AMPHIBOLE-ASBESTOS**, ամֆիբոլի խմբի թելանման միներալների ընդհանուր անվանում, ընդունակ են դիմանալ և չփոփոխվել բարձր ջերմաստիճաններում: Առավել նշանակություն ունեն կրոկիդոլիթը, ամոզիտը, անթոֆիլիտը, ավելի քիչ՝ ակտինոլիթը և տրեմոլիթը: Օգտագործվում են արդյունաբերության քիմ., թղթի սննդի և այլ ճյուղերում:
- A-151. АМФИБОЛИЗАЦИЯ – ԱՄՖԻԲՈԼԻՅՈՒՄ, AMPHIBOLIZATION**, պիրոքսենների և այլ միներալների՝ ամֆիբոլների փոխարկման գործընթաց: Բնորոշ է հիմքային կազմի մագմայական, փոխակերպային և նստվածքային ապարներին, որոնք կրել են տարածաշրջանային (ռեզիոնալ) և հպումային փոխակերպություն:
- A-152. АМФИБОЛИТ (հուն. *amphibolos* – անորոշ, կասկածելի, երկակի) – ԱՄՖԻԲՈԼԻԹ (ԵՂՁԵՐԱՓՈՒՅԼ, ՅՈՍԱՔԱՐ), AMPHIBOLITE**, փոխակերպային (մետամորֆային) ապար՝ հոծ, հազվադեպ թերթավոր կազմվածքով, բաղկացած գլխ. եղջերախաբից (հոռնբլենդից), անդեզիտից և երբեմն՝ նոնաքարից: Առաջանում է տարածաշրջանային (ռեզիոնալ) և հպումային փոխակերպության դեպքում՝ ամֆիբոլիթային ֆացիայի պայմաններում՝ ի հաշիվ տարբեր հիմքային արտաժայթքային և նստվածքային մերգելային ապարների: Գունավորումը՝ մուգ-կանաչավունից մինչև սև, Ա. արհեստագործական և երեսպատման քար է:
- A-153. АМФИБОЛЫ (հուն. *amphibolos* – անորոշ, երկակի, ըստ անջատման ձևերի տարբեր կազմի) – ԱՄՖԻԲՈԼՆԵՐ, AMPHIBOLES**, սիլիկատների դասի ապարակազմիչ միներալների լայնարձակ խումբ, կալցիումի, մատրիումի, մագնեզիումի, երկաթի, ալյումինի և այլ շղթայական սիլիկատներ: Տարբերում են միաթեք (մոնոկլինալ) և ավելի հազվադեպ՝ շեղանկյունային Ա.: Առաջացնում են կանաչ, գորշ, սև, կապույտ հատվածակողմային բյուրեղներ, ասեղնակերպ կամ թելանման ագրեգատներ: Կարծրությունը՝ 5-6: Ծագմամբ լինում են մագմայական (հոռնբլենդ, արֆվեդոսոնիտ, ռիբեկիտ) և փոխակերպային (ակտինոլիթ, գրյուններիտ, գլաուկոֆան): Ա-ի նուրբ թելավոր տեսակները կոչվում են ամֆիբոլ-ասբեստ (տե՛ս *Амфибол-асбест*): Մտնում են շատ մագմայական ու փոխակերպային ապարների կազմի մեջ: Երկրակեղևում ընդհանուր քանակը (ըստ զանգվածի) մինչև 10 % է: Ակտինոլիթի կամ տրեմոլիթի խիտ գաղտնաբյուրեղային ագրեգատը՝ նեֆրիտը, ոսկերչական և արհեստագործական քար է:

- A-154. АНАЛИЗ ГИДРОХИМИЧЕСКИЙ – ՋՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՏԱՐՐԱԼՈՒԹՈՒՄ, HYDROCHEMICAL ANALYSIS**, բնական ջրերի քիմ. բաղադրության, ֆիզ. և այլ հատկությունների (рН, ЕН) որոշում:
- A-155. АНАЛИЗ ГРАВИМЕТРИЧЕСКИЙ – ԾԱՆՐԱՉԱՓԱԿԱՆ (ԳՐԱՎԻՄԵՏՐԱԿԱՆ) ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ, GRAVIMETRIC ANALYSIS**, քանակական վերլուծական մեթոդ՝ հիմնված որոշակի նյութի կամ նրա բաղադրամասերի զանգվածի ճշգրիտ չափման վրա: Հիմքում ընկած է քիմ. վերափոխությունների դեպքում զանգվածի պահպանման օրենքը: Չափիչ սարքերը վերլուծական կշեռքներն են:
- A-156. АНАЛИЗ ГРАНУЛОМЕТРИЧЕСКИЙ – ՀԱՏԻՎԱՉԱՓԱԿԱՆ ՏԱՐՐԱԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ, GRADE ANALYSIS**, տե՛ս Гранулометрический анализ:
- A-157. АНАЛИЗ ДИАТОМОВЫЙ – ԴԻԱՏՈՄԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ, DIATOMACEOUS ANALYSIS**, կենսաշերտագրական, մանրէաբանական և հնակենսաշխարհագրական մեթոդներից մեկն է, հիմնված է դիատոմային ջրիմուռների դասակարգության, էկոլոգիական կազմի և կենսաշխարհագրության ուսումնասիրման վրա:
- A-158. АНАЛИЗ ИСТОРИКО-ГЕОЛОГИЧЕСКИЙ – ՊԱՏՄԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ, HISTORICAL-GEOLOGICAL ANALYSIS**, հետազոտությունների համախմբություն, որը հնարավորություն է տալիս որևէ ժամանակահատվածում երկրակեղևի տվյալ տեղամասում նստվածքակուտակման հաջորդական ընթացքի վերաստեղծումը: Այն սովորաբար բաղկացած է ապարների ֆացիաների, տեկտ. կառուցվածքի, զարգացման, հնաշխ. փոփոխությունների և կլիմայական պայմանների վերլուծությունից:
- A-159. АНАЛИЗ МОЩНОСТЕЙ – ՀԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ, ANALYSIS OF THICKNESSES**, երկրակեղևի տարբեր կարգի առանձին տեկտ. կառույցների տեկտ. շարժումների, ձևավորման և զարգացման պատմության ուսումնասիրման հիմնական մեթոդներից մեկը: Հ. վ. հնարավորություն է տալիս որոշելու բացասական ուղղաձիգ շարժումների լայնույթը, քանի որ կտրվածքում ծանծաղուտային նստվածքների հաստությունը համապատասխանում է ավազանի հատակի իջեցման չափին: Հաստությունների փոփոխությունը օգնում է նստվածքակուտակման ավազանի հնաշխ. իրադրության վերականգնմանը: Նույնահասակ նստվածքների հաստությունների տվյալներն անցկացվում են քարտեզի վրա, հավասար հաստությունների կետերը միացնում են գծերով՝ իզոպախիտներով: Հաստությունների վերլուծությունը պետք է համատեղել ֆացիաների վերլուծության հետ:
- A-160. АНАЛИЗ ПЕРЕРЫВОВ И НЕСОГЛАСИЙ – ԸՆԴՄԻՋՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՆԵՐ-ԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ, ANALYSIS OF HIATUSES AND DISCONFORMITIES**, հնատեկտոնական վերակառուցումների կարևորագույն մեթոդներից մեկն է, հնարավորություն է տալիս վերականգնելու երկրակեղևի շարժումների պատմությունը, դրանց բնույթը (տեսակը)՝ առանձին տեղամասերի տարբեր ժամանակահատվածներում: Հիմքում ընկած է այն ուղղակի կապակցությունը, որը գոյություն ունի նստվածքակուտակման ընդմիջումների ու աններդաշնակությունների և երկրակեղևի բարձրացումների միջև: Ընդմիջումներն ու աններդաշնակությունները սովորաբար համընկնում են տեկտ. շարժումների ու ժեղացման փուլերի հետ:
- A-161. АНАЛИЗ ПРИРОДНОЙ ВОДЫ – ԲՆԱԿԱՆ ՋՐԵՐԻ ՏԱՐՐԱԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ, ANALYSIS OF NATURAL WATER**, նույնն է՝ Химический анализ воды:
- A-162. АНАЛОГ СТРАТИГРАФИЧЕСКИЙ – ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՆՄԱՆԱԿ, STRATIGRAPHICAL ANALOG**, ստորաբաժանում, որը համարվում է մի այլ ստորաբա-



ժամանան հասակակից, բայց հաճախ դրանից տարբերվում է քարաբանաֆացիալ, հնէաբանական և այլ բնութագրերով:

**A-163. АНАЛОГ ФАЦИАЛЬНЫЙ – ՖԱՑԻԱԼ ՆՍԱՆԱԿ, FACIES ANALOG**, ապարների համալիրներ՝ միանման քարաբանաֆացիալ հատկություններով: Համադրվող ստորաբաժանումները կարող են լինել տարահասակ և տարբեր շրջաններում:

**A-164. АНАЛЬЦИМ** (հուն. *ánalkis* – թույլ, շփման դեպքում թույլ էլեկտրականացման պատճառով) – **ԱՆԱԼՑԻՄ, ANALCITE, ANALCIME**, կարկասային (հիմնականաբային) սիլիկատների ենթադասի ապարակազմիչ միներալ,  $\text{Na}[\text{AlSi}_2\text{O}_6]\cdot\text{H}_2\text{O}$ : Հաճախ ներառում են ցեոլիթների խմբի մեջ: Նատրիումի՝ ջուր պարունակող ալյումասիլիկատ է: Առաջացնում է գլխ. անգույն և թափանցիկ, ինչպես նաև սպիտակ, մոխրագույն, վարդագույն բյուրեղներ, հատիկավոր ագրեգատներ, կեղևներ, բյուրեղախմբեր: Կարծրությունը՝ 5,5-6: Ծագումը՝ ջրաջերմային (հիդրոթերմալ) (բազալտի և այլ ապարների նշափոսիկներում), հազվադեպ մազմայական՝ ալկալիական արտաժայթքային ապարներում, հրաբխային՝ տուֆերում, չեչաքարերում: Հանդիպում է նաև որոշ նստվածքային ապարներում:

**A-165. АНАПСИДЫ** (*Anapsida*) – **ԱՆԱՊՍԻԴՆԵՐ, ANAPSIDA**, սողունների խումբ, ընդգրկում է կոտիլոզավրերի ու կրիաների ենթադասերը:

**A-166. АНАТАЗ** (լատ. *anataxis* – ձգվածություն) – **ԱՆԱՏԱԶ, ANATASE**, միներալ, ռուտիլի երեք բնական բազմաձև ձևափոխություններից մեկը: Գորշ, սև. առանձին հատիկներով հանդիպում է պեգմատիտներում, թերթաքարերում, ցրոններում, բոքսիտներում:

**A-167. АНАТЕКСИС** (հուն. *anátexis* – հալչում) – **ԱՆԱԹԵՔՍԻՍ, ANATEXIS, REFUSION**, ապարների (գլխ. նստվածքային և փոխակերպային) մասնակի հալման գործընթաց տեղադրման վայրում՝ մեծ խորություններում խորասուզվելիս:

**A-168. АНАЭРОБНЫЕ ОРГАНИЗМЫ** (հուն. *an* – ժխտ. մասնիկ, *aēr* – օդ և *bios* – կյանք) – **ԱՆՕՂԱԿՅԱՑ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐ, ANAEROBIC ORGANISMS**, օրգանիզմներ, որոնք ընդունակ են ապրելու ազատ թթվածնի բացակայության պայմաններում (չափափակներ, որոշ նախակենդանիներ, որդեր, փափկամարմիններ, միջատներ):

**A-169. АНГИДРИТ** (հուն. *an* – ժխտ. մասնիկ և *hydōr* – ջուր) – **ԱՆՀԻԴՐԻՏ, ANHYDRITE**, 1) միներալ, կալցիումի անջուր սուլֆատ,  $\text{Ca}[\text{SO}_4]$ : Բյուրեղանում է շեղանկյունային համակարգում: Անգույն է կամ երկնագույն, մոխրագույն, վարդագույն: Կարծրությունը՝ 3,5-3,8: Աղային հնքվ-երի գլխ. միներալներից մեկն է, որտեղ խմբակցվում է գիպսի հետ և որից կարող է առաջանալ բարձր ճնշման դեպքում՝ ջրազրկման հետևանքով: Առաջացնում է բյուրեղներ, հատիկավոր և թելավոր ագրեգատներ: Ծագումը գլխ. նստվածքային և ջրաջերմային (հիդրոթերմալ) է: Ջուր կլանելիս անցնում է գիպսի: 2) նստվածքային ապար՝ բաղկացած գլխ. անհիդրիտ միներալից:

**A-170. АНГИДРИТИЗАЦИЯ – ԱՆՀԻԴՐԻՏԱՑՈՒՄ, ANHYDRITIZATION**, նստվածքների և ապարների՝ անհիդրիտով հարստանալու գործընթաց:

**A-171. АНГЛЕЗИТ** (առաջին անգամ գտնվելու վայրի՝ Անգլսի, Anglesey, կղզու անունից, Անգլ.) – **ԱՆԳԼԵԶԻՏ, ANGLESITE**, միներալ սուլֆատների դասից,  $\text{Pb}[\text{SO}_4]$ : Առաջացնում է տարբեր հաբիտուսի երբեմն խոշոր բյուրեղներ, հաճախ՝ հոծ կուտակներ, հատիկավոր և խիտ ագրեգատներ, գույնը՝ հաճախ անգույն, սպիտակ, մոխրագույն, սև: Բյուրեղանում է շեղանկյունային համակարգում: Կարծրությունը՝ 3-3,5, փայլը՝ ալմաստի, ծագումը՝ վերնածին (հիպերգեն)՝ կապարի հանքանյութերի օքսիդացման զոնայում՝ ի հաշիվ գալենիտի:

- A-172. АНДАЛУЗИТ** (Իսպ. պատմ. Անդալուզիա մարզի անունից) – **ԱՆԴԱԼՈՒԶԻՏ, ԱՆԴԱԼՈՒԶԱՔԱՐ, ANDALUSITE**, միներալ կղզային սիլիկատների դասից, ալյումինի սիլիկատի բազմաձև (պոլիմորֆ) ձևափոխություն: Նույն կազմի սիլիկատի այլ ձևափոխությունները կիանիտը և սիլիմանիտն են: Առաջացնում է կեղծ քառանկյուն հատվածակողմային բյուրեղներ, սյունաձև և ճառագայթաձև ագրեգատներ, ներփակվածքներ: Գույնը՝ վարդագույն, շագանակագույն, դեղին, կարմիր, կանաչ, մոխրագույն: Կարծրությունը՝ 6,5-7,5: 1380°C տաքացնելիս փոխարկվում է մուլիտի: Գոյանում է ցածր ճնշման և բարձր ջերմաստիճանի փոխակերպության զոնայում, հանդիպում է թերթաքարերում, եղջերաքարերում, երկրորդային քվարցիտներում, հայտնի է պեգմատիտներում, քվարցային երակներում: Հողմահարման նկատմամբ կայուն է, կուտակվում է ցրոններում: Նստվածքային ապարների ցամաքածին-բեկորային բաղադրամաս է: Երրորդ կարգի թանկարժեք քար է:
- A-173. АНДЕЗИТ** (գերմ. Andesit, Հր. Ամերիկայի Անդեր, Andes, լեռնահամակարգի անունից) – **ԱՆԴԵԶԻՏ, ԱՆԴԵԶԱՔԱՐ, ANDESITE**, միջին կազմի թխագույն արտաժայթքային ապար, դիորիտի արտաժայթքային նմանակ: Գույնը՝ մոխրագույնից մինչև սև, երբեմն կանաչավուն երանգով: Կառուցվածքը պորֆիրային է: Առաջացնում է հրաբխային արտաժայթքումների ժամանակ՝ լավային սառեցման ընթացքում: Կազմված է պլագիոկլազի, պիրոքսենի, եղջերախաբի, բիոտիտի ներփակվածքներից, հիմնական զանգվածը բաղկացած է պլագիոկլազի, ավելի քիչ՝ պիրոքսենի միկրոլիթներից և հրաբխային ապակուց: Ա. առաջացնում է լավային ծածկոցներ ու հոսքեր, ինչպես նաև արտամղածայթքային գմբեթներ: Օգտագործվում է շինարարության մեջ:
- A-174. АНДЕЗИТОВАЯ ЛИНИЯ** – **ԱՆԴԵԶԻՏԱՅԻՆ ԳԻԾ, ANDESITE LINE**, Խաղաղ օվկիանոսի անդեզիտային հրաբխականությանը բնորոշ ծայրամասերը օվկիանոսի ներքին բազալտային կազմի մարզից բաժանող գիծ:
- A-175. АНДИЙСКАЯ (АНДСКАЯ) СКЛАДЧАТОСТЬ** – **ԱՆԴՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ANDEAN FOLDING**, մեզոզոյան ծալքավորության փուլերից մեկը՝ արտահայտված Հր. Ամերիկայի Անդյան լեռնազանգվածում:
- A-176. АНДРАДИТ** (բրազիլացի երկրաբան Ժ. Անդրադա-ի-Սիլվայի անունից, J. Andrade e Silva, 1763-1838) – **ԱՆԴՐԱԴԻՏ, ANDRADITE**, միներալ, կալցիում-երկաթային նմաքար,  $Ca_3Fe_2[SiO_4]_3$ : Առաջացնում է գորշ, մսի կարմիր, կանաչավուն բյուրեղներ, հողամման զանգվածներ: Կարծրությունը՝ 6,5-7: Սկառնային միներալ է, հանդիպում է պեգմատիտներում, սիենիտներում, կարբոնատիտներում: Օգտագործվում է որպես հղկանյութ: Դեմանտոիդը Ա-ի առավել արժեքավոր թափանցիկ ոսկերչական տարատեսակն է:
- A-177. АНИЗИЙСКИЙ ЯРУС** (Ալպերի էնս գետի լատ. Anisus անունից) – **ԱՆԻԶԻՅԱՆ ՀԱՐԿ, ANISIAN**, տրիասի համակարգի միջին բաժնի ստորին հարկ:
- A-178. АНИЗОТРОПИЯ** (հուն. ánisos – անհավասար և trópos – ուղղություն) – **ԱՆԻՉՈՏՐՈՊԻԹՅՈՒՆ, ANISOTROPY**, տարբեր ուղղություններով մարմնի հատկությունների անհամարժեքությունը:
- A-179. АНИЗОТРОПНАЯ ПОРОДА** (հուն. ánisos – անհավասար և trópos – ուղղություն) – **ԱՆԻՉՈՏՐՈՊԱՅԻՆ ԱՊԱՐ, ANISOTROPIC ROCK**, ապար, որի հատկությունները (ձևախախտման, էլեկտրական, ջրային, մագնիսական, օպտիկական, ջրաթափանցելիության և այլն) տարբեր ուղղություններով տարբեր են: Ապարի անհամատեսակությունը պայմանավորված է նրա կառուցվածքային առանձնահատկություններով (մանրաշերտայնություն, հատիկների և բյուրեղների կարգավորված կողմնորոշություն, մանրաճեղքավորվածություն և այլն):

- A-180. АНКЕРИТ** (ավստրալիացի միներալաբան Մ. Անկերի, M. Anker, անունից) – **ԱՆԿԵՐԻՏ, ANKERITE**, միներալ կարբոնատների դասից,  $Ca(MgFe^{2+})[CO_3]_2$ , բյուրեղների ձևով ու ագրեգատներով նման է դոլոմիտին: Բյուրեղանում է տրիգոնային համակարգում: Գույնը՝ սպիտակ դեղնավուն, գորշ, վարդագույն, մոխրագույն և երկնագույն: Կարծրությունը՝ 3,5: Կարբոնատիտներին ու ցածրաջերմաստիճանային կապար-ցինկի հնքվ-երին (կարբոնատային ապարներում) բնորոշ միներալ է:
- A-181. АННАБЕРГИТ** (Անաբերգ հանքավայրի անունից, Գերմ.) – **ԱՆԱԲԵՐԳԻՏ, ANNABERGITE**, միներալ արսենիտների դասից,  $Ni_3[AsO_4]_2 \cdot 8H_2O$ , գույնը՝ խնձորի թույլ կանաչ: Վերնածին (հիպերգեն) միներալ է, առաջանում է նիկելի՝ արսեն (մկնդեղ) պարունակող միներալների օքսիդացման հաշվին:
- A-182. АННЕЛИДЫ** (Annelida) (լատ. annulus – օղակ) – **ՕՂԱԿԱՎՈՐ ՈՐԴԵՐ, ANNELIDA**, տե՛ս Кольчатые черви:
- A-183. АНОМАЛИЯ** (հուն. anomalía – շեղում, անկանոնություն) – **ԱՆԲՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆ, ANOMALY**, որևէ մեծության շեղումը չափաքանակից կամ միջին մեծությունից այս կամ այն կողմ (դրական կամ բացասական անկանոնություն):
- A-184. АНОМАЛИЯ ГИДРОДИНАМИЧЕСКАЯ** – **ՋՐԱԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ ԱՆԲՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, HYDRODYNAMIC ANOMALY**, ջրերի տարածման տեղամաս, որտեղ ջրաերկրք. պարամետրերը էապես տարբերվում են տվյալ ջրատար համալիրի կամ հորիզոնի այլ տեղամասերի համար օրինաչափ համարվող պարամետրերից:
- A-185. АНОМАЛИЯ ГИДРОТЕРМАЛЬНАЯ** – **ՋՐԱՋԵՐՄԱՅԻՆ (ՋՐԱԹԵՐՄԻԿ) ԱՆԲՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, HYDROTHERMAL ANOMALY**, ստոր. ջրերի տարածման տեղամաս, որտեղ նրանց ջերմաստիճանը էապես տարբերվում է տվյալ ջրատար համալիրին կամ հորիզոնին բնորոշ ջերմաստիճանից:
- A-186. АНОМАЛИЯ ГИДРОХИМИЧЕСКАЯ** – **ՋՐԱԲԻՄԻԱԿԱՆ ԱՆԲՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, HYDROCHEMICAL ANOMALY**, ջրերի տարածման տեղամաս, որտեղ դրանց քիմ. բաղադրությունը որևէ ցուցանիշով տարբերվում է տվյալ ջրատար համալիրին կամ հորիզոնին բնորոշ նույնատիպ հատկանիշներից:
- A-187. АНОМАЛИЯ СИЛЫ ТЯЖЕСТИ**, տե՛ս Гравитационная аномалия:
- A-188. АНОРТИТ** (հուն. ánothos – շեղ, ըստ բյուրեղների ձևի) – **ԱՆՈՐԹԻՏ, ANORTHITE, CALCICLASE, LIME-FELDSPAR**, ապարակազմիչ միներալ պլագիոկլազների խմբից, կալցիումի հիմնականախթային սիլիկատ, պլագիոկլազների նույնաձև (իզոմորֆ) շարքի ժայրանդամ,  $Ca[Al_2Si_2O_8]$ : Բյուրեղանում է տրիկլինային համակարգում: Գույնը՝ սպիտակ, մոխրագույն, կանաչավուն, կարծրությունը՝ 6-6,5: Գլխ. մագմայական միներալ է: Հանդիպում է հիմքային արտաժայթքային ապարներում, երբեմն նաև հիմքային ներժայթքային ապարներում (օլիվինային գաբրո, նորիտներ, անորթոզիտներ)՝ բաց գունավորված առանձին միներալային հատիկների կամ դրանց ագրեգատների տեսքով: Հայտնի է նաև քարային երկնաքարերում:
- A-189. АНОРТОЗИТ** (ֆրանս. anorthose – պլագիոկլազ) – **ԱՆՈՐԹՈՋԻՏ, ANORTHOSITE**, բաց գույնի խոշորահատիկ հիմքային ներժայթքային ապար, բաղկացած է գլխ. պլագիոկլազից, սովորաբար՝ լաբրադորից, հազվադեպ՝ անդեզինից կամ բիտովմիտից՝ գունավոր միներալների՝ օլիվինի, պիրոքսենի, տիտանաձագնետիտի, ապատիտի և այլնի ոչ մեծ (ոչ ավել 5-10 %-ից) պարունակությամբ: Գույնը՝ սպիտակից մինչև մուգ մոխրագույն: Կազմվածքը բնորոշվում է պլագիոկլազի աղյուսիկների զուգահեռակերպ դասավորմամբ: Պատկանում է

գաբրոների խմբին, առաջացնում է շերտեր՝ շերտավորված (ստրատիֆորմ) ներ-  
ժայթքվածքներում, կազմում է խոշոր ներժայթքվածքային մարմիններ՝ հին փո-  
խակերպային համալիրներում:

**A-190. АНОРТОКЛАЗ – ԱՆՈՐԹՈՎԼԱԶ, ANORTHOCLASE**, միներալ, հոմոգեն կա-  
լիումանատրումային դաշտասպաթ, տարատեսակը՝ կալիումական անորթոզիտ:  
Հանդիպում է թթու հրաբխային ապարներում:

**A-191. АНОРТОКЛАЗИТ – ԱՆՈՐԹՈՎԼԱԶԻՏ, ANORTHOCLASITE**, ապար՝ համար-  
յա ամբողջովին կազմված անորթոկլազից:

**A-192. АНТАРКТИДА – ԱՆՏԱՐԿՏԻՂԱ, ANTARCTICA, ANTARCTIC CONTINENT**,  
հարավային բևեռային մայր ցամաք:

**A-193. АНТЕКЛИЗА** (հուն. anti – ընդդեմ, հակառակ և klisis – թեքություն) – **ԱՆՏԵԿ-  
ԼԻԶ, ANTECLISE**, փոքրաթեք անտիկլինալակերպ բարձրացման տեսքով պլատ-  
ֆորմային կառույց (պրոֆիլաչափում մի քանի հարյուր կմ): Կենտրոնական մա-  
սում հիմքի խորությունը պակաս է 1000 մ-ից, իսկ որոշ տեղերում հիմքը կարող է  
դուրս գալ Երկրի մակերևույթ:

**A-194. АНТЕЦЕДЕНТНАЯ ДОЛИНА** (լատ. antesedens, սեռ. հ. antecedentis – նա-  
խորդող) – **ԱՆՏԵՑԵՂԵՆՏ ՀՈՎԻՏ, ANTECEDENT VALLEY**, ավելի երիտասարդ  
աճող լեռնաշղթան կամ բարձունքը խաչաձև հատող հովիտ: Ունի խոր միջան-  
ցիկ կիրճի տեսք:

**A-195. АНТИКЛИНАЛЬ, АНТИКЛИНАЛЬНАЯ СКЛАДКА** (հուն. anti – ընդդեմ,  
հակառակ և klinō – կռանում են) – **ԿԱՄԱՐԱԾԱԼՔ (ԿՈՐԱԾԱԼՔ, ԱՆՏԻԿԼԻՆԱԼ), ԱՆ-  
ՏԻԿԼԻՆԱԼ ԾԱԼՔ, ANTICLINE, ANTICLINAL FOLD**, ապարների շերտերի ուռուցի-  
կությանը վեր ուղղված ծալք՝ կենտրոնական մասում (միջուկում) ավելի հին  
ապարների տեղադրմամբ: Հատակագծում, ըստ ուրվագծերի, առանձնացվում են  
գծային, կարճ (քրախի) և գմբեթանման Կ-եր.:

**A-196. АНТИКЛИНАЛЬ АСИММЕТРИЧНАЯ – ԱՆՀԱՄԱԶՈՓ ԿԱՄԱՐԱԾԱԼՔ (ԱՆՏԻԿ-  
ԼԻՆԱԼ), ASYMMETRICAL ANTICLINE**, թևերում շերտերի տարբեր անկմամբ  
կամարածալք (մի թևը ավելի զառիթափ է):

**A-197. АНТИКЛИНАЛЬ ПЕРЕВЕРНУТАЯ – ՇՐՉՎԱԾ ԿԱՄԱՐԱԾԱԼՔ (ԿՈՐԱԾԱԼՔ,  
ԱՆՏԻԿԼԻՆԱԼ), INVERTED ANTICLINE**, կամարածալք, որում կամարային հար-  
թությունն այնպես է կառուցված, որ ծալքի փականը շրջված է ներքև, հոմ.  
Синклиналь ложная:

**A-198. АНТИКЛИНАЛЬНАЯ ДОЛИНА – ԿԱՄԱՐԱԾԱԼՔԱՅԻՆ (ԿՈՐԱԾԱԼՔԱՅԻՆ, ԱՆ-  
ՏԻԿԼԻՆԱԼ) ՀՈՎԻՏ, ANTICLINAL VALLEY**, գետահովիտ, որը ձևավորվում է կա-  
մարածալքի կամարային մասի երկայնքով: Հովտի լանջեր կազմող ապարների  
շերտերն ունեն հակադիր անկում:

**A-199. АНТИКЛИНАЛЬНЫЙ ХРЕБЕТ – ԿԱՄԱՐԱԾԱԼՔԱՅԻՆ (ԿՈՐԱԾԱԼՔԱՅԻՆ, ԱՆ-  
ՏԻԿԼԻՆԱԼ) ԼԵՌՆԱՇՂԹԱ, ANTICLINAL RIDGE**, լեռնաշղթա, որը համապատաս-  
խանում է ապարների կամարածալքային տեղադրման կառուցվածքին:

**A-200. АНТИКЛИНОРИЙ** (անտիկլինալ և հուն. óros – լեռ, բարձրություն) – **ԲԱԶՄԱ-  
ԿԱՄԱՐԱԾԱԼՔ, ԱՆՏԻԿԼԻՆՈՐԻՈՒՄ, ANTICLINORIUM**, երկրակեղևի շերտերի ծալ-  
քերի խոշոր, բարդ կառուցվածք ունեցող համալիր, որը գոյանում է սովորաբար  
շարժում մարզերում՝ երկրակեղևի բարձրացման և ծալքավորության հետևանքով:  
Բնորոշվում է կենտրոնական մասում կամարածալքերի կամարներին հարող մա-  
կերևույթի (ծալքավորության հայելի) ընդհանուր բարձրացմամբ: Երկարությունը՝  
հարյուրավոր կմ, լայնությունը՝ տասնյակ կմ: Ընդհանրապես ունեն կամարածալ-

քային կառուցվածք, մակերևութային սովորաբար մերկանում են ավելի հին ապարները՝ համեմատած հարակից սինկլինորիումների հետ: Ծալքերի առանցքային հարթությունները հաճախ հովհարածն են: Բ-ի թևերում հաճախ դիտվում են վրաշարժային խախտումների զոնաներ: Բ-երի հետ հաճախ կապված են խոշոր ներժայթքային մարիմների ելքեր՝ գրանիտներ և այլն: Հատկապես խոշոր Բ-երը կոչվում են մեգանտիկլինորիումներ:

**A-201. АНТИМОНИТ** (ուշ լատ. antimonium – ծարիր) – **ԱՆՏԻՄՈՆԻՏ, ԾԱՐՐԱՔԱՐ, ԾԱՐՐԻ ՓՈՅԼ, ANTIMONITE**, միներալ, ծարրի սուլֆիդ,  $Sb_2S_3$ : Բյուրեղանում է շեղանկյունային համակարգում: Առաջացնում է կապարամոխրագույն ասեղնավոր բյուրեղներ, ճառագայթային և թելավոր ագրեգատներ: Կարծրությունը՝ 2-2,5, փայլը՝ մետաղի: Ծագումը՝ ցածրաջերմաստիճանային ջրաջերմային (հիդրոթերմալ): Ծարրի հիմնական հանքանյութն է, նույնն է՝ **Стибнит**:

**A-202. АНТОФИЛЛИТ** – **ԱՆՁՈՖԻԼԻՏ, ANTHOPHYLLITE**, միներալ ամֆիբոլների խմբից, բյուրեղանում է շեղանկյունային համակարգում: Բյուրեղները սյունածն են, կտավաքարանման, ագրեգատները թելավոր են, գույնը՝ մոխրագույն, գորշ և այլն: Հանդիպում է ամֆիբոլիթներում, գրանուլիթներում, փոխակերպված գերհիմքային ապարներում:

**A-203. АНТРАЦИТ** (հուն. anthrakitıs – ածխի տեսակ) – **ԱՆՏՐԱՑԻՏ (ԱԾԽԱՔԱՐ), ANTHRACITE, HARD COAL**, բարձրագույն աստիճանի փոխակերպության (ածխացման) բրածո բուսահողային (հունուսային) ածուխ, գույնը՝ մոխրավուն սև և սև-մոխրավուն, փայլը՝ մետաղի, օրգանական զանգվածում ածխածնի պարունակությունը 94-97 %, այրման ջերմությունը՝ 33,8-35,2 ՄՋ/կգ, առաջացնում է տարբեր հաստության շերտեր:

**A-204. АНТРОПОГЕН** (հուն. ánthrōpos – մարդ և génoıs – ցեղ, ծագում) – **ԱՆՏՐՈՊՈԳԵՆ, ANTHROPOGENE**, չորրորդական ժամանակաշրջանի անվանում, առաջարկվել է Պավլովի կողմից 1922-ին, ընդգրկում է վերին պլիոցենի մի մասը, այդ դեպքում Ա-ի տևողությունը՝ 1,8 մլն. տարի:

**A-205. АНТРОПОГЕННЫЕ ПОЧВЫ** – **ԱՆՏՐՈՊՈԳԵՆՅԱՆ ՀՈՂԵՐ, ANTHROPOGENIC SOILS, MAN-MADE SOILS**, մարդու գործունեության հետևանքով առաջացած հողեր (հողերի մշակովի դարձնելը, հողառաջացման գործունեության փոփոխություն, բնական հողածածկույթի խախտում՝ շինարարության հետ կապված):

**A-206. АНТРОПОГЕННЫЕ ФАКТОРЫ** – **ԱՆՏՐՈՊՈԳԵՆՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ, ANTHROPOGENIC FACTORS**, մարդու և նրա գործունեության ազդեցությամբ պայմանավորված գործոններ, որոնք ազդում են կենդանիների, բույսերի և բնական այլ բաղադրամասերի վրա:

**A-207. АНТРОПОГЕННЫЙ ЛАНДШАФТ** – **ԱՆՏՐՈՊՈԳԵՆՅԱՆ ԲՆԱՊԱՏԿԵՐ (ԼԱՆԴՇԱՖՏ), ANTHROPOGENIC LANDSCAPE**, բնական բնապատկեր, որը փոփոխվել է մարդու տնտեսական գործունեության ժամանակ, ինչպես նաև բնաարտադրական համալիրներ, քաղաքային բնակավայրեր և այլն կառուցելու ընթացքում: Այժմ Ա. ք. ընդգրկում է ցամաքի մոտ կեսը:

**A-208. АНТРОПОГЕННЫЙ РЕЛЬЕФ** – **ԱՆՏՐՈՊՈԳԵՆՅԱՆ ՌԵԼԻԵՖ, ANTHROPOGENIC RELIEF**, երկրակեղևի մակերևութի ձևերի համախումբ՝ փոփոխված կամ ստեղծված մարդու գործունեությամբ: Տարբերում են տարերայնորեն ծագած կամ գիտակցականորեն ստեղծված ռելիեֆի ձևեր:

**A-209. АНТРОПОГЕНОВАЯ СИСТЕМА (ПЕРИОД), АНТРОПОГЕН** (հուն. *ánthrōpos* – մարդ և *génos* – ցեղ, ծագում) – **ԱՆՏՐՈՊՊՈԳԵՆԻ(ՅԱՆ) ՀԱՍԱԿԱՐԳ (ԺԱՍԱՆԱՎԱՀՐՉԱՆ), ԱՆՏՐՈՊՊՈԳԵՆ, ANTHROPOGENE**, շերտագրական սանդղակի վերջին համակարգ և Երկրի երկրաբանական զարգացման վերջին ժամանակաշրջան, որը շարունակվում է մինչև հիմա: Անտրոպոգենի համակարգի ընթացքում օրգանական աշխարհի զարգացման պատմության մեջ տեղի է ունեցել կարևոր իրադարձություն՝ հանդես է եկել ու զարգացել մարդը և մարդկային հասարակությունը: Տերմինն առաջարկել է Ա. Պ. Պավլովը 1922-ին: Երկրբ. գրականության մեջ օգտագործվում է չորրորդական համակարգ (ժամանակաշրջան) տերմինին համընթաց, տե՛ս Четвертичная система:

**A-210. АНТРОПОИДЫ – ՍԱՐԴԱՎԵՐՊԵՐ, ANTHROPOIDEA**, խոշոր կապիկների ընտանիք, որն իր կազմվածքով մոտ է մարդուն, նույնն է՝ մարդանման կապիկներ:

**A-211. АНТРОПОЛОГИЯ** (հուն. *ánthrōpos* – մարդ և *lógos* – ուսմունք) – **ՍԱՐԴԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ, ANTHROPOLOGY**, գիտություն է մարդու ծագման ու զարգացման, մարդկային ցեղերի առաջացման մասին, մարդու ֆիզ. կառուցվածքի բնականոն փոփոխականության մասին:

**A-212. АНШЛИФ – ԵՐԵՍԱՀՂՈՒԿ, POLISHED SECTION**, հղկված մակերեսով հանքաքարի կամ ապարի նմուշ:

**A-213. АПАТИТ** (հուն. *apátē* – խաբեություն, Ա. սկզբում հաճախ շփոթել են այլ միներալների հետ) – **ԱՊԱՏԻՏ, ՖՈՍՖԱՏԱՔԱՐ, APATITE**, միներալ ֆոսֆատների դասից, կալցիումի ֆոսֆատ՝ ֆտորի, քլորի, ածխաթթվի և ջրի փոփոխական պարունակությամբ: Բյուրեղանուն է հեքսագոնային համակարգում: Առաջացնում է հատվածակողմային, երբեմն՝ տափակացած բյուրեղներ, համատարած հատիկավոր, բողբոջանման, հողանման զանգվածներ: Գույնը՝ երկնագույն, կապտականաչ, դեղնականաչ, վարդագույն, սև, գորշ: Փայլը՝ ապակու, ճարպային, կարծրությունը՝ 5: Ըստ կազմի՝ տարբերում են ֆտորապատիտ, քլորապատիտ, կարբոնատապատիտ և այլն: Ծագումը՝ մագմայական, ջրաջերմային (հիդրոթերմալ), պլանատոլիթային, նստվածքային: Շատ հրային ու փոխակերպային ապարների ուղեկից (ակցեսորային) միներալ է: Ֆոսֆատային պարարտանյութերի հումք է:

**A-214. АПАТИТОВЫЕ РУДЫ – ԱՊԱՏԻՏԻ (ՖՈՍՖԱՏԱՔԱՐԻ) ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, APATITE ORES**, բնական միներալային ագրեգատներ, որոնք պարունակում են ապատիտ այնպիսի քանակով, որի կորզումը տեխնիկապես հնարավոր և տնտեսապես նպատակահարմար է: Ըստ  $P_2O_5$ -ի պարունակության՝ առանձնացնում են հարուստ (>18%), աղքատ (5-8 %) և աղքատիկ (3-5 %) հնքվ-եր.: Համալիր հանքաքարերում ապատիտը կարող է լինել գլխ. բաղադրամասը կամ գլխավորներից մեկը: Առավել խոշոր արդյ. նշանակություն ունեն մագմայական և կարբոնատիտային հնքվ-երը:

**A-215. АПВЕЛЛИНГ** (անգլ. *up* – դեպի վեր և *well* – թափվել, հորդել, ցայտել) – **ԱՊՎԵԼԻՆԳ, UPWELLING**, օվկիանոսներում ջրի բարձրացում ներքևից դեպի վեր:

**A-216. АПЛИТ** (հուն. *haplóos* – հասարակ) – **ԱՊԼԻՏ, APLITE**, սպիտակավուն, մանրահատիկ երակային ապար, բաղկացած է քվարցից, կալիումի դաշտասպաթից և թթու պլազիոկլազից, աղքատ է փայլարներով ու այլ գունավոր միներալներով: Սովորաբար սերտորեն կապված է գրանիտների հետ: Դայկաների ու երականման մարմինների տեսքով հարում է թթու ներժայթքվածքների վերնային (ապիկալ) մասերին:

**A-217. АПОФИЗА** (հուն. *apóphysis* – ճյուղ) – **ԱՊՈՐՎՅՈՒՂ, ՃՅՈՒՂԱՎՈՐՈՒՄ, APOPHYSIS**, երակների, լավային ծածկոցների, ներժայթքվածքների կողային ճյուղավորումներ, որոնք ներթափանցում են ներփակող ապարների մեջ:

**A-218. АПОФИЛЛИТ** (հուն. apó – հեռացման, անջատման նախածանց և phýllon – թերթ, տաքացնելիս անջատվում է թերթիկների) – **ԱՊՈՖԻԼԻՏ, АРОPHYLLITE**, շերտավոր սիլիկատների ենթադասի ապարակազմիչ միներալ: Բյուրեղանում է քառանկյունային (տետրագոնային) համակարգում: Առաջացնում է հատվածակողմային (մինչև ասեղնաձև) իզոմետրական (զուգաչափական), թիթեղաձև և այլ բյուրեղներ, բյուրեղաբույլեր, թերթանման ագրեգատներ, խիտ զանգվածներ: Մաքուր Ա. անգույն է, ջրաթափանցիկ, փոփոխվածը՝ սպիտակ: Կարծրությունը՝ 4,5-5: Ցածրաջերմաստիճանային ջրաջերմային (հիդրոթերմալ) միներալ է: Բնորոշ է նշաքարային հիմքային արտաժայթքային ապարներին, որոնց դատարկություններում հանդիպում է ցեոլիթների, ագատի հետ համատեղ: Հազվադեպ հանդիպում է գրանիտների, ալկալիական սիենիտների, փոխակերպային ապարների դատարկություններում:

**A-219. АПТСКИЙ ЯРУС, АПТ** (ֆրանս. հր. արլ. գտնվող Ապտ քաղաքի անունից) – **ԱՊՏԻ ՀԱՐԿ, ԱՊՏ, АРТІАN**, կավձի համակարգի ստորին բաժնի ներքևից հինգերորդ հարկ:

**A-220. АПШЕРОНСКИЙ ЯРУС, АПШЕРОН** (Ապշերոնյան թերակղզու անունից) – **ԱՊՇԵՐՈՆՅԱՆ ՀԱՐԿ, ԱՊՇԵՐՈՆ, АРСHERONIAN**, Կասպիական ավազանի եռալեյստոցնի ստորին հարկ:

**A-221. АРАГОНИТ** (իսպ. Արագոն, Aragón, պատմական մարզի անունից) – **ՍՐԱԳՈՆԻՏ, ԱՐԱԳՈՆԱՔԱՐ, АRAGONITE**, միներալ, կալցիումի կարբոնատ ( $CaCO_3$ ), կալցիտի շեղանկյունային ձևափոխումը: Առաջացնում է ասեղնավոր բյուրեղներ, մակահոսքային բողբոջանման կամ ճյուղավոր ագրեգատներ, օղիթներ և այլն: Սովորաբար՝ անգույն, սպիտակ, մոխրագույն, հազվադեպ՝ դեղին, մանուշակագույն, սև: Կարծրությունը՝ 3,5-4: Ծագումը գլխ. նստվածքային, ջրաջերմային (հիդրոթերմալ): Հանդիպում է ծովային նստվածքներում, կարստային քարանձավներում, հողմահարման կեղևում: Քիմ., ցեմենտի և ապակու արդյ. հումք է, լուսաթափանց տարատեսակները (օր. մարմարային եղնզմաքար) արհեստագործական քարեր են: Ա-ի տարատեսակը՝ կոնխիտը, փափկամարմինների մարգարտի և խեցու սահափյա շերտի հիմնական բաղադրամասն է:

**A-222. АРГЕНТИТ** (լատ. argentum – արծաթ) – **ԱՐԳԵՆՏԻՏ (ԱՐԾԱԹԱՔԱՐ, ԱՐԾԱԹՓՈՅԼ), АRGENTITE**, արծաթի սուլֆիդ,  $Ag_2S$ -ի բազմաձև խորանարդային ձևափոխումն է, առաջացնում է կապարամոխրագույնից մինչև սև մետաղական փայլով բյուրեղներ, դեմոդրիտներ, երակիկներ, ներփակվածքներ, հողային և հոծ զանգվածներ: Կայուն է  $173^{\circ}C$ -ից բարձր (այդ ջերմաստիճանից ցածր անցնում է ականտիտի): Ծագումը ջրաջերմային և վերնածնային (օքսիդացման զոնայում) է: Արծաթի արժեքավոր, բայց հազվագյուտ հանքանյութ է:

**A-223. АРГИЛЛИЗАЦИЯ – ԿԱՎԱՑՈՒՄ, ԱՐԳԻԼԱՑՈՒՄ, АRGILLIZATION**, ցածրաջերմաստիճանային մետասոմատիկական (միներալատեղակալման) գործընթաց, որը պայմանավորված է հետհրաբխային գործունեության արտահայտմամբ և հանգեցնում է սկզբնական միներալների տեղակալմանը կավային միներալներով:

**A-224. АРГИЛЛИТ** (հուն. árgillos – կավ և lithos – քար) – **ԱՐԳԻԼԻԹ, ԿԱՎԱՔԱՐ, АRGILLITE, MUDSTONE**, պինդ, կարծր կավային ապար, առաջանում է կավերի խտացման, ջրազրկման և ցեմենտացման հետևանքով: Կավերից տարբերվում է մեծ կարծրությամբ և ջրում չկակղելիությամբ: Ցեմենտի, կերամզիտի արտադրության հումք է: Կառլինային Ա. հրակայուն է (գիպսիտի խառնուրդով):

- A-225. АРГОН, Ar** (լատ. Argon) – **ԱՐԳՈՆ, ARGON**, պարբերական համակարգի VIII խմբի քիմ. տարր, պատկանում է անգործուն (իներտ) գազերին:
- A-226. АРЕАЛ** (լատ. area – հրապարակ, տարածք, մակերես) – **ՏԱՐԱԾԱՍԱՀՄԱՆ, ՏԱՐԱԾԱՇՐՉԱՆ (ԱՐԵԱԼ), AREA, RANGE**, որևէ երևույթի տարածման մակերես, կենսբ. որևէ տեսակի, սեռի, ընտանիքի և այլնի բնակության մարզ:
- A-227. АРЕНИГСКИЙ ЯРУС, АРЕНИГ** [Ուելսում (Մեծ Բրիտանիա) գտնվող Արենիգ լեռան անունից] – **ԱՐԵՆԻԳԻ ՀԱՐԿ, ԱՐԵՆԻԳ, ARENIGIAN**, օրդովիկյ համակարգի ներքևից երկրորդ հարկ:
- A-228. АРИДНАЯ ЗОНА** (լատ. aridus – չոր) – **ՉՈՐԱՅԻՆ ՋՈՆԱ, ARID ZONE**, բնական (աշխարհագրական) զոնա չոր կլիմայով (անապատների և կիսաանապատների զոնա):
- A-229. АРИДНЫЙ РЕЛЬЕФ – ՉՈՐԱՅԻՆ ՌԵԼԻԵՖ, ARID LANDFORMS**, ռելիեֆի ձևերի համախումբ, որն առաջանում է անապատներում, կիսաանապատներում, չոր տափաստաններում՝ անապատային հողմահարման, էոլյան գործընթացի, ժամանակավոր ջրհոսքերի ողողամաշման ազդեցության հետևանքով:
- A-230. АРКОЗ, АРКОЗОВЫЙ ПЕСЧАНИК** (ֆրանս. arkoze) – **ԱՐԿՈՉ, ԱՐԿՈՉԱՅԻՆ ԱՎԱՉԱՔԱՐ, ARKOSE**, ավազաքար, որը բաղկացած է քվարցից, դաշտասպաթից, փայլարից և ցեմենտացնող նյութից (ջրափայլարներ, կաոլինիտ, կարբոնատներ), հանդիսանում է գրանիտների ու գնեյսների քայքայման արդյունք: Բնորոշ է չոր կամ սառը կլիմայով հարթավայրային մարզերին: Խոնավ պայմաններում հանդիպում է խիստ մասնատված ռելիեֆում՝ արագ քայքայման դեպքում:
- A-231. АРСЕН, As** (լատ. arsenicum – ուժեղ, առնական) – **ԱՐՍԵՆ, ՋԱՌԻԿ, ՄԿԵՂԵՂ, ARSENIC**, պարբերական համակարգի V խմբի քիմ. տարր:
- A-232. АРСЕНИДЫ ПРИРОДНЫЕ – ԲՆԱԿԱՆ ԱՐՍԵՆԻԴՆԵՐ, ARSENITES**, միներալների խումբ, մետաղների (երկաթ, կոբալտ, նիկել, պղինձ, արծաթ, պլատին) միացությունները արսենի հետ: Ընդգրկում է 15 միներալ, որոնց մեջ տիրապետում են երկաթի, նիկելի և կոբալտի միացությունները: Գերակշռող զուգավորումը կապարածոխրագույն է, անթափանց բյուրեղները հազվագյուտ են, բնորոշ են հողանման ագրեգատները: Փայլը մետաղի է: Բնորոշ ջրաջերմային (հիդրոթերմալ) միներալներ են, կապված են քվարց-կարբոնատային երակների հետ, հազվադեպ հանդիպում են մագմայական հնքվ-երում: Կարող են ծառայել կոբալտի, նիկելի, պղնձի, պլատինի, արծաթի, արսենի ստացման աղբյուր:
- A-233. АРСЕНОЛИТ** (արսեն և հուն. lithos – քար) – **ԱՐՍԵՆԱԼԻԹ, ՋԱՌԻԿԱՔԱՐ, ARSENOLITE**, միներալ,  $As_2O_3$ , բյուրեղները մագման են, ագրեգատները՝ հողանման, աստղածև, կեղևանման: Փայլը՝ ապակենման, մինչև մետաքսի: Հանդիպում է օքսիդացման զոնայում:
- A-234. АРСЕНОПИРИТ, МЫШЬЯКОВЫЙ КОЛЧЕДАН** (լատ. arsenicum – զառիկ, մկնդեղ և պիրիտ) – **ԱՐՍԵՆԱՊԻՐԻՏ, ՋԱՌԻԿԻ ՀՐԱՔԱՐ, ARSENOPIRITE, ARSENICAL PYRITE**, միներալ, երկաթի և զառիկի սուլֆիդ,  $FeAsS$ : Բյուրեղանում է մոնոկլինային կամ տրիկլինային համակարգում: Առաջացնում է անագասպիտակավուն, մետաղական փայլով բյուրեղներ, ճառագայթավոր կամ մանրահատիկ ագրեգատներ: Կարծրությունը՝ 5,5-6: Հանդիպում է ջրաջերմային (հիդրոթերմալ) հանքավայրերում, սկառներում և պեգմատիտներում: Ջառիկի, հազվադեպ՝ կոբալտի և ոսկու հանքանյութ է:
- A-235. АРТЕЗИАНСКАЯ ВОДА**, տե՛ս Вода артезианская:



**A-236. АРТЕЗИАНСКИЙ БАССЕЙН**, տե՛ս Бассейн артезианский:

**A-237. АРТЕЗИАНСКИЙ КОЛОДЕЦ** (Ֆրանս. Արտուա նահանգի լատ. Artesium անվանումից) – **ԱՐՏԵԶՅԱՆ ՋՐՉՈՐ**, **ARTESIAN WELL**, ուղղանկյուն կամ գլանաձև կտրվածքով ուղղաձիգ փորվածք, որը հատել է ոչ մեծ խորության (մինչև 20-30 մ) արտեզյան ջրի հորիզոն:

**A-238. АРТИКУЛЯТЫ** (Articulata) – **ԱՐՏԻԿՈՒԼՅԱՏՆԵՐ**, **ARTICULATA**, փականավոր ուստանիների դաս:

**A-239. АРТИНСКИЙ ЯРУС** (Միջին Մերձուրալի Արտինյան զավոդ քաղաքի անունից, այժմ՝ Արտի քաղաքատիպ անվան) – **ԱՐՏԻՆՅԱՆ ՋԱՐԿ**, **ARTIAN**, **ARTINSKIAN**, պերմի համակարգի ստորին բաժնի ներքևից երրորդ հարկ:

**A-240. АРХАНТРОПЫ** – **ԱՐԽԱՆՏՐՈՒՊՆԵՐ**, **ARCHAENTHROPS**, 600-ից մինչև 300 հազ. տարի առաջ գոյություն ունեցող բրածո մարդիկ: Ընդգրկում են պիտեկանտրոպները, սինանտրոպները, աուլանտրոպները, հեյդելբերգյան մարդը:

**A-241. АРХЕЙ** (հուն. archaios – նախասկզբնական, հնագույն) – **ԱՐԽԵՅ**, **ARCHEAN**, մինչքեմբրիի երկու խոշոր ստորաբաժանումներից ստորինը, վերին սահմանը մոտ 2.6 մլդ. տ. առաջ, տևողությունը ավելի քան 1,5 մլդ. տ.: Առանձնացնում են ստորին Ա. Ar<sub>1</sub> (եռարխեյ 4.0-3.6 մլդ. տ., պալեոարխեյ 3.6-3.15 մլդ. տ.) և վերին Ա. Ar<sub>2</sub> (մեզոարխեյ 3.15-2.8 մլդ. տ., նեոարխեյ 2.8-2.6 մլդ. տ.): Տարածաշրջանների մեծ մասում հիմնականում ներկայացված է ուժեղ փոխակերպված ապարներով, որոնք կազմում են հին պլատֆորմների հիմքը և ներկանում են վահաններում:

**A-242. АРХЕЙСКАЯ ГРУППА (ЭРАТЕМА)** (հուն. archaios – նախասկզբնական, հնագույն) – **ԱՐԽԵՅԱՆ ԽՈՒՄԲ (ԷՐԱՏԵՄԱ)**, **ARCHEAN GROUP**, մինչքեմբրիի ապարների ստորին հնագույն խումբն է, ներկայացված է գլխ. գրանիտակերպերով, տարբեր զննյաներով, բյուրեղային, գրաֆիտային թերթաքարերով, ամֆիբոլիթներով, ավելի քիչ՝ մարմարներով, քվարցիտներով, հազվադեպ հանդիպում են մագնետիտային բյուրեղային թերթաքարեր և քվարցիտներ (ջեսպիլիտներ): Չազվադեպ օրգանական մնացորդներ (միաբջիջ ջրիմուռներ) գտնված են հնագույն (սկսած 3 մլդ. տ. հասակից) ապարներում:

**A-243. АРХЕЙСКАЯ ЭРА (ЭОН)** – **ԱՐԽԵՅԱՆ ԴԱՐԱՇՐՁԱՆ (ԷՈՆ)**, **ARCHEAN ERA**, Երկրի երկրբ. պատմության հնագույն դարաշրջան: Արխեյան ապարների իզոտոպային ամենահին հասակը 3500-4000 մլն. տ. է, Ա. դ-ի վերջը՝ 2600 մլն տ. է:

**A-244. АРХЕЙСКИЕ СКЛАДЧАТОСТИ** – **ԱՐԽԵՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**, **ARCHEAN FOLDINGS**, Երկրի պատմության ամենավաղ (ավելի քան 2,6 մլդ. տ. առաջ) ծալքավորություններ, որոնք ուղեկցվել են ապարների խոր փոխակերպությամբ և գրանիտացմամբ: Դրանց հետ են կապված մինչհուրոնյան և մինչկարելյան ծալքավոր համակարգերը՝ Կանադական և Բալթիական վահաններում:

**A-245. АРХЕОЗОЙСКАЯ ГРУППА** (հուն. archaios – նախասկզբնական, հնագույն և zōe – կյանք) – **ԱՐԽԵՈՉՈՅԱՆ ԽՈՒՄԲ**, **ARCHEOZOIC GROUP**, նույնն է՝ Архейская группа:

**A-246. АРХЕОПТЕРИКС** (Archaepteryx) (հուն. archaios – հնագույն և ptéryx – թռչուն) – **ԱՐԽԵՈՊՏԵՐԻՔՍ**, **ՅԱԹՈՉՈՒՆ**, **ARCHAEOPTERIX**, հայտնի թռչուններից հնագույնը: Մարմինը (աղավնու չափ) ծածկված է եղել փետուրներով, ծնոտներն ունեցել են կոնաձև ատամներ, գրավում է միջանկյալ դիրք սողունների և թռչունների միջև: Մնացորդները գտնվել են Բավարիայի (ԳՖՂ) յուրայի ապարներում:

**A-247. АРХЕОЦИАТЫ** (Archaeocyathi) (հուն. archaios – հնագույն և cyatos – գավաթ) – **ԱՐԽԵՈՑԻԱՏՆԵՐ**, **ARCHAEOCYATHIDS**, անողնաշարավոր կենդանի-

ների հնագույն մահացած տիպ, եղել են անհատ և գաղութային օրգանիզմներ՝ կրային ծակոտկեն կմախքով, ապրել են վաղ քեմբրիի ծովերում:

- A-248. АРХИПЕЛАГ** (իտալ. Arcipelago – սկզբում էգեյան ծովի անվանումը, հուն. Aigáion pélegos – էգեյան ծով, սխալմամբ կարողալով որպես archipelagos) – **ԱՐՇԻ-ՊԵԼԱԳ, ԿՂՋԵՆՈՒՄԲ, ARCHIPELAGO**, միմյանց մոտ տեղաբաշխված կղզիների խումբ, հաճախ ունեն միևնույն հիմքը և դիտարկվում են որպես մի ամբողջություն: Միևնույն արշիպելագի կղզիներն ունեն միատեսակ ծագում և նման երկրք. կառուցվածք: Տարբերում են մայրցամաքային, բուստային և հրաբխային ծագման Ա-ներ.:
- A-249. АРХОЗАВРЫ** (Archosauria) – **ԱՐԽՈՋԱՎՐԵՐ, ARCHOSAURS**, սողունների դասին պատկանող ենթադաս, ընդգրկում է դինոզավրերը, թևավոր մողեսները, կոկորդիլոսները:
- A-250. АСБЕСТ, ГОРНЫЙ ЛЁН** – (հուն. ásbestos – անմարելի) – **ԱՍԲԵՍ (ԱՆԿԻՉԱՔԱՐ, ԼԵՌՆԱՅԻՆ ՎՈՒՇ, ԿՏԱՎԱՔԱՐ), ASBESTOS, ASBESTINITE, EARTH FLAX, MOUNTAIN FLAX**, սիլիկատների դասի (սերպենտինի և ամֆիբոլի խմբերի) մուրք թելավոր միներալներ: Ըստ միներալային հատկանիշների և բյուրեղային կառուցվածքի՝ տարբերում են քրիզոտիլ-ասբեստ և ամֆիբոլ-ասբեստ: Արդյ. ամենամեծ նշանակություն ունի քրիզոտիլ-ասբեստը (95 %) (սերպենտինիտի թելավոր տարատեսակը), որն առաջանում է գերհիմքային ապարների ջրաջերմային (հիդրոթերմալ) փոփոխության հետևանքով: Հանդիպում է երակների տեսքով: Ասբեստի թելերը ճկուն, հրակայուն, թթվակայուն են, ունեն էլեկտրա- և ջերմամեկուսիչ հատկություններ:
- A-251. АСБЕСТ АМФИБОЛОВЫЙ** – **ԱՄՖԻԲՈԼԱՅԻՆ ԱՍԲԵՍ (ԱՆԿԻՉԱՔԱՐ, ԿՏԱՎԱՔԱՐ)**, հոմ. Амфибол-асбест:
- A-252. АСБЕСТ ХРИЗОТИЛОВЫЙ** – **ՔՐԻՉՈՏԻԼԱՅԻՆ ԱՍԲԵՍ (ԱՆԿԻՉԱՔԱՐ, ԿՏԱՎԱՔԱՐ)**, հոմ. Хризотил-асбест:
- A-253. АСИММЕТРИЧНАЯ ДОЛИНА** – **ԱՆՀԱՄԱՉԱՓ ՀՈՎԻՏ, ASYMMETRICAL VALLEY**, գետահովիտ, որի լանջերից մեկը գառնիթափ և կարճ է, իսկ մյուսը՝ մեղմաթեք ու երկար, կամ մեկ լանջը ուղիղ է, իսկ մյուսը՝ աստիճանավոր:
- A-254. АСИММЕТРИЧНАЯ СКЛАДКА** – **ԱՆՀԱՄԱՉԱՓ ԾԱԼՔ, UNSYMMETRICAL FOLD, ASYMMETRICAL FOLD**, ապարների շերտերի ծռվածք (ծալ), որի թևերը անկում են տարբեր անկյան տակ՝ մեկ թևը մեղմաթեք է, մյուսը՝ գառնիթափ:
- A-255. АСИММЕТРИЯ РЕЛЬЕФА** (հուն. asymmetria – անհամաչափություն) – **ՌԵԼԻԵՖԻ ԱՆՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ, ASYMMETRY OF RELIEF**, գետահովիտ, լեռնաշղթա, բլրաշար և ռելիեֆի այլ ձևեր, որոնք ունեն լանջերի տարբեր թեքություն ու երկարություն:
- A-256. АССЕЛЬСКИЙ ЯРУС** (Հր. Ուրալի Ասել գետի անունից) – **ԱՍԵԼՅԱՆ ՀԱՐԿ, ASSELIAN**, պերմի համակարգի ստորին բաժնի ստորին հարկ:
- A-257. АССИМИЛЯЦИЯ** (լատ. assimilatio – յուրացում, միաձուլում) – **ՅՈՒՐԱՅՈՒՄ, ԱՍԻՄԻԼԱՅՈՒՄ, ASSIMILATION**, ներդրվող մագմայի կողմից ներփակող (կողալի) ապարների նյութի զավթման, վերահալման և հետագա լրիվ յուրացման գործընթաց՝ առանց կլանված ապարների մնացուկների պահպանման:
- A-258. АССИНТСКАЯ СКЛАДЧАТОСТЬ** (Շոտլանդիայի Ասինթ, Assynt, գավառի անունից) – **ԱՍԻՆԹՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ASSYNTIC FOLDING**, Արմ. Եվրոպայում առանձնացված միջքեմբրիի վերջին ծալքավորություն, տե՛ս Байкальская складчатость:

**A-259. АССОЦИАЦИЯ МИНЕРАЛЬНАЯ** (լատ. *associatio* – միացում) – **ՄԻՆԵՐԱԼՆԵՐԻ ԽՄՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՉՈՒԳՈՐԴՈՒՄ, ԱՍՈՑԻԱՑԻԱ), ASSOCIATION OF MINERALS**, միներալացման մի փուլում առաջացած միներալների խմբակցություն, որն իրենից ներկայացնում է մի փուլի միներալային արդյունքը՝ մեկ կամ մի քանի պարագետնետիկ խմբակցությունների տեսքով և արտացոլում է փուլի ամբողջական նյութական արտահայտությունը:

**A-260. АСТЕНОСФЕРА** (հուն. *asthenēs* – թույլ և *sphaira* – գունդ) – **ԱՍԹԵՆՈՍՖԵՐԱ, ԹՈՒՅԼՈՒՈՐՏ, ASTENOSPHERE**, Երկրի վերին միջնապատյանի ցածրացված մածուցիկության շերտ: Ա-ի առաստաղը մայր ցամաքների տակ 80-100 կմ, օվկիանոսների տակ՝ 5-70 կմ է, իսկ հատակը 250-300 կմ խորություններում է: Երկրֆ. տվյալներով առանձնացվում է որպես լայնակի երկրաշարժական ալիքների ցածրացված արագության շերտ: Բնորոշվում է բարձր ջերմաստիճանով, որը հանգեցնում է բազալտային մագմայի մասնակի հալման: Ենթադրվում է, որ Ա-ում տեղի է ունենում նյութի հոսքաշարժ, որը հարուցում է քարոլորտի սալերի հորիզոնական ու ուղղաձիգ տեկտոնական շարժումներ: Ա-ից երկրակեղև թափանցող ֆլյուիդները և մագման մասնակցում են օգտ. հնձ-ների հանքակուտակների ձևավորմանը:

**A-261. АСТИЙСКИЙ ЯРУС** (Պիեմոնտի մարզի Աստի գյուղի անունից, Իտալ) – **ԱՍՏԻՅԱՆ ՅԱՐՎ, ASTIAN**, Արմ. Միջերկրածովյան մարզի պլիոցենի վերին հարկ:

**A-262. АСТРОФИЛЛИТ** (հուն. *ástron* – աստղ և *phýllon* – թերթ) – **ԱՍՏՐՈՖԻԼԻՏ, ASTROPHYLLITE**, ապարակազմիչ միներալ, տիտանացիրկոնային սիլիկատ, բյուրեղները նուրբ ասեղնավոր և նուրբ թերթավոր են, առաջացնում են սֆերուլիթներ, աստղակերպ, խառը թելավոր ագրեգատներ: Գույնը՝ ոսկեգորշ, բրոնզադեղին, ոսկեդեղին: Նեֆելինային սիենիտներին ու պեգմատիտներին բնորոշ միներալ է:

**A-263. АСФАЛТЫ ПРИРОДНЫЕ** (հուն. *ásphaltos* – լեռնային ձյուղ) – **ԲՆԱԿԱՆ ԱՍՖԱԼՏՆԵՐ (ԳԵՏՆԱԶՅՈՒԹԵՐ), ASPHALTS**, համարյա սև, պինդ կամ մածուցիկ դյուրահալ բիտումներ: Առաջանում են որոշ նավթերի (քարյուղ) օքսիդացման ու թեթև ֆրակցիաների գոլորշիացման հետևանքով: Օքսիդացած ածխաջրածինների խառնուրդ են, լցնում են ավազաքարերի ծակոտիները, ճեղքվածքները, կրաքարերի խռռչները, երբեմն խոշոր նավթային լճերի մակերեսում առաջացնում են հաստ կեղև:

**A-264. АСФАЛЬТЕНЫ – ԱՍՖԱԼՏՆԵՐ, ASPHALTENES**, ասֆալտների, ասֆալտիտների, նավթերի (քարյուղ), բիտումակերպերի, ապարների ցրված օրգանական նյութերի ասֆալտախեժային (ասֆալտածյութային) թթվածնային բաղադրամասեր:

**A-265. АСФАЛЬТИТЫ – ԱՍՖԱԼՏԻՏՆԵՐ, ASPHALTITES**, բնական պինդ բիտումների (հանքածյութեր) խմբերից են, առաջանում են Երկրի մակերևույթում կամ փոքր խորություններում՝ նավթի (քարյուղ) փոփոխության հետևանքով: Հանդիպում են երակների և շերտային կուտակների տեսքով:

**A-266. АСФАЛЬТОВЫЕ ПОРОДЫ – ԱՍՖԱԼՏԱՅԻՆ (ԳԵՏՆԱԶՅՈՒԹԱՅԻՆ) ԱՊԱՐՆԵՐ, ASPHALTIC ROCKS**, բնական գոյացուկներ, առավելապես ավազաքարեր, կրաքարեր, դոլոմիտներ, որոնց ծակոտիներում, ճեղքվածքներում, խռռչներում պարփակված է ասֆալտ: Առաջանում են նավթի (քարյուղ) հողմահարման հաշվին:

**A-267. АТЛАНТИЧЕСКИЙ СКЛАДЧАТЫЙ ОРОГЕННЫЙ ПОЯС – ԱՏԼԱՆՏԱՆ ԾԱԼՔԱՇՈՐ ԼԵՌՆԱԳՈՅԱՑՄԱՆ ԳՈՏԻ, ATLANTIC FOLDED OROGENIC BELT**, ուշ մինչքենբրիյան-պալեոզոյան շարժուն գոտի, որը եզրակալում է Ատլանտյան օվ-

կիանոսը: Գոտու արմ. մասին պատկանում են Արլ. Գրենլանդիայի, Նյուֆաունդլենդի, Հս. Ապալաչների կալեդոնիտները, Հր. Ապալաչների, Մեքսիկական ծոցի եզրի հերցինիտները, հս. մասին՝ Բրիտանիայի, Սկանդինավիայի և Շպիցբերգենի կալեդոնիտները: Գոտու ներդրումը տեղի է ունեցել ուշ պրոտերոզոյում (մոտ 1 մլդ. տ. առաջ), որն ուղեկցվել է Եվրասիայից Հս. Ամերիկյան մայր ցամաքի պոկմամբ և խոր օվկիանոսային կեղևով ավազանի առաջացմամբ: Օրդովիկի վերջում, սիլուրում, դևոնի սկզբում և ուշ պալեոզոյում տեղի է ունեցել նստվածքների ձևախախտում և վերը նշված ծալքավոր կառույցների գոյացում (յուրայում):

**A-268. АТЛАНТРОП (ATLANTHROPUS MAURITANICUS) – ԱՏԼԱՆՏՐՈՊ**, արխանտրոպներին պատկանող բրածո մարդ, տե՛ս Архантропы:

**A-269. АТЛАСЫ ГЕОГРАФИЧЕСКИЕ – ԱՇՆԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐԵՐ (ՊԱՏԿԵՐԱԳՐԵՐ, ԱՏԼԱՍՆԵՐ), ATLASES**, աշխ. քարտեզների հավաքածու՝ միավորված ըստ նշանակության, մաթեմատիկական հիմքի, բովանդակության և ձևավորման՝ մի միասնական քարտեզագրական լրակազմում:

**A-270. АТМОСФЕРА** (հուն. átos – գոլորշի և spháira – գունդ) – **ՄՁՆՈՒՈՐՏ, ATMOSPHERE**, Երկրի օդային թաղանթ, որը կապված է ծանրության ուժով և մասնակցում է օրական և տարեկան պտտմանը: Մ-ի օդը գազերի (հիմնականում ազոտ, թթվածին և արգոն) մեխ. խառնուրդ է, ներառում է ջրի կախյալ կաթիլներ, սառցի մասնիկներ, փոշի և այլն:

**A-271. АТМОСФЕРНОЕ ДАВЛЕНИЕ – ՄՁՆՈՒՈՐՏԱՅԻՆ ԾՆՇՈՒՄ, ATMOSPHERIC PRESSURE**, մթնոլորտի ճնշումն իր մեջ գտնվող բոլոր առարկաների և Երկրի մակերևույթի վրա: Որոշվում է միավոր հիմք ունեցող կետում օդի սյան զանգվածով: Ծովի մակերևույթում 0°-մ և 45° լայնությունում ընդունվում է սնդիկի սյան 760 մմ բարձրությունը: Բարձրությունը մեծանալիս ճնշումը փոքրանում է:

**A-272. АТМОСФЕРНЫЕ ОСАДКИ – ՄՁՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ, PRECIPITATIONS**, կաթիլաձեղուկ (անձրև) և պինդ (ծյուն, կարկուտ) վիճակում ջուր, որը թափվում է ամպերից կամ նստում է Երկրի մակերևույթի ու առարկաների վրա (ցող, եղյամ, մերկասառույց)՝ օդում գտնվող ջրային գոլորշիների խտացման հետևանքով:

**A-273. АТОЛЛ** (մալդիվերեն atolu – ներփակ) – **ՕՂԱԿՂԶԻ, ԱՏՈՒ, ATOLL, LAGOON ISLAND**, օղակաձև, ներփակ կամ կիսաբաց բուստային (կորալային) կառույց, որը փակվում է ծովալճակը (լագունան): Օվկիանոսի հատակում հիմք է հանդիսանում հրաբխային բարձրացումը: Առաջանում են բուստերի, կրային ջրիմուռների, մամռակերպերի կենսագործունեության հետևանքով:

**A-274. АУРИПИГМЕНТ** (լատ. aurum – ոսկի և pigmentum – ներկ, գունանյութ) – **ԱՈՒՐԻՊԻԳՄԵՆՏ, ՈՍԿԵԳՈՒՆԱԿ, AURIPIGMENTUM**, միներալ, զառիկի սուլֆիդ, As<sub>2</sub>S<sub>3</sub>: Բյուրեղանում է մոնոկլինային համակարգում: Առաջացնում է ոսկեդեղին և կիտրոնադեղին բյուրեղային ագրեգատներ, սֆերուլիթներ, կեղևներ, հողանման զանգվածներ: Կարծրությունը՝ 1,5-2: Հանդիպում է ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվերում ռեալգարի հետ, տաք աղբյուրների նստվածքներում, հրաբուխների ցմրանյութերում: Ձառիկի հանքանյութ է, դեղին գույնի հումք:

**A-275. АУТИГЕННЫЕ МИНЕРАЛЫ** (հուն. authigenés – տեղային ծագման) – **ՏԵՂԱԾԻՆ (ԱՈՒՏԻԳԵՆ) ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, AUTHIGENIC MINERALS**, նստվածքային ապարների միներալներ, որոնք առաջանում են նստվածքակուտակման վայրում՝ նստվածքակուտակման և քարագոյացման գործընթացում: Օր՝ բարիտ, ցեոլիթներ, որոշ կավային միներալներ:

- A-276. АФАНИТ – ԱՖԱՆԻՏ, ARHANITE**, մանրահատիկ ապար, որում առանձին միներալները անգեմ աչքով աննկատելի են:
- A-277. АФАНИТОВАЯ СТРУКТУРА – ԱՖԱՆԻՏԱՅԻՆ (ՆՐՔԱՅԱՏԻԿԱՎՈՐ) ԿԱՌՈՒՑ-ՎԱԾՔ, ARHANITIC TEXTURE**, գլխ. հրաբխային ապարներ, որոնք ունեն ակնադիտորեն նրբահատիկավոր համասեռ կառուցվածք:
- A-278. АФАНИТОВЫЕ ИЗВЕСТНЯКИ – ԱՖԱՆԻՏԱՅԻՆ (ՆՐՔԱՅԱՏԻԿԱՎՈՐ) ԿՐԱՔԱՐԵՐ, ARHANITIC LIMESTONES**, համասեռ նրբահատիկ կրաքարեր:
- A-279. АФИРОВАЯ СТРУКТУРА – ԱՖԻՐԱՅԻՆ (ՆՐՔԱՔՅՈՒՐԵՂԱՎՈՐ) ԿԱՌՈՒՑ-ՎԱԾՔ, ARHYRIC TEXTURE**, հրային պորֆիրային ապարների կառուցվածք, որում պարզ տեսանելի բյուրեղները բացակայում են:
- A-280. АФТЕРШОКИ** (անգլ. եզ. aftershock) – **ԱՖՏԵՐՇՈԿԵՐ (ՅԵՏՅԱՐՎԱԾՆԵՐ, ՅԵՏՅՆՏՈՒՄՆԵՐ), AFTERSHOCKS**, ծագումնաբանորեն երկրաշարժի հետ կապված և նրան հաջորդող ստր. ցնցումներ: Ա-ի քանակը մեծանում է երկրաշարժի էներգիայի աճման, օջախի խորության փոքրացմանը զուգընթաց և կարող է հասնել մի քանի հազարի: Յետցնցումների մագնիտուդը միջին հաշվով 1-2-ով փոքր է երկրաշարժի մագնիտուդից: Դրանց ներքնակենտրոնները ուրվագծում են օջախի մարզը:
- A-281. АШГИЛСКИЙ ЯРУС, АШГИЛЛИЙ** (Լանկաշիրի Աշգիլ, Ashgyill տեղանքի անունից, Մեծ Բրիտանիա) – **ԱՇԳԻԼՅԱՆ ՅԱՐԿ, ԱՇԳԻԼ, ASHGILLIAN**, օրդովիկի համակարգի վերին հարկ:
- A-282. АШЕЛЬ** (Սենտ-Աշյոլ, Saint-Acheul, տեղանքի անունից, Յր. Ֆրանս.) – **ԱՇԵԼ, ACHEULIAN**, վաղ պալեոլիթի (հին քարի դարի) հնագիտական մշակույթ, ունի լայն տարածում գլխ. Արմ. Եվրոպայում և Աֆրիկայում: Ընդգրկել է երկարատև ժամանակաշրջան՝ էոպլեյստոցենից մինչև վերին պլեյստոցենի սկիզբը: Ա-ում մարդիկ ապրել են քարանձավներում, բացօթյա, օգտվել են կրակից, զբաղվել են որսով և հավաքչությամբ:
- A-283. АЭРАЦИЯ** (հուն. αἴρ – օդ) – **ՕԴԱՎՈՐՈՒՄ, ԱԵՐԱՑԻԱ, AERATION**, կառավարելի օդափոխություն կամ հեղուկների հագեցում օդով:
- A-284. АЭРАЦИЯ ВОДЫ – ՋՐԻ ՕԴԱՎՈՐՈՒՄ, WATER AERATION**, օդի (թթվածնի) ներգործությամբ խմելու և հանքային ջրերը որոշ կախված նյութերից, լուծված և օրգանական նյութերից մաքրելու մեթոդ:
- A-285. АЭРАЦИЯ ПОТОКА – ՅՈՍՔԻ (ՋՐՅՈՍՔԻ) ՕԴԱՎՈՐՈՒՄ, STREAM AERATION**, հոսող ջրի օդով հագեցում, որը տեղի է ունենում ջրհոսքի մեծ արագությունների, մասնավորապես մրրկային (տուրբուլենտ) շարժման ժամանակ:
- A-286. АЭРАЦИЯ ПОЧВЫ – ՅՈՂԻ ՕԴԱՎՈՐՈՒՄ, SOIL AERATION**, հողային օդի գազափոխանակում մթնոլորտայինի հետ:
- A-287. АЭРОБНЫЕ ОРГАНИЗМЫ** (հուն. αἴρ – օդ և biós – կյանք) – **ՕԴԱՎՅԱՑ (ՕԴԱՎԵՑԻԿ, ԱԵՐՈՔ) ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐ, AEROBIC ORGANISMS**, օրգանիզմներ, որոնք կարող են գոյություն ունենալ միայն ազատ թթվածնի առկայության պայմաններում: Դրանց են պատկանում համարյա բոլոր կենդանիներն ու բույսերը, ինչպես նաև շատ մանրէներ:
- A-288. АЭРОГАММАСЪЁМКА – ՕԴԱՎԱՍՄԱՅԱՆՈՒՅԹ, AERIAL GAMMA-RAY SURVEY**, ապարների գամմա ճառագայթման ուժգնությունն օդից չափելու մեթոդ: Կիրառվում է օգտ. հնձ-ների հնքվ-երի որոնման և երկրաբանական քարտեզագրման համար: Օ-ի էությունը հետևյալն է. բազմականալ սպեկտրաչափի օգնությամբ չափվում է գամմա ճառագայթման դաշտի ուժգնությունը հիմնա-

կան իզոտոպների բնորոշ գծերով (ուրանի, թորիումի ճառագայթաակտիվ շարքեր, կալիում-40): Ուժգնությունը սպեկտրի յուրաքանչյուր տեղամասում կախված է ապարում ճառագայթաակտիվ տարրերի պարունակությունից, դրանց լուսապսակի տարածքից, ոչ ճառագայթաակտիվ փուխր ապարների հաստությունից, թռիչքի բարձրությունից, օդում ռադոնի պարունակությունից, ինչպես նաև օդանավի ճառագայթաակտիվ ադտոտությունից և տիեզերական ճառագայթումից:

**A-289. АЭРОГЕОФИЗИЧЕСКАЯ РАЗВЕДКА, АЭРОГЕОФИЗИЧЕСКАЯ СЪЁМКА – ՕԴԱԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ, ՕԴԱԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹ, AEROGEOPHYSICAL EXPLORATION, AEROGEOPHYSICAL SURVEY,**

Երկրի բնական կամ արհեստականորեն հարուցած ֆիզ. դաշտերի չափման մեթոդների համախումբ այնպիսի սարքավորումներով, որոնք գտնվում են օդանավերում կամ ուղղաթիռներում (օդագամմահանույթ, օդամագնիսական հանույթ, օդաէլեկտրահետախուզություն և այլն): Օ. հ. կիրառվում է օգտ. հնձ-ների հնքվ-երի որոնման (նավթի, գազի, գունավոր մետաղների, ճառագայթաակտիվ հանքանյութերի), ինչպես նաև տեկտ. շրջանացման և երկրբ. քարտեզագրման համար: Օ. հ. կատարվում է համեմատաբար ոչ մեծ բարձրություններում (30-300 մ), քանի որ Երկրի մակերևույթից հեռանալիս ֆիզ. դաշտերի ուժգնությունը նվազում է:

**A-290. АЭРОЛИТ** (հուն. *aēr* – օդ և *lithos* – քար) – **ՕԿԱՔԱՐ, ԱՍՈՒՊ, AEROLITE,** նույնն է՝ **Каменный метеорит:**

**A-291. АЭРОЛОГИЯ** (հուն. *aēr* – օդ և *logos* – գիտություն, ուսմունք) – **ՕԿԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱԵՐՈԼՈԳԻԱ, AEROLOGY,** գիտություն ազատ մթնոլորտում [տրոպոսֆերայում (ներքնոլորտում), ստրատոսֆերայում (վերնոլորտում)] տեղի ունեցող ֆիզ. գործընթացների ուսումնասիրման մեթոդների մասին:

**A-292. АЭРОМАГНИТНАЯ СЪЁМКА – ՕԿԱՍԱԳՆԻՍԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹ, AEROMAGNETIC SURVEY,** երկրամագնիսական դաշտի լարվածության չափման մեթոդ՝ օդանավից կամ ուղղաթիռից: Կատարվում է տեկտ. շրջանացման, երկրբ. քարտեզագրման, օգտ. հնձ-ների հնքվ-երի որոնման համար: Հանույթի համար կիրառվում են պրոտոնային և քվանտային օդամագնիսաչափերը (տե՛ս Магнитометр): Օ. հ. կատարվում է Երկրի մակերևույթից կամ ծովից կայուն բարձրության վրա՝ զուգահեռ երթուղիների ցանցով:

**A-293. АЭРОМЕТОДЫ – ՕԿԱՍԵԹՈՂՆԵՐ, METHODS OF AERIAL MAPPING,** թռչող ապարատներից Երկրի աշխ. թաղանթի և նրան բնորոշ երևույթների, բնական և մշակութային բնապատկերի ուսումնասիրման մեթոդների համախումբ: Ընդգրկում է տեղանքի օդահանույթը, օդանկարների վերծանումը և համապատասխան չափումները, որոնք կատարվում են լուսանկարչական եղանակով, նույնն է՝ **Дистанционные методы:**

**A-294. АЭРОСЪЁМКА** (հուն. *aēr* – օդ) – **ՕԿԱՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ, ՕԿԱՀԱՆՈՒՅԹ, AERIAL MAPPING,** օդանավից կամ այլ թռչող ապարատներից Երկրի մակերևույթի օբյեկտների հեռավորական հետազոտման մեթոդ՝ էլեկտրամագնիսական ալիքների սպեկտրի տարբեր մասերի նկարահանման միջոցով: Նախկինում իրագործվում էր լուսանկարչական մեթոդներով (օդալուսանկարահանում), այժմ ընդգրկում է նաև լուսանկարաէլեկտրոնային հանույթը, որը կիրառվում է սպեկտրի այն մասերում, որոնք ենթակա չեն անմիջական նկարահանման գերնրբազգայուն նյութերում: Օ. երկրբ-ում կիրառվում է քարտեզագրության և օգտ. հնձ-ների որոնման, մակերևույթի կառուցվածքային տարրերի բացահայտման, բացահանքերի

մշակման հատակագիծ կազմելու համար:

**A-295. АЭРОФОТОСЪЁМКА** (հուն. *aēr* – օդ) – **ՕՂԱԼՈՒՄԱՆԿԱՐԱՅԱՆՈՒՄ, AERIAL PHOTOGRAPHY**, օդանավից կամ այլ թռչող ապարատներից երկրի մակերևույթի ուսումնասիրման հեռավորական մեթոդ՝ տարբեր մարզերի օպտիկական սպեկտրի լուսանկարահանման միջոցով: Օ. կատարվում է հատուկ օդալուսանկարչական ապարատի օգնությամբ՝ օպտիկական առանցքի առաջադրված ուղղաձիգ (հատակագծային Օ.) կամ թեք (հեռանկարային Օ.) դիրքում: Տեղամասի համատարած լուսանկարչական պատկերում ստանալու համար Օ. կատարվում է ուղղագիծ զուգահեռ երթուղիներով, մասամբ ծածկելով մի երթուղու հարևան լուսանկարները (երկայնական ծածկում), կամ հարակից երթուղիները (լայնական ծածկում): Արդյունքներն օգտագործվում են բաց հանքարանների հատակագծեր, համալիր հողամշակման ծրագրեր կազմելու համար, երկրբ. քարտեզագրությունում, մերձափնյա շէլֆի զոնայի հետազոտման ժամանակ, ճարտարագիտաերկրաբանական ուսումնասիրություններում և այլն:

**A-296. АЭРОЭЛЕКТРОРАЗВЕДКА – ՕՂԱԼԵԿՏՐԱՅԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ, AERO-ELECTRIC PROSPECTING**, օդաերկրֆ. հետախուզության մեթոդներից մեկն է, հիմնված է օդանավում կամ ուղղաթիռում տեղադրված ապարատների օգնությամբ՝ բնական կամ արհեստականորեն ստեղծված էլեկտրամագնիսական դաշտերի ուսումնասիրման վրա: Ապարատուրայի օգնությամբ չափվում է առաջնային էլեկտրամագնիսական դաշտը և նրա կողմից երկրակեղևում ինդուկցված մրրկային հոսքերի երկրորդային մագնիսական դաշտը, որը էլեկտրահաղորդիչ կամ բարձրամագնիսական ապարներում (օր.՝ հանքային մարմիններում) ստացվում է անբնականոն: Այդ դաշտի բնութագրի գրանցումը հնարավորություն է տալիս հետազոտելու երկրակեղևում անբնականոնություն առաջացնող օբյեկտների դիրքը և պարամետրերը: Օ. օգտագործվում է երկրբ. քարտեզագրությունում և մի քանի տասնյակ մետր խորությունում տեղադրված լավ հաղորդիչ հանքանյութերի որոնման համար: Անցողիկ գործընթացների մեթոդը հնարավորություն է տալիս հետազոտելու մեծ խորությունները: Օ. հիմնականում կիրառում է փոքրամասշտաբ (1:1000 000 – 1:200 000) քարտեզագրական աշխատանքներում, մետաղական հանքավայրերի որոնման դեպքում՝ 1:25 000-1:50 000 մասշտաբներում, հազվադեպ՝ մանրամասն որոնման փուլում (1:10 000):

## Б

- Б-1. БАДДЕЛЕИТ** (Ջ. Բեդլիի, J. Baddley անունից, բերել է առաջին նմուշները) – **ՔԱՂԵԼԵԻԹ, BADDELEYITE**, միներալ պարզ օքսիդների ենթադասից,  $ZrO_2$ , բյուրեղանուն է մոնոկլինային համակարգում, բյուրեղները՝ կարճ կամ երկար հատվածակողմային, սեղմված, հազվադեպ՝ սալիկաձև: Գույնը՝ շագանակագույն, հաճախ՝ բժավոր մուգ գորշից մինչև դեղնավուն գորշ: Հանդիպում է մագնետիտ-պիրոքսենային, մագնետիտ-ֆորստերիտ-ապատիտային ապարներում և կարբոնատիտներում: Գնահատելի միներալային հումք է, օգտագործվում է հրակայուն նյութերի, հղկանյութերի, ֆեռոհամահավածքների արտադրությունում և մետաղական ցիրկոնիում ստանալու համար:
- Б-2. БАДЬЯ – ԿՈՆՔ, ՔԱՂՅԱ, HOIST BUCKET, SINKING BUCKET**, հորաններ ու հետախուզահորեր անցկացնելիս ապարը դուրս հանելու ու բարձրացնելու աման:
- Б-3. БАЗАЛЬНАЯ ЗОНА ГОР – ԼԵՆՆԵՐԻ ՀԻՄՔԱՅԻ ԶՈՆԱ, BASAL ZONE OF MOUNTAINS**, լեռների լանջերի ստորին մաս, որտեղ տեղի է ունենում լեռների քայքայված փուխր նյութերի կուտակումը (արտաբերման կոներ, քարաթափվածք և այլն):
- Б-4. БАЗАЛЬНЫЙ КОНГЛОМЕРАТ – ՀԻՄՔԱՅԻՆ (ՀԻՄՔԻ) ԽԱՈՆԱՔԱՐ (ՔԱՐԱԽԱՈՆՈՒՐ, ԿՈՆԳԼՈՍԵՐԱՏ), BASAL CONGLOMERATE**, խառնաքարի (կոնգլոմերատի) շերտ նստվածքային ստվարաշերտի (շերտախմբի) հիմքում, որն ավելի հիմ ապարների վրա տեղադրված է անկյունային կամ զուգահեռ աններդաշնակությամբ: Վկայում է ցամաքի քայքայման գործընթացի մասին՝ նրա վրա ծովի սկսվող առաջընթացի (ծովարշավի) դեպքում (նստվածքակուտակման նոր փուլի մասին):
- Б-5. БАЗАЛЫТ** (լատ. basalt, հուն. básanos-ից – փորձաքար, մեկ այլ մեկնաբանմամբ՝ եթովպական basal բառից – երկաթապարունակ քար) – **ՔԱՉԱԼՏ, ՍԵՎԱԿՈՒԹ, BASALT, BASALTIC ROCKS**, արտաժայթքային նորատիպ հիմքային ապար, գաբրոյի հրաբխավիժական նմանակ: Գույնը՝ մուգ մինչև սև: Բաղկացած է գլխ. հիմքային պլագիոկլազից, մոնոկլինային պիրոքսենից, օլիվինից, հրաբխային ապակուց և ուղեկից (ակցեսորային) միներալներից (մագնետիտ, իլմենիտ, ապատիտ և այլն): Ըստ հատիկների մեծության տարբերում են՝ խոշորահատիկավոր՝ դոլերիտ, մանրահատիկավոր՝ անամեզիտ, նրբահատիկավոր՝ բուն բազալտ: Հնատիպ նմանակը դիաբազներն են: Բնորոշ են տեղադրման ծածկույթները, հոսքերը, դայկաները, շերտանման մարմինները: Առաջացնում է լայնարձակ բազալտային սարավանդներ (օր՝ Դեկանի սարահարթի տրապները), ծածկում է օվկիանոսի հատակի հսկայական տարածքներ: Բ-ին բնորոշ են սյունաձև, հազվադեպ՝ գնդանման անջատությունները: Բարձր ամրությունը, հալման համեմատաբար ցածր ջերմաստիճանը պայմանավորում են Բ-ի կիրառումը որպես շինարարական քար և ծովածքի հումք:



**Б-6. БАЗАЛЬТОВАЯ ЛАВА**, տե՛ս Лава базальтовая:

**Б-7. БАЗАЛЬТОВАЯ МАГМА**, տե՛ս Магма базальтовая:

**Б-8. БАЗАЛЬТОВЫЙ СЛОЙ – ԲԱԶԱԼՏԱՅԻՆ ՇԵՐՏ, BASALTIC LAYER OF THE EARTH'S CRUST**, երկրակեղևի ստորին շերտ՝ տեղաբաշխված գրանիտային շերտի և երկրի վերին միջնապատյանի միջև: Կազմված է հիմքային կազմի մագմայական և ուժեղ փոխակերպված ապարներից, ինչպես նաև գրանուլիթներից: Ապարների խտությունը 2.7-2.9 գ/սմ<sup>3</sup>: Երկրաշարժական երկայնակի ալիքների տարածման արագությունը 6.0-7.6 կմ/վրկ:

**Б-9. БАЗАЛЬТОИДЫ – ԲԱԶԱԼՏԱՎԵՐՊԵՐ, BASALTOIDS**, բազալտներին ազգակից կամ կազմով մոտ ապարների ընդհանուր անվանումը:

**Б-10. БАЗИС** (հուն. basis – հիմք) – **ՅԻՄՔ, ՅԻՄՆԱՍՍԱՎԱՐՈՎԱԿ, BASE**, երկրաբաշխությունում գիծ, որի երկարությունը տեղանքում չափվում է մեծ ճշտությամբ:

**Б-11. БАЗИС АККУМУЛЯЦИИ** (հուն. basis – հիմք, հիմնամակարդակ) – **ԿՈՒՏԱԿՄԱՆ ՅԻՄՆԱՍՍԱՎԱՐՈՎԱԿ, BASE LEVEL OF ACCUMULATION**, կետ, որից բարձր կուտակում չի կարող տեղի ունենալ և փոխարինվում է լերկացմամբ: Կ. հ-ով անցնող հորիզոնական հարթությունը կոչվում է Կ. հ-ի մակերևույթ: Այդ մակերևույթում տեղի է ունենում ռելիեֆի համահարթում և կուտակման հարթությունների առաջացում: Տարբերում են ստորջրյա և ցամաքային Կ. հ.:

**Б-12. БАЗИС ДЕНУДАЦИИ – ԼԵՐԿԱՑՄԱՆ (ՂԵՆՈՒՂԱՑԻԱՅԻ) ՅԻՄՆԱՍՍԱՎԱՐՈՎԱԿ, BASE LEVEL OF DENUDATION**, տվյալ վայրում լերկացման գործընթացների արտահայտման ստորին սահման: Յամենատաբար մեղմաթեք լանջ, ջրհոսքի կամ ջրավազանի մակարդակ՝ մինչև ուր կարող են լանջից տեղափոխվել հողմահարման արդյունքները, հովտի հատակը և այլն: Լ. հ-ի հետ կապված է լանջի վերին մասից տեղափոխվող նյութի կուտակումը:

**Б-13. БАЗИС ОПОЛЗНЯ – ՍՈՂԱՆՔԻ ՅԻՄՔ, BASE LEVEL OF LANDSLIDE**, սողանքի սահքի հարթության ստորին սահման, որը համընկնում է լանջի (արհեստական թեքության) հիմքի հետ և պայմանավորված է սողանքային գործընթացին դիմադրող գործոնների ազդեցությամբ:

**Б-14. БАЗИС ЭРОЗИИ – ՈՂՈՂԱՄԱՇՄԱՆ (ԵՐՈՋԻԱՅԻ, ՈՂՈՂԱՅԱՆՄԱՆ) ՅԻՄՆԱՍՍԱՎԱՐՈՎԱԿ, BASE LEVEL OF EROSION**, մակերևույթ, որի մակարդակում ջրհոսքը (գետ, գետակ) կորցնում է իր կենդանի ուժը և որից ներքև չի կարող խորացնել իր հատակը: Տարբերում են մշտական կամ ընդհանուր և ժամանակավոր կամ տեղական Ո. հ.:

**Б-15. БАЗИТЫ – ԲԱԶԻՏՆԵՐ, BASITES**, նույնն է՝ Основные породы:

**Б-16. БАЗИФИКАЦИЯ – ԲԱԶԻՖԻԿԱՑՈՒՄ, BASIFICATION**, ապարներ Mg-ով, ավելի քիչ Ti-ով, P-ով, Mn-ով, Ca-ով հարստանալու գործընթաց (Si-ի դուրս հանմանը զուգընթաց), որը տարածության և ժամանակի մեջ նախորդում է գրանիտացմանը, կապված է վերը նշված քիմ. բաղադրամասերի՝ ավելի բարձր շարժունակության և գրանիտացման ճակատի համենատաբար ավելի դանդաղ տեղափոխման հետ:

**Б-17. БАЙКАЛЬСКАЯ СКЛАДЧАТОСТЬ – ԲԱՅԿԱԼՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, BAIKALIAN FOLDING**, տեկտոգենեզի դարաշրջան ուշ մինչքեմբրիում (մոտավորապես 1500-550 մլն. տարի), նախորդել է վաղ պալեոզոյի կալեդոնյան ծալքավորությանը: Բ. ծ-յան արդյունքում ավարտվել է երկրասինկլինալային զարգացումը աշխարհի տարբեր մասերի լայնատարած մարզերում, և ձևավորվել են ծալքավոր համակարգեր (բայկալիդներ): Բ. ծ-յան մարզերը եզրագծում են Արևելաեվրոպական պլատֆորմը հյուսիսում, Սիբիրական պլատֆորմը՝ արևմուտքում և հարա-

վում (Ենիսեյան բլրաշարք, Արլ. Սայաններ, Մերձբայկալ, Անդրբայկալ): Դրանք անջատվում են Արաբական թերակղզում և Հր. Ամերիկայում: Արմ. Եվրոպայում Բ. ծ. համապատասխանում է ասիոյան ծալքավորությանը և կաղոմյան ծալքավորությանը: Բ. ծ. տերմինը առաջարկել է Ն. Ս. Շատսկին 1932 թ.:

**Բ-18. БАЙОССКИЙ ЯРУС, БАЙОС** (Հս-արմ. Ֆրանսիայի Նորմանդիա նահանգում ապրած հին ցեղերի՝ բայոկասների, Bajocasses, Baiocases, անվանումից) – **ԲԱՅՈՍԻ ՀԱՐԿ, ԲԱՅՈՍ, ВАЈОСІАΝ**, յուրայի համակարգի միջին բաժնի ներքևից երկրորդ հարկ:

**Բ-19. БАКИНСКИЙ БАСЕЙН – ԲԱՔԿԻ ԱՎԱԶԱՆ, ВАКУ BASIN**, ցածր աղիության ավազան, որը վաղ պլեյստոցենում գտնվել է ժամանակակից Կասպից ծովի տեղում և ունեցել է ավելի մեծ չափեր:

**Բ-20. БАКИНСКИЙ ЯРУС – ԲԱՔԿԻ ՀԱՐԿ, ВАКУ**, պլեյստոցենի ստորին ստորաբաժանում: Տեղադրված է ապշերոնյան հարկի վրա և ծածկվում է խազարյան շերտերով:

**Բ-21. БАКТЕРИИ** (հուն. bacteria – ձողիկ, ցուպիկ) – **ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐ (ՄԱՆՐԵՆԵՐ), BACTERIA**, միաբջիջ միկրոօրգանիզմների խումբ, չունեն ձևավորված կորիզ և բազմանում են պարզ բաժանմամբ: Բ-ի երկրք. դերը հանգում է մահացած նյութերի հսկայական զանգվածների միներալացմանը և մի շարք կարևոր ռեակցիաների կատարմանը՝ կապված բնության մեջ N-ի, S-ի, Fe-ի և այլ տարրերի շրջապտույտի հետ:

**Բ-22. БАКТРИТЫ** (Bactritoidea) – **ԲԱԿՏՐԻՏՆԵՐ, BACTRITES**, գլխոտանի փափկամարմինների մահացած ենթադաս, ունեցել են ուղիղ կոնաձև խեցի, ամոնիտների ու բելենմիտների նախնիներն են, ապրել են օրդովիկից մինչև պերմ:

**Բ-23. БАЛАНС ПОДЗЕМНЫХ ВОД** (ֆրանս. balance, բառ. կշեռք, լատ. bilanx – կշեռքի երկու նժար ունեցող) – **ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ, GROUND WATER BUDGET**, որոշակի տարածքի (ջրաերկրք. շրջանի, հնքվ-ի) ստր. ջրերի սնման և ծախսի բաղադրիչների քանակական հարաբերակցությունը որոշակի ժամանակահատվածում:

**Բ-24. БАЛАНСОВЫЕ ЗАПАСЫ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ – ՕԳՏԱՎԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՇՎԵԿՇՈՒՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐ, BALANCE RESERVES OF MINERALS**, օգտ. հնձ-ների խումբ, որի օգտագործումը տնտեսապես նպատակահարմար է՝ հումքի արդյունահանույթի և վերամշակման՝ գոյություն ունեցող տեխնիկայի ու տեխնոլոգիայի պայմաններում, և երբ պահպանվում են հումքի արդյունավետ օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանման օրենսդրական ակտերը: Խմբի մեջ ընդգրկված են A, B, C<sub>1</sub> և C<sub>2</sub> կատեգորիաները, որոնք բավարարում են միներալային հումքի լավորականությանը (կոնդիցիային), քանակին, տեխնոլոգիական հատկությունների և շահագործման լեռնատեխնիկական պայմաններին:

**Բ-25. БАЛКА – ՀԵՂԵՂԱՍ, BALKA, SMALL FLAT-BOTTOM VALLEY**, չոր կամ ջրի ժամանակավոր հոսքի հովիտ՝ մեղմաթեք հատակով և ցցուն լանջերով, նույնն է՝ Մօր:

**Բ-26. БАЛЛ** (ֆրանս. balle – գունդ) – **FULL, MARK, POINT, NUMBER (IN A SCALE)**, երևույթների (երկրաշարժի, քանու ուժի և արագության, ծովի ալեկոծության և այլն) քանակական և որակական գնահատման պայմանական միավոր:

**Բ-27. БАЛЛЬНОСТЬ ЗЕМЛЕТРЯСЕНИЯ – ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԲԱՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ, EARTHQUAKE INTENSITY SCALE**, երկրաշարժի ուժգնություն՝ արտահայտված բալլերով: Նախկին ԽՍՀՄ-ում 1952 թ. ընդունված է Ս. Վ. Մեդվեդևի 12 բալլային սանդղակը: Բալլայնությունը որոշելիս հաշվի են առնվում երկրաշարժական կայանների ցուցմունքների բնույթը, աստիճանը և քանակը, բնահողերի մնացորդա-

յին երևույթները, ստր. և մակերեսային ջրերի ռեժիմի փոփոխությունները, բնապատկերի փոփոխությունները, ցնցումների զգայությունը:

**Բ-28. БАНКА** (գերմ. Bank – կամ հոլանդերեն bank) – **ԾՈՎԱՅԻՆ ԾԱՆԾԱՂՈՒՏ, BANK, SHOALBANK**, ծովահատակի տեղամաս, որտեղ խորությունը աննշան փոքր է շրջապատից: Կարող է ունենալ ջրաբերուկային, հրաբխային, բուստային, տեկտ. ծագում:

**Բ-29. БАР** (անգլ. bar կամ ֆրանս. barre – արգելք, պատնեշ, առափնյա ծանծաղուտ) – **ՐԱՐ, BAR**, ծովահատակի ափամերձ մասում բլրաշար, որը ձգված է ափի ուղղությամբ և կազմված է ծովային ջրաբերուկներից (ավազ, խեցի, կոպիճ):

**Բ-30. БАРИСФЕРА** (հուն. barýs – ծանր և spháira – գունդ) – **ՔԱՐԻՍՖԵՐԱ, ԾԱՆՐՈՒԼՈՒՏ, BARYSPHERE**, երկրագնդի ներքին մասը՝ միջուկը և միջնապատյանը:

**Բ-31. БАРИЙ, Ba** (լատ. Baryum, հուն. barýs-ից – ծանր) – **ՔԱՐԻՈՒՄ, BARIUM**, պարբերական համակարգի II խմբի գլխ. ենթախմբի քիմ. տարր: Արժաթավուն սպիտակ մետաղ է: Երկրակեղևում բավականին տարածված տարր է (15.10<sup>-2</sup>%):

**Բ-32. БАРИТ** (հուն. barýs – ծանր), **ТЯЖЁЛЫЙ ШПАТ – ՔԱՐԻՏ, ԾԱՆՐԱՄՊԱԹ, BARYTE, HEAVY SPAR, BARYTITE**, միներալ սուլֆատների դասից, BaSO<sub>4</sub>, բարիումի սուլֆատ, բյուրեղանուն է շեղանկյունային համակարգում: Առաջացնում է անգույն կամ բաց գունավորված բյուրեղներ, հատիկավոր, թերթավոր և այլ զանգվածներ: Բնորոշ է բարձր խտությունը, կատարյալ հերձականությունը (թերթականությունը): Հանդիպում են բարիտային վարդեր, գնդային կոնկրեցիաներ: Ծագումը՝ ջրաջերմային (հիդրոթերմալ) և վերնածնային (հիպերգեն): Բարիումի գլխ. հանքանյութն է: Հիմնական կուտակները կապված են ջրաջերմային հանքավայրերի երակների հետ, կոնկրեցիաները հանդիպում են ավազային և կավային մստվածքներում:

**Բ-33. БАРИТОВЫЕ РУДЫ – ՔԱՐԻՏԻ (ԾԱՆՐԱՄՊԱԹԻ) ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, BARITE ORES**, բնական միներալային գոյացություններ՝ բարիտի այնպիսի պարունակություններով, որոնց դեպքում տեխնիկապես հնարավոր է և տնտեսապես նպատակահարմար բարիտի կորիզումը և օգտագործումը: Բարիտի հնքվ-երը բաժանվում են՝ բուն բարիտային և սուլֆիդաբարիտային: Առաջինում բարիտը հանդիսանում է միակ կամ գլխ. օգտակար բաղադրամասը:

**Բ-34. БАРИЧЕСКАЯ СТУПЕНЬ, БАРОМЕТРИЧЕСКАЯ СТУПЕНЬ** (հուն. báros – ծանրություն) – **ԾԱՆՐԱՉՈՒՄՎԱՆ ԱՍՏԻՃԱՆ, PRESSURE STEP**, մթնոլորտային ճնշման 1 մբար փոփոխությունը (մետրերով) ըստ ուղղածիզի:

**Բ-35. БАРОМЕТР** (հուն. báros – ծանրություն և metréo – չափում եմ) – **ՃՆՇԱՉՈՒՄ, ՔԱՐՈՍԵՏՐ, BAROMETER**, մթնոլորտային ճնշումը չափող սարք:

**Բ-36. БАРРЕМСКИЙ ЯРУС, БАРРЕМ** (Բարեմ, Barreme գյուղի անունից, Հր. Ֆրանս.) – **ՔԱՐԵՄԻ(ՅԱՆ) ՀԱՐԿ, ՔԱՐԵՄ, BARREMIAN**, կավճի համակարգի ստորին բաժնի ներքևից չորրորդ հարկ:

**Բ-37. БАРТОНСКИЙ ЯРУС** (Բարտոն ժայռի անունից, Անգլ.) – **ՔԱՐՏՈՆՅԱՆ ՀԱՐԿ, BARTONIAN**, Արմ. Եվրոպայի էոցենի վերին հարկ. երբեմն ամբողջ վերին էոցենը:

**Բ-38. БАРХАННЫЕ ГРЯДЫ – ԱՎԱԶԱԹՍԲԵՐԻ (ՔԱՐԻԱՆՆԵՐԻ) ԲԼՐԱՇԱՐԵՐ, LONGITUDINAL DUNES**, քամիների տիրապետող ուղղությամբ ձգված բուսազուրկ ավազաթմբաշարեր:

**Բ-39. БАРХАНЫ** (թուրք.) – **ԱՎԱԶԱԹՍԲԵՐ, ՔԱՐԻԱՆՆԵՐ, BARCHANS, BARKHANES, CRESCENTIC DUNES**, 1) անապատների մերկ ավազների ընդհանուր տերմին (ավազաթմբերի շարքեր, շղթաներ, բուրգեր և այլն), 2) սորուն ավազների՝ քանու միջոցով առաջացած և բուսականությամբ չամրապնդված կուտակումներ:

- Ե-40. БАРЬЕРНЫЙ РИФ** (ֆրանս. *barriere* – արգելապատ) – **ԱՐԳԵԼԱՊԱՏԱՅԻՆ ԽՈՒԹ (ԲԱՐԻԵՐԱՅԻՆ ԽՈՒԹ), BARRIER REEF**, խութային կառույցների գծաշերտ, որը ձգվում է ցամաքի ափին զուգահեռ, ափից մի քանի տասնյակ կմ հեռավորությամբ և ծովից ցանկապատում է ծանծաղուտային ափամերձ ջրատարածքը՝ բուստային ծովալճակը (լագունան):
- Ե-41. БАСЕЙН** (ֆրանս. *bassin*, ուշ լատ. *bassinum*, *bass*-ից – ջրի աման) – **ԱՎԱՉԱՆ, BASIN**, 1) ցածրացված մարզ, որը չունի մակերևութային հոսք (հոսքազուրկ ավազան), 2) շատ թե քիչ իզոմետրական ձևի զոգահովիտ, ծովի հատակի ցածրացում, 3) խորասուզման և նստվածքների կուտակման մարզ, 4) երկրակեղևի խոշոր գոգավոր կառուցվածք, որտեղ ապարների շերտերի անկումը ուղղված է դեպի կենտրոն, 5) ռելիեֆի ձև կամ ստորգետնյա կառուցվածք, որն ընդունակ է կուտակելու, պահելու և բեռնաթափելու ջուրը (օր.՝ արտեզյան ավազան), 6) շերտային օգտ. հնձ-ների համարյա անընդմեջ տարածման ներփակ մարզ (օր.՝ ածխաբեր ավազան), 7) Երկրի մակերևութի մաս, որտեղ ջրերը հոսում են որպես մի առանձին գետ կամ գետային համակարգ (ջրհավաք ավազան):
- Ե-42. БАСЕЙН АРТЕЗИАНСКИЙ – ԱՐՏԵԶՅԱՆ ԱՎԱՉԱՆ, ARTESIAN BASIN**, ճնշումային ստր. ջրերի ավազան, որը կապված է որոշակի երկրբ. կառուցվածքների հետ (սինեկլիզներ, ճկվածքներ, զոգվածքներ, գրաբեկներ, իջվածքներ և այլն)՝ լցված առավելապես նստվածքային ապարներով:
- Ե-43. БАСЕЙН ВОДОСБОРНЫЙ – ՋՐ(Ա)ՅԱՎԱՔ ԱՎԱՉԱՆ, DRAINAGE BASIN**, Երկրի մակերեսի տարածք, որի մակերևութային ջրերը հոսում են տվյալ գետը, լիճը կամ ծովը, նույնն է՝ ջրաբանական ավազան:
- Ե-44. БАСЕЙН ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЙ – ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԱՎԱՉԱՆ, HYDROGEOLOGICAL BASIN**, պլատֆորմների ու ծալքավոր մարզերի խոշոր երկրբ. կառուցվածքներ (սինեկլիզներ, իջվածքներ, եզրային ճկվածքներ, միջլեռնային գոգավորություններ և այլն), որոնք հիմնականում կազմված են նստվածքային ապարներից և պարունակում են գլխ. ճեղքաշերտային ստր. ջրեր, նույնն է՝ *Бассейн подземных вод*:
- Ե-45. БАСЕЙН ГРУНТОВЫХ ВОД – ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԱՎԱՉԱՆ, UNCONFINED GROUND WATER BASIN**, գրունտաջրերի հոսքի ավազան՝ սահմանազատված ստր. ջրաժաններով:
- Ե-46. БАСЕЙН НЕФТЕГАЗОНОСНЫЙ**, տե՛ս *Нефтегазоносный бассейн*:
- Ե-47. БАСЕЙН ПОДЗЕМНЫХ ВОД – ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԱՎԱՉԱՆ**, տե՛ս *Гидрогеологический бассейн*:
- Ե-48. БАСЕЙН ПОЛЕЗНОГО ИСКОПАЕМОГО – ՕԳՏԱԿԱՐ ՅԱՆԱԾՈՅԻ ԱՎԱՉԱՆ, MINERAL FIELD, MINERAL BASIN**, ապարների որոշակի ֆորմացիաների հետ կապված շերտային նստվածքային օգտ. հնձ-ների անընդմեջ կամ համարյա անընդմեջ տարածման պարփակ մարզ: Օ. հ. ա-ի տարբեր մասերի համար բնորոշ է մեկ խոշոր տեկտ. կառուցվածքում (ճկվածք, գրաբեկ, սինեկլիզ) նստվածքների կուտակման պատմաբանությունը. գործընթացների ընդհանրությունը: Տարբերում են ածխաբեր, նավթազազաբեր, աղաբեր, ինչպես նաև ջրաերկրաբանական ավազաններ:
- Ե-49. БАСЕЙН РЕКИ – ԳԵՏԻ ԱՎԱՉԱՆ, RIVER BASIN**, տարածք, որից ջուրը մակերեսով և ստր. ուղիներով (ապարաշերտերից ու ցրունտից) հոսում է դեպի տվյալ գետը:
- Ե-50. БАСЕЙН УГЛЕНОСНЫЙ (УГОЛЬНЫЙ) – ԱԾԽԱԲԵՐ (ԱԾԽԱՅԻՆ) ԱՎԱՉԱՆ, COAL (BEARING) BASIN**, ածխաբեր նստվածքների (ածխաբեր ֆորմացիաների) համատարած կամ ընդհանուր տարածման խոշոր տարածաշրջան (հազարավոր

կմ<sup>2</sup>): Ա. ա-ի տարբեր տեղամասերի համար բնորոշ է միասնական խոշոր տեկտ. կառուցվածքում (ճկվածք, գրաբեն, սինեկլիզ) նստվածքների կուտակման պատմաներկրք. ընդհանրությունը: Ըստ նստվածքների կուտակման ֆազիալ իրադրության, տարբերում են՝ պարալիկ և լիմնիկ, ըստ երկրատեկտոնական հատկանիշների՝ երկրասինկլինալային, պլատֆորմային և միջանկյալ Ա. ա.: Ա. ա-ի սահմաններում առանձնացվում են (ըստ կառուցվածքատեկտոնական հատկանիշների) ածխաբեր (ածխային) շրջաններ և ածխային հանքավայրեր:

**Բ-51. БАСЕЙН УГЛЕНОСНЫЙ ЛИМНИЧЕСКИЙ** (հուն. limnē – լիճ) – **ԼԻՄՆԻԿ(ԱՎԱՆ) ԱՃԽԱԲԵՐ ԱՎԱԶԱՆ, LIMNIC COAL (BEARING) BASIN**, բնորոշվում է ածխաբեր ստվարաշերտում լճային (լիմնիկ) նստվածքների գերակշռությամբ:

**Բ-52. БАСЕЙН УГЛЕНОСНЫЙ ПАРАЛИЧЕСКИЙ – ՊԱՐԱԼԻԿ(ԱՎԱՆ) (ԾՈՎԵՉԵՐՔԱՅԻՆ) ԱՃԽԱԲԵՐ ԱՎԱԶԱՆ, PARALIC COAL (BEARING) BASIN**, բնորոշվում է ածխաբեր ստվարաշերտում մերձափնյա ծովային (պարալիկ) նստվածքների գերակշռությամբ, որոնք բազմակի շերտափոխվում են ցամաքային նստվածքների հետ:

**Բ-53. БАТИАЛЬ** (հուն. bathys – խոր), **БАТИАЛЬНАЯ ЗОНА – ԲԱԹԻԱԼ, ԲԱԹԻԱԼ ՉՈՆԱ (ՉԱՓՎՈՐ ԽՈՐՈՒԹՅԱՆ ՉՈՆԱ), BATHYAL, BATHYAL ZONE**, օվկիանոսի 200-ից 3000 մ խորությունները ընդգրկող էկոլոգիական մարզ: Տեղաբաշխված է մերձլիթորալ (ծանծաղուտային) և արբիսալ (խորջրյա) մարզերի միջև և մոտավորապես համապատասխանում է մայրցամաքային լանջին:

**Բ-54. БАТИАЛЬНЫЕ ОТЛОЖЕНИЯ – ԲԱԹԻԱԼ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, BATHYAL DEPOSITS**, միջանկյալ (բաթիալ) մարզի նստվածքներ՝ շելֆի (մերձցամաքային ծանծաղուտ) և օվկիանոսի հատակի միջև: Չափավոր խորության նստվածքներ, որոնք կուտակվում են մայրցամաքային լանջում (200-ից մինչև 3000 մ խորություններ) և ներկայացված են գլխ. ցամաքածին նստվածքներով և տիղմերով:

**Բ-55. БАТИМЕТРИЧЕСКИЕ КАРТЫ – ԽՈՐԱՉԱՓՎԱՆ ՔԱՐՏԵՉՆԵՐ, BATHYMETRICAL MAPS**, պատկերում են ստորջրյա ռելիեֆը՝ իզոբատերի (համախորագծերի) օգնությամբ, սովորաբար լրացվում է խորության նիշերով:

**Բ-56. БАТИМЕТРИЯ** (հուն. bathys – խոր և metréō – չափում են) – **ԽՈՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ, BATHYMETRY**, հատուկ սարքերի օգնությամբ (խորաչափ, ձայնախորաչափ և այլն) ծովերի և օվկիանոսների խորությունների չափումներ:

**Բ-57. БАТОЛИТ** (հուն. báthos – խորություն և lithos – քար) – **ԲԱԹՈԼԻԹ, BATHOLITH, BATHYLITH, BATHOLITE, CENTRAL GRANITE**, անկանոն եզրագծերով խոշոր ներժայթքային (ինտրուզիվ) մարմին (մակերեսը մեծ 200 կմ<sup>2</sup>), որը բաղկացած է գլխ. գրանիտակերպերից և տեղադրված է ծալքավոր մարզերի նստվածքային ստվարաշերտերում՝ սովորաբար բազմակամարածալքերի (անտիկլինորիումների) միջուկներում: Հպումները ներփակող ապարների հետ կարող են լինել ներդաշնակ և հատող: Առաջանում են զգալի խորություններում, ըստ ժամանակակից պատկերացումների, Բենիոֆի զոնաների վրա՝ ի հաշիվ մասամբ միջնապատյանի, մասամբ՝ կեղևային նյութի հալման:

**Բ-58. БАТСКИЙ ЯРУС, БАТ** (Բաթ, Bath լեռան անունից, Անգլ.) – **ԲԱԹԻ(ՅԱՆ) ՀԱՐԿ, ԲԱԹ, BATHONIAN**, յուրայի համակարգի միջին բաժնի ներքևից երրորդ հարկ:

**Բ-59. БАХЧИСАРАЙСКИЙ ЯРУС** (Ղրիմի Բախչիսարայ ք-ի անունից) – **ԲԱԽՉԻՍԱՐԱՅԻ ՀԱՐԿ, BAKHCHISARAIAN STAGE**, Ղրիմ-Կովկասյան մարզի եղջեմի ստորին հարկ:

**Բ-60. БАШКИРСКИЙ ЯРУС – ԲԱՇԿԻՐՅԱՆ ՀԱՐԿ, BASHKIRIAN**, քարածխային համակարգի միջին բաժնի ստորին հարկ (ըստ ԽՍՀՄ-ում ընդունված շերտագրական

սանդղակի), համապատասխանում է Արմ. Եվրոպայում ընդունված սանդղակի նամյուրի և վեստֆալի (ստորին և միջին մաս) հարկերին:

**Ե-61. БЕДЛЕНД** (անգլ. bad lands – վատ հողեր) – **ՎԱՏԱՅՈՂԵՐ, BAD LANDS**, խանդակային բարդ ցանցով խիստ մասնատված ցածրալեռնային ռելիեֆ, որը պիտանի չէ հողագործության համար: Առաջանում է գլխ. չոր կլիմայում անջրանցիկ կավային ապարներում՝ մակերևութային ժամանակավոր հոսքերի ողողաքայքայման հետևանքով:

**Ե-62. БЕЛЕМНИТИДЫ** (Belemnitides) (հուն. belmonon – անպրոպային սլաք) – **ԲԵ-ԼԵՄՆԻՏԻՏԻԴՆԵՐ, BELEMNITIDES**, գլխոտանի փափկամարմինների մեզոզոյան մահացած կարգ, բրածո վիճակում լավ պահպանվում է խեցու հիմնական մասերից ռոստրը, որը գլանականման է:

**Ե-63. БЁМИТ** (գերմ. գիտնական Բյոմի, J. Böhm, 1899-1952, անունից) – **ԲՅՈՍԻՏ, ВОЕНМИТЕ**, միներալ, ալյումինի ջրօքսիդ, կազմով նույնական է դիասպորին: Բյուրեղանում է շեղանկյունային համակարգում: Առաջացնում է բաց գունավորված գաղտնաբյուրեղային հախճապակենման կամ հողանման ագրեգատներ: Կարծրությունը՝ 3,5-4: Ծագումը վերնածին (հիպերգեն) (հողմահարման կեղևում) և նստվածքային է: Բոքսիտների գլխ. բաղադրամասերից մեկն է:

**Ե-64. БЕНТАЛЬ** (հուն. bénthos – խորություն) – **ԲԵՆԹԱԼ, BENTHONIC**, ջրավազանի հատակ՝ բնակեցված օրգանիզմներով, որոնք ապրում են գրունտի վրա կամ նրա մեջ:

**Ե-65. БЕНТОНИТ, БЕНТОНИТОВАЯ ГЛИНА** (ԱՄՆ Մոնտանա նահանգի Ֆորտ-Բենտոն, Fort Benton ք-ի անունից, որտեղ այդ կավը առաջին անգամ հայտնաբերվել է) – **ԲԵՆՏՈՆԻՏ, ԲԵՆՏՈՆԻՏԱՅԻՆ ԿԱՎ, BENTONITE, BENTONITE CLAY, BENTONITIC CLAY, VOLCANIC CLAY, SOAP CLAY**, մոնտորիլոնիտային կավ, հազվադեպ կավաքար (արգիլիթ)՝ խիստ արտահայտված կոլոիդալ, այդ թվում կլանման (սորբցիոն) հատկություններով: Առանձնացնում են արդյ. հնքվ-երի 3 ծագումնային տեսակներ՝ ջրաջերմամետասոմատիկ, հրաբխանստվածքային, որոնք առաջանում են հրաբխային մոխրի, տուֆերի և այլ հրաբխածին և հրաբխանստվածքային ապարների ջրաջերմային մետասոմատոզից կամ ստորջրյա վերափոխումներից, և ցամաքային-նստվածքային՝ առաջանում են հողմահարման կեղևի ողողատարման արգասիքներից, դիագենետիկական փոփոխությունից և կոլոիդ-դիսպերսիոն վերաբյուրեղացումից: Ժողովուրդության մեջ ունի խիստ տարբեր բնույթի կիրառություն:

**Ե-66. БЕНТОС** (հուն. bénthos – խորություն) – **ՉԱՏԱՎԱԲՆԱԿՆԵՐ, ԲԵՆԹՈՍ, BENTHOS**, ծովային և մայրցամաքային ջրավազանների հատակին և գրունտի մեջ բնակվող (գլխ. ծովեզերքին մոտ) կենդանիների ու բույսերի համախմբություն: Բաժանվում է՝ բուսա- և կենդանահատակաբնակների (ֆիտոբենթոս և կենդանաբենթոս):

**Ե-67. БЕНЧ** (անգլ. bench) – **ԲԵՆՉ, BENCH**, 1) ափաքերման (ալեհարման) ստորջրյա լանջ, 2) ափային ստորջրյա լանջի մաս՝ բաղկացած արմատական ապարների ելքերից (գուրկ է ծովային ջրաբերուկներից):

**Ե-68. БЕРЕГОВАЯ ЗОНА – ԱՓԱՅԻՆ ՉՈՆԱ, COASTAL ZONE, LITTORAL ZONE, SEA COAST**, ցամաքի և ծովի փոխգործունեության զոնա, որն արտահայտված է ափային ռելիեֆի ժամանակակից ձևերի տարածմամբ:

**Ե-69. БЕРЕГОВАЯ ЛИНИЯ – ԱՓԱՅԻՆ (ԱՌԱՓՆՅԱ) ԳԻԾ, SHORELINE, SHORE-LINE, COAST LINE**, ծովի (լճի) ջրի հորիզոնական մակերևույթի և ցամաքի հատման գիծ:

- Б-70. БЕРЕГОВАЯ МОРЕНА – ԱՌՈՓՆՅԱ ՍԱՌՅԱԲԵՐՈՒԿ (ՄՈՐԵՆ, ՔԱՐԱՎԱՐԿԱՌ), BORDER MORAINЕ**, հովտային սառցադաշտերի սառցաբերուկ, որը բլրաշարի կամ աստիճանի տեսքով կուտակվել է լանջի երկայնքով՝ սառցադաշտի մասնակի կամ լրիվ հալման ժամանակ: Պահպանվում է չոր կլիմայի պայմաններում, խոնավ կլիմայում վերածվում է հողային բուրգերի համալիրի:
- Б-71. БЕРЕГОВАЯ РАВНИНА – ԱՌՈՓՆՅԱ ՀԱՐԹԱՎԱՅՐ, COASTAL PLAIN**, ցամաքի կողմից ափային զոնան եզերող հարթավայր: Իրենից ներկայացնում է ծովի հատակի առափնյա ցամաքած զոտի կամ ափային գործընթացների հետ կապված կուտակումային առաջացումներ:
- Б-72. БЕРЕГОВОЙ РИФ, ОКАЙМЛЯЮЩИЙ РИФ – ԱՌՈՓՆՅԱ ԽՈՒԹ, ԵԶԵՐՈՂ ԽՈՒԹ, FRINGING REEF, ENCIRCLING REEF**, բուստային կառույց, որն անմիջապես հարում է մայրցամաքային կամ կղզային ցամաքին:
- Б-73. БЕРЕГОВОЙ УСТУП – ԱՌՈՓՆՅԱ ՍԱՆԴՂԱԿ, CLIFF**, ափաքերման ուղղածիզ գառիթափ, նույնն է՝ Клиф:
- Б-74. БЕРЕЗИТ** (Ուրալի Բերյոզովյան հնքվ-ի անունից) – **ԲԵՐԵՉԻՏ, BERESITE**, մետասոմատիկական ապար, բաղկացած է սերիցիտից և քվարցից՝ պիրիտի առատ ներփակվածքներով: Որպես կանոն՝ ներթափանցված է սուլֆիդային միներալացման քվարցային երակներով: Առաջանում է գրանիտային ապարների ջրաջերմային (հիդրոթերմալ) փոփոխման դեպքում:
- Б-75. БЕРИЛЛ** (հուն. beryllos – այն թանկարժեք քարերի հնամյա անվանում, որոնք օգտագործվել են որպես տեսողական ապակի) – **ԲԵՐԻԼ, ԲԵՐՅՈՒՂ (ԱՉՆԻՎ ԲՅՈՒՐԵՂԱՔԱՐ), BERYL**, միներալ, ալյումինի օղակավոր բերիլասիլիկատ,  $Be_3Al_2[Si_6O_{18}]$ : Բյուրեղանում է հեքսագոնային համակարգում: Առաջացնում է կանաչ, երկնագույն, դեղին, սպիտակ և այլ գույնի հատվածակողմային բյուրեղներ և դրանց ագրեգատներ: Կարծրությունը՝ 7,5-8: Հանդիպում է պեգմատիտներում, գրեյզեններում, քվարցային երակներում և այլն: Բերիլիումի գլխ. հանքանյութն է: Թափանցիկ տարատեսակները՝ զմրուխտը (թանձրականաչ), ծովակնը (երկնագույն), հելիդոդորը (ոսկեդեղին) թանկարժեք քարեր են:
- Б-76. БЕРИЛЛИЕВЫЕ РУДЫ – ԲԵՐԻԼԻ (ԲԵՐՅՈՒՂԻ) ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, BERYLLIUM ORES**, միներալային բնական գոյացություններ, որոնք պարունակում են բերիլիում այնպիսի քանակներով, որոնց դեպքում բերիլիումի արդյ. կորիզումը տնտեսապես նպատակահարմար է: Be հանքանյութերում գտնվում է գլխ. սեփական միներալների ձևով կամ նույնաձև (իզոմորֆ) խառնուրդի տեսքով (մինչև 1-2 %)՝ ապարակազմիչ միներալներում: Բ. հ-ի գլխ. միներալներն են՝ բերիլ (14,1 % BeO), ֆենակիտ (42-45 %), բերտրանդիտ (40-42 %), հելբերտրանդիտ (32-35 %), քրիզոբերիլ (18-29 %), հելվին (10-12 %), էվկլազ (16-17 %) և լեյկոֆան (10-12 %): Հնքվ-երն ունեն հետմազմայական ծագում և կապված են լեյկոկրատ (սպիտակավուն) գրանիտների և ենթաալկալիական գրանիտակերպերի տարածման մարզերի հետ:
- Б-77. БЕРРИАССКИЙ ЯРУС, БЕРРИАС – (Բերիաս գյուղի անունից, Յր-Արմ. Ֆրանս.) – ԲԵՐԻԱՍԻ ՀԱՐԿ, ԲԵՐԻԱՍ, BERRIASSIAN**, կավճի համակարգի ստորին բաժնի ստորին հարկ:
- Б-78. БЕСПОЗВОНОЧНЫЕ (Invertebrata) – ԱՆՈՂԱՇԱՐԱՎՈՐՆԵՐ, INVERTEBRATE**, ընդգրկում են բոլոր կենդանիները, սկսած նախակենդանիներից, որոնք չունեն ողնաշար և քորդա: Կազմում են կենդանական աշխարհի գերակշռող մեծամասնությունը՝ ինչպես անցյալ ժամանակաշրջաններում, այնպես էլ՝ այժմ:
- Б-79. БЕСПРИЛИВНОЕ МОРЕ – ՍԱԿԸՆԹԱՑԱԶՈՒՐԿ ԾՈՎ, TIDELESS SEA**, օվկիանոսի մաս՝ թույլ արտահայտված մակընթացային երևույթներով: Դրանք ոչ մեծ ծովեր են, որոնք անջատվել են Համաշխարհային օվկիանոսից:

- Б-80. БЕССТОЧНАЯ ОБЛАСТЬ**, տե՛ս Область бессточная:
- Б-81. БЕССТОЧНОЕ ОЗЕРО – ՀՈՍՔԱԶՈՒՐԿ ԼԻՃ, ENCLOSED LAKE, ASTATIC LAKE**, լիճ, որը չունի մակերևութային և ստորգետնյա հոսք: Ջրի ծախսն իրակա-նացվում է գոլորշիացման հաշվին:
- Б-82. БЕССТОЧНЫЕ ВПАДИНЫ – ՀՈՍՔԱԶՈՒՐԿ ԻԶՎԱԾՔՆԵՐ, BASINS WITHOUT OUTFLOW**, ռելիեֆի պարփակ իջվածքներ, որոնք Համաշխարհային օվկիանոսի հետ հոսքային կապ չունեն: Սովորաբար Հ. ի-ում մակերևութային ջրերի ժամա-նակավոր կամ մշտական ներհոսք կատարվում է, իսկ արտահոսք՝ ոչ:
- Б-83. БЕССТОЧНЫЙ БАСЕЙН, ЗАМКНУТЫЙ БАСЕЙН – ՀՈՍՔԱԶՈՒՐԿ ԱՎԱ-ՉԱՆ, ՊԱՐՓԱԿ ԱՎԱՉԱՆ, BLIND DRAINAGE BASIN, CLOSED DRAINAGE BASIN, ENDORHEIC BASIN**, հոսքազուրկ մարզում գտնվող գետի կամ լճի ավա-զան, որի գլխ. զարկերակի հոսքը մինչև ծով չի հասնում և իր ճանապարհին չոր կլիմայական պայմաններում ժախսվում է գոլորշիացման և ներծծման վրա:
- Б-84. БЕСЧЕЛЮСТНЫЕ (Agnatha) – ԱՆՇՆՈՏՆԵՐ, AGNATHOSTOMATOUS**, պար-զագույն ձկնանման ողնաշարավորների դաս, որն ընդգրկում է ժամանակակից կլորբերանավորները և մահացած օստրակոդերմները:
- Б-85. БЕСЩИТКОВЫЕ (Anapsida) – ՎԱՀԱՆԱԶՈՒՐԿՆԵՐ, ANAPSIDA**, պալեոզոյան մահացած պարզագույն անձնոտ ողնաշարավորներ:
- Б-86. БЕТОННАЯ КРЕПЬ – ԲԵՏՈՆԵ ԱՍՐԱՎԱՊ, CONCRETE SUPPORT**, բետոնե համատարած լեռնային ամրակապ: Կիրառվում է հորիզոնական, թեք և ուղղաձիգ հիմնական փորվածքների ամրակապման համար:
- Б-87. БИОГЕНЕЗ** (հուն. bios – կյանք և genēsis – ծնված, ծնող) – **ԿԵՆՍԱԾԱԳՈՒՄ, ԿԵՆՍԱԾՆՈՒԹՅՈՒՆ, ԲԻՈԳԵՆԵԶ, BIOGENESIS**, ուսմունք կենդանի օրգանիզմնե-րի ծագման մասին:
- Б-88. БИОГЕННАЯ ТЕКСТУРА, ОРГАНОГЕННАЯ ТЕКСТУРА** (հուն. bios – կյանք և genēsis – ծնված) – **ԿԵՆՍԱԾԻՆ ԿԱԶՄՎԱԾՔ, ՕՐԳԱՆԱԾԻՆ ԿԱԶՄՎԱԾՔ (ՏԵՔՍՏՈՒ-ՐԱ), ORGANOGENOUS STRUCTURE, ORGANIC TEXTURE**, նստվածքային ապարների կազմվածք, որի գոյացումը կապված է նստվածքների ձևավորման ժամանակ տարբեր օրգանիզմների կենսագործունեության հետ (թաղման հետ-քեր, ֆուկոիդներ, բներ և այլն):
- Б-89. БИОГЕННЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ, ОРГАНОГЕННЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ – ԿԵՆՍԱԾԻՆ ԱՊԱՐՆԵՐ, ԿԵՆՍԱՔԱՐԵՐ, ՕՐԳԱՆԱԾԻՆ ԱՊԱՐՆԵՐ, BIOGENIC ROCKS, ORGANIC ROCKS, BIOLITHES**, նստվածքային ապարներ, որոնք կազմ-ված են կենդանիների ու բույսերի կենսագործունեության արգասիքներից կամ ներկայացնում են դրանց չքայքայված մնացորդներ: Ըստ նյութական կազմի՝ առանձնացնում են. կարբոնատային (կրաքարեր, խեցաքարեր), սիլիցիումային (դիատոմիտ, սպոնգոլիթ, ռադիոլարիտ), ֆոսֆատային (ֆոսֆատային խեցիների խեցաքարեր, գուանո) ապարներ, բրածո ածուխներ, այրվող թերթաքարեր:
- Б-90. БИОГЕННЫЕ ИЗВЕСТНЯКИ, ОРГАНОГЕННЫЕ ИЗВЕСТНЯКИ – ԿԵՆՍԱԾԻՆ ԿՐԱՔԱՐԵՐ, ՕՐԳԱՆԱԾԻՆ ԿՐԱՔԱՐԵՐ, BIOGENIC LIMESTONES, ORGANOGE-NOUS LIMESTONES**, առավելապես ծովային, հազվադեպ՝ լճային ծագման նստ-վածքային ապարներ, որոնք գլխ. կազմված են բույսերի ու կենդանիների կարբո-նատային կմախքների մնացորդներից և դրանց կենսագործունեության արդյունք-ներից (կապրոլիթային, բուստային, ֆորամինիֆերային, օնկոլիթային, ստրոմա-տոլիթային և այլ կրաքարեր):



- Б-91. БИОГЕННЫЕ ОСАДКИ, ОРГАНОГЕННЫЕ ОСАДКИ – ԿԵՆՍԱԾԻՆ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, ՕՐԳԱՆԱԾԻՆ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, BIOGENIC SEDIMENTS, ORGANOGENOUS SEDIMENTS**, նստվածքներ, որոնք առաջանում են օրգանիզմների կենսագործունեության հետևանքով: Կազմված են առավելապես կենսածին օրգանական նյութից կամ միներալային կմախքային մնացորդներից: Ծովային և օվկիանոսային Կ. ն. ներկայացված են սիլիցիումային (ռադիոլարիային, դիատոմային տիղմեր) և կարբոնատային (ֆորամինիֆերային, կոկոլիթային տիղմեր) նստվածքներով, որոնք ծածկում են Համաշխարհային օվկիանոսի հատակի մոտ 50 %-ը: Ցամաքային (լճային, գետային, ճահճային) նստվածքները ներկայացված են սապրոպելներով, տորֆակուտակներով, լճային դիատոմային տիղմերով, խեցաքարերով:
- Б-92. БИОГЕОГРАФИЯ – ԿԵՆՍԱՇԽԱՐՀԱՐՈՒԹՅՈՒՆ, BIOGEOGRAPHY**, գիտություն է կենսացենոզների և դրանց կազմում մասնակցող բույսերի ու կենդանիների տարածման ու տեղաբաշխման օրինաչափությունների մասին: Ներառում է օրգանիզմների աշխարհագրությունը, բուսական ծածկոցի և կենդանական բնակեցման աշխարհագրությունը:
- Б-93. БИОГЕОХИМИЧЕСКИЕ ПОИСКИ – ԿԵՆՍԱԵՐԿՐԱՔԻՄԻԱՎԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ, BIOGEOCHEMICAL SEARCH**, հիմնված են կենսոլորտի տարբեր արգասիքներում քիմ. տարրերի անբնականոն կուտակման կամ օգտ. հնձ-ների հնքվ-երի հայտնաբերման նպատակով միջավայրում քիմ. տարրերով ազդելիս օրգանիզմների հակազդման վրա: Կենդանի նյութի բնույթից կախված՝ տարբերում են բուսաերկրաքիմ., տորֆաերկրաքիմ., կենդանաերկրաքիմ. որոնումներ և որոնումների հողային մեթոդներ: Կ. ո-ի մեթոդների կիրառումը արդյունավետ է ճահիճներում, տորֆաճահիճներում, ինչպես նաև թաղված կամ տարրալվացված քարաերկրաքիմ. ցրված պսակներում, որտեղ տարաբերուկ (ալոխթոն) նստվածքների հաստությունը 5-20 մ է:
- Б-94. БИОГЕОХИМИЯ** (հուն. bios – կյանք, gē – երկիր և քիմա) – **ԿԵՆՍԱԵՐԿՐԱՔԻՄԻԱ, BIOGEOCHEMISTRY**, երկրաքիմիայի բնագավառ, որն ուսումնասիրում է օրգանիզմների մասնակցությամբ կենսոլորտում տեղի ունեցող կենսաքիմ. գործընթացները: Դիտարկվում է օրգանիզմների դերը երկրակեղևում քիմ. տարրերի միգրացիայի, տեղաբաշխման, ցրման ու կուտակման մեջ:
- Б-95. БИОГЕОЦЕНОЗ** (հուն. bios – կյանք, gē – երկիր և koinós – ընդհանուր) – **ԿԵՆՍԱԵՐԿՐԱՑԵՆՈՋ (ԲԻՈԳԵՈՑԵՆՈՋ), BIOGEOCOENOSIS**, բնական միջավայրի կենդանի և անշարժ այն բաղադրամասերի փոխապայմանավորված համալիր, որոնք միմյանց հետ կապված են նյութափոխանակության և էներգիայի յուրահատուկ փոխանակմամբ:
- Б-96. БИОГЕРМ** (հուն. bios – կյանք և hérama – ստորջրյա ժայռ, բլուր) – **ԿԵՆՍԱԲԼՈՒՐ, ԲԻՈՅԵՐՄ, BIOHERM, REEF-KNOLL** ջրավազանի հատակի վրա կրային մակաճուկ, որը գոյանում է հատակին կպած օրգանիզմների (բուստեր, մամռակերպեր, սպունգներ, ֆորամինիֆերներ և այլն) կրային նյութից՝ ապրելատեղում: Կ-ների ձևերը տարբեր են, չափերը՝ մի քանի սմ-ից մինչև հարյուրավոր մ: Հանդիպում են տեղայնացված:
- Б-97. БИОГЛИФЫ – ԿԵՆՍԱՎՐԵՐ, ԲԻՈԳԼԻՖՆԵՐ, BIOGLYPHS**, օրգանական ծագման հիերոգլիֆներ՝ օրգանիզմների կենսագործունեության հետքեր շերտերի մակերեսում:
- Б-98. БИОЗОНА – ԿԵՆՍԱԶՈՆԱ, BIOZONE**, համապատասխանում է կենդանական կամ բուսական աշխարհի մեկ տեսակի, սեռի կամ դասակարգման այլ միավորի գոյության ժամանակահատվածին (օր.՝ տեսակային Կ.):

- Б-99. БИОЛИТЫ** – **ԿԵՆՍԱՔԱՐԵՐ, ԲԻՈԼԻԹՆԵՐ, BIOLITHES**, տե՛ս Биогенные горные породы:
- Б-100. БИОМАССА** – **ԿԵՆՍԱՉԱՆԳՎԱԾ, BIOMASS**, մեկ տեսակի, տեսակների խմբի կամ խմբակեցության ընդհանուր զանգված, որը համընկնում է բնակատեղի մակերեսի կամ ծավալի միավորին: Արտահայտվում է խոնավ կամ չոր նյութի զանգվածով ( $գ/մ^2$ , կգ/հա,  $գ/մ^3$  և այլն): Տարբերում են բուսազանգված և կենդանազանգված:
- Б-101. БИОСТРАТИГРАФИЯ** (հուն. bios – կյանք, լատ. stratum – շերտ և հուն. gráphō – գրում են, նկարում են) – **ԿԵՆՍԱՇՇԵՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ, BIOSTRATIGRAPHY**, շերտագրության բաժին, որն ուսումնասիրում է՝ 1) նստվածքային ապարաշերտերում օրգանիզմների բրածո մնացորդների տեղաբաշխումը՝ այդ նստվածքների հարաբերական հասակը պարզաբանելու նպատակով: 2) «Շերտագրական հնէաբանություն» տերմինի հոմ.:
- Б-102. БИОСТРОМ** (հուն. bios – կյանք և հին լատ. stroma – ծածկոց, փռում) – **ԲԻՈՍՏՐՈՍ, BIOSTROME**, ապարների զգալի երկարության (տասնյակ և հարյուրավոր մ) ոսպնյակ, որը բաղկացած է բիոհերմային կրաքարերից: Բ. որոշ չափով բարձրանում է ավազանի հատակից վեր՝ սեպանալով եզրերում:
- Б-103. БИОСФЕРА** (հուն. bios – կյանք և spháira – գունդ) – **ԿԵՆՍՈՒՈՐՏ, BIOSPHERE**, օրգանիզմների գործուն կյանքի մարզ, որն ընդգրկում է մթնոլորտի ստորին մասը, ջրոլորտը և քարոլորտի վերին մասերը, որոնք փոխկապված են բարդ կենսատրոփաքիմ. գործընթացներով՝ կապված էներգիայի և նյութի վերաբաշխման հետ:
- Б-104. БИОТИТ** (ֆրանս. գիտնական Ժ. Բ. Բիոյի, J. B. Biot, անունից) – **ԲԻՈՏԻՏ, BIOTITE**, միներալ սիլիկատների դասից, փայլարների խմբից: Մագնեզիումի, երկաթի և կալիումի շերտավոր ալյումասիլիկատ,  $K(Mg,Fe)_3AlSi_2O_{10}(OH,F)_3$ : Բյուրեղանում է մոնոկլինային համակարգում: Առաջացնում է սև, գորշ բյուրեղներ, թերթավոր, թեփուկավոր ագրեգատներ: Հեշտ ճեղքվում է ճկուն թերթիկների: Կարծրությունը՝ 2,5-3: Հայտնի են 3 բազմաձև ձևափոխություններ: Մի շարք մագմայական և փոխակերպային ապարների ապարակազմիչ միներալ է (գրանիտների, գրանոդիորիտների, դիորիտների, գնեյսների, բյուրեղային թերթաքարերի): Առավել խոշոր բյուրեղներ հանդիպում են պեգմատիտներում: Հողմահարվելիս անցնում է վերմիկոկլիտի և կավային միներալների: Օգտագործվում է քուլքներ, բրոնզի ներկեր պատրաստելու համար, օպտիկական սարքերում, էլեկտրամեկուսիչ նյութերի արտադրությունում:
- Б-105. БИОТОП** (հուն. bios – կյանք և τόπος – տեղ) – **ԲԻՈՏՈՊ, BIOTOPE**, օրգանիզմների բնակության միջավայրի տեղամաս՝ գոյության շատ թե քիչ միանման պայմաններով:
- Б-106. БИОЦЕНОЗ** (հուն. bios – կյանք և koinós – ընդհանուր) – **ԲԻՈՑԵՆՈՉ, ԿԵՆՍԱՑԵՆՈՉ, BIOCOENOSE, BIOCOENOSIS**, համատեղ ապրող այն կենդանիների, բույսերի, մանրէների համախմբություն, որոնք բնակվում են կենսոլորտի համասեռ տեղամասում և բնորոշվում են որոշակի հարաբերությամբ ինչպես միմյանց, այնպես էլ անկենսական միջավայրի հետ:
- Б-107. БИРЮЗА** (պարսկ. փիրուզե) – **ՓԻՐՈՒՉ, TURQUOISE, CALLAITE, AGAPHITE**, միներալ, ալյումինի և պղնձի հիմքային ջրային ֆոսֆատ,  $CuAl_6[PO_4]_4(OH)_8 \cdot 4H_2O$ : Բյուրեղանում է տրիկլինային համակարգում: Առաջացնում է բողբոջանման, գաղտնաբյուրեղային ագրեգատներ, կոնկրեցիաներ, կեղևներ՝ երկնագույն կամ երկնագույն-կանաչ գույնի: Կարծրությունը՝ 5-6: Փայլը՝

փայլատ, մոմի: Ծագումը գլխ. վերնածին (հիպերգեն), առաջանում է գլխ. չոր կլիմայի մարզերում: Թանկարժեք քար է:

**Б-108. БИСМИТ – ԲԻՍՄԻՏ, BISMITE**, միներալ,  $Bi_2O_3$ , նրբահատիկ, փոշեկերպ ագրեգատներ, գույնը՝ մոխրավուն-կանաչ, դեղին, փայլը՝ կիսաալմաստի, փայլատ, առաջանում է օքսիդացման զոնայում: Հոմ. բիսմութային օխրա:

**Б-109. БИСМУТИТ – ԲԻՍՄՈՒԹԻՏ, BISMUTITE**, տե՛ս Висмутит:

**Б-110. БИТОВНИТ – ԲԻՏՈՎՆԻՏ**, տե՛ս Плагноклазы:

**Б-111. БИТУМИНИЗАЦИЯ ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ԲԻՏՈՒՄԱՅՈՒՄ, BITUMINIZATION OF ROCKS**, ապարների զանգվածում դատարկությունների ու ճեղքվածքների արհեստական լցումը հալված բիտումով (հանքածյութով)՝ ջրամեկուսիչ քող (պատվար) ստեղծելու նպատակով (ստորգետնյան կառույցներում):

**Б-112. БИТУМИНОЛОГИЯ – ԲԻՏՈՒՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ՀԱՆՔԱՉՅՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ), BITUMINOLOGY**, սկզբնապես գիտություն բնական բիտումների մասին: Այժմ գործնականորեն այդ տերմինը ընդգրկում է օրգանական նյութի ուսումնասիրման հարցերի ամբողջ շրջանակը:

**Б-113. БИТУМОИДЫ – ԲԻՏՈՒՄԱՎԵՐՊԵՐ, BITUMOIDS**, ապարների, հողի օրգ. նյութի բաղադրամասեր: Ընդունակ են լուծվելու օրգ. լուծիչներում (քլորոֆորմ, բենզոլ և այլն): Մտնում են բնական բիտումների կազմի մեջ: Իրենցից ներկայացնում են հեղուկ, հաճախ մածուցիկ զանգված՝ բաղկացած՝ յուղից, ձյութից, ասֆալտեններից:

**Б-114. БИТУМЫ ПРИРОДНЫЕ (լատ. bitumen – լեռնային ձյութ) – ԲՆԱԿԱՆ ԲԻՏՈՒՄՆԵՐ (ՀԱՆՔԱՉՅՈՒԹԵՐ), BITUMENS**, առաջնային ածխաջրածնային կազմով օրգ. ծագման օգտ. հնձ-ներ, որոնք ընդերքում տեղադրված են պինդ, մածուցիկ և մածուցիկ-ալաստիկ վիճակում: Ծագումնային տեսանկյունից Բ. բ-ին վերագրվում են քարյուղը (նավթը), բնական այրվող գազերը, ինչպես նաև նավթի բնական ածանցյալները [նավտերը, ասֆալտները, ասֆալտիտները, օզոքերիտը] և դրանց նմանակները (նավթիդները): Բ. բ. կազմված են ածխաջրածիններից և տարատոմային (թվածնային, ծծմբային, ազոտային և այլն) միացություններից:

**Б-115. БИТУМЫ ТОРФЯНЫЕ – ՏՈՐՖԱՅԻՆ ԲԻՏՈՒՄՆԵՐ (ՀԱՆՔԱՉՅՈՒԹԵՐ), PEAT BITUMENS**, օրգ. լուծիչներով (բենզոլ, բենզին և այլն) տորֆից կորզվող նյութեր: Տ. բ-ի հիմնական բաղկացուցիչներն են՝ մոմը, ձյութը, պարաֆինները: Տորֆում բիտումների պարունակությունը կախված է նրա ծագումնային տեսակից և քայքայման աստիճանից:

**Б-116. БИТУМЫ УГОЛЬНЫЕ – ԱԾԽԱՅԻՆ ԲԻՏՈՒՄՆԵՐ (ՀԱՆՔԱՉՅՈՒԹԵՐ), COAL BITUMENS**, օրգ. լուծիչներով բնական ածուխների որոշ տեսակներից կորզվող նյութեր: Ա. բ-ի ելքը կախված է օրգ. նյութի բնույթից, դրա կազմից, ձևափոխությունից, կորզման պայմաններից և տատանվում է 1-22 %-ի սահմաններում, ածխացման աստիճանի բարձրացման դեպքում այն նվազում է:

**Б-117. БИШОФИТ (գերմ. գիտնական Գ. Բիշոֆի, G. Bischof, անունից) – ԲԻՇՈՖԻՏ, BISHOFITE**, միներալ հալոգենիդների դասից,  $MgCl_2 \cdot 6H_2O$ : Բյուրեղանում է մոնոկլինային համակարգում: Առաջացնում է կարճ հատվածակողմային և ասեղնաձև բյուրեղներ, հաճախ՝ հատիկային, թերթիկավոր, թելավոր ագրեգատներ: Անգույն է կամ սպիտակ: Բ. աղազոյացման վերջնական արդյունքն է, գոյանում է սուլֆատային տեսակի աղային նստվածքների եզրափակիչ փուլում: Օգտագործվում է մագնեզիումի և դրա միացությունների ստացման համար:

**Б-118. БЛАГОРОДНЫЕ МЕТАЛЛЫ – ԱՁՆԻՎ ՄԵՏԱՂՆԵՐ**, տե՛ս Металлы драгоценные:

- Б-119. БЛАСТО...** (հուն. blastos – ծիլ, բողբոջ, ընծյուղ) – **ՔԼԱՍՏ...**, **BLASTO...**, օգտագործվում է բարդ տերմինի սկզբում կամ վերջում՝ արտահայտելով պինդ վիճակում վերաբյուրեղացման գործընթաց: Բ. բառի սկզբում նշանակում է, որ նախկին վերաբյուրեղացման հետքերը կարող են ճանաչվել, իսկ վերջավորությունում ցույց է տալիս նորաստեղծ կառուցվածքի տեսքը:
- Б-120. БЛАСТОИДЕИ** (Blastoidea) – **ՔԼԱՍՏՈՒՂՆԵՐ**, **BLASTOIDS**, մահացած, կպչող փշամորթների դաս, ունեցել են կոկոնաձև զավաթ, գոյություն են ունեցել սիլուրից մինչև պերմ:
- Б-121. БЛЁКЛЫЕ РУДЫ** (անվանում ըստ աղոտ, թույլ փայլի) – **ԽՈՒՆԱՑԱԾ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ**, **FAHLITE**, **FAHL ORE**, միներալների խումբ, պղնձի բարդ սուլֆիդներ, առաջացնում են նույնաձև (իզոմորֆ) շարք, որի ծայրամասային անդամներն են տետրաէդրիտը և տենանտիտը: Կախված խառնուրդների պարունակությունից՝ առանձնացնում են ֆրայբերգիտ և արգենտատենանտիտ (Ag), բինիտ և զանդբերգերիտ (Zn և Ag), ֆեռոտետրաէդրիտ և ֆեռոտենանտիտ (Fe), շվացիտ (Hg), անիվիտ (Bi) և այլն: Հաճախ հանդիպում են առանձին հատիկներ և հատիկավոր ագրեգատներ: Գույնը՝ պողպատի մոխրագույնից մինչև երկաթի սև: Փայլը՝ թարմ կոտրվածքում՝ մետաղի, օդում արագ խամրում են: Ջրաջերմային (հիդրոթերմալ) միներալներ են: Արդյ. նշանակություն ունի տետրաէդրիտը (Cu և As):
- Б-122. БЛОК** – **ՔԼՈՎ**, **BLOCK**, 1) երկրակեղևի տեղամաս, տե՛ս Блокы тектоническое, 2) համեմատաբար փոքր չափի բլոկներ առանձնացվում են հանքերում և հանքահորային դաշտերում (հանքամարմնի առանձնացված զանգված, որը մշակվում է մյուսներից անկախ), ճարտարագիտակրթ. շրջանացման դեպքում և այլն:
- Б-123. БЛОКИ ТЕКТОНИЧЕСКИЕ** – **ՏԵԿՏՈՆԱԿԱՆ (ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՐԱՆԱԿԱՆ) ՔԼՈՎՆԵՐ**, **TECTONIC BLOCKS**, երկրակեղևի տեղամասեր՝ սահմանափակված բեկվածքներով: Հատակագծում S. բ. բազմանկյուն, իզոմետրական կամ ձգված են: Չափերը հարյուրավոր մ<sup>2</sup> մինչև միլիոն կմ<sup>2</sup>: Խոշոր S. բ. քարոլորտի մեծաբեկորներ են, որոնք տարբերվում են տեկտ. ռեժիմի բնույթով և զարգացման պատմության յուրահատկությամբ: Դրանք միմյանց նկատմամբ կրում են ինչպես ուղղաձիգ, այնպես էլ հորիզոնական տեղաշարժեր: Վերջինները կարող են հասնել մի քանի հարյուր և հազարավոր կմ-ի, առաջինները՝ տասնյակ կմ-ի: Բլոկները սահմանափակող բեկվածքները տարբեր են՝ ոչ խոր վարմետքերից մինչև խորքային բեկվածքները:
- Б-124. БЛОКОВАЯ СТРУКТУРА** – **ՔԼՈՎԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ**, **BLOCK STRUCTURE**, երկրակեղևի տեղամասի կառուցվածք, որը խզվածքներով հատված է մի շարք բլոկների:
- Б-125. БЛУЖДАЮЩАЯ РЕКА** – **ԹԱՓԱՌՈՂ ԳԵՏ**, **WANDERING RIVER**, գետ, որի ցանցում վտակները փոխում են իրենց տեղադրությունը, կամ գետն ընդհանրապես փոխում է իր հոսանքի ուղղությունը:
- Б-126. БОБОВАЯ РУДА** – **ԲԱՎԱՅԱՉԵՎ ՀԱՆՔԱՔԱՐ**, **PEA ORE**, երկաթի, մանգանի, ալյումինի հանքանյութ, որը կազմված է փոքր կլոր կամ բակլայաձև գոյացություններից, հաճախ համակենտրոն-պատենավոր կառուցվածքով: Ունեն նստվածքային ծագում:
- Б-127. БОГХЕД** (Շոտլանդական Բոգհեդ, Boghead, գյուղի անունից) – **ԲՈԳՅԵՂ**, **BOGHEAD**, **ALGAL COAL**, սապրոպելային (նեխատղմային) սևագորշ ածուխների տարատեսակ՝ ջրածնի, ցնդող բաղադրամասերի բարձր պարունակությամբ: Կոտրվածքը խեցային է, բնորոշվում է բարձր ամրությամբ: Առաջանում է ստորա-

կարգ կենդանիների ու բույսերի մնացորդների փոխակերպման հետևանքով՝ անշարժ ջրավազանի պայմաններում:

**Ե-128. БОДРАКСКИЙ ЯРУС** (Ղրիմի Բոդրակ գետի անունից) – **ԲՈՂՐԱՎՅԱՆ ՋԱՐԿ, BODRAKIAN**, Ղրիմ-Կովկասյան մարզի էոցենի ներքևից երրորդ հարկ: Համապատասխանում է Արմ. Եվրոպայի լեդյան հարկին:

**Ե-129. БОК ВИСЯЧИЙ – ՎԵՐՆԱՎՈՂ, HANGER**, հանքաշերտի, հանքային ոսպնյակի, հանքերակի, դայկայի և քիչ թե շատ զուգահեռ մակերևույթներով սահմանափակված երկրք. մարմնի վերին մակերևույթ:

**Ե-130. БОК ЛЕЖАЩИЙ – ՆԵՐՔՆԱՎՈՂ, BOTTOM LAYER**, հանքաշերտի, հանքային ոսպնյակի, հանքերակի, դայկայի և քիչ թե շատ զուգահեռ մակերևույթներով սահմանափակված երկրք. մարմնի ստորին մակերևույթ:

**Ե-131. БОКОВАЯ МОРЕНА – ԿՈՂԱՅԻՆ ՍԱՌՅԱԲԵՐՈՒԿ (ՄՈՐԵՆ, ՔԱՐԱԿԱՐԿԱՈ), LATERAL MORaine**, ապարների խճի և խոշոր բեկորների կուտակը լեռնային սառցադաշտի եզրում՝ ձյան գծից ներքև: Տեղափոխվում է ներքև շարժվող սառցադաշտի հետ միասին, սառցադաշտի հալվելիս անցնում է ափային սառցաբերուկի:

**Ե-132. БОКОВАЯ ЭРОЗИЯ – ԿՈՂԱՅԻՆ ՈՂՈՂԱՄԱՇՈՒՄ (ԵՐՈՋԻԱ, ՈՂՈՂԱՅԱՆՈՒՄ), LATERAL EROSION**, գետի կողմից հովտի լանջերի ողողաքանդում, որը հանգեցնում է հովտի լայնացմանը, գետազալարների առաջացմանը և գետի միգրացմանը:

**Ե-133. БОКОВОЕ ИЗВЕРЖЕНИЕ – ԿՈՂԱՅԻՆ ԺԱՅԹՔՈՒՄ, LATERAL ERUPTION**, լավայի ժայթքումը հրաբխային կոնի լանջի կամ ստորոտի ճեղքերից: Սովորաբար լանջերի վրա առաջացնում է մակաբույծ կոներ:

**Ե-134. БОКОВОЙ ВОДОРАЗДЕЛ – ԿՈՂԱՅԻՆ ՋՐԲԱԺԱՆ, LATERAL DIVIDE, SECONDARY DIVIDE**, երկրորդ կարգի ջրբաժան, որը բաժանում է նույն գետի վտակները:

**Ե-135. БОКОВОЙ КАРОТАЖ – ԿՈՂԱՅԻՆ ԿԱՐՈՏԱԺ, LATERAL LOG**, հորատանցքերում երկրֆ. ուսումնասիրությունների մեթոդ: Ապարների տեսակարար էլեկտրական դիմադրողականության չափում զոնդի օգնությամբ, որն ապահովում է հոսանքի տարածումը հորատանցքի պատին ուղղահայաց:

**Ե-136. БОКОВЫЕ ПОРОДЫ, ВМЕЩАЮЩИЕ ПОРОДЫ – ԿՈՂԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐ, ՊԱՐՓՎԱԿՈՂ ԱՊԱՐՆԵՐ, LATERAL ROCKS**, օգտ. հնժ-ի հանքակուտակի կողերում գտնվող կամ հարակից ապարներ: Հանքակուտակի հորիզոնական տեղադրման դեպքում ապարի ներքնադիր շերտը կոչվում է հատակ, վերադիր շերտը՝ տանիք: Հանքակուտակի թեք տեղադրման դեպքում տարբերում են վերնակողի Կ. ա. (գտնվում են շերտից վերև) և ներքնակողի Կ. ա. (գտնվում են հանքակուտակի տակ), տե՛ս Вмещающие породы:

**Ե-137. БОКСИТЫ** (ֆրանս. Լե Բո, Lex Baux, տեղանքի անունից, որտեղ հայտնաբերվել է Բ-ի առաջին հանքավայրը) – **ԲՈՔՍԻՏՆԵՐ, BAUXITES**, ալյումինի հանքաքար՝ բաղկացած հիմնականում ալյումինի ջրօքսիդներից, երկաթի օքսիդներից ու ջրօքսիդներից և կավային միներալներից: Բ-ի գլխ. հանքազոյացնող միներալներ են դիսպոքսիդը, բյոմիտը, գիբսիտը, գյոտիտը, հիդրոգյոտիտը, հիդրոհեմատիտը, կաոլինիտը, շամոզիտը, քլորիտները, ռուտիլը, անատազը, իլմենիտը, ալյումագյոտիտը, սիդերիտը, կալցիտը, փայլարները: Գույնը՝ սովորաբար կարմիր, գորշ-շագանակագույն: Ազրեզատները՝ պինդ (քարային), ծակոտկեն, հողանման, փուխր և կավանման: Ըստ կառուցվածքային հատկանիշների՝ առանձնացնում են բեկորային (պելիտային, ավազաքարային, կոպճաքարային, կոնգլոմերատային) և կոնկրեցիոն (ծվաքարային, սիսեռաքարային, բակլայանման) Բ.: Ծագումը՝ գլխ.

նստվածքային և լատերիտային: Լայն տարածված են արևադարձային երկրներում: Արգնահողի ( $Al_2O_3$ ) ստացման գլխ. հանքանյութն են:

**Б-138. БОЛИД** (ֆրանս. bolide, հուն. bolis-ից, սեռ. հ. bolidos – նետողական զենք) – **ԲՈԼԻԴ, FIREBALL, BOLIDE**, շատ վառ ասուպ, ունի նկատելի անկյունավոր չափեր:

**Б-139. БОЛОТНЫЕ ОТЛОЖЕНИЯ – ԳԱՅՏԱՅԻՆ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, BOG DEPOSITES**, միներալային և օրգանածին նստվածքներ, որոնք կուտակվում են ճահիճներում: Դրանց մեջ տիրապետում է տորֆը, որը ժամանակի ընթացքում վերածվում է հումուսային ածխի: Փոքր քանակներով տորֆաճահիճներում գոյանում են նաև կարբոնատներ, երկաթային, ֆոսֆատային և այլ միներալներ:

**Б-140. БОЛОТНЫЙ ГАЗ – ԳԱՅՏԱԳԱԶ (ՄԵԹԱՆ), MARSH GAS, METHANE**, տե՛ս Газ болотный:

**Б-141. БОЛОТНЫЙ ЛАНДШАФТ – ԳԱՅՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՏԿԵՐ (ԼԱՆԴՇԱՖՏ), BOG LANDSCAPE**, ընդգրկում է ճահիճը և հարակից ճահճացած տարածքները:

**Б-142. БОЛОТО – ԳԱՅԻՃ, MIRE, BOG, FEN, SWAMP, MARSH**, ցամաքի տեղամաս, որի համար բնորոշ է կայուն և ավելցուկային խոնավացումը, որը պայմանավորում է խոնավասեր բուսականության հանդես գալը և յուրահատուկ հողային գործընթացների զարգացումը: Հողագոյացման գործընթացը տարբեր է և արտահայտվում է կա՛մ տորֆի առաջացմամբ ու կուտակմամբ, կա՛մ տորֆագոյացման ու դրա ողողահարման կարճատև փուլերով, որոշ դեպքերում՝ նաև տղմագոյացմամբ կամ օրգանամիներալային ցեխի կուտակմամբ, երբեմն՝ միայն փոսման գործընթացների զարգացմամբ:

**Б-143. БОЛОТОВЕДЕНИЕ – ԳԱՅՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, PEAT LAND SCIENCE**, գիտություն ճահիճների մասին՝ հիմնված երկրաբուսաբանական, հողային, ջրաերկրբ. և երկրբ. ուսումնասիրությունների արդյունքների վրա:

**Б-144. БОРАТЫ ПРИРОДНЫЕ – ԲՆԱԿԱՆ ԲՈՐԱՏՆԵՐ, BORATES**, միներալների դաս, բորաթթուների աղեր: Տարբերում են ջրազուրկ և ավելի տարածված ջրապարունակ Բ.: Մեծ մասը անգույն է կամ թույլ գունավորված: Բ. բ. բազմածին (պոլիզեն) միներալներ են, ամենախոշոր կուտակումները հրաբխածին-նստվածքային, ներծին, հպումամետասոմատիկ և աղային-նստվածքային հնքվ-երում են:

**Б-145. БОРЕАЛЬНАЯ ТРАНСГРЕССИЯ** (լատ. borealis – հյուսիսային և transgression – տեղափոխություն) – **ԲՈՐԵԱԼ ԾՈՎԱՐՇԱՎ (ՏՐԱՆՍԳՐԵՍԻԱ), BOREAL TRANSGRESSION**, Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի տրանսգրեսիա Արևելաեվրոպական հարթավայրի հյուսիսում՝ միկոլիդյան միջսառցադաշտայինում:

**Б-146. БОРНИТ, ПЁСТРАЯ МЕДНАЯ РУДА – (Ավստրիական միներալաբան Ի. Բորնի, I. Born, անունից) – ԲՈՐՆԻՏ, ՊՂՆՁԻ ԽԱՅՏԱԲՂԵՏ ՀԱՆՔԱՔԱՐ, BORNITE, PEACOCK ORE, PURPLE COPPER ORE**, միներալ, պղնձի ու երկաթի բարդ սուլֆիդ,  $Cu_5FeS_4$ : Բյուրեղանում է խորանարդային համակարգում: Հաճախ հանդիպում է հոծ զանգվածների կամ անկանոն ձևի հատիկների տեսքով: Կարծրությունը՝ 3-4: Գույնը թարմ կոտրվածքում՝ մուգ պղնձակարմիր, օդում երևան է գալիս խայտաբղետությունը: Ծագումը՝ ջրաջերմային (հիդրոթերմալ) և վերնածին (հիպերզեն): Պղնձային ավազաքարերի և թերթաքարերի բաղադրամասերից է: Պղնձի կարևոր հանքանյութ է:

**Б-147. БОРНЫЕ РУДЫ – ԲՈՐԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, BORAX, TINCAL**, բնական միներալային գոյացություններ, որոնք պարունակում են բոր այնպիսի միացություններում ու քանակներով, որոնց օգտագործումը տնտեսապես նպատակահարմար է: Որպես Բ. հ. օգտագործվում են մի քանի բնական բորատներ և բորասիլիկատներ: Առավել տարածված են նատրիումի, կալցիումի և մագնեզիումի բորատները: Բ. հ.

ի հնքվ-երը ծագումնաբ անորեն և ըստ միներալային կազմի բաժանվում են երկու խմբի՝ ներծին և արտածին: Ներծին հնքվ-երն ունեն առավելապես հպումամետասոմատիկական ծագում, արտածինները՝ հրաբխանստվածքային: Բորի օգտագործումը բազմաբնույթ է՝ ապակու, ռետինի, պարարտանյութերի արտադրություն, խեցեգործություն, հերթիցիդներ, ատոմային էներգետիկա և այլն:

**Б-148. БОРОЗДА – ԱԿՈՍ, FURROW**, 1) ռելիեֆում ձգված ոչ խոր փոս, 2) փորվածքի պատերի երկարությամբ արված մմուշահանման ակոս, որից ստացված մմուշն ուղարկում են ուսումնասիրության:

**Б-149. БОРОЗДА ОБЪЁМНАЯ – ԾԱՎԱԼԱՅԻՆ ԱԿՈՍ, VOLUMETRIC FURROW**, մմուշահանման եղանակ:

**Б-150. БОРОЗДА ПУНКТИРНАЯ – ԿԵՏԱԳԾԱՅԻՆ ԱԿՈՍ, DOTTED FURROW**, մմուշահանման եղանակ:

**Б-151. БОРОЗДОВОЕ ОПРОБОВАНИЕ – ԱՎՈՍԱՅԻՆ ՆՍՈՒՇԱՅԱՆՈՒՄ (ՆՍՈՒՇԱՌՈՒՄ), TRENCHING**, տերմինը ճիշտ չէ, նկատի է առնվում ակոսային մմուշների վերցնում:

**Б-152. БОРОЗДЫ ЛЕДНИКОВЫЕ – ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ԱՎՈՍՆԵՐ, GLACIAL FURROWS**, առաջանում են սառցադաշտի շարժման ժամանակ պինդ արմատական ապարների հղկված մակերևույթի վրա՝ սառցի մեջ ներառած սառցաբերուկների կողմից:

**Б-153. БОРТ КАРЬЕРА – ԲԱՑԱՅԱՆՔԻ ԿՈՂ, PIT EDGE, FLANK OF AN OPEN CAST**, բաց հանքարանը սահմանափակող աստիճանաձև կողային թեք մակերևույթ:

**Б-154. БОСТОНИТ (Բոստոն ք-ի անունից, ԱՄՆ) – ԲՈՍՏՈՆԻՏ, BOSTONITE**, երակային մագնայական ապար՝ բաղկացած գլխ. կալիումամատրիումային դաշտասպաթից և շատ քիչ քանակի բիոտիտից ու ամֆիբոլից: Բ-ի երակները սովորաբար կապված են ալկալիական ապարներ հետ (ալկալիական սիենիտներ և այլն):

**Б-155. БОТАНИКА (հուն. botanikē, botanē-ից – խոտ. բույս) – ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, BOTANY, PHYTOLOGY**, գիտություն բույսերի մասին, ներառում է բույսերի ձևաբանությունը (մորֆոլոգիան) ու անատոմիան, դասակարգումը, էվոլյուցիան ու տոհմաբանությունը, աշխարհագրությունը, երկրաբուսաբանությունը, էկոլոգիան, հնաբուսաբանությունը և այլն:

**Б-156. БРАХИАНТИКЛИНАЛЬ (հուն. brachys – կարճ և անտիկլինալ) – ԿԱՐՃ ԿԱՄԱՐԱԾԱԼԸ, ԲՐԱԽԻԱՆՏԻԿԼԻՆԱԼ, BRACHYANTICLINE**, ապարների շերտերի կարճ կամարածն ծալք, որը հատակագծում ունի ձվաձև տեսք: Կ. կ. կազմող ապարների շերտերը կամարի կենտրոնական մասից թեքված են դեպի բոլոր կողմերը: Երկրբ. քարտեզներում Կ. կ. պատկերվում է համակենտրոն ձվաձև օղակներով, որոնց կենտրոնում տեղաբաշխված են ավելի հին ապարները, իսկ դեպի եզրերը՝ ավելի երիտասարդները:

**Б-157. БРАХИОПОДЫ (Brachiopoda, հուն. brachion – ձեռք և podos – ոտք) – ՈՒՍՈՍԱՆԻՆԵՐ, ԲՐԱԽԻՊՈՂԻՆԵՐ, BRACHIOPODS**, անողնաշարավոր կենդանիների տիպ, անհատ, երկհամաչափ կենդանիներ են, մարմինը ծածկված է երկփեղկանի խեցիով, ապրում են ծովերի հատակում: Առավել բուռն զարգացում են ունեցել պալեոզոյում, այժմ հայտնի է մոտ 200 տեսակ: Քենբրիից–այժմ, նույնն է՝ Плеченогие:

**Б-158. БРАХИСИНКЛИНАЛЬ (հուն. brachys – կարճ և սինկլինալ) – ԿԱՐՃ ԳՈՐԱԾԱԼԸ, ԲՐԱԽԻՍԻՆԿԼԻՆԱԼ, BRACHYSYNCLINE, BRACHYSYNCLINAL FOLD**, ապարների շերտերի կարճ զոգածալք, որը հատակագծում ունի ձվաձև տեսք: Այն կազմող ապարների շերտերը բոլոր կողմերից թեքված են դեպի կենտրոնը: Երկրբ. քարտեզում կ. գ. պատկերվում է համակենտրոն ձվաձև օղակների տես-

քով, որոնց կենտրոնում տեղաբաշխված են ավելի երիտասարդ ապարները, իսկ եզրերում՝ ավելի հները:

**Б-159. БРАХИСИНКЛИНОРИУМ** (հուն. brachýs – կարճ և սինկլինորիում) – **ԿԱՐՃ ԲԱԶՍԱԳՈՂԱԾԱԼՔ, ԲՐԱԽԻՍԻՆԿԼԻՆՈՐԻՈՒՄ, BRACHYSYNCLINORIUM**, բազմագոգածալք (սինկլինորիում), որը բնորոշվում է կարճացված ձվաձև ուրվապատկերով:

**Б-160. БРАХИСКЛАДКА** (հուն. brachýs – կարճ) – **ԿԱՐՃԱԾԱԼՔ, ԲՐԱԽԻԾԱԼՔ, BRACHYFOLD, SHORTFOLD**, կարճ, լայն, համեմատաբար հարթ ծալք, երկար և կարճ առանցքների 10:1 ավելի փոքր հարաբերությամբ:

**Б-161. БРЕКЧИЯ** (իտալ. braccia – ջարդում) – **ՓՇՐԱՔԱՐ, ԲՐԵԿՉԻԱ, BRECCIA**, խոշորաբեկոր ապար, որը կազմված է տարբեր տեսակի ապարների ցեմենտացված անկյունավոր բեկորներից (մեծ 10 մմ-ից): Բեկորները կարող են լինել համասեռ և տարատեսակ՝ խիստ տարբերվելով ցեմենտից: Ըստ բեկորների չափերի՝ տարբերում են մեծաբեկորային (1000 մմ ավել), խոշոր, միջին և մանրաբեկորային (1000-100 մմ) և խոշոր, միջին և մանրախճաքարային (100-10 մմ): Փ. ըստ ծագման՝ լինում է նստվածքային, հրաբխային, տեկտոնական, կարստային և այլն:

**Б-162. БРЕКЧИЯ АВТОКЛАСТИЧЕСКАЯ – ԻՆՔՆԱԲԵԿՈՐԱՅԻՆ ՓՇՐԱՔԱՐ, ԱՎՏՈԿԼԱՍՏԻԿ ԲՐԵԿՉԻԱ, AUTOCLASTIC BRECCIA**, ձևավորվում է լավային հոսքերի վրա լերկացման և հատկապես սառնամանիքային հողմահարման հետևանքով՝ քառսային մեծաբեկորների տեսքով:

**Б-163. БРЕКЧИЯ ВУЛКАНИЧЕСКАЯ – ՅՐԱԲԽԱՅԻՆ ՓՇՐԱՔԱՐ (ԲՐԵԿՉԻԱ), VOLCANIC BRECCIA**, առաջանում է խոշոր փուխր հրաբխային արտանետուկների կուտակման և ցեմենտացման հետևանքով:

**Б-164. БРЕКЧИЯ ТЕКТОНИЧЕСКАЯ, БРЕКЧИЯ ТРЕНИЯ – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՓՇՐԱՔԱՐ (ԲՐԵԿՉԻԱ), ՇՓՄԱՆ ՓՇՐԱՔԱՐ (ԲՐԵԿՉԻԱ), FAULT BRECCIA, CRUSH BRECCIA, TECTONIC BRECCIA**, ջարդոտված ապար՝ կապված խզվածների առաջացման, ինչպես նաև ծալքագոյացման հետ: Տ. փ-երը հանդիպում են վրաշարժերի, կողաշարժերի, վարնետքերի, վերնետքերի հարթությունների երկայնությամբ: Բեկորների չափերը տատանվում են մանրահատիկայինից մինչև հսկա մեծաբեկորները (տրամագծում մինչև հարյուրավոր մ): Փշրված ապարների շերտի հաստությունը կախված է կազմից, խզվածքով տեղախախտման մեծությունից և տեղախախտման խորությունից (երկրի մակերևույթից): Ծալքագոյացման դեպքում Տ. փ-եր առաջանում են նյութի շերտ առ շերտ տեղափոխման և ջարդոտման հետևանքով:

**Б-165. БРЕКЧИЯ ТУФОВАЯ** նույնն է՝ Туфобрекчия:

**Б-166. БРЕКЧИЯ ЭКСПЛОЗИВНАЯ – ՅՐԱԲԽԱՊԱՅԹՈՒՄԱՅԻՆ ՓՇՐԱՔԱՐ (ԲՐԵԿՉԻԱ), EXPLOSIVE BRECCIA**, հոմ. Туф агломератовый:

**Б-167. БРЕКЧИЯ ЭРУПТИВНАЯ – ԺԱՅԹՈՒՄԱՅԻՆ (ԺԱՅԹՄԱՆ) ՓՇՐԱՔԱՐ (ԲՐԵԿՉԻԱ), ERUPTIVE BRECCIA**, առաջանում է ներժայթքային (ինտրուզիվ) մագմայական մարմինների ձևավորման ընթացքում: Ցեմենտը նույն ներժայթքային ապարն է: Բեկորները կարող են կազմված լինել պարփակող ապարներից, ներժայթքուկի ավելի վաղ փուլերի ապարներից կամ նշված բոլոր ապարներից համատեղ: Հաճախ հանդիպում են ներժայթքային մարմինների եզրերում:

**Б-168. БРИКЕТ – ԱԾԽԱՂՅՈՒՄ (ԱՂՅՈՒՄ), ԲՐԻԿԵՏ, BRIQUETTE**, հումքի (հիմնականում միներալային) վերամշակումից (բրիկետացումից) ստացած համասեռ և երկ-



րաչափական կանոնավոր ձև ունեցող կտորներ: Ածխի և հանքանյութերի մանրուքից աղյուսներ պատրաստվել են դեռևս 19-րդ դ. կեսերին:

**Բ-169. БРОНЗОВЫЙ ВЕК – ԲՐՈՆԶԻ ԴԱՐ, BRONZE AGE**, մարդկային հասարակության զարգացման հնագիտական դարակարգ, որի համար բնորոշ է բրոնզե առարկաների պատրաստումը: Վերաբերում է 3-րդ դարի վերջին և 2-րդ դարին՝ մ. ք. ծ.:

**Բ-170. БРУКИТ** (անգլ. միներալաբան Յ. Ջ. Բրուկի, H. J. Brooke, անունից) – **ԲՐՈՒԿԻՏ, BROOKITE**, միներալ, ռուտիլի բնական երեք բազմաձև ձևափոխություններից մեկն է:

**Բ-171. БРУСИТ** (ամերիկյան միներալաբան Ա. Բրուսի, A. Bruce, անունից) – **ԲՐՈՒՍԻՏ, BRUCITE**, միներալ ջրօքսիդների դասից, Mg(OH)<sub>2</sub>, բյուրեղանում է տրիգոնային համակարգում, հանդիպում է համատարած թերթավոր զանգվածների տեսքով կամ նուրբ թելավոր ագրեգատներով: Գույնը՝ սպիտակ, կանաչավուն, փայլը՝ հերձման հարթությունում սադափյա, կտրվածքում՝ ապակե: Կարծրությունը՝ 2,5: Առաջանում է գերհիմքային ապարների ջրաջերմային (հիդրոթերմալ) փոփոխության դեպքում, ապարների փոխակերպության հետևանքով և հողմահարման կեղևում: Մագնեզիումի ու նրա միացությունների հեռանկարային հումք է:

**Բ-172. БРЮХОНОГИЕ МОЛЛЮСКИ, ГАСТРОПОДЫ** (Gastropoda) – **ՓՈՐՈՏԱՆԻ ՓՈՓԿԱՍԱՐՄԻՆՆԵՐ, ՓՈՐՈՏԱՆԻՆԵՐ, ԳԱՍՏՐՈՂՈՂՆԵՐ, GASTROPODS, SNAILS**, փափկամարմինների դաս, մոտ 90 հազ. տեսակ: Գլուխը լավ է զարգացած, ոտքը մկանուտ է, մարմնի ծալքը (թիկնոցը) արտադրում է խեցի, որը սովորաբար պարուրածն ուղղված է, որոշ ձևերի մոտ խեցին ռեդուկցված է: Բնակվում են գլխ. ծովերում, որոշ ձևեր՝ ներքին ջրավազաններում և ցամաքում:

**Բ-173. БУГРИСТОЕ БОЛОТО – ԲԼՐ(ԱԿ)ԱՇԱՏ ՃԱՅԻՃ, RAISED BOG**, բնորոշվում է բազմանյա տորֆային բլրակներով, բլրակների բարձրությունը սովորաբար 2-3 մ է, տրամագիծը՝ 10-20 մ: Հանդիպում է միայն բազմաթիվ տարիներում սառած ապարների տարածման մարզերում:

**Բ-174. БУДИНАЖ** (ֆրանս. boudinage, bound-ից – թմբիկ, հաստացում) – **ՓՔՎԱԾՔ, ԲՈՒԴԻՆԱՍՏ, BOUDINAGE**, շերտի կամ դայկայի վերածումը միմյանցից վզիկներով անջատված ոսպնյակների կամ մեկը մյուսից լրիվ անջատված թմբիկների:

**Բ-175. БУЛАНЖЕРИТ** (ֆրանս. լեռնային ինժեներ Շ. Բուլանժեր, Ch. Boulanger, անունով) – **ԲՈՒԼԱՆՃԵՐԻՏ, BOULANGERITE**, միներալ բարդ սուլֆիդների դասից, Pb<sub>5</sub>Sb<sub>4</sub>S<sub>11</sub>, բյուրեղանում է մոնոկլինային համակարգում, հանդիպում է գլխ. ճառագայթավոր և նուրբ թելավոր ագրեգատների տեսքով: Գույնը՝ կապարի մոխրագույնից մինչև երկաթի սև: Փայլը՝ մետաղի: Կարծրությունը՝ 2,5-3: Հանդիպում է որպես երկրորդական միներալ ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվ-երում: Կապարի երկրորդային հանքանյութ է:

**Բ-176. БУЛЫЖНИК – ԳԵՍԱՔԱՐ, COBBLESTONE**, կլորացված եզրերով, 10-20 սմ չափերով քար:

**Բ-177. БУРДИГАЛЬСКИЙ ЯРУС** (Բորդո ք-ի տեղում գտնված հին կելտական Բուրդիգալա, Burdigala, բնակավայրի անունից, ֆրանս.) – **ԲՈՒՐԴԻԳԱԼՅԱՆ ՀԱՐԿ, BURDIGALIAN**, ստորին միոցենի վերին հարկ:

**Բ-178. БУРЕНИЕ – ՀՈՐԱՏՈՒՄ, DRILLING, CORING, BORING, PERFORATION**, ապարների արհեստական քայքայման հետևանքով կլոր, ոչ մեծ լայնական հատույթով փորվածքի ստեղծում՝ երկրք. կառուցվածքի ուսումնասիրման, որոնումների, հետախուզության, օգտ. հնձ-ների արդյունահանման համար:

- Ե-179. БУРЕНИЕ АЛМАЗНОЕ – ԱԼՄԱՍԱՅԻՆ ՀՈՐԱՏՈՒՄ, DIAMOND DRILLING, DIAMOND BORING**, պտտական հորատում, որի ժամանակ հորատանցքում ապարը քայքայվում է ալմաստներով ամրանավորված ապարաքայքայիչ գործիքով:
- Ե-180. БУРЕНИЕ БЕСКЕРНОВОЕ – ԱՆՀԱՆՈՒԿԱՅԻՆ (ԱՆԿԵՌՆ) ՀՈՐԱՏՈՒՄ, NON-CORE DRILLING**, պտտման հորատում, որի ժամանակ հորատանցքում ապարը քայքայվում է հորատանցքի լայնական հատույթի ամբողջ մակերեսով:
- Ե-181. БУРЕНИЕ ВИБРАЦИОННОЕ – ԹՐԹՈՒԱՀՈՐԱՏՈՒՄ, VIBRATION DRILLING**, մեխ. հորատում, երբ ապարը քայքայվում է ապարաքայքայիչ այնպիսի գործիքով, որի վրա ազդում են թրթռումով կամ թրթռումով ու հարվածով և առանցքային սեղմող ուժով:
- Ե-182. БУРЕНИЕ ВРАЩАТЕЛЬНОЕ – ՊՏՏԱԿԱՆ ՀՈՐԱՏՈՒՄ, ROTARY DRILLING**, մեխ. հորատում, որի դեպքում ապարը քայքայվում է առանցքային ճնշմամբ փորվածքաճակատին սեղմված գործիքը անընդհատ պտտելու միջոցով:
- Ե-183. БУРЕНИЕ ВРАЩАТЕЛЬНО-УДАРНОЕ – ՊՏՏԱՀԱՐԿԱԾԱԿԱՆ ՀՈՐԱՏՈՒՄ, ROTARY-PERCUSSION DRILLING**, մեխ. հորատում, որի ժամանակ առանցքային մեծ ճնշման տակ ապարին անընդհատ հպած հորատագործիքը պտտական շարժման ու ստացած հարվածների միջոցով քայքայում է ապարը:
- Ե-184. БУРЕНИЕ ГИДРАВЛИЧЕСКОЕ – ՀԻԴՐԱՎԼԻԿ(ԱԿԱՆ)ՀՈՐԱՏՈՒՄ (ՋՐԱՀՈՐԱՏՈՒՄ), HYDRAULIC DRILLING**, հորատում, որի ժամանակ ապարը քայքայվում է մեծ ճնշման տակ մղվող ջրային շիթի հարվածներից:
- Ե-185. БУРЕНИЕ ДРОБОВОЕ – ԿՈՏՈՐՈՒՔԱՅԻՆ ՀՈՐԱՏՈՒՄ, SHOT DRILLING**, պտտական հորատում, որի ժամանակ ապարը քայքայվում է փորվածքաճակատի և թագազլիխի միջև գտնվող 2.5-4.5 մմ չափերի չուզուներ կամ պողպատե կոտորուքով, կիրառվում է ամուր ապարները հորատելիս:
- Ե-186. БУРЕНИЕ КОЛОНКОВОЕ – ՍՅՈՒՆԱԿԱՅԻՆ ՀՈՐԱՏՈՒՄ, CORE DRILLING**, պտտական հորատում, որի ժամանակ ապարի գլանաձև համուկը ստանալու նպատակով ապարը քայքայում են օղակաձև ճակատով:
- Ե-187. БУРЕНИЕ КОМБИНИРОВАННОЕ – ԿՈՄԲԻՆԱՑԿԱԾ (ՀԱՄԱԿՑԱԾ) ՀՈՐԱՏՈՒՄ, COMBINED DRILLING**, մի քանի եղանակների համատեղ կիրառումով հորատում:
- Ե-188. БУРЕНИЕ МЕХАНИЧЕСКОЕ – ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՀՈՐԱՏՈՒՄ, MECHANICAL DRILLING**, հորատում, որի ժամանակ ապարը քայքայվում է անմիջականորեն ապարաքայքայիչ գործիքի մեխ. ազդեցությամբ:
- Ե-189. БУРЕНИЕ МНОГОЗАБОЙНОЕ – ԲԱԶՄԱԽՈՐՀԱՅԻՆ ՀՈՐԱՏՈՒՄ, MULTI-HOLE DRILLING**, մեկ հորատանցքից սկիզբ առնող մի քանի թեք հորատանցքերի հորատում. Բ. հ. կատարում են հանքամարմինը հատելու նպատակով:
- Ե-190. БУРЕНИЕ НАКЛОННОЕ – ԹԵՔ ՀՈՐԱՏՈՒՄ, SLANT DRILLING**, ուղղաձիգ ուղղության նկատմամբ որևէ անկյան տակ հորատանցքի հորատում: Կիրառվում է ճահիճների, լճերի, գետերի, գառիթափ լանջերի, ծովի ափամերձ տեղամասերի տակ գտնվող նավթակուտակումներ բացելու և շահագործելու նպատակով, ինչպես նաև գառիթափ անկում ունեցող պինդ օգտ. հնձ-յի հանքամարմինները 90°-ին մոտ անկյան տակ հատելու համար:
- Ե-191. БУРЕНИЕ ПОДЗЕМНОЕ – ՍՏՈՐԳԵՆՆՅԱ ՀՈՐԱՏՈՒՄ, UNDERGROUND DRILLING**, ստորգետնյա որևէ փորվածքից սկիզբ առնող հորատանցքի հորատում:
- Ե-192. БУРЕНИЕ РОТОРНОЕ – ՌՈՏՈՐԱՅԻՆ ՀՈՐԱՏՈՒՄ, ROTARY DRILLING**, պտտական հորատում, որի ժամանակ ապարը քայքայվում է ռոտորով պտտվող հորատախողովակների սյան ներքին ծայրին ամրացված դուրի ազդեցությամբ:

- Б-193. БУРЕНИЕ РУЧНОЕ – ԶԵՌՔՈՎ ՀՈՐԱՏՈՒՄ, HAND DRILLING**, մուրճով հորատին հարվածներ հասցնելու միջոցով պայթանցքի հորատում: Ձ. հ. կատարվում է մեկ կամ երկու հոգով:
- Б-194. БУРЕНИЕ ТЕРМИЧЕСКОЕ – ԶԵՐՄԱՅԻՆ ՀՈՐԱՏՈՒՄ, THERMAL DRILLING**, հորածորանից +2000°C ջերմաստիճան ունեցող և մոտավորապես 2000 մ/վրկ արագությամբ դուրս եկող գազերի շիթերով հորատում: Ջ. հ-ման ժամանակ ապարը քայքայվում է փորվածքաճակատը արագ տաքանալուց առաջացած ջերմային լարումներից:
- Б-195. БУРЕНИЕ УДАРНОЕ – ՀԱՐՎԱԾԱԿԱՆ ՀՈՐԱՏՈՒՄ, PERCUSSION (PERCUSSIVE) DRILLING**, մեխ. հորատում, որի ժամանակ ապարը քայքայվում է հորատագլխիկով փորվածքաճակատի տարբեր տեղերին հասցվող հարվածներից:
- Б-196. БУРЕНИЕ УДАРНО-ВРАЩАТЕЛЬНОЕ – ՀԱՐՎԱԾԱՊՏՏԱԿԱՆ ՀՈՐԱՏՈՒՄ, PERCUSSION-ROTARY DRILLING**, մեխ. հորատում, որի ժամանակ ապարը քայքայվում է ապարին հորատագլխիկով հասցվող հարվածների և պտտական ու առանցքային ճիգերի էներգիայի ազդեցությունից:
- Б-197. БУРЕНИЕ УДАРНО-КАНАТНОЕ – ՀԱՐՎԱԾԱԵՈՊԱՆԱՅԻՆ ՀՈՐԱՏՈՒՄ, CABLE-TOOL DRILLING**, հարվածական հորատում, որի ժամանակ ապարը քայքայվում է ճոպանից կախված մինչև 2000 կգ և ավելի զանգվածով հորատապիտույթի պարբերաբար բարձրացման և անկման հետևանքով փորվածքաճակատին հասցվող հարվածներից:
- Б-198. БУРЕНИЕ ШНЕКОВОЕ – ԳԱՅԼԻԿՈՆԱՁՈՂԱՅԻՆ (ՊԱՐՈՒՅՐԱՁՈՂԱՅԻՆ) ՀՈՐԱՏՈՒՄ, AUGER DRILLING**, պտտական հորատում, որի ժամանակ քայքայված ապարը հորատանցքի խորշից պարուրակածողով անընդհատ դուրս է հանվում երկրի մակերևույթ: Կիրառվում է թույլ ու միջին ամրության ապարներում:
- Б-199. БУРЕНИЕ ШТАНГОВОЕ – ՁՈՂԱՅԻՆ ՀՈՐԱՏՈՒՄ, STEM DRILLING**, սյունակային և տելեսկոպային հորատող մեքենաներով հորատում, որի ժամանակ հորատածողը պարբերաբար երկարացվում է:
- Б-200. БУРИЛЬЩИК – ՀՈՐԱՏՈՂ, DRILLMAN, DRILLER**, հորատանցք և (կամ) պայթանցք հորատող բանվոր:
- Б-201. БУРИМОСТЬ ГОРНОЙ ПОРОДЫ – ԱՊԱՐԻ ՀՈՐԱՏԵԼԻՈՒԹՅՈՒՆ, ROCK DRILLABILITY**, հորատմանը դիմադրելու ապարի հատկություն: Բնութագրվում է փորձարկման կայուն պայմաններում միավոր երկարության պայթանցքի կամ հորատանցքի հորատման համար անհրաժեշտ մեքենայական ժամանակով:
- Б-202. БУРОВАЯ ВЫШКА – ՀՈՐԱՏՄԱՆ ԱՇՏԱՐԱԿ, DRILLING DERRICK**, հորատանցքի վրա կառույց՝ հորատման սարքի իջեցման ու բարձրացման համար:
- Б-203. БУРОВАЯ ПЛАТФОРМА – ՀՈՐԱՏՄԱՆ ՀԵՆԱՀԱՐԹԱԿ, DRILLING PLATFORM**, ջրատարածքներում հորատման սարք՝ ծովի հատակի հանքային ռեսուրսների հետազոտման ու շահագործման համար:
- Б-204. БУРОВАЯ СКВАЖИНА – ՀՈՐԱՏԱՆՑՔ, DRILLING HOLE, DRILLING WELL**, երկրակեղևում համեմատաբար փոքր տրամագծի և անհամեմատ մեծ խորությամբ կլոր հատույթի գլանաձև փորվածք:
- Б-205. БУРОВАЯ УСТАНОВКА – ՀՈՐԱՏՄԱՆ ՍԱՐՔ, DRILLING RIG**, հորատման համար նախատեսված մեքենաների ու մեխանիզմների համալիր:
- Б-206. БУРОВИК – ՀՈՐԱՏՈՂ, DRILLMAN**, հորատանցք հորատելու մասնագետ:

**Ե-207. БУРОВЗРЫВНЫЕ РАБОТЫ – ՀՈՐԱՏԱՊԱՅԹԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, DRILLING AND BLASTING OPERATIONS**, ապարային զանգվածները հորատման և պայթեցման միջոցով մասերի բաժանելու, դրանք փշրելու և տեղափոխելու աշխատանքների ամբողջություն:

**Ե-208. БУРОВОЕ ДОЛОТО – ՀՈՐԱՏԱԴՈՒՐ, DRILLING BIT, BORE BIT**, հորատի ծայրամաս, որով անմիջականորեն քայքայում են ապարը:

**Ե-209. БУРЫЕ ВОДОРОСЛИ (Phaeophyta) – ԳՈՐՇ ԶՐԻՄՈՒՆՆԵՐ, BROWN ALGAE**, ջրիմուռներ, որոնց գունավորումը (ծիթենու դեղինից մինչև մուգ գորշ) պայմանավորված է քրոմատոֆորներում քլորոֆիլի, կարոտինոիդների և գորշ ֆուկոքսանտինի հարաբերությամբ: Տարածված են ծովերում և օվկիանոսներում, բազմաբջիջ կաչող ջրիմուռներ են՝ մինչև 30-50 մ երկարությամբ: Բենթոսի կարևոր բաղադրամասերից են:

**Ե-210. БУРЫЙ ЖЕЛЕЗНЯК – ԳՈՐՇ ԵՐԿԱԹԱՔԱՐ, BROWN IRON ORE, LIMONITE**, երկաթի հանքաքար՝ 30%-ից ավել երկաթի պարունակությամբ: Կազմված է երկաթի ջրօքսիդներից, գյոտիտից, հիդրոգյոտիտից, սիլիցիումի և ալյումինի օքսիդներից ու ջրօքսիդներից: Հիմնական հնքվ-երը նստվածքային են և հողմահարման:

**Ե-211. БУРЫЙ УГОЛЬ – ԳՈՐՇ ԱԾՈՒՄ, BROWN COAL**, ածխայնացման ամենացածր աստիճանի բրածո ածուխ, անցողիկ ձև է տորֆից դեպի քարածուխը: Այրման ջերմունակությունը՝ 22.6-31 ՄՋ/կգ: Գ. ա-երը կտորում և փոշի վիճակում ունեն բաց դեղինից մինչև սև գույն, խտությունը՝ 1200-1500 կգ/մ<sup>3</sup>: Տարբերում են փափուկ, հողանման, փայլատ, լիզնիտային և պինդ (փայլուն) տարատեսակներ: Օդում Գ. ա. արագ անցնում է մանրուքի: Մեծամասնությամբ հումուսային ածուխներ են, սապրոպելիտները և անցողիկ հումուսասապրոպելային տարբերակներն ունեն ստորադաս նշանակություն: Առավել խոշոր հնքվ-երը կապված են մեզոզոյան և կայնոզոյան հասակի նստվածքների հետ:

## B

- B-1. ВАДОЗНЫЕ ВОДЫ** (լատ. vadousus – ոչ խոր) – **ՎԱԴՈՉԱՅԻՆ ՋՐԵՐ, VADOSE WATER**, մթնոլորտային ձագման ստորերկրյա ջրեր:
- B-2. ВАЛ – ԹՈՒՄԲ, RAMPART, SWELL**, (երկրբ.) պլատֆորմի նստվածքային ծածկոցի շերտերի երկար (հարյուրավոր կմ) մեղմաթեք կամ արածալ ծովածք, որը հաճախ կազմված է ավելի մանր գմբեթած կամ ձված կարծրացումներից:
- B-3. ВАЛ ОКЕАНСКИЙ – ՕՎԿԻԱՆՈՍԱՅԻՆ ԹՈՒՄԲ, OCEANIC SWELL**, օվկիանոսի հատակի թալատկրատոնի պարզագույն կառուցվածք, որն իրենից ներկայացնում է օվկիանոսային կեղևի կամարային բարձրացում: Դրա թևերը հաճախ բարդացված են վարմնետքերով, իսկ կամարային մասը՝ բեկվածքներով: Օ. թ-ի կամարային մասում հաճախ տեղադրված են հրաբխային ապարատների գծային շարքեր կամ կուտակներ:
- B-4. ВАЛАНЖИНСКИЙ ЯРУС, ВАЛАНЖИН** (Նևշատել ք-ի մոտ գտնվող Վալանժին, Valangin, դոյակի անունից, Շվեյցարիա) – **ՎԱԼԱՆՇԻՆԻ(ՅԱՆ) ՀԱՐԿ, ՎԱԼԱՆՇԻՆ, VALANGINIAN**, կավճի համակարգի ստորին բաժնի ներքևից երկրորդ հարկ:
- B-5. ВАЛАХСКАЯ СКЛАДЧАТОСТЬ – ՎԱԼԱԽՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, VALAKHIAN FOLDING**, ալպյան ծալքավորության պլեյստոցենյան փուլ:
- B-6. ВАЛДАЙСКАЯ ЛЕДНИКОВАЯ ЭПОХА – ՎԱԼԴԱՅԱՆ ՍԱՈՑԻԱԼՆԱՅԻՆ ԴԱՐԱՎԱՐԳ, VALDAI ICE AGE**, արևելաեվրոպական հարթավայրի ուշ չորրորդական (70-11 հազ. տ. առաջ) սառցապատման դարակարգ, որի ժամանակ սառցադաշտերը հասել են մինչև ժամանակակից Վալդայան բարձունքները: Ըստ ժամանակի՝ համապատասխանում է Արմ. Եվրոպայի վյուրմի և վիսլինյան սառցապատմումներին:
- B-7. ВАЛУН – ՄԵԾԱՎԼԱՔԱՐ, ՎԱԼՈՒՆ, BOULDER, COBBLE**, ապարի խոշոր (10 սմ և ավել) մշակված (կլորացված) բեկոր: Ըստ ծագման՝ առանձնացնում են սառցադաշտային, դեյուվիալ, հեղեղաբերուկ և գետային Մ.:
- B-8. ВАЛУННАЯ ГЛИНА – ՄԵԾԱՎԼԱՔԱՐԱՅԻՆ (ՎԱԼՈՒՆԱՅԻՆ) ԿԱՎ, BOULDER CLAY, TILL**, սառցադաշտային կամ հեղեղաբերուկ ավազախառն կավ, որն իրենից ներկայացնում է կավային նյութի, ալևրիտի, ավազի, տարբեր ապարների տարբեր չափի բեկորների խառնուրդ: Բնորոշ է գորշ ու մոխրագույն գունավորումը և շերտավորության բացակայությունը:
- B-9. ВАЛУННЫЙ ПЕСОК – ՄԵԾԱՎԼԱՔԱՐԱՅԻՆ (ՎԱԼՈՒՆԱՅԻՆ) ԱՎԱՁ, BOULDER SAND**, ավազ, որը պարունակում է մանրակուպիճ, գլաքար և մեծագլաքար: Սովորաբար հանդիսանում է սառցաբերուկ նյութի վերավազման արդյունք:
- B-10. ВАЛУНЫ ЛЕДНИКОВЫЕ – ՍԱՈՑԻԱԼՆԱՅԻՆ ՄԵԾԱՎԼԱՔԱՐԵՐ (ՎԱԼՈՒՆՆԵՐ), GLACIAL BOULDERS**, ապարների հարթեցված, մշակված, հաճախ սառցադաշտային խազերով, քերծվածքներով, նրբագծերով խոշոր բեկորներ:

- B-11. ВАНАДАТЫ – ՎԱՆԱԴԱՏՆԵՐ, VANADATES**, միներալների խումբ, որն իրենից ներկայացնում է օրթովանադիումային թթվի  $H_3(VO_4)$  տարբեր կազմի ու բարդության աղեր: Հայտնի են մոտ 50 միներալներ, որոնցից շատերը հազվագյուտ են: Առավելապես հայտնի են պոլիտերիտը  $Bi(VO_4)$ , դեկլուազիտը, ֆոլբորտիտը  $Cu_3(VO_4)_2 \cdot 3H_2O$ , կարնոտիտը, վանադինիտը:
- B-12. ВАНАДИЕВЫЕ РУДЫ – ՎԱՆԱԴԻՈՒՄԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, VANADIUM ORES**, բնական միներալային գոյացություններ, որոնք պարունակում են վանադիումի այնպիսի քանակ, որի կորզումը տնտեսապես նպատակահարմար է: Վանադիումը հանքաքարերում գտնվում է խառնուրդի ձևով (0,1-0,49 %  $V_2O_5$ ) մագնետիտում, իլմենիտում, ռուտիլում կամ սեփական միներալներում՝ վանադինիտում (11-19 %), դեկլուազիտում (16-23 %), կարնոտիտում (16-21 %) և այլն: Հնքվ-երի մեծ մասը, որոնց հանքանյութերից կորզվում է վանադիում, համալիր են, դրանցից ստացվում են նաև երկաթ, տիտան, ուրան, կապար, ցինկ, պղինձ, ալյումին, ֆոսֆոր: Վ. հ-ի արդյունաբերական հնքվ-երը ըստ ծագման լինում են մագնայական, հպումամետասոմատիկական, արտածին (նստվածքային և օքսիդացման զոնաներ):
- B-13. ВАНАДИЙ, V – ՎԱՆԱԴԻՈՒՄ, VANADIUM**, Մենդելեևի պարբերական համակարգի V խմբի քիմ. տարր, արծաթավուն-մոխրագույն մետաղ է: Երկրակեղևում միջին պարունակությունը 0,02 % է (ըստ զանգվածի):
- B-14. ВАНАДИНИТ – ՎԱՆԱԴԻՆԻՏ, VANADINITE**, վանադատների դասի միներալ, [օրթովանադինային թթվի,  $H_3(VO)_4$  աղեր], բյուրեղանում է հեքսագոնային համակարգում, հանդիպում է մանր հատվածակողմային բյուրեղներով, բողբոջանման կուտակներով, հողանման զանգվածներով: Գույնը՝ դեղին, գորշ, կարմիր: Կարծրությունը՝ 2,7-3: Առաջանում է այն հնքվ-երի օքսիդացման զոնայում, որոնց հանքանյութերը պարունակում են գալենիտ: Մեծ կուտակումների դեպքում վանադիումի հանքանյութ է:
- B-15. ВАРИАЦИИ МАГНИТНЫЕ – ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՓՈՓՈԽԱՐԿՈՒՄՆԵՐ (ՎԱՐԻԱՑԻԱՆԵՐ), MAGNETIC VARIATIONS**, Երկրի մագնիսական դաշտի փոփոխություններն են ժամանակի ընթացքում: Երկրամագնիսականությունում Մ. փ. որոշվում են որպես տարբերություն Երկրի մագնիսականության տարրերի դիտարկվող նշանակության և երկարատև ժամանակահատվածում (ամիս, տարի) նրանց միջին նշանակության միջև: Վիճակագրական մշակումներով դրանց մեջ դիտարկվում է պարբերականություն (արևաօրային, լուսնաօրային և տարեկան): Մ. փ-ի պատճառը իոնոլորտում գոյություն ունեցող հոսանքներն են:
- B-16. ВАРИОЛЫ (ուշ լատ. variola – պալարիկ, բշտիկ, պղպջակ) – ՎԱՐԻՈՒՆԵՐ, ԲՇՏԻՎՆԵՐ, VARIOLES**, զնդակերպ միներալային գոյացություններ (կորեկի հատիկից մինչև սիսեռի հատիկի չափի) աֆանիտային բազալտային ապարներում (վարիոլիթներում), արտահայտվում են այդ ապարների հողմահարված մակերևութում, ունեն ծաղկասպիի տեսք և ճառագայթաթելավոր կամ նրբաճյուղ կազմություն: Դրանք ներկայացված են պլազիոկլազով կամ երկու և ավել միներալների (պլազիոկլազ, ավգիտ և այլն) ներաճումով:
- B-17. ВАРИОЛИТ (ուշ լատ. variola – բշտիկ, պղպջակ) – ՎԱՐԻՈՒՆԻԹ, ԲՇՏԻՎԱՔԱՐ, VARIOLITE**, բազալտի կամ դիաբազի տեսակի պինդ հրաբխային ապար, որը լցված է մինչև սիսեռի մեծության շառավղային-ճառագայթավոր կազմության գնդիկներով (վարիոլներով):
- B-18. ВАРИОМЕТР ГРАВИТАЦИОННЫЙ (լատ. vario – փոփոխում են և հուն. metréo – չափում են) – ԶԳՈՂԱԿԱՆ (ԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ) ՎԱՐԻՈՄԵՏՐ (ՓՈՓՈԽԱ-**

- ՉԱՓ), GRAVITY VARIOMETER**, ձգողական դաշտի պոտենցիալի չափման սարք: Կիրառվում է մեծ հորիզոնական գրադիենտ ունեցող մարզերի ձգողական դաշտի մանրամասն ուսումնասիրման համար, գլխ. երկաթահանքային և բազմամետաղական հնքվ-երի հետախուզման և մանրամաս(ն)ման համար:
- В-19. ВАРИССКАЯ СКЛАДЧАТОСТЬ – ՎԱՐԻՍՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, VARISCIAN FOLDING**, տե՛ս Герцинская складчатость:
- В-20. БАТТЫ** (գերմ. Watten, հոլանդերեն wadden-ից – ափամերձ ծանծաղուտ) – **ՎՍՏԵՐ, MUD FLATS**, մակընթացային ծովերի մերձափնյա ցածրահարթ գոտի, որը մակընթացության ժամանակ ծածկվում է ջրով:
- В-21. ВЕГЕНЕРА ГИПОТЕЗА – ՎԵԳԵՆԵՐԻ ՎԱՐԿԱԾ, WEGENER HYPOTHESIS**, առաջարկվել է գերմ. երկրաֆիզիկոս Վեգեների կողմից 1912-ին: Հիմքում ընկած է այն պատկերացումը, որ գրանիտային շերտից բաղկացած մայր ցամաքները երկրակեղևի հավասարակշիռ վիճակում լողում են ստորադիր բազալտային շերտի վրա, տե՛ս **Мобилизм**:
- В-22. ВЕЕРООБРАЗНАЯ СКЛАДКА – ՀՈՎՅԱՐԱԶԵՎ ԾԱԼՔ, FAN FOLD, FANSHAPED FOLD**, ապարների ծալք, որի թևերը դեպի վեր հովհարածն բաժանվում են՝ առանցքային հարթությունից դեպի կողերը:
- В-23. ВЕЗУВИАН** (գտնված վայրի՝ Վեզուվի լեռան անունից, Իտալ.) – **ՎԵՉՈՒՎԻԱՆ, VESUVIANITE**, միներալ սիլիկատների դասից: Բյուրեղանում է տետրագոնային համակարգում: Առաջացնում է կարծ սյունածև բյուրեղներ, շառավղաճառագայթային ագրեգատներ, խիտ և հողանման զանգվածներ: Գույնը՝ մուգ կանաչ, ձիթենու կանաչ, կանաչագորշ, հազվադեպ՝ անգույն: Կարծրությունը՝ 6,5: Հպունակօրինակներային ապարների և սկառնների բնորոշ միներալ է:
- В-24. ВЕК ГЕОЛОГИЧЕСКИЙ – ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՐ, GEOLOGICAL AGE**, երկրաժամանակագրական ստորաբաժանում, ստորադաս է երկրբ. դարակարգին: Ժամանակահատված, որի ընթացքում կուտակվել են երկրաբանական հարկ կազմող ապարաշերտերը: Տևողությունը պալեոզոյում մոտ 10 մլն. տ. է, մեզոզոյում ու կայնոզոյում՝ 5-6 մլն. տ.:
- В-25. ВЕК ЖЕЛЕЗНЫЙ – ԵՐԿԱԾԻ ԴԱՐ, IRON AGE**, մարդկային մշակույթի զարգացման մինչպատմական փուլ, որը հաջորդում է բրոնզի դարին: Սկսվել է Եգիպտոսում 1300 տ. մ. թ. ծ., Եվրոպայում մոտ 1000 տ. մ. թ. ծ.: Այդ ժամանակ բացահայտվել է հանքանյութից երկաթ ստանալու եղանակը:
- В-26. ВЕК КАМЕННЫЙ – ՔԱՐԻ ԴԱՐ, STONE AGE**, մարդկային մշակույթի զարգացման փուլ՝ սկսած քարե գործիքների հանդես գալուց մինչև պղնձյա և բրոնզե գործիքների տարածումը: Բաժանվում է՝ պալեոլիթ (հին քարի դար), մեզոլիթ (միջին քարի դար) և նեոլիթ (նոր քարի դար): Ք. դ. սկսվել է մոտ 800 հազ. տ. մ. թ. ծ. և ավարտվել է Եվրոպայում մոտ 4000 տ. մ. թ. ծ.:
- В-27. ВЕКОВЫЕ ДВИЖЕНИЯ ЗЕМНОЙ КОРЫ – ԵՐԿՐԱՎԵՂԵՎԻ ԴԱՐԱՎՈՐ ՀԱՐԺՈՒՄՆԵՐ, SECULAR MOVEMENTS OF THE EARTH'S CRUST**, երկրակեղևի դանդաղ շարժումներ (բարձրացումներ և իջեցումներ), որոնք հանգեցնում են ցամաքի բարձրության, ծովի խորության փոփոխության, ինչպես նաև ցամաքի վրա ծովարշավի (տրանսգրեսիայի) կամ ծովի հաշվին ցամաքի լայնացման (ծովիետրնթացության):
- В-28. ВЕЛИКИЕ АККУМУЛЯТИВНЫЕ РАВНИНЫ – ՄԵԾ ԿՈՒՏԱԿՈՒՄԱՅԻՆ ՀԱՐԹԱՎԱՅՐԵՐ, GREAT PLAINS**, խոշոր տեկտ. իջվածքներում տեղաբաշխված հարթավայրեր, որոնք լցված են մեզոկայնոզոյան ծովային և ցամաքային նստվածքներով (օր.՝ Արևմտասիբիրականը):

- B-29. ВЕНД** (հին սլավոնական վեճեր կամ վեճեր գեղի անունից) – **ՎԵՆՌ, VEN-DIAN**, ԽՍՀՄ ընդհանուր շերտագրական սանդղակի վերին պրոտերոզոյի ամենավերին ստորաբաժանում, անմիջապես նախորդում է քեմբրիին: Մոտավոր հասակային միջակայքը  $680 \pm 20 - 570 \pm 20$  մլն. տ.: Հնէաբանորեն և հնաշխարհագրականորեն որոշակի առանձնացվում է ռիֆեյից և քեմբրիից: Առանձնացվել է 1950 թ. Բ. Սոկոլովի կողմից՝ Ռուսական պլատֆորմի արմ. մասում: Այժմ Վ. դիտարկվում է որպես պալեոզոյի ստորին համակարգ:
- B-30. ВЕНЛОКСКИЙ ЯРУС, ВЕНЛОК** (Շրոպշիրում գտնվող Վենլոկ տեղանքի անունից, Անգլ.) – **ՎԵՆԼՈԿԻ(ՅԱՆ) ՀԱՐԿ, ՎԵՆԼՈԿ, VENLOCIAN**, սիլուրի համակարգի ստորին բաժնի ներքևից երկրորդ հարկ:
- B-31. ВЕНТИЛЯЦИЯ ШАХТЫ – ՀԱՆՔԱՅՈՐԻ ՕՂԱՓՈԽՈՒՄ, MINE VENTILATION**, միջոցառումների համալիր՝ նպատակաուղղված հանքահորի բոլոր գործող լեռնային փորվածքներում աշխատանքների կատարման համար անհրաժեշտ մթնոլորտի պահպանմանը:
- B-32. ВЕРМИКУЛИТ** (լատ. vermiculus – որդնիկ) – **ՎԵՐՄԻԿՈՒԼԻՏ, VERMICULITE**, միներալ ջրափայլարների խմբից, մագնեզիումի ու երկաթի շերտավոր ջրային ալյուրոսիլիկատ, մոտավոր քիմ. կազմը  $Mg_x[Mg, Fe]_{3-x}[AlSi_3O_{10}](OH)_2 \cdot 4H_2O$ : Բյուրեղանում է մոնոկլինային համակարգում: Առաջացնում է ոսկեգույն-դեղին կամ գորշ թեփուկավոր ագրեգատներ, նրբահատիկավոր զանգվածներ: Հերձումը խիստ կատարյալ է, մասնատվում է առանձին թերթիկների: Կարծրությունը՝ 1-1,5: Ծագումը գլխ. վերնածնային (հիպերզեն) է (հողմահարման կեղևներում): Տաքացնելիս ուռչում է, ծավալը մեծանում է 10-20 անգամ: Վ. օգտագործվում է որպես բետոնի թեթև լցանյութ, հրակայուն, ջերմա- և ծայնապահպանիչ նյութերի ստացման համար:
- B-33. ВЕРТИКАЛЬНАЯ ЦИРКУЛЯЦИЯ** (լատ. verticalis – ուղղաձիգ) – **ՈՒՂԱՁԻԳ ՇՐՁԱՊՏՈՒՅՑ (ՑԻՐԿՈՒԼՅԱՑԻԱ), VERTICAL CIRCULATION**, ջրավազանում ջրային զանգվածի ուղղաձիգ շարժում: Հարուցվում է լուղարկման և ջրի մակարդակը բարձրացնող քամիների կողմից, տարբեր ջրային զանգվածների խառնման ժամանակ մակերևութային ջրերի խտացման հետևանքով և այլն:
- B-34. ВЕРТИКАЛЬНЫЕ ДВИЖЕНИЯ** (լատ. verticalis – ուղղաձիգ) – **ՈՒՂԱՁԻԳ ՇԱՐժՈՒՄՆԵՐ, VERTICAL MOVEMENTS**, երկրակեղևի շարժումներ՝ առավելապես երկրի մակերևութին ուղղաձիգ կամ շառավղային (երկրի պատկերի նկատմամբ) ուղղություններով:
- B-35. ВЕРТИКАЛЬНЫЙ МАСШТАБ – ՈՒՂԱՁԻԳ ՍԱՄՇՏԱԲ (ՉԱՓՑՈՒՅՑ, ՉԱՓԱԳԻԾ), VERTICAL SCALE**, օգտագործվում է տեղագրական, երկրբ. և այլ պրոֆիլների կազմման ժամանակ բարձրություններն արտահայտելու համար: Որպես կանոն, Ու. մ., ավելի արտահայտիչ լինելու համար, խոշոր է հորիզոնականից:
- B-36. ВЕРТИКАЛЬНЫЙ СБРОС – ՈՒՂԱՁԻԳ ՎԱՐՆԵՏՔ, VERTICAL FAULT**, ապարի տեղաշարժ ուղղաձիգ խզվածքով, տե՛ս Сброс:
- B-37. ВЕРТИКАЛЬНЫЙ ТЕМПЕРАТУРНЫЙ ГРАДИЕНТ – ՈՒՂԱՁԻԳ ՋԵՐՄԱՍԻՏԻՃԱՆԱՅԻՆ ԳՐԱԴԻԵՆՏ (ԱՍԻՏԻՃԱՆԱՓՈԽՈՒՄ), VERTICAL TEMPERATURE GRADIENT**, միավոր տարածությունում ուղղաձիգ ուղղությամբ օդի ջերմաստիճանի փոփոխություն: Դրական է հաշվվում, երբ ջերմաստիճանն ըստ բարձրության ընկնում է, հակառակ դեպքում Ու. ջ. գ. բացասական է: Ներքնոլորտում գրադիենտի մեծությունը  $0.65^\circ\text{C}$  է 100 մ-ում:
- B-38. ВЕРХНИЙ УРОВЕНЬ ДЕНУДАЦИИ – ԼԵՐԿԱՅՄԱՆ (ԴԵՆՈՒՂԱՑԻԱՅԻ) ՎԵՐԻՆ ՍԱՎԵՐԱՈՒՅԹ, GIPFELFLUR, SUMMIT-LEVEL**, երևակայական մակերևութ, որը



կարելի է տանել երկրագնդի ամենաբարձր գագաթներով: Այդ մակերևույթից (8-9 կմ) բարձր լինել չի կարող ոչ մի գագաթ:

**B-39. ВЕРХНЯЯ МАНТИЯ ЗЕМЛИ – ԵՐԿՐԻ ՎԵՐԻՆ ՄԻՋՆԱՊԱՏՅԱՆ (ՄԻՋՆՈՒՈՐՏ, ՍԱՆՏԻԱ), UPPER MANTLE OF THE EARTH**, երկրոլորտ (միջնոլորտի վերնամաս), տեղաբաշխված է երկրակեղևի և ստորին միջնապատյանի միջև՝ Մոհորովիչի մակերևույթից ներքև՝ մինչև մոտ 900 կմ խորությունը: Ե. վ. մ-ի վերին շերտը երկրակեղևի հետ կազմում է կարծր քարոլորտը, դրա տակ տեղադրված է թույլուլորտը (ասթենոսֆերան): Տարբեր տեկտ. կառուցվածքների (ծալքավոր մարզեր, պլատֆորմներ) Ե. վ. մ-ի կազմում կան տարբերություններ: Ե. Վ. մ. կարևոր դեր է խաղում այն գործընթացների ձևավորման մեջ, որոնք պայմանավորում են երկրակեղևում տեկտ. շարժումները, մագնայականությունը, փոխակերպությունը:

**B-40. ВЕРХОВОДКА – ՎԵՐՆԱՋՈՒՐ, VERKHOVODKA**, օդահագեցման զոնայում համատարած տարածում չունեցող անճնշումային ստր. ջրեր: Պարբերաբար կուտակվում են ի հաշիվ ուժգին տեղումների և անհայտանում են գոլորշիացման կամ ավելի խոր հորիզոններ ներթափանցելու հետևանքով:

**B-41. ВЕРХОВЬЕ РЕКИ – ԳԵՏԻ ՎԵՐԻՆ ՀՈՍԱՆՔ(ՆԵՐ), RIVER HEAD, HEADWATERS, UPPER COURSE OF RIVER**, գետի վերին տեղամաս, որն աչքի է ընկնում ամենամեծ թեքություններով և համապատասխանում է ջրի հոսանքի ամենամեծ արագություններին:

**B-42. ВЕРШИНА – ԳԱՎԱԹ, SUMMIT**, բարձրության (բլրաշարի, լեռան, լեռնաշղթայի) ամենաբարձր մաս, որից տեղանքը ցածրանում է:

**B-43. ВЕСТФАЛЬСКИЙ ЯРУС, ВЕСТФАЛ** (Գերմ. պատմ. Վեստֆալյան մարզի անունից) – **ՎԵՍՏՖԱԼՅԱՆ ՀԱՐԿ, ՎԵՍՏՖԱԼ, WESTFALIAN**, Արմ. Եվրոպայի քարածխային համակարգի միջին բաժնի հարկ: Համապատասխանում է ԽՍՀՄ-ում ընդունված սանդղակի բաշխարկան հարկի մի մասին և մոսկովյան հարկին:

**B-44. ВЕТРОВАЯ ЭРОЗИЯ – ՀՈՂՄԱՅԻՆ ՈՂՈՎԱՄԱՇՈՒՄ (ԷՐՈԶԻԱ), WIND EROSION, DEFLATION**, փուխր նյութի (ավազ, լոս և այլն) դուրս քշումը քամու միջոցով՝ քամու գործունեության կենտրոնացման որոշակի գծերի երկայնքով:

**B-45. ВЕЧНОЗЕЛЁНЫЕ РАСТЕНИЯ – ՄՇՏԱԿԱՆԱԶ (ՄՇՏԱԳԱԼԱՐ) ԲՈՒՅՍԵՐ, EVERGREEN PLANTS**, տերևները պահպանվում են ամբողջ տարին: Տարածված են գլխ. խոնավ կլիմայով մերձարևադարձային և արևադարձային մարզերում:

**B-46. ВЗБРОС – ՎԵՐՆԵՏՔ, ՎԵՐՆԵՏՈՒԿ, REVERSED FAULT, UPTHROW FAULT**, ապարների տեղաշարժը բեկվածքով՝ կապված երկրակեղևի մեկ բլրկի՝ մյուսի նկատմամբ բարձրացման հետ: Սովորաբար Վ-ի տեղաշարժիչ հարթության անկման ամենափոքր անկյունը համարվում է 45°, երբեմն՝ <60°-ից: Եթե անկյան մեծությունը 45° և 60°-ի միջև է, առաջակվում է օգտագործել «վերնետքավրաշարժ» տերմինը: Եթե հարթությունը սակավաթեք է, ապա խզվածքը վերագրվում է վրաշարժին: Վ-երը հիմնականում առաջանում են շոշափողական (տանգենցիալ) սեղմման պայմաններում՝ հաճախ կապված ծալքավորման հետ:

**B-47. ВЗБРОСО-СДВИГ – ՎԵՐՆԵՏՔ-ՏԵՂԱՇԱՐԺ (Վ-ԿՈՂԱՇԱՐԺ), REVERSED FAULT DISPLACEMENT**, տե՛ս Сдвиго-взброс:

**B-48. ВЗВЕШЕННЫЕ НАНОСЫ – ԿԱԽՈՒԹԱՅԻՆ ՋՐԱԲԵՐՈՒԿՆԵՐ (ՈՂՈՎԱԿՈՒՏԱԿՆԵՐ), SUSPENDED LOAD**, ջրային հոսքում կախված վիճակում տեղափոխվող պինդ մասնիկներ: Մերձհատակային ջրային մրրիկները ներառում և բարձրացնում են ջրաբերուկի մասնիկները՝ հոսքի զանգվածում՝ պայմանավորելով դրանց շարժումը ջրի հետ միասին:

- B-49. ВЗРЫВНОЕ ИЗВЕРЖЕНИЕ – ՊԱՅԹՈՒՄԱՅԻՆ ԺԱՅԹՐՈՒՄ, EXPLOSIVE ERUPTION, EXPLOSIVE EJECTION**, հրաբխի ժայթքում՝ մագմայական գազերի պայթման հետևանքով: Ուղեկցվում է հրաբխաերախից մեծ քանակությամբ փուխր նյութերի (մոխիր, ռումբեր, մեծաբեկորներ) արտամետմամբ:
- B-50. ВЗРЫВНОЕ РАЗРУШЕНИЕ – ՊԱՅԹՈՒՄԱՅԻՆ ՔԱՅՔԱՅՈՒՄ, BLASTING DESTRUCTION**, պայթման ազդեցության տակ պինդ միջավայրի առանձին անջատությունների բաժանման արագ գործընթաց:
- B-51. ВЗРЫВНОЙ ИНТЕРВАЛ – ՊԱՅԹՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՔ, BLASTING INTERVAL**, երկրաշարժական պրոֆիլի տեղամաս՝ պայթման հարևան կետերի միջև:
- B-52. ВЗРЫВНЫЕ РАБОТЫ – ՊԱՅԹԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, BLASTING**, պայթուցիկ նյութերի լիցքերի նախապատրաստման և պայթման հարուցման գործողությունների ամբողջություն:
- B-53. ВЗРЫВЧАТЫЕ ВЕЩЕСТВА – ՊԱՅԹՈՒՑԻԿ ԱՅՈՒԹԵՐ, EXPLOSIVES, BLASTING AGENTS**, քիմ. միացություններ կամ մեխ. խառնուրդներ, որոնք արտաքին ազդեցություններից պայթում են:
- B-54. ВИБРОСЕЙСМИЧЕСКИЙ МЕТОД РАЗВЕДКИ – ՅԵՏԱԽՈՒՉՈՒԹՅԱՆ ԹՐԹՈՒՆԿՐԱՇԱԿԱՆ (ԹՐԹՈՒՍԵՅՄԻԿԱԿԱՆ) ՄԵԹՈՂ, VIBROSEISMIC METHOD OF EXPLORATION**, երկրաշարժական հետախուզության մեթոդ, որում առաձգական ալիքների առաջացման համար օգտագործվում են թրթռային աղբյուրներ, որոնք հնարավորություն են տալիս կառավարել ու հարուցել ազդանշանի պարամետրերը: Յ. թ. մ-ի առավելություններն են՝ տնտեսական արդյունավետությունը՝ հորատման և պայթեցման աշխատանքների բացակայության հետևանքով, անվտանգությունը, սեյսմիկական աշխատանքների կատարումը՝ արդյունաբերական խանգարումների զգալի մակարդակի պայմաններում:
- B-55. ВИВИАНИТ** (անգլ. միներալաբան Ջ. Գ. Վիվիանի, I. G. Vivian, անունից) – **ՎԻՎԻԱՆԻՏ, VIVIANITE**, միներալ, երկարժեք երկաթե ջրային ֆոսֆատ,  $F_3[PO_4]_2 \cdot 8H_2O$ : Բյուրեղանում է մոնոկլինային համակարգում: Առաջացնում է սպիտակ հողանման ագրեգատներ, կեղևներ, հազվադեպ՝ ասեղնակերպ բյուրեղների շառավղային-ճառագայթավոր սերտաձվածքներ: Թարմ նմուշները անգույն են, օքսիդացվածները՝ ինդիգոյի կապույտ մինչև սևակապույտ: Կարծրությունը՝ 1,5-2: Տարածված է ֆոսֆորիտով հարուստ երկաթահանքային նստվածքային հնքվ-երում, տորֆահնքվ-երում, անագի ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվ-երի վերնածնային (հիպերգենեզի) զոնայում: Օգտագործվում է որպես միներալային գունանյութ (կապույտ ներկ):
- B-56. ВИД (Spesies) – ՏԵՍԱԿ, SPECIES**, կենսբ. այն անհատների համախմբում, որոնք միմյանց մոտ են կազմությամբ և ծագել են ընդհանուր տեսակային նախահորից՝ տվյալ կենսաշխ. մարզի սահմաններում՝ արտաքին միջավայրի ազդեցությամբ և բնական ընտրության հետևանքով: Միներալաբանությունում տեսակը որոշվում է միներալի կազմով և նրա բյուրեղային կառուցվածքով:
- B-57. ВИД МОНОТИПИЧЕСКИЙ – ՄԵՆԱՏԻՊ ՏԵՍԱԿ, MONOTYPIC SPECIES**, ենթատեսակների չբաժանվող տեսակ:
- B-58. ВИД НОВЫЙ (Species nova) – ՆՈՐ ՏԵՍԱԿ, NEW SPECIES**, տեսակ, որը հեղինակի կողմից որոշվել է որպես նոր տեսակ և նկարագրվել ու հրատարակվել է՝ «Կենդանական անվանացուցակի միջազգային օրենսգրքի» պահանջներին համապատասխան:
- B-59. ВИД РЕЛИКТОВЫЙ – ՄԱՅՈՒԿԱՅԻՆ ՏԵՍԱԿ, RELICT SPECIES**, կենսբ. կենդանիների կամ բույսերի տեսակ, որը որևէ վայրում պահպանվել է որպես ավելի վաղ գոյություն ունեցող ֆաունայի կամ ֆլորայի մնացուկ:

- B-60. ВИД СИММЕТРИИ – ՀԱՍԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ, TYPE OF SYMMETRY,** բյուրեղային բազմանիստերի համաչափության տարրերի տեսականորեն հնարավոր համախմբություն: Չ. տ-ների ընդհանուր թիվը 32 է, հոմ. Класс симметрии – համաչափության դաս:
- B-61. ВИЗЕЙСКИЙ ЯРУС, ВИЗЕЙ (Վիզե ք.-ի անունից, Բելգիա) – ՎԻՉԵԻ(ՅԱՆ) ՀԱՐԿ, ՎԻՉԵ, VISEAN,** քարածխային համակարգի ստորին բաժնի հարկ (ԽՍՀՄ ընդունված սխեմայում) կամ ստորին բաժնի (դինամտի) վերին հարկ (Արմ. Եվրոպայում ընդունված սխեմայում):
- B-62. ВИЛЛАФРАНКСКИЙ ЯРУС (СЕРИЯ) (Վիլաֆրանկ, Villafrance, ք.-ի անունից, Յու. Իտալ.) – ՎԻԼԱՖՐԱՆԿԻ(ՅԱՆ) ՀԱՐԿ (ՍԵՐԻԱ), VILLAFRANCHIAN,** ցամաքային նստվածքներ, որոնց ստորին մասը պատկանում է պլիոցենին, իսկ միջին ու վերին մասերը՝ չորրորդական համակարգին:
- B-63. ВИРГАЦИЯ (լատ. virga – ճյուղ) – ՃՅՈՒՂԱՎՈՐՈՒՄ, VIRGATION,** լեռնային երկրի մասնատում՝ ծալքերի ու լեռնաշթաների հովիարածն ցրվող փնջերի տեսքով:
- B-64. ВИСМУТ САМОРОДНЫЙ – ԲՆԱԾԻՆ ԲԻՍՄՈՒԹ (ՎԻՍՄՈՒԹ), NATIVE BISMUTH,** միներալ բնածին տարրերի դասից, Bi: Խիստ հազվադեպ է, առաջացնում է անկանոն ձևի հատիկներ, փետրածն, նիզակածն դեմոդրիտներ, հոծ հողանման զանգվածներ, թերթավոր ագրեգատներ: Գույնը՝ արծաթավուն սպիտակ, թարմ կտրվածքում վարդագույն երանգով: Բ. ջրաջերմային (հիդրոթերմալ) միներալ է, հանդիպում է նաև պեգմատիտներում ու արտաժայթքային ապարներում (որպես ուղեկից միներալ):
- B-65. ВИСМУТИН, ВИСМУТОВЫЙ БЛЕСК – ԲԻՍՄՈՒԹԻՆ (ՎԻՍՄՈՒԹԻՆ), ԲԻՍՄՈՒԹԻ ՓԱՅԼ, BISMUTHINITE, BISMUTH GLANCE, BISMUTHINE.** միներալ պարզ սուլֆիդների ենթադասից,  $\text{Bi}_2\text{S}_3$ , բյուրեղանում է շեղանկյունային համակարգում: Առաջացնում է մետաղական փայլով սպիտակ հողանման զանգվածներ, ասեղնավոր և շառավղային-ճառագայթավոր ագրեգատներ, ներփակվածքային հատիկներ: Հերձումը կատարյալ է մեկ ուղղությամբ: Կարծրությունը՝ 3,5: Բ. ջրաջերմային (հիդրոթերմալ) միներալ է, հանդիպում է անագավոլֆրամային երակային հնքվ-երում և գրեյզեններում, զառիկաբխսնության, պղնձաբխսնության հնքվ-երում, երբեմն՝ պեգմատիտներում: Բիսմութի հանքանյութ է:
- B-66. ВИСМУТИТ (БИСМУТИТ) – ԲԻՍՄՈՒԹԻՏ, ԲԻՍՄՈՒԹԱՔԱՐ, BISMUTHITE,** միներալ,  $\text{Bi}_2[\text{O}_2/\text{CO}_3]$ , հանդիպում է փոշենման, պինդ հողանման, ճառագայթային թելավոր, զնդանման ագրեգատներով: Գույնը՝ դեղին, կանաչավուն, շագանակագույն:
- B-67. ВИСМУТОВЫЕ РУДЫ – ԲԻՍՄՈՒԹԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, BISMUTH ORES,** բնական միներալային գոյացություններ, որոնք պարունակում են բիսմութ այն քանակներով, որոնց դեպքում նրա կորզումը տնտեսապես նպատակահարմար է: Բիսմութը հանքանյութերում գտնվում է գլխ. սեփական միներալների տեսքով, ավելի քիչ՝ խառնուրդի ձևով՝ գալենիտում և զառիկային սուլֆատներում: Հայտնի են 60 բիսմութային հանքային միներալներ, դրանցից հիմնականներն են՝ բնածին բիսմութ, բիսմութին, կոզալիթ, այկինիտ, տետրադիմիտ, բիսմութիտ և այլն: Հնքվ-երը լինում են՝ ներծին (հետնագնայական) և արտածին (էլուվիալ, դեյուվիալ, հազվադեպ՝ դեյուվիալ-ալյուվիալային ցրոններ):
- B-68. ВИСЯЧАЯ ДОЛИНА – ԿԱԽՎԱԾ ՀՈՎԻՏ, HANGING VALLEY,** կողային հովիտ, որի հատակը չի միաձուլվում գլխավոր հովտի հատակին, այլ վերջանում է նրանից քիչ բարձր:
- B-69. ВИСЯЧЕЕ КРЫЛО – ՎԵՐՆԱԹԵՎ, ԿԱԽՎԱԾ ԹԵՎ, UPTHROW SIDE,** 1) վարմետքի թև, որը տեղադրված է տեղաշարժից հարթության (նետիչի) վրա՝ նրա թեք

դիրքում, 2) ապարների շերտի հորիզոնական կամ թեք տեղադրման դեպքում նրա սահմանափակման վերին մակերևույթում:

**B-70. ВИСЯЧИЕ ВОДЫ – ԿԱԽՎԱԾ ՋՐԵՐ, HANGING WATERS**, օդահագեցման զոնայում գտնվող ներծծման ջրեր, որոնք անբավարար սնման պատճառով չեն միախառնվում մազանոթային կամ գրունտային ջրերին և գտնվում են կախված վիճակում:

**B-71. ВИСЯЧИЙ ЛЕДНИК – ԿԱԽՎԱԾ ՍԱՌՑԱԴԱՇՏ, SLOPE GLACIER, CLIFF GLACIER**, լեռնային սառցադաշտերի տեսակ, որը տեղադրված է զառիթափ լանջերի վերին մասերի թույլ արտահայտված իջվածքներում:

**B-72. ВИТЕРИТ** (առաջին հայտնաբերողի՝ անգլ. բուսաբան և միներալաբան Ու. Վիտերինգի, W. Witering, անունից) – **ՎԻՏԵՐԻՏ, WITHERITE**, միներալ կարբոնատների դասից,  $BaCO_3$ , բյուրեղանում է շեղանկյունային համակարգում, բյուրեղները հազվադեպ են, հաճախ հանդիպում է գնդանման և ողկուզանման անջատումների տեսքով, կոպտաթելավոր զանգվածներով, ճառագայթավոր ու խիտ հատիկավոր ագրեգատներով: Գույնը՝ սպիտակից մինչև անգույն, երբեմն՝ դեղնավուն, գորշավուն, կանաչավուն երանգներով: Թափանցիկ է կամ լուսանցիկ: Կարծրությունը՝ 3,5: 4. հազվագյուտ ցածրաջերմաստիճանային ջրաջերմային (հիդրոթերմալ) միներալ է: Խոշոր կուտակների դեպքում բարիումի հունք է:

**B-73. ВИТРЕН** (լատ. vitrum – ապակի) – **ՎԻՏՐԵՆ, VITRAIN**, բրածո ածուխների գլխ. բաղադրամասերից մեկն է, ունի ուժեղ փայլ, խեցածն, կիսախեցածն կամ հարթեցված կտրվածք: Ածուխներում առկա է տարբեր հաստության ոսպնյակների կամ շերտիկների տեսքով: Ածխի ամենամեծ մոխրային ապակեման բաղկացուցիչ մասն է:

**B-74. ВИТРОФИРОВАЯ СТРУКТУРА, СТЕКЛОВАТАЯ СТРУКТУРА** (լատ. vitrum – ապակի) – **ՎԻՏՐՈՖԻՐՈՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ԱՊԱԿԵՆՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, GLASSY TEXTURE, VITROPHYRIC TEXTURE**, հրաբխային ապարների կամ նրանց հիմնական մասի կառուցվածք՝ կազմված գլխ. ապակեման նյութից:

**B-75. ВИТРОФИРЫ** (լատ. vitrum – ապակի և հուն. porphyra – ծիրանի գույն, ծ. ներկ) – **ՎԻՏՐՈՖԻՐՆԵՐ, GLASS-PORPHYRY, VITROPHYRES**, պորֆիրային կառուցվածք ունեցող ապակեման ժայթքաքարային ապարների հավաքական անվանում [գլխ. քվարցային կամ օրթոկլազային պորֆիրներ՝ ապակեման (վիտրոֆիրային) հիմնական զանգվածով]:

**B-76. ВКЛЮЧЕНИЯ – ՆԵՐԱՌՈՒԿՆԵՐ (ՆԵՐՓԱԿՈՒՄՆԵՐ), INCLUSIONS**, ապարագրությունում օտար նյութերի բեկորների ներփակվածքներ ապարի մեջ:

**B-77. ВКЛЮЧЕНИЯ В МИНЕРАЛАХ – ՆԵՐԱՌՈՒԿՆԵՐ (ՆԵՐՓԱԿՈՒՄՆԵՐ) ՄԻՆԵՐԱԼՆԵՐՈՒՄ, INCLUSIONS IN MINERALS**, այլ միներալի հատիկների կամ միներալագոյացման միջավայրի (հալույթի, լուծույթի, գազային փուլի) մասնիկների ներամփոփվածքներ միներալներում, որոնց միներալը ներառել է ածման գործընթացում կամ անջատվել են պինդ լուծույթի տրոհման ժամանակ:

**B-78. ВКЛЮЧЕНИЯ ГОМОГЕННЫЕ** (հուն. homogenēs – համասեռ) – **ՉԱՄԱՍԵՆ ՆԵՐԱՌՈՒԿՆԵՐ (ՆԵՐՓԱԿՈՒՄՆԵՐ), HOMOGENEOUS INCLUSIONS**, առաջացել են նույն մազմայից, որից առաջացել է դրանք ներփակող ապարը:

**B-79. ВКРАПЛЕННИКИ, ФЕНОКРИСТАЛЛЫ** (լատ. feno – անում են բացահայտ, կատարում են բացահայտ) – **ՆԵՐՓԱԿՎԱԾՔՆԵՐ, ՖԵՆՈՔՐԻՏՈՒԵՐՆԵՐ (ԲԱՑԱՅԱՅՏ ԲՅՈՒՐԵՐՆԵՐ), PHENOCRYSTS, INSETS**, միներալի խոշոր բյուրեղներ, որոնք ներփակված են մազմայական ապարների ապակեման կամ մանրաբյուրեղային ընդհանուր զանգվածում: Դրանք աչքի են ընկնում իրենց մեծությամբ և կանոնավոր ձևով: Ն. բնորոշ են պորֆիրային կառուցվածք ունեցող ապարներին:

- B-80. ВКРАПЛЕННОСТЬ – ՆԵՐՓԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ, IMPREGNATION,** ներփակող ապարների մեջ ինչ-որ չափով հավասարաչափ ցրված անկանոն ձևի հանքային միներալների ու մանր կուտակումների առկայություն:
- B-81. ВЛАГОЁМКОСТЬ ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ԽՈՆԱՎԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ (ԽՈՆԱՎԱՏԱՐՈՂՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ), ROCK'S SPECIFIC RETENTION, ROCK'S MOISTURE CAPACITY,** ապարի խոնավություն (ջուր) կլանելու և այն իր մեջ պահելու ունակություն: Խ. արտահայտվում է կշռային կամ ծավալային միավորներով: Տարբերում են խոնավատարության հետևյալ տեսակները՝ խոնավածուծային (հիգրոսկոպիկ), առավելագույն մոլեկուլային, մազանոթային և լրիվ (բացարձակ):
- B-82. ВЛАГОЁМКОСТЬ АБСОЛЮТНАЯ – ԲԱՅԱՐՉԱԿ ԽՈՆԱՎԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ, ABSOLUTE MOISTURE CAPACITY,** ջրի (խոնավության) առավելագույն քանակ, որը պահվում է ապարի կողմից՝ նրա լրիվ հագեցման ժամանակ: Բ. խ. հավասար է ապարի կշռային ծակոտկենությանը: Կավերի մոտ, որոնց ծավալը խոնավանալիս մեծանում է, Բ. խ. գերազանցում է կշռային ծակոտկենությանը: Հոմ. լրիվ խոնավություն:
- B-83. ВЛАГОЁМКОСТЬ ГИГРОСКОПИЧЕСКАЯ – ԽՈՆԱՎԱԾՈՒԾԱՅԻՆ (ՀԻԳՐՈՍԿՈՊՊԻԿ) ԽՈՆԱՎԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ, HYGROSCOPIC MOISTURE CAPACITY,** խոնավության առավելագույն քանակություն, որը կարող է կլանել ապարը ջրային գոլորշիներով հագեցած օդից: Խ. խ. հաստատուն է յուրաքանչյուր ապարի համար:
- B-84. ВЛАГОЁМКОСТЬ КАПИЛЛЯРНАЯ – ՄԱՉԱՆՈՒԹՅՈՒՆ ԽՈՆԱՎԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ, CAPILLARY MOISTURE CAPACITY,** տե՛ս Капиллярная влагоёмкость:
- B-85. ВЛАГОЁМКОСТЬ ОБЪЁМНАЯ (W) – ԾԱՎԱԼԱՅԻՆ ԽՈՆԱՎԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ, VOLUMETRIC MOISTURE CAPACITY,** ապարի մեջ եղած ջրի ծավալի ( $V_w$ ) և չոր ապարի ծավալի ( $V_d$ ) հարաբերությունը՝ արտահայտված %-ներով,  $W=V_w/V_d\%$ :
- B-86. ВЛАГОЁМКОСТЬ ПОЛНАЯ – ԼՐԻՎ ԽՈՆԱՎԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ,** տե՛ս Влагоёмкость абсолютная:
- B-87. ВЛАГОМЕР – ԽՈՆԱՎԱՉԱՓ, MOISTURE METER, MOISTURE TESTER,** ապարների կամ այլ նյութերի խոնավությունը արագորեն չափող սարք:
- B-88. ВЛАЖНОСТЬ ГОРНЫХ ПОРОД (ГРУНТА) – ԱՊԱՐԻ (ԳՐՈՒՆՏԻ) ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ, HUMIDITY OF ROCKS (GROUND),** տվյալ պահին ապարի մեջ եղած ջրի (խոնավության) քանակը, որը բացարձակ չոր ապարի կշռի համեմատությամբ արտահայտվում է %-ներով կամ միավորի մասերով (կշռային խոնավություն): Հաճախ Ա. խ. արտահայտվում է նաև ծավալային միավորներով՝ ջրի և ապարի ծավալների հարաբերությամբ (ծավալային խոնավություն), որը ցույց է տալիս ապարի ջրահագեցվածության աստիճանը:
- B-89. ВЛАЖНОСТЬ ПОЧВЫ – ՀՈՂԻ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ, MOISTURE CONTENT OF SOIL,** հողում խոնավության պարունակությունը պինդ, հեղուկ և գազանման վիճակում: Որոշվում է չոր հողի զանգվածի կամ ծավալի համեմատությամբ՝ արտահայտված ծավալներով:
- B-90. ВЛОЖЕННОЕ ЗАЛЕГАНИЕ – ՆԵՐԴՐՎԱԾ ՏԵՂԱԴՐՈՒՄ,** տե՛ս Ингрессивное залегание:
- B-91. ВМЕЩАЮЩАЯ ПОРОДА – ՊԱՐՓԱԿՈՂ ԱՊԱՐ, ENCLISING ROCK,** ապար, որում ներփակված է հանքակուտակ, երակ, ներժայթքային (ինտրուզիվ) կամ այլ երկր. մարմին: Նշված մարմինների թեք տեղադրման դեպքում Պ. ա. կոչվում է կողային ապար:
- B-92. ВНЕШНИЕ ПРОЦЕССЫ – ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՆՆԹԱՑՆԵՐ,** տե՛ս Экзогенные процессы:

- B-93. ВНЕШНИЙ ГЕОСИНКЛИНАЛЬНЫЙ ПРОГИБ – ԱՐՏԱՔԻՆ ԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԼԱՅԻՆ (ԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԼԱՅԻՆ) ԾԿՎԱԾՔ, EXTERNAL GEOSYNCLINAL DEPRESSION,** երկրակեղևի մերձերկրասինկլինալային չափավոր շարժունակ տեղամաս, որը տեղաբաշխված է հարակից պլատֆորմում կամ ներերկրասինկլինալային երկրաանտիկլինալներում և միջադիր զանգվածներում, ձևավորվում է երկրասինկլինալային ճկման փուլում, կապված է անմիջապես հասակակից երկրասինկլինալների հետ կամ դրանցից անջատված է նեղ պատվարային բարձրացումով և խոշոր բեկվածքներով: Ա. Ե. Ճ-ների համար բնորոշ են ինչպես երկրասինկլինալային, այնպես էլ անցողիկ (դեպի պլատֆորմ) ֆորմացիաները:
- B-94. ВНУТРЕННЕЕ МОРЕ – ՆԵՐՔԻՆ ԾՈՎ, INLAND SEA, ENCLOSED SEA, CONTINENTAL SEA,** դեպի ցամաք խոր մտած ծով, որը հաղորդակցվում է օվկիանոսի կամ հարակից ծովի հետ նեղուցներով: Ջրաբանական ռեժիմից կախված՝ Ն. Ծ-երը բաժանվում են ներմայրցամաքային (օր.՝ Սև ծովը) և միջմայրցամաքային (օր.՝ Միջերկրական ծովը):
- B-95. ВНУТРЕННЕРАКОВИННЫЕ (Endocochlia) – ՆԵՐԽԵՑԱՎՈՐՆԵՐ, ENDOCOCHLIA,** գլխտանի փափկամարմինների դաս, խեցին գտնվում է մարմնի ներսում կամ բացակայում է: Շատերը, հատկապես բելեննիտները, ունեն կարևոր շերտագրական նշանակություն: Վաղ կարբոն-այժմ:
- B-96. ВНУТРЕННИЕ ПРОЦЕССЫ – ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ,** տե՛ս Эндеогенные процессы:
- B-97. ВНУТРЕННЯЯ БЕРЕГОВАЯ ЛИНИЯ – ՆԵՐՔԻՆ ԱՓԱՅԻՆ ԳԻԾ, INNER SHORELINE, INTERIOR COASTLINE,** ծովալճակի (լագունայի) ափային գիծ՝ կազմված «արմատական» ցամաքից:
- B-98. ВНУТРЕННЯЯ МОРЕНА – ՆԵՐՔԻՆ ՍԱՌՑԱԲԵՐՈՒԿ (ՍՈՐԵՆ), ENGLACIAL DRIFT,** սառցադաշտի ներսում գտնվող ապարների բեկորների համախումբ:
- B-99. ВНУТРИГОРНАЯ ВПАДИНА – ՆԵՐԼԵՌՆԱՅԻՆ ԻՋՎԱԾՔ, INTERMOUNTAIN DEPRESSION,** տեկտ. իջվածք մեկ լեռնային համակարգի սահմաններում, որը այդ համակարգը բաժանում է առանձին լեռնաշղթաների (օր.՝ Կուրի իջվածք):
- B-100. ВНУТРИМАТЕРИКОВОЕ МОРЕ – ՆԵՐՍԱՅՐՑԱՍԱՔԱՅԻՆ ԾՈՎ, CONTINENTAL SEA,** ծանծաղ ծով, որը խիստ ներս է ընկած ցամաքի մեջ՝ մեկ մայր ցամաքի սահմաններում (օր.՝ Ազովի, Սպիտակ ծովերը): Ներքին ծովերի մասնավոր դեպք է:
- B-101. ВНУТРИПЛАСТОВОЕ ГОРЕНИЕ – ՆԵՐՇԵՐՏԱՅԻՆ ԱՅՐՈՒՄ, INTERBEDDING COMBUSTION,** նավթային հանքավայրերի մշակման եղանակ՝ հիմնված ածխաջրածինների արտաջերմային օքսիդացման ռեակցիայի վրա:
- B-102. ВНУТРИФОРМАЦИОННЫЙ КОНГЛОМЕРАТ – ՆԵՐՖՈՐՄԱՑԻՈՆ (ՆԵՐՎԱԶՍԱՎՈՐՈՒՄԱՅԻՆ) ՔԱՐԱԽԱՌՆՈՒՐԴ (ԽԱՌՆԱՔԱՐ, ԿՈՆԳԼՈՍԵՐԱՏ), INTERFORMATIONAL CONGLOMERATE,** տե՛ս Конгломерат впутриформационный:
- B-103. ВОГНУТАЯ РАВНИНА – ԳՈԳՎՈՐ ՀԱՐԹԱՎԱՅՐ, CONCAVE PLAIN, HOLLOW PLAIN, CENTRIPETAL PLAIN,** հարթավայր, որը եզրերից խիստ մեղմաթեք ցածրանում է դեպի կենտրոնը: Երբեմն կարող է եզրափակվել լեռներով:
- B-104. ВОДА – ՋՈՒՐ, WATER,** ջրածնի (H) և թթվածնի (O) քիմ. միացություն ( $H_2O$ ), որի մոլեկուլի զանգվածի 11.19 % կազմում է H-ը, իսկ 88.81 %-ը՝ O-ը: Հեղուկ վիճակում Ջ. անհամ է, անհոտ և անգույն: Բնության մեջ հանդիպում է պինդ (սառույց), հեղուկ և գազային (գոլորշի) վիճակում: Ջրոլորտի գլխ. բաղկացուցիչ մասն է: Ջ-ին խիստ բացառիկ դեր է հատկացվում երկրագնդի զարգացման պատմության, կյանքի ծագման, ֆիզքիմ. միջավայրի և մոլորակի եղանակի ու կլիմայի ձևավորման գործում:

- B-105. ВОДА АДСОРБЦИОННАЯ – ՄԱԿԱԿԱՆՄԱՆ (ԱԴՍՈՐԲՄԱՆ) ՋՈՒՐ, ADSORPTION WATER**, ապարի մասնիկների վրա շատ բարակ թաղանթով ջուր, որի մոլեկուլները կապված են բյուրեղային մասնիկների մակերևույթի հետ:
- B-106. ВОДА АЛЛЮВИАЛЬНАЯ – ԳԵՏԱԲԵՐՈՒԿԱՅԻՆ (ԱԼՅՈՒԿԻԱԼ) ՋՈՒՐ, ALLUVIAL WATER**, ժամանակակից կամ թաղված գետահովիտների գետաբերուկների հետ կապված ջուր:
- B-107. ВОДА АРТЕЗИАНСКАЯ (Artezium-ից՝ ֆրանս. Արտուա նահանգի հին լատ. անվանումից, որտեղ այդ ջրերը վաղուց օգտագործվել են) – ԱՐՏԵԶԻԱՆ ՋՈՒՐ, ARTESIAN WATER**, համեմատաբար խոր և խոշոր երկրք. կառուցվածքում վերևից և ներքևից ջրամերժ ապարաշերտերով սահմանափակված, ճեղքավոր, ծակոտկեն կամ կարստավորված ապարների շերտերի մեջ տեղադրված ստր. ջուր, որն ունի ճնշում, և հորատման դեպքում նրա մակարդակը կանգնում է ջրատար շերտի առաստաղից բարձր կամ շատրվանում է:
- B-108. ВОДА БЕЗНАПОРНАЯ (СВОБОДНАЯ) – ԱՆՃՆՇՈՒՄ (ՃՆՇՈՒՄԱՋՈՒՐԿ, ԱՋԱՏ) ՋՈՒՐ, GRAVITY WATER, FREE WATER**, ցամաքային ջրավազանների, ջրհոսքերի ջուր, ինչպես նաև ստր. ձգողական ջուր, որի մակերևույթը չի հպվում ջրամերժ ապարաշերտի, և այդ պատճառով ջրի մակերևույթի վրա եղած ճնշումը հավասար է մթնոլորտային ճնշմանը:
- B-109. ВОДА ВАДОЗНАЯ**, տե՛ս Вадозные воды:
- B-110. ВОДА ВОСХОДЯЩАЯ – ՎԵՐՆՆՁԱՅ ՋՈՒՐ, ASCENDING WATER**, ստր. ջուր, որին հատուկ է շարժման վերընթաց բնույթը: Վերջինը բնորոշ է ճնշումային ջրին, «ճնշումային ջուր» տերմինի հոմ:
- B-111. ВОДА ВУЛКАНИЧЕСКАЯ – ՅՐԱԲԻԱՅԻՆ ՋՈՒՐ, VOLCANIC WATER**, հրաբուխների արտավիժած գոլորշիներից առաջացած ջուր:
- B-112. ВОДА ГИГРОСКОПИЧЕСКАЯ – ԽՈՆԱՎԱԾՈՒԾ (ՅԻԳՐՈՍԿՈՊԻԿ) ՋՈՒՐ, HYGROSCOPIC WATER**, ջուր, որը չոր բնահողերը կլանում են օդից: Խ. ջ-ի քանակը կախված է օդի հարաբերական խոնավությունից, գրունտի հատիկաչափական կազմից և որոշվում է նմուշի չորացման միջոցով (105-110°C պայմաններում): Ի տարբերություն սովորական ջրի, Խ. ջ. լուծելու և ծանրության ուժի շնորհիվ շարժվելու ունակություն չունի:
- B-113. ВОДА ГРАВИТАЦИОННАЯ – ՉԳՈՂԱԿԱՆ (ԳՐԱՎԻՏԱՅԻՆ) ՋՈՒՐ, GRAVITY WATER**, ստր. ջուր, որը շարժվում է ծանրության ուժի ազդեցության տակ:
- B-114. ВОДА ГРУНТОВАЯ – ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ՋՈՒՐ, ԳԵՏՆԱՋՈՒՐ, GROUND WATER**, երկրի մակերևույթից հաշված առաջին մշտական գոյություն ունեցող ջրատար հորիզոնի ջուր, որն ունի ազատ մակերևույթ, և որի վրա ճնշումը հավասար է մթնոլորտայինին: Գ. ջ-երը հիմնականում տեղադրված են երիտասարդ փուխրբեկորային ապարների կամ արմատական ապարների հողմահարման կեղևի մեջ:
- B-115. ВОДА ДРЕНАЖНАЯ – ՑԱՄԱՔՈՒՐԿԱՅԻՆ (ԴՐԵՆԱԺԱՅԻՆ) ՋՈՒՐ, DRAINAGE WATER**, մակերևութային կամ ստր. ջուր, որը հավաքվում և հեռացվում է ցամաքուրդային (դրենաժային) կառույցներով:
- B-116. ВОДА ЖИЛЬНАЯ – ԵՐԱՎԱՅԻՆ ՋՈՒՐ, VEIN WATER**, ստր. ջուր, որը կապված է տեկտ. խախտումների կամ նրանց ուղեկցող բաց ճեղքերի հետ: Ե. ջ. նույն տեղամասի տարբեր հատվածներում ունենում է տարբեր ճնշման մակարդակ:
- B-117. ВОДА ЗОНЫ ВЫЩЕЛАЧИВАНИЯ – ՏԱՐԱԼՈՒԾՄԱՆ (ԼՎԱՑԱՋԵՐԾՄԱՆ) ՋՈՒՆԱՅԻ ՋՈՒՐ, LEACHING ZONE WATER**, ստր. ջուր, որի հանքայնացումը և քիմ. բաղադրությունը ձևավորվել են ապարների տարրալուծման գործընթացների շնորհիվ:

- B-118. ВОДА ИЛОВАЯ – ՏՂՍԱԶՈՒՐ, MUD WATER, SILT WATER, OOZE WATER,** ջրավազանների հատակի տղմային նստվածքների ծակոտիներում պարփակված ջուր, որը կազմում է տղմային դիսպերս համակարգի հեղուկ բաղադրիչը:
- B-119. ВОДА ИНФИЛЬТРАЦИОННАЯ,** տե՛ս Инфильтрационные воды:
- B-120. ВОДА ИСКОПАЕМАЯ – ԲՐԱԾՈ ՋՈՒՐ, FOSSIL WATER,** ստր. ջուր, որը ապարի մեջ պահպանվել է նախորդ երկրք. ժամանակաշրջաններից և քարագոյացման գործընթացում կրել է քիմ. բաղադրության էական փոփոխություններ: Տարբերում են նստվածքակուտակման և թաղված Բ. ջ.: Հոմ. թաղված ջուր:
- B-121. ВОДА КАПИЛЛЯРНАЯ – ՍԱԶԱՆՈՒՅՑԻՆ ՋՈՒՐ, CAPILLARY WATER,** օդահագեցման զոնայում ապարների մանր ծակոտիներում և ճեղքերում պարփակված ջուր, որը մազանոթային ձգողական ուժերի շնորհիվ բարձրանում է ապարի մազանոթներով և գրունտային ջրերից վերև առաջացնում է մազանոթային ջրերի զոնա:
- B-122. ВОДА КАРСТОВАЯ – ԿԱՐՍՏԱՅՑԻՆ ՋՈՒՐ, KARST WATER,** տե՛ս Карстовая вода:
- B-123. ВОДА КОНДЕНСАЦИОННАЯ – ԽՏԱՑՄԱՆ ՋՈՒՐ, CONDENSATION WATER,** ստր. ջուր, որն առաջանում է ապարների ճեղքերի, ծակոտիների, այլ դատարկությունների մեջ՝ մթնոլորտային խոնավության (ջրային գոլորշիների) ներթափանցման և խտացման ճանապարհով:
- B-124. ВОДА КРИСТАЛЛИЗАЦИОННАЯ – ԲՅՈՒԵՂԱՑՄԱՆ ՋՈՒՐ, CRYSTALLIZATION WATER,** տե՛ս Кристаллизационная вода:
- B-125. ВОДА МЕЖМОРЕННАЯ – ՄԻԶՄԱՈՑԱԲԵՐՈՒԿԱՅԻՆ (ՄԻԶՄՈՒԵՆԱՅԻՆ) ՋՈՒՐ, INTERMORAINAL WATER,** ստր. ջուր, որը տեղադրված է սառցաբերուկային (մորենային) նստվածքների մեջ գտնվող ծակոտկեն ապարներում:
- B-126. ВОДА МЕЖПЛАСТОВАЯ – ՄԻՋՇԵՐՏԱՅԻՆ ՋՈՒՐ, CONFINED WATER,** ստր. ջուր, որը տեղադրված է վերևից և ներքևից ջրամերժ շերտերով պարփակված ջրատար ապարների (շերտի) մեջ: Մ. ջ. սովորաբար ճնշումային է: Ի տարբերություն գրունտային ջրերի՝ Մ. ջ. վերևից ծածկված է ջրամերժ շերտով և մթնոլորտի հետ անմիջական կապ չունի:
- B-127. ВОДА МОЛЕКУЛЯРНАЯ – ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՋՈՒՐ,** տե՛ս Молекулярная вода:
- B-128. ВОДА МОРСКАЯ – ԾՈՎԱՅԻՆ ՋՈՒՐ, SEA WATER,** համաշխարհային օվկիանոսի ջուր: Ծ. ջ-ում լուծված են զանազան աղեր և ոչ մեծ քանակությամբ գազեր ու օրգանական նյութեր: Օվկիանոսի բաց մասերում ջրի հանքայնացումը կազմում է 35 գր/կգ (%<sub>0</sub> պրոմիլե):
- B-129. ВОДА НАПОРНАЯ (ВОСХОДЯЩАЯ) – ԳՆՇՈՒՄԱՅԻՆ (ՎԵՐՈՆԹԱՅ) ՋՈՒՐ, CONFINED GROUND WATER,** ջրամերժ շերտով սահմանափակված ծակոտկեն և ճեղքավոր ապարների մեջ տեղադրված ջուր, որը ջրաստատիկ ճնշում է գործադրում ծածկի ապարների վրա: Հորատելիս Գ. ջ. բարձրանում է մինչև սնման և բեռնաթափման մակարդակները միացնող հարթությունը: Եթե ռելիեֆը ցածր է այդ հարթությունից, Գ. ջ. շատրվանում է: Հոմ. արտեզյան ջուր:
- B-130. ВОДА НЕФТЯНАЯ – ՆԱՎԹԱՅԻՆ ՋՈՒՐ, ՆԱՎԹԱԶՈՒՐ, ՔԱՐՅՈՒՂԱՅԻՆ ՋՈՒՐ, OIL-FIELD WATER,** նավթային հնքվ-երում տարածված ջուր, տարբերում են եգրային, թևային (կողային), միջանկյալ և հատակային: Ն. ջ-երը սովորաբար աչքի են ընկնում բարձր հանքայնացումով, հաճախ պարունակում են մեծ քանակությամբ յոդ, բրոմ, բոր, ռադիում և այլ տարրեր, ինչպես նաև ուրիշ նյութեր՝ կենսածին ազոտ, ծծմբաջրածին, ածխաթթու և այլն:
- B-131. ВОДА ПЛЁНОЧНАЯ – ԹՎՂԱՆԹԱՅԻՆ ՋՈՒՐ, ADHESIVE WATER,** ջուր, որը բարակ թաղանթով խոնավածուծ ջրի վրայից պատում է ապարի մասնիկները և պահվում է մոլեկուլային ձգողականության շնորհիվ:



**B-132. ВОДА ПОГЛОЩЁННАЯ – ԿԱՆՎԱԾ ՋՈՒՐ**, տե՛ս Вода адсорбционная:

**B-133. ВОДА ПОГРЕБЁННАЯ – ԹԱՂՎԱԾ ՋՈՒՐ, BURIED WATER**, երկր. անցյալի ջրային ավազանների (ծովերի, լճերի, ծովալճակների) ջրեր, որոնք նստվածքագոյացման գործընթացում մնացել են նստվածքների ծակոտիներում, ծածկվել են հետագա նստվածքներով և տևական ժամանակ թաղված վիճակում մնացել խոր ճկվածքների փակ շերտերում:

**B-134. ВОДА ПОДЗЕМНАЯ – ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՈՒՐ, GROUND WATER, UNDERGROUND WATER, SUBSURFACE WATER**, ջուր, որը գտնվում է երկրակեղևը կազմող ապարների մեջ հեղուկ, գոլորշի, կարծր վիճակում: Ս. ջ.-ին է վերագրվում նաև քիմիապես կապված ջուրը:

**B-135. ВОДА ПОДОШВЕННАЯ – ՀԱՏԱԿԱՅԻՆ ՋՈՒՐ, BOTTON WATER**, ստր. ջուր, որը տեղադրված է նավթաբեր շերտում՝ անմիջապես նավթի տակ:

**B-136. ВОДА ПОДРУСЛОВАЯ – ԵՆԹԱՀՈՒՆԱՅԻՆ ՋՈՒՐ, INFRABED WATER**, ստր. ջուր, որը տեղադրված է գետի հունը կազմող գետաբերուկային նստվածքների կամ երբեմն արմատական ապարների մեջ: Ե. ջ. առաջացնում է ենթահունային ստր. հոսք, որը փոխադարձաբար կապված է գետի հետ:

**B-137. ВОДА ПОРОВАЯ – ԾԱԿՈՏԻՆԱՅԻՆ ՋՈՒՐ, PORE WATER**, տե՛ս Порова вода:

**B-138. ВОДА (ВЛАГА) ПОЧВЕННАЯ – ՀՈՂԱՅԻՆ ՋՈՒՐ (ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ), SOIL WATER**, ստր. ջուր, որը գտնվում է հողային շերտում (օդահագեցման զոնայում) և պահվում է մոլեկուլային ձգողական ուժերի շնորհիվ:

**B-139. ВОДА ПРЕСНАЯ – ՔԱՂՅՐԱՅԱՍ ՋՈՒՐ, FRESH WATER**, բնական ջուր, որի հանքայնացումը չի գերազանցում 1 գր/լ: Ըստ քիմ. բաղադրության՝ Ք. ջ. գերազանցապես ջրակարբոնատային է:

**B-140. ВОДА ПРИДОННАЯ – ՀԱՏԱԿԱՍԵՐԶ ՋՈՒՐ, BOTTON WATER**, օվկիանոսների, ծովերի և այլ ջրավազանների ստորին շերտի ջուր, որն անմիջապես հպվում է հատակին:

**B-141. ВОДА РЕЛИКТОВАЯ – ՄՆԱՅՈՒԿԱՅԻՆ ՋՈՒՐ, RELICT WATER**, ստր. ջուր, որն առաջացել է ջրատար նստվածքային ապարների հետ միաժամանակ և հանդիսանում է նստվածքառաջացման ավազանից մնացած ջուր:

**B-142. ВОДА РУДНАЯ – ՀԱՆՔԱՋՈՒՐ, ORE WATER**, ստր. ջուր, որը տեղադրված է անմիջապես հանքային մարմնի ճեղքերի ու ծակոտիների մեջ: Հ. հարակից ստր. ջրերից տարբերվում է քիմ. բաղադրությամբ, հանքայնացման տարրերի բարձր պարունակությամբ, թթվայնությամբ: Հնացած տերմին:

**B-143. ВОДА РУДНИЧНАЯ – ՀԱՆՔԱՐԱՆԱՅԻՆ ՋՈՒՐ, MINE WATER**, ապարների ծակոտիներից ու ճեղքերից հանքափորվածքներ թափանցող մակերևութային և ստր. ջրեր, որոնք դժվարացնում են հնքվ-ի շահագործման պայմանները:

**B-144. ВОДА СВОБОДНАЯ – ԱԶԱՏ ՋՈՒՐ, FREE WATER**, ստր. ջուր, որի մակերևութի վրա եղած ճնշումը հավասար է մթնոլորտային ճնշմանը: Ա. ջ-ի խմբին են պատկանում վերնաջուրը, գրունտային ջուրը, միջշերտային ոչ ճնշումային ջուրը:

**B-145. ВОДА СВЯЗАННАЯ – ԿԱՊՎԱԾ ՋՈՒՐ, ATTACHED WATER**, ստր. ջուր, որը ֆիզ. և քիմ. կապի մեջ է ապարների կարծր նյութի (մասնիկների) հետ և այդ պատճառով, ի հակադրություն ազատ ջրի, յուրովի անշարժ է:

**B-146. ВОДА СЕДИМЕНТАЦИОННАЯ – ՆՍՎԱԾՔԱՎՈՒՏԱԿԱՆ ՋՈՒՐ, SEDIMENTARY WATER**, հին ջրավազանների նստվածքների ստր. ջուր, որը նստվածքների հետ միասին երկար ժամանակ մնացել է թաղված վիճակում և աստիճանաբար փոփոխվել է դիագենեզի և կատագենեզի փուլերում: Ն. ջ. լինում է կա՛մ նստված-

քային ապարի հետ միաժամանակ առաջացած (սինգենետիկ, մնացուկային ջուր), կա՛ն նստվածքների խտացման ընթացքում արտազատված և այլ հասակի ապարների մեջ տեղադրված (էպիգենետիկ, տեղափոխված ջուր):

- B-147. ВОДА СЕРОВОДОРОДНАЯ – ԾՍՐԲԱԶՐԱԾՆԱՅԻՆ ՋՈՒՐ**, տե՛ս Сульфидные (сероводородные) воды:
- B-148. ВОДА СОЛЁНАЯ – ԱՂԻ ՋՈՒՐ, SALT WATER**, բնական ջուր, որի հանքայնացումը տատանվում է 1-35 գր/լ սահմաններում:
- B-149. ВОДА СОЛОНОВАТАЯ – ԱՂԱՅԱՍ (ԱՂԻԱՎՈՒՆ) ՋՈՒՐ, BRACKISH WATER**, բնական ջուր, որի հանքայնացումը տատանվում է 1-10 գր/լ սահմաններում:
- B-150. ВОДА СУЛЬФАТНАЯ**, տե՛ս Сульфатная вода:
- B-151. ВОДА ТЕРМАЛЬНАЯ – ՋԵՐՄԱԶՈՒՐ (ԹԵՐՄԱԼ ՋՈՒՐ), THERMAL WATER**, ստր. ջրատար հորիզոնի կամ աղբյուրի ջուր, որն ունի բարձր ջերմաստիճան: Ջ-երը ջերմություն ստանում են երկրակեղևի խոր հորիզոններից, որտեղ նրանք տեղադրված են: Ժամանակակից հրաբխային շրջաններում ստր. ջրերը հաճախ գտնվում են գերտաքացած վիճակում և դուրս են գալիս երկրի մակերևույթ՝ գերտաք ջրային գոլորշու կամ եռացող աղբյուրների (գեյզերների) ձևով: Այս ջրերը սովորաբար լինում քաղցրահամից մինչև աղիավուն, ունեն բարձր հիմնայնություն (ալկալայնություն):
- B-152. ВОДА ТРЕЩИННАЯ – ԾԵՂՔԱՅԻՆ ՋՈՒՐ, CREVICE WATER**, ստր. ջուր, որը տեղադրված է ապառաժային ապարների ճեղքերի մեջ, որոնցում ջրի շարժումը կարող է ունենալ ինչպես շիթային, այնպես էլ մրրկային բնույթ:
- B-153. ВОДА ФИЛЬТРАЦИОННАЯ**, տե՛ս Фильтрационные воды:
- B-154. ВОДА ШАХТНАЯ – ՀԱՆՔԱՅՈՐԱՅԻՆ ՋՈՒՐ**, տե՛ս Вода рудничная:
- B-155. ВОДНО-БАКТЕРИАЛЬНАЯ СЪЁМКА – ՋՐԱՍԱՆՐԵԱՅԻՆ ՀԱՆՈՒՅԹ, WATER BACTERIAL SURVEY**, մանրէային հանույթի մեթոդներից մեկը, ուսումնասիրվում են գրունտային և արտեզյան ջրերի մեջ տարածված մանրէները:
- B-156. ВОДНО-ГАЗОВАЯ СЪЁМКА – ՋՐԱԳԱԶԱՅԻՆ ՀԱՆՈՒՅԹ, WATER GAS SURVEY**, երկրաքիմ. հանույթի մեթոդներից մեկը, որի ժամանակ ուսումնասիրվում են ստր. ջրերի գազային բաղադրիչները:
- B-157. ВОДНОЛЕДНИКОВЫЕ ОТЛОЖЕНИЯ – ՋՐԱՍԱՈՑԱԳԱՇՏԱՅԻՆ ՆՍՎԱԾՔՆԵՐ**, տե՛ս Флювиогляциальные отложения:
- B-158. ВОДНОЭРОЗИОННЫЙ ЦИКЛ, НОРМАЛЬНЫЙ ЦИКЛ – ՋՐԱՈՂՈՂԱՍԱՇՍԱՆ (ՋՐԱԵՐՈՉԻՈՆ) ՑԻԿԼ (ՔՈՆՈՐԱՇՐՋԱՆ), NORMAL CYCLE OF EROSION**, ռելիեֆի զարգացման ցիկլներից մեկը, որը տեղի է ունենում չափավոր խոնավ կլիմայական պայմաններում՝ առավելապես ջրային ողողահանման և դրան ուղեկցող լանջային լեռկացման գործընթացների ներազդեցությամբ:
- B-159. ВОДНЫЕ РЕСУРСЫ – ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ (ՊԱՇԱՐՆԵՐ), WATER RESOURCES**, մակերևութային և ստր. ջրերի այն քանակը, որը կարող է օգտագործվել ժողովրդական տնտեսությունում տարբեր նպատակների համար: Ներառում են ջրոլորտի բոլոր տեսակները՝ գետերի, լճերի, ջրանցքների, ջրամբարների, ծովերի, օվկիանոսների, սառցադաշտերի, ստր. ջրերը:
- B-160. ВОДНЫЙ БАЛАНС – ՋՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՈՒ, WATER BALANCE, WATER BUDGET**, որոշակի շրջանի (ջրավազանի) սահմաններում ջրի մուտքի և ծախսի բաղադրիչների քանակական հարաբերակցությունը որոշակի ժամանակամիջոցում:
- B-161. ВОДНЫЙ РЕЖИМ – ՋՐԱՅԻՆ ՌԵՇԻՄ, STREAM-FLOW REGIME**, մակերևութային և ստր. ջրերի գույնի, համի, հոտի, թափանցիկության, ջերմաստիճանի, ռադիոակտիվության, հանքայնացման, քիմ. բաղադրության, ծախսի, մակարդակի և այլ հատկանիշների օրինաչափ փոփոխություններ:

- B-162. ВОДОЁМ – ՋՐԱՎԱԶԱՆ, ՋՐԱՄԲԱՐ, WATER BODY, POND, POOL**, Երկրի մակերևույթի բնական (լճեր) կամ արհեստական (ջրամբարներ, ջրանցքներ) ցածրացումներում հոսքազուրկ կամ դանդաղ հոսք ունեցող ջրերի մշտական կամ ժամանակավոր կուտակումներ:
- B-163. ВОДОНАСЫЩЕННЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ – ՋՐԱՅԱԳԵՑՎԱԾ ԱՊԱՐՆԵՐ, WATER SATURATED ROCKS**, ապարներ, որոնց ճեղքերը, ծակոտիները և այլ դատարկությունները լրիվ լցված են ազատ և կապված ջրով: Տեղադրված են հագեցման զոնայում: Տարբերում են ջրատար Ջ. ա. (գլաքարեր, ավազներ և այլն), որոնք պարունակում են գլխ. ազատ ջուր և ջրամերժ Ջ. ա., որոնք պարունակում են գլխ. կապված ջուր (կավեր, թերթաքարեր և այլն):
- B-164. ВОДОНЕПРОНИЦАЕМЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ – ԱՆՋՐԱԹԱՓՈՒՆՑ, (ԱՆՋՐԱՆՑԻՎ, ՋՐԱՄԵՐԺ) ԱՊԱՐՆԵՐ, IMPERMEABLE ROCKS**, բնական պայմաններում իրենց միջով ազատ ջուր չանցկացնող կամ խիստ աննշան քանակով անցկացնող ապարներ [կավեր, հոծ (ճեղքերից ու ծակոտիներից զուրկ) հրային, նստվածքային, փոխակերպային ապարներ]:
- B-165. ВОДОНОСНАЯ СВИТА – ՋՐԱՍԱՐ ՇԵՐՏԱՆՈՒԲԱՐ, WATER-BEARING SUITE**, տարբեր ֆացիալ-քարաբանական բաղադրության միանման կամ ռիթմիկ հերթափոխվող ջրատար ապարներ, որոնք առաջացել են որոշակի ֆիզաշխ. պայմաններում և կտրվածքում գրավում են որոշակի շերտագրական դիրք: Ջ. շ. համապատասխանում է տեկտոնամատվածքակուտակումային ցիկլի առանձին փուլերին:
- B-166. ВОДОНОСНАЯ СЕРИЯ – ՋՐԱՍԱՐ ՍԵՐԻԱ, WATER-BEARING SERIES**, ֆացիալ-քարաբանական տեսակետից բարդ նստվածքային, փոխակերպային ու հրաբխածին նստվածքների սերիա, որը բնութագրվում է ջրատար և ջրամերժ շերտախմբերի հերթափոխությամբ: Ջ. ս-ի ձևավորումը համապատասխանում է տեկտոնամատվածքակուտակումային խոշոր ցիկլերին, դրանք միմյանցից առանձնանում են շերտագրական ընդմիջումներով, տեկտ. աններդաշնակություններով, ջրատարությամբ աչքի ընկնող հողմահարման զոնաներով:
- B-167. ВОДОНОСНЫЙ ГОРИЗОНТ – ՋՐԱՍԱՐ ՀՈՐԻԶՈՆ, WATER-BEARING HORIZON**, ջրաներկր. ավազանի սահմաններում մնացած ֆացիալ-քարաբանական բաղադրություն և ջրաներկր. հատկանիշներ ունեցող ձգողական (գրավիտացիոն) ջրով հագեցած ապարների շերտեր, որոնք ծագումնաբանորեն համապատասխանում են նստվածքակուտակման կամ հրաբխականության որոշակի փուլում առաջացած ֆացիալ-քարաբանական տիպերին:
- B-168. ВОДОНОСНЫЙ КОМПЛЕКС – ՋՐԱՍԱՐ ՀԱՍՎԻՐ, WATER-BEARING COMPLEX, AQUIFEROUS COMPLEX**, միևնույն կամ տարբեր հասակի, համեմատաբար կայուն հաստության լայնատարած ապարների ստվարաշերտ, որը ջրահագեցած է և՛ վերևից, և՛ ներքևից սահմանափակված ջրամերժ ապարներով: Ջ. հ. ընդգրկում է մի քանի ջրատար հորիզոններ:
- B-169. ВОДОНОСНЫЙ ПЛАСТ – ՋՐԱՍԱՐ ՇԵՐՏ, AQUIFER**, քարաբանական և ջրաներկր. հատկանիշներով համասեռ, ձգողական (ազատ) ջրով հագեցած ապարի շերտ: Այն կարող է ունենալ ճնշումային և ոչ ճնշումային բնույթ:
- B-170. ВОДОБИЛЬНОСТЬ ПОРОДЫ – ԱՊԱՐԻ ՋՐԱՌԱՏՈՒԹՅՈՒՆ, WATERINESS OF ROCK**, ջրի քանակ, որը միավոր ժամանակահատվածում շահագործողական հորատանցքերի միջոցով ստացված է ջրատար ապարներից (շերտից, հորիզոնից, համալիրից և այլն):

- B-171. ВОДОУДАЧА ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ՋՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ (ՋՐԱՆՁԱՏՈՒՄ), ROCK'S YIELD OF WATER**, ջրահագեցած ապարների ձգողական (գրավիտացիոն) ջուր տալու ունակություն, որն արտահայտվում է ապարից ազատ անջատվող ջրի ծավալի և ապարի ծավալի %-ային հարաբերությամբ (ջրատվության գործակից) կամ ապարի 1մ<sup>3</sup> ծավալից անջատվող ջրի քանակով (տեսակարար ջրատվություն):
- B-172. ВОДОПОГЛОЩЕНИЕ ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ՋՐԱՎԱՆՈՒՄ, ROCK'S SPECIFIC RETENTION, ROCK'S MOISTURE CAPACITY**, ապարի ջուր կլանելու ունակություն, երբ ապարը ջրի մեջ է ընկղմվում սովորական պայմաններում:
- B-173. ВОДОПРОНИЦАЕМОСТЬ – ՋՐԱԹԱՓԱՆՑԵԼՈՒԹՅՈՒՆ (ՋՐԱՆՑԻՎՈՒԹՅՈՒՆ) WATER PERMEABILITY**, ապարի՝ իր միջով ջուր անցկացնելու ունակություն, որը պայմանավորված է ապարում ճեղքերի, ծակոտիների և այլ դատարկությունների առկայությամբ, նրանց ձևով, չափերով, հաղորդակցության աստիճանով:
- B-174. ВОДОПРОНИЦАЕМЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ – ՋՐԱԹԱՓԱՆՑ (ՋՐԱՆՑԻՎ) ԱՊԱՐՆԵՐ, PERMEABLE ROCKS**, ծակոտկեն կամ ճեղքավոր ապարներ, որոնցում հնարավոր է ստր. ջրերի շարժումը:
- B-175. ВОДОПРОПУСКНАЯ СПОСОБНОСТЬ – ՋՐԹՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, CONVEYING CAPACITY, WATER CONVEYING CAPACITY**, միավոր ժամանակում ջրի քանակ, որը կարող է հոսել ջրհոսքի հատույթով:
- B-176. ВОДОРАЗДЕЛ – ՋՐԲԱԺԱՆ, DIVIDE, DRAINAGE DIVIDE, WATERSHED**, հարևան ջրհավաք ավազանները բաժանող գիծ, որն անցնում է տեղանքի ամենաբարձր նիշերով: Լեռնային երկրներում Ջ. սովորաբար ցայտուն արտահայտված է ռելիեֆում՝ լանջերի հատման կորագծերի տեսքով, իսկ հարթավայրերում կամ լայն գետահովիտներում այն թույլ է արտահայտված և երբեմն դժվար է նշմարվում: Տարբերում են գլխավոր Ջ., որն անցնում է հակադիր լանջերի հատման գծով, և կողային Ջ., որը բաժանում է միևնույն լանջով հոսող վտակների ջրհավաք ավազանները: Բացի մակերևութային Ջ-ից, առանձնացնում են նաև ստր. ջրերի Ջ., տե՛ս Водораздел подземных вод:
- B-177. ВОДОРАЗДЕЛ ПОДЗЕМНЫХ ВОД – ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՋՐԲԱԺԱՆ, GROUND-WATER DIVIDE**, հարևան ստր. ջրհավաք ավազաններ բաժանող գիծ, որը միացնում է ստր. ջրերի առավելագույն նիշերը՝ միմյանց հակադիր 2 ջրհոսքերի միջև:
- B-178. ВОДОРАЗДЕЛЬНОЕ ПРОСТРАНСТВО – ՋՐԲԱԺԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ, WATERSHED AREA**, 1) հարթավայրերում Ջ. տ-յանն են վերագրվում միջգետային հարթ տարածությունները, որոնք ակնհայտ հոսք չունեն դեպի որևէ գետային համակարգ, 2) լեռնային մարզերում Ջ. տ-յանը վերագրվում է լեռնաշղթաների գագաթնային մասի նեղ գոտին, որն անմիջապես հարում է ջրբաժանին:
- B-179. ВОДРОСЛИ (Algae) – ՋՐԻՍՈՒՈՆԵՐ (ՋՐԻՈՏԵՐ), ALGAE**, պարզագույն բույսերի էկոլոգիական խումբ, պարունակում են քլորոֆիլ և ապրում են գլխ. ջրերում: Ընդգրկում են միաբջջի, գաղութային, բազմաբջջի բույսեր: Չափերը՝ մանրադիտակայինից մինչև բազմամետր: Բնորոշ է քրոմատոֆորների առկայությունը: Առանձնացվում են 10 տիպեր՝ կապտականաչ, գորշ, կարմիր, դիատոմային և այլ Ջ:
- B-180. ВОДОСБОРНАЯ ПЛОЩАДЬ – ՋՐՅԱՎԱՔ ՏԱՐԱԾՔ, DRAINAGE AREA**, 1) տարածք, որի մակերևութային ջրերը հոսում են դեպի գետերը կամ ջրավազանները, 2) տարածք, որի ստր. ջրերը հոսում են դեպի հորատանցքերը, ջրհորերը կամ այլ տարածքներ, որոնցից կատարվում է ջրի արտանդում:

- Յ-181. ВОДОСБОРНЫЙ БАСЕЙН – ՋՐԱՎԱԿԱՔ ԱՎԱԶԱՆ, CATCHMENT, DRAINAGE BASIN**, տարածք, որի մակերևութային ջրերը հոսում են դեպի տվյալ գետը, լիճը կամ ծովը:
- Յ-182. ВОДОУПОРНАЯ КРОВЛЯ – ՋՐԱՄԵՐԺ (ԱՆՋՐԱՆՑԻԿ) ԱՈՍԱՏԱՂ, WATER-PROOF ROOF**, ջրամերժ (անջրանցիկ) ապարների շերտ կամ հոծ զանգված, որը ծածկում է ներքևի ջրատար ապարների շերտը:
- Յ-183. ВОДОУПОРНОЕ ЛОЖЕ (ОСНОВАНИЕ) – ՋՐԱՄԵՐԺ (ԱՆՋՐԱՆՑԻԿ) ՄԱՅԻԳ (ՅԻՍՔ), WATER-PROOF BED**, ջրամերժ ապարների շերտ կամ հոծ զանգված, որը տեղադրված է ջրատար ապարների շերտի տակ:
- Յ-184. ВОДОУПОРНЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ – ՋՐԱՄԵՐԺ (ԱՆՋՐԱՆՑԻԿ) ԱՊԱՐՆԵՐ, WATER RESISTING ROCKS**, տե՛ս Водонепроницаемые горные породы:
- Յ-185. ВОДОХРАНИЛИЩЕ – ՋՐԱՄԲԱՐ, RESERVOIR, STORAGE WORK, STORAGE RESERVOIR**, արհեստական ջրավազան, որն ստեղծվում է գետահունը կամ հովիտը պատվարով արգելափակելու միջոցով:
- Յ-186. ВОДЫ ВЫЩЕЛАЧИВАНИЯ – ԼՎԱՑԱՅԱՆՄԱՆ (ԼՎԱՑԱԶԵՐԾՄԱՆ, ՏԱՐՐԱԼՈՒԾՄԱՆ) ՋՐԵՐ, WATERS OF LEACHING**, ստր. ջրեր, որոնց քիմ. բաղադրությունը ձևավորվում է մթնոլորտային տեղումների ներծծման, ապարների հողմահարման և տարրալուծման գործընթացների համատեղ ներգործության հետևանքով: Լ. ջ. բնորոշվում են ջրակարբոնատ-սիլիկատային, ջրակարբոնատ-կալցիումային, երբեմն՝ սուլֆատային բաղադրությամբ:
- Յ-187. ВОЗВЫШЕННОСТЬ – ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐՁՐԱՎԱՅՐ), UPLAND**, երկրակեղևի տեղամասի մակերևույթ, որը շրջապատող տարածքից բարձր է պայմանականորեն ավելի քան 200 մ:
- Յ-188. ВОЗГОНЫ ВУЛКАНИЧЕСКИЕ (ФУМАРОЛЬНЫЕ) – ՅՐԱԲԵՆԱՅԻՆ (ՖՈՒՄԱՐՈԼԱՅԻՆ) ՑՆՊԱՆՅՈՒԹԵՐ, VOLCANIC SUBLIMATES**, հրաբխային ցնդանյութերից (գազերից, գոլորշիներից) հանքային նստվածքների առաջացում՝ խառնարաններում, հրաբուխների լանջերին, լավային հոսքերում, ֆումարոլներում և այլուր: Յ. ց-ում հայտնի են մոտ 100 միներալներ (ծծումբ, բորաթթու, մետաղների հալոիդային միացություններ, երկաթի ու սիլիցիումի օքսիդներ և այլն):
- Յ-189. ВОЗДУШНАЯ СЪЁМКА – ՕՊԱՅԻՆ ՅԱՆՈՒՅԹ, AIR DISTRIBUTION MEASURE MENTS**, հանքահորի փորվածքներում օդի տեղաբաշխման բնույթի որոշման աշխատանքների համալիր:
- Յ-190. ВОЗРАСТ ГЕОЛОГИЧЕСКИЙ – ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՅԱՍԱԿ, GEOLOGICAL AGE**, ապարների, երկրբ. մարմինների, երկրբ. իրադրությունների առաջացման պահից անցած ժամանակ: Տարբերում են բացարձակ և հարաբերական Ե. հ., տես՝ Возраст геологический абсолютный և Возраст геологический относительный:
- Յ-191. ВОЗРАСТ ГЕОЛОГИЧЕСКИЙ АБСОЛЮТНЫЙ – ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՅԱՐՉԱԿ ՅԱՍԱԿ, GEOLOGICAL ABSOLUTE AGE**, տե՛ս Абсолютный возраст:
- Յ-192. ВОЗРАСТ ГЕОЛОГИЧЕСКИЙ ОТНОСИТЕЛЬНЫЙ – ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՅԱՍԱԿ, GEOLOGICAL RELATIVE AGE**, տե՛ս Относительный возраст:
- Յ-193. ВОЗРАСТ ЛАНДШАФТА – ԼԱՆԴՇԱՖՏԻ (ԲՆԱՊԱՏԿԵՐԻ) ՅԱՍԱԿ, AGE OF LANDSCAPE**, որևէ լանդշաֆտի (բնապատկերի) ժամանակակից կառուցվածքի հիմնական գծերի ձևավորման պահին հետևորդող ժամանակ: Լանդշաֆտի կառուցվածքի փոփոխությունը պայմանավորված է կլիմայի փոփոխությամբ, տեկտ. և հրաբխային գործընթացներով, մարդու գործունեությամբ:

- B-194. ВОЗРАСТ РЕЛЬЕФА – ՌԵԼԻԵՖԻ ՀԱՍԱԿ, AGE OF RELIEF**, որևէ ռելիեֆի կամ նրա առանձին ձևերի ձևավորման պահին հետնորդող ժամանակ: Տարբերում են ձևաբանական (մորֆոլոգիական) հասակ (ռելիեֆի զարգացման փուլ մեկ ցիկլի սահմաններում) և երկրբ. հասակ (ռելիեֆի առաջացման ժամանակ՝ Երկրի երկրբ. զարգացման պատմության որոշակի հատվածում):
- B-195. ВОЗРОЖДЁННЫЕ ГОРЫ, ЭПИПЛАТФОРМЕННЫЕ ГОРЫ – ՎԵՐԱԾՆՎԱԾ ԼԵՌՆԵՐ, ՀԵՏՊԼԱՏՖՈՐՄԱՅԻՆ ԼԵՌՆԵՐ, ՎԵՐՊԼԱՏՖՈՐՄԱՅԻՆ ԼԵՌՆԵՐ, EPI-PLATFORDIAN MOUNTAINS**, լեռներ, որոնք գոյանում են պլատֆորմների ակտիվացման հետևանքով (օր՝ Տյան-Շան, Ալթայ):
- B-196. ВОЛЖСКИЙ ЯРУС (Վոլգա գետի անունից) – ՎՈԼԳԱՅԻ ՀԱՐԿ, VOLGIAN**, յուրայի համակարգի վերին բաժնի վերին հարկ:
- B-197. ВОЛЛАСТОНИТ (անգլ. բնախույզ Ու. Հ. Վոլաստոնի, W. H. Wollaston, անունից) – ՎՈԼԱՍՏՈՆԻՏ, WOLLASTONITE, TABULAR SPAR**, միներալ շղթայական սիլիկատների ենթադասից,  $Ca_3[Si_3O_9]$ , բյուրեղագիտական համակարգը տրիկլինային է, առաջացնում է խրձաձև, թելավոր, հազվադեպ՝ թերթավոր ագրեգատներ, բյուրեղներն ասեղնաձև են, գույնը՝ գորշ, մոխրագույն, կարմրավուն, փայլը՝ ապակու մինչև սադափի, թելավոր զանգվածներում՝ մետաքսի: Կարծրությունը՝ 5-5,5: Ջերմափոխակերպված կրաքարերի և մարմարների ապարակազմիչ միներալ է: Հանդիպում է սկանդինավյան, հյուսիսային եղջերաքարերում, ռեզինալ փոխակերպային ապարներում և այլն: Օգտագործվում է խեցեգործությունում, ցեմենտի, ներկերի, երեսապատման աղյուսների արտադրությունում և այլն:
- B-198. ВОЛНИСТАЯ ЛАВА – ԱԼԻՔՎՈՐ ԼՍՎԱ (ՀՐԱՀՈՍՔ), ROPY LAVA, CORDED LAVA, РАЕНОЕНОЕ LAVA**, ալիքաձև ապակենման մակերևույթով բազալտային լավա: Սովորաբար ուժեղ գազազրկված է:
- B-199. ВОЛНИСТАЯ СЛОИСТОСТЬ – ԱԼԻՔՎՈՐ ՇԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, WAVE-LIKE BEDDING, WAVE BEDDING, SINUOUS BEDDING**, ապարների շերտավորություն, որը բնորոշվում է ալիքավոր, գոգ-ուռուցիկ ձևի շեղ շերտիկներով և շերտավորման հարթությանը զուգահեռ շեղ սերիաների սահմաններով: Կապված է օդային կամ ջրային միջավայրի տատանողական (ալիքային) շարժումների հետ:
- B-200. ВОЛНОВАЯ ЭРОЗИЯ – ԱԼԻՔԱՅԻՆ ՈՂՈՂԱՍԱՇՈՒՄ (ՈՂՈՂԱՋԱՆՈՒՄ, ԷՐՈ-ՋԻԱ), WAVE EROSION**, ափամերձ մասում ալիքների քայքայիչ գործընթաց: Ալիքները ափամերձ զոնայում իրենց էներգիան ծախսում են ափը, ստորջրյա ափային լանջը կազմող ապարների քայքայման վրա: Տե՛ս նաև՝ Абразия:
- B-201. ВОЛНОВЫЕ ДВИЖЕНИЯ ЗЕМНОЙ КОРЫ – ԵՐԿՐԱԿԵՂԵՎԻ ԱԼԻՔԱՅԻՆ ՇԱՐՃՈՒՄՆԵՐ, UNDULATORY MOVEMENTS**, երկրակեղևի ալիքաձև ծռմռումներ, որոնք թափանցում են նրա ամբողջ խորությամբ: Ունեն համընդհանուր արտահայտություն՝ օրինաչափորեն փոփոխվող լայնությով և փոփոխական նշանով:
- B-202. ВОЛНОПРИБОЙНЫЕ ЗНАКИ – ԱԼԵԲԱԽՍԱՆ ՆՇԱՆՆԵՐ, WAVE-CUT MARKS**, ավազանների ալեբախման զոնայի նստվածքների մակերևույթում թույլ ալիքանման նշաններ:
- B-203. ВОЛОСАТЫЙ НОСОРОГ, ШЕРСТИСТЫЙ НОСОРОГ – ՄԱՁՈՏ ՌՆԳԵՂՅՈՒՐ, WOOLY RHINOCEROS**, ռնգեղջյուրների ընտանիքի մահացած կենսասնկավոր կաթնասուններ: Մ. ռ-ները եղել են ժամանակակից ռնգեղջյուրներից ավելի խոշոր և ծածկված խիտ բրդով: Մամոնտների հետ միասին ապրել են տունդրաներում և անտառատունդրաներում ուշ պլեյստոցենում (Եվրոպայում, Հս. Ասիայում):

- В-204. ВОЛЬФРАМИТ – ՎՈԼՖՐԱՄԻՏ, WOLFRAMITE**, միներալ, երկաթի ու մանգանի վոլֆրամատ, (Mn, Fe) WO<sub>4</sub>: Բյուրեղանուն է մոնոկլինային համակարգում: Առաջացնում է սև-գորշավուն հատվածակողմային և աղյուսածն բյուրեղներ, հողանման, ասեղնավոր ագրեգատներ, ներփակված հատիկներ: Հանդիպում է գրեյզեններում, քվարցային երակներում, ցրոններում: Վոլֆրամի հիմնական հանքանյութ է:
- В-205. ВОЛЬФРАМОВЫЕ РУДЫ – ՎՈԼՖՐԱՄԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, TUNGSTEN ORES**, բնական միներալային գոյացություններ, որոնք պարունակում են վոլֆրամ այնպիսի միացություններում և այնպիսի կուտակումներով, որոնց արդյունաբերական օգտագործումը տնտեսապես նպատակահարմար է: Հայտնի են վոլֆրամի մոտ 20 միներալներ: Դրանցից արդյունաբերական նշանակություն ունեն միայն վոլֆրամիտի խմբի միներալները (74-76 % WO<sub>3</sub>) և շենլիթը (80 % WO<sub>3</sub>): Վ. հ. հաճախ պարունակում են մոլիբդեն, անագ, բերիլիում, պղինձ, բիսմութ (0.01-0.1 %): Վ. հ-ի հնքվ-երը ըստ ծագման լինում են ներծին և արտածին: Ներծին հնքվ-երում տարբերում են պեգմատիտային, սկառնային, գրեյզենային և ջրաջերմային (հիդրոթերմալ) հանքանյութերի ծագումնաբանական տիպեր:
- В-206. ВОССТАЮЩАЯ ГОРНАЯ ВЫРАБОТКА – ՎԵՐՆՆԹԱՑ ԼԵՌՆԱՅԻՆ (ԸՆԴԵՐՔԱՅԻՆ) ՓՈՐՎԱԾՔ, RAISE**, վերընթաց ուղղաձիգ կամ մեծաթեք ստորգետնյա փորվածք, որը մակերևույթում ելք չունի և ծառայում է օդափոխման, մարդկանց շարժման, նյութերի տեղափոխման և այլ նպատակների համար:
- В-207. ВОСХОДЯЩЕЕ РАЗВИТИЕ РЕЛЬЕФА – ՌԵԼԻԵՖԻ ՎԵՐՆՆԹԱՑ ՉԱՐԳԱՑՈՒՄ, UPWARD EVOLUTION OF RELIEF, ASCENDING DEVELOPMENT OF RELIEF**, ռելիեֆի զարգացման փուլ այն պայմաններում, երբ տեկտ. բարձրացումների ազդեցությունը գերազանցում է լերկացման ազդակների համատեղ գործունեության ազդեցությանը: Բնորոշվում է գետերի ուժգին ներխուժմամբ, բացարձակ և հարաբերական բարձրացումների մեծացմամբ և լանջերի զառիթափությամբ:
- В-208. ВОСХОДЯЩИЙ ИСТОЧНИК – ՎԵՐՆՆԹԱՑ ԱՂԲՅՈՒՐ, NON-GRAVITY SPRING**, աղբյուր, որի ջրերն ունեն վերընթաց շարժում, ապարների ճեղքածակոտիներից և այլ դատարկություններից նրանք բխում են ջրաստատիկ ճնշման շնորհիվ:
- В-209. ВПАДИНА – ԻՉՎԱԾՔ, ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, BASIN, DEPRESSION**, 1) ցածրացում երկրակեղևում, մեծ մասամբ հավասարաչափ, սովորաբար տեկտ. ծագման, բոլոր կողմերից կամ համարյա բոլոր կողմերից փակված, լցված նստվածքային, հրաբխանստվածքային և հրաբխածին ստվարաշերտերով: Գոյություն ունեն իջվածքների տարբեր տեսակներ (միջլեռնային, նախալեռնային, մերձբեկվածքային և այլն), 2) երկրաձևաբանությունում՝ տարբեր ձևի և ծագման իջեցումներ: Երբեմն «Ի.» տերմինը օգտագործվում է «գոգավորություն, գոգահովիտ, котловина», «իջույթ, депрессия», «տեկտ. ճկվածք, тектонический прогиб» տերմինների հոմ: Օվկիանոսի հատակի նեղ խոր Ի. հաճախ կոչվում է խորջրյա փողրակ (վիհ, ակոս):
- В-210. ВПАДИНА БЕССТОЧНАЯ (ЗАМКНУТАЯ) – ՀՈՍՔԱՉՈՒՐԿ (ԱՆՀՈՍՔ, ՊԱՐՓԱԿ) ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, BASIN WITHOUT OUTFLOW**, ռելիեֆի պարփակ իջվածք (գոգավորություն), որը օվկիանոսի հետ հոսքային կապ չունի: Սովորաբար Հ. գ-ում մակերևութային ջրերի մշտական կամ ժամանակավոր ներհոսք կատարվում է, իսկ արտահոսք՝ ոչ, որի պատճառով ցածրադիր մասերում գոյանում են մշտական կամ ժամանակավոր ջրակուտակներ: Հ. գ-ները գլխ. հանդիսանում են տեկտ. գործընթացների արդյունք և բնորոշ են արիդային (չորային) կլիմայական գոտիներին:

- B-211. ВПАДИНА КАРСТОВАЯ – ԿԱՐՏԱՅԻՆ ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, KARST CAVITY,** կրաքարային մարզերում ռելիեֆի բացասական (գոգավոր) ձև՝ կապված կարստային գործընթացների հետ:
- B-212. ВПАДИНА ЛЕДНИКОВАЯ – ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, GLACIAL DEPRESSION,** սառցադաշտերի սառցաքերման հետևանքով առաջացած գոգավորություն:
- B-213. ВПАДИНА МЕЖГОРНАЯ – ՄԻՋԼԵՆՆԱՅԻՆ ԻՋՎԱԾՔ,** տե՛ս Впадины орогенные:
- B-214. ВПАДИНА ПРЕДГОРНАЯ – ՆԱԽԱԼԵՆՆԱՅԻՆ ԻՋՎԱԾՔ,** տե՛ս Впадины орогенные:
- B-215. ВПАДИНА ПРИРАЗЛОМНАЯ – ՄԵՐՉՐԵԿՎԱԾՔԱՅԻՆ ԻՋՎԱԾՔ,** տե՛ս Впадины орогенные:
- B-216. ВПАДИНА РИФТОВАЯ – ՌԻՖՏԱՅԻՆ ԻՋՎԱԾՔ, RIFT DEPRESSION,** առաջանում է բեկվածքներով սահմանափակված գոտու նստման հետևանքով, երբեմն ոչ ճիշտ համարում են «ռիֆտային հովիտ» տերմինի հոմ.:
- B-217. ВПАДИНЫ ОРОГЕННЫЕ – ԼԵՆՆԱԳՈՅԱՑՄԱՆ ԻՋՎԱԾՔՆԵՐ, OROGENETIC DEPRESSIONS,** բացասական կառուցվածքներ, որոնք առաջանում են ուժգին լեռնագոյացման փուլերում՝ համեմատաբար կայունացած ծալքավոր հիմքի վրա, ինչպես նաև հարակից հակադրական բարձրացումների ու իջեցումների սահմանային զոնայում՝ բեկվածքների երկայնքով: Լ. ի-ի լայնությունը կազմում է մի քանի կմ-ից մինչև սկզբնական մի քանի տասնյակ կմ, երկարությունը՝ տասնյակ և հարյուրավոր կմ: Լ. ի-ի մեջ տարբերում են՝ ա) ուշ ներդրման (ուշ լեռնագոյացման) միջլեռնային ժառանգված իջվածքներ, որոնք առաջանում են մնացորդային երկրասինկլինալների փակումից հետո, դրանց բնորոշ են մոլասային և ցամաքային հրաբխային ֆորմացիաները, բ) նախալեռնային իջվածքներ, առաջանում են ձևավորվող լեռնային ծալքավոր կառույցների և հարակից պլատֆորմների միջև: Դրանց նմանվող ծայրամասային իջվածքներ, որոնք առաջանում են երկու տարահասակ ծալքավոր մարզերի սահմանային զոնայում, ծալքավոր և պլատֆորմային կառուցվածքների կապակցման զոնայում, գ) մերձբեկվածքային իջվածքներ, որոնք զոյանում են ծալքավոր զոնաների ներսում, ինչպես նաև հիմքի բլուկները սահմանազատող բեկվածքների ակտիվացման դեպքում, դ) բայկալյան տիպի իջվածքներ, որոնք ձևավորվում են կամարաբեկորային մարզերում՝ երկրակեղևի ալիքանման կորացումների հետևանքով:
- B-218. ВРАЩЕНИЕ ЗЕМЛИ (СУТОЧНОЕ) – ԵՐԿՐԻ ՊՏՏՈՒՄ (ՕՐԱԿԱՆ), RATATION OF THE EARTH,** Երկրի շարժման բաղադրիչներից մեկն է: Աստղերի նկատմամբ Երկիրը պտտվում է միջին արևային ժամանակի 23 ժ 56 ր 4 վրկ. պարբերությամբ:
- B-219. ВРЕЗАННАЯ ДОЛИНА, УГЛУБЛЕННАЯ ДОЛИНА – ՆԵՐՓՈՐՎԱԾ (ԽՈՐԱՅՎԱԾ) ՀՈՎԻՏ, INCISED VALLEY,** հովիտ, որի հատակը զգալի չափով ցածր է այն առաջնային մակերևույթից, որի վրա ներդրվել է հովիտը:
- B-220. ВРЕМЕННЫЙ БАЗИС ЭРОЗИИ – ՈՂՈՂԱՄԱՇՄԱՆ (ՈՂՈՂԱՅԱՆՄԱՆ, ԷՐՈԶԻԱՅԻ) ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԻՄՆԱՄԱԿԱՐԴԱԿ,** տե՛ս Местный базис эрозии:
- B-221. ВРЕМЯ (ГЕОЛОГИЧЕСКОЕ) – ԺԱՄԱՆԱԿ (ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ), GEOLOGICAL AGE,** միասնական երկրաժամանակագրական սանդղակի ստորաբաժանում:
- B-222. ВСКРЫТИЕ МЕСТОРОЖДЕНИЯ – ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԲԱՑՈՒՄ, BREAKING UP OF DEPOSIT,** այնպիսի փորվածքների անցկացում, որոնք կապ են հաստատում Երկրի մակերևույթի ու հանքամարմնի միջև և ստեղծում են նախապատրաստական փորվածքներ անցկացնելու հնարավորություն:



- B-223. ВСКРЫШНЫЕ РАБОТЫ – ՄԱԿԱՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, STRIPPING, OVERBURDEN REMOVAL**, հնքվ-ի բաց մշակման ժամանակ հանքանյութը ծածկող ապարների հեռացում:
- B-224. ВТОРИЧНОГО ОБОГАЩЕНИЯ ЗОНА, ЗОНА ЦЕМЕНТАЦИИ – ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՀԱՐՍԱՑՄԱՆ ՉՈՆԱ, ՑԵՄԵՆՏԱՑՄԱՆ ՉՈՆԱ, BELT OF CEMENTATION, CEMENTATION ZONE**, սուլֆիդային հնքվ-երի վերին մաս, որը տեղադրված է օքսիդացման զոնայի տակ (երկաթե գլխարկի տակ)՝ գետնաջրերի մակարդակից ցածր: Առաջնային սուլֆիդների և ջրերի մեջ լուծված աղերի փոխազդեցության հետևանքով առաջանում են երկրորդային սուլֆիդներ, գլխ. պղնձի (քալկոզին, կովելին, բորնիտ), որոնք ամենահարուստ պղնձային հանքանյութերն են: Ե. հ. գ-ի խորությունը տասնյակ, երբեմն հարյուրավոր մ է: Հանդիսանում է հրաքարային (սուլֆիդային) հնքվ-երի ամենաարժեքավոր մասը:
- B-225. ВТОРИЧНЫЕ КВАРЦИТЫ – ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՔՎԱՐՑԻՏՆԵՐ, SECONDARY QUARTZITES**, հանքատար ջրաջերմային (հիդրոթերմալ) փոփոխված հրաբխային ապարների ֆորմացիա, որը ձևավորվում է հրաբխի մարման փուլում: Բոլոր միներալային տիպերը բնորոշվում են քվարցի, ռուտիլի, Fe-ի սուլֆիդների կամ օքսիդների մշտական առկայությամբ, ինչպես նաև Al-ի սուլֆատի և ծծմբի: Ե. ք. ներառում են բնածին ծծմբի, հրաքարերի, արգնահողի հումքի հնքվ-եր, ինչպես նաև Au, Ag, Cu, Mo, Hg, Sb, Pb, Zn-ի երակիկաներփակվածքային հանքանյութեր:
- B-226. ВТОРИЧНЫЕ МИНЕРАЛЫ – ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, SECONDARY MINERALS**, միներալներ, որոնք առաջանում են քիմ. հողմահարման կամ նախկին միներալների փոխարկման հետևանքով: Օր.՝ կավային միներալները, օքսիդները և այլն: Ե. մ. կազմում են հողմահարման կեղևի և հողի զանգվածի զգալի մասը:
- B-227. ВУЛКАН** (լատ. vulcanus – կրակ, բոց, սկզբնապես հին հռոմեացիների կրակի և դարբնոցային գործի աստված) – **ՀՐԱՐՈՒԽ, VOLCANO**, երկրբ. գոյացություն, որն առաջանում է երկրակեղևի մղանցքների և ճեղքերի վրա, և որով խորքային մագմայական օջախներից ժայթքում են լավաներ, տաք գազեր, ջրի գոլորշիներ և ապարների բեկորներ: Հրաբուխները ստորաբաժանվում են. գործող՝ ժայթքել կամ դրսևորել են սուլֆատարային ակտիվություն (տաք գազերի ու ջրերի անջատում) վերջին 3500 տ. պատմական ժամանակահատվածում, պոտենցիալ գործող՝ պատկանում են հոլոցենյան Հ-ները, գործել են 3500-13500 տ. սրանից առաջ, պայմանականորեն հանգած՝ հոլոցենում ակտիվություն չեն դրսևորել, բայց պահպանել են իրենց արտաքին ձևը, հանգած՝ ուժեղ ողողամաշված, քայքայված և վերջին 100 հազ. տ. ակտիվություն չցուցաբերած: Ըստ ձևի՝ տարբերում են կենտրոնական և ճեղքային Հ., ըստ խորության՝ միջնապատյանային (30-70 կմ և ավել), կեղևային (5-45 կմ) և խառն: Առաջինի ժայթքման արդյունքները ներկայացված են առավելապես բազալտներով, երկրորդինը՝ անդեզիտներով, դացիտներով, ռիոլիթներով, երրորդինը՝ հրաբխային ապարների բոլոր տեսակներով:
- B-228. ВУЛКАН ГАВАЙСКОГО ТИПА – ՀԱՎԱՅԱՆ ՏԻՊԻ ՀՐԱՐՈՒԽ, HAWAIIAN-TYPE OF VOLCANO**, կենտրոնական հրաբխի տեսակ, որի կառույցը բաղկացած է լավայի բարակ «շերտերից» և աննշան քանակի փուխր նյութերից, որոնք շերտափոխվում են լավաների հետ:
- B-229. ВУЛКАН ГЕГАМСКОГО ТИПА – ԳԵՂԱՍԱ ՏԻՊԻ ՀՐԱՐՈՒԽ, GEGHAM-TYPE OF VOLCANO**, բազմաթիվ ելքերով ոչ մեծ հրաբուխներ, որոնց կառուցվածքում մասնակցում են բազմակի հերթագայող լավաներ և փուխր նյութեր:

- B-230. ВУЛКАН ГРЯЗЕВОЙ – ՑԵԽԱՅԻՆ ՅՐԱՐՈՒԽ, MUD VOLCANO,** կոնաձև բլուր՝ գազաթային ձագարաձև խառնարանով, որից պարբերաբար կամ անընդհատ արտահոսում են ցեխազանգված և գազեր՝ հաճախ ջրով ու նավթով:
- B-231. ВУЛКАН ДЕЙСТВУЮЩИЙ – ԳՈՐԾՈՂ ՅՐԱՐՈՒԽ, ACTIVE VOLCANO,** հրաբուխ, որի ժայթքումը տեղի է ունենում այժմ կամ պատմական ժամանակում, ինչպես նաև հրաբուխ, որում մշտապես արտահայտվում է ֆունարոլային գործունեություն:
- B-232. ВУЛКАН КОНИЧЕСКИЙ – ԿՈՆԱՉԵՎ ՅՐԱՐՈՒԽ, CONICAL VOLCANO,** կենտրոնական տիպի կոնաձև հրաբուխ:
- B-233. ВУЛКАН МОНОГЕННЫЙ** (հուն. monos – մեկ և genēs – ծնող, ծնված) – **ՄԻՍԾԻՆ (ՄՈՆՈԳԵՆ) ՅՐԱՐՈՒԽ, MONOGENIC VOLCANO,** տե՛ս Моногенные вулканы:
- B-234. ВУЛКАН ПАРАЗИТИЧЕСКИЙ – ՄԱՎԱՐՈՒՅԾ ՅՐԱՐՈՒԽ, SUBORDINATE VOLCANO,** գլխավոր հրաբխի լանջում կամ ստորոտում տեղաբաշխված հրաբխային կոն:
- B-235. ВУЛКАН ПОЛИГЕННЫЙ** (հուն. polys – շատ, բազմաթիվ և genēs – ծնող, ծնված) – **ՔԱՉՄԱԾԻՆ (ՊՈԼԻԳԵՆ) ՅՐԱՐՈՒԽ, POLYGENETIC VOLCANO,** տե՛ս Полигенный вулкан:
- B-236. ВУЛКАН ПОТУХШИЙ – ՅԱՆԳԱԾ ՅՐԱՐՈՒԽ, EXTINCT VOLCANO,** ուժեղ ողողանաչված, քայքայված հրաբուխ, առանց հրաբխային ակտիվության արտահայտման պատմական անցյալում (օր. Արագած հրաբուխը):
- B-237. ВУЛКАНИЗМ СУБАЭРАЛЬНЫЙ – ՄԵՐՉՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ (ՍՈՒՐԱԷՐԱԼ) ՅՐԱՐԻՆԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ, SUBAERIAL VULCANISM,** հրաբխային գործունեություն ցամաքային պայմաններում: Բնորոշ են ժայթքման տարբեր տեսակներ՝ կախված արտավիժվող մագմայի կազմից: Օրինակներից են ժամանակակից գործող հրաբուխները: Մ. հ. տարբերվում է ստորջրյա հրաբխականությունից ժայթքման բարձր հրաբխապայթականությամբ, որն ուղեկցվում է մեծաքանակ հրաբեկորային նյութի և գազերի արտանետմամբ: Ժայթքումից հետո հրաբխային նյութը ծանրության ուժի, քանու, ջրի միջոցով տեղափոխվելով վերաբաշխվում է տարածությունում՝ առաջացնելով տարբեր կարգի հրաբխային ֆացիաներ:
- B-238. ВУЛКАН ТРЕЩИННЫЙ – ԾԵՂՔԱՅԻՆ ՅՐԱՐՈՒԽ, FISSURE VOLCANO,** հրաբուխ, որի մղանցք է հանդիսանում երկրակեղևի ճեղքվածքը: Ժայթքումները երբեմն տեղի են ունենում ճեղքի ամբողջ երկարությամբ կամ ավելի հաճախ՝ նրա առանձին տեղամասերում:
- B-239. ВУЛКАН ЦЕНТРАЛЬНЫЙ – ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅՐԱՐՈՒԽ, CENTRAL VOLCANO,** հրաբուխ, որի ժայթքումը ամենից հաճախ կատարվում է կայուն խողովակաձև մղանցքով (հրաբխաբերանով): Ի հաշիվ լավաների ու բեկորների կուտակման՝ հրաբխաբերանի (փողաբերանի) շուրջը առաջանում է բարձրություն՝ գազաթում խառնարանով:
- B-240. ВУЛКАН ЩИТОВИДНЫЙ – ՎԱՅԱՆԱՉԵՎ ՅՐԱՐՈՒԽ, SHIELD VOLCANO,** կենտրոնական հրաբուխ, որն առաջացել է հեղուկ լավայի բազմակի ժայթքումների հետևանքով: Բնորոշ է սակավաթեք վահանաձևությունը, որի վերին մասերում շերտերի անկումը 7-8° է, իսկ ստորին մասերում՝ 3-6°: Նրա գազաթում տեղաբաշխված են լինում խառնարաններ՝ լայն ափսեաձև զոգավորության տեսքով՝ զառիթափ, հաճախ ուղղաձիգ լանջերով:
- B-241. ВУЛКАН ЭФФУЗИВНЫЙ – ԱՐՏԱՎԻՃՈՒՄԱՅԻՆ ՅՐԱՐՈՒԽ, EFFUSIVE VOLCANO,** հաճախ վահանաձև է, հրաբխային կառույցը բաղկացած է հիմնականում լավաներից, ենթակա մասնակցություն ունեն խարամները և այլ փուխր արտանետուկները, հոմ. լավային հրաբուխ:

**В-242. ВУЛКАНИЗМ – ՅՐԱՐԻԱՅՆՈՒԹՅՈՒՆ, ՅՐԱՐԻԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, VOLCANISM, VULCANISM, VULCANICITY,** երևույթների համախմբություն՝ կապված երկրակեղևում և նրա մակերևույթում մագմայի տեղաշարժման հետ: Յ-յան տիպական արտահայտությունը երկրի մակերևույթում հանդիսանում են հրաբուխները, խորքում՝ ներժայթքուկների (ինտրուզիաների) առաջացումը և ներփակող ապարների փոփոխությունը՝ բարձր ջերմաստիճանի և քիմ. ներագոյեցության տակ: Երկրի մակերևույթում Յ-յան դեպքում գոյանում են հրաբխային կոներ (տե՛ս Вулканы), հրաբխային զմբեթներ, հրաբխագոգեր (խառնարաններ), լավային հոսքեր, չեչաքարային (պենզային) ծածկոցներ, գեյզերներ, տաք աղբյուրներ և այլն, երկրի խորքում՝ մագմայական ապարներ: Ըստ արտահայտման առանձնահատկությունների և մասամբ ժայթքման արդյունքների՝ տարբերում են պլատֆորմային, գեոսինկլինալային և լեռնագոյացման Յ., ինչպես նաև ցամաքային և ստորջրյա: Առավել ուժգին Յ. ժամանակակից դարակարգում արտահայտվում է միջինօվկիանոսային լեռնաշղթաներում և օվկիանոսների հատակի այլ լայնատարած տարածքներում, կղզեաղեղներում, ռիֆտային հովիտներում և մայր ցամաքների երիտասարդ ծալքավոր լեռնաշղթաներում:

**В-243. ВУЛКАНИЗМ ГЕОСИНКЛИНАЛЬНЫЙ,** տե՛ս Геосинклинальный вулканизм:

**В-244. ВУЛКАНИЗМ ОРОГЕННЫЙ,** տե՛ս Магматизм орогенный:

**В-245. ВУЛКАНИЗМ ОСТРОВНОЙ,** տե՛ս Островной вулканизм:

**В-246. ВУЛКАНИЗМ ПЛАТФОРМЕННЫЙ – ՊԼԱՏՖՈՐՄԱՅԻՆ ՅՐԱՐԻԱՅՆՈՒԹՅՈՒՆ, PLATFORM VOLCANISM,** պլատֆորմային պայմաններում ընթացող հրաբխային երևույթների համախմբություն: Բնորոշ է բազալտային արտավիժումների խիստ գերակշռությունը, ոչ բարձր հրաբխապայթումականությունը, մագմայի ցնդող բաղադրամասերի աղքատությունը, բազալտային լավայի հանգիստ ճեղքային արտավիժումը կամ հավայան տիպի վահանաձև հրաբխայնությունը և դրա հետ կապված շերտային ներժայթվածքները (ինտրուզիաները), ցամաքային արտավիժումների խիստ գերակայությունը, հիմքային ու գերհիմքային կազմի պայթման փողակների առաջացումը: Առանձնացնում են հետևյալ պլատֆորմային ֆորմացիաները՝ տրապային, մայր ցամաքների ալկալիական օլիվին-բազալտային և ալկալիական-բազալտոդիային, տե՛ս Магматизм платформенный:

**В-247. ВУЛКАНИТ – ՅՐԱՐԻԱՔԱՐ, VOLCANITE,** հրաբխային ապարների ընդհանուր անվանում:

**В-248. ВУЛКАНИЧЕСКАЯ БОМБА – ՅՐԱՐԻԱՅԻՆ ՌՈՒՄԲ, VOLCANIC BOMB,** լավայի կնձիկ, որը ժայթքման ժամանակ արտանետվել է հեղուկ կամ պլաստիկ վիճակում և օդում թռչելու ու սառչելու ընթացքում ձեռք է բերել յուրահատուկ ձև:

**В-249. ВУЛКАНИЧЕСКАЯ БРЕКЧИЯ – ՅՐԱՐԻԱՅԻՆ ՓՇՐԱՔԱՐ (ԲՐԵՎՉԻԱ), VOLCANIC BRECCIA, ERUPTIVE BRECCIA,** ապար, որն առաջացել է հրաբխի ժայթքման ժամանակ արտանետված խոշոր բեկորների ցեմենտացումից:

**В-250. ВУЛКАНИЧЕСКАЯ ВПАДИНА – ՅՐԱՐԻԱՅԻՆ ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, BASIN OF VOLCANIC ORIGIN, CALDERA,** հրաբխային ծագման գոգավորություն [հրաբխագոգ (կալդերա)], խառնարան և այլն:

**В-251. ВУЛКАНИЧЕСКАЯ ГОРНАЯ ПОРОДА – ՅՐԱՐԻԱՅԻՆ ԱՊԱՐ, VOLCANIC ROCK,** ապար, որն առաջացել է հրաբխային ժայթքման հետևանքով: Կախված ժայթքման բնույթից (լավայի արտավիժում, պայթումային ժայթքում)՝ առաջանում

են 2 տեսակի ապարներ՝ հրաբխավիժական (էֆուզիվ) ապարներ և հրաբեկորային (պիրոկլաստիկ) ապարներ: Վերջինները մասնատվում են՝ փուխր (հրաբխային մոխիր, ավազ, ռումբեր և այլն), խտացված և ցեմենտացած (տուֆեր, տուֆալիշրաքարեր և այլն): Բացի դա, առանձնացնում են միջանկյալ Յ. ա-ներ՝ տուֆալավաներ (առաջանում են գազերով հարուստ փրփրավոր լավային հոսքերի ժայթքումից) և իզոհմբրիտներ, որոնք իրենցից ներկայացնում են եռակցված հրաբխաբեկորային նյութ: Ըստ քիմ. կազմի՝ հրաբխավիժական ապարները բաժանվում են հողալկալիական և ալկալիական ապարների, ինչպես նաև հիմքային (սիլիկաթթվով չհագեցված), միջին (սիլիկաթթվով հագեցված) և թթու (սիլիկաթթվով գերհագեցված) ապարների: Խոր փոփոխված, սովորաբար ավելի հին հրաբխավիժային ապարները կոչվում են հնատիպ (պալեոտիպ), չփոփոխվածները՝ նորատիպ (նեոտիպ): Ամենատարածված նորատիպ ապարներն են՝ բազալտները, անդեզիտները, տրախիտները, ռիոլիթները, դրանց հնատիպային կրկնակներն են՝ դիաբազները, բազալտային և անդեզիտային պորֆիրիտները, տրախիտային ու ռիոլիթային պորֆիրները:

**B-252. ВУЛКАНИЧЕСКАЯ ПЫЛЬ – ՅՐԱԲԽԱՅԻՆ ՓՈՇԻ, VOLCANIC DUST**, նուրբ հրաբեկորային նյութ, որը հրաբխի ժայթքման ժամանակ արտանետվում և օդային հոսանքներով տարվում է մեծ տարածությունների վրա:

**B-253. ВУЛКАНИЧЕСКИЕ ГАЗЫ – ՅՐԱԲԽԱՅԻՆ ԳԱԶԵՐ, VOLCANIC GASES**, հրաբուխներից անջատվող գազեր՝ ժայթքման ժամանակ ժայթքումային (երուպտիվ), իսկ հանգիստ գործընթացի ընթացքում՝ ֆունարոլներ: Դրանց կազմում մասնակցում են ջրի գոլորշիներ,  $H_2$ ,  $HCl$ ,  $HF$ ,  $H_2S$ ,  $CO_2$  և այլն: Ձևավորվում են մազմայական և կողային ապարներում բարձր ջերմաստիճանի ազդեցության տակ առաջացած գազերից, որոնք բոլորապատույտ են կատարում հրաբխի մղանցքը շրջապատող ապարների ծակոտիներում ու ճեղքերում:

**B-254. ВУЛКАНИЧЕСКИЕ ГОРЫ – ՅՐԱԲԽԱՅԻՆ ԼԵՈՆԵՐ, VOLCANIC MOUNTAINS**, մեկուսացված հրաբխային կոներ և լեռնաշղթաներ, որոնք առաջանում են մի քանի հրաբուխների միակցումից, ինչպես նաև հրաբխային լեռնաշխարհներ: Վերջինները առաջանում են մեկ բարձրավանդակում միակցվող հրաբխային կոներից ու ծածկոցներից, որոնք վերադրվում են կամ երիտասարդ լեռնային երկրում (օր.՝ Յայկական լեռնաշխարհ), կամ հին պլատֆորմային կառույցների վրա (օր.՝ Արլ. Աֆրիկայի հրաբուխները):

**B-255. ВУЛКАНИЧЕСКИЕ ОСТРОВА – ՅՐԱԲԽԱՅԻՆ ԿՂԶԻՆԵՐ, VOLCANIC ISLANDS**, կղզիներ, որոնք գոյացել են ծովի հատակում հրաբխային գործընթացի հետևանքով:

**B-256. ВУЛКАНИЧЕСКИЙ ВЗРЫВ – ՅՐԱԲԽԱՊՊԱՅԹՈՒՄ, VOLCANIC EXPLOSION**, ժայթքման ժամանակ հրաբխային գազերի բուռն պայթումանման անջատում, երբեմն ուղեկցվում է հրաբխային ապարների մի մասի ավերմամբ:

**B-257. ВУЛКАНИЧЕСКИЙ КОНУС – ՅՐԱԲԽԱՅԻՆ ԿՈՆ, VOLCANIC CONE**, հրաբխային կառույց՝ գագաթը հատած կոնի տեսքով: Առաջանում է հրաբխաերախի շուրջը՝ հրաբխային արդյունքների կուտակման հետևանքով: Ձևը պայմանավորված է լավայի ու փուխր արդյունքների փոխհարաբերությամբ:

**B-258. ВУЛКАНИЧЕСКИЙ КРАТЕР (հրաբուխ և հուն. kratér – մեծ թաս) – ՅՐԱԲԽԱՅԻՆ ԽԱՈՆԱՐԱՆ, VOLCANIC CRATER**, թասածև կամ ծագարածև զոգավորություն հրաբխային կոնի գագաթում կամ լանջում, որն առաջանում է հրաբխի ակտիվ, առավելապես պայթական գործունեության հետևանքով:

- B-259. ВУЛКАНИЧЕСКИЙ КУПОЛ, ЭКСТРУЗИВНЫЙ КУПОЛ – ՅՐԱՐԻԱՅԻՆ ՊՄՐԵԹ, ԱՐՏԱՄՂԱԺԱՅԹԱՅԻՆ ՊՄՐԵԹ, SWELLING DOME, VOLCANIC DOME,** արտաժայթքային ապարների տեղադրման ձև, որն ունի զանգանման մարմնի տեսք: Առաջանում է հրաբխաբախտից շատ մածուցիկ լավայի արտամղման դեպքում:
- B-260. ВУЛКАНИЧЕСКИЙ ЛАНДШАФТ – ՅՐԱՐԻԱՅԻՆ ԲՆԱՊԱՏԿԵՐ (ԼԱՆԴՇԱՖՏ), VOLCANIC LANDSCAPE,** տեղանք, որտեղ լայնորեն տարածված են հրաբխային ռելիեֆի ժամանակակից կամ հին ձևերը:
- B-261. ВУЛКАНИЧЕСКИЙ ОЧАГ – ՅՐԱՐԻԱՅԻՆ ՕՉԱԽ, MAGMA CHAMBER, VOLCANIC FOCUS, MAGMA RESERVOIR, POCKET OF MAGMA,** երկրակեղևում և վերին միջնապատյանում մագմայի մեկուսացված խուց կամ ամբար, որտեղից տեղի է ունենում հրաբխի սնումը: Խորքային 3. օ-ները տեղաբաշխված են 50-70 կմ խորություններում:
- B-262. ВУЛКАНИЧЕСКИЙ ПЕПЕЛ – ՅՐԱՐԻԱՅԻՆ ՍՈՒԽԻՐ, VOLCANIC ASH, CINDER,** հրաբխի պայթման հետևանքով հեղուկ կամ պինդ լավայի և հրաբուխը կազմող ապարների մանրացման ու փոշիացման արդյունք: Բաղկացած է հրաբեկորային նյութից (տեֆրա)՝ փոշու և ավազի մասնիկներից մինչև 2 մմ տրամագծով: 3. մ. կարող է նստել ժայթքման վայրից զգալի հեռավորությունների վրա՝ առաջացնելով կայուն բնորոշիչ հորիզոններ:
- B-263. ВУЛКАНИЧЕСКИЙ ПОЯС – ՅՐԱՐԻԱՅԻՆ ԳՈՏԻ, VOLCANIC BELT,** երկրի մակերևույթի գծային ձգված զոնա մինչև մի քանի հազար կմ երկարությամբ, որը բնորոշվում է հրաբուխների տարածմամբ: Կապված է երիտասարդ ծալքավոր մարզերի, տեկտ. շարժում մարզերի խոշոր բեկվածքների հետ, օր.՝ Խաղաղօվկիանոսյան 3. գ.:
- B-264. ВУЛКАНИЧЕСКИЙ ШЛАК – ՅՐԱՐԻԱՅԻՆ ԽԱՐԱՍ, SLAG, SCORIA,** լավայի բշտիկավոր և ծակոտկեն կտորներ, որոնք արտանետվել են հրաբխի խառնարանից պայթումների ժամանակ և փքվել են սառչման ժամանակ անջատված գազերի կողմից: Առաջանում են նաև լավային հոսքերից, որոնք պնդանում են գազերի բուռն անջատման պայմաններում:
- B-265. ВУЛКАНИЧЕСКОЕ ЗЕМЛЕТРЯСЕНИЕ – ՅՐԱՐԻԱՅԻՆ ԵՐԿՐԱՇԱՐԺ, VOLCANIC EARTHQUAKE,** երկրի մակերեսի թույլ տատանումներ, որոնք արտահայտվում են այն ժամանակ, երբ փողաբերանի պատերը դողողում են մագմայի շարժման հետ կապված՝ հրաբխային ժայթքման նախապատրաստման կամ բուն ժայթքման ընթացքում: 3. ե-երը հնարավորություն են տալիս կանխագուշակել հրաբուխների ժայթքումը:
- B-266. ВУЛКАНИЧЕСКОЕ ИЗВЕРЖЕНИЕ – ՅՐԱՐԻԱՅԻՆ ԺԱՅԹՔՈՒՄ, ERUPTION,** հրաբխի գործընթացի փուլ, երբ այն երկրի մակերևույթ է արտանետում շիկացած կամ տաք պինդ, հեղուկ և գազանման հրաբխային արդյունքներ և արտավիժում է լավա: 3. Ժ-ները լինում են երկարատև (մի քանի տարի և ավել) և կարճաժամկետ (չափվում է ժամերով): 3րաբխի ժայթքման նախանշանակներին են վերագրվում հրաբխային երկրաշարժերը, ձայնային երևույթները, ֆունարոլային գազերի կազմի, մագնիսային հատկությունների փոփոխությունները և այլ երևույթներ: Կապված արտաժայթքվող հրաբխային արդյունքներից (գազանման, հեղուկ և պինդ) և լավայի մածուցիկությունից՝ առանձնացնում են ժայթքումների չորս գլխ. տեսակներ՝ հրաբխավիժական (էֆուզիվ), խառն, արտամղումային (էքստրուզիվ) և հրաբխապայթումային (էքսպլոզիվ), կամ հաճախ համապատասխանաբար՝ հավայան, ստրոմբոլյան, գմբեթային և հրաբխային:
- B-267. ВУЛКАНИЧЕСКОЕ ОЗЕРО – ՅՐԱՐԻԱՅԻՆ ԼԻՃ, VOLCANIC LAKE,** հանգած

հրաբխի խառնարանում գտնվող լիճ (խառնարանային լիճ), պնդացած լավայի ցածրացումներում ջրակուտակներ:

**B-268. ВУЛКАНИЧЕСКОЕ ПЛАТО, ЛАВОВОЕ ПЛАТО – ՅՐԱԲԽԱՅԻՆ ՍԱՐՎԱՆՆԵՐ, ԼԱՎԱՅԻՆ ՍԱՐՎԱՆՆԵՐ, VOLCANIC PLATEAU, LAVA PLATEAU,** լայնատարած բարձր հարթավայր, որն առաջացել է լավայի հսկայական զանգվածների՝ Երկրի մակերևույթ արտավիժման և նախկին ռելիեֆի անհարթությունների լցման հետևանքով:

**B-269. ВУЛКАНОГЕННО-ОСАДОЧНЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ – ՅՐԱԲԽԱԾԻՆ-ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, VOLCANOGENIC-SEDIMENTARY DEPOSITS,** օգտ. հնժ-ների հանքակուտակներ, որոնք ձևավորվել են ժամանակակից և հին ծովերի ու օվկիանոսների հատակում այն միներալային նյութի հաշվին, որն առաջացել է ծովի հատակում, կղզիներում ու ափի երկայնքով տեղաբաշխված հրաբուխների ժայթքումների հետևանքով և նստել է հատակում շերտերի, սալերի և պալարների տեսքով: Հ-ն. հ-ին են վերագրվում երկաթի ու մանգանի հանքանյութերի խոշոր շերտային կուտակները, ինչպես նաև հրաբարային հանքանյութերը՝ երկաթի, պղնձի, ցինկի սուլֆիդային միացությունները:

**B-270. ВУЛКАНОГЕННО-ОСАДОЧНЫЕ ПОРОДЫ – ՅՐԱԲԽԱԾԻՆ-ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ (ՅՐԱԲԽԱՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ) ԱՊԱՐՆԵՐ, VOLCANOGENIC-SEDIMENTARY ROCKS,** ապարներ, որոնք կազմված են հրաբխային և նստվածքային նյութից: Ստորաբաժանվում են հրաբխածին-բեկորայինների և քիմիածինների: Հրաբխածին-բեկորային ապարների հիմնական հրաբխածին բաղադրամասը հրաբուխների հրաբխապայթումային հրաբեկորային նյութն է, որը առաջանում է հրաբխի պայթման ժամանակ հեղուկ լավայի և հրաբուխը կազմող ապարների ջարդոտման հետևանքով: Կախված հրաբխային նյութի քանակից՝ ցեմենտացած Հ-ն ա-ում տարբերում են հրաբխային տուֆեր (համարյա ամբողջովին կազմված հրաբեկորային նյութից), տուֆիտներ (հրաբեկորային նյութը ավելի քան 50%) և հրաբեկորանստվածքային ապարներ (տուֆավազաքարեր, տուֆագրավելիթներ, տուֆակոնգլոմերատներ և այլն), որոնց մեջ գերակշռում է նստվածքային բաղադրամասը: Ըստ բեկորների չափերի՝ տուֆերի ու տուֆիտների մոտ տարբերում են պելիտային (0,01մմ-ից փոքր), ալերիտային (0,01-0,1 մմ), փսամիտային (0,1-2 մմ) և փսեֆիտային (2-200 մմ և ավել): Քիմիածին Հ-ն ա-ի օրինակներից են՝ հասպիսները, ծծումբը, երկաթի, մագնանի որոշ հանքանյութերը, ֆոսֆորիտները և այլն:

**B-271. ВУЛКАНОКЛАСТИЧЕСКАЯ ПОРОДА – ՅՐԱԲԽԱԲԵԿՈՐԱՅԻՆ ԱՊԱՐ, VOLCANOCLASTIC ROCK,** ընդհանրացնող տերմին, որն ընդգրկում է այն բոլոր ապարները, որոնք առաջացել են հրաբխային արտանետուկներից, հրաբխային ապարատներից և սառած լավայի մեխ. քայքայումից:

**B-272. ВУЛКАНОКЛАСТИЧЕСКИЙ МАТЕРИАЛ** (հրաբուխ և հուն. klastós – ջարդոտված, կոտրտված) – **ՅՐԱԲԽԱԲԵԿՈՐԱՅԻՆ ՆՅՈՒԹ, VOLCANOCLASTIC MATERIAL,** բեկորային նյութ, որն արտանետվում է հրաբխի ժայթքման ժամանակ՝ պինդ կամ հեղուկ վիճակում: Ըստ ծագման՝ բաժանվում է երկու խմբի. նյութ, որն անմիջապես կապված է ժայթքվող լավայի հետ (խարամ, մոխիր, չեչաքար) և նյութ՝ կապված հրաբխաերախի կողային ապարների, հին լավաների ջարդոտման հետ: Տե՛ս Пирокластический материал:

**B-273. ВУЛКАНОКЛАСТЫ** (հրաբուխ և հուն. klastós – ջարդոտված, կոտրտված) – **ՅՐԱԲԽԱԲԵԿՈՐՆԵՐ, VOLCANOCLASTIC ROCKS,** ապարներ, որոնք իրենցից ներկայացնում են հրաբխային ժայթքումների փուխր, խտացված կամ ջերմակց-

ված լավային և խարամային նյութի մեծակտորների, բեկորների (խոշորներից մինչև մանրագույն չափերը) խառնուրդ:

**B-274. ВУЛКАНОЛОГ – ՅԱՐԲԻԱԳԵՏ, VOLCANOLOGIST**, մասնագետ, որն ուսումնասիրում է հրաբխային գործընթացները և դրանց արդյունքները:

**B-275. ВУЛКАНОЛОГИЯ** (հրաբուխ և λόγος – ուսմունք, խոսք) – **ՅԱՐԲԻԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, VOLCANOLOGY**, գիտություն, որն ուսումնասիրում է հրաբուխների առաջացման գործընթացներն ու պատճառները, դրանց զարգացումը, ժայթքման արդյունքների կազմը և կառուցվածքը, գործունեության փոփոխության բնույթը, ինչպես նաև երկրի մակերևույթում հրաբուխների տեղաբաշխման օրինաչափությունները:

**B-276. ВУЛКАНИЧЕСКИЙ ТИП ИЗВЕРЖЕНИЯ – ԺԱՅԹՔԱՆ ՅԱՐԲԻԱՅԻՆ ՏԵՍԱԿ, VOLCANIAN-TYPE ERUPTION**, հրաբխի ժայթքում համեմատաբար մածուցիկ լավայով (միջին կամ թթու կազմի) և գազերի մեծ պարունակությամբ: Վերջինները պարբերաբար կուտակվելով՝ պայթեցնում են խառնարանի կեղևը՝ արտանետելով հրաբխային մոխրի սև ամպ, ընկուզիկների, ռումբերի բեկորների հետ:

**B-277. ВУЛКАНО-ТЕКТОНИЧЕСКАЯ ДЕПРЕССИЯ – ՅԱՐԲԻԱՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԻՋՈՒՅԹ, VOLCANO-TECTONIC DEPRESSION**, փլուզման օղակած, ձված կամ բազմանկյուն կառույց, որը կապված է հրաբխային գործընթացի հետ, բայց ոչ առանձին հրաբխային կենտրոնի գործունեության ու զարգացման հետ: Յ. ի-ների տրամագիծը 12-15-ից մինչև 60-80 կմ է, երբեմն՝ մինչև 100 կմ: Արտաքին կողմից սահմանափակված են վարնետքերով: Իջեցման տեսանկյունային լայնությունը մինչև 700-1000 մ է: Իջույթների ներդրումը նախորդում է հրաբխային գործունեության սկզբին: Յ. ի-ների սահմաններում տեղաբաշխված են լինում հրաբխային ապարատների խմբեր, մասամբ՝ բնականոն խառնարաններ: Ռեգիոնալ երկրբ. դիրքորոշումը այդ կառուցվածքների տեղայնացման համար ստեղծում է միայն նախադրյալներ, դրանց հետագա զարգացումը տեղի է ունենում մագմայական գործընթացների ազդեցության տակ:

**B-278. ВУЛЬФЕНИТ** (ավստրիական միներալաբան Ֆ. Վուլֆենի, F. Wulfen, անունից) – **ՎՈՒԼՖԵՆԻՏ, WULFENITE**, միներալ մոլիբդատների դասից,  $Pb(MoO)_4$ , բյուրեղանում է տետրագոնային համակարգում, սովորաբար ներկայացված է լավ արտահայտված բյուրեղների բյուրեղաբույլերով և խոզանակներով: Գույնը՝ հիմնականում պղնձյա դեղին, շագանակագույն-կարմիր, մինչև նարնջագույն: Փայլը՝ ուժեղ է, ճարպային՝ մինչև ավաստի: Կարծրությունը՝ 3: Կապարի հնքվ-երի օքսիդացման զոնային բնորոշ միներալ է: Կապարի հանքանյութ է:

**B-279. ВЫБРОСЫ ВУЛКАНИЧЕСКИЕ – ՅԱՐԲԻԱՅԻՆ ԱՐՏԱՆԵՏՎԱԾՔՆԵՐ, VOLCANIC OUTBURSTS**, հրաբխային ժայթքումների փուխր արդյունքներ՝ ռումբեր, խարամներ, ընկուզիկներ, ավազ, մոխիր, ինչպես նաև փողաբերանի և հրաբխային խցի պատերից պոկված ապարների կտորներ, որոնք դուրս են բերվել մակերևույթ:

**B-280. ВЫВЕТРИВАНИЕ – ՅՈՂՍԱՅԱՐՈՒՄ, WEATHERING, DEGRADATION, DISENGAGEMENT**, երկրի մակերևույթում կամ նրա մոտ ապարների քայքայման ու քիմ. փոփոխության գործընթաց՝ ջերմաստիճանի տատանումների, մթնոլորտի, ջրի ու օրգանիզմների քիմ. և մեխ. ներգործության հետևանքով: Ըստ միջավայրի բնույթի՝ տարբերում են մթնոլորտային (ցամաքային) և ստորջրյա (կամ հալմիորլիզմ) Յ., ըստ ներգործության տեսակի՝ ֆիզիկական, քիմիական և օրգանական (կենսաբանական): Յ-ման արագությունն ու աստիճանը, արդյունքների հաստությունը և կազմը կախված են նաև ռելիեֆից, ապարների նյութական կազմից և կառուցվածքից: Յ-ման արդյունքում հաճախ գոյանում են ռելիեֆի յուրահատուկ

ծներ՝ կախված ապարների բնույթից և հատկություններից: Հ-ման ժամանակ տեղի է ունենում ոչ միայն քայքայում, այլև միներալների, ապարների, լուծույթների և օգտ. հնձ-ների առաջացում: Հ-ման չվերանստեցված արդյունքների կուտակու-մը առաջացնում է հողմահարման կեղև, որի հետ կապված են շատ օգտ. հնձ-ների հնքվ-եր (կաոլինի, օխրայի, երկաթի, ալյումինի և այլն):

**B-281. ВЫВЕТРИВАНИЕ БИОХИМИЧЕСКОЕ (БИОЛОГИЧЕСКОЕ, ОРГАНИЧЕСКОЕ)**

– **ԿԵՆՍԱՔԻՄԻԱԿԱՆ (ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ, ՕՐԳԱՆԱԿԱՆ) ՀՈՂՄԱՀԱՐՈՒՄ, BIOCHEMICAL WEATHERING**, բուսական և կենդանական օրգանիզմների ակտիվ ներգործու-թյունը քարոլորտի վրա, որն արտահայտվում է ապարների ֆիզ. և քիմ. քայքայմամբ՝ օրգանիզմների կենսագործունեության և նրանց կողմից անջատվող թթուների, CO<sub>2</sub>-ի, O<sub>2</sub>-ի ազդեցության տակ:

**B-282. ВЫВЕТРИВАНИЕ ЛАТЕРИТНОЕ**, տե՛ս Латеритизация:

**B-283. ВЫВЕТРИВАНИЕ МЕХАНИЧЕСКОЕ – ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՀՈՂՄԱՀԱՐՈՒՄ**, տե՛ս

Выветривание физическое:

**B-284. ВЫВЕТРИВАНИЕ ОРГАНИЧЕСКОЕ – ՕՐԳԱՆԱԿԱՆ ՀՈՂՄԱՀԱՐՈՒՄ**, տե՛ս

Выветривание биохимическое:

**B-285. ВЫВЕТРИВАНИЕ ПОДВОДНОЕ – ՍՏՈՐՋՐՅԱ ՀՈՂՄԱՀԱՐՈՒՄ, SUBMARINE**

**WEATHERING**, ջրավազանների հատակի մակերեսում ապարների և միներալնե-րի հատիկների մեխ., քիմ. և կենսաքիմ. վերափոխության (քայքայման) գործըն-թացների համախմբություն: Ս. հ-ման հետևանքով առաջանում են կավային միներ-րալներ, ցեոլիթներ, կարբոնատներ, Fe-ի և Mn-ի ջրօքսիդներ, երկրորդային գիպս՝ ի հաշիվ սուլֆիդների և այլ միներալների, տե՛ս Гальмиролиз:

**B-286. ВЫВЕТРИВАНИЕ ТЕРМИЧЕСКОЕ – ՋԵՐՄԱՅԻՆ ՀՈՂՄԱՀԱՐՈՒՄ, THERMAL**

**WEATHERING**, Երկրի մակերևութում ապարների քայքայում ջերմաստիճանի փոփոխության ազդեցության տակ:

**B-287. ВЫВЕТРИВАНИЕ УГЛЯ – ԱԾԽԻ ՀՈՂՄԱՀԱՐՈՒՄ, COAL SLACKING**, բրածո

ածուխների օքսիդացման գործընթաց, որը տեղի է ունենում գլխ. ածխի շերտե-րում բոլորապատույտ կատարող օդի, ջրում պարունակված թթվածնի և կլիմայա-կան պայմանների ազդեցության տակ: Տարբերում են ածխի ֆիզ. և քիմ. հողմա-հարում, որոնք միաժամանակ տեղի են ունենում մերձմակերևութային շրջանում: Ֆիզ. հողմահարման վերջնական արդյունքում առաջանում է փոշենման ածխային զանգված (ածխային մուր): Քիմ. հողմահարման դեպքում փոխվում է ածխի կազ-մը, պակասում է ածխածնի և ջրածնի պարունակությունը, խիստ մեծանում է հու-մինային թթուների պարունակությունը գորշ ածուխներում և թթվածինը՝ օրգանա-կան զանգվածում, մեծանում է խոնավությունը և մոխրայնությունը, ցածրանում է այրման ջերմությունը: Քարածուխներում հանդես են գալիս երկրորդային հումի-նային թթուներ, և վատանում է կոկսացումը: Սապրոպելիտները հողմահարման նկատմամբ ավելի կայուն են, քան հումուսային ածուխները:

**B-288. ВЫВЕТРИВАНИЕ ФИЗИЧЕСКОЕ (МЕХАНИЧЕСКОЕ) – ՖԻԶԻԿԱԿԱՆ (ՄԵ-**

**ԽԱՆԻԿԱԿԱՆ) ՀՈՂՄԱՀԱՐՈՒՄ, PHYSICAL WEATHERING**, Ֆ. հ. հանգեցնում է ապարի տրոհմանը բեկորների, որը տեղի է ունենում ապարի մակերևութային մա-սերի ծավալի արագ փոփոխման և հետագա ճաքճքման հետևանքով՝ ջերմաստի-ճանի օրական կտրուկ տատնումների, ճեղքերում ջրի սառեցման ու հալման ազ-դեցության տակ: Ֆ. հ. բնորոշ է չոր կլիմա ունեցող և բարձր լեռնային ու բևեռա-յին մարզերի տարածքներին:

**B-289. ВЫВЕТРИВАНИЕ ХИМИЧЕСКОЕ – ՔԻՄԻԱԿԱՆ ՀՈՂՄԱՀԱՐՈՒՄ, CHEMICAL**



**WEATHERING**, բ. հ. հանգեցնում է ապարի քիմ. կազմի փոփոխության՝ օքսիդացման, ջրակցման (հիդրատացման) և այլ գործընթացների ազդեցության տակ, որի արդյունքում առաջանում են երկրի մակերևույթում ավելի կայուն միներալներ: Բ. հ. ավելի տարածված է բարեխառն-խոնավ, խոնավ մերձարևադարձային և արևադարձային մարզերում: Ընդհանրապես ֆիզիկական և քիմիական հողմահարումը ընթանում է միաժամանակ և փոխկապակցված:

**B-290. ВЫВЕТРИВАНИЯ МЕСТОРОЖДЕНИЯ – ՀՈՂԱՅԱՐՄԱՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, DEPOSITS OF WEATHERING**, տե՛ս Месторождение выветривания:

**B-291. ВЫДВИНУТАЯ ДЕЛЬТА – ԱՈՁԱՇԱՐԺ ԴԵՆՏԱ, PROTRUDING DELTA**, դելտա, որն առաջ է շարժվել ափի ընդհանուր գծից այն կողմ՝ դեպի բաց ջրավազան: Առաջանում է այն ժամանակ, երբ գետը թափվում է բաց ափում և ունի հարուստ պինդ հոսք:

**B-292. ВЫЕМКА ВАЛОВАЯ – ՀԱՄԱԽԱՈՆ ՀԱՆՈՒՄ, BULK MINING EXTRACTION**, միասին տեղադրված տարատեսակ օգտ. հնձ-ների միասին հանելը, առանց մեկը մյուսից անջատելու:

**B-293. ВЫКЛИНИВАНИЕ СЛОЯ – ՇԵՐՏԻ ՍԵՊԱՑՈՒՄ, WEDGING OUT, PINCHING OUT, THINNING OUT**, շերտի հաստության նվազում մինչև լրիվ անհայտանալը:

**B-294. ВЫРАБОТАННЫЙ РЕЛЬЕФ – ՄՇԱԿՎԱԾ ՌԵԼԻԵՖ**, նույնն է Денудационный рельеф:

**B-295. ВЫРАБОТКА ВЕНТИЛЯЦИОННАЯ – ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՓՈՐՎԱԾՔ, AIR WORKING, AIRWAY**, փորվածք, որով նախապատրաստական և մաքրման փորվածքները մաքրած և արդեն աղտոտված օդը դուրս է գալիս երկրի մակերևույթ:

**B-296. ВЫРАБОТКА ВЕРТИКАЛЬНАЯ ГОРНАЯ – ՈՒՂՂԱԶԻԳ ԼԵՌՆԱՅԻՆ ՓՈՐՎԱԾՔ, VERTICAL WORKING, VERTICAL OPENING**, հորիզոնի նկատմամբ 90° կամ դրան մոտ անկյան տակ տարված փորվածք [հանքափողեր, գեգեկներ, հորեր (շուրֆեր), հորատանցքեր և այլն]:

**B-297. ВЫРАБОТКА ВСКРЫВАЮЩАЯ – ԲԱՑՈՂ ՓՈՐՎԱԾՔ, OPENING WORKING**, երկրի մակերևույթի և հանքամարմնի միջև կապ հաստատող փորվածք: Ստորգետնյա մշակման դեպքում՝ հանքափողեր, բովանցքեր, քվերշլագներ, իսկ բաց մշակման դեպքում՝ խրամներ, կիսախրամներ:

**B-298. ВЫРАБОТКА ГОРНАЯ – ՀԱՆՔԱՓՈՐՎԱԾՔ (ԸՆԴԵՐՔԱՅԻՆ ՓՈՐՎԱԾՔ), MINE WORKING, MINE DIGGINGS, EXCAVATIONS**, օգտ. հնձ-ները կամ դատարկ ապարները հանելու հետևանքով երկրակեղևում առաջացած դատարկություն: Գոյություն ունեն հանքային, հետախուզական, տրանսպորտային, ջրատեխնիկական, ցամաքեցման և այլ փորվածքներ:

**B-299. ВЫРАБОТКА НАКЛОННАЯ ГОРНАЯ – ԹԵՔ ՀԱՆՔԱՓՈՐՎԱԾՔ, INCLINED WORKING**, հորիզոնական և ուղղաձիգ փորվածքներից տարբերվող փորվածք, որն անց է կացվում հորիզոնի նկատմամբ զգալի անկյան տակ (հանքափող, բրենսբերգ, հանքաթեք, թեքատ և այլն):

**B-300. ВЫРАБОТКА ОТКАТОЧНАЯ – ԳԾԱՏԱՐՄԱՆ ՓՈՐՎԱԾՔ, TRAMMING WORKING**, ստորգետնյա փորվածք՝ հիմնականում օգտ. հնձ-ները և դատարկ ապարները նեղածիր ռելեուղիներով փոխադրելու համար:

**B-301. ВЫРАБОТКА ПОЛЕВАЯ – ԴԱՇՏԱՅԻՆ ՀԱՆՔԱՓՈՐՎԱԾՔ, FIELD WORKING**, հանքամարմնից դուրս, դատարկ ապարներով անցկացված փորվածք:

**B-302. ВЫРАБОТКА РАЗВЕДОЧНАЯ ГОРНАЯ – ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՀԱՆՔԱՓՈՐՎԱԾՔ, PROSPECTING OPENING**, հնքվ-ի հետախուզման նպատակով անցկացված փորվածք (հետախուզական բովանցքեր, խավանցքեր, առուներ, հորեր և այլն):

**B-303. ВЫРАБОТКА ЭКСПЛУАТАЦИОННАЯ ГОРНАЯ – ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆ-**

- ՔԱՓՈՐՎԱԾՔ, EXPLOITATION WORKING**, հնքվ. մշակելու համար անցկացված փորվածք:
- B-304. ВЫРАБОТКИ ДРЕНАЖНЫЕ – ՑԱՄԱՔՈՒՐԴԱՅԻՆ (ԴՐԵՆԱԺԱՅԻՆ) ՓՈՐՎԱԾՔՆԵՐ, DRAINAGE WORKINGS**, հնքվ. կամ ապարների զանգվածը ցամաքեցնելու (զազագերծելու) նպատակով ջրի (կամ գազի) կորզման և հեռացման համար անցկացված փորվածքներ:
- B-305. ВЫРАБОТКИ КАПИТАЛЬНЫЕ – ԿԱՊԻՏԱԼ ՓՈՐՎԱԾՔՆԵՐ, PERMANENT MINE**, կապիտալ ներդրումների հաշվին անցկացված և ձեռնարկության հիմնական ֆոնդերում մտած փորվածքներ: Կ. փ. անց են կացվում ստորգետնյա կամ բաց հանքարանային դաշտը բացելու և մշակման ամբողջ ընթացքում հանքային աշխատանքները սպասարկելու համար:
- B-306. ВЫСОКИЕ ГОРЫ – ԲԱՐՉՐ ԼԵՈՆԵՐ**, տե՛ս Высокогорный рельеф:
- B-307. ВЫСОКОГОРНЫЙ РЕЛЬЕФ, ВЫСОКИЕ ГОРЫ – ԲԱՐՉՐԱԼԵՈՆԱՅԻՆ ՌԵԼԻԵՖ, ԲԱՐՉՐ ԼԵՈՆԵՐ, HIGH MOUNTAIN, HIGH MOUNTAIN RELIEF**, լեռների ռելիեֆի ձևածագումնային տեսակ, որը վեր է բարձրանում կլիմայական ձյունային սահմանից և կրում է ժամանակակից ու հին սառցապատումների հետքեր (սառցադաշտային կրկեսներ, սուրանկյուն զազաթներ, հավերժական ձյուն, սառցադաշտեր): Օր.՝ Ալպեր, Կովկաս, Յիմալայներ և այլն:
- B-308. ВЫСОТА АНТИКЛИНАЛИ – ԿԱՄԱՐԱԾԱԼՔԻ (ԱՆՏԻԿԼԻՆԱԼԻ) ԲԱՐՉՐՈՒԹՅՈՒՆ, ANTICLINE ALTITUDE**, 1) ծալքի տվյալ շերտի հողակապի (շառնիրի) հեռավորությունը մինչև այն գիծը, որը միացնում է նրա հողակապերը հարակից սինկլինալներում՝ նորմալ հատույթում, 2) կամարածալքի կտրվածքում որևէ շերտի ամենաբարձր կետի (զազաթի) և նույն շերտի ամենացածր փակված իզոհիպսի ուղղաձիգ հեռավորությունը:
- B-309. ВЫСОТА ГРЕБНЯ СКЛАДКИ – ԾԱԼՔԻ ԿԱՏԱՐԻ ԲԱՐՉՐՈՒԹՅՈՒՆ**, նույնն է՝ Высота антиклинали:
- B-310. ВЫСОТА ДАВЛЕНИЯ – ԾՆՇԱՍՆ ԲԱՐՉՐՈՒԹՅՈՒՆ, PIEZOMETRIC HEIGHT**, ջրի սյան բարձրությունը հորատանցքում, ջրհորում կամ այլ փորվածքում՝ հաշված նրանց հատակից (խորշից): Ջրի սյան բարձրությունը համեմատական պայմանական հարթության նկատմամբ (սովորաբար ընդունվում է ծովի մակարդակը) բնութագրում է ստր. ջրի ընդհանուր ճնշման մակարդակը:
- B-311. ВЫСОТА КАПИЛЛЯРНОГО ПОДНЯТИЯ – ՄԱՁԱՆՈՒԹԱՅԻՆ ԲԱՐՉՐԱՑՄԱՆ ՄԱՎԱՐԴԱՎ, ALTITUDE OF CAPILLARY RISE**, այն մակարդակը, մինչև որը ջուրը բարձրանում է ապարի մազական անցքերով: Մ. բ. մ. հաշվվում է ջրատար հորիզոնի մակերևույթից:
- B-312. ВЫСОТА НАПОРНАЯ – ԾՆՇՈՒՄԱՅԻՆ ԲԱՐՉՐՈՒԹՅՈՒՆ, PRESSURE HEIGHT**, ջրի սյան բարձրությունը հորատանցքում, ջրհորում կամ այլ փորվածքում՝ հաշված ջրատարի շերտի և ջրամերժ ծածկի հպումից:
- B-313. ВЫСОТА ОТНОСИТЕЛЬНАЯ – ՀԱՐԱԲԵՐԱՎԱՆ ԲԱՐՉՐՈՒԹՅՈՒՆ, RELATIVE HEIGHT**, տե՛ս Относительная высота:
- B-314. ВЫСОТА СБРОСА ВЕРТИКАЛЬНАЯ – ՎԱՐՆԵՏՔԻ ՈՒՂՎԱԶԻԳ ԲԱՐՉՐՈՒԹՅՈՒՆ**, նույնն է՝ Амплитуда смещения вертикальная:
- B-315. ВЫСОТА СБРОСА СТРАТИГРАФИЧЕСКАЯ – ՎԱՐՆԵՏՔԻ ՇԵՐՏԱԳՐԱՎԱՆ ԲԱՐՉՐՈՒԹՅՈՒՆ**, հոմ. Амплитуда смещения стратиграфическая:
- B-316. ВЫСОТА СЕЧЕНИЯ – ՀՍՈՒՅԹԻ ԲԱՐՉՐՈՒԹՅՈՒՆ, CONTOUR INTERVAL**, տեղագրական քարտեզներում բարձրությունը երկու հարակից հորիզոնականների միջև:

- B-317. ВЫСОТА СКЛАДКИ – ԾԱԼՔԻ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ, HEIGHT OF FOLD,** 1) մի ծալքի կատարի (ողնուցի) հեռավորությունը մինչև այդ գիծը, որը միացնում է հարակից ծալքերի ողնուցները (կատարները)՝ չափված ըստ բնորոշիչ հորիզոնի, 2) մեկ ծալքի հողակապի հեռավորությունը մինչև այն գիծը, որը միացնում է հարակից ծալքերի հողակապերը՝ չափված ըստ տվյալ շերտի: Հոմ. ծալքի կատարի բարձրություն, ծալքի լայնույթ:
- B-318. ВЫСОТНАЯ ОТМЕТКА – ԲԱՐՁՐԱՆԻՇ, SPOT HEIGHT, BENCH MARK,** տեղանքի բնորոշ կետի բացարձակ բարձրությունը նշող թիվ:
- B-319. ВЫСТУП ФУНДАМЕНТА – ՀԻՍՔԻ ԵՆՈՒՄՍ, PROJECTION OF BASEMENT,** պլատֆորմի սահմանափակ տեղամաս, որտեղ ծալքավոր հիմքը տեղադրված է համեմատաբար ոչ խոր կամ դուրս է գալիս մակերևույթ:
- B-320. ВЫХОД ГАЗА – ԳԱՉԻ ԵԼՔ, GAS DISCHARGE,** բնական գազի անջատում՝ անմիջապես գետնից (գազի չոր ելք) կամ ջրից (պղպջակների ձևով): Ցեխային հրաբուխներում գազն անջատվում է բլրային ցեխի կամ ջրի հետ միասին:
- B-321. ВЫХОД КЕРНА – ՀԱՆՈՒԿԻ (ԿԵՆՆԻ) ԵԼՔ, CORE DISCHARGE,** հորատանցքի տվյալ հատվածում ստացված հանուկի և այդ հատվածի երկարության հարաբերություն:
- B-322. ВЫХОД ЛЕТУЧИХ ВЕЩЕСТВ – ՑՆՂՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԵԼՔ, CONTENT OF VOLATILE AGENTS,** պինդ այրվող օգտ. հնձ-ների որակի ցուցանիշ, որը հաշվի է առնվում նրանց արդյունավետ արդյ. օգտագործման ժամանակ: Ցնդող նյութերը դրանց գազանման և գոլորշիանման արդյունքներն են, որոնք անջատվում են այրվող օգտ. հնձ-ներից՝ ստանդարտ պայմաններում տաքացնելիս:
- B-323. ВЫХОД НЕФТИ – ՆԱՎԹԻ (ՔԱՐՅՈՂԻ) ԵԼՔ, OIL SHOW,** երկրի մակերևույթում նավթի երևան գալը, որը կարող է պայմանավորված լինել նավթաբեր շերտերի մերկացմամբ, ինչպես նաև ճեղքերի ու խզվածքների առկայությամբ, որոնցով նավթը բարձրանում է խոր տեղադրված շերտերից:
- B-324. ВЫЩЕЛАЧИВАНИЕ ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ԼՈՒԾԱԶԱՏՈՒՄ (ԼՎԱՑԱՅԱՆՈՒՄ, ՏԱՐԱԼՈՒԾՈՒՄ), LEACHING OF ROCKS,** ստր. ջրերի միջոցով ապարների առանձին բաղադրատարրերի ընտրական լուծման և հեռացման գործընթաց, որը տարածված է հատկապես ակտիվ ջրափոխանակման զոնայում: Ջրի ընտրական լուծման հատկությունը բարձրանում է, երբ նրա մեջ ավելանում են ածխաթթուն և թթվածինը: Ա. լ-ման ժամանակ առաջին հերթին հեռանում են Na-ի, K-ի և Mg-ի քլորիդները, այնուհետև՝ Ca-ի սուլֆատային և ապա Ca-ի կարբոնատային միացությունները:
- B-325. ВЮРМСКАЯ ЛЕДНИКОВАЯ ЭПОХА, ВЮРМ (Բավարիայում գտնվող Վյուրմ գետի անունից, Գերմ.) – ՎՅՈՒՐՄԻ ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ԴԱՐԱՎԱՐԳ, ՎՅՈՒՐՄ, WURM ICE AGE,** Ալպերի ուշպլեյստոցենյան սառցապատման դարակարգ 170-ից մինչև 11 հազար տ.: Համապատասխանում է Արևելաեվրոպական հարթավայրի վաղրայան սառցապատմանը:

# Գ

- Գ-1. ГАББРО** (իտալ. gabbro, լատ. glaber-ից – հարթ, ողորկ, Յս. Իտալ. տեղանքի անունից) – **ԳԱԲՐՈ, GABBRO**, հիմքային ներժայթքային (ինտրուզիվ) մուգավուն հավասարահատիկ ապար՝ գաբրոային կառուցվածքով: Բաղկացած է հիմքային պլագիոկլազից, մոնոկլինային պիրոքսենից, օլիվինից կամ եղջերախաբից (հոռնբլենդից): Երկրորդային միներալներ են տիտանամագնետիտը, բիոտիտը, նեֆելինը, ուղեկից միներալներ են ապատիտը, պիրրոտիմը, քրոմիտը և պիկոտիտը: Ալկալիական Գ-ի համար բնորոշ է նեֆելինի առկայությունը: Ըստ գունավոր միներալների առկայության՝ տարբերում են՝ օլիվինային Գ. (տրակտոլիթ), հոռնբլենդային Գ. (նորիտ) և այլն: Գ. տեղադրվում է լակոլիտի, լոպոլիթի, ներժայթքային կուտակի, դայկայի, ապարազանգվածի տեսքով, որոնց չափերը կարող են հասնել մի քանի հազ. կմ<sup>2</sup>: Գ. հանդիպում է ինչպես ցամաքային, այնպես էլ օվկիանոսային մարզերում: Գ. օգտագործվում է շինարարական նյութերի արտադրության մեջ: Գ-ի տարբերակը՝ լաբրադորիտը, գեղազարդային քար է:
- Գ-2. ГАББРО-ДИАБАЗ – ԳԱԲՐՈ-ԴԻԱԲԱԶ, GABBRO-DIABASE**, միջակա երակային ապար գաբրոյի և դիաբազի միջև, որն ունի օֆիտային (դիաբազային) կառուցվածք, կազմված է հիմքային պլագիոկլազից և մոնոկլինային պիրոքսենից, ուղեկից միներալներն են սֆենը, ապատիտը, տիտանամագնետիտը: Խորհուրդ է տրվում «Գ-դ.» տերմինը կիրառել միայն երակային (դայկային) ապարների վերաբերյալ:
- Գ-3. ГАББРО-ДИОРИТ – ԳԱԲՐՈ-ԴԻՈՐԻՏ, GABBRO-DIORITE**, գաբրոյի և դիորիտի միջակա ապար:
- Գ-4. ГАББРОИДЫ – ԳԱԲՐՈՅԱԿԵՐՊԵՐ (ԳԱԲՐՈԻԴՆԵՐ), GABBROIDS**, գաբրոյի և նորիտի խմբի ապարների հավաքական անվանում:
- Գ-5. ГАББРО-ПОРФИРИТ – ԳԱԲՐՈ-ՊՈՐՖԻՐԻՏ, GABBRO-PORPHYRITE**, գաբրոային կազմի երակային ապար՝ լաբրադորի ներփակվածքներով և մանրադիաբազային հիմնական զանգվածով, որը կազմված է հիմքային պլագիոկլազից և մոնոկլինային պիրոքսենից:
- Գ-6. ГАББРО-СИЕНИТ – ԳԱԲՐՈ-ՍԻԵՆԻՏ, GABBRO-SYENITE**, «Монзонит» տերմինի հոմ.:
- Գ-7. ГАБИТУС КРИСТАЛЛОВ** (լատ. habitus – արտաքին տեսք) – **ԲՅՈՒՐԵՂՆԵՐԻ ՅԱՐՔՏՈՒ, HABIT OF CRYSTALS**, բյուրեղների արտաքին տեսք, որը որոշվում է այս կամ այն պարզ ձևերի նիստերի առավելագույն զարգացմամբ: Յաբիտոսների օրներ են հատվածակողմայինը, խորանարդայինը, շեղանկյունանիստայինը և այլն:
- Գ-8. ГАВАЙСКИЙ ТИП ИЗВЕРЖЕНИЯ – ԺԱՅԹՔՄԱՆ ՅԱՎԱՅԱՆ ՏԻՊ, HAWAIIAN-TYPE ERUPTION**, բազալտային լավայի համեմատաբար հանգիստ արտավիժում, որն ուղեկցվում է թույլ պայթումներով, շատրվանացմամբ, հեղուկ լավայի

որոշակի տեսակի ռուճերի, կնձիկների, ցայտերի արտանետմամբ: Դրանք խառնարանի մոտ առաջացնում են կոներ և թմբեր:

**Դ-9. ГАГАТ** (Հին Լիդիայի Գագայ լեռան անունից) – **ՍԵՎ ՍԱԹ, ԳԻՇԵՐԱՔԱՐ, ԳԻՇԵՐԱՎՆ, ԽԵԺԱՃՈՒԽ, GAGATE**, բրածո ածխի սև, ամուր, ծյուծի վառ փայլով, համասեռ, խեցանման կոտրվածքով տարատեսակ: Գ-ի ծագումը վերջնականապես պարզված չէ, ամենահավանականն այն է, որ բարձրակարգ բույսերի մնացորդները, առանց օքսիդային նեխման, ընկել են վերականգնման անօդակյաց միջավայր:

**Դ-10. ГАЖА – ԳԱՉ, PLASTER**, ածխաթթվային կալցիումի փուխր, փոշենման զանգված, որը կուտակվել է լճածահճային ջրավազաններում՝ լուծույթներից  $CaCO_3$ -ի նստեցման հետևանքով: Օգտագործվում է ցեմենտի, կրի արտադրության համար: Հոմ. հողանման գիպս, լճային կավիճ:

**Դ-11. ГАЗ БОЛОТНЫЙ – ՃԱՅՃԱԳԱՉ, MARSH GAS**, գազերի խառնուրդ, որն առաջանում է բնական պայմաններում, առանց օդի մուտքի, բուսական մնացորդների մանրակենսաբանական քայքայման ընթացքում: Ունի այրվելու հատկություն: Պարունակվում է 20-95 % մեթան, մնացած բաղադրամասերն են  $CO_2$  և  $N_2$ :

**Դ-12. ГАЗ РУДНИЧНЫЙ – ՀԱՆՔԱԳԱՉ, ՀԱՆՔԱՅԻՆ ԳԱՉ, MINE GAS**, հանքահորերում առաջացած գազ: Կազմված է գլխ. մեթանից՝ այլ գազերի խառնուրդով (պարաֆինային շարքի գազեր, ածխաթթու, ազոտ, ծմբաջրածին և այլն):

**Դ-13. ГАЗОВАЯ ЗАЛЕЖЬ – ԳԱՉԱՅԻՆ ՀԱՆՔԱԿՈՒՏԱԿ, GAS ACCUMULATION, GAS DEPOSIT**, բնական գազի կուտակումը ծուղակներում, որոնք բաղկացած են հավաքիչներից (կոլեկտորներից) և անջրանցիկ ծածկոցից: Տեղադրված են ծակոտկեն, ճեղքավոր, խռոչավոր ապարներում (ավազաքարեր, ալկրոլիթներ, կրաքարեր և այլն): Գ. հ-ները միմյանցից տարբերվում են գազերի կազմով, մշակման ռեժիմով, տեղադրման պայմաններով: Գ. հ-ի հիմնական պարամետրերից է շերտային ճնշումը: Միասնական տեկտ. կառուցվածքում գտնվող Գ. հ-ների համախմբումը առաջացնում է գազային հնքվ.:

**Դ-14. ГАЗОВАЯ СЪЁМКА – ԳԱՉԱՅԻՆ ՀԱՆՈՒՅԹ, GAS MEASURING**, երկրք. մեթոդ, որի հիմքում ընկած է միջև երկրի մակերևույթ տեղաշարժվող բնական գազերի կազմի հետազոտությունը: Կատարվում է նավթի ու գազի, մետաղական (սուլֆիդային հանքանյութերի և խոր տեղադրված հանքամարմինների օքսիդացման զոնա) հնքվ-երի, միներալային ջրերի որոնման, ինչպես նաև երկրք. քարտեզահանման համար: Նավթի ու գազի որոնման տեղերը որոշվում են ենթահողային շերտերում ածխաջրածնային գազերի բարձր պարունակությունները, պինդ օգտ. հնձ-ների որոնման ու երկրք. քարտեզագրության ժամանակ ածխաթթու գազի, ծծմբային գազերի, ջրածնի, ռադոնի, հելիումի, արգոնի, թթվածնի պարունակությունները:

**Դ-15. ГАЗОВАЯ ШАПКА – ԳԱՉԱՅԻՆ ԳԼԽԱՐԿ, GAS CAP**, ազատ գազի կուտակումներ նավթաքեր շերտերի առավել բարձրադիր մասերում՝ նավթային կուտակների վրա: Գ. գ-ները ծագումնաբանորեն և տարածականորեն կապված են նավթի (քարյուղի) հետ:

**Դ-16. ГАЗОВОЕ МЕСТОРОЖДЕНИЕ – ԳԱՉԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ, GAS FIELD**, գազի այն հանքակուտակների համախմբություն, որոնք կապված են մակերևույթի ընդհանուր տեղամասի հետ և վերահսկվում են միասնական կառուցվածքային տարրով: Գ. հ-երը ստորաբաժանվում են միաշերտայինների և բազմաշերտայինների: Վերջիններում միևնույն մակերեսում գտնվում են գազերի մի քանի կուտակներ, որոնք տեղադրված են միմյանց վրա՝ տարբեր խորություններում: Միևնույն Գ. հ-ի առանձին միջակայքերում կարող են լինել տարբեր տիպի կուտակներ, իսկ հավա-

քիչները կարող են ունենալ տարբեր ծագում (խոռոչային, միջհատիկային կամ ճեղքային): Գ. հ-երի խիստ մեծ մասը տարածականորեն խմբավորվում է գազակուտակման զոնաներում և տարածված է պլատֆորմների (կամարային բարձրացումներ, ներպլատֆորմային իջվածքներ և այլն), ծալքավոր մարզերի (միջլեռնային իջվածքներ, միջադիր զանգվածներ) և անցողիկ (նախալեռնային իջվածքներ ու գոգավորություններ) գազաբեր կամ գազանավթաբեր մարզերում: Մաքուր Գ. հ-երն իրենց կազմում ներառում են 94-99 % մեթան և աննշան քանակի էթան, պրոպան: Խառնուրդների ձևով առկա են  $\text{CO}_2$ ,  $\text{N}_2$ ,  $\text{H}_2\text{S}$ , He:

**Դ-17. ГАЗОВОЕ ХРАНИЛИЩЕ – ԳԱԶԱՊԱՅԵՏԱՐԱՆ, GAS STORAGE**, գազի պահեստավորման բնական կամ արհեստական մեծածավալ տարողություններ:

**Դ-18. ГАЗОВЫЙ КАРОТАЖ – ԳԱԶԱՅԻՆ ԿՈՐՈՏԱԺ, GAS LOGGING**, հորատանցքերի ուսումնասիրման մեթոդ, հիմքում ընկած է հորատանցքի լվացման հեղուկում ածխաջրածնային գազերի ու բիտումների պարունակության ու կազմի որոշումը: Կիրառվում է հորատանցքի կտրվածքում նավթի ու գազի հեռանկարային տեղամասերի անջատման և դրանց հագեցվածության հեռանկարային գնահատման համար: Գ. կ-ի ընթացքում ուսումնասիրվում են հորատման ժամանակ հորատախորշից մինչև հորատաբերանը շարժվելիս լվացող հեղուկի մեջ ներառված ածխաջրածնային գազերի գումարային ծավալը և կազմը, խիստ հազվադեպ Գ. կ. օգտագործվում է ածխաբեր նստվածքների հետախուզական հորատման ժամանակ, որտեղ հիմնականում որոշվում է միավոր այրվող զանգվածի մեջ մեթանի պարունակությունը:

**Դ-19. ГАЗОВЫЙ КОНУС – ԳԱԶԱՅԻՆ ԿՈՆ, GAS CONE**, հորատանցքի հատակի մոտակայքում շերտի գազա- և նավթահագեցված (ջրահագեցված) մասերի բաժանման միջև ձևախախտված մակերևույթ, որն առաջանում է նավթահագեցված (ջրահագեցված) բաղադրիչի շահագործման ժամանակ այն դեպքում, երբ հորատախորշում նվազում է ճնշումը:

**Դ-20. ГАЗОВЫЙ РЕЖИМ – ԳԱԶԱՅԻՆ ՌԵՃԻՄ, GAS CONDITIONS**, ռեժիմ, որում օգտ. հնձ-ի հոսքը դեպի արդյունահանվող հորատանցք պայմանավորված է արդյունավետ շերտում գազի ճնշման պոտենցիալ էներգիայով: Նավթային ջրաերկր-ում նավթային հանքակուտակի շահագործման ռեժիմ, որի դեպքում նավթը տարվում է դեպի հորատանցք առավել շարժուն ընդարձակվող գազով: Շերտում ճնշման նվազման պատճառով գազը լուծված վիճակից անցնում է ազատ վիճակի և կատարում գազամբարձի դեր:

**Դ-21. ГАЗОВЫЙ ФОНТАН – ԳԱԶԱՅԻՆ ՇԱՏՐՎԱՆ, GAS SPOUT**, շիթերի ձևով ուժգին գազանջատում հորատանցքերից կամ ապարների ճեղքերից (ստր. փորվածքներով հատելիս), ուր գազերը գտնվում են մեծ ճնշման տակ: Գազը շատրվանելիս տեղի է ունենում նաև ջրի, ցեխի և մանր բեկորների արտանետում:

**Դ-22. ГАЗОГИДРАТНАЯ ЗАЛЕЖЬ – ԳԱԶԱՅԻՂՐԱՏԱՅԻՆ ՀԱՆՔԱԿՈՒՏԱԿ, GAS-HYDRATE DEPOSIT**, երկրակեղևի նստվածքային ծածկոցում ածխաջրածնային գազերի հիդրատների եզակի կուտակում, բնորոշվում է գազերի խիստ ցածր շարժունակությամբ, նույնիսկ շերտային ջրերի ակտիվ միգրացիայի դեպքում:

**Դ-23. ГАЗОГИДРАТНОЕ МЕСТОРОЖДЕНИЕ – ԳԱԶԱՅԻՂՐԱՏԱՅԻՆ ՀԱՆՔԱԿԱՅՐ, GAS-HYDRATE FIELD**, ածխաջրածնային այն գազերի հանքակուտակների համախմբություն, որոնք մասամբ կամ լրիվ գտնվում են հիդրատային վիճակում: Մայր ցամաքներում Գ. հ-երից ներքև կարող են գտնվել նավթի կամ գազի հանքակուտակներ: Համաշխարհային օվկիանոսի ջրատարածքներում ազատ գազի (նավթի) հանքակուտակների վրա տեղաբաշխված Գ. հ-ի (բնորոշ են արկտիկա-

կան ծովերի ափամերձ շերտի համար) շահագործումը աչքի է ընկնում մի շարք առանձնահատկություններով:

**Գ-24. ГАЗОЁМКОСТЬ ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ԳԱՉԱՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ, GAS CONTENT OF ROCK**, ապարների՝ որոշակի ջրաճնշումային պայմաններում գազեր կլանելու ընդունակության բնութագիր: Գնահատվում է գազերի ծավալային պարունակությամբ ապարի միավոր ծավալում կամ զանգվածում: Ա. գ-յան մեծությունը կախված է ապարի կազմությունից և տեղադրման պայմաններից, այն աճում է շերտային ճնշման, ծակոտկենության բարձրացման հետ և նվազում է ջերմաստիճանի և ջրահագեցվածության աճմանը զուգընթաց:

**Գ-25. ГАЗОНАПОРНЫЕ ВОДЫ – ԳԱՉԱՆՆՇՈՒՄԱՅԻՆ ՋՐԵՐ, GAS-ZONE WATERS**, ստր. ջրեր, որոնք վեր են բարձրանում ապարների ճեղքերով, հորատանցքերով կամ այլ փորվածքներով՝ գազի ճնշման շնորհիվ կամ ջրում լուծված գազերի անջատման հետևանքով:

**Գ-26. ГАЗОНЕФТЕНОСНОСТИ ПРИЗНАКИ – ԳԱՉԱՆԱՎԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ (ԳԱՉԱՔԱՐՅՈՒՂԱԲԵՐՈՒԹՅԱՆ) ՆՇԱՆՆԵՐ, GAS AND OIL SHOW**, բնորոշում են երկրաշրջանների (ռեգիոնների) նավթագազաբերության հեռանկարները և ածխաջրածինների հանքակուտակների որակական կազմը: Տարբերում են ուղղակի և անուղղակի Գ. ն.: Ուղղակի Գ. ն-ին են պատկանում բոլոր տեսակի նավթագազային երևույթները, ընդհուպ մինչև նավթի և գազի արոյ. առիտումը և ապարների համատարած ներծծումը նավթով ու գազով, ինչպես նաև՝ ցեխային հրաբուխները, իսկ անուղղակի Գ. ն-ին՝ շերտային ջրերում բենզոլի, տոլուոլի, նեֆտենային թթուների, յոդի, բրոմի, լուծված ածխաջրածնային գազերի (երբեմն ծծմբաջրածնի) բարձրացված քանակը: Մակերևույթում անուղղակի Գ. ն-ից են ծծմբաերևույթների և վերը նշված առանձնահատկություններով ջրերի ելքերը:

**Գ-27. ГАЗОНЕФТЕПРОЯВЛЕНИЕ – ԳԱՉԱՆԱՎԹԱԲԵՐԵՎԱԿՈՒՄ (ԳԱՉԱՔԱՐՅՈՒՂԱԲԵՐԵՎԱԿՈՒՄ), GAS AND OIL SHOW**, գազի կամ նավթի մշտական կամ պարբերական արտահոսք երկրի մակերևույթ կամ ստր. լեռնային փորվածքներ: Տարբերում են գծային Գ.՝ կապված նավթաբեր համակարգերում խզվածքային խախտումների հետ, և կետահրապարակային՝ կապված մակերևույթում նավթային շերտերի ելքերի և ցեխային հրաբուխների հետ: Հորատանցքերում Գ. արտահայտվում է շատրվանացման, պղպջակների, փառերի, ապարների խռոչներում և ճեղքերում նավթի ու գազի լցվածքների, շերտային ջրերի մակերեսում թաղանթի տեսքով: Գ-ները հանդիսանում են գազանավթաբերության հավաստի հատկանիշներ:

**Գ-28. ГАЗОНЕФТЯНАЯ ЗАЛЕЖЬ – ԳԱՉԱՆԱՎԹԱՅԻՆ (ԳԱՉԱՔԱՐՅՈՒՂԱՅԻՆ) ՀԱՆՔԱՎՈՒՄԱԿ, GAS-OIL FIELD**, ընդերքում գազի և նավթի (քարյուղի) եզակի կուտակ, որում ազատ գազը գրավում է ծուղակի վերին մասը և անմիջապես հպվում է նավթի հետ, ըստ որում, գազային գլխարկի ծավալն ավելի մեծ է նավթի ծավալից, որը լրիվ ներքնարկում է գազային մասին: Գ. հ-ի ծածկանը սովորաբար կազմված է նվազաթափանց ապարներից (կավային, աղաբեր և այլն), իսկ նավթային մասը ներքնարկվում է հատակային ջրով: Արդյունավետ շերտերը ներկայացված են ծակոտկեն, խռոչավոր և ճեղքավոր հավաքիչներով (կոլեկտորներով):

**Գ-29. ГАЗОНЕФТЯНОЕ МЕСТОРОЖДЕНИЕ – ԳԱՉԱՆԱՎԹԱՅԻՆ (ԳԱՉԱՔԱՐՅՈՒՂԱՅԻՆ) ՀԱՆՔԱՎԱՅՐ, GAS-OIL FIELD**, գազի և նավթի (քարյուղի) կուտակների համախմբություն, որը վերահսկվում է միևնույն կառուցվածքային տարրով, և որի համար բնորոշ է գազի ծավալի գերակշռությունը նավթի ծավալի նկատմամբ: Գ. հ-ի կտրվածքի վերին մասում գտնվում են գազի հանքակուտակները, ստորին մասում՝

սում՝ նավթի: Կտրվածքում հանքակուտակների տեղաբաշխումը անհավասարաչափ է: Գ. հ-երը խմբավորվելով առաջացնում են նավթագազակուտակումային զոնաներ: Ածխաջրածինների հիմնական կուտակումները կապված են որոշակի քարաբանաշերտագրական համալիրների հետ: Արդյունավետ շերտերը ներկայացված են ծակոտկեն-հատիկավորված, խռոչավոր և ճեղքավոր հավաքիչներով (կոլեկտորներով): Գազի և նավթի հանքակուտակների շահագործումը իրականացվում է անջատականորեն:

**Դ-30. ГАЗООТДАЧА ГАЗОВОГО ПЛАСТА – ԳԱԶԱՅԻՆ ՇԵՐՏԻ ԳԱԶԱՏՎՈՒԹՅՈՒՆ (ԳԱԶԱՅԱՆՁՆՈՒՄ), GAS YIELD OF A GAS SEAM**, բնորոշվում է գազի պաշարների կորզման աստիճանով: Տարբերում են ընթացիկ (որոշվում է ժամանակի որոշ պահին) և վերջնական (հնքվ-ի շահագործման դադարեցման ժամանակ): Գ. շ. գ. արտահանված գազի քանակն է սկզբնական պաշարների նկատմամբ: Հնքվ-երի միջին գործակիցը 0,85 է, այդ ցուցիչի նվազագույնը (0,4-0,5) դիտվում է փոքր պաշարներ ունեցող հնքվ-երում: Առավելագույն Գ. շ. գ. (մինչև 0,9) ունեն միջին և աննշան պաշարներ ունեցող հնքվ-երը, որոնք բնորոշվում են համասեռ հավաքիչներով (կոլեկտորներով): Վերջնական Գ. շ. գ. որոշվում է մի շարք երկրբ. առանձնահատկություններով, ինչպես նաև տնտեսական և հնքվ-ի շահագործման ու գազի արտահանման գործոններով:

**Դ-31. ГАЗОПРОМЫСЛОВАЯ ГЕОЛОГИЯ – ԳԱԶԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**, տե՛ս Нефтегазопромысловая геология:

**Դ-32. ГАЗОПРОНИЦАЕМОСТЬ ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ԳԱԶԱԹՎՈՒՄՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ, GAS PERMEABILITY OF ROCKS**, ապարների՝ գազ բաց թողնելու հատկություն ճնշման անկման առկայության դեպքում՝ ի հաշիվ դատարկությունների (ծակոտիներ, ճեղքեր) հաղորդակցվածության: Տարբերում են բացարձակ, փուլային և հարաբերական Գ.: Գ. կախված է ապարների դատարկությունների չափերից, նրանց հաղորդակցվածության ու ջրահագեցվածության աստիճանից:

**Դ-33. ГАЗЫ ПРИРОДНЫЕ – ԲՆԱԿԱՆ ԳԱԶԵՐ, NATURAL GASES**, տարբեր վիճակներում հանդիպող գազային բաղադրամասերի ամբողջություն: Հանդիպում են ազատ վիճակում (Երկրի օդային մթնոլորտը, ծակոտկեն և ճեղքավոր ապարներում, ածխում գազի հանքակուտակները), լուծված վիճակում (ջրոլորտում, ստր. ջրերում, նավթերում), ապարներում կլանված և պինդ վիճակում (բյուրեղահիդրատների տեսքով): Բ. գ. առաջանում են Երկրի ընդերքում և մակերևույթում ընթացող բնական գործընթացների հետևանքով: Առավել տարածված են ազոտը, ածխաթթու գազը, ածխաջրածինը և այլն, որոնք հանդիպում են թթվածնի, ծծմբաջրածնի և հազվագյուտ գազերի հետ համակցված: Բ. գ. մեծ մասամբ այրվող են (ածխաջրածնայիններ):

**Դ-34. ГАЗЫ ПРИРОДНЫЕ ГОРЮЧИЕ – ԲՆԱԿԱՆ ԱՅՐՎՈՂ ԳԱԶԵՐ, COMBUSTIBLE NATURAL GASES**, մեթանային շարքի ածխաջրածինների և ոչ ածխաջրածնային բաղադրամասերի խառնուրդներ, որոնք հանդիպում են երկրակեղևի նստվածքային ծածկոցում՝ ազատ կուտակների տեսքով, ինչպես նաև լուծված (նավթում և շերտային ջրերում), ցրված (ապարների կողմից կլանված) և պինդ (գազահիդրատային հանքակուտակներ) վիճակում: Մեթանային շարքի ածխաջրածինները ներկայացված են մեթանով (ավելի քան 85-90 %), էթանով, պրոպանով, բուտանամներով, հազվադեպ՝ պենտանով: Ոչ ածխաջրածնային բաղադրամասերը ներկայացված են գլխ. ազոտով, ածխաթթու գազով, ջրային գոլորշիներով. բացի դա, որոշ գազեր հարստացված են ծծմբաջրածնով, հելիումով, արգոնով, հանդիպում



են ջրածին, սնդիկ: Ածխաթթու գազի պարունակությունը տատանվում է տոկոսի մասերից մինչև 10-15 %: Հետազոտողների մեծ մասը ածխաջրածինների օրգանական ծագման կողմնակիցներ են, ըստ որի՝ նավթը և գազը նստվածքային ապարներում ցրված օրգանական նյութի վերափոխության արդյունքն են: Անօրգանական տեսության համաձայն՝ նավթը և գազը առաջանում են երկրակեղևի խոր զոնաներում, բարձր ջերմաստիճանի ու ճնշման պայմաններում՝ ածխածնի ու ջրածնի սինթեզի հետևանքով:

**Գ-35. ԳАЗЫ ФУМАРОЛЬНЫЕ** (գազ և իտալ. եզ. fumarola, fumare-ից – ծուխ է արծակում) – **ՖՈՒՄԱՐՈԼԱՅԻՆ ԳԱԶԵՐ, FUMAROLE GASES**, անջատվում են հրաբխի հանգիստ գործունեության ժամանակ՝ խառնարանի հատակի և լավայի հոսքերի ճեղքերից ու խոռոչներից՝ շիթերի տեսքով:

**Գ-36. ГАЙОТЫ** (առաջին անգամ հայտնաբերողի՝ ամերիկյան աշխարհագետ ու երկրաբան Ա. Գայոթի, A. Guyot, 1807-1884, անունից) – **ԳԱՅՈՒՆԵՐ, ՀԱՐԹԱԳԱԳԱԹՆԵՐ, GUYOTS, FLAT-TOPPED SEAMOUNTS, TABLEMOUNTS**, մեկուսացված հարթագագաթ, հրաբխային ստորջրյա լեռներ: Ենթադրվում է, որ գագաթների հարթեցումը պայմանավորված է հին ալեհարմամբ (աբրազիայով) կամ մերձնակերևութային լերկացմամբ: Տարածված են գլխ. հաղաղ օվկիանոսում, որտեղ լեռների գագաթները գտնվում են 200-ից մինչև 2000 մ խորություններում:

**Գ-37. ГАЛЕНИТ** (լատ. galena – կապարի հանքաքար), **СВИНЦОВЫЙ БЛЕСК – ԳԱԼԵՆԻՏ, ԿԱՊՐԻ ՓԱՅԼ, GALENA, GALENITE, LEAD GLANCE**, միներալ, կապարի սուլֆիդ, PbS: Բյուրեղանում է խորանարդային համակարգում: Առաջացնում է կապարի մոխրագույն, վառ մետաղական փայլով բյուրեղներ, հողանման ագրեգատներ, հոծ զանգվածներ: Կարծրությունը՝ 2-3: Հնքվ-երը գլխ. ջրաջերմային (հիդրոթերմալ) և մետասոմատիկական են: Հանդիպում է բազմամետաղական հնքվ-երում, պեգմատիտներում, սկառներում, հրաբխային գոյացումներում: Կապարի գլխ. հանքանյութն է:

**Գ-38. ГАЛЕЧНИК – ՃԱԼԱՔԱՐԱԽԱՌՆՈՒՐՂ, ՃԱԼԱՔԱՐՈՒՏ, ՃԱԼԱՔԱՐԱՇԵՐՏ, SHINGLE, BENCH GRAVEL, COARSE GRAVEL, PEBBLE-BED**, փուխր խոշորաբեկոր (փսեֆիտային) նստվածքային ապար, կազմված է գլխ. ճալաքարի կուտակումներից՝ կոպիճի, ավազի, երբեմն կավային նյութի խառնուրդով: Ըստ ճալաքարի չափերի՝ առանձնացնում են խոշոր (50-100 մմ), միջին (25-50 մմ) և մանր (10-25 մմ) Գ-ներ:

**Գ-39. ГАЛИТ** (հուն. hals – աղ), **КАМЕННАЯ СОЛЬ – ՀԱԼԻՏ, ՔԱՐԱՂ, HALITE, ROCK-SALT, SALMAR**, միներալ, նատրիումի քլորիդ, NaCl: Բյուրեղանում է խորանարդային համակարգում: Առաջացնում է անգույն կամ սպիտակ խորանարդային բյուրեղներ, դրանց ագրեգատներ, համատարած հողանման զանգվածներ, մակահոսային առաջացումներ, հողային աղակալումներ, շթաքարեր, բյուրեղաբույլեր: Կարծրությունը՝ 2: Հեշտ լուծվում է ջրում, բնորոշ է աղային համր: Օժվալ-ճակային ու ծովային ֆացիաների նստվածքային ստվարաշերտերում առաջացնում է շերտեր, աղային գմբեթներում՝ ապարազանգվածանման մարմիններ և այլն: Օգտագործվում է կերակրի աղի, սոդայի, քլորի, աղաթթվի, մետաղական նատրիումի ստացման համար և այլ բնագավառներում:

**Գ-40. ГАЛЛУАЗИТ** (բելգ. երկրաբան Ժ. Բ. Օմալիուս դ' Յալուի, I. B. Omalius d'Hallooy, անունից) – **ՀԱԼՈՒԲՁԻՏ, HALLOYSITE**, միներալ, շերտավոր սիլիկատ,  $Al_4(OH)_8[Si_4O_{10}]$ , բյուրեղանում է մոնոկլինային համակարգում: Բնորոշ են մոմանման և հախճապակենման ագրեգատները: Գույնը՝ սպիտակ, մոխրագույն, երկնա-

գույն փայլատ է: Կարծրությունը՝ 1-2.5: Հ. ջրում կակղում է՝ առաջացնելով կախույթ (սուսպենզիա) և պլաստիկ զանգված: Գոյանում է արտածին պայմաններում ալյումասիլիկատային ապարների հողմահարման ընթացքում: Հանդիսանում է որոշ կավերի բաղկացուցիչ մասը:

**Դ-41. ГАЛОГЕНЕЗ** (հուն. háls – աղ և génesis – ծագում, գոյացում) – **ԱՂԱԳՈՅԱՑՈՒՄ, HALOGENESIS**, լուծույթներից աղերի առաջացման (նստեցման) գործընթաց, որը խստորեն ենթարկվում է լուծույթի ֆիզքիմ. հավասարակշռության օրենքներին:

**Դ-42. ГАЛОГЕНИДЫ ПРИРОДНЫЕ – ԲՆԱԿԱՆ ԱՂԱԾՆԱԿԵՐՊԵՐ (ՀԱԼՈԳԵՆԻԴՆԵՐ), NATURAL HALOGENIDES**, միներալների խումբ, հալոգենների (աղածինների) (ֆտորի, քլորի, բրոմի, յոդի) միացություններ այլ քիմ. տարրերի հետ: Բ. ա. պատկանում են չորս դասերի՝ ֆտորիդներ, քլորիդներ, բրոմիդներ և յոդիդներ: Բնությունում առավել տարածված են քլորիդները (մոտ 70 միներալ), ֆտորիդները (մոտ 30), յոդիդները խիստ հազվագյուտ են (5-6 միներալ), բրոմիդներից հայտնի է մեկ միներալ (բրոմարգիրիտ):

**Դ-43. ГАЛОГЕННЫЕ ПОРОДЫ – ԱՂԱԾԻՆ (ՀԱԼՈԳԵՆԱՅԻՆ) ԱՊԱՐՆԵՐ, HALOGEN ROCKS, HALOGENIC ROCKS**, նստվածքային ապարներ, որոնք քիմ. ճանապարհով տարբեր աղերի նստվածքների ձևով առաջանում են չոր պայմաններում աղային լուծույթներից՝ տարբեր տեսակի բնական ջրավազաններում (ծովերում, ծովալճակներում, աղիավուն լճերում): Ա. ա-ին են պատկանում հալիտը (կերակրի աղը), կալիումական և մագնեզիումային աղերը (սիլվինը, կառնալիթը, կաինիտը և այլն), նատրիումի սուլֆատային աղերը (միրաբիլիթը, տենարդիտը), կալցիումի սուլֆատները (գիպսը, անհիդրիդը) և այլն:

**Դ-44. ГАЛОГЕННЫЕ ПОЧВЫ – ԱՂԱԾԻՆ (ՀԱԼՈԳԵՆԱՅԻՆ) ՀՈՂԵՐ, HALOGENOUS SOILS**, հողեր, որոնց առաջացման մեջ էական դեր է խաղում հեշտ լուծվող աղերի գաղթաշարժը [աղուտներ, աղուտահողեր, մոխրահողեր (սոլոդներ)]:

**Դ-45. ГАЛЬКИ – ՃԱԼԱՔԱՐԵՐ, RUBBLES, PEBBLES, SHINGLES**, ապարների 10-ից մինչև 100 մմ չափերի բեկորներ, որոնք տարբեր աստիճանի մշակվել են հոսող ջրերով կամ ծովային ալիքներով: Ճ-ի տարբեր ձևերը կախված են ապարի նյութական կազմից և կազմվածքից, ինչպես նաև՝ տեղափոխման պայմաններից: Լայնորեն տարածված են ժամանակակից և հին նստվածքային ապարաշերտերում:

**Դ-46. ГАЛЬМИРОЛИЗ** (հուն. halmyrsós – աղի և lysis – քայքայում) **ПОДВОДНОЕ ВЫВЕТРИВАНИЕ – ՀԱԼՄԻՐՈԼԻԶ, ԱՏՈՐՉՐՅԱ ՀՈՂՄԱՀԱՐՈՒՄ, HALMYROLYSIS**, ծովի հատակում առաջնային նստվածքի քիմիամիներալաբանական փոխարկում՝ լուծման, օքսիդացման և այլ գործընթացների ազդեցության տակ:

**Դ-47. ГАММА-КАРОТАЖ** (ֆրանս. carottage, carotte – բառ՝ գազար, հորատակեռն) – **ԳԱՄՄԱ-ՎԱՐՈՏԱԺ, GAMMA-RAY LOGGING**, հորատանցքերի կտրվածքի ուսումնասիրման մեթոդ, որի հիմքում ընկած է ապարների բնական  $\gamma$ -ճառագայթման գրանցումը: Գ. կ. օգտագործվում է ուրանի, թորիումի հանքանյութերի և դրանց հետ զուգորդված այլ օգտ. հնձ-ների (օր.՝ կալիումական աղերի, հազվագյուտ մետաղների) որոնման, հետախուզման և նմուշահանման համար:

**Դ-48. ГАММА-СЪЁМКА – ԳԱՄՄԱ-ՀԱՆՈՒՅԹ, GAMMA-RAY SURVEY**, ճառագայթաչափական հանույթ, որի հիմքում ընկած է ապարների բնական  $\gamma$ -ճառագայթման չափումը: Օգտագործվում է երկրբ. քարտեզագրության և ճառագայթաակտիվ հանքանյութերի, ինչպես նաև այն գունավոր մետաղների հանքանյութերի (օր.՝ բոքսիտների), ֆոսֆորիտների հնքվ-երի որոնման համար, որոնք պարագենետիկորեն կապված են ճառագայթաակտիվ տարրերի հետ:

- Г-49. ГАРМОНИЧНАЯ СКЛАДКА – ՆԵՐՊԱՇՆԱԿ ԾԱԼՔ, HARMONIC FOLD,** ապարների ծալք, որում տարբեր հասակի շերտերը ճմլված են միանման, ըստ որում, վերին շերտերի ծռումներին համապատասխանում են ավելի խոր շերտերի միատեսակ ծռումներ:
- Г-50. ГАРНИЕРИТ** (ֆրանս. երկրաբան ժ. Գարնիերի, J. Garnier, անունից) – **ՊԱՐՆԻՏԻՏ, GARNIERITE,** միներալ սիլիկատների դասից, նիկելի բարդ և անկայուն քիմ. կազմի սիլիկատ, սերպենտին-նեպոլիտ իզոմորֆ (նմանաձև) սերիայի միջակա անդամ: Բյուրեղանում է մոնոկլինային համակարգում: Կառուցվածքը շերտավոր է, բնորոշ են կոնկրեցիաները, մակահոսքային ագրեգատները, խիտ ծակոտկեն և հողանման զանգվածները: Գույնը՝ խնձորի կանաչից մինչև կանաչավուն-դեղին: Կարծրությունը՝ 2.5-3.5: Փայլը՝ փայլատ, շփումը երբեմն ճարպային: Օդում կորցնելով ջուրը, վերածվում է փոշու: Գ. հանդիպում է գերհիմքային ապարների և սերպենտինիտների հողմահարման կեղևում: Գ. նիկելի սիլիկատային հանքանյութերի բաղադրամաս է:
- Г-51. ГАРЦБУРГИТ** (Չարցի լեռների անունից, Գերմ.) – **ՀԱՐՑԲՈՒՐԳԻՏ, HARBURGITE,** խորքային գերհիմքային ապար, պերիդոտիտի տարատեսակ, կազմված է օլիվինից և շեղանկյունային պիրոքսենից, ուղեկից միներալներ են քրոմշպինելիդը և մագնետիտը: Օլիվինը ճեղքերում հաճախ անցնում է սերպենտինի: Գ. առավել լայն տարածված է գաբրոպերիդոտիտային ֆորմացիայում, որտեղ այն իրենից ներկայացնում է անցողիկ ձև դեպի դունիտը:
- Г-52. ГАСТРОПОДЫ** (Gastropoda) – **ՓՈՐՈՏԱՆԻՆԵՐ, ԳԱՍՏՐՈՊՈՂՆԵՐ, GASTROPODS, SNAILS,** տե՛ս Брюхоногие моллюски:
- Г-53. ГАУСМАНИТ** (Գերմ. միներալաբան Ի. Ֆ. Լ. Հաուսմանի, I. F. L. Hausmann, անունից) – **ՀԱՈՒՍՄԱՆԻՏ, HAUSMANITE,** միներալ օքսիդների դասից,  $Mn^{2+}Mn^{3+}O_4$ : Բյուրեղանում է տետրագոնային համակարգում: Հանդիպում է հատիկավոր կամ խիտ ագրեգատների տեսքով, լայն տարածված են կրկնաբյուրեղները: Գույնը՝ գորշավուն-սև, փայլը՝ կիսամետաղական, փոփոխ է: Կարծրությունը՝ 5-5.5: Սովորաբար հանդիպում է ջրաջերմային (հիդրոթերմալ) երակներում՝ որպես հպումամետատոմատիկական միներալ և վերաբյուրեղացման արդյունք: Հանդիպում է մանգանի փոխակերպված մետաղաքային կամ մնացորդային հանքանյութերում: Հ. մտնում է մանգանի հանքանյութերի կազմի մեջ:
- Г-54. ГЕДЕНБЕРГИТ** (միներալը հայտնաբերող շվեդ քիմիկոս Լ. Հեդենբերգի, L. Hedenberg, անունից) – **ՀԵՂԵՆԲԵՐԳԻՏ, HEDENBERGITE,** ապարակազմիչ միներալ մոնոկլինային պիրոքսենների խմբից, կալցիումի ու երկաթի շղթայական սիլիկատ,  $CaFe[Si_2O_6]$ , բյուրեղները երկարացված հատվածակողմեր են: Առաջացնում է կանաչից մինչև սև ճառագայթավոր ագրեգատներ: Սկառներին բնորոշ միներալ է, քիչ հանդիպում է մագմայական ապարներում:
- Г-55. ГЕЙДЕЛЬБЕРГСКИЙ ЧЕЛОВЕК** (Homo heidelbergensis) – **ՀԵՅԴԵԼԲԵՐԳՅԱՆ ՍԱՐԴ, HELDERBERGIAN,** Եվրոպայի ամենահին բրածո մարդ, ստորին ծնոտի մնացորդը գտնվել է Հեյդելբերգ ք-ի մոտ, ԳՖՀ, երիտասարդ է պիտեկանտրոպից և քիչ հին է սինանտրոպից (մոտ 400 հազ. տ. մ.ք.ծ.):
- Г-56. ГЕЙЗЕР** (իսլանդերեն եզ. geysir, geysa-ից – դուրս հորդել) – **ԳԵՅՅԵՐ (ՑԱՅՏԱՋԵՐՍՈՒԿ), GEYSER, SPOUTING SPRING,** ժամանակակից հրաբխային գործունեության շրջաններում տաք աղբյուր, որից ժամանակ առ ժամանակ ժայթքում է ջուր ու գոլորշի: Գ-ի ջերմաստիճանը սովորաբար 80-100°C է: Աղբյուրի ջրից հաճախ գոյանում է սիլիկահողային մետաղաքային հանքանյութերի համալուծված Գ-ները հիմնականում տեղադրված

են ցամաքուրդային փոսորակի հատակային մասում և կապված են թթու ապարների՝ ռիոլիթների, դացիտների հետ: Գ-ները մեծ տարածում ունեն Կամչատկայում, Յս. Ամերիկայում, Իսլանդիայում, Նոր Զելանդիայում:

**Դ-57. ГЕЙЗЕРИТ – ԳԵՅՉԵՐԻՏ, ԳԵՅՉԵՐԱՔԱՐ, GEYSERITE, SILICEOUS SINTER,** գեյզերների կամ հանքային աղբյուրների բաց գույնի պինդ կամ փխրուն, հաճախ ծակոտկեն (տուֆանման) նստվածքներ, նույնն է՝ Кремнистый туф:

**Դ-58. ГЕЛИКТИТЫ – ՅԵԼԻԿՏԻՏՆԵՐ, HELICTITES,** ճյուղավորվող շթաքար (ստալակտիտ):

**Դ-59. ГЕЛИЙ, He** (լատ. Helium, հուն.  $\eta\epsilon\lambda\iota\omicron\varsigma$ -ից – Արև՝ առաջին անգամ հայտնաբերվել է Արևի սպեկտրում) – **ՅԵԼԻՈՒՄ, HELIUM,** Մենդելևի պարբերական համակարգի VIII խմբի քիմ. տարր, պատկանում է իներտ գազերին:

**Դ-60. ГЕЛЬВЕТСКИЙ ЯРУС, ГЕЛЬВЕТ** (Շվեյցարիայի լատ. Helvetia, Յելվետիա անվանումից) – **ՅԵԼՎԵՏՅԱՆ ՅԱՐԿ, ՅԵԼՎԵՏ, HELVETIAN,** միջին միոցենի ստորին հարկ:

**Դ-61. ГЕМАТИТ** (հուն.  $\eta\alpha\iota\mu\epsilon$ , սեռ. հ.  $\eta\alpha\iota\mu\alpha\tau\epsilon\varsigma$  – արյուն, արյունոտ) – **ՅԵՄԱՏԻՏ (ԱՐՅՈՒՎԱՔԱՐ, ԿԱՐՍՐԱՔԱՐ, ԿԱՐՍԻՐ ԵՐՎԱԹՎԱՐ), HEMATITE,** միներալ, երկաթի (եռավալենտ) օքսիդ,  $\alpha\text{-Fe}_2\text{O}_3$ , կազմը խիստ կայուն է: Բյուրեղանում է տրիգոնային համակարգում: Առաջացնում է գաղտնաբյուրեղային զանգվածներ (կարմիր երկաթաքար), հատիկավոր (երկաթափայլ) և թերթավոր (երկաթե փայլար) ագրեգատներ, խիտ մականստվածքներ, օռլիթներ, հողանման կուտակներ և այլն: Գունավորումը՝ սևից (ակնհայտորեն բյուրեղային տարատեսակներ) մինչև կարմիր (գաղտնաբյուրեղավորների մոտ): Կարծրությունը՝ 6-6.5: Լայն տարածված միներալ է, առաջանում է տարբեր ճանապարհներով, բայց միշտ օքսիդացնող պայմաններում: Ըստ ծագման լինում է փոխակերպային, ջրաջերմային (հիդրոթերմալ), մետասոմատիկական, վերնածնային (հիպերգեն՝ հողմահարման կեղևում) և այլն: Երկաթի շատ հանքանյութերի կարևորագույն միներալ է:

**Դ-62. ГЕМИМОРФИТ** (հուն.  $\eta\epsilon\mu\iota$  – կիսատ և  $\mu\omicron\rho\phi\acute{\iota}\varsigma$  – տեսք), **КАЛАМИН – ՅԵՄԻՄՈՐՖԻՏ, ԿԱԼԱՄԻՆ, HEMIMORPHITE, CALAMINE,** միներալ, ցինկի ջրային սիլիկատ: Առաջացնում է անգույն, սպիտակ, գորշ և այլ բյուրեղային կեղևներ, հողանման և հատիկավոր ագրեգատներ, շթաքարեր (ստալակտիտներ), գոյանում է գլխ. բազմանետաղական հնքվ-երի օքսիդացման զոնայում: Ցինկի հանքանյութ է:

**Դ-63. ГЕМОЛОГИЯ** (լատ. *gemma* – թանկարժեք քար և հուն.  $\lambda\omicron\gamma\omicron\varsigma$  – ուսմունք, խոսք) – **ԳԵՄՈԼՈԳԻԱ, GEMMOLOGY,** թանկարժեք և արհեստագործական քարերի մասին տեղեկությունների համախմբություն՝ գլխ. ֆիզ հատկությունների, քիմ. կազմի առանձնահատկությունների, միներալների ու միներալային ագրեգատների գեղազարդային-գեղարվեստական արժանիքների մասին, որոնք օգտագործվում են ոսկերչական և քարափորագրչության արտադրությունում: Ուսումնասիրում է հնքվ-երի միներալագենիան, ինչպես նաև թանկարժեք և արհեստագործական քարերի տեխնոլոգիան: Գ. սերտ կապով կապված է միներալաբանության, բյուրեղաֆիզիկայի և օգտ. հնժ-ների երկրաբանության հետ:

**Դ-64. ГЕНЕЗИС** (հուն.  $\gamma\epsilon\eta\epsilon\sigma\iota\varsigma$  – ծագում, գոյացում) – **ԾԱԳՈՒՄ, ԳՈՅԱՑՈՒՄ, ԳԵՆԵՉԻՄ, GENESIS,** երկր-ում որևէ երկր. գոյացության ծագում, առաջացում, օր. ապարների, օգտ. հնժ-ների հնքվ-երի և այլն:

**Դ-65. ГЕНЕЗИС МЕСТОРОЖДЕНИЯ – ՅԱՆՔԱՎԱՅՐԻ ԾԱԳՈՒՄ, GENESIS OF DEPOSIT,** հնքվ-ի ծագման պատմություն:

**Դ-66. ГЕНЕРАЦИЯ МИНЕРАЛОВ – ՄԻՆԵՐԱԼՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄ (ԳԵՆԵՐԱՑԻԱ), GENERATION OF MINERALS,** երկարատև ժամանակահատվածում և բարդ գոր-

ծընթացներում ձևավորված բարդ կազմի միներալային գոյացություններում անջատվում են միներալներ կամ միներալների խմբեր (սերունդներ), որոնք առաջացել են գործընթացի տարբեր փուլերում: Տարբեր սերունդների միներալները տարբերվում են կազմով և ձևով:

**Г-67. ГЕНЕРАЦИЯ РЕЛЬЕФА** (լատ. generatio – սերունդ, ծնունդ) – **ՌԵԼԻԵՖԻ ԱՈՍՁԱՑՈՒՄ (ԳԵՆԵՐԱՑԻԱ), GENERATION OF RELIEF**, տարբեր ձագման ռելիեֆի այն ձևերի համալիր, որոնք ձևավորվել են զարգացման միևնույն փուլում և առաջացնում են կարծես թե մեկ սերունդ:

**Г-68. ГЕНЕРАЦИЯ ТРЕЩИН – ՃԵՂՔԵՐԻ ԱՈՍՁԱՑՈՒՄ (ԳԵՆԵՐԱՑԻԱ), GENERATION OF OPENINGS**, ճեղքերի հարաբերական հասակ, երբ ճեղքերը խմբավորվում են հասակային հաջորդականության կարգով՝ ըստ փոխհարաբերության և լցնող նյութի կազմի:

**Г-69. ГЕНЕТИЧЕСКИЙ ТИП – ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՏԻՊ (ՏԵՍԱԿ), GENETIC TYPE**, այն նստվածքների համախմբություն, որոնք առաջացել են երկրբ. որոշակի ազդակների գործունեության հետևանքով: Այժմ տարբեր հեղինակներ այս հասկացությունը օգտագործում են ոչ միանշանակ: Ըստ Ռ. Պ. Պավլովի՝ Ծ. տ. հասկացությունը ավելի լայն է, քան ֆացիան (համապատասխանում է ֆացիաների խմբին) և ավելի նեղ է, քան քարաբանածագումնաբանական տիպը: Այժմ ուսումնասիրված ու համակարգված են ցամաքային ու ծովային նստվածքների Ծ. տ-երը:

**Г-70. ГЕОАНТИКЛИНАЛЬ** (հուն. *gê* – երկիր, *anti* – ընդդեմ, հակառակ և *kliino* – կռումուն են) – **ԵՐԿՐԱԿԱՍՐԱԾԱԼՔ (ԵՐԿՐԱՍՏԻԿԼԻՆԱԼ, ԳԵՈՍՏԻԿԼԻՆԱԼ), GEOANTICLINE**, երկրասինկլինալային մարզերի (համակարգերի) սահմաններում երկրակեղևի գծային, հաճախ անհավասարաչափ բարձրացումներ, որոնք կրել են երկարատև բացարձակ կամ հարաբերական բարձրացում: Լայնությունը 50-150 կմ, երկարությունը՝ մինչև 2000 կմ: Ե-երը բաժանում են երկրասինկլինալները: Ե-երին բնորոշ են կարբոնատային, արտաժայթքային և կոպտաբեկոր ֆորմացիաները, որոնք կազմող ապարների հաստությունը զգալի փոքր է երկրասինկլինալների համեմատությամբ, ինչպես նաև բազմաթիվ ընդմիջումների և աններդաշնակությունների առկայությունը: Ե-ի առանձին մասերը երկարատև ու ուժգին լեռկացման մարզեր են: Զարգացման եզրափակիչ փուլում Ե-երը դառնում են ծալքավոր լեռնային կառույցների միջուկներ: Հին՝ օր. Ուրալտաու լեռնաշղթան (Ուրալի առանցային մասում), ժամանակակից՝ Կուրիլյան կղզիների կղզեաղեղը:

**Г-71. ГЕОБЛОК – ԵՐԿՐԱԲԼՈԿ, GEOBLOCK**, տեկտոնոլորտի մեծաբեկորային տարրեր, որոնք բնորոշում են նրա յուրահատուկ բաժանելիությունը խոշոր (1-5 մլն կմ<sup>2</sup> մակերեսով) կառույցների՝ քարագոյացման, մագմայականության և փոխակերպության բնորոշ գծերով (Բալթիական, Ղազախստանյան, Օխոտյան և այլն): Ե-ի սահմաններում սովորաբար առանձնացվում են երկու-երեք ծալքավոր համակարգեր, որոնք ունեն ներդրման ու զարգացման մոտ պայմաններ:

**Г-72. ГЕОБОТАНИКА** (հուն. *gê* – երկիր և բուսաբանություն) – **ԵՐԿՐԱԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, GEOBOTANY**, գիտություն բուսական համակեցությունների մասին, դրանց կազմի, կառուցվածքի, զարգացման, դասակարգման, միջավայրի առանձնահատկությունների, ինչպես նաև օգտագործման և փոխակերպման մասին:

**Г-73. ГЕОГРАФИЧЕСКАЯ ЗОНА, ЛАНДШАФТНАЯ ЗОНА – ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԶՈՆԱ, ԲՆԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ (ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ) ԶՈՆԱ, GEOGRAPHICAL ZONE**, երկրի մակերևույթի ֆիզաշխ. շրջանացման բարձրագույն ստորաբաժանումներ:

րից մեկը, որն առանձնացվում է աշխ. գոտու սահմաններում: Բնորոշվում է ջերմային պայմանների ու խոնավացման ընդհանրությամբ, որի պատճառով նման են բնապատկերի ու հողի կենսաբանական բաղադրամասերը, նման են նաև արտածին երկրաձևաբանական գործընթացները: Ա. գ-ները մայր ցամաքների ցամաքային ու հարթավայրային մասերում տարածված են լայնակի ուղղությամբ և օրինաչափորեն միմյանց փոխարինում են հասարակածից դեպի բևեռները:

**Դ-74. ГЕОГРАФИЧЕСКАЯ ОБОЛОЧКА, ЛАНДШАФТНАЯ ОБОЛОЧКА – ԱՇԽԱՐՀԱՐԱՎԱՆ ԹԱՂԱՆԹ, ԲՆԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ (ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ) ԹԱՂԱՆԹ, LANDSCAPE MANTLE, LANDSCAPE GEOSPHERE,** Երկրի թաղանթ, որի սահմաններում շփվում են, փոխադարձ ներթափանցվում և միմյանց վրա ներգործում մթնոլորտի ստորին շերտերը, քարոլորտի մերձնակերևութային ապարախմբերը, ջրոլորտը և կենսոլորտը: Ընդգրկում է ամբողջ կենսոլորտը, քարոլորտում՝ վերնածնության (հիպերգենեզի) մարզը, իսկ մթնոլորտում հասնում է մինչև ստրատոպաուզը: Առավելագույն հաստությունը մոտ 40 կմ է:

**Դ-75. ГЕОГРАФИЧЕСКАЯ ШИРОТА – ԱՇԽԱՐՀԱՐԱՎԱՆ ԼԱՅՆՈՒԹՅՈՒՆ, GEOGRAPHIC LATITUDE,** տվյալ կետում ուղղաձիգ գծի և հասարակածի հարթության միջև ընկած անկյուն: Հաշվարկվում է 0°-ից մինչև 90° հասարակածի երկու կողմերում, Երկրի Հս. կիսագնդում դրական է, Հարավայինում՝ բացասական:

**Դ-76. ГЕОГРАФИЧЕСКИЕ КАРТЫ – ԱՇԽԱՐՀԱՐԱՎԱՆ ՔԱՐՏԵՉՆԵՐ, GEOGRAPHICAL MAPS,** Երկրի մակերևույթի փոքրացված, ընդհանրացված, մաթեմատիկորեն որոշված պատկերանշանային արտահայտումը հարթության վրա:

**Դ-77. ГЕОГРАФИЧЕСКИЕ КОМПОНЕНТЫ, КОМПОНЕНТЫ ЛАНДШАФТА – ԱՇԽԱՐՀԱՐԱՎԱՆ ԲԱՂԱԴՐԱՍԱՍԵՐ, ԲՆԱՊԱՏԿԵՐԻ (ԼԱՆԴՇԱՖՏԻ) ԲԱՂԱԴՐԱՍԱՍԵՐ, GEOGRAPHICAL COMPONENTS, COMPONENTS OF LANDSCAPE,** բնապատկերի աշխ. թաղանթի հիմնական մասերն ամբողջությամբ՝ ընդերքը, ռելիեֆը, օդային զանգվածները, մակերևութային և ստր. ջրերը, բուսական ծածկոցը, կենդանական աշխարհը և այլն:

**Դ-78. ГЕОГРАФИЧЕСКИЕ КООРДИНАТЫ – ԱՇԽԱՐՀԱՐԱՎԱՆ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ, GEOGRAPHICAL COORDINATES, TERRESTRIAL COORDINATES,** Երկրի մակերևույթում կետի դիրքը որոշող մեծություններ՝ աշխ. լայնություն և աշխ. երկայնություն:

**Դ-79. ГЕОГРАФИЧЕСКИЙ МЕРИДИАН (լատ. meridianus – միջօրեի) – ԱՇԽԱՐՀԱՐԱՎԱՆ ՄԻՋՕՐԵԱՎԱՆ, MERIDIAN,** Երկրի մակերևույթի և Երկրի պտտման առանցքով ու մակերևույթի որևէ կետով տարված հարթության հատման գիծ:

**Դ-80. ГЕОГРАФИЧЕСКИЙ ПОЛЮС – ԱՇԽԱՐՀԱՐԱՎԱՆ ԲԵՎԵՆ, GEOGRAPHICAL POLE,** Երկրի պտտման առանցքի հատման կետը Երկրի մակերևույթի հետ: Տարբերում են Հյուսիսային բևեռ և Հարավային բևեռ:

**Դ-81. ГЕОГРАФИЧЕСКИЙ ПОЯС – ԱՇԽԱՐՀԱՐԱՎԱՆ ԳՈՏԻ, GEOGRAPHICAL BELT, GEOGRAPHICAL ZONE,** աշխ. թաղանթի ամենախոշոր լայնակի-գոնայական բաժանումն է: Բնորոշվում է ջերմության ու խոնավության, օդային զանգվածների բոլորապտույտի ընդհանուր առանձնահատկություններով, կենսաքիմ. և երկրաձևաբանական գործընթացների յուրատեսակ արտահայտությամբ և այլն: Ա. գ-ու ներսում, կախված կլիմայական գործոնների փոփոխություններից, առանձնացվում են աշխ. զոնաներ և ենթազոնաներ:

**Դ-82. ГЕОГРАФИЯ (հուն. geōgraphia – երկրանկարագրություն, gē – Երկիր և gráphō-ից – գրում եմ) – ԱՇԽԱՐՀԱՐՈՒԹՅՈՒՆ, GEOGRAPHY,** բնական և հասարակ

րակական գիտությունների համակարգ, որն ուսումնասիրում է բնական և արտադրական համալիրները և դրանց բաղադրամասերը: Վերջնական խնդիրները բնության, բնակչության և տնտեսության համալիր ուսումնասիրությունն է, ինչպես նաև աշխարհագրական միջավայրի և մարդկային հասարակության փոխգործունեության բնույթի պարզաբանումը: Տարբերում են ֆիզ. և տնտեսական Ա.: Աշխ. գիտությունների համակարգում մտնում են նաև քարտեզագրությունը, երկրագրությունը (երկրային աշխարհագրությունը), բժշկական Ա., ռազմական Ա.:

**Գ-83. ГЕОДЕЗИЯ** (հուն. geodaisia, ge – երկիր և dáiō – կատարում են, բաժանում են) – **ԵՐԿՐԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ, ԳԵՈՂԵԶԻԱ, GEODESY**, գիտություն է երկրի ձևի, չափերի, ձգողական դաշտի որոշման, երկրի մակերևույթի վրա չափումների մասին, որի նպատակը նրա պատկերումն է հատակագծերում և քարտեզներում, ինչպես նաև այլ գիտական ու գործնական հարցերի լուծումը:

**Գ-84. ГЕОДИНАМИКА** (հուն. ge – երկիր և dýnamis – ուժ) – **ԵՐԿՐԱԴԻՆԱՄԻԿԱ, GEODYNAMICS**, գիտություն է երկրի զարգացման հետևանքով առաջացած խորքային ուժերի ու գործընթացների մասին, որոնք կանխորոշում են երկրի ներսում և նրա արտաքին պինդ թաղանթներում նյութական զանգվածների ու էներգիայի շարժումը: Ե-յի ուսումնասիրման օբյեկտները անմատչելի են անմիջական հետազոտման, այդ պատճառով Ե. սերտորեն կապված է երկրի մասին այլ գիտությունների, հատկապես երկրֆ-ի, երկրք-ի, ապարագրության, տեկտոնիկայի հետ: Ե. հենվում է ֆիզիկայի, քիմիայի ընդհանուր օրենքների վրա՝ օգտագործելով մոլորակաբանության տվյալները: Ե-ն, որպես գիտություն, սկսել է ձևավորվել XX դ. 50-ական թվականներին, 60-ական թվականներին մոբիլիստական պատկերացումների վերածնունդը և քարոլորտի սալերի տեսության ստեղծումը հանգեցրին խորքային բնական գործընթացների նոր մեկնաբանության: Որպես քարոլորտի սալերի շարժման մեխանիզմ՝ ընդունվում են երկրի միջնապատյանի կոնվեկտիվ (ջերմափոխանցման) հոսքերը: Եթե երկրում հաստատվում է միաբջիջ կոնվեկցիա (ջերմափոխանցում)՝ բաղկացած մեկ վերընթաց և մեկ վարընթաց ճյուղից, ապա բոլոր մայր ցամաքները հավաքվում են միասին վարընթաց ճյուղի վրա՝ առաջացնելով գերմայրցամաք (Պանգեյան՝ ուշ պալեոգոյում): Եթե կոնվեկցիոն հոսքերը մասնատվում են բազմաթիվ բջիջների, ապա տեղի է ունենում մայր ցամաքների ճեղքում (կոտրում) և օվկիանոսների առաջացում (օր.՝ մեզոգոյում Ատլանտյան ու Յնդկական օվկիանոսների առաջացումը): Ե. ուսումնասիրում է քարոլորտի սալերի շարժման մեխանիզմը, հետազոտելով դրանց սահմանների երկարությամբ առաջացած դինամիկական պայմանները (ծգման գոնաներում՝ մայրցամաքային մեծաբեկորների խզումը, վրաշարժերը, ներքնաշարժերը, սեղմման զոնայում՝ ծալքավորությունները) և դրանց հետ կապված տեկտ. (այդ թվում՝ երկրաշարժային) և մագմայական գործընթացները: Այդ ընթացքում օգտագործվում են հնամագնիսականության, երկրաշարժագիտության, տեկտոնիկայի տվյալները, ինչպես նաև երկրի կեղևում ժամանակակից լարումների չափումների արդյունքները: Բաբախման երկրատեկտ. վարկածը (երկրի շառավղի կրճատում, ընդարձակում կամ փոխ առ փոխ փոփոխություն) նույնպես հանդիսանում է Ե-յի ուսումնասիրության օբյեկտ:

**Գ-85. ГЕОИД** (հուն. geoiēēs, ge – ից – երկիր և éides – տեսք) – **ԵՐԿՐԱԿԵՐՊ, ԳԵՈՒԴ, GEOID**, երկրի պատկեր՝ սահմանափակված ծանրության ուժի պոտենցիալի հավասարեցված մակերևույթով, որը համընկնում է օվկիանոսների ջրի միջին մակարդակի հետ և ցամաքներում շարունակվում է այնպես, որ այդ մակերևույթը անենուրեք ուղղահայաց լինի ծանրության ուժի ուղղությամբ:

- Г-86. ГЕОИЗОТЕРМЫ – ԵՐԿՐԱԻԶՈՅԵՐՄԵՐ (ԵՐԿՐԱՅԱՎԱՍԱՐԱԶԵՐՄԱԳԾԵՐ), GEOISOTHERMS**, գծեր, որոնք քարտեզներում և կտրվածքներում միացնում են ապարների կամ ստր. ջրերի հավասար ջերմաստիճանների կետերը:
- Г-87. ГЕОКРАТИЧЕСКИЕ ПЕРИОДЫ** (հուն. *gḗ* – Երկիր, *gḗ* – Երկիր, *krátos* – ուժ, իշխանություն) – **ԵՐԿՐԱՑԱՍԲԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՉԱՆՆԵՐ, GEOCRATIC PERIODS**, Երկրի պատմության ժամանակահատվածներ, երբ տեղի է ունեցել ցամաքի մակերեսի զգալի ընդլայնում: Սովորաբար Ե. ժ. համընկնում են տեկտ. ցիկլի II փուլին, երբ Երկրի մակերևույթի զգալի տեղամասեր բարձրանում են վեր ծովի մակարդակից: Օր.՝ սիլուրի վերջը, դևոնի զգալի մասը, պերմը և տրիասի մի մասը, նեոգենի վերջը և անտրոպոգենը:
- Г-88. ГЕОКРИОЛОГИЧЕСКАЯ ФОРМАЦИЯ – ԵՐԿՐԱՍԱՌՑԱՐԱՆԱԿԱՆ ՖՈՐՄԱՑԻԱ (ՎԱՉՍԱՎՈՐՈՒՄ), GEOCRYOLOGICAL FORMATION**, երկրակեղևի սառած հատված, որը ապարների կազմի ու կառուցվածքի տեսակետից համասեռ է, իսկ սառածության ջերմաստիճանը, խորությունը և հաստությունը զգալի տարածությունների վրա կայուն են:
- Г-89. ГЕОКРИОЛОГИЯ** (հուն. *gḗ*-ից – Երկիր, *krýos* – ցուրտ և *lógos* – խոսք, ուսմունք) – **ԵՐԿՐԱՍԱՌՑԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ, GEOCRYOLOGY**, ուսմունք երկրակեղևի՝ հողերի, գրունտների ու ապարների սառեցման և հալման օրինաչափությունների, սառած ապարների կազմի, կառուցվածքի և սառեցման հետևանքով ֆիզմեխ. հատկանիշների փոփոխման մասին:
- Г-90. ГЕОЛОГИЧЕСКАЯ ДОКУМЕНТАЦИЯ – ԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԳՐՈՒՄ, GEOLOGICAL DOCUMENTATION**, քարտեզներում, հատակագծում, տրամատներում, կտրվածքներում երկրբ. հատուկ ուսումնասիրությունների, երկրբ. հանույթի, որոնողական ու հետախուզական աշխատանքների և օգտ. հնձ-ների հնքվ-երի արդյ. շահագործման նյութերի համակողմանի նկարագրությունը և գրաֆիկական պատկերումը:
- Г-91. ГЕОЛОГИЧЕСКАЯ РАЗВЕДКА – ԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ, GEOLOGICAL EXPLORATION**, երկրբ. աշխատանքների համալիր, որը նպատակ ունի որոշելու հնքվ-ի մի շարք երկրաբանաարդյունաբերական պարամետրեր, որոնք բազմակողմանիորեն բնորոշում են հնքվ-ը և անհրաժեշտ են նրա արդյ. գնահատման, նախագծման և լեռնահանքային ձեռնարկության շինարարության համար: Ե. հ-յան ժամանակ անհրաժեշտ է պարզաբանել հնքվ-ի երկրբ. կառուցվածքը, նրանում օգտ. հնձ-յի որակը և տեղաբաշխումը, նրա մշակման պայմանները, հարստացման եղանակները և այլն:
- Г-92. ГЕОЛОГИЧЕСКАЯ (ТЕКТОНИЧЕСКАЯ) СТРУКТУРА – ԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ (ՏԵԿՏՈՆԱԿԱՆ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, GEOLOGICAL STRUCTURE**, 1) երկրակեղևի որևէ տեղամասի երկրբ., կառուցվածք, 2) ապարների տեղադրման ձև, 3) երկրակեղևի որևէ տեղամասի տեկտ. ձևերի ամբողջություն, որը պայմանավորում է նրա երկրբ. կառուցվածքի առանձնահատկությունները (օր.՝ ծալքավոր, խզումնային կառուցվածքներ և այլն):
- Г-93. ГЕОЛОГИЧЕСКАЯ СЪЁМКА – ԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹ, GEOLOGICAL SURVEY**, դաշտային երկրբ. աշխատանքների համալիր՝ երկրբ. քարտեզներ կազմելու և տարածքների երկրբ. կառուցվածքի առանձնահատկությունները, օգտ. հնձ-ների առկայությունն ու հեռանկարները բացահայտելու համար: Կատարվում է երկրաբանահետախուզական գործընթացների սկզբնական փուլերում: Առանձնացվում են Ե. հ-ի մի քանի տեսակներ՝ թերթային ու խմբակային, երկրբ. լրաու-



սոււննասիրում, օդայլուսանկարաերկրաբանական քարտեզագրում, խորքային երկր. քարտեզագրում, հրատարակման նախապատրաստում: Կախված մասշտաբից՝ Ե. հ. ստորաբաժանվում է՝ մանրամասշտաբ (1:1000000, 1:500000), միջին մասշտաբի (1:200000, 1:100000), խոշորամասշտաբ (1:50000, 1:25000) և մանրամասն (1:10000 և խոշոր): Ե. հ. ներառում է նախապատրաստական, դաշտային և գրասենյակային փուլերը: Ըստ Ե. հ-ի արդյունքների՝ կազմվում են վերջնական երկր. քարտեզներ և հաշվետվություններ: ՀՀ տարածքը ծածկված է 1:50000 մասշտաբի Ե. հ-ով:

#### **Դ-94. ГЕОЛОГИЧЕСКИЕ КАРТЫ – ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ, GEOLOGICAL**

**MAPS**, քարտեզներ, որոնք արտապատկերում են տարածքի երկր. կառուցվածքը կամ դրա որևէ հատկանիշը: Կազմում են աշխ. կամ տեղագրական հիմքի վրա, ըստ մասշտաբի բաժանվում են՝ ակնարկային (1:2500000 և փոքր) և ռեգիոնալ, այդ թվում՝ մանրամասշտաբ (1:1500000-1:500000), միջին մասշտաբի (1:200000-1:100000), խոշորամասշտաբ (1:50000-1:25000) և մանրամասն (1:10000 և խոշոր): Ե. ք. հիմք է հանդիսանում շրջանի բոլոր տեսակի երկր. ուսումնասիրությունների, օգտ. հնժ-ների որոնման և տեղաբաշխման օրինաչափությունների բացահայտման, ինժեներական կառույցների նախագծման և այլ աշխատանքների համար: Ե. ք-ում որոշակի գույներով և դրանք լրացնող տառաթվային ցուցիչներով անջատվում են տվյալ տարածքում տարածված և շերտագրականորեն մասնատված ըստ ընդհանուր (միջազգային) շերտագրական սանդղակի շերտադարսվածքային ապարները: Հատուկ գույնով ու ցուցիչներով ցույց են տրվում ներժայթքային (ինտրուզիվ) ապարները, որոնք մասնատվում են ըստ կազմի ու ներդրման ժամանակի: Արտաժայթքային ապարների համար հասակը ցույց տվող գույնի վրա նրբագծային նշաններով նշվում է կազմը: Նրբագծային նշանները (կրապ) օգտագործվում են նաև ցույց տալու նստվածքային ապարների ծագումնաբանական տիպերը կամ կազմը: Տարբեր գծերով ցույց են տրվում տարբեր երկր. սահմանները, աններդաշնակ ու ներդաշնակ տեղադրումները, տեկտ. խախտումները, անհրաժեշտության դեպքում՝ տեղադրման տարրերը, մոլուխահանման, հորատանցքերի տեղերը և այլն: Բացի պայմանական նշաններից, Ե. ք. ուղեկցվում են շերտագրական կտրվածքներով, սյունակներով: Ե. ք-ին են պատկանում նաև տեկտոնական, քարաբանաֆացիալ, մետաղագոյացման, հնաշխարհագրական, հնատեկտոնական և այլ քարտեզները, տե՛ս Карты тектонические, Карты литолого-фациальные, Карты металлогенические, Карты палеогеографические:

#### **Դ-95. ГЕОЛОГИЧЕСКИЕ НАБЛЮДЕНИЯ В ГОРНЫХ ВЫРАБОТКАХ – ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԼԵՆԱՅԻՆ ՓՈՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ, GEOLOGICAL OBSERVATIONS IN MINE WORKINGS**

լեռնային փորվածքներում ապարների զանգվածների, օգտ. հնժ-ների հանքակուտակների երկր. կառուցվածքի ուսումնասիրությունների համալիր: Ընդգրկում է շերտերի տեղադրման տարրերի չափումները, մերկացումների նկարագրությունը և գծանկարները, օգտ. հնժ-ի մոլուխահանումը, բնական փորձարկումները և ապարազանգվածներում ապարների հատկությունների որոշումը:

#### **Դ-96. ГЕОЛОГИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ – ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐ, GEOLOGICAL PROCESSES**

Երկրի կազմը, կառուցվածքը, ռելիեֆը և խորքային կազմությունը փոփոխող գործընթացներ: Տարբերում են արտաժին և ներժին Ե. ՝գ.: Երկր. գոյացությունները կարող են ձևավորվել կա՛մ դրանց համատեղ գործունեության հետևանքով (օր.՝ ռելիեֆը), կա՛մ դրանցից մեկի գերակշռությամբ:

Օր.՝ տեկտ. կառուցվածքները և մագմայական ապարները ձևավորվում են ներծին գործընթացների ազդեցության տակ, իսկ նստվածքային ապարները՝ արտածին գործընթացների գործունեության գերակշռության դեպքում:

**Г-97. ГЕОЛОГИЧЕСКИЙ ПРОФИЛЬ**, տե՛ս Разрез геологический:

**Г-98. ГЕОЛОГИЧЕСКОЕ КАРТИРОВАНИЕ – ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ, GEOLOGICAL MAPPING**, տարբեր երկրբ. քարտեզների կազմում՝ բուն երկրաբանական, չորրորդական նստվածքների, երկրաձևաբանական, ջրաերկրաբանական, երկրաֆիզիկական, երկրաքիմիական, տեկտոնական, հնաշխարհագրական, օգտակար հանածոների, մետաղագոյացման, ճարտարագիտաերկրաբանական, քարաբանաֆազիալ:

**Г-99. ГЕОЛОГИЧЕСКОЕ ЛЕТОИСЧИСЛЕНИЕ – ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**, տե՛ս Геохронология:

**Г-100. ГЕОЛОГИЯ** (հուն. *gê* – երկիր և *lógos* – խոսք, ուսմունք) – **ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, GEOLOGY**, գիտություն երկրակեղևի և երկրի ավելի խոր ոլորտների մասին: Ե. ուսումնասիրում է երկրի, նրա ոլորտների և առաջին հերթին երկրակեղևի կազմը, կառուցվածքը, ծագումը, զարգացումը, նրանում ընթացող գործընթացները, օգտ. հնժ-ների հնքվ-երի առաջացման ու տեղաբաշխման օրինաչափությունները: Երկրբ. գիտությունների գիտական ու գործնական նպատակն է՝ երկրի կազմության ու զարգացման իմացությունը, առանձին երկրբ. գործընթացների պատմության վերականգնումը, երկրբ. երևույթների օրինաչափությունների բացահայտումը և մոլորակի զարգացման տեսության մշակումը, օգտ. հնժ-ների հանքային շրջանների հայտնաբերման կանխագուշակումը և հեռանկարային գնահատումը, դրանց որոնման ու հետախուզման գիտական մեթոդների մշակումը, հանքահումքային պաշարների համալիր օգտագործման հիմնավորումը, մասնակցությունը բնական միջավայրի պրոբլեմների լուծմանը: Ե-յան ուսումնասիրությունների ամփոփական օբյեկտներն են՝ ապարները և դրանց համախմբությունները, միներալները, դրանց քիմ. կազմը և կառուցվածքը, մահացած օրգանիզմները, գազային և հեղուկ միջավայրերը, ֆիզ. դաշտերը: Ե. ներառում է շերտագրությունը (այդ թվում հնէաբանությունը), տեկտոնիկան, երկրադինամիկան, քարաբանությունը, միներալաբանությունը, ապարաբանությունը (պետրոլոգիա), երկրաքիմիան, երկրաֆիզիկան, օգտ. հնժ-ների երկրաբանությունը, ջրաերկրաբանությունը, ճարտարագիտական երկրաբանությունը և այլն: Ե. տերմինը օգտագործվում է նաև երկրի մակերևույթի որևէ տեղամասի երկրբ. կառուցվածքն արտահայտելու համար:

**Г-101. ГЕОЛОГИЯ ДИНАМИЧЕСКАЯ**, տե՛ս Динамическая геология:

**Г-102. ГЕОЛОГИЯ ИЗОТОПНАЯ – ԻՋՈՏՈՊԱՅԻՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ISOTOPE GEOLOGY**, երկրաքիմիայի բաժին, որն ուսումնասիրում է երկրբ. գործընթացների տիրություն տարբեր բնական գոյացություններում տարրերի իզոտոպային կազմի փոխարկումները:

**Г-103. ГЕОЛОГИЯ ИНЖЕНЕРНАЯ – ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ENGINEERING GEOLOGY**, երկրբ. գիտություն, որն ուսումնասիրում է երկրակեղևի վերին հորիզոնների դինամիկան՝ կապված մարդու ճարտարագիտական գործունեության հետ: Ճ. ե. հետազոտում է ճարտարագիտական կառույցների շինարարության ու շահագործման երկրբ. պայմանները և մշակում է ճարտարագիտական կառույցների և երկրբ. միջավայրի փոխազդեցության կանխատեսումները: Ճ. ե. այժմ ունի հետևյալ հիմնական բաժինները՝ գրունտագիտություն (ճար-

տարագիտական ապարաբանություն), ճարտարագիտական երկրադինամիկա, երկարշրջանային (ռեգիոնալ) ճարտարագիտական երկրաբանություն և հատուկ ճարտարագիտական երկրաբանություն:

**Գ-104. ГЕОЛОГИЯ ИСТОРИЧЕСКАЯ – ՊԱՏԱՎԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, HISTORICAL GEOLOGY**, տե՛ս Историческая геология:

**Գ-105. ГЕОЛОГИЯ МОРСКАЯ – ԾՈՎԱՅԻՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, MARINE GEOLOGY, SUBMARINE GEOLOGY**, տե՛ս Морская геология:

**Գ-106. ГЕОЛОГИЯ НЕФТИ И ГАЗА – ՆԱՎԹԻ (ՔԱՐՅՈՒՂԻ) ՈՒ ԳԱԶԻ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, OIL AND GAS GEOLOGY, PETROLEUM AND GAS GEOLOGY**, կիրառական երկրբ. գիտություն՝ քարոլորտում նավթի ու գազի տարածման պայմանների, դրանց արդյ. հանքակուտակների որոնման, պաշարների հաշվարկման և մշակման նախապատրաստման մասին՝ ինչպես ցամաքում, այնպես էլ շելֆում և մայրցամաքային ավազաններում: Ն. և Գ. Ե-յան գործնական արդյունավետությունը կախված է նավթի և գազի երկրաբանահետախուզական աշխատանքների գիտական բազայի մշակման բարձր մակարդակից, որն ընդգրկում է հետևյալ պրոբլեմները՝ 1) նավթի և գազի հնքվ-երի և հանքակուտակների տարածական տեղաբաշխման օրինաչափությունները, 2) նավթի և գազի ծագումը, 3) դրանց հանքակուտակների ձևավորումը, 4) երկրաբանահետախուզական աշխատանքների մեթոդիկան:

**Գ-107. ГЕОЛОГИЯ ПЛАНЕТАРНАЯ – ՄՈՆՈՐԱԿԱՅԻՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, PLANETARY GEOLOGY**, երկրբ. ճյուղ, որն զբաղվում է Արեգակնային համակարգի երկրային խմբի մոլորակների ու դրանց արբանյակների երկրբ. կառուցվածքի առանձնահատկությունների ուսումնասիրմամբ և համադրմամբ Երկրի հետ:

**Գ-108. ГЕОЛОГИЯ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ – ՕԳՏԱՎԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ECONOMIC GEOLOGY, MINING GEOLOGY**, երկրբ. բաժին, որն ուսումնասիրում է Երկրի ընդերքում օգտ. հնժ-ների (պինդ, հեղուկ և գազանման) հնքվ-երի առաջացման պայմանները, նրանց կազմը և կառուցվածքը, տեղաբաշխման օրինաչափությունները: Օ. հ. Ե. հենվում է երկրբ. գիտելիքների երկու ճյուղի վրա՝ 1) նյութական, որն ուսումնասիրում է օգտ. հնժ-ների կազմը և ներառում է երկրաքիմիան, միներալաբանությունը, ապարագրությունը, 2) տարածական, որը բացահայտում է հնքվ-երի տեղաբաշխման օրինաչափությունները և ներառում է կառուցվածքային երկրաբանությունը, տեկտոնիկան, պատմական և ռեգիոնալ երկրաբանությունը:

**Գ-109. ГЕОЛОГИЯ ПРИКЛАДНАЯ – ԿԻՐԱՌՎԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, APPLIED GEOLOGY**, միավորում է երկրբ. գործնական ճյուղերը՝ օգտակար հանածոների երկրաբանությունը, ջրաերկրաբանությունը, ճարտարագիտական երկրաբանությունը, նավթարդյունահանման երկրաբանությունը, հանքային երկրաբանությունը և այլն:

**Գ-110. ГЕОЛОГИЯ РЕГИОНАЛЬНАЯ – ԵՐԿՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ (ՌԵԳԻՈՆԱԼ) ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, REGIONAL GEOLOGY**, երկրբ. բաժին, որն ուսումնասիրում է երկրակեղևի առանձին տեղամասերի (մայր ցամաքներ, ծալքավոր համակարգեր, պլատֆորմներ, դրանց մասեր, երկրներ) երկրբ. կառուցվածքը: Հիմնական մեթոդներ են՝ երկրբ. հանույթ, խոր հորատում, խորքային կառուցվածքի ուսումնասիրման երկրֆ. մեթոդներ: Այդ հետազոտությունների արդյունքում կազմվում են երկրբ. քարտեզներ ու կտրվածքներ, բացահայտվում են որոշակի տարածքի երկրբ. կառուցվածքը և զարգացման պատմությունը, վերականգնվում է կառուցվածքային ձևերի տարածական դիրքը:

- Г-111. ГЕОЛОГИЯ РУДНИЧНАЯ – ՀԱՆՔԱՐԱՆԱՅԻՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, MINING GEOLOGY**, հնքվ-ի մշակման ժամանակ հանքարանի երկրբ. ծառայություն: Յ. ե-յան խնդիրներն են՝ 1) հնքվ-երի բազմակողմանի երկրբ. ուսումնասիրություն՝ նպատակ ունենալով երկարացնելու լեռնահանքային ձեռնարկության գործունեությունը կամ մեծացնելու նրա արտադրական կարողությունը (օգտ. հնժ-ների նոր մարմինների որոնում և հետախուզություն, օգտ. հնժ-ների համալիր օգտագործում, պայքար կորուստների դեմ և այլն), 2) շահագործման բազմակողմանի օգնություն այն բնագավառներում, որոնք վերաբերում են երկրաբաններին (արտադրական պլանների կատարում, անվտանգության ապահովում, շահագործողական հետախուզություն, արդյունահանման համար նախապատրաստված օգտ. հնժ-յի որակի դիտարկում և այլն):
- Г-112. ГЕОЛОГИЯ СТРАТИГРАФИЧЕСКАЯ – ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, STRATIGRAPHIC GEOLOGY**, երկրբ. բաժին, որն ուսումնասիրում է ապարաշերտերի հասակը, փոխհարաբերությունը, տարածումը, տե՛ս Տրատիգրաֆիա:
- Г-113. ГЕОЛОГИЯ СТРУКТУРНАЯ – ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, STRUCTURAL GEOLOGY**, տե՛ս Структурная геология:
- Г-114. ГЕОЛОГИЯ ЧЕТВЕРТИЧНАЯ – ՉՈՐՐՈՐԴԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, QUATERNARY GEOLOGY**, տե՛ս Четвертичная геология:
- Г-115. ГЕОЛОГИЯ ФИЗИЧЕСКАЯ – ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, PHYSICAL GEOLOGY**, տե՛ս Динамическая геология:
- Г-116. ГЕОЛОГОРАЗВЕДОЧНЫЕ РАБОТЫ – ԵՐԿՐԱԲԱՆԱՅԵՏԱԽՈՒՋԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, GEOLOGIC PROSPECTING WORKS**, երկրբ. տարբեր մասնագիտացված և այլ աշխատանքների համալիր, որը կատարվում է օգտ. հնժ-ների հնքվ-երի հայտնաբերման և արդյ. իրացման նախապատրաստման համար: Ներառում է օգտ. հնժ-ների հնքվ-երի տեղաբաշխման օրինաչափությունների, առաջացման պայմանների, կազմության առանձնահատկությունների, նյութական կազմի ուսումնասիրությունը, որի նպատակն է դրանց կանխատեսումը, որոնումը, տեղադրման պայմանների վերականգնումը, նախնական և մանրամասն հետախուզումը, երկրաբանատնտեսական գնահատումը և նախապատրաստումը արդյ. իրացման համար: Ե. ա-ի մեջ են մտնում երկրատարածքային և խոշորամասշտաբ երկրբ., տեղագրաերկրաբաշխական, երկրֆ., երկրք., օդատիեզերական և այլ հանույթները, որոնման, երկրաբանահետախուզական, ջրաերկրբ., ճարտարագիտաերկրբ. աշխատանքները, միներալատեխնոլոգիական, երկրաբանատնտեսական, գիտաթեմատիկական և այլ ուսումնասիրությունները, ինչպես նաև ընդերքի պաշարների շահագործմանը վերաբերող այլ ծառայությունները:
- Г-117. ГЕОЛОГО-ЭКОНОМИЧЕСКАЯ ОЦЕНКА МЕСТОРОЖДЕНИЙ – ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԵՐԿՐԱԲԱՆԱՏՆԵՍԱԿԱՆ ԳՆԱՀՅՈՒՄ, ECONOMIC ESTIMATION OF MINERAL DEPOSITS**, ընդգրկում է հնքվ-երի երկրբ. և լեռնատեխնոլոգիական առանձնահատկությունների, օգտ. հնժ-յի արդյ. արժեքավորության, ժողտնտեսության մեջ արդյունահանվող միներալային հումքի օգտագործման հավանական արդյունքի համալիր գնահատումը: Յ. ե. գ. հիմնվում է կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքների վրա, որոնք ընդհանրացվում են օգտ. հնժ-ների պաշարների հաշվարկման ընթացքում՝ հաշվի առնելով հնքվ-ի երկրբ., լեռնատեխնոլոգիական, տնտեսական և այլ առանձնահատկությունները:

**Г-118. ГЕОМАГНЕТИЗМ** (հուն. *gē* – Երկիր և *magnēites* – մագնիս) – **ԵՐԿՐԱՍԱԳՆԻՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, GEOMAGNETISM**, 1) Երկրի մագնիսական դաշտ, որի գոյությունը պայմանավորված է Երկրի ներսում տեղաբաշխված կայուն աղբյուրներով (ստեղծում են դաշտի հիմնական բաղադրիչը՝ մոտ 90%), ինչպես նաև՝ մագնիսալորտում և իոնոլորտում գտնվող փոփոխական աղբյուրներով, 2) երկրաֆիզիկայի բաժին, որն ուսումնասիրում է Երկրի մագնիսական դաշտի տարածական տեղաբաշխումը ու ժամանակային փոփոխությունները և դրանց հետ կապված երկրֆ. գործընթացները:

**Г-119. ГЕОМАГНИТНОЕ ПОЛЕ – ԵՐԿՐԱՍԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏ, GEOMAGNETIC FIELD**, Երկրի մագնիսական դաշտ, որը ստեղծվել է հիմնականում Երկրի ներսում, ինչպես նաև մագնիսալորտում և իոնոլորտում տեղաբաշխված աղբյուրների գործունեությամբ: Ե. դ. յուրաքանչյուր կետում բնորոշվում է լարվածության վեկտորով, որի ուղղությունը և մեծությունը որոշվում են երեք ուղղանկյուն բաղադրիչներով (հյուսիսային, արևելյան և ուղղաձիգ) և լրիվ վեկտորի մոդուլով, հակամամբ (անկյունը հորիզոնական բաղադրիչի և աշխ. միջօրեականի միջև) և թեքմամբ (անկյունը լրիվ վեկտորի և հորիզոնի միջև): Ե. դ-ի լարվածության վեկտորի մեծությունը չափվում է նանոտեսլերով: Երկրամագնիսական բևեռները (համասեռ մագնիսացված զնդի) և մագնիսական բևեռները (Երկրի իրական բևեռները) ստեղծում են երկրամագնիսական կորոդինատների և մագնիսական կորոդինատների համակարգ: Մագնիսական դաշտի ուսումնասիրման համար կատարվում է մագնիսական հանույթ (հիմնականում մագնիսաչափերով) ցամաքում, օվկիանոսներում, օդային տարածությունում (օդամագնիսական հանույթ), որի արդյունքները ներկայացվում են տարբեր մասշտաբի քարտեզների տեսքով: Ե. դ-ի ազդեցության տակ մագնիսական սլաքը կողմնորոշվում է մագնիսական միջօրեականի երկայնքով: Այդ երևույթն օգտագործվում է երկրաբանական և մարկշեյդերական պրակտիկայում՝ տեղանքում կողմնորոշվելու համար: Ֆեռոմագնիսական միներալներ պարունակող ապարները, Ե. դ-ում մագնիսանալով, առաջացնում են անկանոնություններ, որոնց ուսումնասիրման հիման վրա կատարվում են հնքվ-երի որոնում ու հետախուզություն, երկրբ. քարտեզագրում: Ե. դ-ի շրջմամբ պայմանավորված մնացորդային մագնիսացվածության փոփոխությունները հնարավորություն են տալիս մասնատելու նստվածքային ու հրաբխային ապարները, ճշտելու դրանց հասակը և երկրբ. գործընթացների հաջորդականությունը: Արտաքին մագնիսական դաշտի փոփոխարկումը (վարիացիան) օգտագործում են օգտ. հնձների հետախուզման և Երկրի ներքին կառուցվածքի ուսումնասիրման համար:

**Г-120. ГЕОМЕТРИЗАЦИЯ МЕСТОРОЖДЕНИЯ – ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԵՐԿՐԱՉԱՓԱՅՈՒՄ, GEOMETRIZATION OF DEPOSIT**, դաշտային և գրասենյակային աշխատանքների համակարգ, որի նպատակն է մարկշեյդերական հատակագծերի, գրաֆիկների ու կտրվածքների վրա պատկերել հանքամարմնի կառուցվածքային ու որակական ցուցանիշների բաշխման օրինաչափությունները:

**Г-121. ГЕОМОРФОЛОГИЧЕСКИЕ КАРТЫ – ԵՐԿՐԱՉԵՎԱԲԱՆԱԿԱՆ (ԳԵՈՄՈՐՖՈԼՈԳԻԱԿԱՆ) ՔԱՐՏԵԶՆԵՐ, GEOMORPHIC MAPS, GEOMORPHOLOGICAL MAPS**, որևէ տարածքի ռելիեֆի արտաքին տեսքի, ծագման, հասակի և զարգացման պատմության պատկերումը քարտեզի վրա:

**Г-122. ГЕОМОРФОЛОГИЧЕСКИЙ ПРОФИЛЬ – ԵՐԿՐԱՉԵՎԱԲԱՆԱԿԱՆ (ԳԵՈՄՈՐՖՈԼՈԳԻԱԿԱՆ) ՏՐԱՄԱՏ (ԿՈՂԱՊԱՏԿԵՐ, ՊՐՈՖԻԼ), GEOMORPHOLOGICAL PROFILE**, տրված գծով Երկրի մակերևույթի ռելիեֆի ուղղաձիգ հարթությամբ հատույթի

գրաֆիկական պատկերում: Ե. տ. ցույց է տալիս տեղանքի ռելիեֆի ծագումը, հասակը և երկրը. կառուցվածքը: Ուղղաձիգ մասշտաբը հաճախ մեծացվում է:

**Г-123. ГЕОМОРФОЛОГИЧЕСКИЙ ЦИКЛ – ԵՐԿՐԱԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ (ԳԵՈՍՄՐՖՈԼՈԳԻԱԿԱՆ) ԲՈԼՈՐԱՇՐՋԱՆ (ՑԻԿԼ), GEOMORPHIC CYCLE, GEOMORPHOLOGICAL CYCLE,** Երկրի մակերևույթի որևէ տեղամասի ռելիեֆի հաջորդական փոփոխման ընթացք՝ սկսած տեկտ. բարձրացումից (ծովի մակարդակից վեր), հետագա լերկացումից և վերջացրած ռելիեֆի ցածրացմամբ, հարթեցմամբ և ելակետայինին մոտ համահարթի (պենեպլենի) մակերևույթի առաջացմամբ: Յուրաքանչյուր բոլորաշրջանում առանձնացվում են երիտասարդ, հասուն, ծեր և զառամյալ փուլեր: Նույնն է՝ աշխարհագրական բոլորաշրջան (ցիկլ), ողողամածման բոլորաշրջան:

**Г-124. ГЕОМОРФОЛОГИЧЕСКОЕ РАЙОНИРОВАНИЕ – ԵՐԿՐԱԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ (ԳԵՈՍՄՐՖՈԼՈԳԻԱԿԱՆ) ՇՐՋԱՆԱՑՈՒՄ, GEOMORPHOLOGICAL REGIONALISATION,** Երկրի մակերևույթի համեմատաբար համասեռ ռելիեֆով բնութագրվող տեղամասերի անջատում: Համալիր Ե. շ. հաշվի է առնում ռելիեֆի տարրերի ձևաբանության առանձնահատկությունները, ծագումը, հասակը և հենվում է «ռելիեֆի ձևաբանական տիպեր» հասկացության վրա: Բացի դա, Ե. շ. կարող է իրագործվել ռելիեֆի առանձին հատկանիշների հիման վրա (ըստ ռելիեֆի ձևակառուցվածքի և ձևաքանդակների, հասակի և այլն):

**Г-125. ГЕОМОРФОЛОГИЯ** (հուն. *gê* – Երկիր, *morfê* – ձև և *lógos* – ուսմունք, խոսք) – **ԵՐԿՐԱԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳԵՈՍՄՐՖՈԼՈԳԻԱ, GEOMORPHOLOGY,** գիտություն, որն ուսումնասիրում է Երկրի մակերևույթի ռելիեֆը ցամաքում, օվկիանոսների ու ծովերի հատակում, ելնելով հետևյալ հատկանիշներից՝ արտաքին ձևը, ծագումը, զարգացման օրինաչափությունները, միավորումը բնական խմբավորումներում և տարածումը Երկրի մակերևույթում: Ե. սերտորեն կապված է երկրբ. հետ և հենվում է նրա եզրակացությունների վրա: «Ե.» տերմինը օգտագործվում է նաև Երկրի մակերևույթի որևէ տեղամասի երկրաձևաբանական կառուցվածքն արտահայտելու համար:

**Г-126. ГЕОМОРФОЛОГИЯ СУШИ – ՑԱՍԱՔԻ ԵՐԿՐԱԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ԳԵՈՍՄՐՖՈԼՈԳԻԱ), GEOMORPHOLOGY OF LAND,** երկրաձևաբանության բաժին՝ նվիրված ցամաքի ռելիեֆի ուսումնասիրությանը:

**Г-127. ГЕОСИНКЛИНАЛЬ** ((հուն. *gê* – Երկիր, *synklinō* – կռանում եմ, թեքվում եմ) – **ԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԼ, ԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԼ, GEOSYNCLINE,** տեկտոնիկայի կարևորագույն հասկացություններից մեկն է: Լայն իմաստով այն կարելի է բնորոշել որպես երկրակեղևի բարձր շարժումակ, երկրադինամիկ լարվածության հակադիր փոփոխությունների, նստվածքների մեծ հաստության, զգալի մասնատվածության և թափանցելիության, ակտիվ մագմայականության ու փոխակերպության զոնա: Իրենից ներկայացնում է երկրասինկլինալային համակարգերի, մարզերի սահմաններում երկրակեղևի երկար գծային կամ աղեղնաձև ձգված (տասնյակ և հարյուրավոր կիլոմետրեր), համեմատաբար նեղ և խոր, սովորաբար բեկվածքներով սահմանափակված ձկվածք՝ ծովային ավազանի հատակում, որը լցված է նստվածքային ու հրաբխային ապարների հզոր ապարախմբերով: Երկարատև և ուժգին տեկտ. ձևախախտումների հետևանքով Ե. վերածվում է բարդ ծալքավոր, հաճախ լեռնային կառույցի: Ե-ի համար բնորոշ են ֆորմացիաների որոշակի տիպեր՝ կանաչքարային, հրաբխածին-սիլիցիումային, կավաթերթաքարային, ֆլիշային,

մոլասային, ներժայթքային (ինտրուզիվ) առաջացումներից՝ գրանիտակերպ ներժայթքվածքները, հատկապես օֆիոլիթային խմբակցությունը: Ե-ները տեղաբաշխված են սովորաբար կա՛ն օվկիանոսից դեպի մայր ցամաք անցման զոնայում, կա՛ն մայր ցամաքների միջև: Դիտարկվում են այնպիսի մարզեր, որտեղ օվկիանոսային տիպի երկրակեղևը վերածվում է մայրցամաքայինի: Ե-ների ներդրվելը և զարգացումը սերտորեն կապված են խորքային բեկվածքների հետ: Ժամանակակից Ե-ները կապված են քարոլորտի սալերի սահմանների՝ սպրեդինգի և հատկապես սուբդուկցիայի զոնաների հետ: Իրենց զարգացման սկզբնական փուլում (բուն Ե-ային փուլ) Ե-ները բնորոշվում են խորասուզումների գերակշռությամբ ու ծովային պայմաններով, հզոր նստվածքակուտակմամբ, իսկ եզրափակիչ փուլում (լեռնագոյացման փուլ)՝ բարձրացումների գերակշռությամբ և լեռնագոյացմամբ: Ե-ները բնորոշվում են բարձր երկրաշարժականությամբ, խիստ անբնականոն ձգողական և մագնիսական դաշտերով: Ե-ները և դրանց հարակցող երկրասահմանակիցները երկրասահմանակիցային համակարգերի, մարզերի և գոտիների բաղկացուցիչ մասերն են, տե՛ս նաև Геосинклиналь современная:

**Դ-128. ГЕОСИНКЛИНАЛЬ ЗЕЛЕНОКАМЕННАЯ – ԿԱՆԱՉՔԱՐԱՅԻՆ ԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԿԱԼ (ԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԿԱԼ), GREENSTONE GEOSYNCLINE,** բնորոշվում է ակտիվ հրաբխային գործունեությամբ՝ անդեզիտների, անդեզիտաբազալտների հզոր ժայթքումներով և հրաբեկորային նյութի արտանետվածքներով, տե՛ս Эвгеосинклиналь:

**Դ-129. ГЕОСИНКЛИНАЛЬ КРАЕВАЯ – ԵԶՐԱՅԻՆ ԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԿԱԼ (ԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԿԱԼ), MARGINAL GEOSYNCLINE,** տե՛ս Краевая геосинклиналь:

**Դ-130. ГЕОСИНКЛИНАЛЬ СОВРЕМЕННАЯ – ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԿԱԼ (ԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԿԱԼ), RESENT GEOSYNCLINE,** ակտիվ շարժունակ համակարգեր, որոնք հանդիսանում են անցյալ երկրբ. ժամանակաշրջանների երկրասահմանակիցների ենթադրյալ նմանակները: Վ. Ե. Խահինը առանձնացնում է դրանց չորս տիպեր՝ 1) երիտասարդ կղզեաղեղները և նրանց հետ խմբակցություն կազմող խորջրյա փողրակները, 2) հասուն կղզեաղեղները և նրանց հետ կապված իջվածքները՝ օվկիանոսից դեպի մայր ցամաք անցողիկ զոնայում, 3) ժամանակակից ներքին ծովային մարզերը և դրանց եզրափակող լեռնային կառույցները, որտեղ երկրասահմանակիցային զարգացումն առաջ է անցել նախորդ երկու տիպերից (օր.՝ Միջերկրածովյան, Անձովյան մարզեր և այլն), 4) մայր ցամաքների ու «երիտասարդ» օվկիանոսների անցողիկ զոնայի երկրասահմանակիցները, որոնք տեղաբաշխված են արդեն ավարտված ծալքավոր համակարգերին զուգահեռ (օր.՝ Ապալաչներից դեպի արևելք գտնվող ճկվածքները): Տիպային Ժ. Ե-ային մարզեր հաշվում են օվկիանոսային եզրամասերը, որոնք առավել որոշակի արտահայտված են Խաղաղ օվկիանոսում: Այստեղ գլխ. կառուցվածքաձևաբանական տարրեր են հանդիսանում եզրային ծովերի գոգավորությունները, կղզեաղեղները և խորջրյա փողրակները:

**Դ-131. ГЕОСИНКЛИНАЛЬ ЧАСТНАЯ – ՄԱՍՆԱՎՈՐ ԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԿԱԼ (ԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԿԱԼ), SPECIAL GEOSYNCLINE,** երկրասահմանակիցային համակարգի սահմաններում գտնվող ճկվածքներ, որոնք բաժանված են երկրասահմանակիցային բարձրացումներով: Դրանց լայնությունը մի քանի տասնյակից մինչև մի քանի հարյուր կմ է: Երկարությունը ձգվում է հարյուրավոր կմ: Կախված նստվածքների բնույթից, ստորաբաժանվում են՝ հրաբխային, թերթաքարային, ֆլիշային, կրաքարային: Քիչ օգտագործվող տերմին է:

**Г-132. ГЕОСИНКЛИНАЛЬНАЯ ОБЛАСТЬ – ԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԼԱՅԻՆ (ԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԼԱՅԻՆ) ՍԱՐՁ, GEOSYNCLINAL AREA,** երկրասինկլինալային գոտու խոշոր հարաբերաբար առանձնացված տեղամաս, որը հարակից մարզերից տարբերվում է ծալքավորության հասակով և զարգացման պատմության առանձնահատկություններով: Կազմված է միևնույն կամ մոտիկ հասակի ծալքավոր համակարգերից (օր.՝ կալեդոնյան կամ հերցինյան): Ծալքավոր համակարգերը մարզի ներսում ձգվում են երկու կամ ավելի զուգահեռ շարքերով, շարունակվելով կամ կուլիսանման փոխարինելով մեկը մյուսին տարածության մեջ և բաժանվելով միմյանցից միջադիր զանգվածներով կամ միջլեռնային ճկվածքներով:

**Г-133. ГЕОСИНКЛИНАЛЬНАЯ СИСТЕМА – ԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԼԱՅԻՆ (ԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԼԱՅԻՆ) ՀԱՍՎԱՐԳ, GEOSYNCLINAL SYSTEM,** երկրասինկլինալային մարզի խիստ շարժունակ գծային ձգված և իջեցումներով ու բարձրացումներով մասնատված մաս, որի սահմաններում երկարատև զարգացման հետևանքով օվկիանոսային տիպի կեղևը փոխարկվում է մայրցամաքայինի: Ե. հ. բնորոշվում է ուղղաձիգ շարժումների բարձրացված արագությամբ, մեծ լայնությով և հակադրականությամբ, ուժգին ծալքավորությամբ, վրաշարժերով ու մակաշարժերով, տարաբնույթ մագմայական գործընթացներով, ռեզիոնալ փոխակերպությամբ և ներծին հանքայնացմամբ: Ե. հ-ի արտաքին մասերը, որոնք սովորաբար առաջանում են մայրցամաքային կեղևի վրա, կոչվում են միոգեոսինկլինալներ (տե՛ս Многогеосинклиналь), ներքին ճկվածքները, որոնք ներդրվում են օվկիանոսային կեղևի կամ խիստ ջարդոտված մայրցամաքային հիմքի վրա՝ էվգեոսինկլինալներ (տե՛ս Эвгеосинклиналь): Չարգացման սկզբնական փուլում Ե. հ-ները կրում են խորասուզում, որն ուղեկցվում է հրաբխականությամբ և ծովային նստվածքակուտակմամբ: Հաջորդ նախալեռնագոյացման փուլում (հասունության փուլ) Ե. հ. կազմող երկրասինկլինալները մասնատվում են երկրորդային բարձրացումների (ներերկրաանտիկլինալներ, կղզեաղեղներ) և նեղ քույր ճկվածքների (ներերկրասինկլինալներ), տեղի է ունենում նաև գրանիտների ներդրում: Այնուհետև տեղի է ունենում ընդհանուր փքում, բարձրացում, և սկսվում է լեռնագոյացման փուլը, որի սկիզբը բնորոշվում է առավելագույն ծալքավորությամբ, գրանիտագոյացմամբ, ռեզիոնալ փոխակերպությամբ և առավել ուժգին ներծին հանքագոյացմամբ: Ե. հ. վերափոխվում է ծալքավոր լեռնային կառույցի, որի ներսում ձևավորվում են միջլեռնային, իսկ եզրերում (ծալքավոր համակարգի ու պլատֆորմի սահմանում)՝ եզրային ճկվածքներ: Ըստ գոյացման ժամանակի՝ տարբերում են մինչքեմբրիյան, վաղպալեոզոյան (կալեդոնյան), ուշ պալեոզոյան (հերցինյան), մեզոզոյան և կայնոզոյան (ալպյան) Ե. հ-եր: Ե. հ. միջադիր զանգվածների հետ միասին մտնում է երկրասինկլինալային մարզերի կազմի մեջ, վերջինները առաջացնում են լայնարձակ ծալքավոր գոտիներ:

**Г-134. ГЕОСИНКЛИНАЛЬНЫЙ ВУЛКАНИЗМ – ԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԼԱՅԻՆ (ԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԼԱՅԻՆ) ՀՐԱՔԻԱՅՆՈՒԹՅՈՒՆ, GEOSYNCLINAL VOLCANISM,** շարժուն մարզերի զարգացման երկրասինկլինալային (գեոսինկլինալային) էտապի հրաբխային գործունեություն: Առանձնացնում են զարգացման երկու հիմնական փուլ: Առաջին փուլը համապատասխանում է երկրասինկլինալային մարզի վարընթաց շարժումների գերակայության ժամանակին: Հրաբխային ժայթքումները տեղի են ունենում ստորջրյա (զլխ. խորջրյա) պայմաններում և բնորոշվում են սիլիցիումային հզոր ապարախմբերի կուտակմամբ (սպիլիտ – դիաբազային, սպիլիտ – կերատոֆիրային և այլ ֆորմացիաներ): Երկրորդ փուլը համապատասխա-



նուն է վերընթաց շարժումների գերակայության և մարզի ուժգին տարբերակման ժամանակին: Հրաբխային ժայթքումները ընթանում են ծանծաղուտային պայմաններում և արագ անցնում են մերձնակերևութայինին (կղզեաղեղների հրաբխայնություն): Գերակշռում են անդեզիտները, ավելի սակավ՝ անդեզիտաբազալտները, բազալտները, դացիտները և ավելի թթու ապարները:

**Դ-135. ГЕОСИНКЛИНАЛЬНЫЙ ПОЯС – ԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԼԱՅԻՆ (ԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԼԱՅԻՆ) ԳՈՏԻ, GEOSYNCLINAL BELT,** երկրակեղևի լայնարձակ գծային ձգված, տեկտոնապես առավել շարժունակ և թափանցիկ գոտի: Տեղաբաշխված է կա՛ն հին մայրցամաքային պլատֆորմների միջև, կա՛ն պլատֆորմի ու օվկիանոսի մահճի միջև, ընդգրկելով ներքին ու եզրային ծովերը, կղզեաղեղները և խորջրյա փողրակները: Ե. գ-ու երկարությունը մոտ տասը հազար կմ է, լայնությունը՝ հարյուրավոր և նույնիսկ հազարավոր կմ: Բնորոշվում է քարաբանական որոշակի ֆորմացիաների (կազմավորումների) խմբակցությամբ, մագմայական երևույթների օրինաչափ ուղղվածությամբ, հրաբխային ու նստվածքային ապարների ուժգին ծալքավորմամբ ու փոխակերպությամբ: Ժամանակակից պատկերացումներով Ե. գ-ները գոյանում են քարոլորտի խոշոր սալերի սահմանում կամ մայրցամաքային սալերի ռիֆտագոյացման և ճեղքման հետևանքով: Ջարգանում են կամ օվկիանոսային կեղևի և (կամ) բարակացած ու վերամշակված մայրցամաքային կեղևի վրա: Ե. գ-ներում տեղի է ունենում նստվածքային և հրաբխային ստվարաշերտերի երկարատև կուտակում ծովային, հաճախ խորջրյա, այնուհետև կղզեաղեղային և ծանծաղուտային պայմաններում: Վերջին հաշվով Ե. գ-ները կրում են ուժգին տեկտ. ձևախախտումներ, ռեզիոնալ փոխակերպություն, գրանիտացում և վերածվում են ծալքավոր լեռնային կառույցների՝ հզոր մայրցամաքային կեղևով: Երկրի վերջին 1,6 մլրդ. տարվա պատմության ընթացքում զարգացել են հինգ գլխ. Ե. գ-ներ՝ Խաղաղօվկիանոսյան, Միջերկրածովյան, Ուրալամոնղոլական, Ատլանտյան և Արկտիկական:

Ե. գ-ների զարգացման ընթացքում նրա սահմաններում հաջորդաբար զետեղվել են ու զարգացել բազմաթիվ երկրասինկլինալային մարզեր և երկրասինկլինալային համակարգեր: Ե. գ-ների եզրամասերում սովորաբար տեղաբաշխվում են ավելի հին ծալքավոր մարզերը, կենտրոնական մասում՝ ավելի երիտասարդները: Ե. գ-ների մեծ մասը այժմ ձեռք է բերել ծալքավոր լեռնային կառույցների բնույթ: Ժամանակակից ակտիվ Ե. գ. հանդիսանում են Խաղաղօվկիանոսյանը՝ Խաղաղ օվկիանոսի արմ. եզրամասը և անցողիկ զոնան՝ օվկիանոսից դեպի Ասիայի և Ավստրալիայի մայր ցամաքները, ինչպես նաև Միջերկրածովյան Ե. գ-ու հր-արլ. մասը՝ Ինդոնեզական և Ֆիլիպինյան կղզեխմբերը, Յնդկական ու Խաղաղ օվկիանոսների միջնամասը: Ժամանակակից և հին Ե. գ-ները առանձնացվում են որպես մայր ցամաքների ստորջրյա եզրամասեր՝ շելֆի արտաքին մարզեր, մայրցամաքային լանջ ու ստորոտ, դրանց համապատասխանում են հին գոտիների միոգենոսինկլինալները, որոնք տեղադրված են հին մայրցամաքային կեղևի վրա՝ մագմայական գործունեության թույլ արտահայտմամբ կամ բացակայությամբ (բազալտային կազմի մագմա): Գոտիների ավելի ներքին մասերին, որոնք զարգանում են օվկիանոսային կամ դրան մոտ կեղևի վրա (էվգենոսինկլինալներ), համապատասխանում են եզրային ծովերի համակարգեր, կղզեաղեղներ և խորջրյա փողրակներ: Էվգենոսինկլինալների և գոտիների (ամբողջապես) զարգացման մեջ առաջատար դեր են խաղում գերխորքային թեք բեկվածքները, որոնք խորջրյա փողրակների առանցքներից խորասուզվում են կղզեաղեղների տակ, հասնում են վերին միջնապատյանի ստորոտը և այժմ բացահայտվում են երկրաշարժերի

օջախների տեղաբաշխմամբ [այսպես կոչված՝ Ջավարիցկի-Բենիֆի երկրաշարժակիզակետային (սեյսմաֆոկալ) զոնաներ]: Ենթադրվում է, որ այդ բեկվածքների զոնաների հետ կապված է կղզեաղեղների հրաբխականությունը, որի նախասկզբնական մագման ունի անդեզիտային կազմ: Բացի վերը նշված տարրերից, Ե. գ-ների կազմում հաճախ մասնակցում են միջադիր զանգվածները (ավելի հին մայրցամաքային կեղևի բեկորները), որոնց նմանակները ժամանակակից օվկիանոսներում կոչվում են մանրամայրցամաքներ (միկրոկոնտինենտներ): Միջադիր զանգվածները Ե. գ-ները լայնակի հատույթում բաժանում են առանձին երկրասինկլինալային համակարգերի ու դրանց հետ միասին առաջացնում են երկրասինկլինալային մարզեր, որոնք առանձնացվում են կա՛ն ըստ զոտու տարածման, կա՛ն իրենց փակման ժամանակի: Ե. գ-ները իրենց զարգացման ընթացքում (հարյուր միլիոնավոր, երբեմն միլիարդից ավել տարիներ) անցնում են մի քանի փուլով: Յուրաքանչյուր փուլի վերջում զոտու մի մասը (սովորաբար եզրային) ավարտում է իր երկրասինկլինալային զարգացումը և վերածվում է սկզբում լեռնային երկրի (օրոգեն), հետո՝ երիտասարդ պլատֆորմի, իսկ զոտու առանցքին մոտ ձևավորվում է նոր երկրասինկլինալային համակարգ: Ե. գ-ների տարբեր փուլերում և տարբեր կառուցվածքային տարրերում ձևավորվում են օգտ. հնձների յուրահատուկ համալիրներ:

**Դ-136. ГЕОСТАТИЧЕСКОЕ ДАВЛЕНИЕ – ԵՐԿՐԱՍՏԱՏԻԿ ԾՆՇՈՒՄ, GEOSTATIC PRESSURE**, տվյալ ապարի վրա վերադիր (ծածկող) ապարների կողմից հաղորդվող ճնշում: Հոմ. լեռնաին (ընդերքային) ճնշում:

**Դ-137. ГЕОСФЕРЫ** (հուն.  $g\epsilon^{\acute{\epsilon}}$  – երկիր և  $spha\acute{\iota}r$  – գունդ) – **ԵՐԿՐՈՒՈՐՏՆԵՐ (ԵՐԿՐԱՊՍՅԱՆՆԵՐ), GEOSPHERES**, երկիր մոլորակի կառուցվածքի խոշոր համակենտրոն, համատարած կամ ընդհատուն ոլորտներ (պատյաններ), որոնք բնորոշվում են տարբեր ֆիզ., քիմ. և կենսաբ. առանձնահատկություններով: Սակերեսամերձ մասից դեպի երկրի կենտրոնը առանձնացնում են մագնիսոլորտ, մթնոլորտ, ջրոլորտ, քարոլորտ (երկրակեղևը և սուբստրատը), միջնապատյան և երկրի միջուկ: Առանձնացնում են նաև յուրահատուկ թաղանթներ՝ կենսոլորտ և աշխարհագրական թաղանթ:

**Դ-138. ГЕОТЕКТОНИКА** (հուն.  $g\epsilon^{\acute{\epsilon}}$  – երկիր և  $tektonik\acute{o}s$  – շինարարություն, շինարարությանը վերաբերող) – **ԵՐԿՐԱՏԵԿՏՈՆԻԿԱ (ԵՐԿՐԱԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ), GEOTECTONICS, TECTONIC GEOLOGY**, երկրբ. բաժին, որն ուսումնասիրում է երկրակեղևի և վերին միջնապատյանի կառուցվածքը, տեկտ. շարժումների ու ձևախախտումների ազդեցության տակ նրանց փոփոխությունն ու զարգացումը ժամանակի ու տարածության մեջ՝ կապված երկրի զարգացման հետ ամբողջովին: Ե-յի հիմնական խնդիրները երկրակեղևի ժամանակակից կառուցվածքի ուսումնասիրությունն է, այսինքն՝ նրա սահմաններում տարբեր ապարների տեղաբաշխումը, դասավորությունը, տեղադրման բնույթը և տարբեր կարգի կառուցվածքային տարրերի (մանր ծալքերից ու խզվածքներից մինչև մայր ցամաքներն ու օվկիանոսները) օրինաչափ զուգորդումը, ինչպես նաև տվյալ կառուցվածքի պատմության ու ձևավորման պայմանների պարզաբանումը: Ե-յում մշակված են ուսումնասիրման մի շարք մեթոդներ՝ կառուցվածքային, ֆորմացիոն, ընդմիջումների ու աններդաշնակությունների, ֆացիաների, հաստությունների վերլուծության, համեմատական տեկտոնիկայի, հնատեկտոնական և այլն: Լայնորեն օգտագործվում են հարակից գիտությունների մեթոդները (երկրֆ., երկրաբաշխություն, երկ-

րածնաբանություն և այլն): Օժանդակ դեր են կատարում տեկտ. ուսումնասիրությունների փորձարարական մեթոդները: Ե-յում առանձնացվում են մի քանի ուղղություններ՝ ընդհանուր Ե., ձևաբանական (կառուցվածքային երկրաբանություն) Ե., ռեգիոնալ Ե., պատմական Ե., ծագումնաբանական կամ տեսական Ե., համեմատական Ե., փորձարարական Ե. (տեկտոնաֆիզիկա) և այլն: Ե-յի բաժին է հանդիսանում նորագույն տեկտոնիկան (նեոտեկտոնիկա): Ե-յի և երկրաշարժագիտության կցվածքում ծագել է երկրաշարժատեկտոնիկան (սեյսմատեկտոնիկան):

**Գ-139. ГЕОТЕКТОНИКА ИСТОРИЧЕСКАЯ – ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿՐԱՏԵԿՏՈՆԻԿԱ, HISTORICAL GEOTECTONICS**, երկրատեկտոնիկայի բաժին, որն ուսումնասիրում է երկրակեղևի տեկտ. կառուցվածքների զարգացման հաջորդականությունը:

**Գ-140. ГЕОТЕКТОНИКА МОРФОЛОГИЧЕСКАЯ – MORPHOLOGICAL GEOTECTONICS**. «Геология структурная» տերմինի հոմ.:

**Գ-141. ГЕОТЕКТОНИКА ОБЩАЯ – ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԿՐԱՏԵԿՏՈՆԻԿԱ, GENERAL GEOTECTONICS**, բացահայտում է ժամանակի ու տարածության մեջ տեկտ. գործընթացների, տարբեր տեսակի տեկտ. կառուցվածքների առաջացման մասնակի և ընդհանուր օրինաչափությունները, Երկրի և հատկապես երկրակեղևի ու վերին միջնապատյանի զարգացման առանձնահատկությունները: Վերջնական նպատակը ինչպես երկր. գործընթացները բացատրող մասնավոր վարկածների, այնպես էլ երկրակեղևի և Երկրի զարգացման ընդհանուր տեսությանը վերաբերող երկրատեկտ. վարկածների ստեղծումն ու հիմնավորումն է:

**Գ-142. ГЕОТЕКТОНИКА ОПИСАТЕЛЬНАЯ – ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ԵՐԿՐԱՏԵԿՏՈՆԻԿԱ, DESCRIPTIVE GEOTECTONICS**, «Геология структурная» տերմինի հոմ.:

**Գ-143. ГЕОТЕКТОНИКА ПРИКЛАДНАЯ – ԿԻՐԱՌԱԿԱՆ ԵՐԿՐԱՏԵԿՏՈՆԻԿԱ, APPLIED GEOTECTONICS**, զբաղվում է երկրատեկտոնիկայի առանձին բաժիններում, հատկապես ընդհանուր երկրատեկտոնիկայում բացահայտված այն օրինաչափությունների կիրառմամբ, որոնք օգնում են պարզաբանելու երկրակեղևում տարբեր օգտ. հնձ-ների հանքակուտակների տեղաբաշխման բնույթը՝ որոնողահետախուզական աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու առումով:

**Գ-144. ГЕОТЕКТОНИКА РЕГИОНАЛЬНАЯ – ԵՐԿՐԱՇՐՉԱՆԱՅԻՆ (ՌԵԳԻՈՆԱԼ) ԵՐԿՐԱՏԵԿՏՈՆԻԿԱ, REGIONAL GEOTECTONICS**, տեկտոնիկայի ճյուղ, որն ուսումնասիրում է տարբեր տեկտ. կառույցներ և բազմաթիվ մասնական կառուցվածքային ձևեր ներփակող առանձին խոշոր մարզերի կազմությունը և զարգացումը: Իր խնդիրները լուծելու համար Ե. Ե.օգտագործում է նաև ֆացիալ-շերտագրական, երկրաձևաբանության, ապարագրության, երկրաբաշխության, երկրֆ., երկրք. տվյալները: Ուսումնասիրությունների արդյունքների համադրման հիման վրա առանձնացվում են տեկտ. շրջանացման տարրերը (գոտիներ, մարզեր, համակարգեր, զոնաներ և այլն):

**Գ-145. ГЕОТЕКТОНИКА ЭКСПЕРИМЕНТАЛЬНАЯ – ՓՈՐՉԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՐԱՏԵԿՏՈՆԻԿԱ, EXPERIMENTAL GEOTECTONICS**, տեկտ. մոդելավորման միջոցով կառուցվածքային ձևերի առաջացման ենթադրյալ մեխանիզմի փորձարարական ստուգման գիտություն:

**Գ-146. ГЕОТЕРМАЛЬНЫЕ РЕСУРСЫ – ԵՐԿՐԱՋԵՐՄԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐ (ՌԵՍՈՒՐՍՆԵՐ), GEOTHERMAL RESOURCES**, Երկրի խորքային (ընդերքային) ջերմության պաշարներ, որոնց օգտագործումը ժամանակակից տեխնիկական միջոցներով տնտեսապես նպատակահարմար է: Տարբերում են ջրաջերմային պաշարներ (ջերմաջրեր, թերմալ ջրեր), որոնք ներփակված են բնական ստր. հավաքիչներում

(կոլեկտորներում), և ապարաերկրաջերմային պաշարներ՝ կուտակված տաքացված (մինչև 350°C և ավել), գործնականորեն անջուր (չոր) ապարների բլոկներում: Ապարաերկրաջերմային ջրերի կորզման տեխնոլոգիան հիմնված է արհեստական շրջապտուտային համակարգերի ստեղծման վրա:

**Г-147. ГЕОТЕРМИКА, ГЕОТЕРМИЯ** (հուն. *gē* – Երկիր և *thérmē* – ջերմություն) – **ԵՐԿՐԱՋԵՐՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԵՐԿՐԱՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ, GEOTHERMICS**, Երկրի ֆիզիկայի բաժին, որն ուսումնասիրում է Երկրի ընդերքի ջերմային վիճակը և ջերմային պատմությունը: Երկրաջերմային ուսումնասիրությունները օգտագործվում են Երկրի մասին տարբեր գիտությունների կողմից, դրանց դերը հատկապես մեծ է տեկտ. վարկածների ստեղծման ու գնահատման, Երկրի ներքին ջերմության օգտագործման նախապատրաստման համար:

**Г-148. ГЕОТЕРМИЧЕСКАЯ СТУПЕНЬ – ԵՐԿՐԱՋԵՐՄԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ, GEOTHERMIC STEP**, բնութագրում է երկրակեղևի ուղղաձիգ կտրվածքում ջերմության աճի ինտենսիվությունը և արտահայտում է խորացման չափը (մ-երով), որի դեպքում ջերմաստիճանը բարձրանում է 1°C-ով՝ հաշված հաստատուն ջերմաստիճանի սահմանից: Ե. ա-ի միջին մեծությունը ընդունվում է 33 մ/°C, բայց այն փոփոխվում է 1-200 մ/°C սահմաններում՝ կախված ապարների բնույթից, ֆիզ. վիճակից, ջերմահաղորդականությունից, ջերմային հոսքի խտությունից, ներժայթքային (ինտրուզիվ) մարմինների մոտիկությունից, հրաբխային գործընթացների առկայությունից և այլն:

**Г-149. ГЕОТЕРМИЧЕСКИЙ ГРАДИЕНТ – ԵՐԿՐԱՋԵՐՄԱՅԻՆ ԳՐԱԴԻԵՆՏ, GEOTHERMAL GRADIENT**, երկրակեղևի հաստատուն ջերմաստիճանի սահմանից ներքև յուրաքանչյուր 100 մ խորանալիս ջերմաստիճանի բարձրացման մեծությունը: Միջին մեծությունը ընդունված է 3°, որի մեծությունը տարբեր տեղամասերում ու խորություններում տարբեր է և կարող է տատանվել 0.5-ից մինչև 20-30°C-ի սահմաններում:

**Г-150. ГЕОТЕХНИКА – ԵՐԿՐԱՏԵԽՆԻԿԱ, GEOTECHNICS**, ճարտարագիտական երկրբ. ուղղություն, որը գրունտների հատկություններն ուսումնասիրում է մեխանիկամաթեմատիկական մեթոդներով:

**Г-151. ГЕОФИЗИКА** (հուն. *gē* – Երկիր և *physikē* – բնագիտության հիմունքներ) – **ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱ, GEOPHYSICS**, գիտությունների համալիր, որը ֆիզ. մեթոդներով ուսումնասիրում է Երկրի և նրա պատյանների (մթնոլորտ, ջրոլորտ, քարոլորտ և այլն) ծագումը, զարգացումը, կազմությունը, հատկությունները և դրանցում ընթացող գործընթացները (բնական և տեխնածին): Ե-յի հիմքում ընկած են երկրֆ. դաշտերի (ձգողական, առաձգական, երկրամագնիսական, էլեկտրամագնիսական, երկրաջերմային և այլն) բնույթի, կառուցվածքի, տարածական անհամասեռության, ժամանակային փոփոխականության, բնականոնից դրանց շեղման ուսումնասիրությունը: Դրանք պայմանավորված են Երկրի կազմի անհամասեռությամբ և կազմության բարդությամբ, նրանում ընթացող գործընթացների բնույթով, Արևի, Լուսնի, մոլորակների, տիեզերական ճառագայթման և այլնի ազդեցությամբ, ինչպես նաև կենսոլորտի ներազդեցությամբ և տեխնածին գործունեությամբ: Ե. կապված է երկրբ. գիտությունների (հատկապես տեկտոնիկայի, հրաբխագիտության, պետրոֆիզիկայի, երկրաքիմիայի), աստղագիտության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, ֆիզիկական աշխ. և շատ տեխնիկական գիտությունների հետ: Ե-յի խոշոր բաժիններն են՝ արևաերկրային ֆիզիկա, մթնոլորտի ֆիզիկա, ջրաֆիզիկա, «պինդ» Երկրի ֆիզիկա, հետախուզական Ե., արդյունագործական Ե. և հաշվողական Ե.: Երկրի ֆիզիկայում, կախված ուսումնասիրման առարկայից, առանձնացվում են ինքնուրույն խոշ-

որ բաժիններ՝ երկրաշարժագիտություն, ծանրաչափություն (գրավիմետրիա), երկրամագնիսականություն, երկրաջերմագիտություն, երկրաէլեկտրականություն, երկրադինամիկա, միներալների ու ապարների ուսումնասիրություն բարձր ճնշումների ու ջերմաստիճանների պայմաններում:

**Գ-152. ГЕОФИЗИКА ЛАНДШАФТА – ԼԱՆԴՇԱՖՏԻ (ԲՆԱՊԱՏԿԵՐԻ) ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱ, LANDSCAPE GEOPHYSICS,** լանդշաֆտագիտության ուղղություն, որն ուսումնասիրում է որևէ լանդշաֆտում տեղի ունեցող գործընթացները ֆիզ. մեթոդներով:

**Գ-153. ГЕОФИЗИКА ПРОМЫСЛОВАЯ – ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱ, PETROLEUM GEOPHYSICS,** նավթի և գազի հնքվ-երում հորատանցքերի երկրֆ. ուսումնասիրություն, հորատանցքերի տեխնիկական վիճակի հսկողություն, պայթեցման ու նմուշարկման աշխատանքներ:

**Գ-154. ГЕОФИЗИКА РАЗВЕДОЧНАЯ – ՅԵՏԱՆՈՒԶԱԿԱՆ ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱ, EXPLORATION GEOPHYSICS,** երկրբ. նշանակության երկրաֆիզիկա, ի տարբերություն ընդհանուր երկրաֆիզիկայի, Յ. Ե. ունի իր ուսումնասիրման օբյեկտը (Երկիրը, դրա առանձին մասերը, ընդհուպ մինչև օգտ. հնձ-ների հնքվ-երը) և մեթոդները՝ հետախուզության երկրֆ. մեթոդները: Կախված օբյեկտից՝ տարբերում են հանքային երկրաֆիզիկա, կառուցվածքային երկրաֆիզիկա, ծովային երկրաֆիզիկա, ստորերկրյա երկրաֆիզիկա և այլն:

**Գ-155. ГЕОФИЗИКА РУДНАЯ – ՅԱՆՔԱՅԻՆ ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱ, ORE GEOPHYSICS,** հետախուզական երկրաֆիզիկայի ճյուղ, որը կապված է հանքային շրջանների ուսումնասիրության, մետաղական օգտ. հնձ-ների որոնման ու հետախուզման հետ:

**Գ-156. ГЕОФИЗИКА СТРУКТУРНАЯ – ԿԱՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱ, STRUCTURAL GEOPHYSICS,** հետախուզական երկրաֆիզիկայի ճյուղ, որը կապված է կառուցվածքային երկրաբանության, նավթի, գազի, քարածխի և այլ օգտ. հնձ-ների որոնման ու հետախուզման խնդիրների լուծման հետ:

**Գ-157. ГЕОФИЗИКА ЯДЕРНАЯ – ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱ, NUCLEAR GEOPHYSICS,** երկրֆ. այն մեթոդների համախմբություն, որոնք հիմնված են միջուկային երևույթների և ապարների ու հանքանյութերի ռադիոակտիվ ճառագայթման փոխգործունեության վրա: Այժմ Մ. Ե-յում տարբերում են երեք հիմնական ուղղությունների՝ ճառագայթաչափական, միջուկային և ճառագայթումային մեթոդների մշակում և կիրառում: Գառագայթաչափական մեթոդները հիմնվում են ապարներում ու հանքանյութերում բնական ճառագայթաակտիվ տարրերի ճառագայթաակտիվության ուսումնասիրման վրա և նախատեսված են այդ տարրերի որոնման և հետախուզման համար: Միջուկային մեթոդները հենվում են ապարներում ու հանքանյութերում միջուկային ճառագայթման ազդեցության տակ տեղի ունեցող միջուկային ռեակցիաների օգտագործման վրա և նախատեսված են ոչ ճառագայթային տարրերի քանակական որոշման համար: Գառագայթումային մեթոդները հիմնված են ճառագայթաակտիվ ճառագայթման հետ ապարների ու հանքանյութի փոխգործունեության վրա, դրանցում հանքային բաղադրամասերի քանակական որոշման և ֆիզ. բնութագրերի որոշման համար:

**Գ-158. ГЕОФИЗИЧЕСКАЯ АНОМАЛИЯ – ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆԲՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ), GEOPHYSICAL ANOMALY,** Երկրի ֆիզ. դաշտի մեծության խտորում բնականոնից, որը պայմանավորված է ապարների ֆիզ. հատկությունների տարբերությամբ և Երկրի կազմի ու կառուցվածքի անհամասեռությամբ: Ըստ Ե. ա-ների՝ ուսումնասիրում են Երկրի և երկրակեղևի ներքին կառուցվածքը, հատկապես նրա վերին մասի, կատարում են օգտ. հնձ-ների հնքվ-երի որո-

նուն և հետախուզություն, լուծում են ջրաերկրը. և ճարտարագիտաերկրը. խնդիրներ: Տարբերում են բնական բնականոն դաշտեր (մագնիսական, ձգողական և երկրաջերմային) և արհեստականորեն հարուցված (օր.՝ հաստատուն հոսանքների էլեկտրական դաշտեր): Վերջին դեպքում բնականոն է համարվում համասեռ միջավայրում առաջարկված աղբյուրի դաշտը: Ցանկացած անբնականոն դաշտ բաղկացած է տարբեր կարգի անբնականոնություններից: Կախված դրանց չափերից՝ առանձնացվում են՝ մայրցամաքային, ռեգիոնալ (մակերեսը հազարավոր և տասնյակ հազարավոր կմ<sup>2</sup>) և տեղային (լոկալ) (մինչև հազար կմ<sup>2</sup>) անբնականոնություններ: Հետախուզական երկրաֆիզիկայի համար առավել կարևոր է տեղային անբնականոնությունների ուսումնասիրությունը, որի դեպքում, որպես բնականոն դաշտ, ընդունվում է երկրի բնականոն դաշտի և մայրցամաքային ու ռեգիոնալ անբնականոնությունների գումարը: Անբնականոն դաշտի ուսումնասիրման հիմնական խնդիրը ուսումնասիրվող օբյեկտի հետ կապված երկրաֆիզ. անբնականոնությունների հայտնաբերումն ու առանձնացումն է և անբնականոն դաշտի բաժանումն է տարբեր բնույթի բաղադրիչների: Դրանցից հետո իրագործվում է Ե. ա-յան ֆիզիկաերկր. մեկնաբանություն: Դա ընդդրվում է՝ անբնականոնության երկր. բնույթի բացահայտումը (օր.՝ Ե. ա. կապված մետաղական, նավթի և այլ հնքվ-երի հետ), կառուցվածքային Ե. ա-ները (բնորոշում են երկր. կառուցվածքները, տեկտ. խախտումները, ապարների հպումները), խորքային Ե. ա-ները (որոշվում են երկրի և երկրակեղևի կազմությամբ) և անբնականոնությունների աղբյուրների քանակական նկարագրությունը: Առավել ուսումնասիրված են երկրի բնականոն ձգողական դաշտը, երկրամագնիսական դաշտը և երկրաջերմային դաշտը:

**Դ-159. ГЕОФИЗИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ СКВАЖИН – ՀՈՐԱՏԱՆՑՔԵՐԻ ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, GEOPHYSICAL EXPLORATION IN WELLS**, մեթոդների խումբ, հիմքում ընկած է բնական և արհեստականորեն ստեղծված ֆիզ. դաշտերի (էլեկտրական, ձայնային և այլն), ապարների, շերտային ցնդող նյութերի (ֆլուիդների), հորատման լուծույթում տարբեր զազերի ֆիզ. հատկությունների ուսումնասիրությունը: Օգտագործվում են մերձհորատանցքային և միջհորատանցքային տարածություններում ապարների զանգվածների երկր. կտրվածքն ուսումնասիրելու, հորատանցքի տեխնիկական վիճակը վերահսկելու, նավթի և գազի հնքվ-երը շահագործելու համար: Հորատանցքերի երկր. կտրվածքները ուսումնասիրելու համար տարվող Հ. Ե. ու. կոչվում են կարոտաժ, որն իրագործվում է էլեկտրական, էլեկտրամագնիսական, մագնիսական, ձայնային, ռադիոակտիվ (միջուկաերկր.ֆ.) և այլ մեթոդներով: Կարոտաժի ժամանակ հորատանցք իջեցված սարքի օգնությամբ չափվում են երկր.ֆ. բնութագրերը, որոնք կախված են ապարների մեկ կամ խմբակցային ֆիզ. հատկություններից և հորատանցքի կտրվածքում դրանց տեղաբաշխումից, տե՛ս Электрический каротаж, Каротаж газовый, Каротаж сейсмический, Каротаж магнитный, Каротаж акустический, Каротаж радиоактивный:

**Դ-160. ГЕОФЛЕКСУРА** (գե՝ – երկիր, ցամաք և լատ. flexura – կորություն) – **ԵՐԿՐԱԿՐԿՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԵՐԿՐԱՖԼԵՔՍՈՒՐԱ, GEOFLEXURE**, կրկնակորության (ֆլեքսուրայի) տեսակ, որը ռելիեֆում արտահայտված է երկարածիզ վիթխարի սանդղավանդի տեսքով: Առանձնացվում են մայրցամաքային և ներմայրցամաքային Ե-ներ:

**Դ-161. ГЕОФОРМАЦИЯ – ԵՐԿՐԱՖՈՐՄԱՑԻԱ, ԵՐԿՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄ**, տե՛ս Формации геологические:

**Г-162. ГЕОХИМИЧЕСКАЯ АНОМАЛИЯ – ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ԱՆԲՆԱԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆ (ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆ), GEOCHEMICAL ANOMALY,** երկրակեղևի (կամ երկրի մակերևույթի) տեղամաս, որտեղ երկրք. որոնումներով հայտնաբերված են անբնականոնություններ, որոնք հանքակուտակի նկատմամբ տեղաբաշխված են օրինաչափորեն և ֆոնային պարունակությունների հարաբերությամբ բնորոշվում են քիմ. տարրերի կամ դրանց միացությունների բարձրացված պարունակություններով, օր.՝ գազանման ածխաջրածիններ, Cu, Zn, Ni և այլ մետաղներ:

**Г-163. ГЕОХИМИЧЕСКАЯ КЛАССИФИКАЦИЯ ЭЛЕМЕНТОВ –ՏԱՐՐԵՐԻ ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ, GEOCHEMICAL CLASSIFICATION OF ELEMENTS,** քիմ. տարրերի դասակարգում, որն արտահայտում է դրանց խմբավորումը՝ ըստ երկրք. գործընթացներում տարրերի վարքի հիմնական օրինաչափությունների համապատասխանությամբ: S. Ե. դ-ման հիմքում ընկած է Սենդելենի պարբերական օրենքը: Ընդհանուր ընդունելություն է գտել Վ. Ն. Վերնադսկու (1922, 1927) և Վ. Մ. Գոլդշմիդտի (1924) կողմից առաջարկված S. Ե. դ.: Վ. Ն. Վերնադսկու դասակարգման հիմքում ընկած են 4 սկզբունքներ՝ տարրերի քիմ. ակտիվությունը, մասնակցությունը կենսոլորտի ցիկլային գործընթացներում, ցրված վիճակում գերակշռությունը, բարձր ճառագայթաակտիվությունը: Նրա կողմից առանձնացվել են հետևյալ խմբերը. ազնիվ գազեր (He, Ne, Ar, Kr, Xe), ազնիվ մետաղներ (Ru, Rh, Pd, Os, Ir, Pt, Au, Ag), բոլորաշրջանային (ցիկլային) տարրեր (H, Na, K, Cu, Mg, Ca, Zn, B, Al, C, Si, Ti, Zr, Pb, N, P, V, O, S, Cr, Mo, F, Cl, Mn, Fe, Co, Ni և այլն), ցրված տարրեր (Li, Rb, Cs, Si, Ga, Br և այլն), ուժեղ ճառագայթաակտիվ տարրեր (Po, Rn, Ra, Ai, Th, Pa, U), հազվագյուտ հողերի տարրեր (La, Ce, Pr, Wd, Sm և այլն): Վ. Գոլդշմիդտը բոլոր տարրերը բաժանել է խմբերի՝ ելնելով բնության մեջ նրանց միացությունների կայունությունից: Նա առանձնացրել է լիթոֆիլ տարրեր (O, Li, Wa, K, Rb, Cs, Be, Mg, Cu, Sr և այլն), ֆալկոֆիլ տարրեր (S, Se, Te, As, Sb, Bi, Cu, Ag, Zn, Hg և այլն), սիդերոֆիլ տարրեր (Ni, Co, P, C, Ru, Os, Pt, Au, Mo և այլն): Առաջինները հարստացնում են սիլիկատներին, հաջորդը՝ սուլֆիդներին, իսկ վերջինները հարստացնում են մետաղական փուլը:

**Г-164. ГЕОХИМИЧЕСКАЯ СЪЁМКА – ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹ, GEOCHEMICAL SURVEY,** երկրաքիմ. քարտեզի կազմում՝ տարածքի երկրաքիմ. մոլշահանման հիման վրա: Ե. հ-ի ժամանակ մոլշահանման ցանցի խտությունը կախված է քարտեզի մանրամասնությունից:

**Г-165. ГЕОХИМИЧЕСКИЕ БАРЬЕРЫ – ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ԴԱՏՎԱՐՆԵՐ (ԱՐԳԵԼԵՆԵՐ), GEOCHEMICAL BARRIERS,** քիմ. տարրերի միգրացիոն (տեղազաղթի) ունակությունների կտրուկ նվազեցման զոնա, ուղեկցվում է լուծույթներից այդ տարրերի նստեցմամբ և բարձրացված քանակությունների գոյացմամբ (այդ թվում նաև արդյ. հնքվ-երի): Կախված հանքանստեցման գործոններից՝ առանձնացնում են ֆիզիկաքիմիական, մեխանիկական, կենսաքիմիական պատվարներ:

**Г-166. ГЕОХИМИЧЕСКИЕ КАРТЫ – ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ, GEOCHEMICAL MAPS,** քարտեզներ, որոնք պատկերում են ապարներում քիմ. տարրերի տարածական տեղաբաշխման օրինաչափությունները: Բացահայտում են տվյալ տարածքի սահմաններում տարբեր տեսակի ապարներում (արտաժայթքային, նստվածքային, փոխակերպային) և տարբեր կառուցվածքային զոնաներում տարրերի ցրման և կուտակման մարզերը, տարրերի միգրացիան ապարներում, ջրերում, հողերում, լանդշաֆտում և այլն:

**Г-167. ГЕОХИМИЧЕСКИЕ ПОИСКИ И РАЗВЕДКА МЕСТОРОЖДЕНИЙ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ – ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԵՐԿՐԱՔԻՄ**

**ՄԻԱԿԱՆ ՈՐՈՆՈՒՄ և ՋԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ, GEOCHEMICAL PROSPECTING AND EXPLORATION**, որոնման և հետախուզության մեթոդներ, որոնք հիմնված են քարոլորտում, ջրոլորտում, մթնոլորտում և կենսոլորտում քիմ. տարրերի տեղաբաշխման օրինաչափությունների ուսումնասիրության վրա: Կատարվում են օգտ. հնձ-ների հայտնաբերման նպատակով: Նյութերի բնույթին համապատասխան՝ առանձնացնում են քարաքիմիական, ջրաքիմիական, ատոմաքիմիական և կենսաերկրաքիմիական հանույթներ: Դրանց թվում կարելի է նշել նաև ճառագայթաչափական մեթոդները: Կարևոր նշանակություն ունեն մետաղական հնքվ-երի որոնման ու հետախուզման ապարաքիմիական և ճառագայթաչափական մեթոդները, ինչպես նաև նավթի ու գազի հնքվ-երի ատոմաքիմիական մեթոդները (տե՛ս Газовая съёмка): Օ. հ. ո. և հ-յան մեթոդները արդյունավետ կիրառվում են երկրաբանահետախուզական աշխատանքների բոլոր փուլերում՝ ռեգիոնալ երկրբ. հանույթից մինչև հնքվ-երի մանրամասն շահագործական հետախուզությունը: Աշխատանքների արդյունքում կազմվում են երկրաքիմ. քարտեզներ և գրաֆիկներ: Բացահայտված անկանոնությունները մեկնաբանվում են՝ հաշվի առնելով գոյություն ունեցող երկրբ. և երկրֆ. տվյալները:

**Դ-168. ГЕОХИМИЧЕСКИЕ ПРОВИНЦИИ – ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՊՐՈՎԻՆՑԻԱՆԵՐ (ԳԱՎԱՌՆԵՐ), GEOCHEMICAL PROVINCES**, երկրաքիմիապես համասեռ խոշոր մարզեր, որոնք բնորոշվում են տարրերի որոշակի խմբակցությամբ, չափերով մոտ են մետաղագոյացման, ջրաերկրբ. և այլ պրովինցիաներին: Ե. պ-ի սահմանները հաճախ որոշվում են տեկտ., ապարագրական, մետաղագոյացման և այլ հատկանիշների հիման վրա:

**Դ-169. ГЕОХИМИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ – ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ԳՈՐԾՆՆԹԱՑՆԵՐ, GEOCHEMICAL PROCESSES**, երկրի ոլորտներում քիմ. տարրերի տեղագաղթի (միգրացիայի) գործընթացներ: Ե. գ. առավել ուսումնասիրված են քարոլորտում, ջրոլորտում և մթնոլորտի ստորին շերտերում, տվյալները քիչ են երկրի վերին միջնապատյանի մասին, իսկ ստորին միջնապատյանում և երկրի միջուկում քիմ. տարրերի վարքի մասին կան միայն վարկածներ: Ե. գ. ներառում են քիմ. տարրերի կուտակման և ցրման երևույթները: Առաջինների հետ կապված է օգտ. հնձ-ների հնքվ-երի առաջացումը, երկրորդների հետ՝ հնքվ-երի ցրման երկրորդային տարածասահմանները (արեալները), ինչպես նաև՝ շրջապատող միջավայրի աղտոտման երևույթները: Կախված քիմ. տարրերի տեղագաղթի ձևից՝ տարբերում են մեխ., ֆիզքիմ., կենսաերկրաքիմ. և տեխնածին Ե. գ.: Մեխ. գործընթացներին վերաբերում են գետային ողողամաշումը, մակերեսային ողողումը և դելյուվի առաջացումը, ծովային ալեհարումը, մեխ. նստվածքակուտակումը և այլն: Ֆիզքիմ. Ե. գ. խիստ բազմազան են: Ներծին Ե. գ. ընթանում են բարձր ջերմաստիճանի ու ճնշման պայմաններում, դրանց են վերաբերում մագմայական, ջրաջերմային (հիդրոթերմալ) և փոխակերպային Ե. գ.: Վերնածին (հիպերգեն) Ե. գ. բնորոշ են երկրի մակերևույթի և փոքր խորությունների համար, որտեղ տիրապետում են ցածր ջերմաստիճանը (պայմանականորեն ցածր 40°C) և ճնշումը: Կենսաերկրաքիմ. Ե. գ. բնորոշ են երկրակեղևի վերին մասի՝ կենսոլորտի համար: Դրանց ընթացքում տեղի են ունենում մեխ. և ֆիզքիմ. երևույթներ, բայց որոշիչ նշանակություն ունեն յուրահատուկ Ե. գ., որոնք պայմանավորված են օրգանիզմների գործունեությամբ: Տեխնածին Ե. գ. պայմանավորված են տնտեսական գործունեությամբ: Ներառում են և՛ մեխ., ֆիզքիմ., և՛ կենսաերկրաքիմ. երևույթները, բայց դրանցից շատերը առաջանում են մարդկային գործունեության հետևանքով (ԱԻ-



և այլ մետաղների ստացում, նյութերի սինթեզ, որոնք բնության մեջ հայտնի չեն, ճառագայթաակտիվ իզոտոպների արտադրություն և այլն):

**Г-170. ГЕОХИМИЧЕСКИЕ ЦИКЛЫ – ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՑԻԿԼԵՐ (ԲՈՒՈՐԱՇՐՁԱՆՆԵՐ), GEOCHEMICAL CYCLES,** հաջորդաբար տեղի ունցող երևույթների ու գործընթացների համախմբություն, որը հանգեցնում է երկրակեղևում քիմ. տարրերի ու դրանց միացությունների շրջապտույտի: Երկրակեղևում քիմ. տարրերի մշտական շրջապտույտը պայմանավորված է բնական հավասարակշռությունների շարժունակ բնույթով, երկրակեղևի նյութի անընդմեջ կերպափոխությամբ՝ հողմահարման, նստվածքազոյացման, փոխակերպության, մագմայականության գործընթացներում: Այդ շրջապտույտը ուղեկցվում է տարրերի տարանջատմամբ, որն ավելի բարձր աստիճանով արտահայտվում է կենսոլորտում՝ քարոլորտի, ջրոլորտի և մթնոլորտի նյութերի փոխգործունեության ընթացքում, որին ակտիվ մասնակցում է կենդանի նյութը: Յուրաքանչյուր քիմ. տարր ունի իր Ե. ց.: Առանձնացնում են տարբեր մասշտաբների Ե.ց., օր.՝ ցիկլեր, կապված մթնոլորտի, հողի, գետնաջրերի և կենդանի նյութի տարրերի կենսաերկրաքիմ. շրջապտույտի հետ, կամ ապարների կերպափոխության ցիկլը՝ հողմահարում-ողողատարում-նստվածքազոյացում-հողմահարում գործընթացներում և այլն:

**Г-171. ГЕОХИМИЧЕСКИЙ ЛАНДШАФТ – ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ԼԱՆԴՇԱՓՏ (ԲՆԱՊԱՍԿԵՐ), GEOCHEMICAL LANDSCAPE,** տարածքի՝ լանդշաֆտի մի քանի կառուցվածքային տարրեր միավորող տեղամաս, որում տեղի է ունենում մթնոլորտի, ջրոլորտի, քարոլորտի և կենդանի նյութի քիմ. տարրերի որակապես յուրատեսակ տեղագաղթ (միգրացիա): Այդ տեղամասի համար բնորոշ է ատոմների հատուկ շրջապտույտը, քիմ. տարրերի յուրահատուկ ջրային, օդային, կենսածին և տեխնածին տեղագաղթը:

**Г-172. ГЕОХИМИЧЕСКИЙ ПРОФИЛЬ – ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՏՐԱՄԱՏ (ԿՈՂԱՊԱՍԿԵՐ, ՊՐՈՖԻԼ), GEOCHEMICAL PROFILE,** երկրաքիմ. որոնումների ընթացքում երթուղիների գծով որոշակի քիմ. տարրերի պարունակության փոփոխության գրաֆիկական պատկերում: Դա լրացնում է ծշգրտում է երկրաքիմ. քարտեզը և օգնում է սահմանագծելու ցրման առաջնային ու երկրորդային տարածասահմանները:

**Г-173. ГЕОХИМИЧЕСКИЕ ТИПЫ ВОД – ՋՐԵՐԻ ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՏԻՊԵՐ, GEOCHEMICAL TYPES OF WATERS,** բնական ջրերի տիպեր, որոնք, կախված ֆիզաշխ. և երկրբ. իրադրությունից, բնութագրվում են քիմ. բաղադրության որոշակի առանձնահատկություններով:

**Г-174. ГЕОХИМИЯ** (հուն.  $g\acute{e}$  – Երկիր և քիմիա) – **ԵՐԿՐԱՔԻՄԻԱ, GEOCHEMISTRY,** գիտություն, որն ուսումնասիրում է Երկրի քիմ. կազմը, նրանում քիմ. տարրերի ու դրանց կայուն իզոտոպների տարածվածությունը, տարբեր երկրոլորտներում քիմ. տարրերի տեղաբաշխման օրինաչափությունները, բնական գործընթացներում տարրերի վարքի, կապակցման, տեղագաղթի (միգրացիա), կուտակման, ցրման օրենքները: Ե. ներառում է վերլուծական Ե., ֆիզիկական Ե., քարոլորտի Ե., քարազոյացման (լիթոգենեզի) Ե., ջրոլորտի (ջրաերկրաքիմիա) Ե., ճառագայթաերկրաժամանակագրությունը (ռադիոերկրաժամանակագրություն), լանդշաֆտի Ե., օրգանական Ե. և այլն: «Ե.» տերմինի հեղինակը գերմ. քիմիկոս Կ. Ֆ. Շյոնբեյնն է (1838), տե՛ս Геохимическая классификация элементов, Геохимические провинции, Геохимические процессы:

**Г-175. ГЕОХИМИЯ ВЫВЕТРИВАНИЯ – ՀՈՂՄԱՀԱՐՄԱՆ ԵՐԿՐԱՔԻՄԻԱ, GEOCHEMISTRY OF WEATHERING,** լայն իմաստով նույնն է՝ Геохимия гипергипергене-

ա, ավելի նեղ իմաստով՝ քիմ. տարրերի տեղագաղթը (միգրացիան) և տեղաբաշխումը ապարների քայքայման մարզերում՝ հողմահարման ազդակների ազդեցության տակ:

**Г-176. ГЕОХИМИЯ ГАЛОГЕНЕЗА – ԱՂԱԳՈՅԱՑՄԱՆ ԵՐԿՐԱՔԻՄԻԱ, GEOCHEMISTRY OF HALOGENESIS**, քիմ. տարրերի տեղագաղթի (միգրացիայի) գործընթացների համախմբություն, որը հանգեցնում է աղային հնքվ-երի ձևավորմանը և դրանց կերպափոխմանը: Աղագոյացման գործընթացների համար կարևոր նշանակություն ունեն ավազանի սնման աղբյուրները և գոլորշիացման ընթացքում բյուրեղացման հաջորդականության ֆիզքիմ. օրինաչափությունները: Աղագոյացման գործընթացում որոշ տարրեր նստում են կարբոնատների, սուլֆատների, քլորիդների և այլնի տեսքով, մյուսները կուտակվում են խտացված լուծույթներում՝ աղաջրերում:

**Г-177. ГЕОХИМИЯ ГИДРОТЕРМАЛЬНЫХ ПРОЦЕССОВ – ՋՐԱՋԵՐՄԱՅԻՆ (ՅԻՊՐՈԹԵՐՄԱԼ) ԳՈՐԾՆԵԹԱՑՆԵՐԻ ԵՐԿՐԱՔԻՄԻԱ, GEOCHEMISTRY OF HYDROTHERMAL PROCESSES**, երկրաքիմիայի բաժին, որն ուսումնասիրում է գերտաքացված ջրային լուծույթների հատկությունները, կազմը և գործունեությունը: Երկրակեղևում սառը ստր. ջրերի գոտուց ներքև ամենուրեք տարածված են տաք և գերտաք ջրեր (40°C-ից մինչև 500°C): Դրանց գործունեության հետ կապված է բազմազան մետաղական ջրաջերմային հնքվ-երի ձևավորումը (Cu, Pb, Zn, Ag, Hg և այլն): Այդ գործընթացներն առավել բնորոշ են երկրակեղևի վերին մասի համար (մինչև 8 կմ խորությունները), հրաբխային շրջաններում դրանք արտահայտվում են նաև երկրի մակերևույթում և օվկիանոսի հատակում: Ջ. գ. ե-յի ուսումնասիրման հիմնական մեթոդներն են՝ միներալային խմբակցությունների, զազահեղուկ ներամփոփվածքների ուսումնասիրությունը, թերմադինամիկական վերլուծությունը, ֆիզքիմ. փորձարկումը:

**Г-178. ГЕОХИМИЯ ГИПЕРГЕНЕЗА – ՎԵՐՆԱԾՆՈՒԹՅԱՆ (ՅԻՊԵՐԳԵՆԵՏԻ) ԵՐԿՐԱՔԻՄԻԱ, GEOCHEMISTRY OF HYPERGENESIS**, երկրի մակերևութային մասերում մթնոլորտին, ջրոլորտին և կենսոլորտին բնորոշ գործոնների ազդեցության տակ կատարվող գործընթացների համախմբություն, որը բերում է որոշ միներալների ու ապարների քայքայմանը և մյուսների առաջացմանը: Ֆիզ. քայքայման գործընթացները, որոնք ուղեկցվում են օքսիդացման, ջրակցման գործընթացներում՝ թթուների ներազդեցությամբ, հանգեցնում են քիմ. տարրերի բաժանմանը և բյուրեղային նյութի կերպափոխությանը: Վերնածնության գործընթացների հետևանքով առաջանում են կաոլինային, մոնտորիլոնիտային և այլ կավեր, երկաթի և մանգանի հանքանյութեր, աղերի նստվածքներ և այլն:

**Г-179. ГЕОХИМИЯ ДИАГЕНЕЗА – ԴԻԱԳԵՆԵՏԻ ԵՐԿՐԱՔԻՄԻԱ, GEOCHEMISTRY OF DIAGENESIS**, քիմ. տարրերի տեղագաղթի (այդ թվում ցրման ու կուտակման) գործընթացներ, որոնք ընթանում են ձևավորվող նստվածքային ապարներում: Վաղ և ուշ դիագենեզի ընթացաշրջաններում այդ գործընթացներն էապես տարբեր են: Վաղ դիագենեզի ընթացաշրջանում երկրք. գործընթացները հիմնականում ունեն վերնածնային բնույթ (գերակշռում են օքսիդացումը, լուծումը և վերաբյուրեղացումը, տարբեր փոփոխություններ՝ կապված օրգանիզմների կենսագործունեության հետ): Ուշ դիագենեզի ընթացաշրջանում, որը հանդիսանում է նստվածքային նյութի փոխակերպման առաջին փուլը, քիմ. տարրերի տեղագաղթի կարևորագույն պայման հանդիսանում է ազատ թթվածնի անհայտացումը, վերականգնիչ իրադրության զարգացումը: Այդ պայմաններում որոշ ուժեղ օքսիդացված տարրեր վերականգնվում են՝ առաջացնելով մի շարք նոր միացություններ:

**Գ-180. ГЕОХИМИЯ ИЗОТОПОВ – ԻՉՈՏՈՊՆԵՐԻ ԵՐԿՐԱՔԻՄԻԱ, GEOCHEMISTRY OF ISOTOPES**, երկրաքիմիայի բաժին, որն ուսումնասիրում է բնական նյութերում տարրերի իզոտոպների տեղաբաշխման օրինաչափությունները և դրանք օգտագործում է Երկրի ձևավորման գործընթացների մասին տվյալներ ստանալու համար: Բնական նյութերում տեղի է ունենում տարրերի բաժանումը համապատասխան իզոտոպների: Ֆիզքիմ. մեթոդներով ուսումնասիրելով տարրերի իզոտոպների տարաբաժանման գործընթացները (ջերմաստիճանները, ճնշումը, արագությունների, հավասարակշռության հաստատունները և այլն) և ճշգրտորեն որոշելով բնական նյութերում իզոտոպների բաժանման աստիճանը, կարելի է տեղեկություններ ստանալ այդ նյութերի առաջացման պայմանների մասին, երկրակեղևում ընթացող այն գործընթացների մասին, որոնք հանգեցրել են իզոտոպների դիտարկվող տեղաբաշխմանը: Իզոտոպային մեթոդներով կարելի է որոշել ապարների և միներալների առաջացման ջերմաստիճանը, հանքաերևակումների, նյութի աղբյուրները, գտնել միներալացման որոնողական հատկանիշները և այլն: Այդ մեթոդները կարող են տեղեկություններ տալ երկրակեղևում և մոլորակի խորքում ընթացող այն գործընթացների մասին, որոնք այլ եղանակներով չեն կարող ստացվել:

**Գ-181. ГЕОХИМИЯ НЕФТИ – ՆԱՎԹԻ (ՔԱՐՅՈՒՂԻ) ԵՐԿՐԱՔԻՄԻԱ, OIL GEOCHEMISTRY**, նավթային երկրք. բաժին, որն ընդգրկում է նավթի և նրա հետ կապված բնական առաջացումների կազմի այն հատկանիշների քիմ. ուսումնասիրությունները, որոնք հետաքրքրություն են ներկայացնում նավթային երկրաբանության խնդիրների լուծման տեսակետից:

**Գ-182. ГЕОХИМИЯ ОКЕАНА – ՕՎԿԻԱՆՈՍԻ ԵՐԿՐԱՔԻՄԻԱ, OCEAN GEOCHEMISTRY**, երկրաքիմիայի բաժին, որն ուսումնասիրում է օվկիանոսի քիմ. զարգացումը, նրա աղային զանգվածի ձևավորումը, օվկիանոսային ջրում և նստվածքներում տարրերի կուտակման ու ցրման ուղիները: Օվկիանոսի ջրային զանգվածը և նրա անիոնային կազմը հիմնականում, հավանաբար, առաջացել են Երկրի միջնապատյանի ապագագացման հետևանքով, իսկ կատիոնները՝ ցամաքում ապարների հողմահարման հաշվին:

**Գ-183. ГЕОХИМИЯ ОСАДОЧНЫХ ПОРОД – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ԵՐԿՐԱՔԻՄԻԱ, SEDIMENTARY ROCK'S GEOCHEMISTRY**, երկրք. գիտությունների բնագավառ, որն ուսումնասիրում է տարբեր ծագումնաբանական տիպերի նստվածքային ապարների գոյացման ընթացքում տեղի ունեցող քիմ. գործընթացները և առաջին հերթին՝ խոնավ (հումիդային), չորային (արիդային) և հրաբխանստվածքային տիպերի: Մասնավորապես հետազոտվում է հողմահարման կեղևից տարրերի դուրսբերման հաջորդականությունը, ըստ որում, որոշվում է տարբեր տարրերի երկրաքիմ. շարժունակության աստիճանը, և բացահայտվում են դրանց շարժունակության շարքերը՝ տարբեր ապարների հողմահարման կեղևում և տարբեր ֆիզաշխ. պայմաններում: Ն. ա. ե. ուսումնասիրում է տարրերի տեղագաղթի (միգրացիայի) ձևերը գետային ջրիոսքերում, այդ ձևերի ազդեցությունը ջրավազանների նստվածքներում տարրերի տեղաբաշխման վրա, պարզաբանում է նստվածքագոյացման և դիագենեզի ընթացքում տեղածին (աուտիգեն) միներալների ձևավորման գործընթացները, այդ միներալների մեջ միկրոտարրեր ներառելու և միներալների միջև դրանց տեղաբաշխման օրինաչափությունները և այլն:

**Գ-184. ГЕОХИМИЯ ТЕХНОГЕНЕЗА – ՏԵԽՆԱԾԻՆ ԵՐԿՐԱՔԻՄԻԱ, GEOCHEMISTRY OF TECHNOGENESIS**, մարդու տնտեսական գործունեությամբ պայմանավորված քիմ. և տեխ. գործընթացների համակցություն, որը հանգեցնում է երկրագնդի

վրա քիմ. տարրերի վերաբաշխմանը: Տ. Ե-յի դերը արագ մեծանում է: Աստիճանաբար սպառվում են օգտ. հնժ-ների պաշարները, հանքանյութը փոխարկվում է միանգամայն այլ վիճակի, վառելանյութի էներգիան ծախսվում է հանքանյութերը մետաղների վերածելու վրա: Օրակարգի հարց է դառնում ջերմաջրերի և երկրակեղևի գերտաքացած զոնաների ջերմության մասշտաբների մեծացումը: Արագացող թափով սկսվել է միջուկային էներգիայի աղբյուրների օգտագործումը: Տեխնածին այդ բոլոր գործոնները վերափոխում են աշխարհը:

**Г-185. ГЕОХИМИЯ УГЛЯ – ԱՃԽԻ ԵՐԿՐԱՔԻՄԻԱ, COAL GEOCHEMISTRY**, ածխի մասին գիտության մաս, որն ընդգրկում է բնական ածուխների քիմ. կազմի, հատկությունների և երկրբ. գործընթացների ազդեցության տակ նրանց առաջացման ու վերափոխման պրոբլեմները:

**Г-186. ГЕОХРОНОЛОГИЧЕСКАЯ ШКАЛА – ԵՐԿՐԱԺԱՍԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՆԴՂԱԿ, GEOLOGICAL DATING, GEOCHRONOLOGICAL SCALE**, ընդհանուր շերտագրական ստորաբաժանումների երկրաժամանակագրական համարժեքների հաջորդական շարք և դրանց տաքսոնոմիկական ենթակայություն: Ե. ս. արտահայտվում է ժամանակի միավորներով (սովորաբար միլիոնավոր տարիներով):

Էոն	Դարաշրջան	Ժամանակաշրջան	Երկրժգ. սահմաններ մլն.տ.	տևողությունը մլն. տ
Ֆաներոզոյան	Կայնոզոյան KZ	Չորրորդական Q	1.8	
		Նեոգեն N	23	22
		Պալեոգեն P	65	42
	Մեզոզոյան MZ	Կավիճ K	145	80
		Յուրա J	200	55
		Տրիաս T	251	49
	Պալեոզոյան PZ	Պերմ P	299	48
		Քարածխային C	359	60
		Դևոն D	418	59
		Սիլուր S	443	29.7
		Օրդովիկ O	490	46
			Քենեբրի Ե	545
Պրոտերոզոյան PR			2600	3000
Արխեյան AR			>3500	

**Г-187. ГЕОХРОНОЛОГИЧЕСКОЕ ПОДРАЗДЕЛЕНИЕ – ԵՐԿՐԱԺԱՍԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ, GEOCHRONOLOGICAL SUBDIVISION**, երկրբ. հարաբերական ժամանակի ստորաբաժանում, որը նշում է Երկրի և նրա օրգանական աշխարհի զարգացման ժամանակային փուլը: Ե. ս-ները միավորվում են երկրաժամանակագրական սանդղակում, որն արտահայտում է նրանց ծավալը և ենթակայությունը: Յուրաքանչյուր Ե. ս-մանը համապատասխանում է նրան համարժեք շերտագրական ստորաբաժանում:

**Գ-188. ГЕОХРОНОЛОГИЯ** (հուն. *gê* – Երկիր, *crónos* – ժամանակ և *lógos* – ուսմունք) – **ԵՐԿՐԱԺԱՄԱՆԱԿԱԿՐՈՒԹՅՈՒՆ, ԳԵՈՒՆՐՈՆՈՒՄԱԿԱ, GEOCHRONOLOGY**, գիտություն է երկրակեղևը կազմող ապարների հասակի և ձևավորման հաջորդականության մասին: Տարբերում են հարաբերական Ե. և բացարձակ (միջուկային, իզոտոպային) Ե.:

**Գ-189. ГЕОХРОНОЛОГИЯ АБСОЛЮТНАЯ (ЯДЕРНАЯ, ИЗОТОПНАЯ) – ԲԱՅԱՐՉԱԿ (ՄԻՋՈՒԿԱՅԻՆ, ԻՉՈՏՈՊԱՅԻՆ) ԵՐԿՐԱԺԱՄԱՆԱԿԱԿՐՈՒԹՅՈՒՆ, ABSOLUTE GEOCHRONOLOGY**, Բ. Ե. որոշում է ապարների (զլխ. մագմայական ու փոխակերպային), հանքանյութերի և միներալների հասակը աստղագիտական ժամանակի միավորներով (սովորաբար մլն. տարիներով): Որպես ժամանակաչափ՝ օգտագործվում է քիմ. տարրերի կայուն արագությամբ ընթացող և արտաքին պայմանների ազդեցությունը չկրող ճառագայթաակտիվ տրոհման գործընթացը: Բ. Ե. XX դարի սկզբին առաջարկվել է Պ. Կյուրիի և Է. Ռեզերֆորդի կողմից: Հասակի որոշումը կատարվում է ապարներում ու միներալներում ճառագայթաակտիվ տրոհման արգասիքների հիման վրա: Կախված տրոհման վերջնական արդյունքներից՝ առանձնացվում են Բ. Ե-յան կապարային, հելիումային, արգոնային, կալցիումային, ստրոնցիումային, ճառագայթաածխածնային և այլ մեթոդներ, տե՛ս *Радиологический возраст*:

**Գ-190. ГЕОХРОНОЛОГИЯ ОТНОСИТЕЛЬНАЯ – ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԵՐԿՐԱԺԱՄԱՆԱԿԱԿՐՈՒԹՅՈՒՆ, RELATIVE GEOCHRONOLOGY**, երկրաժամանակագրության բաժին, որն ընդգրկում է ապարների հարաբերական հասակի պրոբլեմները: Հ. Ե. հենվում է շերտագրության վրա, լայնորեն կիրառվում են շերտավորման հաջորդականության սկզբունքը (Ստենոնի օրենքը՝ չխախտված տեղադրման դեպքում վերին շերտը ավելի երիտասարդ է) և հնէաբանական մեթոդը: Հ. Ե. չի տալիս երկրաժամանակագրական ստորաբաժանումների տևողության գնահատումը:

**Գ-191. ГЕОХРОНОЛОГИЯ ЯДЕРНАЯ** – տե՛ս *Геохронология абсолютная*:

**Գ-192. ГЕОХРОНОМЕТРИЯ** (հուն. *gê* – Երկիր, *crónos* – ժամանակ և *metréō* – չափում են) – **ԵՐԿՐԱԺԱՄԱՆԱԿԱՉՈՒԹՅՈՒՆ, GEOCHRONOMETRY**, “”**ГЕОХРОНОЛОГИЯ АБСОЛЮТНАЯ**” տերմինի հոմ.: Հիմնական նպատակը, երկրբ. ժամանակի (ապարների, միներալների հասակի, տարբեր երկրբ. գործընթացների ընթացման ժամանակի) որոշումն է:

**Գ-193. ГЕРЦИНИДЫ – ՀԵՐՑԻՆԻԴՆԵՐ, HERCYNIDES**, հերցինյան ծալքավորության մարզեր, տե՛ս նաև *Герцинская складчатость*:

**Գ-194. ГЕРЦИНСКАЯ СКЛАДЧАТОСТЬ, ВАРИССКАЯ СКЛАДЧАТОСТЬ – ՀԵՐՑԻՆՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐԻՍՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, HERCYNIAN FOLDING, VARISCAN FOLDING**, ուժգին ծալքավորության, լեռնագոյացման, գրանիտակերպ մագմայականության գործընթացների համախմբություն, որն արտահայտվել է պալեոզոյան շարժուն մարզերում և հանգեցրել է ծալքավոր լեռնային համակարգերի՝ հերցինիդների ձևավորմանը՝ պալեոզոյան դարաշրջանի վերջում (դևոնի վերջ-տրիասի սկիզբ): «Հ. ծ.» անվանումը տրվել է ֆրանս. երկրաբան Մ. Բերտրանի կողմից Միջին Եվրոպայի լեռնային խմբին, որը հին հռոմեացիների մոտ հայտնի է եղել Հերցինյան անտառ (*Hercynia Silva, Saltus Hercynius*) անունով: «Վարիսյան ծալքավորություն» տերմինը տիրապետող է գերմ. գրականությունում, որտեղ վերաբերում է հս-արմ. ուղղության տեղախախտումներին (դիսլուկացիաներին): Հ. ծ-յան հետևանքով գոյացել են Արմ., Կենտ. և Հր. Եվրոպայի, Հս-

Արմ. Աֆրիկայի, Յս. Կովկասի, Ուրալի, Տյան-Շանի, Ալթայի, Ապալաչների, Անդերի լեռնային կառույցները: Յետագայում Յ. Թ-յան զգալի տեղամասեր զարգացել են որպես երիտասարդ պլատֆորմներ:

- Г-195. ГЕТЕРО ...** (հուն. héteros – այլ, ուրիշ) – **ՏԱՐԱ... ԱՅԼԱ..., ՅԵՏԵՐՈ..., HET-ERO...**, բարդ բառերում նշանակում է տարբեր (կազմ, ծագում և այլն):
- Г-196. ГЕТЕРОМОРФИЗМ** (հուն. héteros – այլ, ուրիշ և morphē – ձև) – **ՏԱՐԱԶԵՎՈՒ-ԹՅՈՒՆ, HETEROMORPHISM**, ապարների քիմ. կազմի ընդհանրության դեպքում միներալային կազմի տարբերություն, օր.՝ գաբրո-բազալտ: Տարածության պատճառ ապարների ձևավորման պայմանների տարբերությունն է:
- Г-197. ГЕТИТ** (անվանումը տրված է ի պատիվ գերմ. գրող և բնագետ Ի. Վ. Գյոթեի, I. W. Goethe, 1749-1832) – **ԳՅՈՒԹԻՏ, GEOTHITE**, միներալ, երկաթի ջրօքսիդ  $a=FeOOH$ : Բյուրեղանում է շեղանկյունային համակարգում: Առաջացնում է գորշ, գորշ-սև, օխրայի դեղին հողանման և խիտ զանգվածներ, մակահոսուկ ագրեգատներ, օղիքներ, կոնկրեցիաներ: Կարծրությունը՝ 5-5,5: Ծագումը՝ նստվածքային ու վերնածին (հիպերգեն): Երկաթի հանքանյութ է (գորշ երկաթաքարի հնքվե-րում լինոնիտի գլխ. բաղադրամասն է):
- Г-198. ГЖЕЛЬСКИЙ ЯРУС** (մերձնոսկոպյան Գժել գետի անունից) – **ԳժԵԼՅԱՆ ՅԱՐԿ, GJELIAN**, քարածխային համակարգի վերին բաժնի ստորին հարկ նախ-կին ԽՍՅՍ-ում:
- Г-199. ГИАЛИТ** (հուն. hýalos – ապակի) – **ՅԻԱԼԻՏ, HYALITE**, 1) հրաբխային ապար, 2) օպալի ամենավճիտ ջրաթափանց տեսակ:
- Г-200. ГИАЛО...** (հուն. hýalos – ապակի) – **ՅԻԱԼՈ..., HYALO...**, նախածանց, արտա-հայտում է ապարի ապակեման վիճակը:
- Г-201. ГИАЛОБАЗАЛТ** – **ՅԻԱԼՈՐԱԶԱԼՏ, HYALOBASALT**, բազալտ՝ ընդհանուր զանգվածում ապակու մեծ քանակով:
- Г-202. ГИАЛОКЛАСТЫ** – **ԱՊԱԿԵԲԵԿՈՐՆԵՐ (ՅԻԱԼՈՎԼԱՍՏՆԵՐ), HYALOCLAS-TICS, HYALOCLASTIC ROCKS**, ապակեման ապարների բեկորներ:
- Г-203. ГИГРОСКОПИЧНОСТЬ ГОРНЫХ ПОРОД** (հուն. hydgrós – խոնավ և skoréō – դիտում են) – **ԱՊԱՐՆԵՐԻ ԽՈՆԱՎԱԾՕՈՒԹՅՈՒՆ (ՅԻԳՐՈՍԿՈՊԻԿՈՒԹՅՈՒՆ), HYGROSCOPICITY OF ROCKS, WATER-ABSORBING CAPASITY OF ROCKS**, ապարների՝ օդից ջրային գոլորշիներ կլանելու (ադսորբելու) ունակություն: Ա. խ. կախված է ապարների հատիկաչափական ու միներալային կազմից, օդի խոնավությունից, ջերմաստիճանից և բնորոշում է տվյալ պայմաններում ապարի հետ ամուր կապված ջրի քանակը:
- Г-204. ГИДРАТОМОРФИЗМ** (հուն. hýdōr – ջուր և morphē – ձև) – **ՋՐԱԿԵՐՊԱՓՈ-ԽՈՒՄ (ՅԻԴՐԱՏՈՄՈՐՖԻԶՄ), HYDRATOMORPHISM**, ապարների ու միներալների փոխակերպման գործընթաց, որն ընթանում է ջրի մասնակցությամբ:
- Г-205. ГИДРАТАЦИЯ** (հուն. hýdōr – ջուր) – **ՋՐԱԿՑՈՒՄ (ՅԻԴՐԱՏԱՑՈՒՄ) HYDRATA-TION**, ջրում լուծվող նյութի մասնիկների՝ ջրի մոլեկուլների հետ կապակցվելու գոր-ծընթաց: Ջ. հանդիսանում է սոլվատացիայի (որևէ լուծիչի՝ նյութերի հետ միանալու գործընթացի) մասնակի դեպք: Լուծույթներում էլեկտրոլիտների Ջ. հանդիսանում է նրանց դիսոցման գլխավոր պատճառ, պայմանավորում է լուծույթների մեջ իոնների կայունությունը և արգելակում է մոլեկուլների առաջացումը: Ջ-ման ռեակցիաները մեծամասամբ հետադարձ են, հետադարձ ռեակցիան կոչվում է ջրազրկում:
- Г-206. ГИДРО...** (հուն. hýdōr – ջուր) – **ՋՐԱ..., ՅԻԴՐՈ..., HYDRO...**, բարդ բառերի բաղադրիչ՝ ջրին վերաբերող բառաբարդումների մեջ:

- Г-207. ГИДРОГЕОДИНАМИКА – ՋՐԱԵՐԿՐԱԴԻՆԱՄԻԿԱ, HYDROGEODYNAMICS**, ջրաերկրբ. բաժին, որն ուսումնասիրում է ստր. ջրերի ձևավորման ջրադինամիկ ռեժիմի ու հաշվեկշռի քանակական օրինաչափությունները: Հոմ.՝ ստորերկրյա ջրերի դինամիկա:
- Г-208. ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ КАРТА – ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵՋ, HYDROGEOLOGICAL MAP**, ջրաերկրբ. հանույթի արդյունքների գծապատկերման հիմնական ձև, որի վրա արտացոլվում է շերտագրության ընդունված համակարգով առանձնացված ջրատար հորիզոնների, համալիրների, ջրամերժ ապարախմբերի տարածումը, հաջորդականությունը, տեղադրման պայմաններն ու խորությունը, ինչպես նաև ստր. ջրերի որակական ու քանակական բնութագրումները: Ջ. ք-ների կազմման միասնական մեթոդներ չկան: Ներկայումս կազմվում են ակնարկային (1:500000-1:1500000), միջին մասշտաբի (1:100000-1:200000), մանրամասն (1:25000-1:50000) և հատուկ մասնագիտացված քարտեզներ (1:10000 և ավելի խոշոր):
- Г-209. ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ ОБЛАСТЬ – ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՍԱՐՋ, HYDROGEOLOGICAL AREA**, ընդարձակ տարածք, որը բնութագրվում է ֆիզաշխ., երկրբ., քարաբանական, կառուցվածքային և ջրաերկրբ. առանձնահատկությունների նմանությամբ: Ջ. մ-երը խոշոր ռեգիոնների շրջանացման ժամանակ առանձնացվում են որպես առաջին կարգի միավոր:
- Г-210. ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ ПРОВИНЦИЯ – ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՆԱՅԱՆԳ (ՊՐՈՎԻՆՑԻԱ), HYDROGEOLOGICAL PROVINCE**, ըստ Մ. Վասիլևսկու՝ երկրբ. կառուցվածք, որն իրենից ներկայացնում է իջվածք, գոգավորություն, ճկվածք կամ գրաբեն: Ըստ Ի. Մակովի՝ արտեզյան ավազան, ըստ Օ. Լանգեի՝ գրունտային ջրերի մակրոզոնա:
- Г-211. ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ СКВАЖИНА – ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀՈՐՄԱՆՑՔ, GROUND-WATER WELL, HYDROGEOLOGICAL WELL**, օգտագործվում է ապարների ծծանցման հատկությունները որոշելու, ստր. ջրերի ռեժիմի դիտարկումներ, երկրֆ. ուսումնասիրություններ կատարելու համար:
- Г-212. ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ СЪЕМКА – ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆՈՒՅՑ, HYDROGEOLOGICAL SURVEY**, դաշտային ուսումնասիրությունների համալիր, որը կատարվում է ստր. ջրերի հետազոտման ու քարտեզագրման համար: Ջ. հ-ի ընթացքում որոշվում է ապարների ջրատարողությունը, դրանց ծծանցման հատկանիշները, ջրատար համալիրների տարածումը, հասակը, հաստությունը, տեղադրման, սնման և բեռնաթափման պայմանները, քիմ կազմը, օգտագործման պայմանները, ստր. ջրերի պահպանման վիճակը, դերը հնքվ-երի շահագործման ընթացքում ու տարբեր կառույցների շինարարությունում և այլն: Ջ. հ. ընդգրկում է ջրաերկրբ., երկրբ., երկրֆ., և ջրաքիմ. ուսումնասիրությունները: Օգտագործում են նաև օդալուսանկարահանույթի, հանքարանների երկրբ. ծառայության, քարտեզագրական ու որոնման հորատանցքերի և լեռնային փորվածքների տվյալները: Ըստ մանրամասնության՝ տարբերում են Ջ. հ-ի հետևյալ տեսակները՝ փոքրամասշտաբ (1:100000-1:500000), միջին մասշտաբի (1:200000-1:100000), խոշոր մասշտաբի (1:50000-1:25000) և հատուկ (մասնագիտացված) (1:10000 և ավելի խոշոր):
- Г-213. ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ ФОРМАЦИЯ – ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՐՄԱՑԻԱ (ՎԱԶՄԱՎՈՐՈՒՄ), HYDROGEOLOGICAL FORMATION**, քարաբանական և ծագումնաբանական տեսակետից համասեռ, միևնույն կամ տարբեր հասակի ապարների համակարգ, որը բնութագրվում է ստր. ջրերի կուտակման, շարժման, տեղաբաշխման ու քիմ. բաղադրության ձևավորման որոշակի պայմաններով:

- Г-214. ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЕ ИЗЫСКАНИЯ – ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՆ-ՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, HYDROGEOLOGICAL RESEARCHES**, ջրաերկր. մասնագիտացված հետազոտությունների համախումբ, որ կատարվում է կառույցների նախագծման, լեռնային փորվածքները ջրից պաշտպանելու և ջրամատակարարման նպատակով:
- Г-215. ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ – ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, HYDROGEOLOGICAL INVESTIGATIONS**, գիտամեթոդական և արտադրական բնույթի ուսումնասիրություններ, որոնք կատարվում են ստր. ջրերի ձևավորման, տարածման, շարժման ու բեռնաթափման պայմանների, քիմ. բաղադրության ռեժիմի և պաշարների պարզաբանման ու գնահատման նպատակով:
- Г-216. ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЕ ПОИСКИ И РАЗВЕДКА – ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ և ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ, HYDROGEOLOGICAL PROSPECTING AND EXPLORATION**, ջրաերկր. կիրառական բնագավառ, որն զբաղվում է ստր. ջրերի հայտնաբերման, քանակական ու որակական գնահատման, ինչպես նաև ճարտարագիտական կառույցների, լեռնային գործի, ջրատնտեսական բազմազան միջոցառումների համար անհրաժեշտ ջրաերկր. հարցերի ուսումնասիրությամբ: Ջ. ո. և հ. իրագործվում է ջրաերկր. հանույթի միջոցով, որի արդյունքում կազմվում է ջրաերկր. քարտեզ: Հաջորդ` հետախուզական էտապում առանձնացվում են երեք փուլեր` նախնական, մանրամասն և շահագործական: Ջ. ո. և հյան հիմնական խնդիրը հանդիսանում է նախագծման համար անհրաժեշտ հաշվարկային տվյալների ստացումը:
- Г-217. ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЕ УСЛОВИЯ – ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ, HYDROGEOLOGICAL CONDITIONS**, որևէ շրջանի ֆիզաշխ., երկրծ. և երկր. գործոնների համակցություն, որը պայմանավորում է ապարների ջրատարությունը, ստր. ջրերի տեղադրման, շարժման և բեռնաթափման օրինաչափությունները, քանակը, որակը և ռեժիմը:
- Г-218. ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЙ БАСЕЙН, БАСЕЙН ПОДЗЕМНЫХ ВОД – ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԱՎԱԶԱՆ, ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԱՎԱԶԱՆ, HYDROGEOLOGICAL BASIN**, ստր. ջրոլորտի տարր, որն առանձնացվում է տարբեր տեսակի ու կարգի երկրաբանակառուցվածքային սահմանների, ստր. ջրերի ջրադինամիկական սահմանների (ջրբաժանների) հիման վրա` հաշվի առնելով դրանց ձևավորման ու պաշարների տարածման միասնությունը: Տարբերում են արտեզյան ավազանների, գրունտային ջրերի, ճեղքային ջրերի և ստր. հոսքի ավազաններ:
- Г-219. ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЙ ПРОГНОЗ – ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ, HYDROGEOLOGICAL FORECAST**, բնական և արհեստական գործոնների ներազդեցության տակ տեղի ունեցող ջրաերկր. գործընթացների գիտականորեն հիմնավորված նախագուշակում: Ջ. կ. ընդգրկում է ստր. ջրերի ձևավորման, տեղաբաշխման, շարժման, կուտակման, բեռնաթափման օրինաչափությունների բացահայտումը, ինչպես նաև բացահայտված օրինաչափությունների հետագա արտարկումը (էքստրապոլյացիան) տարածության և ժամանակի մեջ: Կատարվում են երկարաժամկետ և կարճաժամկետ Ջ. կ-ներ:
- Г-220. ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЙ ПРОФИЛЬ – ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՏՐԱՄԱՍ (ԿՈՂԱՊԱՏԿԵՐ, ՊՐՈՖԻԼ), HYDROGEOLOGICAL PROFILE**, կողապատկեր, որի վրա արտացոլվում են տեղանքի երկր. կտրվածքի վերին մասի շերտադրությունը, ջրատար հորիզոնները, ջրամերժ շերտերը, գրունտային ջրերի ու ճնշումային



ջրերի մակարդակները, լեռնային փորվածքները (հորատանցքեր, ջրհորեր), նրանցից արտանդվող ջրերի ծախսն ու հանքայնացումը և այլն:

**Г-221. ГИДРОГЕОЛОГИЧЕСКОЕ ОПРОБОВАНИЕ – ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՆՍՈՒՇԱՅԱԿՆԻՄ (ՆՍՈՒՇԱՌՈՒՄ), HYDROGEOLOGICAL SAMPLING**, ջրատար հորիզոնների զոնաների կամ համալիրների դաշտային ու լաբորատոր ուսումնասիրությունների ամբողջություն, որի նպատակն է որոշել ապարների ծծանցման հատկությունները, ստր. ջրերի քիմ. և գազային կազմը:

**Г-222. ГИДРОГЕОЛОГИЧЕСКОЕ РАЙОНИРОВАНИЕ – ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՈՒՄ, HYDROGEOLOGICAL REGIONALIZATION**, ջրաերկր. գլխավոր պայմաններով և ստր. ջրերի հիմնական հատկանիշներով տարբերվող տեղամասերի (շրջանների) առանձնացում: Այն կատարվում է ստր. ջրերի սնման, ձևավորման, տարածման և բեռնաթափման պայմանների ուսումնասիրման հիման վրա: Ջ. 2-ման ժամանակ հաշվի են առնվում շրջանի երկր. կառուցվածքը, ապարների քարաբանական կազմը, ջրատար և ջրամերժ շերտերի հերթափոխությունը, նրանց հաստությունը ու մերկացվածության աստիճանը, երկրծ. պայմանները, կլիմայական ու ջրաբանական գործոնները:

**Г-223. ГИДРОГЕОЛОГИЯ (հուն. hýdōr – ջուր և երկրաբանություն) – ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, HYDROGEOLOGY**, գիտություն ստր. ջրերի ծագման, տեղադրման պայմանների, տարածման և շարժման օրինաչափությունների, ֆիզ. հատկությունների, քիմ., մանրէական և գազային կազմի, ռեժիմի, ինչպես նաև մթնոլորտի մակերևութային ջրերի, երկրակեղևի ապարների հետ ստր. ջրերի փոխազդեցության գործընթացների մասին: Ջ. ընդգրկում է հետևյալ բաժինները՝ ընդհանուր Ջ., ստր. ջրերի դինամիկա (ջրաերկրադինամիկա), ջրաերկրաքիմիա (ստր. ջրերի երկրաքիմիա), ջրաերկր. հետազոտությունների մեթոդներ, օգտ. հնձ-ների հնքվ-երի Ջ., ուսմունք հանքային ջրերի մասին, ճառագայթաջրաերկրաբանություն, ռեզիդուալ Ջ., մելիորատիվ Ջ., ուսմունք ստր. ջրերի հնքվ-երի մասին, ուսմունք ստր. ջրերի ռեժիմի ու հաշվեկշռի մասին, ջրաերկր. մոդելացում, կրիոջրաերկրաբանություն:

**Г-224. ГИДРОГЕОХИМИЯ – ՋՐԱԵՐԿՐԱՔԻՄԻԱ, HYDROGEOCHEMISTRY**, գիտություն ստր. ջրերի քիմ. տարրերի և նրանց միացությունների տեղազաղթի (միգրացիայի) մասին՝ կապված ջրերի ձևավորման ու տեղադրման երկր. իրադրության հետ: Յոմ.՝ ստր. ջրերի երկրաքիմիա:

**Г-225. ГИДРОГРАФ РЕКИ – ԳԵՏԻ ՋՐԱԳԻՐ (ՅԻԴՐՈԳՐԱՖ), HYDROGRAPH OF RIVER**, գետի ջրի ծախսի փոփոխության գրացուցակ (գրաֆիկ)՝ որոշակի ժամանակահատվածի համար (տարեկան, սեզոնային, վարարման և այլն):

**Г-226. ГИДРОГРАФИЧЕСКАЯ СЕТЬ – ՋՐԱԳՐԱԿԱՆ ՑԱՆՑ, HYDROGRAPHIC NETWORK, DRAINAGE NET**, որևէ տարածքում գետերի (ջրանցքների) և այլ ժամանակավոր մակերևութային հոսքերի, լճերի և ճահիճների համակցություն:

**Г-227. ГИДРОГРАФИЯ (հուն. hýdōr – ջուր և gráphō – գրում եմ, նկարագրում եմ) – ՋՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ՅԻԴՐՈԳՐԱՖԻԱ), HYDROGRAPHY**, 1) ցամաքի ջրաբանության (հիդրոլոգիայի) բաժին՝ նվիրված գետերի, լճերի, ջրամբարների և դրանց առանձին մասերի նկարագրությանը, 2) ջրային օբյեկտների հանույթ և անցկացում քարտեզների վրա:

**Г-228. ГИДРОДИНАМИКА (հուն. hýdōr – ջուր և dýnamis – ուժ) – ՋՐԱԴԻՆԱՄԻԿԱ, HYDRODYNAMICS**, ջրամեխանիկայի բաժին, որն ուսումնասիրում է արտաքին ուժերի ազդեցության շնորհիվ հեղուկի շարժման և հեղուկի ու նրա հետ շփվող մարմինների հարաբերական շարժման ժամանակ մեխ. փոխազդեցությունները:

- Г-229. ГИДРОДИНАМИКА ПОДЗЕМНЫХ ВОД – ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՋՐԱԴԻՆԱՄԻԿԱ, UNDERGROUND WATERS HYDRODYNAMICS**, ջրադինամիկայի ճյուղային ուղղություն, որն ուսումնասիրում է ծակոտկեն ու ճեղքավոր ապարներում ջրի և այլ հեղուկների շարժման օրինաչափությունները:
- Г-230. ГИДРОИЗОБАТЫ – ՋՐԱՅԱՍՍԽՈՐԱԳԾԵՐ, ՋՐԱԻՉՈՔԱԹՆԵՐ, HYDROISO-BATHS**, գծեր (քարտեզի կամ հատակագծի վրա), որոնք միացնում են գրունտային ջրերի հայելու՝ Երկրի մակերևույթից միևնույն խորության վրա գտնվող կետերը:
- Г-231. ГИДРОИЗОГИПСЫ (հուն. hýdōr – ջուր, isos – հավասար և hýpsōs – բարձրություն) – ՋՐԱՅԱՍԱՐՁՐԱԳԾԵՐ, ՋՐԱԻՉՈՅԻՊՍԵՐ, COUNTER OF WATER TABLE**, գծեր (քարտեզի կամ հատակագծի վրա), որոնք միացնում են գրունտային ջրերի հայելու միևնույն բարձրության կետերը:
- Г-232. ГИДРОИЗОТЕРМЫ (հուն. hýdōr – ջուր, isos – հավասար և therme – ջերմություն) – ՋՐԱՅԱՍԱՋԵՐՄԱԳԾԵՐ, ՋՐԱԻՉՈՑԵՐՍԵՐ, HYDROISOTHERMS**, գծեր (ուղղաձիգ կտրվածքում, քարտեզի կամ հատակագծի վրա), որոնք միացնում են դիտարկվող հորիզոնի ջրի միևնույն ջերմաստիճան ունեցող կետերը:
- Г-233. ГИДРОКАРБОНАТНЫЕ ВОДЫ – ՋՐԱՎԱՐՔՈՆԱՏԱՅԻՆ ՋՐԵՐ, HYDROCARBONATE WATERS**, բնական ջրեր, որոնց քիմ. բաղադրության մեջ գերիշխող անիոն է հանդիսանում ջրակարբոնատ իոնը:
- Г-234. ГИДРОЛАККОЛИТЫ (հուն. hýdōr – ջուր, lákkos – փոս և lithos – քար) – ՋՐԱԼԱՎՈԼԻԹՆԵՐ, ՅԻԴՐՈԼԱՎՈԼԻԹՆԵՐ, HYDROLACCOLITHS, PINGO**, բազմամյա սառցույթի գոտում տարածված ուռչման բլուրներ, որոնք առաջանում են գրունտային ջրերի սառչումից և ունենում են մինչև 40-50 մ բարձրություն, 300-400 մ տրամագիծ:
- Г-235. ГИДРОЛИЗ (հուն. hýdōr – ջուր և lýsis – քայքայում, տարրալուծում) – ՋՐԱՏԱՐԱԼՈՒԹՈՒՄ (ՅԻԴՐՈԼԻԶ), HYDROLYSIS**, փոխանակման տարրալուծման ռեակցիա՝ ջրի և տարբեր քիմ. միացությունների միջև, որոնք ջրի ներգործությամբ տարրալուծվում և միանում են նրա իոնների հետ:
- Г-236. ГИДРОЛОГИЧЕСКИЕ КАРТЫ – ՋՐԱՐԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ, HYDROLOGICAL MAPS**, արտահայտում են ցամաքի մակերևութային ջրերի տարածումը, շարժումը (դինամիկան), կազմը և հատկությունները:
- Г-237. ГИДРОЛОГИЧЕСКОЕ РАЙОНИРОВАНИЕ – ՋՐԱՐԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՅՈՒՄ, HYDROLOGICAL ZONATION**, երկրատարածքի կամ նրա մասերի՝ Երկրի մակերևույթի բաժանումը առանձին տեղամասերի (շրջանների), որոնք բնորոշվում են մակերևութային ջրերի ու գրունտային ջրերի բնույթի համասեռությամբ:
- Г-238. ГИДРОЛОГИЯ (հուն. hýdōr – ջուր և lógos – ուսմունք) – ՋՐԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ (ՅԻԴՐՈԼՈԳԻԱ), HYDROLOGY**, գիտություն, որը զբաղվում է Երկրի մակերևույթի վրա տարածված ջրերի և նրանց մեջ տեղի ունեցող գործընթացների ու երևույթների օրինաչափությունների ուսումնասիրությամբ: Ջ. ստորաբաժանվում է երկու խոշոր բաժինների՝ օվկիանոսագիտություն (ծովի Ջ.) և ցամաքի Ջ. կամ բուն Ջ.: Վերջինը զբաղվում է ցամաքի մակերևութային ջրերի ուսումնասիրությամբ:
- Г-239. ГИДРОМЕТРИЯ (հուն. hýdōr – ջուր և metréo –չափում են) – ՋՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ, HYDROMETRY**, ջրաբանության բաժին, որը քննարկում է մակերևութային ջրերի (գետերի, լճերի, ծովերի) ռեժիմի ուսումնասիրման նպատակով տարվող բոլոր տեսակի չափումների ու դիտումների ձևերը և մեթոդները:

**Г-240. ГИДРООКСИДЫ ПРИРОДНЫЕ – ԲՆԱԿԱՆ ՋՐՕՔՍԻԴՆԵՐ (ՅԻԴՐՕՔՍԻԴՆԵՐ), HYDROXIDES**, միներալների ենթադաս, որն ընդգրկում է որոշ մետաղների բնական ջրօքսիդները: Հայտնի են մոտ 50 միներալներ, առավել տարածված են երկաթի (օր.՝ գյոթիտ և այլն), ալյումինի (գիբսիտ, բյոմիտ, դիասպոր) և մանգանի (մանգանիտ և այլն) Բ. ջ.:

**Г-241. ГИДРОСЛЮДЫ – ՋՐԱՓՈՅՆՆԵՐ (ՅԻԴՐՈՓՈՅՆՆԵՐ), HYDROMICAS**, միներալների խումբ սիլիկատների դասից, ըստ կառուցվածքի ու կազմի պատկանում են փայլարներին: Տարբերությունը ալկալիների պակասն է և ջրի ավելի բարձր պարունակությունը: Առավել հայտնի է իլլիթը, որն առաջացնում է բաց գույնի նրբաթելուկավոր անջատումներ: Լայն տարածված են կավերում, կավա-կարբոնատային ապարներում, հողմահարման կեղևում, հողերում:

**Г-242. ГИДРОСФЕРА (հուն. hýdōr – ջուր և spháira – գունդ) – ՋՐՈՒՈՐՏ (ՅԻԴՐՈՒՍՖԵՐԱ, ՋՐԱՊՍՅԱՆ), HYDROSPHERE**, Երկրի ընդհատ ջրային թաղանթ, որը տեղաբաշխված է մթնոլորտի և պինդ երկրակեղևի միջև: Իրենից ներկայացնում է օվկիանոսների, ծովերի, ցամաքի մակերևութային ջրերի համախմբություն: Ջ. ծածկում է Երկրի մակերևութի 70,8 %: Ջ-ի ծավալի մոտ 94%-ը կազմում են ծովերն ու օվկիանոսները, 4 %-ը՝ ստր. ջրերը, մոտ 2%-ը՝ սառույցներն ու ձյունը, մոտ 0,4 %-ը՝ ցամաքի մակերևութային ջրերը: Ջրի քիչ քանակ պարունակում են օրգանիզմները և մթնոլորտը: Երկրի մակերևութին թափվող տեղումների ջրի տարեկան քանակը հավասար է օվկիանոսներից ու ցամաքից գոլորշիացող ջրի քանակին:

**Г-243. ГИДРОТЕКТОНИТЫ – ՋՐՍԵԿՏՈՆԻՏՆԵՐ (ՅԻԴՐՈՏԵԿՏՈՆԻՏՆԵՐ), HYDROTECTONITES**, տեկտոնիտներ, որոնք առաջանում են նստվածքակուտակման ու վաղ դիագենեզի փուլերում՝ ջրառատ նստվածքների ստորջրյա ձևախախտման հետևանքով: Ջ-ի առաջացման առավել նպաստավոր պայմանները կապված են առավելագույն ճկման և ծովային ավազանի հատակի առավել թեքության, երկրաշարժերի ու ջրառատ նստվածքների կուտակման արագության հետ:

**Г-244. ГИДРОТЕРМАЛЬНЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ (հուն. hýdōr – ջուր և thérme – ջերմություն) – ՋՐԱՋԵՐՄԱՅԻՆ (ՅԻԴՐՈՋԵՐՄԱՅԻՆ, ՅԻԴՐՈԹԵՐՄԱԼ) ՀԱՆՔԱՎԱՅՐՆԵՐ, HYDROTHERMAL DEPOSITS**, հանքակուտակներ, որոնք գոյանում են Երկրի ընդերքում շրջանառություն կատարող տաք ջրային լուծույթների (ջրաջերմերի) նստվածքներից: Ջրաջերմային լուծույթների աղբյուրներ կարող են լինել՝ մագմայական ջուրը, որը Երկրի ընդերքում անջատվում է մագմայական հալույթի սառչման և հրային ապարների ձևավորման գործընթացում, փոխակերպային ջուրը, որն անջատվում է երկրակեղևի խոր զոնաներում ջրապարունակ միներալների վերաբյուրեղացման դեպքում, ծովային նստվածքային ապարներում թաղված ջուրը, որը շարժման մեջ է դրվում ներերկրային ջերմության ներգործության հետևանքով, և երկրաքարային ջուրը, որը ջրաթափանց ապարներով ներթափանցում է Երկրի ընդերքը: Ջ. հ. ձևավորվել են երկարատև ժամանակահատվածում (հարյուր–հազարավոր մինչև տասնյակ միլիոնավոր տարիներ), Երկրի մակերևութից սկսած մինչև 10 կմ և ավելի խոր, 600°-700°-ից մինչև 50-20°С պայմաններում: Ըստ արժեքավոր միներալների գերակշռող կազմի՝ առանձնացնում են ջրաջերմային հանքանյութերի հետևյալ գլխ. տեսակները՝ սուլֆիդային, օքսիդային, կարբոնատային, բնածին, սիլիկատային:

**Г-245. ГИДРОТЕРМАЛЬНЫЕ РАСТВОРЫ – ՋՐԱՋԵՐՄԱՅԻՆ (ՅԻԴՐՈՋԵՐՄԱՅԻՆ, ՅԻԴՐՈԹԵՐՄԱԼ) ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐ, HYDROTHERMAL FLUIDS**, գազերով, մետաղական իոններով և այլ քիմ. տարրերով հարուստ տաք ջրային լուծույթներ, որոնք

շրջանառում են երկրակեղևում և մասնակցում են հանքային նյութերի տեղափոխման և նստեցման գործընթացներին: Ջ. Լ-ի հետ է կապված ջրաջերմային հնքվ-երի առաջացումը, նույնն է՝ Гидротермы:

**Г-246. ГИДРОТЕРМАЛЬНЫЙ МЕТАМОРФИЗМ – ՋՐԱՋԵՐՄԱՅԻՆ (ՅԻՂՐՈՋԵՐՄԱՅԻՆ, ՅԻՂՐՈՋԵՐՄԱԿԱՆ) ՓՈՆԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՄԵՏԱՄՈՐՖՈՒԹՅՈՒՆ), HYDROTHERMAL METAMORPHISM**, ապարների միներալային և քիմ. փոփոխության գործընթաց, որն ընթանում է տաք ջրային լուծույթների (ջրաջերմերի) ներազդեցության տակ:

**Г-247. ГИДРОТЕРМАЛЬНЫЙ ПРОЦЕСС – ՋՐԱՋԵՐՄԱՅԻՆ (ՅԻՂՐՈՋԵՐՄԱՅԻՆ, ՅԻՂՐՈՋԵՐՄԱԿԱՆ) ԳՈՐԾՆԹԱՅ, HYDROTHERMAL PROCESS**, երկրաքիմ. գործընթաց, որը պայմանավորված է վերընթաց տաք ջրային լուծույթների գործունեությամբ: Այդ լուծույթներն առաջանում են խորքում՝ երկրակեղևի մեջ ներդրված մագմայի սառեցման գործընթացում: Ջ. գ-ի օր. կարող են ծառայել ջրաջերմային (հիդրոթերմալ) հանքավայրերը, որոնք առաջացել են մագմատիկ օջախների տաք ջրային լուծույթներից անջատված միներալների նստեցման կամ տեղակալման ճանապարհով:

**Г-248. ГИДРОТЕРМЫ** (հուն. hýdōr – ջուր և thérme – ջերմություն) – **ՋՐԱՋԵՐՄԵՐ (ՅԻՂՐՈՋԵՐՄԵՐ, ՅԻՂՐՈՋԵՐՄԵՐ), HYDROTHERMAL FLUIDS**, նույնն է՝ Гидротермальные растворы:

**Г-249. ГИДРОХИМИЧЕСКАЯ КАРТА – ՋՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ, HYDROCHEMICAL MAP**, ջրաերկր. քարտեզի տեսակ, որի վրա արտացոլվում են ստր. ջրերի հանքայնացումը, քիմ. բաղադրությունը, ինչպես նաև որոշ բաղադրատարրերի տարածման օրինաչափությունները:

**Г-250. ГИДРОХИМИЧЕСКИЕ ПОИСКИ, ГИДРОГЕОХИМИЧЕСКИЕ ПОИСКИ – ՋՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ, ՋՐԱԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ, HYDROCHEMICAL PROSPECTING, HYDROGEOCHEMICAL PROSPECTING**, նպատակը բնական ջրերում քիմ. տարրերի տեղաբաշխման օրինաչափությունների հետազոտման օգնությամբ օգտ. հնձ-ների հնքվ-երի հայտնաբերումն է: Հիմնվում է ջրի ունակության վրա՝ լուծելու միներալների ու ապարների բաղադրամասերը և մակերևութային ու ստր. ջրերի միջոցով դրանք տեղափոխելու զգալի տարածությունների վրա: Ջ. ո. ընդգրկում են ջրերի նմուշահանումը, նմուշների տարրալուծումը, ստացված արդյունքների վիճակագրական մշակումը և մեկնաբանումը: Վերջին դեպքում հաշվի է առնվում ուսումնասիրվող շրջանի հիմնական ջրաերկր., միներալաերկրաքիմ. և ընդհանուր երկր. առանձնահատկությունները:

**Г-251. ГИДРОХИМИЧЕСКИЕ ПОИСКОВЫЕ КРИТЕРИИ – ՋՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ, HYDROCHEMICAL PROSPECTING CRITERIA**, բնական (զլխ. ստր.) ջրերի մեջ որոշ բաղադրիչների (լուծված իոնների, գազերի, կենսածին և այլ միացությունների) խոտորիչ բարձր պարունակություն և խոտորիչ pH, որոնք ցույց են տալիս տվյալ տեղամասում որոշակի օգտ. հնձ-ների առկայությունը:

**Г-252. ГИДРОХИМИЧЕСКИЕ ФАЦИИ – ՋՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՖԱՅԻԱՆԵՐ, HYDROCHEMICAL FACIES**, վերերկրյա և ստր. ջրոլորտների տեղամասեր, որոնք բնորոշվում են ջրաքիմ. միատեսակ պայմաններով՝ միանման քիմ. բաղադրությամբ, pH-ով, Eh-ով և այլ ցուցանիշներով:

**Г-253. ГИДРОХИМИЧЕСКИЙ ПРОФИЛЬ – ՋՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՏՐԱՄԱՏ (ԿՈՂԱՊԱՍԿԵՐ, ՊՐՈՖԻԼ), HYDROCHEMICAL PROFILE**, կողապատկեր, որի վրա արտացոլվում են տարածության մեջ ստր. ջրերի հանքայնացման, քիմ. կազմի, նրա որոշ բաղադրամասերի, pH-ի, Eh-ի և այլ ցուցանիշների փոփոխությունները:

- Г-254. ГИДРОХИМИЯ** (հուն. hýdōr – ջուր և քիմիա) – **ՋՐԱՔԻՄԻԱ (ԲՆԱԿԱՆ ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱ, ՀԻԴՐՈՔԵՄԻԱ), HYDROCHEMISTRY**, գիտության բաժին, որն ուսումնասիրում է մթնոլորտային տեղումների, մակերևութային և ստր. ջրերի հանքայնացումն ու քիմ. բաղադրությունը, դիտարկում է քիմ. բաղադրության փոփոխությունները՝ շրջապատող միջավայրի ֆիզ., քիմ. և կենսբ. գործընթացների փոխադարձ պատճառական կապի մեջ:
- Г-255. ГИДРОХЛОРИТЫ** (հուն. hýdōr – ջուր և chlōrós – կանաչ) – **ՋՐԱՔԼՈՐԻՏՆԵՐ (ՀԻԴՐՈՔԼՈՐԻՏՆԵՐ), HYDROCHLORITES**, միներալներ, քլորիտների փոխտեսակներ, փոփոխ արգասիքներ:
- Г-256. ГИЕРОГЛИФЫ (ИЕРОГЛИФЫ)** (հուն. hierós – սուրբ և glyphē – փորագրված հին հունական սրբազան նշաններ) – **ՀԻԵՐՈԳԼԻՖՆԵՐ, HIEROGLYPHS**, շերտերի ստորին, երբեմն վերին մակերեսում տարբեր տեսակի ու ծագման (բարդ ծոռնաված թմբիկներ, ակոսներ և այլն) դրոշմներ (նշաններ)՝ սովորաբար մանրա- և միջնահատիկավոր ապարներում (օր.՝ ֆլիշում): Առաջանում են օրգանիզմների կենսագործունեության հետևանքով (կենսագրեր) կամ մեխ. ճանապարհով (մեխանագրեր):
- Г-257. ГИНКГОВЫЕ (GINKGOALES) – ԳԻՆԿԳՈՅԻՆՆԵՐ, GINKGO-PLANTS**, մերկասերմ բույսերի դաս, լայն տարածում են ունեցել մեզոզոյում:
- Г-258. ГИПЕРТЕРМАЛЬНЫЕ ВОДЫ – ԳԵՐՏԱՔ (ՇՍՏ ՏԱՔ) ՋՐԵՐ, HYPERTHERMAL WATERS**, բնական ջրեր, որոնց ջերմաստիճանը տատանվում է 42-100°C սահմաններում:
- Г-259. ГИП..., ГИПО...** (հուն. hypó – տակը, ներքև, ոչ լրիվ) – **ԵՆԹԱ..., ՆԵՐՔԱ..., ՀԻՊՈ..., ԿԻՊՈ...**, բարդ բառերի նախածանց, որն արտահայտում է ներքևում, խորքում գտնվելը կամ բնականոնից նվազելը:
- Г-260. ГИПАБИССАЛЬНЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ** (հուն. hypó – ներքև, ենթա, ոչ լրիվ, այստեղ նշանակում է որակի թուլացում և ábissos – անհատակ) – **ԵՆԹԱԽՈՐՔԱՅԻՆ (ՀԻՊԱԲԻՍԱԼ) ԱՊԱՐՆԵՐ, HYPABYSSAL ROCKS**, մագմայական այն ապարների ընդհանուր անվանում, որոնք առաջանում են երկրակեղևի ապարաշերտերի ոչ մեծ խորություններում: Ըստ տեղադրման պայմանների, կազմի և կառուցվածքի՝ միջանկյալ տեղ են գրավում խորքային (աբիսալ) և արտաժայթքային ապարների միջև: Ե. ա. առաջացնում են համեմատաբար ոչ մեծ ներժայթքային (ինտրուզիվ) մարմիններ [ղայկաներ, ապարազանգվածներ (շտոկներ), լակոլիթներ, հրաբուխների արմատներ], որոնք սովորաբար հատում են ներփակող ապարները: Հպումային փոխակերպությունը ներփակող ապարների հետ թույլ է արտահայտված, հաճախ ներառում են ներփակող ապարների չփոփոխված կամ թույլ փոփոխված մնացուկներ:
- Г-261. ГИПЕРБАЗИТЫ** (հուն. hypér – վերևում, վրա և básiis – հիմք) – **ՀԻՊԵՐԲԱՉԻՏՆԵՐ**, նույնն է՝ Ультраосновные горные породы:
- Г-262. ГИПЕРГЕНЕЗ** (հուն. hypér – վերևում, վեր, վրա և génesis – ծագում, գոյացում) – **ՎԵՐՆԱԾՆՈՒԹՅՈՒՆ (ՀԻՊԵՐԳԵՆԵՉ), HYPERGEINESIS**, միներալային նյութերի քիմ. և ֆիզ. կերպափոխման (ձևափոխման) գործընթացների ամբողջություն, որը տեղի է ունենում երկրակեղևի վերին մասերում կամ նրա մակերևութին (80°C ջերմաստիճանից ցածր պայմաններում)՝ մթնոլորտի, ջրոլորտի և կենդանի օրգանիզմների ներազդեցության տակ: Վ-յան հետևանքով տեղի է ունենում հողմահարման կեղևի (տե՛ս Кора выветривания), հնքվ-երի օքսիդացման զոնայի (տե՛ս Экзогенные месторождения) առաջացում, հողագոյացում, ստր. ջրերի, գետերի, լճերի, ծովերի, օվկիանոսների ջրերի կազմի ձևավորում, քիմիածին և օրգանածին նստվածքազոյացում:

- Г-263. ГИПЕРГЕННЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ – ՎԵՐՆԱԾԻՆ (ՅԻՊԵՐԳԵՆ) ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, HYPERGENIC DEPOSITS, տե՛ս** Экзогенные месторождения:
- Г-264. ГИПЕРГЕННЫЕ МИНЕРАЛЫ – ՎԵՐՆԱԾԻՆ (ՅԻՊԵՐԳԵՆ) ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, HYPERGENIC MINERALS, միներալներ, որոնք առաջանում են վերնածնության (հիպերգեն) զոնայում՝ ցածր ջերմաստիճանի և ճնշման պայմաններում:** Վ. մ-ին են պատկանում կավային միներալները, ջրօքսիդները (հիդրօքսիդները), թթվածնային թթուների աղերը (սուլֆատները, նիտրատները և այլն):
- Г-265. ГИПЕРГЕННЫЕ ПРОЦЕССЫ – ՎԵՐՆԱԾԻՆ (ՅԻՊԵՐԳԵՆ) ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐ, HYPERGENIC PROCESSES, տե՛ս** Экзогенные процессы:
- Г-266. ГИПЕРСТЕН (հուն. hypér – վեր, վրա, չափից ավել և sthénos – ուժ, ամրություն) – ՅԻՊԵՐՍՏԵՆ, HYPERSTHENE, միներալ շեղանկյունային պիրոքսենների խմբից, մագնեզիումի ու երկաթի սիլիկատ,  $(MgFe_2)Si_2O_6$ :** Առաջացնում է հատկավոր ագրեգատներ, հատիկների ներփակվածքներ, հոծ զանգվածներ՝ կանաչ, գորշ դեղնավուն կամ մուգ մոխրագույն գույնի: Կարծրությունը՝ 5-6: Որոշ հիմքային և գերհիմքային մագմայական, ինչպես նաև փոխակերպային ապարներում ապարակազմիչ միներալ է: Պլազիոկլազի հետ միասին կազմում է հիմքային խորքային ապարների մեծ մասը: Հ. հանդիպում է նաև երկնաքարերում:
- Г-267. ГИПОГЕННЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ (հուն. hypō – տակը, ներքև և genēs – ծնող, ծնված) – ԽՈՐԱԾԻՆ (ՆԵՐՔՆԱԾԻՆ, ՅԻՊՈԳԵՆ) ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, տե՛ս** Эндогенные месторождения:
- Г-268. ГИПОГЕННЫЕ ПРОЦЕССЫ – ԽՈՐԱԾԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐ, տե՛ս** Эндогенные процессы:
- Г-269. ГИПОТЕЗА ВЕГЕНЕРА, տե՛ս** Вегенера гипотеза:
- Г-270. ГИПОТЕЗА ГЛУБИННОЙ ДИФФЕРЕНЦИАЦИИ – ԽՈՐԱԾԻՆ ՏԱՐԲԵՐԱՎԱՍԱՆ ՎԱՐԿԱԾ, HYPOTHESIS OF DEPTH DIFFERENTIATION, տեկտ. դրսևորումների սկզբնապատճառ է համարվում նյութի տարբերակումը երկրակեղևում և ներքնադիր միջնապատյանում:** Տեկտոգենեզի առաջնային գործոն հաշվվում է բարձրացումը, իսկ ծալքավորությունը դիտարկվում է որպես երկրորդային գործընթաց, որը պայմանավորված է բարձրացմամբ:
- Г-271. ГИПОТЕЗА КОНТРАКЦИОННАЯ, տե՛ս** Контракционная гипотеза:
- Г-272. ГИПОТЕЗА МОБИЛИЗМА (լատ. mobilis – շարժում) – ՍՈՔԻԼԻԶՄԻ (ՇԱՐԺՈՒՆԱՎՈՒԹՅԱՆ) ՎԱՐԿԱԾ, տե՛ս** Мобилизм:
- Г-273. ГИПОТЕЗА МОБИЛЬНОЙ ЛИТОСФЕРЫ – ՇԱՐԺՈՒՆԱՎ ՔԱՐՈՒՈՐՏԻ ՎԱՐԿԱԾ, տե՛ս** Новая глобальная тектоника, Тектоника плит:
- Г-274. ГИПОТЕЗА ПУЛЬСАЦИОННАЯ – ԲԱԲԱՆՄԱՆ (ՊՈՒՆՍԱՑԻՈՆ) ՎԱՐԿԱԾ, PULSATION HYPOTHESIS, մտահղացում, որը հնարավոր է համարում երկրի սեղմման ու ընդլայնման համերկրային փուլերի գոյությունը, և այդ հիմքի վրա բացատրվում են մագմայականության, Համաշխարհային օվկիանոսի ծովածավալման (տրանսգրեսիայի) ու ռեգրեսիայի երևույթները, ծալքավորությունը, երկրասինկլինալների ներդրումը և փակումը:** Առաջին անգամ առաջարկել է գերմանացի գիտնական Ռոտպլեցը 1902 թ.: Առավել հիմնավոր բացատրություն ստացել է աներիկյան գիտնական Վ. Գ. Բուխերի, ռուս գիտնականներ Մ. Ա. Ուսովի և Վ. Ա. Օբրուչևի աշխատություններում:
- Г-275. ГИПОТЕЗА РОТАЦИОННАЯ – ՈՏՏԱՑԻՈՆ ՎԱՐԿԱԾ, ROTARY HYPOTHESIS, տեկտոգենեզում էական դեր է հատկացվում երկրի պտույտին և այդ պտույ-**

տի խանգարմանը, որը պայմանավորված է արտաերկրային պատճառներով, գլխ. Լուսնի և Արևի ձգողականությամբ, որը երկրակեղևում ու միջնապատյանում հարուցում է պինդ մակընթացություն, դա դանդաղեցնում է երկրի պտույտը, որը հանգեցնում է երկրի պատկերի փոփոխությանը: Վերջինի հետ կապված՝ երկրակեղևում առաջանում են ոչ միայն շառավղային լարվածություններ և ուղղաձիգ տեղաշարժեր, այլև տանգենցիալ (շոշափողական)՝ լայնութենական և երկայնութային: Տեղի է ունենում նաև երկրակեղևի կծկում է ձգում:

**Գ-276. ГИПОЦЕНТР (հուն. hypó – ներքև, տակը և լատ. centrum – կենտրոն) – ՆԵՐՔՆԱԿԵՆՏՐՈՆ (ՀԻՊՈԿԵՆՏՐՈՆ), HYPOCENTRE, CENTRE OF ORIGIN, SEISMIC FOCUS, FOCUS OF EARTHQUAKE,** երկրաշարժի օջախի կենտրոնական կետ: Երկար օջախի դեպքում ներքնակենտրոն համարվում է խզվածքի պատմման սկզբնակետը: Խորությունը հասնում է մինչև 700 կմ:

**Գ-277. ГИПΠΑРИОН (Hipparion) – ՀԻՊԱՐԻՈՆ, HIPPARION,** նեոգենյան բրածո եռամատ ձիու սեռ: Լայն տարածված է եղել Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի, Հս. Ամերիկայի և Ավստրալիայի՝ նեոգենյան ժամանակաշրջանի անտառատափաստաններում: Ունեցել են փոքր չափեր (մինչև 1.5 մ բարձրություն): Հայտնաբերվել են նաև ՀՀ միոցենի գետային նստվածքներում:

**Գ-278. ГИППУРИТЫ (Hippurites) – ՀԻՊՈՒՐԻՏՆԵՐ, HIPPURITES,** երկփեղկանի փափկամարմիններ՝ ռուդիտների ընտանիքից: Խեցիների մեծությունը մինչև 1 մ: Հանդիպում են վերին կավճի նստվածքներում:

**Գ-279. ГИПС (հուն. gýpsos – կավիճ, կիր) – ԳԻՊՍ (ԼՍՆԱԿՈՒՃ, ԳԱԶԱՔԱՐ), GYPSUM, 1)** միներալ սուլֆատների դասից, կալցիումի ջրային սուլֆատ,  $Ca[SO_4] \cdot 2H_2O$ : Բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է, թերթականությունը՝ խիստ կատարյալ, կարծրությունը՝ 1.5-2: Առաջացնում է հատվածակողմ և աղյուսածև անգույն կամ բաց գունավորված բյուրեղներ: Բնորոշ են «ծիծեռնակի պոչ» կրկնաբյուրեղները և խիտ մանրահատիկավոր կամ թելքավոր ագրեգատները: Լայնորեն տարածված է նստվածքային ապարներում (աղային և բորատների հանքակուտակներում, կավային և կարբոնատային նստվածքներում), սուլֆիդային հնքվ-երի օքսիդացման զոնայում, տաք ծծմբաթթվական աղբյուրների ու ֆունարոլների նստվածքներում: Առաջացնում է կեղևներ որոշ անապատների փուխր գետնահողերի վերին հորիզոններում: 2) Նստվածքային ապար՝ բաղկացած գլխ. գիպս միներալից և խառնուրդներից (դոլոմիտ, անհիդրիդ, ցելեստին, երկաթի ջրօքսիդներ, ծծումբ, կալցիտ և այլն): Ըստ ծագման՝ Գ. կարող է լինել առաջնային (գոյանում է աղայնացված ավազանների աղազոյացման սկզբնական փուլում) և երկրորդային (գոյանում է մերձակերևութային զոնայում՝ անհիդրիտի ջրակցումից): Գ-ի տարատեսակներից է սելենիտը (լուսնաքար)՝ կիսաթափանցիկ, թելքավոր, մետաքսափայլ ագրեգատը:

**Գ-280. ГИПС ВОЛОКНИСТЫЙ – ԹԵԼՔԱՎՈՐ ԳԻՊՍ, FIBROUS GYPSUM,** տե՛ս Селенит:

**Գ-281. ГИПС ЗЕМЛИСТЫЙ – ՀՈՂԱՆՍԱՆ (ՀՈՂԱԽԱՈՆ) ԳԻՊՍ, FRIABLE GYPSUM,** ածխաթթվային կալցիումի փուխր, փոշենման զանգված, նստում է լճաճահճային ջրավազաններում, նույնն է՝ ալեբաստը:

**Գ-282. ГИПС ЧЕШУЙЧАТЫЙ – ԹԵՓՈՒԿԱՎՈՐ ԳԻՊՍ, SCALY GYPSUM,** գիպսի թեփուկավոր տարատեսակ:

**Գ-283. ГИПСО... (հուն. hýpsos – բարձրություն) – ԲԱՐՉՐԱ..., ՀԻՊՍՈ..., HYPISO...,** բարդ բառերի նախածանց, որն արտահայտում է բարձրություն:

- Г-284. ГИПСОВАЯ КОРКА – ԳԻՊՍԱՅԻՆ ԿԵՂԵՎ, GYPSUM CRUST**, փուխր նստվածքային ապարներից գոյացած խիտ կամ խռոչավոր, չոր վիճակում կարծր ծածկութային գոյացություններ, որոնք ցեմենտացած են գիպսով կամ գիպսի և կարբոնատների խառնուրդով: Հանդիպում են անապատների առավել ջրազուրկ շրջաններում:
- Г-285. ГИПСОВАЯ ШЛЯПА – ԳԻՊՍԵ ՉԼԽԱՐԿ, GYPSUM HAT**, գիպսի (անհիդրիդի, կավային ու կարբոնատային նյութի քիչ խառնուրդով) կուտակում աղային նստվածքների վերին մասում:
- Г-286. ГИПСОГРАФИЧЕСКАЯ КРИВАЯ** (հուն. hýpsos – բարձրություն և gárpō – գրում են) – **ԲԱՐՁՐԱԳՐԱՅԻՆ (ՀԻՊՍՈԳՐԱՖԻԿ) ԿՈՐԱԳԻԾ, HYP SOGRAPHICAL CURVE**, ուղղագիծ կոորդինատներում կորագիծ, որը բնորոշում է Երկրի վրա տարբեր բարձրությունների (ցամաքում) և խորությունների (ծովում) տարածումը:
- Г-287. ГИПСОМЕТРИЧЕСКИЕ КАРТЫ** (հուն. hýpsos – բարձրություն և metréo – չափում են) – **ԲԱՐՁՐԱՉԱՓԱԿԱՆ (ՀԻՊՍՈՄԵՏՐԱԿԱՆ) ՔԱՐՏԵՋՆԵՐ, HYP SOMETRIC MAPS**, քարտեզներ, որոնց վրա բարձունքային աստիճանների հորիզոնականների ու գույների օգնությամբ տրվում է ռելիեֆի երկրաչափորեն ճիշտ պատկերը:
- Г-288. ГИПСОМЕТРИЯ** (հուն. hýpsos – բարձրություն և metréo – չափում են) – **ԲԱՐՁՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ (ՀԻՊՍՈՄԵՏՐԻԱ), HYP SOMETRY, 1)** երկրաբաշխության բաժին, որն զբաղվում է տեղանքի բացարձակ և հարաբերական բարձրությունների որոշմամբ ու քարտեզահանմամբ, 2) որևէ տարածքում բարձրությունների միջերի տեղաբաշխում:
- Г-289. ГЛАВНЫЙ БАЗИС ЭРОЗИИ – ՈՂՈՂԱՍԱՇՄԱՆ (ԷՐՈԶԻԱՅԻ) ՉԼԽԱՎՈՐ ՀԻՄ-ՆԱՍԱԿԱՐԴԱԿ, GENERAL BASE LEVEL**, օվկիանոսի մակերևույթ, որը պայմանականորեն ընդունվում է իր մեջ թափվող գետերի հատակի խորացման սահման, նույնն է՝ *Общий базис эрозии*:
- Г-290. ГЛАЗОМЕРНАЯ СЪЁМКА – ԱՉՔԱՉԱՓԱՅԻՆ ՀԱՆՈՒՅԹ, FIELD SKETCHING, EYE SURVEY**, պարզեցված երկրաբաշխական հանույթ, որը կատարվում է պարզազույն սարքավորումների օգնությամբ:
- Г-291. ГЛАУБЕРИТ** (անվանումը՝ գլաուբերյան աղի բարձր պարունակությունից) – **ՉԼՈՒԲԵՐԻՏ, GLAUBERITE**, միներալ սուլֆատների դասից,  $\text{Na}_2\text{Ca}[\text{So}_4]_2$ : Բյուրեղանում է մոնոկլինային համակարգում: Առաջացնում է աղյուսածև հատվածակողմային, դիպիրամիդալ (երկբրզածև) բյուրեղներ, բնորոշ են նաև փոշեկերպ ագրեգատները: Գույնը՝ մոխրագույն, դեղնավուն, գորշ: Փայլը՝ ապակու, մինչև մոմի: Կարծրությունը՝ 2.5: Ծովային ու լճային ծագման նստվածքային միներալ է: Աղային հնքվերի կարևորագույն բաղադրամասերից է:
- Г-292. ГЛАУКОНИТ** (հուն. glaukós – երկնագույն-կանաչ) – **ՉԼՈՒԿՈՆԻՏ, GLAUCONITE**, միներալ սիլիկատների դասից, հիդրոփայլարների (ջրափայլարների) խմբից: Կալիումի, երկաթի, մագնեզիումի և ալյումինի ջրաալյումասիլիկատ: Բյուրեղանում է մոնոկլինային համակարգում: Առաջացնում է կանաչ գույնի հողանման, նրբահատիկավոր, երբեմն բողբոջանման ագրեգատներ: Կարծրություն՝ 2-3: Գոյանում է նստվածքների դիագենեզի ընթացքում, ինչպես նաև հողերում և հողմահարման կեղևում: Լայն տարածված է երիտասարդ ծովային նստվածքներում, տարբեր հասակի նստվածքային ապարներում (ավազաքարերում, ալկրոլիթներում, կրաքարերում): Հանդիսանում է նստվածքային ապարների հասակի որոշման (K-Ar – մեթոդ) հիմնական միներալներից մեկը:



- Г-293. ГЛАУКОНИТОВЫЙ ПЕСОК – ԳԼԱՈՒԿՈՆԻՏԱՅԻՆ ԱՎԱԶ, GLAUCONITIC SAND**, գլաուկոնիտի հատիկների առկայության հետևանքով կանաչ գույնի ավազ, հաճախ այլ հատիկավոր, շերտավոր միներալների ու օրգանական մնացորդների խառնուրդով: Բնորոշ է ծովի լիթորալ (առափնյա ծովահատակի) զոնայի համար:
- Г-294. ГЛАУКОФАН** (հուն. glaukós – երկնագույն-կանաչ, բաց կապույտ և rhanès – թվացող, տեսք ունեցող) – **ԳԼԱՈՒԿՈՖԱՆ, GLAUCOPHANE**, ապարակազմիչ միներալ սիլիկատների դասից, մոնոկլինային ամֆիբոլ, առաջացնում է երկարացված հատիկներ, ինչպես նաև սյունաձև, ճառագայթավոր և թելավոր ագրեգատներ: Բյուրեղները հատվածակողմային են: Գույնը՝ մուգ կապույտ, անգույն: Կարծրությունը՝ 5.5-6.5, հերձականությունը՝ կատարյալ: Գլաուկոֆանային և փայլարային բյուրեղային թերթաքարերին բնորոշ միներալ է:
- Г-295. ГЛИНА – ԿՈՎ, CLAY**, կապակցված, չցեմենտացված նստվածքային ապար, բաղկացած է կավային միներալների (մոնոմորֆիլոնիտ, հալուազիտ, կաոլինիտ, ջրափայլարներ և այլն) նրբագույն < 0.01 մմ, (ըստ այլ դասակարգման < 0.001 կամ < 0.005 մմ) մասնիկներից և ունի պլաստիկության ունակություն: Ըստ ծագման լինում է բեկորային և քիմիական, ըստ առաջացման պայմանների՝ մնացորդային, ծովային, ծովալճակային, դելտային, գետային, լճային և այլն, ըստ միներալային կազմի՝ կաոլինիտային, ջրափայլարային, մոնոմորֆիլոնիտային և այլն, ըստ մեխ. կազմի՝ ալևրիտային, ավազային և այլն:
- Г-296. ГЛИНА АЛЛЮВИАЛЬНАЯ – ԳԵՏԱԲԵՐՈՒԿԱՅԻՆ (ԱԼՅՈՒՎԻԱԼ) ԿՈՎ, ALLUVIAL CLAY**, գոյանում է գետահովիտներում:
- Г-297. ГЛИНА БЕНТОНИТОВАЯ**, տե՛ս Бентонит:
- Г-298. ГЛИНА ГЛУБОКОВОДНАЯ КРАСНАЯ**, տե՛ս Глубоководная красная глина:
- Г-299. ГЛИНА ИЗВЕСТКОВАЯ – ԿՐԱՎԱՎ, CALCAREOUS CLAY**, ապար, որը բաղկացած է կավից (>75%) և կարբոնատային միներալներից:
- Г-300. ГЛИНА ЛЕНТОЧНАЯ – ԺՊԱՎԵՆԱՅԻՆ ԿՈՎ, BANDED CLAY**, մերձառցադաշտային լճերի նուրբ շերտավոր կավային նստվածքներ:
- Г-301. ГЛИНА ОГНЕУПОРНАЯ – ՅՐԱՎԱՅՈՒՆ ԿՈՎ, FIRE CLAY**, պլաստիկ և քարանձան կավ, որն ունի հրակայուն հատկություն, 1580°-ից բարձր:
- Г-302. ГЛИНИСТАЯ ПУСТЫНЯ – ԿԱՎԱՅԻՆ ԱՆԱՊՍ, ARID DESERT WITH CLAY SOIL**, անապատի լայն տարածված տեսակ՝ չոր զոնայի ծովային, լճային, գետային, հեղեղաբերուկ, դելտավիալ նստվածքների վրա:
- Г-303. ГЛИНИСТАЯ СУСПЕНЗИЯ – ԿԱՎԱՅԻՆ ԿԱԽՈՒՅԹ (ՍՈՒՍՊԵՆԶԻԱ), CLAY SUSPENSION**, դիսպերս համակարգ, որում որպես միջավայր ծառայում է ջուրը, իսկ դիսպերս (ցրված) փուլը (բաղադրիչը) ներկայացված է կավային մասնիկներով:
- Г-304. ГЛИНИСТАЯ ФРАКЦИЯ – ԿԱՎԱՅԻՆ ՅԱՏԻՎԱԽՈՒՄԲ (ՖՐԱԿՑԻԱ), CLAY FRACTION**, փուխր գրունտների կազմի մեջ մտնող մասնիկների խումբ (կազմված գլխ. կավային միներալներից), որոնց չափերը չեն գերազանցում 0.001 մմ-ից (ճարտարագիտական երկր-ում) կամ 0.005 մմ-ից (ջրաերկր-ում):
- Г-305. ГЛИНИСТЫЕ МИНЕРАЛЫ – ԿԱՎԱՅԻՆ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, CLAY MINERALS**, գլխ. այլումինի, մագնեզիումի, երկաթի, պղնձի, կալիումի, նատրիումի սիլիկատներ և այլումասիլիկատներ: Կ. մ-ին են պատկանում կաոլինիտի, մոնոմորֆիլոնիտի, պալիգորսկիտի խմբերի միներալները, ինչպես նաև ջրափայլարների, հազվադեպ՝ քլորիտների ու փայլարների մանրաթեփուկավոր ագրեգատները: Կազմում են նստվածքային կավային ապարների հողմահարման կեղևի, հողի գլխա-

վոր մասը, ինչպես նաև մի շարք բեկորային, կարբոնատային և այլ ապարների ցրված (դիսպերս) մասը:

**Г-306. ГЛИНИСТЫЙ МЕРГЕЛЬ – ԿԱՎԱՄԵՐԳԵԼ (ԿԱՎԱՅԻՆ ԿԱՎԱԿՐԱՔԱՐ), CLAY MARL**, կավակրաքար (մերգել), որը պարունակում է 50-75% կավային և 25-50% կարբոնատային մասնիկներ:

**Г-307. ГЛИНИСТЫЙ СЛАНЕЦ – ԿԱՎԱԹԵՐԹԱՔԱՐ, CLAY SHALE, CLAY SLATE**, մոխրագույն կամ սև գույնի պինդ թերթավոր փոխակերպային ապար, որը բաղկացած է գլխ. ջրափայլարներից, քլորիտներից, կաոլինիտից և այլ կավային միներալների մնացորդներից, ինչպես նաև քվարցից, դաշտասպաթից, կարբոնատներից, օրգանական նյութից: Ջրում չի կակղում: Առաջանում է կավերի խտացման (դիագենեզի) և մասնակի վերաբյուրեղացման հետևանքով՝ խորքում խորասուզվելիս: Բնորոշ է ծալքավոր մարզերի ապարների համար:

**Г-308. ГЛИНКА ТЕКТОНИЧЕСКАЯ – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԿԱՎ, ATTRITION CLAY**, կավային զանգված, որն առաջանում է խզման հարթության երկայնքով՝ թևերի շարժման ընթացքում:

**Г-309. ГЛИНОЗЕМ – ԱՐՁՆԱՅՈՂ, ALUMINA**, ալյումինի օքսիդ ( $Al_2O_3$ ): Հայտնի են երեք ձևափոխություններ՝ տրիգոնային (կորունդ), հեքսագոնային և խորանարդային (վերջին երկուսը անկայուն են, ստացվել են արհեստականորեն):

**Г-310. ГЛИНЫ АВТОХТОННЫЕ**, տե՛ս Глины аутигенные:

**Г-311. ГЛИНЫ АЛЛОХТОННЫЕ**, տե՛ս Аллохтонные глины:

**Г-312. ГЛИНЫ АУТИГЕННЫЕ – ՏԵՂԱԾԻՆ (ԱՌՏԻԳԵՆ) ԿԱՎԵՐ, AUTHIGENIC CLAYS**, առաջանում են երկրի մակերևույթին՝ տարբեր ապարների միներալների քիմ. հողմահարման արգասիքում՝ նստվածքակուտակման և դիագենեզի գործընթացների ժամանակ:

**Г-313. ГЛИНЫ ГИДРОСЛЮДИСТЫЕ – ՋՐՓՈՒՅԼԱՐԱՅԻՆ (ՀԻԴՐՈՓՈՒՅԼԱՐԱՅԻՆ) ԿԱՎԵՐ, HYDROMICA CLAYS**, կավեր, որոնց միներալային կազմում գերակշռում են ջրափայլարները (հիդրոփայլարները):

**Г-314. ГЛИНЫ ГЛУБОКОВОДНЫЕ – ԽՈՐՁՐՅԱ ԿԱՎԵՐ**, տե՛ս Глины пелагические:

**Г-315. ГЛИНЫ ДИАТОМОВЫЕ – ԴԻԱՏՈՄԱՅԻՆ ԿԱՎԵՐ, DIATOMACEOUS CLAYS**, կավեր՝ դիատոմային ջրիմուռների մնացորդներով:

**Г-316. ГЛИНЫ ЖИРНЫЕ – ՊԱՐԱՐՏ (ՃԱՐՊՈՏ) ԿԱՎԵՐ, RICH CLAYS**, ունեն բարձր պլաստիկություն, ճարպոտ շոշափում:

**Г-317. ГЛИНЫ КОНТИНЕНТАЛЬНЫЕ – ՑԱՄԱՔԱՅԻՆ ԿԱՎԵՐ, CONTINENTAL CLAYS**, գոյանում են երկրի մակերևույթին ծովային մարզերից դուրս: Առանձնացնում են նստվածքային ծագման լճային, ճահճային, գետային, սառցադաշտային, հողմային (եոլյան), հեղեղաբերուկ (պոռլուվյալ) և լանջային (դելյուվիալ) կավեր:

**Г-318. ГЛИНЫ МОРСКИЕ – ԾՈՎԱՅԻՆ ԿԱՎԵՐ, SEA CLAYS**, առաջանում են ծովերում՝ կավային նյութի նստեցման հետևանքով: Առանձնացվում են ծովի ափամերձ և խորջրյա զոնաների կավեր: Ափամերձ մարզի կավերը պարունակում են բեկորային նյութի զգալի խառնուրդ, խորջրյա կավերը բնորոշվում են ավելի համասեռ հատիկաչափական կազմով: Ծ. կ-երի նրբահատիկ բաղադրամասում առկա են իլլիտը, գլաուկոնիտը, մոնտորիլոնիտը, քլորիտը (տեղածին և ցամաքածին) և ցամաքածին կաոլինիտը:

**Г-319. ГЛИНЫ ОЗЁРНЫЕ – ԼՃԱՅԻՆ ԿԱՎԵՐ, LACUSTRINE CLAY**, գոյանում են աղիացած և քաղցրահամ լճերում: Քաղցրահամ ջրերում առաջանում են հրակայուն կաոլինիտային և բազմամիներալային կավեր, կարող են պարունակել բուսա-

կան մնացորդներ և ֆաունա: Աղիացած լճերում նուրբ մասնաբաժնուն գերակշռում են մոնոմորֆիլոնիտի, քլորիտի, պալիգորսկիտի խմբի միներալները: Բնորոշ տեղածին միներալներն են կարբոնատները, լուծվող աղերը, սուլֆատները, սուլֆիդները և այլն:

**Գ-320. ГЛИНЫ ОСАДОЧНЫЕ – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԿՎՎԵՐ, SEDIMENTARY CLAYS,** առաջանում են հողմահարման կեղևի կավային և այլ արդյունքների ու կավային ապարների ողողաքայքայման, տեղափոխման և կուտակման հետևանքով այն ջրային ավազաններում, որտեղ հոսքը թուլացած է կամ բացակայում է, որտեղ հնարավոր է կավային մասնիկների կոագուլյացիան՝ ծովային ջրերում էլեկտրոլիտների, իսկ ցամաքային ավազաններում հումիմային միացությունների ազդեցության հետևանքով, և որտեղ տեղի չի ունենում նստող կավային մասնիկների խառնում: Ն. կ-ում կավային նյութը կարող է լինել ցամաքածին և տեղածին: Ըստ ծագման՝ Ն. կ. լինում են ծովային, ծովալճակային և ցամաքային:

**Գ-321. ГЛИНЫ ПЕЛАГИЧЕСКИЕ – ՊԵԼԱԳԻԱԼ ԿՎՎԵՐ, PELAGIC CLAYS,** բազմածին կազմի խորջրյա պելագիալ կավային նստվածքներ: Անկարբոնատ նրբահատիկային, շագանակագույն, հազվադեպ աղյուսակարմիր գույնի պելիտային (նրբահատիկային), խոր օքսիդացված տիղմեր, որոնք տարածված են օվկիանոսների հատակի 4000-6000 մ խորություններում: Ավելի փոքր խորություններում փոխարինվում են ֆորամինիֆերային նստվածքներով: Պ. կ. բաղկացած են նրբադիսպերս (նրբացրվածքային) ցամաքածին և հրաբխաբեկորային նյութից (որը բերվում է ցամաքից կախութային վիճակում և հողմերի միջոցով), օվկիանոսի հատակի հրաբխայնության արդյունքներից, տեղածին միներալներից (մոնոմորֆիլոնիտից, ցեոլիթներից)՝ կենսածին նյութի փոքր խառնուրդով (ռադիոլարիաներ, դիատոմային ջրիմուռներ, ֆորամինիֆերներ, ձկների ատամներ) և տիեզերական մասնիկներից: Պ. կ-ում են տեղադրված ժամանակակից երկաթ-մանգանային կոնկրեցիաների առավել հարուստ հանքակուտակները, հոմ.՝ Глины красные глубокоководные:

**Գ-322. ГЛИНЫ ТЕРРИГЕННЫЕ – ՑԱՄԱՔԱԾԻՆ (ՏԵՐՐԻԳԵՆ) ԿՎՎԵՐ, TERRIGENOUS CLAYS,** կավեր և կավային միներալներ, որոնք գոյանում են այն նյութի վերանստեցման հետևանքով, որն առաջանում է տարբեր նստվածքային ապարների քայքայման ընթացքում և հողմահարման կեղևում, տե՛ս ԱЛЛОХТОННЫЕ ГЛИНЫ:

**Գ-323. ГЛИНЫ ТУФОГЕННЫЕ – ՏՈՒՖԱԾԻՆ ԿՎՎԵՐ, TUFFACEOUS CLAYS,** դրանց սովորաբար վերագրում են բենթոնիտները և մոխրային կավերը:

**Գ-324. ГЛИНЫ ЭЛЮВИАЛЬНЫЕ,** տե՛ս Элювиальные глины:

**Գ-325. ГЛИПТОГЕНЕЗ** (հուն. glyptós – քանդակված և genesis – ծագում) – **ՌԵԼԻԵՖԱԶԵՎՎՈՐՈՒՄ, ՌԵԼԻԵՖԱՎՁՄՎՈՐՈՒՄ, GLYPTOGENESIS,** երկրի մակերևույթի ռելիեֆի ձևավորման բոլոր գործընթացների համատեղ գործունեություն:

**Գ-326. ГЛОБИГЕРИНЫ (Globigerina)** (լատ. globus – գունդ և gero – տանում են, կրում են) – **ԳԼՈԲԻԳԵՐԻՆՆԵՐ, GLOBIGERINA,** կենդանիների սեռ՝ ֆորամինիֆերների ենթադասից: Ծովային պլանկտոն օրգանիզմներ են՝ կրային ծակոտկեն, մի քանի գնդանման խցիկներից կազմված խեցիով: Դրանց կուտակումից առաջանում է ժամանակակից գլոբիգերինային տիղմի զգալի մասը: Կավճից – այժմ:

**Գ-327. ГЛОБИГЕРИНОВЫЙ ИЛ – ԳԼՈԲԻԳԵՐԻՆԱՅԻՆ ՏԻՂՄ, GLOBIGERINA OOZE,** բաց գույնի ծովային նստվածք, որը կազմված է առավելապես պլանկտոն ֆորամինիֆերների՝ գլոբիգերինների կրային խեցիկներից: Տարածված է 5000 մ-ից փոքր խորություններում, գլխ. արևադարձային և մերձարևադարձային լայնություններում: Մեծ խորություններում խեցիկները լուծվում են:

**Г-328. ГЛУБИНА КАРЬЕРА – ԲԱՅ ՀԱՆՔԱՐԱՆԻ ԽՈՐՈՒԹՅՈՒՆ, DEPTH OF QUARRY,** բաց հանքարանի վերին ու ներքին եզրագծերի միջև եղած ուղղաձիգ հեռավորություն:

**Г-329. ГЛУБИННАЯ СКЛАДКА – ԽՈՐՔԱՅԻՆ ԾԱԼՔ, DEEP FOLD, BASEMENT FOLD,** հիմքի մակերևույթի և նստվածքային ծածկոցի շերտերի համատեղ ծռվածք: Գոյանում է հիմքի կրկնակի ծռումների և (կամ) նրա՝ խզվածքներով շարժվող տարբեր բլոկների բաժանման հետևանքով:

**Г-330. ГЛУБИННАЯ ЭРОЗИЯ – ԽՈՐՔԱՅԻՆ ՈՂՈՂԱՄԱՇՈՒՄ (ԵՐՈՁԻԱ), DOWN-CUTTING,** ջրային հոսքերի կողմից հունի կամ հովտի խորացում:

**Г-331. ГЛУБИННОЕ СЕЙСМИЧЕСКОЕ ЗОНДИРОВАНИЕ – ԽՈՐՔԱՅԻՆ ՍԵՅՍՄԻԿ ՉՈՆԴՈՒՄ (ԽՈՐԱՉՆՆՈՒՄ), DEEP SEISMIC SOUNDING,** երկրակեղևի և վերին միջնապատյանի կազմության ուսումնասիրման ռեզոնանսային մեթոդ: Հիմնված է երկրի մակերևույթում արհեստականորեն հարուցվող առածոակական ալիքների գրանցման վրա: Կիրառվում է մայր ցամաքների ու օվկիանոսների հատակի տեկտ. շրջանացման, նստվածքային ծածկոցի ու հիմքի կազմության որոշման, ինչպես նաև հնքվ-երի առաջացման համար բարենպաստ կառուցվածքային առանձնահատկությունների բացահայտման համար: Առաջին անգամ առաջարկվել է Գ. Մ. Գամբուրցևի կողմից 1939 թ-ին:

**Г-332. ГЛУБИННЫЕ РАЗЛОМЫ – ԽՈՐՔԱՅԻՆ ԲԵԿՎԱԾՔՆԵՐ, DEEP-SEATED FAULTS, DEEP FAULTS,** երկրակեղևի շարժում և տարբեր պատմություն ունեցող մեզաբլոկները բաժանող գծային ձգված զոնաներ, որոնք հատում են երկրակեղևը և ներթափանցում վերին միջնապատյանը: Դրանց երկարությունը հասնում է հարյուրավոր և հազարավոր կմ-երի, լայնությունը՝ մի քանի տասնյակ կմ-ից մինչև հարյուրավոր կմ-եր, խորությունը՝ մինչև 700 կմ: Բնորոշվում են գոյության երկարատևությամբ: Տերմինը առաջարկվել է Ա. Վ. Պեյվեի կողմից 1945 թ.: Խ. Բ. արտահայտված են տարաբնույթ ճեղքերի, ջարդոտման, միլոնիտացման, թերթավորման զոնաներով, մանր մերձբեկվածքային ծալքավորությամբ: Հաճախ ուղեկցվում են արտաժայթքային, ներժայթքային (ինտրուզիվ) և ուժգին փոխակերպված ապարներով: Խ. Բ. բնորոշվում են երկրաշարժական ալիքների մարման, ծանրության ուժի մեծ աստիճանափոխման, դրական և բացասական մագնիսական անբնականությունների գոտիներով: Ռելիեֆում հաճախ համընկնում են գետահովիտների, ուղիղ տեղամասերի, լեռների զառիթափ լանջերի և ստորջրյա լեռնաշղթաների հետ: Խ. Բ-ի հետ կապված են ուժեղագույն երկրաշարժերը և երկրի ընդերքի բարձր ջերմային հոսքերը: Խ. Բ. լինում են ուղղաձիգ, թեք, հորիզոնական: Խ. Բ. վերահսկում են նստվածքային ու մագմայական ֆորմացիաների կուտակումը, հարակից բլոկների ծալքավորության տիպը և աստիճանը. կարևոր դեր են խաղացել շատ օգտ. հնձ-ների տեղայնացման մեջ, հանդիսացել են ուղիներ հանքապարունակ մագմայական և ջրաջերմային լուծույթների համար:

**Г-333. ГЛУБИННЫЕ РАЗЛОМЫ КОРОВЫЕ – ԿԵՂԵՎԱՅԻՆ ԽՈՐՔԱՅԻՆ ԲԵԿՎԱԾՔՆԵՐ, CRUST DEEP FAULTS,** ծնունդ են առնում երկրակեղևի հատակում կամ միջնապատյանի ամենավերին մասերում:

**Г-334. ГЛУБИННЫЕ РАЗЛОМЫ МЕЖГЛЫБОВЫЕ – ՄԻՋՐԵԿՈՐԱՅԻՆ ԽՈՐՔԱՅԻՆ ԲԵԿՎԱԾՔՆԵՐ, INTERBLOCK DEEP FAULTS,** տարանջատում են ծալքավոր համակարգերի բարձրացումների ու իջեցումների ներսում առանձին մեծաբեկորները՝ պայմանավորելով ծալքավոր զոնայի հիմքի աստիճանավոր կազմությունը: Պատկանում են կեղևային խորքային բեկվածքներին:

- Г-335. ГЛУБИННЫЕ РАЗЛОМЫ ПОПЕРЕЧНЫЕ – ԱՅՆԱԿԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ԲԵԿՎԱԾՔՆԵՐ, CROSS DEEP FAULTS,** համապատասխանում են միջանցական խորքային բեկվածքների հատվածներին, որոնք հատում են ծալքավոր գոտիները տարածման լայնքով:
- Г-336. ГЛУБИННЫЕ РАЗЛОМЫ ПРОДОЛЬНЫЕ – ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ԲԵԿՎԱԾՔՆԵՐ, LONGITUDINAL DEEP FAULTS,** ունեն ծալքավոր համակարգերի հետ ընդհանուր տարածում, ընդգրկում են ծալքավոր մարզերի խորքային բեկվածքների մեծ մասը:
- Г-337. ГЛУБИННЫЕ РАЗЛОМЫ СВЕРХГЛУБОКИЕ – ԳԵՐԽՈՐ ԽՈՐՔԱՅԻՆ ԲԵԿՎԱԾՔՆԵՐ, ULTRADEEP FAULTS,** ըստ Վ. Ե. Խախնի՝ գոյանում են 400-700 կմ խորություններում:
- Г-338. ГЛУБИННЫЕ РАЗЛОМЫ СКВОЗНЫЕ – ՄԻՋԱՆՑԱԿԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ԲԵԿՎԱԾՔՆԵՐ, THROUGH DEEP FAULTS,** հատում են ինչպես ծալքավոր մարզերը, այնպես էլ՝ պլատֆորմները:
- Г-339. ГЛУБИННЫЕ СТРУКТУРЫ – ԽՈՐՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, DEEP-SEATED STRUCTURES,** երկրակեղևի ամենաբարձր կարգի տեկտ. կառուցվածքներ, որոնց կազմությունում մասնակցում է ամբողջ երկրակեղևը և մասամբ՝ վերին միջնապատյանը: Ունեն տարածական մեծ երկարություն (հարյուրավոր և հազարավոր կմ): Բնորոշվում են մի քանի երկրբ. ժամանակաշրջաններում զարգացման երկարատևությամբ և բազմափուլականությամբ: Խ. կ-ին են վերագրվում խորքային բեկվածքները, երկրաանտիկլինալները (կղզեաղեղները), երկրասիճկլինալները (ծայրամասային և ներքին ծովեր), շարժուն գոտիները, պլատֆորմները և այլն:
- Г-340. ГЛУБОКИЙ КАРЬЕР – ԽՈՐ ՔԱՅԱՅԱՆՔ, DEEP OPEN PIT,** բացահանքերի պայմանական կարգախումբ՝ 100 մ-ից ավել խորությամբ:
- Г-341. ГЛУБОКОВОДНАЯ ДОБЫЧА – ԽՈՐՋՐՅԱ ԱՐԴՅՈՒՆԱՅԱՆՈՒՄ, DEEP-WATER OUTPUT,** ծովի հատակի 2000 մ-ից ավելի խոր մասերից հանքապարունակ կոնկրեցիաների, մետաղապարունակ տիղմերի, աղաջրերի արդյունահանում:
- Г-342. ГЛУБОКОВОДНАЯ КРАСНАЯ ГЛИНА – ԽՈՐՋՐՅԱ ԿԱՐՄԻՐ ԿԱՎ,** տե՛ս Глины пелагические:
- Г-343. ГЛУБОКОВОДНОЕ БУРЕНИЕ – ԽՈՐՋՐՅԱ ՀՈՐԱՏՈՒՄ, DEEP-SEA DRILLING,** ծովի հատակի 600 մ-ից մեծ խորություններում հորատանցքերի կառուցման գործընթաց՝ վերջրյա տեխ. միջոցների օգտագործմամբ: Կատարվում է ծովային գրունտի, օվկիանոսի հատակի կառուցվածքի ուսումնասիրության, ինչպես նաև ընդերքից հեղուկ և գազանման օգտ. հնձ-ների արդյունահանման նպատակով:
- Г-344. ГЛУБОКОВОДНЫЕ ЖЕЛОБА – ԽՈՐՋՐՅԱ ՓՈՂՐԱԿՆԵՐ (ՎԻՅԵՐ), OCEANIC TRENCHES, DEEPS,** մայր ցամաքից դեպի օվկիանոս անցողիկ զոնայի ռելիեֆի բնորոշ տարր և կարևոր երկրբ. կառուցվածք: Իրենից ներկայացնում է օվկիանոսի եզրային մասերում խորջրյա երկար թույլ աղեղնաձև իջվածք՝ զառիթափ աստիճանաձև լանջերով և, սովորաբար, հարթ ու նեղ հատակով: Դրանց լայնությունը 10-20 կմ է, երկարությունը՝ 3-5 հազ. կմ, խորությունը՝ 5-11 կմ: Խ. փ-ի հատակը նեղացված է մինչև 4-10 կմ և լցված է սիլիցիտային (դիատոմառադիոլարիային) և ցամաքածին-հրաբխածին նստվածքներով՝ մինչև 2-4 կմ հաստությամբ: Խ. փ-ի մեծ մասը տեղաբաշխված է կղզեաղեղների արտաքին կողմում: Ըստ երևույթին, ափային լեռնաշղթան, կղզեաղեղը, խորջրյա փողրակը և նրան օվկիանոսի կողմից եզերող լայն արգելաթումբը իրենցից ներկայացնում են օրինաչափորեն կրկնվող ձևակառուցվածքային համալիր: Խ. փ-ի առաջացումը կապված է միջի-

նօվկիանոսային լեռնաշղթայի կողմից շարժվող օվկիանոսային քարոլորտի սալի ներքնաշարժմամբ կղզեաղեղային կեղևի տակ՝ սուբդուկցիայի (ընկղման) զոնայում: Այդ գործընթացը բարդացված է տեղային տեկտ. խախտումներով (վարնետքերով), որը հանգեցնում է լանջերում աստիճանների ու սանդղավանդների առաջացմանը: Խ. փ-ին բնորոշ են (բացառությամբ Կայմանի փողրակի) բարձր երկրաշարժականությունը, ծանրության ուժի բացասական անբնականոնությունները, երկու նշանների մագնիսական անբնականոնությունները և ջերմային հոսքի ցածրացված արժեքները: Նույնն է՝ Желоб океанический:

**Г-345. ГЛУБОКОВОДНЫЕ ОТЛОЖЕНИЯ – ԽՈՐՋՐՅԱ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, DEEP SEA DEPOSITS, տե՛ս** Абиссальные отложения:

**Г-346. ГЛУБОКОВОДНЫЙ БЕНТОС – ԽՈՐՋՐՅԱ ՀԱՏՎԱԲՆԱԿՆԵՐ (ԲԵՆԹՈՍ), ABYSSAL BENTHOS, օվկիանոսների ու ծովերի խորջրյա (աբիսալ) մարզի հատակաբնակ օրգանիզմների համախմբություն:**

**Г-347. ГЛУБОКОЕ БУРЕНИЕ – ԽՈՐ ՀՈՐԱՏՈՒՄ, DEEP DRILLING, հորատման գործընթաց** երկրակեղևի 4500-6000 մ խորություններում:

**Г-348. ГЛУБОКОФОКУСНЫЕ ЗЕМЛЕТРЯСЕНИЯ – ԽՈՐՔԱԿԻԶԱԿԵՏԱՅԻՆ (ԽՈՐՔԱՕՋԱԽԱՅԻՆ) ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐ, DEEP-FOCUS EARTHQUAKES, երկրաշարժեր,** որոնց օջախների տեղաբաշխման խորությունը հասնում է 700 կմ-ի: Բնորոշ են մայր ցամաքների ու օվկիանոսների անցողիկ զոնային: Երբեմն առանձնացնում են երկրաշարժեր՝ օջախների միջանկյալ խորությամբ (70-300 կմ) և բուն խորքաօջախային երկրաշարժեր (խոր 300 կմ-ից):

**Г-349. ГЛЫБОВАЯ СКЛАДЧАТОСТЬ – ՄԵԾԱԲԵԿՈՐԱՅԻՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, BLOCK FOLDING, նստվածքային ծածկոցում սնդուկածև բարձրացումներ ու իջեցումներ,** որոնց լայնությունը կազմում է մեկ կամ մի քանի տասնյակ կմ: Դրանք միմյանց հետ կապված են կրկնակրություններով (ֆլեքսուրաներով) կամ վարնետքերով: Վերջինիս դեպքում Մ. ծ. անցնում է հորստերի ու գրաբեկների համախմբության: Տարածված են առավելապես ծալքավոր գոտիների եզրերում: Առաջանում են ամրապնդված կեղևի բլոկների ուղղաձիգ շարժումների հետևանքով:

**Г-350. ГЛЫБОВЫЕ ГОРЫ, СБРОСОВЫЕ ГОРЫ – ՄԵԾԱԲԵԿՈՐԱՅԻՆ ԼԵՌՆԵՐ, ՎԱՐՆԵՏՔԱՅԻՆ ԼԵՌՆԵՐ, BLOCK-MOUNTAINS, FAULTED MOUNTAINS, լեռներ,** որոնց ռելիեֆը պայմանավորված է հիմնականում բեկվածքներով կոտրատված երկրակեղևի առանձին մեծաբեկորների տարբերակված շարժումներով: Գոյանում են կրկնական լեռնագոյացման դեպքում այն տեղամասերում, որտեղ երկրակեղևը կորցրել է պլաստիկությունը: Բնորոշվում են զանգվածայնությամբ, զառիթափ լանջերով, մասնատվածությամբ: Կախված կառուցվածքային առանձնահատկություններից՝ առանձնացնում են սեղանաձև մեծաբեկորային լեռներ և ծալքամեծաբեկորային լեռներ:

**Г-351. ГЛЫБОВЫЕ СКЛАДКИ, ШТАМПОВЫЕ СКЛАДКИ, ОТРАЖЁННЫЕ СКЛАДКИ – ՄԵԾԱԲԵԿՈՐԱՅԻՆ ԾԱԼՔԵՐ, ԴՐՈՇՄԱՅԻՆ ԾԱԼՔԵՐ, ԱՆԴՐԱԴԱՐՁՎԱԾ ԾԱԼՔԵՐ, BLOCK FOLDS, նստվածքային ծածկոցում ապարների շերտերի ծռվածքներ,** որոնք գոյացել են հիմքի բլոկների տարբերակված շարժումների հետևանքով:

**Г-352. ГЛЫБЫ – ՄԵԾԱԲԵԿՈՐՆԵՐ, ԽՈՇՈՐԱԲԵԿՈՐՆԵՐ, BLOCKS, MASSIFS. 1)** երկրակեղևի բեկվածքներով առանձնացված տեղամասեր, որոնք հարակիցներից տարբերվում են կազմությամբ, ուղղաձիգ շարժումների ուղղությամբ և արագությամբ: 2) Եկզոտիկ կամ սառցադաշտային պոկվածքներ (լայնությունը և երկարությունը մի քանի հարյուր մ, հաստությունը՝ տասնյակ մ-եր), որոնք տեղադրման

սկզբնական վայրից սառցադաշտերով տեղափոխվել են տասնյակ և հարյուրավոր կմ: 3) Ապարների բեկորներ, որոնց տրամագիծը մեծ է 1 մ-ից:

**Г-353. ГЛЯЦИАЛЬНЫЙ РЕЛЬЕФ**, տե՛ս Ледниковый рельеф:

**Г-354. ГЛЯЦИОДИСЛОКАЦИИ** (լատ. glacies – սառույց և ուշ լատ. dislokatio – տեղաշարժ) – **ՍԱՌՑԱՏԵՂԱԽԱՆՏՈՒՄՆԵՐ (ՍԱՌՑԱԴԻՍԼՈՎԱՑԻԱՆԵՐ), GLACIAL TECTONICS**, ապարների տեղադրման խախտում՝ սառցադաշտի ճնշման տակ (ծալքեր, փոքր վրաշարժեր և այլն): Սովորաբար գոյանում են արմատական հիմնատակի ռելիեֆի անհարթությունների առկայության դեպքում, որոնք խոչընդոտում են սառցադաշտային զանգվածի շարժմանը: Ունեն սահմանափակ տարածում և չեն ներառում խոր տեղադրված շերտերը:

**Г-355. ГЛЯЦИОЛОГИЯ** (լատ. glacies – սառույց և հուն. lógos – ուսմունք) – **ՍԱՌՑԱ-(ՂԱՇՏԱ)ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՍԱՌՑԱ(ՂԱՇՏԱ)ԲԱՆՈՒԹՅՈՒՆ, GLACIOLOGY**, ուսմունք սառցադաշտերի մասին: Ուսումնասիրում է սառցադաշտերի առաջացման, տարածման, գոյության ու շարժման պայմանները, սառցի կազմը, կառուցվածքը, ֆիզ. հատկանիշները, ինչպես նաև սառցադաշտերի երկրբ. և երկրաձևաբանական գործունեությունը:

**Г-356. ГНЕЙС** (գերմ. Gneis) – **ԳՆԵՅՍ, ԳՂՁԱՔԱՐ, GNEISS**, փոխակերպային (մետամորֆային) ապար, բաղկացած է առավելապես քվարցից, կալիումային դաշտասպաթից, պլագիոկլազից և թխավուն միներալներից (պիրոքսեններից, եղջերախաբից, փայլարներից): Բնորոշվում է զուգահեռ-թերթավոր և նուրբ զոլավոր կազմությամբ: Երկրորդային միներալներ են նմաքարը, կորդիերիտը, դիստենը սիլիմանիտը և այլն: Ուղեկից (ակցեսորային) միներալներ են սֆենը, ռուտիլը, ցիրկոնը, ապատիտը, մագնետիտը, կարբոնատները: Միներալաբանական կազմով, երբեմն նաև կառուցվածքով մոտ է գրանիտին: Տարբերում են օրթոգնեյսներ, որոնք առաջանում են արտաժայթքային ապարների փոխակերպումից, և պարագնեյսներ՝ առաջանում են նստվածքային ապարների փոխակերպումից: Ըստ միներալային կազմի՝ առանձնացնում են պլագիոկլազներ (պլագիոկլազը կտրուկ գերակշռում է կալիումային դաշտասպաթի նկատմամբ), բիոտիտային, մուսկովիտային, երկփայլարային, ամֆիբոլային, պիրոքսենային Գ-ներ:

**Г-357. ГНЕЙСЫ ЩЕЛОЧНЫЕ – ԱԼԿԱԼԻԱԿԱՆ ԳՆԵՅՄՆԵՐ (ԳՂՁԱՔԱՐԵՐ), ALKALI GNEISS**, թխավուն միներալներից պարունակում են ալկալիական պիրոքսեններ (եգիրինավադիտ, եգիրին) և ամֆիբոլներ (արֆեդսոնիտ, ռեբեկիտ):

**Г-358. ГНЕЙС КВАРЦЕВЫЙ – ՔՎԱՐՑԱՅԻՆ ԳՆԵՅՍ (ԳՂՁԱՔԱՐ), QUARTZ GNEISS**, գնեյս, որը հարուստ է քվարցով, վերջինը հանդիպում է ոչ միայն հատիկների, այլև փոքր նրբաշերտիկների տեսքով:

**Г-359. ГНЕЙСОВАЯ ТЕКСТУРА – ԳՆԵՅՍԱՅԻՆ (ԳՂՁԱՔԱՐԱՅԻՆ) ԿԱԶՄՎԱԾՔ (ՏԵՔՍՏՈՒՐԱ), GNEISSIC STRUCTURE**, հատուկ է թերթավոր կամ թերթատված հրային ապարներին, ինչպես նաև գնեյսներին, միզմատիտներին, ամֆիբոլիթներին: Արտահայտվում է մի շարք միներալների զուգահեռ կողմնորոշմամբ, ապարում տարբեր միներալային կազմի ու կառուցվածքի նրբազուլերի ու ոսպնյակների հերթափոխմամբ:

**Г-360. ГНЕЙСО-ГРАНИТ – ԳՆԵՅՍԱԳՐԱՆԻՏ, GNEISS-GRANITE**, ըստ կազմի գրանիտին համապատասխանող մագմայական ապար, որի կազմվածքը պայմանավորված է մագմայական բյուրեղացմամբ և նմանվում է գնեյսների կազմվածքին: Շատ հետազոտողներ օգտագործում են որպես «գրանիտագնեյս» տերմինի հոմ., որը ճիշտ չէ:

- Г-361. ГОЛИЦИНА СЛОЙ** (ռուս. գիտ. Բ. Բ. Գոլիցինի անունից) – **ԳՈԼԻՑԻՆԻ ՇԵՐՏ, GOLITSYN'S LAYER**, Երկրի վերին միջնապատյանի ստորին մաս: Տեղաբաշխված է 400-900 կմ խորություններում: Բացահայտված է 1916 թ. ռուս երկրաֆիզիկոս Բ. Բ. Գոլիցինի կողմից՝ երկրաշարժական ալիքների արագության ուժգին աճման հիման վրա:
- Г-362. ГОЛО...** (հուն. hólos – ամբողջովին, լրիվ) – **ՀՈԼՈ..., HOLO...**, բարդ բառերի նախածանց, որը ցույց է տալիս լրիվություն, ամբողջություն, ավարտում:
- Г-363. ГОЛОВОНОГИЕ МОЛЛЮСКИ** (Cephalopoda) – **ԳԼԵՈՏԱՆԻ ՓՈՓՎԱՍԱՐՄԻՆՆԵՐ, CEPHALOPODS**, փափկամարմինների դաս, որն ընդգրկում է փափկամարմինների առավել զարգացած խոշոր (մինչև 18 մ երկարության) ձևերը: Մոտ 600 տեսակ: Մարմինը խիստ մասնատված է գլխի և մարմնային մասի, ոտքը ձևափոխված է շոշափուկների կամ «ձեռքերի» և ձագարի: Բնակվում են միայն ծովերում: Դրանց են պատկանում կալմարները, ութոտնիկները, բրածո խմբերից՝ ամոնիտները, բելեմնիտները և այլն: Քեմբրիից – այժմ:
- Г-364. ГОЛОСЕМЕННЫЕ** (Gymnospermae) (հուն. gýmnōs – մերկ և sperma – սերմ) – **ՄԵՐԿԱՍԵՐՄԵՐ (ՄԵՐԿԱՍԵՐՄ ԲՈՒՅՍԵՐ), GYMNOSPERMS**, սերմնավոր բույսերի ամենահին դաս: Միջանկյալ տեղ է գրավում պտերակերպ և ծածկասերմ բույսերի միջև: Մոտ 800 տեսակ (ծառեր, թփուտներ): Բրածո մնացորդները հայտնի են դեռևս, ծաղկումը՝ պալեոգոյի վերջում և մեզոգոյի սկզբում: Հիմնական ներկայացուցիչներն են՝ փշատերևները, սագոյիները, տափաստամանրիները:
- Г-365. ГОЛОТИП** (հուն. típos – կերպարանք, կերպ) – **ՀՈԼՈՏԻՊ, HOLOTYPE**, տեսակի որոշման ժամանակ հեղինակի ընտրած տիպական օրինակ:
- Г-366. ГОЛОЦЕН, ПОСЛЕЛЕДНИКОВАЯ ЭПОХА** (հուն. hólos – ամբողջովին և kainós – նոր) – **ՀՈԼՈՑԵՆ, ՀԵՏԱՈՒՑԱԴՆՇԱՅԻՆ ԴԱՐԱՎԱՐԳ, HOLOCENE, POST-GLACIAL EPOCH**: Ժամանակակից երկրաբանական դարակարգ, կազմում է Երկրի երկրբ. պատմության չորրորդական (անտրոպոգենյան) ժամանակաշրջանի վերջին, դեռևս չավարտված հատվածը: Սկիզբը (10000 տ.) համախատասխանում է Հս. Եվրոպայի վերջին մայցամաքային սառցապատման ավարտին: Հ. բաժանում են հատվածների՝ կլիմայի զարգացման հաջորդական փուլերին համապատասխան: Հ-ի ընթացքում ցամաքը և ծովը ընդունել են ժամանակակից ուրվագծերը, ձևավորվել են ժամանակակից աշխ. զոնաները, գետերի ողողահունային դարավանդները: Հ-ի մոտ 2/3-ը պատմական ժամանակն է: Հոմ. ժամանակակից նստվածքներ:
- Г-367. ГОЛУБОЙ АСБЕСТ – ԵՐԿԱՎՈՒՅՆ ԱՍԲԵՍՏ (Ե. ԿՏԱՎԱՔԱՐ, Ե. ԼԵՆԱՅԻՆ ՎՈՒՇ), BLUE ASBESTOS, BLUE ASBESTUS, BLUE EARTH FLAX, BLUE MOUNTAIN FLAX**, միներալ, ռիբեկիտի և մագնեզիառիբեկիտի թելավոր տարատեսակ. հոմ. կրոկիդոլիթ:
- Г-368. ГОЛУБОЙ ИЛ – ԵՐԿԱՎՈՒՅՆ ՏԻՂՍ, BLUE OOZE**, ժամանակակից ծովային տիղմերի տեսակ, որը տարածված է մայրցամաքային լանջի սահմաններում: Երկնագույն գույնը պայմանավորված է գլաուկոնիտի առկայությամբ:
- Г-369. ГОМО...** (հուն. homós – հավասար, համանման, միատեսակ) – **ՀՈՍՈ..., ՀԱՍԱ..., ՄԻԱ..., ՆՄԱՆԱ..., НОМО...,** բարդ բառերի նախածանց, նշանակում է հավասարություն, միասնություն, նմանություն, միասեռություն:
- Г-370. ГОМОГЕННЫЙ ВУЛКАН** (հուն. homogenḗs – համասեռ և հրաբուխ) – **ՀԱՍԱՍԵՆ ԶՐԱՐՈՒՄ, HOMOGENEOUS VOLCANO**, համասեռ նյութից կազմված հրաբուխ (օր.՝ միայն լավայից կամ միայն փուխր հրաբեկորային նյութից):



- Г-371. ГОМОКЛИНАЛЬ** (հուն. homós – հավասար, միատեսակ և klinō – կռանում են, թեքվում են) – **ՀԱՄԱԹԵՔ (ՀԱՄԱԿԼԻՆԱԼ), HOMOCLINE**, միաթեքվածք՝ շերտերի հավասարաչափ թեքությամբ:
- Г-372. ГОМОТЕРМИЯ** (հուն. homós – հավասար, միատեսակ և thermē – տաքություն) – **ՄԻԱԶԵՐՄՈՒԹՅՈՒՆ, ՀՈՍՈԹԵՐՄԻԱ, HOMOTHERMY**, ջրաբանության մեջ ջրավազանների (լճերի, գետերի) ջրի ամբողջ զանգվածում միատեսակ ջերմաստիճան և խտություն:
- Г-373. ГОМОТИПНЫЕ ДОЛИНЫ** (հուն. homós – հավասար, միատեսակ և týpos – նմուշ, տեսակ) – **ՄԻԱՏԵՍԱԿ ՀՈՎԻՏՆԵՐ, HOMOTYPIC VALLEYS**, հովիտներ՝ միատեսակ ձևաբանական տեսքով և ծագումով:
- Г-374. ГОНДВАНА** (Կենտրոնական Հնդկաստանի պատմական մարզի անվանումից) – **ԳՈՆԴՎԱՆԱ, GONDWANA, GONDWANALAND**, ենթադրական հսկա մայր ցամաք, որը զոյություն է ունեցել պալեոզոյի մեծ մասում և մեզոզոյի սկզբում, Հր. կիսագնդում, ներառել է ժամանակակից մայր ցամաքների՝ Հր. Ամերիկայի, Աֆրիկայի, Ասիայի, Ավստրալիայի և հնարավոր է՝ Անտարկտիդայի զգալի մասերը: Պալեոզոյում Գ-ի մեծ մասում (բացառությամբ եզրերի) տիրապետել է ցամաքային ռեժիմը: Այն տեղաբաշխված է եղել բարեխառն ու սառը կլիմայի զոնաներում, որը հաստատվում է միջքեմերիում, քեմերիում, օրդովիկում, սիլուրում, հատկապես կարբոնում՝ լեռնային ու մայրցամաքային սառցապատումների հետքերով: Պերմում տեղի է ունեցել կլիմայի տաքացում, որի մասին վկայում է ածխաբեր նստվածքների լայն տարածումը: Մեզոզոյի ընթացքում տեղի է ունեցել Գ-ի մասնատումը առանձին մեծաթեկորների ու դրանց հորիզոնական տեղաշարժ՝ կապված օվկիանոսի հատակի սպրեդինգի հետ: Կավճի ժամանակաշրջանում այն դադարել է գոյություն ունենալուց՝ որպես մի միասնական ամբողջություն:
- Г-375. ГОНИАТИТЫ** (Goniatitida) (հուն. gonia – անկյուն) – **ԳՈՆԻԱՏԻՏՆԵՐ, GONIATITES**, գլխոտանի փափկամարմինների հնագույն և լայն տարածում ունեցող մահացած կարգ:
- Г-376. ГОНИОМЕТР** (հուն. gonia – անկյուն) – **ԱՆԿՅՈՒՆԱԶՈՓ, GONIOMETER**, բյուրեղի միստերի միջև գտնվող անկյան չափման սարք:
- Г-377. ГОРА – ՍԱՐ, ԼԵՌ, MOUNT, 1)** երկրակեղևի մակերևույթի համեմատաբար սահմանափակ չափերի կտրուկ տեղային բարձունք, որը շատ թե քիչ հարթ տարածքում մեկուսացված ձևով ունի ավելի քան 200 մ բարձրություն և բոլոր կողմերից տեղագրական մակերևույթում ունի որոշակի արտահայտված ստորոտ: 2) Գագաթ լեռնային երկրներում:
- Г-378. ГОРИЗОНТ** (հուն. horizōn – սեռ. հ. horizontos, horizō-ից – սահմանափակում են) – **ՀՈՐԻԶՈՆ, HORIZON, 1)** բաց տեղանքում երկրի մակերևույթի՝ աչքով տեսանելի մաս: Տեսանելի Հ-ը գիծ է, որով երկինքը կարծես թե սահմանակցվում է երկրի մակերևույթին: 2) երկրբ-ում տե՛ս Маркирующий горизонт, Стратиграфический горизонт:
- Г-379. ГОРИЗОНТАЛИ – ՀՈՐԻԶՈՆԱԳԾԵՐ, ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆՆԵՐ, CONTOURS**, երկրի մակերևույթի բարձրությունների հավասարագծեր, որոնց համախմբությունը արտահայտում է տեղանքի ռելիեֆը, նույնն է՝ **Изогипсы**:
- Г-380. ГОРИЗОНТАЛЬНАЯ СЛОИСТОСТЬ – ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, HORIZONTAL BEDDING, LAMINATION**, ապարների շերտավորություն՝ բաղկացած շերտերից և շերտիկներից, որոնք զուգահեռ են միմյանց և շերտավորման հարթություններին: Առաջանում է անշարժ կամ թույլ շարժում միջավայրում (օդային կամ ջրային):

- Г-381. ГОРИЗОНТАЛЬНЫЕ ДВИЖЕНИЯ ЗЕМНОЙ КОРЫ – ԵՐԿՐԱԿԵՂԵՎԻ ԶՈՐԻ-ՉՈՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ**, տե՛ս Движения тектонические, Тектоника плит:
- Г-382. ГОРИЗОНТАЛЬНОЕ ЗАЛЕГАНИЕ – ԶՈՐԻՉՈՆԱԿԱՆ ՏԵՂԱԴՐՈՒՄ, FLAT BED, FLAT PITCH**, ապարների տեղադրում, որի դեպքում շերտերը գտնվում են մոտավորապես հորիզոնական դիրքում:
- Г-383. ГОРИЗОНТАЛЬНОЕ РАСЧЛЕНЕНИЕ ГОР – ԼԵՌՆԵՐԻ ԶՈՐԻՉՈՆԱԿԱՆ ՄԱՍԼԱՏՈՒՄ, HORIZONTAL DISSECTION OF MOUNTAINS**, ուրվանկար (հատակագծում)՝ առաջացած տարբեր կարգի լեռնաշղթաներով, գետահովիտներով և լեռնային երկրների այլ լեռնագրական տարրերով:
- Г-384. ГОРНАЯ ВЕРШИНА – ԼԵՌՆԱԳԱՎԱԹ, SUMMIT OF MOUNTAIN**, լեռան, լեռնագանգվածի կամ լեռնաշղթայի կատարի ամենաբարձր մաս:
- Г-385. ГОРНАЯ ВЫРАБОТКА**, տե՛ս Выработка горная:
- Г-386. ГОРНАЯ ГЕОЛОГИЯ – ԼԵՌՆԱՅԻՆ (ՉԱՆՔԱՅԻՆ) ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ROCK GEOLOGY**, գիտություն, որը զբաղվում է օգտ. հնժ-ների հնքվ-երի շահագործման ընթացքում երկր. գործոնների ու լեռնաերկրաբանական երևույթների զարգացման օրինաչափությունների ուսումնասիրությամբ: Ներառում է հանքային ջրաերկր., հանքային երկրասառցաբանությունը, հանքային երկրաֆիզիկան, նավթագա-արդյունագործական երկրաբանությունը և այլն: Լ. Ե-յան հիմնական նպատակը հանքային արտադրության երկր. ապահովումն է՝ նախագծման, շինարարության, շահագործման և հանքարդյունահանման ձեռնարկության լուծարքի դեպքում:
- Г-387. ГОРНАЯ ПОРОДА – ԱՊԱՐ, ROCK**, շատ թե քիչ կայուն միներալային ու քիմ. կազմ ունեցող միներալների բնական ագրեգատ (գանգված), որը երկրակեղևում առաջացնում է ինքնուրույն երկր. մարմին: Միներալային հատիկների ձևը, չափերը և փոխադարձ տեղաբաշխումը պայմանավորում են ապարի կառուցվածքը և կազմվածքը: Ըստ ծագման՝ առանձնացնում են մագմայական, նստվածքային և փոխակերպային ապարներ: Մագմայական ու փոխակերպային (մետամորֆային) ապարները կազմում են երկրակեղևի ծավալի մոտ 90%-ը, մնացած 10%-ը կազմում են նստվածքային ապարները, սակայն վերջինները գրավում են երկրակեղևի մակերևույթի տարածքի մոտ 75 %-ը:
- Г-388. ГОРНАЯ ПУСТЫНЯ – ԼԵՌՆԱՅԻՆ ԱՆԱՊԱՏ, MOUNTAIN DESERT**, բարձր լեռնային մարզում գտնվող անապատ, որը բնորոշվում է մանրահողային, հաճախ խճաքարային հողմահարման կեղևի զարգացմամբ:
- Г-389. ГОРНАЯ РЕКА – ԼԵՌՆԱՅԻՆ ԳԵՏ, MOUNTAIN RIVER, MOUNTAIN TORRENT**, բնորոշվում է ջրի մակերևույթի մեծ թեքությամբ և արագ հոսքով: Հոսում է սովորաբար խոր, թույլ մշակված հովտով, հաճախ հանդիպում են սահանքներ ու ջրվեժներ:
- Г-390. ГОРНАЯ СИСТЕМА – ԼԵՌՆԱՅԻՆ ԶԱՍԱԿԱՐԳ, MOUNTAIN SYSTEM**, ընդհանուր ծագմամբ և երկր. զարգացման պատմության ընդհանրությամբ միավորված լեռնաշղթաների համախմբություն:
- Г-391. ГОРНАЯ СТРАНА – ԼԵՌՆԱՅԻՆ ԵՐԿԻՐ, MOUNTAINS, MOUNTAIN LAND**, բարդ լեռնային բարձրացում՝ բաղկացած մի քանի լեռնահամակարգերից, որոնք առաջացել են միևնույն կամ ժամանակի տեսակետից մոտ տեկտոգենեզի ընթացքում: Լեռնային կառույցների շրջանացման միավոր է: Օր.՝ Կովկասի կազմում առանձնացվում են Մեծ Կովկասը, Այսրկովկասը, Փոքր Կովկասը և Հայկական հրաբխային բարձրավանդակը:
- Г-392. ГОРНАЯ ЦЕПЬ – ԼԵՌՆԱՇԱՐՔ, MOUNTAIN CHAIN, MOUNTAIN RANGE**, երկար լեռնաշղթա, որը ձգված է ծալքերի ընդհանուր տարածման ուղղությամբ

և հարակից շարքերից անջատված է երկայնական տեկտ. կամ ողողամաշման հովիտներով:

**Г-393. ГОРНОЕ ДАВЛЕНИЕ – ԼԵՌՆԱՅԻՆ ԾՆՇՈՒՄ, ԸՆԴԵՐՔԱՅԻՆ ԾՆՇՈՒՄ, ROCK PRESSURE**, փորվածքը շրջապատող ապարների զանգվածում առաջացող լարվածություններ:

**Г-394. ГОРНОЕ ДЕЛО – ԼԵՌՆԱՅԻՆ (ՉԱՆՔԱՅԻՆ) ԳՈՐԾ, MINING, MINING ENGINEERING**, գիտության և տեխնիկայի ճյուղ, որն ընդգրկում է երկրի ընդերքից օգտ. հնժ-ների արդյունահանման ու սկզբնական վերամշակման գործընթացները:

**Г-395. ГОРНОЕ ОЗЕРО – ԼԵՌՆԱՅԻՆ ԼԻՑ, MOUNTAIN LAKE**, ջրավազան լեռներում՝ հաճախ տեկտ., սառցադաշտային կամ պատվարային ծագման:

**Г-396. ГОРНОРУДНАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ – ԼԵՌՆԱՉԱՆՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՐԵՐՈՒԹՅՈՒՆ, MINING INDUSTRY**, հանքային արդյունաբերության ճյուղ, որը զբաղվում է հանքաքարի (գլխ. մետաղական) արդյունահանմամբ և նախնական վերամշակմամբ:

**Г-397. ГОРНОСПАСАТЕЛЬНЫЕ РАБОТЫ – ՉԱՆՔՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, MINE RESCUE ACTION**, հատուկ աշխատանքներ, որոնք կատարում են ռազմականացված հանքափրկարարական ջոկատները և հանքահորի անձնակազմը՝ վթարների ժամանակ: Հիմնական խնդիրը մարդկանց փրկումն է և վթարների ու դրանց հետևանքների վերացումը:

**Г-398. ГОРНЫЕ ЛЕДНИКИ – ԼԵՌՆԱՅԻՆ ՍԱՌՑԱԳԱՇՏԵՐ, MOUNTAIN GLACIERS**, լեռնային երկրների սառցադաշտեր, որոնք ձևաբանորեն ու շարժունակությամբ լրիվ ենթակա են ռելիեֆին: Սովորաբար տեղաբաշխված են լեռնային հովիտների վերին մասում (հովտային սառցադաշտեր) և լանջերի ցածրացումներում (կախված սառցադաշտեր), ինչպես նաև լեռների մերձզագաթային մասերում (կառային սառցադաշտեր):

**Г-399. ГОРНЫЙ ВОСК – ԼԵՌՆԱՍՈՍ, ՉԱՆՔԱՍՈՍ, EARTH WAX, MINERAL WAX**, տե՛ս Озокерит:

**Г-400. ГОРНЫЙ КОМПАС – ԼԵՌՆԱՅԻՆ ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ, SURVEYOR'S COMPASS**, գործիք, որը ծառայում է երկրբ. հանույթի ընթացքում երկրբ. մարմինների (շերտեր, երակներ և այլն) տեղադրման տարրերը (տարածման ու անկման ազիմուտը, անկման անկյունը) չափելու համար:

**Г-401. ГОРНЫЙ ЛАНДШАФТ – ԼԵՌՆԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏ (ԲՆԱՊԱՏԿԵՐ), MOUNTAIN LANDSCAPE**, լանդշաֆտի (բնապատկերի) դաս, ձևավորվել է լեռներում, աչքի է ընկնում բնական պայմանների հակադրությամբ, որը պայմանավորված է բարձրությունների տարբերությամբ, լանջերի դիրքով, երկրբ. կառուցվածքով: Ստորաբաժանվում է ցածրալեռնային, միջին լեռնային և բարձրալեռնային ենթադասերի:

**Г-402. ГОРНЫЙ ЛЁН – ԼԵՌՆԱՅԻՆ ՎՈՒՇ, տե՛ս Асбест:**

**Г-403. ГОРНЫЙ МАССИВ – ԼԵՌՆԱՉԱՆԳՎԱԾ, MOUNTAIN MASSIF**, լեռնային երկրի թույլ մասնատված տեղամաս, որը տեղադրված է շատ թե քիչ մեկուսի և ունի մոտավորապես հավասար երկարություն և լայնություն (օր.՝ Մոմբլանը Ալպերում):

**Г-404. ГОРНЫЙ ОБВАЛ – ԼԵՌՆԱՅԻՆ ՓԼՎԱԾՔ, ROCK FALL**, ապարների խոշոր զանգվածի աղետալի անկում մեծաթեք և զառիթափ լանջերից: Տեղի է ունենում հողմահարման, մակերևութային և ստր. ջրերի, ծանրության ուժի ազդեցության հետևանքով: Հատկապես բնորոշ է երկրաշարժակտիվ շրջաններին:

**Г-405. ГОРНЫЙ ПОЯС – ԼԵՌՆԱՅԻՆ ԳՈՏԻ, MOUNTAIN BELT**, 1) լայնարձակ, լայն գոտու տեսքով գծային ձգված, հաջորդաբար տեղաբաշխված լեռնային երկրնե-

րի համախմբություն: Լեռնային կառույցների շրջանացման խոշորագույն միավոր: Երկարությունը կարող է հասնել մի քանի տասնյակ հազ. կմ, լայնությունը՝ մինչև մի քանի հազ. կմ: Երկրաբանակառուցվածքային տեսակետից համապատասխանում է ծալքավոր գոտուն (օր.՝ Ալպ-Հիմալայան): Լ. գ-ու ամենաերիտասարդ մասերը ներկայացված են ալպյան լեռնագոյացման հետզետոսիկլինալային տիպերով (օր.՝ Ալպերը, Կովկասը, Հիմալայները և այլն): Ավելի հները պատկանում են վերածնված լեռներին, որոնք տարբեր չափի քայքայվել են և այնուհետև երիտասարդացել են նորագույն տեկտ. շարժումներով: 2) Բարձրաբերձ գոտու հոմ.:

**Г-406. ГОРНЫЙ УЗЕЛ – ԼԵՌՆԱՅԻՆ ՉԱՆԳՈՒՅՑ, MOUNTAIN KNOT, PLEXUS OF MOUNTAINS**, երկու կամ մի քանի լեռնաշղթաների հատման կամ միակցման մարզ, որին հարում են լեռնային երկրի ամենամեծ բարձրությունները:

**Г-407. ГОРНЫЙ ХРЕБЕТ – ԼԵՌՆԱՇՆՂՈՒ, RIDGE**, գծային ձգված լեռնային կառույց՝ հակադիր կողմեր թեքված լանջերով: Բնորոշվում է զգալի երկարությամբ, լավ արտահայտված առանցքով՝ հաճախ միասնական ջրբաժանի միասնական գծով, որի երկարությամբ տեղաբաշխված են առավել մեծ բարձրությունները:

**Г-408. ГОРНЫЙ ХРУСТАЛЬ – ՎԱՆԱԿՆ (ԼԵՌՆԱԲՅՈՒՐԵՂ, ԼԵՌՆԱՅԻՆ ԲՅՈՒՐԵՂԱՊԱԿԻ), ROCK CRYSTAL**, միներալ, քվարցի բյուրեղների անգույն, թափանցիկ տարատեսակ: Հանդիպում է ապարների դատարկություններում, պեգմատիտներում, ալպյան տիպի երակներում՝ եզակի բյուրեղներով, երբեմն՝ բյուրեղաբուլբուլներով: Ոսկերչության ու պիեզոէլեկտրականության մեջ օգտագործվում է որպես հումք:

**Г-409. ГОРООБРАЗОВАНИЕ – ԼԵՌՆԱԳՈՅԱՑՈՒՄ, MOUNTAIN BUILDING, OROGENESIS, OROGENY**, տեկտ. շարժումների և լեռկացման (դենուդացիոն) գործընթացների համախմբություն (առաջինների գերակշռությամբ), որը հանգեցնում է լեռնային կառույցների գոյացմանը: Արտահայտվում է ինչպես երկրասինկլինալի տեղում (հետերկրասինկլինալային լեռներ), այնպես էլ պլատֆորմի վրա (հետապլատֆորմային, էպիպլատֆորմային լեռներ): Լ. հատկապես բնորոշ է քարոլորտի սալերի սահմանային զոնաներին:

**Г-410. ГОРСТ** (գերմ. Horst) – **ՀՈՐՍ (ԲԱՐՉՐԱՏԵՂԱՆՔ), HORST, ELEVATED BLOCK, UPLIFTED FAULT-BLOCK**, երկրակեղևի բարձրացված, սովորաբար ձգված տեղամաս, որը սահմանափակված է մեծաթեք խզվածքներով՝ վարնետքերով կամ (բավականին հազվադեպ) վերնետքերով: Հ-ի չափերը տարբեր են. լայնությունը կարող է հասնել մի քանի տասնյակ կմ-ի, երկարությունը՝ հարյուրավոր կմ-ի: Տեղափոխության լայնությամբ կարող է կազմել մի քանի հազ. մ: Սովորաբար առաջանում է ակտիվ բարձրացումների հետևանքով: Տերմինը առաջարկվել է ավստրիական երկրաբան Է. Չյուսի կողմից 1873 թ-ին:

**Г-411. ГОРЫ – ԼԵՌՆԵՐ, MOUNTS, MOUNTAINS**, 1) լեռնային կառույց՝ երկրակեղևի լայնարձակ տարածքներ՝ ծալքավոր կամ ծալքամեծաբեկորային կառուցվածքով, որոնք ծովի մակերևույթից վեր բարձրացված են մինչև մի քանի կմ և իրենց սահմաններում բնորոշվում են բարձունքների կտրուկ տատանումներով: Դրանք ձգվում են հարյուրավոր ու հազարավոր կմ-եր, ուղղագիծ են (օր.՝ Մեծ Կովկասը) կամ աղեղնաձև (օր.՝ Կարպատները, Փոքր Կովկասը): Տեկտ. Լ. առաջանում են երկրակեղևի խիստ տեղախախտված (դիսլոկացված) տեղամասի ուժգին բարձրացումների հետևանքով՝ երկրասինկլինալներում (հետերկրասինկլինալային լեռներ), ինչպես նաև պլատֆորմներում և ծալքավոր գոտիներում (հետապլատֆորմային կամ վերածնված լեռներ): Ըստ տեկտ. հատկանիշների՝ լեռնային կառույցներում առանձնացվում են լեռնային գոտիներ, լեռնային երկրներ, լեռնային հա-

մակարգեր, լեռնային խմբեր, լեռնաշղթաներ, 2) տե՛ս Эрозионные горы, 3) տե՛ս Вулканические горы, 4) տե՛ս Гора:

**Г-412. ГОРЮЧИЕ ИСКОПАЕМЫЕ – ԱՅՐՎՈՂ ՀԱՆԱԾՈՆՆԵՐ**, տե՛ս Каустобиолиты:

**Г-413. ГОРЮЧИЕ СЛАНЦЫ, ПИРОБИТУМИНОЗНЫЕ СЛАНЦЫ – ԱՅՐՎՈՂ ԹԵՐՈՒՔԱՐՆԵՐ, ՀՐԱԲԻՏՈՒՄԱՎՈՐ ԹԵՐՈՒՔԱՐՆԵՐ, PETROLIFEROUS SHALE, PYROSHALE, OIL SHALE**, կարբոնատակավային (մերգելային), կավային կամ սիլիցիումային կազմի նստվածքային ապար, որը պարունակում է 10-50 %, հազվադեպ՝ 60% նստվածքակուտակմանը համաժին օրգանական նյութ (կերոզեն): Ա. թ. ունեն շագանակագույն, շագանակադեղին, մոխրագույն գունավորում, թերթավոր կամ հոծ կազմվածք: Ձյութի ելքը 5-50 % է: Ա. թ. առաջացնում են թերթապարունակ ֆորմացիաներ, որոնց հաստությունը հասնում է տասնյակ և հարյուրավոր մ-երի, տարածման մակերեսը՝ մինչև մի քանի հազ. կմ<sup>2</sup>: Ա. թ-ի օրգանական նյութի համար ելանյութ է հանդիսանում կենսազանգվածը՝ բաղկացած ստորակարգ ջրիմուռներից (սապրոպելային բաղադրամասեր), ավելի քիչ՝ բարձրակարգ բույսերից (հումուսային բաղադրամասեր) և մասամբ կենդանի օրգանիզմներից: Օրգանական նյութը կուտակվում է հատակային նստվածքներում՝ բնականոն թրվածնային ռեժիմի պայմաններում: Այն բնորոշվում է ջրածնի մեծ պարունակությամբ (մինչև 90%), այրման ջերմաստիճանը՝ 14.6-16.7 ՄՋ/կգ է: Հիմնական միներալային բաղադրամասերն են կալցիտը, քվարցը և կավային միներալները: Ա.թ. օգտագործվում են էներգետիկայում (վառելանյութ, գազ, մագուտ), ձյութից ստացվում են տարբեր քիմ. նյութեր, իսկ մոխրից՝ շինարարական նյութեր (ցեմենտ և այլն): Առավել խոշոր հանքավայրերը գտնվում են էստոնիայում, Բելոռուսում, ԱՄՆ-ում, Կանադայում, Չինաստանում, Բրազիլիայում և այլուր:

**Г-414. ГОРЯЧИЕ ИСТОЧНИКИ – ՏԱՔ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ, HOT SPRINGS, THERMAL SPRINGS**, տաք հանքային աղբյուրներ, որոնց ջրի ջերմաստիճանը 50-90°C է: Տարածված են գլխ. լեռնային շրջաններում:

**Г-415. ГОТЕРИВСКИЙ ЯРУС, ГОТЕРИВ** (Շվեյցարիայի Հոտերիվ, Hauterive ք-ի անունից) – **ՀՈՏԵՐԻՎՅԱՆ ՀԱՐԿ, ՀՈՏԵՐԻՎ, HAUTERIVIAN**, կավճի համակարգի ստորին բաժնի ներքևից երրորդ հարկ:

**Г-416. ГОТСКАЯ СКЛАДЧАТОСТЬ – ԳՈԹՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, GOTIAN FOLDING**, տեկտ. ակտիվացման դարակարգ, Շվեդիայում արտահայտվել է գրանիտակերպերի ձևավորմամբ (մոտ 1.4 մլդ. տ. առաջ) և ծալքաբեկորային ձևախախտումներով: Հս. Ամերիկայում դրան համապատասխանում է էլսոնյան դարակարգը, իսկ Աֆրիկայում՝ քիբարյանը:

**Г-417. ГОФРИРОВКА – ՄԱՆՐԱԾԱԼՔԱՎՈՐՈՒՄ (ԾԱԼՔԱՉԱՐԴՈՒՄ)**, տե՛ս Плойчатость:

**Г-418. ГРАБЕН** (գերմ. Graben բառից – փոս) – **ԳՐԱԲԵՆ, ԻՉԱՎԱՅՐ, GRABEN, TROUGH**, երկրակեղևի իջած տեղամաս, որը հարակից համեմատաբար բարձրացած տեղամասերից անջատված է վարնետքերով, հազվադեպ՝ վերնետքերով: Գ-ները հաճախ բարդացնում են խոշոր կամարային բարձրացումները և առաջանում են ինչպես երկրակեղևի բլուրի ակտիվ իջեցման, այնպես էլ հարակից տեղամասերի բարձրացման հետևանքով: Սովորաբար հատակագծում ունեն ձգված տեսք, երկարությունը կարող է հասնել հարյուրավոր կմ-երի, լայնությունը՝ տասնյակ կմ-երի: Այդպիսի Գ-ները մեծ մասամբ պատկանում են ռիֆտերին: Տարբերում են երկայնական Գ. (ձգված է ներփակող ծալքավոր կառուցվածքների տարածման երկայնքով), լայնական Գ. (երկար առանցքը ուղղահայաց է ներփակող կառուցվածքի առանցքին), սեպածն Գ. և միակողմյա Գ. (միայն մեկ կողմից է սահմա-

նափակված վարնետքով): Աշխարհում խոշորագույն Գ-ների համակարգը անցնում է Արլ. Աֆրիկայով, Եվրոպայում ամենամեծը Հոնոս գետի Գ. է:

**Г-419. ГРАВЕЛИТ – ԿՈՊՃԱՔԱՐ (ԳՐԱՎԵԼԻԹ), GRITSTONE, GRITROCK,** ցեմենտացած կոպիճ, ունի ավազային ապարներին բնորոշ կազմություն: Նստվածքային գոյացությունների մեջ ունի լայն տարածում: Կ-ի առկայությունը վկայում է ավելի հին ապարների ողողաքայքայման մասին, ցույց է տալիս ծանծաղուտի, ցամաքի կամ ստորջրյա բարձրության մոտիկությունը:

**Г-420. ГРАВЕЛИСТЫЙ – ԿՈՊՃԱԽԱՌՆ, GRAVELLY,** տվյալ նստվածքում կոպճի խառնուրդի առկայություն:

**Г-421. ГРАВИЙ** (ֆրանս. gravier – կոպիճ) – **ԿՈՊԻՃ, GRAVEL, COARSE SAND, GRIT,** փուխր խոշորաբեկոր (փսեֆիտային) նստվածքային ապար՝ բաղկացած ապարների, հազվադեպ տարբեր միներալների շատ թե քիչ մշակված բեկորներից՝ 1-10 մմ չափերով (տրամագծով): Կախված բեկորների գերակշռող չափերից՝ առանձնացնում են. մանր Կ. (1-2.5 մմ), միջին Կ. (2.5-5 մմ) և խոշոր Կ. (5-10 մմ): Կ. ըստ ծագման ստորաբաժանվում է՝ գետային, լճային, ջրասառցադաշտային: Կ. տեղադրվում է գետային դարավանդների և ողողահունի ջրաբերուկների ստորին հորիզոններում, ջրասառցադաշտային նստվածքներում և ծովափնյա արգելաթմբերում: Ցեմենտացած կոպիճը կոչվում է կոպճաքար (գրավելիթ):

**Г-422. ГРАВИМЕТР** (լատ. gravis – ծանր և հուն. metréo – չափում են) – **ԾԱՆՐԱՉՈՓ, ԳՐԱՎԻՄԵՏՐ, GRAVIMETER,** ծանրության ուժի արագացման չափման սարք: Բացարձակ չափումները (ծանրության ուժի արագացման լրիվ մեծությունների) կատարվում են բալիստիկական (ձգաբանական) Ծ-երով, որոնցում օգտագործվում է վակուումում ծանրության ուժի արագացման կախվածությունը ժամանակից: Ծանրության ուժի արագացման հարաբերական չափումները կատարվում են դաշտային Ծ-երով:

**Г-423. ГРАВИМЕТРИЧЕСКАЯ СЪЁМКА – ԾԱՆՐԱՉՈՓԱԿԱՆ (ԳՐԱՎԻՄԵՏՐԱԿԱՆ) ՀԱՆՈՒՅԹ, GRAVIMETRIC SURVEY,** տվյալ շրջանի ձգողական (գրավիտացիոն) դաշտը բնորոշող մեծությունների չափման համախմբություն: Երկրբ. նպատակների համար կատարվում է գլխ. ծանրաչափի (գրավիմետրի), հազվադեպ՝ փոփոխաչափի (վարիոմետրի) և գրադիենտաչափի օգնությամբ: Ըստ մշանակության տարբերում են ռեգիոնալ Ծ. հ. (կիրառվում է Երկրի պատկերի հետազոտման և ռեգիոնալ երկրաբանական ուսումնասիրությունների համար) և մանրամասն Ծ. հ.՝ ուսումնասիրելու համար ոչ մեծ անբնականությունները, որոնք ստեղծում են առանձին երկրբ. կառուցվածքները և հանքամարմինները: Ըստ անցկացման եղանակի՝ տարբերում են տարածքային Ծ. հ. (դիտարկման կետերը տեղաբաշխվում են հավասարաչափ ամբողջ մակերեսով) և պրոֆիլային (կամ երթուղային), որը կատարվում է առանձին, միմյանցից հեռու գտնվող երթուղիներով (պրոֆիլներով): Կախված առաջադրված երկրբ. խնդիրներից, դաշտային աշխատանքների կատարման պայմաններից և մեկնաբանության նախատեսվող մեթոդներից՝ ընտրվում է հանույթի մասշտաբը, դիտարկման կետերի խտությունը և տեղաբաշխումը, անկանոնությունների որոշման սխալումը և այլն: Ծ. հ. կատարվում է հետևյալ մասշտաբներով՝ ռեգիոնալ երկրաբանա-երկրֆ. ուսումնասիրություններ՝ 1:200000-1:500000, նավթագազաբեր կառուցվածքների որոնում՝ 1:50000, հանքավերահսկող կառուցվածքների ու հանքամարմինների որոնում և ուսումնասիրություններ՝ 1:2000-1:25000:

**Г-424. ГРАВИРАЗВЕДКА – ԾԱՆՐԱՉՈՓԱԿԱՆ (ԳՐԱՎԻՄԵՏՐԱԿԱՆ) ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ, ԾԱՆՐԱՉՈՓԱՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ (ԳՐԱՎԻՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ), GRA-**

**VIMETRIC PROSPECTING**, հետախուզական երկրաֆիզիկայի մեթոդ, որը հիմնված է երկրի անբնականոն ձգողական (գրավիտացիոն) դաշտի չափման վրա: Ծ. հ-յան օբյեկտները երկրակեղևի խտությունների անհամասեռություններն են, որոնք ստեղծում են անբնականոնություններ երկրի ձգողական դաշտում: Ծ. հ. օգտագործվում է երկրակեղևի կազմության ուսումնասիրման, օգտ. հնձ-ների որոնման ու հետախուզման համար: Ծ. հ. բաղկացած է ծանրաչափական հանույթից և անբնականոնությունների մեկնաբանությունից, այն ավարտվում է ուսումնասիրվող օբյեկտի ծանրաչափական մոդելի կառուցմամբ:

**Г-425. ГРАВИТАЦИОННАЯ АНОМАЛИЯ – ՉԳՈՂԱԿԱՆ (ԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ) ԱՆԲՆԱԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆ (ԱՆՎԱՆՈՆՈՒԹՅՈՒՆ), GRAVITY ANOMALY**, տվյալ կետում տարբերությունը դիտարկող ծանրության ուժի և նրա բնականոն տեսական նշանակության միջև: Չ. ա. հնարավորություն է տալիս ուսումնասիրելու երկրի պատկերը (ձևը) ամբողջապես և նրա ներքին կազմությունը: Նույնն է՝ *Аномалия силы тяжести*:

**Г-426. ГРАВИТАЦИОННАЯ ДИФФЕРЕНЦИАЦИЯ – ԾԳՈՂԱԿԱՆ (ԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ) ՏԱՐԲԵՐԱՎՈՒՄ, GRAVITY DIFFERENTIATION**, տարասեռ (հետերոգեն) մագմայական հալույթի տարանջատում ձգողականության ազդեցության տակ: Չ. տ. հանդիսանում է մագմայական առաջնային շերտավորության առաջատար գործընթացը:

**Г-427. ГРАВИТАЦИОННОЕ ПОЛЕ ЗЕМЛИ – ԵՐԿՐԻ ՉԳՈՂՈՒԹՅԱՆ (ԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ) ԴԱՇՏ, GRAVITATIONAL FIELD OF THE EARTH**, ծանրության ուժի դաշտ՝ պայմանավորված երկրի ձգողականությամբ և նրա օրական պտտմամբ հարուցված կենտրոնախույզ ուժով: Աննշան չափով կախված է նաև Լուսնի, Արևի և այլ երկնային մարմինների ու երկրի մթնոլորտի զանգվածի ձգողականությունից: Ե. ծ. դ. բնորոշվում է ծանրության ուժով, ծանրության ուժի պոտենցիալով և նրա տարբեր ածանցյալներով:

**Г-428. ГРАВИТАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ – ՉԳՈՂԱԿԱՆ (ԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ) ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ, GRAVITATION PROCESSES**, երկրի մակերևույթի փոփոխության գործընթացներ՝ ծանրության ուժի ազդեցության տակ: Դրանց են վերաբերում փլվածքները, քարաթափվածքները, ձմափուկները, սողանքները, բնահողի դանդաղ սահունը և հոսքը: Չ. գ. տեղի են ունենում թեք լանջերում և հաճախ կարևոր դեր են խաղում ռելիեֆի ձևավորման գործում:

**Г-429. ГРАВИТАЦИОННЫЙ КАРОТАЖ – ՉԳՈՂԱԿԱՆ (ԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ) ԿԱՐՈՏԱԺ, GRAVITY LOGGING**, հորատանցքերում երկրֆ. ուսումնասիրությունների մեթոդ՝ հիմնված ծանրության ուժի արագացման չափումների վրա: Օգտագործվում է տարբեր հորատանցքերի երկրբ. կտրվածքները ըստ խտության համադրելու, հանքամարմինների դիրքի, բարձր ծակոտկենության զոնաների, լեռնային ճնշման որոշման համար:

**Г-430. ГРАВИТАЦИОННЫЕ СКЛАДКИ – ՉԳՈՂԱԿԱՆ (ԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ) ԾԱԼԵՐ, GRAVITY FOLDS**, ապարների ծալքեր, որոնք առաջանում են շերտերի ճնշման հետևանքով՝ ծանրության ուժի ազդեցության տակ՝ բարձրացումների թեք լանջերով սահելիս:

**Г-431. ГРАВИТАЦИОННЫЙ СКЛОН – ՉԳՈՂԱԿԱՆ (ԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ) ԼԱՆՋ, GRAVITY SLOPE**, լանջ, որը զուրկ է ապարների հողմահարման արգասիքների ծածկույթից և ենթակա է ձգողական գործընթացներին:

**Г-432. ГРАВИТАЦИЯ, ТЯГОТЕНИЕ (լատ. gravites – ծանրություն) – ՉԳՈՂ(ԱՎԱՆ)ՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱՎԻՏԱՑԻԱ, GRAVITATION**, բոլոր մարմինների՝ միմյանց ձգելու հատկություն այնպիսի ուժով, որը կախված է իրենց զանգվածից: Երկրի

ծգող(ական)ությունը մերձերկրային ուղեծրում պահում է Լուսնին և արհեստական արբանյակներին: Ձգողական դաշտի գործունեությամբ պայմանավորված է Երկրի գնդաձևությունը, Երկրի մակերևույթի ռելիեֆի շատ ձևերը, գետերի հոսքը, սառցադաշտերի շարժումը և այլն:

**Г-433. ГРАДАЦИОННАЯ СЛОИСТОСТЬ** (լատ. gradatio – աստիճանական բարձրացում) – **ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐ ՇԵՐՏԱՅՆՈՒԹՅՈՒՆ, GRADED BEDDING, SORTED BEDDING**, ապարների շերտավորություն, որն արտահայտվում է նստվածքների շերտատուփերի հերթափոխմամբ, նրանցից յուրաքանչյուրում մասնիկների չափերը փոքրանում են ներքևից (ավազից, երբեմն կոպիճից) դեպի վեր (մինչև ալևրիտները և պելիտները): Բնորոշ է պղտոր հոսքերին (տուրբիդիտներին), ֆլիշին, նախալեռնային լճերի նստվածքներին և այլն:

**Г-434. ГРАДИЕНТ** (լատ. gradientis, սեռ. հ. gradientis – քայլող) – **ԳՐԱԴԻԵՆՏ, ԱՍՏԻՃԱՆՓՈՆՈՒՄ, GRADIENT**, տարածության (դաշտի) որևէ բնութագրման մեծության փոփոխությունը՝ երկարության միավորի սահմաններում: Գ. հասկացությունից լայնորեն օգտվում են օվկիանոսագիտությունում, օդերևութաբանությունում և այլն (օր.՝ աղայնության Գ., ծովի ջրի խտության Գ., ճնշման Գ., ջերմաստիճանի Գ.):

**Г-435. ГРАНАТЫ** (լատ. granatus – հատիկավոր կամ granatum – նուռ, նռան հատիկների գույնի նմանությունից) – **ՆՈՆԱՔԱՐԵՐ (ԿԱՐԿԵՅԱՆՆԵՐ, ՅԱՐԱՐՋԱԿՆԵՐ), GARNETS**, միներալների խումբ, երկաթի, մագնեզիումի, մանգանի, կալցիումի, ալյումինի, տիտանի և քրոմի բարդ կազմի օրթոսիլիկատներ, կազմը փոփոխական է, ընդհանուր քիմ. ֆորմուլան՝  $R_3^{2+} + R_2^{3+} + [SiO_4]_3$ , որտեղ  $R^{2+}$ -ը Mg, Fe, Mn, Ca է, իսկ  $R^{3+}$ -ը Al, Fe, Cr է: Խումբն ընդգրկում է 15 միներալ: Կախված կազմից՝ Ն-ի գույնը փոփոխվում է: Ըստ կազմի տարբերում են՝ պիրոպ (նարնջագույն-կարմիր, մուգ կարմիր, բաց մանուշակագույն), ալմանդին (վարդագույն, գորշավուն կարմիր), անդրադիտ (շագանակագույն և սև), գրոսուլյար (խոտի կանաչ), սպեսարտին (դեղին) և այլն: Առաջացնում են իզոմորֆ (նմանաձև) շարքեր: Յանդիպում են թափանցիկ կամ կիսաթափանցիկ բյուրեղներով, հողանման գանգավածներով: Ըստ ծագման լինում են փոխակերպային, հպումամետասոմատիկական, մագմայական: Կայուն են հողմահարման նկատմամբ: Հղկանյութ են: Որոշ գեղեցիկ գունավորված թափանցիկ Ն. թանկարժեք քարեր (գարդաքարեր) են:

**Г-436. ГРАНИТ** (իտալ. granito, բառացի՝ հատիկավոր, լատ. granum-ից – հատիկ) – **ԳՐԱՆԻՏ (ՅԱՏԱՔԱՐ), GRANITE**, լիաբյուրեղային ներժայթքային (ինտրուզիվ), հազվադեպ՝ մետասոմատիկական, թթու, բաց գունավորված ապար: Բաղկացած է գլխ. քվարցից՝ 30-40 % (ըստ ծավալի) և դաշտասպաթից՝ (60-70 %) (թթու պլազիոկլազից և կալիումային դաշտասպաթից): Մուգավուն միներալների պարունակությունը չի անցնում 5-10 %-ից: Երկրորդական միներալներ են բիոտիտը, մուսկովիտը, լիթիումային փայլարները, եղջերախաբը, ալկալիական ամֆիբոլները, էգիրինը, տուրմալինը, տոպազը, նռնաքարը: Ուղեկից միներալներն են ապատիտը, ցիրկոնը, սֆենը, իլմենիտը, օրտիտը և այլն: Գույնը՝ վարդագույն, մոխրագույն, սպիտակ, դեղին, կանաչ: Տարբերում են բուն Գ. (պլազիոկլազը 10-65 %), գրանոդիորիտ (65-90 %) և պլազիոգրանիտ կամ տոնալիտ, տրոնդյեմիտ (90 %-ից ավել): Գ. երկրակեղևում ամենատարածված ներժայթքային ապարն է: Տեղադրված է բաթոլիթների, լակոլիթների, ապարազանգվածների (շտոկների), երակների և այլ տեսքով: Գ. առաջանում է կամ մագմայական հալույթի բյուրեղացումից, կամ՝ փոխակերպային ապարների մետասոմատիկական փոխարինման հետևանքով՝ կապված գրանիտացմող լուծույթների ներգործության հետ:



- Գ-437. ГРАНИТ ПЕГМАТИТОВЫЙ – ՊԵՊՍՍԻՏՍՈՒՆ ԳՐԱՆԻՏ, PEGMATITIC GRANITE**, գրանիտի տարատեսակ, որում դաշտասպաթն ու քվարցը օրինաչափորեն ներառում են միմյանց:
- Գ-438. ГРАНИТ ПИСЬМЕННЫЙ – ՍԵՊԱԳՐԱՏԵՍԲ ԳՐԱՆԻՏ, GRAPHIC GRANITE**, պեգմատիտային գրանիտի տարատեսակ, որում դաշտասպաթը ներառում է քվարցի նուրբ սեպածն գոյացությունները՝ հիշեցնելով հին հրեական գրեր:
- Գ-439. ГРАНИТ ПОРФИРОВИДНЫЙ – ՊՈՐՖԻՐԱՆՍԱՆ ԳՐԱՆԻՏ, PORPHYROCEOUS GRANITE**, պորֆիրային կառուցվածք ունեցող գրանիտ: Հիմնական զանգվածը մանր, միջին կամ խոշորահատիկային է, պորֆիրանման անջատումները ներկայացված են քվարցով և դաշտասպաթով:
- Գ-440. ГРАНИТИЗАЦИЯ – ԳՐԱՆԻՏՈՒՄ, GRANITIZATION**, գրանիտակերպ կազմի և գրանիտային կառուցվածքի ապարների գոյացման գործընթաց՝ ի հաշիվ այլ քարազրկան կազմ և տեսք ունեցող ապարների: Գ-ման գործընթացի հիմնական առանձնահատկությունը  $SiO_2$ -ի, Na-ի, K-ի,  $H_2O$ -ի ներմուծումն է և Mg-ի, Fe-ի, Ca-ի և այլ ֆեմիկ բաղադրամասերի դուրս բերումը: Գ-ման ընթացքում դիտվում է ոչ թե կտրուկ, այլ աստիճանական անցումներ գնեյսներից հետո միզմատիտները, մինչև գրանիտազնեյսները և գրանիտները: Ապարների Գ-ման դեպքում տեղի են ունենում ապարի կառուցվածքի ու միներալային կազմի խոր փոփոխություններ: Գ. առավել ուժգին արտահայտվում է շարժուն գոտիների խորքային երոզիոն մակարդակներում՝ առավելապես փոխակերպության ամֆիբոլիթային ու գրանուլիթային ֆացիաների պայմաններում: Հին մինչքեմբրիյան վահաններում Գ. ունեցել է ռեզիոնալ արտահայտություն, իսկ ավելի երիտասարդ ֆորմացիաներում՝ տեղային:
- Գ-441. ГРАНИТНАЯ МАГМА – ԳՐԱՆԻՏՍՈՒՆ ՍԱԳՄԱ**, տե՛ս Кислая магма:
- Գ-442. “ГРАНИТНЫЙ СЛОЙ” – «ԳՐԱՆԻՏՍՈՒՆ ՇԵՐՏ»**, GRANITE LAYER, երկրաշարժական տվյալներով անջատված մայրցամաքային երկրակեղևի շերտ, որը տեղաբաշխված է նստվածքային ու բազալտային շերտերի միջև, վերջինի հետ սահմանակցվում է Կոնրադի մակերևույթով: Գ. շ. մերկանում է վահանների սահմաններում: Բաղկացած է գլխ. գրանիտներից, գնեյսներից և այլ փոխակերպային ու արտաժայթքային ապարներից: Նույնն է՝ Գրանիտազնեյսային շերտ, գրանիտափոխակերպային շերտ: Տե՛ս Земная кора:
- Գ-443. ГРАНИТОВАЯ СТРУКТУРА – ԳՐԱՆԻՏՍՈՒՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, GRANITIC TEXTURE**, բնորոշ է բյուրեղահատիկային խորքային գրանիտակերպ ապարների համար: Բնորոշվում է դաշտասպաթների նկատմամբ գունավոր միներալների ինքնաձևությամբ (իդիոմորֆիզմով) և դաշտասպաթների խիստ այլաձևությամբ (քսենոմորֆությամբ)՝ քվարցի նկատմամբ:
- Գ-444. ГРАНИТО-ГНЕЙС – ԳՐԱՆԻՏԱԳՆԵՅՍ (ԳՐԱՆԻՏԱԳՈՂԱՔԱՐ), GNEISSOID GRANITE**, լիաբյուրեղային զուլավոր կամ թերթավոր կազմով գրանիտին նման ապար, ըստ կառուցվածքի միջանկյալ տեղ է գրավում գրանիտի և գնեյսի (գոծաքարի) միջև: Հետազոտողների մեծ մասը Գ-ները դիտարկում են որպես գրանիտներ, որոնք բյուրեղացել են երկրակեղևի խոր զոնաներում, երբ մագմայական հալույթի սառչումը տեղի է ունեցել ուղղորդված ճնշման պայմաններում կամ մագմայի շարժման գործընթացում: Գ-ները կարող են իրենցից ներկայացնել նախկինում առաջացած ապարների մետասոմատոզի (գրանիտացման) արդյունք: Գ-ները առաջանում են միայն բարձր փոխակերպման զոնաներում և սերտորեն զուգակցվում են տարբեր կազմի գնեյսների հետ:
- Գ-445. ГРАНИТОИДЫ – ԳՐԱՆԻՏԱԿԵՐՊԵՐ (ԳՐԱՆԻՏՈՒԴՆԵՐ), GRANITOIDS**, գրանիտների, գրանոդիորիտների, պլագիոգրանիտների և դրանց տարատեսակների

համախմբություն: Սովորաբար Գ. տերմինը օգտագործվում է գրանիտատեսք ապարների դաշտային նկարագրության կա՛մ չմասնատված, կա՛մ թույլ ուսումնասիրված համալիրի դեպքում:

**Դ-446. ГРАНИТООБРАЗОВАНИЕ – ԳՐԱՆԻՏԱԳՈՅԱՑՈՒՄ, GRANITOGENESIS,** քարոլորտի գրանիտային շերտի ձևավորումը պայմանավորող երկրբ. երևույթներ, արտահայտվում են գրանիտակերպերի առաջացմամբ, որոնց կազմը և տարածակառուցությունը որոշվում է երկրբ., երկրբ. և ֆիզքիմ. գործոնների համախմբությամբ: Վերջինը հնարավորություն է տալիս Գ. ստորաբաժանել քարագոյացման (լիթոգենեզի) սիալիկական և սիմատիկական շարքերի: Սիալիկական շարքի Գ. պայմանավորված է երկրակեղևում փոխակերպային, մետասոմատիկական և գերփոխակերպային գործընթացների զարգացմամբ: Այդ գործընթացների հետ է կապված քարոլորտի գրանիտակերպերի գլխավոր զանգվածի ձևավորումը: Քարոլորտի սիմատիկական (բազալտոիդային) շարքի Գ. պայմանավորված է հետևյալ գործընթացների զարգացմամբ. առաջնային բազալտոիդային մագմայի տարբերակմամբ, խորքում բազալտային մագմայի կողմից հին թթու ապարների յուրացմամբ (ասիմիլյացումով), միջնապատյանի մեջ խորասուզվող էկլոզիտների հալմամբ, որի հետևանքով առաջանում են անդեզիտային և ավելի թթու կրաակալիական կազմի հալույթներ:

**Դ-447. ГРАНИТООБРАЗОВАНИЕ АНАТЕКТИЧЕСКОЕ – ԱՆԱՏԵԿՏԻԿ ԳՐԱՆԻՏԱԳՈՅԱՑՈՒՄ, ANATECTIC GRANITOGENESIS,** գրանիտակերպերի ձևավորման գործընթաց այն ապարների վերահալման հետևանքով, որոնք մինչ այդ հալույթի վիճակում չեն գտնվել (օր.՝ արկոզային և խառնակազմ ավազաքարեր, մետապելիտներ, պարագնեյսներ և այլն), ընթանում է ապարների նյութական կազմի կայունության պայմաններում և գլխ. դիֆուզիայի միջոցով՝ նյութի ներքին վերաբաշխման երևույթների դեպքում: Անատեկտիկ գրանիտակերպերի կազմը պայմանավորված է սկզբնական ապարների կազմով և հալման գործընթացի առավելագույն ջերմաստիճանով:

**Դ-448. ГРАНИТООБРАЗОВАНИЕ МЕТАМОРФОГЕННОЕ – ՓՈՆԱՎԵՐՊՈՃՆԱՅԻՆ (ՄԵՏԱՄՈՐՖՈԳԵՆ) ԳՐԱՆԻՏԱԳՈՅԱՑՈՒՄ, METAMORPHOGENIC GRANITOGENESIS,** գրանիտակերպերի ձևավորման գործընթաց, որը տեղի է ունենում սկզբնական ապարների փոխակերպածնային ձևափոխության հետևանքով՝ հալման երևույթների բացակայության դեպքում: Ընդհանրապես տեղի է ունենում այդ ապարների նյութական կազմի կայունության պայմաններում (բացի  $H_2O$ ,  $CO_2$ , մասամբ՝ Na և K) և միայն նյութի ներքին վերաբաշխման դեպքում՝ դիֆուզիայի միջոցով, որը հանգեցնում է միներալային բաղադրամասերի մետասոմատիկական վերափոխմանը: Ձևավորվող փոխակերպածնային գրանիտակերպերի քիմ. կազմը պայմանավորված է վերամշակվող ապարների սկզբնական կազմով և ինչ-որ չափով փոխակերպության բարձր աստիճաններում ծովային նստվածքներում թաղված և Na-ով ու Cl-ով հարստացված լուծույթներով: Կախված փոխակերպության աստիճանից՝ առանձնացնում են Փ. գ-ման էպիդոտ-ամֆիբոլիթային, ամֆիբոլիթային, գրանուլիթային ֆացիաներ:

**Դ-449. ГРАНИТООБРАЗОВАНИЕ МЕТАСОМАТИЧЕСКОЕ – ՄԵՏԱՍՈՄԱՏԻԿԱԿԱՆ (ՄԻՆԵՐԱԼԱՏԵՂԱԿԱԼՄԱՆ) ԳՐԱՆԻՏԱԳՈՅԱՑՈՒՄ, METASOMATIC GRANITOGENESIS,** գրանիտակերպերի ձևավորում սիլիցիումալկալիական մետասոմատոզի (միներալատեղակալման) և մետասոմատիկական գրանիտացման գործընթացում, հազվադեպ ավելի փոքր չափով մետասոմատիկական՝ ապագրանիտացման հետևանքով: Մ. գ-ման համար բնորոշ են՝ 1) վերամշակվող ապարների նյու-

թական կազմի զգալի փոփոխությունները, որոնք ուղեկցվում են որոշ քիմ. բաղադրամասերի ներառմամբ, մյուսների արտաբերմամբ՝ առանց ձևավորվող ապարների և դրանց միներալային բաղադրիչների հալման, 2) ալկալիների բարձր ակտիվությունը՝ ջրի և ածխաթթվի շարժուն վարքի պայմաններում, պետրոգեն՝ քիմ. բաղադրամասերի տարբերակված շարժականության և Na-ի ու K-ի տարբեր ակտիվության դեպքում՝ կախված վերամշակվող ապարների կազմից: Առանձնացնում են Մ. գ-ման երեք տիպեր՝ ռեզիոնալ բեկվածքների զոնաների և փքման գերփոխակերպության Մ. գ., ռեզիոնալ-մակերեսային տարածման Մ. գ. և արտահպումային (էկզոկոնտակտային) Մ. գ.:

**Г-450. ГРАНИТООБРАЗОВАНИЕ ПАЛИНГЕННОЕ – ՊԱԼԻՆԳԵՆ ԳՐԱՆԻՏԱԳՈՅԱՑՈՒՄ, PALINGENIC GRANITOGENESIS,** գրանիտակերպերի ձևավորման գործընթաց՝ առաջնային մազմայական ապարների (օր.՝ ռիոլիթներ, դաքիտներ, գրանիտներ) կամ այն ապարների վերահալման հետևանքով, որոնք անցել են հալման փուլը նյութական կազմի կայունության պայմաններում:

**Г-451. ГРАНОДИОРИТ – ԳՐԱՆՈԴԻՐԻՏ, GRANODIORITE,** լիաբյուրեղային ներժայթքային ապար, ըստ կազմի միջանկյալ տեղ է գրավում գրանիտի և քվարցային դիորիտի միջև: Բաղկացած է (60-90 %) պլագիոկլազից (անդեզին, հազվադեպ օլիգոկլազ), կալիումական դաշտասպաթից, քվարցից, եղջերախաբից, բիոտիտից, երբեմն՝ պիրոքսենից: Ուղեկից (ակցեսորային) միներալներ են սֆենը, ապատիտը, հազվադեպ՝ ցիրկոնը և այլն: Գրանիտից տարբերվում է պլագիոկլազի ավելի հիմնային կազմով: Գույնը՝ կանաչավուն-մոխրագույն: Ըստ միներալային կազմի՝ առանձնացնում են ավգիտաեղջերախաբային, ավգիտային, բիոտիտ-եղջերախաբային, բիոտիտային, հիպերստեն-բիոտիտային, եղջերախաբային, պիրոքսեն-եղջերախաբային Գ.: Գ. առաջացնում է ներժայթքային (ինտրուզիվ) մարմիններ (բաթոլիթներ, ապարազանգվածներ, լակոլիթներ): Գ. տարածված է ծալքավոր զոտիներում, հատկապես մայր ցամաքների ակտիվ ծայրամասերում, ինչպես նաև տեկտ. ակտիվացման զոնաներում: Գ. դաքիտի խորքային նմանակն է:

**Г-452. ГРАНОСИЕНИТ – ԳՐԱՆՈՍԻԵՆԻՏ, GRANOSYENITE,** ներժայթքային (ինտրուզիվ) ապար: Ըստ կազմի՝ միջանկյալ տեղ է գրավում գրանիտի ու սիենիտի միջև: Կազմված է կալիումական դաշտասպաթից (զերակշռում է), թթու պլագիոկլազից (երբեմն բացակայում է), քիչ քանակի քվարցից (15-20%) և զուեմավոր միներալներից (բիոտիտ, եղջերախաբ և այլն): Ուղեկից (ակցեսորային) միներալներից ավելի հաճախ առկա են սֆենը, ցիրկոնը, ապատիտը, մագնետիտը:

**Г-453. ГРАНУЛИТ (լատ. granulum – հատիկ) – ԳՐԱՆՈՒԼԻԹ (ՅԱՏԻՎԱՔԱՐ), GRANULITE,** գնեյսային (գղձաքարային) կազմվածքի փոխակերպային ապար, որը ձևավորվել է բարձր ջերմաստիճանի (ավելի քան 700°C) և ճնշման (6-10·10<sup>8</sup> Па) պայմաններում: Պատկանում է փոխակերպության գրանուլիթային ֆացիային: Գ-ի միներալային կազմում մասնակցում են քվարցը, պլագիոկլազը, ալկալիական դաշտասպաթը, քիչ քանակով՝ բիոտիտը, նռնաքարը, կորդիերիտը, սիլիմանիտը, հիպերստենը և այլն:

**Г-454. ГРАНУЛОМЕТРИЧЕСКИЙ АНАЛИЗ (լատ. granulum – հատիկ և հուն. metréo – չափում են) – ՅԱՏԻՎԱՉԱՓԱԿԱՆ ՏԱՐԱՆՈՒԹՈՒՄ, GRANULOMETRIC ANALYSIS,** փուխր ապարներ կազմող հատիկների չափսերի և քանակական հարաբերակցության որոշում: Յ. տ-ման պարզագույն եղանակ է հանդիսանում մաղային մեթոդը, որի դեպքում 0.25 մմ-ից խոշոր մասնիկները տարբեր մաղերի միջոցով տարաբաժանվում են հատիկաչափական խմբերի: 0.2 մմ-ից փոքր մասնիկները ուսումնասիրվում են պոտորման մեթոդով, նույնն է՝ Механический анализ:

- Г-455. ГРАНУЛОМЕТРИЧЕСКИЙ СОСТАВ ГОРНЫХ ПОРОД** (լատ. granulum – հատիկ և հուն. metréo – չափում են) – **ԱՊԱՐՆԵՐԻ ՀԱՏԻԿԱԶՈՒՓՈՒՄՆ ԿԱԶՄ, GRANULOMETRIC COMPOSITION OF ROCKS**, ապարներում տարբեր չափերի հատիկախմբերի (ֆրակցիաների) կշռային պարունակությունը՝ արտահայտված %-ներով: Ապարների Ա. հ. կ-ի որոշումները օգտագործվում են դրանց հավաքիչ (կոլեկտորական) հատկությունների գնահատման ու առաջացման պայմանների վերականգնման համար:
- Г-456. ГРАНУЛОМЕТРИЯ** (լատ. granulum – հատիկ և հուն. metréo – չափում են) – **ՀԱՏԻԿԱԶՈՒՓՈՒԹՅՈՒՆ, GRANULOMETRY**, ապարների, գրունտների և այլ նյութերի հատիկաչափական կազմի որոշման եղանակների համախմբություն: Օգտագործվում է երկրբ-ում [շերտերի հավաքիչ (կոլեկտորական) հատկությունները, բեկորային ապարների առաջացման պայմանները բացահայտելու համար], հանքային գործում (հորատապայթեցման արդյունքների, հանքային զանգվածի որակի գնահատման, օգտ. հնժ-ների հարստացման համար), գրունտագիտությունում և այլն:
- Г-457. ГРАНУЛЯЦИЯ** (լատ. granulum – հատիկ) – **ՀԱՏԻԿԱՎՈՐՈՒՄ, GRANULATION**, 1) նյութի վերածումը մանր կտորների (հատիկների), 2) փոխակերպային գործընթացում միներալների խոշոր հատիկների ու ագրեգատների փոխարինումը միևնույն կամ մոտ կազմի ավելի մանր հատիկներով, 3) կարբոնատային ապարի փոխարկում, որի ընթացքում օղիթների, օրգանական մնացորդների կալցիտը փոխարինվում է  $\text{CaCO}_3$ -ի մանրահատիկ ագրեգատով:
- Г-458. ГРАПТОЛИТЫ** (Graptoloidea) – **ԳՐԱՊՏՈԼԻԹՆԵՐ, GRAPTOLITES**, մահացած ծովային զաղութային օրգանիզմներ, ունեցել են տարբեր ձևի օրգանական կմախք, վարել են հատակին կպած և պլանկտոն կյանք: Գոյություն են ունեցել միջին քեմբրիից մինչև վաղ կարբոնը ներառյալ, կարևոր ղեկավարող ձևեր են օրդովիկի և սիլուրի համար:
- Г-459. ГРАУВАККА** (գերմ. grau – մոխրագույն և Wacke – ապարի տեսակ) – **ԳՐԱՈՒՎԱԿ, GRAYWACKE, GREYWACKE, GRAUWACKA**, ամուր մուգավուն ապար, որը առաջանում է արտաժայթքային, նստվածքային, փոխակերպային ապարների քայքայման հետևանքով: Գ. կազմված է տարբեր ծագման ապարների մանր հատիկներից (բեկորներից)՝ զգալի քանակի ցեմենտացնող կավային նյութով: Գույնը՝ սև, մուգ, մոխրագույնից մինչև մուգ կանաչ, հատիկները (բեկորները) անկյունավոր են կամ թույլ մշակված, վատ են տեսակավորված: Ծալքավոր մարզերում առաջացնում են հզոր ապարաշերտեր, որոնք գոյանում են ներքին բարձրացումների քայքայման արդյունքների արագ կուտակման հետևանքով:
- Г-460. ГРАФИКИ ГЕОФИЗИЧЕСКИХ ПАРАМЕТРОВ – ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԻ (ՀԱՐԱԶՈՒՓԵՐԻ) ԳՐԱՖԻԿՆԵՐ, GRAPHS OF GEOPHYSICAL PARAMETERS**, ցույց են տալիս ուսումնասիրվող ֆիզ. դաշտը բնութագրող պարամետրի (հարաչափի) մեծության փոփոխությունները երկրի մակերևույթի որևէ ուղղությամբ կամ տարածության մեջ:
- Г-461. ГРАФИТ** (գերմ. Graphit, հուն. gráphō-ից – գրում են) – **ԳՐԱՖԻՏ, ԳՐԱՔՐԻ, GRAPHITE**, միներալ բնածին տարրերի դասից, երկրակեղևում ածխածնի բազմաձև (պոլիմորֆ) ձևափոխություններից ամենատարածվածն է: Բյուրեղանում է հեքսագոնային համակարգում: Լավ արտահայտված բյուրեղները հազվագյուտ են: Սովորաբար առաջացնում է թեփուկավոր, սյունաձև, հոծ, բողբոջանման, գնդանման ագրեգատներ: Գույնը՝ մուգ մոխրագույնից մինչև սև: Փափուկ է, կարծրությունը՝ 1, հրակայուն է: Քիմիապես կայուն է: Ըստ ծագման լի-

- նում է փոխակերպային, մագմայական: Արդյ. կուտակները կապված են հիմնականում փոխակերպային (մետամորֆային) հնքվ-երի հետ: Հանքանյութերի նյութական կազմը կախված է ծագումից: Սովորաբար առկա են սիլիկատային միներալները (քվարց, դաշտասպաթ, փայլարներ, կավային միներալներ): Տարբերում են գրաֆիտային հանքանյութերի երեք տեսակ՝ թեփուկավոր, պինդ բյուրեղային և գաղտնաբյուրեղային:
- Г-462. ГРЕБЕНЬ – ԿՍՏՐ, ՓԱՓԱԹ, RIDGE, CREST**, երկրծ-ում երկարավուն կամ գծային ձգված բարձրությունների և նրանց բաժանող ցածրությունների ամենաբարձր կետերի համախմբություն: Սովորաբար Կ. հանդիսանում է լեռների, բլրաշարերի ջրբաժան:
- Г-463. ГРЕБЕНЬ СКЛАДКИ – ԾԱԼՔԻ ԿՍՏՐ, APEX OF FOLD**, կամարածալքի (անտիկլինալի) հողակապին հարակից մաս: Որոշակի արտահայտված է զառիթափ կամ սեղմված թևերով կամարածալքերում:
- Г-464. ГРЕБНЕВАЯ ЛИНИЯ, ГРЕБЕНЬ ГОРНОГО ХРЕБТА – ԿՍՏՐԱՅԻՆ ՓԻԾ, ԼԵՌՆԱՇՂԹԱՅԻ ԿՍՏՐ, CREST-LINE, CREST**, լեռնաշղթայի հակադիր լանջերի հատման գիծ, որը միացնում է ամենաբարձր կետերը:
- Г-465. ГРЕБНЕВИДНЫЕ СКЛАДКИ – ԿՍՏՐԱՉԵՎ ԾԱԼՔԵՐ, NARROW FOLDS**, ծալքեր, որնք ներկայացված են կտրուկ արտահայտված սեղմված կամարածալքերով (անտիկլինալներով) և լայն հարթ գոգածալքերով (սինկլինալներով):
- Г-466. ГРЕЙЗЕН** (գերմ. Greisen) – **ԳՐԵՅՅԵՆ, GREISEN**, մետասոմատիկական բաց գունավորված ապար, որը բաղկացած է հիմնականում քվարցից և բաց գույնի փայլարներից (լեպիդոլիթից, մուսկովիտից): Հաճախ պարունակում է կասիտերիտ, վոլֆրամիտ, տանտալիթ, տոպազ (տպագիոն), ֆլյուորիտ և այլ արժեքավոր միներալներ: Առաջանում է ապարների գրեյզենացման դեպքում, հիմնականում՝ գրանիտային զանգվածներում, հատկապես եզրային մասերում՝ երակների և անկանոն մարմինների տեսքով:
- Г-467. ГРЕЙЗЕНИЗАЦИЯ – ԳՐԵՅՅԵՆԱՅՈՒՄ, GREISENING, GREISENIZATION**, գրանիտային ապարների բարձրաջերմաստիճանային մետասոմատիկական փոփոխության գործընթաց, որն ընթանում է ցնդող բաղադրամասերի (ֆտոր, քլոր, բոր և այլն) ակտիվացման դեպքում: Գ-ման դեպքում տեղի է ունենում դաշտասպաթների փոխարինում մուսկովիտով և գրեյզենների առաջացում:
- Г-468. ГРЕНВИЛЬСКАЯ СКЛАДЧАТОСТЬ – ԳՐԵՆՎԻԼՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, GRENVILLIAN FOLDING**, Կանադական վահանի Յր-արլ. եզրամասի Գրենվիլյան գոտում (մոտ 950 մլն. տ. առաջ) ուժգին ձևախախտումների համախմբություն, որն ուղեկցվել է ապարների խոր փոխակերպությամբ: Պայմանականորեն համադրվում է Յր-արմ. Շվեդիայի դալսանդյան ծալքավորության հետ:
- Г-469. ГРИБООБРАЗНЫЕ СКАЛЫ – ՍՆԿԱՆՄԱՆ (ՔԱՐԱ)ԺԱՅՈՒՆ, MUSHROOM ROCKS**, ռելիեֆի մանր սնկանման ձևեր: Առաջանում են չոր կլիմա ունեցող երկրներում՝ հորիզոնական տեղադրված ապարաշերտերի անհավասարաչափ ողողաքայքայման և հողմամաշման հետևանքով:
- Г-470. ГРИНОКИТ** (ի պատիվ անգլ. լորդ Գրինոկի, որն այն առաջին անգամ առանձնացրել է որպես ինքնուրույն միներալ) – **ԳՐԻՆՈՎԻՏ, GREENOCKITE**, միներալ սուլֆիդների դասից, CdS: Բյուրեղանում է հեքսագոնային համակարգում: Առաջացնում է առանձին բյուրեղներ և բյուրեղաբույլեր, ավելի բնորոշ են լիմոնի դեղինից մինչև մարնջագույն, փոշեկերպ հողանման փառերը և կեղևները՝ բարիտի, սֆալերիտի և այլնի բյուրեղների վրա:

- Г-471. ГРОССУЛЯР** (հին լատ. grossularia-ից – հաղարջ, կլոր կանաչ բյուրեղները նման են հաղարջի) – **ԳՐՈՍՍՈՒԼՅԱՐ, GROSSULARITE**, միներալ, կալցիում-ալյումինային նռնաքար, բնորոշ են բյուրեղները և իզոմետրական (զուգաչափական) հատիկները 1մմ-ից մինչև 2-3 սմ: Սովորաբար կանաչ է կամ կանաչադեղին: Գ. հիմքային և գերհիմքային ապարների կալցիումային մետասոմատոզի և կրային սկառների տիպական միներալ է: Թափանցիկ, գեղեցիկ գունավորված բյուրեղները IV կարգի թանկարժեք քարեր են:
- Г-472. ГРОТ** (ֆրանս. grotte, իտալ. grotta-ից) – **ՔԱՐԱՅՐ, ԱՆՁԱՎ, GROTTA**, 1) ոչ բարձր տանիքով լայն բացված քարանձավ, 2) նեղ անցուղուց հետո քարանձավի լայնացում:
- Г-473. ГРУНТ** (լեհ. grunt, գերմ. Grund-ից – հիմք, հող) – **ԳՐՈՒՆՏ, ԳԵՏԻՆ, GROUND**, այն ապարների հավաքական անվանում, որոնք տեղադրված են առավելապես հողմահարման զոնայում և հանդիսանում են մարդու ճարտարագիտաշինարարական գործունեության օբյեկտ: Առանձնացնում են (քարա)ժայռային Գ-ներ (ապարները տեղադրված են մենաքարի կամ ճեղքվածքային զանգվածի տեսքով և ունեն բարձր մեխ. ամրություն), փուխր Գ-ներ (խոշորաբեկոր, ավազային, կավային ապարներ են):
- Г-474. ГРУНТ ВОДОНАСЫЩЕННЫЙ** – **ՋՐԱՅԱԳԵՑԱԾ ԳՐՈՒՆՏ (ԳԵՏԻՆ), WATER SATURATED GROUND**, գետնի ճեղքերի, ծակոտիների և այլ դատարկությունների հագեցումը 150 մթն. ճնշման տակ ներմղվող ջրով:
- Г-475. ГРУНТ ГЛИНИСТЫЙ** – **ԿԱՎԱԳՐՈՒՆՏ, ԿԱՎԱԳԵՏԻՆ, CLAY SOIL, CLAY GROUND**, բաղկացած է փափուկ կամ պլաստիկ հատկանիշներով կապակցված ապարներից (կավերից, կավավազներից):
- Г-476. ГРУНТ СКАЛЬНЫЙ** – **ԱՊԱՆԱԺԱՅԻՆ ԳՐՈՒՆՏ (ԳԵՏԻՆ), ROCKY GROUND**, ունի բարձր մեխ. ամրություն և հանդիսանում է առածոգական պինդ մարմին (գրանիտ, գնեյս, բազալտ, մարմար, ավազաքար և այլն):
- Г-477. ГРУНТОВЕДЕНИЕ** – **ԳՐՈՒՆՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԳԵՏՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, GROUND SCIENCE**, ճարտարագիտական երկրբ. բաժին, որն ուսումնասիրում է ապարների կազմը, կառուցվածքը, կազմվածքը (տեքստուրան) և ֆիզմեխ. հատկությունները, ինչպես նաև կառույցի հետ փոխազդելիս այդ հատկությունների հնարավոր փոփոխությունները և շինարարական նպատակներով դրանց բարելավման հնարավորությունները:
- Г-478. ГРУППА ГЕОЛОГИЧЕСКАЯ** – **ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՒՄՐ**, տե՛ս Ծրագրա:
- Г-479. ГУБКИ** (Spongia, Porifera) – **ՍՊՈՒՆԳՆԵՐ, SPONGES**, անողնաշարավոր կենդանիների տիպ: Գլխ. գաղութային ձևեր են, մոտ 5000 տեսակ: Կազմված են բջիջների երկու շերտից և դրանց միջև գտնվող անկառուցվածքային նյութից (մեզոզլեայից): Կմախքը կրային, կայծքարային կամ եղջերյա է, կազմված է մանր ասեղիկներից՝ սպիկուլաներից: Բնակվում են գլխ. ծովերում, հազվադեպ՝ ներքին քաղցրահամր ջրերում: Մինչքենթրիից մինչև այժմ:
- Г-480. ГУМИДНЫЙ КЛИМАТ** (լատ. humidus – խոնավ) – **ԽՈՆԱՎ ԿԼԻՄԱ, HUMID CLIMATE, WET CLIMATE**, ավելցուկային խոնավացման կլիմա (տարեկան տեղումների քանակը գերազանցում է ջրի այն քանակին, որը նույն ժամկետում գոլորշիանում կամ ներծծվում է հողի մեջ): Ջրի ավելցուկը հեռացվում է մակերևութային ջրի ուղեւորությամբ:
- Г-481. ГУМИФИКАЦИЯ** (լատ. humus – հող և facio – անում են, կատարում են) – **ՀՈՒՄՈՒԲԱՅՈՒՄ, ՀՈՒՄՈՒԲԱԳՈՅԱՅՈՒՄ, HUMIFICATION**, կենդանական և բուսա-

կան մնացորդների քայքայման արդյունքները՝ հումուսային նյութերի վերափոխման գործընթաց:

**Г-482. ГУМОЛИТЫ** (լատ. humus – հող և հուն. lithos – քար) – **ՀՈՒՍՈՒԻԹՆԵՐ, ՀՈՒՍՈՒՍԱՔԱՐԵՐ, HUMOLITES, LIPTOBIOLITIC COALS**, բրածո ածուխների խումբ, առաջանում են ճահճային պայմաններում բարձրակարգ բույսերի մնացորդների վերափոխման հետևանքով: Ստորաբաժանվում են գորշ ածուխների և քարածուխների:

**Г-483. ГУМУС** (լատ. humus – հող) – **ՀՈՒՍՈՒՍ, ԲՈՒՍԱՀՈՂ, HUMUS**, հողի օրգանական նյութերի համախմբություն, որն առաջանում է օրգանական նյութերի կենսաքիմ. փոխարկման հետևանքով: Հումուսի կազմում մտնում են հումուսային (բուսահողային) թթուները և ֆուլվաթթուները: Հումուսում պարունակվում են բույսերի սնման բոլոր տարրերը:

**Г-484. ГУМУСОВЫЙ ГОРИЗОНТ – ՀՈՒՍՈՒՍԱՅԻՆ (ԲՈՒՍԱՀՈՂԱՅԻՆ) ՀՈՐԻԶՈՆ, HUMIC HORIZON, HUMUS HORIZON**, հումուսացված օրգանական նյութերի կուտակման մերձակերևութային հորիզոն: Ունի ավելի մուգ գույն և բնորոշվում է օրգանական նյութերի ամենամեծ (մինչև 30 %) պարունակությամբ:

**Г-485. ГУТЕНБЕРГА СЛОЙ (ЗОНА) – ԳՈՒՏԵՆԲԵՐԳԻ ՇԵՐՏ (ՁՈՆԱ), GUTENBERG ZONE**, տարբերվում է երկրաչարժական ալիքների տարածման ցածրացված արագությամբ: Գուտենբերգը (1926 թ.) ապացուցեց այդ շերտի առկայությունը Երկրի վերին միջնապատյանում և նրա կապը ասթենոսֆերայի (թուլլոլիտի) հետ, տե՛ս Мантия Земли:

**Г-486. ГЮНЦСКАЯ ЛЕДНИКОВАЯ ЭПОХА, ГЮНЦ** (Դանուբի աջ վտակ Գյունց գետի անունով) – **ԳՅՈՒՆՑԻ ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ԴԱՐԱԿԱՐԳ, ԳՅՈՒՆՑ, GUNZ ICE AGE**, Ալպերի սառցապատման հնագույն դարակարգ, նախորդում է մինդելին: Բաժանվում է մի քանի փուլերի: Համապատասխանում է պլեյստոցենի սկզբին (800–900 հազ. տ. առաջ):

# Դ

- Դ-1. ДАВЛЕНИЕ ГИДРОДИНАМИЧЕСКОЕ – ՋՐԱԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ ԾՆՇՈՒՄ, HYDRODYNAMIC PRESSURE**, ճնշում, որը ջրաշիթերը գործադրում են ապարի մասնիկների վրա: Թվապես Ջ. ճ. հավասար է ճնշման գրադիենտին:
- Դ-2. ДАВЛЕНИЕ ГИДРОСТАТИЧЕСКОЕ – ՋՐԱՍՏԱՏԻԿ(ԱԿԱՆ) ԾՆՇՈՒՄ, HYDROSTATIC PRESSURE**, ջրի (հեղուկի) սյան ճնշումը՝ հաշված պայմանական մակարդակից: Այն չափվում է ջրի սյան բարձրությամբ (մ) կամ մթնոլորտային ճնշմամբ (մթն): Հոմ. Ջրաստատիկ(ական) մակարդակ:
- Դ-3. ДАВЛЕНИЕ ГОРНОЕ – ԸՆԴԵՐՔԱՅԻՆ ԾՆՇՈՒՄ, ԼԵՌԱՅԻՆ ԾՆՇՈՒՄ, ROCK PRESSURE**, փորվածքը շրջապատող ապարի զանգվածում առաջացող ուժեր: Անխախտ զանգվածում Ը. ճ. առաջ է գալիս ապարների սեփական կշռից, տեկտ. ուժերից և ջերմաստիճանային գրադիենտից:
- Դ-4. ДАВЛЕНИЕ ПЛАСТОВОЕ – ՇԵՐՏԱՅԻՆ ԾՆՇՈՒՄ, FORMATIONAL PRESSURE**, ճնշում, որը շերտային ֆլյուիդները գործադրում են իրենց ներփակող ապարների վրա:
- Դ-5. ДАЙКА** (անգլ. dike, dyke բառից – քարե պատ, պատնեշ) – **ԴԱՅԿԱ, DYKE, DIKE**, քիթեղանման ուղղաձիգ (կամ ուղղաձիգին մոտ), զուգահեռ հարթություններով սահմանափակված և ներփակող ապարները հատող երկրբ. մարմին: Տարբերում են ներծին Դ-ներ, որոնք առաջանում են այն դեպքում, երբ խորքից ներթափանցող մագման լցնում է երկրակեղևի ուղղաձիգ կամ թեք ճեղքերը, և արտածին, այսպես կոչված, բեկորային Դ-ներ, երբ ճեղքերը լցվում են նստվածքային նյութով: Լինելով ավելի կայուն, քան ներփակող ապարները, լերկացման (դենուդացիայի) ժամանակ երակային զանգվածը Երկրի մակերևույթում հանդես է գալիս թմբի կամ պատի տեսքով, սովորաբար լավ արտահայտված անջատություններով: Դ-ներն ունեն մեծ երկարություն, խորություն և համեմատաբար փոքր հաստություն: Դ-ները ուղեկցում են ներժայթքային (ինտրուզիվ) և արտաժայթքային ապարներին կամ առաջացնում են ինքնուրույն գոտիներ՝ կապված խորքային մագմայական օջախների հետ: Հաճախ օգտ. հնժ-ների (ոսկի, բազմամետաղներ և այլն) որոնողական նշաններ են:
- Դ-6. ДАМБА – ՀՈՂԱՊԱՏՆԵՇ (ՊԱՏՎԱՐ, ԱՐԳԵԼԱՊԱՏ, ԱՍԲԱՐՏԱԿ), DAM, EMBANKMENT, LEVEE**, կավային ապարներից (երբեմն նաև քարից կամ բետոնից) կառուցված պատնեշ (արգելապատ), որի միջոցով ստեղծվում են ոչ մեծ ջրավազաններ, կամ որն ունի ափապաշտպան նշանակություն (ջրամբարների, գետերի համար):
- Դ-7. ДАТСКИЙ ЯРУС** (Դանիայի անունով) – **ԴԱՆԻԱԿԱՆ ՀԱՐԿ, DANIAN**, նախկինում վերին կավճի վերին հարկ, այժմ պալեոգենի համակարգի պալեոցենի բաժնի ստորին հարկ:



**Д-8. ДАЦИТ** (լատ. Dacia – Դակիա, հռոմեական գավառ ժամանակակից Ռումինիայում) – **ԴԱՏԻՏ, DACITE**, նորատիպ (կայնոտիպ) արտաժայթքային ապար, գույնը՝ բաց մոխրագույն, կանաչամոխրագույն, հազվադեպ՝ մուգ մոխրագույն: Նրբահատիկ, միկրոլիթային կամ ապակենման ընդհանուր զանգվածում ներփակվածքները ներկայացված են պլագիոկլազով, հազվադեպ՝ կալիումանատրիումային դաշտասպաթով, քվարցով և մուգավուն միներալներով (ամֆիբոլ, պիրոքսեն, բիոտիտ), ուղեկից (ակցեսորային) միներալներ են ապատիտը, հազվադեպ՝ ցիրկոնը, տիտանիտը, նոնաքարը: Դ. գրանոդիորիտի արտավիժական նմանակն է:

**Д-9. ДВИЖЕНИЕ ЗЕМЛИ – ԵՐԿՐԻ ՇԱՐԺՈՒՄ, EARTH MOTION**, Երկրի տեղափոխությունը որևէ ընտրված կոորդինատային համակարգի նկատմամբ: Գալակտիկայում Ե. շ. կազմված է իր առանցքի շուրջը օրական պտտումից, Արևի շուրջը՝ տարեկան շրջապտույտից:

**Д-10. ДВИЖЕНИЕ ЛЕДНИКА – ՍԱՌՑԱԴԱՇՏԻ ՇԱՐԺՈՒՄ, GLACIAL MOVEMENT, MOVEMENT OF GLACIERS**, ծանրության ուժի ազդեցության տակ սառցի մածուցիկապլաստիկ կամ բլոկային տեղափոխումը (հոսքը) սնման մարզից դեպի սառցադաշտի ստորին եզրամասերը:

**Д-11. ДВИЖЕНИЯ ЗЕМНОЙ КОРЫ – ԵՐԿՐԱԿԵՂԵՎԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ, MOVEMENTS OF THE EARTH'S CRUST**, ներքին (ներծին) ուժերի ազդեցության տակ Երկրի արտաքին պինդ թաղանթի շարժում: Տարբերում են լեռնագոյացման (օրոգեն) և էպեյրոգեն շարժումներ, ուղղաձիգ և հորիզոնական շարժումներ:

**Д-12. ДВИЖЕНИЯ ПЛЫВУННЫЕ – ՀՈՍԱԳՐՈՒՄՆԵՐ (ՀՈՍԱԳԵՏՆԻ, ՊԼԻՎՈՒՄՆԱՅԻՆ) ՇԱՐԺՈՒՄՆԵՐ, QUICKSAND MOVEMENTS**, ծանրության ուժի ազդեցության տակ գերխոնավ փուխր կամ սորուն գրունտների (ավազ, կավավազ) մածուցիկ շարժումներ, որոնք լանջի չնչին թեքության դեպքում անգամ հանգեցնում են նրա կտրուկ ձևափոխությունների (ալիքավորման, փոսորակների առաջացման և այլն):

**Д-13. ДВИЖЕНИЯ ПОЛЮСОВ (ЗЕМЛИ) – ԲԵՎԵՈՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄ (ԵՐԿՐԻ), POLAR MOTIONS, MOVEMENTS OF THE POLE**, աշխարհագրական բևեռների տեղափոխությունը Երկրի մակերևույթում: Բևեռները շարժվում են բարդ կորագծով՝ որոշ միջին դիրքի շուրջը, դրանից չիեռանալով ավելի քան 25-ից 30 մ:

**Д-14. ДВИЖЕНИЯ (ПЕРЕМЕЩЕНИЯ) ГРАВИТАЦИОННЫЕ – ԶՈՂՎԱԿԱՆ (ԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ) ՇԱՐԺՈՒՄՆԵՐ (ՏԵՂԱՇԱՐԺԵՐ), GRAVITY MOVEMENTS**, հողմահարման արդյունքների, ինչպես նաև զգալի հաստության սովորաշերտերի փուխր զանգվածների շարժումներ լանջով ներքև՝ ծանրության ուժի ազդեցության տակ: Տեղի են ունենում բոլոր լայնություններում և ցանկացած պայմաններում (ցամաքում, ջրի տակ), այդ պատճառով Չ. շ. արտածին գործընթացներում հանդիսանում են լերկացման (դեմուդացիայի) համակողմանի ազդակներ, կարող են տեղի ունենալ չոր ապարներում՝ 3-5° թեքության դեպքում կամ խոնավացած գրունտում՝ ամենաաննշան թեքություններում:

**Д-15. ДВИЖУЩИЕСЯ МОРЕНЫ – ՇԱՐԺՎՈՂ ՍԱՌՑԱԲԵՐՈՒԿՆԵՐ (ՍՈՐԵՆՆԵՐ), MOVING MORaine**, սառցադաշտի ներսում կամ մակերևույթում կուտակված խճային և խոշորաբեկոր նյութ, որը տեղափոխվում է շարժվող սառցադաշտի հետ համատեղ:

**Д-16. ДВОЙНИКИ КРИСТАЛЛОВ – ԿՐԿՆԱԲՅՈՒԲԵՂՆԵՐ, TWINS, MACLES**, երկու համասեռ բյուրեղների օրինաչափ հարաճում: Բնորոշ է շատ միներալների համար, օր.՝ գիպսի (այսպես կոչված՝ ծիծեռնակի պոչ), դաշտասպաթների, ռուտիլի և այլն:

- Д-17. ДВОЙНИКОВАЯ ПЛОСКОСТЬ** – **ԿՐԿՆԱԿՄԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ, TWINNING PLANE**, բյուրեղի երկու սերտաճվածքների համաչափության հարթություն, որի օգնությամբ մեկ անհատը արտածվում է մյուսից՝ նրանում անդրադարձվելու ուղիով:
- Д-18. ДВОЙНИКОВЫЙ ЗАКОН** – **ԿՐԿՆԱԿՄԱՆ ՕՐԵՆՔ, TWINNING LAW**, բյուրեղագիտական օրինաչափություն, որն արտահայտում է կրկնավոր սերտաճվածքներում անհատների փոխհարաբերությունը: Որոշվում է կրկնակման առանցքի և կրկնակման կարի (հարաճման հարթություն) սիմվոլով և դրանց փոխհարաբերությամբ:
- Д-19. ДВОЙНИКОВЫЙ ШОВ** – **ԿՐԿՆԱԿՄԱՆ ԿԱՐ, TWINNING JUNCTURE**, կրկնաբյուրեղի երկու անհատների սերտաճման մակերևույթի տեսանելի հետքը (սահմանը երկու անհատների միջև):
- Д-20. ДВОЯКОДЫШАЩИЕ (Dipnoi)** – **ԵՐԿՇՆՉԱՎՈՐ (ԵՐԿՇՈՒՆՉ) ՉԿՆԵՐ, DIPNOANS**, ոսկրային ձկների ենթադաս: Ջրում շնչում են խռիկներով, իսկ ջրավազանի չորացման դեպքում թաղվում են թաց տիղմի մեջ և շնչում թոքերով: Լայն տարածված են եղել դևոնում և կարբոնում, այժմ հայտնի են մի քանի տեսակներ:
- Д-21. ДВУДОЛЬНЫЕ (Dicotyledones)** – **ԵՐԿՇԱՔԻԼԱՎՈՐՆԵՐ, DICOTYLEDONS**, ծածկասերմ կամ ծաղկավոր բույսերի դասի ենթադաս: Սաղմը կազմված է երկու շաքիլից: Հանդիպում են սկսած վաղ կավճից: Պատկանում է սաղարթավոր ծառերի ու թփուտների մեծ մասը:
- Д-22. ДВУПРЕЛОМЛЕНИЕ СВЕТА** – **ԼՈՒՅՍԻ ԵՐԿԲԵՎՈՒՄ, BIREFRINGENCE OF LIGHT**, բյուրեղի մեջ մտնող լույսի ճառագայթի մասնատումը երկու բեկված, բևեռացված ճառագայթների՝ միմյանց փոխուղղահայաց լուսային տատանումներով:
- Д-23. ДВУСТВОРЧАТЫЕ МОЛЛЮСКИ (Bivalvia, Lamellibranchia)** – **ԵՐԿՓԵՂՎ ՓՈՓԿԱՍԱՐՄԻՆՆԵՐ (ԿԱՎՂԱՍՈՐԹՆԵՐ), BIVALVES, LAMELLIBRANCHES**, փափկամարմինների (կակղամորթների) տիպի դաս: Մոտ 15000 տեսակ: Խեցին կազմված է երկու կողային փեղկերից՝ միակցված մեջքային կողմում, գլուխը վերացված է: Բնակվում են ծովերում և ներքին ջրավազաններում: Քենթրիից–այժմ:
- Д-24. ДЕБИТ ИСТОЧНИКА** (ֆրանս. debit – իրացում, ծախք) – **ԱՂԲՅՈՒՐԻ ԾԱՆՍ, SPRING FLOW, DISCHARGE OF SPRING**, միավոր ժամանակում աղբյուրից ստացվող ջրի քանակը, որն արտահայտվում է լ/վրկ, մ<sup>3</sup>/ժ կամ մ<sup>3</sup>/օր:
- Д-25. ДЕВОНСКАЯ СИСТЕМА (ПЕРИОД), ДЕВОН** (Դևոն՝ իր կոմսության անունից, Անգլ.) – **ԴԵՎՈՆԻ ՀԱՄԱԿԱՐԳ (ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ), ԴԵՎՈՆ, DEVONIAN**, պալեոզոյան էրատենայի (դարաշրջանի) IV համակարգ (ժամանակաշրջան): Սկիզբը 416 մլն. տ. սրանից առաջ, տևողությունը մոտ 59 մլն. տ: Ստորաբաժանվում է երեք բաժնի և յոթ հարկերի՝ վերին դևոն՝ ֆամենյան, ֆրանյան հարկեր, միջին դևոն՝ ժիվետյան, էյֆելյան հարկեր, ստորին դևոն՝ էմսյան, գիգենյան, ժեդինյան հարկեր: Վաղ դևոնը բնորոշվում է ծովի նահանջով և ցամաքային հզոր ապարաշերտերի կուտակմամբ՝ կապված կալեդոնյան ծալքավորման ավարտի հետ: Միջին դևոնը իջեցումների, ծովածավալման, հրաբխային գործունեության ակտիվացման ժամանակահատված է: Ուշ դևոնում տեղի է ունեցել ծովածավալման կրճատում՝ կապված հերցինյան ծալքավորության սկսման հետ: Ծովերում զարգացել են զրահավոր և վրձնափետրավոր ձկները, հանդես են եկել ամոնիտները, մեծ դեր են խաղացել բուստերը (կորալները), ուստամինները, ստրոմատոպորոհները, օստրակոդները, կոնոդոնտները, ծովաշուշանները: Ֆլորան բնորոշվում է պսիլոֆիտների լայն տարածմամբ, պտերակերպերի, գետնամուշկայինների, ձիածետերի հանդես գալով:

**Д-26. ДЕГАЗАЦИЯ МЕСТОРОЖДЕНИЯ – ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԳԱԶԱՁԵՐԾՈՒՄ (ԳԱԶԱՋՐԿՈՒՄ, ԱՊԱԳԱԶԱՅՈՒՄ), DEGASSING, OUTGASSING, DECONTAMINATION,** իրենց աղբյուրներից (ածխաշերտեր, ներփակող ապարներ, հանքակուտակներ, տեկտ. խախտման զոնաներում ազատ գազերի կուտակումներ) գազերի արհեստական կամ բնական հեռացում: Հ. գ-ման նպատակն է փոքրացնել գազերի ներմուտը հանքային փորվածքներ, կանխել դրանց անակնկալ անջատումը:

**Д-27. ДЕГАЗАЦИЯ НЕФТИ – ՆԱՎԹԻ (ՔԱՐՅՈՒՂԻ) ԳԱԶԱՁԵՐԾՈՒՄ, DEGASSING OF CRUDE OIL,** արդյունահանվող նավթում լուծված ածխաջրածինների (մեթան, էթան, մասամբ պրոպան), ինչպես նաև ծծմբաջրածնի, ազոտի և ածխաթթու գազի հեռացում: Ն. գ. կատարվում է հետևյալ նպատակով՝ գոլորշիացումից բենզինի չափամասի կորուստների կրճատում, նավթի միափուլ տեղափոխման ապահովում, ինչպես նաև պոմպային ագրեգատների աշխատանքի արդյունավետության բարձրացում:

**Д-28. ДЕГИДРАТАЦИЯ – ՋՐԱՋՐԿՈՒՄ (ԱՊԱՀԻԴՐԱՏ(ԱՑ)ՈՒՄ), DEHYDRATATION,** ապարներից և միներալներից ջրի անջատման գործընթաց, որը տեղի է ունենում հիդրոքսիլ խմբի բյուրեղային ու ցեոլիթային ջուր պարունակող միացություններից ջրի մոլեկուլի անջատման ճանապարհով:

**Д-29. ДЕЛЬТА** (հուն. այբուբենի Δ դելտա տառի մեծատառի ձևից) – **ԳԵՏԱԲԵՐԱՆ, ԴԵՆՏԱ, DELTA,** գետաբերան, ափամերձ ցածրավայր, որը կազմված է գետային բերվածքներից և մասնատված է գետաբազուկների և վտակների ցանցով: Առաջանում է գետի հոսքի, ծովի պլեկոթության, մակընթացության հետևանքով: Դ-ները լինում են եռանկյունաձև, թիակաձև, աղեղնաձև, կտուցանման և այլն:

**Д-30. ДЕЛЬТОВЫЕ ОЗЁРА – ԳԵՏԱԲԵՐԱՆԱՅԻՆ (ԴԵՆՏԱՅԻՆ) ԼՃԵՐ, DELTA LAKES,** հարթավայրային խոշոր գետերի գետաբերանում տեղաբաշխված լճեր:

**Д-31. ДЕЛЬТОВЫЕ ОТЛОЖЕНИЯ – ԳԵՏԱԲԵՐԱՆԱՅԻՆ (ԴԵՆՏԱՅԻՆ) ՆՍՎԱԾՔՆԵՐ, DELTA DEPOSITS,** գետի գետաբերանային մարզի տարբեր մեխ. կազմ ունեցող նստվածքներ: Գետաբերանից դեպի ծովի կողմը հեռանալիս նյութը դառնում է ավելի ու ավելի նուրբ ու համասեռ, շերտավորությունը հարթանում է և դառնում է ոչ պարզորոշ: Նստվածքների հատիկաչափական կազմը, դրանց տեսակավորման և մշակման աստիճանը կախված են գետի չափերից, նրա կողմից բերվող նյութի քանակից, երկայնական տրամատի (պրոֆիլի) թեքությունից, ջրավազանի չափերից ու ջրադինամիկ ռեժիմից, նրա մերձափնյա տեղագրությունից, տեկտ. շարժումների բնույթից, կլիմայից և այլ ազդակներից: Բրածո գետաբերուկներում հաճախ հանդիպում են ածուխների շերտեր:

**Д-32. ДЕЛЮВИЙ, ДЕЛЮВИАЛЬНЫЕ ОТЛОЖЕНИЯ** (լատ. deluo – ողողում տանում են, լվանում են) – **ՈՂՈՂԱԿ, ՈՂՈՂԱԲԵՐՈՒԿ, ՈՂՈՂԱԲԵՐՈՒԿԱՅԻՆ (ՈՂՈՂԱԿԱՅԻՆ, ԴԵՆՅՈՒԿԻԱԼ) ՆՍՎԱԾՔՆԵՐ, DELUVIUM,** նստվածքներ (ողողակուտակներ), որոնք առաջանում են բարձրությունների լանջերի ստորին մասերում և ստորոտի մոտ՝ այդ լանջերի վերին մասերի քայքայված ապարների ողողման ու կուտակման հետևանքով՝ անձրևաջրերով, հալվող ձյունաջրերով, ինչպես նաև ծանրության ուժերի ազդեցության տակ և գրունտի հոսունության (սոլիֆլյուկցիա) հետ կապված: Ո. ն. ունեն տարաբնույթ կազմ (կավերից ու ավազներից մինչև խոշորաբեկորները), բնորոշվում են թույլ տեսակավորմամբ: Սովորաբար լանջերի ստորին մասերում առաջացնում են թիկնոցանման ծածկոցներ (շլեյֆ): Ո. ն-ում հաճախ հանդիպում են ոսկու, անագի, վոլֆրամի և այլ մետաղների ցրոնային հնքվ-եր:

- Դ-33. ДЕНДРИТ** (հուն. déndrom – ծառ) – **ԾԱՌԱԿԵՐՊ, ԴԵՆԴՐԻՏ, DENDRITE**, ծառակերպ միներալային ագրեգատ (երբեմն բյուրեղ): Առաջանում է նուրբ ճեղքվածքներում կամ մածուցիկ միջավայրում՝ արագ բյուրեղացման հետևանքով: Հանդիպում է շերտավորման մակերևույթներում, կլիվաժում, որոշ ապարների ճեղքերի պատերին: Դ. բնորոշ է բնածին տարրերին (ոսկի, պղինձ, արծաթ և այլն), մանգանի օքսիդներին, սառույցին և այլն:
- Դ-34. ДЕНДРОЛИТ – ԴԵՆԴՐՈԼԻԹ, ՓԱՅՏԱՔԱՐ, DENDROLITH**, քարացած փայտ:
- Դ-35. ДЕНУДАЦИОННАЯ СТУПЕНЬ – ԼԵՐԿԱՑՄԱՆ (ԴԵՆՈՒԴԱՑԻԱՅԻ) ԱՍՏԻՃԱՆ, DENUDATION STEP**, սանդղավանդ՝ ռելիեֆի մեկ հարթ մակերևույթից դեպի նման ավելի ցածր տեղադրվածը, որտեղ տարբեր կարծրության ապարներն ունեն հորիզոնական տեղադրում: Տերմինը օգտագործվում է նաև տեղային հարթեցման մակերևույթների համար:
- Դ-36. ДЕНУДАЦИОННАЯ ТЕРРАСА – ԼԵՐԿԱՑՄԱՆ (ԴԵՆՈՒԴԱՑԻԱՅԻ) ԴԱՐՎԱՆԴ (ԴԱՐՍԱՓ), DENUDATION TERRACE**, տե՛ս Структурно-денудационная терраса:
- Դ-37. ДЕНУДАЦИОННОЕ ПЛАТО – ԼԵՐԿԱՑՄԱՆ (ԴԵՆՈՒԴԱՑԻԱՅԻ) ՍԱՐՎԱՆԴ, DENUDATION PLATEAU**, բարձրացված լեռկացման հարթավայր:
- Դ-38. ДЕНУДАЦИОННЫЕ ПОВЕРХНОСТИ – ԼԵՐԿԱՑՄԱՆ (ԴԵՆՈՒԴԱՑԻԱՅԻ) ՍԱԿԵՐԿՈՒՅՑՆԵՐ, DENUDATION SURFACES, SURFACES OF EROSION**, մերձ-հորիզոնական մակերևույթներ, որոնք ծալքավորված տարահասակ ապարները հատում են մեկ մակարդակով: Առաջանում են արտածին քայքայիչ գործընթացների համախմբության ազդեցության տակ այն ժամանակահատվածում, երբ տեղի է ունենում երկրակեղևի տեկտ. շարժումների երկարատև թուլացում և լեռկացման հիմնամակարդակի կայունացում: Տարբեր կլիմայական պայմաններում Լ. մ-ի գործընթացը ինչ-որ չափով տարբեր է, այդ պատճառով ըստ ծագման առանձնացվում են Լ. մ-ի տարբեր անվանումներ՝ պենեպլեն, պեդիպլեն, մնացորդային մակերևույթ, պանպլեն և այլն: Լեռնային երկրներում լեռկացման հիմնամակարդակի բազմակի փոփոխության հետևանքով առաջանում են մի քանի Լ. մ., կամ միևնույն մակերևույթը ձևախախտվում է տեկտ. գործընթացների հետևանքով: Լ. մ-ի ուսումնասիրությունը խոշոր երկրատարածքների ռելիեֆի պատմության վերականգնման հիմնական մեթոդներից մեկն է:
- Դ-39. ДЕНУДАЦИОННЫЕ РАВНИНЫ – ԼԵՐԿԱՑՄԱՆ (ԴԵՆՈՒԴԱՑԻԱՅԻ) ՀԱՐՁԱՎԱՅՐԵՐ, DENUDATION PLAINS, DESTRUCTURAL PLAINS**, հարթ(եց)ված մակերևույթներ, որոնք առաջանում են երբեմնի ավելի բարձրացված և հակադիր (օր. լեռնային) ռելիեֆի տեղում՝ քայքայման և լեռկացման գործընթացների երկարատև կամ ժամանակավոր գերակշռության պայմաններում՝ քայքայման արդյունքների հեռացման հետևանքով:
- Դ-40. ДЕНУДАЦИОННЫЙ РЕЛЬЕФ, ВЫРАБОТАННЫЙ РЕЛЬЕФ – ԼԵՐԿԱՑՄԱՆ (ԴԵՆՈՒԴԱՑԻԱՅԻ) ՌԵԼԻԵՖ, ՄՇԱԿՎԱԾ ՌԵԼԻԵՖ, DENUDATION LANDFORMS, DESTRUCTURAL LANDFORMS**, ռելիեֆ, որն առաջացել է լեռկացման գործընթացների հետևանքով: Առանձնացնում են բուն լեռկացման ձևեր, որոնք առաջանում են հողմահարման արդյունքների ձգողական (գրավիտացիոն) տեղափոխման ու մակերեսային ողողատարման հետևանքով (սյուներ, քիվեր, խորշեր), և լեռկացման ձևեր (լայն հասկացությամբ), որոնք առաջանում են կա՛մ արտածին գործընթացներից որևէ մեկի գերակշռության հետևանքով (ջրային ողողամաշում, սառցաքերում, հողմամաշում և այլն) և կա՛մ դրանց համախումբ ներազդեցության հետևանքով (օր. պենեպլենի (համահարթի) և տարբեր կառուցվածքավերկացման

ծների առաջացումը): Հայտնի են նաև ստորջրյա լերկացման ձևեր (ստորջրյա սողանքներ, հովիտներ, կիրճեր):

**Д-41. ДЕНУДАЦИОННЫЙ СКЛОН – ԼԵՐԿԱՑՄԱՆ (ԴԵՆՈՒԴԱՑԻԱՅԻ) ԼԱՆՋ, DENU-DATIONAL SLOPE**, լանջը կամ նրա մի մասը, որն առաջացել է լերկացման ազդակների գործունեության հետևանքով: Լ. լ-երում տեղի են ունենում ապարների քայքայում և ողողատարում:

**Д-42. ДЕНУДАЦИОННЫЙ СРЕЗ – ԼԵՐԿԱՑՄԱՆ (ԴԵՆՈՒԴԱՑԻԱՅԻ) ՀԱՏՎԱԾՔ, LAYER REMOVED BY EROSION, DEGRADATION SHEET**, բնորոշվում է լերկացման գործընթացներով հեռացված ապարների շերտի հաստությամբ: Լ. հ. լայնորեն օգագործվում է հնաերկրաձևաբանական վերակառուցումների, օգտ. հնձ-ների որոնման ժամանակ:

**Д-43. ДЕНУДАЦИЯ** (լատ. denudatio – մերկացում) – **ԼԵՐԿԱՑՈՒՄ (ԴԵՆՈՒԴԱՑԻԱ, ՏԵՂԱՏԱՐՈՒՄ, ՈՂՈՂԱՏԱՐՈՒՄ), DENUDATION, DEGRADATION, EROSION**, ջրի, քամու, սառցադաշտի, ծանրության ուժի միջոցով հողմահարման արդյունքների քանդման ու տեղափոխման գործընթացների համախմբություն: Լ-ման տեմպի ու բնույթի վրա մեծ չափով ազդում են տեկտ. շարժումները: Լ-ման և երկրակեղևի շարժման փոխհարաբերությունից է կախված ցամաքի ռելիեֆի զարգացման ուղղությունը: Տեկտ. բարձրացումների նկատմամբ Լ-ման գերակշռությունը հանգեցնում է բացարձակ և հարաբերական բարձրությունների աստիճանական ցածրացմանը և հարթեցված ռելիեֆի ձևավորմանը: Երկարատև Լ-ման հետևանքով լեռնային երկրները կարող են վերածվել ալիքավոր հարթավայրերի: «Լ.» տերմինը երբեմն օգտագործվում է նաև նեղ մասշտաբով՝ հողմահարման արդյունքների միայն մակերևութային ողողատարման գործընթացների համար:

**Д-44. ДЕПРЕССИЯ** (լատ. depression – խորասուզում, ճնշում, անկում ներքև) – **ԻՋՈՒՅՑ, DEPRESSION**, 1) երկրձ-ում երկրի մակերևութի ցանկացած իջեցում՝ մեծամասամբ փակ [նեղ իմաստով ծովից ցածր տեղադրված գոգավորություն (փոսորակ)], չոր կամ լցված ջրով: 2) Տեկտոնիկայում երկրակեղևի ճկման մարզ՝ մասամբ կամ լրիվ լցված նստվածքներով: 3) Հորատանցքի շրջանում գազի շերտի շերտային ճնշման և հորատախորշի ճնշման տարբերություն:

**Д-45. ДЕРИВАТЫ** (լատ. derivatum – թափոնակույտ, թափոններ) – **ԱԾԱՆՑՈՒԿՆԵՐ (ԱԾԱՆՑԱԼՆԵՐ, ԴԵՐԻՎԱՏՆԵՐ), DERIVATES**, ապարաբանությունում միասնական մագմայական հալույթի տարբերակման արդյունքներ (ապարներ):

**Д-46. ДЕСИЛИКАЦИЯ, ДЕСИЛИФИКАЦИЯ** (լատ. de – նախածանց, որը նշանակում է հեռացում, ոչնչացում, և selex – սեռ հ. silicies – կայծքար) – **ՍԻԼԻԿԱԶԵՐՈՒՄ (ԱՊԱՍԻԼԻՖԻԿԱՑՈՒՄ), DESILICATION**, 1) ապարների քիմ. հողմահարման կամ այլ գործընթացների ժամանակ սիլիկահողի լուծում և հեռացում: 2) Մագման սիլիկահողով աղքատացնող գործընթաց:

**Д-47. ДЕТРИТ** (լատ. detritus – տրորված) – **ԴԵՏՐԻՏ (ԲԵԿՈՐԱՆՅՈՒԹ, ՔԱՅՔԱՅՈՒԿ), DETRITUS**, նստվածքներում կամ ապարներում օրգանածին նյութ: Դ. առաջանում է բույսերի գործվածքի, կենդանիների խեցիների, կմախքային մասերի և արտաթորվածքների մասերից: Ըստ ջարդոտման աստիճանի՝ առանձնացնում են նրբադետրիտ և կոպտադետրիտ:

**Д-48. ДЕФЛЮКЦИЯ** (լատ. deflue – արտահոսում են, աստիճանաբար անցնում են) – **ԴԵՖԼՅՈՒԿՑԻԱ, DEFLUCTION, DEFLUXION**, հողաբուսական ծածկույթի տակ խոնավացած հողագետնային զանգվածների պլաստիկ շարժում՝ դանդաղ դուրսքաշման տեսքով:

- Д-49. ДЕФЛЯЦИЯ** (հին լատ. deflatio – արտափչում) – **ԴԵՖԼԱՅԻԱ (ԱՐՏԱՓՉՈՒՄ), DEFLATION**, ապարների քայքայման նուրբ արդյունքների (փոշի, ավազ) դուրս տանումը քամու միջոցով: Հատկապես ուժեղ արտահայտվում է անապատներում:
- Д-50. ДЕФОРМАЦИЯ ГОРНЫХ ПОРОД** (լատ. deformatio – աղավաղում) – **ԱՊԱՐ-ՆԵՐԻ ՁԵՎԱՆԱԽՏՈՒՄ, ROCK DEFORMATION**, ապարների ձևի և ծավալի փոփոխություն, որը կատարվում է բնական և արհեստական ուժերի ազդեցությամբ: Ա. ձ. հանգում է միայն ծավալի փոփոխության, եթե նրանց վրա ազդում է ջրաստատիկ ճնշումը, և ծավալի ու ձևի կամ միայն ձևի փոփոխության, եթե նրանց վրա գործում է ուղղորդված ճնշում: Վերջինի ազդեցությամբ առաջանում է Ա. ձ-ների երեք տեսակ՝ առածգական, պլաստիկ և խզվածքային: Առածգական ձևախախտման դեպքում փոխվում է ապարի ձևը, սակայն ճնշման դադարեցմանը զուգընթաց՝ այն վերականգնվում է: Պլաստիկ ձևախախտման դեպքում ապարի ձևը փոխվում է առանց նրա խզման, սակայն, ի տարբերություն առածգականի, պլաստիկ ձևախախտումներն անդարձելի են: Նրանք կատարվում են տարբերակված շարժումների միջոցով և տարբեր ուղղություններով: Խզվածքային ձևախախտումն ուղեկցվում է ապարի ամբողջականության խախտմամբ, ճեղքերի ու ճաքերի առաջացմամբ: Երկրակեղևի կառուցվածքում դիտվում են միայն պլաստիկ (ծալքավոր) և խզվածքային ձևախախտումներ:
- Д-51. ДЕФОРМАЦИЯ ЗЕМНОЙ КОРЫ** (լատ. detromatio – աղավաղում) – **ԵՐԿՐԱ-ԿԵՂԵՎԻ ՁԵՎԱՆԱԽՏՈՒՄ (ՁԵՎԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ), DEFORMATIONS OF THE EARTH'S CRUST**, ապարների տեղադրման ձևի և ծավալի փոփոխություններ՝ Երկրի խորքային ուժերի ներգործության տակ, որոնք երկրակեղևում առաջացնում են տեղային ուղղորդված կամ բազմակողմանի ձգման, սեղմման կամ տեղաշարժման պայմաններ: Արտահայտվում են տարատեսակ երկրբ. մարմինների առաջնային հորիզոնական տեղադրման՝ ծալքավոր և խզումային խախտումների տեսքով (ձկում, կամարագոյացում, ծալքերի, խզվածքների, ճեղքերի գոյացում և այլն):
- Д-52. ДЕФОРМАЦИЯ ОСТАТОЧНАЯ** – **ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ՁԵՎԱՆԱԽՏՈՒՄ**, նույնն է՝ պլաստիկ ձևափոխություն, տե՛ս Деформация горных пород:
- Д-53. ДЕФОРМАЦИЯ РАЗРЫВНАЯ** – **ԽՁՎԱԾՔԱՅԻՆ ՁԵՎԱՆԱԽՏՈՒՄ**, տե՛ս Деформация горных пород:
- Д-54. ДЕФОРМАЦИЯ УПРУГАЯ** – **ԱՈԱԶԳԱԿԱՆ ՁԵՎԱՆԱԽՏՈՒՄ**, տե՛ս Деформация горных пород:
- Д-55. ДЕШИФРИРОВАНИЕ АЭРОФОТОСНИМКОВ** (ֆրանս. déchiffrer – լուծել, գուշակել) – **ՕԳԱՆՈՒՄԱՆԿԱՐՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒՄ, INTERPRETATION OF AIR PHOTOGAPHS, PHOTO-INTERPRETATION**, տարածքի ուսումնասիրման մեթոդ, ըստ որի օդալուսանկարչական պատկերման հիմքում ընկած է օբյեկտների ճանաչումը, դրանց քանակական ու որակական բնութագրման որոշումը, պայմանական նշաններով դրանց արտապատկերումը և հատկությունների մեկնաբանումը: Տարբերում են ընդհանուր աշխ. և ճյուղային Օ. վ.: Առաջինին են վերագրվում տեղագրական և բնապատկերային (լանդշաֆտային), իսկ երկրորդին՝ բոլոր մնացած (օր. երկրբ., սառցադաշտաբանական, հնագիտական) Օ. վ-ները:
- Д-56. ДЕШИФРИРОВАНИЕ КОСМИЧЕСКИХ СНИМКОВ** – **ՏԻԵՁԵՐԱԿԱՆ ՆԿԱՐՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒՄ, INTERPRETATION OF COSMIC PHOTOS**, տիեզերական նկարների դիտարկում, ընթերցում և մեկնաբանում: Տ. ն. վ-ման բովանդակությունը նույնն է, ինչ օդալուսանկարների վերծանման ժամանակ, սակայն ընդգրկման մասշտաբներն ավելի մեծ են, ինչը հնարավորություն է տալիս բնական գործընթացներն ու երևույթները դիտարկել իրենց ամբողջության մեջ:

**Д-57. ДЖЕСПИЛИТ – ՋԵՍՊԻԼԻՏ, JASPILITE**, տե՛ս Железистый кварцит:

**Д-58. ДИАБАЗ** (հուն. diábasis, բառ.-անցում) – **ԴԻԱԲԱԶ, DIABASE**, հիմքային մագմայական ապարների (բազալտի և դոլերտի) հնատիպ նմանակ: Դրանց մոտ է միներալային և քիմ. կազմով: Բաղկացած է պլագիոկլազից (լաբրադոր-անդեզիմ) (ըստ որի զարգանում են ալբիտ, պրենիտ, էպիդոտ, ցոիզիտ, կարբոնատներ), պիրոքսենից (ավգիտ), օլիվինից (դրա սերպենտինային կեղծ ձևերից), մագնետիտից և տիտանամագնետիտից: Կառուցվածքը՝ դիաբազային (օֆիտային), դոլերիտային, աֆիտային, պորֆիրանման: Գույնը՝ մուգ մոխրագույն կամ կանաչավուն-սև: Դ., հանդիսանալով դոլերիտների ու բազալտների փոփոխված նմանակը, նույնպես տարածված է ծալքավոր մարզերում, կազմում է ինչպես ներժայթքային (դայկաներ, սիլլեր), այնպես էլ արտաժայթքային (հոսքեր, ծածկոցներ) մարմիններ:

**Д-59. ДИАБАЗОВАЯ СТРУКТУРА, ОФИТОВАЯ СТРУКТУРА – ԴԻԱԲԱԶԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՕՖԻՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, DIABASIC TEXTURE, ORPHITIC TEXTURE**, բյուրեղահատիկային կառուցվածք, որի համար բնորոշ է պլագիոկլազի ինքնածն (դիոմորֆ) հատվածակողմային և աղյուսածն բյուրեղների առկայությունը, որոնց սեպածն միջակայքը լցված է ավգիտի այլածն (քսենոմորֆ) բյուրեղներով: Հատուկ է դիաբազներին և դոլերիտներին:

**Д-60. ДИАГЕНЕЗ** (հուն. dia – նախածանց, որն այստեղ նշանակում է գործողության ավարտ, և génesis – ծագում, գոյացում) – **ԴԻԱԳԵՆԵԶ (ԱՊԱՐԱԳՈՅԱՑՈՒՄ), DIA-GENESIS**, երկրակեղևի վերին զոնաների ջրային ավազանների հատակում և ցամաքում բնական գործընթացների համախմբություն, որի հետևանքով փուխր նստվածքները փոխարկվում են նստվածքային ապարների: Դ. նստվածքի ֆիզքիմ. հավասարակշռման փուլ է, որն սկզբում իրենից ներկայացնում է անհավասարակշիռ բաց համակարգ՝ ջրակալված և հարուստ օրգանական նյութով (ինչպես կենդանի, օր.՝ բակտերիաների, այնպես էլ՝ մահացած): Առանձնացնում են դիագենետիկ(ական) միներալագոյացման երկու փուլ՝ օքսիդացման՝ կապված նստվածքի ամենավերին թաղանթի հետ, որը դեռևս պարունակում է ազատ O<sub>2</sub>, և վերականգնման, որը ընդգրկում է ավելի խոր շերտերը, զուրկ է O<sub>2</sub>-ից և բնորոշվում է ռեդուկցիոն (վերականգնման) գործընթացներով: Նստվածքի տարբեր մասերում ֆիզքիմ. իրադրության խայտաբղետությունը (pH, Eh, իոնների կենտրոնացում) հանգեցնում է նոր գոյացած դիագենետիկ(ական) միներալների վերաբաշխմանը: Առաջանում են դրանց ձգվածքներ, բծեր, ոսպնյակներ, կոնկրեցիաներ, շերտանման մարմիններ և այլն: Դ-ի այդ ավելի ուշ փուլը՝ նյութի վերաբաշխման փուլը, մեծ նշանակություն ունի շատ տարրերի (P, Mn, Pb, Cu և այլն) հնքվ-երի ձևավորման համար: Դիագենետիկ(ական) միներալների ձևավորմանը զուգընթաց՝ նստվածքը կորցնում է ազատ ջուրը և որոշ չափով խտանում է՝ սկզբում տեղային և բծերով, այնուհետև ավելի ուշ փուլերում (կատագենեզ, մետագենեզ և ռեզիդուալ փոխակերպություն) տեղի է ունենում նրա համատարած խտացում:

**Д-61. ДИАГОНАЛЬНАЯ ДОЛИНА** (լատ. diagonalis, հուն. diagónios – անկյունից անկյուն գնացող) – **ԱՆԿՅՈՒՆԱԳԾԱՅԻՆ ՀՈՎԻՏ, DIAGONAL VALLEY**, գետի հովիտ, որը տեկտ. կառուցվածքների տարածման նկատմամբ ներդրվել է որոշ անկյան տակ:

**Д-62. ДИАПИР, ДИАПИРОВАЯ СКЛАДКА** (հուն. diapéirō – ծակծկում եմ, խոցում եմ) – **ԴԻԱՊԻՐ (ՎԵՐՄՂՎԱԾՔ), ԴԻԱՊԻՐԱՅԻՆ ԾԱԼՔ (ՎԵՐՄՂՎԱԾՔԱՅԻՆ ԾԱԼՔ), DIAPIR, DIAPIR FOLD**, գմբեթանման կամարածալք (անտիկլինալ)՝ ուժգին ճնշված միջուկով, որը հատում է թևերը: Դ. ծ. առաջանում է ի հաշիվ ներքևից մեծ պլաստիկություն ունեցող ապարների (աղ, կավ) վերնդման:

- Д-63. ДИАПИРИЗМ – ԴԻԱՊԻՐԻԶՄ (ՎԵՐՄՆԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ), DIAPIRISM,** միջուկի ավելի պլաստիկ ապարների կողմից գմբեթանման կամ բարձրացված ծածկող ապարների խոցման և խզման գործընթաց՝ տանգեցիալ տեկտ. լարումների հետևանքով (կամարածալքերում) կամ նստվածքային ստվարաշերտերում երկրաստատիկ(ական) ծանրաբեռնվածության հետևանքով (աղային գմբեթներում և դիապիրներում):
- Д-64. ДИАСПОР (հուն. diasporá – ցրում, տաքացնելիս ճաքճքում է) – ԴԻԱՍՊՈՐ, DIASPORE,** միներալ ջրօքսիդների ենթադասից,  $a=AlOOH$ , բյուրեղանում է շեղանկյունային համակարգում, բյուրեղները սովորաբար ունեն թերթավոր տեսք, առաջացնում են թեփուկավոր ագրեգատներ, մակահոսուկներ, բոքսիտներում բարձր դիսպերսային է: Գույնը՝ մոխրագույն, կարմրավուն, կանաչ, գորշ, սպիտակ, դեղնավուն, բյուրեղները՝ թափանցիկից մինչև կիսաթափանցիկ, փխրուն է: Կարծրությունը՝ 6.8-7.3: Բազմածին միներալ է, գոյանում է ինչպես վերնածին (հիպերգեն), այնպես էլ ներքնածին (հիպոգեն) պայմաններում: Դ. բոքսիտների գլխավոր միներալներից մեկն է: Հանդիպում է գրանիտային պեգմատիտներում, մուսկովիտային և տոպազային ջրաջերմային (հիդրոթերմալ) երակներում, երկրորդային քվարցիտներում, փոխակերպային հնքվ-երում:
- Д-65. ДИАСТРОМЫ (հուն. dia – հեռավորության վրա, մեջ առ մեջ և strōma – փռվածք) – ԴԻԱՍՏՐՈՄՆԵՐ, DIASTROMES,** անջատման ճեղքեր ապարի մեջ՝ զուգահեռ շերտայնությանը:
- Д-66. ДИАСТРОФИЗМ (հուն. diastrophē – ծռել, կորացնել, շրջել) – ԴԻԱՍՏՐՈՖԻԶՄ, DIASTROPHISM,** տեկտ. շարժումների ուժգին արտահայտություն և երկրակեղևի ձևախախտումներ: Առանձնացնում են Դ-ի որոշակի դարակարգեր կամ փուլեր, տե՛ս Фазы складчатости:
- Д-67. ДИАТОМИТ (ուշ լատ. diatomeae – դիատոմային ջրիմուռներ, հուն. diátomos – բաժանված երկու կեսի) – ԴԻԱՏՈՄԻՏ (ԴԻԱՏՈՄԱՔԱՐ), DIATOMITE,** թեթև, նրբածակոտկեն, փոխր կամ պինդ սիլիցիումային ապար, հիմնական զանգվածում բաղկացած է դիատոմային ջրիմուռների ծիածանաքարային (օպալե) փեղկերից կամ դրանց բեկորներից: Փեղկերի չափերը 0.03-ից մինչև 0.15 մմ է, պարունակում են 62-97 %  $SiO_2$  (ծիածանաքար): Որպես մշտական խառնուրդ՝ առկա են կավային նյութը, ինչպես նաև ռադիոլարիաները, սպունգների ասեղիկները, գույնը՝ սպիտակ, բաց կամ դեղնամոխրագույն, երբեմն՝ գորշամոխրագույն: Դ. ունի մեծ ծակոտկենություն, վատ ջերմա- և ձայնահաղորդականություն, դժվարահալ է և թթվակայուն: Առաջանում է դիատոմային տիղմից՝ ծովերի և լճերի հատակում: Հանդիպում է կավճից, լայնորեն տարածված է կայնոզոյան նստվածքներում: Օգտագործվում է ժողտնտեսության տարբեր բնագավառներում (տեքստիլ, նավթատեխ., սննդի, թղթի, շինարարության, ողորկման և այլն):
- Д-68. ДИАТОМОВЫЕ ВОДОРОСЛИ (Bacillariophyta կամ Diatomeae) – ԴԻԱՏՈՄԱՅԻՆ ՋՐԻՄՈՒՐՆԵՐ, DIATOMS,** միաբջջ մանրադիտակային ջրիմուռներ՝ 4-ից մինչև 2000 մկ. մեծությամբ: Բջջը պարփակված է արտաքին կայծքարային թաղանթով՝ զրահով: Ջրիմուռների ամենատարածված խումբն է, բնակվում են քաղցրահամ, տարբեր աղիության ու ջերմաստիճանների ջրային ավազաններում, հողում, ծառերի կեղևում: Մոտ 20000 տեսակ: Դ. ջ. կարող են մեծ քանակությամբ կուտակվել նստվածքների մեջ՝ առաջացնելով դիատոմիտ: Հայտնի են յուրայից:



**Д-69. ДИАТОМОВЫЙ ИЛ – ԴԻԱՏՈՍԱՅԻՆ ՏԻՂՍ, DIATOMACEOUS OOZE, DIATOME OOZE**, նստվածք ժամանակակից օվկիանոսների, ծովերի, լճերի հատակում, բաղկացած է հիմնականում դիատոմային ջրիմուռների ծիածանաքարային (օպալե) զրահներից կամ դրանց բեկորներից: Առավել լայնորեն տարածված է Յր. կիսագնդի բարեխառն լայնության օվկիանոսներում, Խաղաղ օվկիանոսի հյուսիսային մասերում:

**Д-70. ДИЗЪЮНКТИВНЫЕ НАРУШЕНИЯ (լատ. disjunctivus – բաժանիչ, տրոհիչ) – ԴԻԶՅՈՒՆԿՏԻՎ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ, DISJUNCTIONS**, երկրբ. մարմինների համատարածության խզվածքներ (խզումներ): Ընդհանուր տերմին է ճեղքերի, խզվածքների, բեկվածքների համար: Ըստ ծագման Դ. խ. բաժանվում են ոչ տեկտոնականների, որոնք առաջանում են ապարների ծավալի կրճատման, հողմահարման, սողանքների, օղաքարերի անկման դեպքում, և տեկտոնական, որոնցում առանձնացնում են խզվածքներ առանց տեղաշարժման (ճեղքեր) և խզվածքներ՝ տեղաշարժմամբ (վարնետքեր, վերնետքեր, կողաշարժեր, վրաշարժեր, մակաշարժեր և տարաշարժեր): Ըստ ծալքավոր և այլ տեկտ. կառուցվածքների հարաբերության՝ Դ. խ. կարող են լինել եզրային կամ սահմանա(զծա)յին, ներքին կամ միջանցական, ըստ խորքային արտահայտման՝ մերձնակերևութային կամ խորքային՝ երկրակեղևը և վերին միջնապատյանը հատող, տե՛ս РАЗРЫВЫ:

**Д-71. ДИККИТ (անգլ. միներալաբան Ա. Դիկի, А. Dick անունով, մահ. 1926) – ԴԻՎԻՏ, DICKITE**, կավային միներալ, կաոլինիտի բազմաձև ձևափոխություն: Առաջացնում է սպիտակ հողանման և թեփուկավոր ագրեգատներ, նուրբ թերթիկներ և դրանց տուփեր: Այլումասիլիկատների ցածրաջերմաստիճանային ջրաջերմային (հիդրոթերմալ) փոփոխության արդյունք է:

**Д-72. ДИМОРФИЗМ (հուն. di – երկու և morphē – ձև) – ԵՐԿՁԵՎՈՒԹՅՈՒՆ, DIMORPHISM**, որևէ նյութի հանդես գալը երկու կառուցվածքային ձևափոխություններում, օր.՝ CaCO<sub>3</sub>-ը կալցիտի և արագոնիտի ձևով:

**Д-73. ДИНАМИКА ПОДЗЕМНЫХ ВОД – ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱ, DYNAMICS OF UNDERGROUND WATER**, ջրաերկրաբանության բաժին, ուսմունք երկրակեղևի ապարներում ստր. ջրերի շարժման մասին, որը կատարվում է ինչպես բնական, այնպես էլ արհեստական գործոնների ազդեցության տակ: Ա. ջ. դ. ուսումնասիրում է նրանց շարժման օրինաչափությունները, մշակում է շարժման քանակական գնահատման և նպատակային կառավարման մեթոդները: Հոմ.՝ ջրաերկրադինամիկա:

**Д-74. ДИНАМИЧЕСКАЯ ГЕОЛОГИЯ – ԴԻՆԱՄԻԿ(ԱՎԱՆ) ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, DYNAMIC GEOLOGY**, երկրաբանության բաժին, որն ուսումնասիրում է ներքին և արտաքին երկրաբանական գործընթացները, որոնք անընդմեջ փոփոխում են երկրակեղևի կազմն ու կառուցվածքը և երկրի մակերևույթի ձևերը: Նույնն է՝ Физическая геология:

**Д-75. ДИНАМИЧЕСКАЯ ГЕОМОРФОЛОГИЯ – ԴԻՆԱՄԻԿ(ԱՎԱՆ) ԵՐԿՐԱԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ԳԵՈՍՏՐՖՈԼՈԳԻԱ), DYNAMIC GEOMORPHOLOGY**, երկրաձևաբանության բաժին, որը նվիրված է ռելիեֆի դինամիկայի և այն ձևավորող տարբեր ռելիեֆագոյացման գործընթացների ուսումնասիրությանը:

**Д-76. ДИНАМОМЕТАМОРФИЗМ (հուն. dýnamis – ուժ և metamórphōsis – փոխակերպում, կերպափոխում) – ՈՒՃՎՈՒՆԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ԴԻՆԱՄՈՍԵՏԱՍՏՐՖՈՒԹՅՈՒՆ), DYNAMIC METAMORPHISM**, ապարների կառուցվածքային և ավելի պակաս չափով միներալային կերպափոխություններ՝ ճնշման ներգործության

տակ: Ենթանալ զարգացումը պայմանավորված է ծալքագոյացման և վերևում տեղադրված ապարների ձգողական ներազդեցության հետ: Ու. տեղի է ունենում գլխ. վերին կառուցվածքային զոնաներում՝ ցածր ջերմաստիճանի պայմաններում: Այդպիսի փոխակերպության արդյունքներն են կատակլազիտները, միլոնիտները և տարբեր թերթաքարերը:

**Դ-77. ДИНАНТ, ДИНАНТСКИЙ ОТДЕЛ** (Դինան ք-ի անունից, Բելգ.) – **ԴԻՆԱՆՏ, ԴԻՆԱՆՏՅԱՆ ԲԱԺԻՆ, DINANTIAN**, Արմ. Եվրոպայի քարածխային համակարգի երկանդան բաժանման ստորին բաժին: Ստորաբաժանվում է տուրնեյան և վիզեյան հարկերի:

**Դ-78. ДИНОЗАВРЫ** (Dinosaurus) (հուն. dinos – սարսափելի, ահավոր և sauros – մողես) – **ԴԻՆՈՉԱՎՐԵՐ, DINOSAURS**, սողունների դասի արխոզավրերի ենթադասի ամենաբազմաքանակ խումբ: Դ-ին պատկանում են խիստ բազմազան սողուններ՝ մանր ձևերից (կատվից ոչ մեծ) մինչև հսկա ձևերը, որոնց երկարությունը հասել է 30 մ-ի: Տեղաշարժվել են երկու կամ չորս ոտքերի վրա: Դրանց մեջ եղել են գիշատիչներ և բուսակերներ: Բրածո վիճակում, բացի կմախքից և նրա մասերից, պահպանվել են նաև ձվերը և մումիացված մնացորդները: Տարբերում են երկու կարգ՝ թռչնակոնքայիններ և մողեսակոնքայիններ: Դ. գոյություն են ունեցել տրիասից մինչև ուշ կավիճը ներառյալ:

**Դ-79. ДИОПСИД** (հուն. di – կրկնակի և ópsis – տեսակ, ըստ բյուրեղների երկու բնորոշ արտաքին տեսքի) – **ԴԻՈՊՍԻԴ, DIOPSIDE**, միներալ մոնոկլինային պիրոքսենների խմբից: Նմանաձև (իզոմորֆ) շարքի ծայրային անդամն է: Կալցիումի ու մագնեզիումի սիլիկատ,  $Ca(MgFe)[Si_2O_6]$ : Առաջացնում է կանաչ, կապույտ սյունաձև բյուրեղներ, ճառագայթավոր ագրեգատներ, հատիկավոր զանգվածներ և այլն: Կարծրությունը՝ 5.5-6: Դ. լայն տարածված ապարակազմիչ միներալ է, գոյանում է ինչպես մազմայական, այնպես էլ փոխակերպային (մետամորֆային) գործընթացներում: Առկա է հիմքային և գերհիմքային ապարներում, սկառներում, որոշ փոխակերպային ապարներում (փոխակերպության էպիդոտ-ամֆիբոլիթայինից մինչև էկլոզիտային ֆացիաները):

**Դ-80. ДИОРИТ** (հուն. diorizō – սահմանազատում են, տարբերում են) – **ԴԻՈՐԻՏ, DIORITE**, միջին կազմի կանաչամոխրագույն մուգավուն ներծայթքային (ինտրուզիվ) բյուրեղահատիկային ապար: Կազմված է հիմնականում անդեզիտից, մուգավուն միներալներից (սովորական եղջերախաբ, երբեմն՝ բիոտիտ և ավգիտ), հազվադեպ՝ քվարցից: Հանքային միներալներից առկա են մագնետիտը, սֆենը և այլն: 5%-ից բարձր (մինչև 20 %) քվարցի պարունակության դեպքում կոչվում է քվարցային Դ.: Դ-ի տարատեսակներից են (ըստ միներալային կազմի) երկպիրոքսենային Դ., օրթոպիրոքսենային Դ. և այլն: Դ. առաջացնում է ինքնուրույն ապարազանգվածներ (շտոկներ), երակներ, լակոլիթներ և այլն: Լայնորեն ներկայացված է բաթոլիթներում, որոնք առաջանում են մայրցամաքային ակտիվ եզրամասերում:

**Դ-81. ДИС...** (լատ. dis, հուն. dys) – **ԴԻՍ...**, **DIS...**, նախածանց, որը նշանակում է անջատում, բացասում, հակադրություն:

**Դ-82. ДИСГАРМОНИЧНАЯ СКЛАДЧАТОСТЬ – ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, DISHARMONIC FOLDING, INHARMONIOUS FOLDING**, այն ծալքերի համախմբություն, որոնք առաջացել են միաժամանակ՝ շերտերի ամբողջ հաստվածքում, բայց տիրապետում են ձևերի, որոնք որոշակիորեն տարբերվում են շերտագրական կտրվածքի տարբեր մակարդակներում: Կապված է կտրվածքում համեմատաբար ավելի կարծր և ավելի պլաստիկ ապարների հերթագայության հետ, առաջինները ճնկվում են պարզ խոշոր ծալքերում, երկրորդները՝ բարդ մանր ծալքերում:

**Д-83. ДИСКОРДАНТНОЕ ЗАЛЕГАНИЕ – ԱՆՆԵՐՂԱՇՆԱԿ ՏԵՂԱԴՐՈՒՄ**, տե՛ս He-  
согласное залегание:

**Д-84. ДИСЛОКАЦИИ** (ուշ լատ. dislocatio – տեղաշարժ) – **ՏԵՂԱԽԱՆՏՈՒՄՆԵՐ (ԴԻՍԼՈԿԱՑԻԱՆԵՐ), DISLOCATIONS, EARTH SHIFTS**, երկրբ. մարմինների տեղադրման ձևերի խախտում, որը հարուցվել է տեկտ. շարժումներով կամ ապարի ներսում տեղի ունեցող գործընթացներով (օր.՝ ծավալի փոփոխություն)՝ ինչպես երկրի մակերևույթում [օր.՝ ապարների ծալքերի առաջացում սառցադաշտի գործունեության հետևանքով՝ սառցատեղախախտում (սառցադիսլոկացիա)], այնպես էլ երկրակեղևի ավելի խոր շերտերում: Տարբերում են պլիկատիվ S. (արտահայտվում են շերտերի տարբեր մասշտաբի ու ձևի ծավառքով) և դիպլոմկտիվ կամ խզվածքային S., որոնք ուղեկցվում են երկրբ. մարմինների համատարածության խզմամբ: Առանձնացնում են նաև ներարկումային (ինտեկտիվ) S., որոնք ստորաբաժանվում են մագմայականների (ներկայացված են տարբեր կազմի ու ձևի ներժայթքային մարմիններով), և ոչ մագմայական (աղային և կավային դիապիրներ): S-ի առաջացումը տեղի է ունեցել երկրբ. պատմության ամբողջ ընթացքում:

**Д-85. ДИСЛОЦИРОВАННОЕ ЗАЛЕГАНИЕ – ՏԵՂԱԽԱՆՏՎԱԾ ՏԵՂԱԴՐՈՒՄ, ԴԻՍԼՈԿԱՑՎԱԾ ՏԵՂԱԴՐՈՒՄ**, տե՛ս Залегание нарушенное:

**Д-86. ДИСТАНЦИОННЫЕ МЕТОДЫ** (լատ. distantia – տարածություն) – **ՅԵՈՎՈՐՈՎԱԿԱՆ ՄԵԹՈՂՆԵՐ, REMOTE SENSING**, թռչող ապարատներից զգալի հեռավորություններից (օր.՝ օդից կամ տիեզերքից) երկրի օբյեկտների կամ տիեզերական մարմինների ուսումնասիրման (տարբեր սարքավորումներով և սպեկտրի տարբեր մարզերում) մեթոդների ընդհանուր անվանում: Յ. մ. հնարավորություն են տալիս զնահատելու ուսումնասիրվող օբյեկտների ռեզոնանս առանձնահատկությունները, որոնք բացահայտվում են մեծ տարածությունների վրա: Յ. մ. մեծ չափով օգտագործվում են աշխ., երկրբ., տեղագրական, օդերևութաբանական, երկրֆ. և այլ ուսումնասիրություններում:

**Д-87. ДИСТЕН – ԴԻՍԹԵՆ, DISTHENE**, նույնն է՝ Кианит:

**Д-88. ДИФФЕРЕНЦИАЦИЯ ЛАНДШАФТОВ** (ֆրանս. differentiation, լատ. differentia – տարբերություն) – **ԲՆԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ (ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐԻ) ՏԱՐԲԵՐՎՈՒՄ, DIFFERENTIATION OF LANDSCAPES, 1)** բնապատկերի (լանդշաֆտի) առանձին մասերի կառուցվածքի ու գործունեության մեջ եղած տարբերությունների խորացման գործընթաց, որը հանգեցնում է ձևաբանական միավորների առանձնացմանը (ֆացիաներ, բնասահման և այլն)՝ նախկինում համասեռ բնապատկերի սահմաններում: 2) Գոյություն ունեցող բնապատկերների միջև տարբերությունների արձանագրում:

**Д-89. ДИФФЕРЕНЦИАЦИЯ МАГМЫ – ՄԱԳՄԱՅԻ (ՅՐԱՅԵՂՈՒԿԻ) ՏԱՐԲԵՐՎՈՒՄ, DIFFERENTIATION OF MAGMA**, գործընթացների համախմբություն, որը հանգեցնում է մագմայից տարբեր միներալային կազմի կամ միևնույն միներալների տարբեր քանակական փոխհարաբերություն ունեցող ապարների գոյացմանը: Մ. տ-ման հիմնական գործոններն են ջերմադինամիկ պայմանների փոփոխությունը, գրանիտացումը, յուրացումը (ասիմիլյացումը) և այլն: Տարբերում են՝ բյուրեղացման տարբերակում (բյուրեղացման գործընթացում պինդ ֆազերի (տար)անջատում, և լիքվացիոն տարբերակում (մագմայի բաժանումը երկու չխառնվող հալույթների, ցնդանյութերի անջատում և այլն): Մ. տ. պայմանավորում է ոչ միայն մագմայական ապարների բազմազանությունը, այլև մագմայական մետաղական հնքվ-երի առաջացումը:

**Д-90. ДИФФУЗИЯ** (լատ. diffusio – տարածում, ցրում, տարհոսում) – **ԴԻՖՈՒԶԻԱ, DIFFUSION**, նյութի մանրագույն մասնիկների (ատոմ, մոլեկուլ, իոն) տեղաշարժ, որը ջերմային շարժման ազդեցությամբ կատարվում է նրանց խտության նվազագույն ուղղությամբ՝ հանգեցնելով միջավայրում մասնիկների հավասարաչափ բաշխմանը: Գազերում դա կատարվում է արագ, հեղուկներում՝ դանդաղ, պինդ մարմիններում՝ չափազանց դանդաղ:

**Д-91. ДНЕПРОВСКАЯ ЛЕДНИКОВАЯ ЭПОХА – ԴՆԵՊՐՅԱՆ ՍԱՌՑԱՎԱՇՏԱՅԻՆ ԴԱՐԱՎԱՐԳ, DNIAPER ICE AGE**, Արևելատեղափոխական հարթավայրի առավելագույն սառցապատման դարակարգ, ծածկել է նրա մեծ մասը միջին պլեյստոցենում: Հր. սահմանը հասել է մինչև Դնեպրոպետրովսկ ք-ի լայնությանը:

**Д-92. ДОБЫЧА ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ – ՕԳՏԱՎԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԱՆՈՒՅԹ, MINERAL PRODUCTION, MINERAL OUTPUT**, Երկրի ընդերքից տեխնիկական միջոցների օգնությամբ պինդ, հեղուկ և գազանման օգտ. հնձ-ների հանման գործընթացներ: Օ. հ. ա. բաղկացած է արժեքավոր բաղադրամասի կորզումից համեմատաբար մաքուր տեսքով (օր.՝ նավթ, բնական գազ, քարածուխ, քարաղ, թանկարժեք քարեր և այլն) կամ ապարազանգվածի տեսքով (օր.՝ մետաղների հանքաքարեր), որը հետագայում ենթարկվում է վերամշակման:

**Д-93. ДОГГЕР** (անգլ. dogger – Յորկշիրի (Անգլ.) ալենի երկաթախառն ավազաքարերի տեղային անվանումից) – **ԴՈԳԵՐ, DOGGER**, յուրայի համակարգի միջին բաժին: Բաժանվում է չորս հարկերի՝ ալենի, բայոսի, բատի և կելովեյի:

**Д-94. ДОКЕМБРИЙ – ՄԻՆՉՔԵՄԲՐԻ, PRECAMBRIAN**, ամբողջական երկրբ. ժամանակ, որը նախորդում է քեմբրիին (պալեոզոյին) և ընդգրկում է երկրակեղևի հնագույն ապարախմբերը, որոնք առաջացել են այդ ժամանակում: Կազմում է Երկրի երկրբ. պատմության մոտ 6/7-ը: Մ-ի տևողությունը որոշվում է հնագույն (իզոտոպային հասակը ավելի քան 3800 մլն. տ.) ապարների առաջացումից մինչև քեմբրիի սկիզբը (մոտ 542 մլն. տ. առաջ): Համապատասխանում է կրիպտոզոյան Էոնին: Նախկին ԽՍՀՄ-ում Մ. ստորաբաժանվում էր արխեյի և պրոտերոզոյի, որոնց միջև սահմանը 2600 մլն. տ. է: Տե՛ս Архейская эра (эратема), Протерозойская эра (эратема): Վաղ Մ-ի առաջացումները (արխեյ–ստորին պրոտերոզոյ) կազմում են հին պլատֆորմների հիմքը և մակերևութում մերկանում են դրանց վահանների սահմաններում, ինչպես նաև ծալքավոր մարզերի անտիկլինորիումային կառույցների միջուկներում: Ստորին Մ-ի գոյացությունները սովորաբար ներկայացված են զնեյսներով, միզմատիտներով, տարբեր բյուրեղային թերթաքարերով, ամֆիբոլիթներով և հազվադեպ՝ ջեսպիլիտներով, քվարցիտներով ու մարմարներով: Դրանք կազմում են հզոր ապարախմբեր, որոնք ծալքավորված են և պատռված հիմքային ու թթու կազմի ներժայթքային (ինտրուզիվ) զանգվածներով: Վերին Մ. կամ վերին պրոտերոզոյը ներկայացված է փոխակերպային (մետամորֆային) թերթաքարերի, քվարցային ավազաքարերի ու քվարցիտների, կավային թերթաքարերի ու ֆիլիտների, տարբեր հրաբխածին գոյացությունների, կրաքարերի ու դոլոմիտների, բեկորային ապարների հզոր ապարախմբերով: Մ. բարձր տեկտ. ակտիվացման ժամանակ է, տե՛ս Докембрийские эпохи складчатости): Մ-ի ապարները ներփակում են կապտականաչ ջրիմուռների բազմաթիվ մնացորդներ և դրանց կենսագործունեության հետքեր (ստրոմատոլիթներ), որոնք վերին Մ-ում ունեն շերտագրական նշանակություն: Հայտնաբերված են նաև անողնաշարավոր կենդանիների բավականին հարուստ մնացորդներ (աղեխորշավորներ, հատվածոտանիներ, որդեր, փշամորթներ):

**Д-95. ДОКЕМБРИЙСКИЕ ЭПОХИ СКЛАДЧАТОСТИ – ՄԻՆԶՔԵՄԲՐԻՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՎԱՐԳԵՐ, PRECAMBRIAN FOLDINGS, PRECAMBRIAN EPOCHS OF DIASTROPHISM**, Երկրի մինչքեմբրիյան դարաշրջանների տեկտոնամազմայական ակտիվացման դարակարգեր (էպոխաներ), ընդգրկում են նրա ամբողջ պատմության տևողության 85 %-ը: Մ. ծ. դ. բազմակի և ուժեղ արտահայտվել են ապարների ծալքավոր ու վրաշարժային ձևախախտումների, դրանց ռեզիոնալ փոխակերպության (ընդհուպ մինչև գրանուլիթային ֆացիան) և գրանիտագոյացման գործընթացների կցորդված տեսքով: Ֆաներոզոյի համեմատությամբ Մ. ծ. դ. բաժանված են ժամանակի ավելի մեծ միջակայքերով և ունեն ավելի մեծ տևողություն: Մինչքեմբրիյան դիաստրոֆիզմի ամենավաղ խոշոր դարակարգը սամյանն է (3750-3500 մլն. տ): Հաջորդը կենոբրանյանն է (2800-2600 մլն. տ.), որով ավարտվում է արխեյան դարաշրջանը: Վաղ պրոտերոզոյան դարաշրջանը ավարտվում է դիաստրոֆիզմի կարելյան դարակարգով (2000-1700 մլն. տ), Հս. Ամերիկայում՝ հուդզոնյան: Ուշ պրոտերոզոյում արտահայտվել են գոտյան (վաղ ռիֆեյի վերջում, 1400-1300 մլն. տ), գրենվիլյան (միջին ռիֆեյի վերջում, 1000±50 մլն. տ), բայկալյան (ուշ ռիֆեյի վերջում-վենդում 680-620-ից մինչև 480 մլն. տ) ծալքավորության դարակարգերը:

**Д-96. ДОЛГОТА – ԵՐԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ, LONGITUDE**, գնդային կոորդինատների համակարգի կոորդինատներից մեկը, որը որոշում է Երկրի մակերևութում կետերի դիրքը, տե՛ս Географические координаты:

**Д-97. ДОЛЕРИТ** (հուն. doleros – խաբուսիկ) – **ԴՈԼԵՐԻՏ, DOLERITE**, հիմքային նորատիպ բազալտային կազմի արտաժայթքային կամ ինտրուզիվ (փոքր խորություններում) ապար, կազմված է պլագիոկլազից (թիտովնիտից մինչև անդեզիտը), մոնոկլինային պիրոքսենից, օլիվինից, տիտանամազնետիտից: Առանձնացնում են լրիվ բյուրեղային, նրբահատիկից մինչև խոշորահատիկավոր տարատեսակներ: Գույնը՝ մուգ մոխրագույն: Կառուցվածքը՝ օֆիտային (դոլերիտային), պոլիլոօֆիտային: Դ. համարվում է ինչպես ներժայթքային, այնպես էլ արտաժայթքային ապար: Դ-ները առաջացնում են ենթախորքային (հիպաբիսալ) ներժայթքային մարմիններ (դայկաներ, սիլեր): Լայնորեն տարածված են տրապային (կծաքարային) ֆորմացիաներում (ցամաքներում), օվկիանոսային կեղևում, կղզիներում: Ամերիկյան գրականությունում Դ. դիաբազի հոմ. է:

**Д-98. ДОЛИНА – ՀՈՎԻՏ, VALLEY**, ռելիեֆի բացասական գծային ձգված ձև, որն ունի ընդհանուր թեքություն վերին հոսանքից դեպի ներքին հոսանքը: Առաջանում է հաստատուն ջրհոսքերի (գետերի) ողողամաշման գործունեության հետևանքով: Գետահովտի խորությունը և լայնությունը կախված է գետի հասակից ու հզորությունից, տեղանքի երկրբ, կառուցվածքից ու տեկտ. ռեժիմից, ողողամաշման (երոզիայի) հիմնամակարդակի դիրքից և ընդհանուր ֆիզաշխ. պայմաններից: Հասուն հովիտներում տարբերում են հատակ (սովորաբար ներկայացված է ողողահունով), դարավանդներ և արմատական ափ: Հ-ի լայնական տրամատը (պրոֆիլը) կարող է ունենալ կանյոնի, V-անման, U-անման և այլ ձևեր: Ըստ ձևաբանության՝ կտրուկ տարբերվում են հարթավայրային և լեռնային գետերի Հ-ները: Առաջիններին բնորոշ է մեծ լայնությունը՝ մեծ խորության լանջերի զառիթափության դեպքում, երկրորդներն ունեն զգալի խորություն՝ համեմատաբար փոքր լայնության և երկայնակի պրոֆիլի խիստ անհավասարաչափ անկման դեպքում: Վերին հոսանքում Հ-ները սովորաբար փակվում են լանջերով, սառցադաշտային կրկետով (լեռներում) կամ հանդիսանում են բաց (լանջերը չեն փակվում՝ վերին հոսանքներում անցնելով հարևան գետին):

**Д-99. ДОЛИНА V-ОБРАЗНАЯ – V-ՉԵՎ ՅՈՎԻՏ, V-SHAPED VALLEY**, գետահովիտ, որը լայնական տրամատում (պրոֆիլում) V-ձև է, սովորաբար վկայում է նրա զարգացման վաղ փուլի մասին:

**Д-100. ДОЛИНА U-ОБРАЗНАЯ – U-ՉԵՎ ՅՈՎԻՏ, U-SHAPED VALLEY**, գետահովիտ, որը լայնական տրամատում (պրոֆիլում) U-ձև է: Այն սովորաբար իր ծագմամբ պայմանավորված է սառցադաշտի մշակմամբ, որը ինչ-որ ժամանակ լցրել է հովիտը:

**Д-101. ДОЛИНА-ГРАБЕН – ՅՈՎԻՏ-ԳՐԱԲԵՆ, GRABEN-VALLEY, FAULT-BLOCK VALLEY**, գետահովիտ, որը ներդրվել է գրաբենային ծագում ունեցող ցածրավայրի երկարությամբ:

**Д-102. ДОЛИННЫЕ ЛЕДНИКИ – ՅՈՎՏԱՅԻՆ ՍԱՆՑԱԴԱՇՏԵՐ, VALLEY GLACIERS**, լեռնային սառցադաշտի տեսակ՝ խիստ արտահայտված սնման մարզով (բրնձասառույցի ավազան), որտեղ պինդ տեղումների կուտակումը գերակշռում է հողմատարման (աբլյացիայի) նկատմամբ: Սնման մարզը սովորաբար ընդգրկում է սառցադաշտային կրկեսը, իսկ սառցադաշտային լեզվակը ցած է իջնում հովիտներով՝ ծյունային սահմանից ներքև:

**Д-103. ДОЛОМИТ** (ֆրանս. երկրաբան. Դ. Դոլոմիենի, D. Dolomien, 1750-1801, անունից) – **ԴՈԼՈՄԻՏ, DOLOMITE**, 1) միներալ կարբոնատների դասից, կալցիումի և մագնեզիումի ածխաթթվային աղ,  $\text{CaMg}(\text{CO}_3)_2$ , բյուրեղային համակարգը ռոմբոէդրային է, կարծրությունը՝ 3.5-4: Բյուրեղները շեղանկյունանիստային հատվածակողմային, աղյուսածև են: Առաջացնում է հատիկավոր, բողբոջաձեռնապակենման, երբեմն՝ թելավոր կամ սիսեռաքարի (պիզոլիթի) տեսքով ագրեգատներ: Խոշորաբյուրեղային ագրեգատները հանդիպում են ջրաջերմային (հիդրոթերմալ) և վերաբյուրեղացած կարբոնատային ապարաշերտերում: Գույնը՝ բաց սպիտակ, երբեմն՝ դեղնավուն, գորշավուն և կանաչավուն երանգներով: Ծագումը՝ ջրաջերմային և նստվածքային: 2) նստվածքային կարբոնատային ապար՝ բաղկացած 95% և ավելի դոլոմիտ միներալից: Հիմնական խառնուրդներ են կալցիտը, անհիդրիդը: Դ-ները և կրաքարերը միմյանց հետ կապված են անցումներով: Կախված Դ-ի պարունակությունից (%)՝ առանձնացնում են կրաքարախառն Դ. (95-75), կրային Դ. (75-50), դոլոմիտային կրաքարեր (50-ից ցածր): Գերակշռում են բաց գունավորված տարատեսակները: Դ-ները կազմում են շերտեր (երբեմն զգալի հաստությամբ), նրբաշերտեր, ոսպնյակներ, անկանոն ձևի մարմիններ և երակներ: Առաջնային նստվածքային Դ-ները գոյանում են չոր զոնայի ավազաններում քիմ. նստեցման հետևանքով: Դ-ի մյուս բոլոր տեսակները հանդիսանում են կրային նստվածքների կամ ապարների փոխարինման արդյունք՝ մագնեզիումային աղերով: Դ. օգտագործվում է մետաղագործությունում, ապակու, ջնարակի, սպիտակ մագնեզիումի արտադրության համար, շինարարությունում:

**Д-104. ДОЛОМИТИЗАЦИЯ – ԴՈԼՈՄԻՏԱՅՈՒՄ, DOLOMITIZATION**, կրային տիղմի (նստվածքի) կամ կրաքարային ապարի՝ դոլոմիտով հարստանալու գործընթաց՝ կապված կալցիտը դոլոմիտով փոխարինվելու հետ: Դ. տեղի է ունենում նստվածքների և ապարների (կրաքարերի) վրա մագնեզիումով հարստացած ստր. ջրերի ներագոյեցության հետևանքով: Սովորաբար ուղեկցվում է վերաբյուրեղացմամբ և ծավալի փոքրացմամբ (առաջնային կրաքարի ծավալի մինչև 11%-ը), որը նպաստում է ծակոտիների, խոռոչների և ճեղքերի առաջացմանը:

**Д-105. ДОННАЯ МОРЕНА – ՅԱՏԱԿԱՅԻՆ ՍԱՆՑԱԲԵՐՈՒԿ (ՄՈՐԵՆ), BOTTOM-MORaine**, ապարների բեկորներ, որոնք տեղափոխվել են սառցադաշտային ծածկոցի ներսում և նրա հիմքում: Սառցի հալումից հետո Գ. ս. առաջացնում է սառցաբերուկային նստվածքների լայնարձակ, բավականին հարթ շերտ:

- Ժ-106. ДОННЫЕ ОСАДКИ, ДОННЫЕ ОТЛОЖЕНИЯ – ՀԱՏԱԿԱՅԻՆ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, BOTTOM SEDIMENTS, BED LOADS, BOTTOMS, PRODELTA,** նստվածքներ, որոնք ծածկում են ավազանի հատակը: Եթե մերձհատակային հոսքի արագությունը փոքր է ինչ-որ կրիտիկական մեծությունից, ապա հոսքով բերվող մասնիկները նստում են հատակին՝ ձևավորելով անշարժ Հ. Ա. և շերտի առաջացում: Մորկային (տուրբուլենտային) հոսքերում Հ. Ա-ի ակտիվ փոխանակվող շերտը հանդիսանում է հատակային կուտակումային ռելիեֆի (բլրաշարեր, թմբեր, թմբիկների շարքեր) և դրանք կազմող շեղ շերտիկների սերիաների աղբյուր: Կախված ավազանի բնույթից՝ առանձնացնում են օվկիանոսային, ծովային, ծովալճակային, լճակային, գետային Հ. Ա.:
- Ժ-107. ДРАГА (անգլ. drag-ից) – ԴՐԱԳ, ՀՈՂԱՀԱՆ, DREDGE,** լողացող հանքահարստացուցիչ համալիր, որը նախատեսված է օգտ. հնժ-ների ջրավորված հնքվ-երի մշակման համար (օր.՝ ցրոնային):
- Ժ-108. ДРАГОЦЕННЫЕ КАМНИ – ԹԱՆԿԱՐԺԵ ՔԱՐԵՐ (ՁԱՐԴԱՔԱՐԵՐ), PRECIOUS STONES, GEM STONES, JEWELS,** անգույն կամ գեղեցիկ գունավորված (գունագեղ) միներալներ (առավելապես բյուրեղներ), որոնք բնորոշվում են պայծառ փայլով, մեծ լուսացրությամբ, թափանցիկությամբ, բարձր կարծրությամբ, գունավորման երանգի մաքրությամբ, գույնի համասեռությամբ և այլն, օր.՝ 1-ին դասի Թ. ք. են ավմաստը, սուտակը, շափյուղան, 2-րդ դասի՝ տպագիոնը, բերիլը (բերյուղը), մեղեսիկը (ամեթիստը), 3-րդ դասի՝ ագատը, սարդիոնը, վանակնը (լեռնաբյուրեղը): Թ. ք-ին են պատկանում նաև կենսածին միներալային գոյացությունները՝ մարգարիտը, սաթը, տե՛ս նաև Камень поделочный:
- Ժ-109. ДРАГОЦЕННЫЕ МЕТАЛЛЫ – ԱԶՆԻՎ ՄԵՏԱՂՆԵՐ, PRECIOUS METALS, Au, Ag, Pt** և պլատինի խմբի մետաղներ, ամենակայուն մետաղներն են (բացի արծաթից) քիմ. ներգործության նկատմամբ: Նույնն է՝ Металлы благородные:
- Ժ-110. ДРЕВНИЕ ГОРЫ – ՀԻՆ ԼԵՆՆԵՐ, OLD MOUNTAINS,** լեռներ, որոնց ծալքավոր կառուցվածքները գոյացել են հին (մինչալպյան) որևէ ծալքավորության դարակարգում և հետո բազմակի բարդացել են կրկնական լեռնագոյացումների ընթացքում: Հ. լ. կարող են երիտասարդանալ նորագույն կամ ժամանակակից տեկտ. շարժումների հետևանքով:
- Ժ-111. ДРЕВНЯЯ ПЛАТФОРМА – ՀԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ, ANCIENT PLATFORM, CRATON,** պլատֆորմ, որի ծալքավոր հիմքը կազմված է մինչքեմբրիյան (սովորաբար արխեյան և ստորին պրոտերոզոյան) գոյացություններից, իսկ նստվածքային ծածկոցը՝ ֆաներոզոյան (հաճախ նաև վերին պրոտերոզոյան) նստվածքներից (օր.՝ Արևելաեվրոպական, Սիբիրական և այլն):
- Ժ-112. ДРЕЙФ (հոլանդ. dryven – քշել, հեռացնել, լողալ) – ԴՐԵՅՖ (ՏԵՂԱՇԱՐԺ), DRIFT,** որևէ առարկայի (սառույց, նավ և այլն) պասիվ տեղաշարժ, տեղի է ունենում քամու, հոսանքի և այլնի ազդեցության տակ:
- Ժ-113. ДРЕНАЖ (անգլ. drain – չորացնել) – ՑԱՍԱՔՈՒՐԴ (ԴՐԵՆԱԺ), DRAINAGE, 1)** ջրատար ապարների, գերխոնավ հողերի ու ճահճուտների ցամաքեցում, որն իրականացվում է ինչպես բնական (ծորակներ, հովիտներ և այլն), այնպես էլ արհեստական (հորատանցքեր, ջրհորեր, առուներ, այլ փորվածքներ) ճանապարհով: 2) Ստր. ջրերի հեռացում:
- Ժ-114. ДРЕНАЖНЫЕ ВОДЫ – ՑԱՍԱՔՈՒՐԴԱՅԻՆ (ԴՐԵՆԱԺԱՅԻՆ) ՋՐԵՐ, DRAINAGE WATERS,** տե՛ս Воды дренажные:

- Ժ-115. ДРЕСВА – ԽՃԱՎԱՉ, DEBRIS, SCREE**, բեկորային նյութ, խիճ՝ բաղկացած ապարների ու միներալների չմշակված բեկորներից՝ 1-10 մմ չափերով: Հանդիսանում է ապարների ֆիզ. հողմահարման արդյունք:
- Ժ-116. ДРУЗА** (գերմ. Druse-ից – խոզանակ) – **ԲՅՈՒՐԵՂԱԽՈՒՄԲ (ԲՅՈՒՐԵՂԱՐՈՒՅԼ), DRUSE**, միներալային ագրեգատի ձև, որը ներկայացված է բյուրեղների խմբով, բյուրեղներ, որոնք մեկ ծայրով հարաճած են ընդհանուր հիմքի վրա՝ խոռոչի պատին (ժեղոցներ, միմարոլներ) կամ ապարի բաց ճեղքին: Առավել հաճախ հանդիպում են քվարցի, կալցիտի, տարբեր սուլֆիդների (պիրիտի, գալենիտի և այլն), ֆլյուորիտի Բ-եր:
- Ժ-117. ДУНИТ** (Նոր Զելանդիայում Դուն, Dun լեռան անունով) – **ԴՈՒՆԻՏ, DUNITE**, ներժայթքային գերհիմքային ապար: Կազմված է համարյա ամբողջովին բարձրամագնեզիումային օլիվինից, պարունակում է նաև (մինչև 5%) ակցեսորային քրոմշպինելիդ: Սովորաբար տարբեր աստիճանի սերպենտինացված է: Կազմվածքը հոծ է, գույնը՝ բաց կանաչ, փոխտխված տարատեսակների մոտ՝ մուգ կանաչից մինչև սև: Դ. պատկանում է սիլիկատային ծայրահեղ աղքատացած և մագնեզիումով հարստացած սիլիկատային ապարներին: Ծալքավոր մարզերում Դ. տարածված է դունիտ-հարցբուրգիտային և դունիտ-կլինոպիրոքսենիտ-գաբրոային համալիրներում, պլատֆորմներում՝ շերտատված ներժայթքուկներում և օղակային ալկալիազերհիմքային համալիրներում: Առաջացնում է ներժայթքային կուտակներ, ոսպնյակներ, հատող խողովակիկներ, հազվադեպ՝ խոշոր ներժայթքային մարմիններ: Դ-ի հետ կապված են քրոմի և պլատինոիդների խոշորագույն հնքվ-եր:
- Ժ-118. ДЮНЫ** (գերմ. եզ. Düne) – **ԴՅՈՒՆՆԵՐ (ԱՎԱԶԱԹՄԵՐ, ԱՎԱԶԱԲՆՈՒՐՆԵՐ), DUNES**, 1) ԱՊՀ երկրներում ավազների ռելիեֆի ձևեր արտասանապատային մարզերում՝ ծովերի, լճերի, գետերի ափերում, հին սառցադաշտային ավազներում: Ա-ի երկայնակի տրամատը (պրոֆիլը) անհամաչափ է, հողմազերծ լանջը զառիթափ է (մինչև 35°), հողմահար լանջը՝ մինչև 15°: Դ. շարժվում են քամու տիրապետող ուղղությամբ: Դ-ի ձևը սովորաբար պարաբոլային (գուգորդային) է, համեմատական բարձրությունը՝ միավորից մինչև 100-ավոր մ: Դ. առաջանում են տարբեր լայնություններում, անկախ կլիմայից, որով տարբերվում են բարխաններից. վերջինները առաջանում են միայն չոր մարզերում (անապատներում): 2) Այլ երկրներում «Դ.» ընդհանուր տերմին է ավազների ռելիեֆի բոլոր ձևերի համար, որոնք գոյանում են քամու գործունեությամբ անապատներում, ցածր ծովափերում, գետերի ողողատներում և այլն:
- Ժ-119. ДЮРЕН** (լատ. durus – կարծր) – **ԴՅՈՒՐԵՆ, DURAIN**, բրածո ածուխների ակնադիտորեն փայլատ բաղադրիչ: Առաջացնում է շերտեր (տարբեր հաստությամբ) անհամասեռ ածուխներում, երբեմն կազմում է ածխի ամբողջ շերտը: Դ. ամուր, կարծր է, հաճախ ճիլ, փայլը ճարպային է, կոտրվածքը՝ անհարթ:



## E

- E-1. ЕВРАЗИЯ – ԵՎՐԱՍԻԱ, EURASIA**, Երկրի ամենամեծ մայր ցամաք, միավորում է երկու աշխարհամասերը՝ Եվրոպան և Ասիան:
- E-2. ЕЖИ МОРСКИЕ (Echinoidea) – ԾՈՎԱՅԻՆ ՈՋՆԻՆԵՐ (ԾՈՎՈՋՆԻՆԵՐ), ECHINOIDS**, փշամորթների դաս: Ծովային կենդանիներ են՝ ազատ տեղաշարժող, գնդանման, ձվաձև, կոնաձև և սրտաձև տեսքով: Ջրափը կազմված է բազմաթիվ կրային թիթեղիկներից, որոնք դասավորված են ուղղաձիգ շարքերով (հինգ ամբուլյակրալ և հինգ միջամբուլյակրալ շարքեր): Բերանը տեղաբաշխված է ներքևում, հետանցքը՝ վերևում: Փշերը սովորաբար տեղաբաշխված են միջամբուլյակրալ դաշտերում: Տարբերում են երկու մեծ խմբեր՝ կանոնավոր և անկանոն Ծ.: Օրդովիկից մինչև այժմ, ծաղկումը՝ մեզոզոյում:
- E-3. ЕСТЕСТВЕННАЯ ВЛАЖНОСТЬ ПОРОДЫ – ԱՊԱՐԻ ԲՆԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ, NATURAL MOISTURE CONTENT OF ROCK**, ջրի պարունակությունը բնական տեղադրման ապարներում: Տարբերում են կշռային խոնավություն, ծավալային խոնավություն, բերված խոնավություն և հարաբերական խոնավություն:
- E-4. ЕСТЕСТВЕННАЯ ФИЛЬТРАЦИЯ – ԲՆԱԿԱՆ ԾՃԱՆՑՈՒՄ, NATURAL FILTRATION**, ստր. ջրերում կախված մասնիկների ու խառնուրդների մաքրում (տղմազատում)՝ ապարների մանր ճեղքերով ու ծակոտիներով ծծանցվելիս: Տերմինն օգտագործվում է ստր. ջրերի բնական տղմազատման իմաստով:

## Ж

- Ж-1. ЖАДЕИТ** [ֆրանս. jadéite, jade-ից – նեֆրիտ, իսպ. piedra de ijada – երիկամային ծակծկոցի (խիտի) քար, խիտաքար] – **ժԱԴԵԻՏ, JADEITE**, միներալ կլինոպիրոքսենների խմբից, նատրիումի և ալյումինի սիլիկատ,  $\text{NaAl}[\text{Si}_3\text{O}_6]$ ,  $\sigma$  – դիոպսիդ և  $\sigma$  – էգիրին անընդմեջ նույնաձև (իզոմորֆ) շարքի ծայրանդամ: Կարծրությունը՝ 7: Մտնում է որոշ գլաուկոֆանային թերթաքարերի կազմի մեջ կամ անջատվում է հիպերբազիտներում հոծ, նրբից մինչև միջնահատիկավոր ագրեգատներով, գույնը՝ սպիտակ, մոխրագույն, կանաչ, հազվադեպ՝ դեղին, բազմագույն, կարմիր:  $\sigma$ . գոյանում է պլազիոկլազների լավոնիտ-գլաուկոֆանային ֆացիայի փոխակերպության դեպքում և երակային պլազիոգրանիտների, սպիտակավուն գաբրոների բիմետասոմատիզմի ընթացքում: Գեղեցիկ, գլխ. կանաչ գույնի  $\sigma$ . ակնագործական և արհեստագործական քար է, հազվագյուտ թափանցիկ, զնրուխտանման տարատեսակը II կարգի թանկարժեք քար է:
- Ж-2. ЖЕДИНСКИЙ ЯРУС, ЖЕДИН** (ժեդին, Gedine գյուղի անունով, Բելգ.) – **ժԵԴԻՆ-ՅԱՆ ՅԱՐԱԿ, ժԵԴԻՆ, GEDINNIAN**, Դևոնի համակարգի ստորին բաժնի ստորին հարկ:
- Ж-3. ЖЕЛВАКИ – ՊԱԼԱՐՆԵՐ, NODULES**, կլորավուն պալարանման կարբոնատային ձգվածքներ, որոնք առաջացնում են կենդանիները կամ ջրիմուռները օրգանիզմի աճի որևէ բեկորի՝ կարբոնատով ծածկվելու և հատակի վրա գլորվելու հետևանքով: Կարող են բաժանվել կենդանածինների, բուսածինների և խառն (կենդանաբուսածինների):
- Ж-4. ЖЕЛВАКИ РУДНЫЕ – ՅԱՆՔԱՔԱՐԱՅԻՆ ՊԱԼԱՐՆԵՐ, ORE NODULES**, կլորավուն, ձվածև կամ անկանոն տեսքի ոչ մեծ հանքաքարային կուտակներ և կոնկրեցիաներ:
- Ж-5. ЖЕЛЕЗИСТЫЙ КВАРЦИТ, ДЖЕСПИЛИТ, ТАКОНИТ, ИТАБИРИТ – ԵՐԿԱԹԱԽԱՐՆ (ԵՐԿԱԹԱՅԻՆ) ՔՎԱՐՑԻՏ, ՋԵՍՊԻԼԻՏ, ՏԱԿՈՆԻՏ, ՏԱԿՈՆԻՏ, ԻՏԱԲԻՐԻՏ, JASPILITE, TACONITE, ITABIRITE, FERRUGINOUS QUARTZITE**, քիմիածին-նստվածքային ծագման փոխակերպային (մետամորֆային) ապար, որը կազմված է հիմնականում քվարցից, մագնետիտից, հեմատիտից (ոչ միշտ) և ունի բնորոշ նուրբ շերտավոր կազմություն: Ե.ք. երկաթասիլիցիումային ֆորմացիաների ամենատարածված անդամն է: Ապարի կառուցվածքը գրանոբլաստիկ, խճանկարային է, կազմվածքը (տեքստուրան)՝ զոլավոր: Առանձնացնում են նուրբ (մինչև 3 մմ), միջին (3-10 մմ) և լայն (10 մմ-ից ավել) զոլավոր տարբերակներ: Ե. ք-ի գույնը մոխրագույն, կարմրամոխրագույն, հողմահարված տարատեսակների մոտ՝ գորշ, ժանգագույն է: Գլխ. տարատեսակներն են մագնետիտային Ե. ք. և հեմատիտային Ե. ք. (սովորաբար մագնետիտի հետ): Առաջինում երկաթի պարունակությունը 25-30%-ից բարձր է, երկրորդում՝ 50-60% է: Քիմ. կազմում  $\text{SiO}_2$  30-70 % է,  $\text{FeO}$  5-20 %,  $\text{Fe}_2\text{O}_3$  10-40 %: Մյուս բաղադրամասերը՝ 1-2%: Ե. ք-ների հնքվ-երը տեղադրված են մինչքենքրի-

յան վահաններում ու պլատֆորմներում, սովորաբար ունեն պրոտերոզոյան կամ արխեյան հասակ: Ե. ք-ները կազմում են մեծաթեք շերտանման կամ ոսպնյակաձև մարմիններ՝ ներփակող ապարներից ներդաշնակ: Մարմինների հաստությունը մի քանի սմ-ից մինչև 800 մ է: Ե. ք-ներն առաջացնում են աշխարհում ամենախոշոր շերտային երկաթահանքաքարային հնքվ-երը (Կուրսկի մագնիսական անկանոնություն, Կրիվոյ Ռոզի երկաթահանքաքարային ավազան և այլն):

**Ж-6. ЖЕЛЕЗИСТЫЙ ПЕСЧАНИК – ԵՐԿԱԹԱԽԱՌՆ (ԵՐԿԱԹԱՅԻՆ) ԱՎԱԶԱՔԱՐ, FERRUGINOUS SANDSTONE,** ավազաքար, որում քվարցի հատիկները ցեմենտացված են երկաթի օքսիդներով, կամ երկաթի օքսիդների հատիկները ցեմենտացված են այլ նյութով, սովորաբար կարմիր կամ գորշ գույնի են:

**Ж-7. ЖЕЛЕЗНАЯ ШЛЯПА – ԵՐԿԱԹԵ ԲՈՒՈՐԱԳԼԽԱՐԿ, IRON HAT,** գլխ. սուլֆիդային հնքվ-երի վերին օքսիդացված մաս, որն առաջանում է հանքամարմնի առաջնային միներալների հողմահարման և օքսիդացման հետևանքով: Կազմված է առավելապես երկաթի տարբեր ջրային օքսիդներից, քվարցից, քաղկեդոնից, օպալից: Ե. ք-ի տարածման խորությունը սովորաբար սահմանափակվում է վերնաջրերի մակարդակով և հասնում է տասնյակ և հարյուրավոր մ-երի: Կտրուկ առանձնանալով ներփակող ապարների ֆոնում՝ Ե. ք. հանդիսանում է կարևոր որոնողական հատկանիշ:

**Ж-8. ЖЕЛЕЗНЫЕ РУДЫ – ԵՐԿԱԹԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, IRONSTONES, IRON ORES,** բնական միներալային զոյացություններ, որոնք պարունակում են երկաթ այնպիսի քանակներով, որոնց դեպքում երկաթի արդյունաբերական կորզումը տնտեսապես նպատակահարմար է: Տարբերում են հարուստ հանքաքարեր (Fe ավելի քան 50 %), շարքային (50-25 %), աղքատ (մինչև 25 %): Գլխ. միներալներն են մագնետիտը, տիտանամագնետիտը, հեմատիտը, գյոտիտը, հիդրոգյոտիտը, սիդերիտը: Հնքվ-երը լինում են ներծին, արտածին և փոխակերպային:

**Ж-9. ЖЕЛЕЗНЫЙ БЛЕСК – ԵՐԿԱԹԱՓՈՅՅԼ, IRON GLANCE, OLIGIST-IRON, SPECULARIRON, SPECULARITE,** միներալ, հեմատիտի հատիկավոր տարատեսակ:

**Ж-10. ЖЕЛЕЗНЫЙ КОЛЧЕДАН – ԵՐԿԱԹԻ ՀՐԱՔԱՐ, IRON PYRITE,** տե՛ս Пирит:

**Ж-11. ЖЕЛЕЗНЫЙ МЕТЕОРИТ – ԵՐԿԱԹԵ(ՅԱ) ԵՐԿՆԱՔԱՐ, IRON METEORITE, SIDERITE,** երկնաքար, որը բաղկացած է գլխ. նիկելախառն երկաթից:

**Ж-12. ЖЕЛЕЗНЫЙ ШПАТ – ԵՐԿԱԹԻ ՄՊԱԹ,** տե՛ս Сидерит:

**Ж-13. ЖЕЛЕЗОКАМЕННЫЙ МЕТЕОРИТ, СИДЕРОЛИТ – ԵՐԿԱԹԱՔԱՐԱՅԻՆ ԵՐԿՆԱՔԱՐ, ՍԻԴԵՐՈԼԻԹ, SIDEROLITE,** երկնաքար, որը բաղկացած է սիլիկատներից (գլխ. պիրոքսեններից ու օլիվինից) և նիկելախառն երկաթից:

**Ж-14. ЖЕЛЕЗО (Ferrum, Fe) – ԵՐԿԱԹ, IRON,** տարրերի պարբերական համակարգի VIII խմբի քիմ տարր, երկրակեղևում իր պարունակությամբ (4.65 % ըստ զանգվածի) մետաղների մեջ գրավում է երկրորդ տեղը (ալյումինից հետո) և առաջացնում է մոտավորապես 300 միներալ:

**Ж-15. ЖЕЛЕЗО САМОРОДНОЕ – ԲՆԱԾԻՆ ԵՐԿԱԹ, NATIVE IRON,** միներալ բնածին տարրերի դասից, Fe: Տարբերում են երկրային (տեղւորային) և տիեզերածին (երկնաքարային) Բ. ե.: Բյուրեղները հազվագյուտ են, սովորական են դեմոդրիտները, անկանոն անջատումները, սղոցանման մասնիկները: Հայտնի են բնակտորներ, հաճախ՝ օդաքարային, որոնց քաշը հասնում է տասնյակ և հարյուրավոր տոննաների: Գույնը՝ պողպատի մոխրագույն, փայլը՝ մետաղի, կարծրությունը՝ 4-5: Հազվագյուտ միներալ է:

**Ж-16. ЖЕЛЕЗО-МАРГАНЦЕВЫЕ КОНКРЕЦИИ – ԵՐԿԱԹԱՍԱՆԳԱՆԱՅԻՆ ԿՈՆԿՐԵՑԻՆՆԵՐ, IRON-MANGANESE CONCRETIONS,** երկաթի, մանգանի ինչպես նաև

այլ տարրերի օքսիդների տեղածին միներալային ձգվածքներ, որոնք գոյանում են լճերի, ծովերի և օվկիանոսների հատակում: Առավել լայն տարածված են Համաշխարհային օվկանոսի պելագիկ շրջաններում: Խորջրյա Ե. կ. տեղադրված են հատակի մակերևույթին և չորրորդական նստվածքների վերին շերտում՝ միաշերտ տեսքով: Ըստ արտաքին տեսքի՝ առանձնացնում են բուն կոնկրեցիաներ, մեծաբեկորային, սալանման առաջացումներ և կեղևներ՝ ապարների մակերևույթին: Կոնկրեցիաներն ունեն գնդանման, էլիպսաձև, աղյուսաձև, բողբոջանման ձևեր: Չափերը տատանվում են մմ-ի մասերից մինչև տասնյակ սմ և նույնիսկ մ, միջինը՝ 3-4 սմ է: Սովորաբար կազմված են միջուկից և հանքանյութային թաղանթից, որն ունի համակենտրոն շերտային կազմություն: Միջուկները հանդիսանում են տարբեր ապարների բեկորներ, օրգանական մնացորդներ, միներալային հատիկներ: Երկաթի միներալները ներկայացված են հիդրոհեմատիտով, հիդրոգյուտիտով, հեմատիտով, ֆեռոքսիդիտով, մանգանի միներալները՝ վերնադիտով, թողորոկիտով, բերնեսիտով, ռանսեիտով, բրաունիտով, պիրոյուզիտով, վուդրաֆիտով և այլն: Հանքանյութի աղբյուրները և ձևավորման մեխանիզմը վերջնականապես պարզաբանված չեն:

**Ж-17. ЖЕЛОБ ОКЕАНИЧЕСКИЙ – ՕՎԿԻԱՆՈՍԱՅԻՆ ՓՈՂՐԱԿ (ՎԻՅ, ԱԿՈՍ), OCEANIC TRENCH,** նեղ և երկար, հատակագծում թույլ կորացած խորջրյա իջվածքներ

օվկիանոսների ծայրամասերում: Դրանց լայնությունը 10-20 կմ է, երկարությունը՝ 3-5 հազ. կմ, խորությունը՝ 5-11 կմ: Օ. փ-ներն աչքի են ընկնում V-ձևությամբ, լայնական տրամատում (պրոֆիլում) որոշ անհամաչափությամբ, զառիթափ լանջերում (8-20°) սանդղավանդների ու աստիճանների առկայությամբ: Օ. փ-ի հատակը նեղացված է (4-10 կմ) և լցված է սիլիցիումային (դիատոմառադիոլարիտային) և ցամաքածին-հրաբխածին նստվածքներով՝ մինչև 2-4 կմ հաստությամբ: Նստվածքների կուտակումը զգալի չափով կապված է պլտոր հոսքերի և սողանքների գործունեության հետ: Աստիճաններում կուտակվում են նաև լանջերից բերվող կոպտաբեկոր նստվածքներ: Օ. փ-ների մեծ մասը հարում է կղզեաղեղների արտաքին կողմին և հանդիսանում է օվկիանոսից դեպի մայր ցամաք անցողիկ զոնայի կառուցվածքային տարրերից մեկը: Ըստ երևույթին ափային լեռնաշղթան, կղզեաղեղը, խորջրյա փողրակը և դրան օվկիանոսի հատակի կողմից եզրագծող լայն արգելաթունքը իրենցից ներկայացնում են օրինաչափորեն կրկնվող համալիր: Օ. փ-ի առաջացումը մեկնաբանվում է միջինօվկիանոսային լեռնաշղթայի կողմից շարժվող օվկիանոսային քարոլորտի սալի ներքնաշարժով և իջեցմամբ կղզեաղեղի կեղևի տակ՝ սուբդուկցիայի զոնաներում: Օ. փ-ների համար (բացառությամբ Կայմանի փողրակի) բնորոշ են բարձր երկրաշարժակտիվությունը և ֆայայի ծանրության ուժի բացասական անբնականությունները, երկու նշանների մագնիսական խոշոր անբնականությունների և ջերմային հոսքի ցածրացված մեծությունները:

**Ж-18. ЖЕЛТОЗЕМЫ – ԴԵՂՆԱՅՈՂԵՐ (ՇԻԿԱՅՈՂԵՐ), YELLOW SOILS, YELLOW**

**EARTHS, ZHELTOZEMS,** հողի տեսակ, որն առաջանում է խոնավ մերձարևադարձային կլիմայի պայմաններում անտառածածկ շրջաններում՝ նստվածքային, թթու հրաբխածին և փոխակերպային ապարների հողմահարման արդյունքների վրա: Բնորոշվում է դեղին գունավորման գերակշռությամբ, բուսահողի (հումուսի) պարունակությամբ (վերին հորիզոններում 2-7%), թթու ռեակցիայով, երկաթի ու ալյումինի օքսիդների բարձրացված պարունակությամբ:

**Ж-19. ЖЕМЧУГ** (ենթադրաբար հին թուրքական կամ չինական ծագման) – **ՍԱՐԳԱՐԻՏ, PEARL**, գնդանման կամ անկանոն ձևի կրային առաջացում, որը գոյանում է որոշ փափկամարմինների մարմնում՝ թիկնոցի պատին կամ թիկնոցի ու խեցու միջև կողմնակի առարկայի (ավազահատիկ և այլն) թափանցելու հետևանքով, որի շուրջը կուտակվում է սադափ: Մ. լինում է սպիտակ, վարդագույն կամ դեղին, երբեմն՝ սև, շագանակագույն, չափերը՝ մանրադիտակայինից մինչև աղավնու ձվի մեծությամբ: Խոշոր, կանոնավոր ձևի Մ. շատ թանկ է գնահատվում:

**Ж-20. ЖЕОДА** (ֆրանս. géode, հուն. gēodés – երկրածև, ըստ կլորավուն ձևի) – **ԺԵՈՂ, GEODE, BUG HOLE, SRYSTAL CAVE**, ապարում կլորավուն խոռոչ, որը լցված է միներալների գաղտնաբյուրեղային և բացահայտ բյուրեղային ագրեգատներով, որոնք հաճախ առաջացնում են համակենտրոն զոնայական շերտեր (օր.՝ ագատները): Երբեմն ժեոդի ներսում լինում է դատարկություն, որի պատերը սովորաբար ծածկվում են բյուրեղների բյուրեղախմբերով (բյուրեղաբույլերով):

**Ж-21. ЖЕРЛО ВУЛКАНА – ՅՐԱԲԻՒ ՓՈՂԱԲԵՐԱՆ (ՅՐԱԲԻՒԱԵՐԱՆ, ՅՐԱԲԻՒ ԲՎԱՆՑՔ), VOLCANIC VENT FUNNEL, VOLCANIC PIPE, CHIMNEY, VENT**, հրաբխափողի ուղղաձիգ կամ համարյա ուղղաձիգ վերին մաս, որը հրաբխի օջախը միացնում է Երկրի մակերևույթի հետ:

**Ж-22. ЖЕРЛОВИНА**, տե՛ս Некк:

**Ж-23. ЖЕСТКОСТЬ ВОДЫ – ՋՐԻ ԿՈՇՏՈՒԹՅՈՒՆ, HARDNESS OF WATER**, այն հատկությունների համախմբություն, որոնք պայմանավորված են ջրում պարունակված կալցիումի և մագնեզիումի իոններով (գլխ. կարբոնատների տեսքով): Բնական ջրերի կոշտության մեծությունը արտահայտվում է 1 լիտր ջրում պարունակվող Са-ի և Mg-ի մգ համարժեքների գումարով, այն տատանվում է շատ լայն սահմաններում՝ 0.1-0.2 մգ-համ/լ գետերի ու լճերի ջրերում, մինչև 80-100 մգ-համ/լ ծովերի ու օվկիանոսների և որոշ ստր. ջրերում:

**Ж-24. ЖИВЕТСКИЙ ЯРУС, ЖИВЕТ** (Ժիվե, Give ք-ի անունից, Յու. Ֆրանս) – **ԺԻՎԵՏՅԱՆ ՅԱՆ ՅԱՐԿ, ԺԻՎԵՏ, GIVETIAN**, դևոնի համակարգի միջին բաժնի վերին հարկ:

**Ж-25. ЖИЛА – (ՅԱՆՔ) ԵՐԱԿ, VEIN**, թիթեղածև երկրբ. մարմին, որն առաջանում է կա՛մ ճեղքերը միներալային նյութով լցվելիս (լցման երակ), կա՛մ ճեղքի երկայնքով ապարի մետասոմատիկ(ական) փոխարինմամբ միներալային նյութով (փոխարինման երակ): Ե. մակածին (էպիգենետիկ) գոյացություն է: Ե-ի չափերի և տեղադրման պայմանների որոշման հիմնական երկրբ. տարրերն են տարածման ուղղությունը և երկարությունը ըստ տարածման, անկման անկյունը և երկարությունը ըստ անկման, հակումը և հաստությունը: Ե-ները կազմված են երակային և հանքային միներալներից (քվարց, կարբոնատներ, սուլֆիդներ և այլն): Դրանք տարբերվում են դայկաներից, որոնք բաղկացած են առավելապես մագմայական ապարներից, ըստ ձևի Ե-ները լինում են պարզ, թիթեղածև, բարդ աստիճանավոր, ցանցածև, ճյուղավորված, ոսպնյակածև և այլն: Ե-ների հետ կապված են տարբեր տեսակի օգտ. հնձ-ների բազմաթիվ հնքվ-եր (ոսկի, կապար-ցինկի հանքանյութեր, վոլֆրամ, սնդիկ և այլն):

**Ж-26. ЖИЛА БРЕКЧИЕВИДНАЯ – ՓՇՐԱԲԱՐԱՆՄԱՆ (ԲՐԵԿԿԻԱՆՄԱՆ) ԵՐԱԿ, BRECCIATED VEIN**, ներփակում է կողային ապարների բեկորներ, սովորաբար վարնետքային ճեղքը լցված է շփման փշրաքարերով:

**Ж-27. ЖИЛА ВЕТВЯЩАЯСЯ – ԾՅՈՒՂԱՎՈՐԿՈՂ ԵՐԱԿ, BRANCHING VEIN**, ըստ տարածման կամ անկման բաժանվում է ավելի բարակ երակների կամ նրբերակների:

**Ж-28. ЖИЛА ВЫПОЛНЕНИЯ – ԼՅՄԱՆ ԵՐԱԿ, FILLING VEIN**, առաջանում է ապարի ճեղքի խոռոչը միներալային նյութով լցվելու հետևանքով:

- Ж-29. ЖИЛА ЗАМЕЩЕНИЯ – ФОНТАРИՆՄԱՆ (ՏԵՂԱԿԱՆՄԱՆ) ԵՐԱԿ, REPLACEMENT VEIN**, հիմնականում առաջանում է ճեղքերի երկարությամբ ապարի մետասոմատիկ(ական) փոխարինմամբ՝ միներալային նյութով:
- Ж-30. ЖИЛА ОСАДОЧНАЯ – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԵՐԱԿ, SEDIMENTARY VEIN**, ապարում ճեղքվածք՝ լցված նստվածքային նյութով:
- Ж-31. ЖИЛА ПЛАСТОВАЯ – ՇԵՐՏԱՅԻՆ ԵՐԱԿ, SHEET VEIN**, տեղադրված է ներփակող նստվածքային կամ փոխակերպային ապարների շերտավորությամբ ներդաշնակ:
- Ж-32. ЖИЛА ПРОСТАЯ – ՊԱՐՉ ԵՐԱԿ, SINGLE VEIN**, եզակի երակ, որը չի ուղեկցվում նրբերակներով կամ շատ մոտ զուգահեռ երակներով:
- Ж-33. ЖИЛА РУДНАЯ – ՀԱՆՔԵՐԱԿ, ORE VEIN**, բաղկացած է լրիվ կամ առավելապես հանքային միներալներից:
- Ж-34. ЖИЛА СЕТЧАТАЯ – ՑԱՆՑԱԶԵԿ ԵՐԱԿ, NET-VEIN**, առաջանում է միմյանց հատող ճեղքերը միներալային նյութով լցվելու հետևանքով:
- Ж-35. ЖИЛА СЛОЖНАЯ – ԲԱՐԴ ԵՐԱԿ, COMPOUND VEIN**, բաղկացած է երկու կամ մի քանի զուգահեռ մոտիկացված երակներից, սովորաբար միակցված բազմաթիվ շեղորեն ուղղված նրբերակներով:
- Ж-36. ЖИЛА СТУПЕНЧАТАЯ – ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐ ԵՐԱԿ, LADDER VEIN**, կազմված է կարճ զուգահեռ երակներից և նրբերակներից, որոնք լցնում են դրանց ներփակող դայկաների արտաժայթքային ապարների կամ այլ երակի լայնական ճեղքերը:
- Ж-37. ЖИЛА ЭРУПТИВНАЯ – ԺԱՅԹՔՈՒՄԱՅԻՆ ԵՐԱԿ, ERUPTIVE VEIN**, բաղկացած է հրաբխային ապարներից (լավային կամ հրաբեկորային): Դայկաներից տարբերվում է ավելի պակաս կանոնավոր ձևով և սովորաբար փոքր չափերով:
- Ж-38. ЖИЛЬНАЯ ПОРОДА – ԵՐԱԿԱՅԻՆ ԱՊԱՐ, VEIN ROCK, GANGUE**, մազմայական ապար, որը տեղադրված է երկրակեղևի մակերևութային ապարազանգվածներում՝ երակների կամ դայկաների ձևով: Հաճախ հանդիսանում է ավելի խոշոր ներժայթքային մարմնի ճյուղավորումը (ապոֆիզը) և նրանից տարբերվում է կազմով ու կառուցվածքով: Սովորաբար բնորոշվում է պորֆիրանման կառուցվածքով և լրիվ բյուրեղային, հազվադեպ՝ ապակեման հիմնական զանգվածով:
- Ж-39. ЖИЛЬНЫЕ ИСТОЧНИКИ – ԵՐԱԿԱՅԻՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ, VEIN SPRINGS**, ապարների առանձին բաց ճեղքերից անընդմեջ շիթով բխող աղբյուրներ:
- Ж-40. ЖУРНАЛ БУРОВОЙ – ՀՈՐԱՏՄԱՆ ՄԱՏՅԱՆ, WELL LOG, DRILL LOG**, մատյան, որտեղ գրանցում են հորատանցքի հորատման ամբողջ ընթացքը: Հ. մ-ում գրանցում են հորատանցքի խորություններն ըստ հորատման միջակայքերի, հորատման գործիքի մակնիշը և տրամագիծը, հորատանցքի ամրակապումը, լվացման հեղուկի բաղադրությունը, հորատանցքով հատած ապարների և օգտ. հնձների անվանումները, հաստությունները, կեռնի (հանուկի) ելքը, ջրի մակարդակը հորատանցքում և այլն:
- Ж-41. ЖУРНАЛ ОПРОБОВАНИЯ – ՆՄՈՒՇԱՀԱՆՄԱՆ (ՆՄՈՒՇԱՈՄԱՆ) ՄԱՏՅԱՆ, SAMPLING REGISTER**, մատյան, որտեղ գրանցվում են մնուշներ վերցնելու և դրանց տարրալուծման տվյալները: Ն. մ-ում գրանցում են մնուշների համարները, մնուշ վերցնելու տեղը և եղանակը, ակոսների երկարությունը և լայնական հատույթի մեծությունը, հանքաքարի բնութագիրը, մնուշները վերցնելու, տարրալուծման ուղարկելու և արդյունքները ստանալու ամսաթվերը, տարրալուծության արդյունքները:

# 3

- 3-1. ЗАБОЙ** – 1) **ՀԱՆՔԱԽՈՐՀԱՃԱԿԱՏ**, 2) **ՓՈՐՎԱԾՔԱՃԱԿԱՏ**, 3) **ՀԱՆՔԱԽՈՐՀ (ՓՈՐՎԱԾՔԱԽՈՐՀ), FACE STOPE, HOLE BOTTOM**, 1) հանքահորում անցկացվող փորվածքը զանգվածից սահմանափակող և աշխատանքների հետևանքով տեղափոխվող մակերևույթ, 2) փորվածքը զանգվածից սահմանափակող և աշխատանքների հետևանքով տեղափոխվող մակերևույթ: 3) հանքախորշաճակատին (փորվածքաճակատին) անմիջականորեն հարող տարածություն:
- 3-2. ЗАБОЙ ДЕЙСТВУЮЩИЙ** – **ԳՈՐԾՈՂ ՀԱՆՔԱԽՈՐՀ, ACTIVE FACE**, հանքախորշ, որտեղ կատարվում են փորվածք անցկացնելու կամ ընդերքից օգտ. հնժ. կորզելու աշխատանքները:
- 3-3. ЗАБОЙ ЗАПАСНОЙ** – **ՊԱՅՏԱՍԱՅԻՆ ՀԱՆՔԱԽՈՐՀ, RESERVE FACE**, նախապատրաստված հանքախորշ, որը գործող հանքախորշ դառնում է միայն՝ այնտեղ մեխանիզմներ տեղակայելուց հետո:
- 3-4. ЗАБОЛАЧИВАНИЕ** – **ՃԱՅՃԱՏՈՒՄ, SWAMPING, BOG FORMATION**, երկրի մակերևույթի գերխոնավացած տեղամասերում ճահճաառաջացման գործընթաց, որը պայմանավորված է հոսքի դժվարությամբ, ջրամերժ շերտի՝ երկրի մակերևույթի մոտ տեղադրմամբ կամ գոլորշիացման նվազմամբ, ծանծաղ ջրավազաններում ճահճային բույսերի փարթամ աճմամբ:
- 3-5. ЗАВАЛ ВЫРАБОТКИ** – **ՓՈՐՎԱԾՔԻ ՓՈՒԻՉՈՒՄ, GOAF OF WORKING**, փորվածքում ապարների զգալի զանգվածի ինքնաբերաբար փլուզում, որը խանգարում է փորվածքի կանոնավոր շահագործմանը:
- 3-6. ЗАГРЯЗНЕНИЕ СРЕДЫ** – **ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՂՏՈՏՈՒՄ, POLLUTION, CONTAMINATION**, 1) որևէ միջավայր ներմուծվող կամ նրանում գոյացող նոր, սովորաբար նրան ոչ բնորոշ ֆիզքիմ. կամ կենսաբ. ազդանյութերի տարածում կամ միջավայրում նշված ազդանյութերի կուտակման միջին տարեկան բնական մակարդակի գերազանցում: 2) Նշված ազդանյութերի ոչ վաղ դիտված չափանիշների նկատմամբ քանակի ավելացում: 3) Գոյանում է բնական պատճառներով (բնական աղտոտում) և մարդու գործունեության (անտրոպոգենյան աղտոտում) հետևանքով:
- 3-7. ЗАГРЯЗНЕНИЕ АТМОСФЕРЫ** – **ՄԹՆՈՒՈՐՏԻ ԱՂՏՈՏՈՒՄ, POLLUTION OF ATMOSPHERE**, մթնոլորտային օդում կախված վիճակում խոշորադիսպերս պինդ և հեղուկ մասնիկների, ինչպես նաև այն գազերի առկայությունը, որոնք չեն մտնում օդի բաղադրության մեջ (փոշի, ծուխ, թթուների կաթիլներ, ավտոմեքենաների արտանետման գազեր, տարբեր արտադրությունների մոլեկուլային համալիրներ, գազեր և այլն):
- 3-8. ЗАДНЕЖАБЕРНЫЕ** (Opisthobranchia) – **ՅԵՏԻՆԻԿԱՎՈՐՆԵՐ, OPISTHOBRANCHIA**, փորոտանի փափկամարմինների ենթադաս, խռիկները տեղաբաշխված են սրտի հետևում: Կարբոնից-այժմ:
- 3-9. ЗАКОН БИОГЕНЕТИЧЕСКИЙ (ЗАКОН ГЕККЕЛЯ-МЮЛЛЕРА, 1866)** – **ԿԵՆՍԱԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ (ՅԵԿԿԵԼ-ՄՅՈՒԼԼԵՐԻ ՕՐԵՆՔ), BIOGENETIC LAW**, օմտոգենեզը (անհատի զարգացումը բջից մինչև մահ) ֆիլոգենեզի կարճ կրկ-

նությունն է: Ըստ այդ օրենքի՝ կենդանի էակների անհատական զարգացումը (հատկապես սաղմնային) կրկնում է նախնիների ամբողջ շարքի զարգացման հիմնական փուլերը (ֆիլոգենեզ):

- 3-10. ЗАКОН НЕОБРАТИМОСТИ ЭВОЛЮЦИИ – ԷՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԱՆՂԱՐՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ, LAW OF EVOLUTION IRREVERSIBILITY,** ձևակերպվել է բելգիացի հնէաբան Դոլոյի կողմից (1893), ֆիլոգենետիկական շարքում մի անգամ կորցված օրգանը կան հատկանիշը հետագա ֆիլոգենետիկական զարգացման գործընթացում չի վերականգնվում: Այժմ հնարավոր է համարվում մասնակի վերադարձ նախնիների վիճակին, կապված նախկին կյանքի կերպին վերադառնալու հետ: Բայց կորցրած կառուցվածքների լրիվ վերականգնումը և նախնիների տեսակների կրկին հանդես գալը բացառվում է:
- 3-11. ЗАКОН ПЕРИОДИЧНОСТИ – ՊԱՐՔԵՐԱՎՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ, PERIODIC LAW,** Մենդելեևի քիմիական տարրերի պարբերական համակարգը: Օգտագործվում է տարրերի զուգորդությունների, դրանց դասակարգման և միգրացիայի օրինաչափությունների բացահայտման համար:
- 3-12. ЗАКРЫТАЯ СКЛАДКА, ЗАМКНУТАЯ СКЛАДКА – ՓԱԿ (ԳՈՅ) ԾԱԼՔ, CLOSED FOLD, TIGHT FOLD,** ապարների ծալք, որում թևերը ծալքի փականում զուգամիտվում են ուղիղ անկյան տակ:
- 3-13. ЗАКРЫТАЯ ТРЕЩИНА – ՓԱԿ ԵՏՂՔ, TIGHT-CLOSED FRACTURE, CLOSED FRACTURE,** ապարի ճեղք, որում խզվածքի հակադիր պատերը միմյանց կիպ սեղմված են:
- 3-14. ЗАЛЕГАНИЕ ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ, POSITION, ACCURRENCE, ATTITUDE,** երկրակեղևում երկրբ. մարմինների դիրքը և փոխհարաբերությունը: Նստվածքային և հրաբխածին ապարների մեծ մասի համար բնորոշ են շերտանման ձևը և մեղմաթեք, հորիզոնականին մոտ առաջնային տեղադրումը: Գլխ. տեկտ. գործընթացների ներգործության տակ տեղի է ունենում շերտերի տեղադրման խախտում (տեղախախտում, դիսլոկացիա): Գոյանում են տարբեր երկրորդային կառուցվածքներ՝ միակողմ թեքվածք (միաթեք), տարբեր ձևի ու չափի ծալքեր, հաճախ բարդացված խզվածքային խախտումներով: Բարդ ծալքավորված ապարազանգվածներում դիտվում են ապարների շրջված տեղադրումներ (հին ապարները տեղադրված են մորեի վրա): Տարածության մեջ շերտերի դիրքը որոշվում է դրանց տարածմամբ, անկման ուղղությամբ և անկյունով: Տեղադրման այդ տարրերը չափվում են լեռնային կողմնացույցով: Մագմայական խորքային ապարները երկրակեղևում առաջացնում են բաթոլիթներ, ապարազանգվածներ (շտոկներ), դայկաներ, լակոլիթներ, շերտանման մարմիններ կամ սիլեր և այլն: Ապարների տեղադրումը լինում է նաև ծովարշավային (տրանսգրեսիվ), ներմուտ (ինգրեսիվ) և հետընթաց (ռեգրեսիվ), տե՛ս Трансгрессивное залегание, Ингрессивное залегание, Регрессивное залегание:
- 3-15. ЗАЛЕГАНИЕ НАРУШЕННОЕ – ԽԱՆՏՎԱԾ ՏԵՂԱԴՐՈՒՄ, BROKEN BEDDING,** ապարների տեղադրում, որը տարբերվում է նստվածքակուտակման ժամանակ և անմիջապես դրանից հետո եղած տեղադրումից:
- 3-16. ЗАЛЕГАНИЕ НОРМАЛЬНОЕ – ԲՆԱԿԱՆՈՆ ՏԵՂԱԴՐՈՒՄ, NORMAL POSITION,** ապարների տեղադրում, որը նրանք ձեռք են բերում իրենց ձևավորման գործընթացում, նույնն է՝ Залегание первичное:
- 3-17. ЗАЛЕГАНИЕ РЕГРЕССИВНОЕ,** տե՛ս Регрессивное залегание:
- 3-18. ЗАЛЕГАНИЕ ТРАНСГРЕССИВНОЕ – ԾՈՎԱՐՇՎԱԿԱՅԻՆ (ԾՈՎԱԾՎԱԿԱՅԻՆ, ՏՐԱՆՍԳՐԵՍԻՎ) ՏԵՂԱԴՐՈՒՄ, TRANSGRESSIVE OVERLAPPING,** ծովային նստ-



վածքների տեղադրումը ավելի հին ապարների ողողաքայքայված մակերևույթի վրա, առաջանում է ցամաքի վրա ծովածավալման պայմաններում: Բնորոշվում է տարածության վրա և ուղղաձիգ կտրվածքում ֆացիաների օրինաչափ փոփոխությամբ՝ համեմատաբար խորջրայիններից դեպի ծանծաղուտայինները:

**3-19. ЗАЛЕГАННИЕ ЦЕНТРИКЛИНАЛЬНОЕ**, տե՛ս Центиклиналиное падение:

**3-20. ЗАЛЕЖЬ ПОЛЕЗНОГО ИСКОПАЕМОГО – ՀԱՆՔԱՎՈՒՏԱԿ, MINERAL DEPOSIT**, Երկրի ընդերքում կամ մակերևույթին բնական միներալային հումքի կուտակում, որն ունի արդյունաբերական նշանակություն: Ըստ ձևի բաժանվում են իզոմետրական [հանքազանգված (շտոկ), շտոկվերկ, գրպաններ, բներ], հարթ (շերտեր, երակներ) և ձգված (խողովակներ, բնորոշ ներկայացուցիչներից են քիմբելիթները):

**3-21. ЗАЛЕЖЬ ГОРИЗОНТАЛЬНАЯ – ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՀԱՆՔԱՎՈՒՏԱԿ, HORIZONTAL ORE DEPOSIT**, մինչև 3° անկման անկյուն ունեցող հանքակուտակ:

**3-22. ЗАЛЕЖЬ ИНТРУЗИВНАЯ – ՆԵՐԺԱՅՑՔԱՅԻՆ (ԻՆՏՐՈՒԶԻՎ) ԿՈՒՏԱԿ, SILL, INTRUSIVE DEPOSIT**, շերտանման ներժայթքային մարմին, որը տեղադրված է հորիզոնական տեղադիրք ունեցող կամ թույլ ծալքավորված ստվարաշերտերում: Ն. կ-ները սահմանափակող մակերևույթները զգալի տարածությունների վրա համարյա զուգահեռ են: Եթե Ն. կ. տեղադրված է երկու աններդաշնակ շերտախմբերի միջև, կոչվում է միջկազմավորումային (միջֆորմացիոն): Հոմ. սիլ, շերտային ներժայթքուկ:

**3-23. ЗАЛЕЖЬ КРУТАЯ – ՉԱՌԻԹԱՓ ՀԱՆՔԱՎՈՒՏԱԿ, STEEP DEPOSIT**, 36°-ից մեծ անկում ունեցող հանքակուտակ:

**3-24. ЗАЛЕЖЬ НЕФТИ (ГАЗА) – ՆԱՎԹԻ (ՔԱՐՅՈՒՂԻ) (ԳԱԶԻ) ՀԱՆՔԱՎՈՒՏԱԿ, OIL (GAS) DEPOSIT**, ծուղակում նավթի (գազի) բնական կուտակում, որը գոյացել է կուտակիչ ապարում (կոլեկտորում)՝ անթափանց ապարների ծածկոցի տակ: Սովորաբար Ն. հ-ի տակ հասկացվում են նավթի (գազի) արդյունաբերական կուտակումները: Նավթը և ջուրը բաժանող մակերևույթը կոչվում է նավթի (գազի) հանքակուտակի հատակ: Ըստ հանքակուտակի ածխաջրածնային կազմի՝ առանձնացնում են՝ նավթային (նավթում լուծվող գազի հետ), գազանավթային (նավթային հանքակուտակ գազի գլխարկով), գազային և գազակոնդենսատային հանքակուտակներ:

**3-25. ЗАЛИВ – (ԾՈՎԱ)ԾՈՑ, GULF**, օվկիանոսի (ծովի կամ լճի) մաս, որը բավակազմին խոր մտել է ցամաքի մեջ, բայց հիմնական ջրավազանի հետ ունի ազատ ջրափոխանակություն:

**3-26. ЗАЛЬБАНД** (գերմ. Sahlband) – **ՉԱԼԲԱՆԴ (ՀՊԱՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ), VEIN WALL, VEIN SELVAGE**, կողային ապարների հետ հանքերակների հպման մակերևույթ:

**3-27. ЗАМОК СКЛАДКИ – ԾԱԼՔԻ ՓԱԿԱՆՔ, HINGE OF FOLD**, ապարների ընդհանուր ծռման գիծ՝ կամարածալքի (անտիկլինալի) վերին մասում կամ գոգածալքի (սինկլինալի) ստորին մասում:

**3-28. ЗАМЫКАНИЕ СКЛАДКИ – ԾԱԼՔԻ (ԾԱՅՐԱ)ՓԱԿՈՒՄ**, տե՛ս Периклиналиь:

**3-29. ЗАПАСЫ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ – ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆՆԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐ, MINERAL RESERVES**, Երկրի ընդերքում պարփակված օգտ. հնձ-ների և դրանց բաղադրիչների կշռային կամ ծավալային քանակություն: Օ. հ. պ. հաշվարկվում և հաշվառվում են ըստ օգտ. հնձ-ի յուրաքանչյուր տեսակի և նրա հնարավոր օգտագործման ուղղության՝ ժողտնտեսության մեջ: Ըստ ուսումնասիրման աստիճանի՝ Օ. հ. պ. բաժանվում են հետախուզված A, B, C և նախապես գնահատված C<sub>2</sub> կարգերի: Օ. հ. պ-ի կարգերի ստորաբաժանումը հաշվի է առնում որոշման արժանահավատությունում գոյություն ունեցող տարբերությունները, որոնք աստիճանաբար

նվազում են A կարգից դեպի C<sub>2</sub>-ը: Պինդ օգտ. հնժ-ների համար կարգերի սահմանման չափանիշներ են հանդիսանում օգտ. հնժ-ի մարմնի ձևի, չափերի և տեղադրման պայմանների, դրանց արտաքին ձևի, բնույթի, որակի և ներքին կազմվածքի փոփոխականության օրինաչափությունները, հնքվ-ի ջրաերկրք., ճարտարագիտաերկրք., լեռնաերկրք. և այլ բնական պայմանները: Օ. հ. պ-ի տարբեր կարգերի հաշվարկը կատարվում է առանձին օգտ. հնժ-ի առանձնացված յուրաքանչյուր մարմնի (հանքակուտակի, հորիզոնի) համար: Օ. հ. պ., ըստ նրանցում պարունակվող բաղադրամասերի և ժողտնտեսական նշանակության, բաժանվում են երկու խմբի՝ օգտ. հնժ-ների հաշվեկշռային և արտահաշվեկշռային պաշարներ, որոնք ենթակա են առանձին հաշվարկման և հաշվառման, տե՛ս Запасы полезных ископаемых балансовые, Запасы полезных ископаемых забалансовые:

**3-30. ЗАПАСЫ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ БАЛАНСОВЫЕ – ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆՆԵՐԻ ՀԱՇՎԵԿՇՐԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐ, BALANCE RESERVES OF MINERALS, տե՛ս Балансовые запасы полезных ископаемых:**

**3-31. ЗАПАСЫ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ ВСКРЫТЫЕ – ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆՆԵՐԻ ԲԱՑՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐ, PROVED MINERAL RESERVES, օգտ. հնժ-ների արդյունաբերական պաշարների այն մասը, որի մշակման համար կարիք չկա անցկացնելու լրացուցիչ հանքային կապիտալ փորվածքներ:**

**3-32. ЗАПАСЫ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ ГЕОЛОГИЧЕСКИЕ – ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆՆԵՐԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ, GEOLOGICAL MINERAL RESERVES, Երկրի ընդերքում գտնվող օգտ. հնժ-ների հաշված պաշարներ, որոնք կարող են միայն ցույց տալ արդյունաբերական պաշարների հայտնաբերման հեռանկարները և որոշել որոնման աշխատանքների կատարման նպատակահարմարությունը:**

**3-33. ЗАПАСЫ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ ГОТОВЫЕ К ВЫЕМКЕ – ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆՆԵՐ ՀԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏԻ ՊԱՇԱՐՆԵՐ, PREPARED MINERAL RESERVES, օգտ. հնժ-ների նախապատրաստված պաշարների այն մասը, որի արդյունահանման համար անհրաժեշտ բոլոր նախապատրաստական աշխատանքներն արդեն կատարված են:**

**3-34. ЗАПАСЫ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ ЗАБАЛАНСОВЫЕ – ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՇՎԵԿՇՐԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐ, TOTAL MINERAL RESOURCES, օգտ. հնժ-ների այնպիսի պաշարներ, որոնց օգտագործումը տեխնիկայի զարգացման արդի փուլում տնտեսապես նպատակահարմար չէ: Օ. հ. ա. պ-ի արդյունահանման նպատակահարմարությունը պայմանավորված է այդ պաշարների քիչ լինելով, հանքակուտակի փոքր հաստությամբ, շահագործման արտակարգ դժվար պայմանների առկայությամբ և այլ պայմաններով: Օ. հ. ա. պ. հետագայում կարող են վերածվել հաշվեկշռային պաշարների և դառնալ արդյունաբերական յուրացման օբյեկտ:**

**3-35. ЗАПАСЫ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ ПРОМЫШЛЕННЫЕ – ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ, COMMERCIAL MINERAL RESERVES, օգտ. հնժ-ների հաշվեկշռային պաշարների (տե՛ս Запасы полезных ископаемых балансовые) այն մասը, որը նախագծի կամ հանքային աշխատանքների զարգացման պլանի համաձայն պետք է կորզվի Երկրի ընդերքից: Այն որոշվում է որպես տվյալ հանքավայրի օգտ. հնժ-ների հաշվեկշռային պաշարների և հանքավայրի մշակման նախագծով նախատեսված կորուստների տարբերություն:**

**3-36. ЗАСОЛЁННЫЕ ПОЧВЫ – ԱՂՈՒՏԱՑՎԱԾ ՀՈՂԵՐ, SALTY SOILS, SALINE SOILS, հողեր, որոնք բնորոշվում են դյուրալույծ աղերի բարձրացված պարունա-**

կությամբ (ավելի քան 25 %): Սովորաբար ձևավորվում են չոր շրջաններում՝ հողում և հողագետնային ջրերում աղերի կուտակման հետևանքով:

**3-37. ЗАТУХАНИЕ СКЛАДОВ – ԾԱԼՔԵՐԻ ՍԱՐՈՒՄ, DISAPPEARANCE OF FOLD STRUCTURES**, ապարների շերտերի ծալքերի հարթեցում ըստ տարածման կամ կտրվածքով դեպի վեր: Խախտված ծալքավոր տեղադրման աստիճանական անցնում դեպի չխախտված հորիզոնական:

**3-38. ЗАЧИСТКА – ՍԱՔՐԱՀԱՐԹՈՒՄ, CLEAN-UP**, մակաբացման աշխատանքներից հետո հանքաստիճանի հրապարակի վրա մնացած դատարկ ապարների հեռացում:

**3-39. ЗЕЛЕНОКАМЕННЫЕ ПОРОДЫ – ԿԱՆԱՉՔԱՐԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐ, GREENSTONES, GREEN ROCKS**, հիմքային, հազվադեպ գերհիմքային և միջին կազմի մագմայական ապարների ընդհանուր անվանում: Այդ ապարների ապարակազմիչ միներալները ցածրաջերմաստիճանային ռեզիոնալ փոխակերպության հետևանքով փոխարինվել են սերպենտինով, քլորիտով, ակտինոլիթով, էպիդոտով, որը պայմանավորել է դրանց կանաչ գունավորումը: Բնորոշ են երկրակեղևի ծալքավոր զոնաներին (օր.՝ Ուրալ, Կովկաս), ինչպես նաև մինչքեմբրիի, այսպես կոչված, կանաչքարային գոտիներին (Յր. Աֆրիկա և այլն): Կ. ա. պղնձահրաքարային հնքվերի որոնողական չափանիշներից են:

**3-40. ЗЕЛЁНЫЕ ВОДОРОСЛИ (Chlorophyta) – ԿԱՆԱՉ ՋՐԻՍՈՒՌՆԵՐ, GREEN ALGAE**, ջրիմուռներ, որոնց մոտ քրոմատոֆորները պարունակում է քլորոֆիլ և կարոտինոիդներ: Տարածված են առավելապես քաղցրահամ ջրերում, որոշ մասը՝ ծովերում, հողում, ծառերի կեղևում և այլն: Մոտ 5.5 հազ. տեսակ:

**3-41. ЗЕЛЁНЫЙ СЛАНЕЦ – ԿԱՆԱՉ ԹԵՐԹԱՔԱՐ, GREEN SCHIST**, տարածված նրբաշերտավոր փոխակերպային (մետամորֆային) ապար, առաջանում է գլխ. հիմքային հրաբխաքարերի կերպափոխումից՝ բարեխառն ճնշման և ջերմաստիճանի պայմաններում՝ համեմատաբար փոքր խորություններում (ռեզիոնալ փոխակերպության կանաչքարային ֆազիա): Կ. թ. կազմված է ալբիտից, ակտինոլիթից, քլորիտից, էպիդոտից, քվարցից, եղջերախաբից: Գույնը՝ մոխրականաչ (տարբեր երանգների): Հանդիպում է կանաչքարային գոտիների կազմում, սովորաբար՝ պրոտերոզոյան ու պալեոզոյան շերտախմբերի հիմքում, ինչպես նաև տեկտ. զոնաների հիմքային ապարների կազմում: Փոխակերպության ջերմաստիճանի մեծացման դեպքում Կ. թ. փոխարինվում է ամֆիբոլիթով:

**3-42. ЗЕМЛЕВЕДЕНИЕ – ԵՐԿՐԱՎԻՏՈՒԹՅՈՒՆ, EARTH SCIENCE**, աշխարհագրության բաժին, որն ուսումնասիրում է Երկրի աշխ. թաղանթը՝ կազմի, կառուցվածքի և զարգացման ամենաընդհանուր օրինաչափությունները: Երբեմն «Ե.» տերմինը օգտագործվում է որպես Երկիրն ուսումնասիրող բոլոր գիտությունների (աշխ., երկր., երկրֆ. և այլն) կրճատված նշանակում:

**3-43. ЗЕМЛЕТРЯСЕНИЯ – ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐ, EARTHQUAKES, EARTH SHOCKS**, Երկրի մակերևույթի և ընդերքի տատանումներ (ցնցումներ), որոնք հարուցվում են գոյություն ունեցող (կամ նոր առաջացող) տեկտ. խզվածքների թևերի հանկարծակի, արագ տեղաշարժմամբ և ընդունակ են հաղորդվելու մեծ տարածությունների վրա: Խոշոր բեկվածքներում Ե-ի ծագումը տեղի է ունենում այդ բեկվածքով հավող տեկտ. բլոկների կամ սալերի՝ հակադիր կողմեր երկարատև տեղաշարժվելու դեպքում: Այդ ընթացքում կցորդող (շաղկապող) ուժերը կասեցնում են բեկվածքի թևերը սահունից, և բեկվածքի զոնան կրում է աստիճանաբար աճող տեղաշարժային ձևախախտում, որի որոշ սահմանի հասնելու դեպքում տեղի է ունենում բեկվածքի «պատռում» և նրա թևերի տեղաշարժ: Նոր գոյացող բեկվածքներում Ե. դի-

տարկվում են որպես փոխներգործող ճեղքերի համակարգի օրինաչափ զարգացման արդյունք: Դրանք, միավորվելով խզվածքների բարձր կուտակման զոնայում, առաջացնում են մայրագծային խզվածք, որն ուղեկցվում է Ե-ով: Միջավայրի ծավալը, որտեղ անջատվում է տեկտ. լարվածությունների մի մասը, և ազատվում է կուտակված պոտենցիալ էներգիայի որոշ մասը, կոչվում է Ե-ի օջախ: Մեկ Ե-ի ժամանակ անջատվող էներգիայի քանակը կախված է գլխ. բեկվածքի շաժվող մակերևույթի չափերից: Բեկվածքի տարածական կողմնորոշումը և նրա թևերի տեղաշարժման ուղղությունը ստացել են Ե-ի օջախի մեխանիզմ անվանումը: Օջախում ընթացող գործընթացները անմատչելի են ուղղակի չափումների համար: Այդ պատճառով երկրաշարժերի օջախների տեղաբաշխման և դրանց հատկությունների ուսումնասիրման համար օգտագործվում են Ե-ի ժամանակ ճառագայթվող ծավալային երկրաշարժական ալիքները (երկայնական P և լայնական S), ինչպես նաև դրանց կողմից երկրակեղևում հարուցված մակերևութային ալիքները: Երկրաշարժական կայանների դիտարկումների միջոցով որոշվում է այն տեղը (կետը), որտեղ սկսվել է բեկվածքի պատռումը: Այդ կետը կոչվում է Ե-ի ներքնակենտրոն (հիպոկենտրոն): Ներքնակենտրոնի պրոյեկցիան Երկրի մակերևույթի վրա կոչվում է Ե-ի վերնակենտրոն (էպիկենտրոն): Թույլ Ե-ի համար օջախ և ներքնակենտրոն հասկացությունները կարելի է դիտարկել որպես հոմ-ներ: Ուժեղ Ե-ի դեպքում դրանք սկզբունքորեն տարբերվում են: Ե-ի էներգետիկ դասակարգման համար գործնականում օգտվում են նրա մագնիտուդից (ուժաստիճանից) (M): Ե-ի մագնիտուդը երկրաշարժի ժամանակ գետնի մասնիկների տեղափոխության մեծության միջոցով Ե-ի ուժի գնահատման չափն է, փաստորեն Ե-ի մագնիտուդ ասելով հասկացվում է նրա մեծությունը: Ինչքան մեծ է Ե-ի ժամանակ գետնի մասնիկների տեղափոխությունների աստիճանը, այնքան մեծ է մագնիտուդը, այսինքն՝ այնքան մեծ է երկրաշարժը: Երկրի մակերևույթում Ե-ի ազդեցության գնահատման համար օգտագործվում են Ե-ի ուժգնության (բալլայնության) սանդղակներ կամ երկրաշարժական սանդղակներ: Ամենատարածվածը 12-բալլային սանդղակն է: Սկզբում սանդղակները զուտ նկարագրական էին, բայց հետագայում բացահայտվեց, որ բալլի թիվը (համարը) համադրվում է գրունտի շարժման արագության կամ նրա արագացման և կամ տեղաշարժման հետ: Ե-ի մակերևութի ազդեցության ուսումնասիրման ժամանակ եզրագծվում են միատեսակ բալլայնության զոնաներ, դրանք սահմանափակող գծերը կոչվում են իզոսեյստեր: Փոխհարաբերությունը Ե-ի առավելագույն ուժգնության և նրա մագնիտուդի միջև կախված է օջախի խորությունից: Գլխավոր Ե. ուղեկցվում են աֆտերշոկերով և ֆորշոկերով (տե՛ս Афтершоки, форшоки): Ե-ի նախագուշակները (նախանշանները) պայմանականորեն բաժանվում են երկարատև և կարճատև նախագուշակների (տե՛ս Предвестники землетрясения): Կախված օջախի խորությունից՝ Ե. ստորաբաժանվում են բնականոն Ե. (մինչև 70 կմ), միջանկյալ (80-300 կմ) և խորքային (խորքակիզակետային) (300 կմ-ից խոր): Երկրաշարժականության գլխավոր գոտին եզերակալում է Խաղաղ օվկիանոսը և կապված է խորջրյա փողրակների համակարգի հետ: Այս գոտու ծայրահեղ բարձր երկրաշարժականությունը պայմանավորված է քարոլորտի օվկիանոսային սալի ենթաշարժով՝ մայրցամաքային սալի և ծայրամասային ծովերի տակ: Երկրորդ խոշոր գոտին՝ Եվրասիականը, համընկնում է ալպյան հասակի ծալքավոր լեռնային կառույցների հետ: Այս գոտում Ե. տեղի են ունենում մի կողմից Եվրասիական սալի, մյուս կողմից՝ Յնդկական, Արաբական և Աֆրիկյան սալերի ճնշման հետևանքով: Երրորդ երկրաշարժակալի գո-

տին կապված է միջինօվկիանոսային լեռնաշղթաների համակարգի հետ և բնորոշվում է ավելի թույլ երկրաշարժակտիվությամբ: Տվյալ տարածքում սպասվող Ե-ի մակերևութային ազդեցության գնահատումը և քարտեզագրությունը կոչվում է երկրաշարժական շրջանացում, տե՛ս Сейсмическое районирование: 20-րդ դարի կեսերից երկրակեղևի վրա տեխնածին ներգործությունը դարձել է ուղղորդված երկրաշարժականության պատճառներից մեկը (խոշոր ջրամբարների լցում, ստորերկրյա միջուկային պայթեցումներ և այլն):

**3-44. ЗЕМЛЯ** (ընդհանուր սլավոնական зем – հատակ, ներքև, հող) – **ԵՐԿԻՐ, EARTH**, Արևային համակարգի Արևից երրորդ մոլորակ: Արևի շուրջը պտտվում է ձվածրակերպային (էլիպսոիդալ) ուղեծրով՝ 29.765 կմ/վրկ միջին արագությամբ, 149.6 մլն կմ. հեռավորությամբ և 365.24 միջին արևային օր պարբերությամբ: Ե. ունի ձգողական, մագնիսական և դրանց հետ սերտորեն կապված էլեկտրական դաշտ: Ե-ի ձևը երկրածև է (գեոիդ) (մոտավորապես եռառանցք էլիպսոիդ, գնդակեղև): Ըստ ժամանակակից տիեզերածնական պատկերացումների՝ Ե. առաջացել է մոտ 4.7 մլրդ. տ. առաջ նախաարևային համակարգում ցրված գազափոշային նյութից: Ե-ի նյութի տարբերակման հետևանքով (կապված նրա ձգողական դաշտի գործունեության հետ) և Ե-ի ընդերքի տաքացման պայմաններում գոյացել և զարգացել են քիմ. կազմով, ազդեգատային վիճակով և ֆիզ. հատկություններով տարբեր պատյաններ՝ երկրոլորտներ (մթնոլորտ, ջրոլորտ, քարոլորտ, Ե-ի միջնապատյան և միջուկ): Ե-ի երկրբ. պատմությունը բաժանվում է երկու անհավասար փուլերի՝ մինչքեմերիյան, որը զբաղեցնում է ամբողջ երկրբ. թվականության մոտ 5/6-ը (մոտ 3 մլրդ. տարի) և ֆաներոզոյան, որն ընդգրկում է վերջին 542 մլն. տարին (տե՛ս Земная кора): Երկրի մակերևութի մեծ մասը (361.1 մլն. կմ<sup>2</sup>) ծածկված է Դամաշխարհային օվկիանոսով, ցամաքը կազմում է 149.1 մլն. կմ<sup>2</sup> և բարձրանում է Դամաշխարհային օվկիանոսի մակարդակից վեր՝ միջինը 875 մ, լեռները գրավում են նրա մակերևութի ավելի քան 1/3-ը: Արեգակնային համակարգի մյուս մոլորակներից Ե-ի կարևորագույն տարբերությունը նրա վրա կյանքի գոյությունն է, որը հանդես է եկել 3-3.5 մլրդ. տարի առաջ և հասել է մինչև մարդու հանդես գալը (3 մլն. տարի առաջ): Ե-ի ներքին կազմության մասին ժամանակակից պատկերացումները հենվում են կողմնակի տվյալների վրա՝ երկրաշարժագիտության, ծանրաչափության, երկրաջերմության, բարձր ճնշումների պայմաններում ապարների հատկությունների ու վարքի փորձարարական տվյալների և այլն: Այդ ուսումնասիրությունները հաստատում են, որ Ե. կազմված է երեք հիմնական երկրոլորտներից՝ երկրակեղևից, միջնապատյանից և միջուկից, որոնք իրենց հերթին ստորաբաժանվում են մի շարք շերտերի (տե՛ս Земная кора, Мантия земли, Ядро Земли): Կախված երկրաշարժական ալիքների արագության մեծությունից և փոփոխման բնույթից՝ ըստ խորության «պինդ» Ե. բաժանվում է ութ երկրաշարժական շերտերի՝ A, B, C, D', D'', E, F, G: Բացի դա, Ե-ում անջատում են հատուկ ամուր շերտ՝ քարոլորտ և ներքնադիր կակուղ շերտ՝ ասթենոսֆերա (թույլլորտ): A շերտը երկրակեղևն է, B, C, D' և D'' շերտերը միջնապատյանի կազմում են, E, F և G շերտերը առաջացնում են Ե-ի միջուկը: Ե-ի և մասնավորապես երկրակեղևի զարգացումը (երկրադինամիկական) որոշվում են ներծին գործընթացներով, որոնց շարժիչ ուժը Ե-ի ներքին էներգիան է, և արտածին գործընթացներով, որոնք գոյանում են ի հաշիվ արևային ճառագայթման (տե՛ս Эндогенные процессы, Экзогенные процессы): Ներծին և արտածին գործընթացների ընթացքում Ե-ի նյութի բաշխման և վերաբաշխման կարևոր գործոն է հանդիսանում ծանրության ուժը: Երկրակեղևի վերին մասերում

և մակերևութին տեղի է ունենում ներծին և արտածին գործընթացների բարդ փոխգործունեություն, ըստ որում՝ առաջինները ստեղծում են տեկտ. և հրաբխային ծագման ռելիեֆի խոշոր անհարթությունները, իսկ երկրորդները ձգտում են դրանք հարթեցնել՝ քայքայելով մակերևութի ցցվածքները (լեյկացման գործընթացներ) և լցնելով ցածրությունները (կուտակումային գործընթացներ): Երկրակեղևի ներքին մասերը՝ միջնապատյանը և միջուկը, ներծին գործընթացների ոլորտներն են: Միջնապատյանում տեղի են ունենում ֆազային վերափոխություններ, որոնք ուղեկցվում են նյութի ընդարձակմամբ ու սեղմմամբ և նրա դանդաղ տեղաշարժմամբ, որը, ըստ երևույթին, ունի կոնվեկցիոն (ջերմա-զանգվածափոխանցական) բնույթ: Այդ կոնվեկցիոն հոսքերին և մասնավորապես վերին միջնապատյանում նյութի ենթադրական հոսքերին կարևոր տեղ է տրվում ժամանակակից մոբիլիստական կոնցեպցիայում (տե՛ս Геодинамика, Мобилизм, Тектоника плит):

Ե-ի երկրաբանական պատմության ընթացքում առանձնացվում են բարձր կարգի 3 երկրաժամանակագրական ստորաբաժանումներ (եոններ)՝ արխեյ (3.8-2.6 մլդ. տարի), պրոտերոզոյ (2.6-0.54 մլդ. տարի) և ֆաներոզոյ՝ բաղկացած պալեոզոյան (540-230 մլն. տարի), մեզոզոյան (230-65 մլն. տարի) և կայնոզոյան (65-0 մլն. տարի) դարաշրջաններից: Շատ հետազոտողներ գտնում են, որ ժամանակակից պլատֆորմների զգալի տարածքներում դեռևս 3.8-3.6 մլդ. տարի առաջ գոյացել է նախամայրցամաքային կեղև՝ գրանոդիորիտին մոտ կազմով: Արխեյի ընթացքում երկրակեղևը բնորոշվել է բարձր ջերմային հոսքով, մակերևութի բարձր ջերմաստիճանով (100-300°C արխեյի սկզբում), հաջորդ դարաշրջանների հետ համեմատած խիստ բարձր շարժունակությամբ, ուժգին հրաբխային գործունեությամբ և պլաստիկ ձևախախտումների բարձր ունակությամբ: Ուշ արխեյում սկսել են գոյանալ բազմաթիվ գծային տեկտ. զոնաներ՝ կանաչքարային գոտիներ: Հետագայում դրանք ենթարկվել են սեղմման, ձևախախտումների, ուժեղ տաքացման ու գրանիտացման, որն ուղեկցվել է գրանիտացնեսային գմբեթների առաջացմամբ (2.7-2.6 մլդ. տարի առաջ):

Վաղ պրոտերոզոյում երկրակեղևի ջերմային ռեժիմը և համապատասխանաբար շարժունակությունը, փոխակերպության ու մագմայականության աստիճանը արխեյի համեմատությամբ նկատելիորեն ցածրացել են: Հին պլատֆորմների տարածքների մեծ մասում սկսվել է տեկտ. կայունացում (կրատոնացում), որոշ տեղամասերում տեղի է ունեցել նախապլատֆորմային նստվածքների կուտակում: Ավելի փոքր տարածքներում գոյացել են ավելի խոր նախաերկրասինկլինալային ճկվածքներ: Երկրակեղևի բազմակի տաքացման, պլաստիկ ձևախախտումների, ապարների փոխակերպության ու գրանիտացման հետևանքով հին պլատֆորմներում, հնարավոր է նաև մայր ցամաքների ամբողջ տարածքներում, ձևավորվել է հզոր հասուն մայրցամաքային տիպի երկրակեղև:

Ուշ պրոտերոզոյում Հյուսիսային մայր ցամաքների տարածքում տեղի է ունեցել տեկտ. պայմանների զգալի տարբերակում, առանձնացել են հյուսիսային խմբի (Լավրասիայի խմբի) պլատֆորմները՝ Հյուսիսամերիկյան, Արևելաեվրոպական, Սիբիրական, Չինակորեական, Հարավչինական, հարավում՝ բարդ կազմության Գոնդվանայի գերպլատֆորմը: Ներդրվել են դրանց բաժանող շարժուն գոտիները՝ Հյուսիսատլանտյան, Ուրալամոնղոլական, Միջերկրածովյան (կամ Հնատեթիսը) և Խաղաղօվկիանոսյան: Այդ ժամանակ առանձնացվել է նաև ժամանակակից Խաղաղօվկիանոսյան իջվածքը: Նշված գոտիների մի շարք գոնաներում 1.3-1.4 մլդ. տարի և այնուհետև 1 մլդ. տարի առաջ տեղի են ունեցել ծալքավոր ձևախախ-

տուններ, փոխակերպության ու գրանիտային մագմայականության գործընթացներ: Հին պլատֆորմներում գոյացել են ռիֆտային զոնաներ (ավլակոգեններ):

Պալեոգոյում շարունակվել է նախկինում գոյացած շարժուն գոտիների զարգացումը: Վաղ պալեոգոյում Հյուսիսատլանտյան գոտում և Ուրալամոնղոլական գոտու որոշ մարզերում ավարտվել է երկրասինկլինալային զարգացումը՝ սալաիրյան և կալեդոնյան ծալքավորությունների հետևանքով: Ուշ պալեոգոյում հերցինյան ծալքավորությունը արտահայտվել է Ուրալամոնղոլական գոտու մնացած մարզերում և Միջերկրածովյան ու Խաղաղօվկիանոսյան գոտիների որոշ մարզերում, որի հետևանքով Հյուսիսային կիսագնդում առաջացել է խոշոր տարակազմ գերմայրցամաք՝ Լավրասիան: Հարավային կիսագնդում գոյություն է ունեցել խոշոր մայր ցամաք Գոնդվանան:

Մեզոգոյում և կայնոգոյում Ե-ի տեկտ. կառուցվածքը խիստ փոփոխվել է: Ե-ի գլխավոր տարրերի՝ հին պլատֆորմների ու շարժուն գոտիների փոխարեն աստիճանաբար սկսում են ձևավորվել մայր ցամաքները (բաղկացած հին ու երիտասարդ պլատֆորմներից, հետերկրասինկլինալային ծալքավոր մարզերից) և օվկիանոսային իջվածքները: Լայն զարգացում են ստանում երկրակեղևի հորիզոնական ընդարձակման գործընթացները՝ սպրեդինգը օվկիանոսներում և ռիֆտագոյացումը մայր ցամաքներում: Ե-ի մեզոկայնոգոյան պատմության կարևորագույն երկրբ. գործընթաց է հանդիսանում երիտասարդ օվկիանոսների իջվածքների ձևավորումը (Հնդկական, Ատլանտյան, Արկտիկական), որը հանգեցնում է պալեոգոյան գերմայրցամաքներ Լավրասիայի ու Գոնդվանայի տրոհմանը: Այն սկսվել է ներմայրցամաքային ռիֆտային համակարգերի գոյացմամբ, որոնցում տեղի է ունեցել մայրցամաքային կեղևի ձգում, բարակում՝ ընդհուպ մինչև որոշ մարզերում դրա լրիվ խզումը: Հետագայում այդտեղ տեղի է ունեցել սալերի հեռաշարժ, ընդարձակում, նոր օվկիանոսային կեղևի առաջացում, սպրեդինգ և այնուհետև՝ միջինօվկիանոսային ռիֆտային գոտիների ձևավորում: Մեզոգոյում և կայնոգոյում շարունակվել է Միջերկրածովյան և Խաղաղօվկիանոսյան շարժուն գոտիների զարգացումը, դրանցում ալպյան ծալքավորության արտահայտությունը և ծալքավոր մարզերի ձևավորումը: Խաղաղօվկիանոսյան գոտու և Ինդոնեզական մարզի երկրասինկլինալի ակտիվությունը պահպանած հատվածները օվկիանոսի հատակից անջատվում են խորջրյա փողրակներով, որտեղ, ըստ քարոլորտի սալերի կոնցեպցիայի, տեղի է ունենում օվկիանոսային սալի սուբդուկցիա, կեղևի հորիզոնական կրճատում և կլանում, որը լրիվ հավասարակշռում է կեղևի ընդարձակումը սպրեդինգի զոնաներում, տե՛ս Глубоководные желоба, Срединг, Субдукция, Срединно-океанические хребты:

**3-45. ЗЕМНАЯ КОРА – ԵՐԿՐԱԿԵՂԵՎ, EARTH'S CRUST**, երկրի վերին պինդ թաղանթ, որը ներքևից սահմանափակված է Մոհորովիչիչի մակերևույթով: Ե-ի կառուցվածքի, կազմի և մյուս բնութագրերի ժամանակակից պատկերացումների հիմքում ընկած են երկրֆ. տվյալները առածական ալիքների (հիմնականում երկայնական, Vp) տարածման արագությունների մասին, որոնք Մոհորովիչիչի մակերևույթում ցատկաձև մեծանում են 7.5-7.8-ից մինչև 8.1-8.2 կմ/վրկ: Ե-ի համար բնորոշ է ուղղաձիգ և հորիզոնական անհամասեռությունը: Ե-ի զգալի մասը գտնվում է հավասարակշիռ վիճակում (տե՛ս Изостазия), որը խախտվելու դեպքում արագ վերականգնվում է՝ շնորհիվ ասթենոսֆերայի առկայության: Անջատում են Ե-ի երկու գլխ. տեսակներ՝ օվկիանոսային և մայրցամաքային, որոնք միմյանցից տարբերվում են կազմով, կազմվածքով, հաստությամբ և այլ հատկանիշներով: Մայրցամաքային Ե-ի հաստությունը փոփոխվում է 25-45 կմ-ից (պլատֆորմներ-

րում) մինչև 45-75 կմ (լեռնագոյացման մարզերում): Դրա կազմվածքում առանձնացնում են նստվածքային (Վր մինչև 4.5 կմ/վրկ), «գրանիտային» (գրանիտափոխակերպային, Վր 5.1-6.4 կմ/վրկ) և «բազալտային» (Վր 6.1-7.4 կմ/վրկ) շերտեր: Նստվածքային շերտի հաստությունը հասնում է 20 կմ, այն չունի համատարած տարածում: «Գրանիտային» և «բազալտային» շերտերի անվանումները պայմանական են, դրանք բաժանվում են Կոնրադի սահմանով (Վր 6.2 կմ/վրկ), սակայն հետագա (գլխ. գերխոր հորատման) տվյալները ցույց են տալիս այդ սահմանի որոշ չափով կասկածելի լինելը: «Գրանիտային» շերտի խտությունը 2.6-2.7 տ/մ<sup>3</sup> է, դրա ելքերը վահաններում բաղկացած են ոչ միայն գրանիտային կազմի ապարներից, այլև՝ գնեյսներից և այլ փոխակերպային գոյացություններից: «Բազալտային» շերտը մայր ցամաքներում անմիջական ուսումնասիրման ենթակա չէ, այն կազմված է ինչպես հիմքային կազմի մագմայական, այնպես էլ բարձր աստիճանի փոխակերպված փոխակերպային (գրանուլիթային) ապարներից, միջին խտությունը 2.7-3.0 տ/մ<sup>3</sup> է: Օվկիանոսային կեղևը մայրցամաքայինից տարբերվում է «գրանիտային» շերտի բացակայությամբ, փոքր հաստությամբ (2-10 կմ), ավելի երիտասարդ հասակով (յուրա, կավիճ, կայնոզոյ), տարածական ավելի մեծ համասեռությամբ: Այն բաղկացած է երեք շերտից: Առաջին՝ նստվածքային շերտի հաստությունը մինչև 2 կմ է, Վր՝ 1.6-5.4 կմ/վրկ, երկրորդ շերտի հաստությունը 1.2-1.8 կմ է, կազմված է գլխ. ուժեղ ճեղքավորված և բրեկչիացված բազալտից: Երրորդ շերտը, ըստ հետազոտությունների մեծ մասի, բաղկացած է գաբրոիդային կազմի ապարներից, հաստությունը 2-5 կմ է, Վր՝ 6.5-7.7 կմ/վրկ: Ե-ի, բացի նշված երկու գլխ. տեսակներից, առանձնացնում են նաև անցողիկ տեսակի կեղև՝ ենթամայրցամաքային (կղզեաղեղներում) և ենթաօվկիանոսային (մայրցամաքային ծայրամասերում):

Ե-ի հնագույն ապարների հասակը 4.0-4.1 մլրդ. տարի է: Առաջին 2 մլրդ. տարիների ընթացքում, ըստ երևույթին, ձևավորվել է ժամանակակից Ե-ի մոտ 50%-ը (ըստ որոշ տվյալների՝ 70-80%-ը), հաջորդ 2 մլրդ. տարիներին՝ 40%-ը, վերջին 500 մլն. տարիներին՝ 10%-ը: Արխեյում և վաղ պրոտերոզոյում Ե-ի ձևավորման և տեղաշարժման բնույթի վերաբերյալ կարծիքները տարբեր են: Որոշ գիտնականներ գտնում են, որ Ե-ի ձևավորումը տեղի է ունեցել խոշորամասշտաբ հորիզոնական տեղաշարժերի բացակայության պայմաններում, երբ ռիֆտային կամաչքարային գոտիների զարգացումը զուգակցվել է գրանիտազենյալային գմբեթների առաջացմանը: Այլ գիտնականներ գտնում են, որ սկսած արխեյից՝ գործել է սալերի տեկտոնիկայի սաղմնային ձևը, իսկ գրանիտակերպերը ձևավորվել են սուբդուկցիայի զոնաների վրա, չնայած որ դեռևս չեն եղել մայրցամաքային կեղևի խոշոր հորիզոնական տեղաշարժեր: Բեկումնային պահ Ե-ի զարգացման ընթացքում տեղի է ունեցել ուշ մինչքեմբրիում, երբ հասուն մայրցամաքային կեղևի խոշոր սալերի առկայության պայմաններում հնարավոր են դարձել խոշոր հորիզոնական տեղափոխությունները, որոնք ուղեկցվել են նոր առաջացած քարոլորտի սուբդուկցիայով և օբդուկցիայով: Այդ ժամանակից սկսած Ե-ի առաջացումն ու զարգացումը ընթացել են սալերի տեկտոնիկայի մեխանիզմով պայմանավորված երկրադինամիկական հանգամանքներում:

**3-46. ЗЕМНОВОДНЫЕ, АМФИБИИ (Amphibia) – ԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐ, ԱՄՖԻԲԻԱՆԵՐ, AMPHIBIANS**, ողնաշարավոր կենդանիների դաս, մոտ 1800 տեսակ: Հարմարված են բնակվելու ինչպես ջրում, այնպես էլ՝ ցամաքում, թրթուրը շնչում է խռիկներով, հասուն ձևերը՝ գլխ. թոքերով, մարմնի ջերմաստիճանը անկայուն է, ձկնկիթը դնում են ջրում, բնակվում են քաղցրահամ ջրերում: Ե-ին են պատկանում սալամանդրները, տրիտոնները, գորտերը և այլն:



**3-47. ЗЕМНОЙ МАГНЕТИЗМ**, տե՛ս Геомагнетизм:

**3-48. ЗЕМНЫЕ ОБОЛОЧКИ – ԵՐԿՐԱՊՈՍՅԱՆՆԵՐ, ԵՐԿՐԱԹԱՂԱՆԹՆԵՐ**, տե՛ս Геосферы, Земля:

**3-49. ЗЕМНЫЕ ТОКИ, ТЕЛЛУРИЧЕСКИЕ ТОКИ – ԵՐԿՐԱՅԻՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ, ՏԵԼՈՒՐԱՅԻՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ, EARTH CURRENTS, TELLURIC CURRENTS**, երկրակեղևում ընթացող էլեկտրական հոսանքներ: Դրանց գոյությունը կապված է գլխ. երկրի մագնիսական դաշտի փոփոխականության (վարիացիայի), մթնոլորտի էլեկտրական դաշտի, ապարներում էլեկտրաքիմ. և ջերմաէլեկտրական գործընթացների հետ:

**3-50. ЗЕРКАЛО ВОД – ՋՐԵՐԻ ՀԱՅԵԼԻ, WATER PLANE**, գետերի, լճերի և այլ ջրավազանների ջրային մակերևույթ կամ ջրատար շերտում ստր. ոչ ճնշումային ջրերի սահման (մակերևույթ):

**3-51. ЗЕРКАЛО ГРУНТОВЫХ ВОД, ПОВЕРХНОСТЬ ГРУНТОВЫХ ВОД – ԳՐՈՒՆՏԱՋՐԵՐԻ ՀԱՅԵԼԻ, ԳՐՈՒՆՏԱՋՐԵՐԻ ՍԱՎԵՐԵՎՈՒՅԹ, GROUND WATER TABLE**, գրունտային ջրերի վերին սահման (մակերևույթ), որի վրա ճնշումը հավասար է մթնոլորտայինին: Թեքված է ջրի շարժման ուղղությամբ:

**3-52. ЗЕРКАЛО СКОЛЬЖЕНИЯ, ПОВЕРХНОСТЬ СКОЛЬЖЕНИЯ – ՍԱՅՔԻ ՀԱՅԵԼԻ, ՍԱՅՔԻ ՍԱՎԵՐԵՎՈՒՅԹ, GLIDE PLANE, SLICKENSIDE**, ապարների հարթ ողորկված և ակոսավորված մակերևույթ, որը առաջանում է տեկտ. բլոկների շփման դեպքում, երբ դրանք խզվածքային խախտման ժամանակ սահում են բեկվածքի հարթության երկայնքով:

**3-53. ЗЕРНОВОЙ СОСТАВ ГОРНЫХ ПОРОД**, տե՛ս Гранулометрический состав горных пород:

**3-54. ЗМЕЕВИК – ՕՉԱՔԱՐ**, տե՛ս Серпентин:

**3-55. ЗНАКИ ВОЛОЧЕНИЯ – ՔԱՇՎՈՏՄԱՆ ՆՇԱՆՆԵՐ, DRAG MARKS**, ջրի միջոցով տեղափոխվող առարկաների կողմից ջրավազանի տղմոտ հատակի մակերևույթում առաջացած ակոսներ ու քերվածքներ:

**3-56. ЗНАКИ РЯБИ – ԾՓԱՆՔԻ ՆՇԱՆՆԵՐ, RIPPLE MARKS**, ուղիղ կամ կորացած, շատ թե քիչ զուգահեռ թմբիկների շարքեր, որոնք առաջանում են փուխր ավազային կամ ալևրիտային նստվածքների մակերևույթում՝ քամու, ջրային հոսանքների կամ ալիքների միջոցով: Բրածո վիճակում հանդիպում են ապարների շերտերի ստորին մակերևույթում՝ առավելապես հակադրոշմահետքերի տեսքով: Ունեն կարևոր նշանակություն հնաշխ. պայմանների՝ հոսանքի ուղղության ու արագության վերականգնման համար:

**3-57. ЗНАКИ РЯБИ ВОЛНЕНИЯ – ԱԼԻՔԱՅԻՆ ԾՓԱՆՔԻ ՆՇԱՆՆԵՐ, CORRUGATED RIPPLE MARKS**, 1) առաջանում են ծովերի ու լճերի ալեբախության զոնայում՝ կապված ջրի շարժման հետ (հոմ. ալեբախման նշաններ): 2) Ալեկոծության նշաններ՝ առաջանում են ծովերի ու լճերի ծանծաղուտների ավելի խոր մասերում՝ ջրի տատանողական շարժումների հետևանքով:

**3-58. ЗНАКИ РЯБИ ТЕЧЕНИЯ – ՀՈՍԱՆՔԻ ԾՓԱՆՔԻ ՆՇԱՆՆԵՐ, CURRENT RIPPLE-MARKS, CURRENT RIPPLES, CURRENT MARKS**, անհամաչափ նշաններ՝ սուր կամ կլորացված կատարներով, որոնք բաժանում են կլորավուն ցածրացումները: Առաջանում են օդի կամ ջրի հոսանքով, որը ավազանի մակերևույթի վրա շարժվում է ինչ-որ չափով կայուն մեկ ուղղությամբ: Ծփանքը դանդաղ տեղափոխվում է հոսանքի ուղղությամբ: Ցածրություններում կուտակվում է կոպտահատիկային ավազը, իսկ կատարներում՝ նրբահատիկայինը:

- 3-59. ЗНАКИ РЯБИ ЭЛОВЫЕ – ՅՈՒՍԱՅԻՆ ԾՓԱՆՔԻ ՆՇԱՆՆԵՐ, EOLIAN RIPPLE MARKS**, ծփանքի անհամաչափ նշաններ՝ հողմահակառակ զառիթափ լանջով: Թմբիկները սովորաբար աղեղնածև կորացած են, հատակագծում տեղաբաշխված են մոտավորապես զուգահեռ: Յանդիպում են նաև խաչածևկող համակարգեր, որոնք գոյանում են քանու ուղղության փոփոխության հետևանքով: Առաջանում են անապատներում կամ ջրավազանների մերձափում՝ ավազային նստվածքների բաց մակերևույթի վրա:
- 3-60. ЗОЛА (ИСКОПАЕМЫХ УГЛЕЙ) – ՍՈՒՆԻՐ (ԲՐԱԾՈ ԱԾՈՒԽՆԵՐԻ), ASH OF FOSSIL COALS**, մոտ 800°C ջերմանստիճանում օդի լրիվ մուտքի դեպքում ածխայրման մնացորդ: Մ-ի կազմի մեջ մտնում են տարբեր հարաբերություններով  $\text{SiO}_2$ ,  $\text{Al}_2\text{O}_3$ ,  $\text{Fe}_2\text{O}_3$ ,  $\text{CaO}$ ,  $\text{MgO}$ ,  $\text{Na}_2\text{O}$ ,  $\text{K}_2\text{O}$ ,  $\text{SO}_3$ , ինչպես նաև ածխում պարունակվող միկրոտարրեր:
- 3-61. ЗОЛОТО, Au** (լատ. Aurum) – **ՈՍԿԻ, GOLD**, Սենդելեկի պարբերական համակարգի I խմբի տարր, վառ դեղին, փափուկ, ծանր մետաղ է: Բնության մեջ հանդիպում է բնածին ոսկու տեսքով, ինչպես նաև պինդ լուծույթների ձևով՝ արծաթի, պղնձի, բիսմութի, իրիդիումի և պլատինի հետ:
- 3-62. ЗОЛОТО САМОРОДНОЕ – ԲՆԱԾԻՆ ՈՍԿԻ, NATIVE GOLD**, միներալ բնածին տարրերի դասից, արծաթի (մինչև 43%) բնական պինդ լուծույթ  $\text{Au}=\text{Ag}$ : Առաջացնում է վառ դեղին, իսկ խառնուրդների դեպքում՝ բաց կարմրադեղին, կանաչավուն հատիկներ, թեփուկներ, դեմդրիդներ, հոծ սպունգային զանգվածներ: Յանդիպում է արմատական ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվելում և ցրոններում: Ոսկու գլխավոր հանքանյութն է:
- 3-63. ЗОЛОТО СВОБОДНОЕ – ԱԶԱՏ ՈՍԿԻ, FREE GOLD**, քիմիապես կապված չէ այլ տարրերի հետ (բացի արծաթից) և չի հանդիսանում ցրված ներփակումեր այլ միներալներում:
- 3-64. ЗОЛОТО ШЛИХОВОЕ – ՍՂԿՎԱԾՔԱՅԻՆ (ՍՂԿՎՅԱՆՔԱՅԻՆ) ՈՍԿԻ, STREAM GOLD**, ցրոններից կորզված բնածին ոսկի:
- 3-65. ЗОЛОТОДОБЫВАЮЩАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ – ՈՍԿՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՅԱՆՍԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, GOLD-MINING INDUSTRY**, զուևավոր մետաղագործության ենթաճյուղ, որը զբաղվում է հանքանյութերից ու ցրոններից ոսկու արդյունահանմամբ և կորզմամբ:
- 3-66. ЗОЛОТОНОСНЫЙ ПЛАСТ – ՈՍԿԵԲԵՐ ՇԵՐՏ, GOLD-BEARING BED**, փուխր նստվածքների շերտ, որը պարունակում է արդյունաբերական քանակի ոսկի: Ո. շ. սովորաբար տեղադրված է փուխր ալյուվիալ կամ այլ նստվածքների ստորին մասում: Ո. շ. կարող է ունենալ տարբեր կազմ, հաճախ բաղկացած է ճալաքարաավազային կամ տղմաավազային նյութից:
- 3-67. ЗОЛОТЫЕ РУДЫ – ՈՍԿՈՒ ՅԱՆՔԱՔԱՐԵՐ, GOLD ORES**, բնական միներալային գոյացություններ, որոնք պարունակում են ոսկի այնպիսի քանակներով, որի դեպքում ոսկու արդյունաբերական կորզումը տնտեսապես նպատակահարմար է: Բացի բուն Ո. հ-ից, հայտնի են պղնձի, միկելի, կապարի և ցինկի, արծաթի, երկաթի, մանգանի ոսկեբեր հանքանյութեր: Ոսկին գտնվում է գլխ. բնածին տեսքով, հազվադեպ՝ տելուրիդների տեսքով: Տարբերում են ներծին, արտածին և փոխակերպված Ո. հ.: Ոսկու բոլոր ներծին հանքանյութերը ջրաջերմային (հիդրոթերմալ) ծագման են, Au պարունակությունը 2-3-ից մինչև մի քանի հարյուր գ/տ է: Ոսկու արտածին հանքանյութերը ներփակված են ցրոններում, հազվադեպ՝ ոսկեբեր սուլֆիդային հնքվել-երի օքսիդացման զոնայում: Փոխակերպված Ո. հ. կապված են ոսկեբեր խառնաքարերի (կոնգլոմերատների), հազվադեպ՝ կոպճաքարերի (գրավելիթների) հետ:

- 3-68. ЗОЛЬНОСТЬ – ՍՈՆԻՐԱՅՆՈՒԹՅՈՒՆ, ASH CONTENT,** այրվող հանածոների բնութագիր, որը բնորոշվում է դրանց այրումից առաջացած մոխրի քանակությամբ: Մ. վառելիքի այրումից գոյացած չայրվող մնացորդի (մոխրի) զանգվածի և սկզբնական վառելանյութի զանգվածի փոխհարաբերությունն է, նշանակվում է լատ. A տառով (սինվոլով) և արտահայտվում է տոկոսներով: Մ. հաշվարկվում է վառելանյութի չոր կամ բանվորական վիճակի համար:
- 3-69. ЗОНА АКТИВНОГО ВОДООБМЕНА – ԱԿՏԻՎ ՋՐԱՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՉՈՆԱ, ZONE OF ACTIVE WATER-EXCHANGE,** ջրաերկր. կտրվածքի վերին մասը, որը գտնվում է տեղական ողողատարման հիմքից բարձր: Ա. ջ. գ. ընդգրկում է գետնահողային և արտեզյան ջրերի վերին հորիզոնները, որոնք սերտ կապի մեջ են մթնոլորտային և մակերևութային ջրերի հետ: Յոմ. ազատ ջրափոխանակման զոնա:
- 3-70. ЗОНА АЭРАЦИИ – ՕՂԱՅԱԳԵՑՄԱՆ ՉՈՆԱ, ZONE OF AERATION,** երկրակեղևի ամենավերին զոնա՝ երկրի մակերևութի և գետնաջրերի հայելու (հագեցման զոնայի) միջև: Օ. գ-ի ապարների դատարկությունների մեծ մասը զբաղված է օդով և ջրային գոլորշիներով: Այստեղ տարածված են խոնավածուծ, թաղանթային և մազանոթային ջրերը:
- 3-71. ЗОНА ВЫВЕТРИВАНИЯ – ՅՈՂՄԱՅԱՐՄԱՆ ՉՈՆԱ, ZONE OF WEATHERING,** երկրակեղևի վերին զոնա, որի սահմաններում տեղի են ունենում ֆիզ. և քիմ. հողմահարման գործընթացներ: Այստեղ ապարների քայքայումը և նոր միներալների առաջացումը տեղի է ունենում եռաֆազ համակարգի պայմաններում (զազանման, հեղուկ և պինդ): Յ. գ-ի հաստությունը կտրտված ռելիեֆի պայմաններում կարող է հասնել 500 մ-ի, իսկ հարթ տեղանքում չի անցնում մի քանի մ-ից, ընդ որում՝ հողմահարման ակտիվ գործընթացներ դիտվում են ընդամենը մի քանի մ-ի սահմաններում:
- 3-72. ЗОНА ВЫЩЕЛАЧИВАНИЯ – ՏԱՐՎԱԼՈՒԹՄԱՆ (ԼՈՒԾԱԶԱՏՄԱՆ) ՉՈՆԱ, ZONE OF LEACHING,** մետաղական հնքվ-երի մակերևութային մաս, որը ստր. ջրերի կողմից լուծագերծման հետևանքով գրեթե զուրկ է հանքանյութերից: Տ. գ. առավել բնորոշ է ներփակումային (պորֆիրային) տիպի պղինձ-հրաքարային հնքվ-երին:
- 3-73. ЗОНА ГИДРОДИНАМИЧЕСКАЯ – ՋՐԱԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ ՉՈՆԱ, HYDRODYNAMIC ZONE,** ջրաերկր. կտրվածքի մաս, որտեղ տարածված ստր. ջրերն ունեն սնման, շարժման և բեռնաթափման միանման պայմաններ:
- 3-74. ЗОНА ГИДРОХИМИЧЕСКАЯ – ՋՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՉՈՆԱ, HYDROCHEMICAL ZONE,** ջրաերկր. կտրվածքի մաս, որի սահմաններում ստր. ջրերի քիմ. կազմի ցուցանիշները (կամ մի մասը) նման են կամ կրում են աննշան փոփոխություններ:
- 3-75. ЗОНА ГИПЕРГЕНЕЗА – ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ (ՅԻՊԵՐԳԵՆԵՏԻ) ՉՈՆԱ, ZONE OF HYPERGENESIS,** ստր. ջրերի տեղաշարժի զոնա: Վ. գ. իր հերթին ստորաբաժանվում է ակտիվ և դանդաղ ջրափոխանակման զոնաների: Ակտիվ ջրափոխանակման զոնան գտնվում է տեղական ողողատարման հիմքից (խոշոր գետահուններից) վերև, որտեղ ստր. հոսքը սերտ կապի մեջ է մակերևութային ջրերի հետ, իսկ ստր. ջրերի շարժումն (դինամիկ) պաշարները գերազանցում են կայուն պաշարներին: Այդ զոնայի հաստությունը պլատֆորմներում հասնում է 200-300 մ-ի, լեռնային մարզերում՝ 0.5-1.0 կմ-ի: Դանդաղ ջրափոխանակումը գտնվում է ողողատարման տեղական հիմքից ներքև, իսկ ստորին սահմանը պայմանականորեն ընդունվում է ծովային իջվածքը: Չոնայի հաստությունը պլատֆորմներում հասնում է 500-600 մ-ի, ծալքավոր մարզերում՝ 1.0-2.0 կմ-ի, հիմնականում ընդգրկելով խոր տեղադրման արտեզյան ավազանները, որոնց պաշարները գերազանցում են շարժուն պաշարներին:

- 3-76. ЗОНА ДРОБЛЕНИЯ – ՋԱՐԴՄԱՆ (ՓՇՐՄԱՆ) ՉՈՆԱ, ZONE OF CRUSH,** երկրակեղևի գծային ձգված տեղամաս (անկախ չափերից), որի սահմաններում ապարները ջարդված (փշրված) են բազմաթիվ տարբեր ուղղության անկանոն ճեղքերով, որոնք սովորաբար լցված են երակներով: Երակների հետ հաճախ կապված են տարբեր հանքայնացումներ:
- 3-77. ЗОНА ИНФИЛЬТРАЦИИ – ՆԵՐԾՕԱՆՑՄԱՆ ՉՈՆԱ, ZONE OF INFILTRATION,** երկրակեղևում վերին մաս, որտեղ ապարներում տեղի է ունենում մթնոլորտային ջրերի ներծծանցում: Ն. գ. համընկնում է օդահագեցման զոնայի հետ:
- 3-78. ЗОНА КАПИЛЛЯРНОГО ПОДНЯТИЯ – ՄԱՉԱՆՈՒԱՅԻՆ ԲԱՐՉՐԱՑՄԱՆ ՉՈՆԱ, ZONE OF CAPILLARY RISE,** օդահագեցման զոնայի ստորին մաս, որտեղ մազանոթային ծակոտիներն ու ճեղքերը լցված են ջրով: Վերջինը պահվում է մազանոթային ձգողական ուժերի շնորհիվ:
- 3-79. ЗОНА КАТАГЕНЕЗА – ԿԱՏԱԳԵՆԵԶԻ ՉՈՆԱ, ZONE OF KATAGENESIS,** խոր տեղադրման հարաբերականորեն անշարժ ջրերի զոնա, որտեղ ստր. հոսքը դիտվում է երկրբ. ժամանակահատվածում:
- 3-80. ЗОНА ЛИТОРАЛЬНАЯ,** տե՛ս Литораль:
- 3-81. ЗОНА МАЛЫХ СКОРОСТЕЙ – ՓՈՔՐ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉՈՆԱ, LOW-VELOCITY ZONE,** վերին փուխր շերտ, որը բնորոշվում է երկրաշարժական ալիքների արագությունների փոքր մեծություններով (80-100-ից մինչև 1200-2000 մ/վրկ): Բնորոշ է չոր ապարներին: Փ. ա. գ-ի հաստությունը փոփոխվում է մեծ սահմաններում (1-2-ից մինչև 80-100 մ), հաճախ այն կազմում է 8-15 մ:
- 3-82. ЗОНА НАРУШЕНИЙ – ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՉՈՆԱ, ZONE OF DISTURBANCE, ZONE OF TROUBLE,** երկրակեղևի գծային ձգված տեղամասերի ընդհանուր անվանում, որտեղ կենտրոնացված են զգալի թվով խզվածքային տեկտ. խախտումներ: Ազատ օգտագործման տերմին է:
- 3-83. ЗОНА НАСЫЩЕНИЯ – ՉԱԳԵՑՄԱՆ ՉՈՆԱ, ZONE OF SATURATION,** երկրակեղևի ուղղաձիգ կտրվածքում զոնա, որտեղ ապարները հագեցված են ձգողական ջրով:
- 3-84. ЗОНА ОБРУШЕНИЯ – ՓԼՈՒՉՄԱՆ ՉՈՆԱ, ZONE OF CAVING,** բնական թեքություններում և լեռնային փորվածքներում ապարների տեղաշարժի տեղամաս, որտեղ դրանք ենթարկվել են փլուզման:
- 3-85. ЗОНА ОКИСЛЕНИЯ – ՕՔՍԻԴԱՑՄԱՆ ՉՈՆԱ, ZONE OF OXIDATION,** երկրի մակերևույթի մոտ օդահագեցման զոնայում տեղադրված սուլֆիդային հնքվ-ի մաս, որտեղ օքսիդացման գործընթացի համար պայմանները նպաստավոր են: Օ. գ-յում առաջնային սուլֆիդային, արսենիդային և այլ միներալները մասամբ կամ ամբողջապես վերածվում են օքսիդային (ջրային և անջուր) միացությունների:
- 3-86. ЗОНА ОСАДКОНАКОПЛЕНИЯ – ՆՍՏՎԱԾՔԱՎՈՒՏԱՎՄԱՆ ՉՈՆԱ, ZONE OF SEDIMENTATION,** ընդգրկում է Համաշխարհային օվկիանոսի հատակը և ցամաքի մակերևույթը: Նստվածքակուտակումը տեղի է ունենում կա՛մ օվկիանոսների ու ծովերի հատակում, կա՛մ ցամաքի ներքին իջվածքներում և ցածրամասերում:
- 3-87. ЗОНА ОСАДКООБРАЗОВАНИЯ – ՆՍՏՎԱԾՔԱՍՈՒՋԱՑՄԱՆ ՉՈՆԱ, ZONE OF SEDIMENTATION,** երկրի մակերևութային զոնա, որտեղ տեղի են ունենում նստվածքների առաջացման գործընթացներ, այսինքն՝ առաջնային ապարների քայքայում, քայքայված նյութի տեղափոխում և նստվածքների կուտակում: Ն. գ. ընդգրկում է մթնոլորտի ցածր մասերը, ամբողջ ջրոլորտը և քարոլորտի վերին մասը:
- 3-88. ЗОНА ПЕРВИЧНЫХ СУЛЬФИДНЫХ РУД – ԱՌԱՋՆԱՅԻՆ ՍՈՒԼՖԻԴԱՅԻՆ ՀԱՆՔԱՆՅՈՒԹԵՐԻ ՉՈՆԱ, ZONE OF PRIMARY SULPHIDE ORES,** տեղաբաշխված է երկ-

րորդային սուլֆիդային հարստացման զոնայից ներքև՝ անշարժ ջրերի զոնայում, որտեղ գետնաջրերը հավասարակշռության մեջ են գտնվում մետաղական հնքվե-րի առաջնային միներալների հետ, և որոնց առաջնային կազմը պահպանվել է:

**3-89. ЗОНА ПЕРЕХОДНАЯ (ОТ МАТЕРИКА К ОКЕАНУ) – ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՉՈՆԱ (ՄԱՅՐ ՑԱՄԱՔԻՑ ԴԵՊԻ ՕՎԿԻԱՆՈՍ), TRANSITION ZONE,** Երկրի ռելիեֆի և երկրբ. կառուցվածքի գլխավոր տարրերից մեկն է, տեղադրված է մայր ցամաքի և օվկիանոսի միջև: Կազմված է ծայրամասային ծովերի գոգավորություններից, կղզեաղեղների լեռնոտ արշիպելագներից և դրանց՝ օվկիանոսի կողմից եզերապատող խորջրյա փողրակներից: Բնորոշվում է ռելիեֆի առավելագույն հակադրականությամբ, երկրակեղևի՝ մայր ցամաքներից դեպի օվկիանոսը անցումային տեսակով, ուղղաձիգ տեսկտ. շարժումների մեծ արագություններով ու կտրուկ տարբերակմամբ, խորակներում երկրաշարժականությամբ և հրաբխականության հզոր արտահայտմամբ: Այդ բոլորը հնարավորություն են տալիս Ա. գ-ները դիտարկել որպես ժամանակակից երկրասինկլինալային մարզեր: Առավել տիպային տեսքով ներկայացված է Ասիայի արևելյան ափերի մոտ:

**3-90. ЗОНА ПОДПОРА ПОДЗЕМНЫХ ВОД – ՍՈՌԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՄՅԱՐԻ ՉՈՆԱ, ZONE OF UNDERGROUND BACKWATER,** զոնա, որտեղ բնական կամ արհեստական դիմհարի պատճառով տեղի է ունենում ստր. ջրերի մակարդակի բարձրացում:

**3-91. ЗОНА ПРОМЕРЗАНИЯ – ՍԱՆՑՄԱՆ ՉՈՆԱ, ZONE OF FREEZING,** երկրակեղևի վերին զոնա, որի սահմաններում ստր. ջրերը ձմռանը վերածվում են սառույցի:

**3-92. ЗОНА РАЗЛОМОВ ОКЕАНИЧЕСКАЯ – ՕՎԿԻԱՆՈՍԱՅԻՆ ԲԵԿՎԱԾՔՆԵՐԻ ՉՈՆԱ, OCEANIC ZONE OF FRACTURES,** օվկիանոսների հատակի խոշոր տեսկտ. կառուցվածք, իրենից ներկայացնում է երկրակեղևի համեմատաբար նեղ (տասնյակ ու հարյուրավոր կմ), երկար (հարյուրավոր և հազարավոր կմ) խզվածքային խախտումների համակարգ, որը բնորոշվում է ավելի կտրտված (քան հատակի հարակից մասերը) ռելիեֆով, զառիթափ սանդղակներով, նեղ վիհերով (փողրակներով), անհամաչափ բեկորային ու հրաբխային լեռնաշղթաներով, որոնք կողմնորոշված են խախտման երկայնքով: Առավել խոշոր Օ. բ. գ-ները խաղաղ օվկիանոսի հս-արլ. մասում և միջին օվկիանոսային լեռնաշղթաներում են:

**3-93. ЗОНА СМЯТИЯ – ՃՍԼՍԱՆ ՉՈՆԱ, COMPRESSION ZONE,** բարդ ծալքավորված և դիմամափոխակերպային ու հպումամափոխակերպային գործընթացներով թերթատված ապարների երկար (տասնյակ ու հարյուրավոր կմ) նեղ գոտի, որը տարածված է խորքային բեկվածքների զոնաներում՝ տարբեր երկրբ. զարգացում ունեցող բլոկների կցվածքում:

**3-94. ЗОНА ФАЦИАЛЬНАЯ – ՖԱՑԻԱԼ ՉՈՆԱ, FACIAL ZONE,** տերմինի տակ հասկացվում են ըստ խորության միմյանց հետ կապված ֆացիաների խմբերի տարածման զոնաները (շելֆի զոնա, բաթիալ զոնա, լիթորալ զոնա և այլն) կամ այլ հատկանիշներով միավորված ֆացիաների խումբ, որը բավականին որոշակի տարբերվում է հարակիցներից:

**3-95. ЗОНА ЦЕМЕНТАЦИИ – ՑԵՄԵՆՏԱՑՄԱՆ ՉՈՆԱ, ZONE OF CEMENTATION,** զոնա, որի սահմաններում ապարների դատարկություններում կուտակվում են շաղախանյութեր: Դա կարող է կատարվել՝ 1) բնական ճանապարհով, երբ հողմահարման նյութերում կամ սուլֆիդային հնքվե-րի վերին մասերում ընթացող օքսիդացման գործընթացների հետևանքով առաջացող երկրորդային սուլֆիդները (զլխ. պղնձի սուլֆիդներ՝ քալկոզին, կովելին, բորնիտ) լցնում, շաղախակալում են ապարների դատարկությունները: 2) Արհեստական ճանապարհով, երբ ապարների մեջ հորատանցքերի միջոցով ցեմենտ է ներմղվում:

- 3-96. ЗОНАЛЬНОСТЬ МЕСТОРОЖДЕНИЙ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ – ՕԳՏԱՎԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԶՈՆԱՅԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ (ԳՈՏԻԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ), ZONING OF MINERAL DEPOSITS, MINERAL DEPOSIT ZONALITY,** որոշվում է տարածության մեջ օգտ. հնժ-ների միներալային կազմի հերթափոխմամբ, որը հանգեցնում է այս կամ այն բաղադրամասի գերակշռությամբ զոնաների առաջացմանը: Տարբերում են օգտ. հնժ-ների հնքվ-երի առաջնային զոնայականություն, որը պայմանավորված է օգտ. հնժ-ների հնքվ-երի ձևավորման գործընթացներով, և երկրորդային, որը գոյանում է երկրի մակերևույթին մոտ՝ միներալային հունքի օքսիդացման և ձևափոխության հետևանքով:
- 3-97. ЗОНАЛЬНОСТЬ МЕТАСОМАТИЧЕСКАЯ – ՄԵՏԱՍՈՄԱՏԻԿԱՎԱՆ (ՄԻՆԵՐԱԼՍԵՂԱՎԱՄԱՆ) ԶՈՆԱՅԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, METASOMATIC ZONING,** մետասոմատիկական (միներալատեղակալման) գործընթացում տարբեր միներալային կազմի զոնաների առաջացում, որոնցից յուրաքանչյուրում մեկ բաղադրամասը չէզոք է, իսկ մյուսները լրիվ շարժունակ են, ըստ որում՝ յուրաքանչյուր բաղադրամաս անցնում է լրիվ շարժունակ վիճակի՝ մետասոմատիկական փոխարինման գործընթացի որոշակի փուլում:
- 3-98. ЗОНАЛЬНОСТЬ ОРУДЕНЕНИЯ ВЕРТИКАЛЬНАЯ – ՀԱՆՔԱՅՆԱՑՄԱՆ ՈՐՂՂԱՉԻԳ ԶՈՆԱՅԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, VERTICAL ZONALITY OF MINERALIZATION,** հանքանյութի միներալային կամ քիմ. կազմի օրինաչափ փոփոխությունն ըստ ուղղաձիգի՝ անկախ արտահայտման մասշտաբից: Առավել բնորոշ է առանձին հանքամարմիններին և հնքվ-երին:
- 3-99. ЗОНАЛЬНОСТЬ ОРУДЕНЕНИЯ ГОРИЗОНТАЛЬНАЯ – ՀԱՆՔԱՅՆԱՑՄԱՆ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԶՈՆԱՅԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, HORIZONTAL ZONALITY OF MINERALIZATION,** հանքանյութի միներալային կամ քիմ. կազմի օրինաչափ փոփոխությունը հատակագծում՝ անկախ արտահայտման մասշտաբից:
- 3-100. ЗОНАЛЬНОСТЬ ОРУДЕНЕНИЯ ДИАГЕНЕТИЧЕСКАЯ – ՀԱՆՔԱՅՆԱՑՄԱՆ ԴԻԱԳԵՆԵՏԻԿԱՎԱՆ (ԱՊԱՐԱԳՈՅՑՄԱՆ) ԶՈՆԱՅԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, DIAGENETIC ZONALITY OF MINERALIZATION,** նստվածքային հանքագոյացման միներալային տեսակների զոնայական տեղաբաշխում, որը ձևավորվում է դիագենեզի (ապարագոյացման) փուլում: Բորոշ է Fe-ի, Mn-ի, Cu-ի և այլ մետաղների շատ նստվածքային հնքվ-երին:
- 3-101. ЗОНАЛЬНОСТЬ ОРУДЕНЕНИЯ ПУЛЬСАЦИОННАЯ – ՀԱՆՔԱՅՆԱՑՄԱՆ ԲԱՐԱՆՄԱՆ ԶՈՆԱՅԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, PULSATION ZONALITY OF MINERALIZATION,** տարածության մեջ հաջորդաբար առաջացող հանքային ֆորմացիաների օրինաչափ տեղաբաշխում, որը պայմանավորված է մետաղաբեր օջախից ճեղքագոյացման բազմակի վերսկսման դեպքում տարբեր կազմի լուծույթների առանձին չափաբաժիններով (բաբախմամբ) ներթափանցման հետ: Յ. ք. ժամանակի ընթացքում հանքաբեր լուծույթների տարբերակման արգասիք է, որը և պայմանավորում է հանքագոյացման փուլականությունը: Միներալացման ավելի ուշ փուլի արդյունքները, որպես կանոն, տեղաբաշխվում են արտաքին զոնաներում:
- 3-102. ЗОНАЛЬНОСТЬ ОРУДЕНЕНИЯ РЕГИОНАЛЬНАЯ – ՀԱՆՔԱՅՆԱՑՄԱՆ ՌԵԳԻՈՆԱԿԱՆ (ԵՐԿՐԱՇՐՁԱՆԱՅԻՆ) ԶՈՆԱՅԱՎԱՅՈՒԹՅՈՒՆ, REGIONAL ZONALITY OF MINERALIZATION,** տարբեր բաղադրության ներծին հնքվ-երի օրինաչափ հերթափոխումը մոլորակային և շատ խոշոր հանքաբեր մակերեսների սահմաններում: Յ. ռ. գ. արտահայտվում է տարահասակ մագմայական ապարների և դրանց հետ

կապված ներծին հնքվ-երի օրինաչափ տեղաբաշխմամբ՝ խիստ որոշակի տեկտ. զոնաներում (ծալքավոր մարզեր, պլատֆորմներ և այլն):

- 3-103. ЗОНАЛЬНОСТЬ ОРУДЕНЕНИЯ ТЕМПЕРАТУРНАЯ – ՀԱՆՔԱՅՆԱՑՄԱՆ ՋԵՐ-ՄԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ՉՈՆԱՅԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, TEMPERATURE ZONALITY OF MINERALIZATION**, ներժայթքվածքի (ինտրուզիվ) երկրաջերմային դաշտում տեղաբաշխված հանքամարմնի միներալային կազմի օրինաչափ փոփոխություն՝ կապված ներժայթքվածքից հեռանալիս միներալային զուգորդությունների առաջացման ջերմաստիճանի հաջորդական նվազման հետ: Բնորոշ է հնքվ-երին և հանքային դաշտերին:
- 3-104. ЗОНД КАРОТАЖНЫЙ – ԿԱՐՈՏԱԺԻ ՉՈՆԴ (ՉՆՆԱՉՈՂ, ՄԽԱՆ), SONDÉ**, չափիչ սարք, որն օգտագործվում է հորատանցքերի երկրֆ. ուսումնասիրության ժամանակ:
- 3-105. ЗОНДИРОВАНИЕ** (ֆրանս. sonder – հետազոտել, եզրակացնել) – **ՉՈՆԴՈՒՄ (ԽՈՐԱՉՆՆՈՒՄ, ՉՈՂԱՐԿՈՒՄ), SOUNDING**, 1) փուխր ապարների առածական հատկությունների ուսումնասիրություն՝ ապարի մեջ ներդրվող զոնդի օգնությամբ, 2) գլխ. արհեստականորեն հարուցվող երկրֆ. դաշտերի հետազոտման երկրֆ. մեթոդներ՝ երկրի ընդերքի ուղղածիզ հատույթներ ստանալու նպատակով: Չ. կատարվում է երկրի մակերևույթից և հորատանցքերում: Չ. լինում է կետային, գծային և տարածքային: Ըստ երկրֆ. դաշտերի բնույթի՝ առանձնացնում են էլեկտրական, էլեկտրամագնիսական և էլեկտրաձայնային Չ. (տե՛ս Сейсмическая разведка): Սովորաբար Չ. անցկացվում է երկրաբանահետախուզական աշխատանքների նախազննական և ռեզիոնալ փուլերում՝ ընդերքի կազմության, երկրֆ., երկրբ. պարամետրերի և ապարների վիճակի ուսումնասիրման համար: Չ-ման արդյունքներն ընկած են տարածքի շրջանացման և ավելի մանրամասն որոնողական աշխատանքների մեթոդիկայի ու պարամետրերի ընտրման հիմքում:
- 3-106. ЗООБЕНТОС** (հուն. zōon – կենդանի և benthos – խորություն) – **ԿԵՆԴԱՆԱԲԵՆԹՈՍ (ԿԵՆԴԱՆԱՀԱՏԱԿԱԲԵՆԱԿ), ZOOBENTHOS**, ջրավազանների հատակում կամ գրունտում բնակվող կենդանիների համախմբություն:
- 3-107. ЗООГЕОГРАФИЯ** (հուն. zōon – կենդանի և աշխարհագրություն) – **ԿԵՆԴԱՆԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ZOOGEOGRAPHY**, կենդանաբանության ֆիզաշխ. բաժին, որն ուսումնասիրում է կենդանիների աշխ. տարածումը (ինչպես այժմ, այնպես էլ անցյալում), այդ տարածումը պայմանավորող ժամանակակից և պատմական գործոններն ու օրինաչափությունները, ինչպես նաև կենդանիների էկոլոգիական խմբավորումների աշխ. տարածումը:
- 3-108. ЗООПЛАНКТОН** (հուն. zōon – կենդանի և պլանկտոն) – **ԿԵՆԴԱՆԱՊԼԱՆԿՏՈՆ, ZOOPLANKTON**, պլանկտոնի կազմի մեջ մտնող կենդանիների համախմբություն:
- 3-109. ЗРЕЛАЯ ДОЛИНА – ՀԱՍՈՒՆ ՀՈՎԻՏ, MATURE VALLEY**, լայն դարավանդացված գետահովիտ՝ մշակված հավասարակշիռ տրամատով (պրոֆիլով):
- 3-110. ЗРЕЛАЯ РЕЧНАЯ СЕТЬ – ՀԱՍՈՒՆ ԳԵՏԱՅԻՆ ՑԱՆՑ, MATURE DRAINAGE**, գետահովիտ, որի բոլոր ջրհոսքերը մշակել են հավասարակշիռ տրամատ (պրոֆիլ):

## И

- И-1. ИГЛОКОЖИЕ** (Echinodermata) – **ՓՇԱՍՈՐԹՆԵՐ, ECHINODERMS**, անողնաշարավոր կենդանիների տիպ, մոտ 5 հազ. տեսակ, բնակվում են ծովերում: Փ-ին են պատկանում ծովաստղերը, ծովոզնիները, ծովաշուշանները, հոլոտուրները: Քենթրիից-այժմ:
- И-2. ИГНИМБРИТ** (լատ. ignis – կրակ և imber – անձրև) – **ԻԳՆԻՍՐԻԻՏ, IGN-IMBRITE, FLOOD TUFF**, հրաբխային բեկորային ապար, որն ունի ինչպես լավայի, այնպես էլ հրաբեկորային գոյացությունների հատկանիշներ: Ունի բեկորային կազմություն, բաղկացած է առավելապես հրաբխային ապակու մանր (մոխրային) մասնիկներից, չեչաքարի (պեմզայի) բեկորներից և բյուրեղներից: Մոխրային մասնիկները միմյանց խիտ կաշեկով միախառնվում են դեռևս հալված վիճակում: Դրանք ձգված ու տափակեցված են մակերևույթին զուգահեռ և առաջացնում են ընդհանուր-գծային կազմվածք: Այդ մոխրային զանգվածում ցրված են միներալների ֆեոքսիդները և չեչաքարերի բեկորները, որոնք վերափոխված են ամուր ապակենման սկավառակների՝ բնորոշ կրականման եզրափակումներով: Ըստ կազմի՝ տարբերում են ռիոլիթային, դացիտային, տրախիտային, հազվադեպ՝ անդեզիտային Ի-ներ: Ի-ները բարձրաշարժունակ մոխրային հոսքերի արդյունք են՝ կապված կատմայան տիպի ժայթքումների հետ: Հետաքրքրություն են ներկայացնում որպես շինարարական քարեր:
- И-3. ИДИОМОРФИЗМ** (հուն. idios – սեփական, յուրահատուկ և morphé – ձև) – **ԻՆՔՆԱՁԵՎՈՒԹՅՈՒՆ (ՅՈՒՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆ, ԻԴԻՈՍՈՐՖՈՒԹՅՈՒՆ), IDIOMORPHISM**, միներալների ունակություն՝ բյուրեղացման ժամանակ ընդունելու որոշակի, իրենց բնորոշ բյուրեղագիտական ուրվապատկեր: Առավել ինքնաձևություն ունեն այն միներալները, որոնք ձևավորվել են ապարի գոյացման վաղ փուլում՝ դյուրաշարժունակ միջավայրում:
- И-4. ИЗАНОМАЛЫ** (հուն. isos – հավասար, միանման, միատեսակ և anō malos – շեղում ընդհանուր կանոնից) – **ԻՉԱՆՈՍԱԼՆԵՐ (ՀԱՎԱՍԱՐԱՇԵՂՈՒՄԱԳԾԵՐ), ISANOMALES**, հավասարագծեր, որոնք բնորոշում են տվյալ մեծության (ջերմաստիճանի, ծանրության ուժի և այլնի) շեղումն ընդունված նորմայի մեծությունից:
- И-5. ИЗБИРАТЕЛЬНАЯ ЭРОЗИЯ, СЕЛЕКТИВНАЯ ЭРОЗИЯ – ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՈՂՈՎԱՍՇՈՒՄ (ԵՐՈՁԻԱ), DIFFERENTIAL EROSION, SELECTIVE EROSION**, հոսող ջրի ողողաքայքայման գործունեություն՝ քայքայման նկատմամբ ամենաթույլ դիմադրության տեղանքում (օր.՝ կավային ապարների շերտերի ելքերի, բեկվածքների և սողանքների, ուժեղ փշրված ապարների զոնաների երկայնքով):
- И-6. ИЗБИРАТЕЛЬНОЕ ВЫВЕТРИВАНИЕ – ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՀՈՂՍԱՀԱՐՈՒՄ, SELECTIVE WEATHERING**, ապարների քայքայման գործընթաց, որի բնույթը և ուժգնությունը պայմանավորված են գլխ. ապարների բաղադրությամբ, կառուցվածքով,



կազմվածքով և այլն: Օր.՝ մուգավուն միներալները, որոնք ուժեղ կլանում են ջերմային ճառագայթները, ֆիզիկապես հողմահարվում են ավելի արագ, քան բաց գունավորվածները, որոնք ունեն բարձր անդրադարձման ունակություն:

**И-7. ИЗВЕРЖЕНИЕ ГЛАВНОГО КРАТЕРА – ԳԼԽԱՎՈՐ ԽԱՌՆԱՐԱՆԻ ԺԱՅԹՔՈՒՄ, ERUPTION OF THE MAIN CRATER,** տեղի է ունենում կենտրոնական հրաբխի գլխավոր խառնարանից:

**И-8. ИЗВЕРЖЕНИЕ ЛАВОВОГО ОЗЕРА – ԼԱՎԱՅԻՆ ԼՃԻ ԺԱՅԹՔՈՒՄ, ERUPTION OF THE LAVA LAKE,** հեղուկ բազալտային մագմայի հանգիստ ժայթքում, որը հանգեցնում է բաց լավային ավազանի գոյացմանը: Լավային լճի գործունեության հետ կապված ամենահայտնի հրաբուխը՝ Կիլաուէա հրաբուխն է Հավայան կղզիներում:

**И-9. ИЗВЕРЖЕНИЕ ЛИНЕЙНОЕ – ԳԾԱՅԻՆ ԺԱՅԹՔՈՒՄ,** տե՛ս Извержение трещинное:

**И-10. ИЗВЕРЖЕНИЕ ПАРАЗИТИЧЕСКОГО КРАТЕРА – ՍԱՎԱՐՈՒՅԾ ԽԱՌՆԱՐԱՆԻ ԺԱՅԹՔՈՒՄ, ERUPTION OF THE ADVENTIVE CRATER,** տեղի է ունենում կողմնակի (մակարույծ) խառնարանից:

**И-11. ИЗВЕРЖЕНИЕ СТРОМБОЛИАНСКОГО ТИПА** (Ստրոմբոլի, Stromboli, հրաբխի անունով, նույնանուն կղզում) – **ՍՏՐՈՄԲՈԼՅԱՆ ՏԻՊԻ ԺԱՅԹՔՈՒՄ, STROMBOLIAN TYPE OF ERUPTION,** հրաբխի կենտրոնական ժայթքում՝ հիմքային բաղադրության համեմատաբար հեղուկ լավայով, բնորոշվում է բաց փողաբերանում ռիթմիկ կրկնվող պայթյուններով: Կախված պայթման ուժգնությունից՝ մինչև մի քանի հարյուր մ բարձրություն են արտանետվում շիկացած լավայի տարբեր մեծության կտորներ, որոնք առաջացնում են Ս. տ. ժ-մանը բնորոշ ռումբեր և խարամ:

**И-12. ИЗВЕРЖЕНИЕ ТРЕЩИННОЕ – ԳԵՂՔԱՅԻՆ ԺԱՅԹՔՈՒՄ, FISSURE ERUPTION,** հեղուկ լավայի արտավիճում, գլխ. բազալտային կազմի, երկրակեղևի գծային ճեղքերով, հոմ. գծային ժայթքում:

**И-13. ИЗВЕРЖЕНИЕ ЦЕНТРАЛЬНОЕ – ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԺԱՅԹՔՈՒՄ, CENTRAL ERUPTION,** բնորոշ է կենտրոնական տիպի հրաբուխներին: Կախված հրաբուխը սնող լավայի մածուցիկությունից և զազային ճնշումից՝ այն տարբեր կերպ է ընթանում: Երկրի ժամանակակից փուլում Կ. ժ. տիրապետող է:

**И-14. ИЗВЕРЖЕНИЕ ЭКСТРУЗИВНОЕ – ԱՐՏԱՄՂԱՅԻՆ (ԷՔՍՏՐՈՒԶԻՎ) ԺԱՅԹՔՈՒՄ, EXTRUSIVE ERUPTION,** մածուցիկ լավայի արտանդում հրաբխի խառնարանից՝ գմբեթի և այլ ձևերով, տե՛ս Купол вулканический:

**И-15. ИЗВЕРЖЁННАЯ ГОРНАЯ ПОРОДА,** տե՛ս Эффузивная горная порода:

**И-16. ИЗВЕСТКОВЫЕ КОНКРЕЦИИ – ԿՐԱՅԻՆ ԿՈՆԿՐԵՑԻԱՆԵՐ, LIMESTONE CONCRETIONS, LIME NODULES, LIMY CONCRETIONS,** ձգվածքներ, որոնք առաջանում են նստվածքային ապարներում՝ դրանցում կալցիտի, հազվադեպ՝ արագոնիտի նստման հետևանքով:

**И-17. ИЗВЕСТКОВЫЙ ТУФ, ТРАВЕРТИН – ԿՐԱՅԻՆ ՏՈՒՖ, ՏՐԱՎԵՐՏԻՆ, CALCAREOUS TUFF, CALCAREOUS TUFFA, CALCAREOUS SINTER, TRAVERTINE,** թթև, ծակոտկեն ապար, որն առաջանում է տաք կամ սառը ածխաթթվային աղբյուրներից՝ կալցիումի կարբոնատի նստեցման հետևանքով: Հաճախ պարունակում է բույսերի դրոշմահետքեր և տարբեր օրգանական մնացորդներ: Աղբյուրների ելքերի տեղում կազմում են դարավանդներ և բլուրներ:

**И-18. ИЗВЕСТКОВЫЙ ШПАТ – ԿՐԱՄՊԱԹ,** տե՛ս Кальцит:

**И-19. ИЗВЕСТНЯК – ԿՐԱՔԱՐ, LIMESTONE,** նստվածքային կարբոնատային ապար, որը բաղկացած է հիմնականում կալցիտից կամ օրգանիզմների կալցիտային կմախքային մնացորդներից, հազվադեպ՝ արագոնիտից: Մաքուր Կ-ի քիմ.

կազմը մոտ է կալցիտին ( $\text{CaO}$  56 %,  $\text{CO}_2$  44 %), մի շարք դեպքերում ներառում է կավային միներալների, դոլոմիտի, քվարցի, հազվադեպ՝ գիպսի և օրգանական մնացորդների խառնուրդ, որը որոշում է Կ-ի անվանումը՝ դոլոմիտացված ( $\text{MgO}$  4-17 %), մերգելային, ավազային և կայծքարացած (ուճի քվարցի, օպալի և քաղկեդոնի խառնուրդ): Ըստ կառուցվածքի՝ առանձնացնում են բյուրեղային, օրգանածին-բեկորային, բեկորաբյուրեղային (խառը կառուցվածքի) և հոսանստված-քային (տրավերտին) Կ.: Օրգանածին-բեկորային Կ. լինում է խութային, խեցաքարային, դեղրիտային, ջրիմուռային և այլն: Ընդունված է Կ-ի անվան մեջ արտահայտել նաև ապարակազմիչ մասնիկների ձևը (օուլիթային, փշրաքարաման): Ըստ ծագման՝ անջատում են օրգանածին, քիմիածին, բեկորային և խառը Կ-եր: Կ-ի գույնը առավելապես սպիտակ, բաց մոխրագույն, դեղնավուն է: Օրգանական, երկաթային, մանգանային և այլ խառնուրդները պայմանավորում են մուգ մոխրագույն, սև, գորշ, կարմրավուն և կանաչավուն գունավորումը: Կ. ամենատարածված նստվածքային ապարներից է: Դրա կուտակները հանդիպում են բոլոր երկրք. համակարգերի նստվածքների մեջ՝ մինչքեմբրիից մինչև չորրորդական: Փոխակերպության դեպքում անցնում են մարմարների: Կ. ուճի համակողմանի օգտագործում արդյունաբերությունում, գյուղատնտեսությունում, շինարարությունում, մետաղագործությունում:

**И-20. ИЗВЕСТНЯК ДОЛОМИТИЗИРОВАННЫЙ – ԴՈԼՈՄԻՏԱՑՎԱԾ ԿՐԱՔԱՐ, DOLOMITIC LIMESTONE**, կրաքար, որում կալցիտը ինչ-որ չափով փոխարինված է դոլոմիտով: Հայտնի են բոլոր անցումները կրաքարերից դեպի երկրորդային դոլոմիտները: «Ղ. կ.» տերմինը չպետք է շփոթել «դոլոմիտային կրաքար» տերմինի հետ, քանի որ այն արտահայտում է ոչ թե ապարում բաղադրամասերի քանակական պարունակությունը, այլ՝ դրանց ծագումը:

**И-21. ИЗВЕСТНЯКИ АВТОХТОННЫЕ – ԱՎՏՈՆՏՈՆԱՅԻՆ (ՏԵՂԱՅԻՆ) ԿՐԱՔԱՐԵՐ, AUTOCHTHONOUS LIMESTONES**, առաջանում են իրենց տեղում՝ ի հաշիվ այն օրգանական կրային մնացորդների կուտակման, որոնք իրենց սկզբնական բնակավայրից ու մահացման վայրից տեղափոխության չեն ենթարկվել: Հանդիսանում են հատակին կպած կրային օրգանիզմների կենսագործունեության արդյունքներ, որոնք մահվանից հետո պահպանել են նախամահու վիճակը: Օր.՝ բիոհերմերը (կենսաթմբեր):

**И-22. ИЗВЕСТНЯКИ АЛЛОХТОННЫЕ – ԱԼԼՈՆՏՈՆԱՅԻՆ (ՏԱՐԱԲԵՐՈՒՎԱՅԻՆ) ԿՐԱՔԱՐԵՐ, ALLOCHTHONOUS LIMESTONES**, բաղկացած են տարբեր կարբոնատային նյութերից (օրգանածին և կարբոնատային բեկորներ, օուլիթներ և այլն), որոնք կուտակման, թաղման և քարագոյացման վայր տեղափոխվել են այլ տեղամասերից: «Ա. կ.» տերմինը «բեկորային կրաքարեր» տերմինին մոտ է կամ նույնն է:

**И-23. ИЗВЕСТНЯКИ БИОГЕННЫЕ (ОРГАНОГЕННЫЕ), տե՛ս Биогенные (органогенные) известняки:**

**И-24. ИЗВЕСТНЯКИ БИОГЕРМНЫЕ** (հուն. bios – կյանք և héрма – ստորջրյա ժայռ, թումբ) – **ԲԻՈՅԵՐՄԱՅԻՆ (ԿԵՆՍԱԹՄՔԱՅԻՆ) ԿՐԱՔԱՐԵՐ, BIOHERMAL LIMESTONES**, կրային ապարներ, որոնք գոյացել են կաչող կրային այն օրգանիզմների կենսագործունեության հետևանքով, որոնք մահվանից հետո պահպանել են իրենց նախամահու վիճակը: Բ. կ. սովորաբար ունեն մեծ ծակոտկենություն և առաջնային խոռոչավորություն:

**И-25. ИЗВЕСТНЯКИ БИТУМИНОЗНЫЕ – ԲԻՏՈՒՄԱՎՈՐ (ԲԻՏՈՒՄԱԿԻՐ) ԿՐԱՔԱՐԵՐ, BITUMINOUS LIMESTONES**, պարունակում են բիտումներ՝ ցրված վիճակում կամ ներփակումների տեսքով:

**И-26. ИЗВЕСТНЯКИ БРЕКЧИЕВИДНЫЕ – ՓՇՐԱՔԱՐԱՆՄԱՆ ԿՐԱՔԱՐԵՐ, BRECCIAFORM LIMESTONES**, կարբոնատային նստվածքային ապար՝ կեղծ փշրաքարանման կազմվածքով: Դրանց են պատկանում կա՛ն ճաքճքման փշաքարերը, կա՛ն անկյունավոր-բծավոր ապարները, որոնք իրենցից ներկայացնում են կեղծ փշրաքարեր (պսևդոբրեկչիաներ):

**И-27. ИЗВЕСТНЯКИ ДЕТРИТОВЫЕ – ԴԵՏՐԻՏԱՅԻՆ (ԲԵԿՈՐԱՆՅՈՒԹԱՅԻՆ) ԿՐԱՔԱՐԵՐ, DETRITAL LIMESTONES**, կրաքարերի տարատեսակ, որը բաղկացած է հիմնականում օրգանիզմների կմախքային մասերի բեկորներից (դետրիտից), սովորաբար՝ կրային խեցիների, ջրիմուռների և այլն:

**И-28. ИЗВЕСТНЯКИ КЛАСТИЧЕСКИЕ**, հոմ. Известняки обломочные:

**И-29. ИЗВЕСТНЯКИ ОБЛОМОЧНЫЕ (КЛАСТИЧЕСКИЕ) – ԲԵԿՈՐԱՅԻՆ ԿՐԱՔԱՐԵՐ, CALCARENITE, CLASTIC LIMESTONES**, բաղկացած են կարբոնատային մասնիկներից (կարբոնատային կմախքով օրգանիզմների, օլիթների, կարբոնատային ապարների բեկորներից), որոնք ցեմենտացած են ածխաթթվային կրով: Այդ մասնիկները, մինչև նստվածքի մեջ կուտակվելը, ենթարկվել են տեղափոխման, մշակման և տեսակավորման ըստ չափերի: Օր.՝ կրաքարային ավազաքարերը, կրաքարային կոպճաքարերը:

**И-30. ИЗВЕСТНЯКИ ООЛИТОВЫЕ – ՕՈԼԻԹԱՅԻՆ (ՉՎԱՔԱՐԱՅԻՆ) ԿՐԱՔԱՐԵՐ, OOLITIC LIMESTONES**, տե՛ս Оолитовый известняк:

**И-31. ИЗВЕСТНЯКИ ОРГАНОГЕННЫЕ**, տե՛ս Биогенные известняки:

**И-32. ИЗВЕСТНЯКИ ПЕЛИТОМОРФНЫЕ** (հուն. pēlos – կավ) – **ԿՎՎԱՆՄԱՆ ԿՐԱՔԱՐԵՐ, PELITOMORPHIC LIMESTONES**, բնորոշվում են պելիտանման (կավանման) կառուցվածքով: Հաճախ պարունակում են 95-99 %  $CaCO_3$ , երբեմն թույլ կավային են: Կենսածին մնացորդները հազվադեպ են: Կ. կ. գոյանում են կրային տիղմերի քարացման դեպքում՝ խորության մեծ միջակայքում (մերձլիթորալից մինչև մի քանի հազար մ):

**И-33. ИЗВЕСТНЯКИ ПЕРЕКРИСТАЛЛИЗОВАННЫЕ – ՎԵՐԱԲՅՈՒՐԵՂԱՑԱԾ ԿՐԱՔԱՐԵՐ, RECRYSTALLIZED LIMESTONES**, վերաբյուրեղացման ազդեցության տակ տեղի է ունեցել ավելի մանրահատիկ բյուրեղային կամ ամորֆ զանգվածի անցում ավելի խոշորահատիկ (բյուրեղային) տարատեսակի՝ առանց միներալային կազմի փոփոխության:

**И-34. ИЗВЕСТНЯКИ РИФОВЫЕ – ԽՈՒԹԱՅԻՆ ԿՐԱՔԱՐԵՐ, REEF LIMESTONES**, ապար, որը հանդիսանում է ջրավազանի հատակին կպած գաղութային այն խութակառուցող օրգանիզմների կենսագործունեության արդյունք, որոնք իրենց կմախքի կազմավորման համար անջատում են ածխաթթվային կիր [օր.՝ բուստային (կորալային), մանուկերպային, արխեոցիատային, ջրիմուռային և այլ կրաքարեր]:

**И-35. ИЗВЕСТНЯКИ ТОНКОДЕТРИТОВЫЕ**, տե՛ս Известняки шламовые:

**И-36. ИЗВЕСТНЯКИ ХЕМОГЕННЫЕ – ՔԻՄԻԱԾԻՆ ԿՐԱՔԱՐԵՐ, CHEMICAL LIMESTONES**,  $CaCO_3$ -ի կուտակումներ, որոնք գոյանում են վերհատակային ջրից՝ նրա քիմ. նստեցման հետևանքով: Սովորաբար դրանք խիստ նրբահատիկ, կավանման (պելիտոմորֆ) են: Օրգանական մնացորդները բացակայում են կամ հազվագյուտ են: Բնորոշ են չորային ջրամբարներին, լճերին ու ծովերին, որոնց աղիությունը բնականոնից դեռևս թույլ է շեղված:

**И-37. ИЗВЕСТНЯКИ ШЛАМОВЫЕ (ТОНКОДЕТРИТОВЫЕ) – ՇԼԱՄԱՅԻՆ (ՆՐԲԱԴԵՏՐԻՏԱՅԻՆ) ԿՐԱՔԱՐԵՐ, SLUDGE LIMESTONES**, բաղկացած են կենսածին դետրիտից (ավելի քան 50%), որի չափերը փոքր են 0.1 մմ-ից, և որը ցեմենտացած է գաղտնաբյուրեղային և նրբաբյուրեղային կալցիտով: Առաջանում են ծովի

անշարժ կամ ավելի խոր մասերում, որտեղ կուտակվում է ամենամուրբ կենսածին բեկորային չափամասը՝ կրային տիղմի հետ համատեղ:

**И-38. ИЗВЛЕЧЕНИЕ – ԿՈՐՉՈՒՄ, ENRICHMENT, RECOVERY**, բաժանման տեխնոլոգիական (օգտ. հնժ-ների հարստացման, մետաղագործական, քիմ. տեխնոլոգիայի և այլն) գործընթացներում ելանյութից օգտակար բաղադրամասը հանելու (կորզելու) չափանիշ: Կ. որոշվում է կորզված նյութի և ելանյութում նրա զանգվածների հարաբերությամբ՝ արտահայտված տոկոսներով:

**И-39. ИЗЛИВШИЕСЯ ГОРНЫЕ ПОРОДЫ**, տե՛ս Эффузивные горные породы:

**И-40. ИЗЛОМ – ԿՈՏՐՎԱԾՔ, FRACTURE**, մակերևույթի ձև, որն առաջանում է թերթականություն չունեցող միներալների և որոշ ապարների կոտրատման դեպքում: Կ. պայմանավորված է նյութի ֆիզ. հատկություններով և երբեմն հանդիսանում է բնորոշ դիագնոստիկական հատկանիշ: Միներալների մոտ տարբերում են խեցածև, մանրախեցածև, հարթ, հատկավոր, խորդուբորդ, անհարթ, սանդղածև Կ.:

**И-41. ИЗО...** (հուն. isos – հավասար, միատեսակ, նման) – **ՀԱՍԱ..., ՀԱՎԱՍԱՐԱ..., ISO...**, բարդ բառերի սկզբնամաս, որն արտահայտում է հավասարություն, նմանություն՝ ըստ ձևի կամ նշանակության:

**И-42. ИЗОАНАБАЗЫ** (հուն. isos – հավասար) – **ԻՉՈԱՆԱՐԱԶԵՐ, ISOANABASES**, ժամանակակից հավասար բարձրացումների գծեր: Միացնում են այն կետերը, որոնք կրել են բարձրացում կա՛ն հավասար արագությամբ, կա՛ն լայնությունով՝ ժամանակի որոշակի հատվածում: Տե՛ս Изобазы:

**И-43. ИЗОБАЗЫ** (հուն. isos – հավասար և basis – ընթացք, շարժում, հիմք) – **ԻՉՈՐԱԶԵՐ (ՀԱՎԱՍԱՐԱՇԱՐԺԱԳԾԵՐ), ISOBASES**, աշխ. քարտեզում գծեր, որոնք միացնում են երկրի մակերևույթի այն կետերը, որոնք ժամանակի միևնույն միջակայքում տեկտ. շարժումների հետևանքով կրել են հավասար բարձրացում (իզոանաբազեր) կամ հավասար իջեցում (իզոկատաբազեր):

**И-44. ИЗОБАРЫ** (հուն. isos – հավասար, միատեսակ և báros – ծանրություն) – **ԻՉՈՐԱՐԵՐ (ՀԱՎԱՍԱՐԱԾՆՇՈՒՄԱԳԾԵՐ), ISOBARS**, մթնոլորտային ճնշման հավասարագծեր:

**И-45. ИЗОБАТЫ** (հուն. isos – հավասար և báthos – խորություն) – **ԻՉՈՐԱԹՆԵՐ (ՀԱՎԱՍԱՐԱԽՈՐԱԳԾԵՐ), ISOBATHES, ISOBATHIC CURVES, SUBMARINE CONTOUR LINES**, բարտեզում ջրավազանի խորության հավասարագծեր:

**И-46. ИЗОГАММЫ – ԻՉՈԳԱՄՆԵՐ, ISOGAMS**, ծանրության ուժի արագացման կամ շեղման հավասար մեծությունների գծեր:

**И-47. ИЗОГИПСЫ** (հուն. isos – հավասար և hýpos – բարձրություն) – **ԻՉՈՅԻՊՍԵՐ (ՀԱՍԱՐԱՐՉՐԱԳԾԵՐ)**, տե՛ս Горизонтали:

**И-48. ИЗОДИНАМЫ** (հուն. isos – հավասար և dýnamis – ուժ) – **ԻՉՈԴԻՆԱՄՆԵՐ, ISODYNAMIC LINES**, երկրամագնիսական դաշտի կամ նրա բաղադրամասերի լրիվ լարվածության հավասարագծեր:

**И-49. ИЗОКЛИНАЛЬ, ИЗОКЛИНАЛЬНАЯ СКЛАДКА** (հուն. isos – հավասար, միատեսակ և klinō – թեքում են) – **ԻՉՈԿԼԻՆԱԼ (ՀԱՎԱՍԱՐԱԹԵՔԱԾՔ), ՀԱՎԱՍԱՐԱԹԵՔ ԾԱԼՔ, ISOCLINAL FOLD**, ծալք, որի թևերը զուգահեռ են միմյանց և առանցքային մակերևույթին, այդ բոլորը միասին թեքված են միևնույն կողմը և մոտավորապես նույն անկյան տակ: Հ. ծ-երը բնորոշ են համասեռ ապարնրին (օր.՝ թերթաքարերին) և հանդիսանում են ուժեղ ձևախախտումների ցուցիչներ:

- И-50. ИЗОКЛИНАЛЬНАЯ ДОЛИНА – ԶԱՎԱՍԱՐԱԹԵՔ ԶՈՎԻՏ, ISOCLINAL VALLEY**, երկայնական գետահովիտ, որը ձևավորվել է ծալքի որևէ թևում: Զովտի երկու լանջերին ապարների շերտերը թեքված են միևնույն կողմը՝ մոտավորապես նույն անկյան տակ: Զ. հ-ները սովորաբար անհամաչափ են. շերտերի անկման հետ ներդաշնակ լանջը ավելի մեղմաթեք է, անկման հակադարձ լանջը զառիթափ է և հաճախ՝ աստիճանավոր:
- И-51. ИЗОКЛИНАЛЬНАЯ СКЛАДКА**, տե՛ս *Изогиналь*:
- И-52. ИЗОКЛИНАЛЬНОЕ ЗАЛЕГАНИЕ – ԶԱՎԱՍԱՐԱԹԵՔ ՏԵՂԱԴՐՈՒՄ, ISOCLINAL BEDDING**, ապարների տեղադրում իզոկլինալի (հավասարաթեքվածքի) թևերում, որոնք բնորոշվում են մոտավորապես միևնույն թեքությամբ և միևնույն շերտերի բազմակի կրկնությամբ:
- И-53. ИЗОКЛИНАЛЬНЫЙ ХРЕБЕТ – ԶԱՎԱՍԱՐԱԹԵՔ ԼԵՌՆԱՇՐՈՍ, ISOCLINAL RIDGE**, լեռնաշղթա, որը կազմված է նստվածքային ապարների այնպիսի շերտերից, որոնք ունեն միևնույն անկման անկյունը և ուղղությունը:
- И-54. ИЗОКЛИНЫ** (հուն. isos – հավասար և klinō – թեքում են) – **ԻՉՈՎԼԻՆՆԵՐ (ԶԱՎԱՍԱՐԱԹԵՔՈՒՄԱԳԾԵՐ), ISOCLINALS, ISOCLINIC LINES, ISOCLINAL LINES**, գծեր, որոնք աշխ. քարտեզում միացնում են մագնիսական թեքման միևնույն արժեքներ ունեցող կետերը: Զրոյական թեքման իզոկլինը մագնիսային հասարակածն է:
- И-55. ИЗОЛИНИИ** (հուն. isos – հավասար) – **ԶԱՎԱՍԱՐԱԳԾԵՐ, ISOLINES**, որևէ մեծության (օր.՝ ջերմաստիճանի, ճնշման և այլն) հավասար արժեքների գծեր՝ աշխ. քարտեզի ուղղաձիգ կտրվածքում կամ գրաֆիկում:
- И-56. ИЗОМОРФИЗМ** (հուն. isos – հավասար, նման, միատեսակ և mórfhē – ձև, տեսք) – **ԻՉՈՍՈՐՖԻԶՄ (ՆՄԱՆԱՁԵՎՈՒԹՅՈՒՆ), ISOMORPHISM**, սկզբում քիմ. կազմով և բյուրեղային ձևով նման բյուրեղային նյութեր, որոնք ունակ են առաջացնելու խառը բյուրեղներ: Այժմ Ի. համարվում է այն երևույթը, որն արտահայտում է բյուրեղներում կամ միներալներում քիմ. տարրերի (ատոմների) միմյանց փոխարինելու ունակությունը կամ հատկությունը: Ի. հաճախ պայմանավորում է բնական միացությունների կազմի բարդությունը և քիմ. տարրերի պարագենեզիսը: Ի. կարևոր դեր է խաղում երկրակեղևում քիմ. տարրերի միգրացիայում, հատկապես՝ հազվագյուտ և ցրված: Ի. սովորաբար կիրառվում է երկրաբանամիներալաբանական գիտություններում: Ֆիզ. քիմիայում նրան փոխարինում է «պինդ լուծույթ» հասկացությունը:
- И-57. ИЗОПАХИТЫ** (հուն. isos – հավասար և phachýs – հաստ, զանգվածային) – **ԻՉՈՊԱԽԻՏՆԵՐ (ԶԱՍՈՒՍԱՍԱԳԾԵՐ), ISOPACHYTES, ISOPACHS, ISOPACHOUS LINES**, քարտեզում որևէ հասակի կամ կազմի երկրք. նստվածքների հաստությունների հավասարագծեր:
- И-58. ИЗОСЕЙСТЫ** (հուն. isos – հավասար և seistós – ճոճումներ, տատանումներ) – **ԻՉՈՍԵՅՍՏԵՐ, ISOSEISTS, ISOSEISMALS, ISOSEISMIC LINES**, երկրաշարժերի հավասար ուժգնության գծեր:
- И-59. ИЗОСТАЗИЯ, ИЗОСТАТИЧЕСКОЕ РАВНОВЕСИЕ** (հուն. isostásios – հավասար կշիռ ունեցող) – **ԻՉՈՍՏԱԶԻԱ, ԻՉՈՍՏԱՏԻԿ ԶԱՎԱՍԱՐԱՎՇՈՒԹՅՈՒՆ, ISOSTASY OF THE EARTH'S CRUST**, երկրակեղևի հավասարակշիռ վիճակ, որի դեպքում այն կարծես թե «լողում է» ավելի պինդ և ծանր սուբստրատի վրա: Այդ կապակցությամբ երկրակեղևն այնքան է խորասուզվում սուբստրատի մեջ, որքան նա հաստ է և խիտ, այդ պատճառով լեռների տակ առաջացնում է ելուստ

միջնապատյանի մեջ (այսպես կոչված լեռների արմատներ): Երկրակեղևը համարյա ամենուրեք գտնվում է լրիվ հավասարակշռությանը մոտ վիճակում: Սակայն ուժգին տեկտ. շարժումների մարզերում գոյություն ունեն շեղումներ (օր.՝ օվկիանոսային վիհերի երկայնքով): Ի-ի արտահայտություն է հանդիսանում չորրորդական սառցապատումների մարզերի բարձրացումը (տարեկան մինչև 10 սմ միջին արագությամբ)՝ սառցադաշտային ծածկույթի հալումից հետո:

**И-60. ИЗОТАХИ** (հուն. isos – հավասար և táchos – արագություն) – **ԻՉՈՏԱԽԵՐ (ՅԱՄԱՐԱԳԱԳԾԵՐ), ISOTACHES**, քարտեզում միատեսակ արագությունների (քամու, ջրային հոսանքի և այլնի) հավասարագծեր:

**И-61. ИЗОТЕРМЫ** (հուն. isos – հավասար և thérme – ջերմություն) – **ՅԱՄԱՋԵՐՄԱԳԾԵՐ (ԻՉՈԹԵՐՄԵՐ), ISOTHERMS**, քարտեզում ջերմաստիճանի հավասարագծեր (օր.՝ օդի. ջրի):

**И-62. ИЗОТОПНЫЙ ВОЗРАСТ**, տե՛ս Абсолютный возраст:

**И-63. ИЗОТОПЫ – ԻՉՈՏՈՊՆԵՐ, ISOTOPES**, քիմ. տարրերի ատոմներ, որոնք բնորոշվում են տարբեր զանգվածային թվերով, բայց ունեն ատոմային միջուկի միատեսակ լիցք և այդ պատճառով պարբերական համակարգում գրավում են միևնույն տեղը: Միևնույն քիմ. տարրի տարբեր իզոտոպների ատոմները տարբերվում են միջուկի կազմի մեջ մտնող նեյտրոնների քանակով և միջուկային հատկություններով, բայց էլեկտրոնային թաղանթների միատեսակ կազմության հետևանքով գործնականորեն ունեն համանման քիմ. հատկանիշներ:

**И-64. ИЗОХРОНЫ** (հուն. isos – հավասար և chrónos – ժամանակ) – **ԻՉՈՔՐՈՆՆԵՐ (ՅԱՄԱԺԱՄԱՆԱԿԱԳԾԵՐ), ISOCHRONES**, երևույթների միաժամանակյա սկիզբը նշող կետերը միացնող գծեր:

**И-65. ИЗУМРУД** (թուրք. zümrüd, պարսկ. zumrud, հուն. smaragdos-ից) – **ՋՄՐՈՒԽՏ, EMERALD, SMARAGD**, միներալ, բերիլի հազվագյուտ քրոմապարունակ վառ խտականաչ տարատեսակ: Բյուրեղները վեցանկյուն-հատվածակողմային, կարճ և երկար սյունածև են: Առաջանում է բերիլիում-ֆտորակիր գազահեղուկ լուծույթներից՝ պեգմատիտային, գրեյզենային և ջրաջերմային գործընթացների ընթացքում՝ քրոմապարունակ կողային ապարների մասնակցությամբ: Խտականաչ թափանցիկ Ջ. 1 կարգի թանկարժեք քար է:

**И-66. ИЙОЛИТ** (Ֆինլանդիայում գտնվող Իյո, Ijo, գյուղի շվեդ. անվանում և հուն. lithos – քար) – **ԻՅՈԼԻԹ, IJOLITE**, լիաբյուրեղային դաշտասպաթազուրկ նեֆելինային ապար, կազմված է հիմնականում նեֆելինից (մոտ 50 %) և էգիրին-ավգիտից (կամ այլ պիրոքսեններից):

**И-67. ИЛ – ՏԻՂՄ, MUD, OOZE, SILT, SLIME**, 1) նուրբ դիսպերսիոն ջրահագեցած չխտացած նստվածք, որն առաջանում է ջրավազանների հատակում: Տ. շատ նստվածքային ապարների ձևավորման սկզբնական փուլն է: Բնական պայմաններում բնորոշվում է հոսունությամբ, չորանալիս ձեռք է բերում պինդ նյութի հատկություններ: Տարբերում են ծովային և ցամաքային (լճային, ճահճային) Տ.: Ըստ ծագման լինում է ցամաքածին (կավային և այլն), կենսածին (դիատոմային, գլոբիգերինային և այլն), հրաբխածին, քիմիածին (կարբոնատային և այլն), ըստ հատիկաչափական կազմի՝ մանրաալերիտային, ալերիտապելիտային (ալերիտակավային), պելիտային (կավային): 2) Ծովային նստվածք, որը պարունակում է 30-50 % նուրբ մասնիկներ (փոքր 0.01 մմ-ից): Այդ հասկացությամբ «Տ.» տերմինը օգտագործվում է ծովային նավագնացության քարտեզներում՝ գրունտի նշանակման համար:

**И-68. ИЛ АЛЕВРИТО-ГЛИНИСТЫЙ**, տե՛ս Ил алевроито-пелитовый:

- И-69. ИЛ АЛЕВРИТО-ПЕЛИТОВЫЙ – ԱԼԵՎՐԻՏԱՊԵԼԻՏԱՅԻՆ (ԱԼԵՎՐԻՏԱԿԱՎԱՅԻՆ) ՏԻՂՍ, ALEURITE-PELITIC OOZE,** նստվածք, որը պարունակում է 50-70 % պելիտային (կավային) (<0.01 մմ-ից) չափամաս, մնացածն ավելի խոշոր ավազա-ալկրիտային նյութ է:
- И-70. ИЛ ВУЛКАНИЧЕСКИЙ – ՅՐԱԲԻԱՅԻՆ ՏԻՂՍ, VOLCONIC MUD,** առավելապես խորջրյա նստվածք, որը բաղկացած է տիղմից և հրաբխային մոխրի խառնուրդից:
- И-71. ИЛ ПЕЛИТОВЫЙ – ՊԵԼԻՏԱՅԻՆ (ԿԱՎԱՅԻՆ) ՏԻՂՍ, PELITIC OOZE,** նստվածք, որը բաղկացած է գլխ. 0.01 մմ-ից փոքր մասնիկների չափաբաժնից:
- И-72. ИЛ САПРОПЕЛЕВЫЙ – ՍԱՊՐՈՊԵԼԱՅԻՆ ՏԻՂՍ, SAPROPEL OOZE, DECAY OOZE,** անշարժ ջրավազանների հատակի տիղմ, որը հարուստ է օրգանիզմների քայքայվող մնացորդներով:
- И-73. ИЛЛИТ (ԱՄՆ-ի Իլլիմոյս մահանգի անունից) – ԻԼԼԻՏ, ILLITE,** միներալ, անորոշ փայլար կամ կավային միներալ, արտասահմանյան գրականությունում Ի-ին հաճախ անվանում են ջրափայլար: Հանդիպում է կավային թերթաքարերում, արգիլիթներում: Առաջանում է դաշտասպաթների հողմահարման և կավային միներալների դիագենեզի ժամանակ:
- И-74. ИЛЬМЕНИТ, ТИТАНИСТЫЙ ЖЕЛЕЗНЯК (Յր. Ուրալի Իլմենյան լեռների անունից) – ԻԼՄԵՆԻՏ (ՏԻՏԱՆԱՔԱՐ), ՏԻՏԱՆԱՅԻՆ ԵՐԿԱՌԱՔԱՐ, ILMENITE, TITANIC IRON ORE,** միներալ բարդ օքսիդների ենթադասից,  $FeTiO_3$ , բյուրեղանուն է տրիգոնային համակարգում, առաջացնում է անկանոն հատիկներ, տափակացած և նրբաթերթավոր բյուրեղներ: Հայտնի են Ի-ի օրինաչափ սերտաձվածքներ մագնետիտի, ռուտիլի, պերովսկիտի, բիտիտի հետ: Գույնը՝ երկաթի սև, փայլը՝ կիսամետաղական, փխրուն է, կարծրությունը՝ 5-6: Թույլ մագնիսական է: Ի. տիպային ներքնածին (հիպոգեն) միներալ է: Հիմքային և ալկալիական մագմայական ապարների և որոշ գրանիտների ակցեսորային միներալ է: Խոշոր կուտակները կապված են զաբրոիդների հետ: Հանդիպում է ներփակվածքների տեսքով որոշ քրոմիտային հանքանյութերում: Ջրաջերմային Ի. հայտնի է որոշ քվարցային և մագնեզիումային երակներում: Ի. շատ նստվածքային ապարների ցամաքածին միներալ է: Գլխ. հնքվ-երը ցրոնային են: Տիտանի հանքանյութ է:
- И-75. ИЛЬМЕНОРУТИЛ – ԻԼՄԵՆԱՌՈՒՏԻԼ, ILMENORUTILE,** ռուտիլի միոբիում-մապարունակ տարատեսակ,  $(Ti, Nb, Fe^{3+})_3 O_6$ : Առաջացնում է երկբուրգային կարճ հատվածակողմային բյուրեղներ և անկանոն ձևի անջատումներ: Գույնը սև է: Հանդիպում է պեգմատիտներում: Քվարցային գրեյզեններին բնորոշ ուղեկից (ակցեսորային) միներալ է: Կուտակվում է ալյուվիալ ցրոններում:
- И-76. ИММЕРСИОННЫЕ ЖИДКОСТИ – ԻՄԵՐՍԻՈՆ (ՍՈՒՉՍԱՆ) ՀԵՂՈՒԿՆԵՐ, IMMERSION LIQUIDS,** բեկման ցուցիչների չափանմուշային հավաքածու: Օգտագործվում են միներալների բեկման ցուցիչները որոշելու համար:
- И-77. ИММЕРСИОННЫЙ МЕТОД (ուշ լատ. immersio-ից – սուզում) – ԻՄԵՐՍԻՈՆ (ՍՈՒՉՍԱՆ) ՄԵԹՈՂ, IMMERSION METHOD,** բևեռացման մանրադիտակի տակ պինդ մարմինների մանրագույն (մինչև 0.001-0.002 մմ) թափանցիկ հատիկների բեկման ցուցիչների որոշում: Այդ չափի հատիկների դեպքում թափանցիկ է դառնում միներալների մեծ մասը: Որոշումը կատարվում է համեմատելով հատիկի բեկման ցուցիչը չափորոշիչ հեղուկի բեկման ցուցիչի հետ, որի մեջ այն սուզված է: Մեթոդի հիմքում ընկած է երկու նյութերի սահմանում բարակ լուսավոր գծի՝ «Բեկեի գծի» առաջացումը, մանրադիտակի դիտափողակի փոքր բարձրացման դեպքում այդ գիծը շարժվում է ավելի բարձր բեկման ցուցիչ ունեցող նյութի կողմը, իջեցնելիս՝ դեպի հակառակ կողմը: Դիտելով «Բեկեի գծի» շարժումը՝ որոշվում

է, թե միմյանց հպվող նյութերից (միներալներ կամ հեղուկներ) որի բեկման ցուցիչն է բարձր: Ի. մ-ում օգտագործվում է իմերսիոն հեղուկների հավաքածու (միմչև 100)՝ 1.33 (ջրի) բեկման ցուցիչից միմչև 2.06:

**И-78. ИМПАКТИТ** (անգլ. impact – հարված, հրում) – **ԻՄՊԱԿՏԻՏ, IMPACTITE**, ապար, որը վերահավել է երկնաքարերի հարվածի կամ պայթման հետևանքով: Կազմված է ամուր, բշտիկավոր կամ ֆլուիդալ ապակուց, որը ներփակում է տարբեր ապարների ու միներալների բեկորները:

**И-79. ИНВЕРСИОННЫЙ РЕЛЬЕФ – ՇՐՋԱԿԾ (ՀԱՎԱԴԱՐՁ) ՌԵԼԻԵՖ, INVERTED RELIEF**, ողողամաշման-լերկացման ռելիեֆ, որի ձևերը հակադիր են երկրբ. կառուցվածքների նկատմամբ [օր.՝ Լեռնաշղթաները ըստ տեղադրավայրի համապատասխանում են գոգածալքերին (սինկլինալներին), իսկ հովիտները՝ կամարածալքերին (անտիկլինալներին)]:

**И-80. ИНВЕРСИЯ ГЕОМАГНИТНОГО ПОЛЯ** (լատ. inversio – շրջում, վերադասավորում) – **ԵՐԿՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՇՐՋՈՒՄ (ՀԱՎԱԴԱՐՁՈՒՄ, ԻՆՎԵՐՍԻԱ), GEOMAGNETIC REVERSAL**, Երկրի մագնիսական դաշտի ուղղության հակադարձ փոփոխություն՝ երկրամագնիսական առանցքի միևնույն ուղղության դեպքում՝ ժամանակի 500 հազ-ից միմչև 50 մլն. տարի ընդմիջումից հետո:

**И-81. ИНВЕРСИЯ ЛАНДШАФТА – ԼԱՆԴՇԱՓՏԻ (ԲՆԱՊԱՏԿԵՐԻ) ՇՐՋՈՒՄ (ՀԱՎԱԴԱՐՁՈՒՄ), LANDSCAPE INVERSION**, Լանդշաֆտների (բնապատկերների) ըստ բարձրության այնպիսի բաշխում, որը չի համապատասխանում (հակադիր է) Լանդշաֆտների բարձրության գոտիավորման օրենքին: Լ. շ. կարող է պայմանավորված լինել ջերմաստիճանային շրջմամբ և բարձրությունների Լանջերի տարբեր տեղամասերում ցամաքուրդային (դրենաժային) պայմանների տարբերությամբ: Լ. շ. բնորոշ է կտրտված ռելիեֆով ցածրալեռնային և միջնալեռնային շրջաններին:

**И-82. ИНВЕРСИЯ ТЕКТОНИЧЕСКОГО РЕЖИМА – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՌԵՃԻՄԻ ՇՐՋՈՒՄ (ՀԱՎԱԴԱՐՁՈՒՄ), TECTONIC REGIME INVERSION**, երկրասինկլինալային զարգացմանը բնորոշ կարևոր գործընթաց, որի ընթացքում երկրասինկլինալային ճկվածքները հաջորդաբար վերածվում են բարձրացումների (երկրասանտիկլինալների), իսկ երկրասանտիկլինալային զոնաները՝ ճկվածքների: Այդ ընթացքում և՛ առաջինները, և՛ երկրորդները կրում են լուրջ որակական փոփոխություններ՝ ծալքավորություն, փոխակերպություն և ներժայթքվածքների ներդրում: Տ. ռ. շ. երկրասինկլինալային զարգացման ամենաբնորոշ հատկանիշն է: Ավելի հազվադեպ շրջումը դիտվում է պլատֆորմային կառուցվածքների զարգացման ընթացքում, հիմնականում ավլակոգենների ձևով, ըստ որում՝ շրջումը համարյա երբեք չի հասնում ճկվածքի լրիվ շրջմանը, նույնն է՝ Обращение тектонического режима:

**И-83. ИНГРЕДИЕНТЫ УГЛЯ – ԱԾԽԻ ԲԱՎԱԴՐԱՄԱՍԵՐ (ԻՆԳՐԵԴԻԵՆՏՆԵՐ), Banded INGREDIENTS**, ածխի բաղադրամասեր (ֆյուզեն, կլարեն, վիտրեն, դյուրեն), որոնք նկատելի են չզինված աչքով կամ մանրադիտակով:

**И-84. ИНГРЕССИВНОЕ ЗАЛЕГАНИЕ – ՆԵՐՍՈՒՏ (ԻՆԳՐԵՍԻՎ) ՏԵՂԱԴՐՈՒՄ, INGRESSIVE OCCURRENCE**, ծովային նստվածքների տրանսգրեսիվ (ծովարշավային) տեղադրման տեսակ, երբ նստվածքները լցնում են հին ռելիեֆի ցածրությունները և հենվում են ավելի հին ապարներից կազմված լանջերին:

**И-85. ИНГРЕССИОННОЕ МОРЕ – ՆԵՐՍՈՒՏ (ԻՆԳՐԵՍԻՎ) ԾՈՎ, INGRESSION SEA**, առաջանում է այն դեպքում, երբ ծովը ծածկում է մայրցամաքային հարթավայրի իջեցված մասերը:



**И-86. ИНГРЕССИЯ** (հուն. *ingressio* – ներխուժել, մուտք գործել) – **ՆԵՐՍՈՒՏՔ (ԻՆԳՐԵՍԻԱ), INGRESSION**, ծովային ջրերի ներթափանցումը մերձափնյա ցամաքի ռելիեֆի ցածրությունները՝ ծովի մակարդակի բարձրացման կամ ափի իջեցման հետևանքով:

**И-87. ИНДЕКС ДИФФЕРЕНЦИАЦИИ – ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ (ԻՆԴԵՔՍ), DIFFERENTIATION INDEX**, ապարաքին. ցուցիչ՝ ապարների հիմքայնությունը և տարբերակման (դիֆերենցման) աստիճանը որոշելու համար:

**И-88. ИНДИКАТОРЫ** (լատ. *indico* – ցույց են տալիս, որոշում են) – **ՑՈՒՑԻՉՆԵՐ (ԻՆԴԻԿԱՏՈՐՆԵՐ), INDICATORS**, 1) ջրաերկրաբանությունում նյութեր, որոնք օգտագործվում են ստր. ջրհոսքերի ուղղությունը և արագությունը որոշելու համար: Այդ նյութերը փոխում են ջրի գույնը, քիմ. բաղադրությունը կամ էլեկտրահաղորդականությունը, սակայն ջրում լուծված աղերի հետ ռեակցիայի մեջ չեն մտնում և հեշտությամբ հայտնաբերվում են: 2) Տարրալուծվող լուծույթին փոքր քանակությամբ ավելացվող նյութեր, որոնք ցույց են տալիս քիմ. ռեակցիայի սկիզբը կամ ջրածնի իոնների կոնցենտրացիան:

**И-89. ИНДИКАТОРЫ ГЕОХИМИЧЕСКОЙ ОБСТАНОВКИ – ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ, INDICATORS OF GEOCHEMICAL ENVIRONMENT**, հին նստվածքների աղայնության, օքսիդացնող-վերականգնիչ պայմանների և միջավայրի բնույթի ցուցիչներ, այսինքն՝ դրանց pH, rH և այլն: Օր.՝ հին ջրավազանների աղայնության ցուցիչներին են պատկանում տեղածին (աուտիզեն) միներալները (ֆլուորիտ, ցելեստին, ֆոսֆորիտներ, գլաուկոնիտ և այլն), ապարների կառուցվածքը (օոլիթային, խութածին և այլն): Բուն երկրք. ցուցիչներ են Cl-ի պարունակությունը կավային ապարների փակ ծակոտիներում, կատիոնների կազմը, Ca:Mg զործակիցը, K:Cl փոխհարաբերությունը և այլն, ինչպես նաև ֆաունայի կազմը կամ բացակայությունը:

**И-90. ИНДСКИЙ ЯРУС** (Հնդկաստանում և Պակիստանում գտնվող Ինդոս գետի անունից) – **ԻՆԴՈՍԻ ՀԱՐԿ, INDIAN**, տրիասի համակարգի ստորին բաժնի ստորին հարկ (մախկին ԽՍՀՄ-ում ընդունված սխեմայով): Համապատասխանում է Ալպյան մարզի սկիֆյան հարկի ստորին՝ ամոնիտային զոնաներին:

**И-91. ИНЕРТНЫЕ ГАЗЫ – ԻՆԵՐՏ (ԱՆԳՈՐԾՈՒՄ) ԳԱԶԵՐ, INERT GASES**, ազնիվ, հազվագյուտ, միատոմ, անգույն և անհոտ գազեր՝ հելիում (He), նեոն (Ne), արգոն (Ar), կրիպտոն (Kr), քսենոն (Xe), ռադոն (Rn): Իներտությունը պայմանավորված է ատոմների մոտ արտաքին կայուն էլեկտրոնային թաղանթի առկայությամբ: Ի. գ. փոքր քանակությամբ առկա են բնական այրվող գազերում, ապարներում, լուծված վիճակում՝ ջրում, նավթում:

**И-92. ИНЖЕНЕРНАЯ ГЕОДЕЗИЯ – ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԿՐԱՔԱՇԽՈՒԹՅՈՒՆ (ԳԵՈՂԵԶԻԱ), ENGINEERING GEODESY**, երկրաբաշխության բաժին, որում դիտարկվում են երկրաբաշխական աշխատանքների մեթոդները, տեխնիկան և կազմակերպումը՝ ժողտնտեսական և ճարտարագիտական խնդիրների լուծման համար:

**И-93. ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКАЯ КАРТА – ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԵՐԿՐԱՔԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ, GEOLOGICAL-ENGINEERING MAP**, որոշակի մասշտաբի տեղագրական քարտեզի վրա տեղանքի ճարտարագիտակերպ. պայմանների պատկերում, որը ցույց է տալիս տեղանքում շինարարության ծավալման կամ նրա տնտեսական իրացման հնարավորությունները: Ճ. ք-ները ստորաբաժանվում են՝ ակնարկային (1:1500000 և փոքր), մանրամասշտաբ (1:500000-1:1000000), միջին մասշտաբի (1:100000-1:200000), խոշորամասշտաբ (1:25000-1:50000) և մանրամասն (1:10000 և խոշոր):

- И-94. ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКАЯ СЪЁМКА – ԾԱՐՏԱՐԱԳԻՏԱԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹ, GEOLOGICAL-ENGINEERING SURVEY**, գանազան կառույցների նախագծման և շինարարության համար տեղանքի երկրք. կառուցվածքի, երկրծ. պայմանների, երկրք. գործընթացների ու երևույթների, ինչպես նաև ապարների ֆիզմեխ. հատկությունների համալիր ուսումնասիրություններ, որոնց արդյունքների հիման վրա կազմվում են ճարտարագիտակերպեր. քարտեզներ, տե՛ս *Инженерно-геологическая карта*:
- И-95. ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ԾԱՐՏԱՐԱԳԻՏԱԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, GEOLOGICAL-ENGINEERING RESEARCH OF ROCKS**, կառույցների նախագծման ու շինարարության համար ապարների ֆիզմեխ. հատկությունների ուսումնասիրություն և շինարարության հետևանքով այդ հատկությունների հնարավոր փոփոխությունների կանխատեսում:
- И-96. ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ – ԾԱՐՏԱՐԱԳԻՏԱԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԵԹԱՅՆԵՐ, GEOLOGICAL-ENGINEERING PROCESSES**, ժամանակակից երկրք. գործընթացներ, որոնք ծագում են կան ակտիվանում տեխնածին գործունեության հետևանքով:
- И-97. ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКИЕ УСЛОВИЯ ТЕРРИТОРИИ – ՏԱՐԱԾՔԻ ԾԱՐՏԱՐԱԳԻՏԱԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ, GEOLOGICAL-ENGINEERING CONDITIONS OF TERRITORY**, տարածքի առանձնահատկություններ, որոնք բնորոշում են մարդու ճարտարագիտական գործունեության համար նրանց նպաստավորության չափը (ռելիեֆ, երկրք. կառուցվածք, ջրակերպեր. պայմաններ, երկրք. գործընթացների առկայություն, ապարների ֆիզմեխ. հատկություններ և այլն):
- И-98. ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКИЙ КОМПЛЕКС – ԾԱՐՏԱՐԱԳԻՏԱԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՍԱԼԻՐ, GEOLOGICAL-ENGINEERING COMPLEX**, շերտագրական հաջորդականությամբ տեղադրված ապարների ստվարաշերտ, որը բնութագրվում է ապարների ճարտարագիտակերպեր. հատկությունների և օրինաչափ փոփոխությունների ընդհանրությամբ:
- И-99. ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКИЙ РАЙОН – ԾԱՐՏԱՐԱԳԻՏԱԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ, GEOLOGICAL-ENGINEERING AREA**, ճարտարագիտակերպ. մարզի մաս, որն առանձնացվում է բնորոշ ճարտարագիտակերպեր. համակարգով և ժամանակակից ֆիզիկակերպեր. գործընթացների ու երևույթների ընդհանրությամբ:
- И-100. ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКИЙ РЕГИОН – ԾԱՐՏԱՐԱԳԻՏԱԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ՌԵԳԻՈՆ (ԵՐԿՐԱՇՐՋԱՆ), GEOLOGICAL-ENGINEERING REGION**, տարածքի ճարտարագիտակերպ. շրջանացման ամենախոշոր միավոր, որն առանձնացվում է երկրք. կառուցվածքի, երկրծ. և ջրակերպեր. պայմանների, ժամանակակից նստվածքների բնույթի և ֆիզիկակերպեր. գործընթացների ընդհանրությամբ:
- И-101. ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКОЕ РАЙОНИРОВАНИЕ – ԾԱՐՏԱՐԱԳԻՏԱԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՈՒՄ, GEOLOGICAL-ENGINEERING REGIONALIZATION**, ուսումնասիրվող տարածքի բաժանումը ենթադաս միավորների (ռեգիոն, մարզ, շրջան, ենթաշրջան, տեղամաս)՝ ըստ ճարտարագիտակերպեր. պայմանների:
- И-102. ИНИЦИАЛЬНЫЙ ВУЛКАНИЗМ – ԻՆԻՑԻԱԼ (ՍԿՁԲՆԱՅԻՆ) ՀՐԱԲԽԱՅՆՈՒԹՅՈՒՆ, INITIAL VOLCANISM**, բազալտային մագմայի ստորջրյա արտափոխում՝ երկրասինկլինալի ճկման սկզբնական փուլում:
- И-103. ИНОЦЕРАМ (Inoceramus) – ԻՆՈՑԵՐԱՄ, INOCERAM**, երկփեղկանի փափկամարմինների սեռ, խեցին անհավասարափեղկ է, քանդակները համակենտրոն ծալքերն են: Ուշ տրիաս-կավիճ: Ղեկավարող բրածոներ են:

- И-104. ИНСЕКВЕНТНАЯ ДОЛИНА** (լատ. in – ժխտական նախածանց է և sequens, սեռ. h. sequentis – որևէ բանի ներդաշնակ հաջորդը) – **ԻՆՍԵԿՎԵՆՏ ՅՈՎԻՏ, INSEQUENT VALLEY, NEUTRAL VALLEY**, գետահովիտ, որը ներդրվել է անկախ որևէ կառուցվածքային զծից՝ սովորաբար հարթավայրային սեղանաձև տարածքների սահմաններում, որտեղ ապարախմբերն ունեն հորիզոնական շերտադարսվածություն:
- И-105. ИНСОЛЯЦИОННОЕ ВЫВЕТРИВАНИЕ** (լատ. insolatio, insolo-ից – դնում են արևի տակ) – **ԻՆՍՈԼՅԱՑԻՈՆ (ԱՐԵՎԱՅԱՐ) ՅՈՂՄԱՅԱՐՈՒՄ, INSOLATIONAL WEATHERING**, ապարների քայքայման գործընթաց՝ դրանց ճաքճքման հետևանքով, որը կապված է ջերմաստիճանի կտրուկ տատանումների, հատկապես արևի տաքացման հետ:
- И-106. ИНТЕНСИВНОСТЬ ЗЕМЛЕТРЯСЕНИЯ** – **ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՈՒԺԳՆՈՒԹՅՈՒՆ, INTENSITY OF EARTHQUAKE**, երկրաշարժի ուժի մեծությունն է երկրի մակերևույթի որոշակի տեղում, օջախից որոշակի հեռավորության վրա, տե՛ս Балльность землетрясения, Магнитуда землетрясения:
- И-107. ИНТЕРНИДЫ** (լատ. internus – ներքին) – **ԻՆՏԵՐՆԻԴՆԵՐ, INTERNIDES**, օրթերկրասինկլինալային ծալքավոր համակարգերի ներքին և ավելի հին զոնաներ: Բնորոշվում են ապարների ուժգին ծալքավորությամբ և փոխակերպությամբ: Ի-ի հետ սովորաբար զուգորդվում են օֆիոլիթների գոտիներ: Գոյանում են էվերկրասինկլինալների տեղում:
- И-108. ИНТЕРФЕРЕНЦИОННАЯ ОКРАСКА** (լատ. interferento – փոխգործողություն) – **ԻՆՏԵՐՖԵՐԵՆՑԱՅԻՆ (ՎԵՐԱԴՐԱՎԱՆ) ԳՈՒՆԱՎՈՐՈՒՄ, INTERFERENCE COLOUR**, բյուրեղի զույնը երկու խաչաձև նիկոլների հատույթում՝ սպիտակ բևեռացման լույսի տակ: Ի. գ. պայմանավորված է երկու ինտերֆերենցող ճառագայթների քայլի տարբերությամբ:
- И-109. ИНТРАГЕОАНТИКЛИНАЛЬ** (լատ. intra – ներսում, մեջ և երկրաանտիկլինալ) – **ԻՆՏՐԱԵՐԿՐԱՎԱՆՏԻԿԼԻՆԱԼ (ԻՆՏՐԱԳԵՈԱՆՏԻԿԼԻՆԱԼ, ՆԵՐԵՐԿՐԱՎԱՆՏԻԿԼԻՆԱԼ), INTRAGEOANTICLINE**, բարձրացում երկրասինկլինալային մարզի ներսում, որը հարևան ներերկրասինկլինալներից տարբերվում է նստվածքների փոքր հաստություններով՝ կապված երկրակեղևի ավելի փոքր ճկման հետ:
- И-110. ИНТРАГЕОСИНКЛИНАЛЬ** (լատ. intra – ներսում, միջում և երկրասինկլինալ) – **ԻՆՏՐԱԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԼ (ՆԵՐԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԼ, ԻՆՏՐԱԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԼ), INTRAGEOSYNCLINE**, ճկվածք երկրասինկլինալային մարզի ներսում, որը հարակից զոնաների (ինտրաերկրաանտիկլինալների) համեմատությամբ տարբերվում է նստվածքների մեծ հաստությամբ:
- И-111. ИНТРУЗИВ** (լատ. intrusus – ներմղված, ներդրված) – **ՆԵՐԺԱՅՈՔՎԱԾՔ (ԻՆՏՐՈՒԶԻՎ), INTRUSIVE, INJECTED BODY, INJECTED MASS**, մագմայական մարմին, որը գոյանում է երկրակեղևի սովորաշերտերում՝ խորքից ներդրված մագմայի սառչելու հետևանքով: Ըստ Ն-ի ձևի, մեծության և ներփակող ապարների փոխհարաբերության՝ տարբերում են ապարազանգվածներ (շտոկ), բաթոլիթներ, էտմոլիթներ, լակոլիթներ, շերտային և հատող երակներ և այլն: Տե՛ս Интрузия:
- И-112. ИНТРУЗИВНЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ** – **ՆԵՐԺԱՅՈՔՎԱՅԻՆ (ԻՆՏՐՈՒԶԻՎ) ԱՊԱՐՆԵՐ, INTRUSIVE ROCKS, IRRUPTIVE ROCKS**, մագմայական ապարներ, որոնք առաջանում են երկրակեղևի խորքերում և միջնապատյանում մագմայի բյուրեղացման հետևանքով: Ն. ա-ի բնորոշ հատկանիշներն են ներփակող ապարների հետ կտրուկ հատող հպումները, լիաբյուրեղային կառուցվածքը և միներա-

լային խմբակցությունների հավասարակշռությունը: Դրանց ձևավորումը տեղի է ունենում դանդաղ սառեցման պայմաններում մեծ ճնշման տակ և ցնդող բաղադրիչների ակտիվ մասնակցությամբ, որոնք նպաստում են միներալների բյուրեղացմանը և սառչող մագմայի ջերմաստիճանի նվազմանը: Ըստ առաջացման խորության՝ տարբերում են խորքային (արխալ) (5 կմ-ից խոր) (գրանիտներ, դիորիտներ, գաբրո և այլն), միջին խորության (մեզարխալ) և ենթախորքային (հիպաբիսալ) ն. ա.: Վերջինները առաջանում են փոքր խորություններում և միջանկյալ տեղ են գրավում խորքային և արտաժայթքային ապարների միջև (օր.՝ գաբրոպորֆիրիտներ, գրանիտ-պորֆիրներ և այլն):

**И-113. ИНТРУЗИИ ДООРОГЕННЫЕ**, տե՛ս Интрузии доскладчатые:

**И-114. ИНТРУЗИИ ДОСКЛАДЧАТЫЕ – ՄԻՆՉԾԱԼՔԱՎՈՐ ՆԵՐԺԱՅԹՔՈՒՄՆԵՐ (ԻՆՏՐՈՒԶԻԱՆԵՐ), PREFOLDED INTRUSIONS**, առավելապես շերտային և ճեղքային, հիմքային և գերհիմքային բաղադրության ներժայթքվածքներ, որոնք ներդրվել են երկրասինկլինալային խորասուզման փուլում՝ մինչև ծալքավորման սկիզբը: Մ. ն. մասնակցում են ծալքավորությանը՝ ներփակող ապարների հետ համատեղ: Նույնն է՝ Интрузии доорогенные:

**И-115. ИНТРУЗИИ НЕСОГЛАСНЫЕ – ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿ ՆԵՐԺԱՅԹՔՈՒՄՆԵՐ (ԻՆՏՐՈՒԶԻԱՆԵՐ), DISCORDANT INTRUSIONS**, ներժայթքումներ, որոնց հպումները աններդաշնակ են ծալքերի թևերի անկումներին:

**И-116. ИНТРУЗИИ ПЛАТФОРМЫ – ՊԼԱՏՖՈՐՄԻ ՆԵՐԺԱՅԹՔՈՒՄՆԵՐ (ԻՆՏՐՈՒԶԻԱՆԵՐ), PLATFORM INTRUSIONS**, առաջանում են պլատֆորմային մարզերի նստվածքային ծածկոցի սահմաններում: Պլատֆորմների կառույցները մագմայի համար անթափանց զրահներ են, սակայն պլատֆորմներում մագմայի տարածման ու տեղաբաշխման համար բարենպաստ են շերտախմբերի ու շերտերի սահմանները, ծալքավոր հիմքի և նստվածքային ծածկոցի սահմանները, խոշորամասշտաբ ռեզիոնալ բեկվածքները, խոր ճեղքերը, որոնք կապված են մեծ թմբերի առաջացման հետ: Պ. ն. սովորաբար ունեն հիմքային, գերհիմքային, ալկալիական բաղադրություն և պատկանում են տրապային, ալկալիազերհիմքային և այլ տիպի ֆորմացիաներին:

**И-117. ИНТРУЗИИ ПОЗДНЕОРОГЕННЫЕ – ՈՒՇ ԼԵՌՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՆԵՐԺԱՅԹՔՈՒՄՆԵՐ (ԻՆՏՐՈՒԶԻԱՆԵՐ), LATE-OROGENIC INTRUSIONS**, ըստ Շտիլեի (1940) դրանք գրանիտակերպ ներժայթքումներ են, որոնք կապված են ծալքավորության ուշ փուլի հետ:

**И-118. ИНТРУЗИИ ПОСЛЕСКЛАДЧАТЫЕ – ՅԵՏԾԱԼՔԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԺԱՅԹՔՈՒՄՆԵՐ (ԻՆՏՐՈՒԶԻԱՆԵՐ), POSTFOLDED INTRUSIONS**, ճեղքային ներժայթքումներ, որոնք առաջանում են ծալքավորության ավարտից հետո՝ ընդհանուր բարձրացման փուլում կամ ակտիվացման փուլում: Աչքի են ընկնում առաջացման միջին և փոքր խորությամբ և ներկայացված են ճեղքային մարմիններով, լակոլիթներով, ապարազանգվածներով, օղակաձև ներժայթքումներով, դայկաներով: Ըստ կազմի տարբեր գրանիտակերպեր, սիենիտներ, ալկալիական գաբրոակերպեր են:

**И-119. ИНТРУЗИИ СИНОРОГЕННЫЕ – ՅԱՄԱԼԵՌՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՆԵՐԺԱՅԹՔՈՒՄՆԵՐ (ԻՆՏՐՈՒԶԻԱՆԵՐ), SYNOROGENIC INTRUSIONS**, ըստ Շտիլեի (1940) գրանիտակերպ ներժայթքումներ, որոնց ներդրումը տեղի է ունեցել ծալքավորության հետ համատեղ: Կախված ծալքավորության արտահայտման ժամանակից՝ Յ. Շտիլեն տարբերում է բուն լեռնագոյացման (բարձրալեռնագոյացման), ուշ լեռնագոյացման և ինտերցեդենտ գրանիտակերպ ներժայթքումներ: Յետագայում Յ. ն.

սկսեցին անվանել ներժայթքումները, որոնք կապված են շարժունակ զոնաների ծալքավորության գլխավոր փուլի կամ զարգացման միջին փուլերի հետ:

**И-120. ИНТРУЗИИ СКЛАДЧАТЫХ ОБЛАСТЕЙ – ԾԱԼՔԱՎՈՐ ՄԱՐԶՐԵՐԻ ՆԵՐԺԱՅԹՔՈՒՄՆԵՐ (ԻՆՏՐՈՒԶԻԱՆԵՐ), INTRUSIONS OF FOLDED AREAS,** կապված են ծալքավոր մարզերի հետ և առաջանում են մարզի զարգացման որևէ փուլում (տե՛ս Цикл тектоно-магматический): Տարածականորեն հարում են նեղ, երկար ծալքավոր զոնաներին: Ըստ տեկտ. շարժումներ նկատմամբ առաջացման ժամանակի՝ տարբերում են՝ 1) նախատեկտոնական (մինչծալքավոր, մինչլեռնագոյացման) Ծ. մ. ն., որոնք գոյացել են տեկտոնամագմայական ցիկլի վաղ փուլում՝ մինչ հիմնական տեկտ. շարժումները, 2) համատեկտոնական (համածալքավոր, համալեռնագոյացման) Ծ. մ. ն., որոնք առաջացել են ցիկլի միջին փուլում՝ ուժգին ծալքավոր շարժումների ժամանակ, 3) հետտեկտոնական (հետծալքավոր, հետլեռնագոյացման) Ծ. մ. ն., որոնք գոյացել են ցիկլի ուշ փուլում:

**И-121. ИНТРУЗИИ СОГЛАСНЫЕ – ՆԵՐԴԱՇՆԱԿ ՆԵՐԺԱՅԹՔՈՒՄՆԵՐ (ԻՆՏՐՈՒԶԻԱՆԵՐ), CONCORDANT INTRUSIONS,** ծալքերի միջուկում տեղադրված ներժայթքումներ, որոնց հպումները ներդաշնակ են ծալքի թևերի անկմանը:

**И-122. ИНТРУЗИИ СОСКЛАДЧАТЫЕ – ՀԱՄԱԾԱԼՔԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԺԱՅԹՔՈՒՄՆԵՐ (ԻՆՏՐՈՒԶԻԱՆԵՐ),** նույնն է՝ Интрузии синорогенные:

**И-123. ИНТРУЗИИ СУБВУЛКАНИЧЕСКИЕ – ԵՆԹԱՅՐԱԲԻԱՅԻՆ (ՍՈՒԲՅՐԱԲԻԱՅԻՆ) ՆԵՐԺԱՅԹՔՈՒՄՆԵՐ (ԻՆՏՐՈՒԶԻԱՆԵՐ), SUBVOLCANIC INTRUSIONS,** տեղադրված են փոքր խորություններում, ծագումնաբանորեն կապված են հրաբխային գործընթացների հետ և առաջացման պահին ունեն ուղիղ կամ կողմնակի կապ երկրի մակերևույթի հետ:

**И-124. ИНТРУЗИЯ** (ուշ լատ. intrusio – ներդրում, լատ. intrudo-ից – ներս են հրում) – **ՆԵՐԺԱՅԹՔՈՒՄ, ԻՆՏՐՈՒԶԻԱ, INTRUSION,** 1) երկրի քարոլորտի պինդ նյութում մագմայական հալույթի ներդրման գործընթաց, 2) մարմին, որն առաջանում է երկրի մակերևույթից ներքև որևէ խորությունում՝ մագմայական հալույթի սառչման (պնդացման) դեպքում: Կախված ներժայթքվածքային մարմնի և ներփակող ստվարաշերտերի շերտադասավորման փոխհարաբերությունից, տարբերում են՝ ներդաշնակ Ն-ներ, որոնք ներդրված են շերտավոր ստվարաշերտերի շերտավորման մակերևույթների երկայնքով, և աններդաշնակ (հատող) Ն-ներ, որոնք շերտագրական բաժինների նկատմամբ տեղաբաշխված են որևէ անկյան տակ: Ըստ ձևի՝ ներդաշնակ Ն-ների մոտ առանձնացնում են սիլեր, լակոլիթներ, ֆակոլիթներ [ոսպնյակաձև ներժայթքումներ կամարածալքերի (անտիկլինալների), հազվադեպ՝ գոգածալքերի (սինկլինալների) միջուկներում]: Աններդաշնակ, հատող մարմիններից առավել տարածված են դայկաները և ապարազանգվածները (հատակագծում շատ թե քիչ իզոմետրական): Հատող ներժայթքվածքային մարմինները սովորաբար կապված են տեկտ. խզվածքների հետ, հանդիպում են երկրակեղևի և՛ համեմատաբար կայուն, և՛ շարժունակ տեղամասերում: Ներդաշնակ Ն-ները ավելի բնորոշ են ամրապնդված մարզերին:

**И-125. ИНТРУЗИЯ АЛЬПИНОТИПНАЯ – ԱԼՊԻԱԿԵՐՊ ՆԵՐԺԱՅԹՔՈՒՄ (ԻՆՏՐՈՒԶԻԱ), ALPINE TYPE INTRUSION,** տերմինը վերաբերում է պերիդոտիտների ու սերպենտիտների ներժայթքումներին, որոնք կապված են լեռնագոյացման գոտիների ծալքավոր նստվածքների հետ: Նախատիպը նկարագրվել է Միջերկրածովյան շարժունակ գոտու ալպյան ծալքավոր համակարգում: Ա. ն-երը հանդիպում են ոչ մեծ ոսպնյակաձև, երականման կամ անկանոն ֆակոլիթանման մարմիններ:

րի ձևով, որոնք սովորաբար ներդաշնակ տեղադրված են ներփակող վաղ երկրասինկլինալային ուժգին ծալքավորված նստվածքաարտաժայթքային գոյացություններում: Որոշ ներժայթքումներ ունեն բավականին մեծ չափեր և ըստ տարածման հետամտվում են շատ կմ-եր:

**И-126. ИНТРУЗИЯ КОНИЧЕСКАЯ – ԿՈՆԱՉԵՎ ՆԵՐԺԱՅՁՔՈՒՄ (ԻՆՏՐՈՒԶԻԱ), CONICAL INTRUSION**, ենթախորքային (հիպաբիսալ) ներժայթքումներ, որոնք լցնում են խոշոր ներժայթքային մարմնի շրջապատի կոնաձև ճեղքերը: Վերջինները գոյանում են մագմայի ճնշման տակ, երբ մագման ապարների բլուկը տեղաշարժում է դեպի վեր: Կ. ն-ի ելքերը մակերևութում առաջացնում են համակենտրոն շերտերի սերիաներ: Կոնաձև շերտերը հաճախ հանդիպում են կենտրոնական ներժայթքումների կազմի օղակաձև դայկաների հետ միասին:

**И-127. ИНТРУЗИЯ МНОГОФАЗНАЯ – ԲԱԶՄԱՓՈՒԼ ՆԵՐԺԱՅՁՔՈՒՄ (ԻՆՏՐՈՒԶԻԱ), MULTIPHASE INTRUSION**, ձևավորվում են ներժայթքվածքային գործընթացների բազմիցս բռնկումների հետևանքով՝ մագմայի երկու, երեք (և ավելի) ներդրման փուլերում: Բ. ն-ները ստորաբաժանվում են՝ ա) բազմակի, երբ մագմայի կազմը տարբեր ներժայթքվածքային փուլերում համարյա չի փոփոխվում, բ) բարդ, երբ յուրաքանչյուր փուլում ներդրվում է տարբեր բաղադրության մագմա:

**И-128. ИНТРУЗИЯ ОФИОЛИТОВАЯ – ՕՖԻՈԼԻԹԱՅԻՆ ՆԵՐԺԱՅՁՔՈՒՄ (ԻՆՏՐՈՒԶԻԱ), OPHIOLITIC INTRUSION**, հիմքային և գերհիմքային ապարների ներժայթքումների տիպ, որը բնորոշ է էվերկրասինկլինալային տիպի ծալքավոր զոնաների զարգացման վաղ փուլերի համար և նախկինում ներառվում էր օֆիոլիթային ֆորմացիայի մեջ: Այժմ «օֆիոլիթային ֆորմացիա» տերմինը համարվում է հնացած, այդ պատճառով «Օ. ֆ.» երբեմն օգտագործվում է որպես ազատ օգտագործման տերմին, որն ընդգծում է այն սերտ կապակցվածությունը, որը ժամանակի և տարածության մեջ գոյություն ունի հիմքային ու գերհիմքային ապարների ներժայթքումների (որոնք այժմ պատկանում են զաբրոպերիդոտիտային կամ զաբրոբազիտային ֆորմացիային) և հրաբխածին սպիլիտ-դիաբազային համալիրների միջև: Օֆիոլիթային ածականի օգտագործումը նպատակահարմար է նաև այն պատճառով, որ տեկտոնամագմայական ցիկլի վաղ փուլի հիմքային և գերհիմքային ապարների ոչ բոլոր կազմավորումներն են զուգորդվում ստորջրյա հիմքային արտաժայթքումներով, այսինքն՝ դրանք ոչ բոլորն են վերագրվում օֆիոլիթային խմբին:

**И-129. ИНТРУЗИЯ ЦЕНТРАЛЬНАЯ – ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՆԵՐԺԱՅՁՔՈՒՄ (ԻՆՏՐՈՒԶԻԱ), CENTRAL INTRUSION**, օղակաձև տիպի աններդաշնակ ներժայթքում, որի ներքին կառուցվածքը բնորոշվում է մի շարք կոնաձև մարմինների առկայությամբ, որոնք իրենցից ներկայացնում են ներդրման ինքնուրույն փուլեր: Կ. ն-ներից շատերը հանդիսանում են ենթահրաբուխներ: Կ. ն-ների եզրային օղակները ավելի հին են և հատվում են ավելի երիտասարդներով: Կ. ն-ների առավել տիպական օրինակներ հանդիսանում են ալկալիական, ալկալիազերհիմքային ներժայթքումները (խիբիններ, Կոլայի թերակղզի, Ալդան, ԶԶ և այլն):

**И-130. ИНФИЛЬТРАЦИОННЫЕ ВОДЫ – ՆԵՐԾԾ(ԱՆՑ)ՄԱՆ (ԻՆՖԻԼՏՐԱՑԻՈՆ) ՋՐԵՐ, PERCOLATING WATERS**, ստր. ջրեր, որոնք առաջացել են ապարների դատարկությունների միջով մթնոլորտային տեղումների և մակերևութային ջրերի ներծծման շնորհիվ:

**И-131. ИНФИЛЬТРАЦИОННЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ – ՆԵՐԾԾ(ԱՆՑ)ՄԱՆ (ԻՆՖԻԼՏՐԱՑԻՈՆ) ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, PERCOLATING DEPOSITS**, հողմահարման կեղևում միներալային զանգվածի կուտակում, որը գոյանում է միներալային նյու-

թի վերանստեցման արդյունքներից՝ նրա ներծծ(անց)ման գործընթացում: Երկրի մակերևույթ դուրս բերված խորքային ապարներն ու հանքանյութերը դառնում են քիմիապես անկայուն և ջրի, ածխաթթվի ու թթվածնի ներագդեցության տակ վերափոխվում են հողմահարման կեղևում տվյալ պայմաններում կայուն նոր քիմ. միացությունների: Միներալային միացությունների մի մասը, այդ թվում նաև մետաղապարունակները, անցնում են գետնաջրերի լուծույթների մեջ և ենթարկվում են ծծանցման՝ ապարների ծակոտիներով ու ճեղքերով ավելի խոր: Խորքում օքսիդացնող միջավայրը փոխարինվում է վերականգնվողով, որի հետ կապված՝ լուծված միներալային միացությունների որոշ մասը դառնում է անլուծելի և, նստելով Երկրի մակերևույթից որոշ խորությունում, առաջացնում է Ն. հ.: Ն. հ. ձևավորվում են գետնաջրերի մակերևույթին մոտ՝ մինչև մի քանի տասնյակ և հարյուրավոր մ խորությունները: Այդ հնքվ-երին են պատկանում ուրանի, երկաթի, պղնձի, բնածին ծծմբի հանքանյութերը:

**И-132. ИНФИЛЬТРАЦИЯ** (լատ. in – ներսը, մեջը և ուշ լատ. filtratio – քանել, մզել, գտել) – **ՆԵՐԾԾ(ԱՆՑ)ՈՒՄ (ԻՆՖԻԼՏՐԱՑԻԱ), INFILTRATION**, մթնոլորտային ու մակերևութային ջրերի թափանցելը երկրակեղևը կազմող գրունտների և ապարների մեջ՝ ճեղքերի, ծակոտիների և այլ դատարկությունների միջոցով: Մթնոլորտային տեղումների քանակի և ներծծվող ջրի քանակի հարաբերությունը (%-ներով) կոչվում է ներծծման գործակից:

**И-133. ИНФРАКЕМБРИЙ** (լատ. infra – ներքևում, ավելի ցածր) – **ԻՆՖՐԱՔԵՄԲՐԻ, INFRA-CAMBRIAN**, նույնն է՝ Эокембрий:

**И-134. ИНФЛЮАЦИЯ** (լատ. influo – ներհոսում են) – **ՆԵՐՉՈՍԹ (ԻՆՖԼՅՈՒԱՑԻԱ), INFLUENT FLOW, PERCOLATION**, մթնոլորտային և մակերևութային ջրերի թափանցելը երկրակեղևը կազմող գետնահողերի և ապարների մեջ՝ խոշոր ճեղքերի, ծակոտիների և կարստային դատարկությունների միջով:

**И-135. ИНЪЕКЦИОННАЯ БРЕКЦИЯ** (լատ. injectio – ներս գցել, ներարկել) – **ՆԵՐԱՐԿՈՒՄԱՅԻՆ ՓՇՐԱՔԱՐ (ԲՐԵԿԿԻԱ), INJECTION BRECCIA**, բեկորային ապար, որն առաջանում է ներփակող ապարների ճեղքերում՝ առավելապես այլասեռ ապարների բեկորների ներդրման հետևանքով:

**И-136. ИНЪЕКЦИЯ** (լատ. injectio – ներս գցել, ներարկել) – **ՆԵՐԱՐԿՈՒՄ, INJECTION**, (երկրբ.), մագմայական հալույթի կամ նստվածքային նյութի՝ ապարների կամ նստվածքի մեջ ներթափանցման գործընթաց (ներքևից վեր, վերևից ներքև և կողային ուղղությամբ)՝ բարձր ճնշման ազդեցության տակ՝ նստվածքային ապարների շերտերի միջև (շերտային Ն.) և կամ ապարների ստվարաշերտերը հատող ճեղքերի մեջ:

**И-137. ИПРСКИЙ ЯРУС** (Իպր, Ypres ք-ի անունից Բելգ.) – **ԻՊՐՅԱՆ ՀԱՐԿ, YPRESIAN**, Արմ. Եվրոպայի էոցենի ստորին հարկ:

**И-138. ИРИДИЕВЫЕ РУДЫ**, տե՛ս Платиновые руды:

**И-139. ИРИДИЙ, Ir** (հուն. iris – սեռ. հ. iridos – ծիածան, այդ տարրի աղերի գանազան գունավորումից) – **ԻՐԻԴԻՈՒՄ, IRIDIUM**, Մենդելեևի պարբերական համակարգի VIII խմբի քիմ. տարր: Հիմքային և գերհիմքային ապարների տիպական տարրերից է: Ի-ի համար հիմնականում բնորոշ է բնածին վիճակը, կորզվում է պլատինաբեր և ոսկեբեր ցրոններից:

**И-140. ИСКОПАЕМЫЕ ОРГАНИЗМЫ** – **ԲՐԱԾՈՆ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐ, FOSSIL ORGANISMS**, տե՛ս Окаменелости:

**И-141. ИСКОПАЕМЫЕ РАСТЕНИЯ** – **ԲՐԱԾՈՆ ԲՈՒՅՍԵՐ, FOSSIL PLANTS**, բույսերի մնացորդներ (տերևներ, ցողուններ, պտուղներ, բեղմնիկներ, ծաղկափոշի), որոնք

հանդիպում են նստվածքային ապարներում, հատկապես՝ ցամաքային: Այդ մնացորդներից, եթե կուտակվել են զանգվածայնորեն, որոշակի պայմաններում առաջացել են ածուխների և այլ այրվող հանածոների շերտերը: Բ. բ-ի կազմի հիման վրա որոշվում է ներփակող նստվածքների հասակը, տե՛ս նաև՝ Палеоботаника:

**И-142. ИСКОПАЕМЫЕ РОССЫПИ – ԲՐԱԾՈՆ ՑՐՈՆՆԵՐ, FOSSIL PLACERS**, քանկարժեք մետաղների հիւն (մինչքեմբրիյան, պալեոզոյան, մեզոզոյան) կուտակումներ, որոնք տարբեր երկրք. գործընթացների հետևանքով կորցրել են կապը ժամանակակից ռելիեֆի հետ: Առանձնացնում են Բ. ց-ի հետևյալ ծագումնաբանական տիպերը՝ դելյուվիալ, հեղեղաբերուկ (պրոլյուվիալ), գետաբերուկ (ալյուվիալ), դելտային, մերձափնյա ծովային, ծովային: Ոսկու, ուրանի, ալմաստի, տիտանի և ցիրկոնիումի Բ. ց. հայտնի են նստվածքահրաբխային ստվարաշերտերի տարբեր հորիզոններում, որոնք լցնում են երկրասինկլինալային և պլատֆորմային ճկվածքները: Ոսկու, ուրանի և ալմաստի Բ. ց. տեղադրված են ճկվածքների եզրերում տարածված հիմքային, միջին և ներկազմավորումային կոնգլոմերատներում, տիտանի և ցիրկոնիումի Բ. ց.՝ մանրահատիկ լավ տեսակավորված ավազներում (քվարցիտներում):

**И-143. ИСКОПАЕМЫЙ ЛЁД – ԲՐԱԾՈՆ ՍԱՈՒԻՅՑ, FOSSIL ICE**, մնացորդային ստր. սառույց, որը պահպանվել է անցյալ երկրք. ժամանակաշրջաններից:

**И-144. ИСКОПАЕМЫЙ РЕЛЬЕФ – ԲՐԱԾՈՆ ՌԵԼԻԵՖ**, տե՛ս Погребённый рельеф:

**И-145. ИСКРИВЛЕНИЕ СКВАЖИНЫ – ՅՈՐԱՏԱՆՑՔԻ ՇԵՂՈՒՄ, WELL DEVIATION**, հորատման գործընթացում հորատանցքի շեղում նախատեսված ուղղությունից, որը կարող է կախված լինել երկրք. պայմաններից (թերթավորություն, ճեղքավորություն, ապարների անկման տարբեր անկյուններ և այլն), հորատման տեխնոլոգիայի առանձնահատկություններից, տեխնիկական պայմաններից և այլն:

**И-146. ИСЛАНДСКИЙ ШПАТ (Իսլանդիայում առաջին խոշոր հնքվ-ի հայտնաբերման տեղավայրից) – ԻՍԼԱՆԴԱՎԱՆ ՍՊԱԹ, ICELAND SPAR**, կալցիտի խոշորաբյուրեղային թափանցիկ տարատեսակ, արժեքավոր օպտիկական հումք: Անգույն կամ գունավորված՝ գլխ. դեղին գույնով: Բնորոշ են աճման կրկնաբյուրեղները: Առաջանում է ջրաջերմային երկկարբոնատաբլորիդային լուծույթներից՝ հիմքային արտաժայթքային ու կարբոնատային ապարների խոռոչներում: Գլխ. արդյունաբերական նշանակություն ունեն հին պլատֆորմների տրապային ֆորմացիաների հետհրաբխային հնքվ-երը:

**И-147. ИСТОК РЕКИ – ԳԵՏԻ ԱՎՈՒՆՔ, SOURCE, RIVER HEAD, HEADWATER**, վայր, որտեղ հունում երևան է գալիս ջրի կայուն հոսք: Խոշոր գետերի համար պայմանականորեն Գ. ա. համարվում է տարբեր անվանման երկու գետերի միախառնման տեղը:

**И-148. ИСТОРИЧЕСКАЯ ГЕОЛОГИЯ – ՊԱՏՄԱՎԱՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, HISTORICAL GEOLOGY**, գիտություն, որն ուսումնասիրում է երկրի երկրք. զարգացման պատմությունն ու օրինաչափությունները՝ երկրակեղևի առաջացման պահից մինչև նրա ժամանակակից վիճակը: Պ. ե-յան խնդիրներն են՝ ժամանակի ընթացքում ապարների առաջացման հաջորդականության հաստատումը, անցյալի ֆիզաշխ. պայմանների վերականգնումը, երկրի օրգանական աշխարհի զարգացման ուսումնասիրությունը, տեկտ. շարժումների և տեկտ. կառուցվածքների զարգացման պատմության պարզաբանումը, հրաբխականության պատմության և ներժայթքումների (ինտրուզիաների) ներդրման հաջորդականության բացահայտումը: Պ. ե. իր ուսումնասիրություններում հենվում է հնէաբանության, քարաբանու-



թյան, ֆացիաների վերլուծության, ապարագրության, միներալաբանության, բացարձակ հասակի որոշման, տեկտոնիկայի և երկրբ. այլ ճյուղերի տվյալների վրա: Պ. ե-յան հիմք են հանդիսանում շերտագրությունը և հնաշխարհագրությունը:

**И-149. ИСТОЧНИК НЕФТЯНОЙ – ՆԱՎԹԻ (ՔԱՐՅՈՒՂԻ) ԱՂԲՅՈՒՐ, OIL SPRING,** նավթի կամ ջրախառն նավթի բնական ելք՝ երկրի մակերևույթում կամ ջրի տակ:

**И-150. ИСТОЧНИК (РОДНИК, КЛЮЧ) – ԱՂԲՅՈՒՐ, SPRING,** ստր. ջրի կենտրոնացած բնական ելք՝ երկրի մակերևույթում կամ ջրավազանում (ստորջրյա աղբյուր): Առաջանում է այնտեղ, որտեղ ջրատար հորիզոնը հատվում է ժամանակակից ռելիեֆի բացասական ձևերով:

**И-151. ИСТОЧНИКИ НИСХОДЯЩИЕ – ՎԱՐՆԵԱՅ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, GRAVITY SPRINGS,** տե՛ս Исходящие источники:

**И-152. ИСХОДНЫЕ ФОРМЫ РЕЛЬЕФА – ՌԵԼԻԵՖԻ ՍԿՁԲՆԱԿԱՆ ՁԵՎԵՐ,** տե՛ս Первичные формы рельефа:

**И-153. ИХТИОЗАВРЫ (Ichthyosaurus) (հուն. ichthýs – ձուկ և sauros – մողես) – ՋԿՆԱՍՈՂԵՍՆԵՐ, ԻԽԹԻՈՉԱՎՐԵՐ, ICHTHYOSAURS,** մահացած սողունների ենթադաս, ունեցել են ձկնանման մարմին՝ արտաքինից նման դելֆինների մարմնին: Բնակվել են ծովերում՝ տրիասից մինչև կավիճ:

# Կ

- Կ-1. КАВЕРНОЗНОСТЬ ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ԽՈՌՈՉԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, CAVERNOSITY OF ROCKS**, ապարներում փոքր (0.1 մմ-ից մինչև մի քանի սմ և ավելի տրամագծով) կլորավուն կամ անկանոն ձևի դատարկությունների (խոռոչներ) առկայություն: Ըստ ծագման՝ Ա. խ. լինում է առաջնային և երկրորդային: Առաջնային խոռոչավորությունը բնորոշ է որոշ հրաբխածին ապարներին (պայմանավորված է գազերով հարուստ լավայի սառեցման առանձնահատկություններով), ինչպես նաև՝ օրգանածին կրաքարերին: Երկրորդայինը ջրի քայքայիչ գործունեության արդյունք է և դիտվում է հեշտ կարստավորվող ապարներում (կրաքարեր, դոլոմիտներ, գիպս և այլն):
- Կ-2. КАДАСТР** (ֆրանս. cadastre, ուշ հուն. katástichon-ից կամ ուշ լատ. capitastrum-ից – գրանցում, թվարկում) – **ՎԱԴԱՍՏ (ԱՍՓՈՓԱԳԻՐ), CADASTRE**, տվյալների համակարգված հավաքածու, որն ընդգրկում է օբյեկտների ու երևույթների քանակական և որակական հավաքագրումը, հաճախ՝ սոցիալ-տնտեսական գնահատմամբ:
- Կ-3. КАДОМСКАЯ СКЛАДЧАТОСТЬ – ՎԱԴՈՍՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, CADOMIAN FOLDING**, Արմ. Եվրոպայում (Ֆրանսիայում) առանձնացված մինչքեմբրիյան ծալքավորություններից վերջինը, համապատասխանում է բայկալյան ծալքավորությանը:
- Կ-4. КАЗАНСКИЙ ЯРУС** (Թաթարական ԱՅ, Կազան ք-ի անունից) – **ՎԱՉԱՆՅԱՆ ՅԱՐԿ, KAZANIAN**, պերմի համակարգի վերին բաժնի ներքևից երկրորդ հարկ:
- Կ-5. КАЗАНЦЕВСКОЕ МЕЖЛЕДНИКОВЬЕ, МЕЖЛЕДНИКОВАЯ ЭПОХА – ՎԱՉԱՆՑԵՎՅԱՆ ՄԻՉՍԱՈՑԱԴԱՇՏԱՅԻՆ ԴԱՐԱՎԱՐԳ, KAZANTSEVO INTERGLACIAL**, միջսառցադաշտային դարակարգ, որն անջատվել է Սիբիրում տազովյան և զիրյանյան սառցադաշտային դարակարգերի միջև: Համապատասխանում է Արլ. Եվրոպայի միկուլինյան միջսառցադաշտայինին:
- Կ-6. КАИНИТ** (հուն. kainós-ից – նոր) – **ՎԱԻՆԻՏ, KAINITE**, միներալ սուլֆատների դասից, քիմ. կազմը  $\text{RMg}(\text{SO}_4)\text{Cl}\cdot 3\text{H}_2\text{O}$ , բյուրեղանում է մոնոկլինային համակարգում, առաջացնում է անգույն աղուսածն և իզոմետրական բյուրեղներ, հողանման և մակահոսքային ագրեգատներ, խիտ զանգվածներ: Կարծրությունը՝ 2.5-3: Բնորոշ է կատարյալ հերձականությունը, մետաղային փայլը: Առաջանում է ծովային ծագման էվապորիտներում: Մտնում է կալիումային աղերի կազմի մեջ:
- Կ-7. КАЙНОЗОЙСКАЯ ГРУППА** (հուն. kainós – նոր) – **ՎԱՅՆՈՉՈՅԱՆ ԽՈՒՄԲ**, նույնն է՝ Кайнозойская эратема:
- Կ-8. КАЙНОЗОЙСКАЯ ЭРАТЕМА (ЭРА), КАЙНОЗОЙ** (հուն. kainós – նոր և zōē – կյանք) – **ՎԱՅՆՈՉՈՅԱՆ ԷՐԱՏԵՄԱ (ԴԱՐԱՇՐՋԱՆ) (ՆՈՐ ՎՅԱՆՔԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ), ՎԱՅՆՈՉՈՅ, CAINOZOIC, CENOZOIC, KAINOZOIC**, երկրակեղևի շերտերի ընդհանուր շերտագրական սանդղակի ամենավերին (երիտասարդ) էրատեմա

(խումբ) և դրան համապատասխանող երկրի երկրբ. պատմության նորագույն դարաշրջան: Սկսվել է 65 մլն. տարի սրանից առաջ, շարունակվում է առ այսօր: Ստորաբաժանվում է պալեոգենյան, մեոգենյան և չորրորդական (անտրոպոգենյան) համակարգերի (ժամանակաշրջանների): Կայնոգոյը բնութագրվում է ուժգին լեռնագոյացման շարժումներով, կապված ալպյան ծալքավորության հետ, որի հետևանքով ստեղծվել են ամենաբարձր լեռնաշղթաները հաղաղ օվկիանոսի ափերի երկայնքով, Զր. Եվրոպայում և Ասիայում: Նեոգենի վերջում և չորրորդական ժամանակաշրջանում տեղի է ունեցել խիստ ցրտացում, որն ուղեկցվել է Եվրոպայում, Ասիայում և Զս. Ամերիկայում հզոր մայրցամաքային սառցապատումներով: Օրգանական աշխարհում տիրապետող դիրք են գրավել կաթնասունները: Կենդանիները և բույսերը մոտ են ժամանակակիցներին: Անտրոպոգենի սկզբում հանդես են եկել առաջին պարզունակ մարդիկ:

**К-9. КАЙНОТИПНЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ** (հուն. kainós – նոր և týpos – տեսք, դեմք) – **ՆՈՐԱՏԻՊ (ԿԱՅՆՈՏԻՊ) ԱՊԱՐՆԵՐ, CENOTYPAL ROCKS, KAINOTYPE ROCKS**, երկրորդային գործընթացներով չփոփոխված կամ աննշան փոփոխված մագմայական, գլխ. արտաժայթքային ապարներ (անկախ իրենց հասակից), որոնք պահպանել են իրենց թարմ տեսքը:

**К-10. КАЛАМИТОВЫЕ** (Calamites) (հուն. kálamos – եղեգն) – **ԿԱԼԱՄԻՏՆԵՐ, CALAMITES**, հատվածացողունավոր բույսերի մահացած խումբ, ունեցել են ծառանման բուն՝ մինչև 10-12 մ բարձրությամբ: Գոյություն են ունեցել կարբոնում և պերմում: Ղեկավարող բրածոներ են:

**К-11. КАЛЕДОНИДЫ – ԿԱԼԵՊՈՆԻԴՆԵՐ, CALEDONIDES**, կալեդոնյան ծալքավորության մարզեր:

**К-12. КАЛЕДОНСКАЯ СКЛАДЧАТОСТЬ** (Շոտլանդիայի լատինական Կալեդոնիա, Caledonia, անվանումից) – **ԿԱԼԵՊՈՆՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, CALEDONIAN FOLDING**, տեկտոգենեզի դարակարգ, որն արտահայտվել է երկրբ. գործընթացների (ուժգին ծալքավորության, լեռնագոյացման և գրանիտակերպ մագմայականության) համախմբությամբ՝ վաղ պալեոգոյի վերջում-ուշ պալեոգոյի սկզբում (500-400 մլն. տարի): Կ. ծ-յան հետևանքով ավարտվել է դեռևս պրոտերոգոյի վերջում գոյություն ունեցող որոշ շարժում գեոսինկլինալային համակարգերի զարգացումը, որը հանգեցրել է նրանց տեղում ծալքավոր լեռնային համակարգերի՝ կալեդոնիդների ձևավորմանը: Դասական կալեդոնիդներ են Բրիտանական կղզիների, Սկանդինավիայի, Զս. և Արլ. Գրենլանդիայի լեռնային համակարգերը: Տիպական կալեդոնիդները տարածված են Կենտրոնական Ղազախստանում, Զս. Տյան-Շանում, Զր-Արլ. Չինաստանում, Արլ. Ավստրալիայում: Կ. ծ. էական դեր է խաղացել կորդիլիերների (հատկապես Զր. Ամերիկայի), Զս. Ապալաչների և այլ մարզերի զարգացման մեջ: Կ. ծ-յան ամենավաղ փուլերը վերաբերում են քեմբրիի միջին մասին և վերջին (սալաիրյան կամ սարդյան), հիմնական փուլերը ընդգրկում են օրդովիկի վերջը-սիլուրի սկիզբը (տակոնյան) և սիլուրի վերջը – դևոնի սկիզբը (ուշ կալեդոնյան), իսկ եզրափակիչները՝ դևոնի միջին մասը (օրկադյան կամ սվալբարդյան):

**К-13. КАЛИЙ, К** [արաբ. ալ-կալի-պոտաշ (կալիումի կարբոնատ)] – **ԿԱԼԻՈՒՄ, POTASSIUM**, Մենդելեևի պարբերական համակարգի I խմբի քիմ. տարր: Բնական Կ. կազմված է երկու կայուն (<sup>39</sup>K, <sup>41</sup>K) և մեկ ճառագայթակտիվ (<sup>40</sup>K) իզոտոպներից: Կ. արծաթավուն-սպիտակ, թեթև, փափուկ և դյուրահալ մետաղ է: Երկրակեղևի ամենատարածված ապարածին տարրերից է (25% ըստ զանգվածի): Մագմայական ապարներում Կ-ի պարունակությունը մեծանում է թթվայնության աճմանը զուգընթաց: Առավելագույն պարունակությունը (մինչև 7%) ապատիտային շար-

քի ալկալիական ապարներում է: Այդ ապարներում գլխ. Կ. պարունակող միներալներ են ալկալիական դաշտասպաթները, փայլարները, նեֆելինը, լեյցիտը: Մագմայական ապարների հողմահարման ժամանակ Կ-ի հիմնական մասը կուտակվում է կավերում, որոնցում Կ-ի պարունակությունը 2.28 % է (ըստ զանգվածի):

**K-14. КАЛИЙНЫЕ СОЛИ – ԿԱԼԻՈՒՄԱՅԻՆ ԱՂԵՐ, POTASH SALTS, POTASSIUM SALTS**, նստվածքային ապարներ, որոնք գոյացել են ջրում լուծվող կալիումային և կալիումամագնեզիումային միներալներից (սիլվին, կառնալիթ, կահնիտ, պոլիհալիտ և այլն): Առաջացնում են նստվածքային հնքվ-եր:

**K-15. КАЛОРИЙНОСТЬ ТОПЛИВА – ԿԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ԿԱՈՐԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, CALORICITY OF FUEL**, հետազոտվող վառելանյութի կշռային միավորի լրիվ այրման ժամանակ անջատված ջերմության քանակ:

**K-16. КАЛЬДЕРА (իսպ. caldera, բառ. մեծ կաթսա) – ԿԱԼԴԵՐԱ (ՅՐԱԲԽԱԳՈԳ), CALDERA**, հրաբխային ծագման լայնարձակ, կլորավուն կամ ձվաձև գոգավորություն (փոսորակ)՝ զառիթափ, հաճախ աստիճանավոր լանջերով: Կ-յի լայնությունը հասնում է 10-20 կմ, խորությունը՝ մի քանի հարյուր մ: Տարբերում են պայթման Կ-ներ, որոնք առաջանում են հրաբխային գագեթի պայթման դեպքում, և փլեցման Կ-ներ, որոնք առաջանում են հրաբուխը շրջակայող կամ հրաբխային մարմնում գտնվող խզվածքներով ապարազանգվածների նստեցման հետևանքով:

**K-17. КАЛЬЦИЙ, Ca** (լատ. calx-ից, սեռ. h. calcis – կիր) – **ԿԱԼՑԻՈՒՄ (ԿՐԱԾԻՆ), CALCIUM**, պարբերական համակարգի II խմբի քիմ. տարր: Արծաթավուն-սպիտակ, թեթև մետաղ է: Կ. երկրակեղևի ամենատարածված ապարածին տարրերից է (5-րդ տեղում է, ըստ զանգվածի 3.27 %): Ստնում է շատ միներալների կազմի մեջ (սիլիկատներ, ալյումասիլիկատներ, բորասիլիկատներ, կարբոնատներ, սուլֆատներ, ֆոսֆատներ, վանադատներ, ֆտորիդներ, քլորիդներ և այլն): Կ-ի սիլիկատները և ալյումասիլիկատները մագմայական և փոխակերպային ապարների կարևորագույն ապարակազմիչ միներալներ են: Ջրաջերմային (հիդրոթերմալ) և մակերևութային գործընթացների պայմաններում դառնում է կայուն և լայնորեն տարածված է կարբոնատներում:

**K-18. КАЛЬЦИТ, ИЗВЕСТКОВЫЙ ШПАТ** (լատ. calx-ից սեռ. h. calcis – կիր) – **ԿԱԼՑԻՏ, ԿՐԱՍՊԱԹ (ԿՐԱԾՆԱՔԱՐ), CALCITE, CALC SPAR**, միներալ կարբոնատների դասից, CaCO<sub>3</sub>: Բյուրեղանում է տրիգոնային համակարգում: Առաջացնում է կանոնավոր բյուրեղներ՝ հատվածակողմային, աղյուսածև, շեղանկյունանիստային և այլ բարդ ձևեր: Սովորական է կրկնաբյուրեղությունը: Յերծականությունը կատարյալ է: Կ-ի համար բնորոշ են նաև հատիկավոր ագրեգատները, բյուրեղախմբերը, շթաքարերը, պոկաքարերը, խիտ, ծակոտկեն, նրբաթերթավոր, ճառագայթավոր և թելավոր կուտակումները, նրբազուլավոր կիսաթափանցիկ տարբերակները [մարմարային օնիքս (եղնզնաքար)]: Անգույն և թափանցիկ Կ. կոչվում է իսլանդական սպաթը: Կ. կարող է գունավորված լինել (իզոմորֆ և մեխ. խառնուրդների հետևանքով) մոխրագույն, դեղին, կարմիր, գորշ, կանաչ և սև երանգներով: Յաճախ սպիտակ է: Կարծրությունը 3 է: Լուծվում է սառը նոսրացված աղաթթվում: Կ. ամենատարածված միներալներից է: Նստվածքային (քիմիածին և օրգանածին) ապարների կարևորագույն ապարակազմիչ միներալ է: Յպումային և ռեզիդուալ փոխակերպված կրաքարային ապարների՝ բյուրեղային կրաքարերի, մարմարների, կալցիֆիրների գլխավոր բաղադրամասն է: Յանդիպում է ալկալիական մագմայական ապարներում, կարբոնատիտներում, երկրորդային միներալացման արգասիքներում: Աղբյուրների ելքերի մոտ առաջացնում է կրային տուֆեր (տրավերտիններ): Կ. միջին և ցածրաջերմաստիճանային հնքվ-երի տիպական միներալ է:

**K-19. КАЛЬЦИТИЗАЦИЯ – ԿԱԼՑԻՏԱՑՈՒՄ, CALCITIZATION**, ապարների՝ կալցիտով հարստացման երկրորդային գործընթացներ՝ ի հաշիվ սկզբնական բաղադրիչների կամ դատարկությունների, ծակոտիների և խռոչների լցման:

**K-20. КАЛЬЦИФИР – ԿԱԼՑԻՖԻՐ, CALCIPHIRE**, փոխակերպային ապար, անհավասարահատիկ սիլիկատակարբոնատային, որն առաջացել է կարբոնատային ապարների խոր փոխակերպման հաշվին: Բաղկացած է կալցիտի և դոլոմիտի բյուրեղներից, ինչպես նաև շպինելից և մագնեզիումի սիլիկատներից:

**K-21. КАМЕНИСТАЯ ПУСТЫНЯ, ГАМАДА, ХАМАДА – ՔԱՐՔԱՐՈՏ ԱՆԱՊԱՍ, ՀԱՍԱՊԱ, STONY DESERT, HAMMADA, DESERTIC ROCK PLAIN**, անապատ, որը գոյացել է ցածրաբլուրային և մանրաբլուրային սարավանդների մայրական թույլ հողմահարված ապարների վրա: Մակերևույթը ծածկված է խճաքարով և ճալաքարով: Հողաբուսական ծածկույթը բացակայում է:

**K-22. КАМЕННАЯ СОЛЬ – ՔԱՐԱՂ, տե՛ս Գалит:**

**K-23. КАМЕННОУГОЛЬНАЯ СИСТЕМА (ПЕРИОД), КАРБОН (քարածխի հանքակուտակների լայն տարածումից) – ՔԱՐԱԾԽԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ (ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆ), ԿԱՐԲՈՆ, CARBONIFEROUS SYSTEM (PERIOD), CARBONIAN**, պալեոզոյան էրատենայի (խմբի) ըստ հաջորդականության հինգերորդ համակարգ, համապատասխանում է Երկրի պալեոզոյան դարաշրջանի պատմության հինգերորդ ժամանակաշրջանին: Սկսվել է 359 մլն. տարի առաջ, տևողությունը՝ 60 մլն. տարի: Նախկին ԽՍՀՄ-ում Ք. հ. ստորաբաժանվում է երեք բաժինների՝ ստորին (տուրնեյան, վիզեյան և սերպուխովյան հարկեր), միջին (բաշկիրական և մոսկովյան հարկեր), վերին (կասիմովյան և գժելյան հարկեր): Արմ. Եվրոպայում ընդունված է բաժանումը երկու բաժինների՝ ստորին (դինամտյան), որը ներառում է տուրնեյան և վիզեյան հարկերը, և վերին (սիլեզյան)՝ միավորում է նամյուրյան, վեստֆալյան և ստեֆանյան հարկերը: ԱՄՆ-ում Ք. հ-ի ստորին ու միջին և վերին բաժինները դիտարկվում են որպես երկու ինքնուրույն համակարգեր՝ միսսիսիպյան և փենսիլվանյան: Ժամանակաշրջանի սկզբում ծովը ծածկել է մայր ցամաքների զգալի մասը, վերջում Հր. կիսագնդում տեղի են ունեցել լայնատարած սառցապատումներ: Ք. հ-ում արտահայտվել են ուժգին տեկտ. շարժումներ՝ հերցինյան (վարիսյան) ծալքավորությունը: Ձևավորվել են լեռնաշղթաներ (Տյան-Շան, Ղազախստան, Ուրալ, Եվրոպայի հս. և արմ. մասեր, Արլ. Ասիա, Հս. Ամերիկա): Կ-ում ցամաքը բնակեցվել է առաջին ցամաքային ողնաշարավորներով՝ ստեզոցեֆալներով, հանդես են եկել խոշոր միջատները: Բույսերի մեջ տիրապետել են ծառանման պտերները, գետնամուշկայինները, հանդես են եկել առաջին փշատերևները: Ծովային ֆաունան բնորոշվել է քառաճառագայթ բուստերի, ֆորամինիֆերների, մամռակերպերի, ուստոտանիների և մի շարք այլ խմբերի ծաղկմամբ: Կլիման աչքի է ընկել արևադարձային, մերձարևադարձային և բարեխառն գոտիների բարձր խոնավությամբ, որը նպաստել է բոլոր մայր ցամաքներում անտառային և ճահճային բուսականության լայն տարածմանը: Տորֆաճահիճներում բուսական մնացորդների կուտակումը հանգեցրել է ածխային բազմաթիվ ավազանների ու հնքվ-երի առաջացմանը:

**K-24. КАМЕННЫЙ БЕК – ՔԱՐԻ ԴԱՐ, STONE AGE**, տե՛ս Բек каменный:

**K-25. КАМЕННЫЙ МЕТЕОРИТ, АЭРОЛИТ – ՔԱՐԵ ԵՐԿԱՍՔԱՐ, ՕԼԱՔԱՐ, STONE METEORITE, AEROLITE**, երկնաքար՝ բաղկացած գլխ. պիրոքսենից, օլիվինից կամ դրանց խառնուրդից: Հայտնի երկնաքարերի մոտ կեսը քարե է:

- K-26. КАМЕННЫЙ УГОЛЬ – ՔԱՐԱԾՈՒԽ, HARD COAL, MINERAL COAL**, բրածո հումուսային ածուխ՝ գորշ ածխից բարձր ածխացման աստիճանով, միջանկյալ է գորշ ածխի և անտրացիտի միջև: Այրվող զանգվածում պարունակում է 75-ից մինչև 92% ածխածին, 2.5-5.7% ջրածին, 1.5-15% թթվածին, այրման ջերմությունը (անմոխիր չոր վիճակում) 30.5-36.8 Մջ/կգ: Տեղադրված է տարբեր հաստության (մինչև մի քանի տասնյակ և հարյուրավոր մ) շերտերի և ոսպնյակաձև մարմինների տեսքով: Ք-ի առաջացումը բնորոշ է համարյա բոլոր երկրք. համակարգերին, բայց առավել շատ տարածված է քարածխային, պերմի և յուրայի նստվածքներում: Ք-ները առաջանում են բարձրակարգ բույսերի օրգանական մնացորդների քայքայման արդյունքներից, որոնք կրել են փոփոխություն (փոխակերպություն) համեմատաբար բարձր ջերմաստիճանի և շրջապատող ապարների ճնշման պայմաններում: Խոշոր ավազաններից են՝ Դոնեցկի, Կուզբասի, Փենսիլվանիայի, Ապալաչյան, Ռուրի և այլն:
- K-27. КАМЕНЬ КРОВАВЫЙ**, տե՛ս Гематит:
- K-28. КАМЕНЬ ЛИТОГРАФИЧЕСКИЙ – ԿԻՍԱԳՐԱԿԱՆ ՔԱՐ, ԿԻՍԱԳՐԱՔԱՐ, LITHOGRAPHIC STONE**, նրբահատիկ պինդ, ամուր կավային կրաքար կամ դոլոմիտ, որն օգտագործվում է վիճագրության մեջ:
- K-29. КАМЕНЬ ЛУЧИСТЫЙ**, տե՛ս Актинолит:
- K-30. КАМЕНЬ ПЕНИСТЫЙ**, տե՛ս Пемза:
- K-31. КАМЕНЬ ПОДЕЛОЧНЫЙ – ՉԱՐԴԱՔԱՐ, ORNAMENTAL STONE**, հղկվելու ունակություն և գեղեցիկ գույն ունեցող քար: Օգտագործվում է դեկորացման, երեսապատման (մարմար, գրանիտ, լաբրադորիտ և այլն) և գեղարվեստական-ուկերչական (նեֆրիտ, մալաքիտ, հասպիս և այլն) աշխատանքներում:
- K-32. КАМЕНЬ СТРОИТЕЛЬНЫЙ – ՇԻՆԱՔԱՐ, BUILDING STONE**, շինարարության համար օգտագործվող քար:
- K-33. КАМЕНЬ ТОЧИЛЬНЫЙ – ՅԵՍԱՆԱՔԱՐ, RAZOR STONE**, օգտագործվում է մետաղական իրեր սրելու համար:
- K-34. КАМПАНСКИЙ ЯРУС, КАМПАН** (Ֆրանս. Շամպայն նահանգի լատ. Կամպանիա, Campania, անունից) – **ԿԱՄՊԱՆԻ ՅԱՐԿ, ԿԱՄՊԱՆ, CAMPANIAN**, կավճի համակարգի վերին բաժնի ներքևից հինգերորդ հարկ:
- K-35. КАМЫ** [անգլերեն բարբառային (Շոտլանդիա) kame, բառ. կատար, գագաթ] – **ԿԱՄԵՐ, KAMES**, գառիթափ լանջերով կլորավուն կամ ձգված ձևի առանձին թմբեր և դրանց խմբեր, որոնք տարածված են առավելապես անտրոպոգենի մայրցամաքային սառցապատումների շրջաններում: Բարձրությունը՝ 2-3-ից մինչև 30 մ:
- K-36. КАНАВА – ԱՈՒԲ, DITCH, TRENCH**, 1) լայնական հատույթում սեղանաձև, երբեմն ուղղանկյունաձև ոչ մեծ մակերեսով ձգված բաց փորվածք, 2) հուն, որով ջուր է հոսում, 3) ակոս, երկայնաձև հանվածք: Երկրբ-ում Ա. ծառայում է ապարների ելքերը հայտնաբերելու, նմուշահանման, լեռնային գործում՝ մակերևութային ջրերի հավաքի և հեռացման համար:
- K-37. КАНАВА ВОДООТВОДНАЯ – ՋՐՅԵՌԱՅՄԱՆ ԱՈՒԲ, DIVERSION DITCH**, առու, որով հեռացվում են հանքահորային ջրհեռացման ազդեցության շառավղից դուրս գտնվող հանքահորային ջրերը:
- K-38. КАНАВА ВОДОСБОРНАЯ – ՋՐՅԱՎԱՔ ԱՈՒԲ, CATCHMENT DITCH**, առու, որտեղ հավաքվում են փորվածքներից դուրս եկող ջրերը:
- K-39. КАНАВА ДРЕНАЖНАЯ – ՑԱՍԱՔԵՑՄԱՆ (ԴՐԵՆԱԺԱՅԻՆ) ԱՈՒԲ, DRAINAGE DITCH**, առու, որը նպաստում է ստր. ջրերի մակարդակի իջեցմանը և տեղանքի ցամաքեցմանը:

- K-40. КАНАВА РАЗВЕДОЧНАЯ – ՅԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՌՈՒ, PROSPECTING TRENCH**, Երկրի մակերևույթին մոտ գտնվող ապարների երկրք. կառուցվածքի ուրվագծման և օգտ. հնժ-յի նմուշը վերցնելու համար անցկացված առու:
- K-41. КАНАДСКИЙ ЩИТ – ԿԱՆԱԴԱԿԱՆ ՎԱՅԱՆ, CANADIAN SHIELD**, մինչքենբրի-յան հիմքի խոշոր ելուստ Յյուսիսամերիկյան պլատֆորմի հս. մասում: Ներկայացված է արխեյան ու պրոտերոզոյան հասակի խոր փոխակերպված, գրանիտացված, ծալքավորված գոյացություններով: Կազմված է բեկվածքներով սահմանափակված մեծաբեկորներից, որոնց հետ կապված են երկաթի, ոսկու, պղնձի, նիկելի, կոբալտի, ուրանի, կապարի, ցինկի և այլ հնքվ-եր:
- K-42. КАНАЛ ВУЛКАНА** (լատ. canalis – խողովակ, փողրակ և հրաբուխ) – **ՅՐԱԲԽԻ ՄՂԱՆՑՔ, CHANNEL OF ASCENT, VOLCANIC VENT**, ուղղաձիգ կամ թեք խողովականման կամ ճեղքանման անցուղի, որը հրաբխի օջախը միացնում է երկրի մակերևույթի հետ: Յ. մ-ի հատույթը կլորավուն, ձվաձև կամ անկանոն ձևի է:
- K-43. КАНАЛ РУДНЫЙ (РУДОПОДВОДЯЩИЙ) – ՅԱՆՔԱՅԻՆ (ՅԱՆՔԱՌԲԵՐՈՂ) ԱՆՑՈՒԴԻ, ORE CHANNEL**, ուղի, որով հանքատար լուծույթները հոսում են հանքակուտակման վայրը:
- K-44. КАНАТНАЯ ЛАВА – ՃՈՊԱՆԱԶԵՎ ԼԱՎԱ, ROPY LAVA**, ալիքավոր լավայի հոսք, որի կնճռոտ մակերևույթն ունի ճոպանանման տեսք՝ 2-ից մինչև 15 սմ լայնակի չափերով: Բնորոշ է հեղուկ բազալտային լավային, որը երկար պահպանում է պլաստիկությունը և շարժունակությունը:
- K-45. КАНЗАССКАЯ ЛЕДНИКОВАЯ ЭПОХА** (Կանզաս նահանգի անունից, ԱՄՆ) – **ԿԱՆԶԱՍԻ ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ԴԱՐԱԿԱՐԳ, KANSANICE AGE**, վաղպլեյստոցենի սառցադաշտային դարակարգ, որն անջատված է Յս. Ամերիկայի հարթավայրերում, ենթադրաբար համադրվում է Ալպերի մինդելի սառցապատման հետ:
- K-46. КАНКРИНИТ** (անվանումը ի պատիվ ռուս պետական գործիչ Ե. Ֆ. Կանկրինի, 1774-1845) – **ԿԱՆԿՐԻՆԻՏ, CANCRINITE**, միներալ սիլիկատների դասի ֆելդշպաթոիդների խմբից, բյուրեղագիտական համակարգը հեքսագոնային է, առաջացնում է համատարած հատիկավոր զանգվածներ, եզրաշերտեր նեֆելինի շուրջը, հազվադեպ՝ հատվածակողմային բյուրեղներ: Գույնը՝ սպիտակ, մոխրագույն, դեղին, կարմրավուն, բաց երկնագույն, մինչև երկնագույն կապույտ: Փայլը՝ ապակու, կոտրվածքում՝ ճարպային, փխրուն է: Մազմայական ֆելդշպատոիդային ապարների ապարակազմիչ միներալ է: Առաջանում է ի հաշիվ նեֆելինի՝ հետմազմայական լուծույթների ներագդեցության տակ:
- K-47. КАНЬОН** (իսպ. canon – կիրճ, խողովակ) – **ԿԱՆՅՈՆ (ԽՆԶԱՅՈՎԻՏ), CANYON**, նեղ խոր հովիտ՝ զառիթափ կամ ուղղաձիգ լանջերով, որոնց մոտ լեռկացումը թույլ է արտահայտված: Յատում են սարավանդները և լեռնոտ տեղանքը: Կ-ները բնորոշ են առավելապես կրային կամ բազալտային սարավանդներին, որոնք տեղաբաշխված են չոր կլիմայի շրջաններում:
- K-48. КАНЬОН ПОДВОДНЫЙ – ՍՈՌՉՐՅԱ ԿԱՆՅՈՆ (ԽՆԶԱՅՈՎԻՏ), SUBMARINE CANYON**, տե՛ս Поводные каньоны:
- K-49. КАОЛИН** (ՉժՅ Ցզյանսի նահանգի Կաոլին տեղանքի անունից, որտեղ առաջին անգամ հայտնաբերվել է Կ.) – **ԿԱՈԼԻՆ (ՃԵՆԱԿԱԿ), KAOLIN, WHITE CLAY**, սպիտակ կամ բաց գույնի փուխր կավային ապար, որը բաղկացած է գլխ. կաոլինիտից, բնորոշվում է բարձր հրակայունությամբ, ցածր պլաստիկությամբ և կավային մասնիկների համեմատաբար մեծ չափերով: Առաջանում է փայլարադաշտասպաթային ապարների (գրանիտակերպերի, գնեյսների, թերթաքարերի և

այլն) հողմահարման կամ ջրաջերմային (հիդրոթերմալ) փոփոխության հետևանքով: Ավելի քիչ քանակով պարունակում է նաև այլ կավային միներալներ՝ քվարցի, դաշտասպաթի, փայլարի և երկաթի օքսիդների խառնուրդի հետ համատեղ: Տարբերում են 4. մնացորդային (առաջնային)՝ տեղադրված իր գոյացման տեղում, և նստվածքային, վերանստեցված (երկրորդային), որը առաջանում է ջրավազաններում գլխ. կաոլինիտային հողմահարման արդյունքների ողողատարման և նստման հետևանքով: 4-ի առաջացման ուժգին գործընթացներ տեղի են ունեցել կարբոնում, յուրայում, պալեոգենում և նեոգենում, երբ խոնավ ու տաք կլիմայական պայմաններում գոյություն է ունեցել հարուստ բուսականություն:

**K-50. КАОЛИНИЗАЦИЯ – ԿԱՈԼԻՆԱՑԻԱ (ՃԵՆԱՎԱՎԱՑԻԱ), KAOLINIZATION, KAOLINISATION,** կաոլինի (ճենակավի) առաջացման գործընթաց՝ ի հաշիվ այլունասիլիկատների (գլխ. դաշտասպաթների ու փայլարների) փոխարկման: Առավել ուժգին ընթանում է գրանիտների, սիենիտների և այլ դաշտասպաթային ապարների հողմահարման կեղևում՝ տաք և խոնավ կլիմայական պայմաններում:

**K-51. КАОЛИНИТ – ԿԱՈԼԻՆԻՏ, KAOLINITE,** միներալ շերտավոր սիլիկատների ենթադասից, այլունիտի սիլիկատ,  $Al_4[Si_4O_{10}](OH)_8$ : Գլխավոր կավային միներալներից մեկն է: Բյուրեղանում է տրիկլինային համակարգում: Առաջացնում է նրբաթփուկավոր փոշեկերպ ագրեգատներ, հայտնի են կոնկրեցիաներ, օոլիթներ, պալարներ, ճառագայթավոր և հողանման փուխր կուտակումներ: Մաքուր վիճակում սպիտակ է, երբեմն երկնագույն կամ գորշ երանգով: Մեխ. խառնուրդների դեպքում գունավորվում է կարմիր, սև, վառ կանաչ գույներով: 4. լայն տարածված երկրորդային միներալ է, առաջանում է դաշտասպաթային ապարների հողմահարման կեղևում: Մտնում է տարբեր նստվածքային ապարների կազմի մեջ: Շատ կավերի (կաոլինային) հիմնական բաղադրամասն է, երբեմն առաջացնում է խոշոր հանքակուտակներ: 4. հանդիսանում է նաև ջրաջերմային փոփոխված ապարների առանձին զոնաների գլխ. բաղադրամասը: 4. այլունիտի ստացման պոտենցիալ աղբյուր է:

**K-52. КАОЛИНИТОВАЯ ГЛИНА – ԿԱՈԼԻՆԻՏԱՅԻՆ ԿԱՎ, KAOLINITE CLAY, KAOLIN CLAY, FLINTCLAY,** կազմված է հիմնականում կաոլինիտից, սովորաբար սպիտակ, բաց մոխրագույն, մոխրագույն, կարմիր է, ջրում չի ուռչում: Առաջանում է գլխ. ցամաքային պայմաններում: Պինդ տարատեսակներն են չորահացանման կավը, տոնշտեյնը, ֆլինտկլեյը:

**K-53. КАПЕЖ – ԿԱԹՈՑՔ, DOWNPOUR,** ստր. լեռնային փորվածքների կամ քարանձավների մեջ (առաստաղից կամ պատերից) ստր. ջրերի ներթափանցում կաթիլքի ձևով:

**K-54. КАПИЛЛЯРНАЯ ВЛАГОЁМКОСТЬ – ՄԱՉԱՆՈԹԱՅԻՆ ԽՈՆԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, CAPILLARY MOISTURE CAPACITY,** մազանոթային բարձրացման զոնայի սահմաններում ապարի մազանոթներում պարունակված ջրաքանակ: Մ. խ. որոշվում է մազանոթների ջրի և չոր ապարի կշիռների հարաբերությամբ (%-ներով):

**K-55. КАПИЛЛЯРНОЕ ДАВЛЕНИЕ – ՄԱՉԱՆՈԹԱՅԻՆ ԾՆՇՈՒՄ, CAPILLARY PRESSURE,** մազանոթում ջրի բարձրացմանը համապատասխանող ճնշում:

**K-56. КАПИЛЛЯРНОЕ ПОДНЯТИЕ – ՄԱՉԱՆՈԹԱՅԻՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ, CAPILLARY RISE,** մազանոթներում ջրի բարձրացումը գետնաջրերի մակարդակի նկատմամբ: Մ. բ. տեղի է ունենում մազանոթում ջուր-օդ սահմանի մակերևութային լարվածության շնորհիվ:

**K-57. КАПТАЖ ПОДЗЕМНЫХ ВОД (ֆրանս. captage, լատ. captio-ից – որսում են, բռնում են) – ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՋՐՎԱՎԱՔՈՒՄ, CAPTATION OF UNDER-**



**GROUND WATER**, ստր. ջրերի բռնելը, հավաքելը և կենտրոնացնելը՝ տարբեր տեսակի կառույցների միջոցով:

**K-58. KAP, ЦИРК** (գերմ. Kar) – **ԿԱՌ, ԿՐԿԵՍ, CIRQUE, CORRIE, KAR**, բնական թասաձև խորացում լեռների մերձգագաթային մասում՝ զառիթափ ժայռակերպ լանջերով և հարթագոգ հատակով: Առաջացումը կապված է ոչ մեծ սառցադաշտերի ներգործության, ձյունային և սառնամանիքային հողմահարման հետ:

**K-59. КАРБОН**, տե՛ս Каменноугольная система (период):

**K-60. КАРБОНАДО** (իսպ. carbonado, լատ. carbo-ից, սեռ. h. carbonis – ածուխ) – **ՎԱՐՐՈՆԱԴՈ, BLACK CARBON, BLACK DIAMOND, CARBONADO**, ալմաստի տարատեսակ, որը իրենից ներկայացնում է ծակոտկեն մանր կամ գաղտնաբյուրեղային ագրեգատ՝ բաց մոխրագույն կամ սև գույնի: Բաղկացած է ութանիստ, հազվադեպ՝ խորանարդային հաբիտուսի բյուրեղներից և հատիկներից: Որոշ Կ-ներ ունեն ավելի բարձր կարծրություն, քան ալմաստը:

**K-61. КАРБОНАТИЗАЦИЯ – ՎԱՐՐՈՆԱՏԱՅՈՒՄ, CARBONATIZATION**, գործընթացների համախմբություն, որը հանգեցնում է ապարների հարստացմանը տարբեր կարբոնատներով: Սովորաբար տեղի է ունենում ածխաթթու պարունակող ջրերի ներագդեցության տակ: Առավել տարածված է դոլոմիտացումը և կալցիտացումը:

**K-62. КАРБОНАТИТЫ – ՎԱՐՐՈՆԱՏԻՏՆԵՐ, CARBONATITES**, ներծին կարբոնատային կամ ավելի հաճախ սիլիկատակարբոնատային ապարներ, որոնք ավելի քան 50 % բաղկացած են կալցիտից, դոլոմիտից, անկերիտից և այլն: Կարող են ներկա լինել նաև պիրոքսենը, ամֆիբոլը, ֆլոգոպիտը, ֆորստերիտը, ապատիտը, մագնետիտը, տիտանիտը, ալկալիական դաշտասպաթը և այլն: Կ-ի կազմի յուրահատկությունը հաճախակի հարստացումն է հազվագյուտ և ցրված տարրերով, ինչպես նաև բարիումով, ստրոնցիումով, ֆոսֆորով, երկաթով, տիտանով և այլն: Կ. լայնորեն տարածված են օղակաձև խորքային ալկալիազերհիմքային համալիրների կազմում, հրաբխային ապարատներում: Կ. օղակաձև զանգվածներ և հրաբխային ապարատներ կազմող ապարներից ամենաերիտասարդներն են:

**K-63. КАРБОНАТНЫЕ ПОРОДЫ – ՎԱՐՐՈՆԱՏԱՅԻՆ ՎՊԱՐՆԵՐ, CALCAREOUS ROCKS**, ապարներ, որոնք բաղկացած են հիմնականում բնական կարբոնատներից: Այդ խմբին կարող են պատկանել բոլոր այն ապարները, որոնք կազմված են կալցիտից, արագոնիտից, դոլոմիտից, մագնեզիտից, սիդերիտից, անկերիտից, ռոդոխրոզիտից և այլն: Կ. ա. կազմող հիմնական միներալներ են կալցիտը, դոլոմիտը, ավելի քիչ չափով՝ մագնեզիտը: Կ. ա-ում համարյա միշտ առկա են կավային և օրգանական նյութերը, քվարցը, հաճախ՝ գլաուկոնիտը, պիրիտը, ֆոսֆորիտը, կայծքարը և այլն: Կ. ա-ի հիմնական զանգվածը առաջացել է ծովային ու լճային ավազաններում՝ նստվածքային ճանապարհով: Առանձնացնում են Կ. ա-ի երեք զլխ. տիպեր՝ օրգանածին, քիմիածին և բեկորային: Կ. ա. կազմում են բոլոր նստվածքային գոյացությունների մոտ 20%-ը (ըստ զանգվածի): Նրանք հայտնի են բոլոր հասակների նստվածքներում, շերտերի հաստությունը կարող է հասնել մի քանի հարյուր մ-ի: Կ. ա. խիստ բազմազան են ըստ նյութական կազմի, կառուցվածքի և ծագման: Կախված Կ. ա-ում կալցիտի ու դոլոմիտի պարունակությունից և կարբոնատային ու ցամաքածին բաղադրամասերի փախհարաբերությունից՝ առանձնացնում են հետևյալ տարատեսակները՝ կրաքար [CaCO<sub>3</sub> 95-100%, CaMg(CO<sub>3</sub>)<sub>2</sub> 5-10%], դոլոմիտային կրաքար (համապատասխանաբար 50-95 % և 50-5%), կրային դոլոմիտ (5-50 % և 95-50%), դոլոմիտ (0-5 % և 100-95%): Ըստ CaCO<sub>3</sub>-ի և կավի պարունակության՝ առանձնացնում են կրաքար (դոլոմիտ) (95-

100% և 5-0%), կավային կրաքար (դոլոմիտ) (75-95% և 25-5%), մերգել (կավակրաքար), դոլոմիտային մերգել (25-75% և 75-25%), կրային (դոլոմիտային) կավ (5-25 % և 95-75%): 4. ա-ի ամենամաքուր տարատեսակը՝ կավիճը, բաղկացած է հիմնականում նրբագույն 1-3 մկ չափերի մասնիկներից (ծովային ջրիմուռների, կոկոլիթոֆորիդների մնացորդներ):

**K-64. КАРБОНАТНЫЕ ПОЧВЫ – ԿԱՐԲՈՆԱՏԱՅԻՆ ՀՈՂԵՐ, CARBONATE SOILS,** հողեր, որոնք պարունակում են մեծ քանակությամբ կալցիումի ու մագնեզիումի կարբոնատներ՝ գլխ. վերին հորիզոններում:

**K-65. КАРБОНАТЫ ПРИРОДНЫЕ** (լատ. carbo, սեռ. h. carbonis – ածուխ) – **ԲՆԱԿԱՆ ԿԱՐԲՈՆԱՏՆԵՐ, NATIVE CARBONATES**, միներալների դաս, ածխաթթվի,  $H_2CO_3$ , աղեր: Բնության մեջ հայտնի են ավելի քան 120 Բ. կ.: Առանձնացնում են թթու աղեր, երկկարբոնատներ (բիկարբոնատներ), հիմքային աղեր, ջրակարբոնատներ (հիդրոկարբոնատներ), անջուր և ջրային բնականոն Բ. կ. և բարդ Բ. կ., որոնք պարունակում են լրացուցիչ անիոններ ( $F^-$ ,  $Cl^-$ ,  $[SO_4]^{2-}$  կամ  $[PO_4]^{3-}$ ): Բ. կ-ի համար բնորոշ են բազմաթիվ իզոմորֆ (մանածև) շարքերը: Լայնորեն տարածված է բազմածևության (պոլիմորֆիզմի) երևույթը: Առավել տարածված Բ. կ. բյուրեղանում են կալցիտի կառուցվածքում (մագնեզիտ, ռոդոխրոզիտ, սիդերիտ, դոլոմիտ, սմիթսոնիտ) կամ արագոնիտի (ստրոնցիանիտ, վիտերիտ, ցերուսիտ): Բ. կ. հանդիպում են լավ նիստավորված զգալի չափերի բյուրեղների տեսքով: Ավելի բնորոշ են խիտ, հատիկավոր զանգվածները, որոնք կազմում են հզոր մենամիներալային ստվարաշերտեր, հազվադեպ հանդիպում են շառավղային, ճառագայթային, ասեղնավոր, մակահոսքային, բողբոջանման ագրեգատներ: Վերնածին Բ. կ-ի համար բնորոշ են մանրահատիկ կոլոիդային, խիտ հախճապակենման զանգվածները, նուրբ խառնուրդները այլ միներալների հետ: Կրաքարերը, դոլոմիտները, կարբոնատիտները Բ. կ-ից բաղկացած համարյա մենամիներալ ապարներ են: Բ. կ-ի մեծ մասը սպիտակ է կամ անգույն: Գունավորումը պայմանավորված է գունակիր իոնների կամ խառնուրդների առկայությամբ: Բ. կ-ի կարևոր դիագնոստիկ հատկանիշներից է լուծելիությունը  $HCl$ -ում: Բ. կ. երբեմն բյուրեղանում են կալցիտային և սոդային հրաբխային լավաներից: Բ. կ. միջին և ցածրաջերմաստիճանային ջրաջերմային հանքավայրերի երակային բնորոշ միներալներից են: Շատ Բ. կ. ունեն մետասոմատիկ (միներալատեղակալման) բնույթ, գոյանում են կարբոնատացման երկրորդային գործընթացների ընթացքում՝ առաջացնելով բնորոշ մերձհանքաքարային ապարներ (լիստվենիտներ, բերեզիտներ և այլն):  $Ca$ -ի,  $Mg$ -ի, հազվադեպ՝  $Fe$ -ի,  $Mn$ -ի կարբոնատները առաջանում են նստվածքային գործընթացներում քիմիածին կամ կենսածին ճանապարհով՝ ձևավորելով կրաքարերի ստվարաշերտեր: Բ. կ. հողմահարման կեղևի սովորական միներալներ են, առաջանում են սիլիկատների հաշվին՝ չոր կլիմայական պայմաններում:  $Pb$ -ի,  $Zn$ -ի,  $Cu$ -ի կարբոնատները մետաղական հնքվ-երի օքսիդացման զոնայի տիպային միներալներ են: Նստվածքային կարբոնատները փոխակերպության ընթացքում վերաբյուրեղանում են և վերածվում են կալցիտային ու դոլոմիտային մարմարների:

**K-66. КАРБОНИЗАЦИЯ** (լատ. carbo – սեռ. h. carbonis – ածուխ) – **ԱՃԽԱՑՈՒՄ, CARBONIZATION**, օրգանական նյութի փոփոխության գործընթաց, որն ուղեկցվում է դրանց սևացմամբ, ջրածնի ու թթվածնի պակասեցմամբ և ածխածնի ավելացմամբ:

**K-67. КАРЕЛЬСКАЯ СКЛАДЧАТОСТЬ – ԿԱՐԵԼՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, KARELIAN FOLDING**, մինչքեմբրի վերջին ուժգին ծալքավորություն Բալթիական վահանի արլ. մասում, որն ավարտվել է 1900-1700 մլն. տարի առաջ:

- K-68. КАРЛИКОВЫЙ РЕЛЬЕФ – ԳԱՃԱԾ ՌԵԼԻԵՖ, DWARF RELIEF**, տե՛ս Нанорельеф:
- K-69. КАРНАЛЛИТ** (ի պատիվ գերմ. լեռնային ինժեներ Ռ. Կառնալի, R. von Carnall, 1804-1874) – **ՎԱՌՆԱԼԻԹ, CARNALLITE**, միներալ ջրային քլորիդների ենթադասից,  $\text{CaMgCl}_2 \cdot 6\text{H}_2\text{O}$ , բյուրեղանուն է շեղանկյունային համակարգում, բնորոշ են հողանման զանգվածները՝ հալիտի խառնուրդով, թելավոր ագրեգատները: Ուժեղ խոնավածուծ է, դյուրալույծ է, ունի դառը համ: Մաքուր Կ. անգույն, թափանցիկ է, խառնուրդների դեպքում գունավորված է մինչև կարմրաշագանակագույն: Կ. նստում է ուժեղ միներալացված ծովային աղաջրերից՝ բյուրեղացման վերջին փուլում:
- K-70. КАРНИЙСКИЙ ЯРУС** (Կարնիյան Ալպեր լեռների անունից) – **ՎԱՐՆԻՅԱՆ ՅԱՐԿ, CARNIAN, KARNIAN**, տրիասի համակարգի վերին բաժնի ստորին հարկ:
- K-71. КАРНОТИТ** (ի պատիվ ֆրանս. գիտնական Մ. Ա. Կառնոյի, M. A. Carnot, 1839-1920) – **ՎԱՌՆՈՏԻՏ, CARNOTITE**, միներալ վանադատների ենթադասի ուրանային փայլարների ընտանիքից, քիմ. կազմը  $\text{K}_2(\text{UO}_2)_2[\text{V}_2\text{O}_8] \cdot 3\text{H}_2\text{O}$ : Բյուրեղանուն է մոնոկլինային համակարգում: Առաջացնում է վառ դեղին հողանման զանգվածներ, փոշենման փառեր, կեղևիկներ, անջատումներ ավազաքարերի ցեմենտում, հազվադեպ՝ մանր բյուրեղներ: Փխրուն է: Կ. երկրորդային միներալ է: Մտնում է ուրանային և վանադիումային հանքանյութերի կազմի մեջ:
- K-72. КАРОВАЯ ПЕРРАСА – ՎԱՌԱՅԻՆ ԴԱՐԱՎԱՆԴ, CIRQUE PLATFORM**, լեռնաշղթայի լանջում դարավանդանման հրապարակ, որն առաջացել է հարակից սառցադաշտերի կառերի (կրկեսների) հատակի միացումից:
- K-73. КАРОВОЕ ОЗЕРО – ՎԱՌԱՅԻՆ ԼԻՃ, CIRQUE LAKE, TARN**, ոչ մեծ սառցադաշտային լիճ, որը զբաղեցնում է կառի հատակը:
- K-74. КАРОТАЖ** (ֆրանս. carottage, carofte – բառ, գազար, հորատակեռն) – **ՎԱՐՈՏԱԺ, LOGGING**, հորատանցքի երկրբ. կտրվածքի ուսումնասիրման երկրֆ. մեթոդներ, որոնք իրագործվում են ապարների ֆիզ. հատկությունների, ինչպես նաև բնական կամ արհեստական ստեղծված դաշտերի չափման միջոցով: Չափվող հատկություններին կամ դաշտերին համապատասխան՝ գոյություն ունեն Կ-ի տարբեր տեսակներ՝ էլեկտրական, մագնիսական, ռադիոակտիվ, սեսյմիկ և այլն: Կ-ի օգնությամբ լուծվում է երկրբ. կտրվածքի քարաբանական տարանջատման խնդիրը, որոշվում է առանձին շերտերի կամ հանքատար և ջրատար զոնաների տեղադիրքը (խորությունը, հաստությունը): Կ-ին են վերագրվում նաև մի շարք գործողություններ, որոնք հնարավորություն են տալիս լուծելու հատուկ խնդիրներ՝ հորատանցքում ջրի ներհոսքի տեղերի որոշումը, շերտերի անկման ու հորատանցքի շեղման չափումը, ջերմային պայմանների որոշումը և այլն:
- K-75. КАРОТАЖ АКУСТИЧЕСКИЙ – ՉԱՅՆԱՅԻՆ (ԱՎՈՒՄՏԻԿ) ՎԱՐՈՏԱԺ, ACOUSTIC LOGGING**, հորատանցքերի ուսումնասիրման երկրֆ. մեթոդ, որը հիմնվում է ապարներում հաճախականության ծայնային տիրույթում առաձգական ալիքների տարածման տարբեր արագությունների վրա: Չ. կ-ի դեպքում օգտագործվում են հորատանցքային սարքեր՝ առաձգական տատանումների ճառագայթիչներով և ընդունիչներով:
- K-76. КАРОТАЖ ГАЗОВЫЙ – ԳԱԶԱՅԻՆ ՎԱՐՈՏԱԺ, GAS LOGGING**, տե՛ս Газовый каротаж:
- K-77. КАРОТАЖ-ГАММА**, տե՛ս Гамма-каротаж:
- K-78. КАРОТАЖ МАГНИТНЫЙ – ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՎԱՐՈՏԱԺ, MAGNETIC LOGGING**, տե՛ս Магнитный каротаж:

- K-79. КАРОТАЖ РАДИОАКТИВНЫЙ – ՃԱՌԱԳԱՅԹԱԱԿՏԻՎ (ՈԱԴԻՈԱԿՏԻՎ) ԿԱՐՈՏԱԺ, RADIOACTIVITY LOGGING**, հորատանցքի երկրբ. կտրվածքի երկրֆ. ուսումնասիրման եղանակ, որը հիմնված է բնական  $\gamma$ -ճառագայթման և ապարների վրա նեյտրոններով ազդելիս արհեստական ճառագայթասկտիվության չափումների, ինչպես նաև ապարաշերտերում նեյտրոնների տարածման առանձնահատկությունների ուսումնասիրման վրա:
- K-80. КАРОТАЖ СЕЙСМИЧЕСКИЙ – ԵՐԿՐԱՇԱՐԺԱԿԱՆ (ՍԵՅՍՄԻԿ) ԿԱՐՈՏԱԺ, SIESMIC LOGGING**, հորատանցքի պատերի ապարների առաձգական հատկությունների ուսումնասիրություն՝ երկրաշարժական ալիքների արագության, նրանց անդրադարձման, անցման և կլանման գործակիցների որոշման միջոցով: Արդյունքները օգտագործվում են երկրաշարժահետախուզության տվյալների մեկնաբանման, ապարների քարաբանական կազմի ու ֆիզ. հատկությունների, ինչպես նաև նավթագազաբեր արդյունավետ շերտերի բացահայտման ու հորատանցքի տեխ. վիճակի վերահսկման համար:
- K-81. КАРОТАЖ ЭЛЕКТРИЧЕСКИЙ**, տե՛ս Электрический каротаж:
- K-82. КАРОТАЖ ЯДЕРНЫЙ**, նույնն է՝ Каротаж радиоактивный:
- K-83. КАРОТАЖНАЯ ДИАГРАММА – ԿԱՐՈՏԱԺԱՅԻՆ ԴԻԱԳՐԱՄ (ՏՐԱՄԱԳԻՐ), LOGGING DIAGRAM**, պատկերում է հորատանցքի երկրբ. կտրվածքի ֆիզ. պարամետրերի փոփոխության կորերը:
- K-84. КАРПОИДЕИ (Carpoidea)** (հուն. carpos – պտուղ) – **ԿԱՐՊՈՒԴՆԵՐ, CARPOIDEA**, փշամորթների մահացած պալեոզոյան պարզունակ դաս:
- K-85. КАРРЫ, ШРАТТЫ** (գերմ. Karren) – **ԿԱՌԵՐ, ՇՐԱՏՆԵՐ, KARREN, CLINTS, ROCK RILL, GRIKES**, կարստավորվող ապարների մակերևույթին բնորոշ ռելիեֆի ձևեր, որոնք իրենցից ներկայացնում են անկանոն խոր (մինչև 1-2 մ) ակոսներով հատված խորդուբորդությունների համակցություն: Կ. առաջանում են մակերևութային ջրերի ու մթնոլորտային տեղումների քայքայիչ գործունեության հետևանքով:
- K-86. КАРСТ** (գերմ. Karst, Զարավսլավիայի Կարստ կամ Կրաս, Kraz, սարավանդի անունից) – **ԿԱՐՍՏ, KARST, KARST PHENOMENA**, մակերևութային և ստր. ջրերի ներգործությամբ լուծվող ապարներում տեղի ունեցող տարրալուծման ու քայքայման գործընթացների համակցություն, որի հետևանքով երկրակեղևում առաջանում են տարբեր չափի ու ձևի դատարկություններ (խոռոչներ, գետնուղիներ, քարանձավներ), իսկ տեղանքի մակերևույթին՝ ռելիեֆի բացասական ձևեր (կառեր, ձագարներ, կարստային դաշտեր և այլն): Զեշտ լուծվող (կարստավորվող) ապարներին են դասվում կերակրի ու կալիումական աղերը, գիպսը, դոլոմիտները, կրաքարերը և այլն: Կախված ստր. ջրերի թափանցման խորությունից և տեղանքի տեկտ. ակտիվությունից, կարստային դատարկությունները կարող են տարածվել մինչև 100 մ և ավելի խոր: Կ-երը լայնորեն տարածված են շատ երկրներում:
- K-87. КАРСТОВАЯ ВОДА – ԿԱՐՍՏԱՅԻՆ ՋՈՒՐ, KARST WATER**, ստր. ջրեր, որոնք տեղադրված են իրենց իսկ գործունեության հետևանքով լուծելի ապարներում առաջացած կարստային ուղիների ու դատարկությունների մեջ:
- K-88. КАРСТОВАЯ ВОРОНКА – ԿԱՐՍՏԱՅԻՆ ՉԱԳԱՐ, DOLINE, SWALLOW HOLE, SINK HOLE**, կարստավորված ռելիեֆի բացասական ձևեր, որոնք կարստային դատարկությունների փլուզման արդյունք են և մակերևույթում արտահայտվում են անենատարբեր չափի ձագարների (կոների) ձևով:
- K-89. КАРСТОВОЕ ОЗЕРО – ԿԱՐՍՏԱՅԻՆ ԼԻՃ, KARST POND, SOLUTION LAKE, KARST LAKE, SINK-HOLE LAKE**, լիճ, որն առաջացել է կարստային ձագարնե-

րը, քարանձավները և գոգավոսերը ջրով լցվելու հետևանքով: Գտնվում են կարստերի տարածման շրջաններում:

**K-90. КАРСТОВЫЕ КОТЛОВИНЫ – ԿԱՐՍԱՅԻՆ ԳՈԳԱՅՈՎԻՏՆԵՐ, KARST BASINS,** կարստային ռելիեֆի բացասական ձևեր, որոնք առաջանում են կարստային ծագարների միացումից: Հատակագծում Կ. գ. ունեն բարդ եզրագծեր, լայնությունը և երկարությունը գերազանցում են 100-200 մ-ից, խորությունը՝ 5-10 մ-ից:

**K-91. КАРСТОВЫЕ ПУСТОТЫ – ԿԱՐՍԱՅԻՆ ԴԱՏԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, KARST CAV-ERNS,** կարստավորվող ապարներում առաջացած դատարկություններ, որոնք ունենում են ամենատարբեր չափեր ու ձևեր (խոռոչներ, մղանցքեր, գետնուղիներ, քարանձավներ և այլն):

**K-92. КАРСТОВЫЙ ЛАНДШАФТ – ԿԱՐՍԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՓՏ (ԲՆԱՊԱՍԿԵՐ), KARST LANDSCAPE,** կարստերի տարածման մարզերի լանդշաֆտ (բնապատկեր): Բարեխառն լայնություններում արտահայտված է անհարթ մակերևույթով՝ փակ խորացումներով ու գոգավորություններով, զգալի ջրհոսքերի բացակայությամբ, գետնաջրերի խոր տեղադրմամբ, ստորգետնյա խոռոչների, քարանձավների, հզոր աղբյուրների առկայությամբ: Մերձարևադարձային և արևադարձային գոտիներին բնորոշ են ռելիեֆի մնացորդային ձևերը՝ գմբեթների, կոների ձևով, մերկ քարքարոտ տեղամասերը, կարստային գոգավորությունները:

**K-93. КАРСТОВЫЙ РЕЛЬЕФ – ԿԱՐՍԱՅԻՆ ՌԵԼԻԵՖ, KARST RELIEF, KARST TOPOGRAPHY,** երկրի մակերևույթի ռելիեֆ, որն առաջացել է ջրի կողմից կրաքարերի, դոլոմիտների, գիպսի և այլ լուծվող ապարների լուծման հետևանքով: Բնորոշվում է բացասական ձևերի լայն տարածմամբ (ինչպես մակերևույթային ծագարներ, գոգավորություններ և այլն, այնպես էլ՝ ստորգետնյա՝ քարանձավներ):

**K-94. КАРТА (հուն. chártes – պապիրուսով փաթեթ կամ թերթ նամակի համար) – ՔԱՐՏԵԶ, MAP, CHART,** երկրի մակերևույթի, աստղային երկնքի մաթեմատիկորեն որոշված փոքրացված պատկերումը հարթության վրա:

**K-95. КАРТА АНОМАЛИЙ СИЛЫ ТЯЖЕСТИ – ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԻ ԱՆՎԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ, MAP OF GRAVITY ANOMALIES, BOUGUER ANOMALY MAP,** ուսումնասիրվող մակերեսի ձգողական (գրավիտացիոն) չափումների գրաֆիկական պատկերումը՝ իզոանոմալների (հավասարաշեղումագծերի) տեսքով: Իզոանոմալների միջակայքի մեծությունը կախված է հանույթի մանրամասնությունից: Ծ. ու. ա. ք-ի վրա ցույց է տրվում բնականոն դաշտի բանաձևը, ծանրության ուժի կիրառվող ռեդուկցիան, Բուգեի անկանոնությունների քարտեզի կազմման դեպքում՝ միջանկյալ շերտի խտությունը:

**K-96. КАРТА БАТИМЕТРИЧЕСКАЯ – ԽՈՐԱՉԱՓԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ, BATHYMETRIC MAP,** հավասար խորությունների գծերի (իզոբատեր) միջոցով տրվում է ստորջրյա ռելիեֆի և խորությունների նիշերի պատկերը:

**K-97. КАРТА ГЕОГРАФИЧЕСКАЯ, տե՛ս** Географические карты:

**K-98. КАРТА ГЕОЛОГИЧЕСКАЯ, տե՛ս** Геологические карты:

**K-99. КАРТА ГЕОЛОГИЧЕСКИХ ФОРМАЦИЙ – ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՐՄԱՑԻԱՆԵՐԻ (ՎԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ) ՔԱՐՏԵԶ, MAP OF GEOLOGICAL FORMATIONS,** հատուկ երկրբ. քարտեզ, որը ցույց է տալիս երկրբ. ֆորմացիաների տարածումը, այսինքն՝ ապարների այն խմբակցությունների տարածումը, որոնք պարագենետիկորեն կապված են միմյանց և գոյացել են որոշակի տեկտ., ֆիզաշխ. և ջերմադինամիկական պայմաններում: Հատուկ նպատակների համար կազմվում են՝ 1) մագմայական ֆորմացիաների քարտեզներ, որոնց վրա ցույց են տրվում միայն

մագնայական գոյացությունները՝ մագնայական ֆորմացիաները, որոնք իրենցից ներկայացնում են հրային ապարների բնական խմբակցություններ և օրինաչափորեն արտահայտվում են երկրակեղևի տարահասակ, բայց միատեսակ երկրատեկտ. տարրերի զարգացման ընթացքում՝ որոշակի երկրբ. իրադրությունում, 2) նստվածքային կազմավորումների քարտեզներ, որոնք ցույց են տալիս իրական գոյություն ունեցող համագոյացությունները այն նստվածքային ապարների, որոնք պարագենետիկորեն կապված են միմյանց և կազմում են ֆորմացիաների շարքեր: Դրանք արտահայտում են երկրակեղևի տվյալ տեղամասի զարգացման օրինաչափությունները:

**K-100. КАРТА ГЕОМОРФОЛОГИЧЕСКАЯ**, տե՛ս Геоморфологические карты:

**K-101. КАРТА ГЕОФИЗИЧЕСКАЯ – ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ, GEOPHYSICAL MAP**, քարտեզի վրա գրաֆիկորեն պատկերված են երկրֆ. հանույթի արդյունքները, որոնք կատարվել են երկրբ. քարտեզագրման, օգտ. հնձ-ների որոնման ու հետախուզման համար: Ըստ բովանդակության Ե. ք. ստորաբաժանվում են 4 կարգի՝ 1) ֆիզ. դաշտերի դիտարկումների քարտեզներ, 2) կերպափոխված ֆիզ. դաշտերի քարտեզներ, 3) ապարների հաշվարկված և չափված ֆիզ. պարամետրերի քարտեզներ, 4) երկրաբանաերկրֆ. քարտեզներ, որոնք միջանկյալ են հանդիսանում վերը նշած 3 կարգի երկրֆ. քարտեզների և երկրբ., տեկտ., կառուցվածքային քարտեզների միջև:

**K-102. КАРТА ГЕОХИМИЧЕСКАЯ**, տե՛ս Геохимические карты:

**K-103. КАРТА ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ**, տե՛ս Гидрогеологическая карта:

**K-104. КАРТА ГРУНТОВАЯ – ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ, GROUND MAP**, հատուկ ճարտարագիտակերպ. քարտեզ, որի վրա արտացոլվում են միայն գրունտների հատիկաչափական կազմը, գույնը և ներփակումների բնույթը:

**K-105. КАРТА ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКАЯ**, տե՛ս Инженерно-геологическая карта:

**K-106. КАРТА МИНЕРАЛЬНЫХ ВОД – ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՔԱՐՏԵԶ, MAP OF MINERAL WATERS**, ջրակերպ. քարտեզ, որի վրա առանձնացվում են տարբեր տիպի հանքային ջրերի տարածման մարզերը, շրջանները, հնքվ-երը և հիմնական երևակումները: Արտացոլվում են ջրերի հանքայնացումը, քիմ. բաղադրությունը, յուրահատուկ բաղադրիչների, գազերի պարունակությունը և այլ ցուցանիշներ:

**K-107. КАРТА МОЩНОСТЕЙ – ՀԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ, THICKNESS MAP**, աշխ. հիմքի վրա ցույց է տրվում որոշակի հասակի ապարների հաստությունների տեղաբաշխումը՝ տարբեր հաստությունների գծերի կառուցման միջոցով, յուրաքանչյուր գիծ (իզոպախիտ) միացնում է այդ ապարների հավասար հաստություն ունեցող կետերը: Հ. ք. հնարավորություն է տալիս դատելու տվյալ ռեգիոնի սահմաններում՝ ժամանակի որոշակի միջակայքում տատանողական շարժումների լայնույթի մասին:

**K-108. КАРТА НОВЕЙШЕЙ ТЕКТОНИКИ – ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԿՏՈՆԻԿԱՅԻ ՔԱՐՏԵԶ, NEOTECTONIC MAP**, արտացոլում է երկրակեղևի հիմնական կառուցվածքային տարրերում տեկտ. շարժումների զարգացման օրինաչափությունները նորագույն՝ սովորաբար ուշ օլիգոցեն-չորրորդական ժամանակում կամ դրա հատվածներում: Այդ շարժումները պայմանավորել են երկրի ժամանակակից ռելիեֆի ձևավորման հիմնական դիմագծերը: Քարտեզների կազմման մեթոդները կախված են մասշտաբից, ուսումնասիրման աստիճանից և երկրբ. զարգացման պայմաններից: Քարտեզում մի դեպքում պատկերվում են նորագույն տեկտ. փուլի (կամ մասերի)

ուղղաձիգ շարժումները, այլ դեպքում՝ հորիզոնական, ծալքագոյացման, խզվածքային և այլ տեսակի շարժումները: Իջեցման լայնույթը որոշվում է ըստ նստվածքների հաստությունների ու ֆացիաների, բարձրացման լայնույթը՝ ըստ ռելիեֆի տատանաթափի, բարձրաչափական դիրքի, հողմահարման մակերևութների, ծովային ու գետային դարավանդների, գետահովիտների ներփորված խորության և այլ հատկանիշների:

**K-109. КАРТА ОБНАЖЕНИЙ – ՄԵՐԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՔԱՐՏԵՉ, OUTCROP MAP**, տեղագրական քարտեզ, որի վրա անցկացվում են ուսումնասիրված բնական և արհեստական բոլոր մերկացումները:

**K-110. КАРТА ТЕРМАЛЬНЫХ ВОД – ՋԵՐՄԱՋՐԵՐԻ (ԹԵՐՄԱԼ ՋՐԵՐԻ) ՔԱՐՏԵՉ, MAP OF THERMAL WATERS**, ջրաերկր. քարտեզ, որի վրա, ըստ ստր. ջրերի ջերմաստիճանի և ջրադինամիկ յուրահատկությունների, առանձնացվում են ջերմաջրերի տարածման մարզերը, հնքվ-երը և հիմնական երևակումները, արտացոլվում են ջրերի ջերմաստիճանը, հանքայնացումը, քիմ. բաղադրությունը և այլ հատկանիշներ:

**K-111. КАРТА ФАКТИЧЕСКОГО МАТЕРИАЛА – ՓԱՍՏԱՑԻ ՆՅՈՒԹԻ ՔԱՐՏԵՉ, MAP OF FACTUAL MATERIAL**, երկր. (ջրաերկր. և այլն) հանույթի մասշտաբով կազմվող քարտեզ, որի վրա անց են կացվում բոլոր երթուղիները, հետախուզական նշագծերը, լեռնային փորվածքները, մերկացումները, ջրային օբյեկտները և այլ կետեր, որտեղ կատարվել են դիտարկումներ, փորձեր, նմուշահանումներ և այլն:

**K-112. КАРТА ШЛИХОВАЯ – ՍՂԿԱԾՔԱՅԻՆ (ՍՂԿԱՅԱՆՔԱՅԻՆ) ՔԱՐՏԵՉ, HEAVY CONCENTRATE MAP**, երկր. քարտեզի վրա գրաֆիկորեն արտացոլվում են սղկվածքային նմուշահանման ընդհանրացված արդյունքները:

**K-113. КАРТОГРАФИЯ** (քարտեզից և հուն. gráphō – գրում եմ) – **ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ, CARTOGRAPHY, CARTOLOGY**, գիտություն աշխ. քարտեզների և այլ քարտեզագրական ստեղծագործությունների, դրանց կազմման ու օգտագործման մեթոդների մասին: Արտապատկերում և ուսումնասիրում է բնության երևույթների ու հասարակության տարածական տեղաբաշխումները, զուգակցությունը և կապը՝ քարտեզագրական արտացոլման միջոցով:

**K-114. КАРТОМЕТРИЯ** (քարտեզից և հուն. metréo – չափում եմ) – **ՔԱՐՏԵԶԱՇԱՓՈՒԹՅՈՒՆ, CARTOMETRY**, քարտեզագրության բաժին, որն ուսումնասիրում է քարտեզների միջոցով երկարությունը, մակերեսը, անկյունները, բարձրությունները չափելու եղանակները:

**K-115. КАРЬЕР** (ֆրանս. carrière, հին լատ. quarraria-ից – քարհանք) – 1) **ԲԱՅԱՅԱՆՔ, QUARRY**, հանքային ձեռնարկություն, արտադրատնտեսական ինքնուրույն միավոր, որն օգտ. հնժ-ն արդյունահանում է բաց եղանակով, 2) **ԲԱՑ ՅԱՆՔԱՐԱՆ**, հնքվ-ի բաց մշակման հետևանքով երկրի կեղևում առաջացած բաց փորվածքների ամբողջություն:

**K-116. КАССИТЕРИТ, ОЛОВЯННЫЙ КАМЕНЬ** (հուն. kassiteros – անագ) – **ԿԱՍԻՏԵՐԻՏ, ԱՆԱԳԱՔԱՐ, CASSITERITE, TINSTONE, TIN ORE, TIN SPAR**, միներալ օքսիդների դասից, SnO<sub>2</sub>, բյուրեղանում է տետրագոնային համակարգում, առաջացնում է անգույն, սև, գորշից, մինչև դեղին և կարմիր երկբուրգային բյուրեղներ, ներփակվածքային հատիկներ, հողանման և հոսանստուկային զանգվածներ: Մերձնակերևութային առաջացումներին բնորոշ են համակենտրոն-զոնայական քվարց-կասիտերիտային ագրեգատները: Առավել խոշոր կուտակումները կապված են բարձրաջերմաստիճանային գրեյզենային և ջրաջերմային (հիդրոթերմալ)

հնքվ-երի հետ՝ տոպագի, ալբիտի, քվարցի, մուսկովիտի խմբակցությամբ: Շատ գրանիտներում ներկա է որպես ուղեկից (ակցեսորային) միներալ: Կ. կարող է առաջանալ օքսիդացման զոնայում՝ ի հաշիվ ստանինի: Մակերևութային պայմաններում կայուն է՝ առաջացնելով ալյուվիալ և դելյուվիալ-էլյուվիալային ցրոններ: Կ. անագի գլխավոր հանքանյութն է:

- K-117. КАТАГЕНЕЗ** (հուն. kata – նախածանց, որը նշանակում է շարժում վերևից ներքև, անցողիկություն և génesis – ծագում, գոյացում) – **ԿՍՏԱԳԵՆԵԶ, KATAGENESIS**, նստվածքային ապարների կերպափոխման գործընթացների համախմբություն, որը տեղի է ունենում նստվածքների դիագենեզի (ապարագոյացման) հետևանքով ապարի գոյացումից հետո՝ մինչև նրա վերափոխվելը փոխակերպային ապարի: Արտասահմանյան գրականությունում Կ-ի փոխարեն կիրառվում է դիագենեզի «ուշ փուլ» անվանումը: Կ-ի օրինաչափությունների իմացությունն ունի կարևոր գործնական նշանակություն, օր.՝ նստվածքային ստվարաշերտի նավթագազաբերության հեռանկարները գնահատելու համար և այլն:
- K-118. КАТАЗИЯ** (Արմ. Եվրոպայում Չինաստանի միջնադարյան անվանումից՝ Չինաստան+Ասիա) – **ԿՍՏԱՍԻԱ, KATASIA**, պալեոգոյից մինչև պլիոցենը գոյություն ունեցող մայր ցամաք, որի կազմում ընդգրկված են եղել Չինաստանի հր-արլ. մասը, Չնդկաչինը, Մալայան արշիպելագը և Ջոնդյան կղզիները:
- K-119. КАТАКЛАЗ** (հուն. katakláo – ջարդում են, ջախջախում են) – **ՋԱՐԴՈՏՈՒՄ (ԿՈՏՐԱՏՈՒՄ, ԿՍՏԱԿԼԱԶ), KATACLASIS**, տեկտ. գործընթացների ազդեցության տակ ապարների ձևախախտում, որն ուղեկցվում է միներալային հատիկների ու դրանց ագրեգատների փշրմամբ կամ պտտմամբ (առանց քիմ. բաղադրության փոփոխության):
- K-120. КАТАКЛАСТИЧЕСКАЯ СТРУКТУРА** (հուն. kata – նախածանց, որը նշանակում է շարժում վերևից ներքև և klastós – ջարդված, փշրված) – **ՓՇՐԱԲԵԿՈՐԱՅԻՆ (ԿՍՏԱԿԼԱՍՏԻԿ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, KATACLASTIC TEXTURE**, հատուկ է այն բյուրեղային ապարներին, որոնք կրել են ուժափոխակերպություն: Բնորոշվում է միներալների ծռված, ջարդոտված հատիկների առկայությամբ՝ ընդհանրապես ապարի համասեռության պահպանման պայմաններում:
- K-121. КАТАКЛАСТИЧЕСКИЕ ПОРОДЫ, КАТАКЛАЗИТЫ – ՓՇՐԱԲԵԿՈՐԱՅԻՆ (ԿՍՏԱԿԼԱՍՏԻԿ) ԱՊԱՐՆԵՐ, KATACLASTIC ROCKS**, ապարներ, որոնք կրել են տեկտ. լարվածությունների ներազդեցություններ և կորցրել են նախասկզբնական կառուցվածքը: Ապարակազմիչ միներալների շատ հատիկներ ջարդոտված են ձեղքերի ցանցով, ծռված են, իսկ դրանց բյուրեղային ցանցը ձևափոխված է, որը արտահայտվում է մանրադիտակի տակ քվարցի հատիկներում «ալիքավոր մարմամբ»:
- K-122. КАТАСТРОФИЗМ – ԱՂԵՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, CATASTROPHISM, CONVULSIONISM**, երկրբ. մտահղացում (կոնցեպցիա), որի համաձայն երկրակեղևի կերպափոխությունը և մասնավորապես նրա ձևախախտումը, ինչպես նաև օրգանական աշխարհի կազմի փոփոխությունը տեղի են ունենում աղետալի արագ՝ երկրբ. ժամանակի կարճ միջակայքերում, որոնք բաժանված են հանգստի երկարատև ժամանակահատվածներով: Աղետների գիտաենթադրությունը ծագել է 19-րդ դարի սկզբում, հիմնադիրը ֆրանս. գիտնական Ժ. Կյուվեն է, որը դրանով էր բացատրում երկրբ. շերտերում ֆաունայի և ֆլորայի հերթափոխը: 19-րդ դարի վերջում կորցրեց իր նշանակությունը:
- K-123. КАУСТОБИОЛИТЫ** (հուն. kausticós – դյուրավառ, bios – կյանք և lithos – քար) – **ԿԱՌԲՍՏՈՒԹՅՈՒՆԵՐ (ԿԱՌԲՍԱԿԵՆՍԱՔԱՐԵՐ), CAUSTOBIOLITHS**, օր-



գանական ծագման այրվող հանածոներ, որոնք իրենցից ներկայացնում են երկր. գործոնների ազդեցության հետ կապված բուսական և կենդանական մնացորդների կերպափոխության արդյունքներ: Այժմ երկրաբանների մեծ մասը Կ., ըստ առաջացման պայմանների, ստորաբաժանում է 2 խմբի՝ ածխային շարքի Կ., որոնք ներառում են նստվածքակուտակման հետ համագոյացած դյուրավառ ապարները՝ տորֆը, բրածո ածուխները, այրվող թերթաքարերը, և նավթային շարքի Կ., որոնք ունեն հիմնականում տարաշարժի (միգրացիայի) բնույթ, ընդգրկում են նավթը, ասֆալտները, օզոքերիտը և այլն: Կ-ի միասնական դասակարգում մշակված չէ՝ դրանց գոյացման պայմանների, նյութական կազմի և տեխնոլոգիական հատկությունների արմատական տարբերությունների պատճառով:

**K-124. КВАЗИКРАТОН** (լատ. quasi – կարծեցյալ, կեղծ և կրատոն) – **ԿՎԱԶԻԿՐԱՏՈՆ**, “Молодая платформа” տերմինի հոմ.:

**K-125. КВАРЦ** (գերմ. Quarz) – **ՔՎԱՐՑ (ՈՐՉԱՔԱՐ), QUARTZ**, սիլիկահողի ընտանիքի գլխավոր միներալն է,  $SiO_2$ , լայնորեն տարածված է քարոլորտում: Հայտնի են  $SiO_2$ -ի 12 բազմաձև ձևափոխություններ, այդ թվում  $\alpha$ -Ք (հեքսագոնային),  $\beta$ -Ք (տրիգոնային),  $\beta_2$ -տրիգիմիտ (հեքսագոնային),  $\beta$ -կրիստոբալիտ (խորանարդային) և այլն: Ք. անջատվում է առանձին հատիկների, լավ միատավորված հատվածակողմային, հազվադեպ՝ շեղանկյունային բյուրեղների ձևով, հողանման և ձողանման ագրեգատներով, մանրաթելավոր և գնդավոր զանգվածներով (քաղկեդոն): Լայն տարածված են կրկնաբյուրեղները: Կարծրությունը 7 է, տիրապետում է պիեզոէլեկտրական հատկություններին: Ք-ի տարատեսակներն են՝ վանակն (ջրաթափանցիկ խոշորաբյուրեղային), ծխագույն Ք. (ծխագույն-գորշ), մորիոն (փայլարի սև), ցիտրին (դեղին, նարնջագույն), ամեթիստ (մեղեսիկ) (մանուշակագույն, վարդագույն): Ք-ի գունավորումը հաճախ պայմանավորված է այլ միներալների մանրաներփակվածքներով [օր.՝ ակրինոլիթի կամ քլորիտի ներփակվածքների դեպքում՝ բաց մոխրագույն (պրազեմ), հեմատիտի և փայլարների դեպքում՝ ոսկեգույն-դեղին կամ գորշավուն-կարմիր (ավանտյուրին) և այլն]: Մանրադիտակային շառավղաճառագայթային կամ զուգահեռ-թելավոր Ք. կոչվում է քաղկեդոն (տե՛ս Хальцедон), քաղկեդոնի համակենտրոն-գլավոր ագրեգատը՝ ագատ (տե՛ս Агат): Ք. բազմածին միներալ է: Առաջանում է  $SiO_2$ -ով հարուստ մագմայական հալույթից (գրանիտակերպեր, քվարցային պորֆիրներ, պեգմատիտներ), գազահեղուկ ֆլյուիդներից (պեգմատիտներ, գրեյզեններ) և ջրային ակալիաքլորիդային և երկկարբոնատային լուծույթներից (հանքաբեր և ոչ հանքաբեր քվարցային երակներ), ակտիվ հրաբխային մարզերում սիլիկատային ապարների ջրատարալուծումից (հիդրոլիզից) (երկրորդային քվարցիտներ և այլն): Վանակնը բյուրեղանում է ջրաջերմերից պեգմատիտների և քվարցային երակների խոռոչներում, քաղկեդոնը (ագատը)՝ հրաբխաքարերում՝ հետհրաբխային լուծույթներից, ինչպես նաև հողմահարման կեղևում և կայծքարակրային ապարների կատազենեզի դեպքում (կայծքարեր): Ք. շատ նստվածքային (ավազաքարեր, ավազներ և այլն) և փոխակերպային ապարների (երկաթախառն քվարցիտներ, բյուրեղային թերթաքարեր) գլխ. բաղադրամասն է:

**K-126. КВАРЦ ОПТИЧЕСКИЙ** – **ՕՊՏԻԿԱԿԱՆ ՔՎԱՐՑ (ՈՐՉԱՔԱՐ), OPTICAL QUARTZ**, վանակնի (լեռնաբյուրեղի) մաքուր, անթերի բյուրեղներ կամ դրանց մասեր, որոնք ուլտրամանուշակագույն ճառագայթներում ունեն բարձր թափանցիկություն: Օ. ք-ի կիրառումը հիմնված է նրա՝ սպեկտրի ինֆրակարմիր և հատկապես ուլտրամանուշակագույն մասի անցկացման հատկության վրա, ինչպես նաև երկբեկման և լուսային փնջի բեռնացման հարթության պտտման ունակության վրա:

**K-127. КВАРЦЕВЫЙ ДИОРИТ – ՔՎԱՐՑԱՅԻՆ (ՈՐՉԱՔԱՐԱՅԻՆ) ԴԻՈՐԻՏ, QUARTZ**

**DIORITE**, լիաբյուրեղային, մոխրագույն և կանաչավուն-մոխրագույն գույնի, միջին կազմի խորքային մագմայական ապար, որը պարունակում է 57-64 %  $\text{SiO}_2$ : Տարբերում են բնականոն կամ բուն Ք. դ. և սուբալկալիական Ք. դ.: Ք. դ. սովորաբար պարունակում է 55-65 % պլագիոկլազ: Մուգավուն միներալներ են եղջերախաբը, բիոտիտը, պիրոքսենը (ավգիտ, հազվադեպ՝ դիոպսիդ, երբեմն՝ հիպերստեն): Քվարցը կազմում է 5-ից մինչև 20 %: Ըստ մուգավուն բաղադրամասի՝ առանձնացնում են փայլարային, եղջերախաբային, ավգիտային, հիպերստենային Ք. դ.-ներ: Բնական Ք. դ. հանդիսանում է անդեզիտի խորքային ապարաքին. նմանակը, իսկ սուբալկալիականը՝ տրախիանդեզիտի: Կառուցվածքը հիպիդիոմորֆ-հատիկավոր՝ խոշորահատիկավորից մինչև նրբահատիկավոր, պորֆիրաման է: Ք. դ.-ները հազվադեպ են առաջացնում ինքնուրույն զանգվածներ (սովորաբար հանդիպում են բարդ զանգվածներում՝ դիորիտների հետ համատեղ), կազմում են ապարազանգվածներ, դայկաներ, անկանոն ձևի մարմիններ: Բնորոշ են տեկտոգենեզի լեռնագոյացման փուլին:

**K-128. КВАРЦЕВЫЙ ПОРФИР, РИОЛИТ ПАЛЕОТИПНЫЙ** (քվարց և հուն. porphýreos – պորփյուր, ծիրանագույն) – **ՔՎԱՐՑԱՅԻՆ ՊՈՐՓՅՈՒՐ (ԾԻՐԱՆԱՔԱՐ, ՊՈՐՖԻՐ), ՋՆԱՏԻՊ ՌԻՈԼԻԹ, QUARTZ PORPHYRY**, պորֆիրային կառուցվածքի արտաժայթքային հնատիպ թթու ապար: Կազմված է կալիում-նատրիումային դաշտասպաթից (40-90 %), պլագիոկլազից (10-60 %): Ներփակվածքները (30-35 %) ներկայացված են օլիգոկլազով, օրթոկլազով: Քիչ քանակով առկա է բիոտիտը, պիրոքսենը և գորշ եղջերախաբը: Հիմնական զանգվածը քանակապես գերակշռում է ներփակվածքներին, դրա կառուցվածքը մանրաֆելզիտային, ապակենման է: Ք. պ-ի կազմվածքը ֆլուիդալ է, երբեմն՝ զոլավոր, գունավորումը՝ սովորաբար գորշ, կարմրագորշ, մոխրականչ, մարմինների ձևերը՝ հոսքեր, ծածկոցներ, արտամղումային ապարազանգվածային մարմիններ:

**K-129. КВАРЦИТ – ՔՎԱՐՑԻՏ, QUARTZITE**, ռեզիոնալ փոխակերպված (մետամորֆացված) ապար, բաղկացած է քվարցի հատիկներից, որոնք ակնադիտականորեն չեն զանազանվում և միախառնվում են համատարած խիտ զանգվածում, կոտրվածքը խեցածև կամ անհարթ է: Ըստ Ք-ի կազմում մասնակցող այլ միներալների՝ առանձնացնում են փայլարային, նռնաքարային, եղջերախաբային և այլ Ք-ներ: Ք-ների առաջացումը կապված է ռեզիոնալ փոխակերպության գործընթացում քվարցային ավազաքարերի վերաբյուրեղացման հետ: Ք-ներին են վերագրվում քիմիածին ծագման վերաբյուրեղացած ապարները՝ երկաթախառն քվարցիտները (տե՛ս Железистый кварцит): Ք-ները տեղադրված են բազմազան փոխակերպային ապարների մեջ՝ համատարած շերտային մարմինների տեսքով, որոնք ունեն մեծ տարածվածություն: Ք-ների հատուկ տարատեսակներից են երկրորդային քվարցիտները, տե՛ս Вторичные кварциты:

**K-130. КВАСЦОВЫЙ КАМЕНЬ**, տե՛ս Алунит:

**K-131. КВАСЦЫ ПРИРОДНЫЕ – ԲՆԱԿԱՆ ՇԻՔԵՐ (ՊԱՂԵՂԱՔԱՐԵՐ), ALUM**, միներալներ, ալյումինի ալկալիական կատիոնների կրկնակի ջրային սուլֆատներ: Ընդհանուր ֆորմուլան  $\text{MAl}(\text{SO}_4)_2 \times 12\text{H}_2\text{O}$ , որտեղ M-ը՝  $\text{Na}^+$ ,  $\text{K}^+$ ,  $\text{NH}_4^+$  է: Ներառում է նատրիումային, կալիումային, ամոնիումային և այլ շիբերը (պաղլեղաքարերը): Անջատման ձևերն են՝ փառերը, թաղանթները, խալկալումները, հազվադեպ՝ ութանիստ բյուրեղները: Գույնը՝ սպիտակ, հազվադեպ՝ վարդագույն, կարծրությունը՝ 2.5: Դյուրալույծ են: Առաջանում են ծծմբաթթվի և ալյումասիլիկատների փոխ-

գործունեության արդյունքում, չորային տեղերում: Բնության մեջ Բ. շ. հազվադեպ են հանդիպում:

**K-132. КВЕРШЛАГ – ԲՎԵՐՇԼԱԳ (ԼԱՅՆԱԿԱՆ ՓՈՐՈՒՏ), CROSSCUT**, հորիզոնական կամ թեք, Երկրի մակերևույթ անմիջականորեն ելք չունեցող, դատարկ ապարներով և հանքամարմնի տարածմանը մոտավորապես ուղղահայաց ուղղությամբ տարածված ստր. բացող փորվածք, որը ծառայում է բեռների և մարդկանց տեղափոխման, օդափոխման, ջրի արտահանման համար:

**K-133. КЕЛЛОВЕЙСКИЙ ЯРУС, КЕЛЛОВЕЙ** (Կելովեյ, Kelloway գյուղի անունից, Անգլ.) – **ԿԵԼՈՎԵՅԻ ՅԱՐԿ, ԿԵԼՈՎԵՅ, CALLOVIAN**, յուրայի համակարգի միջին բաժնի վերին հարկ:

**K-134. КЕМБРИЙСКАЯ СИСТЕМА (ПЕРИОД), КЕМБРИЙ** (Ուելսի լատ. Քամբրիա, Cambria, անվանումից, Անգլ.) – **ՔԵՄԲՐԻԻ ՅԱՄԱԿԱՐԳ (ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆ), ՔԵՄԲՐԻ, CAMBRIAN SYSTEM**, պալեոզոյան էրատեմայի ըստ հաջորդականության առաջին համակարգ, համապատասխանում է Երկրի երկրբ. պատմության պալեոզոյան դարաշրջանի առաջին ժամանակաշրջանին: Սկսվել է 545 մլն. տ. սրանից առաջ, տևողությունը 54 մլն. տ.: Ստորաբաժանվում է 3 բաժինների՝ ստորին, միջին և վերին: Ընդհանուր ընդունված հարկային բաժանումներ գոյություն չունեն: Այժմ առավել ընդունված է հետևյալ հարկային ստորաբաժանումը. ստորին Ք.՝ տոմնոտի, ատդաբանի, բոտոմի, տոյոտի, միջին Ք.՝ անգինի, մայայի, վերին Ք.՝ այոսոկկանի, սմակի, ակսայի, բատրոբայի հարկեր: Ստորին քեմբրիում առավել լայն տարածված են ծովային նստվածքները՝ կապված ծովի լայնարձակ ծովարշավի (տրանսգրեսիայի) հետ: Միջինում շատ վայրերում տեղի է ունեցել ծովի հետընթացություն (ռեգրեսիա): Վերին քեմբրիում լայն տարածում են ստանում ծովալճակային (լագունային) կարմրագույն նստվածքները: Գլխ. տեկտ. կառուցվածքները ձևավորվել են դեռևս ռիֆեյի վերջում: Ք-ի ժամանակաշրջանում երկրբ. պատմության մեջ առաջին անգամ հանդես են գալիս կմախքային օրգանիզմները: Վաղ քեմբրիի համար բնորոշ են տրիլոբիտները և արխեոցիատները, գոյություն են ունեցել ուստոանիները, փափկամարմինները, օստրակոդները և այլն: Քեմբրիի վերջում հանդես են գալիս գրապտոլիթները: Բուսական աշխարհը ներկայացված է կապտականաչ ու կարմիր ջրիմուռներով և պարզունակ բարձրակարգ բույսերով: Քեմբրիի նստվածքները, մյուս համակարգերի համեմատությամբ, աղքատ են օգտ. հնձ-ներով, առավել նշանակալի են ֆոսֆորիտների հնքվ-երը:

**K-135. КЕРАТОФИР** (հուն. kēras, սեռ. հ. kēratos – եղջյուր և porphýros – պորփյուր, ծիրանագույն, մուգ կարմիր) – **ԿԵՐԱՏՈՖԻՐ, KERATOPHYRE**, երկրորդային գործընթացներով փոփոխված թթու արտաժայթքային ապար: Կազմված է ալբիտից, հազվադեպ՝ օլիգոկլազից, երբեմն՝ քվարցից (քվարցային Կ.), ինչպես նաև քլորիտից, էպիդոտից և կալցիտից: Յազվադեպ հանդիպում են մուգավուն միներալներ: Բնորոշ է բաց մոխրագույն, բաց կանաչ գունավորումը: Կառուցվածքը պորֆիրային, ֆելզիտային, մանրապոլիլիտային է: Բնորոշ է Կ-ի համատեղ գտնվելը սպիլիտների հետ՝ Կ-սպիլիտ-դիաբազային ֆորմացիայում:

**K-136. КЕРН** (գերմ. Kern – միջուկ) – **ԿԵՌՆ, ՅԱՆՈՒԿ, DRILL CORE, CORE SAMPLE**, ապարի գլանաձև հանվածք, որն ստացվում է հորատանցքի ճակատի օղակաձև քայքայումից:

**K-137. КЕРНИТ** (Կերն, Kern հնքվ-ի անունից, Կալիֆոռնիա, ԱՄՆ) – **ԿԵՐՆԻՏ, KERNITE**, միներալ բորատների դասից,  $\text{Na}_2\text{B}_4\text{O}_7 \cdot 4\text{H}_2\text{O}$ : Բյուրեղանում է մոնոկլինա-

յին համակարգում: Առաջացնում է ձգված կամ սեպածն բյուրեղներ, թելավոր, հողանման ագրեգատներ: Անգույն է կամ սպիտակ: Փայլը՝ ապակու, կարծրությունը՝ 2.5: Հանդիպում է բորի հրաբխանստվածքային հնքվ-երում, մտնում է բորի հանքանյութերի կազմի մեջ:

**K-138. КЕРНОМЕТР – ԿԵՌՆԱՉԱՓ, ՀԱՆՈՒԿԱՉԱՓ, CORE METER,** կոզմոորոշված կեռնի վրա չափումներ կատարելու միջոցով ապարաշերտերի տարածման ու անկման անկյունները որոշող սարք:

**K-139. КЕРОГЕН** (հուն. kēros – մոմ և genēs – ծագած, գոյացած) – **ԿԵՐՈՂԵՆ, KERO-GEN**, նստվածքային ապարներում ցրված օրգանական նյութի (ցածր կերպափոխման փուլի) մաս, որը չի լուծվում օրգանական լուծիչներում: Կ. տարասեռ դետրիտային և նրբադիսպերսային օրգանական նյութերի համակցություն է, որը կերպափոխվել է մեծ մասամբ անօդակյաց պայմաններում: Կ-ի պարունակությունը այրվող թերթաքարերում մինչև 65 % է (առավելապես 15-35%): Կատագենեզի զոնայում Կ-ի տարրային բաղադրությունը (%-ը) սապրոպելային տիպում հետևյալն է՝ C 64-93, H 6-10, O 0-25, N 0.1-4.0, S 0.1-8.0, հումուսասապրոպելային տիպում՝ C 64-96, H 1-5, O 3-25, N 0.1-2.0, S 0.1-3.0: Փոխակերպության դեպքում մեծանում է C-ի չափաբաժինը: Որոշ հետազոտողներ Կ-ին են վերագրում ցանկացած ծագման և ներփակող ապարների հետ համածին ցրված օրգանական նյութը:

**K-140. КИАНИТ, ДИСТЕН** (հուն. kyanós – մուգ կապույտ) – **ԿԻԱՆԻՏ, ԴԻՍՏԵՆ, CYANITE, DISTHENE**, միներալ օրթոսիլիկատների ենթադասից,  $Al_2[SiO_4]O$ : Բյուրեղանում է տրիկլինային համակարգում: Կ. առաջացնում է երկարացած սյունածն բյուրեղներ, հազվադեպ՝ աղյուսածն, շառավղաճառագայթային, խրձածն ագրեգատներ: Գույնը՝ սպիտակից մինչև երկնագույն և մուգ կապտականաչ: Կարծրությունը՝ 5.5-7: Կ. բնորոշ ներքնածին (հիպոգեն) միներալ է, առաջանում է բարձր ճնշման զոնաներում՝ արգնահողով հարուստ նստվածքային ապարների փոխակերպման դեպքում, զրանիտային պեգմատիտներում գոյանում է  $Al_2O_3$ -ով հարուստ ապարների ասիմիլացումից: Օգտագործվում է ամուր բարձրահրակայուն, թթվակայուն նյութերի ստացման, արգնահողի կորզման համար:

**K-141. КИЗЕРИТ** (գերմ. գիտնական Ռ. Կիզերի, D. Kiesser (1779-1856), անունից) – **ԿԻՉԵՐԻՏ, KIESERITE**, միներալ սուլֆատների դասից:  $Mg(SO_4) \cdot H_2O$ : Բյուրեղանում է մոնոկլինային համակարգում, բյուրեղները հազվադեպ են: Սովորաբար հանդիպում է համատարած, հողանման զանգվածների տեսքով: Գույնը մոխրավուն-սպիտակ, դեղնավուն, հազվադեպ անգույն է և թափանցիկ, փայլը՝ ապակու: Զրում դանդաղ է լուծվում, ջրում թրջվելիս պնդանում է: Կ. ծովային էվապորիտների բնորոշ միներալ է: Տիպիկ է աղային բրածո սուլֆատային հանքակուտակումների համար: Հանդիպում է նաև բորատների մակերևութային հնքվ-երում: Կ. մագնեզիումի և դրա միացությունների ստացման հումք է:

**K-142. КИМБЕРЛИТ** (Հր. Աֆրիկայի Քիմբերլի, Kimberley p-ի անունից, որտեղ առաջին անգամ հայտնաբերվել է Ք.) – **ՔԻՄԲԵՐՆԼԻԹ, KIMBERLITE**, պինդ փշրաքարանման (բրեկչիանման) կամ տուֆակերպ գերհիմքային մագմայական ապար: Կազմված է սերպենտինացված օլիվինից, ֆլոգոպիտից, մելիլիթից, կարբոնատներից, պիրոպից, դիոպսիդից, ակցետորային ապատիտից և այլ միներալներից: Գույնը՝ կանաչավուն-սև, մուգավուն: Լցնում է պայթման խողովակները, հազվադեպ հանդիպում է դայկաների, սիլերի ձևով, տարածված է գլխ. հին պլատֆորմներում: Ք-ի ելքերի մոտ 8-10%-ը պլմաստաբեր է:

- K-143. КИМЕРИДЖСКИЙ ЯРУС, КИМЕРИДЖ** (Կիմերիջ, Kimmeridge գյուղի անունից, Յր. Անգլիայում) – **ԿԻՄԵՐԻՋԻ ՀԱՐԿ, ԿԻՄԵՐԻՋ, KIMMERIDGIAN**, յուրայի համակարգի վերին բաժնի ներքևից երկրորդ հարկ:
- K-144. КИММЕРИЙСКАЯ СКЛАДЧАТОСТЬ – ԿԻՄԵՐՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, CIMMERIAN FOLDING**, տե՛ս Складчатость киммерийская:
- K-145. КИНОВАРЬ** (հուն. kinnábari) – **ԿԻՆԱՐԱՐ (ՋԻՆՋԱՐԱԿ, ԿԻՆՈՎԱՐ), CINNABAR, CINNABARITE**, միներալ պարզ սուլֆիդների ենթադասից, HgS, (Hg-86,2%, S-13.8%): Բյուրեղանում է տրիգոնային համակարգում: Առաջացնում է աղյուսածև, շեղանկյունանիստ, հազվադեպ՝ հատվածակողմային բյուրեղներ, բնորոշ են հողանման ագրեգատները, հաճախ հանդիպում են կրկնաբյուրեղներ: Գույնը՝ վառից մինչև մուգ կարմիր: Կարծրությունը՝ 2-2.5: Մերձակերևութային ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվ-երին բնորոշ միներալ է՝ գլխ. երիտասարդ հրաբխային մարզերում: Կ. սնդիկի հանքանյութերի գլխավոր միներալն է: Սնդիկի ամենատարածված և կայուն միներալն է:
- K-146. КИСЛАЯ ЛАВА – ԹԹՈՒ ԼԱՎԱ (ՀՐԱՀՈՍՔ), ACID LAVA**, լավա, որը պարունակում է 65-70% սիլիկաթթու: Արտավիժման ժամանակ բնորոշվում է ավելի մեծ մածուցիկությամբ և փոքր շարժունակությամբ, քան հիմքային լավան: Արտավիժման կենտրոնի վրա հաճախ առաջացնում է արտամղային գմբեթ:
- K-147. КИСЛАЯ МАГМА, ГРАНИТНАЯ МАГМА – ԹԹՈՒ ՄԱԳՄԱ (ՀՐԱՀԵՂՈՒԿ), ԳՐԱՆԻՏԱՅԻՆ ՄԱԳՄԱ, ACID MAGMA**, խորքային մածուցիկ սիլիկատային հալույթ, որը պարունակում է ավելի քան 65% սիլիկահող և համեմատաբար հարուստ է ցնդող նյութերով (հիմնականում ջրով): Մագմայի հիմնական տեսակներից մեկն է: Մակերևութում կամ մերձակերևութային պայմաններում սառչելիս առաջացնում է ռիոլիթներ, դաշիտներ և հրաբեկորային ապարներ, խորքային պայմաններում՝ գրանիտներ, գրանոդիորիտներ:
- K-148. КИСЛЫЕ ВОДЫ – ԹԹՈՒ ՋՐԵՐ, ACID WATERS**, ցայտուն արտահայտված թթու ռեակցիայով բնական ջրեր, որոնց մեջ ջրածնային իոնների կուտակումը pH<5:
- K-149. КИСЛЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ – ԹԹՈՒ ԱՊԱՐՆԵՐ, ACID ROCKS, SILICEOUS ROCKS**, սիլիկահողի բարձր պարունակությամբ (64-78 %) սպիտակավուն մագմայական ապարներ: Սիլիկահողի ավելցուկը Թ. ա-ում անջատվում է բյուրեղային քվարցի կամ (արտաժայթքային ապարներում) մտնում է հիմնական զանգվածի ապակու կազմի մեջ: Գլխավոր միներալներն են՝ քվարց, ալկալիական դաշտասպաթ (օրթոկլազ, հազվադեպ՝ միկրոկլին, սանիդին՝ հրաբխային ապարներում), թթու պլազիոկլազ (ալբիտ-օլիգոկլազ, հազվադեպ՝ անդեզին), գունավոր միներալներ (բիտիտ, ամֆիբոլ, պիրոքսեններ), ակցեսորայիններ՝ ապատիտ, ցիրկոն, օրտիտ, սֆեն, մագնետիտ, իլմենիտ և այլն: Ըստ ծագման առանձնացվում են խորքային (լիաբյուրեղային) և հրաբխային Թ. ա.: Ըստ քիմ. կազմի՝ բաժանվում են՝ 1) բնականոն գրանոդիորիտներ (հրաբխային՝ դաշիտներ), ցածրաալկալիական գրանիտներ (ցածրաալկալիական ռիոդաշիտներ), գրանիտներ (ռիոդաշիտներ), լեյկոգրանիտներ (ռիոլիթներ), 2) ենթաալկալիական (սուբալկալիական)՝ քվարցային սիենիտներ (տրախիդաշիտներ), ենթաալկալիական գրանիտներ (տրախիդիոդաշիտներ), ենթաալկալիական լեյկոգրանիտներ (տրախիդիոլիթներ), 3) ալկալիական՝ ալկալիական՝ քվարցային սիենիտներ (ալկալիական տրախիդաշիտներ), ալկալիական գրանիտներ (պանտելերիտներ):
- K-150. КИСЛЫЕ ФУМАРОЛЫ – ԹԹՈՒ ՖՈՒՄԱՐՈՆՆԵՐ, ACID FUMAROLES**, մինչև 400-600°C ջերմության հրաբխային գազանման արտանետվածքներ՝ ֆումարոլներ (տե՛ս Фумаролы), որոնք ունեն բարձր թթվայնություն (pH<2-3):

- K-151. КИШЕЧНОПОЛОСТНЫЕ** (Coelenterata) – **ԱՂԵՆՈՐՇԱՎՈՐՆԵՐ, COELENTERATES**, անողնաշարավոր կենդանիների տիպ, մոտ 10 հազ. ժամանակակից և 10 հազ. բրածո տեսակներ: Մարմինը կազմված է երկու շերտից՝ էկտոդերմ և էնդոդերմ: Միակ անցքը տանում է դեպի ստամոքսային խոռոչը, դրա միջոցով ընդունվում է սնունդը, և արտահանվում են մնացորդները: Անցքը հաճախ շրջապատված է շոշափուկներով: Բնորոշ է խայթող բջիջների առկայությունը: Բաժանվում է 3 դասերի՝ հիդրոիդներ, սցիֆոիդներ և բուստային պոլիպներ: Քենթրիից-այժմ:
- K-152. КЛАРЕН** (ֆրանս. clarin, լատ. clarus-ից – պարզ, լուսավոր, փայլուն) – **ՎԼԱՐԵՆ, CLARAIN**, բրածո ածուխների ակնադիտականորեն տարբերվող փայլուն բաղադրամաս (ինգրեդիենտ), բրածո ածուխների քարաբանածագումնային տեսակ: Անհամասեռ ածուխներում առաջացնում է զոլեր, երբեմն՝ ամբողջական շերտեր: Գույնը սև է:
- K-153. КЛАРКИ ЭЛЕМЕНТОВ** – **ՏԱՐՐԵՐԻ ՔԼԱՐԿՆԵՐ, CLARKS**, պարունակությունների միջինացված համակարգ, որը բնորոշում է քիմ. տարրերի տարածումը խոշոր երկրք. համակարգում (երկրակեղևում, քարոլորտում, մթնոլորտում, ջրոլորտում, կենսոլորտում, Երկրում ամբողջապես կամ տիեզերքում): Արտահայտվում է զանգվածային, ծավալային, ատոմային տոկոսներով (%), պրոմիլեյով (‰), միլիոնավոր մասերով (գ/տ) կամ որևէ առավել տարածում ունեցող տարրի համեմատությամբ:
- K-154. КЛАССИФИКАЦИЯ БИТУМОВ** (լատ. classis – տարակարգ, խումբ, դաս և facio – անում եմ, կատարում եմ) – **ԲԻՏՈՒՄՆԵՐԻ (ՅԱՆՔԱՉՅՈՒԹԵՐԻ) ԴԱՍԱՎԱՐԳՈՒՄ, CLASSIFICATION OF BITUMENS**, բիտումների ժամանակակից դասակարգման հիմքում նախկին ԽՍՀՄ-ում դրված է բիտումագոյացման ծագումնաբանական ուղղությունը, որի դեպքում դասերի միջև սահմանները որոշվում են ֆիզքիմ. ցուցանիշներով: Բիտումները ստորաբաժանվում են հիմնական ծագումնաբանական շարքերի՝ նավթիդներ և նավթիդներ: Շատ այլ երկրներում ընդունված դասակարգման համաձայն բիտումները ստորաբաժանվում են 2 դասի՝ 1) նավթաբիտումներ, որոնք լրիվ լուծվում են քլորոֆորմում և հալվում են տաքացներիս (բնական գազեր, նավթեր, ասֆալտներ, ասֆալտիտներ, օզոքերիտներ), 2) ասֆալտիդներ, որոնք գործնականորեն չեն լուծվում և չեն հալվում առանց քայքայման (կերիտներ, անտրաքսոլիթներ):
- K-155. КЛАССИФИКАЦИЯ ГЕОХИМИЧЕСКАЯ ЭЛЕМЕНТОВ** – **ՏԱՐՐԵՐԻ ԵՐԿՐԱՎՈՒՄՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՐԳՈՒՄ, CLASSIFICATION OF GEOCHEMICAL ELEMENTS**, տե՛ս Геохимическая классификация элементов:
- K-156. КЛАССИФИКАЦИЯ ГРУНТОВ ГРАНУЛОМЕТРИЧЕСКАЯ** – **ԳՐՈՒՆՆԵՐԻ ՅԱՏԻՎԱԶԱՓԱԿԱՆ ԴԱՍԱՎԱՐԳՈՒՄ, GRANULOMETRIC CLASSIFICATION OF GROUNDS**, գրունտների՝ ըստ հատիկային կազմի (հատիկախմբերի պարունակության) դասակարգում, որը կատարվում է հատիկային կազմի ուսումնասիրության տվյալների հիման վրա: Տե՛ս Гранулометрический состав горных пород:
- K-157. КЛАССИФИКАЦИЯ ЗАПАСОВ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ** – **ՕԳՏԱՎԱՐ ՅԱՆԱՃՈՆԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՐԳՈՒՄ, CLASSIFICATION OF MINERAL RESERVES**, օգտ. հնժ-ների պաշարների բաժանումը խմբերի և կարգերի, տե՛ս Запасы полезных ископаемых:
- K-158. КЛАССИФИКАЦИЯ МЕСТОРОЖДЕНИЙ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ** – **ՕԳՏԱՎԱՐ ՅԱՆԱՃՈՆԵՐԻ ՅԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԴԱՍԱՎԱՐԳՈՒՄ, CLASSIFICATION OF MINERAL DEPOSITS**, օգտ. հնժ-ների հնքվ-երի ստորաբաժանումը (դասեր, սերիաներ, տիպեր, ավելի փոքր ստորաբաժանումներ) ըստ որոշ գլխավոր հատ-

կանիշների՝ ծագումնաբանական, նյութական կազմի, միներալային կազմի, ձևաբանության (մորֆոլոգիայի), արդյ. օգտագործման, տե՛ս Месторождение полезных ископаемых:

**К-159. КЛАССИФИКАЦИЯ МЕСТОРОЖДЕНИЙ ПО ВЕЛИЧИНЕ ЗАПАСОВ НЕФТИ И ГАЗА – ՆԱՎԹԻ ՈՒ ԳԱԶԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԴԱՍԱՎԱՐԳՈՒՄ ԸՍՏ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԶՎՔԵՐԻ, CLASSIFICATION OF DEPOSITS BY OIL AND GAS RESERVES VALUE,** նախկին ԽՍՀՄ-ում ընդունված էր հետևյալ դասակարգումը. խոշոր՝ նավթ > 50 մլն. տ-ից, գազ > 30 մլն. մ<sup>3</sup>-ից, միջին՝ նավթ 10-50 մլն. տ., գազ 5-30 մլն. մ<sup>3</sup>. փոքր՝ նավթ < 10 մլն. տ-ից, գազ < 5 մլն. մ<sup>3</sup>-ից:

**К-160. КЛАССИФИКАЦИЯ ОСАДОЧНЫХ ПОРОД – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՐԳՈՒՄ, CLASSIFICATION OF SEDIMENTARY ROCKS,** գոյություն ունեն նստվածքային ապարների տարբեր դասակարգումներ: Այժմ առավել ընդունված է այդ ապարների դասակարգումը ըստ նյութական կազմի և ծագման: Առանձնացնում են նստվածքային ապարների հետևյալ խմբերը կամ դասերը: 1) Բեկորային ապարներ, ստորաբաժանվում են՝ խոշորաբեկոր (կամ կոպտաբեկոր) ապարների [պարունակում են ավելի քան 50 % ըստ քաշի կամ ծավալի 1 մմ-ից (կամ 2մմ-ից) խոշոր բեկորներ]: Ավազային ապարներ՝ ավազային, ալերիտային և խառն ապարներ: Կազմված են 0.1-1.0 մմ կամ 0.05-2 մմ չափերի ապարների ու միներալների բեկորներից: Փուխր տարբերակները կոչվում են ավազներ, ցեմենտացածները՝ ավազաքարեր: Ալերիտային ապարները կազմված են 0.01-0.1 մմ կամ 0.005-0.05 մմ չափերի միներալների բեկորներից: Փուխր տարբերակները կոչվում են ալերիտներ, ցեմենտացածը՝ ալերոլիթներ: 2) Կավային ապարներ, բազմամիներալային են, ապարակազմիչ միներալներ են սիլիկատները և ալյումոսիլիկատները, կավային միներալներ՝ մասնիկների չափերը փոքր են 0.001մմ-ից: 3) Կարբոնատային կրամագնեզիումային ապարներ՝ կրաքարեր, մերգելներ, դոլոմիտներ: 4) Սիլիցիումային ապարներ՝ տրեպել, օպոկ, գեյզերիտ, դիատոմիտ, սպոնգոլիթ, ֆտանիտ, հասպիս, ռադիոլարիտ: 5) Բարձր արգնահողային ապարներ և ալյումինի հանքաքարեր՝ ալիթներ, բոքսիտներ, ալումինտային ապարներ ու հանքաքարեր: 6) Հիպոմանգանային ապարներ ու հանքաքարեր: 7) Երկաթային ապարներ ու հանքաքարեր: 8) Ֆոսֆորիտներ: 9) Աղային ապարներ: 10) Անհիդրիդ և գիպս: 11) Հրաբխածին-նստվածքային ապարներ [տեֆրոգեն ապարներ, հրաբխացամաքածին (վուլկանամիկտային) ապարներ, տուֆածին կավեր ու արգիլիթներ, տուֆածին ցեոլիտոլիթներ, տուֆածին բազմամիներալային ապարներ, տուֆապելիտներ]: 12) Հողմահարման կեղևներ:

**К-161. КЛАССИФИКАЦИЯ ПОДЗЕМНЫХ ВОД – ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԱՍԱՎԱՐԳՈՒՄ, CLASSIFICATION OF UNDERGROUND WATER,** ստր. ջրերը դասակարգվում են ըստ ծագման, տեղադրման պայմանների, ջրադինամիկ հատկանիշների, ջերմաստիճանի, հանքայնացման, քիմ. բաղադրության, ջրատար ապարների քարաբանական կազմի ու հասակի և այլն: Այդ պատճառով դասակարգումները բազմաթիվ են, սակայն ստր. ջրերի բոլոր օրինաչափություններն ու առանձնահատկություններն ընդգրկող դասակարգում գոյություն չունի: Ստորև բերվում է առավել ընդունվածներից մեկը՝ Ա. Մ. Օվչիննիկովի (1948) դասակարգումը ըստ կարգերի. I տիպ՝ վերնաջրեր, II տիպ՝ գրունտային ջրեր և III տիպ՝ արտեզյան ջրեր: Այդ տիպերի կազմում առանձնացվում են ենթատիպեր. ծակոտկեն ապարներում վերնաջրերի կազմում առանձնացվում են հողային, ճահճային, վերնաջրեր՝ ջրամերժ ապարների ոսպնյակների վրա, թակիրների ու ավազաթմբերի և ավազային

զանգվածների ու դյունների ջրեր, գրունտային ջրերի կազմում՝ այլուվիալ, դելյուվիալ ու պրոլյուվիալ, ֆլյուվիոգլացիալ և արմատական ապարների ջրեր, արտեզյան ջրերի կազմում՝ արտեզյան ավազանների ջրեր (ավազային շերտերում) և արտեզյան լանջերի ջրեր (նախալեռնային նստվածքների բեկորային շերտախմբերում):

**К-162. КЛАССИФИКАЦИЯ РУД – ՀԱՆՔԱՔԱՐԵՐԻ ԴԱՍԱՎԱՐԳՈՒՄ, CLASSIFICATION OF ORES**, հանքաքարերը բաժանվում են դասերի, խմբերի, տիպերի և տարատեսակների ըստ միներալային (որակական և քանակական) կազմի և քիմ. բաղադրության, կառուցվածքի ու կազմվածքի, ֆիզ. հատկանիշների:

**К-163. КЛАССИФИКАЦИЯ УГЛЕЙ ГЕНЕТИЧЕСКАЯ – ԱՃՈՒՏՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱՎԱՐԳՈՒՄ, GENETIC CLASSIFICATION OF COALS**, գոյություն ունեն տարբեր դասակարգումներ, առավել տարածված է Ժենչուժնիկովի դասակարգումը, Գինգբուրգի և ուրիշների լրացումներով (1962): Դրանում հաշվի է առնվում ելանյութը, մայրական բույսերի ցողունները, տերևները և այլ մասերը, ելանյութի կուտակման ֆիզաշխ. պայմանները, լանդշաֆտը, ելանյութի կուտակները, ֆիզքիմ (ջրաքիմ.) և միկրոկենսաբանական առանձնահատկությունները և որպես այդ բոլորի արդյունք՝ բուսական նյութի քայքայման գործընթացները: Դասակարգման մեջ առաջին ստորաբաժանումը կատարվում է ելանյութի հիման վրա՝ առանձնացվում են հումոլիթներ, սապրոհումոլիթներ, սապրոպելիթներ: Այդ խմբերի հետագա ստորաբաժանումը դասերի՝ հենվում է ածխային նյութի կերպափոխման տարբերությունների վրա: Հումոլիթների մեջ առանձնացվում են հումիտներ և լիպտոբիոլիթներ, սապրոհումոլիթների մեջ՝ սապրոպելիտահումիտներ, սապրոպելիթների մեջ՝ բուն սապրոպելիթներ և հումիտասապրոպելիթներ: Դասերի հետագա ստորաբաժանումը ածուխների քարաբանական տիպերի՝ կատարվում է ըստ ֆյուզենացված ու լիպոիդային և հելիֆիկացված բաղադրամասերի հարաբերության: Վերջինները բաժանվում են տարատեսակների՝ ըստ մանրաբաղադրամասերի միջև եղած փոխհարաբերության: Վերոհիշյալ բոլոր ստորաբաժանումների մեջ հաշվի են առնվում բրածո ածուխների կառուցվածքը, փայլը և կազմվածքը:

**К-164. КЛАСТИЧЕСКАЯ ДАЙКА** (հուն. klastós – ջարդված, փշրված) – **ԲԵՎՈՐԱՅԻՆ ԴԱՅՉԱ, CLASTIC DIKE**, ճեղք երկրակեղևում (մետրից մինչև մի քանի կմ) լցված (ներքևից կամ վերևից) բեկորային նյութով (ավազաքարով, խառնաքարով, փշրաքարով, միլոնիտներով, տուֆով), նույնն է՝ Кластическая жила:

**К-165. КЛАСТИЧЕСКАЯ ЖИЛА – ԲԵՎՈՐԱՅԻՆ ԵՐԱՎ, տե՛ս** Кластическая дайка:

**К-166. КЛАСТИЧЕСКАЯ СТРУКТУРА – ԲԵՎՈՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, CLASTIC TEXTURE**, նստվածքային ապարների կառուցվածքի ընդհանուր անվանում, ապարներ, որոնք կազմված են ըստ չափերի չտեսակավորված սուրանկյուն և կլորացված բեկորներից: Նույնն է՝ Обломочная структура:

**К-167. КЛИВАЖ** (ֆրանս. clivage – շերտատում, ճեղքում) – **ԿԼԻՎԱԺ, CLEAVAGE**, ձևախախտված ապարների ունակություն՝ ճեղքվելու նուրբ թերթիկների կամ ոսպնյակների զուգահեռ մակերևույթների համակարգով, որը հատում է շերտավորությունը կամ ներդաշնակ է նրա հետ: Դիտվում է երկրակեղևի գծային ծալքերի տարածման վայրերում, ծալքեր, որոնք գոյանում են հորիզոնական սեղմման և նյութի շերտ առ շերտ հոսքի ազդեցության տակ: Կ. ապարների մեխ. քայքայման ձևերից մեկն է, իրենից ներկայացնում է անցողիկ ձև ծալքերի ու խզվածքների միջև: Տարբերում են հոսանքի Կ. և նրա տարատեսակը՝ թերթավորությունը, ինչպես նաև՝ խախտման Կ. և նրա տարատեսակը՝ ջարդման Կ.: Ձուգահեռ Կ. օգտա-



գործվում է երկրբ. քարտեզագրման ժամանակ: Կ-ի լայն տարածումը երբեմն քողարկում է շերտավորությունը:

**K-168. КЛИВАЖ ВЕЕРООБРАЗНЫЙ – ՅՈՎՅԱՐԱՁԵՎ ԿԼԻՎԱԺ, FAN CLEAVAGE,** ճեղքերի մակերևութներ, որոնք անտիկլինալների վրա ցրվում են, իսկ սինկլինալներում՝ զուգամիտվում են:

**K-169. КЛИВАЖ ВТОРИЧНЫЙ – ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԿԼԻՎԱԺ, SECONDARY CLEAVAGE,** ապարների ձևախախտման արդյունք, որը տեղի է ունեցել արտաքին, գլխ. տեկտ. ներազդեցության տակ և արտահայտվում է ճեղքավորության հանդես գալով: Ե. կ. ստորաբաժանվում է հոսանքի կլիվաժի և խախտման կլիվաժի:

**K-170. КЛИВАЖ ЛИНЕЙНЫЙ – ԳԾԱՅԻՆ ԿԼԻՎԱԺ, LINEAR CLEAVAGE,** բնորոշ է այն ապարներին, որոնք բաղկացած են ձգված հատվածակողմային միներալներից:

**K-171. КЛИВАЖ ПЕРВИЧНЫЙ – ԱՌԱՋՆԱՅԻՆ ԿԼԻՎԱԺ, PRIMARY CLEAVAGE,** ապարում առաջանում է գլխ. ներքին պատճառների ազդեցության տակ, որոնք կախված են իր՝ ապարի նյութից կամ քարագոյացման (լիթոգենեզի) գործընթացում ապարի ծավալի կրճատումից: Նստվածքային ապարներում Ա. կ. արտահայտվում է զուգահեռ ճեղքերի երկու համակարգերի առաջացմամբ, որոնք ուղղահայաց են միմյանց և շերտավորությանը:

**K-172. КЛИВАЖ ПОСЛОЙНЫЙ – ՇԵՐՏԱՅԻՆ (ՇԵՐՏ ԱՈՒ ՇԵՐՏ) ԿԼԻՎԱԺ, BEDDING CLEAVAGE,** կլիվաժի մակերևութները զուգահեռ են ապարի առաջնային շերտավորությանը:

**K-173. КЛИВАЖ РАЗЛОМА – ԲԵՎՎԱԾՔԻ ԿԼԻՎԱԺ, FRACTURE CLEAVAGE,** կապված է ջարդման ճեղքերի խիտ ցանցի առաջացման հետ՝ անկախ ձգված միներալների կողմորոշումից: Սովորաբար իրենից ներկայացնում է կլիվաժառաջացման սկզբնական փուլը:

**K-174. КЛИМАТ АРИДНЫЙ – ՉՈՐԱՅԻՆ ԿԼԻՄԱ, DRY CLIMATE, ARID CLIMATE,** կլիմա, որի դեպքում տարեկան գոլորշիացման մեծությունը խիստ գերազանցում է մթնոլորտային տեղումների քանակին:

**K-175. КЛИМАТИЧЕСКИЕ ПОЯСА (ЗОНЫ) – ԿԼԻՄԱՅԱՎԱՆ ԳՈՏԻՆԵՐ (ՁՈՆԱՆԵՐ), CLIMATIC BELTS (ZONES),** երկրի մակերևութի լայնութենական կամ մերձլայնութենական գոտիներ, որոնք միմյանցից տարբերվում են Արևի ճառագայթային ջերմության տաքացման ուժգնությամբ և մթնոլորտի ընդհանուր շրջապտույտի առանձնահատկություններով:

**K-176. КЛИМАТИЧЕСКОЕ РАЙОНИРОВАНИЕ – ԿԼԻՄԱՅԱՎԱՆ ՇՐՋԱՆԱՑՈՒՄ, CLIMATIC REGIONALIZATION,** տեղանքի (մարզի, երկրի, մայր ցամաքի կամ օվկիանոսի, ամբողջ երկրագնդի) բաժանումը գոտիների, զոնաների, մարզերի և ավելի փոքր ռեգիոնների՝ ըստ շատ թե քիչ համասեռ կլիմայական պայմանների կամ ընդհանրապես կլիմայական հատկանիշների: Կ. շ-ման վրա է հիմնված կլիմայի տիպերի անջատումը:

**K-177. КЛИМАТОЛОГИЯ (կլիմա և հուն. λόγος – ուսմունք, խոսք) – ԿԼԻՄԱՅԱՎԻՏՈՒԹՅՈՒՆ, CLIMATOLOGY,** գիտություն երկրագնդի կլիմայի մասին, դրա տիպերի, ձևավորման գործոնների, աշխ. տարածման օրինաչափությունների և ժամանակի ընթացքում փոփոխությունների մասին: Ստանում է աշխ. գիտությունների համակարգի մեջ, բայց հենվում է նաև օդերևութաբանության եզրակացությունների վրա:

**K-178. КЛИМАТОСТРАТИГРАФИЯ – ԿԼԻՄԱՅԱՇԵՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ, CLIMATOSTRATIGRAPHY, CLIMATIC STRATIGRAPHY,** շերտագրության ճյուղ, որը հնարավորություն է տալիս վերականգնելու համեմատաբար փոքր տևողության (մի քա-

նի 10-նյակից մինչև հարյուր հազարավոր և ավելի տ.) երկրք. իրադարձությունների մանրամասն պարբերականությունը: Պարբերականությունը անցկացվում է հնակլիմայի ռիթմիկական տատանումների հիման վրա, որն արտացոլվում է նստվածքային ստվարաշերտերի ռիթմիկության մեջ, ֆաունայի ու ֆլորայի տարբեր համալիրների հերթափոխման մեջ:

**K-179. КЛИПЫ – ԿԼԻՊՆԵՐ, KLIPPE**, տե՛ս Останец тектонического покрова:

**K-180. КОАГУЛЯЦИЯ** (լատ. coagulatio – կծկում, թանձրացում) – **ԿՈԱԳՈՒԼՈՒՄ (ՍԱՎԱՐԴՈՒՄ, ԿՈԱԳՈՒԼՅԱՑԻԱ), COAGULATION**, կոլոիդ և ավելի կոպիտ դիսպերս համակարգերի փոփոխության գործընթաց, որը տեղի է ունենում դրանց կայուն վիճակի խախտման հետևանքով: Կ-ի գործընթացում կոլոիդ մասնիկները, միմյանց միանալով (կաչելով), խոշորանում են, կորցնում իրենց կոլոիդ հատկանիշները և նստում կամ վերածվում դոմդողակի:

**K-181. КОБАЛЬТ, Со** (գերմ. հեքիաթային գետնաոգի, տան ոգի) – **ԿՈՐԱՍ, CO-BALT**, պարբերական համակարգի VIII խմբի քիմ. տարր: Բաց դեղնավուն՝ վարդագույն կամ կապտավուն երանգով մետաղ է: Երկրակեղևում պարունակությունը 0.0018 % է (ըստ զանգվածի): Հայտնի են Կ-ի մոտ 50 միներալներ:

**K-182. КОБАЛЬТИН – ԿՈՐԱՍԻՆ, COBALTITE, COBALT GLANCE, BRIGHT WHITE COBALT**, միներալ սուլֆիդների դասից, CoAsS: Co-ի պարունակությունը 26-34 % է: Բյուրեղանում է խորանարդային համակարգում: Առաջացնում է ութանիստային, խորանարդային բյուրեղներ, հողանման ագրեգատներ, ներփակվածքներ, նրբերակներ: Գույնը՝ անագի սպիտակ՝ բնորոշ վարդագույն երանգով: Փայլը մետաղային է: Փխրուն է, կարծրությունը՝ 5.5: Առավել նշանակալի կուտակումները հանդիպում են բարձրաջերմաստիճանային հպումամետասոմատիկական հնվք-երում՝ երկաթահանքային սկառներում, ջրաջերմային (հիդրոթերմալ) ոսկի-քվարցային և արծաթ-արսենիդային երակներում: Օքսիդացման զոնայում անցնում է էրիտրինի: Կոբալտի հանքաքարերի հիմնական միներալներից մեկն է, նույնն է՝ Кобальтовый блеск:

**K-183. КОБАЛЬТОВЫЕ РУДЫ – ԿՈՐԱՍԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, COBALT ORES**, բնական միներալային զոյացություններ, որոնք պարունակում են կոբալտ այնպիսի քանակներով, որոնց արդյ. կորզումը տնտեսապես նպատակահարմար է (սովորաբար հազարավոր և հարյուրավոր մասերից մինչև 4 %): Գլխավոր միներալներն են՝ կոբալտինը, լինեիտը, սկուտտերուդիտը, շնալտին-քլոանտիտը: Հանքանյութերի տիպերն են՝ զառիկային (արսենային), ծծմբային, օքսիդային: Հնքվ-երը տեղաբաշխված են Մարոկկոյում, Կանադայում, Ջաիբում և այլ երկրներում:

**K-184. КОБАЛЬТОВЫЙ БЛЕСК – ԿՈՐԱՍԻ ՓԱՅԼ, COBALT GLANCE**, տե՛ս Кобальтин:

**K-185. КОВЕЛЛИН, МЕДНОЕ ИНДИГО** (ի պատիվ առաջին անգամ Վեզուվի լավայում հայտնաբերած իտալ. քիմիկոս Ն. Կովելլիի, N. Covelli, 1790-1829) – **ԿՈՎԵԼԻՆ (ՊՈՆՁԻ ԼԵՂՎՎԱՔԱՐ, ՊՈՆՁԻ ԻՆԴԻԳՈ), COVELLITE, COVELLINE, COVELLITE, INDIGO COPPER**, միներալ սուլֆիդների դասից,  $CuS_2$ , բյուրեղանում է հեքսագոնային համակարգում: Առաջացնում է բարակ փառեր, քվածքներ, մրային փոշակերպ զանգվածներ, խիստ հազվադեպ՝ մանր բյուրեղներ: Գույնը՝ լեղակաքար-կապույտից մինչև սև, փայլատ է, կարծրությունը՝ 2-2.5: Վերնածին (հիպերգեն) միներալ է, առաջանում է սուլֆիդային հնքվ-երի ցենենտացման զոնայում՝ ի հաշիվ քալկոպիրիտի, բորնիտի, քալկոզինի: Հաճախ փոխարինում է սֆալերիտին և գալենիտին: Խոշոր կուտակումների դեպքում պղնձի հանքանյութ է:

**K-186. КОКС** (գերմ. Koks, անգլ. coke) – **ԿՈՔՍ, СОКЕ**, բարձրացված ամրության արհեստական կարծր վառելանյութ է, ստացվում է անօդ պայմաններում բնական վառելանյութերի կամ դրանց արդյունքների տաքացումից ու վերամշակումից՝ մինչև 950-1100°C: Կախված հումքի տեսակից՝ առանձնացնում են քարածխային, էլեկտրոդային, կուպրային և նավթային Կ.:

**K-187. КОКС КАМЕННОУГОЛЬНЫЙ – ՔԱՐԱԾԽԱՅԻՆ ԿՈՔՍ, BLACK COAL COKE, MINERAL COAL COKE**, քարածխի բարձր ջերմաստիճանային արդյ. կոքսացման կարծր մնացորդ: Իրենից ներկայացնում է տարբեր չափերի կտորներ, գույնը՝ արծաթափայլից մինչև մուգ մոխրագույն, փայլատ է: Քարածխի կոքսացման ելքը 75-80% է: Կ-ին բնորոշ է բարձր ծակոտկենությունը (ծավալի 45-50%), այրվող զանգվածում ածխածնի բարձր պարունակությունը (ավելի քան 97%), ցնդող նյութերի ելքը ոչ ավել 1-1.5%-ից և ցածր մոխրայնությունը (ոչ ավել 10-12 %-ից):

**K-188. КОКС ПРИРОДНЫЙ – ԲՆԱՎԱՆ ԿՈՔՍ, NATIVE COKE, CARBONITE**, առաջանում է քարածուխների հպումային փոխակերպման պայմաններում, ինչպես նաև քարածուխների ստորգետնյա հրդեհից:

**K-189. КОКСУЮЩИЕСЯ УГЛИ – ԿՈՔՍԱՅՈՂ ԱԾՈՒՄՆԵՐ, COKING COALS**, ածխացման միջին փուլի քարածուխներ, որոնցից արդյ. կոքսացման պայմաններում (այլ ածուխների խառնուրդներով կամ առանց խառնուրդի) ստացվում է որոշակի խոշորության ու ամրության կտորավոր կոքս: Ի տարբերություն մյուս քարածուխների՝ կոքսացող քարածուխները առանց օդի մուտքի տաքացնելիս անցնում են պլաստիկ վիճակի և եռակալվում են:

**K-190. КОЛЕБАТЕЛЬНЫЕ ДВИЖЕНИЯ ЗЕМНОЙ КОРЫ – ԵՐԿՐԱԿԵՂԵՎԻ ՏՍՏԱՆՈՂԱՎԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ, WARPING MOVEMENTS**, ամենուրեք և անընդմեջ տեղի ունեցող տեկտ. շարժումներով պայմանավորված երկրակեղևի բարձրացումներ ու իջեցումներ, որոնք միմյանց փոխարինում են ժամանակի ու տարածության մեջ: Ե. տ. շ. տեղի են ունեցել անցյալ բոլոր երկրք. ժամանակաշրջանների ընթացքում և շարունակվում են այժմ: Դրանք որոշում են ցամաքի ու ծովի տեղաբաշխումը և ուրվագծերի փոփոխությունը, պայմանավորում են ռելիեֆի ձևավորումը և զարգացումը: Ե. տ. շ-ի հետ կապված հիմնական օրինաչափությունները մշակել է Ա. Կարպինսկին՝ 19-րդ դարի վերջում, ամերիկյան երկրաբան Գ. Ջիլբերտը 19-րդ դարի վերջում Ե. տ. շ. առանձանցրել է «էպեյրոզեն շարժումներ» անվանմամբ: Յետագա ուսումնասիրությունները բացահայտեցին Ե. տ. շ-ի երկու տարատեսակներ՝ ընդհանուր տատանումներ և ալիքավոր շարժումներ: Ընդհանուր տատանողական շարժումները արտահայտվում են լայնարձակ մարզերի միաժամանակյա բարձրացմամբ ու իջեցմամբ, որոնք ընդգրկում են մայր ցամաքները կամ դրանց զգալի մասերը: Դրանց առավելագույն պարբերությունը 200-300 մլն. տ. է: Դրանք ընկած են տեկտ. ցիկլերի հիմքում, որոնք առաջին հերթին արտահայտվում են խոշոր ծովարշավների (տրանսգրեսիաների) և հետընթացությունների (ռեգրեսիաների) կրկնությամբ: Ալիքավոր տատանողական շարժումները վերադրվում են ընդհանուր տատանումների վրա և արտահայտվում են երկրի մակերևույթի ցանկացած խոշոր տեղամասի երկարատև մասնատմամբ՝ բարձրացումների ու իջեցումների գոնաների: Այդ շարժումները արտացոլվում են երկրի մակերևույթի ռելիեֆում և նստվածքների, ֆացիաների ու հաստությունների տեղաբաշխման մեջ: Դրանց լայնույթը կարող է հասնել 15-20 կմ-ի (շարժում զոնաներում):

**K-191. КОЛЛЕКТОРЫ НЕФТИ И ГАЗА** (միջնադ. լատ. collector – հավաքիչ) – **ՆԱԿԹԻ (ՔԱՐՅՈՒՂԻ) և ԳԱԶԻ ՀԱՎԱՔԻՉՆԵՐ (ԿՈՆԵԿՏՈՐՆԵՐ), OIL AND GAS RESER-**

**VOIRS**, ապարներ, որոնք ունակ են ամբարել (ներփակել) հեղուկ, գազանման ածխաջրածիններ և հետ տալ դրանք հնքվ-ի շահագործման ընթացքում: Ն. և գ. հ-ին ապարների պատկանելիության չափանիշ է ծառայում թափանցելիության ու տարողության մեծությունը, որը պայմանավորված է ծակոտկենության, ճեղքավորվածության, խռոչվածության զարգացմամբ: Նավթի ու գազի համար օգտակար տարողության մեծությունը կախված է մնացորդային ջրանավթահագեցվածության պարունակությունից: Հավաքիչներ են հանդիսանում տարբեր նյութական կազմի ու ծագման ապարները՝ ցամաքածին, կարբոնատային, կավակայծքարաբխտունային, հրաբխածին-նստվածքային և այլն: Ցամաքածին (տերրիզեն) ապարների կուտակիչ հատկությունները կախված են հատիկաչափական կազմից, տեսակավորումից, մշակվածությունից, բեկորային հատիկների դարսվածքից, ցեմենտի քանակից, կազմից և տեսակից: Այդ պարամետրերով է պայմանավորված արդյունավետ ծակոտկենության և թափանցելիության մեծությունը: Կավայնության մեծացումը ուղեկցվում է թափանցելիության նվազեցմամբ: Կարբոնատային ապարների հավաքիչ հատկությունները որոշվում են ծակոտիների, խռոչների, ճեղքերի, տարրալուծման դատարկությունների զարգացման աստիճանով: Հրաբխածին-նստվածքային Ն. և գ. հ. որոշվում են դատարկում տարածքների բնույթով, ճեղքավորության մեծ դերով և հնքվ-ի սահմաններում հատկությունների կտրուկ փոփոխությամբ: Ածխաջրածինների առավել նշանակալի պաշարները կապված են ավազային և կարբոնատային խութածին առաջացումների հետ:

**K-192. КОЛЛЮВИЙ, КОЛЛЮВИАЛЬНЫЕ ОТЛОЖЕНИЯ** (լատ. colluvisio – կուտակում, անկանոն կույտ) – **ԿՈԼՅՈՒՎԻ (ԼԱՆՋԱՎՈՒՏԱԿ), ԿՈԼՅՈՒՎԻԱԿ (ԼԱՆՋԱՎՈՒՏԱՎՈՒՄԱՅԻՆ) ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, COLLUVIUM, COLLUVIAL DEPOSITS**, 1) լայն իմաստով բոլոր լանջային նստվածքները, որոնք առաջանում են ապարների քայքայման արդյունքները լանջով դեպի ներքև տեղաշարժվելու հետևանքով: Այդ նստվածքները կազմում են լանջի ստորին մասին հենվող շլեյֆներ, 2) ավելի նեղ իմաստով՝ զառիթափ լանջերի փլվածքային կուտակներ և քարաթափվածքներ:

**K-193. КОЛОДЕЦ – ЗОЛ (ՋՐՅՈՐ), WELL**, ուղղածիզ լեռնային փորվածք, որի խորությունը մեծ է լայնությունից: Օգտագործվում են ստր. ջուր, նավթ, աղաջուր և այլն ստանալու համար:

**K-194. КОЛОНИЯ** (լատ. colonia – բնակություն) – **ԳՎՂՈՒԹ, COLONY** (կենսբ.), 1) կենդանի կամ բրածո օրգանիզմների խումբ, որը հայտնաբերվել է այն շրջանում կամ ապարներում, որոնց համար այդ օրգանիզմները բնորոշ չեն, 2) Կենդանիների ու բույսերի միևնույն տեսակի անհատների միավորում մի ամբողջությունում՝ հաճախ նրանց միջև տարբեր ֆունկցիաների տեղաբաշխմամբ:

**K-195. КОЛУМБИТ** (լատ. columbium-ից, այդպես է կոչվում ԱՄՆ-ում նիոբիում քիմ. տարրը) – **ԿՈԼՈՒՄԲԻՏ, COLUMBITE**, միներալ, նիոբիումի, երկաթի, մանգանի բարդ օքսիդ, (Fe, Mn) (Nb, Ta)<sub>2</sub>O<sub>6</sub>: Բյուրեղանում է շեղանկյունային համակարգում: Առաջացնում է նմանաձև (իզոմորֆ) խառնուրդներ տանտալիթի հետ: Հանդիպում է սև, գորշ բյուրեղների տեսքով, դրանց ագրեգատներով՝ գրանիտային պեգմատիտներում և գրանիտներում: Հողմահարման նկատմամբ կայուն է, կուտակվում է ցրոններում: Նեոբիումի և տանտալի հանքաքար է:

**K-196. КОЛЧЕДАННЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ – ՀՐԱՔԱՐԱՅԻՆ (ԿՈԼՉԵԴԱՆԱՅԻՆ) ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, PYRITES DEPOSITS**, երկրի ընդերքում մետաղների ծծմբային (սուլֆիդային) միացությունների հանքակուտակներ, որոնք ունեն արդյ. նշանակություն: Բաժանվում են ծծմբահրաքարային, պղնձահրաքարային և բազմամե-

տաղահրաքարային հնքվ-երի: Ծծմբահրաքարային հանքաքարերում գերակշռում են երկաթի սուլֆիդները՝ պիրիտը, պիրրոտինը, մարկագիտը: Պղնձահրաքարային հանքաքարերում, բացի դրանք, առկա են պղնձի միներալները՝ խալկոպիրիտը, բորնիտը, խալկոզինը: Բազմամետաղահրաքարային հնքվ-երում առկա են ցինկի ու կապարի, ինչպես նաև բարիտի, երբեմն՝ գիպսի միներալները:

**K-197. КОЛЧЕДАНЫ** (Փոքր Ասիայում հին Հունաստանի խալկեդոն, Chalkédōn գաղութի անունից) – **ՀՐԱՔԱՐԵՐ (ԿՈՆՉԵՂԱՆՆԵՐ), PYRITES, IRON PYRITES**, սուլֆիդների և արսենիդների խմբի միներալներ, որոնք պարունակում են երկաթ, պղինձ, միկել և անագ: Տարբերում են մագնիսական Հ. կամ պիրրոտին ( $Fe_{1-x}S$ ), ծծմբային կամ երկաթային Հ.՝ պիրիտ ( $FeS_2$ ), պղնձային Հ.՝ խալկոպիրիտ ( $CuFeS_2$ ), երկաթանիկելային Հ.՝ պենտլանդիտ [ $(FeNi)_9S_8$ ], միկելային Հ.՝ միկելին ( $NiAs$ ), անագային Հ.՝ ստանին ( $Cu_2FeSnS_4$ ): Հանդիպում են համատեղ կամ առանձին՝ տարբեր դասի ներծին հնքվ-երում: Հայտնի են նաև սկառնային հնքվ-երում: Հ. օգտագործվում են որպես ծծմբաթթվի հումք: Հ-ից կորզում են պղինձ և միկել:

**K-198. КОЛЧЕДАН МЕДНЫЙ**, տե՛ս Халькопирит:

**K-199. КОЛЧЕДАН СЕРНЫЙ**, տե՛ս Пирит:

**K-200. КОЛЬЦЕВЫЕ СТРУКТУРЫ** – **ՕՂԱՎԱԶԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, RING STRUCTURES**, երկրի քարային թաղանթում երկրբ. գոյացություններ և այլ մոլորակներում մարմիններ, որոնք հատակագծում օղակաձև, կլորավուն և ձվաձև են: Սովորաբար բացահայտվում են հիմնականում երկրի մակերևույթի տիեզերական և օդահեռավորական նկարների երկրբ. վերծանման միջոցով: Օ. կ. ըստ ծագման և կազմի բազմազան են, ընդունված է առանձնացնել տեկտ., մագմայական, փոխակերպային և իմպակտային Օ. կ.: Տեկտ. Օ. կ-ից են կամարներն ու գմբեթները, իջվածքներն ու գոգվածքները (մուլդաները), աղային գմբեթներն ու դրանց խմբերը, ինչպես նաև օղակաձև կամ աղեղնաձև խզվածքների և ճեղքերի զոնաները: Մագմայական Օ. կ-ի մեջ առանձնացնում են այն կառուցվածքները, որոնք պայմանավորված են չմերկացված կամ մասամբ մերկացված ներժայթքվածքային (ինտրուզիվ) զանգվածներով, կլորավուն կամ համակենտրոն կազմություն ունեցող ներժայթքվածքներով: Փոխակերպային Օ. կ. ընդգրկում են գրանիտազնեյսային գմբեթները և ձվածիրները: Որպես իմպակտային Օ. կ., առանձնացվում են աստրոբլեմները՝ հին օղաքարային խառնարանների մնացորդները:

**K-201. КОЛЬЧАТЫЕ ЧЕРВИ** (Annelida) – **ՕՂԱՎԱՎՈՐ ՈՐԴԵՐ, ANNELIDS**, անողնաշարավոր կենդանիների տիպ: Մոտ 9500 տեսակ: Բնորոշվում են հատվածավորված, մասնատված մարմնով: Բնակվում են գլխ. ծովերում, ավելի քիչ՝ քաղցրահամ ջրերում և հողում:

**K-202. КОМАГМАТИТЫ (КОМАГМАТИЧЕСКИЕ ПОРОДЫ)** – **ՀԱՄԱՄԱԳՄԱՏԻՏՆԵՐ (ՀԱՄԱՄԱԳՄԱՅԱՎԱՆ ԱՊԱՐՆԵՐ), COMAGMATIC ROCKS**, արտաժայթքային ապարներ, որոնք բնորոշվում են միանման հասակով, միատեսակ ապարաքիմ. և երկրաքիմ. առանձնահատկություններով, տարածական կապվածությամբ և այլ հատկանիշներով: Այդ բոլորը վկայում են մեկ մագմայից առաջանալու հնարավորությունների մասին:

**K-203. КОМПЕНСИРОВАННЫЙ ПРОГИБ** – **ՓՈԽՀԱՏՈՒՑՎԱԾ ԵՎԱԿԱԾՔ, COMPENSATED DEPRESSION**, երկրակեղևի ճկվածք, որտեղ նստվածքակուտակման արագությունը համապատասխանում է ճկման լայնությին:

**K-204. КОМПЕТЕНТНАЯ ПОРОДА** (լատ. competens, սեր. h. competentis – համապատասխան) – **ԿՈՄՊԵՏԵՆՏ ԱՊԱՐ, COMPETENT ROCK**, ապար, որն ունակ է

որոշակի պայմաններում դիմակայելու տեկտ. ճնշմանը՝ առանց իր նյութի հոսունության և հաստության փոփոխության: Երկր. պատմության ընթացքում միևնույն ապարը, կախված ձևախախտման տևողությունից, միջավայրի կոնկրետ պայմաններից, կարող է լինել կոմպետենտ կամ ոչ կոմպետենտ:

**K-205. КОМПЛЕКС ГОРНЫХ ПОРОД** (լատ. complexus – կապ, զուգակցում) – **ԱՊԱՐ-ՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ, COMPLEX OF ROCKS, ASSOCIATION OF ROCKS**, 1) ցանկացած հասակի և ծագման տարբեր ապարների խոշոր այնպիսի խմբակցություն, որում կառուցվածքային փոխհարաբերությունները շատ բարդ են, և առանձին ապարները քարտեզագրման ժամանակ չեն կարող անջատվել (օր.՝ հրաբխային, փոխակերպային Ա. հ-ները), 2) քարաբանաշերտագրական ամենախոշոր միավոր:

**K-206. КОМПЛЕКС ИНТРУЗИВНЫЙ (ИЛИ ЭФФУЗИВНЫЙ) – ՆԵՐԺԱՅՔԱՅԻՆ (ԿԱՍ ԱՐՏԱԺԱՅՔԱՅԻՆ) ՀԱՄԱԼԻՐ, INTRUSIVE COMPLEX, IGNEOUS COMPLEX**, դիֆերենցիատների լրիվ (գերհիմքայինից մինչև թթու) հավաքածու, որը բնորոշվում է մագմայական օջախի, հասակակցության, տեկտ. զոնայում որոշակի դիրքի, մետաղագոյացման առանձնահատկությունների ընդհանրությամբ: Ն. հ-ի կազմի մեջ մտնում են ներժայթքային ապարները և երակային սերիան, ինչպես նաև ջրաջերմային ու մետասոմատիկական առաջացումները և ծագումնաբանորեն դրանց հետ կապված հանքայնացումները:

**K-207. КОМПЛЕКС ЛИТОЛОГО-СТРАТИГРАФИЧЕСКИЙ – ՔԱՐԱԲԱՆԱՇԵՐՏԱԳՐԱՎԱՆ ՀԱՄԱԼԻՐ, LITHOLOGICAL STRATIGRAPHICAL COMPLEX**, նույնահասակ ստվարաշերտ, որը կազմված է միմյանց մոտիկ նյութական կազմ ունեցող ապարներից, հետամտվում է որոշակի տարածաշրջանում և տարբերվում է ներքնադիր ու ծածկող ապարներից: Սովորաբար համապատասխանում է քարաբանաշերտագրական շերտախմբին, շերտատուփին կամ կարող է ընդգրկել մի քանի շերտատուփ:

**K-208. КОМПЛЕКС РУДНЫЙ – ՀԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ, ORE COMPLEX**, ըստ Բիլիբինի (1947) մետաղական հնքվ-երի խումբ, որը շարժունակ զոնաների զարգացման ընթացքում գրավում է որոշակի դիրք և ծագումնաբանորեն կապված է որոշակի մագմայական համալիրի հետ: Յ. հ. միավորում է ազգակից հանքային ֆորմացիաները:

**K-209. КОМПЛЕКС СТРУКТУРНО-ФОРМАЦИОННЫЙ – ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՖՈՐՄԱՑԻՈՆՆ (ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՎԱԶՄԱՎՈՐՈՒՄԱՅԻՆ) ՀԱՄԱԼԻՐ, STRUCTURAL FORMATIONAL COMPLEX**, առանձնացվում է հիմնականում ծալքավոր մարզերում, իրենից ներկայացնում է նստվածքային և հրաբխածին ապարների բնորոշ խումբ կամ խմբակցություն, որը առաջանում է հատուկ տիպի երկր. կառուցվածքներում (կառուցվածքաֆորմացիոն զոնաներում), որոշակի տեկտ. ռեժիմում և յուրահատուկ ֆիզաշխ. պայմաններում, որի պատճառով բնորոշվում է նստվածքների կազմի և ծալքավոր ձևերի առանձնահատկությունների յուրահատկությամբ: Կ. հ-ները, որպես կանոն, միմյանցից անջատվում են զգալի ռեզիոնալ աններդաշնակություններով:

**K-210. КОМПЛЕКС ЭФФУЗИВНЫЙ**, տե՛ս Комплекс интрузивный:

**K-211. КОМПЛЕКСНОЕ ОСВОЕНИЕ НЕДР – ԸՆԴԵՐՔԻ ՀԱՄԱԼԻՐ ՅՈՒՐԱՅՈՒՄ, COMPREHENSIVE MINERAL EXPLOITATION**, երկրի ընդերքի բոլոր տեսակի ռեսուրսների ամենալրիվ և խնայողական յուրացում՝ արդյունավետ լեռնային տեխնոլոգիաների համալիր զուգակցման հիման վրա:

**K-212. КОМПЛЕКСНЫЕ РУДЫ – ՀԱՄԱԼԻՐ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, COMPLEX ORES**, բնական միներալային գոյացություններ, որոնք պարունակում են մի քանի մետաղներ

և այլ արժեքավոր բաղադրամասեր այնպիսի միացություններում ու այնպիսի կուտակումներով, որոնց արդյ. օգտագործումը տեխնոլոգիապես հնարավոր և տնտեսապես նպատակահարմար է: Կ. հ. կարող են լինել բազմամիներալային կամ բազմատարր: Բազմամիներալային Զ. հ. կազմված են տարբեր կազմի միներալներից, որոնց անջատողական օգտագործումը հնարավոր է (օր.՝ բազմամետաղական հանքաքարերը կազմված են պղնձի, ցինկի, կապարի և այլ մետաղների սուլֆիդներից): Բազմատարր Զ. հ. բաղկացած են մի քանի մետաղներից, որոնք մտնում են մի միներալի կազմի մեջ (օր.՝ վանադինիտը, որը իր կազմում պարունակում է կապար և վանադիում):

**K-213. КОМПОНЕНТЫ ПОЛЕЗНЫЕ – ՕԳՏԱԿԱՐ ԲԱՂԱԴՐԱՍԱՍԵՐ, USEFUL COMPONENTS**, օգտ. հնժ-յի կազմի մեջ մտնող քիմ. տարրեր, որոնց կորզումը մյուս տարրերի համեմատությամբ տվյալ պահին ավելի նպատակահարմար է:

**K-214. КОМПОНЕНТЫ ТЕРРИГЕННЫЕ** (լատ. terra – ցամաք, հող և հուն. genês – ծագում) – **ՑԱՄԱՔԱԾԻՆ (ՏԵՐՐԻԳԵՆ) ԲԱՂԱԴՐԱՍԱՍԵՐ, TERRIGENOUS COMPONENTS**, ապարների ու միներալների բեկորներ, որոնք ներառվում են նստվածքի մեջ՝ ի հաշիվ ցամաքի քայքայման:

**K-215. КОМПОНЕНТЫ УГЛЕЙ МИНЕРАЛЬНЫЕ – ԱԾՈՒԽՆԵՐԻ ՄԻՆԵՐԱԼԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԱՍԱՍԵՐ, MINERAL COMPONENTS OF COALS**, տարբերում են՝ 1) համածին առաջացումներ, որոնք տորֆագոյացման գործընթացում օրգանական նյութի կուտակման մարզ են բերվում ցամաքածին նյութի կախույթի տեսքով, լուծված կամ կոլոիդ վիճակում (քվարց, կավային նյութ, դաշտասպաթ, փայլարներ, հրաբխային մոխիր, մանրատարրեր և այլն): 2) Բաղադրամասեր, որոնք առաջացել են տորֆային զանգվածում դիագենեզի ընթացքում (կաոլինիտ, օպալ, քաղկեդոն, ծծմբային հրաքար, գորշ երկաթաքար, հեմատիտ, սիդերիտ, դոլոմիտ և այլն): 3) Մակածին (էպիգենետիկ) գոյացություններ, որոնք առաջանում են ածխագոյացման գործընթացում (կարբոնատներ, պիրիտ, կաոլինիտ):

**K-216. КОНВЕКЦИЯ** (լատ. convectio – բերել, տեղ հասցնել) – **ԿՈՆՎԵԿՑԻԱ (ՋԵՐՍԱ–ԼԻՑՔԱ-ՉԱՆԳՎԱԾԱՓՈԽԱՆՑՈՒՄ), CONVECTION**, միջավայրի (գազ, հեղուկ) մակրոմասնիկների տեղաշարժ, որը հանգեցնում է ջերմության, զանգվածի և այլ ֆիզ. մեծությունների փոփոխության՝ 1) տեկտոնիկայում՝ ենթակեղևային կամ միջնապատյանի նյութի զանգվածների ենթադրյալ շարժում՝ ի հաշիվ գլխ. ջերմային ռեժիմում տեղի ունեցող փոփոխությունների: Շարժումը ուղղված է կա՛մ կողքային (լատերալ) ուղղությամբ, կա՛մ դեպի վեր և կա՛մ դեպի ներքև: Մի շարք տեկտ. վարկածների համաձայն՝ կոնվեկցիոն շարժումների հետ կապված են լեռնագոյացումը (օրոգենեզ), խորջրյա փողրակների, կղզեաղեղների, երկրասինկլինալների առաջացումը, սալերի տեղաշարժը, 2) օվկիանոսագիտությունում՝ օվկիանոսի ջրերի տեղաշարժման կարևորագույն մեխանիզմ [օր.՝ մրրկային (տուրբուլենտային հոսքերը)], 3) օդերևութաբանությունում՝ մթնոլորտում երկրի մակերևույթի ավելի տաքացած առանձին օդային զանգվածների բարձրացում և միաժամանակ ավելի սառը զանգվածների իջեցում:

**K-217. КОНВЕРГЕНЦИЯ** (լատ. convergo – մոտենալ, նմանվել) – **ՉՈՒՎԱՄԻՏՈՒԹՅՈՒՆ (ԿՈՆՎԵՐԳԵՆՑԻԱ), CONVERGENCE**, տարբեր աղբյուրներից և տարբեր ուղիներով նմանատիպ արդյունքների գոյացում: 1) Ապարաբանությունում՝ ապարագոյացման տարբեր գործընթացների հետևանքով կառուցվածքով ու կազմով մոտիկ ապարների ձևավորում: 2) Մետաղական հնքվ-երի Կ.՝ մի շարք մետաղական հնքվ-երի գլխավոր հատկանիշների (բաղադրության, կազմվածքի, երկր.

դիրքի) համընկնում կամ մեծ նմանություն, որը հիմք է հանդիսանում դրանց վերագրելու դասակարգման միևնույն խմբին, հաշվի չառնելով դրանց առաջացման պայմանների տարբերությունը (օր.՝ հրաքարային հնքվ-երը): 3) Երկրաձևաբանությունում՝ սառցադաշտերի միախառնումը, ռելիեֆի ձևերի նմանությունը, որոնք կարող են գոյանալ տարբեր ուղիներով՝ տարբեր պայմաններում: 4) Կենդանաբանությունում՝ տարբեր օրգանիզմների մոտ արտաքին կամ ներքին կառուցվածքի նմանությունը, որը պայմանավորված է ձևերի ոչ թե ազգակցական կապերով, այլ գոյության միանման պայմաններին հարմարվելու հանգամանքով:

**K-218. КОНГЛОМЕРАТ** (լատ. conglomeratus – պնդացած, իրար վրա դիզված, խտացած) – **ԽԱՌՆԱՔԱՐ (ԿՈՆԳԼՈՍԵՐԱՏ, ՔԱՐԱԽԱՌՆՈՒՐԴ), CONGLOMERATE, PUDDING ROCK, PUDDING STONE**, բեկորային ապար, որը իրենից ներկայացնում է ցեմենտացած ճալաքար (10-100 մմ չափի)՝ ավելի մուրք նյութի (ալևրիտի, ավազի, կոպիճի) խառնուրդով: Ցեմենտը սովորաբար ներկայացված է լինում երկաթի օքսիդներով, կարբոնատներով, կավային նյութով, հազվադեպ՝ սիլիկատներով: Խ-երը կարող են բաղկացած լինել տարբեր կազմի ապարներից (տարակազմ, պոլիմիկտային խ.) կամ միայն մեկ ապարի ճալաքարերից (միակազմ, մոնոմիկտային խ.): Ըստ կուտակման բնույթի՝ առանձնացնում են ծովային, գետային, հեղեղաբերուկ, լճային Խ-եր: Երկրբ. կտրվածքների ապարաշերտերում Խ-երի առկայությունը վկայում է ավելի հին ապարների ողողաքայքայման ուժեղացման և ցամաքի առկայության կամ բարձրացման մոտիկության մասին: Խ-երը երբեմն (գլխ. ցեմենտում) պարունակում են ոսկու, պլատինի և այլ մետաղների ցրոններ:

**K-219. КОНГЛОМЕРАТ БАЗАЛЬНЫЙ**, տե՛ս Базальный конгломерат:

**K-220. КОНГЛОМЕРАТ ВНУТРИФОРМАЦИОННЫЙ – ՆԵՐՖՈՐՄԱՑԻՈՆ ԽԱՌՆԱՔԱՐ (ԿՈՆԳԼՈՍԵՐԱՏ), INTRAFORMATIONAL CONGLOMERATE**, խառնաքար (կոնգլոմերատ), որը ենթաշերտի ձևով տեղադրված է միասնական մատվածքային ֆորմացիայի (կազմավորման) մատվածքների մեջ, երբեմն առանց ընդմիջումների ու ողողաքայքայման որոշակի նշանների: Առաջանում է ինչ-որ չափով ամրապնդված մատվածքի ողողաքայքայումից հոսանքների և ալեկոծության միջոցով՝ ջրից վեր ելքով կամ առանց ելքի և մոտիկ ցամաքից պարբերաբար ավազան մուտք գործող բեկորային նյութի չափաքանակների կուտակումից:

**K-221. КОНГЛОМЕРАТО-БРЕКЧИЙ – ԽԱՌՆԱՔԱՐ-ՓՇՐԱՔԱՐ (ԿՈՆԳԼՈՍԵՐԱՏԱՐ-ՐԵՉՒԱ), CONGLOMERATE-BRECCIA**, ցեմենտացած կոպտաբեկորային ապար, որը մոտավորապես հավասար քանակով պարունակում է ինչպես մշակված, այնպես էլ չմշակված բեկորներ և այդ պատճառով միջանկյալ տեղ է գրավում խառնաքարի և փշրաքարի միջև:

**K-222. КОНДЕНСАЦИЯ** (լատ. condensare – խտացնել, թանձրացնել) – **ԽՏԱՑՈՒՄ [ԿՈՆԴԵՆՍ(ԱՑ)ՈՒՄ], CONDENSATION**, սառեցման կամ խտացման հետևանքով գազանման նյութի փոխարկում հեղուկ կամ պինդ վիճակի:

**K-223. КОНДИЦИИ** (կատ. condicio – պայմաններ) – **ԿՈՆԴԻՑԻԱՆԵՐ (ԼԱՎՈՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ), STANDARDS**, օգտ. հնձ-ների արդյ. օգտագործման պիտանիությունը որոշող որակական և քանակական ցուցանիշներ (օգտակար և վնասակար բաղադրիչների, ինչպես նաև մանր ֆրակցիայի պարունակությունները, օգտ. հնձ-ի կտորի չափերը և այլն):

**K-224. КОНЕЧНАЯ МОРЕНА, ФРОНТАЛЬНАЯ МОРЕНА – ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍԱՌՑԱՐԵՐՈՒԿ (ՄՈՐԵՆ), ՃԱԿԱՏԱՅԻՆ ՍԱՌՑԱՐԵՐՈՒԿ (ՄՈՐԵՆ), END MORaine, FRONTAL MORaine**, բեկորային նյութ, որը մեկ կամ մի քանի աղեղնաձև թմբերի տեսքով կուտակվում է երկարատև անշարժ հովտային սառցադաշտի ստորին եզրի մոտ:



**K-225. КОНЕЧНО-МОРЕННЫЕ ОЗЁРА – ՎԵՐՋՆԱՍԱՈՑԱԲԵՐՈՒԿԱՅԻՆ (ՎԵՐՋՆԱ-ՍՈՐԵՆԱՅԻՆ) ԼՃԵՐ, END MORAINÉ LAKES, FRONTAL MORAINÉ LAKES,** լճեր, որոնք առաջանում են վերջնասառցաբերուկների թմբերի միջև գտնվող ցածրու-թյուններում կամ մինչսառցադաշտային հովիտները վերջնական սառցաբերուկ-ներով պատվարվելիս:

**K-226. КОНЕЧНО-МОРЕННЫЙ РЕЛЬЕФ – ՎԵՐՋՆԱՍԱՈՑԱԲԵՐՈՒԿԱՅԻՆ (ՎԵՐՋՆԱ-ՍՈՐԵՆԱՅԻՆ) ՌԵԼԻԵՖ, RELIEF OF END MORAINÉ,** թմբածև և բլրաշարային ռե-լիեֆ, որը կազմված է սառցաբերուկներից և լեռնային ու ծածկութային սառցա-դաշտերի ժամանակավոր կայուն փուլի եզրային բեկորային կուտակումներից:

**K-227. КОНКОРДАНТНОЕ ЗАЛЕГАНИЕ,** տե՛ս Согласно залегание:

**K-228. КОНКРЕЦИИ** (լատ. concretio – մակաճում, խտացում) – **ԿՈՆԿՐԵՑԻԱՆԵՐ, CONCRETIONS,** կլորավուն կամ անկանոն ձևի միներալային գոյացություններ, որոնք առաջանում են առավելապես նստվածքային ապարներում դիագենեզի, հողմահարման և այլ գործընթացների ժամանակ: Հաճախ գոյանում են որևէ մի-ջուկի կամ կենտրոնի շուրջը, օր.՝ միներալային հատիկի, թերթի, խեցու, ածխային մասնիկի: Սովորաբար Կ. տարբերվում են պարփակող ապարներից բաղադրու-թյամբ և ներքին կազմվածքով: Կ. իրենցից ներկայացնում են պարփակող ապար-ներում կամ ցենենտացնող նյութում ցրված բաղադրամասերի՝ սիլիկահողի, կալ-ցիտի, դոլոմիտի, ֆոսֆատի, օքսիդների և այլնի կուտակում (առձգում): Ըստ չա-փերի Կ. տատանվում են միկրոնից մինչև 3 մ տրամագծում: Ըստ կազմության հա-ճախ հանդիպում են՝ համակենտրոն-շերտավոր, կոպտազուլավոր, շառավղաճա-ռագայթավոր և հատիկավոր Կ.: ժամանակակից օվկիանոսային նստվածքներում տարածված են երկաթամանգանային Կ., որոնք պարունակում են նաև Ni, Co, Cu և առաջացնում են հանքակուտակներ: Հին նստվածքներում հայտնի են երկաթի, ալյումինի, ֆոսֆորի, մանգանի և այլ կոնկրեցիոն հանքաքարերի խոշոր հնքվ-եր:

**K-229. КОНКРЕЦИИ КРЕМНЕВЫЕ – ՍԻԼԻՑԻՈՒՄԱՅԻՆ ԿՈՆԿՐԵՑԻԱՆԵՐ, SILICIUM CONCRETIONS,** կազմված են կայծքարահողի որևէ միներալից (քվարց, քաղկե-դոն)՝ պարփակող ապարի նյութի, ինչպես նաև օրգանական նյութի, երկաթի օք-սիդների, կալցիտի, դոլոմիտի խառնուրդով:

**K-230. КОНКРЕЦИИ ЖЕЛЕЗО-МАРГАНЦЕВЫЕ,** տե՛ս Железо-марганцевые кон-креции:

**K-231. КОНКРЕЦИИ ФОСФОРИТОВЫЕ – ՖՈՍՖՈՐԻՏԱՅԻՆ ԿՈՆԿՐԵՑԻԱՆԵՐ, PHOSPHORITE CONCRETIONS,** պարունակում են մինչև 20-30 % P<sub>2</sub>O<sub>5</sub>, ունեն գնդանման, անկանոն և շերտանման ձևեր: Առաջացնում են պալարանման ֆոս-ֆորիտների հնքվ-եր:

**K-232. КОНОДОТЫ** (հուն. koínos – կոն և odús, սեռ. հ. odóntos – ատամ) – **ԿՈՆՈ-ՂՈՆՏԵՐ, CONODONTS,** մանրադիտակային չափերի անջատ ատամնանման կմախքային տարրեր, որոնք կազմված են ֆոսֆատից և կալցիումից: Ենթադրվում է դրանց պատկանելիությունը ծովային պլանկտոն կամ նեկտոն օրգանիզմներին, որոնք պայմանականորեն վերագրվում են ողնաշարավորներին: Կ. գոյություն են ունեցել քենթրիից մինչև վաղ տրիաս: Կարևոր ղեկավարող բրածոներ են:

**K-233. КОНРАДА ПОВЕРХНОСТЬ** (ավստ. երկարաֆիզիկոս Վ. Կոնրադի, V. Conrad, 1876-1962, անունով) – **ԿՈՆՐԱԴԻ ՄԱՎԵՐԵՎՈՒՅԹ, CONRAD DISCONTINUITY,** սահմանը (հաճախ ընդհատում)՝ «գրանիտային» և «բազալտային» շերտերի միջև: Այդ սահմանը անցնելիս երկայնական երկրաշարժային ալիքների արագությունը թռիչքածև մեծանում է 6-ից մինչև 6.6 կմ/վրկ: Տեղադրման խորությունը 5-35 կմ է:

Որոշ հետազոտողների կարծիքով այս սահմանի առկայությունը կասկածելի է, այն բացահայտված չէ նաև Կոլալի գերխոր հորատանցքի անցկացման ժամանակ:

**K-234. КОНСЕДИМЕНТАЦИОННАЯ СКЛАДЧАТОСТЬ** (լատ. con, cum – միասին, զուգընթացաբար և sedimentum – նստում) – **ՉԱՍԱՆՍՏՎԱԾՔԱՎՈՒՏԱՎՈՒՄԱՅԻՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, SYNSEDIMENTARY FOLDING, PENECONTEMPORANEOUS FOLDING**, ապարների ծալքավորություն, որը ձևավորվում է նստվածքակուտակման հետ միաժամանակ: Յ. ծ-յան ժամանակ կուտակվող նստվածքների հաստությունը և ֆացիալ առանձնահատկությունները օրինաչափորեն կապված են զարգացող կառուցվածքում նրանց տեղադիրքի հետ:

**K-235. КОНСЕДИМЕНТАЦИОННЫЕ ТЕКТОНИЧЕСКИЕ ДВИЖЕНИЯ – ՉԱՍԱՆՍՏՎԱԾՔԱՎՈՒՏԱՎՈՒՄԱՅԻՆ ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ, SYNSEDIMENTARY TECTONIC MOVEMENTS**, տեկտ. շարժումների հետ կապված ձևախախտումներ, որոնք զարգանում են որևէ համալիրի նստվածքների կուտակման հետ միաժամանակ: Յ. տ. շ. կարող են արտահայտվել ծալքերի ու խզվածքների առաջացմամբ: Այդ տիպի շարժումների հատկանիշ է՝ ծալքերի փականներում ու թևերում, կամարածալքերում ու զոգածալքերում նստվածքների ֆացիալ կազմի ու հաստությունների տարբերությունը (բարձրացումներում հաստությունները փոքր են, ֆացիաները ավելի կոպիտ են): Խզվածքների երկարատև զարգացման դեպքում բարձրացած թևը երկար ժամանակ կարող է հանդես գալ որպես այն ավազանի ժայռային ափ, որտեղ նստում են իջած թևի նստվածքները:

**K-236. КОНСЕКВЕНТНАЯ ДОЛИНА, СОГЛАСНАЯ ДОЛИНА** (լատ. consequens, սեռ. հ. consequentis – հաջորդական) – **ԿՈՆՍԵԿՎԵՆՏ ՅՈՎԻՏ, ՆԵՐՂԱՇՆԱԿ ՅՈՎԻՏ, ACCORDANT VALLEY**, գետահովիտ, որի երկայնակի տրամատը (պրոֆիլը) ներդաշնակ է այն մակերևույթի թեքությանը, որի վրա հովիտը ներդրվել է (հաճախ համընկնում է ապարների շերտերի անկման հետ):

**K-237. КОНСЕРВАЦИЯ СКВАЖИНЫ** (լատ. conservatio – պահպանում) – **ՅՈՐԱՍԱՆՑՔԻ ԿՈՆՍԵՐՎԱՅՈՒՄ, WELL CONSERVATION**, որոշակի ժամանակահատվածում հորատանցքի հորաբերանի հերմետիկացում, որի նպատակն է պահպանել հորատափողը հորատման գործընթացի ժամանակ կամ հորատումն ավարտելուց հետո:

**K-238. КОНСОЛИДАЦИЯ ГРУНТОВ** (լատ. con, cum – միասին, զուգընթացաբար և solida – խտացնում են, պնդացնում են) – **ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ (ԿՈՆՍՈԼԻԴԱՅՈՒՄ), CONSOLIDATION OF GROUNDS**, որոշակի բեռնվածքի տակ գրունտի խտացում (խտացման ավարտ), որը կատարվում է գրունտի ծակոտիներից ջրի դուրս մղման և մասնիկների խտացման շնորհիվ:

**K-239. КОНСТИТУЦИОННАЯ ВОДА – ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԿԱՆ ՋՈՒՐ, CONSTITUTIONAL WATER**, միներալներում քիմիապես կապակցված ջուր, որը մտնում է նրանց բյուրեղային ցանցի մեջ՝ OH-, O+ և H<sub>2</sub>O+ իոնների ձևով:

**K-240. КОНТАКТ ГЕОЛОГИЧЕСКИЙ** (լատ. contactus – հպում, շոշափում) – **ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ՅՊՈՒՄ (ՅՊԱՏԵՂ), GEOLOGICAL CONTACT**, ապարների հպման, շփման մակերևույթներ: Տարբերում են բնականոն կամ շերտագրական, մագմայական (ներժայթքային) և տեկտ. Յ-ներ:

**K-241. КОНТАКТ МАГМАТИЧЕСКИЙ – ՄԱԳՄԱՅԱԿԱՆ ՅՊՈՒՄ (ՅՊԱՏԵՂ), MAGMATIC CONTACT**, մագմայական ապարների հպման զոնա (հազվադեպ մակերևույթ) որևէ պարփակող ապարի հետ, առաջանում է մագմայի ներժայթքման կամ ներարկման հետևանքով:

- K-242. КОНТАКТ ТЕКТОНИЧЕСКИЙ – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԴՊՈՒՄ (ԴՊԱՏԵՂ), TECTONIC CONTACT**, ապարների հպումը խզվածքային խախտումների մակերևույթներով, նույնն է՝ դիպլոմկտիվ հպում:
- K-243. КОНТАКТОВЫЙ МЕТАМОРФИЗМ – ԴՊՈՒՄԱՅԻՆ ՓՈՆԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՄԵՏԱՄՈՐՖՈՒԹՅՈՒՆ), CONTACT METAMORPHISM**, ապարի միներալային կազմի փոփոխություն կամ միներալների վերաբյուրեղացում մագմայական մարմնի ջերմության ներազդեցության տակ՝ մերձկոնտակտային զոնայում: Այդպիսի տեղային փոխակերպություն հարուցում են բարձր ջերմային գրադիենտները: Դ. փ. բնորոշվում է ցածր ճնշումներով, որոնք հատուկ են փոքր և միջին խորություններին (1-15 կմ): Դ. փ-յան արդյունքները կոչվում են եղջերաքարեր: Առանձնացնում են սամիդինային, պիրոքսենային և ամֆիբոլային եղջերաքարերի ֆազիաներ: Դ. փ-յան կարևոր ազդակներից են ֆլուվիդները:
- K-244. КОНТИНЕНТ (լատ. continens – սեռ. հ. continentis – մայր ցամաք) – ՄԱՅՐ ՑԱՍԱՔ, CONTINENT, CONTINENTAL MASS, MAINLAND**, երկրակեղևի խոշոր զանգված, որի մեծ մասը Զամաշխարհային օվկիանոսից բարձր է ցամաքի տեսքով, իսկ եզրային մասերը խորասուզված են օվկիանոսի մակերևույթից ցածր (մայր ցամաքների ստորջրյա ծայրամաս): Մայր ցամաքների երկրակեղևը բնորոշվում է «գրանիտային» շերտի ներկայությամբ և 35-45 կմ միջին հաստությամբ: Ժամանակակից երկր. ժամանակահատվածում գոյություն ունեն 6 մայր ցամաքներ՝ Եվրասիա, Աֆրիկա, Դս. Ամերիկա, Զր. Ամերիկա, Ավստրալիա և Անտարկտիդա:
- K-245. КОНТИНЕНТАЛЬНАЯ ЗЕМНАЯ КОРА, МАТЕРИКОВАЯ ЗЕМНАЯ КОРА – ՄԱՅՐՑԱՍԱՔԱՅԻՆ ԵՐԿՐԱԿԵՂԵՎ, CONTINENTAL EARTH'S CRUST, CONTINENTAL EARTHCRUST**, տե՛ս Земная кора:
- K-246. КОНТИНЕНТАЛЬНАЯ ФЛЕКСУРА – ՄԱՅՐՑԱՍԱՔԱՅԻՆ ԿՐԿՆԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ (ՖԼԵՔՍՈՒՐԱ), CONTINENTAL FLEXURE**, երկրակեղևի խոշոր կրկնակորոթյան (ֆլեքսուրայի) տիպի ծովածք, որը սահմանափակում է մայրցամաքային ելուստը օվկիանոսային իջվածքից և համապատասխանում է մայրցամաքային լանջին:
- K-247. КОНТИНЕНТАЛЬНОЕ ПОДНОЖИЕ, МАТЕРИКОВОЕ ПОДНОЖИЕ – ՄԱՅՐՑԱՍԱՔԱՅԻՆ ԱՍՈՐՈՏ, CONTINENTAL FOOT**, մայրցամաքային եզրի ամենատարտաքին մաս, որը տեղադրված է մայրցամաքային լանջի և օվկիանոսի հատակի խորջրյա (աբիսալ) գոգավորության միջև: Իրենից ներկայացնում է դեպի օվկիանոսի կողմը մեղմաթեք կուտակումային շլեյֆ, որը առաջացել է մայր ցամաքի քայքայումից գոյացած բեկորային նյութի կուտակման հետևանքով: Մ. ս. 2.5-3 կմ խորությունից աստիճանաբար խորասուզված է մինչև 5-5.5 կմ: Բեկորային նյութի տեղափոխման գործոններն են ձգողական (գրավիտացիոն) գործընթացները, գլխ. պղտոր հոսքերը և ստորջրյա սողանքները: Մ. ս-ում նստվածքների հաստությունը ավելի քան 2-3 կմ է, որոշ դեպքերում՝ 4-5 կմ և ավել:
- K-248. КОНТИНЕНТАЛЬНЫЕ ОТЛОЖЕНИЯ – ՑԱՍԱՔԱՅԻՆ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, CONTINENTAL DEPOSITS**, նստվածքներ, որոնք առաջանում են ցամաքում, ներառյալ մակացամաքային ջրավազանները (լճերը, գետերը): Ըստ սկզբնական նստվածքի կուտակման պայմանների և կերպափոխության՝ Ց. ն-ի մեջ առանձնացնում են բուն ցամաքային (սուբաերալ), ստորջրյա (սուբակվալային), ենթասառցադաշտային (սուբգլյացիալ) նստվածքներ: Ց. ն-ում, ըստ կուտակման բնույթի, տեղադրման պայմանների և կազմության առանձնահատկությունների՝ առանձնացնում են ծագումնաբանական տիպեր՝ էլյուվիալ (տեղակուտակ), լանջային (կոյուվիալ, դեյուվիալ, սոլիֆլյուկցիոն), ալյուվիալ (գետաբերուկային), պրոյուվիալ

(հեղեղաբերուկային), սառցադաշտային, էոլյան (հողմային), ինչպես նաև՝ տեխնածին: Ց. Գ-ին են վերագրվում հրաբխային գործունեության արդյունքները և դրանց վերանստեցման արգասիքները, որոնք գոյանում են ցամաքի վրա:

**K-249. КОНТИНЕНТАЛЬНЫЙ БАСЕЙН – (ՆԵՐ)ՑԱՍԱՔԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ, INTRA-CONTINENTAL BASIN**, ցամաքի ներքին մասի տարածք, որը ներառում է մեկ կամ մի քանի փակ ջրավազաններ:

**K-250. КОНТИНЕНТАЛЬНЫЙ КЛИМАТ – ՑԱՍԱՔԱՅԻՆ ԿԼԻՄԱ, CONTINENTAL CLIMATE**, օվկիանոսից հեռու տեղաբաշխված և նրա մեղմացնող ազդեցությունից զուրկ տարածքի կլիմա: Բնորոշ է Եվրասիայի և Հս. Ամերիկայի ներքին մասերին, որտեղ գիշեր-ցերեկ տիրապետում է ցամաքային ծագման օդը: Ջերմաստիճանի տարեկան տատանումները մեծ են, մթնոլորտային տեղումները մոտավորապես տարեկան 600 մմ:

**K-251. КОНТИНЕНТАЛЬНЫЙ ШЕЛЬФ, տե՛ս Шельф:**

**K-252. КОНТРАКЦИОННАЯ ГИПОТЕЗА (լատ. contractio – սեղմում, կրճատում) – ԿՈՆՏՐԱԿՑԻԱՅԻ ՎՈՎԱՆՔԻ ՎԱՐԿԱԾ, CONTRACTIONAL HYPOTHESIS, HYPOTHESIS OF CONTRACTING EARTH**, գիտամտահղացում, որի համաձայն ապարների շերտերի ծալքավորությունը և լեռնագոյացումը տեղի են ունենում Երկրի սառեցման և նրա ծավալի, շառավղի ու մակերեսի կրճատման հետևանքով: Առավել տարածում է ստացել 19-րդ դարի վերջում, 20-րդ դարի սկզբում (Ֆրանս. երկրաբան Լ. Էլի դե Բոնոն և ավստր. երկրաբան Է. Ջյուս):

**K-253. КОНТРАСТНОСТЬ РЕЛЬЕФА (ֆրանս. constraste – հակադրություն) – ՌԵԼԻԵՖԻ ՀԱՎԱԴՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, GEOMORPHIC CONTRASTS**, Երկրի մակերևույթի հարակից տեղամասերում ռելիեֆի դրական ու բացասական ձևերի հաճախակի հերթափոխում՝ բարձրությունների (խորությունների) կտրուկ լայնույթով:

**K-254. КОНТРОЛЬ ОПРОБОВАНИЯ – ՆՍՈՒՇԱՅԱՆՄԱՆ ՀՍԿՈՒՄ, CONTROL OF SAMPLING**, մնուշահանման բոլոր գործույթների հավաստիության ստուգում՝ համադրելով հսկող և հսկվող մնուշների արդյունքները:

**K-255. КОНТРОЛЬНАЯ СКВАЖИНА – ՍՏՈՒԳԻՉ ՀՈՐԱՏԱՆՑՔ, OBSERVATION WELL**, ժամանակավոր հորատանցք, որն անցկացվում է մնուշահանման կամ փորձային արտանդումների ժամանակ՝ ստր. ջրերի մակարդակը ճշտելու կամ այլ նպատակներով:

**K-256. КОНТУР ЗАЛЕЖИ – ՀԱՆՔԱԿՈՒՏԱԿԻ ԵԶՐԱԳԻԾ, CONTOUR OF DEPOSIT**, գիծ, որը հատակագծում կամ կտրվածքում սահմանագատում է հանքակուտակը և դատարկ ապարը, նույնն է՝ գրոյական եզրագիծ:

**K-257. КОНТУР КОНДИЦИОННЫЙ – ԿՈՆԴԻՑԻԱՅԻՆ (ԼԱՎՈՐԱՎՈՒԹՅԱՆ) ԵԶՐԱԳԻԾ, CONDITIONING CONTOUR**, հանքամարմնի սահմաններ, որոնց ներսում հանքանյութը քանակով, հաստությամբ և այլ հատկանիշներով համապատասխանում է արդյունաբերության պահանջներին:

**K-258. КОНТУРЫ СТРУКТУРНЫЕ – ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵԶՐԱԳԾԵՐ, STRUCTURAL CONTOUR**, գծեր, որոնց օգնությամբ քարտեզներում ու գծապատկերներում արտացոլվում են երկրակեղևի տարբեր տեկտ. կառուցվածքները և դրանց սահմանափակումները: Կ. ե-ի տարատեսակներից են ստրատոհիզոհիպսերը (շերտահամաբարձրագծերը):

**K-259. КОНУС ВЫНОСА – ԱՐՏԱՀՈՍԱՅԻՆ (ԱՐՏԱԲԵՐՄԱՆ) ԿՈՆ, ALLUVIAL FAN, ALLUVIAL CONE**, կուտակումային ռելիեֆի ձև, որն առաջացել է փուխր բեկորային նստվածքների կուտակումից՝ նախալեռնային գոտիներում հեղեղատների, ձո-

րերի, հովիտների ստորին վերջույթներում, որտեղ տեղի է ունենում հոսանքի ուժի անկում: Ունի հարթ, կիսակոնաձև տեսք, որը գազաթով ուղղված է ջրհոսքի հոսանքին հանդիման: Ա. կ-ները հատկապես լայն տարածված են այնտեղ, որտեղ լեռնային գետերը դուրս են գալիս հարակից հարթավայրերը:

**K-260. КОНУС ВЫНОСА ПОДВОДНЫЙ – ՍՏՈՐՋՐՅԱ ԱՐՏԱՅՈՍԱՅԻՆ (ԱՐՏԱԲԵՐՄԱՆ) ԿՈՆ, DEEP-SEA CONE, DEEP-SEA FAN, SUBMARINE FAN,** կուտակումային ռելիեֆի ձև, որն առաջանում է ստորջրյա կանյոնի գետաբերանում՝ շնորհիվ այն նյութի կուտակման, որը պղտոր հոսանքներով բերվում է մայրցամաքային լանջի ստորին մասերը կամ մայրցամաքային ստորոտները:

**K-261. КОНУС ГРЯЗЕВОЙ – ՑԵՆԱՅԻՆ ԿՈՆ, MUD CONE,** առաջանում է ցեխային հրաբուխների պնդացած արտանետվածքներից:

**K-262. КОНУС ЛАВОВЫЙ – ԼԱՎԱՅԻՆ ԿՈՆ, LAVA CONE,** հրաբխային կոն՝ կազմված առավելապես լավայի զանգվածային հոսքերից, հաճախ առկա է հրաբեկորային նյութը:

**K-263. КОНУС ПЕМЗОВЫЙ – ՊԵՄՉԱՅԻՆ (ՉԵՉԱՔԱՐԱՅԻՆ) ԿՈՆ, PUMICE CONE,** կոնաձև փոքր հրաբխային կառույց, որը կազմված է գլխ. պեմզայից (չեչաքարից):

**K-264. КОНУС ШЛАКОВЫЙ – ԽԱՐԱՄԱՅԻՆ ԿՈՆ, SLAG CONE,** փոքր կոնաձև, ինքնուրույն միածին հրաբուխ, որը բաղկացած է գլխ. բազալտային և անդեզիտաբազալտային կազմի խարամներից, հրաբխային ռունքերից և ավելի մանր հրաբխային նյութից: Հաճախ զուգակցվում է բազալտային հոսքերի հետ:

**K-265. КОНУСОВИДНЫЙ ВУЛКАН,** տե՛ս Вулкан конический:

**K-266. КОНУСЫ ЭКСПЛОЗИВНЫЕ – ՀՐԱԲԽԱՊԱՅԹՈՒՄԱՅԻՆ ԿՈՆԵՐ, EXPLOSIVE CONES,** կոնաձև հրաբուխների ընդհանուր անվանում: Առաջացել են պայթման հետևանքով և ունեն ավելի փոքր չափեր, քան ստրատոհրաբուխները: Հ. կ-ին են վերագրվում պեմզային, խարամային, տուֆային և մոխրային կոները:

**K-267. КОНЦЕНТРАТ** (նոր լատ. concentrate – կենտրոնաց(վ)ած) – **ԽՏԱՅԱՆՔ (ՀԱՐՍՏԱՆՅՈՒԹ), CONCENTRATE,** օգտ. հնժ-ների հարստացումից ստացված նյութ, որում արժեքավոր բաղադրիչի պարունակությունը գերազանցում է սկզբնականին:

**K-268. КОНЦЕНТРИЧЕСКАЯ СКЛАДКА – ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆ ԾԱԼՔ, CONCENTRIC FOLD, PARALLEL FOLD,** ծալք՝ ապարների շերտերի համակենտրոն կորերի ծովածքով, շերտերն ունեն կայուն հաստություն, դրանց առաստաղը և հատակը զուգահեռ են:

**K-269. КОНЬЯКСКИЙ ЯРУС, КОНЬЯК** (Կոնյակ, Cognac, ք-ի անունից, ֆրանս.) – **ԿՈՆՅԱԿԻ ՀԱՐԿ, ԿՈՆՅԱԿ, CONIACIAN,** կավճի համակարգի վերին բաժնի ներքևից երրորդ հարկ:

**K-270. КООРДИНАТЫ** (լատ. co, cum – միասին, միատեղ և ordinatus – կարգավորված, կանոնավորված, որոշակի) – **ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ, COORDINATES,** կետեր, որոնք որոշում են կետի դիրքը Երկրի մակերևույթում (աշխ., երկրաբաշխական):

**K-271. КОПРОЛИТ** (հուն. kópros – թրիք, կղկղանք և lithos – քար) – **ԿՂԿՂԱՆՔԱՔԱՐ (ԿՈՊՐՈԼԻԹ), COPROLITE, FOSSIL DROPPINGS,** ծովային կենդանիների (որդերի, փափկամարմինների, իխտիոզավրերի և այլն) կղկղանքներ, որոնք պահպանվել են բրածո վիճակում՝ պահպանելով սկզբնական ձևը: Որոշ տեղերում առաջացնում են ծովային տիղմ: Բրածո վիճակում հանդիպում են կղկղանքածին կրաքարեր, դոլոմիտներ և ֆոսֆորիտներ, որոնք իրենցից ներկայացնում են պսևդոմորֆոզներ՝ ըստ Կ-երի:

**K-272. КОРА ВЫВЕТРИВАНИЯ – ՀՈՂՍԱՀԱՐՄԱՆ ԿԵՂԵՎ, WASTE MANTLE, WEATHERING CRUST, ROCK WASTE,** ցամաքային նստվածքներ, որոնք գոյանում են Երկրի մակերևույթին ապարների հողմահարման հետևանքով և տեղադրված են ծածկույթի տեսքով: Փոփոխման արդյունքները, որոնք մնացել են իրենց առաջնային տեղադրման վայրում (մայրական ապարների վրա), կոչվում են մնացորդային Յ. կ., իսկ դրանց արդյունքները, որոնք տեղափոխվել են փոքր տարածության վրա, բայց չեն կորցրել կապը մայրական ապարների հետ, կոչվում են վերանստեցված Յ. կ.: Երբեմն Յ. կ-ին են վերագրվում հողի և մնացորդային Յ. կ-ի ողողաքայքայման և վերանստեցման արդյունքները՝ դրանց անվանելով կուտակումային Յ. կ. (հեղեղաբերուկ, դեյուվի, էյուվի): Յ. կ-ի առաջացումը կախված է կլիմայից, արմատական ապարների բաղադրությունից, ջրաերկրք. պայմաններից, տեղանքի ռելիեֆից, տեկտ. կառուցվածքից, առաջացման երկարատևությունից, ձևավորման ժամանակաշրջանից և երկրակեղևի շարժունակության աստիճանից: Մնացորդային Յ. կ-ին բնորոշ է ուղղաձիգով միներալային և քիմ. բաղադրության զոնալային հերթափոխը՝ արմատական թույլ փոփոխված ապարներից մինչև Երկրի մակերևույթ դուրս եկող ուժգնորեն փոփոխված ապարները: Յ. կ-ի ձևավորման համար առավել բարենպաստ են համեմատաբար հանգիստ տեկտ. ժամանակահատվածներում տաք և խոնավ կլիմայական պայմանները: Չոր և սառը կլիմայական պայմաններում ապարների փոփոխության ուժգնությունը նվազագույն է: Կախված միներալային կազմից՝ տարբերում են կաոլինային, լատերիտային և այլ Յ. կ-ներ: Կլիմայական կախվածությունը որոշում է Յ. կ-ի տիպերի տեղաբաշխման լայնության զոնայականությունը: Հին Յ. կ-ի հետ կապված են նիկելի, երկաթի, քրոմի, ալյումինի, ֆոսֆորի, հազվագյուտ տարրերի, կաոլինի, ոսկու էյուվիալ ցրոնների հնքվ-եր:

**K-273. КОРА ВЫВЕТРИВАНИЯ ДРЕВНЯЯ – ՀԻՆ ՀՈՂՍԱՀԱՐՄԱՆ ԿԵՂԵՎ, ANCIENT CRUST OF WEATHERING,** ձևավորվել է անցյալ երկրք. ժամանակաշրջաններում: Երկրի երկրք. պատմության ընթացքում գոյություն են ունեցել հզոր Յ. հ. կ-ի ձևավորման մի քանի դարակարգեր՝ մինչքեմբրիյան, վերին պալեոզոյան, տրիաս-յուրայի, կավիճ-պալեոգենյան, պլիոցեն-չորրորդական: Այդ հին Յ. հ. կ-ների մնացորդները պահպանվում են նստվածքային ապարաշերտերի տակ կամ դուրս են գալիս Երկրի մակերևույթ:

**K-274. КОРА ВЫВЕТРИВАНИЯ ЛАТЕРИТНАЯ – ԼԱՏԵՐԻՏԱՅԻՆ ՀՈՂՍԱՀԱՐՄԱՆ ԿԵՂԵՎ, LATERITIC CRUST OF WEATHERING,** հողմահարման կեղևի երկրք. տիպ, որը բնորոշվում է կտրվածքի վերին զոնայում հողմահարման վերջնական արդյունքների՝ Fe-ի, Al-ի, Ti-ի օքսիդների ու հիդրօքսիդների հարստացմամբ: Լատերիտային հողմահարման դեպքում մայրական ապարներում վերնածնային պայմաններում տեղի է ունենում բոլոր անկայուն միներալների քայքայում, ալկալիների, հողալկալիական մետաղների, սիլիկահողի արտահանում: Լ. հ. կ-ի հետ կապված են բոքսիտների, երկաթի, նիկելի, կոբալտի հանքաքարերի հնքվ-եր, զուճավոր մետաղների ցրոններ:

**K-275. КОРАЛЛОВЫЕ ОСТРОВА – ԲՈՒՏՍԱԿՂՋԻՆԵՐ (ԿՈՐԱԼԱՅԻՆ ԿՂՋԻՆԵՐ), CORAL ISLANDS,** կղզիներ, որոնք առաջանում են բուստային կառույցների քայքայման արդյունքներից, հազվադեպ՝ բուստային կրաքարերից (օղակղզիների կամ խութային այլ կառույցների բարձրացումից):

**K-276. КОРАЛЛОВЫЙ ИЗВЕСТНЯК – ԲՈՒՏՍԱՅԻՆ (ԿՈՐԱԼԱՅԻՆ) ԿՐԱՔԱՐ, CORAL LIMESTONE,** պինդ ծակոտկեն կրային ապար, որը կազմում է բուստախութեր:

Կազմված է գլխ. բուստերի (կորալների) գաղութների կմախքներից (փափկամարմինների և ֆորամինիֆերների խառնուրդով), փշամորթների զրահներից, կրային ջրիմուռներից և այլն, որոնք ցեմենտացած են կալցիտով կամ դոլոմիտով:

**K-277. КОРАЛЛОВЫЙ РИФ, КОРАЛЛОВОЕ СООРУЖЕНИЕ – ԲՈՒՍԱԽՈՒԹ, ԲՈՒՍԱՎԱՌՈՒՅՑ (ԿՈՐԱԼԱՅԻՆ ԽՈՒԹ, Կ. ԿԱՌՈՒՅՑ), CORAL REEF**, երկրբ. գոյացություն, որը ձևավորված է արևադարձային ծովերում (միջինը 30-50-ից մինչև 1-2 մ)՝ բուստային պոլիպների և դրանց ուղեկցող օրգանիզմների կենսագործունեության հետևանքով: Կազմված է գլխ. բուստերի կրային կմախքներից, կրային ջրիմուռներից, մամռակերպերից և փափկամարմինների խեցիներից: Առանձնացնում են Բ-ի 4 տիպեր՝ եզերագծող կամ ափային խութ, պատվարային խութ, օղակղզի (աթու) և ներծովալճակային (ներլագունային) խութ:

**K-278. КОРАЛЛЫ** (հուն. եզ. թ. korállion) – **ԲՈՒՍԵՐ (ԿՈՐԱԼՆԵՐ), CORALS**, ծովային աղետորշավոր կենդանիներ, գլխ. բուստային պոլիպների դասից, մասամբ՝ հիդրոիդների դասից: Բ-ի մեծ մասը առաջացնում է տարբեր ձևի կրային, հազվադեպ՝ եղջերային կմախք: Մադրեպորային բուստերի թփուտները կազմում են բուստախութերի հիմքը:

**K-279. КОРДАИТОВЫЕ** (Cordaites) – **ԿՈՐԴԱԻՏՆԵՐ, CORDAITES**, մերկասերմ բույսերի մահացած խումբ, առավելապես ծառաբույսեր են, տերևները նշտարած են՝ զուգահեռ երակավորմամբ: Գոյություն են ունեցել կարբոնում և պերմում:

**K-280. КОРДИЛЬЕРА** (իսպ. cordillera-ից – լեռների շղթա) – **ԿՈՐԴԻԼԻԵՐՆԵՐ, CORDILLERA**, 1) երկրածևաբանությունում՝ ընդհանուր տերմին, որի տակ հասկացվում է շատ թե քիչ զուգահեռ լեռնաշղթաների երկարածիգ սերիաներ կամ լայնարձակ կուտակումներ (ներառյալ հարակից հովիտները, ավազանները, սարավանդները): Յր. Ամերիկայում Կ. տերմինը օգտագործվում է նաև առանձին լեռնաշղթայի համար: 2) Երկրաբանությունում՝ նեղ նորագոյացած ներերկրասինկլինալային բարձրացում, ժայռոտ կղզիների շղթա՝ եզրապատված բեկորային նյութով:

**K-281. КОРЕННАЯ ПОРОДА – ԱՐՄԱՏԱԿԱՆ ԱՊԱՐ, BEDROCK, SOLID ROCK**, 1) երկրաբանությունում այն ապարների ընդհանուր անվանում, որոնք լեռկացման (դենուդացիայի) գործընթացներով տեղափոխված չեն կամ վերափոխված չեն էլյուվիի, 2) երկրածևաբանությունում ապար, որը դիտարկվող ռելիեֆի նկատմամբ ավելի հին է (օր.՝ չորրորդական հասակի ռելիեֆի և այդ ռելիեֆը կազմող ապարների համար նեոգենի ապարները համարվում են արմատական):

**K-282. КОРЕННЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ – ԱՐՄԱՏԱԿԱՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, PRIMARY DEPOSITS, DIRECT DEPOSITS**, հանքակուտակների տեղադրումը արմատական ապարներում (այսինքն՝ իրենց նախասկզբնական առաջացման տեղում): Հակադրվում են օգտ. հնձ-ների ցրոնային հնքվ-երին:

**K-283. КОРЕНЬ СКЛАДКИ – ԾԱԼՔԻ ԱՐՄԱՏ, ROOT OF FOLD**, պառկած ծալքի ամենախոր մաս, որտեղ առանցքային հարթությունը ձեռք է բերում զառիթափ կամ ուղղաձիգ դիրք:

**K-284. КОРИЧНЕВЫЙ ИЛ – ԴԱՐՉՆԱԳՈՒՅՆ ՏԻՂՄ, OCHREOUS MUD**, ցամաքածին (տերրիզեն) օքսիդացած դարչնագույն տիղմ, որը տարածված է Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ծովերում:

**K-285. КОРНИ ТЕКТОНИЧЕСКОГО ПОКРОВА – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԱՐՄԱՏՆԵՐ, ROOTS OF NAPPE**, ծածկույթի հետին կամ արմատական մաս, որը համապատասխանում է այն տեղին, որտեղից (սովորաբար ենթադրաբար) սկսվել է ծածկույթի շարժումը դեպի ժամանակակից տեղադրման շրջանը:

- K-286. КОРОБЧАТАЯ СКЛАДКА, СУНДУЧНАЯ СКЛАДКА – ՏՈՒՓԱՉԵՎ ԾԱԼՔ, ՍՈՒՆԴՈՒՎԱԶՉԵՎ ԾԱԼՔ, BOX-FOLD, FLAT-TOPPED FOLD**, ապարների շերտերի ծալք, որն ունի կա՛ն լայն զառիթափ, կա՛ն ուղղաձիգ թևերով վերնահարթ կամարածալքի (անտիկլինալի), կա՛ն զառիթափ թևերով լայնահատակ գոգածալքի (սինկլինալի) տեսք:
- K-287. КОРРАЗИЯ** (լատ. corrado – քերուն են) – **ԿՈՌԱԶԻԱ (ԱՊԱՐԱՍԱՇՈՒՄ), COR-RASION**, 1) արմատական ապարների վրա պինդ բեկորային նյութի (հողմահարման արդյունքների) մեխ. լերկացման ներգործություն՝ շարժուն միջավայրի կողմից (հոսող ջուր, սառույց, քամի), 2) անզլ. գրականությունում ողողամաշում (էրոզիա) տերմինի հոմ.:
- K-288. КОРРЕЛЯЦИЯ** (ուշ լատ. correlatio – հարաբերակցություն) – **ՀԱՐԱԲԵՐԱՎՎ-ՑՈՒԹՅՈՒՆ (ԿՈՌԵԼՅԱՑԻԱ), CORRELATION**, երկու մեծությունների միջև գոյություն ունեցող վիճակագրական կամ հավանական կապ, որը չունի ճիշտ ֆունկցիոնալ բնույթ:
- K-289. КОРРЕЛЯЦИЯ ПАЛЕОМАГНИТНАЯ – ՀԱՍՏԱՓՆԻՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐԱՎՎՑՈՒԹՅՈՒՆ (ԿՈՌԵԼՅԱՑԻԱ), PALEOMAGNETIC CORRELATION**, հնամագնիսական տվյալների օգնությամբ ապարների հասակային նույն(ական)ացում:
- K-290. КОРРЕЛЯЦИЯ ПЛАСТОВ, ПАРАЛЛЕЛИЗАЦИЯ ПЛАСТОВ – ՇԵՐՏԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱՎՎՑՈՒԹՅՈՒՆ (ԿՈՌԵԼՅԱՑԻԱ), ՇԵՐՏԵՐԻ ԶՈՒԳԱՅԵՈՎԱԿԱՆԱՑՈՒՄ, STRATA CORRELATION**, հնքվ-երի, տարածքների, ավազանների սահմաններում նստվածքային, նստվածքահրաբխածին, նստվածքափոխակերպային ստվարաշերտերի (ինչպես նաև շերտերի, շերտատուփերի, հորիզոնների) միմյանցից մեկուսացված կտրվածքների նույնանուն հասակակից շերտերի համադրում, կապակցում: Շ. հ. իրագործվում է երկրաբանահետախուզական գործընթացի բոլոր փուլերում, բայց այն ավելի կարևոր նշանակություն ունի հետախուզական և շահագործման փուլերում: Հարաբերակցության օբյեկտներ են հանդիսանում առավելապես ածխի, այրվող թերթաքարերի, նավթի, երկաթի հանքաքարերի, բոքսիտների, կրաքարերի, ավազաքարերի, կավային և այլ ապարների շերտերը: Հարաբերակցության համար օգտագործվում են համալիր մեթոդներ՝ հնէաբանական, քարաբանական, երկրք., երկրֆ., մաթեմատիկական, երկրաչափական և այլն:
- K-291. КОРРЕЛЯЦИЯ РАЗРЕЗОВ – ԿՏՐՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱՎՎՑՈՒԹՅՈՒՆ (ԿՈՌԵԼՅԱՑԻԱ), CORRELATION OF SECTIONS**, տարբեր կտրվածքների համադրումը՝ կազմի, հասակի և այլ հատկանիշների հիման վրա:
- K-292. КОРРЕЛЯЦИЯ СТАТИГРАФИЧЕСКАЯ – ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐԱՎՎՑՈՒԹՅՈՒՆ (ԿՈՌԵԼՅԱՑԻԱ), STRATIGRAPHIC CORRELATION**, տարածականորեն միմյանցից մեկուսացված շերտագրական ստորաբաժանումների և դրանց մասերի համադրությունը ըստ երկրք. հասակի և (կամ) կտրվածքում գրաված դիրքի: Շ. հ. շերտագրական ուսումնասիրությունների կարևոր փուլերից մեկն է, որի ժամանակ նպատակահարմար է օգտագործել համալիր հատկանիշներ՝ օրգանիզմների մնացորդները, քարաբանական կազմը, իզոտոպային հասակավորումը, հրաբխային և տեկտ. ակտիվացման հետքերը, հնամագնիսական տվյալները և այլն: Առանձին կտրվածքների հարաբերակցության ժամանակ կիրառվում է առավելապես կենսաշերտագրական մեթոդը, նստվածքակուտակման միևնույն հնավազանի կտրվածքների համար՝ քարաբանաֆազիալ մեթոդը (բնորոշիչ հորիզոնների անջատմամբ)՝ կենսաշերտագրական մեթոդի հետ համատեղ: Հորատանցքների դեպքում կիրառվում են կարոտաժի տարբեր տեսակներ:



**K-293. КОРРОЗИЯ** (ուշ լատ. corrosio – կերամաշում) – **ՔԱՅՔԱՅՈՒՄ (ԿՈՌՈԶԻԱ, ԿԵՐԱՄԱՇՈՒՄ), CORROSION**, 1) մետաղների քայքայում՝ արտաքին միջավայրի քիմ. կամ էլեկտրաքիմ. փոխազդեցության հետևանքով, 2) ապարների քայքայում՝ ջրի քիմ. ներազդեցության տակ՝ դրանց լուծման հետևանքով, որը հանգեցնում է ապարներում ստորգետնյա ակոսների, խռոչների, քարանձավների և այլնի առաջացմանը: 3) Մագմայի ներդրման ժամանակ հալույթի կողմից բյուրեղային ներփակվածքների, ապարների բեկորների կերամաշում և մասնակի լուծում:

**K-294. КОРУНД** (գերմ. Korund – սանսկ. կուրուվինդա-սուտակ) – **ԿՈՐՈՒՆԴ, CORUNDUM, CORUNDITE, ADAMANTINE SPAR, DIAMOND SPAR**, միներալ օքսիդների դասից,  $Al_2O_3$ , բյուրեղային համակարգը տրիգոնային է, բյուրեղները տակառոնկաձև, սյունաձև, հազվադեպ երկբուրգային են: Բուն Կ. առաջացնում է նաև պինդ մանրահատիկավոր զանգվածներ: Սովորական Կ-ի գունավորումը կապտամոխրագույն, դեղին է, գեղեցիկ գունավորված թափանցիկ տարատեսակներ են սուտակը (ռուբին) և շափյուղան (սապֆիր): Փայլը՝ ավնաստի – մինչև ապակու: Բնորոշ է բարձր կարծրությունը՝ 9: Կ. բազմածին միներալ է՝ փոխակերպային, մետասոմատիկ, մագմայական, կուտակվում է ցրոններում: Կ. հղկանյութ է [զմռնիտ (նաժդակ)]: Թափանցիկ խոշոր բյուրեղները (սուտակ, շափյուղա և այլն) թանկարժեք քարեր են:

**K-295. КОРУНД КРАСНЫЙ**, տե՛ս Рубин:

**K-296. КОРУНД СИНИЙ**, տե՛ս Сапфир:

**K-297. КОСА – ՑԱՄԱՔԱԼԵԶՎԱԿ, SPIT, SAND BANK**, ծովի կամ լճի ափին ցամաքի ցածր ջրաբերուկային շերտ, որը կազմված է ավազից, գլաքարից, կոպճից: Մեկ ծայրով միակցվում է ափին, իսկ մյուսով ազատ վերջանում է ջրատարածքի սահմաններում:

**K-298. КОСМИЧЕСКАЯ ПЫЛЬ – ՏԻԵԶԵՐԱՎԱՆ ՓՈՇԻ, COSMIC DUST**, նյութի մասնիկներ, որոնք միջաստղային և միջնոլորակային տարածությունում առաջացնում են ամպեր և ավելի խիտ գոյացություններ՝ գլոբուլներ (գնդիկներ):

**K-299. КОСМИЧЕСКАЯ СЪЁМКА – ՏԻԵԶԵՐԱՎԱՆ ՉԱՆՈՒՅԹ, SPACE SURVEY**, երկրի, երկնային մարմինների և տիեզերական երևույթների պատկերների ստացում՝ մթնոլորտի սահմաններից դուրս գտնվող սարքերի միջոցով (տիեզերանավերից և այլն), պատկերները տրվում են էլեկտրամագնիսական սպեկտրի տարբեր մարզերում: Տ. հ-ի միջին մասշտաբը 1:1000000 և 1:10000000 է: Տ. հ. հնարավորություն է տալիս ուսումնասիրելու մոլորակի մթնոլորտի, քարոլորտի, ջրոլորտի, կենսոլորտի և լանդշաֆտի հիմնական կառուցվածքային, ռեգիոնալ, զոնայական և համընդհանուր առանձնահատկությունները:

**K-300. КОСМОГЕННЫЕ МИНЕРАЛЫ, КОМПОНЕНТЫ ОСАДКОВ – ՏԻԵԶԵՐԱԾԻՆ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, ՆԱՏՎԱԾՔՆԵՐԻ ԲՎՂԱԴՐԱՄԱՍԵՐ, COSMOGENIC MINERALS**, միներալային մասնիկներ, որոնք նստվածքների մեջ ներառվում են անմիջապես տիեզերական տարածությունից (օդաքարեր, տիեզերական փոշի): Դրանք հատկապես նկատելի են խորջրյա պեղագիկ նստվածքներում, մասնավորապես՝ պեղագիկ կավերում:

**K-301. КОСМОГОНИЧЕСКИЕ ГИПОТЕЗЫ** (հուն. kósmos – աշխարհ, տիեզերք և gonê, gonéia – ծնում) – **ՏԻԵԶԵՐԱԾՆԱՎԱՆ ՎԱՐԿԱԾՆԵՐ, COSMOGONICAL HYPOTHESIS**, վարկածներ Արևային համակարգի ծագման մասին: Կանտի ու Լապլասի առաջին գիտական վարկածները (18-րդ դար) Արևի և մոլորակների առաջացումը բացատրում էին լայնարձակ պտտվող գազափոշային միգամածության խտացմամբ: Դրան հակասում է արևային հաշվարկների համեմատությամբ

ավելի դանդաղ պտույտը: Այդ կապակցությամբ առաջ քաշվեցին նոր վարկածներ: Դրանցից լայն տարածում ստացավ Ջինսի վարկածը (1920-1930 թթ.) Արևից նախամոլորակային տաք թանձրուկների անջատման մասին: Հետագայում ապացուցվել է դրա անհիմն լինելը: Այնուհետև Կանտի ու Լապլասի վարկածի հիման վրա 20-րդ դարի 2-րդ կեսում ստեղծվեց նոր վարկած՝ միասնական սառը գազափոշային ամպից Արևի ու մոլորակների առաջացման մասին: Այն զարգացվեց Օ. Յու. Շմիդտի և Ֆ. Հոյլի կողմից:

**K-302. КОСМОЛОГИЯ** (հուն. *kósmos* – աշխարհ, տիեզերք և *lógos* – ուսմունք) – **ՏԻԵԶԵՐԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ, COSMOLOGY**, ֆիզ. ուսմունք տիեզերքի մասին ամբողջապես:

**K-303. КОСМОС** (հուն. *kósmos* – աշխարհ, տիեզերք) – **ՏԻԵԶԵՐՔ, SPACE, UNIVERSE, COSMOS**, գոյություն ունեցող ամբողջ նյութական աշխարհը՝ ամսահման ժամանակի և տարածության մեջ:

**K-304. КОСМОХИМИЯ – ՏԻԵԶԵՐԱՔԻՄԻԱ, COSMOCHEMISTRY**, գիտություն, որն ուսումնասիրում է քիմ. տարրերի տարածումը և տեղաբաշխումը տիեզերքում՝ տիեզերական տարածությունում, օդաքարերում, աստղերում, մոլորակներում և դրանց առանձին մասերում:

**K-305. КОСМОХРОНОЛОГИЯ – ՏԻԵԶԵՐԱԺԱՄԱՆԱԿԱՎՐՈՒԹՅՈՒՆ, COSMOCHRONOLOGY**, միջուկային երկրաժամանակագրության բաժին, որն զբաղվում է իրադարձությունների պարբերացմամբ՝ տիեզերական նյութի զարգացման ընթացքում: S-յան հիմնական խնդիրը տիեզերական նյութի պատմության վերականգնումն է: Օդաքարերում ճառագայթակտիվ, ճառագայթածին և տիեզերածին իզոտոպների հիման վրա առանձնացվում են դրանց գոյության փուլերը: Ըստ այդ տվյալների՝ երկաթային օդաքարերի մեծ մասը առաջացել է 6-9 մլդ. տ. առաջ, որը գերազանցում է Երկրի և քարային օդաքարերի հասակը (4.5 մլդ. տ.):

**K-306. КОСОВОЛНИСТАЯ СЛОИСТОСТЬ – ՇԵՂԱԼԻՔԱՎՈՐ ՇԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, CROSS BEDDING, FALSE BEDDING**, պարզ շերտավորության տեսակ, որը ձևով ու ծագմամբ անցողիկ է ալիքավոր և շեղ շերտավորությունների միջև: Շերտիկների սերիաների սահմանները ալիքավոր են, սերիայի ներսում շերտիկների տեղադիրքը շեղ է (հոսանքի ծփանքի ներսում):

**K-307. КОТИЛОЗАВРЫ** (*Cotylosaurus*) – **ԿՈՏԻԼՈՉԱՎՐԵՐ, COTYLOSAURS**, ամենահին սողունների ենթադաս: Ծագել են երկկենցաղներից ուշ կարբոնում և լայն տարածվել են պերմում, մահացել են տրիասի սկզբում: Կ-ից առաջացել են սողունների մնացած ենթադասերը:

**K-308. КОТЛОВИНА – ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ԳՈԳԱՅՈՎԻՏ, ՓՈՍՈՐԱԿ), BASIN**, երկրի մակերևույթի ցածրացում, բոլոր կողմերից փակ կամ բաց՝ մեկ կամ երկու հակադիր կողմերից (գետի գործունեության դեպքում): Ձևը և ծագումը տարբեր են (տեկտ., սառցադաշտային և այլն): Երբեմն Գ. տերմինը օգտագործվում է որպես «Իջույթ» (*депрессия*) տերմինի հոմ.: Գ-ները տեղաբաշխված են նաև օվկիանոսի հատակում (ծայրամասային ծովերի Գ-ներ, խորջրյա Գ-ներ):

**K-309. КОТЛОВИНА ВУЛКАНИЧЕСКАЯ ЭРОЗИОННАЯ – ՀՐԱԲԽԱՅԻՆ ՈՂՈՂԱՍԱՇՄԱՆ ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, VOLCANIC EROSION BASIN**, կլորավուն կամ ձվաձև եզրագծերով հրաբխային իջույթ, որն առաջանում է հրաբխի կոնի թուլացված զոնայի երկայնքով՝ հոսող ջրերի և կլիմայական ազդակների ներգործության հետևանքով:

**K-310. КОТЛОВИНА КАРСТОВАЯ – ԿԱՐՍՏԱՅԻՆ ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, KARST BASIN**, տե՛ս Կарстовые котловины:

- K-311. КОТЛОВИНА ОБРУШЕНИЯ – ՓԼՈՒՉՍԱՆ ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, COLLAPSE DEPRESSION, COLLAPSE BASIN**, իջույթ, որն առաջացել է կրաքարերում կամ այլ ապարներում ստր. խոռոչների կամարների բեկվածքներով՝ փլուզման կամ նստեցման հետևանքով:
- K-312. КОТЛОВИНА ОКЕАНИЧЕСКАЯ – ՕՎԿԻԱՆՈՍԱՅԻՆ ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, OCEANIC BASIN**, տե՛ս Океаническая котловина:
- K-313. КОТЛОВИНА ОКРАИННОГО МОРЯ – ԾԱՅՐԱՄԱՍԱՅԻՆ ԾՈՎԻ ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, BASIN OF ADJACENT SEA, BASIN OF FRINGING SEA, BASIN OF MARGINAL SEA**, հարթ կամ ալիքավոր հատակով, զառիթափ լանջերով խոշոր իջույթ, որը օվկիանոսից անջրպետված է կղզեաղեղով:
- K-314. КОЭФФИЦИЕНТ АККУМУЛЯЦИИ НЕФТИ – ՆԱՎԹԻ (ՔԱՐՅՈՒՂԻ) ԿՈՒՏԱԿՍԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, OIL ACCUMULATION COEFFICIENT**, մեծություն, որը բնորոշում է սկզբնական մայրական ապարներում առաջացած նավթային ածխաջրածինների այն մասնաբաժինը, որը կուտակվել է հանքամարմնում: Որոշվում է հանքակուտակի նավթային ածխաջրածինների քանակի և մայրական ապարներում գոյացած սկզբնական ածխաջրածինների քանակական հարաբերությամբ:
- K-315. КОЭФФИЦИЕНТ ВОДОУДАЧИ – ՋՐԱՏՎՈՒԹՅԱՆ (ՋՐԱՆՋԱՏՍԱՆ) ԳՈՐԾԱԿԻՑ, COEFFICIENT OF STORAGE**, ջրահագեցած ապարից ազատ կերպով անջատվող ջրաքանակի հարաբերությունը նրա լրիվ խոնավությանը՝ արտահայտված միավորի մասերով կամ %-ներով:
- K-316. КОЭФФИЦИЕНТ ВЯЗКОСТИ – ՄԱԾՈՒՑԻԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, COEFFICIENT OF VISCOSITY**, հեղուկի (գազի) մի մասը մյուսի նկատմամբ տեղաշարժի ժամանակ հեղուկի կողմից ցուցադրվող դիմադրության քանակական բնութագիր:
- K-317. КОЭФФИЦИЕНТ ИЗВЛЕЧЕНИЯ – ԿՈՐՉՍԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, COEFFICIENT OF RECOVERY, ENRICHMENT COEFFICIENT**, հանքավայրից (կամ նրա մի մասից) արդյունահանված օգտ. հնձ-յի քանակության և նույն հնձվ-ի (կամ նրա մի մասի) հաշվեկշռային պաշարների հարաբերություն:
- K-318. КОЭФФИЦИЕНТ КРЕПОСТИ ПОРОД – ԱՊԱՐԻ ԱՄՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, ROCK HARDNESS RATIO**, արդյունահանման, հորատման ընթացքում ապարների կողմից քայքայմանը ցույց տրվող հարաբերական դիմադրությունը մոտավորապես բնութագրող գործակից:
- K-319. КОЭФФИЦИЕНТ НЕФТЕНАСЫЩЕНИЯ – ՆԱՎԹԱՅԱՎԵՑՄԱՆ (ՔԱՐՅՈՒՂԱՅԱՎԵՑՄԱՆ) ԳՈՐԾԱԿԻՑ, OIL SATURATION RATIO**, շերտի ծակոտիներում պարունակված նավթի (քարյուղի) ծավալի հարաբերությունը նավթաբեր շերտի բոլոր ծակոտիների ծավալին:
- K-320. КОЭФФИЦИЕНТ ПОДЗЕМНОГО СТОКА – ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՀՈՍՔԻ ԳՈՐԾԱԿԻՑ, COEFFICIENT OF SUBSURFACE FLOW**, որոշակի ժամանակահատվածում ջրիավաք ավազանում բեռնաթափվող ստր. հոսքի մեծության հարաբերությունը նույն տարածքում թափվող մթնոլորտային տեղումների քանակին:
- K-321. КОЭФФИЦИЕНТ ПОРИСТОСТИ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, ROCK POROSITY RATIO, COEFFICIENT OF ROCK POROSITY**, ապարների գունարային ծավալի և ապարի միներալային կմախքի ծավալի հարաբերություն:
- K-322. КОЭФФИЦИЕНТ ПРОНИЦАЕМОСТИ – ԹԱՓԱՆՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, PERMEABILITY COEFFICIENT**, գրունտի ջրահաղորդականությունը բնութագրող պարամետր, որը հանդիսանում է ծծանցման գործակցի նմանակը, տե՛ս Коэффициент фильтрации:

- K-323. КОЭФФИЦИЕНТ СТОКА – ՅՈՍՔԻ ԳՈՐԾԱԿԻՑ, RUN-OFF COEFFICIENT**, որևէ ջրհավաք ավազանում որոշակի ժամանակահատվածում ձևավորվող մակերևութային հոսքի մեծության (մմ) հարաբերությունը նույն ժամանակահատվածում թափվող մթնոլորտային տեղումների քանակին (մմ):
- K-324. КОЭФФИЦИЕНТ ТРЕЩИНОВАТОСТИ – ԾԵՂՔԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, FISSURING COEFFICIENT**, ապարների ճեղքավորվածության մեծություն, որն արտահայտվում է ապարի որոշակի զանգվածի ճեղքերի գումարային ծավալի և այդ զանգվածի ծավալի հարաբերությամբ, ինչպես նաև ապարի հղկուկի վրա դիտվող ճեղքերի գումարային մակերեսի և հղկուկի մակերեսի հարաբերությամբ:
- K-325. КОЭФФИЦИЕНТ ФИЛЬТРАЦИИ – ԾՕԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ, FILTRATION COEFFICIENT**, մեծություն, որը բնութագրում է ապարների ջրանցիկության ունակությունը, այն որոշակի ապարի համար հաստատուն է: Ըստ Դարսիի, Ծ. գ. իրենից ներկայացնում է ապարի միջով ծծանցման արագությունը, երբ ճնշման գրադիենտը հավասար է մեկ միավորի: Յոմ՝ ջրաթափանցելիության գործակից:
- K-326. КОЭФФИЦИЕНТ ФОССИЛИЗАЦИИ – ՖՈՍԻԼԱՑԻԱՆ (ՔԱՐՑՈՒԿԱԳՈՅԱՑՄԱՆ) ԳՈՐԾԱԿԻՑ, FOSSILISATION COEFFICIENT**, մեծություն, որը բնութագրում է հարաբերությունը կենդանի նյութի զանգվածի և ֆոսիլացվող օրգանական նյութի զանգվածի միջև:
- K-327. КРАЕВАЯ ГЕОСИНКЛИНАЛЬ – ԵԶՐԱՅԻՆ ԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԼ (ԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԼ), MARGINAL GEOSYNCLINE**, շարժուն(ակ) գոտի, որը տեղաբաշխված է օվկիանոսի և մայր ցամաքի սահմանում, օր.՝ Խաղաղօվկիանոսային անդեգիտային գծից արևմուտք տեղաբաշխված երկրասինկլինալային ճկվածքները, նույնն է՝ Геосинклиналь окраинная:
- K-328. КРАЕВОЙ ПРОГИБ, КРАЕВАЯ ВПАДИНА, ПЕРЕДОВОЙ ПРОГИБ, ПРЕДГОРНЫЙ ПРОГИБ – ԵԶՐԱՅԻՆ ԵԿՎԱԾՔ, ԵԶՐԱՅԻՆ ԻԶՎԱԾՔ, ԱՌԱՋԱՎՈՐ ԵԿՎԱԾՔ, ՆԱԽԱԼԵՌՆԱՅԻՆ ԵԿՎԱԾՔ, FOREDEEP, FORETROUGH, MARGINAL TROUGH**, խոր ճկվածք, որն առաջանում է պլատֆորմների ու ծալքավոր մարզերի միջև՝ վերջինների զարգացման լեռնագոյացման փուլում (օր.՝ Նախաուրալյան, Նախաապալաչյան, Նախահիմալայան, Նախակովկասյան և այլ ճկվածքներ): Ե. ճ-ները լցված են մոլասային ֆորմացիաների նստվածքներով՝ ստորին մասում ծովային, միջին մասում՝ ծովալճակային (լազունային), վերին մասում՝ ցամաքային: Ե. ճ-ներն ունեն խիստ անհամաչափ կառուցվածք: Դրանց ներքին, դեպի լեռնային կառույցների կողմը գտնվող թևերը խիստ ծալքավորված են գծային (հաճախ վրաշարժերով բարդացված) ծալքերով: Արտաքին պլատֆորմային թևերում դիտվում են միայն գմբեթանման բարձրացումներ: Ե. ճ-ների հետ կապված են ածուխների, նավթի, բնական գազերի, աղի հնքվ-եր:
- K-329. КРАЕВАЯ ВПАДИНА**, տե՛ս Краевой прогиб:
- K-330. КРАСНАЯ ГЛУБОКОВОДНАЯ ГЛИНА – ԿՐՄԻՐ ԽՈՐՋՐՅԱ ԿԱՎ, RED Ooze, RED CLAY, RED OCEANIC CLAY**, օվկիանոսների առավել խոր մասերի (ավելի քան 4000-5000 մ) հատակային նստվածքների տեսակ, որը կազմված է նրբադիսպերս ցամաքածին նյութից, հրաբխային մոխրի ու պեմզայի (չեչաքարի) քայքայման կավային արգասիքներից՝ մանգանային ու երկաթային կոնկրեցիաների ներփակվածքներով և օրգանական նյութի (ռադիոլարներ, դիատոմային ջրիմուռներ, ֆորամինիֆերներ և այլն) ու տիեզերական փոշու ոչ մեծ խառնուրդից: Կ. խ. կ. կուտավում է շատ դանդաղ, մոտ 1 մմ՝ 1000 տարում, ծածկում է Խաղաղ օվկիանոսի հատակի մոտ 35 % -ը, Յնդկական և Ատլանտյան օվկիանոսներում՝ մոտ 25 %-ը:

**K-331. КРАСНАЯ МЕДНАЯ РУДА – ԿՐՄԻՐ ՊՐՆՁԱՔԱՐ, RED COPPER ORE, RED GLASSY COPPER, տե՛ս Куприт:**

**K-332. КРАСНОЗЕМ – ԿՐՄՐԱՅՈՂ, RED EARTH, KRASNOZEM, հողի տեսակ, որն առաջանում է հիմքային արտաժայթքային ապարների հողմահարման արդյունքների վրա՝ անտառային բուսականության տակ խոնավ մերձարևադարձային կլիմայական պայմաններում: Բնորոշվում է վերին հորիզոններում բուսահողի (հումուսի) մինչև 6-9% պարունակությամբ, թթու ռեակցիայով, երկաթի և ալյումինի օքսիդների մեծ պարունակությամբ, կարմիր գույնով:**

**K-333. КРАСНЫЕ ВОДОРОСЛИ (Rodophyta) – ԿՐՄԻՐ ՋՐԻՍՈՒՌՆԵՐ, RED ALGAE, ստորակարգ բույսերի տիպ, գույնը՝ մանուշակագույնից մինչև վառ կարմիր: Բնորոշ է խորջրյա բենթոսին: Մոտ 4000 տեսակ, բազմաբջիջ են, հանդիպում են մեզոգոյան և կայնոգոյան նստվածքներում:**

**K-334. КРАСНЫЙ ЖЕЛЕЗНЯК – ԿՐՄԻՐ ԵՐՎԱԹԱՔԱՐ, RED HEMATITE, RED IRON ORE, RED OXIDE OF IRON, հեմատիտի գաղտնաբյուրեղային տարատեսակ:**

**K-335. КРАТОН (հուն. krátos – ուժ, ամրություն) – ԿՐԱՏՈՆ, CRATON, երկրակեղևի ամրապնդված տեղամաս, որն անընդունակ է ձևափոխվելու ալպյան ծալքավորության կողմից: Կ-ները գերմ. գիտնական Յ. Շտիլեն ստորաբաժանել է՝ բարձրացված Կ-ների՝ գլխ. սիալիկ (Si, Al) կազմի (հին պլատֆորմներ) և խորասուզված Կ-ների՝ զանգվածներ սիմատիկ (Si, Fe, Mg) հիմքով (առավելապես օվկիանոսների հատակի մարզեր): «Կ» տերմինը առաջարկվել է Շտիլենի կողմից (1940)՝ ավստրիական երկրաբան Լ. Քոբերի (1928) «Կրատոգեն» տերմինի փոխարեն և լայնորեն օգտագործվում է որպես «պլատֆորմ» տերմինի հոմ.:**

**K-336. КРЕМЕНЬ – ԿԱՅԾՔԱՐ (ՍԻԼԻՑԱՔԱՐ, ԳԱՅԼԱԽԱՉ), FLINT, CHERT, միներալային գոյացություն, որը բաղկացած է բյուրեղային կամ անբյուրեղակազմ (ամորֆ) սիլիկահողից [ծիածանաքարից (օպալից), քաղկեդոնից կամ քվարցից]: Բնության մեջ լայն տարածված է կոնկրեցիաների, պալարների, ոսպնյակների և շերտերի տեսքով, որոնք ներդաշնակ կամ հատող մարմինների տեսքով հանդիպում են կրաքարերում և գրելու կավձում: Առաջանում է նստվածքների դիագենեզի, ապարների կատագենեզի և հողմահարման ժամանակ: Կոտրվածքը խեցածև է: Հնում (մինչև երկաթի դարը) Կ. մարդու կողմից օգտագործվել է քարե գործիքներ պատրաստելու համար:**

**K-337. КРЕМНЕЗЕМ – ՍԻԼԻԿԱՅՈՂ (ԿԱՅԾՔԱՐԱՅՈՂ), SILICA, սիլիցիումի երկօքսիդի (SiO<sub>2</sub>) հոմ.: Բնության մեջ լայն տարածված է β-քվարցի տեսքով, հազվադեպ հանդիպում է α-քվարցը, տրիդիմիտը, կրիստոբալիտը, անբյուրեղակազմ Ս., մեկանոֆլոգիտը:**

**K-338. КРЕМНИЙ, Si (լատ. Silicium) – ՍԻԼԻՑԻՈՒՄ, SILICIUM, SILICON, պարբերաբար համակարգի IV խմբի քիմ. տարր: Երկրակեղևում իր տարածմամբ թվածնից հետո երկրորդն է (կլարկը 29.5 % է): Հայտնի են Ս. պարունակող ավելի քան 400 միներալ: Քարոլորտի մոտ 12 %-ը կազմում են քվարցը (SiO<sub>2</sub>) և նրա գաղտնաբյուրեղային տարատեսակները (քաղկեդոն, ծիածանաքար և այլն):**

**K-339. КРЕМНИСТЫЕ ПОРОДЫ, СИЛИЦИТЫ – ՍԻԼԻՑԻՈՒՄԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐ, ՍԻԼԻՑԻՏՆԵՐ, SILICEOUS ROCKS, նստվածքային ու հրաբխանստվածքային ապարների խումբ, ապարներ, որոնք բաղկացած են ամբողջովին կամ ավելի քան 50% ջրային կամ ազատ սիլիկահողից (կայծքարահողից)՝ սովորաբար ինչ-որ աստիճանի բյուրեղացած: Ապարակազմիչ միներալներն են ծիածանաքարը (օպա-**

լը), քաղկեդոնը և քվարցը: Կախված միներալային կազմից՝ տարբերում են ծիածանաքարային, կրիստոբալիտ-ծիածանաքարային, քաղկեդոնային, քվարցային և խառն, ըստ կառուցվածքի՝ օրգանածին, մանրահատիկային և գաղտնաբյուրեղային Ս. ա.: Ըստ տեղադրման պայմանների՝ Ս. ա. կարող են լինել շերտային և պլարային: Ըստ ծագման՝ տարբերում են քիմիածին (գեյզերիտ, ջեսպիլիտ) և օրգանածին (դիատոմիտ, ռադիոլարիտ, սպոնգոլիթ): Բացի դա, առանձնացնում են կրիպտոգեն (օպոկներ, տրեպել և այլն) և դիագենետիկ (կայծքար) Ս. ա.: Շատ Ս. ա-ի ձևավորման ժամանակ (հասպիսներ, գեյզերիտներ և այլն) էական դեր են խաղում հրաբխանստվածքային գործընթացները: Ս. ա. բազմանպատակային օգտագործման ոչ մետաղական հումք են:

**K-340. КРЕМНИСТЫЙ СЛАНЕЦ – ՍԻԼԻՑԻՈՒՄԱՅԻՆ ԹԵՐՈՍԻԼ, SILICEOUS SHALE**, պինդ, կարծր սիլիցիումային նրբասալիկավոր նստվածքային ապար՝ խեցեման կոտրվածքով: Նկատելիորեն փոխակերպված է, ունի որոշակի թերթավոր կազմվածք: Հաճախ պարունակում է սիլիցիումային օրգանիզմների մնացորդներ, կավային և օրգանական նյութի խառնուրդ:

**K-341. КРЕМНИСТЫЙ ТУФ, ГЕЙЗЕРИТ, ФИОРИТ – ՍԻԼԻՑԻՈՒՄԱՅԻՆ ՏՈՒՖ, ԳԵՅՉԵՐԻՏ, ՖԻՈՐԻՏ, SILICEOUS SINTER, GEYSERITE, FIORITE**, բաց գունավորված մականստվածքային պինդ կամ փուխր, հաճախ ծակոտկեն (տուֆանման) նստվածք, որը բաղկացած է գլխ. ծիածանաքարից (օպալից): Գեյզերների կամ տաք հանքային աղբյուրների նստվածքներ են:

**K-342. КРЕПЛЕНИЕ ГОРНОЕ – ԸՆԴԵՐՔԱՅԻՆ (ԼԵՌՆԱՅԻՆ) ԱՄՐԱՎԱՊՈՒՄ, ՀԱՆՔԱՅՐՈՒՅԻՆ ԱՄՐԱՎԱՊՈՒՄ, MINING TIMBERING, MINING CASING**. 1) ընդերքային ամրակապի կառուցման աշխատանքների համալիր: 2) Հանքահորերում կատարվող ամրակապման աշխատանքների համախումբ:

**K-343. КРЕПЛЕНИЕ СКВАЖИНЫ – ՀՈՐԱՏԱՆՑՔԻ ԱՄՐԱՎԱՊՈՒՄ, WELL LINING**, շրջապահ խողովակի և տամպոնային լուծույթի միջոցով հորատանցքի պատերի ամրացում:

**K-344. КРЕПОСТЬ ГОРНОЙ ПОРОДЫ – ԱՊԱՐԻ ԱՄՐՈՒԹՅՈՒՆ, ROCK HARDNESS**, արդյունահանելիս քայքայման (հորատման, պայթեցման, պոկման և այլն) նկատմամբ ապարների դիմադրությունը բնորոշող հատկություն:

**K-345. КРЕПЬ ГОРНАЯ – ԼԵՌՆԱՅԻՆ ԱՄՐԱՎԱՊ, TIMBER, SUPPORT**, փորվածքներում կառուցվող պահպանիչ կառույց՝ շրջապատող ապարների փլվելը կանխելու համար:

**K-346. КРЕПЬ ПРИЗАОЙНАЯ – ՓՈՐՈՎԱԾՔԱՆՈՐՇԱՅԻՆ ԱՄՐԱՎԱՊ, FACE SUPPORT**, փորվածքախորշի (հանքախորշի) ճակատին անմիջականորեն մոտ կառուցված ամրակապ:

**K-347. КРЕПЬ СПЛОШНАЯ – ՀԱՍՏԱՐԱԾ ԱՄՐԱՎԱՊ, CLOSE TIMBER**, ամրակապ, որի հիմնական տարրերը ծածկում են փորվածքի կողերն ու առաստաղը:

**K-348. КРИВАЯ ГРАНУЛОМЕТРИЧЕСКОГО (МЕХАНИЧЕСКОГО) СОСТАВА – ՀԱՏԻԿԱՉԱՓԱԿԱՆ (ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ) ԿԱՉՄԻ ԿՈՐ, GRANULOMETRIC CURVE**, ապարի հատիկաչափական (մեխ.) կազմի գրաֆիկական արտահայտություն, որն իրենից ներկայացնում է (ըստ մասնիկների չափերի) ապարի նմուշի ծավալի ավելացումն արտահայտող ինտեգրալ կոր:

**K-349. КРИВАЯ ДЕБИТА – ԾԱՆՍԻ ԿՈՐ, DISCHARGE CURVE**, հորատանցքի (ջրհորի) Q ծախսի կախումը S իջեցումից արտահայտող գրաֆիկ: Ծ. կ. ընդհանուր տեսքով ճնշումային ջրերի համար ներկայացնում է ուղիղ գիծ, իսկ գրունտային ջրերի համար՝ պարաբոլիկ կոր:

- K-350. КРИОГЕНЕЗ** (հուև. krýos – ցուրտ, սառնամանիք, սառույց և génesis – ծագում) – **ՍԱՌՑԱԾՆՈՒԹՅՈՒՆ (ԿՐԻՈԳԵՆԵԶ), CRYOGENESIS**, ջերմաֆիզ., ֆիզմեխ. և ֆիզքիմ. գործընթացների համակցություն, որը տեղի է ունենում սառչող, սառած և հալվող ապարներում, ինչպես նաև ջրակուտակներում և ջրհոսքերում:
- K-351. КРИОГЕННАЯ СТРУКТУРА** (հուև. krýos – ցուրտ, սառնամանիք, սառույց և genêsis – ծնող, ծնված) – **ՍԱՌՑԱԾԻՆ (ԿՐԻՈԳԵՆ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, CRYOGENIC TEXTURE**, սառած ապարների կառուցվածք, որը պայմանավորված է նրանց բաղադրամասերի (միներալային կմախքի, սառցե բյուրեղների, հեղուկի թաղանթի, գազի ներփակվածքների) հարաբերական քանակով, ձևերով ու չափերով:
- K-352. КРИОГЕННАЯ ТЕКСТУРА – ՍԱՌՑԱԾԻՆ (ԿՐԻՈԳԵՆ) ԿԱԶՄՎԱԾՔ, CRYOGENIC STRUCTURE**, նուրբ դիսպերս և օրգանածին՝ բազում տարիներ սառած ապարների կազմվածք, որն առաջացնում է սեգրեգացվող սառույցը:
- K-353. КРИОСФЕРА** (հուև. krýos – ցուրտ, սառնամանիք, սառույց և spháira – գունդ) – **ՍԱՌՑՈՒՐՏ (ԿՐԻՈՊՍՅԱՆ), CRYOSPHERE**, Երկրի ընդհատ պատյան կամ ոլորտ, որը ընդգրկում է քարոլորտի, ջրոլորտի և մթնոլորտի որոշակի մասեր: Ս-ի տարբերիչ հատկանիշ է բացասական ջերմաստիճանը:
- K-354. КРИП** (անգլ. creep – սողալ) – **ՍՈՂՔ, ՍՈՂՈՒՆՈՒԹՅՈՒՆ, CREEP, DEFLUCTION**, փոխար ծածկոցի դանդաղ սողք լամջով դեպի ներքև՝ ծանրության ուժի ազդեցության տակ:
- K-355. КРИПТО...** (հուև. kriptós – թաքուն, գաղտնի) – **ԿՐԻՊՏՈ..., ԳԱՂՏԱ... CRYPTO...**, ապարների կառուցվածքի նախածանց, որն արտահայտում է դրանց նուրբ տարատեսակները:
- K-356. КРИПТОГЕННЫЙ** (հուև. kriptós – թաքուն, գաղտնի և génesis – ծագում, գոյացում) – **ԳԱՂՏԱԾԻՆ, CRYPTOGENIC**, անհայտ կամ ենթադրական (վարկածային) ծագման:
- K-357. КРИПТОЗОЙСКИЙ ЭОН, КРИПТОЗОЙ** (հուև. kriptós – թաքուն, գաղտնի և zōē – կյանք) – **ԿՐԻՊՏՈՉՈՅԱՆ (ԳԱՂՏԱՎԿՅԱՆՔԻ) ԷՈՆ, ԿՐԻՊՏՈՉՈՅ, CRYPTOZOIC**, երկր. ժամանակի խոշորագույն միջակայք, որն ընդգրկում է մինչքենբրիյան ստվարաշերտերի ձևավորումը, ստվարաշերտեր, որոնք զուրկ են կմախքային ֆաունայի ակնհայտ մնացորդներից: Առանձնացվել է ամերիկյան երկրաբան Ջ. Չեդվիկի կողմից (1930), որը Երկրի ամբողջ պատմությունը բաժանել է 2 էոնի, տե՛ս նաև Геохронология, Докембрий, Фанерозойский эон:
- K-358. КРИПТОКРИСТАЛЛИЧЕСКИЙ** (հուև. kriptós – թաքուն, գաղտնի և բյուրեղ) – **ԳԱՂՏԱԲՅՈՒՐԵՂԱՅԻՆ, CRYPTOCRYSTALLINE**, առաջացել է այնպիսի մանր բյուրեղային մասնիկներից, որոնց առանձին բյուրեղային անհատները չեն զանազանվում նույնիսկ ամենամեծ խոշորացումներում:
- K-359. КРИСТАЛЛ** (հուև. krýstallós – սկզբնապես՝ սառույց, հետագայում՝ լեռնաբյուրեղ, վանակն) – **ԲՅՈՒՐԵՂ, CRYSTAL**, պինդ մարմին՝ տարածության մեջ ատոմների, իոնների կամ մոլեկուլների խիստ օրինաչափ դասավորությամբ, որն առաջացնում է եռաչափ պարբերական բյուրեղային ցանց: Բ. պինդ մարմինների հավասարակշիռ վիճակ է: Յուրաքանչյուր քիմ. տարրին, որը տվյալ ջերմադինամիկ պայմաններում գտնվում է բյուրեղային վիճակում, համապատասխանում է որոշակի բյուրեղային կառուցվածք, որը հանգեցնում է արտաքին տեսքի և ֆիզ. հատկությունների որոշակի համաչափության: Միևնույն նյութի նիստերի միջև ընկած անկյունները կայուն են: Բ-ները աչքի են ընկնում հատկությունների անիզոտրոպությամբ և նպաստավոր պայմաններում բյուրեղանում են բազմանիստերի տեսքով:

Բյուրեղային բազմանիստերի համաչափության տարրերը [պտտման առանցքներ, համաչափության կենտրոն, ինվերսիոն պտտման առանցքներ, համաչափության հարթություններ] պայմանավորում են համաչափության 32 դասերի գոյությունը: Դրանց մեջ առանձնացվում են 7 համակարգ՝ տրիկլինային, մոնոկլինային, շեղանկյունային (ռոմբային), քառանկյունային (տետրագոնային), հեքսագոնային (վեցանկյունային), տրիգոնային (եռանկյունային) և խորանարդային:

**K-360. КРИСТАЛЛ ЖИДКИЙ – ՅԵՂՈՒԿ ԲՅՈՒՐԵՂ, LIQUID CRYSTAL**, հեղուկ, որում մոլեկուլներն ունեն տարածության մեջ կարգավորված դասավորվելու միտում, և որն ունի անիզոտրոպային հատկություններ՝ օր.՝ երկբեկում:

**K-361. КРИСТАЛЛ ОПТИЧЕСКИ ДВУОСНЫЙ – ՕՊՏԻԿԱԿԵՍ ԵՐՎԱՌԱՆՑՔ ԲՅՈՒՐԵՂ, OPTICALLY BIAXIAL CRYSTAL**, շեղանկյունային, մոնոկլինային, տրիկլինային համակարգերի բյուրեղ, որը բնորոշվում է եռառանցք էլիպսոիդի ձևի օպտիկական ինդիկատրիսով և ունի երկու օպտիկական առանցք, որոնք ուղղահայաց են ինդիկատրիսի շրջանային հատույթին:

**K-362. КРИСТАЛЛ ОПТИЧЕСКИ ИЗОТРОПНЫЙ – ՕՊՏԻԿԱԿԵՍ ԻՅՈՏՐՈՊԱՅԻՆ ԲՅՈՒՐԵՂ, OPTICALLY ISOTROPIC CRYSTAL**, խորանարդային համակարգի բյուրեղ, որի օպտիկական ինդիկատրիսը գնդաձև է:

**K-363. КРИСТАЛЛ ОПТИЧЕСКИ ОДНООСНЫЙ – ՕՊՏԻԿԱԿԵՍ ՄԻԱՌԱՆՑՔ ԲՅՈՒՐԵՂ, OPTICALLY UNIAXIAL CRYSTAL**, տրիկլինային, տետրագոնային և հեքսագոնային համակարգերի բյուրեղ, որը բնորոշվում է պտտման էլիպսոիդի ձևի օպտիկական ինդիկատրիսով և ունի մեկ օպտիկական առանցք, որը համընկնում է ինդիկատրիսի պտտման առանցքի հետ:

**K-364. КРИСТАЛЛИЗАЦИОННАЯ ВОДА – ԲՅՈՒՐԵՂԱՑՄԱՆ ՋՈՒՐ, CRYSTALLIZATION WATER**, միներալների բյուրեղային ցանցում առանձին մոլեկուլների կամ խմբերի ձևով գտնվող ջուր: Այն միներալներից անջատվում է մինչև 250-300°C ջերմության պայմաններում, ուղեկցվում է ջերմության կլանմամբ և միներալի բյուրեղային ցանցի քայքայումով կամ վերակառուցումով:

**K-365. КРИСТАЛЛИЗАЦИОННАЯ ДИФФЕРЕНЦИАЦИЯ – ԲՅՈՒՐԵՂԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ, CRYSTALLIZATION DIFFERENTIATION**, պայմանավորված է տարբեր պատճառների ազդեցության տակ բյուրեղացման գործընթացում գոյացած միներալային փուլերի տեղաշարժմամբ և տարածական առանձնացմամբ, որը հանգեցնում է հալույթում բյուրեղների ռեակցիայի բնականոն ընթացքի փոփոխությանը, այսինքն՝ մագմայի չափամասային (ֆրակցիոն) բյուրեղացմանը: Բ. տ. հանդիսանում է մագմայական հալույթի տարբերակման հիմնական մեխանիզմը:

**K-366. КРИСТАЛЛИЗАЦИЯ – ԲՅՈՒՐԵՂԱՑՈՒՄ, CRYSTALLIZATION**, բյուրեղների աճման գործընթաց՝ սկսած դրանց սաղմնավորումից: Կարող է տեղի ունենալ հեղուկ (լուծույթից, հալույթից, մագմայից), գազանման և պինդ (ապակենման) վիճակից:

**K-367. КРИСТАЛЛИЧЕСКИЕ СЛАНЦЫ – ԲՅՈՒՐԵՂԱՅԻՆ ԹԵՐԹԱՔԱՐԵՐ, SCHISTS, CRYSTALLINE SCHISTS**, փոխակերպային ապարների լայնատարած խմբի ընդհանուր անվանում, բնորոշվում են փոխակերպության միջին (մասամբ ուժեղ) աստիճանով: Բ. թ. բաղկացած են առավելապես քվարցից, դաշտասպաթից և մուգավուն միներալներից (փայլարներից, ամֆիբոլներից և այլն), որոնց միջև քանակական փոխհարաբերությունը խիստ փոփոխական է: Տարբերում են օրթոթերթաքարեր (առաջանում են ժայթքային ապարների փոխակերպությունից) և պարաթերթաքարեր (առաջանում են նստվածքային ապարների փոխակերպությունից), տե՛ս նաև Фундамент платформы:



**K-368. КРИСТАЛЛИЧЕСКИЙ ФУНДАМЕНТ – ԲՅՈՒՐԵՂԱՅԻՆ ՀԻՍՔ, CRYSTALLINE BASEMENT**, տե՛ս Фундамент платформы:

**K-369. КРИСТАЛЛОБЛАСТЫ** (բյուրեղ և հուն. blastos – ծիլ, ընծյուղ, բողբոջ) – **ԲՅՈՒՐԵՂԱՐԱՍՆԵՐ (ԲՅՈՒՐԵՂԱՐՈՂՐՈՋՆԵՐ), CRYSTALLOBLASTS**, փոխակերպային ապարներում այն միներալների հատիկների ընդհանուր անվանում, որոնք վերաբյուրեղացման հետևանքով առաջացրել են լիաբյուրեղային կառուցվածքներ:

**K-370. КРИСТАЛЛОГРАФИЯ** (բյուրեղ և հուն. gráphō – գրում եմ, նկարագրում եմ) – **ԲՅՈՒՐԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, CRYSTALLOGRAPHY**, գիտություն է բյուրեղների ու նյութերի բյուրեղային վիճակի մասին: Ուսումնասիրում է բյուրեղների համաչափությունը, կազմվածքը, առաջացումը և հատկությունները: Առանձնացնում են երկրաչափական Բ., որն զբաղվում է բյուրեղների արտաքին ձևի նկարագրությամբ ու համաչափության ուսումնասիրությամբ, և կառուցվածքային Բ., որն ուսումնասիրում է բյուրեղների ատոմամոլեկուլային կազմվածքը՝ ռենտգենակառուցվածքային վերլուծության, էլեկտրոնագրաֆիայի, նեյտրոնագրաֆիայի և այլ մեթոդներով:

**K-371. КРИСТАЛЛОКЛАСТИЧЕСКАЯ СТРУКТУРА – ԲՅՈՒՐԵՂԱՐԵԿՈՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, CRYSTALLOCLASTIC STRUCTURE**, հրաբեկորային ապարների (հրաբխային տուֆեր) կառուցվածք, որը ներկայացված է սուրանկյուն միներալներով կամ դրանց բեկորներով՝ խորասուզված ավելի նուրբ կապակցող զանգվածում:

**K-372. КРИСТАЛЛОМОРФОЛОГИЯ – ԲՅՈՒՐԵՂԱՁԵՎԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ, CRYSTALLOMORPHOLOGY**, բյուրեղագիտության բաժին, որն ուսումնասիրում է բյուրեղների ձևը, տեսքը, նիստերի ու կողերի առանձնահատկությունները, ինչպես նաև աճման, լուծման պատկերները և բարդացված ձևերը:

**K-373. КРИСТАЛЛОХИМИЧЕСКИЕ ФОРМУЛЫ – ԲՅՈՒՐԵՂԱՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՆԱՁԵՎԵՐ, CRYSTALLOCHEMICAL FORMULAE**, միացությունների ու բյուրեղների Բ. բ., արտացոլում են ոչ միայն միացությունների բաղադրության հիմնական բնույթը (ինչպես դա ընդունված է պարզեցված բյուրեղագիտական բանաձևերում), այլև կազմության կարևորագույն բնութագրերը (միացություններում բոլոր ատոմների ու իոնների կոորդինացիոն թվերը):

**K-374. КРИСТАЛЛОХИМИЯ – ԲՅՈՒՐԵՂԱՔԻՄԻԱ, CRYSTALLOCHEMISTRY**, բյուրեղագիտության բաժին, որն ուսումնասիրում է բյուրեղներում տարրային բաղադրության, ատոմների, իոնների, մոլեկուլների տարածական տեղաբաշխման և քիմ. փոխազդեցության միջև եղած կապը: Հիմնվում է դիֆրակցիոն մեթոդներով (ռենտգենակառուցվածքային վերլուծություն, էլեկտրոնագրաֆիա, նեյտրոնագրաֆիա) բյուրեղների կառուցվածքի որոշման փորձարարական տվյալների վրա, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու կառուցվածքի երկրաչափական բնութագրերը (համաչափության ֆեդորովյան խումբ, տարրական բջջի չափերը և ձևը, ատոմների կոորդինատները և միջատոմային հեռավորությունները): Բ-ի տվյալները ընկած են այն բոլոր գիտությունների հիմքում, որոնք զբաղված են երկրակեղևի նյութական կազմի ուսումնասիրությամբ (միներալաբանություն, ապարագիտություն, երկրաքիմիա, ուսմունք օգտ. հնձ-ների մասին):

**K-375. КРИТЕРИИ НЕФТЕГАЗОНОСНОСТИ – ՆԱՎԹԱԳԱԶԱՐԵՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ, PETROLEUM BEARING CRITERIA**, չափանիշներ, որոնք բնորոշում են նավթային ածխաջրածինների առաջացման, նավթագազաբեր ավազանների երկրբ. զարգացման ընթացքում նավթի ու գազի կուտակումների ձևավորման ու գոյության պայմանները (նավթագազակուտակների առկայություն, կտրվածքում մայրական ապարների, կուտակիչների և ծուղակների առկայություն, բարենպաստ ջրաերկրբ. պայմաններ և այլն), տե՛ս Нефть:

**K-376. КРИТЕРИИ ПОИСКОВЫЕ – ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ, PROSPECTING CRITERIA**, տե՛ս Поисковые предпосылки:

**K-377. КРИТЕРИИ ФАЦИАЛЬНЫЕ – ՖԱՏԻԱԿ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ, FACIAL CRITERIA**, հատկանիշներ, որոնք հնարավորություն են տալիս տարբեր աստիճանի հավանականությամբ վերականգնել անցյալ ժամանակաշրջանների նստվածքների կուտակման պայմանները: Այդ հատկանիշներն են՝ 1) նստվածքների նյութական կազմը (ապարների բեկորների ու հատիկների չափը և ձևը, միներալային կազմը, գույնը, երկրաքիմ. առանձնահատկությունները և այլն), 2) կազմվածքակառուցվածքային չափանիշները (շերտավորության բնույթը, կազմվածքային նշանները շերտավորման մակերևույթներում և այլն), 3) հնատեղաբանական չափանիշները, 4) նստվածքային մարմինների կազմության և փոխհարաբերությունների առանձնահատկությունները (ռիթմիկությունը և այլն):

**K-378. КРОВЕЛЬНЫЕ СЛАНЦЫ – ՏԱՆԻՔԻ ԹԵՐԹԱՔԱՐԵՐ, ROOFING SLATES**, թերթաքարեր կամ այլ ապարներ, որոնք ճեղքոտվում են բարակ (2.5-6 մմ) և հավասար սալիկների, օգտագործվում են շենքերի տանիքների ծածկի և երեսապատման համար:

**K-379. КРОВЛЯ ВЫРАБОТКИ – ՓՈՐՎԱԾՔԻ ԱՈՍՍԱՂ, ROOFING**, փորվածքը վերևից սահմանափակող ապարների մակերևույթ, հաճախ նաև այդ մակերևույթին հարող ապարազանգվածը:

**K-380. КРОВЛЯ ЗАЛЕЖИ – ՀԱՆՔԱԿՈՒՏԱԿԻ ՏԱՆԻՔ, ROOF OF A DEPOSIT**, հանքակուտակի վերին մակերևույթին հարող ապարազանգված:

**K-381. КРОВЛЯ ПЛАСТА – ՇԵՐՏԻ ՏԱՆԻՔ, TOP OF BED, ROOF, UPPER FACE OF STRATUM**, 1) շերտը սահմանափակող վերին շերտագրական մակերևույթ, 2) անմիջապես շերտի վրա նստած ապար:

**K-382. КРОКОИТ** (հուն. krókos – զաֆրան, խնձոր, շաֆրան) – **ԿՐՈԿՈՒՏ, CROCOITE**, միներալ քրոմատների դասից,  $Pb[CrO_4]$ : Բյուրեղանում է մոնոկլինային համակարգում: Բյուրեղները հատվածակողմային տեսքի են, բնորոշ են բյուրեղները և բյուրեղախմբերը: Գույնը՝ նարնջակարմիր, փայլը՝ ալմաստի: Փխրուն է: Առաջանում է քրոմապարունակ գերհիմքային ապարներում տեղադրված կապար-ցինկի հնքվերի օքսիդացման զոնայում: Հավաքածոների համար արժեքավոր միներալ է:

**K-383. КРОМАНЬОНЕЦ, КРОМАНЬОНСКИЙ ЧЕЛОВЕК – ԿՐՈՄԱՆՅՈՆՑԻ, ԿՐՈՄԱՆՅՈՆՅԱՆ ՍԱՐԴ, CRO-MAGNON MAN**, ուշ քարի դարի բրածո մարդ, արտաքինապես մոտ է ժամանակակից մարդուն (Homo sapiens): Անվանումը տրված է մարդկանց կմախքային մնացորդների գտածոներից (1868) Ֆրանսիայի Դորդոն դեպարտամենտի Կրո-Մանյոն անձավում: Գոյության ժամանակը վյուրմի երկրորդ կեսն է:

**K-384. КРУПНОЗЕРНИСТЫЙ ПЕСОК (ПЕСЧАНИК) – ԽՈՇՈՐԱՀԱՏԻԿ ԱՎԱԶ (ԱՎԱԶԱՔԱՐ), COARSE SAND**, ավազ (ավազաքար), որի հատիկների տրամագիծը 0.5-1 (կամ մինչև 2 ) մմ է:

**K-385. КРУПНООБЛОМОЧНАЯ СТРУКТУРА**, տե՛ս Псефитовая структура:

**K-386. КРУТОПАДАЮЩИЙ СБРОС – ՄԵԾԱԹԵՔ ՎԱՐՆԵՏՔ (ՏԱՐԵՉՔ), HIGH-ANGLE FAULT**, վարնետք, որի տեղաշարժի հարթությունը հորիզոնականի հետ կազմում է 45°-ից մեծ անկյուն:

**K-387. КРЫЛАТЫЕ ЯЩЕРЫ, ПТЕРОЗАВРЫ (Pterosaurus) – ԹԵՎԱՎՈՐ ՍՈՂԵՍՆԵՐ, ՊՏԵՐՈՉԱՎՐԵՐ, FLYING REPTILES, PTEROSAURS**, արխոզավրերի մահացած խումբ, որը հարմարվել է թռչելու: Առջևի վերջավորությունները վերածվել են յուրահատուկ թևերի՝ թաղանթի տեսքով (առջևի վերջավորությունների և մարմնի

- միջև): Դրանք ունեցել են երկար պոչ կամ եղել են անպոչ: Թևերի բացվածքը հասել է 8 մ-ի: Գոյություն են ունեցել վաղ յուրայից մինչև ուշ կավիճ:
- K-388. КРЫЛО РАЗРЫВА ОПУЩЕННОЕ (НИЖНЕЕ) – ԽՉՎԱԾՔԻ ԻՉԱԾ (ՆԵՐՔԻՆ) ԹԵՎ, DOWNCAST SIDE OF RUPTURE**, ուղղաձիգ նետիչին հարակից շերտերի՝ դեպի ներքև տեղաշարժված մի մասը:
- K-389. КРЫЛО РАЗРЫВА ПОДНЯТОЕ (ВЕРХНЕЕ) – ԽՉՎԱԾՔԻ ԲԱՐՉՐԱՑՎԱԾ (ՎԵՐԻՆ) ԹԵՎ, UPCAST SIDE OF RUPTURE**, ուղղաձիգ նետիչին հարակից շերտերի՝ դեպի վեր տեղաշարժված մի մաս:
- K-390. КРЫЛО СБРОСА – ՎԱՐՆԵՏՔԻ (ՏԱՐԷՉՔԻ) ԹԵՎ, WALL, LIMB, SIDE (OF FAULT)**, վարնետքի նետիչին հարակից խախտված երկրբ. մարմնի տեղաշարժված մաս:
- K-391. КРЫЛЬЯ СКЛАДКИ – ԾԱԼՔԻ ԹԵՎԵՐ, LIMBS OF A FOLD**, ծալքի հողակապի երկու կողմերի մասեր՝ ապարի շերտերի ուռուցիկ կամ գոգավոր ծռումներ:
- K-392. КРЯЖ – ԲԼՐԱՇԱՐ(Ք), CHAIN OF HILLS**, երկարացված, հաճախ գծային ձգված բարձունք՝ աննշան և անհավասարաչափ հարաբերական բարձրություններով: Բնորոշվում է մեղմ, կլորավուն եզրագծեր ունեցող զագաթներով:
- K-393. КСЕНО...** (հուն. xénos – օտար, խորթ) – **ՔՍԵՆՈ..., ԱՅԼԱ..., ՕՏԱՐԱ..., XENO...** բարդ բառերի նախածանց:
- K-394. КСЕНОБЛАСТЫ** (հուն. xénos – օտար, blastos – ծիլ, ընծյուղ, բողբոջ) – **ՔՍԵՆՈՔԼԱՍՏՆԵՐ, XENOBLASTS**, փոխակերպային ապարներում միներալների հատիկներ, որոնք ունեն անկանոն, կլորավուն, ատամնաձև կտրատված ուրվագծեր:
- K-395. КСЕНОКРИСТАЛЛЫ – ՕՏԱՐԱԲՅՈՒՐԵՂՆԵՐ, XENOCRYSTS**, տվյալ մագմայական ապարին խորթ բյուրեղներ, որոնք ներառվել են մագմայի մեջ ներդրման ժամանակ, այսինքն՝ ապարի առաջացման գործընթացում:
- K-396. КСЕНОЛИТ** (հուն. xénos – օտար, խորթ և lithos – քար) – **ՕՏԱՐԱՔԱՐ (ՔՍԵՆՈԼԻԹ), XENOLITH**, արտաժայթքային ապարում կողմնակի ապարի բեկոր: Օտերի չափերը տատանվում են առանձին մանրադիտակային բյուրեղներից ու դրանց բեկորներից՝ մինչև մի քանի տասնյակ և հարյուրավոր մետրեր:
- K-397. КСЕРОТЕРМИЧЕСКИЙ ПЕРИОД** (հուն. xērós – չոր և thérmē – ջերմություն) – **ՉՈՐԱՋԵՐՄ(ԱՅԻՆ) ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆ, XEROTHERMIC PERIOD**, չոր և տաք կլիմայի ժամանակաշրջան, որը համապատասխանում է հետսառցադաշտայինի մերձարկտիկական փուլին (4500-2500 տ. սրանից առաջ):
- K-398. КСЕРОФИТЫ** (հուն. xērós – չոր և phytón – բույս) – **ՉՈՐԱՍԵՐ ԲՈՒՅՍԵՐ, XEROPHYTES**, բույսեր, որոնք ապրում են անբավարար խոնավության պայմաններում և կայուն են մթնոլորտային ու հողային երաշտի ժամանակ (մնում են ֆիզիոլոգիապես ակտիվ):
- K-399. КУКЕРСИТ** (Էստոնիայի Կուկրուգե, kukruse, գյուղի Kuckers – գերմ. անվանումից) – **ԿՈՒԿԵՐՍԻՏ, KUCKERSITE**, հոծ. սալիկավոր, կավամերգելային շագանակագույն-գորշ այրվող թերթաքար: Տարածված է Մերձբալթյան թերթաքարային ավազանում:
- K-400. КУЛИСООБРАЗНАЯ СКЛАДЧАТОСТЬ** (ֆրանս. coulisse, couler – սահել) – **ԿՈՒԼԻՍԱՆՄԱՆ (ՇԱՐՎԱՐԳԱՆՄԱՆ) ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ECHELON FOLDING**, բնորոշվում է ապարների ծալքերի տեղաբաշխմամբ՝ զուգահեռ հատվածների տեսքով: Ծալքերը հատակագծում միմյանց նկատմամբ տեղաշարժված են:
- K-401. КУЛЬМ** (անգլ. Culm) – **ԿՈՒԼՄ, CULM**, 1) Անգլիայում քարածխային համակարգի ստորին բաժին, 2) անտրագիտի տեսակ:

- K-402. КУЛЬТУРНЫЙ СЛОЙ – ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՇԵՐՏ, CULTURAL LAYER, CULTURAL LEVEL**, հին մարդկանց բնակավայրի տեղում բրածո հողաշերտ, որը պարունակում է նրանց գործունեության հետքեր (գործիքներ, կենդանիների ոսկորներ, խարույկների մնացորդներ և այլն):
- K-403. КУПОЛ** (իտալ *cupola* – կամար) – **ԳՄՐԵԹ, DOME**, 1) երկրաբանությունում բարձրացված կառույց կամ կամարածալքի տիպի կառույց, որը հատակագծում ունի կլորավուն կամ ձվաձև ուրվագծեր: Գ-ում ապարները սակավաթեքված են կենտրոնից դեպի բոլոր կողմերը: Երկարությունը հավասար է լայնությանը կամ չի գերազանցում 2 անգամին: Դեպի Գ-ի կենտրոնը շերտերի հաստությունը հաճախ փոքրանում է: Գ. բրախիկամարածալքի մասնավոր դեպքն է: Բացի դա, տարբերում են հրաբխային, գրանիտազնեյսային, աղային Գ-ներ: 2) Երկրաձևաբանությունում ընդհանուր տերմին է ռելիեֆի գմբեթանման ձևերի համար:
- K-404. КУПОЛ ГРАНИТО-ГНЕЙСОВЫЙ – ԳՐԱՆԻՏԱԳՆԵՅԱՍՅԻՆ (ԳՐԱՆԻՏԱԳՈՂՁԱՔԱՐԱՅԻՆ) ԳՄՐԵԹ, GRANITE-GNEISS DOME**, հատակագծում կլորավուն, ձվաձև կամ քիչ երկարացած ձևի գրանիտազնեյսային կառույց՝ պլատֆորմների բյուրեղային հիմքում: Հանդիպում են հին վահանների բոլոր մինչքեմբրիան համալիրներում (Բալթիական, Ուկրաինական, Ալդանի և այլն): Գ. գ-ները հաճախ աչքի են ընկնում ապարների զոնալ տեղաբաշխմամբ, միջուկում գտնվում են գրանիտները, եզրերի մոտ՝ զնեյսները ու միզմատիտները և այնուհետև՝ բյուրեղային թերթաքարերը: Գոյանում են միզմատացման և գրանիտացման հետ միաժամանակ: Հայտնի են նաև ֆաներոզոյի գոյացություններում (Ղազախստան, Ուրալ, Կանադական Կորդիլիերներ և այլն):
- K-405. КУПРИТ** (լատ. *cuprum* – պղինձ, Կիպրոս կղզու անունից, որտեղից հնում արտահանել են պղինձ), **КРАСНАЯ МЕДНАЯ РУДА – ԿՈՒՊՐԻՏ, ՊՂՆՁԻ ԿԱՐՄԻՐ ՀԱՆՔԱՔԱՐ, CUPRITE, RUBY COPPER, RED COPPER ORE, RED GLASSY COPPER**, միներալ օքսիդների դասից,  $Cu_2O$ , բյուրեղագիտական համակարգը խորանարդային է: Բյուրեղները ութանիստ տեսքի են, հազվադեպ՝ խորանարդի, երբեմն ասեղնաձև և թելավոր են: Սովորական են պինդ, հողանման և հատիկավոր ագրեգատները: Գույնը կարմիր է (տարբեր երանգների), փայլը՝ ավաստի կամ կիսամետաղական, կոտրվածքը՝ խեցեման: Պղնձի հնքվ-երի օքսիդացման զոնայի միներալ է: Հանդիպում է բնածին պղնձի, մալաքիտի, ազուրիտի, խալկոզինի հետ միասին:
- K-406. КУЭСТА** (իսպ. *cuesta* – թեքություն, սարալանջ) – **ՔՈՒԷՍ, CUESTA**, լայնակի հատույթում անհամաչափ բլրաշար, որն առաջացել է փոքր թեքության մենաթեք (մոնոկլինալ) շերտախմբերի ողողամաշման ու լերկացման հետևանքով: Շերտախմբերի ապարները հողմահարման նկատմամբ ցուցաբերում են տարբեր կայունություն:
- K-407. КЯРИЗ (КЯХРИЗ, КЯГРИЗ) – ՔՅԱՐԻԶ (ՋՐԱՀԱՎԱՔ ԳԵՏՆՈՒՂԻ), KARIZ, KAREZ**, ստր. հորիզոնական գետնուղի՝ ջրերի հոսանքով դեպի վեր, որը փորվում է այդ ջրերը բռնելու և ինքնահոսով երկրի մակերևույթ դուրս բերելու համար:

# Л

- Л-1. ЛАБРАДОР** (առաջին գտածոյի տեղի՝ Լաբրադոր թերակղզու մոտ գտնվող Պոլ կղզու անունից) – **ԼՄԲՐԱԴՈՐ, LABRADOR**, միներալ դաշտասպաթների խմբից, հիմքային պլագիոկլազ: Կանոնավոր բյուրեղները (հիմնականում թիթեղաձև) հանդիպում են ապարների մեջ ներփակվածքների տեսքով, հաճախակի են հատիկավոր ագրեգատները: Մաքուր Լ. անգույն է, բայց բնության մեջ հաճախ գունավորված է մեխ. խառնուրդներով (մոխրագույն, մուգ մոխրագույն, համարյա սև): Լ-ի համար բնորոշ է ծիածանունը վառ կապույտ, դեղին, կանաչ գույներով: Ծագումը մագմայական է, գաբրոների, նորիտների և հիմքային արտաժայթքային ապարների ապարակազմիչ միներալ է, կազմում է լաբրադորիտ ապարը (անորտոզիտների խմբից):
- Л-2. ЛАБРАДОРИТ** (Յու. Ամերիկայի Լաբրադոր, Labrador, թերակղզու անունից) – **ԼՄԲՐԱԴՈՐԻՏ, LABRADORITE**, գաբրոյի անորտոզիտ-սպիտակավուն (լեյկոկրատ) տարատեսակ, որը գործնականորեն բաղկացած է մեկ պլագիոկլազից, սովորաբար՝ լաբրադորից: Առկա են նաև շեղանկյունային պիրոքսենը, ավգիտը, տիտանանագնետիտը, իլմենիտը, հազվադեպ՝ ապատիտը, երբեմն շատ քիչ՝ կալիումական դաշտասպաթը, քվարցը, բիոտիտը: Կազմվածքը հոծ է կամ տրախիտոիդային: Գույնը՝ մոխրագույն (մինչև սև): Հաճախ դիտվում է պլագիոկլազի ծիածանացուն՝ առավելապես երկնագույն-կապույտ, հազվադեպ՝ ոսկեգույն երանգներով: Լ-ի հնքվերը սովորաբար կապված են բյուրեղային վահանների հետ՝ զանգվածների ու ոսպնյակաձև հանքակուտակների տեսքով: Լ. բարձր կարգի երեսապատման քար է:
- Л-3. ЛАВА** (իտալ. lava, լատ. labes-ից – փլուզում, անկում) – **ԼԱՎԱ (ՀՐԱՀՈՍՔ), LAVA**, շիկացած (690-1200°C), առավելապես սիլիկատային հեղուկ կամ խիստ մածուցիկ զանգված (հալույթ), որն արտաժայթքում կամ արտամղվում է երկրի մակերևույթ՝ հրաբխային ժայթքումների ժամանակ: Մագմայից տարբերվում է մի շարք բաղադրամասերի (առաջին հերթին ջրի և այլ ցնդող նյութերի) բացակայությամբ, ինչպես նաև որոշ երկրք. և ֆիզքիմ. հատկություններով: Լ-ի պնդացման դեպքում (քիմ. բաղադրությանը համապատասխան) առաջանում են արտաժայթքային (էֆուզիվ) և արտամղային (էքստրուզիվ) ապարներ, որոնք նույնպես կոչվում են Լ-ներ: Առավելապես տարածված են բազալտային, անդեզիտային և ռիոլիթային Լ-ները (տարբեր ալկալիականության), ավելի քիչ՝ տրախիտային, ֆոնոլիթային և այլն: Լ-ի մածուցիկությունը բարձրանում է ցնդող բաղադրամասերի նվազեցման և SiO<sub>2</sub>-ի պարունակության մեծացման դեպքում: Լ-ի մածուցիկությունը պայմանավորում է նրանից առաջացած երկրք. մարմինների ձևը: Թույլ մածուցիկ, շարժուն բազալտային լավայի ժայթքումից առաջանում են ծածկույթներ, հոսքեր, թթու Լ-ները (դացիտային, տրախիտային և ռիոլիթային) առաջացնում են գմբեքներ: Ըստ մակերևույթի բնույթի՝ առանձնացնում են ԱԱ-լավա, բլոկային (բեկորային), ալիքավոր, ճոպանավոր, բարձիկավոր, գնդային, էլիպտիդային Լ., պիլլոու-լավա և այլն:

- Л-4. ЛАВА АНДЕЗИТОВАЯ – ԱՆՂԵՉԻՏԱՅԻՆ ԼԱՎԱ (ՅՐԱՅՈՍՔ), ANDESITE LAVA,** անդեզիտային կազմի լավա, հատկապես բնորոշ է ստրատոհրաբուխներին (շերտավոր հրաբուխներին), որտեղ L-ն տեղադրվում է հոսքերի, գմբեթների, երեսապատումների տեսքով, սովորաբար նույն կազմի առատ հրաբեկորային նյութի մեջ:
- Л-5. ЛАВА БАЗАЛЬТОВАЯ – ԲԱԶԱԼՏԱՅԻՆ ԼԱՎԱ (ՅՐԱՅՈՍՔ), BASALTIC LAVA,** բազալտային և անդեզիտաբազալտային լավա, տարածված է կենտրոնական տիպի հրաբուխներում, բայց առանձնապես բնորոշ է վահանաձև և ճեղքային հրաբուխներին: Բ. լ. համեմատաբար ավելի հեղուկ է և բարձրաջերմաստիճանային, հոսքերի ու ծածկոցների մակերևույթին հաճախ առաջացնում է ալիքավոր, կմճիռանման, ճուպանաձև և այլ ձևեր, խարամային տիպի մակերեսներ: Ջրում արտավիժելիս առաջացնում է գնդանման և բարձրկավոր անջատություններ:
- Л-6. ЛАВА ГОРНАЯ – ԼԵՆՆԱՅԱՆՔԱՅԻՆ ԼԱՎԱ, LONGWALL FACE,** ածխահանքում անցկացված ստորգետնյա մաքրման փորվածք, որն ունի զգալի երկարությամբ խորաճակատ:
- Л-7. ЛАВА КАНАТНАЯ – ՃՈՊԱՆԱՎՈՐ ԼԱՎԱ, ROPY LAVA,** տե՛ս Канатная лава:
- Л-8. ЛАВА ПОДУШЕЧНАЯ, ШАРОВАЯ ЛАВА, ПИЛЛОУ-ЛАВА** (անգլ. pillow – բարձիկ) – **ԲԱՐՉԻՎԱՎՈՐ ԼԱՎԱ, ԳՆՂԱՎՈՐ ԼԱՎԱ, ՊԻԼԼՈՒԼԱՎԱ, ELLIPSOIDAL LAVA, PILLOW LAVA,** լավա, որը արտավիժել է ջրում կամ տիղմի մեջ: Յոսքերը հաճախ ներկայացված են գնդանման (տրամագիծը 1-5 մ), բարձրկաճև մարմինների սերիաներով, որոնք սեղմված են միմյանց կամ ձգված են մեկը մյուսի հետևից և միակցվում են կարճ խողովակներով կամ վզիկներով:
- Л-9. ЛАВА РИОЛИТОВАЯ – ՌԻՈՒԼԻԹԱՅԻՆ ԼԱՎԱ (ՅՐԱՅՈՍՔ), RHYOLITE LAVA,** ռիոլիթային (լիպարիտային) կազմի լավա, սովորաբար մածուցիկ է: Տեղադրվում է կարճ հոսքերի (գառիթափ պատերով) և հրաբխային գմբեթների տեսքով:
- Л-10. ЛАВА ТРАХИТОВАЯ – ՏՐԱԽԻՏԱՅԻՆ ԼԱՎԱ (ՅՐԱՅՈՍՔ), TRACHYTIC LAVA,** տրախիտային կազմի լավա, որն ունի զգալի մածուցիկություն: Սովորաբար տեղադրվում է գմբեթների, ինչպես նաև դայկաների և մերձմակերևութային ներժայթքվածքների տեսքով:
- Л-11. ЛАВА ШАРОВАЯ,** տե՛ս Лава подушечная:
- Л-12. ЛАВИНА, СНЕЖНЫЙ ОБВАЛ** (գերմ. Lawine, հին. լատ. labina-ից – սողանք) – **ՉՆԱՅՅՈՒՄ (ՉՆԱՅՈՍՔ, ՉՆԱՓԼՎԱԾՔ), AVALANCHE,** ձյան զանգվածի ձգողական շարժում, որի հոսքը կատարվում է լեռների գառիթափ լանջերին և հաճախ պատճառում է հսկայական ավերածություններ:
- Л-13. ЛАВОБРЕКЧИЯ** (լավա և իտալ. bressia – ջարդում, կոտրատում) – **ԼԱՎԱՓՇՐԱՔԱՐ (ԼԱՎԱՔԵՎՉԻԱ), LAVA BRECCIA,** փշրաքար (բրեկչիա), որում և՛ բեկորները, և՛ ցեմենտը բաղկացած են լավայից: Ի տարբերություն ինքնափշրաքարի, L-ի բեկորների և ցեմենտի կազմը տարբեր է:
- Л-14. ЛАВОВАЯ ПРОБКА – ԼԱՎԱՅԻՆ ԽՑԱՆ,** տե՛ս Некк:
- Л-15. ЛАВОВОЕ ИЗВЕРЖЕНИЕ – ԼԱՎԱՅԻՆ ԺԱՅԹՔՈՒՄ, LAVA ERUPTION, ERUPTION EFFUSIVE,** լավայի արտավիժում, որի ընթացքում փուխը հրաբեկորային արտանետուկները համարյա բացակայում են:
- Л-16. ЛАВОВОЕ ОЗЕРО – ԼԱՎԱՅԻՆ ԼԻՃ, LAVA LAKE, FIRE-LAKE,** հրաբխի խառնարանում կամ փոսերում հրահեղուկ, սովորաբար բազալտային լավայի լիճ: Տերմինը երբեմն վերաբերում է նաև պնդացած լավային: Օր.՝ լիճ, որը գոյություն ունի Յավայան Կիլաուա հրաբխի խառնարանում՝ երկարատև ժամանակահատվածում:
- Л-17. ЛАВОВОЕ ПЛАТО – ԼԱՎԱՅԻՆ ՍԱՐՎԱՆԴ, LAVA PLATEAU,** տե՛ս Вулканическое плато:

**Л-18. ЛАВОВЫЙ ПОКРОВ – ԼԱՎԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ, LAVA SHEET,** լավայի տեղադրման ձև, որն առաջանում է մեծաքանակ լավայի (բազմակի կմ<sup>3</sup>) արտավիժման և դեպի բոլոր կողմերը լայնարձակ տարածքներ ծածկելու հետևանքով: Լ. ծ. բնորոշ է հեղուկ բազալտային արտավիժումներին: Ենթադրվում է, որ այդպիսի արտավիժումները տեղի են ունենում խոշոր ճեղքերից կամ անցքերից, որոնք առաջանում են մագմայական օջախի թափանցահալման ժամանակ:

**Л-19. ЛАВОВЫЙ ПОТОК – ԼԱՎԱՅԻՆ ՀՈՍՔ, LAVA FLOW, LAVA STREAM,** տե՛ս Поток лавовый:

**Л-20. ЛАВРАЗИЯ** [Լավրենտյան վահան (այժմ Կանադական վահան) անունից և Ասիա] – **ԼԱՎՐԱՍԻԱ, LAVRASIA,** Երկրի Հս. կիսագնդի ենթադրական խոշոր մայր ցամաք, որը գոյություն է ունեցել միջին մեզոզոյից և Հր. կիսագնդի Գոնդվանա մայր ցամաքից անջատվել է խոշոր ծովային ավազանով՝ Տեթիսի օվկիանոսով: Ավելի ուշ (միջին մեզոզոյում) Լ. մասնատվել է երկու մասի՝ Հյուսիսամերիկյան և Եվրասիական, որոնց միջև առաջացել է Ատլանտյան օվկիանոսը:

**Л-21. ЛАГУНА** (իտալ. laguna, լատ. lacus-ից – լիճ) – **ԾՈՎԱԼՃԱԿ (ԼԱԳՈՒՆԱ), LAGOON, POND, LIDO,** օվկիանոսի (ծովի) ծանծաղ մաս, որը նրանից անջատված է ստորջրյա պատնեշով, բուստային խութով, ցամաքալեզվակով և նրա հետ միանում է նեղ նեղուցով կամ նեղուցներով: Ծ-ներին բնորոշ է փոքր խորությունը, ջրի՝ բնականոնից բարձր կամ ցածր աղիությունը, յուրահատուկ օրգանական աշխարհը:

**Л-22. ЛАГУННЫЕ ОТЛОЖЕНИЯ – ԾՈՎԱԼՃԱԿԱՅԻՆ (ԼԱԳՈՒՆԱՅԻՆ) ՆՍՎԱԾՔՆԵՐ, LAGOONAL DEPOSITS,** ծանծաղուտային փակ կամ կիսափակ ավազանների (ծովալճակների) նստվածքներ: Անալիացած ծովալճակների նստվածքների մեջ գերակշռում են ավազային, ալերիտային, կավային, իսկ երբեմն նաև կավակարբոնատային տիղմերը, սապրոպելի և տորֆի շերտերը: Ջրի բարձր աղիություն ունեցող ծովալճակներում կուտակվում է սև տիղմ (ծծմբաջրածնի սուր հոտով), աղաբեր նստվածքներ (նատրիումի քլորային և սուլֆատային աղեր, գիպս, անհիդրիդ), կարբոնատներ (կրաքարեր, դոլոմիտներ, երբեմն՝ մագնեզիտ): Ծ. ն. բնորոշվում են բրածո ֆաունայի կա՛մ բացակայությամբ, կա՛մ տեսակների աղքատությամբ, իսկ անհատների՝ առատությամբ: Ծ. ն-ում դիտվում է ապարների և ֆացիաների արագ հերթափոխ՝ հորիզոնական և ուղղաձիգ ուղղություններով: Ծ. ն-ում օգտ. հնժ-ներից առավել հաճախ հանդիպում են աղեր, գիպս, անհիդրիդ և այլն:

**Л-23. ЛАГУННЫЕ РОССЫПИ – ԾՈՎԱԼՃԱԿԱՅԻՆ (ԼԱԳՈՒՆԱՅԻՆ) ՏՐՈՆՆԵՐ, LAGOONAL PLACERS,** առաջանում են ծովալճակ բերվող ծանր միներալների, երբեմն սաթի կուտակումից: Ծովալճակներում ջրադինամիկ պայմանները հանգիստ են, այդ պատճառով ծանր միներալների (իլմենիտ, ռուտիլ, ցիրկոն, մագնետիտ, տիտանամագնետիտ, նոնաքար) կուտակումներ տեղի են ունենում առավելապես հարակից դելտաներում, լողափային և հողմային (էոլյան) ցրոններին մոտ: Ծանր միներալների արդյ. կուտակումները Ծ. ց-ում հազվադեպ են:

**Л-24. ЛАДИНСКИЙ ЯРУС** (Տիրոլում ապրած ցեղերի՝ լադինների անունից, Իտալ.) – **ԼԱԴԻՆՅԱՆ ՀԱՐԿ, LADINIAN,** տրիասի համակարգի միջին բաժնի վերին հարկ:

**Л-25. ЛАЗЕРНЫЙ СПЕКТРАЛЬНЫЙ АНАЛИЗ – ԼԱԶԵՐԱՅԻՆ ՍՊԵԿՏՐԱԿԱՆ ԱՆԱԼԻԶ (ԼՈՒՍԱՊԱՏԵՐԱՅԻՆ) ՏԱՐՐԱԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ, LASER SPECTRUM ANALYSIS,** նյութի տարրային և մոլեկուլային կազմի որոշում՝ նրա սպեկտրի (լուսապատկերի) ուսումնասիրման միջոցով, որը կատարվում է լազերային ճառագայթման օգնությամբ:

**Л-26. ЛАЗУРИТ, ЛЯПИС-ЛАЗУРЬ** (լատ. lapis – քար, ուշ լատ. lazur – կապույտ քար, լազուրի գույն, պարսկ, լաջվարդ-երկնակապույտ գույն) – **ԼԱԶՈՒՐԻՏ (ԼԱԶՎԱՐԴ), LAZURITE, LASURITE, LAPIS-LAZULI, ULTRAMARINE,** միներալ դաշտասպաթո-

իդների (ֆելդսպաթոիդների) խմբից, նատրիումի և կալցիումի կարկասային սիլիկատ,  $(\text{Na,CA})_8[\text{AlSiO}_4]_6(\text{SO}_4,\text{Cl,S})_2$ : Բյուրեղային համակարգը խորանարդային է: Բյուրեղները հազվադեպ են, սովորական են զանգվածահոծ ագրեգատները: Գունավորումը՝ երկնագույնից ու բաց կապույտից մինչև մուգ կապույտ, մանուշակագույնկապույտ: Կարծրությունը՝ 5.5-6: Ծագումը մետասոմատիկական է: Լ. արժեքավոր ոսկերչական-արհեստագործական քար է, բնական կապույտ ներկ է (ուլտրամարին):

**Л-27. ЛАККОЛИТ** (հուն. lákkos – փոս, խորացում և lithos – քար) – **ԼԱԿՈԼԻԹ, LACCOLITH, LACCOLITE**, սնկածն ներժայթքային (ինտրուզիվ) մարմին, որը տեղադրված է Երկրի մակերևույթից փոքր խորություններում: Լ-ի մոտ ինչպես հատակը, այնպես էլ առաստաղը ներդաշնակ են ներփակող ապարների շերտավորության հետ: Առաջանում են մտավածքային ապարների շերտերի մեջ մագմայի ներդրման ժամանակ, երբ այդ շերտերը կամարածն բարձրանում են ներժայթվածքի վրա: Երբեմն լերկացման գործընթացները հանգեցնում են Լ-ի մերկացմանը մակերևույթի վրա:

**Л-28. ЛАМПРОФИЛЛИТ** (հուն. lamprós – փայլուն և fýllon – թերթ, անվանումը՝ ըստ թերթանման անջատումների և հերձման հարթության ուժեղ փայլի) – **ԼԱՄՊՐՈՖԻԼԻՏ, LAMPROPHYLLITE**, միներալ սիլիկատների դասից: Բյուրեղային համակարգը մոնոկլինային է: Առաջացնում է սյունածն բյուրեղներ, կրկնաբյուրեղներ, թիթեղաձև ագրեգատներ: Հայտնի են պսևդոմորֆոզներ ըստ սֆենի, իլմենիտի, սանիդիդի, ամֆիբոլի: Գույնը՝ բրոնզադեղին, շագանակագույն, փայլը՝ ապակու, կարծրությունը՝ 2-3: Նեֆելինային սիենիտների ակցեսորային (երբեմն ապարակազմիչ) միներալ է: Գեղեցիկ բյուրեղները և ագրեգատները հետաքրքրություն են ներկայացնում հավաքածուների առումով:

**Л-29. ЛАМПРОФИРЫ** (հուն. lamprós – փայլուն և porphýreos – մուգ կարմիր, մուգ) – **ԼԱՄՊՐՈՖԻՐՆԵՐ, LAMPROPHYRES**, գերհիմքային, հիմքային և միջին կազմի, պորֆիրային կազմվածքի, մուգավուն, լրիվ բյուրեղային երակային ապարների հատուկ խումբ: Լ. պարունակում են 30 %-ից ոչ պակաս երկաթամագնեզիումային սիլիկատներ, գլխ. բիոտիտ (ֆլոգոպիտ) և (կամ) ամֆիբոլ, ավելի քիչ՝ կլինոպիրոքսեն, օլիվին: Լ-ի ապարակազմիչ միներալներից են նաև պլազիոկլազը, K-Na-ային դաշտասպաթը (անորթոկլազը), ֆելդսպաթոիդները (նեֆելին, լեյցիտ, անալցիմ): Ակցեսորային և հանքային միներալներն են՝ մագնետիտը, ապատիտը, ցիրկոնը: Գույնը՝ մուգ մոխրագույնից մինչև սև: Լ. առաջացնում են մանր ներժայթքային մարմիններ՝ սիլեր, դայկաներ, նեկեր, պայթման խողովակներ:

**Л-30. ЛАНДШАФТ ГЕОГРАФИЧЕСКИЙ** – **ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԼԱՆԴՇԱՖՏ, ԲՆԱՊԱՏԿԵՐ, GEOGRAPHICAL LANDSCAPE**, 1) լայն իմաստով Ա. Լ. բնական տարածքային համալիրի հոմ. է, այսինքն՝ կարգազուրկ միավոր, որը կարելի է դիտարկել ինչպես ռեգիոնալ մասշտաբով՝ որպես ֆիզաշխ. շրջանացման տարբեր միավորների առանձնացման հիմք, այնպես էլ բնական տեղամասերի համախումբ՝ միանման ձևաբանական և գործառնական առանձնահատկություններով (տալալային լանդշաֆտ, ճահճային լանդշաֆտ, քաղաքային լանդշաֆտ): 2) Ֆիզաշխ. շրջանացման հիմնական միավոր՝ ծագումնաբանորեն միասնական տարածք՝ միատեսակ ռելիեֆով, երկրբ. կառուցվածքով, կլիմայով, մակերևութային ու գրունտային ջրերի ընդհանուր բնույթով, կենդանական ու բուսական խմբակցությունների օրինաչափ զուգորդմամբ:

**Л-31. ЛАНДШАФТНАЯ СЪЕМКА** – **ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ (ԲՆԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ) ՀԱՆՈՒՅԹ, MAPPING OF LANDSCAPES**, լանդշաֆտի (բնապատկերի) ուսումնասիրություն, որի հիման վրա կազմվում են լանդշաֆտային (բնապատկերային) քարտեզները:



**Л-32. ЛАНДШАФТНЫЕ КАРТЫ – ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ (ԲՆԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ) ՔԱՐՏԵՉ-ՆԵՐ, LANDSCAPE MAPS**, պատկերում են բնատարածքային համալիրների տեղաբաշխումը և դրանց տարածական փոխհարաբերությունը:

**Л-33. ЛАНТАН, La** (հուն. lanthánō – թաքնվում եմ) – **ԼԱՆԹԱՆ, LANTHANUM**, պարբերական համակարգի III խմբի քիմ. տարր, հազավոլտ հողերին պատկանող սպիտակ մետաղ է: L-ի կլարկը (գր/տ) երկրակեղևում 16 է, օվկիանոսների տոլեխտներում՝ 3.36, մայր ցամաքներում՝ 7, ալկալիական բազալտներում՝ 59, կավերում՝ 24-35, ավազներում՝ 14-16, կարբոնատային ապարներում՝ 6.3-8.3:

**Л-34. ЛАПИЛЛИ** (լատ. lapillus – քարիկ, մանր քար) – **ԼԱՊԻԼՆԵՐ (ԸՆԿՈՒՁԻԿՆԵՐ), LAPILLI**, հրաբխային արտանետուկներ՝ ծակոտկեն լավայի փոքր կլորավուն կամ անկանոն ձևի կտորներ՝ ոլոռահատիկից մինչև ընկույզի չափերի: L. արտանետվում են հրաբխի ժայթքման ժամանակ և պնդանում են օդում:

**Л-35. ЛАРАМИЙСКАЯ СКЛАДЧАТОСТЬ** (ժայռոտ լեռների Լարամի, Laramie Mountains, լեռնաշղթայի անունից, ԱՄՆ) – **ԼԱՐԱՄՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, LARAMIAN FOLDING**, մեզոզոյան ծալքավորության ամենաերիտասարդ փուլերից մեկն է, որն արտահայտվել է կավճի վերջում–պալեոգենի սկզբում՝ ժայռոտ լեռների մարզում, ինչպես նաև Հր. Ամերիկայում և Երկրի այլ ռեգիոններում:

**Л-36. ЛАСТОНОГИЕ (Pinnipedia) – ՄԱՇԿՈՏՆՅԱՆԵՐ, ՄԱՇԿՈՏԱՆԻՆԵՐ, PINNIPEDS**, ջրային կաթնասուններ, որոնք բնորոշվում են ջրային կյանքի պայմաններին բարձր աստիճանի հարմարվողականությամբ: Հայտնի են միոցենից: Ժամանակակից ներկայացուցիչներ են ծովափղերը, փոկերը, ծովարջերը և այլն:

**Л-37. ЛАТЕРИТ** (լատ. later – աղուս) – **ԼՍԵՐԻՏ, LATERITE**, կարմրագույն երկաթային կամ երկաթակավահողային էլյուվիալ գոյացություն, որն իրենից ներկայացնում է արևադարձային և մերձարևադարձային խոնավ պայմաններում ալյումասիլիկատային ապարների ֆիզքիմ. խոր հողմահարման արդյունք: L-ները տեղադրված են տարբեր հասակի ու կազմի ալյումասիլիկատային ապարների վրա, որոնք ենթարկվել են լատերիտացման: Վերջինը բնորոշվում է մայրական ապարներից՝ մի կողմից սիլիկատի (SiO<sub>2</sub>) և Na-ի, K-ի, Ca-ի, Mg-ի հիմքերի հեռացմամբ (մայրական ապարներում դրանց պարունակությունը ավելի քան 90% է), իսկ մյուս կողմից՝ Al-ի, Fe-ի, Ti-ի օքսիդների կուտակմամբ՝ մնացորդային ապարներում: L-ներն ունեն պինդ քարանման, ծակոտկեն կամ հողանման կազմություն, բակլայած, խողովակաձև կամ կավային (պելիտային) կառուցվածք՝ առանց տեսանելի շերտավորության: Կախված հողմահարման ենթարկվող մայրական ապարների կազմից՝ տարբերում են բոքսիտաբեր, միկելաբեր, երկաթային, մանգանաբեր L-ներ, ինչպես նաև ոսկու, պլատինի, ալմաստի, կասիտերիտի և այլնի էլյուվիալ ցրոններ (տե՛ս Кора выветривания): Բոքսիտաբեր L-ները ձևավորվում են թթու, միջին և հիմքային կազմի նստվածքային, փոխակերպային և արտաժայթքային ապարների վրա, երկաթային L-ները՝ ուլտրաբազիտների հողմահարման կեղևում: Երկրագնդի արևադարձային զոնայում L-ները ծածկում են լայնարձակ սարավանդներ և բլրապատ տարածքներ. դրանց հաստությունը մի քանի մ-ից հասնում է մինչև 50 մ, հասակը՝ յուրայից մինչև ժամանակակից: L-ների հետ կապված են ալյումինի, երկաթի, միկելի, մանգանի և այլ հանքանյութեր:

**Л-38. ЛАТЕРИТИЗАЦИЯ – ԼՍԵՐԻՏԱՑԻԱ, LATERITIZATION, LATERISATION**, ալյումասիլիկատային ապարների խոր և երկարատև հողմահարման գործընթաց՝ խոնավ արևադարձային և մերձարևադարձային կլիմայի պայմաններում, որի արդյունքում մայրական ապարից դուրս են տարվում SiO<sub>2</sub>-ը, Na-ը, K-ը, Ca-ը, Mg-ը (ավելի քան 90 %), իսկ Al-ի, Fe-ի, Ti-ի մասամբ Si-ի ազատված օքսիդները

մնում են տեղում՝ լատերիտի տեսքով, որը բաղկացած է նորագոյաց միներալներից՝ կաոլինիտից, գյոտիտից, հեմատիտից, անատազից և այլն:

**Л-39. ЛАТЕРИТНАЯ КОРКА, ЖЕЛЕЗНЫЙ ПАЩИРЬ – ԼԱՏԵՐԻՏԱՅԻՆ ԿԵՂԵՎ, ԵՐՎԱԹԵ ՋՐԱՅ, LATERITIC CRUST, FERRUGINOUS CRUST, RED CAP,** խոշոր և մանրաբեկորային կազմության, երբեմն ծակոտկեն ապար, որը բաղկացած է սիլիկահողից, կավահողից, երկաթի օքսիդներից և հիդրօքսիդներից, որոնք բոլորը միասին կազմում են լատերիտային կեղևի վերին զոնան:

**Л-40. ЛАТЕРИТНЫЕ ПОЧВЫ – ԼԱՏԵՐԻՏԱՅԻՆ ՀՈՂԵՐ, LATERITIC SOILS,** խոնավ արևադարձային և հասարակածային անտառների կարմիր և դեղին հողեր, որոնք բնորոշվում են երկաթի, ալյումինի՝ մեծ, սիլիկահողի ցածր պարունակությամբ:

**Л-41. ЛАТЕРИТНЫЙ ПРОФИЛЬ (РАЗРЕЗ) – ԼԱՏԵՐԻՏԱՅԻՆ ՏՐԱՍՍ (ՊՐՈՖԻԼ), (ԿՏՐՎԱԾՔ), LATERITIC PROFILE,** առաջանում է խոնավ արևադարձային և մերձարևադարձային վայրերում՝ ապարների լատերիտային հողմահարման հետևանքով: Բնորոշ է կտրվածքում ուղղաձիգ զոնայականությունը, որը պայմանավորված է մայրական ապարների քայքայման տարբեր աստիճաններով, ըստ որում, ներքևում մայրական ապարների թույլ փոփոխված զոնան է, որը դեպի վեր փոխարինվում է ավելի ուժգին քայքայված զոնաներով:

**Л-42. ЛАХАР (հնդոնեզ.) – ԼԱԽԱՐ, ՑԵՆԱՀՈՍՔ, LAHAR, VOLCANIC MUDFLOW,** ցեխային հոսք, որն առաջանում է հրաբխի լանջերում, երբ հրաբխային նյութը խառնվում է խառնարանային լճերի, անձրևների, ձնհալի ջրերի հետ: Տարբերում են տաք Լ., որը գոյանում է տաք հրաբեկորային նյութից, և սառը Լ., երբ փուխր հրաբխային նյութը սառն է և կապված չէ անմիջապես ժայթքման հետ:

**Л-43. ЛЕГЕНДА КАРТЫ (լատ. legenda – բառ. այն, ինչ պետք է կարդալ) – ՔԱՐՏԵ-ՉԻ ԲԱՅԱՏՐԱԳԻՐ (ԼՈՒՍԱՆՑԱԳԻՐ), LEGEND, EXPLANATION, KEY, MAP CAPTIONS,** պայմանական նշանների ու բացատրությունների ամբողջություն, որը պարզաբանում է քարտեզի բովանդակությունը:

**Л-44. ЛЁД ЗЕРНИСТЫЙ – ՀԱՏԻԿԱՎՈՐ ՍԱՌՈՒՅՑ, հոմ. Лёд фирновый:**

**Л-45. ЛЁД ПОГРЕБЁННЫЙ – ԹԱՂԱԾ ՍԱՌՈՒՅՑ, BURIED ICE,** առաջանում է երկրի մակերեսում, բայց որևէ գործընթացի (փլուզման, սողանքի, սառցաբերուկի, գետային, ծովային նստվածքների կուտակման) հետևանքով և ծածկվում է նստվածքներով:

**Л-46. ЛЁД ФИРНОВЫЙ – ԲԵՆՉԱՍԱՌՈՒՅՑ, FIRN ICE,** խոշորահատիկ սառույց, որն առաջանում է սառցադաշտի այն մասերում, որտեղ հատիկավոր սառույցը անցնում է բյուրեղայինի:

**Л-47. ЛЕДНИК – ՍԱՌՑԱԴԱՇՏ, GLACIER,** մթնոլորտային ծագման սառույցի շարժվող բնական կուտակում, որը կապված է երկրի մակերևույթի այն տեղամասերի հետ, որտեղ տարվա ընթացքում պինդ տեղումներ կուտակվում են ավելի շատ, քան հալումը և գոլորշիացումը: Ս-երի մեծ մասը կազմված է սնման մարզից, որտեղ տեղի է ունենում ձյան կուտակում և դրանից բրնձասառույցի ու սառույցի առաջացում, և հողմատարման (աբլյացիայի) մարզից, որը բնորոշվում է հալման և գոլորշիացման գործընթացների գերակշռությամբ: Ս-երը խիստ բազմազան են ըստ ձևի, չափերի, սնման պայմանների և տեղագրական դիրքի:

**Л-48. ЛЕДНИК АКТИВНЫЙ – ԳՈՐԾՈՒՆ (ԱԿՏԻՎ) ՍԱՌՑԱԴԱՇՏ, ACTIVE GLACIER,** շարժուն սառցադաշտ, որը կապ ունի սնման մարզի հետ, որտեղից անընդհատ սառույց է մատակարարվում:

**Л-49. ЛЕДНИК ПОКРОВНЫЙ – ԾԱԾԿՈՒԹԱՅԻՆ ՍԱՌՑԱԴԱՇՏ, ICE CAP, Ծ.** ս-երը տարածվում են միլիոնավոր կմ<sup>2</sup> տարածքներում՝ իրենց տակ թաղելով նույնիսկ լեռնային ռելիեֆը: Դրանք ընդհանրապես ունեն մակերևույթի ուռուցիկ ձև: Դրանցում սառույցը տարահոսում է կենտրոնից դեպի եզրերը:

- Л-50. ЛЕДНИК ПРЕДГОРНЫЙ – ՆԱԽԱԼԵՆՈՆԱՅԻՆ ՍԱՌՑԱԴԱՇՏ, PIEDMONT GLACIER**, նախալեռնային հարթավայրերի լայնատարած սառցային դաշտ, որն առաջանում է մի քանի սառցադաշտերի լայնացած եզրամասերի միախառնումից:
- Л-51. ЛЕДНИК ШЕЛЬФОВЫЙ – ՄԱՅՐՑԱՍԱՔԱՅԻՆ ԾԱՆԾԱՂՈՒՏԱՅԻՆ (ՇԵԼՖԱՅԻՆ) ՍԱՌՑԱԴԱՇՏ, SHELF ICE**, ակտիվ հոսում, լողացող կամ մասամբ ծովահատակին հենվող սառցադաշտ, որը հանդիսանում է ցամաքային սառցադաշտային ծածկույթի շարունակությունը:
- Л-52. ЛЕДНИК ГОРНЫЙ – ԼԵՌՆԱՅԻՆ ՍԱՌՑԱԴԱՇՏ, MOUNTAIN GLACIER**, տե՛ս Горные ледники:
- Л-53. ЛЕДНИКОВАЯ ГЕОЛОГИЯ – ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ԵՐԿՐԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ, GLACIAL GEOLOGY**, երկրաբանության բաժին, որն ուսումնասիրում է չորրորդական սառցապատումների աշխ. պայմանները և սառցադաշտային ու ջրասառցադաշտային (ֆլուվիոգլյացիալ) նստվածքների ծագումնաբանությունն ու շերտագրությունը: Անգլո-ամերիկյան գրականությունում «Ս. ե.» տերմինը երբեմն օգտագործվում է որպես «չորրորդական երկրաբանություն» տերմինի հոմ.:
- Л-54. ЛЕДНИКОВАЯ ДЕНУДАЦИЯ – ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ԼԵՐԿԱՑՈՒՄ (ԴԵՆՈՒԴԱՅԻՍ), GLACIAL EROSION, GLACIAL DENUDATION**, սառցադաշտի կողմից ապարների քայքայման արդյունքների քանդման ու տեղափոխման գործընթացների համակցություն:
- Л-55. ЛЕДНИКОВАЯ ДОЛИНА – ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ՀՈՎԻՏ, GLACIAL VALLEY**. 1) լեռներում ողողամաշման (երոզիոն) ծագման հովիտ, որը մշակվել է սառցադաշտի կողմից, լանջերի ստորին մասը և հատակը առաջացնում են տաշտահովիտ: 2) Հարթավայրային սառցապատման մարզերում Ս. հ-ներ առաջացրել են սառցադաշտային ջրերի հոսքերը:
- Л-56. ЛЕДНИКОВАЯ СТАДИЯ – ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ՓՈՒԼ, GLACIAL STAGE**, սառցապատումների դարակարգերում ցրտեցման համեմատաբար կարճատև փուլ, որի հետևանքով տեղի է ունենում երկարատև առաջ շարժվող կամ նահանջող սառցադաշտերի ծայրամասերի կանգառ:
- Л-57. ЛЕДНИКОВАЯ ТЕОРИЯ – ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, GLACIAL THEORY**, գիտական պատկերացումների համակարգ այն սառցադաշտերի բազմակի զարգացման մասին, որոնք ծածկել են Երկրի հսկայական տարածքներ: Մինչև 19-րդ դարի 70-ական թվականները նստվածքների մեջ հանդիպող գլաքար-ցուցիչները (թափառող գլաքարերը, էրատիկ գլաքարերը) վերագրվում էին ծովային նստվածքներին, որոնց մեջ դրանք բերել են սառցասարերը: Ըստ Ս. տ-յան, այդ գլաքարերը, որոնք տարածված են Հս. Ամերիկայի և Եվրոպայի լայնարձակ տարածքներում, գոյացրել են այն սառցադաշտերը, որոնք շարժվել են հյուսիսից դեպի հարավ՝ հարյուրավոր և հազարավոր կմ-եր: Ս. տ. ելնում է բազմասառցակալության սկզբունքից և վերաբերվում է գլխ. Երկրի պլեյստոցենյան պատմությանը, չնայած որ լայնատարած սառցապատումներ բացահայտված են նաև ավելի հին ժամանակաշրջաններում: Տե՛ս նաև Ледниковые отложения:
- Л-58. ЛЕДНИКОВАЯ ШЛИФОВКА – ՍԱՑԱԴԱՇՏԱՅԻՆ ՀՂԿՈՒՄ, GLACIAL POLISH**, ապարների մակերեսի հղկման գործընթաց շարժվող սառցադաշտի կողմից՝ իր հետ տեղափոխվող սառցաբերուկային նյութի օգնությամբ:
- Л-59. ЛЕДНИКОВАЯ ЭПОХА – ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ԴԱՐԱՎԱՐԳ, ICE AGE**, Երկրի երկրբ. պատմության ժամանակահատված, որը բնորոշվում է ուժգին ցրտեցմամբ և մայրցամաքային ծածկույթային սառույցների լայնատարած տարածմամբ ոչ միայն բևեռային, այլև բարեխառն լայնություններում: Ս. դ-երը բաժանվել են սառ-

ցաղաշտերի համարյա լրիվ անհետացման դարակարգերով՝ միջսառցադաշտայիններով: Իրենց՝ Ս. դ-երի ներսում առանձնացվում են սառցադաշտային փուլեր, որոնք բնորոշվում են միևնույն սառցապատման ընթացքում սառցադաշտերի առաջ շարժվելով կամ նահանջելով, և միջփուլայիններ, որոնք բնորոշվում են սառցադաշտերի զգալի կրճատմամբ:

**Л-60. ЛЕДНИКОВОЕ ВЫПАХИВАНИЕ – ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ՅԵՐԿՈՒՄ**, տե՛ս Экзарация:

**Л-61. ЛЕДНИКОВОЕ ОЗЕРО – ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ԼԻՃ, GLACIAL LAKE, MARGINAL LAKE**, 1) լիճ, որի առաջացումը կապված է սառցադաշտի անցյալ (կուտակիչ կամ քանդող, հերկող) գործունեության հետ (սառցաբերուկային և կառային լճեր), 2) լիճ, որը գոյանում է բնական ջրի ուսքը սառցադաշտի լեզվակներով կամ առաջնամասով պատնեշվելիս:

**Л-62. ЛЕДНИКОВЫЕ ОТЛОЖЕНИЯ – ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, GLACIAL DEPOSITS, GLACIAL DRIFT**, երկրբ. նստվածքներ, որոնց գոյացումը ծագումնաբանորեն կապված է ժամանակակից և հին լեռնային սառցադաշտերի և մայրցամաքային սառցադաշտային ծածկույթների հետ: Ստորաբաժանվում են՝ բուն սառցադաշտային [սառցաբերուկներ (մորեններ)], ջրասառցադաշտային (Ֆյուվիոգլյացիալ) և լճասառցադաշտային (լիմնոգլյացիալ) նստվածքների: Տե՛ս Морена, Лимногляциальные отложения, флювиогляциальные отложения: Ս. և-ի բոլոր տեսակները առաջացնում են բարդ համակցություններ (սառցադաշտային համալիրներ կամ սառցադաշտային ֆորմացիաներ): Դրանք հատկապես բնորոշ են չորրորդական ժամանակաշրջանին, երբ լայնատարած մայրցամաքային սառցադաշտերը ծածկել են բարեխառն գոտիների հսկայական տարածքներ: Պրոտերոզոյի, վենդի, վերին պալեոզոյի, օրդովիկի նստվածքների մեջ նույնպես հայտնի են հին Ս. և. (տիլիթներ), տե՛ս Тиллиты:

**Л-63. ЛЕДНИКОВЫЕ ПОКРОВЫ – ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅՑՆԵՐ, ICE SHEETS, CONTINENTAL ICE SHEETS**, ցամաքային սառցադաշտի տիպ՝ մինչև մի քանի կմ (ավելի քան 4 կմ) հաստությամբ և միլիոնավոր կմ<sup>2</sup> մակերեսով: Պլեյստոցենում Ս. ծ. լայն տարածում են ունեցել Եվրոպայում, Յս. Ամերիկայում, Յս. Ասիայում, այժմ՝ Անտարկտիդայում, Գրենլանդիայում:

**Л-64. ЛЕДНИКОВЫЙ ПЕРИОД – ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՉԱՆ, GLACIAL PERIOD, GLACIAL AGE, ICE AGE**, Երկրի երկրբ. պատմության համեմատաբար երկարատև փուլ, որի ընթացքում կլիմայի ընդհանուր ցրտեցման ֆոնի վրա բազմակի հերթազայել են կլիմայի խիստ սառը ժամանակահատվածներ, երբ գոյացել են խոշոր մայրցամաքային սառցապատումներ (սառցադաշտային դարակարգեր), և ավելի տաք ժամանակահատվածներ, երբ մայրցամաքային սառցապատումների զգալի մասը հալվել է (միջսառցադաշտայիններ): Սառցապատումներ հայտնի են Յս. Ամերիկայի վաղ պրոտերոզոյում, Աֆրիկայի ու Ավստրալիայի վերին վենդում, Եվրոպայի, Ասիայի և Յս. Ամերիկայի վենդում, ենթադրական մայր ցամաք Գոնդվանայում՝ կարբոնի վերջում և պերմի սկզբում: Ս. ժ-ը առավել լավ ուսումնասիրված է պլեյստոցենում:

**Л-65. ЛЕДНИКОВЫЙ РЕЛЬЕФ – ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ՌԵԼԻԵՖ, GLACIAL FORMS OF RELIEF, GLACIAL LANDFORMS**, Երկրի մակերևույթի ձևեր, որոնց առաջացումը պայմանավորված է ծածկութային ու լեռնային սառցադաշտերի, ինչպես նաև հալվող սառցադաշտային ջրերի համատեղ գործունեությամբ: Տարբերում են սառցաբերման (էկզարացիոն) ձևեր (տե՛ս Экзарация)՝ «խոյի ճակատներ», տաշտահովիտներ, կառեր. սառցադաշտակուտակումային ձևեր՝ սառցաբերուկային հարթավայրեր, թմբեր ու բլրաշարեր. ֆյուվիոգլյացիալ (ջրասառցադաշտային) դարավանդներ և հարթավայրեր:

**Л-66. ЛЕДНИКОВЫЙ ЦИРК**, տե՛ս Кар:

**Л-67. ЛЕЖАЧАЯ СКЛАДКА – ՊԱՌԿԱԾ ԾԱԼՔ, RECUMBENT FOLD**, ապարների ծալք, որի առանցքային հարթությունը և թևերը գրավում են հորիզոնական կամ դրան մոտ դիրք:

**Л-68. ЛЕЖАЧЕЕ КРЫЛО, ЛЕЖАЧИЙ БОК – ՊԱՌԿԱԾ ԹԵՎ, ՊԱՌԿԱԾ ԿՈՂ, DOWN-THROW SIDE**, վարնետքի թև, որը տեղադրված է թեք դիրք ունեցող նետիչի տակ:

**Л-69. ЛЕЙАС** (անգլ. lias, հին ֆրանս. lois-ից – կարծր, քարքարոտ կրաքար) – **ԼԵՅԱՍ, LIAS**, 1) Մեծ Բրիտանիայի հարավում ստորին յուրայի տարբեր շերտերի տեղային անվանում: 2) Յուրայի համակարգի ստորին բաժնի անվանում:

**Л-70. ЛЕЙКО...** (հուն. leukós – սպիտակ, բաց գույնի) – **ԼԵՅԿՈ... ՍՊԻՏԱՎՎՈՒՆ, ՍՊԻՏԱՎԵՐԱՆՔ, LEUCO...**, մագմայական ապարների անվանման նախածանց, որ ցույց է տալիս՝ 1) ապարը բաղկացած է առավելապես բաց գունավորված միներալներից, 2) ապարը հարստացվել է բաց գույնի միներալներով:

**Л-71. ЛЕЙКОКРАТОВЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ** (հուն. leukós – սպիտակ և kratéo – գերիշխում են) – **ՍՊԻՏԱՎՎՈՒՆ (ՍՊԻՏԱՎԵՐԱՆՔ, ԼԵՅԿՈԿՐԱՍ) ԱՊԱՐՆԵՐ, LEUCOCRATIC ROCKS**, մագմայական ապարներ, որոնք համապատասխան ապարի բնականոն միջին տեսակի համեմատությամբ հարստացված են սպիտակաերանգ միներալներով (դաշտասպաթներով, քվարցով, ֆելդսպաթիդներով և այլն):

**Л-72. ЛЕЙКОКРАТОВЫЕ МИНЕРАЛЫ – ՍՊԻՏԱՎՎՈՒՆ (ՍՊԻՏԱՎԵՐԱՆՔ, ԼԵՅԿՈԿՐԱՍ) ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, LEUCOCRATIC MINERALS**, բաց երանգավորում ունեցող կամ անգույն միներալներ:

**Л-73. ЛЕЙЦИТ** (հուն. leukós – սպիտակ) – **ԼԵՅՅԻՏ, LEUCITE**, միներալ կարկասային ալյումասիլիկատների ենթադասի ֆելդսպաթիդների խմբից,  $KAlSi_2O_6$ , բյուրեղագիտական համակարգը տետրագոնային է, ապարի մեջ առաջացնում է բյուրեղներ և ներփակվածքներ: Գույնը սպիտակ, մոխրագույն է, փայլը՝ մակերեսում փայլատ է, կարծրությունը՝ 5.5-6.0: Գոյանում է բարձր ջերմաստիճանի և ցածր ճնշման պայմաններում: Տիպական է  $SiO_2$ -ով աղքատ արտաժայթքային և ենթախորքային ալկալիական ապարների համար (լեյցիտիտների, լեյցիտային բազալտների և տեֆրոիտների, շոնկիմիտների և այլն): Լեյցիտային ապարները ալյումինի, պոտաշի, կալիումային պարարտանյութերի արտադրության պոտենցիալ հունք են:

**Л-74. ЛЕНСКИЙ ЯРУС** (Լենա գետի անունից) – **ԼԵՆԱՅԻ ՅԱՐԿ, LENIAN**, ԽՍՀՄ-ում ընդունված քեմբրիի համակարգի ստորին բաժնի վերին հարկ:

**Л-75. ЛЕНТОЧНЫЕ ГЛИНЫ – ԺԱՊԱՎԵՆԱԶԵՎ ԿԱՎԵՐ, VARVED CLAY, BANDY CLAY**, մերձառցադաշտային լճերի նստվածքներ, որոնք ներկայացված են նրբահատիկ ավազի ու կավերի նուրբ շերտերի հերթազայությամբ: Տարեկան շերտերի քանակի հաշվարկը օգտագործվում է ուշառցադաշտային ու հետառցադաշտային երկրաժամանակագրությունում:

**Л-76. ЛЕПИДОЛИТ** (հուն. lepis – թեփուկ և lithos – քար) – **ԼԵՊԻԴՈԼԻԹ (ԹԵՓՈՒԿԱՔԱՐ), LEPIDOLITE**, միներալ շերտավոր սիլիկատների ենթադասի փայլարների խմբից: Բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է, առաջացնում է թերթավոր, թեփուկավոր, կեղևանման անջատումներ, երբեմն՝ խիտ մանրահատիկավոր ագրեգատներ: Գույնը՝ վարդագույն, բաց մանուշակագույն՝ տարբեր երանգներով, փայլը՝ սաղափյա, թափանցիկ է, հերձումը խիստ կատարյալ է, կարծրությունը՝ 2.5-3.5: Յանդիպում է լիթիումային պեգմատիտներում, գրանիտներում, գրեյզեններում: Լ. լիթիումի կարևոր պոտենցիալ աղբյուր է:

**Л-77. ЛЕПТИТ** (հուն. leptos – բարակ, մանր) – **ԼԵՊՏԻՏ, LEPTITE**, խիստ նրբահատիկ փայլարով աղքատ գնեյսի (գղձաքարի) անվանում:

- Л-78. ЛЕРЦОЛИТ** (ֆրանս. էր կամ Լեր, Hers, Lherz գետի անունից) – **ԼԵՐՑՈԼԻԹ, LHERZOLITE**, պերիդոտիտների ընտանիքի խորքային մագմայական ապար, բաղկացած է օլիվինից (ապարի զանգվածի 40-90 %) և պիրոքսեններից (10-50 %): Ապարակազմիչ միներալներից վերին միջնապատյանի խորքային զոնաների Լ-ում հանդես է գալիս նաև նոնաքարը (պիրոպը), հանդիպում է նաև փայլարը (ֆլուզոպիտը կամ բիոտիտը), ինչպես նաև՝ ամֆիբոլը: Առաջատար ակցետորային միներալը մագնեզիումային քրոմչպինելիդն է: Լ. այլ գերհիմքային ապարների համակցությամբ տարածված է ծալքավոր մարզերում, քարոլորտի հիմնական բաղադրամասն է՝ Մոհորավիչիչի սահմանից ներքև:
- Л-79. ЛЕС ПЬЯНЫЙ – ՅՐԲԱԾ ԱՆՏԱՈՒ, FOREST GROWING ON LANDSLIDES**, ներկայացված է սողանքների վրա տարբեր ուղղությամբ թեքված և ծռված ծառերով:
- Л-80. ЛЕТОИСЧИСЛЕНИЕ ГЕОЛОГИЧЕСКОЕ (ОТНОСИТЕЛЬНОЕ И АБСОЛЮТНОЕ) – ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ և ԲԱՑԱՐՁԱԿ), GEOLOGICAL CHRONOLOGY, GEOCHRONOLOGY**, Երկրի մասին գիտություններում ժամանակի հաշվարկման համակարգ, տե՛ս Возраст геологический:
- Л-81. ЛЕТУЧИЕ ВЕЩЕСТВА – ՑՆՊՈՂ ՆՅՈՒԹԵՐ, VOLATILE AGENTS**, այրվող օգտ. հնձ-ներում զազանման և զոլորշիանման նյութեր, որոնք անջատվում են այրվող հանածոները տաքացնելիս (մոտ 850°C)՝ օրգանական նյութի քայքայման հետևանքով:
- Л-82. ЛЁСС** (գերմ. Loss, բարբառային losch-ից – փխրուն, ոչ կարծր) – **ԼՅՈՍ (ՓԽՐԱՅՈՂ), LOESS, BRICKEARTH LIMON**, համասեռ, սովորաբար ոչ շերտավոր, ծակոտկեն, թույլ ցեմենտացած, մերգելային կամ ավազակավային ծածկության նստվածքներ: Բաղկացած են առավելապես ալերիտային չափայնության հատիկներից, ավելի քիչ՝ կավային ու մանրավազային հատիկաբաժիններից: Գույնը լինում է հարդագույնից (բաց դեղնավունից) մինչև բաց դեղին կամ դեղնաշագանակագույն: Փլվածքներում առաջացնում են զառիթափ ուղղաձիգ պատեր: Առաջացնում են զգալի հաստության (մի քանի մ-ից մինչև 100-200 մ) ստվարաշերտեր: Լ-երի ծագման մասին կան մի քանի տեսություններ՝ էոլյան (հողմային), ալյուվիալ (գետաբերուկային), դելյուվիալ, պրոլյուվիալ (հեղեղաբերուկային) և հոդառաջացման: Ամենատարածվածը էոլյան տեսությունն է:
- Л-83. ЛЁССОВИДНЫЕ ПОРОДЫ – ԼՅՈՍԱՆՄԱՆ (ՓԽՐԱՅՈՂԱՆՄԱՆ) ԱՊՐՆԵՐ, LOESS-LIKE ROCKS**, նստվածքային ապարներ, որոնք արտաքնապես նման են լյուսին և ըստ կազմի պատկանում են ավազակավերին և կավավազներին: Լ. ա. լյուսից տարբերվում են շերտավորության և ճալաքարուտի նրբաշերտերի առկայությամբ, ավելի կավային կամ ավելի ավազային կազմով: Լ. ա. կարող են լինել տարբեր ծագման՝ էոլյան (հողմային), ալյուվիալ (գետաբերուկային), դելյուվիալ, էլյուվիալ:
- Л-84. ЛЁССОВИДНЫЙ СУГЛИНОК – ԼՅՈՍԱՆՄԱՆ (ՓԽՐԱՅՈՂԱՆՄԱՆ) ԱՎԱՋԱԿԱԿ, LOESS LOAM**, լյուսանման ապար, որը աչքի է ընկնում կավային մասնիկների մեծ պարունակությամբ, կոպիտ ավազային, երբեմն ճալաքարային նյութի առկայությամբ, շերտավորությամբ (հազվադեպ):
- Л-85. ЛИГНИТ** (լատ. lignum – ծառ, փայտանյութ) – **ԼԻԳՆԻՏ, LIGNITE**, թույլ ածխայնացած, գորշ գույնի բրածո փայտանյութ (զլխ. փշատերև բույսերի), որը պահպանել է բուսական հյուսվածքների անատոմիական կառուցվածքը և իր արտաքին տեսքով նման է չփոփոխված փայտանյութի: Լ. անվանում են նաև գորշ ածուխը, որը պարունակում է թույլ փոփոխված փայտածխի առատ ներփակվածքներ (լիգնիտային ածուխ): Որոշ երկրներում (ԱՄՆ, ԳՖՅ) Լ-ներին են վերագրվում գորշ ածուխների որոշ տարատեսակները:

- Л-86. ЛИКВАЦИОННАЯ ДИФФЕРЕНЦИАЦИЯ – ԼԻՔՎԱՑԻՈՆ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ, LIQUATION DIFFERENTIATION**, սառեցման ընթացքում մագմայի բաժանումը երկու չխառնվող հեղուկ մասերի: Ապարաբանությունում շատ գիտնականներ այժմ *L.* տ-մանը ապարագոյացման մեծ դեր չեն տալիս, ենթադրելով, որ համասեռ սիլիկատային հալույթում *L.* տ. ընդհանրապես տեղի չի ունենում:
- Л-87. ЛИКВАЦИОННЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ – ԼԻՔՎԱՑԻՈՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, LIQUATION DEPOSITS**, մագմայական ծագման հնքվ-եր, որոնք գոյանում են երկրի ընդերքում մետաղների ծծմբային միացություններ պարունակող հիմքային կազմի մագմայի սառեցման և բյուրեղացման գործընթացում, երբ տեղի է ունենում հալույթի բաժանումը երկու՝ սիլիկատային ու սուլֆիդային չխառնվող հեղուկների: Սիլիկատային հալույթի պնդեցման դեպքում առաջանում են գաբրոպերիդոտիտային կազմի մագմայական ապարներ, իսկ սուլֆիդային հալույթի բյուրեղացման դեպքում գոյանում են սուլֆիդային հանքանյութերի կուտակումներ: Առավել հայտնի են պղինձ-նիկելային սուլֆիդային *L.* հ.:
- Л-88. ЛИКВАЦИЯ** (հին. լատ. *liquatio*, բառ.՝ հալում, ջրիկացում) – **ԼԻՔՎԱՑԻԱ, LIQUATION**, ջերմաստիճանի ցածրացման ժամանակ մագմայի երկու՝ չխառնվող հալույթների բաժանվելու գործընթաց:
- Л-89. ЛИМАН** (հուն. *limēn*– ծովախորշ) – **ԼՃՈՒՅՔ (ԼԻՄԱՆ, ԳԵՏԱՐԵՐԱՆԻ ԾՈՎԱԽՈՐՇ), BRACKISH LAGOON, DROWNED RIVER, FIRTH, LIMAN, EMBAYMENT**, ձգված ծովախորշ՝ հատակագծում ուղրուն, ոչ բարձր ափերով: Առաջանում է հարթավայրային գետաբերանները կամ ցամաքի մերձափնյա ցածրացումները ծովով ջրածածկվելիս: *L*-ների մեծ մասը աչքի է ընկնում աղերի զգալի պարունակությամբ:
- Л-90. ЛИМНОЛОГИЯ** (հուն. *limnē* – լիճ և *lógos* – ուսմունք) – **ԼՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LIMNOLOGY**, տե՛ս *Озероведение*:
- Л-91. ЛИМОНИТ** (գերմ. *Limonit*, հուն. *leimōn*-ից – մարգագետին, խոնավ տեղ) – **ԼԻՄՈՆԻՏ, LIMONITE**, երկաթի հիդրօքսիդների՝ գյոտիտի, հիդրոգյոտիտի, լեպիդոկրոկիտի, հիդրոհեմատիտի և այլնի բարձրադիսպերս խառնուրդի հավաքական անվանում: Պարունակում է նաև *Al*-ի և *Mn*-ի հիդրօքսիդներ, օքսիհիդրատներ, սիլիկահող: Առաջացնում է դեղնա- և կարմրագորշ փոշեկերպ, փուխր հողանման ագրեգատներ, թաղանթներ, պալարներ, օոլիթային անջատումներ, պսևդոմորֆոզներ ըստ պիրիտի, սիդերիտի, հազվադեպ՝ հեմատիտի: Ծագումը՝ վերնածին (հողմահարման գոնայում) կամ նստվածքային: Տարածված է մետաղական հնքվ-երի օքսիդացման գոնայում: Առաջացնում է բարձրորակ երկաթի հանքանյութերի խոշոր հնքվ-եր:
- Л-92. ЛИНЕАМЕНТ** (լատ. *lineamentum* – գիծ, ուրվագիծ) – **ԼԻՆԵԱՄԵՆՏ, LINEAMENT**, երկրակեղևի կառուցվածքի ու ռելիեֆի ռեգիոնալ գծային կողմնորոշված տարր, որի երկարությունը շատ անգամ գերազանցում է լայնությանը: Բացահայտվում է ըստ երկրբ. (ներժայթքվածքների, ծալքերի, խզվածքների, երկրբ. սահմանների շարաններ) և ֆիզաշխ. (լեռնաշղթաների, հովիտների, լճերի շարաններ) հատկանիշների, որոնք լավ արտահայտվում են օդատիեզերական նկարներում: *L*-ները դիտարկվում են որպես երկրի մակերևութային խորքային բեկվածքների արտացոլում: *L*-ները հետամտվում են ցամաքներում (մեծ մասամբ վարժուն գոտիների ու պլատֆորմների երկայնությամբ՝ որպես սահմանային գոնաներ), անցողիկ զոնաներում մայր ցամաքի ու օվկիանոսի միջև (օր.՝ հրաբխային կղզեաղեղները), օվկիանոսներում (օր.՝ Խաղաղ օվկիանոսի հս-արմ. մասի լայնական բեկվածքները, Միջինօվկիանոսային լեռնաշղթաների ռիֆտային զոնաները և այլն), ինչպես նաև ռելիեֆում (օր.՝ Հս. և Հր. Ամերիկայի արևմտյան եզրի լեռնաշղթաները):

- Л-93. ЛИНЕЙНАЯ ЭРОЗИЯ – ԳՃԱՅԻՆ ՈՂՈՂԱՄԱՇՈՒՄ (ԵՐՈՋԻԱ, ՈՂՈՂԱՅԱՆՈՒՄ), LINEAR EROSION**, ջրհոսքի կողմից երկրի մակերևույթի ողողաքայքայում, որն արտահայտված է նեղ ժապավենով և ստեղծել է ռելիեֆի բացասական ձևեր (հովիտ, ձոր, հեղեղատ):
- Л-94. ЛИНЕЙНОЕ ИЗВЕРЖЕНИЕ – ԳՃԱՅԻՆ ԺԱՅԹՔՈՒՄ, FISSURE ERUPTION**, երկրակեղևի գծային ճեղքվածքներից հեղուկ, գլխ. բազալտային լավայի արտավիժում, նույնն է՝ Извержение трещинное:
- Л-95. ЛИНЕЙНЫЕ СТРУКТУРЫ – ԳՃԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, LINEAR STRUCTURES**, ընդհանրացված հասկացություն, որն ընդգրկում է տիեզերական և օդալուսանկարահանման նյութերի վերժանման հետևանքով երկրակեղևում բացահայտված (մակերևույթում երևացող կամ չերևացող) խզվածքային բնույթի տեկտ. գծերի ամբողջ համախումբ, այդ թվում՝ լինեամենտները: Գ. կ. ընդունված է ըստ խորության ստորաբաժանել խորքային (հասնում են միջնապատյանին), խոր հիմնադրման (հասնում և արտահայտվում են կայունացված կեղևում՝ հիմքում), ոչ խոր հիմնադրման (չեն բափանցում հիմքի մեջ): Բացի դա, առանձնացնում են սահմանային (բաժանում են կեղևի խոշոր բլոկները), հատող (երկրի պտտման առանցքի նկատմամբ առաջացնում են ուղղանկյուն և շեղանկյուն ցանց, որը մոտենում է մոլորակային ճեղքավորությանը) և ներբլոկային Գ. կ.: Ըստ երկարության՝ առանձնացվում են անդրմայրցամաքային (տրանսկոնտինենտալ), անդրօվկիանոսային, անդրեզդիոնալ (տրանսեզդիոնալ), ռեզդիոնալ և տեղային (լոկալ) Գ. կ.: Անջատում են նաև տարանցիկ (տրանզիտային) Գ. կ., որոնք օվկիանոսային ջրատարածքներից անցնում են մայր ցամաքներ: Գ. կ. հնարավորություն են տալիս բացահայտելու տարբեր օգտ. հնձ-ների հանքային զոնաների ու հանգույցների տեղաբաշխման լրացուցիչ օրինաչափություններ: Նավթազագաբեր մարզերում Գ. կ. կարևոր դեր են խաղում տեղային կամարածալքերի, ճեղքավորման զոնաների տեղաբաշխման գործում:
- Л-96. ЛИНЗА (գերմ. Linse, լատ. lens-ից՝ ոսպ) – ՈՍՊՆՅԱԿ, LENS, LENSE, LENTICLE, LENTIL**, ոսպածև (ոսպնյակածև) երկրբ. մարմին, որը բոլոր ուղղություններով սեպասպառվում է:
- Л-97. ЛИНИЯ НАРУШЕНИЯ (геол.) – ԽԱԽՏՄԱՆ ԳԻԾ (երկրբ.), DISTURBANCE LINE, DISLOCATION LINE**, երկրբ. մարմնի տեղադրման խզվածքային գիծ՝ նրա մի մասի՝ մյուսի նկատմամբ ուղղաձիգ տեղաշարժման դեպքում: Ռելիեֆում երբեմն արտահայտվում է մակերևույթի սանդղավանդի տեսքով:
- Л-98. ЛИНИЯ ПАДЕНИЯ (геол.) – ԱՆԿՄԱՆ ԳԻԾ (երկրբ.), LINE OF DIP, DIP LINE**, շերտի (երակի, ճեղքի և այլն) մակերևույթի վրա գիծ, որն ուղղահայաց է տարածման գծին և կողմնորոշված է շերտի առավելագույն թեքության ուղղությամբ:
- Л-99. ЛИНИЯ ПРОСТИРАНИЯ (геол.) – ՏՈՐԱԾՄԱՆ ԳԻԾ (երկրբ.), STRIKE LINE, LINE OF STRIKE**, հորիզոնական հարթության հատման գիծը շերտի (երակի, խզվածքի) մակերևույթի հետ:
- Л-100. ЛИНИЯ РАЗВЕДОЧНАЯ – ՅԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳԻԾ, EXPLORING LINE**, գիծ, որի երկարությամբ տեղաբաշխված են հետախուզական փորվածքներ՝ առու, հետախուզահոր, հորատանցք և այլն: Սովորաբար ձգվում է ապարների կամ օգտ. հնձ-ների մարմինների տարածմանը ուղղահայաց:
- Л-101. ЛИНИЯ РАЗРЫВА (геол.) – ԽՉՎԱԾՔԻ ԳԻԾ (երկրբ.), FLOWLINE, STREAM LINE**, խզվածքի հարթության հատման գիծը երկրի մակերևույթի հետ:
- Л-102. ЛИПАРИТ, РИОЛИТ (իտալ. Lipari, Լիպարյան կղզիների անունից, որտեղ Լ. առաջին անգամ հայտնաբերվել է) – ԼԻՊԱՐԻՏ, ՌԻՈԼԻԹ, LIPARITE, RHYOLITE**, նորատիպ (կայնոտիպ) արտաժայթքային ապար, սպիտակաերանգ գրանիտի



(լեյկոգրանիտի) հրաբխային նմանակ: Հոծ, հազվադեպ ծակոտկեն աֆիրային կամ պորֆիրային ապար է, ներփակվածքները ներկայացված են պլագիոկլազով (սովորաբար օլիգոկլազ), կալիում-նատրիումային դաշտասպաթով (սանիդին, օրթոկլազ), բիոտիտով, պիրոքսենով (սովորաբար ավգիտ), գորշ եղջերախաբով, հրաբխային ապակով: Հիմնական զանգվածը ապակենման է կամ միկրոֆելզիտային: L. հաճախ ֆլյուիդալ է: Հիմնական զանգվածը ակնադիտորեն միշտ աֆանիտային է և ունի տարբեր գունավորում՝ վարդագույն, սպիտակ, մոխրավուն կամ դեղնավուն-սպիտակ, կարմիր, դեղին, գորշ, բաց մոխրագույն, ապակենման տարատեսակների մոտ՝ սև, կանաչամոխրագույն, երկնագույն-մոխրագույն, կարմրավուն: L-ները առաջացնում են հրաբխային ծածկույթներ, շերտեր, գմբեթներ, դայկաներ և այլ մարմիններ:

**Л-103. ЛИПТОБИОЛИТЫ** (հուն. leiptós – պահպանված, մնացած, bios – կյանք և lithos – քար) – **ԼԻՊՏՈԲԻՈԼԻԹՆԵՐ**, **LIPTOBIOLITES**, ածուխների տարատեսակ, որի համար սկզբնական նյութ են հանդիսացել բարձրակարգ բույսերի կենսաքիմիապես կայուն տարրերը: L. պատկանում են կիսափայլատ և փայլատ ածուխների խմբին:

**Л-104. ЛИСТВЕНИТИЗАЦИЯ** – **ԼԻՍՏՎԵՆԻՏԱՑԻՅԱ**, **LISTVENITIZATION**, սերպենտինիտներից և այլ գերհիմքային ապարներից ցածր ջերմաստիճանում (200°-250°) թթվային լվացագերծման ժամանակ լիստվենիտի առաջացման մերձերակային և մերձհանքանյութային մետասոմատիկ գործընթաց:

**Л-105. ЛИСТВЕНИТЫ** – **ԼԻՍՏՎԵՆԻՏՆԵՐ**, **LISTVENITES**, մետասոմատիկական ապարներ, առավելապես քվարց-կարբոնատային բաղադրության, որոնք առաջանում են ըստ սերպենտինիտների և այլ գերհիմքային ապարների: Ավելի քիչ քանակով առկա են մուսկովիտը կամ սերիցիտը, դաշտասպաթները, քլորիտը, տալկը, հեմատիտը: Գույնը կանաչ է, հազվադեպ՝ դեղին, մոխրագույն: Կազմվածքը զուլավոր, զանգվածային, բծավոր է: Տարածված է ոսկու հանքանյութում գերհիմքային ապարների համալիրներում՝ հանդիսանալով մերձհանքային կամ հանքապարունակ միջավայր:

**Л-106. ЛИТИЕВЫЕ РУДЫ** – **ԼԻԹԻՈՒՄԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ**, **LITHIUM ORES**, բնական միներալային գոյացություններ, որոնք պարունակում են լիթիումի և նրա միացությունների այնպիսի քանակներ, որոնց կորզումը տնտեսապես նպատակահարմար է: Արդյունաբերական նշանակություն ունեցող գլխ. լիթիումապարունակ միներալներն են սպոդումենը (LiO<sub>2</sub> 5.9-7.6%) ամբլիգոնիտը (3.5-4.1 %), ցինվալդիտը (3.0-3.5 %) և լեպիդոլիթը (5.5-8.8 %):

**Л-107. ЛИТИФИКАЦИЯ** (հուն. lithos – քար և լատ. facio – անում եմ, դարձնում եմ) – **ՔՐԱՐՑՈՒՄ** (**ԼԻԹԻՖԻԿԱՑԻՅԱ**), **LITHIFICATION**, փուխր սստվածքների՝ պինդ ապարների վերածվելու գործընթաց, կարող է տեղի ունենալ սստվածքների կերպափոխման տարբեր փուլերում, տե՛ս *Диагенез, Катагенез, Литогенез*:

**Л-108. ЛИТОГЕНЕЗ** (հուն. lithos – քար և génesis – ծագում, առաջացում) – **ՔՐԱՐԱԳՈՅՑՈՒՄ** (**ԼԻԹՈԳԵՆԵԶ**), **LITHOGENESIS**, սստվածքային ապարների գոյացման և հետագա փոփոխությունների բնական գործընթացների համակցություն: Ք-ման գլխ. գործոնները տեկտ. շարժումները և կլիման են: Ք-ման ցիկլի ընթացքում առանձնացնում են հետևյալ փուլերը. մակերևութային վերնածնություն (հիպերգենեզ)՝ մայրական ապարների ֆիզ. և քիմ. քայքայման գործընթացում սստվածքների ելանյութերի գոյացում և դրանց տեղափոխում դեպի կուտակման վայրը, սստվածքազոյացում (սեդիմենտոգենեզ)՝ սստվածքների ներմուտը ջրիոսքի վերջնական ջրավազանը և սստեցումը, դիագենեզ՝ ջրով հագեցած սստվածքի ֆիզքիմ. հավասարակշռվածություն, որի հետևանքով այն վերափոխվում է ապարի, կատագենեզ՝

ապարների հետագա կերպափոխությունը թաղման խորության մեծացման և ճնշման ու ջերմաստիճանի ազդեցության տակ, երբեմն էլ՝ ջրային լուծույթների ու զազերի ներգործության տակ (երբեմն այս փուլը սխալ կերպով անվանում են էպիգենեզ), մետազենեզ կամ բուն փոխակերպություն՝ ապարների կազմի (հատկապես կավային) հաջորդական փոփոխություն՝ դրանց հետագա խորասուզման դեպքում: Որոշ հետազոտողներ (Ն. Ստրախով և ուր.) Ք-մանը վերագրում են միայն վերնածնությունը (հիպոգենեզը), նստվածքակուտակումը (սեդիմենտոգենեզը) և դիազենեզը, իսկ մետազենեզը դիտարկում են որպես միջանկյալ ինքնուրույն փուլ կատազենեզի և փոխակերպության միջև: Ն. Ստրախովը առաջին անգամ (1956) առանձնացրեց Ք-ման տիպերը՝ սառցային, խոնավ (հումիդային), չորային (արիդային) և հրաբխամստվածքային, հետագայում ավելացրեց նաև օվկիանոսային տիպը:

**Л-109. ЛИТОГЕНЕЗ АРИДНЫЙ – ՉՈՐԱՅԻՆ (ԱՐԻԴԱՅԻՆ) ՔԱՐԱԳՈՅԱՑՈՒՄ (ԼԻԹՈԳԵՆԵՆԵԶ), ARID LITHOGENESIS**, տեղի է ունենում այն մարզերում, որտեղ միջին տարեկան ջերմաստիճանը բարձր է 0-ից, և գոլորշիացումը գերակշռում է տեղումների քանակին:

**Л-110. ЛИТОГЕНЕЗ ВУЛКАНОГЕННО-ОСАДОЧНЫЙ – ՀՐԱԲԽԱՆՆՍՎԱԾՔԱՅԻՆ ՔԱՐԱԳՈՅԱՑՈՒՄ (ԼԻԹՈԳԵՆԵԶ), VOLCANOGENIC–SEDIMENTARY LITHOGENESIS**, տեղի է ունենում հրաբխային գործունեության (ցամաքային և ստորջրյա) տեղամասերում, ներկայացված է ապարների յուրահատուկ հավաքածուով՝ տուֆեր, տուֆափշրաքարեր (տուֆաբրեկչիաներ), տուֆավազաքարեր, քիմ. և կենսաքիմ. նստվածքներ, Fe-ի, Mn-ի հանքանյութեր, հասպիս և այլն: Տե՛ս Вулканогенно-осадочные породы:

**Л-111. ЛИТОГЕНЕЗ ГУМИДНЫЙ – ԽՈՆԱՎ (ՀՈՒՄԻԴԱՅԻՆ) ՔԱՐԱԳՈՅԱՑՈՒՄ (ԼԻԹՈԳԵՆԵԶ), HUMID LITHOGENESIS**, բնորոշվում է խոնավ կլիմայով, երբ միջին տարեկան ջերմաստիճանը գերազանցապես բարձր է 0-ից, իսկ մթնոլորտային տեղումների քանակը ավելի շատ է, քան գոլորշիացումը:

**Л-112. ЛИТОГЕНЕЗ ЛЕДОВЫЙ – ՍԱՆՑԱՅԻՆ ՔԱՐԱԳՈՅԱՑՈՒՄ (ԼԻԹՈԳԵՆԵԶ), ICE LITHOGENESIS**, տեղի է ունենում մայր ցամաքների այն տեղամասերում, որոնք ծածկված են սառույցով, տարեկան միջին ջերմաստիճանը զգալի չափով ցածր է 0-ից, իսկ տեղումների քանակը գերակշռում է գոլորշիացմանը:

**Л-113. ЛИТОГЕНЕТИЧЕСКАЯ КОЛОНКА – ՔԱՐԱԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՍՅՈՒՆԱԿ, LITHOGENIC COLUMN**, քարաբանաչերտագրական սյունակ, որը լրացված է մի շարք այնպիսի տվյալներով, որոնք արտացոլում են նստվածքների առաջացման պայմանները, կտրվածքում շերտ առ շերտ փոփոխությունների առանձնահատկությունները՝ հատիկաչափությունը, կարբոնատայնությունը, ֆացիաները և այլն:

**Л-114. ЛИТОГЕНЕТИЧЕСКИЙ АНАЛИЗ – ՔԱՐԱԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, LITHOGENIC ANALYSIS**, նստվածքային ապարների հատկանիշների համալիր ուսումնասիրություն, որի նպատակն է պարզաբանել այդ ապարների առաջնային գոյացման առանձնահատկությունները (ֆացիաները), ինչպես նաև հետագա (դիազենետիկ, կատազենետիկ, մետազենետիկ և այլն) փոփոխությունների գործընթացները և արդյունքները:

**Л-115. ЛИТОГЕНЕТИЧЕСКИЕ ТИПЫ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ՔԱՐԱԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՏԻՊԵՐ, LITHOGENIC TYPES OF ROCK, LITHOGENIC ROCKS**, ֆացիալ վերլուծության միջոցով որոշվում է այս կամ այն կոնկրետ ֆացիան: Դա բացահայտվում է ըստ ապարի առաջնային ծագումնաբանական հատկանիշների համալիրի, որը ընդգրկում է ապարի այն հատկանիշները, որոնք կապված են նստվածքի կուտակման և ձևավորման հետ լապարի կառուցվածքը, կազմվածքը,

նյութական կազմը, աուտիզեն (տեղածին) միներալները, օրգանական մնացորդները, փոխհարաբերությունը այլ ապարների հետ և այլն]: Միևնույն ապարը կարող է առաջանալ տարբեր պայմաններում և հետևաբար կարող է պատկանել Ա. ք. տարբեր տիպերի, տարբեր ֆացիաների: «Ծագումնաբանական տիպ» տերմինը «Ա. ք. տ.» տերմինի հոմ. չէ:

**Л-116. ЛИТОГЕНЕТИЧЕСКИЙ ТИП УГЛЯ – ԱԾԽԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՏԻՊ, LITHOGENEOUS COAL, LITHOGENIC COAL**, տերմին, որի տակ հասկացվում է բրոժոն ածուխների շերտերում չզինված աչքով տեսանելի (ըստ փայլի, գույնի, կարծրության, կառուցվածքի) բաղադրամասերը, որոնք արտացոլում են Ա. Ծ. տ-ի նյութական կազմը, ածխագոյացման պայմանները և ելանյութի կերպափոխությունը: Հունդիթներում առանձնացնում են հետևյալ ծագումնաբանական տիպերը (լիթոտիպերը)՝ վիտրեն, կլարեն, դյուրեն և ֆյուզեն, սապրոպելային ածուխներում՝ բոգիեդ և քենել:

**Л-117. ЛИТОГЕННЫЙ ЛАНДШАФТ** (հուն. lithos – քար և gen<sup>ē</sup> s – ծնող, ծնված) – **ՔԱՐԱԾԻՆ ԼԱՆԴՇԱՓՏ (ԲՆԱՊԱՍԿԵՐ), LITHOGENIC LANDSCAPE**, լանդշաֆտ (բնապատկեր), որի հիմնական հատկանիշները կապված են մերձնակերևութային ապարների առանձնահատկությունների և ռելիեֆի ջրային ռեժիմի ու հողերի վրա դրանց ունեցած ազդեցության հետ: Բ. լ-ի տարածումը և եզրագծերը պայմանավորված են լանդշաֆտ առաջացնող քարաբանորեն համասեռ ստվարաշերտերի տարածմամբ և եզրագծերով:

**Л-118. ЛИТОКЛАСТЫ (ЛИТОКЛАСТИЧЕСКИЕ ВЫБРОСЫ)** (հուն. lithos – քար և klastós – փշրված, ջարդված) – **ՔԱՐԱԲԵԿՈՐՆԵՐ (ՔԱՐԱԲԵԿՈՐԱՅԻՆ ԱՐՏԱՆԵՏՈՒԿՆԵՐ), LITHOCLASTS**, տարատեսակ ապարներ (հրաբխային, երակային, նույնիսկ նստվածքային), որոնք կազմել են հրաբխային զագաթի տանիքը և փշրվելով արտանետվել են հրաբխի ժայթքման ժամանակ: Խտացված և ցեմենտացված բեկորները առաջացնում են քարաբեկորային (լիթոկլաստիկ) տուֆեր:

**Л-119. ЛИТОЛОГИЧЕСКАЯ КАРТА – ՔԱՐԱԲԱՆԱԿԱՆ (ԼԻԹՈԼՈԳԻԱԿԱՆ) ՔԱՐՏԵԶ, LITHOLOGICAL MAP**, պատկերում է որոշակի հասակի նստվածքային ապարների տարածման մարզերը: Պայմանական նշաններով ցույց է տրվում ապարների նյութական կազմը, ներփակվածքները, բնորոշ կառուցվածքային, կազմվածքային և այլ առանձնահատկությունները: Ի տարբերություն քարաբանաֆացիալ և հնաշխարհագրական քարտեզների, Բ. ք-ների վրա չեն արտացոլվում սնման և նստվածքակուտակման մարզերի ֆիզաշխ. պայմանները:

**Л-120. ЛИТОЛОГИЯ** (հուն. lithos – քար և λόγος – ուսմունք, խոսք) – **ՔԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ԼԻԹՈԼՈԳԻԱ), LITHOLOGY**, գիտություն է ժամանակակից նստվածների և նստվածքային ապարների մասին, դրանց կազմի, կազմվածքի, ծագման և տարածական տեղաբաշխման օրինաչափությունների մասին: Ժամանակակից Բ. սերտորեն կապված է շերտագրության, տեկտոնիկայի, հնաշխարհագրության, երկրաքիմիայի, միներալաբանության, օգտ. հնձ-ների երկրաբանության, ծովային երկրաբանության, հնէաբանության, կլիմայագիտության, հողագիտության, ինչպես նաև ֆիզքիմ. և մաթեմատիկական գիտությունների հետ: Բ-յան խնդիրներն են՝ նստվածքային ապարների նյութական կազմի, կառուցվածքի ու կազմության ուսումնասիրությունը, երկրի երկրք. պատմության ընթացքում ապարագոյացման ընդհանուր գործընթացում նստվածքային ապարների տիպերի ու նրանց հետ կապված օգտ. հնձ-ների ծագման ու տեղաբաշխման օրինաչափությունների բացահայտումը: Այդ խնդիրների լուծման հիմնական ուղիներն են՝ նստվածքային ապարների ծագումնաբանական (ֆացիալ), դրանց բնական պարագենետիկա-

կան զուգորդությունների՝ նստվածքային ֆորմացիաների վերլուծությունը և կուտակման հնաշխ. իրադրության վերականգնումը: Ք-յան գլխ. մեթոդներն են՝ ապարագրական, միներալաբանական, քիմ., ֆացիաների և ֆորմացիաների վերլուծությունը, ինչպես նաև համեմատաբարաբանական մեթոդը: Ք-յան խնդիրներից է նաև այն երկրորդային փուլային փոփոխությունների բացահայտումը, որոնք տեղի են ունենում քարոլորտի մեջ նստվածքային ապարների խորասուզման ընթացքում, տե՛ս Катагенез, Метагенез, Эпигенез:

**Л-121. ЛИТОЛОГО-ПАЛЕОГЕОГРАФИЧЕСКАЯ КАРТА – ՔԱՐԱԲԱՆԱՅՆԱՇԽԱՐՉԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵՉ, LITHOLOGIC-PALEO GEOGRAPHICAL MAP**, պատկերում է տվյալ շերտագրական ստորաբաժանման, երկրբ. ժամանակի համար բնորոշ ապարների ֆացիալ համալիրների կազմն ու տարածումը, ինչպես նաև հնաշխ. պայմանները: Սովորաբար գույներով ցույց են տալիս հնաշխ. պայմանները, իսկ նշաններով՝ նստվածքների քարաբանական կազմը (հիմնականում նստվածքների առաջնային առանձնահատկությունները): Նշում են ապարների տեսակների շերտափոխությունը, կազմը, հրաբխաքարերի, մոխրի, լավաների կազմն ու տարածումը, հին ծովային ու ցամաքային օրգանիզմների բնորոշ տեսակների, այլ խմբերի տեղավայրը և հավանական տարածումը, տեղածին (աուտիգեն) միներալները և այլն: Հնաշխ. իրադրությունը և տվյալ ժամանակի համար ծովի ու ցամաքի տեղաբաշխումը, դրանց ֆիզաշխ. պայմանները ցույց են տրվում բարձրաչափական (հիպսոմետրական) քարտեզների գույների երանգներով (ցամաքի ռելիեֆը, ծովի խորությունը, մարզերը և այլն):

**Л-122. ЛИТОЛОГО-ФАЦИАЛЬНЫЕ КАРТЫ – ՔԱՐԱԲԱՆԱՖԱՑԻԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ, LITHOLOGIC MAPS, LITHOFACIES MAPS**, արտացոլում են որևէ երկրբ. ժամանակահատվածում առաջացած նստվածքների կազմը, առաջացման պայմանները: Ք. ք-ի վերաբերյալ գոյություն ունեն երկու հիմնական կարծիքներ՝ 1) Ք. ք-ի վրա առաջին հերթին ցույց են տրվում ֆացիալ իրադրությունները, նստվածքների կազմը, իզոպախիտները, բեկորային նյութի տեղափոխման ուղղությունը, հոսանքների ուղղությունը, բնորոշ աուտիգեն միներալները, օրգանական մնացորդները, երբեմն նստվածքի դիագենեզի երկրբ. պայմանները: 2) Ք. ք-ի վրա ցույց են տրվում նստվածքների տեսակները (ավազային, կավային և այլն) և դրանց որոշ հատկանիշներն ու առանձնահատկությունները: Առաջին կարծիքի համաձայն կազմված Ք. ք-ն առավել ընդունելի են:

**Л-123. ЛИТОРАЛЬ** (լատ. litoralis – առափնյա, մերձափնյա) – **ՄԵՐՉԱՓՆՅԱ ԾՈՎԱՅՍԱԿ (ԼԻԹՈՐԱԿ), LITTORAL**, ծովի հատակի էկոլոգիական մարզ, որը մակընթացության ժամանակ ծածկվում է ջրով, իսկ տեղատվության ժամանակ չորանում է: Տեղաբաշխված է ջրի տեղատվության ամենացածր և մակընթացության ամենաբարձր մակարդակների միջև: Լիթորալ զոնայի կրճատ անվանումն է:

**Л-124. ЛИТОРАЛЬНАЯ ФАУНА – ՄԵՐՉԱՓՆՅԱ ԾՈՎԱՅՍԱԿԱԿՅԻՆ (ԼԻԹՈՐԱԿ) ՖԱՈՒՆԱ, LITTORAL FAUNA**, մերձափնյա ծովահատակում ապրող կենդանիների համակցություն: Մ. ծ.ֆ-ի կազմի մեջ մտնում են շատ անողնաշարավորներ (սպունգներ, աղեխորշավորներ, որդեր, խեցգետնակերպեր, փափկամարմիններ, մամռակերպեր, փշամորթներ և այլն), ձկներ: Դրանց համար բնորոշ է հարմարվողականությունը՝ պարբերաբար ապրելու օդում, դիմանալու օրական ջերմաստիճանի ու աղայնության տատանումներին, ալեկոծությանը, արևի ուղղակի ճառագայթմանը:

**Л-125. ЛИТОРАЛЬНАЯ ФЛОРА – ՄԵՐՉԱՓՆՅԱ ԾՈՎԱՅՍԱԿ(ԱՅԻՆ) (ԼԻԹՈՐԱԿ) ՖԼՈՐԱ, LITTORAL FLORA**, կազմված է հիմնականում գետնին կպած կանաչ, գորշ, կարմիր և կապտականաչ ջրիմուռներից:

**Л-126. ЛИТОРАЛЬНЫЕ ОТЛОЖЕНИЯ – ՄԵՐՉԱՓՆՅԱ ԾՈՎԱՅԱՏԱՎԱՅԻՆ (ԼԻՊՈՐԱԼ) ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, LITTORAL DEPOSITS**, ծովի կամ օվկիանոսի մակընթացատեղատվության (լիթորալ) զոնայի նստվածքներ: Ըստ կազմի խիստ բազմազան են՝ գլաքարեր, ճալաքարեր (տարբեր աստիճանի մշակված), կոպիճ, ավազ, տղմային նստվածքներ, երբեմն դիտվում է օրգանական մնացորդների բարձր պարունակություն: Ժամանակակից Մ. ծ. ն. հանդիպում են միայն նեո զոնայի սահմաններում: Հին Մ. ծ. ն. ձևավորվել են ափային զծի տեղաշարժման պայմաններում: Տրանսգրեսիաների ժամանակ դրանք թաղվել են ծովային նստվածքների տակ: Լավ պահպանվում են կտրվածքներում, տեղադրված են խիստ աններդաշնակ տարբեր ծագման ավելի հին ապարների վրա: Մ. ծ. ն-ի հետ կապված են ցրոնային հնքվեր:

**Л-127. ЛИТОСТРАТИГРАФИЧЕСКОЕ ПОДРАЗДЕЛЕНИЕ – ՔԱՐԱՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՍՏՐԱՐԱԺԱՆՈՒՄ, LITHOSTRATIGRAPHIC UNIT, ROCK-STRATIGRAPHIC UNIT**, ապարների ստորաբաժանում, որի հիմքում ընկած են քարաբանական և ցանկացած ֆիզքիմ. հատկանիշները: Ք. ս-ները շերտագրական ստորաբաժանումներ չեն, դրանք առանձնացվում են քարտեզագրական նպատակահարմարության սկզբունքից ելնելով:

**Л-128. ЛИТОСФЕРА (հուն. lithos – քար և spháira – գունդ) – ՔԱՐՈՒՈՐՏ (ՔԱՐԱՊՈՍՅԱՆ, ԼԻՊՈՍՖԵՐԱ), LITHOSPHERE**, «կարծր» Երկրի վերին, համեմատաբար ամուր պատյան, որն ընդգրկում է երկրակեղևը և ներքնադիր վերին միջնապատյանի (վերին մանտիայի) վերին մասը, տեղաբաշխված է ավելի պակաս մածուցիկ և ավելի պլաստիկ ասթենոսֆերայի վրա: Ք-ի ստորին սահմանը կտրուկ չէ և անջատվում է մածուցիկության, երկրաշարժական ալիքների արագության նվազեցման և էլեկտրահաղորդականության մեծացման հիման վրա: Ք-ի և ասթենոսֆերայի միջև սահմանը բացահայտվում է երկրաշարժագիտական և մագնիսաթելուրական մեթոդներով: Օվկիանոսային լեռնաշղթաների տակ է), մայր ցամաքների տակ՝ 25-200 կմ է (առավելագույնը հին պլատֆորմների վահանների տակ է): Երկրբ. ժամանակի ընթացքում Ք-ի հաստությունը (միջին) մեծացել է՝ կապված ջերմային հոսքի նվազեցման հետ: Ք-ի ամենախոշոր կառուցվածքային տարրերը հանդիսանում են քարոլորտի սալերը, որոնց չափերը տրամաչափում կազմում են 1-10 հազ. կմ: Ժամանակակից դարակարգում Ք. բաժանված է 7 գլխավոր և մի քանի ավելի փոքր սալերի: Սալերի սահմանները հանդիսանում են տեկտ., երկրաշարժական և հրաբխային ակտիվության զոնաներ, տե՛ս Тектоника плит, Геодинамика:

**Л-129. ЛИТОСФЕРНЫЕ ПЛИТЫ – ՔԱՐՈՒՈՐՏԻ ՍԱԼԵՐ, LITHOSPHERIC PLATES**, քարոլորտի խոշոր կոշտ բեկորներ, որոնք միմյանցից անջատված են տեկտ. բեկվածքներով (կարերով)՝ Երկրի երկրաշարժական գոտիների առանցքային գծերով: Ըստ «Նոր գլոբալ տեկտոնիկայի» (սալերի տեկտոնիկայի) պատկերացումների՝ սալերը գտնվում են մշտական շարժման մեջ, տեղաշարժվելով ասթենոսֆերայի վրայով ձգման զոնաներից (միջինօվկիանոսային լեռնաշղթաներից) դեպի սեղմման զոնաները (բենիոֆի զոնաներ), որտեղ Ք. ս., ընդհարվելով միմյանց, ենթարկվում են ենթաշարժի (սուբդուկցիայի) կամ վրաշարժի (օբդուկցիայի) մայր ցամաքի եզրի նկատմամբ: Ք. ս. կարող են միմյանց նկատմամբ տեղաշարժվել նաև տրանսֆորմ բեկվածքների երկայնքով:

**Л-130. ЛИТОФИЛЬНЫЕ ЭЛЕМЕНТЫ (հուն. lithos – քար և philéō – սիրում եմ) – ՔԱՐԱՍԵՐ ՏԱՐՐԵՐ, LITHOPHILE ELEMENTS**, ըստ Վ. Գոլդշմիդտի՝ երկրաքիմ. դասակարգման քիմ. տարրեր, որոնք կազմում են երկրակեղևի զանգվածի մոտ 93%-ը և օվկիանոսային ջրի աղային կազմի զանգվածի մոտ 97%-ը: Դրանց են պատկանում Li, Be, B, C, O, F, Na, Mg, Al, Si, P, Cl, K, Ca, Ti և այլն:

- Л-131. ЛИТОХИМИЧЕСКИЕ ПОИСКИ – ԲԱՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ, LITHO-CHEMICAL PROSPECTING**, օգտ. հնժ-ների հնքվ-երի որոնման երկրք. մեթոդներ, որոնք հիմնված են արմատական ապարներում կամ փուխր գոյացություններում քիմ. տարրերի՝ ֆոնի համեմատությամբ բարձրացված կամ ցածրացված կուտակումների բացահայտման վրա:
- Л-132. ЛИХВИНСКОЕ МЕЖЛЕДНИКОВЬЕ** [Տուլայի մարզի Լիխվին (այժմ Չեկալին) քաղաքի անունից] – **ԼԻԽՎԻՆՅԱՆ ՄԻՋՍԱՈՑԱԴԱՇՏԱՅԻՆ ԴԱՐԱԿԱՐԳ, LIKHVIN INTERGLACIAL**, միջսառցադաշտային դարակարգ, որը բաժանում է Արևելաեվրոպական հարթավայրի՝ օկայի ու դնեպրի սառցապատումները:
- Л-133. ЛЛАНВИРНСКИЙ ЯРУС, ЛЛАНВИРН** [Ուելսի Լլանվիրն տեղանքի անունից (Անգլ.)] – **ԼԼԱՆՎԻՐՆՅԱՆ ՅԱՐԿ, ԼԼԱՆՎԻՐՆ, LLANVIRNIAN**, օրդովիկի համակարգի ներքևից երրորդ հարկ:
- Л-134. ЛЛАНДЕЙЛОВСКИЙ ЯРУС, ЛЛАНДЕЙЛО** [Ուելսի Լլանդեյլո ք-ի անունից, (Անգլ.)] – **ԼԼԱՆԴԵՅԼՅԱՆ ՅԱՐԿ, ԼԼԱՆԴԵՅԼ, LLANDEILIAN**, օրդովիկի համակարգի ներքևից չորրորդ հարկ:
- Л-135. ЛЛАНДОВЕРИЙСКИЙ ЯРУС, ЛЛАНДОВЕРИ** [Ուելսի Լլանդովերի ք-ի անունից, (Անգլ.)] – **ԼԼԱՆԴՈՎԵՐԻՅԱՆ ՅԱՐԿ, ԼԼԱՆԴՈՎԵՐԻ, LLANDOVERIAN**, սիլուրի համակարգի ներքևից առաջին հարկ:
- Л-136. ЛОВУШКА НЕФТИ И ГАЗА – ՆԱՎԹԻ ԵՎ ԳԱԶԻ ԾՈՒՂԱԿ, OIL AND GAS TRAP**, հավաքիչի (կոլեկտորի) մաս, որի տեղադրման պայմանները և փոխհարաբերությունը էկրանային ապարների հետ ապահովում են նավթի ու գազի կուտակումը ու երկարատև պահպանումը: Ծուղակի տարրերն են՝ նավթի ու գազի հավաքիչը, ծածկանը, էկրանը: Ըստ որոնողական ու ծագումնաբանական հատկանիշների՝ առանձնացնում են կամարային ծուղակներ (կամարածալքի կամարային մաս, աղային գմբեթներ, դիապիրներ և ողողամաշման ելուստներ, խութային զանգվածներ) և էկրանացած տիպի ծուղակներ (կամարածալքերի թևեր, ֆլեքսուրաներ, մենաթեքվածքներ՝ քարաբանական կամ ջրադինամիկ էկրանների առկայության դեպքում): Ըստ էկրանի ծագման՝ առանձնացնում են տեկտ., շերտագրական, քարաբանական, ջրադինամիկական ծուղակներ:
- Л-137. ЛОГ**, տե՛ս Балка:
- Л-138. ЛОЖБИНА – ՉՈՐԱԿ, LINEAR DEPRESSION, HOLLOW**, ռելիեֆի ձգված մեղմաթեք լանջերով բացասական ձևերի ընդհանուր անվանում: Ըստ ծագման՝ Չ-ները կարող են լինել ողողային, էոլյան, կարստային:
- Л-139. ЛОЖБИНЫЕ ОЗЁРА – ՉՈՐԱԿԱՅԻՆ ԼՇԵՐ, SUBGLACIAL CHANNEL LAKES**, չորրորդական սառցապատումների եզրային զոնաների հալվող սառցադաշտի հին ջրհոսքերի ցածրացված հովիտներն զբաղեցնող լճեր: Հաճախ տեղաբաշխված են շղթայաձև՝ միմյանց միանալով հոսքերով:
- Л-140. ЛОЖЕ ЛЕДНИКА – ՍԱՈՑԱԴԱՇՏԻ ՄԱՅԻՃ, BED OF GLACIER**, արմատական ապարների մակերևույթ, որի վրա պառկած է սառցադաշտի մարմինը:
- Л-141. ЛОЖЕ ОКЕАНА – ՕՎԿԻԱՆՈՍԻ ՄԱՅԻՃ, FLOOR OF OCEAN, SEA FLOOR, DEEP-SEA FLOOR**, Համաշխարհային օվկիանոսի հատակի ռելիեֆի և երկրք. կառուցվածքի գլխ. տարրերից մեկը, որը զբաղեցնում է Երկրի մակերևույթի ամենացածր մակարդակը (մինչև 6-7 հազ. մ խորությամբ), տեղաբաշխված է մայրցամաքային լանջի և միջինօվկիանոսային լեռնաշղթաների միջև: Ունի օվկիանոսային տիպի կեղև, աչքի է ընկնում ժամանակակից հրաբխականության ու երկրաշարժականության թույլ արտահայտությամբ, երկրակեղևի ուղղաձիգ շարժումների փոքր արագությամբ, տե՛ս Талассократон, Абиссальная равнина:

- Л-142. ЛОКАЛЬНАЯ МОРЕНА** (լատ. localis – տեղային) – **ՏԵՂԱՅԻՆ ՍԱՌՑԱԲԵՐՈՒԿ (ՄՈՐԵՆ)**, **LOCAL MORaine**, հիմնական սառցաբերուկ, որը կազմված է առավելապես տեղային արմատական ապարներից:
- Л-143. ЛОКАЛЬНОЕ НЕСОГЛАСИЕ, МЕСТНОЕ НЕСОГЛАСИЕ – ՏԵՂԱՅԻՆ ԱՆՆԵՐ-ԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ, LOCAL UNCORFORMITY**, ապարների աններդաշնակ տեղադրում, որն արտահայտվում է սահմանափակ չափեր ունեցող տեղամասերում:
- Л-144. ЛОПАРИТ** (Կոլա թերակղզում ապրած լոպարներ ժողովրդի անունից) – **ԼՈՊԱՐԻՏ, LOPARITE**, միներալ բարդ օքսիդների ենթադասից, ցերիումի և այլ թեթև լանտանոիդների միոբիումատիտանատ, քիմ. կազմը  $(\text{Na,Ce,Ca})_2(\text{Ti,Nb})_2\text{O}_6$ , բյուրեղանում է մոնոկլինային համակարգում: Փխրում է, գույնը ծյուֆի սև, հազվադեպ՝ գորշ, փայլը՝ ապակու մինչև մետաղական: Կարծրությունը՝ 5.5-6.5: Ծագումը մագմայական է, սովորաբար հանդիպում է նեֆելինային սիենիտներում: Խոշոր կուտակումները Ta-ի, Nb-ի, Th-ի, Ti-ի արժեքավոր հումք են:
- Л-145. ЛОПОЛИТ** (հուն. lopás – թաս և lithos – քար) – **ԼՈՊՈԼԻԹ, LOPOLITH**, խոշոր ներժայթքային (հնտրուզիվ) թասածև մարմին, որը ներքևում ունի արտաբերող փողրակ: Լ. սովորաբար տեղադրված է ներդաշնակ ներփակող ապարների շերտերի հետ: Բաղկացած է գլխ. հիմքային կազմի ապարներից:
- Л-146. ЛУДЛОВСКИЙ ЯРУС, ЛУДЛОУ** (Շրոպշիր կոնսուբյան Լուդլոու, ճիշտը՝ Լադլոու, Ludlow, ք-ի անունից, Անգլ.) – **ԼՈՒԴԼՈՎՅԱՆ ՅԱՐԿ, ԼՈՒԴԼՈՒ, LUDLOW**, սիլուրի համակարգի ներքևից երրորդ հարկ:
- Л-147. ЛУНА – ԼՈՒՄԻՆ, MOON**, Երկրի միակ բնական արբանյակն է, պտտվում է մրա շուրջը էլիպսածև ուղեծրով՝ միջինը 384 հազ. կմ հեռավորությամբ: Լ-ի շառավիղը 1738 կմ է: Մակերևույթում ջերմաստիճանը +130-ից մինչև -170°C է, միջին խտությունը 3350 կգ/մ<sup>3</sup> է: Լ-ի մակերևույթը լեռնոտ է, ծածկված է բազմաթիվ խառնարաններով [գլխ. հարվածական (երկնաքարային) ծագման]: Լ-ի գրունտը (ռեզոլիթ) կազմված է մանրահատիկային բեկորափոշակերպ նյութից:
- Л-148. ЛУННЫЙ КАМЕНЬ – ԼՈՒՄՆԱՔԱՐ, MOONSTONE**, ցանկացած կազմի ծիածանվող դաշտային սպաթ:
- Л-149. ЛУЧИСТЫЙ КОЛЧЕДАН – ՃԱՈՒԳԱՅԹԱՎՈՐ ՅՐԱՔԱՐ**, նույնն է՝ Марказит:
- Л-150. ЛЮМИНЕСЦЕНТНЫЙ АНАЛИЗ (МИНЕРАЛОВ И РУД) – ԼՅՈՒՄԻՆԵՍԵՆՏԵՆՏԱՅԻՆ (ԼՈՒՄԻՆՉԱԿԱՅԻՆ) ՏԱՐՐԱԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ (ՄԻՆԵՐԱԼՆԵՐԻ և ՅԱՆՔԱՔԱՐՆԵՐԻ), LIMINESCENT ANALYSIS**, ուսումնասիրության մեթոդների հիմքում ընկած է անդրամանուշակագույն, ռենտգենյան, էլեկտրոնային ճառագայթների ազդեցության տակ, ինչպես նաև տաքացներիս (նախապես ենթարկելով իոնացնող ճառագայթահարման) ուսումնասիրվող առարկայի լուսարձակելու ունակությունը: Լ. տ. սովորաբար կատարվում է սպեկտրի տեսանելի մասում: Կարևոր լյումինեսցենտող միներալներ են՝ ալմաստը, կինովարը, սֆալերիտը, ֆլյուորիտը, քվարցը, կորունդը, շպինելը, կասիտերիտը, դաշտասպաթները, փայլարները, ցիրկոնը, ապատիտը, կալցիտը, շեելիտը, անհիդրիդը, բարիտը:
- Л-151. ЛЮТЕТСКИЙ ЯРУС** (Փարիզի՝ լատ. Լյուտեցիա, lutetia, անվանումից) – **ԼՅՈՒՏԵՏՅԱՆ ՅԱՐԿ, LUTETIAN**, Արմ. Եվրոպայի եղեմի ներքևից երկրորդ հարկ:

# M

**M-1. МААР** (գերմ. Maar) – **ՄԱԱՐ, ԶՐԱՔԻԱՓՈՍ, MAAR**, հրաբխային ծագման ծագարած կամ գլանաձև հարթահատակ խորացում (խառնարան)՝ տրամագիծը մինչև 3200 մ, խորությունը՝ 300-400 մ: Երկրի մակերևույթում գոյանում է հրաբխի գազային պայթման ժամանակ, որը չի ուղեկցվում լավայի արտավիժմամբ: Խոնավ կլիմայական պայմաններում հաճախ լցվում է ջրով:

**M-2. МААСТРИХТСКИЙ ЯРУС, МААСТРИХТ** (Յոլանդիայի Մասստրիխտ, Maast-richt, ք-ի անունից) – **ՄԱԱՍՏՐԻԽՏԻ ԶՐԿ, ՄԱԱՍՏՐԻԽՏ, MAESTRICHTIAN**, կավճի համակարգի վերին բաժնի ներքևից վեցերորդ հարկ:

**M-3. МАГМА** (հուն. μάγμα – թանձր քուլք, շփոթ) – **ՄԱԳՄԱ (ՅՐԱՅԵՂՈՒԿ), MAGMA**, երկրի խորքային զոնաների հալված, հրահեղուկ, առավելապես սիլիկատային զանգված: Բազմաթիվ քիմ. տարրերի միացությունների բարդ լուծույթ է: Այդ տարրերի մեջ գերակշռում են թթվածինը, սիլիցիումը, ալյումինը, երկաթը, մագնեզիումը, կալցիումը, նատրիումը և կալիումը, երբեմն մի քանի տոկոս են կազմում ցնդող բաղադրամասերը (ջրեր, ածխածնի օքսիդներ, ծծմբաջրածին, ջրածին, ֆտոր, քլոր և այլն): Տիպիկ կատիոնների հետ միասին Մ-յում գտնվում են անիոններ՝ ներկայացված գլխ. թթվածնի հետ սիլիցիումի միացություններով: Մ. հազվադեպ ունենում է ոչ սիլիկատային կազմ՝ ալկալիակարբոնատային կամ սուլֆիդային: Մ. երկրակեղևում ներդրվելիս կամ մակերևույթին արտավիժելիս (լավա) առաջացնում է մագմայական ապարներ (տե՛ս Интрузивные горные породы, Эффузивные горные породы): Մ. երկրի տարբեր խորությունների սահմաններում պարբերաբար առաջացնում է առանձին օջախներ, օր.՝ ասթենոսֆերայում, որտեղ տեղի է ունենում միջնապատյանի ապարների մասնակի հալում: Սալերի տեկտոնիկայի տեսության համաձայն՝ Մ. առավելապես գոյանում է քարոլորտի սալերի ընդհարման և ենթաշարժման զոնաներում (Բենիոֆ-Չավարիցկու զոնաներ), սալերի տարաշարժման (ռիֆտային) զոնաներում և վերընթաց ջերմային հոսքերի զոնաներում (այսպես կոչված՝ տաք կետեր): Մ. կարող է առաջանալ երկու ուղիով՝ նախկինում գոյություն ունեցող ապարների լրիվ և կամ մասնակի հալման դեպքում, կամ չափաբաժիններով հալվելիս, որի դեպքում դյուրահալ հեղուկ մասնաբաժինները բաժանվում են չհալված պինդ մնացորդից: Մ-ի գլխ. տեսակներն են՝ բազալտային և գրանիտային: Մ-ի մեջ պարունակվող օգտակար բաղադրամասերը նրա բյուրեղացման գործընթացում կուտակվում են առանձին տեղամասերում՝ առաջացնելով ներծին հնքվ-եր:

**M-4. МАГМА БАЗАЛЬТОВАЯ – ԲԱԶԱԼՏԱՅԻՆ ՄԱԳՄԱ (ՅՐԱՅԵՂՈՒԿ), BASALTIC MAGMA**, մագմայական հալույթների ամբողջություն, որից առաջանում են տարբեր տեսակի բազալտներ և նրանց խորքային նմանակներ: Բ. մ. տարբերվում է ցածրացված մածուցիկությամբ. նրանից առաջացած լավային հոսքերը խիստ



շարժունակ են: Բազալտների կազմի միատեսակությունը, մեծ ծավալը և լայն տարածումը բոլոր երկրք. ժամանակներում վկայում են այն մասին, որ Բ. մ. մագմայական հալույթի հիմնական տեսակներից է:

**M-5. МАГМА ГРАНИТНАЯ**, տե՛ս Кислая магма:

**M-6. МАГМА ОСТАТОЧНАЯ – ՄԱՅՅՈՐՂԱՅԻՆ ՄԱԳՄԱ (ՅՐԱՅԵՂՈՒԿ), RESIDUAL MAGMA**, մագմա, որը մնում է մագմայական հալույթի գլխ. զանգվածի բյուրեղացումից հետո:

**M-7. МАГМА ПЕРВИЧНАЯ – ԱՈԱՋՆԱՅԻՆ (ՍԿՉԲՆԱԿԱՆ) ՄԱԳՄԱ (ՅՐԱՅԵՂՈՒԿ), PRIMARY MAGMA**, մագմա, որը գոյանում է երկրակեղևի խոր մասերում կամ վերին միջնապատյանում՝ խորքային հալումների գործընթացի ընթացքում: Որոշ հետազոտողներ որպես Ա. մ. դիտարկում են հիմքային և գերհիմքային կազմի մագման: Գրանիտային մագման համարվում է երկրորդային:

**M-8. МАГМАТИЗМ – ՄԱԳՄԱՅԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, MAGMATISM**, մագմայի գոյացման, նրա հետագա զարգացման, տեղաշարժման, պինդ ապարների հետ փոխհարաբերության և պնդացման գործընթացների համախմբություն: Մ. Երկրի խորքային ակտիվության կարևորագույն արտահայտություններից մեկն է: Կախված երկրք. պատմությունից և երկրակեղևի կառուցվածքների տեղադրությունից՝ տարբերում են շարժուն, լեռնագոյացման, պլատֆորմային և տեկտոնամագմայական ակտիվացման մարզերի Մ.: Ըստ արտահայտման խորության (մագմայի սառեցման)՝ տարբերում են՝ արբիսալ (խորքային), հիպարբիսալ (ենթախորքային), ենթահարբիսային, մակերևութային (հրաբխայնություն) Մ., ըստ բաղադրության՝ գերհիմքային, հիմքային, միջին, թթու և ալկալիական Մ. (տե՛ս Магматические горные породы): «Նոր գլոբալ տեկտոնիկայի» (սալերի տեկտոնիկա) կոնցեպցիայի համաձայն՝ Մ. արտահայտվում է հիմնականում քարոլորտի սալերի փոխգործունեության զոնաներում, դրանց տարաշարժման (ռիֆտային) զոնաներում և վերընթաց ջերմային հոսքերի (տաք կետերի) զոնաներում: Մ-յան արտահայտման առավել ուժգնությամբ բնորոշվում են ակտիվ մայրցամաքային ծայրամասերը (մայր ցամաք-օվկիանոս անցողիկ զոնան) և կղզեաղեղները: Մ-յան հետ կապած է բազմազան օգտ. հնժ-ների հնքվ-երի գոյացումը:

**M-9. МАГМАТИЗМ ГЕОСИНКЛИНАЛЬНЫЙ – ԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԼԱՅԻՆ (ԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԼԱՅԻՆ) ՄԱԳՄԱՅԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, GEOSYNCLINAL MAGMATISM**, կապված է երկրասինկլինալների խորասուզման կամ ծալքավոր մարզերի զարգացման վաղ փուլի հետ: Երբեմն այս տերմինը հասկացվում է ավելի լայն իմաստով՝ որպես ծալքավոր մարզերի զարգացման բոլոր փուլերի Մ-յան արտահայտման համախմբություն: Երբեմն Ե. մ-յան տակ հասկացվում է սկզբնական կամ ինիցիալ մագմայականություն: Այն սկսվում է հիմքային կազմի արտավիժումներով [գլխ. ստորջրյա (կերատոֆիր-սպիլիտ-դիաբազային և սպիլիտ-դիաբազային ֆորմացիաներ)], որին հետևում է ուլտրաբազիտների և գաբրոների ներդրումը (գաբրոպերիդոտիտային ֆորմացիա): Այս մագմայականությունը կոչվում է նաև «օֆիոլիթային մագմայականություն», որը բնորոշ է էվերկրասինկլինալներին: Ե. մ. ավարտվում է գաբրոների ու պլագիոգրանիտների ներդրմամբ և բազմաբնույթ լավաների (բազալտային պորֆիրներից մինչև դացիտները) արտավիժմամբ (անդեզիտային և բազալտային պորֆիրների ֆորմացիաներ): Ե. մ-յան այս բոլոր արտահայտությունները միավորվում են ծալքավոր մարզերի զարգացման վաղ (բուն երկրասինկլինալային) փուլի խմբում:

**M-10. МАГМАТИЗМ ИНИЦИАЛЬНЫЙ**, նույն է՝ Магматизм начальный:

- M-11. МАГМАТИЗМ КОНЕЧНЫЙ (ФИНАЛЬНЫЙ) – ՎԵՐՋՆԱԿԱՆ (ԱՎԱՐՏԱՅԻՆ) ՄԱԳՄԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, FINAL MAGMATISM**, ըստ Շտիլեի (1940) առավելապես հիմքային հրաբխականություն, որն արտահայտվում է երկրակեղևի կայունացած տեղամասերում՝ կրատոններում: Տարածված է ինչպես բարձրացումներում, այնպես էլ՝ խորասուզված կրատոններում: Դրանք նախկին երկրասինկլինալային մարզերն են, որոնք իրենց երկրատեկտ. զարգացման վերջում վերածվել են կրատոնների, բազալտային հրաբխականությունը համապատասխանում է այդ զարգացման ավարտական՝ կրատոնային վիճակին: Ըստ ժամանակակից պատկերացումների՝ Շտիլեի Վ. մ. համապատասխանում է տեկտոնամագմայական ցիկլի զարգացման ուշ (կայունացված) փուլին կամ հետկայունացման ակտիվացման մագմայական ֆորմացիաներին:
- M-12. МАГМАТИЗМ НАЧАЛЬНЫЙ – ՍԿՋԲՆԱԿԱՆ ՄԱԳՄԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, INITIAL MAGMATISM**, բնորոշվում է ստորջրյա հրաբխածին ստվարաշերտերի (սպիլիտ-դիաբազային, անդեզիտային, քվարց-կերատոֆիրային ֆորմացիաներ) հզոր կուտակումներով և ներժայթքային (ինտրուզիվ) ֆորմացիաների (հիպերբազիտային, գաբրո-պլագիոգրանիտային, գաբրո-սիենիտային) սերիաների ուժգին արտահայտմամբ: Ս. մ. տիպական է էվերկրասինկլինալային շարժուն մարզերի համար և ուժգին արտահայտվում է դրանց զարգացման սկզբնական՝ խորասուզման փուլում, նույնն է՝ Магматизм инициальный:
- M-13. МАГМАТИЗМ ОРОГЕННЫЙ – ԼԵՆԱԳՈՅԱՑՄԱՆ (ՕՐՈԳԵՆ) ՄԱԳՄԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, OROGENIC MAGMATISM**, շարժուն գոտիների զարգացման գլխավոր ծալքավորությանը հաջորդող լեռնագոյացման փուլի մագմայականություն, որը բնորոշվում է ցամաքային, գլխ. կենտրոնական տիպի արտաժայթքվածքների և ենթախորքային (հիպաբիսալ) համագոյացությունների լայն զարգացմամբ: Լայնորեն զարգացած են թթու, միջին և թույլ ալկալիական արտաժայթքվածքները, գրանիտային, դիորիտային և սիենիտային ներժայթքվածքները (ինտրուզիվները): Շտիլեն այդ փուլի մագմայականությունը անվանում է սուբսելվենտ հրաբխականություն: Լեռնագոյացման փուլի վերջում սովորաբար նորից արտահայտվում է բազալտային ու տրախիբազալտային մագմայականությունը (ավարտային հրաբխականություն ըստ Շտիլեի): «Լ. մ.» տերմինը համեմատաբար քիչ է օգտագործվում, քանի որ լեռնագոյացման փուլի ծավալը և սահմանները տարբեր հետազոտողներ տարբեր կերպ են մեկնաբանում:
- M-14. МАГМАТИЗМ ОФИОЛИТОВЫЙ – ՕՖԻՈԼԻԹԱՅԻՆ ՄԱԳՄԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ORHIOLITE MAGMATISM**, սկզբնական գեոսինկլինալային բազալտոդային մագմայականություն, տե՛ս Офиолиты:
- M-15. МАГМАТИЗМ ПЛАТФОРМЕННЫЙ – ՊԼԱՏՖՈՐՄԱՅԻՆ ՄԱԳՄԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, PLATFORM MAGMATISM**, ծալքավոր մարզերի մագմայականությունից տարբերվում է արտահայտման ավելի փոքր ուժգնությամբ և արդյունքների ավելի մեծ բազմազանությամբ: Իրենից ներկայացնում է բացառապես հիմքային և ալկալիալիալիալի մագմայի ածանցյալներ: Պ. մ. տիպական է շարժուն պլատֆորմների համար և միշտ կապված է պլատֆորմի տեկտ. ռեժիմի խախտման հետ, որը պայմանավորված է բեկվածքներով շարժումների աշխուժացմամբ: Պլատֆորմներում տեկտ. շարժումների ակտիվացման փուլերը համընկնում են հարակից երկրասինկլինալների ծալքավորման փուլերի հետ: Պ. մ-յան համար բնորոշ է տարածության մեջ մագմայական գոյացությունների անհավասարաչափ տեղաբաշխումը:
- M-16. МАГМАТИЗМ СИНОРОГЕННЫЙ – ՅԱՄԱԼԵՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՄԱԳՄԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, SYNOROGENIC MAGMATISM**, ըստ Յ. Շտիլեի (1940)՝ լեռնագոյաց-

մանն ուղեկցող առավելապես սիալիկ մագմայականություն, ունի գրանիտակերպ բնույթ և արտահայտվում է երկու փուլերով՝ լեռնագոյացման գլխավոր փուլի մագմայականություն (ներդաշնակ տեղադրված գրանիտակերպեր, որոնք կապված են ռեգիոնալ փոխակերպության հետ) և ուշ լեռնագոյացման մագմայականություն (աններդաշնակ տեղադրված գրանիտներ և հպումային փոխակերպություն), որը հաջորդում է ծալքավորման գլխավոր փուլին, երբ ծալքագոյացման շարժումները թուլանում են, և մագմայի ներդրումը զգալի չափով պայմանավորվում է բեկորային տեկտոնիկայով:

**М-17. МАГМАТИЗМ СКЛАДЧАТОЙ ОБЛАСТИ – ԾԱԼՔԱՎՈՐ ՄԱՐԶԻ ՄԱԳՄԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, FOLDED AREA MAGMATISM**, սերտորեն կապված է բարձր տեկտ. ակտիվության հետ: Ծ. մ. մ-յան բնույթը և ուժգնությունը փոփոխվում են՝ կապված ծալքավոր մարզի հասակի, տիպի և զարգացման փուլի հետ: Տարբեր հասակի Ծ. մ-ի մ-յան ընդհանուր առանձնահատկությունը զարգացման ուղղվածությունն է հիմքային և գերհիմքայինից (երկրասինկլինալային խորասուզման փուլում) դեպի թթուն (գլխավոր ծալքավորման և բարձրացման փուլում) ու այնուհետև խառնակազմը (թթու և հիմքային)՝ ծալքավորության ավարտից և բեկվածքների առաջացումից հետո:

**М-18. МАГМАТИЗМ СУБСЕКВЕНТНЫЙ – ՍՈՒԲՍԵԿՎԵՆՏ ՄԱԳՄԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, SUBSEQUENT MAGMATISM**, ըստ Յ. Շտիլեի (1940)՝ հետլեռնագոյացման սիալիկ հրաբխականություն, որն ըստ ժամանակի՝ անմիջապես հաջորդում է համալեռնագոյացման (ավելի ճիշտ՝ ուշ լեռնագոյացման) պլուտոնիզմին և բնորոշում է հիմքի կվազիկրատոնային վիճակը: Շտիլեն հետլեռնագոյացման արտաժայթքումները ծագումնաբանորեն կապում էր համալեռնագոյացման ներժայթքումների հետ: Ս. մ. լրիվ համապատասխանում է հետծալքավոր ցամաքային ֆորմացիաների խմբին (անդեզիտային, լիպարիտային և այլն):

**М-19. МАГМАТИЧЕСКАЯ ФОРМАЦИЯ – ՄԱԳՄԱՅԱԿԱՆ ՖՈՐՄԱՑԻԱ (ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄ), VOLCANIC FORMATION, MAGMATIC FORMATION**, մագմայական ապարների բնական, կայուն խմբակցություն, որն օրինաչափորեն արտացոլվում է երկրակեղևի տարահասակ, բայց միատեսակ երկրատեկտ. կառուցվածքի զարգացման գործընթացում՝ որոշակի երկրբ. իրադրությունում, և այդ ընթացքում պահպանում է կազմի, ներքին կազմվածքի և շրջակա միջավայրի հետ փոխհարաբերությունների բնորոշ առանձնահատկությունները: Մ. ֆ. իր անվանումը ստանում է այն գերակշռող ապարի անունից, որը որոշում է նրա ապարագրական տեսքը (գրանիտային, բազալտային և այլն), կամ բարդ սերիայի առավել տիպական ներկայացուցիչների անունից (զաբրո-գրանիտային, բազալտ-ռիոլիթային և այլն): Ըստ երկրակեղևի երկրատեկտ. կառուցվածքների պատկանելիության՝ առանձնացնում են ծալքավոր մարզերի, պլատֆորմների, ավարտուն ծալքավորության հետկոնսոլիդացիոն ակտիվության զոնաների կամ պլատֆորմների եզրային մասերի Մ. ֆ-ներ: Ծալքավոր մարզերում Մ. ֆ-ները ստորաբաժանվում են ըստ զարգացման փուլերի (երկրասինկլինալային, ինվերսիոն և այլն): Սալերի տեկտոնիկայի կոնցեպցիայի համաձայն՝ ֆորմացիաները առանձնացվում են ըստ ձևավորման երկրադինամիկ պայմանների (կղզեաղեղների, ծայրամասային ծովերի, օվկիանոսային ռիֆտերի և այլն):

**М-20. МАГМАТИЧЕСКИЕ ГОРНЫЕ ПОРОДЫ – ՄԱԳՄԱՅԱԿԱՆ ԱՊԱՐՆԵՐ, MAGMATIC ROCKS, VOLCANIC ROCKS, IGNEOUS ROCKS**, առաջանում են մագմայի բյուրեղացման կամ պնդանալու հետևանքով: Առանձնացնում են ներժայթքային (ինտրուզիվ) ապարներ, որոնք գոյանում են երկրակեղևի ստվարաշերտում (օր.՝

գրանիտներ, սիենիտներ, դունիտներ և այլն), ունեն լիաբյուրեղային կառուցվածք, և արտաժայթքային (էֆուզիվ) ապարներ, որոնք առաջանում են մակերևութային լավայի արտավիժման հետևանքով, ունեն ապակենման և համեմատաբար հազվադեպ լիաբյուրեղային կառուցվածք (օր.՝ բազալտներ, անդեզիտներ և այլն): Մ. ա. սովորաբար բաղկացած են սիլիկատներից: Ըստ սիլիկատների պարունակության՝ անջատում են գերհիմքային ( $\text{SiO}_2 < 44\%$ ), հիմքային ( $\text{SiO}_2$  44-53%), միջին ( $\text{SiO}_2$  53-64%), թթու ( $\text{SiO}_2$  64-78%) Մ. ա.: Կախված ալկալիների պարունակությունից՝ յուրաքանչյուր խմբում առանձնացնում են նորմալ և ալկալիական շարքի ապարներ (օր.՝ սիենիտներ, ֆոնոլիթներ և այլն): Տարբեր տեսակի Մ. ա-ի հետ կապված են տարբեր օգտ. հնժ-ներ, օր.՝ թթու Մ. ա-ի հետ՝ անագ, վոլֆրամ, ոսկի, հիմքայինների հետ՝ պղինձ, գերհիմքայինների հետ՝ քրոմ, պլատին, միկել և այլն, ալկալիականների հետ՝ տիտան, ֆոսֆոր, ցիրկոնիում, հազվագյուտ հողեր և այլն:

**M-21. МАГМАТИЧЕСКИЕ МЕСТОРОЖДЕНИЯ – ՍԱԳՄԱՅԱԿԱՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, MAGMATIC DEPOSITS**, օգտ. հնժ-ների հանքակուտակներ, որոնք ձևավորվել են երկրի ընդերքում՝ իր կազմում արժեքավոր միներալների բարձրացված քանակություններ պարունակող մագմայական հալույթի սառեցման ու բյուրեղացման գործընթացում: Տարատեսակ հանքակուտակները ձևավորվում են ազգակից մագմայական ապարներում: Ըստ ծագման՝ տարբերում են լիքվացիոն, սեզրեզացիոն և հիստերոմագմայական Մ. հ.: Լիքվացիոն հնքվ-երը ձևավորվում են մագմայի սառեցման այն գործընթացում, երբ մագման բաժանվում է երկու չխառնվող հեղուկների: Դրանցից մեկը բաղկացած է օգտ. հնժ-ների նյութերից (օր.՝ սուլֆիդային պղինձ-միկելային հանքանյութեր): Մագմայի բյուրեղացման ընթացքում արժեքավոր միներալները կարող են մյուսներից ավելի վաղ անջատվել և խորասուզվել մագմայական օջախի հատակի վրա՝ առաջացնելով վաղմագմայական սեզրեզացիոն (կուտակումային) հնքվ-եր (օր.՝ քրոմի, տիտանի, երկաթի ոչ մեծ հնքվ-երը): Գազով հարուստ մագմայում բյուրեղացման ընթացքում օգտ. հնժ-ի նյութը կարող է կուտակվել դյուրահալ մնացորդային հալույթում և հետագա պնդացման դեպքում առաջացնել ուշ մագմայական (հիստերոմագմայական) հնքվ-եր (օր.՝ տիտանամագնետիտի, քրոմիտի, տանտալի և այլ տարրերի հնքվ-երը):

**M-22. МАГМАТИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ ПОИСКОВ – ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ ՍԱԳՄԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ, MAGMATIC PROSPECTING CRITERIA**, տեսականորեն դիտարկվում է շրջանի օգտ. հնժ-ների հնքվ-երի օրինաչափ կապը (ծագումնաբանական, տարածական տեղաբաշխման և այլն) մագմայականության հետ, որն օգտագործվում է որոնումների ուղղորդման համար:

**M-23. МАГМАТОГЕННЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ – ՍԱԳՄԱՅԱԾԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, նույնն է՝ Эндогенные месторождения:**

**M-24. МАГНЕЗИТ** (ֆրանս. magnésite, նոր լատ. magnesia-ից, մագնեզիա, հուն. Magnesia – Փոքր Ասիայի հին ք-ի անունից) – **ՍԱԳՆԵՉԻՏ, MAGNESITE, MAGNESIUM CARBONATE**. 1) միներալ կարբոնատների դասից,  $\text{MgCO}_3$ , բյուրեղանում է տրիգոնային համակարգում: Ազրեզատներում սովորական են խառնուրդները (ածխային նյութ, սիլիկատների միներալներ, մագնեզիումի սիլիկատներ): Բյուրեղները (շեղանկյան և հատվածակողմային համակցություն) հազվադեպ են: Ավելի տարածված են հատիկավոր զանգվածները (կոպտահատիկավորից մինչև գաղտնաբյուրեղային ճենապակենման): Գույնը՝ ձյան սպիտակ, մոխրագույն, դեղնավուն, վարդագույն: Կարծրությունը՝ 4-7, Մ. ըստ ծագման՝ վերնածնային (գերհիմքային ապարների հողմահարման կեղևում), ջրաջերմային-մետատոմատիկական և նստվածքային է: 2) Բյուրեղային ապար, որը կազմված է գլխ. մագնեզիտ միներալից:

**М-25. МАГНЕТИЗМ ЗЕМНОЙ**, տե՛ս Геомагнетизм:

**М-26. МАГНЕТИТ** (հնարավոր է հուն. Մագնեսիա, Magnesia, պատմ. մարզի անունից, գերմ. Magnetite, հուն. magnētis-ից – մագնիս), **МАГНИТНЫЙ ЖЕЛЕЗНЯК – ՄԱԳՆԵՏԻՏ, ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԵՐԿԱԹԱՔԱՐ, MAGNETITE, MAGNETIC IRON ORE**, միներալ բարդ օքսիդների ենթադասից,  $FeFe_2O_4$ : Բյուրեղանում է խորանարդային համակարգում: Կազմը և հատկությունները անկայուն են և կախված են առաջացման պայմաններից: Անջատման ձևերն են՝ մանրահատիկավոր համատարած զանգվածները, մանր ներփակվածքները, ութանիստ, հազվադեպ խորանարդային բյուրեղները: Հանդիպում են գնդաքարեր (տրամագիծը մինչև 10 սմ), թելավոր և մրուրային անջատումներ, բողբոջանման ագրեգատներ, օղիթներ: Գույնը՝ երկաթի սև, փայլը՝ մետաղի, կարծրությունը՝ 5.5-6: Ուժեղ մագնիսական է: Մ. մագմայական, փոխակերպային և նստվածքային ապարների տարածված ակցեսորային միներալ է: Խոշոր կուտակումները հանդիպում են երկաթային քվարցիտներում, սկառներում, կարբոնատիտներում, գաբրոային, գաբրո-պիրոքսենիտ-դունիտային ֆորմացիաներում: Մ. երկաթի կարևորագույն հանքաքարն է, զուգընթաց կորզվում են նաև Ti, V:

**М-27. МАГНИЕВЫЕ РУДЫ – ՄԱԳՆԵԶԻՈՒՄԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, MAGNESIUM ORES**, բնական միներալային գոյացություններ, որոնցից տնտեսապես նպատակահարմար և տեխնիկապես հնարավոր է մետաղային մագնեզիումի, նրա օքսիդների և այլ միացությունների կորզումը: Մ. հ-ի գլխավոր միներալներն ունեն նստվածքային ծագում, երկրորդայինները առաջանում են հողմահարման ու փոխակերպության ժամանակ: Ըստ արդյ. նշանակության նվազեցման՝ առանձնացնում են մագնեզիտների երեք ծագումնային տիպեր՝ ծովալճակածոլային, հիպերբազիտների հողմահարման կեղևի և լճային: Մագնեզիումը զգալի քանակներով մտնում է մոտ 100 միներալների կազմի մեջ: Անսպառ պաշարներ լուծված վիճակում կան ծովային ջրում: Մագնեզիումի հումք են հանդիսանում բրուսիտը, ֆորստերիտը, մագնեզիտը, սերպենտինը, տալկը, դոլոմիտը, բիշոֆիտը, լանգբեյնիտը և այլն:

**М-28. МАГНИЙ, Mg** (լատ. Magnesium) – **ՄԱԳՆԵԶԻՈՒՄ (ՄԱԳՆԵՍԻՈՆ), MAGNESIUM**, Մենդելեևի պարբերական համակարգի II խմբի քիմ. տարր: Մ. արծաթափայլ մետաղ է: Երկրի միջնապատյանի բնորոշ տարրերից է, որի դերը քարոլորտի վերին հորիզոններից դեպի ներքև նվազում է: Մ-ի կլարկը Երկրում 11.25 % է (ըստ զանգվածի): Բնության մեջ ազատ վիճակում չի հանդիպում: Մտնում է սիլիկատների, քլորիդների, կարբոնատների, սուլֆատների կազմի մեջ:

**М-29. МАГНИТНАЯ АНОМАЛИЯ – ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆ (ԱՆԲԱԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆ), MAGNETIC ANOMALY**, Երկրի մագնիսական դաշտի մեծության խտորումը նրա բնականոն արժեքից: Տարբերում են՝ մայրցամաքային Մ. ա. (մակերեսը 10-100 հազ. կմ<sup>2</sup>, օր.՝ Արևելասիբիրական), որը կապված է, ըստ երևույթին, Երկրի միջուկում նյութի շարժման առանձնահատկությունների հետ, ռեգիոնալ Մ. ա. (մակերեսը 1-10 հազ. կմ<sup>2</sup>), որը պայմանավորված է երկրակեղևի (գլխ. բյուրեղային հիմքի) կազմության առանձնահատկություններով, և տեղային (լոկալ) Մ. ա., որի գոյությունը պայմանավորված է երկրակեղևի վերին մասի անհամասեռ կազմությամբ (հաճախ կապված է օգտ. հնձ-ների հանքակուտակների հետ):

**М-30. МАГНИТНАЯ БУРЯ – ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՓՈՓՈՐԻԿ, MAGNETIC STORM**, Երկրի մագնիսական դաշտի ուժգին զրոգում, որը տևում է մի քանի ժամից մինչև մի քանի օր: Առաջանում է արևային քամու պարամետրերի փոփոխության դեպքում:

- M-31. МАГНИТНАЯ ВОСПРИИМЧИВОСТЬ – ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԱԿՈՒԹՅՈՒՆ, MAGNETIC SUSCEPTIBILITY**, բնորոշում է մագնիսական դաշտի ազդեցության տակ ապարների մագնիսացման ունակությունը, որը պայմանավորված է գլխ. ապարների մեջ ֆեռոմագնիսական միներալների ներփակվածքների պարունակությամբ (առավելապես տիտանամագնետիտային խմբի): Մ. ը-յան մեծության վրա ազդում են նաև ֆեռոմագնիսական միներալների ձևը և չափերը, հատիկների՝ միմյանց նկատմամբ ունեցած տեղաբաշխումը: Ընդհանրապես ամենաբարձր Մ. ը-յամբ բնորոշվում են երկաթային քվարցիտները (մինչև 0.2): Ներժայթքային (ինտրուզիվ) ապարներում, որոնցում երկաթի օքսիդների պարունակությունը մեծանում է հիմքայնության մեծացմանը զուգընթաց, Մ. ը. մեծանում է թթու տարատեսակներից դեպի հիմքայինները (գրանիտների մոտ չի անցնում  $10^{-5}$ -ից, գաբրոների մոտ հասնում է  $10^{-2}$ -ի):
- M-32. МАГНИТНАЯ СЕПАРАЦИЯ – ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՉԱՏՈՒՄ, MAGNETIC SEPARATION**, օգտ. հնժ-ների հարստացման եղանակ, որը հիմնված է հանքանյութերի բաղադրիչների մագնիսական հատկությունների տարբերության վրա: Նույնն է՝ մագնիսական հարստացում:
- M-33. МАГНИТНАЯ СЪЁМКА – ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹ, MAGNETIC SURVEY**, տարածության մեջ երկրի մագնիսական դաշտի խտորումը բնութագրող մեծությունների չափումներ: Չափում են երկրամագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորի գործակիցը (կամ նրա աճը) և կամ դաշտի ուղղաձիգ (հազվադեպ հորիզոնական) բաղադրիչի համեմատական մեծությունները: Տարբերում են օդամագնիսական հանույթ, ցամաքային Մ. հ., ջրամագնիսական հանույթ, ինչպես նաև ստր. փորվածքների ու հորատանցքերի Մ. հ.: Ցամաքային Մ. հ. կատարվում է 1:10 000 և ավելի խոշոր մասշտաբով, ավելի մանր մասշտաբի հանույթները կատարվում են օդատարբերակով:
- M-34. МАГНИТНОЕ НАКЛОНЕНИЕ – ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԹԵՔՈՒՄ, MAGNETIC INCLINATION, MAGNETIC DIP**, անկյունը երկրամագնիսական դաշտի լարվածության վեկտորի և հորիզոնի հարթության միջև:
- M-35. МАГНИТНОЕ ПОЛЕ ЗЕМЛИ**, տե՛ս Геоманнитное поле:
- M-36. МАГНИТНОЕ СКЛОНЕНИЕ – ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՀԱՎՈՒՄ, MAGNETIC DECLINATION**, երկրի մակերևույթի տվյալ կետում անկյունը մագնիսական և աշխ. միջօրեականների միջև: Հաշվվում է դրական, եթե մագնիսական սլաքի հյուսիսային ծայրը խտորվում է աշխ. միջօրեականից դեպի արևելք, և բացասական, եթե՝ դեպի արևմուտք:
- M-37. МАГНИТНЫЙ АЗИМУТ – ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԱՋԻՍՈՒՏ, MAGNETIC AZIMUTH**, երկրի մակերևույթի տվյալ կետում անկյունը մագնիսական միջօրեականի հարթության և ուղղաձիգ հարթության միջև, որն անցնում է այդ կետով և այն ուղղությունով, որի ազիմուտը որոշվում է:
- M-38. МАГНИТНЫЙ АНАЛИЗ – ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՏԱՐՐԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, MAGNETIC ANALYSIS**, մագնիսական դաշտում օգտ. հնժ-ների կորզման աստիճանի գնահատում՝ դրանց մագնիսական հարստացման հնարավորության ուսումնասիրման նպատակով:
- M-39. МАГНИТНЫЙ ЖЕЛЕЗНЯК**, տե՛ս Магнетит:
- M-40. МАГНИТНЫЙ КАРТАЖ – ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԿԱՐՈՏԱԺ, MAGNETIC LOGGING**, հորատանցքում երկրֆ. հետազոտման մեթոդ, որի հիմքում ընկած է ապարների մագնիսական ընկալունակության ուսումնասիրությունը: Մ. կ. կիրա-

ռուն են ճշտելու համար երկաթի հանքաքարերի (հիմնականում մագնետիտային կազմի) հանքակուտակների տեղադրման խորությունը և հաստությունը, դրանցում որոշելու երկաթի պարունակությունը, ինչպես նաև մագնիսահետախուզության տվյալների մեկնաբանման համար:

**M-41. МАГНИТНЫЙ КОЛЧЕДАН – ՍԱԳՆԻՍԱԿԱՆ ՀՐԱՔԱՐ**, նույնն է՝ Пирротин:

**M-42. МАГНИТНЫЙ МЕРИДИАН – ՍԱԳՆԻՍԱԿԱՆ ՄԻՋՕՐԵԱԿԱՆ, MAGNETIC MERIDIAN**, երկրամագնիսական դաշտի ուժագծի պրոեկցիան երկրի մակերևութի վրա: Մ. մ-ներն իրենցից ներկայացնում են բարդ կորեր, որոնք զուգամիտվում են հս. և հր. մագնիսական բևեռներում:

**M-43. МАГНИТОМЕТР – ՍԱԳՆԻՍԱԶՈՓ, MAGNETOMETER**, սարք, որն օգտագործվում է մագնիսական դաշտերի բնութագրերը և նյութերի (այդ թվում ապարների) մագնիսական հատկությունները չափելու համար: Մագնիսահետախուզությունում օգտագործվում են հիմնականում մագնիսամեխանիկական և ինդուկցիոն Մ-եր:

**M-44. МАГНИТОРАЗВЕДКА – ՍԱԳՆԻՍԱՅԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ, MAGNETIC PROSPECTING**, հետախուզության երկրֆ. մեթոդ, հիմնված է ապարների ու հանքանյութերի մագնիսական հատկությունների տարբերության վրա: Կիրառվում է երկրբ. հետազոտությունների բոլոր փուլերում և ընդգրկում է երկրի մագնիսական դաշտի կամ նրա տարրերի լարվածության չափումները, մագնիսական քարտեզների կազմումը, օգտ. հնձ-ների հնքվ-երի որոնումը, երկրբ. քարտեզահամումը, ապարների համադրումն ըստ մագնիսական հատկանիշների, ապարների հարաբերական հասակի որոշումը և մոլորակային տեկտոնիկայի հարցերը: Մ. ուսումնասիրում է երկրբ. մարմինների ստեղծած մագնիսական անկանոնությունները, որոնք մագնիսացված են երկրի ժամանակակից և հին մագնիսական դաշտերով: Ապարների մագնիսացումը որոշվում է նրանց մեջ ֆեռոմագնիսական միներալների (մագնետիտ, պիրոտին) առկայությամբ: Առանձնապես ուժգին մագնիսական անկանոնություններ են ստեղծում հիմքային և գերհիմքային հրային ապարները, մագնետիտային երկաթային հանքաքարերը: Մ-յան դեպքում չափումները կատարվում են երկրի մակերևութին, ինքնաթիռներից կամ ուղղաթիռներից (օդամագնիսական հանույթ), շարժվող նավերից (ջրամագնիսական հանույթ կամ ծովային Մ.), հորատանցքերում (հորատանցքային Մ.), հանքափորվածքներում (ստորգետնյա Մ.): Չափումների համար օգտագործվում են տարբեր տիպի մագնիսաչափեր: Մ. ինքնուրույն, ինչպես նաև երկրֆ. և երկրբ. մեթոդների հետ, կիրառվում է երկրակեղևի ռեգիոնալ խորքային կառուցվածքի ուսումնասիրման, երկաթի հանքաքարերի մագնիսական տարատեսակների, ինչպես նաև հիմքային ու գերհիմքային ապարների հետ կապված մետաղական և ոչ մետաղական հնքվ-երի, ակցեսորային մագնիսական միներալներ պարունակող զուևավոր, հազվագյուտ, ազնիվ մետաղների որոնման և երկրբ. քարտեզագրման համար:

**M-45. МАГНИТОСФЕРА** (հուն. magnētis – մագնիս և spháira – գունդ) – **ՍԱԳՆԻՍՈՒՈՐՏ, MAGNETOSPHERE**, մերձերկրյա տարածության մարզ, որի ֆիզ. հատկությունները որոշվում են երկրի մագնիսական դաշտով և նրա փոխգործունեությամբ՝ տիեզերական լիցքավորված մասնիկների հետ: Երկրի Մ. ցերեկային կողմից տարածվում է 8-14 երկրային շառավիղ հեռավորությամբ, գիշերային կողմից ձգված է՝ առաջացնելով, այսպես կոչված, Երկրի պոչը՝ մի քանի հարյուր շառավիղ հեռավորությամբ:

**M-46. МАГНИТУДА ЗЕМЛЕТРЯСЕНИЯ** (լատ. magnitudo – մեծություն) – **ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՈՒԺԱՍՏԻՃԱՆ (ՍԱԳՆԻՏՈՒԴ), MAGNITUDE OF EARTHQUAKE**, պայմանական մեծություն, որը բնութագրում է երկրաշարժերի կամ պայթյունների

հետևանքով առաջ եկող առաձգական տատանումների ընդհանուր էներգիան: Ե. ու. երկրաշարժի ժամանակ գետնի մասնիկների տեղափոխության մեծության միջոցով երկրաշարժի ուժի գնահատման չափն է. ինչքան մեծ է երկրաշարժի ժամանակ գետնի մասնիկների տեղափոխությունների աստիճանը, այնքան մեծ է Ե. ու., այսինքն՝ այնքան մեծ է երկրաշարժը: Երկրաշարժի առավելագույն ուժաստիճանը կազմում է մոտավորապես 9, որը համապատասխանում է  $10^{19}$ Ջ էներգիայի:

**M-47. МАДЛЕН, МАДЛЕНСКАЯ КУЛЬТУРА** (Լա Մադլեն, La Madeleine. քարայրի անունից, Ֆրանս.) – **ՄԱԴԼԵՆ, ՄԱԴԼԵՆՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ, MAGDALENIAN**, ուշ քարի դարի վերջի հնագիտական մշակույթ: Առաջին անգամ առանձնացվել է ֆրանսիայում: Բնորոշվում է հարուստ և բազմատեսակ քարե և ոսկրե գույքով, որսատեգերի, զարդաքանդակ ոսկորների, խեցիներից պատրաստված զարդերի առկայությամբ: Համապատասխանում է ուշ սառցադաշտային ժամանակին (16-10 հազ. տ. առաջ):

**M-48. МАКРО...** (հուն. makrós – մեծ, խոշոր, երկար) – **ՄԱԿՐՈ..., ՄԵԾԱ..., ԽՈՇՈՐԱ..., МАСRО...**: Բարդ բառերի սկզբնամաս, որ ցույց է տալիս որևէ բանի խոշոր չափերը:

**M-49. МАКРОБЕНТОС – ԽՈՇՈՐԱԲԵՆԹՈՍ (ԽՈՇՈՐԱՅԱՏԱԿԱՐԵԱԿ, ՄԱԿՐՈԲԵՆԹՈՍ), MACROBENTHOS**, անգեն աչքով տեսանելի օրգանիզմներ, որոնք ապրում են ջրավազանների հատակի վրա կամ հատակի գրունտում:

**M-50. МАКРОПЛАНКТОН** (հուն. makrós – մեծ, խոշոր և պլանկտոն) – **ԽՈՇՈՐԱՊԼԱՆԿՏՈՆ (ՄԱԿՐՈՊԼԱՆԿՏՈՆ), MACROPLANKTON**, պլանկտոնի կազմի մեջ մտնող խոշոր օրգանիզմներ (մեղուզաներ, որոշ խեցգետնակերպեր, պլանկտոն ձկներ և այլն):

**M-51. МАКРОПОРИСТОСТЬ – ԽՈՇՈՐԱԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅՈՒՆ (ՄԱԿՐՈԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅՈՒՆ), MACROPOROSITY**, անգեն աչքով դիտվող խոշոր ծակոտիներ, որոնք կազմում են ապարի ծակոտիների ընդհանուր ծավալի 15-60 %-ը: Մ. բնորոշ է լյոսերին ու լյոսանման ապարներին, էապես բարձրացնում է նրանց ջրափանցելիությունը և սեղմելիությունը:

**M-52. МАКРОРЕЛЬЕФ – ՄԱԿՐՈՐԵԼԻԵՖ (ՄԵԾԱՐԵԼԻԵՖ), MACRORELIEF**, ցամաքի, օվկիանոսների ու ծովերի հատակի ռելիեֆի խոշոր ձևեր, բարձրությունների մի քանի հարյուր մ-ից մինչև մի քանի հազ. մ տատանումներով (լեռնաշղթաներ, միջլեռնային իջվածքներ, դաշտավայրեր և այլն):

**M-53. МАКРОСΚΛΑΔΚΑ – ՄԵԾԱԾԱԼՔ, MACROFOLD**, կեղևային տիպի ամենամեծ ծռվածք, որում հատակը կազմող ապարների ձևը համապատասխանում է առաստաղի ձևին:

**M-54. МАКРОСКОПИЧЕСКИЙ – ԱԿՍԱԴԻՏԱԿԱՆ (ՄԱԿՐՈՍԿՈՊԻՍԿՈՊԻՍԿԱՆ), MACROSCOPIC**, անգեն աչքով երևացող:

**M-55. МАКРОСТРУКТУРА – ՄԱԿՐՈԿԱՆՈՒՑՎԱԾՔ, MACROSTRUCTURE**, կառուցվածք, որի դեպքում ապարի առանձին բյուրեղային կամ բեկորային հատիկները նկատելի են անգեն աչքով:

**M-56. МАКРОФАУНА – ՄԱԿՐՈՖԱՈՒՆԱ, MACROFAUNA**, երկրաբանության մեջ կենդանական աշխարհի այն բրածո մնացորդների ամբողջությունը, որոնց համակարգային պատկանելիությունը որոշելու համար չի պահանջվում օգտագործել օպտիկական միջոցներ (մանրադիտակ, բինոկուլյար և այլն): Տերմինը չի համապատասխանում օրգանիզմների որևէ բնական խմբի, չունի համակարգային նշանակություն: «Մ.» տերմինը խորհուրդ չի տրվում գործածել:

**M-57. МАКРОФАЦИИ** (հուն. makrós – մեծ, խոշոր և ֆացիաներ) – **ՄԱԿՐՈՖԱՑԻԱՆԵՐ, MACROFACIES**, առաջին կարգի կամ ամենախոշոր ֆացիաներ: Համապատասխանում են Դ. Նալիվկինի (1956) նիմիաներին (ճահճային, դելտային, սառցադաշտային և այլն), Ռուխինի (1961)՝ մեզոֆացիաներին:



**M-58. МАКСИМАЛЬНАЯ ГИГРОСКОПИЧНОСТЬ ПОРОДЫ – ԱՊԱՐԻ ԱՌՎԵԼԱԳՈՒՅՆ ՆԵՐԾՈՒԾ ԽՈՆԱՎԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ, MAXIMUM HYGROSCOPICITY OF ROCK,** ջրային գոլորշիների առավելագույն քանակ, որն ապարը ընդունակ է կլանել մթնոլորտից: Որոշվում է խոնավության կշռի և բացարձակ չոր ապարի կշռի հարաբերությամբ:

**M-59. МАКСИМАЛЬНАЯ МОЛЕКУЛЯРНАЯ ВЛАГОЁМКОСТЬ ГРУНТА – ԳՐՈՒՆՏԻ ԱՌՎԵԼԱԳՈՒՅՆ ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԽՈՆԱՎԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ, MAXIMUM MOLECULAR MOISTURE CAPACITY OF GROUND,** ներծուծ և թաղանթային ջրերի առավելագույն քանակ, որը պահվում է գրունտի մասնիկներով:

**M-60. МАКСИМАЛЬНОЕ КАПИЛЛЯРНОЕ ПОДНЯТИЕ – ԱՌՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԱՉԱՆՈՒԹՅՈՒՆ ԲԱՐՁՐԱՅՈՒՄ, MAXIMUM CAPILLARY RISE,** առավելագույն բարձրություն, որին ջուրը կարող է հասնել մազանոթային ուժերի շնորհիվ:

**M-61. МАЛАХИТ** (ֆրանս. malachite, հուն. maláche – մոլորշավարդ՝ տերևների գույնի նմանությամբ) – **ՄԱԼԱՔԻՏ (ԴԱՅԱՆԱՎ, ՄՈԼՈՇԱՔԱՐ), MALACHITE, GREEN COPPER,** միներալ կարբոնատների դասից,  $Cu_2(OH)_2(CO_3)$ : Բյուրեղային համակարգը մոնոկլինային է: Բյուրեղները հազվադեպ են: Սովորաբար առաջացնում է երկվամածն կեղևիկներ, շթաքարանման թելավոր կառուցվածքով ագրեգատներ, հողանման զանգվածներ: Գույնը՝ վառ կանաչ, փայլը՝ ապակու, ավնաստի, մետաքսի: Կարծրությունը՝ 3.5-4: Հանդիպում է պղնձի հնքվերի օքսիդացման զոնայում: Մ. օգտագործվում է որպես գեղազարդային քար և պղնձի հանքանյութ (պարունակում է մոտ 57% պղնձ), իսկ հողախառն՝ որպես ներկանյութ՝ «մալաքիտային կանաչ»:

**M-62. МАЛЬМ** (անգլ. malin) – **ՄԱԼՄ, MALM,** Մեծ Բրիտանիայի վերին յուրայի մերգելների ու ավազաքարերի տեղական անվանում: Օգտագործվում է որպես յուրայի համակարգի վերին բաժնի ընդհանուր անվանում:

**M-63. МАМОТ** (Mammuthus) – **ՄԱՄՈՆՍ, MAMMOTH,** փղերի ընտանիքի խոշոր մահացած կենդանիներ: Բնորոշվում են վերին պարուրածն կորացած խոշոր ժանիքներով, սեղանատամներով, որոնք ունեցել են լայնական կատարներ: Մարմինը ծածկված է եղել խիտ և երկար բրդով: Գոյություն են ունեցել պլեյստոցենում: Մ-ների մնացորդները հանդիսանում են ղեկավարող բրածոներ չորրորդական ցամաքային նստվածքների երկր. հասակը որոշելիս:

**M-64. МАНГАНИТ** (անվանումը ըստ կազմի, լատ. manganum-ից՝ մանգան) – **ՄԱՆԳԱՆԻՏ, MANGANITE,** միներալ,  $Mn^{3+}$ -ի օքսիհիդրատ,  $\gamma - MnOOH$ , բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է: Առաջացնում է նուրբ բյուրեղային, օղիթային, հատիկավոր ագրեգատներ, բյուրեղաբույլեր: Գույնը՝ մուգ գորշից մինչև սև, փայլը՝ կիսամետաղական: Կարծրությունը՝ 4: Ծագումը նստվածքային կամ ջրաջերմային (հիդրոթերմալ) է: Հանդիպում է նստվածքային հնքվերում պիրոլյուզիտի և ռոդոխրոզիտի ֆացիաների միջև, ցածր ջերմաստիճանային ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվերում՝ բարիտի, սիդերիտի, բրաունիտի հետ: Մանգանի կարևոր հանքանյութ է:

**M-65. МАНГАНОЛИТЫ – ՄԱՆԳԱՆԱՔԱՐԵՐ, ԱՐՋՆԱՔԱՐԵՐ, MANGANOLITES,** նստվածքային ապարներ և հանքանյութեր, որոնց գլխավոր բաղադրամասը մանգանի բնական օքսիդներն ու հիդրատներն են:

**M-66. МАНТИЯ ЗЕМЛИ** (միջին հուն. mantion – ծածկոց, թիկնոց) – **ԵՐԿՐԻ ՄԻՋՆԱՊԱՏՅԱՆ (ՄԱՆՏԻԱ, ԹԻԿՆՈՑԱՊԱՏՅԱՆ, ՄԻՋՆՈԼՈՐՏ), EARTH'S MANTLE,** «կարծր» երկրոլորտ, տեղաբաշխված է երկրակեղևի և միջուկի միջև: Կազմում է երկրի ծավալի 83 և զանգվածի 67 %-ը: Վերին սահմանը (Մոհորովիչիչի մակերևույթ) գտնվում է մի քանի կմ-ից (օվկիանոսների տակ) մինչև 70 կմ (մայր ցա-

մաքների տակ) խորություններում, ստորին սահմանը՝ 3900 կմ խորություններում: Բաժանվում է վերին (հաստությունը 800-900 կմ) և ստորին (հաստությունը մոտ 2000 կմ) միջնապատյանների: Ե. մ-ի նյութը, հավանաբար, գտնվում է պինդ բյուրեղային վիճակում, բացառությամբ՝ ասթենոսֆերայի: Ենթադրվում է, որ Ե. մ. կազմված է O-ի, Si-ի, Mg-ի և Fe-ի տարբեր կառուցվածքային խտության միացություններից, որոնք սինթեզվում են գերբարձր ճնշումների տակ: Ըստ խորության՝ հավանաբար մեծանում է ծանր տարրերի կուտակումը: Հիմնական դեր է խաղում օլիվինը: Ե. մ-ի ստորին հորիզոններում հնարավոր է միներալների մասնակի տրոհումը օքսիդների՝ նոր ավելի խիտ կառուցվածքների առաջացմամբ: Ե. մ-ի գործընթացների (տարբերակում ըստ խտության, ջերմային կոնվեկցիայի և այլն) հետ կապված են երկրակեղևում տեղի ունեցող տեկտ. շարժումները, մագմայականությունը և հրաբխականությունը: Տե՛ս նաև Земля, Верхняя мантия, Нижняя мантия:

**M-67. МАРГАНЕЦ, Mn** (գերմ. Manganerz-ից՝ մանգանի հանքանյութ, լատ. Manganum) – **ՄԱՆԳԱՆ (ԱՐՋՆԱՔԱՐ), MANGANESE**, տարրերի պարբերական համակարգի VII խմբի քիմ. տարր: Պարունակությամբ երկրակեղևում 11-րդ տարրն է (0.1 %), ուր ազատ վիճակում չի հանդիպում: Տարածված բազմաթիվ միներալներից կարևոր են պիրոլյուզիտը, մանգանիտը, գաուսմանիտը և այլն: Հողում, լճերում, ճահիճներում առաջացնում է երկաթամանգանային կուտակումներ (խոշոր կուտակումներ են հայտնաբերվել օվկիանոսների հատակում): Մ. սպիտակ, արծաթափայլ, փխրուն մետաղ է:

**M-68. МАРГАНЦЕВЫЕ КОНКРЕЦИИ – ՄԱՆԳԱՆԻ (ԱՐՋՆԱՔԱՐԻ) ԿՈՆԿՐԵՑԻԱՆԵՐ, MANGANESE NODULES**, միներալային ձգվածքներ, կազմված են մանգանի հիդրօքսիդներից ու կարբոնատներից: Հանդիպում են լճերի, ծովերի, օվկիանոսների հատակում և նստվածքային ապարներում:

**M-69. МАРГАНЦЕВЫЕ РУДЫ – ՄԱՆԳԱՆԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, MANGANESE ORES**, բնական միներալային գոյացություններ, պարունակում են մանգան այնպիսի քանակներով, որոնցից նրա կորզումը տնտեսապես նպատակահարմար է (սովորաբար ավելի քան 10 %): Գլխավոր միներալներն են՝ պիրոլյուզիտը, պսիլոմելանը, մանգանիտը, վերնադիտը, բրաունիտը, գաուսմանիտը: Ըստ ծագման՝ առավել մեծ նշանակություն ունեն նստվածքային հնքվ-երը: Դրանք ներկայացված են հին ծովերի կամ լճերի ավազաններում ձևավորված շերտավոր և ոսպնյակաձև կուտակներով: Փոխակերպային հնքվ-երը առաջանում են երկրի ընդերքում նստվածքային հնքվ-երի փոփոխության հաշվին՝ բարձր ջերմաստիճանի և ճնշման ազդեցությամբ: Հողմահարման հնքվ-երը կազմված են հզոր հին և ժամանակակից հողմահարման կեղևներից՝ նրանց մեջ մանգանի երկրորդային կոնցենտրացիայով:

**M-70. МАРГАРИТ** (հուն. margaites – մարգարիտ, ըստ սադափանման փայլի) – **ՄԱՐԳԱՐԻՏ, MARGARITE, BRITTLE MICA**, միներալ շերտավոր սիլիկատների դասից, բյուրեղանում է մոնոկլինային համակարգում: Անջատման ձևերը՝ թիթեղավոր, թեփուկավոր ագրեգատներ: Գույնը՝ մարգարիտի սպիտակ՝ դեղնավուն, վարդագույն, մոխրագույն երանգներով: Հերձականությունը խիստ կատարյալ է, փայլը՝ սադափանման: Փուխր է: Մ. առաջանում է փոխակերպության դեպքում և մտնում է տարբեր փոխակերպային թերթաքարերի կազմի մեջ: Հանդիպում է նաև հպումափոխակերպային հնքվ-երում և երկրորդային քվարցիտներում:

**M-71. МАРКАЗИТ** (ուշ լատ. marcasite, առաջնաաղբյուրը՝ պարսկ. մարգաշիշե–հրաքար) – **ՄԱՐԿԱԶԻՏ (ԼՈՒՍԱՔԱՐ), MARCASITE, WHITE IRON, PYRITE CELLULAR**, միներալ սուլֆիդների դասից, FeS<sub>2</sub>: Պիրիտի քիմ. նմանակ: Բյուրեղագիտական համակարգը շեղանկյունային է: Առաջացնում է միզակաձև, հաճախ բարդ

կրկնաբյուրեղներ, կատարանման մակաճումներ, կլորավուն կոնկրեցիաներ, սֆերոլիթներ կամ սև, մրախառն զանգվածներ: Գույնը՝ լատունի դեղին, փայլը՝ մետաղի: Կարծրությունը՝ 6-6.5: Առաջանում է ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվերում պիրիտի, պիրրոտիմի և այլ սուլֆիդների հետ միասին: Օգտագործվում է ծծմբաթթու ստանալու համար, նույնն է՝ Лучистый колчедан:

**M-72. МАРКИРУЮЩИЙ ГОРИЗОНТ, ОПОРНЫЙ ГОРИЗОНТ – ԲՆՈՐՈՇԻՉ ՀՈՐԻ-ՉՈՆ, ՀԵՆԱՐԱՆԱՅԻՆ ՀՈՐԻՉՈՆ, KEY BED, KEY STRATUM,** շերտ, որն ապարների շերտախմբում աչքի է ընկնում ինչ-որ հատկանիշներով (քարաբանական կազմով, գույնով, օրգանական մնացորդներով, միներալային ներփակվածքներով և այլն), օգտագործվում է կտրվածքների համադրման, երկրբ. քարտեզահանման, օդատիեզերական նկարների վերծանման, որոնողահետախուզական աշխատանքների ժամանակ:

**M-73. МАРКШЕЙДЕРИЯ, МАРКШЕЙДЕРСКОЕ ДЕЛО** (գերմ. Mark – սահման և scheiden – տարբերել, բաժանել) – **ՄԱՐԿՇԵՅՂԵՐԻԱ, MINE SURVEYING,** լեռնային գործի բնագավառ, որն զբաղվում է հնքվ-ի իրացման բոլոր փուլերում երկրի ընդերքում և նրան համապատասխան մակերևույթում տարածական-երկրաչափական չափումներ կատարելով և դրանց արդյունքները հատակագծերում, տարբեր պրոյեկցիաներում և կտրվածքներում պատկերելով, ինչպես նաև անցկացվող փորվածքներին ուղղություն տալով և հանքաերկրաչափական տարբեր բնույթի հարցերի լուծումով:

**M-74. МАРКШЕЙДЕРСКАЯ СЪЕМКА – ՄԱՐԿՇԵՅՂԵՐԱՎԱՆ ՀԱՆՈՒՅԹ, MINE SURVEY,** փորվածքների, կառույցների և օգտ. հնժ-ների կուտակումների ձևը, տեղադրման պայմաններն ու հատկությունները մարկշեյդերական հատակագծերում պատկերելու, ինչպես նաև հնքվ-երի հետախուզման ու հանքային ձեռնարկությունների շինարարության ու շահագործման գործընթացում զանազան հանքաերկրաչափական խնդիրների լուծման նպատակներով հանքափորվածքներում և երկրի մակերևույթում կատարվող գծային և անկյունային չափումների համախումբ:

**M-75. МАРТИТ** (լատ. Mars, սեռ. հ. Martis – Մարս՝ հռոմեական դիցաբանությունում պատերազմի աստված) – **ՍԱՐՏԻՏ, MARTITE,** միներալ, հեմատիտի տարատեսակ (պսևդոմորֆոզը ըստ մագնետիտի), մագնետիտի ( $Fe_3O_4$ ) վերափոխումը հեմատիտի ( $Fe_2O_3$ ): Անջատման ձևերը՝ պինդ և փուխր զանգվածներ, իզոմետրիկ հատիկներ և կորամիստ ութանիստեր: Մ. առաջանում է մագնետիտի օքսիդացումից՝ բյուրեղի կամ բյուրեղային հատիկի ձևի պահպանմամբ: Երկաթի բարձրորակ հանքանյութ է, երկաթային քվարցիտների հնքվ-երի երկաթով հարուստ հանքաքարերի գլխավոր միներալն է:

**M-76. МАРШРУТНАЯ СЪЕМКА – ԵՐԹՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՈՒՅԹ, COMPASS SKETCHING, MAP SKETCHING,** առանձին երթուղիներով տեղանքի հանույթ, որը կատարվում է տեղագրական և այլ քարտեզների կազմման կամ նորացման նպատակով: Կատարվում է գործիքային կամ աչքաչափական հանույթի մեթոդներով:

**M-77. МАССИВ – ՉԱՆԳՎԱԾ, MASSIF:** Տեկտոնիկայում՝ համեմատաբար կոշտ, կայունացված կառուցվածք, որը կրել է երկարատև բարձրացում և ավելի հին է, քան հարակից ծալքավոր կառույցները: Չ-ները իրենցից ներկայացնում են նաև մինչալպյան բյուրեղային հիմքի ելքերը՝ անտեկլիզների կամարներում: «Չ» տերմինը օգտագործվում է նաև այլ նշանակություններով: Ապարագրությունում՝ ներժայթքային մարմին, որի ձևը և տեղադրման պայմանները ճշտորեն բացահայտված չեն: «Չ» տերմինը վերաբերում է նաև հին պլատֆորմների հիմքի ելուստներին, որոնք փոքր են վահաններից և հաճախ ծածկված են ծովով:

- M-78. МАССИВ ГОРНЫХ ПОРОД** (ֆրանս. massif, բառ. հզոր, համատարած, ամբողջական) – **ԱՊԱՐՆԵՐԻ ՉԱՆԳՎԱԾ (ԱՊԱՐԱՉԱՆԳՎԱԾ), MASSIF, BLOCK, ROCK MASS, SOLID MASS, SOLID STRATA**, երկրակեղևի տեղամաս, որը բնորոշվում է առաջացման ընդհանուր պայմաններով և այն կազմող ապարների որոշակի ճարտարագիտակերպը. հատկություններով: Ա. գ-ները տարբերվում են տեղադրման, ապարների խախտման աստիճանի (ճեղքավորության և բլոկայնության), միներալային կազմի, կազմվածքի, ծակոտկենության առանձնահատկություններով, հեղուկ (ջուր, նավթ, աղաջրեր) ներփակվածքների առկայությամբ, երկրամեխ. և ֆիզ. վիճակի ցուցիչներով:
- M-79. МАССИВНАЯ ТЕКТУРА – ՅՈՏ ԿԱԶՄՎԱԾՔ (ՏԵՔՍՏՈՒՐԱ), MASSIVE STRUCTURE**, բնորոշվում է ապարների բոլոր ուղղություններով համասեռ կազմությամբ, հատիկային կառուցվածքով, որի բաղկացուցիչ մասնիկները զուրկ են որոշակի կողմնորոշումից: Յուրահատուկ է հիմնականում մազմայական ապարներին, հազվադեպ՝ նստվածքային ապարներին (օր.՝ կրաքարերին):
- M-80. МАСТОДОНТ (Mastodon) – ՄԱՍՏՈՂՈՆՏ, MASTODON**, կնճիթավորների կարգի մահացած կենդանիներ, որոնք ունեցել են մեծացած վերին ու ստորին ժանիքներ և թմբիկավոր սեղանատամներ: Բարձրությունը՝ 1.5-3.2 մ: Տարածված են եղել նեոգենի վերջում և պլեյստոցենում: Մ-ները կայնոզոյի ցամաքային նստվածքների համար ունեն շերտագրական նշանակություն:
- M-81. МАШТАБ КАРТЫ (գերմ. Maßstab, Maß-ից՝ մետր և Stab – ձող) – ՔԱՐՏԵՉԻ ՄԱՍՇՏԱՔ (ՉԱՓԱՑՈՒՅՑ, ՉԱՓԱԳԻԾ), SCALE OF A MAP, MAP SCALE**, քարտեզի (հատակագծի, օդանկարի և այլնի) վրա հատվածի երկարության հարաբերությունը բնօրինակի համապատասխան հատվածի երկարությանը, քարտեզի մաթեմատիկական հիմքի մասն է: Տարբերում են թվային և գծային, ինչպես նաև ուղղաձիգ և հորիզոնական Մ.:
- M-82. МАТЕМАТИЧЕСКАЯ ГЕОЛОГИЯ – ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, MATHEMATICAL GEOLOGY**, գիտության ճյուղ, որը զբաղվում է երկրբ. գործընթացների մոդելավորմամբ և դրան հարակից հարցերի լուծմամբ: Մ. ե. ընդգրկում է հարցերի լայն շրջանակ, այն կարելի է բաժանել 3 բաժինների: 1) Բուն Մ. ե., որի նպատակն է, ելնելով ժամանակակից երկրաբանության ծագումնաբանական պատկերացումներից, ստեղծել երկրբ. գործընթացների մաթեմատիկական մոդելներ: 2) Գործընթացի հավանական մոդելի կառուցումը պահանջում է կոնկրետ պատկերացումներ տվյալ երկրբ. օբյեկտ ծնող գործընթացների առանձնահատկությունների մասին: Բայց երկրաբանության ծագումնային սխեմաները հաճախ բավարար չափով կոնկրետ չեն այդ մոդելների ստեղծման համար: Այդ դեպքում օգտագործում են մոդել-արձագանքներ, այսինքն՝ ֆունկցիաներ, որոնք նկարագրում են երկրբ. օբյեկտի հիմնական հատկությունները: 3) Երկրբ. դիտարկումների վիճակագրական մշակում:
- M-83. МАТЕМАТИЧЕСКАЯ КАРТОГРАФИЯ – ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ, MATHEMATICAL CARTOGRAPHY**, քարտեզագրության բաժին, որն ուսումնասիրում է քարտեզների մաթեմատիկական հիմքերը, մասնավորապես քարտեզագրական պրոյեկցիաների արդյունավետ օգտագործման տեսությունն ու եղանակները:
- M-84. МАТЕРИАЛ ОСАДОЧНЫЙ – ՆՍՎԱԾՔԱՅԻՆ ՆՅՈՒԹ, SEDIMENTARY MATERIAL**, նստվածքների նախնական նյութեր, որոնք գտնվում են սնման մարզից դեպի նստվածքակուտակման մարզ տեղափոխման վիճակում (լուծված, կախյալ, գազանման, հատակին գլորվելով): Ըստ ծագման՝ առանձնացնում են ցամաքածին, կենսածին, քիմիածին և տիեզերածին Ն. Ե-եր:

**М-85. МАТЕРИКОВОЕ ПОДНОЖИЕ – ՄԱՅՐՑԱՍԱՔԱՅԻՆ ՍՏՈՐՈՏ, CONTINENTAL**

**RISE**, մայր ցամաքի ստորջրյա ծայրամասի արտաքին մաս: Թեք, մեղմ ալիքավոր կուտակումային հարթավայր, որը հարում է մայրցամաքային լանջի հիմքին: Կառուցվածքային տեսակետից իրենից ներկայացնում է խոր իջվածք՝ մայրցամաքային և օվկիանոսային կեղևների կցվածքում, լցված է փուխր նստվածքների հզոր ստվարաշերտով: Օրգանական աշխարհի հարստությամբ զիջում է մայրցամաքային լանջին և մոտենում է օվկիանոսի հատակին:

**М-86. МАТЕРИКОВЫЙ ЛЕДНИК, տե՛ս Ледниковые покровы:****М-87. МАТЕРИКОВЫЙ СКЛОН – ՄԱՅՐՑԱՍԱՔԱՅԻՆ ԼԱՆՋ, CONTINENTAL SLOPE,**

մայր ցամաքի ստորջրյա ծայրամասի մաս, որը գտնվում է շելֆի և մայրցամաքային ստորոտի միջև: Բնորոշվում է մակերևույթի մեծ թեքությամբ (միջինը մոտ 4°, հաճախ՝ 15-20°, մինչև 40°) և խիստ մասնատված ռելիեֆով (աստիճաններ, կանյոններ և այլն): Երկրակեղևը մայրցամաքային տիպի է: Լանջի վերին մասի համար բնորոշ է նստվածքների խոշոր զանգվածների տեղաշարժը՝ ստորջրյա սողանքների և պղտոր հոսքերի տեսքով: Լանջի ստորին մասում տիրապետում են կուտակումային գործընթացները: Օրգանական նյութի բարձր արդյունավետության պատճառով Մ. լ. առանձնացվում է որպես առանձին բաթիալ մարզ:

**М-88. МАТЕРИНСКАЯ ПОРОДА – ՄԱՅՐԱՎԱՆ ԱՊԱՐ, PARENT ROCK, MOTHER**

**ROCK**, 1) երկրաբանությունում՝ ապար, որից առաջացել են այլ ապարներ կամ օգտ. հնձ-ներ: 2) Հողագիտությունում՝ ապար, որից առաջացել է հողը:

**М-89. МАТОВЫЙ УГОЛЬ – ՓԱՅԼԱՍ ԱՃՈՒԽ, DULL COAL,** բնորոշվում է փայլատ

բաղադրամասերի (ինգրեդիենտների) գերակայությամբ: Պատկանում են դյուրեմային ածուխները, բոգեդները, սապրոկոլիթները և միներալային խառնուրդի բարձր պարունակություն ունեցող բոլոր ածուխները:

**М-90. МАФИТЫ (լատ. magnesium – մագնեզիում և ferrum – երկաթ) – ՄԱՖԻՏՆԵՐ,**

**MAFITES**, մագնայական ապարների մուգավուն միներալներ (գլխ. երկաթի ու մագնեզիումի սիլիկատներ):

**М-91. МЕАНДР (հուն. Máíandros – Մեանդրոս՝ Փոքր Ասիայում խիստ ոլորապտույտ**

Մեծ Մեանդրես գետի հին անվանումից) – **ԳԵՏԱԳԱԼԱՐ, MEANDER**, հարթավայրային գետի սահուն ծովածքներ, որոնց կորույթյան շառավիղը կախված է գետի ջրատարողությունից և հոսանքի արագությունից: Գ-ի գոգավոր ափը սովորաբար գառիթափ է, ուռուցիկը՝ ծանծաղուտային:

**М-92. МЕГА... (հուն. mégas – մեծ) – ՄԵԳԱ..., ՄԵԾԱ..., ԽՈՇՈՐԱ..., MEGA...,** մախա-

ծանց, նշանակում է մեծ, խոշոր:

**М-93. МЕГАНТИКЛИНАЛЬ (հուն. mégas – մեծ, խոշոր և անտիկլինալ) – ՄԵԾԱՎԱ-**

**ՄԱՐԱԾԱԼԲ (ՄԵԳԱՆՏԻՎԼԻՆԱԼ), MEGANTICLINE**, համեմատաբար պարզ կազմության խոշոր կամարածալք (անտիկլինալ), որը համաչափելի է անտիկլինորիումի չափերի հետ և ռելիեֆում արտահայտված է լեռնային բարձրացումով: Երկարությունը կազմում է բազմահարյուրավոր կմ-եր, լայնությունը՝ մի քանի հարյուր կմ: Բնորոշ է երիտասարդ պլատֆորմներին և հետպլատֆորմային լեռնագոյացման մարզերին: «Մ.» տերմինը այժմ հաճախ օգտագործվում է խոշոր անտիկլինալների նկարագրման ժամանակ:

**М-94. МЕГАНТИКЛИНОРИЙ (հուն. mégas – մեծ և անտիկլինորիում) – ՄԵԾԱՔԱԶ-**

**ՄԱՎԱՍԱՐԱԾԱԼԲ (ՄԵԳԱՆՏԻՎԼԻՆՈՐԻՈՒՄ), MEGANTICLINORIUM**, բարդ լեռնածալքավոր կառույց, որը կազմված է մի քանի անտիկլինորիումներից (բազմակամարածալքերից) և ստորադաս ցածր կարգի սինկլինորիումներից (բազմագոգա-

ծալքերից) կամ տեկտ. ծածկոցների փաթեթից: Ծալքավորման հայելին կառույցի առանցքային մասում գրավում է ամենաբարձր դիրք (օր.՝ Ուրալը, Կարպատները, Կովկասը): Գոյանում է ծալքավոր համակարգի զարգացման եզրափակիչ լեռնագոյացման փուլում՝ քարոլորտի սալերի ընդհարման (կոլիզիայի) հետևանքով:

**M-95. МЕГАРЕЛЬЕФ** (հուն. mégas – մեծ և ռելիեֆ) – **ՄԵԳԱՌԵԼԻԵՖ (ՄԵՃԱՌԵԼԻԵՖ), MEGARELIEF**, Երկրի մակերևույթի ռելիեֆի ամենախոշոր տարրերը՝ օվկիանոսային իջվածքները, լեռնագոտիները, մայրցամաքային ելուստները, հարթ տարածքները, ռելիեֆում արտահայտված համամոլորակային բեկվածքները և այլն:

**M-96. МЕГАСИНКЛИНАЛЬ** (հուն. mégas – մեծ և սինկլինալ) – **ՄԵՃԱԳՈՎԱԾԱԼՔ (ՄԵՎԱՍԻՆԿԼԻՆԱԼ), MEGASYNCLINE**, պարզ կազմության խոշոր գոգածալք (սինկլինալ), որը համաչափ է սինկլինորիումի չափերի հետ, ռելիեֆում արտահայտված է հարյուրավոր կմ չափեր ունեցող իջվածքներով: Թևերը կարող են բարդացված լինել փոքր սակավաթեք ծալքերով: Մ-երը տարածված են հետպլատֆորմային (երկրորդային) լեռնագոյացման մարզերում (օր.՝ Իսիկ-Կուլի, Ջունգարյան իջվածքները):

**M-97. МЕГАСИНКЛИНОРИЙ** (հուն. mégas – մեծ և սինկլինալ) – **ՄԵՃԱԲԱԶՍԱԳՈՎԱԾԱԼՔ (ՄԵՎԱՍԻՆԿԼԻՆՈՐԻՈՒՄ), MEGASYNCLINORIUM**, բարդ լեռնածալքավոր կառույց, որը կազմված է բազմագոգածալքերից (սինկլինորիումներից) և դրանց ենթակա ցածր կարգի բազմակամարածալքերից (անտիկլինորիումներից): Ծալքավորման հայելին առանցքային զոնայում խորասուզվում է: Գոյանում է շարժուն զոնաների զարգացման վերջում՝ նախորդող ճկվածքի ոչ մեծ բարձրացման և ոչ լրիվ շրջման (ինվերսիայի) դեպքում, օր.՝ Արմ. Սայանները: Մ-ներն ընդգրկում են նաև միջլեռնային իջվածքները, օր.՝ Ֆերգանայի:

**M-98. МЕДИСТЫЕ ПЕСЧАНИКИ И СЛАНЦЫ – ՊՂՆՁԱՅԻՆ (ՊՂՆՁԱԽԱՈՆ) ԱՎԱԶԱՔԱՐԵՐ և ԹԵՐԹԱՔԱՐԵՐ, COPPER SANDSTONES AND SLATES**, ավազաքարային և թերթաքարային նստվածքային ապարների շերտեր, որոնք պարունակում են պղնձի միներալներ և հանդիսանում են պղնձի հանքանյութ: Պ. ա. և թ. սովորաբար զբաղեցնում են մեծ տարածքներ, ունեն կայուն հաստություն և կապված են հին ծովերի, ծովալճակների և ծովածոցա-ծովալճակների նստվածքների որոշակի շերտագրական հորիզոնների հետ: Առաջացնում են խոշոր հնքվ-եր: Պղնձի գլխ. միներալներն են՝ բորնիտը, խալկոզինը և խալկոպիրիտը: Հնքվ-երի ծագումը վիճելի է: Որոշ երկրաբաններ դրանք համարում են հին ծովերի նստվածքներ, մյուսները ենթադրում են, որ դրանք առաջացել են ջրաջերմային (հիդրոթերմալ) գործընթացների հետևանքով:

**M-99. МЕДНО-МОЛИБДЕНОВЫЕ РУДЫ – ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, COPPER MOLYBDATE ORES**, բազմաբնույթ հանքաքարեր, որոնց կազմի մեջ մտնում են պղնձի ու մոլիբդենի միներալներ: Պղնձի միներալը սովորաբար ներկայացված է խալկոպիրիտով ( $CuFeS_2$ ), երբեմն նաև բորնիտով, խալկոզինով, կովելինով, մալաքիտով, կուպրիտով և բնածին պղնձով: Մոլիբդենի միներալը մոլիբդենիտն է ( $MoS_2$ )՝ ֆեռիմոլիբդենիտի խառնուրդով: Պ. հ. կազմում են պլուտոնածին ջրաջերմային (հիդրոթերմալ) պղնձամոլիբդենապորֆիրային հնքվ-եր:

**M-100. МЕДНЫЕ РУДЫ – ՊՂՆՁԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, COPPER ORES**, բնական միներալային գոյացություններ, որոնք պարունակում են պղնձի այնպիսի միացություններ ու քանակներ, որոնց արդյ. օգտագործումը տեխնիկապես հնարավոր և տնտեսապես նպատակահարմար է: Գլխավոր միներալներն են՝ բնածին պղինձը, բորնիտը, խալկոպիրիտը, խալկոզինը, կովելինը, խունացած հանքաքարերը,

կուպրիտը և այլն: Առաջնային հանքաքարերում պղինձը ներկայացված է առավելապես սուլֆիդների տեսքով, օքսիդացման զոնայում՝ կարբոնատներով, սիլիկատներով, սուլֆատներով, օքսիդներով և այլ միացություններով: Հանքաքարերի հիմնական տիպերն են՝ երակիկաներփակվածքային (պղնձի պարունակությունը 0.3-2%), պղնձախառն ավազաքարեր և թերթաքարեր (1.5-6% պղինձ):

**M-101. МЕДНЫЙ БЛЕСК**, տե՛ս Халькозин:

**M-102. МЕДНЫЙ КОЛЧЕДАН**, տե՛ս Халькопирит:

**M-103. МЕДЬ, Cu** (Լատ. Cuprum – Կիպրոս կղզու անունից, որտեղ հնում արդյունահանվել է պղինձ) – **ՊՂԻՆՁ, COPPER**, պարբերական համակարգի I խմբի քիմ. տարր: Փափուկ, կռելի, կարմիր գույնի մետաղ է: Պ-ի կլարկը ըստ զանգվածի 4.7-10<sup>3</sup>% է: Հայտնի են Պ-ի ավելի քան 170 միներալներ, բայց արդյ. նշանակություն ունեն 17-ը (խալկոպիրիտը, խալկոզինը, բորնիտը և այլն):

**M-104. МЕДЬ САМОРОДНАЯ – ԲՆԱԾԻՆ ՊՂԻՆՁ, NATIVE COPPER**, միներալ, բնածին մետաղական պղինձ: Փայլը՝ մետաղի, կարծրությունը՝ 2.5-3, կոտրվածքը՝ ծլեպավոր: Առաջացնում է պղնձակարմիր դենդրիտներ, թելանման և լարանման բյուրեղներ, հոծ զանգվածներ: Ծագումը՝ վերնածին (հիպերգեն) և ջրաջերմային (հիդրոթերմալ): Պղնձի հանքանյութ է:

**M-105. МЕЖГОРНАЯ РАВНИНА – ՄԻՋԼԵՆՆԱՅԻՆ ՀԱՐԹԱՎԱՅՐ, INTERMONTANE PLAIN**, միջլեռնային իջույթում տեղաբաշխված, սովորաբար նստվածքակուտակումային հարթավայր, օր.՝ Ֆերգանայի գոգավորությունը:

**M-106. МЕЖГОРНЫЙ ПРОГИБ – ՄԻՋԼԵՆՆԱՅԻՆ ԵՎՎԱԾՔ, INTERMONTANE TROUGH**, լեռնային կառույցների միջև գտնվող տեկտ. իջույթ, որն առաջացել է երկրակեղևի ճկման հետևանքով՝ շրջապատող լեռնաշղթաների բարձրացման հետ միաժամանակ և սովորաբար լցված է բեկորային ապարների՝ մոլասների հզոր ստվարաշերտերով: Գոյանում է զարգացման այն փուլում, երբ շարժում մարզը վերածվում է լեռնածալքավոր մարզի, կամ երբ այդպիսի մարզերը ձևավորվում են մայրցամաքային պլատֆորմներում: Մ. ճ. լցնող նստվածքային ստվարաշերտերը ավելի ուժգին ձևախախտված են լինում եզրային մասերում, առանցքային մասում դրանք ունեն ավելի հանգիստ տեղադրում: Մ. ճ-ի հետ կապված են նավթի, գազի, աղի, ածխի հնքվ-եր:

**M-107. МЕЖДУНАРОДНЫЙ ГЕОЛОГИЧЕСКИЙ КОНГРЕСС (МГК) – ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՂԱԺՈՂՈՎ (ԿՈՆԳՐԵՍ), (ՄԵՎ), INTERNATIONAL GEOLOGICAL CONGRESS**, ՄԵՎ-ի առաջին նստաշրջանը տեղի է ունեցել Փարիզում, 1878 թ., մասնակցել են Եվրոպայի և Հս. Ամերիկայի երկրաբանները՝ նպատակ ունենալով մշակելու ունիվերսալ շերտագրական սանդղակ և ստեղծելու լայնարձակ ռեգիոնների միջազգային երկրբ. քարտեզներ: Այնուհետև ՄԵՎ ավանդականորեն անցակցվում է 3-4 տարին մեկ անգամ՝ տարբեր մայր ցամաքներում: ՄԵՎ-ին կից գոյություն ունեն հանձնաժողովներ՝ երկրաբանության տարբեր բաժինների գծով:

**M-108. МЕЖДУРЕЧЬЕ – ԳԵՏԱՍԵՉ, INTERSTREAM AREA, INTERFLUVE**, տարածք՝ տեղաբաշխված երկու հարակից գետերի միջև:

**M-109. МЕЖДЮННЫЕ ЛОЖБИНЫ – ՄԻՋԱՎԱԶԱԲՆՈՒՐԱՅԻՆ (ՄԻՋԳՅՈՒՆԱՅԻՆ) ԶՈՐԱՎՆԵՐ, INTERDUNAL HOLLOW, SLACKS**, հովտանման ցածրացում՝ արտաանապատային ավազաբլուրների միջև:

**M-110. МЕЖЛЕДНИКОВЬЕ – ՄԻՋՍԱՆՑԱՎԱՇՏԱՅԻՆ ԴԱՐԱԿԱՐԳ, INTERGLACIAL**, չորրորդական ժամանակաշրջանի երկու սառցադաշտային դարակարգերը բաժանող ժամանակահատված, որը բնորոշվում է կլիմայի տաքացմամբ, բարեխառն

լայնություններում սառցադաշտերի վերացմամբ, ջերմասեր բույսերի ու կենդանիների հայտնվելով:

**M-111. МЕЖМАТЕРИКОВОЕ МОРЕ – ՄԻՉՄԱՅՐՑԱՍԱՔԱՅԻՆ ԾՈՎ, INLAND SEA, MEDITERRANEAN SEA**, օվկիանոսի մաս, որը տեղաբաշխված է մայր ցամաքների միջև և դրանց հետ կապված է մեկ կամ մի քանի նեղուցներով (օր.՝ Միջերկրական ծովը):

**M-112. МЕЗО...** (հուն. μέσος – միջին, միջանկյալ) – **Մեզո...**, **Միջև...**, **Միջև...**, **MESO...**, նախածանց, նշանակում է միջին մեծություն, դիրք, վիճակ և այլն:

**M-113. МЕЗОЗАБРЫ** (Mesosuaria) – **Մեզոզուպրեր**, **MESOSAURS**, հին ջրաբնակ սողուններ, ապրել են Յր. Ամերիկայի ու Աֆրիկայի քաղցրահամ ջրերում՝ ուշ կարբոն-վաղ պերմում:

**M-114. МЕЗОЗОЙСКАЯ ГРУППА**, տե՛ս Мезозойская эратема:

**M-115. МЕЗОЗОЙСКАЯ СКЛАДЧАТОСТЬ – Մեզոզոզան Ծալքավորութուն, MESOZOIC FOLDING**, ծալքավորության, լեռնագոյացման և գրանիտակերպ մագմայականության գործընթացների համախմբություն, որը տեղի է ունեցել մեզոզոյան դարաշրջանի ընթացքում: Մ. ծ. էական դեր է խաղացել մայր ցամաքների ժամանակակից կառուցվածքի ձևավորման գործում: Մ. ծ-յան հետևանքով ստեղծված ծալքավոր կառույցները իրենց մակերեսի մեծ մասում պահպանվել են՝ շնորհիվ լեռնային ռելիեֆի նորագույն բարձրացումների: Մ. ծ-յան ամենավաղ դարակարգը՝ վաղկիմերյանը, արտահայտվել է տրիասի վերջում–յուրայի սկզբում՝ Դոբրուջայում, Լեռնային Դրինում, Լեռնային Մանգիշլակում, Յր. Թուրքմենիայում, Կենտրոնական Իրանում, Յր. Չինաստանում, Յր-Արլ. Ասիայում, Կորդիլիերներում, Յր. Անդերում, Անտարկտիդայում:

Ծալքավորության հաջորդ կարևոր դարակարգը՝ ուշկիմերյանը (նևադայինը), տեղի է ունեցել յուրայի վերջում–կավճի սկզբում: Դրա արտահայտման հիմնական տարածաշրջանը Խաղաղօվկիանոսյան ծալքավոր օղակն է, որտեղ ձևավորվել է Վերխոյանաչուկոտյան մարզի, ճապոնական կղզիների և Նոր Զելանդիայի զգալի մասի, Յս-Ամերիկյան Կորդիլիերների արևմտյան մասի ծալքավոր կառուցվածքը: Եվրասիայում այդ ձևախախտումներն արտահայտվել են Ալպերի, Դինարիդների ներքին զոնաներում, Կենտրոնական Իրանում, Աֆղանստանում, Յր. Պամիրում, Տիբեթում, Բիրմայում: Կովկասում ձևախախտումները արտահայտվել են միջին յուրայի վերջում:

Մ. ծ-յան երրորդ խոշոր դարակարգը Ալպերում և Կարպատներում անջատվել է որպես ավստրիական: Այն արտահայտվել է ամբողջ Ալպ-Յիմալայան գոտում, չնայած որ ոչ մի տեղ չի ավարտվել երկրասինկլինալային զարգացումը: Խաղաղօվկիանոսյան գոտում այդ շարժումները հիմնական դեր են խաղացել Սիխոտե-Ալինի ծալքավոր համակարգի ձևավորման գործում: Տեկտ. ակտիվության նոր ուժեղացում տեղի է ունեցել վերին կավճի վերջում–պալեոգենի սկզբում (լարամյան դարակարգ): Այն ընդգրկել է Ալպ-Յիմալայան գոտին (Ալպերը, Բալկանները, Անատոլիան, Փոքր Կովկասը), Յս. Ամերիկայի Կորդիլիերների ամբողջ արևելյան զոնան, Անդերը, Սախալինը, Ֆիլիպինները: Խաղաղօվկիանոսյան գոտում ծալքավոր ձևախախտումները ուղեկցվել են հզոր գրանիտակերպ մագմայականությամբ, ավելի պակաս չափով այդ մագմայականությունը արտահայտվել է Ալպ-Յիմալայան գոտում:

**M-116. МЕЗОЗОЙСКАЯ ЭРАТЕМА (ЭРА), МЕЗОЗОЙ** (հուն. μέσος – միջին և zōē – կյանք) – **Մեզոզոզան Էրատեմա (Դարվճրան), Միջևպենդանվճրան, Մեզոզո, MESOZOIC**, ֆաներոզոյի միջին՝ պալեոզոյին հաջորդող և կայնոզոյին նախորդող ստորաբաժանում: Երկրակեղևի շերտագրական սխեմայի ներքևից



չորրորդ էրատենա (խումբ) և դրան համապատասխանող դարաշրջան: Առանձնացվել է 1841 թ. անգլ. երկրաբան Ջ. Ֆիլիպսի կողմից: Մ. է. սկսվել է 251 մլն. տ. սրանից առաջ, շարունակվել է մոտ 188 մլն. տ.: Ստորաբաժանվում է 3 համակարգերի՝ տրիասի, յուրայի և կավճի: Մեզոզոյի ընթացքում մի շարք ռեգիոններում դիտվում է ծալքավորության ուժգին արտահայտություն (տե՛ս *Мезозойская складчатость*): Բնորոշ է սողունների [դինոզավրեր, իխտիոզավրեր (ծկնամողեսներ), պտերոզավրեր (թևավոր մողեսներ)] գերիշխությունը, թռչունների, կաթնասունների հանդես գալը: Անողնաշարավորների մեջ կարևորագույն նշանակություն են ունեցել ամոնիտները, բելեմնիտները և որոշ երկփեղկանիներ: Բույսերի մեջ մեզոզոյի սկզբում գերակշռել են պտերները, սագոյիմները, զինկոգները, փշատերևները, վերջում հանդես են եկել ծածկասերմ բույսերը: «Մեզոզոյան էրատենա» և «մեզոզոյան խումբ» տերմինները հոմ-ներ են:

**M-117. МЕЗОЗОНА – ՄԻՋՆԱՋՈՆԱ, MESOZONE**, փոխակերպության միջին զոնա, որը բնորոշվում է բարձր ջերմաստիճանով, հիդրոստատիկ ճնշմամբ և ուժգին միակողմ ճնշմամբ:

**M-118. МЕЗОЛИТ** (հուն. *mésos* – միջին և *lithos* – քար) – **ՄԵՉՈՒԻԹ (ՄԻՋԻՆ ՔԱՐԻ ԴԱՐ), MESOLITHIC**, քարի դարի միջին՝ պալեոլիթի (հին քարի դարի) և նեոլիթի (նոր քարի դարի) միջև ընկած ժամանակահատված: Մ. Եվրասիայում ունի 10-6 հազ. տարվա, Մերձավոր Արևելքում՝ 10-9 հազ. տարվա վաղեմություն: Մ-ի մշակույթին բնորոշ են քարե մանր գործիքներ, գործածվել են նաև ոսկրից ու եղջյուրից գործիքներ: Տնտեսության հիմքը կազմել են որսորդությունը, ձկնորսությունը և հավաքչությունը: Մ-ի սկիզբը մոտավորապես համընկնում է հոլոցենի սկզբի հետ (10 հազ. տ. առաջ), երբ վերջին սառցապատման սառույցի հալվելուց հետո տեղի է ունեցել կլիմայի տաքացում:

**M-119. МЕЗОМЕТАГЕНЕЗ** (հուն. *mésos* – միջին, *meta* – հետո և *génesis* – ծագում) – **ՄԻՋՆԱՍԵՏԱԳԵՆԵԶ, MESOMETAGENESIS**, մետագենեզի (փոխակերպության) միջին փուլ, որը հանգեցնում է տարբեր բյուրեղային թերթաքարերի առաջացմանը:

**M-120. МЕЗОРЕЛЬЕФ** (հուն. *mésos* – միջին և *relief* – ռելիեֆ) – **ՄԵՉՈՒԵԼԻԵՖ (ՄԻՋՆԱՌԵԼԻԵՖ), MESORELIEF**, երկրի մակերևույթի միջին չափի անհարթություններ (բարձրությունների լայնույթը մինչև մի քանի տասնյակ մ), որոնց առաջացումը կապված է գլխ. արտածին գործընթացների հետ (սառցաբերուկային թմբեր, հեղեղատներ և այլն):

**M-121. МЕЗОСФЕРА** (հուն. *mésos* – միջին և *spháira* – գունդ) – **ՄԻՋՆՈՒՈՐՏ, MESOSPHERE**, մթնոլորտի շերտ, որը տարածված է վերնոլորտից (ստրատոսֆերայից) վեր՝ 50-85 կմ բարձրություններում, բնութագրվում է դեպի վեր ջերմաստիճանի ցածրացումով 0°C-ից մինչև 90°C:

**M-122. МЕЛ ПИСЧИЙ – ԿԱՎԻՃ ԳՐԵԼՈՒ, CHALK**, սպիտակ, կեղտառու, թույլ կապակցված նստվածքային ապար, բաղկացած է գլխ. (90-99 %) ծովային կրային պլանկտոն ջրիմուռներից՝ ֆորամինիֆերների և այլ օրգանական մնացորդների, կավային ու ավազային մասնիկների փոքր խառնուրդով: Տաք ծովերի պելագիալ նստվածքներ են, կուտակված են 30-500 մ խորություններում: Բնորոշ են կավճի համակարգի վերին բաժնին: Ժամանակակից նմանակները լայն տարածված են արևադարձային և մերձարևադարձային օվկիանոսների 100-4000 մ խորություններում:

**M-123. МЕЛАНЖ** (ֆրանս. *mélange*-ից – խառնուրդ) – **ՄԵԼԱՆՇ (ԽԱՌՆՈՒՐԴ), MELANGE**, տարբեր կազմի ապարների տեկտ. ջարդոտման արդյունք, հաճախ՝ սերպենտինիտների մասնակցությամբ: Կազմված է տարբեր չափի բեկորներից,

ընդհուպ՝ խոշորները: Սերտորեն կապված է տեկտ. ծածկույթների հետ: Մ-ի կազմում ապարների բեկորների տեղադրումը սովորաբար քառասյին է:

**M-124. МЕЛАНOKPАTОВЫЕ ГОPНЫЕ ПОPОДЫ** (հուն. mélas, սեռ. հ. mélanos – սև, krátos – գերակշռություն, իշխանություն) – **ՄՈՒԳԱՎՈՒՆ (ՄԵԼԱՆՈԿՐԱՏ) ԱՊԱՐՆԵՐ, MELANOCRATIC ROCKS**, մագմայական ապարներ, որոնց կազմում երկաթով ու մագնեզիումով հարուստ միներալները (օր.՝ պիրոքսենները, ամֆիբոլները, բիոտիտները) ավելի շատ են, քան համանման ապարների բնականոն միջին տեսակում:

**M-125. МЕЛАНOKPАTОВЫЕ МИНЕРАЛЫ** (հուն. mélos, սեռ. հ. mélanos – սև և krátos – գերակշռություն) – **ՄՈՒԳԱՎՈՒՆ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, MELANOCRATIC MINERALS**, տե՛ս Мафиты:

**M-126. МЕЛИОРАТИВНАЯ ГИДРОГЕОЛОГИЯ – ՀՈՂԱՐԱՐԵԼԱՎԱՍԱՆ (ՄԵԼԻՈՐԱՏԻՎ) ՋՐԱԵՐԿՐԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ, RECLAMATION HYDROGEOLOGY**, ջրաերկր. բնագավառ, որն ուսումնասիրում է հողատարածքների ջրաերկր. պայմանները, մշակում է հողաբարելավման մեթոդներ ու եղանակներ՝ դրանց արդյունավետ օգտագործման և կայուն բարձր բերքի ստացման նպատակով:

**M-127. МЕЛИОРАЦИЯ** (լատ. melioratio – բարելավում) – **ԲԱՐԵԼԱՎՈՒՄ (ՄԵԼԻՈՐԱՏՈՒՄ), MELIORATION, RECLAMATION**, կազմակերպչական, տնտեսական և տեխնիկական միջոցառումների գիտականորեն հիմնավորված համախմբություն, որի նպատակը բնական միջավայրի (գլխ. գյուղատնտեսական հողերի) բարելավումն է: Տարբերում են ջրարբիացման, զորացման Մ., անտառաբարելավում, քիմիական, կլիմայի բարելավում և այլն:

**M-128. МЕЛИОРАЦИЯ ПОЧВЫ – ՀՈՂԱՐԱՐԵԼԱՎՈՒՄ, SOIL MELIORATION**, բերրությունը բարձրացնելու նպատակով հողի հատկությունների բարելավում: Կախված բնական պայմաններից՝ կիրառում են բարելավման տարբեր տեսակներ՝ ջրատեխնիկական (չորացում, ոռոգում, աղազերծում), քիմ. (գիպսավորում, կրայնացում, թթվեցում և այլն), հողի ֆիզ. հատկությունների բարելավում (կավային հողերի ավազահավելում, կավայնացում և այլն), ագրոկենսաբանական և այլն:

**M-129. МЕЛКОВОДНЫЕ ОТЛОЖЕНИЯ – ԾԱՆԾԱՂՈՒՏԱՅԻՆ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, SHALLOW-WATER DEPOSITS**, ծովային նստվածքների խումբ, որը կուտակվել է մինչև 200 մ խորություններում: Դրանց առանձնացման ամենահուսալի չափանիշը հատակաբնակ, լույսից խուսափող օրգանիզմների կազմն է, տե՛ս Морские отложения:

**M-130. МЕЛКОМАСШТАБНЫЕ КАРТЫ – ՄԱՆՐԱՄԱՍՇՏԱՐ (ՄԱՆՐԱԶԱՓԱՑՈՒՅՑ) ԲԱՐՏԵԶՆԵՐ, SMALL SCALE MAPS**, աշխ. քարտեզներ, որոնց մասշտաբը փոքր է 1:1000000-ից:

**M-131. МЕЛКОСОПОЧНИК – ՄԱՆՐԱԲԼՈՒՐ, HUMMOCKY TOPOGRAPHY**, արմատական ապարներում չոր-լերկացման ռելիեֆ, որն իրենից ներկայացնում է տարբեր ձևի բլուրներ և դրանց խմբեր: Թմբերը բաժանված են շատ թե քիչ լայն, հարթ զոգավորություններով կամ հին գետահովիտներով:

**M-132. МЕЛОВАЯ СИСТЕМА (ПЕРИОД), МЕЛ – ԿԱՎԵԻ ՀԱՄԱԿԱՐԳ (ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆ), ԿԱՎԻՃ, CRETACEOUS**, մեզոզոյան էրատենայի երրորդ (վերջին) համակարգ, համապատասխանում է երկրի պատմության մեզոզոյան դարաշրջանի երրորդ ժամանակաշրջանին: Շերտագրական սանդղակում հաջորդում է յուրայի և նախորդում է պալեոգենի համակարգերին: Անվանումը ծագում է Եվրոպայի տարածքի Կ. հ-ի վերին բաժնում լայնորեն տարածված սպիտակ կավճից: Կ. հ-ի սկիզբը որոշվում է 145.5 մլն. տ., վերջը՝ 65.5 մլն. տ., ընդհանուր տևողությունը մոտ 80 մլն. տ. է: Արմ. Եվրոպայում կավճի նստվածքները, որպես ինքնուրույն համակարգ, առաջին անգամ

առանձնացվել են Փարիզի ավազանում՝ բելգ. երկրաբան. ժ. Օմալիուս Դ՛Ալուայի կողմից 1822-ին: Կ. հ. ստորաբաժանվում է 2 բաժինների՝ ստորին և վերին:

Ըստ տարածման ընդարձակության՝ Կ. հ. ֆաներոզոյում գրավում է առաջին տեղերից մեկը: Յուրայի վերջում – կավճի սկզբում լեռնագոյացումն ընդգրկել է Կորդիլիերների և Արևելասիական ծալքավոր մարզերը: Այն արտահայտվել է նաև Մոնղոլաօխոտյան և Միջերկրածովյան (արևելյան մաս) գոտիներում, հանգեցնելով ծովի լայնարձակ հետընթացության (ռեգրեսիայի): Ուշ կավճի սկզբում տեղի է ունեցել պլատֆորմների զգալի խորասուզում՝ առաջացնելով երկրի պատմության մեջ խոշորագույն ծովածավալումներից մեկը: Նստվածքների տիրապետող տեսակներից են նուրբ կրային և կրակավային տիղմերը, որոնք վերափոխվել են կրաքարերի, մերգելների և գրելու կավճի: Հս. Ամերիկայի արևմուտքում (իջվածքներում) տեղի է ունեցել ածուխների ամենախոշոր կուտակումը: Կ. ժ-ի օրգանական աշխարհի համար բնորոշ են վերջին ամոնիտների ու բելեմնիտների, խոշոր սողունների լայն տարածումը և այնուհետև՝ մահացումը: Տարածված են եղել՝ ատամնավոր թռչունները, առաջին ընկերքավոր կաթնասունները, ոսկրոտ ձկները, բույսերից՝ պտերները, մերկասերմերը, ծածկասերմերը, վերջում՝ ծաղկավորները:

**Կավճի համակարգի հարկերը**

Բաժիններ	Հարկեր	
Վերին կավիճ	Մասստրիխտի	Սեմոն
	Կամպանի	
	Սանտոնի	
	Կոնյակի	
	Տուրոնի	
	Սեմոնամի	
Ստորին կավիճ	Ալբի	Նեոկոն
	Ապտի	
	Բարրեմի	
	Հոտերիվի	
	Վալանժիմի	
	Բերրիասի	

**M-133. МЕРГЕЛИСТАЯ КОНКРЕЦИЯ – ՄԵՐԳԵԼԱՅԻՆ (ԿԱՎԱԿՐԱՔԱՐԱՅԻՆ) ԿՈՆԿՐԵՑԻԱ, MARLY CONCRETION**, միներալային ձգվածքներ (մերգելային կազմի), որոնք երբեմն հանդիպում են դեյուվիալ կավերում, ավազակավերում, ածխաբեր և այլ նստվածքային ապարներում:

**M-134. МЕРГЕЛИСТЫЙ СУГЛИНОК – ՄԵՐԳԵԼԱՅԻՆ (ԿԱՎԱԿՐԱՔԱՐԱՅԻՆ) ԱՎԱԶԱԿԱՎ, MARL, MARLY LOAM**, կարբոնատներով հարուստ ավազակավ:

**M-135. МЕРГЕЛЬ** (գերմ. Mergel, լատ. marga) – **ՄԵՐԳԵԼ (ԿԱՎԱԿՐԱՔԱՐ), MARL, MARLSTONE**, խառնակազմ կավակարբոնատային նստվածքային ապար, պարունակում է 50-80 % կարբոնատներ (կալցիտ, հազվադեպ՝ դոլոմիտ) և համապատասխանաբար՝ 20-50 % կավային նյութ: Մ-ները լինում են կավային, կրաքարա-

յին, կավճանման և դոլոմիտային, իսկ ըստ խառնուրդների՝ սիլիկահողային, գլաուկոնիտային, ավազային, բիտումային, ածխային և այլն: Գույնը բազմազան է, ավելի հաճախ՝ բաց: Մ-ները լայնորեն տարածված են բնության մեջ, օգտագործվում են որպես հումք ցեմենտի արդյունաբերության մեջ:

**M-136. МЕРГЕЛЬ ДОЛОМИТОВЫЙ – ԴՈԼՈՄԻՏԱՅԻՆ ՄԵՐԳԵԼ (ԿԱՎԱԿՐԱՔԱՐ), DOLOMITIC MARL**, կավակարբոնատային նստվածքային ապար, որի մեջ կարբոնատային ապարակազմիչ միներալը ներկայացված է դոլոմիտով, և որը կազմում է ապարի 50-75 %-ը:

**M-137. МЕРГЕЛЬ ИЗВЕСТКОВЫЙ – ԿՐԱՅԻՆ ՄԵՐԳԵԼ (ԿԱՎԱԿՐԱՔԱՐ), CALCAREOUS MARL**, կավակարբոնատային նստվածքային ապար, որը պարունակում է 50-70 %  $\text{CaCO}_3$ , օգտագործվում է ցեմենտի արդյունաբերության մեջ:

**M-138. МЕРГЕЛЬ МЕЛОПОДОБНЫЙ – ԿԱՎՃԱՆՄԱՆ ՄԵՐԳԵԼ (ԿԱՎԱԿՐԱՔԱՐ), CHALKY MARL**, նստվածքային ապար, որը պարունակում է 10-30 % կավային նյութ և 35-90 % կալցիտ՝ ներկայացված օրգանիզմների մանրագույն կմախքներով և մանրահատիկ կալցիտով, որոնք նրբորեն մեջընդմիջվում են կավային մասնիկներով: Համեմատաբար փափուկ է և բաց գունավորված:

**M-139. МЁРТВОЕ ОЗЕРО – ՄԵՆՅՈՒԼ ԼԻՑ, DEAD LAKE**, 1) լիճ, որը հարածած է բուսականությամբ, 2) լիճ, որում բարձր միներալացման պատճառով ջրային օրգանիզմները բացակայում են:

**M-140. МЕСТНЫЙ БАЗИС ЭРОЗИИ – ՈՂՈՂԱՄԱՇՄԱՆ (ՈՂՈՂԱՅԱՆՄԱՆ, ԷՐՈԶԻԱՅԻ) ՏԵՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՄԱԿԱՐԴԱԿ, TEMPORARY BASE LEVEL, LOCAL BASE LEVEL**, ողողամաշման հիմնամակարդակ, որն ունի տեղական ու ժամանակավոր նշանակություն և տեղաբաշխված է ցանկացած բարձրության վրա:

**M-141. МЕСТООБИТАНИЕ – ԲՆԱԿԱՏԵՂ(Ի), HABITAT, SITE**, ցամաքի կամ ջրավազանի տեղամաս, որը զբաղեցնում են օրգանիզմները, որևէ տեսակի անհատները, բիոցենոզը, և որտեղ կան դրանց գոյության համար անհրաժեշտ պայմաններ:

**M-142. МЕСТОРОЖДЕНИЕ БЛИЗПОВЕРХНОСТНОЕ – ՄԵՐՉՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ, NEAR-SURFACE DEPOSIT**, ներծին հետմազմայական կամ էքսզյացիոն հանքավայր, որը գոյացել է մթնոլորտային մոտ ճնշման և ցածր ջերմաստիճանի պայմաններում:

**M-143. МЕСТОРОЖДЕНИЕ ВЫВЕТРИВАНИЯ – ՀՈՂԱՅԱՐՄԱՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ, WEATHERING DEPOSIT**, գոյանում է հողմահարման կեղևում՝ ապարների ֆիզքիմ. ձևափոխությունների գործընթացների ազդեցության տակ: Հ. հ-երի ձևավորումը հաճախ ուղեկցվում է միներալատեղակալման գործընթացներով, պրոֆիլում օգտակար բաղադրամասերի տեղաշարժմամբ և կուտակմամբ՝ հողմահարման կեղևի որոշակի զոնաներում, տե՛ս Кора выветривания:

**M-144. МЕСТОРОЖДЕНИЕ ВЫСОКОТЕМПЕРАТУРНОЕ – ԲԱՐՉՐԱՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ, HIGH TEMPERATURE DEPOSIT**, խորքային ծագման հնքվ., սովորաբար գոյանում է հետմազմայական տաք գազաջրաջերմային լուծույթներից՝ 300-350°C պայմաններում: Այս տերմինի օգտագործման դեպքում խորհուրդ է տրվում ճշտել հնքվ-ի առաջացման պայմանները:

**M-145. МЕСТОРОЖДЕНИЕ ГИДРОТЕРМАЛЬНОЕ, տե՛ս Гидротермальные месторождения:**

**M-146. МЕСТОРОЖДЕНИЕ ГИСТЕРОМАГМАТИЧЕСКОЕ – ՈՒՇՄԱԳՄԱՅԱԿԱՆ (ՀԻՍՏԵՐՈՄԱԳՄԱՅԱԿԱՆ) ՀԱՆՔԱՎԱՅՐ, HYSTEROMAGMATIC DEPOSIT**, առաջանում է

- մնացորդային հանքային հալույթներից, որոնք գոյանում են մագմայի տարբերակման ժամանակ՝ սիլիկատային միներալների բյուրեղացումից և հալույթում հանքային ու ցնդող բաղադրամասերի կուտակումից հետո: Օր.՝ քրոմիտի ու տիտանամագնետիտի հնքվ-երը՝ գերհիմքային ապարներում, խոշոր ապատիտանեֆելինային հնքվ-երը՝ սիենիտներում և այլն, տե՛ս Позднемагматическое месторождение:
- M-147. МЕСТОРОЖДЕНИЕ ДИАГЕНЕТИЧЕСКОЕ – ԴԻԱԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ (ԱՊԱՐԱԳՈՅԱՑԱՆ) ՀԱՆՔԱՎԱՅՐ, DIAGENETIC DEPOSIT**, նստվածքային հնքվ., որում արդյ. հանքանյութերը ձևավորվել են դիագենեզի (ապարագոյացման) փուլում (Cu-ի, Zn-ի, Pb-ի և այլ շերտադարսվածքային հնքվ-եր): Դիագենեզի ընթացքում մետաղների նստեցումը և կուտակումը տեղի են ունենում գրունտային լուծույթներից:
- M-148. МЕСТОРОЖДЕНИЕ ЖИЛЬНОЕ – ԵՐԱՎԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ, LODE, LODE DEPOSIT**, կազմված է հանքային կամ միներալային երակներից:
- M-149. МЕСТОРОЖДЕНИЕ ЗАКРЫТОЕ (СЛЕПОЕ) – ՓԱԿ (ԿՈՒՅՐ) ՀԱՆՔԱՎԱՅՐ, CONCEALED DEPOSIT**, հնքվ., որը մակերևույթում ելքեր չունի:
- M-150. МЕСТОРОЖДЕНИЕ ИНФИЛЬТРАЦИОННОЕ**, տե՛ս Инфильтрационное месторождение:
- M-151. МЕСТОРОЖДЕНИЕ КАТАГЕНЕТИЧЕСКОЕ – ԿԱՏԱԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ, CATAGENETIC DEPOSIT**, ձևավորվում է կատագենեզի փուլում արդեն քարացած նստվածքներում՝ ստր. ջրերի ակտիվ մասնակցության պայմաններում (Pb-ի, Zn-ի և այլ շերտադարսվածքային հնքվ-եր): Կ. հնքվ-երի գոյացման համար առավել բարենպաստ են դելտային, հունային և այլ նստվածքները:
- M-152. МЕСТОРОЖДЕНИЕ КОЛЧЕДАННОЕ**, տե՛ս Колчеданное месторождение:
- M-153. МЕСТОРОЖДЕНИЕ КОНТАКТОВО-МЕТАМОРФИЧЕСКОЕ**, տե՛ս Скарны:
- M-154. МЕСТОРОЖДЕНИЕ МАГМАТОГЕННОЕ**, տե՛ս Эндогенные месторождения:
- M-155. МЕСТОРОЖДЕНИЕ МЕТАМОРФОГЕННОЕ**, տե՛ս Метаморфогенные месторождения:
- M-156. МЕСТОРОЖДЕНИЕ МЕТАСОМАТИЧЕСКОЕ – ՄԵՏԱՍՈՄԱՏԻԿԱԿԱՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ, METASOMATIC DEPOSIT, REPLACEMENT DEPOSIT**, օգտ. հնձ-ների հանքակուտակներ, որոնք առաջացել են մետասոմատոզի ընթացքում և բաղկացած են սկզբնական ապարների միներալներին փոխարինած արժեքավոր միներալներից (օր.՝ պղնձի, կապարի, ցինկի և այլ տարրերի հանքաքարեր):
- M-157. МЕСТОРОЖДЕНИЕ МИНЕРАЛЬНЫХ ВОД – ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ, DEPOSIT OF MINERAL WATERS**, ստր. հանքային ջրերի կուտակում (ավազան), որի եզրագծերն ու ծավալը ժամանակ-տարածության մեջ համեմատաբար հաստատուն են և կախված են ջրատար ապարների երկրք. կառուցվածքից, ստր. ջրոլորտում այլ ջրատար հորիզոնների նկատմամբ տեղադիրքից, ինչպես նաև շահագործման վիճակից:
- M-158. МЕСТОРОЖДЕНИЕ НИЗКОТЕМПЕРАТУРНОЕ – ՑԱԾՐԱՋԵՐՄԱՍԻՃԱՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ, LOW TEMPERATURE DEPOSIT**, ջրաջերմային (հիդրոջերմային) հնքվ., որն առաջացել է 200°C-ից ցածր ջերմաստիճաններում:
- M-159. МЕСТОРОЖДЕНИЕ ОСАДОЧНОЕ**, տե՛ս Осадочные месторождения:
- M-160. МЕСТОРОЖДЕНИЕ ОСТАТОЧНОЕ – ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ, RESIDUAL DEPOSIT**, գոյանում է վերնածնության (հիպերգենեզի) զոնայի վերին հորիզոնները օգտակար բաղադրամասերով հարստանալու հետևանքով, երբ մայրական ապարների նյութի մի մասը դուրս է տարվում հողմահարման գործընթացների ընթացքում: Մ. հ-երից առավել տարածված են բոքսիտների, կաոլինիտի, միկելի

սիլակատային հանքաքարերի, գորշ երկաթաքարի, մանգանի օքսիդների, մագնետիտի հնքվ-երը, տիտանի, անագի, վոլֆրամի, ոսկու, տանտալի միներալները:

**M-161. МЕСТОРОЖДЕНИЕ ПЕГМАТИТОВОЕ – ՊԵՂՄԱՏԻՏԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ, PEGMATITIC DEPOSIT**, գոյանում է պեգմատիտների առաջացման ընթացքում, սովորաբար կապված է գրանիտային, մասամբ ալկալիական ապարների հետ: Պ. հ-երը առավելապես ոչ մետաղական (փայլարներ, դաշտասպաթներ, կորունդ, ֆլյուորիտ և այլն), ավելի քիչ՝ հազվագյուտ ու ցրված մետաղների հնքվ-եր են:

**M-162. МЕСТОРОЖДЕНИЕ ПЛАСТОВОЕ – ՇԵՐՏԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ, SHEET DEPOSIT**, հանքամարմինները շերտաձև են: Տիպական Շ. հ-եր են հանդիսանում պղնձի, երկաթի և այլ մետաղների որոշ հնքվ-եր, ինչպես նաև բազմազան ոչ մետաղական օգտ. հնծ-ների հնքվ-եր:

**M-163. МЕСТОРОЖДЕНИЕ ПНЕВМАТОЛИТОВОЕ**, տե՛ս Пневматолитовые месторождения:

**M-164. МЕСТОРОЖДЕНИЕ ПОВЕРХНОСТНОЕ – ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ, SURFACE DEPOSIT**, առաջանում է այն գործընթացների հետևանքով, որոնք տեղի են ունենում երկրի մակերևույթին: Մ. հ-ները ստորաբաժանվում են՝ նստվածքային, բեկորային, ցրոնային և այլ տիպերի: Ներառում են նաև որոշ ներծին հնքվ-եր (օր.՝ ծծմբի կուտակները՝ կապված ժամանակակից հրաբուխների հետ):

**M-165. МЕСТОРОЖДЕНИЕ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ – ՕԳՏԱՎԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ, MINERAL DEPOSIT**, երկրի մակերևույթին կամ ընդերքում միներալային նյութի կուտակում, որը ըստ քանակի, որակի և տեղադրման պայմանների՝ պիտանի է արդյ. օգտագործման համար: Օգտ. հնծ-ները լինում են՝ գազային (այրվող և չայրվող գազերի հնքվ-եր), հեղուկ (նավթի և ստր. ջրերի հնքվ-եր) և պինդ (Օ. հ. հ-երի մեծ մասը): Ըստ արդյ. օգտագործման՝ Օ. հ. հ-երը ստորաբաժանվում են՝ մետաղական (տե՛ս Рудные месторождения), ոչ մետաղական (տե՛ս неметаллические полезные ископаемые), այվող կամ կառուտորիդիթներ (տե՛ս Газовое месторождение, Нефтяное месторождение, Месторождение угольное) և ջրամիներալային: Ըստ առաջացման երկրբ. պայմանների՝ Օ. հ. հ-երը ստորաբաժանվում են՝ նստվածքաձագումնային (մակերևութային, արտածին), մագմայածին (խորքային, ներծին) և փոխակերպածին սերիաների: Վերջինները բաժանվում են խմբերի, խմբերը՝ դասերի, դասերը՝ ենթադասերի և ենթադասերը՝ ֆորմացիաների:

**M-166. МЕСТОРОЖДЕНИЕ ПОЗДНЕМАГМАТИЧЕСКОЕ**, նույնն է՝ Месторождение гистеромагматическое:

**M-167. МЕСТОРОЖДЕНИЕ ПОДЗЕМНЫХ ВОД – ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ, DEPOSIT OF UNDERGROUND WATER**, ջրատար հորիզոնների կամ համալիրների տարածման այնպիսի մասեր, որոնց սահմաններում բնական և արհեստական գործոնների շնորհիվ կուտակվող ստր. ջրերը որակական և քանակական տեսակետից համեմատաբար կայուն են և տնտեսապես շահավետ՝ ժողովրդական տնտեսության մեջ օգտագործման համար:

**M-168. МЕСТОРОЖДЕНИЕ ПОЛИМЕТАЛЛИЧЕСКОЕ – ԲԱԶՄԱՄԵՏԱՂԱՎԱՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ, POLYMETALLIC DEPOSIT**, տե՛ս Полиметаллические месторождения:

**M-169. МЕСТОРОЖДЕНИЕ ПОСТМАГМАТИЧЕСКОЕ – ՀԵՏՄԱՎՍԱՅԱՎԱՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ, POSTMAGMATIC DEPOSIT**, գոյանում է գազերից ու ջրային լուծույթներից, որոնք անջատվում են մագմայի բյուրեղացման ընթացքում և գլխ. նրա պնդացումից հետո:

**M-170. МЕСТОРОЖДЕНИЕ РОССЫПНОЕ**, տե՛ս Россыпи:

**М-171. МЕСТОРОЖДЕНИЕ СЕДИМЕНТАЦИОННОЕ**, տե՛ս Экзогенные месторождения:

**М-172. МЕСТОРОЖДЕНИЕ СРЕДНТЕМПЕРАТУРНОЕ – ՄԻՋԻՆ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ**, **MIDDLE TEMPERATURE DEPOSIT**, ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվ., որի ձևավորումը տեղի է ունեցել 200-ից մինչև 300°C պայմաններում:

**М-173. МЕСТОРОЖДЕНИЕ СТРАТИФИЦИРОВАННОЕ**, տե՛ս Стратифицированное месторождение:

**М-174. МЕСТОРОЖДЕНИЕ УГОЛЬНОЕ – ԱԾԽԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐ**, **COAL DEPOSIT**, նստվածքային ապարներից կազմված երկրբ. մարմին, որը ներառում է լիզնիտի, գորշ ածխի կամ քարածխի շերտեր (հանքակուտակներ), որոնք ունեն արդյ. նշանակություն: Կարող է լինել առանձին կամ կազմել ածխային ավազանի մի մասը: Պաշարները կարող են լինել հազարավոր, միլիոնավոր, հազվադեպ՝ միլիարդավոր տոննաներ:

**М-175. МЕСТОРОЖДЕНИЕ ЭКЗОГЕННОЕ**, տե՛ս Экзогенные месторождения:

**М-176. МЕСТОРОЖДЕНИЕ ЭНДОГЕННОЕ**, տե՛ս Эндогенные месторождения:

**М-177. МЕСТОРОЖДЕНИЕ ЭПИТЕРМАЛЬНОЕ – ԷՊԻԹԵՐՄԱԼ ՀԱՆՔԱՎԱՅՐ**, **EPITHERMAL DEPOSIT**, գոյանում է երկրի մակերևույթից ներքև փոքր խորություններում ջրաջերմային լուծույթներից՝ ցածր ճնշման պայմաններում: Հոմ.՝ ցածրաջերմաստիճանային հանքավայր:

**М-178. МЕТА...** (հուն. μετά – հետո) – **ՄԵՏԱ...**, **ՀԵՏՈ...**, **META...**, նախածանց 1) ապարի անվանման նեջ նշանակում է, որ ապարը կրել է փոխակերպային փոփոխություն, 2) նշանակում է ինչ-որ բանին հաջորդելը, վիճակի փոփոխությունը:

**М-179. МЕТАБАЗИТЫ – ՄԵՏԱԲԱԶԻՏՆԵՐ**, **METABASITES**, փոխակերպված հիմքային ապարների (գաբրոներ, դիաբազներ և այլն) ընդհանուր անվանում:

**М-180. МЕТАГЕНЕЗ** (հուն. μετά – հետո և génesis – ծագում, գոյացում) – **ՄԵՏԱԳԵՆԵՆԵԶ**, **METAGENESIS**, նստվածքային ապարների բնական կերպափոխման գործընթացների համախմբություն, երբ այդ ապարները խորասուզվում են քարոլորտի համեմատաբար խոր հորիզոնները և ենթարկվում են բարձր ճնշման ու ջերմաստիճանի ներազդեցության: «Մ.» տերմինի հասկացության վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Ն. Բ. Վասոկիչը այն համարում է ռեգիոնալ փոխակերպության հոմ., Ն. Մ. Ստրախովը՝ նստվածքային ապարների ձևափոխման փուլերից մեկը, որը հաջորդում է դիագենեզին և տեղի է ունենում մինչև դրանց վերափոխվելը փոխակերպային ապարի: Մ., ի տարբերություն կատագենեզի, ընդգրկում է ապարի ամբողջ միներալային զանգվածը: Օր.՝ կավային միներալները վերափոխվում են փայլարների, ալյումինի հիդրօքսիդները՝ կորունդի և այլն, բայց ապարի շերտավոր կազմվածքը հաճախ պահպանվում է:

**М-181. МЕТАГНЕЙС**, տես Парагнейс:

**М-182. МЕТАКРИСТАЛЛЫ – ՄԵՏԱԲՅՈՒԵՂՆԵՐ**, **METACRYSTALS**, բյուրեղներ, որոնք առաջանում են ապարների փոխակերպության կամ մետասոմատոզի դեպքում՝ լուծույթների կամ ֆլյուիդների ազդեցության տակ: Օր.՝ բյուրեղային թերթաքարերում նոնաքարի (ալմանդինի) խոշոր, լավ միստավորված բյուրեղները, թերթաքարերում՝ պիրիտի խորանարդային բյուրեղները և այլն: Մետասոմատիկական ապարների (սկառներ, գրեյզեններ և այլն) միներալների մեծ մասը Մ. են, նույնն է՝ Кристаллобласты:

**М-183. МЕТАЛЛИЧЕСКИЕ ПОЛЕЗНЫЕ ИСКОПАЕМЫЕ – ՄԵՏԱՂԱՎԱՆ ՕԳՏԱՎԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ**, **METALLICS**, ներկայացված են բնածին մետաղներով, սև, գունա-

վոր, հազվագյուտ ու ճառագայթաակտիվ մետաղների, ինչպես նաև հազվագյուտ հողերի տարրերի հանքաքարերով:

**M-184. МЕТАЛЛОВЕДЕНИЕ – ՄԵՏԱՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, METALLOGY**, մետաղների և համաձուլվածքների բաղադրությունը, կառուցվածքի ու հատկությունների միջև եղած կապը և արտաքին տարրեր ազդեցություններից նրանց փոփոխությունն ուսումնասիրող գիտություն:

**M-185. МЕТАЛЛОГЕНИЧЕСКАЯ ЗОНА – ՄԵՏԱՂԱԳՈՅԱՑՄԱՆ (ՄԵՏԱՂԱԾՆԱԿԱՆ) ՉՈՆԱ, METALLOGENIC ZONE**, ծագումնաբանորեն փոխկապակցված հնքվ-երի համախմբություն, որը կապված է ապարների որոշակի ֆորմացիաների հետ: Առանձնացվում են նստվածքային, հրաբխածին-նստվածքային, հրաբխային, պլուտոնիկ, փոխակերպային և հողմահարման կեղևի Մ. գ-ներ: Դրանց ներսում զոնաները մասնատվում են ըստ հանքապարփակող ապարների ֆորմացիոն կազմի: Օր.՝ նստվածքային ապարների մեջ հնարավոր է անջատել կարբոնատների, ցամաքածին ստվարաշերտերի, էվապորիտների և այլ Մ. գ-ներ:

**M-186. МЕТАЛЛОГЕНИЧЕСКАЯ КАРТА – ՄԵՏԱՂԱԳՈՅԱՑՄԱՆ (ՄԵՏԱՂԱԾՆԱԿԱՆ) ՔԱՐՏԵԶ, METALLOGENIC MAP**, պատկերում է հանքաքեր տեղամասերի, մետաղական հնքվ-երի և միներալացման բոլոր երևակումների տեղաբաշխման օրինաչափությունները՝ կապված տարածքի երկրք. կառուցվածքի, նստվածքակուտակման, տեկտոնիկայի, փոխակերպության և մագմայականության առանձնահատկությունների հետ: Մ. ք. մետաղական հնքվ-երի կանխատեսության հիմքն է: Ըստ պատկերման մասշտաբների՝ Մ. ք-ները բաժանվում են 3 խմբի՝ ակնարկային կամ մանրամասշտաբ (1:1 000 000 - ից ավել մինչև 1:500 000), միջին մասշտաբ (1:200 000 - 1:100 000), խոշորամասշտաբ (1:50 000 000 - 1:25 000): Մ. ք-ների կազմման համար հիմք են հանդիսանում նստվածքային, մագմայական ու փոխակերպային ֆորմացիաների քարտեզները, տեկտ. քարտեզը, խոշորամասշտաբների համար՝ նաև երկրք. քարտեզը:

**M-187. МЕТАЛЛОГЕНИЧЕСКАЯ ПРОВИНЦИЯ – ՄԵՏԱՂԱԳՈՅԱՑՄԱՆ (ՄԵՏԱՂԱԾՆԱԿԱՆ) ՊՐՈՎԻՆՑԻԱ, METALLOGENIC PROVINCE**, մետաղական հնքվ-երի համախմբություն, որն անջատվում է տեկտ. խոշոր ստորաբաժանումների սահմաններում: Առանձնացվում են պլատֆորմային վահանների, սալերի, ծալքավոր համակարգերի, առաջնային իջվածքների և միջադիր զանգվածների Մ. պ-ներ:

**M-188. МЕТАЛЛОГЕНИЧЕСКИЕ ЭПОХИ – ՄԵՏԱՂԱԳՈՅԱՑՄԱՆ (ՄԵՏԱՂԱԾՆԱԿԱՆ) ԴԱՐԱՇՐՉԱՆՆԵՐ, METALLOGENIC EPOCHS**, մետաղական հնքվ-երի ձևավորման գլխավոր ժամանակաշրջաններ, որոնք համապատասխանում են երկրակեղևի երկրք. զարգացման հիմնական փուլերին: Շատ հետազոտողների կարծիքով Մ. դ-ը համապատասխանում են տեկտոնամագմայական ցիկլերին: Երկրակեղևի զարգացման պատմության ընթացքում առանձնացնում են մետաղագոյացման 11 դարաշրջան: Գրենլանդյան դարաշրջան (5000-3800 մլն. տ. առաջ), համընկնում է հնագույն լուսնային զարգացման փուլին՝ առանց մետաղագոյացման հատկանիշների: Կոլայի դարաշրջան (3800 - 2800 մլն. տ. առաջ), համապատասխանում է նուկլերային փուլին և նշանավորում է հնագույն ներծին, սովորաբար խոր փոխակերպված, մետաղական հնքվ-երի ձևավորման սկիզբը: Սպիտակծովյան դարաշրջան (2800 - 2300 մլն. տ. առաջ), ընդգրկում է նախաերկրասինկլինալային փուլի առաջին կեսը, համապատասխանում է հին երկրասինկլինալների սաղմնավորմանը, բնորոշվում է նախաերկրասինկլինալային քրոմի և տիտանամագնետիտի հնքվ-երի ձևավորմամբ: Կարելական դարաշրջան (2300 - 1800 մլն.



տ. առաջ), կապված է նախաերկրասինկլինալների ծաղկման և վերացման հետ: Այդ փուլի երկրասինկլինալային բազալտոիդային հրաբխականության հետ կապված է երկաթային քվարցիտների՝ աշխարհի բոլոր խոշոր հնքվ-երի և ավազանների ձևավորումը: Գոթյան դարաշրջան (1800 - 1500 մլն. տ. առաջ), համապատասխանում է երկրբ. պատմության ներերկրասինկլինալային փուլին, երբ տեղի է ունեցել ներծին մետաղագոյացման նկատելի ընդմիջում: Գրենվիլյան դարաշրջան (1500 - 1000 մլն. տ. սրանից առաջ), համապատասխանում է նոր երկրասինկլինալային փուլի սկզբին, բնորոշվում է բազալտոիդային հրաբխականությամբ և դրա հետ կապված հրաքարաբազմամետաղական հնքվ-երի ձևավորմամբ: Բայկալյան դարաշրջան (1000 - 600 մլն. տ. առաջ), բնորոշվում է բազալտոիդային և դրան հաջորդող գրանիտոիդային շարքի ներծին հնքվ-երով: Կալեդոնյան դարաշրջան (600 - 400 մլն. տ. առաջ), աչքի է ընկնում բազալտոիդների գերակշիտ զարգացմամբ՝ բազմաթիվ հրաքարային հնքվ-երով: Յերցինյան դարաշրջան (400 - 250 մլն. տ. առաջ), բնորոշվում է երկրասինկլինալային մագմայականության ու մետաղագոյացման բուռն զարգացմամբ: Կիմերյան դարաշրջան (250 - 100 մլն. տ. առաջ), արտահայտվել է Խաղաղօվկիանոսյան և Միջերկրածովյան ծալքավոր գոտիների եզրային՝ մերձպլատֆորմային մասերում (գունավոր և ճառագայթակտիվ մետաղների հետմագմայական հնքվ-եր): Ալպյան դարաշրջան (100 մլն. տ. առաջ), աչքի է ընկնում բեկվածքային տեկտոնիկայով, ոսկու, արծաթի, պղինձ-պորֆիրային ջրաջերմային հնքվ-երով (Խաղաղօվկիանոսյան գոտի), ինչպես նաև հանքաբեր կարբոնատիտներով ու ալմաստաբեր քիմբեռլիթներով (Աֆրիկական, Յուրսիս-Ամերիկյան և Սիբիրական պլատֆորմներ):

**M-189. МЕТАЛЛОГЕНИЧЕСКИЙ ПОЯС – ՄԵՏԱՂԱԳՈՅԱՑՄԱՆ (ՄԵՏԱՂԱԾՆԱԿԱՆ)**

**ԳՈՏԻ, METALLOGENIC BELT**, ըստ Բիլիբինի՝ մոլորակային մետաղաբեր տարածքներ, որոնք համընկնում են երկրագնդի տեկտ. խոշորագույն գոտիների հետ, օր.՝ Խաղաղօվկիանոսյան, Միջերկրածովյան գոտիները: Մ. գ-ները կազմված են ավելի ցածր կարգի փոխկապակցված մետաղաբեր տարածքներից՝ մետաղածնական պրովինցիաներից: Մ. գ-ները կարող են ձևավորվել մի քանի տեկտ. ցիկլերի կամ մետաղագոյացման դարաշրջանների ընթացքում: Նրանցից յուրաքանչ-յուրը բնորոշվում է հանքայնացման որոշակի տիպերով: Խոշոր Մ. գ-ների երկարությունը կազմում է տասնյակ հազարավոր կմ, լայնությունը՝ հարյուրավոր կմ: Որոշ երկրաբաններ առաջարկում են Մ. գ. համարել այն հանքաբեր տարածքները, որոնք չափերով ավելի փոքր են և համապատասխանում են մետաղագոյացման պրովինցիաներին (Ուրալյան, Սոնդոլաօխոտյան և այլն):

**M-190. МЕТАЛЛОГЕНИЧЕСКОЕ РАЙОНИРОВАНИЕ – ՄԵՏԱՂԱԳՈՅԱՑՄԱՆ (ՄԵՏԱՂԱԾՆԱԿԱՆ) ՇՐՋԱՆԱՑՈՒՄ, METALLOGENIC REGIONALIZATION**, տարբեր նշանակության ու չափայնության մետաղաբեր տարածությունների առանձնացում և դրանց համաստորադասության սահմանում: Անջատվում են ավելի խոշոր ռեգիոնալ միավորներ (մետաղագոյացման գոտիներ, պրովինցիաներ, կառուցվածքամետաղագոյացման զոնաներ) և տեղային միավորներ (հանքային շրջաններ, զոնաներ, հանգույցներ, դաշտեր): Յանքային զոնաների, հանգույցների ու դաշտերի մեջ առանձնացվում են առանձին հնքվ-եր, երբեմն՝ հանքային տեղամասեր:

**M-191. МЕТАЛЛОГЕНИЯ** (հուն. métallon – մետաղ և géneia – բարդ բառերում՝ գոյացում, ստեղծում) – **ՄԵՏԱՂԱԳՈՅԱՑՈՒՄ (ՄԵՏԱՂԱԾՆՈՒԹՅՈՒՆ), METALLOGENY**, մետաղական հնքվ-երի մասին ուսմունքի բաժին, ուսումնասիրում է մետաղական հնքվ-երի ձևավորման ու տեղաբաշխման ռեգիոնալ երկրբ. օրինաչափու-

թյունները՝ ժամանակի և տարածության մեջ: Մ. սերտորեն կապված է երկրակեղևի առանձին մարզերի երկրբ. զարգացման ընդհանուր ընթացքի հետ և պայմանավորված է հիմնական երկրբ. գործոններով (մագմայականություն, տեկտոնիկա, նստվածքակուտակում, քարաբանություն, փոխակերպություն, էրոզիա և այլն): Մ. գիտական հիմք է հանդիսանում տարբեր խմբի հնքվ-երի տարածման, հեռանկարների գնահատման և հայտնաբերման հնարավորությունների համար:

**M-192. МЕТАЛЛОГЕНИЯ ДРЕВНИХ ПЛАТФОРМ – ՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄՆԵՐԻ ՄԵՏԱՂԱԳՈՅԱՑՈՒՄ, PALEOPLATFORM METALLOGENY, ANCIENT PLATFORM METALLOGENY,** դիտարկում է հին պլատֆորմներում (բյուրեղային հիմքում, նստվածքային ծածկոցում) հնքվ-երի տեղաբաշխման ընդհանուր օրինաչափությունները՝ ժամանակի և տարածության մեջ, այսինքն՝ պլատֆորմների զարգացման ընթացքում և այն կառուցվածքաֆորմացիոն զոնաներում, որոնք առաջացել են այդ զարգացման հետևանքով: Պլատֆորմների Մ. որոշվում է դրանց ներքին երկրբ. կառուցվածքի ձևավորման 3 փուլերով՝ ծալքավոր հիմքի առաջացմամբ, նստվածքային ծածկոցի ձևավորմամբ և տեկտոնամագմայական ակտիվացմամբ:

**M-193. МЕТАЛЛОГЕНИЯ МОРСКОГО ДНА – ԾՈՎԻ ՀԱՏԱԿԻ ՄԵՏԱՂԱԳՈՅԱՑՈՒՄ, SEA BED METALLOGENY,** ռեգիոնալ մետաղագոյացման բաժին, որը քննարկում է ծովի հատակում օգտ. հնժ-ների (առավելապես մետաղական) տեղաբաշխման օրինաչափությունները: Համաշխարհային օվկիանոսի Հ. մ. բնորոշվում է հիմնականում հատակին երկաթ-մանգանային կոնկրեցիաների կուտակմամբ, որոնք ներփակում են երկաթի, մանգանի, պղնձի, նիկելի և կոբալտի խոշոր պաշարներ: Հայտնի են նաև ջրաջերմային ծագման սուլֆիդային հանքանյութեր:

**M-194. МЕТАЛЛОГЕНИЯ ОБЛАСТЕЙ (ЗОН) АКТИВИЗАЦИИ – ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՄԱՐԶԵՐԻ (ԶՈՆԱՆԵՐԻ) ՄԵՏԱՂԱԳՈՅԱՑՈՒՄ, METALLOGENY OF ACTIVATION REGIONS,** դիտարկում է ժամանակի և տարածության մեջ հնքվ-երի տեղաբաշխման ընդհանուր օրինաչափությունները այն յուրահատուկ տիպի կառուցվածքների սահմաններում, որոնք գոյանում են պլատֆորմների և լրիվ կոնսոլիդացված ծալքավոր մարզերի այն զոնաներում, որտեղ տեղի է ունեցել տեկտ. շարժումների և մագմայականության ակտիվացում: Այժմ ներծին հանքագոյացումը կապում են գործընթացների երեք հիմնական տեսակների հետ, որոնք հանգեցնում են տարբեր առանձնահատկություններ ունեցող ակտիվացված զոնաների ձևավորմանը. 1) ավտոնոմ (ինքնավար) ակտիվացման մարզերի (զոնաների) մետաղագոյացում, 2) կցորդված ակտիվացման մարզերի (զոնաների) մետաղագոյացում, 3) կամարաբեկորային մարզերի մետաղագոյացում:

**M-195. МЕТАЛЛОГЕНИЯ СКЛАДЧАТЫХ ОБЛАСТЕЙ – ԾԱԼՔԱՎՈՐ ՄԱՐԶԵՐԻ ՄԵՏԱՂԱԳՈՅԱՑՈՒՄ, FOLDED REGIONS METALLOGENY,** դիտարկում է ժամանակի և տարածության մեջ հնքվ-երի ընդհանուր տեղաբաշխման օրինաչափությունները ծալքավոր (շարժուն) մարզերում՝ դրանց զարգացման ընթացքում և այդ զարգացման արդյունքում ձևավորված կառուցվածքաֆորմացիոն զոնաներում: Շարժուն մարզերի կերպափոխումը՝ համեմատաբար կայուն ծալքավոր մարզերի, տեղի է ունենում 3 ընթացաշրջաններով, որոնց համապատասխանում են մագմայական ապարների և դրանց հետ զուգորդված մետաղական հնքվ-երի 3 սերիաներ: Վաղ ընթացաշրջանում, որը բնորոշվում է շարժուն մարզերի հատակի ճկմամբ և հրաբխածին-նստվածքային ապարների հզոր ստվարաշերտերի կուտակմամբ, ձևավորվում են բազալտոիդային մագմայական ապարների և դրանց հետ կապված մետաղական հնքվ-երի չորս ֆորմացիաներ՝ բազալտ-լիպարիտային (պղնձի, ցինկի, երբեմն՝ կապարի հրա-

քարային հնքվ-երով), պերիդոտիտային (քրոմի հանքաքարերի մագմայական հնքվ-երով), գաբրո-պիրոքսենիտ-դունիտային (տիտանամագնետիտային հանքաքարերի մագմայական հնքվ-երով), պլագիոգրանիտ-պլագիոսիենիտային (երկաթի ու պղնձի հանքաքարերի սկառնային հնքվ-երով): Շարժուն մարզերի զարգացման միջին ընթացաշրջանում ծալքավորման գլխավոր փուլի ընթացքում առաջանում են գրանիտակերպերի և դրանց հետ կապված մետաղական հնքվ-երի երկու ֆորմացիաներ՝ գրանոդիորիտային (վոլֆրամի, ոսկու, պղնձի, մոլիբդենի, կապարի և ցինկի սկառնային և ջրաջերմային հնքվ-երով) և գրանիտային (անագի, վոլֆրամի, տանտալի, լիթիումի, բերիլի պեգմատիտային, ալբիտիտային, գրեյզենային և բարձրաջերմաստիճանային ջրաջերմային հնքվ-երով): Ուշ ընթացաշրջանում՝ շարժունակից դեպի պլատֆորմային ռեժիմը անցողիկ ժամանակաշրջանում, տեղի է ունենում մագմայական ապարների երկու ֆորմացիաների ներդրում (համապատասխան մետաղական հնքվ-երի ուղեկցությամբ)՝ դիորիտ-պորֆիրիտների, գրանիտ-պորֆիրների, սիենիտ-պորֆիրների փոքր հիպաթիսալ ներժայթքվածքների (զունավոր, հազվագյուտ, ազնիվ և ճառագայթաակտիվ մետաղների տարատեսակ պլուտոնածին ջրաջերմային հնքվ-երով) և անդեզիտադաշտների՝ նույնպես բազմազան հրաբխածին ջրաջերմային մետաղական հնքվ-երով: Ծ. մ.մ-ման նշված սխեման ընդհանրացված է և սովորաբար կոնկրետ ծալքավոր մարզում լրիվ չի արտահայտվում:

**M-196. МЕТАЛЛОГЕНИЯ ЭКЗОГЕННАЯ – ԱՐՏԱԾԻՆ ՄԵՏԱՂԱԳՈՅԱՑՈՒՄ, EXOGENOUS METALLOGENY**, մետաղագոյացման բաժին, որն ուսումնասիրում է արտածին հանքաքեր տարածքների ու հնքվ-երի տարածման օրինաչափությունները՝ ժամանակի և տարածության մեջ:

**M-197. МЕТАЛЛОГЕНИЯ ЭНДОГЕННАЯ – ՆԵՐԾԻՆ ՄԵՏԱՂԱԳՈՅԱՑՈՒՄ, ENDOGENOUS METALLOGENY**, մետաղագոյացման բաժին, որն ուսումնասիրում է ներծին միներալացման հանքաքեր տարածքների ու հնքվ-երի տեղաբաշխման օրինաչափությունները՝ ժամանակի և տարածության մեջ:

**M-198. МЕТАЛЛУРГИЯ – ՄԵՏԱՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, METALLURGY**, մետաղական հանածո հումքերից և այլ նյութերից մետաղների ստացման, մետաղական համաձուլվածքների քիմ. բաղադրության, կառուցվածքի, նրանց հատկությունների փոփոխության հետ կապված գործընթացներն ընդգրկող գիտության ու տեխնիկայի բնագավառ և արդյունաբերության ճյուղ:

**M-199. МЕТАЛЛЫ БЛАГОРОДНЫЕ – ԱՋՆԻՎ ՄԵՏԱՂՆԵՐ**, տե՛ս Драгоценные металлы:

**M-200. МЕТАЛЛЫ (ИЛИ ЭЛЕМЕНТЫ) РАССЕЯННЫЕ – ՑՐՎԱԾ ՄԵՏԱՂՆԵՐ (ՎԱՍՏԱՐԵՐ), DISSEMINATED METALS**, մետաղներ (տարրեր), որոնք բնության մեջ հանքակուտակների ձևով չեն հանդիպում, խիստ հազվադեպ են ինքնուրույն միներալներ առաջացնում, շատ քիչ քանակներով հանդիպում են ապարների և հանքաքարերի կազմում: Դրանք են՝ սկանդիումը, գալիումը, ինդիումը և այլն, ինչպես նաև հազվագյուտ հողերի տարրերը: Անհաջող տերմին է, քանի որ ապարներում ու հանքաքարերում դրանք հանդիպում են ոչ թե ցրված, այլ փոքր կուտակումներով:

**M-201. МЕТАЛЛЫ САМОРОДНЫЕ – ԲՆԱԾԻՆ ՄԵՏԱՂՆԵՐ, NATIVE METALS**, բնության մեջ հանդիպում են մաքուր կամ համարյա մաքուր տեսքով:

**M-202. МЕТАЛЛЫ ЦВЕТНЫЕ – ԳՈՒՆԱՎՈՐ ՄԵՏԱՂՆԵՐ, NONFERROUS METALS**, մետաղների պայմանական խումբ, որն ընդգրկում է Cu, Pb, Zn, Ni, Co, Al, Mg:

**M-203. МЕТАЛЛЫ ЧЁРНЫЕ – ՍԵՎ ՄԵՏԱՂՆԵՐ, FERROUS METALS**, տերմինը օգտագործվում է սև (երկաթի) մետաղագործության մեջ. բացի երկաթից, ընդգրկում է նաև Mn, Ti և Cr:

**M-204. МЕТАМИКТНЫЕ МИНЕРАЛЫ** (հուն. metamiktós – խառն) – **ՄԵՏԱՄԻԿՏԱՅԻՆ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, METAMICT MINERALS**, բարդ օքսիդներ, հազվագյուտ հողերի տիտան-տանտալ-նիոբատներ, սիլիկատներ, ֆոսֆատներ և որոշ այլ միներալներ, որոնք պարունակում են ուրան և թորիում: Պահպանելով բյուրեղի արտաքին տեսքը՝ գտնվում են ամորֆ, ապակեման վիճակում: Դրանց համար բնորոշ է ծյուրի փայլը, խեցածև կոտրվածքը, մուգ գունավորումը:

**M-205. МЕТАМОРФИЗМ** (հուն. metamorphóomai – ենթարկվում եմ կերպափոխության, վերափոխվում եմ) – **ՓՈՒՍԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ԿԵՐՊԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆ, ՄԵՏԱՍՈՐՖՈՒԹՅՈՒՆ), METAMORPHISM**, նստվածքային և մագմայական ապարների փոփոխություն (վերաբյուրեղացում, միներալային և քիմ. կերպափոխություններ), որի հետևանքով դրանք վերածվում են փոխակերպային (մետամորֆային) ապարների: Առանձնացնում են ներծին Փ., որը տեղի է ունենում ապարի վրա ջերմության, ֆլյուիդների, ինչպես նաև երկրի վերնադիր շերտերի ճնշման ներգործության հետևանքով, և տիեզերածին Փ., որը տեղի է ունենում խոշոր երկնաքարային խառնարաններում՝ վայր ընկած խոշոր երկնաքարերի հարվածական ալիքների ներազդեցության տակ: Ներծին Փ. ստորաբաժանվում է ռեգիոնալ և հպումային Փ-ների (տե՛ս Контактный метаморфизм, Региональный метаморфизм): Փ-յան գլխավոր գործոններ են հանդիսանում ջերմաստիճանը, ճնշումը (հիդրոստատիկ և միակողմանի), լուծույթների կամ ֆլյուիդների բաղադրությունը և քիմ. ակտիվությունը: Էական նշանակություն ունեն նաև սկզբնական ապարների բաղադրությունն ու կազմվածքը և Փ-յան երկր. պայմանները (տեկտ. շարժումների, մագմայականության հետ տարածական և ծագումնային փոխկապվածությունը): Փ-յան փոփոխությունները ներառում են նախասկզբնական միներալների տրոհումը և նոր, ավելի կայուն միներալային խմբակցությունների առաջացումը, այսինքն՝ ապարների մասնակի կամ լրիվ վերաբյուրեղացումը և նոր կառուցվածքների ու մեծ մասամբ նոր միներալների գոյացումը: Փ-յան գործընթացները խիստ բազմազան են: Փ-յան գլխավոր տեսակներն են՝ ռեգիոնալ, հպումային, ջրաջերմային (հիդրոթերմալ) փոխակերպություն, ուժափոխակերպություն (դինամոմետամորֆություն) և այլն, տե՛ս Гидротермальный метаморфизм, Динамометаморфизм, Контактный метаморфизм, Региональный метаморфизм, Метаморфизм термальный: Փ-յանը չեն վերագրվում այն գործընթացները, որոնք տեղի են ունենում հողմահարման ու ցեմենտացիայի զոնայում, ինչպես նաև ապարի հալման գործընթացները:

**M-206. МЕТАМОРФИЗМ ГИДРОТЕРМАЛЬНЫЙ**, տե՛ս Гидротермальный метаморфизм:

**M-207. МЕТАМОРФИЗМ ИНЪЕКЦИОННЫЙ – ՆԵՐԱՐԿՈՒՄԱՅԻՆ ՓՈՒՍԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՄԵՏԱՍՈՐՖՈՒԹՅՈՒՆ), INJECTION METAMORPHISM**, փոխակերպություն՝ կապված ապարների մեջ մագմայական հալույթի (սովորաբար գրանիտային կազմի) ներարկման հետ: Տեղի է ունենում ներժայթքուկների հպումային զոնայում և ռեգիոնալ փոխակերպության խոր զոնաներում: Առաջանում են տարատեսակ միզմատիտներ և գնեյսներ:

**M-208. МЕТАМОРФИЗМ КОНТАКТОВЫЙ**, տե՛ս Контактный метаморфизм:

**M-209. МЕТАМОРФИЗМ РЕГИОНАЛЬНЫЙ**, տե՛ս Региональный метаморфизм:

**M-210. МЕТАМОРФИЗМ ТЕРМАЛЬНЫЙ – ՋԵՐՄԱՅԻՆ (ԹԵՐՄԱԼ) ՓՈՒՍԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՄԵՏԱՍՈՐՖՈՒԹՅՈՒՆ), THERMAL METAMORPHISM**, ապարների փոխակերպային գործընթաց, որի դեպքում գերակշռող գործոն է ջերմաստիճանը:

**M-211. МЕТАМОРФИЗМ УГЛЕЙ – ԱՃՈՒՆՆԵՐԻ ՓՈՒՍԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՄԵՏԱՍՈՐՖՈՒԹՅՈՒՆ), METAMORPHISM OF COALS**, քրածո ածուխների քիմ. կազմի, ֆիզ.

հատկությունների և ներքին կազմվածքի փոփոխման հետևանքով ածխածնի պարունակության հաջորդական բարձրացման անդարձելի գործընթաց, որը տեղի է ունենում ջերմաստիճանի ու ճնշման բարձրացման հետևանքով: Առանձնացնում են Ա. փ-յան 3 խմբեր՝ գորշածխային, քարածխային և անտրացիտային:

**M-212. METAMORФИЗОВАННЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ – ՕԳՏԱՎԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՓՈՒՍԱԿԵՐՊՎԱԾ (ՄԵՏԱՄՈՐՖԱՑՎԱԾ) ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, METAMORPHOSED DEPOSITS,** գոյանում են օգտ. հնժ-ների նախկինում գոյություն ունեցող մարմինների արմատական փոփոխության դեպքում՝ ռեգիոնալ և տեղային փոխակերպության գործընթացների հետևանքով, երբ անհետանում է առաջնային ծագման հատկանիշների մեծ մասը: Ռեգիոնալ փոխակերպության գործընթացում օգտ. հնժ-ների մարմինները ճզմվում են, միներալային զանգվածների կազմվածքը ձեռք է բերում փոխակերպային ապարներին բնորոշ գծեր, զարգանում են թերթավոր ու թելավոր կազմվածքները, զրանոբլաստիկ կառուցվածքը: Փոքր խտության միներալային ձևափոխությունները (մոդիֆիկացիաները) փոխարինվում են ավելի մեծ խտության միներալներով, ջրապարունակ միներալները՝ ջրազուրկներով, ամորֆ նյութերը՝ բյուրեղայիններով: Ռեգիոնալ փոխակերպված հնքվ-եր հայտնի են ապարների հին, մինչպալեոզոյան ֆորմացիաներում (Կրիվոյ Ռոգի երկաթահանքային ավազան, Կուրսկի մագնիսական անկանոնություն և այլն): Հպումափոխակերպված հնքվ-երին են պատկանում Ուրալի ու Սիբիրի սկառնային երկաթահանքային հնքվ-երը:

**M-213. METAMORФИЧЕСКИЕ ГОРНЫЕ ПОРОДЫ – ՓՈՒՍԱԿԵՐՊԱՅԻՆ (ՄԵՏԱՄՈՐՖԱՅԻՆ) ԱՊԱՐՆԵՐ, METAMORPHIC ROCKS,** ապարներ, որոնք ֆյուլիդների, ջերմաստիճանի և ճնշման ներգործության տակ ենթարկվել են փոխակերպության՝ փոխել են միներալային կազմը և հատիկների ազդեցության կազմվածքը, առանց քիմ. բաղադրության էական փոփոխության (բացառությամբ  $H_2O$ -ի և  $CO_2$ -ի պարունակության): Տարբերում են պարա- և օրթոփոխակերպային ապարներ, որոնք առաջացել են համապատասխանաբար նստվածքային և հրաբխային ապարների փոխակերպումից: Առավել տարածված են թերթավոր կամ զուլավոր Փ. ա.՝ թերթաքարերը, զնեյսները (գղձաքարերը), հազվադեպ չեն նաև հոծ ապարները՝ մարմարները, քվարցիտները, եղջերաքարերը: Բացի դա, լայն տարածված են նաև բազմազան ջարդոտված ապարները՝ կատակլազիտները և միներալները, որոնք առաջանում են դիսլոկացիոն կամ դինամիկական փոխակերպության դեպքում: Փ. ա-ի կազմը և ֆիզմեխ. հատկությունները փոփոխվում են մեծ սահմաններում: Տարբերում են մետապելիտներ (առաջանում են թթու նստվածքային ու արտաժայթքային ապարներից) և մետաբազիտներ (առաջանում են հիմքային նստվածքային և մագմայական ապարներից): Առանձնահատուկ տեղ են զբաղում կարբոնատային Փ. ա. (մարմարներ, կալցիֆիրներ): Ըստ ջերմաստիճանային հետազոտության բնույթի՝ տարբերում են՝ ռեգիոնալ փոխակերպված (բազմազան թերթաքարեր ցածրաջերմաստիճանային քլորիտայինից մինչև բարձրաջերմաստիճանային բյուրեղայինը) և հպումափոխակերպված (եղջերաքարեր, մարմարներ, մաժրակ) Փ. ա.: Եղջերախաբ-պլազիոկլազային կազմի Փ. ա.՝ մետաբազիտները, կոչվում են ամֆիբոլիթներ:

**M-214. METAMORФИЧЕСКИЕ МЕСТОРОЖДЕНИЯ – ՓՈՒՍԱԿԵՐՊԱՅԻՆ (ՄԵՏԱՄՈՐՖԱՅԻՆ) ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, METAMORPHIC DEPOSITS,** օգտ. հնժ-ների հանքակուտակներ, որոնք գոյանում են ապարների փոխակերպության հետևանքով: Օր.՝ քարածխի շերտերը բարձր ճնշման ու ջերմաստիճանի պայմաններում փո-

խակերպվելով վերածվում են գրաֆիտի, կրաքարերը՝ մարմարների, ավազաքարերը՝ քվարցիտների: Կավային թերթաքարերը փոխակերպության ցածր աստիճանում վերածվում են տանիքի թիթեղաքարերի, բարձրի դեպքում՝ անդալուզիտի, կիանիտի և սիլիմանիտի հնքվ-երի: Փոխակերպային ծագման մետաղական օգտ. հնձ-ների արդյ. հնքվ-եր գրեթե չկան:

**M-215. METAMORFOGENNYES MESTOROZHDIENIA – ՓՈԽԱԿԵՐՊՈՃՆԱՅԻՆ (ՄԵՏԱՄՈՐՖՈՃՆԱՅԻՆ) ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, METAMORPHOGENIC DEPOSITS,** օգտ.

հնձ-ների հնքվ-եր, որոնք գոյացել են ապարների փոխակերպության գործընթացում բարձր ճնշման ու ջերմաստիճանի պայմաններում և գտնվում են փոխակերպային համալիրների մեջ: Բաժանվում են 2 խմբի՝ փոխակերպված հնքվ-եր և փոխակերպային հնքվ-եր: Միներալային կազմը համապատասխանում է հանքապարունակ ապարների փոխակերպային ֆազիաներին: Այդ հնքվ-երից են՝ բնածին պղնձի, երկաթային քվարցիտների, հրաքարային հանքանյութերի, ոսկու, ուրանի, մանգանի սիլիկատային և այլ հնքվ-եր:

**M-216. МЕТАН, БОЛОТНЫЙ ГАЗ, РУДНИЧНЫЙ ГАЗ, CH<sub>4</sub> – ՄԵԹԱՆ, ԾԱՅՃԱԳԱԶ, ՀԱՆՔԱԳԱԶ, METHANE, MARSH GAS,** բնական այրվող, անգույն, անհոտ գազ,

հանդիպում է երկրակեղևի նստվածքային ծածկոցում՝ ազատ կուտակների, ցրված, լուծված, պինդ վիճակում, կազմում է բնական ածխաջրածնային գազերի հիմնական մասը, առաջանում է կենսաքիմ. գործընթացներում, ինչպես նաև բուսահողային (հումուսային) ածուխների կատագենեզի ընթացքում: Խառնուրդները պայթուցիկ են: Մ. օգտագործվում է որպես վառելագազ և օգտակար նյութերի արտադրության հումք:

**M-217. METACOMATIZM, METACOMATOZ** (հուն. metá – հետո, ավելի ուշ և sóma – մարմին) – **ՄԵՏԱՄՈՄԱՏԻԶՄ, ՄԵՏԱՄՈՄԱՏՈՋ (ՄԻՆԵՐԱԼԱՏԵՂԱՎԱԼՈՒՄ), META-**

**SOMATISM, METASOMATOSIS,** քիմիապես բարձր ակտիվություն ունեցող լուծույթների ու ֆլուիդների ներագոյացության տակ որոշ միներալների փոխարինում այլ միներալներով, որը ուղեկցվում է առաջնային ապարի քիմ. կազմի էական փոփոխությամբ (սովորաբար ապարի ծավալի և պինդ վիճակի պահպանմամբ): Այդ ընթացքում տեղի է ունենում ապարի մեջ որոշ քիմ. տարրերի ներկայում և այլ տարրերի հեռացում: Մ. լայնորեն արտահայտված է երկրակեղևում տարբեր մասշտաբներով՝ տեղային և ռեգիոնալ: Կարող է ընթանալ ինչպես բարձր ճնշման ու ջերմաստիճանի պայմաններում, այնպես էլ երկրի մակերևույթին: Ըստ նյութի տեղափոխման բնույթի՝ Մ. լինում է՝ դիֆուզիոն, ներծծման, իոնադիֆուզիոն, հպումադիֆուզիոն, հպումային և այլն: Մետասոմատիկ նորագոյացումների ձևավորման պայմանների ընդհանուրության և կազմի հիման վրա Մ-ի արգասիքները ստորաբաժանվում են սկառների, գրեյզենների, կարբոնատիտների, ակսետալիթների, պրոպիլիթների, արգիլիզիտների և այլ ձևերի:

**M-218. METACOMATITы,** տե՛ս *Метасоматические горные породы*:

**M-219. METACOMATICHESKIE GORNYES PORODY – ՄԵՏԱՄՈՄԱՏԻՎԱԿԱՆ ԱՊԱՐՆԵՐ, METASOMATIC ROCKS,** ապարներ, որոնք առաջացել են տեղակալման

հետևանքով՝ վաղորորք առաջացած ապարների մետասոմատիզմից: Տարբերում են Մ. ա-ի առաջացման մի քանի ընթացաշրջան՝ վաղ ալկալիական (մագնեզիումային և կրային սկառներ), թթվային (գրեյզեններ և երկրորդային քվարցիտներ), ուշ ալկալիական (բերեզիտներ, լիստվենիտներ):

**M-220. METACOMATICHESKIE MESTOROZHDIENIA,** տե՛ս *Месторождения метасоматические*:

**M-221. METACOMATOZ**, տե՛ս Metacomatism:

**M-222. METEOP** (հուն. *metéōra* – մթնոլորտային ու երկնային երևույթներ) – **ԱՍՈՒՊ, METEOR**, մթնոլորտում կարճատև բռնկումներ՝ կապված պինդ մասնիկների՝ ասուպային մարմինների տիեզերական արագությամբ մթնոլորտ ներթափանցելու հետ:

**M-223. METEORIT – ԵՐԿՆԱՔԱՐ, METEORITE**, միջնոլորակային տարածությունից երկրի վրա ընկնող Արևային համակարգի փոքր մարմին: Ե-երի զանգվածը գրամի մասերից հասնում է տասնյակ տոննաների: Տարբերում են երկաթային, երկաթաքարային և քարային Ե-եր:

**M-224. METEORNYE ВОДЫ – ԵՐԿՆԱՅԻՆ ՋՐԵՐ, METEORIC WATERS**, մթնոլորտային տեղումներից գոյացած ջրեր:

**M-225. METEORNYI KRATER – ԵՐԿՆԱՔԱՐԱՅԻՆ ԽԱՈՆԱՐԱՆ, METEORITE CRATER**, կլորավուն կամ ձվաձև գոգավորություն, որն առաջացել է երկնաքարի անկման վայրում: Տարբերում են հարվածական և պայթումային խառնարաններ. վերջինները կապված են խոշոր երկնաքարերի հետ:

**M-226. METEOROLOGIYA** (հուն. *metéōra* – մթնոլորտային ու երկնային երևույթներ և *lógos* – ուսմունք) – **ՕՂԵՐԵՎՈՒԹԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ, METEOROLOGY**, գիտություն երկրի մթնոլորտի մասին, զբաղվում է մթնոլորտի ֆիզ. հատկությունների ու վիճակի, տարբեր մասերի դինամիկայի, նրանում ընթացող տարբեր գործընթացների (այդ թվում եղանակը ձևավորող ու փոփոխող) ուսումնասիրությամբ:

**M-227. МЕТОД ГЕОЛОГИЧЕСКИХ БЛОКОВ – ԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ԲԼՈԿՆԵՐԻ ՄԵԹՈՂ, GEOLOGICAL BLOCKS METHOD**, պինդ օգտ. հնձ-ների պաշարների հաշվարկման հիմնական մեթոդներից մեկը, հիմքում ընկած է երկրաբանաարդյ. նման պարամետրեր (հաստությունը, պարունակությունը, տեղադրման պայմանները ու խորությունը, հանքաքարերի տեխնոլոգիական հատկությունները և տեսականությունը, հանքայնացման փոփոխականությունը, հետախուզման աստիճանը և այլն) ունեցող հաշվարկային բլոկների առանձնացումը և եզրագծումը: Ըստ գոյություն ունեցող բանաձևերի՝ անջատված բլոկների սահմաններում կատարվում է հանքաքարերի ու մետաղների պաշարների հաշվարկում:

**M-228. МЕТОД ИЗОЛИНИЙ – ՉԱՎԱՍԱՐԱԳԾԵՐԻ ՄԵԹՈՂ, ISOLINE METHOD**, էլեկտրահետախուզության մեթոդ, հիմքում ընկած է ապարազանգվածներում երկու գծային (հազվադեպ կետային) հողակցվածքների միջոցով ստեղծված ցածր հաճախականության էլեկտրական հոսանքի տարածման բնույթի ուսումնասիրությունը, նախատեսված է այն հանքամարմինների որոնման համար, որոնք ունեն ավելի բարձր էլեկտրահաղորդականություն, քան ներփակող ապարները:

**M-229. МЕТОД МОЩНОСТЕЙ И ФАЦИЙ – ՉԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՖԱՑԻԱՆԵՐԻ ՄԵԹՈՂ, THICKNESS AND FACIES METHOD**, հնարավորություն է տալիս կուտակվող նստվածքների հաստության և ֆացիալ կազմի ուսումնասիրության հիման վրա նոտավորապես որոշելու ուղղաձիգ շարժումների արագությունն ու մեծությունը և նստվածքների գոյացման խորության փոփոխությունը: Հիմնված է այն պատկերացման վրա, որ ապարների տվյալ սերիայի հաստությունը գումարելիորեն համապատասխանում է երկրակեղևի նստվածքակուտակման տեղամասի խորասուզմանը: Միևնույն ժամանակ տարբեր ֆացիաների տեղաբաշխումը, որևէ ուղղությամբ դրանց տեղաշարժը, ուղղաձիգ ուղղությամբ հերթափոխումը (կախված տատանողական շարժումներից կամ անհավասարաչափ միաուղղորդված շարժումից), նստվածքների հաստությունների վերլուծության հետ համակցված,

օգնում են ստանալու երկրակեղևի տվյալ տեղամասի տատանողական շարժումներն արտացոլող գրաֆիկական պատկերումը:

**M-230. МЕТОД ОБЪЕМНЫЙ – ՃԱՎԱԼԱՅԻՆ ՄԵԹՈՂ, VOLUMETRIC METHOD,** տարբեր հասակի ու տիպի նստվածքների ծավալի չափում, որի նպատակն է նստվածքակուտակման մարզի խորասուզման քանակական գնահատումը և բարձրացման լայնության որոշումը, որտեղից այդ նույն նստվածքները տարվել են: Օգտագործվում է երկրատեկտոնիկայում:

**M-231. МЕТОД ОПРЕДЕЛЕНИЯ АБСОЛЮТНОГО ВОЗРАСТА АРГОНОВЫЙ – ԲԱՑԱՐՁԱԿ ՉԱՍԱԿԻ ՈՐՈՇՄԱՆ ԱՐԳՈՆԱՅԻՆ ՄԵԹՈՂ, ARGON ABSOLUTE AGE METHOD,** հիմքում ընկած է կալիում պարունակող ապարներում ու միներալներում  $^{40}\text{Ar}$  կուտակումը՝ ի հաշիվ  $^{40}\text{K}$ -ի ճառագայթակալի տրոհման: Կալիումի տրոհման կիսապարբերության տևողությունը 1.3 մլն. տ. է, որը նպաստավոր է երկրբ. ժամանակների բոլոր միջակայքերի իզոտոպային հասակի որոշման համար: Արգոնը լավ պահպանվում է միներալների բյուրեղային ցանցում: Կալիումի միներալները ցանկացած ապարում ունեն լայն տարածում, այդ պատճառով արգոնային մեթոդն այժմ համարվում է հիմնական մեթոդներից մեկը և լայնորեն կիրառվում է մագմայական, փոխակերպային և նստվածքային ապարների իզոտոպային հասակի որոշման համար:

**M-232. МЕТОД ОПРЕДЕЛЕНИЯ АБСОЛЮТНОГО ВОЗРАСТА РАДИОУГЛЕРОДНЫЙ – ԲԱՑԱՐՁԱԿ ՉԱՍԱԿԻ ՈՐՈՇՄԱՆ ԾԱՌԱՎԱՅԹԱՍԾԻԱԾՆԱՅԻՆ (ՈՒԴԻՈՍԿԱՐԲՈՆԱՅԻՆ) ՄԵԹՈՂ, RADIOSARBON ABSOLUTE AGE METHOD,** հիմնված է ածխածնի  $^{14}\text{C}$  իզոտոպի ուսումնասիրման վրա, որն առաջանում է մթնոլորտում տիեզերական մասնիկների՝  $^{14}\text{N}$  ազոտի հետ ռեակցիայի դեպքում և այնուհետև յուրացվում է բույսերի հյուսվածքներում: Բույսերի մահից հետո տեղի է ունենում նրանցում կուտակված  $^{14}\text{C}$ -ի տրոհում՝ որոշակի արագությամբ, որը և հնարավորություն է տալիս որոշելու բույսերի և այն շերտերի հասակը, որոնց մեջ դրանք թաղված են:  $^{14}\text{C}$ -ի կիսատրոհման պարբերությունը 5750 տ. է, այդ պատճառով ճառագայթաածխածնային մեթոդը օգտագործվում է երիտասարդ չորրորդական ապարների հասակը որոշելու համար, ինչպես նաև հնագիտությունում և մարդաբանությունում: Ուսումնասիրման օբյեկտ են հանդիսանում տարբեր բույսերի մնացորդները, ինչպես նաև ածխայինացած բուսական ու կենդանական հյուսվածքները՝ մինչպատմական մարդկանց խարույկների մոխրի մեջ:

**M-233. МЕТОД ОПРЕДЕЛЕНИЯ АБСОЛЮТНОГО ВОЗРАСТА СВИНЦОВЫЙ – ԲԱՑԱՐՁԱԿ ՉԱՍԱԿԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՊՐԱՅԻՆ ՄԵԹՈՂ, LEAD ABSOLUTE AGE METHOD:** Կապարային մեթոդը սկսել է կիրառվել մյուսներից վաղ՝ Կանադայում 1907-ին: Այն առաջին անգամ օգտագործել է Բ. Բոլտվուդը: Այդ մեթոդի հիմքում ընկած է  $^{235}\text{U}$ ,  $^{238}\text{U}$ ,  $^{232}\text{Th}$  իզոտոպների ճառագայթակալի տրոհումը կապարի իզոտոպի: Իզոտոպային հասակի որոշման համար անհրաժեշտ է իմանալ ճառագայթակալի միներալի մեջ ուրանի կամ թորիումի և կապարի իզոտոպի պարունակությունը: Սովորաբար օգտագործվում են ուժեղ ճառագայթակալի միներալները, որոնք պարունակում են ավելի քան 1 % ուրան կամ թորիում (ուրանիտիտ, մոնացիտ, օրտիտ, ցիրկոն): Օգտագործվում են նաև թույլ ճառագայթակալի միներալները (քսենոտիմ, պիրոքլոր և այլն): Բոլոր նշված միներալները հանդիպում են գրանիտներում, պեգմատիտներում և քվարցային երակներում: Կապարային մեթոդը ամենահուսալին և լավ մշակվածն է: Ավելի լավ տվյալներ ստացվում են հին ապարների համար:

**M-234. МЕТОД ОПРЕДЕЛЕНИЯ АБСОЛЮТНОГО ВОЗРАСТА СТРОНЦИЕВЫЙ – ԲԱՑԱՐՁԱԿ ՉԱՍԱԿԻ ՈՐՈՇՄԱՆ ՍՏՐՈՆՑԻՈՒՄԱՅԻՆ ՄԵԹՈՂ, STRONTIUM**



**ABSOLUTE AGE METHOD**, հիմնված է ռուբիդիում պարունակող ապարներում ու միներալներում  $^{87}\text{Sr}$ -ի կուտակման վրա՝ ի հաշիվ  $^{87}\text{Rb}$ -ի տրոհման: Կիրառվում է մինչքենթրիյան ապարների իզոտոպային հասակի որոշման համար, քանի որ  $^{87}\text{Rb}$ -ի կիսատրոհման պարբերությունը մեծ է (49.9 մլդ. տ.): Վերջին տարիներին ստրոնցիումային մեթոդը օգտագործվում է նաև ֆաներոզոյի ապարների հասակը որոշելու համար: Ռուբիդիումը ինքնուրույն միներալներ չի առաջացնում և խառնուրդի ձևով հանդիպում է կալիումային միներալներում: Ավելի հաճախ օգտագործում են փայլարները: Ստրոնցիումային մեթոդը կիրառելի է այն միներալների նկատմամբ, որոնք օգտագործվում են արգոնային մեթոդի դեպքում:

**M-235. МЕТОДЫ ЛАНДШАФТНЫЕ – ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ (ԲՆԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ) ՄԵԹՈՂՆԵՐ, LANDSCAPE METHODS**, հնարավորություն են տալիս տեղանքի ընդհանուր պատկերի բաղադրամասերի վերլուծության հիման վրա ճանաչողական պատկերացում ստանալ տեղանքի երկրք. կառուցվածքի և ջրաերկրք. պայմանների մասին: Լ. մ. գլխ. հիմնված է օդալուսանկարների վերծանման ու օդաաչքաչափական դիտումների վրա, որոնք զուգորդվում են մակերևութային ուսումնասիրությունների հետ:

**M-236. МЕТОДЫ ЛИТОЛОГО-СТРАТИГРАФИЧЕСКОЙ КОРРЕЛЯЦИИ ОСАДОЧНЫХ ТОЛЩ – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՎԱՐԱՇԵՐՏԵՐԻ ՔԱՐԱՐԱՆԱՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՆԵՐ, METHODS OF LITHOLOGICAL-STRATIGRAPHICAL CORRELATION OF SEDIMENTARY ROCK MASS**, կտրվածքների (գլխ. հնէաբանական մնացորդներից զուրկ) հարաբերակցություն՝ քարաբանական հատկանիշների, կտրվածքների կազմվածքի (ռիթմերի կամ ցիկլերի առկայության ու բնութագրի), ապարների կազմի, բնորոշ հորիզոնների առկայության (կտրվածքում աչքի ընկնող ինչ-որ հատկանիշների, օր.՝ սիլիցիտների, սիլիցիումային կոնկրեցիաների հորիզոնների, բեկորային ապարների մեջ լավաների կամ տուֆածին շերտերի, կարմրագույն նստվածքների հորիզոնների և այլն), բեկորային ակցեսորային միներալների կազմի (ծանր չափամաս), գլխավոր ապարակազմիչ միներալների (թեթև չափամաս), տեղածին նստվածքածին, դիագենետիկ միներալների հիման վրա:

**M-237. МЕТОДЫ ОПРЕДЕЛЕНИЯ АБСОЛЮТНОГО ВОЗРАСТА РАДИОЛОГИЧЕСКИЕ – ԲԱՑԱՐՁԱԿ ՀԱՍԱԿԻ ՈՐՈՇՄԱՆ ՌԱԴԻՈԳԻՏԱԿԱՆ (ՃԱՈԱԳԱՅԹԱԳԻՏԱԿԱՆ) ՄԵԹՈՂՆԵՐ, RADIOLOGICAL ABSOLUTE AGE METHODS**, հիմքում ընկած է բնական ճառագայթաակտիվ տարրերի ճառագայթաակտիվ վերափոխումը այլ տարրի կայուն իզոտոպի: Հասակի որոշման ճշտությունը հաստատագրված է հետևյալ պայմաններով՝ 1) ճառագայթաակտիվ տրոհումը ընթանում է կայուն արագությամբ՝ անկախ երկրակեղևում գոյություն ունեցող ֆիզքիմ. երևույթներից, 2) ճշտորեն հայտնի է մայրական ճառագայթաակտիվ տարրերի և դրանց տրոհման վերջնական արդյունքների իզոտոպային կազմը, 3) ճառագայթաակտիվ շարքերի տրոհման վերջնական արդյունքները կայուն են, 4) գոյություն ունեցող բոլոր ճառագայթաակտիվ տարրերը հայտնի են: Ճառագայթաակտիվ տրոհման կայուն արագությունը հիմնավորված է տեսականորեն և ապացուցված է փորձարարական տվյալներով: Այն բնորոշվում է կիսատրոհման պարբերությամբ, այսինքն՝ այն ժամանակով, որի ընթացքում ճառագայթաակտիվ նյութը կիսով չափ պակասում է: Ապարների իզոտոպային հասակը որոշելու համար օգտագործված են կիսատրոհման երկարատև պարբերություն ունեցող ճառագայթաակտիվ տարրերը: Ցանկացած ճառագայթաակտիվ և ճառագայթածին իզոտոպի զույգի միջոցով կարելի է որոշել հասակը: Այժմ իզոտոպային հասակի որոշման համար օգտագոր-

ծուն են ինքնակամ միջուկային փոխարկումները.  $^{238}\text{U} \rightarrow ^8\text{He} + ^{208}\text{Pb}$ ,  $^{40}\text{K} + e \rightarrow ^{40}\text{Ar}$ ,  $^{235}\text{U} \rightarrow ^7\text{He} + ^{207}\text{Pb}$ ,  $^{40}\text{K} \rightarrow ^{40}\text{C} + \beta$ ,  $^{232}\text{Th} \rightarrow ^6\text{He} + ^{208}\text{Pb}$ ,  $^{87}\text{Rb} \rightarrow ^{87}\text{St} + \beta$ : Ապարի իզոտոպային հասակի որոշման մեթոդի անվանումը տրվում է ճառագայթաակտիվ տարրի տրոհման վերջնական արդյունքի անունից՝ կապարային, հելիումային, արգոնային, կալցիումային, ստրոնցիումային և այլն:

**M-238. МЕТОДЫ ПОДСЧЕТА ЗАПАСОВ НЕФТИ И ГАЗА – ՆԱՎԹԻ (ՔԱՐՅՈՒՂԻ) և ԳԱԶԻ ՊԱՀԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐ, OIL AND GAS RESERVES CALCULATION METHODS,** նավթի պաշարների հաշվարկի դեպքում տարբերում են՝

1) ծավալային, 2) ստացում 1 հեկտարից կամ  $1\text{մ}^2$ -ուց, 3) ծավալածագումնային, 4) շահագործման կորերի կամ վիճակագրական, 5) հավասարաճնշագծերի (իզոբարների) քարտեզների: Գազերի պաշարների հաշվարկման դեպքում՝ 1) ծավալային, 2) ճնշման անկման, 3) հավասարաճնշագծերի (իզոբարների) քարտեզների: Պաշարների հաշվարկման հիմնական մեթոդը ծավալայինն է:

**M-239. МЕХАНИКА ГРУНТОВ – ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ՄԵԽԱՆԻԿԱ, SOIL MECHANICS,** ճարտարագիտական երկրաբանության բաժին, որն ուսումնասիրում է գրունտների լարումները, ձևախախտումները, ամրության ու կայունության պայմանները, արտաքին, գլխ. մեխ. ազդեցությամբ նրանց վիճակի և հատկությունների փոփոխությունները:

**M-240. МЕХАНИЧЕСКИЙ АНАЛИЗ – ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՏԱՐԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, MECHANICAL ANALYSIS,** տե՛ս Гранулометрический анализ:

**M-241. МИГМАТИТ (հուն. migma, սեռ. հ. migmatos – խառնուրդ) – ՄԻԳՄԱՏԻՏ, MIGMATITE,** բարդ կազմության մազմայական ապար՝ մազմայական նյութի խառնուրդ՝ փոխակերպային ապարի մնացորդային նյութի հետ: Առաջանում է մազմայի՝ շրջապատի ապարների մեջ ներդրման շնորհիվ (սովորաբար մազման ներթափանցում է ապարների շերտավորությունների մեջ), երբ տեղի է ունենում տարբեր կազմի փոխակերպային ապարների ոչ լրիվ մազմայական տեղակալում: Մ-ները սովորաբար կապված են գրանիտակերպ մազմայականության հետ: Ըստ կազմվածքային հատկանիշների՝ տարբերում են զոլավոր (ներկայացված են մազմայածին նյութի և հիմնանյութի հերթագայող զոլերով), ոսպնյակածև-զոլավոր (մազմայածին նյութի ոսպնյակիկների զոլերով), ակնոցային (դաշտասպաթի կլորավուն և կլորաոսպնյակածև պորֆիրաբլաստներով), մետաբլաստային՝ հիմնանյութում նորագոյաց նյութի հավասարաչափ տեղաբաշխումով, պորֆիրաբլաստային (մազմայածին նյութի հավասարաչափ անջատումներով՝ պորֆիրաբլաստի տեսքով), փշրաքարանման (կամ ազմատիտ) (մազմայական նյութի երակիկների տեսքի անհավասարաչափ անջատումներով) Մ-ներ և այլն: Մ-ները լայնորեն տարածված են բյուրեղային հիմքի փոխակերպային համալիրներում:

**M-242. МИГРАЦИЯ ГЕОХИМИЧЕСКАЯ (լատ. migratio, migro-ից – անցնում են, վերաբնակվում են) – ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՏԱՐԱՇԱՐԺ (ՄԻԳՐԱՑԻԱ), GEOCHEMICAL MIGRATION,** ըստ Ա. Ե. Ֆերսմանի, գործընթացների համակարգ, որը բերում է երկրակեղևում քիմ. տարրերի տարածական տեղաշարժին, հանգեցնելով նրանց կուտակման փոփոխությանը, մի տեղամասում նրանց կուտակմանը, մեկ այլ տեղամասում՝ ցրմանը: Ե. տ-ի կարևոր գործոններ են հանդիսանում ֆիզքիմ. և երկրբ. պայմանների փոփոխությունները, որոնք տարբեր տարրերի վրա (կախված նրանց հատկանիշներից) տարբեր ձևով են ազդում:

**M-243. МИГРАЦИЯ ЖИВОТНЫХ И РАСТЕНИЙ – ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ՈՒ ԲՈՒՅՍԵՐԻ ՏԵՂԱԳԱՂԹ (ՄԻԳՐԱՑԻԱ), ANIMALS AND PLANTS MIGRATION,** կենդանիների

ու բույսերի տեղափոխություն տարածության մեջ, որի պատճառ է հանդիսանում բնակավայրերում գոյության պայմանների փոփոխությունը կամ կապված է նրանց զարգացման ցիկլի հետ: Բույսերի Տ. միշտ ավելի թույլ է:

**M-244. МИГРАЦИЯ НЕФТИ И ГАЗА – ՆԱՎԹԻ (ՔԱՐՅՈՒՂԻ) և ԳԱԶԻ ՏԱՐԱՇԱՐԺ (ՄԻԳՐԱՑԻԱ), OIL AND GAS MIGRATION**, երկրակեղևում նավթի (քարյուղի) և գազի տեղափոխություն՝ բնական ուժերի ազդեցության տակ: Տարաշարժման հնարավորությունները, տեսակները և մասշտաբները վերահսկվում են երկրբ. իրադրության տարբեր պայմաններով՝ տարաշարժվող նավթի ու գազի ֆիզ. հատկություններով, ապարների հատկություններով, տեղաշարժման մեջ ստր. ջրերի մասնակցությամբ և այլն: Տարբերում են առաջնային տարաշարժ, երբ տեղի է ունենում նրբահատիկ, թույլ թափանցելիության նավթամայրական ապարներից ածխաջրածինների (կապված ջրերի հետ համատեղ) մղումը դեպի հավաքիչ (կոլեկտոր) ստվարաշերտերը, և երկրորդային՝ նավթի ու գազի տեղաշարժը ջրահագեցած շերտերում (հավաքիչներում), որի արդյունք է հանդիսանում այդ ֆլյուիդների տարբերակումը և հանքակուտակների գոյացումը, ինչպես նաև նրանց հետագա վերածնավումը: Ն. և գ. տ-ի մեխանիզմը կախված է ֆլյուիդների վիճակից, որոշակի ջերմաճնշումային պայմաններում դրանց տեղաշարժը պայմանավորող ուժերից, տարաշարժման պայմաններից ու ուղիներից: Այդ մեխանիզմներից հայտնի են՝ ծծանցումը թափանցելի ապարներում ճնշման անկման առկայության դեպքում, հավաքիչում պարունակված նավթի ու գազի երեսելնումը ջրում, դրանց տեղաշարժը ստր. ջրերի հոսքերում, ապարի խտացման կամ ձևափոխման դեպքում՝ գազի ու նավթի դուրս մղումը, դրանց տեղափոխումը մազանոթային ուժերի ներազդեցության տակ, պլաստիկ կավային ապարների պատռումը նավթի ու գազի կողմից: Ն. և գ. տ-ման ուղիներ են հանդիսանում թույլ թափանցիկ և հավաքիչ ապարների ամբողջ զանգվածը, բեկվածքները, ճեղքերը, բարձրացված ճեղքավորության զոնաները, շերտավորման և աններդաշնակ տեղադրման հարթությունները և այլն: Ն. և գ. տ-ի հիմնական շարժիչ ուժերն են՝ ձգողական, հիդրավիկ և մոլեկուլային փոխգործողությունները:

**M-245. МИГРАЦИЯ ПОДЗЕМНЫХ ВОД – ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՏԱՐԱՇԱՐԺ (ՄԻԳՐԱՑԻԱ), UNDERGROUND WATER MIGRATION**, ստր. ջրերի տեղաշարժ մի ջրատար ապարից (շերտախմբից) մեկ ուրիշը՝ առանց որակական փոփոխության:

**M-246. МИГРАЦИЯ СКЛАДЧАТОСТИ – ԾԱՂՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՇԱՐԺ (ՄԻԳՐԱՑԻԱ), MIGRATION OF FOLDING**, ըստ Շտիլեի՝ ծաղքավորության ճակատի տեղափոխումը ծաղքավորման ավելի հին փուլից դեպի ավելի երիտասարդը: Տարբերում են Ծ. տ, որը տեղի է ունենում ծաղքավոր մարզի գլխավոր տարածման լայնական ուղղությամբ, և Ծ. տ.՝ ծաղքավոր կառուցվածքների տարածման երկայնքով:

**M-247. МИГРАЦИЯ ФАЦИЙ – ՖԱՑԻԱՆԵՐԻ ՏԱՐԱՇԱՐԺ (ՄԻԳՐԱՑԻԱ), MIGRATION OF FACIES**, ավազանի նստվածքակուտակման ֆացիալ զոնաների հաջորդական տեղափոխում՝ կապված ապարագրական հորիզոնների հասակային սահմանի հետ: Արտացոլում է նստվածքակուտակման ավազանի էվոլյուցիոն զարգացումը, բայց առաջանում են բարդություններ՝ կապված նստվածքակուտակման ընդհատության, տեղային բարձրացումների և այլ բազմաթիվ պատճառների հետ:

**M-248. МИГРАЦИЯ ЭЛЕМЕНТОВ – ՏԱՐԵՐԻ ՏԱՐԱՇԱՐԺ (ՄԻԳՐԱՑԻԱ), MIGRATION OF ELEMENTS**, տեղի է ունենում բնական երկրաքիմ. գործընթացներում և հանգեցնում է տարրերի ցրմանը կամ կուտակմանը: Տ. տ. որոշվում է տարրերի ատոմների հատկություններով, առավելապես՝ դրանց արտաքին էլեկտրոններով և

ավելի պակաս չափով՝ միջուկներով, ինչպես նաև ֆիզքիմ. պայմաններով (ջերմաստիճանով, ընդհանուր ճնշմամբ, օքսիդացնող-վերականգնող իրադրություններով, ֆյուիդային փուլի բաղադրամասերի կազմով ու կուտակմամբ և այլն): Տ. տ-ման պատճառը միջավայրի ֆիզքիմ. պայմանների անընդմեջ փոփոխությունն է:

**М-249. МИКРО...** (հուն. mikrós – փոքր) – **ՄԻՎՐՈ..., ՄԱՆՐ..., ՄԱՆՐԱ..., ՓՈՔՐԱ..., MICRO...**, նախածանց, որը ցույց է տալիս փոքր չափեր:

**М-250. МИКРОБИОЛОГИЧЕСКИЕ ПОИСКИ – ՄԻՎՐՈԿԵՆՍԱՐԱՆԱԿԱՆ (ՄԱՆՐԵԱՎԵՆՍԱՐԱՆԱԿԱՆ) ՈՐՈՆՈՒՄՆԵՐ, MICROBIOLOGICAL PROSPECTING**, օգտ. հնժ-ների հնքվ-երի որոնման մեթոդներ, որոնք հիմնված են միկրոօրգանիզմների (մանրէների) տարածման օրինաչափությունների ուսումնասիրության վրա: Մ. ո. առաջին անգամ նավթի ու գազի որոնումների համար առաջարկել է Գ. Մոզիլսկին (1937), մետաղական օգտ. հնժ-ների համար՝ Գ. Սլավնին (1957): Նավթագազաբերության ուղղակի հատկանիշներն են միկրոօրգանիզմները, որոնք ընտրողաբար յուրացնում են մեթանը, պրոպանը, բուտանը և հեղուկ ախճաջրածինները: Գազանման ածխաջրածինների օգտագործումը լայնորեն տարածված է բակտերիաների որոշ խմբերի մոտ: Մետաղական հնքվ-երի Մ. ո- ի հիմքում ընկած է այն միկրոօրգանիզմների ուսումնասիրությունը, որոնք ունակ են արագ զարգանալու մետաղների աղերի առկայության դեպքում: Նավթի ու գազի Մ. ո. իրականացվում են ռեզիոնալ (1:1000000 - 1:500000) և որոնողական (1:200000 - 1:100000) երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ, մետաղական հնքվ-երի դեպքում՝ նախազննական (1:200000 - 1:100000), միջին մասշտաբի (1:50000 - 1:25000) և մանրամասն (1:10000): Աշխատանքների արդյունքում կազմվում են քարտեզներ ու գրաֆիկներ, որոնց վրա առանձնացնում են միկրոօրգանիզմների տեսակների համախմբությունների անկանոն կուտակումները:

**М-251. МИКРОБРЕКЦИЯ – ՄԱՆՐԱՓՇՐԱՔԱՐ, ՄԻՎՐՈՐԵԿՉԻԱ, MICROBRECCIA**, բեկորային ապար՝ ցեմենտացված անկյունավոր մասնիկներով, որոնց չափերը փոքր են 1 սմ-ից:

**М-252. МИКРОКЛИН** (հուն. mikrós – փոքր և klinō – թեքվում են, հերձման հարթությունների միջև անկյունը ընդամենը 20°-ով է տարբերվում ուղիղ անկյունից) – **ՄԻՎՐՈԿԼԻՆ, MICROCLINE**, միներալ ալկալիական դաշտասպաթների խմբից,  $K[AlSi_3O_8]$ : Բյուրեղանում է տրիկլինային համակարգում: Կանոնավոր իզոմետրական կամ կարճ սյունաձև բյուրեղները հանդիպում են գլխ. պեգմատիտների դատարկություններում: Ապարներում Մ. հաճախ առկա է հատիկավոր ագրեգատների տեսքով: Բյուրեղները և հատիկները հաճախ բարդ կրկնաբյուրեղացված են: Գույնը՝ սպիտակ, մոխրագույն, դեղնավուն, բայց հաճախ՝ վարդագույն և մսի կարմիր, երբեմն՝ երկնագույն-կանաչ կամ կանաչ (տե՛ս Амазонит): Փայլը՝ ապակու: Չերձումը կատարյալ է երկու ուղղությամբ, կարծրությունը՝ 6: Մ. հաճախ պարունակում է ալբիտի օրինաչափորեն կողմնորոշված ներաճվածքներ (տե՛ս Пертит): Ծագումը՝ մագմայական, փոխակերպային (մետամորֆային), մետասոմատիկական, ջրաջերմային: Մ. գրանիտների, սինեիտների և այլ խորքային ապարների, ինչպես նաև զենյանների և միզմատիտների ապարակազմիչ միներալ է:

**М-253. МИКРОЛИТЫ** (հուն. mikrós – փոքր և lithos – քար) – **ՄԱՆՐԱՔՈՒՐԵՂՆԵՐ (ՄԻՎՐՈԼԻԹՆԵՐ), MICROLITES**, ասեղնաձև կամ թիթեղաձև մանրադիտական բյուրեղիկներ, որոնք մտնում են որոշ արտաժայթքային ապարների ապակենման զանգվածի մեջ կամ երբեմն կազմում են այդ ամբողջ զանգվածը: Մ-ի միներալային կազմը պայմանավորված է ապարի կազմով: Բազալտներում և անդեզիտներում

րում դրանք հաճախ ներկայացված են պլազիոկլազներով, պիրոքսենով, տրախիտներում ու ռիոլիթներում՝ ալկալիական դաշտասպաթներով, փայլարներով, ամֆիբոլներով, հաճախ՝ պլազիոկլազի հետ միասին:

**М-254. МИКРООРГАНИЗМЫ** (հուն. mikrós – փոքր և bios – կյանք) – **ՄԻԿՐՈՐԳԱՆԻԶՄՆԵՐ (ՍԱՆՐԷՆԵՐ), MICROORGANISMS**, կենդանիների ու բույսերի (գլխ. միաբջիջ) լայնարձակ խումբ: Նկատելի են միայն մանրադիտակի տակ (օր.՝ բակտերիաներ, սնկեր, ջրիմուռներ, նախակենդանիներ և այլն): Բնակվում են բնական ջրերում, հողում, ապարների խոնավացած մակերևութում: Ակտիվ կերպով մասնակցում են հողառաջացմանը, ապարների հողմահարմանը և այլն:

**М-255. МИКРОПАЛЕОНТОЛОГИЯ – ՄԻԿՐՈՐՆԵԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ, MICROPALEONTOLOGY**, հնէաբանության բաժին, ուսումնասիրում է մանր և մանրադիտակյա օրգանիզմների մնացորդները (ֆորամինիֆերների, ռադիոլարների, օստրակոդների և այլն):

**М-256. МИКРОРЕЛЬЕФ** (հուն. mikrós – փոքր և ռելիեֆ) – **ՄԻԿՐՈՒՆԵԼԻԵՖ (ՍԱՆՐԱՌԵԼԻԵՖ), MICRORELIEF, MINOR SURFACE LANDFORMS, SMALL SCALE LANDFORMS**, ռելիեֆի մանր ձևեր, երկրակեղևի մակերևութի անհարթությունների համալիր, որը պայմանավորված է հիմնականում արտածին գործոններով, բարձրությունների տատանումը չի անցնում մի քանի մ-ից, կազմում են ռելիեֆի ավելի խոշոր ձևերի մասերը:

**М-257. МИКРОСКЛАДЧАТОСТЬ**, տե՛ս Плойчатость:

**М-258. МИКРОСКОП ПОЛЯРИЗАЦИОННЫЙ – ԲԵՎԵՌԱՑՄԱՆ ՍԱՆՐԱԴԻՏԱԿ, POLARIZING MICROSCOPE**, սովորական (կենսաբանական) մանրադիտակից տարբերվում է Նիկոլի երկու ոսպնյակների առկայությամբ: Դրանցից մեկը (բևեռացնող) գտնվում է Բ. մ-ի առարկայական սեղանիկի տակ, լուսավորման սարքում, իսկ մյուսը (վերլուծիչ, անալիզատոր)՝ ներս մտնող և վեր քաշվող դիտափողակում: Առարկայական սեղանիկը պտտվում է իր առանցքի շուրջը, որը համընկնում է Բ. մ-ի առանցքի հետ: Վերլուծիչի վրա ուղղվում է սովորական լույսը, որը դրանից դուրս է գալիս մեկ ուղղագիծ բևեռացված ճառագայթի տեսքով, այնուհետև բյուրեղի միջով անցնելիս տրոհվում է երկու ճառագայթի, որոնք տատանվում են փոխուղղահայաց հարթություններով և բյուրեղում տարածվում են տարբեր արագությամբ: Արդյունքում այդ երկու ճառագայթները դուրս են գալիս ընթացքի (փուլի) որոշ տարբերությամբ: Վերլուծիչը ճառագայթների տատանումը բերում է մեկ հարթության վրա և ստիպում է դրանց վերադրվել, որի հետ կապված՝ մարում են սպեկտրի այս կամ այն մասերը:

**М-259. МИКРОСКОП ЭЛЕКТРОННЫЙ – ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԱՆՐԱԴԻՏԱԿ, ELECTRON MICROSCOPE**, առարկայի՝ մի քանի հարյուր հազար անգամ խոշորացված պատկեր ստանալու էլեկտրոնաօպտիկական սարք: Է. մ-ում ճառագայթման աղբյուրը արագ էլեկտրոնների հոսքն է, որն առաջանում է շիկացած կաթոդից դուրս թռչող էլեկտրոնները պոտենցիալների տարբերություն ունեցող էլեկտրական դաշտում մի քանի հազար վայրկյան արագացնելիս:

**М-260. МИКРОСЛОИСТОСТЬ – ՄԻԿՐՈՇԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ՍԱՆՐԱՇԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ), MICROLAMINATION**, շերտավորության տարատեսակ, որի համար բնորոշ է շերտիկների աննշան հաստությունը (հաճախ մմ-ի տասնյակ կամ հարյուրավոր մասեր), այն նկատելի է միայն մանրադիտակի տակ՝ հղկուկներում: Կարող է լինել հորիզոնական, շեղ, ալիքաձև, պայմանավորված է տարբեր կազմի, գունավորման և խոշորության հատիկների հերթագայմամբ:

- M-261. МИКРОСТРУКТУРА – ՄԻԿՐՈԿԱՌՈՒՑՎԱԾՔ (ՄԱՆՐԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ), MICROSTRUCTURE**, ապարների և հանքաքարերի կառուցվածք, որը չզինված աչքով աննկատելի է, ճանաչվում է մանրադիտակի տակ:
- M-262. МИКРОФАУНА** (հուն. micrós – փոքր և ֆաունա) – **ՄԻԿՐՈՖԱՈՒՆԱ, MICRO-FAUNA**, մանրադիտական կենդանի օրգանիզմների համախմբություն (օր.՝ նախակենդանիները):
- M-263. МИКРОФЛОРА** (հուն. micrós – փոքր և ֆլորա) – **ՄԻԿՐՈՖԼՈՐԱ, MICROFLORA**, բուսական միկրոօրգանիզմների համախմբություն (մանրադիտական սնկեր, ջրիմուռներ, բակտերիաներ):
- M-264. МИКРОФОССИЛИИ** (հուն. micrós – փոքր և լատ. fossilis – բրածո) – **ՄԻԿՐՈՐՐԱԾՈՆԵՐ, MICROFOSSILS**, մանր և մանրադիտական օրգանիզմների մնացորդներ: Պահանջվում են դաշտային հատուկ մեթոդներ դրանց հավաքման և հատուկ քիմիական ու մեխանիկական եղանակներ՝ ապարից կորզելու համար:
- M-265. МИКРОЭЛЕМЕНТЫ – ՄԻԿՐՈՏԱՐՐԵՐ, MICROELEMENTS**, օրգանիզմներում փոքր (սովորաբար տոկոսի հազարերորդական մասեր) քանակներով պարունակվող և դրանց բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ քիմիական տարրեր: Մ. են նաև հողում, ապարներում, հանքանյութերում, ջրերում պարունակվող քիմիական որոշ տարրեր: Մակրոտարրերից զատելու քանակական ճշգրիտ սահմաններ չկան: Հողի և ապարների որոշ միկրոտարրեր (Fe, Al և այլն) կենդանիների և բույսերի համար Մ. են:
- M-266. МИКУЛИНСКОЕ МЕЖЛЕДНИКОВЬЕ** (սնդեմսկի մարզի Միկուլինո ավանի անունից) – **ՄԻԿՈՒԼԻՆՅԱՆ ՄԻՋՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ԴԱՐԱԿԱՐԳ, MIKULINO INTERGLACIAL**, միջսառցադաշտային դարակարգ՝ բաժանում է Արևելաեվրոպական հարթավայրի միջին պլեյստոցենյան (մոսկովյան) և ուշպլեյստոցենյան (վալդայան) սառցադաշտային դարակարգերը: Համապատասխանում է Արևմտյան Եվրոպայի ռիս-վյուրմի կամ էեմյան միջսառցադաշտայինին:
- M-267. МИЛЛЕРИТ** (անգլ. միներալաբան Ու. Հ. Միլլերի, W. H. Miller, 1801-80, անունից), **НИКЕЛЕВЫЙ КОЛЧЕДАН – ՄԻԼԼԵՐԻՏ, ՆԻԿԵԼԻ ՀՐԱՔԱՐ, MILLERITE, միներալ** սուլֆիդների դասից, NiS, բյուրեղանում է տրիգոնային համակարգում: Առաջացնում է շառավղաճառագայթային մազանման խառը թելավոր, երբեմն հատիկավոր ագրեգատներ, կեղևներ: Բյուրեղները ասեղնաձև են: Գույնը՝ լատունի դեղին, փայլը՝ մետաղի, հերձումը կատարյալ է, փխրուն է: Ծագումը՝ ջրաջերմային: Մտնում է միկելի հանքաքարերի կազմի մեջ:
- M-268. МИЛОНИТ** (հուն. μύλον – աղաց, երկանաքար) – **ՄԻԼՈՆԻՏ, MYLONITE**, ճնված, փշրված թերթավորված ապար, առաջանում է ուժափոխակերպության (դինամոնետամորֆության) հետևանքով՝ խզումային խախտումների, հատկապես վրաշարժերի, վերնետքերի զոնաներում: Արտաքին տեսքով հիշեցնում է ամուր կոնգլոմերատներ՝ ներփակող ապարների միներալների կլորացված բեկորներով և նուրբ մանրափշրաքարային ցեմենտացնող նյութով: Կատակլիզիտից տարբերվում է մանրատվածության աստիճանով և զուգահեռ կազմվածքների զարգացմամբ, իրենից ներկայացնում է ապարի ջարդոտման վերջին փուլը՝ մինչև մանրադիտական չափի մասնիկները: Միլոնիտացումը հաճախ ուղեկցվում է նուրբ նյութի վերաբյուրեղացմամբ և նրանում նոր միներալագոյացություններով: Մ-ները հիմնականում կապված են խոշոր ռեզիոնալ խախտումների գոտիների հետ (Ուրալ, Տյան-Շան, Կովկաս, Ալթայ և այլն):
- M-269. МИНДАЛЕКАМЕННАЯ ТЕКСТУРА – ՆՇԱՔԱՐԱՅԻՆ ԿԱԶՄՎԱԾՔ (ՏԵՔՍՏՈՒՐԱ), AMYGDALOIDAL STRUCTURE**, բնորոշ է ծակոտկեն հրաբխային ապարներում:

րին, որոնց կլորավուն կամ էլիպտիդային ծակոտիները լցված են երկրորդային միներալներով (քվարցով, քաղկեդոնով, կարբոնատներով, ցեոլիթներով և այլն):

**M-270. МИНДАЛИНЫ – ՆՇԱԿՈՐԻՉՆԵՐ, AMYGDALOIDS**, փոքր ձգված բշտիկանման խոռոչներ արտաժայթքային ապարներում՝ լցված ցեոլիթներով, քլորիտներով, օպալով, քաղկեդոնով, քվարցով, կալցիտով և այլ ջրաջերմային (հիդրոթերմալ) միներալներով:

**M-271. МИНДЕЛЬСКАЯ ЛЕДНИКОВАЯ ЭПОХА, МИНДЕЛЬ** (Դանուբ գետի Մինդել, Mindel, վտակի անունից, ԳՖՅ) – **ՄԻՆԴԵԼՅԱՆ ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ԴԱՐԱՎԱՐԳ, ՄԻՆԴԵԼ, MINDEL ICE AGE, MINDEL**, Ալպերի վաղալեյստոցենյան սառցադաշտային դարակարգ: Համադրվում է Արևելաեվրոպական հարթավայրի օկայի և Հս. Ամերիկայի կանգասի սառցադաշտային դարակարգերին:

**M-272. МИНЕРАГЕНИЯ** (ուշ լատ. minera – հանքանյութ և հուն. géneia – ծագում, ստեղծում) – **ՀԱՆՔԱԳՈՅԱՑՈՒՄ (ՀԱՆՔԱԾՆՈՒԹՅՈՒՆ, ՄԻՆԵՐԱԳԵՆԻԱ), MINER-AGENCY**, երկրաբանության բաժին, ուսումնասիրում է օգտ. հնժ-ների բոլոր տարատեսակների հնքվ-երի ձևավորման ու տեղաբաշխման ռեգիոնալ երկրբ. օրինաչափությունները: Տարբերում են ընդհանուր, մասնավոր և ծագումնաբանական Հ.: Ընդհանուր Հ. ուսումնասիրում է օգտ. հնժ-ների բոլոր խմբերի ձևավորման դարաշրջանները և պլատֆորմների, ծալքավոր մարզերի տարածքների կառուցվածքաֆորմացիոն զոնաներում, ծովերի և օվկիանոսների հատակում դրանց համախմբային տեղաբաշխումը: Մասնավոր Հ. բնորոշում է այդ գործընթացները օգտ. հնժ-ների առանձին տարատեսակների համար: Դրա ամենամեծ բաժինը մետաղագոյացումն է (տե՛ս Металлогения): Ծագումնաբանական Հ. ուսումնասիրում է օգտ. հնժ-ների առանձին խմբերի ու դասերի (նստվածքային, հողմահարման կեղևի, ջրաջերմային, սկառնային, կարբոնատիտային, պեգմատիտային, մագմայական և այլն) գոյացման և տարածական տեղաբաշխման ռեգիոնալ երկրբ. օրինաչափությունները:

**M-273. МИНЕРАГРАФИЯ** (ուշ լատ. minera – հանքաքար, հանքանյութ և հուն. gráphō – գրում, նկարագրում են) – **ՀԱՆՔԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ՄԻՆԵՐԱԳՐԱՖԻԱ), MINERAGRAPHY**, միներալաբանության բաժին, ուսումնասիրում է հանքանյութերի և հանքային միներալների բաղադրությունն ու կառուցվածքը մի շարք յուրահատուկ մեթոդների (ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ՝ օբյեկտիվ) օգնությամբ: Դրանք են՝ անդրադարձվող լույսի օգտագործման վրա հիմնված (անդրադարձման ունակության և պտտման հատկությունների հետազոտման), ֆիզ. (միկրոկարծրության, մագնիսականության որոշման), քիմ. (միկրոքիմ. փորձարկումների, կառուցվածքային կերպագծման, դրոշմային) մեթոդները: Տերմինն առաջարկել է Ուայթիեդը (Whitehead) 1917-ին:

**M-274. МИНЕРАЛ** (ֆրանս. mineral, ուշ լատ. minera-ից – հանքաքար) – **ՄԻՆԵՐԱԼ, MINERAL**, քիմիապես և կառուցվածքով անհատականացված բնական մարմին, որն իր քիմ. կազմությամբ և ֆիզ. հատկություններով մոտավորապես համասեռ է, արդյունք է երկրակեղևում անընհատ կատարվող բարդ ֆիզքիմ. գործընթացների: Մ-ներ են երկրակեղևը կազմող ապարների, հանքանյութերի և բազմաթիվ այլ միներալային մարմինների բաղկացուցիչ մասերը: Մ-ներն առավելապես կարծր բյուրեղային մարմիններ են, դրանց քիմ. և ֆիզ. հատկությունները պայմանավորված են քիմ. կազմությամբ և բյուրեղային ցանցի կառուցվածքով: Մ-ների շարքում հանդիպում են տարասեռ համակարգեր (կարծր կոլոիդներ), փոփոխական կազմության մարմիններ (կարծր լուծույթներ, իզոմորֆ խառնուրդներ), ինչպես նաև

հեղուկ մարմիններ (օր.՝ բնածին ծծումբը): Առանձին միներալային տարատեսակներ են հանդիսանում այն մարմինները, որոնք ունեն տարբեր քիմ. կազմություն, ինչպես նաև նույն քիմ. կազմության բազմաձև տարբերակներ (օր.՝ ալմաստ և գրաֆիտ): Բնության մեջ հայտնի են մոտ 3 հազ. միներալային տեսակներ, առավել տարածված են սիլիկատները (միներալների հայտնի քանակի մոտ 34 %), օքսիդները և հիդրօքսիդները (մոտ 25%), սուլֆիդային միացությունները և նրանց նմանակները (մոտ 20%): Յուրաքանչյուր բյուրեղային Մ. ունի մոտավոր միատարր քիմ. կազմություն, որը կարող է արտահայտվել օքսիդների կամ կառուցվածքային բանաձևի ձևով: Բնական Մ-ների շարքում հանդիպում են ինչպես ազատ ատոմներից բաղկացած բյուրեղային գոյացություններ՝ բնածին մետաղներ (օր.՝ բնածին պղինձ, արծաթ, ոսկի և այլն), այնպես էլ՝ տարբեր տիպերի քիմ. միացություններ՝ պարզ և բարդ օքսիդներ (օր.  $\text{Cu}_2\text{O}$ , կուպրիտ), աղեր (օր.՝  $\text{NaCl}$ ), սուլֆիդներ (օր.՝  $\text{Cu}_2\text{S}$ ) և այլն: Մ-ների մեջ շատ կարևոր դեր է կատարում ջուրը: Մ-ների ֆիզ. հատկությունների (գույնը, փայլը, կարծրությունը, խտությունը), քիմ. կազմության և կառուցվածքի միջև գոյություն ունի սերտ կապ: Մ-ների օպտիկական հատկություններից առաջնային նշանակություն ունեն թափանցիկությունը, փայլը և գույնը, իսկ ֆիզ. հատկություններից՝ հերձումը, կարծրությունը, խտությունը, մագնիսականությունը, էլեկտրահաղորդականությունը, ճառագայթատիվությունը, լուծելիությունը, համը, հոտը: Բնության մեջ հանդիպում են հատվածակողմային, ասեղնաձև, թերթաձև, սյունաձև, հավասարաչափ և այլ տեսքի Մ-ներ: Միներալային ազրեզատի բնույթը (բյուրեղախմբեր, ժեոդներ, սեկրեցիաներ և այլն), նրա կառուցվածքը (հատիկավոր, գաղտնաբյուրեղային, հոլոմորֆ և այլն), օրինաչափ սերտաճումները, բյուրեղների աճման և լուծման, կարծր լուծույթների տրոհման ձևերը հաճախ հնարավորություն են ընձեռում վերականգնելու Մ-ների առաջացման պատմությունն ու պայմանները տվյալ հնքվում:

Մ-ներն ունեն բազմազան ծագում: Միներալաառաջացման բոլոր գործընթացները բաժանվում են ներծին և արտածին խմբերի: Ամեն մի միներալ կարող է գոյություն ունենալ միայն որոշակի ջերմաստիճանի, ճնշման և միջավայրի պայմաններում: Այդ պայմանները փոփոխվելիս Մ-ները ենթարկվում են էական փոփոխությունների՝ նոր պայմաններում փոխարինվում են նոր կայուն միացություններով և առաջացնում փոխակերպածին Մ-ներ: Մ-ների քիմ., ֆիզ. և ձևաբանական առանձնահատկությունների և նրանց ծագման միջև գոյություն ունեցող փոխկապի ուսումնասիրությունը թույլ է տալիս վերականգնելու միներալային հնքվ-երի ծագման գործընթացները և ձևավորման պատկերը: Ժամանակակից միներալաբանությունում գոյություն ունեն միներալաբանական դասակարգության տարբեր տարբերակներ: Առավել ընդունված է Մ-ների դասակարգումը տիպերի ու դասերի՝ ըստ քիմ. կազմության: Դասերի ներսում ավելի փոքր միավորներ (ենթադասեր, բաժիններ, խմբեր և այլն) առանձնացվում են ըստ կառուցվածքի տիպերի (սիլիկատներ) և կազմի բարդացման աստիճանի: Տեխնիկայում և արդյունաբերության մեջ օգտագործվում է բոլոր հայտնի միներալային տեսակների մոտ 15%-ը՝ որպես հանքանյութեր, հրակայուն, թթվակայուն, խեցեգործական, մեկուսիչ, ներկող նյութեր, զարդաքարեր, օգտագործվում են նաև օպտիկայում, ռադիոտեխնիկայում և բազմաթիվ այլ բնագավառներում:

**M-275. МИНЕРАЛИЗАТОРЫ – ՀԱՆՔԱՅՆԱՐԱՐՆԵՐ (ՄԻՆԵՐԱԼԻԶԱՏՈՐՆԵՐ), MINERALIZERS**, մագմայում և ջրաջերմային (հիդրոթերմալ) լուծույթներում լուծված դյուրացնողը և քիմիապես բավական ակտիվ, հատկապես բարձր ջերմաստիճա-



նում, նյութեր: Պնևնատոգեն լուծույթները հիմնականում կազմված են Դ-ից: Դ-ի առկայությունը մազմայում նվազեցնում է նրա մածուցիկությունը և բյուրեղացման ջերմաստիճանը, կարող է փոխել մազմայից միներալների անջատման կարգը և նպաստել խոշոր բյուրեղների աճին: Դ-ի ներկայությունը լուծույթներում խիստ մեծացնում է նրանց մետասոմատիկ (միներալատեղակալման) քիմ. ակտիվությունը և առաջացնում բազմազան միներալային հնքվ-եր, որոնք տարբերվում են շրջապատող ապարների միներալներից: Դ. հաճախ չեն մտնում առաջացող միներալների բաղադրության մեջ, մասամբ էլ լոկ նպաստում են միներալների առաջացմանը՝ կատարելով կատալիզատորների դեր, որտեղից էլ ծագել է նրանց անվանումը:

**M-276. МИНЕРАЛИЗАЦИЯ – ՀԱՆՔԱՅՆԱՑՈՒՄ, MINERALIZATION**, միներալագոյաց ազդակների (հանքատար լուծույթների, ֆլուիդների, գազերի, հալույթների) կողմից հանքային նյութի նստեցման գործընթացներ, որոնց հետևանքով հանքայնացված ապարներում առաջանում են տարբեր միներալներ՝ ներփակվածքների, երակիկների և այլ անջատումների տեսքով. միներալները (հանքային, երակային, ապարակազմիչ) այդ գործընթացների արդյունք են:

**M-277. МИНЕРАЛИЗАЦИЯ ВОД (ПОДЗЕМНЫХ ВОД) – ՋՐԵՐԻ (ՍՏՈՐԵԿՐՅԱ ՋՐԵՐԻ) ՀԱՆՔԱՅՆԱՑՈՒՄ, WATER MINERALIZATION**, ջրում տարրալուծված անօրգանական (միներալային) նյութերի ընդհանուր կշռային պարունակություն: Այդ նյութերը կարող են պարունակվել ինչպես իոնների, այնպես էլ՝ կոլոիդների տեսքով: Տարբերում են հանքայնացման բնույթ և մեծություն (աստիճան) հասկացությունները: Ջրի հանքայնացման բնույթը պայմանավորված է ջրի քիմ. տիպով: Հանքայնացման աստիճանի արտահայտման միանշանակ մեծություն գոյություն չունի:

**M-278. МИНЕРАЛОГИЧЕСКАЯ ШКАЛА ТВЕРДОСТИ, МООСА ШКАЛА – ԿԱՐԾՐՈՒԹՅԱՆ ՄԻՆԵՐԱԼԱԲԱՆԱԿԱՆ ՍԱՆԴՂԱԿ, ՄՈՐՅՍԻ ՍԱՆԴՂԱԿ, MINERALOGICAL SCALE OF HARDNESS**, միներալների չափանմուշային հավաքածու՝ քերծման մեթոդով միներալի հարաբերական կարծրությունը որոշելու համար: Որպես չափանմուշ՝ ընդունված են հետևյալ 10 միներալները (դասավորված են ըստ կարծրության մեծացման)՝ 1) տալկ, 2) գիպս, 3) կալցիտ, 4) ֆլուորիտ, 5) ապատիտ, 6) օրթոկլազ, 7) քվարց, 8) տոպազ, 9) կորունդ և 10) ալմաստ: Յուրաքանչյուր միներալ քերծում է նախորդներին, բայց չի քերծում հաջորդներին:

**M-279. МИНЕРАЛОГИЧЕСКИЕ ПОИСКИ – ՄԻՆԵՐԱԼԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ, MINERALOGICAL SEARCH**, մեթոդների համախմբում՝ հիմնված տարատեսակ միներալաբանական հատկանիշների վրա: Դրանք են՝ առանձին միներալների գտնվելը, դրանց զոնայական տեղաբաշխումը, ձևաբանության օրինաչափ և ուղղորդված փոփոխությունը, միներալների ու դրանց խմբակցությունների այլ ֆիզքիմ. հատկությունները՝ մերձհանքային տարածություններում: Ուղղակի որոնողական հատկանիշներ են այն միներալների գտածոները, որոնք հանդիսանում են օգտ. հնձ-ներ: Ուղեկից միներալների բնորոշ խմբակցությունների հայտնաբերումը բարձրացնում է հանքայնացման տիպի ու նրա հեռանկարների գնահատման ճշտությունը: Միներալ – ցուցիչները, որոնք որոշում են հանքայնացման համար բարենպաստ պայմանները, պատկանում են անուղղակի հատկանիշներին: Մ. ո-ի հնագույն մեթոդներից է գլաքարաբեկորային մեթոդը, որը մինչև այժմ կիրառվում է: Այժմ մեծ տարածում ունի սղկվածքային (սղկահանքային) մեթոդը, որը լայնորեն օգտագործվում է ծանր միներալների (ոսկի, պլատին, կասիտերիտ և այլն) որոնման համար: Մ. ո-ի դասական մեթոդ է օքսիդացման զոնայի միներալների ուսումնասիրությունը:

**M-280. МИНЕРАЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ – ՄԻՆԵՐԱԼԱԲԱՆԱԿԱՆ ՏԱՐՐԱԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ, MINERALOGICAL ANALYSIS**, ապարների ու հանքաքարերի միներալա-

յին կազմի որակական ու քանակական որոշումներ: Գոյություն ունեն տարբեր մեթոդներ՝ պինդ ապարներում ու հանքաքարերում (հղկուկներում ու երեսահղկուկներում)՝ մակերեսային, գծային, կետային, փոխրերում՝ կշռային, ստատիկ կշռային, ծավալային և այլ մեթոդներ:

**М-281. МИНЕРАЛОГИЯ** (միներալ ու հուն. *logós* – ուսմունք, *խոսք*) – **ՄԻՆԵՐԱԼՈԳԻԱ** (միներալոգիա, **MINERALOGY**, գիտություն բնական քիմ. միացությունների՝ միներալների, նրանց կազմության, ներքին կառուցվածքի, հատկությունների, առաջացման գործընթացների և փոփոխությունների մասին: Մ. ուսումնասիրում է ապարների և հանքանյութերի բաղադրամասերը՝ միներալները, երկրբ. տարբեր պայմաններում տեղի ունեցող միներալառաջացման գործընթացները: Մ-յան հիմնական խնդիրն է՝ միներալների կազմության ու հատկությունների ուսումնասիրությունը, նպատակը՝ նրանց գործնական կիրառումը: Մ., որպես երկրբ. գիտությունների ճյուղ, սերտորեն կապված է ապարագրության, երկրաքիմիայի, օգտ. հնձ-ների մասին ուսմունքի, ինչպես նաև բյուրեղագիտության, բյուրեղաքիմիայի, ֆիզիկական քիմիայի, քիմիայի հետ: Մ. բաժանվում է մի քանի ուղղությունների՝ նկարագրական, ծագումնաբանական, ռեգիոնալ, փորձարարական, կիրառական, տիեզերական մարմինների Մ.: Նկարագրական Մ. զբաղվում է միներալների նկարագրմամբ, սիստեմատիկավորմամբ, նրանց քիմ. կազմության և բյուրեղային կառուցվածքի, ֆիզ. հատկությունների ուսումնասիրությամբ: Ծագումնաբանական Մ-յան հիմնական խնդիրն է պարզել այն պայմանները, օրենքները և գործընթացները, որոնք հանգեցրել են երկրակեղևում և նրա մակերևույթին միներալային տեսակների կամ միներալային համակարգությունների առաջացմանը: Ռեգիոնալ Մ. զբաղվում է միներալային տեսակների ու նրանց համաստեղությունների՝ որոշակի երկրբ. կառուցվածքներին և մարզերին տարածականորեն հարելու հարցերի ուսումնասիրությամբ: Դա հնարավորություն է տալիս դատելու տարբեր միներալային համաստեղությունների հնարավոր տարածական տեղաբաշխման մասին, նպատակասլաց պլանավորելու տարբեր տարածքներում օգտ. հնձ-ների որոնման աշխատանքները: Փորձարարական Մ. հարում է ծագումնաբանական Մ-յանը և այն լրացնում է միներալառաջացման բնական գործընթացների մոդելացմամբ ու այն ֆիզքիմ. համակարգերի հետազոտմամբ, որոնք վերարտադրում են (սովորաբար բավականին պարզեցված) բնական միներալային համագոյացությունները և դրանց ձևավորման իրադրությունը: Կիրառական տեխնիկատնտեսական Մ. ուսումնասիրում է միներալների, որպես մետաղական և ոչ մետաղական հանքային հումքի, առավել արդյունավետ օգտագործման հարցերը: Տիեզերական մարմինների (Լուսնի, մոլորակների, երկնաքարերի) Մ. Մ-յան նոր բաժին է և կապված է արագ զարգացող համեմատական մոլորակագիտության հետ: Միներալների հետ կապված խնդիրների լուծման նպատակով Մ. օգտվում է տարբեր մեթոդներից (քիմ. տարրալուծություն, սպեկտրաքիմ. և ռենտգենոլոգիական հետազոտություններ, ռենտգենակառուցվածքային վերլուծություն, էլեկտրոնային մանրադիտակ, արհեստական միներալների սինթեզ և այլն): Մ., ինչպես նաև բնական մյուս գիտությունները, սկզբնավորվել է մարդու գիտակցական կյանքի հետ զուգահեռ, նրա զարգացումը և առաջընթացը սերտորեն շաղկապվում են մարդկային հասարակության զարգացման պատմության հետ:

**М-282. МИНЕРАЛООБРАЗОВАНИЕ АУТИГЕННОЕ** – **ՏԵՂԱԾԻՆ (ԱՈՒՏԻՓԵՆ) ՄԻՆԵՐԱԼՈԳՈՅԱԳՆԱԳՈՒՄ, AUTHIGENIC MINEROGENESIS**, միներալների առաջացում՝ իրենց գտնված տեղում: Տարբերում են նստվածքակուտակումային տեղածին միներալներ (առաջանում են անմիջական ավազանում), դիագենետիկ տեղածին մի-

ներալներ (առաջանում են դիագենեզի փուլում՝ ի հաշիվ նստվածքների պինդ վիճակի վերամշակման և լուծույթների) և կատագենետիկ տեղածին միներալներ (գոյանում են կատագենեզի ընթացքում նոր ջերմածնունային պայմաններում), տե՛ս նաև Аутигенные минералы:

**M-283. МИНЕРАЛООБРАЗОВАНИЕ ДИАГЕНЕТИЧЕСКОЕ – ԴԻԱԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՄԻՆԵՐԱԼԱԳՈՅԱՑՈՒՄ**, տե՛ս Диагенетические минералы:

**M-284. МИНЕРАЛЫ АКЦЕССОРНЫЕ**, տե՛ս Акцессорные минералы:

**M-285. МИНЕРАЛЫ АЛЛОТИГЕННЫЕ** (հուն. allothignes – այլածին) – **ԱՅԼԱԾԻՆ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, ALLOTHIGENE MINERALS, ALLOTHIGENIC MINERALS, ALLOTHIGENOUS MINERALS**, միներալներ, որոնք առաջացել են այլ տեղում և նստվածքի մեջ բերվել են ողողաբայթայման (սնման) մարզից, և կամ գոյացել են ավազանի հատակի տեղային վերալվացման հետևանքով: Նստվածքային ապարներում հայտնի են ավելի քան 250 Ա. մ.:

**M-286. МИНЕРАЛЫ ДИАГЕНЕТИЧЕСКИЕ – ԴԻԱԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, DIAGENETIC MINERALS**, առաջանում են ապարում նրա բյուրեղացումից հետո՝ գոյության ֆիզքիմ. պայմանների փոփոխության հետևանքով: Այդ ընթացքում որևէ բազմածև ձևափոխությունը կարող է փոխարկվել մեկ ուրիշի (օր.՝ տրիդիմիտ–քվարց), կարող է տեղի ունենալ պինդ լուծույթների տրոհում, քիմ. հատկությունների փոփոխություն և այլն:

**M-287. МИНЕРАЛЫ ЖИЛЬНЫЕ – ԵՐԱՎԱՅԻՆ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, VEIN MINERALS**, կազմում են երակների գլխավոր զանգվածը և չեն հանդիսանում օգտ. հնժ-ներ, առավել տարածված են՝ քվարցը, կարբոնատները, բարիտը:

**M-288. МИНЕРАЛЫ-ИНДИКАТОРЫ – ՄԻՆԵՐԱԼՆԵՐ-ՑՈՒՑԻՉՆԵՐ (ԻՆԴԻԿԱՏՈՐՆԵՐ), INDICATOR MINERALS**, միներալներ, որոնք տիրապետում են վառ արտահայտված ու հեշտ հայտնաբերվող հատկանիշների (օր.՝ գունավորման) և տարբեր տիպի հնքվ-երում ուղեկցում են դժվար արատորոշվող արդյ. արժեքավոր միներալներին: Մ. ց-ի առկայությունը որոշակի տեսակի հանքայնացման ցուցիչ է:

**M-289. МИНЕРАЛЫ КСЕНОГЕННЫЕ** (հուն. xénos – օտար և génos – ծնունդ) – **ՕՏԱՐԱԾԻՆ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, XENOGENIC MINERALS**, պատահական միներալներ, գոյանում են մագմայի ասիմիլյացիայի ու կողային ապարների՝ իր մեջ օտար նյութի ներառման և այդ անբնականոն տեղամասերի բյուրեղացման ժամանակ:

**M-290. МИНЕРАЛЫ ОБЛОМОЧНЫЕ – ԲԵԿՈՐԱՅԻՆ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, DETRITAL MINERALS**, առաջանում են ավելի հին հասակի մագմայական, փոխակերպային և նստվածքային ապարների ֆիզ. հողմահարման և ջրային կամ օդային միջավայրում տեղափոխման հետևանքով: Տեղափոխման ընթացքում տեղի է ունենում դրանց հետագա մանրացում և մշակում: Տերմինը մոտ է «Այլածին միներալներ» տերմինին, բայց նույնական չէ:

**M-291. МИНЕРАЛЫ ОПТИЧЕСКИЕ – ՕՊՏԻԿԱԿԱՆ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, OPTICAL MINERALS**, կիրառվում են օպտիկական արդյունաբերության մեջ: Դրանց են պատկանում քվարցը (վանակն և մորիոն), իսլանդական սպաթը, ֆլյուորիտը, գիպսը և այլն:

**M-292. МИНЕРАЛЫ ОСАДОЧНЫХ ПОРОД – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, SEDIMENTARY ROCK MINERALS**, տարբերում են Ն. ա. մ-ի հետևյալ տիպերը՝ 1) ժառանգված (բեկորային միներալներ)՝ առաջնային ապարների քայքայման արգասիքներ (քվարց, դաշտային սպաթներ, տարբեր ծանր միներալներ), 2) մոտոզեն՝ առաջանում են նստվածքի տեղափոխման, ինչպես նաև կոլոիդ լուծույթների կոագուլյացիայի ընթացքում (կավային միներալներ, Fe-ի, եր-

բեմն՝ Si-ի օքսիդներ, աղային միներալներ), 3) առաջնային տեղածին (աուտիգեն) միներալներ [նստվածքակուտակումային, օրգանածին, համածին (սինգենետիկ)] և դիագենետիկ միներալներ, 4) երկրորդական [մակածին (էպիգենետիկ), վերնածին (հիպերգեն)] միներալներ: Ծագումնաբանական ավելի խիստ մոտեցման դեպքում առանձնացնում են միներալների հետևյալ տիպերը՝ բեկորային (ալոտիպ) և տեղածին (աուտիգեն) միներալներ:

**M-293. МИНЕРАЛЫ ПОРОДООБРАЗУЮЩИЕ – ԱՊԱՐԱԿԱԶՄԻՉ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, ROCK-FORMING MINERALS**, միներալներ, որոնք ապարների կազմի մեջ մտնում են որպես մշտական էական բաղադրամասեր, երկրակեղևի ամենատարածված միներալներն են: Ներկայացված են առավելապես սիլիկատներով, այլումասիլիկատներով, կարբոնատներով ու ֆոսֆատներով: Ապարների յուրաքանչյուր ծագումնային խմբին յուրահատուկ են իր Ա. մ.: Մագմայական ապարների համար բնորոշ են քվարցը, դաշտային սպաթները, պիրոքսենները, ամֆիբոլները, փայլարները, նստվածքայինների համար՝ կալցիտը, դոլոմիտը, կավային միներալները:

**M-294. МИНЕРАЛЫ ТИПОМОРФНЫЕ – ՏԻՊՄՈՐՓՆԵ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, ТИПОМОРФИЧЕСКИЕ МИНЕРАЛЫ**, առաջացման որոշակի պայմաններին (երկրբ. կամ ֆիզքիմ.) տիպական (բնորոշ) միներալներ:

**M-295. МИНЕРАЛЫ ТЯЖЁЛЫЕ – ԾԱՆՐ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, HEAVY MINERALS**, միներալներ, որոնց տեսակարար կշիռը մեծ է 2.75-2.85-ից, կազմում են բեկորային ապարների փոքր մասը, աչքի են ընկնում մեծ բազմազանությամբ:

**M-296. МИНЕРАЛЫ ФЕРРОМАГНИТНЫЕ – ՖԵՐՄԱԳՆԻՏԱԿԱՆ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, FERROMAGNETIC MINERALS**, միներալների խումբ, որոնց համար բնորոշ է համեմատաբար բարձր դրական մագնիսական ընկալունակությունը, վերջինի կախվածությունը մագնիսացնող դաշտից, մնացորդային մագնիսացվածություն ձեռք բերելու ունակությունը, մագնիսական հիստերեզիսի, Կյուրիի կետի առկայությունը:

**M-297. МИНЕРАЛЫ ЭНДОГЕННЫЕ – ՆԵՐԾԻՆ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, ENDOGENOUS MINERALS**, առաջանում են ներծին գործընթացներում, տե՛ս Эндегенные процессы:

**M-298. МИНЕРАЛЫ ЭПИГЕНЕТИЧЕСКИЕ ОСАДОЧНЫЕ – ՄԱԿԱԾԻՆ ՆՍՎԱԾՔԱՅԻՆ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, EPIGENETIC SEDIMENTARY MINERALS**, առաջանում են նստվածքային ապարներում դիագենեզից (քարագոյացումից) հետո՝ մինչև փոխակերպությունը կամ հողմահարման և փոփոխության (կատագենեզ, մետագենեզ) տարբեր փուլերում:

**M-299. МИНЕРАЛЬНАЯ АССОЦИАЦИЯ – ՄԻՆԵՐԱԼԱՅԻՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԱՍՑՑԻԱՅԻԱ), MINERAL ASSOCIATION**, երկրակեղևի տվյալ տեղամասում ներկա գտնվող բոլոր միներալների համամբություն: Մ. խ. ավելի լայն հասկացություն է, քան միներալների պարագենեզիսը: Մ. խ-յան կազմի մեջ առաջնային միներալների մնացորդների հետ միասին կարող են մտնել ավելի ուշ առաջացածները, մասնավորապես՝ նախկին միներալների (այդ թվում և մակածին) մետասոմատիկական փոփոխությունների արդյունքները: Մ. խ-ներն ընդգրկում են ժամանակի մեջ միմյանց հերթափոխող մի քանի պարագենետիկական խմբակցություններ:

**M-300. МИНЕРАЛЬНАЯ РАЗНОВИДНОСТЬ – ՄԻՆԵՐԱԼԱՅԻՆ ՏԱՐՄԵՍԱԿ, MINERAL VARIETY**, մի տեսակի միներալային անհատների համախմբություն, որը տարբերվում է նույն տեսակի մյուս անհատներից լրացուցիչ առանձնահատկություններով: Ըստ վերջինների առաջատար դերի՝ առանձնացնում են քիմ. և կառուցվածքային Մ. տ-ներ:

**M-301. МИНЕРАЛЬНОЕ СЫРЬЁ – ՀԱՆՔԱՅԻՆ ՀՈՒՄՔ (ՀԱՆՔԱՀՈՒՄՔ), MINERAL RAW MATERIALS**, ընդերքից արդյունահանած բնական միներալային նյութեր,

որոնք հանդիսանում են արդյունաբերության համար անհրաժեշտ մետաղներ կամ այլ տարրեր կորզելու համար հանքաքարեր, կամ օգտագործվում են էներգետիկայի (ածուխ, նավթ, գազ), շինարարության, քիմ. արդյ., էլեկտրատեխնիկայի և այլ ճյուղերի կարիքների համար:

**М-302. МИНЕРАЛЬНЫЕ ВОДЫ – ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ, MINERAL WATER,** բարձր հանքայնացման (1 գր/լ-ից ավելի) ջրեր, որոնք պարունակում են առանձնահատուկ միկրոբաղադրիչների (ազատ ածխաթթու, ծծմբաջրածին, լիթիումի, երկաթի, ֆտորի, բրոմի, յոդի իոններ, բորաթթու, ռադոն) որոշակի քանակներ: Ըստ բաղադրիչների՝ առանձնացնում են ածխաթթվային, լիթիումային, երկաթային և այլ Յ. ջ.: Յ. ջ. օգտագործվում են առողջարանային բուժման համար և որպես սեղանի զովացուցիչ ջրեր:

**М-303. МИНЕРАЛЬНЫЕ ИСТОЧНИКИ – ՀԱՆՔԱՅԻՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ, MINERAL SPRINGS,** հանքային ջրերի բնական ելքեր, որոնք գերազանցապես կապված են տեկտ. խախտումների զոնաների հետ: Ըստ քիմ. բաղադրության՝ առանձնացնում են Յ. ա-ի բազմաթիվ տիպեր՝ հիմնային, կրային, աղային, թթվային, երկաթային, ածխաթթվային, ծծմբային և այլն, որոնք օգտագործվում են առողջապահական նպատակների համար:

**М-304. МИНЕРАЛЬНЫЕ ОЗЁРА – ՀԱՆՔԱՅԻՆ ԼՃԵՐ, SALT LAKES,** լճեր, որոնց ջրի զանգվածի 35%-ից ավելին բաժին է ընկնում լուծված աղերին (կերակրի աղ, նատրիումի սուլֆատ, սոդա, ծծմբաթթվային մագնեզիում և այլն): Յ. Լ-ի խիտ աղաջրերից ստանում են կերակրի աղ, բրոմային, յոդային, կալիումական, մագնեզիումային և այլ աղեր:

**М-305. МИНЕРАЛЬНЫЕ РЕСУРСЫ – ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐ, MINERAL RESOURCES,** օգտ. հնձ-ների համախմբություն, որը հայտնաբերված է առանձին ռեզիդուների, երկրների, մայր ցամաքների, օվկիանոսների հատակի կամ երկրի ողջ ընդերքում, մատչելի ու պիտանի է արդյ. օգտագործման համար և, որպես կանոն, երկրք. ուսումնասիրությունների և հետազոտության միջոցով քանակապես գնահատված է: Յ. պ. հանդիսանում են չվերականգնվող բնական պաշարներ:

**М-306. МИОГЕОСИНКЛИНАЛЬ** (հուն. μέιον – ավելի նվազ, ավելի քիչ և երկրասինկլինալ) – **ՄԻՈԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԼ (ՄԻՈԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԼ), MIOGEOSYNCLINE,** երկրասինկլինալային մարզերի ավելի պակաս շարժում, ավելի քիչ տարբերակված մասեր՝ սկզբնական մագմայականության թույլ արտահայտմամբ կամ լրիվ բացակայությամբ և հզոր ցամաքածին ու կարբոնատային ֆորմացիաների գերակշռությամբ: Առանձնացվել է գերմ. երկրաբան Յ. Շտիլեի կողմից (1940): Մ-ները միջանկյալ տեղ են գրավում կրատոնների և էվերկրասինկլինալների միջև և տեղաբաշխված են մայրցամաքային տիպի կեղևի վրա: Ծալքավորությունը ավելի թույլ է և ավելի ուշ, քան էվերկրասինկլինալային զոնաներում, էական դեր են խաղում վրաշարժերը: Ֆրանս. երկրաբան Ժ. Օբուլենի կարծիքով Մ. – էվերկրասինկլինալ զույգը երկրասինկլինալի զարգացման գործընթացում առաջացնում է տարրային կառուցվածքը:

**М-307. МИОЦЕН** (հուն. μέιον – ավելի քիչ և kainós – նոր) – **ՄԻՈՅԵՆ, MIOCENE,** նեոգենի համակարգի (ժամանակաշրջանի) ստորին բաժին (առաջին դարակարգ), տե՛ս Неогеновая система (период):

**М-308. МИРАБИЛИТ, ГЛАУБЕРОВА СОЛЬ** (լատ. mirabilis – զարմանահրաշ, արտասովոր, անվանումը տվել է գերմ. քիմիկոս Ի. Գլաուբերը (1604-70), որն այն

անսպասելի ստացել է փորձի ընթացքում) – **ՄԻՐԱԲԻԼԻՏ, ԳԼԱՈՒԲԵՐՅԱՆ ԱՂ, MIRABILITE, GLAUBER'S SALT**, միներալ սուլֆատների դասից,  $\text{Na}_2[\text{SO}_4] \cdot 10\text{H}_2\text{O}$ , նատրիումի ջրային սուլֆատ: Բյուրեղային համակարգը մոնոկլինային է: Առաջացնում է կարճ հատվածակողմային կամ ասեղնաձև բյուրեղներ, հատիկավոր, փոշեման ագրեգատներ և մանրաբյուրեղ կեղևիկներ: Հեշտությամբ լուծվում է ջրում: Անգույն է, սպիտակ, փայլը՝ ապակու: Կարծրությունը՝ 1.5-2: Մ. աղային լճերի, ծանծաղ ծոցերի և տաք աղբյուրների տիպական քիմիածին արգասիք է: Օգտագործվում է քիմ. արդյունաբերության բնագավառում՝ սոդայի ու կծու նատրիումի ստացման համար, բժշկության մեջ՝ որպես լուծողական:

**M-309. МИРОВОЙ ОКЕАН – ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՎԿԻԱՆՈՍ, WORLD OCEAN**, Երկրի անընդմեջ ջրային թաղանթ, շրջապատում է մայր ցամաքներն ու կղզիները և բնորոշվում է աղիության ընդհանրությամբ (աղերի գումարի 99 % կազմում են նատրիումի, մագնեզիումի, կալիումի, կալցիտի, քլորի և ծծմբի իոնները): Աղային լուծույթի միջին կուտակումը 35 գ/լ է: Ջրոլորտի հիմնական մասն է: Գրավում է երկրագնդի մակերևույթի մոտ 70,8 %-ը: Միջին խորությունը 3795 մ է, առավելագույն խորությունը՝ 11022 մ (Մարիյան փողրակ՝ Խաղաղ օվկիանոսում): Ջրի ծավալը 1370 մլն. կմ<sup>3</sup> է: Բաժանվում է չորս գլխավոր մասերի՝ Խաղաղ, Ատլանտյան, Հնդկական և Հյուսիսային սառուցյալ օվկիանոսներ:

**M-310. МИССИСИПСКИЙ ОТДЕЛ** (Հս. Ամերիկայի Միսսիսիպի գետի անունից) – **ՄԻՍՍԻՍԻՊԻՊՅԱՆ ԲԱԺԻՆ, MISSISSIPIAN**, ԱՄՆ-ի շերտագրական սանդղակի քարածխային համակարգի ստորին բաժին, հաճախ համարվում է ինքնուրույն համակարգ: Մոտավորապես համապատասխանում է արևմտաեվրոպական սանդղակի կարբոնի ստորին բաժնին:

**M-311. МЛЕКОПИТАЮЩИЕ** (Mammalia) – **ԿԱԹՆԱՍՈՒՆՆԵՐ, MAMMALS**, ողնաշարավոր կենդանիների բարձրագույն դաս: Մոտ 3.5 հազ. տեսակ: Մեծ մասի մոտ մարմինը ծածկված է մազային ծածկույթով, կենդանածիններ են, էգերի մոտ բնորոշ է կաթնային գեղձերի առկայությունը: Տարածված են համարյա ամենուրեք: Կ-ի ամենահին բրածո մնացորդները հայտնաբերված են տրիասի հասակի ապարներում:

**M-312. МНОГОЗОНАЛЬНАЯ СЪЁМКА – ԲԱԶՄԱԶՈՆԱՅԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹ, MULTIBAND SURVEY, MULTISPECTRAL SURVEY**, թռչող սարքերից սպեկտրի տարբեր ընդգրկությամբ Երկրի կամ այլ տիեզերական մարմինների օբյեկտների պատկերների սերիաների միաժամանակյա ստացում: Հնարավորություն է տալիս բարձրացնելու այդ օբյեկտների վերծանման արդյունավետությունը՝ ի հաշիվ սպեկտրի տարբեր մարգերում դրանց առանձնահատկությունների ավելի լրիվ բացահայտման:

**M-313. МОБИЛИЗМ** (լատ. mobilis – շարժում) – **ՍՈՔԻԼԻԶՄ, MOBILISM**, վարկած, որը ենթադրում է երկրակեղի (քարոլորտի) մայրցամաքային խոշոր բեկորների հորիզոնական զգալի (մինչև մի քանի հազ. կմ) տեղաշարժերը միմյանց և բևեռների նկատմամբ՝ երկրբ. ժամանակի ընթացքում: Մ. հակադրվում է ֆիքսիզմին (վարկած, որը ժխտում է այդպիսի տեղաշարժերը և երկրակեղևի զարգացումը հիմնականում պայմանավորում է ուղղաձիգ շարժումներով): Մ-ի գիտականորեն մշակված վարկածը առաջին անգամ ձևավորել է գերմ. երկրաֆիզիկոս Ա. Վեգեները (1912, մայր ցամաքների դրեյֆի տեսություն): Մ-ի ժամանակակից տարբերակը՝ «Նոր գլոբալ տեկտոնիկան» (կամ քարոլորտի սալերի տեկտոնիկան), գլխ. հիմնված է օվկիանոսների հատակի ռեյլեֆի և մագնիսական դաշտերի ուսումնասիրության, ինչպես նաև հնամագնիսական տվյալների վրա:

Պալեոգոյան մայր ցամաքների՝ Գոնդվանայի (ընդգրկել է Զր. Ամերիկան, Աֆրիկան, Զնդկաստանը, Ավստրալիան և Անտարկտիդան) և Լավրասիայի (Զս. Ամերիկա, Եվրոպա, Ասիայի հյուսիսային կեսը) միմյանցից անջատ մասերի երկրք. նմանության և դրանց մայրցամաքային լանջերի եզրագծերի համընկման հիման վրա կատարված են հնամագնիսական վերակառուցումներ: Այդ կառուցումները հաստատվում են հնակլիմայական, հնէաբանական և հնամագնիսական տվյալներով, որոնք ցույց են տալիս, որ պալեոգոյի վերջում և մեզոգոյի սկզբում Գոնդվանայի տարբեր մասերը գտնվել են անհամեմատ մոտ Զր. բևեռին, իսկ Զս. Ամերիկան տեղաբաշխված է եղել Եվրոպայի կողքին: Մեզոգոյի ու կայնոգոյի ընթացքում տեղի ունեցած տեղաշարժերը հանգեցրել են Լավրասիայի և Գոնդվանայի միջև տարածված Տեթիսի օվկիանոսի համարյա լրիվ անհետացմանը և նոր օվկիանոսների (Զնդկական և Ատլանտյան) առաջացմանը: Մայր ցամաքների և քարոլորտի սալերի տեղաշարժման հնարավոր պատճառներ են համարվում ենթակեղևային հոսքերը, որոնց առաջացումը կապված է Երկրի խորքային շերտերի անհավասարաչափ տաքացման հետ (ջերմային կոնվեկցիա), միջնապատյանի նյութի ըստ խտության բաժանումը (ծգողական տարբերակում, քիմիախտացման կոնվեկցիա) և Երկրի շառավղի փոփոխությունը (մասնավորապես ընդարձակումը, որը ուղեկցվում է խզվածքներով և մայր ցամաքների տարաշարժով):

**M-314. МОДЕЛИРОВАНИЕ ТЕКТОНИЧЕСКОЕ – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՍՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ, TECTONIC MODELLING**, բնության մեջ դիտվող տեկտ. կառուցվածքների տարբեր տեսակների առաջացման տարաբնույթ պայմանների փորձարարական հետազոտում: Զիմքում ընկած է, այսպես կոչված, նմանության տեսությունը: Այդ տեսության համաձայն՝ բնական պայմանների հետ համեմատած կարճ տևողությունը և երևույթների փոքր մասշտաբները պահանջում են փորձերի ժամանակ օգտագործել այնպիսի նյութեր, որոնք իրենց հատկություններով տարբերվում են սովորական ապարներից:

**M-315. МОДИФИКАЦИИ ПОЛИМОРФНЫЕ – ԲԱԶՄԱՁԵՎ ՁԵՎԱՓՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, POLYMORPHIC MODIFICATIONS**, միևնույն նյութի կառուցվածքային տարատեսակներ:

**M-316. МОДУЛЬ ДЕФОРМАЦИИ – ՁԵՎԱՆԱԽՏՄԱՆ (ԴԵՖՈՐՄԱՑԻԱՅԻ) ՍՈՂՈՒԼ, MODULUS OF DEFORMATION**, համեմատականության գործակից՝ գրունտի վրա գործադրվող ճնշման և նրա ազդեցությամբ գրունտի կրած գծային ձևախախտման միջև:

**M-317. МОДУЛЬ СДВИГА (G) – ՍՈՂՔԻ (ԿՈՂԱՇԱՐԺԻ) ՍՈՂՈՒԼ (G), SHEAR MODULUS**, համեմատականության գործակից՝ գրունտի վրա մեկուսի գործադրվող շոշափող ուղղության լարման և համապատասխան ձևախախտման միջև:

**M-318. МОЛАССА** (ֆրանս. molasse, լատ. mollis-ից – փափուկ) – **ՄՈԼԱՍՍ, MOLASSE**, նստվածքային ապարների հզոր (մինչև մի քանի 1000 մ հաստության) ապարախումբ, որը հիմնականում կազմված է խառնաքարերից (կոնգլոմերատներից), ավազաքարերից, ալևրոլիթներից, կավերից, երբեմն՝ մերգելների, կրաքարերի մասնակցությամբ: Կուտակվում է ծայրամասային և միջլեռնային իջվածքներում՝ համընթաց աճող լեռնային կառույցներին՝ ի հաշիվ դրանց քայքայման: Բնորոշ է ծալքավոր մարզերի զարգացման եզրափակիչ (լեռնագոյացման) փուլին: Տարբերում են ստորին Մ. (շլիռ) և վերին կամ կոպիտ Մ., որոնք բնորոշում են լեռնագոյացման ենթափուլերը: Ստորին Մ. արտահայտված է ներքին աճող բարձրա-

ցունները շրջապատող ծանծաղ ավազանների նստվածքներով (օր.՝ Կովկասի օլիգոցեն – ստորին միոցենյան նստվածքները), վերին Մ. նախորդ փուլում գոյացած և տվյալ փուլում արագ աճող լեռնաշղթաների քայքայման արգասիք է (օր.՝ Կովկասի պլիոցենյան նստվածքները): Մ-ի հետ կապված են ածուխների, նավթի, գազի, պղնձային ավազաքարերի և այլ օգտ. հնձ-ների հնքվ-եր:

**M-319. МОЛЕКУЛЯРНАЯ ВОДА – ՍՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՋՈՒՐ, MOLECULAR WATER,** ջուր, որը մոլեկուլային ձգողության շնորհիվ պահվում է ապարի մակերևույթին կամ ծակոտիների պատերին:

**M-320. МОЛЕКУЛЯРНЫЕ СИЛЫ – ՍՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՈՒԺԵՐ, MOLECULAR FORCES,** նյութի մոլեկուլների միջև փոխազդեցության ուժեր, որոնք, կախված արտաքին ազդակներից (ջերմություն, ճնշում), պայմանավորում են նյութի այս կամ այն ագրեգատային վիճակը և նրա մի շարք ֆիզ. հատկությունները (խտություն, մեխ. հատկություններ, մակերևութային ձգողականություն և այլն):

**M-321. МОЛИБДЕН, Mo** (լատ. Molybdaenum, հուն. μόλυβδος-ից – կապար) – **ՍՈԼԻԲԻԴԵՆ, MOLYBDENUM,** պարբերական համակարգի VI խմբի քիմ. տարր: Բնական Մ. ունի 7 կայուն իզոտոպներ: Մ. բաց մոխրագույն մետաղ է, ունի փոքր տարածում, երկրակեղևում միջին պարունակությունը  $1 \cdot 10^{-4}$  % (ըստ զանգվածի): Հայտնի են Մ-ի մոտ 20 միներալներ, դրանցից կարևորագույններն են՝ մոլիբդենիտը, պոլվելիտը, մոլիբդիտը, վոլֆենիտը:

**M-322. МОЛИБДЕНИТ, МОЛИБДЕНОВЫЙ БЛЕСК** (հուն. μόλυβδος-ից – կապար՝ արտաքինից նման է կապարին) – **ՍՈԼԻԲԻԴԵՆԻՏ, ՍՈԼԻԲԻԴԵՆԱՅԻՆ ՓԱՅԼ, MOLYBDENITE, MOLYBDEN GLANCE,** միներալ սուլֆիդների դասից,  $\text{MoS}_2$ : Բյուրեղագիտական համակարգը հեքսագոնային է: Առաջացնում է հատվածակողմային և տակառածն բյուրեղներ, սովորաբար ցանավոր, թեփուկավոր, ֆեռոլիթային ագրեգատներ: Գույնը՝ կապարի մոխրագույն՝ երկնագույն երանգով: Փայլը՝ մետաղի, կարծրությունը՝ 1-1.5: Հանդիպում է թթու հրային ապարների հետ կապված՝ բարձր-միջին ջերմաստիճանի ջրաջերմային հնքվ-երում, պեզմատիտներում, գրեյզեններում և այլն: Մոլիբդենի հանքանյութերի կարևորագույն միներալ է:

**M-323. МОЛИБДЕНОВЫЕ РУДЫ – ՍՈԼԻԲԻԴԵՆԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, MOLYBDIC ORES,** մոլիբդենի բնական միացություններ, որոնցից տնտեսապես շահավետ է մետաղի կորզումը: Գլխավոր միներալը մոլիբդենիտն է: Մ. հ. երկրակեղևում ծագումով կապված են գրանիտակերպ ներժայթումների (ինտրուզիաների) հետ: Այդ հնքվ-երին են դասվում՝ 1) մոլիբդենային, հաճախ վոլֆրամամոլիբդենային սկառնային հանքանյութերը՝ գրանիտների և կրաքարերի հպվածքում զարգացած նռնաքարապիրոքսենային ապարներում, 2) ջրաջերմային ծագման քվարցմոլիբդենային երակները՝ մետաղի բարձր պարունակությամբ և 3) մոլիբդենային ու պղինձ-մոլիբդենային երակիկացանավոր հանքանյութերը՝ գրանիտային ապարների քվարցացած տեղամասերում՝ մոլիբդենի բարձր պարունակությամբ: Հիմնականում մշակվում են երակիկացանավոր հանքանյութերը՝ մոլիբդենի 0,05-0,08 % պարունակությամբ:

**M-324. МОЛЛЮСКИ** (Mollusca) (լատ. mollis – փափուկ) – **ՓԱՓՎԱՍԱՐՄԻՆՆԵՐ (ԿՎԿՎԱՍՈՐԹՆԵՐ), MOLLUSCS,** անողնաշարավոր կենդանիների տիպ: Մոտ 200 հազ. ժամանակակից և բրածո տեսակներ: Մեծ մասն ունի խեցի: Մարմինը հատվածավորված չէ, կազմված է գլխից, բերանային բացվածքից և, այսպես կոչված, ոտքից՝ շարժման օրգանից: Տիրապետում են ծովերում բնակվողները, չնայած բավականին շատ են ցամաքային և քաղցրահամ ջրային ներկայացուցիչները:



Առավել տարածված դասերը փորոտանի, երկփեղկանի և գլխոտանի փափկամարմիններն են: Հայտնի են մեծաքանակ բազմազան բրածո ձևեր տարբեր հասակի նստվածքներում՝ սկսած քեմբրիից:

**M-325. МОЛОДАЯ ДОЛИНА – ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶՈՎԻՏ, YOUTHFUL VALLEY, JUVENILE VALLEY**, ձևաբանական զարգացման վաղ փուլում գտնվող գետահովիտ, բնորոշվում է լանջերի նեղությամբ և զառիթափությամբ, երկայնակի տրամատի չհարթեցմամբ, ողողահունի և դարավանդների բացակայությամբ: Գետի «հուն» և «հովիտ» հասկացությունները համընկնում են:

**M-326. МОЛОДАЯ ПЛАТФОРМА – ԵՐԻՏԱՍԱՐԴ ՊԼԱՏՖՈՐՄ, YOUNG PLATFORM**, պլատֆորմ, որի ծալքավոր հիմքի հասակը ուշ մինչքեմբրիյան, պալեոզոյան կամ մեզոզոյան է: Բայկալյան ծալքավոր հիմք ունեցող Ե. պ-ները կոչվում են հետբայկալյան (էպիբայկալյան), պալեոզոյան հիմք ունեցողները՝ հետպալեոզոյան (էպիպալեոզոյան), այդ թվում հետկալեդոնյան (էպիկալեդոնյան) և հետհերցինյան (էպիհերցինյան), մեզոզոյան հիմք ունեցողները՝ հետմեզոզոյան (էպիմեզոզոյան):

**M-327. МОЛОДЫЕ ГОРЫ – ԵՐԻՏԱՍԱՐԴ ԼԵՌՆԵՐ, YOUNG MOUNTAINS, YOUTHFUL MOUNTAINS**, լեռներ, որոնց ծալքավոր կառուցվածքը ձևավորվել է լեռնագոյացման ալպյան դարակարգում:

**M-328. МОНАЦИТ** (գերմ. monazit, հուն. monazó-ից – ապրում են միայնակ, սովորաբար հանդիպում է առանձին բյուրեղների տեսքով) – **ՄՈՆԱՅԻՏ, MONAZITE**, հազվագյուտ տարրերի՝ հիմնականում ցերիումի խմբի ֆոսֆատ, (Ce, La...)[PO<sub>4</sub>]: Բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է: Առաջացնում է թերթավոր, երբեմն՝ հաստ աղյուսածն բյուրեղներ, անկանոն հատիկներ, հատիկավոր զանգվածներ: Սովորաբար ուժեղ ճառագայթակալի է: Գույնը՝ դեղինից, դեղնականաչից մինչև շագանակագույն, կարմրագորշ: Կարծրությունը՝ 5-5.5: Մ-ի հնքվ-երը հիմնականում կապված են գրանիտների, պեգմատիտների, սակավ՝ ալկալիական գրանիտներում և սիենիտներում ջրաջերմային կարբոնատային երակների հետ: Արդյունահանվում է գլխ. գետային ու ծովային ցրոններից: Հունք է ցերիում և թորիում ստանալու համար:

**M-329. МОНИТОРИНГ** (լատ. monitor – հիշեցնող, հսկող) – **ՄՈՆԻՏՈՐԻՆԳ, MONITORING**, բնական միջավայրի ինչ-որ օբյեկտների կամ երևույթների հսկում (հետևում) և նախազգուշացում՝ դրանց հանդես գալու, փոփոխության և կրիտիկական իրավիճակների ստեղծման մասին, իրավիճակներ, որոնք վնասակար և վտանգավոր են մարդկանց առողջության, բուսական և կենդանական օրգանիզմների, բնական և անտրոպոգենյան օբյեկտների համար: Ըստ հսկման մեթոդների՝ առանձնացնում են տիեզերական, ավիացիոն, ցամաքային, կենսաբանական և գործիքային Մ.:

**M-330. МОНО...** (հուն. mónos – մեկ, միակ) – **ՄՈՆՈ..., ՄԻԱ..., ՄԵՆԱ..., MONO...**, նախածանց, որը նշանակում է մեկը, միակը, մի բան:

**M-331. МОНОАНТИКЛИНАЛЬНЫЕ ГОРЫ – ՄԵՆԱԿԱՄԱՐԱԾԱԼՔԱՅԻՆ (ՄՈՆՈԱՆՏԻԿ-ԼԻՆԱԼ) ԼԵՌՆԵՐ, DOME MOUNTAINS, ARCHED MOUNTAINS, UNIT TYPE MOUNTAINS**, լեռնային մարզ, որը տեկտ. տեսակետից ներկայացված է խոշոր միասնական կամարածալքի կամարով (բրախիկամարածալքով): Այդ մարզերի լեռնային ռելիեֆը գոյանում է ընտրողական ողողահարման մասնատման հետևանքով:

**M-332. МОНОГЕНЕТИЧЕСКИЕ ГОРЫ, ОДНОЦИКЛОВЫЕ ГОРЫ – ՄԻԱԾԱԳՈՒՄԱՅԻՆ ԼԵՌՆԵՐ, ՄԻԱՑԻԿԼԱՅԻՆ ԼԵՌՆԵՐ, MONOGENETIC MOUNTAINS**, լեռներ, որոնք ձևավորվել են մեկ լեռնագոյացման հետևանքով և կրում են աշխ. մի ցիկլի ձևաբանական հետքերը:

- M-333. МОНОГЕННЫЕ ВУЛКАНЫ** (հուն. *mónos* – մեկ, միակ, *genēs* – ծնված) – **ՄԻԱԾԻՆ ԶՐԱԲՈՒԽՆԵՐ, MONOGENIC VOLCANOES**, հրաբուխներ, որոնք առաջացել են միանգամյա ժայթքման հետևանքով (օր.՝ Պարիկուտին հրաբուխը Մեքսիկայում):
- M-334. МОНОГЕОСИНКЛИНАЛЬ** (հուն. *mónos* – մեկ, միակ և երկրասինկլինալ) – **ՄԵՆԱԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԼ (ՄՈՆՈԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԼ), MONOGEOSYNCLINE**, համեմատաբար նեղ, խոր ճկված, բայց միշտ ծանծաղուտային նստվածքներով երկրասինկլինալ, տեղաբաշխված է մայր ցամաքի ներսում, լեռնագոյացման դեպքում առաջացնում է մեկ լեռնային համակարգ (օր.՝ Ապալաչյան Մ.):
- M-335. МОНОКЛИНАЛЬ** (հուն. *mónos* – մեկ, միակ և *klinō* – թեքվում են) – **ՄԻԱԹԵՔ(ՎԱԾՔ) (ՄՈՆՈԿԼԻՆԱԼ), MONOCLINE**, ապարների տեղադրման ձև, բնորոշվում է դրանց մեղմաթեք միակողմ թեքությամբ: Իրենից ներկայացնում է սովորաբար որևէ լայնարձակ և սակավաթեք բարձրացման կամ իջվածքի թև: Մ. հատկապես բնորոշ է պլատֆորմների համար, որտեղ դրանք կապված են անտեկլիզների կամ սինեկլիզների թևերի հետ: Օր.՝ Բալթյան բյուրեղային վահանի հր. լանջի (դեպի Մոսկովյան սինեկլիզի կողմը) պալեոգոյան ստվարաշերտերի կառուցվածքները. շերտերի թեքությունը 1 կմ երկարությունում 2-2.5 մ է:
- M-336. МОНОКЛИНАЛЬНАЯ ДОЛИНА** – **ՄԻԱԹԵՔ ԶՈՎԻՏ, MONOCLINAL VALLEY**, երկայնական գետահովիտ, որը ձևավորվել է մեղմաթեք տեղադրում ունեցող ապարների շերտերում: Սովորաբար ունի անհամաչափ լայնական տրամատ:
- M-337. МОНОКЛИНАЛЬНОЕ ЗАЛЕГАНИЕ** – **ՄԻԱԹԵՔ (ՄՈՆՈԿԼԻՆԱԼ) ՏԵՂԱԴՐՈՒՄ, MONOCLINAL BEDDING**, ապարների խախտված տեղադրում, որի դեպքում շերտերը թեքված են միակողմ՝ մոտավորապես մույն անկյան տակ և կտրվածքում չեն կրկնվում:
- M-338. МОНОКРИСТАЛЛ** – **ՄԻԱԲՅՈՒԻՆՆ, MONOCRYSTAL**, միայնակ, առանձին բյուրեղ՝ գործնականորեն չխախտված կառուցվածքով:
- M-339. МОНОЛИТ** (հուն. *mónos* – մեկ, միակ, *lithos* – քար) – **ՄԵՆԱՔԱՐ, ՄԻԱԶՈՒՅԼ ԱՊԱՐԱՆՍՈՒՇ, MONOLITH**. 1) երկր-ում ապարների խոշոր, հոծ, ամբողջական, ճեղքերից զուրկ խոշորաբեկոր (տրամագծում սովորաբար մի քանի մ), 2) հողագիտությունում որոշակի ձև ու չափ ունեցող նմուշ, որը վերցված է՝ առանց խախտելու ապարի բնական կառուցվածքն ու խոնավությունը:
- M-340. МОНСКИЙ (МОНТСКИЙ) ЯРУС** (Մոնս, *Mons* ք-ի հին հռոմ. *Montium* անվանումից, Բելգ.) – **ՄՈՆՍՅԱՆ (ՄՈՆՏՅԱՆ) ԶԱՐԿ, MONTIAN**, Արմ. Եվրոպայի պալեոցենի ներքևից երկրորդ հարկ:
- M-341. МОНТМОРИЛЛОНИТ** (ֆրանս. Մոնտմորիլոն, *Montmorillon*, հնքվ-ի անունից) – **ՄՈՆՏՄՈՐԻԼՈՆԻՏ, MONTMORILLONITE**, կավային միներալ շերտավոր սիլիկատների ենթադասից, քիմ. կազմը փոփոխական է: Առաջացնում է խիտ կավային զանգվածներ: Բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է: Բյուրեղները սակավ են և երևում են էլեկտրոնային մանրադիտակի օգնությամբ: Սովորաբար հանդիպում է անկանոն թերթիկների ձևով: Գույնը՝ սպիտակ, վարդագույն, կապտագորշ, կարմիր, կանաչավուն, կարծրությունը՝ չոր վիճակում 1-2: Թրջելիս խիստ փքվում է: Մ. առաջանում է նստվածքային և փոխակերպային ապարներում, հողերում, հրաբխային գոյացությունների ստորջրյա փոփոխությունների ընթացքում: Բենթոնիտների գլխավոր բաղադրամասն է: Օգտագործվում է հորատման լուծույթներում, խեցեգործության բնագավառում, թղթի, ռետինի, ներկերի, օճառի արտադրության մեջ:
- M-342. МОНЦОНИТ** (Իտալիայում գտնվող Մոնցոնի, *Monzoni* լեռան անունից) – **ՄՈՆՑՈՆԻՏ, MONZONITE**, ենթաակալիական շարքի պլուտոնիկ լիաբյուրեղային

ապար: Կազմված է կալիում-նատրիումական դաշտասպաթից (35-45 %), պլազիոկլազից (անդեզին, լաբրադոր, 35-55 %) և գունավոր միներալներից (ավգիտ, ամֆիբոլ, բիոտիտ, 0-40%): Գույնը՝ մոխրագույն, վարդամոխրագույն: Ֆիզ. հատկությունները մոտ են դիորիտին: Մ-ները կազմում են ինքնուրույն զանգվածներ, մասնակցում են բարդ կազմի ներժայթքվածքների (ինտրուզիաներ) կազմության մեջ: Մ-ների հետ տարածականորեն կապված են վոլֆրամի, մոլիբդենի, պղնձի, ոսկու հանքայնացումներ:

**M-343. MOPE – ծՈՎ, SEA**, օվկիանոսի մաս, որից շատ կամ քիչ մեկուսացված է ցամաքով կամ ստորջրյա ռելիեֆի բարձրացումներով, օվկիանոսի բաց մասից տարբերվում է գլխ. սեփական ջրաբանական և կլիմայական ռեժիմով: Ծ-եր են կոչվում նաև որոշ խոշոր լճերը (Արալյան, Կասպից, Մեռյալ) կամ ջրամբարները (օր.՝ Մոսկոլյան): Ըստ առանձնացվածության աստիճանի և ջրաբանական ռեժիմի՝ Ծ-երը բաժանվում են՝ ներքին, ծայրամասային և միջկղզային, ըստ աշխ. դիրքի՝ միջմայրցամաքային և ներմայրցամաքային Ծ-երի:

**M-344. MOPE КОТЛОВИННОЕ – ԳՈՎԱՅՍԱՎԱՎՈՐ ԾՈՎ, BASIN SEA**, ծովային ավազան, որի հատակը իրենից ներկայացնում է հստակ արտահայտված խորջրյա իջույթ (գոգավորություն)՝ բոլոր կողմերից սահմանափակված լանջերով: Գ. ծ-երը սովորաբար տեղաբաշխված են ալպյան ծալքավոր կամ ժամանակակից երկրասինկլինային գոտիների սահմաններում (Օխոտի, ճապոնական, Բազամյան, Կարաիբյան, Սև, Կասպից և այլ ծովեր):

**M-345. MOPE МЕЖОСТРОВНОЕ – ՄԻԶՎՂԶԱՅԻՆ ԾՈՎ, SEA ENCIRCLED WITH ISLANDS**, անջատված է օվկիանոսից կղզիների օղակով: Բնորոշվում է օվկիանոսի հետ ազատ ջրափոխանակմամբ, ուժեղ հոսանքներով և մակընթացություններով:

**M-346. MOPE МЕЛКОВОДНОЕ (МЕЛКОЕ) – ԾԱՆԾԱՂ ԾՈՎ, SHALLOW SEA**, ծով, որի խորությունը չի գերազանցում շելֆի խորությանը, տե՛ս More шельфовое:

**M-347. MOPE ОКРАИННОЕ – ԾԱՅՐԱՄԱՍԱՅԻՆ ԾՈՎ, MARGINAL SEA**, տեղաբաշխված է մայր ցամաքների և օվկիանոսների միջև (մայր ցամաքների ծայրամասերում), սովորաբար անջատված է օվկիանոսից կղզիներով, թերակղզիներով կամ ստորջրյա բարձրացումներով, որն ապահովում է համեմատաբար ազատ ջրափոխանակություն օվկիանոսի հետ: Ծ. ծ-երը կարող են լինել շելֆային (Յյուսիսային, Բարենցի) կամ գոգավորային (Օխոտի, Բերինգի և այլն):

**M-348. MOPE ПЛОСКОЕ – ՉԱՐԹԱՅՍԱԿ ԾՈՎ, FLAT SEA**, ծանծաղուտային (շելֆային) ծով՝ շատ թե քիչ հարթեցված հատակով, չունի լավ արտահայտված գոգահատակ (Ազովի, Արևելասիբիրական, Յյուսիսային):

**M-349. MOPE ШЕЛЬФОВОЕ – ՇԵԼՖԱՅԻՆ (ՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ ԾԱՆԾԱՂՈՒՏԱՅԻՆ) ԾՈՎ, SHELF SEA**, ամբողջովին տեղաբաշխված է մայրցամաքային ծանծաղուտի (շելֆի) սահմաններում՝ մայրցամաքային տիպի կեղևի վրա: Շ. ծ-երը սովորաբար ծանծաղ են (մինչև 100-200 մ), բայց ժամանակակից և չորրորդական սառցապատումների մարզերում (Բարենցի, Կարայան) ունեն ներշելֆային փողրակներ և գոգավորություններ՝ մինչև 500-1000 մ խորացմամբ: Յոմ. վերմայրցամաքային (Էպիկոնտինենտալ) ծով:

**M-350. МОРЕНА** (ֆրանս. moraine) – **ՍԱՌՑԱԲԵՐՈՒԿ (ՄՈՐԵՆ, ՔԱՐԱՎԱՐԿԱՌ), TILL, GLACIAL DRIFT, MORaine**, նստվածքներ, որոնք կուտակել են սառցադաշտերը՝ իրենց շարժման և հատակի հերկման ժամանակ: Ըստ կազմի խիստ բազմազան են (կավաավազներից մինչև խոշոր գլաբարեր), տեսակավորված չեն, պարունակում են կոպիճ և գլաբարեր՝ սառցադաշտային սպիներով և ողորկությամբ: Տար-

բերվում են շարժվող կամ շարժուն և նստվածքային Ա-ներ: Շարժվող Ա-ները լինում են մակերևութային, ներքին և հատակային: Մակերևութային Ա-ները գոյանում են հովտի ժայռոտ լանջերից՝ սառցադաշտի մակերևութին թափված բեկորներից, ներքին Ա-ները՝ ձնահյուսների հետ թափված, սառցադաշտի մեջ խրված բեկորներից, ինչպես նաև մակերևութային ու հատակային բեկորներից: Հատակային Ա. հատակից պոկված բեկորային նյութ է՝ պարփակված սառցի մերձհատակային շերտերում: Նստվածքային Ա. բաղկացած է սառցադաշտի նահանջից մնացած բոլոր տեսակի շարժուն Ա-ների բեկորային նյութից և մեծ տարածում ունի անտրոպոգենի մայրցամաքային սառույցներով ծածկված շրջաններում: Ա-ները առաջացնում են բլրասառցաբերուկային ռելիեֆ:

**M-351. МОРЕННАЯ ГРЯДА – ՍԱՌՑԱԲԵՐՈՒԿԱՅԻՆ (ՍՈՐԵՆԱՅԻՆ) ԹՄԲԱՇԱՐ, ԹՈՒՄԲ, MORAINIC RIDGE**, սառցադաշտի կուտակված նստվածքների հողմահարման արգասիքների թմբանման կուտակում:

**M-352. МОРЕННОЕ ОЗЕРО – ՍԱՌՑԱԲԵՐՈՒԿԱՅԻ (ՍՈՐԵՆԱՅԻՆ) ԼԻՃ, MORAINAL LAKE**, 1) լիճ, որը զբաղեցնում է մայրցամաքային սառցադաշտի վերջնական կամ հատակային սառցաբերուկային նստվածքների գոգավորությունը: 2) Լիճ, որն առաջացել է սառցադաշտի նահանջից հետո՝ հովտում մնացած սառցաբերուկների փլուզումից:

**M-353. МОРИОН – ՄՈՐԻՈՆ, MORION**, միներալ, քվարցի սև կամ մուգ շագանակագույն բյուրեղներ:

**M-354. МОРОЗНОЕ ВЫВЕТРИВАНИЕ – ՍԱՌՆԱՍԱՆԻՔԱՅԻՆ ՀՈՂՄԱՀԱՐՈՒՄ, FROST WEATHERING, CONGELIFRACTION, FREEZE AND THAW DESINTEGRATION**, ճեղքերի և ծակոտիների մեջ սառչող ջրի ճնշման հետևանքով ապարների փխրեցում և քայքայում: Ա. հ-ման հետևանքով բարձր լեռնային և բևեռային մարզերում առաջանում են «քարային ծովեր», լեռների ու ձորերի զառիթափ լանջերին՝ փլվածքներ ու թափվածքներ, սառցադաշտերի գործունեության շրջաններում՝ կառեր, սոլիֆյուկցիոն երևույթներ:

**M-355. МОРСКАЯ ГЕОЛОГИЯ – ԾՈՎԱՅԻՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, MARINE GEOLOGY, SUBMARINE GEOLOGY**, գիտություն, որն ուսումնասիրում է Երկրի ծովերի ու օվկիանոսների՝ ջրով ծածկված ընդերքի կազմը, կառուցվածքը և զարգացման պատմությունը: Ուսումնասիրման օբյեկտը գլխ. օվկիանոսային երկրակեղևն է, որը կազմում է Երկրի մակերևութի մոտ 71 %: Հիմնական խնդիրներն են՝ օվկիանոսների ու ծովերի ծագման, կազմության ու զարգացման պատմության ուսումնասիրությունը, դրանցում օգտ. հնձ-ների առաջացման պայմանների ու տեղաբաշխման բնույթի պարզաբանումը: Ուսումնասիրության ուղղությունը ներառում է հատակի ռելիեֆի ծագման և զարգացման, հատակային նստվածքների, մազմայական և փոխակերպային ապարների կազմի, ձևավորման պայմանների և տարածական փոփոխականության հետազոտությունը, օվկիանոսային կեղևի տեկտոնիկայի ու երկրադինամիկայի, Երկրի խորքային կառուցվածքի, հրաբխականության, երկրաշարժականության, երկրաքիմ. առանձնահատկությունների ու երկրֆ. դաշտերի ուսումնասիրությունը, հնաերկրբ., հնաօվկիանոսագիտական և հնաերկրադինամիկ պայմանների վերականգնումը, օվկիանոս-մայր ցամաք անցողիկ զոնայի, այրվող (նավթ, գազ), մետաղական (երկաթ-մանգանային կոնկրեցիաներ, մետաղաբեր նստվածքներ, ցրոններ և այլն) և ոչ մետաղական (ֆոսֆատներ և այլն) հնձ-ների գոյացման և տեղաբաշխման բնույթի ուսումնասիրությունը: Ծ. ե-յան խնդիրների լուծման համար օգտագործվում են գլխ. հեռավորական մեթոդներ, քանի որ սումնասիրման օբյեկտը դիտորդից անջատված է ջրի զանգվածով:

**M-356. МОРСКАЯ ГЕОФИЗИЧЕСКАЯ РАЗВЕДКА – ԾՈՎԱՅԻՆ ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ՅԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ, OFF-SHOPE GEOPHYSICAL EXPLORATION, OFF-SHOPE GEOPHYSICAL PROSPECTING**, կիրառվում է մայցամաքային ծանծաղուտի, մայրցամաքային լանջի և օվկիանոսի մահիճի սահմաններում օգտ. հնժ-ների հնքվ-եր որոնելու և հետազոտելու ընթացքում: Ծ. Ե. հ-յան գծով առաջին աշխատանքները կատարվել են XX դ. 30-ական թթ. ԽՍՀՄ-ում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում՝ էլեկտրահետախուզության և ծանրաչափության օգտագործմամբ: Ծ. Ե. հ-յան խնդիրներն են երկրակեղևի՝ ծովերով ու օվկիանոսներով ծածկված հատվածների խորքային կառուցվածքի ուսումնասիրումը, նավթագազաբերության տեսակետից հեռանկարային տարածքների որոնումը և նախապատրաստումը հետախուզական հորատման համար, ստորջրյա ցրոնային հնքվ-երի քարտեզագրումը: Ծ. Ե. հ. օգտվում է գլխ. սեյսմահետախուզության, ինչպես նաև մագնիսաչափական, ծանրաչափական, էլեկտրահետախուզության, միջուկաերկրաֆիզիկական մեթոդներից: Երկրաչարժահետախուզական մեթոդը շատ կարևոր է նավթագազաբերության տեսակետից՝ հեռանկարային կառուցվածքների որոնման համար:

**M-357. МОРСКАЯ РАЗВЕДКА МЕСТОРОЖДЕНИЙ – ՅԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԾՈՎԱՅԻՆ ՅԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ, OFF-SHOPE EXPLORATION**, երկրբ. աշխատանքների համալիր, որի խնդիրը ծովերի ու օվկիանոսների ջրատարածքներում հանքային հումքի հետազոտումը, երկրաբանատնտեսական գնահատումը և արդյ. իրացման նախապատրաստումն է: Տարբերում են օգտ. հնժ-ների 3 խումբ՝ ծովային ջրում պարունակվող, պինդ օգտ. հնժ-ներ՝ հատակի վրա կամ մերձհատակային շերտում և ֆլուիդներ (նավթ, գազ, ջերմաջրեր)՝ մայցամաքային և օվկիանոսային երկրակեղևի խորքային շերտերում: Այդ օգտ. հնժ-ների բոլոր հնքվ-երը ըստ տեղաբաշխման բաժանվում են մերձափնյա զոնայի, մոտակա և հեռավոր շելֆի, ծովային խորջրյա և օվկիանոսային իջվածքների հնքվ-երի:

**M-358. МОРСКАЯ ФАУНА – ԾՈՎԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ (Ծ. ՖԱՈՒՆԱ), MARINE FAUNA**, ծովերում և օվկիանոսներում բնակվող կենդանիների համախմբություն: Մոտավորապես 160 հազար տեսակ՝ նախակենդանիներ, սպունգներ, աղեխորշավորներ, փշամորթներ, ուստանիներ, որդեր, մամռակերպեր, փափկամարմիններ, խեցգետնակերպեր, թաղանթավորներ, ձկներ և աննշան քանակությամբ կաթնասուններ ու սողուններ: Ըստ խորության Ծ. Ֆ. աղքատանում է: Տարբերում են պելագիալ (կենդանապլանկտոն և նեկտոն) և հատակային (բենթոս) Ծ. Ֆ.: Հատակային ֆաունայի մեջ առանձնացնում են լիթորալ և մերձլիթորալ (մերձափնյա և մերձափնյա ծովահատակի) (մինչև 200 մ), բաթիալ (2-3 կմ), աբիսալ (մինչև 6-7 կմ) և անդրաբիսալ (7-11 կմ):

**M-359. МОРСКАЯ ФЛОРА – ԾՈՎԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ (Ծ. ՖԼՈՐԱ), MARINE FLORA**, ծովերում և օվկիանոսներում բնակվող բույսերի համախմբություն՝ ջրիմուռներ, խոտեր, բակտերիաներ, ավելի քիչ՝ սնկեր (մոտ 4000 տեսակ): Առավել տարածված են ջրիմուռները, որոնք բնակվում են ջրային զանգվածում մինչև լույսի թափանցման ստորին սահմանը (100-400 մ): Որոշ ջրիմուռներ (սովորաբար մանրադիտական չափերի) ապրում են ջրի մակերևութային շերտերում (բուսապլանկտոն, ֆիտոպլանկտոն), մյուսները (առավելապես խոշոր ձևերը) ապրում են հատակում (բենթոս): Բարձրակարգ բույսերից Ծ. Ֆ-ի համար բնորոշ են խոտերը, որոնք առաջացնում են լայնատարած ստորջրյա մարգագետիններ (գլխ. մինչև 100 մ խորություններում):

**M-360. МОРСКИЕ ОТЛОЖЕНИЯ – ՃՈՎԱՅԻՆ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, MARINE SEDIMENTS, SEA SEDIMENTS,**

Երկրի ժամանակակից և հին ծովերի ու օվկիանոսների հատակային նստվածքներ: Գերակշռում են ցամաքային նստվածքներին՝ կազմելով մայր ցամաքների նստվածքային թաղանթի ընդհանուր ծավալի ավելի քան 75 %-ը և ժամանակակից Համաշխարհային օվկիանոսի ամբողջ նստվածքային ծածկոցը: Ծ. ն-ին պատկանում են կրաքարերի, դոլոմիտների, մերգելների, սիլիցիումային և կավային ապարների մեծ մասը, ալկրոլիթների, ավազաքարերի, խառնաքարերի զգալի մասը: Շատ փոխակերպային ապարներ (գնեյսներ, թերթաքարեր, մարմարներ) նախասկզբնապես կուտակվել են որպես Ծ. Ն.: Ըստ ծագման Ծ. ն. բաժանվում են՝ ցամաքածին (տերրիզեն), կենսածին, քիմիածին և հրաբխածին, ըստ նյութական կազմի՝ ալյումասիլիկատային (բեկորային և կավային), կարբոնատային (կրային և դոլոմիտային), սիլիկատային, երկաթային, սապրոպելային, ֆոսֆատային և այլն: Ըստ ավազանի խորության՝ տարբերում են ծանծաղուտային (մինչև 200 մ) և խորջրյա (200-11000 մ) Ծ. ն.: Ծանծաղուտային Ծ. ն. ներկայացված են վերնայրցամաքային ծովերի, մայրցամաքային ու կղզային շելֆի, մեկուսացված առափնյա ծանծաղուտի ափային զոնայի տարատեսակ ֆացիաներով (լիթորալ ֆացիաներ): Դրանք գլխ. ցամաքածին բեկորային (ճալաքարեր, ավազներ, ալերիտներ, ալերապելիտներ) կամ կենսածին կրային (բուստաջրինուռային, խեցաքարային, մանուկերպային և այլն) նստվածքներ են: Ծանծաղուտային Ծ. ն-ի հետ կապված են օուլիթային երկաթային հանքանյութեր, ծանր միներալների (մոնացիտի, ցիրկոնի, ռուտիլի, ոսկու, կասիտերիտի, իլմենիտի, ալմաստի և այլն) ցրոններ, շինանյութերի (ավազ, կոպիժ, կրաքար, կավ) հնքվ-եր: Ցամաքածին նյութի առատության դեպքում կուտակվում են նավթազազամայրական և նավթազազաբեր ստվարաշերտեր: Խորջրյա Ծ. ն. բաժանվում են ծովայինների, մերձմայրցամաքայինների և օվկիանոսային պելագիկ Ծ. ն-ի: Դրանց հիմնական մասը կուտակված է մայրցամաքային լանջերի ստորոտներում և խորջրյա արտահոսային կոներում, որտեղ ցամաքածին Ծ. ն-ի (տուրբիդիտներ, գրավիտիտներ) հաստությունը տեղ-տեղ անցնում է 10-15 կմ-ից: Այդպիսի ստվարաշերտերը կարող են լինել նավթազազամայրական: Ցամաքածին նյութի աղբյուրներից հեռանալիս (զոգափոսային ծովերի հատակում և աբիսալ զոգավորություններում) նստվածքների հաստությունը և կուտակման արագությունը նվազում են, մեծանում է կենսածին (պլանկտոնածին) նստվածքային նյութի դերը, և տուրբիդիտների (պղտոր հոսքանստվածների) հետ համատեղ ձևավորվում են առավելապես մոխրագույն հեմիպելագիկ նստվածքներ (կավային, սիլիցիումակավային, կրային, մերգելային): Ժամանակակից օվկիանոսների կենտրոնական մասերում տիրապետում են պելագիկ Ծ. ն., որոնց առաջացումը կապված է գլխ. կենսածին գործընթացների հետ: Պելագիկ նստվածքների հետ կապված են երկաթամանգանային կոնկրեցիաներ, միջինօվկիանոսային լեռնաշղթաների ռիֆտային զոնաներում՝ էքսզյացիոն-նստվածքային բազմամետաղական սուլֆիդային և մանգանի օքսիդների հանքերակույմներ: Մայր ցամաքներում բրածո Ծ. ն-ի հետ կապված են մետաղական (երկաթ, մանգան, ուրան, վանադիում, պղինձ և այլն), ոչ մետաղական (ֆոսֆորիտներ) օգտ. հնձ-ների խոշոր հնքվ-եր:

**M-361. МОРСКИЕ ТЕЧЕНИЯ, ОКЕАНИЧЕСКИЕ ТЕЧЕНИЯ – ՃՈՎԱՅԻՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ, ՕՎԿԻԱՆՈՍԱՅԻՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ, SEA CURRENTS, OCEAN CURRENTS,**

ջրային զանգվածքների առաջընթաց հոսանքներ՝ ծովերում և օվկիանոսներում: Առաջացումը պայմանավորված է տարբեր ուժերով (ծանրահակային շփման, մա-

կընթացությունն առաջացնող և այլն): Ըստ տեղադիրքի լինում են՝ մակերեսային, խորքային, հատակային, մերձափնյա, ըստ ֆիզքին. հատկանիշների՝ տաք և սառն, աղի և աղիավուն: Տաք հոսանքները շարժվում են աշխ. ցածր լայնություններից (հասարակածային) դեպի բարձրը, սառը հոսանքները՝ հակառակ ուղղությամբ: Երկրի պտույտի ազդեցության հետևանքով Ծ. հ. Յս. կիսագնդում շարժվում են ժամացույցի սլաքի, Յր. կիսագնդում՝ հակառակ ուղղությամբ: Ծ. հ. լինում են մշտական (Յյուսիսային և Յարավային պասսատային, Գոլֆստրիմ) և ժամանակավոր (Յնդկական օվկիանոսի հս. մասի մուսսոնային):

**M-362. МОРСКОЕ БУРЕНИЕ – ԾՈՎԱՅԻՆ ՀՈՐԱՏՈՒՄ, OFF-SHOPE DRILLING**, հորատման աշխատանքների տարատեսակ, կատարվում է Համաշխարհային օվկիանոսի և ներքին ծովերի ջրատարածքներում՝ նավթի, գազի և այլ օգտ. հնձ-ների որոնման ու հետազոտման, ինչպես նաև ճարտարագիտակերպաբանական հետազոտության և գիտական ուսումնասիրությունների նպատակով: Ըստ հորատանքների խորության տարբերում են՝ ծովային ոչ խոր հորատում (ծովի հատակի մակերևույթից մինչև 500 մ խոր) և ծովային խորջրյա հորատում՝ առավելապես Համաշխարհային օվկիանոսի նավթագազային պաշարների որոնման ու իրացման համար: Ծ. հ. իրականացվում է անշարժ և լողացող ջրատեխնիկական կառույցների միջոցով:

**M-363. МОРСКОЙ КЛИМАТ – ԾՈՎԱՅԻՆ ԿԼԻՄԱ, MARINE CLIMATE, SEA CLIMATE**, մթնոլորտում օվկիանոսային տարածությունների գերիշխող ազդեցությամբ ձևավորվող կլիմա: Առավել լավ արտահայտված է օվկիանոսների վրա: Տարածված է նաև մայր ցամաքների այն շրջաններում, որոնք հաճախ են ենթարկվում ծովային օդային զանգվածների ազդեցությանը (օր.՝ Արմ. Եվրոպայի Ծ. Կ.): Ծ. կ-յին բնորոշ են բրիզները (ափամերձ շրջաններում), օդի ջերմաստիճանի օրական և տարեկան փոքր տատանումները, առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների ուշացումը (մեկ-երկու ամսով), բարձր խոնավապարունակությունը, օդում աղային մասնիկների առատությունը:

**M-364. МОРФОГЕНЕЗ** (հուն. morphḗ – ձև, տեսք, կերպ և génesis – ծագում, գոյացում) – **ՁԵՎԱԳՈՅՈՒՄ (ՄՈՐՖՈԳԵՆԵՉ), MORPHOGENESIS**, 1) Երկրի մակերևույթի ռելիեֆի ձևերի առաջացում և զարգացում, 2) օրգանիզմի մասերի, համակարգերի և օրգանների գոյացում ու զարգացում՝ ինչպես անհատական, այնպես էլ էվոյուցիոն զարգացման ընթացքում:

**M-365. МОРФОГРАФИЯ** (հուն morphḗ – ձև, տեսք, կերպ և gráphō – գրում են, նկարագրում են) – **ՁԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ՄՈՐՖՈԳՐԱՖԻԱ), MORPHOGRAPHY**, Երկրի մակերևույթի արտաքին հատկանիշների նկարագրություն՝ առանց դիտարկելու ռելիեֆի ծագման, հասակի և զարգացման հարցերը, նույնն է՝ Орoграфия:

**M-366. МОРФОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ** (հուն. morphḗ – ձև, տեսք, կերպ և lógos – ուսմունք, խոսք) – **ՁԵՎԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ, MORPHOLOGICAL ANALYSIS**, Երկրակեղևի նորագույն շարժումների բնույթի և զարգացման պատմության որոշման մեթոդ, հիմնված է երկրակեղևի ժամանակակից ռելիեֆի ուսումնասիրման՝ գլխ. գետահովիտների լանջերի տրամատի վերլուծության վրա, որն արտացոլում է հարաբերությունը ողողամաշման – լեռկացման գործընթացների և տեկտ. շարժումների միջև: Մեթոդը առաջարկել է գերմ. գիտնական Վ. Պենկը 1924-ին: Պենկի մի քանի դրույթները ենթարկվեցին խիստ քննադատության, բայց նրա կարևորագույն գաղափարները զգալի չափով օգնեցին երկրաձևաբանության զարգացմանը:

- M-367. MORFOЛОГИЯ ЗЕМНОЙ ПОВЕРХНОСТИ** (հուն. morphē – ձև, տեսք, կերպ և λόγος – ուսմունք, խոսք) – **ԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, MORPHOLOGY OF THE EARTH'S SURFACE**, 1) նույնն է, ինչ երկրաձևաբանությունը, 2) երկրի մակերևույթի ռելիեֆի ձևերի համախմբություն:
- M-368. MORFOЛОГИЯ ЛАНДШАФТА – ԼԱՆԴՇԱՖՏԻ (ԲՆԱՊԱՏԿԵՐԻ) ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, MORPHOLOGY OF LANDSCAPE**, լանդշաֆտաբանության բաժին, ուսումնասիրում է աշխ. լանդշաֆտի, տեղանքի, բնասահմանի և այլնի ներքին կազմությունը:
- M-369. MORФОМЕТРИЯ** (հուն. morphē – ձև, տեսք, կերպ և metréō – չափում են) – **ՁԵՎԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ, MORPHOMETRY**, երկրաձևաբանության բնագավառ, նվիրված է երկրի մակերևույթի ռելիեֆի ձևերի թվային բնութագրման (երկարության, մակերեսի, ծավալի, բարձրության, խորության և այլն) որոշման մեթոդներին: Ձևաչափական ցուցանիշները ստացվում են գլխ. տեղագրական քարտեզների և օդալուսանկարչական նյութերի մշակման հետևանքով:
- M-370. MORФОСКУЛЬПТУРЫ** (հուն. morphē – ձև, տեսք, կերպ և լատ. sculptura – քանդակ, արձանագործություն) – **ՁԵՎԱՔԱՆԴԱԿՆԵՐ, MORPHOSCULPTURES, LAND SCULPTURES**, ռելիեֆի ձևեր, որոնց առաջացման մեջ գլխ. դերը պատկանում է արտածին գործընթացներին:
- M-371. MORФОСТРУКТУРЫ** (հուն. morphē – ձև, տեսք և լատ. structura – կառուցվածք, կազմություն) – **ՁԵՎԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐ (ՄՈՐՖՈՍՏՐՈՒԿՏՈՒՐԱԿՆԵՐ), MORPHOSTRUCTURES, LAND STRUCTURES**, երկրի մակերևույթի առավելապես խոշոր ձևեր, որոնց առաջացման մեջ գլխավոր դերը պատկանում է ներծին գործընթացներին, և որոնց ձևաբանությունում պարզորեն արտացոլվում են երկրբ. կառուցվածքները: Առանձնացվում են ըստ չափերի: Ամենախոշոր Ձ. համապատասխանում են երկրակեղևի խոշորագույն կառուցվածքային տարրերին (մայր ցամաքների ելուստներ, օվկիանոսների իջվածքներ, միջինօվկիանոսային լեռնաշղթաներ և այլն): Ավելի փոքր կարգի Ձ.՝ պլատֆորմային հարթավայրերը, ծալքավոր մարզերի լեռնային երկրներն են: Տերմինը առաջարկել է ռուս գիտնական Ի. Պ. Գերասիմովը 1946-ին:
- M-372. MORФОТЕКТОНИКА**, տե՛ս Структурная геоморфология:
- M-373. MORФОТЕКТОНИЧЕСКИЙ АНАЛИЗ – ՁԵՎԱՏԵԿՏՈՆԱԿԱՆ (ՄՈՐՖՈՏԵԿՏՈՆԱԿԱՆ) ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ, MORPHOTECTONIC ANALYSIS**, նորագույն տեկտ. շարժումների (ուղղվածության, ուժգնության և լայնության) բացահայտման մեթոդ՝ ռելիեֆի բարձրացման և մասնատման աստիճանի, համահարթման մակերևույթների, դարավանդների ու դրանց ձևափոխման, հնաերկրաձևաբանության և այլնի վերլուծության օգնությամբ:
- M-374. МОСКОВСКАЯ ЛЕДНИКОВАЯ ЭПОХА – ՄՈՍԿՈՎՅԱՆ ՍԱՌՑԱԳՎՇՏԱՅԻՆ ԴԱՐԱՎԱՐԳ, MOSCOW ICE AGE**, Արևելաեվրոպական հարթավայրի միջին պլեյստոցենյան սառցապատման դարակարգ: Համապատասխանում է Արմ. Եվրոպայի զաալյան սառցապատման վարտայի փուլին (75-120 հազ. տ. առաջ):
- M-375. МОСКОВСКИЙ ЯРУС (Մոսկվա ք-ի անունից) – ՄՈՍԿՈՎՅԱՆ ՀԱՐԿ, MOSCOVIAN**, ԽՍՀՄ-ում ընդունված շերտագրական սանդղակում քարածխային համակարգի միջին բաժնի վերին հարկ: Համապատասխանում է Արմ. Եվրոպայում ընդունված սանդղակի վեստֆալյան հարկի վերին մասին:
- M-376. МОХОРОВИЧИЧА ПОВЕРХНОСТЬ, МОХО, М, – ՄՈՐՈՐՈՎԻՉԻՉԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹ, MOHOROVICIC DISCONTINUITY**, բաժանման սահմանը՝ երկրակեղևի և



երկրի միջնապատյանի միջև: Մ. մ. հայտնաբերվել է ըստ երկրաչարժական տվյալների: Երկայնակի երկրաչարժական ալիքների արագությունը Մ. Մ-ի միջով անցնելու (վերևից ներքև) դեպքում աճում է թռիչքածն՝ 6.7-7.6-ից մինչև 7.9-8.2 կմ/վրկ., իսկ լայնակի ալիքներինը՝ 3.6-4.2-ից մինչև 4.4-4.7 կմ/վրկ.: Չանագան երկրֆ., երկրբ. և այլ տվյալները ցույց են տալիս, որ նյութի խտությունը նույնպես աճում է թռիչքածն, ենթադրաբար՝ 2.9-3-ից մինչև 3.1-3.5 տ/մ<sup>3</sup>: Հավանաբար Մ. Մ. բաժանում է տարբեր քիմ. բաղադրության շերտեր: Մ. Մ. իր անվանումը ստացել է ի պատիվ հայտնաբերողի՝ հարավսլավացի երկրաֆիզիկոս Ա. Մոհորովիչի (1857-1936): Տե՛ս նաև Земля:

**M-377. МОЦНОСТЬ – ՀԱՍՏՈՒԹՅՈՒՆ, THICKNESS**, երկրբ. մարմնի (շերտի, երակի, շերտախմբի, հարկի, համակարգի և այլն) հաստություն: Տարբերում են իսկական, ուղղաձիգ և տարբեր տեսակի Հ.: Իսկական Հ. շերտի առաստաղի ու հատակի միջև ամենակարճ ուղղահասց հեռավորությունն է: Ուղղաձիգ Հ. շերտի առաստաղի ու հատակի միջև հեռավորությունն է՝ չափված ուղղաձիգ գծով: Ուղղաձիգ Հ. իսկական Հ-յան հետ կապված է հետևյալ կախվածությամբ՝ Հի=Հու·cosa, որտեղ Հի՝ իսկական Հ. է, Հու՝ ուղղաձիգ Հ. է, a՝ շերտի անկման անկյունն է: Տեսանելի Հ.՝ շերտի առաստաղի ու հատակի միջև հեռավորությունն է, որը չափվել է շերտի տարածման նկատմամբ՝ տարածության մեջ կամայական կողմնորոշված գծերով: Հ-յան այս տարատեսակների տերմինաբանությունը դեռևս մշակված չէ:

**M-378. МОЦНОСТЬ НЕПОЛНАЯ – ՈՉ ԼՐԻՎ ՀԱՍՏՈՒԹՅՈՒՆ, INCOMPLETE THICKNESS**, տվյալ մերկացումում (կամ շրջանում) շերտի, երակի, շերտախմբի, հարկի և այլնի հաստություն: Նշվում է այն դեպքում, երբ տվյալ մերկացումում (շրջանում) բացակայում է շերտի, շերտախմբի, հարկի և այլնի վերին կամ ստորին մասը:

**M-379. МРАМОР** (լատ. marmor, հուն. mármaros – փայլուն քար, քարե մեծակտոր) – **ՍԱՐՄԱՐ, MARBLE**, լիաբյուրեղային փոխակերպային (մետամորֆային) կարբոնատային ապար, որն առաջացել է կրաքարի կամ դոլոմիտի վերաբյուրեղացումից: Բուն Մ. կոչվում են այն կարբոնատային ապարները, որոնցում անգեմ աչքով կարելի է նկատել Մ. կազմող կարբոնատի առանձին բյուրեղները: Սովորաբար Մ. պարունակում է այլ միներալների մեծ քանակի խառնուրդ (քվարց, քաղկեդոն, դաշտասպաթ, լիմոնիտ, հեմատիտ, պիրիտ և այլն) և օրգանական միացություններ, որոնք տարբեր կերպ են ազդում նրա որակի վրա: Առավել ամուր ու ողորկելի են հատիկների ատամնավոր կապով մանրաբյուրեղային Մ-ները, հատկապես գնահատվում են սպիտակ համասեռ տարբերակները: Մ-ները աչքի են ընկնում գունավորման և նախշերի բազմազանությամբ: Գույնը կախված է խառնուրդներից: Գունավոր միներալների զգալի մասն ունի խայտաբղետ երանգավորում: Ձարդանկարը որոշվում է ոչ միայն Մ-ի կառուցվածքով, այլև այն ուղղությամբ, որով սղոցվում է քարը: Մ-ի գունավորումը և զարդանկարը բացահայտվում են նրա ողորկումից հետո: Մ. բարձրորակ գեղազարդային քար է:

**M-380. МУЛЛИТ** (Շոտլանդիայի Մալ, Mull կղզու անունով) – **ՍՈՒԼԻՏ, MULLITE**, միներալ սիլիկատների դասի կիանիտ-սիլիմանիտի խմբից, 3Al<sub>2</sub>O<sub>3</sub>·SiO<sub>2</sub>: Բյուրեղագիտական համակարգը շեղանկյունային է: Հանդիպում է մանր հատվածակողմերի ձևով: Մաքուր Մ. անգույն է: Երկաթի և տիտանի օքսիդների ոչ մեծ խառնուրդից ներկվում է վարդագույն կամ կապտավուն երանգով: Կարծրությունը՝ 6, Մ. Al<sub>2</sub>O<sub>3</sub>-ի միակ միացությունն է SiO<sub>2</sub>-ի հետ, որ կայուն է բարձր ջերմաստիճաններում: Բնության մեջ սակավ է պատահում: Հայտնաբերված է Մալ կղզու չորրորդական հասա-

կի լավայի եղջերացած կավային ներփակումներում: Մ. առաջանում է՝ կաոլինիտը մինչև 950°C տաքացնելու դեպքում: Մտնում է ճենապակու, հրակայուն կավահողի՝ շամոտի կազմի մեջ: Հալած մուլիտային հրակայուն նյութ ստացվում է էլեկտրական վառարաններում՝ բոքսիտի, կավահողի, կաոլինի, կոքսի խառնուրդից:

**M-381. МУЛЬДА** (գերմ. Mulde-ից, բառ. տաշտ, լազան) – **ՏԱՇՏԱՓՈՍ (ԳՈԳՎԱԾՔ), TROUGH, BASIN**, երկրակեղևի շերտերի իզոմետրական կամ ձևաձրային մեղմաթեք զոգավոր տեկտ. կառուցվածք: Առաջանում է հանգիստ տեկտ. ռեժիմի պայմաններում:

**M-382. МУСКОВИТ** (անգլ. Muscovite, Muscovy – Մոսկովիա, Ռուսաստանի հնամենի անվանումը, որտեղից այդ միներալի խոշոր քերթերը «Մոսկովյան ապակի» անվանմամբ արտահանվում էին արևմուտք) – **ՄՈՒՍԿՈՎԻՏ, MUSCOVITE**, միներալ փայլարների խմբից, կազմը  $KAl_2[Al, Si_3O_{10}](OH)_2$ : Բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է: Առաջացնում է թիթեղաձև բյուրեղներ, թեփուկավոր, թերթավոր-հատիկային ագրեգատներ: Հերձումը հիմքով՝ լրիվ կատարյալ: Սովորաբար անգույն է, հազվադեպ՝ տարբեր երանգներով (գորշ, կանաչավուն): Փայլը՝ ապակու, հերձման հարթություններում՝ սադափի և արծաթի: Կարծրությունը՝ 2.5-3: Հողմահարման դեպքում փոխարկվում է հիդրոմոսկովիտի, իլլիտի, այնուհետև՝ մոնտմորիլոնիտի և, վերջապես, կաոլինիտի: Լայնորեն տարածված է փոխակերպային ապարներում, գրանիտներում, պեգմատիտներում: Գործնական նշանակություն ունեն գրանիտային պեգմատիտներում հանդիպող կուտակումները:

**M-383. МУСТЬЕ, КУЛЬТУРА МУСТЬЕРСКАЯ** (Լե Մուստիե, Le Moustier, քարանձավի անունով, Ֆրանս., դեպարտամենտ Դոդոն) – **ՄՈՒՄՏԻԵ, ՄՈՒՄՏԻԵՐՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ, MOUSTERIAN**, Մուստիերյան դարաշրջան, հին քարի դարի վերջին շրջանը: Հաջորդել է աշելյան մշակույթին: Տարածված է Եվրոպայում, Հս. Աֆրիկայում, Մերձավոր և Միջին Ասիայում: Երկրաբանորեն համընկնում է վերին պլեյստոցենին, ռիս-վյուրմյան միջսառցադաշտային շրջանի վերջին և Եվրոպայի վերջին սառցապատմանը (վյուրմյան շրջանի 1-ին կեսին): Մ. մ-ի ուշ շրջանի հուշարձանները Եվրոպայում թվագրվում են ք. ա. 53-33-րդ հազարամյակներով, սկզբնական շրջանինը՝ ք. ա. 100-80-րդ հազարամյակներով: Մ. մ-ի հետքեր հայտնի են ՀՀ մի շարք կայաններից, որոնցից ամենավաղ շրջանին պատկանում են Արտեմի (Արտին) լեռան (Սատանի դար, Արեգունի և Հարավային բլուրներ), Հրազդանի միջին հոսանքի (Արզնի, Նուռնուս, Ջրաբեր, Ֆանտան), Արթիկի (Պենգաշեն) կացարանները:

**M-384. МУТНОСТЬ ВОДЫ** – **ՋՐԻ ՊՂՏՈՐՈՒԹՅՈՒՆ, SILT LOAD, TURBIDITY**, ջրում կախված տարբեր ծագման մասնիկների (բերվածքների) պարունակությունը բնութագրող մեծություն՝ հեղուկի միավոր ծավալում:

**M-385. МУТЬЕВЫЕ ПОТОКИ, ТУРБИДНЫЕ ТЕЧЕНИЯ** – **ՊՂՏՈՐ ՀՈՍՔԵՐ, TURBIDITY CURRENT, SUSPENSION CURRENT**, օվկիանոսներում ու ծովերում մերձհատակային ծանրահակ հոսանքներ, որոնք հագեցված են կախույթով և բնորոշվում են բարձրացված խտությամբ: Առաջանում են ծովային հատակի լանջում երկրաշարժի հետևանքով կամ այլ պատճառներով, երբ խախտվում է հատակային փոխար նստվածքի խոշոր զանգվածի հավասարակշռությունը, և առաջանում են ստորջրյա սողանքներ: Սողացող նյութը լանջով դեպի ներքև շարժվում է մեծ արագությամբ (մինչև 70-90 կմ/ժ) հարյուրավոր կիլոմետրեր: Այդ ընթացքում Պ. հ կարող են ողողաքայքայել ծովի հատակը (առաջացնելով ստորջրյա կանյոններ):

**M-386. МШАНКИ** (Bryozoa) – **ՄԱՍՈՎԿԵՐՊԵՐ, BRYOZOANS**, ջրային գաղութային անողնաշարավոր կենդանիների տիպ: Վարում են հատակին անրակայված կյանք, բնակվում են ծովերում և քաղցրահամ ջրերում:

**M-387. МЫШЬЯК, AS** (լատ. Arsenium, հուն. ársēn, árrēn – ուժեղ, առնական) – **ԱՐՍԵՆ (ՉԱՌԻԿ, ՄՎՆՂԵՂ), ARSENIC**, տարրերի պարբերական համակարգի IV պարբերության V խմբի քիմ. տարր: Պարունակությունը երկրակեղևում 0.0005 զանգվածային % է: Հայտնի են Ա-ի 120 միներալներ, որոնցից տարածված են արսենապիրիտը, շելինգիտը, աուրիպիգմենտը և ռեալգարը: Սովորական պայմաններում առավել կայուն է մետաղական կամ մոխրագույն Ա. (a ձև), որը փխրուն, թարմ կոտրվածքում մետաղական փայլով բյուրեղային նյութ է: Հիմնականում օգտագործվում է համաձուլվածքներ ստանալու համար, ինչպես նաև ժողովուրդային մի շարք այլ բնագավառներում:

**M-388. МЫШЬЯКОВЫЕ РУДЫ – ԱՐՍԵՆԻ (ՄՎՆՂԵՂԻ) ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, ARSENIC ORES**, բնական միներալային գոյացություններ, որոնք պարունակում են արսենայնապիսի քանակներով, որոնցից այդ տարրի ու նրա միացությունների կորզումը տնտեսապես նպատակահարմար է: Հայտնի են արսեն պարունակող 120 միներալ: Ա. հ-ի ամենատարածված միներալներն են՝ արսենապիրիտը, FeAsS (46.0 % As), լյուինգիտը FeAs<sub>2</sub> (72.8 % As), ռեալգարը AsS (70.1 % As), աուրիպիգմենտը, As<sub>2</sub>S<sub>3</sub> (61.0 % As): Ա. հ-ի հնքվ-երի մեծ մասը ներծին են, պատկանում են ջրաջերմային խմբի պլուտոնածին և հրաբխածին դասերին:

**M-389. МЭОТИЧЕСКИЙ ЯРУС** (հուն. Maiōtis, լատ. Maeōtis, Meotis – Ազովի ծովի հին անվանումից) – **ՄԷՈՏԻՍԻ ՀԱՐԿ, MEOTIAN**, Սևծովակասպիական ավազանի միոցենի ներքևից իններորդ հարկ:

# Н

## **Н-1. НАБОР ИММЕРСИОННЫЙ – ԻՄԵՐՍԻՈՆ (ՍՈՒՉՍԱՆ) ՀԱՎԱՔԱԾՈՒ, IMMERSION**

**SET**, հեղուկների հավաքածու, բաղկացած է 30-50-100 շիկներից՝ 1-2 մլ տարողությամբ, հեղուկների 1.4-ից մինչև 1.8 բեկման ցուցիչներով: Առավելապես օգտագործվում է 98-100 հեղուկներից կազմված հավաքածու, տե՛ս **Иммерсионный метод**:

**Н-2. НАБУХАНИЕ ПОРОДЫ – ԱՊԱՐԻ ՈՒՂՉՈՒՄ, SWELLING OF ROCK**, ջրի հետ փոխազդեցության ժամանակ կավային ապարների ծավալը մեծացնելու ունակություն, որը բացատրվում է սվյալ վիճակում ապարների ջրակալման հակումով, մասնավորապես ջրի օսմոտիկ ներծծմամբ: Օսմոտիկ ճնշումը պայմանավորվում է ապարի կազմությամբ և կառուցվածքով, փոխանակային կատիոնների և ապարի վրա ներգործող ջրի բաղադրությամբ: Ուռչման ամենամեծ ունակություն ունեն մոնոտորիլոնիտային կավերը, ամենաթույլը՝ կաոլինիտային:

**Н-3. НАГОРНАЯ РАВНИНА – ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱՎԱՅԻՆ ՀԱՐԹԱՎԱՅՐ, MOUNTAIN PLAIN**, բարձր տեղադիրք ունեցող հարթավայր, սարավանդի համեմատությամբ ավելի քիչ է մասնատված:

**Н-4. НАГОРЬЕ – ԼԵՆԱՇԽԱՐՀ, HIGH PLATEAU, HIGHLAND**, Երկրի լեռնագոյացման զոնայում տեղադրված, շրջապատի նկատմամբ բարձրադիր, միասնական ընդարձակ տարածք՝ լեռնային ռելիեֆի համալիրների ու ձևերի բազմազանությամբ: Բաղկացած է լեռնահամակարգերի, բարձրավանդակների, սարահարթերի, միջլեռնային գոգավորությունների զուգակցությունից: Լ-ին բնորոշ է ռելիեֆի դրական ու բացասական ձևերի բարձրությունների մեծ տարբերությունը (մինչև մի քանի հազ. մ): Ծագումը պայմանավորված է բացառապես լեռնակազմությամբ: Խոշոր Լ-ներից են՝ Հայկականը, Տիբեթը, Պամիրը և այլն:

**Н-5. НАДВИГ – ՎՐԱՇԱՐԺ, OVERTHRUST, OVERLAP, OVERFAULT, THRUST-FAULT**, ապարների տեղադրման խզվածքային խախտում, սովորաբար տեղաշարժի հարթության մեղմ (45-60°) թեքությամբ, այդ հարթությունով վերնակողը համեմատաբար բարձրացված և վրաշարժված է պառկած կողի վրա: Վ-երը առաջանում են տեկտ. շարժումների ընթացքում, սովորաբար ուղեկցում են գծային ծալքերին, զարգանում են ուժգին հորիզոնական սեղմման, ապարների պլաստիկ վերաբաշխման և դրանք թևերից դեպի ծալքի փականը ներմղվելու պայմաններում: Պլաստիկ ձևախախտումները տեկտ. գործընթացների որոշակի փուլում անցնում են խզվածքայինների և սահքապոկման՝ ծալքի սեղմված ու բարակացած թևերի երկայնքով: Այդ կապակցությամբ կամարածալքերի միջուկի ավելի հին ապարները վրաշարժվում են գոգածալքերի միջուկի ավելի երիտասարդ շերտերի վրա: Վ-ի մակերևույթը, ըստ խորության, դառնում է տափակավուն, դեպի վեր, ընդհակառակը, դառնում է ավելի թեք, որը բացատրվում է այդ ուղղությամբ շերտերի պլաստիկության նվազմամբ: Մեղմաթեք, բաց մակածածկի մեծ լայնույ-

թով (տասնյակ-հարյուրավոր կմ) Վ-երը անվանում են տեկտոնական ծածկույթներ կամ մակաշարժեր (շարիաժներ):

**H-6. НАДВИГ ПЛАСТОВЫЙ – ՇԵՐՏԱՅԻՆ ՎՐԱՇԱՐԺ, BEDDING THRUST**, վրաշարժ, որը ներքնադիր ապարների շերտերի շերտավորման հարթությունների հետ կազմում է ոչ մեծ անկյուն, առաջանում ու զարգանում է բարձրացված պլաստիկություն ունեցող ապարներում՝ համարյա զուգահեռ դրանց շերտավորությանը: Հոմ.՝ ներդաշնակ վրաշարժ:

**H-7. НАДВИГ ПОСЛЕЭРОЗИОННЫЙ – ՅԵՏՈՂՈՂԱՍԱՇՄԱՆ (ՅԵՏԵՐՈԶԻՈՆ) ՎՐԱՇԱՐԺ, POSTEROSIONAL THRUST**, վրաշարժ, որը դուրս է գալիս Երկրի մակերևույթ և զարգանում է մասնատված ռելիեֆի պայմաններում: Այդպիսի վրաշարժերի մակերևույթը դեպի վեր դառնում է խիստ տափակավուն:

**H-8. НАДВИГ РЕГИОНАЛЬНЫЙ – ՌԵԳԻՈՆԱԼ ՎՐԱՇԱՐԺ, REGIONAL THRUST, REGIONAL OVERFAULT**, զարգացած է խոշոր կառուցվածքային տարրերի սահմաններում (անտիկլինորիումներ, սինկլինորիումներ և այլն), հետամտվում է տասնյակ, մույնիսկ հարյուրավոր կմ-եր:

**H-9. НАДВИГ СЕКУЩИЙ – ՀԱՏՈՂ ՎՐԱՇԱՐԺ, TRANSVERSE THRUST**, վրաշարժ, որի մակերևույթը տեղաբաշխված է ապարների տարածմանը ոչ զուգահեռ կամ ծալքեր կազմող ապարների թեքության հետ առաջացնում է զգալի անկյուն:

**H-10. НАДВИГ СОГЛАСНЫЙ – ՆԵՐՂԱՇՆԱԿ ՎՐԱՇԱՐԺ**, նույնն է՝ Надвиг пластовой:

**H-11. НАДПОЙМЕННАЯ ТЕРРАСА – ՄԱԿԱՈՂՈՂԱՅՈՒՆԱՅԻՆ ԴԱՐԱՎԱՆԴ, FLUVIAL TERRACE ABOVE FLOOD-PLAIN**, դարավանդ, որը գրավում է ողողահունից բարձր դիրք:

**H-12. НАЖДАК – ԶՍՈՆԻՏ (ՀՂԿԱՔԱՐ, ՆԱԺԴԱԿ), EMERY**, տե՛ս Корунд:

**H-13. НАЗЕМНАЯ ДЕЛЬТА, СУХОПУТНАЯ (СУБАЭРАЛЬНАЯ) ДЕЛЬТА – ՎԵՐԳԵՏՆՅԱ ԴԵԼՏԱ, ՑԱՍԱՔԱՅԻՆ ԴԵԼՏԱ, SUBAERIAL DELTA, DRY DELTA**, առաջանում է չոր կլիմայի մարզերում, երբ գետը իր ջրերը չի հասցնում ծով կամ լիճ, չորանում և նստվածքները կուտակում է ցամաքում:

**H-14. НАЗЕМНОЕ ИЗВЕРЖЕНИЕ – ՎԵՐԳԵՏՆՅԱ ԺԱՅԹՔՈՒՄ, SUBAERIAL ERUPTION**, տեղի է ունենում վերգետնյա, ցամաքային պայմաններում: Վ. Ժ. հակադրվում է ստորջրյա ժայթքմանը, տե՛ս Вулканизм субаэральний:

**H-15. НАКЛОН СЛОЕВ (ОСАДКОВ) ПЕРВИЧНЫЙ – ՇԵՐՏԵՐԻ (ՆՍՍՎԱԾՔՆԵՐԻ) ԱՈԱՋՆԱՅԻՆ ԹԵՔՈՒԹՅՈՒՆ, PRIMARY INCLINATION OF STRATUM (SEDIMENTS)**, թեքություն, որը գոյություն է ունեցել նստվածքակուտակման ընթացքում՝ ռելիեֆի անհարթությունների վրա նյութի նստեցման հետևանքով: Առաջանում է և՛ ցամաքային, և՛ ծովային պայմաններում: Թեքման անկյունը երբեմն հասնում է 30-40°-ի: Հին նստվածքներում շերտերի առաջնային թեքության առկայությունը վկայում է դրանց կուտակման վայրում ստորջրյա կամ վերջրյա ռելիեֆի բավական զառիթափ լանջերի գոյության մասին:

**H-16. НАКЛОННАЯ РАВНИНА, КОСАЯ РАВНИНА – ԹԵՔ (ՇԵՂ) ՀԱՐԹԱՎԱՅՐ, INCLINED PLAIN, OBLIQUE PLAIN**, հարթավայր, որը մեղմաթեք անկյուն է մեկ ուղղությանը (հեղեղաբերուկ կոներ, բարձրացող ցամաքի ափային հարթավայրեր և այլն):

**H-17. НАКЛОННАЯ СКЛАДКА, КОСАЯ СКЛАДКА – ԹԵՔ ԾԱԼՔ, ՇԵՂ ԾԱԼՔ, INCLINED FOLD**, ապարների շերտերի ծալք՝ թեք առանցքային հարթությամբ, թևերն անկյուն են հակադիր կողմեր՝ տարբեր անկյան տակ:

- H-18. НАКЛОННЫЙ СБРОС – ԹԵՔ ՎԱՐՆԵՏՔ, INCLINED FAULT, TILTED FAULT,** վարնետք, որի տեղաշարժիչը թեք է հորիզոնական հարթության նկատմամբ:
- H-19. НАЛОЖЕННАЯ ВПАДИНА – ՎԵՐԱԴԻՐ ԻՋՎԱԾՔ, SUPERIMPOSED DEPRESSION,** տարբեր չափի ու ձևի տեկտ. իջույթ, որն առաջացել է ողողամաշված տեկտ. կառուցվածքների վրա՝ դրանց ծալքավորությունից զգալի չափով ավելի ուշ: Վ. ի. լցնող նստվածքները նրա հիմքի կառուցվածքների վրա տեղադրված են մեծ աններդաշնակությամբ:
- H-20. НАЛОЖЕННАЯ ТЕРРАСА – ՎԵՐԱԴԻՐ ԴԱՐՎԱՆԴ, SUPERIMPOSED TERRACE,** դարավանդ, որի գետաբերուկները վերադրված են ավելի հին (թաղված) դարավանդի գետաբերուկների վրա:
- H-21. МАМАГНИЧЕННОСТЬ – ՍԱԳՆԻՍԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, MAGNETIZATION,** նյութի, ապարի, միներալի հատկություն, որոշվում է միավոր ծավալի մագնիսական մոմենտով, որը առաջանում է արտաքին մագնիսական դաշտի ազդեցության տակ և ընդհանրապես բնութագրում է նրանց մագնիսական դաշտ ստեղծելու ունակությունը: Ապարի Մ. հիմնականում կախված է ֆեռոմագնիսական միներալների պարունակությունից (տիտանամագնետիտ, հեմատիտ, պիրրոտին և այլն), որոնցում Մ-յան մեծությունը և ուղղվածությունը որոշվում են ժամանակակից գործող մագնիսական դաշտով (հնդուկտված Մ.) և Մ-յանը նախորդող պատմությամբ (մնացորդային Մ.):
- H-22. НАМЮРСКИЙ ЯРУС, НАМЮР (Նամյուր, Namur, ք-ի անունով, Բելգ.) – ՆԱՄՅՅՈՒՐԻ ԶԱՐԿ, ՆԱՄՅՅՈՒՐ, NAMURIAN,** ԽՍՀՄ-ում ընդունված շերտագրական սխեմայում քարածխային համակարգի ստորին բաժնի վերին հարկ կամ Արմ. Եվրոպայում ընդունված սխեմայում՝ վերին բաժնի ստորին հարկ:
- H-23. НАНОПЛАНКТОН (հուն. nános – գաճաճ և plankós – թափառող) – ՆԱՆՈՊԼԱՆԿՏՈՆ, NANOPLANKTON,** գաճաճ պլանկտոն, տե՛ս նաև Планктон:
- H-24. НАНОРЕЛЬЕФ, КАРЛИКОВИЙ РЕЛЬЕФ (հուն. nános – գաճաճ և ռելիեֆ) – ՆԱՆՈՐԵԼԻԵՖ (ԳԱՃԱՃ ՌԵԼԻԵՖ), NANORELIEF,** ռելիեֆի մանր ձևեր (բարձրությունը մինչև մի քանի տասնյակ սմ), որոնք առաջացել են սուֆոզիոն-կարստային, ջերմակարստային, սառցուղային, ողողամաշված, հողմային և հողառաջացման գործընթացների, ինչպես նաև կենդանիների ու մարդկանց կենսագործունեության հետևանքով:
- H-25. НАНОСЫ – ՋՐԱԲԵՐՈՒԿՆԵՐ (ՈՂՈՂԱՎՈՒՏԱԿՆԵՐ), DRIFT, LOAD, SEDIMENTS.** 1) երկրի մակերևույթի չորրորդական փուխր ապարների ընդհանուր անվանում՝ անկախ նրանց առաջացման պայմաններից (ավազ, կոպիճ, ճալաքար, ավազակավ, կավ և այլն), 2) գետերով, հոսանքներով, ափաքերման հետևանքով ջրամբար, լիճ, ծով բերվող պինդ մասնիկներ, 3) մերձափնյա ծովային Ջ. առաջանում են ափային զոնայում, մյուս ծովային նստվածքների համեմատությամբ բնորոշվում են բարձր աստիճանի շարժունակությամբ:
- H-26. НАПЛАСТОВАНИЕ, НАСЛОЕНИЕ, СТРАТИФИКАЦИЯ – ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄ (ՇԵՐՏԱԴԱՍՎՈՐՈՒԹՅՈՒՆ), BEDDING, STRATIFICATION.** 1) նույնն է, ինչ շերտավորությունը (տե՛ս Слоистость), 2) երկրակեղևում նստվածքային ապարների տեղադրում՝ շերտերի տեսքով: Շերտերը բաժանված են Շ-ման մակերևույթներով. դրանք կրում են մի շարք նշաններ, որոնք օգնում են վերականգնելու նստվածքի առաջացման պայմանները (ծփանքի նշաններ, չորացման ճեղքեր, սառցույթի ճեղքեր, անձրևի կաթիլների դրոշմահետքեր, հոսանքի ակոսների հետքեր, սողանքային նստվածքների հետքեր, օրգանիզմների կենսագործունեության հետքեր):

**H-27. НАПЛАСТОВАНИЕ СОГЛАСНОЕ**, տե՛ս Согласное залегание:

**H-28. НАПОРНЫЙ ГРАДИЕНТ (ГИДРАВЛИЧЕСКИЙ ГРАДИЕНТ) – ՃՆՇՄԱՆ ԳՐԱԴԻԵՆՏ (ՀԻԴՐԱՎԼԻԿ ԳՐԱԴԻԵՆՏ), PRESSURE (HYDRAULIC) GRADIENT**, ստր. ջրերի ճնշման մեծությունը (չափը) ծծանցման միավոր ճանապարհի վրա: Հոմ` հոսքի գրադիենտ:

**H-29. НАПОРНЫЙ (АРТЕЗИАНСКИЙ) ИСТОЧНИК – ՃՆՇՈՒՄԱՅԻՆ (ԱՐՏԵՉՅԱՆ) ԱՂԲՅՈՒՐ, ARTESIAN SPRING**, ճնշումային (արտեզյան) ջրերի բնական ելք` ակն-հայտ վերընթաց շարժումով:

**H-30. НАПРАВЛЕНИЕ ПАДЕНИЯ – ԱՆԿՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ, DIRECTION OF DIP**, շերտի (խզվածքի հարթության, երակի և այլն) անկման գծի թեքության կողմնորոշումը` Երկրի կողմերի նկատմամբ:

**H-31. НАПРАВЛЕНИЕ ПРОСТИРАНИЯ – ՏԱՐԱԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ, DIRECTION OF STRIKE**, շերտի (խզվածքի հարթության, երակի և այլն) տարածման գծի կողմնորոշումը Երկրի կողմերի նկատմամբ:

**H-32. НАПРЯЖЕНИЕ ГИДРОДИНАМИЧЕСКОЕ – ՋՐԱԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, HYDRODYNAMIC STRESS**, լարվածություն, որն առաջանում է ջրով հագեցած ապարում` արտաքին ճնշման փոփոխության կամ հոսքի ճանապարհին` ապարի ջրաթափանցելիության փոփոխության հետևանքով:

**H-33. НАПРЯЖЕНИЕ ДОПУСКАЕМОЕ – ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԼԱՐՈՒՄ, PERMISSIBLE STRESS**, փորձի տվյալներով սահմանվող նորմատիվ մեծություն, որը հավասար է տվյալ գրունտի սահմանային (քայքայիչ) լարվածության և նրա համար ընդունված ամրության պաշարի հարաբերությանը: Տարբերում են ձգման, սեղմման, խզման, ճզմման և այլ թ. լ.:

**H-34. НАРУШЕНИЕ ДИЗЬЮНКТИВНОЕ**, տե՛ս Разрыв, Разрывное нарушение:

**H-35. НАРУШЕНИЯ СКЛАДЧАТЫЕ**, տե՛ս Пликативные дислокации:

**H-36. НАРУШЕННЫЕ СЛОИ, ДИСЛОЦИРОВАННЫЕ СЛОИ – ԽԱԽՏՎԱԾ ՇԵՐՏԵՐ, ԴԻՍԼՈՎԱՑՎԱԾ ՇԵՐՏԵՐ, DISTORTED BEDS, DISLOCATED BEDS**, տարբեր երկրբ. գործընթացների հետևանքով ճնլված, կորացած, կտրտված կամ տեղաշարժված շերտեր:

**H-37. НАСЕКОМЫЕ (Insecta) – ՄԻՋԱՏՆԵՐ, INSECTS**, հատվածոտանի կենդանիների լայն տարածված դաս: Մոտ 1 մլն. տեսակ (ամենախոշոր դասն է): Հատկապես մեծ դեր են խաղում ցամաքային բիոցենոզների մեջ:

**H-38. НАСЫЩЕНИЕ ПОРОДЫ ВОДОЙ – ԱՊԱՐԻ ՋՐԱՀԱԳԵՅՈՒՄ, WATER SATURATION OF ROCK**, ապարում եղած բոլոր ծակոտիների, ճեղքերի և այլ դատարկությունների լրիվ ջրահագեցում:

**H-39. НАСЫЩЕННЫЙ РАСТВОР – ՀԱԳԵՅԱԾ ԼՈՒԾՈՒՅԹ, SATURATED SOLUTION**, լուծվող նյութերի (աղերի) ավելցուկի հետ հավասարակշռության մեջ գտնվող լուծույթ: Ջերմության բարձրացմանը զուգընթաց` Հ. լ-ում աղերի պարունակությունը ավելանում է, իսկ լուծված զազերինը` պակասում:

**H-40. НАТЁКИ, НЕТЁЧНО–КАПЕЛЬНЫЕ ОБРАЗОВАНИЯ – ՀՈՍԱՆՍՏՎԱԾՔՆԵՐ, ՀՈՍԱՎՈՒՏԱՎՆԵՐ, ՄԱՎԱՀՈՍՈՒԿՆԵՐ, DRIPSTONE DEPOSITS, SINTERS**, մակահոսքային միներալային գոյացություններ, որոնք առաջանում են բաց մակերևույթով հոսող լուծույթների որոշ բաղադրատարրերի անջատման (նստեցման) հետևանքով: Քարանձավներում և ստր. լեռնային փորվածքներում Հ. ներկայացված են պտկաքարերի ու շթաքարերի ձևով և առաջանում են ներթափանցող ջրերից կրաքարի նստեցման հաշվին: Հանդիպում են նաև այլ ձևի Հ. (բողբոջածև,





- H-46. HEANDERTALЬЦЫ** (Homo neanderthalensis) (Պյուսեյդորֆի մոտ գտնվող Նեանդերթալ, Neandertal, հովտի անունով, ՉՖՅ) – **ՆԵԱՆԴԵՐԹԱԼՑԻՆԵՐ, ՆԵԱՆԴԵՐԹԱԼՅԱՆ ՍԱՐԴ, NEANDERTHAL MEN**, հնագույն պեղածո մարդ, հնամարդ: Ապրել է 350-35 հազ. տ. առաջ (հին քարի դարի վերջ, միջին քարի դար) Եվրոպայում, Ասիայում և Աֆրիկայում: Անվանումը ստացել է Նեանդերթալ հովտից (ՉՖՅ), որտեղ 1856-ին հայտնաբերվել է առաջին պեղածո մարդկանցից մեկը: Արմ. Եվրոպայի Ն. մ-ում բնորոշ է ոչ բարձր հասակը (160 սմ), խոշոր ուղեղը (մինչև 1700 սմ<sup>3</sup>), առանց կրկնակզակի ելուստի ներքին ծնոտը: Ն. մ-ու մնացորդներն ուղեկցվում են ուշաշելյան և մուստիերյան իրերով:
- H-47. НЕВАДИЙСКАЯ СКЛАДЧАТОСТЬ, НЕВАДСКАЯ СКЛАДЧАТОСТЬ** (Նևադա նահանգի անունով, ԱՄՆ) – **ՆԵՎԱԴՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, NEVADIAN FOLDING, NEVADIAN OROGENY**, մեզոզոյան ծալքավորության դարակարգերից մեկը, արտահայտվել է Արմ. Կորդիլերներում (ՅՍ. Ամերիկա):
- H-48. НЕДРА – ԸՆԴԵՐՔ, INTERIOR PART OF THE EARTH, BOWELS**, բնական միջավայր Երկրի մակերևույթի տակ, ինչպես նաև օգտ. հնժ-ների հնքվ-երի ելքերը՝ Երկրի մակերևույթին: Ավելի լայն իմաստով Ը. երկրակեղևի պայմանականորեն առանձնացված վերին մասն է, որը տեղաբաշխված է ցամաքի մակերևույթի և Յանաշխարհային օվկիանոսի հատակի տակ և տարածվում է մինչև այն խորությունները, որոնք մատչելի են երկրբ. ուսումնասիրության և յուրացման՝ ժամանակակից տեխ. միջոցներով:
- H-49. НЕКК** (անգլ. neck, բառ.՝ վիզ, պարանոց) – **ՆԵԿ, NECK, VOLCANIC NECK, PLUG**, լեռկացման հետևանքով մերկացած սյունածև մարմին, որը իրենից ներկայացնում է հրաբխի փողաբերանի լցվածք: Բաղկացած է լավայից կամ տուֆափշրաքարերից, որոնք հաճախ փոփոխվել են փողաբերանով անցնող հրաբխային գազերի ազդեցության հետևանքով: Ն-երի լայնական չափերը տատանվում են մի քանի մ-ից մինչև 1.5 կմ և ավել: Առանձնացնում են բարդ Ն-եր, որոնք բաղկացած են համաժամանակյա տուֆային և լավային նյութից, և տուֆային Ն-եր, որոնք կազմված են կոպտաբեկոր, ցեմենտացած հրաբխածին նյութից՝ ինչ-որ քանակի կողմնակի ապարների խառնուրդով:
- H-50. НЕКТОН** (հուն. nectós – լողացող) – **ՆԵԿՏՈՆ, NECTON**, ազատ լողացող օրգանիզմների համախմբություն, բնակվում են ջրավազանների պեղազիկ մարզի ջրի շերտազանգվածներում:
- H-51. НЕМЕТАЛЛИЧЕСКИЕ ПОЛЕЗНЫЕ ИСКОПАЕМЫЕ – ՈՉ ՄԵՏԱԳԱԿԱՆ ՕԳՏԱՎԱՐ ՀԱՆԱԾՈՒՆԵՐ, NON-METALLIFEROUS MINERALS**, զանազան պինդ. օգտ. հնժ-ների պայմանականորեն առանձնացված լայնածավալ խումբ, որից մետաղներ չեն կորզվում: Ո. մ. օ. հ. ժողտնտեսության մեջ օգտագործվում են անմիջապես որպես ապար, առանձին միներալների կամ ապարից կորզված քիմ. միացությունների ձևով: Հայտնի են Ո. մ. օ. հ-ի ավելի քան 100 տեսակ (ապարներ, առանձին միներալներ): Ի տարբերություն մետաղականների, մեծ մասամբ բաղկացած են ապար կազմող տարրերից՝ Si, Al, Ca, Mg, Na, K, O, P, CL, F և այլն: Ոչ մետաղական հումքի մեջ գլխավոր դեր են խաղում ալյումասիլիկատները, օքսիդները, քլորիդները, ֆտորիդները, ֆոսֆատները, սուլֆատները: Ո. մ. օ. հ-ի միասնական ընդհանուր ընդունված երկրաբանաարդ. դասակարգում գոյություն չունի: Ըստ կիրառման բնագավառների՝ բաժանվում են մի շարք խմբերի՝ լեռնաքիմ. հումք (ապատիտ, ֆոսֆորիտներ, բարիտ, հանքային աղեր, ծծումբ, գիպս և այլն), հրակայուն նյութեր (հրակայուն կավեր, քվարցիտներ, մագնեզիտ, տալկաքար և

այլն), էլեկտրատեխնիկական պիեզոպտիկական, ջերմա- և ձայնամեկուսիչ, հղկող, թթվա- և ալկալիական հումք (փայլարներ, ֆլյուորիտ, պիեզոքվարց, կորունդ, հղկաքար, ամֆիբոլ, ասբեստներ, պեմզա, տալկ, դիատոմիտ և այլն), շինանյութեր (գրանիտներ, բազալտներ, տուֆեր, կավեր, ավազ, խիճ և այլն), թանկարժեք քարեր, զարդաքարեր և տեխ. քարեր (ալմաստ, զմրուխտ, ագատ, քաղկեդոն, սուտակ և այլն): ՀՀ-ում տարածված են Ո. մ. օ. հ-ի (տուֆ, պեմզա, պեռլիտ, դիատոմիտ, բենտոնիտային կավեր, հանքային աղեր) բազմաթիվ հնքվ-եր:

**H-52. “HEMЫE” ГOPHЫE ПOPOДЫ – «ՀԱՄՐ» ԱՊԱՐՆԵՐ, UNFOSSILIFEROUS ROCKS**, հասակը մատնանշող օրգանական մնացորդներից զուրկ ապարներ:

**H-53. НEO...** (հուն. néos – նոր, երիտասարդ) – **ՆԵՈ... , ՆՈՐ... , ՆՈՐԱ... , NEO...**, բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս նոր կամ երիտասարդ լինելը, նոր մեկնաբանում, զարգացման համեմատաբար բարձր աստիճան:

**H-54. НEOАНТРОПЫ** (հուն. néos – նոր և ánthrōpos – մարդ) – **ՆԵՈԱՆՏՐՈՊՆԵՐ, NEOANTHROPS**, մարդու զարգացման բարձր աստիճանի ներկայացուցիչներ:

Դրանց են պատկանում ժամանակակից տեսակի մարդը (Homo sapiens): Հանդես են եկել ուշ քարի դարում (35-45 հազ. տ. առաջ) և բնակվում են Երկրի վրա մինչև այժմ:

**H-55. НEOVУЛКАНИЗМ – ՆՈՐԱՅՐԱԲԻՍԱՅՆՈՒԹՅՈՒՆ, NEOVOLCANICITY, NEOVOLCANISM**, չորրորդական ժամանակաշրջանի հրաբխայնություն:

**H-56. НEOГЕЙ** (հուն. néos – նոր, երիտասարդ և γῆ, γαία – Երկիր) – **ՆԵՈԳԵՅ, NEOGAEA**, Երկրի զարգացման խոշոր տեկտ. ցիկլ՝ 1.5 մլդ. տ. տևողությամբ, միավորում է ուշ պրոտերոզոյը և ֆաներոզոյան էոնը:

**H-57. НEOГЕՈVԱՅԱ ՏԻՏԵՄԱ (ՍԵՐԻՈԴ) НEOГЕՈ** (հուն. néos – նոր և génos – ծնունդ, հասակ) – **ՆԵՈԳԵՆԻ ՀԱՍԱԿԱՐԳ (ԺԱՍԱՆԱԿԱՇՐՋԱՆ), ՆԵՈԳԵՆ, NEOGENE**, կայնոզոյան էրատեմայի երկրորդ համակարգ, համապատասխանում է Երկրի պատմության կայնոզոյան դարաշրջանի երկրորդ ժամանակաշրջանին, շերտագրական սանդղակում հաջորդում է պալեոգենի համակարգին և նախորդում է չորրորդական համակարգին: Ն. հ-ի սկիզբը որոշված է ճառագայթաչափական մեթոդով 24.0 մլն. տ., իսկ վերջը՝ 1.8 մլն. տ. (ըստ 1948 թ. Միջազգային երկրբ. վեհաժողովի որոշման): Ժամանակաշրջանի ընդհանուր տևողությունը 22-23.6 մլն. տ. է: Ն. հ. ստորաբաժանվում է երկու բաժնի՝ միոցեն և պլիոցեն: «Ն. հ.» անվանումը առաջարկել է ավստրիացի երկրաբան Մ. Հյոռնեսը (1853): Ն-ի բաժինները ստորաբաժանվել են ենթաբաժինների և մի շարք հարկերի (տե՛ս աղյուսակը):

Նեոգենի նստվածքները լայնորեն տարածված են չորրորդական նստվածքների ծածկոցի տակ՝ բոլոր մայր ցամաքներում և օվկիանոսների հատակին: Ն. ժ. Երկրի զարգացման երկրատեկտ. առավել ակտիվ փուլերից մեկն է, հատկապես նրա 2-րդ կեսը՝ պլիոցենը: Պլիոցենի վերջում ձևավորվել են ժամանակակից ռելիեֆի ու ջրային ցանցի հիմնական գծերը, ավարտվել է բազմաթիվ լեռնային համակարգերի՝ Ալպերի, Կարպատների, Բալկանների, Ապենինների, Դրիմի, Կովկասի, Հիմալայների, Կորդիլիերների, կղզեաղեղների՝ Ալեուտյան, Կորյակական-չատկյան, ճապոնական և այլնի առաջացումը: Ուժգին բարձրացումը հանգեցրել է բազմաթիվ ներքին իջվածքների և խորջրյա ներքին ու ծայրամասային ավազանների առաջացմանը: Ն. ժ-ի համար բնորոշ է կլիմայի զգալի ցրտեցումը և Ամտարկտիդայի ու Գրենլանդիայի սառցադաշտային ծածկույթների առաջացումը: Ցրտեցման ընդհանուր ֆոնում դիտվում են նաև տաքացման փուլեր: Ն-ի սկիզբը Եվրասիայում ուղեկցվել է ցամաքային ֆաունայի ու ֆլորայի խիստ նորացմամբ: Բուսական և կենդանական աշխարհը սկսում է նմանվել ժամանակակիցներին: Բն-

րոշ են ցամաքային խոշոր կաթնասունները (մաստոդոնտները, դինոթերիումները, հսկա եղջերուները), հանդես են գալիս առաջին մարդանման կապիկները: Բուսական աշխարհում հիմնական դեր են խաղացել ժամանակակից խմբերը:

Համակարգ (ժամանակաշրջան)	Բաժին (Դարակարգ)	Հարկ (դար)		Իզոտոպային հասակը (մլն. տ.)	
		Արևելյան պարատեթիս	Միջերկրածովյան մարզ	Դարակարգի սկիզբ	Տևողություն
Նեոգենի	Պլիոցենի	Ակչագիլի Կիմերյան	Պիաչենցի Չանկլիի	5.5	3.8
	Միոցենի	Պոնտոսի Մետոսի Սարմատի Կոնկի Կարագանի Չոկրակի Թարխանի Կոցախուի Սակարաուլի Կովկասի	Մեսինի Տորտոնի Սարավալի Լանգիի Բուրդիգալի Ակվիտանի	24	18.5

**H-58. HEOKOM** (Շվեյցարիայի Նեշատել ք-ի լատ. Neocomium անվանումից) – **Նեոկոմ, NEOCOMIAN**, շերտագրական ստորաբաժանում, որը միավորում է կավ-ճի համակարգի ստորին բաժնի մի քանի հարկեր: Նախկին ԽՍՀՄ-ում ընդգրկում էր բերիասից մինչև բարենի հարկը ներառյալ, ֆրանսիայում՝ բացառությամբ բարենի հարկի:

**H-59. HEOLIT** (հուն. néos – նոր և lithos – քար) – **Նեոլիթ, ՆՈՐ ՔԱՐԻ ԴԱՐ, NEOLITHIC, NEW STONE AGE**, քարի դարի վերջին դարաշրջան: Հաջորդել է մեզոլիթին: Ն-ի սկիզբը բնութագրվում է քարե ու ոսկրե հղկված գործիքների օգտագործմամբ, խեցեգործության և երկրագործության առաջացմամբ, վերջը՝ վաղ մետաղամշակությամբ (էնեոլիթի սկզբնավորմամբ): Ն-ի մարդիկ, զարգացած հավաքչական, որսորդական և ձկնորսական յուրացնող տնտեսությանը զուգահեռ, սկսել են զբաղվել երկրագործությամբ, կենդանիների ընտելացմամբ ու բուծմամբ: Ն-ի ծագումը տեղի է ունեցել 6-ից 4-րդ դարերում մ. ք.: ՀՀ տարածքում Ն-յան կայաններ ու բնակավայրեր են հայտնաբերված Թալիմի շրջանում (Ջաղաներ, Արեգունի բլուր, Բառոժ) և Արարատյան դաշտում (Մաշտոցի բլուր, Տերտերի ձոր):

**H-60. HEOH, Ne** (լատ. Neonum, հուն. néos-ից – նոր) – **Նեոն, NEON**, պարբերական համակարգի երկրորդ պարբերության VIII խմբի քիմ. տարր: Իներտ գազ է: Երկրի վրա գտնվում է հիմնականում մթնոլորտում, որտեղ նրա ծավալային պարունակությունը  $1.8 \cdot 10^{-3} \%$  է:

**H-61. НЕОТЕКТОНИКА, НОВЕЙШАЯ ТЕКТОНИКА** (հուն. néos – նոր և տեկտոնիկա) – **ՆԵՈՏԵԿՏՈՆԻԿԱ, ՆՈՐԱՉՈՒՅՆ ՏԵԿՏՈՆԻԿԱ, NEOTECTONICS**, տեկտոնիկայի բաժին, ուսումնասիրում է երկրակեղևի տարբեր կառուցվածքները, զարգացման պատմությունը և տեկտ. շարժումները, որոնք պայմանավորել են Երկրի ժամանակակից ռելիեֆի հիմնական գծերը: Չետագոտոլների մեծ մասը այդ շարժումների հասակը համարում է ուշ օլիգոցեն-չորրորդական: Երկրակեղևի զարգացման ժամանակակից փուլում տեղի ունեցող շարժումները առանձնացվում են ժամանակակից տեկտոնական շարժումներ անվանմամբ: Ն., որպես տեկտոնիկայի ինքնուրույն բաժին, առանձնացվել է 1948 թ.՝ Վ. Ա. Օբրուչևի առաջարկությամբ: 1950 թ. Ն. ի. Նիկոլաևը առանձնացրեց տեկտ. շարժումների ուժեղացման նեոգեն-չորրորդական փուլ՝ Երկրի զարգացման նորագույն (նեոտեկտոնական) փուլ անվանմամբ: Ն-ի տեսական հարցերի մշակումը սերտ կերպով կապված է մի շարք գործնական հարցերի լուծման հետ՝ երկրաբաժանկետ կառուցվածքների նախագծում, ջրամատակարարում, նավթի, գազի, ցրոնային հնքվ-երի որոնում, երկրաշարժերի կանխատեսում և այլն:

**H-62. НЕПТУНИЗМ** (լատ. Neptunus – Նեպտուն, հռոմեական դիցաբանությունում ծովերի ու ջրերի աստված) – **ՆԵՊՏՈՒՆԻԶՄ, NEPTUNISM**, 18-րդ դարի վերջի - 19-րդ դարի սկզբի երկրբ. կոնցեպցիա, հիմքում ընկած էր այն պատկերացումը, ըստ որի բոլոր ապարները (այդ թվում հրային) առաջացել են Երկրի մակերևույթը ծածկող Չամաշխարհային օվկիանոսի ջրերից, այդ ապարների ձևավորումը և ձևափոխությունը տեղի են ունեցել ծովային նստվածքակուտակման հետևանքով: Ն-ի հիմնադիրը գերմ. գիտնական Ա. Վեռներն է: 19-րդ դարի քսանական թվականներից, երբ հիմնավորվեց գիտական պատկերացումները հրաբխային ու նստվածքային ապարների մասին, Ն. կորցրեց իր նշանակությունը:

**H-63. НЕРИТОВЫЕ ОТЛОЖЕНИЯ** (հուն. nēritēs – ներիտներ, ծովային փափկամարմինների սեռ) – **ՆԵՐԻՏԱՅԻՆ ՆՍՎԱԾՔՆԵՐ, NERITIC DEPOSITS**, ծովերի առափնյա ծանծաղուտի նստվածքներ, առաջանում են մայրցամաքային ծանծաղուտի սահմաններում՝ մինչև 200 մ խորությունները: Գերակշռում են ճալաքարուտները, խեցաքարերը, ավելի քիչ՝ օլիթային և ֆորամինիֆերային ավազները, տղմային և քիմիածին նստվածքները՝ օրգանական մնացորդներով:

**H-64. НЕРУДНЫЕ ПОЛЕЗНЫЕ ИСКОПАЕМЫЕ**, նույնն է՝ Неметаллические полезные ископаемые:

**H-65. НЕСОГЛАСИЕ, НЕСОГЛАСНОЕ ЗАЛЕГАНИЕ – ԱՆՆԵՐԳԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ, ԱՆՆԵՐԳԱՇՆԱԿ ՏԵՂԱԴՐՈՒՄ, NON-CONFORMITY, UNCONFORMITY, DISCORDANCE, DISCORDANT BEDDING**, ավելի երիտասարդ ապարների տեղադրում՝ տակդիր ապարների ողողաքայքայված մակերևույթի վրա, որը վկայում է նստվածքակուտակման մեջ ընդմիջման մասին: Ավելի հին շերտերը կարող են պահպանել հորիզոնական դիրքը կամ ենթարկված լինել տեղախախտման (դիսլոկացիայի): Ա. տ. սահմանում է տարահասակ, գլխ. շերտավոր ապարների ոչ միայն տարածական, այլև պատմական փոխհարաբերությունը: Տարբերում են Ա. տ-ման տարբեր տեսակներ՝ ռեզիոնալ, տեղային, առաջնային և երկրորդային, շերտագրական, տեկտոնական և այլն (ընդամենը 13 տեսակ):

**H-66. НЕСОГЛАСИЕ ВТОРИЧНОЕ – ԵՐԿՐՈՐԳԱՅԻՆ ԱՆՆԵՐԳԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ, SECONDARY UNCONFORMITY**, փոխհարաբերությունը տարահասակ ստվառաշերտերի կամ նույն ստվառաշերտի տարբեր մասերի միջև, որը գոյացել է նստվածքների կուտակման ավարտից հետո՝ աններդաշնակ ծալքավորության, դիա-

պիրիզմի, նույն թեքության շերտերի՝ այլ թեքություն ունեցողների վրա վրաշարժման և այլնի հետևանքով, հոմ.՝ կեղծ աններդաշնակություն:

**H-67. НЕСОГЛАСИЕ ЛОЖНОЕ – ԿԵՂԾ ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ**, “Несогласие вторичное” տերմինի հոմ.:

**H-68. НЕСОГЛАСИЕ МЕСТНОЕ**, տե՛ս Локальное несогласие:

**H-69. НЕСОГЛАСИЕ ПАРАЛЛЕЛЬНОЕ – ԶՈՒԳԱՅԵՌ ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ, PARALLEL UNCONFORMITY**, բնորոշվում է աներդաշնակության մակերևույթի երկու կողմերում շերտերի մոտավորապես զուգահեռ դիրքով, “Несогласие стратиграфическое” տերմինի հոմ.:

**H-70. НЕСОГЛАСИЕ РЕГИОНАЛЬНОЕ – ՌԵԳԻՈՆԱԿ ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ, REGIONAL UNCONFORMITY**, լայնարձակ տարածքներում երիտասարդ նստվածքների տեղադրումը ծալքավորված կամ թույլ խախտված ավելի հին շերտերի ողողաքայքայման մակերևույթի վրա: Առաջանում է նախկինում համեմատաբար երկար ժամանակ լերկացման զոնայում գտնվող ցանկացած տարածքի խորասուզման և նստվածքներով ծածկվելու դեպքում:

**H-71. НЕСОГЛАСИЕ СКРЫТОЕ – ԹԱՔՆՎԱԾ ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ, NON-EVIDENT UNCONFORMITY**, “Несогласие стратиграфическое” տերմինի հոմ.:

**H-72. НЕСОГЛАСИЕ СТРАТИГРАФИЧЕСКОЕ – ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ, STRATIGRAPHIC UNCONFORMITY**, շերտերի տեղադրման հաջորդականության խախտում, որը պայմանավորված է շերտագրական կտրվածքի ոչ լրիվությամբ, կտրվածքում որոշ շերտերի բացակայությամբ, որն ուղեկցվում է ավելի երիտասարդ շերտերի տեղադրմամբ հին շերտերի ողողամաշված մակերևույթի վրա՝ առանց վերին և ստորին շերտերի միջև անկումների նկատելի տարբերության: Շ. ա. լինում է հստակ արտահայտված (բացահայտ Շ. ա.) և թույլ նկատելի (թաքնված Շ. ա.), հոմ-ներն են՝ զուգահեռ աններդաշնակություն, թաքնված աններդաշնակություն, ողողամաշված աններդաշնակություն:

**H-73. НЕСОГЛАСИЕ СТРУКТУРНОЕ – ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ, STRUCTURAL UNCONFORMITY**, ավելի երիտասարդ շերտերի տեղադրումը հին ծալքավորված շերտերի ողողաքայքայված մակերևույթի վրա: Առաջանում է լերկացման ենթարկված ծալքավոր ստվարաշերտերի խորասուզման և նստվածքներով ծածկվելու դեպքում: Հոմ.՝ տեղախախտման (դիսլոկացիոն) աններդաշնակություն:

**H-74. НЕСОГЛАСИЕ ТЕКТОНИЧЕСКОЕ – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ, TECTONIC UNCONFORMITY**, առաջանում է արդեն կուտակված ստվարաշերտերի ձևախախտման գործընթացում, սովորաբար կառուցվածքի մի մասի՝ մյուսի վրա վրաշարժման (վրաշարժի, վարնետքի, մակաշարժի) հետևանքով: Հոմ.՝ երկրորդային անկյունային աններդաշնակություն, մակածին (էպիգենետիկ) աններդաշնակություն:

**H-75. НЕСОГЛАСИЕ УГЛОВОЕ – ԱՆԿՅՈՒՆԱՅԻՆ ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ, ANGULAR UNCONFORMITY**, ավելի երիտասարդ նստվածքների (շերտավորված) տեղադրումը հին, այլ անկման անկյուն ունեցող նստվածքների վրա:

**H-76. НЕСОГЛАСИЕ ЭРОЗИОННОЕ – ՈՂՈՂԱՍԱՇՄԱՆ (ԷՐՈԶԻՈՆ) ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ, EROSIONAL UNCONFORMITY**, «Շերտագրական աններդաշնակություն» տերմինի հոմ.:

**H-77. НЕСОГЛАСНОЕ ЗАЛЕГАНИЕ**, տե՛ս Несогласие:

**Н-78. НЕФЕЛИН** (հուն. nephélē – ամպ, մեներալը թթուներում տարրալուծվելիս առաջացնում է սիլիկահողի ամպանման դոնդող) – **ՆԵՖԵԼԻՆ, NEPHELINE**, միներալ կարկասային սիլիկատների խմբից, քիմ. կազմը  $KNa_3[AlSiO_4]_4$ : Բյուրեղային համակարգը հեքսագոնային է: Առաջացնում է հոծ հատիկավոր ագրեգատներ, հազվադեպ՝ կարծ հատվածակողմային բյուրեղներ: Կարծրությունը՝ 5-6: Գույնը՝ անգույն, սպիտակ, գորշ, կանաչավուն, մսի կարմիր:  $SiO_2$ -ով չհագեցած ալկալիական ապարների բնորոշ միներալ է: ՀՀ-ում հարուստ կուտակումներ հայտնի են Փամբակի լեռնաշղթայում: Կարող է օգտագործվել որպես այլումինի հումք, սոդա, սիլիկագել ստանալու համար, ինչպես նաև գյուղատնտեսության մեջ՝ որպես պարարտանյութ:

**Н-79. НЕФЕЛИНОВЫЙ СИЕНИТ – ՆԵՖԵԼԻՆԱՅԻՆ ՍԻԵՆԻՏ, NEPHELINE SYENITE**, լիաբյուրեղային ներժայթքային (ինտրուզիվ) ալկալիական ապար, կազմված է ալկալիական դաշտային սպաթից, նեֆելինից, սակավ՝ այլ դաշտասպաթիդներից և քիչ քանակի գունավոր միներալներից (բիոտիտից, ալկալիական պիրոքսենից և ամֆիբոլից): Որպես ակցեսորային միներալներ՝ առկա են ցիրկոնի սիլիկատներ, տիտանի սիլիկատներ, ինչպես նաև ֆտոր, ֆոսֆոր, հազվագյուտ տարրեր պարունակող միներալներ: Կառուցվածքը միջին, երբեմն խոշորահատիկավոր է: Ն. ս-ներն առաջացնում են խոշոր ինքնուրույն ներժայթքային զանգվածներ, մտնում են նաև ալկալիական և ալկալիաուլտրաբազիտային համալիրների կազմի մեջ՝ առաջացնելով առանձին զոնաներ:

**Н-80. НЕФРИТ** (գերմ. Nephrit, հուն. nephros – երիկամ, հնում կարծում էին, որ նեֆրիտը բուժում է երիկամային հիվանդությունները) – **ՆԵՖՐԻՏ, NEPHRITE**, միներալ, ամֆիբոլների խիտ, մանրաթելավոր, գաղտնաբյուրեղային տարբերակ: Լավ հղկվում է: Կարծրությունը՝ 5.5-6.5: Գույնը՝ կանաչ, կաթի սպիտակ: Հին ժամանակներից կիրառվում է որպես կիսաթանկարժեք քար: Բնության մեջ առաջանում է հիմքային ապարների (սերպենտինիտների, պիրոքսենային և ամֆիբոլային բյուրեղային թերթաքարերի) փոխակերպության դեպքում:

**Н-81. НЕФТЕГАЗОВАЯ ЗАЛЕЖЬ – ՆԱՎԹԱԳԱԶԱՅԻՆ (ՔԱՐՅՈՒՂԱԳԱԶԱՅԻՆ) ՀԱՆՔԱՎՈՒՏԱԿ, OIL AND GAS POOL**, նավթային (քարյուղի) հանքակուտակ՝ գազային գլխարկով, աչքի է ընկնում միասնական հանքակուտակում գազի ծավալի նկատմամբ նավթի ծավալի գերազանցությամբ:

**Н-82. НЕФТЕГАЗОМАТЕРИНСКИЕ ПОРОДЫ – ՆԱՎԹԱԳԱԶԱՍԱՅՐԱԿԱՆ (ՔԱՐՅՈՒՂԱԳԱԶԱՍԱՅՐԱԿԱՆ) ԱՊԱՐՆԵՐ, SOURCE ROCKS OF OIL AND GAS**, նստվածքային ապարներ, որոնք ունակ են որոշակի երկրք. պայմաններում անջատելու իրենց մեջ ներփակված ցրված օրգանական նյութերի՝ դիա- և կատագենեզի գործընթացներում ձևափոխված ազատ ածխաջրածնային ֆյուլիդները: Ն. ա. տարբերվում են օրգանական նյութի մեծ կուտակմամբ և ձևավորման երկրք. պայմաններով: Նվազ արգասավոր Ն. ա. կարող են լինել թույլ վերականգնիչ և վերականգնիչ երկրք. ֆացիաների ապարների համարյա բոլոր քարաբանական տիպերը: Արդյունավետությամբ բարձր նավթամայրական ապարներ են վերականգնիչ երկրք. ֆացիաների կավային, կավակարբոնատային և կարբոնատակավային, գազամայրական թույլ վերականգնիչ և վերականգնիչ ֆացիաների կավային, ալերիտակավային և կավաալերիտային ապարները: Ըստ օրգանական նյութի գերակշռության՝ տարբերում են նավթամայրական ապարներ (պարունակում են առավելապես սապրոպելային և հումուսասապրոպելային տիպի օրգանական նյութ) և գազամայրական (սապրոպելահումուսային և հումուսային օրգանական նյութով): Միևնույն պայմաններում սապրոպելային օրգանական նյութերը գոյաց-

նում են 2-3 անգամ ավելի շատ հեղուկ ածխաջրածիններ, քան հումուսայինը: Ն. ա-ի միավոր ծավալից անջատվող նավթագազային ֆլուիդների քանակը որոշվում է նրանցում ներփակված օրգանական նյութի տիպով, քանակով, կազմությամբ, խորությամբ և ձևափոխման ուղղվածությամբ:

**H-83. НЕФТЕГАЗОНАКОПЛЕНИЯ ЗОНА – ՆԱՎԹԱԳԱԶԱՎՈՒՏԱԿԱՄԱՆ (ՔԱՐՅՈՒՂԱԳԱԶԱՎՈՒՏԱԿԱՄԱՆ) ԶՈՆԱ, ZONE OF OIL AND GAS ACCUMULATION**, նավթի (քարյուղի) և գազի գծային կամ տարածականորեն տեղաբաշխված այն հարակից հնքվե-րի համախմբություն, որոնք միավորվում են ըստ կառուցվածքային ձևերի կամ կուտակումներում ածխաջրածինների ֆազային վիճակի ընդհանրությամբ: Առանձնացնում են հետևյալ Ն. գ-ները՝ կամարածալքային կամ թմբանման (նավթի ու գազի հնքվե-ր՝ կապված բրախիկամարածալքերի հետ) զոնա, թաղված խութային զանգվածների զոնա, աղազմբեթային մարզերի զոնա, թաղված ողողամաշման ելուստների և ռեզիդուալ անկյունային աններդաշնակության զոնա, խզվածքային խախտումների ռեզիդուալ զարգացման զոնա, ոսպնյակաձև ավազային հավաքիչների (կոլեկտորների) կամ փակված ծակոտկեն զոնա՝ կարբոնատային ապարներում:

**H-84. НЕФТЕГАЗОНОСНАЯ ОБЛАСТЬ – ՆԱՎԹԱԳԱԶԱՐԵՐ (ՔԱՐՅՈՒՂԱԳԱԶԱՐԵՐ) ՍԱՐՁ, PETROLEUM BEARING REGION**, նավթագազակուտակման (քարյուղագազակուտակման) զոնաների համախմբություն, որը կապված է խոշոր երկրատեկտ. տարրի հետ (կամարի, իջվածքի, խոշոր արգելաթմբի և այլն): Ն. մ. բնութագրվում է երկրբ. զարգացման պատմության, նավթագազագոյացման ու նավթագազակուտակման քարաբանաֆազիալ պայմանների ընդհանրությամբ: Ըստ տեկտ. հատկանիշների՝ առանձնացնում են պլատֆորմային, ծալքավոր գոտիների և անցողիկ Ն. մ-եր: Պլատֆորմային Ն. մ-երը կապված են կամարային բարձրացումների, պլատֆորմի իզոմետրական իջվածքների և ավլակոգենների հետ, ծալքավոր գոտիների Ն. մ-երը՝ միջլեռնային իջվածքների, գրաբեկների, միջադիր զանգվածների հետ, անցողիկ տիպի Ն. մ-երը՝ ծայրամասային (առաջնային) ճկվածքների հետ: Ն. մ. կարող է լինել նավթագազաբեր պրովինցիայի մի մասը կամ, որոշ հետազոտողների կարծիքով, ինքնուրույն տարածք:

**H-85. НЕФТЕГАЗОНОСНАЯ ПРОВИНЦИЯ – ՆԱՎԹԱԳԱԶԱՐԵՐ (ՔԱՐՅՈՒՂԱԳԱԶԱՐԵՐ) ՊՐՈՎԻՆՑԻԱ, PETROLEUM BEARING PROVINCE**, տարածք, որը միավորում է նավթագազաբեր մարզերի համախմբություն, հարում է երկրատեկտ. մեկ խոշոր տարրի կամ տարրերի խմբի (սինեկլիզի, անտեկլիզի, ծայրամասային ճկվածքի և այլն): Ն. պ-ներն ունեն նավթագազաբերության ռեզիդուալ շերտագրական ընդգրկույթ, մոտիկ երկրաթիմ., քարաբանաֆազիալ և ջրաերկրբ. պայմաններ, նավթի ու գազի գոյացման ու կուտակման միանման հնարավորություններ: Դրանք սահմանափակված են ոչ հեռանկարային կամ թույլ հեռանկարային տեղամասերով, խոշոր բեկվածքներով կամ նստվածքային ծածկոցի ապարների հասակի կտրուկ փոփոխման զոնաներով (օր.՝ Արևմտասիբիրական, Վոլգա-Ուրալյան և այլն):

**H-86. НЕФТЕГАЗОНОСНАЯ СВИТА – ՆԱՎԹԱԳԱԶԱՐԵՐ (ՔԱՐՅՈՒՂԱԳԱԶԱՐԵՐ) ՇԵՐՏԱՍՈՒՄԲ, PETROLEUM BEARING FORMATION**, ռեզիդուալ տարածման շերտադարսված ապարների հզոր ստվարաշերտ, որը պարունակում է նավթի և (կամ) գազի շերտեր: Ն. շ-երի հաստությունը կազմում է հարյուրավոր և ավելի մ: Շերտախումբը ընդգրկում է հավաքիչները (կոլեկտորները), ֆլուիդամբժ և հաճախ նավթագազամայրական ապարները: Ըստ քարաբանական կազմի՝ Ն. շ-երը կարող են լինել ցամաքածին, կարբոնատային կամ կազմված լինել ցամաքածին և կարբոնատային ապարների շերտափոխումից, կարող են նաև ներփա-

կել հրաբխածին և այլ ապարներ: Ն. շ. իր անվանումը ստանում է ըստ տեղավայրի, կազմի առանձնահատկությունների, հնէաբանական և այլ հատկանիշների (օր.՝ մայկոպյան ավազակավային):

**Н-87. НЕФТЕГАЗОНОСНЫЙ БАСЕЙН – ՆԱՎԹԱԳԱԶԱԲԵՐ (ՔԱՐՅՈՒՂԱԳԱԶԱԲԵՐ) ԱՎԱԶԱՆ, PETROLEUM BEARING BASIN,** երկրակեղևի ժամանակակից կառուցվածքում արտահայտված և նստվածքային ապարներից կազմված իջվածք, որի ձևավորումը ուղեկցվել է ածխաջրածինների առաջացմամբ, հանքամարմնում դրանց կուտակմամբ և պահպանմամբ: Տարածական հիմնական պարամետրերն են՝ մակերեսը ( $10^4$ - $10^6$  կմ<sup>2</sup>), երկարությունը (10-13<sup>3</sup>կմ), ձևավորող ապարների ծավալը ( $10^3$ - $10^6$  կմ<sup>3</sup>), նավթի (քարյուղի) և գազի պաշարների չափը, հանքակուտակում ածխաջրածինների ֆազային վիճակը, ուղղածիզ զոնայակառուցությունը, նավթի ու գազի ծավալային հարաբերությունը: Ն. ա-ները զբաղեցնում են առավելապես ստորջրյա ծագման նստվածքային ապարների կուտակման մարզերը՝ ավելի քան 1000-1500 մ հաստությամբ: Ըստ դրանցում նավթի ու գազի կուտակումների ձևավորման առանձնահատկությունների՝ տարբերում են պլատֆորմային ու ծալքավոր մարզերի Ն. ա-ներ և Ն. ա-ներ, որոնք տեղաբաշխված են պլատֆորմների ու ծալքավոր մարզերի սահմանակցման մասերում: Պլատֆորմների սահմաններում առանձնացնում են վերսալային, ծայրամասային հանգուցային սինեկլիզների, միայնակ սինեկլիզների, գրաբեցների, պերիկոնտինենտալ իջույթների Ն. ա-ներ, ծալքավոր մարզերում՝ սինկլինորիումների, միջադիր զանգվածքների իջվածքների, գրաբեցների, միջլեռնային իջվածքների Ն. ա-ներ, պլատֆորմների ու ծալքավոր մարզերի սահմանում՝ եզրային ճկվածքների և պլատֆորմի հարակից լանջի Ն. ա-ներ:

**Н-88. НЕФТЕГАЗОНОСНЫЙ ПЛАСТ – ՆԱՎԹԱԳԱԶԱԲԵՐ (ՔԱՐՅՈՒՂԱԳԱԶԱԲԵՐ) ՇԵՐՏ, PETROLEUM BEARING BED,** ծակոտկեն ապարի (հավաքիչի) շերտ կամ զանգված, որը հագեցած է նավթով և լուծված գազով: Շերտը (զանգվածը) կարող է լրիվ (առաստաղից մինչև հատակը) կամ մասամբ հագեցված լինել նավթով՝ ունենալով ջրահագեցած տակդիր: Ըստ քարաբանական կազմի՝ Ն. շ-երը ներկայացված են առավելապես ավազաքարերով և ալևրոլիթներով, տարբեր կառուցվածքի կրաքարերով ու դոլոմիտներով, հազվադեպ (զանգվածներում)՝ կարբոնատային ու ցամաքածին ապարների հերթագայմամբ, ինչպես նաև փոխակերպային և այլ ապարներով: Ն. շ-երի հաստությունը փոխվում է մի քանի մ-ից մինչև մի քանի տասնյակ (հազվադեպ հարյուրավոր) մ, առավել տարածված են 10-20 մ հաստության Ն. շ-երը:

**Н-89. НЕФТЕПРОМЫСЛОВАЯ ГЕОЛОГИЯ – ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱՅԱՆՈՒԹՅԱՆ (ՔԱՐՅՈՒՂԱՐԴՅՈՒՆԱՅԱՆՈՒԹՅԱՆ) ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, PETROLEUM FIELD GEOLOGY,** նավթային (քարյուղային) երկրաբանության բնագավառ, զբաղվում է ածխաջրածինների հայտնաբերված և մշակվող հնքվ-երի մանրամասն ուսումնասիրությամբ՝ դրանցից նավթի ու գազի առավելագույն կորզման նպատակով: Ն. եյան հիմնական հարցերն են՝ նավթի ու գազի հնքվ-երի հետախուզման մեթոդիկան, արդյունավետ նստվածքների նյութական կազմի ու տեսակների ուսումնասիրումը, երկրբ. կտրվածքների մանրամասն մասնատումը և համադրումը, հավաքիչների ֆիզ. հատկությունների որոշումը, շերտային հեղուկների ու գազերի ֆիզքիմ. հատկությունների ուսումնասիրումը, ածխաջրածինների հանքակուտակների էներգետիկ վիճակի, նավթի ու գազի տեղադրման պայմանների հետազոտումը, հանքակուտակների պարամետրերի որոշումը, գազի ու նավթի պաշարների հաշվարկումը, ածխաջրածինների պաշարների դասակարգումը, հետախուզա-



կան և մշակման տվյալների հիման վրա նավթի ու գազի կորզման գործակցի հիմնավորումը, ընդերքի և շրջապատող միջավայրի պահպանությունը, հնքվ-ի արդյունահանման ծառայությունը:

**Н-90. НЕФТЕГАЗОПРОЯВЛЕНИЯ – ՆԱՎԹԱԳԱԶԱՆՇՄԱՐՆԵՐ, ՔԱՐՅՈՒՂԱԳԱԶԱՆՇ-ՄԱՐՆԵՐ (ՆԱՎԹԱԳԱԶԱՆՇՎԱԿՈՒՄՆԵՐ), OIL AND GAS SHOWS**, նավթի ու նրա փոխարկման արգասիքների հետքեր, այրվող գազի ելքեր, որոնք դիտվում են երկրի մակերևույթում կամ հորատանցքերի հորատման ժամանակ: Տարբերում են մակրոնավթագազանշմարներ (տեսողական) և միկրոնավթագազանշմարներ (արձանագրվում են հատուկ սարքերով): Մակերևութային մակրոնավթագազանշմարներին վերագրվում են՝ նավթի շիթերի արտահոսքը (սովորաբար ջրով), աղբյուրների, լճերի, ճահիճների ջրի մակերևույթում նավթի փառերը, նավթով հագեցած կամ մածուցիկ ու պինդ բիտումներով արմատական ապարների ելքերը, ասֆալտի, օգոքերիտի տարբեր տեսակի տեղադրումները, այրվող գազի ելքերը: Հորատանցքերում և արձանագրում են հորատման լուծույթում ածխաջրածնային գազերի առկայությունը, նրա մակերևույթում նավթի թաղանթի հանդես գալը, հանուկի մեջ պինդ բիտումի կամ նավթային ապարների ներկայությունը:

**Н-91. НЕФТЕГЕОЛОГИЧЕСКОЕ РАЙОНИРОВАНИЕ – ՆԱՎԹԱՆԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ (ՔԱՐՅՈՒՂԱՆԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ) ՇՐՋԱՆԱՑՈՒՄ, OIL GEOLOGICAL ZONING**, խոշոր երկրբ. օբյեկտի (օր.՝ երկրի նստվածքային ժածկոցի, երկրբ. ռեզիոնի և այլն) հաջորդաբար բաժանումը համաստորադաս մասերի, որոնք բնորոշվում են նավթագազաներկրբ. բնութագրման ավելի ու ավելի բարձր համասեռությամբ: Ն. շ. կատարվում է տարբեր սկզբունքներով, այդ հարցում կան բավականին տարակարծություններ: Գիտական գրականության մեջ հանդիպում են Ն. շ-ման տարրերի երկու զուգահեռ շարքեր՝ 1) Նավթագազաբեր ավազանների համակարգ՝ նավթագազաբեր ավազան-նավթագազաբեր ռեզիոն-նավթագազակուտակման տարածաշրջան-նավթագազակուտակման զոնա-հանքավայր-հանքակուտակ, 2) նավթագազակուտակման գոտի՝ նավթագազաբեր պրովինցիա-նավթագազաբեր մարզ-նավթագազաբեր շրջան-նավթագազակուտակման զոնա-հանքավայր-հանքակուտակ:

**Н-92. НЕФТЕОТДАЧА – ՆԱՎԹԱՏՎՈՒԹՅՈՒՆ (ՆԱՎԹԱՏԱՑՔ, ՔԱՐՅՈՒՂԱՏԱՑՔ), OIL RECOVERY RATIO**, բնորոշում է հնքվ-ի շահագործման գործընթացում արդյունավետ շերտերից նավթի կորզման աստիճանը: Ն-ի քանակական գնահատման համար օգտագործում են Ն-ի գործակիցը՝ արդյունահանված նավթի քանակի հարաբերությունը սկզբնական պաշարներին (արտահայտվում է միավորի մասերով կամ տոկոսներով):

**Н-93. НЕФТЬ** (թուրք. нефт, պարսկ. նավթ-ից (խոնավ, թաց), հուն. náphtha) – **ՆԱՎԹ (ՔԱՐՅՈՒՂ), OIL, CRUDE OIL, PETROLEUM**, երկրի նստվածքային թաղանթում տարածված այրվող, յուղանման, յուրահատուկ հոտով հեղուկ, կարևորագույն օգտ. հնձ.: Լինում է բաց շագանակագույնից (համարյա անգույն) մինչև գորշ, գրեթե սև գույնի: Առաջանում է գազանման ածխաջրածինների հետ (տե՛ս Газы природные горючие) միասին՝ երկրակեղևի 1.5-2 կմ-ից ավելի խորություն ունեցող հորիզոններում: Երկրի մակերևույթի մոտ Ն. փոխարկվում է թանձր մալթայի (մածուցիկ նավթ), կիսակարծր ասֆալտի և այլնի (տե՛ս Битумы природные): Ն. տարբեր մոլեկուլային զանգված ունեցող գազային, հեղուկ և պինդ սահմանային, ցիկլիկ և բուրավետ ածխաջրածինների խառնուրդ է: Ն-ի բաղադրամասեր են

հանդիսանում նաև նրա մեջ լուծված գազերը, ջուրը և միներալային աղերը: Պարունակում է նաև թթվածնի, ծծմբի, ազոտի միացություններ: Ն-ում համեմատաբար կայուն է քիմ. տարրերի պարունակությունը՝ 82.5 - 87 զանգվածային % C, 11.5-14.5 % H, 0.05-0.35, հազվադեպ՝ մինչև 0.7% O, 0.001-5.5 % S (1 %-ից ավելի S է պարունակում արդյունահանվող Ն-ի միայն 1/3), 0.02-1.8 % N: Մյուս տարրերի գումարային պարունակությունը չի անցնում տասնորդական տոկոսներից: Ն-ի խտությունը 650-1050 կգ/մ<sup>3</sup> է, ըստ որի՝ Ն. բաժանվում է երեք խմբի: Ամենից շատ արտահանվում է թեթև Ն.՝ խտությունը 650-870 կգ/մ<sup>3</sup>, դրանից քիչ՝ միջին Ն.՝ 871-910 կգ/մ<sup>3</sup>, ավելի քիչ ծանր Ն.՝ 910 կգ/մ<sup>3</sup>-ից ավել: Սովորաբար 27°C-ից բարձր տաքացնելիս Ն. սկսում է եռալ: Պնդանում է (պարաֆինի պարունակությունից կախված) +30-ից մինչև -60°C-ում: Ն-ի այրման ջերմությունը 43.7-46.2 Մջ/կգ (10400-11000 կկալ/կգ) է: Մածուցիկությունը կախված է քիմ. և չափամասնային բաղադրությունից: Ն. լուծվում է օրգանական լուծիչներում, ջրում գործնականորեն չի լուծվում: Ելնելով Ն-ի թորվածքային մասում ածխաջրածինների խմբային կազմի տարբերություններից՝ առանձնացվում են մեթանային (թորվածքային մասի կազմում գերակշռում են մեթանային ածխաջրածինները), մեթանանավթենային (Ն-ի կազմում մեթանային և նավթենային ածխաջրածինների քանակը նույն կարգի է, բուրավետ ածխաջրածինների պարունակությունը համեմատաբար ցածրացված է), մեթանանավթենաբուրավետ (բնորոշվում է ասֆալտածյուրային նյութերի հարստացմամբ (10% և ավել), նավթենային (գերակշռող բաղադրամասը նավթենային ածխաջրածիններն են) և նավթենաբուրավետ (թորվածքային մասում գերակշռում են նավթենային և բուրավետ ածխաջրածինները) Ն-եր:

Մ. Լոնոնոսովը 1763-ին առաջինն է ենթադրել, որ Ն. առաջացել է օրգանական նյութերից՝ խորքային ջերմության ներգործության տակ: Դ. Մենդելեևը (1877) առաջարկել է միներալային վարկած, ըստ որի Ն-ի առաջացումը կապված է բեկվածքներով Երկրի խորքը ջրի ներթափանցման և ածխածնային մետաղների (կարբիդների) վրա նրա ներազդեցության հետ, որի արգասիքում առաջանում են ածխաջրածիններ և երկաթի օքսիդներ: Վ. Վերնադսկին և ուրիշներ նոր փաստական տվյալներով հիմնավորել են Դ. Մենդելեևի տեսակետը: Առաջարկվել են նաև նավթի տիեզերական, հրաբխային, միջնապատյանային միներալային ծագման վարկածներ: Նավթային և երկրք. միջազգային վեհաժողովներում (1963-83) նավթի անօրգանական ծագման վարկածները աջակցություն չստացան: Երկրաբան-նավթագործների մեծ մասը Ն-ի օրգանական ծագման կոնցեպցիայի կողմնակիցներ են: Անցյալ դարի սկզբում Ն-ի օպտիկական ակտիվության բացահայտումը և նրա սերտ կապը նստվածքային ապարների սապրոպելային օրգանական նյութի հետ՝ հանգեցրին Ն-ի ծագման սապրոպելային վարկածին (Գ. Պոտոնյե, Ն. Անդրուսով, Ի. Գուբկին, Ն. Ջելինսկի, Ջ. Նյուբերրի, Դ. Ուայտ և ուր.): Քսանական քվանտներից նավթագոյացման և դրա հետ կապված նավթամայրական նստվածքների պրոբլեմի գծով սկսվեցին երկրաբանաերկրք. ուսումնասիրություններ, որոնք հետագայում ավելի լայն թափ ստացան, տարբեր երկրներում հրատարակվեցին բազմաթիվ դասական աշխատանքներ նավթի ծագման և նավթակուտակների ձևավորման վերաբերյալ: Նավթամայրական նյութի կենսածին ծագման մասին համոզիչ փաստարկներ ստացվեցին ածխաջրածինների և ապարների ու նավթակուտակների մեջ հանդիպող սկզբնական օրգանական նյութերի մոլեկուլային կազմի մանրամասն ուսումնասիրման և համադրության արգասիքում: Սկզբնա-

կան նյութ հանդիսանում է պլանկտոնը, որը կազմում է ջրավազաններում կուտակվող սապրոպելային տիպի օրգանական նյութի մեծ մասը: Ն. գոյանում է նաև հումուսային նյութից, որը առաջանում է հիմնականում բուսական մնացորդներից: Հիմնական նավթամայրական ապարներ հանդիսանում են կավերը, հազվադեպ՝ կարբոնատային և ավազաալրիտային ապարները (տե՛ս Нефтегазоматеринские породы), որոնք խորասուզման գործընթացում հասնում են մեզոկատագենեզի զոնան, որտեղ առավել ակտիվ գործում է նավթագոյացման գլխավոր գործոնը՝ օրգանական նյութի երկարատև տաքացումը՝ 50°C-ից բարձր ջերմաստիճանում: Այդ զոնայի վերին սահմանը տեղաբաշխված է 1.3-1.7-ից մինչև 2.7-3 կմ խորություններում, ստորին սահմանը՝ 3.5-5 կմ: Ն. և նրան ուղեկցող գազերը իրենց սկզբնավորման մայր ապարներից տեղափոխվել են ծակոտկեն ապարների մեջ և հետագայում փոքր խտության, ինչպես նաև հիդրավիկ և այլ պատճառների շնորհիվ ձգվել դեպի առավել բարձրադիր կառուցվածքները՝ ինչպես հեղուկ, այնպես էլ գազային վիճակում (տե՛ս Нефтяной газ): Ն. պարունակող ապարները (հավաքիչները) սովորաբար խիստ ծակոտկեն և թափանցելի են, այսինքն՝ թույլ են տալիս Ն-ին և գազին ազատ կերպով տեղաշարժվել և կուտակներ գոյացնել (տե՛ս Нефтегазоносные породы): Ն-ի գլխավոր հավաքիչներ են՝ ավազները, ավազաքարերը, խառնաքարերը, դոլոմիտները, կրաքարերը և այլ թափանցելի ապարները, որոնք ամփոփված են անթափանց ապարների (կավ, գիպս) մեջ: Սովորաբար Ն-ի կուտակները ուղեկցվում են ջրով, որը նրանց սահմանազատում է հատակից: Ն-ի վրա երբեմն կուտակվում է գազ, որը գտնվում է մեծ ճնշման տակ: Երկար ժամանակ երկրաբանները կարծում էին, որ այդ կուտակները հարում են բացառապես կամարածալքերին: Հետագայում պարզվեց, որ ն-ի և գազի կուտակները կապված են նաև վարմետքերի, վրաշարժերի, անկյունային աններդաշնակությունների, շերտերի սեպավորման զոնաների, աղազմբեթների, խութային զանգվածների հետ: Սկզբում նավթագոյացման համար նպաստավոր էին համարվում լեռնային շրջանները և նախալեռները: Հետագայում պարզվեց, որ ն-ի հնքվ-երը տարածված են նաև հարթավայրային՝ պլատֆորմային տարածքներում, անցյալ երկրք. ժամանակաշրջանների միջցամաքային ծովերի նստվածքներում: Ն. գոյություն ունի երկրք. բոլոր դարաշրջանների նստվածքներում: Ն. տեղադրված է տասնյակ մ-երից մինչև 5-6 կմ խորություններում, բայց կուտակների առավելագույն քանակը տեղադրված է 1-3 կմ խորություններում: Ն-ի հնքվ-երը երկրագնդում տեղաբաշխված են անհավասարաչափ: Ամենամեծ պաշարները հայտնի են ՌԴ-ում, ԱՄՆ-ում, Վենեսուելայում, Միջին ու Մերձավոր Արևելքում, Արաբական թերակղզում:

**Н-94. НЕФТЯНАЯ ГЕОЛОГИЯ – ՆԱՎԹԱՅԻՆ (ՔԱՐՅՈՒՂԱՅԻՆ) ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, OIL GEOLOGY**, երկրաբանության բաժին, ուսումնասիրում է Երկրի ընդերքում նավթի ու գազի կուտակների ձևերը, դրանց գոյացման, փոխարկման, քայքայման պայմանները և տեղաբաշխման օրինաչափությունները: Ն. Ե-յան գիտական ու գործնական նպատակներ են՝ նավթագոյացման տեսության, նավթի ու գազի որոնման ու հետախուզական մեթոդների մշակումը, բացահայտված նավթաբեր և պոտենցիալ նավթաբեր տարբեր կարգի օբյեկտների հեռանկարային գնահատումը: Ն. Ե. սերտորեն կապված է տեկտոնիկայի, կառուցվածքային, պատմական և ռեզիոնալ երկրաբանության, քարաբանության, երկրաքիմիայի, երկրաֆիզիկայի և ջրաերկրաբանության հետ: Նավթի ու գազի բաղադրության և ծագման ուսում-

նասիրումը հենվում է քիմ. և կենսաքիմ. պրոֆիլի գիտությունների վրա, իսկ երկրակեղևում այդ օգտ. հնժ-ների տեղաշարժման օրինաչափությունների բացահայտումը՝ ֆիզ. և ֆիզքիմ. պրոֆիլի գիտությունների վրա: Բացի ավանդական երկրք., երկրք., երկրֆ. մեթոդները, ժամանակակից Ն. Ե. լայնորեն օգտագործում է մոդելավորման մեթոդները, մաթեմատիկական սարքավորումները, էլեկտրոնահաշվողական տեխնիկան: Ն. Ե-յան հիմքի վրա զարգացած գիտության մասնագիտացված ուղղություններն են՝ ուսմունք նավթի ու գազի հնքվ-երի որոնման ու հետախուզման մասին, նավթարդյունահանման երկրաբանություն, նավթի ու գազի հնքվ-երի մշակում:

**Н-95. НЕФТЯНАЯ ЗАЛЕЖЬ – ՆԱՎԹԱՅԻՆ (ՔԱՐՅՈՒՂԻ) (ՀԱՆՔԱ)ԿՈՒՏԱԿ, OIL FIELD, OIL POOL,** նավթի բնական եզակի կուտակում ծուղակում, կազմված է հավաքիչ շերտից և ծածկանից, վերահսկվում է միասնական ջրանավթային հպակով: Ն. հ. սովորաբար տակդրված է ջրով, հազվադեպ բոլոր կողմերից սահմանափակված է անթափանց ապարներով և չունի հպում ջրի հետ: Հիմնական պարամետրերն են՝ մակերեսը, արդյունավետ հաստությունը, կուտակիչի ծակոտկենությունը, թափանցելիությունը և նավթահագեցվածությունը, շերտային ջերմաստիճանը, ճնշումը, ջրանավթային հպակի բարձրադիրքը: Ն. հ-ները ըստ պաշարների ստորաբաժանվում են՝ բացառիկ (300 մլն. տոննայից ավելի), հսկա (100-300 մլն. տոննա), խոշոր (30-100 մլն. տոննա), միջին (10-30 մլն. տոննա), մանր (մինչև 10 մլն. տոննա) և ոչ արդյունաբերական:

**Н-96. НЕФТЯНАЯ СКВАЖИНА – ՆԱՎԹԱՅԻՆ (ՔԱՐՅՈՒՂԻ) ՀՈՐԱՏԱՆՑՔ, OIL WELL,** ծառայում է նավթի հանքակուտակի բացման և նրանից նավթ ու ուղեկից գազ արդյունահանելու համար: Ն. հ-երը ստորաբաժանվում են՝ արդյունահանման, մղիչային, գնահատման, պիեզոչափական և դիտման:

**Н-97. НЕФТЯНОЕ МЕСТОРОЖДЕНИЕ – ՆԱՎԹԱՅԻՆ (ՔԱՐՅՈՒՂԻ) ՀԱՆՔԱՎԱՅՐ, OIL FIELD,** նավթակուտակների համախումբ, որը տեղադրված է մեկ կամ մի քանի ծուղակներում, վերահսկվում է միասնական կառուցվածքային տարրով և տեղաբաշխված է մի տեղայնացված մակերեսում: Ն. հ-երի դասակարգման մեծ մասի հիմքում ընկած են տեկտ. պատկերացումները: Ն. հ-երը կապված են հետևյալ հիմնական տեկտ. տարրերի հետ՝ միջքենբրիայան ծալքավոր հիմքով հին պլատֆորմների, երիտասարդ պլատֆորմների (պալեոգոյան և մասամբ բայկալյան ծալքավոր հիմքով), ծայրամասային իջվածքների (հերցինյան, մեզոգոյան և ալպյան հասակի ծալքավոր կառույցների նախալեռնային մասերում), մակաերկրասինկլինալային լեռնագոյացման մարզերի, մակապլատֆորմային լեռնագոյացման մարզերի: Ըստ ածխաջրածինների ֆազային պարունակության՝ Ն. հ-երը լինում են՝ նավթային, գազանավթային, գազախտուցքանավթային: Ըստ պաշարների առանձնացնում են՝ գերհսկա (500 մլն տոննայից ավել նավթ), հսկա (100-500 մլն. տոննա), խոշոր (30-100 մլն. տոննա), միջին (10-30 մլն. տոննա), մանր (10 մլն. տոննայից պակաս) և ոչ արդյունաբերական Ն. հ-եր:

**Н-98. НЕФТЯНОЙ ГАЗ, НЕФТЯНОЙ ПОПУТНЫЙ ГАЗ – ՆԱՎԹԱԳԱԶ, ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶ, ՆԱՎԹԱՅԻՆ ՈՒՂԵԿԻՑ ԳԱԶ (ՔԱՐՅՈՒՂԱԳԱԶ, ՔԱՐՅՈՒՂԱՅԻՆ ՈՒՂԵԿԻՑ ԳԱԶ), OIL GAS,** բնության մեջ նավթին ուղեկցող և նավթի վերամշակման ընթացքում ստացվող գազ: Նավթին ուղեկցող գազերը պարունակում են մեթան, էթան, պրոպան, բուտան և այլ հազեցած ածխաջրածիններ, ջրային գոլորշիներ, երբեմն նաև՝ ազոտ, ածխաթթու գազ, ծծմբաջրածին, հելիում, արգոն: Մեկ տոննա նավթին ընկնող գազերի քանակությունը՝ գազային գործոնը, կախված է նավթահան-

քի առաջացման և երկրի ընդերքում նրա տեղադրման պայմաններից և կարող է լինել 3-5-ից մինչև 250 և ավել մ<sup>3</sup>/տ.: Փազավերամշակման գործարաններում նավթից ստանում են գազային բենզին, բենզինազտված գազ և ածխաջրածիններ: Ածխաջրածնային չափամասերը քիմ. և նավթաքիմ. արդյունաբերության կարևոր հումք են: Հեղուկացված պրոպան-բուտանային չափամասը լայնորեն օգտագործվում է որպես շարժիչային ու կենցաղային վառելանյութ: Նավթավերամշակման գազերն ունեն այրման մեծ ջերմություն՝ 52.3 Մջ/մ<sup>3</sup> (12500 կկալ/մ<sup>3</sup>) և օգտագործվում են որպես վառելանյութեր:

**Н-99. НИВАЦИЯ** (լատ. niv, սեռ. h. nivis – ծյուն) – **ՆԻՎԱՑԻԱ, NIVATION**, ապարների վրա ծյունածածկի քայքայիչ գործունեություն, որը սառնամանիքային հողմահարման (ծյան հալչման ու սառեցման անընդհատ հերթափոխություն) արդյունք է: Ն. նպաստում է լեռնալանջերին, հատկապես ծյան գծին մոտ, խոռոչների, ակոսների և կրկեսների առաջացմանը: Հոմ.՝ ծյան ողողամաշում:

**Н-100. НИВЕЛИРОВАНИЕ** (ֆրանս. niveler – հավասարեցնել, niveau – մակարդակ) – **ՄԱՎԱՐԴԱՎԱՉԱՓՈՒՄ, LEVELLING**, պայմանականորեն ընտրված որևէ մակարդակի նկատմամբ տեղանքի կետերի բարձրությունների չափում:

**Н-101. НИЖНИЙ УРОВЕНЬ ДЕНУДАЦИИ – ԼԵՐԿԱՑՄԱՆ (ԴԵՆՈՒԴԱՑԻԱՅԻ) ՄՏՈՐԻՆ ՄԱՎԱՐԴԱՎ, ABSOLUTE BASE LEVEL OF DENUDATION**, մակարդակ, մինչև որը տեսականորեն կարող է ցածրանալ ցամաքը՝ բոլոր արտածին գործոնների համախումբ գործունեության հետևանքով: Տեսականորեն համընկնում է ողողամաշման ընդհանուր հիմքի՝ Համաշխարհային օվկիանոսի մակարդակի հետ: Իրականում Լ. ս. մ. գտնվում է օվկիանոսի մակարդակից էլ ներքև, քանի որ ծովի ափամաշումը, ծովային ծանծաղուտներում գետերի ողողամաշումը արտահայտվում են նաև ջրի տակ:

**Н-102. НИЗКОГОРНЫЙ РЕЛЬЕФ, НИЗКИЕ ГОРЫ – ՑԱԾՐԱԼԵՆԱՅԻՆ ՌԵԼԻԵՖ, ՑԱԾՐ ԼԵՆՆԵՐ, LOW-MOUNTAIN RELIEF**, ոչ բարձր լեռների ու թմբերի ռելիեֆ (մի քանի հարյուր մ-ից ոչ բարձր հարաբերական բարձրությամբ), մեծ կլորավուն տրամատներով, լանդշաֆտի ուղղաձիգ տարբերակման բացակայությամբ կամ թույլ արտահայտմամբ:

**Н-103. НИЗМЕННОСТЬ – ՑԱԾՐԱՎԱՅՐ, ԴԱՇՏԱՎԱՅՐ, LOWLAND, LOW LAND**, ցամաքի զգալի տարածվածության հարթավայրային տեղամաս՝ տեղադրված ծովի մակերևույթից մինչև 200 մ բարձրության վրա, օր.՝ Ամազոնի Ց.:

**Н-104. НИЗОВЬЕ РЕКИ – ԳԵՏԻ ՄՏՈՐԻՆ ԱՎԱՉԱՆ (ԳԵՏԻ ՄՏՈՐԻՆ ՀՈՍԱՆՔԻ ՎԱՅՐ), LOWER REACH, LOWER RIVER, LOWER COURSE**, գետի ստորին տեղամաս, բնորոշվում է սովորաբար մեղմաթեք լայնական տրամատով, հանդարտ հոսանքով, գետաբերուկների ամենուրեք կուտակմամբ, գետի առավելագույն ծախսով:

**Н-105. НИКЕЛЕВЫЕ РУДЫ – ՆԻԿԵԼԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, NICKEL ORES**, նիկել պարունակող օգտ. հնժ-ների կուտակներ, որոնցից մետաղի կորզումը տնտեսապես շահավետ է: Արդյունաբերության մեջ օգտագործվող Ն. հ. լինում են սուլֆիդային պղինձ-նիկելային և սիլիկատային: Սուլֆիդային պղինձ-նիկելային հանքանյութերի գլխավոր միներալներն են՝ պետլանդիտը, միլերիտը, խալկոպիրիտը, կուբանիտը, պիրրոտինը, մագնետիտը: Այդ հանքանյութերի հնքվ-երը պատկանում են հին պլատֆորմների բյուրեղային վահանների մագմայական գոյացություններին: Նիկելի պարունակությունը սուլֆիդային հանքանյութերում տատանվում է 0.3-4 % և ավելի սահմաններում: Բացի Ni-ից և Cu-ից, հանքանյութերից կորզում են նաև Co, Au, Pt, Pd, Rh, Se, Te, Si: Խոշոր հնքվ-եր կան ՌԴ-ում (Սոբիլսկ, Մուր-

մանակի մարզ), Կանադայում և Յր. Ամերիկայում: Նիկելի սիլիկատային հանքանյութերը ներկայացված են նիկել պարունակող ուլտրաբազիտների հողմահարման կեղևի փխրուն և կավանման ապարներով: Հնքվ-եր հայտնի են ՌԴ-ում, Ուկրաինայում, Կանադայում և այլուր:

**H-106. НИКЕЛИН – ՆԻԿԵԼԻՆ, ՆԻԿԵԼԻ ԿԱՐՄԻՐ ՀՐԱՔԱՐ, NICKELINE, NICCOLITE, COPPER NICKEL, NICKEL ARSENIDE**, միներալ, նիկելի արսենիդ, NiAs, հաճախ պարունակում է Co-ի, Fe-ի, Sb-ի խառնուրդներ: Բյուրեղագիտական համակարգը հեքսագոնային է: Առաջացնում է հոծ հատիկավոր կամ ծողածև զանգվածներ: Գույնը՝ գունատ պղնձի կարմիր, փայլը՝ մետաղի: Կարծրությունը 5-5.5 է: Օքսիդացման զոնայում հեշտությամբ հողմահարվում է, փոխարկվում է անաբերգիտի: Հանդիպում է գերհիմքային ներժայթքային (ինտրուզիվ) ապարներում քրոմի հետ՝ պղինձ-նիկելային, նիկել-կոբալտային և արծաթ-նիկել-կոբալտային ֆորմացիաների հնքվ-երում: Ջգալի կուտակումների դեպքում նիկելի արժեքավոր հանքանյութ է:

**H-107. НИСХОДЯЩЕЕ РАЗВИТИЕ РЕЛЬЕФА – ՌԵԼԻԵՖԻ ՎԱՐՆՆՈՒՄ ՉԱՐԳԱՅՈՒՄ, DESCENDING EVOLUTION OF RELIEF**, ռելիեֆի զարգացման փուլ, որի համար բնորոշ է լեռկացման (դենուդացիայի) ուժգին գործընթացների գերակշռությունը տեկտ. բարձրացումների նկատմամբ: Ուղեկցվում է բացարձակ և հարաբերական բարձրությունների հարաճուն փոքրացմամբ, լանջերի զոգավոր ձևերի հանդես գալով, լեռկացման բոլոր գործընթացների թուլացմամբ, ռելիեֆի հավասարեցմամբ և համահարթի առաջացմամբ:

**H-108. НИСХОДЯЩИЕ ИСТОЧНИКИ – ՎԱՐՆՆՈՒՄ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ, DESCENDING SPRINGS**, աղբյուրներ, որոնք սնվում են գրունտային կամ ոչ ճնշումային ջրերով: Ջրերի շարժումը կատարվում է վարընթաց ուղղությամբ՝ ջրատար հորիզոնի սնման մակերևույթից դեպի ցամաքուրդ հանդիսացող աղբյուրի ելքը:

**H-109. НИТРАТЫ ПРИРОДНЫЕ – ԲՆԱԿԱՆ ՆԻՏՐԱՏՆԵՐ, NATURAL NITRATES**, միներալների դաս, ազոտական թթվի աղեր: Բյուրեղային, ջրում լուծելի, մեծ մասամբ անգույն նյութեր են: Սովորական պայմաններում կայուն են, բարձր ջերմաստիճանում հեշտությամբ քայքայվում են: Առավել կայուն են ալկալիական մետաղների նիտրատները: Բնության մեջ հանդիպում են նատրիումի, կալիումի, կալցիումի և այլ մետաղների Բ. ն., որոնցից կիրառական նշանակություն ունի նատրիումի նիտրատը (NaNO<sub>3</sub>, չիլիական բորակ): Թվարկված մետաղների և ամոնիումի Բ. ն. օգտագործվում են որպես պարարտանյութեր, պայթուցիկ նյութերի արտադրության մեջ, ներկման գործում: Ալկալիական, հողալկալիական մետաղների և ամոնիումի Բ. ն. կոչվում են բորակներ:

**H-110. НОВАЯ ГЛОБАЛЬНАЯ ТЕКТОНИКА**, նույնն է՝ Тектоника плит:

**H-111. НОВАЯ ТЕКТОНИКА**, նույնն է՝ Неотектоника:

**H-112. НОВОКАСПИЙСКАЯ ТРАНСГРЕССИЯ – ՆՈՐԿԱՍՊԻԱԿԱՆ ԾՈՎԱՐՇԱԿ (ՏՐԱՆՍԳՐԵՍԻԱ, ԾՈՎԱԾԱՎԱԼՈՒՄ), NEW-CASPIAN TRANSGRESSION**, Կասպից ծովի խուժումը ցամաքի վրա ուշ հոլոցենում: Կասպից ծովի մակարդակը 11 մ-ով բարձր է եղել այժմեականից (26 մ ցածր է օվկիանոսի մակարդակից):

**H-113. НОВОЧЕРНОМОРСКАЯ ТРАНСГРЕССИЯ – ՆՈՐՍԵՎՈՆՎՅԱՆ ԾՈՎԱՐՇԱԿ (ՏՐԱՆՍԳՐԵՍԻԱ, ԾՈՎԱԾԱՎԱԼՈՒՄ), NEW-BLACK SEA TRANSGRESSION**, Սև ծովի խուժումը ցամաքի վրա հոլոցենում, ծովի մակարդակը եղել է 4-5 մ բարձր այժմեականից:

**H-114. НОРИЙСКИЙ ЯРУС (Ավստրիայի Նորիյան Ալպեր լեռների անունով) – ՆՈՐԻՅԱՆ ՀԱՐԿ, NORIAN**, տրիասի համակարգի վերին բաժնի միջին հարկ:

**Н-115. НОРИТ** (նորվեգ. norit, Norge-ից – Նորվեգիա) – **ՆՈՐԻՏ, NORITE**, գաբրոյի խմբի լրիվ բյուրեղային հիմքային մագնայական ապար: Կազմված է հիմքային պլագիոկլազից (սովորաբար լաբրադոր) և օրթոռոմբային պիրոքսեններից: Ն-ի մոնոկլինային պիրոքսեն պարունակող տարատեսակը կոչվում է գաբրո-նորիտ: Կարող է օգտագործվել որպես շինանյութ:

**Н-116. НОРМАЛЬНАЯ СКЛАДКА – ԲՆԱԿԱՆՈՆ ԾԱԼՔ, NORMAL FOLD**, 1) ապարների շերտերի պարզորոշ արտահայտված ծալք, որը բնորոշվում է լայնության նկատմամբ բարձրության հարաբերության մեծ նշանակությամբ և հեռացված ուրվագծերով, 2) ծալք, որի մոտ թևերը ծալքի առանցքի նկատմամբ տեղաբաշխված են համաչափորեն:

**Н-117. НОРМАЛЬНОЕ КРЫЛО СКЛАДКИ – ԾԱԼՔԻ ԲՆԱԿԱՆՈՆ ԹԵՎ, NORMAL LIMB OF A FOLD**, շրջված կամ պառկած ծալքի թև՝ նստվածքների տեղադրման բնական (բնականոն) շերտագրական հաջորդականությամբ:

**Н-118. НУММУЛИТИДЫ** (Nummulitida) (լատ. nummulus – մանր մետաղադրամ) – **ՆՈՄՄՈՒԼԻԹԻԴՆԵՐ, NUMMULITIDA**, ֆորամինիֆերների ենթադասի մահացած միաբջջի օրգանիզմների կարգ: Ն-ի մնացորդները հայտնի են Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի, Ամերիկայի արևադարձային ու մերձարևադարձային երկրների պալեոգենի նստվածքներում: Ն. ունեցել են ոսպածև կամ սկավառականման խեցի (տրամագիծը մինչև 10 սմ), որը կազմված է եղել միջնորմներով խցիկների բաժանված բազմաթիվ պտույտներից: Յուրաքանչյուր նոր պտույտ ծածկել է նախորդին: Վարել են հատականերձ կյանք: Ն-ի խեցիների կուտակումները առաջացրել են նումուլիթային կրաքարեր: Ն. կարևոր ղեկավարող բրածոներ են պալեոգենի շերտագրության համար: Լայնորեն տարածված են Կենտրոնական և Հարավային Հայաստանի պալեոգենի նստվածքներում:

## O

- O-1. ОБВАЛ – ՓԼՎԱԾՔ, COLLAPSE**, լեռների և ձորերի մեծաթեք և զառիթափ լանջերին առաջացող ձգողական (գրավիտացիոն) գործընթացներ, որոնք դիտվում են խոշոր ապարազանգվածների հանկարծակի փլուզման ձևով: Հողմահարման հետևանքով զառիթափ լանջերի ապարները կորցնում են կոշտ կապերը և ծանրահակ ուժերի ազդեցությամբ, երբեմն նաև սեյսմիկ և տեխնածին ցնցումների հրահրմամբ, պոկվում են լանջերից, գլորվում, փշրվում և կուտակվում լանջերի ստորոտներում, ձորերում և հովիտներում:
- O-2. ОБВАЛЬНОЕ ЗЕМЛЕТРЯСЕНИЕ – ՓԼՎԱԾՔԱՅԻՆ ԵՐԿՐԱՇԱՐԺ, COLLAPSE EARTHQUAKE**, երկրաշարժ, որը տեղի է ունենում լուծելի ապարների ստր. խոռոչներում՝ կամարի փլվածքի հետևանքով:
- O-3. ОБВОДНЕНИЕ – ՋՐԱՐԲԻԱՑՈՒՄ, FLOODING, INUNDATION**, ջրասակավ շրջաններում գյուղատնտեսության ու կոմունալ-կենցաղային նպատակների համար ջրապահովվածության բարձրացումը՝ տեղի մակերևութային հոսքն ու ստր. ջրերն օգտագործելու, ինչպես նաև ջրառատ շրջաններից ազատ ռեսուրսներ տեղափոխելու նպատակով:
- O-4. ОБВОДНЕНИЕ НЕФТЯНОГО (ГАЗОВОГО) ПЛАСТА – ՆԱԿԹԱՅԻՆ (ԳԱԶԱՅԻՆ) ՇԵՐՏԻ ՋՐԱՎԱԼՈՒՄ, INUNDATION OF PETROLEUM (GAS) STRATUM**, 1) նավթային (գազային) շերտի աստիճանաբար ջրակալում՝ հարակից ջրատար շերտերից ջրի ներխուժման հետևանքով, որը տեղի է ունենում նավթի (գազի) շահագործման և քանակի (ճնշման) նվազման պատճառով: 2) Ն. Չ. ջ., որը տեղի է ունենում հորատանցքերով բացված վերին հորիզոնների ջրերի հաշվին, եթե նրանք հուսալի մեկուսացված (ցեմենտացված) չեն: 3) Արհեստական ջրակալում, որը կատարվում է նավթային (գազային) շերտում՝ ճնշումը պահպանելու նպատակով:
- O-5. ОБДУКЦИЯ** (լատ. obductio – ծածկում) – **ՍԱԼԱՎՐԱՇԱՐԺ (ՕԲԴՈՒԿՑԻԱ), OBDUCTION**, օվկիանոսային քարոլորտի սալի վրաշարժ մայրացամաքային սալի ծայրամասի վրա (համաձայն «նոր գլոբալ տեկտոնիայի» պատկերացումների): Ս. ուղեկցվում է մանրաօջախային երկրաշարժերի զոնաների առաջացմամբ: Ս-ի ժամանակակից գործընթաց ենթադրվում է Միջերկրական ծովի արլ. մասում, որտեղ Էգեյան ծովի սալը վրաշարժվում է Միջերկրական ծովի մահճի վրա:
- O-6. ОБЗОРНЫЕ КАРТЫ – ԱԿՆԱՐԿԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ, GENERAL MAPS, CHOROGRAPHIC MAPS**, փոքրամասշտաբ աշխ. քարտեզներ, որոնք ընդհանուր պատկերացում են տալիս պատկերվող տարածքի մասին (օր.՝ մայր ցամաքի կամ պետության Ա. ք.):
- O-7. ОБЛАСТЬ БЕССТОЧНАЯ – ՀՈՍՔԱԶՈՒՐԿ ՄԱՐԶ, CLOSED DRAINAGE AREA**, ներցամաքային հոսքի մարզ, որը գետային ցանցով կապված չէ Համաշխարհային օվկիանոսի հետ (օր.՝ Կասպից ծովի ավազանը):
- O-8. ОБЛАСТЬ ГОРООБРАЗОВАНИЯ**, տե՛ս Область орогенная:



- Օ-9. ОБЛАСТЬ ИНФИЛЬТРАЦИИ – ՆԵՐԾՃԱՆՑՄԱՆ ՄԱՐԶ, INFILTRATION AREA,** ջրատար ապարների տարածման տեղամասեր, որոնց սահմաններում տեղի է ունենում մակերևութային ու մթնոլորտային ջրերի ներթափանցում (ներծծում) ապարների մեջ:
- Օ-10. ОБЛАСТЬ ОРОГЕННАЯ (հուն. óros – լեռ և génos – ծագում, ծնում) – ԼԵՌՆԱ-ՓՈՅՈՒՑՄԱՆ ՄԱՐԶ, OROGENIC AREA,** երկրակեղևի խոշոր ինքնուրույն կառուցվածքային տարր, որը ձևավորվում է ծալքավոր մարզերի ու պլատֆորմների զարգացման առանձնահատուկ փուլում: Լ. մ. բնորոշվում է լեռնային (բեկորային, կամարային, կամարաբեկորային, ծալքաբեկորային լեռնային կառույցներ) ռելիեֆով, յուրահատուկ ծալքավոր ձևերով (գերմանատիպ, մերձբեկվածքային ծալքավորություն և այլն), մոլասային ֆորմացիաների տարածմամբ (տե՛ս Прогиды орогенные) և մագմայականությամբ (տե՛ս Магматизм складчатых областей): Լ. մ-երը գոյանում են՝ 1) ծալքավոր մարզերի ձևավորման եզրափակիչ փուլում՝ քարոլորտի սալերի սահմանային զոնաներում բարդ տարբերակված տեկտ. ռեժիմի պայմաններում, 2) պլատֆորմների տեկտ. ակտիվացման (կոտրատման) ժամանակ՝ կապված կամարաբեկորային տարբերակված շարժումների, ինչպես նաև հարևան ծալքավոր մարզերում տեղի ունեցած ուժգին տեկտ. շարժումների հետ, նույնն է՝ Область горообразования:
- Օ-11. ОБЛАСТЬ ПЕЛАГИЧЕСКАЯ, տե՛ս Пелагиаль:**
- Օ-12. ОБЛАСТЬ РАЗГРУЗКИ ПОДЗЕМНЫХ ВОД – ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԲԵՆՆԱ-ԹԱՓՄԱՆ ՄԱՐԶ, DISCHARGE AREA OF UNDERGROUND WATER,** ստր. ջրերի՝ երկրի մակերևույթ դուրս գալու տեղամաս, որտեղ այդ երևույթը կարող է արտահայտվել աղբյուրների, ճահճացումների ու թացությունների տեսքով կամ գետերի ու լճերի մեջ առաջին հայացքից չնկատվող բեռնաթափումով:
- Օ-13. ОБЛАСТЬ СКЛАДЧАТАЯ ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ – ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԾԱԼՔԱՎՈՐ ՄԱՐԶ, HYDROGEOLOGICAL FOLDED AREA, HYDROGEOLOGICAL FOLDED REGION,** միմյանց հետ այս կամ այն չափով կապված ջրաերկրբ. զանգվածների, ներլեռնային և միջլեռնային արտեզյան ավազանների համակարգ:
- Օ-14. ОБЛЕКАЮЩЕЕ ЗАЛЕГАНИЕ, ПЛАЩЕОБРАЗНОЕ ЗАЛЕГАНИЕ – ՊՍՏՈՂ ՏԵՂԱԴՐՈՒՄ, ԹԻՎՆՈՑԱՆՄԱՆ ՏԵՂԱԴՐՈՒՄ, ENVELOPING BEDDING,** շերտերի առաջնային տեղադրում, որը ծածկում է հին ռելիեֆի անհարթությունները, ըստ որում՝ հաստությունը ցածրացած տեղամասերում սովորաբար մեծանում է, իսկ բարձրացումներում՝ կրճատվում:
- Օ-15. ОБЛИЦОВОЧНЫЙ КАМЕНЬ – ԵՐԵՍԱՊՍՏՄԱՆ ՔԱՐ, FACING STONE, ORNAMENTAL STONE,** քար, որը հանդիսանում է երեսապատման նյութեր ստանալու հումք, գոյություն ունեն Ե. ք-երի մի քանի դասակարգումներ: Ըստ ծագման Ե. ք-երը ստորաբաժանվում են՝ հրային (գրանիտներ, սիենիտներ, գաբրո, բազալտներ, տուֆեր և այլն), մետավածքային (ավազաքարեր, կրաքարեր, դոլոմիտներ, տրավերտիններ և այլն) և փոխակերպային (մարմարներ, գնեյսներ, քվարցիտներ և այլն): Ե. ք-երը դասակարգվում են նաև ըստ անրության, մշակելիության, երկարաժամկետության, գեղազարդության:
- Օ-16. ОБЛОМОЧНЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ, КЛАСТИЧЕСКИЕ ГОРНЫЕ ПОРОДЫ – ԲԵՎՈՐԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐ, DETRITAL ROCKS, CLASTIC ROCKS,** մետավածքային ապարներ, որոնք ամբողջովին կամ առավելապես կազմված են տարբեր ապարների (մագմայական, փոխակերպային կամ մետավածքային) և միներալների (քվարց, դաշտասպաթներ, փայլարներ, երբեմն՝ հրաբխային ապակի, գլաուկո-

նիտ և այլն) բեկորներից: Տարբերում են ցեմենտացած և չցեմենտացած (փուխր) Բ. ա.: Ցեմենտացած Բ. ա-ում կապակցող նյութ են ծառայում կարբոնատները (կալցիտ, դոլոմիտ), սիլիցիումի օքսիդները (օպալ, քաղկեդոն, քվարց), երկաթի օքսիդները (լիմոնիտ, գյոտիտ և այլն), կավային միներալները և այլն: Բ. ա. հաճախ պարունակում են օրգանական մնացորդներ: Բ. ա-ի դասակարգման հիմքում ընկած է կառուցվածքային հատկանիշը՝ բեկորների չափերը: Առանձնացնում են կոպտաբեկոր ապարներ կամ փսեֆիտներ՝ բեկորների չափերը 1 մմ-ից ավել (չցեմենտացվածները՝ մեծաբեկորներ, գլաքարեր, ճալաքարեր, խիճ, խճավազ, կոպիճ, ցեմենտացվածները՝ խառնաքար, կոպճաքար և այլն), ավազային ապարներ կամ փսամիտներ՝ մասնիկների չափերը 1-0.05 մմ, այլ դասակարգմամբ՝ 1-0.1 մմ (2-0.05 մմ) (ավազներ և ավազաքարեր), ալերիտային (փոշեման) ապարներ՝ մասնիկների չափերը 0.05-0.005 մմ (0.1-0.01 մմ) (ալերիտներ և ալերոլիթներ), կավային ապարներ կամ պելիտներ՝ մասնիկների չափերը 0.005 կամ 0.01 մմ-ից փոքր: Կավային ապարները կարող են լինել ինչպես քիմ., այնպես էլ բեկորային ծագման: Անջատվում են խառը ծագման Բ. ա., որոնք կազմված են տարբեր չափերի բեկորներից: Նշված կառուցվածքային ենթատիպերի ներսում հետագա ստորաբաժանումները կատարվում են ըստ բեկորների միներալային կազմի կամ այլ հատկանիշների: Բեկորային ապարներին են պատկանում նաև հրաբխային ժայթքումների արգասիքները՝ հրաբխային խիճը, մոխիրը (փուխր ապարներ և դրանց ցեմենտացած տարատեսակներ՝ տուֆեր), տուֆափշրաքարերը, տուֆիտները, տուֆածին ապարները, տե՛ս Вулканогенно-осадочные породы:

**Օ-17. ОБНАЖЕНИЕ ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ՄԵՐՎԱՑՈՒՄ, EXPOSURE, OUTCROP**, արմատական ապարների ելքերը երկրի մակերևույթում: Տարբերում են բնական (գետահովիտներում, լեռների լանջերին և այլն) և արհեստական (լեռնային փորվածքներում) մերկացումներ:

**Օ-18. ОБОГАТИМОСТЬ – ՀԱՐՍԱՆԱԼԻՈՒԹՅՈՒՆ, WASHABILITY**, տվյալ օգտ. հնժ-յից արժեքավոր բաղադրիչների լրիվ կորզման բնութագիր (զնահատական): Հանքաքարի վերամշակման տնտեսական նպատակահարմարության հաշվարկի և հարստացման սխեմայի ընտրման համար նախօրոք որոշվում են այդ հանքաքարի Հ.:

**Օ-19. ОБОГАЩЕНИЕ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ – ՕԳՏԱՎԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՐՍԱՑՈՒՄ, BENEFICIATION, CLEANING, SEPARATION**, պինդ միներալային հումքի սկզբնական վերամշակման գործընթացների համախումբ, որը կատարվում է օգտագործման կամ տեխնիկապես հնարավոր և տնտեսապես նպատակահարմար քիմ. և մետալուրգիական վերամշակման համար պիտանի արգասիքների կորզման նպատակով: Գոյություն ունեն օ. հ. հ-ման մի շարք մեթոդներ՝ ձեռքով տեսակավորում, գրավիտացիոն, մագնիսական, շփման, ընտրովի, թաց, չոր, ֆլոտացիոն, էլեկտրական և այլն:

**Օ-20. ОБРАЗЕЦ – ՆՄՈՒՇ, SPECIMEN, SAMPLE**, ապարի (միներալի) կամ օրգանիզմների քարացած մնացորդների կտոր, որը վերցված է մերկացումից կամ հանուկից՝ ուսումնասիրման համար:

**Օ-21. ОБРАЗОВАНИЯ ЭПИГЕНЕТИЧЕСКИЕ – ՄԱՎԱԾԻՆ ԳՈՅԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, EPIGENETIC FORMATIONS**, ազատ օգտագործման տերմին. լայնորեն օգտագործվում է այն բոլոր երկրորդային գոյացությունների համար, որոնք գոյանում են խիստ տարբեր գործոնների ազդեցության տակ:

- O-22. ОБРАЩЕНИЕ ТЕКТОНИЧЕСКОГО РЕЖИМА**, տե՛ս Инверсия тектонического режима:
- O-23. ОБРАЩЁННЫЙ РЕЛЬЕФ**, տե՛ս Инверсионный рельеф:
- O-24. ОБРУШЕНИЕ КРОВЛИ ПОЛНОЕ – ԱՌԱՍԱՂԻ ԼՐԻՎ ՓԼԵՑՈՒՄ, COMPLETELY ROOF CAVING**, ընդերքային ճնշման կառավարման եղանակ, որը կիրառելիս հանքախորհի ամբողջ երկարությամբ առաստաղը փլեցնում են:
- O-25. ОБРУШЕНИЕ МАССОВОЕ – ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՓԼԵՑՈՒՄ, BLOCK CAVING**, մեծ քանակությամբ հնժ-ների փլեցում: Օգտագործվում է մշակման համապատասխան համակարգ կիրառելիս:
- O-26. ОБРЫВ – ԴԱՐԱՓՈՒԼ, SCARP**, գառիթափ կամ համարյա ուղղաձիգ լանջ:
- O-27. ОБСИДИАН** (լատ. Obsidianus lapis – Օբսիդիոսի քար, ըստ Պլինիոս Ավագի, այդ ապարը եթովպիայում հայտնաբերել է ոմն Օբսիդիոսը) – **ՕԲՍԻԴԻԱՆ (ՎԱՆԱԿԱՍ, ԶՐԱԲԻԱՅԻՆ ԱՊԱԿԻ), OBSIDIAN**, սև, մուգ, մոխրագույն, շագանակագույն, արծաթավուն, խեցածև կոտրվածքով հրաբխային ապակի: Քիմ. կազմը փոխարկվում է ռիոլիթներից մինչև դացիտները: Կարծրությունը՝ 5: Պարունակում է մոտ 0.5 % ջուր: Լավ հղկվում է: Առաջանում է թթու ռիոլիթային կամ ռիոլիթադացիտային լավայի մածուցիկ տարատեսակների սառչելու ժամանակ: Հետագոտողների կարծիքով Օ. եգիպտոս էր բերվել Հայաստանից՝ Վանա լճի ափերից, այստեղից էլ ծագել է քարի հայկական վանակատ անվանումը: Օ. տարածված է հրաբխային գործունեության մարզերում: Օ-ի զգալի կուտակումներ հայտնի են ՀՀ-ում՝ Արտենիի, Հատիսի, Գուբանասարի, Գեղասարի, Սպիտակասարի լանջերին և մերձգագաթային մասերում: Օ-ին բնորոշ է ջերմափքությունը: Օգտագործվում է թեթև բետոններ լցնելու և ապակե տարաների պատրաստման համար: Օ-ի գեղեցիկ տարատեսակները գեղազարդային քարեր են:
- O-28. ОБСТАНОВКА ОСАДКООБРАЗОВАНИЯ – ՆՍՏՎԱԾՔԱԿՈՒՏԱԿՄԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ, DEPOSITIONAL ENVIRONMENT**, նստվածքակուտակման միջավայրի ֆացիան, պայմաններն ու բնույթը: Կախված է ռելիեֆից, միջավայրից (ջրային, օդային), կլիմայից, տարածքի երկրբ. կառուցվածքից և տվյալ փուլում երկրի վրա կյանքի զարգացման առանձնահատկություններից, մթնոլորտի, օվկիանոսի ջրի քիմ. կազմից և այլն:
- O-29. ОБЩИЙ БАЗИС ЭРОЗИИ, ПОСТОЯННЫЙ БАЗИС ЭРОЗИИ, ГЛАВНЫЙ БАЗИС ЭРОЗИИ – ՈՂՈՂԱՄԱՇՄԱՆ (ԷՐՈԶԻԱՅԻ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՆԱՄԱԿԱՐԴԱԿ, ՈՂՈՂԱՄԱՇՄԱՆ ԿԱՅՈՒՆ ՀԻՄՆԱՄԱԿԱՐԴԱԿ, ՈՂՈՂԱՄԱՇՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱՄԱԿԱՐԴԱԿ, GENERAL BASE LEVEL, PERMANENT BASE LEVEL, MAIN BASE LEVEL**, Համաշխարհային օվկիանոսի մակարդակ, որը նրա մեջ թափվող գետերի համար պայմանականորեն ծառայում է մահճի խորացման սահման:
- O-30. ОБЪЁМ ОПОЛЗНЯ – ՍՈՂԱՆՔԻ ԾԱՎԱԼ, VOLUME OF LANDSLIDE, VOLUME OF LANDSLIP**, սողանքային շարժումներով ընդգրկված ապարների զանգվածի ծավալ:
- O-31. ОБЪЁМНАЯ ВЛАГОЁМКОСТЬ – ԾԱՎԱԼԱՅԻՆ ԽՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ, VOLUMETRIC MOISTURE CAPACITY**, տե՛ս Влагоёмкость объёмная:
- O-32. ОБРАГ – ՀԵՂԵՂԱՍ, ԶՈՐԱԿ, GULCH, GULLY, RAVINE**, ռելիեֆի գծային, նեղ, գառիթափ պատերով, վերևում հաճախ ճյուղավորվող, մերկ, չճինապատված լանջերով բացասական ձև: Երկարությունը մինչև մի քանի կմ, խորությունը և լայնությունը՝ տասնյակ մ: Առաջանում է սովորաբար հեշտ ողողամաշվող նստվածքային ապարներում՝ ձնհալի և անձրևաջրերի անկայուն հոսքերի միջոցով:

- O-33. ОЗЁРНАЯ КОТЛОВИНА – ԼՃԱՅԻՆ ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, LAKE BASIN,** երկրի մակերևութի ցածրացում, որը ծառայում է լճային ջրի գետեղման համար: Լ. գ-ները առաջանում են ինչպես ներքին (ներծին) գործընթացների հետևանքով (տեկտ. և հրաբխային զոգավորություններ), այնպես էլ արտածին (ողողամանան, կուտակումային, հողմային, պատվարային զոգավորություններ): Պատվարային տիպի Լ. գ-ներ ստեղծվում են տնտեսական գործունեության հետևանքով:
- O-34. ОЗЁРНАЯ РАВНИНА – ԼՃԱՅԻՆ ՀԱՐԹԱՎԱՅՐ, LAKE PLAIN, LACUSTRINE PLAIN,** հարթավայր, որն առաջանում է անհետացող լճի տեղում, կազմված է գլխ. լճային նստվածքներից:
- O-35. ОЗЁРНАЯ РЕКА – ԼՃԱՅԻՆ ԳԵՏ, RIVER RISING FROM LAKE,** արտահոսում է լճից կամ հոսում է նրա միջով: Բնորոշվում է առավելագույն հոսքի ավելի ցածր մոդուլով, սակավաջրությունում՝ ավելի բարձր հոսքով և երկարատև վարարմամբ՝ համեմատած նույն ֆիզաշխ. պայմաններում գտնվող գետերի հետ, որոնք չունեն արտահոսք լճից:
- O-36. ОЗЁРНАЯ ТЕРРАСА – ԼՃԱՅԻՆ ԴԱՐՎԱՎԱՆՂ, LAKE TERRACE,** դարավանդ, որի առաջացումը կապված է լճի ալիքային գործընթացի հետ:
- O-37. ОЗЁРНЫЕ ОТЛОЖЕНИЯ – ԼՃԱՅԻՆ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, LACUSTRINE DEPOSITS, LAKE DEPOSITS,** լճերի հատակի նստվածքային զոյացություններ (ժամանակակից նստվածքներ, հին ապարներ)՝ բեկորային, կենսածին և քիմիական ծագման: Մեծ լճերի ափամերձ զոնայում կուտակվում են ճալաքարեր, կոպիճ, ավազներ և ալևրիտներ, խորջրյա մարզում՝ ալևրակավային և կավային տիղմեր՝ օրգանական նյութով, դիատոմիտային տիղմեր (Բայկալ, Սևան և այլն), որոնք հերթագայվում են պղտոր հոսքերի ավազային նստվածքներով (Բայկալ և այլն): Մեծ լճերի նստվածքներն ունեն նմանություններ ծովային նստվածքների հետ: Հյուսիսի և հյուսիսային անտառային զոնաների փոքր լճերում (բարեխառն և խոնավ կլիմայական պայմաններում) տեղի է ունենում երկաթի ու մանգանի (բակլայանան և կոնկրեցիոն հանքանյութեր՝ օքսիդներ, մասամբ կարբոնատներ), սապրոպելների, դիատոմային տիղմի կուտակում: Ավազներ և ալևրոլիթներ հանդիպում են միայն նեղ մերձափնյա զոնայում: Հատուկ տեսակ են սառցադաշտային լճերը՝ ժապավենածև կավերով: Անապատների և կիսաանապատների լճային նստվածքներում տարածված են գիպս, էպսոմիտ, միրաբիլիտ, հալիտ: Չոր տափաստաններում հայտնի են կարբոնատային-սոդային լճեր, որտեղ տեղի է ունենում կալցիտի, դոլոմիտի և սոդայի նստեցում: Լճային նստվածքների բնորոշ գծերն են՝ շերտերի փոքր հաստությունը, հաճախ հորիզոնական շերտավորությունը և ոսպնյակածև տեղադրումը, բնորոշ ֆաունայի առկայությունը:
- O-38. ОЗЕРО – ԼԻՃ, LAKE,** բնական ջրավազան, որը լճային թասի (լճային մահճի) սահմաններում լցված է ջրով և չունի անմիջական միացում ծովի հետ: Ըստ ծագման՝ զոգավորությունները լինում են տեկտ., սառցադաշտային, գետային (հնահունային), մերձափնյա, փլուզումային (կարստային, ջերմակարստային), հրաբխային, ամբարտակային (արհեստական ջրամբարներ և լճակներ): Կախված լճի մահճի առաջացման պայմաններից, առանձնացնում են լճերի հետևյալ հիմնական տիպերը՝ ամբարտակային (գետային, հովտային և մերձափնյա, այս խմբին են պատկանում նաև արհեստական ջրամբարները), զոգափոսային (սառցաբերուկային, կառային, կարստային, հրաբխային և տեկտոնական) և խառն ծագման: Կան այլ դասակարգումներ: Լ-երը լինում են հոսքային և անհոսք, ըստ քիմ. կազմի՝ քաղցրահամ, աղիավուն և աղային: Հատուկ խումբ են կազմում հանքային լճերը:

- О-39. ОЗЕРО ГОРЬКО-СОЛЁНОЕ (СУЛЬФАТНОЕ) – ԴԱՌՆԱԴԻ (ՍՈՒԼՖԱՏԱՅԻՆ) ԼԻՃ, SULPHATE LAKE**, կարող է լինել երկու տեսակի՝ սուլֆատանատրիումային և սուլֆատանագնեզիումային (քլորանագնեզիումային), հիմնական իոններն են՝  $\text{Na}^+$ ,  $\text{Mg}^{2+}$ ,  $\text{SO}_4^{2-}$ ,  $\text{Cl}^-$ :
- О-40. ОЗЕРОВОЕДЕНИЕ, ЛИМНОЛОГИЯ** (հուն. limnē – լիճ և lógos – խոսք, ուսմունք) – **ԼՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LIMNOLOGY**, գիտություն ցամաքային դանդաղեցված ջրափոխանակություն ունեցող ջրավազանների (լիճ, ջրամբար) մասին, ուսումնասիրում է դրանցում ընթացող փոխկապակցված ֆիզ., քիմ. և կենսաբ. գործընթացների համալիրը: Լ. օգտագործում է ջրաերկրբ., ջրակենսբ., ջրաքիմ., ջրաֆիզ., երկրծ., ջրաբանական և այլ մեթոդները: Լ-յան հիմնական խնդիրներն են՝ ջրավազանների ռեժիմի ու զարգացման, լճային զոգափոսերի ծագման (դրանց ձևը, չափը), ջրի ֆիզ. և քիմ. հատկությունների, հատակային նստվածքների, ջրափոխանակության, ֆաունայի և ֆլորայի ուսումնասիրությունը:
- О-41. ОЗОКЕРИТ, ГОРНЫЙ ВОСК** (գերմ. Ozokerit, հուն. ózō-ից՝ հոտ են արձակում և kēros – մոմ) – **ՕՉՈՔԵՐԻՏ (ՅԱՆՔԱՍՈՍ, ԼԵՌՆԱՍՈՍ), OZOKERITE, EARTH WAX, MINERAL WAX**, միներալային նյութ, պինդ հագեցած ածխաջրածինների բնական մոնոման խառնուրդ է: Շոշափելիս ճարպոտ է: Ունի կերոսինի հոտ: Հեշտությամբ վառվում է: Կիրառվում է պարֆյուներային արտադրության մեջ, ինչպես նաև օզոքերիտաբուժման համար: Օ-ի զգալի մասը վերամշակվում է ցերեզինի:
- О-42. ОЗОНОСФЕРА – ՕՉՈՆՈՍՖԵՐԱ, OZONOSPHERE, OZON SCREEN**, մթնոլորտի շերտ 10-ից մինչև 50 կմ բարձրություններում, որտեղ կուտակված է մթնոլորտի օզոնի հիմնական զանգվածը: Օզոնի շերտը պահում է բոլոր կենդանի էակների համար մահացու տիեզերական ճառագայթման մեծ մասը:
- О-43. ...ОИД – ...ԿԵՐՊ, ... ՈՒՂ, ...OID**, բարդ տերմինների վերջավորություն, որը նշանակում է «մնամներ», «մերձավորներ»:
- О-44. ОКАМЕНЕЛОСТИ – ՔԱՐԱՑՈՒԿՆԵՐ, FOSSILS**, երկրի շերտերում պահպանված օրգանիզմների մնացորդներ և դրանց կենսագործունեության հետքեր, նույնն է՝ Ископаемые организмы:
- О-45. ОКАМЕНЕНИЕ – ՔԱՐԱՑՈՒՄ, PETRIFICATION, FOSSILISATION**, 1) գործընթաց, որի ժամանակ տեղի է ունենում փոխար միներալային նստվածքի փոխարկումը պինդ ապարի, տե՛ս Литификация; 2) գործընթաց, երբ թաղված կենդանական ու բուսական մնացորդների օրգանական նյութը փոխարինվում է միներալային նյութով, որի հետևանքով ժամանակի ընթացքում այդ մնացորդները փոխարկվում են քարացուկների, տե՛ս Фоссилизация:
- О-46. ОКАТАННОСТЬ, ОКРУГЛЁННОСТЬ – ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ԿՈՐԱՅՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ROUNDNESS**, բեկորների մախասկզբնական կողերի հարթեցման աստիճան, տեղի է ունենում դրանց տրորման հետևանքով՝ ջրի, սառցադաշտի կամ քամու միջոցով տեղափոխվելու ընթացքում:
- О-47. ОКЕАН** (հուն. ókeanós – Օվկիանոս՝ մեծ գետ, որը շրջահոսում է երկիրը) – **ՕՎԿԻԱՆՈՍ, OCEAN**, Համաշխարհային օվկիանոսի մաս, որը, շրջապատող մայր ցամաքներով առանձնանալու հետևանքով, տիրապետում է մթնոլորտի ընդհանուր շրջանառության ինքնուրույն համակարգերի: Դա պայմանավորում է նրա մակերևութին կլիմայական պայմանների բազմազանությունը, մակերևութային ու խորքային հոսանքների ինքնուրույն համակարգը և դրա հետևանքով ջրաբանական, ջրաքիմ. և կենսաբ. բնութագրերի տեղաբաշխման սեփական հորիզոնական և ուղղաձիգ համակարգերը:

**О-48. ОКЕАНИЧЕСКАЯ ЗЕМНАЯ КОРА – ՕՎԿԻԱՆՈՍԱՅԻՆ ԵՐԿՐԱՎԵՂԵՎ, OCEANIC EARTH'S CRUST**, երկրակեղև, որը տարածված է օվկիանոսների ու ծովերի հատակի տակ: Մայրցամաքայինից տարբերվում է «գրանիտային» շերտի բացակայությամբ, ավելի երիտասարդ հասակով (յուրա, կավիճ, պալեոգեն), տարածական մեծ համասեռությամբ, ավելի փոքր հաստությամբ, [5-(2)-10 կմ]: Օ. ե. կազմված է 3 շերտից՝ առաջին (վերին) շերտը բաղկացած է ծովային համեմատաբար փուխր նստվածքներից, երկրորդը (վերբազալտայինը) ներկայացված է բազալտային լավանների և քարացած նստվածքների շերտերով, երրորդը, այսպես կոչված, բազալտային շերտն է, տե՛ս նաև Земная кора:

**О-49. ОКЕАНИЧЕСКАЯ КОТЛОВИНА – ՕՎԿԻԱՆՈՍԱՅԻՆ ԳՈՎԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, OCEANIC BASIN**, օվկիանոսի մահճի ռելիեֆի և տեկտ. կառուցվածքի խոշորագույն տարր, շրջափակված է մայրցամաքային լանջով, ստորջրյա լեռնաշղթաներով, թմբերով ու բարձրացումներով: Մահճի գոգավորության միջին խորությունը մոտ 5 կմ է: Գոգավորության հատակի 80 %-ը բնորոշվում է բլրաշատ ռելիեֆով՝ բարձրությունների 500-1000 մ տատանումներով:

**О-50. ОКЕАНИЧЕСКАЯ ПЛИТА – ՕՎԿԻԱՆՈՍԱՅԻՆ ՍԱԼ, OCEANIC PLATE**, նախակզբնական հասկացությամբ՝ օվկիանոսի մահճի ամենակայուն մաս, որը հանդիսանում է գոգավորության խոր խորասուզված հատակը: Օ. ս. զբաղեցնում է Համաշխարհային օվկիանոսի մակերեսի կեսից ավելին: Գերակշռող խորությունները մոտ 5 կմ են, մակերևույթը հարթեցված է: Օ. ս-ի երկրակեղևի կազմում մասնակցում է խորջրյա նստվածքների ոչ հաստ շերտ (1 կմ-ից փոքր), որից ներքև երկրորդ շերտն է (1-3 կմ)՝ բաղկացած տոլեիտային բազալտներից՝ նստվածքային ապարների ենթաշերտերով, դրա տակ երրորդ շերտն է՝ ներկայացված 4-6 կմ հաստության գաբրոային ապարներով: Սալերի տեկտոնիկայի կոնցեպցիայի համաձայն՝ Օ. ս-ի տակ հասկացվում է քարոլորտի սալը, որը կազմված է օվկիանոսային տիպի կեղևից: Այդ սալերից են Խաղաղօվկիանոսյան, Կոկոսի, Նասկայի սալերը:

**О-51. ОКЕАНИЧЕСКИЕ ОТЛОЖЕНИЯ – ՕՎԿԻԱՆՈՍԱՅԻՆ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, OCEANIC SEDIMENTS**, նստվածքային գոյացություններ, որոնք առաջանում են օվկիանոսի մահճի վրա: Դրանք տարբերվում են համեմատաբար փոքր հաստություններով, նստվածքակուտակման ցածր արագություններով, ցամաքածին նյութի ոչ մեծ դերով: Արհեսալ իջվածքներում մեծ տարածությունների վրա դրանք խիստ համասեռ են: Համեմատաբար փոքր խորություններում Օ. ն. ներկայացված են կրային կենսածին նստվածքներով (առավելապես ֆորամինիֆերային տիղմեր), ավելի խոր՝ ռադիոլարիային և դիատոմային նստվածքներով: Ամենամեծ խորություններում գերակշռում են կարմիր խորջրյա կավերը: Շատ շրջաններում օվկիանոսի հատակին հայտնի են երկաթ-մանգանային կոնկրեցիաների կուտակումներ: Օ. ն-ին են պատկանում օֆիոլիթների նստվածքային մասերը, որոնք ներկայացված են առավելապես ռադիոլարիտներով:

**О-52. ОКЕАНИЧЕСКИЕ ХРЕБТЫ – ՕՎԿԻԱՆՈՍԱՅԻՆ ԼԵՌՆԱՇՂԹԱՆԵՐ, SUBMARINE RIDGES, SUBMARINE RANGES, OCEANIC RIDGES**, օվկիանոսի հատակին գետեղված գծային բարձրացումներ, որոնք ձգվում են հազարավոր կմ-եր, լայնությունը հասնում է հարյուրավոր և հազարից ավել կմ-երի, բարձրությունը՝ 1-3 կմ-ի: Հատկապես առանձնացվում է միջինօվկիանոսային լեռնաշղթաների համակարգը, որի երկարությունը մոտ 60000 կմ է: Առանձին գագաթները բարձրանում են օվկիանոսի մակարդակից վեր՝ առաջացնելով հրաբխային կղզիներ: Օ. լ-ի ռելիեֆը բարդ է. դրանք սովորաբար կազմված են թմբերի սերիաներից և դրանք

բաժանող ցածրացումներից: Այդ համակարգի լեռնաշղթաների առանցքային մասում զետեղված են ռիֆտային հովիտներ: Լեռնաշղթաները հատվում են լայնակի (տրանսֆորմ) բեկվածքներով: Ռիֆտային իջվածքների երկայնքով արտահայտված են ոչ խոր երկրաշարժերի օջախներ: Այդ իջվածքներին բնորոշ է ուղղահայաց ուղղության մերձհորիզոնական ձգողական մեխանիզմ: Այստեղ դիտվում է բարձր ջերմային հոսք՝ մոտ 2-3 անգամ ավել Երկրի համար միջին նշանակությունից: Միջինօվկիանոսային լեռնաշղթաների առանցքի երկայնությամբ տեղաբաշխված են բազմաթիվ հրաբուխներ, դիտվել են ջրաջերմային գործունեության արտահայտություններ: Ըստ երկրֆ. տվյալների՝ Օ. Լ-ի առանցքային զոնաների տակ քարոլորտը անբնականոն բարակ է (մի քանի կմ): Լեռնաշղթաների երկայնքով զետեղված են մագնիսական անկանոնությունների համաչափ գոտիներ, որոնց հետ կապակցված է օվկիանոսի հասակը. վերջինը օրինաչափորեն մեծանում է Օ. Լ-ի առանցքից դեպի կողերը հեռանալիս: Օ. Լ-ին են պատկանում նաև կամարաբեկորային և հրաբխային լեռնաշղթաները:

**O-53. ОКЕАНОГРАФИЯ** (օվկիանոսից և հուն. gráphō – գրում են, նկարագրում են) – **ՕՎԿԻԱՆՈՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ, OCEANOGRAPHY**, 1) տե՛ս Океанология, 2) գիություն, որն ուսումնասիրում է Համաշխարհային օվկիանոսում ջրային միջավայրի ֆիզ. և քիմ. հատկությունները, ֆիզ. և քիմ. գործընթացների ու երևույթների օրինաչափությունները՝ կապված հատակի, ցամաքի և մթնոլորտի հետ դրանց փոխգործունեությամբ:

**O-54. ОКЕАНОЛОГИЯ** (օվկիանոսից և հուն. lógos – խոսք, ուսմունք) – **ՕՎԿԻԱՆՈՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, OCEANOLOGY**, Համաշխարհային օվկիանոսում ֆիզ., քիմ., երկրբ. և կենսբ. գործընթացների մասին գիտաճյուղերի համախմբություն: Օ. ստորաբաժանվում է՝ օվկիանոսի ֆիզիկա (ֆիզիկական օվկիանոսագիտություն, ծովի ֆիզիկա), օվկիանոսի քիմիա (քիմիական օվկիանոսագիտություն), օվկիանոսի կենսաբանություն և երկրաբանություն: Օ-յան գլխավոր խնդիրներ են՝ վերջրյա և ստորջրյա նավագնացության անվտանգության ապահովումը և արդյունավետության բարձրացումը, օվկիանոսի ջրի և հատակի կենսբ., միներալային և էներգետիկ պաշարների օգտագործումը, եղանակի կանխատեսման մեթոդների կատարելագործումը:

**O-55. ОКИСЛЕННАЯ НЕФТЬ – ՕՔՍԻԴԱՑՎԱԾ ՆԱՎԹ (ՔՍԻՅՈՒՂ), OXIDATED OIL**, նավթ, որը կրել է վերնածնային (հիպերգեն) փոփոխություններ՝ զոլորչիացման, ֆոտոքիմ. պոլիմերացման, օքսիդացման և այլ գործընթացների, այդ թվում նաև օդակյաց և անօդակյաց պայմաններում մանրեական (բակտերիական) գործընթացների ներազդեցության տակ: Օ. ն., կախված օքսիդացման գործընթացների մասշտաբից ու բնույթից, ունի մեծ խտություն, բենզինի ցածր պարունակություն, ձյութասֆալտենային բաղադրիչի բարձր տոկոս: Առավել ուժգին փոփոխություններ տեղի են ունենում Երկրի մակերևույթին՝ նավթի ելքերի դեպքում: Այդ ընթացքում նավթը կորցնում է թեթև ֆրակցիաները և ձյութացվում է, մեծանում է նրա խտությունը, բարձրանում է մածուցիկությունը, ասֆալտաձյութային բաղադրամասերի և օքսիդների քանակը: Օ. ն-ի արգասիքներ են ասֆալտային բիտումները:

**O-56. ОКНО ТЕКТОНИЧЕСКОЕ – ՏԵԿՏՈՆԱՎԱՆ ՊԱՏՈՒՅԱՆ, FAULT (NAPPE) INLIER, TECTONIC WINDOW**, տեկտ. ծածկույթների մեջ ավտոխթոնի (հիմքի) կամ ալոխթոնի ապարների մեկուսացված ողողամաշման ելքեր, առաջանում են մակաշարժերի մակերևույթի բարձրացման մարզերում:

- О-57. ОКОНТУРИВАНИЕ ВОДОНОСНОГО ГОРИЗОНТА – ՋՐԱՏԱՐ ՀՈՐԻԶՈՆԻ ԵԶՐԱԳՃՈՒՄ, DELINEATION OF AQUIFER**, ջրատար հորիզոնի տարածման բնական սահմանների որոշումը ու դրանց անցկացումը ջրաերկրք. քարտեզների վրա: Ջ. հ. Ե. անհրաժեշտ է ստր. ջրերի պաշարների հաշվարկման և օգտագործման հնարավորությունների պարզաբանման համար:
- О-58. ОКОНТУРИВАНИЕ МЕСТОРОЖДЕНИЙ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ – ՕԳՏԱՎԱՐ ՀԱՆԱՃՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԵԶՐԱԳՃՈՒՄ, DELINEATION OF MINERAL DEPOSITS**, հատակագծում կամ կտրվածքում օգտ. հնձ-ների հնքվ-ի կամ նրա մասերի (առանձին մարմինների, բլոկների, հորիզոնների) տարածման սահմանների որոշում՝ կոնդիցիաների ցուցիչների հիման վրա:
- О-59. ОКОНЧАНИЕ СКЛАДКИ ПЕРИКЛИНАЛЬНОЕ – ԾԱԼՔԻ ԾԱՅՐԱԹԵՔ (ՊԵՐԻԿԼԻՆԱԼ) ՎԵՐՋԱՆԱԼՔ, PERICLINAL END OF FOLD, “Периклиналиль”** տերմինի հոմ.:
- О-60. ОКОНЧАНИЕ СКЛАДКИ ЦЕНТРИКЛИНАЛЬНОЕ – ԾԱԼՔԻ ՎԵՆՏՐՈՆԱԹԵՔ (ՑԵՆՏՐԻԿԼԻՆԱԼ) ՎԵՐՋԱՆԱԼՔ, CENTRICLINAL END OF FOLD, “Центриклиналиль”** տերմինի հոմ.:
- О-61. ОКРАИННАЯ ВПАДИНА, տե՛ս Впадины орогенные:**
- О-62. ОКРАСКА ОСАДОЧНЫХ ПОРОД – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ԳՈՒՆԱՎՈՐՈՒՄ, COLOUR OF SEDIMENTARY ROCKS**, կարևորագույն հատկանիշներից է, կարող է լինել առաջնային և երկրորդային: Առաջնային գունավորումը յուրահատուկ է ապարի առաջացման ամենասկզբնական, ինչպես նաև դիագենեզի փուլերին: Երկրորդային գունավորումն ունի վերնածին ծագում, այսինքն՝ առաջանում է հողմահարման և հետընթաց մակածնության գործընթացներում: Առաջնային գունավորումը արտացոլում է ապարի կազմը և ծագումը, օգնում է շերտագրական համադրումներին: Գունավորումը կարող է կախված լինել ապարի կազմի մեջ մտնող միներալներից, մանրագույն մասնիկների առկայությունից, մեխ. խառնուրդներից, հատիկները պարփակող նուրբ թաղանթներից:
- О-63. ОКРЕМНЕНИЕ, СИЛИЦИФИКАЦИЯ – ԿԱՅԾՔԱՐԱՑՈՒՄ, ՍԻԼԻՑԻՖԻԿԱՑՈՒՄ, SILICIFICATION, SILICIFYING**, սիլիկահողով (կայծքարահողով) (օպալով, քաղկեդոնով, կրիստոբալիտով, քվարցով) ապարի հարստացման գործընթաց՝ միներալների տեղակալման կամ ծակոտիների լցման միջոցով: Կ-ման գործընթացները ընթանում են դիագենեզի և կատագենեզի ընթացքում, ինչպես նաև սիլիկաթթվով հագեցած ջրաջերմերի ազդեցության տակ: Այլումասիլիկատային ապարների հողմահարման ժամանակ ազատվում է զգալի քանակով սիլիկահող, որն անցնելով լուծույթի և տեղաշարժվելով ներքև՝ երբեմն փոխարկում է տարբեր ապարները: Կ-ման հետևանքով առաջանում են կայծքարեր, կայծքարացած կրաքարեր և այլ ապարներ:
- О-64. ОКСИ...** (հուն. oxýs – թթու, կծու) – **ՕՔՍԻ... , OXY...**, թթու արտաժայթքային ապարների անվանման նախածանց, նշելու համար այն տարատեսակները, որոնցում քվարցը չի անջատվում, այլ մնում է պոտենցիալ վիճակում:
- О-65. ОКСИДЫ ПРИРОДНЫЕ – ԲՆԱԿԱՆ ՕՔՍԻԴՆԵՐ, NATURAL OXIDES**, միներալների դաս, ներկայացված է թթվածնի հետ տարբեր տարրերի քիմ. միացություններով: Հայտնի են մոտ 300 միներալային տեսակներ: Առավել տարածված են Si-ի, Fe-ի, Mn-ի, Al-ի Բ. օ., ավելի քիչ՝ Cu-ի, U-ի:
- О-66. ОКСИЛОФИТЫ** (հուն. oxýs – թթու և phytón – բույս) – **ԹԹՎԱՀՈՂԱՐՈՒՅՍԵՐ (ՕՔՍԻԼՈՖԻՏՆԵՐ), OXYLOPHYTES**, բույսեր, որոնք բնակվում են թթու հողերում:



- О-67. ОКСКАЯ ЛЕДНИКОВАЯ ЭПОХА** (Օկա գետի անունով) – **ՕԿԱՅԻ ՍԱՌՑԱ-ԴԱՇՏԱՅԻՆ ԴԱՐԱՎԱՐԳ, ОКА ICE AGE**, Արևելաեվրոպական հարթավայրի վաղպլեյստոցենյան սառցապատման դարակարգ, համապատասխանում է Արմ. Եվրոպայի միևնույն պատմության սառցապատմանը:
- О-68. ОКСФОРДСКИЙ ЯРУС, ОКСФОРД** (Օքսֆորդ ք-ի անունով, Անգլ.) – **ՕՔՍ-ՖՈՐԴԻ ՅԱՐԿ, ՕՔՍՖՈՐԴ, OXFORDIAN**, յուրայի համակարգի վերին բաժնի ներքևից առաջին հարկ:
- О-69. ОЛЕДЕНЕНИЕ – ՍԱՌՑԱՊԱՏՈՄ, GLACIATION**, 1) Երկրի մակերևույթում սառցադաշտերի մակերեսի զգալի ընդարձակման գործընթաց: Բազմակի տեղի է ունեցել Երկրի պատմության ընթացքում: Վերջին Ս. տեղի է ունեցել չորրորդական ժամանակաշրջանում՝ Յու. Եվրասիայում և Յու. Ամերիկայում: 2) Երկարատև գոյություն ունեցող բնական սառույցների, գլխ. սառցադաշտերի համախմբություն (օր.՝ լեռնային Ս-ները, ծածկութային Ս-ները):
- О-70. ОЛЕНЁКСКИЙ ЯРУС** (Յակուտիայի Օլենյոկ գետի անունով) – **ՕԼԵՆՅՈՎՅԱՆ ՅԱՐԿ, OLENEKIAN**, նախկին ԽՍՀՄ-ում ընդունված շերտագրական սխեմայում տրիասի համակարգի ստորին բաժնի վերին հարկ:
- О-71. ОЛИВИН** (լատ. oliva – ձիթապտուղ, կապված գույնի հետ) – **ՕԼԻՎԻՆ (ՉԻՅԱՎՆ), OLIVINE**, միներալ, մագնեզիումի և երկաթի սիլիկատ, ֆորստերիտ-ֆայալիթ անընդհատ իզոմորֆ շարքի անդամ: Ընդհանուր քիմ. կազմը՝  $(MgFe)_2[SiO_4]$ : Բյուրեղագիտական համակարգը ռոմբային է: Առաջացնում է հատիկավոր ագրեգատներ: Գույնը՝ տարբեր երանգների կանաչ, կարծրությունը՝ 6.5: Գերհիմքային և որոշ հիմքային մագմայական ապարների, ինչպես նաև կարբոնատիտների, մագնեզիումային սկառների ապարակազմիչ միներալ է: Օ. հողմահարման և ջրաջերմային գործընթացների ժամանակ հեշտորեն փոխարկվում է սերպենտինիտի, քլորիտի և այլնի: Օ-ի թափանցիկ տեսակները (քրիզոլիթ) կիրառվում են որպես թանկարժեք քար:
- О-72. ОЛИВИНИТ – ՕԼԻՎԻՆԻՏ, OLIVINITE**, միամիներալային, լիաբյուրեղային գերհիմքային ապար, բաղկացած է օլիվինից և որոշ քանակի մագնետիտից: Յակադրվում է դունիտին, որի կազմում, որպես մշտական խառնուրդ, առկա է քլորիտը:
- О-73. ОЛИГОКЛАЗ** (հուն. oligos – քիչ, սակավ, աննշան և klásis – կտորատում, ճեղքում, բեկում) – **ՕԼԻԳՈՎԼԱՉ, OLIGOCLASE, OLIGOCLASITE**, միներալ դաշտային սպաթների խմբից, թթու պլազիոկլազ: Օ. 10-30% անորթիտի և 70-80 % ալբիտի իզոմորֆ խառնուրդ է: Բյուրեղանում է տրիկլինային համակարգում: Առաջացնում է սպիտակ, մոխրագույն, դեղնավուն բյուրեղներ, հատիկավոր ագրեգատներ: Թթու մագմայական ապարների, պեգմատիտների ապարակազմիչ միներալ է: Հողմահարման ժամանակ փոխարկվում է կավային միներալների:
- О-74. ОЛИГОМИКТОВАЯ ПОРОДА** (հուն. oligos – քիչ, սակավ, աննշան և miktós – խառը) – **ՕԼԻԳՈՄԻԿՏԱՅԻՆ (ՍԱՎԱՎԱԽԱՆՆ) ԱՊԱՐ, OLIGOMICTIC ROCK**, բեկորային ապար, որի բեկորային մյուսը բաղկացած է երկու տարբեր միներալներից կամ երկու ապարների բեկորներից և կամ մեկ ապարի և մեկ միներալի բեկորներից: Բաղադրիչներից մեկը կարող է գերակշռել, բայց մյուսը 5-10 %-ից պակաս չպետք է լինի: Որպես խառնուրդ (ոչ ավել 5-10 %-ից) կարող են ներկա լինել այլ միներալներ և ապարների բեկորներ:
- О-75. ОЛИГОЦЕН** (հուն. oligos – քիչ, սակավ, աննշան և kainós – նոր) – **ՕԼԻԳՈՑԵՆ, OLIGOCENE**, պալեոգենի համակարգի (ժամանակաշրջանի) վերին բաժնի (ուշ դարակարգ):

**O-76. ОЛИСТОЛИТЫ,** տե՛ս Олисторомы:

**O-77. ОЛИСТОСТРОМЫ** (հուն. ólisthos – սայթաքելիություն, անկայունություն և strōma– փռում, ծածկոց) – **OLIUSNUSIRNUSՆԵՐ, OLISTHOSTROMES,** տարբեր ապարների բեկորների չտեսակավորված վերանստեցված քառասյին խառնակուտակումներ, որոնք ցեմենտացած են նրբահատիկ կավալերիտային զանգվածով: Օ. առաջանում են խոշոր մեծաբեկորների պոկման և լանջով ու ավազանի հատակով սահման (ստորջրյա սողանքներ), ինչպես նաև պղտոր հոսքերի միջոցով՝ կոպտաբեկոր նյութի տեղաշարժման հետևանքով: Խոշոր չափերի բլոկները, որոնք տեղափոխվել են ստորջրյա սողանքների հետևանքով, կոչվում են օլիստոլիթներ: Ըստ կազմի Օ. խիստ անհամասեռ են, քանի որ դրանցում հանդիպում են խիստ տարբեր չափի ու հասակի ապարների բլոկներ ու մեծաբեկորներ: «Օ.» տերմինը առաջարկել է Խտալ. երկրաբան Է. Բենեոն (1956): Գոյություն ունի որոշակի կապ Օ-ի և տեկտ. ծածկույթների միջև: Օ-ի առաջացումը տեղի է ունեցել ակտիվ տեկտ. շարժումների ժամանակահատվածներում՝ ծայրամասային ու ներքին ծովային ավազանների փակման փուլերում, երբ տեղի է ունեցել քարոլորտի սալերի ընդհարում (ավելի հաճախ՝ կղզեաղեղները մայր ցամաքների հետ):

**O-78. ОЛОВО, Sn** (լատ. Stannum) – **ԱՆԱԳ, TIN,** տարրերի պարբերական համակարգի IV խմբի քիմ. տարր: Ա. փափուկ, կռելի, սպիտակ, արծաթափայլ մետաղ է, օդում չի օքսիդանում: Ա. բավական տարածված տարր է, կազմում է երկրի կեղևի  $4 \cdot 10^{-3}$  % (ըստ զանգվածի): Բնության մեջ հանդիպում է միացությունների ձևով: Հայտնի են Ա-ի մոտ 90 միներալներ, որոնցից կարևորը կասիտերիտն է,  $\text{SnO}_2$ : Ա. առավելապես կուտակվում է մագմայական հալոցքի զարգացման ուշ արգասիքներում՝ պեգմատիտներում, ինչպես նաև ջրաջերմային գոյացություններում:

**O-79. ОЛОВЯННЫЕ РУДЫ – ԱՆԱԳԻ ՀԱՆՔԱՔԱՐՆԵՐ, TIN ORES,** բնական միներալային գոյացություններ՝ անագի այնպիսի պարունակությամբ, որոնցից մետաղական անագի կորզումը տնտեսապես շահավետ է: Անագի հիմնական միներալը կասիտերիտն է (անագաքար) ( $\text{Sn} - 78.8$  %), արդյ. որոշ նշանակություն ունի նաև ստանինը: Ա. հ-ի արմատական հնքվ-երը մշակվում են այն դեպքում, երբ անագի պարունակությունը կազմում է 0.1-0.2 %, ցրոնները՝ 0.02-0.07 %: Ըստ ծագման Ա. հ. կապված են թթու գրանիտների հետ և ստորաբաժանվում են անագաքեր պեգմատիտային, քվարց-կասիտերիտային և սուլֆիդ-կասիտերիտային ֆորմացիաների: Ա. հ-ի համաշխարհային պաշարների մոտ 75 % կուտակված է անագի ցրոնային հնքվ-երում:

**O-80. ОЛОВЯНЫЙ КАМЕНЬ – ԱՆԱԳԱՔԱՐ, STANNOLITE, TINSTONE,** նույնն է՝ Касситерит:

**O-81. ОЛОВЯННЫЙ КОЛЧЕДАН – ԱՆԱԳԻ ՀՐԱՔԱՐ, TIN PYRITES,** նույնն է՝ Станнин:

**O-82. ОМОЛОЖЕНИЕ РЕЛЬЕФА – ՌԵԼԻԵՖԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑՈՒՄ, REJUVENATION OF RELIEF,** նախկինում լերկացման (դենուդացիայի) գործընթացներով համահարթված ռելիեֆի հակադրականության մեծացում՝ կապված տեղանքի նոր տեկտ. բարձրացման կամ ողողամաշման հիմնամակարդակի ցածրացման հետ, որոնք հարուցում են գետերի խորքային ողողամաշման վերսկսում և ռելիեֆի մասնատվածության ուժեղացում:

**O-83. ОМОЛОЖЁННАЯ ГОРНАЯ СТРАНА – ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑՎԱԾ ԼԵՈՆԱՅԻՆ ԵՐԿՐԱՍՍ, REJUVENATED MOUNTAINS,** երկարատև լերկացման (դենուդացիայի) հետևանքով իջած և համահարթված լեռնային երկրամաս, որը հերթական տեկտ. բարձրացման շնորհիվ ներառվում է նոր ողողամաշման բոլորաշրջանում և դրա հետևանքով ձեռք է բերում նոր հակադրական լեռնային ռելիեֆ:

- О-84. ОНИКС** (հուն. *όνυx* – սկզբնապես՝ եղունգ) – **ԵՂՆԳՆԱՔԱՐ (ՕՆԻՔՍ), ONYX**, ագատի ժապավենագուլավոր տարատեսակ, բնորոշ է տարբեր գունավորման հարթ-գուգահեռ շերտերի հերթագայում: Տարբերում են բուն եղնգնաքար (սև և սպիտակ շերտերի հերթագայում), սարդօնիքս (գորշ և սպիտակ շերտերի), կարմեղ-օնիքս (սպիտակ և կարմիր շերտերի): Մարմարային Օ. բաղկացած է կալցիտի կամ արագոնիտի հատիկների խիտ, լուսարկող ագրեգատից: Ե. նստում է ածխաթթվային ջրերից կարստածին քարանձավներում և տաք ջրային աղբյուրների ելքերի վայրերում, լցնում է տեկտ. ճեղքերը, առաջացնում է նրբաշերտիկներ կրաքարերում, տրավերտիններում, ավազաքարերում և բազալտային ու անդեզիտադափտային կազմի տուֆերում: Արհեստագործական քար է:
- О-85. ОНКОЛИТЫ** (հուն. *ónkos* – պալար, *lithos* – քար) – **ՕՆԿՈԼԻԹՆԵՐ, ONCOLITES**, բրածո կրային կլորացված առձգումներ (պալարներ)՝ հաճախ համակենտրոն շերտավորությամբ: Օ-ի ծագումը ենթադրաբար կապում են կապտականաչ ջրիմուռների կամ բակտերիաների հետ:
- О-86. ООЛИТ** (հուն. *όόν* – ձու և *lithos* – քար) – **ՕՈԼԻԹ (ՉՎԱՔԱՐ), OOLITE, EGGSTONE**, կլորավուն, գնդանման կամ էլիպսոիդային գոյացումներ, որոնք բաղկացած են ածխաթթվային կրից, երկաթի, մանգանի օքսիդներից և այլն: Բնորոշվում են համակենտրոն-շերտավոր, երբեմն էլ շառավղաճառագայթային (սֆերոլիթ) կազմվածքով (չափերը 0.1-3.0 մմ): Առաջանում է նստվածքակուտակման, դիագենեզի ընթացքում, ապարի փոխարկման այլ գործընթացներում՝ դատարկություններում լուծույթների շրջապտույտի դեպքում:
- О-87. ООЛИТОВАЯ СТРУКТУРА – ՕՈԼԻԹԱՅԻՆ (ՉՎԱՔԱՐԱՅԻՆ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, OOLITIC TEXTURE**, ապարի կառուցվածք, որը ներկայացված է օոլիթներով (ծվաքարերով) և ցենենտացնող նյութով: Տարածված է կրաքարերում, դոլոմիտներում և որոշ նստվածքային հանքանյութերում (երկաթի, բոքսիտային և այլն):
- О-88. ООЛИТОВЫЙ ИЗВЕСТНЯК – ՕՈԼԻԹԱՅԻՆ (ՉՎԱՔԱՐԱՅԻՆ) ԿՐԱՔԱՐ, OOLITIC LIMESTONE**, կրաքար, որը կազմված է հիմնականում կալցիտային օոլիթներից: Օոլիթների առկայությունը վկայում է Օ. կ-երի առաջացման փոքր խորությունների մասին:
- О-89. ОПАЛ** (լատ. *opalus*, հուն. *opállios*, սանսկր. ուպալայից – թանկարժեք քար) – **ՕՊԱԼ, ԾԻԱԾԱՆԱՔԱՐ (ԱՐԵՎԱԿՆ, ԱՐԵՎԱՔԱՐ), OPAL, OPALITE**, միներալ, ջուր պարունակող ամորֆ սիլիկահող (սիլիցիումի օքսիդ): Քիմ. կազմը՝  $SiO_2 \cdot n H_2O$ : Խառնուրդների ձևով սովորաբար առկա են Fe-ի, Al-ի, Mn-ի հիդրօքսիդներ: Առաջացնում է մակահոսուկ, շերտավոր, ծակոտկեն ագրեգատներ: Անգույն է, բայց հեշտությամբ ներկվում է տարբեր քրոմոֆորներով: Տարբերում են ազնիվ Օ. (թափանցիկ), հրավառ Օ. (դեղինից շագանակագույն-կարմիր), կաթնագույն Օ. (կաթի սպիտակ), հասպիսային Օ. (կարմիրից – շագանակագույն), մոմային Օ. (դեղին): Կարծրությունը՝ 5-6: Օ. ժամանակի ընթացքում ջրազրկվում է և փոխակերպվում քաղկեդոնի կամ քվարցի: Մի շարք ապարներ (գեյզերիտ, դիատոմիտ, տրեպել) կազմված են Օ-ից: Առաջանում է նստվածքային ճանապարհով, սիլիկատների հողմահարման ժամանակ, ջրաջերմային գործընթացներում և այլն: Օ-ները կիրառվում են որպես զարդաքար, ազնիվ Օ. թանկարժեք քար է:
- О-90. ОПАЛИТЫ – ՕՊԱԼԻՏՆԵՐ, OPALITES**, նստվածքային ապարների հավաքական անվանում, ապարներ, որոնք 50 % և ավել կազմված են օպալից: Դրանց են պատկանում տրեպելները, օպոկները, դիատոմիտները, գեյզերիտները, ինչպես նաև օպալից բաղկացած ջրաջերմային փոփոխված ապարները:

- О-91. ОПИСАНИЕ РАЗРЕЗА ПОСЛОЙНОЕ – ԿՏՐՎԱԾՔԻ ՇԵՐՍԱՅԻՆ (ՇԵՐՏ ԱՌ ՇԵՐՏ) ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, LIT-BY-LIT DESCRIPTION OF SECTION,** շերտավոր ապարների ուսումնասիրման անհրաժեշտ հիմքն է: Սկսվում է կտրվածքի տիպայնացմամբ, այնուհետև արձանագրվում են բնական ելքերում, լեռնային փորվածքներում, հորատման անցքերում շերտերի նյութական կազմը և տեղաբաշխման կարգը (վարից վեր կամ վերից վար): Յուրաքանչյուր շերտի համար նշվում է ապարի անվանումը, ապարի գլխավոր արտաքին հատկանիշները (հատիկայնություն, շերտայնություն), կտրվածքում համասեռության աստիճանը, հաստությունը, տեղադրման տարրերը, գունավորումը, հատիկայնության բնութագիրը, տվյալ շերտի մակերևույթի բնույթը, շերտավորության մանրամասն բնութագիրը, շերտերի հպումների բնույթը, շերտում օրգանական մնացորդների տեղաբաշխման բնութագիրը, հողմահարման ընթացքում շերտի փոփոխությունները և այլ քարաբանական հատկանիշները: Յուրաքանչյուր շերտից վերցվում են նմուշներ և օրգանական մնացորդներ: Կ. շ. ն. ուղեկցվում է կտրվածքի շերտագրական սյունակի կազմմամբ, ուրվանկարներով, լուսանկարներով և այլն:
- О-92. ОПЛЫВИНА – ՈՂՈՂԱՅՈՒՔ, EARTH FLOW, MUD–STREAM,** փուխր ապարների փոքր հաստության շերտերի քշվել-տարվելը լանջով, երբ հողագրունտները, գերհագեցնալով ձնհալքի, անձրևի և գրունտային ջրերով, անցնում են հոսուն վիճակի և ցեխաջրային շարժում են հիշեցնում:
- О-93. ОПОКА – ՕՊՈԿ, GAIZE, ОРОКА,** մանր ծակոտիներով սիլիցիումային նստվածքային ապար: Կազմված է անորֆ սիլիկատներից (օպալից), կավային նյութի խառնուրդից, օրգանիզմների կմախքային մասերից, միներալային (քվարցի, դաշտասպաթների, գլաուկոնիտի) հատիկներից, SiO<sub>2</sub>-ի պարունակությունը հասնում է 92-98 %: Լայնորեն տարածված է կավճի ու ստորին չորրորդական հասակի ապարներում: Կիրառվում է շինարարության մեջ և որպես աղսորբենտ:
- О-94. ОПОЛЗЕНЬ – ՍՈՂԱՆՔ, LANDSLIDE, LANDSLIP, SLUMP,** լեռնաշանջերի, գետահովիտների և արհեստական թեքությունների վրա զգալի չափերի ապարազանգվածի տեղաշարժ (սահք), որը կատարվում է ծանրահակ ուժերի, ինչպես նաև ջրադինամիկ ճնշման, լանջի վրա արհեստական բեռնվածքի ավելացման (կառուցապատման), երկրաշարժային կամ տեխնածին ցնցումների և այլ ուժերի ներգործությամբ: Ս-ները քայքայում են բնական և արհեստական թեքությունները, ստեղծում են յուրահատուկ սողանքային ռելիեֆ: Ապարների զանգվածի սահքը կատարվում է մեկ կամ մի քանի սահքի մակերևույթներով, որոնք հանդիսանում են Ս-ի բնորոշ կառուցվածքային տարր: Ս-ները խիստ բազմազան են իրենց մասշտաբներով, ապարազանգվածի տեղաշարժի մեխանիզմով, նրա հավասարակշռության խախտման պատճառներով, գործընթացի զարգացման դինամիկայով և այլ ցուցիչներով: Յուրաքանչյուր Ս. բնորոշվում է այս կամ այն աստիճանի կայունացմամբ, որը պայմանավորված է Ս-ի առաջացման պատճառների լիովին կամ ժամանակավոր վերացմամբ:
- О-95. ОПОЛЗЕНЬ АСЕКВЕНТНЫЙ – ԱՍԵԿՎԵՆՏ ՍՈՂԱՆՔ, ASEQUENTIAL LANDSLIDE,** սողանք, որն առաջանում է համասեռ, շերտայնությունից զուրկ ապարներում (կավեր, ավազակավեր, կավավազներ և այլն):
- О-96. ОПОЛЗЕНЬ ДЕЯТЕЛЬНЫЙ – ԳՈՐԾՈՂ (ԳՈՐԾՈՒՆՅԱ) ՍՈՂԱՆՔ, ACTIVE LANDSLIDE,** ներկա ժամանակում շարժվող սողանք:
- О-97. ОПОЛЗЕНЬ ДРЕВНИЙ – ՀԻՆ ՍՈՂԱՆՔ, ANCIENT LANDSLIDE,** սողանք, որը տեղի է ունեցել երկրբ. անցյալում՝ միանգամայն այլ երկրբ. իրադրությունում:

- Օ-98. ОПОЛЗЕНЬ ИНСЕКВЕНТНЫЙ – ԻՆՍԵԿՎԵՆՏ ՍՈՂԱՆՔ, INSEQUENT LANDSLIDE**, սողանք, որն առաջանում է անհամասեռ, շերտավոր, հորիզոնական կամ լանջի թեքությամբ մոտ տեղադրված ապարներում: Ի. ս-ի սահքի մակերևույթը վերին մասում կտրուկ խրվում, ապա դեպի հիմքը աստիճանաբար կորանում է՝ հատելով անհամասեռ ապարաշերտը:
- Օ-99. ОПОЛЗЕНЬ КОНСЕКВЕНТНЫЙ – ԿՈՆՍԵԿՎԵՆՏ ՍՈՂԱՆՔ, CONSEQUENT LANDSLIDE**, սողանք, որն առաջանում է շերտավոր անհամասեռ, հաճախ ճեղքավոր ապարներում: Կ. ս-ի սահքի մակերևույթը հիմնականում համընկնում է երկրբ. շերտերի սահմանային հարթությունների հետ:
- Օ-100. ОПОЛЗЕНЬ ПОГРЕБЁННЫЙ – ԹԱՂՎԱԾ ՍՈՂԱՆՔ, BURIED LANDSLIDE**, սողանք, որը թաղված է նորագույն երկրբ. գոյացությունների տակ, այսինքն՝ ծածկված է այլ երկրաձևաբանական ձևերով:
- Օ-101. ОПОЛЗЕНЬ ПОДВОДНЫЙ – ՍՍՈՐՋՐՅԱ ՍՈՂԱՆՔ, SUBAQUEOUS SLUMP**, սողանք, որն առաջանում է ստորջրյա պայմաններում ջրային ավազանի թեք լանջերին: Ս. ս-ներ առավել հաճախ առաջանում են նստվածքակուտակման արագության կտրուկ տարբերության դեպքում, որը դիտվում է առավելապես ընդջրյա դելտայի գառիկող լանջերին:
- Օ-102. ОПОЛЗНЕВАЯ ТЕРРАСА – ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ԴԱՐՎԱԿԱՆԴ, LANDSLIDE TERRACE, LANDSLIP TERRACE**, սողանքային լանջի վրա առաջացած սանդղաձև դարավանդ:
- Օ-103. ОПОЛЗНЕВОЕ ТЕЛО – ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ, LANDSLIDE BODY, LANDSLIP BODY**, սողանքային գործընթացով ընդգրկված ողջ ապարազանգվածը, որը սահմանափակվում է սահքի մակերևույթով: Ս. մ. բնութագրվում է հաստությամբ, ծավալով, տարածքով և ապարազանգվածի թանձրությամբ:
- Օ-104. ОПОЛЗНЕВЫЕ ДИСЛОКАЦИИ – ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ՏԵՂԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ, LANDSLIP DISLOCATIONS**, ապարների տեղադրման խախտումներ՝ հարուցված սողանքային գործընթացներով: Արտահայտվում են շերտերի խզմամբ և ծնլմամբ՝ ինչպես նստվածքակուտակման ընթացքում (օր.՝ ստորջրյա սողանքներ), այնպես էլ՝ արդեն ձևավորված ապարներում: Նստվածքակուտակմանը համընթաց Ս. տ-ին բնորոշ է կապը մեկ հորիզոնի հետ, ըստ որում՝ ծածկող և տակդիր ապարները, ինչպես նաև նստվածքների մածուցիկահոսունության վիճակին հատուկ հատկանիշները մնում են չխախտված: Ապարների առաջացումից հետո տեղի ունեցող Ս. տ. բնորոշվում են ապարների ջարդոտմամբ և չխախտված շերտերի հետ կտրուկ հպումներով:
- Օ-105. ОПОЛЗНЕВЫЕ НАКОПЛЕНИЯ – ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐ, LANDSLIDE ACCUMULATIONS, LANDSLIP ACCUMULATIONS**, լանջով կամ թեքությամբ սահած ապարների կուտակումներ:
- Օ-106. ОПОЛЗНЕВЫЕ УСТУПЫ – ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ՍԱՆԴՎԱԿԱՆԴՆԵՐ, LANDSLIDE ESCARPS, LANDSLIP ESCARPS**, սողանքի գլխամասում (կրկեսում) դիտվող աստիճանաձև սանդղավանդներ, որոնք առաջանում են զուգահեռ աղեղնաձև պոկման ճեղքերով:
- Օ-107. ОПОЛЗНЕВЫЙ ЦИРК – ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ԿՐԿԵՍ, LANDSLIDE CIRQUE, LANDSLIP CIRQUE**, սողանքի գլխամասում պոկման ճեղքերով առաջացած կիսակլոր փոսորակ, ձևաչափորեն հիշեցնում է ամֆիթատրոն (կրկես):
- Օ-108. ОПОЛЗНЕВЫЙ ЯЗЫК – ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ԼԵԶՎԱԿ, LANDSLIDE TONGUE, LANDSLIP TONGUE**, սողանքային մարմնի վերջնամաս, որը ձևաչափորեն լեզվակ է հիշեցնում:

**Օ-109. ОПОРНОЕ БУРЕНИЕ – ԴԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՀՈՐԱՏՈՒՄ, KEY HOLE DRILLING**, հենակետային տվյալներ ստանալու նպատակով հետազոտական հորատանցքերի համակարգի իրականացում: Ստացված տվյալները հիմք են հանդիսանում ռեգիոնալ և որոնողական աշխատանքների ծավալների ու տեսակների նախագծման, ինչպես նաև հորատանցքերի շինարարության տեխնոլոգիական գործընթացների որոշման համար: Տարբերում են երկրբ. և տեխնոլոգիական Դ. հ.: Երկրբ. Դ. հ. կիրառվում է ռեգիոնալ երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ՝ խոշոր երկրաբանակառուցվածքային տարրերի երկրբ. կառուցվածքը և երկրբ. պատմությունը ուսումնասիրելու, նավթի, գազի, այլ օգտ. հնձ-ների երկրաբանահետազոտական աշխատանքների գիտականորեն առավել հեռանկարային ուղղություններ հիմնավորելու համար: Որպես կանոն, Դ. հ-ները անցկացվում են ռեգիոնալ երկրբ. տվյալների հիման վրա՝ առավել բարենպաստ կառուցվածքային պայմաններում: Հորատումը կատարվում է հանուկի վերցմամբ: Դ. հ. ուղեկցվում է բացահայտվող նստվածքների լրիվ երկրբ. և երկրբ. համալիր ուսումնասիրությամբ:

**Օ-110. ОПРОБОВАНИЕ – ՆՍՈՒՇԱՅԱՆՈՒՄ (ՆՍՈՒՇԱՌՈՒՄ), SAMPLING**, օգտակար հանածոյի բաղադրության կամ այլ ցուցանիշների ու հատկությունների ուսումնասիրման նպատակով նրանից նմուշ վերցնելու, մշակելու և հետազոտելու գործույթների ամբողջություն:

**Օ-111. ОПРОБОВАНИЕ ВОДЫ – ՋՐԻ ՆՍՈՒՇԱՅԱՆՈՒՄ (ՆՍՈՒՇԱՌՈՒՄ), WATER SAMPLING**, լաբորատոր ուսումնասիրությունների համար ջրի նմուշի վերցումը և տեղում ջրի ջերմաստիճանի, ֆիզ. հատկանիշների և մի շարք քիմ. բաղադրիչների (ցնդող տարրեր, PH) որոշում: Նմուշահանման են ենթարկվում աղբյուրները, հորատանցքերը, ջրհորերը, գետերը, լճերը և այլ ջրակետեր: Ջ. ն. կատարվում է հանույթի, ջրաբանական, ջրաերկրբ. և այլ հետազոտությունների ժամանակ:

**Օ-112. ОПРОБОВАНИЕ ГЕОФИЗИЧЕСКОЕ – ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ՆՍՈՒՇԱՅԱՆՈՒՄ, GEOPHYSICAL SAMPLING**, օգտ. հնձ-ների որակի որոշում, որի հիմքում ընկած է նրա ֆիզ. հատկությունների կախվածությունը տարբեր տարրերի պարունակությունից (օր.՝  $\alpha$ ,  $\beta$  կամ  $\gamma$  ճառագայթման ուժգնությունը կախված է հանքանյութի մեջ ճառագայթաակտիվ տարրերի պարունակությունից): Ե. Ն. հաճախ հնարավորություն է տալիս բաղադրիչների որոշում՝ առանց նմուշահանման, որը հատկապես կարևոր է հորատանցքերի նմուշահանման դեպքում:

**Օ-113. ОПРОБОВАНИЕ ГЕОХИМИЧЕСКОЕ – ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՆՍՈՒՇԱՅԱՆՈՒՄ, GEOCHEMICAL SAMPLING**, հանքանյութի մեջ մեկ տարրի պարունակության որոշումը հաշվարկային եղանակով՝ կախված մյուսների պարունակությունից (ըստ դրանց միջև եղած հարաբերակցական կախվածության): Օր.՝ հանքանյութի մեջ Cd-ի պարունակությունը՝ ըստ Zn-ի պարունակության: Երբեմն մեկ տարրի պարունակությունը (օր.՝ մագնետիտի հանքաքարում Co-ի պարունակությունը) բացահայտվում է ըստ երկու տարրերի (Fe և S) պարունակության:

**Օ-114. ОПРОБОВАНИЕ МИНЕРАЛОГИЧЕСКОЕ – ՄԻՆԵՐԱԼՈԳԻԱԿԱՆ ՆՍՈՒՇԱՅԱՆՈՒՄ, MINERALOGICAL SAMPLING**, գործույթների ամբողջություն, որի նպատակը օգտ. հնձ-ների միներալային կազմի քանակական և որակական որոշումն է: Որոշվում են միներալների կառուցվածքային ու կազմվածքային առանձնահատկությունները (միներալների հատիկների ու ագրեգատների չափերը, ձևերը, փոխհարաբերությունը), միներալների ֆիզ. հատկությունները (խտությունը, կարծրությունը, փխրունությունը, հերձումը, ճառագայթաակտիվությունը, մագնիսական ընկալունակությունը, էլեկտրահաղորդականությունը, տարբեր թթուներ

րում լուծելիությունը և այլն), միներալների քիմ. բաղադրությունը, միներալների տեղաբաշխումը հանքանյութերի բնական տիպերում և արդյ. տեսակներում:

**Օ-115. ОПРОБОВАНИЕ ПЛАСТОВ – ՇԵՐՏԵՐԻ ՆՍՈՒՇԱՅԱՆՈՒՄ, TESTING OF PRODUCING HORIZON, SEAM TESTING**, արդյունավետ նավթագազաբեր շերտի սահմանների, նրա նավթագազահագեցվածության, ինչպես նաև շերտային ճնշման և ջերմաստիճանի որոշում: Սովորաբար կատարվում է նավթի և գազի հետախուզական հորատանցքի հորատման գործընթացում՝ մինչև ամրակապման շարասյան իջեցումը:

**Օ-116. ОПРОБОВАНИЕ ХИМИЧЕСКОЕ – ՔԻՄԻՎԱԿԱՆ ՆՍՈՒՇԱՅԱՆՈՒՄ, CHEMICAL SAMPLING**, օգտ. հնձ-ների քիմ. բաղադրության որոշում հետևյալ նպատակներով՝ տարբեր բաղադրիչների պաշարների հաշվարկ, ոչ որոշակի սահմաններ ունեցող հանքակուտակների հաստության և մակերեսների որոշում, հանքանյութերի բնական տիպերի և արդյ. տեսակների ուսումնասիրություն, կորուստների հաշվառում, հանքանյութի ընտրովի արդյունահանույթի օպերատիվ ղեկավարություն և այլն:

**Օ-117. ОПРОБОВАНИЕ ШЛИХОВОЕ – ՍՂԿՎԱԾՔԱՅԻՆ (ՍՂԿԱՅԱՆՔԱՅԻՆ) ՆՍՈՒՇԱՅԱՆՈՒՄ, HEAVY CONCENTRATE SAMPLING**, մեխ. (ավազակոպճային) պսակների և ցրման հոսքերի միներալային նմուշահանում՝ սղկվածքային (ծանր) միներալների բաղադրության և քանակական փոխհարաբերության հետազոտման նպատակով: Այդ նպատակով երբեմն ուսումնասիրվում են արմատական ապարների սղկվածքային միներալները:

**Օ-118. ОПРОКИНУТАЯ СКЛАДКА – ՇՐՋՎԱԾ ԾԱԼՔ, OVERTURNED FOLD, INVERTED FOLD**, ծալք ապարների շերտերում՝ ուժեղ թեքված առանցքային հարթությամբ: Թևերից մեկի շերտերն ունեն շրջված տեղադրում:

**Օ-119. ОПРОКИНУТОЕ ЗАЛЕГАНИЕ, ПЕРЕВЕРНУТОЕ ЗАЛЕГАНИЕ – ՇՐՋՎԱԾ ՏԵՂԱԴՐՈՒՄ, OVERTURNED BEDDING, REVERSED BEDDING, INVERTED BEDDING**, շերտերի տեղադրում, որի դեպքում ավելի հին շերտերը պառկած են ավելի երիտասարդների վրա, և դրանց հատակը ուղղված է դեպի վեր, իսկ առաստաղը՝ ներքև (օր.՝ պառկած կամարածալքի ստորին թևում):

**Օ-120. ОПРОКИНУТОЕ КРЫЛО – ՇՐՋՎԱԾ ԹԵՎ, INVERTED LIMB OF FOLD, OVERTURNED LIMB OF FOLD**, շրջված կամ պառկած ծալքի թև, որում դիտվում է շերտերի հակադարձ շերտագրական հաջորդականություն:

**Օ-121. ОПУСКАНИЕ СУШИ – ՑԱՍԱՔԻ ԻՉԵՑՈՒՄ, SUBSIDENCE OF LAND, LAND SUBSIDENCE**, մայր ցամաքի և նրա առանձին մասերի իջեցում (ցածրացում) Չանաշխարհային օվկիանոսի մակարդակի նկատմամբ՝ կապված տեկտ. շարժումների հետ: Ց. ի., ինչպես նաև օվկիանոսի մակարդակի բարձրացումը, հարուցում է ծովի առաջխաղացում (ծովարշավ): Ց. ի-ման մասին է վկայում խոշոր գետերի գետաբերանային մասի ջրածածկումը, մերձափնյա ծովերի հատակում գետահովիտների շարունակությունը և այլն:

**Օ-122. ОПУЩЕННОЕ КРЫЛО – ԻՉԱԾ ԹԵՎ, DOWNTHROWN SIDE**, վարնետքի կամ վերնետքի ներքև տեղաշարժված թև:

**Օ-123. ОРБИТОИДЫ (Orbitoides) – ՕՐԲԻՏՈՒԴՆԵՐ, ORBITOIDS**, ֆորամինիֆերների ենթադասի նումուլիտիդների կարգի բնորոշ սեռերից է: Խեցին խոշոր է, տափակացած: Չարգացման սկզբնական փուլում բազմաթիվ խցիկները դասավորված են պարուրած, այնուհետև՝ համակենտրոն օղակներով: Ուշ կավիճ – այժմ:

**Օ-124. ОРГАНОГЕННАЯ ТЕКСТУРА, БИОГЕННАЯ ТЕКСТУРА** (հուն. bios – կյանք և genēs – ծնող, ծնված) – **ՕՐԳԱՆԱԾԻՆ ԿԱԶՄՎԱԾՔ, ԿԵՆՍԱԾԻՆ ԿԱԶՄՎԱԾՔ**,

**ORGANIC TEXTURE, ORGANOGENOUS STRUCTURE**, նստվածքային ապարների կազմվածք, որի ծագումը կապված է նստվածքի ձևավորման ընթացքում տարբեր օրգանիզմների կենսագործունեության հետ (թաղման հետքեր, տարբեր բծեր, բներ, խողովակիկներ, ֆուկոիդներ և այլն):

**O-125. ОРГАНОГЕННЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ – ՕՐԳԱՆԱԾԻՆ ԱՊԱՐՆԵՐ, ORGANIC ROCKS**, տե՛ս Биогенные горные породы:

**O-126. ОРГАНОГЕННЫЙ РЕЛЬЕФ – ՕՐԳԱՆԱԾԻՆ ՌԵԼԻԵՖ, BIOGENIC LAND-FORMS**, ռելիեֆի ձևեր, որոնք երկրի մակերևույթում գոյանում են կենդանիների ու բույսերի գործունեության հետևանքով, օր.՝ բուստային կառույցներ, տերմիտ-նիկներ, խլուրդի բներ և այլն:

**O-127. ОРДОВИКСКАЯ СИСТЕМА (ПЕРИОД), ОРДОВИК** (Ուելսի տարածքում բնակված հին ցեղերի՝ օրդովիկների, լատ. Ordovices անունով, Անգլ.) – **ՕՐԴՈՎԻԿԻ ՀԱՍՎԱՐԳ (ԺԱՍՆԱՎԱՇՐՋԱՆ), ՕՐԴՈՎԻԿ, ORDOVICIAN**, պալեոզոյան էրատեմայի ներքևից երկրորդ համակարգ, համապատասխանում է երկրի երկրբ. պատմության պալեոզոյան դարաշրջանի երկրորդ ժամանակաշրջանին, շերտագրական (երկրաժամանակագրական) սանդղակում հաջորդում է քեմբրիի համակարգին (ժամանակաշրջանին) և նախորդում է սիլուրի համակարգին (ժամանակաշրջանին): Օ. հ-ի սկիզբը թվագրվում է 490 մլն. տ., իսկ վերջը՝ 443 մլն. տ. առաջ: Սահմանել է անգլ. երկրաբան Ռ. Մուրչիսոնը՝ 1835-ին: Անվանումը առաջարկել է անգլ. երկրաբան Չ. Լապլորթը (1879): Որպես ինքնուրույն համակարգ՝ ընդունվել է 1960-ին Միջազգային երկրբ. վեհաժողովում: Մինչ այդ շատ երկրներում Օ. հ. դիտվում էր որպես սիլուրի համակարգի ստորին բաժին: Մինչև այժմ գոյություն չունի Օ. հ-ի ընդհանուր ընդունված ստորաբաժանում՝ բաժինների ու հարկերի: Շատ երկրներում ստորաբաժանվում է երեք բաժնի՝ ստորին (հարկերը ներքևից վեր՝ տրեմատոկի, արենիզի), միջին (լլանվիրնի, լլանդեյլի և կարադոկի) և վերին (աշգիլյան): Օ. հ. առանձնացվում է բոլոր մայր ցամաքներում (բացի Անտարկտիդայից): Օ. հ-ի նստվածքները մասնակցում են պլատֆորմների զգալի մասի ծածկոցի կազմում և լայնորեն տարածված են ծալքավոր համակարգերում: Օ. հ-ի վերջում կալեդոնյան ծալքավորության արտահայտման հետևանքով ձևավորվեցին ծալքավոր կառույցներ և լեռնային համակարգեր (Ղազախստան, Շոտլանդիա և այլն): Ծովերում գոյություն են ունեցել բազմազան անողնաշարավորներ (ռադիոլարիաներ, ֆորամինիֆերներ, գրապտոլիթներ և այլն), տիրապետել են ջրիմուռները: Օգտ. հնձ-ներից Օ. հ-ի ապարներում առավել հայտնի են այրվող թերթաքարերը (Մերձբալթիկա), ֆոսֆորիտները, նավթը (ԱՄՆ), երկաթի հանքանյութերը:

**O-128. ОРЕОЛ РАССЕЯНИЯ** (ֆրանս. auréole, լատ. corona aureola-ից – ոսկե պսակ) – **ՑՐՄԱՆ ՊՍԱԿ, DISPERSION HALO, HALO OF DISPERSION**, օգտ. հնձ-ների հնքվ-ին մոտիկ զոնա, որը բնութագրվում է հանքամարմինները ներփակող ապարներում քիմ. տարրերի բարձրացված պարունակությամբ: Ց. պ-ները կապված են հանքագոյացման գործընթացների (առաջնային) և հողմահարման գործընթացների (երկրորդային) հետ: Ց. պ-ների բացահայտման համար գոյություն ունեն օգտ. հնձ-ների որոնման երկրբ. մեթոդներ:

**O-129. ОРИЕНТИРОВКА ГАЛЕК – ԾԱԼԱՔԱՐԵՐԻ ԿՈՂՄՆՈՐՇՈՒՄ, ORIENTATION OF RUBBLES**, պայմանավորված է ջրաբերուկների շարժման ջրադինամիկ ռեժիմով: Երկարացված և տափակեցված ճալքաքարերը երկար առանցքներով կողմնորոշվում են ուղղահայաց (հատակին գլորվելիս) կամ զուգահեռ (կախված վիճակում տեղափոխվելիս) հոսքին: Մերձափնյա ճալքաքարերում երկար առանցքը հաճախ զուգահեռ է ափային գծին, իսկ կարճ առանցքը թեքված է դեպի ծովի կողմը:



- Օ-130. ОРИЕНТИРОВКА ОРГАНИЧЕСКИХ ОСТАТКОВ – ՕՐԳԱՆԱԿԱՆ ՄՆԱՑՈՐԴ-ՆԵՐԻ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ, ORIENTATION OF ORGANIC REMAINS**, օրգանական մնացորդների կարգավորված դասավորությունը կախված է նրանց ձևից և տեղափոխման միջավայրի բնույթից: Երկարացված օրգանական մնացորդները հոսքերում դասավորված են երկար առանցքներով՝ ափի երկարությամբ:
- Օ-131. ОРИКТОЦЕНОЗ (հուն. oryktós – փորված, բրածո և koinós – ընդհանուր) – ՕՐԻԿՏՈՑԵՆՈՋ, ОРЫСТОЦЕНОЗИС**, օրգանական մնացորդների համալիր, որը հանդիպում է բրածո վիճակում՝ մեկ վայրում:
- Օ-132. ОРИНЬЯК, ОРИНЬЯКСКАЯ КУЛЬТУРА – ՕՐԻՆՅԱԿ, ՕՐԻՆՅԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹ, AURIGNACIAN**, ուշ պալեոլիթի վաղ շրջանի հնագիտական մշակույթ: Անվանվել է ըստ Օրինյակ քարայրի (Ֆրանսիայի Վերին Գարոն դեպարտամենտում) պեղումների: Ֆրանսիայում այն թվագրվում է մ. թ. 33000-19000 տ.: Հաջորդել է մուստիերյան մշակույթին: Տարածված է եղել Արմ. և Կենտր. Եվրոպայի մի շարք երկրներում:
- Օ-133. ОРОГЕН (հուն. óros – լեռ և génos – ծնունդ, ծագում) – ԼԵՌՆԱԿԱՌՈՒՅՑ, OROGEN**, լեռնային կառույց, որը գոյացել է երկրասինկլինալի տեղում՝ նրա զարգացման ավարտման փուլում (հետերկրասինկլինալային լեռնագոյացում) կամ պլատֆորմի տեղում՝ նրա ակտիվացման փուլում (հետպլատֆորմային լեռնագոյացում): Տերմինը առաջարկել է ավստ. երկրաբան Լ. Քոբերը 1921-ին, երկրակեղևի տեկտ. շարժումն զոնաների (երկրասինկլինալների) զարգացման եզրափակիչ փուլի համար: Այդ փուլը բնորոշվում է վերընթաց շարժումների գերակշռությամբ և լեռների գոյացմամբ: Քոբերը գտնում էր, որ Լ. ունի համաչափ կազմություն և զետեղված է կոշտ զանգվածների (կրատոգենների) միջև: Նա Լ. բաժանում էր մի քանի զոնաների: Կենտրոնական մասը կոշտ գրանիտային զանգվածներն են (ինտերնիդներ), դրանց երկու կողմերում տեղաբաշխված են ցենտրալիդները, զոնաներ, որոնք կազմված են հրաբխային ու նստվածքային ապարներից և իրենցից ներկայացնում են խոշոր մակաշարժեր՝ դեպի կրատոգենների կողմը: Ցենտրալիդներին հարում են մետամորֆիդները, որոնք ներկայացված են փոխակերպված նստվածքային ու մագմայական ապարներով (օֆիոլիթներ): Լ.-ի ծայրամասային զոնաները՝ էքստերնիդները, բաղկացած են ֆլիշից: «Լ.» տերմինին հաճախ փոխարինում է «ծալքավոր լեռնային կառույց» տերմինը:
- Օ-134. ОРОГЕНЕЗ, ОРОГЕНЕЗИС (հուն. óros – լեռ և génos – ծագում, առաջացում) – ԼԵՌՆԱԳՈՅԱՑՈՒՄ, OROGENY, OROGENESIS**, “Орогенические движения” տերմինի հոմ:
- Օ-135. ОРОГЕНИЧЕСКИЕ ДВИЖЕНИЯ – ԼԵՌՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՀԱՐԺՈՒՄՆԵՐ, OROGENIC MOVEMENTS**, երկրակեղևի շարժումներ, որոնք հանգեցնում են լեռների գոյացման (ամերիկյան երկրաբան Գ. Ջիլբերտի պատկերացմամբ, 1890): Հակադրվում է էպեյրոգեն շարժումներին, որոնք գոյացնում են մայր ցամաքներ, սարավանդներ, օվկիանոսային և մայրցամաքային ավազաններ: Գերմ. երկրաբան Յ. Շտիլեն Լ. շ-ի գլխավոր արդյունքը համարում է ոչ թե լեռնագոյացումը, այլ ծալքագոյացումը: Այժմ «Լ. ժ.» տերմինը օգտագործվում է լեռնագոյացում իմաստով:
- Օ-136. ОРОГРАФИЯ (հուն. óros – լեռ և grápho – գրում են, նկարագրում են) – ԼԵՌՆԱԿՐՈՒԹՅՈՒՆ**, տե՛ս Морфография:
- Օ-137. ОРОМЕТРИЯ (հուն. óros – լեռ և metréo – չափում են) – ԼԵՌՆԱՉՈՒԹՅՈՒՆ, OROMETRY**, երկրի մակերևույթի ռելիեֆի արտաքին տեսքի նկարագրություն՝ առանց դիտարկելու ռելիեֆի ծագման, հասակի և զարգացման հարցերը:

- O-138. ОРТИТ** (հուն. orthós – ուղիղ, ըստ բյուրեղների կանոնավոր ձևի) – **ՕՐԹԻՏ, ORTHITE**, միներալ սիլիկատների դասից: Բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է: Առաջացնում է հատվածակողմային բյուրեղներ, հատիկավոր ագրեգատներ, անկանոն անջատումներ: Գույնը՝ գորշ, սև, կարծրությունը՝ մինչև 6: Կիրառվում է ապարների բացարձակ հասակը կապարային մեթոդով որոշելու և հազվագյուտ տարրեր (Ce, V և այլն) կորզելու համար:
- O-139. ОРТО...** (հուն. orthós – ուղիղ, կանոնավոր, իրական) – **ՕՐԹՈ..., ORTHO...**  
 1) նախածանց, բարդ բառերում օգտագործվում է մագմայական ապարների փոխակերպության հետևանքով առաջացած ապարների նշանակման համար (օր.՝ օրթոգնեյսներ): 2) Օրթո..., մետա..., պարա... քիմիայում՝ բենզոլային օղակում երկու տեղակալիչների դիրքերը միմյանց նկատմամբ ցույց տվող համառոտ նշանակում:
- O-140. ОРТОГЕОСИНКЛИНАЛЬ** (հուն. orthós – ուղիղ և երկրասինկլինալ) – **ՕՐԹՈՒԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԼ, ORTHOGEOSYNCLINE**, լայնարձակ գծային ձգված, միջմայրցամաքային շարժում գոտի, որտեղ երկրբ. զարգացման երկրասինկլինալային պայմանները արտահայտված են առավել լրիվ և տիպական: Երկրակեղևի ծալքավորման ու բարձրացման հետևանքով Օ. փոխարկվում է ծալքավոր լեռնային կառույցի: Օ. սովորաբար կազմված է երկայնակի էվերկրասինկլինալային (ուժգին սկզբնական մագմայականությամբ) և միտերկրասինկլինալային (մագմայականության թույլ արտահայտմամբ) զոնաներից:
- O-141. ОРТОГНЕЙС – ՕՐԹՈԳՆԵՅՍ (ՕՐԹՈԳՂՁԱՔԱՐ), ORTHOGNEISS**, գնեյս (գղձաքար), որն առաջացել է արտաժայթքային ապարների խոր փոխակերպության հետևանքով:
- O-142. ОРТОКЛАЗ** (հուն. orthós – ուղիղ և klásis – ճեղքում, կտրատում, բեկում) – **ՕՐԹՈՎԼԱՉ, ORTHOCLASE**, ապարակազմիչ միներալ ալկալիական դաշտային սպաթների խմբից: Քիմ. կազմը՝  $K[AlSi_3O_8]$ : Խառնուրդների ձևով պարունակում է Na, սակավ՝ Ba, փոքր քանակներով՝ Fe, Ca, Rb և այլն: Բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է: Առաջացնում է բյուրեղներ, ներփակվածքային հատիկներ, հատիկավոր ագրեգատներ: Բնորոշ է երկուղղությամբ հերձումը: Գույնը՝ բաց վարդագույն, գորշ, դեղին, մսի կարմիր: Փայլը՝ ապակու: Կարծրությունը՝ 6: Շատ մագմայական և փոխակերպային ապարների (գրանիտներ, սիենիտներ, պորֆիրներ, գնեյսներ, միզմատիտներ, պեզմատիտներ և այլն) կարևորագույն ապար կազմող միներալներից է: Հողմահարման ժամանակ փոխարկվում է կաոլինիտի:
- O-143. ОРТОФИР, ОРТОКЛАЗОВЫЙ ПОРФИР** (օրթոկլազից և պորֆիր) – **ՕՐԹՈՒՖԻՐ, ՕՐԹՈՎԼԱՉԱՅԻՆ ՊՈՐՓՅՈՒՐ, ORTHOPHYRE, ORTHOCLASE PORPHYRY**, պորֆիրային (անքվարց) տրախիտ, որում պորֆիրային ներփակվածքները ներկայացված են կալիումական դաշտային սպաթներով (օրթոկլազ և մյուսները), երբեմն՝ ալագիոկլազի հետ: Հազվադեպ հանդիպում են կլինոպիրոքսենը, ամֆիբոլը, բիոտիտը, հիմնական զանգվածը բաղկացած է այդ նույն միներալներից: Հին տրախիտային ապարազանգվածների տիպական բաղադրամասն է:
- O-144. ОРУДЕНЕНИЕ – ՀԱՆՔԱՅՆԱՑՈՒՄ, MINERALIZATION**, 1) ապարում հանքային միներալների առկայություն՝ անկախ դրանց պարունակությունից և տեղաբաշխման բնույթից, 2) գործընթաց, որի հետ կապված է ապարում հանքային միներալների հայտնվելը:
- O-145. ОРУДЕНЕНИЕ ПРОЖИЛКОВОЕ – ՆՐԲԵՐԱՎԱՅԻՆ ՀԱՆՔԱՅՆԱՑՈՒՄ, VEINLET MINERALIZATION**, ներկայացված է տարբեր ուղղություն ունեցող բազմաթիվ հանքային նրբերակների ցանցով:

**O-146. ОСАДКОНАКОПЛЕНИЕ, СЕДИМЕНТАЦИЯ – ՆՍՏՎԱԾՔԱՎՈՒՏԱԿՈՒՄ, SEDIMENTATION**, բնական պայմաններում բոլոր տեսակի նստվածքների առաջացման գործընթաց, երբ տեղի է ունենում շարժում, կախութային կամ լուծված վիճակից (ջրային կամ օդային միջավայրում) նստեցվող նյութի անցումը անշարժի (նստվածքի): Ն. տեղի է ունենում գետերի, լճերի, ծովերի ու օվկիանոսների հատակին, ինչպես նաև ցամաքի մակերևույթին: Բեկորային նյութին և լուծույթներին են միանում օրգանիզմների կենսագործունեության, հրաբխային ժայթքումների արգասիքները և տիեզերական նյութը: Արդյունքում ստացվում է նստվածք, որը փուխր է ու ծակոտկեն, մասամբ կամ լրիվ հագեցած է ջրով, բաղկացած է տարբեր պինդ բաղադրիչներից (բեկորային, կենսածին, քիմիածին), հեղուկ ֆազից, գազերից և ինչ-որ քանակի մահացած կամ կենդանի օրգանական նյութից (բակտերիաներ և այլն):

**O-147. ОСАДКОБРАЗОВАНИЕ СОВРЕМЕННОЕ АРИДНОЕ – ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՉՈՐԱՅԻՆ (ԱՐԻԴԱՅԻՆ) ՆՍՏՎԱԾՔԱՎՈՅՑՈՒՄ, RECENT ARID SEDIMENTATION**, նստվածքագոյացում Երկրի չորային (արիդ) զոնաներում: Ցամաքում բնութագրվում է ֆիզ. հողմահարման կտրուկ տիրապետմամբ քիմիականի նկատմամբ, հողմային (էոլյան) գործընթացների լայն տարածմամբ, հոսքի ցածր մոդուլներով, ներմայրցամաքային ջրավազաններում՝ քիմիածին, ինչպես նաև կենսածին կարբոնատակուտակման և աղագոյացման զարգացմամբ, օվկիանոսներում ու ծայրամասային ծովերում՝ ցամաքածին ու կենսածին նստվածքակուտակման ցածր տեմպերով, հողմային նյութի դերի մեծացմամբ:

**O-148. ОСАДКОБРАЗОВАНИЕ СОВРЕМЕННОЕ ГУМИДНОЕ – ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽՈՆԱՎ (ՀՈՒՄԻԴԱՅԻՆ) ՆՍՏՎԱԾՔԱՎՈՅՑՈՒՄ, RECENT HUMID SEDIMENTATION**, նստվածքագոյացում Երկրի խոնավ (հումիդ) զոնաներում (հս. և հր. բարեխառն և հասարակածային): Ցամաքում բնորոշվում է քիմ. հողմահարման զարգացմամբ (հողմահարման կեղև), ցամաքային ջրանստվածքային գոյացություններով (դելյուվիալ, ալյուվիալ, լճային, ճահճային), հոսքի բարձր մոդուլով, ներմայրցամաքային ջրավազաններում՝ ցամաքածին, ավելի քիչ կենսածին նստվածքների կուտակմամբ, օվկիանոսներում ու ծայրամասային ծովերում՝ կենսածին սիլիցիումային (դիատոմային, ռադիոլարիային) և կարբոնատային (ֆորամինիֆերային, բուստային), ինչպես նաև ցամաքածին նստվածքների կուտակմամբ և նստվածքակուտակման համեմատաբար բարձր արագությամբ:

**O-149. ОСАДКОБРАЗОВАНИЕ СОВРЕМЕННОЕ КОНТИНЕНТАЛЬНОЕ – ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՑԱՍԱՔԱՅԻՆ ՆՍՏՎԱԾՔԱՎՈՅՑՈՒՄ, RECENT CONTINENTAL SEDIMENTATION**, ժամանակակից նստվածքագոյացման գործընթացներ ցամաքում և ցամաքային ջրավազաններում (լճերում, գետերում, ճահիճներում): Ժամանակակից ցամաքի մեծ մասը իրենից ներկայացնում է լերկացման (դենուդացիայի) մարզ, իսկ Ժ. ց. ն. կրում է անկայուն, ընդհատ բնույթ, չնայած կուտակման արագությունները առանձին կուտակումային տեղամասերում լինում են շատ բարձր: Ժ. ց. ն-ման գործընթացներում ձևավորվում են գլխ. բեկորային ու կավային ապարներ: Լայն տարածված են նաև կենսածին գործընթացները՝ տորֆերի, սապրոպելային և դիատոմային տիղմերի, գետնահողերի առաջացումը: Ժ. ց. ն-ման քիմիածին գործընթացները տարածված են հիմնականում չորային զոնաների ջրավազաններում: Ակտիվ հրաբխայնության շրջաններում Ժ. ց. ն-ման մեջ զգալի դեր ունեն հրաբխային գործընթացները:

**O-150. ОСАДКООБРАЗОВАНИЕ СОВРЕМЕННОЕ ЛЕДОВОГО ТИПА – ՍԱՌՑԱՅԻՆ ՏԻՊԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆՏՏՎԱԾՔԱԳՈՅԱՑՈՒՄ, RECENT GLACIAL TYPE OF SEDIMENTATION**, նստվածքակուտակում մայրցամաքային սառցապատումների մարզերում (Անտարկտիդա, Գրենլանդիա) և դրանց անմիջական հարող ծովերում ու օվկիանոսներում, որտեղ լերկացման (դենուդացիայի), նստվածքային նյութի տեղափոխման ու կուտակման առաջատար գործոն են հանդիսանում սառույցները (մայրցամաքային սառցադաշտերը, սառցասարերը): Բնորոշվում է ապարների քիմ. հողմահարման լրիվ բացակայությամբ, ցամաքում՝ սառցաբերուկ (մորենային) և ջրասառցադաշտային (ֆլուվիոգլյացիալ), ծովերում՝ սառցածովային և սառցասարային նստվածքների տարածմամբ:

**O-151. ОСАДКООБРАЗОВАНИЕ СОВРЕМЕННОЕ МОРСКОЕ – ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԾՈՎԱՅԻՆ ՆՏՏՎԱԾՔԱԳՈՅԱՑՈՒՄ, RECENT MARINE SEDIMENTATION**, նստվածքների առաջացում ծովային ավազաններում: Տարբեր կլիմայական պայմաններում և տարբեր տիպի ծովերում տարբեր կերպ է ընթանում, օվկիանոսից տարբերվում է եզրակալող ցամաքի ավելի ուժեղ ազդեցությամբ (ջրավազանի ավելի ուժգին սնմամբ): Օվկիանոսի հետ ազատորեն հաղորդակցվող լայնատարած ու խոր ծայրամասային ծովերում Ժ. Ժ. Ա. նմանվում է օվկիանոսայինին: Տերմինը օգտագործվում է լայն իմաստով և վերաբերվում է ինչպես ծովերին, այնպես էլ օվկիանոսներին, տե՛ս Морские отложения:

**O-152. ОСАДКООБРАЗОВАНИЕ СОВРЕМЕННОЕ ПРИБРЕЖНОЕ – ՄԵՐՉԱՓՆՅԱ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆՏՏՎԱԾՔԱԳՈՅԱՑՈՒՄ, RECENT COASTAL SEDIMENTATION**, նստվածքակուտակման գործընթացներ մերձափնյա զոնայում, որոնց հետևանքով հիմնականում տեղի է ունենում ծով ներթափանցող ցամաքածին նյութի վերաբաշխում: Մ. Ժ. Ա. բնորոշվում է ֆացիաների մեծ խայտաբղետությամբ, շերտավորության տեսակների բազմազանությամբ: Մերձափնյա զոնայում նստվածքային նյութի տարբերակումը կապված է ալիքային մեխ. նստեցման հետ, որը պայմանավորում է խիստ անկայուն (ըստ ֆացիալ կազմի, կտրվածքի) ստվարաշերտերի գոյացումը, ինչպես նաև նյութի լայն տարածված գատումը՝ ըստ հատիկաչափական ու միներալային կազմի: Մ. Ժ. Ա-ման ժամանակ քիմիակենսբ. նստեցումը ունի ենթակա և տեղային նշանակություն: Մ. Ժ. Ա. ներառում է նստվածքների տարբեր ֆացիալ տիպեր՝ լողափի, դելտային, ծովալճակային և այլն:

**O-153. ОСАДОЧНЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ – ՆՏՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐ, SEDIMENTARY ROCKS**, ապարներ, որոնք առաջացել են նյութի նստման միջոցով ջրային միջավայրում, սակավադեպ՝ օդից և սառցադաշտերի գործունեության հետևանքով՝ ցամաքի մակերևույթին, ծովային և օվկիանոսային ավազաններում: Նստումը կարող է տեղի ունենալ մեխ. (ծանրության ուժի և միջավայրի դինամիկայի փոփոխման ներգործությամբ), քիմ. (ջրային լուծույթներից) ճանապարհով, ինչպես նաև՝ կենսածին (օրգանիզմների կենսագործունեության ազդեցությամբ): Կախված նստման բնույթից՝ Ն. ա. լինում են բեկորային, քիմիածին և օրգանածին (կենսածին): Ն. ա-ի առաջացման համար նյութի աղբյուր են երկրակեղևը կազմող մագմայական, փոխակերպային և ավելի հին նստվածքային ապարների հողմահարման մնացորդները, ջրերում լուծված բաղադրամասերը, մթնոլորտային գազերը, օրգանիզմների կենսագործունեության ընթացքում գոյացող արգասիքները, հրաբխային գոյացությունները, տիեզերական նյութը: Որոշ Ն. ա. (կրաքարեր, ածուխ, դիատոմիտներ և այլն) ամբողջովին կազմված են օրգանական մնացորդներից:

Ն. ա. առաջացնում են շերտեր, ոսպնյակներ և տարբեր չափի ու ձևի այլ

երկր. մարմիններ, որոնք երկրակեղևում տեղադրվում են բնականոն-հորիզոնական, թեք կամ բարդ ծալքերի տեսքով: Ն. ա-ի առաջացումը տեղի է ունենում հետևյալ սխեմայով՝ սկզբնական արգասիքների գոյացում՝ մայր ապարների քայքայման ճանապարհով, նյութի տեղափոխում ջրի, քամու, սառցադաշտերի օգնությամբ և նստում՝ ցամաքում ու ջրային ավազաններում: Դրա հետևանքով առաջանում է ծակոտկեն և փուխր, ջրով հագեցած նստվածք, որը կազմված է տարասեռ բաղադրամասերից: Այդ նստվածքը չհավասարակշռված բարդ ֆիզքին. (և մասամբ կենսբ.) համակարգ է, որը ժամանակի ընթացքում աստիճանաբար փոխարկվում է նստվածքային ապարի: Ն. ա-ի դասակարգման հիմքում ընկած է նրանց կազմը և ծագումնաբանությունը: Տարբերում են Ն. ա-ի տասից ավելի խմբեր՝ բեկորային, կավային, գլաուկոնիտային, սիլիցիումային, երկաթային, մանգանային, ֆոսֆատային, կարբոնատային, աղեր, կաուստոբիոլիթներ և այլն: Քանի որ Ն. ա-ի զգալի մասը բազմածին է, ապա ապարների հիմնական խմբերի դեպքում հաշվի է առնվում նրանց կազմը: Բացի հիմնական խմբերը, գոյություն ունեն նաև խառը կազմի ապարներ՝ անցողիկ բեկորային ու կարբոնատային, կարբոնատային ու սիլիցիումային և այլ ապարների միջև, ինչպես նաև հրաբխածին-նստվածքային ապարներ, որոնք իրենցից ներկայացնում են նստվածքաբեկորային նյութի և հրաբխային պինդ արտանետվածքների խառնուրդ: Նշված խմբերի կազմում ավելի մանրակրկիտ ստորաբաժանումներ առանձնացվում են ըստ կառուցվածքի (հատիկների չափերի), միներալային կազմի և ծագման: Ն. ա-ի մեջ տիրապետում են կավային (կավեր, արգիլիթներ, կավային թերթաքարեր՝ 48 % պլատֆորմներում և 49% ծալքավոր մարզերում), ավազային (ավազներ ու ավազաքարեր՝ 23 % պլատֆորմներում, 23 % ծալքավոր մարզերում) և կարբոնատային (կրաքարեր, դոլոմիտներ և այլն՝ 29 % պլատֆորմներում, 28 % ծալքավոր մարզերում) ապարները: Աղերը կազմում են 2.8 % պլատֆորմներում և 0.3 % ծալքավոր մարզերում: Երկրի մակերևույթին Ն. ա-ի առաջացումը և տեղաբաշխումը որոշվում են գլխ. կլիմայական և տեկտ. գործոններով: Ն. ա. կազմում են երկրակեղևի զանգվածի մոտ 10 %-ը և ծածկում են Երկրի մակերևույթի մոտ 75 %-ը: Դրանց հիմնական զանգվածը կենտրոնացված է մայր ցամաքներում, առափնյա ծանծաղուտում և մայրցամաքային լանջում: Երկրի ընդերքից հանվող բոլոր օգտ. հնձ-ների ավելի քան 75 %-ը (ածուխ, նավթ, աղեր, երկաթի, մանգանի, ալյումինի հանքաքար, ոսկու, պլատինի ցրոններ, ֆոսֆորիտներ, շինանյութեր և այլն) ներփակված են Ն. ա-ում:

**O-154. ОСАДОЧНЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, SEDIMENTARY DEPOSITS, SEDIMENTARY FIELDS**, օգտ. հնձ-ների հնքվ-եր, որոնք առաջացել են նստվածքակուտակման գործընթացում ջրավազանների հատակին: Ըստ ծագման վայրի Ն. հ. լինում են՝ գետային, ճահճային, լճային, ծովային և օվկիանոսային (պլատֆորմային և ծալքավոր զոնաների): Ն. հ., հատկապես ծովային, հաճախ ունեն խոշոր չափեր: Կախված նստվածքակուտակման բնույթից՝ Ն. հ-ի մեջ առանձնացնում են 4 դաս՝ մեխ., քիմ., կենսաքիմ. և հրաբխածին-նստվածքային: Մեխ. Ն. հ. ներկայացված են նստվածքների բեկորային ֆրակցիաներով, մեծ մասամբ շինանյութեր են (կոպճի, ավազի, կավի հնքվ-եր): Դրանց են պատկանում նաև ցրոնային հնքվ-երը: Քիմ. հանքավայրերը ներառում են աղերի, գիպսի, անհիդրիդի, բորատների, բարիտի հնքվ-երը, երկաթի, մանգանի, ալյումինի, ինչպես նաև որոշ գունավոր մետաղների (պղինձ, մոլիբդեն), ուրանի հանքաքարերը: Կենսաքիմ. Ն. հ-ին են պատկանում այրվող գազերի, նավթի, ածուխների, ֆոսֆորիտների, կարբոնատների և սիլիցիումային ապարների հնքվ-երը:

Չրաբխածին Ն. հ-ին են պատկանում գունավոր մետաղների հրաբարային, երկաթի ու մանգանի օքսիդային, ինչպես նաև հասպիսի և քվարցիտների հնքվ-երը: Ն. հ-ի ձևավորման ֆիզքին. և երկրբ. պայմանները կապված են նստվածքային ապարների կազմավորման ընդհանուր ընթացքի հետ:

**O-155. ОСАДОЧНЫЙ КОМПЛЕКС – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՍԱԼԻՐ, SEDIMENTARY COMPLEX**, մեծ հաստության այն նստվածքների ստվարաշերտ, որոնք կապված են որևէ ընդհանրությամբ (առաջացման, տեկտոնիկայի և այլն), և որոնց հասակը չի կարող ճշտորեն որոշվել: Ազատ օգտագործման տերմին է:

**O-156. ОСАДОЧНЫЙ РИТМ – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ՌԻԹՄ, SEDIMENTARY RHYTHM, RHYTHM OF STRATIFICATION**, կտրվածքում օրինաչափորեն կրկնվող շերտերի խումբ, շերտեր, որոնք կապված են հատկանիշների ուղղորդված փոփոխություններով:

**O-157. ОСАДОЧНЫЙ СЛОЙ ЗЕМНОЙ КОРЫ – ԵՐԿՐԱՎԵՂԵՎԻ ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ՇԵՐՏ, SEDIMENTARY LAYER OF THE EARTH'S CRUST**, երկրակեղևի վերին մասը, որը կազմված է գլխ. տարահասակ նստվածքային ապարներից: Տակդիր շերտից (գրանիտային, բազալտային) անջատված է խիստ աններդաշնակ սահմանով, տե՛ս Земная кора:

**O-158. ОСАДОЧНЫЙ ЦИКЛ – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԲՈԼՈՐԱՇՐՁԱՆ (ՑԻԿԼ), SEDIMENTARY CYCLE**, նստվածքների ֆացիալ տիպերի օրինաչափ հաջորդականություն, որում վերին (ուշ) անդամները ցուցաբերում են զգալի նմանություններ ստորին (սկզբնականների) հետ:

**O-159. ОСАДОЧНЫЙ ЧЕХОЛ**, տե՛ս Платформенный чехол:

**O-160. ОСАЖДЕНИЕ – ՆՍՏՈՒՄ, SEDIMENTATION, PRECIPITATION**. 1) Ջրամբարի կամ ջրհոսքի հատակում ջրում կախված նյութի (այդ թվում կենսբ. և հրաբխային) նստում, 2) լուծույթներից աղերի նստում՝ գոլորշիացման, կոագուլյացիայի, քիմ. ռեակցիայի և այլնի հետևանքով, 3) լուծույթից նստվածքի ձևով որևէ միացության անջատման մեթոդ:

**O-161. ОСАЖДЕНИЕ ГРАВИТАЦИОННОЕ – ՁԳՈՂԱԿԱՆ (ԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ) ՆՍՏՈՒՄ, GRAVITATIONAL SEDIMENTATION**, հոսանքներով ու ալիքներով բերվող կախված հատիկները սակավաշարժ զոնայում նստում են միայն ձգողականորեն՝ բեկորային մասնիկների ծանրության ուժի ազդեցության տակ:

**O-162. ОСАЖДЕНИЕ МЕХАНИЧЕСКОЕ – ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՆՍՏՈՒՄ, MECHANICAL SEDIMENTATION**, ջրավազանների պինդ նստվածքային մասնիկների տեղափոխման և նստման գործընթաց, նստվածքային նյութի տարբերակումը տեղի է ունենում ըստ մասնիկների մեծության (հատիկաչափական տեսակավորում) և տեսակարար կշռի (միներալային տեսակավորում): Վերահսկվում է հատակի ռելիեֆով և ջրադինամիկ գործոններով:

**O-163. ОСАЖДЕНИЕ ХИМИКО-БИОЛОГИЧЕСКОЕ – ՔԻՄԻԱՎԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՆՍՏՈՒՄ, CHEMICAL-BIOLOGICAL PRECIPITATION**, ջրում լուծված նյութերից նստվածքների առաջացում՝ քիմ. նստեցման ճանապարհով կամ նստվածքագոյացնող օրգանիզմների կողմից միներալային մասնիկների կենսբ. սինթեզի հետևանքով: Ք. ն-ման դեպքում տեղի է ունենում լուծույթից որոշակի նյութերի ընտրողական կորզում՝ կախված նրանց քիմ. կազմից (լուծելիությունից) և կենսբ. ակտիվությունից:

**O-164. ОСЕВАЯ ПЛОСКОСТЬ – ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ, AXIAL PLANE**, տեկտոնիկայում ծալքի երևակայական մակերևույթ, որը անցնում է ծալքի շերտերի ծռման գծով (ծալքի հողակապով) և հավասարաչափ է հեռացված նրա թևերից:

- О-165. ОСНОВНАЯ ЛАВА – ՀԻՄՔԱՅԻՆ ԼԱՎԱ (ՀՐԱՀՈՍՔ), BASIC LAVA**, բազալտային և անդեզիտաբազալտային բաղադրության լավա: Բնորոշ է վահանաձև և ճեղքային հրաբուխներին: Առաջացնում է լավային ծածկոցներ և հոսքեր, տե՛ս Лава базальтовая:
- О-166. ОСНОВНАЯ МАГМА – ՀԻՄՔԱՅԻՆ ՄԱԳՄԱ, BASIC MAGMA**, տե՛ս Магма базальтовая:
- О-167. ОСНОВНАЯ МАССА – ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՆԳՎԱԾ, BASIC MASS**, ապարագրոթյունում՝ մագմայական պորֆիրային ապարներում մանրահատիկ, երբեմն ապակեման զանգված, որը կապակցում է իրենում տեղաբաշխված պորֆիրային անջատումները (ֆենոբյուրեղները):
- О-168. ОСНОВНЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ – ՀԻՄՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐ, BASIC ROCKS**, մագմայական ապարներ, որոնք պարունակում են 44-53 % ( $\pm 2\%$ ) սիլիկահող և բուրձազրկում են ալյումինի, կալցիումի, երկաթի, մագնեզիումի բարձր պարունակությամբ: Հ. ա-ի կարևորագույն միներալներն են՝ հիմքային պլագիոկլաստները (լաբրադոր, բիտովնիտ, անորթիտ), պիրոքսենները (շեղանկյունային և մոնոկլինային), օլիվինը: Տարբերում են բնականոն, ենթաակալիական և ակալիական շարքերի պլուտոնիկ և հրաբխային Հ. ա.: Բնականոն հրաբխային շարքին են պատկանում պիկրոբազալտների ու պիկրոդոլերիտների, բազալտների և դոլերիտների, պլուտոնիկներին՝ պիրոքսենիտ-հոռնբլենդիտների, գաբրոիդների ընտանիքները: Ենթաակալիական հրաբխային ու ենթախորքային Հ. ա. ընդգրկում են ենթաակալիական բազալտ-տրախիբազալտների և դոլերիտ-տրախիանդեզիտների ընտանիքները: Ալկալիական Հ. ա. ներառում են հրաբխային՝ հիմքային ֆոիդիտների, ալկալիական բազալտոիդների, հիմքային ֆոնոլիթների, պլուտոնիկ՝ հիմքային ֆոիդոլիթների, ալկալիական գաբրոիդների, հիմքային դաշտասպաթային սիենիտների ընտանիքները: Հ. ա. հիմնականում տարածված են երկրի, Լուսնի, Մարսի քարոլորտում: Օվկիանոսային երկրակեղևում ունեն գերակայող տարածում, իսկ մայր ցամաքներում բազալտները ավելի քան 5 անգամ գերազանցում են այլ մագմայական արտաժայթքային ապարներին: Վահաններում մեծ մակերեսներ են գրավում անորթոզիտները: Հ. ա. միջնապատյանի մագմայի ածանցյալներ են:
- О-169. ОСТАТКИ ОРГАНИЧЕСКИЕ**, նույնն է՝ Окаменелости:
- О-170. ОСТАТОЧНАЯ ПОРОДА – ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՊԱՐ, RESIDUAL ROCK**, երկրակեղևի մեխանիկորեն և քիմիապես փոփոխված նյութ, որը երկրի մակերևութին (կամ մոտ) քայքայման ու փոփոխության ընթացքում, մի շարք բաղադրամասերի դուրս բերումից հետո մնում է իր սկզբնական տեղադրման վայրում: Դրանք հաճախ հողմահարման կեղևի ապարներ և հանքանյութեր են:
- О-171. ОСТАТОЧНАЯ РАВНИНА – ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ՀԱՐԹԱՎԱՅՐ, RESIDUAL PLAIN**, հարթավայր, որն առաջացել է մասնատված ռելիեֆի տեղում՝ նրա երկարատև լերկացման (դենուդացիայի), ցածրացման ու հարթեցման հետևանքով, տե՛ս Пенеплен, Денудационная равнина:
- О-172. ОСТАТОЧНЫЕ ГОРЫ, ОСТАНЦОВЫЕ ГОРЫ – ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԼԵՌՆԵՐ, DEGRADED MOUNTAINS**, լեռներ, որոնք իրենցից ներկայացնում են նախասկզբնապես ավելի բարձր լեռնային ռելիեֆի երկարատև լերկացման (դենուդացիայի) արգասիքներ:
- О-173. ОСТРАКОДЕРМЫ, ЩИТКОВЫЕ** (հուն. ostrakon – զանգիկ, ոսկրյա զրահ և derma – մաշկ, մաշկային ծածկոց) – **ՕՍՏՐԱՎՈՂԵՐՄԵՐ (ՎԱՅՆԱՎԱՎՈՐՆԵՐ), OSTRACODERMS**, ամենահին մահացած ողնաշարավորների խումբ, պատկա-

նում է անծնոտներին: Օ-ի գլուխը ծածկված է եղել ոսկրյա վահանով կամ փոքր թիթեղներով: Երկարությունը մինչև 2 մ: Գոյություն են ունեցել ծովերում՝ օրդովիկից մինչև դևոն: Դևոնի համար ունեն շերտագրական նշանակություն:

**O-174. ОСТРОВНОЙ ВУЛКАНИЗМ – ԿՂՁԱՅԻՆ ՀՐԱՔԻԱՅՆՈՒԹՅՈՒՆ, ISLAND**

**VOLCANISM**, հրաբխային գործընթացներ, որոնք կապված են օվկիանոսներում կղզիների առաջացման ու զարգացման հետ: Տարբերում են կղզեաղեղների հրաբխային գործունեություն և ներօվկիանոսային կղզիների հրաբխային գործունեություն: Կղզեաղեղներում գործող հրաբուխները, որպես կանոն, տեղաբաշխված են աղեղի ներքին զոգավոր կողմում, դրանց գործունեությունը առավելապես հրաբխապայթումային է (տե՛ս *Островные дуги*): Ներօվկիանոսային կղզիների համար ավելի բնորոշ են հրաբխավիժական (էֆուզիվ) գործընթացները:

**O-175. ОСТРОВНЫЕ ГОРЫ – ԿՂՁԻԱՁԵՎ ԼԵՌՆԵՐ, INSELBERGS, BORNHARDTS**, լայնարձակ հարթավայրային տարածքներում բարձրացած մեկուսացված կամ փոքր խմբերով մնացորդներ, որոնք գոյացել են երբեմնի ավելի բարձր լեռնային երկրի երկարատև լերկացման (դենուդացիայի) հետևանքով:

**O-176. ОСТРОВНЫЕ ДУГИ, ОСТРОВНЫЕ ГИРЛЯНДЫ – ԿՂՁԵԱՂԵՂՆԵՐ, ԿՂՁԵՇԱՐԱՆՆԵՐ, ISLAND ARCS**, հրաբխային կղզիների շղթաներ, որոնք ձգվում են օվկիանոսների ծայրամասերով և բաժանում են օվկիանոսները ծայրամասային ծովերից ու մայր ցամաքներից: Տիպային օրինակ են Կուրիլյան, Ալեուտյան, Ճապոնական աղեղները: Հատակագծում ունեն շարաններին բնորոշ ձև և իրենցից ներկայացնում են երկրասնտիկլինալային բարձրացումներ: Կ-ի հիմք են ծառայում ստորջրյա լեռնաշղթաները՝ 40-50-ից մինչև 200-400 կմ լայնությամբ և մինչև 1000 կմ և ավել երկարությամբ: Կ. օվկիանոսի կողմից միշտ ուղեկցվում են խորջրյա փողրակներով՝ միջինը մոտ 150 կմ հեռավորությամբ: Կ. երկրում հայտնի ամենախոշոր լեռնաշղթաներն են, դրանց մերձօվկիանոսային լանջերը 2-4 կմ խորություններում զբաղեցված են նախաաղեղային ավազաններով՝ 50-100 կմ լայնությամբ: Կ-ի ստորոտները խորջրյա փողրակների մոտ ունեն թեփուկավոր կազմություն, բաղկացած են տեկտ. թիթեղներից: Կ. առաջացել են ակտիվ և ոչ վաղ անցյալում գործող ցամաքային և ստորջրյա հրաբուխներից: Դրանց կազմում գլխավոր տեղ են գրավում անդեզիտները, բայց առկա են նաև բազալտները, դացիտները, ռիոլիթները: Ժամանակակից Կ-ի հրաբխայնությունը սկսվել է 10-ից մինչև 40 մլն. տ. առաջ: Կ. գոյացել են օվկիանոսային կամ մայրցամաքային կեղևի վրա, ձգված են քարոլորտի սալերի մոտեցման զոնայի երկայնությամբ: Դրանց տակ տեղաբաշխված են Բենիոֆ-Չավարիցկու զոնաները, որոնց երկայնությամբ օվկիանոսային քարոլորտի սալերը խորասուզվում են միջնապատյանի մեջ: Կ-ի զոնայում ձևավորվում է նոր մայրցամաքային կեղև: Դրանց համար բնորոշ են խիստ տարբերակված ձգողական և մագնիսական դաշտերը, ջերմային հոսքի բարձրացված արժեքները, ակտիվ հրաբխայնությունը և բարձր երկրաշարժականությունը:

**O-177. ОСТРОУГОЛЬНАЯ СКЛАДКА – ՍՈՒՐԱՆԿՅՈՒՆ ԾԱԼԶ, ANGULAR FOLD, ACUTE FOLD**, ծալք ապարների շերտերում՝ ծալքի փականում շերտերի կտրուկ ծռվածքով:

**O-178. ОСУШЕНИЕ ЗЕМЕЛЬ – ՀՈՂԵՐԻ ՉՈՐԱՅՈՒՄ, SOIL DRAINAGE**, ճարտարագիտական միջոցառումների համակարգ, որն իրացվում է գլխ. հողերի բերքատվությունն ապահովելու, ինչպես նաև տորֆի արդյունահանման, անտառատնկման, շինարարության, ճանապարհների անցկացման և այլ աշխատանքների իրագործման պայմանները բարելավելու նպատակով: Չորացման հետևանք



քով ճահճացած և գերխոնավացված հողերում ստեղծվում է անհրաժեշտ ջրային և ջերմային ռեժիմ: Հողի մելիորացիայի (բարելավման) մեթոդներից մեկն է:

**Օ-179. ОСЫПНОЙ СКЛОН – ՔԱՐԱԹԱՓՎԱԾՔԱՅԻՆ ԼԱՆՋ, TALUS SLOPE,** լանջ, որը ձևավորվել է քարաթափվածքային գործընթացների ներգործության տակ՝ լանջերում ֆիզ. հողմահարման արգասիքում գոյացած ժայռային ապարների բեկորների (գլխ. խճի) անկման, գլորման, սահման և քարաթափուկների ձևավորման հետևանքով:

**Օ-180. ОСЫПЬ – ՔԱՐԱԹԱՓՎԱԾՔ, ԱՊԱՐԱԹԱՓՎԱԾՔ, MOUNTAIN WASTE, TALUS, SCREE,** խճի կուտակում լանջերի ու բնական թեքությունների վրա: Ի տարբերություն փլվածքների (տե՛ս ՕՅՅԱԼ), ք-ները բնորոշվում են ձգողության ուժով շարժվող ապարազանգվածի մանրաբեկորությամբ: Կուտակվում են լանջերի ստորոտներին՝ ձգված արտաբերման կոնների տեսքով:

**Օ-181. ОСЬ ОПТИЧЕСКАЯ – ՕՊՏԻԿԱԿԱՆ ԱՈՒՆՑՔ, OPTIC AXIS,** ուղղություն, որով լույսը երկբեկման չի ենթարկվում:

**Օ-182. ОСЬ СИММЕТРИИ – ՀԱՍԱՉԱՓՈՒԹՅԱՆ ԱՈՒՆՑՔ, AXIS OF SYMMETRY,** բյուրեղագիտությունում ուղիղ գիծ, որի շուրջը համաչափ պատկերը որոշակի անկյան տակ պտտելիս տարածության մեջ կգրավի նույն դիրքը, որը նա ունեցել է մինչև պտույտը, բայց նրա որոշ մասերի տեղում կտեղավորվեն այլ նման մասեր:

**Օ-183. ОСЬ СКЛАДКИ – ԾԱԼՔԻ ԱՈՒՆՑՔ, FOLD AXIS,** ծալքի առանցքային մակերևույթի հատման գիծը հորիզոնական կամ ուղղահիգ հարթության և կամ երկրի մակերևույթի հետ, ինչպես նաև վերջին դեպքում այդ գծի պրոյեկցիան քարտեզի հարթության վրա: Ծ. ա. արտահայտում է ծալքի կողմնորոշումը տարածության մեջ, այն չպետք է շփոթել ծալքի հողակապի հետ:

**Օ-184. ОТВАЛ – ԹԱՓՈՆԱԿՈՒՅՑ, DUMP, SPOIL, HEAP,** լեռնահանքային արդյունաբերությունում դատարկ ապարների, ոչ կոնդիցիոն օգտ. հնձ-ների կամ հարստապուշերի կուտակ, որը սովորաբար զետեղված է գյուղատնտեսության կամ շինարարության համար ոչ պիտանի տարածքներում (ձորակներ, քարքարոտ հողեր և այլն):

**Օ-185. ОТДЕЛ ГЕОЛОГИЧЕСКИЙ – ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ, GEOLOGICAL SERIES,** երկրաբանական համակարգին ենթակա՝ ընդհանուր (միջազգային) շերտագրական սանդղակի ստորաբաժանում և դրան համապատասխանող նստվածքներ, որոնք առաջացել են երկրաբանական դարակարգի ընթացքում: Արտացոլում է քարոլորտի և օրգանական աշխարհի զարգացման որոշակի փուլը: Ներառում է 2 և ավելի հարկեր: Ե. ք-ների մեծ մասը չունի սեփական անուն և անվանվում է համապատասխան համակարգի ստորին և վերին, կամ ստորին, միջին և վերին բաժին:

**Օ-186. ОТДЕЛЬНОСТЬ – ԱՆՋԱՏՈՒԹՅՈՒՆ, JOINTING, PARTING,** ապարների բնորոշ ձևի կտորներ, որոնք առաջանում են որոշակի հարթություններով՝ նրանց բնական կտրատման, ճեղքավորման ժամանակ: Նստվածքային ապարներում տարածված են ուղղանկյուն, խորանարդային, սալիկային, գնդային, թեփուկավոր և այլ Ա-ներ: Գլխ. կապված են այն ճեղքերի հետ, որոնք առաջանում են դիագենեզի և կատագենեզի գործընթացներում, ինչպես նաև ապարների ձևախախտման ու հողմահարման ժամանակ: Մագմայական ապարներում զարգացած են հատվածակողմային, սյունածև, բարձիկավոր, գնդային և այլ Ա-ները, որոնք առաջանում են լավայի և ներժայթքային մարմինների սառեցման և սեղմման ընթացքում: Փոխակերպային ապարներում առավել հաճախ հանդիպում են սալիկավոր և թիթեղային Ա-ներ. առաջանում են ապարների ձևախախտման ժամանակ:

- О-187. ОТКРЫТАЯ РАЗРАБОТКА МЕСТОРОЖДЕНИЙ – ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԲԱՅ ԱՇԱՎՈՒՄ, SURFACE MINING, OPENCAST MINING, OPEN PIT MINING, QUARRY MINING**, օգտ. հնձ-ների արդյունահանում երկրի մակերևույթից՝ բաց լեռնահանքային փորվածքների օգնությամբ, տե՛ս Карьер: Հ. ք. մ-ան հիմնական լեռնային փորվածքներն են կապիտալ խրամները, որոնք ապահովում են մուտքը դեպի օգտ. հնձ-ները, և կտրտված խրամները, որոնք նախապատրաստում են բացահանքային դաշտը՝ մակաբացման և արդյունահանման աշխատանքների համար: Հ. ք. մ-մանը բնորոշ է ընդերքից օգտ. հնձ-ների կորզման բարձր աստիճանը, արտադրական մեծ հզորությունների հասնելու հնարավորությունը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, արդյունահանման ինքնարժեքի իջեցումը:
- О-188. ОТКРЫТАЯ СКЛАДКА – ԲԱՅ ԾԱԼՔ, OPEN FOLD**, ապարների շերտերի համեմատաբար պարզ կազմություն ունեցող ծալք: Բաց կամարածալքում (անտիկլինալում) թևերը թեքված են առանցքային հարթությունից այլ կողմեր, իսկ գոգածալքում (սինկլինալում)՝ դեպի առանցքային հարթությունը:
- О-189. ОТКРЫТЫЕ ТРЕЩИНЫ, ЗИЯЮЩИЕ ТРЕЩИНЫ – ԲԱՅ ԾԵՂԵՐ, OPEN JOINTS, GAPIING FISSURES**, ապարներում ճեղքեր՝ բացված (իրարից անջատված) պատերով:
- О-190. ОТЛОЖЕНИЯ – ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, DEPOSITS, SEDIMENTS**, այս տերմինի տակ սովորաբար հասկացվում են ինչպես հին նստվածքային գոյացությունները (ապարները), այնպես էլ ժամանակակից նստվածքները: Հին գոյացությունների բնութագրման դեպքում «Ն.» տերմինը «ապար» տերմինի հետ միասին օգտագործվում է տարբեր դեպքերում. ա) ապարների համալիրների շերտագրական պատկանելիության որոշման դեպքում, բ) նստվածքային ապարների բնութագրման համար՝ նրանց հետ կապված որևէ օգտ. հնձ-ների առկայության դեպքում (օր.՝ ածխաբեր և այլն), ծագումնաբանական տիպի որոշման դեպքում (օր.՝ լճային Ն., խորջրյա Ն. և այլն):
- О-191. ОТЛОЖЕНИЯ АВТОХТОННЫЕ** (հուն. autóichthon – տեղային, արմատական) – **ԱՎՏՈՒՆՈՒՆԱՅԻՆ (ՏԵՂԱՅԻՆ) ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, AUTOCHTHONOUS DEPOSITS**, նստվածքներ, որոնց բաղադրիչ մասերը չեն կրել տեղափոխություն և վերանստեցում: Դրանց են պատկանում ածուխները, ջրիմուռային, բուստային և այլ օրգանածին, էյուվիալ և որոշ քիմիածին (կեղևներ, շթաքարեր և այլն) նստվածքները:
- О-192. ОТЛОЖЕНИЯ БИОХИМИЧЕСКИЕ – ԿԵՆՍԱՔԻՄԻԱԿԱՆ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, BIO-CHEMICAL DEPOSITS, BIOCHEMICAL SEDIMENTS**, ընդգրկում են առավելապես կարբոնատային և սիլիցիումային նստվածքների մի մեծ խումբ, որի առաջացման մեջ կարող են մասնակցել օրգանիզմների մնացորդներ, տղմակեր որդեր, մանրագույն բուսապլանկտոն, բակտերիաներ, կարբոնատների, սիլիցիումային նյութերի, ֆոսֆատների, մանգանի ու երկաթի հանքանյութերի և այլնի նստեցման քիմ. գործընթացներ: Այս նստվածքների ծագումնաբանությունը դեռևս բավարար չափով պարզաբանված չէ:
- О-193. ОТЛОЖЕНИЯ ВОДНО-ЛЕДНИКОВЫЕ – ՋՐԱՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, AQUEOGLACIAL DEPOSITS**, հալվող սառցադաշտի ջրերի նստվածքներ, որոնց մեջ տարբերում են լճասառցադաշտային և սառցադաշտագետային նստվածքներ, տե՛ս Ледниковые отложения, флювиогляциальные отложения:
- О-194. ОТЛОЖЕНИЯ ВРЕМЕННЫХ ПОТОКОВ – ԺԱՍԱՆԱՎԱՎՈՐ ՀՈՍՔԵՐԻ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, TORRENTIAL DEPOSITS**, կուտակվում են կարճատև ջրային հոսքերի գոյացման ընթացքում, որոնք հոսում են լեռներից դեպի հարակից հարթավայրե-

րը: Տարբերում են գլխավոր հոսքի հունային, հունային, միջհունային, արտահոսային կոնի և այլ նստվածքներ: Դրանց կտրվածքը խիստ անկայուն է: Տիրապետում են կոպտաբեկոր և ավազակավային նստվածքները: Խառնաքարերը և ճալաքարուտները կազմված են համեմատաբար լավ մշակված ճալաքարերից և առաջանում են ժամանակավոր հոսքերի հուններում: Միջհունային նստվածքները, հատկապես արտահոսային կոների եզրամասերում, սովորաբար ներկայացված են վատ տեսակավորված ալերոլիթներով ու կավերով՝ ավազային մասնիկների զգալի խառնուրդով: Բնորոշ է կարմրավուն գունավորումը, շեղ շերտայնությունը, օրգանական մնացորդների բացակայությունը:

**O-195. ОТЛОЖЕНИЯ ГРАВИТАЦИОННЫЕ – ՁԳՈՂԱԿԱՆ (ԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ) ՆՍՎԱԾՔՆԵՐ, GRAVITATIONAL DEPOSITS,** լանջային նստվածքներ, որոնք առաջանում են ձգողական ուժի (սեփական կշռի) ազդեցության տակ՝ ապարների ամբողջ զանգվածների կամ առանձին բեկորների տեղաշարժման հետևանքով: Ըստ ծագման առանձնացնում են՝ 1) փլվածքային կուտակումներ (տե՛ս Обвал), 2) քարաթափվածքային կուտակումներ (տե՛ս Осыпь), 3) սողանքային նստվածքներ (տե՛ս Оползень), 4) սոլիֆլյուկցիոն նստվածքներ (տե՛ս Солифлюкция):

**O-196. ОТЛОЖЕНИЯ ИСТОЧНИКОВ – ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՆՍՎԱԾՔՆԵՐ, SPRING DEPOSITS,** քիմիածին նստվածքներ, որոնք առաջանում են երկրի մակերևույթ դուրս եկող ստր. ջրերի աղբյուրների ջրային լուծույթի զոլորշիացման հետևանքով: Ա. Գ-ի բնորոշ գոյացումներ են՝ տրավերտինները, կրային ու սիլիկատային տուֆերը և այլն:

**O-197. ОТЛОЖЕНИЯ ОБЛОМОЧНЫЕ – ԲԵԿՈՐԱՅԻՆ ՆՍՎԱԾՔՆԵՐ, DETRITAL DEPOSITS, CLASTIC DEPOSITS,** կազմված են տարբեր ապարների ու միներալների բեկորային նյութից, որն առաջանում է ցամաքի քայքայման, ջրավազանի հատակի ողողաքայքայման, ստորջրյա սողանքների, կարստային և այլ գործընթացների ժամանակ: «Բ. ա.» տերմինը օգտագործվում է ավելի լայն իմաստով, քան «ցամաքային նստվածքներ» տերմինը:

**O-198. ОТЛОЖЕНИЯ ОРГАНОГЕННЫЕ,** տե՛ս Биогенные отложения:

**O-199. ОТЛОЖЕНИЯ ПУСТЫННЫЕ – ԱՆԱՊԱՏԱՅԻՆ ՆՍՎԱԾՔՆԵՐ, DESERT DEPOSITS,** լինում են տարբեր ծագման՝ ելյան (տե՛ս Эоловые отложения), դելյուվիալ (տե՛ս Делювиальные отложения), պրոլյուվիալ (տե՛ս Пролювиальные отложения), էլյուվիալ (տե՛ս Элювиальные отложения), ինչպես նաև դառն աղի լճերի, թակիրների նստվածքներ: Ա. Գ-ում միշտ առկա են քսերոֆիտային ֆլորայի մնացորդներ և իրենց կազմով, կառուցվածքով ու կազմվածքով բնորոշ թակիրների և աղերի նստվածքներ: Խոշոր անապատների ավազային նստվածքների բնորոշ առանձնահատկություններից է հատիկների, նույնիսկ ալերիտային ֆրակցիայի բարձր մշակվածությունը:

**O-200. ОТЛОЖЕНИЯ СКЛОНОВЫЕ – ԼԱՆՋԱՅԻՆ ՆՍՎԱԾՔՆԵՐ, SLOPE DEPOSITS,** ապարների քայքայման տարբեր գործընթացների (լերկացում, տեղափոխում, կուտակում) հետ կապված և լանջերին առաջացած ցամաքային նստվածքների պարագենետիկական շարք: Լ. Գ-ին են պատկանում դելյուվիալ և ձգողական (գրավիտացիոն) նստվածքները:

**O-201. ОТЛОЖЕНИЯ ХЕМОГЕННЫЕ,** տե՛ս Хемогенные горные породы:

**O-202. ОТМЕЛЬ, МЕЛЬ, МЕЛКОВОДЬЕ – ԾԱՆԾԱՂՈՒՏ, SHOAL, SHALLOW, KEY, CAY,** ջրավազանի (ծովի, լճի) կամ ջրային հոսքի տեղամաս, որը շրջապատողների համեմատությամբ բնորոշվում է փոքր խորություններով:

- O-203. ОТМЕЛЬ МАТЕРИКОВАЯ – ՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ ԾԱՆԾԱՂՈՒՄՏ**, տե՛ս Шельф:
- O-204. ОТНОСИТЕЛЬНАЯ ВЛАЖНОСТЬ ГРУНТА – ԳՐՈՒՄՏԻ ՀԱՐԱՔԵՐԱՎԱՆ ԽՈՒՆԱՎՈՒԹՅՈՒՆ, RELATIVE HUMIDITY OF GROUND**, գրունտի խոնավության (ջրի ծավալի) հարաբերությունը նրա ծակոտիների ծավալին՝ արտահայտված %-ներով:
- O-205. ОТНОСИТЕЛЬНАЯ ВЫСОТА – ՀԱՐԱՔԵՐԱՎԱՆ ԲԱՐՉՐՈՒԹՅՈՒՆ, RELATIVE HEIGHT**, երկրի մակերևույթի որևէ կետի բարձրության տարբերությունը մյուս կետի նկատմամբ, որը հավասար է այդ կետերի բացարձակ բարձրությունների տարբերությանը (օր.՝ լեռնագագաթի բարձրությունը մոտակա հովտի մակերևույթից վեր):
- O-206. ОТПЕЧАТКИ – ԴՐՈՇՄԱՅՏՔԵՐ, IMPRINTS, IMPRESSIONS**, հնէաբանությունում այն ապարի վրա որևէ բրածոյի կամ նրա մասի նեգատիվ տպվածքը, որում նա թաղված է եղել: Սովորաբար պատկերացում է տալիս օրգանիզմի որևէ մասի կառուցվածքի մասին:
- O-207. ОТПЕЧАТКИ КРИСТАЛЛОВ – ԲՅՈՒՐԵՂՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՅՏՔԵՐ, CRYSTAL IMPRINTS**, դյուրալույծ միներալների կամ սառցի բյուրեղների ծեփապատճենը շերտի դատարկություններում, որոնք հաճախ լցված են նստվածքով և պատկերում են ապարում ներփակված բյուրեղի ձևը:
- O-208. ОТПЕЧАТКИ КАПЕЛЬ ДОЖДЯ – ԱՆՉՐԵՎԻ ԿԱԹԻԼՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՅՏՔԵՐ, RAIN PRINTS, RAIN-DROP IMPRESSIONS**, կլորավուն, մանր (1-2 մմ) թմբիկով շրջապատված փոսիկ՝ ապարների շերտերի մակերևույթի վրա՝ 2-3 մմ, երբեմն մինչև 15 մմ տրամագծով: Ա. կ. դ. ունեն հնաշխ. նշանակություն:
- O-209. ОТПЕЧАТКИ РАСТЕНИЙ – ԲՈՒՅՍԵՐԻ ԴՐՈՇՄԱՅՏՔԵՐ, PLANT IMPRINTS**, տերևների ֆոսիլացման (բրածոների առաջացման) ձևերից մեկն է: Բ. դ. բույսերի կամ ավելի հաճախ նրանց մասերի տպվածքն է նստվածքի վրա, որը հետագայում փոխարկվել է ապարի:
- O-210. ОТРИЦАТЕЛЬНЫЕ ФОРМЫ РЕЛЬЕФА, ВОГНУТЫЕ ФОРМЫ РЕЛЬЕФА – ՈՒՆԻԵՖԻ ԲԱՑԱՍԱՎԱՆ ՉԵՎԵՐ, ՈՒՆԻԵՖԻ ԳՈԳԱՎՈՐ ՉԵՎԵՐ, NEGATIVE FORMS OF RELIEF, CONCAVE LANDFORMS**, երկրի մակերևույթի համեմատաբար ցածրացված տեղամասեր (իջվածքներ, ակոսներ, հովիտներ, ստորջրյա կանյոններ, կարստային ձագարներ և այլն), որոնք ընկած են ցամաքի կամ ծովի հատակի որոշակի մարզի միջին բարձրաչափական մակարդակից ցածր:
- O-211. ОТРОГ ГОРНОГО ХРЕБТА – ԼԵՈՆԱՇՂԹԱՅԻ ԼԵՈՆԱՃՅՈՒՂ, OFFSHOOT, OFFSET, OFFSPUR**, երկրորդ կարգի լեռնաշղթա, որը հեռանում է գլխավոր շղթայից և ունի այլ տարածում:
- O-212. ОТСОТИРОВАННЫЕ ОСАДКИ – ՏԵՍԱՎԱՎՈՐՎԱԾ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, GRADED SEDIMENTS, SORTED SEDIMENTS**, ըստ մասնիկների չափերի ու խտության համասեռ նստվածքային միներալային գոյացություններ:
- O-213. ОТПОРЖЕНЕЦ – ՊՈՎՎԱԾՔ, ERRATIC MASS**, 1) ապարների մեծակտոր (մի քանի մ-ից մինչև հարյուրավոր մ), որը հաճախ պահպանել է շերտավորությունը և սառցադաշտի միջոցով տեղափոխվել է մինչև մի քանի հարյուր կմ տարածություն, 2) նույնն է, ինչ տեկտ. ծածկոցի մնացորդը կամ կլիպը:
- O-214. ОТЧЁТ ГЕОЛОГИЧЕСКИЙ – ԵՐԿՐԱՔԱՆԱՎԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, GEOLOGICAL REPORT**, փաստաթուղթ, որն իրենից ներկայացնում է որոշակի օբյեկտի (տեղամասի, շրջանի, հնքվ-ի, պլանշետի և այլն) ուսումնասիրման արդյունքների ամփոփագիրը: Դրանում բերվում և վերլուծվում են երկրաբանահանութային, որոնողական, երկրֆ., հետախուզական, շահագործական աշխատանքների արդյունքները, կատարվում են հիմնավորված եզրակացություններ, և ձևավորվում են այն հարցերը, որոնք ենթակա են մանրամասն պարզաբանման:

**Օ-215. ՕՓԻՕԼԻՏԻ** (հուն. óphis – օժ և lithos – քար) – **ՕՖԻՈԼԻԹՆԵՐ, ՕՓԻՕ-ԼԻՏԵՑ**, խորքային հիմքային ու գերհիմքային (դունիտներ, պերիդոտիտներ, պիրոքսենիտներ, գաբրոներ, տոնալիթներ), արտաժայթքային (առավելապես բազալտներ և դրանց տուֆեր) և նստվածքային (օվկիանոսային տիպի խորջրյա նստվածքներ) համատեղ հանդիպող ապարների համալիր: «Օ» տերմինը առաջին անգամ կիրառել է շվեյցարացի գիտնական Գ. Շտայնմանը (G. Steinmann) 1905-ին: Սովորաբար Օ-ի առաջացումը կապում են շարժուն երկրասինկլինալային համակարգերի ձևավորման նախնական փուլերում մագմայականության դրսևորման հետ: Վերջին տասնամյակներում ծալքավոր մարզերի Օ. սկսեցին դիտարկել որպես օվկիանոսային տիպի կեղևի մնացուկներ, որոնք տեկտոնապես տեղափոխվել են մայր ցամաքների ծայրամասերը: Օ. հազվադեպ, երբեմն շրջված տեղադրմամբ, կազմում են տեկտ. ծածկոցների հզոր թիթեղներ, որոնք հորիզոնականորեն տեղափոխվել են մեծ հեռավորությունների վրա, կամ սառը ներդրումներ՝ պրոտրուզիաներ են: Օ. գծային ծալքավոր կառույցների սովորական բաղադրամաս են: Օ-ի ուսումնասիրությունը կարևոր է մի շարք օգտ. հնձ-ների (քրոմ, նիկել, պլատին, ոսկի, սնդիկ և այլն) հնքվ-երի բացահայտման համար:

**Օ-216. ՕՓԻՏՈՎԱՅԱ ՏՐՄԱԿՏՐԱ** – **ՕՖԻՏՈՎԱՅԱ ՎԱՌՈՒՑՎԱԾՔ, ՕՓԻՏԻԿ ՏԵՔՏՈՐԵ**, տե՛ս *Диабазовая структура*:

**Օ-217. ՕՃՐԱՆԱ ՀԵԴՐ** – **ԸՆԴԵՐՔԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆ, PROTECTION OF THE INTERIOR PART OF THE EARTH**, օրենքի ուժ ստացած կանոնների ու լեռնատեխ. միջոցառումների համակցություն, որն ապահովում է օգտ. հնձ-ների հնքվ-երի արդյունավետ շահագործումը, ընդերքից հանքաքարի լրիվ արդյունահանումը և նրա անկորուստ մշակումը՝ միջոցների առավել խնայողության, լեռնահանքային գործի անվտանգության կանոնների պահպանման պայմաններում:

**Օ-218. ՕՇԵՆԿԱ ՄԵՏՐՈՋԵՆԻՅ ՍԵՐՅՈՒԶՆԻՅ ԴՈՒՅՆՆՈՒՄ, EVALUATION OF MINERAL DEPOSITS**, օգտ. հնձ-ների ու հանքաերակույմների արդյ. նշանակալիության որոշում՝ երկրբ. մեթոդների համալիրի (երկրբ. գնահատում) և տնտեսական հաշվարկների (տնտեսական գնահատում) օգնությամբ: Կատարվում է դրանց ուսումնասիրման, հետախուզման և արդյ. յուրացման բոլոր փուլերում՝ ռեզիոնալ կանխատեսումից մինչև լրիվ մշակումը, բայց հիմնական նշանակություն ձեռք է բերում հնքվ-ի հայտնաբերումից անմիջապես հետո՝ նախնական հետախուզությունից մանրակրկիտին անցնելիս, հնքվ-ը արդյ. յուրացման հանձնելուց առաջ և օգտ. հնձ-ների բացահայտված ու հետախուզված հանքակուտակների մշակումն ավարտելու նախօրյակին:

**Օ-219. ՕՇԱԳ ՅԵՄԼԵՏՐԱՅԵՆԻՅԱ** – **ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՕՉԱԽ, SEISMIC FOCUS, FOCUS OF EARTHQUAKE**, ստորերկրյա հարվածի առաջացման մարզ, որտեղ երկարատև կուտակված էներգիայի արձակման հետևանքով համարյա ակնթաթորեն տեղի է ունենում զանգվածների տեղաշարժ: Ե. օ-երը զետեղվում են երկրակեղևում ու վերին միջնապատյանում և հարում են սովորաբար երկրբ. խզումներին, տե՛ս նաև *Землетрясения*:

**Օ-220. ՕՇԿՈՎԱՅԱ ՏՐՄԱԿՏՐԱ** – **ԱՎՆՈՑԱՎԵՐՊ ՎԱՌՈՒՑՎԱԾՔ, EYED TEXTURE, AUGEN TEXTURE**, հատուկ է փոխակերպային ապարներին, բնորոշվում է խոշոր բյուրեղների (պորֆիրոբլաստների կամ պորֆիրոկլաստների) ուսանյակաձև կուտակումներով (այսպես կոչված՝ «ակնոցներով»), որոնք շրջապատված են մանրահատիկավոր կամ թեփուկավոր հիմնական զանգվածով:

## II

- П-1. ПАДЕНИЕ ПЛАСТА – ՇԵՐՏԻ ԱՆԿՈՒՄ, SEAM INCLINATION, SEAM PITCH,** շերտի (հանքակուտակի, հանքերակի և այլն) առավելագույն թեքություն, որը որոշվում է հորիզոնական հարթության (անկման անկյուն) և տեղանքի միջօրեականի (անկման ազիմուտ) նկատմամբ: Տարածման հետ միասին կազմում է երկր. մարմնի և կառուցվածքային մակերևութների տեղադրման տարրերը: Տե՛ս Залегание горных пород:
- П-2. ПАДЕНИЕ РЕКИ – ԳԵՏԻ ԱՆԿՈՒՄ, STREAM GRADIENT, GRADIENT OF RIVER, FALL OF STREAM,** գետի երկարությամբ որոշ հեռավորության վրա զետեղված երկու կետերի ջրի մակարդակային հարթության բարձրությունների տարբերություն: Կարող է հաշվարկվել ըստ տեղամասերի կամ ամբողջ գետի համար՝ նրա ակունքի և գետաբերանի միջակայքում:
- П-3. ПАЛЕОАНТРОПЫ** (հուն. palaiós – հին և ánthrōpos – մարդ) – **ՊԱԼԵՈԱՆՏՐՈՊՆԵՐ, PALEOANTHROPS,** մարդու զարգացման երկրորդ աստիճան, հանդես են եկել մինդել-ռիսում մոտ 350 հազ. տ. առաջ, ծաղկումը՝ ռիս-վյուրմում (100-70 հազ. տ. առաջ): Պ-ին են պատկանում նեանդերթալյան բրածո մարդիկ: Գոյություն են ունեցել մինչև վյուրմի կեսը (40 հազ. տ. առաջ):
- П-4. ПАЛЕОБИОГЕОГРАФИЯ** (հուն. palaiós – հին և կենսաշխարհագրություն) – **ՋՆԱԿԵՆՍԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, PALEOBIOGEOGRAPHY,** կենսաշխարհագրության բաժին, որն ուսումնասիրում է անցյալ ժամանակաշրջաններում երկրի մակերևույթում օրգանիզմների տեղաբաշխման օրինաչափությունները:
- П-5. ПАЛЕОБИОГЕОХИМИЯ – ՋՆԱԿԵՆՍԱԵՐԿՐԵՄԻԱ, PALEOBIOGEOCHEMISTRY,** երկրաքիմիայի բաժին, որն ուսումնասիրում է անցյալ երկր. ժամանակաշրջաններում օրգանիզմների մասնակցությամբ տեղի ունեցած երկրք. գործընթացները:
- П-6. ПАЛЕОБОТАНИКА** (հուն. palaiós – հին և բուսաբանություն) – **ՋՆԱՐՈՒՍԱՐԿՆՈՒԹՅՈՒՆ, PALEOBOTANY,** հնէաբանության բաժին, որն ապարների մեջ պահպանված մնացորդների և դրոշմահետքերի միջոցով ուսումնասիրում է հին (մահացած) բույսերի ձևաբանությունը, ֆիլոգենիան, անատոմիան և դասակարգումը:
- П-7. ПАЛЕОВУЛКАНОЛОГИЯ** (հուն. palaiós – հին և հրաբխագիտություն) – **ՋՆԱՐԱՐԿՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, PALEOVOLCANOLOGY,** երկրաբանության բնագավառ, որն ուսումնասիրում է անցյալ երկր. ժամանակաշրջանների հրաբխային գործունեությունը: 3-յան ուսումնասիրությունները կարևոր նշանակություն ունեն հնաշխարհագրական վերականգնումների համար և հնարավորություն են տալիս լուծելու այն օգտ. հնժ-ների որոնման հետ կապված խնդիրները, որոնք գոյացել են հրաբխային գործունեության հետևանքով:
- П-8. ПАЛЕОГЕНОВАЯ СИСТЕМА (ПЕРИОД), ПАЛЕОГЕН** (հուն. palaiós – հին և génos – ծնունդ, հասակ) – **ՊԱԼԵՈԳԵՆԻ ՋԱՄԱՆԱԳ (ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ), ՊԱԼԵՈ-**

**ԳԵՆ, PALEOGENE**, կայնոզոյան էրատենայի առաջին համակարգն է, համապատասխանում է Երկրի պատմության կայնոզոյան դարաշրջանի առաջին ժամանակաշրջանին, շերտագրական սանդղակում հաջորդում է մեզոզոյան էրատենայի կավճի համակարգին և նախորդում է նեոգենի համակարգին: Պ. հ. սկսվել է 65 մլն. տ. առաջ և ավարտվել է 23 մլն. տ. առաջ, տևողությունը մոտ 42 մլն. տ. է: Անվանումը առաջարկել է գերմ. երկրաբան Կ. Նաումանը 1866-ին: Երկրորդ միջազգային վեհաժողովում (1881 թ.) հաստատվել է որպես երրորդական համակարգի բաժին: 1959-ից ԽՍՀՄ Միջգերատեսչական շերտագրական կոմիտեի որոշմամբ պալեոգենը դիտարկվում է որպես համակարգ, իսկ «Երրորդական» տերմինը չի օգտագործվում: Բաժանվում է 3 բաժնի՝ պալեոգեն, էոգեն և օլիգոգեն: Պ. հ-ի հարկային բաժանման միասնական սանդղակ գոյություն չունի: Առավել տարածված է արևմտաեվրոպական սանդղակը, ըստ որի պալեոգենը ստորաբաժանվում է 2 ենթաբաժնի (ստորին, վերին) և 4 հարկի (դանիական, մոնթյան, զելանդական, տանետյան), էոգենը՝ 3 ենթաբաժնի (ստորին, միջին, վերին) և 4 հարկի (հայրյան, լյուտետյան, բարտոնյան և պրիաբոնյան), օլիգոգենը՝ 2 բաժնի (ստորին, վերին) և 2 հարկի (ռյուպեյան և հատյան): Պալեոգենում տեղի են ունեցել հզոր տեկտ. շարժումներ, առաջացել են կորդիլիերները, Անդերը և այլ լեռնային կառույցներ, ձևավորվել են ալպիդների ծալքավոր կառույցները, գոյացել են Պիրենեյների, Ալպերի, Կարպատների, Դրիմի, Կովկասի, Պամիրի, Ատլասի, Հիմալայների երկրաձևաբանորեն արտահայտված առանցքային մասերը: Առավելագույն ծովաբազալը (տրանսգրեսիան) տեղի է ունեցել էոգենի վերջում: Պ. հ-ի սկզբում լայն տարածում են ստացել կաթնասունները, հանդես են եկել գիշատիչները, կրծողները, սնբակավորները, պրիմատները: Խոշոր շերտագրական նշանակություն ունեն պելագիկ ֆորամինիֆերները (այդ թվում՝ նունուլիթները), մանոպլանկտոնը, ռադիոլարիաները, դիատոմային ջրիմուռները: Բուսական աշխարհում տիրապետել են ծածկասերմերը և մերկասերմերը:

**Պ-9. ПАЛЕОГЕОГРАФИЧЕСКИЕ КАРТЫ – ՅՆԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵՉՆԵՐ, PALEO GEOGRAPHICAL MAPS**, արտապատկերում են երկրբ. անցյալի ֆիզաշխ. պայմանները, մասնավորապես՝ ցամաքի ու ծովի տեղաբաշխումը, ռելիեֆի բնույթը, բնական զոնաների սահմանների տեղադիրքը և այլն:

**Պ-10. ПАЛЕОГЕОГРАФИЯ** (հուն. palaiós – հին և աշխարհագրություն) – **ՅՆԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, PALEO GEOGRAPHY**, գիտություն, որն ուսումնասիրում է Երկրի վրա անցյալ երկրբ. ժամանակաշրջաններում գոյություն ունեցած ֆիզաշխ. պայմանները: Հ. դիտարկում է լանդշաֆտում արտահայտվող ֆիզաշխ. բոլոր գործընթացներն ու երևույթները: Այդ նպատակով կատարվում է հին ռելիեֆի, կլիմայի, օրգանիզմների և օրգանական նյութերի տարածման վերականգնում, կիրառվում է հնաշխ. քարտեզագրում՝ քարաբանաֆազիալ վերլուծությամբ և հնատեկտոնիկայի համակցությամբ: Հ. ներառում է մի շարք մասնավոր գիտաճյուղեր՝ հնաերկրաձևաբանություն, հնակլիմայագիտություն, հնակենսաշխարհագրություն, հնաէկոլոգիա և այլն: Հ. նաև պատմական երկրաբանության մաս է, որը նյութ է տալիս երկրակեղևի զարգացման պատմության ճանաչողության համար: Հ. հիմնվում է ապարների կազմի, կառուցվածքի, կազմվածքի, տեղադրման և այլ հատկանիշների, ինչպես նաև նրանցում ներփակված օրգանական մնացորդների ուսումնասիրության վրա: Այն սերտորեն կապված է ֆազիաների մասին ուսումնառքի, քարաբանության, շերտագրության, տեկտոնիկայի, հնէաբանության, երկրաքիմիայի, երկրաֆիզիկայի հետ: Հ. ձևավորվել է 19-րդ դարի կեսերին: 20-րդ դարի 30-ական թվականներից Հ-ական վերականգնումները դառնում են անհրաժեշտ

նախադրյալներ օգտ. հնձ-ների (նավթ և գազ, ածուխ, աղեր, բոքսիտներ, ֆոսֆորիտներ, ալմաստներ և այլն) որոնման համար:

**Փ-11. ПАЛЕОГЕОМОРФОЛОГИЯ** (հուն. palaiós – հին և երկրաձևաբանություն) – **ՀՆԱԵՐԿՐԱԶԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ (ՀՆԱԳԵՈՍՈՐՖՈԼՈԳԻԱ), PALEOGEOMORPHOLOGY**, երկրաձևաբանության (գեոմորֆոլոգիայի) բաժին, որը դիտարկում է անցյալ երկրը. ժամանակաշրջանների ռելիեֆը (հաճախ թաղված), նպատակ ունենալով պարզաբանելու երկարատև երկրը. ժամանակի ընթացքում երկրի մակերևույթի ձևավորման պատմությունը: Հին ռելիեֆը վերականգնելու համար ուսումնասիրվում են նստվածքային գոյացություններում ողողամաշման մակերևույթները, ինչպես նաև համահարաբերական նստվածքները:

**Փ-12. ПАЛЕОГИДРОГЕОЛОГИЯ** (հուն. palaiós – հին և ջրաերկրաբանություն) – **ՀՆԱՋՐԱԵՐԿՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, PALEOHYDROGEOLOGY**, ջրաերկրաբանության բաժին (պատմական ջրաերկրաբանություն), որն ուսումնասիրում է երկրակեղևի ջրածնշումային համակարգերի զարգացման պատմությունը՝ նպատակ ունենալով պարզաբանելու տարբեր բաղադրության ստր. ջրերի ձևավորման օրինաչափությունները և նրանց երկրը. դերը օգտ. հնձ-ների հնքվ-երի առաջացման ու քայքայման գործուն:

**Փ-13. ПАЛЕОГИДРОГРАФИЯ – ՀՆԱՋՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, PALEOHYDROGRAPHY**, ջրագրության բաժին, որն ուսումնասիրում է երկրը. անցյալում (հիմնականում չորրորդական ժամանակաշրջանում) գոյություն ունեցած, ներկայումս թաղված գետային ցանցը, ժամանակի ընթացքում նրա կրած փոփոխությունների պատճառներն ու օրինաչափությունները:

**Փ-14. ПАЛЕОГЛЯЦИОЛОГИЯ** (հուն. palaiós – հին և սառցադաշտագիտություն) – **ՀՆԱՍԱՆՑԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, PALEOGLACIOLOGY**, սառցադաշտագիտության բաժին, որն ուսումնասիրում է երկրը. անցյալի բնական սառույցները, ինչպես նաև երկրի ժամանակակից սառցապատումների ծագման և զարգացման պատմությունը: Հին սառցապատումների վերականգնման համար ուսումնասիրվում են նրանց երկրը. և երկրաձևաբանական գործունեության հետքերը:

**Փ-15. ПАЛЕОЗОЙСКАЯ ГРУППА – ՊԱԼԵՈՉՈՅԱՆ ԽՈՒՄԲ**, նույնն է՝ Палеозойская эратема:

**Փ-16. ПАЛЕОЗОЙСКАЯ ЭРАТЕМА (ЭРА), ПАЛЕОЗОЙ** (հուն. palaiós – հին և zōē – կյանք) – **ՊԱԼԵՈՉՈՅԱՆ ԵՐԱՏԵՄԱ (ԴԱՐԱՇՐՋԱՆ), ՊԱԼԵՈՉՈՅ, PALEOZOIC**, երկրակեղևի շերտերի շերտագրական սանդղակի երատեմաներից (խմբերից) մեկն է և երկրի երկրը. պատմությամբ՝ իրեն համապատասխանող դարաշրջանը: Ֆաներոզոյի սկզբնական խոշոր ստորաբաժանումն է՝ հաջորդում է պրոտերոզոյին (մինչքենթրիին) և նախորդում է մեզոզոյան երատեմային (դարաշրջանին): Սկիզբը 545 մլն. տ. առաջ, տևողությունը՝ 295 մլն. տ.: Առանձնացրել է անգլ. երկրաբան Ա. Սեջվիկը 1838-ին: Ներառում է քենթրիի, օրդովիկի, սիլուրի, դևոնի, քարածխային և պերմի համակարգերը (դարաշրջանները): Պալեոզոյի սկզբի հետ կապված են բայկալյան ծալքավորության վերջին արտահայտումները, կենտրին տեղի են ունեցել կալեդոնյան, իսկ վերջում՝ հերցինյան ծալքավորությունները: Պալեոզոյի ստորին սահմանն աչքի է ընկնում կարծր կմախք ունեցող կենդանական օրգանիզմների զանգվածայնորեն հանդես գալով: Վաղ պալեոզոյում դրանք ներկայացված են բացառապես անողնաշարավորներով, ուշ պալեոզոյում հանդես են գալիս ողնաշարավորները (սկզբում ձկները, ավելի ուշ՝ երկկենցաղները և ստորակարգ սողունները), էպսես հարստանում է անողնաշարավորների դասակարգումային կազմը: Վաղ պալեոզոյի բուսական աշխարհը ներկայացված է ջրիմուռներով, ուշ պալեո-



զոյուն զարգանում է ցամաքային բուսականությունը՝ փսիլոֆիտները, գետնամուշկազգիները, հատվածացողունավորները, պտերները, քորդափտները:

**П-17. ПАЛЕОЗООГЕОГРАФИЯ – ՀԱՎԿԵՆԴԱՆԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, PALEO-ZOOGEOGRAPHY**, գիտություն է անցյալ երկրբ. ժամանակաշրջաններում կենդանիների աշխհ. տարաբնակեցման օրինաչափությունների մասին:

**П-18. ПАЛЕОЗООЛОГИЯ** (հուն. palaiós – հին և կենդանաբանություն) – **ՀԱՎԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, PALEOZOOLOGY**, հնէաբանության բաժին, որն ուսումնասիրում է երկրբ. անցյալի կենդանաբանական աշխարհը և նրա զարգացման պատմությունը՝ ըստ նրանց բրածո մնացորդների և կենսագործունեության հետքերի:

**П-19. ПАЛЕОКЛИМАТОЛОГИЯ** (հուն. palaiós – հին և կլիմայագիտություն) – **ՀԱՎԿԼԻՄԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, PALEOCLIMATOLOGY**, գիտություն, որն ուսումնասիրում է երկրի երկրբ. և պատմական անցյալի կլիման: Սերտորեն կապված է հնաշխարհագրության հետ: Հին կլիման վերականգնվում է ըստ նստվածքային ապարների նյութական կազմի ու կառուցվածքային հատկանիշների, օրգանիզմների բրածո մնացորդների և այլ բազմաթիվ երկրբ. ցուցիչների:

**П-20. ПАЛЕОЛИТ** (հուն. palaiós – հին և lithos – քար) – **ՊԱԼԵՈԼԻԹ, ՀԻՆ ՔԱՐԻ ԴԱՐ, PALEOLITHIC**, մարդագոյացման ամենաերկարատև փուլ, որի ընթացքում տեղի են ունեցել քարե գործիքների զարգացում, դրանց աստիճանական բարդացում և փոխարինում, կրակի օգտագործում: Հանդես են եկել ոսկրե գործիքներ, արվեստի առարկաներ, սկսվել է կացարանների կառուցում և այլն: Կիրառվում է Պ-ի երկանդան (վաղ և ուշ պալեոլիթ), ինչպես նաև եռանդան (միջին՝ մուստերյան մշակույթի անջատմամբ) բաժանում: Ուշ պալեոլիթին անցնելիս հանդես է գալիս և բնակություն հաստատում ժամանակակից ֆիզ. տիպի մարդը: Պ. ընդգրկում է էոպլեյստոցենի սկզբից մինչև հոլոցեն ընկած ժամանակահատվածը:

**П-21. ПАЛЕОМАГНЕТИЗМ** (հուն. palaiós – հին և magnētis – մագնիս) – **ՀՆԱՍԱԳՆԻՍԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, PALEOMAGNETISM**. 1) ապարների հատկություն՝ իրենց ձևավորման ընթացքում մագնիսացվելու և ձեռք բերված մագնիսացվածությունը (մնացորդային մագնիսացվածություն) պահպանելու հետագա երկրբ. ժամանակաշրջանում: 2) երկրային մագնիսականության բաժին, որն ուսումնասիրում է երկրբ. անցյալի երկրամագնիսական դաշտը: Հ. հնարավորություն է տալիս ուսումնասիրելու երկրամագնիսական դաշտի էվոլյուցիան, որոշելու անցյալ երկրբ. դարաշրջաններում մայր ցամաքների կամ նրանց խոշոր մեծաբեկորների դիրքը միմյանց և բևեռների նկատմամբ (օր.՝ Հնդկաստանը մեզոզոյի վերջում գտնվել է Հր. կիսագնդում), վերականգնելու հնաշխհ. պայմանները և այլն:

**П-22. ПАЛЕОНТОЛОГИЯ** (հուն. palaiós – հին, ón – սեռ. հ. óntos – էակ և lógos – ուսմունք, խոսք) – **ՀՆԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, PALEONTOLOGY**, գիտություն, որն ուսումնասիրում է անցյալ երկրբ. ժամանակաշրջանների օրգանական աշխարհը և նրա զարգացման օրինաչափությունները՝ սերտորեն կապված երկրի պատմության ուսումնասիրման հետ: Հ-յան ուսումնասիրման օբյեկտ են հանդիսանում շերտերի մեջ պահպանված օրգանիզմների մնացորդները և նրանց կենսագործունեության հետքերը (բրածո մնացորդներ): Հ. սերտորեն կապված է մի շարք կենսբ. գիտությունների հետ՝ լայնորեն օգտագործելով դրանց մեթոդները (համեմատական անատոմիական, ձևաֆունկցիոնալ, էմբրիոլոգիական և այլն): Հ. կազմված է երկու բաժիններից՝ հնակենդանաբանություն (ուսումնասիրում է բրածո կենդանիները) և հնաբուսաբանություն (հետազոտում է բրածո բույսերը): Առաջինը բաժանվում է անողնաշարավորների Հ-յան և ողնաշարավորների Հ-յան: Հ-յան կազ-

մի մեջ մտնում են ակտուալները, տաֆոնոմիան, հնաէկոլոգիան, հնա-կենսաշխարհագրությունը և այլն: Հ. սերտորն կապված է նաև երկրբ. մի շարք գիտությունների հետ՝ կենսաշերտագրության, պատմական երկրաբանության, քարաբանության, հնաշխարհագրության: Օրգանական աշխարհի զարգացման փուլերի հիման վրա հաստատագրվեց երկրաժամանակագրությունը, իսկ հնէաբանական մեթոդը առաջատարն է շերտագրական ուսումնասիրություններում: Բացի դրանից, Հ-յան տվյալները կիրառվում են երկրբ. անցյալի ֆիզաշխ. պայմանների հետազոտման ընթացքում: Հ-յան ձևավորումը, որպես գիտություն, կապված է անգլիացի Ու. Սմիթի և ֆրանսիացիներ Ժ. Կյուվեի ու Ժ. Լամարկի անունների հետ, գործել են XVIII դ. վերջում և XIX դ. սկզբում:

**П-23. ПАЛЕОНТОЛОГИЯ БЕСПОЗВОНОЧНЫХ – ԱՆՈՂՆԱՇԱՐՎՈՐՆԵՐԻ ՀՆԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, INVERTEBRATE PALEONTOLOGY**, հնէաբանության բաժին, որն ուսումնասիրում է անցյալ երկրբ. ժամանակաշրջանների անողնաշարավորների ֆիլոգենիան, անատոմիան, ձևաբանությունը, համակարգությունը, գոյության ժամանակը և տեղը:

**П-24. ПАЛЕОНТОЛОГИЯ ПОЗВОНОЧНЫХ – ՈՂՆԱՇԱՐՎՈՐՆԵՐԻ ՀՆԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, VERTEBRATE PALEONTOLOGY**, հնէաբանության բաժին, որն ուսումնասիրում է անցյալ երկրբ. ժամանակաշրջանների ողնաշարավորների ձևաբանությունը, անատոմիան, ֆիզիոլոգիան, համակարգությունն ու ֆիլոգենիան, գոյության ժամանակը և տեղը՝ ըստ շերտերի մեջ պահպանված մնացորդների:

**П-25. ПАЛЕОПОЧВЫ – ՀՆԱՀՈՂԵՐ, PALEOSOL**, 1) «թաղված հողեր» տերմինի հոմ, 2) հողեր, որոնք այժմ գտնվում են մակերևույթին, բայց ձևավորվել են նախորդ ժամանակաշրջաններում (մինչև հոլոցենը), այնպիսի պայմաններում, որոնք խիստ կերպով տարբերվում են արդի պայմաններից:

**П-26. ПАЛЕОПАЛИНОЛОГИЯ** (հուն. palaiós – հին, palinē – նուրբ փոշի և logos – ուսմունք, խոսք) – **ՀՆԱՊԱԼԻՆՈԼՈԳԻԱ, PALEOPALYNOLOGY**, գիտություն, որն ուսումնասիրում է տարբեր հասակի ապարներում ցրված բրածո բեղմնիկները (սպորները), ծաղկափոշին և բուսական այլ մանր թաղվածքները:

**П-27. ПАЛЕОТЕМПЕРАТУРЫ – ՀՆԱՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՆԵՐ, PALEOTEMPERATURES**, երկրբ. անցյալի ծովային ավազանների ջերմաստիճան, որոշվում է՝ 1) զանգվածասպեկտրաչափորեն՝ օրգանածին կալցիտի (բելեմնիտների ռոստրներից, նումուլիթների խեցիներից և այլն) ածխաթվում  $O^{18}$  և  $O^{16}$  իզոտոպների հարաբերությամբ, 2) քիմիավերլուծությամբ՝ ծովային անողնաշարավորների խեցիներում, բելեմնիտների ռոստրներում կալցիտի մեջ Ca-ի և Mg-ի հարաբերությամբ:

**П-28. ПАЛЕОТИПНЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ** (հուն. palaiós – հին և týpos – կերպ, տեսակ) – **ՀՆԱՏԻՊ ԱՊԱՐՆԵՐ, PALEOTYPAL ROCKS, PALEOVOLCANIC ROCKS**, հրաբխային ապարներ, որոնք երկրորդային գործընթացների հետևանքով ենթարկվել են փոփոխությունների և այդ պատճառով, անկախ հասակից, ակնադիտականորեն ունեն «հին» տեսք: Հակադրվում են լավ պահպանված նորատիպ ապարներին: Նորատիպ ապարները և դրանց հնատիպ նմանակները ստացել են տարբեր անվանումներ, օր.՝ բազալտի հնատիպը կոչվում է բազալտային պորֆիրիտ, դոլերիտինը՝ դիաբազ, դացիտինը կամ ռիոլիթինը՝ քվարցային պորֆիր (դացիտային պորֆիրիտ կամ ռիոլիթային պորֆիր) և այլն:

**П-29. ПАЛЕОФИТОЛОГИЯ**, նույնն է՝ Палеоботаника:

**П-30. ПАЛЕОЦЕН** (հուն. palaiós – հին և kainós – նոր) – **ՊԱԼԵՈՑԵՆ, PALEOCENE**, պալեոգենի համակարգի (ժամանակաշրջանի) ստորին բաժին (առաջին դարակարգ):

- Ս-31. ՍԱԼԵՕԿՈԼՈԳԻԱ** (հուն. palaiós – հին և էկոլոգիա) – **ՅԱԼԵԿՈԼՈԳԻԱ, PALE-OECOLOGY**, հնէաբանության բաժին, որն ուսումնասիրում է փոխհարաբերությունները երկրի անցյալի օրգանիզմների ու նրանց բնական միջավայրի միջև, օրգանիզմների (բույսերի և կենդանիների) գոյության պայմանները և ապրելակերպը: Յ. ունի կարևոր նշանակություն բացահայտելու այն նստվածքների առաջացման պայմանները, որոնցում հանդիպում են օրգանական մնացորդները:
- Ս-32. ՍԱԼԻՆԳԵՆԵԶ** (հուն. pálin – նորից, կրկին և génesis – ծագում, գոյացում) – **ՊԱԼԻՆԳԵՆԵԶ (ԿՐԿՆԱԾՆՈՒԹՅՈՒՆ), PALINGENESIS**, գործընթաց, որը հանգում է մագմայի կրկնակի առաջացման՝ ի հաշիվ երկրակեղևի ստորին մասերում մագմայական ապարների մասնակի կամ լրիվ հալման: Տերմինը առաջարկել է Ֆին երկրաբան Յա. Ի. Սյոդերհոլմը, 1907-ին: Պալինգեն մագմաների բարձրացման հետ կապված է լեռնագոյացման ներժայթքվածքների (ինտրուզիաների) և դիապիր-պլուտոնների առաջացումը:
- Ս-33. ՍԱԼԻՆՈԼՈԳԻԱ** (հուն. palinē – նուրբ փոշի և lógos – ուսմունք, խոսք) – **ՊԱԼԻՆՈԼՈԳԻԱ, PALYNOLOGY**, կենսաբանության և հնակենսաբանության բաժին, որն ուսումնասիրում է բույսերի բեղմնիկները (սպորները) և ծաղկափոշին (այդ թվում՝ բրածո): Անցյալ երկրի ժամանակաշրջանների բույսերի բեղմնիկների ու ծաղկափոշու ուսումնասիրումը (բեղմնիկ-ծաղկափոշային վերլուծություն) օգնում է որոշելու ապարների հարաբերական հասակը, իրականացնելու շերտերի համահարաբերակցությունը և վերականգնելու հնակլիման ու հնաէկոլոգիական պայմանները:
- Ս-34. ՍԱՆԳԵԱ** (հուն. pán – ողջը, բոլորը և gē, gáia – երկիր) – **ՊԱՆԳԵՅԱ, PAN-GAEA**, ենթադրական մայր ցամաք, որը պալեոգոյում և մեզոգոյում միավորել է բոլոր ժամանակակից մայր ցամաքները: Նրա կոտրատումը և մասերի տարաշարժը, նոր գլոբալ տեկտոնիկայի վարկածի համաձայն, կապված է միջնապատյանում կոնվեկցիոն բջիջների նոր համակարգի առաջացման հետ:
- Ս-35. ՍԱՆՈՆՏԻՅԱՆ ԿՐՍ, ՍԱՆՈՆ** (Դանուբ գետի վերին հոսանքում գտնվող հին հռոմեական Պաննոնիա մարզի անունով) – **ՊԱՆՆՈՆՅԱՆ ԿՐԿ, ՊԱՆՆՈՆ, PANNONIAN**, Վիեննական ավազանի (միոցեն-միջին պլիոցեն) նստվածքներ, ներառում են սարմատի մի մասը, մետոսիս, պոնտոսի և դակիան հարկերը:
- Ս-36. ՍԱՆՑԻՐՆԵ ՐԻԲԻ, տե՛ս ՍԱԿՈԴԵՐՄԻ:**
- Ս-37. ՍԱՍՐՈՒՆԻԿԻ (Filicinae) –ՁԱՐԽՆՏԵՐ, ՊՏԵՐՆԵՐ, FERNS**, բարձրակարգ բեղմնիկային բույսերի դաս, միավորում է խոտաբույսերի, հազվադեպ ծառանման բույսերի (վերջինները միայն արևադարձային երկրներում) խոշոր և լայն տարածում ունեցող խումբ: Յանդես են եկել դեռևս, ամենալայն տարածման և բազմազանության հասել են մեզոգոյում, պալեոգենում և նեոգենում:
- Ս-38. ՍԱՍՐՈՒՆԻԿՈՕԲՐԱԶՆԻԵ (Pteridophyta) – ՊՏԵՐԱԶՓԻՆԵՐ, PTERIDOPHYTES**, բարձրակարգ անսերմ բույսերի բաժին, խոտաբույսեր և ծառանման բույսեր: Ծաղկումը կարբոնում է, երբ դրանց ծառանման տեսակները կազմել են լայնատարած անտառներ: Բաժինը ներառում է ձարխոտերը, գետնամուշկայինները, հատվածացողունավորները, այդ թվում՝ շատ մահացած ձևեր:
- Ս-39. ՍԱՐԱ... (հուն. pará – մոտ, կողքին, կից) – ՊԱՐԱ..., ՍԱՐԱ..., բարդ բառերի սկզբնամաս, որը նշանակում է՝ 1) ապարներ, որոնք առաջացել են նստվածքային ապարների փոխակերպման հետևանքով (օր.՝ պարագենյաներ, պարամֆիթոլիթներ, պարաթերթաքարեր), 2) միներալներ, որոնք մոտ են նման անվանում ունեցողներին (օր.՝ պարափայլարներ):**
- Ս-40. ՍԱՐԱԳԵՆԵԶ (ՍԱՐԱԳԵՆԵԶԻՍ)** (հուն. pará – մոտ, կողքին և génesis – ծագում, գոյացում) – **ՊԱՐԱԳԵՆԵԶ (ՊԱՐԱԳԵՆԵԶԻՍ), PARAGENESIS**, միաժամանակյա

կամ հաջորդական առաջացման հետևանքով միատեղ գտնվելը, համատեղ լինելը: Տերմինը կիրառվում է միներալների (միներալների Պ.), ապարների (ապարների Պ.), ֆացիաների (ֆացիաների Պ.) նկատմամբ: Օր.՝ միներալների և երկրաքիմիայի Պ.՝ ծագումնաբանորեն միմյանց հետ կապված միներալների և քիմ. տարրերի օրինաչափորեն համատեղ գտնվելն է: Մագմայական և նստվածքային ապարների պարագենետիկական կապերը սահմանված են մագմայական և նստվածքային ֆորմացիաներում (տե՛ս նաև *Формации геологические*):

**Պ-41. ПАРАГЕОСИНКЛИНАЛЬ** (հուն. *para* – մոտ, կողքին, դուրս և երկրասինկլինալ) – **ՊԱՐԱԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԼ, PARAGEOSYNCLINE**, 1) միջանկյալ կառուցվածք պլատֆորմի ու երկրասինկլինալի միջև, որը չունի երկրասինկլինալների բոլոր տիպական գծերը և կրել է համեմատաբար թույլ ձևախախտումներ (դեֆորմացիաներ), նստվածքների փոխակերպությունը թույլ է արտահայտված, ներժայթքային (ինտրուզիվ) մագմայականությունը ներկայացված է փոքր ներժայթքվածքներով: Տեկտ. շարժումների շրջումը համարյա չի արտահայտված, 2) երկրասինկլինալների ժամանակակից տեսակ, որի համար բնորոշ է օվկիանոսների ու մայր ցամաքների միջև տեղադրված լինելը, և որը օվկիանոսից անջատվում է կղզիների նեղ շղթայով: Այս հասկացությամբ «Պ.» տերմինը գործնականորեն չի կիրառվում:

**Պ-42. ПАРАГНЕЙС** – **ՊԱՐԱԳՆԵՅՍ (ՊԱՐԱԳՂՁԱՔԱՐ), PARAGNEISS**, գնեյս (գղձաքար), որն առաջացել է նստվածքային ապարների խոր փոխակերպման հետևանքով:

**Պ-43. ПАЗИТИЧЕСКИЙ ВУЛКАНИЧЕСКИЙ КОНУС, ПОБОЧНЫЙ ВУЛКАНИЧЕСКИЙ КОНУС** – **ՍԱԿԱՐՈՒՅԾ ԶՐԱԲԵԱՅԻՆ ԿՈՆ, ԿՈՂՄՆԱԿԻ (ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ) ԶՐԱԲԵԱՅԻՆ ԿՈՆ, SUBORDINATE VOLCANO, PARASITIC VOLCANIC CONE**, հրաբուխ, որը տեղաբաշխված է գլխավոր հրաբխի լանջերին կամ ստորոտին:

**Պ-44. ПАЗИТИЧЕСКИЙ КРАТЕР** – **ՍԱԿԱՐՈՒՅԾ ԽԱՌՆԱՐԱՆ, ADVENTIVE CRATER**, կենտրոնական հրաբխի կողմնակի խառնարան, որը տեղաբաշխված է նրա լանջին և իրենից ներկայացնում է կենտրոնական մղանցքից կամ բկանցքից հեռացող մղանցքի ավարտը:

**Պ-45. ПАРАЛИЧЕСКИЙ ТИП УГЛЕОБРАЗОВАНИЯ** (հուն. *parálios* – ծովեզերք) – **ԱԾԽԱԳՈՅԱՑՄԱՆ ԾՈՎԵՁԵՐՔԱՅԻՆ (ՊԱՐԱԼԻԿԱԿԱՆ) ՏԻՊ, PARALIC TYPE OF CARBONIFICATION**, ածխագոյացում, որը տեղի է ունենում ծովային ափամերձ պայմաններում: Բնորոշ է ցամաքային և տիպական ծովային նստվածքների բազմակի ցիկլային հերթափոխը: Ծովային նստվածքները ներկայացված են կրաքարերով և կավային թերթաքարերով (գլխ. ածխային շերտերի առաստաղում): Գզոր (հազարավոր մ-եր) ածխաբեր ստվարաշերտերը ներփակում են մեծաքանակ (տասնյակ և հարյուրավոր) ածխային շերտեր, որոնք համեմատաբար կայուն են զգալի տարածություններում:

**Պ-46. ПАРАЛЛЕЛЬНОЕ ЗАЛЕГАНИЕ** – **ՁՈՒԳԱՅԵՌ ՏԵՂԱԴՐՈՒՄ, PARALLEL BEDDING**, տե՛ս *Согласное залегание*:

**Պ-47. ПАРАЛЛЕЛЬНОЕ НЕСОГЛАСИЕ** – **ՁՈՒԳԱՅԵՌ ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ, PARALLEL DISCORDANCE**, տե՛ս *Несогласие параллельное*:

**Պ-48. ПАРАМАГНЕТИЗМ** – **ՊԱՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, PARAMAGNETISM**, մագնիսացող դաշտի ուղղությամբ նյութի թույլ մագնիսացվելու հատկություն:

**Պ-49. ПАРАМЕТРИЧЕСКОЕ БУРЕНИЕ** – **ՊԱՐԱՄԵՏՐԱԿԱՆ (ԶԱՐԱՉԱՓԱԿԱՆ) ԶՈՐԱՏՈՒՄ, PARAMETRIC DRILLING**, հետազոտվող տարածքում՝ ռեգիոնալ փուլում հորատանցքի անցում, որի նպատակն է բացահայտելու և ստանալու նավթագա-

զակուտակման զոնաների երկրաբանակերպ. պարամետրեր, որոնք առավել հեռանկարային են որոնողական աշխատանքների անցկացման համար:

**П-50. ПАРАМЕТРЫ МЕСТОРОЖДЕНИЙ ГЕОЛОГО-ПРОМЫШЛЕННЫЕ – ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԵՐԿՐԱԲԱՆԱՍՐԴՅՈՒՆԱԲԵՐՎԱԿԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐ, GEOLOGICAL COMMERCIAL PARAMETERS OF DEPOSITS, օգտ. հնժ-յի հանքակուտակների քանակական, երկրբ. և հունքի բնական հատկությունների բնութագրեր, որոնք ազդում են հնքվ-ի շահագործման, հարստացման և հունքի վերամշակման պայմանների վրա: Դրանցից գլխավորներն են՝ հանքակուտակների հաստությունը, տարածվածությունը, ձևը և ներքին կառուցվածքը, օգտ. հնժ-ների նյութական կազմը, որակը, տեխնոլոգիական հատկությունները, տեղադրման պայմանները, հնքվ-ի շահագործման լեռնատեխնիկական պայմանները:**

**П-51. ПАЧКА – ՇԵՐՏԱՏՈՒՓ (ՂԱՐՍԱՇԵՐՏ), PACKET, 1)** Շ. տառային կամ թվային ցուցիչով շերտախմբի կամ ենթաշերտախմբի համեմատաբար փոքր հաստություն ունեցող մասն է, որը բնորոշվում է որոշակի ֆացիալ-քարաբանական ու հնէաբանական առանձնահատկություններով: 2) Շ. առանց թվային կամ տառային ցուցիչի՝ այն շերտերի փոքր հաստության համախմբությունն է, որոնք բնորոշվում են հատկությունների որոշ ընդհանրությամբ: Ազատ օգտագործման տերմին է:

**П-52. ПАЧКА ЛИТОЛОГО-СТРАТИГРАФИЧЕСКАЯ – ՔԱՐԱԲԱՆԱՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՇԵՐՏԱՏՈՒՓ (ՂԱՐՍԱՇԵՐՏ), LITHOSTRATIGRAPHICAL PACKET, և ստվածքային ապարների փոքր հաստության (մինչև մի քանի տասնյակ մ) համալիր, որը բնորոշվում է քարաբանական, երբեմն նաև հնէաբանական առանձնահատկություններով, որոնք տարբերում են տվյալ շերտատուփը իրեն ներփակող ապարներից: Կտրվածքում Ք. շ. գրավում է որոշակի շերտագրական դիրք և սովորաբար կազմում է շերտախմբի կամ ենթաշերտախմբի, երբեմն՝ հարկի մի մասը:**

**П-53. ПЕГМАТИТ** (ֆրանս. pegmatite, հուն. pēgma, սեռ. հ. pēgmatos-ից – կապակցում, միացում) – **ՊԵՊՄԱՏԻՏ, PEGMATITE**, բաց գունավորված խոշորահատիկ ժայթքային (հիմնականում երակային) ապար, որին բնորոշ են բարդ և բազմազան միներալային կազմը, դյուրացնող բաղադրիչներ (ջուր, ֆտոր, բոր, քլոր և այլն) պարունակող միներալների և հազվագյուտ ու ցրված տարրերի միներալների բարձրավուն պարունակությունը: Տեղադրվում է երակների, ոսպնյակների, բների և այլ ձևերով: Պ-ները ձևավորվում են չափավոր և զգալի խորություններում, լայն ջերմաստիճանային ընդգրկություն (650-700°-ից մինչև 250-200°C), որը համապատասխանում է մագմայական գործընթացի վերջին՝ ջրաջերմային (հիդրոթերմալ) փուլի սկզբին՝ ցնդող բաղադրիչների-միներալիզատորների (ջուր, ֆտոր և այլն) բարձր ակտիվության պայմաններում: Տարբերում են գրանիտային, միասկիտային (ալկալիական) և հիմքային Պ-ներ՝ կապված համապատասխան կազմության լրիվ բյուրեղային ապարների հետ: Պ-ները հանդիսանում են բազմաթիվ օգտ. հնժ-ների աղբյուր (կերամիկական հունք, փայլարներ, բնագույն և թանկարժեք քարեր, հազվագյուտ տարրեր և այլն): Տարբերում են պեգմատիտային հնքվ-երի 3 դաս՝ պարզ կամ կերամիկական պեգմատիտներ, վերաբյուրեղացած կամ փայլարային պեգմատիտներ, մետասոմատիկ (տեղակալման) կամ հազվագյուտ մետաղային պեգմատիտներ:

**П-54. ПЕДИМЕНТ** (անգլ. pediment, լատ. pedamentum-ից – դիմհար, հենարան, նեցուկ, սեռ. հ. pedis-ից – ոտք, ստորոտ) – **ՊԵԴԻՄԵՆՏ, PEDIMENT, DESERT ROCKPLAIN**, մեղմաթեք լեռկացման (դենուդացիայի) հարթավայր, որը մշակված է արմատական ապարներում և ծածկված է փխրուն ապարների փոքր հաստու-

թյան շերտով: Առաջանում է զառիթափ լանջերի ստորոտին մոտ՝ մակերևութային ողողամաշման և ալիքածև հոսքերի ներգործության տակ՝ լանջի զուգահեռ նահանջի հետևանքով, առավելապես չորային և կիսաչորային պայմաններում:

**П-55. ПЕДИПЛАНАЦИЯ, ПЕДИПЛЕНИЗАЦИЯ – ՊԵԴԻՊԼԱՆԱՑՈՒՄ, ՊԵԴԻՊԼԵՆԻ-ՉԱՑՈՒՄ, PEDIPLANATION**, լանջերի զուգահեռ նահանջի հետևանքով ռելիեֆի հարթեցում՝ լերկացման (դենուդացիայի) հիմնամակարդակի շատ թե քիչ կայուն դիրքի և այդ ընթացքում առաջացած պեդիմենտների հաջորդական միաձուլման դեպքում: Հատկապես բնորոշ է կիսաչոր կլիմայի մարզերի համար:

**П-56. ПЕДИПЛЕН** (անգլ. pediplain, լատ. pes-ից, սեռ. h. pedis-ից – ոտք, ստորոտ և անգլ. plain – հարթավայր) – **ՊԵԴԻՊԼԵՆ, PEDIPLAIN**, հարթեցված սակավաթեք լերկացման (դենուդացիայի) մակերևույթ, որն առաջանում է պեդիպլենացման եզրափակիչ փուլերում՝ պեդիմենտների միաձուլման հետևանքով: Դիտվում է արևադարձային Աֆրիկայում, որտեղ հարթեցված տարածքները գրավում են մակերևույթի մինչև 90 %:

**П-57. ПЕЛАГИАЛЬ, ПЕЛАГИЧЕСКАЯ ОБЛАСТЬ** (հուն. pélagos – ծով) – **ՊԵԼԱԳԻ-ԱԼ, ՊԵԼԱԳԻԱԼ ՄԱՐԶ, PELAGIAL, PELAGIC REGION**, օվկիանոսների, ծովերի, լճերի ջրի զանգվածը՝ որպես պելագիալ օրգանիզմների (պլանկտոն, նեկտոն, պլեյստոն) բնակման վայր: Հակադրվում է բենթալին (ջրավազանների հատակին), որտեղ բնակվում են հատակաբնակ (բենթոս) օրգանիզմները:

**П-58. ПЕЛАГИЧЕСКИЕ ОРГАНИЗМЫ – ՊԵԼԱԳԻԱԼ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐ, PELAGIC ORGANISMS**, կենդանական և բուսական օրգանիզմներ, որոնք ապրում են օվկիանոսների, ծովերի ու լճերի ջրային զանգվածում և կապված չեն ջրավազանի հատակի կամ նրա մերձափի հետ:

**П-59. ПЕЛАГИЧЕСКИЕ ОТЛОЖЕНИЯ** (հուն. pēlagos – ծով) – **ՊԵԼԱԳԻԱԼ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, PELAGIC DEPOSITS**, բաց ծովի կամ օվկիանոսի խորջրյա հատակային նստվածքներ, որոնք գոյանում են ափից հեռու ջրում կախված մասնիկների, պլանկտոն միկրոօրգանիզմների կմախքային մնացորդների, կավային ու բեկորային նյութի, հրաբխային մոխրի, տիեզերական փոշու և հատակին ձևավորվող միներալների դանդաղ կուտակման հետևանքով: Պ. ն-ին են պատկանում ժամանակակից կենսածին նստվածքները (գլոբիգերինային, կոկոլիթային, դիատոմա-յին և ռադիոլարիային տիղմեր, կարմիր խորջրյա կավ), իսկ հին նստվածքներից՝ որոշ կրաքարեր, ռադիոլարիտներ, դիատոմիտներ և այլն:

**П-60. ПЕЛЕЙСКИЙ ТИП ИЗВЕРЖЕНИЯ – ԺԱՅԹՔՄԱՆ ՊԵԼԵՅԱՆ ՏԻՊ, PELEAN-TYPE ERUPTION**, հրաբխի ժայթքում՝ խիստ մածուցիկ (թթու կազմի) լավայով, որը պնդանում է մինչև բկանցքից դուրս գալը և առաջացնում է խցան, վերջինը դուրս է մղվում գմբեթի վրա միաձույլ կոթողի տեսքով:

**П-61. ПЕЛИТОВАЯ СТРУКТУРА** (հուն. pēlós – կավ) – **ՊԵԼԻՏԱՅԻՆ (ԿԱՎԱՅԻՆ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, PELITIC TEXTURE**, կավային ապարների կազմություն՝ բաղկացած 0.01 մմ-ից փոքր մասնիկներից:

**П-62. ПЕЛИТОВАЯ ФРАКЦИЯ – ՊԵԼԻՏԱՅԻՆ ՀԱՏԻԿԱԽՈՒՄԲ (ՖՐԱԿՑԻԱ), PELITIC FRACTION**, փուխր ապարների հատիկախումբ, որի մասնիկների չափերը չեն գերազանցում 0.005 մմ-ին, նույնն է՝ կավային հատիկախումբ:

**П-63. ПЕЛИТЫ** (հուն. pēlós – կավ) – **ՊԵԼԻՏՆԵՐ, PELITES**, 0.001 կամ 0.005 մմ-ից փոքր մասնիկներից կազմված տարբեր կազմի ու ծագման նստվածքային ապարների ընդհանուր անվանում (կավեր, արգիլիթներ և այլն):

**П-64. ПЕЛИТИЗАЦИЯ – ՊԵԼԻՏԱՑՈՒՄ (ԿԱՎԱՑՈՒՄ), PELITIZATION**, դաշտային ապարների փոփոխության սկզբնական փուլ, երբ հողմահարման և հետմազմայա-

կան գործընթացների ազդեցության տակ տեղի է ունենում դաշտային սպաթների պոլտորում՝ նրանցում պելիտային (կավային) նյութի, մասնավորապես՝ կաոլինի-տի զարգացման հետևանքով:

**Ս-65. ПЕМЗА** (լատ. pumex – փրփուր) – **ՊԵՄՉԱ (ՉԵՉԱՔԱՐ), PUMICE, PUMICE-STONE**, թեթև (ջրում չուլվող), սպիտակ, բաց դեղնավուն, դարչնագույն, խիստ ծակոտկեն (մինչև 70 %) և թելանման կառուցվածք ունեցող թթվային հրաբխային ապակի: Առաջանում է գազով հագեցած մածուցիկ մագմաներից, որոնցում ժայթքման ժամանակ ճնշման անկման շնորհիվ գազերը խիստ ընդարձակվում են, և լավան վերափոխվում է սպունգանման զանգվածի: Պ. տեղադրվում է ծածկոցների և հոսքերի տեսքով, ինչպես նաև կազմում է արտամղաժայթքային (էքստրուզիվ) գմբեթների և լավային հոսքերի վերին մասը: ՀՀ-ում Պ-ի հիմնական հնքվ-երն են Պենդաշենը, Իրինդը, Անիպեմզան և այլն: Օգտագործվում է որպես թեթև բետոնների լցանյութ, պլաստմասսաների և ռետինի արտադրություններում, քիմ. արդյունաբերության մեջ, որպես հղկանյութ և այլն:

**Ս-66. ПЕНЕПЛЕН** (անգլ. peneplain, լատ. paene – համարյա և անգլ. plain-ից – հարթավայր) – **ՀԱՄԱՀԱՐԹ (ՊԵՆԵՊԼԵՆ), PENEPLAIN, PENEPLANE**, թույլ ալիքանման (բլրակապատ) լեռկացման հարթավայր, որը հատում է տարբեր ծագման տեղախախտված ապարները մեկ ընդհանուր մակարդակով: Առաջանում է քայքայված լեռների տեղում՝ բնորոշելով երկրակեղևի երկրատեսկտ. զարգացման լեռնագոյացման փուլի անցումը պլատֆորմայինի: Տերմինը առաջարկել է ամերիկյան գիտնական Ու. Դեյվիսը 19-րդ դարի վերջում:

**Ս-67. ПЕНЕПЛЕНИЗАЦИЯ – ՀԱՄԱՀԱՐԹՈՒՄ (ՊԵՆԵՊԼԵՆԱՑՈՒՄ), PENEPLANATION**, 1) երկարատև հողմահարման, մթնոլորտային ջրերի ողողաքայքայման և լեռկացման այլ գործընթացների հետևանքով երկրի մակերևույթի (նախկինում խիստ ռելիեֆ ունեցող) հարթեցում, որը հանգեցնում է համահարթի (պենեպլենի) առաջացմանը: 2) Ռելիեֆի հարթում, որը, ի տարբերություն պեդիպլենացման, տեղի է ունենում խոնավ կլիմայական պայմաններում:

**Ս-68. ПЕНИСТЫЙ КАМЕНЬ – ՓՐՓՐԱՔԱՐ, FOAM-STONE**, բջջանման խարամային կեղև, որն առաջանում է սառչող բազալտային լավայի մակերևույթում:

**Ս-69. ПЕНСИЛЬВАНСКИЙ ОТДЕЛ** (ԱՄՆ-ի Փենսիլվանիա, Pennsylvania նահանգի անունով) – **ՓԵՆՍԻԼՎԱՆՅԱՆ ԲԱԺԻՆ, PENNSYLVANIAN**, ԱՄՆ-ի շերտագրական սանդղակի քարածխային համակարգի վերին բաժին, որը հաճախ դիտարկվում է որպես ինքնուրույն համակարգ: Մոտավորապես համապատասխանում է նախկին ԽՍՀՄ-ի միջին և վերին կարբոնին և Արմ. Եվրոպայի վերին կարբոնին:

**Ս-70. ПЕНТЛАНДИТ** (անվանումը ի պատիվ իռլանդական բնախույզ և ճանապարհորդ Ջ. Պենտլենդի, J. Pentland, 1797-1873) – **ՊԵՆՏԼԱՆԴԻՏ, PENTLANDITE**, միներալ սուլֆիդների դասից, (Fe, Ni)<sub>9</sub>S<sub>8</sub>, պարունակում է 34±10% Ni: Բյուրեղագիտական համակարգը խորանարդային է: Անջատման ձևերն են՝ փոքր իզոմետրիկ հատիկներ, հազվադեպ՝ խոշորաբյուրեղ ներփակվածքներ՝ Cu-ի և Fe-ի սուլֆիդներում: Կարծրությունը 3-4, փուխը է: Հանդիպում է արտաժայթքային ապարներում, ինչպես նաև պլատինի հնքվ-երում: Նիկելի կարևոր աղբյուր է:

**Ս-71. ПЕПЛОВЫЙ КОНУС – ՄԽԵՐԱՅԻՆ ԿՈՆՍ, ASH CONE, CINDER CONE**, փոքր չափերի հրաբխային կոն, որը կազմված է փուխը հրաբխային արգասիքներից՝ մոխիրներից:

**Ս-72. ПЕРВИЧНАЯ РАВНИНА, РАВНИНА МОРСКОЙ АККУМУЛЯЦИИ – ԱՌԱՋ-ՆԱՅԻՆ ՀԱՐԹԱՎԱՅՐ, ԾՈՎԱՅԻՆ ԿՈՒՏԱՎՄԱՆ ՀԱՐԹԱՎԱՅՐ, INITIAL PLAIN**, ոչ

բարձր ցամաքային հարթավայր, որն առաջացել է մակամայրցամաքային ծովի հետընթացության հետևանքով (հաճախ պլատֆորմային կառուցվածքների սահմաններում) և կազմված է երիտասարդ չձալքավորված ծովային նստվածքներից (օր.՝ Մերձկասպյան ցածրավայրը):

**Պ-73. ПЕРВИЧНАЯ СЛОИСТОСТЬ – ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, PRIMARY BEDDING**, նստվածքային ստվարաշերտի շերտավորություն, որը պայմանավորված է նստվածքակուտակման գործընթացներով և նրա հետ համաժամանակյա է: Պատճառը նստվածքակուտակման պայմանների փոփոխությունն է:

**Պ-74. ПЕРВИЧНОЕ ЗАЛЕГАНИЕ**, տե՛ս Залегание нормальное:

**Պ-75. ПЕРВИЧНО-ТЕКТОНИЧЕСКИЙ РЕЛЬЕФ – ԱՌԱՋՆԱՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՌԵԼԻԵՖ, INITIAL TECTONIC RELIEF, INITIAL STRUCTURAL RELIEF, PRIMARY TECTONIC RELIEF**, բնության մեջ հազվադեպ հանդիպող ռիլիեֆի ձևեր, որոնք սահմանափակված են տեկտ. գործընթացներով ձևափոխված մակերևույթով, օր.՝ երկրաշարժի ժամանակ գոյացած վարնետքային սանդղավանդը, որը ողողամածամբ դեռևս չի մասնատվել: Ա. ռ-ին են պատկանում նաև թույլ լեռկացման ենթարկված կամարածալքերը, գոգածալքերը և այլ տեկտ. կառուցվածքները:

**Պ-76. ПЕРВИЧНЫЕ ОРЕОЛЫ РАССЕЙНИЯ МЕСТОРОЖДЕНИЙ – ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՑՐՄԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊՍԱԿՆԵՐ, PRIMARY DISPERSION HALO OF DEPOSITS**, շրջափակող արմատական ապարներում հանքային տարրերի բարձր պարունակությամբ զոնա, որը առաջացել է հանքակուտակի ձևավորման հետ միաժամանակ:

**Պ-77. ПЕРВИЧНЫЕ ФОРМЫ РЕЛЬЕФА, ИСХОДНЫЕ ФОРМЫ РЕЛЬЕФА – ՌԵԼԻԵՖԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՁԵՎԵՐ, ՌԵԼԻԵՖԻ ՍԿՋՐՆԱԿԱՆ ՁԵՎԵՐ, INITIAL LAND-FORMS**, երկրի մակերևույթի ձևեր, որոնք գոյացել են որևէ ռելիեֆագոյացնող գործոնի ռեզիոնալ ներգործության հետևանքով և հետագայում կրել են երկրորդային փոխարկումներ՝ այլ գործոնների ազդեցության տակ: Օր.՝ սկզբնական սառցաբերուկային հարթավայրը:

**Պ-78. ПЕРЕДОВОЙ ХРЕБЕТ – ԱՌԱՋՆԱՅԻՆ ԼԵՌՆԱՇՂԹԱ, FORERANGE**, տեղաբաշխված է նախալեռների և գլխավոր լեռնաշղթայի միջև, զուգահեռ է վերջինին: Սովորաբար ավելի ցածր է, հատվում է անտեցեղենտ հովիտներով և գլխավոր լեռնաշղթայից անջատվում է ներլեռնային իջվածքով: Օր.՝ Մեծ Կովկասի Ա. լ-ները:

**Պ-79. ПЕРЕЖАТАЯ СКЛАДКА – ՆԵՂԱՑԱԾ (ՍԵՂՄՎԱԾ) ԾԱԼՔ, COMPRESSED FOLD**, մոտեցված թևերով և շատ թե քիչ մեկուսացված կորիզով ծալք, տե՛ս Веерообразная складка:

**Պ-80. ПЕРЕЖИМ ПЛАСТА – ՇԵՐՏԻ ՆԵՂԱՑՈՒՄ (ԲԱՐԱԿՈՒՄ), PINCH**, շերտի հաստության տեղային բարակում, կարող է լինել սկզբնական (կապված անհարթ մակերևույթին նստվածքի կուտակման հետ) կամ տեկտ., երբ շերտը սեղմվում է՝ կապված տեկտ. շարժումների ժամանակ ուժգին ճնշման հետ:

**Պ-81. ПЕРЕКРЁСТНАЯ СЛОИСТОСТЬ – ԽԱՉԱՁԵՎ (ԽԱՉՎՈՂ) ՇԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, CROSS LAMINATION, CRISS-CROSS BEDDING, CROSS-BEDDING**, 1) շերտավորություն, որում մի սերիայի շեղ շերտիկները հավում են մյուս սերիայի շերտիկների հետ անկյան տակ, բայց չեն խաչաձևավում. առաջանում է ջրային կամ օդային զանգվածի հոսանքի ուղղության ու ուժի փոփոխության հետևանքով: 2) շերտավորություն, որում նստվածքային շերտիկները խաչաձևավում են մակածին ծագման զուլերի հետ: Խ. շ. հոսքի ուղղության ու ուժի պարզաբանման հիմնական չափանիշներից մեկն է:

**Պ-82. ПЕРЕКРИСТАЛЛИЗАЦИЯ – ՎԵՐԱՔՐԻՏՈՒԵՂԱՑՈՒՄ, RECRYSTALLIZATION**, բյուրեղների ձևափոխություն (առանց բաղադրության ու կազմության փոփոխու-



թյան)՝ ի հաշիվ բյուրեղացման փոփոխվող պայմանների (ջերմադինամիկ պայմանների, բյուրեղացման միջավայրի կազմի և այլն) ներազդեցության: Վ. կարող է տեղի ունենալ գազանման, հեղուկ և պինդ վիճակում. այն հանգեցնում է նոր պայմանների համար հավասարակշիռ բյուրեղի ձևի փոխարկմանը, բյուրեղի չափերի մեծացմանը, փոքրացմանը և այլն: Վ. լայնորեն արտահայտվում է ապարների դիագենեզի և փոխակերպության ընթացքում:

**Ս-83. ПЕРЕРЫВ В ОСАДКОНАКОПЛЕНИИ – ՆՍՏՎԱԾՔԱՎՈՒՏԱԿՄԱՆ ԸՆԴՄԻՋՈՒՄ, BREAK IN SEDIMENTATION, STRATIGRAPHICAL LACUNA**, ժամանակի տարբեր տևողության միջակայք, որի ընթացքում Երկրի մակերևույթի այս կամ այն տեղամասում նստվածքներ չեն կուտակվել: Ընդմիջումները կարող են արտահայտվել հողմահարման կեղևի առաջացմամբ կամ ուղեկցվել նախկինում առաջացած նստվածքների ողողաքայքայմամբ: Ն. ը. հաճախ հանգեցնում է նստվածքային ստվարաշերտերի ներսում պարզորոշ աններդաշնակությունների գոյացմանը: Որոշ դեպքերում Ն. ը-ները (համեմատաբար կարճատև) չեն ուղեկցվում ողողաքայքայմամբ և երբեմն արտացոլվում են նստվածքային ապարների շերտավորությունում:

**Ս-84. ПЕРЕСЛАИВАНИЕ – ՇԵՐՏԱԴԱՐՍՈՒՄ (ՇԵՐՏԱԳԱՅՈՒՄ), INTERBEDDING, INTERSTRATIFICATION**, կտրվածքում ինչ-որ հատկանիշներով (կազմով, գույնով և այլն) տարբերվող շերտերի բավականին հաճախակի և շատ թե քիչ հավասարաչափ հերթափոխում: Օր.՝ ժապավենածև կավերը, ֆլիշը:

**Ս-85. ПЕРЕХОДНАЯ ЗОНА (ОТ МАТЕРИКА К ОКЕАНУ), ОСТРОВНЫХ ДУГ ЗОНА – ԱՆՑՈՒՄԱՅԻՆ (ՄԱՅՐ ՑԱՄԱՔԻՑ ԴԵՊԻ ՕՎԿԻԱՆՈՍ) ԶՈՆԱ, ԿՂԶԱՅԻՆ ԱՂԵՂՆԵՐԻ ԶՈՆԱ, TRANSITORY ZONE, ISLAND ARCS ZONE**, տե՛ս Зона переходная (от материка к океану):

**Ս-86. ПЕРИДОТ, ХРИЗОЛИТ – ՊԵՐԻԴՈՏ, ՔՐԻՉՈԼԻԹ, PERIDOT**, միներալ, օլիվինի թափանցիկ, կանաչ գույնի տարատեսակ:

**Ս-87. ПЕРИДОТИТ (Ֆրանս. péridotite, péridot-ից – պերիդոտ, օլիվին) – ՊԵՐԻԴՈՏ-ՏԻՏ, PERIDOTITE**, խորքային գերհիմքային պիրոքսեն-օլիվինային ապարների ընտանիքի ընդհանուր անվանում, պարունակում են ըստ ծավալի 40-90 % օլիվին: Ըստ միներալային կազմի՝ առանձնացվում են Պ-ի տեսակներ՝ հարցբուրգիտ (օլիվին+շեղանկյունային պիրոքսեն), վերլիտ (օլիվին+մոնոկլինային պիրոքսեն), լերցուլիթ (օլիվին+շեղանկյունային պիրոքսեն+մոնոկլինային պիրոքսեն), եղջերախաբային Պ. (օլիվինից ու պիրոքսենից բացի, պարունակում է նաև եղջերախաբ): Տիպական երկրորդային միներալներից են խրոմշափնեխիդը և նռնաքարը՝ երբեմն՝ փայլարը, իլեմնիտը, հիմքային պլագիոկլազը: Պ. սովորաբար ինչ-որ աստիճանի սերպենտինացված է: Գույնը՝ բաց կանաչ, փոփոխվածների մոտ՝ մուգ կանաչից մինչև սև: Կառուցվածքը հիպիդրոմորֆահատիկային է: Բնորոշ է սիլիկահողի ցածր պարունակությունը, (44 %-ից ցածր ըստ զանգվածի): Պ-ները հանդիսանում են միջնապատյանային գերհիմքային ու հիմքային մագմայի ածանցյալները, Երկրի վերին միջնապատյանի գլխավոր բաղադրիչներն են: Երկրակեղևում Պ-ները տարածված են գլխ. ծալքավոր մարզերում՝ ինչպես այլ գերհիմքային ու հիմքային ապարների խմբակցությամբ, այնպես էլ ինքնուրույն զանգվածների տեսքով, սովորաբար ունեն ալոխթոն տեղադրում: Պ-ների հետ կապված են քրոմի, տալիի, ասբեստի, միկելի, հրակայուն հումքի հնքվ-եր:

**Ս-88. ПЕРИКЛИНАЛЬ (հուն. peri – մոտ, կողքին, շուրջը և klinō – կռանում են), ЗАМЫКАНИЕ СКЛАДКИ – ՊԵՐԻԿԼԻՆԱԼ (ՃԱՅՐԱԹԵՔՎԱԾՔ), ԾԱԼՔԻ ԾԱՅՐԱՓԱՎՈՒՄ, PERICLINE**, կամարածալքի հողակապի խորասուզման տեղամաս, որը բնորոշվում է շերտերի անկմամբ կենտրոնից դեպի կողմերը:

- Պ-89. ПЕРИКЛИНАЛЬНОЕ ЗАЛЕГАНИЕ – ՊԵՐԻԿԼԻՆԱԼ (ԾԱՅՐԱԹԵՔ) ՏԵՂԱԳՐՈՒՄ, PERICLINAL BEDDING**, ապարների երկրորդային տեղադրում, որը բնորոշվում է շերտերի անկմամբ՝ կենտրոնից դեպի ծայրամասերը: Դիտվում է գմբեթներում և կամարածալքերի ծայրափակվածքում:
- Պ-90. ПЕРИКЛИНАЛЬНОЕ ПАДЕНИЕ – ՊԵՐԻԿԼԻՆԱԼ (ԾԱՅՐԱԹԵՔ) ԱՆԿՈՒՄ, PERICLINAL DIP**, շերտերի անկում՝ ուղղված մեկ կենտրոնից տարբեր կողմեր: Յուրահատուկ է տեկտ. գմբեթներին և կամարածալքերի ծայրափակվածքներին:
- Պ-91. ПЕРИОД АКТИВИЗАЦИИ – ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ, PERIOD OF ACTIVATION**, ժամանակի միջակայք, որին բնորոշ է երկրակեղևի երկրբ. և մետաղագոյացման զարգացման երրորդ, ենթադրաբար բեկորային (կամարաբեկորային) տիպը:
- Պ-92. ПЕРИОД ГЕОЛОГИЧЕСКИЙ** (հուն. periodos – որոշակի ժամանակաշրջան, շրջանցում, շրջապտույտ) – **ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ (ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆ), GEOLOGICAL PERIOD**, ընդհանուր երկրաժամանակագրական սանդղակի ստորաբաժանում, երկրբ. ժամանակի միջակայք, որի ընթացքում առաջացել են երկրբ. համակարգը կազմող նստվածքները (օր.՝ քեմբրիի, սիլուրի և այլ ժամանակաշրջաններ): Ստորաբաժանվում է երկրբ. դարակարգերի: Ե. ժ-ի տևողությունը տասնյակ մլն. տ. է:
- Պ-93. ПЕРИОД ПОЛУРАСПАДА – ԿԻՍԱՏՐՈՅԱՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ( $T_{1/2}$ ), HALF-LIFE PERIOD**, ժամանակահատված, որի ընթացքում տրոհվում է ցանկացած ճառագայթակալի (ռադիոակտիվ) տարրի առկա ատոմների կեսը: Դա յուրաքանչյուր ճառագայթակալի տարրի հիմնական բնութագրերից մեկն է:
- Պ-94. ПЕРИОДИЧНОСТЬ ГЕОЛОГИЧЕСКИХ ПРОЦЕССОВ – ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, PERIODISITY OF GEOLOGICAL PROCESSES**, որոշվում է երկրի տեկտ. զարգացման, կլիմայական տատանումների, հրաբխայնության, մագմայականության արտահայտման, նստվածքագոյացման, հանքագոյացման, ածխակուտակման, աղակուտակման և այլնի պարբերականությամբ: Այդ բոլորը անդրադառնում է երկրաձևաբանական գործընթացների պարբերականության վրա՝ ողողամաշման ցիկլերում, սառցապատումների, ծովաբարձիների ու ծովերի հետընթացների շփմիկությունում: Ե. գ. պ. սովորաբար լինում է մոլորակային, հիմնականում՝ համաժամանակյա, բայց կարող են լինել տեղային էական շեղումներ:
- Պ-95. ПЕРЛИТ** (ֆրանս. perlite, perle-ից – մարգարիտ) – **ՊԵՆԼԻՏ (ՍԱՐԳԱՐՏԱՔԱՐ), PERLITE, PEARL STONE**, թթու ջրապարունակ հրաբխային ապակի՝ բնորոշ համակենտրոն գնդաձև անջատություններով, ըստ որոնց նա կոտրատվում է գնդիկների: Վերջիններն ունեն թույլ ծիածանվող մակերևույթ (նմանվում են մարգարիտի): Պ-ի կազմում պարունակվում է 1.5 %-ից ոչ պակաս կառուցվածքային ջուր, ինչպես նաև տարբեր բյուրեղային ներամփոփվածքներ, որոնք ներկայացված են ներփակվածքներով և միկրոլիթներով (քվարց, կալիումի դաշտասպաթ, պլազիոկլազ, բիոտիտ, ամֆիբոլ), գնդաքարերով (դաշտասպաթ և  $\text{SiO}_2$ -ի որևէ ձևափոխություն), երկրորդային միներալներով (ցեոլիթ, մոնտորիլոնիտ): Պ-ի որոշ տարատեսակներում առկա են օբսիդիանի և ռիոլիթի ներփակվածքներ: Տարբերում են ծակոտկեն և հոծ Պ-ներ: Պ. ծագումով կապված է մյուս տարբերակի՝ օբսիդիանի հետ, որի փքումից էլ (բնական կամ արհեստական պայմաններում) առաջանում է բարձր ջերմաստիճանի (800-1200°C) տակ՝ իր մեջ պարփակված ջրային գոլորշիների ճնշման ազդեցությամբ: Ստացված ծակոտկեն ապարի ծավալը մոտ 5-16 անգամ գերազանցում է նախնական ծավալը: Պ. օգտագործվում է թեթև բե-

տոնների, ջերմա- և էլեկտրամեկուսիչների, նուրբ քամիչների, սպիտակ և գունավոր ապակիների, բյուրեղապակու, հրակայուն թելերի և այլ նյութերի արտադրության մեջ: Գոյություն ունի նաև Պ-ի որակյալ և հարուստ հնքվ-եր (Արտենիի, Արագածի, Ջրաբերի, Գեղասարի, Բազենքի և այլն):

**Ս-96. ПЕРЛЮВИЙ** (լատ. perluo – վիացում) – **ՊԵՐԼՅՈՒՎԻ, PERLUVIUM**, կոպտաբեկորային գլաքարային կամ կոպճաքարային նյութի կուտակում՝ տարբեր ծագման մայրական ապարների կուտակման վայրում, երբ մանրահողը վիացվում, հեռացվում է ջրերի միջոցով: Օր.՝ գլաքարերի կուտակում, որը մնում է տեղում՝ սառցաբերուկների վիացումից հետո: Առաջանում է լճերի ու ծովերի ջրերով՝ հոսվիտներում ու մերձափում:

**Ս-97. ПЕРМСКАЯ СИСТЕМА (ПЕРИОД), ПЕРМЬ** (Պերմի նահանգի անունից, ՌԴ) – **ՊԵՐՄԻ ՅԱՄԱՎԱՐԳ (ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆ), ՊԵՐՄ, PERMIAN**, պալեոզոյան էրատենմայի (խմբի) վեցերորդ (վերջին) համակարգ, համապատասխանում է Երկրի պատմության պալեոզոյան դարաշրջանի վեցերորդ ժամանակաշրջանին: Պ. ժ. սկսվել է 299 մլն. տ. և ավարտվել՝ 251 մլն. տ. առաջ: Ընդհանուր շերտագրական սանդղակում հաջորդում է քարածխայինին և նախորդում է մեզոզոյան էրատենմայի տրիասի համակարգին: Առանձնացրել է անգլ. երկրաբան Ռ. Մուրչիսոնը 1841-ին: Բաժանվում է երկու բաժինների և յոթ հարկերի: Ստորին Պ-ի կազմում առանձնացվում են ասեյան, սակմարյան, արտինյան և կունգուրյան, վերին Պ-ի կազմում՝ ուֆայի, կազանի, թաթարական հարկերը, իսկ Արևելյան Պարատեթիսում՝ ասսեյան, սակմարյան, յախթաշյան, բոլորյան հարկերը, իսկ Արևելյան Տեթիսում՝ կուբերգանդյան, մուրդաբյան, միդիյան, ջուլֆայի և դարաշամի հարկերը: Վերջին տարիներին Պ-ի համակարգում առանձնացվում են 3 բաժիններ՝ մերձուրալի P<sub>1</sub>(ասսեյան, սակմարյան, արթինյան, կունուրյան հարկեր), գվադելուպայի P<sub>2</sub>(ռոուդի, վորդի, կեպտենի հարկեր) և լոպինգի P<sub>3</sub>(ուչապինի, չանսինի հարկեր): Պ. ժ-ում ավարտվել են հերցինյան լեռնագոյացման շարժումները, որոնք հատկապես ուժեղ են եղել Ուրալատյանշանյան, Արևմտաեվրոպական, Ապալաչյան ծալքավոր մարզերում, աշխուժացել է հրաբխականությունը (հիմքային լավաների ամենախոշոր արտավիժումներ եղել են Սիբիրական պլատֆորմում՝ տրապների տեսքով), տեղի է ունեցել Երկրի պատմության ամենախոշոր ռեգրեսիաներից մեկը, ժամանակակից մայր ցամաքների սահմաններում տիրապետել են ցամաքային պայմանները, որոնցում ձևավորվել են ածխաբեր, աղաբեր ու կարմրագույն, նստվածքներ, կլիման բնորոշվել է կտրուկ արահայտված գոտիավորմամբ և աճող չորայնությանը: Պ. ժ-ի կենդանական և բուսական աշխարհը բազմազան է եղել: Բուսական աշխարհում տիրապետել են հատվածացողունավորները, պտերները, մերկասերմերը, կենդանականում՝ երկկենցաղները, պարզագույն սողունները, միջատները (ցամաքում), ֆորամինիֆերները, բուստերը, փափկամարմինները և այլն (ծովերում): Պ. ժ-ի նստվածքների հետ կապված են աշխարհի ածխի պաշարների 26,8 %-ը (Պեչորայի, Կուզնեցկի ու Տունգուսկայի ածխային ավազաններ և այլն), նավթի ու գազի հնքվ-եր (աշխարհի գազի պաշարների մինչև 20-30 %-ը), (Տիման-Պեչորայի, Կոլգաուրալյան նավթագազաբեր պրովինցիաներ և այլն), աղերի հնքվ-եր (Մերձուրալյան, Մերձկասպյան և այլն), երկաթի, ցինկի, կապարի, պղնձի հնքվ-եր:

**Ս-98. ПЕРОВСКИТ** (ռուս. պետական գործիչ կոմս Լ. Պերովսկու անունով, 1792-1856) – **ՊԵՐՈՎՍԿԻՏ, PEROVSKITE**, միներալ բարդ օքսիդների ենթադասից, կալցիումի տիտանիտ, CaTiO<sub>3</sub>, բյուրեղագիտական համակարգը շեղանկյունային է: Կարծրությունը՝ 5.5: Փխրուն է: Հաճախ պարունակում է նիոբիումի ու հազվա-

գյուտ հողերի խառնուրդ: Առաջացնում է սև, գորշ բյուրեղներ, բյուրեղախմբեր, հատիկավոր ագրեգատներ: Գերհիմքային ու ալկալիական ապարների ուղեկից (ակցեսորային) միներալ է, հանդիպում է նաև կարբոնատիտներում և սկառններում, կուտակվում է ցրոններում: Պ. տիտանի պոտենցիալ աղբյուր է:

**Պ-99. ПЕРТИТ** (Պերտ, Perth *p*-ի անունից, Կանադա) – **ՊԵՐՏԻՏ, PERTHITE**, կալիումի դաշտային սպաթ (օրթոկլազ կամ միկրոկլին)՝ ալբիտի կամ այլ թթու պլազիոկլազների, այսպես կոչված, պերտիտային ներընծյուղներով: Ըստ ծագման՝ Պ. լինում է տրոհման (առաջանում է կալիում-նատրիումական դաշտասպաթների խառը բյուրեղների տրոհման հետևանքով՝ ջերմաստիճանի ցածրացման դեպքում) և փոխարինման (առաջանում է ալբիտացման ժամանակ):

**Պ-100. ПЕСКИ – ԱՎԱԶՆԵՐ, SANDS**, մանրաբեկորային փուխր նստվածքային ապարներ (կամ ժամանակակից նստվածքներ): Կազմված են տարբեր միներալների ու ապարների մշակված կամ անկյունավոր հատիկներից: Ըստ առաջացման պայմանների՝ Ա. կարող են լինել գետային, լճային, ծովային, ջրասառցադաշտային, էյուվիալ, դելյուվիալ, պրոլյուվիալ և ելյան: Ընդհանուր ընդունված դասակարգում, ըստ հատիկների ու բեկորների չափերի, բացակայում է: Սովորաբար ավազայիններին են վերագրվում 0.05-ից մինչև 2 մմ չափեր ունեցող հատիկները: Ա. բաժանվում են նրբահատիկային (0.05-0.1 մմ), մանրահատիկային (0.1-0.25 մմ), միջին հատիկային (0.25-0.5 մմ), խոշորահատիկային (0.5-1 մմ) և կոպտահատիկային (1-2 մմ): Համարյա միշտ ունեն փոշենման, կավային և օրգանական մասնիկների խառնուրդ: Ըստ նյութական կազմի՝ տարբերում են միամիներալային (բաղկացած է առավելապես մեկ միներալի հատիկներից), օլիգոմիկտային (սակավախառն) (բաղկացած է 2-3 միներալների հատիկներից՝ մեկի գերակշռությամբ) և խառնակազմ (պոլիմիկտային) (բաղկացած է տարբեր կազմի ապարների ու միներալների հատիկներից) Ա.: Առավել հաճախ հանդիպում են քվարցային, արկոզային (քվարց-դաշտասպաթային), գլաուկոնիտ-քվարցային, փայլարային և այլ Ա.: Հատիկները ըստ ձևի բաժանվում են՝ կլոր, կլորանկյունավոր և անկյունավոր, ըստ մշակման աստիճանի՝ մշակված, կիսամշակված և սուրանկյունավոր: Ա. և ավազաքարերը կազմում են երկրակեղևի նստվածքային թաղանթի մոտ 20 %-ը: Ա. լայնորեն կիրառվում են շինարարության և շինանյութերի արտադրության մեջ (բետոնի և շինարարարական լուծույթների լցանյութ, ապակու և սիլիկատային աղյուսի արտադրության հումք, հղկանյութ), մետաղածուլակալան արտադրությունում:

**Պ-101. ПЕСКИ СОВРЕМЕННЫЕ КАРБОНАТНЫЕ – ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԱՐԲՈՆԱՏԱՅԻՆ ԱՎԱԶՆԵՐ, RECENT CARBONATE SANDS**, բաղկացած են առավելապես կալցիումի կարբոնատից: Կարող են լինել քիմիածին (օլիթային ավազներ), կենսածին (խեցային, ֆորամինիֆերային ավազներ) և ցամաքածին (կարբոնատային ապարների բեկորներ):

**Պ-102. ПЕСКИ СОВРЕМЕННЫЕ МАГНЕТИТОВЫЕ – ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱԳՆԵՏԻՏԱՅԻՆ ԱՎԱԶՆԵՐ, RECENT MAGNETIC SANDS**, բաղկացած են հիմնականում մագնետիտից և իլմենիտից՝ այլ միներալների խառնուրդներով: Առաջանում են մագնետիտապարունակ ապարների քայքայումից և տեսակավորումից, հաճախ՝ ծովային լողափերում:

**Պ-103. ПЕСКИ ЭОЛОВЫЕ – ԷՈՒՅԱՆ (ՅՈՂՄԱՅԻՆ) ԱՎԱԶՆԵՐ, EOLIAN SANDS**, էոլյան նստվածքների տարատեսակներից են, բնորոշ են ցանկացած աշխ. լայնության չորային, կիսաչորային կլիմայի ցամաքային և ծովային, լճային, գետային ավազային մերձափնյա գոյացությունների համար: Առաջանում են միներալային մասնիկները քանու միջոցով տեղաշարժվելու և օդից նստելու հետևանքով: Բն-

րոշվում են մեխ. կազմի համեմատաբար համասեռությամբ, 0.15-0.30 մմ չափամասի գերակշռությամբ, հատիկների մեծ մասի մշակման բարձր աստիճանով, ծանր ու անկայուն միներալների ոչ էական պարունակությամբ, շեղ շերտայնությամբ, տե՛ս նաև *Эоловые отложения*:

**Ս-104. ПЕСОК ВУЛКАНИЧЕСКИЙ – ՀՐԱԲԽԱՅԻՆ ԱՎԱԶ, VOLCANIC SAND**, չցեմենտացած հրաբխային նյութ, որի մասնիկների գերակշռող մասի չափերը կազմում են 0.1-ից մինչև 1 մմ (0.5-0.2 մմ):

**Ս-105. ПЕСОК ЗОЛОТОНОСНЫЙ – ՈՍԿԵՐԵՐ ԱՎԱԶ, AURIFEROUS SAND**, փուխր, առավելապես ավազային ապար, որը պարունակում է ցրոնային ոսկի:

**Ս-106. ПЕСОК КВАРЦЕВЫЙ – ՔՎԱՐՑԱՅԻՆ ԱՎԱԶ, QUARTZ SAND**, ավելի քան 90 %-ը բաղկացած է քվարցային բեկորներից և սովորաբար բնորոշվում է հատիկների լավ տեսակավորմամբ ու մշակմամբ: Ք. ա. բնորոշ է պլատֆորմային շրջաններին, առաջանում է ինչպես խոնավ, տաք կլիմայում մայրական ապարների խոր քիմ. հողմահարման արգասիքների վերամստեցման հաշվին, այնպես էլ՝ ավազային նյութի երկարատև վերամստեցման կամ ավելի հին քվարցային ավազների ու ավազաքարերի ողողամաշման հետևանքով:

**Ս-107. ПЕСТРАЯ МЕДНАЯ РУДА – ԽԱՅՏԱՐԴԵՏ ՊՂՆԶԱՔԱՐ (ՊՂՆԶԻ ԽԱՅՏԱՐԴԵՏ ՀԱՆՔԱՔԱՐ), CHALCOMICLITE**, տե՛ս Борнит:

**Ս-108. ПЕСЧАНАЯ СТРУКТУРА**, տե՛ս Псаммитовая структура:

**Ս-109. ПЕСЧАНИК – ԱՎԱԶԱՔԱՐ, SANDSTONE**, նստվածքային ապար, կազմված է ավազի հատիկներից, որոնք ցեմենտացված են կավային, կարբոնատային, սիլիցիոնային և այլ նյութով: Ցեմենտացնող նյութը կարող է լինել համաձին (կուտակվում է հատիկների հետ միաժամանակ) կամ մակածին (թափանցում է փուխր ապարների մեջ և լցնում է հատիկների միջև եղած դատարկությունները): Ըստ հատիկների տիրապետող չափերի՝ Ա-երը լինում են մանրահատիկային (0.1-0.25 մմ), միջին հատիկային (0.25-0.5 մմ), խոշորահատիկային (0.5-2 մմ), ըստ միներալային կազմի՝ միա- և բազմամիներալային, արկոզային (տե՛ս Аркоз), գրաուվակներ (տե՛ս Граувакка): Ա-երը լինում են տարբեր զույնի, բայց գերակշռում են մոխրագույն, դեղնամոխրագույն կամ սպիտակ, ավելի սակավ՝ կարմրավուն գույները: Փոխակերպության դեպքում Ա. փոխարկվում է քվարցիտի:

**Ս-110. ПЕСЧАНИК АРКОЗОВЫЙ**, տե՛ս Аркоз, Аркозовый песчаник:

**Ս-111. ПЕСЧАНИК ОЛИГОМИКТОВЫЙ**, տե՛ս Алевролит (и песчаник) олигомиктовый:

**Ս-112. ПЕСЧАНИК ПОЛИМИКТОВЫЙ**, տե՛ս Алевролит (и песчаник) полимиктовый:

**Ս-113. ПЕСЧАНИК ТУФОГЕННЫЙ – ՏՈՒՖԱԾԻՆ ԱՎԱԶԱՔԱՐ, TUFFACEOUS SANDSTONE**, ավազաքար, որը պարունակում է 50-90 % հրաբեկորային նյութ:

**Ս-114. ПЕСЧАНЫЕ ЗЁРНА, ПЕСЧАНЫЕ ЧАСТИЦЫ, ПЕСЧИНКИ – ԱՎԱԶԱՅԻՆ ՀԱՏԻԿՆԵՐ, ԱՎԱԶԱՅԻՆ ՄԱՍՆԻԿՆԵՐ, ԱՎԱԶԱՅԻՆ ՏԻԿՆԵՐ, SAND GRAINS, SANDY PARTICLES**, տարբեր միներալների (ամենից հաճախ քվարցի) մանր (միլիմետրի մասեր) հատիկներ, որոնք արգասիք են ավազային նստվածքային և որոշ մազմայական ապարների հողմահարման, ողողաքայքայման և ափաքերման (աբրազիայի):

**Ս-115. ПЕТРОГРАФИЯ** (հուն. pétros – ժայռ, քար և gráphō – գրում եմ, նկարագրում եմ) – **ԱՊՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, PETROGRAPHY**, գիտություն ապարների, նրանց միներալային ու քիմ. կազմի, կառուցվածքի, կազմվածքի, երկրակեղևում և երկրի մակերևույթին տեղադրման ու տեղաբաշխման պայմանների, առաջացման ու փոփոխությունների մասին: Նեղ իմաստով՝ ենթադրվում է այդ գիտության նկարագրական մասը, տարբերելով այն ապարաբանությունից (տե՛ս Петрология), որն զբաղ-

վում է ապարաառաջացման-ծագումնաբանական հարցերով: Ա., որպես գիտության ինքնուրույն ճյուղ, ձևավորվել է XIX դ. 30-ական թթ. և սերտորեն կապված է միներալաբանության, երկրաքիմիայի, հրաբխագիտության, տեկտոնիկայի, շերտագրության, օգտ. հնժ-ների մասին գիտությունների հետ: Ըստ ուսումնասիրվող ապարների տարատեսակների՝ տարբերում են հրային ապարների Ա., փոխակերպային (մետամորֆային) ապարների Ա. և նստվածքային ապարների Ա.: Ա-ում օգտագործվում են երկրք. քարտեզահանման, բյուրեղաօպտիկական, քիմ., ֆիզիկաքիմ., մեթոդները: 1950-ից լայնորեն կիրառվում են մաթեմատիկական վիճակագրության մեթոդները: Ուսումնասիրվող առանձնահատկություններին և կիրառվող մեթոդներին համապատասխան՝ անջատում են Ա-յան հետևյալ բաժինները՝ ապարաքիմիա, ապարաֆիզիկա, ապարատեկտոնիկա, ֆիզիկաքիմիական և փորձարարական Ա., տեխնիկական Ա.: 1970-ին ձևավորվեց մի նոր ուղղություն՝ տիեզերական Ա., որն զբաղվում է երկնաքարերի, Լուսնի և մոլորակային ապարների ուսումնասիրությամբ: Ա-ում զարգացման առաջընթացը կապվում է միներալների ուսումնասիրման նոր ֆիզ. մեթոդների (հատկապես միկրոզոնդային) կիրառման հետ: 1960-70-ից նոր գլոբալ տեկտոնիկայի տեսանկյունից մեծ ուշադրություն է դարձվում օվկիանոսի հատակի, օֆիոլիթային շարքի ապարների, ինչպես նաև հրային ապարների կայուն համախմբություններ կազմող և ընդհանուր առանձնահատկություններով օժտված խմբերի՝ հրային ֆորմացիաների բազմակողմանի ուսումնասիրությանը:

**Պ-116. ПЕТРОГРАФИЯ ОСАДОЧНЫХ ПОРОД – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ԱՊԱՐՎՐՈՒԹՅՈՒՆ, PETROGRAPHY OF SEDIMENTARY ROCKS**, ուսումնասիրում է նստվածքային ապարների միներալային կազմը, կազմվածքը, հատկությունները, համակարգությունը և ծագումը, տե՛ս նաև **Литология**:

**Պ-117. ПЕТРОЛОГИЯ** (հուն. pétros – ժայռ, քար և logos – խոսք, ուսմունք) – **ԱՊԱՐՎԱՆՈՒԹՅՈՒՆ, PETROLOGY**, գիտություն, որը բազմակողմանի ուսումնասիրում է մագմայական ու փոխակերպային ապարները՝ նյութական կազմի երկրք. առանձնահատկությունների և ծագումնաբանության տեսակետից: Ի տարբերություն նկարագրական ապարագրության, Ա., հիմք ընդունելով փորձարարական և ֆիզիկաքիմիական ապարագրության տվյալները, ունակ է լուծելու ապարների ծագումնաբանության, տարբեր կազմի մագմաների գոյացման և նրանց հետագա էվոլյուցիայի հարցերը:

**Պ-118. ПЕТРОТЕКТОНИКА** (հուն. pétros – քար և տեկտոնիկա) – **ԱՊԱՐՄԵԿՏՈՆԻԿԱ, PETROTECTONICS, STRUCTURAL PETROLOGY**, երկրաբանության բաժին, որն ուսումնասիրում է ձևախախտված ապարների կողմնորոշված միկրոկառուցվածքի օրինաչափ կապը իրենց տեկտ. պատմության հետ (լարվածությունների դաշտեր, ձևախախտման փուլեր):

**Պ-119. ПЕТРОФИЗИКА** (հուն. pétros – քար և ֆիզիկա) – **ԱՊԱՐՄՖԻԶԻԿԱ, PETROPHYSICS**, գիտություն ապարների ֆիզ. հատկությունների մասին: Ծագել է ապարագրության, երկրաֆիզիկայի և ապարների ֆիզ. հատկությունների ուսումնասիրման լաբորատոր մեթոդների հիմքի վրա: Ա. տերմինը առաջարկել է գերմ. գիտնական Ֆ. Ֆրյոլիխը 1953-ին: Ա-յի հիմնական խնդիրներն են՝ ապարների ֆիզ. հատկությունների բնույթի ուսումնասիրումը և ապարների, ֆացիաների, ստվարաշերտերի ապարագրական տիպերի դասակարգումը ըստ ֆիզ. հատկությունների համալիրի: Ապարների հատկությունները ուսումնասիրվում են ապարազանգվածներում՝ երկրք. և տիեզերաֆիզ. մեթոդներով, ինչպես նաև լաբորատոր պայմաններում՝ բարձր ջերմաստիճանի և ճնշման տակ ապարների ֆիզ. պարամետրե-

րի որոշման միջոցով: Ապարների ֆիզ. հատկությունների (խտություն, ծակոտկենություն, առածականություն, էլեկտրական, մագնիսական, միջուկային և այլն) և ապարակառուցվածքային պարամետրերի միջև գոյություն ունի համահարաբերակցություն, որը բացահայտվում է ապարաֆիզիկական վերլուծության միջոցով: Ստացված ապարաֆիզիկական տվյալները հնարավորություն են տալիս վերականգնելու երկրբ. մարմինների ձևավորման երկրադինամիկական պայմանները, բացահայտելու ձևախախտումային փոխարկումների ու լարումների տիպը, պարզաբանելու մետաղական օգտ. հնժ-ների, նավթի ու գազի հնքվ-երի տեղաբաշխման օրինաչափությունները, լուծելու ճարտարագիտակերպ. խնդիրները:

**Պ-120. ПЕТРОХИМИЯ** (հուն. pétros – քար և քիմիա) – **ԱՊԱՐԱՔԻՄԻԱ, PERTOCHEMISTRY**, ապարաբանության բաժին, որն ուսումնասիրում է ապարներում և ապարակազմիչ միներալներում քիմ. տարրերի տեղաբաշխման օրինաչափությունները: «Ա» հասկացությունը ներածել է ռուս գիտնական Ա. Ն. Ջավարիցկին (1944): Ա., որպես ինքնուրույն գիտություն, ծագել է երկու գիտությունների՝ ապարագրության և քիմիայի սահմանագծում: Ա-յի ուսումնասիրման առարկան ապարների բաղադրությունն է, որը բացահայտվում է լաբորատոր տարրալուծությամբ և արտահայտվում է օքսիդների միջոցով (%-ներով ըստ զանգվածի): Ա-յի մեթոդական հիմք են ծառայում ապարների քիմ. տարրալուծման վերահաշվման համակարգերը (հաճախ էՅՄ-ի կիրառմամբ), որոնք բացահայտում են օրինաչափ կապերը ապարների քիմ. բաղադրության և միներալային կազմի միջև: Ա-կան մեթոդները կիրառվում են բացահայտելու մագմայական ապարների գլոբալ ապարաքիմիական սերիաները (տոլեիտային, կրաակալիական, ենթաակալիական և ալկալիական): Այդ նպատակով օգտագործվում են որոշակի ապարաքիմ. դիագրամներ: Կոնկրետ ռեզիդուների համար առանձնացվում են ռեզիդուալ ապարաքիմ. սերիաներ, որոնք արտացոլում են ռեզիդուալ կառուցվածքների մագմայականության յուրահատկությունը: Ա-կան մեթոդների զարգացումը ընդլայնում է ապարաբանության խնդիրները և օգտագործվում է դրանց լուծման ընթացքում:

**Պ-121. ПЕЩЕРА – ՔԱՐԱՆՁԱՎ (ՔԱՐԱՅՐ), CAVE, CAVERN**, խոռոչ երկրակեղևի վերին ապարազանգվածներում, որը բացվում է երկրի մակերևույթին մոտիկ մեկ կամ մի քանի անցքերով: Առաջանում է գլխ. դյուրալույծ ապարների (կրաքարեր, դոլոմիտներ, գիպսեր) ջրի միջոցով տարրալուծման, ողողաքայքայման, ինչպես նաև սուֆոզիայի, ալեհարման և այլ գործընթացների հետևանքով: Ամենախոշորները կարստային ք-ներն են, որոնք իրենցից ներկայացնում են անցուղիների ու դահլիճների բարդ համակարգեր:

**Պ-122. ПЕЩЕРНЫЕ ОТЛОЖЕНИЯ – ՔԱՐԱՆՁԱՎԱՅԻՆ (ՔԱՐԱՅՐԱՅԻՆ) ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, CAVE DEPOSITS**, առաջանում են քարանձավներում, ներառում են ստր. ջրերի հոսքերի այլուվիալ նստվածքները, մանրահողը, չլուծվող մնացորդը, քարանձավների կամարների փլման փշրաքարերը, մակահոսուկները, շթաքարերը, պտկաքարերը, քարանձավի պատերի կեղևները, քարանձավային կենդանիների ոսկորների ու կղկղանքների կուտակները: Ք. ն-ի հետ կապված են քարի դարի մարդու ոսկորների և նյութական մշակույթի մնացորդները:

**Պ-123. ПЕЩЕРНЫЙ МЕДВЕДЬ (Ursus spelaeus) – ՔԱՐԱՆՁԱՎԱՅԻՆ ԱՐՁ, CAVE BEAR**, գիշատիչների կարգի մահացած կենդանիների ներկայացուցիչ, քիչ խոշոր է ժամանակակից գորշ արջից: Տարածված է եղել պլեյստոցենում (Արմ. Եվրոպա, Ասիա): Ք. ա. բնակվել է քարանձավներում և հարթավայրերում:

**Պ-124. ПЕЩЕРОВЕДЕНИЕ**, տե՛ս Спелеология:

- Ո-125. ПИЗОЛИТ** (հուն. pisos – սիսեռ և lithos – քար) – **ՊԻՉՈՒԼԻԹ (ՍԻՍԵՆՈՒՔԱՐ), PISOLITE, PISOLITH**, սիսեռի մեծության (2մմ-ից մեծ) կլորավուն միներալային մարմին, սովորաբար կալցիտային (պիզոլիթային) կրաքար, հազվադեպ՝ արագոնիտային, երկաթային, բոքսիտային, մանգանային և այլն:
- Ո-126. ПИК** (ֆրանս. pic) – **ԼԵՈՆԱԳՈՒՄ, MOUNTAIN PEAK**, 1) սրածայր լեռնագագաթ, 2) լեռնագագաթի բարձրագույն կետ՝ անկախ նրա ձևից:
- Ո-127. ПИКРИТ** (հուն. pykrós – դառն) – **ՊԻԿՐԻՏ, PICRITE**, գերհիմքային արտաժայթքային կամ ենթախորքային ապար, որը հարստացված է օլիվինով կամ կլինոպիրոքսենով և սովորաբար ունի պորֆիրային կամ պորֆիրանման կազմություն: Ներկավածքները, բացի օլիվինից և կլինոպիրոքսենից, հաճախ ներկայացված են եղջերախաբով, բիոտիտով, ֆլուգոպիտով: Միջներկավածքային տարածքը լցված է արտաժայթքային Պ-ներում սերպենտինացված, քլորիտացված հիմնական զանգվածով, իսկ ենթախորքային Պ-ներում՝ պիրոքսենի միկրոլիթներով կամ մանրաբյուրեղային ագրեգատով: Գույնը՝ մուգ կանաչ, մինչև սև՝ օլիվինի բաց կանաչ կամ գորշ ներկավածքներով: Պ-ները առաջացնում են լավայի հոսքեր, հրաբխային փշրաքարերի, տուֆերի սովորաշերտեր ու հորիզոններ: Մտնում են ուլտրամաֆիտային ու մաֆիտ-ուլտրամաֆիտային համալիրի մեջ, որն առաջանում է ծալքավոր մարզերի զարգացման երկրասինկլինալային կամ ուշ լեռնագոյացման փուլում, ինչպես նաև՝ պլատֆորմների ակտիվացման զոնաներում:
- Ո-128. ПИЛЛОУ-ЛАВА, ПОДУШЕЧНАЯ ЛАВА, ШАРОВАЯ ЛАВА** (անգլ. pillow – բարձիկ) – **ՊԻԼՈՒԼ-ԼՈՎԱ, ԲՈՐԶԻԿՎՈՐ ԼՈՎԱ, ԳԵՂՎՈՐ ԼՈՎԱ, PILLOW LAVA, ELLIPSOIDAL LAVA**, լավա, որն արտավիժել է ջրում, հոսքերը հաճախ իրենցից ներկայացնում են գնդերի սերիաներ (տրամագիծը 1-5 մ), որոնց մակերևութային շերտը կազմված է ապակուց, կենտրոնը՝ բյուրեղացած ապարից:
- Ո-129. ПИРАРГИРИТ** (հուն. pyr – կրակ և argyros – արծաթ), **КРАСНОЕ СЕРЕБРО, РУБИНОВАЯ ОБМАНКА, СЕРЕБРЯНАЯ ОБМАНКА** – **ՊԻՐԱՐԳԻՐԻՏ, ԿՐՍԻՐ ԱՐԾԱԹ, ՍՈՒՏԱԿԻ ԽԱՐՈՒՍԱԿ, ԱՐԾԱԹԻ ԽԱՐՈՒՍԱԿ, PYRARGYRITE, ANTIMONIAL, RED SILVER, RUBY SILVER**, միներալ, արծաթի սուլֆատի մոնիտ,  $Ag_3SbS_3$ , պարունակում է 59.76 % Ag: Բյուրեղագիտական համակարգը տրիգոնային է: Հանդիպում է տձև հատիկների և նրանց ագրեգատների, ինչպես նաև հատվածակողմ բյուրեղների ձևով: Գույնը մուգ կարմիր է՝ ալմաստի փայլով: Կարծրությունը՝ 2.5: Առաջանում է ջրաջերմային հնքվ-երում՝ չափավոր կամ ցածր ջերմաստիճանի պայմաններում: Արծաթի հանքանյութ է:
- Ո-130. ПИРАМИДА** – **ԲՈՒՐԳ, PYRAMID**, պարզ բյուրեղագիտական ձև, որի բոլոր միստերը հատվում են մեկ կետում:
- Ո-131. ПИРАМИДА ГЕКСАГОНАЛЬНАЯ** – **ՅԵՔՍԱԳՈՆԱՅԻՆ (ՎԵՑԱՆԿՅՈՒՆԱՅԻՆ) ԲՈՒՐԳ, HEXAGONAL PYRAMID**, հեքսագոնային և տրիգոնային (եռանկյունային) համակարգերի պարզ ձև, կազմված է վեց միստերից, որոնք հատվում են մեկ կետում:
- Ո-132. ПИРАМИДА РОМБИЧЕСКАЯ** – **ՇԵՂԱՆԿՅՈՒՆԱՅԻՆ ԲՈՒՐԳ, RHOMBIC PYRAMID**, քառանիստ բուրգ, որի հիմքն ունի շեղանկյան տեսք:
- Ո-133. ПИРАМИДА ТРИГОНАЛЬНАЯ** – **ԵՈՒՆԿՅՈՒՆԱՅԻՆ ԲՈՒՐԳ, TRIGONAL PYRAMID**, եռանիստ բուրգ, որի հիմքն ունի կանոնավոր եռանկյան տեսք:
- Ո-134. ПИРИТ** (հուն. pyrites lithos – բառ. հարվածով կրակ հանող քար, pyr-ից – կայծ), **СЕРНЫЙ КОЛЧЕДАН, ЖЕЛЕЗНЫЙ КОЛЧЕДАН** – **ՊԻՐԻՏ, ԾՕՄԲՎԱՆ ՅՐԱՔԱՐ, ԵՐՎԱԹԱՅԻՆ ՅՐԱՔԱՐ, PYRITE, IRON PYRITE**, միներալ սուլֆիդների դասից,  $FeS_2$ , բաղադրությունը՝ 46.6 % Fe, 53.4 % S, երբեմն՝ Co-ի, Ni-ի, As-ի, Cu-ի, Au-ու և այլ խառնուրդներ: Բյուրեղագիտական համակարգը խորանարդային է:



Առաջացնում է խորանարդներ, պենտագոնոդեկաէդրներ, հազվադեպ՝ օկտաէդրներ, առավել տարածված է հոծ հատիկավոր զանգվածներով, հանդիպում են նաև ներփակվածքային հատիկներ, մակահոսուկներ, կոնկրեցիաներ, պսևդոմորֆոզներ՝ ըստ պիրոտիմի և օրգանական մնացորդների: Գույնը՝ արույրի կամ ծղոտի դեղին, փայլը՝ մետաղի, կարծրությունը՝ 6-6.5: Պ. երկրակեղևի ամենատարածված միներալներից մեկն է, հանդիպում է խիստ տարբեր ծագումնաբանական տիպի ներծին ու արտածին հնքվ-երում: Առավել տարածված է ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվ-երում, հրաբարային կուտակներում, որտեղ կազմում է ըստ ծավալի 80-90 %: Պ. լայն տարածված է նաև նստվածքային ապարներում, այդ թվում՝ բրածո ածուխներում: Հողմահարման դեպքում փոխարկվում է երկաթիդիօքսիդի (լիմոնիտի): Պ. ծծմբի, ծծմբական թթվի և երկաթի արջասպի հումք է:

**П-135. ПИРОБИТУМИНОЗНЫЕ СЛАНЦЫ**, նույնն է՝ Горючие сланцы:

**П-136. ПИРОКЛАСТИЧЕСКИЕ ПОРОДЫ, ПИРОКЛАСТЫ** (հուն. *pyr* – կրակ և *kláo* – կտրատում են, ջարդում են) – **ՀՐԱԲԵԿՈՐԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐ, ՀՐԱԲԵԿՈՐՆԵՐ, PYROCLASTIC ROCKS, PYROCLASTICS**, բեկորային ապարներ, որոնք առաջանում են հրաբխի ժայթքման ժամանակ արտանետված բեկորային նյութի (հրաբխային փշրաքարեր, տուֆեր և այլն) կուտակման հետևանքով, ինչպես նաև հրաբխի ժայթքման հետ կապված շիկացած ամպերի և տաք տարափի նստվածքներից: Հ. ա-ին են պատկանում նաև այն նստվածքները, որոնք առաջանում են հրաբխային ժայթքումներին ուղեկցող ցեխահոսքերի պնդացումից: Կուտակումից հետո Հ. ա. եռակավվում են, ինչպես դա տեղի է ունենում իզոհիմբրիտի դեպքում, կամ ենթարկվում են դիագենեզի:

**П-137. ПИРОКЛАСТИЧЕСКИЙ МАТЕРИАЛ** (հուն. *pyr* – կրակ և *kláo* – կտրատում են, ջարդում են) – **ՀՐԱԲԵԿՈՐԱՅԻՆ ՆՅՈՒԹ, PYROCLASTIC MATERIAL**, բեկորային նյութ, որն առաջանում է թարմ, դեռևս շիկացած կամ տաք վիճակում գտնվող լավայի տարբեր չափի բեկորների ջարդոտման, փշրման հետևանքով [ռումբեր, լավիլներ (ընկուզիկներ), հրաբխային ավազ, փոշի, խարամ, պեմզա (չեչաքար) և այլն]:

**П-138. ПИРОКЛАСТОЛИТЫ** (հուն. *pyr* – կրակ և *kláo* – կտրատում են, ջարդում են և *lithos* – քար) – **ՀՐԱԲԵԿՈՐԱՔԱՐԵՐ (ՊԻՐՈԿԼԱՍՏՈԼԻԹՆԵՐ), PYROCLASTOLITHES**, նստվածքային ապարների հավաքական անվանում, առաջանում են հրաբխային ժայթքումների փուխր արգասիքների [հրաբխային ռումբեր, լավիլներ (ընկուզիկներ), մոխիր և այլն] կուտակման հետևանքով:

**П-139. ПИРОКЛАСТЫ** (հուն. *pyr* – կրակ և *kláo* – կտրատում են, ջարդում են) – **ՀՐԱԲԵԿՈՐՆԵՐ, PYROCLASTS**, հրաբեկորային նյութի առանձին բեկորներ:

**П-140. ПИРОКСЕНИТЫ – ՊԻՐՈՔՍԵՆԻՏՆԵՐ, PYROXENITES**, խորքային հիմքային ուլտրամաֆիտների ընդհանուր անվանում, պարունակում են 50-ից մինչև 100 ծավալային % տարբեր պիրոքսեններ (օրթոռոմբային և մոնոկլինային)՝ օլիվինի, քրոմիտի, շպինելի, մագնետիտի և այլ միներալների խառնուրդով: Պ-ում պիրոքսենների կազմը ուժեղ փոփոխվում է էնստատիտից մինչև հիպերստենը և դիոպսիդից մինչև ժադեիտը: Որպես ապարակազմիչ միներալ, Պ-ի կազմում նշվում են նաև նոնաքարը, իլմենիտը, փայլարը, պլագիոկլազը: Պարունակում են 53-43 % սիլիկահող: Թարմ ապարների գույնը լինում է դեղին, կանաչ, մոխրագույն, սև: Կախված օրթոռոմբային պիրոքսենի կազմությունից՝ զանազանվում են էնստատիտներ, բրոնզիտներ, հիպերստենիտներ, իսկ կախված մոնոկլինային պիրոքսենի կազմությունից՝ դիոպսիդիտներ, դիալագիտներ, ավգիտիտներ: Ջանազանվում են նաև օլիվինային, բիոտիտային, նոնաքարային, շպինելային, մագնետիտային տարբերակները: Պ. միջանկյալ տեղ են գրավում պերիդոտիտների ու զաբրոիդների միջև:

Պ. պատկանում են լայն տարածում ունեցող ապարների թվին, բայց սովորաբար հանդիպում են ոչ մեծ ծավալներով: Հայտնի են ծալքավոր մարգերում՝ գերհիմքային ապարների խմբակցությունում, պլատֆորմային բազիտ-ուլտրաբազիտային ներժայթքվածքներում (ինտրուզիաներում) և ալկալիազերհիմքային համալիրներում: Պ-ի հետ կապված են պլատինի խմբի մետաղների, քրոմի, միկելի հանքանյութեր, ասբեստի հնքվ-եր:

**ՈՒ-141. ՍԻՐՈՔՍԵՆԻ** (հուն. *pyr* – կրակ և *xenos* – օտար, կողմնակի, սկզբնապես այն սխալ ենթադրությունից, որ Պ. լավաների մեջ օտար ներամփոփվածքներ են) – **ՊԻՐՈՔՍԵՆԵՆԵՐ, PYROXENES**, շղթայական սիլիկատների ենթախմբին պատկանող մագնեզիում, երկաթ, կալցիում, ալյումին, նատրիում, լիթիում պարունակող գլխավոր ապար կազմող միներալների ընտանիք: Ընդհանուր կառուցվածքային բանաձևն է  $M'M[Si_2O_6]$ , որտեղ  $M'$ –Mg, Fe<sup>2+</sup>, Na, Ca, Li է,  $M$ –Mg, Fe<sup>2+</sup>, Fe<sup>3+</sup>, Al, Mn<sup>2+</sup>, Ni<sup>2+</sup>, Ti<sup>3+</sup>, Ti<sup>4+</sup>, Cr<sup>3+</sup>, V<sup>3+</sup> է: Պ. բյուրեղանում են շեղանկյունային (շեղանկյունային Պ. կամ օրթոպիրոքսեններ) կամ մոնոկլինային (մոնոկլինային Պ. կամ կլինոպիրոքսեններ) համակարգերում: Շեղանկյունային Պ-ում գերակշռում են Mg<sup>2+</sup> և Fe<sup>2+</sup> կատիոնները, որոնք իզոմորֆ կերպով փոխարինում են միմյանց (էնստատիտ- հիպերսթեն-ֆեռոսիլիթի շարք): Մոնոկլինային Պ., ըստ գերակշռող կատիոնների, բաժանվում են հողալկալայինների՝ Ca<sup>2+</sup>, Mg<sup>2+</sup> և Fe<sup>2+</sup> (դիոպսիդ-հեդենբերգիտ) և ալկալայինների՝ Na<sup>+</sup>–Fe<sup>3+</sup>, Na<sup>+</sup>–Al<sup>3+</sup>, Si<sup>+</sup>–Al<sup>3+</sup> (եգիրին, ժադեիտ, սպոդումեն): Գույնը տատանվում է կանաչի տարբեր երանգների, կարծրությունը՝ 5-6-ի սահմաններում: Շեղանկյունային Պ. գերհիմքային և հիմքային ապարների գլխավոր միներալներից են: Մոնոկլինային Պ. տարածված են ապարների ավելի շատ տարատեսակներում (բազալտներում, անդեզիտներում, գաբրոներում, դիորիտներում, սիենիտներում և այլ ապարներում): Մոնոկլինային Պ. (ավգիտիտները) Լուսինի բազալտների հիմնական միներալներն են: Սպոդումենը հումք է լիթիումի կորզման համար, իսկ նրա թափանցիկ տարատեսակները թանկարժեք քարեր են: Ուպես զարդաքար է օգտագործվում ժադեիտը:

**ՈՒ-142. ՍԻՐՈԼՅՈՒԶԻՏ** (հուն. *pyr* – կրակ և *lyō* – վլանում են, ապակեգործության մեջ՝ ապակու գունազրկման նպատակով օգտագործելու պատճառով) – **ՊԻՐՈԼՅՈՒԶԻՏ, PYROLUSITE**, միներալ, մանգանի երկօքսիդ, MnO<sub>2</sub>, պարունակում է 55-63 % Mn: Բյուրեղագիտական համակարգը տետրագոնային է: Հաճախ առաջացնում է գաղտնաբյուրեղային հողանման և փոշենման զանգվածներ, օղիթներ, մակահոսուկներ, հատիկավոր և շառավղաճառագայթավոր ագրեգատներ: Պարունակում է մանգանի, մասամբ երկաթի ջրային օքսիդներ, ինչպես նաև՝ SiO<sub>2</sub>, BaO, H<sub>2</sub>O և ուրիշ խառնուրդներ: Գույնը՝ մոխրագույն կամ սև, փայլը՝ կիսամետաղական: Կարծրությունը տատանվում է 2-3 (փուխրի համար), մինչև 6 (բյուրեղային տարբերակներ): Ծագումը գլխ. նստվածքային կամ վերնածնային է, հազվադեպ՝ ցածրաստիճան ջրաջերմային: Պ. մանգանի կարևոր հանքանյութ է: Օգտագործվում է ֆեռոմանգանի համաձուլվածք ստանալու համար և այլ բնագավառներում:

**ՈՒ-143. ՍԻՐՈՄՈՐՓԻՏ** (հուն. *pyr* – կրակ և *morphē* – ձև, Պ-ի հալված գնդիկները սառչելիս ընդունում են բյուրեղային ձև) – **ՊԻՐՈՄՈՐՓԻՏ, PYROMORPHITE**, միներալ, կապարի քլորիդ-ֆոսֆատ, Pb<sub>5</sub>[PO<sub>4</sub>]<sub>3</sub>Cl: Բյուրեղանում է հեքսագոնային համակարգում: Բյուրեղները հատվածակողմային են: Տիպական են կեղևները, մակահոսուկային ու հատիկավոր ագրեգատները: Գույնը՝ կեղտոտ կանաչ, մոմի դեղին, հազվադեպ՝ կարմիր, նարնջագույն է, փայլը՝ ավաստի մինչև ճարպային, կարծրությունը՝ 3.5-4: Փուխր է: Կապարի և այլ սուլֆիդային հնքվ-երի օքսիդաց-

ման զոնայի բնորոշ միներալ է: Հաճախ առաջացնում է պսևդոմորֆոզներ՝ ըստ գալենիտի: Երբեմն հանդիպում է ցածրաջերմաստիճանային ջրաջերմային հնքվերում: Մեծ կուտակները օգտագործվում են որպես կապարի հանքանյութ:

**П-144. ПИРОП** (հուն. pyrōpós – կրականման) – **ՊԻՐՈՊ, PYROPE**, միներալ նռնաքարերի խմբից,  $Mg_3Al_2[SiO_4]_3$ : Գունավորումը՝ արյան կարմիր, բալի կարմիր, փայլը՝ ապակու մինչև ճարպային: Հանդիպում է գերհիմքային ապարներում, քիմբեռլիթներում (ալմաստների ուղեկից է), ցրոններում: Հղկանյութ է, թափանցիկ բյուրեղները թանկարժեք քարեր են:

**П-145. ПИРОФИЛЛИТ** (հուն. pyr – կրակ և phýllon – թերթ, ըստ զոնման փողակի բոցում բարակ թերթիկների ճեղքվելու հատկության) – **ՊԻՐՈՖԻԼԻՏ, PYROPHYLLITE**, միներալ, շերտավոր սիլիկատ,  $Al_2[Si_4O_{10}](OH)_2$ , բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է: Հանդիպում է թերթավոր, նրբաթիթեղավոր, շառավղաճառագայթային և հատիկավոր ագրեգատներով: Գույնը սպիտակ, կանաչավուն, դեղնավուն, գորշավուն է, փայլը՝ ապակու, հերձման մակերեսում սադափյա երանգով, շփումը՝ ճարպային, հերձումը՝ կատարյալ, կարծրությունը՝ 1-2: Ջգալի քանակներով առաջանում է սիլիկատների ջրատարալուծման ժամանակ և երկրորդային քվարցիտների ձևավորման դեպքում, ինչպես նաև ցածր ջերմաստիճանի փոխակերպման դեպքում՝ կավային միներալների բնական ջրազրկման հետևանքով: Օգտագործվում է խեցգործության մեջ, թղթի, ռետինի արդյունաբերության մեջ և այլն:

**П-146. ПИРРОТИН** (հուն. pyrrhótēs – հրակարմիր, կամ մուգ նարնջագույն), **МАГНИТНЫЙ КОЛЧЕДАН – ՊԻՐՐՈՏԻՆ, ՍԱԳՆԻՍԱԿԱՆ ՀՐԱՔԱՐ, PYRRHOTINE, PYRRHOTITE, MAGNETIC PYRITES**, միներալ, երկաթի սուլֆիդ, քիմ. կազմը փոփոխական է,  $Fe_{1-x}S$  ( $x=0.0-0.11$ ), պարունակում է Ni-ի, Co-ի, Pb-ի, Cu-ի խառնուրդներ: Բյուրեղագիտական համակարգը հեքսագոնային և մոնոկլինային է, գույնը՝ բրոնզի դեղին, փայլը՝ մետաղի, կարծրությունը՝ 3.5-4.5, փխրուն է: Էլեկտրականության լավ հաղորդիչ է: Բնության մեջ սովորական են հոծ հատիկավոր զանգվածները: Առաջանում է ջրաջերմային լուծույթներից պղինձ-նիկելային ներքնածին հնքվերում՝ կապված գերհիմքային ապարների հետ, ինչպես նաև այլ ծագումնային տիպի հնքվերում, օքսիդացման զոնայում անցնում է պիրիտի, մարկազիտի և գորշ երկաթաքարի: Ni-ի, Co-ի, Cu-ի, Pt-ի հանքանյութ է:

**П-147. ПИТАНИЕ ВОДОНОСНОГО ГОРИЗОНТА – ՋՐԱՏԱՐ ՀՈՐԻԶՈՆԻ ՍՆՈՒՄ, ALIMENTATION OF AQUIFER**, տարբեր ծագումնային կազմի ջրերի (մթնոլորտային, մակերևութային, անջատման, խորքային և այլն) ներթափանցումն ու կուտակումը ջրատար ապարների մեջ:

**П-148. ПИТЕКАНТРОПЫ** (հուն. pithekōs – կապիկ և ánthrōpes – մարդ) – **ՊԻՏԵԿԱՆՏՐՈՊՆԵՐ (ԿԱՊԿԱՍԱՐԴԻԿ), PITHECANTHROPS**, հոմինիդների ընտանիքի բրածո ներկայացուցիչներ: Ձևաբանական հատկանիշներով, գլխուղեղի կառուցվածքով ու ծավալով ավելի մոտ են ժամանակակից մարդուն, քան ավստրալապիտեկներին: Պ-ի գտածոների հետ երբեմն կապված են արեվիլին և վաղ աշելին պատկանող քարե գործիքներ: Առաջին անգամ Պ-ի մնացորդներ հայտնաբերված են Յավա կղզում 1891-93-ին: Տեղավայրեր հայտնի են Հս. և Արլ. Աֆրիկայում, Արմ. և Կենտր. Եվրոպայում, Հս. Ասիայում: Պ-ի մնացորդները համապատասխանում են էոպլեյստոցենի վերջին-ստորին պլեյստոցենին (1.2-0.5 մլն. տ. առաջ):

**П-149. ПЛАГИОГРАНИТ** (հուն. plágios – թեք, շեղ և գրանիտ) – **ՊԼԱԳԻՈԳՐԱՆԻՏ, PLAGIOGRANITE**, նատրիումային կրաալկալիական գրանիտ, որը չի պարունակում կալիումի դաշտային սպաթ՝ որպես ինքնուրույն միներալ, կամ պարունակում

է խառնուրդի տեսքով: Պ. կազմված է քվարցից (20-30 %), թթու պլազիոկլազից (ալբիտ-օլիգոկլազ) և որոշ քանակի գունավոր միներալներից (բիոտիտ, ամֆիբոլ): Քիմ. կազմով Պ. համապատասխանում է բնականոն գրանիտին, որի մեջ K-ի զգալի մասը փոխարինվել է Na-ով: Պ-ները հատկապես բնորոշ են շարժուն գոտիների զարգացման բուն երկրասինկլինալային փուլի ներժայթքային (համալիրներում) համալիրներին, որտեղ նրանք դիորիտների, քվարցային դիորիտների և գաբրոների հետ մտնում են գաբրո-պլազիոգրանիտային ֆորմացիայի կազմի մեջ:

**П-150. ПЛАГИОКЛАЗЫ** (հուն. plágios – թեք, շեղ և klásis – ճեղքում) – **ՊԼԱԳԻՈԿԼԱՉՆԵՐ, PLAGIOCLASES**, լայն տարածում ունեցող ապարակազմիչ միներալներ, իրենց բյուրեղաքիմ. կառուցվածքի առանձնահատկություններով դասվում են դաշտային սպաթների խմբին: Քիմ. բաղադրությամբ Պ. նատրիում-կալցիումային ալյումասինկլատների՝ ալբիտի ( $\text{Na}[\text{AlSi}_3\text{O}_8]$ ) և անորթիտի ( $\text{Ca}[\text{Al}_2\text{Si}_2\text{O}_8]$ ) անընդհատ իզոմորֆ շարք են: Պ-ի կազմը արտահայտում են համարանիշներով, որոնք ցույց են տալիս անորթիտի (An) տոկոսային պարունակությունը իզոմորֆ խառնուրդներում: Ըստ համարանիշի՝ Պ-ին տրվում են որոշակի անուններ՝ ալբիտ (An 0-10), օլիգոկլազ (An 10-30), անդեզիմ (An 30-50), լաբրադոր (An 50-70), բիտովմիտ (An 70-90), անորթիտ (An 90-100): Բյուրեղագիտական համակարգը տրիկլինային է: Հաճախ ներկայացված են բարդ կրկնաբյուրեղներով: Պ-ի կազմի և Al-Si կարգավորվածությանը զուգընթաց՝ մաքուր ալբիտից դեպի մաքուր անորթիտի անցնելիս օրինաչափ կերպով փոխվում են խառնուրդների ֆիզ. հատկությունները՝ տեսակարար կշիռը՝ 2620-2760 կգ/մ<sup>3</sup>, կարծրությունը՝ 6-6.5, հալման ջերմաստիճանը՝ 1100-1500°C: Պ., որպես կանոն, առաջանում են հալույթի բյուրեղացման ընթացքում: Պ. սովորաբար անգույն կամ սպիտակ են, երբեմն՝ վարդագույն և այլ երանգներով: Հանդիպում են հրային ապարների բոլոր տարատեսակներում (բացառությամբ որոշ գերհիմքային ապարների): Գոյություն ունեն խորքային (անորթոզիտներ) և մետասոմատիկական (ալբիտիտներ և այլն) ապարներ, որոնք համարյա ամբողջովին կազմված են պլազիոկլազներից (պլազիոկլազիտներ): Թթու հրային ապարների համար բնորոշ է օլիգոկլազը, միջինների համար՝ անդեզիմը, հիմքայինների համար՝ լաբրադորը: Օլիգոկլազը, բիտովմիտը և անորթիտը երկնաքարերի սովորական միներալներ են: Հողմահարման դեպքում Պ. փոխարկվում են տարբեր կավային միներալների: Օլիգոկլազների կապույտ, երկնագույն, ոսկեգույն տարատեսակները և լաբրադորը օգտագործվում են որպես զարդաքարեր:

**П-151. ПЛАКАНТИКЛИНАЛЬ** (հուն. plákos – հարթություն, հարթավայր և կամարածալք) – **ՀԱՐԹԱՎԱՄԱՐԱԾԱԼՔ (ՊԼԱՎԱՆՏԻՎԼԻՆԱԼ), PLACANTICLINE**, պլատֆորմային տիպի դրական կառույց, որը սովորաբար համաչափ ձևի կամարածալքանման ծովածք է՝ սահուն պերիկլինալ վերջավորություններով կամ լայն վահանանման անհամաչափ փլվածքներով: Այլ Հ-եր ներկայացված են արկղաձև կառուցվածքներով կամ խիստ անկանոն բարձրացումներով: Շերտերի անկումը մեղմաթեք թևերում չափվում է ըոպեններով, զառիթափ թևերում հասնում է 45°-ի: Հ-երը հատակագծում առաջացնում են եզակի բարձրացումներ կամ ձգված թմբեր, Հ-երի թևերում դիտվում է շերտերի անկումների մեծացում վերից վար, երիտասարդներից դեպի հինը, ի հաշիվ թևերում հաստությունների աճման: Հին պլատֆորմներում շատ Հ. բնորոշվում են, ընդհակառակը, խոր հորիզոնների կառուցվածքի տափակեցմամբ:

- П-152. ПЛАКОДЕРМЫ, ПЛАСТИНОКОЖИЕ** (հուն. derma – մաշկ), **ПАНЦИРНЫЕ РЫБЫ** (Placodermi) – **ԹԵՐՔԱՍԱՇՇԿԱՎՈՐՆԵՐ, ԹԵՐՔԱՍԱՇՇԿԱՎՈՐ ՉԿՆԵՐ, ՉՐԱ-ՅԱՊԱՏ ՉԿՆԵՐ, PLACODERMI**, մահացած ձկների դաս: Գլուխը և մարմնի առջևի մասը պաշտպանված է եղել ամուր ոսկրային զրահով: Գոյություն են ունեցել դեռևս ծովային և ցամաքային ավազաններում:
- П-153. ПЛАКОСИНКЛИНАЛЬ – ՅԱՐՔԱԳՈԳԱԾԱԼՔ (ՊԼԱԿՈՍԻՆԿԼԻՆԱԼ), PLACOSYNCLINE**, պլատֆորմային բացասական կառույց, առանձնացվում է որպես հարթականարածալքի հակապատկեր, բայց տարածականորեն նրա հետ կապված է: Հիր ածնանը զուգընթաց համարյա լրիվ լցվում է նոր կուտակվող նստվածքներով:
- П-154. ПЛАНГИПСОМЕТРИЧЕСКИЙ – ԲԱՐՉՐԱՉԱՓԱԿԱՆ (ՀԻՊՍՈՄԵՏՐԱԿԱՆ) ՀԱՏԱՎԱԳԻԾ, HYPSONOMETRIC PLAN**, մարկշեյդերական հատակագիծ, որի վրա հանքակուտակի, շերտի, ջրատար հորիզոնի և այլնի վերնա-ներքնակողերի մակերևույթները պատկերված են միատեսակ բարձրության գծերով (հավասարագծերով):
- П-155. ПЛАНЕТЫ** (ուշ լատ. planeta, հուն. astēr planetēs-ից – թափառող աստղ) – **ՍՈՆՈՐԱԿՆԵՐ, PLANETS**, Արևային համակարգի առավել հոծ մարմիններ, որոնք Արևի շուրջը շարժվում են էլիպսային ուղեծրով և լուսավորվում են արևային անդրադարձող լույսով: Մ-ի դասավորությունը Արևից հեռանալիս՝ Մերկուրի (Փայլածու), Վեներա (Արուսյակ), Երկիր, Մարս (Հրատ), Յուպիտեր (Լուսնթագ), Սատուրն (Երևակ), Ուրան, Նեպտուն, Պլուտոն: Երկրի խմբի Մ. (Մերկուրի, Վեներա, Երկիր, Մարս) իրենց չափերով և քիմ. կազմով մոտիկ են, դրանց միջին խտությունը 5.52-ից մինչև 3.97 գ/սմ<sup>3</sup> է: Հսկա Մ-ի՝ Յուպիտերի, Սատուրնի, Ուրանի, Նեպտունի միջին խտությունը 1.4 գ/սմ<sup>3</sup> է և մոտ է արևայինին:
- П-156. ПЛАНКТОН** (հուն. planktós – թափառող) – **ՊԼԱՆԿՏՈՆ, PLANKTON**, ակտիվ շարժման ունակությունից զուրկ և ջրում ալիքների ու հոսանքների միջոցով տեղաշարժվող բուսական ու կենդանական օրգանիզմների համախմբություն: Ըստ չափերի՝ տարբերվում են մանրա- և խոշորապլանկտոն, ըստ համակարգային կազմի՝ կենդանապլանկտոն և բուսապլանկտոն: Պ-ին են պատկանում տարբեր ջրիմուռներ, պարզագույն կենդանիներ, որոշ խեցգետնակերպեր, մեղուզաներ, փափկամարմիններ և այլն: Պ. ծառայում է որպես սնունդ շատ կենդանիների, այդ թվում՝ ձկների և կետանմանների համար:
- П-157. ПЛАНКТОН МЕРТВЫЙ – ՍԱՀԱՅԱԾ ՊԼԱՆԿՏՈՆ, DEAD PLANKTON**, մահացած օրգանիզմներ, լողացող խեցիներ, որոնց փափուկ մասերը ոչնչացել են և տեղափոխվել են ջրային հոսանքների միջոցով: Մ. պ. ունի կարևոր շերտագրական նշանակություն, քանզի խեցիները տեղափոխվում են մեծ տարածությունների վրա. դա հնարավորություն է տալիս համադրելու միմյանցից հեռու գտնվող կտրվածքները:
- П-158. ПЛАСТ – ՇԵՐՏ, SEAM, BED, LAYER, STRATUM**, 1) երկրբ. մարմին, որն ունի հարթ ձև, հաստությունը բազմաթիվ անգամ փոքր է տարածման մակերեսից, ունի համասեռ հատկանիշներ և սահմանափակված է շատ թե քիչ զուգահեռ մակերևույթներով՝ վերին առաստաղով և ներքին հատակով: Հաստությունը որոշվում է առաստաղի ու հատակի միջև ամենակարճ հեռավորությամբ: Շ. կարող է կազմված լինել մի քանի՝ միմյանց հետ ինչ-որ բանով կապված տարբեր ապարների նրբաշերտերից (օր.՝ ածխի շերտ՝ արգիլիթի նրբաշերտերով): 2) Ազատ օգտագործման շերտագրական ստորաբաժանում՝ քարաբանորեն ինչ-որ չափով համասեռ, համեմատաբար փոքր հաստության նստվածքներ, որոնք հստակ անջատվում են ներքև և վերև տեղադրված նստվածքներից և կտրվածքում գրավում են որոշակի շերտագրական դիրք:

- П-159. ПЛАСТ НЕФТЯНОЙ – ՆԱՎԹԱՅԻՆ ՇԵՐՏ, OIL BED**, ծակոտկեն կամ ճեղքավոր ապարների շերտ, որը այս կամ այն աստիճանով հագեցված է նավթով (քարյուղով):
- П-160. ПЛАСТ РУДНЫЙ – ՀԱՆՔԱՇԵՐՏ, ORE BED**, ներդաշնակ հանքամարմին, որը սահմանափակված է զուգահեռ մակերևույթներով: Առավել տիպական է նստվածքային հնքվ-երին:
- П-161. ПЛАСТ УГОЛЬНЫЙ – ԱԾԽԱՇԵՐՏ, COAL SEAM, COAL BED**, ապարների շերտայնության ուղղությամբ, մոտավորապես զուգահեռ հարթությունների միջև, զգալի մակերեսով տարածված ածխանյութի կուտակվածք:
- П-162. ПЛАСТИНЧАТАЯ ОТДЕЛЬНОСТЬ, ПЛИТНЯКОВАЯ ОТДЕЛЬНОСТЬ – ԹԻ-ԹԵՂԱՉԵՎ ԱՆՋԱՏՈՒԹՅՈՒՆ, ՍԱԼԱՔԱՐԱՅԻՆ ԱՆՋԱՏՈՒԹՅՈՒՆ, PLATY JOINTING, PLATY PARTING**, ապարների անջատություն, որը թիթեղաձև կամ սալաձև է:
- П-163. ПЛАСТИЧЕСКАЯ ДЕФОРМАЦИЯ – ՊԼԱՍՏԻԿ ԶԵՎԱԽԱՆՏՈՒՄ, PLASTIC DEFORMATION**, արտաքին ուժերի ներգործությամբ գրունտի ձևախախտում, որն ընթանում է առանց նրա ամբողջության ընդհատման (խզման), ընդ որում՝ արտաքին ուժերի ազդեցությունը վերացնելուց հետո գրունտը պահպանում է իր ձեռք բերած ձևը:
- П-164. ПЛАСТИЧНОСТЬ ГОРНЫХ ПОРОД** (հուն. plastikós – պիտանի ծեփվածքի համար, դյուրափոխելի, պլաստիկական) – **ԱՊԱՐՆԵՐԻ ՊԼԱՍՏԻԿՈՒԹՅՈՒՆ, ROCK PLASTICITY**, մեխ. ուժերի ներգործությամբ ապարների ձևախախտման (առանց անընդհատության խախտման) և այդ ուժերի ազդեցությունը վերացնելուց հետո նրանց ստացված ձևի պահպանման ունակություն: Ա. պ. մեծանում է ջերմաստիճանի ու ճնշման աճմանը զուգընթաց: Առավել պլաստիկ են կավերը, գրաֆիտը, քարաղը և այլն:
- П-165. ПЛАСТОВАЯ ИНТРУЗИЯ, СИЛЛ, ПЛАСТОВАЯ ЖИЛА – ՇԵՐՏԱՅԻՆ ՆԵՐ-ԺԱՅԹՔՈՒՄ (ԻՆՏՐՈՒԶԻԱ), ՄԻԼ, ՇԵՐՏԱՅԻՆ ԵՐԱՎ, INTRUSIVE SHEET, SHEET VEIN, SILL**, ներժայթքային ապարների շերտանման մարմին, որը տեղադրված է ներփակող նստվածքային կամ փոխակերպային ապարների շերտավորմանը ներդաշնակ: Շ. ն-երի երկարությունը երբեմն հասում է մի քանի կմ-ի:
- П-166. ПЛАСТОВЫЕ ВОДЫ, МЕЖПЛАСТОВЫЕ ВОДЫ – ՇԵՐՏԱՅԻՆ ՋՐԵՐ, ՄԻՋ-ՇԵՐՏԱՅԻՆ ՋՐԵՐ, CONFINED WATER**, ջրատար ապարների շերտերում պարունակվող ճնշումային կամ գրունտային ջրեր, որոնք ներքևից ու վերևից պարփակված են ջրաներժ ապարներով: Նավթային ջրաերկր-ում Շ. ջ. են կոչվում տվյալ նավթային ստվարաշերտում պարունակվող ջրերը:
- П-167. ПЛАТИНА САМОРОДНАЯ** (իսպ platina, plata-ից – արծաթ) – **ՊԼԱՏԻՆ ԲՆԱԾԻՆ, NATURAL PLATINUM**, պլատինային խմբի միներալներ, հանդիսանում են պլատինում Fe-ի, Cu-ի, Ni-ի, Yr-ի, Ph-ի, Sn-ի, Os-ի, Ru-ի, Au-ի, Ag-ի, Bi-ի, Pb-ի չկարգավորված բնական պինդ լուծույթներ: Սովորաբար պարունակում են 2-3 հիմնական (միներալ առաջացնող) և տարբեր քանակների խառնուրդ մետաղներ: Բյուրեղանում են խորանարդային համակարգում: Ազրեգատները՝ ցան, բնածին տձև կտորներ, թեփուկներ, ճառագայթաձև կառուցվածքի կոնկրեցիաներ: Գույնը՝ մոխրագույն-սպիտակ, կարծրությունը՝ 3.5-5.5: Պ. բ-ի միներալները ներծին են և առաջանում են մագմայական ու ջրաջերմային հնքվ-երում, հանդիպում են գերհիմքային, հազվադեպ՝ հիմքային ապարներում, օքսիդացման զոնաներում:
- П-168. ПЛАТИНОВЫЕ РУДЫ – ՊԼԱՏԻՆԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, PLATINUM ORES**, բնական միներալային գոյացություններ, որոնք պարունակում են պլատինային մետաղներ (ռութենիում, ռոդիում, պալադիում, օսմիում, իրիդիում, պլատին) այնպիսի կուտա-

կուններով, որոնց արդյ. օգտագործումը տնտեսապես նպատակահարմար է: Պ. հ. լինում են արմատական և ցրոնային, ըստ կազմի՝ բուն պլատինային ու կոնպլեքսային (պղնձի և պղինձ-նիկելային սուլֆիդային արմատական շատ հնքվ-եր, ոսկու՝ պլատինի հետ, ինչպես նաև ոսկու՝ իրիդիումի հետ ցրոնային հնքվ-եր):

**П-169. ПЛАТО** (ֆրանս. plateau – մատուցարան, սարահարթ, plat-ից – տափարակ) – **ՍԱՐԱՎԱՆԴ, PLATEAU**, բարձրացված հարթավայր՝ հարթ կամ ալիքավոր թույլ մասնատված մակերևույթով, որը հարևան ավելի ցածր հարթավայրային տարածքներից սահմանափակված է պարզորոշ սանդղավանդով: Տարբերում են կառուցվածքային, հրաբխային, լերկացման, լեռնային Ս-ներ:

**П-170. ПЛАТФОРМА, КОНТИНЕНТАЛЬНАЯ ПЛАТФОРМА** (ֆրանս. plate-forme, plate-ից – տափակ և forme – ձև) – **ՊԼՍՏՖՈՐՄ, ՄԱՅՐՅԱՄԱՔԱՅԻՆ ՊԼՍՏՖՈՐՄ, PLATFORM, CRATON**, մայրցամաքային երկրակեղևի խոշոր լայնատարած (տրամագծում մի քանի հազ. կմ), համեմատաբար կայուն մեծաբեկոր: Արտասահմանյան գրականությունում հաճախ անվանվում է կրատոն: Պ. բնորոշվում է երկհարկանի կազմությամբ. ստորին մասում տեղադրված է ուժգին տեղախախտված, փոխակերպված (մետամորֆացված), գրանիտացված հիմքը, որն աներդաշնակ ծածկվում է նստվածքային, որոշ տեղերում հրաբխային ապարների մասնակցությամբ, ծածկոցով, որն ունի մերձհորիզոնական տեղադրում և ենթարկված չէ փոխակերպության: Մինչքենթրիան հիմքով Պ-ները կոչվում են հին Պ-ներ, դրանք կազմում են ժամանակակից մայր ցամաքների կորիզը (բացի Ասիայից, որի կազմում հայտնի են 4 Պ-ներ) և շատ գիտնականների կողմից դիտարկվում են որպես մեկ մայրցամաքային զանգվածի՝ Պանգեայի բեկորներ, որոնք առաջացել են պրոտերոզոյի միջնամասում (1700 մլն. տ.): Ավելի երիտասարդ (պալեոզոյ-վաղ մեզոզոյ) հիմքով Պ-ները կոչվում են երիտասարդ Պ-ներ և տեղաբաշխված են հին Պ-ների եզրամասերում կամ դրանց միջակայքում: Պ-ները սահմանակցված են կամ ավելի երիտասարդ ծալքավոր գոտիների հետ, որոնք սովորաբար վրաշարժված են իրենց վրա, կա՛մ օվկիանոսների հետ, որոնցից հաճախ անջատված են ուղղաձիգ բեկվածքով: Այդ պատճառով Պ-ներն ունեն բազմանկյուն ուրվապատկեր: Պ-ների համար բնորոշ են ուղղաձիգ տեկտ. շարժումների փոքր արագությունները, որոնք որոշում են նրանց հարթավայրային ռելիեֆը, իջեցումների նկատմամբ թույլ բարձրացումները, ծածկոցում փոքր հաստության ցամաքային և ծանծաղձովային նստվածքների լայն տարածումը, թույլ երկրաշարժականությունը և համեմատաբար թույլ ու յուրահատուկ մագմայականությունը: Բնորոշ են նաև, այսպես կոչված, տրապները (լայնածավալ բազալտային ծածկոցները՝ դայկաներով ու շերտային ներժայթքումներով), ինչպես նաև ալկալիական բազալտները, ալկալիազերհիմքային օղակային ներժայթքուկները և քիմբեռլիթները:

Պ-ի հիմքի ելուստները մակերևույթում կոչվում են վահաններ կամ զանգվածներ, ծածկոցով ծածկված տարածքները՝ սալեր, Պ-ների եզրամասերում՝ պերիկրատոնային իջեցումներ: Սալերի ներսում խոշոր բարձրացումները հայտնի են որպես անտեկլիզներ, իջվածքները՝ սինտեկլիզներ, իսկ դրանց հիմքում խոր (մինչև 10-12 կմ) գծային գրաբեն-ճկվածքները՝ ավլակոգեններ: Ծածկոցի ավելի մանր գծային տեղախախտումները կոչվում են թմբեր: Պ-ներում մայրցամաքային կեղևի հաստությունը 30-40 կմ է, որից մինչև 5, հազվադեպ՝ 10-15 կմ և ավել ընկնում է նստվածքային ծածկոցին: Ասթենոսֆերան (թույլլորտը) տեղադրված է 100-150 կմ-ից մինչև 200-250 կմ խորություններում: Նստվածքային ծածկոցի հետ կապված են նավթի ու գազի, ածխի, աղերի, ֆոսֆորիտների, երկաթի, բոքսիտների, ցրոնային, հիմքի հետ՝ երկաթի (երկաթային քվարցիտներ), մանգանի, ալմաստի, ոսկու, նիկելի և այլ հնքվ-եր:

**П-171. ПЛАТФОРМЕННЫЙ ЧЕХОЛ, ОСАДОЧНЫЙ ЧЕХОЛ – ՊԼԱՏՖՈՐՄԱՅԻՆ ԾԱԾԿՈՑ, ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԾԱԾԿՈՑ, PLATFORM MANTLE, SEDIMENTARY COVER**, պլատֆորմային մարզերի թույլ տեղախախտված, սովորաբար չփոխակերպված նստվածքային ապարների ստվարաշերտեր, որոնք աններդաշնակ ու տրանսգրեսիվ ծածկում են հին, ծալքավոր, փոխակերպված, գրանիտացված հիմքը: Մագմայական ապարները ենթակա դեր են խաղում և ներկայացված են առավելապես բազալտների ծածկոցներով (պլատոբազալտներ): Նստվածքային ծածկոցի ապարները երբեմն պատռված են ակալիական ներժայթքվածքներով:

**П-172. ПЛЕЙСТОЦЕЙСТА** (հուն. pléistos – խոշորագույն, ամենամեծ և seistós – տատանվող, ցնցվող) – **ՊԼԵՅՍՏՈՍԵՅՍ, PLEISTOSEISMAL LINE**, երկրաշարժի առավելագույն ուժգնության մարզի շրջագիծ:

**П-173. ПЛЕЙСТОЦЕН** (հուն. pléistos – խոշորագույն, ամենաերկարատև և kainós – նոր) – **ՊԼԵՅՍՏՈՑԵՆ, PLEISTOCENE**, չորրորդական (անտրոպոգենյան) ժամանակաշրջանի միջին՝ երկարատև (մոտ 1 մլն. տ.) դարակարգին համապատասխանող բաժին: Պ. համադաս է ընդհանուր շերտագրական սանդղակի հարկին կամ զոնային և ստորաբաժանվում է ստորին, միջին և վերին Պ-ի, որոնք համապատասխանում են ստորին, միջին և վերին չորրորդական օղակներին: Բնորոշվում է երկրի կլիմայի ընդհանուր ցրտեցմամբ և միջին լայնություններում լայնատարած սառցապատումների պարբերաբար գոյացմամբ: Առավելագույն սառցապատումների ժամանակ մայր ցամաքների տարածքի ավելի քան 72 % ծածկված է եղել սառույցներով: Էոպլեյստոցենի և Պ-ի սահմանում կենդանական ու բուսական աշխարհում տեղի են ունեցել զգալի փոփոխություններ, հանդես են եկել հնագույն մարդիկ (արխանտրոպները): Տերմինը առաջարկել է անգլ. երկրաբան Չ. Լայելը 1832 թ-ին, տե՛ս նաև Четвертичная система (период):

**П-174. ПЛЕОХРОИЗМ** (հուն. pléōn – ավելի, առավել, բազմաթիվ և chrōa – գույն, ներկ) – **ԲԱԶՍԱԳՈՒՆՈՒԹՅՈՒՆ (ՊԼԵՈՔՐՈՒԶՍ), PLEOCHROISM**, անիզոտրոպ(ային) բյուրեղների, միջավայրի, այդ թվում միներալների հատկություն՝ ընտրողականորեն կլանելու լուսային ճառագայթները՝ կախված բյուրեղագիտական ուղղությունից: Սովորաբար արտահայտվում է մանրադիտակի տակ բևեռացման լույսում պտտելու ընթացքում միներալի հատիկի գույնի, երանգի կամ գունավորման ինտենսիվության փոփոխմամբ, բայց որոշ միներալների (կորդիերիտ, տուրմալին, կունցիտ և այլն) մոտ դիտվում է նաև տեսողականորեն: Օպտիկապես միաառանցք միներալները բնորոշվում են Բ-յան երկու գույնի առկայությամբ (դիքրոիզմ), երկառանցքները՝ երեք (տրիքրոիզմ): Բ. օգտագործվում է միներալների որոշման ժամանակ:

**П-175. ПЛЕЧЕНОГИЕ – ՈՒՍՈՍԱՆԻՆԵՐ**, տե՛ս Брахиподы:

**П-176. ПЛИКАТИВНЫЕ ДИСЛОКАЦИИ – ՊԼԻԿԱՏԻՎ ՏԵՂԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ (ՌԻՍԼՈՎԱՅԻԱՆԵՐ)**, նույնն է՝ ծալքավոր տեղախախտումներ (խախտումներ), տե՛ս Дислокации, Складчатость:

**П-177. ПЛИНСБАХСКИЙ ЯРУС, ПЛИНСБАХ** (Պլինսբախ գյուղի անունից, ԳՖՀ) – **ՊԼԻՆՍԲԱԽԻ ՀԱՐԿ, ՊԼԻՆՍԲԱԽ, PLEINSBACHIAN**, յուրայի համակարգի ստորին բաժնի ներքևից երրորդ հարկ:

**П-178. ПЛИОЦЕН** (հուն. pléiōn – ավելի շատ, ավելի երկարատև և kainós – նոր) **ՊԼԻՈՑԵՆ, PLIOCENE**, նեոգենի համակարգի (ժամանակաշրջանի) վերին բաժին (ուշ դարակարգ): Բաժանվում է 3 ենթաբաժինների:

**П-179. ПЛИТА (ГЕОЛ.) – ՍԱԼ (ԵՐԿՐԲ.), PLATE**, պլատֆորմի սահմաններում երկրակեղևի տեղամաս, որտեղ ծալքավոր հիմքը համեմատաբար խորասուզված է և ծածկված հորիզոնական տեղադրված կամ թույլ տեղախախտված նստվածքային



ապարների ստվարաշերտով: Ս. հակադրվում է պլատֆորմի համեմատաբար բարձրացված կառուցվածքին՝ վահանին, և բարդացված է ավելի ցածր կարգի կառուցվածքներով (անտեկլիզներով, սինեկլիզներով, թմբերով և այլն): Տերմինը առաջարկել է ավստր. երկրաբան Է. Յյուսը 1885-ին:

**П-180. ПЛОЙЧАТОСТЬ** (ֆրանս. ployer – ծռել, կորացնել, ծալել, դարսել) – **ՄԱՆՐԱԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, PPLICATION, CRUMBLING, CRENULATION, MICROFOLDING**, մանր ծռվածքներ, որոնք բարդացնում են ապարների ծալքավորությունը: Դիտվում է ուժգին ծալքավորման մարզերում կամ պլաստիկ ապարներում:

**П-181. ПЛОСКОГОРЬЕ – ՍԱՐԱՀԱՐԹ (ԲԱՐՉՐԱՎԱՆԴԱԿ, ԼԵՆՆԱՀԱՐԹ), TABLELAND**, ցամաքի լայնատարած տեղամաս, որը վեր է բարձրացած շրջապատող տարածքից և բնորոշվում է ողողամաշման (էրոզիոն) զգալի մասնատմամբ, ինչպես նաև՝ տափարակ ջրբաժանային մակերևույթների թույլ ողողամաշմամբ: Երկրբ. կառուցվածքի տեսակետից որոշ երկրաբաններ գտնում են, որ Ս-երը բաղկացած են հորիզոնական տեղադրում ունեցող ապարներից, նման են սարավանդներին՝ ավելի խոր մասնատված ռելիեֆով, մյուսները Ս-երին են վերագրում պլատֆորմային պայմանները, հարթված հին լեռնային, ծալքավոր ապարներից կազմված երկրները:

**П-182. ПЛОСКОСТНАЯ ЭРОЗИЯ, ПОВЕРХНОСТНЫЙ СМЫВ – ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ՈՂՈՂԱՍԱՇՈՒՄ (ԷՐՈԶԻԱ), ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅՈՒՆ ՈՂՈՂԱՏԱՐՈՒՄ, SHEET EROSION, SHEET WASH, SHOPE WASH**, Երկրի մակերևույթից մանր միներալային մասնիկների արտահանում անձրևաջրերի և ծյունաջրերի միջոցով, որոնք հոսում են փոփոխվող մանրահուններով կամ առաջացնում են համատարած ջրային թաղանթ:

**П-183. ПЛОСКОСТЬ СИММЕТРИИ – ՀԱՍԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ, PLANE OF SYMMETRY**, հարթություն, որը համաչափ պատկերը բաժանում է երկու հավասար մասերի, որոնցից մեկը իրենից ներկայացնում է մյուսի հայելային նմանությունը:

**П-184. ПЛОСКОСТЬ СЛАНЦЕВАТОСТИ – ԹԵՐԹԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ, PLANE OF SCHISTOSITY**, հարթություն, որում երկար ու լայն միստերով տեղաբաշխված են սալիկավոր, թեփուկավոր և ձգված միներալները, որի հետևանքով ապարը ձեռք է բերում թերթավոր կազմվածք: Թ. հ. ոչ միշտ է հանդիսանում շերտավորության հարթություն:

**П-185. ПЛОТИК – ՀԻՄՆԱԺԱՅՈ, ՊԼՈՏԻԿ, BEDROCK**, արմատական ապարներ (նստվածքային, մագմայական, փոխակերպային), որոնց ողողամաշման-էրկացման մակերևույթի վրա զգալի կառուցվածքային ու շերտագրական աններդաշնակությամբ տեղադրված են ցրոնները:

**П-186. ПЛОТИНА – ՊՍՏՎԱՐ, ԱՍԲԱՐՏԱԿ, DAM**, ջրհոսքը (զետ և այլն) պատնեշող և ջրի մակարդակի բարձրացում ապահովող ջրատեխնիկական կառույց:

**П-187. ПЛОТНОСТЬ ВОДЫ – ՋՐԻ ԽՏՈՒԹՅՈՒՆ, WATER DENSITY**, ջրի միավոր ծավալի կշիռ: 1 մ<sup>3</sup> ջուրը +4°C դեպքում կշռում է 1 տոննա:

**П-188. ПЛОТНОСТЬ ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ԽՏՈՒԹՅՈՒՆ, ROCK DENSITY**, ապարի միավոր ծավալով զանգվածը (գ/սմ<sup>3</sup>)՝ նրա ծակոտիներում պարունակող հեղուկների ու գազերի հետ միասին:

**П-189. ПЛОЩАДНОЕ ИЗВЕРЖЕНИЕ – ՀՐԱՊԱՐԱՎԱՅԻՆ (ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ) ԺԱՅԹՔՈՒՄ, SHEET ERUPTION**, հսկայական մակերեսում հրաբխի ժայթքում՝ բազմաթիվ ճեղքերով ու խողովականման մղանցքերով: Օր.՝ Դեկանի պլատոբազալտների ձևավորումը (մակերեսը՝ 200.000 կմ<sup>2</sup>) և այլն:

**П-190. ПЛОЩАДЬ ДРЕНИРОВАННАЯ – ՑԱՍԱԹԵՅՎԱԾ ՄԱԿԵՐԵՍ, DRAINAGED AREA**, տարածք, որի մակերևութային և ստր. ջրերը ցամաքուրդի են ենթարկվում

բնական գետային ցանցի կամ արհեստական փորվածքների (առուներ, ջրհորեր, հորատանցքեր և այլն) միջոցով:

**П-191. ПЛУТОН** (հուն. Pluton – Պլուտոն, ստորերկրյա թագավորության աստված հունական դիցաբանությունում) – **ՊԼՈՒՏՈՆ, PLUTON, PLUTONIC MASS**, առանձին ինքնուրույն խորքային մագնայական մարմինների ընդհանուր անվանում: Առաջանում են երկրակեղևի վերին շերտում՝ միջնապատյանից կամ կեղևի ստորին մասերից ներթափանցած մագնայի սառեցման դեպքում: Պ-ների ձևը, կախված ներփակող ապարների կառուցվածքից, տարբեր է: Ըստ չափերի, ձևի և տեղադրման՝ երկրակեղևում առանձնացնում են բաթոլիթներ, լակոլիթներ, լապոլիթներ, ֆակոլիթներ, դայկաներ և այլն:

**П-192. ПЛУТОНИЗМ** (հուն. Pluton – Պլուտոն, ստորերկրյա թագավորության աստված հունական դիցաբանությունում) – **ՊԼՈՒՏՈՆԻԶՄ, PLUTONISM**, XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին տարածված ուսմունք՝ երկրբ. պատմության ընթացքում երկրի ներքին ուժերի առաջատար նշանակության մասին: Այդ ուսմունքը, որպես որոշակի համակարգ, առաջարկել է անգլ. երկրաբան Ջ. Հատտոնը (J. Hutton, 1726-1797) 1788-ին: Երկրակեղևում ապարների ձևավորման ու փոխարկման մեջ հիմնական նշանակությունը վերագրում է ներծին գործընթացների գործունեությանը, հատկապես խորքային մագնայականությանը և հրաբխայնությանը: Պ-ի կայացումը ընթացել է նեպտունիզմի (Ա. Վերներ) դեմ մղած անհաշտ պայքարում, որը ապարագոյացման մեջ վճռական դեր տալիս էր ջրոլորտում ընթացող գործընթացներին և ժխտում էր ներքին երկրբ. գործոնների որևէ դերը: XIX դ. սկզբում ապացուցվեց բազալտների հրաբխային ծագումը և բացահայտվեց երկրի ներքին էներգիայի դերը երկրբ. գործընթացների մեծամասնությունում: Պ-ի և նեպտունիզմի միջև պայքարը կարևոր դեր խաղաց երկրբ. գիտության ձևավորման գործում:

**П-193. ПЛЫВУН – ЗОУПАГОРОТЪС (ԱՊԱՐԱԼՈՂԻԿ), QUICKSAND**, ջրով գերհագեցած, փուխր, հիմնականում մանրահատիկ ավազներից կազմված ապարներ, որոնք որոշակի ջերմադինամիկ պայմաններում մեծ շարժունակություն են դրսևորում (շարժվում են ցեխաջրի կամ շաղախի նման): Տարբերում են իսկական և կեղծ Յ-ներ: Յ-ները կազմված են ջրասեր կոլոիդներ պարունակող ավազներից և անցնում են հոսուն վիճակի աննշան ճնշումային գրադիենտի դեպքում և մշտական շարժունակություն են ձեռք բերում: Յ-ները հեշտությամբ ջրազրկվում են և կորցնում իրենց շարժունակությունը:

**П-194. ПЛЮВИАЛЬНЫЙ ПЕРИОД (ЭПОХА)** (լատ. pluvialis – անձրևային) – **ՊԼՅՈՒՎԻԱԼ (ԱՆՋՐԵՎՈՏ) ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆ (ԴԱՐԱԿԱՐԳ), PLUVIAL PERIOD**, կլիմայի ուժգին խոնավացման փուլ՝ ի հաշիվ հեղուկ տեղումների քանակի մեծացման: Չորրորդական ժամանակաշրջանում Պ. ժ. աչքի է ընկնում արտասառցադաշտային մարզերում տեղումների առատությամբ՝ գլխ. արևադարձային և մերձարևադարձային մարզերում:

**П-195. ПЛЯЖ** (ֆրանս. plage – թեքավուն ծովափ) – **ԼՈՂԱՓ, BEACH, STRAND, PLAGЕ**, ափի՝ դեպի ծովը մեղմաթեք գոտի, կազմված է ավազից, կոպճից, ճալաքարից, որոնք կուտակվում են ալեկոծության հոսքերի ներգործության տակ:

**П-196. ПНЕВМАТОЛИЗ** (հուն. pneuma, սեռ. հ. pneumatōs – շնչել, փչել և lysis – լուծում, տարրալուծում) – **ՊՆԵՎՄԱՏՈԼԻԶ, PNEUMATOLYSIS**, միներալագոյացման գործընթաց՝ ապարների պարունակության վրա մագնայից անջատված ցնդող միացությունների ազդեցությամբ: Միներալները կամ ուղղակի նստում (սուբլիմվում) են գազերի փոխներգործունեության շնորհիվ, կամ այդ գազերը ներգործում են

մինչ այդ գոյություն ունեցած ապարների միներալների վրա (պնևմատոլիթային տեղակալում): Պ-ի միջոցով մազմայից դուրս են բերվում շատ մետաղներ և ոչ մետաղներ, որոնք առաջացնում են տարբեր օգտ. հնձ-ների հնքվ-եր: Պ. բարձր ջերմաստիճանի, առավելապես աղածին տարրերից, ջրից, բորի, ֆոսֆորի միացություններից և ալկալիական մետաղներից կազմված մազմայական էմանացիաների համատեղ գործողությամբ առաջ է բերում ապարների փոփոխություններ (պնևմատոլիթային փոխակերպություն): Պ. սովորաբար ուղեկցվում է ջրաջերմային (հիդրոթերմալ) գործընթացներով:

**Պ-197. ПНЕВМАТОЛИТОВЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ – ՊՆԵՎՄԱՏՈԼԻԹԱՅԻՆ ՀԱՆՔՎԱՅՐԵՐ, PNEUMATOLYTIC DEPOSITS**, պնևմատոլիզի գործընթացում, այսինքն՝ գազային փուլում առաջացած օգտ. հնձ-ների հետմազմայական հնքվ-եր: Որոշ դասակարգումներում Պ. հ-ի տիպին են դասում հպումամետասոմատիկական (սկառնային) հնքվ-երը և հազվագյուտ մետաղների բարձր ջերմաստիճանային հնքվ-երի մի մասը: Պ. հ. հանդիպում են հազվադեպ, ձևավորվում են ներժայթքումների հպումներին մոտ, մեծ մասամբ նրանց եզրագծերից դուրս, երբեմն էլ՝ հենց ներժայթքվածքների (ինտրուզիաների) մեջ: Դրանց համար սովորաբար բնորոշ են հանքամարմինների անկանոն ձևերը:

**Պ-198. ПОБЕРЕЖЬЕ – ԾՈՎԱԾ (ԾՈՎԵՉԵՐՔ), SHORE, COAST**, ծովի (օվկիանոսի, լճի, ջրամբարի) ափամերձ գոտի, որը բնութագրվում է ծովի ու ցամաքի փոխազդեցության, մասնավորապես ջրային ծագման ռելիեֆի ձևերով:

**Պ-199. ПОВЕРХНОСТНЫЙ СТОК – ՍԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՀՈՍՔ, SURFACE RUNOFF, OVERLAND RUNOFF**, բնության մեջ ջրի շրջանառության կարևոր բաղադրիչ, մթնոլորտային տեղումների և ստր. ջրերի ելքերի այն մասը, որը գետային ցանցով տեղափոխվում է դեպի ծովեր, օվկիանոսներ և փակ ավազաններ: Մ. հ. ընդգրկում է լանջային, գետային և հեղեղումային հոսքերը:

**Պ-200. ПОВЕРХНОСТЬ ВЫРАВНИВАНИЯ – ՀԱՐԹԵՑՄԱՆ ՍԱԿԵՐԵՎՈՒՅԹ, PENEPLANATION PLANE, LEVELLING PLANE**, լեռներում ու հարթավայրերում տարբեր ծագման (լերկացման կամ կուտակումային) հարթված մակերևույթ, որը ձևավորվել է ներծին գործընթացները արտածիններով մասամբ կամ լրիվ հավասարակշռվելու պայմաններում, որի հետևանքով նա իր ձևով և սկզբնական բարձրությամբ մոտենում է երկրի ձգողական դաշտի հավասարեցված մակերևույթներին: Հ. մ-ները ավարտում են ռելիեֆի զարգացումը եզրափակիչ փուլերում (երկրածնաբանական լրիվ կամ ոչ լրիվ ցիկլ): Լրիվ կամ ավարտված ցիկլը բնորոշվում է լերկացման հարթավայրի ձևավորմամբ, այդ թվում՝ պենեպլենի:

**Պ-201. ПОВЕРХНОСТЬ ДЕПРЕССИОННАЯ – ԻՋՈՒԹԱՅԻՆ (ԴԵՊՐԵՍԻՈՆ) ՍԱԿԵՐԵՎՈՒՅԹ, DEPRESSION SURFACE**, ճնշումային կամ գրունտային ջրերի մակերևույթի ցածրացող մաս՝ դեպի նրանց բնական ելքի տեղը կամ դեպի արհեստական փորվածքները, որոնցից ջրի արտամղում է կատարվում: Համասեռ ջրատար ապարներում Ի. մ. ունենում է համաչափ իջութային ծագարի ձև, իսկ անհամասեռ ապարներում նրա համաչափությունը էապես խախտվում է:

**Պ-202. ПОВЕРХНОСТЬ НАДВИГА – ՎՐԱՇԱՐԺԻ ՍԱԿԵՐԵՎՈՒՅԹ, OVERTHRUST PLANE**, մակերևույթ, որով տեղի է ունեցել վրաշարժի վերնաթևի շարժումը տակդիր ապարների վրայով: Սովորաբար նա ունի անկանոն ձևեր և բնորոշվում է անհարթությունների հարթմամբ:

**Պ-203. ПОВЕРХНОСТЬ НАПЛАСТОВАНИЯ, ПОВЕРХНОСТЬ НАСЛОЕНИЯ – ՇԵՐՏԱՎՈՐՄԱՆ ՍԱԿԵՐԵՎՈՒՅԹ, BEDDING PLANE, BEDDING SURFACE**, նստվածքային ապարների շերտերի շփման առաջնային մակերևույթ, որը հանդիսանում է

նստվածքների կուտակման մակերևույթ: Յարթ, տափակացած Շ. մ-ին երբեմն անվանում են շերտավորման հարթություն:

**П-204. ПОВЕРХНОСТЬ НЕСОГЛАСИЯ – ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԱԿԵՐԵՎՈՒՅԹ, SURFACE OF UNCONFORMITY, 1)** ապարների երկու, տարահասակ, նստվածքակուտակման ընդմիջումով բաժանված ստվարաշերտերի հպման մակերևույթ: 2) երկու ստվարաշերտերի տեկտ. խզվածքով հպման մակերևույթ:

**П-205. ПОВЕРХНОСТЬ РАЗМЫВА – ՈՂՈՂԱՔԱՅՔԱՅՄԱՆ ՍԱԿԵՐԵՎՈՒՅԹ, SCOUR SURFACE,** տարբեր ապարները բաժանող անհարթ մակերևույթ, առաջանում է մինչև ավելի երիտասարդ նստվածքների կուտակումը՝ հին ապարների լերկացման կամ ողողաքայքայման դեպքում: Վկայում է նստվածքակուտակման գործընթացում ընդմիջման առկայության մասին:

**П-206. ПОВЕРХНОСТЬ СБРОСА, ПЛОСКОСТЬ СБРОСА – ՎԱՐՆԵՏՔԻ ՍԱԿԵՐԵՎՈՒՅԹ, ՎԱՐՆԵՏՔԻ ՅԱՐԹՈՒԹՅՈՒՆ, FAULT PLANE, FAULT SURFACE,** խզվածքային հարթություն, որի երկայնքով տեղի է ունենում վարնետքային տեղաշարժը, տե՛ս նաև Сместитель:

**П-207. ПОВЕРХНОСТЬ СКОЛЬЖЕНИЯ,** տե՛ս Зеркало скольжения:

**П-208. ПОГРЕБЁННАЯ ТЕРРАСА – ԹԱՂՎԱԾ ԴԱՐՎԱՆԴ (ԴԱՐՍԱՓ), BURIED TERRACE,** դարավանդ, որը թաղված է նստվածքային կամ հրաբխային ստվարաշերտերի տակ և արտահայտված է տեսանելի (բաց) ռելիեֆում:

**П-209. ПОГРЕБЁННЫЕ ПОЧВЫ – ԹԱՂՎԱԾ ՀՈՂԵՐ, BURIED SOILS,** հողեր, որոնք գտնվում են ցամաքային տարբեր նստվածքների ստվարաշերտերում: Վկայում են նստվածքակուտակման մեջ ընդմիջումների մասին և նյութ են ծառայում հնաշխ. վերականգնումների համար:

**П-210. ПОГРЕБЁННЫЙ РЕЛЬЕФ, ИСКОПАЕМЫЙ РЕЛЬЕФ – ԹԱՂՎԱԾ ՌԵԼԻԵՖ, ԲՐՎՈՆ ՌԵԼԻԵՖ, BURIED RELIEF,** ռելիեֆ, որը ծածկված է ավելի ուշ գոյացած նստվածքային ու հրաբխային ապարներով:

**П-211. ПОГРУЖЕНИЕ ШАРНИРА СКЛАДКИ – ԾԱԼՔԻ ՀՈՂՎԱԿՊԻ ԽՈՐԱՍՈՒՉՈՒՄ, PLUNGE OF FOLD HINGE,** ծալքի հողակապի թեքություն, չափվում է ազիմուտով և թեքության անկյունով:

**П-212. ПОДВИЖНЫЙ ПОЯС, МОБИЛЬНЫЙ ПОЯС – ՇԱՐԺՈՒՆ(ԱԿ) ԳՈՏԻ, MOBILE BELT,** երկրակեղևի տեղամաս, որը բնորոշվում է տեկտ. շարժումների մեծ լայնությամբ ու արագությամբ, ինչպես նաև շրջապատող մարզերի համեմատությամբ՝ մագմայական գործունեության ու ժգնությամբ: Տարբերում են երկրասինկլինալային (ծայրամասամայրցամաքային կամ միջմայրցամաքային), էպի-երկրասինկլինալային, էպիպլատֆորմային լեռնագոյացման (ներմայրցամաքային), միջինօվկիանոսային լեռնաշղթաների Շ. գոտիներ:

**П-213. ПОДВОДНАЯ ОКРАИНА МАТЕРИКА – ՄԱՅՐ ՑԱՄԱՔԻ ՍՏՈՐՉՐՅԱ ԵՉՐ, SUBMARINE CONTINENTAL MARGIN,** Համաշխարհային օվկիանոսի հատակի ծայրամաս՝ երկրակեղևի մայրցամաքային տիպով «գրանիտային» շերտի ներառմամբ: Ըստ ռելիեֆի առանձնահատկությունների՝ ստորաբաժանվում է շեֆի (մայրցամաքային ծանծաղուտի), մայրցամաքային լանջի և մայրցամաքային ստորոտի: Ցամաքի պլատֆորմային տեղամասերի համեմատությամբ «գրանիտային» շերտը Մ. ց. ս. ե-ում զգալիորեն բարակ է, իսկ մայրցամաքային ստորոտի ու օվկիանոսի մահճի սահմանում լրիվ վերանում է:

**П-214. ПОДВОДНОЕ ВЫВЕТРИВАНИЕ,** տե՛ս Гальмиролиз:

**П-215. ПОДВОДНОЕ ЗЕМЛЕТРЯСЕНИЕ – ՍՏՈՐՉՐՅԱ ԵՐԿՐԱՇԱՐԺ, SUBMARINE**

**EARTHQUAKE**, երկրաշարժ օվկիանոսների ու ծովերի հատակին կամ հատակի տակ: Ս. ե-երը կապված են մայր ցամաքների ստորջրյա եզրերի նեղ շարժուն գոնանների (գլխ. Խաղաղ օվկիանոսի ծայրամասերում) կամ միջինօվկիանոսային լեռնաշղթաների հետ: Օվկիանոսների հատակի մեծ մասում երկրաշարժերը հազվադեպ են տեղի ունենում, չունեն մեծ ուժգնություն:

**П-216. ПОДВОДНЫЕ ГОРЫ – USՈՐՋՐՅԱ ԼԵՈՆԵՐ, SEA-MOUNTS**, 1) տարբեր ծագման մեկուսացած լեռներ (հաճախ հրաբխային), որոնք բարձրանում են օվկիանոսային գոգավորության հատակից (տե՛ս նաև Га́йоты): 2) Ստորջրյա օվկիանոսային լեռնաշղթաների գագաթներ:

**П-217. ПОДВОДНЫЕ КАНЫОНЫ – USՈՐՋՐՅԱ ՎԱՆՅՈՆՆԵՐ (ԽՆՁԱՅՈՎԻՏՆԵՐ), SUBMARINE CANYONS**, ռելիեֆի զառիթափ լանջերով խոր (մինչև 1-2 կմ), սովորաբար Ս-ձև և ճյուղավորված զծային ձգված ձևեր, որոնք հարում են մայր ցամաքների ստորջրյա եզրերին: Սկսվում են առավելապես առափնյա ծանծաղուտում և ավարտվում են արտահոսային կոնով, որը մայրցամաքային լանջի հիմքում կամ մայրցամաքային ստորոտում (2-4 կմ խորությունում) հասնում է շառավղում 300-350 կմ-ի: Երբեմն հանդիսանում են ցամաքային գետահովիտների շարունակությունը (Կոնգո, Նեղոս, Ամազոն և այլն): Ս. կ-ի առաջացման մեջ շատ դեպքերում մասնակցում են պղտոր հոսանքները, սակայն նրանց առաջացման առավել հավանական վարկածը տեկտ. ծագումն է:

**П-218. ПОДВОДНЫЕ ХРЕБТЫ – USՈՐՋՐՅԱ ԼԵՈՆԱՇՂԹԱՆԵՐ, SUBMARINE RIDGES**, օվկիանոսների և ծովերի հատակի լեռնային բարձրացումներ: Մայր ցամաքների ստորջրյա եզրերի սահմաններում հազվադեպ են: Մայր ցամաքներից դեպի օվկիանոս անցումային զոնայում ներկայացված են գլխ. կղզային աղեղներով, ինչպես նաև ծայրամասային ծովերի գոգավորությունների հատակի լեռնաշղթաներով: Օվկիանոսի մահճում տարածված են բեկորային, կամարաբեկորային և հրաբխային լեռնաշղթաներ: Ս. լ-ի հատուկ տեսակ են միջինօվկիանոսային (կենտրոնական օվկիանոսային) լեռնաշղթաները:

**П-219. ПОДВОДНЫЙ ВУЛКАНИЗМ, СУБМАРИННЫЙ ВУЛКАНИЗМ – USՈՐՋՐՅԱ ՅՐԱԲԽԱՅՆՈՒԹՅՈՒՆ, ԵՆԹԱԾՈՎԱՅԻՆ ՅՐԱԲԽԱՅՆՈՒԹՅՈՒՆ, SUBMARINE VOLCANISM**, հրաբխային գործունեության դրսևորում ջրի տակ: Ջրի մեծ խորություններում ջրաստատիկ ճնշման պատճառով ժայթքումները սովորաբար աննկատելի են, ծանծաղ վայրերում ուղեկցվում են մեծ քանակի գոլորշու, գազերի արտանետումներով՝ լավայի փոքր բեկորներով: Երբեմն ստորջրյա ժայթքումների հետևանքով առաջանում են կղզիներ:

**П-220. ПОДВОДНЫЙ РАЗЛОМ – USՈՐՋՐՅԱ ԲԵԿՎԱԾՔ, SUBMARINE FAULT**, օվկիանոսներում երկրակեղևի խորքային խախտումների զոնաներ, երկարությունը հասնում է մի քանի հազ. կմ-ի, լայնությունը՝ 100-200 կմ-ի, ուղեկցվում են գծային մագնիսական անկանոնությունների խոշոր (մինչև 1000 կմ) հորիզոնական տեղաշարժերով (օր.՝ Խաղաղ օվկիանոսում Մենդոսինոյի, Մարրիի, Փայոնիի բեկվածքները):

**П-221. ПОДГОРНАЯ РАВНИНА, ПРЕДГОРНАЯ РАВНИНА, РАВНИНА ПОДНОЖИЯ – ՆԱԽԱԼԵՈՆԱՅԻՆ ՅՐԹԱՎԱՅՐ, ԼԵՈՆԱՍՈՐՈՏԻ ՅՐԹԱՎԱՅՐ, PIEDMONT PLAIN, MOUNTAIN APRON**, հարթավայր, որը հարում է լեռնային կառույցին և նրա հետ սերտորեն կապված է առաջացման ու զարգացման գործընթացներում: Ունի մակերևույթի ակնհայտ թեքություն լեռնաստորոտից, կարող է լինել կուտակումային (պրոլուվիալ, ալյուվիալ) կամ լերկացման (դենուդացիոն): Սովոր

րաբար ծածկված է փուխր նստվածքներով, որոնց հաստությունը մեծանում է լեռնաճակատից հեռանալիս:

**П-222. ПОДДВИГ – ՆԵՐՔՆԱՇԱՐԺ, UNDERTHRUST**, տեղաշարժ խզվածքով, ձևաբանորեն նման է վրաշարժին, բայց առաջանում է ոչ թե վերնաթևի, այլ ներքնաթևի ակտիվ շարժման դեպքում:

**П-223. ПОДЗЕМНОЕ ПИТАНИЕ РЕК – ԳԵՏԵՐԻ ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ԱՆՈՒՄ, SUBSURFACE ALIMENTATION OF RIVERS**, ստր. ջրերի բեռնաթափում գետերի մեջ: Հիմնականում կատարվում է գրունտային ջրերի հաշվին:

**П-224. ПОДКОРОВЫХ ТЕЧЕНИЙ ГИПОТЕЗА – ԵՆԹԱԿԵՂԵՎԱՅԻՆ ՀՈՍՔԵՐԻ ՎԱՐԿԱԾ, HYPOTHESIS OF SUBCRUSTAL CURRENTS**, կոնցեպցիա, որը ենթադրում է միջնապատյանում ջերմափոխանցական (կոնվեկցիոն) հոսքերի շրջապատույտի գոյությունը: Այդ հոսքերը ներառում են իրենց հետ երկրակեղևը (քարոլորտը) և հարուցում նրա ձևախախտում: Հավասար նշանակություն է տալիս երկրակեղևի ուղղաձիգ ու հորիզոնական շարժումներին: Ծագել է XX դ. առաջին կեսում (ավստ. գիտնական Օ. Ամպֆերեր, գերմ. գիտնականներ Ռ. Շվիններ և Է. Կրաուս, հոլանդ. գիտնական Ֆ. Վենինգ Մեյնես):

**П-225. ПОДНЯТИЕ ВУЛКАНО-ТЕКТОНИЧЕСКОЕ – ՀՐԱԲՆԱՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ, VOLCANO-TECTONIC UPRHEAVAL**, կցորդված լեռնային (ցամաքային կամ ստորջրյա) հրաբխային կառույցների կամ առանձին հրաբխային բլուկների (հրաբխատեկտոնական հորստերի) համակարգեր, որոնք ունեն որոշակի արտահայտված բարձրացման (փքման) միտում: Ռիթմանը (1964) տարբերում է վահանային հրաբուխների (օր.՝ Հավայան, Սամոա) և ստրատոհրաբուխների (կղզային աղեղների սահմաններում) լեռնաշղթաներ:

**П-226. ПОДНЯТИЕ КУПОЛОВИДНОЕ – ԳՐԲԵԹԱՉԵՎ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ, DOME, DOMING**, միջին չափերի (մակերեսը՝ 200-1000 կմ<sup>2</sup>), կլորավուն դրական պլատֆորմային կառուցվածք: Հաճախ այդ տերմինի տակ հասկացվում են ավելի փոքր կառուցվածքներ:

**П-227. ПОДНЯТИЕ СВОДОВОЕ – ԿԱՍԱՐԱՅԻՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ, ARCHED UPLIFT**, կորության մեծ շառավղով կամարածև ծավածք, որն ընդգրկում է երկրակեղևի լայնատարած տեղամաս: Կ. բ-ման կառուցվածքում մեծ է բեկվածքների դերը, որոնք այն բաժանում են բլուկների համակարգի: Երբեմն Կ. բ-ները բարդացվում են ռիֆտերով: Կ. բ-ների զարգացման ընթացքում տարբերում են 4 փուլ՝ ուժգին բարձրացում, կամարի ջարդոտում բլուկների՝ հորստերի ու գրաբեկների առաջացմամբ, ռելիեֆի որոշ հարթում և զանգվածային հրաբխայնություն, կամարի նստում: Կ. բ-ները կարող են խմբավորվել մարզերում (օր.՝ Ալթայ-Սայանյան մարզ) և գոտիներում (օր.՝ Հարավսիբիրական գոտի):

**П-228. ПОДНЯТОЕ КРЫЛО – ԲԱՐՁՐԱՅՎԱԾ ԹԵՎ, UPTHROW SIDE, UPLIFTED WALL**, վարնետքի կամ վերնետքի դեպի վեր տեղաշարժված թև:

**П-229. ПОДОШВА ГОР, ПОДНОЖИЕ ГОР – ԼԵՌՆԵՐԻ ՀԱՏԱԿ, ԼԵՌՆԵՐԻ ԱՏՈՐՈՏ, FOOT OF SLOPE, TOE OF SLOPE, FOOT OF MOUNTAIN, PIEDMONT**, 1) պայմանական գիծ, որը հատակագծում սահմանափակում է լեռնային կառույցը և նրան անջատում է հարթավայրային տարածությունից, 2) հարթավայրի գոտի, որն անմիջապես հարակցում է լեռների ստորին մասին:

**П-230. ПОДОШВА ПЛАСТА – ՇԵՐՏԻ ՀԱՏԱԿ, SUBFACE OF STRATUM, BASE OF BED, FLOOR OF BED**, 1) շերտը սահմանափակող շերտագրորեն ստորին մակերևույթ, 2) տվյալ շերտի անմիջապես տակը փռված ապար:

**П-231. ПОДСЧЁТ ЗАПАСОВ ПОДЗЕМНЫХ ВОД – ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ, CALCULATION OF UNDERGROUND WATER RESERVES**, ջրա-

երկրք. հաշվարկ, որը կատարվում է ստր. ջրերի պաշարների հետազոտման հիման վրա: Ս. ջ. պ. հ. և գնահատումը կատարվում են ջրադինամիկական, ջրաբանական (հիդրավիկական), հաշվեկշռային, ինչպես նաև մոդելավորման (էլեկտրաջրադինամիկական մեթոդներով և հաշվառման որոշակի կանոնակարգով: Հաշվարկը կատարվում է ըստ ստր. ջրերի պաշարների կատեգորիաների:

**Ս-232. ПОДСЧЁТ ЗАПАСОВ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ – ՕԳՏԱՎԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ, CALCULATION OF USEFUL MINERAL RESERVES,** ընդերքում հունքի քանակի և որակի որոշում, ներառում է հետևյալ գործողությունները՝ հնքվ-ի եզրագծում, պաշարների բաժանումը ըստ ժողովրդական նշանակության, հետախուզվածության աստիճանի, տեղադրման, հանքանյութի որակի, արդյունահանման պայմանների, հաշվարկվող բլոկների անջատումն ըստ հաստության, պարունակության և այլ արժեքների, պարամետրերի միջին նշանակությունների որոշումը և առանձնացված յուրաքանչյուր բլոկի պաշարների քանակական հաշվարկումը: Օ. հ. պ. հ. կատարվում է որոնողահետազոտական աշխատանքների բոլոր փուլերում, հատկապես կարևոր է նախնական և մանրամասն հետախուզության փուլերում: Մանրամասն հետախուզության փուլում Օ. հ. պ. հ. ելակետային նյութ է հանդիսանում լեռնահանքային ձեռնարկության նախագծման համար:

**Ս-233. ПОЗВОНОЧНЫЕ, ЧЕРЕПНЫЕ (Vertebrata, Craniata) – ՈՂՆԱՇԱՐԱՎՈՐՆԵՐ, ԳԱՆԳԱՎՈՐՆԵՐ, VERTEBRATES,** քորդավոր կենդանիների ենթատիպ: Մոտ 40-70 հազար տեսակ: Բնորոշ է գլխուղեղի, զանգի, ողնաշարի (կրծիկային կամ ոսկրային), սրտի, երիկամների առկայությունը: Շարժման օրգանները վերջավորություններն են, որոնք որոշ ձևերի մոտ երկրորդայնորեն բացակայում են (օձեր, անոտք մողեսներ): Տարածված են ծովերում, ներքին ջրավազաններում և ցամաքում: Ընդգրկում են կլորաբերանավորների, ձկների, երկկենցաղների, սողունների, թռչունների և կաթնասունների դասերը: Գոյություն ունի Ո-ի ծագման մի քանի տեսություն: Առավել հավանական է, որ նրանք հանդես են եկել պալեոզոլի սկզբում՝ փշամորթներին մոտ ձևերից:

**Ս-234. ПОИСКИ МЕСТОРОЖДЕНИЙ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ – ՕԳՏԱՎԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՈՐՈՆՈՒՄ, MINERAL DEPOSITS PROSPECTING,** երկրաբանահետազոտական աշխատանքների համալիր, որը նպատակաուղղված է ժողովրդական կարիքների համար հնարավոր միներալային հունքի արդյունաբերորեն արժեքավոր կուտակումների բացահայտմանը և դրանց կանխատեսումային երկրաբանատնտեսական գնահատմանը: Օ. հ. հ. ո. անցկացվում է 3 հաջորդական փուլերով՝ ընդհանուր որոնումներ [1:50000 (1:25.000) մասշտաբի երկրաբանահանութային աշխատանքների հետ համատեղ], որոնողական աշխատանքներ և որոնողագնահատման աշխատանքներ: Օ. հ. հ. ո. իրականացվում է նախկինում կազմված երկրք. քարտեզների հիմքի վրա և ուղեկցվում է մասնագիտացված երկրք., երկրք. հանույթներով: Որոնումների որակի բարձրացմանը աջակցում է հեռավորական՝ տիեզերա- և օդաերկրաբանական մեթոդների կիրառումը: Այն մակերեսների կանխատեսման համար, որոնք հեռանկարային են, օգտ. հնձ-ների կոնկրետ տեսակների ու համալիրների բացահայտման համար օգտագործվում է բարենպաստ երկրք. (որոնողական) նախադրյալների ու հատկանիշների ամբողջություն (տե՛ս Поисковые предпосылки, поисковые признаки, поисковые работы): Օ. հ. հ. ո-ման արդյունքների հիման վրա կատարվում է պրովիզիաների, ավազանների, շրջանների, հանքային հանգույցների, դաշտերի ու հնքվ-երի կանխատեսումային ռեսուրսների համալիր գնահատում՝ P<sub>3</sub>, P<sub>2</sub> կամ P<sub>1</sub> կատեգորիաներով:

**Ռ-235. ПОИСКОВЫЕ ПРЕДПОСЫЛКИ, ПОИСКОВЫЕ КРИТЕРИИ – ՈՐՈՆՈՂԱՎԱՆ ԼԱԽԱԳՐՅԱԼՆԵՐ, ՈՐՈՆՈՂԱՎԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ, PROSPECTING CRITERIA,**

երկրք., միներալաբանական, երկրք., երկրֆ. գործոններ, որոնք կանխորոշում են երկրակեղևում օգտ. հնձ-ներ հայտնաբերելու պայմանները: Ո. ն. հնարավորություն են տալիս զննահատելու որոշակի մակերեսներում օգտ. հնձ-ներ գտնելու հնարավորությունները, արտացոլում են օգտ. հնձ-ների կապը երկրք. կառուցվածքների, ռելիեֆի, կլիմայի, երկրք. գոյացությունների հասակի, ապարների կազմի, տարբեր տիպի անբնականոն դաշտերի հետ: Առանձնացվում են խորքամետաղագոյացման, կլիմայական, երկրաժամանակագրական ու շերտագրական, տեկտ., երկրծ., քարաբանական, ապարաբանական, միներալաբանական, երկրք., երկրֆ. Ո. ն.: Ըստ մասշտաբի Ո. ն. ստորաբաժանվում են մոլորակային, ռեգիոնալ, տեղային: Ըստ Ո. ն-ի համախմբության՝ իրագործվում է հեռանկարային այն զոնաների, մակերեսների, տեղամասերի կանխատեսությունը, որոնք առանձնացվել են համապատասխան փուլի ու մասշտաբի երկրաբանահետախուզական աշխատանքներ կատարելու համար:

**Ռ-236. ПОИСКОВЫЕ ПРИЗНАКИ – ՈՐՈՆՈՂԱՎԱՆ ՅՍԿԱՆԻՇՆԵՐ, PROSPECTING SHOWS,**

միներալաբանական, երկրք., երկրֆ. գործոններ (անկանոնություններ), որոնք ուղղակիորեն կամ անուղղակի ցույց են տալիս որոշակի տարածքների կամ տեղամասերի սահմաններում օգտ. հնձ-ների առկայությունը: Ուղղակի Ո. հ. են բնական մերկացումներում, լեռնային փորվածքներում, հորատանցքերի հանուկում օգտ. հնձ-ների երևալուները, գետաբերուկներում, լանջային փուխր ստվածքներում, արմատական ապարներում՝ միներալների կամ քիմ. տարրերի (օր.՝ ոսկու, կասիտերիտի և անագի, կինովարի և սնդիկի) հոսքերը կամ պսակները, բարձր ուժգնության մագնիսական անկանոնությունները (կապված մագնետիտային հանքաքարերի հետ) և այլն: Անուղղակի Ո. հ. են՝ գլխավոր օգտակար բաղադրիչների միներալների ու քիմ. տարրեր – ուղեկիցների հոսքերն ու պսակները, օր.՝ ոսկու հնքվ-երի համար՝ պիրիտի, խալկոպիրիտի, գալենիտի, սֆալերիտի (պղնձի, կապարի, ցինկի, արծաթի) հոսքերն ու պսակները, անագի հնքվ-երի համար՝ շեելիթի, վոլֆրամիտի կամ կապարի, ցինկի և այլ սուլֆիդների հոսքերն ու պսակները և այլն, մետասոմատիտներով պայմանավորված երկրֆ. անկանոնությունների համար՝ սուլֆիդային հանքայնացման միներալ-ուղեկիցների պսակները, հանքավերահսկող կառուցվածքները, ապարների ֆիզ. հատկությունները և այլն):

**Ռ-237. ПОИСКОВЫЕ РАБОТЫ – ՈՐՈՆՈՂԱՎԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, PROSPECTING,**

պինդ օգտ. հնձ-ների երկրաբանահետախուզական այն աշխատանքների ինքնուրույն փուլ, որոնք նպատակաուղղված են ստվածքային օգտ. հնձ-ների հայտնի և պոտենցիալ հանքային դաշտերի ու ավազանների, ստվածքային օգտ. հնձ-ների սահմաններում պոտենցիալ հնքվ-երի տեղամասերի հայտնաբերմանը: Կատարվում են այն մակերեսներում, որոնց հեռանկարայնությունը հաստատված է ընդհանուր որոնումների գործընթացներում՝ օգտ. հնձ-ների ուղղակի որոնողական համալիր հատկանիշների առկայությամբ: Ո. ա-ի մասշտաբը որոշվում է որոնողական դիտարկումների ցանցի խտությամբ, որը կախված է օգտ. հնձ-ի տեսակից ու տարածքի երկրք. կառուցվածքի բարդությունից (1:25000-ից մինչև 1:5000, մետաղական հնքվ-երի մեծ մասի համար՝ 1:10000): Ո. ա. ներառում են երկրք. և երկրֆ. մեթոդների համալիրը՝ մակերևութային լեռնային փորվածքների անցկացմամբ և դրոնողական հորատանցքերի հորատմամբ:

**Ռ-238. ПОЙКИЛИТОВАЯ СТРУКТУРА (հուն. poikilos – տարբեր, փոփոխական) –**

**ՊՈՅԿԻԼԻՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, POIKILITIC TEXTURE,** ապարի կառուցվածք, որում մեկ միներալի խոշոր բյուրեղները ներամփոփում են այլ միներալի կամ մի-



ներալների անկանոն տեղաբաշխված բազմաթիվ մանր կլորավուն հատիկներ կամ ինքնաձև (իդիոմորֆ) բյուրեղներ:

**П-239. ПОЙМА, ЛУГОВАЯ ТЕРРАСА – ՈՂՈՂԱՅՈՒՆ (ՅԵՂԵՂԱՅՈՒՆ), ՍԱՐԳԱԳԵՏ-ՆԱՅԻՆ ԴԱՐԱՎԱՆԴ (ԴԱՐԱՏԱՓ), FLOOD-PLAIN, BOTTOMLAND OF A VALLEY, VALLEY BOTTOM, RIVER PLAIN, RIVER FLAT,** գետահովտի հատակի համեմատաբար հարթ մաս, որը ծածկված է ժամանակակից գետաբերուկով, ջրածածկվում է գետավարարման ընթացքում և բարձր է գետի ամենացածր մակարդակից (սակավաջրության ժամանակ): Հասուն գետահովտի ողողահունի վրա կարող են լինել չոր հուններ (լճեր-հնահուններ, ճահիճներ, ափային թմբեր):

**П-240. ПОЙМЕННОЕ БОЛОТО – ՈՂՈՂԱՅՈՒՆԱՅԻՆ (ՅԵՂԵՂԱՅՈՒՆԱՅԻՆ) ՃԱՅԻՃ, BACK SWAMP, FLOOD PLAIN SWAMP,** ցածրավայրային ճահճի տեսակ, որը զետեղված է հասուն գետահովտում, գլխ. կազմված է եղեգնից և սեզից:

**П-241. ПОЙМЕННОЕ ОЗЕРО – ՈՂՈՂԱՅՈՒՆԱՅԻՆ (ՅԵՂԵՂԱՅՈՒՆԱՅԻՆ) ԼԻՃ, BAYOU LAKE, CRESCENT LAKE, DEAD LAKE, MEANDER LAKE,** ջրավազան գետի ողողահունում, ունի երկարավուն, ոլորապտույտ կամ պայտածև տեսք:

**П-242. ПОЙМЕННЫЕ ОТЛОЖЕНИЯ – ՈՂՈՂԱՅՈՒՆԱՅԻՆ (ՅԵՂԵՂԱՅՈՒՆԱՅԻՆ) ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, FLOOD-PLAIN DEPOSITS,** ողողահունի գետաբերուկ նստվածքներ, որոնք ներկայացված են ավազաալերիտային և ալերիտակավային նստվածքներով: Կուտակվում են գետի հեղեղահունի վրա՝ գետավարարման ժամանակ:

**П-243. ПОКАЗАТЕЛИ ПОИСКОВЫЕ ГИДРОХИМИЧЕСКИЕ,** տե՛ս Гидрохимические поисковые критерии:

**П-244. ПОКАЗАТЕЛИ ПОИСКОВЫЕ ГИДРОХИМИЧЕСКИЕ НА НЕФТЬ И ГАЗ – ՆԱԿԹԻ (ՔԱՐՅՈՒՂԻ) ՈՒ ԳԱԶԻ ՈՐՈՆՄԱՆ ՋՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ, HYDROCHEMICAL PROSPECTING INDICES OF OIL AND GAS,** ստր. ջրերի գազային և իոնային-աղային բաղադրիչներ, որոնք ցույց են տալիս նավթի կամ գազի կուտակների հնարավոր առկայությունը: Հիմնական ցուցանիշներ են՝ 1) ածխաջրածինների բարձր պարունակությունը, 2) կենսածին ծծմբաջրածնի և ազոտի բարձր պարունակությունը, 3) իոնային-աղային ցուցանիշներ՝ ֆենոլների, նավթենատների, ջրում պարունակվող օրգանական նյութերի օքսիդացման բարձր պարունակությունը, 4) ամոնիումի, յոդի, բրոմի (փոքր քլոր-բրոմային զործակցի դեպքում), ջրասուլֆիդի բարձր պարունակությունը, 5) ջրերի սուլֆատներով թերհագեցվածությունը, 6) ջրերի գերիշխող՝ ջրակարբոնատ-քլորիդային-մատրիումային և քլոր-կալցիում-մատրիումային կազմը: Հիշյալ ցուցանիշները օգտագործվում են համակարգված ձևով:

**П-245. ПОКАЗАТЕЛИ ПОИСКОВЫЕ ГИДРОХИМИЧЕСКИЕ НА СУЛЬФИДНЫЕ РУДЫ – ՍՈՒՖԻԴԱՅԻՆ ՀԱՆՔԱՔԱՐԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ ՋՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ, HYDROCHEMICAL PROSPECTING INDICES OF SULPHIDE ORES,** ստր. ջրերի քիմ. բաղադրության տարրեր, որոնք ցույց են տալիս սուլֆիդային հանքակուտակների առկայությունը: Տարբերում են ջրաքիմ. ուղղակի ու անուղղակի ցուցանիշներ: Ուղղակի ցուցանիշներ են ջրերում զանազան մետաղական իոնների խտորիչ բարձր պարունակությունները, որոնք մատնանշում են հանքակուտակների (Mn, Zn, Cu, Pb, As, CO, Sn, Bu, Cr, Ti և այլն) արոյ. արժեքը: Անուղղակի ցուցանիշներ են ստր. ջրերի քիմ. բաղադրության հնարավոր փոփոխությունները, որոնք պայմանավորված են վերնածնային (հիպերգենեզի) զոնայում հանքանյութի վերափոխումներով՝ ջրի բարձր հանքայնացում, սուլֆատային իոնների և ուղեկից մետաղների բարձր պարունակություն, ջրի թթու ռեակցիա (pH<7):

**П-246. ПОКРОВНАЯ СТРУКТУРА – ԾԱԾԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, NAPPE STRUCTURE,** երկրբ. կառուցվածք, որը պայմանավորված է տեկտ. ծածկույթներ-

րի առկայությամբ: Ծ. կ. ունեցող լեռները կոչվում են ծածկութային տիպի լեռներ (օր.՝ Արլ. Ալպերը):

**П-247. ПОКРЫТОСЕМЕННЫЕ РАСТЕНИЯ, ЦВЕТКОВЫЕ РАСТЕНИЯ (ANGIOSPERMAE) – ԾԱԾԿԱՍԵՐՄ ԲՈՒՅՍԵՐ, ԾԱՂԿԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐ, ANGIOSPERMES, SEED PLANTS, FLOWERING PLANTS**, բույսերի դաս, որոնց համար բնորոշ է ծաղկի առկայությունը և երկակի բեղմնավորումը, որի հետևանքով առաջանում են պտղի մեջ ներփակված սերմերը: Ընդգրկում է բոլոր հայտնի բարձրակարգ բույսերի կեսից ավելին: Հանդես են եկել միջին մեզոզոյում:

**П-248. ПОКРЫШКА ЗАЛЕЖИ – ՀԱՆՔԱՎՈՒՏԱԿԻ ԾԱԾԿԱՆ, САР РОКК, ծայրահեղ ցածր թափանցելիություն ունեցող ապարների համալիր (ապար), որը ծածկում է արդյունավետ հավաքիչը (կոլեկտորը) և խոչընդոտում է հանքակուտակի քայքայմանը: Հանքակուտակի պահպանման անհրաժեշտ պայման է հավաքիչում ներառված ֆլուիդների համար հուսալի ծածկանի առկայությունը, որը պահպանում է իր մեկուսիչ հատկությունները որոշակի ջերմաճնշումային պայմաններում՝ երկարատև երկրբ. ժամանակի ընթացքում: Ապարի էկրանավորող հատկությունները պայմանավորված են նրա քարաբանական ու միներալային կազմով, ֆիզքիմ. առանձնահատկություններով, հաստությամբ և մակերեսային տարածման կայունությամբ: Ըստ տարածման՝ տարբերում են ռեզիդուալ, զոնալային և տեղային Հ. ծ-ներ, ըստ կազմի՝ կավային, էվապորիտային (աղեր, քիչ անհիդրիդ), կարբոնատային և խառն: Լավագույնը աղաբեր ստվարաշերտերն են, առավել տարածված են կավայինները:**

**П-249. ПОЛЕВЫЕ ШПАТЫ (տերմինը շվեդական ծագման է, եվրոպական լեզուներին անցել է գերմաներենից. սպաթներ անվանվում են բոլոր լավ հերձում ունեցող միներալները, «դաշտային»)՝ շվեդական սառցաբերուկային վարելահողերում բեկորների հաճախակի հանդիպելու պատճառով, որոնք առաջացել են գրանիտների քայքայումից) – ԴԱՇՏԱՅԻՆ ՍՊԱԹՆԵՐ (ԴԱՇՏԱՍՊԱԹՆԵՐ), FELDSPARS**, երկրակեղևի վերին մասի ամենատարածված ապար կազմող միներալների ընտանիք: Հիմնականում նատրիումի, կալցիումի, կալիումի և հազվադեպ՝ բարիումի կարկասային ալյումասիլիկատներ են, կազմը որոշվում է եռակի համակարգում հիմնականում հետևյալ բաղադրամասերի հարաբերությամբ՝  $\text{NaAlSi}_3\text{O}_8$ - $\text{KAlSi}_3\text{O}_8$ - $\text{CaAl}_2\text{Si}_2\text{O}_8$ , կազմում են մագմայական ապարների շուրջ 60 %-ը, առաջացնում են բյուրեղներ, հատիկավոր ագրեգատներ, հատիկային ներփակվածքներ և այլն: Բյուրեղանում են մոնոկլինային և տրիկլինային համակարգերում: Գույնը՝ սպիտակ, կարմրավուն, վարդագույն, գորշ և այլն: Կարծրությունը՝ 6, խտությունը՝ 2500-2900 կգ/մ<sup>3</sup>, հերձումը կատարյալ է երկու ուղղությամբ, փայլը՝ ապակու: Ըստ բաղադրության՝ բաժանվում են ալկալիական կալիում-նատրիումային (օրթոկլազը սանիդին և այլն), կալցիում-նատրիումային (ալազիոկլազներ) և հազվադեպ՝ բարիում-կալիումային խմբերի: Հանդիպում են մագմայական ծագման (գրանիտներ, սիենիտներ և այլն), փոխակերպային (գնեյսներ և այլն) ու նստվածքային (կոնգլոմերատներ, ավազաքարեր և այլն) ապարներում: Առկա են լուսնային ապարների ու երկնաքարերի կազմում: Դ. ս. պարունակում են արժեքավոր, հազվագյուտ և ցրված տարրեր: Օգտագործվում են որպես ճենապակու և հախճապակու հումք՝ ապակու և ցեմենտի արտադրության մեջ, որոշ տարատեսակները՝ իբրև կիսաթանկարժեք քար (ամազոնիտ, լուսնաքար): Հիմնական արդյ. կուտակները կապված են պեգմատիտների հետ, տե՛ս նաև՝ Օրտոկլազ, Санидин, Микроклин, Плагиоклазы:

**П-250. ПОЛЕЗНЫЕ ИСКОПАЕМЫЕ – ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ, MINERALS, USEFUL MINERALAS**, երկրակեղևի անօրգանական և օրգանական ծագման բնական

միներալային գոյացումներ, որոնց օգտագործումը նյութական արտադրության ոլորտում տնտեսապես շահավետ է: Ըստ ֆիզ. վիճակի՝ Օ. հ. լինում են պինդ (ածուխներ, տորֆ, մետաղական և ոչ մետաղական օգտ. հնժ-ներ), հեղուկ (նավթ, ստր. ջրեր) և գազանման (բնական այրվող և իներտ գազեր):

Օ. հ-ի ուսումնասիրության նպատակը դրանց ծագման պայմանների ու արդյ. արժեքավորության բացահայտումն է: Այն իրականացվում է դաշտային և լաբորատոր մեթոդներով: Դաշտային ուսումնասիրություններով որոշվում է Օ. հ-ի մարմինների դիրքը շերտագրական կտրվածքում, դրանց կապը հրային ապարների հետ, փոխհարաբերությունը ներփակող ապարների կազմի և երկրբ. կառուցվածքների հետ, հանքակուտակների ձևը, կազմությունը և միներալային կազմը: Դաշտային ուսումնասիրությունների հիմնական մեթոդը երկրբ. քարտեզագրումն է, 1:500-1:50000 մասշտաբի երկրբ. քարտեզների ու կտրվածքների կազմումը: Լաբորատոր ուսումնասիրությունները ներառում են Օ. հ-ի միներալային, քիմ. կազմի և ֆիզիկատեխնիկական հատկությունների հետազոտումը: Օ. հ. ձևավորվել են երկրակեղևի ողջ պատմության ընթացքում: Օ. հ-ի ձևավորման համար անհրաժեշտ նյութերը տեղափոխվում են երկրի վերին միջնապատյանից, երկրակեղևից և մակերևույթից՝ մագմայական հալույթների, հեղուկ և գազային լուծույթների միջոցով:

Օ. հ. ձևավորվել են երկրի ընդերքում՝ ներծին ու փոխակերպային գործընթացների արգասիքում, ինչպես նաև նրա մակերևույթին՝ արտածին գործընթացների շնորհիվ: Մագմայական հալույթի՝ երկրակեղևի մեջ ներդրվելու և սառչելու դեպքում առաջանում են մագմայական հնքվ-եր: Հիմքային կազմի ներժայթքվածքների հետ կապված են Cr-ի, Fe-ի, Ti-ի, Ni-ի, Cu-ի, Co-ի, պլատինային մետաղների խմբի հանքանյութեր, ալկալիական ներժայթքվածքների (ինտրուզիաների) հետ՝ P-ի, Ta-ի, Nb-ի, Zr-ի և հազվագյուտ հողերի հանքանյութեր: Գրանիտային պեգմատիտների հետ ծագումնաբանորեն կապված են փայլարների, դաշտային սպաթների, քանկարժեք քարերի, Be-ի, Si-ի, Nb-ի Ta-ի հնքվ-եր: Հպումամետատամադիական հնքվ-երում, հատկապես սկառներում, հայտնի են Fe-ի, Cu-ի, Co-ի, Pb-ի, Zn-ի, W-ի, Mo-ի, Sn-ի, Be-ի, U-ի, Au-ու հանքանյութեր, լեռնային բյուրեղապակու, գրաֆիտի կուտակումներ: Մեծ քանակությամբ Օ. հ. կան պնևմատոլիթային և ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվ-երում: Դրանց մեջ հատկապես կարևոր նշանակություն ունեն Cu-ի, Ni-ի, Co-ի, Zn-ի, Pb-ի, Bi-ի, W-ի, Sn-ի, Si-ի, Be-ի, Au-ու, Ag-ի, U-ի, Ra-ի, ինչպես նաև քվարցի, բարիտի, ֆլյուորիտի, ասբեստի հնքվ-երը: Արտածին գործընթացների դեպքում գոյացող նստվածքակուտակումային հնքվ-երը լինում են նստվածքային, ցրոնային և հողմահարման: Նստվածքային հնքվ-երը ձևավորվում են ծովերի, լճերի, գետերի և ճահիճների հատակում: Արժեքավոր միներալներ (ոսկի, պլատին, ալմաստ և այլն) պարունակող ցրոնները կուտակվում են օվկիանոսների և ծովերի առափնյա, ինչպես նաև գետային ու լճային նստվածքներում, հովիտների լանջերին: Հողմահարման հնքվ-երը կապված են հին և ժամանակակից հողմահարման կեղևի հետ, որին բնորոշ են ուրանի, պղնձի, բնածին ծծմբի ներծծանցման և նիկելի, երկաթի, մանգանի, բոքսիտների, մագնեզիտի, կաոլինի մնացորդային հնքվ-երը: Ավելի վաղ առաջացած հնքվ-երը վերափոխվում են փոխակերպածին կուտակումների (օր.՝ Կրիվոյ Ռոզի ավազանի և Կուրսկի մագնիսական անկանոնության երկաթի, Հր. Աֆրիկայի ոսկու և ուրանի հնքվ-երը), կամ էլ ապարների փոխակերպման գործընթացում առաջանում են նորերը (մարմարի, կիանիտի, գրաֆիտի հնքվ-եր): Օ. հ-ի հնքվ-երի, տվյալ տարածքի երկրբ. կառուցվածքի և երկրբ. պատմության գլխավոր գծերի, ինչպես նաև երկրբ., ջրատերկրբ. և

երկրծ. առանձնահատկությունների միջև եղած կապերի հետազոտությունը գիտական հիմք է ծառայում Օ. հ-ի որոնման ու հետախուզման համար և հնարավորություն է ընձեռում բացահայտելու հնքվ-երի տեղաբաշխման օրինաչափությունները (տե՛ս Геологическая съемка, поиски месторождений полезных ископаемых):

Աշխ. և երկրբ. տեսակետից առանձնացված խոշոր տարածքները, իրենց հարող հնքվ-երի որոշակի խմբերի հետ, կոչվում են Օ. հ-ի պրովինցիաներ (նահանգներ): Դրանք ստորաբաժանվում են հանքային մարզերի, իսկ վերջինները՝ հանքային շրջանների: Հանքային շրջանների տարածքում անջատվում են հանքային դաշտեր՝ հնքվ-երի առանձին խմբերով, որոնք միավորվում են ծագման ու երկրբ. կառուցվածքի ընդհանրությամբ: Ածխաբեր պրովինցիաների սահմաններում տարբերում են ածխային ավազաններ, շրջաններ ու հնքվ-եր, նավթագազաբեր պրովինցիաներում՝ մարզեր, շրջաններ, նավթագազակուտակման զոնաներ և նավթի, գազի կամ նավթի-գազի հնքվ-եր (տե՛ս Нефть): Ընդերքում գտնվող բոլոր Օ. հ. միասին կազմում են պետության, մայր ցամաքի կամ ամբողջ երկրագնդի հանքային ռեսուրսները (պաշարները) և հիմք են ծառայում արդյ. արտադրության կարևորագույն ճյուղերի համար: Ըստ արդյ. կիրառման բնագավառի՝ հանքային ռեսուրսները ստորաբաժանվում են՝ ա) վառելիքաէներգետիկ (նավթ, բնական գազ, ածուխ, այրվող թերթաքարեր, տորֆ, ուրանի հանքանյութեր), բ) մետաղական հումք սև և գունավոր մետալուրգիայի համար (երկաթի ու մանգանի հանքաքարեր, քրոմիտներ, պղնձի, կապար-ցինկի, նիկելի, վոլֆրամի, մոլիբդենի, անագի, ծարիրի, ազնիվ մետաղների հանքանյութեր), գ) լեռնաքիմ. հումք (ֆոսֆորիտներ, ապատիտներ, կերակրի, կալիումական, մագնեզիումական աղեր, ծծումբ և դրա միացություններ, բրոմ և յոդ պարունակող լուծույթներ), դ) բնական շինանյութեր և ոչ մետաղական Օ. հ-ի մի մեծ խումբ, ինչպես նաև զարդաքարեր, տեխ. և թանկարժեք քարեր (մարմար, գրանիտ, հասպիս, ագատ, լեռնային բյուրեղապակի, նոնաքար, կորունդ, ալմաստ) և ջրամիներալային (ստր. քաղցրահամ, հանքային և թերմալ ջրեր):

**П-251. ПОЛЗУЧЕСТЬ ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ՍՈՂՔ, CREEP OF ROCKS**, բեռնվածքի ազդեցության կամ մեխ. լարվածության տակ ապարի դանդաղ ու անընդհատ ձևախախտման ունակություն: Բեռնվածքը կամ մեխ. լարվածությունը վերացնելիս այդ ձևախախտումները կարող են լինել դարձելի (առածգակալ) և ոչ դարձելի (մնացորդային կամ պլաստիկ):

**П-252. ПОЛИ** (հուն. *polys* – շատ, բազմաթիվ) – **ԲԱԶՄԱ..., ՊՈԼԻ..., POLY...**, բարդ բառերում նշանակում է բազմաթվություն, հաճախություն:

**П-253. ПОЛИГАЛИТ** (հուն. *polys* – բազմաթիվ և *háls* – աղ) – **ՊՈԼԻՀԱԼԻՏ, POLY-HALITE**, միներալ, ջրային սուլֆատ,  $K_2MgCa_2[SO_4]_4 \cdot 2H_2O$ : Սովորաբար հանդիպում է համատարած պինդ և ձողաձև (մինչև թելավոր) ագրեգատների տեսքով: Գույնը՝ կարմիր (տարբեր երանգներով), հազվադեպ՝ անգույն, սպիտակ, մոխրագույն, փայլը՝ ապակու, մինչև ճարպային: Փուխր է: Ծագումը՝ նստվածքային, քիմիածին: Կալիումական պարարտանյութերի հումք է:

**П-254. ПОЛИГЕНЕТИЧЕСКИЕ ГОРЫ, МНОГОЦИКЛОВЫЕ ГОРЫ** (հուն. *polys* – շատ, բազմաթիվ և *genētós* – ծնված, գոյացած) – **ԲԱԶՄԱԾԻՆ (ՊՈԼԻԳԵՆ) ԼԵՆՆԵՐ, POLYGENETICAL MOUNTAINS, MULTICYCLIC MOUNTAINS**, լեռնային երկիր, որը ձևավորվել է մի քանի լեռնագոյացման դարակարգերի հետևանքով և կրում է մի քանի ցիկլերի ձևաբանական հետքեր՝ լերկացման (դենուդացիոն) համահարթման մակերևույթների բարձրացված մնացորդների տեսքով:

**П-255. ПОЛИГЕННЫЙ ВУЛКАН** (հուն. polys – շատ, բազմաթիվ և genes – ծնված, ծնվող) – **ԲԱԶՄԱԾԻՆ (ՊՈԼԻԳԵՆ) ՀՐԱՐՈՒՄ, POLYGENETIC VOLCANO**, հրաբուխ, որը գոյացել է բազմակի կրկնվող ժայթքումների հետևանքով (օր.՝ Կիլիմանջարո հրաբուխը Աֆրիկայում):

**П-256. ПОЛИМЕТАЛЛИЧЕСКИЕ РУДЫ** (հուն. polys – շատ, բազմաթիվ) – **ԲԱԶՄԱՍՏՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, COMPLEX ORES**, համալիր հանքաքարեր, որոնցում գլխավոր բաղադրիչներ հանդիսանում են կապարը և ցինկը, ուղեկիցներ՝ պղինձը, ոսկին, արծաթը, կադմիումը, երբեմն՝ բիսմութը, անագը: Որոշ Բ. հում արդյ. արժեք են ներկայացնում բարիտը, ֆլյուորիտը և ծծումբը: Գլխավոր հանքային միներալներն են՝ գալենիտը, սֆալերիտը, հաճախ առկա են պիրիտը, խալկոպիրիտը, երբեմն՝ խունացած հանքանյութերը, արսենապիրիտը և կասիտերիտը: Բ. հ-ի արդյ. հնքվ-երում արժեքավոր բաղադրիչների պարունակությունը տատանվում է մի քանիսից մինչև 10 % և ավել: Տե՛ս Свинцово-цинковые руды:

**П-257. ПОЛИМЕТАМОРФИЗМ** (հուն. polys – շատ, բազմաթիվ և մորֆոզոս – փոխակերպություն) – **ԲԱԶՄԱՓՈՒՆԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ԲԱԶՄԱՍՏՏԱՍՈՐՖՈՒԹՅՈՒՆ), POLYMETAMORPHISM**, ապարի բազմափուլ կերպափոխում, որը պայմանավորված է արդեն փոխակերպված ապարի վրա փոխակերպության գործընթացների վերադրմամբ (օր.՝ հպումափոխակերպության վրա ռեզիոնալ փոխակերպության վերազդում):

**П-258. ПОЛИМИКТОВАЯ ПОРОДА** (հուն. polys – շատ, բազմաթիվ և miktós – խառնված) – **ԽԱՈՆԱԿԱԶՍ (ՊՈԼԻՄԻԿՏԱՅԻՆ) ԱՊԱՐ, POLYMICTIC ROCK**, նստվածքային ապար, որի բեկորային նյութը բաղկացած է տարբեր ապարների (նստվածքային, հրային, փոխակերպային) բեկորներից և տարբեր կազմի միներալային հատիկներից:

**П-259. ПОЛИМОРФИЗМ** (հուն. polymorphos – բազմաձևություն) – **ԲԱԶՄԱԶԵՎՈՒԹՅՈՒՆ, POLYMORPHISM**, որոշ քիմ. տարրերի ու միացությունների ունակություն՝ գոյություն ունենալու տարբեր համաչափություն ունեցող տարատեսակ բյուրեղային ձևերում (փուլերում): Բյուրեղային փուլերը կոչվում են բազմաձև ձևափոխումներ, նշանակվում են հունական այբուբենի տառերով ( $\alpha$ ,  $\beta$  և այլն), ըստ որում,  $\alpha$  նշանը վերագրվում է ամենացածր ջերմաստիճանային տարատեսակին: Երկրակեղևում հանդիպող նյութի բազմաձև ձևափոխումներն ունեն սեփական անվանումները՝ որպես ինքնուրույն միներալային ձևեր: Օր.՝ ածխածնի բազմաձև ձևափոխումներն են ալմաստը, գրաֆիտը, լոնսդեյլիթը, չաոիտը: Յուրաքանչյուր բազմաձև ձևափոխությունը կայուն է որոշակի ջերմաստիճանի ու ճնշման մարզերում, որից դուրս այն պետք է կրի բազմաձև կերպափոխում:

**П-260. ПОЛНАЯ ВЛАГОЁМКОСТЬ ПОРОДЫ** – **ԱՊԱՐԻ ԼՐԻՎ ԽՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ, ABSOLUTE MOISTURE CAPACITY OF ROCK**, ապարում ջրի բոլոր տեսակների գումարային պարունակությունը՝ նրա դատարկությունների լրիվ հագեցվածության դեպքում: Ա. լ. խ. կարելի է արտահայտել բացարձակ չոր ապարի կշռի կամ ապարի միներալային մասնիկների (կմախքի) ծավալի հարաբերությամբ:

**П-261. ПОЛНОКРИСТАЛЛИЧЕСКАЯ СТРУКТУРА** – **ԼԻԱԲՅՈՒՐԵՂԱՅԻՆ ԿԱՈՒՑՎԱԾՔ, HOLOCRYSTALLINE TEXTURE**, հատուկ է լրիվ բյուրեղացած ապարներին, որոնք զուրկ են հրաբխային ապակուց:

**П-262. ПОЛОЖИТЕЛЬНЫЕ ФОРМЫ РЕЛЬЕФА** – **ՈՒՆԻԵՑԻ ԴՐԱԿԱՆ ԶԵՎԵՐ, POSITIVE LANDFORMS**, երկրի մակերևույթի համեմատաբար բարձրացված տեղամասեր (լեռնաշղթաներ, բլրաշարեր, ավազաթմբեր և այլն), որոնք ցամաքի տվյալ մարզի բարձրաչափական միջին մակարդակից բարձր են:

- П-263. ПОЛОСКА БЕККЕ – ԲԵՎԿԵՆԻ ՇԵՐՏԱԳԾԻԿ, BECKE LINE**, օպտիկական երևույթ, լուսավոր շերտագծիկ, որը առաջանում է մանրադիտակի տակ երկու տարբեր բեկման ցուցիչ ունեցող նյութերի կցվածքում՝ բևեռացման լույսում ուսումնասիրելիս: Մանրադիտակի տեսափողը բարձրացնելիս շերտագծիկը շարժվում է դեպի ավելի բարձր բեկման ցուցիչ ունեցող միջավայրը, իջեցնելիս՝ ընդհակառակը:
- П-264. ПОЛОСЧАТОСТЬ, ЛЕНТОЧНОСТЬ – ԶՈՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, BANDING**, ապարում նուրբ զուգահեռ զուլերի (շերտերի) հերթագայում: Զուլերը միմյանցից տարբերվում են կազմով, գույնով, կառուցվածքով, հատիկների կողմնորոշմամբ:
- П-265. ПОЛЮС МАГНИТНЫЙ – ՍԱԳՆԻՍԱԿԱՆ ԲԵՎԵՆ, MAGNETIC POLE**, կետ երկրի մակերևույթին, որտեղ մագնիսական սլաքը գետեղվում է ուղղաձիգով (մագնիսական թեքումը 90°): Տարբերում են երկրի Զյուսիսային և Զարավային Մ. բ.:
- П-266. ПОНТИЧЕСКИЙ ЯРУС, ПОНТ (հուն. Póntos – Սև ծով) – ՊՈՆՏՈՍԻ ԶԱՐԿ, ՊՈՆՏՈՍ, PONTIAN STAGE**, Աևծովակասպիական ավազանի ստորին պլիոցենի ստորին հարկ: Վերջին տարիներին Պ. հ. դիտարկվում է միայն միոցենի կազմում՝ որպես ամենավերին հարկ:
- П-267. ПОПЕРЕЧНАЯ ДОЛИНА – ԼԱՅՆԱԿԱՆ ԶՈՎԻՏ, TRANSVERSE VALLEY, CROSS-VALLEY**, գետահովիտ, որը ապարների ծալքերի տարածման գիծը հատում է ուղիղ կամ շեղ անկյան տակ: Երկայնակի պրոֆիլը սովորաբար աստիճանավոր է:
- П-268. ПОПЕРЕЧНЫЕ ТРЕЩИНЫ – ԼԱՅՆԱԿԱՆ ԾԵՂՔԵՐ, TRANSVERSE JOINTS, CROSS JOINTS**, ճեղքեր, որոնք կողմնորոշված են ապարների շերտերի տարածմանը կամ այլ տեկտ. կառուցվածքներին ուղղահայաց:
- П-269. ПОПЕРЕЧНЫЙ СБРОС – ԼԱՅՆԱԿԱՆ ՎԱՐՆԵՏՔ, TRANSVERSE FAULT, CROSS-FAULT, DIP FAULT**, վարնետք, որի տեղաշարժիչը կողմնորոշված է իր կողմից խախտված ապարների տարածմանը մոտավորապես ուղղահայաց:
- П-270. ПОПЕРЕЧНЫЙ СДВИГ – ԼԱՅՆԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺ (ԿՈՂԱՇԱՐԺ), TRANSVERSAL SHEAR FAULT, TRANSVERSE THRUST**, տեղաշարժ (կողաշարժ), որը կողմնորոշված է ապարների տարածմանը ուղղահայաց կամ մեծ անկյան տակ:
- П-271. ПОРИСТАЯ ТЕКСТУРА – ԾԱԿՈՏԿԵՆ ԿԱԶՄՎԱԾՔ, POROUS STRUCTURE**, հատուկ է այն ապարներին, որոնց դատարկությունները լցված չեն երկրորդային միներալներով (օր.՝ հրաբխային տուֆը):
- П-272. ПОРИСТОСТЬ – ԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅՈՒՆ, POROSITY**, ապարում եղած բոլոր ծակոտիների, ճեղքերի ու դատարկությունների ընդհանուր ծավալը, որն արտահայտվում է ծակոտիների ծավալի և ապարի ընդհանուր ծավալի %-ային հարաբերությամբ: Ապարի ծակոտկենությունը բնութագրվում է նաև ապարի ծակոտիների ծավալի և ապարի կմախքի ծավալի հարաբերությամբ: Այդ մեծությունը կոչվում է ծակոտկենության գործակից, որն արտահայտվում է միավորի մասերով: Ծ-յան մեծությունը կարող է արտահայտվել նաև ծակոտիներում եղած ջրի կշռի և չոր ապարի կշռի հարաբերությամբ:
- П-273. ПОРИСТОСТЬ ТРЕЩИННАЯ – ԾԵՂՔԱՅԻՆ ԾԱԿՈՏԿԵՆՈՒԹՅՈՒՆ, FISSURE POROSITY**, ճեղքերի ծավալի հարաբերությունը ապարի ընդհանուր ծավալին: Տվյալ դեպքում ճեղքերը դիտվում են որպես ծակոտկենության բաղադրամաս, իսկ Ծ. Ծ. բնութագրում է ճեղքերի տեսակարար ծավալը:
- П-274. ПОРОВЫЕ ВОДЫ – ԾԱԿՈՏԻՆԱՅԻՆ ՋՐԵՐ, PORE WATERS**, ստր. ջրեր, որոնք տեղադրված են տարբեր ծագման ապարների ծակոտիների մեջ: Ծ. ջ. գերազանցապես տարածված են փուխր բեկորային չշաղկապված նստվածքային ապարներում (կոպիճ, գլաքար, ավազ, կավավազ, կավեր և այլն), ինչպես նաև՝ հրաբխային խարամներում:

- Ս-275. ՍՕՐՈԴԱ ԱՆԻՑՈՏՐՈՊՆԱԿ (ԱՅԻՆ) ԱՊԱՐ, ANISOTROPIC ROCK,** ապար, որում ջրաթափանցելիությունը, ծակոտկենությունը, տեղախախտման ու սեղմման դիմադրողականությունը, օպտիկական և մյուս հատկությունները տարբեր ուղղություններում տարբեր են:
- Ս-276. ՍՕՐՈԴԱ ԱՓԱՆԻՏՎԱԿԱՆ (ԱՓԱՆԻՏՎԱԿԱՆ) ԱՊԱՐ, APHANITIC ROCK,** ապար, որում առանձին մասնիկները կամ միներալները անզբաղված աննշմարելի են: Տե՛ս նաև Ափանիտային կառուցվածք:
- Ս-277. ՍՕՐՈԴԱ ԲԻՕԿԼԱՏԻԿԵՍԿԱՆ (ԿԵՆՍԱՐԲԵԿՈՐԱՅԻՆ) ԱՊԱՐ, BIOCLASTIC ROCK,** օրգանածին բեկորային նստվածքային ապար: Բաղկացած է օրգանական ծագման ապարների կամ օրգանիզմների կմախքային մնացորդների բեկորներից: Հոմ. դետրիտային ապար:
- Ս-278. ՍՕՐՈԴԱ ԲԻՏՈՒՄԻՆՈՅՆԱԿ (ԲԻՏՈՒՄԱՎՈՐ, ԲԻՏՈՒՍԱԿԻՐ) ԱՊԱՐ, BITUMINOUS ROCK,** բիտումներ պարունակող նստվածքային ապար, որը մուգ գույնի է ձեռք բերում և բնորոշ հոտ է արձակում: Տարբերում են Բ. ա-ների երկու տեսակ՝ 1) բիտումով համաչափորեն հագեցված ապարներ՝ բիտումակիր կավեր, ավազաքարեր, 2) բիտումով միայն ճեղքերն ու ծակոտիները լցված ապարներ՝ բիտումակիր կրաքարեր, դոլոմիտներ:
- Ս-279. ՍՕՐՈԴԱ ՎԵՇԱԿՈՒՄԱԿԱՆ (ՎԵՇԱԿՈՒՄԱԿԱՆ) ԱՊԱՐ, ENCLOSING ROCK, COUNTRY ROCK,** տե՛ս Վեշակոմա կառուցվածք:
- Ս-280. ՍՕՐՈԴԱ ՎՈԴՈՍՈՒՄԱԿԱՆ (ՋՐԱՍՈՒՄԱԿԱՆ) ԱՊԱՐ, WATER-BEARING ROCK,** ծակոտկեն կամ ճեղքավոր ապար, որի ծակոտիները, ճեղքերը և այլ դատարկությունները լցված են ծանրահալ ջրով, որը կարելի է կորզել:
- Ս-281. ՍՕՐՈԴԱ ԳԻՍՏԱԿԱՆ (ԳԻՍՏԱԿԱՆ) ԱՊԱՐ, GYPSESSAL ROCK,** տե՛ս Գիստակալիտային կառուցվածք:
- Ս-282. ՍՕՐՈԴԱ ԳԼԻՆԻՏՎԱԿԱՆ (ԳԼԻՆԻՏՎԱԿԱՆ) ԱՊԱՐ, CLAY ROCK,** քիմիական, քիմիաբեկորային և բեկորային ծագման նստվածքային ապարներ, որոնք բնորոշվում են բազմամիներալային կազմով և բարձր դիսպերսայնությամբ (մանրությամբ): Գլխավոր ապարակազմիչ միներալներ են սիլիկատները և ալյումասիլիկատները (այսպես կոչված՝ կավային միներալները)՝ կաոլինիտը, ջրափայլարները, մոնտմորիլոնիտը, պալիգորսկիտը, քլորիտները, պիրոֆիլիտը, վերմիկուլիտը, որոնց անհատական մասնիկների չափերը փոքր են 0.001 մմ-ից (այլ տվյալներով՝ 0.005 մմ-ից): Պարունակում են բեկորային խառնուրդ (քվարց, դաշտային սպաթներ, փայլարներ և այլն): Կ. ա-ները ստորաբաժանվում են 2 խմբի՝ 1) փոխար կամ կապակցված կավեր, 2) ցեմենտացված և խտացված (մասամբ փոխակերպված)՝ արգիլիթներ, կավային թերթաքարեր, ասպիդային, ֆիլիթանման թերթաքարեր: Ռեզիլիենտ փոխակերպության դեպքում փոխարկվում են ֆիլիթների, բյուրեղային թերթաքարերի, գնեյսների, հպումային զոնաներում՝ եղջերաքարերի: Կ. ա-ները կազմում են ֆաներոզոյի նստվածքային ապարների մոտ 65 %: Արժեքավոր օգտ. հնձ-ներ են, տե՛ս նաև Глины:
- Ս-283. ՍՕՐՈԴԱ ԴԵՏՐԻՏՎԱԿԱՆ (ԴԵՏՐԻՏՎԱԿԱՆ) ԱՊԱՐ, DETRITIC ROCK,** տե՛ս Ս-277:
- Ս-284. ՍՕՐՈԴԱ ԿԻՏՎԱԿԱՆ (ԿԻՏՎԱԿԱՆ) ԱՊԱՐ, ACIDIC ROCK,** մագմայական ապար՝ սիլիկաթթվի բարձր պարունակությամբ (ավելի քան 65 %): Այդ ապարներում սիլիկաթթվի ավելցուկը անջատվում է քվարցի տեսքով, միայն որոշ արտաժայթքային ապարներում կարող է մնալ ընդհանուր զանգվածի ամորֆ մասում: Կ. ա-ներին են պատկանում գրանիտները, գրանոդիորիտները, ռիոլիթները և այլն:
- Ս-285. ՍՕՐՈԴԱ ՄՈՆՈԳԵՆԱԿ (ՄՈՆՈԳԵՆԱԿ) ԱՊԱՐ, MONOGENE ROCK,** բեկորային ապարներ (ճալաքարուտ, խառնաքար, կոպիճ, ավազ և այլն), որոնք բաղկացած

են հիմնականում մեկ ապարի կամ մեկ միներալի բեկորներից՝ այլ բեկորների աննշան խառնուրդով: Սովորաբար առաջանում են մեկ ապարից կազմված ստվարաշերտերի քայքայման ժամանակ կամ, բացի մեկ կայուն բեկորից, բեկորների մյուս բոլոր տարատեսակների ոչնչացման դեպքում:

**Ս-286. ПОРОДА НЕСОРТИРОВАННАЯ – ՉՏԵՍԱԿԱՎՈՐՎԱԾ ԱՊԱՐ, UNSORTED ROCK**, նստվածքային բեկորային ապար, որը կազմված է տարբեր չափի բեկորներից: Բեկորների կազմը և մշակվածությունը սովորաբար նույնպես տարբեր են: Առավել բնորոշ է հեղեղաբերուկ, լանջային, սառցադաշտային նստվածքներին:

**Ս-287. ПОРОДА ООЛИТОВАЯ – ՕՈԼԻԹԱՅԻՆ (ՁՎԱՔԱՐԱՅԻՆ) ԱՊԱՐ, OOLITIC ROCK**, օոլիթային կառուցվածք ունեցող նստվածքային ապար: Այդ խմբի մեջ են մտնում որոշ կարբոնատային ապարներ (օոլիթային կրաքարեր ու դոլոմիտներ), ինչպես նաև երկաթի ու մանգանի հանքաքարերի մի մասը:

**Ս-288. ПОРОДА ПЕРЕНАСЫЩЕННАЯ ВОДОЙ – ՋՐՈՎ ԳԵՐՉԱԳԵՑԱԾ ԱՊԱՐ, SUPERSATURATED ROCK**, փուխր ապար, որն իր լրիվ խոնավատարությունից ավել քանակությամբ ջուր է պարունակում: Նման դեպքերում մանրահատիկ ապարները հոսունություն են ձեռք բերում (հոսագրունտներ, ցեխաջրային հոսքեր):

**Ս-289. ПОРОДА ПОЛНОКРИСТАЛЛИЧЕСКАЯ – ԼԻԱՔՑՈՒՐԵՂ(ԱՅԻՆ) ԱՊԱՐ, HOLOCRYSTALLINE ROCK**, ապար, որը չի պարունակում ապակի: Երբեմն Լ. ա-ի բաղադրիչ մասերը տեսանելի են միայն միկրոսկոպի տակ:

**Ս-290. ПОРОДА ПУСТАЯ (БЕЗРУДНАЯ) – ԴԱՏԱՐԿ (ՅԱՆՔԱՁԵՐԾ) ԱՊԱՐ, BARREN ROCK**, ապար, որի մեջ օգտակար բաղադրիչներ չկան, կամ նրանք այնքան աննշան են, որ դրանց կորզումը առկա պայմաններում ակնհայտորեն ձեռնտու չէ:

**Ս-291. ПОРОДА РЫХЛАЯ – ՓՈՒԽՐ ԱՊԱՐ, LOOSE ROCK**, չցմնենտացած կամ թույլ ցմնենտացած, հեշտ ցրվող ապար (ճալաքարուտ, լյոս, ավազ և այլն):

**Ս-292. ПОРОДА СКАЛЬНАЯ – ԱՊԱՐԱԺԱՅԻՆ ԱՊԱՐ, HARD ROCK**, բյուրեղային կառուցվածքային կապերով ապարների խումբ, որի մեջ մտնում են հրաբխային և փոխակերպային ապարները, նստվածքային ցմնենտացած ապարները (կրաքարեր, դոլոմիտներ, կարբոնատային կամ սիլիցիումային շաղախով ավազաքարեր և այլն), ինչպես նաև ամորֆ առածգական կապերով որոշ ապարներ (կայծքարային տուֆեր և այլն): Ա. ա-ները օժտված են մեծ ամրությամբ:

**Ս-293. ПОРОДА ЯШМОВИДНАЯ – ՅԱՄՊԻՍԱՆՄԱՆ ԱՊԱՐ, JASPEROID ROCK**, սիլիցիումային ապար, որն իր արտաքին տեսքով և ֆիզքիմ. հատկություններով մոտ է հասպիսներին: Յ. ա-ները բաժանվում են 2 խմբի՝ 1) առաջնային նստվածքային ապարներ, որոնք ըստ ծագման համանման են հասպիսների որոշ տեսակներին և դրանցից տարբերվում են առավելապես գունավորմամբ (օր.՝ ֆտանիտներ), 2) երկրորդային, որոնք առաջանում են տարբեր ապարների կայծքարացման (սիլիկատացման) հետևանքով:

**Ս-294. ПОРОДЫ ТУФОГЕННО-ОСАДОЧНЫЕ – ՏՈՒՖԱԾՆԱՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐ, TUFFACEOUS-SEDIMENTARY ROCKS**, նստվածքային ապարներ՝ հրաբեկորային նյութի էական պարունակությամբ: Ըստ հրաբեկորային նյութի կազմի ու տոկոսային պարունակության՝ առանձնացնում են նստվածքատուֆածին ապարներ՝ տուֆիտներ՝ 50-90 % հրաբեկորային նյութի պարունակությամբ և տուֆածնանստվածքային ապարներ՝ 10-50 %: Տ. ա. սովորաբար ունեն շերտավորություն, երբեմն պարփակում են օրգանական մնացորդներ և նստվածքային միներալային նորառաջացումներ (ցմնենտում):

**Ս-295. ПОРФИР (հուն. porphýreos – մուգ կարմիր, ծիրանագույն) – ՊՈՐՓՅՈՒՐ (ԾԻՐԱՆԱՔԱՐ, ՊՈՐՖԻՐ), PORPHYRY**, պորֆիրային կառուցվածք ունեցող հնատիպ թթու արտավիժական ապարների ընդհանուր անվանում: Գլխավոր տարատե-



սակներն են՝ օրթոֆիլը՝ տրախիտի հնատիպ նմանակը, և քվարցային պորփյուրը՝ ռիոլիթի հնատիպ նմանակը: Պ. կոչվում են նաև ենթաաբխալ և երակային այն ապարները, որոնցում միներալ-ներփակվածքները խորասուզված են մանրաբյուրեղային գրանիտանման հիմնական զանգվածում (գրանիտ-պորֆիր): Ապարի կազմվածքը սովորաբար հոծ է կամ ֆլուիդալ, գունավորումը՝ մոխրագույն, դեղին, վարդագույն, գորշ՝ տարբեր երանգներով: Պ-ներն աչքի են ընկնում բարձր գեղազարդային հատկություններով:

**Պ-296. ПОРФИРИТ – ՊՈՐՖԻՐԻՏ, PORPHYRITE**, հնատիպ միջին և հիմքային արտաժայթքային ապարների ընդհանուր անվանում, որոնց կառուցվածքում պլագիոկլազի, եղջերախաբի կամ պիրոքսենի խոշոր անջատումները ներառված են նույն միներալներից և փոփոխված ապակուց բաղկացած ընդհանուր զանգվածում (պորֆիրային կառուցվածք): Կախված համանման նորատիպ ապարի կազմից՝ տարբերում են բազալտային Պ., անդեզիտային Պ. և այլն: Պ-ներ են կոչվում նաև ենթաաբխալ, երակային միջին ու հիմքային ապարները (օր.՝ գաբրոպորֆիրիտ, դիորիտային Պ.), որոնք ունեն պորֆիրային կառուցվածք:

**Պ-297. ПОРФИРИТОИДЫ – ՊՈՐՖԻՐԻՏՈՒԴՆԵՐ, PORPHYRITIDS**, թերթավոր ապարներ, որոնք առաջանում են դիաբազների, պորֆիրիտների և դրանց մոտիկ կազմի ապարների դինամոթերմալ փոխակերպության հետևանքով:

**Պ-298. ПОРФИРОБЛАСТИЧЕСКАЯ СТРУКТУРА – ՊՈՐՖԻՐԱԲԼԱՍՏԻԿ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, PORPHYROBLASTIC TEXTURE**, փոխակերպային ապարների անհավասարահատիկ կառուցվածք, որում միներալի զգալի մեծության անջատումները (պորֆիրաբլաստները) տեղաբաշխված են մանրահատիկ հիմնական զանգվածում, ըստ որում, բոլոր միներալները բյուրեղացել են միաժամանակ, և հատիկի մեծությունը պայմանավորված է միայն միներալի ածանուցանակությամբ:

**Պ-299. ПОРФИРОВАЯ СТРУКТУРА – ՊՈՐՖԻՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, PORPHYRITIC TEXTURE**, մազմայական (զլխ. արտաժայթքային) ապարների անհավասարաչափ հատիկավոր կառուցվածք: Բնորոշվում է նրանով, որ հիմնական ապակյա կամ միկրոլիթային զանգվածում ներփակված են միներալների խոշոր բյուրեղները՝ ներփակվածքները:

**Պ-300. ПОРФИРОВЫЕ ВЫДЕЛЕНИЯ – ՊՈՐՖԻՐԱՅԻՆ ԱՆՋԱՏՈՒՄՆԵՐ**, հոմ. Фенокристаллы:

**Պ-301. ПОРФИРОИДЫ – ՊՈՐՖԻՐՈՒԴՆԵՐ, PORPHYROIDS**, ապարներ, որոնք առաջացել են ռիոլիթային և դաջիտային պորֆիրների ու կերատոֆիրների դինամոթերմալ փոխակերպության հետևանքով: Ըստ որում՝ դրանք ձեռք են բերում թերթավոր կազմվածք, ներփակվածքները ենթարկվում են փշրման և ուժեղ փոփոխության դեպքում ընդունում են ոսպնյակածև տեսք: Վերջին հաշվով անցնում են սերիցիտային թերթաքարերի:

**Պ-302. ПОСЛЕЛЕДНИКОВАЯ ЭПОХА – ՅԵՏԱՍՈՑԱԴԱՇՏԱՅԻՆ ԴԱՐԱՎԱՐԳ, POST-GLACIAL EPOCH**, նույնն է՝ Голоцен:

**Պ-303. ПОСТОЯННЫЙ БАЗИС ЭРОЗИИ**, տե՛ս Общий базис эрозии:

**Պ-304. ПОСТСЕДИМЕНТАЦИОННЫЙ – ՅԵՏՆԱՍՎԱԾՔԱԿՈՒՄՍԱԿՈՒՄԱՅԻՆ (ՅԵՏՍԵԴԻՄԵՆՏԱՅԻՈՆ), POSTSEDIMENTATION**, գործընթացներ և երևույթներ, որոնք տեղի են ունենում նստվածքակուտակումից հետո, օր.՝ հետնստվածքակուտակումային ծալքավորություն, հետնստվածքակուտակումային շարժումներ, հետնստվածքակուտակումային բեկվածքներ:

**Պ-305. ПОСТУМНАЯ СКЛАДЧАТОСТЬ** (լատ. postumus – վերջին, վերջինը ծնված) – **ՊՈՍՏՈՒՄԱՅԻՆ ԾԱԼՔԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ, POSTHUMOUS FOLDING**, ապարների

ծալքավորություն, որը գոյանում է պոստումային (ժառանգական) շարժումների հետևանքով, նույնն է՝ Унаследованная складчатость:

**П-306. ПОСТУМНЫЕ ДВИЖЕНИЯ – ՊՈՍՏՈՒՄԱՅԻՆ ՇԱՐՇՈՒՄՆԵՐ**, տե՛ս Унаследованные движения:

**П-307. ПОТЕРИ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ – ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԿՈՐՈՒՄՆԵՐ, MINERAL LOSSES**, օգտ. հնժ-յի հաշվեկշռային պաշարների այն մասը, որը բաղկացած է երկրի ընդերքից չկորզված, արդյունահանված և թափոնակույտում տեղավորված, պահեստավորման, բարձման և տեղափոխման վայրերում թափված օգտ. հնժ-ներից: Օ. հ. կ. լինում են՝ նախագծային, նորմատիվ, պլանային և փաստացի: Տարբերում են նաև համահանքարանային և շահագործական կորուստներ:

**П-308. ПОТОК БАЗАЛЬТОВЫЙ – ԲԱԶԱԼՏԱՅԻՆ ՀՈՍՔ, BASALTIC STREAM**, քարե բազալտային լավայի զանգված, որը տարածվում է հոսքի տեսքով: Հոսքի երկարությունը, ձևը և հաստությունը որոշվում են բազալտի մածուցիկության ու հոսունության աստիճանով, ինչպես նաև տեղանքի թեքությամբ: AA լավայի հոսքերը ավելի երկար են ու բարակ: Բ. հ-ի լայնությունը տատանվում է մի քանի մ-ից մինչև 1 կմ և ավել, հաստությունը՝ մինչև 10 մ: Հովիտները և իջույթները լցնելու դեպքում լայնությունը կարող է հասնել մինչև 100 կմ-ի:

**П-309. ПОТОК КАМЕННЫЙ – ՔԱՐԱՀՈՍՔ, STONE STREAM, ROCK STREAM**, քարե մեծաքեկորների և խճի (կոյուվի) դանդաղ սողացող հոսք լեռների բուսականությունից զուրկ լանջերով՝ սառնամանիքային տեղաշարժման, սոլիֆյուկցիայի և ծանրության ուժի ազդեցության տակ:

**П-310. ПОТОК ЛАВОВЫЙ – ԼԱՎԱՅԻՆ ՀՈՍՔ, LAVA FLOW, LAVA STREAM**, մակերևութային լավայի տարածման ձև, որը բնորոշվում է զգալի երկարությամբ և համեմատաբար փոքր լայնությամբ՝ կախված լավայի մածուցիկությունից և տեղանքի թեքությունից: Թթու լավայի հոսքերը սովորաբար կարճ են (1-10 կմ) և հաստ (մինչև 25-30 մ), բազալտային լավայի հոսքերը շատ երկար են (տասնյակ կմ-եր): Լավայի շարժման բնույթը իրենից ներկայացնում է շիթային (լամինար) հոսանք:

**П-311. ПОТОК ЛАМИНАРНЫЙ – ՇԻԹԱՅԻՆ (ԼԱՄԻՆԱՐ) ՀՈՍՔ, LAMINAR FLOW**, հեղուկի համաչափ, դանդաղ հոսք, որի դեպքում հեղուկի շիթերը շարժվում են միմյանց զուգահեռ: Հոսանքի արագության մեծացման դեպքում հեղուկի շարժումն ընդունում է մրրկային բնույթ:

**П-312. ПОТОК ЛИНЕЙНЫЙ (ОДНОМЕРНЫЙ) – ԳԾԱՅԻՆ (ՄԻԱԶԱՓ) ՀՈՍՔ, LINEAR FLOW**, ծակոտկեն միջավայրում հեղուկի կամ գազի շարժում, որի դեպքում շիթերի հետագծերն իրենցից ներկայացնում են զուգահեռ ուղիղներ, ըստ որում՝ հոսքի յուրաքանչյուր հարթ կտրվածքի ցանկացած կետում ծծանցման արագությունները ոչ միայն զուգահեռ, այլև հավասար են:

**П-313. ПОТОК НАНОСОВ – ՋՐԱԲԵՐՈՒԿՆԵՐԻ (ՈՂՈՂԱԿՈՒՏԱԿՆԵՐԻ) ՀՈՍՔ, DRIFT OF DEPOSITS**, ափի երկայնքով բեկորային նյութի տեղափոխման գործընթաց, որը երկար ժամանակ պահպանում է նույն ուղղությունը: Տարբերում են հատակային և ափային Ջ. հ.: Ջ. հ-երը գործուն դեր են խաղում ափային կուտակումային ձևերի առաջացման և ափի էվոլյուցիայի գործում:

**П-314. ПОТОК ПЕМЗОВЫЙ – ՊԵՄԶԱՅԻՆ (ԶԵԶԱՔԱՐԱՅԻՆ) ՀՈՍՔ, PUMICE FLOW**, շիկացած հրաբխային նյութի հոսք, որի զգալի մասը կազմում են պեմզայի բեկորները, որոնց չափերը չեն գերազանցում հրաբխային ավազին (> 2 մմ-ից):

**П-315. ПОТОК ПЕПЛОВЫЙ – ՄՈՒՆՐԱՅԻՆ ՀՈՍՔ, ASH FLOW**, տաք գազերի և շիկա-

ցած հրաբեկորային նյութի մրրկային (տուրբուլենտ) խառնուրդ, որը հրաբխապայթումային ժայթքումից հետո արագ տեղափոխվում է հրաբխի լանջերի մակերևութով: Յուրքի պինդ նյութը սովորաբար բաղկացած է 4 մմ-ից փոքր մասնիկներից:

**Պ-316. ПОТОК ТУРБУЛЕНТНЫЙ** (լատ. turbulentus – մրրկոտ, անկանոն) – **ՍՐԿԱՅԻՆ (ՏՈՒՐԲՈՒԼԵՆՏ) ՀՈՍՔ, TURBULENT FLOW**, հեղուկի (կամ գազի) մրրկային (զալարումային) հոսք, որի դեպքում անկանոն հետագծով շարժվող մասնիկներն ու շիթերը միախառնվում ու բաժանվում են: Շիթային հոսքի համեմատությամբ Մ. հ. օժտված է կախված մասնիկներ տեղաշարժելու և տանելու մեծ ունակությամբ:

**Պ-317. ПОЧВА ИСКОПАЕМАЯ – ԲՐԱՃՈ ՀՈՂ, FOSSIL SOIL**, անցյալ երկրբ. ժամանակաշրջանների հող: Բ. հ-եր են հանդիսանում յոսերի մեջ հումուսային (բուսահողային) հորիզոնները, ածխաշերտերի տակդիր հողերը և այլն:

**Պ-318. ПОЧВЕННАЯ ВОДА – ԳԵՏՆԱՀՈՎԱՅԻՆ ՋՈՒՐ, SOIL WATER**, հողում տարբեր ձևերով պարունակված ջուր, աչքի է ընկնում շարժունակությամբ և մատչելի է բուսականությանը:

**Պ-319. ПОЧВОВЕДЕНИЕ – ՀՈՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, PEDOLOGY, SOIL SCIENCE**, գիտություն հողերի մասին, դրանց հատկությունների, առաջացման, զարգացման, աշխ. տեղաբաշխման, արդյունավետ օգտագործման եղանակների և բերրության բարձրացման մասին:

**Պ-320. ПОЯС ГИДРОХИМИЧЕСКИЙ – ՋՐԱԲԻՄԻԱԿԱՆ ԳՈՏԻ, HYDROCHEMICAL ZONE**, երկրակեղևի տեղամաս, որը բնութագրվում է ուղղաձիգ կտրվածքում ջրաքիմ. զոնաների (տարբեր հանքայնացման ստր. ջրերի) որոշակի հերթափոխությամբ և դրանով տարբերվում է հարևան տեղամասերից:

**Պ-321. ПРЕДВЕСТНИКИ ЗЕМЛЕТРЯСЕНИЯ – ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐ, FORERUNNERS OF EARTHQUAKE, PREMONITORY SYMPTOMS OF EARTHQUAKE**, մոտալուտ երկրաշարժի հատկանիշների համախմբություն: Ե. ն-ին են վերագրվում ֆորշոկերը, Երկրի մակերևութի ձևախախտումները, ապագա երկրաշարժի օջախի զոնայում երկրֆ. դաշտերի պարամետրերի, ստր. ջրերի կազմի և ռեժիմի, նյութի վիճակի ու հատկությունների փոփոխությունները և այլն, տե՛ս Землетрясения:

**Պ-322. ПРЕДГОРНАЯ РАВНИНА**, տե՛ս Подгорная равнина:

**Պ-323. ПРЕДГОРЬЯ – ՆԱԽԱԼԵՆՈՒՆԵՐ, FOOTHILLS, PIEDMONT**, լեռնային երկրների ցածրացված ծայրամասեր, որոնք բնորոշվում են բլրաշատ ռելիեֆով, իրենցից ներկայացնում են անցում լեռնային երկրից դեպի հարակից հարթավայրերը: Սովորաբար կազմված են ավելի երիտասարդ ապարներից, քան իրենք՝ լեռները, կամ դրանց քայքայման արգասիքներից:

**Պ-324. ПРЕСМЫКАЮЩИЕСЯ, РЕПТИЛИИ (Reptilia) – ՍՈՂՈՒՆՆԵՐ, REPTILES**, ողնաշարավոր կենդանիների դաս: Մարմինը ծածկված է թեփուկներով, մարմնի ջերմաստիճանը անկայուն է, արյան շրջանառությունը խառն է, բազմանում են ձվերով, բայց ջրային ձևերը [օր.՝ ձկնամողեսները (հիստիոզավրերը)] և որոշ ցամաքային ձևեր կենդանածին են, տարածված են ցամաքում, հազվադեպ՝ ջրավազաններում, գլխ. արևադարձային և մերձարևադարձային գոտիներում: Հանդես են եկել պալեոզոյի վերջում, առավելագույն ծաղկման հասել են մեզոզոյի ընթացքում: Կայնոզոյում իրենց տիրապետող դիրքը զիջել են կաթնասուններին ու թռչուններին: Ժամանակակից Ա-ի տեսակների քանակը մոտ 4000 է: Ներառում են կոկորդիլոսները, կրիաները մողեսները, օձերը, մահացած խմբերից՝ դինոզավրերը, թևավոր մողեսները և այլն:

**Պ-325. ПРЭСНЫЕ ВОДЫ – ՔԱՂՏՐԱՅԱՍ ՋՐԵՐ, FRESH WATERS**, տե՛ս Вода пресная:

**Պ-326. ПРЭСНОЕ ОЗЕРО – ՔԱՂՏՐԱՅԱՍ ԼԻՃ, FRESH-WATER LAKE**, լիճ, որի ջուրը քաղցրահամ է, այսինքն՝ ունի փոքր քանակի (մինչև 1 գր/լ) լուծված միներալային նյութ:

**Պ-327. ПРИБРЕЖНО-МОРСКИЕ ОТЛОЖЕНИЯ – ՄԵՐՁԱՓՆՅԱ ԾՈՎԱՅԻՆ ՆՍՎԱԾՔ-ՆԵՐ, COASTAL–MARINE DEPOSITS**, առաջանում են ափային գծին մոտիկ: Տերմինը օգտագործվում է լայնորեն, բայց չունի լրիվ ճշտված իմաստ: Ժայռային մերձափում այս նստվածքները բաղկացած են խոշոր բեկորներից, որոնք նեղ գոտիով ձգվում են ավազանի ափի երկայնքով: Եթե ափը մեղմաթեք է և կազմված է ալոխթոն նստվածքներից, ապա Մ. ծ. ն. դժվար է տարբերել լիթորալ նստվածքներից, այդ պատճառով հաճախ Մ. ծ. ն-ին վերագրվում են լիթորալ զոնայի նստվածքները:

**Պ-328. ПРИБРЕЖНЫЙ БЕНТОС – ՄԵՐՁԱՓՆՅԱ ԲԵՆԹՈՍ (ՉՏԱՎԱԲՆԱԿ), LITTORAL BENTHOS**, ջրային ավազանի (ծովի, լճի) մերձափնյա հատակային օրգանիզմների համախմբություն:

**Պ-329. ПРИЗМА – ՉՏԱՎԱԾԱԿՈՂՍ, ՊՐԻՉՄԱ, PRISM**, բազմանիստ, որի երկու նիստերը *n*-անկյուն բազմանկյուններ են (Յ-ի հիմքեր), իսկ մյուս (*n*) նիստերը (կողմնային նիստեր)՝ զուգահեռագծեր: Յ-ի նիստերը համընկնելի են և զուգահեռ: Յ-ները անվանում են ուղիղ, եթե նրանց կողմնային նիստերը ուղղահայաց են հիմքի հարթությանը (հակառակ դեպքում Յ. անվանում են թեք), կանոնավոր, եթե հիմքերը կանոնավոր *n*-անկյուններ են: Յ-ները պարզ բյուրեղային ձևեր են և լինում են եռանկյուն, քառանկյուն և այլն:

**Պ-330. ПРИЗМА НИКОЛЯ – ՆԻԿՈԼԻ ՉՏԱՎԱԾԱԿՈՂՍ (ՊՐԻՉՄԱ), NIKOL PRISM**, սարք, որը ծառայում է մեկ հարթությունում բևեռացված լույս ստանալու համար: Բաղկացած է թափանցիկ կալցիտի բյուրեղից, որը կողերի նկատմամբ կտրված է որոշակի անկյան տակ և այնուհետև սոսնձված է կանադական բալզամով:

**Պ-331. ПРИЗНАКИ НЕФТЕНОСТИ – ՆԱՎԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ (ՔԱՐՅՈՒՂԱԲԵՐՈՒԹՅԱՆ) ՆՇԱՆՆԵՐ, OIL INDICATIONS, OIL SHOW**, առանձնացվում են՝ 1) ուղղակի նշաններ՝ հեղուկ նավթի (քարյուղի) կամ նավթով ներծծված ապարների, պինդ բիտումների ելքեր, այրվող գազի անջատումներ, 2) կողմնակի նշաններ՝ նավթամայրական բիտումապարունակ ապարների, ստր. ջրերում բարենպաստ ջրաերկր. ցուցիչների (լուծված գազերի կամ օրգանական միացությունների, նավթաբեր թթուների, I, Br և այլ տարրերի բարձրացված պարունակության) առկայություն, ջրերի քլոր-կալցիումային և հիդրոկարբոնատ-մատրիումային տիպի բարձրացված միներալացում, սուլֆատների բացակայություն, ծծմբաջրածնի ներկայություն, ծծմբի առկայություն՝ կարբոնատային ու քիմ. նստվածքներում և այլն:

**Պ-332. ПРИЛИВЫ (И ОТЛИВЫ) – ՄԱԿՆԹԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԵՎ ՏԵՂԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ), TIDES (AND EBB-TIDES)**, երկրի ծովերի մակարդակների ու մթնոլորտային ճնշման պարբերական տատանումներ, ինչպես նաև պինդ մասի ձևախախտումներ, որոնք պայմանավորված են Լուսնի և Արեգակի ձգողականությամբ: Քանի որ երկրի տվյալ միջօրեականում Լուսինը լինում է 24 ժամ 52 րոպե պարբերությամբ, ապա այդ ժամանակամիջոցում տվյալ վայրում երկու անգամ տեղի է ունենում ծովի մակընթացություն և երկու անգամ տեղատվություն: Օվկիանոսներում, սովորաբար, ջրի մակարդակի տատանումը մեկ, իսկ ափերին՝ 2-3 մ է (առավելագույնը՝ 18 մ), ներքին ծովերում՝ մի քանի սմ: Մակընթացային ալիքների բարձրությունը կախված է նաև հատակի ու ափի ռելիեֆից: Լուսնի հարուցած տեղատվության բարձրությունը 2,2 անգամ մեծ է արեգակնայինից: Մ. և տ. դիտ-

վում է նաև Երկրի կեղևում, որի արտաքին շերտերը մինչև 25 սմ պարբերաբար բարձրանում և իջնում են:

**П-333. ПРИМАТЫ** (լատ. primatus – առաջնակարգեր, ամենակարևորներ) – **ՊՐԻՄԱՏՆԵՐ (ԱՌԱՋՆԱԿԱՐԳԵՐ), PRIMATES**, կիսակապիկների և կապիկների ընդհանուր անվանում, պրիմատների կարգին պատկանում է նաև մարդը: Պալեոցեն – այժմ:

**П-334. ПРИТОК – ՎՏԱԿ, CONFLUENT, TRIBUTARY**, ջրհոսք, որը թափվում է ավելի խոշոր ջրհոսքի կամ լճի մեջ:

**П-335. ПРОБА** (գերմ. Probe, լատ. proba-ից – փորձարկում են, գնահատում են) – **ՆՍՈՒՇ, SAMPLE**, 1) տարրալուծումների և փորձարկումների համար նախատեսված նյութ, որը սահմանված կանոններով վերցվում է հետազոտվող օբյեկտից, 2) մաքուր մետաղի պարունակությունը բնածին ոսկու և արծաթի կամ դրանցից պատրաստված իրերի մեջ:

**П-336. ПРОБА БОРОЗДОВАЯ – ԱՎՈՍԱՅԻՆ ՆՍՈՒՇ, TRENCH SAMPLE**, ցանցի նյութը վերցվում է ակոսով, որը սովորաբար գետեղված է հանքակուտակի հաստության ուղղությամբ:

**П-337. ПРОБЛЕМАТИЧЕСКИЕ ОСТАТКИ – ԵՆԹԱԴՐԱԿԱՆ (ՊՐՈՔԼԵՄԱՏԻԿ) ՄԱՑՈՐԴՆԵՐ, PROBLEMATICAL REMAINS, PROBLEMATICS**, օրգանիզմների բրածո մնացորդներ, որոնց ճշգրիտ պատկանելությունը բույսերի ու կենդանիների համապատասխան խմբերին որոշակի չէ, հայտնի են գլխ. մինչքեմբրիի ապարների մեջ:

**П-338. ПРОГИБ НЕКОМПЕНСИРОВАННЫЙ – ԶՓՈՆՉԱՏՈՒՑՎԱԾ ԵԿՎԱԾՔ, NON-COMPENSATED DEPRESSION**, երկրակեղևի տեղամաս, որտեղ ճկումը զգալի չափով գերազանցում է նստվածքակուտակման արագությանը:

**П-339. ПРОГИБ ПЕРИКРАТОННЫЙ – ՊԵՐԻԿՐԱՏՈՆԱՅԻՆ ԵԿՎԱԾՔ, PERICRATONAL DEPRESSION**, պլատֆորմների եզրերում գոյացած իջեցումների զոնաներ, որոնք դեպի ծալքավոր լեռնային մարզերը անցնում են առաջնային (եզրային, նախալեռնային) ճկվածքներին: Սովորաբար ունեն անհամաչափ կազմվածք (պլատֆորմային կողը լայն մեղմաթեք է, իսկ հակադիր կողը՝ ավելի նեղ, զառիթափ, ուժգին ձևախախտված):

**П-340. ПРОГИБЫ ОРОГЕННЫЕ – ԼԵՈՆԱԳՈՅԱՑՄԱՆ (ՕՐՈԳԵՆ) ԵԿՎԱԾՔՆԵՐ, OROGENIC DEPRESSION**, ձևավորվում են լեռնագոյացման մարզերի կազմում, ինչպես ծալքավոր մարզերի զարգացման ուշ և հետշրջման փուլերում, այնպես էլ՝ պլատֆորմների տեկտ. ակտիվացման դարակարգերում: Լ. ճ-ի մեջ առանձնացվում են միջլեռնային և ծայրամասային ճկվածքներ, տե՛ս Межгорные прогибы, Впадины орогенные:

**П-341. ПРОГНОЗНЫЕ КАРТЫ (ГЕОЛОГИЧЕСКИЕ)** (հուն. prógnōsis – կանխատեսում, կանխագուշակում) – **ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԱՅԻՆ ՔԱՐՏԵՉՆԵՐ (ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ), FORECAST MAPS**, քարտեզներ, որոնք կազմված են այն մակերեսների բացահայտման ու պատկերման համար, որոնք հեռանկարային են օգտ. հնժ-ների նոր հնքվ-երի և հանքակուտակների հայտնաբերման համար: Կ. ք-ի նախապատրաստման համար, որպես կանոն, օգտագործվում են մետաղագոյացման քարտեզներ՝ տեղագրական հանույթի հիմքի վրա: Կ. ք-ի ամենատարածված մասշտաբներն են՝ 1:200000-ից մինչև 1:10000: Կ. ք-ի վրա առանձնացվում են հայտնի հնքվ-երը, նոր հնքվ-երի հայտնաբերման համար հեռանկարային և ոչ հեռանկարային տարածքները: Հեռանկարային տարածքները ստորաբաժանվում են մի քանի կարգերի՝ առավել հեռանկարային, հեռանկարային ու թույլ հեռանկարային: Կ. ք-ի կազմման ժամանակ նշվում են մակերեսներ՝ Երկրի մակերևութային

օգտ. հնժ-ների նոր հնքվ-երի որոնման համար և մակերեսներ՝ խորքում տեղադրված և մակերևույթում ելքեր չունեցող հնքվ-երի հայտնաբերման համար:

**П-342. ПРОДОЛЬНАЯ ДОЛИНА – ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ՀՈՎԻՏ, STRIKE VALLEY, LONGITUDINAL VALLEY**, գետահովիտ, որը ձգված է ծալքերի առանցքների ուղղությամբ, կարող է լինել գոգածալքային, միաթեքվածքային, կամարածալքային:

**П-343. ПРОДОЛЬНЫЕ ТРЕЩИНЫ – ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ԾԵՂՔԵՐ, LONGITUDINAL JOINTS**, ճեղքեր, որոնք կողմնորոշված են ապարների տարածմանը զուգահեռ:

**П-344. ПРОДОЛЬНЫЙ СБРОС – ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ՎԱՐՆԵՏՔ, STRIKE FAULT, LONGITUDINAL FAULT**, վարնետք, որի տեղաշարժիչը մոտավորապես զուգահեռ է նրա կողմից խախտված ապարների տարածմանը:

**П-345. ПРОЛЮВИАЛЬНО-АЛЛЮВИАЛЬНЫЙ ШЛЕЙФ – ՀԵՂԵՂԱԲԵՐՈՒԿ-ԳԵՏԱԲԵՐՈՒԿ ՆՍՏՎԱԾՔԱՓԵՇ, AGGRADATION PLAIN, APRON**, ժամանակավոր և մշտական ջրհոսքերի արտահոսային կոների միաձուլման շերտ, որը լեռների ստորոտներում առաջացնում է թեքավուն հարթավայր:

**П-346. ПРОЛЮВИЙ, ПРОЛЮВИАЛЬНЫЕ ОТЛОЖЕНИЯ** (լատ. proluvium – ողողելով դուրս տարված նյութեր, proluo-ից – հոսանքով տանում են, լվանում են) – **ՀԵՂԵՂԱԲԵՐՈՒԿ (ՊՐՈՆՅՈՒԿԻ), ՀԵՂԵՂԱԲԵՐՈՒԿԱՅԻՆ (ՊՐՈՆՅՈՒԿԻԱԼ) ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, PROLUVIUM, PROLUVIAL DEPOSITS**, փուխր գոյացումներ, իրենցից ներկայացնում են ապարների քայքայման արգասիքներ, որոնք ժամանակավոր ջրային հոսանքներով դուրս են բերվել դեպի բարձրությունների ստորոտները: Առաջացնում են արտահոսային կոներ և դրանց միաձուլումից գոյացած հեղեղաբերուկ նստվածքափեշեր: Կոների գազաթներից դեպի ստորոտներ բեկորային նյութի մեխ. կազմը փոփոխվում է ավազակավային ցեմենտով ճալաքարից ու խճից (ֆանգլոներատներ) մինչև ավելի նուրբ ու տեսակավորված նստվածքները, հաճախ՝ յոսանման: Հ. ն. առավել լրիվ զարգացած են նախալեռնային և կիսաչոր ու չոր մարզերում, որտեղ մարզի ծայրամասերում երբեմն կուտակվում են ալկրիտակավային, հաճախ գիպսացված ու աղայնացված նստվածքներ: Երբեմն Հ. ն-ին վերագրվում են նաև ցամաքային (չորացած) դելտաների նստվածքները: Տերմինը առաջարկել է Ա. Պ. Պավլովը 1914-ին: Հ-ների հետ կապված են ցրոնային հնքվ-երի որոշ տիպեր, ինչպես նաև՝ բազմաթիվ շինարարական նյութեր:

**П-347. ПРОМИЛЛЕ** (լատ. pro – մաս, mille – հազար) – **ՊՐՈՄԻԼԵ, PRO MIL**, չափման հարաբերական միավոր, որը համապատասխանում է որևէ մեծության հազարերորդ մասին կամ տոկոսի տասներորդ մասին: Պ. նշվում է ‰:

**П-348. ПРОМЫШЛЕННАЯ ВОДА – ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՋՈՒՐ, INDUSTRIAL WATER**, լուծված վիճակում այնպիսի քանակությամբ օգտակար բաղադրամասեր ու նրանց միացություններ պարունակող բնական ջուր, որը կարող է հանդիսանալ արդյ. հումք նրանց կորզման համար: Ա. ջ-երում առավել շատ տարածված են յուղը, բրոմը, կերակրի աղը, ինչպես նաև բորի, լիթիումի, ռութիլիումի, ուրանի, ռադիումի և այլ միացություններ:

**П-349. ПРОНИЦАЕМОСТЬ ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ԹԱՓԱՆՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ, PERMEABILITY OF ROCKS**, ապարների՝ հեղուկներ և գազեր իրենց միջով բաց թողնելու ունակություն: Այն կախված է ապարների արդյունավետ ծակտկենությունից, հեղուկների ու գազերի ճնշումից և հեղուկների մածուցիկությունից: Ըստ թափանցելիության աստիճանի՝ տարբերում են թափանցելի, կիսաթափանց և անթափանց ապարներ: Ա. թ. հանդիսանում է ջրատար ու նավթագազատար շերտերի արդյունավետության կարևոր ցուցանիշ: Տարբերում են բացարձակ, արդյունավետ և հարաբերական թափանցելիություն:

**П-350. ПРОПИЛИТ** (հուն. própylon – նախամուտք, նախադուռ) – **ՊՐՈՊԻԼԻՏ, PROPYLITE**, կանաչ գույնի մետասոմատիկական ապար՝ հոծ կազմվածքով: Բաղկացած է քլորիտից, ալբիտից, կալցիտից, պիրիտից և քվարցից: Ակցեսորային միներալներ են ռուտիլը, սֆենը, ապատիտը: Պ-ի առաջացման գործընթացը կոչվում է պրոպիլիտացում (տե՛ս Пропилитизация): Պ. հանդիպում է տարբեր երկրատեսկո. զոնաներում, բայց առավել տարածված են լեռնագոյացման Պ-ները, որոնք կապված են անդեզիտադիորիտային ֆորմացիայի հետ: Պ-ները հարում են խզվածքային խախտումների զոնաներին և ենթահրաբխային մարմինների կուտակումներին: Պ-ների հետ կապված են բազմամետաղական հանքանյութերի, ոսկու և արծաթի հնքվ-եր:

**П-351. ПРОПИЛИТИЗАЦИЯ – ՊՐՈՊԻԼԻՏԱՑՈՒՄ, PROPYLITIZATION**, փոքր ու միջին խորություններում հրաբխային ստվարաշերտերում ապարների մետասոմատիկական փոխարկման գործընթաց: Պ-ման ընթացքում դաշտային սպաթները փոխարինվում են ալբիտով, ադուլարով, զուևավոր միներալները՝ քլորիտով, էպիդոտով, կալցիտով: Ծագումնաբանորեն կապված է ոսկու, արծաթի, պղնձի, կապարի, ցինկի, մոլիբդենի և այլ հանքանյութերի ձևավորման հետ:

**П-352. ПРОСАДОЧНОСТЬ ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ՆՍՍՎԱԾՈՒԹՅՈՒՆ (ՆՍՍՎԱՆ ՈՒՆԱՎՈՒԹՅՈՒՆ), SUBSIDENCE CAPACITY OF ROCKS**, խոնավացման հետևանքով ապարների ծավալի փոքրացում (նստում): Ա. ն. բնորոշ է լյուսերին և լյուսանման ավազակավերին, որոնք հանդիսանում են մանրածակտկեն ապարներ:

**П-353. ПРОСЛОЙ – ՆՐԱՇԵՐՏ, INTERLAYER, INTERBED, PARTING BAND**, ապարի բարակ շերտ, որն ունի ստորադաս նշանակություն և ներառված է այլ գույնի կամ կազմի ավելի հաստ շերտերի միջև, նույնն է՝ Пропласток:

**П-354. ПРОСТЕЙШИЕ** (Protozoa) (հուն. prótos – առաջին, նախնական և zōē – կյանք) – **ՆԱԽԱԿԵՆՊԱՆԻՆԵՐ (ԱՄԵՆԱՊԱՐՁ ԿԵՆՊԱՆԻՆԵՐ), PROTOZOAN**, անողնաշարավոր կենդանիների պարզագույն տիպ: Մոտ 30 հազար տեսակ: Ն-ի մարմինը կազմված է մեկ բջջից, որը հանդիսանում է ամբողջական օրգանիզմ և ունակ է վարելու ինքնուրույն ապրելակերպ: Կան գաղութային ձևեր: Առանձնացվում են 4 դաս՝ սարկոֆիներ, մտրակաթելիկավորներ, սպորավորներ և ինֆուզորիաներ: Որոշ խմբեր ունեն կայծքարային կմախք (ռադիոլարիաներ) կամ կրային խեցի (ֆորամինիֆերներ), որոնք առաջացնում են օվկիանոսների հատակի նստվածքներ: Ազատ շարժվող ձևերը լայնորեն տարածված են ծովերում, ներքին ջրավազաններում և հողում: Մինչքենթրից–այժմ:

**П-355. ПРОСТИРАНИЕ – ՏՐԱԾՈՒՄ, STRIKE**, մակերևութում շերտի (երակի, խզվածքի հարթության, ճեղքի և այլն) հորիզոնական գծի ուղղություն, որը որոշված է լեռնային կողմնացույցով՝ միջօրեականի նկատմամբ: Անկման հետ միասին S. կազմում է երկրբ. մարմինների և կառուցվածքային մակերևութների տեղադրման տարրերը:

**П-356. ПРОТЕРОЗОЙ** (հուն. próteros – ավելի վաղ և zōē – կյանք) – **ՊՐՈՏԵՐՈՉՈՅ, PROTEROZOIC**, մինչքենթրիի երկու խոշորագույն ստորաբաժանումներից վերինը: Տերմինը առաջարկել է ամերիկացի երկրաբան Է. Էմոնսը 1888-ին, նշանակելու համար այն նստվածքները, որոնք տեղադրված են արխեյի և քենթրիի միջև: Պ. հասկացվում է որպես էոնոտեմա (էոն) կամ ընդհանուր շերտագրական սանդղակի ավելի խոշոր (ոչ ընդհանուր ընդունված) ստորաբաժանում: Կախված մինչքենթրիի մասնատման ընդունված կոնցեպցիայից՝ Պ. ընդունվում է որպես նստվածքների համալիր՝ սահմանափակված իզոքրոն սահմաններով (ժամանակաշերտագրական կոնցեպցիա, ընդունված է ԽՍՀՄ-ում, ՉԺՀ-ում և Հնդկաստանում) և կամ երկրբ. ժամանակահատված (ժամանակաչափական կոնցեպցիա, որը հան-

րաճանաչ է մյուս երկրներում): Պ-ի ընդհանուր ընդունված մասնատում գոյություն չունի: Տարբեր երկրներում օգտագործվում են երկանդամ կամ եռանդամ բաժանում: Մինչքեմբրիի շերտագրության միջազգային ենթահանձնաժողովը հանձնարարում է ժամանակաշափական սանդղակում առանձնացնել վաղ (2500-1600 մլն. տ.), միջին (1600-900 մլն. տ.) և ուշ (900-550 մլն. տ.) Պ.: Նախկին ԽՍՀՄ-ի մինչքեմբրիի սանդղակում (1977) ընդունված է երկանդամ բաժանումը՝ ստորին և վերին Պ., վերջինը մասնատվում է ռիֆեյի ու վենդի, Պ-ի ստորին սահմանը ընդունված է 2600±100 մլն. տ., ստորին ու վերին Պ-ի սահմանը՝ 1650±50 մլն. տ.: Պ-ի օրգանական մնացորդների մեջ լայն տարածված են բակտերիաների, ջրիմուռների կայծքարային մնացորդներ, դրանց կենսագործունեության արգասիքներ (ստրոմատոլիթներ), վենդում՝ անկմախք կենդանիների դրոշմահետքեր:

**Պ-357. ПРОТО...** (հուն. *prótos* – առաջին, նախնական) – **ՆԱԽԱ... , ПРОТО...**, բարդ բառերի նախածանց, որը ցույց է տալիս առաջնային լինելը:

**Պ-358. ПРОТОГЕЙ** (հուն. *prótos* – առաջին, նախնական և *gē* – երկիր) – **ՊՐՈՏՈԳԵՅ, PROTOGAIKUM**, երկրի զարգացման առաջին խոշոր էտապ, որն ընդգրկում է մինչռիֆեյան ժամանակահատվածը:

**Պ-359. ПРОТОГЕОСИНКЛИНАЛЬ** (հուն. *prótos* – առաջին, նախնական և երկրասինկլինալ) – **ՆԱԽԱԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԼ (ՆԱԽԱԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԼ), PROTOGEO-SYNCLINE**, 1) հնագույն երկրասինկլինալային ճկվածքներ, որոնք գոյացել են նուկլեարային (միջուկային) էտապից անմիջապես հետո, դեռևս չկայունացած բազալտ-անդեզիտային կեղևի վրա: Ն-երն ունեցել են խիստ մեծ չափեր, բնորոշվել են նստվածքակուտակների ֆացիալ կայունությամբ, համեմատաբար պարզ ծալքավորությամբ: 2) Առաջնային (3000-2500 մլն. տարուց երիտասարդ) երկրասինկլինալային կառուցվածքներ, որոնք մասնատել են նախապլատֆորմները:

**Պ-360. ПРОТОПЛАТФОРМА** (հուն. *prótos* – առաջին և պլատֆորմ) – **ՆԱԽԱՊԼԱՏՖՈՐՄ, PROTOPLATFÖRM**, պլատֆորմային տիպի հնագույն կառուցվածքներ, որոնք առաջացել են արխեյան ծալքավոր զոնաների տեղում, դրանց երկրասինկլինալային (նախաերկրասինկլինալային) զարգացումից հետո:

**Պ-361. ПРОТРУЗИЯ** – **ՊՐՈՏՐՈՒԶԻԱ, PROTRUSION**, առաջնային ներժայթքվածքային (ինտրուզիվ) զանգվածների (առավելապես գաբրո-պերիդոտիտային) սառը վիճակում ներդրման ձևերը վերին շերտերի մեջ:

**Պ-362. ПРОЧНОСТЬ ГОРНОЙ ПОРОДЫ** – **ԱՊԱՐԻ ԱՍՐՈՒԹՅՈՒՆ, ROCK STRENGHT**, արտաքին լարումներին ապարների ցուցաբերած դիմադրության ունակություն: Տարբերում են ապարների սեղմման, ծզման, ծռման, ջարդոտման, հարվածի տակ քայքայման և այլ ամրություններ:

**Պ-363. ПРУСТИТ** (ֆրանս. քիմիկոս Ժ. Պրուստի, 1754-1826, անունով) – **ՊՐՈՒՄՏԻՏ, PROUSTITE**, միներալ, արծաթի սուլֆասեսնիդ,  $Ag_3AsS_3$ , պարունակում է 65.42 % Ag: As-ը կարող է նմանաձևորեն փոխարինվել Sb-ով: Բյուրեղագիտական համակարգը տրիգոնային է: Առաջացնում է հատիկավոր ագրեգատներ, բյուրեղներ: Գույնը՝ կինովարի կարմիր, կարծրությունը՝ 2-2.5: Հանդիպում է ցածրաջերմաստիճանային ջրաջերմային (հիդրոթերմալ) արծաթ-բազմամետաղական հնքվերում՝ կալցիտային երակներում: Վերնածնային Պ. առաջանում է արծաթի հնքվերի օքսիդացման դեպքում՝ երկրորդային սուլֆիդային հարստացման զոնայում: Արծաթի հանքանյութերի կարևոր բաղադրամաս է:

**Պ-364. ПРЯМАЯ СКЛАДКА, СИММЕТРИЧНАЯ СКЛАДКА** – **ՈՒՂԻՂ ԾԱԼՔ, ՀԱՄԱՉԱՓ ԾԱԼՔ, UPRIGHT FOLD**, ապարների շերտերի ծալք, որի առանցքային հարթությունը մոտ է ուղղաձիգին, իսկ թևերն ունեն մոտավորապես հավասար թեքություն:



- П-365. ПСАММИТЫ** (հուն. psammitēs – ավազային, psámmos-ից – ավազ) – **ՓՍՍՍՄԻՏՆԵՐ (ԱՎԱԶԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐ), PSAMMITES**, ապարներ, որոնք 50% և ավել կազմված են միներալների հատիկներից ու ապարների բեկորներից՝ 0.1-ից մինչև 1 մմ (կամ 0.05-ից մինչև 2 մմ) չափերով: Փ-ի փուխը տարատեսակները կոչվում են ավազներ, ցեմենտացածները՝ ավազաքարեր՝ Փ-ի մեջ առանձնացնում են մի-ամիներալային (առավել հաճախ՝ քվարցային), սակավախառն (օլիգոմիկտային) (քվարց-դաշտասպաթային և այլն) և խառնակազմ (պոլիմիկտային) (արկոզներ, գրաուվակներ) ապարներ: Փ. առաջանում են գլխ. ապարների ֆիզ. հողմահարման, հետագա տեղափոխման ու նստեցման արգասիքում: Փ. կամ իրենք են օգտ. հնժ-ներ (շինարարական նյութեր) կամ ներփակում են մավթի, գազի կուտակներ, հազվադեպ՝ ցրոնային հնքվ-եր (ալմաստի, ոսկու, արծաթի, պլատինի և այլ օգտ. հնժ-ների), տե՛ս նաև՝ Пески, Песчаники:
- П-366. ПСАММИТОВАЯ СТРУКТУРА, ПЕСЧАНАЯ СТРУКТУРА – ՓՍՍՄԻՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ԱՎԱԶԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, PSAMMITIC TEXTURE**, բեկորային ապարների կառուցվածք՝ հատիկների 0.1-ից մինչև 1 մմ (կամ 0.05-ից մինչև 2 մմ) չափերով:
- П-367. ПСЕВДОВУЛКАНИЧЕСКОЕ ИЗВЕРЖЕНИЕ** (հուն. pséudos – կեղծ) – **ԿԵՂԾՐԱԲԽԱՅԻՆ ՃԱՅԹՔՈՒՄ, PSEUDOVOLCANIC ERUPTION**, ցեխային հրաբխի ժայթքում, որն արտաքինից հիշեցնում է սովորական հրաբխային ժայթքում:
- П-368. ПСЕВДОЛЕЙЦИТ** (հուն. pséudos – կեղծ և лейцит) – **ՊՍԵՎՂՈՆԵՅՅԻՏ (ԿԵՂԾ ԼԵՅՅԻՏ), PSEUDOLEUCITE**, օրթոկլազի (կամ սանիդինի) և մատրիոնմային ֆելդսպաթոիդների խառնուրդի պսևդոմորֆոզը ըստ լեյցիտի:
- П-369. ПСЕВДОМОРФОЗЫ** (հուն. pséudos – կեղծ և morphé – տեսք, ձև) – **ՊՍԵՎՂՈՍՈՐՖՈՉՆԵՐ (ԿԵՂԾ ՉԵՎԵՐ), PSEUDOMORPHS**, միներալային գոյացություններ, որոնց արտաքին ձևը չի համապատասխանում իրենց կազմին ու ներքին կազմությանը: Պ-ին են վերագրվում ոչ միայն կանոնավոր բյուրեղային ձև ունեցող միներալային մարմինները, այլև ապարի ցանկացած հատիկները, որոնք փոխարինվել են նորագոյացուկ միներալներով, ինչպես նաև ֆոսիլացված օրգանական մնացորդները՝ կենսամորֆոզները (օր.՝ քարացած ծառերը): Ըստ գոյացման մեխանիզմի՝ առանձնացնում են Պ-ի երեք գլխավոր տեսակներ. լցման պսևդոմորֆոզներ՝ առաջանում են նախկինում գոյություն ունեցած և հետագայում տարրալուծման ենթարկված միներալների խոռոչների լցման ճանապարհով, փոխարինման պսևդոմորֆոզներ՝ առաջանում են նախկինում գոյություն ունեցած միներալների քիմ. փոխարինման ճանապարհով՝ պահպանելով նրանց արտաքին ձևը, և փոխարկման պսևդոմորֆոզներ, երբ նախամիներալի քիմ. բաղադրությունը մնում է կայուն, և փոփոխվում է միայն նրա բյուրեղային կազմությունը:
- П-370. ПСЕФИТЫ** (հուն. pséphos – մանրաքար, ճալաքար) – **ՓՍԵՖԻՏՆԵՐ, PSEPHITES**, կոպտաբեկոր ապար, որը բաղկացած է խոշոր (ոչ փոքր 1 մմ-ից) բեկորներից: Փ. կազմող բեկորները կարող են լինել մշակված (գլաքար, ճալաքար, կոպճաքար) և չմշակված (խիճ, մեծաբեկոր): Փ-ի մեջ առանձնացնում են փուխը (ճալաքարուտ, կոպիճ) և ցեմենտացած [խառնաքար (կոնգլոմերատ), կոպճաքար, փշրաքար (բրեկչիա)], տե՛ս նաև՝ Обломочные горные породы:
- П-371. ПСЕФИТОВАЯ СТРУКТУРА, ГРУБООБЛОМОЧНАЯ СТРУКТУРА, КРУПНООБЛОМОЧНАЯ СТРУКТУРА – ՓՍԵՖԻՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ԿՈՊՍԱԲԵԿՈՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ԽՈՇՈՐԱԲԵԿՈՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, PSEPHITIC STRUCTURE, PSEPHITIC TEXTURE, RUDACEOUS TEXTURE**, ընդհանուր տերմին բոլոր խոշորաբեկոր ապարների (փշրաքարեր, խառնաքարեր, ճալաքարուտ և այլն) համար, որոնց բեկորների չափերը մեծ են 1 մմ-ից:

- П-372. ПСИЛОМЕЛАН** (հուն. psilós – մերկ, հարթ և mélas, սեռ. հ. mélanos – սև) – **ՓՍԻԼՈՍԵԼԱՆ, PSILOMELANE**, միներալ, մանգանի բարդ հիդրօքսիդ, կազմը փոփոխական է: Բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է: Սովորաբար առաջացնում է հոծ մանրա- և գաղտնաբյուրեղային ու մակահոսուկային ագրեգատներ, շթաքարեր, կեղևիկներ, օոլիթներ, փոշենման և հողանման զանգվածներ, թաղանթային դենդրիտներ: Գույնը՝ մոխրավուն-սև, կարծրությունը՝ 5-6: Թթուներում դյուրալույծ է: Ծագումը վերնածին է և նստվածքային: Մանգանի հանքանյութ է:
- П-373. ПСИЛОФИТЫ** (Psilopside) – **ՓՍԻԼՈՖԻՏՆԵՐ, PSILOPHYTES**, բարձրակարգ բույսերի հնագույն տիպ: Ունեցել են խոտաբույսերի տեսք, անտերև ցողուն, կողային արմատներ չեն եղել: Համարվում են մյուս բարձրակարգ բույսերի նախահայրերը: Գոյություն են ունեցել սիլուրի վերջում – դևոնում: Աճել են խոնավ և ճահճապատ վայրերում, ծանծաղուտների ափամերձ մասերում:
- П-374. ПТЕРОЗАВРЫ**, տե՛ս Крылатые ящеры:
- П-375. ПТЕРОПОДОВЫЙ ИЛ** – **ՊՏԵՐՈՊՊՈՎԱՅԻՆ ՏԻՂՍ, PTEROPOD OOZE**, պելագիկ կարբոնատային նստվածք, որը հարստացված է թևոտանի փափկամարմինների խեցիկներով: Տարածված է Ատլանտյան, Հնդկական և Խաղաղ օվկիանոսների արևադարձային շրջաններում, Միջերկրական և Կարմիր ծովերում՝ 700-ից մինչև 3500 մ խորություններում:
- П-376. ПТИЦЫ** (Aves) – **ԹՈՉՈՒՆՆԵՐ, BIRDS**, ողնաշարավոր կենդանիների դաս: Մոտավորապես 8.6 հազ. տեսակ: Հիմնականում թռչող կենդանիներ են, որոշ տեսակներ կորցրել են թռչելու ունակությունը: Մարմնի ջերմաստիճանը կայուն է: Տարածված են ամբողջ երկրագնդում: Ուշ Յուրա – այժմ:
- П-377. ПУСТЫНЯ** – **ԱՆԱՊԱՍ, DESERT**, լանդշաֆտի (բնապատկերի) տեսակ, որը ձևավորվել է ցամաքային բույսերի զարգացման համար անբարենպաստ պայմաններում՝ խոնավության պակասության (չոր անապատներ), ջերմաստիճանի պակասության (սառը անապատներ): Ռելիեֆը լեռնային, մանրաբլրային ձևերի բարդ զուգակցություն է: Լայն տարածված են ռելիեֆի էոլյան (հողմային) ձևերը: Ա-ի տարածքի մեծ մասը հոսքագուրկ է, երբեմն դրանց հատում են տարանցիկ գետերը, շատ են չորացած լճերը: Հողերը թույլ են զարգացած: Ըստ հիմքի բնույթի՝ տարբերում են քարային, ավազային, կավային, աղուտային Ա-ներ: Գերակշռում են չորասեր, կիսաթփուտային և կարճակյանք բույսերը: Ա-ները տեղաբաշխված են արևադարձային, մերձարևադարձային, բարեխառն գոտիներում, ինչպես նաև Արկտիկայում և Անտարկտիդայում:
- П-378. ПЫЛЬЦА** (Pollen) – **ԾԱՂԿԱՓՈՇԻ, POLLEN**, միաբջիջ, հազվադեպ բազմաբջիջ գոյացումներ (ծաղկափոշային հատիկներ), որոնք զարգանում են սերմնավոր բույսերի փոշանոթներում և մասնակցում են բազմացման գործընթացին: Բրածո ծաղկափոշու ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի դրանց ներփակող ապարների հասակի որոշման, ինչպես նաև բույսերի ֆիլոգենիայի, ֆլորայի պատմության համար:
- П-379. ПЬЕЗОКВАРЦ** – **ՊԻԵՉՈՔՎԱՐՑ, PIEZOQUARTZ**, քվարցի անգույն կամ գունավորված բյուրեղներ, դրանց բեկորներ ու ճալաքարեր, որոնք ինչ-որ մասում չեն պարունակում կողմնակի միներալների, գազի, հեղուկի, ճեղքերի, կրկնաբյուրեղների ներփակվածքներ: Պ-ի օգտագործումը հիմնված է նրա պիեզոէլեկտրական հատկությունների վրա:

# P

**P-1. РАВНИНА – ՀԱՐԹԱՎԱՅՐ, PLAIN**, Երկրի մակերևույթի ռելիեֆի կարևորագույն տարրերից մեկն է (ցամաքի, ծովերի ու օվկիանոսների հատակի սահմաններում): Բնորոշվում է բարձրությունների փոքր թեքություններով և ամնշան տատանումներով: Ցամաքում տարբերում են 3-եր` ծովի մակերևույթից ցածր (օր.՝ Մերձկասպյան), ցածրադիր՝ 0-ից մինչև 200 մ բարձրությամբ, բարձրադիր՝ 200-ից մինչև 500 մ և լեռնային՝ 500 մ-ից բարձր: 3-ի մակերևույթը կարող է լինել հորիզոնական, թեք և գոգավոր: Ըստ մակերևույթի ձևաբանության՝ տարբերվում են բլրավոր, ալիքաձև, թմբային և հարթ 3-եր: Ըստ արտածին գործընթացների գերակշռության՝ առանձնացնում են լերկացման (դենուդացիոն) և կուտակումային (ակումուլյատիվ), այդ թվում՝ գետաբերուկ, ծովային, լճային, սառցադաշտային, հրաբխային 3-եր: 3-երի մեծ մասը ձևավորվում է պլատֆորմներում (պլատֆորմային 3-եր), լեռնագոյացման մարզերում 3-երը հարում են գլխ. միջլեռնային ու նախալեռնային ճկվածքների: Ստորջրյա 3-երի մեջ լայն տարածված են արհսալ հարթավայրերը, որոնք հարում են օվկիանոսի մահճին, և ծանծաղուտային (շելֆային) ու ծայրամասային ծովերի գոգավորությունների հարթավայրերը:

**P-2. РАВНИННАЯ РЕКА – ՀԱՐԹԱՎԱՅՐԱՅԻՆ ԳԵՏ, LOWLAND RIVER, RIVER OF PLAIN**, բնորոշվում է դանդաղ, հանգիստ հոսանքով և ջրային մակերևույթի փոքր թեքությամբ, հոսում է լավ մշակված լայն հովտով:

**P-3. РАВНИННЫЙ ЛАНДШАФТ – ՀԱՐԹԱՎԱՅՐԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏ (ԲՆԱՊԱՍԿԵՐ), PLAIN LANDSCAPE**, լանդշաֆտ, որը ձևավորվել է հարթ տեղանքում: Լանդշաֆտների դասակարգման մեջ դիտարկվում է որպես հատուկ դաս:

**P-4. РАДИЙ, Ra** (լատ. radius – ճառագայթ) – **ՌԱԴԻՈԲՄ, RADIUM**, պարբերական համակարգի 2-րդ խմբի ճառագայթաակտիվ քիմ. տարր: 223, 224, 226 և 228 զանգվածային թվով իզոտոպները մտնում են բնական ճառագայթաակտիվ շարքի մեջ: Հայտնաբերել են Պ. Կյուրին, Ս. Սկլադովսկայա-Կյուրին և Ժ. Բեմոնը 1898-ին: Ռ-ն արծաթավուն-սպիտակ մետաղ է: Երկրակեղևում միջին պարունակությունը  $1 \cdot 10^{-10}$  % է (ըստ զանգվածի): Ռ-ի ստացման հիմնական աղբյուրն ուրանի հանքանյութերն են:

**P-5. РАДИОАКТИВНОСТЬ ГОРНЫХ ПОРОД** (լատ. radio – ճառագայթում են, ճառագայթներ են արձակում) – **ԱՊՐՆԵՐԻ ԾԱՌԱԳԱՅՅՈՒԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ (ՌԱԴԻՈՎԱՍԻՎՈՒԹՅՈՒՆ), RADIOACTIVITY OF ROCKS**, ապարների ճառագայթաակտիվ ճառագայթարձակման ունակություն, որը պայմանավորված է ապարի մեջ ճառագայթաակտիվ տարրեր պարունակող միներալների, ինչպես նաև ճառագայթաակտիվ քիմ. տարրերի իզոտոպների առկայությամբ:

- P-6. РАДИОАКТИВНОСТЬ ПРИРОДНЫХ ВОД – ԲՆԱԿԱՆ ՋՐԵՐԻ ՃԱՌԱԳԱՅԹԱԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ (ՌԱԴԻՈԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ), RADIOACTIVITY OF NATURAL WATERS**, բնական ջրերի հատկություն, որը պայմանավորված է նրանցում պարունակվող ճառագայթաակտիվ տարրերի (ուրան, ռադիում, ռադոն) խտությամբ և ինքնական տրոհման հատկությամբ: Բ. ջ. ճ. տատանվում է մեծ սահմաններում. ամենասակավ ակտիվություն դրսևորում են օվկիանոսների, ծովերի, գետերի ու լճերի ջրերը, ամենամեծ ակտիվություն՝ ուրանային հնքվ-երի ստր. ջրերը:
- P-7. РАДИОАКТИВНЫЕ ИЗОТОПЫ (լատ. radius – ճառագայթ) – ՃԱՌԱԳԱՅԹԱԱԿՏԻՎ (ՌԱԴԻՈԱԿՏԻՎ) ԻՉՈՏՈՊՆԵՐ, RADIOACTIVE ISOTOPES**, քիմ. տարրերի անկայուն իզոտոպներ, որոնք ինքնաբերաբար տրոհվելով փոխարկվում են այլ տարրերի կայուն իզոտոպների:
- P-8. РАДИОАКТИВНЫЕ МИНЕРАЛЫ – ՃԱՌԱԳԱՅԹԱԱԿՏԻՎ (ՌԱԴԻՈԱԿՏԻՎ) ՄԻՆԵՐԱԼՆԵՐ, RADIOACTIVE MINERALS**, միներալներ, որոնք պարունակում են բնական ճառագայթաակտիվ տարրերի ( $^{238}\text{U}$ ,  $^{235}\text{U}$  և  $^{232}\text{Th}$  ճառագայթաակտիվ շարքերի երկարակյաց իզոտոպներ) այնպիսի քանակ, որն զգալիորեն գերազանցում է երկրակեղևում նրանց միջին պարունակությունները (կլարկը): Հայտնի են ուրանի և թորիումի մոտ 250 միներալ: Ռադիումի միներալների քանակը հայտնի չէ:
- P-9. РАДИОАКТИВНЫЕ ВОДЫ – ՃԱՌԱԳԱՅԹԱԱԿՏԻՎ (ՌԱԴԻՈԱԿՏԻՎ) ՋՐԵՐ, RADIOACTIVE WATER**, բնական ջրեր, որոնք բնութագրվում են ճառագայթաակտիվ նյութերի բարձրացված պարունակությամբ: Ստր. ջրերում առկա են գլխ. բնական իզոտոպներ ( $^{226}\text{Ra}$ ,  $^{222}\text{Rn}$ ,  $^{238}\text{U}$ ), դրան համապատասխան տարբերում են ռադոնային, ռադիումային, ուրանային և այլ ջրեր: Գ. ջ. օգտագործվում են բուժական նպատակներով և որպես ճառագայթաակտիվ տարրերի հնքվ-երի որոնողական նշաններ:
- P-10. РАДИОГЕОЛОГИЯ, ЯДЕРНАЯ ГЕОЛОГИЯ – ՃԱՌԱԳԱՅԹԱԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ՌԱԴԻՈԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ), ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, RADIOGEOLOGY**, երկրաբանության ճյուղ, ուսումնասիրում է բոլոր այն երկրբ. գործընթացները և երևույթները, որոնցում տեղի է ունենում բնական ճառագայթաակտիվ տրոհման գործընթաց: Կապված է միջուկային ֆիզիկայի, երկրաքիմիայի և տիեզերաքիմիայի հետ: Բաժանվում է բուն ճ-յան, իզոտոպային երկրաբանության և բացարձակ երկրաժամանակագրության: Գ. ուսումնասիրում է բնական տարրերի էվոլյուցիան և իզոտոպային կազմության փոփոխությունները: ճառագայթաակտիվ տրոհման արագությամբ որոշվում է միներալների ու ապարների բացարձակ հասակը, Երկրի վրա տեղի ունեցած երկրաբանական գործընթացների հաջորդականությունը:
- P-11. РАДИОГИДРОГЕОЛОГИЯ – ՃԱՌԱԳԱՅԹԱՋՐԱԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ՌԱԴԻՈՋՐԱԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ), RADIOHYDROGEOLOGY**, ջրաերկրաբանության բաժին, որն ուսումնասիրում է բնական ճառագայթաակտիվ ջրերը, նրանց ձևավորման ու տարածման պայմանները, պարզաբանում է նրանց դերը որպես ճառագայթաակտիվ տարրերի հնքվ-երի որոնման չափանիշ:
- P-12. РАДИОЛОГИЧЕСКИЙ ВОЗРАСТ, РАДИОМЕТРИЧЕСКИЙ ВОЗРАСТ, ИЗОТОПНЫЙ ВОЗРАСТ, АБСОЛЮТНЫЙ ВОЗРАСТ – ՃԱՌԱԳԱՅԹԱԳԻՏԱԿԱՆ (ՌԱԴԻՈԳԻՏԱԿԱՆ) ՀԱՍԱԿ, ՃԱՌԱԳԱՅԹԱՉՓԱԿԱՆ (ՌԱԴԻՈՉՓԱԿԱՆ) ՀԱՍԱԿ, ԲԱՑՏԱՐՉԱԿ ՀԱՍԱԿ, RADIOLOGICAL AGE, RADIOMETRIC AGE, ABSOLUTE AGE**, ապարի հասակ, որն արտահայտված է աստղագիտական ժամանակի միավորներով (մլն. տ.): Որոշվում է տարբեր ճառագայթագիտական մեթոդներով (տե՛ս Դեո-

хронология): Հաշվարկումը կատարվում է ներկա ժամանակից, այսինքն՝ վարընթաց կարգով: Ճառագայթագիտական թվագրումը միշտ չէ որ համապատասխանում է կոնկրետ երկրք. իրադրության արտահայտման ժամանակին, երբ խախտվում է փոխհարաբերությունը ճառագայթակտիվ տրոհման արգասիքների միջև՝ վերադիր գործընթացների արտահայտման հետևանքով, որը հանգեցնում է ճ. հ-ի երիտասարդացմանը կամ հնացմանը: Առավել հուսալի են ցիրկոնների թվագրման ուրան-կապարային մեթոդը և ապարի ամբողջական ռուբիդիում-ստրոնցիումային իզոքրոն թվագրումը:

**P-13. РАДИОЛЯРИЕВЫЙ ИЛ – ՈԱԴԻՈԼԱՐԻԱՅԻՆ ՏԻՂՍ, RADIOLARIAN OOZE,** ժամանակակից օվկիանոսային խորջրյա կայծքարակավային տիղմերի տարատեսակ, որը հարստացված է ծովային պլանկտոնով, գլխ. ջրաջերմասեր օրգանիզմների՝ ռադիոլարիաների կմախքներով: Խոնավ վիճակում իրենից ներկայացնում է շագանակագույն, երբեմն՝ կանաչանոխրավուն, սև ալերիտակավային և կավային նստվածք: Բաղկացած է օպալային սիլիկահողից (5-30 %), կավային միներալներից, հրաբխածին նյութից, երկաթի ու մանգանի հիդրօքսիդներից: Ռ. տ. տարածված է Հնդկական և Խաղաղ օվկիանոսների հասարակածային գոտում՝ 4500-6000 մ խորությունում: Ծածկում է Համաշխարհային օվկիանոսի հատակի 3.4 %-ը: Բրածո վիճակում Ռ. տ. փոխարկվում է օրգանածին նստվածքային ապարին՝ ռադիոլարիտին:

**P-14. РАДИОЛЯРИИ, ЛУЧЕВИКИ (Radiolaria) – ՈԱԴԻՈԼԱՐԻԱՆԵՐ (ՃԱՌԱԳԱՅԹԱՎՈՐՆԵՐ), RADIOLARIA,** նախակենդանիների տիպի սարկոդինիաների դասի ենթադաս: Միաբջիջ, մեծ մասամբ բնականոն աղիության տաք ջրերի ծովային կենդանիներ են՝ 0.3-1 մմ և ավելի չափերով: Ռ-ի կմախքը կազմված է ներքին՝ պլազմայից և արտաքին՝ միներալային մասերից, վերջինը կազմված է կայծքարից կամ ստրոնցիումի սուլֆատից: Այն առաջանում է երկրաչափորեն կանոնավոր դասավորված փշեր-ճառագայթներից: Ռ. հայտնի են պրոտերոզոյից մինչև այժմ և ունեն կարևոր շերտագրական նշանակություն: Ռ-ի կմախքները առաջացնում են խորջրյա ռադիոլարիային տիղմ:

**P-15. РАДИОЛЯРИТ – ՈԱԴԻՈԼԱՐԻՏ, RADIOLARITE,** օրգանածին նստվածքային ապար, առավելապես սիլիցիումային, բաղկացած է ավելի քան 50 % ռադիոլարիաների կմախքներից: Պարունակում է ֆոսֆատային, կավային, ալերիտային և այլ նյութերի խառնուրդ: Գունավորված է տարբեր գույներով (դեղին, կարմիր, մոխրագույն), տե՛ս նաև՝ Радиоляриевый ил:

**P-16. РАДИОМЕТРИЧЕСКАЯ РАЗВЕДКА – ՃԱՌԱԳԱՅԹԱԶՎԱԿԱՆ (ՈԱԴԻՈԶՎԱԿԱՆ) ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ, RADIOMETRIC PROSPECTING,** հետախուզական երկրաֆիզիկայի մեթոդների համալիր: Հիմնված է բնական ճառագայթակտիվ (ռադիոակտիվ) նուկլիդների զամմա-ճառագայթման չափման կամ հողային օդում ռադոնի իզոտոպների կուտակման որոշման վրա: Կիրառվում է ուրանի և թորիումի հնքվ-երի որոնման ու հետախուզման համար, ինչպես նաև որպես երկրք. քարտեզագրության օժանդակ մեթոդ:

**P-17. РАДИОМЕТРИЧЕСКИЙ ВОЗРАСТ,** տե՛ս Радиологический возраст:

**P-18. РАДИОУГЛЕРОД (<sup>14</sup>C) – ՃԱՌԱԳԱՅԹԱԱԾԽԱԾԻՆ (ՈԱԴԻՈԱԾԽԱԾԻՆ), RADIOCARBON,** ածխածնի ճառագայթակտիվ (ռադիոակտիվ) իզոտոպ <sup>14</sup>C-ը: Կիսատրոհման պարբերաշրջանով: Առաջանում է մթնոլորտի վերին շերտերում:

**P-19. РАДИОУГЛЕРОДНЫЙ МЕТОД – ՃԱՌԱԳԱՅԹԱԱԾԽԱԾՆԱՅԻՆ (ՈԱԴԻՈԱԾԽԱԾՆԱՅԻՆ) ՄԵԹՈԴ, RADIOCARBON DATING,** հիմնված է բնական օբյեկտներ-

րում (ավելի հաճախ՝ ածխի, փայտածխի մեջ, ոսկրային մնացորդներում և այլն)  
<sup>14</sup>C իզոտոպի պարունակության համեմատական որոշման վրա: Օգտագործվում է համեմատաբար երիտասարդ (մի քանի տասնյակ հազ. տ-ուց ոչ ավել) ապարների հասակը որոշելու համար:

**P-20. РАДОН, Rn (Radonum) – ՌԱԴՈՆ, RADON**, տարրերի պարբերական համակարգի 8-րդ խմբի ճառագայթաակտիվ (ռադիոակտիվ) քիմ. տարր: Պատկանում է իներտ գազերի խմբին: Հայտնի են Ռ-ի 201-222 զանգվածային թվերով ճառագայթաակտիվ իզոտոպներ: Ռ-ի պարունակությունը երկրակեղևում  $7 \cdot 10^{-14}$  զանգվածային % է: Աննշան քանակով պարունակվում է բնական ջրերում: Ռ-ի պարունակությունը համեմատաբար մեծ է ճառագայթաակտիվ հանքանյութերով հարուստ շրջաններում:

**P-21. РАЗВЕДКА ДЕТАЛЬНАЯ – ՄԱՆՐԱՄԱՍՆ ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ, DETAIL EXPLORATION**, երկրաբանահետախուզական աշխատանքների փուլ, որը կատարվում է պինդ օգտ. հնձ-ների և ստր. ջրերի հնքվ-երում՝ դրանք արդյունաբերական յուրացման նախապատրաստելու նպատակով: Նավթի ու գազի երկրաբանահետախուզական գործընթացներում այս փուլը չի առանձնացվում: Մ. հ-յան տվյալները հնքվ-ի կամ խոշոր հնքվ-ի տեղամասի մշակման նախագծի հիմք են ծառայում: Պինդ օգտ. հնձ-ների մերձակերևութային մասերը ուսումնասիրվում են մանրամասն երկրք. քարտեզագրման ու նմուշահանման միջոցով՝ օգտագործելով վերգետնյա երկրք. և երկրք. մեթոդները, փոքր հորատանցքերը և երկրաբանահետախուզական փորվածքներն այնպիսի մանրամասնությամբ, որը հնարավորություն է տալիս պարզաբանելու օգտ. հնձ-ների հիմնական մարմինների ձևը. չափերը, տեղավայրը և տեղադրման պայմանները, օքսիդացման զոնայի խորությունը, օգտ. հնձ-ների որակը և տեխնոլոգիական հատկանիշները, ծածկող նստվածքների կազմը և հաստությունը: Հնքվ-երը ըստ խորության հետախուզելու համար անցկացվում են հորատանցքեր, իսկ բարդ երկրք. կառուցվածք ունեցող հնքվ-երում՝ լեռնային փորվածքներ: Հետախուզության տեխնիկական միջոցներն ընտրելիս հաշվի է առնվում նախնական հետախուզության տվյալները, համանման հնքվ-երի հետախուզման ու յուրացման փորձը, Մ. հ-յան անցկացման նպատակահարմարության տեխնիկատնտեսական և գործող նորմատիվային փաստաթղթերի դրույթները: Հնքվ-ի երկրք. կառուցվածքի մանրամասն ուսումնասիրությանը զուգահեռ՝ ճշգրտվում է ապարների կազմը և տեխնոլոգիական հատկությունները, հնքվ-ի մշակման, ջրաերկրաբանական, ճարտարագիտաերկրաբանական, լեռնաերկրաբանական և այլ բնական պայմանները: Աշխատանքներ են տարվում նաև հնքվ-ում զուգընթաց և ուղեկից օգտ. հնձ-ների բացահայտման ու արդյունաբերական գնահատման, ինչպես նաև վնասակար բաղադրիչների բացահայտման համար:

**P-22. РАЗВЕДКА ПРЕДВАРИТЕЛЬНАЯ – ՆԱԽՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ, PRELIMINARY EXPLORATION**, երկրաբանահետախուզական աշխատանքների փուլ: Կատարվում է որոնողական աշխատանքների ընթացքում հայտնաբերված պինդ օգտ. հնձ-ների կամ ստր. ջրերի հնքվ-երի երկրաբանատնտեսական գնահատման համար հուսալի տվյալներ ստանալու նպատակով: Նավթի ու գազի հնքվ-երի հետախուզական գործընթացում այս փուլը չի առանձնացվում: Ն. հ. կատարվում է, որպես կանոն, հնքվ-ի բնական սահմաններում, շատ խոշոր հնքվ-երում՝ երկրք. առաջադրանքով բացահայտված ուրվագծերում: Հնքվ-ի մերձակերևութային մասերն ուսումնասիրվում են երկրք. քարտեզագրման միջոցով (1:5000-1:10.000 մասշտաբի)՝ հորատանցքերի, մակերևութային լեռնային փորվածքների և վերերկրյա երկրք. ու երկրք. մեթոդների կիրառմամբ: Ըստ խորության, մինչև ենթադրվող մշակման խորու-

թյունը, հնքվ-ը ուսումնասիրվում է եզակի հորատանցքերով, որով գնահատվում է հնքվ-ի ավելի խոր հորիզոնների հեռանկարայնությունը: Բարդ երկրք. կառուցվածք, փոփոխական ձևաբանություն ու կազմություն ունեցող բարդ կազմի հանքանյութերով հնքվ-երում հետախուզական հորատանցքերը զուգակցվում են ստր. լեռնային փորվածքներով: Ն. հ-յան նախնական փուլերում հորատանցքերը տեղաբաշխվում են որոնողական աշխատանքների ժամանակ առանձնացված առավել հեռանկարային տեղամասերում՝ հանքայնացումը վերահսկող կառուցվածքների տարածմանը խաչաձև: Հետագայում հետախուզական հորատանցքերի դասավորությունը կանոնավորվում է ըստ ստացված արդյունքների: Ներփակող ապարների, օգտ. հնժ-ների տեղադրման պայմանների, կազմության և հատկությունների ուսումնասիրման համար օգտագործվում են համալիր երկրաբանամիներալաբանական, երկրֆ. և երկրք. մեթոդներ: Կատարվում է բոլոր տեսակի օգտ. հնժ-ների նմուշահանում: Ն. հ-յան տվյալների հիման վրա մշակվում ու հաստատվում են օգտ. հնժ-ների ժամանակավոր կոնդիցիաները, հաշվարկվում են պաշարները՝ հիմնականում C<sub>2</sub> կատեգորիայով, առավել մանրամասն ուսումնասիրված տեղամասերում՝ C<sub>1</sub> կատեգորիայով: Ն. հ-յան տվյալների հիման վրա կազմվում է տեխ. զեկույց մանրամասն հետախուզության նպատակահարմարության մասին:

**P-23. РАЗВЕДКА ЭКСПЛУАТАЦИОННАЯ – ՀԱՅԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ, MINING EXPLORATION, MINING PROSPECTING**, երկրաբանահետախուզական աշխատանքների փուլ, որը կատարվում է հնքվ-ի մշակման գործընթացում: Հիմնական խնդիրը մանրամասն հետախուզության ընթացքում օգտ. հնժ-ների մարմինների ձևաբանության, տարածման ուրվագծերի, ներքին կառուցվածքի, օգտ. հնժ-ների կազմի և տեխնոլոգիական հատկությունների, մշակման ջրաերկրք. ու ճարտարագիտաերկրք. պայմանների մասին ստացված տվյալների ճշգրտումն է: Տարվում է նաև պաշարների շարժի գործարարական հաշվառում և այլն: Ստացված երկրք. տվյալներն ու նյութերը ապահովում են շահագործական աշխատանքների պլանավորումն ու կարգավորումը:

**P-24. РАЗВЕДОЧНАЯ СЕТЬ – ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՑԱՆՑ, EXPLORATION NETWORK**, հետախուզական գծերի փոխհատվող համակարգ, որն առաջացել է օգտ. հնժ-յի մարմնի երկայնական հարթությունում: Հետախուզական գծերի հատման հանգույցներում զետեղվում են հետախուզական փորվածքները: Հ. ց-ի հիմնական բնութագիրը նրա բջջի երկրաչափությունն է (կողմնորոշումը, ձևը և չափերը): Հ. ց-ի ձևի (ուղղանկյուն, քառակուսի, շեղանկյուն) ընտրությունը կախված է օգտ. հնժ-յի մարմնի ձևաբանությունից ու չափերից և տարբեր ուղղություններում նրա հատկությունների փոփոխությունից: Օգտ. հնժ-ների իզոտրոպային մարմինների ուսումնասիրման ժամանակ կիրառվում է քառակուսի ցանց: Ցանցի խտությունը բնորոշվում է հարակից հետախուզական փոխհատումների միջև եղած հեռավորությամբ:

**P-25. РАЗВЕДОЧНОЕ ДЕЛО – ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾ, EXPLORATION ENGINEERING**, ընդհանրացված հասկացություն, որն ընդգրկում է օգտ. հնժ-ների հնքվ-երի հետախուզությանը վերաբերող հարցերի ամբողջ համալիրը:

**P-26. РАЗВЕДОЧНЫЕ ГОРНЫЕ ВЫРАБОТКИ – ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԼԵՈՆԱՅԻՆ ՓՈՐՎԱԾՔՆԵՐ, EXPLORING OPENINGS**, հնքվ-ի հետախուզման նպատակով անցկացված փորվածքներ: Հ. լ. փ. են՝ հետախուզական բովանցքերը (շտուլնյաները), հանքամիջանցքները (շտրեկները), առունները, հետախուզահորերը (շուրֆերը) և այլն:

**P-27. РАЗДВИГ – ՏՄՐԱՇԱՐԺ (ՀԵՌԱՇԱՐԺ), TENSION CRACK**, երկրակեղևի տեկտ. խզվածքային խախտումների տեսակ, որն առաջանում է նրա ձգման պայմաններ

րում և արտահայտվում է երկրակեղևի որոշ բլոկների հեռացմամբ մյուսներից: S-ի ժամանակ առաջացած ճեղքը լցվում է հեռացվող բլոկների ապարների ջարդոտման արգասիքներով, իսկ մեծ լայնության դեպքում՝ նստվածքներով կամ հրաբխային ժայթքումների արգասիքներով: Խոշոր մասշտաբի խորքային S-երը (գրաբենները), որոնց լայնությունը տասնյակ, իսկ երկարությունը հարյուրավոր և ավելի կմ է (օր.՝ Բայկալյան), կոչվում են ռիֆտեր:

**P-28. РАЗЛОМА ЗОНА – ԲԵԿՎԱԾՔԻ ՉՈՆԱ, FAULT ZONE**, խզվածքային խախտումների ուժգին զարգացման և ապարների ջարդման գոտի: Ուղեկցվում է մանր ճեղքերի սերիաներով և փշրաքարերով կամ տեկտ. կավերով: Չոնայի լայնությունը կարող է հասնել հարյուրավոր մ-երի:

**P-29. РАЗЛОМЫ – ԲԵԿՎԱԾՔՆԵՐ, FRACTURES, FAULTS**, առավել խոշոր տեկտ. խզվածքներ: Տարբերում են կեղևային և խորքային Բ., վերջինները հասնում են Երկրի միջնապատյանին (տե՛ս Глубинные разломы): Երկրի վրա և այլ մոլորակներում զարգացած է մի քանի համակարգերի Բ-ի ցանց, որը օրինաչափորեն կողմնորոշված է մոլորակի պտտման առանցքի նկատմամբ: Համապատասխանորեն առանձնացվում են լայնական, միջօրեական և 2 անկյունագծային (մեկը մյուսի նկատմամբ 30°-ի տակ) Բ-ի համակարգեր, տե՛ս Разрыв (разрывные нарушения):

**P-30. РАЗЛОМЫ ОКЕАНСКИЕ – ՕՎԿԻԱՆՈՍԱՅԻՆ ԲԵԿՎԱԾՔՆԵՐ, OCEANIC FAULTS**, շատ խոշոր՝ մի քանի հազ. կմ երկարությամբ և 100-200 կմ լայնությամբ զոնաներ, հատկապես պարզորոշ հետամտվում են Խաղաղ օվկիանոսի հս-արլ. մասում: Այդ բեկվածքների զոնաների հատակի ռելիեֆը բնորոշվում է անհավասարաչափ լեռնաշղթաների և նեղ հովտանման իջույթների հերթագայությամբ: Բեկվածքների երկու կողմերի կտրվածքները վկայում են երկրակեղևում և միջնապատյանում խորքային խախտումների գոյության մասին: Օ. Բ-ի շրջաններում մագնիսական դաշտը անբնականոն է: Անկանոնությունների վերլուծությունը հնարավորություն է տալիս ենթադրելու բեկվածքների երկայնքով խոշոր տեղաշարժերի մասին: Օ. Բ-ի ծագման մասին կան մի քանի վարկածներ: Որոշ հեղինակներ դրանք կապում են Երկրի միջնապատյանի կոնվեկցիոն հոսքերի հետ, մյուսները՝ բեկորների ուղղաձիգ տեղաշարժերի հետ:

**P-31. РАЗЛОМЫ СЕЙСМОГЕНЕТИЧЕСКИЕ – ԵՐԿՐԱՇԱՐԺԱԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԵԿՎԱԾՔՆԵՐ, SEISMOGENETIC FAULTS**, խոշոր խզվածքային կառուցվածքներ, որոնց սահմաններում շարունակվում են ապարների ձևախախտումները և տեղաշարժերը, և որոնք ուղեկցվում են երկրաշարժերով:

**P-32. РАЗМЫВ – ՈՂՈՂԱՔԱՅՔԱՅՈՒՄ, EROSION BY WATER, WASHOUT, SCOUR**, ջրային հոսքերով, սառցադաշտերով, հողմերով ապարները քայքայելու և ստացված նյութերը տեղափոխելու գործընթաց: Տարբերում են վերգետնյա և ստորջրյա Ո.: Վերգետնյա Ո-ման հատկանիշներն են՝ կտրվածքում ընդմիջման անհարթ մակերևույթը, ավելի երիտասարդ ստվարաշերտի ծովարշավային (տրանսգրեսիվ) տեղադրումը, անկյունային աններդաշնակությունը, տակդիր շերտերում ողողամաշվման (էրոզիոն) կտրվածքը, աններդաշնակության մակերևույթին մոտ հողմահարման հետքերը, ցամաքային նստվածքներով ու ցամաքային և քաղցրահամ օրգանիզմների մնացորդներով զրպանները և այլն:

**P-33. РАЗОРВАННАЯ СКЛАДКА – ԿՏՐԱՍՎԱԾ ԾԱԼՔ, DISRUPTED FOLD**, ծալք ապարների շերտերում, որը բարդացված է խզվածքային խախտումներով:

**P-34. РАЗРАБОТКА МЕСТОРОЖДЕНИЙ ПОЛЕЗНЫХ ИСКОПАЕМЫХ – ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ, MINING, EXPLOITA-**



**TION**, հանքավայրերի բացման, նախապատրաստման և օգտ.հնժ-ների կորզման աշխատանքների ամբողջություն: Առանձնացվում են Օ. հ. հ. ա-ման 4 հիմնական եղանակ՝ հանքահորային (ստորգետնյա լեռնային փորվածքների համակարգի օգնությամբ), բացահանքային կամ բաց (բաց լեռնային փորվածքների օգնությամբ), հորատանցքային (շահագործական հորատանցքերի համակարգի օգնությամբ), ծովային (կապված ծովի մակարդակից ներքև կատարվող աշխատանքների հետ): Ավանդաբար առաջին երկու եղանակները կիրառվել են պինդ օգտ. հնժ-ների արդյունահանման համար, հորատանցքայինը՝ հեղուկ և գազանման օգտ. հնժ-ների համար: Տեխ. առաջընթացի շնորհիվ 20-րդ դարի կեսերից ավելանում է հորատանցքերի միջոցով օգտ. հնժ-երի արդյունահանման ծավալը, կատարվում է բարձրամածուցիկ նավթերի արդյունահանում բաց և հանքահորային եղանակով:

**P-35. РАЗРАБОТКА МОРСКИХ МЕСТОРОЖДЕНИЙ НЕФТИ И ГАЗА – ՆԱՎԹԻ (ՔԱՐՅՈՒՂԻ) ԵՎ ԳԱԶԻ ԾՈՎԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ, OFF-SHOPE MINING, SEA MINING**, կազմակերպչական-տեխ. միջոցառումների համակարգ, որն ապահովում է օվկիանոսների ու ծովերի հատակի տակ տեղաբաշխված հեղուկ ու գազանման ածխաջրածինների արդյունավետ հանումը: Միջոցառումները կապված են որոնողահետախուզական, հորատանցքերի հորատման, ստորջրյա ու վերջրյա կառույցների շինարարության, գազի ու նավթի հավաքման և տեղափոխման աշխատանքների կատարման հետ: Նավթի ու գազի արդյունահանման աշխատանքներում ընդգրկված են Համաշխարհային օվկիանոսի հսկայական ջրատարածքներ, որոնց հատակի նստվածքային ծածկոցում հայտնաբերված են 1000-ից ավելի հնքվ-եր: Նավթի ու գազի հիմնական պաշարները կապված են մայրցամաքային ծանծաղուտի հետ: Համաշխարհային օվկիանոսի մի շարք շրջաններում նավթագազաբեր են համարվում նաև մայցամաքային լանջը և օվկիանոսի մահիճը:

**P-36. РАЗРЕЗ (ПРОФИЛЬ) ГЕОЛОГИЧЕСКИЙ – ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ (ՏՐԱՄՍՍ, ՊՐՈՖԻԼ), GEOLOGICAL SECTION (PROFILE)**, ուղղաձիգ հարթության վրա ապարների տեղադրման պայմանների, տարբեր կազմի ու հասակի ապարների փոխհարաբերության, երկրբ. մարմինների ձևի ու դրանց հաստությունների փոփոխության, ծալքավոր ու խզվածքային խախտումների բնույթի, տարբեր ֆազիաների ու դրանց փոխանցումների գրաֆիկական պատկերում: Ե. կ-ները լրացնում ու ճշգրտում են երկրբ. քարտեզը՝ տալով ակնառու պատկերացում ըստ խորության երկրբ. կառուցվածքի փոփոխության մասին և կազմվում են քարտեզի հետ միաժամանակ: Ե. կ-ները կազմվում են ապարների տարածմանը խաչաձև կամ որոշ անկյան տակ, հազվադեպ՝ տարածման երկայնքով, նույն մասշտաբով, ինչպիսին երկրբ. քարտեզինն է, կամ ավելի խոշոր մասշտաբով՝ արդյ. հետաքրքրություն ներկայացնող տեղամասերի համար: Ե. կ-ի ուղղաձիգ և հորիզոնական մասշտաբները պետք է լինեն նույնը. երբեմն թույլատրվում է ուղղաձիգ մասշտաբի մեծացում: Ե. կ. կազմվում է երկրբ. դիտարկումների, հորատանցքերի և երկրֆ. ուսումնասիրությունների տվյալներով:

**P-37. РАЗРЕЗ (ПРОФИЛЬ) ГЕОЛОГО-ГЕОФИЗИЧЕСКИЙ – ԵՐԿՐԱԲԱՆԱԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ (ՏՐԱՄՍՍ, ՊՐՈՖԻԼ), GEOLOGICAL AND GEOPHYSICAL SECTION (PROFILE)**, ուղղաձիգ հարթության վրա որևէ ուղղությամբ ուսումնասիրվող տարածքի գրաֆիկական պատկերում, որը բնութագրում է նրա երկրբ. կառուցվածքը ըստ երկրաբանաերկրֆ. հորիզոնների վարքի, որոնք առանձնացված են երկրֆ. ուսումնասիրությունների (հաճախ մի քանի մեթոդների կիրառմամբ) հետևանքով: Կազմվում են ըստ հորատանցքերի երկրբ. ուսումնասիրության և

երկրֆ. հետախուզության վերգետնյա և օդային մեթոդների նյութերի տվյալների: Առաջին դեպքը իրենից ներկայացնում է տարբեր ֆիզ. պարամետրերի կարոտա-ժային դիագրամներ, որոնք համադրված են հնքվ-երի կամ շրջանի կտրվածքի շերտազրական և քարաբանական սյունակի հետ: Վերգետնյա և օդային երկրֆ. հանույթի ժամանակ կազմված կտրվածքներում ցույց են տրվում կտրվածքի առանձին հորիզոնների համար ֆիզ. պարամետրերի արժեքները կամ յուրաքանչ-յուր մեթոդին բնորոշ չափանիշները՝ հորատման տվյալների կամ երկրբ. հանույթի նյութերի երկրբ. մեկնաբանության հետ համատեղ: Կախված երկրֆ. և այլ արժեքների ստացման եղանակից՝ առանձնացնում են երկրաէլեկտրական, երկրաշարժաերկրաբանական, համալիր երկրաբանաերկրաֆիզ. և այլ կտրվածքներ:

**P-38. РАЗРЕЗ (ПРОФИЛЬ) ГИДРОГЕОЛОГИЧЕСКИЙ – ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ (ՏՐԱՄԱՏ, ՊՐՈՖԻԼ), HYDROGEOLOGICAL SECTION (PROFILE),** ուսումնասիրվող շրջանի ջրաերկրբ. իրադրության գրաֆիկ պատկերումը ուղղաձիգ հարթության վրա: Նրա վրա արտահայտվում են ջրատար և ջրամերժ շերտերի տեղադիրքն ու դասավորությունը, ջրատար հորիզոնների ճնշումն ու հոսքի ուղղությունը, ստր. ջրերի հանքայնացումը, քիմ. կազմը և այլ տվյալներ: Ջ. կ. հանդիսանում է ջրաերկրբ. քարտեզի լրացումը և սովորաբար կազմվում է դրա հետ համատեղ:

**P-39. РАЗРЕЗ (ПРОФИЛЬ) ЛИТОЛОГО-ФАЦИАЛЬНЫЙ – ՔԱՐԱԲԱՆԱՖԱՑԻԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ (ՏՐԱՄԱՏ, ՊՐՈՖԻԼ), LITHOFACIES SECTION (PROFILE),** ուսումնասիրվող շրջանի ապարների քարաբանական առանձնահատկությունների և առաջացման պայմանների գրաֆիկ պատկերումը ուղղաձիգ հարթության վրա: Գրաֆիկի վրա հաճախ ցույց է տրվում նաև շերտերի դիրքը ծովի մակերևույթի նկատմամբ, ինչպես նաև՝ հրաբխային գործունեության արտահայտությունները, հնէաբանական առանձնահատկությունները և այլ տվյալներ:

**P-40. РАЗРЕЗ (ПРОФИЛЬ) ОПОРНЫЙ ГЕОЛОГО-ГЕОФИЗИЧЕСКИЙ – ԵՐԿՐԱԲԱՆԱԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ԳԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԿՏՐՎԱԾՔ (ՏՐԱՄԱՏ, ՊՐՈՖԻԼ), GEOLOGICAL AND GEOPHYSICAL KEY SECTION (PROFILE),** շրջանում ամենալավ ուսումնասիրված երկրբ. կտրվածքի գիծ, որով առավել մանրագին կատարվում են երկրֆ. ուսումնասիրությունները՝ աշխատանքների ժամանակ կիրառելով օգտագործվող բոլոր մեթոդները: Աշխատանքների նպատակը բացահայտված երկրֆ. անկանոնությունների համադրությունն է շրջանի երկրբ. կառուցվածքի առանձնահատկությունների հետ և այն երկրբ. օբյեկտների անջատումը, որոնք հարուցում են այդ անկանոնությունները:

**P-41. РАЗРЕЗ (ПРОФИЛЬ) ПАЛЕОГЕОГРАФИЧЕСКИЙ – ՅԱՇԽԱՐՅԱԳՐԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ (ՏՐԱՄԱՏ, ՊՐՈՖԻԼ), PALEOGEOGRAPHICAL SECTION (PROFILE),** որևէ տարածքի տրված ուղղությամբ կտրվածք, որի վրա հատուկ պայմանական նշաններով ցույց են տրվում նրա պատմաերկրբ. և հնաշխ. զարգացման որոշակի փուլի ֆիզաշխ. իրադրությունները: Յ. կ-ի վրա ցույց են տրվում նաև տվյալ ժամանակահատվածի երկրակառուցվածքային միավորների, կլիմայական զոնաների սահմանները, ռելիեֆի տարրերը, նստվածքակուտակման և սնման մարզերը ու հնաշխ. քարտեզների այլ տարրեր: Խորհուրդ է տրվում Յ. կ-ների կազմումը համատեղել քարաբանաֆազիալ կտրվածքների հետ: Յ. կ-ները կազմվում են հնաշխ. կամ քարաբանահնաշխարհագրական քարտեզների հետ միաժամանակ (սովորաբար կառուցվածքային և հնաշխ. զոնաներին խաչաձև):

**P-42. РАЗРЕЗ (ПРОФИЛЬ) РАЗВЕДОЧНЫЙ – ԳԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ (ՏՐԱՄԱՏ, ՊՐՈՖԻԼ), PROSPECTING SECTION (PROFILE),** հնքվ-ի կամ հանքային դաշ-

տի հետախուզված տեղամասի երկրք. կառուցվածքի գրաֆիկական պատկերումը ուղղաձիգ, հազվադեպ թեք հարթության վրա՝ ըստ հետախուզական ու շահագործական տվյալների (սովորաբար ըստ հետախուզական փորվածքների, նմուշահանման կետերի և այլ տվյալների): Երկրք. քարտեզի և շերտագրական սյունակի հետ միասին Յ. կ. ծավալային պատկերացում է տալիս տեղամասի կառուցվածքի, օգտ. հնձ-ների մարմինների տարածական տեղադիրքի և փոխհարաբերության, նրանց կազմվածքի, հաստության, ձևի, տեղադրման պայմանների և այլնի մասին: Ելնելով օգտ. հնձ-ների կառուցվածքային տարրերի ու մարմինների հետ ունեցած հարաբերությունից՝ տարբերվում են լայնական, երկայնակի և թեք Յ. կ-ներ:

**P-43. РАЗРЕЗ СТРАТИГРАФИЧЕСКИЙ ОПОРНЫЙ – ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ, STRATIGRAPHICAL KEY SECTION**, երկրակեղևի որևէ տեղամասի կամ նրա հատվածի նստվածքների մանրամասն կտրվածք, որն աչքի է ընկնում հնարավոր լրիվությամբ (առանց զգալի շերտագրական ընդմիջումների և ընդհատումների մերկացումների միջև), բրածո օրգանական մնացորդների բավարար պարունակությամբ, վերադիր և տակդիր գոյացությունների պարզորոշ սահմաններով ու փոխհարաբերությամբ և տարածաշրջանի ընդհանուր կտրվածքում դրանց շերտագրական դիրքի հստակությամբ: Յ. շ. կ-ները ծառայում են տվյալ տարածաշրջանի սահմաններում մյուս կտրվածքները դրանց հետ համեմատելու համար, ինչպես նաև միջտարածքային հարաբերակցությունների համար:

**P-44. РАЗРЕЗ СТРАТИГРАФИЧЕСКИЙ СВОДНЫЙ – ԱՄՓՈՓՉ ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ, STRATIGRAPHICAL COMPOSITE SECTION**, երկրակեղևի որոշակի տեղամասի կտրվածք, որը կազմվել է մասնական կտրվածքները միմյանց հետ համադրելու միջոցով՝ հիմք ընդունելով հենակետային շերտերն ու հորիզոնները:

**P-45. РАЗРЫВ, РАЗРЫВНОЕ НАРУШЕНИЕ – ԽՁՎԱԾՔ, ԽՁՎԱԾՔԱՅԻՆ ԽԱՒՏՈՒՄ, RUPTURE, FRACTURE**, տեկտ. խախտումների շատ տեսակների ընդհանուր անվանում: Ապարների հոծության խախտում: Առանձնացնում են Խ. տեղաշարժմամբ (խզվածքային տեղաշարժեր կամ պարակլազներ) և Խ. առանց տեղաշարժման (ճեղքեր կամ դիակլազներ): Այդ ընթացքում ապարների անջատված զանգվածները առաջացնում են Խ-ի թևերը: Թեք Խ-ի դեպքում տարբերում են պառկած թև (խզվածքի տակդիր թև) և կախված թև (վերնաթև) (Խ-ին ծածկող թև): Խզվածքային տեղաշարժերի մեջ առանձնացվում են՝ տեղաշարժ, տարաշարժ, վարնետք, վերնետք, վրաշարժ, տեկտոնական ծածկույթ, վարնետք-տեղաշարժ և այլն: Առանց տեղաշարժման տեկտ. ճեղքերի չափերը մեծ մասամբ չեն անցնում մի քանի մ-ից: Տեղաշարժմամբ Խ-ները փոփոխարկվում են փոքր ճեղքերից մինչև խորքային բեկվածքները, որոնք հատում են ամբողջ երկրակեղևը և վերին միջնապատյանի մի մասը: Ըստ ծալքավոր և այլ տեկտ. կառուցվածքների հարաբերության՝ Խ-ները կարող են լինել սահմանագատող, ներքին և միջանցական: Տեկտ. Խ-ների համակարգով խոշոր իջեցումները կոչվում են ռիֆտեր: Հաճախ խզվածքների խոռոչները ուղի են հանդիսանում ջրաջերմային (հիդրոթերմալ) լուծույթների համար՝ սկիզբ տալով երակային ապարների առաջացմանը, նույնն է՝ դիպլոմկտիվ խախտումներ, տե՛ս նաև Разломы:

**P-46. РАЗРЫВНЫЕ ДВИЖЕНИЯ – ԽՁՎԱԾՔԱՅԻՆ ՇԱՐժՈՒՄՆԵՐ, FAULT MOVEMENTS, FRACTURING, MOVEMENTS OF RUPTURE**, տեկտ. շարժումներ, որոնք հարուցում են երկրք. մարմինների հոծության խախտում և խզվածքների ու ճեղքերի առաջացում: Դրանցով կատարվում է ապարների տեղաշարժ:

**P-47. РАЗРЫВНЫЕ СМЕЩЕНИЯ, ПАРАКЛАЗЫ – ԽՉՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ, ՊԱՐՎՎԱԶՆԵՐ, FAULTS, PARACLASES**, տեկտ. խզվածքներ, որոնք ուղեկցվում են տեղաշարժմամբ:

**P-48. РАКОВИНА – ԽԵՑԻ, SHELL**, մի շարք անողնաշարավորների (փափկամարմիններ, ուստանիներ, որոշ հատվածոտանիներ և այլն), ինչպես նաև որոշ մախակենդանիներին հատուկ պինդ արտաքին, հազվադեպ՝ ներքին կմախքային գոյացություն: Սովորաբար բաղկացած է օրգանական նյութից՝ ներծծված սիլիցիումի միացություններով, ածխաթթվային կալցիտով և որոշ այլ միներալային նյութերով, որոնք երբեմն ներառված են ավազահատիկներով, դիատոմային ջրիմուռների զրահներով, սպունգների ասեղիկներով և այլն: Խ-ների կուտակումները գոյացրել են շատ մատածքային ապարներ (նումուլիթային կրաքարեր, պտերոպոդային տիղմ և այլն):

**P-49. РАКООБРАЗНЫЕ (Crustacea) – ԽԵՑԳԵՏՆԱԿԵՐՊԵՐ, CRUSTACEOUS**, հատվածոտանի կենդանիների դաս, մոտ 20000 տեսակ: Մյուս հատվածոտանիներից տարբերվում են երկու զույգ բեղիկների առկայությամբ և խռիկային շնչառությամբ: Բնակվում են գլխավորապես ծովերում, ինչպես նաև՝ ներքին ջրավազաններում: Միջին բեմբրի-այժմ:

**P-50. РАКУШЕЧНИК, РАКУШНЯК – ԽԵՑԵՔԱՐ, SHELL LIMESTONE, COQUINA**, կրաքար, որը բաղկացած է առավելապես փափկամարմինների ու ուստանիների ամբողջական կամ ջարդոտված խեցիներից: Սովորաբար առաջանում է ափամերձ գոտում:

**P-51. РАМП** (ֆրանս. rampe – թեքություն) – **ՌԱՄՊ, RAMP**, գրաբեն, որը սահմանափակված է վարնետքերով կամ վրաշարժերով: Ռ-ի ձևավորման վարկածը ամերիկյան որոշ երկրաբաններին հետաքրքրում է Մեռյալ ծովի կառուցվածքը բացատրելու համար:

**P-52. РАПАКИВИ** (ֆին. rapakivi, rapa-ից – նստվածք, թափոն, ցեխ և kivi – քար) – **ՌԱՊԱԿԻՎԻ, RAPAКИVI**, բարձրացված ալկալիականության պորֆիրանման գրանիտ՝ բնորոշ կառուցվածքով, որը պայմանավորված է սովորաբար պլագիոկլազի երիզներով շրջապատված կալիումական դաշտային սպաթի խոշոր, կլորացված բյուրեղների առկայությամբ: Այդպիսի կառուցվածքը պայմանավորում է ապարի համեմատաբար արագ քայքայումը, որի հետևանքով և կապված է նրա անվանումը:

**P-53. РАССЕЧКА – ԿՈՂԱՓՈՐՎԱԾՔ, LONGWALL FACE DEVELOPMENT**, երկրի մակերևույթ անմիջականորեն ելք չունեցող, մինչև 20-30 մ, երբեմն՝ 50-100 մ երկարության ստորգետնյա հորիզոնական փորվածք, որը, սկիզբ առնելով որևէ փորվածքից, անց է կացվում այդ փորվածքի կողքին՝ ապարի տարածմանը մոտավորապես ուղղահայաց և ծառայում է գլխ. հետախուզման նպատակներին:

**P-54. РАССЕЯННЫЕ ЭЛЕМЕНТЫ – ՑՐՎԱԾ ՏԱՐԵՐ, TRACE ELEMENTS**, քիմ. տարրերի խումբ (ռուբիդիում, կադմիում, սկանդիում, գալիում, ինդիում, թալիում, գերմանիում, հաֆնիում, վանադիում, սելեն, տելուր, ռենիում), որոնք բնության մեջ հանդիպում են գլխ. խառնուրդների տեսքով տարբեր միներալներում և կորզվում են այլ հանքանյութերի կամ օգտ. հնձ-ների (ածուխներ, աղեր, ֆոսֆորիտներ և այլն) հետ զուգընթաց: Ց. տ-ի հանքանյութերը բնության մեջ հանդիպում են խիստ հազվադեպ:

**P-55. РАССЛАИЦЕВАНИЕ – ԹԵՐԹԱՏՈՒՄ (ԹԵՐԹԱՎՈՐՈՒՄ), SCHIST-FORMING PROCESS**, ապարներում թերթավորության (թերթավոր կազմվածքի) առաջացում:

**P-56. РАССОЛЫ – ԱՂԱՋՐԵՐ, BRINES, SALT BRINES**, բնական կամ արհեստական ջրային լուծույթներ, որոնցում լուծված աղերի պարունակությունը գերազանցում է 35 գ/լ (ըստ Վ. Ի. Վերնադսկու՝ 50 գ/լ):

- P-57. РАСТУЩАЯ ДЕЛЬТА – ԱՃՈՂ ԳԵՏԱԲԵՐԱՆ (ԴԵՆՏԱ), GROWING DELTA**, գետաբերան, որը մեծացնում է իր մակերեսը՝ գետի կուտակումային գործընթացի հետևանքով:
- P-58. РАСЩЕПЛЕНИЕ ПЛАСТА – ՇԵՐՏԻ ԾԵՂՔՈՒՄ, SPLITTING OF STRATUM**, ապարի մեկ շերտի ֆացիալ բաժանումը երկու և ավելի շերտերի, որը տեղի է ունենում նստվածքների կուտակման ժամանակ՝ նստվածքակուտակման պայմանների փոփոխության հետևանքով:
- P-59. РЕАЛЬГАР** (ֆրանս. réalgar, արաբ. ռախս ալ գհար, բառ. քարանձավի, հանքի փոշի) – **ՌԵԱԼԳԱՐ, REALGAR, RED ARSENIC**, միներալ սուլֆիդների դասից, AsS, պարունակում է 70.1 % As: Բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է: Առաջացնում է վառ նարնջակարմիր գույնի զուգահեռանիստեր: Հանդիպում է հոծ հատիկային զանգվածների կամ փոշենման հողային կուտակումների տեսքով, փխրուն է: Կարծրությունը՝ 1.5-2, հանդես է գալիս, սովորաբար, աուրիպիգմենտի, անտիմոնիտի, կապարի, արծաթի ու ոսկու ջրաջերմային (հիդրոթերմալ) հանքանյութերի հետ: Արևի լույսի ազդեցության տակ քայքայվում և անցնում է դեղին աուրիպիգմենտի: Ռ. մկնդեղ ստանալու կարևոր հանքանյութ է:
- P-60. РЕГЕНЕРАЦИЯ КРИСТАЛЛОВ** (ուշ լատ. regeneratio – վերականգնում, վերածնունդ) – **ԲՅՈՒՐԵՂՆԵՐԻ ՎԵՐԱՎԱՆԳՆՈՒՄ (ՌԵԳԵՆԵՐԱՑԻԱ), REGENERATION OF CRYSTALS**, համապատասխան բաղադրության գերհագեցած միջավայրի մեջ խորասուզվելիս մասամբ լուծված բյուրեղի կամ նրա մասերի վերականգնումը՝ կանոնավոր հարթանիստ և ուղղակող ձևերի:
- P-61. РЕГЕНЕРАЦИЯ МЕСТОРОЖДЕНИЯ** (ուշ լատ. regeneratio – վերածնունդ, վերականգնում) – **ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՎԵՐԱՎԱՆԳՆՈՒՄ, REGENERATION OF DEPOSIT**, ներծին հնքվ-երի ձևավորում՝ ի հաշիվ ավելի վաղ մետաղական հանքակուտակ նյութերի վերանստեցման, որոնք հետագա տեկտ. գործընթացներով ենթարկվել են փոխակերպային, մագմայական և ջրաջերմային (հիդրոթերմալ) ակտիվացման:
- P-62. РЕГЕНЕРАЦИЯ ОБЛОМОЧНЫХ ЗЕРЕН** (ուշ լատ. regeneratio – վերականգնում, վերածնունդ) – **ԲԵԿՈՐԱՅԻՆ ՀԱՏԻԿՆԵՐԻ ՎԵՐԱՎԱՆԳՆՈՒՄ, REGENERATION OF DETRITAL GRAINS, REGENERATION OF CLASTIC GRAINS**, առավելապես ավազաքարերում քվարցի ու դաշտային սպաթների բեկորային հատիկների երեսպատում և աճ՝ սկզբնական բեկորային հատիկի օպտիկական կողմնորոշման (և առանց դրա) պահպանմամբ:
- P-63. РЕГЕНЕРАЦИЯ ТЕКТОНИЧЕСКАЯ** (ուշ լատ. regeneratio – վերականգնում, վերածնունդ) – **ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՎԵՐԱՎԱՆԳՆՈՒՄ, TECTONIC REGENERATION**, տեկտ. գործընթաց, որը հակադիր է կոնսոլիդացմանը (կայունացմանը) և հանգեցնում է տեկտ. շարժունակության բարձր աստիճանի վերսկսմանը, մասնավորապես՝ պլատֆորմի տեղում շարժունակ պայմանների վերականգնմանը, տե՛ս Активизация тектоническая:
- P-64. РЕГИОН** (լատ. regio – Երկիր, մարզ) – **ԵՐԿՐԱՇՐՋԱՆ, ՌԵԳԻՈՆ (ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ), REGION**, խոշոր անհատական տարածքային միավոր: Ֆիզ. աշխարհագրությունում ֆիզաշխ. շրջանացման միավորի ընդհանրացված անվանում (անկախ տեկտ. կարգից):
- P-65. РЕГИОН ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКИЙ – ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿՐԱՇՐՋԱՆ (ՌԵԳԻՈՆ), ENGINEERING-GEOLOGICAL REGION**, ճարտարագիտաերկրաբանական շրջանացման առավել խոշոր ստորաբաժանում, որը փոքրամասշտաբ ակնարկային քարտեզների վրա առանձնացվում է այնպիսի

հատկանիշների ընդհանրությամբ, ինչպիսիք են՝ երկրբ. և ջրաերկրբ. ընդհանուր պայմանները, երկրծ. իրադրությունը և երկրբ. գործընթացները:

**P-66. РЕГИОНАЛЬНАЯ ГИДРОГЕОЛОГИЯ – ԵՐԿՐԱՇՐՋԱՆԱՅԻՆ (ՌԵԳԻՈՆԱԼ) ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, REGIONAL HYDROGEOLOGY**, ջրաերկրաբանության բաժին, որն զբաղվում է որոշակի երկրաշրջանների (մարզերի) ստր. ջրերի առաջացման, տեղադրման, տարածման օրինաչափությունների, երկրակեղևի երկրբ. կառուցվածքի և զարգացման պատմության հետ նրանց կապի ուսումնասիրությամբ՝ նպատակ ունենալով պարզաբանելու ժողովրդական տնտեսության մեջ ստր. ջրերի օգտագործման հնարավորություններն ու հեռանկարները: Ե. ջ. քմնարկում և մշակում է տարբեր ֆիզաշխ. պայմաններ և երկրբ. կառուցվածք ունեցող տարածքների երկրաշրջանային տվյալների ընդհանրացման, ջրաերկրբ. քարտեզահանման և շրջանացման սկզբունքները:

**P-67. РЕГИОНАЛЬНЫЙ МЕТАМОРФИЗМ – ԵՐԿՐԱՇՐՋԱՆԱՅԻՆ (ՌԵԳԻՈՆԱԼ) ՓՈՒԽԱՎԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՄԵՏԱՄՈՐՖՈՒԹՅՈՒՆ), REGIONAL METAMORPHISM**, լայնարձակ տարածքներում ապարների փոխակերպություն՝ ապարների միներալային կազմի և կառուցվածքի վերափոխում, որը հարուցվում է միակողմանի ու հիդրոստատիկ ճնշմամբ, ջերմաստիճանով և ավելի փոքր չափով՝ խորքային լուծույթների ներագդեցությամբ: Ե. փ. արտահայտվում է շարժուն գոտիներում՝ կապված մակերևութային ապարների՝ երկրակեղևի խորքային զոնաներում խորասուզվելու հետ: Ե. փ-յան արգասիքներ են՝ անֆիբոլիթները, ֆիլիտները, գնեյսները, միզմատիտները, բյուրեղային և փոխարկերպային թերթաքարերը, տե՛ս նաև *Метаморфизм*:

**P-68. РЕГИОНАЛЬНЫЙ ЯРУС – ԵՐԿՐԱՇՐՋԱՆԱՅԻՆ (ՌԵԳԻՈՆԱԼ) ՉՐԱԿ, REGIONAL STAGE**, երկրաշրջանային շերտագրական ստորաբաժանումների հիմնական տաքսոնոմիական միավոր, մոտավորապես համապատասխանում է ընդհանուր շերտագրական սանդղակի երկրբ. հարկին և սովորաբար միավորում է տարբեր քարաբանական կազմի մի քանի հասակակից շերտախմբեր՝ բնորոշ հնէաբանական մնացորդների առկայության հիման վրա:

**P-69. РЕГОЛИТ – ՌԵԳՈԼԻԹ, REGOLITH**, Լուսնի մակերևութային շերտ, կազմված է բեկորային նյութից, որը ձևավորվել է առաջնային լուսնային ապարի վրա երկարատև բազմակի հարվածային երևույթների հետևանքով (բաղադրությամբ մոտ է բազալտին): Ռ-ի մակերևույթը ծածկված է երկնաքարերի հարվածների խառնարաններով: Ռ-ի մակերեսը փոշենման է, ավելի խոր՝ պնդացած է:

**P-70. РЕГРЕССИВНАЯ ЭРОЗИЯ – ՅԵՏԸՆԹԱՑ (ՌԵԳՐԵՍԻՎ) ՈՂՈՂԱՍԱՇՈՒՄ (ԷՐՈՉՄԱԿ), RETROGRESSIVE EROSION, HEADWARD EROSION, BACKWARD EROSION**, մակերևութային ջրհոսքերով ապարների քայքայման ու ողողատարման գործընթաց, որը տարածվում է նրանց ստորին հոսանքից դեպի վեր: Խորքային ողողամաշման հետ միասին հանգեցնում է հավասարակշռության երկայնակի տրամատի (պրոֆիլի) ձևավորմանը:

**P-71. РЕГРЕССИВНОЕ ЗАЛЕГАНИЕ – ՅԵՏԸՆԹԱՑ (ՌԵԳՐԵՍԻՎ) ՏԵՂԱԴՐՈՒՄ, REGRESSIVE BEDDING**, ծովային ծագման ապարների տեղադրում՝ ծովի նահանջի պայմաններում: Բնորոշ է ֆացիաների օրինաչափ փոփոխությունը՝ համեմատաբար խորջրայիններից դեպի ծանծաղուտայինը՝ տարածության վրա և ուղղաձիգ կտրվածքում:

**P-72. РЕГРЕССИВНЫЙ МЕТАМОРФИЗМ – ՅԵՏԸՆԹԱՑ (ՌԵԳՐԵՍԻՎ) ՓՈՒԽԱՎԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՄԵՏԱՄՈՐՖՈՒԹՅՈՒՆ), REGRESSIVE METAMORPHISM**, միներալա-

յին փոխարկումներ, որոնք հարուցվում են մագմայական և փոխակերպային ապարներում նոր՝ փոխակերպության ավելի ցածր աստիճանի պայմաններին հարմարվելու հետևանքով: Դա հանգեցնում է նախորդ առաջընթաց փոխակերպության գործընթացում առաջացած ավելի բարձր ջերմաստիճանային միներալների փոխարեն նոր՝ ցածր ջերմաստիճանային միներալային խմբակցությունների գոյացմանը:

**P-73. РЕГРЕССИЯ** (լատ. regressio – հետադարձ շարժում, հեռացում) – **ՉԵՏՆՆԹԱՑՈՒ-ԹՅՈՒՆ (ՌԵԳՐԵՍԻԱ), REGRESSION**, ծովի դանդաղ նահանջը ափերից, որը տեղի է ունենում ցամաքի բարձրացման, օվկիանոսային հատակի իջեցման կամ օվկիանոսային ավազանում ջրի ծավալի փոքրացման հետևանքով (օր.՝ սառցադաշտային դարակարգերի ժամանակ): Չ. երկրբ. պատմության ընթացքում բազմակի տեղի է ունեցել՝ հիմնականում համընկնելով լեռնագոյացման դարակարգերի հետ:

**P-74. РЕДКИЕ МЕТАЛЛЫ** – **ՉԱԶՎԱԳՅՈՒՄՍ ՄԵՏԱՂՆԵՐ, RARE METALS**, մետաղների պայմանականորեն առանձնացվող խումբ, ներառում է Sn, W, Mo, Bi, Sb, Hg, V, Ta, Nb, Cd և այլն:

**P-75. РЕДКОЗЕМЕЛЬНЫЕ ЭЛЕМЕНТЫ** – **ՉԱԶՎԱԳՅՈՒՄՍ ՉՈՂԵՐԻ ՏԱՐԵՐ, RARE-EARTH ELEMENTS**, այս անվան տակ միավորվում են լանտանը (դասական թիվը՝ 57) և Մենդելևեի պարբերական համակարգում նրան հաջորդող 14 տարրերը (դասական թիվը՝ 58-71), որոնք կոչվում են լանտանոիդներ:

**P-76. РЕЖИМ ГИДРОЛОГИЧЕСКИЙ** – **ՋՐԱԲԱՆԱԿԱՆ ՌԵՃԻՄ, HYDROLOGICAL REGIME**, ժամանակ-տարածության մեջ ջրային օբյեկտի (լճի, գետի, ճահճի և այլն) փոփոխությունների օրինաչափությունները, որոնք պայմանավորված են ավազանի ֆիզաշխ. (առաջին հերթին կլիմայական) պայմաններով, ինչպես նաև հիդրոտեխնիկական միջոցառումներով:

**P-77. РЕКА** – **ԳԵՏ, RIVER, STREAM**, զգալի չափերի ջրային հոսք, որը հաստատուն հոսում է իր մշակած հունով և սնվում է իր ավազանի մակերևութային և ստր. հոսքերով: Գ. իր վտակների հետ առաջացնում է գետային համակարգ, որի բնույթը և զարգացումը պայմանավորված է գլխ. կլիմայով, ռելիեֆով և ավազանի չափերով ու երկրբ. կառուցվածքով: Գ-երը բաժանվում են երկու խմբի՝ լեռնային, որոնք արագ հոսանքով հոսում են սովորաբար նեղ հովիտներով, և հարթավայրային Գ-եր, որոնք ունեն ավելի դանդաղ հոսանք և լայն դարավանդված հովիտներ: Գ-ի ռեժիմը կախված է գլխ. Գ-ի սնման բնույթից և տեղանքի կլիմայական պայմաններից: Գ-երը բնական միջավայրի կարևոր տարր են, կենցաղային ու արդյ. ջրամատակարարման աղբյուր, բնական ջրային ուղի, հիդրոէներգիայի մշտական աղբյուր, ձկների և այլ քաղցրահամ օրգանիզմների, ինչպես նաև ջրային բուսականության բնակավայր:

**P-78. РЕЛИКТОВАЯ ФАУНА** (լատ. relictum – մնացած, մնացորդ) – **ՄՆԱՑՈՒԿԱՅԻՆ ՖԱՈՒՆԱ, RELIC FAUNA**, հին ֆաունա, որը պահպանվել է գոյության համար բարենպաստ վայրերում:

**P-79. РЕЛИКТОВАЯ ФЛОРА** (լատ. relictum – մնացած, մնացորդ) – **ՄՆԱՑՈՒԿԱՅԻՆ ՖԼՈՐԱ, RELIC FLORA**, հին ֆլորայի տեսակների համախմբում, որը հատվածների տեսքով պահպանվել է նրա պահպանության համար հատկապես բարենպաստ տեղամասերում:

**P-80. РЕЛЬЕФ** (ֆրանս. relief, լատ. relivo-ից – բարձարցնում են) – **ՌԵԼԻԵՖ, RELIEF, TOPOGRAPHY**, երկրի մակերևույթի տարբեր ուրվապատկերներ, չափեր, ծագում, հասակ և զարգացման պատմություն ունեցող անհարթությունների (ծևերի) համախումբ: Կազմված է դրական ձևերից, որոնք առաջացնում են ռելիե-

ֆի բարձրացումներ, և բացասական, որոնք իրենցից ներկայացնում են իջվածքներ: Ըստ մասշտաբի՝ տարբերում են մոլորակային ձևեր, խոշորագույն (մեգա...), խոշոր (մակրո...), միջին (մեզո...) և մանր (մանո...) ձևեր: Ռ. ձևավորվում է երկրի մակերևութի վրա ներծին (առավելապես տեկտ.) և արտածին ուժերի համախմբային ներգործության հետևանքով: Ռ-ի ձևավորման մեջ կարևոր դեր են խաղում ձգողական (գրավիտացիոն) գործընթացները, որոնք ընթանում են ժանրության ուժի անմիջական ներազդեցության դեպքում: Բնական Ռ-ի վրա զգալի են մարդու կատարած փոփոխությունները: Ռ. ուսումնասիրում է երկրաձևաբանությունը: Ռ. դիտարկվում է տարբեր տեսանկյուններից՝ արտաքին տեսքի, ձևաչափական, հասակային, ծագումնաբանական և այլն:

**P-81. РЕЛЬЕФ БРОНИРОВАННЫЙ – ՋՐԱՀԱՊԱՏՎԱԾ ՌԵԼԻԵՖ, ARMoured LANDFORMS**, պինդ ապարի (կրաքարի, ավազաքարի, հրաբխավիժական ապարի և այլն) շերտի մշակված մակերևութ, որը ներքևում տեղադրված ապարները ժամանակավորապես պահպանում է քայքայումից:

**P-82. РЕЛЬЕФ ВУЛКАНИЧЕСКИЙ – ՀՐԱՐԽԱՅԻՆ ՌԵԼԻԵՖ, VOLCANIC RELIEF**, առաջանում է տարահասակ կենտրոնական տիպի և ճեղքային արտավիժումների հետևանքով: Հ. ռ-ի բնորոշ առանձնահատկությունը ռելիեֆի կուտակումային տեսակների գերակշռությունն է, որոնց առաջացումը կապված է լավայի արտավիժման (լավային սարավանդներ և հոսքեր) և հրաբեկորային նյութի ու լավայի կուտակման (հրաբխային կոներ) հետ: Հազվադեպ հանդիպում են արտամղային (էքստրուզիվ) գմբեթներ և կոներ:

**P-83. РЕЛЬЕФ ОБРАЩЁННЫЙ**, տե՛ս Инверсионный рельеф:

**P-84. РЕЛЬЕФ СКУЛЬПТУРНЫЙ – ՔԱՆՊԱՎԱԳՈՐԾԱՎԱՆ ՌԵԼԻԵՖ, SCULPTURED RELIEF**, տե՛ս Скульптурный рельеф:

**P-85. РЕЛЬЕФ УНАСЛЕДОВАННЫЙ – ԺԱՈՒՆԳՎԱԾ ՌԵԼԻԵՖ, INHERITED LANDFORMS**, ժամանակակից ռելիեֆ, որը հիմնական գծերով կրկնում է հին ռելիեֆը, շարունակում է ձևավորվել նախկին ուղղությամբ, սովորաբար երկարատև զարգացող տեկտ. կառուցվածքների կանխորոշմամբ:

**P-86. РЕОЛОГИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ – ՌԵՈԼՈԳԻԱԿԱՆ ՀՐԱՐԽԱՅԻՆ ԳՈՐԾՆԹԱՅՆԵՐ, RHEOLOGICAL PROCESSES**, բնական գործընթացներ, որոնք կապված են նյութի ( մետաղների, ապարների, սառույցի, գրունտների) հոսունության հետ և ուղեկցվում են առաջնային կառուցվածքի ձևախախտմամբ:

**P-87. РЕОЛОГИЯ** (հուն. rheos – հոսանք և logos – ուսմունք, խոսք) – **ՌԵՈԼՈԳԻԱ ՀՐԱՐԽԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ, RHEOLOGY**, մեխանիկայի բաժին, որն ուսումնասիրում է համատարած միջավայրերի (հեղուկ, գազանման և պինդ մարմինների) հոսունության ու ձևախախտման հատկությունները:

**P-88. РЕСУРСЫ ВОДНЫЕ – ՋՐԱՅԻՆ ՊԱՀԱՐՆԵՐ, WATER RESOURCES**, մակերևութային և ստր. ջրերի վերականգնվող պաշարներ, որոնք կարող են օգտագործվել ժողտնտեսության տարբեր նպատակների համար:

**P-89. РЕЧНАЯ СЕТЬ – ԳԵՏԱՅԻՆ ՑԱՆՑ, DRAINAGE NETWORK, RIVER SYSTEM**, որևէ տարածքի սահմաններում գտնվող բոլոր գետերի համակցություն:

**P-90. РЕЧНАЯ СИСТЕМА – ԳԵՏԱՅԻՆ ՀԱՄԱՎԱՐԳ, RIVER SYSTEM, STREAM SYSTEM**, գլխավոր գետը, որը թափվում է ընդունող ջրավազանը (ծովը, լիճը) և նրա մեջ ջուր բերող բոլոր ջրհոսքերը:

**P-91. РЕЧНАЯ ТЕРРАСА – ԳԵՏԱՅԻՆ ԴԱՐՎԱՆԴ (ԴԱՐԱՏԱՓ), RIVER TERRACE**, դարավանդ, որն առաջացել է գետի գործունեության հետևանքով: Տարբերում են



ողողամաշման (երոզիոն) դարավանդներ, կուտակումային դարավանդներ, ալյուվիալ դարավանդներ, տե՛ս նաև Террасы:

**P-92. РЕЧНАЯ ЭРОЗИЯ – ԳԵՏԱՅԻՆ ՈՂՈՂԱՍԱՇՈՒՄ (ԵՐՈԶԻԱ), STREAM EROSION**, հոսող ջրի ողողաքայքայման գործունեություն: Տարբերում են խորքային ողողամաշում, կողային ողողամաշում և հետընթաց (ռեգրեսսային) ողողամաշում:

**P-93. РЕЧНОЕ ОЗЕРО – ԳԵՏԱՅԻՆ ԼԻՃ, RIVER LAKE**, 1) ժամանակավոր ջրավազան, որն առաջանում է տարվա չոր եղանակի ժամանակ գետի հոսքի խիստ ցածրացման հետևանքով, 2) ողողահունային լիճ:

**P-94. РЕЧНЫЕ ОТЛОЖЕНИЯ – ԳԵՏԱՅԻՆ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, FLUVIAL DEPOSITS**, գետային հունների, ողողահունների, հնահունների, գետային ավազաբլուրների, ճահիճների նստվածքներ: Գ. ն. բնորոշվում են առավելապես բեկորային ապարների զարգացմամբ ու փոփոխականությամբ, կավերի նկատմամբ ավազների գերակայությամբ, նրանց հատիկաչափական ու միներալային կազմի բազմազանությամբ և ճալաքարուտների առկայությամբ: Գ. ն-ի կազմը և հաստությունը կախված է գետի տիպից (լեռնային, հարթավայրային), նրա չափերից և գետի հոսանքի այն մասից, որտեղ տեղի է ունենում նստվածքների կուտակում: Օր.՝ Լեռնային գետերի նստվածքներում ճալաքարային նստվածքները զուգակցվում են ավազային կամ կավային նստվածքների հետ: Դրանց մեջ հանդիպում են ցրոնային հանքավայրեր: Ծանր միներալների կազմը խիստ բազմազան է, երբեմն մեծ է հանքային միներալների պարունակությունը: Հարթավայրային գետերի նստվածքները խիստ տարբերվում են նյութի տեսակավորմամբ, նրա մշակվածությամբ, նրբահատիկությամբ, ավելի մեղմաթեք շեղ շերտայնությամբ, տե՛ս նաև՝ АЛЛЮВИИ:

**P-95. РЕШЁТКА КРИСТАЛЛИЧЕСКАЯ – ԲՅՈՒՐԵՂԱՅԻՆ ՑԱՆՑ, CRYSTALLINE LATTICE**, բյուրեղային վիճակում նյութին հատուկ մասնիկների (ատոմներ, իոններ, մոլեկուլներ) կանոնավոր դասավորություն, որը բնորոշվում է երեք չափումներում պարբերական կրկնությամբ: Կազմված է բյուրեղների կառուցվածքը բնութագրող կրկնվող բջիջներից: Ըստ բյուրեղի համաչափության՝ տարրական բջիջը կարող է լինել շեղանկյուն կամ ուղղանկյուն զուգահեռանիստ, քառանկյուն կամ վեցանկյուն պրիզմա, խորանարդ: Բ. ց-ի մաթեմատիկական սխեման, որում պահպանվում են միայն տեղափոխումների երկրաչափական պարամետրերը, և ցույց չի տրվում ատոմների կոնկրետ տեղաբաշխումը տվյալ կառուցվածքում, կոչվում է տարածական ցանց: Բ. ց-ով է պայմանավորված բյուրեղների անիզոտրոպությունը, նիստերի հարթ լինելը, անկյունների կայունությունը և այլ հատկությունները:

**P-96. РИО... – ՌԻՈ..., RHYO...**, նախածանց, որը ցույց է տալիս ապարի մեջ ազատ քվարցի առկայությունը:

**P-97. РИОЛИТ – ՌԻՈԼԻԹ, RHYOLITH**, տե՛ս Липарит:

**P-98. РИССКАЯ ЛЕДНИКОВАЯ ЭПОХА (ЛЕДНИКОВЬЕ), РИСС** (գերմ. Ris – Ռիս, Դանուբի վտակներից մեկի անունով) – ՌԻՍՅԱՆ ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ԴԱՐՎԱՐԳ, ՌԻՍ, RISS ICE AGE, Ալպերի մարզի պլեյստոցենյան առավելագույն սառցապատման նախավերջին դարակարգ (250-75 հազ. տ. առաջ): Համապատասխանում է Արևելաեվրոպական հարթավայրի դնեպրյան ու մոսկովյան, Հս. Ամերիկայի իլլոնոյսյան դարակարգերին:

**P-99. РИТМ (В ОСАДКОНАКОПЛЕНИИ) – ՌԻԹՄ (ՆՍՏՎԱԾՔԱՎՈՒՏԱՎՄԱՆ ՄԵՋ), RHYTHM**, նստվածքակուտակման ընթացքում միանման կամ շատ մոտ պայմանների մոտավորապես հավասարաչափ կրկնություն, որը հանգեցնում է ռիթմականորեն շերտավորված նստվածքների կուտակմանը: Յուրաքանչյուր կրկնությանը

համապատասխանում է ապարների օրինաչափ զուգակցում (հերթագայում): Ապարների այդպիսի համակցությունները հաճախ անվանում են ցիկլեր (եթե նրանք ունեն համեմատաբար մեծ հաստություն) կամ ռիթմեր (փոքր հաստության դեպքում): Կախված հաստությունից՝ տարբերում են խոշորառիթմեր (մակրոռիթմեր՝ մեծ հաստություն), միջնառիթմեր (մեզոռիթմեր՝ մի քանի տասնյակ մ) և մանրառիթմեր (միկրոռիթմեր՝ սմ և դմ): Շատ երկրներում «ռիթմ», «ցիկլ» և «նստվածքային ցիկլ» տերմինները հասկացվում են որպես հոմո-ներ:

**P-100. РИТМИЧНАЯ СЛОИСТОСТЬ – ՌԻԹՄԱՎԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, RHYTHMIC LAMINATION, RHYTHMIC BEDDING,** շերտավորություն, որը բնորոշվում է կտրվածքում զույգ կամ մեծ թվով շերտերի կանոնավոր կրկնությամբ:

**P-101. РИТМИЧНОСТЬ ОСАДКОНАКОПЛЕНИЯ – ՆՍՏՎԱԾՔԱՎՈՒՏԱՎԱՄԱՆ ՌԻԹՄԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, RHYTHM OF SEDIMENTATION,** նստվածքների կուտակման պայմանների շատ թե քիչ հավասարաչափ հերթագայում, որը պայմանավորված է պարբերաբար գործող կամ համեմատաբար կանոնավոր փոփոխվող գործոններով՝ հիմնականում տեկտ. և կլիմայական: Ռիթմական նստվածքակուտակման արգասիքներ են ֆլիշը, սառցադաշտալճային ժապավենաձև կավերը: Ն. ռ. ֆացիալ վերլուծության հիմնական մեթոդներից մեկն է:

**P-102. РИТМИЧНОСТЬ (ЦИКЛИЧНОСТЬ) УГЛЕНОСНЫХ ФОРМАЦИЙ – ԱԾԽԱՐԵՐ ՖՈՐՄԱՑԻԱՆԵՐԻ ՌԻԹՄԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ (ՑԻԿԼԱՅՆՈՒԹՅՈՒՆ), RHYTHM OF COAL-BEARING FORMATIONS,** ածխաբեր ֆորմացիաներում նման շերտերի և դրանց համալիրների բազմակի օրինաչափ կրկնություն: Այն առավել ակնառու արձանագրվում է նստվածքների հատիկաչափական կազմի փոփոխությամբ, որի հետևանքով առաջանում են հատիկաչափական ցիկլեր (ռիթմեր): Վերջիններում դիտվում է նստվածքների հատիկների խոշորության փոփոխություն ներքևից դեպի վեր: Ածխաբեր ֆորմացիաների ֆացիալ կազմը խիստ տարբեր է (մերձափնյա ծովային, ծովալճակային, դելտային, գետային, լճաճահճային և այլն): Ա. ֆ. ռ. կիրառվում է ածխաբեր ֆորմացիաների և ածուխների շերտերի համահարաբերակցության համար:

**P-103. РИТМОСТРАТИГРАФИЯ – ՌԻԹՄԱՇԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, RHYTHMOSTRATIGRAPHY,** երկրբ. իրադրությունների և շերտերի շերտագրական ուսումնասիրություն՝ նստվածքակուտակման ռիթմերի բացահայտման միջոցով: Կտրվածքում նստվածքակուտակման մակերևույթների հարաբերական բարձրացումներին ու իջեցումներին համապատասխան՝ ռիթմաշերտախմբերի և ռիթմաշերտատուփերի անջատումը հնարավորություն է տալիս նստվածքային ստվարաշերտի կտրվածքում բացահայտելու ռիթմերը և, ըստ այդ ռիթմերի, կազմելու տվյալ նստվածքակուտակման ավազանի սահմաններում տեղաբաշխված կտրվածքները, այդ կտրվածքներում առանձնացնելու ռիթմաշերտագրական ստորաբաժանումները (ռիթմաշերտախմբեր, ռիթմաշերտատուփեր և այլն): Կիրառվում է կտրվածքների մասնատման ու համադրման մյուս մեթոդների հետ համատեղ:

**P-104. РИФ** (հոլանդ. rif) – **ԽՈՒԹ, REEF,** գաղութային բուստերի (կորալների), կրային ջրինուռների, մանուկերպերի և այլ խութագոյացնող օրգանիզմների ստորջրյա կրային կառույց: Տարածված են միայն տաք արևադարձային ծովերում: Տարբերում են Խ-երի տարբեր տեսակներ՝ արգելապատային, ափային, կեղևային, օղակաձև [ատոլներ (օղակղզիներ)]:

**P-105. РИФЕЙ** (լատ. Rhiphaei montes – Ռիֆեյան լեռներ, երբեմն՝ Ուրալյան լեռները այդպես էին անվանում անտիկ աշխարհագետները) – **ՌԻՖԵՅ, RIPHEAN,** նախկին

ԽՍՀՄ-ի մինչքեմբրիի շերտագրական սանդղակի վերին պրոտերոզոյի խոշորագույն ստորաբաժանում, որը վերը տեղադրված վենդի հետ կազմում է վերին պրոտերոզոյի ծավալը: Առանձնացրել է Ն. Ս. Շատսկին, 1945-ին, որպես նստվածքների համալիր, որը համապատասխանում է երկրակեղևի զարգացման այն փուլին, որն ընկած է կարելյան և բայկալյան ծալքավորությունների ավարտման պահերի միջև: Ստորին սահմանի հասակը 1650 մլն. տարի է, վերին սահմանը՝ 650 մլն. տարի: Ռ. բաժանվում է 3 ստորաբաժանումների՝ ստորին, միջին և վերին: Շատ շրջաններում Ռ. ներկայացված է թույլ փոխակերպված (մետամորֆացված) ապարներով, բնորոշ է կարբոնատային ֆորմացիաների լայն տարածումը՝ ստրոմատոլիթների հարուստ համալիրով:

**P-106. РИФОВЫЙ ИЗВЕСТНЯК – ԽՈՒԹԱՅԻՆ ԿՐԱՔԱՐ, REEF LIMESTONE,** ապար, որն առաջացել է ջրավազանների հատակին կպած խութակառուցող օրգանիզմների կրային կմախքներից (օր.՝ բուստային, մամռակերպային, արխեոցիտային, ջրիմուռային և այլ կրաքարեր):

**P-107. РИФТ** (անգլ. rift, բառ.՝ ճեղք, կիրճ), **РИФТОВАЯ ЗОНА – ՌԻՖՏ, ՌԻՖՏԱՅԻՆ ՉՈՒԱ, RIFT,** երկրակեղևի հորիզոնական ձգման խոշոր գոտիանման (հատակազծում) ձգված զոնա, որը նրա վերին մասում արտահայտված է մեկ կամ մի քանի մոտեցված գծային գրաբեկներով և նրանց հետ զուգակցված բլրկային կառուցվածքներով՝ սահմանափակված և բարդացված առավելապես երկայնակի թեք վարմնեքային և տարաշարժային բեկվածքներով: Ռ-երի երկարությունը հարյուրավոր և հազարից ավելի կմ է, լայնությունը՝ սովորաբար տասնյակ կմ: Ռեկտեֆում Ռ., որպես կանոն, արտահայտված է նեղ և խոր ձգված, համեմատաբար թեք լանջերով գոգավորություններով կամ փոսերով: Ակտիվ զարգացման փուլերում (ռիֆտագոյացման) Ռ-երը բնորոշվում են երկրաշարժականությամբ (երկրաշարժեր ոչ խոր օջախներով) և բարձր ջերմային հոսքերով: Ռ-երի զարգացման ընթացքում նրանցում կարող են կուտակվել մեծ հաստության նստվածքային և հրաբխային-նստվածքային ստվարաշերտեր, որոնցում ներփակված են նավթի (քարյուղի), գազի, ածխի, աղերի, տարբեր մետաղների հանքանյութերի խոշոր հնքվ-եր:

Ձարգացող Ռ-երի տակ անբնականոն տաքացված և ցածր մածուցիկությամբ աչքի ընկնող միջնապատյանի վերին մասը սովորաբար ենթարկվում է փքման (այսպես կոչված՝ միջնապատյանային դիապիր) և որոշ տարահոսման, իսկ վերևում գտնվող կեղևը՝ կամարածև ուռչման: Այդ գործընթացները որոշ հետազոտողներ համարում են Ռ-երի առաջացման հիմնական պատճառը, մյուսները ենթադրում են, որ վերին միջնապատյանի և կեղևի փքումը միայն նպաստում է Ռ-երի առաջացմանը և կանխորոշում է նրանց տեղայնացումը, իսկ ռիֆտագոյացման հիմնական պատճառ է համարվում երկրակեղևի ռեգիոնալ (կամ նույնիսկ համընդհանուր) ձգումը: Հատկապես ուժեղ հորիզոնական ձգման դեպքում Ռ-երի սահմաններում հին մայրցամաքային կեղևը ենթարկվում է լրիվ խզման, և նրա տարաշարժված բլրկների միջև, այդ դեպքում, ի հաշիվ վերին միջնապատյանից բարձրացող հիմքային մագմայական նյութի, ձևավորվում է նոր, փոքր հաստության օվկիանոսային տիպի երկրակեղև: Այդ գործընթացը հատուկ է օվկիանոսային Ռ-երին և կոչվում է սպրեդինգ:

Ըստ Ռ-երի խորքային կառուցվածքի և նրանց եզրակալող զոնաների՝ տարբերվում են Ռ-երի գլխավոր կարգերը՝ ներմայրցամաքային, միջմայրցամաքային, ծայրամասամայրցամաքային և ներօվկիանոսային: Ներմայրցամաքային Ռ-երը բնորոշվում են մայրցամաքային տիպի երկրակեղևով, որը եզրակալող մարզերի համեմատությամբ բարակացած է: Դրանց մեջ, ըստ տեկտ. դիրքի առանձնահատկություններ-

րի, առանձնացնում են հին պլատֆորմների Ռ-եր (էպիպլատֆորմային)՝ կամարահրաբխային տիպի (օր.՝ Քենիական) և թույլ կամ ոչ հրաբխային ճեղքային տիպի (օր.՝ Բայկալյան), ինչպես նաև շարժուն(ակ) գոտիների Ռ-եր և ռիֆտային համակարգեր, որոնք պարբերաբար առաջանում են և այնուհետև փոփոխվում են իրենց երկրասինկլինալային զարգացման ընթացքում: Ներմայրցամաքային Ռ-երում ձգման մասշտաբը ամենափոքրն է մյուս կարգերի համեմատությամբ (մի քանի կմ – առաջին տասնյակ կմ): Եթե Ռ-ի զոնայում մայրցամաքային կեղևը ենթարկվում է լրիվ խզման, ներմայրցամաքային Ռ-երը վերածվում են միջմայրցամաքայինների (օր.՝ Կարմիր ծովի Ռ.): Ներօվկիանոսային Ռ-երը (այսպես կոչված՝ միջինօվկիանոսային լեռնաշղթաներ) ունեն օվկիանոսային տիպի կեղև ինչպես առանցքային զոնաներում (սարեղինգի զոնաներ), այնպես էլ իրենց թևերում: Այդպիսի ռիֆտային լեռնաշղթաներ կարող են գոյանալ կա՛մ միջմայրցամաքային Ռ-երի հետագա զարգացման հետևանքով, կա՛մ ավելի հին օվկիանոսային մարզերի սահմաններում (օր.՝ Խաղաղ օվկիանոսում): Ներօվկիանոսային Ռ-երի հորիզոնական լայնացման մասշտաբն ամենամեծն է (մինչև մի քանի հազ. կմ): Այդ Ռ-երին բնորոշ է նրանց հատող լայնական խզվածքների (տրանսֆորմ բեկվածքներ) առկայությունը, որոնք տեղաշարժում են Ռ-ային զոնայի հարևան բլոկները: Ժամանակակից բոլոր ներօվկիանոսային, միջմայրցամաքային և ներմայրցամաքային Ռ-երը մեծ մասամբ Երկրի մակերևույթում անմիջապես կապված են միմյանց հետ և առաջացնում են ռիֆտերի համաշխարհային համակարգը: Ծայրամայրցամաքային Ռ-երը և ռիֆտային համակարգերը հատուկ են Ատլանտյան ու Յնդկական օվկիանոսների ծայրամասերին, ունեն խիստ բարակացած մայրցամաքային կեղև: Դրանք ձևավորվել են երկրորդային օվկիանոսների իջվածքների զարգացման նախնական փուլերում: Միջմայրցամաքային և ներօվկիանոսային Ռ-երը առաջացել են միջին մեզոզոյում և հնարավոր է՝ ավելի վաղ: Հին պլատֆորմների սահմաններում ներմայրցամաքային Ռ-երը ձևավորվել են սկսած պրոտերոզոյից և հետագայում հաճախ վերականգնվել են (ավլակոզեններ):

**P-108. ՐԻՓՏՈՎԱԿԱՆ ԴՈՒՆԱՆՆԵՐ** – ՌԻՓՏՈՎԱԿԱՆ ԴՈՒՆԱՆՆԵՐ, RIFT VALLEY, իջույթ, որն առաջացել է ռիֆտագոյացման ժամանակ՝ երկրակեղևի բեկվածքների զուգահեռ զոնաներով սահմանափակված գծային ձգված տեղամասերի իջեցման հետևանքով (օր.՝ Յնդկոս գետի հովիտը):

**P-109. ՐՈԳՈՎԱԿԱՆ ՕԲՄԱՆԿԱ** (գերմ. Horn – եղջյուր և Blende – խաբուսիկ, եղջյուրի հետ ճեղքված բյուրեղների խաբուսիկ նմանությունից) – **ԵՂՋԵՐԱԽԱՐ, HORN-BLENDE**, առավել տարածված ապար կազմող միներալ ամֆիբոլների խմբից (սովորական Ե.): Քիմ. կազմը  $(Ca, Na, K)_{2-3}(Mg, Fe^{2+}, Fe^{3+}, Al)_5[(OH, F)_2(Si, Al)_2Si_6O_{22}]$  հաստատուն չէ: Բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է: Առաջացնում է ձգված հատվածակողմային և անկանոն հատիկներ, թելավոր ագրեգատներ: Գույնը՝ կանաչ, սև, գորշ: Կարծրությունը՝ 5-6: Սովորական Ե. գրանիտակերպերին, գաբրոներին և փոխակերպային ապարներին բնորոշ միներալ է: Հաճախ առաջանում է պիրոքսենի հաշվին: Հայտնի են համարյա մենամիներալային եղջերախաբային ապարներ՝ հոռնբլենդիտներ:

**P-110. ՐՈԳՈՎԻԿ** (անվանումը կապված է խեցածև կոտրվածքի հետ, որ նման է եղջյուրի նյութին) – **ԵՂՋԵՐԱՔԱՐ (ԴԱՇՏԱՔԱՐ), HORNFELS, HORNSTONE, CORNU-BIANITE**, 1) նրբահատիկ կամ գաղտնաբյուրեղային հպումափոխակերպային ապար: Առաջանում է կավային և այլ նրբահատիկ այլումասիլիկատների տաքացման դեպքում, երբ դրանք փոքր կամ չափավոր խորություններում (մինչև 10 կմ) հպման մեջ են գտնվում մագմայական մարմինների հետ: Ապարը սովորաբար

- գորշ, մոխրագույն կամ սպիտակ գույնի է, ունի խեցածև կոտրվածք և կորցրել է մայրական ապարների թերթավորությունը: 2) Սիլիցիումային նստվածքային ապար՝ կավային նյութի և երկաթի հիդրօքսիդների խառնուրդով, կարբոնատային ու կավային ապարներում առաջացնում է առձգումներ, պալարներ և նրբաշերտեր:
- P-111. РОДОНИТ** (հուն. rhodon – վարդ) – **ՌՈՂՈՆԻՏ (ՎԱՐԴԱՔԱՐ), RHODONITE**, սիլիկատների դասի պիրոքսենոիդների ընտանիքի միներալ,  $CaMn_4\{Si_5O_{15}\}$ : Mn մասամբ փոխարինվում է Mg-ով և Fe-ով: Բյուրեղագիտական համակարգը տրիկլինային է: Բյուրեղները հազվադեպ են և ունեն թերթիկների, զուգահեռանիստերի ձև: Սովորաբար հանդիպում է հատիկային կամ խիտ զանգվածի ձևով: Գույնը՝ վարդագույն, փայլը՝ ապակու, կարծրությունը՝ 5.5-6: Ցածր ջերմաստիճանային միներալ է, առաջանում է ջրաջերմային (հիդրոթերմալ) և հպումափոխակերպային հնքվ-երում: Կիրառվում է որպես զարդաքար և երեսապատման քար:
- P-112. РОДОСЛОВНОЕ ДЕРЕВО – ՏՈՂՈՍԾԱՐ, TREE OF LIFE**, առանձին համակարգային միավորների (տեսակների, սեռերի, ընտանիքների և այլն) միջև ծագումնաբանական կապերի գրաֆիկական պատկերման եղանակ:
- P-113. РОДОХРОЗИТ** (հուն. rhodon – վարդ և chrōsis – գույն, վարդագույն գունավորման համար) – **ՌՈՂՈՔՐՈՉԻՏ, RHODOCHROSITE**, կարբոնատների դասի միներալ,  $MnCO_3$ : Անընդմեջ նմանածև (իզոմորֆ) շարքերով կապված է սիդերիտի և կալցիտի հետ: Բյուրեղագիտական համակարգը տրիգոնային է, բյուրեղները (շեղանիստ) հազվադեպ են: Սովորական են մանրասփերոլիթները, հոծ հատիկավոր զանգվածները, բյուրեղային կեղևները: Գույնը՝ վարդագույն, երբեմն՝ մոխրասպիտակ, դեղնամոխրագույն: Կիսաթափանցիկ է: Փայլը՝ ապակու, սաղափյա երանգով: Փխրուն է: Ռ. առաջանում է գլխ. նստվածքային ճանապարհով և հանդիպում է մանգանի ծովային նստվածքային հանքանյութերի հնքվ-երում: Հայտնի է ջրաջերմային (հիդրոթերմալ), բազմամետաղական և ոսկի-բազմամետաղական հնքվ-երում: Երբեմն օգտագործվում է որպես գեղազարդային քար:
- P-114. РОМБՕՋՐ – ՇԵՂԱՆԿՅՈՒՆԱՆԻՏ, RHOMBOHEDRON**, տրիգոնային համակարգի պարզունակ ձև, վեցանիստ՝ շեղանկյուն տեսքի նիստերով: Իրենից ներկայացնում է կարծես թե խորանարդ, որը ձգված է կամ սեղմված իր համաչափության երեք առանցքներից մեկի երկայնքով:
- P-115. РОССЫПИ – ՑՐՈՆՆԵՐ, PLACERS**, փուխր կամ ցեմենտացած բեկորային նյութի կուտակում, որը հատիկների, դրանց բեկորների կամ ագրեգատների տեսքով պարունակում է արժեքավոր ցրոնագոյացնող միներալներ: Իրենից ներկայացնում են հնքվ-երի ինքնուրույն խումբ, ձևավորվում են տարբեր արտածին գործընթացների ազդեցության տակ՝ ապարների ու հանքանյութերի քայքայման և վերանստեցման հետևանքով: Ց-ի օգտակար բաղադրիչներ են այն միներալները, որոնք բնությունում հանդիպում են համեմատաբար քիչ քանակներով, այդ թվում՝ մետաղական, ակցեսորային և որոշ ապարակազմիչ միներալներ, որոնց ֆիզքին. հատկությունները նպաստում են վերնածնության (հիպերգենեզի) զոնայում տարբեր բեկորային փուխր ապարներում նրանց պահպանմանը: Ց. տարբերվում են ըստ ծագման (ալյուվիալ, էլյուվիալ, դելյուվիալ), օգտ. հնժ-ի տեսակով (ազնիվ մետաղների, անագային, վոլֆրամային, տիտան-ցիրկոնային, հազվագյուտ մետաղների, ոսկերչական և արհեստագործական քարերի), ըստ երկրբ. հասակի (մինչ-պալեոզոյան, մեզոզոյան, կայնոզոյան և ժամանակակից), համեմատական հնությունը և ռելիեֆի նկատմամբ ունեցած հարաբերությամբ (ժամանակակից, թաղված), ըստ ամրացման ու հողմահարման աստիճանի (փուխր, ցեմենտացած), տե-

ղաղիրքի (հունային, դարավանդային), ըստ մշակման եղանակի (դրագային, էքսկավատորային): Ըստ սնման աղբյուրի հարաբերության և ձևավորման պայմանների՝ տարբերում են մոտակա հոսատարման և հեռավոր տեղափոխման ու վերանստեցման Ց.: Մոտակա հոսատարման Ց. (գլխ. ազնիվ մետաղների, անագի, վոլֆրամի, ալմաստի) բնորոշվում են սերտ տարածական ու ծագումնային կապով՝ սնման արմատական աղբյուրների հետ: Դրանց են պատկանում էլյուվիալ, լանջային, հեղեղաբերուկ (պրոյուվիալ) Ց., այլուվիալ Ց-ի մեծ մասը և ծովային Ց-ի մի մասը: Ձևավորվում են արմատական աղբյուրներից 15 կմ-ից ոչ ավելի հեռավորության վրա, դրանք ունեն կոպտաբեկոր կազմ, արդյունավետ շերտերի ոչ մեծ հաստություն: Հեռավոր տեղափոխման ու վերանստեցման Ց. առաջանում են ի հաշիվ հողմահարման և մեխ. քերամաշման նկատմամբ կայուն ծանր միներալների (իլմենիտ, ռուտիլ, ցիրկոն, մագնետիտ, տիտանամագնետիտ, մոնացիտ, մոնաքար, ստավրուլիթ, կիանիտ, սիլիմանիտ) կուտակման: Բերվելով ցամաքի ներքին մասերի մեծ մակերեսներից՝ օգտակար միներալները կուտակվում են գլխ. լճերի, ծովերի և օվկիանոսների ափային զոնաներում, բնորոշվում են ավելի մանրահատիկությամբ, համասեռությամբ և արդյունավետ շերտերի զգալի հաստությամբ:

**P-116. РОССИПИ АЛЛЮВИАЛЬНЫЕ – ԳԵՏԱԲԵՐՈՒԿԱՅԻՆ (ԱԼՅՈՒՎԻԱԼ) ՑՐՈՆՆԵՐ, ALLUVIAL PLACERS**, կուտակվում են գետահովիտներում՝ ջրային հոսանքներով էլյուվիալ, դեյուվիալ, կոյուվիալ, հին ցրոնների, արմատական ապարների և հնքվ-երի ողողաքայքայման, բեկորային նյութի տեղափոխման ու կուտակման արգասիքում: Կապված են գետաբերուկային նստվածքների հետ և ներառում են գետային հովտային, հունային և դարավանդային ցրոնները:

**P-117. РОССИПИ БЕРЕГОВЫЕ – ԱՓԱՅԻՆ ՑՐՈՆՆԵՐ, BEACH PLACERS**, առաջանում են ծովերի ու խոշոր լճերի մերձափնյա զոնայում՝ կապված ալեբախության և մերձափնյա հոսանքների հետ: Բեկորային նյութը ջրավազան է բերվում գետերով կամ առաջանում է ալեբախության հետևանքով՝ օգտ. հնձ-ներ պարունակող ապարների քայքայումից:

**P-118. РОССИПИ МОРСКИЕ – ԾՈՎԱՅԻՆ ՑՐՈՆՆԵՐ, MARINE PLACERS**, կապված են ծովային նստվածքների հետ: Տարբերում են դարավանդային, ափային և ստորջրյա ցրոններ: Սովորաբար գոտիանման ձգվում են մերձափի երկայնքով: Առաջանում են ջրային հոսանքների և ծովի ալեբախության արգասիքում: Առավել կարևոր նշանակություն ունեն դարավանդային ցրոնները:

**P-119. РОССИПИ ИСКОПАЕМЫЕ (ПОГРЕБЁННЫЕ) – ԲՐԱԾՈ (ԹԱՂԱԾ) ՑՐՈՆՆԵՐ, FOSSIL PLACERS**, ցրոններ, որոնք իրենց առաջացումից հետո ծածկվել են ավելի երիտասարդ նստվածքային կամ հրաբխային ապարներով, վերջինները ծագումնաբանորեն կապված չեն ցրոնների ձևավորման հետ:

**P-120. РОССИПИ РУСЛОВЫЕ – ՀՈՒՆԱՅԻՆ ՑՐՈՆՆԵՐ, CHANNEL FILL PLACERS**, այլուվիալ ցրոններ, որոնք գետեղված են ջրհոսքերի հունում: Ի տարբերություն հովտային ցրոնների, դրանք մշտապես ենթարկվում են վերալվացման և հաճախ հոսանքով դեպի ներքև տեղաշարժման: Պարունակում են մանր, լավ տեսակավորված օգտակար բաղադրիչ:

**P-121. РОССИПИ ЭЛЮВИАЛЬНЫЕ – ԷԼՅՈՒՎԻԱԼ ՑՐՈՆՆԵՐ, ELUVIAL PLACERS**, տե՛ս Элювиальные россыпи:

**P-122. РОССИПИ ЭОЛОВЫЕ – ՀՈՂՄԱՅԻՆ (ԷՈԼՅԱՆ) ՑՐՈՆՆԵՐ, EOLIAN PLACERS**, առաջանում են օգտակար բաղադրիչների հողմամաշման և քամու միջոցով տեղափոխման ժամանակ: Տարածվում են անապատային մարզերում: Սովորաբար Հ. ց. մեծ չեն և չունեն գործնական նշանակություն:

- P-123. РОССЫПНЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ – ՑՐՈՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, PLACER DEPOSITS**, բեկորային ապարների կուտակում, որը պարունակում է արժեքավոր միներալների այնպիսի քանակներ, որոնց մշակումը տնտեսապես նպատակահարմար է: Ց. հ-ի ձևավորումը պայմանավորված է ապարների ու օգտ. հնձ-ների ֆիզ. և քիմ. հողմահարմամբ: Ց. հ-ի մեջ առանձնացնում են էյուվիալ, դելյուվիալ, հեղեղաբերուկ (պրոլյուվիալ), գետաբերուկ (ալյուվիալ), լիթորալ, սառցային և հողմային (եոլյան) դասեր: Ըստ առաջացման ժամանակի՝ տարբերում են ժամանակակից և հին (բրածո), ըստ տեղադրման պայմանների՝ բաց և թաղված, ըստ հանքակուտակների ձևի՝ թիկնոցանման, շերտային, ոսպնյակածև, ժապավենածև և բնային Ց. հ.: Ունեն կարևոր նշանակություն մի շարք օգտ. հնձ-ների արդյունահանման համար (ոսկի, պլատին, արծաթ, տիտան, վոլֆրամ, անագ, միոբիում, նոնաքար, սաթ և այլն):
- P-124. РТУТНЫЕ РУДЫ – ՍՆԴԻԿԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, MERCURY ORES**, բնական միներալային գոյացումներ, որոնցից սնդիկի արդյ. կորզումը շահավետ է: Ս. հ-ի գլխավոր հանքային միներալը կինովարն է (HgS)՝ Hg-ի 86.2 % պարունակությամբ: Խառնուրդների ձևով առկա են բնածին Hg և Cu-ի, Sb-ի, As-ի սնդիկ պարունակող սուլֆոհաղեր և այլն: Ս. հ. բաժանվում են շատ հարուստ (5-10 % և ավել Hg), հարուստ (մոտ 1 % Hg), շարքային (0.2-0.3 % Hg), աղքատ (0.06-0.12 % Hg) և ավելի աղքատ (0.02-0.06 % Hg) տեսակների: Համալիր Ս. հ. պարունակում է Sb, Cu, Pb, Zn, W, Au, Ag և վնասակար խառնուրդ՝ As: Հանքամարմինները շերտանման և հպումային կուտակներ են, երակներ, բներ, շտոկվերկեր և այլն: Տարբերում են բուն ջրաջերմային (հիդրոթերմալ), տելեթերմալ և հրաբխային Ս. հ.: Արդյ. նշանակություն ունեն հիմնականում տելեթերմալ հնքվ-երը:
- P-125. РТУТЬ САМОРОДНАЯ – ԲՆԱԾԻՆ ՍՆԴԻԿ, NATURAL MERCURY**, միներալ բնածին տարրերի դասից, Hg: Հաճախ պարունակում է Ag-ի, Au-ու խառնուրդներ: Սովորական ջերմաստիճանում հեղուկ է, պնդանում է 38.87 աստիճանում: Գույնը՝ արծաթավուն-սպիտակ, փայլը՝ մետաղի, տեսակարար կշիռը 0 աստիճանում՝ 13.59: Հնքվ-երի օքսիդացման զոնայում Hg առաջանում է կինովարի քայքայումից, հայտնի է ցրոններում, գեյզերների նստածքներում:
- P-126. РУБИДИЙ (Rb) – ՌՈՒԲԻԴԻՈՒՄ, RUBIDIUM**, տարրերի պարբերական համակարգի 5-րդ պարբերության 1-ին խմբի տարր: Ալկալիական մետաղ է: Բնական Ռ. բաղկացած է <sup>85</sup>Rb կայուն (72.15 %) և <sup>87</sup>Rb թույլ ճառագայթակալիով (27.85 %) իզոտոպներից: <sup>87</sup>Rb B ճառագայթակալիով իզոտոպը փոխարկվում է <sup>87</sup>Sr կայուն իզոտոպի: <sup>87</sup>Rb և <sup>87</sup>Sr իզոտոպների հարաբերական պարունակությունը միներալներում և ապարներում թույլ է տալիս հաշվել նրանց երկրբ. տարիքը (ստրոնցիումային մեթոդ): Ռ. չափազանց ցրված տարր է, պարունակությունը երկրակեղևում 1.5·10<sup>-2</sup> % է (ըստ զանգվածի): Նշանակալի քանակներով պարունակվում է թթու հրաբխային ապարներում և հատկապես՝ պեգմատիտներում (1-3 %), փոքր քանակներով՝ գերհիմքային և հիմքային ապարներում: Սեփական միներալներ չի առաջացնում, ուղեկցում է կալիումին, լիթիումին, ցեզիումին: Ռ-ի միացությունները նմանաձև (իզոմորֆ) խառնուրդի ձևով մտնում են լիպիդոլիթի, ցինվալդիտի, պոլլուիցիտի, սիլվինիտի, կամնալիթի և այլ միներալների բաղադրության մեջ:
- P-127. РУБИН (ուշ լատ. rubinus, լատ. rubeus-ից – կարմիր) – ՍՈՒՏԱԿ, RUBY**, միներալ, կորունդի թափանցիկ կարմիր տարատեսակ: Թանկարժեք քար է:
- P-128. РУГОЗЫ (Rugosa) (լատ. rugosus – կնճռոտ), ЧЕТЫРЕХЛУЧЕВЫЕ КОРАЛЛЫ (Tetracorallia) – ՈՌԳՈՂՆԵՐ (ԿՆՃՈՏՆԵՐ), ՔԱՌԱՃԱՌԱԳԱՅՑԱՎՈՐ ԲՈՒՄՏԵՐ (ԿՈՐԱԼՆԵՐ), RUGOSE CORALS, TETRACORALS**, մահացած անհատ կամ գաղութա-

յին բուստային պոլիպների (կորալյան պոլիպների) ենթադաս: Բնակվել են ծովերի ծանծաղուտային զոնաներում՝ առաճելով ստորջրյա առարկաների վրա կամ ազատ պառկած հատակին: Գոյություն են ունեցել միջին օրդովիկից մինչև պերմ: Ունեն խոշոր նշանակություն պալեոգոյան ապարների շերտագրության համար:

**P-129. РУДА – ЗУЛЕУФУР (ЗУЛЕУСНОФ), ORE**, բնական միներալային հումք, որն ունի մետաղների կամ դրանց միացությունների այնպիսի պարունակություն ու տեսք, որոնք պիտանի են արդյ. օգտագործման համար: Երբեմն Յ. են կոչվում նաև ոչ մետաղական միներալային հումքի որոշ տեսակներ, օր.՝ ասբեստի, բարիտի, գրաֆիտի, ծծմբի, գյուղատնտեսական Յ-երը: Առանձնացվում են բնականորեն հարուստ Յ-եր և աղքատ Յ-եր, որոնք ենթարկվում են հարստացման: Յ-երը լինում են մենամիներալային (կազմված են մեկ միներալից) և բազմամիներալային՝ բաղկացած արժեքավոր միներալներից և նրանց ուղեկցող այլ միներալներից, որոնք չունեն արդյ. արժեք: Յ-երը համարվում են համալիր, եթե նրանցում առկա են ուղեկցող արժեքավոր բաղադրամասեր (մետաղներ, ոչ մետաղներ), որոնց կորզումը տնտեսապես շահավետ է (տե՛ս Комплексные руды): Ըստ Յ-երի մեջ գերակշռող միներալների քիմ. կազմի՝ տարբերում են սիլիկատային, սիլիցիումային, օքսիդային, սուլֆիդային, կարբոնատային և խառը Յ-եր: Բոլոր Յ-երը, որոնք արդյունահանվում են արմատական նստվածքային, մազմայական ու փոխակերպային ապարներում պարփակված հանքամարմիններից, կոչվում են արմատական: Գետային, լճային, ծովային և օվկիանոսային ավազներից արդյունահանվողները կոչվում են ցրոնային Յ-եր (տե՛ս Рессыпи): Ըստ կազմվածքի՝ առանձնացվում են հոծ, զրկավոր, նրբերակային, ցանավոր, բծավոր և այլ Յ-եր: Տարբերում են Յ-երի հավասարահատիկ, անհավասարահատիկ, օլիթային, պորֆիրային, ճառագայթաշառավղային և այլ կառուցվածքներ: Օգտակար բաղադրիչների կորզման նպատակով Յ-երը հետագա վերամշակման են ենթարկվում, դրանով էլ Յ-երը տարբերվում են օգտ. հնժ-ների մյուս տեսակներից (ածուխ, տուֆ, քարաղ, շինանյութեր), որոնք կարող են օգտագործվել բնական վիճակում՝ առանց վերամշակման:

**P-130. РУДА БОБОВАЯ – ԲՈՎԱՆՅԱՆՍԱՆ ՅԱՆՔԱՔԱՐ, PEA ORE**, տե՛ս Бобовая руда:

**P-131. РУДА БОГАТАЯ – ՀԱՐՈՒՄՍ ՅԱՆՔԱՔԱՐ, RICH ORE**, հանքաքար, որում օգտակար բաղադրիչների պարունակությունը բարձր է արդյունաբերության տվյալ ճյուղում սահմանված միջին պարունակությունից:

**P-132. РУДА ВКРАПЛЕННАЯ – ՑԱՆԱՎՈՐ ՅԱՆՔԱՔԱՐ, IMPREGNATION ORE**, ապարում շատ թե քիչ համաչափ, ցանի տեսքով տարածված օգտակար բաղադրիչի մանր ներառուկներով (առանձին հատիկների, կուտակների կամ նրբերակների տեսքով) հանքաքար:

**P-133. РУДА ЖЕЛВАКОВАЯ – ՊԱՆՈՐԱՆՍԱՆ ՅԱՆՔԱՔԱՐ, NODULAR ORE**, ներկայացված է հանքային պալարներով: Հանդիպում է նստվածքային երկաթային (լինոնիտային), ֆոսֆորիտային և որոշ այլ հնքվ-երում:

**P-134. РУДА МЕТАЛЛИЧЕСКАЯ – ՄԵՏԱՂԱԿԱՆ ՅԱՆՔԱՔԱՐ, METALLIC ORE**, հանքաքար, որում օգտակար բաղադրիչը արդյունաբերության մեջ օգտագործվող որևէ մետաղ է: Հակադրվում է ոչ մետաղական հանքաքարերին, օր.՝ ֆոսֆորային, բարիտային և այլն:

**P-135. РУДА НЕКОНДИЦИОННАЯ – ՈՉ ԿՈՆԴԻՑԻՈՆ ՅԱՆՔԱՔԱՐ, NONCONDITIONING ORE**, հանքաքար, որն օգտակար կամ վնասակար բաղադրիչների պարունակությամբ, հանքաքարի կտորի մեծությամբ և այլ ցուցիչներով սահմանված կոնդիցիաներին չի բավարարում:



- P-136. РУДА НЕМЕТАЛЛИЧЕСКАЯ – ՈՉ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐ, NONMETALLIC ORE**, մետաղներ չպարունակող օգտակար բաղադրիչներով հանքաքար (օր.՝ ապատիտ, փայլար, գրաֆիտ և այլն):
- P-137. РУДА ОКИСЛЁННАЯ – ՕՔՍԻԴԱՅԱԾ ՀԱՆՔԱՔԱՐ, OXIDIZED ORE**, սուլֆիդային հնքվ-երի մերձմակերևութային մասի (օքսիդացման զոնայի) հանքաքար, առաջանում է առանցնային հանքաքարերի օքսիդացման հաշվին:
- P-138. РУДА ООЛИТОВАЯ – ՕՈԼԻԹԱՅԻՆ (ՉՎԱՔԱՐԱՅԻՆ) ՀԱՆՔԱՔԱՐ, OOLITIC ORE**, կազմված է մանր կլորավուն, համակենտրոն-պատենավոր կամ շառավղաճառագայթավոր գոյացումներից՝ օլիթներից: Երկաթային հանքաքարերի տարածված կառուցվածքային տեսակներից է, բնորոշ է նաև բոքսիտների բազմաթիվ հնքվ-երի հանքաքարերին:
- P-139. РУДА ПОЛИМЕТАЛЛИЧЕСКАЯ**, տե՛ս Свинцово-цинковые руды:
- P-140. РУДА РАДИОАКТИВНАЯ – ԾԱՌԱԳԱՅԹԱԱԿՏԻՎ (ՌԱԴԻՈԱԿՏԻՎ) ՀԱՆՔԱՔԱՐ, RADIOACTIVE ORE**, հանքաքար, որը պարունակում է ճառագայթակտիվ տարրերի (U, Ra, Th) միներալներ, տե՛ս նաև Радиоактивные минералы:
- P-141. РУДИСТЫ (Rudistae) – ՌՈՒԴԻՍՏՆԵՐ, RUDISTIDS**, երկփեղկանի փափկամարմինների մահացած կարգ: Ունեցել են ոլորված կամ կոնաձև երկփեղկանի խեցի, երբեմն՝ մինչև 2 մ բարձրությամբ, բնակվել են ուշ յուրայի և կավճի ծովերում՝ հատակին կառչած: Ունեն կարևոր նշանակություն տարբեր ռեզիոնների վերին յուրայի ու կավճի նստվածքների շերտագրական համահարաբերակցության համար:
- P-142. РУДНАЯ ЗАЛЕЖЬ**, տե՛ս Залежь полезных ископаемых:
- P-143. РУДНАЯ ЗОНА – ՀԱՆՔԱՅԻՆ ՉՈՆԱ, ORE ZONE**, ապարների տարածման զոնա, որը պարունակում է հանքային միներալների կուտակներ՝ անկանոն զանգվածների, երակների, նրբերակների համակարգի և ներփակվածքային տեղամասերի տեսքով: Հ. գ-ների տեղադրությունը որոշվում է տեկտ., շերտագրական և քարաբանական տարրերով: Տեկտ. բնույթի Հ. գ-ները կապված են խզվածքների ծնլումների, ջարդոտման, ճեղքավորման տեղամասերի հետ: Շերտագրական ծագման Հ. գ-ները առաջանում են որևէ շերտի, շերտախմբի սահմաններում հանքային նյութի կուտակման հետևանքով և կտրվածքում գրավում են որոշակի շերտագրական դիրք: Քարաբանական բնույթի Հ. գ-ները կապված են այն ապարների հետ, որոնց կազմը բարենպաստ է հանքային կուտակների ձևավորման համար: Հ. գ-ների չափերը տատանվում են մեծ սահմաններում՝ հասնելով մի քանի տասնյակ կմ երկարության:
- P-144. РУДНИК – ՀԱՆՔԱՐԱՆ, MINE**, օգտ. հնձ-ներ արդյունահանող հանքային ձեռնարկության արտադրական-տնտեսական ինքնուրույն միավոր: Հ. ընդգրկում է հանքարանային դաշտի սահմաններում հնքվ-երի մշակման համար նախատեսված մակերևութային կառույցներն ու ստորգետնյա փորվածքները:
- P-145. РУДНАЯ ГЕОЛОГИЯ**, տե՛ս Геология рудничная:
- P-146. РУДНОЕ ПОЛЕ – ՀԱՆՔԱՅԻՆ ԴԱՇՏ, ORE FIELD**, տարածականորեն մերձեցված մետաղական հնքվ-երի ամբողջություն, որը միավորում է հնքվ-երը ըստ ծագման և երկրբ. կառուցվածքի միասնականության: Ըստ երկրբ. կառուցվածքի բնույթի՝ առանձնացվում են Հ. դ-երի յոթ գլխավոր խմբեր. մագմայական հնքվ-երի Հ. դ. (գերհիմքային, հիմքային և ալկալիական ապարների զանգվածների կառուցվածքներում), սկառնային, պեգմատիտային, ալբիտիտային և գրեյզենային հնքվ-երի Հ. դ. (գրանիտակերպ զանգվածների կառուցվածքային եզրային մասերում), ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվ-երի Հ. դ. (մանր ներժայթքվածքների ու դայկաների տարած-

ման մակերեսների կառուցվածքներում), հրաբխային և մերձհրաբխային կառուցվածքների ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվ-երի Յ. դ., երակային տիպի Յ. դ. (ճեղքային տեկտոնիկայի կառուցվածքներում), փոխակերպային հնքվ-երի Յ. դ. (թերթավորման ու կլիվաժի զոնաների կառուցվածքներում) և շերտադարսված հնքվ-երի Յ. դ. (հրաբխածին և նստվածքային ապարների շերտավորման կառուցվածքում):

**P-147. РУДНОЕ ТЕЛО – ՀԱՆՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ, ՀԱՆՔԱՄԱՐՄԻՆ, ORE BODY**, հանքաքարի բոլոր կողմերից սահմանափակված բնական կուտակում, որը կապված է որոշակի երկրաբանակառուցվածքային տարրի հետ: Ըստ ձևի առանձնացնում են Յ. մ-ների երեք խմբեր՝ զուգաչափական (հանքազանգված, շտոկվերկ, հանքային բներ), հարթ (հանքային շերտեր և երակներ), մեկ ուղղությամբ ձգված (հանքային խողովակներ, խողավականման հանքակուտակներ):

**P-148. РУДНЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ – ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, ORE DEPOSITS, METALLIFEROUS DEPOSITS**, երկրակեղևի տեղամաս, որի ընդերքում կան մակերևույթում կան մետաղական հանքակուտակներ, որոնք իրենց չափերով, որակով և տեղադրման պայմաններով պիտանի են արդյ. շահագործման համար: Մ. հ-ի մեջ առանձնացնում են սև, թեթև, գունավոր, հազվագյուտ, ազնիվ և ճառագայթակալի (ռադիոակտիվ) մետաղների հանքաքարերի հնքվ-եր, ինչպես նաև ցրված և հազվագյուտ հողերի տարրերի հնքվ-եր: Սև մետաղների հանքաքարերի հնքվ-երին են պատկանում երկաթի, մանգանի, քրոմի, տիտանի և վանադիումի հնքվ-երը, թեթև մետաղների հանքաքարերի հնքվ-երին՝ ալյումինի հնքվ-երը, գունավոր մետաղների հանքաքարերի հնքվ-երին՝ պղնձի, կապարի, ցինկի, նիկելի և ծարիրի հնքվ-երը, հազվագյուտ մետաղների հանքաքարերի հնքվ-երին՝ անագի, վոլֆրամի, մոլիբդենի, սնդիկի, բերիլիումի, լիթիումի, տանտալի և նեոբիումի հնքվ-երը, ազնիվ մետաղների հանքաքարերի հնքվ-երին՝ ոսկու, պլատինոիդների և արծաթի հնքվ-երը, ճառագայթակալի հանքաքարերի հնքվ-երին՝ ուրանի, թորիումի և ռադիումի հնքվ-երը: Ցրված և հազվագյուտ հողերի տարրերը կորզվում են զուգընթացաբար՝ այլ մետաղների հանքաքարերի վերամշակման ժամանակ:

**P-149. РУДНЫЕ ФОРМАЦИИ – ՀԱՆՔԱՅԻՆ ՖՈՐՄԱՑԻԱՆԵՐ (ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ), ORE FORMATIONS**, մետաղական հնքվ-երի խմբեր, որոնք միավորում են երկրի ընդերքում կան մակերևույթին նման երկրբ. և ֆիզքիմ. պայմաններում առաջացած և միներալային հումքի մոտիկ կազմ ունեցող հնքվ-երը: Յ. ֆ-ի միներալային խմբակցությունների մեջ առանձնացվում են երեք խումբ. առաջինը կայուն միներալների տիպոմորֆային խումբն է, միներալներ, որոնք կրկնվում են ըստ կազմի, նստեցման հաջորդականության և այլ միներալների հետ ունեցած հարաբերության (անկախ գտնվելու տեղից և երկրբ. հասակից): Երկրորդը միներալների փոփոխական խումբն է, որը բնորոշ է միայն որոշակի հանքային շրջաններին, երրորդը օտար (խորթ) խումբն է, որը վերադրվել է տիպամորֆայինի վրա՝ հանքառաջացման լրացուցիչ գործընթացների ժամանակ: Յ. ֆ. կարող են առանձնացվել ըստ հանքագոյացնող միներալների տիպամորֆային խմբակցության՝ հնքվ-երի ծագումնաբանական խմբերի, հանքային պրովինցիաների և առանձին միներալների հնքվ-երի: Յ. ֆ-ի օրինակներ կարող են ծառայել մագմայական խմբի ֆորմացիաները, որոնց կազմի մեջ մտնում են քրոմիտային, տիտանամագնետիտային, ապատիտ-մագնետիտային, ապատիտային, լուպարիտային, պիրրոտին-խալկոպիրիտ-պենտլանդիտային և այլնատի Յ. ֆ.:

**P-150. РУДНЫЙ ПОЯС – ՀԱՆՔԱՅԻՆ ԳՈՏԻ, ORE BELT**, զգալի հեռավորության վրա ձգված մետաղական հնքվ-երի շղթա: Սովորաբար գետեղված են խոշոր տեկտ.

խախտումների երկայնքով, որոնց մեջ գլխավոր դեր են խաղում այն բեկվածքները, որոնք նպաստել են երկրի խորքից հանքաբեր հալույթների ու լուծույթների բարձրացմանը: Տարբերում են հիմքի, խորքային և շարքային բեկվածքներով վերահսկվող Յ. գ-ներ: Հիմքի բեկվածքները չեն ներթափանցում վերին երկրք. հարկերի ապարների մեջ, բայց ուղեգծվում են այդ ապարների մեջ գտնվող մետաղական հնքվ-երի շղթաներով: Խորքային բեկվածքները ծալքավոր մարզերի կառուցվածքաֆորմացիոն զոնաներ են: Դրանց երկայնքով ձգված են խոշոր հնքվ-եր: Շարքային տեկտ. բեկվածքները (վարնետքեր, վերնետքեր և այլն) պայմանավորում են շատ հանքային պրովինցիաների Յ. գ-ները: Յ. գ-ների երկարությունը կազմում է մի քանիսից մինչև հազարավոր կմ-եր, լայնությունը՝ մի քանիսից մինչև հարյուրավոր կմ-եր:

**P-151. РУДНЫЙ РАЙОН – ՀԱՆՔԱՅԻՆ ՇՐՁԱՆ, ORE REGION**, երկրաբանորեն և աշխարհագրորեն առանձնացված տարածք, որի սահմաններում զետեղված են որևէ հանքային ֆորմացիայի հնքվ-եր: Տարբերում են պարզ Յ. շ-ներ՝ որևէ մեկ հանքային ֆորմացիայի հնքվ-երով, և բարդ՝ մի քանի ֆորմացիաների հնքվ-երով, որոնք պատկանում են մեկ կամ մի քանի մետաղագոյացման դարակարգերի: Յ. շ-ի անվանման մեջ ներառվում է աշխհ. անվանումը և առաջատար մետաղների անունը, օր.՝ ֆերոգանայի ծարիր-սնդիկային Յ. շ.:

**P-152. РУДНЫЙ УЗЕЛ – ՀԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑ, ORE KNOT, ORE NODE**, մետաղական հնքվ-երի կենտրոնացման առանձնացված տեղամաս, որը մյուս տեղամասերից բաժանված է ոչ հանքային տարածությամբ: Տարբերում են միաձագունային և բազմաձագունային, միամետաղական և բազմամետաղական Յ. հ-ներ: Յ. հ-ներում մետաղական հնքվ-երի կենտրոնացումը պայմանավորված է հանքագոյացման համար բարենպաստ երկրք. իրադրությամբ՝ ներժայթքային (ինտրուզիվ) գմբեթների, հնահրաբուխների, խոշոր տեկտ. բեկվածքների փոխհատմամբ, հանքաքարերի համար քարաբանորեն բարենպաստ ապարների ելքերի առկայությամբ և այլն:

**P-153. РУДОНОСНЫЕ РАСТВОРЫ – ՀԱՆՔԱԲԵՐ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐ, ORE-BEARING SOLUTIONS**, առավելապես խորքային ծագման լուծույթներ, որոնք տեղափոխում և նստեցնում են հանքային բաղադրիչները: Հետազոտողների մեծ մասի կարծիքով հեղուկ ջրային լուծույթների (տե՛ս Гидротермальные растворы) հետ միասին նույնպիսի դեր կատարում են գազերը, այսինքն՝ մագմայական աղբյուրից անջատված գերկրիտիկական ջրային լուծույթները: Գոյություն ունեն պատկերացումներ ներծին հանքագոյացման մեջ գազերի աննշան մասնակցության վերաբերյալ:

**P-154. РУДОНОСНОСТЬ – ՀԱՆՔԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, PRESENCE OF ORE**, հանքային գոյացությունների առկայությունը այս կամ այն շրջանում, այս կամ այն ապարում, սովորաշերտում, շերտախմբում և այլն, տե՛ս Металлоносность:

**P-155. РУДОПРОЯВЛЕНИЕ – ՀԱՆՔԱԲԵՐԵՎԱԿՈՒՄ (ՀԱՆՔԱԴՐՍԵՎՈՐՈՒՄ), SHOW OF ORE, ORE MANIFESTATION**, միներալային նյութի սովորաբար ոչ մեծ բնական կուտակում, որն ըստ որակի համապատասխանում է կոնդիցիոնային պահանջներին, բայց քանակական տեսակետից տվյալ տնտեսական պայմաններում չի կարող մշակման առարկա դառնալ: Հետագա հետախուզության ժամանակ պաշարների մեծացման կամ կոնդիցիոնային պահանջների նվազեցման դեպքում կարող է անցնել հնքվ-երի կարգը:

**P-156. РУКОВОДЯЩИЕ ИСКОПАЕМЫЕ – ՂԵՎԱՎԱՐՈՂ ԲՐԱԾՈՆԵՐ, INDEX-FOSSILS**, մահացած այնպիսի օրգանիզմների մնացորդներ (բրածոներ), որոնք են-

թարկվել են արագ էվոլյուցիայի և ապրել են համապատասխանաբար կարճ ժամանակ, ժամանակագրորեն լայն են տարածված, հանդիպում են մեծ քանակությամբ և ունեն որոշման լավ հատկանիշներ: Լավագույն Ղ. Բ. պիտանի են զոնայական շերտագրական սխեմաների կազմման և համընդհանուր համահարաբերակցությունների համար:

**P-157. РУСЛО – ՅՈՒՆ, RIVER BED, RIVER CHANNEL, STREAM CHANNEL**, գետահովտի ամենացածրացված մաս, որով տեղի է ունենում ջրի հոսքը՝ միջհեղեղային փուլերում: Պարբերաբար չորացող գետերի հովիտներում առաջանում են չոր Յ-եր: Մեծ գետերում Յ-երն ունեն տասնյակ և հարյուրավոր մ-երից մինչև մի քանի կմ լայնություն:

**P-158. РУСЛОВАЯ ЭРОЗИЯ – ՅՈՒՆԱՅԻՆ ՈՂՈՂԱՄԱՇՈՒՄ (ԷՐՈԶԻԱ), CHANNEL EROSION**, գետային հունների ողողաքայքայում՝ գլխ. գետավարարման և հեղեղումների ժամանակ: Բաժանվում է կողայինի, որը հարուցում է հատակագծում հունի տեղաշարժում, խորքայինի, որը փոխում է հունի բարձրությունը:

**P-159. РУСЛОВЫЕ ОТЛОЖЕНИЯ – ՅՈՒՆԱՅԻՆ ՆՍՎԱԾՔՆԵՐ, CHANNEL DEPOSITS**, տե՛ս АЛЛЮВИЙ:

**P-160. РУСЛОВЫЙ СТОК – ՅՈՒՆԱՅԻՆ ՅՈՍՔ, CHANNEL FLOW**, մակերևութային հոսք, որը կատարվում է գետերի և ժամանակավոր ջրհոսքերի հունով:

**P-161. РУТИЛ (լատ. rutilus – դեղնակարմիր, վառ կարմիր՝ ոսկու փայլվումով) – ՌՈՒՏԻԼ, RUTILE**, միներալ, տիտանի երկօքսիդ,  $TiO_2$ , բյուրեղագիտական համակարգը տետրագոնային է, կարծրությունը՝ 6-6.5: Անգույն է, սակայն խառնուրդների առկայությամբ ձեռք է բերում կարմիր, գորշ, կանաչ, սև գունավորում: Ներժայթքային (ինտրուզիվ) և փոխակերպային ապարների տարածված ուղեկից միներալներից է: Պեգմատիտներում և ջրաջերմային (հիդրոթերմալ) երակներում հանդիպում է խոշոր զուգահեռանիստ և ասեղնաձև բյուրեղների ձևով: Որպես կարևոր տիտանային հանքանյութեր՝ արդյ. նշանակություն ունեն ռուտիլաբեր քվարցիտները, քլորիտային, գրաֆիտային և այլ թերթաքարերը: Առաջացնում է հարուստ ցրոններ:

**P-162. РЫБЫ (Pisces) – ՉԿՆԵՐ, FISHES**, ողնաշարավոր կենդանիների վերադաս: Մոտ 25 հազ. տեսակ: Բնորոշվում են մարմնի անկայուն ջերմաստիճանով, խռիկային շնչառությամբ և լողաթևերի տեսքի վերջավորություններով: Բնակվում են ծովերում և ներքին ջրերում: Ձ-ի վերադասը բաժանվում է չորս դասերի՝ թերթամաշկավորներ (Placodermi), ականտոդներ (Acartodii), կրճիկային ձկներ (Chondrichthyes), ոսկրային ձկներ (Osteichthyes): Օրդովիկից մինչև այժմ:

**P-163. РЭТСКИЙ ЯРУС (РЭТИЧЕСКИЙ ЯРУС), РЭТ (լատ. Raetia, Rhaetia, Ալպերում գտնվող հին մարզի անունով) – ՌԷՏՅԱՆ ՅԱՐԿ, ՌԷՏ, RHAETIC**, տրիասի համակարգի վերին բաժնի վերին հարկ:

**P-164. РЮПЕЛЬСКИЙ ЯРУС (Ռյուպել, Rupal, գետի անունով, Բելգ.) – ՌՅՈՒՊԵԼՅԱՆ ՅԱՐԿ, RUPELIAN**, Արմ. Եվրոպայի օլիգոցենի ներքևից առաջին հարկ: Նախկին ԽՍՀՄ-ում համապատասխանում է ստորին-միջին օլիգոցենի նստվածքներին:

**P-165. РЯБЬ – ԾՓԱՆՔ (ԱԼԵՃԱԼՔ), RIPPLE**, ավազների, հազվադեպ՝ կավային ապարների մակերեսում բարդ ճյուղավորված թմբիկների շարքեր, որոնք առաջանում են շարժում միջավայրի (ջրի, քամու և այլն) ազդեցության հետևանքով, տե՛ս Знаки ряби:

## C

- C-1. САЖА УГОЛЬНАЯ – ԱԾԽԱՅԻՆ ՄՈՒՐ, BLOSSOM**, ածխի հողմահարման (օքսիդացման) սև և գորշավուն-սև գույնի, փխրուն, ձեռքերը մրոտող արգասիքներ: Կազմում է ածխի ելքը մակերևույթին կամ աններդաշնակ ծածկող ապարների տակ, որտեղ հողմահարման գործընթացները առավել ուժգին են ընթացել:
- C-2. САКМАРСКИЙ ЯРУС (Ուրալ գետի աջ վտակ Սակմարա գետի անունով) – ՍԱԿՄԱՐԱՅԻ ՀԱՐԿ, SAKMARIAN**, պերմի համակարգի ստորին բաժնի ներքևից երկրորդ հարկ:
- C-3. САМОРОДНЫЕ ЭЛЕМЕНТЫ – ԲՆԱԾԻՆ ՏԱՐՐԵՐ, NATIVE ELEMENTS**, միներալների դաս, որոնց քիմ. բաղադրությունը համապատասխանում է քիմ. տարրերին: Բ. տ-ի մեջ (մոտ 80 միներալ) տարբերում են բնածին մետաղներ, կիսամետաղներ և ոչ մետաղներ: Մետաղների մեջ առավել տարածված են բնածին Cu, Au, Ag, Pt և պլատինակերպերը: Հազվադեպ հանդիպում են բնածին Bi, Sn, Hg, խիստ հազվադեպ՝ Pb, Zn, Al, Cr, Cd, Co: Բնածին կիսամետաղներից ու ոչ մետաղներից առավել տարածված են ածխածնի տարածն ձևափոխումները (ալմաստ, գրաֆիտ և այլն) և ծծմբի ձևափոխությունները, որոնք առաջացնում են ինքնուրույն հնքվ-եր: Համեմատաբար հազվագյուտ են բնածին As-ը, Sb-ը, Se-ը, Te-ը: Բ. տ-ի անջատման ձևերը տարբեր են՝ կաթիլանման հատիկներ, ինքնաձև և թելանման բյուրեղներ, մետաղալարածն ձգված կամ հարթ դեմոնիտներ, օտարածն անկյունավոր կամ թերթավոր գոյացումներ:
- C-4. САМОРОДОК – ԲՆԱԿՏՈՐ, PRILL, PEPITA, NUGGET**, արմատական հնքվ-երում և ցրոններում բնածին մետաղների (ոսկու, արծաթի, պլատինի և այլն) համեմատաբար խոշոր բնական անջատումներ, որոնց զանգվածը սովորաբար 1 գր-ից մեծ է:
- C-5. САМОРОДОК ЗОЛОТА – ՈՍԿՈՒ ԲՆԱԿՏՈՐ, NUGGET, HEAVY GOLD**, մեծ մասամբ հանդիպում է ցրոններում, հողմահարման կեղևներում, ինչպես նաև հանքային մարմիններում: Արտաքին ձևը հաճախ նրբերականման է, երբեմն՝ ճյուղավորվող, թերթավոր, անկյունավոր: Հանդիպում են բնակտոր բյուրեղներ, դրանց հարածումներ, դեմոնիտներ: Ո. բ-ների զանգվածը հասնում է կգ-ների, նվազագույնը պայմանականորեն՝ 1 գ: Ոսկու խոշոր և յուրահատուկ տեսք ունեցող բնակտորները ավանդաբար ունեն իրենց անվանումները: Ամենախոշորները գտնվել են Ավստրալիայում՝ «Հոլտերմանի սալ» – 285 կգ (քվարցի հետ) և «Ձանկալի անծանոթ» – 70.9 կգ (քվարցի հետ):
- C-6. САМОРОДНОЕ ОЗЕРО – ԻՆՔՆԱՆԻՍ (ԱՂԱՆԻՍ) ԼԻՃ, HYPERHALIN LAKE**, աղային կամ միներալային լիճ, որը ջրում պարունակում է տարբեր աղերի այնպիսի քանակներ, որոնք լուծույթից նստում են: Լուծույթները, որոնցից կատարվում է աղերի նստում, կոչվում են աղաջրեր կամ բնաղաջրեր:
- C-7. САМОУБЕТЫ – ՓԱՅԼԱՔԱՐԵՐ (ԲՆԱԳՈՒՅՆ ՔԱՐԵՐ, ԲՆԱԳՈՒՆԵՂ ՔԱՐԵՐ), GEMS, GEM-STONES**, թափանցիկ, անգույն ու գունավոր թանկարժեք, կիսա-

թանկարժեք և արհեստագործական միներալներ և ապարներ, որոնք ունեն որևէ արժեքավոր հատկություն՝ բարձր կարծրություն, թափանցիկություն, գեղեցիկ գույն կամ նախշ, փայլ, մշակման ու ողորկման ենթարկվելու ունակություն: Օգտագործվում են որպես զարդեր, ոսկերչական, գեղարվեստական և գեղազարդային պատրաստվածքներ:

**C-8. САНИДИН** (հուն. sanis, սեռ. h. sanidos – տախտակ, բյուրեղների հարթ ձևի հետ կապված) – **ՍԱՆԻԴԻՆ, SANIDINE, GLASSY FELDSPAR**, ապարակազմիչ միներալ, ալկալիական դաշտային սպաթ, (K, Na) {Al, Si<sub>3</sub>, O<sub>8</sub>}: Կալիում-նատրիումային դաշտային սպաթի բարձրաջերմաստիճանային մոնոկլինային ձևափոխումն է: Բյուրեղների ձևը՝ աղյուսածևից մինչև թիթեղածև, բնորոշ են ներածման կրկնաբյուրեղները: Ա. անգույն է, ծագումը՝ մագմայական, տարածված է թթու և ալկալիական կազմի արտաժայթքային և ենթախորքային ապարներում, տե՛ս նաև՝ Полевые шпаты:

**C-9. САНТОНСКИЙ ЯРУС, САНТОН** (Ֆրանսիայի պատմական Սենտոնոմա մարզի լատ. Santonia, Սանտոնիա անվանումից) – **ՍԱՆՏՈՆԻ ՀԱՐԿ, ՍԱՆՏՈՆ, SANTONIAN**, կավճի համակարգի վերին բաժնի ներքևից չորրորդ հարկ:

**C-10. САПРОГУМОЛИТ – ՍԱՊՐՈՂՅՈՒՄՈՒԼԻԹ, SAPROHUMOLITE**, բրածո ածուխ, որն անցողիկ է հումոլիթի և սապրոպելիտի միջև: Ա-ի օրգանական նյութում գերակշռում են բարձրակարգ բույսերի մնացորդները, սապրոպելային նյութի (ստորակարգ բույսերի և պլանկտոնի փոխարկման արգասիքներ) պարունակությունը հասնում է մինչև 25 %-ի: Ակնադիտականորեն Ա. կիսափայլուն կամ փայլատ է, սև գույնի: Ցնդող նյութերի ելքը մինչև 55 % է: Քիմ. կազմով և հատկություններով Ա-ները մոտ են լիպտոբիոլիթներին:

**C-11. САПРОПЕЛИТ** (հուն. saprós – նեխած և pēlós – տիղմ, ցեխ) – **ՍԱՊՐՈՊԵԼԻՏ (ՆԵՆԱՏՎԱԾՈՒԽ), SAPROPELITE**, բրածո ածուխ, որն առաջացել է հիմնականում ստորակարգ բույսերի և պարզագույն կենդանական օրգանիզմների մնացորդների փոխարկման արգասիքներից: Ըստ կազմի, սկզբնական նյութերի քայքայման ու փոխակերպման աստիճանի՝ առանձնացնում են դասեր՝ 1) բուն սապրոպելիտներ, բաղկացած են հիմնականում ալգինիտից, դրանք հիմնականում բոզհետ ածուխներն են, 2) հումիտասապրոպելիտներ՝ անցողիկ տարատեսակներ բուն սապրոպելիտների ու սապրոհումոլիթների միջև, բաղկացած են ալգինիտի (20-50 %), լեյպտինիտի (մինչև 20 %) և վիտրինիտի (մինչև 75 %) մանրաբաղադրիչներից: Ա-երը ակնադիտականորեն փայլատ և կիսափայլատ են, գույնը՝ մուգ շագանակագույն և մոխրավուն սև, համասեռ և հոծ են, ամուր և մածուցիկ: Ցնդող նյութերի ելքը 55-70 % է: Ա-ները հումոլիթների շերտերի մեջ առաջացնում են փոքր հաստության ենթաշերտեր (ոսպնյակներ), հազվադեպ՝ ինքնուրույն շերտեր:

**C-12. САПРОПЕЛЬ** (հուն. saprós – նեխած և pēlós – տիղմ, ցեխ) – **ՍԱՊՐՈՊԵԼ (ՆԵՆԱՏԻՎ), SAPROPEL, DECAY OOZE**, ցամաքային քաղցրահամ ջրավազանների տիղմային նստվածքներ, որոնք պարունակում են ավելի քան 15 % (ըստ զանգվածի) օրգանական նյութեր: Ա. իրենից ներկայացնում է վարդագույնից մինչև շագանակագույն-դեղնականաչ և համարյա սև գույնի ճարպային շփումով զանգված: Չորանալիս պնդանում և վերածվում է դոնդողանման զանգվածի՝ սապրոկոլի: Ա-ի օրգանական նյութը առաջանում է ի հաշիվ ջրավազանում բնակվող կենդանական ու բուսական օրգանիզմների մնացորդների, ավելի պակաս չափով՝ ջրավազանը շրջապատող ցամաքից բերվող բարձրակարգ բույսերի մնացորդների, ինչպես նաև միկրոօրգանիզմների կենսագործունեության արգասիքների: Մի-

- ներառալից մասը բաղկացած է բեկորային նյութից (կավ, ալկրիտ, ավազ) և ջրում լուծված Ca-ի, Fe-ի, Mg-ի օքսիդներից: Ս-ի ձևավորումն ընթանում է կենսաքիմ., միկրոկենսաբ. և մեխ. գործընթացների ներազդեցության տակ: Հայտնի են Ս-ի շատ տեսակներ՝ կավային, կրային, դիատոմային, կոպտադետրիտային, նրբադետրիտային և այլն: Ս-ի տարրային կազմը հետևյալն է՝ C (52-60%), H (6-8 %), O (30-36 %), S (1.5-3 %), N (մինչև 6 %): Օրգանական մասը պարունակում է 3-ից մինչև 11 % բիտումներ, մինչև 40 % հումինային նյութեր և այլ կենսաբանորեն ակտիվ նյութեր: Ս. օգտագործվում է որպես կենդանիների կերային հավելում, հորատման լուծույթներ, շինարարական նյութեր պատրաստելու համար, բժշկության մեջ:
- C-13. САПФИР** (հուն. sáppheiros, հին հրեական սապիր-ից՝ – կապույտ քար) – **ՀԱՓՅՈՒՂԱ (ԼԵՂԱՎԱՔԱՐ), SAPPHIRE**, միներալ, կորունդի թափանցիկ կապույտ (տիտանի խառնուրդի հետ կապված) տարատեսակ: Գույնը լինում է նաև մանուշակագույն, դեղին, նարնջագույն, կանաչ, վարդագույն, որը պայմանավորված է նմանաձև (իզոմորֆ) խառնուրդներով: Թանկարժեք քար է:
- C-14. САРДОНИКС – ՍԱՐՂՈՆԻՔՍ, SARDONYX**, կարմիր կամ շագանակագույն քաղկեդոն, տե՛ս Сердолик:
- C-15. САРМАТСКІЙ ЯРУС, САРМАТ** (Հյուսիսային Մերձսևծովյան տարածքներում բնակված հին ցեղերի՝ սարմատների անունով) – **ՍԱՐՄԱՏԻ ՀԱՐԿ, ՍԱՐՄԱՏ, SARMATIAN**, Նեոգենի համակարգի վերին միոցենի ստորին հարկ:
- C-16. САТЕЛЛИТ – ՍԱՏԵԼԻՏ, SATELLITE**, ապարաբանության մեջ համեմատաբար ոչ մեծ ներժայթքային մարմին, որը հանդիսանում է հեռվում տեղադրված ներժայթքվածքի ցցվածքը կամ ճյուղը:
- C-17. СБРАСЫВАТЕЛЬ – ՆԵՏԻՉ**, նույնն է՝ Сместитель:
- C-18. СБРОС – ՎԱՐՆԵՏԲ (ՏԱՐԷՋԲ), FAULT**, երկրակեղևի խզվածքային տեկտ. խախտումների տարատեսակներից է, առաջանում է նրա ձգման պայմաններում: Վ-ի ժամանակ ապարների տեղաշարժը տեղի է ունենում կա՛մ ուղղաձիգ հարթությունով (ուղղաձիգ վարնետք), կա՛մ թեք հարթությունով (մեծաթեք վարնետք) այնպես, որ վերնաթևը համեմատաբար տեղաշարժվում է ներքև, իսկ ներքնաթևը՝ դեպի վեր: Վ-երի լայնությունը կարող է հասնել առաջին կմ-երին (ռիֆտերում): Հանդիպում են երկրակեղևի ամենատարբեր կառուցվածքային զոնաներում (ինչպես մայր ցամաքներում, այնպես էլ օվկիանոսներում): Վ-երը հաճախ համակցվում են զույգերով, առաջացնելով վարնետքային իջվածքներ՝ գրաբեններ, կամ ցցվածքներ (հորստեր): Տարածված են նաև աստիճանավոր Վ-երը:
- C-19. СБРОСОВАЯ ДОЛИНА – ՎԱՐՆԵՏԲԱՅԻՆ ՀՈՎԻՏ, FAULT-LINE VALLEY**, գետահովիտ, որը գետեղված է վարնետքի գծի երկարությամբ. տեկտ. հովիտների տեսակներից մեկն է:
- C-20. СБРОСОВЫЕ ГОРЫ**, տե՛ս Глыбовые горы:
- C-21. СБРОСОВЫЙ УСТУП – ՎԱՐՆԵՏԲԱՅԻՆ ՍԱՆՂԱՎԱՆՂ, FAULT LEDGE, FAULT SCARP**, վարնետքի թևի միակողմանի բարձրացում, որը ռելիեֆում արտահայտված է անհամաչափ լեռնային թմբաշարքի տեսքով՝ թեք լանջերով:
- C-22. СБРОСО-СДВИГ**, տե՛ս Сдвиго-сброс:
- C-23. СВЕРХГЛУБОКОЕ БУРЕНИЕ – ԳԵՐԽՈՐ ՀՈՐԱՏՈՒՄ, ULTRADEEP DRILLING**, ժամանակակից գիտության և պրակտիկայի համար երկրակեղևում առավելագույն խորության (ավելի քան 6000 մ) հորատանցքերի անցկացում: Գ. հ. նախատեսված է օգտ. հնձ-ների խոր տեղադրված հնքվ-երի որոնման ու հետախուզման, երկրի ընդերքի երկրաբանաֆիզ. պարամետրերի, միներալային հումքի

առաջացման ու տեղաբաշխման օրինաչափությունների ուսումնասիրման և այլ գործնական ու գիտական նպատակների համար: Գ. հ-ման օբյեկտը երկրակեղևի բոլոր բնորոշ տիպերն են: Խորքային հորատման համաշխարհային ամենաբարձր ցուցանիշը 12066 մ է (Կոլայի թերակղզի, 1984):

**C-24. СВИНЕЦ, Pb** (լատ. plumbum) – **ԿՎՊԱՐ, LEAD, PLUMBUM**, պարբերական համակարգի 4-րդ խմբի քիմ. տարր: Ունի չորս կայուն իզոտոպ՝  $^{204}\text{Pb}$  (1.48 %),  $^{206}\text{Pb}$  (23.6 %),  $^{207}\text{Pb}$  (22.6 %),  $^{208}\text{Pb}$  (52.3 %) և չորս ճառագայթաակտիվ՝  $^{210}\text{Pb}$ ,  $^{211}\text{Pb}$ ,  $^{212}\text{Pb}$ ,  $^{214}\text{Pb}$ : Պարունակությունը երկրակեղևում (քլարկ)  $1.6 \cdot 10^{-3}$  % է (ըստ զանգվածի): Առաջացնում է 80 միներալ, որոնցից արժեքավորը գալենիտն է՝  $\text{PbS}$ : Կ. կապտագորշ ծանր մետաղ է, պլաստիկ է և փափուկ, քիմիապես քիչ է ակտիվ: Թթվածնի հետ առաջացնում է օքսիդներ:

**C-25. СВИНЕЦ САМОРОДНЫЙ – ԲՆԱԾԻՆ ԿՎՊԱՐ, NATIVE LEAD**, միներալ, Pb, հանդիպում է փոքր կլորացված հատիկներով, թեփուկներով, գնդիկներով, թիթեղիկներով: Գույնը՝ կապտամոխրագույն, փայլը՝ մետաղի, կարծրությունը՝ 1.5, տեսակարար կշիռը՝ 11.4-13.3: Հանդիպում է ներփակվածքներով արտաժայթքային, գլխ. թթու ապարներում, երկաթի, մանգանի հնքվ-երում, ցրոններում:

**C-26. СВИНЦОВО-ЦИНКОВЫЕ РУДЫ, ПОЛИМЕТАЛЛИЧЕСКИЕ РУДЫ – ԿՎՊԱՐ-ՑԻՆԿԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, ԲԱԶՄԱՄԵՏԱՊԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, LEAD-ZINC ORES, POLYMETALLIC ORES**, բնական միներալային գոյացումներ, որոնք պարունակում են կապար և ցինկ այնպիսի քանակներով, որոնք կորզումը տնտեսապես նպատակահարմար է: Բնության մեջ հայտնի են կապարի ու ցինկի մոտ 180 միներալ: Հիմնական արդյ. նշանակություն ունեն կապարի ու ցինկի սուլֆիդները, ավելի պակաս չափով՝ սուլֆատները և կարբոնատները: Կապարի գլխավոր սուլֆիդը գալենիտն է (86.6 % Pb), ցինկինը՝ սֆալերիտը (67 % Zn): Օքսիդացված հանքաքարերը, որոնք ունեն անհամեմատ փոքր նշանակություն, բաղկացած են կապարի կարբոնատից (ցերուսիտ), կապարի սուլֆատից (անգլեզիտ), ցինկի կարբոնատից (սմիտոնիտ) և ցինկի սիլիկատից (կալամին): Հանքաքարերը պարունակում են ծծումբ, երբեմն՝ պղինձ և բարիտ: Ուղեկից բաղադրիչներ են՝ պղինձը, արծաթը, ոսկին, կադմիումը, բիսմութը, ծարիրը, սնդիկը, սելենը, տելուրը: Կապարի և ցինկի փոխհարաբերությունը տարբեր տիպի հնքվ-երում տատանվում է լայն սահմաններում, ընդհուպ մինչև կապարի, ավելի քիչ ցինկի սեփական հնքվ-երի ձևավորումը: Կապարի սովորական պարունակությունը հանքաքարում 1-2 % է, ցինկինը՝ 2-4 %: Ըստ առաջացման պայմանների՝ Կ-ց. հ. ստորաբաժանվում են արտածին-ներծինների և ներծինների: Առաջին դեպքում հանքաքար լուծույթները, ներքևից ապարների թափանցելի զոնաներով բարձրանալով, ծծանցում են ծովի հատակին, որտեղ և առավելապես տեղի են ունենում հանքակուտակումը և հանքանյութերի հետագա մակածին փոխարկումը: Երկրորդ դեպքում լուծույթները միներալացնում են էկրանավորող ծածկոցի տակ գտնվող ներփակող ապարները: Արտածին-ներծիններին (բազմածիններին) պատկանում են բազմամետաղահարաքարային հնքվ-երը, որոնք հանդիպում են ինչպես նստվածքահրաքարային, այնպես էլ ցամաքածին-ֆլիշային նստվածքներում և ներկայացված են շերտանման հանքակուտակներով: Ներծիններին պատկանում են երակային և անկանոն ձևի հանքային մարմինները, որոնք հարում են կարբոնատային ապարներին՝ երբեմն պարունակելով սկառներ: Դրանք հաճախ տեղայնացված են գրանիտների և կրաքարերի հպումային զոնայում:

**C-27. СВИНЦОВЫЕ РУДЫ – ԿՎՊԱՐԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, PLUMBUM ORES**, տե՛ս Свинцово-цинковые руды:



**C-28. СВИНЦОВЫЙ БЛЕСК – ԿԱՊԱՐԻ ՓԱՅԼ (ԱՐՃԱՓԱՅԼ), LEAD GLANCE,** նույնն է Գаленит:

**C-29. СВИТА ГЕОЛОГИЧЕСКАЯ – ՇԵՐՏԱԽՈՒՄԲ, SUITE, FORMATION,** տեղական շերտագրական ստորաբաժանումների հիմնական տաքսոնոմիական միավոր: Երկր. որևէ շրջանի սահմաններում տարածված նստվածքների համախմբություն է, որը բնորոշվում է ֆացիալ-քարաբանական կամ ապարագրական առանձնահատկություններով և կտրվածքում գրավում է որոշակի շերտագրական դիրք: Շ. արտացոլում է երկրակեղևի տվյալ տեղամասի երկր. զարգացման առանձնահատուկ փուլ, որն արտահայտվում է նստվածքակուտակման, օրգանական մնացորդների, տեկտոնիկայի, հրաբխայնության, փոխակերպության, կլիմայական պայմանների և այլնի յուրահատկությամբ: Այդ պատճառով Շ-ի շերտագրական սահմանները հաճախ չեն համընկնում ընդհանուր շերտագրական սանդղակի ստորաբաժանումների սահմանների հետ: Շ. կազմությամբ կարող է լինել միատարր, ինչպես նաև ներկայացված լինել տարբեր տեսակի ապարների հերթագայությամբ: Շ-ի մեջ չպետք է լինեն էական շերտագրական կամ անկյունային աններդաշնակություններ: Հորիզոնական տարածումը սահմանափակվում է կառուցվածքաֆորմացիոն զոնաների կամ երկր. ռեգիոնի այլ մասերի, նստվածքակուտակման հնավազանի մասի սահմաններում: Շ-ի հասակը գնահատվում է ըստ նրա ամենալրիվ կտրվածքի (շերտատիպի) կամ կտրվածքների խմբի: Շ-ի տարածման տարբեր տեղամասերում հասակը կարող է մի քիչ փոփոխվել: Շ-երին տրվում են աշխ. անվանումներ, Շ. ստորաբաժանվում է ենթաշերտախմբերի, որոնք անվանվում են ստորին, միջին, վերին՝ ավելացնելով շերտախմբի անվանումը:

**C-30. СВИТА НЕФТЕГАЗОНОСНАЯ – ՆԱԳԹԱԳԱԶԱՐԵՐ ՇԵՐՏԱԽՈՒՄԲ, PETROLEUM BEARING FORMATION,** նստվածքների շերտագրական համալիր՝ ռեզերվուարային ապարների շերտերով, հորիզոններով կամ ոսպակներով, որոնք պարունակում են նավթի (կամ գազի) արդյ. կուտակումներ:

**C-31. СВИТА УГЛЕНОСНАЯ – ԱԾԽԱՐԵՐ ՇԵՐՏԱԽՈՒՄԲ, COAL-BEARING FORMATION,** տեղային շերտագրական սանդղակի միավոր, որի ամբողջ կտրվածքը կամ կտրվածքի մի մասը ներկայացված է ածխային շերտեր ներփակող ածխային ֆորմացիայով:

**C-32. СВОД – ԿԱՄԱՐ, ARCH,** մայրցամաքային պլատֆորմի սահմաններում խոշոր մեղմաթեք կամ արանման բարձրացում՝ սովորաբար ծվածն ուրվապատկերով: Կլորավուն Կ-ները կոչվում են գմբեթներ: Կ-ների տրամաչափը կազմում է տասնյակ և առաջին հարյուրավոր կմ, բարձրությունը՝ հարյուրավոր, երբեմն ավելի մ: Կ-ներից սովորաբար կազմված են ավելի խոշոր պլատֆորմային բարձրացումները՝ անտեկլիզները: Կ-ները հազվադեպ հանդիպում են իջվածքներում՝ սինեկլիզներում կամ ներկայացնում են մեկուսացված ձևեր: Աչքի են ընկնում երկարատև զարգացմամբ (արտացոլվում են նստվածքային ծածկոցի հաստությունների կրճատմամբ), նստվածքակուտակման մեջ ընդմիջումների արտահայտությամբ, նստվածքների ավելի ծանծաղուտային բնույթով:

**C-33. СВЯЗАННЫЕ ВОДЫ – ԿԱՊԱԿԱԾ ՋՐԵՐ, ATTACHED GROUND WATER, FIXED GROUND WATER,** տե՛ս Вода связанная:

**C-34. СВЯЗНОСТЬ ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ROCK COHESION,** չոր կամ խոնավ վիճակում ապարների կոնպակտություն (խտակցվածություն) դրսևորելու և ձևը պահպանելու ունակություն, որը պայմանավորված է նրանց մասնիկների կամ ագրեգատների միջև գոյություն ունեցող

կապերով: Տարբերում են առաձգական, բյուրեղային, մոլեկուլային և պլաստիկ ջրակոլոիդային կապեր:

- C-35. СДВИГ – ՏԵՂԱՇԱՐԺ (ԿՈՂԱՇԱՐԺ), SHEAR-FAULT, STRIKE-SLIP FAULT**, երկրակեղևի խզվածքային տեկտ. խախտումների տեսակներից մեկն է, առաջանում է նրա հորիզոնական սեղմման պայմաններում և արտահայտվում է հարակից բլոկների՝ մեկը մյուսի նկատմամբ հորիզոնական ուղղությամբ տեղաշարժմամբ՝ բեկվածքի ուղղաձիգ հարթությունով: Տարբերում են ձախ և աջ S-եր, ներփակող ապարների կառուցվածքի նկատմամբ ներդաշնակ, աններդաշնակ, լայնական, երկայնակի և թեք S-եր: Հանդիպում են առավելապես ծալքավոր մարզերում, որտեղ նրանց երկայնքով տեղաշարժման լայնությամբ կարող է հասնել հարյուրավոր կմ-երի: Օվկիանոսներում տարածված են հատուկ տեսակի S-եր՝ տրանսֆորմ բեկվածքներ:
- C-36. СДВИГО-ВЗБРОС – ՏԵՂԱՇԱՐԺ-ՎԵՐՆԵՏՔ, SHIFT-OVERFAULT, SHIFT REVERSED FAULT, SHIFT UPTHROW FAULT**, տեղաշարժիչի անկման (և տարածման) նկատմամբ թեք տեղաշարժմամբ խզվածքներ, որոնք համակցում են տեղաշարժի և վարնետքի տարրերը: Միշտ վերնակողը բարձրացված է, նույնն է՝ ВЗбросо-сдвиг:
- C-37. СДВИГО-СБРОС – ՏԵՂԱՇԱՐԺ-ՎԱՐՆԵՏՔ, STRIKE-SLIP FAULT**, ուղղաձիգ կամ թեք տեղաշարժիչով և նետիչի անկման (և տարածման) նկատմամբ թեք տեղաշարժմամբ խզվածք է, որը համակցում է տեղաշարժի և վարնետքի տարրերը, նույնն է՝ Сбросо-сдвиг:
- C-38. СДВИЖЕНИЕ ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺ, ROCK DISPLACEMENT**, փորվածքների անցկացման, ապարազանգվածի խոնավանալու կամ ջրազրկման և այլ պատճառներով ապարների բնական հավասարակշռության խախտմամբ և դրանց ֆիզ. հատկությունների փոփոխմամբ պայմանավորված ապարազանգվածների շարժում և ձևախախտում:
- C-39. СДВОЕННЫЕ ВУЛКАНЫ – ԵՐԿՏԱԿ(ՎԱԾ) ՀՐԱՔՈՒԽՆԵՐ, TWIN VOLCANOES**, հրաբուխներ, որոնք ստորին մասերում իրենց կուտակումային կոներով միախառնվել են մեկ ընդհանուր զանգվածում՝ ժայթքային կենտրոնի տեղափոխման հետևանքով (օր.՝ Մեծ և Փոքր Արարատները):
- C-40. СЕВЕРНЫЙ ПОЛЮС – ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԲԵՎԵՌ, NORTH POLE**, աշխ. բևեռ, որը գտնվում է Հյուսիսային կիսագնդում, Սառուցյալ օվկիանոսի կենտրոնական մասում: Հ. բ. առաջինը հասել է ամերիկացի հետազոտող Ռ. Պիրին, 1909 թ.:
- C-41. СЕГРЕГАЦИЯ** (ուշ լատ. segregatio – անջատում) – **ՍԵԳՐԵԳԱՑԻԱ, SEGREGATION**, 1) միներալների կուտակում, որը սովորաբար իրենից ներկայացնում է մագմայի բյուրեղացման ամենասկզբնական արգասիքները, 2) խոնավ և ջրահագեցած ապարների սառչելիս դրանց ծակոտիներում սառույցի մաքուր բյուրեղների առաջացում, 3) օգտ. հնձ-ները հարստացնելիս թրթռման ազդեցությամբ միներալային հատիկների ըստ մեծության բաշխում:
- C-42. СЕДИМЕНТАЦИЯ** (լատ. sedimentum – նստում) – **ՆՍՏՎԱԾՔԱՎՈՒՏԱՎՈՒՄ, SEDIMENTATION**, բնական պայմաններում ծանրության ուժի ազդեցությամբ, ինչպես նաև քիմ. և օրգանական գործընթացների շնորհիվ հեղուկ կամ գազային միջավայրից կախված կամ տարրալուծված մասնիկների նստեցում: Ն-ման արագությունը կախված է հիմնականում միջավայրի խտությունից, մասնիկների չափերից և դրանց շարժունակությունից, տե՛ս Осадконакопление:
- C-43. СЕДИМЕНТАЦИЯ НУЛЕВАЯ – ՉՐՈՅԱԿԱՆ ՆՍՏՎԱԾՔԱՎՈՒՏԱՎՈՒՄ, ZERO SEDIMENTATION**, հատակի մակերևույթում նստվածքային նյութի կուտակման

բացակայություն: Դիտվում է մերձհատակային ջրերի բարձր շարժունակության պայմաններում:

**C-44. СЕДИМЕНТАЦИЯ ОТРИЦАТЕЛЬНАЯ – ԲԱՅԱՍԱԿԱՆ ՆԱՏՎԱԾՔԱՎՈՒՄՍԱԿՈՒՄ, NEGATIVE SEDIMENTATION**, հատակային նստվածքների և հատակի արմատական ապարների ողողաքայքայում:

**C-45. СЕДИМЕНТОГЕНЕЗ** (լատ. sedimentum – նստում և հուն. génesis – ծնում, գոյացում) – **ՆԱՏՎԱԾՔԱՎՈՅՈՒՄ, SEDIMENTOGENESIS**, նստվածքի առաջացման փուլ: Միավորում է երեք ընթացաշրջան՝ 1) հողմահարման ու ողողաքայքայման ժամանակ նյութի ակտիվացում, 2) ջրի, սառույցի, քամու միջոցով կամ ձգողականության ուղղակի ներագդեցության տակ նյութի տեղափոխում, 3) նյութի նստեցում ջրավազանների հատակին կամ ցամաքում: Ն. հերթափոխվում է դիագնոզով, տե՛ս նաև՝ Литогенез:

**C-46. СЕДИМЕНТОГЕННЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ**, տե՛ս Экзогенные месторождения:

**C-47. СЕДИМЕНТОЛОГИЯ**, տե՛ս Литология:

**C-48. СЕДЛО – ԹԱՍԲ, SADDLE**, ծալքավոր կառուցվածք, որը երկայնակի-ուղղաձիգ հատություն ունի մեղմաթեք գոգածալքի (սինկլինալի) ձև, իսկ լայնական-ուղղաձիգում՝ կամարածալքի (անտիկլինալի) ձև: Հարում է գմբեթանման զետեղված կամարածալքերի հողակապման տեղերին:

**C-49. СЕДЛОВИНА – ԹԱՍԲԱՐԴ, SADDLE**, 1) տեկտ. կամ լեռկացման-ողողամաշման ծագման ցածրացում լեռնաշղթայի գագաթում, 2) կամարածալքի կամարային մաս:

**C-50. СЕЙСМИЧЕСКАЯ РАЗВЕДКА, СЕЙСМОРАЗВЕДКА – ԵՐԿՐԱՇԱՐԺԱԿԱՆ (ՍԵՅՍՄԻԿ) ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԿՐԱՇԱՐԺԱՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ (ՍԵՅՍՄԱ-ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ), SEISMIC SURVEY**, հետախուզության երկրֆ. մեթոդների ամբողջություն, որը հիմնված է երկրակեղևում տարբեր տեսակի երկրաշարժական ալիքների հարուցման ու տարածման առանձնահատկությունների գրանցման վրա: Պայթեցումներից կամ մեխ. ներգործություններից առաջացած երկրաշարժական (սեյսմիկ) ալիքները, տարածվելով բոլոր ուղղություններով, թափանցում են մեծ խորություններ (10 կմ և ավելի), անդրադառնում են և բեկվում տարբեր առածականություն ու խտություն ունեցող ապարների սահմաններում: Այդ անդրադարձած ու բեկված ալիքները մասնակիորեն վերադառնում են երկրի մակերևույթ և գրանցվում սեյսմակայաններում: Ե. հ-յան ժամանակ գլխ. օգտագործվում են երկայնական ալիքները, որոնց արագությունը ապարների մեջ տատանվում է 0.4-8 կմ/վրկ. սահմաններում:

Ե. հ-յան մեջ կիրառվում են անդրադարձվող ալիքների մեթոդը (ԱԱՄ), բեկված ալիքների մեթոդը (ԲԱՄ) և պիեզոէլեկտրական էֆեկտը (ՊԷԷ): ԱԱՄ-ը, որպես առավել մանրամասն ու ճշգրիտ մեթոդ, ուսումնասիրում է նստվածքային շերտերը՝ կապված նավթի ու բնական գազի որոնման ու հետախուզման հետ: Այն կիրառվում է նաև որոշ մետաղական հնքվ-երի և ռեզիոնալ երկրաբանության մի շարք հարցերի ուսումնասիրության բնագավառում: Այս մեթոդը հնարավորություն է տալիս քարտեզագրելու սահմանները մինչև 1-2 % ճշտությամբ՝ մինչև 7-10 կմ խորությունները: Օգտվելով ԲԱՄ-ից՝ կարելի է որոշել մեկ կամ մի քանի բեկող շերտերի խորությունը և ձևը: Այս մեթոդը բնորոշվում է մեծ խորությամբ, բայց փոքր ճշտությամբ, հնարավորություն է տալիս հետազոտելու միայն երկրաշարժական ալիքների բարձրացված արագություն ունեցող շերտերը: Բեկված ալիքների համահարաբերակցական մեթոդը (ԲԱՀԱ) և խորքային երկրաշարժական զոնդումը (խորագնումը) (ԽԵԶ) դարձել են

մայր ցամաքների ու օվկիանոսների ռեգիոնալ ուսումնասիրությունների հիմնական մեթոդները: Օգտ. հնժ-ների որոնման ու հետախուզման համար կիրառվում են ԱԱՄ-ի ձևափոխումները՝ ընդհանուր խորքային կետից անդրադարձած օգտակար ազդանշանների գումարման տեսքով, ծավալային երկրաշարժահետախուզություն, որի հիմքում ընկած է տարածքային համակարգերի դիտարկումների օգտագործումը, բազմաալիքային երկրաշարժահետախուզությունը և այլն: ՊԷԷ-ի միջոցով հայտնաբերվում ու հետամտվում են պեգմատիտային մարմինները և քվարցային երակները: Ըստ դիտարկումների անցկացման պայմանների՝ տարբերում են վերգետնյա, ծովային, հորատանցքային, հանքահորային և այլ Ե. հ.: Ե. հ. կիրառվում է տարածքի և ապարների համալիրների երկրաբանաերկրաշարժական շրջանացման, նստվածքային ծածկոցում և կոնսոլիդացված հիմքում երկրբ. սահմանների քարտեզագրման, բյուրեղային հիմքի մակերևույթի ռելիեֆի, նավթի ու գազի կառուցվածքային և այլ ծուղակների որոնման, հանքային մարմինների որոնման, երկրբ. կտրվածքի կազմության, ապարների կազմի և ֆլյուիդային հազեցվածության կանխատեսման, տեկտ. խախտումների, կարստային խռոչների բացահայտման, ստր. ջրերի մակերևույթի որոշման, հնքվ-երի հետախուզության համար և այլն: Ե. հ. հնարավորություն է տալիս ուսումնասիրելու Երկրի կեղևի խորքային կառուցվածքը՝ ընդհուպ մինչև Մոհորովիչիչի մակերևույթը (տե՛ս Сейсмология): Ե. հ. կատարվում է տրամատներով, որոնց վրա որոշակի հեռավորությամբ տեղադրվում են տատանումներ առաջացնող աղբյուր և գրանցող սարքեր՝ սեյսմագրիչներ: Երկրաբանահետախուզական աշխատանքների տնտեսական արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Ե. հ. կատարվում է երկրֆ. այլ մեթոդների հետ համատեղ:

**C-51. СЕЙСМИЧЕСКАЯ ШКАЛА – ԵՐԿՐԱՇԱՐժԱԿԱՆ ՍԱՆՂԱԿ, SCALE OF SEISMIC INTENSITIES**, տե՛ս Землетрясение:

**C-52. СЕЙСМИЧЕСКИЕ ВОЛНЫ – ԵՐԿՐԱՇԱՐժԱԿԱՆ (ՍԵՅՍՄԻԿ) ԱԼԻՔՆԵՐ, SEISMIC WAVES**, տատանումներ, որոնք տարածվում են Երկրում բնական (երկրաշարժ, հրաբխի ժայթքում, կարստային փլվածքներ, լեռնային հարվածներ և այլն) կամ արհեստական (պայթյուններ, թրթռիչներ և այլն) աղբյուրներից: Ե. ա-ի հաճախական տիրույթը 0.001 Չց-ից մինչև 100 Չց է: Ուժեղ երկրաշարժերի օջախների մոտ վայրկյանի տասներորդ մասի տատանումների պարբերության դեպքում Ե. ա-ները ձեռք են բերում կործանիչ ուժ: Ըստ տարածման բնույթի՝ Ե. ա. լինում են երկայնակի և լայնակի, որոնք միասին կոչվում են ծավալային ալիքներ: Երկայնակի ալիքը բնութագրվում է միջավայրի մասնակի շեղումով, իսկ լայնակին՝ մասնակի շեղումով՝ երկրաշարժային ալիքին ուղղահայաց ուղղությամբ: Նրանց լայնության նվազումը համասեռ և իզոտոպային միջավայրում հակադարձ համեմատական է հեռավորությանը: Երկայնակի ալիքների արագությունը մեծ է լայնակի ալիքների արագությունից և հասնում է մինչև 8 կմ/վրկ: Միջավայրի բաժանման սահմանի և Երկրում այլ անհամասեռությունների առկայության դեպքում դիտարկվում են անդրադարձման, բեկման և Ե. ա-ի տեսակների փոխանակության երևույթներ: Երկրի մակերևութին մոտ առաջանում են տարբեր տեսակի մակերևութային ալիքներ (Ռ-Էլեյի, Լյավի և այլն), որոնց լայնության նվազումը հակադարձ համեմատական է հեռավորության քառակուսի արժատին: Այդ պատճառով հեռակա երկրաշարժերի առաջացրած ալիքների մեջ լայնության մեծությամբ իշխողը մակերևութային ալիքներն են: Ըստ խորության՝ Երկրի հատկությունների փոփոխման հետևանքով փոխվում է նաև ծավալային ալիքների տարածման արագությունը, որը հնարավորություն է տալիս հայտնաբերելու Երկրի ներսում մի

շարք պատյաններ և հետազոտելու դրանց կառուցվածքը:

**C-53. СЕЙСМИЧЕСКИЙ ГОДОГРАФ** (հուն. hodós – ուղի, շարժում, ուղղություն և gráphō – գրում են) – **ԵՐԿՐԱՇԱՐԺԱԿԱՆ (ՍԵՅՍՄԻԿ) ՉՈՂՈԳՐԱՖ, TRAVEL TIME, TIME GRAPH, TIME DISTANCE CURVE**, երկրաշարժական ալիքների վազքի ժամանակի և դիտարկման կետի ու ալիքների աղբյուրի հեռավորության միջև եղած կախվածություն: Հնարավորություն է տալիս որոշելու Երկրում երկրաշարժական ալիքների տարածման արագությունը և երկրաշարժի ներքնակենտրոնի տեղադրությունը:

**C-54. СЕЙСМИЧЕСКОЕ МИКРОРАЙОНИРОВАНИЕ – ԵՐԿՐԱՇԱՐԺԱԿԱՆ (ՍԵՅՍՄԻԿ) ՍԱՆՐԱՇՐՁԱՆԱՅՈՒՄ, SEISMIC MICROZONING**, ճարտարագիտական երկրաշարժագիտության բաժին, որի հիմնական խնդիրը ընդհանուր երկրաշարժական շրջանացման տվյալների ճշտումն ու կառուցապատվող տարածքի երկրաշարժական վտանգի աստիճանի որոշումն է: Ե. մ-ման ժամանակ երկրաշարժամետությունը (սեյսմիկությունը) գնահատվում է բալլով կամ երկրաշարժական բեռնվածությամբ, որն արտահայտվում է գրունտի սպասվող կամ իրական արագացումագրությամբ (արագացման գրանցումներով): Ե. մ-ման օգնությամբ տարածքը բաժանվում է տեղամասերի, որոնց բալլականությունը կարող է ճշտվել ( $\pm 1-2$  բալլ)՝ կախված տեղական տեկտ. և ճարտարագիտակերպ. պայմաններից: Ե. մ-ման արդյունք է 1:10 000 - 1:50 000 քարտեզների կազմումը:

**C-55. СЕЙСМИЧЕСКОЕ РАЙОНИРОВАНИЕ – ԵՐԿՐԱՇԱՐԺԱԿԱՆ (ՍԵՅՍՄԻԿ) ՇՐՁԱՆԱՅՈՒՄ, SEISMIC ZONING**, տարածքի բաժանումը սպասվող երկրաշարժերի տարբեր ուժգնության շրջանների: Ե. 2-ման տվյալները օգտագործվում են երկրաշարժակայուն (սեյսմակայուն) կառույցների նախագծման ու շինարարության, ինչպես նաև երկրաշարժավտանգ տարածքներում այլ գործնական խնդիրների լուծման համար: Ե. 2-ման քարտեզներ կազմելու համար օգտագործվում են երկրաշարժերի պատմական տվյալները, գործիքային դիտարկումները, երկրբ., տեկտ. և երկրֆ. քարտեզները, երկրակեղևի բլոկների շարժման տվյալները: Առաջին փուլում առանձնացվում են երկրաշարժերի օջախների հնարավոր առաջացման զոնաները (ԵՅՕ)՝ օջախների տարբեր խորություններով: Առավել վտանգավոր են այն երկրաշարժերը, որոնց օջախները գտնվում են երկրակեղևում (3-ից մինչև 30-50 կմ խորություններում): ԵՅՕ-ի զոնաները դասակարգվում են ըստ երկրաշարժերի առավելագույն հնարավոր ուժաստիճանների (մագնիտուդների, էներգիաների): Երկրի մակերևույթին երկրաշարժերի ազդեցությունը սովորաբար արտահայտում են երկրաշարժական սանդղակի բալլերով կամ տատանումների ուժգնության քանակական բնութագրմամբ (գրունտի մասնիկների տատանումների արագության ու արագացման մեծություններով): Ե. 2-ման քարտեզների վրա անջատում են զոնաներ՝ երկրաշարժերի ուժգնության 10, 9, 8, 7, 6, 5 և ավելի փոքր բալլերով կամ անցկացվում են մակարդակագծեր արագությունների՝ 0.05 g, 0.10 g, 0.20 g, 0.40 g զագաթնակետային արդյունավետ լայնություններով (g-ն ծանրության ուժի արագացումն է): Ե. 2-ման քարտեզները խոշոր տարածքների (երկրների) համար կազմվում են 1:5 000 000 - 1:1 000 000 մասշտաբներով, առանձին ռեգիոնների համար մանրամասն Ե. 2-ման քարտեզների մասշտաբը 1:500 000 - 1:100 000 է: Ե. 2-ման քարտեզները մտնում են երկրաշարժակայուն շինարարության նորմերի և կանոնների մեջ:

**C-56. СЕЙСМИЧНОСТЬ ЗЕМЛИ** (հուն. seismós – տատանում, երկրաշարժ) – **ԵՐԿՐԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԱՍԵՏՈՒԹՅՈՒՆ (ՍԵՅՍՄԻԿՈՒԹՅՈՒՆ), EARTH SEISMICITY**, երկրի կամ նրա առանձին տարածքների ենթարկվածությունը երկրաշարժերին: Բնո-

րոշվում է տարբեր էներգիայի երկրաշարժերի տարածքային տեղաբաշխմամբ, որը գնահատվում է ուժաստիճանով (մագնիտուդով) կամ ըստ էներգետիկական դասերի սանդղակի, մակերևույթում դրանց արտահայտությամբ՝ բալլերով, երկրաշարժական իրադարձությունների հաճախականությամբ և այլն: Ուժեղ երկրաշարժերը տեղի են ունենում հիմնականում երկարացված երկրաշարժական գոտիների սահմաններում, ինչպես նաև միջինօվկիանոսային լեռնաշղթաների և մայրցամաքային ռիֆտային զոնաների սահմաններում: Գոյություն ունի նաև ներսալային երկրաշարժերի կարևոր կատեգորիա, որը տեղի է ունենում մայր ցամաքների պլատֆորմային շրջաններում (օր.՝ Ուզբեկստանի Գազլիի շրջանը): Առավել ուժգնությամբ բնորոշվում են խաղաղօվկիանոսյան գոտին (Երկրի երկրաշարժական էներգիայի ավելի քան 75 %) և Ալպ-Հիմալայան գոտին (մոտ 20 %): Երկրաշարժական էներգիայի մեծ մասը անջատվում է այն երկրաշարժերի դեպքում, որոնց օջախների խորությունը չի անցնում մի քանի տասնյակ կմ-ից: Միջանկյալ խորության և խորաֆոկուսային (մինչև 600-700 կմ) երկրաշարժերը կենտրոնացված են շատ նեղ (ոչ ավելի, քան մի քանի տասնյակ կմ) թեք զոնաներում, որոնք ունեն բարդ կառուցվածք և ֆիզ. բնութագրերով տարբերվում են ներփակող տարածությունից: Երկրաշարժերի աշխ. տեղաբաշխման և նրանց մեխանիզմի առանձնահատկությունների ուսումնասիրությունը կարևոր դեր խաղաց սալերի տեկտոնիկայի տեսության մշակման գործում, ըստ որի Ե. Ե-յան հիմնական պատճառ է հանդիսանում լարվածությունների կուտակումը շարժուն քարոլորտային սալերի սահմաններում: Միջանկյալ և խոր երկրաշարժերը կապում են միջնապատյանի մեջ օվկիանոսային սալերի խորասուզման հետ: Երկրաշարժերի տարածական-ժամանակային և էներգետիկական տեղաբաշխման մասին ռեգիոնալ տվյալները կոչվում են երկրաշարժական ռեժիմ: Ե. Ե-յան կարևոր գործոն է հանդիսանում կրկնելիության գրաֆիկը՝ երկրաշարժերի թվի լոգարիթմական կախվածությունը ուժաստիճանից (մագնիտուդից) կամ էներգետիկական դասից:

**C-57. ՇԵՄՈԳՐԱՄՄԱ – ԵՐԿՐԱՇԱՐՇԱԳԻՐ (ՍԵՅՍՄԱԳԻՐ, ՑՆՑԱԳԻՐ), SEISMOGRAM,** երկրաշարժագրերով (սեյսմագրերով) երկրաշարժական տատանումների անընդհատ գրանցման արդյունք: Գրանցման տեխնիկան բազմազան է: Առավել տարածված ձևը երկրաշարժաչափի ճոճանակի կամ գալվանաչափի հայելուց անդրադարձած լույսի ճառագայթի օգնությամբ գրանցումն է լուսանկարչական թղթի վրա: Պատրաստվում են հատուկ հարմարանքներ, որոնց օգնությամբ երկրաշարժական տատանումները գրանցվում են մագնիսական ժապավենի վրա թվային կոդի տեսքով՝ ԷՅՄ-ին հաղորդելու համար: Ե-ի վրա ալիքների տատանումների գրանցմանը զուգընթաց նշվում է ճիշտ ժամանակը: Ե-ի օգնությամբ որոշվում է տարբեր առածական ալիքների մուտքի ժամանակը, իսկ հողոգրաֆի միջոցով՝ երկրաշարժի առաջացման ժամանակը օջախում և նրա տեղը: Լայնույթի և տատանման տարբերության մեծությունը հնարավորություն է տալիս որոշելու երկրաշարժի էներգիան (մագնիտուդը) և տատանման հզորությունը (բալլայնությունը):

**C-58. ՇԵՄՈԳՐԱՓ** (հուն. seismós – տատանում, երկրաշարժ և gráphō – գրում եմ) – **ԵՐԿՐԱՇԱՐՇԱԳՐԻՉ (ՍԵՅՍՄԱԳՐԻՉ, ՑՆՑԱԳՐԻՉ), SEISMOGRAPH,** երկրաշարժի, պայթեցումների, թրթռումների և այլ պատճառներով հարուցված գրունտների ու կառույցների տատանումների գրանցման սարքերի համալիր: Բաղկացած է երկրաշարժական ազդանշանն ընդունող երկրաշարժաչափից (սեյսմաչափից) և սարքերից, որոնք ձևավորում և գրանցում են ելքային ազդանշանը (տե՛ս նաև Сейсмометрия): Ե-ի հիմքը կոշտ կերպով կապված է հետազոտվող օբյեկտի հետ,

որի տատանումների դեպքում հիմքի նկատմամբ առաջանում է ծանրոցի (երկրաշարժաչափի իներտ զանգվածի) շարժում: Ժամանակակից Ե-ները երկրաշարժի ժամանակ գրանցում են գետնի երեք փոխադարձ ուղղությամբ տատանումներ՝ երկու հորիզոնական և մեկ ուղղաձիգ ուղղություններով:

**C-59. СЕЙСМОЛОГИЯ** (հուն. seismós – տատանում, երկրաշարժ և lógos – ուսմունք, խոսք) – **ԵՐԿՐԱՇԱՐժԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (ՍԵՅՍՄԱԼՈԳԻԱ), SEISMOLOGY**, երկրաֆիզիկայի բաժին, որն ուսումնասիրում է երկրաշարժերը, դրանց պատճառները, հետևանքները և արհեստական կառույցների պաշտպանության միջոցառումները: Ե-յան հիմնական ուղղություններն են՝ երկրաշարժական գործընթացների, երկրաշարժի օջախի մոտ և հեռվում ալիքային սեյսմիկ դաշտի ուսումնասիրությունը: Երկրաշարժական գործընթացի ուսումնասիրությունը ընդգրկում է երկրաշարժերի համախմբության ուսումնասիրումը տարածության և ժամանակի մեջ, դրանց առաջացման պատճառական և ստոխաստիկ օրինաչափությունների բացահայտումը և կապերը Երկրի ընդհանուր էվոլյուցիայի հետ: Դրանց գործնական նպատակը երկրաշարժերի առաջացման տեղավայրի, ուժի և կրկնողության երկարաժամկետ կանխատեսումն է (տե՛ս Сейсмическое районирование): Երկրաշարժի օջախի ուսումնասիրության ժամանակ կատարվում է իրական ֆիզերկրբ. միջավայրում երկրաշարժի նախապատրաստման գործընթացների, օջախում երկրի բլոկների տեղաշարժման և միջավայրի այլ փոխարկումների ուսումնասիրություն, օջախի պարամետրերի գնահատում: Բացահայտվում են երկրաշարժի նախանշանակները, մշակվում է երկրաշարժի ժամանակ կարճատև ու օպերատիվ կանխատեսումը, երկրաշարժական գործընթացի կառավարման եղանակները, գնահատվում են երկրաշարժամետության վրա անտրոպոգեն (տեխնածին) գործոնների ազդեցության հնարավորությունը: Ճարտարագիտաերկրաշարժական խնդիրների լուծման համար ուսումնասիրվում են օջախի մոտ երկրաշարժի հարուցած երկրաշարժական ալիքային դաշտը, Երկրի մակերևույթի ուժեղ երկրաշարժական շարժումները և գրունտի փոխազդեցությունը կառույցի հետ, կատարվում է միկրոերկրաշարժական շրջանացում, որոշվում է երկրաշարժի ազդեցությունը Երկրի ջրոլորտի և մթնոլորտի վրա: Երկրաշարժի օջախից հեռու կատարվող ուսումնասիրությունները ներառում են ալիքային երկրաշարժական դաշտը՝ երկրաշարժի ալիքի երկարությունը գերազանցող հեռավորություններում, ինչպես նաև Երկրի ներքին կազմությունը ճանաչելու համար երկրաշարժական մեթոդների մշակումը և օգտագործումը: Այդ ուղղությանն է հարում Երկրի մակերևույթում երկրաշարժական աղմուկի՝ միկրոսեյսմների (մանրատատանումների) ուսումնասիրությունը: Կիրառական խնդիրներին են վերաբերում ստորգետնյա միջուկային փորձարկումների գրանցումը և ճանաչումը: Ե-յանը սերտորեն հարում է երկրաշարժաչափությունը (սեյսմաչափությունը)՝ երկրաշարժական ալիքների գրացման մեթոդների ու սարքավորումների մշակումը:

Ե-յան ուսումնասիրությունները ներառում են երկրաշարժերի տեսողական դիտարկումներ և երկրաշարժերի հարուցած երկրաշարժային ալիքների գրանցումներ բոլոր դիմամիկական ու հաճախականության ընդգրկությամբ (սարքային դիտարկումներ): Ալիքները գրանցվում են երկրաշարժագրիչներով, որը հնարավորություն է տալիս որոշելու երկրաշարժի օջախի տեղավայրը և պարամետրերը: Երկրաշարժագրիչները լինում են անշարժ և արշավախմբային: Առաջինը տեղադրվում է երկրաշարժական կայաններում և աշխատում է անընդմեջ: Երկրաշարժական կայանների ցանցը կազմում է երկրաշարժական ծառայության հիմ-

քը: Այն կոչված է կատարելու երկրաշարժական գործընթացների դիտարկումներ, կազմելու երկրաշարժերի տեղեկագրեր և կատալոգներ, նախագուշացնելու ստորջրյա երկրաշարժերի հետ կապված ցունամիների մասին, տեղեկացնելու կառավարությանը ուժեղ երկրաշարժերի մասին և այլն: Արշավախմբային երկրաշարժագրիչների համակարգերը տեղաբաշխվում են տեղի ունեցած ուժեղ երկրաշարժերի օջախային մարզերում՝ դրանց հետագա ցնցումները գրանցելու համար, շինարարության համար առավել պատասխանատու տարածքներում (օր.՝ ԱԷԿ-ի), ծովերի ու օվկիանոսների հատակում: Դրանք ուղարկվել են նաև Լուսնի և Արուսյակի վրա: Տեսողական դիտարկումները կատարվում են ուժեղ երկրաշարժերի օջախային մարզերում՝ երկրաբանաերկրաձևաբանական հետազոտությունների միջոցով, որոնց նպատակն է հայտնաբերել նոր առաջացած կամ վերակենդանացած խզվածքները, բլոկների տեղաշարժերը, փլուզումները, սողանքները և այլն: Ե. սերտորեն կապված է ֆիզիկամաթեմատիկական, երկրբ., աշխ. և տեխնիկական գիտությունների հետ: Օր.՝ երկրաշարժական գործընթացի ուսումնասիրությունը առնչվում է ֆիզ. աշխարհագրության, տեկտոնիկայի, հատկապես նորագույն տեկտոնիկայի և սեյսմատեկտոնիկայի հետ: Երկրաշարժերի օջախի և նախագուշակների ուսումնասիրությունը հենվում է պինդ մարմնի ֆիզիկայի, մեխանիկայի, երկրաբաշխության, երկրի ֆիզիկայի, ջրաերկրաբանության, երկրաքիմիայի նվաճումների վրա: Օջախի մոտ ուսումնասիրությունները հաշվի են առնում ճարտարագիտական երկրաբանության նվաճումները և անհրաժեշտ են երկրաշարժակայուն շինարարության զարգացման համար: Երկրի ներքին կազմության ուսումնասիրման համար երկրաշարժական ալիքների օգտագործումը պահանջում է մաթեմատիկական ֆիզիկայի մեթոդների կիրառում՝ զուգակցված ծանրաչափական, երկրաջերմագիտության, ապարաբանության, երկրամագնիսականության և երկրի մասին այլ գիտությունների հետ: Երկրի կազմության ուսումնասիրությունում Ե-յան նվաճումները հիմք ծառայեցին երկրաշարժական հետախուզության մեթոդների զարգացման համար:

**С-60. СЕЙСМОМЕТРИЯ** (հուն. seismós – տատանում, երկրաշարժ և metréo – չափում են) – **ԵՐԿՐԱՇԱՐժԱԶՈՒԹՅՈՒՆ (ՍԵՅՍԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ, ՅՆՑՈՒՄԱԶՈՒԹՅՈՒՆ), SEISMOMETRY**, երկրաշարժագիտության բաժին, զբաղվում է երկրաշարժական ալիքների գրանցման մեթոդների և գրանցող սարքերի մշակմամբ: Երկրաշարժական տատանումների համար նախատեսված գործիքները կոչվում են երկրաշարժագրիչներ (սեյսմագրիչներ, տե՛ս Сейсмограф), իսկ գրանցման արդյունքները՝ երկրաշարժագրեր (սեյսմագրեր, տե՛ս Сейсмограмма): Երկրաշարժերից, միջուկային պայթեցումներից և առաձգական տատանումների այլ աղբյուրներից առաջացած երկրաշարժական ալիքների գրանցումը կատարվում է երկրաշարժական կայաններում՝ ավտոմատ սարքերով, տե՛ս նաև Сейсмология:

**С-61. СЕЙСМОТЕКТОНИКА** (հուն. seismós – տատանում, երկրաշարժ և տեկտոնիկա) – **ԵՐԿՐԱՇԱՐժԱՏԵԿՏՈՆԻԿԱ (ՍԵՅՍԱՏԵԿՏՈՆԻԿԱ), SEISMOTECTONICS**, երկրաբանության բաժին, ուսումնասիրում է երկրաշարժերի առաջացման տեկտ. պայմանները և դրանց երկրբ. հետևանքները: Երկրաշարժական ցուցիչները օգտագործվում են երկրատեկտոնական ռեժիմի կայունության աստիճանի բնութագրման, հակադիր տեկտ. շարժման զոնաների որոշման, շարժումակության գերակշռող ուղղությունների բացահայտման համար: Ուսումնասիրությունների արդյունքները արտահայտվում են քարտեզների ձևով: Դրանց վրա նշվում են տեկտ. կառույցների և երկրաշարժերի վերնակենտրոնների մասին տվյալներ,



որոնք հնարավորություն են տալիս որոշակի կապ հաստատելու երկրաշարժերի և տվյալ ռեգիոնի երկրբ. կառուցվածքի տարրերի ու երկրբ. զարգացման առանձնահատկությունների միջև: Ե. հնարավորություն է տալիս կանխատեսելու սպասվելիք երկրաշարժերի տեղը, ուժը և մոտավոր հաճախականությունը, ինչպես նաև կազմելու սենյանիկ շրջանացման քարտեզներ:

**C-62. СЕКРЕЦИЯ** (լատ. *secretio* – բաժանում) – **ԱՐՏԱԶԱՏՈՒՄ, SECRETION**, ապարի դատարկությունների լցվելը բյուրեղային կամ կոլոիդ նյութով: Ի հակադրություն կոնկրեցիաների, Ա. տեղի է ունենում դատարկության պատերից դեպի կենտրոն՝ պատերին նյութի համակենտրոն շերտերի նստեցման ձևով: Հաճախ Ա-ման մեջտեղում մնում է խոռոչ՝ շրջապատված տարբեր միներալների բյուրեղախմբերով: Տարբերում են մանր Ա-ներ՝ նշաքարեր և խոշոր՝ ժեղդներ:

**C-63. СЕКУЩИЙ СБРОС**, տե՛ս Поперечный сброс:

**C-64. СЕЛЕВЫЕ ОТЛОЖЕНИЯ** – **ՍԵԼՎՎԱՅԻՆ (ՑԵԽԱՅԵՂԵՂԱՅԻՆ) ՆՍՎԱԾՔՆԵՐ, MUD-FLOW DEPOSITS**, կավային, ավազային և կոպտաբեկոր նյութից կազմված չտեսակավորված նստվածք, որն արտաբերել ու կուտակել են սելավները:

**C-65. СЕЛЕКТИВНАЯ ЭРОЗИЯ**, տե՛ս Избирательная эрозия:

**C-66. СЕЛЕН, Se** (հուն. *sēlinē* – լուսին) – **ՍԵԼԵՆ, SELENIUM**, պարբերական համակարգի 6-րդ խմբի քիմ. տարր: Բնական Ա. ունի 6 կայուն իզոտոպ և <sup>82</sup>Se ճառագայթակառիկ իզոտոպը: Ա. գոյություն ունի մի քանի բյուրեղային ձևափոխություններում, ինչպես նաև ապակենման և ամորֆ ձևերում: Ա. ոչ մետաղական, օդում կայուն տարր է: Երկրակեղևում միջին պարունակությունը 5·10<sup>-6</sup> % է (ըստ զանգվածի): Ա-ի միներալները ինքնուրույն ձևով խիստ հազվադեպ են: Ա-ի բնական միացություններն են գլխ. սելենաջրածնի ածանցյալները:

**C-67. СЕЛЕНИТ** (հուն. *sēlinē* – լուսին) – **ՍԵԼԵՆԻՏ (ԼՈՒՍՆԱՔԱՐ), SELENITE**, միներալ, գիպսի թելանման, մետաքսի փայլով տարատեսակ: Գունավորումը մեղրի կամ վարդագույն դեղին է, կարծրությունը՝ 2: Արհեստագործական քար է:

**C-68. СЕЛЬ** (արաբ. սայլ-ուժգին հոսք) – **ՍԵԼՎՎ (ՑԵԽԱՅԵՂԵՂ), MUD FLOW, MUD STREAM, STONE-RUN**, ցեխային կամ ցեխաքարային կարճատև, ավերիչ հոսք, որը հանկարծակի առաջանում է գլխ. լեռնային գետերի հուններում: Ա-ները հարուցում են ուժեղ տեղատարափները կամ ուժգին ձնհալը՝ բուսազուրկ լանջերում հողմահարման արգասիքների մեծաքանակ կուտակման պայմաններում: Բնորոշ են չոր կլիմա ունեցող լեռնային շրջաններին:

**C-69. СЕНОМАНСКИЙ ЯРУС, СЕНОМАН** (Լե-Ման քաղաքի լատ. *Cenomanum* անավնումից, Ֆրանս.) – **ՍԵՆՈՄԱՆԻ ՀԱՐԿ, ՍԵՆՈՄԱՆ, CENOMANIAN**, կավճի համակարգի վերին բաժնի ստորին հարկ:

**C-70. СЕНОНСКИЙ НАДЪЯРУС, СЕНОН** (Սանս ք-ի լատ. *Senones* անվանումից, Ֆրանս.) – **ՍԵՆՈՆԻ ՎԵՐՆԱՀԱՐԿ, ՍԵՆՈՆ, SENONIAN**, շերտագրական ստորաբաժանում, որը միավորում է վերին կավճի կոնյակի, սանտոնի, կամպանի և մասստրիխտի հարկերը:

**C-71. СЕПАРАТОР** (լատ. *separator* – զատիչ) – **ԶՍԻՉ, SEPARATOR**, խառնուրդից նյութեր զատող մեքենա: Զ-ի գործողությունը հիմնված է խառնուրդի բաղադրիչների ֆիզ. հատկությունների՝ ձևի, խտության, լուսային, մագնիսական, էլեկտրական և այլ հատկությունների տարբերության օգտագործման սկզբունքի վրա: Զ-ն օգտագործվում է օգտ. հնձ-ների հարստացման գործընթացում:

**C-72. СЕРА, S** (լատ. *sulfur*) – **ԾՃՈՒՄԲ, SULPHUR**, պարբերական համակարգի 6-րդ

խմբի քիմ. տարր: Կազմված է չորս կայուն իզոտոպից:  $\bar{O}$ . տարածված տարր է, պարունակությունը երկրակեղևում  $4.7 \cdot 10^{-2} \%$  է (ըստ զանգվածի): Բնության մեջ հանդիպում է ազատ վիճակում (բնածին  $\bar{O}$ .) և միացությունների (սուլֆիդների, պոլիսուլֆիդների, սուլֆատների) ձևով: Կենսոլորտի բազմաթիվ գործընթացների հետևանքով  $\bar{O}$ . կուտակվում է հողի հումուսում, ածխում, նավթում, ծովերում ու օվկիանոսներում, ընդերքի ջրերում, լճերում և այլուր: Հայտնի է  $\bar{O}$ -ի ավելի քան 200 միներալ, որոնցից արոյ. նշանակություն ունեն պիրիտը (FeS), գալենիտը (PbS), սֆալերիտը (ZnS), անհիդրիդը ( $CaSO_4$ ), գիպսը ( $CaSO_4 \cdot 2H_2O$ ), միաբիլիտը ( $Na_2SO_4 \cdot 10H_2O$ ):  $\bar{O}$ . պինդ բյուրեղային նյութ է: Գոյություն ունի ալոտրոպ երկու ձևափոխություններով՝ շեղանկյունային  $\bar{O}$ . կիտրոնադեղին է, մոնոկլինայինը՝ պղնձադեղին:

**C-73. СЕРА САМОРОДНАЯ – ԲՆԱԾԻՆ ԾՕՈՒՄԲ, NATIVE SULPHUR**, բնածին տարրերի դասի միներալ: Առավել տարածված է շեղանկյունային ձևափոխությունը: Առաջացնում է բյուրեղային ագրեգատներ, հոծ, երբեմն հողանման զանգվածներ, մակահոսքային, բողբոջանման ձևեր և փառեր: Գույնը՝ դեղինի տարբեր երանգներ, փայլը՝ միատերում ադամանդի, կոտրվածքում՝ ճարպային, կարծրությունը՝ 1-2: Փխրուն է: Առաջանում է հրաբխային ժայթքումների ժամանակ, սուլֆիդների հողմահարման, գիպսաբեր նստվածքային ստվարաշերտերի քայքայման արգասիքում, ինչպես նաև՝ կապված բակտերիաների գործունեության հետ:

**C-74. СЕРДОЛИК** (հուն. sardonyx – ներդաշնակությամբ անվանումը մոտ է «սիրտ» և «տեսք» բառերին) – **ՍԱՐԴԻՈՆ, CARNELIAN, CAMBAY STONE**, միներալ, քաղկեդոնի վարդագույն, նարնջագույն-կարմիր և ոսկեգույն-դեղին տարատեսակ: Բնության մեջ հանդիպում է միջին ու հիմքային արտավիժումային ապարների ճեղքերի լցման ու նշաքարերի տեսքով: Դրանց քայքայման դեպքում կուտակվում է հողմահարման կեղևում և ցրոններում ճալաքարի տեսքով: Հնքվ-երի գլխավոր արոյ. տիպերը այլովիալ և էյուովիալ ցրոններն են: Կիսաթանկարժեք քար է:

**C-75. СЕРЕБРО, Ag** (լատ. argentum) – **ԱՐԾԱԹ, SILVER**, պարբերական համակարգի 1-ին խմբի քիմ. տարր: Ազնիվ մետաղ է: Պարունակությունը երկրակեղևում  $7 \cdot 10^{-6}$  զանգվածային տոկոս է: Բնության մեջ գտնվում է ազատ վիճակում (բնածին Ա.), նաև միացությունների ձևով՝ արգենտիտ ( $Ag_2S$ ), պիրարգիրիտ ( $Ag_2PbS_2$ ), պրուստիտ ( $Ag_2AsS_2$ ), կերարգիրիտ ( $Ag Cl$ ) և այլ միներալներում: Բնության մեջ Ա. ամենամեծ տարածում ունեցող ազնիվ մետաղն է: Ա. ավելի լավ, քան հայտնի մյուս մետաղները, անդրադարձնում է լույսը, հաղորդում է ջերմությունն ու էլեկտրականությունը: Չափազանց պլաստիկ է: Արդյունահանվող Ա-ի մեծ մասը ստացվում է Ա. պարունակող կապարի, ցինկի և պղնձի սուլֆիդային հանքանյութերի վերամշակման ժամանակ:

**C-76. СЕРЕБРО САМОРОДНОЕ – ԲՆԱԾԻՆ ԱՐԾԱԹ, NATIVE SILVER**, բնածին տարրերի դասի միներալ, Ag: Բ. ա-ում արծաթի պարունակությունը կարող է հասնել 99 %-ի: Հաճախ իրենից ներկայացնում է Ag–Au կամ Ag–Hg պինդ լուծույթ: Բյուրեղային համակարգը խորանարդային է: Առաջացնում է ծաված ու պտտված, մազանման, մետաղալարանման, թիթեղաձև, կմախքային և դեմդրիտային անջատումներ, տարբեր սուլֆիդներում՝ նուրբ ներփակվածքներ: Գույնը՝ արծաթավուն-սպիտակ, փայլը՝ թարմ մակերեսում ուժեղ մետաղի, կարծրությունը՝ 2-2.5: Ջերմության և էլեկտրականության հաղորդիչ է: Վերածին (հիպերգեն) Բ. ա. կապված է համարյա բոլոր սուլֆիդային հնքվ-երի օքսիդացման ու ցեմենտացման զոնաների հետ:

**C-77. СЕРЕБРЯНАЯ ОБМАНКА – ԱՐԾԱԹԻ ԽԱՐՈՒՍԱԿ**, նույնն է՝ Прустит:

**C-78. СЕРЕБРЯНЫЕ РУДЫ – ԱՐԾԱԹԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, SILVER ORES**, բնական միներ-

րալային գոյացություններ, որոնք պարունակում են արծաթի այնպիսի քանակներ, որոնցից նրա կորզումը տնտեսապես նպատակահարմար է: Հայտնի են արծաթի ավելի քան 50 միներալներ, որոնցից կարևոր նշանակություն ունեն միայն 15-20-ը, այդ թվում բնածին արծաթը և նրա տարատեսակները, էլեկտրումը և կյուստելիտը, արգենտիտը ( $Ag_2S$ ), պրուստիտը ( $AgAsS_3$ ), պիրարգիրիտը ( $AgSbS_3$ ), ստեֆանիտը ( $Ag_3SbS_4$ ), դիսկրագիտը ( $Ag_3Sb$ ), ագվիլարիտը ( $Ag_4Se_5$ ) և այլն: Ա. հ-ի հնքվ-երի մեջ առանձնացնում են բուն արծաթի հնքվ-եր և համալիր արծաթապարունակ հնքվ-եր (արծաթը, որպես ուղեկից արդյ. բաղադրիչ, մտնում է գունավոր ու ազնիվ մետաղների հանքաքարերի կազմի մեջ): Բուն արծաթի հնքվ-երը կապված են ծալքավոր մարզերի զարգացման լեռնագոյացման փուլի հետ և ձևավորվում են տարբեր երկրատեկտոնական իրադրությունում: Առավել տարածված են հրաբխային գոտիների երակների, երակային և միներալացված զոնաների ու շտոկվերկային տեսքով հնքվ-երը, որոնք հարում են կայնոզոյան, հազվադեպ ավելի հին ռիոլիթային և անդեզիտ-ռիոլիթային կազմի հրաբխային և ենթահրաբխային կառույցներին (հնահրաբուխներին, հրաբխագոգերին): Հանքային մարմինները տեղադրված են ինչպես ենթահրաբխային և հրաբխային ստվարաշերտերում, այնպես էլ տակդիր ցամաքածին համալիրներում: Ա. հ. երակների, երակային ու միներալացված զոնաների տեսքով լայն տարածում ունեն նաև միոգենոսիկլինալների ցամաքածին և ցամաքածին-կարբոնատային ստվարաշերտերում: Համալիր արծաթապարունակ հնքվ-երն ունեն կարևոր արդյ. նշանակություն (ապահովում են արծաթի հանույթի մոտ 80 %-ը): Այս հնքվ-երում արծաթի արդյունահանման ու պաշարների մեջ զլխավոր դերը պատկանում է բազմամետաղական հնքվ-երին, քիչ պակաս՝ պղնձի հնքվ-երին: Փոքր նշանակություն ունեն արծաթ պարունակող ոսկու, անագի, ծարրի, միկելի, մանգանի և այլ մետաղների հանքաքարերի հնքվ-երը:

**C-79. СЕРЕБРЯНЫЙ БЛЕСК – ԱՐԾԱԹԻ ՓՈՅԼ, SILVER GLANCE, ԱՐԳԵՆՏԻՏ:**

**C-80. СЕРИЦИТ** (լատ. sericus – մետաքսե, անվանումը ըստ մետաքսի փայլի) – **ՍԵՐԻՑԻՏ, SERICITE**, միներալ, մուսկովիտի կամ (հազվադեպ) պարագոնիտի մանրաթեփուկավոր տարատեսակ: Ա-ի ծագումը ջրաջերմային (հիդրոթերմալ) է՝ կապված երկրորդային քվարցիտների ու բերեզիտների հետ (տե՛ս Серицитизация), կամ փոխակերպային՝ սերիցիտային թերթաքարերում և ֆիլիտներում: Ա. ունի կարևոր որոնողական նշանակություն որպես միներալ, որն ուղեկցում է պղնձի, բազմամետաղների, ոսկու և այլ տեսակի հանքայնացումներին:

**C-81. СЕРИЦИТИЗАЦИЯ – ՍԵՐԻՑԻՏԱՑԻԱ, SERICITIZATION**, միջնաջերմաստիճանային ջրաջերմային (հիդրոթերմալ) լուծույթների ներագդեցության հետևանքով ապարի մետասոմատիկական (միներալատեղակալման) փոփոխության գործընթաց, որը հանգեցնում է միներալների (ալյումասիլիկատների ու սիլիկատների, առաջին հերթին՝ դաշտասպաթների) հիդրոլիզային (ջրատարրալուծական) քայքայմանը և դրանց ագրեգատների փոխարինմանը սերիցիտով՝ քվարցի, երբեմն քլորիտների, կարբոնատների, պիրիտի հետ: Ա. Cu-ի, Zn-ի, Pb-ի, Ag-ի, Mo-ի, As-ի, Hg-ի, Sb-ի և այլ հանքաքարերի հնքվ-եր ներփակող ապարների մերձերակային փոփոխությունների ամենատարածված տեսակներից մեկն է:

**C-82. СЕРИЯ ГЕОЛОГИЧЕСКАЯ – ԵՐԿՐԱԲՈՒՆԱԿԱՆ ՍԵՐԻԱ, GEOLOGICAL SERIE**, տեղական շերտագրական ստորաբաժանումների տաքսոնոմիական միավոր, ըստ կարգի ավելի խոշոր է, քան երկրաբանական շերտախումբը: Այն միավորում է երկու կամ ավելի շերտախմբեր, որոնք բնորոշվում են ինչ-որ հատկանիշներով՝ առաջացման նման պայմաններով (ծովային, ցամաքային, հրաբխային և այլն),

որոշակի ապարների գերակշռությամբ (նստվածքային, փոխակերպային, հրաբխային), կառուցվածքի առանձնահատկություններով (ռիթմիկություն և այլն): Ե. ս-ի մեջ մտնող շերտախմբերի փոխհարաբերությունը կտրվածքում կարող է տարբեր լինել՝ սկսած ընդմիջումների և աննշան աններդաշնակությունների առկայությունից, մինչև աստիճանական անցումները: Ե. ս-ները միմյանցից անջատված են լինում զգալի շերտագրական ու անկյունային աններդաշնակություններով, իսկ երբեմն էլ ներժայթքային մագմայականության արտահայտմամբ: Արտասահմանյան շատ երկրներում Ե. ս. (serie) նշանակում է երկրաբանական բաժին:

**C-83. СЕРНЫЕ РУДЫ – ՏՃՄԲԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, SULPHUR ORES**, բնական միներալային զոյացություններ, որոնք բնածին ծծումբ պարունակում են այնպիսի քանակությամբ, որի դեպքում նրա կորզումը տնտեսապես նպատակահարմար է: Սովորաբար ծծմբի նվազագույն պարունակությունը Ծ. հ-ում 5-10 % է: Ծ. հ. անջատվում են ըստ նրանց նյութական կազմի առանձնահատկությունների համալիրի և առաջին հերթին ըստ ծծումբ ներփակող ապարների քարաբանական կազմի: Ըստ այդ հատկանիշի՝ առանձնացնում են կրաքարային (կալցիումային), կալցիտադոմիտային, կավային, գիպսային, օպալիտային, քվարցիտային և այլ Ծ. հ.: Արտածին հնքվ-երում գերակշռում են կրաքարային Ծ. հ. (համաշխարհային հանույթի 90-95 %): Դրանք բնութագրվում են ծծմբի բարձր և բավականին կայուն պարունակությամբ (մոտ 25 %): Գլխավոր ապարակազմիչ միներալը կալցիտն է: Կալցիտադոմիտային Ծ. հ. բնորոշվում են ծծմբի ավելի փոքր պարունակությամբ (12-14 %): Ծծմբի ներծին (հրաբխածին) հնքվ-երում ամենամեծ նշանակություն ունեն այն Ծ. հ., որոնք ներկայացված են ծծմբաբեր քվարցիտներով և օպալիտներով, ծծմբաալունիտային քվարցիտներով: Դրանցում ծծմբի պարունակությունը 5-ից մինչև 10 % է: Օպալիտային Ծ. հ-ին են պատկանում խառնարանային լճերի ծծմբաբեր տիղմերը: Ծ. հ-ում ծծումբը ներկայացված է երեք տարատեսակներով՝ նրբաներփակվածքային (մանր հատիկների կամ ագրեգատների տեսքով՝ ցրված ներփակող ապարների մեջ), գաղտնաբյուրեղային (փոքր ներփակվածքներ, բներ և երակիկներ), խոշորաբյուրեղային (բներ, ոսպնյակներ, նրբաշերտեր, բյուրեղների խոզանակներ):

**C-84. СЕРНИЙ КОЛЧЕДАН**, նույնն է՝ Пирит:

**C-85. СЕРОВОДОРОДСОДЕРЖАЩИЕ ГАЗЫ – ՏՃՄԲԱՋՐԱԾՆԱՊԱՐՈՒՆԱԿ ԳԱՉԵՐ, HYDROGENE SULPHIDE CONTAINING GASES, ACID GASES**, գազեր, որոնց կազմի մեջ մտնում են ծծմբական ջրածին ( $H_2S$ ): Պարունակվում են հրաբխային գազերում, միներալացված ջրերում և այլն: Օդում ծծմբական ջրածնի սահմանային թույլատրելի քանակությունը 0.01 մգ/լ է: Ծ. գ-ի խառնուրդը օդի հետ պայթունավտանգ է:

**C-86. СЕРПЕНТИН** (ֆրանս. serpentine, լատ. serpens-ին – օձ) – **ՍԵՐՊԵՆՏԻՆ (ՕՉԱՔԱՐ), SERPENTINE**, շերտավոր սիլիկատների ենթադասի միներալների խումբ, ներառում է  $Mg_3[Si_2O_5](OH)_4$  կազմի տարբեր կառուցվածքային ձևափոխումները և պոլիտիպերը: Ս-ի գլխավոր կառուցվածքային տարատեսակներն են՝ անտիգորիտը, լիզարդիտը և քրիզոտիլը: Ս. մենաբյուրեղներ չի առաջացնում: Անջատման ձևերը բազմազան են՝ խիտ գաղտնաբյուրեղային զանգվածներ (սերպոֆիտ), հոլոմորֆ զանգվածներ (դեվեյլիթ), համատարած, համարյա ամորֆ զանգվածներ (կերոլիթ), թիթեղավոր (անտիգորիտ), թելավոր (քրիզոտիլ), զուգահեռ-թելավոր (քրիզոտիլ-ասբեստ): Համասեռ, բաց գունավորված, հաճախ կիսաթափանցիկ տարատեսակը կոչվում է ազնիվ Ս. կամ օֆիտ: Գույնը՝ կանաչի տարբեր երանգներ, երբեմն՝ սպիտակ, դեղնավուն, երկնագույն: Փայլը՝ անփայլ, մետաքսի, ապա-

կու և սաղափի, հերձումը խիստ կատարյալ է: Բնորոշ են բազմաթիվ փայլուն «սահման հայելիները»: Կարծրությունը՝ 2.5-3.5: Ս-երի առաջացումը կապված է սերպենտինացման գործընթացների հետ (տե՛ս СЕРПЕНТИНИЗАЦИЯ): Ս-ի զգալի կուտակումներ առաջանում են ուլտրաբազիտների հողմահարման կեղևում:

**C-87. СЕРПЕНТИНИЗАЦИЯ – ՍԵՐՊԵՆՏԻՆԱՑԻԱ (ՕՉԱՔԱՐԱՑԻԱ), SERPENTINIZATION**, ապարների, հիմնականում գերհիմքային կազմի, ջրաջերմային (հիդրոթերմալ) փոփոխության գործընթաց, որի ընթացքում ապարը կազմող մագնեզիումի անջուր սիլիկատները ջրատարրալուծվում են և փոխարկվում սերպենտինի խմբի միներալների, իսկ ապարները՝ սերպենտինիտի (օձաքարի): Ս. տեղի է ունենում 400-450-ից մինչև 90-100°C միջակայքում: Ս-ման գործընթացի հետ է կապված քրիզոտիլ-ասբեստի հնքվ-երի մեծ մասի առաջացումը:

**C-88. СЕРПЕНТИНИТ – ՍԵՐՊԵՆՏԻՆԻՏ, SERPENTINITE**, ամուր ապար, որն առաջացել է գերհիմքային ապարների ջրաջերմային (հիդրոթերմալ) փոփոխության (սերպենտինացման) հետևանքով: Բաղկացած է գլխ. սերպենտինի (օձաքարի) խմբի միներալներից և կարբոնատների, մագնեզիտի, քրոմիտի ու այլ խառնուրդներից: Գույնը կանաչ է՝ տարբեր գույների բծերով: Ս-ներին ներհատուկ են Cu-ի, Ni-ի, Co-ի, Pt-ի և պլատինոիդների, քրոմիտի, ասբեստի, մագնեզիտի, տալկի հանքանյութերը:

**C-89. СЖАТИЕ ЗЕМЛИ – ԵՐԿՐԻ ՍԵՂՍԻՄ, OBLATENESS OF THE EARTH, EARTH'S FLATTENING**, մեծություն, որը բնորոշում է երկրային էլիպսի խտորումը գնդից: Այն հավասար է հասարակածային ու բևեռային շառավիղների տարբերության հարաբերությանը հասարակածի շառավիղին (թվայնորեն 1:298.3):

**C-90. СИАЛЛИТИЗАЦИЯ** (սիալ և հուն. lithos – քար) – **ՍԻԱԼԻԹԱՑԻԱ, ARGILLIZATION, CLAY FORMATION, SIALLITIZATION**, ապարների քիմ. հողմահարման գործընթաց, երբ պարբերաբար խոնավ, չափավոր տաք կլիմայի պայմաններում առաջանում են երկրորդային կավային միներալներ (կաոլինիտ, իլլիթ և այլն):

**C-91. СИАЛЬ, СИАЛИЧЕСКАЯ ОБОЛОЧКА – ՍԻԱԼ, ՍԻԱԼԱՅԻՆ ԹԱՂԱՆԹ, SIAL, SIAL ZONE OF THE EARTH**, «պինդ» երկրի արտաքին թաղանթի հնացած անվանում: Կազմված է այնպիսի ապարներից, որոնց կազմի մեջ մտնում են առավելապես սիլիցիումը և ալյումինը (այստեղից էլ անվանումը): Տերմինը առաջարկել է ավստրիացի գիտնական Է. Ջյուսը 19-րդ դարի վերջին:

**C-92. СИДЕРИТ, ЖЕЛЕЗНЫЙ ШПАТ** (հուն. sidērites, sidēros-ից – երկաթ) – **ՍԻԴԵՐԻՏ, ԵՐԿԱԹԱՍՊԱԹ, SIDERITE, IRON SPAR, SPARRY IRON**, միներալ, երկաթի կարբոնատ, FeCO<sub>3</sub>: Պարունակում է 62.01 % FeO և 37.99 % CO<sub>2</sub>: Բյուրեղագիտական համակարգը տրիգոնային է: Առաջացնում է շեղանիստ, թիթեղաձև, հատվածակողմային, սկալենոէդրիկ բյուրեղներ, որոնք հազվադեպ են հանդիպում: Սովորաբար լինում է հատիկավոր ագրեգատների, կոնկրեցիաների, հողախառն կուտակների և այլ ձևերով: Գոյացնում է շերտեր, երակներ և տձև մարմիններ: Գույնը դեղնասպիտակ է, մոխրագույն, կանաչավուն-մոխրագույն, հողմահարման դեպքում՝ սպիտակ: Կարծրությունը՝ 4.5: Ըստ առաջացման պայմանների՝ տարբերում են ջրաջերմային (հիդրոթերմալ), նստվածքակուտակումային և փոխակերպված Ս.: Լայն տարածված միներալ է: Ցածրաջերմաստիճանային ջրաջերմամետասոմատիկ երկաթաքարի հանքամարմիններում և երակներում կարող է ունենալ արդյ. նշանակություն: Օղիթային երկաթային նստվածքների գլխավոր միներալներից մեկն է, առաջանում է դիագենեզի ընթացքում՝ ի հաշիվ երկաթային քլորիտների:

**C-93. СИЕНИТ** (հին եգիպտական Սուն, այժմ Ասուան ք-ի հուն. S yēnē – անվանումից) – **ՍԻԵՆԻՏ, SYENITE, SIENITE**, լիաբյուրեղային ներժայթքային անքվարց ապար՝

ալկալիական դաշտային սպաթների (60-90 %) և մուգավուն միներալների (10-20 %) մեծ պարունակությամբ: Բաղկացած է հիմնականում կալիումային դաշտային սպաթից, պլագիոկլազներից, գունավոր միներալների (եղջերախաբ, բիոտիտ, պիրոքսեն, հազվադեպ՝ օլիվին) խառնուրդից: Սիլիկահողի պարունակությունը՝ 55-65 % է: Ըստ ալկալիների պարունակության՝ բաժանվում են բնականոն ալկալիականության, բարձրացված ալկալիականության և ալկալային տարբերակների: Նեֆելինային Ս-ները առանձնացվում են ֆելդսպատոիդային ապարների առանձին խմբում: Ս-ներին են պատկանում նաև մուգավուն (մելանոկրատ) երակային ապարները՝ լամպրոֆիրները: Ս-երը անցողիկ տարատեսակներով կապված են դիորիտների (սինոդիորիտներ), գաբրոների (մոնոցոնիտներ) և գրանիտների (քվարցային սինիտներ և գրանոսինիտներ) հետ: Ըստ գունավոր միներալների գերակշռության՝ անջատվում են պիրոքսենային, բիոտիտային և եղջերախաբային Ս-եր:

**C-94. СИЕНИТ-ПЕГМАТИТ – ՍԻԵՆԻՏ-ՊԵՂՄԱՏԻՏ, SYENITE-PEGMATITE**, սինիտային կազմի պեգմատիտ, բաղկացած է գլխ. ալկալիական դաշտային սպաթից, երբեմն՝ փոքր քանակի թթու պլագիոկլազից և գունավոր միներալներից՝ բիոտիտից, էգիրին-ավգիտից, հազվադեպ՝ ալկալիական եղջերախաբից:

**C-95. СИЛА ТЯЖЕСТИ – ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ՈՒժ, GRAVITY**, երկրի մակերևույթին մոտ գտնվող նյութական մասնիկի վրա ազդող երկրի ձգողական ուժի ու երկրի հետ կապված հաշվարկման համակարգի նկատմամբ այդ մասնիկի իներցիայի կենտրոնախույզ ուժի համազորը: Իներցիայի կենտրոնախույզ ուժի ազդեցությունն աննշան է: Ծ. ու-ի ուղղությամբ որոշվում է տվյալ վայրի ուղղաձիգը: Ծ. ու. էական ազդեցություն ունի երկրի վրա ընթացող թե՛ բնական, թե՛ տեխ. բոլոր երևույթների ու գործընթացների վրա:

**C-96. СИЛИКАТЫ** (լատ. silex, սեռ. h. silicis – կայծքար) – **ՍԻԼԻԿԱՏՆԵՐ, SILICATES**, երկրակեղևում առավելագույն տարածում ունեցող (զանգվածային 75 %, միներալային տեսակների մոտ 25 %) միներալների խոշոր դաս, սիլիկատների աղեր: Բնության մեջ հայտնի են ավելի քան 700 Ս., ներառյալ կարևորագույն ապարակազմիչ միներալները (դաշտային սպաթներ, պիրոքսեններ, ամֆիբոլներ, փայլարներ և այլն): Ջրում լուծվում են (սահմանափակ) միայն ալկալիական մետաղների Ս., որոնք լուծույթում զգալիորեն ջրատարրալուծվում են: Ս-ի կառուցվածքի հիմքում ընկած են  $[\text{SiO}_4]^{4-}$  քառանիստ անիոնային խմբերը, որոնք կարող են համակցել (թթվածնի ընդհանուր ատոմով)՝ առաջացնելով շղթաներ, հարթ և տարածական ցանցեր: Ս. դասակարգվում են ըստ  $\text{SiO}_4^{4-}$  խմբերի համակցման տեսակի, ռադիկալների բաղադրության, կատիոնների բնույթի և պարունակության, ջրի հիդրօքսիլ ու այլ անիոնային խմբերի առկայության և բնույթի: Այլ քառանիստային անիոններ պարունակող Ս. են ալյումասիլիկատները, բորասիլիկատները, բերիլասիլիկատները, նաև տիտանասիլիկատները և ցիրկոնասիլիկատները: Ըստ  $[\text{SiO}_4]^{4-}$  քառանիստերի համակցման բնույթի՝ տարբերում են՝ կղզային Ս. (օլիվին, ցիրկոն, տպագիոն, նոնաքար և այլն), օղակավոր Ս. (բերիլ և այլն), շղթայական Ս., շերտավոր Ս. (փայլարներ), տարածական Ս. (ցեոլիթներ, դաշտային սպաթներ, նեֆելիններ և այլն): Ս-ին բնորոշ է նմանաձևությունը (իզոմորֆությունը), այդ պատճառով տարածված են դրանց պինդ լուծույթները: Ս. կարող են պարունակել բյուրեղաջուր, ցեոլիթային և միջշերտային աղսորքված ջուր: Բազմաթիվ Ս. կարևոր օգտ. հնձ-ներ են (պարունակում են Li, Be, Ni և այլն): Նեֆելիններից ստանում են ալյումին, պոտաշ, սոդա: Կարևոր են նաև ոչ մետաղական օգտ. հնձ-ները (դաշտային սպաթ, փայլար, ասբեստ, տալկ և այլն), թանկարժեք և այլ զարդաքարերը (զմրուխտ, տպագիոն, աքվամարին և այլն):

**C-97. СИЛИЦИТЫ**, տե՛ս Кремнистые породы:

**C-98. СИЛИЦИФИКАЦИЯ**, տե՛ս Окремнение:

**C-99. СИЛЛ**, տե՛ս Пластовая интрузия:

**C-100. СИЛЛИМАНИТ** (ի պատիվ ամերիկացի քիմիկոս Բ. Սիլիմանի, B. Siliman, 1779-1864) – **ՍԻԼԻՄԱՆԻՏ, SILLIMANITE**, ժապավենային սիլիկատների ենթադասի միներալ,  $Al[AlSiO_5]$ : Բյուրեղագիտական համակարգը շեղանկյունային է: Հանդիսանում է  $Al_2SiO_5$  միացության բարձրաջերմաստիճանային բազմաձև ձևափոխություն (տե՛ս նաև Андалузит և Кианит): Ս. առաջացնում է թելավոր, ասեղնավոր, ձողաձև, ինչպես նաև խիտ խառնաթելավոր ագրեգատներ: Գույնը՝ սպիտակ, մոխրագույն, կանաչավուն, կապույտ: Փայլը՝ ապակու: Թափանցիկ է, մինչև կիսաթափանցիկ: Կարծրությունը՝ 7: Ս. լայն տարածված է ամֆիբոլիթային ֆացիայի բարձր ջերմաստիճանային փոխակերպային ապարներում, բյուրեղային թերթաքարերի, քվարցիտների և գնեյսների փոխակերպային գրանուլիթային ֆացիայի տիպային միներալ է: Հաճախ հանդիպում է այդ ապարների քվարցային երակներում: Հայտնի է միզմատիտներում, էկլոզիտներում: Կուտակվում է ցրոններում: Օգտագործվում է բարձրաստիճանային ջերմակայուն և թթվակայուն նյութերի պատրաստման համար: Թափանցիկ գունավորված տարատեսակները 4-րդ կարգի թանկարժեք քարեր են:

**C-101. СИЛУРИЙСКАЯ СИСТЕМА (ПЕРИОД), СИЛУР** (Ուելսում բնակված հին կելտական ցեղերի՝ սիլուրների, Silures, անունով, Անգլ.) – **ՍԻԼՈՒՐԻ ՅԱՄԱԿԱՐԳ (ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆ), ՍԻԼՈՒՐ, SILURIAN SYSTEM (PERIOD)**, պալեոզոյան էրատեմայի (դարաշրջանի) ներքևից երրորդ համակարգ (ժամանակաշրջան): Շերտագրական սանդղակում հաջորդում է օրդովիկի և նախորդում է դևոնի համակարգերին: Համակարգի տևողությունը ռադիոչափական մեթոդներով որոշվում է 25 մլն. տ. (443-ից մինչև 418 մլն. տ. առաջ): Առանձնացրել է անգլ. երկրաբան Ռ. Մուրչիսոնը 1835-ին Մեծ Բրիտանիայում (տիպային տարածքը՝ Ուելսի մարզում): Սկզբնապես միավորում էր նաև օրդովիկը (գոտլանտ): Հետագայում ստորին մասը առանձնացվել է որպես ինքնուրույն օրդովիկի համակարգ: «Սիլուր» անվանումը պահպանվել է միայն վերին մասի համար և այդ ծավալով էլ հաստատվել է Երկրաբանական միջազգային կոնգրեսում (Կոպենհագեն, 1960): Ս. հ-ի ընդհանուր շերտագրական սանդղակը ներառում է լլանդովերիյան, վենլոկյան, լուդլովյան և պրժիդոլյան հարկերը: Նախկին ԽՍՀՄ-ու ընդունված էր Ս. հ-ի մասնատումը ստորին ու վերին բաժինների՝ լուդլովյան հարկի հատակի սահմանով: Սիլուրի ժամանակ ամենախոշոր մայր ցամաքը եղել է Զր. կիսագնդում տեղաբաշխված Գոնդվանան: Հայտնի են նաև ցամաքի ավելի փոքր զանգվածներ՝ Լավրենտիան, Բալտասարմատիան, Անգարիդան և այլն: Սիլուրի սկիզբը նշվել է ծովային խոշոր ծովաբաշխված (տրանսգրեսիայով), սիլուրի վերջում ավարտվել է կալեդոնյան ծավալորությունը: Սիլուրի սկզբում օրգանական աշխարհում ձևավորվել են անողնաշարավորների բոլոր հիմնական դասերը, հանդես են եկել առաջին պարզունակ ողնաշարավորները, զարգացել է առաջին ցամաքային ֆլորան՝ փսիլոֆիտները: Ծովերում լայն տարածում են ունեցել ուսոտանիները, փափկամարմինները, օստրակոդները, գրապտոլիթները, բուստերը, ծովաշուշանները, ջրիմուռները:

**C-102. СИЛЬВИН** (հոլանդ. բժիշկ և քիմիկոս Փ. Բոեի, 1614-1672, լատինացված Sylvius անունով) – **ՍԻԼՎԻՆ, SYLVINE, POTASSIUM CHLORIDE**, քլորիդների դասի միներալ, KCl, պարունակում է 52.5 % K (ըստ զանգվածի): Բյուրեղանում է խորանարդային համակարգում: Անջատման ձևերն են՝ խիտ հատիկավոր զանգվածներ, ձողավոր և թելավոր ագրեգատներ, քարանձավներում՝ շթաքարեր, պտկաքարեր, լճերի ու ծովալճերի հատակում՝ մակահոսուկներ, բյուրեղախմբեր, կեղևներ, բյուրեղներ: Անգույն է, հաճախ թափանցիկ, հեմատիտի խառնուրդի

հետևանքով՝ կարմիր: Փայլը՝ ապակու, հերձուներ՝ կատարյալ, կարծրությունը՝ 2: Ջրում հեշտությամբ լուծվում է: Ուժեղ խոնավածուծ է: Հիմնական հնքվ-երն ունեն քիմիածին-նստվածքային ծագում: Հալիտի, կառնալիթի, կիզերիտի և այլնի հետ առկա է աղաբեր ստվարաշերտերում, որոնք արգասիք են ծովային ավազանների չորացման: Հազվադեպ՝ Ս. առաջանում է աղային լճերում, կալիումային աղերի գլխավոր բաղադրիչներից մեկն է:

**C-103. СИЛЬВИНИТ – ՍԻԼՎԻՆԻՏ, SYLVINITE**, աղային ապարներին պատկանող նստվածքային ապար, իրենից ներկայացնում է սիլվինի, հալիտի, կառնալիթի և այլ աղածնային ու սուլֆատային միներալների բյուրեղների խիտ ագրեգատ: Ս-ում առանձին բաղադրիչների պարունակությունը հետևյալն է՝ KCl 12-60 %, NaCl 22-80 %, MgCl<sub>2</sub> մինչև 2.5 %, CaSO<sub>4</sub> 0.2-12 %: Առկա են K<sub>2</sub>SO<sub>4</sub>-ի, MgSO<sub>4</sub>-ի և կավային միներալների խառնուրդներ: Ս. առաջանում է քիմիածին ճանապարհով՝ բարձրացված աղիության ավազաններում (մերձափնյա ծովային, ծովալճակային տիպի) KCl-ի և NaCl-ի նստման հետևանքով՝ չոր կլիմայի պայմաններում: Օգտագործվում է կալիումի արդյունաբերության մեջ:

**C-104. СИМА – ՍԻՄԱ, SIMA**, Երկրի թաղանթի հնացած անվանում, որի կազմում գերակշռում են սիլիցիումը և մագնեզիումը (այստեղից էլ անվանումը): Տերմինը առաջարկել է ավստր. գիտնական Է. Ջյուսը 19-րդ դարի վերջին՝ սիալի տակդիր շերտի համար:

**C-105. СИММЕТРИЧНАЯ СКЛАДКА**, տե՛ս Прямая складка:

**C-106. СИН...** (հուն. σύν – միասին) – **ՍԻՆ...**, **ՀԱՄԱ...**, **ՍԻՍ...**, **SYN...**, բարդ բառերի նախածանց, նշանակում է միասին, համատեղ, միաժամանակ:

**C-107. СИНАНТРОП (Sinanthropus) (Տինանտրոպ)** (Տինանտրոպի միջնադարյան անվանումն է) – **ՍԻՆԱՆՏՐՈՊՊ, SINANTHROPUS**, բրածո մարդու հին ձևերից մեկն է, պատկանում է արխանտրոպներին: Ս. պատրաստել է պարզունակ գործիքներ, օգտվել է կրակից: Առաջին գտածոները հայտնաբերվել են 1923 թ. Պեկինի մոտ, այդ պատճառով Ս-ին երբեմն անվանում են պեկինյան մարդ, տե՛ս նաև Архантропы:

**C-108. СИНГЕНЕЗ (հուն. σύν – միասին, համատեղ և genesis – ծագում, գոյացում) – ՀԱՄԱԾԱԳՈՒՄ (ՀԱՄԱԳՈՅԱՑՈՒՄ), SYNGENESIS**, բառացիորեն միներալի, ապարի, հանքանյութի և այլնի ինչ-որ բանի հետ միաժամանակյա առաջացում: Ազատ օգտագործման տերմին է:

**C-109. СИНГЕНЕТИЧЕСКИЕ МЕСТОРОЖДЕНИЯ (հուն. σύν – միասին, միատեղ և genētós – ծնված) – ՀԱՄԱԾԻՆ (ՍԻՆԳԵՆԵՏԻԿ) ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, SYNGENETIC DEPOSITS**, օգտ. հնձ-ների հնքվ-եր, որոնք առաջացել են դրանք ներփակող ապարների հետ համատեղ: Սովորաբար ունեն շերտերի կամ շերտանման հանքակուտակների տեսք և ներդաշնակ են տակդիր և ծածկող ապարների հետ: Դրանց կազմի մեջ օգտ. հնձ-ների միներալների հետ մեկտեղ մտնում են ներփակող ապարների միներալներ: Հ. հ. լայն տարածված են օգտ. հնձ-ների նստվածքային հանքավայրերում (ավազների, կավերի, կրաքարերի, ածուխների, աղերի, երկաթի, մանգանի և այլնի նստվածքային հնքվ-եր): Մազմայածին հնքվ-երի մեջ Հ. հ. հազվադեպ են հանդիպում (օր.՝ քրոմիտի և տիտանամագնետիտի վաղմազմայական հնքվ-երը՝ գերհիմքային ապարների մեջ և այլն):

**C-110. СИНГОНИЯ КРИСТАЛЛОВ (հուն. σύν – միասին, համատեղ և gōnia – անկյուն) – ԲՅՈՒՐԵՂՆԵՐԻ ՀԱՄԱՎԱՐԳ (ՍԻՆԳՈՆԻԱ), CRYSTAL SYSTEM**, բյուրեղների համախումբ, որի մեջ մտնող բյուրեղների տարրական բջիջները բնորոշվում են միանման համաչափություններով և կոորդինատային առանցքների միատեսակ բյուրեղագի-



տական համակարգով: Կախված բջջի կողերի երկարության a, b, c և անկյունների  $\alpha$ ,  $\beta$ ,  $\gamma$  հարաբերակցությունից, տարբերում են 7 բ. հ-եր՝ բարձրագույն՝ խորանարդային, միջին՝ քառանկյունային (տետրագոնային), վեցանկյունային (հեքսագոնային), եռանկյունային (տրիգոնային) և ստորակարգ՝ շեղանկյունային (ռոմբային), մոնոկլինային և տրիկլինային: Միներալների մոտ 38 %-ը բյուրեղանում է տրիկլինային և մոնոկլինային համակարգերում, 23 %-ը՝ շեղանկյունային, 10 %-ը՝ եռանկյունային, 7.5 %-ը՝ վեցանկյունային, 9.5 %-ը՝ քառանկյունային, 12 %-ը՝ խորանարդային:

**C-111. СИНЕЗЕЛЁНЫЕ ВОДОРОСЛИ (Cyanophyta) – ԿԱՊՏԱԿԱՆԱԶ ՋՐԻՄՈՒՈՒՆԵՐ, BLUE-GREEN ALGAE, CYANOPHYCEAE**, բույսերի բաժին, քաղցրահամ, հազվադեպ՝ ծովային և հողային ջրիմուռներ: Հայտնի օրգանիզմներից ամենահիներն են՝ մոտ 2000 տեսակ: Անշարժ միաբջջ և բազմաբջջ գաղութային և թելավոր ձևեր են: Հայտնի են միլիարդավորից:

**C-112. СИНЕКЛИЗА** (հուն. *σύν* – միասին և *έκκλις* – հակում, թեքում) – **ՍԻՆԵԿԼԻԶ, SYNECLISE**, խոշոր իջվածք մայրցամաքային պլատֆորմի սահմաններում, սովորաբար ձվաձև կամ կլորավուն, տրամագծում՝ հարյուրավոր, երբեմն ավելի քան 1000 կմ, խորությունը մինչև հիմքը՝ սովորաբար մինչև 3-5 կմ: Ա-ի լանջերը մեղմաթեք են (ոչ ավել 1 աստիճանից): Հաճախ առաջանում են ավելի հին ավազանների վրա (օր.՝ Ուկրաինական Ա.՝ Դնեպրադելտայան ավազանների վրա) կամ ավազանների կապակցման վրա (օր.՝ Մոսկովյան Ա.)՝ կազմելով սալերի կազմվածքի գլխավոր տարրերից մեկը: Ա-ները բաժանվում են անտեկլիզներով: Հաճախ վրադրվում են վահանների կենտրոնական մասերի վրա (օր.՝ Հուդզոնի ծովածոցը՝ Կանադական վահանի վրա): Ա-ի հատուկ տեսակ հարում է պլատֆորմի ծայրամասերին, որտեղ աչքի է ընկնում պլատֆորմի հիմքի մեծ խորասուզմամբ (մինչև 20 կմ) (օր.՝ Մերձկասպիական Ա.՝ Ռուսական սալի հարավում): Մյուս հատուկ տեսակը տրապային Ա է (օր.՝ Տունգուսյան Ա.՝ Սիբիրյան պլատֆորմի վրա), պլատֆորմալ տեքների հզոր ծածկոցների լայն տարածմամբ: Ա-ները կայուն զարգանում են հարյուր-միլիոնավոր տարիների ընթացքում: Ա-ներին բնորոշ նստվածքային ֆորմացիաներից են աղաբեր, բիտումակիր թերթաքարերի կամ մերգելների, շերտավոր կրաքարերի, կավճի և կավճանման մերգելների, եզրերում՝ խութային ֆորմացիաները: Ա. ն-երի հետ կապված են աղերի, պալարակերպ ֆոսֆորիտների, օլիթային երկաթային հանքանյութերի, նավթի, գազի, շինարարական նյութերի հանքակուտակներ: Շատ Ա-ներ խոշոր արտեզյան ավազաններ են:

**C-113. СИНЕМЮРСКИЙ ЯРУС, СИНЕМИОР** (Սենյու բ.-ի լատ. *Sinemurum* անվանումից, Ֆրանս.) – **ՍԻՆԵՄՅՈՒՐԻ ՀԱՐԿ, ՍԻՆԵՄՅՈՒՐ, SINEMURIAN**, յուրայի համակարգի ստորին բաժնի ներքևից երկրորդ հարկ:

**C-114. СИННИСКАЯ СИСТЕМА, СИННИЙ** (Sina – Չինաստանի միջնադարյան անունով) – **ՍԻՆԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳ, ՍԻՆԱ, SINIAN**, Չինաստանի վերին պրոտերոզոյի թույլ փոփոխված նստվածքներ (կրաքարեր, դոլոմիտներ, քվարցիտներ, խառնաքարեր, թերթաքարեր, երկաթի հանքաքարեր): Ռադիոչափական տվյալներով որոշ չափով գերազանցում է ռիֆեյի ծավալին՝ ընդգրկելով 1900 մլն. տ-ուց մինչև քեմբրիի սկիզբը (550 մլն. տ. առաջ):

**C-115. СИНКЛИНАЛЬ** (հուն. *synklinō* – կռանում են, թեքվում են) – **ԳՈԳԱԾԱԼՔ (ՍԻՆԿԼԻՆԱԼ), SYNCLINE, SYNCLINAL FOLD**, երկրակեղևի շերտերի ծալքավոր ծովածքի տեսակ, բնորոշվում է գոգավոր ձևով՝ շերտերի թեքությամբ դեպի առանցքը և առանցքային մասում ավելի երիտասարդ, իսկ թևերում՝ ավելի հին շերտերի տեղադրմամբ: Տարբերում են համաչափ և անհամաչափ, արկղաձև

(հարթ հատակով), ողնուցանման և այլ Գ-եր: Չվածն Գ-երը կոչվում են կարճ գոգածալքեր (բրախիսինկլինալներ) կամ գոգվածքներ (մուլդաներ), կլորավունները՝ թասեր: Գ-երը լայն տարածված են ծալքավոր լեռնային կառույցներում: Գ-երը սովորաբար կապակցվում են ուռուցիկ ծռվածքներով՝ կամարածալքերով: Այն Գ-երը, որոնք առաջանում են նստվածքների կուտակման հետ միաժամանակ և բնորոշվում են դրանց բարձրացված հաստությամբ և ավելի խորջրյա բնույթով, կոչվում են համանստվածքակուտակումային (կոնսեդիմենտացիոն), իսկ նստվածքակուտակման ավարտից հետո առաջացածները՝ հետնստվածքակուտակումային (պոստսեդիմենտացիոն):

**C-116. СИНКЛИНАЛЬ КОМПЕНСАЦИОННАЯ – ՓՈՆՅԱՏՈՒՑԱՆ ԳՈԳԱԾԱԼՔ (ՍԻՆԿԼԻՆԱԼ), COMPENSATING SYNCLINE**, գոգածալք, որն օղակի ձևով առաջացել է աղային զանգվածի շուրջը՝ ի հաշիվ բարձրացող զանգվածի՝ դեպի կողերը աղի արտահոսման և զանգվածին հարակից նստվածքային ծածակոցի ապարների նստման:

**C-117. СИНКЛИНАЛЬ ПЕРЕВЕРНУТАЯ – ՇՐՉՎԱԾ ԳՈԳԱԾԱԼՔ (ՍԻՆԿԼԻՆԱԼ), INVERTED SYNCLINE**, գոգածալք, որի առանցքային մակերևույթը ծռված է այնպես, որ ծալքը իր փականով դարձած է դեպի վեր:

**C-118. СИНКЛИНАЛЬНАЯ ДОЛИНА – ԳՈԳԱԾԱԼՔԱՅԻՆ (ՍԻՆԿԼԻՆԱԼ) ՀՈՎԻՏ, SYNCLINAL VALLEY**, գետի հովիտ՝ հիմնադրված գոգածալքի առանցքի երկայնքով: Հովտի լանջերը կազմող ապարների շերտերը անկում են դեպի հովտի առանցքը (թալվեզը):

**C-119. СИНКЛИНАЛЬНАЯ СКЛАДКА – ԳՈԳԱԾԱԼՔ (ՍԻՆԿԼԻՆԱԼ ԾԱԼՔ), SYNCLINAL FOLD**, նույնն է՝ Синклиналь:

**C-120. СИНКЛИНОРИЙ** (հուն. sinklinō – կռանում են, թեքվում են և óros – լեռ) – **ԲԱԶՍԱԳՈԳԱԾԱԼՔ (ՍԻՆԿԼԻՆՈՐԻՈՒՄ), SYNCLINORIUM**, երկրակեղևի շերտերի ծալքավոր տեղախախտումների ընդհանուր գոգածալքային կազմվածք ունեցող բարդ ձև, իրենից ներկայացնում է ծալքերի փունջ՝ ծալքավորման հայելու (կամարածալքերի կամարը շոշափող հարթության) ընդհանուր խորասուզմամբ դեպի փնջի առանցքը: Բ-երը տարածված են ծալքավոր կառույցներում և առաջանում են սովորաբար երկրասինկլինալային կամ լեռնագոյացման (միջլեռնային) ձկվածքների տեղում: Հերթագայվում են անտիկլինորիումներով:

**C-121. СИНОНИМИКА** (հուն. synónimos – նույնանուն) – **ՍԻՆՈՆԻՄԻԿԱ, SYNONYMY**, հնէաբանության մեջ որևէ սեռի, տեսակի և այլնի բոլոր նկարագրությունների ու պատկերումների համակարգային ցուցանակ:

**C-122. СИНОРОГЕНИЧЕСКИЕ ДВИЖЕНИЯ, СИНОРОГЕННЫЕ ДВИЖЕНИЯ – ՀԱՍԱԼԵՆԱԳՈՅԱՑՄԱՆ (ՀԱՍՈՐՈՂԵՆ) ՇԱՐԺՈՒՄՆԵՐ, SYNOROGENIC MOVEMENTS**, էպեյրոգեն տիպի շարժումներ, որոնք տեղի են ունենում լեռնագոյացման շարժումների հետ միաժամանակ, բայց արտահայտվում են լեռնագոյացման զարգացման մարզի սահմաններից դուրս: Հ. շ., որպես կանոն, զգալի չափով ուժգին են, քան տիպային էպեյրոգեն շարժումները: Դրանք տեղ են գրավում էպեյրոգեն և լեռնագոյացման շարժումների միջև:

**C-123. СИНСЕДИМЕНТАЦИОННЫЙ – ՀԱՄԱՆՍՏՎԱԾՔԱԿՈՒՏԱԿՈՒՄԱՅԻՆ, SYNSEDIMENTARY**, առաջացած նստվածքների նստեցման հետ միաժամանակ, նույնն է՝ Конседиментационный:

**C-124. СИНТЕЗ МИНЕРАЛОВ** (հուն. síntesis – միացում, կազմում) – **ՄԻՆԵՐԱԼՆԵՐԻ ՄԻՆԹԵԶ, SYNTHESIS OF MINERALS**, միներալների ստացում արհեստական եղանակով: Առաջին միներալը, որի արդյ. արտադրությունը կազմակերպվեց

1910 թ., սուտակն էր, որն արհեստական եղանակով լաբորատորիայում ստացվել է 1904-ին: 1980-ին գործնականորեն համարյա ամբողջ օգտագործվող սուտակը, տեխնիկայում օգտագործվող քվարցի 90-95 %-ը ստացվում էր արհեստական եղանակով: Մշակվում էին մեթոդներ արհեստական ֆտորֆլուորոպիտի, օպտիկական կալցիտի, ցեոլիթների, մոլիտի, մալաքիտի, գնդուխտի և այլ միներալների ստացման համար: Լաբորատոր պայմաններում ստացվել են շատ միներալներ՝ մանր բյուրեղների կամ բազմաբյուրեղային ագրեգատների տեսքով, բայց արդյ. մասշտաբով արտադրվում են քիչ քանակի միներալային միացություններ:

**C-125. СИСТЕМА ГЕОЛОГИЧЕСКАЯ** (հուն. *sýstema* – ամբողջություն, մասերից կազմված) – **ԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՍԱԿԱՐԳ, GEOLOGICAL SYSTEM**, միջազգային (ընդհանուր) շերտագրական սանդղակի հիմնական ստորաբաժանում, համապատասխանում է երկրակեղևի և օրգանական աշխարհի զարգացման բնական փուլին: Ժամանակը, որի ընթացքում ձևավորվել է Ե. հ., կոչվում է երկրբ. ժամանակաշրջան: Յուրաքանչյուր Ե. հ. բնորոշվում է բացառապես իրեն յուրահատուկ կամ տիրապետող զարգացում ունեցող ֆաունայի և ֆլորայի այս կամ այն ներկայացուցիչներով: Երկրի նորագույն երկրբ. պատմության մեջ ֆաներոզոյում պարունակվում են 12 Ե. հ-եր՝ քեմբրիի, օրդովիկի, սիլուրի, դևոնի, քարածխային, պերմի, տրիասի, յուրայի, կավճի, պալեոգենի, նեոգենի, չորրորդական (անտրոպոգենի): Դրանց հաջորդականությունը սահմանվել է 19-րդ դարի առաջին կեսում և հաստատվել է Բոլոնիայում 1881 թ.: Միջազգային երկրբ. վեհաժողովում, տե՛ս նաև *Геохронология*:

**C-126. СИСТЕМАТИКА – ՀԱՍԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ, ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ, SYSTEMATICS**, կենսաբանության մեջ գիտություն օրգանիզմների դասակարգման մասին:

**C-127. СКАПОЛИТ** (հուն. *skápos* – փող, ձող և *lithos* – քար, ըստ բյուրեղների սյունածև տեսքի) – **ՍԿԱՊՈԼԻԹ, SCAPOLITE**, կարկասային սիլիկատների միներալների խումբ: Ս-ի խմբի միներալները առաջացնում են անընդմեջ նմանածև (իզոմորֆ) շարք, որի ծայրանդամները՝ մարիպիթը և մեյոնիտը, մաքուր վիճակում բնության մեջ հայտնի չեն: Ս-ները բյուրեղանում են քառանկյունային համակարգում: Բնորոշ են սյունածև բյուրեղների տեսքով անջատումները՝ մինչև 50×20 սմ չափերով, հողանման և զուգահեռ-ձողածև ագրեգատները: Գույնը՝ սպիտակ, մոխրագույն, մոխրականաչ, երկնագույնից՝ մինչև մանուշակագույն, փայլը՝ ապակու, թափանցիկ է՝ մինչև կիսաթափանցիկը: Կարծրությունը՝ 6: Ս-ները բարձր ջերմաստիճանային սկապոլիթ-դիոպսիդային ամֆիբոլիթների, բյուրեղային թերթաքարերի, գնեյսների, գրանուլիթների ապարակազմիչ միներալներ են: Հանդիպում են մարմարներում, սկառներում, պեգմատիտներում: Թափանցիկ, խոշոր բյուրեղները ոսկերչական հումք են:

**C-128. СКАРНЫ** (շվեդ. *skarn* – թափոն, ցեխ) – **ՍԿԱՌՆԵՐ, SKARNS**, բարձրաջերմաստիճանային հպումամետասոմատիկական ապար, բաղկացած է կրամագնեզիումաերկաթախառն սիլիկատներից և ալյումասիլիկատներից: Ս. առաջանում են մագմայական ապարների բարձրաջերմաստիճանային հպումային եզրապսակներում՝ կարբոնատային ապարների և մագմայի ներժայթքվածքների (ինտրուզիաների) կամ այլ սիլիկատային ապարների քիմ. փոխազդեցության հետևանքով: Գործընթացին մասնակցում են տաք մագմայածին լուծույթները: Տարբերում են կրային Ս., որոնք գոյանում են առավելապես փոքր և միջին խորություններում (մինչև 10-12 կմ) հետմագմայական փուլում, կրաքարերի և ալյումասիլիկատային ապարների հպման տեղում: Դրանց տիպոմորֆ միներալներն են՝ վոլաստոնիտը, նոնաքարերը, երկաթային կլինոպիրոքսենը, էպիդոտը: Մագնեզիումային Ս. առաջանում են նույնպես հետմագմայական փուլում՝ դոլոմիտների և ներդրվող մագմայի ռեակցիոն փո-

խազդեցության ժամանակ կամ մեծ խորություններում (10-12 կմ-ից խոր) այլուճա-սիլիկատների հպման տեղում, ներկայացված են ֆորստերիտով, հումիտի խմբի մի-ներալներով, շպինելով, մագնեզիումային կլինոպիրոքսենով, ֆլոգոպիտով: Ման-գանային Ս. բաղկացած են մանգանային սիլիկատներից: Ս. առաջացնում են հպու-մային ոսպնյակաձև կամ շերտավոր, հազվադեպ՝ խողովակաձև և երականման մարմիններ: Ս-ին հաճախ հարում են երկաթի, պղնձի, կապարի, ցինկի, վոլֆրամի, մոլիբդենի և այլ հանքանյութերի խոշոր կուտակներ, որոնք առաջացնում են սկա-ռնային հնքվ-եր:

**C-129. СКВАЖИНА ГИДРОГЕОЛОГИЧЕСКАЯ – ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀՈՐԱ-ՏԱՆՑՔ, HYDROGEOLOGICAL HOLE, հորատանցք՝ ստր. ջրերի դեբիտն ու որա-կը ուսումնասիրելու համար:**

**C-130. СКВАЖИНА ИНЖЕНЕРНО-ГЕОЛОГИЧЕСКАЯ – ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԵՐԿՐԱԲԱ-ՆԱԿԱՆ ՀՈՐԱՏԱՆՑՔ, ENGINEERING-GEOLOGICAL HOLE, շինարարության նպատակով՝ ապագա կառույցի տակ գտնվող ապարների ու գրունտների ֆիզ. հատկությունների ուսումնասիրման համար նախատեսված հորատանցք:**

**C-131. СКВАЖИНА ПОИСКОВАЯ – ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ՀՈՐԱՏԱՆՑՔ, PROSPECTING HOLE, երկրի ընդերքում օգտ. հնձ-ներ հայտնաբերելու և նրանց սկզբնական տվ-յալները բնութագրելու համար նախատեսված հորատանցք:**

**C-132. СКВАЖИНА ФОНТАННАЯ – ՀԱՏՐՎԱՆԱՅԻՆ ՀՈՐԱՏԱՆՑՔ, FLOWING WELL, հորատանցք, որից հեղուկի շատրվանումը տեղի է ունենում շերտային ճնշման կամ հորատանցքով բարձրացող և նավթից անջատվող ու ընդարձակվող գազի ազդեցությամբ:**

**C-133. СКВАЖИНА ЭКСПЛУАТАЦИОННАЯ – ՀԱՅԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՐԱՏԱՆՑՔ, PRODUCTION HOLE, PRODUCTION WELL, հեղուկ կամ գազանման օգտ. հնձ-ների (միներալային և ոչ միներալային ջրեր, նավթ, գազ և այլն) արդյունահանելու հա-մար նախատեսված հորատանցք:**

**C-134. СКЛАДКА – ԾԱԼՔ, FOLD, ապարների շերտերի ծռվածք՝ սովորաբար ուռու-ցիկ (կամարածալք) և գոգավոր (գոգածալք) ձևերի հերթագայությամբ: Ծ-երը սո-վորաբար տեսիլ. ձևափոխությունների հետևանք են՝ առանց դրանք կազմող ապարների հոծության խախտման: Առանձնացվում են Ծ-ի հետևյալ տարրերը՝ թևեր, միջուկ, փական, առանցքային հարթություն, առանցք, հողակապ:՝ Առանձ-նացնում են Ծ-եր ըստ ձևի և տարածության մեջ դիրքի, ծագման և այլն: Անջա-տում են առաջին կարգի Ծ-եր (երկարությունը՝ հարյուրավոր, լայնությունը՝ տասնյակ կմ-եր), օր.՝ կամարածալքեր ու գոգածալքեր և երկրորդ կարգի (խոշոր ծալքերը բարդացնող մանր ծալքեր): Ծ-երը առավել լայն տարածված ու վառ ար-տահայտված են ծալքավոր համակարգերի սահմաններում (օր.՝ Ուրալ, Կովկաս) և ավելի մեղմաթեք ու հազվագյուտ են պլատֆորմներում:**

**C-135. СКЛАДКА АСИММЕТРИЧНАЯ – ԱՆՀԱՄԱՉԱՓ ԾԱԼՔ, UNSYMMETRICAL FOLD, ASYMMETRICAL FOLD, ծալք, որի առանցքային հարթությունը ուղղաձիգ չէ, իսկ թևերը նրա նկատմամբ թեքված են տարբեր անկյան տակ:**

**C-136. СКЛАДКА МАГМАТОГЕННАЯ – ՄԱԳՄԱՅԱԾԻՆ ԾԱԼՔ, MAGMATOGENE FOLD, ծալք, որի գոյացումն անմիջականորեն կապված է մագմայի բարձրաց-ման և երկրակեղևում ներդրման հետ, ինչպես նաև երկրակեղևում «երկրորդա-յին» մագմայական օջախի առաջացման հետ: Մ. ծ-երին են պատկանում մագ-մայական դիապիրները:**

**C-137. СКЛАДКА ПРОСТАЯ – ՊԱՐՉ ԾԱԼՔ, SINGLE FOLD, SIMPLE FOLD, ծալք, որը բարդացված չէ ավելի մանր ծալքերի լրացուցիչ ծռվածքներով:**

- C-138. СКЛАДКА КАЛЫВАНИЯ – ՍԱՅՔԱՊՈՎԱՆ ԾԱԼՔ, SHEARFOLD**, ծալք, որն առաջացել է ապարների շերտերի սահքապոկման հետևանքով՝ առանցքային հարթությանը զուգահեռ ուղղությամբ:
- C-139. СКЛАДКА СЛОЖНАЯ – ԲԱՐԴ ԾԱԼՔ, COMPOUND FOLD**, ծալք, որը բարդացված է ավելի փոքր կարգի լրացուցիչ ծավածքներով:
- C-140. СКЛАДКА СУНДУЧНАЯ – ԱՐԿԱՉԵՎ ԾԱԼՔ, COFFER FOLD**, նույնն է՝ Коробчатая складка:
- C-141. СКЛАДКИ БЕЗКОРНЕВЫЕ – ԱՆԱՐՄԱՍ ԾԱԼՔԵՐ, ROOTLESS FOLDS**, ծալքեր, որոնք արտահայտված չեն հիմքի ռելիեֆում ու ծածկոցի ստորին հորիզոններում և հանդես են գալիս ծածկոցի սահմաններում՝ որոշակի մակարդակում:
- C-142. СКЛАДКИ ГЛЯЦИАЛЬНЫЕ** (լատ. *glaciosa* – սառույց) – **ՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ ԾԱԼՔԵՐ, GLACIAL FOLDS**, մակերևութային արտածին ծալքերի տեսակներից է: Առաջացումը պայմանավորված է պլաստիկ ապարների վրա շարժվող սառցադաշտի ճնշմամբ: Ս. ծ. առավել մեծ տարածում ունեն այն տեղամասերում, որտեղ արմատական ապարները բարձրաչափորեն բարձրացված են և դիմադրում են սառցադաշտերի հետագա շարժմանը:
- C-143. СКЛАДКИ ДИВЕРГЕНТНЫЕ – ՏԱՐԱՄԻՏՎԱԾ (ԴԻՎԵՐԳԵՆՏ) ԾԱԼՔԵՐ, DIVERGENT FOLDS**, առանձին ծալքեր կամ ծալքերի համակարգեր, որոնք շրջված են միմյանցից տարբեր կողմեր:
- C-144. СКЛАДКИ ДИСГАРМОНИЧНЫЕ – ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿ ԾԱԼՔԵՐ, DISHARMONIC FOLDS**, բնորոշվում են ծալքերը կազմող անհամասեռ (ըստ կազմի ու ֆիզ. հատկությունների) ապարների ճնշման տարբեր աստիճանով: Կարծր և պլաստիկ ապարների (օր՝ կրաքարերի ու կավերի) շերտավորման դեպքում ծալքագոյացման գործընթացների ներազդեցության ժամանակ առաջինները տալիս են պարզ ծալքեր, իսկ երկրորդները՝ մանր և բարդ ծալքեր:
- C-145. СКЛАДКИ КОНСЕДИМЕНТАЦИОННЫЕ – ՀԱՄԱՆՍՏՎԱԾՔԱԿՈՒՏԱԿՈՒՄԱՅԻՆ ԾԱԼՔԵՐ, SYNDEPOSITIONAL FOLDS**, ծալքեր, որոնք առաջանում են նստվածքակուտակման գործընթացի հետ միաժամանակ: Բնորոշվում են կամարածալքերի կամարում՝ թևերի համեմատությամբ շերտերի հաստությունների նվազմամբ և հաճախ քարաբանական կազմի փոփոխությամբ:
- C-146. СКЛАДКИ МЕТАМОРФОГЕННЫЕ – ՓՈՒՆԱԿԵՐՊԱԾՆԱՅԻՆ ԾԱԼՔԵՐ, METAMORPHOGENIC FOLDS**, մանր ու բարդ գծային ծալքեր, առաջանում են սահմանափակ տարածքային պայմաններում՝ փոխակերպության գործընթացում ապարի ծավալի մեծացման արգասիքում:
- C-147. СКЛАДКИ НАГНЕТАНИЯ – ՆԵՐՄՄԱՆ ԾԱԼՔԵՐ, INJECTION FOLDS**, առաջանում են զանգվածների հորիզոնական շարժման ժամանակ, շարժում, որն ընդգրկում է ոչ թե բոլոր շերտերը, այլ կենտրոնանում է այն շերտախմբում, որն ունի մեծ պլաստիկություն: Այդ շերտախմբի սահմաններում նյութը որոշ տեղերից հոսում և կենտրոնանում է այլ տեղերում, որի հետ կապված՝ շերտախմբի առաջնային հաստությունը մի տեղում փոքրանում է, իսկ մի այլ տեղում՝ մեծանում: Վերջին տեղում առաջանում են ներմղման և խոցոտման գնդեր: Դրանցից վեր տեղադրված շերտերը ծռմովում են՝ ներմղման գնդերի վրա բարձրանալով և ճկվելով նյութի արտահոսման տեղերում:
- C-148. СКЛАДКИ ОПОЛЗАНИЯ – ՍՈՂԱՆՔԻ ԾԱԼՔԵՐ, SLUMP FOLDS**, մակերևութային ծալքերի տարատեսակներից է, ծագումը առավելապես արտածին-գրավի-

տացիոն է: Առանձնացնում են Ս. ծ-ի երեք տեսակ՝ 1) ստորջրյա սողանքային ձևափոխություն, սովորաբար ունեն փոքր չափեր և առաջանում են երկրասինկլինալային ավազանների հատակի լանջերի անհարթություններում, 2) ձևափոխություններ, որոնք առաջանում են լեռկացման (դենուդացիայի) փուլում՝ գետերի, ալեկոծության և այլնի ողողատարման հետ կապված ձգողական (գրավիտացիոն) հավասարակշռության խախտման հետևանքով, 3) անհարթ ռելիեֆում շարժվող լավայի մեջ առաջացած ծալքեր: Ս. ծ. նման ձգողական ծալքերից տարբերվում են մակերևութային արտահայտման փոքր մասշտաբներով:

**C-149. СКЛАДКИ ОСАДОЧНОГО ЧЕХЛА**, նույնն է՝ Складки чехла:

**C-150. СКЛАДКИ ПЛАТФОРМЕННЫЕ – ՊԼԱՏՖՈՐՄԱՅԻՆ ԾԱԼՔԵՐ, PLAINS-TYPE FOLDS**, պլատֆորմներում տեղաբաշխված խիստ մեղմաթեք կառուցվածքներ, որոնց թևերի թեքության անկյունները չափվում են րոպեներով, հազվադեպ՝ աստիճաններով: Աչքի են ընկնում լայնության նկատմամբ բարձրության փոքր արժեքներով: Հին պլատֆորմներում հաճախ լինում են անհամաչափ՝ թեք ֆլեքսուրային թևով: Շատերը բարդացված են գմբեթանման փքվածքներով: Պ. ծ. սովորաբար առաջացնում են ձգված զոնաներ՝ կապված թմբային տիպի կառուցվածքների հետ:

**C-151. СКЛАДКИ ПОВЕРХНОСТНЫЕ (ЭКЗОГЕННЫЕ) – ՍԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ (ԱՐՏՍԾԻՆ) ԾԱԼՔԵՐ, SURFACE FOLDS, EXOGENIC FOLDS**, նստվածքային ծածկոցի ծալքերի երեք ենթատիպերից մեկն է: Առաջանում են ծածկոցի ամենավերին մասում՝ տարբեր արտածին գործընթացների և ծանրության ուժի ազդեցության տակ: Սովորաբար ունեն փոքր չափեր և տեղային տարածում: Ս. ծ-ին են պատկանում նստվածքային պարուրման, խտացման, ուռչման, նստման, սողանքի, սառցադաշտային ծալքերը:

**C-152. СКЛАДКИ ПОДОБНЫЕ – ՆՄԱՆ ԾԱԼՔԵՐ, SIMILAR FOLDS**, ծալքեր, որոնց մոտ բոլոր շերտերի ծովածքի ձևը միանման է, իսկ հաստությունները մեծանում են թևերից դեպի փակակնը:

**C-153. СКЛАДКИ ПОКРОВНЫЕ – ԾԱԾԿՈՒԹԱՅԻՆ ԾԱԼՔԵՐ**, տե՛ս Складки чехла:

**C-154. СКЛАДКИ ПРИРАЗЛОМНЫЕ – ՄԵՐՉՐԵԿՎԱԾՔԱՅԻՆ ԾԱԼՔԵՐ, FAULT FOLDS**, առաջանում են վարներքի ներքնակողում, վրաշարժի (մերձվրաշարժային) կամ տեղաշարժի (մերձտեղաշարժային) մոտ: Առաջին ենթատիպի ծալքերն աչքի են ընկնում պարզորոշ արտահայտված գծայնությամբ և առանցքային մակերևույթների մի կողմ թեքվածությամբ (դեպի բեկվածքի կողմը): Ընդ որում՝ քարաբանորեն համասեռ ապարներում առաջանում են համակենտրոն ծալքեր, իսկ անհամասեռ ապարներում՝ նման ծալքեր: Երկրորդ ենթատիպի ծալքերը «մայրական» տեղաշարժի նկատմամբ տեղաբաշխվում են կուլիսանման՝ 5-ից մինչև 30 աստիճան անկյան տակ: Այդ ծալքերը իրենցից ներկայացնում են համակենտրոն կազմության ձգված բրախիկամարածալքեր՝ բաժանված ավելի լայն զոգածալքերով: Ս. ծ. սովորաբար հետնստվածքակուտակումային են:

**C-155. СКЛАДКИ РАЗБУХАНИЯ – ՌՈՂՉՄԱՆ ԾԱԼՔԵՐ, FOLDS OF SWELLING**, առաջանում են վերնածնության (հիպերգենեզի) փուլում՝ ապարի ծավալի փոփոխության դեպքում, մասնավորապես՝ ջրակցման հետևանքով անհիդրիդի ծավալի մեծացման և գիպսի փոխարկվելու դեպքում կամ նստվածքային ապարների մեջ ջրի սառեցման և հալման ժամանակ ծավալի փոփոխակի մեծացման դեպքում:

**C-156. СКЛАДКИ ТЕЧЕНИЯ – ՀՈՍՔԻ ԾԱԼՔԵՐ, FLOW FOLDS, FLOWAGE FOLDS**, առանցքային հարթությունների տարակողմնորոշում ունեցող ծալքեր,

որոնք առաջանում են ձևախախտվող ստվարաշերտերի բարձր շարժումակազմավածների հոսման հետևանքով (օր.՝ ֆլիշային և թերթաքարային ստվարաշերտերում, միզմատիտներում):

**C-157. СКЛАДКИ ЧЕХЛА, СКЛАДКИ ОСАДОЧНОГО ЧЕХЛА – ԾԱԾՎՈՑԻ ԾԱԼՔԵՐ, ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԾԱԾՎՈՑԻ ԾԱԼՔԵՐ, COVER FOLDS, FOLDS OF THE SEDIMENTARY MANTLE**, առաջանում են հիմքի ձևախախտման հետ կապված կամ դրանից անկախ: Ծ. ծ. բաժանվում են երեք կարգի՝ 1) Ծ. ծ., որոնք իրենցից ներկայացնում են հիմքի ձևախախտումների՝ ծովածքների, բեկվածքների անմիջական արտացոլումը, 2) Ծ. ծ., որոնք առաջանում են նստվածքային ժածակոցի ճնշման հետևանքով՝ հիմքի կառուցվածքից շատ թե քիչ անկախ: Հաճախ դրանք կոչվում են ժածկութային ծալքեր: Ծածկութային ձևափոխությունները հիմքի նկատմամբ աններդաշնակ են, այսինքն՝ չեն կրկնում նրա ծովածքներն ու աստիճանները, 3) Ծ. ծ., որոնք առաջացել են տարբեր արտաքին գործընթացների հետևանքով: Այդ ծալքավոր ձևափոխությունները սովորաբար փոքր չափերի են, ունեն տեղային տարածում և անջատվում են որպես մակերևութային կամ արտածին:

**C-158. СКЛАДКИ ЭКЗОГЕННЫЕ** (հուն. éxó – դրսից, արտաքին, դուրս) – **ԱՐՏԱԾԻՆ ԾԱԼՔԵՐ, EXOGENIC FOLDS**, մակերևութային ծալքերի հոմ-ն է, տես նաև՝ Складки чехла:

**C-159. СКЛАДКИ ЭНДОГЕННЫЕ** (հուն. éndon – ներսում) – **ՆԵՐԾԻՆ ԾԱԼՔԵՐ, ENDOGENIC FOLDS**, առաջանում են խորքային երկրբ. գործընթացների գերակշռող մասնակցության դեպքում: Ն. ծ-ին են պատկանում մազնայածին, փոխակերպածին, սեղմման, ազատ ձգողական (գրավիտացիոն) սահման, ճզմման, դիապիրային, մեծարեկորային ծալքերը:

**C-160. СКЛАДКООБРАЗОВАНИЕ – ԾԱԼՔԱԳՈՅԱՑՈՒՄ, FOLDING**, լայնորեն տարածված գործընթաց, որը երկրակեղևում դրսևորվում է տեկտ. շարժումների և մասամբ արտածին գործընթացների ազդեցության տակ և հանգեցնում է ապարների շերտերում տարբեր մասշտաբի ու ձևի ծովածքների առաջացմանը: Ծ. պայմանավորում է երկրակեղևի նստվածքային թաղանթի տարբեր խտության շերտավոր ստվարաշերտերում և գրանիտափոխակերպային շերտում ծալքերի առաջացումը:

**C-161. СКЛАДКООБРАЗОВАТЕЛЬНЫЕ ДВИЖЕНИЯ – ԾԱԼՔԱԳՈՅԱՑՄԱՆ ՇԱՐՃՈՒՄՆԵՐ, FOLDING MOVEMENTS**, տեկտ. շարժումների համախմբություն, որն արտահայտվում է երկրակեղևի շերտերի ճնշմամբ և ծալքերի առաջացմամբ: Ծ. շ. բնորոշվում են իրենց անդարձելիությամբ:

**C-162. СКЛАДЧАТАЯ ОБЛАСТЬ – ԾԱԼՔԱՎՈՐ ՄԱՐԶ, FOLD AREA, FOLDED REGION, OROGEN**, ծալքավոր կառույցների համախմբություն, որն առաջացել է նախորդող շարժում մարզի տեղում: Համապատասխանում է ծալքավոր լեռնային երկրին և նույնպես էլ անվանվում է (օր.՝ Ալթայ-Սայանյան Ծ. մ.):

**C-163. СКЛАДЧАТАЯ СИСТЕМА – ԾԱԼՔԱՎՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ, FOLD SYSTEM**, երկրակեղևի ծալքերի կայուն տարածման խոշոր համակարգ, որը սովորաբար առաջանում է շարժում համակարգի տեղում, բայց երբեմն նաև՝ պլատֆորմի սահմաններում կամ ծայրամասում: Տարբերվում են գլխավոր ծալքավորության հասակով (արխեյան, բայկալյան, կալեդոնյան, հերցինյան, ալպյան և այլն), ձևաբանությամբ և բեկվածքների հետ կապվածությամբ (գծային, խճանկարային և այլն):

**C-164. СКЛАДЧАТО-ГЛЫБОВЫЕ ГОРЫ – ԾԱԼՔԱԲԵՎՈՐԱՅԻՆ ԼԵՌՆԵՐ, FOLDED BLOCK-MOUNTAINS**, լեռնային ռելիեֆ, որն առաջացել է պլաստիկությունը

կորցրած ծալքավոր մարզերի կրկնական լեռնագոյացման հետևանքով: Ծ. Լ. կազմված են առանձին մեծաբեկորներից, որոնցից մի քանիսը բարձրանում են հորստ-լեռնաշղթաների տեսքով, մյուսներն իջնում են գրաբեն-իջվածքների տեսքով: Սովորաբար պատկանում են հետապլատֆորմային լեռնային գոտիների վերածնված լեռներին (օր.՝ Տյան-Շանը):

**C-165. СКЛАДЧАТОСТЬ – ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, FOLDING,** 1) ծալքագոյացման գործընթաց, 2) երկրակեղևի որևէ տեղամասի ծալքերի համախմբություն, 3) լայն իմաստով՝ ծալքավոր մարզերի ու ծալքավոր համակարգերի առաջացման գործընթաց: Ծ. ապարների ճնշման գործընթաց է և այդ գործընթացի արգասիքը՝ նրանց ծալքավոր ձևը: Այն առավել ուժգնության հասնում է ծալքավոր համակարգերում, որոնք առաջացել են շարժում մարզերի տեղում կամ նրանց եզրամասերում, որտեղ զարգացած են մեծ երկարության նեղ գծային ծալքեր՝ հաճախ բարդացված վրաշարժերով (գծային, ալպինատիպ կամ հոլոմորֆ ծալքավորություն): Ծ-յան ծագումը գիտնականների մեծ մասը կապում է քարոլորտի մոտեցող սալերի սեղմման հետ՝ կցորդման (կոնվերգենցիայի) զոնայում կամ բախման (կոլիզիայի) հետ: Այլ հետազոտողներ այն բացատրում են խորքային փոխակերպություն և գրանիտացում կրող ստվարաշերտերի ծավալի մեծացմամբ և բարձրացմամբ, որի վերջնական արգասիքը գրանիտագնեյսային գմբեթների առաջացումն է: Ծալքավոր կառույցների նախալեռնային ու միջլեռնային ճկվածքներում, ինչպես նաև պլատֆորմների խոր իջվածքներում և մերձօվկիանոսային ճկվածքներում լայն տարածված են կամարածալքային դիապիրային ծալքերը, որոնց միջուկը կազմված է աղերից ու կավերից: Պլատֆորմներում, բացի սեղմման ուժերի ազդեցության տակ առաջացած և հարակից ծալքավոր կառույցների ուղղորդված ծալքերից, տարածված են ծածկոցի ծալքերը, որոնք մեղմաթեք են և իրենց ծագմամբ պարտական են բեկվածքներով կոտրատված հիմքի բլոկների անհավասարաչափ բարձրացմանը կամ խորասուզմանը (արտացոլված ծալքեր): Որոշ տեղային տարածում ունեցող մերձմակերևութային ծալքերն առաջանում են արտածին գործընթացների ազդեցության տակ:

Ծալքերի ձևավորումը, բացի արտածիններից, սովորաբար իրենից ներկայացնում է երկարատև գործընթաց, որի ընթացքում առանձնացվում են դրանց արագացված զարգացման առանձին դարակարգեր և փուլեր՝ կապված ներծին գործընթացների մոլորակային ռիթմերի հետ: Այդ դարակարգերը և փուլերն անջատվում են նստվածքային ստվարաշերտերում ռեզիոնալ ընդմիջումների ու անկյունային աններդաշնակությունների առկայության հիման վրա: Դրանցից գլխավորները հայտնի են այն շրջանների աշխհ. անուններով, որտեղ ավելի տիպային են արտահայտվել կամ առաջին անգամ են արտահայտվել [օր.՝ Լարանյան դարակարգը (կավճի վերջում-պալեոզենի սկզբում) իր անվանումը ստացել է Յս. Ամերիկայի Կորդիլերյան լեռներից, պիրենյանը (էոցենի վերջում)՝ Պիրենեյների անունից և այլն]: Ծ-յան դարակարգերի ու փուլերի հետ հաճախ համընկնում է ներժայթքային (ինտրուզիվ), հատկապես գրանիտային մագմայականությունը և (կամ) ռեզիոնալ փոխակերպությունը, որը հնարավորություն է տալիս դրանց թվագրել ռադիոչափորեն (ճառագայթաչափորեն): Ծալքերի աճը հաճախ սկսվում և ընթանում է ծովային ավազանների հատակում՝ խորասուզման պայմաններում, այն արտահայտվում է նստվածքների հաստության ու ֆացիաների փոփոխմամբ՝ կամարածալքերից դեպի գոգածալքերը, որը հատակի ռելիեֆում արտահայտվում է համապատասխան բարձրացումներով ու գոգվածքներով: Այդպիսի ծալքերը կոչվում են համանստ-



վածքակուտակումային (կոնսեդիմենտացիոն), իսկ նստվածքակուտակման ավարտից հետո առաջացածները՝ հետնստվածքակուտակումային կամ կոնդենումեն:

**C-166. СКЛАДЧАТОСТЬ ГЕОСИНКЛИНАЛЬНАЯ – ԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԼԱՅԻՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**, նույնն է՝ Складчатость голоморфная:

**C-167. СКЛАДЧАТОСТЬ ГЛАВНАЯ – ԳԼԽԱՎՈՐ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, PRINCIPAL FOLDING**, ըստ Յ. Շտիլեի (1924)՝ երկրասինկլինալային համակարգի զարգացման ընթացքում առաջին իրական խոշոր ծալքավորությունը: Ժամանակակից հասկացությամբ ծալքավորություն, որն ավարտում է շարժուն համակարգի զարգացումը և իրենից ներկայացնում է բեկումնային ժամանակաշրջան, որից հետո այդ համակարգերի տեղում զարգանում են լեռնագոյացման կամ պլատֆորմային մարզեր:

**C-168. СКЛАДЧАТОСТЬ ГОЛОМОРФНАЯ** (հուն. hólos – ամբողջովին, լրիվ) – **ՀՈԼՈՄՈՐՖ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, HOLOMORPHIC FOLDING**, տարածված է ծալքավոր զոնաներում, բնորոշվում է տվյալ ծալքավոր մարզի սահմաններում զարգացման անընդհատությամբ, կամարածալքերի ու գոգածալքերի հավասար տարածմամբ, գծայնությամբ, զանգվածների շարժման կողմնորոշմամբ, որն արտահայտվում է մեծ տարածությունների վրա առանցքային մակերևույթների օրինաչափ և միատեսակ թեքությամբ, հոմո-ներն են՝ լրիվ, գծային, երկրասինկլինալային ծալքավորություն:

**C-169. СКЛАДЧАТОСТЬ ГРАВИТАЦИОННАЯ – ԶԳՈՂԱԿԱՆ (ԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ) ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, GRAVITY FOLDING**, առաջանում է ապարների ստվարաշերտերում՝ թեքությունների վրա սեփական կշռի ազդեցության տակ նրանց սահումից: Ներքև սահող շերտերը, հանդիպելով այդ գործընթացով չշոշափված իրենց շարունակության դիմադրությանը, ճնշվում են և վերածվում ծալքերի: Զ. ծ. առաջանում է ստվարաշերտի սողման բավականին մեծ լայնությի և ստվարաշերտի հիմքում բարձր պլաստիկության ապարների առկայության դեպքում: Ծալքավորման ուժգնությունը մեծանում է սահող ստվարաշերտի հաստության և տեղաշարժի լայնությի մեծացման դեպքում:

**C-170. СКЛАДЧАТОСТЬ ИДИОМОРФНАЯ** (հուն. idios – մասնավոր, առանձին, առանձնացված) – **ԻՆԻՍԱՉԵՎ (ԻԴԻՈՄՈՐՖ) ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, IDIOMORPHIC FOLDING**, տարածված է առավելապես պլատֆորմներում, բնորոշվում է հորիզոնական տեղադրված շերտերի դաշտում տեղաբաշխված ընդհատուն կամ տեղային ծալքերի զարգացմամբ, կամարածալքերի ու գոգածալքերի անհավասար տարածմամբ, գծայնության և զանգվածների շարժման կողմնորոշման բացակայությամբ:

**C-171. СКЛАДЧАТОСТЬ КИММЕРИЙСКАЯ – ԿԻՄԵՐՅԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, CIMMERIAN FOLDING**, մեզոզոյան ծալքավորության դարակարգերից մեկն է: Տարբերում են Կ. ծ-յան երկու փուլ՝ վաղ կիմերյան (հին կիմերյան)՝ տրիասի վերջը – յուրայի սկիզբը, և ուշ կիմերյան (նոր կիմերյան)՝ յուրայի վերջը – կավճի սկիզբը: Առաջին փուլը արտահայտված է Ղրիմի, Յու. Դոբրուչայի, Թայմիրի, Յու. Աֆղանստանի, Յր-Արլ. Ասիայի, Պատագոնյան Անդերի, Յու-Արլ. Արգենտինայի լեռնային կառույցներում, երկրորդը՝ Վերխոյանաչուկոտյան մարզում, Կենտրոնական ու Յր-Արլ. Պամիրում, Կարակորումում, Կենտրոնական Իրանում, Կովկասում, Արմ. Կորդիերներում, Անդերում և այլ մարզերում, տե՛ս Мезозойская складчатость:

**C-172. СКЛАДЧАТОСТЬ КОНЦЕНТРИЧЕСКАЯ – ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, CONCENTRIC FOLDING**, ծալքավորություն, որի դեպքում ծալքի ամբողջ տարածությունում շերտերը պահպանում են նույն հաստությունը, և այդ պատճառով շերտավորման բոլոր մակերևույթները մնում են զուգահեռ, իսկ հաջորդական շերտերի սերիաները ծռվում են շատ թե քիչ համակենտրոն:

- C-173. СКЛАДЧАТОСТЬ КУПОЛОВИДНАЯ – ԳՄԲԵԹԱՉԵՎ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, DOME-SHAPED FOLDING**, բնորոշվում է բարձրացման տեսքով ընդհատուն ծալքերի զարգացմամբ, որոնք հատակագծում ունեն կլորավուն կամ էլիպսաձև ուրվագծեր, հաճախ անկանոն ձևեր՝ թևերում շերտերի մինչև 30-40° անկման անկյուններով: Առաջանում են լայնարձակ իջնող տարածքներում՝ առանձին տեղամասերի ուղղաձիգ բարձրացման դեպքում:
- C-174. СКЛАДЧАТОСТЬ ЛИНЕЙНАЯ – ԳԾԱՅԻՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, LINEAR FOLDING**, հոմ. Складчатость голоморфная:
- C-175. СКЛАДЧАТОСТЬ НАГНЕТАНИЯ – ՆԵՐՄՂՄԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, INJECTION FOLDING**, հոսքի ծալքավորության տարատեսակ: Առաջանում է պլաստիկ շերտերում, որոնց նյութը ճզմման ժամանակ տեղաշարժվում է դեպի ցածրացված ճնշման զոնաները՝ ծալքերի փականը և բեկվածքների զոնաները: Տեղաշարժման ժամանակ պլաստիկ շերտերը իրենց հետ քաշում-տանում են ավելի քիչ պլաստիկները՝ հարուցելով ճզմման զոնաներում դրանց ձգում ու ոսպնյակավորում, իսկ լցանդման զոնաներում՝ ծալքավորություն: Լայն տարածված է մինչքենթրի-յան ապարախմբերում:
- C-176. СКЛАДЧАТОСТЬ ПЛАТФОРМЕННАЯ – ՊԼԱՏՖՈՐՄԱՅԻՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, PLATFORM FOLDING**, տարածված է հին պլատֆորմների (կրատոնների), երիտասարդ պլատֆորմների սահմաններում, ինչպես նաև՝ կվազիպլատֆորմային ռեժիմի մարզերում: Տարբերվում է մեծ բազմազանությամբ, բայց ծալքերի ձևաբանական տեսակների համեմատական պարզությամբ, ընդհատուն (անհավասարաչափ) տարածմամբ: Պ. ծ-յան համալիրը ընդգրկում է նստվածքային ծածկոցի ծալքերը, ծածկութային ծալքերը, մակերևութային (արտածին) ծալքերը:
- C-177. СКЛАДЧАТОСТЬ ПОПЕРЕЧНАЯ – ԼԱՅՆԱԿԱՆ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, CROSS FOLDING**, առաջանում է տիրապետող ուղղության ծալքավորության հետ միաժամանակ, բայց նրա նկատմամբ լրացուցիչ է: Դրսևորվում է ծալքերի հողակապերի լայնական ձկվածքների տեսքով, ինչպես նաև կուլիսանման տեղաբաշխված ծալքերի գոյացմամբ:
- C-178. СКЛАДЧАТЫЕ ГОРЫ – ԾԱԼՔԱՎՈՐ ԼԵՌՆԵՐ, FOLDED MOUNTAINS**, լեռներ, որոնց հիմնական լեռնագրական տարրերը զարգացման վաղ փուլերում համապատասխանում են ծալքավոր ձևափոխություններին՝ խզվածքային խախտումների ստորադաս դերի դեպքում: Սովորաբար պատկանում են հետերկրասինկլինալային լեռներին, որոնք առաջացել են երկրասինկլինալային համակարգերի տեղում (օր.՝ Դաղստանի, Կենտրոնական Կոպետդաղի լեռները):
- C-179. СКЛАДЧАТЫЙ КОМПЛЕКС – ԾԱԼՔԱՎՈՐ ՀԱՄԱԼԻՐ, FOLD COMPLEX**, նստվածքային կամ (և) հրաբխածին նստվածքների համալիր, որը ճմռվել է ծալքերի՝ ծալքավորման որոշակի փուլում և ռեգիոնալ անկյունային աններդանակությամբ անջատված է ներքև և վերև տեղադրված համալիրներից (օր.՝ կալեդոնյան, հերցինյան համալիրները):
- C-180. СКЛАДЧАТЫЙ ПОЯС – ԾԱԼՔԱՎՈՐ ԳՈՏԻ, FOLD BELT, FOLDING ZONE**, ծալքավոր լեռնային կառույցների մոլորակային համակարգ, որն առաջացել է շարժուն գոտու տեղում՝ երկու պլատֆորմների կամ մայրցամաքային պլատֆորմի ու օվկիանոսի միջև: Կազմված է տարահասակ ծալքավոր մարզերից ու համակարգերից (օր.՝ Միջերկրածովյան, Խաղաղօվկիանոսային գոտիները և այլն):
- C-181. СКЛАДЧАТЫЙ ФУНДАМЕНТ – ԾԱԼՔԱՎՈՐ ՀԻՄՔ, FOLDED BASEMENT**, երիտասարդ պլատֆորմի հիմք, տե՛ս Фундамент платформы:

- C-182. СКЛОН, ОТКОС, ПОКАТОСТЬ – ԼԱՆՋ, ԴԱՐԱԼԱՆՋ, ՋԱՌԻՎԱՅՐ, SLOPE, ACCLIVITY, DECLIVITY,** Երկրի մակերևույթի թեք տեղամաս՝ սահմանափակված ռելիեֆի դրական ու բացասական ձևերով: Ըստ ծագման՝ L-երը կարող են իրենցից ներկայացնել առաջնային (ծովի մակարդակից դուրս եկած) կամ տեկտ. գործընթացներով ձևափոխված, լերկացմամբ հարթեցված հարթություն, մակերևույթ, ռելիեֆի ողողամաշման (էրոզիոն) կամ կուտակումային ձևերի մակերևույթի մաս: Շատ L-եր ունեն բարդ ծագում: L-երով տեղի է ունենում բեկորային նյութի ձգողական (գրավիտացիոն) տեղափոխում՝ անձրևաջրերի ու ձնհալի ջրերի հոսքերով: Ընդհանուր թեքություն ունեցող L-երի ամբողջությունը կոչվում է զառիվայր:
- C-183. СКЛОНОВЫЕ ПРОЦЕССЫ – ԼԱՆՋԱՅԻՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐ, SLOPE PROCESSES,** լանջերի կերպափոխման գործընթացների համախմբություն: Ընդգրկում է լանջով դեպի ներքև փուխր ծածկութային նյութի կամ արմատական ապարների բլոկների տեղաշարժը, դրան հաջորդող կուտակումը լանջի ստորոտում կամ հետագա տեղափոխությունը: Լանջերի զարգացումը տեղի է ունենում ծանրության ուժի և լանջային հոսքերի անմիջական ազդեցության տակ և ընթանում է տարբեր կերպ՝ կախված տեղանքի տեկտ. ռեժիմից, երկրաբանությունից, կազմությունից և կլիմայական պայմաններից:
- C-184. СКЛОНЫ ДОЛИНЫ – ՅՈՎՏԻ ԼԱՆՋԵՐ, VALLEY SLOPES, VALLEY SIDES,** լանջեր, որոնք կողերից սահմանափակվում են հովտի հատակը, հաճախ բարդացված են գետային դարավանդներով: Յ. լ. կարող են լինել բարձր, ցածր, զառիթափ, մեղմաթեք, իսկ ըստ տրամատի (պրոֆիլի) ձևի՝ ուղիղ, գոգավոր, ուռուցիկ, գոգաուռուցիկ, աստիճանավոր:
- C-185. СКРЫТОЕ НЕСОГЛАСИЕ – ԹԱՔՆՎԱԾ ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ, HIDDEN DISCORDANCE,** միատեսակ կազմի ապարների սովորաբար տեղում դժվար նկատելի աններդաշնակություն:
- C-186. СКРЫТОКРИСТАЛЛИЧЕСКАЯ СТРУКТУРА – ԳԱՂՏՆԱԲՅՈՒՐԵՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, CRYPTOCRYSTALLINE TEXTURE,** հոծ ապարի կառուցվածք, որում բյուրեղային բաղադրամասերը նկատվում են միայն խոշոր մեծացումների դեպքում:
- C-187. СКРЫТООБЛОМОЧНАЯ ГОРНАЯ ПОРОДА – ԳԱՂՏՆԱԲԵԿՈՐԱՅԻՆ ԱՊԱՐ, CRYPTOCLASTIC ROCK,** կավային (պեղիտային) կառուցվածք ունեցող ապար:
- C-188. СКУЛЬПТУРНЫЙ РЕЛЬЕФ – ՔԱՆԴԱՎԱԳՈՐԾԱԿԱՆ ՌԵԼԻԵՖ, SCULPTURED RELIEF,** 1) ձևաքանդակագործության հոմ., 2) ռելիեֆ, որը ձևավորվել է համասեռ (կայունության տեսակետից) ապարներում՝ լերկացման տարբեր ազդակների միջոցով և չի դրսևորում ուղղակի կապ երկրբ. կառուցվածքների հետ (օր.՝ վատահողերը և այլն), 3) ցանկացած լերկացման ռելիեֆի հոմ.:
- C-189. СЛАНЦЕВАТОСТЬ – ԹԵՐԹԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, SCHISTOSITY, CLEAVAGE, FISILITY, FOLIATION,** ապարների ունակություն՝ հարվածի դեպքում համենատարբար հեշտ ճեղքվելու որոշակի հարթությանը զուգահեռ: Թ. տարբերվում է կլիվաժից այն բանով, որ Թ-յան դեպքում բյուրեղները տափակվում են սեղմման առանցքին ուղղահայաց հարթության վրա, ապարը ձեռք է բերում հարթազուգահեռ կողմնորոշված ներքին կառուցվածք: Թ. պայմանավորված է ուժափոխակերպությամբ (դինամոմետամորֆությամբ), որի ժամանակ ապարը կազմող թիթեղավոր և սյունաձև միներալները (օր.՝ փայլարները և քլորիտները), վերաբյուրեղացման կամ պտտման հետևանքով, ստանում են միատեսակ կողմնորոշում: Թ. սովորաբար գոյանում է ապարների (զլխ. կավային) ծալքավորման ժամանակ, որի դեպքում այն սովորաբար մերձզուգահեռ է ծալքերի առանցքային հարթություններին:

**C-190. СЛАНЦЫ – ԹԵՐՁԱՔԱՐԵՐ (ՉԵՐՉԱՔԱՐԵՐ), SHALES, SCHISTS, SLATES,**

փոխակերպային (մետամորֆային) ապարներ, որոնք բնորոշվում են ապարակազմիչ միներալների կողմնորոշված դասավորությամբ և ունակ են ճեղքվելու բարակ թիթեղների կամ սալիկների (թերթավորություն): Ըստ սկզբնական ապարների բնույթի՝ տարբերում են օրթո- և պարաթերթաքարեր: Առաջինները գոյացել են մազմայական ապարների փոխակերպության դեպքում, երկրորդները՝ նստվածքային: Ըստ փոխակերպության աստիճանի՝ առանձնացնում են թույլ փոխակերպված կավային, սիլիցիումային Թ., խոր փոխակերպված բյուրեղային Թ., միջանկյալ դիրք են զբաղում ֆիլիտները, քլորիտային ու սերիցիտային Թ., կանաչ Թ. և այլն: Սիլիցիումային Թ. ամուր, հոծ նրբաթիթեղավոր (երբեմն թերթավոր) մոխրագույն ապարներ են, կազմված են քվարցի (երբեմն քաղկեդոնի հետ) եղջերաքարային ագրեգատից: Ապարում  $\text{SiO}_2$ -ի պարունակությունը 67.5-97 % է: Հաճախ առկա է օրգանական նյութի, գրաֆիտի, Fe-ի և Mn-ի օքսիդների ու հիդրօքսիդների, քլորիտի, ռադիոլարիանների կմախքների, սպունգների սպիկուլանների խառնուրդը: Սիլիցիումային Թ-ի ամենատարածված տարատեսակներից են ռադիոլարիտները և լիդիտները (ֆտանիտները) կամ ածխածնով հարստացած սարքային քարերը: Բյուրեղային Թ. լայն իմաստով, որպես ռեգիոնալ փոխակերպության ամֆիբոլիթային և մասամբ գրանուլիթային ֆացիաների արգասիք, ընդգրկում են գնեյսները և միզմատիտները: Բյուրեղային Թ., որպես գլխավոր միներալներ, սովորաբար պարունակում են կա՛ն քվարց և փայլար (բիոտիտ, մուսկովիտ), կա՛ն պիրոքսեններ, ամֆիբոլներ և պլագիոկլազ, կա՛ն սկապուլիթ, կա՛ն միայն մուզավում միներալներ (օր.՝ եղջերախաբ): Բյուրեղային Թ-ի կազմում մասնակցում են նաև փոխակերպային ապարների յուրահատուկ միներալներ՝ նոնաքար (ալմանդին), կորդիերիտ, անդալուզիտ, կիանիտ, սիլիմանիտ, ստավրուլիթ, սկապուլիթ, երբեմն՝ կարբոնատներ և այլն: Ըստ միներալային կազմի՝ տարբերում են քվարցապարունակ փայլարային, նոնաքար-բիոտիտային, անդալուզիտ-բիոտիտային, կորդիերիտ-բիոտիտային, անքվարց դիոպսիդ-սկապուլիթային, դիոպսիդ-պլագիոկլազային, դիոպսիդ-կարբոնատային և այլ բյուրեղային Թ.:

Փոխակերպության ցածր աստիճանի Թ. տարածված են տարբեր հասակի երկրք. ֆորմացիաներում: Թ. միզմատիտների ու գնեյսների հետ կազմում են հին (մինչքենթրիյան) պլատֆորմների հիմքը, լեռնաշղթաների առանցքային զոնաները (խոշոր անտիկլինորիումների միջուկները): Օրգանական նյութով հարստացված կավային Թ. օգտագործվում են որպես այրվող թերթաքարեր: Գրաֆիտով հարստացված Թ. հադիսանում են գրաֆիտի հումք: Բյուրեղային Թ. (բարձր արժնահողային կիանիտային, սիլիմանիտային և այլն) օգտագործվում են որպես հրակայուն հումք: Կավային, քլորիտային և տալկաքլորիտային Թ., որոնք ճեղքվում են բարակ ու հավասար սալիկների, կոչվում են տանիքի Թ.: Թրծելիս ուռչելու ունակություն ունեցող Թ. օգտագործվում են որպես ջերմա- և ձայնամեկուսիչ նյութ:

**C-191. СЛАНЦЫ АСПИДНЫЕ – ԱՄՊԻԴԱՅԻՆ (ԹԻԹԵՂԱՔԱՐԱՅԻՆ) ԹԵՐՁԱՔԱՐԵՐ,**

**SLATES,** կավային փոխակերպված (մետամորֆացված) ապարներ՝ խիտ, թերթավորված, գույնը՝ մուգ մոխրագույն և սև, բաղկացած են սերիցիտից, ջրափայլարից, քլորիտներից, քվարցից և այլ ոչ կավային միներալներից, սովորաբար պարունակում են զգալի քանակի օրգանական ածխային նյութի խառնուրդ:

**C-192. СЛАНЦЫ УГЛИСТЫЕ – ԱԾԽԱՅԻՆ ԹԵՐՁԱՔԱՐԵՐ, COAL SHALES, CARBON SHALES,** տե՛ս Углистые сланцы:

**C-193. СЛАНЦЫ ХЛОРИТОВЫЕ – ՔԼՈՐԻՏԱՅԻՆ ԹԵՐՈՒՔԱՐԵՐ, CHLORITE SCHISTS, CHLORITE SLATES**, կանաչ կամ կանաչասև, թեփուկավոր կամ թեփուկահատիկավոր կազմվածքով փոխակերպային թերթավոր ապար, կազմված է գլխ. քլորիտից, կարբոնատներից, քվարցից, դաշտային սպաթից, հաճախ առկա են՝ տալկը, փայլարը, նոնաքարը, տուրմալինը, մագնետիտը: Առաջանում են կանաչ թերթաքարերի ֆացիայում:

**C-194. СЛОЖНЫЙ СБРОС – ԲԱՐԴ ՎԱՐՆԵՏՔ (ՏԱՐԷՋՔ), COMPLEX FAULT, COMPOUND FAULT**, մի քանի պարզ վարնետքերի զուգակցություն:

**C-195. СЛОИСТАЯ СТРУКТУРА – ՇԵՐՏԱՎՈՐ ԿԱՈՒՑՎԱԾՔ, BEDDED STRUCTURE, LAYERED STRUCTURE**, բնորոշվում է նստվածքային ապարներում հերթազայող շերտերի առկայությամբ, որոնք տարբերվում են կազմով, մասնիկների խոշորությամբ ու դասավորությամբ և այլն:

**C-196. СЛОИСТОСТЬ (ОСАДОЧНЫХ ОБРАЗОВАНИЙ) – ՇԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ՆՍՎԱԾՔԱՅԻՆ ԳՈՅԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ), BEDDING, STRATIFICATION, LAMINATION, LAYERING**, նստվածքային ապարների կարևորագույն հատկանիշներից մեկն է: Ապարների կազմությունն է՝ մեկը մյուսի վրա դասավորված շերտերի տեսքով, որոնք տարբերվում են միմեքալային կազմով, զույնով, ապարը կազմող մասնիկների առանձնահատկություններով և այլ հատկանիշներով: Տարբերում են ապարների շերտավորության երկու տեսակ՝ նստվածքային ստվարաշերտերի շերտավորություն և շերտավորություն ապարի շերտի ներսում: Նստվածքային ստվարաշերտերի շերտավորությունը (շերտադասավորությունը, շերտաբաշխումը) գոյանում է առավելապես ապարների շերտերից, որոնք տարբերվում են կազմով, կազմվածքով և այլ առանձնահատկություններով: Կախված շերտերի հաստությունից՝ առանձնացնում են նուրբ, մանր, խոշոր և շատ խոշոր Շ.: Ըստ առանձին շերտերի հաստության հարաբերակցության՝ այն կարող է լինել հավասարաչափ և անհավասարաչափ: Շերտերի առաջնային տեղադրումը սովորաբար հորիզոնական է, որոշ դեպքերում՝ թեք: Շ-յան այս տեսակը պայմանավորված է նստվածքի մեջ ներառվող նյութի փոփոխությամբ, նստվածքակուտակման մարզի ներսում պայմանների հերթափոխմամբ, որոնք պայմանավորված են սեզոնային ու կլիմայական տատանումներով, ֆացիաների տեղազաղթով, տեկտ. շարժումներով, հրաբխայնությամբ և այլն:

Շերտի ներսի շերտավորությունը արտահայտվում է սովորաբար նուրբ շերտիկների հերթազայմամբ (հաստությունը մմ-ի մասերից մինչև 1-2 սմ), որոնք տարբերվում են դրանք կազմող ապարի բաղադրամասերի կառուցվածքով, միմեքալային կազմով կամ խառնուրդներով: Շերտիկները խմբավորվելով՝ առաջացնում են սերիաներ կամ շերտատուփեր: Այս Շ., ըստ շերտիկների ձևի և դիրքի, կարող է լինել հորիզոնական, շեղ և ալեծև (ալիքավոր): Հորիզոնական Շ. առաջանում է հանգիստ ջրերում, այն օգտագործվում է ապարների տեղադրման տարրերը որոշելու համար: Շեղ Շ. կապված է տարբեր հոսանքների հետ, նրա օգնությամբ որոշում են նստվածքի տեղափոխման ուղղությունը, երբեմն՝ սնման մարզի տեղավայրը: Կապված ձևավորման տարբեր պայմանների հետ՝ առանձնացնում են Շ-յան մի քանի ծագումնային տիպեր՝ հողմային, գետային, ժամանակավոր հոսքերի, լճային, դելտային, ծովային տարբեր հոսանքների, ծովի ալեկոծության զոնաների, ծովի նստվածքակուտակման հանգիստ զոնաների: Ըստ արտահայտման աստիճանի՝ Շ. կարող է լինել ցայտուն արտահայտված, պարզորոշ և ոչ լրիվ զարգացած: Ապարների Շ-յան տարրերի կանոնավոր կրկնման դեպքում այն կոչվում է ռիթմիկային, տարբեր տիպի խախտումների առկայության դեպքում՝ խախտված: Ապարների Շ-

յան ուսումնանսիրությունն ունի կարևոր տեսական ու գործնական նշանակություն՝ ֆացիաների վերլուծության, հնաշխարհագրական վերականգնումների, նստվածքային ստվարաշերտերի մասնատման ու համահարաբերակցման, նստվածքային օգտ. հնձ-ների հնքվ-երի որոնման ու հետախուզման ժամանակ:

**C-197. СЛОИСТОСТЬ ЛИНЗОВИДНАЯ – ՈՍՊՆՅԱԿԱԶԵՎ ՇԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, LENTICULAR BEDDING**, բնորոշվում է շեղ սերիաների ստորին կորացված և վերին ուռուցիկ սահմաններով:

**C-198. СЛОИСТОСТЬ НАКЛОННАЯ – ԹԵՔ ՇԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, INCLINED BEDDING**, շերտավորություն, որի դեպքում շերտիկները դասավորված են շեղ՝ հորիզոնական հարթության նկատմամբ, բայց զուգահեռ՝ նստեցման թեք մակերևույթին:

**C-199. СЛОИСТОСТЬ СЕЗОННАЯ – ՍԵՉՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, SEASONAL VARVING**, արտահայտվում է տարբեր կազմի շերտերի հերթագայմամբ, որը կապված է կլիմայով պայմանավորված նստվածքակուտակման պայմանների փոփոխության հետ (օր.՝ ձմեռային ու ամառային սեզոններ, չորային և խոնավ տարիներ):

**C-200. СЛОЙ – ՇԵՐՏ, LAYER, BED, STRATUM**, 1) երկրաշրջանային (ռեգիոնալ) նշանակության օժանդակ միավոր, որը կազմում է շերտագրական հորիզոնի մասը, 2) շերտագրական նշանակում, որը միավորում է ընդհանուր քարաբանական կամ հնէաբանական հատկանիշներ ունեցող նստվածքները՝ սահմանափակված նստեցման երկու տարահասակ մակերևույթներով: Շ-ի քարաբանական կազմը ըստ տարածման կարող է փոխվել, 3) ստվարաշերտի շերտավոր կազմվածքի ցածրագույն տաքսոնոմիական միավոր, որը բաղկացած է միատեսակ ապարից և ունի երկրք. հարթ մարմնի ձև:

**C-201. СЛОЙЧАТОСТЬ – ՇԵՐՎՈՐՈՒԹՅՈՒՆ, LAMINATION, BEDDING**. նստվածքային գոյացությունների շերտավորության հիմնական տեսակներից մեկն է, այն շերտի ներքին կազմվածքն է, տե՛ս Слоистость (осадочных образований):

**C-202. СЛЮДЫ – ՓՅՅԱՐՆԵՐ, MICAS**, շերտավոր ալյումասիլիկատների ենթադասի ապարակազմիչ միներալների խոշոր խումբ, ընդհանուր ֆորմուլան է՝  $R_1R_{2-3}[AlSi_3O_{10}](OH, Fe)_2$ , որտեղ  $R_1=K, Na$ ,  $R_2=Al, Mg, Fe, Li$ : Խմբում առանձնացվում են բուն Փ., փխրուն Փ. և ջրափայլարներ (հիդրոփայլարներ): Բուն Փ-ին պատկանում են փոփոխական կազմի միներալները, որոնց մոտ միջշերտային կատիոնները ներկայացված են K-ով և Na-ով (ֆլոգոպիտ, մուսկովիտ, պարագոնիտ, բիոտիտ, լեպիդոլիթ, ցինվալդիտ և այլն): Փխրուններին պատկանում են այն Փ., որոնց մոտ միջշերտային կատիոնները ներկայացված են Ca-ով (մարգարիտ, կլինտոնիտ, բիտինիտ): Փ. սովորաբար բյուրեղանում են մոնոկլինային համակարգում, առաջացնում են սյունաձև կամ թիթեղաձև տեսքի կեղծ հեքսագոնային, ինչպես նաև թիթեղաձև, աղյուսաձև, թեփուկավոր ագրեգատներ: Փ-ի յուրահատկությունը դրանց մեջ ջրի պարունակությունն է, որը տարբեր Փ-ի մոտ անջատվում է ջերմաստիճանային տարբեր միջակայքերում: Կարծրությունը՝ 2.5-4, հերձականությունը խիստ կատարյալ է: Փ-ին բնորոշ է բարձր էլեկտրական, ջերմային, քիմ., մեխ. կայունությունը: Թերթիկները ճկուն են և առածգական: Բոլոր Փ. առաջանում են ներծին պայմաններում, մագմայական, փոխակերպային ու մետասոմատիկական ապարների կարևոր ապարակազմիչ միներալներ են: Արդյ. նշանակություն ունեն մուսկովիտը, ֆլոգոպիտը, վերմիկուլիտը, գլաուկոնիտը, ինչպես նաև լիթիումային Փ.: Մուսկովիտի հնքվ-երը հարում են գրանիտային պեգմատիտներին, գրեյզեններին, փայլարային թերթաքարերին, ֆլոգոպիտի հնքվ-երը՝ հպումամետասոմատիկական, ալկալիական ու գերհիմքային ապարներին:

- C-203. СМЕСТИТЕЛЬ, СБРАСЫВАТЕЛЬ – ՏԵՂԱՇԱՐԺԻՉ, ՆԵՏԻՉ, FAULT FISSURE**, մակերևույթ, որով տեղի է ունեցել ապարների մի բլուկի տեղաշարժ մյուսի նկատմամբ՝ երկրակեղևում խզվածքներ առաջանալիս:
- C-204. СМЕШАННЫЙ ВУЛКАН**, տե՛ս Стратовулкан:
- C-205. СМЕШАННЫЙ ТИП ИЗВЕРЖЕНИЯ – ԺԱՅԹՔՄԱՆ ԽԱՈՐ ՏԵՍԱԿ, ERUPTION OF MIXED TYPE, MIXED ERUPTION**, հրաբխի ժայթքում, որը ներկայացված է հեղուկ լավայի արտավիժումների և փուխր նյութերի (մոխիր, ընկուզիկներ, հրաբխային ռումբեր) արտանետումների հերթագայությամբ (օր.՝ Ստրոմբոլյան հրաբուխները Լիպարյան կղզիներում):
- C-206. СМИТСОНИТ** (ի պատիվ անգլ. միներալաբան Ջ. Սմիթսոնի, J. Smithson, 1765-1829) – **ՍՄԻԹՍՈՆԻՏ, SMITHSONITE**, կարբոնատների դասի միներալ,  $Zn\{CO_3\}$ : Բյուրեղագիտական համակարգը տրիգոնային է: Բյուրեղները հազվադեպ են, սովորաբար հանդիպում է հատիկավոր կամ հողանման զանգվածների և կեղևանման հոսանստվածքային ագրեգատների ձևով: Գույնը՝ սպիտակ, դեղնավուն, մոխրագույն, գորշ: Կարծրությունը՝ 4-4.5: Ս. ցինկի առաջնային սուլֆիդային հնվ-երի օքսիդացման զոնայի տիպիկ արդյ. միներալ է:
- C-207. СОВРЕМЕННЫЕ ДВИЖЕНИЯ ЗЕМНОЙ КОРЫ – ԵՐԿՐԱԿԵՂԵՎԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՇՐԺՈՒՄՆԵՐ, RECENT CRUSTAL MOVEMENTS**, երկրակեղևի բարձրացումներ, իջեցումներ, տեղաշարժեր, որոնք տեղի են ունենում այժմ կամ տեղի են ունեցել մի քանի հարյուր տ. առաջ: Բացահայտվում են երկրաբաշխական տվյալներով (կրկնական մակարդակաչափում, եռանկյունացում), ջրագրական և երկրաբանաերկրաձևաբանական դիտարկումներով, տե՛ս նաև՝ Неотектоника:
- C-208. СОГЛАСНАЯ ДОЛИНА**, տե՛ս Консеквентная долина:
- C-209. СОГЛАСНОЕ ЗАЛЕГАНИЕ, КОНКОРДАНТНОЕ ЗАЛЕГАНИЕ, ПАРАЛЛЕЛЬНОЕ ЗАЛЕГАНИЕ – ՆԵՐՂԱՇՆԱԿ ՏԵՂԱԴՐՈՒՄ, ԿՈՆԿՈՐԴԱՆՏ ՏԵՂԱԴՐՈՒՄ, ՋՈՒԳԱՅԵՌ ՏԵՂԱԴՐՈՒՄ, CONCORDANT STRATIFICATION, CONFORMABLE BEDDING, CONCORDANT BEDDING**, ապարների տեղադրում, որը բնորոշվում է շերտերի մոտավոր զուգահեռականությամբ և կտրվածքի անընդհատությամբ:
- C-210. СОГЛАСНЫЙ БЕРЕГ, КОНКОРДАНТНЫЙ БЕРЕГ, ПРОДОЛЬНЫЙ БЕРЕГ – ՆԵՐՂԱՇՆԱԿ ԱՓ, ԿՈՆԿՈՐԴԱՆՏ ԱՓ, ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ԱՓ, CONCORDANT COAST, LONGITUDINAL COAST, COAST OF PACIFIC TYPE**, ափ, որի ընդհանուր ուղղությունը համընկնում է ցամաքի ափամերձ մասի երկրբ. կառուցվածքների ընդհանուր ուղղության հետ (օր.՝ ծալքերի առանցքների տարածման հետ):
- C-211. СОДАЛИТ** (նոր լատ. soda – սոդա և հուն. lithos – քար) – **ՍՈՂԱԼԻԹ, SODALITE**, ալյումասիլիկատների խմբի միներալ,  $Na_8[SiAlO_4]Cl_2$ , բյուրեղագիտական համակարգը խորանարդային է: Առաջացնում է հատիկային ագրեգատներ: Անգույն է, ունի տարբեր երանգներ, հաճախ՝ կապույտ: Կարծրությունը՝ 5.5-6: Որպես ապարակազմիչ միներալ՝ տարածված է նեֆելինային ու սոդալիթային սիենիտներում և ֆոնոլիթներում: Հանդիպում է ալկալիական պեգմատիտներում, ալկալիական ներժայթքուկների հպման զոնայի փոխակերպված կրաքարերում:
- C-212. СОЛЕНАКОПЛЕНИЕ – ԱՂԱԿՈՒՏԱԿՈՒՄ, SALINE ACCUMULATION**, բնական աղերի կուտակման գործընթաց յուրահատուկ աղածնող ավազաններում, որոնք հարում են երկրակեղևի ուժգին ճկվող խոշոր կառուցվածքներին և զետեղված են չորային (մասամբ կիսաչոր) կլիմայի զոնաներում: Տարբերում են ցամաքային և ծովային Ա.: Ցամաքային Ա. ունի արտահայտման ավելի փոքր մասշտաբներ, քան ծովայինը: Դրանք առավելապես աղային լճերի նստվածքներ են, որոնք ներկա-

յացված են կարբոնատային (սոդային), սուլֆատային և քլորիդային արգասիքներով: Սոդային նստվածքներում գերակայում են կարբոնատները (գեյլուսիտ, սոդա և այլն), սուլֆատները (տենարդիտ, միրաբիլիտ) և նատրիումի քլորիդները: Սուլֆատային տիպի նստվածքների համար բնորոշ են նատրիումի ու մագնեզիումի սուլֆատները ու քլորիդները (գլաուբերիտ, միրաբիլիտ, տենարդիտ, աստրախանիտ և այլն): Քլորիդային տիպի նստվածքներում հանդիպում են նատրիումի, մագնեզիումի, կալիումի և կալցիումի քլորիդներ: Վերջին երկու տիպերի նստվածքները սովորաբար պարունակում են գիպս և զգալի քանակով բեկորային նյութ: Ծովային աղազոյացնող ավազաններում կուտակվել են ըստ ծավալի ավելի խոշոր աղածնային ֆորմացիաներ: Ն. Մ. Ստրախովը առանձնացնում է այդպիսի ավազանների չորս տեսակներ՝ ծովալճակներ (լազունաներ), բաց կամ փակ ծովածոցեր (Կարա-Բողազ-գոլի նմանակներ), վերցամաքային ծովերի ծայրամասային իջութային զոնաներ, ներմայրցամաքային աղազոյացնող ծովեր: Ծովային ջրի գոլորշիացման դեպքում գիպսի, հալիտի և մագնեզիումի սուլֆատների նստումից հետո կուտակվել են կալիումի ու մագնեզիումի քլորիդներ՝ մագնեզիումի սուլֆատների խառնուրդով:

**C-213. СОЛЁНОСТЬ ВОД – ՋՐԵՐԻ ԱՂԻՈՒԹՅՈՒՆ, SALTINESS OF WATER**, բնական ջրերի աղիություն, որը պայմանավորված է դրանց մեջ լուծված հիմքերի (Na, K, Ca, Mg և այլն) և ուժեղ թթվային մնացորդների (SO<sub>4</sub>, Cl և այլն) առկայությամբ:

**C-214. СОЛЁНОСТЬ МОРСКОЙ ВОДЫ – ԾՈՎԱՅԻՆ ՋՐԻ ԱՂԻՈՒԹՅՈՒՆ, SALTINESS OF SEA WATER**, կարծր միներալային նյութերի ընդհանուր քանակությունը (գ) 1 կգ ծովային ջրում (պայմանով, որ բոլոր հալոգենները փոխարինված են Cl-ի համարժեք քանակով, ածխաթթվային աղերը վերածված են օքսիդների, իսկ օրգանական նյութերն այրված են): Ծ. ջ. ա-յան չափման միավոր է հանդիսանում պրոմիլեն (‰), որը համապատասխանում է 1 կգ ջրում 1 գ հանքային նյութերի պարունակությանը:

**C-215. СОЛИФЛЮКЦИЯ (ПОЧВОТЕЧЕНИЕ)** (լատ. solum – հող, գետին և fluctio – արտահոսք) – **ՍՈԼԻՖԼՅՈՒԿՑԻԱ (ՑԵԽԱՅՈՍՔ, ՑԵԽԱՍՈՂՔ), SOLIFLUCTION**, փոքրաթեք լանջերի վրա հալչող գերխոնավ բուսահողերի կամ գրունտների փոքր շերտի համեմատաբար դանդաղ տեղաշարժ, որը կատարվում է ձգողական ուժերին գումարվող սառցածին երևույթների (այդ շերտի հերթափոխվող հալչման-սառչման, կծկման-ուռչման և այլնի) շնորհիվ:

**C-216. СОЛОНЧАК – ԱՂՈՒՏ, SOLONCHAK**, 1) երկրծ-ում հարթ, սովորաբար բուսազուրկ, աղերով հարուստ (1 % և ավելի) կավային հողերով պատված տարածքներ, որոնք բնորոշ են կիսաանապատային ու տափաստանային մարզերին, 2) հողեր, որոնք հարուստ են հեշտ լուծվող աղերով (նատրիումի, կալցիումի, մագնեզիումի քլորիդներ, միրաբիլիտ և այլն): Տարածված են տափաստանային և անապատատափաստանային գոտիներում:

**C-217. СОЛЬФАТАРЫ – ՍՈԼՖԱՏԱՐՆԵՐ, SOLFATARES**, հրաբխի խառնարանում ու լանջերին լավային և հրաբեկորային հոսքերի անցքերից ու ճեղքերից անջատվող ծծմբային գազի ու ծծմբաջրածնի (ջրի գոլորշիների, ածխաթթվային և այլ գազերի խառնուրդով) շիթեր: Ջերմաստիճանը՝ 100-300°C:

**C-218. СОЛЯНАЯ ТЕКТОНИКА – ԱՂԱՅԻՆ ՏԵԿՏՈՆԻԿԱ, SALT TECTONICS**, երկրակեղևի նստվածքային շերտի ծալքավոր տեղախախտումների լայն տարածում ունեցող յուրահատուկ ձև, որը պայմանավորված է աղային ստվարաշերտի առանձնահատուկ ռելիեֆական հատկություններով (մյուս նստվածքային ապարների հա-



մենատուրյամբ դրանց ցածր խտությունը և բարձր, հատկապես բարձրացված ճնշման ու ջերմաստիճանի պայմաններում՝ պլաստիկությունը): Ա. տ. արտահայտվում է տարբեր ձևերով՝ ոչ մեծ փքվածքներից (այսպես կոչված՝ աղային բարձիկներից), այնուհետև աղային դիապիրակերպերից (գմբեթանման բարձրացումներ՝ աղային միջուկների մեծացած հաստություններով, բայց առանց վերադային շերտերի խոցոտման), մինչև աղային դիապիրները (գմբեթներ աղային միջուկով, որը խոցել է վերադային շերտերն ու հաճախ ելք ունի երկրի մակերևույթում) և աղային թմբերն ու կամարածալքերը՝ տասնյակ, երբեմն ավելի քան 100 կմ երկարությամբ: Վերջինների տրամագիծը կազմում է մի քանիսից մինչև մի քանի տասնյակ կմ: Աղային գմբեթների կամարները հաճախ կոտրված են ձգման վարնետքերով և դրա հետևանքով բարդացված են գրաբեկներով: Ա.տ. ստեղծող հիմնական գործոնները՝ ձգողական (գրավիտացիոն) (ծածկող ավելի խիտ նստվածքների տակից աղի դեպի վեր՝ մակերես բարձրանալը) և տեկտոնիկան (հորիզոնական սեղմումը), հաճախ գործում են համատեղ: Ձգողական գործոնների աղդեցության հետևանքով առաջանում են աղային բարձիկներ, դիապիրակերպեր և դիապիրներ-գմբեթներ, որոնք հատկապես բնորոշ են պլատֆորմների իջվածքներին: Դրանց աճմանը հաճախ նպաստում են ենթաաղային հատակի սակավաթեք կամարածալքային բարձրացումները և վարնետքային սանդղավանդները: Տեկտ. գործոնները առավել ակնառու արտահայտվում են ծալքավոր կառույցների արտաքին զոնաներում և առաջնային ու միջլեռնային իջվածքներում: Դրանց աղդեցության տակ առաջանում են աղային թմբեր ու կամարածալքեր: Ա. տ-ի համարյա բոլոր մարզերը նավթագազաբեր ավազաններ են, որտեղ նավթի ու գազի կուտակները հարում են աղային գմբեթների գազաթերին ու լանջերին, ինչպես նաև ենթաաղային կառուցվածքներին: Վերջին դեպքում աղային ստվարաշերտերը հանդիսանում են էկրաններ (ծածկաններ):

**C-219. СОЛЯНОЙ КУПОЛ – ԱՂԱՅԻՆ ՉՄԲԵԹ, SALT DOME, SALT PLUG,** կառուցվածք, որը ձևավորվում է պլատֆորմների խոշոր իջվածքներում և ծայրամասային ճկվածքներում՝ աղային տեկտոնիկայի արտահայտման արգասիքում: Ա. գ. կազմված է աղային զանգվածից և վերադային կառուցվածքից, որը միջուկի վրա կազմավորել են գմբեթանման բարձրացող ապարները, և որը հաճախ կտրատված է վարնետքերով: Հայտնի են կլորավուն, ձվաձև և անկանոն Ա. գ-ներ: Ա. գ-ների մակերեսը 1-ից մինչև 100 կմ<sup>2</sup> է, բարձրությունը՝ 0.1-ից մինչև մի քանի կմ է, տե՛ս նաև՝ Соляная тектоника:

**C-220. СОРТИРОВАННОСТЬ – ՏԵՍԱՎԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, GRADATION,** նստվածքի կամ նստվածքային ապարի բեկորային մասնիկների համասեռության կամ բազմազանության աստիճան:

**C-221. СОРТИРОВКА ОСАДКОВ – ՆՍՏՎԱԾՔՆԵՐԻ ՏԵՍԱՎԱՎՈՐՈՒՄ, GRADING OF SILT,** գործընթաց, որը հանգեցնում է նստվածքի մեջ չափերով ու տեսակարար կշռով մոտ մասնիկների կուտակմանը:

**C-222. СПАЙНОСТЬ МИНЕРАЛОВ – ՄԻՆԵՐԱԼՆԵՐԻ ՀԵՐՁՈՒՄ (ՀԵՐՁՎԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵՐԹՎԱՆՈՒԹՅՈՒՆ), CLEAVAGE OF MINERALS,** որոշակի բյուրեղագիտական ուղղությամբ միներալների կոտրվելու կամ ճեղքվելու հատկություն, որը պայմանավորված է նրանց բյուրեղային ցանցի կազմվածքով: Միներալների Հ-ման հարթությունները և բյուրեղային ցանցի հարթությունները սովորաբար համընկնում են: Տարբերում են խիստ կատարյալ Հ.՝ բյուրեղները հեշտ են ճեղքվում (փայլարներ, քլորիտ և այլն), կատարյալ Հ.՝ բյուրեղները ճեղքվում են՝ առաջացնելով հարթ փայլուն մակերևույթներ (կալցիտ, ֆլուորիտ, դաշտային սպաթ), միջին Հ.՝ միներա-

լի բեկորների վրա, անհարթ մակերևույթներին համատեղ, պարզորոշ դիտվում են նաև հարթ փայլուն մակերևույթներ (օր.՝ պիրոքսեններ), ոչ կատարյալ  $\beta$ . (կամ  $\beta$ . բացակայում է)՝ միներալների հատիկները սահմանափակված են անկանոն մակերևույթներով, բացառությամբ բյուրեղի նիստերի (օր.՝ քվարց, պիրիտ): Մեկ բյուրեղում, նրա համաչափության և կառուցվածքի տիպին համապատասխան, կարող են արտահայտվել  $\beta$ -ման մի քանի տեսակներ:  $\beta$ -ից կախված է միներալի կոտրվածքի բնույթը:  $\beta$ . միներալների դիագնոստիկական կարևոր հատկանիշ է:

**C-223. СПЕЛЕОЛОГИЯ** (հուն. *spè laion* – քարայր, քարանձավ և *lógos* – ուսմունք) – **ՔԱՐԱՆԶԱՎԱԿԻՏՈՒԹՅՈՒՆ (ԱՆԶԱՎԱԿԻՏՈՒԹՅՈՒՆ), SPELEOLOGY**, ֆիզ. աշխ. բաժին, զբաղվում է քարանձավների ուսումնասիրությամբ՝ ձևաբանության, ծագման, տարածման, միկրոկլիմայի, ջրաբանության, օրգանական աշխարհի, քարի դարի նյութական մշակույթի մնացորդների, ժամանակակից օգտագործման և այլն:

**C-224. СПЕССАРТИН** (Շպեսարտ, Spessart սարահարթի անվամբ, ԳՖՅ) – **ՍՊԵՍԱՐՏԻՆ, SPESSARTITE, SPESSARTINE**, միներալ, մանգանաալյումինային նոնաքար,  $Mn_3Al_2[SiO_4]_3$ : Բյուրեղագիտական համակարգը խորանարդային է: Առաջացնում է նոնաքարերի համար տիպական բյուրեղներ և հատիկավոր ագրեգատներ: Գույնը, կախված խառնուրդներից, փոխվում է բաց վարդագույնից մինչև գորշ կարմիր: Կարծրությունը՝ 7-7.5: Ս. առավել հաճախ հանդիպում է գրանիտային պեգմատիտներում, փոխակերպային ապարներում և սկամներում:

**C-225. СПИЛИТ** (հուն. *spilos* – բիծ) – **ՍՊԻԼԻՏ, SPILITE**, հնատիպ բազալտային ապար, որի մեջ դաշտային սպաթը ներկայացված է երկրորդային ալբիտով: Ս-ի կառուցվածքը միկրոլիթային է, հազվադեպ՝ դիաբազային, կազմված է պլագիոկլազի նեղ երկար միկրոլիթներից, որոնց արանքները լցված են քլորիտով և հանքային միներալներով: Ս-ի ծագումը վիճելի է, առաջանում է ստորջրյա ժայթքումների հետևանքով: Ս-ները կերատոֆիրների հետ մտնում են երկրակեղևի շարժում գոտիների զարգացման երկրասինկլինալային փուլի սպիլիտ-կերատոֆիրային ֆորմացիաների կազմի մեջ:

**C-226. СПОДУМЕН** (հուն. *spodúmenos* – փոխարկված մոխրի, *spodós* – մոխր, հալվելիս Ս. վերածվում է մոխրագույն փոշու) – **ՍՊՈՂՈՒՄԵՆ, SPODUMENE**, պիրոքսենների խմբի միներալ, լիթումի ու ալյումինի սիլիկատ,  $LiAl[Si_2O_6]$ : Բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է: Առաջացնում է սպիտակ, մոխրագույն, երբեմն թափանցիկ վարդագույն (կունցիտ) կամ կանաչ (գիդենիտ) հատվածակողմային բյուրեղներ, հատիկավոր ագրեգատներ: Կարծրությունը՝ 6.5-7: Գոյանում է գրանիտային պեգմատիտներում, ապարակազմիչ միներալ է: Լիթումի գլխավոր հանքաքարն է: Կունցիտը և գիդենիտը թանկարժեք քարեր են:

**C-227. СПОНГИОЛИТЫ, СПОНГОЛИТЫ** (հուն. *spongiá*, ինչպես նաև՝ *spóngos* – սպունգ և *lithos* – քար) – **ՍՊՈՆԳԻՈԼԻԹ, ՍՊՈՆԳՈԼԻԹ (ՍՊՆԳԱՔԱՐ), SPONGIOLITES, SPONGOLITES**, կանաչավուն կամ բաց մոխրագույն սիլիցիումային ապարներ, փուխր կամ ամուր, կազմված են ավելի քան 50 % սիլիցիումային սպունգների սպիկուլներից (սպոնգիումից) և ծիածանաքարային (օպալային) հիմնական զանգվածից, երբեմն, մասամբ կամ ամբողջովին, անցնում են կրիստոբալիտի, քաղկեդոնի կամ քվարցի: Կուտակվել են ծովերի փոքր և միջին խորություններում:

**C-228. СПРЕДИНГ** (անգլ. *spreading*, *spread*-ից – ձգելով լայնացնել, լայնացնել) – **ՍՊՐԵԴԻՆԳ (ՍԱԼՍԱՐԱՇԱՐԺ), SPREADING**, քարոլորտի կոշտ սալերի տարաշարժման ենթադրական գործընթաց՝ միջինօվկիանոսային լեռնաշղթաների ռիֆտերի մարզում, որն ուղեկցվում է օվկիանոսային տիպի երկրակեղևի մշտական

վերարտադրությամբ՝ ի հաշիվ վերին միջնապատյանի վերընթաց կոնվեկցիոն հոսքերով գերտաքացած նյութի բարձրացման, տե՛ս նաև՝ *Тектоника плит*:

**C-229. СРЕДИННО-ОКЕАНИЧЕСКИЕ ХРЕБТЫ – ՄԻՋԻՆՕՎԿԻԱՆՈՍԱՅԻՆ ԼԵՆՆԱՇՂԹԱՆԵՐ, MID-OCEANIC RIDGES,** օվկիանոսի մահճի ստորջրյա բարձրացումներ՝ քարոլորտի սալերի ակտիվ տարաշարժման (սպրեդինգի) և օվկիանոսային տիպի երկրակեևի վերարտադրության զոնաներում: Հայտնի են բոլոր օվկիանոսներում, առաջացնում են Մ. Լ-ի համաշխարհային համակարգ, հայտնաբերվել են 20-րդ դարի 50-ական թվականների վերջում: Մ. Լ-ի ընդհանուր երկարությունը 60 հազ. կմ է: Մ. Լ-ի համակարգը Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում հետանտվում է Լապտևների ծովի շելֆից մինչև Շպիցբերգեցի շրջանը, նրա շարունակությունն է Միջինատլանտյան լեռնաշղթան՝ համանուն օվկիանոսում: Դեպի արևմուտք նրանից առանձնանում է Ամերիկաանտարկտիկական լեռնաշղթան, որը Հնդկական օվկիանոսում փոխարինվում է Հնդկաօվկիանոսային լեռնաշղթայով: Վերջինն այդ օվկիանոսի կենտրոնում միակցվում է միջօրեականի ուղղության Արաբահնդկական և Հր-Արլ. Ավստրաանտարկտիկական լեռնաշղթաների հետ: Վերջինի շարունակությունը Հարավխաղաղօվկիանոսյան բարձրացումն է, որն իր հերթին փոխարինվում է Արևելախաղաղօվկիանոսյան բարձրացումով, որը դեպի հյուսիս անցնում է Կալիֆոռնիական նեղուցը և հատվում է Սան-Անդրիասի բեկվածքով: Դեպի հյուսիս նմանատիպ ստորջրյա բարձրացում նորից հանդես է գալիս Կանադայի մերձափին մոտ: Մ. Լ-ի լայնությունը մի քանի հարյուր կմ-ից մինչև 1000-1500 կմ է, բարձրությունը՝ օվկիանոսի հատակից մինչև 3-4 կմ, երբեմն դուրս են ելնում հրաբխային ծազման կղզիների տեսքով: Լեռնաշղթաների կատարային զոնան (լայնությունը մինչև 100 կմ) աչքի է ընկնում խիստ մասնատված ռելիեֆով, մանրաբլուկային կազմությամբ և ամենաերիտասարդ նստվածքներով՝ միայն իջեցված բլուկներում: Լեռնաշղթաների առանցքի երկարությամբ ձգվում է ռիֆտային հովիտ՝ 25-30 կմ լայնությամբ: Հովտի հատակի ճեղքում գտնվում են երիտասարդ հրաբխային կոներ: Նստվածքներն այստեղ բացակայում են: Լեռնաշղթաների առանցքների հետ կապված են ոչ խոր և համեմատաբար թույլ երկրաշարժեր: Լեռնաշղթաների լանջերը բնորոշվում են ավելի հանգիստ ռելիեֆով, նրանք ծածկված են նստվածքների համատարած շերտով, որի հաստությունը դեպի եզրերը մեծանում է, իսկ կտրվածքները դառնում են ավելի լրիվ՝ ի հաշիվ ավելի հին հորիզոնների: Մ. Լ. հատված են բազմաթիվ լայնական բեկվածքներով՝ տրանսֆորմ բեկվածքներով, որոնցով լեռնաշղթաների առանցքները տեղաշարժված են (հատակագծում) մինչև մի քանի հարյուր կմ:

**C-230. СРЕДИННЫЙ МАССИВ – ՄԻՋԱԴԻՐ ԶԱՆԳՎԱԾ, MEDIUM MASSIF,** մայրցամաքային կեղևի համեմատաբար կայուն մեծաբեկոր, որը ավելի հին է (սովորաբար մինչքեմբրիի հասակի), քան այն շարժուն երկրասփինկլինալային գոտու կեղևը, որի ներսում գետեղված է այդ մեծաբեկորը: Զանգվածի ծածկոցը երկրասփինկլինալային գոտու նստվածքահրաբխածին լցույթի հետ հասակակից է, բայց տարբերվում է փոքրացված հաստություններով, ծանծաղուտային ու ցամաքային նստվածքների գերակայությամբ և շերտերի տեղախախտման ցածր աստիճանով: Ծալքերը և վրաշարժերը սովորաբար կարծես թե շրջահոսում են Մ. գ-ները: Լեռնագոյացման փուլերում, հարակից ծալքավոր լեռնային կառույցների ձևավորման ընթացքում, Մ. գ-ները մասամբ կամ ամբողջովին ընդգրկվում են իջեցումներով (մոլասային ստվարաշերտերի կուտակմամբ) և ներառվում են միջլեռնային կառույցներում (օր.՝ Ռիոնի ու Քոնի իջվածքները Այսրկովկասյան զանգվածում):

Չնաշխհ. և հնատեկտ. առումով Մ. գ-ները համապատասխանում են մանրամայր-ցամաքներին (միկրոկոնտինենտներին)՝ հին մայր ցամաքների բեկորներին, որոնք պոկվել են շարժում երկրասինկլինալային գոտիների ներդրման ու դրանց օվկիանոսային մահճի լայնացման ժամանակ:

**C-231. СРЕДНИЕ ГОРНЫЕ ПОРОДЫ – ՄԻՋԻՆ (ՄԻՋՆԱԿԱԶՍ) ԱՊԱՐՆԵՐ, INTER-MEDIATE ROCKS**, մագմայական ապարներ, որոնք պարունակում են  $64 \pm 2$  % սիլիկահող: Ըստ քիմ. և միներալային կազմի՝ ստորաբաժանվում են երկու ճյուղի՝ բնականոն և ենթաակալիական (կալիումային): Բնականոն շարքին են պատկանում դիորիտները և նրանց արտավիժած նմանակները՝ անդեզիտաբազալտները, ինչպես նաև քվարցային դիորիտները և նրանց արտավիժական համարժեքները (ըստ քիմ. կազմի)՝ անդեզիտները: Ենթաակալիական շարքին պատկանում են կրաակալիական սիենիտները և նրանց արտավիժական նմանակները՝ տրախիտները, ինչպես նաև դիորիտներից դեպի սիենիտները անցողիկ ապարները՝ մոնցոդիորիտներն ու մոնցոնիտները (սիենիտադիորիտները) և անդեզիտներից (անդեզիտաբազալտներից) դեպի տրախիտները՝ լատիտները: Հաճախ առանձնանցնում են նաև Մ. ա-ի երրորդ՝ ալկալիական ճյուղը (ալկալիական սիենիտներ և ալկալիական տրախիտներ):

**C-232. СРЕДНИЙ КАМЕННЫЙ ВЕК – ՄԻՋԻՆ ՔԱՐԻ ԴԱՐ**, նույնն է՝ Мезолит:

**C-233. СТАВРОЛИТ** (հուն. staurós – խաչ և lithos – քար, ըստ կրկնակման սերտաճքվածքների խաչաձև տեսքի) – **ՍՍԱՎՐՈԼԻԹ, STAUROLITE**, միներալ սիլիկատների դասից, քիմ. կազմը՝  $Fe^{2+}Al_2[SiO_4]_2O_2(OH)_2$ , բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է, սովորաբար ներկայացված է լավ ձևավորված խաչաձև կրկնաբյուրեղային սերտաճվածքներով, հանդիպում են նաև հատվածակողմային բլոկ-բյուրեղներ, հատիկներ և ագրեգատներ: Գունավորումը՝ մուգ գորշից մինչև սև: Կարծրությունը՝ 7.5: Փոխակերպային ապարներին բնորոշ միներալ է, տարածված է առավելապես ռեզիոնալ փոխակերպության ամֆիբոլիթային ֆացիայի բյուրեղային թերթաքարերում: Թափանցիկ տարատեսակները հազվագյուտ ոսկերչական քար են:

**C-234. СТАЛАГМИТ** (հուն. stalagma – կաթիլ) – **ՊՏԿԱՔԱՐ (ՍՍԱԼԱԿՄԻՏ), STALAGMITE**, կոների, սյուների տեսքով մակահոսուկ-կաթիլային կրային գոյացություններ, որոնք աճում են քարանձավների հատակից դեպի վեր՝ շթաքարերին ընդառաջ և հաճախ միակցվելով դրանց հետ՝ քարանձավներում առաջացնում են սյուներ (ստալանգմատներ):

**C-235. СТАЛАКТИТ** (հուն. stalaktós – կաթիլներով մակահոսված, կաթիլներից գոյացած) – **ՇԹԱՔԱՐ (ՍՍԱԼԱԿՄԻՏ), STALACTITE**, սառցալեզվակների, փուխր կրային խողովակիկների, ծոպերի և այլնի տեսքով կրային մակահոսուկ-կաթիլային գոյացություններ, որոնք աճում են քարանձավների առաստաղից: Աղային ու գիպսային քարանձավներում նույնպես երբեմն առաջանում են Շ-եր:

**C-236. СТАЛАКТИТ ЛАВОВЫЙ – ԼԱՎԱՅԻՆ ՇԹԱՔԱՐ (ՍՍԱԼԱԿՄԻՏ), LAVA STALACTITE**, դատարկ լավային թունելի առաստաղից կախված լավային հոսակուտակ:

**C-237. СТАННИН** (լատ. stannum – անագ), **ՕԼՈՎՅԱՆՆԱԿ ԿՈԼՉԵԴԱՆ, КОЛОКОЛЬНАЯ РУДА – ՍՍԱՆԻՆ, ԱՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՔԱՐ, ՉԱՆԳԻ ՀԱՆՔԱՔԱՐ, STANNITE, STANNINE, TIN PYRITE**, սուլֆիդների դասի խալկոպիրիտի խմբի միներալ,  $Cu_2[FeZn]SnS_4$ , բյուրեղագիտական համակարգը տետրագոնային է ( $420^\circ\text{C}$ -ից ցածր ջերմաստիճանում բյուրեղանալիս), ավելի բարձր ջերմաստիճանում առաջացնում է խորանարդային ձևափոխություն: Հանդիպում է հատիկավոր

զանգվածների և երիզների (կասիտերիտի և խալկոպիրիտի հատիկների շուրջը) ձևով: Գույնը՝ պողպատի մոխրագույն: Կարծրությունը՝ 3-4.5: Փխրուն է, լավ էլեկտրահաղորդիչ: Առաջանում է ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվածքում, հազվադեպ՝ պեգմատիտներում և գրեյզեններում՝ վոլֆրամի, խալկոպիրիտի, կասիտերիտի, սֆալերիտի, խունացած հանքանյութերի և այլ միներալների հետ համատեղ: Անագի հանքանյութ է:

**C-238. СТВОРКА – ՓԵՂԿ, VALVE**, 1) որոշ անողնաշարավորների (ուստամանիներ, երկփեղկանի փափկամարմիններ, օստրակոդներ) խեցու մասերից մեկը (սովորաբար կեսը), 2) դիատոմային ջրիմուռների մոտ՝ սիլիցիումային գրահի մի մասը: Փ-երը խիստ բազմաձև են, հանդիսանում են համակարգային կարևոր հատկանիշներից մեկը:

**C-239. СТЕГОЗАВРЫ (Stegosaurus)** (հուն. stegō – ծածկոց, տանիք և sauros – մողես) – **ՍՏԵԳՈՉԱՎՐԵՐ, STEGOSAURS**, խոշոր (մինչև 6 մ) թռչնակոնքային դինոզավրեր: Գոյություն են ունեցել յուրայում և վաղ կավճում:

**C-240. СТЕГОЦЕФАЛЫ (Stegoccephali)** (հուն. stegō – ծածկոց, տանիք և kephalē – գլուխ) – **ՍՏԵԳՑԵՖԱԼՆԵՐ (ՏԱՆԻՔԱԳԼՈՒԽՆԵՐ, ԾԱԾԿԱԳԼՈՒԽՆԵՐ), STEGOCERPHALS**, ցամաքային երկկենցաղների մահացած խմբերի հավաքական անվանում: Գանգատուփը ծածկված է եղել հոծ մաշկային ոսկորներով: Գոյություն են ունեցել ուշ դևոնից մինչև վաղ յուրա:

**C-241. СТЕПЕНЬ МЕТАМОРФИЗМА – ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ, DEGREE OF METAMORPHISM**, փոխակերպության ընթացաշրջան (փուլ): Փ. ա. համադրվում է «փոխակերպության ֆացիա» տերմինի հետ: Տարբերում են ցածր, միջին և բարձր Փ. ա-ներ, որոնք համապատասխանում են փոխակերպության կանաչթերթաքարային, ամֆիբոլիթային և գրանուլիթային (և էկլոգիտային) ֆացիաներին:

**C-242. СТИБИТ – ՍՏԻԲԻՏ, տե՛ս АНТИМОНИТ:**

**C-243. СТОК ПОДЗЕМНЫЙ – ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՅՈՍՔ, SUBSURFACE RUNOFF, SUBSURFACE FLOW**, ապարների ջրի տեղաշարժ, որը ճնշումագուրկ հորիզոններում կատարվում է հիդրավլիկ թեքության (գրադիենտ), իսկ ճնշումային հորիզոններում՝ հիդրավլիկ ճնշման շնորհիվ:

**C-244. СТОЛБЧАТАЯ ОТДЕЛЬНОСТЬ – ՍՅՈՒՆԱՉԵՎ ԱՆՋԱՏՈՒԹՅՈՒՆ, COLUMNAR JOINTING, PRISMATIC JOINTING, BASALTIC JOINTING**, բազալտային լավաներում և այլ ներժայթքային ու արտաժայթքային ապարներում գուլգահեռ (հաճախ հնգանկյուն կամ վեցանկյուն) հատվածակողմային սյուներ: Առաջանում են լավայի սառչման ընթացքում՝ սեղմման հետևանքով:

**C-245. СТОЛОВЫЕ ГОРЫ – ՍԵՂԱՆԱՍԱՐԵՐ (ՍԵՂԱՆԱՉԵՎ ՍԱՐԵՐ), TABLE MOUNTAINS**, մեկուսացված բարձունքներ, բնորոշվում են գառիթափ լանջերով և հարթ գագաթային մակերևույթներով, որոնք գրահապատված են լեռկացման նկատմամբ կայուն նստվածքային կամ արտաժայթքային ապարների շերտով, ինչպես նաև լատերիտային կեղևով (արևադարձային տափաստանային զոնաներում): Առաջանում են շերտային հարթավայրերի ողողամաշմամբ մասնատման կամ բեկվածքներով առանձին բլուկների տեղափոխման դեպքում:

**C-246. СТОЧНЫЕ ВОДЫ – ՅՈՍՔԱՅԻՆ ՋՐԵՐ (ՅՈՍՔԱՋՐԵՐ), SEWAGE WATER**, մարդու կենցաղային և արտադրական գործունեության հետևանքով աղտոտված ջրեր, որոնք ենթակա են հեռացման: Ըստ ծագման, կազմի և աղտոտման քանակական բնութագրի՝ Յ. ջ. ստորաբաժանվում են երեք հիմնական կարգերի՝ արտադրական, մթնոլորտային և կենցաղային:

**C-247. СТРАТИГРАФИЧЕСКАЯ ГРАНИЦА – ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՅԱՆ, STRATIGRAPHICAL BOUNDARY**, 1) շերտագրական կտրվածքում երկու հարակից ներդաշնակ տեղադրված շերտերի բաժանման գիծ կամ մակերևույթ, անկախ դրանց միջև շերտագրական ընդմիջման առկայության կամ բացակայության, 2) երկու հարակից շերտագրական ստորաբաժանումների սահման:

**C-248. СТРАТИГРАФИЧЕСКАЯ ЗОНА, ХРОНОЗОНА – ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ԶՈՆԱ, ԲՐՈՆՈԶՈՆԱ, STRATIGRAPHICAL ZONE**, ընդհանուր շերտագրական սանդղակի տաքսոնոմիական միավոր՝ հարկին ստորադաս: Ներառում է այն շերտերը, որոնք համապատասխանում են բրածո օրգանիզմներին բնորոշ համալիրին: Զոնաների անվանումը տրվում է նրանց բնորոշ քարացուկների սեռի կամ տեսակի անունով:

**C-249. СТРАТИГРАФИЧЕСКАЯ КОРРЕЛЯЦИЯ, տե՛ս Корреляция стратиграфическая:**

**C-250. СТРАТИГРАФИЧЕСКАЯ ШКАЛА ОБЩАЯ (МЕЖДУНАРОДНАЯ) – ԸՆԴՀԱՆՈՒՐ (ՄԻՋԱԶԳԱՅԻՆ) ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՍԱՆԴՂԱԿ, GENERAL STRATIGRAPHIC SCALE**, ընդհանուր շերտագրական ստորաբաժանումների (իրենց լրիվ ծավալով, առանց բացթողումների ու վրածածկումների) համախմբություն, որտեղ այդ ստորաբաժանումները դասավորված են շերտագրական հաջորդականության և տաքսոնոմիական ենթակայության կարգով: Ը. շ. ս-ի տաքսոնոմիական միավորներին համապատասխանում են երկրաժամանակագրական սանդղակի միավորները:

Շերտագրական ստորաբաժանումներ	Երկրաժամանակագրական ստորաբաժանումներ
Էոնոտենա	Էոն
Էրատենա	Դարաշրջան
Համակարգ	Ժամանակաշրջան
Բաժին	Դարակարգ
Հարկ	Դար
Զոնա	Փուլ
Հատված	–
Օղակ	Պորա
Աստիճան	Ջերմա (Կրիո) քրոն

Հատված, օղակ և աստիճան ստորաբաժանումներն օգտագործվում են չորրորդական համակարգի մասնաբաժանների համար: Ը. շ. ս. ձևավորվել է երկրբ. համակարգերի առանձնացումից հետո և կազմվել է Եվրոպայի կտրվածքների և նրանցում ներփակված օրգանական մնացորդների ուսումնասիրության ընթացքում (տե՛ս աղյուսակը): Ը. շ. ս-ի առաջին նախագիծը կազմել և ներկայացրել է Միջազգային երկրաբանական կոնգրեսի VIII մատաշրջանին (1900) շվեյց. երկրաբան Է. Ռենեյեյն:

**Ֆաներոզոյի ընդհանուր շերտագրական սանդղակ**

Էրատեմա	Համակարգը, տարին և առանձնացման վայրը	Ցուցիչը	Բաժինների թիվը	Հարկերի թիվը
Կայնոզոյան	Չորրորդական, 1795, Ֆրանս.	Q	բաժանվում է օղակների	
	Նեոգեն, 1795, Իտալ.	N	2	12
	Պալեոգեն, 1872, Իտալ.	P	3	10
Մեզոզոյան	Կավիճ, 1822, Ֆրանս.	K	2	12
	Յուրա, 1795, Շվեյց.	J	3	11
	Տրիաս, 1834, Կենտ. Եվր.	T	3	7
Պալեոզոյան	Պերմ, 1841, Ռուս.	P	2	9
	Քարածխային, 1822, Անգլ.	C	3	7
	Ղևոն, 1839, Անգլ.	D	3	7
	Սիլուր, 1835, Անգլ.	S	2	4
	Օրդովիկ, 1879, Անգլ.	O	3	6
	Քեմբրի, 1835, Անգլ.	Є	3	10

Պալեոզոյան, մեզոզոյան և կայնոզոյան էրատեմաները միավորվում են ֆաներոզոյան էոնոտեմայի մեջ: Ավելի հին նստվածքները պատկանում են կրիպտոզոյան էոնոտեմային (հաշվի առնելով մինչքեմբրիի երկարատևությունը, նպատակահարմար է առանձնացնել 2 կամ 3 էոնոտեմաներ), որը ստորաբաժանվում է արխեյի (ստորին, վերին) ու պրոտերոզոյի (ստորին, միջին, վերին, նախկին ԽՍՀՄ-ում՝ ստորին, վերին): Վերին պրոտերոզոյում անջատված են ռիֆեյը (3 ստորաբաժանումներով) և վենդը:

**C-251. СТРАТИГРАФИЧЕСКИЙ КОДЕКС – ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ԿՈՂԵՔՍ (ՕՐԵՆՍԳԻՐՔ), STRATIGRAPHIC CODE**, շերտագրական դասակարգման, տերմինաբանության, ընդհանուր դրույթների և շերտագրական անվանակարգության հավաքածու:

**C-252. СТРАТИГРАФИЧЕСКИЙ КОМПЛЕКС – ՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ՀԱՍԱԼԻՐ, STRATIGRAPHICAL COMPLEX**, տեղական շերտագրական ստորաբաժանումների ամե-

նախոշոր տաքսոնոմիական միավոր, որը միավորում է երկու կամ մի քանի երկր. սերիաներ: Այն սովորաբար խիստ հզոր և բարդ կազմի երկր. գոյացությունների համախմբություն է, որը համապատասխանում է տվյալ տարածքի երկր. զարգացման խոշոր տեկտ. փուլին: Շ. հ-ները հաճախ օգտագործվում են մինչքենթրի-ի շերտագրությունում:

**C-253. СТРАТИГРАФИЧЕСКИЙ ПЕРЕРЫВ – ՇԵՐՏԱԳՐԱՎԱՆ ԸՆԴՄԻՋՈՒՄ, STRATIGRAPHICAL HIATUS**, կտրվածքում որևէ շերտի բացակայություն՝ կապված նստվածքների կուտակման ժամանակ ընդմիջման կամ ավելի վաղ կուտակված նստվածքների ողողաքայքայման հետ: Մի շարք դեպքերում կտրվածքում ապարների դուրս մնալը չի ուղեկցվում նկատելի ապարաքայքայմամբ կամ անկյունային աններդաշնակությամբ (թաքնված ընդմիջում):

**C-254. СТРАТИГРАФИЧЕСКИЙ РАЗРЕЗ, СТРАТИГРАФИЧЕСКАЯ КОЛОНКА – ՇԵՐՏԱԳՐԱՎԱՆ ԿՏՐՎԱԾՔ, ՇԵՐՏԱԳՐԱՎԱՆ ՍՅՈՒՆԱԿ, STRATIGRAPHICAL SECTION, COLUMNAR SECTION**, տվյալ շրջանում կամ տվյալ կոնկրետ մերկացումում տարածված ապարների ստվարաշերտերի տեղադրման հաջորդականության և առաջնային շերտագրական փոխհարաբերությունների ուղղաձիգ կտրվածքը կամ գրաֆիկական պատկերումը ուղղաձիգ հարթության վրա: Ապարների հաստությունը տրվում է մասշտաբով, իսկ քարաբանական կազմը՝ ստանդարտային կամ պայմանական նշաններով, որոնք սովորաբար ուղեկցվում են կարճ բացատրություններով: Նշվում է նաև ապարների հասակը, նրանց բնութագիրը, հնէաբանական մնացորդների առկայությունը:

**C-255. СТРАТИГРАФИЧЕСКОЕ НЕСОГЛАСИЕ**, տե՛ս Несогласие стратиграфическое:

**C-256. СТРАТИГРАФИЯ** (լատ. stratum – փռվածք, շերտ և հուն. gráphō – գրում են, նկարագրում են) – **ՇԵՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ, STRATIGRAPHY**, երկրաբանության բաժին, որն ուսումնասիրում է երկրակեղևի կտրվածքում ապարների համալիրների ձևավորման հաջորդականությունը և նրանց առաջնային փոխհարաբերությունները տարածության մեջ: Շ. ապահովում է երկրաբանության մյուս բոլոր ուղղությունների պատմականությունը, երկրաժամանակագրական հիմք է ստեղծում առանձին երկրաշրջանների և երկրակեղևի երկր. գործընթացների, երկր. օբյեկտների զարգացման ուսումնասիրման, ինչպես նաև երկր. բովանդակության քարտեզների կազմման համար: Շ. սերտորեն կապված է պատմական երկրաբանության, հնէաբանության, երկրաժամանակագրության, քարաբանության, նստվածքային ծագման օգտ. հնժ-ների երկրաբանության հետ: Շ-յան օբյեկտները բնականոն շերտավորվող նստվածքային, հրաբխածին ու փոխակերպային ապարներից կազմված երկր. մարմիններն են: Շերտագրական ստորաբաժանումը (ստրատոնը) այն ապարների համախմբությունն է, որոնք կազմում են որոշակի միասնություն և ըստ հատկանիշների գատված են, որը հնարավորություն է տալիս շերտագրական կտրվածքում բացահայտելու նրանց ձևավորման հաջորդականությունը և դիրքը: Շ-յան հիմնական խնդիրներն են՝ կտրվածքների մասնատումը և տեղական շերտագրական ստորաբաժանումների (համալիր, սերիա, շերտախումբ, շերտատուփ) առանձնացումը, շերտագրական ստորաբաժանումների համահարաբերակցությունը և շերտագրական սխեմայի կազմումը, ընդհանուր շերտագրական սխեմայի կազմումը: Շ. օգտագործում է հնէաբանական, քարաբանական (այդ թվում ռիթմաշերտագրական), երկրաժամանակագրական, կլիմայաշերտագրական, երկրաքիմիական, երկրաֆիզիկական (այդ թվում մագնիսա- և



երկրաշարժաշերտագրական) մեթոդները: Տարբերում են ընդհանուր շերտագրություն, որը մշակում է գիտության սկզբունքները, դասակարգման, տերմինաբանության և անվանակարգության համահարաբերակցության ու մեթոդաբանության պրոբլեմները, ինչպես նաև ընդհանուր շերտագրական սանդղակը և երկրաշրջանային (ռեգիոնալ) շերտագրությունը, որոնք ապահովում են երկրբ. հանույթի ու քարտեզագրման հիմքերը, որոնողական ու հետախուզական աշխատանքները:

**C-257. СТРАТИФИЦИРОВАННОЕ МЕСТОРОЖДЕНИЕ – ՇԵՐՏԱԴԱՐՍՎԱԾՔԱՅԻՆ (ՇԵՐՏՎՈՐՎԱԾ) ՀԱՆՔՎԱՅՐ, STRATIFIED DEPOSIT**, միներալային կուտակումներ, որոնք գետեղված են ներփակող շերտատված նստվածքային կամ մագմայական ապարների տեղադրման հետ ներդաշնակ, կամ հարում են որոշակի շերտագրական հորիզոններին:

**C-258. СТРАТИФОРМНЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ** (լատ. stratum – փռվածք, շերտ և forma – տեսք, ձև) – **ՇԵՐՏԱՉԵՎ ՀԱՆՔՎԱՅՐԵՐ, STRATIFORM DEPOSITS**, օգտ. հնժմերի հանքակուտակներ, որոնք ձևավորում են հանքային մարմինների խմբեր՝ հրաբխածին-նստվածքային և նստվածքային շերտավոր ստվարաշերտերի մեկ կամ մի քանի շերտագրական հորիզոններում: Առավել բնորոշ ներկայացուցիչները կարբոնատային ստվարաշերտերում կապար-ցինկի և ավազաթերթաքարային ապարների ստվարաշերտերում պղնձի հանքանյութերի հնքվ-երն են: Շ. հ-ում գերակշռում են ներփակող ապարների հետ ներդաշնակ շերտային մարմինները: Դրանք աչքի են ընկնում հանքաբեր ապարների մեկ կամ մի քանի շերտերում հանքանյութերի պարզ միներալային կազմով, պղնձի, ցինկի, կապարի սուլֆիդների որոշակի ներփակվածքայնությամբ: Շ. հ. սովորաբար ունեն մեծ չափեր և լայն մակերեսային տարածում՝ ձևավորելով լայնարձակ հանքային շրջաններ և պրովինցիաներ:

**C-259. СТРАТОВУЛКАН** (լատ. stratum – շերտ) – **ՇԵՐՏԱՅՐԱՔՈՒՄ (ՍՏՐԱՏՈՅՐԱՔՈՒՄ), STRATOVOLCANO, STRATIFIED VOLCANO**, հրաբուխ, որի կոնը բաղկացած է լավայի պնդացած հոսքերի և լավայի բեկորների (ցեմենտացված և տուֆերի փոխարկված մեծաբեկորներ, ռումբեր, ընկուզիկներ և այլն) հերթագայումից, հոմ.՝ խառնակազմ հրաբուխ:

**C-260. СТРАТОИЗОГИПСЫ** (լատ. stratum – շերտ, հուն. isos – հավասար և hýpos – բարձրություն) – **ՍՏՐԱՏՈՒՉՈՅԻՊՍԵՐ, STRATOISOHYPSES**, երկրբ. մարմինների (շերտեր, ներժայթքվածքներ և այլն) բացարձակ կամ հարաբերական նիշերի հավասարագծեր:

**C-261. СТРАТОСФЕРА** (լատ. stratum – շերտ և հուն. sprháira – գունդ) – **ՎԵՐՆՈՒՆՈՐՏ (ՍՏՐԱՏՈՍՖԵՐԱ), STRATOSPHERE**, մթնոլորտի շերտ՝ ներքնոլորտի (տրոպոսֆերայի) ու միջնոլորտի (մեզոսֆերայի) միջև (8-16-ից մինչև 45-55 կմ բարձրություններում), ընդգրկում է մթնոլորտի զանգվածի մոտ 20 %: Օդի զազային կազմը նման է ներքնոլորտին, բայց Վ-ում պարունակված են ավելի քիչ ջրային գոլորշիներ և ավելի շատ օզոն:

**C-262. СТРАТОТИП – ՇԵՐՏԱՏԻՊ (ՇԵՐՏԱՏԻՊԱՐ), STRATOTYPE**, որևէ շերտագրական միավորի (հարկի, հորիզոնի կամ տեղական ստորաբաժանման՝ շերտախմբի և այլն) նստվածքների կոնկրետ ներկացման կամ մի քանի մոտիկ գետեղված մերկացումների կտրվածք, որը այդ ստորաբաժանումը առաջին անգամ առանձնացնող հետազոտողը նշում և նկարագրում է որպես նրա տիպային կտրվածք: Հանդիսանում է ստուգանմուշ այլ շրջանների երկրբ. համապատասխան հասակի նստվածքների հետագա համեմատման համար: Քանի դեռ Շ. գոյություն ունի և ենթակա է ուսումնասիրման, չի կարող փոխարինվել այլ կտրվածքով: Շ.

պետք է գտնվի այն տեղանքում, որից ստորաբաժանումը ստացել է իր աշխ. անվանումը: Շ. պետք է աչքի ընկնի առավել լրիվությամբ, շերտագրական սահմանների ու դիրքի որոշակիությամբ: Նույնն է՝ շերտատիպ կտրվածք:

**C-263. СТРЕКАЮЩИЕ** (Cindaria) – **ԽԱՅՅՈՂՆԵՐ**, նույնն է՝ Кишечнополостные:

**C-264. СТРОМАТОЛИТЫ** (հուն. strōma, սեռ. հ. strōmatos – փռում, տակը փռելը և lithos – քար) – **ՍՏՐՈՍԱՏՈՒԹՆԵՐ, STROMATOLITHES**, ջրավազանների հատակում կարբոնատային կառույցներ (բիոհերմեր), որոնք ունեն ուռուցիկ կամ անհարթ մակերևույթ և ներքին բարդ շերտավորություն: Առաջանում են ջրիմուռների (կապտականաչ և այլն) կենսագործունեության հետևանքով՝ ծանծաղուտային պայմաններում: Հայտնի են արխեյից, բայց հատկապես հաճախ հանդիպում են վերին պրոտերոզոյում և ստորին պալեոզոյում: Օգտագործվում են կենսաշերտագրական ստորաբաժանման համար:

**C-265. СТРОНЦИЙ** (Strontium), Sr – **ՍՏՐՈՆՑԻՈՒՄ, STRONTIUM**, պարբերական համակարգի II խմբի քիմիական տարր, հողալկալիական մետաղ: Երկրակեղևում միջին պարունակությունը՝  $3.4 \cdot 10^{-2}$  % (ըստ զանգվածի): Հայտնի են U-ի մոտ 30 միներալներ, դրանցից կարևոր են ցելեստինը և ստրոնցիանիտը:

**C-266. СТРУКТУРА – ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, TEXTURE, STRUCTURE, 1)** Սազմայական ու փոխակերպային (մետամորֆային) ապարների համար այն հատկանիշների համախմբությունը, որոնք պայմանավորված են բյուրեղայնության աստիճանով, բյուրեղների բացարձակ և հարաբերական չափերով ու ձևով, նրանց՝ միմյանց և ապակու հետ զուգակցման եղանակով, ինչպես նաև առանձին միներալային հատիկների և դրանց ագրեգատների արտաքին առանձնահատկություններով: Կ. հանդիսանում է ապարների դիագնոստիկական և դասակարգման կարևորագույն հատկանիշ (տե՛ս նաև Структура магматических пород, Структура метаморфических пород): Նստվածքային ապարների Կ-ները արտացոլում են նստվածքների կուտակման պայմանները (համանստվածքակուտակումային) և նրանց հետագա փոխարկումները (երկրորդային), տե՛ս նաև՝ Структура осадочных пород:

2) Տեկտոնիկայում ապարների տեղադրման տարածական ձև: «Տեկտոնական կառուցվածք» տերմինն ունի լայն կիրառություն: Օգտագործվում է Երկրի կառուցվածքի համար ամբողջովին, ինչպես նաև նրա առանձին մարզերի, շրջանների և ոչ մեծ տեղամասերի համար: Հաճախ Կ-ներ են կոչվում ծալքերի տարբեր տեսակները, բարձրացումները, գմբեթները և ապարների տարրական տեղադրման այլ ձևերը: Նավթային երկրաբանությունում «Կառուցվածք» տերմինի տակ հասկացվում են բարձրացված տեկտ. ձևերը (կամարածալքերը, կարճակամարածալքերը, դիապիրային ծալքերը, գմբեթները, կամարները և այլն), որոնք բարենպաստ են նավթի ու գազի կուտակումների ձևավորման համար, տե՛ս Структуры тектонические:

**C-267. СТРУКТУРА АГЛОМЕРАТОВАЯ – ՇԵՂՋԱՔԱՐԱՅԻՆ (ԱՎՈՍԵՐԱՏԱՅԻՆ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, AGGLOMERATE TEXTURE**, հրաբեկորային ապարների բեկորային կառուցվածքի տարատեսակ, որը կազմված է խոշոր բեկորներից՝ հրաբխային ռումբերից, ընկուզիկներից և մեծաբեկորներից:

**C-268. СТРУКТУРА ВИТРОКЛАСТИЧЕСКАЯ** (լատ. vitrum – ապակի, հուն. klastós – փշրված, ջարդված) – **ՎԻՏՐՈՎԿԼԱՍՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, VITROCLASTIC TEXTURE**, բեկորային կառուցվածքի տարատեսակ, որը յուրահատուկ է հրաբխային տուֆերին: Տերմինը օգտագործվում է երկակի նշանակությամբ՝ 1) որպես մոխրային կառուցվածքի հոմ., 2) նշելու այն ապարների կառուցվածքը, որոնք կազմված են առավելապես հրաբխային ապարների բեկորներից՝ անկախ նրանց ձևից և չափերից:

**C-269. СТРУКТУРА ГАББРОВАЯ – ԳԱԲՐՈՍԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, GABBRO TEX-**

**TURE**, խորքային հիմքային ապարների (գաբրո, գաբրոնորիտներ) հատիկային կառուցվածք, որը բնորոշվում է պլագիոկլազի և զուևավոր միներալների իզոմետրական (զուգաչափական) ձևերով, որոնք ունեն ինքնաձևության (իդիոմորֆության) թույլ և մոտավորապես միանման աստիճան:

**C-270. СТРУКТУРА ДОЛЕРИТОВАЯ – ԴՈԼԵՐԻՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, DOLETRIC**

**TEXTURE**, դիաբազային կառուցվածքի տարատեսակ, որի դեպքում պլագիոկլազի ինքնաձև (իդիոմորֆ) բյուրեղների յուրաքանչյուր միջակայք լցված է պիրոքսենի (հաճախ օլիվինի հետ) մի քանի շատ թե քիչ այլաձև (քսենոմորֆ) հատիկներով:

**C-271. СТРУКТУРА МАГМАТИЧЕСКИХ ПОРОД – ՄԱԳՄԱՅԱԿԱՆ ԱՊԱՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, MAGMATIC ROCK TEXTURE**

**TEXTURE**, ապարների բյուրեղայնության աստիճանի բնութագիր՝ կախված ապարները կազմող միներալային հատիկների չափերից և ձևից, միմյանց և հրաբխային ապակու հետ ունեցած փոխհարաբերությունից: Բյուրեղայնության աստիճանը աճում է հրաբխային ապարներից դեպի երակայինը (դայկայինը) և խորքայինը (ներժայթքայինը): Համապատասխանաբար հրաբխային ապարներին բնորոշ են ապակենման ոչ լիաբյուրեղային, լիաբյուրեղային, աֆիրային և պորֆիրային կառուցվածքները, այդ ապարների հիմնական զանգվածի կառուցվածքը վիտրոֆիրային (ապակենման), հիալոպիլիտային (անդեզիտային), պիլոտաքսիտային, տրախիտային, դոլերիտային, օֆիտային է և այլն: Երակային ապարները սովորաբար ունեն պորֆիրանման, նրբահատիկային և մանրահատիկային կառուցվածք՝ բազմաթիվ ձևաբանական տարատեսակներով (ապլիտային, լամպրոֆիրային և այլն): Խորքային ապարների համար բնորոշ են ակնհայտ բյուրեղային, մանրաբյուրեղային և միջնաբյուրեղային կառուցվածքները, որոնք ըստ միներալների փոխհարաբերության ստորաբաժանվում են հիպիդիոմորֆահատիկային (գրանիտներ, օֆիտային գաբրո, գաբրո), ալտրոմորֆահատիկային (օլիվինիտներ), սիդերոնիտային (հանքային գաբրոներ և պիրոքսենիտներ) և պանիդիոմորֆահատիկային (անորթոզիտներ, պիրոքսենիտներ):

**C-272. СТРУКТУРА МЕТАМОРФИЧЕСКИХ ПОРОД – ՓՈՆԱԿԵՐՊԱՅԻՆ (ՄԵՏԱՄՈՐՖԱՅԻՆ) ԱՊԱՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, METAMORPHIC ROCK TEXTURE**

**TEXTURE**, Փ. ա. կ-ները կոչվում են բյուրեղաբլաստային, պորֆիրաբլաստային, պորֆիրանմանաբլաստային, լեպիդաբլաստային (թերթաքարային), գրանալեպիդաբլաստային (գնեյսային), նենատաբլաստային, միկրոգրանաբլաստային (եղջերաքարային) և այլն: Հավասարահատիկ Փ. ա. կ-ները կոչվում են հոմեոբլաստային, իսկ անհավասարահատիկները՝ հետերոբլաստային: Փոխակերպային ապարների հատիկները ըստ ինքնաձևության (իդիոմորֆության) աստիճանի ստորաբաժանվում են իդիոբլաստների (ուներն սեփական երեսակում) և քսենոբլաստների (անկանոն ձևի): Թերթաքարային ու գնեյսային կառուցվածքները յուրահատուկ են ռեզիոնալ փոխակերպության ապարներին, իսկ եղջերաքարայինները՝ հպումային:

**C-273. СТРУКТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, SEDIMENTARY ROCK TEXTURE**

**TEXTURE**, Ն. ա. կ-ները արտացոլում են կուտակման պայմանները (համակուտակման կառուցվածքներ) և նրանց հետագա փոխարկումները (երկրորդային կառուցվածքներ): Ըստ հատիկների խոշորության տարբերում են նրբապելիտային (նրբակավային), պելիտային (կավային), խոշորապելիտային (տղմային), ալերիտապելիտային (ալերիտակավային), փսամիտային (ավազային), փսեֆիտային (կոպտաբեկորային), ազլոմերատային (շեղջաքարային) և այլ կառուցվածքներ: Բեկորների ձևը արտացոլում են կլաստիկ (բեկորային), խճային, բրեկչիային (փշրաքարային), կոպճային, կոպճաճալաքա-

րային, օղիթային, գնդակերպ և այլ կառուցվածքները: Նստվածքային ապարների բեկորների կազմն արտացոլում են մոխրային, տուֆային, տուֆիտային (հրաբխային նյութով), արկոզային (գրանիտների բեկորներով ու միներալներով), գրանուվակային (հիմքային ապարների բեկորներով), դետրիտային (օրգանածին բեկորներով), կծկավոր (կոշտավոր) և այլ կառուցվածքները: Նստվածքային ապարների երկրորդային կառուցվածքներին են վերագրվում գաղտնաբյուրեղային, բյուրեղային, թելավոր և այլ կառուցվածքները:

**C-274. СТРУКТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД АЛЕВРИТОВАЯ – ՆՍՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ԱԼԵՎՐԻՏԱՅԻՆ (ՓՈՇԵՆՄԱՆ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ALEURITIC TEXTURE OF SEDIMENTARY ROCKS**, մանրաբեկորային ապարների կառուցվածք, որը կազմված է 0.01-ից մինչև 0.1 մմ (կամ 0.005-ից մինչև 0.05 մմ) մեծության հատիկներից:

**C-275. СТРУКТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД БИОМОРФНАЯ – ՆՍՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ԿԵՆՍԱՉԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, BIOMORPHIC TEXTURE OF SEDIMENTARY ROCKS**, օրգանիզմների խեցիների և կմախքների (ամբողջական) մնացորդներով կառուցվածք: Դիտվում է այն կրաքարերի մոտ, որոնք ամբողջովին բաղկացած են օրգանիզմների որևէ տեսակի մնացորդներից:

**C-276. СТРУКТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД БОБОВАЯ – ՆՍՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ԲԱՎԼԱՅԱՉԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, PEA STRUCTURE OF SEDIMENTARY ROCKS**: Որոշ ապարների (օր.՝ բոբսիտների) կառուցվածք, որը կազմված է բակլայատեսք հատիկներից՝ ցեմենտացված կոլոիդային կամ բյուրեղային նյութերով:

**C-277. СТРУКТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД ВОЛОКНИСТАЯ – ՆՍՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ԹԵՆԱՎՈՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, FIBROUS STRUCTURE OF SEDIMENTARY ROCKS**, պայմանավորված է թելավոր կամ նրբածողիկավոր միներալային անհատներով, որոնք դասավորված են կողմնորոշված կամ անկանոն: Հանդիպում է գիպսերում, անհիդրիդներում, քաղկեդոններում և այլն:

**C-278. СТРУКТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД ГАЛЕЧНАЯ – ՆՍՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ՃԱԼԱՔԱՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, PEBBLE TEXTURE OF SEDIMENTARY ROCKS**, յուրահատուկ է ճալաքարուտներին և կոնգլոմերատներին, որոնք բնորոշվում են բեկորների մշակված ձևերով և դրանց 10-ից մինչև 100 մմ չափերով:

**C-279. СТРУКТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД ГРАВИЙНАЯ – ՆՍՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ԿՈՊՃԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, GRAVELLY TEXTURE OF SEDIMENTARY ROCKS**, բնորոշվում է բեկորների մշակված ձևով և դրանց 1-ից (կամ 2-ից) մինչև 10 մմ չափերով: Հատուկ է ինչպես փուխր կոպճային ապարներին, այնպես էլ դրանց ցեմենտացված տարատեսակներին՝ կոպճաքարերին: Առանձնացնում են մանրա – (1-2.5 մմ), միջնա – (2.5-5 մմ) և խշորակոպճային (5-10 մմ) կառուցվածքներ:

**C-280. СТРУКТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД ГРУБООБЛОМОЧНАЯ (ПСЕФИТОВАЯ) – ՆՍՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ԿՈՊՏԱՔԵՎՈՐԱՅԻՆ (ՓՍԵՖԻՏԱՅԻՆ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, PSEPHITIC TEXTURE OF SEDIMENTARY ROCKS**, բոլոր կոպտաբեկոր ապարների (փշրաքարեր, կոնգլոմերատներ, ճալաքարուտներ և այլն) կառուցվածքի ընդհանուր անվանում, բեկորների չափերը՝ 10 մմ-ից խոշոր:

**C-281. СТРУКТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД ДЕТРИТОВАЯ – ՆՍՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ԴԵՏՐԻՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, DETRITAL TEXTURE OF SEDIMENTARY ROCKS**, բնորոշ է այն ապարներին, որոնք կազմված են օրգանիզմների բեկորներից:

**C-282. СТРУКТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД ЗЕРНИСТАЯ – ՆՍՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ՀՍՏԻՎԱՎՈՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, GRANULAR TEXTURE OF SEDIMENTARY ROCKS**, բոլոր մանրաբեկորային ու հատիկավոր ապարների (փուխր և ցեմենտացված) կառուցվածքի ընդհանուր անվանում:

- C-283. СТРУКТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД ЗООГЕННАЯ – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ԿԵՆԴԱՆԱԾԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ZOOGENIC TEXTURE OF SEDIMENTARY ROCKS**, հատուկ է առավելապես կրաքարերին և սիլիցիումային ապարներին, որոնք մեծ մասամբ կազմված են կենդանիների մնացորդներից:
- C-284. СТРУКТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД КРУПНООБЛОМОЧНАЯ – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ԽՈՇՈՐԱԲԵԿՈՐԱՎՈՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, RUDACEOUS TEXTURE OF SEDIMENTARY ROCKS**, բոլոր խոշորաբեկորավոր ապարների (կոպիճ և այլն) կառուցվածքի ընդհանուր անվանում, բեկորների չափերը՝ 2 մմ-ից խոշոր, հոմ. Структура осадочных пород псефитовая:
- C-285. СТРУКТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД МИКРОЗЕРНИСТАЯ – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ՄԱՆՐԱՅԱՏԻԿԱՎՈՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, MICROGRANULAR TEXTURE OF SEDIMENTARY ROCKS**, բյուրեղահատիկավոր նստվածքային ապարների կառուցվածք, որը կազմված է 0.01 մմ-ից փոքր չափերի հատիկներից, վերջինները նկատելի են միայն զգալի մանրադիտակային խոշորացումների դեպքում:
- C-286. СТРУКТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД ОБЛОМОЧНАЯ**, տե՛ս Кластическая структура:
- C-287. СТРУКТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД ООЛИТОВАЯ**, տե՛ս Оолитовая структура:
- C-288. СТРУКТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД ПЕЛИТОВАЯ**, տե՛ս Пелитовая структура:
- C-289. СТРУКТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД ПСАММИТОВАЯ – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ՓՍԱՄԻՏԱՅԻՆ (ԱՎԱԶԱՅԻՆ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, PSAMMITIC TEXTURE OF SEDIMENTARY ROCKS**, բնորոշվում է բեկորային հատիկների մշակված տեսքով և դրանց 0.1-ից մինչև 1 մմ (կամ 0.05-ից մինչև 2 մմ) չափերով: Կախված հատիկների գերակշռող չափերից՝ առանձնացնում են նրբա- (0.05-0.1 մմ), մանրա- (0.1-0.25 մմ), միջնա- (0.25-0.5 մմ), խոշորա- (0.5-1 մմ) և կոպտահատիկային (1-2 մմ) կառուցվածքներ:
- C-290. СТРУКТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД ПСЕФИТОВАЯ – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ՓՍԵՖԻՏԱՅԻՆ (ԿՈՊՏԱԲԵԿՈՐԱՅԻՆ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, PSEPHITIC TEXTURE OF SEDIMENTARY ROCKS**, նույնն է՝ Структура осадочных пород грубообломочная:
- C-291. СТРУКТУРА ПИРОКЛАСТИЧЕСКАЯ – ՅՐԱԲԵԿՈՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, PYROCLASTIC TEXTURE**, հրաբխային տուֆերի կառուցվածքի ընդհանուր անվանում: Բնորոշվում է հրաբեկորային նյութի գերակշռությամբ, նյութի թույլ տեսակավորմամբ կամ վերջինի բացակայությամբ, մշակվածության բացակայությամբ:
- C-292. СТРУКТУРА ПОРФИРОВИДНАЯ – ՊՈՐՖԻՐԱՆՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, PORPHYROID TEXTURE**, բնորոշվում է ապարում խոշոր, աչքով տեսանելի, շատ թեքիչ ինքնաձև (իդիոմորֆ) ֆենոքրիստների (ներփակվածքների) առկայությամբ, որոնք խորասուզված են լիաբյուրեղային հիմնական զանգվածի մեջ: Պորֆիրային կառուցվածքից տարբերվում է բյուրեղայնության բարձր աստիճանով:
- C-293. СТРУКТУРА ТОЛЕИТОВАЯ – ՏՈԼԵԻՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, THOLEIITIC TEXTURE**, դիաբազային (օֆիտային) կառուցվածքի տարատեսակ, բնորոշվում է պլագիոկլազի հատիկների միջակայքում ավզիտի հետ թարմ կամ քայքայված հրաբխային ապակու աննշան տեղամասերի առկայությամբ (պլագիոկլազի մանրաբյուրեղներով և հանքային միներալի դենդրիտներով):
- C-294. СТРУКТУРА ТРАХИТОВАЯ – ՏՐԱԽԻՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, TRACHYTIC TEXTURE**, պորֆիրային ապարների հիմնական զանգվածի կառուցվածք, որը բնութագրվում է դաշտային սպաթի մանրաբյուրեղների մերձգուգահեռ զետեղմամբ, որոնց միջև չկա կամ խիստ քիչ է ապակենման հիմքը:

**C-295. СТРУКТУРА ФЕЛЬЗИТОВАЯ – ՖԵԼՉԻՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, FELSITIC TEXTURE**, թթու արտաժայթքային ապարների հիմնական զանգվածի կառուցվածք, որը բաղկացած է մանրագույն բյուրեղային գոյացություններից (հատիկներից, թելերից և այլն) և մանրատեղաբաշխված ապակյա նյութից:

**C-296. СТРУКТУРА ФЛЮИДАЛЬНАЯ – ՖԼՅՈՒԻԴԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, FLUIDAL TEXTURE, FLOW TEXTURE**, բնորոշվում է ապարի բյուրեղների կամ հիմնական զանգվածի մանրաբյուրեղների հոսքանման դասավորությամբ: Առաջանում է մածուցիկ պնդացող լավայի շարժման դեպքում:

**C-297. СТРУКТУРНАЯ ГЕОЛОГИЯ – ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՐԿՐԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ, STRUCTURAL GEOLOGY**, տեկտոնիկայի բաժին, որն ուսումնասիրում է երկրակեղևում կառուցվածքային ձևերի ձևաբանությունը, ծագումը, տեղաբաշխման և տարածական փոխհարաբերության օրինաչափությունները, ինչպես նաև ձևախախտումների գործընթացները, որոնք հանգեցնում են այդ փոխհարաբերություններին: Երկրակեղևը բաղկացած է ապարներից, որոնք առաջացնում են տարբեր ձևի և չափի մարմիններ (ապարների տեղադրման ձևեր կամ կառուցվածքային ձևեր): Կ. եյան ուսումնասիրության առարկան կառուցվածքային ձևերն են՝ շերտերը, ծալքերը, ճեղքերը, խզվածքային խախտումները (վարնետքեր, վերնետքեր, վրաշարժեր, տեղաշարժեր, տեկտոնական ծածկոցներ), մագմայական ծագման մարմինները, մետավածքակուտակումային և գրավիտացիոն կառուցվածքները և այլն: Առանձնացնում են առաջնային կառուցվածքային ձևեր (առաջանում են ապարների ձևավորման հետ միաժամանակ) և երկրորդային կամ խախտված (առաջանում են առաջնային կառուցվածքային ձևերի ձևախախտումային փոխարկումների հետևանքով): Առաջնային կառուցվածքային ձևերը խախտող ձևափոխությունները լինում են տեկտ. և ոչ տեկտ. (չբարացած մետավածքների սողքալանջերում, ապարների ծավալի փոփոխություն՝ կապված չորացման, ջրակալման, ջրագրկման, ջերմային ներազդեցության գործընթացների հետ, ծածկոցային սառցադաշտերի շարժում և այլն): Կ. ե. հիմնական ուշադրությունը դարձնում է այն երկրորդային կառուցվածքային ձևերի ձևավորման օրինաչափությունների բացահայտման վրա, որոնք կապված են տեկտ. ձևախախտումների հետ: Պայմանականորեն Կ. ե. կարող է բաժանվել 2 մասի՝ ձևաբանական կառուցվածքային երկրաբանություն (ներառում է կառուցվածքային ձևերի արտաքին նկարագրությունը և դրանց ձևաբանական դասակարգումը) և դինամիկ կառուցվածքային երկրաբանություն (ուսումնասիրում է այն ձևախախտումային գործընթացները, որոնք խախտում են ապարների առաջնային տեղադրման ձևերը և հանգեցնում են երկրակեղևում երկրորդային կառուցվածքային ձևերի առաջացմանը): Կ. ե. սերտորեն կապված է շերտագրության, քարաբանության, ապարաբանության, երկրաձևաբանության, երկրաֆիզիկայի, ջրաերկրաբանության, ճարտարագիտական երկրաբանության և լեռնային գործի հետ: Կառուցվածքային ձևերի ծագումը որոշելու համար լայնորեն կիրառվում են հետազոտման ֆիզ. մեթոդները (տե՛ս Тектонофизика): Տեկտ. ձևախախտումները ազդում են նաև ապարների կառուցվածքի ու կազմվածքի վրա (տե՛ս Петропектоника): Առանց կառուցվածքային ձևերի ուսումնասիրման՝ անհնար է երկրբ. հանույթը և քարտեզագրումը:

**C-298. СТРУКТУРНАЯ ГЕОМОРФОЛОГИЯ – ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՐԿՐԱԶԵՎԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ (ԳԵՈՄՈՐՖՈԼՈԳԻԱ), STRUCTURAL GEOMORPHOLOGY**, երկրաձևաբանության բաժին, որը զլխ. քննարկում է ռելիեֆի խոշոր ձևերը՝ կապված ներծին գործոնների հետ (երկրբ. կառուցվածքի, երկրակեղևի տեկտ. շարժումների և այլն):

**C-299. СТРУКТУРНО-ДЕНУДАЦИОННАЯ ТЕРРАСА, ДЕНУДАЦИОННАЯ ТЕРРАСА, СТРУКТУРНАЯ ТЕРРАСА – ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱԵՐԿԱՑՄԱՆ ԴԱՐՎԱՆԴ, ԼԵՐ-**

**ԿԱՑՄԱՆ (ԴԵՆՈՒԴԱՑԻՈՆ) ԴԱՐԱՎԱՆՆԵՐ, STRUCTURAL TERRACE, STRUCTURAL BENCH, STRUCTURAL ROCK-BENCH**, լանջում դարավանդանման գոյացություն, որը պայմանավորված է մակերևույթում պինդ ապարների շերտի ելքով, որն ունի հորիզոնական կամ դրան մոտ տեղադրում և մշակված է ընտրովի լերկացմամբ:

**C-300. СТРУКТУРНО-ДЕНУДАЦИОННЫЙ РЕЛЬЕФ – ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱԼԵՐԿԱՑՄԱՆ (ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱԴԵՆՈՒԴԱՑԻՈՆ) ՌԵԼԻԵՖ, STRUCTURAL DENUDATIONAL RELIEF**, ռելիեֆ, որի ձևաբանությունը պայմանավորված է լերկացմամբ մշակված երկրք. կառուցվածքներով: Կարող է լինել ուղիղ և շրջված (ինվերսիոն)՝ կապված զարգացման փուլից, լերկացման ուժգնությունից և ապարների կազմից:

**C-301. СТРУКТУРНО-МЕТАЛЛОГЕНИЧЕСКАЯ ЗОНА – ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՄԵՏԱՂԱՓՈՅԱՑՄԱՆ ԶՈՆԱ, STRUCTURAL METALLOGENIC ZONE**, հանքաքեր տարածություն, առանձնացվում է հանքաքեր պրովինցիաների ու գոտիների սահմաններում և հարում է ծալքավոր կամ պլատֆորմային կառուցվածքների որոշակի տիպի, որին հատուկ է բնորոշ հանքային ֆորմացիաների և հնքվ-երի որոշակի տիպերի զերակչիո զարգացումը, և որոնք իրենց ծագմամբ կապված են ծալքավոր մարզերի ու պլատֆորմների զարգացման որևէ փուլի տեկտ. ռեժիմի, նստվածքակուտակման և մագմայականության առանձնահատկությունների հետ: Կ. գ-յի մետաղագոյացման դիմագիծը որոշվում է մեկ կամ մի քանի գլխավոր և մի շարք երկրորդական մետաղներով: Նույն պրովինցիայի յուրաքանչյուր զոնա մյուսներից տարբերվում է նստվածքակուտակման, կառուցվածքի, մագմայականության և ներծին միներալացման առանձնահատկություններով: Կ. գ. հանդսանում է կառուցվածքաֆորմացիոն զոնայի մասը, բայց կարող է հանդնկնել նրա հետ կամ զետեղվել այդ զոնաների անցումային մասերում, ինչպես նաև երբեմն խոշոր, հատկապես ծայրամասային ու խորքային բեկվածքների երկայնությամբ:

**C-302. СТРУКТУРНО-ФОРМАЦИОННАЯ ЗОНА – ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՖՈՐՄԱՑԻՈՆ (ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՎԱՉՄԱՎՈՐՈՒՄԱՅԻՆ) ԶՈՆԱ, STRUCTURAL FORMATION ZONE**, զոնա ծալքավոր մարզի սահմաններում, հարևան զոնաներից տարբերվում է նստվածքակուտակման, կառուցվածքի, մագմայականության առանձնահատկություններով, որոնք պայմանավորված են զոնայի ձևավորման ժամանակի ընթացքում յուրահատուկ տեկտ. ռեժիմով և մի շարք ֆիզաշխ. գործոններով (կլիմայական և այլն): Կ. գ-ները սովորաբար սահմանափակված են լինում խորքային բեկվածքներով: Նրանք կարող են համապատասխանել կառուցվածքամետաղագոյացման զոնաներին կամ կարող են իրենց չափերով զգալի զերագանցել դրանց: Մետաղագոյացման քարտեզներում Կ. գ-ները առանձնացվում են կառուցվածքաֆորմացիոն վերլուծության հիմքի վրա:

**C-303. СТРУКТУРНОЕ БУРЕНИЕ – ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀՈՐԱՏՈՒՄ, STRUCTURAL DRILLING**, անցկացվում է ճշտելու ապարների կառուցվածքը, մասնավորապես շերտագրական հաջորդականությունը, որոնք բացահայտված են երկրք. հանույթի ընթացքում կամ երկրք. մեթոդներով: Սովորաբար կիրառվում է մեծ խորությունները ուսումնասիրելիս, որտեղ ապարների պոտենցիալ արդյունավետ համալիրները ծածկված են ոչ արդյունավետ գոյացություններով:

**C-304. СТРУКТУРНОЕ ПЛАТО – ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍԱՐԱՎԱՆՆԵՐ, STRUCTURAL PLATEAU**, սարավանդ՝ զրահապատված հորիզոնական կայուն շերտով, որը մակերևույթում մերկացել է վերևում տեղադրված ավելի անկայուն շերտերի լերկացման հետևանքով:

**C-305. СТРУКТУРНЫЕ ЭЛЕМЕНТЫ ЗЕМНОЙ КОРЫ – ԵՐԿՐԱԿԵՂԵՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍԱՐԲԵՐԸ**, տե՛ս Тектонические структуры:

- C-306. СТРУКТУРНЫЙ НОС – ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՔԻԹ, HEMIANTICLINE**, ապարների շերտերի սովորաբար մեղմաթեք կամարածալքային ծռվածք, որն առաջացնում է ելուստ միաթեքվածքի կամ ծալքի թևի վրա և արագ խորասուզվում է դեպի մի կողմ:
- C-307. СТРУКТУРНЫЙ ЯРУС (ЭТАЖ) – ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՐԿ, STRUCTURAL STADE**, իրենից ներկայացնում է երկրբ. ֆորմացիաների միասնական շարք, որը ձևավորվել է տեկտոնամագմայական ցիկլի մեկ ընթացաշրջանում (փուլում) և բնորոշվում է կառուցվածքի ու փոխակերպության աստիճանի որոշակի տիպով: Վերև և ներքև տեղադրված հարկերից (երբ դրանք կան) բաժանվում է ռեզոնանս անկյունային աններդաշնակություններով: Կ. հ-ի սահմաններում երբեմն առանձնացնում են կառուցվածքային ենթահարկեր: «Структурный ярус» և «Структурный этаж» տերմինների փոխհարաբերության վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Որոշ հետազոտողների կարծիքով դրանք հոմանիշներ են, այլ հետազոտողներ օգտագործում են միայն «Структурный этаж» տերմինը, իսկ մի շարք հետազոտողներ «Структурный этаж» տերմինը օգտագործում են ավելի լայն ծավալով, որի կազմում «Структурный ярус» տերմինը դիտարկվում է որպես ավելի ցածր կարգի ստորաբաժանում: Հայկական երկրբ. գրականության մեջ օգտագործվում է միայն «Կառուցվածքային հարկ» տերմինը:
- C-308. СТРУКТУРЫ ВУЛКАНО–ТЕКТОНИЧЕСКИЕ – ՀՐԱՔԻՍԱՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, VOLCANO–TECTONIC STRUCTURES**, լայն իմաստով, կառուցվածքային ձևերի համալիր, որն առաջանում է խորքային մագմագոյացման անմիջական ներազդեցության տակ, ինչպես նաև երկրակեղևի վերին հորիզոններում մագմայի ներդրման կամ մակերևույթում նրա ելուստի արգասիքում: Ավելի նեղ մեկնաբանման դեպքում՝ կառուցվածքներ, որոնք առաջանում են երկրակեղևի վերին մասերում մագմայական զանգվածի շարժման մեխ. ազդեցության հետևանքով: Մոլորակային մասշտաբի բարձրակարգ Հ. կ. հանդիսանում են հրաբխային գոտիները և դրանց օղակները: Դրանցում II կարգի Հ. կ-ից են նստեցման (հրաբխատեկտոնական իջույթներ, գրաբեմ-գոգածալքեր, իջվածքներ) և բարձրացման (հրաբխատեկտոնական լեռնաշղթաներ, ստրատոհրաբուխների և վահանաձև հրաբուխների լեռնաշղթաներ, հորստեր, գմբեթանման բարձրացումներ) կառուցվածքները: Տեղական Հ. կ-ից են հրաբխի շուրջը ձգման ճեղքերը, որոնք արտահայտվում են շառավղային կոնաձև և օղակաձև դայկաների համակարգով, հրաբխի տակ հիմքի գմբեթանման բարձրացումով և այլն:
- C-309. СТРУКТУРЫ НЕФТЕГАЗОНОСНЫЕ – ՆԱՎԹԱՎԱԶԱՔԵՐ (ՔԱՐԱՅՈՒՂԱՎԱԶԱՔԵՐ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, PETROLEUM BEARING STRUCTURES**, Ն. կ. են հանդիսանում կամարածալքերը, վարնետքերի, վրաշարժերի, անկյունային աններդաշնակության, շերտերի սեպասպառնման զոնաները, աղային գմբեթները, ռիֆտային զանգվածքները, ծակոտկեն և թափանցիկ շերտերում նավթի ու գազի համար ծուղակները:
- C-310. СТУПЕНЧАТЫЕ СБРОСЫ, ТЕРРАСОВИДНЫЕ СБРОСЫ – ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐ ՎԱՐՆԵՏՔԵՐ, ԴԱՐԱՎԱՆԴԱՁԵՎ ՎԱՐՆԵՏՔԵՐ, STEP FAULTS**, մեկը մյուսից հետո հաջորդաբար զետեղված բնականոն վարնետքերի համակարգ:
- C-311. СУБ... (լատ. sub – ենթա..., ստորա..., մերձ..., տակը) – ԵՆԹԱ..., ՍՏՈՐԱ..., ՍՈՒԲ..., SUB..., բառերի նախածանց, որը ցույց է տալիս մոտ, համարյա, ոչ լրիվ, ներքև, տակը, քիչ:**
- C-312. СУБАЭРАЛЬНЫЕ ПРОЦЕССЫ (լատ. sub – տակ, ներքև և հուն. αἰετ – օդ) – ՍՈՒԲԱԵՐԱԼ (ՄԱՎԱՑԱՄԱՔԱՅԻՆ) ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐ, SUBAERIAL PROCESSES**, երկրաբանական գործընթացներ, որոնք տեղի են ունենում ցամաքի վրա:



- C-313. СУБГЛЯЦИАЛЬНЫЕ ПРОЦЕССЫ** (լատ. sub – տակը, ներքև և glacies – սառույց) – **ԵՆԹԱՍԱՈՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ, SUBGLACIAL PROCESSES**, ենթասառցադաշտային երկրաբանական գործընթացներ:
- C-314. СУБДУКЦИЯ** (լատ. sub – տակ, ներքև և ductio – անցկացնել, քաշել, ներածել) – **ՍՈՒԲԴՈՒԿՑԻԱ (ՍԱԼԱԵՆԹԱՇԱՐԺ), SUBDUCTION**, օվկիանոսային կեղևի և միջնապատյանի ապարների քարոլորտի սալերի ենթաշարժը այլ սալերի ծայրամասի տակ (համաձայն «նոր գլոբալ տեկտոնիկայի» պատկերացումների): Ս. ուղեկցվում է խորաֆոկուս (խորակենտրոն) երկրաշարժերի զոնաների զոյացմամբ և ակտիվ հրաբխային կղզեաղեղների ձևավորմամբ: Ժամանակակից Ա-ի զոնայի օրինակ է Կարմադեկի փողրակը Խաղաղ օվկիանոսում:
- C-315. СУБОКЕАНИЧЕСКАЯ ЗЕМНАЯ КОРА – ԵՆԹԱՕՎԿԻԱՆՈՍԱՅԻՆ ԵՐԿՐԱՎԵՂԵՎ, SUBOCEANIC TYPE OF THE EARTH'S CRUST**, երկրակեղևի անցողիկ տեսակ, հատուկ է ծայրամասային (Բերինգի, Օխոտի, ճապոնական և այլն) և Միջերկրյա (Միջերկրական, Աև) ծովերին: Նման է օվկիանոսային կեղևին, բայց բնորոշվում է ավելի հզոր, քան օվկիանոսում, նստվածքային շերտով:
- C-316. СУБСЕКВЕНТАЯ ДОЛИНА** (լատ. subsequens, սեռ. հ. subsequens – որևէ բանի հաջորդը) – **ՍՈՒԲՍԵԿՎԵՆՏ ՅՈՒՎՈՒՆ, SUBSEQUENT VALLEY**, կոնսեկվենտ հովտի առաջին կարգի վտակի հովիտ: Սովորաբար հանրակնում է միաթեք տեղադրված շերտերի տարածման հետև և զարգանում է հեշտ ողողահարվող ապարներում:
- C-317. СУГЛИНОК – ԱՎԱԶԱՎԱՎ, LOAM**, փուխր ցամաքային նստվածք, բաղկացած է 0.01 մմ-ից փոքր չափի մասնիկներից (30-50 %) և 0.01 մմ-ից խոշոր բեկորային նյութից (70-50 %):
- C-318. СУЛЬФАТНАЯ ВОДА – ՍՈՒԼՖԱՏԱՅԻՆ ՋՈՒՐ, SULPHATE WATER**, բնական ջուր, որի քիմ. բաղադրակազմում անիոններից գերիշխում է սուլֆատ իոնը ( $SO_4^{2-}$ ):
- C-319. СУЛЬФАТЫ** (լատ. sulphur – ծծումբ) – **ՍՈՒԼՖԱՏՆԵՐ, SULPHATES**, միներալների դաս, ծծմբական թթվի ( $H_2SO_4$ ) աղեր, ընդգրկում են մոտ 150 միներալ: Գլխավոր միներալներն են՝ անհիդրիդը, գիպսը, բարիտը, ցելեստինը, ալունիտը, միրաբիլիտը և այլն: Առաջանում են նստեցման միջոցով գլխ. աղային լճերում ու ծովալճակներում (լազունաներում) և վերնածնության (հիպերգենեզի) զոնաներում՝ չոր կլիմայական շրջաններում: Ս-ի մի մասը գոյանում է ջրաջերմային (հիդրոթերմալ) գործընթացներում և մետաղական հնքվ-երի օքսիդացման զոնայում:
- C-320. СУЛЬФИДЫ** (լատ. sulphur – ծծումբ) – **ՍՈՒԼՖԻԴՆԵՐ, SULPHIDES**, միներալների մեծաթիվ դաս (200-ից ավել), ծծմբի հետ ծանր մետաղների (Pb, Cu, Sb, As, Ag, Bi, Fe, Ni, Co) միացություններ: Ս. կազմում են երկրակեղևի մոտ 0.15 % (ըստ զանգվածի): Տարբերում են պարզ Ս., դիսուլֆիդներ և բարդ Ս. (այդ թվում նաև սուլֆատներ): Ըստ կազմի սովորաբար բազմաբաղադրամասային են: Բնորոշ են մետաղանման փայլը, մեծ խտությունը: Ըստ ծագման գլխ. ջրաջերմային (հիդրոթերմալ) են: Հայտնի են նաև մագմայական, փոխակերպային ծագման Ս.: Հանդիսանում են շատ մետաղների հանքանյութեր:
- C-321. СУЛЬФИДНЫЕ (СЕРОВОДОРОДНЫЕ) ВОДЫ – ՍՈՒԼՖԻԴԱՅԻՆ (ԾՍՐԱԶՐԱԾՆԱՅԻՆ) ՋՐԵՐ, SULPHIDE WATERS**, բնական ջրեր, որոնք պարունակում են զգալի քանակությամբ ազատ ծծմբաջրածին ( $H_2S$ ), ջրասուլֆիդ-իոն ( $HS^-$ ) և սուլֆիդ-իոն ( $S^{2-}$ ):
- C-322. СУПЕСЬ – ԿԱՎԱՎԱԶ, LOAMY SAND**, փուխր նստվածք (գրունտ), որը կազմված է մոտավորապես 90-70 % ալևրիտաավազային նյութից և 10-30 % 0.01 մմ-ից փոքր կավային մասնիկներից: Բնորոշվում է ավազակավից ավելի փոքր պլաստիկությամբ:

- C-323. СУПРАЛИТОРАЛЬ** (լատ. supra – վրան, բարձր և լիթորալ) – **ՍՈՒՊՐԱԼԻԹՈՐԱԼ, SUPRALITTORAL, SUPRATIDAL ZONE**, ցամաքի շերտ, որը զետեղված է լիթորալից (առափնյա ծովահատակից) բարձր: Աչքի է ընկնում բարձր խոնավության: Ս. ցամաքային և ծովային ֆաունայի ու ֆլորայի սահմանակցման զոնան է: Կենդանիների տեսակային կազմը այստեղ աղքատ է, բայց չափերը լինում են շատ մեծ: Ս. առավել արտահայտված է բարեխառն լայնություններում:
- C-324. СУРЬМА, Sb** (թուրք, surme-ից, լատ. Stibium) – **ԾԱՐԻՐ (ԱՆՏԻՄՈՆ), ANTIMONY**, պարբերական համակարգի V խմբի քիմ. տարր: Պարունակությունը երկրակեղևում  $5 \cdot 10^{-5}$  % է (ըստ զանգվածի): Ամենատարածված միներալը ծարիրափայլն է ( $Sb_2S_3$ ):
- C-325. СУРЬМЯНЫЕ РУДЫ – ԾԱՐԻՐ (ԱՆՏԻՄՈՆԻ) ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, ANTIMONY ORES**, բնական հանքատեսակներ, որոնցից ծարրի արդյ. կորզումը տնտեսապես շահավետ է: Ծարիրն արդյունահանվում է գլխ. ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվ-երի սուլֆիդային հանքանյութերից, որոնք սովորաբար առաջացնում են շերտածև կուտակումներ կրաքարերում կամ հատող երակներ տարբեր ապարներում: Կարևոր միներալն անտիմոնիտն է: Նվազ նշանակություն ունեն ծարրի և այլ մետաղների համալիր սուլֆիդները՝ ջենտոնիտը, բուլանժերիտը, պիրարգիրիտը, տետրաէդրիտը: Ծ. հ-ի ջրաջերմային հնքվ-երի մերձակերևութային մասերում առաջանում են օքսիդացած հանքանյութեր:
- C-326. СУРЬМЯНЫЙ БЛЕСК, տես АНТИМОНИТ:**
- C-327. СУФФОЗИЯ** (լատ. suffossio – տակից քանդում, փորում) – **ՍՈՒՖՈՉԻԱ, UNDERWASHING, SUFFOSION**, ապարների հեշտ լուծելի աղերի քիմ. տարրալուծման ու նուրբ մասնիկների մեխ. տարավլացման և տեղատարման գործընթացների համակցություն, որի արդյունքում նրանք կորցնում են իրենց ամրությունը և վերադիր ապարների ճնշման տակ ենթարկվում են նստման: Ս. երկրի մակերևութի վրա արտահայտվում է տարբեր չափերի իջվածքների (փոսորակներ, ափսեներ, ձագարներ) ձևով:
- C-328. СУХОЙ ОСТАТОК – ՉՈՐ ՄԱՅՈՐՈՂ, DRY RESIDUE**, ջրում լուծված հանքային նյութերի չոր (կարծր) մնացորդ, որն առաջանում է բնական ջրի գոլորշիացումից:
- C-329. СФАЛЕРИТ, ЦИНКОВАЯ ОБМАНКА** (հուն. sphalero's – խաբուսիկ) – **ՍՖԱԼԵՐԻՏ, ՑԻՆԿԱՆԱՐՈՒԿ, SPHALERITE, ZINK BLENDE, FALSE GALENA**, սուլֆիդների դասի միներալ,  $ZnS$ : Fe-ով հարուստ տեսակները կոչվում են մարմատիտ, իսկ անգույն և թույլ գունավորվածները՝ կլեյոֆան: Բյուրեղագիտական համակարգը խորանարդային, հեքսագոնային է: Հանդիպում է հատիկավոր ագրեգատների կամ բյուրեղների ձևով: Ամխառնուրդ Ս. անգույն է: Կարծրությունը՝ 3.5-4: Առաջանում է ջրաջերմային (հիդրոթերմալ), ինչպես նաև նստվածքային հնքվ-երում: Ս. ցինկի հիմնական հանքանյութն է:
- C-330. СФЕН, տես Կրիտ:**
- C-331. СФЕРОИД ЗЕМНОЙ** (հուն. spháira – գունդ և éides – տեսք) – **ԵՐԿՐԱՅԻՆ ՓՆԴԱՐԴ, EARTH'S SPHEROID**, երկրաչափական պատկեր, մոտ է գնդին, քիչ սեղմված է բևեռներում, պատկերում է երկրի ձևը ամբողջապես:
- C-332. СФЕРОИДАЛЬНАЯ ОТДЕЛЬНОСТЬ, տես Шаровая отдельность:**
- C-333. СЫРЬЕ МИНЕРАЛЬНОЕ – ՄԻՆԵՐԱԼԱՅԻՆ ՀՈՒՄՔ, MINERAL PRODUCTS**, ընդերքից արդյունահանված բնական միներալային նյութեր, որոնք հանդիսանում են արդյունաբերության համար անհրաժեշտ մետաղներ կամ այլ տարրեր կորզելու համար հանքանյութեր, կամ օգտագործվում են էներգետիկայի (ածուխ, նավթ, գազ), շինարարության, քիմ. արդյունաբերության, էլեկտրատեխնիկայի և այլ ճյուղերի կարիքների համար:

# T

- T-1. ТАБУЛЯТЫ** (Tabulata) – **ՏԱԲՈՒԼՅԱՏՆԵՐ, TABULATE CORALS**, բուստային (կորալյան) պոլիպների մահացած ենթադաս: Գաղութները խիտ, փնջավոր կամ փռված են, կազմված են ոչ մեծ (0.5-4 մմ) տարբեր ձևի խողովականման անհատներից՝ լավ զարգացած հատակով: Ապրել են ծանծաղուտային ծովերում՝ ուշ քեմբրիից մինչև պերմ: Պալեոզոյան նստվածքների համար ունեն շերտազրական նշանակություն:
- T-2. ТАКОНИТ**, տե՛ս Железистый кварцит:
- T-3. ТАКСИТОВАЯ ТЕКСТУРА – ՏԱՔՍԻՏԱՅԻՆ ԿԱԶՄՎԱԾՔ (ՏԵՔՍՈՒՐԱ), TAXITIC STRUCTURE**, ապարների կազմվածք, բաղացած է այնպիսի տեղամասերից, որոնք միմյանցից տարբերվում են միներալային կազմով կամ կառուցվածքով (օր.՝ տարահատիկավոր տեղամասեր), կամ միաժամանակ և՛ միներալային կազմով, և՛ կառուցվածքով:
- T-4. ТАКСОН** (հուն. táxis – դասավորում, կարգ և mónos – օրենք) – **ՏԱՔՍՈՆ, TAXON**, դասակարգման միավորների անվանում, որը ցույց է տալիս համակարգում միավորների կարգը կամ տեղը (օր.՝ տիպ, դաս, սեռ, տեսակ և այլն):
- T-5. ТАЛАССОКРАТОН** (հուն. thálassa – ծով և krátos – ուժ, հզորություն) – **ԹԱԼԱՍՈՎՐԱՏՈՆ, THALASSOCRATON**, օվկիանոսի մահճի տեկտոնապես համեմատաբար կայուն, սակավաշարժ, գործնականում ոչ երկրաշարժական մարզ (օվկիանոսային պլատֆորմ), որի սահմաններում զարգացած են աբսիալ հարթավայրեր, և որը կրում է առավելապես վարընթաց ուղղաձիգ շարժումներ: Թ-ի սահմաններում առավել մեծ տարածքներ զբաղեցնում են օվկիանոսային գոգավորությունները, որտեղ օվկիանոսի հատակը իջած է 4-6 կմ խորություններ: Այստեղ նստվածքային ծածկոցի հաստությունը չի անցնում 1000 մ-ից:
- T-6. ТАЛЬБЕГ** (գերմ. Talweg, Tal-ից – հովիտ և Weg – ճանապարհ) – **ՅԵՂԵՂԱՍԱՅՈՒՆ (ՅՈՎՍԱՓՈՍ), TALWEG, THALWEG, VALLEY LINE** հովտի, հեղեղատի, ձորակի առանցքային ամենախոր մաս:
- T-7. ТАЛЬК** (գերմ. Talk, ծագումով արաբական բառ է) – **SULԿ, TALC**, շերտավոր սիլիկատների ենթադասի միներալ,  $Mg_3[Si_4O_{10}](OH)_2$ : Բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է: Առաջացնում է թփուկավոր, խիտ ագրեգատներ, սակավ՝ անկանոն բյուրեղներ: Անգույն է կամ տարբեր երանգներով: Փայլը՝ սաղափի: Կարծրությունը՝ 1: Շոշափելիս ճարպոտ է: Թերթերը ճկուն են, բայց առածոգական չեն: Արդյունք է մազմայական գերհիմքային և նստվածքային կարբոնատային ապարների ջրաջերմային (հիդրոթերմալ) փոփոխության: Սովորաբար հանդիպում է սիլիկահողային դոլոմիտներում: Տալկի հանքանյութերի գլխավոր միներալն է:
- T-8. ТАМПОНАЖ СКВАЖИНЫ – ՅՈՐԱՏԱՆՑՔԻ ՏԱՄՊՈՆՈՒՄ (ՑԵՄԵՆՏԱՑՈՒՄ), WELL CEMENTATION**, հորատանցքով հատած (բացված) ջրատար կամ նավթագազատար շերտերի և հորիզոնների մեկուսացում՝ ցեմենտի կամ այլ ջրանթափանց կապակցող նյութերի միջոցով:

- T-9. ТАНАТОЦЕНОЗ** (հուն. thánatos – մահ և koinós – ընդհանուր) – **ՏԱՆԱՏՈՑԵՆՈՋ, THANATOCOENOSIS**, դեռևս նստվածքներում չթաղված մահացած օրգանիզմների մնացորդների կուտակում:
- T-10. ТАНЕТСКИЙ ЯРУС** (Քենոտ կոմսության Տանետ, Thanet կղզու անունով, Անգլ.) – **ՏԱՆԵՏՅԱՆ ՀԱՐԿ, THANETIAN**, Արևմտյան Եվրոպայի պալեոցենի վերին հարկ:
- T-11. ТАНТАЛИТ** – **ՏԱՆՏԱԼԻՑ, TANTALITE**, տանտալի, երկաթի և մանգանի բարդ օքսիդների տիտանատանտալանիդատների ընտանիքի միներալ, (Fe, Mn) (Ta, Nb)<sub>2</sub>O<sub>6</sub>: Առաջացնում է մմանածն (իզոմորֆ) խառնուրդ կոլումբիտի հետ: Բյուրեղագիտական համակարգը շեղանկյունային է: Բյուրեղները աղյուսածն, կարծ, հատվածակողմային, նիզակածն, ասեղնածն են: Գույնը՝ սև, կարմրաշագանակագույն, գորշ: Կարծրությունը՝ 6.5-7, փոխար է: Ծազունը ներծին է: Հնքվ-երը գլխ. կապված են ալբիտացման, լեպիդոլիթացման գործընթացների հետ: Հողմահարման նկատմամբ կայուն է, կուտակվում է ցրոններում: Տանտալի գլխավոր հանքանյութն է:
- T-12. ТАНТАЛОВЫЕ РУДЫ** – **ՏԱՆՏԱԼԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, TANTALUM ORES**, բնական միներալային զոյացություններ, որոնցից տանտալի կորզումը տնտեսապես շահավետ է: Հանքանյութերի մեջ տանտալի հնգօքսիդի պարունակությունը 0.012-0.03 % է: Գլխավոր միներալներն են՝ տանտալիտը, կոլումբիտ-տանտալիտը, մանգանատանտալիտը, լոպարիտը, վոչինիտը, միկրոլիթը և այլն: Առանձնացնում են հնքվ-երի մի քանի տեսակներ՝ հազվագյուտ մետաղների հնքվ-եր, պեզմատիտներ, տանտալաբեր գրանիտներ, կարբոնատիտներ, ցրոններ:
- T-13. ТАТАРСКИЙ ЯРУС** (թաթարների անունով) – **ԹԱԹԱՐԱԿԱՆ ՀԱՐԿ, TATARIAN**, պերմի համակարգի վերին բաժնի վերին հարկ:
- T-14. ТАФОНОМИЯ** (հուն. táphos – գերեզման, թաղում և nómos – օրենք) – **ՏԱՖՈՆՈՄԻԱ, TAPHONOMY**, հնէաբանության բաժին, որն ուսումնասիրում է կենդանիների ու բույսերի թաղման պայմաններն ու օրինաչափությունները և բրածո մնացորդների խմբակցությունների առաջացումը:
- T-15. ТАФОЦЕНОЗ** (հուն. táphos – գերեզման, թաղում և kóinos – ընդհանուր) – **ՏԱՖՈՑԵՆՈՋ, TAPHOCENOS**, նստվածքներով ծածկված, բայց դեռևս քիչ փոփոխված օրգանիզմների կուտակ:
- T-16. ТАФРОГЕНЕЗ, ТАФРОГЕНЕЗИС** (հուն. táphros – փոս և génesis – ծագում) – **ՏԱՖՐՈԳԵՆԵՆՉ, TAPHROGENESIS**, ձգման պայմաններում երկրակեղևի մասնատումը բլոկների՝ խոշոր գրաբեկների առաջացմամբ: «S.» տերմինը գործնականորեն հանդիսանում է ռիֆտագոյացում տերիմի հոմ.: Գրականության մեջ «S» տերմինը հաճախ նշանակում է խոշոր գրաբեկների ձևավորում, օր.՝ Արևելա-աֆրիկյան ռիֆտային համակարգը:
- T-17. ТАФРОГЕОСИНКЛИНАЛЬ** (հուն. táphros – փոս և երկրասինկլինալ) – **ՏԱՖՐՈԳԵՐԿԱՍԻՆԿԼԻՆԱԼ (ՏԱՖՐՈԳԵՆՈՍԻՆԿԼԻՆԱԼ), TAPHROGEOSYNCLINE**, երկրաբանական ճկվածքներ, որոնք երկու կողմից սահմանափակված են խզվածքներով: Օր.՝ Ապալաչներում գրաբեկների տիպի ճկվածքները:
- T-18. ТАФРОСИНЕКЛИЗА** – **ՏԱՖՐՈՍԻՆԵԿԼԻՉ, TAPHROSYNCLISE**, պլատֆորմային խոշոր բացասական կառուցվածք (գրաբեկանման ճկվածք), որը իրենից ներկայացնում է նեղ, գծային-ձգված ճկվածք՝ երկարությունը 500-1000 կմ, լայնությունը՝ մի քանի տասնյակ, հազվադեպ՝ 100-150 կմ:
- T-19. ТАХЕОМЕТРИЧЕСКАЯ СЪЁМКА** (հուն. tahýs – սեռ. հ., tachéos – արագ և metréo – չափում են) – **ՏԱԽԵՆՈՄԵՏՐԱԿԱՆ (ՀԵՆԱՉԱՓԱԿԱՆ) ՀԱՆՈՒՅԹ, TACHEOMETRICAL SURVEY**, տեղագրական աշխատանքների համախմբություն, նպատակը պլանում և ըստ բարձրության տեղանքի կետի տեղադիրքի որոշումն է՝ թեոդո-

լիտ-տախեոմետրի (թեոդոլիտ-հեռաչափի) օգնությամբ, որին հետևում է հորիզոնականներով տեղամասի հատակագծի կազմումը:

**T-20. ТВЁРДОСТЬ МИНЕРАЛОВ – ՄԻՆԵՐԱԼՆԵՐԻ ԿԱՐԾՐՈՒԹՅՈՒՆ, MINERAL HARDNESS**, այլ ավելի կարծր մարմնի արտաքին մեխ. ազդեցության նկատմամբ միներալի դիմադրողականությունը: Պայմանավորված է գլխավորապես բյուրեղային ցանցի ամրությամբ և նրա մեխ. պարամետրերով (առածգականությամբ, պլաստիկությամբ, փխրունությամբ): Կախված փորձարկման մեթոդից՝ տարբերում են քերծման (խազման), ներճնշման, հղկման կարծրություն: Խազման մեթոդով Մ. կ-յան որոշման ամենահին եղանակը մոսկի սանդղակի ստուգանմուշային միներալների կիրառումն է, տե՛ս Мооса шкала:

**T-21. ТЕКСТУРА ГОРНЫХ ПОРОД** (լատ. *textura* – գործվածք, կառուցվածք) – **ԱՊԱՐՆԵՐԻ ԿԱԶՄՎԱԾՔ (ՏԵՔՍՏՈՒՐԱ), ROCKS STRUCTURE**, ապարի անհամասեռությունների աստիճանի ու առանձնահատկությունների բնութագիր, որը դրսևորվում է միներալային ագրեգատների կամ ապակենման բաղադրիչ մասնիկների ձևով, դասավորությամբ և կողմնորոշմամբ: Ի տարբերություն կառուցվածքի՝ կազմվածքի ձևաբանական միավոր հանդիսանում է միներալային ագրեգատը: Մազմայական ապարների կազմվածքը արտացոլում է նրանց ֆյուլիդային բաղադրիչների անջատման և հեղուկային անխառնելիության ու բյուրեղացման հետևանքով հալոցքի տարբերակման գործընթացները: Մազմայական ապարներին բնորոշ են բյուրեղային, զանգվածային, սյունաձև և այլ կազմվածքները: Փոխակերպային ապարներին բնորոշ է համասեռ կամ գոլավոր թերթաքարային ու գնեյսային կազմվածքը: Նստվածքային ապարների կազմվածքը պայմանավորված է նստվածքների կուտակման ֆազիալ պայմաններով (շերտավոր, շիթանման, խողովակաձև, նախշաձև, հանգուցային, ֆյուլիդալ և այլն):

**T-22. ТЕКСТУРА ДРУЗОВАЯ – ԲՅՈՒՐԵՂԱՆՄԲԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, DRUSY STRUCTURE**, բնորոշվում է պնդացման գործընթացի ժամանակ ապարում դատարկությունների առկայությամբ, որոնք լցված են պատերի վրա հարածած պնեմատոլիթային և ջրաջերմային ծագման միներալների բյուրեղներով:

**T-23. ТЕКСТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД БИОГЕННАЯ**, տե՛ս Биогенная текстура:

**T-24. ТЕКСТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД КОНКРЕЦИОННАЯ (ЖЕЛВАКОВАЯ) – ՆՍՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ԿՈՆԿՐԵՑԻՈՆԱԿԱՆ (ՊԱՆՈՐԱՆՄԱՆ) ԿԱԶՄՎԱԾՔ, CONCRETIONARY STRUCTURE OF SEDIMENTARY ROCKS**, բնորոշվում է կավային նյութից բաղկացած անկանոն կլորացված կամ ձվաձև խտացված գոյացությունների առատությամբ:

**T-25. ТЕКСТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД ПОЛОСЧАТАЯ – ՆՍՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ԶՈՆԱՎՈՐ ԿԱԶՄՎԱԾՔ, BANDED STRUCTURE OF SEDIMENTARY ROCKS**, ապարների կազմվածքի ընդհանուր անվանում, որտեղ միներալային կազմով, կառուցվածքով, հատիկների խոշորությամբ կամ գույնով տարբերվող տեղամասերը հերթագայում են նուրբ զուգահեռ գուլերի տեսքով:

**T-26. ТЕКСТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД ПЯТНИСТАЯ – ՆՍՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ԲԾԱՎՈՐ ԿԱԶՄՎԱԾՔ, MACULOSE STRUCTURE OF SEDIMENTARY ROCKS**, բնորոշվում է ապարներում բծերի առկայությամբ, որոնք նրա հիմնական զանգվածից տարբերվում են միներալային կամ հատիկաչափական կազմով, գույնով, կարծրությամբ կամ հողմահարման նկատմամբ կայունությամբ:

**T-27. ТЕКСТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД СЛАНЦЕВАТАЯ – ՆՍՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ԹԵՐԹԱՎՈՐ ԿԱԶՄՎԱԾՔ, CLEAVAGE STRUCTURE OF SEDIMENTARY ROCKS**, պայմանավորված է կավային, ալերիտաավազակավային և այլ ապար-

ներում դինամոփոխակերպության ժամանակ թերթավորության հարթությունների գոյացմամբ: Այդ ընթացքում ապարը հաճախ տրոհվում է (թերթավորվում է) կլիվաժին զուգահեռ թերթիկների, թիթեղիկների, սալիկների: Այդ գործընթացը ուղեկցվում է կավային և այլ միներալների վերաբյուրեղացմամբ:

- T-28. ТЕКСТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД СЛОИСТАЯ – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ՇԵՐՏԱՎՈՐ ԿԱԶՄՎԱԾՔ, BEDDED STRUCTURE OF SEDIMENTARY ROCKS,** բնորոշվում է նստվածքային ապարում հերթագայող շերտերի առկայությամբ, որոնք միմյանցից տարբերվում են կազմով, մասնիկների խոշորությամբ ու դասավորությամբ և այլ առանձնահատկություններով: Հանդիսանում է նստվածքային ապարների կարևորագույն հատկանիշներից մեկը և պայմանավորված է նյութի անհավասարաչափ նստեցմամբ և նստման ու ողողահարման մակերևույթների առաջացմամբ:
- T-29. ТЕКСТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД СТОЛБЧАТАЯ – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ՍՅՈՒՆԱԶԵՎ ԿԱԶՄՎԱԾՔ, COLUMNAR STRUCTURE OF SEDIMENTARY ROCKS,** բնորոշվում է ապարում նստվածքային ապարի մեկ շերտի սյունաձև, գլանաձև կամ հատվածակողմային ցցվածքով, որը ներթափանցում է նրան ծածկող այլ ապարի մեջ: Սովորաբար առաջանում է կրաքարերում, դոլոմիտներում, մերգելներում, հազվադեպ՝ թերթաքարերում, քվարցիտներում, ավազաքարերում, արգիլիթներում: Հոմ. նստվածքային ապարների ստիլոլիթային կազմվածք:
- T-30. ТЕКСТУРА ОСАДОЧНЫХ ПОРОД ЧЕШУЙЧАТАЯ – ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԻ ԹԵՓՈՒԿԱՎՈՐ ԿԱԶՄՎԱԾՔ, IMBRICATED STRUCTURE OF SEDIMENTARY ROCKS,** կավային բժավոր կազմվածքի տարատեսակ, որում օրգանական միացություններով կամ երկաթի օքսիդներով զուլնավորված նուրբ, ցրված կավային նյութի տեղամասերն ունեն թեփուկների ձև:
- T-31. ТЕКСТУРА РУД – ՀԱՆՔԱՔԱՐԵՐԻ ԿԱԶՄՎԱԾՔ, ORE STRUCTURE,** հանքային զանգվածի կազմության առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են հանքաքարը կազմող տարբեր միներալային ագրեգատների կողմնորոշմամբ և տարածական փոխհարաբերությամբ: Որոշվում է տարբեր կառուցվածքի և կազմի միներալային ագրեգատների զուգակցությամբ: Կազմվածքի ձևաբանական միավորը միներալային ագրեգատն է: Անգլիական գրականության մեջ այդ տերմինը վերաբերում է հանքաքարի կառուցվածքին:
- T-32. ТЕКСТУРА РУД БОБОВАЯ – ՀԱՆՔԱՔԱՐԵՐԻ ԲԱՎԼԱՅԱԶԵՎ ԿԱԶՄՎԱԾՔ, PEA STRUCTURE OF ORES,** կոնկրեցիոն կազմվածքի տարատեսակ, որում հանքային միներալի (սովորաբար գորշ երկաթաքարի) գնդանման կամ ձվաձև կոնկրեցիաների տրամագիծը 0.5-1 սմ է: Բնորոշ է երկաթի որոշ նստվածքային հանքաքարերին:
- T-33. ТЕКСТУРА РУД ВКРАПЛЕННАЯ – ՀԱՆՔԱՔԱՐԵՐԻ ՆԵՐՓԱԿԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄՎԱԾՔ, IMPREGNATED STRUCTURE OF ORES,** բնորոշվում է հիմնական ոչ հանքային զանգվածում ցրված հանքային միներալների հատիկների կամ ագրեգատների առկայությամբ:
- T-34. ТЕКСТУРА РУД ЗЕМЛИСТАЯ – ՀԱՆՔԱՔԱՐԵՐԻ ՀՈՂԱՆՄԱՆ ԿԱԶՄՎԱԾՔ, EARTHY STRUCTURE OF ORES,** բնորոշ է արտածին ծագման չցենսնտացած, փուխր, փոշեկերպ և սորուն միներալային ագրեգատներին:
- T-35. ТЕКСТУРА РУД ЗОНАЛЬНАЯ – ՀԱՆՔԱՔԱՐԵՐԻ ԶՈՆԱՅԱԿԱՆ ԿԱԶՄՎԱԾՔ, ZONAL STRUCTURE OF ORES,** պայմանավորված է տարբեր միներալային կազմի կամ կառուցվածքի շերտերի համակենտրոն հերթագայմամբ:
- T-36. ТЕКСТУРА РУД МАССИВНАЯ – ՀԱՆՔԱՔԱՐԵՐԻ ՀՈԾ ԿԱԶՄՎԱԾՔ, MASSIVE STRUCTURE OF ORES,** տարածության համատարած և հավասարաչափ լցումը

հանքային միներալներով՝ առանց բաղկացուցիչ մասերի օրինաչափ դասավորության և առանց որևէ դատարկությունների ու երակիկների:

**T-37. ТЕКСТУРА РУД ПОЛОСЧАТАЯ – ՀԱՆՔԱՔԱՐԵՐԻ ԶՈՒԱՎՈՐ ԿԱԶՄՎԱԾՔ, BANDED STRUCTURE OF ORES**, բնորոշվում է հանքաքարում համեմատաբար նուրբ զուլերի (շերտերի) հերթագայությամբ, որոնք տարբերվում են իրենց կառուցվածքով, գույնով, հատիկների խոշորությամբ կամ միներալային կազմով: Հանդիպում է տարբեր ծագման (մագմայական, նստվածքային ու փոխակերպային) հանքաքարերում և պայմանավորված է խիստ տարբեր պատճառներով:

**T-38. ТЕКСТУРА РУД ПРОЖИЛКОВАЯ – ՀԱՆՔԱՔԱՐԵՐԻ ՆՐԲԵՐԱՎԱՎՈՐ ԿԱԶՄՎԱԾՔ, STREAKY STRUCTURE OF ORES**, բնորոշվում է 2 միներալային ագրեգատների զուգակցմամբ, որոնք լցնում են կողային ապարների կամ ավելի վաղ առաջացած հանքաքարերի ճեղքերը և հանդիսանում են ներառնող զանգված: Հոմ. հանքաքարերի հատող կազմվածք:

**T-39. ТЕКСТУРА РУД СЕТЧАТАЯ – ՀԱՆՔԱՔԱՐԵՐԻ ՑԱՆՑԱԶԵՎ ԿԱԶՄՎԱԾՔ, RETICULATE STRUCTURE OF ORES**, առաջուճում է ապարում փոխհատվող ճեղքերը հանքային միներալներով լցվելիս:

**T-40. ТЕКСТУРА РУД СЛОИСТАЯ – ՀԱՆՔԱՔԱՐԵՐԻ ՇԵՐՏԱՎՈՐ ԿԱԶՄՎԱԾՔ, STRATIFIED STRUCTURE OF ORES**, արտահայտվում է նրբաշերտերի հերթագայությամբ, որոնք տարբերվում են միներալային կազմով, կառուցվածքով, հատիկների խոշորությամբ, իսկ միատեսակ միներալային կազմի դեպքում՝ ֆիզ. հատկանիշներով (կարծրությամբ, գույնով): Սահմանները նրբաշերտերի միջև կարող են լինել կտրուկ կամ աստիճանական: Բնորոշ է երկաթի ու մանգանի շատ նստվածքային հանքաքարերի համար:

**T-41. ТЕКСТУРА ФЛЮИДАЛЬНАЯ – ՖԼՅՈՒԻԴԱԼ (ՀՈՍԱՆՈՒՏ) ԿԱԶՄՎԱԾՔ, FLOW STRUCTURE, FLUXION STRUCTURE**, բնորոշվում է արտաժայթքային ապարներում հոսքանման, զուլավոր տեղամասերի դասավորությամբ, որոնք միմյանցից տարբերվում են կազմով կամ կառուցվածքով:

**T-42. ТЕКСТУРА ШЛИРОВАЯ – ՇԼԻՌԱՅԻՆ ԿԱԶՄՎԱԾՔ, SCHLIERIC STRUCTURE**, պայմանավորված է շլիռների առկայությամբ, այսինքն՝ այն գոյացումների, որոնք իրենցից ներկայացնում են ինչ-որ միներալների կուտակներ, որոնք ապարի այլ տեղերում հավասարաչափ են տեղաբաշխված:

**T-43. ТЕКТИТЫ** (հուն. τέκτος – հալված) – **ՏԵԿՏԻՏՆԵՐ, TEKTITES**, համեմատաբար ոչ մեծ տարբեր ձևի բնական ապակե մարմիններ, որոնք ամբողջովին մակահալված են և ունեն կանաչ, հազվադեպ սև գույն: S-ում գործնականորեն չկան անկանոն ձևի բյուրեղահատիկներ, և համեմատաբար քիչ են գազային բշտիկները: Հանդիպում են միայն պալեոգեն-չորրորդական փուխր նստվածքներում կամ երկրի մակերևույթի այն մարզերում, որոնց հրաբխային ծագումը բացառվում է: S-ի ծագման ընդհանուր ընդունված վարկած գոյություն չունի:

**T-44. ТЕКТОГЕНЕЗ – ՏԵԿՏՈԳԵՆԵԶ, TECTOGENESIS**, երկրակեղևի տեկտ. կառուցվածքները ձևավորող տեկտ. շարժումների ու գործընթացների համախմբություն: «Տեկտոգենեզ» տերմինը առաջարկել է գերմանացի երկրաբան Է. Հարմանը (1930):

**T-45. ТЕКТОНИКА, ГЕОТЕКТОНИКА** (հուն. tectonikós – շինարարությանը վերաբերող, կառույց) – **ՏԵԿՏՈՆԻԿԱ (ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ), ԵՐԿՐԱՏԵԿՏՈՆԻԿԱ, TECTONICS, GEOTECTONICS**, երկրաբանության բաժին, գիտություն է երկրակեղևի (քարոլորտի) կազմության, շարժումների, ձևափոխությունների և զարգացման մասին՝ կապված երկրի զարգացման հետ ամբողջապես: Դասական S-ի հիմնական

խնդիրներն են՝ լեռնագոյացման, ցամաքագանգվածների ուղղաձիգ և հորիզոնական տեղաշարժերի, ապարների շերտերի ծալքերի, խզվածքների ու մակաշարժերի առաջացման բացատրությունը, ծովերի ու ցամաքների գրաված տարածությունների փոփոխությունների ու տեկտ. շարժումների ընդհանուր պատճառների բացահայտումը: S-ի հիմնական ստորաբաժանումներն են. կառուցվածքային երկրաբանությունը կամ ձևաբանական տեկտոնիկան, որը զբաղվում է երկրակեղևում ապարների խախտված տեղադրման բնորոշ տեսակների՝ փոքր ու միջին չափերի (տրամաչափում մինչև տասնյակ կմ) առանձնացմամբ, դրանց նկարագրմամբ և դասակարգմամբ: Ավելի խոշոր ձևերով զբաղվում է ընդհանուր երկրատեկտոնիկան: Ռեգիոնալ երկրատեկտոնիկան ուսումնասիրում է երկրակեղևի ժամանակակից կառուցվածքը, այսինքն՝ կառուցվածքային ձևերի տարածական տեղաբաշխումը առանձին ռեգիոններում, մայր ցամաքներում ու օվկիանոսներում և դրանց անցողիկ զոնաներում: Պատմական երկրատեկտոնիկան ուսումնասիրում է երկրակեղևի ժամանակակից կառուցվածքի ձևավորման հաջորդական պատմությունը, նրա զարգացման հիմնական փուլերը, այդ փուլերի կառուցվածքային պլանը և շարժումների ռեժիմը: Ծագումնաբանական կամ ընդհանուր երկրատեկտոնիկան ուսումնասիրում է մայր ցամաքների ու օվկիանոսների կառուցվածքային ձևերի հիմնական տեսակների ծագումը, ինչպես նաև այն գործոնները, որոնք պայմանավորում են երկրակեղևի կառուցվածքների շարժումը, ձևափոխությունները և ընդհանուր զարգացումը: Այդ պրոբլեմների լուծմանը մասնակցում են նաև տեկտոնաֆիզիկան, որը ուսումնասիրում է տեկտ. ձևափոխությունների ֆիզ. պայմանները, և փորձարարական տեկտոնիկան, որը զբաղվում է ֆիզ. մոդելավորմամբ: Կիրառական տեկտոնիկայի խնդիրը որոշակի կառուցվածքային ձևերի և դրանց զարգացման որոշակի բնույթի հետ տարբեր տեսակի օգտ. հնձ-ների կապերի բացահայտումն է: S-ին հարակից է երկրաշարժատեկտոնիկան (տե՛ս Сейсмоструктура): S. զարգանում է սերտորեն կապակցված նոր գիտության՝ երկրադինամիկայի հետ:

S-ի հիմնական մեթոդներն են՝ 1) կառուցվածքային վերլուծությունը, դիտարկում է տարածության մեջ տարբեր կառուցվածքային ձևերի հարաբերակցությունը՝ պարզաբանելու համար դրանց ձևավորման հաջորդականությունն ու պայմանները, 2) համեմատական մեթոդը տարբեր տիպի կառուցվածքային ձևերի ձևաբանության և պատմության համեմատումն է՝ դրանց ընդհանուր բնույթը պարզելու նպատակով, 3) երկրակեղևի ժամանակակից շարժումների վերլուծությունը՝ գեոդեզիական, տիեզերագեոդեզիական, երկրաձևաբանական և այլ մեթոդների կիրառմամբ, 4) հնատեկտոնական վերլուծությունը՝ անցյալ երկրբ. ժամանակաշրջաններում երկրակեղևի շարժումների, ձևափոխությունների և տարրերի ձևերի վերականգնումը, 5) ժամանակակից և հին լարվածությունների դաշտերի վերլուծությունը (տեկտոդինամիկական վերլուծություն), 6) երկրաֆիզիկական մեթոդները, հատկապես երկրաշարժական, որոնք տալիս են առավել գնահատելի տեղեկություն երկրակեղևի և միջնապատյանի խորքային կազմության մասին: 7) Ապարաքիմիական և երկրաքիմիական մեթոդները բացահայտում են S-ի ու մագմայականության կապը, 8) ավելի լայնորեն օգտագործվում են մաթեմատիկական մեթոդները (մաթեմատիկական վիճակագրություն, մոդելավորում և այլն):

S-ի հիմունքները սկսվել են մշակվել 17-րդ դարում դանիացի գիտնական Ն. Ստենոնի կողմից: 18-րդ դարում ստեղծվեց երկրակեղևի կառուցվածքի զարգացման առաջին վարկածը՝ բարձրացման վարկածը (Մ. Լոմոնոսով, Ջ. Յետոն): 19-րդ դարում մշակվեց կառուցվածքաերկրաբանական տերմինաբանությունը, բարձրացման վարկածին փոխարինեց կոնտրակցիոն (կծկանքի) վարկածը (Է. դե Բոմոն): 50-80 թթ.



ամերիկական գիտնականներ Ջ. Հոլը (1859), Ջ. Դենը (1873) և ֆրանս. երկրաբան Մ. Բերտրանը (1887) ստեղծեցին երկրասինկլինալների մասին ուսմունքը, որը կարևոր դեր խաղաց Տ-ի զարգացման մեջ, այն լրացվեց պլատֆորմների մասին ուսմունքով (Ն. Գոլովկինսկի, Ա. Կարպինսկի, Ն. Շատսկի, Ա. Բոգդանով, Մ. Մուրատով և ուրիշներ): Այդ երկու ուսմունքները կազմեցին երկրակեղևի զարգացման ընդհանուր պատկերացումների հիմքը՝ երկրասինկլինալներից դեպի լեռնագոյացումները և այնուհետև դեպի պլատֆորմները: Հետագայում, սկսած 20-րդ դարի 40-ական թվականներից, պարզվեց, որ պլատֆորմները երկրատեկտ. ակտիվացման գործընթացներում կարող են նորից փոխարկվել լեռնային կառույցների (Վ. Օբրուչև, Ա. Շուլց, Ն. Նիկոլան): Դեռևս 20-րդ դարի սկզբում բացահայտվեց կոնտրակցիոն վարկածի ֆիզ. և աստղագիտական հիմքերի անհնարինությունը, և առաջ քաշվեցին մի քանի նոր վարկածներ, այդ թվում՝ գերմանացի երկրաֆիզիկոս Ա. Վեգեների (1912)՝ մայր ցամաքների դրեյֆի վարկածը: Տ-ի զարգացման մեջ որոշակի դեր խաղացին պուլսացիոն (բաբախման) (Վ. Բուխեր, Մ. Ուսով, Վ. Օբրուչև), ընդարձակվող երկրի (Օ. Հելգենբերգ, Ու. Քերի) վարկածները: 20-րդ դարի երկրորդ կեսում երկրաֆիզիկայի բնագավառում, ինչպես նաև օվկիանոսների երկրաբանությունում նոր հայտնագործությունները ստիպեցին գիտնականների մեծ մասին հրաժարվելու վերոհիշյալ վարկածներից, վերածնելու Ա. Վեգեների գաղափարները և դրանք վերափոխելու նոր, ավելի հստակ և լրիվ մշակված կոնցեպցիայի՝ սալերի տեկտոնիկայի կոնցեպցիայի (Ռ. Դիտց, Հ. Հես, Վ. Մորգան, Ջ. Լը Պիշոն): Այդ կոնցեպցիայի էական լրացում է ծառայում քարոլորտի տեկտոնական շերտատման կոնցեպցիան (Ա. Պեյվե, Յու. Պուշչարովսկի):

**T-46. ТЕКТОНИКА ПЛИТ, НОВАЯ ГЛОБАЛЬНАЯ ТЕКТОНИКА – ՍԱԼԵՐԻ ՏԵԿՏՈՆԻԿԱ, ՆՈՐ ԳԼՈԲԱԼ ՏԵԿՏՈՆԻԿԱ, PLATE TECTONICS, NEW GLOBAL TECTONICS,** երկրբ. տեսություն, որը պարզաբանում է երկրի վերին թաղանթի շարժումները, ձևափոխությունները և երկրաշարժական ակտիվությունը: Ա. տ. նորբիլիզմի ժամանակակից տարբերակն է: Ա. տ-ի հիմնադրույթները ձևավորվեցին 1967-68 թթ. ամերիկյան երկրաֆիզիկոսներ Վ. Մորգանի Ջ. Լը Պիշոնի, Ջ. Օլիվերի, Ջ. Այգեբսի, Հ. Հեսի, Ռ. Դիտցի աշխատանքներում: Ա. տ-ի հիմնադրույթները հանգում են հետևյալին: Քարոլորտի տակ փռված է ավելի մածուցիկ ասթենոսֆերան (թույլլորտը), որը բացահայտվում է երկրաշարժական և մագնիսաթելուրական ուսումնասիրությունների տվյալներով: Քարոլորտը բաժանված է սահմանափակ քանակի մեծ (7) և մանր սալերի, որոնց սահմանները անցկացվում են ըստ երկրաշարժերի օջախների խտացման: Այդ սահմանները հանդիսանում են գերխոր բեկվածքներ, որոնք մի դեպքում համընկնում են միջինօվկիանոսային լեռնաշղթաների առանցքային մասի ռիֆտային հովիտների հետ, այլ դեպքերում՝ խորջրյա փողոկների հետ: Վերջինները հանդիսանում են խորօջախյա երկրաշարժերի զոնաների մակերևութային արտահայտությունները, որոնք կոչվում են Ձավարիցկի-Բենիոֆի զոնաներ: Խոշոր սալերի թվին են պատկանում Խաղաղօվկիանոսյանը, Եվրասիականը, Հյուսիսամերիկյանը, Հարավամերիկյանը, Աֆրիկականը, Հնդկաստրալիականը, Անտարկտիկականը: Ասթենոսֆերայի վրա շարժվող քարոլորտի սալերը կոշտ են և միաձույլ, կրում են երեք տեսակի փոխադարձ հորիզոնական տեղափոխություն. ա) բաժանում (տարամիտում, դիվերգենցիա)՝ միջինօվկիանոսային լեռնաշղթաների առանցքային մասերում, բ) հանդիպում (զուգամիտում, կոնվերգենցիա)՝ օվկիանոսների ծայրամասերի խորջրյա փողոկներում, որտեղ օվկիանոսային սալերը ենթաշարժվում են մայրցամաքային կամ կղզեաղեղային սալերի տակ, գ) սահում սալերի երկայնքով՝ տրանսֆորմ խզվածքներով: Բոլոր այդ տեղափոխությունները բացահայտվել են երկրաշարժական տվյալներով: Միջինօվկիանոսային լեռնաշղթաների առանցքի երկայնությամբ, սալերի տարաշարժի հետ կապված, ռիֆտային հովիտներում բացվող ճեղքերից ներքևից ժայթքում է

բազալտային լավան, որը պնդանալով առաջացնում է օվկիանոսային կեղև: Այդ գործընթացների հետ կապված՝ օվկիանոսային մահճի ընդլայնումը և նոր օվկիանոսային կեղևի ձևավորումը հավասարակշռվում են կեղևի կլանմամբ ենթասալաշարժի զոնայում՝ խորջրյա փողրակներում, որի շնորհիվ Երկրի ծավալը մնում է կայուն: Քարոլորտի սալերի տեղափոխման պատճառը Երկրի միջնապատյանում ջերմային կոնվեկցիան (ջերմափոխանցում) է: Երկու հանդիպակաց ջերմային կոնվեկցիոն հոսանքների վերընթաց հոսքը հանգեցնում է սալերի տարաշարժի (սպրեդինգի), վարընթացը՝ ենթասալաշարժի (սուբդուկցիայի): Այս դրույթները հետագայում հիմնավորվեցին խորջրյա հորատման տվյալներով, որոնք հաստատեցին օվկիանոսների առաջացումը սպրեդինգի գործընթացներում, ինչպես նաև միջադիր լեռնաշղթաների ռիֆտային հովիտների, Կարմիր ծովի և Ադենի նեղուցի հատակի ուսումնասիրություններով և, վերջապես, սալերի ժամանակակից շարժումների հետազոտմամբ՝ տիեզերական գեոդեզիայի տարբեր մեթոդներով: Դրա հետ մեկտեղ՝ պարզվեց, որ սալերի փոխադարձ շարժումների գործընթացները (սպրեդինգը և սուբդուկցիան) ավելի բարդ են, քան սկզբնական տեսությունում նախատեսվածները, որ այդ տեսությունը չի բացատրում ներսալային ձևախախտումներն ու մագնայականությունը, սալերի ուղղաձիգ շերտատումը՝ շերտերի տարբերակված տեղախախտմամբ, միջնապատյանում կոնվեկցիայի բնույթի անհստակությունը և այլն: Ոմանք ենթադրում են, որ ասթենոսֆերան չունի համատարած տարածում, երկրաշարժական տվյալներով բացահայտվել է քարոլորտի ներսում ասթենոսֆերայի շերտերի առկայությունը: Ս. տ-ն դեռևս չի բացատրում տեկտ. շարժումների ու ձևախախտումների ուժգնության պարբերական փոփոխությունը, խորքային խզվածքների կայուն գլոբալ ցանցի առկայությունը: Դեռևս բաց է մնում Երկրի պատմությունում Ս. տ-ի սկզբնավորման հարցը, քանի որ սալատեկտոնիկայի ուղղակի հատկանիշներ (օֆիոլիթները որպես սպրեդինգի ցուցիչներ, բարձր ճնշումների փոխակերպության գոտիները, որպես սուբդուկցիայի ցուցիչներ) հայտնի են միայն ուշ պրոտերոզոյից՝ ռիֆեյից: Այնուամենայնիվ, որոշ հետազոտողներ Ս. տ-ի արտահայտման սկիզբը համարում են արխեյը կամ ստորին պրոտերոզոյը: Ս. տ-ի կոնցեպցիայում իրենց բացատրությունն են գտնում Երկրի մակերևույթի հնաշխ. էվոլյուցիան, մագնայական սերիաների ռեգիոնալ փոխակերպության և նստվածքային ֆորմացիաների բազմազանությունը, տարբեր տիպի օգտ. հնձ-ների տեղաբաշխումը և այլն:

**T-47. ТЕКТОНИТЫ – ՏԵԿՏՈՆԻՏՆԵՐ, TECTONITES**, բեկորային կազմության այն լեռնային զանգվածների ընդհանուր անվանում, որոնք առաջացել են սկզբնական ապարների ջարդոտման հետևանքով՝ կապված երկրակեղևում խզվածքային խախտումների առաջացման ժամանակ դրանց մեխ. տեղաշարժման հետ: Ստորաբաժանվում են ըստ բեկորների խոշորության և խոշոր ու մանր մասնիկների փոխհարաբերության: Առավել մուրք տրորված բեկորներից կազմված ապարները կոչվում են միլոնիտներ, ավելի խոշորները՝ կատակլազիտներ կամ տեկտ. փշրաքարեր (բրեկչիաներ): S-ի առանձնահատուկ տարատեսակ է տեկտ. մելանժը, որում խոշոր բեկորները ներփակված են մանրաբեկորային զանգվածում՝ հաճախ ներկայացված սերպենտինիտներով (սերպենտինիտային մելանժ): S-ում բեկորները սովորաբար անկյունավոր են՝ ծածկված սահման հայելիներով, ավելի պլաստիկ ապարների (օրինակ՝ սերպենտինիտների) բեկորները հաճախ կլորացված են:

**T-48. ТЕКТОНИЧЕСКАЯ ДОЛИНА – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՅՈՎԻՏ, TECTONIC VALLEY, STRUCTURAL VALLEY**, գետահովիտ, որը ներդրված է տեկտ. ծագման ցածրացված ռելիեֆում (գոգածալք, գրաբեն, տեկտ. խախտման գծով ապարների ջարդոտման զոնա և այլն):

**T-49. ТЕКТОНИЧЕСКАЯ КОНСОЛИДАЦИЯ – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԱՄՐԱՊՆՂՈՒԲՄ (ԿՈՆՍՈԼԻԴԱՑԻՈՒԲՄ), CONSOLIDATION, STABILIZATION**, ավելի շարժուն (երկրասինկլինալային) վիճակից անցումը ավելի կայուն (պլատֆորմային) վիճակի:

**T-50. ТЕКТОНИЧЕСКАЯ РАССЛОЁННОСТЬ ЛИТОСФЕРЫ – ՔԱՐՈՆՈՐՏԻ ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՇԵՐՏԱՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, TECTONIC LAMINATION OF LITHOSPHERE**, քարոլորտում տեկտ. և մագմայական գործընթացների զարգացման մորֆոխտական մոդել, հիմնված է վերին երկրաթաղանթների ուղղաձիգ և լատերալ կառուցվածքային, նյութական, ֆիզ. և ռեոլոգիական անհամասեռությունների վրա: Տեկտ. ագդակների դեպքում անհամասեռությունները ստեղծում են պայմաններ մակերևութային կամ ներքարոլորտային լեռնային զանգվածների հորիզոնական պոկվածքների համար (քարաթիթեղներ), որոնք տեղափոխվում են տարբեր արագություններով: Այդպիսի տեղափոխությունների արդյունք է հանդիսանում նոր անհամասեռությունների գոյացումը: Երկրակեղևի երկրք. պատմությունում այդպիսի գործընթացն արձանագրվում է նրա կառուցվածքային պլանի փոփոխությամբ: Դրանով էլ որոշվում է Ք. տ. 2-յան տարբերությունը քարոլորտի սալերից, որոնք հանդիսանում են կոշտ և ռեոլոգիապես համասեռ մարմիններ: Հորիզոնական պոկվածքների մակերևութներից մեկը մոհորովիչիչի մակերևութն է: Քարաթիթեղների պոկվածքներ և տեղափոխություններ տեղի են ունենում քարոլորտի ներսի այլ մակարդակներում, որին օգնում է ցածրացված մածուցիկության շերտերի առկայությունը: Ուսումնասիրություններն ու փորձարկումները վկայում են խորքային ապարների կարծրաթիթեղային հոսքերի մասին: Քարոլորտի տեկտ. մասնատումը ծածկույթների, թիթեղների և վրաշարժերի՝ առավել հստակ արտահայտված է երկրակեղևում: Շարժուն զոնաների մեծ մասը (Պամիր, Կովկաս, Ուրալ, Ալպեր, Ապալաչներ և այլն) ունեն ծածկոցածալքավոր կառուցվածք: Ք. տ. 2-յան ուսմունքը տալիս է մայր ցամաքների դրեյֆի, երկրորդային օվկիանոսների առաջացման, մագմայական գործունեության ու մետաղագոյացման երևույթների յուրահատուկ լուսաբանում:

**T-51. ТЕКТОНИЧЕСКИЕ ГИПОТЕЗЫ – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՎԱՐԿԱԾՆԵՐ (ՀԻՊՈԹԵԶՆԵՐ), TECTONIC HYPOTHESES**, գիտականորեն հիմնավորված ենթադրություններ երկրակեղևի այն շարժումների ու ձևափոխությունների պատճառների մասին, որոնք փոփոխում են նրա կառուցվածքը: Տ. վ-ից յուրաքանչյուրը բավարար բացատրություն է տալիս ուսումնասիրվող օրինաչափությունների մի մասին: Տեկտ. գործընթացների հիմնական պատճառներն են՝ երկրի ծավալի, պտտման արագության, առանցքի դիրքի և ներքին զանգվածքների տեղաբաշխման էական փոփոխությունները: Այդ մոտիվներով ստեղծվել են մի շարք Տ. վ., տե՛ս Դипотезы контрекции, мобилизма, тектоники плит, пульсационная, ротационная:

**T-52. ТЕКТОНИЧЕСКИЕ ДВИЖЕНИЯ – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՇԱՐՇՈՒՄՆԵՐ, TECTONIC MOVEMENTS**, երկրակեղևի մեխ. շարժումներ, որոնք հարուցվում են երկրակեղևում և երկրի միջնապատյանում գործող ուժերի կողմից: Այդ շարժումները հանգեցնում են կեղևը կազմող ապարների ձևափոխությունների: Տ. 2., ըստ արտահայտման ձևի, սահմանավորման խորության, մեխանիզմի և ծագման պատճառների, խիստ բազմազան են: Ընդունված է Տ. 2. բաժանել էպեյրոզեն (դանդաղ բարձրացումներ և իջեցումներ) և օրոզեն (լեռնագոյացման), դանդաղ (դարավոր) և արագ, ուղղաձիգ և հորիզոնական, ուղղորդված ու տատանողական և այլ շարժումների, ըստ արտահայտման ժամանակի՝ ժամանակակից, նորագույն և հին շարժումների: Ժամանակակից պատկերացումների համաձայն Տ. 2-ի հիմնական պատճառը համարվում են միջնապատյանում կոնվեկցիոն (ջերմափոխանցման)

հոսքերը: Այդ հոսքերի վերընթաց ճյուղերում քարոլորտը կրում է բարձրացում և ձգում, որը հանգեցնում է սալերի տարաշարժի՝ գոյացող ռիֆտային զոնաներում: Միջինօվկիանոսային ռիֆտերից հեռանալիս քարոլորտը խտանում է, ծանրանում է, նրա մակերևույթը իջնում է, որը պայմանավորում է օվկիանոսի խորության մեծացումը, և, վերջապես, այն խորասուզվում է խորջրյա փողրակներում: Մայրցամաքային ռիֆտերում տաքացած մագմայի վերընթաց հոսքերի մարունը հանգեցնում է քարոլորտի ստեղծման և խորասուզման՝ առաջացնելով նստվածքներով լցված ավազաններ: Նստվածքների ծանրության տակ ավազանների հիմքը կրում է լրացուցիչ խորասուզում: Համանման գործընթաց տեղի է ունենում մայր ցամաքների ծայրամասերում, երբ մայրցամաքային ռիֆտագոյացումը անցնում է օվկիանոսայինի (տե՛ս Спредиитг): Սալերի զուգամիտման ու ընդհարման զոնաներում երկրակեղևը և քարոլորտը կրում են սեղմում, կեղևի հզորությունը մեծանում է, սկսվում են ուժգին վերընթաց շարժումներ, որոնք հանգեցնում են լեռնագոյացման: Երկրակեղևի առանձին տեղամասերի բարձրացման համար լրացուցիչ գործոն է կեղևի տարբեր մակարդակներում խտությունների շրջումը (ինվերսիան), երբ մեծ խտության ապարների տակ տեղադրված են ավելի փոքր խտության ապարներ: Այդպիսի պայմաններ առաջանում են, երբ կեղևի նստվածքային շերտում տեղադրված են աղային ստվարաշերտեր, կամ երբ ապարները հասնում են ամֆիբոլիթային ֆացիայի փոխակերպման ու գրանիտացման խորությունները: Առաջին դեպքում առաջանում են աղային գմբեթներ (տե՛ս Соляная тектоника), երկրորդ դեպքում՝ գրանիտագնեյսային գմբեթներ (տե՛ս Купол гранито-гнейсовый): Տ. 2-ին խթանում են Երկրի միջնապատյանում ֆազային փոխարկումները, Երկրի պտտման արագության պարբերական փոփոխությունները, Լուսնի և Արևի ձգողականությամբ հարուցվող պինդ մակընթացությունները: Ժամանակակից Տ. 2. ուսումնասիրվում են գեոդեզիական մեթոդներով, որոնք ցույց են տալիս, որ այդ շարժումները տեղի են ունենում անընդմեջ և ամենուրեք: Ուղղաձիգ շարժումների արագությունը տարեկան մմ-ի մասերից մինչև առաջին տասնյակ մմ է, հորիզոնականներինը՝ սմ-ի մասերից մինչև առաջին տասնյակ սմ: Նորագույն շարժումները ուսումնասիրում են առավելապես երկրաձևաբանական (գեոմորֆոլոգիական) մեթոդներով: Մինչօլիգոցենյան շարժումների, հատկապես ուղղաձիգ, ուսումնասիրման մեջ առաջատար տեղ է գրավում նստվածքային ու հրաբխածին ապարների ֆացիաների ու հաստությունների վերլուծությունը: Քարոլորտի սալերի խոշորամասշտաբ տեղափոխությունների ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունեն հնամագնիսական հետազոտությունները:

**T-53. ТЕКТОНИЧЕСКИЕ ДЕФОРМАЦИИ – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԶԵՎԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, TECTONIC DEFORMATIONS**, ապարների տեղադրման ձևերի, ծավալի, ներքին կառուցվածքի և փոխադարձ դասավորության փոփոխություն՝ Երկրի ներծին ուժերի ազդեցության տակ: Վերջինները երկրակեղևում հարուցում են տեղային ուղղորդված կամ համակողմանի ձգման, սեղմման կամ տեղաշարժման պայմաններ: Տ. ձ-ի հետևանք են տեկտ. խախտումները (դիսլոկացիաները), որոնք բաժանվում են երեք դասի՝ խզվածքային (դիզյունկտիվ), ծալքավոր (պլիկատիվ) և ներարկունային: Որոշ խզվածքային խախտումներ առաջանում են ձգման պայմաններում (վարնետքեր), մյուսները՝ սեղմման պայմաններում (վերնետքեր, վրաշարժեր, տեկտոնական ծածկույթներ, շարիածներ), երրորդները՝ սահքապոկման պայմաններում (տեղաշարժ): Ծալքավոր խախտումների մեջ անջատում են ապարների ծալքեր: Ներարկունային դիսլոկացիաները կապված են երկրակեղևի նստվածքային շերտի ապար-

ների մեջ մագմայի կամ անբնականոն փոքր մածուցիկության կամ խտության ապարների (աղեր, կավեր, գնեյսներ) ներդրմամբ: Տ. ձ. երկրակեղևում արտահայտվում են անհավասարաչափ տարածության և ժամանակի մեջ:

**T-54. ТЕКТОНИЧЕСКИЕ КАРТЫ – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ, TECTONIC MAPS,** պատկերում են երկրակեղևի կազմությունը և նրա զարգացման հիմնական փուլերը՝ առանձին ռեգիոնների սահմաններում կամ երկրում ամբողջովին: Տարբերում են կառուցվածքային Տ. ք., որոնք պատկերում են տեկտ. կառուցվածքների ձևաբանությունը, և բուն Տ. ք., որոնք բացահայտում են այդ կառուցվածքների ձևավորման պատմությունը, զարգացման էտապներն ու փուլերը, մագմայականության կապը տեկտոնիկայի հետ:

**T-55. ТЕКТОНИЧЕСКИЕ ПРОГИБЫ – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԾԿՎԱԾՔՆԵՐ, TECTONIC TROUGHS,** երկրի գծային ձևի ցանկացած ձկվածքների (իջեցումների) ընդհանուր անվանում, որոնք գոյացել են տեկտ. շարժումների հետևանքով: Տ. ճ-ի մեջ առանձնացնում են մի քանի խմբեր. երկրասինկլինալային (տե՛ս Геосинклиналь), ծայրամասային ձկվածքներ (առաջավոր ձկվածքներ), միջլեռնային ձկվածքներ: Տարբերում են նաև ներպլատֆորմային ձկվածքներ (ավլակոգեններ, ռիֆտային համակարգեր): Բացի դա, Տ. ճ. բաժանվում են՝ ժառանգված Տ. ճ. (գոյանում են նախորդող ձկման տեղում) և վերադիր Տ. ճ., որոնք առաջանում են զգալի ընդմիջումից հետո, ավելի հին տարբեր կառուցվածքների վրա, որոնց նրանք աններդաշնակ հատում են: Ժամանակակից Տ. ճ-ի օրինակներ են խորջրյա փողրակները, Կարմիր ծովի ռիֆտային ձկվածքները և այլն:

**T-56. ТЕКТОНИЧЕСКИЕ СТРУКТУРЫ – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, TECTONIC STRUCTURES,** 1) որոշակի ռեգիոնի, մայր ցամաքի, օվկիանոսի, երկրակեղևի (ամբողջովին) սահմաններում տարբեր կազմի ու հասակի ապարների դասավորությունը և նրանց տեղադրման պայմանների փոփոխությունը: 2) երկրբ. մարմին՝ տարբեր կազմի ու հասակի ապարների տեղադրման բնորոշ ձև, որը կրկնվում է տարբեր ռեգիոններում և գոյացել է տեկտ. ուժերի միջոցով: Ապարների կառուցվածքային ձևերը ուսումնասիրում են կառուցվածքային երկրաբանությունը (փոքր ու միջին ձևերը՝ մինչև 10 կմ պրոֆիլաչափով) և տեկտոնիկան (խոշոր ձևերը՝ ավելի քան 100 կմ): Առաջինները կոչվում են տեկտ. խախտումներ կամ դիսլոկացիաներ և լինում են ծալքավոր, ներարկումային և խզվածքային: Երկրորդներին պատկանում են անտիկլինորիումներն ու սինկլինորիումները (ծալքավոր մագրերում), անտեկլիզները, սինեկլիզները, ավլակոգենները, վահանները, սալերը, պերիկրատոնային իջեցումները (պլատֆորմներում) և, վերջապես, ծալքավոր գոտիները, լեռնագոյացուկները (օրոգենները), պլատֆորմները, մայր ցամաքները, օվկիանոսները, մայր ցամաքների ստորջրյա ծայրամասերը (ակտիվ և պասիվ), միջինօվկիանոսային լեռնաշղթաները, օվկիանոսային սալերը, ինչպես նաև մայրցամաքային խորքային բեկվածքները, ռիֆտերը, տրանսֆորմ բեկվածքները, շարիածները: Բոլոր այս խոշոր Տ. կ. ընդգրկում են, որպես կանոն, ամբողջ երկրակեղևը և նույնիսկ քարոլորտը, այդ պատճառով էլ կոչվում են նաև խորքային Տ. կ.:

**T-57. ТЕКТОНИЧЕСКИЙ ПОКРОВ, ШАРЬЯЖ (Ֆրանս. charrier – գլորել, թավալել) – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹ, ՇԱՐԻԱԺ (ՄԱԿԱՇԱՐԺ), OVERTHRUST SHEET, NAPPE, CHARRIAGE,** մեղմաթեք վրաշարժ ապարների թիթեղներ, մի քանի հարյուր մ-ից մինչև մի քանի կմ հաստությամբ, որոնք ներքևից սահմանափակված են մեղմալիքավոր կամ համարյա հարթ մակերևույթով և իրենց առաջնային տեղադրման վայրից տեղափոխված են հորիզոնական ուղղությամբ մի քանի կմ-ից

մինչև մի քանի հարյուր կմ: Տեղափոխված զանգվածները կոչվում են ալոխթոններ, իսկ ներքին չտեղափոխվածները՝ ավտոխթոններ: Ալոխթոնի մեջ ավտոխթոնների ելուստները կոչվում են տեկտոնական պատուհաններ, իսկ ավտոխթոնի վրա ալոխթոնի մնացորդները՝ կլիպներ կամ տեկտոնական մնացորդներ: Առաջին անգամ Տ. ծ-ներ բացահայտված են Ալպերում, ժայռոտ լեռներում և Սկանդինավյան լեռներում 19-րդ-ի վերջում: Ապացուցված է, որ Տ. ծ-ները առաջնակարգ տեղ են գրավում աշխարհի ծալքավոր կառույցների մեծ մասի կազմում: Տ. ծ-ների առաջացմանը նպաստում են քարոլորտի շերտատվածությունը և հատկապես նրա քարաթերթերի սահմանում ցածրացված մածուցիկության հորիզոնների առկայությունը: Տ. ծ-ներ ընդգրկում են քարոլորտի տարբեր խորության ստվարաշերտերը: Որոշ Տ. ծ-ները կազմված են բացառապես նստվածքային ծածկոցի ապարներից, որոնք պոկվել են բյուրեղային հիմքից և բնորոշ են ծալքավոր կառույցների արտաքին զոնաներին (Ուրալ, Ապալաչներ, ժայռոտ լեռներ և այլն): Տ. ծ-ի մյուս տիպը ներառում է մայրցամաքային կեղևի ոչ միայն նստվածքային, այլև գրանիտազնեյսային շերտի ապարները (Սկանդինավյան, Շոտլանդական, Գրենլանդական կալեդոնիտներ, Ալպեր, Հիմալայներ և այլն): Երրորդ տիպը օֆիոլիթային ծածկույթներն են, որոնք կազմված են օվկիանոսային տիպի կեղևից և վերին միջնապատյանից (Ուրալ, Հր. Տյան-Շան, Սայաններ, Փոքր Կովկաս և այլն):

**T-58. ТЕКТОНИЧЕСКИЙ РЕЖИМ – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՌԵՃԻՄ, TECTONIC REGIME,** երկրակեղևի հիմնական կառուցվածքային մարզերում տեկտ. շարժումների ու ձևափոխությունների գերակշռող տիպ, որը երկարատև պահպանվում է: Մայր ցամաքների ու նրանց եզրերի սահմաններում առանձնացվում են Տ. ռ-ի հետևյալ տիպերը՝ շարժում գոտիների, լեռնագոյացման (օրոգեն) և պլատֆորմային:

**T-59. ТЕКТОНИЧЕСКИЙ РЕЛЬЕФ – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՌԵԼԻԵՖ, TECTONIC LAND-FORMS,** ռելիեֆի ձևեր, որոնք առաջացել են անմիջապես երկրի մակերևույթի տեկտ. ձևափոխությունների հետևանքով՝ ծալքերի, գմբեթների, վարնետքային սանդղավանդների և այլ տեսքով:

**T-60. ТЕКТОНИЧЕСКИЙ ЦИКЛ – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՑԻԿԼ, TECTONIC CYCLE,** երկրի երկրբ. պատմության ժամանակաշրջան, որը բնութագրվում է տեկտ. և ընդհանուր երկրբ. իրադարձությունների որոշակի հաջորդականությամբ: Տ. ց. առավել ակնառու արտահայտվում է երկրասինկլինալներում, որտեղ ցիկլը սկսվում է երկրակեղևի խորասուզմամբ, նստվածքների հզոր ստվարաշերտերի կուտակմամբ, ստորջրյա հրաբխայնությամբ: Այնուհետև գոյանում են կղզեաղեղներ, սկսվում են ծալքավորաշարժային ձևափոխություններ, լեռնազանգվածների ձևավորում՝ շրջապատված ու բաժանված ծայրամասային ու միջլեռնային ճկվածքներով, որոնք լցվում են մուսսներով: Այդ գործընթացը ուղեկցվում է ռեզիոնալ փոխակերպությամբ, գրանիտազոյացմամբ, ցամաքային հրաբխային արտավիժումներով: Պլատֆորմներում ցամաքային պայմանները փոխարինվում են ծովածավալմամբ և այնուհետև՝ ծովի հետընթացությամբ, ցամաքային ռեժիմի հաստատմամբ և հողմահարման կեղևի առաջացմամբ: Ֆաներոզոյում Տ. ց-ի միջին տևողությունը 150-180 մլն. տ. է:

**T-61. ТЕКТОНИЧЕСКОЕ РАЙОНИРОВАНИЕ – ՏԵԿՏՈՆԱԿԱԿԱՆ ՀՐՁԱՆԱՑՈՒՄ, TECTONIC REGIONALIZATION,** երկրակեղևի կամ տեկտոնոլորտի բնական տեղամասերի առանձնացում, որի հիմքում ընկած է դրանց պատմաերկրբ. զարգացումը, ձևաբանական առանձնահատկությունները և համալիր երկրաբանաերկրֆ. ուսումնասիրությունը: Տ. շ. լայնորեն օգտագործվում է օգտ. հնժ-ների տեղաբաշխման օրինաչափությունները բացահայտելու համար, մետաղագոյացման ու

երկրաշարժագիտական ուսումնասիրությունների ժամանակ, նավթային ու ածխային երկրաբանությունում: S. շ-ման ժամանակ սովորաբար անջատվում են հետևյալ տեկտ. ստորաբաժանումները՝ տեկտոնական կառուցվածքները, տեկտոնական ցիկլերն ու փուլերը, կառուցվածքաֆորմացիոն զոնաներն ու համալիրները, կառուցվածքային հարկերը և այլն: S. շ-ման դեպքում կարելի է ընդունել համաստորադասական կառուցվածքների հետևյալ շարքը: Մայր ցամաքների համար՝ ծալքավոր (շարժուն) գոտիներ → ծալքավոր մարզեր → ծալքավոր համակարգեր → մեզանտիկլինորիումներ և մեզասինկլինորիումներ → անտիկլինորիումներ և սինկլինորիումներ, միջադիր զանգվածներ, լեռնագոյացման ճկվածքներ: Պլատֆորմների խումբ → հին պլատֆորմներ, երիտասարդ պլատֆորմներ, սալեր, անտեկլիզներ և սինեկլիզներ, կամարներ, պլատֆորմային իջվածքներ, ներպլատֆորմային ռիֆտեր, պերիկրատոնային իջվածքներ, ավլակոգեններ: Ակտիվացման մարզերի կառուցվածքներ՝ հետպլատֆորմային (էպիպլատֆորմային) լեռնագոյացման (օրոգեն) գոտիներ, հրաբխային գոտիներ, բեկորային, կամարային և կամարաբեկորային բարձրացումներ, վերադիր իջվածքներ (հրաբխածին և այլ տիպերի գրաբեն-սինկլինալներ): Մայր ցամաքների և օվկիանոսների միջև անցողիկ զոնաների համար՝ մայրցամաքային լանջ, ծայրամասային ծովերի գոգավորություններ (երկրասինկլինալային գոգավորություններ), կղզեաղեղներ (հասունացած և երիտասարդ), խորջրյա փողակներ: Օվկիանոսների համար՝ թալասոկրատոններ (օվկիանոսային պլատֆորմներ), միջինօվկիանոսային շարժուն (ռիֆտային) գոտիներ, օվկիանոսային թմբեր, օվկիանոսային սալեր, ներօվկիանոսային հրաբխային գոտիներ, տերեներ (օտարաբլուկներ):

**T-62. ТЕКТОНОСФЕРА – ՏԵԿՏՈՆՈՍՓԵՐԱ, TECTONOSPHERE,** Երկրի արտաքին թաղանթ, ընդգրկում է երկրակեղևը և վերին միջնապատյանը, որտեղ հիմնականում տեղի են ունենում տեկտ., ինչպես նաև մագմայական և փոխակերպային գործընթացներ: S-ի համար բնորոշ է այն կազմող ապարների ֆիզ. հատկությունների և կազմի ուղղաձիգ և հորիզոնական անհամասեռությունը:

**T-63. ТЕКТОНОФИЗИКА – ՏԵԿՏՈՆԱՖԻԶԻԿԱ, TECTONOPHYSICS,** տեկտոնիկայի բաժին, ուսումնասիրում է ապարների շերտերում տեկտ. ձևախախտումների (ծալքեր, խզվածքներ և այլն) ֆիզ. պայմանները: S-ի հիմնական խնդիրը երկրակեղևում լարվածությունների և դրանց առաջացման տարբեր մեխանիզմների բացահայտումն է: Արտասահմանյան գրականությունում «Տեկտոնաֆիզիկան» ավելի լայնորեն հասկացվում է որպես երկրում ընթացող բոլոր գործընթացների ֆիզիկա: S.-յում լայնորեն օգտագործվում է տեկտ. գործընթացների ֆիզ. մոդելավորման մեթոդը: S-կան ուսումնասիրությունների արդյունքները մեծ չափով օգտագործվում են խորքային գործընթացների պատճառների, երկրաշարժերի կանխագուշակման, օգտ. հնձ-ների որոնման, հետախուզման ու մշակման ժամանակ:

**T-64. ТЕЛО РУДНОЕ – ՀԱՆՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ (ՀԱՆՔԱՄԱՐՄԻՆ), OREBODY,** տե՛ս Рудное тело:

**T-65. ТЕЛО РУДНОЕ СЕКУЩЕЕ – ՀԱՏՈՂ ՀԱՆՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ (ՀԱՆՔԱՄԱՐՄԻՆ), CROSS-CUTTING OREBODY,** մարմին, որի դիրքը չի համապատասխանում ներփակող ապարների ներքին կառուցվածքային տարրերին (երակներ, նրբերակներ, սյուներ, հանքազանգվածներ և այլն):

**T-66. ТЕЛО РУДНОЕ СОГЛАСНОЕ – ՆԵՐԴԱՇՆԱԿ ՀԱՆՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ (ՀԱՆՔԱՄԱՐՄԻՆ), CONCORDANT OREBODY,** հարմարված է ներփակող ապարների ներքին կառուցվածքային տարրերին (շերտավորմանը): Դրանց են պատկանում հանքային շերտերը, հանքային կուտակումները, հանքային ոսպնյակները և այլն:

**T-67. ТЕННАНТИТ, МЫШЬЯКОВАЯ БЛЁКЛАЯ РУДА** (անգլ. քիմիկոս Ս. Տեննանտի, S. Tennant, 1761-1815, անունով) – **ՏԵՆԱՆՏԻՏ, ՉԱՌԻԿԻ (ԱՐՍԵՆԻ) ԽՈՒՆԱՑԱԾ ՉԱՆՔԱՔԱՐ, TENNANTITE**, միներալ, պղնձի բարդ սուլֆիդ,  $Cu_{12}As_4S_{13}$ : Տետրաէդրիդ – Ս. խմբի խունացած հանքանյութերի նմանածև (իզոմորֆ) շարքի ծայրանդամ: Բյուրեղագիտական համակարգը խորանարդային է, առաջացնում է տետրաէդրային, խորանարդային տեսքի բյուրեղներ, ավելի հաճախ՝ նրբահատիկավոր հոծ զանգվածներ: Գույնը՝ պողպատի մոխրագույներից մինչև մոխրագույն-սև: Կարծրությունը՝ 3.5-4.5: Հանդիպում է որպես երկրորդական հանքային միներալ միջին ջերմաստիճանային ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվ-երում, հրաբարային և բազմամետաղական հանքանյութերում:

**T-68. ТЕПЛОВОЙ БАЛАНС В ГЕОФИЗИКЕ – ՋԵՐՄԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՈՐ ԵՐԿՐԱՖԻ-ՉԻՎԱՅՈՒՄ, HEAT BALANCE IN GEOPHYSICS**, ջերմության մուտքն ու ելքը երկիր-մթնոլորտ համակարգում: Տարբերում են երկրի մակերևույթի և մթնոլորտի ջերմային հաշվեկշիռներ: Առաջինը բաղկացած է արեգակնային ճառագայթման տեսքով ջերմության մուտքից և գոլորշիացման, ճառագայթման ու ջերմատվության (երկրի մակերևույթից դեպի մթնոլորտ) գումարային ելքից: Մթնոլորտային ջերմային հաշվեկշիռը բաղկացած է երկրի մակերևույթից անդրադարձող երկարալիք ճառագայթման, կլանման, ջրային գոլորշիների խտացման ու երկրի մակերևույթից դեպի մթնոլորտ ջերմատվության մուտքից և դեպի երկրի մակերևույթ ու համաշխարհային տարածք ուղղված ճառագայթումների գումարային ելքից:

**T-69. ТЕРМАЛЬНЫЕ ВОДЫ – ՋԵՐՄԱՋՐԵՐ (ԹԵՐՄԱԼ ՋՐԵՐ), THERMAL WATER**, տաք սուր. ջրեր, որոնց ջերաստիճանը ելքի տեղում  $+20^{\circ}\text{C}$ -ից բարձր է, կամ այլ սահմանումով՝ բարձր է տվյալ տեղանքի օդի տարեկան միջին ջերմաստիճանից:

**T-70. ТЕРМОЭРОЗИЯ** (հուն. *thérme* – ջերմություն և *էրոզիա*) – **ՋԵՐՄԱՈՂԱՂԱՍԱՇՈՒՄ (ՋԵՐՄԱԵՐՈՋԻԱ), THERMAL EROSION**, սառույցներից կամ բազմամյա սառցակալած ապարներից կազմված մակերևույթի ջրհոսքերով ողողման գործընթաց, որի ընթացքում հոսող ջրի ազդեցության հետ համատեղ տեղի է ունենում սառույցի հալչում:

**T-71. ТЕРРА РОССА, КРАСНАЯ ЗЕМЛЯ** (իտալ. *terra* – հոսող և *rossa* – կարմիր) – **ՏԵՐԱ ՌՈՍԱ, ԿԱՐՄՐԱՅՈՂ, TERRA ROSSA, RED EARTH**, կարմրագույն նստվածքներ, որոնք կազմված են հիդրոփայլարներից, գյոտիտից և հեմատիտից՝ կաոլինիտի, գիբսիտի և բյոմիտի հազվադեպ խառնուրդով կամ գերակշռությամբ: Առաջանում են կրաքարերի և հողմով բերված փոշու չլուծվող մնացորդից՝ ժամանակակից չորային կամ փոփոխական-խոնավ արևադարձային և մերձարևադարձային կլիմայի պայմաններում: Կուտակվում են կարստային ծագարների հատակում:

**T-72. ТЕРРАСЫ** (ֆրանս. *terrasse*, լատ. *terra*-ից – ցամաք, հող) – **ԴԱՐԱՎԱՆԴՆԵՐ (ԴԱՐԱՏԱՓԵՐ), TERRACES**, հովտի լանջերի, լճերի ու ծովերի ափերի ռելիեֆի աստիճանանման ձևեր: Համապատասխանաբար տարբերում են գետային, լճային, ծովային և խառը ծագման Դ.: Յուրաքանչյուր Դ-ի մոտ առանձնացվում են Դ-ի մակերևույթ կամ հարթակ, Դ-ի դարավուլ կամ սանդղավանդ, Դ-ի եզերք և թիկունքային կար կամ ծայր: Տարբերում են կուտակումային դարավանդներ և ողողամանային դարավանդներ, պատվանդանային և արմատական: Դ. հաճախ դասավորվում են մի քանի հարկերով՝ մեկը մյուսի վրա, դա վկայում է գետի գոյության ընթացքում կուտակման և ողողահարման մի քանի ցիկլերի մասին, որոնք պայմանավորված են անհավասարաչափ տեկտ. բարձրացումներով, կլիմայի փոփոխություններով և ջրային ավազանի մակարդակի տեղափոխություններով:



**T-73. ТЕРРИГЕННЫЕ ОТЛОЖЕНИЯ** (լատ. terra – ցամաք, գետին և հուն. genês – ծնող, ծնված) – **ՑԱՄԱՔԱԾԻՆ (ՏԵՐՐԻԳԵՆ) ԼՍՏՎԱԾՔՆԵՐ, TERRIGENOUS DEPOSITS**, բեկորային նստվածքներ և բեկորային ապարներ՝ կազմված հիմնականում տարբեր ապարների բեկորներից ու միներալների հատիկներից, որոնք գոյացել են ի հաշիվ ցամաքի լերկացման (դենուդացիայի): Առաջանում են ինչպես ծովային ավազաններում, այնպես էլ ցամաքային պայմաններում:

**T-74. ТЕТИС** (հուն. դիցաբանության մեջ ծովի աստվածուհու Փետիդի, Thétys, անունով) – **ՏԵԹԻՍ, THETYS**, հին օվկիանոս, որը մեզոզոյում և վաղ կայնոզոյում բաժանել է Լավրասիայի և Գոնդվանայի մայրցամաքային զանգվածները, որոնք հետագայում մասնատվել են՝ կապված Ատլանտյան և Յնդկական օվկիանոսների առաջացման հետ: Ուշ կայնոզոյում՝ սկսած էոգենի վերջից (մոտ 40 մլն. տ.), Տ. իրենից ներկայացրել է իրեն սահմանափակող մայր ցամաքների մոտեցման մարզ, նրա տեղում գոյացել է ծալքավոր-ծածկոցային լեռնային կառուցվածքներից բաղկացած Ալպ-Հիմալայան գոտին, որը ձգվում է Ջիբլարթարից մինչև Ինդոնեզիա՝ ընդգրկելով Բետյան Կորդիլիերները, Պիրենեյները, Ապենինները, Ալպերը, Կարպատները, Դինարիդները, Բալկանները, Պոնտիդները, Տավրոսը, Կովկասը, Կոպետդաղը, Էլբուրսը, Ջագրոսը, Պամիրը, Հիմալայները, Յնդկաբիրմայան լեռնաշղթաները, Ջոնդան կղզիները: Տ-ի մնացորդներ են համարվում Միջերկրական, Սև, Կասպից ծովերը, Պարսկական ծոցը, Մալազյան արշիպելագի ծովերը: Մեզոկայնոզոյան Տ-ի (Նեոտեթիսի) առաջացմանը նախորդել է նման լայնական օվկիանոսի գոյությունը ուշ պալեոզոյում-մեզոզոյի սկզբում (Մեզոտեթիս), վաղ ու միջին պալեոզոյում (Պալեոտեթիս) և ուշ պրոտերոզոյում (Պրոտոտեթիս): «Տեթիս» տերմինը առաջարկել է ավստրիացի երկրաբան Է. Չյուսը 1893-ին:

**T-75. ТЕФРА** (հուն. téphra – մոխիր) – **ՏԵՖՐԱ, TERHRA**, ժայթքման ժամանակ առաջացած հրաբխային բեկորային արգասիքների ընդհանուր անվանում:

**T-76. ТЕХНОГЕНЕЗ** (հուն. téchnē – արվեստ, արհեստ, վարպետություն և génesis – ծնում, ծագում) – **ՏԵԽՆԱԾԻՆ, TECHNOGENESIS OF LANDSCAPE**, լանդշաֆտների (բնապատկերների) ծագումը և փոփոխությունը՝ տեխնածին գործոնների ուղղակի կամ անուղղակի ազդեցության տակ (հանքավայրերի մշակում, հիդրոտեխնիկական կառույցների, անտառային զանգվածների օգտագործում և այլն):

**T-77. ТЕШЕНИТ** (Գերմ. Տեշեն, Teschen, ք-ի անունով) – **ՏԵՇԵՆԻՏ, TESHENITE**, մուգ գույնի ենթախորքային լիաբյուրեղային ալկալիական ապար, պարունակում է գլխ. պլագիոկլազ, երբեմն տիտանավգիտի հետ, և եղջերախաբ: Կառուցվածքը սովորաբար դիաբազային է: Կազմում է ոչ մեծ զանգվածներ, դայկաներ, սիլեր:

**T-78. ТИЛЛИТЫ** (անգլ. եզ. ք., tillite, till-ից – գլաքարային կավ) – **ՏԻԼԼԻՏՆԵՐ, TILLITES**, հին խոշորաբեկորային չտեսակավորված սառցադաշտային նստվածքներ (սառցաբերուկներ), որոնք ենթարկվել են խտացման (ցեմենտացման), երբեմն՝ փոխակերպության (մետամորֆոսիայի): Տ. հին սառցապատումների վկաներ են: Հայտնի են վաղ պրոտերոզոյից և խիստ լայն տարածված են համարյա բոլոր մայր ցամաքների վերին պրոտերոզոյի նստվածքներում: Տ. լայնորեն օգտագործվում են շերտագրության, հնաշխարհագրության (հնակլիմայի) հարցերի լուծման համար, ինչպես նաև որոշ օգտ. հնձ-ների (օր.՝ երկաթի հանքանյութերի հնքվ-երի) կանխագուշակման համար:

**T-79. ТИТАН, Ti** (հուն. Titánes – տիտաններ, լատ. Titanium) – **ՏԻՏԱՆ, TITANIUM**, պարբերական համակարգի IV խմբի քիմիական տարր, արծաթասպիտակավուն մետաղ: Տ-ի միջին պարունակությունը (քլարկը) երկրակեղևում 0.45 % է:

**T-80. ТИТАНИТ, СФЕН – S<sub>2</sub>SU<sub>2</sub>S, UՖԵՆ, TITANITE, SPHENE**, կղզային սիլիկատների ենթադասի միներալ, CaTi[SiO<sub>4</sub>](O, OH, F): Բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է: Առաջացնում է աղյուսածև, սեպանման, սակավ` հատվածակողմային, ասեղնաձև բյուրեղներ: Գույնը` շագանակագույն, դեղին, սպիտակ, կանաչ: Կարծրությունը` 5-6: Գրանիտների, ալկալիական մագմայական ապարների ակցետրային միներալ է, հանդիպում է նաև զնեյսներում, բյուրեղային թերթաքարերում, քվարցային երակներում: Թափանցիկ տարատեսակները կիսաթանկարժեք քարեր են:

**T-81. ТИТАНОВЫЕ РУДЫ – S<sub>2</sub>SU<sub>2</sub>S ՅԱՆՔԱՔԱՐԵՐ, TITANIC ORES**, տիտանի բնական միներալային առաջացումներ, որոնցից մետաղի կորզումը տնտեսապես շահավետ է: Կարևոր միներալներ են` իլմենիտը, ռուտիլը, անատազը, բրուկիտը, լեյկոքսենը, լոպարիտը, տիտանիտը: Հնքվ-երը լինում են մագմայական, արտածին և փոխակերպածին: Մագմայական հնքվ-երը կապված են գերհիմքային, հիմքային, ալկալիական ապարների հետ և պարունակում են 7-32 % TiO<sub>2</sub>: Արտածին հնքվ-երի մեջ տարբերում են իլմենիտային և ռուտիլային հնքվ-եր` հողմահարման կեղևում (3-30 % TiO<sub>2</sub>), իլմենիտ-ռուտիլի էլուվիալ-դելուվիալ և ալյուվիալ ցրոններ (0.5-25 % TiO<sub>2</sub>), իլմենիտ-ռուտիլի առափնյաձուլային ցրոններ (0.5-35 % TiO<sub>2</sub>):

**T-82. ТИТАНОМАГНЕТИТ – S<sub>2</sub>SU<sub>2</sub>S ՄԱՍՍՈՒՄՄԱՍՏՅԱՆ, TITANOMAGNETITE**, 1) բարդ օքսիդների ենթադասի միներալ, տիտանապարունակ մագնետիտ, (Fe, Ti) Fe<sub>2</sub>O<sub>4</sub>, 2) մագնետիտ` ուլվաշպինելի կամ իլմենիտի ներփակվածքներով: Երկաթի, տիտանի և վանադիումի համալիր հանքանյութեր են:

**T-83. ТИТОНСКИЙ ЯРУС, ТИТОН** (հուն. դիցաբանության հերոս Տիտանոսի, Tithōnos, անունով) – **S<sub>2</sub>SU<sub>2</sub>S ՅԱՐԿ, S<sub>2</sub>SU<sub>2</sub>, TITHONIAN**, յուրայի համակարգի վերին բաժնի վերին հարկ: Անջատված է Միջերկրածովյան մարզում, համապատասխանում է Բորեալ մարզի վոլգյան հարկին:

**T-84. ТОВАРСКИЙ ЯРУС, ТОВАР** (Տուար ք-ի լատ. Toarcium, անվանումից, Ֆրանս.) – **ՏՈՒՐԻ ՅԱՐԿ, ՏՈՒՐ, TOARCIAN**, յուրայի համակարգի ստորին բաժնի վերին հարկ:

**T-85. ТОЛЩА – ՍՏՎԱՐԱՇԵՐՏ (ԱՊԱՐԱՋԱՆԳՎԱԾ), ROCK MASS, SERIES, STRATA**, շերտագրական ազատ օգտագործման տերմին, որն օգտագործվում է տարբեր հաստության ու հասակի որևէ ընդհանուր առանձնահատկություններ ունեցող նստվածքային, հրաբխային կամ փոխակերպային առաջացումների մշման համար: Հաճախ Ս. անվանում են այնպիսի երկրք. մարմինը, որի առանձնացման հիմնավորման անբավարարությունը հնարավորություն չի տալիս այն համարել շերտախումբ կամ ենթաշերտախումբ:

**T-86. ТОЛЩА РУДОНОШАЯ – ՅԱՆՔԱՔԱՐԵՐ ՍՏՎԱՐԱՇԵՐՏ (ԱՊԱՐԱՋԱՆԳՎԱԾ), ORE-BEARING ROCK MASS**, որևէ շերտագրական ստորաբաժանման (շերտախմբի, շերտատուփի և այլն) նստվածքներ, որոնք ներփակում են հանքային գոյացություններ: Ազատ օգտագործման տերմին է:

**T-87. ТОПАЗ** (ֆրանս. topaze, հուն. topazos – հավանաբար Կարմիր ծովի նույնանուն կղզու անունից, որտեղ, ինչպես ենթադրվում է, առաջին անգամ հայտնաբերվել է S-ի հնքվ-եր) – **ՏՊԱՋԻՈՆ, ՏՊԱՋ, TOPAZ**, միներալ, ալյումինի կղզային սիլիկատ, Al<sub>3</sub>[F<sub>2</sub>]SiO<sub>4</sub>, պարունակում է հիդրօքսիլ և ֆտոր: Բյուրեղագիտական համակարգը շեղանկյունային է: Առաջացնում է հատվածակողմային բյուրեղներ, հատիկավոր ագրեգատներ, հաճախ` բյուրեղախմբեր: Գույնը` անգույն, երկնագույն, վարդագույն, գինու դեղին: Կարծրությունը` 8: Հանդիպում է գրանիտային պեգմատիտներում, պնևմատոլիթային հնքվ-երում: Տոպազի թափանցիկ, գեղեցիկ գունավորված բյուրեղները երկրորդ կարգի թանկարժեք քարեր են:

- T-88. ТОПОГРАФИЧЕСКАЯ ОСНОВА – ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՀԻՍՔ, TOPOGRAPHICAL BASIS**, տեղագրական քարտեզ, որն օգտագործվում է որպես հիմք՝ վրան այլ քարտեզ գծելու համար:
- T-89. ТОПОГРАФИЧЕСКИЕ КАРТЫ – ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ, TOPOGRAPHIC MAPS**, խոշորամասշտաբ ընդհանուր աշխ. քարտեզներ, որոնց վրա մանրամասն պատկերվում են տեղանքի բնական և սոցիալ-տնտեսական օբյեկտները:
- T-90. ТОПОГРАФИЯ** (հուն. τόπος – տեղանք, վայր և grápho – գրում են, նկարագրում են) – **ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ՏՈՊՈԳՐԱՖԻԱ), TOPOGRAPHY**, գիտական դասընթաց, որը մշակում է տեղանքի հանույթի մեթոդները՝ այն տեղագրական քարտեզի վրա պատկերելու նպատակով: Ժամանակակից Տ-յան հիմնական մեթոդներն են օդալուսանկարահանումը, ինչպես նաև տիեզերական հանույթը: Վերգետնյա հանույթները օգտագործվում են առավելապես այն տեղամասերում, որտեղ օդից կամ տիեզերքից քարտեզագրումը հեռավորական մեթոդներով անշահութաբեր է (փոքր տարածքներ, բարձրալեռնային շրջաններ):
- T-91. ТОРИАНИТ – ԹՈՐԻԱՆԻՏ, THORIANITE**, օքսիդների դասի միներալ, ThO<sub>2</sub>: Ուրանիտի հետ հաճախ առաջացնում է անընդմեջ նույնաձև (իզոմորֆ) շարք: Բյուրեղագիտական համակարգը խորանարդային է: Բյուրեղներն ունեն խորանարդի և օկտաէդրի ձև: Հաճախակի են կրկնաբյուրեղները: Գույնը՝ սև, մուգ մոխրագույն: Կարծրությունը՝ 6.5-7.5: Ուժեղ ճառագայթաակտիվ է: Հանդիպում է պեգմատիտներում, կարբոնատիտներում, փոխակերպված կրաքարերում: Թորիումի հիմնական հանքանյութերից է:
- T-92. ТОРТОНСКИЙ ЯРУС, ТОРТОН (Տորտոն, Tortona ք-ի անունով, Իտալ.) – ՏՈՐՏՈՆԻ ՀԱՐԿ, ՏՈՐՏՈՆ, TORTONIAN**, Արևմտյան Եվրոպայի նեոգենի համակարգի վերին միոցենի ստորին հարկ:
- T-93. ТОРФ** (գերմ. Torf) – **ՏՈՐՖ, PEAT**, այրվող օգտ. հնժ., առաջանում է ճահճային բուսականության բնական մահացման և ոչ լրիվ տրոհման գործընթացում՝ ավելցուկային խոնավացման և օդի մուտքի դժվարության պայմաններում: Իրենից ներկայացնում է ածխազոյացման գործընթացի առաջին փուլի արդյունք: Սկզբնական բուսական կազմին, առաջացման պայմաններին և հատկություններին համապատասխան՝ առանձնացնում են 3 հիմնական տիպեր՝ բարձրվայրային, անցողիկ, ցածրավայրային: Տորֆը հանդիպում է հանքակուտակումների տեսքով: Տորֆի հնքվ-երի գրաված ընդհանուր մակերեսը մոտ 350 մլն. հեկտար է:
- T-94. ТОРФООБРАЗОВАНИЕ – ՏՈՐՖԱԳՈՅՍՑՈՒՄ, PEAT FORMATION**, տորֆի առաջացման վայրը տորֆային ճահիճն է: Տորֆի ծագումը կապված է ճահիճներում բույսերի ամենամյա աճման, նրանց մահացման, կուտակման և բուսազանգվածի ոչ լրիվ տրոհման հետ՝ ավելցուկային խոնավացման և թթվածնի անբավարար մուտքի պայմաններում: Բույսերի մահացած մասը ենթարկվում է հիմնականում կենսաքիմ. քայքայման կուտակի վերին շերտերում՝ գրունտային ջրերի ցածրացման պարբերաշրջանում: Տ. ըստ խորության կտրուկ մարում է՝ միջավայրի ռեժիմի փոփոխման և կեսաբանորեն ակտիվ օդակյաց միկրոօրգանիզմներն անօդակյացներով փոխարինվելու հետևանքով: Տ-ման գործընթացում առանձնացվում են 2 փուլ՝ կենդանի օրգանական նյութի կուտակում և սկզբնական բուսական մնացորդների ոչ լրիվ տրոհում: Կուտակված կենսազանգվածի 8-ից մինչև 30 %-ը փոխակերպվում է տորֆի:
- T-95. ТОРФЯНАЯ ЗАЛЕЖЬ – ՏՈՐՖԱԿՈՒՏԱԿ, PEAT DEPOSIT**, երկր. մարմին, որն առաջացել է տարբեր տիպի տորֆերի շերտավորումից: Վերջինների օրինաչափ հերթափոխը արտացոլում է ջրամիներալային սնուցման, բուսական ծածկոցի և

տորֆագոյացման գործընթացի պայմանների փոփոխությունը: S-ի հիմնական բնութագրերն են՝ ծագումնային տիպը, չափերը, խորությունը, տորֆի հաստությունը, միներալային ենթաշերտերի հաստությունը, սապրոպելի առկայությունը և հաստությունը, խոնավությունը, քայքայման աստիճանը, տորֆի մոխրայնությունը և այլն: S-ները ստորաբաժանվում են 4 տիպի՝ ցածրավայրային, անցողիկ, խառն և բարձրավայրային:

**T-96. ТРАВЕРТИН** (իտալ. travertino, լատ. lapis Triburtinus – քար Տիբուրից, Տիբուրը ք. է հին Իտալիայում, այժմ Տիվոլի, Tivoli), **ИЗВЕСТКОВЫЙ ТУФ – ՏՐԱՎԵՐՏԻՆ, ԿՐԱՔԱՐԱՅԻՆ ՏՈՒՖ, TRAVERTINE, CALCAREOUS TUFF**, հանքային ածխաթթվային տաք և սառը աղբյուրների կրաքարային նստվածք: Սովորաբար ունի մակահոսային կառուցվածք և մեծ ծակոտկենություն: Լավ մշակվում է: Հաճախ պարունակում է բույսերի դրոշմահետքեր և տարբեր օրգանական մնացորդներ: Գույնը սովորաբար բաց է, դեղնամոխրագույն, բաց դեղնավուն, գորշավուն-մոխրագույն: Ծակոտկենությունը՝ 2-ից մինչև 40 %: Երբեմն շատ զեղեցիկ է կոտրվածքում և հղկված տեսքով, կիրառվում է որպես շինարարական և երեսպատման քար, ցեմենտի արտադրության մեջ:

**T-97. ТРАНСГРЕССИЯ** (լատ. transgressio – առաջխաղացում, տեղափոխություն) – **ԾՈՎԱՐՇԱՎ (ԾՈՎԱԾԱՎԱԼՈՒՄ, ՏՐԱՆՍԳՐԵՍԻԱ), TRANSGRESSION**, ցամաքի վրա ծովի տեղաշարժման գործընթաց, որը տեղի է ունենում կա՛մ վարընթաց տեկտ. շարժումների հետ կապված երկրակեղևի իջեցման, կա՛մ Համաշխարհային օվկիանոսի մակարդակի բարձրացման հետևանքով, մասնավորապես միջսառցադաշտային դարակարգերում սառցադաշտերի հալման կամ միջինօվկիանոսային լեռնաշղթաների աճման հետևանքով: Սովորաբար արտահայտվում է ծովի մի շարք ավելի կարճատև առաջընթացով և հետընթացով՝ առաջինի գերակշռությամբ: Ուղեկցվում է ափաքերմամբ (աբրազիայով), ընդմիջումների ու անկյունային աններդաշնակությունների առաջացմամբ: Ծ-ի ժամանակ առաջացած ապարների կտրվածքը բնորոշվում է ներքևից դեպի վեր ծանծաղուտային ֆացիաների փոխարինմամբ խոր ծովայիններով, այսպես կոչված՝ ծովարշավային (տրանսգրեսիվ) տեղադրում: Հակադիր գործընթացը կոչվում է ռեգրեսիա (հետընթացություն):

**T-98. ТРАПЫ** (չվեդ. trappa – աստիճան, սանդուղք) – **ՏՐԱՊԵՆԵՐ (ԿՃԱՔԱՐԵՐ), TRAPPS**, աստիճանաձև անջատում ունեցող հիմքային մագմայական ապարների ընդհանուր անվանում: Առաջանում են պլատֆորմների վրա՝ ցամաքային պայմաններում: Ենթադրվում է, որ տրապային ապարախմբերը գոյանում են հիմքային մագմայի արտավիժումից, որը բարձրանում է միջնապատյանի մեծ խորություններից: «Տրապներ» տերմինը չունի հստակ ապարագրական նշանակություն: Տրապային ապարախմբերի կազմի մեջ մտնում են տոլեիտները, բազալտները, դիաբազները, դոլերիտները, պորֆիրիտները, որոնք ունեն խիստ տարբեր կառուցվածք և կազմվածք, ինչպես նաև հպումափոխակերպային ապարները: Տ. գրավում են զգալի մակերեսներ Սիբիրում, Հնդկաստանում, Հարավային Աֆրիկայում, Հարավային Ամերիկայում: S-ի հետ կապված են ալմաստի, իսլանդական սպաթի, ցեոլիթների, գրաֆիտների և այլ հնքվ-եր:

**T-99. ТРАСС** (գերմ. Trass, իտալ. terrazzo-ից – փռվածք) – **ՏՐԱՍՍ, TRASS**, հնացած տերմին է, վերաբերում է նուրբ հրաբխային տուֆին, որը փոփոխված է և պինդ ցեմենտացված: Հարուստ է ամորֆ սիլիկաթթվով: S-ի կազմի մեջ են մտնում հրաբխային ապակու բազմաթիվ մանր բեկորներ, որոնք մասամբ փոխարկվում են ցեոլիթների: Հանդիպում են ՀՀ-ում, Ղրիմում: Օգտագործվում են ցեմենտի արտադրության մեջ:

**T-100. ТРАХИТ** (հուն. trachys – անհարթ, անողորկ) – **ՏՐԱԽԻՏ, TRACHYTE**, ենթաակալիական շարքի նորատիպ արտավիժումային ապար, կազմված է ալկալիական

դաշտային ապաթից (անորթոկլազ, սանիդին), պլագիոկլազից, կլինոպիրոքսենից, ամֆիբոլից, բիոտիտից, ինչպես նաև հրաբխային ապակուց կամ նրա փոփոխության արգասիքներից: Երկրորդական և ակցեսորային միներալներ են՝ շեդանկյունային պիրոքսենը, օլիվինը, մագնետիտը, ապատիտը, տիտանիտը: Հիմնական զանգվածի կառուցվածքը տրախիտային է, հիալոպիլիտային, սֆերոլիթային: Կազմվածքը պորֆիրային, աֆիրային, հոծ է: Գույնը՝ սպիտակ, բաց մոխրագույն, դեղնավուն, վարդագույն: Սիենիտի արտավիժումային նմանակն է: Առաջացնում է հոսքեր, ծածկոցներ, գմբեթներ, նեկեր: Ապարը շոշափելիս խորդուբորդ է, անհարթ:

**T-101. ТРЕМАДОКСКИЙ ЯРУС, ТРЕМАДОК** (Ուելսում գտնվող Տրեմադոկ գյուղի անունով, Անգլ.) – **ՏՐԵՄԱԴՈՎԻ ՀԱՐԿ, ՏՐԵՄԱԴՈՎ, TREMADOCIAN**, օրդովիկի համակարգի ստորին հարկ: Որոշ անգլիացի երկրաբաններ դիտարկում են որպես քեմբրիի մաս:

**T-102. ТРЕМОЛИТ** (առաջին անգամ գտնված վայրի՝ Տրեմոլա, Tremola, հովտի անունով, Ալպերում, Շվեյց.) – **ՏՐԵՄՈԼԻԹ, TREMOLITE**, ամֆիբոլների խմբի ապարակազմիչ միներալ: Կալցիումի և մագնեզիումի շերտավոր սիլիկատ,  $Ca_2Mg_5[Si_4O_{11}](OH,F)_2$ : Բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է: Առաջացնում է ձողիկավոր և թելավոր, հաճախ՝ ճառագայթային և թաղիքանման ագրեգատներ, հազվադեպ՝ ասեղնաձև բյուրեղներ, ինչպես նաև ասբեստանման զանգվածներ (տրեմոլիթ-ասբեստ) և խիտ մածուցիկ գաղտնաթելավոր զանգվածներ (նեֆրիտ): Տ-ի ծագումը գլխ. փոխակերպային է, առաջանում է առավելապես մագնեզիումային կրաքարերի ու դոլոմիտների ռեգիոնալ (հազվադեպ հպումային) փոխակերպության դեպքում:

**T-103. ТРЕПЕЛ** (գերմ. Tripel, Հւ. Աֆրիկայում գտնվող Տրիպոլի, Tripoli, ք-ի անունից) – **ՏՐԵՊԵԼ, TRIPOLITH, TRIPOLITE**, փուխր կամ թույլ ցեմենտացած, շատ թեթև, նրբածակոտկեն, ծիածանաքարային (օպալային) ապար: Ֆիզ. հատկություններով համանման է դոլոմիտին, բայց համարյա զուրկ է օրգանական մնացորդներից և բաղկացած է ամորֆ սիլիկահողի (օպալ-կրիստոբալիտ) գնդիկաձև (զլոբուլային) մանր (տրամագիծը 1-2 մկ) մասնիկներից: Սովորաբար պարունակում է քիչ քանակով կավային նյութ, քվարցի, գլաուկոնիտի, դաշտային սպաթի հատիկներ: Գույնը՝ սպիտակից ու մոխրագույնից մինչև մուգ մոխրագույն, գորշ կարմիր և սև: Ծակոտկենությունը 50-70 % է: Ծագումը հավանաբար կենսաքիմիական է: Օգտագործվում է ցեմենտի արդյունաբերության մեջ (ավելի քան 75 %), ինչպես նաև որպես ջերմամեկուսիչ և շինարարական նյութ, հղկանյութ:

**T-104. ТРЕТИЧНАЯ СИСТЕМА (ПЕРИОД) – ԵՐՐՈՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (ԺԱՄԱՆԱՎԱՇՐՋԱՆ), TERTIARY**, կայնոզոյան էրատենայի համակարգ, համապատասխանում է Երկրի պատմության կայնոզոյան դարաշրջանի առաջին ժամանակաշրջանին: Տերմինը օգտագործվում է առավելապես արտասահմանյան գրականությունում: Շատ երկրներում Ե. հ-ի (Ժ-ի) փոխարեն առանձնացվում են պալեոգենի համակարգը (ժամանակաշրջանը) և նեոգենի համակարգը (ժամանակաշրջանը)՝ որպես ինքնուրույն համակարգ: Երրորդական համակարգի անվանումը առաջարկվել է 1759-ին իտալացի երկրաբան Ջ. Արդուինոյի կողմից:

**T-105. ТРЕЩИНОВАТОСТЬ ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ԾԵՂՔՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ (ԾԵՂՔՎԱԾՔՎՈՐՈՒԹՅՈՒՆ), ROCK JOINTING, ROCK FISSURING**, տարբեր երկարության, ձևի և տարածական կողմնորոշման ճեղքերով երկրակեղևի ապարների տարանջատման երևույթ: Ա. ճ. ըստ ծագման լինում է ոչ տեկտոնական, տեկտոնական և մոլորակային: Ոչ տեկտոնական ճեղքավորվածությունը հետևանք է ապարների ճաքճքման, որը տեղի է ունենում սառեցման (մագմայական ապարներ-

րի համար), խտացման, ջրազրկման դեպքում, արտածին գործընթացների ժամանակ (ձգողական սողանքների, ջերմաստիճանի կտրուկ տատանումների), լեռնային աշխատանքներ անցկացնելիս և այլն: Տեկտոնական ճեղքավորվածությունը զարգանում է՝ կապված խորքային տեկտ. ուժերի ազդեցության տակ ապարներում առաջացող լարվածությունների հետ: Առանձնացնում են պոկման (խզման) և կոտրման ճեղքավորվածություններ, որոնք առաջացնում են համակարգեր՝ օրինաչափորեն կողմնորոշված խոշոր տեկտ. կառուցվածքների նկատմամբ: Վերջինների զարգացմանը զուգընթաց տեղի է ունենում ապարների ճաքճքում: Ապարների մոլորակային ճեղքավորվածության դեպքում երկրակեղևում լարվածությունները առաջանում են մոլորակային երևույթների ազդեցության տակ (օր.՝ Երկրի պտտման հաճախականության փոփոխման, «պինդ» մակընթացությունների և այլն): Ա. ճ. ունի և՛ դրական, և՛ բացասական գործնական հետևանքներ: Այն նպաստում է երկրակեղևի թափանցելիությանը խորքային լուծույթների (ֆլյուիդների) համար, ճեղքավորված ապարների խոր հորիզոնները կարող են հանդիսանալ քաղցրահամ ջրի, նավթի, գազի հավաքիչներ և այլն: Ա. ճ-յան բացասական ազդեցությունը արտահայտվում է ապարազանգվածների կայունության թուլացմամբ:

**T-106. ТРЕЩИНЫ СКАЛЫВАНИЯ – ԿՈՏՐՄԱՆ ԾԵՂՔԵՐ, SHEAR FRACTURES,** ապառաժային և կիսաապառաժային ապարների սեղմման ժամանակ ճնշման ուղղությամբ որոշ անկյան տակ առաջացող ճեղքեր:

**T-107. ТРЕЩИНЫ УСЫХАНИЯ – ՉՈՐԱՅՄԱՆ ԾԵՂՔԵՐ, DESICCATION CRACKS, DRYING CRACKS,** կավային ապարների չորացման ու կծկման հետևանքով առաջացող ճեղքեր, որոնք ապարների մակերևույթը բաժանում են բազմանիստ (առավելապես 5-6 նիստով) հատվածների և դեպի խորքը առաջացնում են սյունաձև անջատություններ:

**T-108. ТРИАСОВАЯ СИСТЕМА (ПЕРИОД), ТРИАС (հուն. trais – երրորդություն) – ՏՐԻԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳ (ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆ), ՏՐԻԱՍ, TRIASSIC,** մեզոզոյան էրատեմայի առաջին (ստորին) համակարգ, համապատասխանում է Երկրի երկրբ. պատմության մեզոզոյան դարաշրջանի առաջին ժամանակաշրջանին: Շերտագրական սանդղակում հետնորդում է պերմի համակարգին (ժամանակաշրջանին) և նախորդում է յուրայի համակարգին (ժամանակաշրջանին): Սկիզբը 251 մլն. տարի առաջ, տևողությունը մոտավորապես 49 մլն. տ.: Առանձնացրել է բելգ. գիտնական Ժ. դ' Օմալիուսը 1831-ին «Կեյպերյան նստվածքներ» անվանմամբ, իսկ 1834-ին գերմ. երկրաբան Ֆ. Ալբերտին անվանել է տրիաս: Տ. հ. բաժանվում է 3 բաժնի և 6 հարկի՝ ստորին տրիաս (ինդոսյան, օլենյոկյան հարկեր), միջին տրիաս (անիզիյան, լադինյան), վերին տրիաս (կարնիյան, նորիյան, ռետյան): ՄՇԿ-ի որոշմամբ ռետը ներառվել է նորիյան հարկի կազմում, որպես ենթահարկ: Տրիասի սկզբում Արևմտյան Եվրոպայի, Ասիայի, Հյուսիսային Ամերիկայի և Արևելյան Ավստրալիայի հերցինյան կառուցվածքները վերածվել են երիտասարդ պլատֆորմների, դրանք միաձուլվել են՝ կազմելով մի ամբողջություն՝ Լավրասիան (Հյուսիսային կիսագնդում), իսկ Հարավային կիսագնդում միակցվել են Գոնդվանային: Այդ երկու գերպլատֆորմները անջատվել են Տեթիսի ծովով: Թույլ տեկտ. շարժումներն ունեցել են միայն տեղական նշանակություն: Տրիասի վերջում հինկիմերյան լեռնագոյացումը զոյացրել է ծալքավոր կառույցներ՝ առավելապես Արևելյան և Հարավ-արևելյան Ասիայում: Տրիասում կլիման եղել է բավականին տաք, արևադարձային գոտին համապատասխանել է Տեթիսի և Հյուսիսային Ամերիկայի հարավին: Ծովերում գլխավոր դեր են խաղացել ամոնոիդները (ցերատիտները), երկփեղկաձև և փորոտանի փափկամարմինները, հանդես են եկել բելեմնիտները, փշառատ

ծկները: Բնորոշ է խոշոր սողունների, երկկենցաղների ծաղկումը, առաջին կաթնասունների հանդես գալը: Բուսական աշխարհում գերակշռել են պտերները, փշատերևները, բենետիտները, սագոյիները: Օգտ. հնժ-ների մեջ առավել նշանակալի են քարածուխները և գորշ ածուխները, նավթն ու գազը, ալմաստները, աղերը, ուրանի հանքանյութերը, մարմարները:

**T-109. ТРИЛОБИТЫ** (Trilobita) (հուն. trilobos – եռամասնյա) – **ՏՐԻԼՈԲԻՏՆԵՐ, TRILOBITES**, ծովային հատվածոտանիների մահացած դաս, մարմինը երկարացած հատվածավորված ձևի է՝ 3-10 սմ, հազվադեպ՝ մինչև 50-70 սմ չափերով: Կազմված է գլխային վահանից, մարմնային մասից և պոչային բաժնից: Գոյություն են ունեցել ծանծաղ ծովերում՝ քենթրիից մինչև պերմ: Ունեն կարևոր շերտագրական նշանակություն՝ հատկապես քենթրիի ու սիլուրի համար:

**T-110. ТРОГ** (գերմ. Trog, բառ. տաշտ) – **ՏՄՇՏԱՅՈՒՄ (ՏՐՈԳ), GLACIAL TROUGH, GLACIAL-CARVED VALLEY, TROUGH VALLEY**, տաշտածն լեռնահովիտ՝ խորացված ու լայնացված սառցադաշտերի գործունեության հետևանքով:

**T-111. ТРОПОСФЕРА** (հուն. trópos – պտույտ, փոփոխություն և spháira – գունդ) – **ՆԵՐՔՆՈՒՐՏ (ՏՐՈՊՈՍՖԵՐԱ), TROPOSPHERE**, մթնոլորտի ստորին մաս, որը առավել ենթակա է երկրակեղևի ազդեցությանը: Տարածված է բարեխառն լայնություններում մինչև 10-12 կմ բարձրությունները, բևեռային շրջաններում՝ մինչև 8-10 կմ և արևադարձայիններում՝ մինչև 16-18 կմ: Ներառում է մթնոլորտի օդի մոտ 80 % և համարյա մթնոլորտային ամբողջ ջրային գոլորշին: Բնորոշվում է ըստ բարձրության 100 մ-ում ջերմաստիճանի մոտ 0.65°C նվազմամբ, մրրկային ու կոնվեկցիոն հոսքերի զարգացմամբ և ամպերի առաջացմամբ:

**T-112. ТРУБКА ВЗРЫВА, ДИАТРЕМА – ՊՈՅԹՍԱՆ ՓՈՂԱԿ, ԴԻԱՏՐԵՄԱ, CLASTIC PIPE, VOLCANIC PIPE, DIATREME**, խողովականման անցուղի, որն առաջանում է երկրակեղևի շերտերի միջով գազերի ու շիկացած մագմայի պատռման ու ներխուժման դեպքում: Տրամագիծը հասնում է 1 կմ-ի: Առավել հայտնի են, այսպես կոչված, քիմբեռլիթային տիպի (ալմաստաբեր) Պ. փ-ները, որոնք լցված են փշրաքարանման ապարներով՝ քիմբեռլիթներով (օր. Սիբիրական պլատֆորմում, ՅԱՄ-ում, Յնդկաստանում և այլուր): Դ-ները կոնածն մարմիններ են՝ գազաթով շրջված դեպի ներքև: Քիմբեռլիթային տիպի Պ. փ-ները գոյացել են հին պլատֆորմների տեկտ. ակտիվացած տեղամասերում:

**T-113. ТУРБИДИТЫ** (լատ. turbidus – պղտոր) – **ՏՈՒՐԲԻԴԻՏՆԵՐ (ՊՂՏՈՐ ՀՈՍՔԱՆՍՎԱԾՔՆԵՐ), TURBIDITES**, ծովերի ու օվկիանոսների հատակում պղտոր հոսքերի նստվածքներ, ներկայացված են տարբեր չափայնության ու մշակվածության աստիճանի բեկորային գոյացություններով: Տ. ունեն ռիթմիկ կազմություն: Լայն տարածված են ժամանակակից և հին նստվածքներում (հատկապես երկրաշարժաակտիվ մարզերում):

**T-114. ТУРБУЛЕНТНОЕ ТЕЧЕНИЕ** (լատ. turbulentus – բուռն, մրրկալից, անկանոն) – **ՄՐԻՎԱՅԻՆ (ՏՈՒՐԲՈՒԼԵՆՏ) ՀՈՍԱՆՔ, TURBULENT FLOW**, հեղուկի (կամ գազի) հոսանք, որի դեպքում հեղուկի մասնիկները կատարում են անկանոն քառային շարժում՝ ամենաբարդ հետագծերով: Մ. հ. շիթային (լամինար) հոսանքից տարբերվում է ինտենսիվ մրրկայնությամբ, գալարումներով, ջերմափոխանակությամբ:

**T-115. ТУРМАЛИН** (գերմ. Turmalin, սինհալի լեզվով տուրմալի կամ տուրամալի-մոխիր ձգող, ըստ բյուրեղների պիրոէլեկտրական հատկությունների) – **ՏՈՒՐՄԱԼԻՆ, TOURMALINE**, օղակավոր սիլիկատների ենթադասի միներալների խումբ, քիմ. կազմ  $AB_3C_6(Si_6O_{18})(BO_3)_3(OH,F,O)_4$ , որտեղ  $A=Na,Ca$ ,  $B=Mg,Fe^{3+},Li,Al,Mn$ ,  $C=Al,Fe^{3+}$ : S-ի խումբն ընդգրկում է մի քանի նույնածն (իզոմորֆ) շարքեր: Դրան-

- ցից ամենատարածվածների ծայրանդամներն ունեն սեփական անվանումները՝ շեռլ, դրավիտ, էլբաիտ: Բյուրեղագիտական համակարգը տրիգոնային է: S-ի համար բնորոշ են երկարացած սյունածև, հաճախ ձողածև, մինչև ասեղնածև բյուրեղները, շառավղաճառագայթավոր, խառնաթելավոր ասբեստանման և միկրոբյուրեղային հոծ ագրեգատները: Գույնը փոփոխվում է, կապված կազմից՝ սև, մուգ կանաչ, մուգ շագանակագույն, դեղին, դեղնականաչ, երկնագույն, վարդագույն, դեղին, անգույն: Ըստ գույնի՝ տարբերում են նաև S-ի տարատեսակներ՝ ռուբելիթ (կարմիր և վարդագույն), ինդիգոլիթ (երկնագույն և կապույտ), աֆրիցիտ (սև), վերդելիթ (կանաչ), ախրոիտ (անգույն): Կարծրությունը՝ 7.5: S. ունի հրա- և պիեզոէլեկտրական հատկություն: S-ները ամենատարածված բորասիլիկատներն են: Որոշ մագմայական ու փոխակերպային ապարների ակցետորային միներալներ են, հանդիպում են երակներում, մերձհանքային փոփոխված ապարներում, ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվ-երում, պեգմատիտներում, հիմքային կազմի փոփոխված ապարներում, ցրոններում: Թափանցիկ բյուրեղները թանկարժեք քարեր են:
- T-116. ТУРНЕЙСКИЙ ЯРУС, ТУРНЕ** (Տուրնե ք-ի անունով, Բելգ.) – **ՏՈՒՐՆԵԻ ՀԱՐԿ, ՏՈՒՐՆԵ, TOURNAISIAN**, քարածխային համակարգի ստորին բաժնի ստորին հարկ:
- T-117. ТУРОНСКИЙ ЯРУС, ТУРОН** (Ֆրանս. պատմական Տուրեն մարզի լատ. Տուրոնիա, Turonia, անունով) – **ՏՈՒՐՈՆԻ ՀԱՐԿ, ՏՈՒՐՈՆ, TURONIAN**, կավճի համակարգի վերին բաժնի ներքևից երկրորդ հարկ:
- T-118. ТУФ АГЛОМЕРАТОВЫЙ – ՇԵՂՁԱՔԱՐԱՅԻՆ (ԱՉԼՈՍԵՐԱՏԱՅԻՆ) ՏՈՒՖ, AGGLOMERATE TUFF**, հրաբխային տուֆ, որն առաջանում է խոշոր չափերի հրաբխային արգասիքների կուտակման ու ցեմենտացման հետևանքով: Հոմ. հրաբխային փշրաքար (բրեկչիա):
- T-119. ТУФ АНИЙСКОГО ТИПА – ԱՆԻԱԿԱՆ ՏԻՊԻ ՏՈՒՖ, ANI TYPE OF TUFF**, Հայաստանի տուֆերի տարատեսակ, բնորոշվում է իր մեջ լավանների ու չեչաքարերի բեկորների մեծաքանակ պարունակությամբ:
- T-120. ТУФ АРТИКСКОГО ТИПА – ԱՐԹԻԿՅԱՆ ՏԻՊԻ ՏՈՒՖ, ARTIC TYPE OF TUFF**, Հայաստանում տարածված վարդագույն կամ մանուշակագույն հրաբխային ապար, բնորոշվում է բարձր ծակոտկենությամբ և ավելի ծակոտկեն ապակուոսպնյակածև ներփակվածքների պարունակությամբ: Պատկանում է տուֆալավաներին, քանի որ նրա հիմնական զանգվածը չի տարբերվում լավայից: Լայնորեն տարածված է Արագածի լեռնավահանում: Գեղեցիկ շինարարական քար է:
- T-121. ТУФ ВУЛКАНИЧЕСКИЙ** (Իտալ. tuffo, լատ. tofus – հրաբխային ծագման ապար) – **ՀՐԱԲԽԱՅԻՆ ՏՈՒՖ (ՓԵՐԱՔԱՐ, ՔԱՎԱՆԳ), VOLCANIC TUFF**, պինդ ապար, որն առաջացել է հրաբխային ժայթքումների պինդ արգասիքներից (մոխիր, ավազ, ընկուզիկներ, ռումբեր, երբեմն՝ ոչ հրաբխային ծագման ապարների բեկորներ) և հետագայում խտացել ու ցեմենտացվել է: Հ. տ-երը ստորաբաժանվում են ըստ կազմի, բնույթի և բեկորների չափերի: Առանձնացնում են բազալտային, անդեզիտային, ռիոլիթային և այլ տարատեսակներ, որոնք կազմված են համապատասխան ապարների բեկորներից: Ըստ բեկորների բնույթի՝ տարբերում են հետևյալ տարատեսակները՝ լիթոկլաստիկ (քարաբեկորային՝ բաղկացած է ապարների բեկորներից), բյուրեղակլաստիկ (բյուրեղաբեկորային՝ առանձին միներալների բյուրեղներից ու բեկորներից), վիտրոկլաստիկ (հրաբխային ապակու բեկորներից) ու խառնակազմ Հ. տ.: Ըստ գերակշռող բեկորների մեծության՝ անջատում են կոպտաբեկորային (շեղջաքարային), խոշորաբեկորային (փսեֆիտային), միջնաբեկորային (փսամիտային) և նրբաբեկորային (ալևրիտային ու պելիտային) Հ. տ-եր: Հ. տ-երում ցեմենտը կարող է լինել հրաբխային մոխիր, կավային



կամ սիլիցիումային նյութ, երբեմն՝ քայքայված մոխրի արգասիքների խառնուրդով: Գունավորումը լինում է խիստ բազմազան՝ դեղին, շագանակագույն, մանուշակավարդագույն, կարմիր, մոխրագույն և սև: Հ. տ-երի առաջացումը կարող է ընթանալ կա՛մ օդից՝ անմիջական նստեցման ճանապարհով՝ հրաբխի ժայթքման դեպքում, կա՛մ էլ ջրային կամ օդային հոսանքներով՝ տուֆային նյութի տեղափոխման հետևանքով: Հ. տ-երը կիրառվում են որպես շատ արժեքավոր շինանյութ (շինարարական քար, թեթև բետոնների լցանյութ): Ունեն բարձր դեկորատիվ որակներ: Խոշոր հանքավայրերը գտնվում են ՀՀ-ում, Իտալիայում, Իսլանդիայում:

**T-122. ТУФ ЕРЕВАНО-ГЮМРИЙСКОГО (ЛЕНИНАКАНСКОГО) ТИПА – ԵՐԵՎԱՆ-ԳՅՈՒՄՐԻՅԱՆ (ԼԵՆԻՆԱՎԱՆՅԱՆ) ՏԻՊԻ ՏՈՒՖ, YEREVAN-GYUMRI TYPE OF TUFF**, Հայաստանում լայն տարածված հրաբխային տուֆ, կազմված է հրաբխային ապակու, միներալների և տարբեր ապարների բեկորներից: Ըստ գույնի՝ առանձնացվում են սև, գորշաշագանակագույն և կարմիր տարատեսակներ:

**T-123. ТУФ ИЗВЕСТКОВЫЙ**, տե՛ս Травертин:

**T-124. ТУФОАЛЕВРОЛИТ – ՏՈՒՖԱԼԵՎՐՈԼԻԹ, TUFF-ALEUROLITE**, հրաբխածին-նստվածքային ապար (ալկրիտային կառուցվածքի), որում նստվածքային ալկրիտային նյութը գերակշռում է (> 50 %-ից):

**T-125. ТУФОБРЕКЧИЯ – ՏՈՒՖԱՓՇՐԱՔԱՐ (ՏՈՒՖԱՐԵԿՉԻԱ), TUFF-BRECCIA**, հրաբխային-նստվածքային ապար, կազմված է արտաժայթքային ապարների տարբեր մեծության (մեծաբեկորներից մինչև ավազահատիկները) անկյունավոր, հազվադեպ թույլ մշակված բեկորներից՝ ցեմենտացված մուրբ հրաբխային մոխրով: Հրաբխածին ապարախմբերի կազմում S-երը առաջացնում են հաստ շերտեր: S-ի ծագումը միշտ չէ որ պարզ է, շատ դեպքերում դրանք հզոր ցեխահոսքերի՝ լախարների հոսքեր են, որոնք ուղեկցում են հրաբխային ժայթքումներին:

**T-126. ТУФОКОНГЛОМЕРАТ – ՏՈՒՖԱԿՈՆԳԼՈՍԵՐԱՏ (ՏՈՒՖԱՆԱՆԱՆԱՔԱՐ), TUFF-CONGLOMERATE**, հրաբխածին-նստվածքային բեկորային ապար, բեկորները մշակված են, չափերը՝ 10-ից մինչև 100 մմ, կազմված են նստվածքային ցամաքածին և 50 % -ից պակաս հրաբխաբեկորային նյութից, տե՛ս նաև՝ Вулканогенно-осадочные породы:

**T-127. ТУФОЛАВА – ՏՈՒՖԱԼԱՎԱ, TUFFLAVA**, տուֆային զանգվածով հրաբխային ապարներ, որոնք կազմված են լավայից, մոխրից և ապակու բեկորներից: S-ները, ըստ կառուցվածքի և առաջացման եղանակի, միջանկյալ ապարներ են լավաների ու տուֆերի միջև: S-ների տարբերակներից է իզոմիմերիտը:

**T-128. ТУФОПЕСЧАНИК – ՏՈՒՖԱՎԱՉԱՔԱՐ, TUFF-SANDSTONE**, հրաբխածին-նստվածքային ապար, բեկորների չափերը՝ 0.1-ից մինչև 1 մմ: Կազմված է նստվածքային ցամաքածին նյութից՝ հրաբխաբեկորայինի (10-50 %) խառնուրդով:

**T-129. ТУФФИТ – ՏՈՒՖԻՏ, TUFFITE**, հրաբխածին-նստվածքային ապար, կազմված է հրաբխածին նյութից, որն արտանետվել է հրաբխի ժայթքման ժամանակ (խարամ, մոխիր, չեչաքար, ապարների բեկորներ), և նրա հետ խառնված նստվածքային նյութից: Բացի հրաբխածին արգասիքներից, S. կարող է պարունակել ներժայթքային ապարների, մասամբ քվարցի, դաշտային սպաթի, բիոտիտի մշակված բեկորներ, ինչպես նաև օրգանական մնացորդներ: Հրաբեկորային նյութի պարունակությունը 50 %-ից ավել է: Կախված մասնիկների չափերից (գլխ. հրաբեկորային)՝ տարբերում են փսեֆիտային, փսամփտային, ալկրիտային և պելիտային S-ներ: Ցեմենտը կարող է լինել կարբոնատային կամ կավային: S-ները օգտագործում են որպես շինարարական նյութ, տե՛ս նաև՝ Вулканогенно-осадочные породы:

## Y

**Y-1. УВАРОВИТ** (Ռուս. ԳԱ Մախագահ Ա. Ա. Ուվարովի, 1786-1855, անունով) – **ՈՒՎԱՐՈՎԻՏ, OUVAROVITE**, միներալ, կացիում-քրոմային նռնաքար,  $Ca_3Cr_2[SiO_4]_3$ : Բյուրեղագիտական համակարգը խորանարդային է: Առաջացնում է մանր (0.5-1 մմ) ռոմբոդոդեկաէդրային բյուրեղներ: Կարծրությունը՝ 6.5-7.5, գույնը՝ վառ խոտի կանաչ: Առաջանում է գերհիմքային ապարների ու քրոմային հնքվերի ջրաջերմային (հիդրոթերմալ) վերամշակման դեպքում: Արժեքավոր ոսկերչական քար է:

**Y-2. УГЛЕВОДОРОДЫ – ԱԾԽԱԶՐԱԾԻՆՆԵՐ, HYDROCARBONS**, օրգանական միացություններ, որոնց մոլեկուլները կազմված են ածխածնի ու ջրածնի ատոմներից: Ա-ի խումբը ընդգրկում է գազային, հեղուկ կամ պինդ վիճակում գտնվող անգույն, օդում հեշտ այրվող բազմահազար նյութեր: Ա-ի պարզագույն ներկայացուցիչը մեթանն է: Ա-ի մոլեկուլներում ածխածնի ատոմներն առաջացնում են բաց շղթաներ կամ օղակներ: Առաջիկաները կոչվում են ացիկլիկ Ա., երկրորդները՝ կարբոցիկլիկ Ա.: Այն Ա., որոնց մոլեկուլներում ածխածնի ատոմներն իրար հետ միացված են մեկական կապերով, կոչվում են հագեցած (սահմանային) Ա. (մեթան, էթան, պրոպան և այլն), իսկ այն Ա., որոնց մոլեկուլում կա գոնե մեկ կրկնակի կամ եռակի կապ, կոչվում են չհագեցած Ա. (էթիլեն, ացետիլեն, դիվինիլ, իզոպրեն և այլն): Ա. բավականին տարածված են բնության մեջ: Նավթը (քարյուղը) և այրվող բնական գազերը հիմնականում Ա-ի խառնուրդներ են: Ա. ստացվում են նավթից, բնական գազերից, նաև քարածխի, գորշ ածխի, տորֆի և բիտումային խեժերի չոր թորումից: Օգտագործվում են որպես վառելանյութ, քսայուղեր, դեղանյութեր, կաուչուկ, պոլիմերներ, ներկանյութեր, պայթուցիկ նյութեր ստանալու համար:

**Y-3. УГЛЕНОСНАЯ ТОЛЩА – ԱԾԽԱՐԵՐ ՍՏՎԱՐԱՇԵՐՏ, COAL MEASURES**, նստվածքային բեկորային գոյացումների համալիր, որը ներառում է ածխի բանվորական շերտեր: Ա. ս. պայմանական հասկացություն է, օգտագործվում է ածխային հնքվերի հետախուզման և երկրաբանաարդյ. գնահատման, նրանց ածխաբերության բնութագրման և շահագործման ժամանակ:

**Y-4. УГЛЕНОСНАЯ ФОРМАЦИЯ – ԱԾԽԱՐԵՐ ՖՈՐՄԱՑԻԱ (ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄ), COAL-BEARING FORMATION**, միմյանց հետ պարագենետիկորեն կապված ածխաբեր ապարների ռիթմիկ կազմվածք ունեցող բազմաֆազիալ ստվարաշերտ, որն առաջացել է ածխագոյացման համար բարենպաստ երկրատեսկտ. և ֆազիալ գործոնների փոխգործունեության հետևանքով: Ածխագոյացման լանդշաֆտակլիմայական և երկրատեսկտ. իրադրությունների զուգակցման տարբերությունները պայմանավորել են Ա. ֆ-ների տարածական մակերեսների, հաստությունների, կազմի տարբերությունները, նրանց ածխաբերության պարամետրերի քանակն ու որակը,

ծածկող և տակդիր նստվածքներին անցնելու բնույթը: Ա. ֆ-ների տարածման անընդմեջ մակերեսները տատանվում են մի քանի կմ<sup>2</sup>-ուց մինչև տասնյակ և հարյուր-հազարավոր կմ<sup>2</sup>, հաստությունները՝ տասնյակ մ-ից մինչև մի քանի կմ: Ա. ֆ-ները ներկայացված են կավային, կավավազային և ավազային ապարներով, ավելի պակաս՝ կոպճաքարերով, կոնգլոմերատներով: Ծովեզերքային (պարալիկ) ավազաններում լայն տարածված են կարբոնատային նստվածքները: Ա. ֆ-ներին բնորոշ է ռիթմիկ կազմությունը, որը պայմանավորված է նստվածքակուտակման ավազանի ընդհանուր երկարատև իջեցման ֆոնում ավելի ցածր կարգի տատանողական շարժումների նշանի ու լայնույթի փոփոխությամբ: Ա. ֆ-ների կտրվածքում անջատվում են հորիզոններ, որոնցում պարոզորոշ դիտվում է ապարների հատիկաչափական կազմի աստիճանական օրինաչափ փոփոխություն: Արբախատիկ կենսածին և քիմիածին նստվածքները (ածուխներ, ածխային ապարներ, կրաքարեր) հերթափոխվում են ավելի խոշորահատիկներով՝ կավերից մինչև ավազաքարերը և հակառակը:

**У-5. УГЛЕНОСНОСТЬ – ԱԾԽԱՐԵՐՈՒԹՅՈՒՆ, TENOR OF COAL, PRESENCE OF COAL**, ածխաբեր ստվարաշերտի կտրվածքում ածխի շերտերի քանակի ու տեղաբաշխման, այդ շերտերի ձևի, տարածման մակերեսների չափերի, տեղադրման խորության, ածխի որակի և տեխնոլոգիական հատկությունների, մշակման լեռնակերպը. պայմանների մասին տվյալների համախմբություն: Ա-յան գործակիցը արտահայտվում է ածխի բանվորական կամ բոլոր շերտերի գումարային հաստության տոկոսային հարաբերությամբ՝ ածխաբեր ֆորմացիայի (ստվարաշերտի, շերտախմբի, հորիզոնի) ընդհանուր հաստության նկատմամբ: Ա. արտացոլում է ածխաբեր ֆորմացիայում (ստվարաշերտում, շերտախմբում, հորիզոնում) պարփակված ածխի պաշարների քանակը՝ նրանց տարածման մակերեսի միավորի սահմաններում:

**У-6. УГЛЕПРОЯВЛЕНИЕ – ԱԾԽԱԵՐԵՎԱԿՈՒՄ, COAL SHOW**, բրածո ածուխների փոքր կամ չբացահայտված չափերի բնական կուտակումների բացահայտված առկայություն: Հետագա հետախուզման դրական արդյունքների դեպքում Ա. կարող է դիտարկվել որպես հնքվ.:

**У-7. УГЛЕФИКАЦИЯ – ԱԾԽԱՅՈՒՄ, COALIFICATION**, ածխագոյացման փուլ, որի ընթացքում երկրի ընդերքում թաղված տորֆը, համապատասխան պայմանների դեպքում, հաջորդաբար փոխարկվում է սկզբում գորշ ածխի, այնուհետև՝ քարածխի և անտրացիտի: Անջատվում է Ա-ման 2 փուլ՝ դիագենեզ և ածխի փոխակերպություն: Դիագենեզի փուլում ավարտվում է բուսական նյութի հումուսացումը, կոլոիդների հնացումը ու պնդացումը, տեղի է ունենում ջրազրկում, գազերի և այլ դիագենետիկական օրգանական ու միներալային բաղադրիչների անջատում, կազմավորվում է ածխի ապարագրական կազմը: Ածխի հետագա փոխակերպությունը արգասիք է համախումբ ֆիզմեխ. գործընթացների, որոնք պայմանավորված են ածխաբեր ստվարաշերտերը՝ երկրի ընդերք խորասուզվելու դեպքում բարձրացված ջերմաստիճանների ու ճնշման երկարատև ներգործությամբ (ածխի ռեգիոնալ փոխակերպություն): Դա հանգեցնում է ածխի միկրոբաղադրիչների կառուցվածքամոլեկուլային փոխարկման և դրանց քիմ. բաղադրության ու ֆիզ. հատկությունների էական փոփոխությունների: Առանձնացվում են Ա-ման 3 աստիճան՝ ցածր (գորշաածխային), միջին (քարածխային) և բարձր (անտրացիտային): Ա-ման աստիճանը (ածխի ռեգիոնալ փոխակերպության աստիճանը) համապատասխանում է այն հնաշխ. պայմաններին, որոնցում ածուխները գտնվել են երկրի ըն-

դերքում առավելագույն խորասուզման ժամանակ: Ա-ման անընդմեջ և անշրջուն գործընթացն ուղեկցվում է ածխի տարրային կազմում օրգանական նյութի, ածխածնի պարունակության աճմամբ ու զուգահեռաբար թթվածնի պարունակության նվազմամբ, իսկ Ա-ման բարձր փուլերում՝ նաև ջրածնի ու ազոտի: Ա-ման աստիճանի բարձրացմանը զուգընթաց աճում են ածխի փայլն ու անդրադարձման ունակությունը, օպտիկական անիզոտրոպությունը, միկրոկարծրությունը: Ա-ման աստիճանից կախված են ածուխների քիմ. բաղադրությունը, ֆիզ. և տեխնոլոգիական հատկությունները: Ընդհանրապես անընդմեջ Ա-ման շարքում անջատվում են հետևյալ փուլերը՝ գորշածխային, երկարաբոցավոր, գազային, ճարպային, կոքսային, եռակավոդ, վտիտային, կիսամետրացիտային և անտրացիտային:

**Մ-8. ՄԳԼԻ ԻՏԿՈՓԱԵՄԻԵ – ԲՐԱԾՈՆ ԱԾՈՒԽՆԵՐ, FOSSIL COALS**, պինդ այրվող ապարներ, որոնք առաջացել են մահացած բույսերից: Բ. ա. տեղադրված են նստվածքային ստվարաշերտերում (ածխաբեր ֆորմացիաներում)՝ շերտերի ու նրբաշերտերի կամ հաստ շերտանման և ոսպնյականման հանքակուտակների տեսքով: Ունեն հողանման, հոծ, շերտավոր կամ հատիկավոր կազմվածք, համասեռ կամ զղավոր կառուցվածք: Գույնը՝ շագանակագույնից մինչև մոխրասև, փայլը՝ փայլատից մինչև մետաղի: Բ. ա. ամենատարածված օգտ. հնժ-ներից են, բացահայտված են երկրագնդի բոլոր մայր ցամաքներում: Հայտնի են ավելի քան 3000 ածխային հնքվ-եր և ավազաններ: Ըստ սկզբնանյութերի և ծագման՝ Բ. ա. բաժանվում են՝ 1) հունուլիթներ՝ բարձրակարգ բույսերի նեխունից առաջացած ածուխներ, որոնք կազմում են Բ. ա-ի գերակշռող մասը (գորշ ածուխ, քարածուխ, անտրացիտ), 2) սապրոպելիտներ՝ ստորակարգ բույսերի և պլանկտոն կենդանիների քայքայումից առաջացած ածուխներ (բոգհեդ, սապրոկոլիթ) և սապրոհունուլիթներ: Հունուլիթների մեջ առանձնացվում են լիպտոբիոլիթներ՝ լիզինացեյուլոզային հյուսվածքները հոսող ջրով ավելախանման հետևանքով առաջացած ածուխներ, որոնք գրեթե ամբողջովին կազմված են կուտիկուլաններից, ծյութերից և մոմից: Նախնական նյութի բնույթով Բ. ա. լինում են ալոխթոն և ավտոխթոն: Մոխրի 30-35 % պարունակության դեպքում Բ. ա. անցնում են ածխային թերթաքարերի կամ ածխային արգիլիթների: Բ. ա-ի հիմնական բաղադրիչներն են՝ օրգանական նյութը, միներալային խառնուրդները և խոնավությունը: Քիմ. կազմում մասնակցում են հիմնականում ածխածինը, ավելի քիչ՝ ջրածինը, թթվածինը, ազոտը, ծծումբը, երբեմն նաև ֆոսֆորը, որոնցից այրվող են ածխածինը, ջրածինը և մասամբ՝ ծծումբը: Ածխածինը կազմում է գորշ ածուխներում 55-78 %, քարածուխներում՝ 75-92 %, անտրացիտում՝ մինչև 98 %: Ածխածնի պարունակության աճմամբ բարձրանում է հանածոյի ջերմունակությունը: Օրգանական նյութը կազմում է չոր ածխի ընդհանուր զանգվածի 50-97 %: Միներալային խառնուրդները օրգանական զանգվածի կամ ածխային շերտի մեջ ցրված են բյուրեղների, կոնկրեցիաների, նուրբ շերտիկների կամ ոսպնյակների տեսքով: Առավել տարածված են կավային միներալները: Բ. ա-ի արդյ. դասակարգումը հիմնված է ածխացման աստիճանի վրա: Դոմեցյան դասակարգմամբ առանձնացվում են երկարաբոցավոր, գազային, ճարպային, կոքսացող, վտիտ և անտրացիտ տեսակները: Ըստ բաղադրիչ մասերի պարունակության՝ տարբերում են երկու փայլուն (վիտրեն, կլարեն) և երկու փայլատ (դյուրեն, ֆյուզեն) տարատեսակներ: Բ. ա. էներգիայի և մի շարք քիմ. նյութերի ստացման հումք են: 500°C ջերմության պայմաններում Բ. ա-ից չոր թորման եղանակով ստացվում է հեղուկ ծյութ, լուսազազ, ածխաթթվային ամոնիակ, իսկ 1000°C-ում՝ կոքս: Բ. ա-ի կուտակումներ սկսվել են քեմբրիից, սակայն

արդյ. պաշարների կուտակումը՝ դեռնից: Առավել ուժգին ածխագոյացումը կապված է հերցինյան ու ալպյան դարաշրջանների տեկտոգենեզի մի շարք էպոխաների սկզբնական և ավարտական փուլերի հետ: ՀՀ տարածքում հայտնի են մի շարք ածխաերևակումներ, այդ թվում՝ Ջաջուռի (Շիրակի մարզ), Ջերմանիսի (Արարատի մարզ), Իջևանի (Տավուշի մարզ), Շամուտի (Լոռու մարզ):

**У-9. УГЛИСТЫЙ СЛАНЕЦ – ԱԾԽԱՅԻՆ ԹԵՐԹԱՔԱՐ, COAL SHALE, CARBON SHALE, CARBONACEOUS SHALE**, սև խտացված թերթավոր կավային ապար՝ հարստացված ածխային նյութով: Հաճախ պարունակում է քվարցի և փայլարի խառնուրդ: Հանդիպում է ուժեղ փոխակերպված ածխաբեր ստվարաշերտերում:

**У-10. УГЛОВАТОСТЬ – ԱՆԿՅՈՒՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ANGULARITY**, նստվածքային հատիկների հատկություն, որոշվում է հատիկների եզրագծերում անկյունների քանակով և դրանց սրվածության աստիճանով:

**У-11. УГОЛ НЕСОГЛАСИЯ – ԱՆՆԵՐԴԱՇՆԱՎՈՒԹՅԱՆ ԱՆԿՅՈՒՆ, ANGLE OF UNCONFORMITY**, աններդաշնակ տեղադրված շերտերի անկման անկյունների տարբերություն:

**У-12. УГОЛ ОПТИЧЕСКИХ ОСЕЙ – ՕՊՏԻԿԱԿԱՆ ԱՈԱՆՑՔՆԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ, AXIAL ANGLE**, երկառանցք բյուրեղներում սուր անկյուն՝ օպտիկական առանցքների միջև: Օ. ա. ա. անվանում են դրական, երբ կիսորդ է Ng, և բացասական, երբ կիսորդ է Np:

**У-13. УГОЛ ПАДЕНИЯ – ԱՆԿՍԱՆ ԱՆԿՅՈՒՆ, ANGLE OF DIP, DIP ANGLE**, շերտի (երակի, հանքամարմնի, տեկտ. խզվածքի, լանջի և այլնի) վերին կամ ստորին մակերևույթի տվյալ կետում տարածմանն ուղղահայաց ուղղությամբ շոշափողի կազմած անկյունը հորիզոնական հարթության հետ:

**У-14. УГОЛ ПОГАСАНИЯ КРИСТАЛЛА – ԲՅՈՒՐԵՂԻ ՍԱՐՄԱՆ ԱՆԿՅՈՒՆ, EXTINCTION ANGLE OF CRYSTAL**, անկյունը բյուրեղի օպտիկական ինդիկատրիսի առանցքներից մեկի (Ng, Nm, Np) և նրա որևէ բյուրեղագիտական առանցքի միջև:

**У-15. УЛЬТРА...** (լատ. ultra – չափից ավել, ծայրահեղ, սահմանից այն կողմ) – **ՈՒՆԼՐԱ..., ԳԵՐ..., ԱՆԴՐԱ..., ULTRA...**, բարդ բառերի նախածանց:

**У-16. УЛЬТРААБИССАЛЬ** (լատ. ultra – չափից ավել, սահմանից այն կողմ) – **ԳԵՐԱԲԻՍԱԼ, HADAL, HADAL ZONE, ULTRA-ABYSSAL**, օվկիանոսի ամենախոր մասը (6000-7000-ից մեծ խորությունները), օվկիանոսային փողոակների մարզն է:

**У-17. УЛЬТРАБАЗИТЫ**, տե՛ս Ультраосновные горные породы:

**У-18. УЛЬТРАГЕОСИНКЛИНАЛЬ – ԳԵՐԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԼ (ՈՒՆԼՐԱԳԵՆՈՍԻՆԿԼԻՆԱԼ), ULTRAGEOSYNCLINE**, գերշարժուն տեկտ. կառուցվածք, որը բնորոշ է հնագույն (արխեյան) դարաշրջանին: Բնորոշվում է մագմայական հալույթների համար երկրակեղևի հեշտ թափանցելիությամբ, հրաբխաքարերի լայն տարածմամբ: Հոսքի ծալքավորության ուժգնությունը վկայում է Գ-ում նյութի խիստ պլաստիկ վիճակի մասին: Ավելի ուշ առաջացած գծային ծալքավոր երկրասինկլինալներից տարբերվում է ծալքերի բարդ ծովածքներով և ներծայթվածքներով: «Գ.» տերմինին մոտ է «նախաերկրասինկլինալ» տերմինը:

**У-19. УЛЬТРАМЕТАМОРФИЗМ – ԳԵՐՓՈՆԱՎԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ԳԵՐՍԵՏԱՍՈՐՖՈՒԹՅՈՒՆ), ULTRAMETAMORPHISM**, ռեգիոնալ փոխակերպություն, որն ուղեկցվում է միզմատիտների առաջացմամբ՝ ծայրահեղ ջերմաստիճանային ու ճնշումային պայմաններում: Գ. ունի խիստ ալլոքիմ. բնույթ և ուղեկցվում է ապարների մագմայական փոխարինմամբ և ապաբազիֆիկացումով, որի ընթացքում տեղի է ունենում հիմքերի (CaO, MgO և այլն) հեռացում և SiO<sub>2</sub>-ի, K<sub>2</sub>O-ի, Ma<sub>2</sub>O-ի կուտա-

կում: Այդ գործընթացի հետ են հիմնականում կապում մայրցամաքային կեղևի գրանիտազնեյսային շերտի առաջացումը և կեղևային գրանիտային մագմայակառուցության էքստենսիվ (տարածուն) զարգացումը:

**У-20. УЛЬТРАОСНОВНЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ, УЛЬТРАБАЗИТЫ, ГИПЕРБАЗИТЫ**

– **ԳԵՐԴԻՄՔԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐ, ՈՒՆՏՐԱԲԱԶԻՏՆԵՐ, ԶԻՊԵՐԲԱԶԻՏՆԵՐ, ULTRABASIC ROCKS**, մագմայական ապարների խումբ՝ սիլիկահողի ցածր պարունակությամբ (30-45 %  $\text{SiO}_2$ ): Ըստ միջավայրի ալկալիականության՝ դաշտասպաթազուրկ պարագենեզները միավորող Գ. ա-ի մեջ առանձնացվում են խորքային և հրաբխային ապարների երկու ապարաքիմ. շարքեր՝ բնականոն ալկալիականության (բուն Գ. ա.) և ալկալիական (ֆոնդիտներ և ֆոնդոլիթներ): Բուն Գ. ա., որոնց տիպաչափորոշիչային ապարակազմիչ միներալները ներկայացված են գերակայող օլիվինով, ինչպես նաև շեղանկյունային և մոնոկլինային պիրոքսենով ու եղջերախաբով, ամբողջովին մուգավուն են և պարունակում են ավելի քան 18 %  $\text{MgO}$  (ըստ զանգվածի): Այդ շարքի հրաբխային և ենթախորքային ապարները միավորված են պիլիտների ընտանիքում: Խորքային ապարների մեջ տարբերում են բուն օլիվինային ապարների (օլիվինիտների-դունիտների) և պիրոքսեն-օլիվինային ապարների (պերիդոտների) ընտանիքներ: Ալկալիական Գ. ա. պարունակում են ըստ զանգվածի ավելի քան 2 %  $\text{Na}_2\text{O}+\text{K}_2\text{O}$ : Ըստ տիպաչափորոշիչային ապարակազմիչ միներալներ օլիվինի, մելիլիտի, նատրիումային ու կալիումային ֆելդսպաթիդների համեմատական դերի՝ ալկալիազերիիմքային հրաբխաքարերը ստորաբաժանվում են 3 ընտանիքների՝ ալկալիական պիլիտների, մելիլիտիտների, գերիիմքային ֆոնդիտների: Այս շարքի խորքային ապարները բաժանվում են 2 ընտանիքների՝ մելիտոլիթների և գերիիմքային ֆոնդոլիթների: Գ. ա. բնության մեջ ունեն գալի պակաս տարածում, քան հրային ապարների մյուս խմբերը: Դրանց մեջ առավել մեծ նշանակություն ունեն խորքային ուլտրաբազիտները՝ առավելապես պերիդոտիտները, որոնք լայն տարածված են ֆաներոզոյի ծալքավոր գոտիներում և ժամանակակից օվկիանոսների կեղևում: Գ. ա. կազմում են նաև վերին միջնապատյանը՝ մինչև մի քանի հարյուր կմ խորությունները: Գ. ա-ի հետ կապված են քրոմիտների, ասբեստի, պլատինի, պլնաստների, պղինձ-նիկելային և երկաթային հանքաքարերի, հազվագյուտ մետաղների, փայլարների, բնագունեղ քարերի, հրակայուն հումքի խոշոր հնքվ-եր:

**У-21. УНАСЛЕДОВАННАЯ СКЛАДЧАТОСТЬ – ԺԱՌԱՆԳՎԱԾ ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, INHERITED FOLDING**

ձևավորվում է այն թուլացող լեռնագոյացման շարժումների հետևանքով, որոնք տեղի են ունենում ծալքավորության գլխավոր փուլի ավարտից անմիջապես հետո և ընդհանուր գծերով կրկնում են ծալքավորության ձևերի այն ուղղությունը, որն առաջացել է նախորդ ծալքագոյացման ընթացքում, հոմ. պոստումային ծալքավորություն:

**У-22. УНАСЛЕДОВАННЫЕ ДВИЖЕНИЯ, ПОСТУМНЫЕ ДВИЖЕНИЯ – ԺԱՌԱՆԳՎԱԾ ՀԱՐԺՈՒՄՆԵՐ, ՊՈՍՏՈՒՄԱՅԻՆ ՀԱՐԺՈՒՄՆԵՐ, POSTHUMOUS MOVEMENTS**

տեկտ. շարժումներ, որոնք ժառանգել են նախորդող շարժումների ուղղությունը և բնույթը, բայց սովորաբար թուլացած ձևով: Տերմինը սովորաբար օգտագործվում է պլատֆորմներում (հատկապես երիտասարդ)՝ նշելու այն տեկտ. շարժումները, որոնք ընթացել են նույն ուղղությամբ, ինչպիսին եղել են շարժումները նախորդող երկրասինկլինալային փուլում:

**У-23. УНДУЛЯЦИЯ (լատ. undulatus – ալիքանման) – ԱԼԻՔԱՎՈՐՈՒՄ (ՈՒՆԴՈՒԼԱՑՈՒՄ), UNDULATION**, ապարների ծալքերի հողակապերի (շառնիրների) ալիքավորություն և խորասուզում:

- У-24. УПЛОТНЕНИЕ ГРУНТОВ – ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ԽՏԱՑՈՒՄ, CONSOLIDATION OF GROUNDS**, գրունտների խտության մեծացումը՝ ի հաշիվ նրանց ծակոտկենության նվազման: Խտացման հետևանքով մեծանում են գրունտի կշիռը և սեղմման դիմադրությունը, նվազում են ծծանցման և ջրակլանման հատկությունները և այլն:
- У-25. УПРУГОСТЬ ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ԱՌԱՉԳԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, ROCK ELASTICITY**, մեխ. բեռնվածքը հեռացնելուց հետո ապարի նախկին ձևի ու ծավալի վերականգման հատկություն:
- У-26. УРАНИНИТ – ՈՒՐԱՆԻՆԻՏ, URANINITE, NIVENITE**, միներալ, ուրանի անջուր օքսիդ,  $UO_{2+x}$  (x-ը փոփոխվում է 0-ից մինչև 1): Պարունակում է մինչև 86.86 % U.: Խառնուրդների ձևով մշտապես առկա են ճառագայթածին Pb, հաճախ՝ Th և TR: Pb-ի պարունակությամբ որոշում են ապարի բացարձակ հասակը: Բյուրեղագիտական համակարգը խորանարդային է: Առաջացնում է խորանարդներ, օկտաէդրեր կամ դրանց կոմբինացիաներ, ներփակումներ: Գույնը՝ խեժի սևից մինչև կանաչավուն սև: Փայլը՝ խեժի, կիսամետաղական: Կարծրությունը՝ 5-6: Ուժեղ ճառագայթաակտիվ է: Հանդիպում է պեգմատիտներում, Co, Ni, Bi, Ag, As պարունակող ջրաջերմային (հիդրոթերմալ) երակներում: Օգտագործվում է կապարային մեթոդով ապարների բացարձակ հասակը որոշելու համար: Ու-ի բոլոր տարբերակները հիմք են ծառայում ուրանի հանքանյութերի համար:
- У-27. УРАНОВЫЕ РУДЫ – ՈՒՐԱՆԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, URANIUM ORES**, ուրան և նրա միացություններ պարունակող բնական միներալային գոյացություններ, որոնցից ուրանի կորզումը տնտեսապես շահավետ է: Հայտնի են ուրանի շուրջ 100 միներալ, որոնցից գործնական հետաքրքրություն են ներկայացնում 12-ը: Առավել արդյ. նշանակություն ունեն ուրանի օքսիդները՝ ուրանինիտը և նրա տարատեսակները: Ըստ ծագման պայմանների՝ Ու. հ. լինում են ներծին, արտածին և փոխակերպածին: Օգտակար խառնուրդների պարունակությամբ առանձնանցվում են բուն ուրանի, ուրան-մոլիբդենի, ուրան-վանադիումի, ուրան-նիկել-կոբալտ-բիսմութ-արծաթի և այլ հանքանյութեր: Ըստ ուրանի քանակության՝ տարբերում են հանքանյութերի 5 տեսակ՝ գերհարուստ (0.3 %-ից ավելի ուրան), հարուստ (0.1-0.3 %), շարքային (0.5-0.10 %), աղքատ (0.03-0.05 %) և արտահաշվեկշռային (0.01-0.03 %): Որպես կողմնակի արգասիք՝ ուրանը կորզվում է այնպիսի հանքանյութերից, որոնք պարունակում են 0.01-0.015 % ուրան (օր.՝ ՀԱԳ-ում գտնվող Վիտվատերսրանդի ոսկեբեր կոնգլոմերատներից) և նույնիսկ 0.006-0.008 % (Ֆլորիդայի ֆոսֆորիտներից):
- У-28. УРЕЗ ВОДЫ – ՋՐԱԳԻԾ, WATER EDGE, WATER BOUNDARY**, գետի կամ լճի (ջրամբարի) տվյալ պահին ջրային մակերևույթի հատման գիծը ցամաքի (ափի) մակերևույթի հետ:
- У-29. УРОВЕНЬ ПОДЗЕМНЫХ ВОД – ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՍԱՎԱՐՂԱԿ, SUBSURFACE WATER LEVEL, LEVEL OF UNDERGROUND WATER**, ստր. ջրերի ազատ կամ ճնշումային մակերևույթի տեղադիրքը տվյալ կետում՝ կամավոր հարթության (երկրի մակերևույթ, ծովի մակերևույթ և այլն) նկատմամբ:
- У-30. УСАДКА ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ԿԾՎՈՒՄ, CONTRACTION OF ROCKS**, չորանալիս որոշ խոնավ ապարների ծավալի փոքրացում: Մեծ կծկում ունեն կավային ապարները:
- У-31. УСЛОВНЫЕ ЗНАКИ – ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ, CONVENTIONAL SIGNS, SYMBOLS**, նշաններ, որոնք կիրառվում են տարբեր քարտեզների վրա՝ պատկերելու համար տարբեր օբյեկտները, դրանց որակական և քանակական բնութագրերը:

**У-32. УСТОЙЧИВОСТЬ ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, STABILITY OF ROCKS,** 1) ապարների քայքայման դիմադրությունը՝ ջրային հոսքերով տեղափոխման, ողողամաշման կամ ափաքերման դեպքում, 2) հորատանցքերում և լեռնային փորվածքներում ապարների փլուզմանը դիմադրելու հատկություն, 3) հասկացություն, որը հակադրվում է ապարների երկրբ. հատկանիշների փոփոխականությանը:

**У-33. УСТОЙЧИВОСТЬ МИНЕРАЛОВ – ՄԻՆԵՐԱԼՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, STABILITY OF MINERALS,** միներալների ունակություն՝ հակադրվելու արտաքին ֆիզ. և քիմ. ներազդեցություններին: Հողմահարման (տեղափոխման) գործընթացների ժամանակ կախված է միջավայրի հատկություններից: Տարբերում են միներալների ֆիզ. և քիմ. կայունություն: Խիստ կայուն ապարակազմիչ միներալներ են քվարցը, կավային միներալները, լիմոնիտը, ակցեսորային՝ ցիրկոնը, տուրմալինը, ռուտիլը, կորունդը, տոպազը: Խիստ անկայուն միներալներ են. ապարակազմիչ՝ հիմքային պլագիոկլազները, բիոտիտը, գիպսը, անհիդրիդը, սիդերիտը, հալիտը, սիլվինը, ակցեսորային՝ մարկագիտը, պիրիտը, օլիվինը, ֆելդսպատիդները, Fe-ի և այլ մետաղների սուլֆատները:

**У-34. УСТУП – 1) ՍԱՆԴՂԱՎԱՆՂ, 2) ՀԱՆՔԱՍՏԻՃԱՆ, 1) ESCARP, LEDGE, STEP, 2) BENCH, SCARP,** 1) գառիթափ, երբեմն ուղղաձիգ դարափուլ, որը բաժանում է տարբեր բարձրություններ ունեցող մակերևույթները: Ծագումը կարող է կապված լինել ինչպես ներծին (վարնետք, ֆլեքսուրա), այնպես էլ արտածին (ողողամաշում, ափաքերում և այլն) գործընթացների հետ, 2) ապարների ստվարաշերտի աստիճանաձև մաս, որը նախապատրաստված է մշակման համար՝ ինքնուրույն կամ տրանսպորտային միջոցներով:

**У-35. УСТЬЕ РЕКИ – ԳԵՏԱԲԵՐԱՆ, RIVER MOUTH,** վայր, որտեղ գետը թափվում է ծովի, լճի (ջրամբարի) կամ այլ ավելի խոշոր գետի մեջ:

**У-36. УФИМСКИЙ ЯРУС (Ուֆա ք-ի անունով, ՌԴ) – ՈՒՖԱՅԻ ՀԱՐԿ, UFIMIAN,** պերմի համակարգի վերին բաժնի ստորին հարկ:

**У-37. УЩЕЛЬЕ – ԿԻՐՃ, ՉՈՐ (ԽՈՐԱՉՈՐ), GAP, GORGE, NARROW, COMBE,** լեռներում խոր և գառիթափ լանջերով հովիտ: Ի տարբերություն կանյոնի (խնձահովտի)՝ Կ-ի հատակը լրիվ զբաղված չէ գետի հունով:

**У-38. УЭНЛОКСИЙ ЯРУС, УЭНЛОК, ВЕНЛОК (Շրոպշիր կոմսության Ուենլոկ ք-ի անունով, Անգլ.) – ՈՒԷՆԼՈԿԻ ՀԱՐԿ, ՈՒԷՆԼՈԿ, ՎԵՆԼՈԿ, WENLOCKIAN,** սիլուրի համակարգի ներքևից երկրորդ հարկ:



## Φ

- Φ-1. ФАЗА МАГМАТИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ – ՄԱԳՄԱՅԱՎԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ, PHASE OF MAGMATIC ACTIVITY**, երկրբ. ժամանակի համեմատաբար պարզորոշ արտահայտված միջակայք, հանդիսանում է տեկտոնամագմայական ցիկլի մասը և բնորոշվում է որոշակի տեկտ. իրադրությամբ, որի ընթացքում ձևավորվում են առանձին մագմայական (ներժայթքային և արտաժայթքային) համալիրներ: Տերմինն անհրաժեշտ է օգտագործել մագմայական գործընթացի զարգացման որոշակի ժամանակահատվածի համար և ոչ թե այդ ժամանակահատվածում առաջացած ապարների համար:
- Փ-2. ФАЗА ОРУДЕНЕНИЯ (РУДООБРАЗОВАНИЯ) – ՀԱՆՔԱՅՆԱՑՄԱՆ (ՀԱՆՔԱԳՈՅԱՑՄԱՆ) ՓՈՒԼ, METALLIZING PHASE**, տարբեր հանքային ֆորմացիաների այն հնքվ-երի առաջացման ժամանակաշրջան, որոնք կապված են մագմայական ապարների այս կամ այն համալիրի հետ: Հ. փ-երը մասնատվում են էտապների, իսկ վերջինները՝ ընթացաշրջանների (ստադիաների): Հոմ. միներալացման փուլ:
- Փ-3. ФАЗЫ СКЛАДЧАТОСТИ (ТЕКТОГЕНЕЗА) – ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ (ՏԵԿՏՈԳԵՆԵԶԻ) ՓՈՒԼԵՐ, FOLDING PHASES, OROGENIC PHASES**, երկարատև և անընդմեջ տեկտ. շարժումների (հատկապես ծալքագոյացման) արագացման կարճատև դրսևորումներ, որոնք ապարախմբերի շերտերում, շնորհիվ բարձրացման ու ողողաքայքայման, ֆիքսվում են անկյունային աններդաշնակություններով: Պարզվել է, որ չնայած Օ. փ-ի հասակային սահուններին, առանձին ծալքավոր կառույցների սահմաններում նկատվում է տեկտ. ձևախախտումների (ոչ միայն ծալքավոր) հիմնական դարակարգերի արտահայտման համաժամանակություն գլոբալ մասշտաբով, տե՛ս նաև Эпоха складчатости: Օ. փ-ի մասին հասկացությունը հանդես է եկել 19-րդ դ-ի առաջին կեսում, բայց այն ավելի պարզորոշ ձևակերպել է գերմ. գիտնական Հ. Շտիլեն 1924-ին:
- Փ-4. ФАКОЛИТ** (հուն. phakós – ոսպ և ilthos – քար) – **ՖԱԿՈԼԻԹ, PHACOLITH**, ոսպնյակածև (ոսպածև) ոչ մեծ անարմատ ներժայթքային (ինտրուզիվ) մարմին, որը տեղադրված է անտիկլինալ ծալքի կամարում կամ սինկլինալ ծալքի գոգվածքում՝ ներփակող ապարների հետ ներդաշնակ: Ֆ-ները բնորոշ են օֆիոլիթային (ալպինատիպ) գերհիմքային ներժայթքվածքների համար:
- Փ-5. ФАКТОРЫ МЕТАЛЛОГЕНИЧЕСКИЕ – ՄԵՏԱՂԱԳՈՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐ, METALLOGENIC FACTORS**, գործոններ, որոնք պայմանավորում են հանքաբեր համալիրների, հանքաբեր ֆորմացիաների և հնքվ-երի տեղաբաշխումը ժամանակի և տարածության մեջ: Ներծին հնքվ-երի Մ. գ., ըստ Բիլիբինի (1959), միավորվում են 3 խմբում՝ տեկտոնամագմայական, կառուցվածքաքարաբանական և ողողամաշման (երոզիայի) խորության: Արտածին հնքվ-երի տեղաբաշխումը որոշվում

է ֆացիալ-շերտագրական, հնաշխ., երկրծ. և այլ գործոններով: Մ. գ-ի մեջ Շատալովը և ուր. (1964) առանձնացնում են՝ ա) մետաղագոյացման երկրաբանատերկրֆ. գործոններ՝ մոլորակային հանքաքեր տարածքների համար, բ) մետաղագոյացման կառուցվածքաֆացիալ և տեկտոնամագմայական գործոններ՝ շատ մեծ և մեծ հանքաքեր տարածքների համար, գ) հանքավերահսկող երկրծ. գործոններ՝ միջին և ավելի՝ տեղական հանքաքեր տարածքների համար:

**Փ-6. ФАМЕНСКИЙ ЯРУС, ФАМЕН** (Արդեններում գտնվող Ֆամեն տեղանքի անունով, Բելգ.) – **ՖԱՄԵՆԻ ՅԱՐԿ, ՖԱՄԵՆ, FAMENNIAN**, դևոնի համակարգի վերին բաժնի վերին հարկ:

**Փ-7. ФАНГЛОМЕРАТЫ** (անգլ. fan – արտահոսային կոն, բառ. քամհար և լատ. glomero – ցած են գլորում, կույտ են հավաքում) – **ՖԱՆԳԼՈՍԵՐԱՏՆԵՐ, FANGLOMERATES**, սելավային հոսքերի և լեռնային գետերի արտահոսային կոնի չտեսակավորված և ոչ շերտային նստվածքներ: Կազմված են ապարների թույլ մշակված մանր ու խոշոր բեկորներից: Յատակագծում Ֆ-ի նստվածքներն ունեն հովհարածև տեսք:

**Փ-8. ФАНЕРОЗОЙСКАЯ ЭОНОТЕМА, ФАНЕРОЗОЙ** (հուն. phaneros – բացահայտ, ակնհայտ և zōe – կյանք) – **ՖԱՆԵՐՈԶՈՅԱՆ ԷՈՆՈՏԵՄԱ, ՖԱՆԵՐՈԶՈՅ, PHANEROZOIC**, ընդհանուր շերտագրական ստորաբաժանում, միավորում է պալեոզոյան, մեզոզոյան և կայնոզոյան էրատեմաները: Երկրաժամանակագրական աղյուսակում համապատասխանում է էոնին: Տերմինն առաջարկել է ամերիկյան երկրաբան Ջ. Չեդվիկը 1930-ին: Ֆ. է-ի սկզբունքային տարբերությունը կրիպտոզոյան էրատեմայից կայանում է ներծին և արտածին երկրբ. գործընթացների կտրուկ և ուժգին տարբերակման մեջ, որի արդյունքներն արտահայտվել են քարոլորտի բլոկային կազմությունում և քարոլորտի սալերի շարժման մեջ, պլատֆորմային կառուցվածքների մեծացմամբ ու օվկիանոսների և մայր ցամաքների ձևավորմամբ, կենսոլորտի ընդհանուր առաջադիմական զարգացմամբ, որը պայմանավորել է մթնոլորտի կազմի փոփոխությունը, տարատեսակ օրգանածին ապարների առաջացումը: Ֆ. է-ի տևողությունը կազմում է 550 մլն. տ.: Քննարկվում են առաջարկություններ՝ վեցերորդ ներառելու Ֆ. է-ի կազմում և Ֆ. է-ի կազմից հանելու չորրորդական համակարգը:

**Փ-9. ФАНЕРОЗОЙСКИЙ ЭОН – ՖԱՆԵՐՈԶՈՅԱՆ ԷՈՆ, PHANEROZOIC**, երկրբ. պատմության երկարատև ժամանակ, որն ընդգրկում է պալեոզոյան, մեզոզոյան և կայնոզոյան դարաշրջանները: Շերտագրական սանդղակում համապատասխանում է էոնոտեմային, տե՛ս *Фанерозойская эонотема*:

**Փ-10. ФАУНА** (լատ. Fauna – հռոմեական դիցաբանության մեջ դաշտերի, անտառների և կենդանիների հոտերի աստվածուհի) – **ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ (ՖԱՈՒՆԱ), FAUNA**, կենդանիների տեսակների ամբողջություն, որը բնորոշ է որևէ տեղանքի կամ երկրբ. ժամանակահատվածի համար: «Ֆ.» տերմինը օգտագործվում է նաև ապարների մնուշում ներփակված կամ մերկացումում հավաքված կենդանական մնացորդների համալիրի համար:

**Փ-11. ФАУНИСТИЧЕСКИЙ КОМПЛЕКС – ՖԱՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱԼԻՐ, FAUNISTIC COMPLEX**, կենդանիների տեսակների խումբ, որն առաջացել է մնան տարածաշրջաններ և որոշ մոտ էկոլոգիական առանձնահատկություններ ունեցող աշխ. ռեգիոնում:

**Փ-12. ФАЦИИ (ГЕОЛОГИЧЕСКИЕ ОСАДОЧНЫЕ)** (լատ. facies – դեմք, տեսք) – **ՖԱՑԻԱՆԵՐ (ԴԻՄԱՊԱՏԿԵՐՆԵՐ) (ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ), FACIES**, Ֆ.

հասկացությունը ծագել է 19-րդ դ.՝ նշելու համար նստվածքային ապարների կազմի և նրանցում ներփակված օրգանական մնացորդների փոփոխությունները մեկ շերտագրական հորիզոնի սահմաններում՝ նրա տարածման մակերեսում: «Ֆ.» տերմինը առաջարկել է շվեյց. երկրաբան Ա. Գրեսլին (1838-1841): Ֆացիալ փոփոխությունները Գրեսլին կապում էր ապարների առաջացման պայմանների տարբերության հետ և դրանք համեմատում էր այն փոփոխությունների հետ, որոնք կարելի է դիտել ժամանակակից ծովերի հատակում: Ֆացիան, ըստ Գրեսլիի, հասակակից ապարների ցանկացած շերտի կոնկրետ տեղամասն է, որը հարևան տեղամասերից տարբերվում է ինչպես քարաբանական կազմով, այնպես էլ օրգանիզմների բրածո մնացորդներով կամ այլ հատկանիշներով (Գունավորում, շերտավորություն և այլն): Ռուս. գրականության մեջ «Ֆ.» տերմինը (Գրեսլիի հասկացմամբ) առաջին անգամ օգտագործել է Ն. Գոլովկինսկին (1868)՝ նշելու համար պերմի նստվածքների փոփոխությունները Վոլգա և Կամա գետերի ավազաններում: «Ֆ.» հասկացությունը Գրեսլիի մոտ բազմակողմանի էր, այն ընդգրկում էր ապարների քարաբանական կազմը, նրանցում ներփակված օրգանական մնացորդները, նստվածքների ծագումը և փոփոխությունները՝ որոշակի շերտագրական շրջանակներում: Այդ պատճառով հետագայում «Ֆ.» տերմինը օգտագործվել է տարբեր իմաստներով: Առավել լայնորեն այն օգտագործվում է նշելու համար հին նստվածքակուտակման ֆիզաշխ. պայմանները միջավայրի բոլոր առանձնհատկություններով՝ դինամիկայով, քիմ. ռեժիմով, օրգանական աշխարհով, ջրավազանի խորությամբ և այլն: Ֆ-ի ժամանակակից մեկնաբանությունում գոյություն ունեն երկու տարբերակներ. ֆացիան ապար է, որն առաջացել է որոշակի իրադրությունում, այն նստվածքակուտակման իրադրություն է (ժամանակակից և հին), որը նյութավորվել է ապարում կամ նստվածքում: Ֆ-ի բնորոշման այս երկու տարբերակները միմյանց շատ մոտ են, և մեկը լրացնում է մյուսին: Հաճախ Ֆ. օգտագործում են՝ նշելու նստվածքային գործընթացի՝ քարագոյացման (լիթոգենեզի) տարբեր փուլերը: Փոխակերպային ապարների համար ֆիննական երկրաբան Պ. Էսկոլան մտցրեց «փոխակերպության ֆացիա» հասկացությունը: Լ. Վ. Պուստովալովը 1933-ին տվեց բրածո երկրաքիմ. ֆացիայի բնորոշումը, որը իրենից ներկայացնում է շերտ կամ շերտախումբ, որն իր ամբողջ տարածվածությունում ունի միանման երկրաքիմ. բնութագիր: Վերջինը կապված է ապարների ձևավորման գործընթացի հետ: «Երկրաքիմ. Ֆ.» տերմինը լայն ճանաչում ստացավ հատկապես նավթային երկրաբանների մոտ, քանի որ ցույց է տալիս նստվածքակուտակման ու դիագենեզի միջավայրի երկրաքիմ. առանձնհատկությունները, որոնք ունեն կարևոր նշանակություն նավթի ելանյութային օրգանական նյութի կուտակման համար:

Տարբեր Ֆ. բնորոշվում են ըստ ծագումնաբանական հատկանիշների համալիրի, այդպիսիք են՝ օրգանական աշխարհի բնույթը և հնաէկոլոգիական պայմանները, ապարների կառուցվածքն ու կազմվածքը, միջավայրի ջրադինամիկ ակտիվությունը, հատիկների ու բեկորների ձևը և հատիկավորությունը, նստվածքի տեսակը և նյութական կազմը, ջրի աղիությունը և զազային ռեժիմը, ապարի երկրաքիմ. առանձնհատկությունները և գույնը, ռիթմիկության առկայությունն ու բնույթը, ապարների տեղադրման բնույթը և տարածական կայունությունը, փոխհարաբերությունը այլ Ֆ-ի հետ ժամանակի և տարածության մեջ, տեկտ. ռեժիմի ընդհանուր ուղղվածությունը, համեմատությունը նման ժամանակակից Ֆ-ի հետ: Ֆ. անջատվում են ըստ նստվածքակուտակման միջավայրի իրադրության, ապարների կազմի, ապարների փոփոխության փուլի, օրգանական մնացորդների: Հազվա-

դեպ Ֆ. առանձնացվում են ըստ որևէ մեկ հատկանիշի, օր.՝ լիթոֆացիաներ, երկրք. ֆացիաներ, կենսաֆացիաներ, տեկտոնաֆացիաներ: Բրածո Ֆ-ի ընդհանուր դասակարգում դեռևս մանրամասն մշակված չէ: Ընդունված է դրանց մեջ առանձնացնել երեք մեծ խմբեր՝ ցամաքային, անցողիկ (ծովայինից դեպի ցամաքային) և ծովերի ու օվկիանոսների Ֆ.: Ցամաքային Ֆ-ի մեջ առանձնացվում են այլուվիալ (գետային), լճային, ճահճային, առափնյա հարթավայրերի, անապատային, պրոյուվիալ (հեղեղային), սառցադաշտային, լանջային (դելյուվիալ և կոյուվիալ), ցամաքային հրաբխային, էոլյան (հողմային), կարստային ու քարանձավային Ֆ.: Ֆ-ի անցողիկ խմբին պատկանում են ծովալճակային ու ծովածոցային, մակընթացային-տեղատվութային հարթավայրերի, մերձծովային լճերի, դելտային, լողափային Ֆ.: Բրածո ծովային ու օվկիանոսային Ֆ-ի առավել տարածված խմբեր հանդիսանում են շելֆի Ֆ.՝ մերձափնյա զոնայի (լիթորալի) և ծանծաղուտային զոնայի (մերձլիթորալի) Ֆ., համեմատաբար քիչ հանդիպում են բաթիալ և աբիսալ Ֆ.: Երկրաբանության այն բաժինը, որը դիտարկում է նստվածքային ապարների առաջացման ֆիզաշխ. իրադրությունը, ստացել է «Ուսմունք ֆացիաների մասին» անվանումը, իսկ Երկրի պատմության անցյալ ժամանակաշրջանների համար այդ իրադրությունների վերականգնումը կոչվում է ֆացիաների վերլուծություն. վերջինը հանդիսանում է պատմական երկրաբանության և հնաշխարհագրության գլխավոր մեթոդներից մեկը:

**Փ-13. ՓАЦИИ АБИССАЛЬНЫЕ – ԽՈՐՉՐՅԱ (ԱՐԻՍԱԼ) ՖԱՑԻԱՆԵՐ, ABYSSAL**

**FACIES**, նստվածքակուտակման իրադրություն, որը բնորոշ է օվկիանոսային խորություններին: Տարածվում է օվկիանոսի մահիճում և խորջրյա փողրակներում՝ սովորաբար 3-4 կմ-ից ավելի մեծ խորություններում: Բնորոշ է առավելապես սիլիցիումային տիղմերի և կարմիր խորջրյա կավի տարածմամբ:

**Փ-14. ՓАЦИИ БАТИАЛЬНЫЕ – ԲԱԹԻԱԼ ՖԱՑԻԱՆԵՐ, BATHYAL FACIES**, նստ-

վածքակուտակման իրադրություն, որն ընդգրկում է ծովերի ու օվկիանոսների 200-400 մ-ից մինչև 2-3 կմ խորությունները, համապատասխանում է մայրցամաքային լանջին: Բ. ֆ-ի հիմնական հատկանիշներն են՝ ծանծաղուտային հատկանիշների լրիվ բացակայությունը, ֆաունայի բացակայությունը կամ հազվադեպությունը, կավային, կրակավային և կրային տիղմերի գերակշռությունը, հոծ, իսկ զոնայի վերին մասերում՝ մանրաշերտավոր կազմվածքի զարգացումը, միջմառիթմիկության բացակայությունը, օքսիդացման գործակցի ցածր աստիճանը (մինչև 0.3), կապը խոշոր տրանսգրեսիվ ցիկլերի ավարտի հետ:

**Փ-15. ՓАЦИИ ВУЛКАНОГЕННЫЕ – ՅՐԱԲԽԱԾԻՆ ՖԱՑԻԱՆԵՐ, VOLCANOGENIC**

**FACIES**, բնորոշ հրաբխածին ապարների համախմբություններ, որոնց տարբերիչ առանձնահատկությունները պայմանավորված են մի շարք գործոններով՝ հրաբխայնության տիպով, ֆիզաշխ. միջավայրի բնույթով, հալույթի սառչման խորությամբ, ժայթքման կենտրոնի նկատմամբ դիրքով և այլն: Ըստ ձևավորման ֆիզաշխ. պայմանների՝ առանձնացվում են ստորջրյա, ցամաքային, ենթասառցադաշտային և այլ Յ. ֆ., ըստ մագմայական հալույթի պնդացման խորության՝ մակերևութային, հրաբխածին, փողաբերանային և ենթահրաբխային Յ. ֆ., ըստ ժայթքման կենտրոնի նկատմամբ ունեցած տեղադիրքի՝ մերձփողաբերանային (մերձխառնարանային), հեռացված հրաբեկորային և այլն:

**Փ-16. ՓАЦИИ ДЕЛЬТОВЫЕ – ԳԵՏԱԲԵՐԱՆԱՅԻՆ (ԴԵԼՏԱՅԻՆ) ՖԱՑԻԱՆԵՐ, DEL-**

**TAIC FACIES**, ֆացիաների խմբեր, որոնք համապատասխանում են գետաբերանի տարբեր տեղամասերին և ներառում են տվյալ տեղամասին բնորոշ նստվածքների ու ապարների քարաբանածագումնաբանական տիպեր: Որոշ հետազոտող-

ներ Գ. ֆ-ին են վերագրում բոլոր այն ֆացիաները, որոնք հանդիպում են ժամանակակից խոշոր գետերի գետաբերանների սահմաններում, այդ թվում՝ լճային, ճահճային և ջրավազանների առափնյա զոնայի ֆացիաները:

**Փ-17. ՓԱՇԻԻ ԼԱԳՄՆԻԵ – ԾՈՎԱԼՃԱԿԱՅԻՆ (ԼԱԳՈՒՆԱՅԻՆ) ՖԱՑԻԱՆԵՐ, LAGOON FACIES**, ծովալճակային նստվածքներն առաջանում են ծովից ոչ լրիվ անջատված ծանծաղ ավազաններում (ծովալճակներում): Դրանց հիմնական առանձնահատկությունը ջրի ցածրացված կամ բարձրացված աղայնությունն է: Այդ նստվածքների համար բնորոշ է լավ արտահայտված շերտայնությունը, ֆաունայի տեսակային կազմի աղքատությունը: Խոնավ կլիմայական պայմաններում ծովալճակների ջրերը տարբեր աստիճանի աղազերծված են, և գերակշռում են ավազակավային նստվածքները: Չոր կլիմայական պայմաններում ծովալճակների ջրերը տարբեր աստիճանի աղայնացված են, և առաջանում են կարբոնատային (դոլոմիտ) և աղածին ապարներ (գերակշռում են գիպսը, անհիդրիդը, միրաբիլիտը, քարաղը):

**Փ-18. ՓԱՇԻԻ ՄԱԳՄԱՏԻՇԵՍԿԻՍ ԲՈՐՈԸ – ՄԱԳՄԱՅԱԿԱՆ ԱՊԱՐՆԵՐԻ ՖԱՑԻԱՆԵՐ, FACIES OF MAGMATIC ROCKS**, մագմայական մարմիններ կամ ապարներ, որոնց որոշ բնորոշ առանձնահատկությունները պայմանավորված են առաջացման պայմաններով՝ ձևավորման խորությամբ, տեղադրման պայմաններով և կողային ապարների հետ փոխհարաբերությամբ: Ըստ առաջացման խորության՝ տարբերում են առավել խոր (աբիսալ), միջին խորությունների, փոքր խորությունների (ենթախորքային), ենթահրաբխային և արտաժայթքային Մ. ա. ֆ.:

**Փ-19. ՓԱՇԻԻ ՄԵՏԱՄՈՐՓԻՅՄԱ – ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ՄԵՏԱՄՈՐՖՈՒԹՅԱՆ) ՖԱՑԻԱՆԵՐ, METAMORPHISM FACIES**, փոխակերպային ապարների ջերմադինամիկ կայունության մարզ, անջատվում է փոխակերպության գործոնների՝ ճնշման, ջերմաստիճանի, ֆլուիդալ բաղադրիչների հարաբերմամբ: Փ. ֆ. անվանվում են ըստ իրենց համար բնորոշ ապարների՝ մետաբազիտների (կանաչ թերթաքարերի ֆացիա, ամֆիբոլիթների ֆացիա, պիրոքսեն-պլազիոկլազային եղջերաքարերի ֆացիա և այլն), մետապելիտների (կավային թերթաքարերի, ֆիլիթների, գնեյսների, անդալուզիտային եղջերաքարերի և այլն), կարբոնատային ապարների (մարմարների) և այլն: Ըստ ջերմադինամիկ պայմանների՝ առանձնացվում են ռեզիոնալ փոխակերպության երեք գլխավոր ֆացիաներ՝ 1) կանաչ թերթաքարերի ֆացիա՝ բնորոշվում է փոքր խորության ցածր ջերմաստիճանով ու ճնշմամբ, առաջանում են քլորիտ, սերիցիտ, էպիդոտ, ակտինոլիթ, որոնք մտնում են քլորիտային, սերիցիտային և այլ փոխակերպային թերթաքարերի կազմի մեջ, 2) ամֆիբոլիթային ֆացիա՝ բնորոշվում է զգալի խորությունների բարձր ճնշմամբ ու ջերմաստիճանով, ջրի առկայությամբ, բնորոշ միներալներն ամֆիբոլներն ու փայլարներն են, այս ֆացիային պատկանում է փոխակերպային ապարների մեծ մասը (գնեյսներ, ամֆիբոլիթներ, բյուրեղային թերթաքարեր), 3) գրանուլիթային ֆացիա՝ բնորոշվում է ավելի բարձր ճնշմամբ ու ջերմաստիճանով, բայց առանց ջրի, առաջանում են գրանուլիթներ (հիպերստեն-նոնաքարային գնեյսներ՝ առանց փայլարների ու ամֆիբոլների):

**Փ-20. ՓԱՇԻԻ ՕՍԱԾՈՇՆԻԵ**, տե՛ս Փաշիի (геологические осадочные):

**Փ-21. ՓԱՇԻԻ ՐԵՇՆԻԵ – ԳԵՏԱՅԻՆ ՖԱՑԻԱՆԵՐ, FLUVIAL FACIES**, ֆացիաների խումբ, որը պայմանավորված է գետահովտի զարգացմամբ, գետի հունից գլորվող և կախութային ջրաբերուկների արտահանմամբ ու կուտակմամբ (ափային ծանծաղուտներում և ողողահունում): Դրանց մեջ առանձնացվում են երեք խոշոր ֆացիա-

ներ՝ հունային, ողողահունային և հնահունային: Հունային ֆացիան սովորաբար ներկայացված է ավազաճալաքարային նյութով, ողողահունային ֆացիան՝ առավելապես ալերիտներով ու կավային նստվածքներով, հնահունային ֆացիան գրավում է համեմատաբար փոքր մակերեսներ. դրանք գետի թողած հունի տեղամասերն են, որոնք լցված են կավային ավազներով և ալերիտակավային նստվածքներով: Նշված ֆացիաների կազմում առանձնացվում են ավելի մանր ֆացիաներ:

**Փ-22. ՓԱՇԻՐԻՓՈՎԻԵ** – **ԽՈՒԹԱՅՆ ՖԱՑԻԱՆԵՐ, REEF FACIES**, ծովային հատակի ֆացիաներ, որոնք բնորոշվում են միատեսակ ֆիզաշխ. ու ջրադինամիկական պայմաններով և խութակառույց օրգանիզմների միատեսակ համալիրով: Տարածված են մերձափնյա ծանծաղուտում կամ ափից զգալի չափով հեռացված ծանծաղուտում: Խ. ֆ-ի մեջ առանձնացվում են ափային, պատվարային ու բարձրացված խութերի, օղակղզիների (ատոլների), խութային կղզիների և այլ ֆացիաներ, տե՛ս նաև Քիֆ:

**Փ-23. ՓԱՅԼԻՏ** (Ֆայալ, Faial, Fayal կղզու անունով, Ազորյան կղզիներ, որտեղ առաջին անգամ գտնվել է Ֆ.) – **ՖԱՅԱԼԻՏ, FAYALITE**, միներալ, օլիվինի երկաթային տարատեսակ, ֆայալիթ-ֆորստերիտ նույնաձև (իզոմորֆ) սերիայի ծայրանդամ: Տարածված է թթու, հազվադեպ ալկալիական մագմայական ապարներում, փոխակերպված երկաթային նստվածքներում, պեգմատիտներում, տե՛ս նաև՝ **Օլիվին**:

**Փ-24. ՓԵԼԴՍՊԱՏԻՅԱՑԻԱ** (գերմ. Feldspat – դաշտային սպաթ) – **ՖԵԼԴՍՊԱՏԱՑԻՈՒՄ, FELDSPATHISATION**, դաշտային սպաթների նորագոյացություններով ապարների հարստացման գործընթաց: Տեղի է ունենում ալկալիական մետասոմատոզի կամ ապարների վրա ջրաջերմային (հիդրոթերմալ) լուծույթների ներգործության հետևանքով:

**Փ-25. ՓԵԼԴՍՊԱՏՈԻԴՆԵՐ** – **ՖԵԼԴՍՊԱՏՈԻԴՆԵՐ (ԴԱՇՏԱՍՊԱՏՈԻԴՆԵՐ), FELDSPATHOIDS, FELDSPATHIDS**, միներալների խումբ, նատրիումի, կալիումի, մասամբ կալցիումի ալյումասիլիկատներ: Գլխավոր միներալներ են՝ նեֆելինը, սողալիթը, լեյցիտը, կանկրենիտը և այլն: Ալկալիական արտաժայթքային ապարների ապարակազմիչ միներալներն են (փոխարինում են դաշտային սպաթներին այն ապարներում, որոնք գերհագեցած են ալկալիներով և զրկված են քվարցից):

**Փ-26. ՓԵԼԶԻՏ** (գերմ. Felsit) – **ՖԵԼԶԻՏ, FELSITE**, թթու հրաբխային բաց զույնի աֆանիտային ապար, բաղկացած է քվարցի և դաշտային սպաթի նրբահատիկ (զաղտնաբյուրեղային) ագրեգատից: Կարող են առկա լինել փոքրաքանակ հրաբխային ապակի, երբեմն քվարցի փոխարեն՝ կրիստոբալիթ և տրիդիմիտ: Ֆ. ըստ քիմ. կազմի փոփոխարկվում է դացիտից մինչև ռիոլիթները: Օգտագործվում է որպես բարձրորակ թթվակայուն նյութ:

**Փ-27. ՓԵԼԶՕ...** – **ՖԵԼԶՕ...., FELSO...**, ապարների անվանման նախածանց, նշելու համար այն, որ ապարի հիմնական զանգվածը հանդիսանում է գաղտնաբյուրեղային (ոչ ապակեման):

**Փ-28. ՓԵՆԱԿԻՏ** (հուն. phénax, սեռ. հ. phénakos – խաբեբա, քվարցի հետ արտաքին նմանությունից) – **ՖԵՆԱԿԻՏ, PHENACITE**, միներալ, բերիլիումի օրթոսիլիկատ,  $Be_2[SiO_4]$ : Բյուրեղագիտական համակարգը տրիգոնային է: Առաջացնում է անզույն, դեղնավուն, սպիտակ բյուրեղներ, ճառագայթավոր ագրեգատներ: Կարծրությունը՝ 7.5-8: Փայլը՝ ապակու (միստերում) և ճարպանման (խեցանման կտորվածքում): Հանդիպում է պեգմատիտներում և ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվելում: Բերիլիումի հանքանյութ է: Թափանցիկ բյուրեղները թանկարժեք քարեր են:

**Փ-29. ФЕНОКРИСТАЛЛЫ**, տե՛ս Вкрапленники:

**Փ-30. ФЕРОМАГНЕТИЗМ – ՖԵՐՈՄԱԳՆԵՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, FERROMAGNETISM**, նյութի հատկություն՝ մագնիսական դաշտում մագնիսացվելու և մագնիսացվածությունը մասամբ պահպանելու՝ մագնիսացնող դաշտի վերանալուց հետո:

**Փ-31. ФИЗИКО-ГЕОГРАФИЧЕСКИЕ КАРТЫ – ՖԻԶԻԿԱՆՇԽԱՐՅԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ, PHYSICAL-GEOGRAPHICAL MAPS**, պատկերում են առանձին բնական բաղադրիչները, օբյեկտները, աշխհ. միջավայրի երևույթներն ու գործընթացները (օր.՝ երկրի մակերևույթի ռելիեֆը, կլիման, հողերը և այլն) և դրանց օրինաչափ զուգակցությունները (բնական տարածքային համալիրները):

**Փ-32. ФИЗИКО-ГЕОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ – ՖԻԶԻԿԱՆՇԽԱՐՅԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐ, PHYSICAL-GEOGRAPHICAL PROCESSES**, բնական գործընթացներ, որոնք ընթանում են աշխհ. թաղանթում և հանգեցնում են նրանում նյութի և էներգիայի քանակի ու ձևի վերաբաշխմանը, որը պայմանավորված է լանդշաֆտի բաղադրամասերի միջև գոյություն ունեցող փոխազդեցությամբ (օր.՝ ռելիեֆագոյացումը, խոնավապտույտը, կենսազանգվածի ստեղծումը և այլն): Դրանց հակադրվում են տեխնածին գործընթացները:

**Փ-33. ФИЗИКО-ГЕОГРАФИЧЕСКОЕ РАЙОНИРОВАНИЕ – ՖԻԶԻԿԱՆՇԽԱՐՅԱԳՐԱԿԱՆ ՇՐՁԱՆԱՑՈՒՄ, PHYSICAL-GEOGRAPHICAL REGIONALIZATION**, երկրի մակերևույթի բաժանման համակարգ, որի հիմքում ընկած է համաստրադաս բնական ռեգիոնների (երկրաշրջանների) բացահայտումը: Տարբերում են շրջանացում ըստ բնական միջավայրի բաղադրիչների (երկրծ., կլիմայական, հողային և այլն) և համալիր (լանդշաֆտային): Համալիր շրջանացման զոնայական միավորներն են՝ աշխարհագրական գոտի, աշխարհագրական զոնա, ենթազոնա, ֆիզաշխարհագրական շերտ, ոչ զոնայական՝ հատված, երկրամաս, մարզ, նահանգ (պրովինցիա), շրջան:

**Փ-34. ФИЗИЧЕСКОЕ ПОЛЕ ЗЕМЛИ**, տե՛ս Геофизическое поле:

**Փ-35. ФИКСИЗМ** (լատ. fixus – պինդ, ամուր, չփոփոխվող, ամրացված) – **ՖԻՔՍԻԶՄ, FIXISM**, տեկտ. գիտաենթադրությունների խումբ՝ հիմնված երկրի մակերևույթում մայր ցամաքների դիրքի անփոփոխության և երկրակեղևի զարգացման ընթացքում ուղղաձիգ շարժումների վճռական դերի պատկերացումների վրա: Հակադրվում է մոբիլիզմին: Ֆ. հաջորդել և փոխարինել է կծկանքի (կոնտրակցիայի) վարկածին, որը հիմնված էր երկրակեղևի զարգացման մեջ հորիզոնական ուղղության ուժերի գերակայության վրա: Ֆ., որպես գիտական ուղղություն, ընդգրկում է մի քանի տեկտ. վարկածներ՝ հիմնված այն պատկերացումների վրա, որ ուղղաձիգ տատանողական շարժումները առաջնային են, իսկ հորիզոնականները՝ երկրորդային: Առաջին անգամ այս ուղղության առավել լրիվ վարկածը հանդիսանում է հոլանդ. գիտնական Ռ. Վ. վան Բեմելենի (1933) վարկածը երկրի խորքային նյութի ձգողական (գրավիտացիոն) տարբերակման մասին՝ կապված նրա երկրք. էվոլյուցիայի հետ: Ֆ-ի ամենահետևողական կողմնակիցներից էր ռուս երկրաբան Վ. Վ. Բելուսովը, որը զարգացրեց ներծին ռեժիմների կոնցեպցիան՝ հիմնված այն պատկերացման վրա, որ երկրի քարոլորտում տեղի ունեցող գործընթացներն անխզելիորեն կապված են միջնապատյանի խորքային գործընթացների հետ, որոնք ընթանում են անմիջապես նրա համապատասխան տեղամասերի տակ: Կոնկրետ ներծին ռեժիմները, որոնք արտացոլվում են այս կամ այն խոշոր տեկտ. կառուցվածքի ձևավորման մեջ, որոշվում են ասթենոսֆերայի և քարոլորտի փոխհարաբերությամբ:

- Փ-36. ФИЛЛИТ** (հուն. phýllon – թերթ) – **ՖԻԼԻՏ, PHYLLITE**, փոխակերպային ապար, ամուր նրբաթեփուկավոր ու նրբաթերթավոր, բաց կամ մուգ մոխրագույն քվարց-սերիցիտային թերթաքար՝ թերթավորման մակերևույթներում բնորոշ մետաքսանման առկայծող փայլով: Հաճախ պարունակում է նաև քլորիտ, երբեմն՝ բիոտիտ, ալբիտ, քլորիտոիդ, գրաֆիտ, մագնետիտ և այլ միներալներ: Առաջանում է պեղիտային ապարների ռեգիոնալ փոխակերպության դեպքում՝ կանաչքարային ֆացիայի պայմաններում: Իրենից ներկայացնում է կավային թերթաքարերի, արգիլիթների փոխակերպության հաջորդ աստիճանը: Փոխակերպության աստիճանի բարձրացման դեպքում փոխակերպվում է փայլարային, բյուրեղային թերթաքարի: Օգտագործվում է թերթաքարային ալյուրի արտադրության մեջ:
- Փ-37. ФИЛЬТРАЦИОННЫЕ ВОДЫ** – **ԾՃԱՆՑՄԱՆ ՋՐԵՐ, SEEPAGE WATERS**, ստր. ջրեր, որոնք թափանցում են ապարների մեջ մանր ծակոտիներով ծծանցվելու միջոցով:
- Փ-38. ФИЛЬТРАЦИЯ** (ֆրանս. filtre – քամիչ, ուշ լատ. filtrum-ից, բառ.՝ թաղիք) – **ԾՃԱՆՑՈՒՄ, FILTRATION, PERCOLATION, SEEPAGE**, ծանրության ուժի կամ ջրաստատիկ ճնշման ազդեցությամբ հեղուկի շարժումը ապարների ճեղքերով և ծակոտիներով: Մազական ճեղքերի և ծակոտիների միջով հեղուկի ծծանցումը խիստ դժվարանում է շփման մակերեսի մեծության, պատերի անհարթության, հեղուկի մածուցիկության և միջմասնիկային դատարկություններում թաղանթային ու մազանոթային ջրերի առկայության հետևանքով: Այդ պատճառով դիսպերս ապարներում (կավերում) հեղուկի շարժում գրեթե չի կատարվում: Ծ. ունի կարևոր նշանակություն ջրաերկրաբանությունում, նավթի արդյունահանման մեջ:
- Փ-39. ФИРН** (գերմ. Firn, հին գերմ. firni-ից – անցյալ տարվա, հին) – **ԲՐՆՁԱՍԱՆՈՒՅՑ (ՖԻՈՆ), FIRN, GRANULAR ICE**, խոշորահատիկ ձյուն, առաջանում է ձյան վերաբյուրեղացման և ձյան շերտի խորքը թափանցող ջրի մակերևութային հալման և սառչման բազմակի հերթագայման հետևանքով: Վերին շերտերի ճնշման տակ խտացող Բ. փոխակերպվում է սառցադաշտային սառույցի:
- Փ-40. ФИТОБЕНТОС** (հուն. phytón – բույս և bénthos – խորություն) – **ԲՈՒՍԱԲԵՆԹՈՍ (ՖԻՏՈԲԵՆԹՈՍ), PHYTOBENTHOS**, ջրավազանների հատակում ապրող բուսական օրգանիզմների համախմբություն: Բ-ին պատկանում են գլխ. ջրիմուռները, որոշ ծաղկավոր բույսեր:
- Փ-41. ФИТОПЛАНКТОН** (հուն. phytón – բույս և պլանկտոն) – **ԲՈՒՍԱՊԼԱՆԿՏՈՆ (ՖԻՏՈՊԼԱՆԿՏՈՆ), PHYTOPLANKTON**, պլանկտոնի կազմի մեջ մտնող բույսերի համախմբություն: Մյուս ջրային օրգանիզմների համար հանդիսանում է թթվածնի և օրգանական նյութի աղբյուր:
- Փ-42. ФЛЕКСУРА** (լատ. flexura – ծովածք, կորացում) – **ԿՐԿՆԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ (ՖԼԵՔՍՈՒՐԱ), FLEXURE, KNEE-FOLD**, տեկտ. կառուցվածք՝ միասնական միաթեքվածքի (մոնոկլինալի) ֆոնում ապարների շերտերի ավելի զառիթափ տեղադրմամբ, հորիզոնական տեղադրված ապարների աստիճանաձև ծովածք: Կ. կազմված է 5 տարրերից՝ երկու ծովածքներից և երեք թևերից: Յուրաքանչյուր տարր բնորոշվում է տեղադրման սեփական պարամետրերով, որոնց հարաբերությունը պայմանավորում է Կ-ների բազմաթիվ տարատեսակները: Կ-ների չափերը մ-ի մասերից հասնում են շատ կմ-երի, թևերի թեքվածությունը՝ հազիվ նշմարելի-ից մինչև ուղղաձիգի: Հատկապես խոշոր Կ-ներ հանդիպում են պլատֆորմների եզրերի մոտ և սինեկլիզմների կողզերներում:
- Փ-43. ФЛИШ** (շվեյց. բարբառային Flysch, գերմ. flieBen-ից – հոսել) – **ՖԼԻՇ (ՆՐՔԱՌԻԹՍ), FLYSCH**, ծովային նստվածքային, առավելապես բեկորային ծագման



ապարների հզոր սերիա, որը բնութագրվում է շերտերի մի քանի քարաբանական տարատեսակների ռիթմիկ հերթագայությամբ: Շերտերի հատիկաչափական կազմը վերընթաց կտրվածքում փոքրանում է՝ անկախ միներալային կազմից: Ֆ. կազմված է բազմաթիվ ոչ մեծ (մի քանի սմ-ից մինչև մի քմի տասնյակ սմ) ցիկլերից (այլ կերպ՝ ցիկլիտներից, ցիկլոտեմներից, ցիկլոսոմներից, բազմաշերտերից), որոնց երբեմն սխալմամբ անվանում են ռիթմեր: Ցիկլոտեմերը կազմված են 2-4 շերտերից կամ տարրերից, որոնցից ներքևիները ներկայացված են հատիկավոր ապարներով (ավազաքարով, ալկրոլիթով, բեկորային կրաքարով)՝ հաճախ շեղ կամ մրկացող շերտավորությամբ, իսկ վերինները՝ պելիտներով: Բնորոշ են տարբեր ձևի ու ծագման հիերոգլիֆները՝ ցիկլիտների ներքևի մակերևույթների վրա, որոնք իրենցից ներկայացնում են ջրավազանի հատակի վրայի անհարթությունների դրոշմահետքերը: Վերջիններն առաջացել են կարծատև պղտոր հոսքերի ողողաքայքայման գործունեության և հատակին սողացող տարբեր կենդանիների (հաճախ որդերի) կենսագործունեության հետևանքով: Դրանց հետ են կապված Ֆ-ի համար շատ բնորոշ ֆուկոիդները, որոնք նման են ջրիմուռներին: Ֆ-ի ցիկլայնությունը (ռիթմիկությունը) պայմանավորված է նստվածքակուտակման առանձնահատկություններով՝ շատ թե քիչ պարբերաբար գոյացող պղտոր հոսքերով, որոնց նստեցման արգասիքները կոչվում են տուրբիդիտներ (պղտոր հոսքանստվածքներ): Համապատասխանաբար Ֆ. առաջանում է մայրցամաքային լանջի զոնայում և նրա ստորոտում՝ խորջրյա ավազաններում: Երկրասինկլինալների մասին ուսմունքի տեսանկյունից Ֆ. բնորոշ երկրասինկլինալային ֆորմացիա է, որը ձևավորվում է զարգացման նախալեռնագոյացման փուլում, երբ ակտիվ մայրցամաքային ծայրամասերում առաջանում են կղզեաղեղներ (կորդիլիերներ)՝ կղզիների շղթաներ, որոնց լանջերին ձևավորվում է «վայրի» Ֆ. (հարստացված կոնգլոմերատներով ու ավազաքարերով), որն ըստ խորության փոխարինվում է տիպիկ Ֆ-ով և այնուհետև՝ թերզարգացած Ֆ-ով և կիսաֆլիշով (ենթաֆլիշով): Նմանատիպ նստվածքներ տուրբիդիտներով ձևավորվում են նաև պասիվ մայրցամաքային ծայրամասերում: Ծալքավոր մարզերի ֆորմացիաների ուղղաձիգ շարքում Ֆ. սովորաբար միջանկյալ տեղ է գրավում ասպիդային ու մոլասային ֆորմացիաների միջև: Ծալքավոր մարզերում (երկրասինկլինալների տեղում առաջացած) Ֆ-ային նստվածքները ուժգին ծալքավորված են, սովորաբար կազմում են արտաքին զոնաները (էքստերնիդները): Ֆ-ների հետ երբեմն կապված են նավթի ու հանքային ջրերի հնքվ-երը:

**Փ-44. ФЛИШОИДЫ – ՖԼԻՇՈՒԴՆԵՐ (ՖԼԻՇԱԿԵՐՊԵՐ), FLYSCHOIDS**, ռիթմիկ ֆլիշանման ստվարաշերտեր, որոնք մի շարք էական հատկանիշներով չեն պատկանում տիպիկ ֆլիշին: Ի տարբերություն տիպիկ ֆլիշի, դրանք ավելի ծանծաղուտային են:

**Փ-45. ФЛОГОПИТ** (հուն. plogōpōs – կրակագույն, հրակարմիր՝ վառ կարմրավուն երանգի առումով) – **ՖԼՈԳՈՊԻՏ, PHLOGOPITE**, թերթավոր սիլիկատների ենթադասի փայլարների ընտանիքի միներալ, մագնեզիումային փայլար, քիմ. կազմը՝  $K(Mg/Fe)_3[Al, Si_3O_{10}](OH, F)_2$ : Առաջացնում է սյունաձև, կարճ հատվածակողմային, թիթեղաձև բյուրեղներ, թեփուկավոր, թիթեղաձև ագրեգատներ: Գույնը՝ մուգ-գորշ, դեղնավուն-շագանակագույն, կարմրավուն-շագանակագույն, կանաչ: Հանդիպում է մագնեզիումային սկառներում, կարբոնատիտներում, ալկալիական ու գերհիմքային ապարներում, քիմբեռլիթներում:

**Փ-46. ФЛОРА** (լատ. Flora – հռոմեական դիցաբանության մեջ ծաղիկների ու զարման աստվածուհի) – **ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ, ՖԼՈՐԱ, FLORA**, բույսերի տեսակների կամ այլ համակարգային միավորների ամբողջություն, որը յուրահատուկ է որևէ տեղանքի, երկրամասի կամ երկրի. որոշակի ժամանակահատվածի:

- Փ-47. ФЛОТАЦИЯ** (ֆրանս. flottation, անգլ. flotation, բառ. լողում ջրի մակերևույթում) – **(ՀԱՆՔԱ)ՀԱՐՄԱՏԱՑՈՒՄ (ՖԼՈՏԱՑԻԱ), FLOTATION**, արդյունաբերական մասշտաբներով պինդ օգտ. հնձ-ների հարստացման եղանակ, որը հիմնված է ընտրովի թրջվելիության և շարժվող ֆազերի (ջուր, օդ, յուղ) անջատման մակերևույթին առանձին բաղադրիչների միներալային մասնիկների կաչելու երևույթն օգտագործելու վրա:
- Փ-48. ФЛЮВИАЛЬНЫЕ ФОРМЫ РЕЛЬЕФА** (լատ. fluvius – գետ, հոսանք) – **ՌԵԼԻԵՖԻ ՀՈՍՔԱՅԻՆ (ՖԼՅՈՒՎԻԱԼ) ՉԵՎԵՐ, FLUVIAL LANDFORMS**, ռելիեֆի ձևեր, որոնք գոյացել են ջրային հոսքերի գործունեության հետևանքով՝ ինչպես կայուն, այնպես էլ ժամանակավոր (ալյուվիալ, ալյուվիալ-պրոլյուվիալ հարթավայրեր, հովիտներ, ձորակներ, հեղեղատներ, դարավանդներ, արտահոսային կոներ և այլն):
- Փ-49. ФЛЮВИОГЛЯЦИАЛЬНЫЕ ОТЛОЖЕНИЯ** (լատ. fluvius – գետ, հոսք և glacies – սառույց) – **ՋՐԱՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ (ՖԼՅՈՒՎԻՈԳԼՅԱՑԻԱԿԱԼ) ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, FLUVIOGLACIAL DEPOSITS, GLACIAL OUTWASH**, հավվող սառցադաշտային ջրերի նստվածքներ: Տարբերում են Ջ. ն-ի երկու տեսակ՝ մերձսառցադաշտային և ներսառցադաշտային: Մերձսառցադաշտային Ջ. ն. առաջանում են սառցադաշտի ճակատի առջև՝ նրա եզրերի տակից արտահոսող ջրերով: Դրանց համար բնորոշ է սառցադաշտից հեռանալիս կոպիտ ճալաքարային և գլաքարային ավազների փոխարինումը մանրահատիկ շեղաշերտավոր ավազաներով: Ներսառցադաշտային Ջ. ն. ծյունահալքի ջրերի միջոցով կուտակվում են ստորասառցադաշտային թունելներում, սառցադաշտի նստվածքի փոսերում, սառցահալուտներում: Ջ. ն. աչքի են ընկնում կազմության խիստ անհամասեռությամբ, որը պայմանավորված է կտրվածքում հերթագայող և տարածության մեջ հերթափոխվող գլաքարերի, ճալաքարերի, կոպճաքարերի կուտակների և վատ տեսակավորված տարահատիկ շեղաշերտ ավազների տարածմամբ: Ջ. ն. ռելիեֆում առաջացնում են դարավանդներ, կամեր, բլրաշարեր:
- Փ-50. ФЛЮВИОГЛЯЦИАЛЬНЫЕ ПРОЦЕССЫ – ՋՐԱՍԱՌՑԱԴԱՇՏԱՅԻՆ (ՖԼՅՈՒՎԻՈԳԼՅԱԿԱԼ) ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ, FLUVIOGLACIAL PROCESSES**, հավվող սառցադաշտային ջրերի գործունեության հետ կապված գործընթացներ, որոնք տեղի են ունենում ցամաքի՝ անմիջապես սառցադաշտերի եզրերը հատող տեղամասերում կամ սառցադաշտի ներսում: Դրանց թվին են պատկանում սառցաբերուկների (մորենների) ողողաքայքայումը, տեսակավորումը և տեղափոխումը, վերավացված սառցաբերուկ նյութի կուտակումը, ինչպես նաև ենթասառցադաշտային հոսանքների արտահոսային կոների, սառցադաշտային հոսքերի առաջնային հովիտների, կամերի, բլրաշարերի, զանդրային հարթավայրերի և ռելիեֆի այլ ձևերի ձևավորումը:
- Փ-51. ФЛЮИД** (լատ. fluidus – հոսուն) – **ՖԼՅՈՒԻԴ, FLUID**, մազմայի հեղուկ կամ գազակերպ դյուրաշարժ բաղադրիչներ կամ երկրակեղևի մեծ խորություններում շրջանառող գազերով հարուստ լուծույթներ: Ենթադրվում է, որ Ֆ-ի կազմում գերակշռում են ջրի գերտաքացած զոլորչիները, առկա են ֆտոր, քլոր, ածխաթթու և այլն: Նավթային երկրաբանությունում երբեմն Ֆ-ի տակ հասկացվում է ջուր-նավթ-գազ խառնուրդը:
- Փ-52. ФЛЮОРИТ** (լատ. flour – հոսանք, մետաղների հանքաքարերին ավելացնելիս դրանց հալման ջերմաստիճանը նվազեցնելու ունակության կապակցությամբ), **ПЛАВИКОВЫЙ ШПАТ – ՖԼՅՈՒՐԻՏ, ՖՏՈՐՍՊԱԹ, FLUORITE, FLUOR-SPAR**, ֆտորիդների դասի միներալ,  $\text{CaF}_2$ , բյուրեղագիտական համակարգը խորանարդային է: Առաջացնում է բյուրեղախմբեր, հատիկավոր, խիտ ագրեգատներ: Գու-

նավորումը բազմազան է (անգույն, դեղին, կանաչ, մանուշակագույն, սև և այլն), հաճախ ճառագայթասակտիվ է: Փայլը՝ ապակու: Կարծրությունը՝ 4: Հանդիպում է պեգմատիտներում, ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվ-երում, նստվածքային ապարներում: Կիրառվում է մետալուրգիայում որպես ֆլյուս, քիմ. արդյ. մեջ՝ կրիոլիթ ստանալու, օպտիկայում՝ օբյեկտիվներ, ոսպնյակներ պատրաստելու համար:

**Փ-53. ФОНОЛИТ** (հուն. phōne – ձայն և lithos քար, քանի որ հարվածելիս Ֆ-ի նուրբ թերթերը ձայն են արձակում) – **ՖՈՆՈԼԻԹ (ՁՆԳՁՆԳԱՔԱՐ, ՀՆՉՈՒՆ ՔԱՐ), PHONOLITE**, պորֆիրային, հազվադեպ աֆիրային կառուցվածքով նեֆելինային սիննիտների արտաժայթքային նմանակ: Կազմված է ալկալիական դաշտային սպաթներից, ֆելդսպաթոիդներից և զուևավոր միներալներից՝ ալկալիական պիրոքսենից ու ամֆիբոլից: Բնության մեջ առավելապես տարածված են միջին ( $SiO_2$  53– 60.68 %) սպիտակավուն (լեյկոկրատ) Ֆ-ները, որոնք կազմված են առավելապես ալկալիական ալյումասիլիկատներից: Օգտագործվում է որպես բետոնի լցանյութ և խճաքար՝ ճանապարհներն ամրաժառնկելու համար:

**Փ-54. ФОРАМИНИФЕРЫ** (Foraminifera) – **ՖՈՐԱՄԻՆԻՖԵՐՆԵՐ, FORAMINIFERA**, նախակենդանիների տիպի սարկոդինների (Sarcodina) դասի ենթադաս: Հայտնի է Ֆ-ի մոտ 20000 տեսակ (ժամանակակից և բրածո): Խեցին օրգանական, կեղծ խիտինային (ազլյուտինացված) և կրային է: Մարմնի չափերը հաճախ կազմում են 0.1-1 մմ, երբեմն մինչև 20 սմ: Խեցու ներքին մասը՝ խոռոչը, հաղորդակցվում է շրջապատող միջավայրի հետ բերանի, իսկ շատ տեսակների մոտ՝ նաև խեցու պատերի վրա գտնվող շատ ծակոտիների միջոցով: Բնակվում են գլխ. ծովերի հատակում, հազվադեպ մտնում են ծովային պլանկտոնի կազմի մեջ: Ֆ-ի խեցիները առաջացնում են օվկիանոսային տիղմերի զգալի մասը: Բրածո Ֆ. հայտնի են քեմբրիից, ծաղկումը տեղի է ունեցել կարբոն-պերմում, երբ հանդես են եկել ֆուզուլինիդները: Մեզոզոյում-կայնոզոյում հանդես են եկել նոր ձևեր, որոնցից առավել հայտնի են նուևոլիթները: Բրածո Ֆ. ունեն մեծ նշանակություն պալեոգոյան, մեզոգոյան և կայնոգոյան նստվածքների շերտագրության համար: Նուևոլիթները լայնորեն տարածված են ՀՀ պալեոգենի նստվածքներում:

**Փ-55. ФОРЛАНД** (գերմ. Vorland, vor-ից – առաջ, առջև և land – երկրամաս) – **ՖՈՐԼԱՆԴ, FORELAND**, պլատֆորմային մարզ, որ տեղաբաշխված է ծալքավոր գոտու առջևում:

**Փ-56. ФОРМАЦИИ ВУЛКАНОГЕННО-ОСАДОЧНЫЕ – ՀՐԱԲԻԱԾԻՆ-ՆՍՎԱԾՔԱՅԻՆ ՖՈՐՄԱՑԻԱՆԵՐ (ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ), VOLCANOGENIC–SEDIMENTARY FORMATIONS**, երկրբ. ֆորմացիաների խումբ, կազմված է նստվածքային ու հրաբխային ապարների զուգակցումից: Ընդգրկում է ֆորմացիաների շատ տեսակներ, որոնք տարբերվում են ինչպես հրաբխածին. այնպես էլ նստվածքային ապարների կազմով և ծագմամբ: Կախված գերակշռող նստվածքային ապարների կազմից՝ առանձնացվում են Հ-ն. ֆ-ի 3 տիպ՝ հրաբխածին-բեկորային, հրաբխածին-սիլիցիումային և հրաբխածին-կարբոնատային, որոնց միջև գոյություն ունեն անցողիկ տարբերակներ: Առաջին խմբի բնորոշ ֆորմացիաներ են՝ պորֆիրիտատուֆայինը, հրաբխածին-թերթաքարայինը և այլն, երկրորդինը՝ սպիլիտահասպիսայինը, դիաբազաֆտանիտայինը, տուֆադիատոմիտայինը և այլն, երրորդինը՝ սպիլիտ-կերատոֆիրակրաքարայինը, քվարց-կերատոֆիրակրաքարայինը և այլն: Հ-ն. ֆ. հատկապես բնորոշ են ծալքավոր գոտիներին: Հ-ն. ֆ-ի հետ կապված են բազմաթիվ ներծին (սուլֆիդային հանքանյութեր) և հրաբխածին-նստվածքային (երկաթի ու մանգանի հանքանյութեր, ֆոսֆատներ, բորատներ և այլն) օգտ. հնժ-ների հնքվ-եր:

**Փ-57. ФОРМАЦИИ ВУЛКАНОГЕННЫЕ – ՅՐԱՐԻՆԱԾԻՆ ՖՈՐՄԱՑԻԱՆԵՐ (ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ), VOLCANOGENIC FORMATIONS**, արտաժայթքային ապարների և նրանց ածանցյալների բնական համամագմայական գուգորոթյուններ, որոնց կազմի մեջ են մտնում հրաբխային գործունեության փուլի հետ համաժամանակյա լավաներ, տուֆեր, տուֆիտներ, ենթահրաբխային ներծայթքվածքներ, ինչպես նաև հետհրաբխային արգասիքներ՝ ներառյալ հանքային գոյացություններ: Առաջացել են որոշակի երկր. իրադրությունում և համապատասխանում են երկրակեղևի երկրատեկտոնական տարրի զարգացման որոշակի փուլին: Յ. ֆ. անվանվում են ըստ առավել տարածված ապարների կազմի: Յու. Ա. Կուզնեցովը (1964) Յ. ֆ-ի դասակարգման հիմքում դիտարկում է դրանց կապը գլխավոր տեկտ. կառուցվածքների հետ: Ծալքավոր զոնաների համար նա առանձնացնում է բուն երկրասինկլինալային (շարժուն) էտապի զարգացման Յ. ֆ. (սպիլիտակերատոֆիրային, սպիլիտադիաբազային, քվարց-կերատոֆիրային և այլն) և լեռնագոյացման՝ գլխ. երկրասինկլինալային (բազալտ-անդեզիտ-ռիոլիթային խումբ՝ անդեզիտային, տրախիանդեզիտային, ռիոլիթային, ռիոլիթ-բազալտային): Կայուն զոնաների համար առանձնացվում են տրապային, ալկալիաօլիվինաբազալտային մայրցամաքային և ալկալիաօլիվինաբազալտային օվկիանոսային, ինչպես նաև ալկալիաբազալտոդիաբազային (նեֆելին-լեյցիտ-բազալտային) Յ. ֆ.: Վերջին տարիներին առանձնացվում են երկրադինամիկական Յ. ֆ. (օր.՝ տոլեիտայիններից մինչև շոշոնիտայինները):

**Փ-58. ФОРМАЦИИ ГЕОЛОГИЧЕСКИЕ** (լատ. formatio – կազմում, գոյացում, գոյացություն, կազմավորում) – **ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՐՄԱՑԻԱՆԵՐ (ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ), GEOLOGICAL FORMATIONS**, ապարների բնական համալիրներ, որոնց առանձին անդամները պարագենետիկորեն կապված են միմյանց հետ ինչպես կողքային ուղղությամբ, այնպես էլ ուղղաձիգ շերտագրական հաջորդականությունում: Ե. ֆ. այն ապարների բնական համախմբություններն են, որոնք բնորոշվում են իրենց առաջացման պայմանների ընդհանրությամբ, այսինքն՝ առաջացել են նման ֆիզաշխ. և տեկտ. (երկրադինամիկական) իրադրությունում: Դրանք առաջանում են խոշոր տեկտ. կառուցվածքների զարգացման որոշակի փուլերում: Ե. ֆ. բնորոշվում են հարյուրավոր և նույնիսկ հազարավոր մ հաստությամբ և շատ հազարավոր կմ<sup>2</sup> մակերեսային տարածմամբ: Սկզբնապես «Ե. Ֆ.» տերմինը առաջարկել է գերմ. երկրաբան Յ. Ֆյուկսելը 18-րդ դարում՝ որոշակի կազմի ու շերտագրական դիրքի նստվածքային ստվարաշերտերի համար: Այս իմաստով այն օգտագործվում է ԱՄՆ-ում և մոտավորապես համապատասխանում է մեր «շերտախումբ» տերմինին: Յետագայում այն, հատկապես Ռուսաստանում, ձեռք բերեց ծագումնաբանական իմաստ: Ե. ֆ-ի մասին ուսմունքն ուժգին զարգացում ստացավ նախկին ԽՍՀՄ-ում անցյալ դարի երկրորդ կեսում (Ն. Շատսկի, Ն. Խերասկով, Վ. Պոպով, Ն. Վասուկիչ, Ն. Ստրախով, Լ. Ռուխին և ուր.):

«Ե. Ֆ.» տերմինն ունի մի քանի մեկնաբանություն, սակայն մեծ մասամբ ֆորմացիաների դասակարգման հիմք հանդիսանում է երկրակեղևի զարգացման ռեժիմը, ըստ որում՝ առաջատար են տեկտ. ռեժիմը, հրաբխայնությունը, այնուհետև՝ կլիման, քարաբանական կազմը և այլն: Տեկտ. հատկանիշներին համապատասխան՝ վերջին տարիներին ընդունված է առանձնացնել Ե. ֆ-ի 5 դաս՝ պլատֆորմային, ակտիվացած մարզերի, օվկիանոսային, երկրասինկլինալային (շարժուն մարզերի) և լեռնագոյացման: Ե. ֆ. կարող են լինել նստվածքային, հրաբխածին, հրաբխածին-նստվածքային, ներծայթքային-մագմայական, փոխակերպային

(մետամորֆային), հանքային: Անջատում են նաև Ե. Ֆ. ըստ նրանց հետ կապված օգտ. հնժ-ների տիպերի՝ ածխաբեր, ֆոսֆորիտաբեր, աղաբեր և այլն: Նստվածքային ֆորմացիաների օրինակներ են՝ ֆլիշային, մոլասային, պարալիկ ածխաբեր, լիմնիկ ածխաբեր, խորջրյա կարմիր կավային, հրաբխածին ֆորմացիաների՝ կղզեաղեղային կրաակալիական, օվկիանոսակղզեաղեղային ակալիաբազալտային, ցամաքային պլատոբազալտային, ներծայթքամազնայական՝ գաբրո-անորտոզիտային, գրանիտային բաթոլիթների, գերհիմքային ակալիական, փոխակերպայինների՝ կավաթերթաքարային, գնեյսային, ամֆիբոլիթային, գլաուկոֆանային թերթաքարերի ֆորմացիաները: Նստվածքային, հրաբխածին և ներծայթքային (հնտրոլիկ) ֆորմացիաների հաճախ հանդիպող օրինաչափ զուգորդությունն անվանում են երկրաբանական խմբակցություն (ասոցիացիա): Լայնորեն տարածված են գերհիմքային ու հիմքային ներծայթքային ապարների, տոլեիտային բազալտների և պելագիկ սիլիցիումային, կավային ու կարբոնատային ապարների խմբակցությունը (օֆիոլիթային ասոցիացիա), պլատոբազալտների և գաբրո-դոլերիտային դայկաների, սիլերի, շերտավորված ներծայթքուկների խմբակցությունը (հայտնի է տրապային ֆորմացիա անվանմամբ), ծայրամայրցամաքային կրաակալիական հրաբխապլուտոնիկ խմբակցությունը:

Ե. Ֆ. բնորոշվում են. ապարների որոշակի հավաքածուով (պարագենեզով)՝ գլխավոր և երկրորդական (նստվածքային ապարների դեպքում՝ որոշակի ֆացիաներ), այդ ապարների հերթափոխման առանձնահատկություններով (օր.՝ ցիկլայնությունը), մարմնի ձևով (տարածվածությունը, հաստությունը): Յուրաքանչյուր Ե. Ֆ. համապատասխանում է որոշակի իրադրության, այդ առումով Ե. Ֆ-ի վերլուծությունը լայնորեն օգտագործվում է առանձին ռեգիոնների երկրբ. զարգացումը վերականգնելու համար: Այն հնարավորություն է տալիս որոշելու տվյալ ռեգիոնի զարգացման այն փուլի տեկտ. ռեժիմի տիպը, որում ձևավորվել է այս կամ այն ֆորմացիան, խոշոր տեկտ. կառուցվածքի բնույթը (շարժուն գոտի, օրոգեն, պլատֆորմ, օվկիանոս) և այդ կառուցվածքի զարգացման փուլը: Տեկտ. (երկրադինամիկական) իրադրությունների հետ համատեղ՝ ցամաքային և ծանծաղ ծովային ծագման նստվածքային ֆորմացիաների կազմի վրա մեծ ազդեցություն ունեն կլիմայական պայմանները: Այդ կապակցությամբ նստվածքային Ե. Ֆ-ի դասակարգումը կատարվում է ոչ միայն տեկտ., այլև կլիմայական հիմքի վրա: Նեոնոբիլիզմի գաղափարների, հատկապես սալերի տեկտոնիկայի կոնցեպցիայի հանդես գալուն զուգընթաց՝ Ե. Ֆ. օգտագործվեցին որպես մայրցամաքային կեղևի կազմավորման փուլերի ցուցանիշներ և այնուհետև՝ հնաերկրադինամիկական իրադրության ցուցանիշներ, օր.՝ մայրցամաքային և օվկիանոսային ռիֆտերի, շելֆի, մայրցամաքային լանջերի և ստորոտների, այսինքն՝ սալերի, կղզեաղեղների, խորջրյա փողրակների, անդյան տիպի ակտիվ ծայրամասերի տարամիտման (դիվերգենցիայի), ինչպես նաև սալերի զուգամիտման (կոնվերգենցիա), դրանց ընդհարման, կոլիզիայի (մոլասներ) և այլն: Ֆորմացիոն վերլուծությունը կարևոր նշանակություն ունի նաև տարբեր տիպի օգտ. հնժ-ների տեղաբաշխման օրինաչափությունների բացահայտման համար: Հատուկ տեղ է գրավում հանքային Ե. Ֆ-ի՝ հանքային միներալների պարագենեզների ուսումնասիրությունը: «Ե. Ֆ.» տերմինը ծագումնաբանական իմաստով հատկապես լայն տարածում ստացավ նախկին ԽՍՀՄ-ում, արևմտյան երկրների գրականությունում դրա խիստ համարժեքը (ծագումնաբանական իմաստով) չկա, այդ տերմինին առավել մոտ է անգլ. «lithologic assemblage» տերմինը:

**Փ-59. ФОРМАЦИИ ГЕОСИНКЛИНАЛЬНЫЕ – ԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԼԱՅԻՆ ՖՈՐՄԱՑԻԱՆԵՐ (ԿԱԶՍԱՎՈՐՈՒՄՆԵՐ), GEOSYNCLINAL FORMATIONS**, ֆորմացիաների մեծ խումբ: Առաջանում է երկրասինկլինալային մարզերում (զարգացման բուն երկրասինկլինալային էտապում)՝ խիստ տարբերակված, մեծ արագության ու լայնույթի տեկտ. շարժումների պայմաններում: Ե. ֆ-ի բնորոշ հատկանիշներն են՝ 1) գոտիանման տարածումը՝ զգալի երկարությամբ (հաճախ ավելի քան 1000 կմ) և փոքր լայնությամբ (տասնյակ, հազվադեպ 100 կմ-ից ավելի), 2) մեծ հաստությունը (հազարավոր մ-եր), 3) ցիկլիտների շերտատուփերի քարաբանական կայունությունը ըստ տարածման, 4) նստվածքակուտակման առավելապես խորջրյա իրադրությունը՝ բնականոն աղիության պայմաններում, 5) կոպտաբեկոր ապարների ոչ մեծ դերը, 6) ալևրիտաավազային ապարներում ստորջրյա սողանքային և փլվածքային գոյացությունների մեծ դերը, 7) մակրոֆաունայի մնացորդների պակասությունը, 8) հաճախ հրաբխաբեկորային և մոխրային նյութի խառնուրդը, 9) կատագենիկ (քարացման) փոփոխությունների բարձր աստիճանը, ընդհուպ մինչև սկզբնական փոխակերպությունը: Տիպիկ Ե. ֆ. են՝ թերթաքարային (ասպիդային), գրաուվակային, սիլիցիումային, ֆլիշային և պելագիկ ֆորմացիաները:

**Փ-60. ФОРМЫ РЕЛЬЕФА, ФОРМЫ ЗЕМНОЙ ПОВЕРХНОСТИ – ՌԵԼԻԵՖԻ ԶԵՎԵՐ, ԵՐԿՐԻ ՄԱՎԵՐԵՎՈՒՅԹԻ ԶԵՎԵՐ, TOPOGRAPHIC FORMS, LANDFORMS, FORMS OF THE EARTH SURFACE**, առանձին եռաչափ մարմիններ, որոնք գրավում են երկրակեղևի որոշակի ծավալներ: Դրանք սահմանափակված են երկչափ (մակերևութային) տարրերով կամ ռելիեֆի նիստերով (լանջերով, հորիզոնական կամ մերձհորիզոնական մակերևութներով): Ռ. ձ. կարող են լինել ուռուցիկ կամ դրական (լեռներ, բլուրներ) և զոգավոր կամ բացասական (փոստրակներ, գետահովիտներ և այլն): Դրական և բացասական ձևերը, օրինաչափորեն համակցվելով միմյանց, առաջացնում են ռելիեֆի տիպեր: Ռ. ձ. դասակարգվում են ըստ չափերի, ձևաբանության, ծագման և հասակի:

**Փ-61. ФОРСТЕРИТ** (գերմ. գիտնական Ի. Ֆորստերի, I. Forster, 1729-1798, անունով) – **ՖՈՐՍՏԵՐԻՏ, FORSTERITE**, միներալ, օլիվինի մագնեզիումային տարատեսակ, Ֆ-ֆայալիթ նույնաձև (իզոմորֆ) անընդմեջ շարքի ծայրանդամ, քիմ. կազմը՝  $Mg_2[SiO_4]$ : Գերհիմքային ապարների ապարակազմիչ միներալ է, հանդիպում է նաև փոխակերպված դոլոմիտներում, մագնեզիումային սկառններում, տես նաև՝ Оливин:

**Փ-62. ФОРШОКИ** (անգլ. fore – առջևում և shock – հարված, ցնցում), **ПРЕДВАРЯЮЩИЕ ТОЛЧКИ – ՖՈՐՇՈՎԵՐ, ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆՈՂ ՑՆՑՈՒՄՆԵՐ (ՆԱԽԱՅԱՐՎԱԾՆԵՐ), FORESHOCKS**, ստորերկրյա թույլ ցնցումներ, որոնք երբեմն նախորդում են ուժեղ երկրաշարժերին:

**Փ-63. ФОССИЛИЗАЦИЯ** (լատ. fossilis – բրածո) – **ՖՈՍԻԼԻՑՈՒՄ, ԲԱՐԱՑՈՒՎԱԳՈՅԱՑՈՒՄ, FOSSILISATION**, օրգանական մնացորդները քարացուկների (բրածոների) փոխարկվելու գործընթաց, որն ընթանում է փուխր նստվածքներն ապարի փոխարկվելու գործընթացին (քարացմանը) զուգահեռ: Ֆ-ման ընթացքում տեղի է ունենում օրգանական մնացորդների փոփոխություն՝ կապված տարբեր ֆիզքիմ. գործընթացների և ջերմաստիճանի ու ճնշման փոփոխության հետ: Կմախքային մնացորդները ենթարկվում են ձևափոխությունների, քարացման, վերաբյուրեղացման, մետատոմատոգի (միներալատեղակալման) կամ լուծման:

**Փ-64. ФОСФАТНЫЕ РУДЫ – ՖՈՍՖԱՏԱՅԻՆ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ, PHOSPHATE ORES**, բնական միներալային գոյացություններ, որոնք պարունակում են ֆոսֆոր այնպիսի միացություններում և այնպիսի քանակներով, որոնց դեպքում նրանց արդյ. օգ-

տագործունը տնտեսապես շահավետ է: Ըստ  $P_2O_5$ -ի պարունակության՝ առանձնացվում են Ֆ. հ-ի հետևյալ տեսակները՝ հարուստ (ավելի քան 28 %), միջին (8-28 %), աղքատ (8-18 %), շատ աղքատ (2-3-ից մինչև 8 %  $P_2O_5$ ): Ֆ. հ. ներկայացված են հիմնականում երկու խմբով՝ ֆոսֆորիտներով և ապատիտներով, խիստ սակավ՝ ալյումա- և երկաթաֆոսֆատներով, ինչպես նաև գուլանոյով: Ֆ. հ-ի գլխավոր միներալային բաղադրիչներ են ապատիտի խմբի ֆոսֆատները: Ծագումնաբանորեն Ֆ. հ-ի հնքվ-երը բաժանվում են ներծինների, արտածինների և փոխակերպածինների:

**Փ-65. ФОСФАТЫ ПРИРОДНЫЕ – ՖՈՍՖԱՏՆԵՐ ԲՆԱԿԱՆ, NATURAL PHOSPHATES,**

օրթոֆոսֆորական թթվի՝  $H_3PO_4$ -ի աղեր: Հիմնականում բարդ միացություններ են: Հանդիպում են հոծ հատիկավոր ագրեգատների, կոնկրեցիաների, կեղևիկների, սակավ՝ նիստավորված բյուրեղների տեսքով: Գույնը խիստ բազմազան է: Կարծրությունը՝ անջուր տեսակներից 4-5, ջրայիններից՝ 3-4: Հիմնականում ցրված են ապարների մեջ: Բ. Ֆ. ակցեսորային միներալների տեսքով հանդիպում են պեգմատիտներում, սկառներում, գրեյզեններում, բնորոշ են վերնածին (հիպերգեն) առաջացումների համար: Բ. Ֆ-ի խոշոր կուտակումներ կապված են ալկալիական ապարների ու կարբոնատիտների հետ, ինչպես նաև նստվածքային ապարների հետ: Առավել տարածված և գործնականորեն կարևոր են ապատիտի խմբի միներալները: Օգտագործվում են որպես ֆոսֆատային հանքաքար:

**Փ-66. ФОСФОРИТЫ – ՖՈՍՖՈՐԻՏՆԵՐ, PHOSPHORITES,**

նստվածքային ապարներ, որոնք ավելի քան 50 %-ով կազմված են ապատիտի խմբի ամորֆ կամ մանրաբյուրեղային միներալներից:  $P_2O_5$ -ի պարունակության ստորին սահմանը պայմանականորեն ընդունված է 12 %: Երկրաբանահետախուզական պրակտիկայում Ֆ-ի շարքին են դասվում նաև 5-12 %  $P_2O_5$  պարունակող ապարները: Մաքուր Ֆ-ի գույնը սպիտակ է, սակայն բնության մեջ սև և գորշ են, սակավ՝ կանաչ, կարմիր, դեղին՝ կախված գունավորող նյութերի խառնուրդներից: Ֆ. լինում են շերտային, պալարային, հատիկավոր, խեցեքարային, կարստային և փոխակերպված: Հիմնականում կիրառվում են ֆոսֆորական պարարտանյութերի ստացման համար:

**Փ-67. ФРАКЦИЯ ГРУНТА** (լատ. fractia – ջարդոտում, մասնատում, ֆրանս. fraction – մաս, բաժին) – **ԳՐՈՒՆՏԻ ՀՍԻՎԱՆՈՒՄԲ (ՖՐԱԿՑԻԱ), GROUND FRACTION,** փուխր ապարների հատիկախումբ, որի չափերը տատանվում են որոշակի սահմաններում, տե՛ս Гранулометрический состав пород:

**Փ-68. ФРАКЦИЯ ТЯЖЁЛАЯ – ԾԱՆՐ ՉՈՓԱՍԱՍ (ՖՐԱԿՑԻԱ), HEAVY FRACTION,** ապարից անջատված մաս, որը կազմված է ծանր միներալներից (տեսակարար կշիռը ավելի քան 2.75-2.85):

**Փ-69. ФРАНКСИЙ ЯРУС, ФРАН** (Ֆրան գյուղի, Frasnies-Lez-Couvin, անունով, Բելգ.) – **ՖՐԱՆԻ ՀԱՐԿ, ՖՐԱՆ, FRANSIAN,** դևոնի համակարգի վերին բաժնի ստորին հարկ:

**Փ-70. ФРОНТАЛЬНАЯ МОРЕНА,** տե՛ս Конечная морена:

**Փ-71. ФУЗУЛИНИДЫ (Fusulinida) – ՖՈՒՉՈՒԼԻՆԻԴՆԵՐ, FUSULINIDS,** մահացած ֆորամինիֆերների կարգ: Ֆ-ի խեցիները ոսպանման, գնդանման, բրնձանման կրային, բազմախցիկային են: Չափերը համեմատաբար մեծ են (մինչև 60 մմ), ունեն մի քանի միմյանց ընդգրկող պտույտներ՝ միջնապատերով բաժանված խցիկների: Գոյություն են ունեցել կարբոնի և պերմի ծովերում: Ֆ. եղել են ապարակազմիչ օրգանիզմներ (ֆուզուլինային կրաքար): Ունեն կարևոր նշանակություն կարբոնի և պերմի շերտագրության համար:

**Փ-72. ՓՄԱՐՈԼԻ** (իտալ. եզ. fumarola, fumare-ից – ծուխ է արձակում) – **ՖՈՒՄԱՐՈԼԻՆԵՐ, FUMAROLAS**, շիթերի կամ քուլաների տեսքով հրաբխային տաք գազերի ու ջրային գոլորշիների ելքեր՝ կապված հրաբխի մակերևույթի ճեղքերի կամ դեռևս չսառած լավային հոսքերի և ծածկոցների ճեղքերի ու անցքերի հետ: Ըստ տեղադիրքերի ու սնման օջախի՝ տարբերում են առաջնային (մշտական) և երկրորդային (ժամանակավոր) Ֆ.: Առաջնային Ֆ. կապված են գործող հրաբուխների հետ և գտնվում են խառնարանի հատակին, պատերին, հրաբխի արտաքին լանջերին: Երկրորդային Ֆ. դիտվում են չսառած լավայի հոսքերի, ծածկոցների և կուտակների վրա: Մինչև 700° C ջերմության ջրային գոլորշիներին միախառնված՝ Ֆ-ից դուրս են գալիս տարբեր գազեր, առավելապես՝ SO<sub>2</sub>, CO<sub>2</sub>, CO, H, O<sub>2</sub>, N<sub>2</sub>, Ar, Cl և F:

**Փ-73. ՓՄՆԴԱՄԵՆՏ ՍՏՈՒՄ** (լատ. fundamentum-հիմք) – **ՊԼԱՏՖՈՐՄԱ ԶԻՍՔ, PLATFORM BASEMENT, PLATFORM FOUNDATION**, պլատֆորմի ստորին կառուցվածքային հարկ, որը ներքնարկում է նրա ծածկոցին: Պ. հ. կազմված է ուժգին ծալքավորված և փոխակերպված (մետամորֆացված), գրանիտներով և այլ ներժայթքվածքներով ներարկված ապարներից: Ձևավորվում է երկրակեղևի տվյալ տեղամասի զարգացման մինչպլատֆորմային (երկրասինկլինալային) փուլում: Հին պլատֆորմների հիմքն ունի մինչքեմբրիյան, հիմնականում վաղ մինչքեմբրիյան (1.7 մլդ. տ. ավելի հին) հասակ: Պ. հ-ի ապարները սովորաբար փոխակերպված են ռեզիդուալ փոխակերպության ամֆիբոլիթային և գրանուլիթային ֆազիաներում և ուժեղ գրանիտացված են (այստեղից էլ՝ բյուրեղային հիմք անվանումը): Դրանում երկայնական երկրաշարժային ալիքների արագությունը 6.0 կմ/վրկ և ավելի է: Երիտասարդ պլատֆորմների հիմքը թույլ է փոխակերպված, սովորաբար ոչ բարձր կանաչթերթաքարային ֆազիայում, նստվածքային ծածկոցից տարբերվում է հիմնականում իր ուժգին տեղախախտմամբ (դիսլոկացիայով) և այդ պատճառով հաճախ կոչվում է ծալքավոր հիմք: Նրանում երկայնական երկրաշարժական ալիքների արագությունը 5.5-6.0 կմ/վրկ է: Պ. հ. նաև կոչվում է ամրապնդված (կոնսոլիդացված) կեղև, նրա հաստությունը հասնում է 30-40 կմ-ի: Պ. հ. մակերևույթում դուրս է գալիս բյուրեղային վահաններում ու զանգվածներում: Պ. հ-ի ապարներում տեղակայված են երկաթի, նիկելի, պղնձի, ոսկու հանքանյութեր, կերամիկական հումք և այլ օգտ. հնժ-ներ:



# X

- X-1. ХАЗАРСКАЯ ТРАНСГРЕССИЯ** (խազար ժողովրդի անունից) – **ԽԱԶԱՐՅԱՆ ԾՈՎԱՐՇԱՎ** (**ՏՐԱՆՍԳՐԵՍԻՎ**), **KHAZAR TRANSGRESSION**, Կասպից ծովի միջին չորրորդական ծովարշավ, որը տարածվել է Մերձկասպյան ցածրավայրի մեծ մասում:
- X-2. ХАЛЦЕДОН** (հուն. chalkēdōn – Փոքր Ասիայի հին նույնանուն ք-ի անունից) – **ՔԱԿԵՂՈՆ** (**ԽԱԼՑԵՂՈՆ**), **CHALCEDONY**, միներալ, քվարցի մանրաբյուրեղային տարատեսակ: Բնորոշվում է մանրաթելավոր (սֆերուլիթային), նրբաթեփուկավոր և գերմանրահատիկավոր կազմությամբ: Գույնը տարբեր է՝ շագանակագույն-գորշ (սարդեր), նարնջագույնից մինչև վարդագույն (սերդուլիկ), կարմիր (կարնեոլ), խնձորի կանաչ (քրիզոպրագ), երկնագույն-մոխրագույն՝ մինչև գունատ կապույտ (սապֆիրին): Կարծրությունը՝ 6-7, փայլը՝ մոմի: Առաջանում է հրաբխային ապարների դատարկություններում՝ հանքային տաք ջրերի կամ ջրաջերմային (հիդրոթերմալ) լուծույթների նստեցումից: Նուրբ գծաշերտերով և նախշերով տարբերակը հայտնի է ազատ անունով: Օգտագործվում է ոսկերչական գործում և որպես տեխ. քար:
- X-3. ХАЛЬКАНТИТ** (հուն. chalkós – պղինձ և ánthos – ծաղիկ), **МЕДНЫЙ КУПОРОС** – **ԽԱԼԿԱՆԹԻՏ** (**ՔԱԼԿԱՆԹԻՏ**), **ՊՂՆՁԱՐՉԱՍՊ**, **CHALCANTHITE**, սուլֆատների դասի միներալ,  $Cu[SO_4] \cdot 5H_2O$ , բյուրեղագիտական համակարգը տրիկլինային է: Սովորաբար առաջացնում է հոծ զանգվածներ, շթաքարեր, բողբոջանման և հատիկավոր ագրեգատներ, գույնը՝ երկնագույն, կանաչավուն, կապույտ, փայլը՝ ապակու: Կարծրությունը՝ 2.5: Հանդիպում է պղնձի հնքվ-երի օքսիդացման զոնայում:
- X-4. ХАЛЬКОЗИН** (հուն. chalkós – պղինձ), **МЕДНЫЙ БЛЕСК** – **ԽԱԼԿՈՉԻՆ** (**ՔԱԼԿՈՉԻՆ**), **ՊՂՆՁՈՓՈՅԼՈՒԿ**, **CHALCOCITE**, **CHALCOSINE**, **CHALCOSITE**, **COPPER GLANCE**, սուլֆիդների դասի միներալ,  $Cu_2S$ : Բյուրեղագիտական համակարգը ցածր ջերմաստիճանային պայմաններում շեղանկյունային է, բարձր ջերմաստիճանայինի դեպքում՝ հեքսագոնային: Բյուրեղները հազվադեպ են, և սովորաբար առաջացնում է մանրահատիկ հոծ զանգվածներ: Գույնը՝ կապարի մոխրագույն: Կարծրությունը՝ 2.5-3, փայլը՝ մետաղի: Խ. առաջանում է վերնածնային (հիպերգեն) և ներքնածին (հիպոգեն) գործընթացների դեպքում: Ջգալի կուտակումները սովորաբար կապված են պղնձի և բազմամետաղական հնքվ-երի երկրորդային սուլֆիդային հարստացման զոնաների հետ:
- X-5. ХАЛЬКОПИРИТ** (հուն. chalkós – պղինձ և պիրիտ), **МЕДНЫЙ КОЛЧЕДАН** – **ԽԱԼԿՈՊԻՐԻՏ** (**ՔԱԼԿՈՊԻՐԻՏ**), **ՊՂՆՁԻ ՀՐԱՔԱՐ**, **CHALCOPYRITE**, **COPPER PYRITE**, սուլֆիդների դասի միներալ,  $CuFeS_2$ , բյուրեղագիտական համակարգը տետրագոնային է, բարձր ջերմաստիճանային պայմաններում՝ խորանարդային: Բյուրեղները հազվադեպ են: Սովորաբար առաջացնում է հոծ և հատիկավոր զանգվածներ, գույնը՝ արույրի դեղին, ոսկու դեղին, փայլը՝ մետաղի: Կարծրությունը՝ 3-4 է: Հաճախ հանդիպում է պղնձի ջրաջերմային (հիդրոթերմալ), հրաբա-

րային, սկառնային, ինչպես նաև մագմայական ծագման պղինձ-նիկելային հնքվերում: Պղնձի գլխավոր հանքաքարն է:

**X-6. ХАТТСКИЙ ЯРУС** (Կենտրոնական Եվրոպայում ապրած գերմ. քատեր ցեղի անունով) – **ՔՍՏՅԱՆ ՅԱՐԿ, CHATTIAN**, Արմ. Եվրոպայի օլիգոցենի վերին հարկ, որոշ հետազոտողներ այն դիտարկում են որպես ստորին միոցենի ակվիտանյան հարկի ստորին մասի ֆազիա:

**X-7. ХВАЛЫНСКАЯ ТРАНСГРЕССИЯ** (Կասպից ծովի ռուս. խվալինյան ծով անվանումից) – **ԽՎԱԼԻՆՅԱՆ ՇՈՎԱՐՇԱՎ (ՏՐԱՆՍԳՐԵՍԻԱ), KHVALYN TRANSGRESSION**, Կասպից ծովի ուշչորրորդական ծովարշավ, որի ժամանակ ծովը ծածկել է համարյա ամբողջ Մերձկասպյան ցածրավայրը:

**X-8. ХВОСТЫ – ЗИРСУШКОՉԵՐ, TAILINGS**, հարստացման գործընթացից հետո մնացած նյութեր՝ բաղկացած հիմնականում դատարկ ապարից, որի մեջ օգտակար բաղադրիչի պարունակությունը զգալիորեն ավելի փոքր է, քան սկզբնական ելակետային նյութերում կամ այդ նույն գործընթացի մյուս արգասիքներում:

**X-9. ХЕМОГЕННЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ** (հին հուն. *cheméia* – քիմիա և հուն. *genês* – ծնող, ծնված) – **ՔԻՄԻԱԾԻՆ ԱՊՈՐՆԵՐ, CHEMOGENIC ROCKS**, ապարների խումբ, որն առաջացել է ջրից կամ լուծույթներից անմիջապես նստեցման ճանապարհով՝ առանց կենսբ. գործընթացների մասնակցության: Կախված նստեցման տեղից ու եղանակից, ինչպես նաև ջրերի ու լուծույթների ծագումից՝ Ք. ա. կարող են լինել նստվածքային, ջրաջերմանստվածքային (հիդրոթերմանստվածքային) և ջրաջերմային (հիդրոթերմալ): Նստեցման եղանակներն են՝ ջրերի ու լուծույթների աստիճանական հագեցումը՝ արևային գոլորշիացման, երկու և ավելի լուծվող աղերի լուծույթների խառնման և լուծույթների ջերմաստիճանի նվազման արգասիքում: Ըստ ծագման՝ միներալագոյաց ջրերն ու լուծույթները կարող են լինել ծովային, ցամաքային ջրաջերմային (թույլ միներալացված և աղաջրային): Նստեցման վայրը երկրի մակերևույթն է կամ ընդերքը: Առաջին դեպքում առաջանում են շերտային մարմիններ, երկրորդ դեպքում՝ ճեղքաերակային ոսպնյակաձև մարմիններ: Ք. ա-ի գերակշռող մասը ջրաջերմանստվածքային է, ավելի քիչ՝ նստվածքային ու ջրաջերմային: Ք. ա-ին են պատկանում բոլոր միներալային աղերը (տե՛ս Галогенез), կալիումական աղերը, էվապորիտները, սոդան, կայծքարերը և կայծքարանման օպոկները, տրեպելները, ֆոսֆորիտները, երկաթամանգանային հանքաքարերը, բոքսիտները, քիմիածին կրաքարերը, տրավերտինները, կապարացիկային, ծծմբային, բորակիր և լիթիումակիր հանքաքարերի մեծ մասը:

**X-10. ХЕТЕТИДЫ (Chaetetida) – ՔԵԹԵՏԻՂՆԵՐ, CHAETETIDS**, կրային խողովակափնջային կմախք ունեցող ծովային գաղութային օրգանիզմների մահացած խումբ: Համակարգային դրությունը պարզ չէ, պատկանում են բուստային կամ հիդրոիդային պոլիպներին: Գոյություն են ունեցել օրդովիկից մինչև էոցեն, հատկապես լայն տարածված են եղել կարբոնում: Ապրել են ծանծաղուտային ծովերի հատակում:

**X-11. ХИМИЧЕСКИЕ ОТЛОЖЕНИЯ**, տե՛ս Хемогенные горные породы:

**X-12. ХИМИЧЕСКИЙ АНАЛИЗ ВОДЫ – ՋՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՏԱՐԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ, CHEMICAL ANALYSIS OF WATER**, բնական ջրում լուծված քիմ. տարրերի ու միացությունների որոշում: Ջ. ք. տ-յան բազմաթիվ տեսակներից ջրաերկրբ. աշխատանքների ժամանակ առանձնացվում է ջրի ընդհանուր քիմ. բաղադրության բնութագիրը, ֆիզ. հատկանիշները, pH-ը, առավել տարածված գազերի (CO<sub>2</sub>, H<sub>2</sub>S, O<sub>2</sub>) քանակական պարունակությունը, մակրոբաղադրիչների քանակը և լուծված օրգանական նյութերի ընդհանուր պարունակության մոտավոր բնութագիրը:

- X-13. ХИОЛИТЫ** (Hyolitha) – **ՅԻՈԼԻԹՆԵՐ, HYOLITHS**, մահացած օրգանիզմների դաս, պայմանականորեն վերագրվում է փափականարմինների տիպին: Ունեցել են կոնաձև կամ բուրգանման խեցի՝ 0.1-ից մինչև 15 սմ չափերով: Գոյություն են ունեցել քենթրիից մինչև պերմ, ապրել են ծովերում: Ունեն կարևոր շերտագրական նշանակություն քենթրիի նստվածքների համար:
- X-14. ХЛОАНТИТ** (հուն. chloanthēs – կանաչող) – **ՔԼՈՒՆՏԻՏ, CHLOANTHITE**, միներալ, կորալտի ու նիկելի արսենիդ: Առաջացնում է անագի սպիտակ հատիկավոր զանգվածներ: Հանդիպում է ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվ-երում: Նիկելի հանքաքար է:
- X-15. ХЛОРИДЫ ПРИРОДНЫЕ** – **ՔԼՈՐԻԴՆԵՐ ԲՆԱԿԱՆ, NATURAL CHLORIDES**, միներալների դաս, աղաթթվի աղեր: Հայտնի են մոտ 100 միներալային տեսակներ: Ք-ի դասի մեջ են ներառվում նաև քիչ տարածում ունեցող բրոմիդները և յոդիդները: Տարբերում են պարզ (օր.՝ հալիտ, քլորարգիտ) և բարդ (կանալիթ) Ք., նաև օքսո- և հիդրօքսոքլորիդներ (հիմքային աղեր): Բացի բուն Ք-ից, լայն տարածված են խառը կազմի աղերը՝ քլորիդ-սուլֆատները (օր.՝ կալինիտ), քլորիդ-նիտրատները, քլորիդ-կարբոնատները և այլն, ինչպես նաև ապատիտի տիպի կառուցվածք ունեցող քլորապարունակ միներալները (ֆոսֆատներ, արսենատներ, վանադատներ և այլն):
- X-16. ХЛОРИТИЗАЦИЯ** – **ՔԼՈՐԻՏԱՅՈՒՄ, CHLORITIZATION**, որոշ գունավոր միներալների (ամֆիբոլներ, պիրոքսեններ, բիոտիտ և այլն) կամ ապարի հիմնական զանգվածի՝ քլորիտով փոխարինվելու գործընթաց: Ենթադրվում է, որ քլորիտացումը ընթանում է ռեգիոնալ փոխակերպային երևույթների դեպքում (կանաչ թերթաքարերի առաջացմամբ) և ջրաջերմային (հիդրոթերմալ) լուծույթների ներագդեցության տակ:
- X-17. ХЛОРИТЫ** (հուն. chlōros – կանաչ) – **ՔԼՈՐԻՏՆԵՐ, CHLORITES**, շերտավոր սիլիկատների ենթադասի լայն տարածում ունեցող ապարակազմիչ միներալների ընտանիք, գլխ. Mg-ի ու Fe-ի հիմքային սիլիկատներ և այլումասիլիկատներ, քիմ. կազմը  $(MgFe^{2+})_3[AlSi_3O_{10}(OH)_2] \cdot 3(Mg,Fe)(OH)_2$ : Բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային կամ տրիկլինային է: Առաջացնում են թեփուկավոր, սֆերոլիթային, օլիթային, գաղտնաբյուրեղային ագրեգատներ: Գույնը՝ հիմնականում կանաչ, երբեմն՝ վարդագույն-կարմիր (Fe-ի պարունակության դեպքում), գորշ-սև (Fe-քլորիտ): Կարծրությունը՝ 2-3: Ըստ  $Fe^{3+}$  և  $Fe^{2+}$  հարաբերակցության՝ տարբերում են օրթոքլորիտներ (չօքսիդացված, պարունակում են 4 %-ից պակաս  $Fe_2O_3$ ) և լեպտոքլորիտներ (հարուստ  $Fe_2O_3$ -ով): Ք. կանաչ թերթաքարերի, կանաչքարային ապարների, պրոպիլիտների, սպիլիտների, հնատիպ արտաժայթքային ապարների ու հրաբխային տուֆերի կարևոր ապարակազմիչ միներալներ են: Քլորիտային թերթաքարերը ռեգիոնալ փոխակերպության սկզբնական փուլի լայն տարածված արգասիքներ են: Ք. առաջանում են նաև քլորիտացման, պրոպիլիտացման գործընթացում՝ մետասոմատիկական ճանապարհով, բնորոշ են միջին ջերմաստիճանային ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվ-երի ներփակող ապարների մերձհանքային փոփոխությունների գործընթացների համար: Մեծ քանակով Ք. առաջանում են գերհիմքային ապարների, հրաբխային տուֆերի ջրաջերմային փոփոխության դեպքում: Ք. սովորական միներալներ են հանքային քվարցային երակների համար, առաջանում են նաև հողմահարման կեղևում, որպես տեղածին միներալներ, տարածված են նստվածքային ապարներում, ծովերի հատակի ժամանակակից կավային նստվածքներում:

- X-18. ХОБОТНЫЕ** (Proboscidea) – **ԿՆՃԻԹԱՎՈՐՆԵՐ, PROBOSCIDEANS**, խոշոր և հսկա կաթնասուն կենդանիներ՝ զանգվածային մարմնով, սյունանման ոտքերով, վերին շրթունքի երկարացված կնճիթով և ժանիքների տեսքով կտրիչներով: Ուշ էոցեն-այժմ: Այժմ ներկայացված են փղերի երեք տեսակով:
- X-19. ХОЛМ** – **ՔԼՈՒՐ, HILL, HILLOCK**, ռելիեֆի ոչ մեծ հարաբերական բարձրության (մինչև 200 մ) դրական ձև, համեմատաբար մեղմաթեք (30°-ից փոքր), սովորաբար ծնապատված լանջերով, կլորացված գագաթով և թույլ արտահայտված ստորոտով:
- X-20. ХОНДРИТЫ** (հուն. chondros – հատիկ) – **ՔՈՆՊՐԻՏՆԵՐ, CHONDRITES**, քարային երկնաքարեր, որոնք կազմված են քոնդրերի (զնդիկների) ձևով սառած և նրբահատիկ զանգվածի մեջ ընկղմված սիլիկատային նյութի կաթիլներից: Այդ զանգվածը նույն սիլիկատային նյութի ապաբյուրեղացման արգասիքն է: Քոնդրերի չափերը տատանվում են 1 մմ-ից մինչև սիսեռի հատիկի մեծության: Մազոնը (Mason, 1960) և Ռինգվուդը (Ringwood, 1961) առանձնացնում են Ք-ի հինգ խումբ՝ էնստատիտային, օլիվին-բրոնզիտային, օլիվին-հիպերսթենային, օլիվին-պիֆոնիտային և ածխածնային:
- X-21. ХОРДОВЫЕ** (Chordata), (լատ. chorda – լար) – **ԹԻՎՆԱԼԱՐԱՎՈՐՆԵՐ, ՔՈՐՉՎՈՐՆԵՐ, CHORDATES**, բարձրակարգ կենդանիների տիպ: Ընդգրկում է 3 ենթատիպ՝ թրթուրաքորդավորներ, անգանգներ և ողնաշարավորներ կամ զանգավորներ: Թ-ին բնորոշ են քորդան (թիկնալարը), մեջքի կողմում գտնվող նյարդային խողովակը, խռիկային ճեղքերը: Քորդան ողնաշարավորների մոտ զարգանում է սաղմնային փուլում և այնուհետև փոխարինվում է ողնաշարով: Հայտնի է ժամանակակից Թ-ի մոտ 45 հազ. տեսակ, որից 40 հազ. ողնաշարավորներ են:
- X-22. ХРИЗОБЕРИЛЛ** (հուն. chrysós – ոսկի և բերիլ) – **ՔՐԻՉՈՐԵՐԻԼ, CHRYSOBERYL**, բարդ օքսիդների ենթադասի միներալ,  $Al_2[BeO_4]$ : Բյուրեղագիտական համակարգը շեղանկյունային է: Առաջացնում է հատվածակողմային բյուրեղներ, հատիկավոր ագրեգատներ: Գույնը՝ կանաչ, դեղին, շագանակագույն, կարմիր, երբեմն՝ անգույն: Կարծրությունը՝ 8.5: Ք. բազմածին միներալ է, անջատման ձևը և գունավորումը պայմանավորված են առաջացման պայմաններով: Հանդիպում է պեզմատիտներում, զմրուխտաբեր ֆլուգոպիտային փայլարիդներում, գրեյզեններում, ջրաջերմային-մետասոմատիկական հնքվ-երում, մագնետիտային սկառններում: Վերնածնային պայմաններում Ք. կայուն է: Թափանցիկ, գունավորված տարբերակները, հատկապես ալեքսանդրիտը, II կարգի թանկարժեք քարեր են:
- X-23. ХРИЗОЛИТ** (հուն. chrysós – ոսկի և lithos – քար) – **ՔՐԻՉՈՒԼԻԹ (ՈՍԿԵՔԱՐ), CHRYSOLITE, OLIVINE**, միներալ, սակավաերկաթային օլիվինի (ֆորստերիտի) դեղնականաչ և կանաչ թափանցիկ տարատեսակ: Օգտագործվում է որպես IV կարգի ոսկերչական քար:
- X-24. ХРИЗОПРАЗ** (հուն. chrysós – ոսկի և prásius – բաց կանաչ) – **ՔՐԻՉՈՊՐԱՉ, CHRYSOPRASE**, գաղտնաբյուրեղային սիլիկատի (քաղկեդոն, նրբահատիկավոր քվարց, ծիածանաքար) կիսաթափանցիկ միներալային ագրեգատ՝ գունավորված նիկելի միացություններով՝ կանաչ գույնի տարբեր երանգներով: Առաջանում է նիկելաբեր գերիիմքային զանգվածների հողմահարման կեղևում: Օգտագործվում է որպես IV կարգի ոսկերչական քար:
- X-25. ХРИЗОТИЛ-АСБЕСТ** (հուն. chrysós – ոսկի և tilos – դուրս քաշված, այստեղ՝ թելիկ, նազաթել) – **ՔՐԻՉՈՏԻԼ-ԱՍԲԵՍՏ, CHRYSOTILE-ASBESTOS**, միներալ, մագնեզիումային շերտավոր սիլիկատ: Բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է: Գույնը՝ սպիտակ կամ բաց կանաչ: Կարծրությունը՝ 2-3 (թելիկների

լայնքով): Ք. ա-ի գլխավոր հատկությունը հեշտությամբ բաժանվելն է բարակ ձկուն փնջերի, հյուսերի, խրձիկների (ընդհուպ մինչև տարրական բյուրեղները) և բարձր ամրությունը: Ք. ա-ի առաջացումը կապված է դոլոմիտների և գերհիմքային ապարների սերպենտինացման գործընթացի հետ:

**X-26. ХРОМАТЫ ПРИРОДНЫЕ – ՔՐՈՍՏՆԵՐ ԲՆԱԿԱՆ, NATURAL CHROMATES,** միներալների դաս, քրոմային թթուների աղեր: Ներառում են 15-16 միներալային տեսակներ: Որոշ միներալաբաններ Ք-ի որոշ մասը ներառում են բարդ օքսիդների ենթադասի մեջ: Ք-ի ամենահայտնի միներալը կրոկոիտն է: Շատ Ք.  $[\text{CrO}_4]^{2-}$  անիոնի հետ միասին պարունակում են և այլ անիոններ, այսինքն՝ ներկայացված են խառն աղերով (քրոմատ-ֆոսֆատներ, քրոմատ-արսենատներ, քրոմատ-սիլիկատներ և այլն): Ք-ի բյուրեղագիտական համակարգը առավելապես մոնոկլինային ու տրիկլինային է, առաջացնում են մանր հատվածակողմային, ասեղնաձև կամ աղյուսաձև բյուրեղներ, թելավոր, մանրահատիկավոր, մակահոսուկ ագրեգատներ, կեղևներ: Գույնը վառ դեղին, մարնջագույն, կարմիր, սակավ շագանակագույն է, կարծրությունը՝ 2.5-3.5: Ք-ի մեծ մասը հազվագյուտ միներալներ են, չունեն գործնական նշանակություն:

**X-27. ХРОМИТОВЫЕ РУДЫ, ХРОМИТЫ – ՔՐՈՍԻՏԱՅԻՆ ՉԱՆՔԱՔԱՐԵՐ, ՔՐՈՍԻՏՆԵՐ, CHROMITE ORES, CHROME IRON ORES,** քրոմ պարունակող բնական միներալային գոյացություններ, որոնց արդյ. օգտագործումը տնտեսապես շահավետ է: Քրոմի օքսիդի պարունակությունը սովորաբար բարձր է 10.5 %-ից: Գլխավոր միներալներն են քրոմչափնելիդները և սիլիկատները (սերպենտինիտ, քլորիտ և այլն): Չնքվ-երը ըստ ծագման հիմնականում մագմայական են:

**X-28. ХРОМШПИНЕЛИДЫ – ՔՐՈՍՇՊԻՆԵԼԻՎՆԵՐ, CHROME-SPINELLIDS,** բարդ օքսիդների ենթադասի միներալներ, քրոմիտի ( $\text{FeCr}_2\text{O}_4$ ), շափնելի, հերցինիտի ( $\text{FeAl}_2\text{O}_4$ ), մագնետիտի և ուլվոչափնելի ( $\text{Fe}_2\text{TiO}_4$ ) մագնեզիումային ու երկաթային պինդ լուծույթներ: Ք. ընդգրկում են մոտ 20 միներալ և դրանց տարբերակներ: Ք-ում  $\text{Cr}_2\text{O}_3$ -ի պարունակությունը հասնում է 75 %-ի: Կարևոր միներալներ են՝ մագնոքրոմիտը, քրոմպիկոտիտը, ալյումաքրոմիտը: Բուն քրոմիտը հազվագյուտ միներալ է և հայնաբերված է միայն երկնաքարերում: Ք-ի բյուրեղագիտական համակարգը խորանարդային է: Բյուրեղային կառուցվածքը նման է կանոնավոր շափնելի կառուցվածքին: Գույնը՝ սև, գորշ սև: Կարծրությունը՝ 5.5-7.5: Երբեմն թույլ մագնիսական են: Ք. մագմայածին միներալագոյացման տիպիկ արգասիքներ են, կապված են գլխ. գերհիմքային ու հիմքային ապարների հետ: Քրոմի ստացման հիմնական հանքանյութ են: Արհեստական Ք.՝ քրոմային ֆերիտները, կիրառվում են ռադիոէլկտրոնիկայում, հաշվողական տեխնիկայում:

**X-29. ХРОНОЗОНА** (հուն. *crónos* – ժամանակ և *zónē* – գոտի) – **ՔՐՈՆԱԶՈՆԱ, CHRONOZONE,** տե՛ս Стратиграфическая зона:

## Ц, Ч

- Ц-1. ЦЕЛЕСТИН** (լատ. caelestis – երկնային, շատ նմուշներ հաճախ ունեն երկնագույն գունավորում) – **ՑԵԼԵՍԻՆ, CELESTINE, CELESTITE**, սուլֆատների դասի միներալ,  $\text{Sr}[\text{SO}_4]$ : Բյուրեղագիտական համակարգը շեղանկյունային է: Առաջացնում է աղյուսածև կամ հատվածակողմային տեսքի բյուրեղներ, հատիկավոր, ձողանման և կեղևանման ագրեգատներ: Գույնը՝ երկնագույն (տարբեր ինտենսիվության), սակավ՝ սպիտակ կամ մոխրագույն, երբեմն՝ վարդագույն, դեղնավուն, կանաչավուն (մեխ. աղտոտվածության պատճառով): Փայլը՝ ապակու: Կարծրությունը՝ 3.0-3.5: Փխրուն է: Ց. բազմածին միներալ է: Ց-ի վերնածնային հնքվ-երում հիմնական նշանակություն ունեն մետատմատիկական, երակային, նստվածքադիագենետիկական և հրաբխածին-նստվածքային հնքվ-երը: Ց. արդյունահանվում է նաև ծծմբային հնքվ-երից, հազվադեպ՝ ջրաջերմային (հիդրոթերմալ): Ստրոնցիումի գլխավոր հանքանյութն է:
- Ц-2. ЦЕМЕНТАЦИЯ – ՑԵՄԵՆՏԱՑՈՒՄ, CEMENTATION, AGGLUTINATION**, ապարների հողմահարման փուխր արգասիքների, նստվածքների ու հողի ամրացումը ամուր հոծ զանգվածի՝ կավային, կրային, սիլիցիումային կամ երկաթային նյութով: Ց-ման հետևանքով ավազները փոխարկվում են ավազաքարերի, խիճը՝ փշրաքարի, ճալաքարուտը՝ կոնգլոմերատի:
- Ц-3. ЦЕМЕНТАЦИЯ ГОРНЫХ ПОРОД – ԱՊԱՐՆԵՐԻ ՑԵՄԵՆՏԱՑՈՒՄ, CEMENTATION OF ROCKS**, ճեղքավոր ու ծակոտկեն ապարների միաձուլության ու ամրության բարձրացման և ջրաթափանցելիության նվազեցման եղանակ, որն իրականացվում է հորատանցքերի համակարգի միջոցով՝ նրանց մեջ ցեմենտի լուծույթ (շաղախ) ներարկելու միջոցով:
- Ц-4. ЦЕНТР ВУЛКАНИЧЕСКИЙ – ՅՐԱԲԽԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ, VOLCANIC CENTRE**, մակերևութային երկրբ. գոյացություն, որը ցույց է տալիս տվյալ տեղում հրաբխային ապարատի գոյությունը: Դրանք կարող են լինել տարբեր աստիճանի պահպանվածության հրաբխային կառույցներ, նեկեր, պայթման փողրակներ, ենթահրաբխային ներժայթքվածքներ, հետհրաբխային արգասիքներ և այլն, որոնք մատնանշում են տվյալ տեղամասում երբևիցե հրաբխային գործունեության արտահայտումը:
- Ц-5. ЦЕНТР ПОКРОВНОГО ОЛЕДЕНЕНИЯ – ԾԱԾԿՈՒԹԱՅԻՆ ՍԱՌՑԱՊՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ, CENTRE OF GLACIATION**, ցամաքի տեղամաս (հաճախ լեռնային կամ բարձունք), որն ընկած է խոնավ օդային հոսանքների կամ ցիկլոնների ճանապարհներին, որտեղ չորրորդական ժամանակաշրջանում գոյացել են սառցադաշտերը, և որտեղից նրանք այնուհետև տարածվել են հարակից տարածքներ (օր.՝ Սկանդինավյան լեռները՝ Յս. Եվրոպայի Ծ. ս. կ.):
- Ц-6. ЦЕНТРИКЛИНАЛЬ** (լատ. centrum – կենտրոն, կենտրոնակետ, հուն. klinō – կռանում են) – **ՑԵՆՏՐԻԿԼԻՆԱԼ (ԿԵՆՏՐՈՆԱԳՈՎՎԱԾՔ), CENTRICLINE, CENTROCLINE**, զոգածալքի (սինկլինալի) հողակապի փքման տեղամաս, որը բնորոշվում է շերտի անկմամբ դեպի մեկ կենտրոնը:

**Ц-7. ЦЕНТРИКЛИНАЛЬНОЕ ПАДЕНИЕ – ՅԵՆՏՐԻԿԼԻՆԱԼ (ԿԵՆՏՐՈՆԱԳՈԳ) ԱՆ-ՎՈՒՄ, CENTRICLINAL DIP, CENTRIPETAL DIP OF STRATA,** ապարների շերտերի անկում՝ ուղղված դեպի մեկ կենտրոն: Յուրահատուկ է գոգվածքների (մուղանների) և գոգածալքերի (սինկլինալ ծալքերի) փակումներին:

**Ц-8. ЦЕОЛИТЫ** (հուն. zēō – եռում են և lithos – քար, քանի որ ուժեղ և արագ տաքացման դեպքում առաջացնում են բշտիկավոր ապակի) – **ՑԵՈԼԻԹՆԵՐ, ZEOLITES**, միներալների խումբ,  $[\text{SiO}_2]^{4-}$  և  $[\text{SiO}_4]^{5-}$  տետրաէդրերից կազմված բյուրեղային կառուցվածքով կալցիումի, նատրիումի, բարիումի, ստրոնցիումի, կալիումի ջրային այլու-մասիլիկատներ: Ց. հանդիպում են բնության մեջ և ստացվում արհեստական եղա-նակով: Հայտնի են բնական Ց-ի մոտ 40 միներալային տեսակներ, առավել տարած-ված են անալցիմը, կլինոպտիլոլիթը ( $\text{K}_2\text{Na}_2\text{Ca}[\text{Al}_2\text{Si}_{7,5-11,0}\text{O}_{19,0-26,0}]$ ), մորդենիտը, լո-մանտիտը ( $\text{Ca}[\text{Al}_2\text{Si}_4\text{O}_{12}]\cdot 2\text{H}_2\text{O}$ ), կատրոլիթը, ֆոնազիտը, շաբազիտը, ֆիլիպսիտը: Բնական Ց. առաջացնում են ցանկացած բյուրեղագիտական համակարգի սպի-տակ, երբեմն թափանցիկ, անգույն բյուրեղներ: Կարծրությունը՝ 3-5: Ց. ունակ են տաքացնելիս կորցնելու ջուրը, իսկ սառչելիս՝ նորից այն ներառելու՝ առանց խախ-տելու բյուրեղային կառուցվածքը: Ց. առաջանում են հրաբխային (բազալտ-անդե-զիտ-ռիոլիթային) և հրաբխածին-նստվածքային ապարներում՝ ջրաջերմային (հիդ-րոթերմալ), ջրաջերմամետասոմատիկական, դիագենետիկական և փոխակերպա-յին գործընթացների հետևանքով: Ց. գոյանում են նաև հրաբխային տուֆերի փոխա-կերպության և օվկիանոսների ու աղային լճերի նստվածքների դիագենեզի ընթաց-քում: Անցյալ դարի կեսերից արդյ. մասշտաբով արտադրվում են սինթետիկ Ց.: Ջրագրկված Ց. էֆեկտիվ սորբենտներ են, մոլեկուլային մաղեր և օժտված են աղ-սորբցիայի խիստ բարձր ընտրողականությամբ:

**Ц-9. ЦЕРАТИТЫ (Ceratites) – ՑԵՐԱՏԻՏՆԵՐ, CERATITES**, ամոնոիդների կարգ, ունեն տարբեր ձևի հարթ-պարուրած, խիստ քանդակավորված խեցի: Պերմ-ուշ տրիաս:

**Ц-10. ЦЕРУССИТ, БЕЛАЯ СВИНЦОВАЯ РУДА** (լատ. cerussa – սպիտականերկ) – **ՑԵՐՈՒՄԻՏ, ԿԱՊՐԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՆՔԱՔԱՐ, CERUSSITE**, կարբոնատների դասի միներալ,  $\text{PbCO}_3$ : Բյուրեղագիտական համակարգը շեղանկյունային է: Առաջաց-նում է հատիկավոր տեսքի համատարած զանգվածներ ու ագրեգատներ, կեղևներ, մակահոսուկներ, ներփակվածքներ, սակավ՝ աղյուսածև, սյունածև և ծողածև բյու-րեղներ: Անգույն է, թափանցիկ կամ ձյունասպիտակ, երբեմն՝ մոխրագույն կամ գորշավուն երանգով: Կարծրությունը՝ 3.0-3.5: Փայլը՝ ալմաստի, երբեմն՝ ապակու: Խիստ փխրուն է: Ց. տիպիկ վերնածնային (հիպերգեն) միներալ է, առաջանում է կապարի և բազմամետաղական հնքվ-երի օքսիդացման զոնայում՝ ըստ գալենիտի կամ անգլեզիտի: Ջգալի կուտակների դեպքում կապարի հանքանյութ է:

**Ц-11. ЦЕХШТЕЙН** (գերմ. Zechstein, Թյուրինգիա) – **ՑԵԽՇՏԵՅՆ, ZECHSTEIN**, Կենտրոնական Եվրոպայի պերմի համակարգի վերին ստորաբաժանման անվա-նում, բնորոշվում է աղաբեր նստվածքների առկայությամբ:

**Ц-12. ЦИКЛ ГЕОТЕКТОНИЧЕСКИЙ**, տե՛ս Цикл тектонический:

**Ц-13. ЦИКЛ ОСАДОЧНЫЙ (СЕДИМЕНТАЦИОННЫЙ) – ՆՍԿԱԾՔԱՅԻՆ (ՆՍԿԱԾ-ՔԱՎՈՒՏԱՎՈՒՄԱՅԻՆ) ՑԻԿԼ (ԲՈՆՈՐԱՇՐԱՆ) – SEDIMENTARY CYCLE**, տվյալ ջրատարածքի կամ ցամաքի տարածքի զարգացման ընթացքում նստվածքակու-տակման իրադրության հերթափոխման մեջ որոշակի հերթականություն, որը կրկն-վում է այս կամ այն փոփոխարկմամբ: Ն. ց-երին հաճախ վերագրում են միջակա-

քեր, որոնք ընկած են հաջորդական ծովարշավների (տրանսգրեսիաների) միջև, նստվածքների կուտակման էական ընդմիջումների միջև և այլն: Ցիկլեր կամ ցիկլոտեմեր (կամ ոչ ճիշտ ռիթմեր) անվանվում են նաև նստվածքակուտակման պայմանների հաջորդական հերթափոխման նյութական արգասիքները՝ ապարների համապատասխան համալիրները: Ն. ց-երը կարող են լինել տարբեր տևողության՝ համապատասխանելով շարժուն գոտիների զարգացման ալպյան, հերցինյան, կալեդոնյան և ավելի հին փուլերին: Այդպիսի ցիկլերին համապատասխանում են երկրբ. ֆորմացիաների շարքեր, այդ թվում՝ նստվածքահրաբխածին, օր.՝ սպիլիտակերատոֆիրային, ասպիդային, ֆլիշային, շլիռամուլասային (ստորին մուլասային) և բուն մուլասային (վերին մուլասային): Կարող են լինել ավելի կարճատև ցիկլեր: Ցածր կարգի ցիկլերը պայմանավորված են գլխ. կլիմայական գործոններով: Ավելի խոշոր ցիկլերի առաջացման մեջ կարևոր դեր են խաղում տատանողական և այնուհետև ալիքային շարժումները: Ն. ց-երի դասակարգումը. 1) տարրական ցիկլումներ (բազմաշերտեր՝ առանց ապարների միանշանակ կրկնության): Շերտախմբերի, ենթաշերտախմբերի և շերտատուփերի կառուցվածքային տարրեր: Ցիկլումները ստորաբաժանվում են ցիկլոտեմների՝ ապարների ամենապարզ սակավատարր (2-5 շերտեր) զուգակցություն և ցիկլոտեմների՝ ներառում է շերտերի մեծ քանակ (5-12): 2) Բազմացիկլիտներ և բազմացիկլոտեմեր՝ տարբեր կարգի ցիկլիտների կամ ցիկլոտեմների խմբակցություն: Հիմնական համակարգային հատկությունը սկզբունքորեն միատիպ, բայց դրա հետ մեկտեղ օրինաչափորեն զարգացող տարրական ցիկլերի կրկնությունն է: 3) Ցիկլահամալիր՝ 3-րդ կարգի խոշոր ցիկլում, որի տարրերն են շերտախմբերը (ֆորմացիաները): 4) Բազմացիկլահամալիր՝ ամենաբարձր կարգի ցիկլում, որը կազմված է ցիկլահամալիրների սերիաներից:

**Ц-14. ЦИКЛ СКЛАДЧАТОСТИ**, տե՛ս Цикл тектонический:

**Ц-15. ЦИКЛ ТЕКТОНИЧЕСКИЙ (ГЕОТЕКТОНИЧЕСКИЙ) – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ (ԵՐԿՐԱ-ՏԵԿՏՈՆԱԿԱՆ) ՑԻԿԼ, ТЕСТОНИС СУСЛЕ**, տե՛ս Тектонический цикл:

**Ц-16. ЦИКЛ ТЕКТОНО-МАГМАТИЧЕСКИЙ – ՏԵԿՏՈՆԱՄԱԳՄԱՅԱԿԱՆ ՑԻԿԼ, ТЕСТОНОМАГМАТИС СУСЛЕ**, ժամանակի պարբերաշրջան, որն ընդգրկում է շարժուն գոտիներում տեկտ. և մագմայական ակտիվության փոխկապակցված և ուղղորդված արտահայտումը՝ երկրասինկլինալի սաղմնավորումից մինչև նրա փոխարկումը ծալքավոր մարզի, ընդհուպ մինչև նրա վերջնական կոնսոլիդացումը և տեկտ. ու մագմայական գործընթացների ավարտը: Ծալքավորության դարակարգերին համապատասխանաբար առանձնացվում են օր.՝ բայկալյան, կալեդոնյան, հերցինյան, կիմերյան, ալպյան Ց. ց-եր, որոնք սովորաբար ստորաբաժանվում են 3-ից 5 փուլերի: Հետազոտողների մեծ մասը տարբերում է Ց. ց-ի զարգացման բուն երկրասինկլինալային, լեռնագոյացման և հետլեռնագոյացման փուլեր, որոնց ընթացքում համապատասխանաբար զարգանում է իմիցիալ, լեռնագոյացման և հետլեռնագոյացման մագմայականություն, որում ուղղորդված կերպով հիմքային մագման սկզբում հերթափոխվում է թթու, այնուհետև՝ զանազան թթու, միջին և հիմքային մագմաներով: Ց. ց-ի մասին պատկերացումը առաջին անգամ ձևավորել է Հ. Շտիլեն (1940):

**Ц-17. ЦИКЛ ЭРОЗИИ – ՈՂՈՂԱՄԱՇՄԱՆ (ԵՐՈՁԻԱՅԻ) ՑԻԿԼ, EROSION CYCLE**, երկրակեղևի որևէ տեղամասի ռելիեֆի հաջորդական փոփոխության ընթացք՝ սկսած համաշխարհային օվկիանոսի մակարդակից վեր տեկտ. բարձրացման փուլից, դրան հետևող լերկացմամբ, որն ընթանում է որևէ արտածին գործոնի գերակշռող



ազդեցության տակ, և վերջապես ռելիեֆի ցածրացմամբ, հարթեցմամբ ու ելակետայինին մոտ մակարդակի համահարթեցման առաջացմամբ: Կախված կլիմայական պայմաններից և լեռկացման առաջատար գործոնից՝ տարբերում են «բնականոն» (ջրաողողամաշման), սառցային, չորային (եոլյան), ծովային (ափային), կարստային և այլ ցիկլեր:

**Ц-18. ЦИКЛИЧНОСТЬ – ՑԻԿԼԱՅՆՈՒԹՅՈՒՆ, CYCLIC RECURRENCE**, ցիկլի առկայություն, ցիկլային գործընթացի հատկություն, որն իրենից ներկայացնում է ինչ-որ երևույթների օրինաչափ շարք: Այդ շարքը (ցիկլը) երկրաբանությունում չպետք է պատրադիր կրկնվի և հանգեցնի ելակետային դիրքի: Երկրբ. գործընթացների Ց. կապված է բնության զարգացման հետ, իրադրությունների առաջընթաց ընթացքի հետ, որոնք արտահայտվում են քիչ թե շատ որոշակիությամբ: Ց. առավել լավ արտահայտվում է ածխաբեր ստվարաշերտերում: Ց. ավելի լայն և ավելի ընդհանուր հասկացություն է, քան ռիթմիկությունը: Վերջինը ինչ-որ տարրերի շատ թե քիչ հավասարաչափ կրկնությունն է: Ըստ որոշ հետազոտողների՝ ռիթմեր պետք է կոչվեն փոքր ցիկլերը, ըստ որում՝ ռիթմերի ծագումը կապված է կլիմայի հետ, նրա տատանումների հետ, իսկ ցիկլերն ունեն տեկտ. բնույթ: Ունանք երկու տերմինը համարում են հոմանիշներ: Երբեմն Ց. են անվանում ցիկլերի կրկնությունը, բաց դրա համար կան այլ ավելի հարմար տերմիններ՝ պարբերականություն, ռիթմիկություն:

**Ц-19. ЦИНКОВАЯ ОБМАНКА – ՑԻՆՎԱԽԱՐՈՒԿ**, նույնն է՝ Сфалерит:

**Ц-20. ЦИНКОВЫЕ РУДЫ**, տե՛ս Свинцово-цинковые руды:

**Ц-21. ЦИННВАЛЬДИТ** (Ցինվալդ հնքվ-ի, գերմ. Zinnwaid, այժմ Ցինովեց, Cinovec, անունով, Չեխիա) – **ՑԻՆՎԱԼԴԻՏ, ZINNWALDITE**, միներալ, լիթումաերկաթային փայլար: Առաջացնում է թիթեղավոր բյուրեղներ, թերթավոր ագրեգատներ: Գույնը՝ մուգ մոխրագույն, բաց գորշավուն, գորշավուն-կանաչ: Կարծրությունը՝ 2.5-4: Մյուս հատկություններով նման է մուսկովիտին և լեպիդոլիթին: Հանդիպում է գլխ. գրեյզեններում: Լիթումի, երբեմն ռուբիդիումի հանքանյութ է:

**Ц-22. ЦИРК**, տե՛ս Кар:

**Ц-23. ЦИРКОН** (գերմ. Zirkan, պարսկ. զարհուն-ից – ոսկեգույն) – **ՑԻՐԿՈՆ, ZIRCON**, կղզային սիլիկատների ենթադասի միներալ,  $Zr[SiO_4]$ : Բյուրեղագիտական համակարգը տետրագոնային է: Առաջացնում է բյուրեղային ներփակումներ. հատիկավոր, կոլոմորֆ անջատումներ: Գույնը՝ տարբեր երանգի շագանակագույն, հայտնի են նաև անգույն, ոսկեգույն, դեղնավուն, նարնջագույն-կարմիր, հազվադեպ՝ կանաչ գույնի Ց-ներ: Փայլը՝ ալմաստի, կարծրությունը՝ 6.5: Ց. գրանիտների, սակավ տարբեր կազմի արտաժայթքային ապարների, ինչպես նաև գնեյսների, բյուրեղային թերթաքարերի, ցամաքային նստվածքային ապարների տարածված ակցեսորային միներալ է: Zr-ի ստացման հանքանյութ է: Օգտագործվում է ապարների բացարձակ հասակը կապարային մեթոդով որոշելու համար:

**Ц-24. ЦИРКУЛЯЦИЯ** (լատ. circulatio – շրջանապտույտ) – **ՇՐՋԱՊՏՈՒՅՑ, CIRCULATION**, ընդհանուր տերմին, որը նշանակում է օդային կամ ջրային զանգվածների տեղափոխություն մեծ մակերեսներում՝ հոսքի փակ կամ մասնակի փակ գծերով: Օր.՝ մթնոլորտի Շ., ջրի Շ. օվկիանոսներում, ծովերում և լճերում:

**Ц-25. ЦИСТОИДЕИ (Cystoidea) – ՑԻՍՏՈՒՂՆԵՐ, CYSTOIDS**, մահացած փշամորթների դաս, ունեցել են կրային ծակոտկեն կմախք՝ կազմված գնդանման թասիկից, ցողունից (երբեմն բացակայել է) և սննդի հավաքման օրգաններից (բրախիոլներից): Կպել են ծովի հատակին կամ ուղղակի պառկել են հատակի վրա: Գոյություն են ունեցել օրդովիկից մինչև միջին դևոն:

**Լ-26. ԼՕՈՅՈՒՏ** (անվանումը ի պատիվ սլովենյան գրող, գիտնական և միներալների կոլեկցիոներ Ս. Յոյսի, S. Zois, 1747-1819) – **ՑՈՒԶԻՏ, ZOISITE**, կղզային սիլիկատների ենթադասի ապարակազմիչ միներալ, քիմ. կազմը  $\text{Ca}_2\text{Al}_3[\text{SiO}_4][\text{Si}_2\text{O}_7](\text{OH})$ : Ըստ կազմի, կառուցվածքի, հատկությունների և առաջացման պայմանների մոտ է էպիդոտին: Տարբերվում է երկաթի բացակայությամբ կամ աննշան պարունակությամբ, բաց գունավորմամբ (մոխրագույն, կանաչավուն-մոխրագույն), ինչպես նաև շեղանկյունային բյուրեղագիտական համակարգով: Առաջացնում է խիտ, հոծ կամ մանրահատիկավոր ագրեգատներ: Կարծրությունը՝ 6: Ց-ի թափանցիկ բյուրեղային տարատեսակը՝ տանգանիտը, թանկարժեք քար է: Ց. առաջանում է փոխակերպային ապարներում կամ հպումամետասոմատիկական հնքվ-երում:

**Վ-1. ՎԱՐՈՒՏ** (Կալկուտայի հիմնադիր Ջ. Չարնոկի, J. Charnock, անունով) – **ՉԱՐՆՈՒՏ, CHARNOKITE**, սակավալկալիական գրանիտների ընտանիքի ապար: Բաղկացած է կալիումային դաշտային սպաթից, օլիգոկլազից, քվարցից, հիպերստենից: Պարունակում է պիրոպ, երբեմն բիոտիտ, եղջերախաբ, ակցեստրային միներալներ են՝ մագնետիտը, ապատիտը, ցիրկոնը: Գույնը՝ մուգ, սակավ բաց մոխրագույն՝ երկնագույն երանգով: Կառուցվածքը՝ գրանիտային, միջին և կոպտաբեկորավոր, երբեմն պորֆիրանման: Չ-ի ծագումը կապում են մագմայականության և գրանուլիթային փոխակերպության գործընթացների հետ: Մագմայական Չ-ները կազմում են շերտային, զմբթանման զանգվածներ՝ մի քանի տասնյակից մինչև հազարավոր կմ<sup>2</sup> մակերեսով:

**Վ-2. ՎԱՐՈՒՏ** (Չարա գետի անունով, Արմ. Սիբիր) – **ՉԱՐՈՒՏ, CHAROITE**, միներալ, K-ի, Na-ի, Ca-ի, Ba-ի, Mn-ի բարդ սիլիկատ: Հայտնաբերվել է 1977 թ-ին: Բյուրեղագիտական համակարգը ենթադրաբար մոնոկլինային է: Հազվագյուտ միներալ է: Հանդիպում է հոծ նրբասեղնավոր, թելավոր, շառավղաճառագայթային ագրեգատների տեսքով: Գույնը՝ վարդագունա-բաց մանուշակագույն, կարծրությունը՝ 5.5: Ծագումը ջրաջերմային (հիդրոթերմալ) – մետասոմատիկական է: Ոսկերչական – արհեստագործական քար է:

**Վ-3. ՉԵՏՎԵՐՏԻՉՆԱՅԱ ԳԵՕԼՈԳԻՅԱ – ՉՈՐՐՈՐՂԱՎԱՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, QUATERNARY GEOLOGY**, երկրաբանության բաժին, որն ուսումնասիրում է չորրորդական համակարգը (ժամանակաշրջանը): Չ. ե-յան դիտարկումը, որպես ինքնուրույն գիտաճյուղ, պայմանավորված է չորրորդական համակարգի նստվածքների առանձնահատկություններով, օգտագործվող մեթոդական ձևերի յուրահատկությամբ և նրա կողմից մշակվող պրոբլեմների համալիրի առանձնահատկությամբ: Չորրորդական դարաշրջանի պատմության վերականգման համար հարկավոր է նստվածքների շերտագրական ստորաբաժանումների ավելի մեծ մանրամասնում, քան ավելի հին համակարգերի համար: Չ. ե-յան համար առաջնակարգ մշանակություն ունեն երկրաձևաբանական ուսումնասիրությունները: Ցամաքային նստվածքներում առանձնացված ստորաբաժանումների կենսաշերտագրական հիմնավորման համար առաջատար տեղ են գրավում կաթնասունները, պալիոկոլոգիական, կարպոլոգիական, դիատոմային վերլուծությունները: Չորրորդական համակարգի նստվածքների մասնատման համար էական մշանակություն ունեն կլիմայաշերտագրական մեթոդները, քանի որ չորրորդական ժամանակաշրջանի

բնորոշ առանձնահատկությունը կլիմայի բազմակի համամոլորակային տատանումներն են: Ծովերի ու օվկիանոսների նստվածքների համար, բացի փափկամարմինների ու միկրոօրգանիզմների ուսումնասիրությունը, կարևոր է նաև ջրի հնաքերմաստիճանի որոշումը՝ թթվածնահիզոտոպային մեթոդի օգնությամբ: Օգտագործվում են նաև նստվածքների հասակի որոշման ռադիոգիտական որոշումները և հնամագնիսական մեթոդները: Չորրորդական ժամանակաշրջանը մարդու, մարդկային հասարակության ձևավորման և զարգացման ժամանակն է, որի վաղ փուլերի մասին դատում են ըստ նյութական մշակութային մնացորդների, որոնք օգտագործվում են նաև չորրորդականի շերտագրությունում:

**Կ-4. ЧЕТВЕРТИЧНАЯ СИСТЕМА (ПЕРИОД), КВАРТЕР, АНТРОПОГЕНОВАЯ СИСТЕМА (ПЕРИОД), АНТРОПОГЕН – ՉՈՐՐՈՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ), ԲԿԱՐՏԵՐ, ԱՆՏՐՈՊՈԳԵՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ), ԱՆՏՐՈՊՈԳԵՆ, QUARTERNARY SYSTEM, ANTHROPOGENE,** կայնոզոյան էրատեմայի վերջին համակարգ, համապատասխանում է Երկրի երկրք. պատմության կայնոզոյան դարաշրջանի վերջին ժամանակաշրջանին, որը շարունակվում է մինչև այժմ, շերտագրական սանդղակում հաջորդում է նեոգենյան համակարգին (ժամանակաշրջանին): Չ. Ժ-ի սկիզբը Միջագգ. շերտագրական հանձնաժողովի կողմից ընդունված է 1.65, իսկ ռուս. ՄՇԿ-ի կողմից՝ 1.8 մլն. տ.: 1825-ին ֆրանս. գիտնական Ժ. Դենուայեն առաջարկեց հետերրոդական նստվածքները առանձնացնել հատուկ չորրորդական համակարգում, Չ. Լայելը 1830-ին առաջարկեց «պլեյստոցեն» տերմինը՝ նշելու համար պլիոցենից երիտասարդ բոլոր նստվածքները: 1922-ին Ա. Պավլովը առաջարկեց «Չ. Ժ.» տերմինի անվանումը փոխարինել «անտրոպոգեն» կամ «անտրոպոգենյան ժամանակաշրջան» տերմիններով, քանի որ այդ ժամանակաշրջանի գլխավոր իրադրությունը մարդու հանդես գալն ու զարգացումն է: 1963-ին ԽՍՀՄ-ում «չորրորդական» ու «անտրոպոգենյան» անվանումները ընդունվեցին որպես համարժեքներ, իսկ 1998-ին ՌԴ-ում ՄՇԿ առաջարկեց Չ. հ-ի կրճատված քվարտեր անվանումը:

1963-ին ԽՍՀՄ-ի ՄՇԿ-ի որոշմամբ Չ. հ-ի ծավալում առանձնացվեցին 4 հիմնական ստորաբաժանումներ՝ ստորին- միջին- վերինչորրորդական և ժամանակակից: Տաքսոնոմիական տարակարգում դրանք հարկից ու զոնայից ցածր են: Ձոնայից ցածր անջատվեցին հատված (раздел), օղակ (звено), աստիճան (ступень): Ռեզիոնալ շերտագրական սանդղակներում, որպես հիմնական ստորաբաժանում, առանձնացվում են հորիզոններ, որոնք սովորաբար համապատասխանում են ընդհանուր սանդղակի աստիճաններին (կլիմատոլիթներին): 1.65 (1.80)-0.8 մլն. տ. միջակայքը անջատվում է որպես ինքնուրույն հատված՝ էոպլեյստոցեն (իր երկու օղակներով՝ ստորին և վերին և վերագրվում է ստորին պլեյստոցենին): 0.8-0.01 մլն. տ. միջակայքը առանձնացվում է որպես նեոպլեյստոցեն իր երեք օղակներով՝ ստորին (0.8-0.42 մլն. տ.), միջին (0.42-0.1 մլն. տ.), վերին (0.1-0.01 մլն. տ.): Չ. հ-ի վերին հատվածը հոլոցենն է (0.01 մլն. տ. – այժմ): Չ. Ժ-ի ընթացքում Երկրի մակերևույթը, բուսական և կենդանական աշխարհը ընդունեցին ժամանակակից տեսքը: Բնորոշ է խոշոր մայրցամաքային սառցապատումների զարգացումը (հատկապես մեծ չափերով Հս. կիսագնդում): Չ. Ժ-ում տեղի ունեցան երկրակեղևի հզոր տեկտ. շարժումներ, որոնք հատկապես ուժեղ արտահայտվեցին Եվրասիայի ալպյան ծալքավորության զոտում, Խաղաղ օվկիանոսի եզրերի երիտասարդ ծալքավոր կառուցվածքներում և Կենտրոնական ու Միջին

Ասիայի լեռնային համակարգերում: Ժամանակակից ցամաքի մակերևույթին տիրապետում են տարբեր ծագումնաբանական տիպերի ցամաքային նստվածքները (սառցադաշտային, լյոսային, ալյուվիալ, պրոլյուվիալ, լճային, հողմային և այլն): Չ. հ-ի առանձնահատկությունները հանգեցրին գիտության ինքնուրույն ճյուղի՝ չորրորդական երկրաբանության առանձնացմանը: Այս ժամանակաշրջանի հետ է կապված մարդու ծագման և կազմավորման պատմությունը, տե՛ս նաև Четвертичная геология:

**4-5. ЧЕШУЙЧАТАЯ СТРУКТУРА (ТЕКТ.) – ԹԵՓՈՒԿԱՁԵԿ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ (ՏԵԿՏ.), IMBRICATE STRUCTURE, SCHUPPEN STRUCTURE,** տեկտ. խախտումների ձև, որն առաջանում է ապարների զանգվածների (թեփուկների) տեղաշարժման իրար մոտեցած, շատ թե քիչ զուգահեռ վրաշարժերի համակարգի տեսքով: Բնորոշ է ծալքավոր մարզերին: Հայտնաբերված է Հս-Արմ. Եվրոպայի կալեդոնիտներում, Ապալաչներում, Մեծ Կովկասում:

**4-6. ЧЛЕНИСТОНОГИЕ (Arthropoda) – ՀԱՏՎԱԾՈՏԱՆԻՆԵՐ, ARTHROPODS,** բազմաբջիջ կենդանիների տիպ: Ամենամեծաքանակն է, ընդգրկում է ավելի քան 1.5 մլն. տեսակ: Մարմինը մասնատված է գլխի, կրծքի և փորիկի, ծածկված է քիտինային զրահով, վերջավորությունները նույնպես հատվածավոր են: Լավ զարգացած են մարսողական, նյարդային, շնչառական, արյունատար օրգանների համակարգերը, աչքերը պարզ են և բարդ: Բնակվում են ցամաքում, ծովերում և ներքին ջրավազաններում: Ամենատարածված դասերն են՝ սարդակերպերը, խեցգազետնակերպերը, բազմոտանիները, միջատները: Բրածո ձևերից են՝ տրիլոբիտները, օստրակոդները, խեցգետնակարիճները:

## III

- Մ-1. ШАМОЗИТ** (առաջին գտածոյի վայրի՝ Շամոզոն, Chamoson, տեղանքի անունով. Շվեյց.) – **ՇԱՄՈՉԻՏ, CHAMOSITE**, քլորիտների ընտանիքի միներալ: Լայն իմաստով «Շ.» տերմինը ընդգրկում է մագնեզիումաերկաթային քլորիտների անընդմեջ իզոմորֆ շարքի երկաթային անդամները՝ կլինոքլոր – Շ: Շ. հայտնի է երկու բազմաձև ձևափոխումներով՝ մոնոկլինային (բուն Շ.) և շեղանկյունային (ավելի հազվադեպ՝ օրթոչամոզիտ): Սովորաբար հանդիպում է նրբաթեփուկավոր ագրեգատներով, համակենտրոն-պատենավոր օլիթներով, հոծ գաղտնաբյուրեղային և հողանման զանգվածներով: Գունը՝ մոխրականաչ, ծիթապտղի կանաչից մինչև սև: Կարծրությունը՝ 2.5-3: Երբեմն մեծ կուտակներով առաջանում է երկաթի օլիթային նստվածքային հնքվ-երում: Մի շարք ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվ-երի բնորոշ երակային միներալ է: Շ-ի խոշոր կուտակները երկաթի հանքանյութ են:
- Մ-2. ШАРНИР СКЛАДКИ – ԾԱԼՔԻ ՀՈՂԱՎԱՊ, HINGE OF FOLD, APEX OF FOLD**, ծալքի առանցքային մակերևույթի հատման գիծը ծալք կազմող ցանկացած շերտի մակերևույթի հետ: Հողակապ են անվանում նաև ծալքի առանցքային մակերևույթի հատման գիծը երկրի մակերևույթի կամ հորիզոնական հարթության հետ:
- Մ-3. ШАРОВАЯ ЛАВА**, տե՛ս Пиллоу-лава:
- Մ-4. ШАРОВАЯ ОТДЕЛЬНОСТЬ, СФЕРОИДАЛЬНАЯ ОТДЕЛЬНОСТЬ – ԳՆՂԱՉԵՎ ԱՆՋԱՏՈՒԹՅՈՒՆ, SPHEROIDAL JOINTING, GLOBULAR JOINTING, SPHEROIDAL PARTING**, որոշ ապարների (սպիլիտներ և այլն) անջատություն, որը հաճախ ունի համակենտրոն – պատենավոր կազմություն:
- Մ-5. ШАРОВАЯ СТРУКТУРА, СФЕРОИДАЛЬНАЯ СТРУКТУРА – ԳՆՂԱՉԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, BALL STRUCTURE, SPHEROIDAL STRUCTURE**, բնորոշվում է ապարի բաղադրիչ մասերի կամ նրա ագրեգատների գնդաձևությամբ: Այս տիպին պատկանում են օլիթային, սֆերոլիթային և այլ կառուցվածքները (կազմվածքները), ինչպես նաև որոշ հրաբխային (գնդաձև, բարձիկավոր) լավաները:
- Մ-6. ШАРЬЯЖ**, տե՛ս Тектонический покров:
- Մ-7. ШАХТА** (գերմ. Schacht) – **ՀԱՆՔԱՓՈՂ, ՀԱՆՔԱՀՈՐ, ՀԱՆՔԱՐԱՆ, MINE, PIT, COLLIERY**, 1) հանքափող՝ ուղղանկյուն կամ կլորավուն մեծ կտրվածքով ուղղաձիգ լեռնային փորվածք, որը ծառայում է հանքափորների, հանքաքարերի, շինանյութերի ու սարքավորումների տեղափոխման, ինչպես նաև օդափոխման ու ջրահեռացման համար, 2) հանքահոր, հանքաքարի ստր. փորվածքների համախումբ, 3) հանքարան, հանքային ձեռնարկության արտադրատնտեսական ինքնուրույն միավոր, որն օգտ. հնձ. արդյունահանում է ստր. մշակմամբ: Հ. բաղկացած է վերգետնյա կառուցվածքներից և ստր. փորվածքներից:
- Մ-8. ШЕЕЛИТ** (շվեդ. քիմիկոս Կ. Վ. Շեելի, K. W. Scheele, 1742-1786, անունով) – **ՇԵԵԼԻԹ, SCHEELITE**, վոլֆրամատների դասի միներալ,  $Ca[WO_4]$ : Բյուրեղագի-

տական համակարգը տեսորագոնային է: Բյուրեղները բրգածն են, համարյա հավասարաչափ, հազվադեպ՝ թերթավոր, առաջացնում են մի շարք կրկնաբյուրեղներ, հոծ հատիկային ագրեգատներ: Գույնը՝ անգույն, սպիտակ, բաց դեղինից մինչև դարչնագույն, կանաչավուն, մոխրագույն: Փայլը՝ ապակու մինչև ավաստի: Կարծրությունը՝ 3-5: Հանդիպում է սկառնային, բարձր- միջին- ցածրաջերմաստիճանային ջրաջերմային (հիդրոթերմալ) հնքվ-երում և պեզմատիտներում: Վոլֆրամի կարևոր հանքանյութ է:

**Մ-9. ШЕЛЛЬ** (Շել, Chelles, ք-ի անունով, Փարիզի մոտ) – **ՇԵԼ, CHELLEAN**, վաղ հին քարի դարի հնագիտական մշակույթ (հին աշելյան մշակույթ, արբևիյան մշակույթ) Եվրոպայում, Աֆրիկայում, Հր-Արմ. և Հր. Ասիայում, նաև Հայաստանում: Հաջորդել է մինչաշելյան մշակույթին: Ունի 1800 հազ. -300 հազ. տարվա վաղեմություն: Շ-ին բնորոշ են ձեռքի պարզունակ գործիքները, որոնք ծառայել են կտրելու, ծակելու, հարվածելու, փորելու համար: Շ-ի մշակույթի կրողներ եղել են արխանտրոպոսները (պիտեկանտրոպոս, սինանտրոպոս և այլն): Հայաստանում Շ-ի գործիքներ հայտնաբերվել են 1943-ին Արտեմի (Արտիմ) լեռան Սատանի դար կոչվող բլրի վրա:

**Մ-10. ШЕЛЬФ** (անգլ. shelf), **МАТЕРИКОВАЯ ОТМЕЛЬ** – **ՇԵԼՖ, ՍԱՅՐՑԱՍԱՔԱՅԻՆ ԾԱՆԾԱՂՈՒՑ, SHELF**, մայր ցամաքների եզրային ստորջրյա հարթավայրային, փոփոխական լայնության (մի քանի կմ-ից մինչև 1200-1500 կմ) գոտի, որը հարակցում է ցամաքի ափերին և բնորոշվում է նրա հետ ընդհանուր երկրբ. կառուցվածքով: Եզերքը կարող է տեղաբաշխված լինել տարբեր խորություններում՝ 50-100 մ-ից մինչև 200 մ, իսկ որոշ դեպքերում՝ 1500-2000 մ (օր.՝ Օխոտի ծովի Հարավկուրիլյան գոգվածքում): Շ-ի ընդհանուր ընդունված դասակարգում չկա: Տարբերում են մայրցամաքային և կղզային Շ.: Բացի դա, առանձնացնում են մայրցամաքային ակտիվ և պասիվ ծայրամասերի Շ.: Ակտիվ ծայրամասերի Շ. տարբերվում է մեծ երկրաշարժականությամբ, բարձրացված ջերմային հոսքով, ուժեղ մագնիսական անկանոնությամբ, հրաբխայնության արտահայտությամբ: Ունանք Շ. համարում են ամբողջովին մայրցամաքային կառուցվածք և ցամաքի ջրածածկված մաս, ուրիշները՝ օվկիանոսի մաս, որը զարգացել է օվկիանոսային կառուցվածքների ներագրեցության տակ: Կա կարծիք Շ-ի անցողիկ (միջանկյալ), բայց ինքնուրույն ձևակառուցվածք լինելու մասին: Շ-ում նստվածքային ապարները ներկայացված են յուրայի և ավելի երիտասարդ ցամաքածին, կարբոնատային, երբեմն՝ աղաբեր, ցամաքային ու ծանծաղուտածովային (պասիվ ծայրամասեր), հրաբխածին, ծովային և ծանծաղուտածովային (ակտիվ ծայրամասեր) նստվածքների հզոր ստվարաշերտերով: Շ-ում հայտնի են տարբեր օգտ. հնժ-ների հնքվ-եր: Ամենամեծ նշանակություն ունեն նավթն ու գազը, կարևոր են նաև ցրոնային հնքվ-երը, որոնք հանդիսանում են տիտանի, ցիրկոնիումի, անագի, քրոմի, ալմաստների, ոսկու, պլատինի աղբյուր: Բացահայտված են ֆոսֆորիտների և շինանյութերի մեծ պաշարներ:

**Մ-11. ШКАЛА АБСОЛЮТНОЙ ГЕОХРОНОЛОГИИ** – **ԲԱՅԱՐՉԱԿ ԵՐԿՐԱԺԱՍԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԱՆԴՂԱԿ, SCALE OF ABSOLUTE GEOCHRONOLOGY**, երկրբ. զարգացման սանդղակ, որում երկրբ. պատմության հիմնական սահմանները արտահատված են ժամանակի աստղագիտական միավորներով (տարիներով): Առաջին անգամ կազմել է Հոլմսը 1947-ին՝ կապարային մեթոդով ստացված արժեքների հիման վրա: Հետագայում այն անընդհատ ենթարկվել է ճշտման ու լրացման և հաստատման Միջազգային երկրաժամանակագրական հանձնաժողովում: Սակայն մինչև այժմ գոյություն ունեն անորոշության զգալի միջակայքեր Բ. Ե. ս-ի համարյա բոլոր ստորաբաժանումների սահմաններում:

Էոն	Դարաշրջան	Ժամանակաշրջան	Սկիզբը մլն. տ. առաջ	Տևողությունը մլն. տ.
Ֆաներոզոյան	Կայնոզոյան KZ	Չորրորդական Q	1.8	1.8
		Նեոգենի N	24	22
		Պալեոգենի P	65	42
	Մեզոզոյան MZ	Կավճի K	142	77
		Յուրայի J	200	58
		Տրիասի T	257	51
	Պալեոզոյան PZ	Պերմի P	296	45
		Քարածխային C	358	62
		Դևոնի D	416	58
		Սիլուրի S	443	27
Օրդովիկի O		495	52	
		Քեմբրիի Շ	545	50
Կրիպտոզոյան (մինչքեմբրի)	Պրոտերոզոյան PR	Ուշ	1650	1100
		Վաղ	2600	900
	Արխեյան AR		>3500	

**Մ-12. ՄԿԱԼԱ ԶԵՄԼԵՏՐՅԱՑԵՆԻՅ – ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐԻ ՍԱՆԴՈՎՎ, SCALE OF EARTHQUAKE INTENSITIES,** օգտագործվում է Երկրաշարժերի ուժգնությունը

գնահատելու համար: Երկրաշարժի ուժգնության սանդղակներն առաջացել են ավելի վաղ, քան նրա առաջին զործիքային գրանցումները՝ սեյսմագրերը: Սկսած 18-րդ դարից, երևան եկան երկրաշարժի ուժի գնահատման մոտ 50 զանազան սանդղակներ, որոնք հիմնվում էին մարդկանց կողմից երկրաշարժի հետևանքների ընկալումների, շրջապատի ռելիեֆի փոփոխությունների և շենքերի ու կառուցվածքների վնասվածությունների ու ավերվածությունների աստիճանի վրա: Մի շարք երկրներում, որպես երկրաշարժի ուժգնության միավոր, ընդունվում է բալլը (Ֆրանս. ball – գնդակ բառից), ներկայումս տարբեր երկրներում գործում են ուժգնության տարբեր սանդղակներ: Դրանցից ամենատարածվածները երեքն են: 1) Մերկալլի բարեփոխված MM սանդղակը մշակվել և ընդունվել է 1931-ին, լայն կիրառություն է գտել ՅՍ. Ամերիկայում, բաղկացած է 12 միավորից: 2) Ճապոնական JMM սանդղակը ընդունված է 1949-ին, բաղկացած է 8 միավորից: 3) Սեյսմիկ ուժգնության միջազգային MSK-64 սանդղակն ընդունված է 1964-ին, մեծ տարածում ունի Արլ. Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ երկրներում: Բաղկացած է 12 միավորից: Երկրաշարժի չափումը, ըստ իր էներգիայի սեյսմիկական հուզումների դասակարգման, կարևոր է, սակայն այն բավականաչափ հարմար չէ, միշտ չի հաջողվում հեշտությամբ հաշվել երկրաշարժի էներգիան, և քանի որ դրա համար օգտվում են ամենատարբեր մեթոդներից, ստացված արդյունքները միշտ չէ որ համադրելի են լինում: Ռիխտերը և Գուտենբերգը 1935-ին փոխանակ երկրաշարժը գնահատելու ըստ նրա էներգիայի, նրանք այն բնութագրեցին ուժաստիճանի (մագնիտուդի, M) միջոցով, որը երկրաշարժի ժամանակ գետնի մասնիկների տե-

դափոխության մեծության միջոցով երկրաշարժի ուժի գնահատման չափն է: Այն կարելի է որոշել և՛ տեսական դրույթների հիման վրա, և՛ սեյսմագրերի տվյալներով: Մագնիտուդը հանդիսանում է էներգիայի ֆունկցիան (քանի որ այն հարաբերական է նրա լոգարիթմին) և միևնույն ժամանակ՝ ուժգնության ֆունկցիան (քանի որ մագնիտուդը հանդիսանում է երկրաշարժական ալիքների լայնության լոգարիթմը՝ վերնակենտրոնից 100 կմ հեռավորության վրա): Ըստ Ռիխտերի սանդղակի (1935)՝ մագնիտուդը նշվում է 0-ից մինչև 9 թվանշանով Ամենաուժեղ երկրաշարժը, որը գրանցվել է Երկրի վրա մինչև այսօր, ունեցել է  $M=8.9$  մագնիտուդ, տե՛ս նաև *Магнитуда землетрясения*:

**Մ-13. ՄԿԱԼԱ ՄՕՕՏԱ – ՄՈՂՍԻ ՍԱՆԴՂԱԿ, MOHS SCALE**, Մոհսի կողմից առաջարկված միներալների որոշակի հավաքածու՝ հաջորդաբար աճող կարծրությանը, տե՛ս *Минералогическая шкала твердости*:

**Մ-14. ՄԿԱԼԱ ԿՐԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆԴՂԱԿ, SCALE OF HARDNESS**, միներալների կարծրության որոշման սանդղակ: Միներալների մեծ մասի բյուրեղների համար կարծրությունը տարբեր ուղղություններով նույնը չէ: Բացի դա, տարբերում են քերծվածքային, խցկման և հղկման կարծրություն: Կարծրության ճիշտ որոշումը կատարվում է հատուկ սարքերի միջոցով, տե՛ս *Минералогическая шкала твердости*:

**Մ-15. ՄՍԼԻՔ** (գերմ. Schlier – ցեխ, մերգել) – **ՇԼԻՌ, SCHLIEREN**, մագմայական ապարներում միներալների կուտակ, որը նրա մնացած զանգվածից տարբերվում է կազմով, կառուցվածքով կամ բաղադրիչ միներալների փոխհարաբերությամբ: Շ-ների և հիմնական ապարների միջև անցումները սովորաբար աստիճանական են: Շ-ների ձևավորումը կարող է պայմանավորված լինել մագմայական հալույթի նախասկզբնական անհամասեռությամբ, ներդրման ժամանակ երկու մագմաների խառնմամբ կամ ներդրման ընթացքում ներփակող ապարների ներամփոփվածքների ուժգին մշակմամբ:

**Մ-16. ՄՍԼԻՓ** (գերմ. Schliff, schleifen-ից – սրել, հեսանել, ողորկել) – **ՅՂԿՈՒԿ (ՇԼԻՖ), MICROSECTION, THIN SECTION, THIN SLIDE**, ապարի կամ միներալի գերբարակ (սովորաբար 0.02-0.03 մմ, իսկ մի շարք դեպքերում՝ ավելի բարակ հաստությամբ) կտրվածք, որը նախատեսված է նրա ուսումնասիրության համար՝ մանրադիտակի տակ անցողական, սովորաբար բևեռացած լույսի ճառագայթներում: Միներալների մեծ մասը Յ-ում դառնում են թափանցիկ, նրանցում օպտիկական հատկությունները օգնում են ճանաչելու միներալը, իսկ մի շարք դեպքերում նաև՝ որոշելու նրա մոտավոր կազմը: Ապարների ու միներալների ուսումնասիրությունը Յ-ներում լայնորեն օգտագործվում է ապարագրությունում և միներալաբանությունում: Անցողական լույսում ոչ թափանցիկ ապարների ու միներալների համար պատրաստվում են երեսահղկուկներ (անշլիֆներ), որոնք հղկված ու ողորկված են միայն մեկ կողմից: Այդպիսի պատրաստուկներում միներալները մանրադիտակի տակ ուսումնասիրվում են անդրադարձող լույսով հատուկ սարքի՝ օպակ-իլյումինատորի օգնությամբ:

**Մ-17. ՄՍԼԻԽ** (գերմ. Schlich) – **ՍՂԿՎԱԾՔ (ՅԱՆՔԱՍԻԿ, ՍՂԿԱՅԱՆՔ), HEAVY CONCENTRATE**, ծանր միներալների խտահանք (հարստանյութ), որը մնում է բնական փուխր նստվածքները և ջարդոտված ապարները ջրում լվանալուց հետո: Ս-ի կազմի մեջ մտնում են այն միներալները, որոնց խտությունը 3000 կգ/մ<sup>3</sup>-ից բարձր է և կայուն են ֆիզ. և քիմ. հողմահարման նկատմամբ: Ս-ի ստացումը ընկած է ցրոնային հնքվ-երի՝ ալմաստի, ոսկու, պլատինի, անագի, վոլֆրամի, սնդիկի, տիտանի, ցիրկոնիումի, տանտալի, ոսկերչական հումքի, հղկանյութերի, ֆլուորիտի,



բարիտի և այլնի որոնողական ամենահին մեթոդներից մեկի՝ շլիխայի տարրալուծության հիմքում: Այուրվիալ, դեյուրվիալ, այուրվիալ-էյուրվիալ և մերձափնյա ծովային նստվածքներում որոնման շլիխային մեթոդը ներառում է հետևյալ գործույթները՝ փորձանմուշների վերցնում, դրանց մշակում, Ա-ի տարրալուծում, արգասիքների գրաֆիկական ձևավորում: Ա. կազմող միներալների արատորոշումը հեշտացնելու համար այն նախապես բաժանվում է չափամասերի՝ մագնիսական, էլեկտրամագնիսական, ծանր, թեթև: Չափամասերում Ա-ի տարրալուծությունը (միներալների որոշումը և նկարագրությունը ըստ չափամասերի) կատարվում է երկակնյա մանրադիտակի օգնությամբ: Առանձին չափամասերը ենթարկվում են լուսապատկերային (սպեկտրալ) և այլ տեսակի տարրալուծությունների: Ա-ային որոնումների արդյունքների գրաֆիկական ձևավորումը ներառում է Ա-ային քարտեզի կազմումը: Ա-ում քիմ. տարրերի որոշումը նրա առանձին չափամասերում, միներալներում (սղկվածքաերկրաքիմ. մեթոդ) ընդլայնում է Ա-ային որոնումների հեռանկարային հնարավորությունները:

**Մ-18. ШЛИХОВОЙ АНАЛИЗ – ՍԴԿՎԱԾՔԱՅԻՆ (ՍԴԿԱՅԱՆՔԱՅԻՆ) ՏԱՐՐԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, HEAVY CONCENTRATE ANALYSIS**, օգտ. հնժ-ների որոնման ու գնահատման Ա. տ-յան ավարտումը: Ա. տ. ուսումնասիրում է փուխր նստվածքների կամ սղկված ապարների լվացումից մնացած ծանր մնացուկը՝ դա չափամասերի, դասերի (ըստ խոշորության ու ֆիզ. հատկությունների) բաժանելու միջոցով՝ միներալների հետագա արատորոշմամբ, քանակական փոխհարաբերության բացահայտմամբ և որակական բնութագրմամբ: Ընդհանրապես Ա. տ. ընդգրկում է սղկվածքի նախապատրաստումը և ըստ էության միներալային կազմի ուսումնասիրությունը:

**Մ-19. ШЛЯПА (в геологии) – ԲՈՒՈՐԱԳԼԵՍԱՐԿ (ԵՐԿՐԱՔԱՆՈՒՅՈՒՆՈՒՄ), MINERAL CAP**, օգտ. հնժ-ների մարմնի վերին մաս, որի միներալային նյութը Երկրի մակերևույթի մոտ փոխակերպվել է քայքայման (օքսիդացման, տեղակալման) գործընթացների հետևանքով: Օր.՝ երկաթապարունակ սուլֆիդային հանքանյութերի քայքայման դեպքում ձևավորվում է երկաթի Բ.:

**Մ-20. ШОВ ТЕКТОНИЧЕСКИЙ – ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԿԱՐ, TECTONIC SUTURE**, գծային ձգված զոնա, որը հանդիսանում է խորքային բեկվածքների մակերևութային արտահայտությունը: Սովորաբար գետեղված է խոշոր կառուցվածքային տարրերի (օր.՝ անտիկլինորիումների և սինկլինորիումների, միջադիր զանգվածների և նրանց եզրապատող ծալքավոր զոնաների) միջև: Երբեմն Տ. կ. անվանում են միմյանց մոտիկացված շատ թե քիչ զուգահեռ խորքային բեկվածքների բարդ զոնաները: Տ. կ-ի բնորոշ գիծը համեմատաբար հեշտ թափանցելիությունն է մագմայական հալույթի համար:

**Մ-21. ШПИТЕЛЬ (իտալ. spinella, լատ. spia-ից – փուշ, ըստ բյուրեղների ձևի) – ՇՊԻՆԵԼ, SPINEL**, բարդ օքսիդների ենթադասի միներալ,  $MgAl_2O_4$ : Բյուրեղագիտական համակարգը խորանարդային է: Առաջացնում է օկտաէդրային բյուրեղներ: Գույնը՝ տարբեր երանգների կարմիր, կանաչ, կապույտ, սև, անգույն: Կարծրությունը՝ 7.5-8: Շ. զոյանում է բարձր ջերմաստիճանային պայմաններում՝ հպումային և ռեգիոնալ փոխակերպության գործընթացներում: Հանդիպում է որպես ակցեսորային միներալ հիմքային, հազվադեպ՝ թթու ապարներում, հաճախ՝ մագնեզիումային սկառներում, կալցիֆիրներում, ամֆիբոլիթներում, գնեյսներում: Կարմիր և կապտավուն Շ. (ագնիվ Շ.) թանկարժեք քար է:

**Մ-22. ШТОК (գերմ. Stock, բառ. ձեռնափայտ, փող) – ԱՊԱՐԱՉԱՆԳՎԱԾ, ՀԱՆՔԱՉԱՆԳՎԱԾ, STOCK, BOSS**, ապարի կամ օգտ. հնժ-յի անկանոն գլանաձև կամ իզոմետրական ձևի խոշոր զանգված՝ տեղադրված այլ ապարների մեջ: Ընդլայ-

նական կտրվածքը կլոր կամ էլիպսաձև է: Չափերը՝ մի քանի տասնյակ մ-ից մինչև մի քանի կմ: Սովորաբար փոքր թեքությամբ ընկղմված են դեպի խորքը: Լինում են մագնայական (գրանիտներ, դիորիտներ, սիենիտներ և այլն), տեկտոնական (քարաղ և այլն), ջրաջերմային (երկաթի, պղնձի, կապարի և այլ հանքաքարեր):

**Մ-23. ШТОКВЕРК** (գերմ. Stockwerk) – **ՇՏՈՎՎԵՐԿ, STOCKWORK**, ապարների մեջ տարբեր ուղղություններով տարածվող, հանքերակների խիտ ցանցից բաղկացած անձև մարմին: Հանքերակներում պարփակված հանքային միներալների ներփակվածքները սովորաբար գտնվում են նաև հանքերակներով հատված ապարներում:

**Մ-24. ШТОЛЬНЯ** (գերմ. Stollen) – **ՉԱՆՔՈՒՂԻ (ՇՏՈՆԼՅԱ), ADIT**, Երկրի մակերևութի վրա անմիջականորեն ելք ունեցող ստորգետնյա հորիզոնական բացող փորվածք, որը նախատեսված է ստորգետնյա աշխատանքներն սպասարկելու համար: Որոշ բառարաններում այն անվանվում է բովանցք, որը անհաջող է:

**Մ-25. ШТОЛЬНЯ РАЗВЕДОЧНАЯ – ՉԵՏԱՆՈՒԶԱՎԱՆ ՉԱՆՔՈՒՂԻ, PROSPECTING ADIT**, հնքվ-ի մանրամասն հետախուզման նպատակով անցակցված հանքուղի:

**Մ-26. ШТРЕК** (գերմ. Stracke, բառ. – հեռավորություն) – **ՉԱՆՔԱՄԻՉԱՆՑՔ (ՇՏՐԵԿ), GALLERY, ENTRY, ROADWAY**, սակավաթեք, թեք ու զառիթափ անկման հնքվ-եր մշակելիս հանքամարմնի տարածման, իսկ հորիզոնական հնքվ-եր մշակելիս՝ ցանկացած ուղղությամբ անցկացրած և Երկրի մակերևութի վրա անմիջականորեն ելք չունեցող ստորգետնյա հորիզոնական հանքափորվածք:

**Մ-27. ШТРИХОВАННЫЕ БАЛУНЫ – ՍՏՎԵՐԱԳԾՎԱԾ ԳԼԱՔԱՐԵՐ, STRIATED BOULDERS, SCRATCHED BOULDERS**, սովերագծեր, քերծվածքներ ունեցող ողողարկված (փայլեցված) գլաքարեր, որոնք առաջանում են սառցադաշտի տեղափոխման ընթացքում՝ սառցադաշտի ստորին մասի բեկորային մասնիկների քերամաշման, հազվադեպ՝ սառցադաշտի ժայռային մահճի շփման հետևանքով: Հանդիպում են սառցաբերուկային (մորենային) նստվածքներում:

**Մ-28. ШТУФ** (գերմ. Stufe) – **ՉԱՆՔԱԿՏՈՐ, ԱՊԱՐԱԿՏՈՐ, LUMP OF COAL, LUMP OF ORE**, ապարի, հանքաքարի կամ ածուխի ոչ մեծ չափերով (մոտավորապես 10×6×5 սմ) կտոր:

**Մ-29. ШУНГИТ** (Շունգա գյուղի անունով, Կարելիա) – **ՇՈՒՆԳԻՏ, SCHUNGITE**, սև փայլուն փոխակերպային ապար (թերթաքարեր, ալկրոլիթներ), որը պարունակում է գաղտնաբյուրեղային ածխածին (բուն Շ. ապակիաածխածնի բնական նմանակն է): Շ-ի առաջացումը կապված է կոքսացման բնական գործընթացների հետ, որոնք ուղեկցվում են օրգանական ածխածնի փոխարկմամբ անբյուրեղակազմ (ամորֆ) տարատեսակի, որը հաճախ անջատվում է երականման փոքր մարմինների տեսքով (բուն Շ.): Շ-ի արդյ. կուտակումներ հայտնի են միայն Կարելիայում: Շինարարական նյութ է:

**Մ-30. ШУРФ** (գերմ. Schurf) – **(ՉԵՏԱՆՈՒԶԱ)ՋՈՐ, EXPLORING SHAFT, PROSPECTING SHAFT, BORE PIT**, Երկրի մակերևութի վրա անմիջականորեն ելք ունեցող ստորգետնյա ուղղաձիգ կամ թեք փորվածք, որն ունի ոչ մեծ խորություն և ուղղանկյունաձև կամ քառակուսի լայնական հատույթի համեմատաբար ոչ մեծ մակերես և ծառայում է զլխ. հետախուզման, ստորգետնյա աշխատանքների սպասարկման և պայթուցիկ նյութերի խցային լիցքերի տեղավորման նպատակներին:

## Ш

**ՍՉ-1. ШЕБЕНЬ – ԽԻՃ, ROCK DEBRIS, BREAK-STONE, CRUSHED STONE, RUBBISH, BROKEN-STONE,** 1) փուխր խոշորաբեկոր (փսեֆիտային) ապար, որը կազմված է պինդ ապարների համարյա չմշակված սուրանկյուն բեկորներից՝ 10-ից մինչև 100 մմ չափերով: Ըստ բեկորների գերակշռող մեծության՝ անջատում են խոշոր (70-150 մմ), միջին (20-70 մմ) և մանր (10-20 մմ) Խ., 2) սովորաբար սուրանկյուն կտորների ձևով նյութ (3 կամ 5 մմ-ից մինչև 150 մմ), որը ստացվել է ապարների փշրումից և հետագա ցրումից կամ ցրումից՝ առանց փշրման: Խ. ստորաբաժանվում է չափամասերի (մմ)՝ 3-10 կամ 5-10, 10-20, 20-40, 40-70, սպառողների պահանջով նաև՝ 70 մմ-ից խոշոր:

**ՍՉ-2. ШЕЛОЧНЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ – ԱԼԿԱԼԻԱԿԱՆ ԱՊԱՐՆԵՐ, ALKALINE ROCKS,** մագմայական (հրաբխային, ենթախորքային, պլուտոնիկ) ապարներ, որոնք պարունակում են դաշտասպաթոիդներ և (կամ) ալկալիական մուգավուն սիլիկատներ՝ ալկալիական պիրոքսեններ և (կամ) ալկալիական ամֆիբոլներ: Ըստ  $SiO_2$ -ի պարունակության (%-ը ըստ զանգվածի)՝ Ա. ա. դասակարգվում են գերհիմքային (<44), հիմքային (44-53), միջին (53-64) և թթու (64-70) Ա. ա-ի: Առանձնացվում է Ա. ա-ի 19 ընտանիք, այդ թվում գերհիմքայինների կազմում՝ ալկալիական պիկրիտների, մելիլիտիտների, գերհիմքային ֆոնոլիթների (հրաբխային ապարների դաս), մելիլիտոլիթների, գերհիմքային ֆոնոլիթների (պլուտոնիկ ապարների դաս) ընտանիքները: Հիմքային Ա. ա-ի կազմում առանձնացվում են ալկալիական բազալտոիդների, հիմքային ֆոնոլիտների (հրաբխային ապարների դաս), ալկալիական գաբրոիդների, հիմքային ֆոնոլիթների (պլուտոնիկ ապարների դաս) ընտանիքները, միջինների կազմում՝ ալկալիական տրախիտների, ֆոնոլիթների (հրաբխային ապարների դաս), ալկալիական սիենիտների, դաշտասպաթոիդային սիենիտների (պլուտոնիկ ապարների դաս) ընտանիքները, թթուների կազմում՝ ալկալիական տրախիդացիտների, պանտելերիտների, կոմենդիտների (հրաբխային ապարների դաս), ալկալիական քվարցային սիենիտների, ալկալիական գրանիտների, ալկալիական լեյկոգրանիտների (պլուտոնիկ ապարների դաս) ընտանիքները: Ըստ  $Na_2O/K_2O$  հարաբերության՝ տարբերում են հետևյալ սերիաները՝ նատրիումային (>4), կալիումանատրիումային (1-4), կալիումային (<1-գերհիմքային ու հիմքայինների համար, <04-միջին ու թթու Ա. ա-ի համար): Ալկալիների գումարի ( $Na_2O+K_2O$ , %-ը ըստ զանգվածի) սահմանային պարունակությունը գերհիմքային Ա. ա-ում 1-2 է, հիմքայիններում՝ 4.5-22, միջիններում՝ 7.8-22, թթուներում՝ 9-13: Ա. ա-ի տիպոմորֆ ապարակազմիչ միներալներ են օլիվինը, կլինոպիրոքսենը, մելիլիթը, փայլարը, նատրիումային ու կալիումային դաշտասպաթոիդները (գերհիմքայինների համար), պլագիոկլազը, ալկալիական դաշտային սպաթը, կլինոպի-

րոքսենը, օլիվինը, փայլարը, նատրիումային ու կալիումային դաշտասպաթիդները (հիմքայինների համար), ալկալիական դաշտային սպաթը, ալբիտը, ալկալիական կլինոպիրոքսենը, ալկալիական ամֆիբոլը, նատրիումային ու կալիումային դաշտասպաթիդները (միջինների համար), ալկալիական դաշտային սպաթը, ալբիտը, քվարցը, ալկալիական կլինոպիրոքսենը, ալկալիական ամֆիբոլը (թթուների համար): Ակցեսորային միներալներ են ռանգաիտը, լովենիտը, ֆերսմիտը, օրտիտը, լոպարիտը և այլն: Ա. ա-ի կառուցվածքը մանրահատիկայինից մինչև պեգմատիտային է: Գույնը՝ բաց մոխրագույնից մինչև մուգ մոխրագույն, երբեմն՝ կանաչավուն-մոխրագույն կամ վարդագույն-մոխրագույն:

**ՇՈՒՄ 3. ՇՈՒՄ ԿՐԻՏԱԼԼԻՇԵՍԿԻԻ – ԲՅՈՒՐԵՂԱՅԻՆ ՎԱՅԱՆ, CRISTALLINE SHIELD,**

պլատֆորմի հիմքի խոշոր (մինչև հազարավոր կմ տրամագծով) ելուստ, որը նրա պատմության մեծ մասի ընթացքում պահպանել է կայուն բարձրացված դիրք և միայն առավելագույն ծովաբազանների դարակարգերում կարճատև ծածկվել է ծանծաղ ծովով: Կազմված է բյուրեղային թերթաքարերից, գնեյսներից, գրանիտներից և այլ ներժայթքային ապարներից: Բնորոշվում է ցածրացված ջերմային հոսքով և քարոլորտի մեծացված հաստությամբ (150 կմ): «Վահան» տերմինը առաջարկել է ավստ. երկրաբան Է. Ջյուսը 1885-ին, իսկ «Բ. վ.» տերմինը՝ ռուս երկրաբան Ն. Շատսկին 1947-ին: Բ. վ-ների սահմաններում հայտնի են երկաթի, պղնձի, նիկելի, մանգանի, ոսկու, փայլարների, խեցեգործության հումքի և այլ օգտ. հնժ-ների հանքակուտակները:

## Ձ

- Ձ-1. ЭВАПОРИТЫ** (լատ. *evaporato* – գոլորշիանում են), **ЭВАПОРИТОВЫЕ ОСАДКИ** – **ԷՎԱՊՈՐԻՏՆԵՐ, ԷՎԱՊՈՐԻՏԱՅԻՆ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ (ԳՈՒՈՐՇԱՆՍՏՎԱԾՔՆԵՐ), EVAPORITES, EVAPORITE DEPOSITS**, պարփակ կամ կիսապարփակ ջրային ավազաններում արևային ճառագայթման հաշվին ջրի գոլորշիացման և նրա աղերով գերհագեցման արգասիքում հատակին նստած քիմ. նստվածքներ: Ջրավազանները տեղաբաշխված են չորային կամ կիսաչորային կլիմայական զոնաներում (ծովածոցեր, ծովալճակներ, աղային լճեր): Է. ն-ին են պատկանում տարբեր աղեր՝ հալիտ, գիպս, անհիդրիդ, միրաբիլիտ, կառնալիթ, գլաուբերիտ, աստրախանիտ և այլն, որոշ կրաքարեր, դոլոմիտներ: Ջրավազանների համար բնորոշ է տարածության մեջ աղիության փոփոխությունը, որը հանգեցնում է նստվածքի մեջ աղերի ընտրողական նստեցմանը:
- Ձ-2. ЭВГЕОСИНКЛИНАЛЬ** (հուն. *έυ* – լիակատար, լավ, կատարյալ, *ցέ* – երկիր և սինկլինալ) – **ԷՎԵՐԿՐԱՍԻՆԿԼԻՆԱԼ (ԷՎԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԼ), EUGEOSYNCLINE**, երկրասինկլինալային համակարգի ներքին, առավել շարժունակ և մագմայական արգասիքներով հագեցած մաս, ի տարբերություն նրա արտաքին նվազ շարժունակ միտերկրասինկլինալային զոնաների (տե՛ս *Миогеосинклиналь*), որոնք հարում են պլատֆորմներին: Անջատել է գերմ. երկրաբան Յ. Շտիլեն 1940-ին: Է-ները սովորաբար ձգված են գծային զոնաների տեսքով և տարածվում են հարյուրավոր ու հազարավոր կմ-եր: Դրանց շերտագրական կտրվածքի ստորին մասերը, որպես կանոն, կազմված են օֆիոլիթներից, վերին մասերը՝ գրաուվակային կազմի բեկորային սովարաշերտերից, ֆլիշից, խութածին կրաքարերից, որոնք մեծ մասամբ զուգորդվում են անդեզիտային կազմի հրաբխային ապարների հետ: Շերտերը բարդ ծալքավորված են և հաճախ առաջացնում են թեփուկավոր կառուցվածքներ և տեկտ. ծածկույթներ: Է-ի զարգացմամբ ավարտվում է մայրցամաքային կեղև ունեցող բարդ կազմության ծալքավոր զոնաների առաջացումը: Ձևափոխությունների զուգահեռ աստիճանաբար տեղի է ունենում գրանիտափոխակերպային շերտի ձևավորումը: Տիպական Է-ները սկզբնապես անցնում են զարգացման օվկիանոսային ընթացաշրջան՝ խորջրյա նստվածքների և հիմքայի կազմի հրաբխաքարերի առաջացմամբ, որը հերթափոխվում է կղզեաղեղային և ծայրամասային ծովերի ընթացաշրջանով: Այսպիսով, Է. գոյանում է անցյալ օվկիանոսային ավազանների և օվկիանոսից դեպի մայր ցամաք ակտիվ անցողիկ զոնաների տեղում, որոնք լեռնագոյացման գործընթացների արգասիքում ներառվել են մայր ցամաքների ծալքավոր գոտիներում: Է-ի հետ կապված են կարևոր օգտ. հնձ-ների՝ պլատինի, քրոմի, երկաթի, պղնձի, բազմամետաղների, ասբեստի հնքվ-եր:

- Э-3. ЭВДИАЛИТ** (հուն. eudiálytos – հեշտ քայքայվող, թթուներում հեշտ լուծվելու համար) – **ԷՎԴԻԱԼԻՏ, EUDIALYTE**, օղակավոր սիլիկատների ենթադասի միներալ: Բյուրեղագիտական համակարգը տրիգոնային է: Սովորաբար անջատումները հատիկավոր կամ համաձուլյ ագրեգատների ձևով են: Հաստ աղյուսածև, կարծ սյունածև կամ տակառածև բյուրեղները հազվադեպ են: Գույնը վարդագույն կարմիր, կարմրագորշ է, փայլը՝ ապակու: Կարծրությունը՝ 5-6: Տիպամորֆ է ապատիտային նեֆելինային սիենիտների և դրանց պեզմատիտների համար: Է. ցիրկոնի-ուսի պոտենցիալ հումք է:
- Э-4. ЭГИРИН** (Սկանդինավյան դիցաբանությունում ծովերի աստված Էգիրի անունից) – **ԷԳԻՐԻՆ, AEGIRINE**, պիրոքսենների ընտանիքի ապարակազմիչ միներալ, նատրիումի և երկաթի շղթայական սիլիկատ,  $\text{NaFe}^{3+}[\text{Si}_2\text{O}_6]$ : Բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է: Կարծրությունը՝ 6.0-6.5: Փայլը՝ ապակու: Գույնը՝ մուգ կանաչ, կանաչագորշ, երբեմն՝ սև: Գոյություն ունեն է-ավզիտ և է-դիոպսիդ անընդհատ իզոմորֆ սերիաներ: Անջատման ձևերն են՝ կարծ- և երկար հատվածակողմային նրբասեղնավոր բյուրեղները, շառավղաճառագայթավոր ագրեգատները, հազվադեպ՝ խառնաթելավոր: Ալկալիական ապարներին բնորոշ ապարակազմիչ միներալ է: Հանդիպում է ալկալիական սիենիտներում, գրանիտներում և պեզմատիտներում, փոխակերպային բյուրեղային թերթաքարերում և սկառներում:
- Э-5. ЭЙФЕЛЬСКИЙ ЯРУС, ЭЙФЕЛЬ** (էյֆել լեռնազանգվածի անունից, ՊՖՀ) – **ԷՅՖԵԼՅԱՆ ՀԱՐԿ, ԷՅՖԵԼ, EIFELIAN**, դևոնի համակարգի միջին բաժնի ստորին հարկ:
- Э-6. ЭКЗАРАЦИЯ** (ուշ լատ. exaratio – վարում, հերկում) – **ՍԱՌՑԱՔԵՐՈՒՄ (ԷԿՉԱՐԱՑԻԱ), EXARATION**, շարժվող սառույցի քայքայման զործունեություն իր ժայռային մահճի վրա: Հատիկային սառցաբերուկի բեկորային նյութը այս դեպքում հղկանյութի դեր է խաղում:
- Э-7. ЭКЗОГЕННЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ** (հուն. éxō – դրսից, արտաքին կողմից և genês – ծնող, ծնված), **ГИПЕРГЕННЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ, СЕДИМЕНТОГЕННЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ** – **ԱՐԱՍԱԾԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, ՎԵՐՆԱԾԻՆ (ՀԻՊԵՐԳԵՆ) ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, ՆՍՎԱԾՔԱԾԱԳՈՒՄՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, EXOGENETIC DEPOSITS, HYPERGENIC DEPOSITS, SEDIMENTOGENIC DEPOSITS**, օգտ. հնժ-ների հանքակուտակներ, որոնք կապված են երկրի հին և ժամանակակից երկրք. գործընթացների հետ: Առաջանում են երկրի մակերևույթին՝ նրա բարակ վերին մասում (ներառում է գրունտային և մասամբ ստր. շերտային ջրերի հորիզոնները), ինչպես նաև ճահիճների, լճերի, գետերի, ծովերի ու օվկիանոսների հատակում: Ա. հ. ձևավորվում են ներծին ծագման միներալային նյութերի մեխ. և կենսաքին. փոխարկման և տարբերակման հետևանքով: Ա. հ-ի մեջ առանձնացնում են չորս ծագումնային խմբեր՝ մնացորդային, ներծանցման, ցրոնային և նստվածքային: Մնացորդային հնքվ-երը ձևավորվում են հողմահարման զոնայից լուծվող միներալային նյութերի հեռացման և դժվարալույծ միներալային մնացորդի կուտակման արգասիքում՝ առաջացնելով երկաթի, նիկելի, մանգանի, ալյումինի հանքանյութեր: Ներծանցման հնքվ-երը գոյանում են մակերևութային ծագման ստր. ջրերից նրանց մեջ լուծված միներալային նյութերի նստեցման դեպքում՝ առաջացնելով ուրանի, պղնձի, արծաթի, ոսկու, բնածին ծծմբի հանքազանգվածներ: Ցրոնային հնքվ-երը գոյանում են գետերի հատակին, ծովերի մերձափում՝ փուխր նստվածքներում ծանր և ամուր արժեքավոր միներալների կուտակման արգասիքում, դրանց թվին են պատկանում ոսկին, պլատինը, տիտանի, վոլֆրամի, անագի միներալները: Նստվածքային հնքվ-երը առաջանում են նստվածքա-

կուտակման գործընթացում՝ ծովերի և ցամաքային ավազանների հատակին, ձևավորելով ածխի, այրվող թերթաքարերի, նավթի, այրվող գազի, աղերի, ֆոսֆորիտների հանքակուտակներ, երկաթի, մանգանի, բոքսիտների, ուրանի, պղնձի, ինչպես նաև շինարարական նյութերի հնքվ-եր: Ա. հ. ունեն խոշոր արդյ. նշանակություն, տե՛ս նաև Гипергенез:

**Յ-8. ЭКЛОГИТ** (հուն. eklogē – ընտրություն, գատում) – **ԷԿԼՈԳԻՏ, ECLOGITE**, խորքային փոխակերպային (մետամորֆային) կամ մագմայական ապար, կազմված է ցածրաքրոմային պիրոպ-ալմանդին-գրոսուլյարային նռնաքարից և ժադեիտ-դիոպսիդային կլինոպիրոքսենից: Որպես երկրորդական և ակցետորային միներալներ՝ հանդիպում են ռուտիլը, կիանիտը, կորունդը, սանիդինը, էնստատիտը, գրաֆիտը, ալմաստը, ֆլուգոպիտը: Ըստ քիմ. կազմի՝ Է-ները համապատասխանում են բազալտներին և գաբրոներին: Է-ներ առաջանում են բարձր ջերմաստիճաններում (350-1200°C) և մեծ ճնշման պայմաններում: Հանդիպում է խոր փոխակերպված գոտիներում հոծ զանգվածների, իսկ քիմբեռլիթային խողովակներում՝ ապարաբեկորների ձևով: Ենթադրվում է, որ Է-ները կազմում են մայր ցամաքների միջնապատյանի վերին շերտը:

**Յ-9. ЭКОЛОГИЯ** (հուն. oikos – կացարան, ապրելավայր և logos – ուսմունք) – **ԷԿՈԼՈԳԻԱ, ECOLOGY**, օրգանիզմների և շրջապատող միջավայրի փոխհարաբերությունն ուսումնասիրող գիտություն: Է. ուսումնասիրում է միջավայրն ամբողջովին և նրա առանձին գործոնների ազդեցությունն օրգանիզմների վրա, օրգանիզմների ձևաբանական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունների կազմավորումը, դրանց քանակական փոխհարաբերությունը՝ կախված միջավայրի պայմաններից ու դինամիկայից, ինչպես նաև կենսացենոզների փոխհարաբերությունը միջավայրի հետ, օրգանիզմների միջտեսակային և ներտեսակային հարաբերությունները:

**Յ-10. ЭКОЛОГИЯ ГЕОХИМИЧЕСКАЯ – ԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱ, GEOCHEMICAL ECOLOGY**, կենսաերկրաքիմիայի և էկոլոգիայի բաժին, որն ուսումնասիրում է կենդանի օրգանիզմների վրա միջավայրի երկրք. գործոնների ազդեցությունը: Օրգանիզմների կողմից քիմ. տարրերի կուտակման աստիճանը որոշվում է օրգանիզմների կենսք. բնույթով, միջավայրի երկրք-յով և կենսաերկրաքիմիական սննդային շղթաներով, որոնց միջոցով իրագործվում է օրգանիզմների ու միջավայրի կապը: Ե. է-յի խնդիրներն են՝ որոշել օրգանիզմների կողմից քիմ. տարրերի ընտրողական կլանման և կուտակման ուղիները, օրգանիզմների կողմից քիմ. տարրերի պահանջումները, դրանց շենքային կուտակումը, քիմ. տարրերի միացությունների ձևերը, միացությունների կենսք. ակտիվությունը, միկրոտարրերի պարունակությունը, նյութերի փոխանակությունը՝ երկրք. միջավայրում քիմ. տարրերի տարբեր պարունակության դեպքում, օրգանիզմների էվոլյուցիայի վրա երկրք. գործոնների ազդեցությունը:

**Յ-11. ЭКСПЛОЗИЯ** (ֆրանս. explosion – պայթյուն, լատ. explodo-ից – վտարում՝ ճարձատումով և աղմուկով) – **ՀՐԱԲԵՍԱՊՈՒՅՑՈՒՄ (ԷՔՍՊԼՈՋԻԱ), EXPLOSION**, հրաբխային պայթումային ժայթքում, որը սովորաբար ուղեկցվում է մեծ քանակի հրաբեկորային նյութի, լավայի բեկորների, հրաբխի մղանցքի պատերի ապարների և գազանման նյութերի արտանետմամբ: Առաջանում է այն ժամանակ, երբ ներքին մագմայական ճնշումը գերազանցում է օջախի առաստաղի ամրությանը: Արտանետուկի բնույթը կախված է լավայի մածուցիկությունից: Փոքր մածուցիկության լավաները առաջացնում են հրահեղուկ լավայի շատրվաններ, ավելի մածուցիկները՝ անգույն գազերի արտանետումներ՝ շիկացած բեկորներով և ռումբերով, մածուցիկները՝ սև

ամալի արտանետումներ՝ գերլցված լավայի բեկորներով, հրաբխային ավազով ու փոշիով: Այդ խառնուրդի տարածման արագությունը հասնում է հարյուրավոր մ/վրկ:

**Յ-12. ЭКСТЕРНИДЫ** (լատ. externus – արտաքին) – **ԷՔՍՏԵՐՆԻԴՆԵՐ, EXTERNIDES, SECONDARY ARC**, լեռնագոյացման գոտու արտաքին մաս, որն առավելապես մոտ է կրատոնին կամ ֆոռլանդին: Սովորաբար դա միոերկրասինկլինալ է՝ իր զարգացման վաղ փուլում: Լեռնագոյացման ժամանակ ենթարկվում է եզրային ձևափոխությունների (ծալքավորության և վրաշարժերի առաջացման): Տերմինը առաջարկել է ամերիկյան երկրաբան Լ. Քոբերը 1928-ին: Չետագայում «Է.» հասկացությունը մշակել է գերմ. երկրաբան Ս. Բուբնովը 1960-ին:

**Յ-13. ЭКСТРАГЛЯЦИАЛЬНЫЕ ОТЛОЖЕНИЯ** (լատ. extra – դուրս և glacies – սառույց) – **ԱՐՏԱՍԱՌՅԱ (ՂԱՇՏԱ)ՅԻՆ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, EXTRAGLACIAL DEPOSITS**, բոլոր այն նստվածքների համախմբություն, որոնք պլեյստոցենում առաջացել են արտասառցա(դաշտա)յին մարզերում, այսինքն՝ մայր ցամաքների այն մասերում, որոնք չեն ծածկվել մայրցամաքային սառցապատումներով:

**Յ-14. ЭКСТРУЗИВНЫЙ КУПОЛ**, տե՛ս Вулканический купол:

**Յ-15. ЭКСТРУЗИЯ** (միջնադարյան լատ. extrusio – արտահրում) – **ԱՐՏԱՂԱԺԱՅԹՔՈՒՄ (ԷՔՍՏՐՈՒՉԻԱ), EXTRUSION**, հրաբխային ժայթքման տեսակ, որի ընթացքում մածուցիկ լավան (անդեզիտային, դաջիտային, ռիոլիթային կազմի) դուրս է մղվում կամ արտահրվում է արտաքին մակերևույթ՝ հրաբխի փողաբերանի մոտ առաջացնելով հրաբխային գմբեթ:

**Յ-16. ЭЛЕКТРИЧЕСКИЙ КАРОТАЖ (ЭЛЕКТРОКАРОТАЖ) – ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԿԱՐՈՏԱԺ (ԷԼԵԿՏՐԱԿԱՐՈՏԱԺ), ELECTRICAL LOGGING**, հորատանցքերում երկրֆ. ուսումնասիրություններ, որոնք հիմնված են ինքնաբերաբար գոյացող կամ արհեստականորեն ստեղծված էլեկտրական դաշտի չափումների վրա: Է. կ. օգտագործվում է հորատանցքի պատերը կազմող ապարների քարաբանական կազմը գնահատելու, նրանցում նավթագազահագեցված, հանքային և ջրահագեցված շերտերն առանձնացնելու, դրանց պարամետրերը գնահատելու, տարբեր հորատանցքերի կտրվածքները համադրելու, հորատանցքի տեխ. վիճակը գնահատելու համար: Է. կ-ի ֆիզ. հիմքը ապարների էլեկտրական հատկությունների տարբերությունն է: Չորատանցքերում չափվում են ապարների էլեկտրական դիմադրությունը և բևեռացման ունակությունը բնութագրող մեծությունները: Է. կ-ի մեջ մտնում են ինքնաբերաբար բևեռացման պոտենցիալների կարոտաժը, դիմադրության կարոտաժը, կողային կարոտաժային զոնդումը (խորագնումը), հարուցվող պոտենցիալների կարոտաժը, էլեկտրոդային պոտենցիալների կարոտաժը, հոսանքային կարոտաժը, կողային կարոտաժը, միկրոկարոտաժը, ինդուկցիոն կարոտաժը: Է. կ., ըստ կատարվող աշխատանքների ծավալի, պատկանում է հորատանցքերի երկրֆ. ուսումնասիրման հիմնական մեթոդներին: Դիմադրության և ինքնաբերական բևեռացման պոտենցիալների կարոտաժները պարտադիր չափորոշիչ ուսումնասիրություններ են այն հորատանցքերի մեծ մասի համար, որոնք հորատվում են պարզ երկրք. պայմաններում:

**Յ-17. ЭЛЕКТРОРАЗВЕДКА – ԷԼԵԿՏՐԱՉԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ, ELECTRICAL PROSPECTING**, հետախուզության երկրֆ. մեթոդ: Չիմնված է հաստատուն և փոփոխական հոսանքի բնական ու արհեստական էլեկտրական (էլեկտրամագնիսական) դաշտի ուսումնասիրության վրա: Կիրառվում է երկրք. քարտեզագրության, կառուցվածքային երկրաբանության մեջ, օգտ. հնձ-ների որոնման ու հետախուզման գործում, ջրաերկրք. և ճարտարագիտաերկրք. հետազոտություններում:



- Э-18. ЭЛЕМЕНТЫ ЗАЛЕГАНИЯ – ՏԵՂԱԴՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐ, ELEMENTS OF OCCURRENCE**, շերտի տարածում, անկում և անկման անկյուն, որոնք որոշում են նրա դիրքը տարածության մեջ:
- Э-19. ЭЛЕМЕНТЫ-ИНДИКАТОРЫ – ՏԱՐԻՆԵՐ-ՑՈՒՑԻՉՆԵՐ (ԻՆԴԻԿԱՏՈՐՆԵՐ), INDICATOR ELEMENTS**, միկրոտարրեր, որոնց տարածումը բնական գոյացությունների տարբեր տեսակներում կարող է օգտագործվել որպես հայտանիշ օգտ. հնժ-ների հնքվ-երի որոնման համար: Մետաղական հնքվ-երի երկրք. որոնման ժամանակ որպես S-ց. օգտագործվում են մետաղներ (հանքաքարերի գլխավոր բաղադրիչները) և այլ տարրեր, որոնք կուտակվում են համատեղ հանքային փուլում (ուղղակի S-ց.), տարրեր-ուղեկիցներ, որոնք սևեռվել են հանքամարմնում և պարփակող ապարներում մինչ- և հետհանքային փուլում (կողմնակի S-ց.):
- Э-20. ЭЛЕМЕНТЫ СКЛАДКИ – ԾԱԼՔԻ ՏԱՐԻՆԵՐ, ELEMENTS OF FOLD**, ծալքի մասեր՝ երևակայական գծեր ու մակերևույթներ, որոնք նրա չափերի հետ համատեղ՝ հանդիսանում են կարևոր տարրեր՝ ծալքի ձևի և տարածության մեջ նրա դիրքի նկարագրման ժամանակ: Առանձնացվում են ծալքի հետևյալ տարրերը՝ թևեր, միջուկ, փականք, առանցքային մակերևույթ, առանցք, հողակապ, ծալքի անկյուն: Կամարածալքերում առանձնացվում են կամար, կատար, պերիկլինալ (ծայրաթեքվածք), զոգածալքերում՝ զոգվածք, ողնուց, ցենտրիկլինալ (կենտրոնագոգվածք):
- Э-21. ЭЛЮВИАЛЬНЫЕ ГЛИНЫ – ԷԼՅՈՒՎԻԱԼ (ՏԵՂԱԿՈՒՏԱԿ) ԿԱՎԵՐ, ELUVIAL CLAYS**, ցամաքային գոյացություններ, որոնք առաջանում են հողմահարման ժամանակ՝ տարբեր ապարների քայքայման և կավային արգասիքների կուտակման հետևանքով: Հաստությունը՝ մի քանի սմ-ից մինչև տասնյակ մ-եր: Ուղղաձիգ կտրվածքում դիտվում է աստիճանական անցում կավերից դեպի մայրական ապարները, ըստ խորության մեծանում է առաջնային ապարների քայքայումից պահպանված միներալների քանակը: Բուսական մնացորդներն ու օրգանական նյութերը հազվադեպ են: Կազմը տարբեր է և կախված է մայրական ապարների կազմից ու հողմահարման բնույթից:
- Э-22. ЭЛЮВИАЛЬНЫЕ РОССЫПИ – ԷԼՅՈՒՎԻԱԼ (ՏԵՂԱԿՈՒՏԱԿ) ՑՐՈՆՆԵՐ, ELUVIAL PLACERS**, առաջանում են օգտակար միներալներ պարունակող հանքաքարերի ու ապարների հողմահարման արգասիքում, ներկայացված են հողմահարման չտեղափոխված արդյունքներով: Է. ց. տեղադրված են երկրի մակերևույթի արմատական ապարների ելքի՝ անմիջապես նրա վերին կիսաքայքայված մասի վրա: Հողմահարման ազդակների համատեղ արտահայտման դեպքում, կախված գերակայող ազդակից, առանձնացվում են ֆիզ. և քիմ. հողմահարման Է. ց.: Ֆիզ. հողմահարման Է. ց. գոյանում են մերձբևեռային և չորային (արիդային) կլիմայի մարզերում, բնորոշվում են օրական և սեզոնային ջերմաստիճանի մեծ անկմամբ և քիմ. հողմահարման գործընթացների թույլ արտահայտմամբ: Դրանք բաղկացած են արմատական ապարների բեկորներից՝ ավազակավի և կավավազի խառնուրդով: Օգտակար բաղադրամասը ներփակված է արմատական աղբյուրի բեկորներում և միներալների սերտաձվածքներում: Տեղակուտակի հաստությունը փոքր է, այդ պատճառով գործնական նշանակություն ունեն միայն այն Է. ց., որոնք տեղադրված են ալմաստի, ոսկու, պլատինի, կասիտերիտի, վոլֆրամիտի և որոշ ոսկերչական ու արհեստագործական քարերի հնքվ-երի արմատական հանքակուտակների վրա: Քիմ. հողմահարման Է. ց. և օքսիդացման զոնաները բնորոշ են հին լերկացման (պալեոզոյան ու մեզոզոյան) համահարթեցումներին, ինչպես նաև կայնոզոյան արևադարձային լեռնագոյացման մարզերին, որտեղ քիմ. հող-

մահարման գործընթացները ուժգնորեն են արտահայտվում: Հարում են կեղևագոյացման կավային և ավազակավային արգասիքներին և պարունակում են օգտակար միներալներ, որոնք կայուն են քիմ. հողմահարման զոնայում: Բնորոշ է արմատական աղբյուրների նկատմամբ օգտակար միներալների բարձրացված կուտակումը: Այս ենթատիպի է. ց-ի հաստությունը տասնյակ մ է, իսկ արմատական ապարներում սուլֆիդների առկայության դեպքում հասնում է  $n \times 100$  մ: Օգտակար բաղադրամասերը ներկայացված են ալմաստի, ոսկու, իլմենիտի, կասիտերիտի, ոսկերչական, արհեստագործական քարերի և այլնի կուտակներով:

**Յ-23. ЭЛЮВИЙ** (լատ. eluo – ողողել, ողողելով քանդել, լվանալով մաքրել) – **ԷԼՅՈՒՎԻ (ՏԵՂՎՎՈՒՏԱԿ), ELUVIUM**, ապարների հողմահարման արգասիքներ՝ կուտակված իրենց առաջացման տեղում: Ձևավորվում են հորիզոնական մակերևութներին կամ լանջերին, որտեղ լերկացումը թույլ է ընթանում: Կազմում են հողմահարման կեղևը: Կախված մայրական ապարների բնույթից և հողմահարման տիպից՝ կարող են ունենալ տարբեր կառուցվածք (մեծաբեկորայինից մինչև կավային) և կազմ (կաոլիններ, երկաթի, մանգանի, ալյումինի, նիկելի և այլ հանքանյութեր):

**Յ-24. ЭМССКИЙ ЯРУС, ЭМС** (Էմս, Ems ք-ի անունից, ԳՖՀ) – **ԷՄՍԻ ՀԱՐԿ., ԷՄՍ, EMSIAN**, դևոնի համակարգի ստորին բաժնի վերին հարկ:

**Յ-25. ЭНАРГИТ** (հուն. enargēs – բացահայտ, ակնհայտ, ըստ կատարյալ հերձականության) – **ԷՆԱՐԳԻՏ, ENARGITE**, միներալ, բարդ սուլֆիդ,  $Cu_3AsS_4$ : Սովորաբար պարունակում է 46-48 % Cu: Բյուրեղագիտական համակարգը շեղանկյունային է: Առաջացնում է հոծ զանգվածներ՝ խիտ մանրահատիկ կառուցվածքով, հազվադեպ՝ աղյուսածև կամ հատվածակողմային բյուրեղներ: Գույնը՝ պողպատի մոխրագույնից մինչև երկաթի սև: Կարծրությունը՝ 3.5, փայլը՝ մետաղի, մինչև աղոտ: Առաջանում է միջին- և ցածրաջերմաստիճանային ջրաջերմային (հիդրոթերմալ) պայմաններում: Վերնածնային պայմաններում հեշտ օքսիդանում է՝ առաջացնելով մալաքիտ, ազուրիտ, As-ի օքսիդներ: Cu-ի գլխավոր հանքային միներալներից է:

**Յ-26. ЭНДЕМИКИ** (հուն. éndēmos – տեղային) – **ՏԵՂԱՅԻՆՆԵՐ (ԷՆԴԵՄԻԿՆԵՐ), ENDEMIC**, կենդանիների ու բույսերի տեսակներ, որոնք ունեն սահմանափակ տարածում որևէ մեկ մարզի սահմաններում և այլ վայրերում չեն հանդիպում:

**Յ-27. ЭНДОГЕННЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ** (հուն. éndon – ներսում, մեջը և genēs – ծնված, ծնող), **ГИПОГЕННЫЕ МЕСТОРОЖДЕНИЯ – ՆԵՐԾԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, ՆԵՐՔՆԱԾԻՆ (ՀԻՊՈԳԵՆ) ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, ENDOGENOUS DEPOSITS, HYPOGENIC DEPOSITS**, օգտ. հնձ-ների կուտակումներ, որոնք կապված են երկրի խորքային մասերի երկրք. գործընթացների հետ: Ձևավորվում են մագմայական հալույթներից կամ գազային ու հեղուկ տաք միներալացված լուծույթներից խորքային երկրք. կառուցվածքներում՝ բարձր ճնշման ու ջերմաստիճանի պայմաններում: Ն. հ-ի մեջ առանձնացվում են 5 գլխավոր ծագումնաբանական տիպեր՝ մագմայական, պեգմատիտային, կարբոնատիտային, սկառնային, ջրաջերմային (հիդրոթերմալ): Մագմայական հնքվ-երն առաջանում են հալույթի պնդացման ընթացքում՝ քրոմի, տիտանի, վանադիումի, երկաթի, պլատինի, պղնձի, նիկելի, հազվագյուտ մետաղների, ինչպես նաև ապատիտի ու ալմաստի հանքանյութերի զատմամբ: Պեգմատիտային հնքվ-երը իրենցից ներկայացնում են սառչող մագմայի վերջնական արգասիքների բյուրեղացած անջատվածքներ, որոնք օգտագործվում են որպես խեցեգործական հումք և փայլարների, թանկարժեք քարերի ու հազվագյուտ մետաղների արդյունահանման համար: Կարբոնատիտային հնքվ-երը զուգակցվում են գերհիմքային ալկալիական մագմայական ապարների

հետ, որոնց մեջ կուտակվում են կարբոնատային ապարներ և դրանց մեջ գտնվող պղնձի, միոբիումի, ապատիտի և ֆլուգոպիտի հանքանյութեր: Սկանալային հնքվե-րը գոյանում են միներալացված տաք գոլորշիների ազդեցության հետևանքով, մագմայական զանգվածի համան մոտ՝ առաջացնելով երկաթի, պղնձի, վոլֆրա-մի, մոլիբդենի, կապարի, կոբալտի, ոսկու և այլ հանքանյութեր: Ջրաջերմային հնքվե-րը կազմված են գունավոր, ազնիվ և ճառագայթաակտիվ մետաղների հան-քանյութերից, որոնք իրենցից ներկայացնում են խորքում շրջապատույտ կատարող տաք միներալացված ջրային լուծույթների նստվածքներ:

**Յ-28. ЭНДОГЕННЫЕ ПРОЦЕССЫ – ՆԵՐՃԻՆ ԳՈՐԾՆԵԱՅՆԵՐ, ENDOGENOUS**

**PROCESSES**, երկրբ. գործընթացներ, որոնք կապված են երկրի ընդերքում առա-ջացած էներգիայի հետ: Ն. գ-ին վերաբերվում են երկրակեղևի տեկտ. շարժումնե-րը, մագմայականությունը, փոխակերպությունը (մետամորֆություն), երկրաշար-ժաակտիվությունը: Ն. գ-ի էներգիայի գլխավոր աղբյուրներ են ջերմությունը և երկ-րի ընդերքում նյութի վերաբաշխումը ըստ խտության (ձգողական տարբերակում): Երկրի խորքային ջերմությունը, գիտնականների մեծ մասի կարծիքով, ունի առա-վելապես ճառագայթաակտիվ ծագում: Ջերմության որոշակի քանակ անջատվում է նաև ձգողական տարբերակման դեպքում: Երկրի ընդերքում ջերմության անընդ-հատ առաջացումը հանգեցնում է նրա հոսքի գոյացմանը դեպի մակերևույթ (ջեր-մային հոսք): Երկրի ընդերքի որոշ խորություններում, նյութական կազմի, ջերմաս-տիճանի և ճնշման բարենպաստ զուգակցման դեպքում, կարող են գոյանալ մաս-նակի հալման օջախներ ու շերտեր: Այդպիսի շերտ վերին միջնապատյանում հան-դիսանում է ասթենոսֆերան (թույլլորտ)՝ մագմայի առաջացման հիմնական աղբ-յուրը. նրանում կարող են առաջանալ կոնվեկցիոն (ջերմափոխանակման) հոսքեր, որոնք ենթադրաբար հանդիսանում են քարոլորտում հորիզոնական և ուղղաձիգ շարժումների պատճառ: Խոշոր քարոլորտային սալերի սառեցումը հանգեցնում է ուղղաձիգ իջեցումների (տե՛ս Тектоника плит): Կղզեաղեղային հրաբխային գո-տիների և մայր ցամաքների ծայրամասային զոնաներում միջնապատյանում մագ-մայի հիմնական օջախները կապված են գերխորքային բեկվածքների (Վադատի-Ջավարիցկու-Բենիոֆի սեյսմաֆոկալ զոնա) հետ: Վեր բարձրացող խորքային մագմայի կողմից բերվող ջերմության ազդեցության տակ երկրակեղևի մեջ առա-ջանում են մագմայի կեղևային օջախներ: Հասնելով կեղևի մերձմակերևութային մասերին՝ մագման ներդրվում է տարբեր ձևի ներծայթվածքների (ինտրուզիանե-րի) տեսքով կամ արտավիժելով առաջացնում է հրաբուխներ: Ձգողական (գրավի-տացիոն) տարբերակումը հանգեցրել է երկրի շերտատմանը՝ տարբեր խտության երկրոլորտների ձևավորմանը: Երկրի մակերևութային այն արտահայտվում է նաև տեկտ. շարժումների տեսքով, որոնք իրենց հերթին առաջացնում են երկրակեղևի և վերին միջնապատյանի ապարների ձևախախտումներ: Տեկտ. լարվածություննե-րի կուտակումը և հետագա լիցքաթափումը ակտիվ բեկվածքների երկայնությամբ հանգեցնում է երկրաշարժերի:

Խորքային գործընթացների երկու տեսակները սերտ կապակցված են: Գա-ռագայթաակտիվ (ռադիոակտիվ) ջերմությունը, իջեցնելով նյութի մածուցիկու-թյունը, նպաստում է նրա տարբերակմանը, իսկ վերջինը արագացնում է ջերմու-թյան դուրս բերումը դեպի մակերևույթ: Այդ նույն խորքային գործընթացների տա-րածական անհավասարաչափությունը, ըստ երևույթին, որոշակի դեր է խաղում երկրակեղևի բաժանմանը՝ երկրաբանորեն շատ թե քիչ ակտիվ մարզերի, օր.՝ շարժուն գոտիների ու պլատֆորմների: Ն. գ-ի հետ է կապված երկրի ռելիեֆի ձևավորումը և կարևոր շատ օգտ. հնձ-ների առաջացումը:

- Յ-29. ЭНЕОЛИТ** (լատ. aeneus – պղնձե և հուն. lithos – քար) – **ԷՆԵՈԼԻԹ, ENEOLITH-IC**, պղնձի դար, պղնձաքարային դար, նոր քարի դարից (նեոլիթ) բրոնզի դարին անցնելու ժամանակաշրջան: Բնորոշվում է անասնապահության և հողագործության լայն զարգացմամբ, պղնձից պատրաստված գործիքների հանդես գալով:
- Յ-30. ЭНСТАТИТ** (հուն. enstátēs – հակառակորդ՝ դժվարահալության համար) – **ԷՆՍՏՏԻՏ, ENSTATITE**, պիրոքսենների ընտանիքի ապարակազմիչ միներալ,  $Mg_2[Si_2O_6]$ : Բյուրեղագիտական համակարգը շեղանկյունային է: Սովորաբար առաջացնում է հոծ հատիկավոր կամ թիթեղաձև ագրեգատներ: Գույնը՝ սպիտակ, մոխրագույն, դեղնավուն, շագանակագույն, կանաչավուն: Փայլը՝ ապակու, կարծրությունը՝ 5.5: Է-ի ծագումը մագնայական է, սակավ՝ փոխակերպային: Է. և բրոնզիտը կազմում են օրթոպիրոքսենիտների և պերիդոտիտների որոշ տեսակներ, որոնք տարածված են դունիտ – հարցբուրգիտային և դունիտ–պիրոքսենիտ–գաբրոային ֆորմացիաներում, ինչպես նաև շերտատված ներժայթքվածքների պերիդոտիտ–պիրոքսենիտ–նորիտային ֆորմացիայում:
- Յ-31. ЭОКЕМБРИЙ** (հուն. εὐός – արշալույս, լուսաբաց) – **ԷՈՔԵՄԲՐԻ, EOCAMBRIAN**, վերին մինչքեմբրիի նստվածքներ, անմիջապես նախորդում են քեմբրիի համակարգին: «Է.» տերմինը առաջարկել է նորվեգական երկրաբան Բրյոգերը 1900-ին: Լայն տարածում է ստացել Արմ. Եվրոպայի երկրներում: Նախկին ԽՍՀՄ-ում դրան համապատասխանող նստվածքները կրում են վենդ անվանումը:
- Յ-32. ЭОЛОВЫЕ ОТЛОЖЕНИЯ** (հին հուն. դիցաբանության մեջ քամիների տիրակալ Էոլի անունից) – **ՅՈԼՄԱՅԻՆ (ԷՈԼՅԱՆ) ՆՍՏՎԱԾՔՆԵՐ, EOLIAN DEPOSITS, WIND DEPOSITS**, քամու միջոցով բերված նուրբ, փուխր նյութի կուտակում [որոշ լյուեր (փխրահողեր), ավազներ]: Ձևավորվում են ի հաշիվ տարբեր ապարների քայքայման, այդ թվում՝ ավազային, ծովային, դելտային, ալյուվիալ, պրոլյուվիալ, լճային և ջրասառցադաշտային նստվածքների: Ելանյութերի համեմատությամբ Յ. ն. ավելի լավ են տեսակավորված, աղքատացած են դյուրամաշ միներալներով և հարստացված են պինդ ու նորագույն միներալների հատիկներով: Ավազային Յ. ն. բնորոշվում են անկյունագծային-ալիքավոր կամ սեպանման շեղ շերտավորությամբ, հաստությունը մի քանի մ-ից մինչև մի քանի տասնյակ մ է: Տարածված են գլխ. չորային մարզերում, բայց հանդիպում են նաև այլ բնական զոնաներում՝ ծովերի և լճերի մերձափում, գետերի դարավանդներում, դելտաներում: Երբեմն իրենցից ներկայացնում են մի շարք օգտ. հնձ-ների ցրոններ:
- Յ-33. ЭОН** (հուն. αιὼν – դար, դարակարգ) – **ԷՈՆ, EON**, երկրաժամանակագրական սանդղակի ստորաբաժանում, համապատասխանում է Երկրի և օրգանական աշխարհի (կենսոլորտի) զարգացման խոշորագույն և հարակիցներից սկզբունքորեն տարբերվող էտապին: Էոնոտեմայի երկրաժամանակագրական համարժեքն է, մասնատվում է երկրբ. դարաշրջանների: Տերմինը առաջարկել է ամերիկյան երկրաբան Ջ. Դանը 1875-ին: Առանձնացվում են ֆաներոզոյան (տևողությունը 545 մլն. տ.) և կրիատոզոյան է-ները, բայց վերջինն իր երկարատևության (ավելի քան 3.5 մլր. տ.) պատճառով պետք է բաժանվի մի քանի է-ների:
- Յ-34. ЭОНОТЕМА – ԷՈՆՈՏԵՄԱ, EONOTHEM**, ընդհանուր (միջազգային) շերտագրական սանդղակի խոշորագույն միավոր, ընդգրկում է այն նստվածքները, որոնք առաջացել են էոնի ընթացքում: Յուրաքանչյուր է. արտացոլում է Երկրի երկրբ. (խորքային կառուցվածքի, քարոլորտի, ջրոլորտի, մթնոլորտի) և օրգանական աշխարհի (կենսոլորտի) զարգացման խոշորագույն և հարակիցներից սկզբունքորեն տարբերվող էտապ: Առանձնացվում են ֆաներոզոյան է., որը միավորում է պալեո-

ոգոյան, մեզոզոյան ու կայնոզոյան էրատեմաները, և կրիպտոզոյան է., որի հիմքի վրա պետք է անջատվեն մի քանի է-ներ:

**Э-35. ЭОПЛЕЙСТОЦЕН** (հուն. *εὖος* – լուսաբաց, արշալույս և պլեյստոցեն) – **ԷՈՊ-ԼԵՅՍՏՈՑԵՆ, EOPLEISTOCENE**, չորրորդական համակարգի ստորին ստորաբաժանում: Համապատասխանում է Արմ. Եվրոպայի վիլաֆրանկյան հարկի (սերիայի) վերին մասին, նախկին ԽՍՀՄ-ի ապշերոնյան հարկին (շերտերին): Ընդգրկում է 1.8-ից մինչև 0.8 մլն. տ. առաջ ժամանակի միջակայք: Սկզբնապես «է.» տերմինը ներառվեց որպես ստորին (հին) պլեյստոցենի հոմ.:

**Э-36. ЭОЦЕН** (հուն. *εὖος* – արշալույս, լուսաբաց, *kainós* – նոր) – **ԷՈՑԵՆ, EOCENE**, պալոգենի համակարգի (ժամանակաշրջանի) միջին բաժին (դարակարգ):

**Э-37. ЭПЕЙРОГЕНИЧЕСКИЕ ДВИЖЕНИЯ, ЭПЕЙРОГЕНЕЗ** (հուն. *επιρος* – ցամաք և *génos* – ծնունդ) – **ԷՊԵՅՐՈԳԵՆ (ՑԱՄԱՔԱՍՏԵՂԾ) ՀԱՐԺՈՒՄՆԵՐ, ԷՊԵՅՐՈԳԵՆԵՉ, EPEIROGENETIC MOVEMENTS, EPEIROGENESIS**, երկրակեղևի դանդաղ, խիստ երկարատև շարժումներ՝ ինչպես վերընթաց, այնպես էլ՝ վարընթաց: Համեմատաբար հավասարաչափ ընդգրկում են լայնարձակ մարզեր, հիմքի տեկտ. կառուցվածքները թողնում են անփոփոխ:

**Э-38. ЭПИГЕНЕЗ** (հուն. *epi* – հետո, ավելի ուշ, հետագայում և *génesis* – ծագում, գոյացում) – **ՄԱՎԱԾՆՈՒԹՅՈՒՆ (ԷՊԻԳԵՆԵՉ), EPIGENESIS**, երկրորդական գործընթացներ, որոնք հանգեցնում են միներալներում ու ապարներում ցանկացած փոփոխության, նորագոյացումների, այդ թվում նաև օգտ. հնժ-ներում՝ իրենց առաջացումից հետո: Տերմինը առաջարկել է գերմ. երկրաբան Բ. Շտեյլցները 1901-06-ին:

**Э-39. ЭПИГЕНЕТИЧЕСКИЕ МЕСТОРОЖДЕНИЯ – ՄԱՎԱԾԻՆ (ԷՊԻԳԵՆԵՏԻՎԱՎԱՆ) ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ, EPIGENETIC DEPOSITS**, օգտ. հնժ-ների հանքակուտակներ, որոնք գոյացել են պարփակող ապարներից ավելի ուշ: Դրանք սովորաբար ներկայացված են ապարները հատող երակներով, ոսպնյակներով, հանքազանգվածներով և խողովակներով: Միներալային և քիմ. կազմը կտրուկ տարբերվում է պարփակող ապարների կազմից: Դրանց ներգործության հետևանքով պարփակող ապարներում առաջանում են Մ. հ-ին ուղեկցող միներալացման զոնաներ: Մ.հ-ին են պատկանում տիտանամագնետիտի, քրոմիտների, պլատինոիդների, ալմաստների, ապատիտի մագմայական հնքվ-երը, ինչպես նաև սուլֆիդային պղինձ-միկելային հանքաքարերի որոշ մարմիններ: Մ. հ-ին են պատկանում նույնպես երկաթի, պղնձի, կապարի, ցինկի և այլնի սկառնային, փայլարային և հազվագյուտ մետաղական պեգմատիտային հնքվ-երը: Մ. հ-ի ամենամեծ խումբ են կազմում գունավոր, հազվագյուտ, ազնիվ և ճառագայթաակտիվ (ռադիոակտիվ) մետաղների, ինչպես նաև քվարցի, բարիտի, ֆլուորիտի ջրաջերմային (հիդրոթերմալ) երակային և մետասոմատիկական հնքվ-երը: Մ. հ-ին են պատկանում նաև երկաթի, պղնձի և ուրանի ներծանցման հնքվ-երը:

**Э-40. ЭПИГЕОСИНКЛИНАЛЬНЫЕ ГОРЫ** (հուն. *epi* – հետո և երկրասինկլինալ) – **ՀԵՏԵՐՎՐԱՍԻՆԿԼԻՆԱԼԱՅԻՆ (ԷՊԻԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԼԱՅԻՆ) ԼԵՌՆԵՐ, EPIGEOSYNCLINE MOUNTAINS**, լեռներ, որոնք առաջացել են երկրատեկտ. ցիկլի երկրասինկլինալային փուլին անմիջապես հաջորդող լեռնագոյացման (օրոգեն) փուլում: Լեռնագրական տարրերը հաճախ հանրնկնում են բարձր կարգի ծալքավոր կառուցվածքների հետ: Բնորոշ է հրաբխայնությունը (ժամանակակից կամ նեոգեն – չորրորդական): Ժամանակակից երկրբ. դարակարգում Հ. լ-ին են վերագրվում այն լեռները, որոնք ձևավորվել են Ալպյան ծալքավոր մարզում (օր.՝ Ալպերը, Կարպատները, Կովկասը, Կոպետդաղը և այլն):

- Э-41. ЭПИДОТ** (հուն. *épidotós* – ածելով կլած, ըստ բյուրեղի լայնական հատույթի զուգահեռագծային տեսքի) – **ԷՊԻԴՈՏ, EPIDOTE**, ապարակազմիչ միներալ կղզային սիլիկատների ենթադասից, քիմ. կազմը  $Ca[Al,Fe,Mn]_3[SiO_4][Si_2O_7](OH)$ : Բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է: Կարծրությունը՝ 6-7, փայլը՝ ապակու: Գույնը՝ կանաչ, դեղնականաչ: Առաջանում է գլխ. տարբեր ապարների դատարկություններում, ճեղքերում: Հաճախ հանդես է գալիս հատիկավոր, ճառագայթային, ձողաձև ագրեգատներով: Հանդիպում է մի շարք փոխակերպային ապարներում, սկառններում, քվարցային երակներում:
- Э-42. ЭПИКОНТИНЕНТАЛЬНОЕ (НАДМАТЕРИКОВОЕ) МОРЕ – ՄԱԿԱՍՍԱՅՐՅԱ-ՄԱՔԱՅԻՆ (ԷՊԻԿՈՆՏԻՆԵՆՏԱԼ) ԾՈՎ, EPICONTINENTAL SEA, SHELF SEA**, առաջանում է Համաշխարհային օվկիանոսի ծովարաշվի դեպքում՝ մայր ցամաքի ծայրամասի իջեցման կամ օվկիանոսի մակարդակի բարձրացման հետևանքով (օր.՝ Օխոտի ծովը):
- Э-43. ЭПИПЛАТФОРМЕННЫЕ ГОРЫ**, տե՛ս Возрождённые горы:
- Э-44. ЭПИПЛАТФОРМЕННЫЙ ОРОГЕНЕЗ – ՀԵՏՊԼԱՏՖՈՐՄԱՅԻՆ (ԷՊԻՊԼԱՏՖՈՐՄԱՅԻՆ) ԼԵՌԱԳՈՅԱՑՈՒՄ, ERIPLATFORMIAN OROGENESIS**, լեռնակազմավորման տեկտ. շարժումներ, որոնք արտահայտվել են երկրակեղևի այն տեղամասերում, որոնք մինչ այդ երկար ժամանակ զարգացել են պլատֆորմային ռեժիմի պայմաններում: Երկրբ. պատմության նորագույն փուլում Հ. լ. արտահայտվել է սկսած էոցենի վերջից (օլիգոցենից կամ ավելի ուշ), որպես տեկտ. ակտիվացման վերջին ձև:
- Э-45. ЭПИЦЕНТР** (հուն. *epi* – վրա, վեր, վերևում, բարձր և լատ. *centrum* – կենտրոն) – **ՎԵՐԱՎԿԵՆՏՐՈՆ (ԷՊԻՎԵՆՏՐՈՆ), EPICENTER, EPICENTRE**, երկրաշարժի ներքնակենտրոնի (հիպոկենտրոնի) պրոյեկցիան Երկրի մակերևույթին: Որոշվում է երկրաշարժական կայանների գրառումներով:
- Э-46. ЭПОХА ГЕОЛОГИЧЕСКАЯ** (հուն. *epoché*, բառ. կանգառ) – **ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ԴԱՐՎԱԿԱՐԳ (ԷՊՈԽԱ), GEOLOGICAL EPOCH**, երկրաժամանակագրական սանդղակի ստորաբաժանում, որը ստորադաս է երկրաբանական ժամանակաշրջանին և բաժանվում է երկրաբանական դարերի: Երկրաբանական բաժնի երկրաժամանակագրական համարժեքն է: Ե. դ-երն իրենց անվանումն ստանում են երկրբ. ժամանակաշրջանում ըստ իրենց հաջորդականության՝ վաղ, ուշ կամ վաղ, միջին, ուշ:
- Э-47. ЭПОХА СКЛАДЧАТОСТИ – ԾԱԼՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՐՎԱԿԱՐԳ (ԷՊՈԽԱ), FOLDING EPOCH**, ծալքավորության, ինչպես նաև սովորաբար լեռնագոյացման և գրանիտային ներծայթքային մագմայականության գործընթացների ակտիվացման դարակարգ (էպոխա): Ծ. դ-ում տեղի է ունենում ծալքավոր համակարգերի ու մարզի կառուցվածքային պլանի արմատական վերակառուցում:
- Э-48. ЭРА ГЕОЛОГИЧЕСКАЯ** (լատ. *aera*, բառ. ելակետային թիվ) – **ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ, GEOLOGICAL ERA**, երկրաժամանակագրական սանդղակի խոշոր ստորաբաժանում, համապատասխանում է քարոլորտի ու օրգանական աշխարհի զարգացման խոշոր փուլին, ստորադաս է էոնին և բաժանվում է երկրաբանական ժամանակաշրջանների: Ե. դ. էրատենայի երկրաժամանակագրական համարժեքն է: Տերմինն ընդունվել է 2-րդ Միջազգային երկրբ. վեհաժողովում (1881): Ե. դ-ի տևողությունը ֆաներոզոյի ընթացքում հնեից դեպի ավելի երիտասարդները փոքրանում է (պալեոզոյը մոտ 289 մլն. տ., մեզոզոյը մոտ 186 մլն. տ., կայնոզոյը մոտ 65 մլն. տ.): Քննարկվում է պրոտերոզոյում Ե. դ-ների առանձնացման հնարավորության հարցը: Ե. դ-ի անվանումը տրվում է համապատասխան էրատենայի անունից:

- Յ-49. ЭРАТЕМА – ԷՐԱՏԵՍԱ, ERATHEM**, ընդհանուր (միջազգային) շերտագրական սանդղակի խոշոր միավոր, ստորադաս է էոնոտեմային, ընդգրկում է երկրաբանական դարաշրջանի ընթացքում առաջացած նստվածքները: Տերմինը առաջարկել է ամերիկյան երկրաբան Յ. Յեդբերգը 1966-ին: Ռուսական գրականության մեջ «Է.» տերմինի հոմ-ը խուճբն է, որը խորհուրդ չի տրվում օգտագործել: Է. արտահայտում է քարոլորտի և օրգանական աշխարհի զարգացման խոշոր փուլը: Պալեոզոյան, մեզոզոյան և կայնոզոյան Է-ները, որոնք կազմում են ֆաներոզոյան էոնոտեման, բնորոշվում են բույսերի ու կենդանիների խոշոր (մինչև դասերը) տաքսոնների յուրահատուկ համալիրներով: Յուրաքանչյուր Է. բաժանվում է 3 և ավելի համակարգերի: Արխեյը և պրոտերոզոյը մինչև այժմ կոչվում են Է-ներ, բայց դրանց երկարատևությունը պահանջում է ընդհանուր շերտագրական սանդղակի ավելի բարձր կարգի միավորի շնորհում:
- Յ-50. ЭРОДИРОВАННЫЙ ВУЛКАН** (լատ. erodo – կրծում են, մաշում են) – **ԷՐՈՂԻՐՈՎԱԾՎԱԾ ՀՐԱՔՈՒՄ, DISSECTED VOLCANO**, հրաբխային կոն, որի լանջերը խոր կտրատված են շառավղաձև ողողամաշման ակոսներով:
- Յ-51. ЭРОЗИОННАЯ ДОЛИНА – ՈՂՈՂԱՍԱՇՄԱՆ (ԷՐՈՋԻՈՆ) ՀՈՎԻՏ, EROSIONAL VALLEY**, հովիտ, որն առաջացել է հոսող ջրի ողողաքայքայման գործողությամբ, սովորաբար առանց տեկտոնիկայի կանխորոշիչ դերի:
- Յ-52. ЭРОЗИОННАЯ ТЕРРАСА, КОРЕННАЯ ТЕРРАСА – ՈՂՈՂԱՍԱՇՄԱՆ (ԷՐՈՋԻՈՆ) ԴԱՐՎԱՆԿ (ԴԱՐԱՏԱՓ), ԱՐՄԱՏԱԿԱՆ ԴԱՐՎԱՆԿ, ROCK-TERRACE, ROCK BENCH, EROSION TERRACE**, դարավանդ, որը կազմված է փոքր հաստության էյլովիալ նստվածքներով ծածկված արմատական ապարներից: Դրանք հաճախ առավել հին և առավել բարձր դարավանդներ են, որոնցից լերկացումը հասցրել է արտահանել ծածկող ավելի հաստ ալյուվին:
- Յ-53. ЭРОЗИОННЫЕ ГОРЫ – ՈՂՈՂԱՍԱՇՄԱՆ (ԷՐՈՋԻՈՆ) ԼԵՌՆԵՐ, EROSION MOUNTAINS**, լեռներ, որոնք առաջացել են երկրի մակերևույթի բարձր բարձրացած, հորիզոնական երկրք. կառուցվածք ունեցող սարավանդանման մարզերի խոր ողողամաշման մասնատման հետևանքով (սովորաբար պլատֆորմներում): Օր.՝ Հս. Ամերիկայում Կոլորադո գետի ավազանը:
- Յ-54. ЭРОЗИОННЫЙ ЦИКЛ**, տե՛ս Водноэрозионный цикл:
- Յ-55. ЭРОЗИЯ** (լատ. erosio – ողողում, քայքայում, մաշում) – **ՈՂՈՂԱՍԱՇՈՒՄ (ՈՂՈՂԱՀԱՆՈՒՄ, ԷՐՈՋԻԱ), EROSION**, ջրային հոսքերով ապարների և հողերի քայքայման գործընթաց: Արտահայտվում է՝ ա) հոսանքի մեխ. ազդեցությամբ, որը հարուցում է պինդ մասնիկների կախույթ ու արտահանում կամ դրանց տեղափոխում ջրային հոսքի մահճի վրայով, բ) ապարների լուծում ջրում (կոռոզիա), գ) հոսքի մահճի քերամաշում, լցակալում՝ ջրում տեղափոխվող մասնիկներով (կոռազիա), դ) հակադիր նշանի էլեկտրական լիցքերի հարուցում «ջուր-պինդ մարմին» համակարգում, որը նպաստում է մանր մասնիկների կախութեացմանը: Ո. երկրի մակերևույթի ռելիեֆի ձևավորման գործոններից մեկն է: Տարբերում են մակերևութային Ո. (լանջերի ողողում), որը նպաստում է ռելիեֆի անհարթությունների հարթմանը, և գծային Ո. (ծորակների, հովիտների առաջացում), որը հանգեցնում է երկրի մակերևութի ռելիեֆի մասնատմանը: Գծային Ո. բաժանվում է խորքայինի և կողայինի: Արևմտյան երկրների երկրաձևաբանները «Ո.» տերմինը օգտագործում են ավելի լայն հասկացությամբ՝ դրա տակ հասկանալով գծային ու հարթ լերկացման բոլոր գործընթացները:

- Յ-56. ЭРУПТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ** (լատ. eruptus – կոտրելով դուրս նետված, արտանետված) – **ԺԱՅԹՔՈՒՄԱՅԻՆ (ԺԱՅԹՔՄԱՆ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, ERUPTIVE ACTIVITY**, հրաբխի ժայթքման հետ կապված գործընթացների ու երևույթների համախմբություն:
- Յ-57. ЭРУПТИВНЫЙ ЦЕНТР – ԺԱՅԹՔՈՒՄԱՅԻՆ (ԺԱՅԹՔՄԱՆ) ԿԵՆՏՐՈՆ, ERUPTION CENTRE, ERUPTIVE VENT**, փողաբերանային մաս, որով հրաբխային արգասիքները խորքից դուրս են բերվում մակերևույթ:
- Յ-58. ЭСТУАРИЙ** (լատ. aestuarium – գետաբերանի ողողում) – **ԷՍՏՈՒԱՐ (ԳԵՏԱԲԵՐԱՆԱԾՈՑ), ESTUARY**, դեպի օվկիանոս կամ ծով ընդարձակվող ձագարածև գետաբերան: Առաջանում է, երբ գետի բերած ջրաբերուկները հեռանում են ծովային հոսանքների, մակընթացության և տեղատվության հետևանքով, ինչպես նաև ցամաքի իջեցման, գետաբերանները ծովով ծածկվելու ժամանակ: Բնորոշ է խոշոր գետերին:
- Յ-59. ЭТАЖ СТРУКТУРНЫЙ**, տե՛ս Структурный ярус (этаж):
- Յ-60. ЭТМОЛИТ** (հուն. ēthmós – մաղ, քամիչ և lithos – քար) – **ԷԹՄՈԼԻԹ, ETHMOLITH**, աններդաշնակ տեղադրված ներժայթքային ձագարանման մարմին:
- Յ-61. ЭФФУЗИВНЫЕ ГОРНЫЕ ПОРОДЫ, ВУЛКАНИЧЕСКИЕ ГОРНЫЕ ПОРОДЫ, ИЗЛИВШИЕСЯ ГОРНЫЕ ПОРОДЫ, ВУЛКАНИТЫ – ԱՐՏԱԺԱՅԹՔԱՅԻՆ (ԱՐՏԱԺԱՅԹՔՈՒՄԱՅԻՆ, ԷՖՈՒԶԻՎ) ԱՊԱՐՆԵՐ, ԱՐՏԱՎԻԺՎԱՆ (ԱՐՏԱՎԻԺՈՒՄԱՅԻՆ) ԱՊԱՐՆԵՐ, ԶՐԱԲԵԱՔԱՐԵՐ, EFFUSIVE ROCKS**, մագմայական ապարներ, որոնք առաջանում են մագմայի պնդեցման ժամանակ՝ Երկրի մակերևույթին կամ մերձ-մակերևույթային պայմաններում: Ա. ա-ի կազմում առանձնացվում են բուն արտա-ժայթքային (արտավիժական, էֆուզիվ) ապարներ (գոյանում են լավայի ազատ փոփոխության դեպքում), արտամղաժայթքային (էքստրուզիվ) (գոյանում են մակերևույթ մղված մածուցիկ լավայից) և հրաբեկորային (հրաբխային արտանետուկների բեկորային նյութ): Ա.ա-ի մեջ առավել տարածված են բազալտներն ու անդեզիտները (կազմում են Ա. ա-ի գրաված մակերեսի ոչ պակաս, քան 75 %), դաջիտներն ու ռիոլիթները (մոտ 25 %), մոտ 1% կազմում են ալկալիական (ֆոնոլիթներ, լեյցիտներ և այլն) և գերիիմքային (կոմատիտներ և այլն) Ա. ա.: Թթու և ալկալիական Ա. ա-ի համար սովորական են ապակեման կառուցվածքները, անդեզիտների ու բազալտների համար՝ կիսաբյուրեղային (հիալոպիլիտային, տոլեիտային, ինտերսերտալ): Տիպիկ են պորֆիրային կառուցվածքները: Ա. ա. կարող են լինել հոծ, փրփրուն, նշաքարային, ֆլուիդալ, զոլավոր: Անջատությունները հատկապես բնորոշ են բազալտների համար (սյունածև, գնդանման, բարձիկավոր): Դյուրահոս հիմքային լավաներն առաջացնում են տափակացած, ձգված մարմիններ՝ ծածկոցներ, հոսքեր, դայկաներ, իսկ մածուցիկները (թթու, միջին)՝ գմբեթներ, կոթողներ, ասեղներ:
- Յ-62. ЭФФУЗИЯ** (լատ. effusio – արտահոսում) – **ԱՐՏԱՎԻԺՈՒՄ, ԶՐԱԲԵԱՎԻԺՈՒՄ (ԷՖՈՒԶԻՎ), EFFUSION**, հեղուկ լավայի հանգիստ արտավիժում: Սովորաբար առաջացնում է ծածկոցներ ու հոսքեր: Մեծ մասամբ պայթումներով չի ուղեկցվում:



# Ю, Я

**Ю-1. ЮВЕНИЛЬНЫЕ ВОДЫ** (լատ. Juvenilis – պատանի) – **ԿՈՒՍԱԿԱՆ (ՅՈՒՎԵՆԻԼ) ՋՐԵՐ, JUVENILE WATER**, ստր. ջրեր, որոնք առաջանում են մեծ խորություններում ջրային գոլորշիներից և, հավանական է,  $H^+$  և  $O_2$  դիսոցված ատոմներից: Կ. ջ. սկիզբ են առնում կա՛մ մագմայական օջախների գազագոլորշային անջատումներից, կա՛մ խորքային ապարների քիմիապես կապակցված ջրերից: Կ. ջ. մաքուր վիճակում Երկրի մակերևույթ չեն հասնում, խառնվում են ծծանցման կամ այլ ջրերի հետ:

**Ю-2. ЮРСКАЯ СИСТЕМА (ПЕРИОД), ЮРА** (Յուրայի լեռների անունից, Ֆրանս. և Շվեյց.) – **ՅՈՒՐԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳ (ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ), ՅՈՒՐԱ, JURASSIC**, մեզոզոյան էրատեմայի երկրորդ համակարգ, համապատասխանում է Երկրի պատմության մեզոզոյան դարաշրջանի երկրորդ ժամանակաշրջանին: Շերտագրական սանդղակում հաջորդում է տրիասին և նախորդում է կավճի համակարգին: Ռադիոչափական մեթոդով սկիզբը որոշվում է 200 մլն. տ., վերջը՝ 142 մլն. տ., ընդհանուր տևողությամբ՝ 58 մլն. տ.: Յ. հ. ժամանակակից ծավալով անջատել է գերմ. գիտնական Ա. Դունբուլտը 1822-ին:

## Յուրայի համակարգի հարկերը

Բաժիններ	Հարկեր
Վերին (մալմ)	Տիտոնի (վոլգայի) Կիմերիջի Օքսֆորդի
Միջին (դոգեր)	Կելովեյի Բաթի Բայոսի Ալենի
Ստորին (լեյաս)	Տոարի Պլիսբախի Սինեմյուրի Հետանգի

Տիտոնի հարկն անջատվում է Միջերկրածովյան կենսաշխի. մարզում, հյուսիսային (բորեալ) զոնայում նրա համաթեքը հանդիսանում է վոլգայի հարկը: Յուրայում, տրիասի հետ համեմատած, ուժեղանում են տեկտ. շարժումները (առավել ուժգին հաղաղ օվկիանոսի ծայրամասերին հարող մարզերում): Տեղի է

ունեցել Ատլանտյան և Հնդկական օվկիանոսների իջվածքների ձևավորումը՝ հարուցված, ըստ երևույթին, մայր ցամաքների տարաշարժմամբ և, հատկապես, Գոնդվանայի մասնատմամբ: Բեկվածքների զոնաների (Արլ. Աֆրիկա, Հր. Ամերիկա) հետ կապված է ցամաքային հրաբխայնության զգալի դրսևորումը: Հր. կիսագնդի մայր ցամաքներում յուրայի ընթացքում պահպանվել են առավելապես ցամաքային պայմաններ: Կլիման յուրայի սկզբում եղել է թույլ տարբերակված և համեմատաբար չորային, միջին յուրայում դառնում է խոնավ: Միջին յուրայի խոնավ կլիման նպաստել է ածխազոյացմանը, իսկ ուշ յուրայի չորայինը՝ էվապորիտների կուտակմանը: Օրգանական աշխարհում ծաղկման են հասնում ամոնիտները, բելեմնիտները, սպունգները, գաղութային կորալները: Հանդես են գալիս թռչող մողեսները և թռչունները, լայնորեն տարածվում են դինոզավրերը: Կաթնասունները սակավաքանակ են և պարզունակ: Բուսական աշխարհի համար բնորոշ են գինկգոները, պտերները, ձիածետերը, բենետիտները և այլն: Օգտ. հնժ-ների մեջ զգալի են ածուխների ու նավթի, երկաթի հանքանյութերի, ֆոսֆորիտների և այլ հանքանյութերի պաշարները:

**Я-1. ЯДЕРНАЯ ГЕОХРОНОЛОГИЯ**, տե՛ս Абсолютная геохронология:

**Я-2. ЯДЕРНО-ГЕОФИЗИЧЕСКИЕ МЕТОДЫ – ՄԻՋՈՒԿԱԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԵԹՈՂՆԵՐ, NUCLEAR-GEOPHYSICAL METHODS**, երկրֆ. մեթոդների համախմբություն, հիմնված են ապարներում բնական կամ արհեստականորեն հարուցվող միջուկային ճառագայթումների դաշտերի ուսումնասիրության վրա: Ապարներից ճառագայթումների դաշտերի փոփոխությունը և ռադիոակտիվ ճառագայթումների փոխազդեցությունը կախված են ապարի կազմից ու հատկություններից և դրանց հագեցնող ֆլյուիդներից (գազ, նավթ, ջուր): Մ. մ. օգտագործվում են ուսումնասիրելու երկրակեղևի կազմը, երկրբ. կառուցվածքը, Երկրի ընդերքում ընթացող գործընթացները, ինչպես նաև վերահսկելու օգտ. հնժ-ների հնքվ-երի որոնման և մշակման աշխատանքները: Ի տարբերություն մյուս երկրֆ. մեթոդների, Մ. մ. տալիս են անմիջական տեղեկատվություն ուսումնասիրվող օբյեկտի տարրային և ռադիոնուկլիդային կազմի մասին: Միջուկաերկրֆ. հանույթի կատարման ժամանակ առավել լայն օգտագործվում են գամմա-մեթոդները (գամմա-հանույթ), որոնք հիմնված են ապարներում պարունակվող բնական ռադիոակտիվ նուկլիդների գամմա-ճառագայթման հոսքի կամ սպեկտրի ուժգնության չափման վրա: Ապարներում բնական նեյտրոնային հոսքերի արձանագրման վրա հիմնված մեթոդները լայն կիրառություն չստացան: Ռենտգենառադիոչափական մեթոդը կիրառվում է հանքային երկրաֆիզիկայում: Հորատանցքերում երկրֆ. ուսումնասիրությունների ժամանակ առավել լայն օգտագործվում են գամմա-կարոտաժը, գամմա-գամմա կարոտաժը, նեյտրոն-նեյտրոնային կարոտաժը և նեյտրոնային գամմա-կարոտաժը:

**Я-3. ЯДРО ЗЕМЛИ – ԵՐԿՐԻ ՄԻՋՈՒԿ, EARTH'S CORE**, կենտրոնական երկրորդրտ՝ մոտավորապես 3470 կմ շառավղով: Ե. մ-ի գոյությունը հաստատել է գերմ. երկրաշարժագետ Է. Վիխերտը 1897-ին, տեղադրման խորությունը (2900 կմ) որոշել է ամերիկյան երկրաֆիզիկոս Բ. Գուտենբերգը 1910-ին: Ե. մ. կազմված է արտաքին, հավանաբար, հեղուկ միջուկից (մինչև 4980 կմ խորությունը), անցողիկ պնդացած շերտից (մինչև 5120 կմ խորությունը) և պինդ ներքին միջուկից: Ե. մ-ի առաջացման մասին միասնական կարծիք չկա: Ենթադրում են, որ այն առաջացել է առաջնային Երկրի ձգողական (գրավիտացիոն) տարբերակման հետևանքով՝ նրա ած-

ման ընթացքում կամ ավելի ուշ, կամ երկաթային միջուկը զոյացել է դեռևս նախա-մոլորակային ամպում: Ե. մ-ի կազմի և ֆիզ. պարամետրերի մասին տե՛ս Земля:

**Я-4. ЯДРО СКЛАДКИ – ԾԱԼՔԻ ՄԻՋՈՒԿ, CORE OF FOLD**, ծալքի ներքին մաս, որը կամարածալքերում (անտիկլինալներում) կազմված է ավելի հին նստվածքներից՝ համեմատած ծալքի արտաքին մասը կազմող նստվածքների հետ, իսկ գոգածալքերում (սինկլինալներում)՝ ավելի երիտասարդներից:

**Я-5. ЯНТАРЬ** (լիտվերեն gint āras, լատիշերեն dzintaras) – **ՍԱԹ, AMBER**, միներալ, փշատերև ծառերի, գլխ. պալեոգենի ժամանակաշրջանի, քարացած բրածո խեժ: Մոտավոր քիմ. կազմը  $C_{10}H_{16}O$ : Հանդիպում է կիսաթափանցիկ, սակավ թափանցիկ հատիկների, պալարների, թիթեղների տեսքով՝ մի քանի մմ-ից մինչև 50 սմ չափերով: Գույնը՝ գորշ. դեղին, կարմիր, հազվադեպ՝ կանաչ: Կարծրությունը՝ 2-3: Հանդիպում է գլխ. մերձափնյա ծովային ծագման կավերում, ավազներում: Ոսկերչական-արհեստագործական քար է:

**Я-6. ЯРОЗИТ** (հայտնաբերման վայրի՝ Յարոսո, Jaroso, տեղանքի անունից, Իսպանիա) – **ՅԱՐՈՋԻՏ, JAROSITE**, սուլֆատների դասի միներալ,  $KFe_3[SO_4]_2(OH)_6$ : Բյուրեղագիտական համակարգը տրիգոնային է: Մոլորաբար հանդիպում է կեղևիկների տեսքով, հողանման զանգվածներով, հատիկավոր ու հոծ ագրեգատներով, կոնկրեցիաների ձևով: Գույնը՝ օխրայի դեղին: Կարծրությունը՝ 3.0-3.5: Ծազունը վերնածնային է՝ սուլֆիդային հնքվ-երի օքսիդացման զոնայում:

**Я-7. ЯРУС ГЕОЛОГИЧЕСКИЙ – ԵՐԿՐԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԿ, GEOLOGICAL STAGE**, ընդհանուր (միջազգային) շերտագրական սանդղակի ստորաբաժանում, ենթադաս է երկրբ. բաժնին, ընդգրկում է երկրբ. դարի ընթացքում առաջացած նստվածքները: Ե. հ-ի շերտագրական ծավալը և սահմանները որոշվում են նրա համար տիպային կենդանիների սեռերի, ենթասեռերի ու տեսակների համալիրով, որը, որպես կանոն, գտնված է նրա շերտատիպերում: Քեմբրի-նեոգեն միջակայքում առանձնացված են 92 Ե. հ.: Ե. հ-երը բաժանվում են զոնաների (քրոնոզոնաների) (ընդհանուր շերտագրական սանդղակում), միաժամանակ կարող են մասնատվել պրովինցիալ կամ տեղական կենսաշերտագրական զոնաների՝ ըստ օրգանիզմների տարբեր խմբերի: Ե. հ-ի անվանումը տրվում է այն աշխ. օբյեկտի անվանումից, որի տարածքում կամ որի մոտ գտնվում է շերտատիպը:

**Я-8. ЯШМА** (արաբ. յաշբ-ից) – **ՀԱՍՊԻՍ (ՀԱՍՄԿԱՔԱՐ), JASPER**, նստվածքափոխակերպային ապար, որն ուղեկցում է օֆիոլիթային համալիրներին: Գաղտնաբյուրեղային, ամուր, չլուսարկող, խեցածև կոտրվածքով ապար է: Կազմված է հիմնականում քվարցի նրբահատիկավոր ագրեգատից և զուևավորված է երկաթի օքսիդների ու հիդրօքսիդների և այլ միներալային խառնուրդների հետևանքով՝ առավելապես կարմիր, դեղին և կանաչ գույներով: Տարբերում են Հ-ի մի քանի գեղազարդային տեսակներ՝ համասեռ, բժավոր, զոլավոր, խայտաբղետ, փշրաքարանման և բնապատկերային: Ըստ ծագման նստվածքային է՝ թույլ փոխակերպված: Գեղազարդային և արհեստագործական քար է:

## ՀԱՅԵՐԵՆ ՏԵՐՄԻՆԱՑԱՆԿ

### Ա

- ԱԱ լավա (ԱԱ-հրահոսք), **A-1**  
աալենի հարկ, աալեն, **A-2**  
աբեվիլ, աբվիլ, **A-3**  
արյացիա, **A-11**  
ագատ, **A-38**  
ադամեղիթ, **A-51**  
ադուլար, **A-55**  
ագատ ոսկի, **3-63**  
ագատ ջուր, **B-144**  
ագիմուտ, **A-56**  
ագիմուտային աններդաշնակություն, **A-60**  
ագնիվ մետաղներ, **B-118, D-109**  
ագոտ, **A-61**  
ագուրիտ (խաժաքար), **A-62**  
աերոլոգիա, **A-291**  
ալբիտ, **A-123**  
ալբիտոֆիր, **A-124**  
ալբյան հարկ, ալբ, **A-125**  
ալդանի հարկ, **A-95**  
ալեբախման նշաններ, **B-202**  
ալեբաստր, լսնակուճ (ալաբաստր), **A-96**  
ալեքսանդրիտ, ոսկեբյուրեղ, **A-103**  
ալիթացում, **A-104**  
ալիթներ, **A-105**  
ալիքային ծփանքի նշաններ, **3-57**  
ալիքային ողողամաշում  
(ողողահանում, էրոզիա), **B-200**  
ալիքավոր լավա (հրահոսք), **B-198**  
ալիքավոր շերտավորություն, **B-199**  
ալիքավորում (ունդուլացում), **Y-23**  
ալկալիական ապարներ, **Ա-2**  
ալկալիական գնեյսներ (զոծաքարեր),  
**Г-357**  
ալմայի հարկ, **A-127**  
ալմանդին, **A-126**  
ալմաստ, **A-118**  
ալմաստաբեր փողոակ, **A-119**  
ալմաստային հորատում, **B-179**  
ալյասկիտ, **A-138**  
ալյումասիլիկատներ, **A-137**  
ալյումին, **A-134**  
ալյումինի հանքաքարեր, **A-133**  
ալոխթոնային (տարաբերուկային) կրա-  
քարեր, **И-22**  
ալոխթոններ, **A-110**  
ալոֆան, **A-106**  
ալպիդներ, **A-128**  
ալպինակերպ ներժայթքումներ (ինտ-  
րուզիաներ), **И-124**  
Ալայան ծալքավոր լեռնագոյացման  
մարզ, Ալա-Յիմալայան ծալքավոր  
լեռնագոյացման մարզ, **A-129**  
ալայան ծալքավորություն, **A-130**  
ալայան ռելիեֆ, **A-132**  
ալայան սառցադաշտ, **A-131**  
ալունիտ (պաղլեղաքար, շիբաքար),  
**A-120**  
ալունիտացում (պաղլեղաքարացում),  
**A-122**  
ալունիտի (պաղլեղաքարի, շիբաքարի)  
հանքաքարեր, **A-121**  
ալրիտ, **A-97**  
ալրիտային (ալրիտակավային) տիղմ,  
**И-69**  
ալրիտային կավ, **A-98**  
ալրիտային մասնիկներ, **A-99**  
ալրոլիթ (ալրաքար), **A-100**  
ալրոլիթ խառնակազմ  
(պոլիմիկտային), **A-102**  
ալրոլիթ սակավախառն, (օլիգոմիկ-  
տային), **A-101**  
ածանցուկներ (ածանցյալներ, դերի-  
վատներ), **D-45**  
ածխաբեր (ածխային) ավազան, **B-50**  
ածխաբեր շերտախումբ, **C-31**  
ածխաբեր ստվարաշերտ, **Y-3**  
ածխաբեր ֆորմացիաների ռիթմակա-  
նություն (ցիկլայնություն), **P-102**  
ածխաբեր ֆորմացիա (կազմավորում),  
**Y-4**

- ածխաբերություն, **Y-5**  
 ածխագոյացման ծովեզերքային (պարալիկական) տիպ, **П-45**  
 ածխաերևակում, **Y-6**  
 ածխադյուս (ադյուս), բրիկետ, **Б-168**  
 ածխային բիտումներ (հանքածյութեր), **Б-116**  
 ածխային թերթաքար, **Y-9**  
 ածխային հանքավայր, **М-174**  
 ածխային մուր, **С-1**  
 ածխաշերտ, **П-161**  
 ածխաջրածիններ, **Y-2**  
 ածխացում, **К-66, Y-7**  
 ածխի բաղադրամասեր (ինգրեդիենտներ), **И-83**  
 ածխի երկրաքիմիա, **Г-185**  
 ածխի ծագումնաբանական տիպ, **Л-116**  
 ածխի հողմահարում, **В-287**  
 ածուխների ծագումնաբանական դասակարգում, **К-163**  
 ածուխների միներալային բաղադրամասեր, **К-215**  
 ածուխների փոխակերպություն (մետամորֆություն), **М-211**  
 ականթիտ, **А-63**  
 ակնադիտական [մակրոսկոպ(ի)ական], **М-54**  
 ակնարկային քարտեզներ, **О-6**  
 ակնոցակերպ կառուցվածք, **О-220**  
 ակոս, **Б-145**  
 ակոսային նմուշ, **П-336**  
 ակոսային նմուշահանում, **Б-151**  
 ակչագիլյան ավազան, **А-93**  
 ակչագիլյան հարկ, ակչագիլ, **А-94**  
 ակտինիում, **А-87**  
 ակտինոլիթ (ճառագայթաքար), **А-88**  
 ակտինոլիթ-աքետ (ճառագայթաքար-կտավաքար, ճառագայթաքար-անկիզաքար), **А-89**  
 ակտիվ ածուխ, **А-82**  
 ակտիվ գազեր, **А-81**  
 ակտիվ ջրափոխանակման զոնա, **З-69**  
 ակտիվ սառցադաշտ, **А-86**  
 ակտիվացած պլատֆորմ, **А-80**  
 ակտիվացման ժամանակաշրջան, **П-91**  
 ակտիվացման մարզերի (զոնաների) մետաղագոյացում, **М-194**  
 ակտուահնէաբանություն (արդիահնէաբանություն), **А-91**  
 աղագոյացման երկրաքիմիա, **Г-176**  
 աղագոյացում, **Г-41**  
 աղածին (հալոգենային) հողեր, **Г-44**  
 աղածին (հալոգենային) ապարներ, **Г-43**  
 աղակուտակում, **С-212**  
 աղահամ (աղիավուն) ջուր, **В-149**  
 աղային գմբեթ, **С-219**  
 աղային տեկտոնիկա, **С-218**  
 աղաջրեր, **Р-56**  
 աղբյուր, **И-150**  
 աղբյուրի ծախս, **Д-24**  
 աղբյուրների նստվածքներ, **О-196**  
 աղեխորշավորներ, **К-151**  
 աղետավորություն, **К-122**  
 աղի ջուր, **В-148**  
 աղուտ, **С-216**  
 աղուտացված հողեր, **З-36**  
 աճանստվածք, **А-68**  
 աճող գետաբերան (դելտա), **Р-57**  
 ամազոնիտ, ամազոնաքար, **А-137**  
 ամգայի հարկ, **А-138**  
 ամեթիստ, մեղեսիկ, **А-139**  
 ամիկտային լիճ, **А-140**  
 ամոնալներ, **А-141**  
 ամոնիտներ, **А-142**  
 ամորֆություն, **А-143**  
 ամփոփիչ շերտագրական կտրվածք, **Р-44**  
 ամֆիբիոտներ, **А-149**  
 ամֆիբոլային արքեստ (անկիզաքար, կտավաքար), **А-251**  
 ամֆիբոլ-արքեստ (ամֆիբոլ-կտավաքար), **А-150**  
 ամֆիբոլացում, **А-151**  
 ամֆիբոլիթ (եղջերափայլ, հոմաքար), **А-152**  
 ամֆիբոլներ, **А-157**  
 այլածին միներալներ, **М-285**  
 այրվող թերթաքարեր, հրաբխոլումավոր թերթաքարեր, **Г-413**  
 այրվող հանածոներ, **Г-412**  
 անաբերգիտ, **А-181**  
 անագ, **О-78**  
 անագաքար, **О-80**  
 անագի հանքաքարեր, **О-79**  
 անագի հրաքար, **О-81**  
 անաթեքսիտ, **А-167**  
 անալցիմ, **А-164**  
 անապատ, **П-377**  
 անապատային նստվածքներ, **О-199**

- անապսիդներ, **A-165**  
անատագ, **A-166**  
անատեկտիկ գրանիտագոյացում, **Գ-447**  
անարմատ ծալք, **C-141**  
անբյուրեղակազմ, ամորֆ, **A-145**  
անգլեզիտ, **A-171**  
անդալուզիտ, անդալուզաքար, **A-172**  
անդեզիտ, անդեզաքար, **A-173**  
անդեզիտային գիծ, **A-174**  
անդեզիտային լավա (հրահոսք), **Ղ-4**  
անդյան ծալքավորություն, **A-175**  
անդրադիտ, **A-176**  
անթոֆիլիտ, **A-202**  
անիական տիպի տուֆ, **T-119**  
անիզիյան հարկ, **A-177**  
անիզոտրոպային ապար, **A-179**  
անիզոտրոպություն, **A-178**  
անձնոտներ, **Ե-84**  
անկանոնություն, անբնականոնություն,  
**A-183**  
անկերիտ, **A-180**  
անկման ազիմուտ, **A-58**  
անկման անկյուն, **Y-13**  
անկման գիծ (երկրբ.), **Ղ-98**  
անկման ուղղություն, **H-30**  
անկյունագծային հովիտ, **Դ-60**  
անկյունային աններդաշնակություն, **H-75**  
անկյունաչափ, **Գ-376**  
անկյունավորություն, **Y-10**  
անհամաչափ ծալք, **A-254**  
անհամաչափ կամարածալք (անտիկլի-  
նալ), **A-196**  
անհամաչափ հովիտ, **A-253**  
անհանուկային (անկեռն) հորատում,  
**Ե-180**  
անհիդրիտ, **A-169**  
անհիդրիտացում, **A-170**  
անձրևի կաթիլների դրոշմահետքեր,  
**O-208**  
անճնշում (ճնշումազուրկ, ազատ) ջուր,  
**B-108**  
աններդաշնակ ծալքավորություն, **Դ-82**  
աններդաշնակ ծալքեր, **C-144**  
աններդաշնակ տեղադրում, **Դ-83**  
աններդաշնակ ներծայթումներ (ինտ-  
րուզիաներ), **И-115**  
աններդաշնակության անկյուն, **Y-11**  
աններդաշնակության մակերևույթ, **Ս-204**  
աններդաշնակություն, աններդաշնակ  
տեղադրում, **H-65**
- անողնաշարավորներ, **Ե-78**  
անողնաշարավորների հնէաբանություն,  
**Ս-23**  
անորթիտ, **A-188**  
անորթոզիտ, **A-189**  
անորթոկլազ, **A-190**  
անորթոկլազիտ, **A-191**  
անջատություն, **O-186**  
անջրաթափանց (անջրանցիկ, ջրամերժ)  
ապար, **B-164**  
Անտարկտիդա, **A-192**  
անտեկլիզ, **A-193**  
անտեցեդենտ հովիտ, **A-194**  
անտիմոնիտ (ծարրաքար, ծարրի փայլ)  
**A-201**  
անտրացիտ, **A-203**  
անտրոպոզեն, **A-204**  
անտրոպոզենի(յան) համակարգ (ժամա-  
նակաշրջան), **A-209**  
անտրոպոզենյան բնապատկեր (լանդ-  
շաֆտ) **A-207**  
անտրոպոզենյան գործոններ, **A-206**  
անտրոպոզենյան հողեր, **A-205**  
անտրոպոզենյան ռելիեֆ, **A-214**  
անցումային զոնա (մայրցամաքից դեպի  
օվկիանոս), **3-89**  
անօդակյաց օրգանիզմներ, **A-168**  
աշգիլյան հարկ, աշգիլ, **A-281**  
աշել, **A-282**  
աշխարհագրական բաղադրամասեր,  
բնապատկերի (լանդշաֆտի ) բաղադ-  
րամասեր, **Գ-77**  
աշխարհագրական բևեռ, **Գ-80**  
աշխարհագրական զոտի, **Գ-81**  
աշխարհագրական զոնա,  
բնապատկերային (լանդշաֆտային)  
զոնա, **Գ-73**  
աշխարհագրական թաղանթ, բնապատ-  
կերային (լանդշաֆտային թաղանթ),  
**Գ-74**  
աշխարհագրական լայնություն, **Գ-75**  
աշխարհագրական լանդշաֆտ,  
բնապատկեր, **Ղ-30**  
աշխարհագրական կոորդինատներ, **Գ-78**  
աշխարհագրական միջօրեական, **Գ-79**  
աշխարհագրական քարտեզագրքեր  
(պատկերագրքեր, ատլասներ), **A-269**  
աշխարհագրական քարտեզներ, **Գ-76**  
աշխարհագրություն, **Գ-82**

աուրիպիզմենտ, ոսկեգունակ, **A-274**  
 աչքաչափային հանույթ, **F-290**  
 ապակեբեկորներ (հիալոկլաստներ),  
**F-202**  
 ապառաժային ապար, **P-292**  
 ապառաժային գրունտ (գետին), **F-476**  
 ապատիտ (ֆոսֆատաքար), **A-213**  
 ապատիտի (ֆոսֆատաքարի)  
 հանքաքարեր, **A-214**  
 ապար, **F-387**  
 ապարաբանություն, **P-117**  
 ապարագրություն, **P-115**  
 ապարազանգված, հանքազանգված,  
**W-22**  
 ապարակազմիչ միներալներ, **M-293**  
 ապարաճյուղ, ճյուղավորում, **A-217**  
 ապարատեկտոնիկա, **P-118**  
 ապարաքիմիա, **P-120**  
 ապարաֆիզիկա, **P-119**  
 ապարի (գրունտի) խոնավություն, **B-88**  
 ապարի ամրության գործակից, **K-318**  
 ապարի ամրություն, **K-344, P-362**  
 ապարի առավելագույն ներծուծ խոնա-  
 վատարություն, **M-58**  
 ապարի բնական խոնավություն, **E-3**  
 ապարի լրիվ խոնավություն, **P-260**  
 ապարի հորատելիություն, **B-201**  
 ապարի ուռչում, **H-2**  
 ապարի ջրահագեցում, **H-38**  
 ապարի ջրառատություն, **B-170**  
 ապարների առաձգականություն, **Y-25**  
 ապարների բիտումացում, **B-111**  
 ապարների գազաթափանցելիություն,  
**F-32**  
 ապարների գազատարողություն, **F-24**  
 ապարների զանգված (ապարազանգ-  
 ված), **M-78**  
 ապարների թափանցելիություն, **P-349**  
 ապարների լուծագատում (լվացահա-  
 նում, տարալվացում), **B-324**  
 ապարների խոնավածություն (հիգրոս-  
 կոպիկություն), **F-203**  
 ապարների խոնավատարություն  
 (խոնավատարողունակություն), **B-81**  
 ապարների խոռոչավորություն, **K-1**  
 ապարների խտություն, **P-188**  
 ապարների ծակոտկենության  
 գործակից, **K-321**  
 ապարների կազմվածք (տեքստուրա),  
**T-21**

ապարների կայունություն, **Y-32**  
 ապարների կապակցվածություն, **C-34**  
 ապարների կծկում, **Y-30**  
 ապարների համալիր, **K-205**  
 ապարների հատիկաչափական կազմ,  
**F-445**  
 ապարների ձևախախտում, **D-50**  
 ապարների ճառագայթաակտիվություն  
 (ռադիոակտիվություն), **P-5**  
 ապարների ճարտարագիտակերպա-  
 նական ուսումնասիրություն, **H-95**  
 ապարների ճեղքավորվածություն  
 (ճեղքվածքավորություն), **T-105**  
 ապարների մերկացում, **O-17**  
 ապարների նստվածություն (նստման  
 ունակություն), **P-352**  
 ապարների պլաստիկություն, **P-164**  
 ապարների ջրակլանում, **B-172**  
 ապարների ջրատվություն  
 (ջրանջատում), **B-171**  
 ապարների սողք, **P-251**  
 ապարների տեղադրում, **3-14**  
 ապարների տեղաշարժ, **C-38**  
 ապարների ցեմենտացում, **U-3**  
 ապարների քարածագումնաբանական  
 տիպեր, **L-115**  
 ապլիտ, **A-216**  
 ապշերոնյան հարկ, ապշերոն, **A-220**  
 ապոֆիլիտ, **A-218**  
 ապվելինգ, **A-215**  
 ապտի հարկ, ապտ, **A-219**  
 առանցքային հարթություն, **O-164**  
 առաջաշարժ դելտա, **B-291**  
 առաջնային (սկզբնական) մագմա (հրա-  
 հեղուկ), **M-7**  
 առաջնային լեռնաշղթա, **P-78**  
 առաջնային հարթավայր, ծովային  
 կուտակման հարթավայր, **P-72**  
 առաջնային կլիված, **K-171**  
 առաջնային շերտավորություն, **P-73**  
 առաջնային սուլֆիդային  
 հանքանյութերի զոնա, **3-88**  
 առաջնատեկտոնական ռելիեֆ, **P-75**  
 առաձգական ձևախախտում, **D-54**  
 առաստաղի լրիվ փլեցում, **O-24**  
 առավելագույն մագմոթային բարձրա-  
 ցում, **M-60**  
 առափնյա խութ, եզերող խութ, **B-72**  
 առափնյա հարթավայր, **B-71**

- առափնյա սանդղակ, **Բ-73**  
 առափնյա սառցաբերուկ (մորեն), **Բ-70**  
 առու, **Կ-36**  
 ասբեստ (անկիզաքար, կտավաքար, լեռնային վուշ), **Ա-250**  
 ասելյան հարկ, **Ա-256**  
 ասեկվենտ սողանք, **Օ-95**  
 ասթենոսֆերա (թույլլորտ), **Ա-260**  
 ասինթյան ծալքավորություն, **Ա-258**  
 ասպիդային (թիթեղաքարային) թերթաքարեր, **Շ-191**  
 աստիճանավոր երակ, **Ջ-36**  
 աստիճանավոր շերտայնություն, **Դ-433**  
 աստիճանավոր վարնետքեր, դարավանդավոր վարնետքեր, **Շ-310**  
 աստինյան հարկ, **Ա-261**  
 աստրոֆիլիտ, **Ա-262**  
 ասուլ, **Մ-222**  
 ասֆալտային (գետնածյուրային) ապարներ, **Ա-266**  
 ասֆալտեններ (գետնածյուրներ), **Ա-264**  
 ասֆալտիտներ, **Ա-265**  
 ավազաթմբեր, բարխաններ, **Բ-39**  
 ավազաթմբերի (բարխանների) բլրաշարեր, **Բ-38**  
 ավազակավ, **Շ-317**  
 ավազային հատիկներ, ավազային մասնիկներ, ավազահատիկներ, **Մ-114**  
 ավազան, **Բ-41**  
 ավազաքար, **Մ-109**  
 ավազներ, **Մ-100**  
 ավանդելտա, **Ա-23**  
 ավանտյուրին, **Ա-24**  
 ավգիտ, հրատ, **Ա-25**  
 ավլակոգեն, **Ա-26**  
 ավստրալապիտեկներ, **Ա-27**  
 ավտոխթոնային (տեղային) նստվածքներ, **Օ-191**  
 ավտոխթոնային (տեղային) կրաքարեր, **Ի-21**  
 Ատլանտյան ծալքավոր լեռնագոյացման գոտի, **Ա-267**  
 ատլանտրոպ, **Ա-268**  
 արագոնիտ (արագոնաքար), **Ա-221**  
 արգելապատային խութ (բարիերային խութ), **Բ-40**  
 արգենտիտ (արծաթաքար, արծաթի փայլ), **Ա-222**  
 արգիլիթ (կավաքար), **Ա-224**  
 արզոն, **Ա-225**  
 արդիականություն (այժմեականություն), **Ա-90**  
 արդյունաբերական ջուր, **Մ-348**  
 արդյունագործական երկրաֆիզիկա, **Դ-153**  
 արենիզի հարկ, արենիզ, **Ա-227**  
 արզնահող, **Դ-309**  
 արթիկյան տիպի տուֆ, **Տ-120**  
 արխանտրոպներ, **Ա-240**  
 արխեյ, **Ա-241**  
 արխեյան դարաշրջան (էոն), **Ա-243**  
 արխեյան խումբ (էրատենա), **Ա-242**  
 արխեյան ծալքավորություններ, **Ա-244**  
 արխեոպտերիքս, հնաթռչուն, **Ա-246**  
 արխեոցիատներ, **Ա-247**  
 արխոզավրեր, **Ա-249**  
 արծաթ, **Շ-75**  
 արծաթի խաբուսակ, **Շ-77**  
 արծաթի հանքաքարեր, **Շ-78**  
 արծաթի փայլ, **Շ-79**  
 արկղածն ծալք, **Շ-140**  
 արկոզ, արկոզային ավազաքար, **Ա-230**  
 արմատական ապար, **Կ-281**  
 արմատական հանքավայրեր, **Կ-282**  
 արշիպելագ, կղզեխումբ, **Ա-248**  
 արսեն (մկնդեղ, գառիկ), **Մ-387**  
 արսենապիրիտ, գառիկի հրաքար, **Ա-234**  
 արսենի (մկնդեղի) հանքաքարեր, **Մ-388**  
 արսենիդներ բնական, **Ա-232**  
 արսենալիթ, գառիկաքար, **Ա-233**  
 արտազատում, **Շ-62**  
 արտաժայթքային (արտաժայթքումային, էֆուզիվ) ապարներ, արտավիժական (արտավիժումային) ապարներ, հրաբխաքարեր, **Յ-61**  
 արտամղային (էքստրուզիվ) ժայթքում, **Ի-14**  
 արտածին ծալքեր, **Շ-158**  
 արտածին հանքավայրեր, վերնածին (հիպերգեն) հանքավայրեր, նստվածքածագումնային հանքավայրեր, **Յ-7**  
 արտածին մետաղագոյացում, **Մ-196**  
 արտահոսային (արտաբերման, ջրաբերուկ) կոն, **Կ-259**  
 արտամղաժայթքում (էքստրուզիա), **Յ-15**  
 արտամղային (էքստրուզիվ) ժայթքում, **Ի-20**  
 արտասառցա(դաշտա)յին նստվածքներ, **Յ-13**



արտավիժում, հրաբխավիժում  
(էֆուզիա), **Յ-62**  
 արտավիժումային հրաբուխ, **B-241**  
 արտաքին գործընթացներ, **B-92**  
 արտաքին երկրասինկլինալային (գեո-  
 սինկլինալային) ճկվածք, **B-93**  
 արտեզյան ավազան, **A-236, B-42**  
 արտեզյան ջուր, **B-107**  
 արտեզյան ջրհոր, **A-237**  
 արտիկուլյատներ, **A-238**  
 արտինյան հարկ, **A-239**  
 աուրիպիզմենտ, ոսկեզուռակ, **A-274**  
 ափային (առափնյա)զիծ, **B-69**  
 ափային զոնա, **B-68**  
 ափային կուտակում, **A-75**  
 ափային ցրոններ, **P-117**  
 ափաքերման (ալեհարման) ափ, **A-16**  
 ափաքերման (ալեհարման) դարավանդ,  
**A-15**  
 ափաքերման (ալեհարման) կամար, **A-13**  
 ափաքերման (ալեհարման)  
 հարթավայր, **A-14**  
 ափաքերում (ալեհարում, աբրազիա),  
**A-17**  
 աքվիտանյան հարկ, աքվիտան, **A-67**  
 աֆանիտ, **A-276**  
 աֆանիտային ապար, **Ո-276**  
 աֆանիտային (նրբահատիկավոր) կա-  
 ռուցվածք, **A-277**  
 աֆանիտային (նրբահատիկավոր) կրա-  
 քարեր, **A-278**  
 աֆիրային (նրբաբյուրեղավոր) կառուց-  
 վածք, **A-279**  
 աֆտերշոկեր (հետհարվածներ, հետցն-  
 ցումներ), **A-280**

## Բ

բաբախման (պուլսացիոն) վարկած,  
**Դ-274**  
 բազալտ (սևակուճ), **B-5**  
 բադելեիթ, **B-1**  
 բազալտակերպեր, **B-9**  
 բազալտային լավա (հրահոսք), **Ղ-5**  
 բազալտային հոսք, **Ո-308**  
 բազալտային մագմա (հրահեղուկ), **M-4**  
 բազալտային շերտ, **B-8**  
 բազիտներ, **B-15**  
 բազիֆիկացում, **B-16**

բազմագոգածալք (սինկլինորիում), **C-120**  
 բազմագունություն, պլեոքրոիզմ, **Ո-174**  
 բազմագոնայական հանույթ, **M-312**  
 բազմախորշային հորատում, **B-189**  
 բազմածին (պոլիգեն) հրաբուխ, **Ո-255**  
 բազմածին (պոլիգեն) լեռներ, **Ո-254**  
 բազմակամարածալք  
 (անտիկլինորիում), **A-200**  
 բազմածև ձևափոխություններ, **M-315**  
 բազմածևություն, **Ո-259**  
 բազմամետաղական հանքավայր, **M-168**  
 բազմամետաղական հանքաքարեր,  
**Ո-256**  
 բազմափոխակերպություն (բազմամե-  
 տամորֆություն), **Ո-257**  
 բազմափուլ ներժայթքում (ինտրուզիա),  
**Ո-126**  
 բաթի(յան) հարկ, բաթ, **B-58**  
 բաթիալ նստվածքներ, **B-54**  
 բաթիալ ֆացիաներ, **Փ-14**  
 բաթիալ, բաթիալ զոնա (չափավոր խո-  
 րության զոնա), **B-53**  
 բաթոլիթ, **B-57**  
 բալլ, **B-26**  
 բախչիսարայի հարկ, **B-59**  
 բակլայածև հանքաքար, **B-126**  
 բակտերիաներ (մանրէներ), **B-21**  
 բակտրիոներ, **B-22**  
 բայկալյան ծալքավորություն, **B-17**  
 բայոսի(յան) հարկ, բայոս, **B-18**  
 բաշկիրյան հարկ, **B-60**  
 բար, **B-29**  
 բարդ երակ, **Ջ-35**  
 բարդ ծալք, **C-139**  
 բարդ վարնետք (տարեջք), **C-194**  
 բարելավում (մելիորացում), **M-127**  
 բարենի(յան) հարկ, բարեն, **B-36**  
 բարիում, **B-31**  
 բարիսֆերա, ծանրոլորտ, **B-30**  
 բարիտ, ծանրասպաթ, **B-32**  
 բարիտի (ծանրասպաթային)  
 հանքաքարեր, **B-33**  
 բարձրիկավոր լավա, գնդավոր լավա,  
 պիլոու-լավա, **Ղ-8**  
 բարձունք, բարձրություն, բարձրավայր,  
**B-187**  
 բարձր լեռներ, **B-306**  
 բարձրագրային (հիպսոգրաֆիկ)  
 կորագիծ, **Դ-286**

- բարձրալեռնային ռելիեֆ, բարձր  
լեռներ, **B-307**
- բարձրանիշ, **B-318**
- բարձրաչափական (հիպսոմետրական)  
հատակագիծ, **Ո-154**
- բարձրաչափական (հիպսոմետրական)  
քարտեզներ, **Դ-287**
- բարձրաչափություն (հիպսոմետրիա),  
**Դ-288**
- բարձրաջերմաստիճանային  
հանքավայր, **Մ-144**
- բարձրավանդակային հարթավայր, **Կ-3**
- բարձրացում, **Ո-225**
- բարձրացված թև, **Ո-228**
- բարտոնյան հարկ, **Բ-37**
- բաց ծալք, **Օ-188**
- բաց հանքարանի խորություն, **Դ-328**
- բաց ճեղքեր, **Օ-189**
- բացահանք, բաց հանքարան, **Կ-115**
- բացահանքի կող, **Բ-153**
- բացասական նստվածքակուտակում,  
**Շ-44**
- բացարձակ (միջուկային, իզոտոպային)  
երկրաժամանակագրություն, **Դ-189**
- բացարձակ բարձրություն, **Ա-19**
- բացարձակ երկրաժամանակագրության  
սանդղակ, **Մ-11**
- բացարձակ  
երկրաժամանակագրություն, **Ա-20**
- բացարձակ խոնավատարություն, **Բ-82**
- բացարձակ խոնավություն, **Ա-18**
- բացարձակ հասակ, ռադիոչափական  
հասակ, **Ա-21**
- բացարձակ հասակի որոշման  
արգոնային մեթոդ, **Մ-231**
- բացարձակ հասակի որոշման  
կապարային մեթոդ, **Մ-233**
- բացարձակ հասակի որոշման ճառագայթաածխածնային (ռադիոածխածնային) մեթոդ, **Մ-232**
- բացարձակ հասակի որոշման ռադիոգիտական (ճառագայթագիտական) մեթոդներ, **Մ-237**
- բացարձակ հասակի որոշման ստրոնցիումային մեթոդ, **Մ-234**
- բացող փորվածք, **Բ-297**
- Բաքվի ավազան, **Բ-19**
- բաքվի հարկ, **Բ-20**
- բելենմիտիդներ, **Բ-62**
- բեկկեի շերտագիծ, **Ո-263**
- բեկորային ապարներ, **Օ-18**
- բեկորային դայկա, **Կ-164**
- բեկորային երակ, **Կ-165**
- բեկորային կառուցվածք, **Կ-166**
- բեկորային կրաքարեր, **Կ-29**
- բեկորային հատիկների վերականգնում,  
**Ք-62**
- բեկորային միներալներ, **Մ-290**
- բեկորային նստվածքներ, **Օ-197**
- բեկվածքի զոնա, **Ք-28**
- բեկվածքի կլիվաժ, **Կ-173**
- բեկվածքներ, **Ք-29**
- բենթալ, **Բ-64**
- բենչ, **Բ-67**
- բենտոնիտ, բենտոնիտային կավ, **Բ-65**
- բետոնե ամրակապ, **Բ-86**
- բերեզիտ, **Բ-74**
- բերիլ (բերյուղ, ազնիվ բյուրեղաքար),  
**Բ-75**
- բերիասի հարկ, բերիաս, **Բ-77**
- բերիլի (բերյուղի) հանքաքարեր, **Բ-76**
- բիշոֆիտ, **Բ-117**
- բիոհերմային (կենսաթմբային)  
կրաքարեր, **Կ-24**
- բիոստրոմ, **Բ-102**
- բիոտիտ, **Բ-104**
- բիոտոպ, **Բ-105**
- բիոցենոզ, կենսացենոզ, **Բ-106**
- բիսմիտ, **Բ-108**
- բիսմութի հանքաքարեր, **Բ-67**
- բիսմութին (բիսմութի փայլ), **Բ-65**
- բիսմութիտ, բիսմութաքար, **Բ-66**
- բիտովնիտ, **Բ-110**
- բիտումաբանություն (հանքածյութաբանություն), **Բ-112**
- բիտումակերպեր, **Բ-113**
- բիտումներ բնական, **Բ-114**
- բիտումապարունակ (բիտումավոր, բիտումակիր) ապար, **Ո-278**
- բիտումավոր (բիտումակիր) կրաքարեր,  
**Կ-25**
- բիտումների (հանքածյութերի) դասակարգում, **Կ-154**
- բլաստո..., **Բ-119**
- բլաստոիդներ, **Բ-120**
- բլոկ, **Բ-122**
- բլոկային կառուցվածք, **Բ-124**
- բլուր, **Կ-19**

- բլր(ակ)աշատ ճահիճ, **Բ-173**  
բլրաշար(ք), **Կ-392**  
բյունիտ, **Բ-63**  
բյուրեղ, **Կ-359**  
բյուրեղաբեկորային կառուցվածք, **Կ-371**  
բյուրեղաբլաստներ  
(բյուրեղաբողբոջներ), **Կ-369**  
բյուրեղագիտություն, **Կ-370**  
բյուրեղախմբային կազմվածք (տեքստուրա), **Կ-22**  
բյուրեղախումբ (բյուրեղաբույլ), **Դ-116**  
բյուրեղաձևաբանություն, **Կ-372**  
բյուրեղային ագրեգատներ, **Ա-49**  
բյուրեղային թերթաքարեր, **Կ-367**  
բյուրեղային հիմք, **Կ-368**  
բյուրեղային վահան, **ՍԿ-3**  
բյուրեղային տարբերակում, **Կ-365**  
բյուրեղային ցանց, **Բ-95**  
բյուրեղացման ջուր, **Կ-364**  
բյուրեղացում, **Կ-366**  
բյուրեղաքիմիա, **Կ-374**  
բյուրեղաքիմիական բանաձևեր, **Կ-373**  
բյուրեղի մարման անկյուն, **Կ-14**  
բյուրեղների դրոշմահետքեր, **Օ-207**  
բյուրեղների հաբիտուս, **Գ-7**  
բյուրեղների համակարգ, **Կ-110**  
բյուրեղների վերականգնում (ռեգեներացիա), **Բ-60**  
բնածին արծաթ, **Կ-76**  
բնածին բիսմութ, **Բ-64**  
բնածին երկաթ, **Կ-15**  
բնածին ծծումբ, **Կ-73**  
բնածին կապար, **Կ-25**  
բնածին մետաղներ, **Կ-201**  
բնածին ոսկի, **Կ-62**  
բնածին պղինձ, **Կ-104**  
բնածին սնդիկ, **Կ-125**  
բնածին տարրեր, **Կ-3**  
բնական աղածնակերպեր  
(հալոգենիդներ), **Գ-42**  
բնական այրվող գազեր, **Գ-34**  
բնական ասֆալտներ (զետնածյուրներ),  
**Ա-263**  
բնական արսենիդներ, **Ա-232**  
բնական բիտումներ (հանքածյուրներ),  
**Բ-114**  
բնական բորատներ, **Բ-144**  
բնական գազեր, **Գ-33**  
բնական ծծանցում, **Ե-4**  
բնական կոքս, **Կ-188**  
բնական նիտրատներ, **Կ-109**  
բնական շիբեր (պաղլեղաքարեր), **Կ-130**  
բնական ջրերի ճառագայթաակտիվություն  
(ռադիոակտիվություն), **Բ-6**  
բնական ջրերի տարրալուծություն, **Ա-161**  
բնական ջրօքսիդներ (հիդրօքսիդներ),  
**Գ-240**  
բնական օքսիդներ, **Օ-65**  
բնականոն ծալք, **Կ-116**  
բնականոն տեղադրում, **Կ-16**  
բնակատեղ (հ), **Կ-141**  
բնակտոր, **Կ-4**  
բնիկներ, ավտոխթոններ, **Ա-37**  
բնորոշիչ հորիզոն, հենարանային հորիզոն,  
**Կ-72**  
բոգիեղ, **Բ-127**  
բողոակյան հարկ, **Բ-128**  
բոլիդ, **Բ-138**  
բոլորագլխարկ (երկրաբանությունում),  
**Ս-19**  
բոստոնիտ, **Բ-154**  
բորեալ ծովարշավ (տրանսգրեսիա),  
**Բ-145**  
բորի հանքաքարեր, **Բ-147**  
բորնիտ, պղնձի խայտաբղետ  
հանքաքար, **Բ-146**  
բոքսիտներ, **Բ-137**  
բրածո (թաղված) ցրոններ, **Բ-119**  
բրածո բույսեր, **Կ-141**  
բրածո հող, **Կ-317**  
բրածո ջուր, **Բ-120**  
բրածո ռելիեֆ, **Կ-144**  
բրածո սառույց, **Կ-143**  
բրածո ցրոններ, **Կ-142**  
բրածո օրգանիզմներ, **Կ-140**  
բրածո ածուխներ, **Կ-8**  
բրնձասառույց (ֆիռն), **Փ-39, Լ-46**  
բրոնզի դար, **Բ-169**  
բրուկիտ, **Բ-170**  
բրուսիտ, **Բ-171**  
բուլանժերիտ, **Բ-175**  
բույսերի դրոշմահետքեր, **Օ-209**  
բուսաբանություն, **Բ-155**  
բուսաբենթոս (ֆիտոբենթոս), **Փ-40**  
բուսական աշխարհ, ֆլորա, **Փ-46**  
բուսապլանկտոն (ֆիտոպլանկտոն),  
**Փ-41**  
բուստախութ, բուստակառույց  
(կորալային խութ, կ.կառույց), **Կ-277**

բուստակղզիներ (կորալային կղզիներ), **K-275**  
 բուստային (կորալային) կրաքար, **K-276**  
 բուստեր (կորալներ), **K-278**  
 բուրգ, **P-130**  
 բուրդիզալյան հարկ, **B-177**  
 բևեռացման մանրադիտակ, **M-258**  
 բևեռների շարժում (երկրի), **D-13**

## գ

գաբրո, **G-1**  
 գաբրոային կառուցվածք, **C-269**  
 գաբրո-դիաբազ, **G-2**  
 գաբրո-դիորիտ, **G-3**  
 գաբրոյակերպեր (գաբրոիդներ), **G-4**  
 գաբրո-պորֆիրիտ, **G-5**  
 գաբրո-սիենիտ, **G-6**  
 գազաթ, **B-42**  
 գազահիդրատային հանքակուտակ, **G-22**  
 գազահիդրատային հանքավայր, **G-23**  
 գազաճնշումային ջրեր, **G-25**  
 գազային գլխարկ, **G-15**  
 գազային կարոտաժ, **G-18**  
 գազային կոն, **G-19**  
 գազային հանույթ, **G-14**  
 գազային հանքակուտակ, **G-13**  
 գազային շատրվան, **G-21**  
 գազային հանքավայր, **G-16**  
 գազային շերտի գազատվություն (գազահանձնում), **G-30**  
 գազային ռեժիմ, **G-20**  
 գազանավթաբերության (գազաքարյուղաբերության) նշաններ, **G-26**  
 գազանավթաերևակում (գազաքարյուղաերևակում), **G-27**  
 գազանավթային (գազաքարյուղային) հանքակուտակ, **G-28**  
 գազանավթային (գազաքարյուղային) հանքավայր, **G-29**  
 գազապահեստարան, **G-17**  
 գազարդյունագործական երկրաբանություն, **G-31**  
 գազի ելք, **B-320**  
 գալենիտ, կապարի փայլ, **G-37**  
 գաղութ, **K-194**  
 գաղտնաբեկորային ապար, **C-187**  
 գաղտնաբյուրեղային կառուցվածք, **C-186**

գաղտնաբյուրեղային, **K-358**  
 գաղտնածին, **K-356**  
 գաճաճ ռելիեֆ, **K-68**  
 գամմա-հանույթ, **G-48**  
 գամմա-կարոտաժ, **G-47**  
 գայլիկոնածողային (պարույրածողային) հորատում, **B-198**  
 գայթերներ, հարթագագաթներ, **G-36**  
 գաջ, **G-10**  
 գարնիերիտ, **G-50**  
 գեղամա տիպի հրաբուխ, **B-229**  
 գենոլոգիա, **G-63**  
 գեյզեր (ցայտաշերմուկ), **G-56**  
 գեյզերիտ, գեյզերաքար, **G-57**  
 գետ, **P-77**  
 գետաբերան, դելտա, **D-29**  
 գետաբերան, **Y-35**  
 գետաբերանային (դելտային) լճեր, **D-30**  
 գետաբերանային (դելտային) նստվածքներ, **D-31**  
 գետաբերանային (դելտային) ֆացիաներ, **F-16**  
 գետաբերուկ, ալյուվի, գետաբերուկային (ալյուվիալ) նստվածքներ, **A-117**  
 գետաբերուկային (ալյուվիալ) դարավանդ, **A-112**  
 գետաբերուկային (ալյուվիալ) ծածկույթ (թիկնոց) **A-116**  
 գետաբերուկային (ալյուվիալ) կավ, **G-296**  
 գետաբերուկային (ալյուվիալ) հարթավայրեր, **A-115**  
 գետաբերուկային (ալյուվիալ) հողեր, **A-114**  
 գետաբերուկային (ալյուվիալ) հովիտ, **A-111**  
 գետաբերուկային (ալյուվիալ) նստվածքներ, **A-113**  
 գետաբերուկային (ալյուվիալ) ջուր, **B-106**  
 գետաբերուկային (ալյուվիալ) ցրոններ, **P-116**  
 գետազալար, **M-91**  
 գետամեջ, **M-108**  
 գետային դարավանդ (դարատափ), **P-91**  
 գետային լիճ, **P-99**  
 գետային համակարգ, **P-90**

- գետային նստվածքներ, **P-94**  
 գետային ողողամաշում (էրոզիա), **P-92**  
 գետային ցանց, **P-89**  
 գետային ֆացիաներ, **Փ-21**  
 գետաքար, **Բ-176**  
 գետերի ստորջրյա սնում, **Ս-223**  
 գետի ակունք, **Ի-147**  
 գետի անկում, **Ս-2**  
 գետի ավազան, **Բ-49**  
 գետի ջրագիր (հիդրոգրաֆ), **Գ-225**  
 գետի ստորին ավազան (գետի ստորին հոսանքի վայր), **Ի-104**  
 գետի վերին հոսանք(ներ), **Բ-41**  
 գետնահողային ջուր, **Ս-318**  
 գերաբիսալ, **Կ-16**  
 գերերկրասինկլինալ (ուլտրագետոսինկլինալ), **Կ-18**  
 գերխոր խորքային բեկվածքներ, **Գ-337**  
 գերխոր հորատում, **Ը-23**  
 գերհիմքային ապարներ, ուլտրաբազիտներ, հիպերբազիտներ, **Կ-20**  
 գերտաք (շատ տաք) ջրեր, **Գ-258**  
 գերփոխակերպություն (գերմետամորֆություն), **Կ-19**  
 գծելյան հարկ, **Գ-198**  
 գինկգոյիններ, **Գ-257**  
 գիպս, լսնակուճ (գաջաքար), **Գ-279**  
 գիպսային կեղև, **Գ-284**  
 գիպսե գլխարկ, **Գ-285**  
 գլաուբերիտ, **Գ-291**  
 գլաուկոնիտ, **Գ-292**  
 գլաուկոնիտային ավազ, **Գ-293**  
 գլաուկոֆան, **Գ-294**  
 գլխավոր խառնարանի ժայթքում, **Ի-10**  
 գլխավոր ծալքավորություն, **Ը-167**  
 գլխոտանի փափկամարմիններ, **Գ-363**  
 գլորիզերինային տիղմ, **Գ-327**  
 գլորիզերիններ, **Գ-326**  
 գծային կլիվաժ, **Գ-170**  
 գծային (միաչափ) հոսք, **Ս-312**  
 գծային ժայթքում, **Ի-9, Լ-94**  
 գծային ծալքավորություն, **Ը-174**  
 գծային կառուցվածքներ, **Լ-95**  
 գծային ողողամաշում (էրոզիա, ողողահանում), **Լ-93**  
 գծատարման փորվածք, **Բ-300**  
 գմբեթ, **Կ-403**  
 գմբեթաձև բարձրացում, **Ս-226**  
 գմբեթաձև ծալքավորություն, **Ը-173**  
 գյոթիտ, **Գ-197**  
 գյուղատնտեսական հանքանյութեր, **Ա-50**  
 գյուղացի սառցադաշտային դարակարգ, **Գ-486**  
 գնդաձև անջատություն, **Ս-4**  
 գնդաձև կառուցվածք, **Ս-5**  
 գնեյս, գղձաքար, **Գ-356**  
 գնեյսագրանիտ, **Գ-360**  
 գնեյսային (գղձաքարային) կազմվածք, **Գ-359**  
 գոգածալք (սինկլինալ), **Ը-115**  
 գոգածալք (սինկլինալ ծալք), **Ը-119**  
 գոգածալքային (սինկլինալ) հովիտ, **Ը-118**  
 գոգահատակավոր ծով, **Մ-344**  
 գոգավոր հարթավայր **Բ-103**  
 գոգավորություն (գոգահովիտ, փոսորակ), **Կ-308**  
 գոթյան ծալքավորություն, **Գ-416**  
 գոլիցինի շերտ, **Գ-361**  
 Գոնդվանա, **Գ-374**  
 գոնիատիտներ, **Գ-375**  
 գործող հանքախորշ, **Յ-2**  
 գործող հրաբուխ, **Բ-231**  
 գործող սողանք, **Օ-96**  
 գործուն (ակտիվ) սառցադաշտ, **Լ-48**  
 գորշ ածուխ, **Բ-211**  
 գորշ երկաթաքար, **Բ-210**  
 գորշ ջրիմուռներ, **Բ-209**  
 գրաբեճ (իջավայր), **Գ-418**  
 գրադիենտ, աստիճանափոխում, **Գ-434**  
 գրանիտ (հատաքար), **Գ-436**  
 գրանիտագնեյս (գրանիտագղձաքար), **Գ-444**  
 գրանիտագնեյսային (գրանիտագղձաքարային) գմբեթ, **Կ-404**  
 գրանիտագոյացում, **Գ-446**  
 գրանիտակերպեր, գրանիտոիդներ, **Գ-445**  
 գրանիտային կառուցվածք, **Գ-443**  
 գրանիտային մագմա, **Գ-441**  
 գրանիտային շերտ, **Գ-442**  
 գրանիտացում, **Գ-440**  
 գրանոդիորիտ, **Գ-451**  
 գրանոսիենիտ, **Գ-452**  
 գրանուլիթ (հատիկաքար), **Գ-453**  
 գրաուվակ, **Գ-459**  
 գրապտոլիթներ, **Գ-458**

գրաֆիտ, **Դ-461**  
 գրեյզեն, **Դ-466**  
 գրեյզենացուն, **Դ-467**  
 գրենվիլյան ծալքավորություն, **Դ-468**  
 գրինոկիտ, **Դ-470**  
 գրոսուլյար, **Դ-471**  
 գրունտ, գետին, **Դ-473**  
 գրունտագիտություն,  
 գետնագիտություն, **Դ-477**  
 գրունտային ջուր, գետնաջուր, **Բ-114**  
 գրունտային ջրերի ավազան, **Բ-45**  
 գրունտային քարտեզ, **Կ-104**  
 գրունտաջրերի հայելի, **Յ-51**  
 գրունտի առավելագույն մոլեկուլային  
 խոնավատարություն, **Մ-59**  
 գրունտի հատիկախումբ (ֆրակցիա),  
**Փ-67**  
 գրունտի հարաբերական խոնավություն,  
**Օ-204**  
 գրունտների ամրապնդում  
 (կոնսոլիդացում), **Կ-238**  
 գրունտների խտացում, **Ս-24**  
 գրունտների հատիկաչափական դասա-  
 կարգում, **Կ-156**  
 գրունտների մեխանիկա, **Մ-239**  
 գունավոր մետաղներ, **Մ-202**  
 գուտենբերգի շերտ (զոնա), **Դ-485**

## Դ

դայկա, **Դ-5**  
 դանիական հարկ, **Դ-7**  
 դաշտային հանքափորվածք, **Բ-301**  
 դաշտային սպաթներ, **Ս-249**  
 դառնաղի (սուլֆատային ) լիճ, **Օ-39**  
 դատարկ (հանքագերծ) ապար, **Ս-290**  
 դարավանդներ (դարատափեր), **Դ-72**  
 դարափուլ, **Օ-26**  
 դարչնագույն տիղմ, **Կ-284**  
 դացիտ, **Դ-8**  
 դեղնահողեր (շիկահողեր), **Ջ-18**  
 դենդրոլիթ, փայտաքար, **Դ-34**  
 դետրիտ (բեկորանյութ, քայքայուկ),  
**Դ-47**  
 դետրիտային (բեկորանյութային) կրա-  
 քարեր, **Ի-34**  
 դեֆլյացիա (արտափչում), **Դ-48**  
 դեֆլուկցիա, **Դ-48**  
 դիաբազ, **Դ-58**  
 դիաբազային կառուցվածք, օֆիտային  
 կառուցվածք, **Դ-59**  
 դիագենեզ (ապարագոյացում), **Դ-60**  
 դիագենեզի երկրաքիմիա, **Դ-179**  
 դիագենետիկական (ապարագոյացման)  
 հանքավայր, **Մ-147**  
 դիագենետիկական միներալագոյացում,  
**Մ-283**  
 դիագենետիկական միներալներ, **Մ-286**  
 դիապիր (վերմոլվածք), դիապիրային  
 ծալք (վերմոլվածքային ծալք), **Դ-62**  
 դիապիրիզմ (վերմոլվածություն), **Դ-63**  
 դիասպոր, **Դ-64**  
 դիաստրոմներ, **Դ-65**  
 դիաստրոֆիզմ, **Դ-66**  
 դիատոմային կավեր, **Դ-315**  
 դիատոմային ջրիմուռներ, **Դ-68**  
 դիատոմային վերլուծություն, **Ա-157**  
 դիատոմային տիղմ, **Դ-69**  
 դիատոմիտ (դիատոմաքար), **Դ-67**  
 դիգլուկտիլ խախտումներ, **Դ-70**  
 դիկիտ, **Դ-71**  
 դինամիկ(ական) երկրաբանություն, **Դ-74**  
 դինամիկ(ական) երկրաձևաբանություն  
 (գեոմորֆոլոգիա), **Դ-75**  
 դինանտ, դինանտյան բաժին, **Դ-77**  
 դինոզավրեր, **Դ-78**  
 դիսթեն, **Դ-87**  
 դիոպսիդ, **Դ-79**  
 դիորիտ, **Դ-80**  
 դիֆուզիա, **Դ-90**  
 դյուներ (ավազաթմբեր, ավազաբլուր-  
 ներ), **Դ-118**  
 դյուրեն, **Դ-119**  
 դնեպրյան սառցադաշտային  
 դարակարգ, **Դ-91**  
 դոզեր, **Դ-93**  
 դոլերիտ, **Դ-97**  
 դոլերիտային կառուցվածք, **Կ-270**  
 դոլոմիտ, **Դ-103**  
 դոլոմիտային մերգել (կավակրաքար),  
**Մ-136**  
 դոլոմիտացում, **Դ-104**  
 դոլոմիտացված կրաքար, **Ի-26**  
 դոլմիտ, **Դ-117**  
 դրազ, հողահան, **Դ-107**  
 դրեյֆ (տեղաշարժ), **Դ-112**  
 դրոշմահետքեր, **Օ-206**  
 դևոնի համակարգ (ժամանակաշրջան),  
 դևոն, **Դ-25**

## Ե

- եզրային երկասինկլինալ (գեոսինկլինալ), **K-327**
- եզրային ճկվածք, եզրային իջվածք, առաջավոր ճկվածք, նախալեռնային ճկվածք, **K-328**
- երկրակեղևի կառուցվածքային տարրերը, **C-305**
- եղնգնաքար (օմիքս), **O-84**
- եղջերախար, **P-109**
- եղջերաքար (ղաշտաքար), **P-110**
- ենթադրական (պրոբլեմատիկ) մնացորդներ, **Ս-337**
- ենթախորքային (հիպարիսալ) ապարներ, **Դ-260**
- ենթակեղևային հոսքերի վարկած, **Ս-224**
- ենթահունային ջուր, **B-136**
- ենթահրաբխային (սուբհրաբխային) ներժայթքումներ (ինտրուզիաներ), **Ս-123**
- ենթասառցային գործընթացներ, **C-313**
- ենթավերինոսային երկրակեղև, **C-315**
- եռանկյունային բուրգ, **Ս-133**
- Եվրասիա, **E-1**
- երակ, **Ջ-25**
- երակային աղբյուրներ, **Ջ-39**
- երակային ապար, **Ջ-38**
- երակային հանքավայր, **M-148**
- երակային միներալներ, **M-287**
- երակային ջուր, **B-116**
- երակավոր (ջղոտ) գնեյս (գղձաքար), **A-53**
- Երևան-Գյումրիյան (Լենինականյան) տիպի տուֆ, **T-122**
- երեսահղկուկ, **A-212**
- երեսապատման քար, **O-15**
- երթուղային հանույթ, **M-76**
- երիտասարդ լեռներ, **M-327**
- երիտասարդ հովիտ, **M-325**
- երիտասարդ պլատֆորմ, **M-326**
- երիտասարդացված լեռնային երկրամաս, **O-83**
- երկաթ, **Ջ-14**
- երկաթախառն (երկաթային) ավազաքար, **Ջ-8**
- երկաթախառն (երկաթային) քվարցիտ, ջեսալիլիտ, տակոնիտ, իտաբիրիտ, **Ջ-5**
- երկաթամանգանային կոնկրեցիաներ, **Ջ-16**
- երկաթափայլ, **Ջ-9**
- երկաթաքարային երկնաքար, սիդերոլիթ, **Ջ-13**
- երկաթե երկնաքար, **Ջ-11**
- երկաթե բոլորագլխարկ, **Ջ-7**
- երկաթի հանքաքարեր, **Ջ-8**
- երկաթի դար, **B-25**
- երկաթի հրաքար, **Ջ-10**
- երկաթի սպաթ, **Ջ-12**
- երկայնական խորքային բեկվածքներ, **Դ-336**
- երկայնական հովիտ, **Ս-342**
- երկայնական ճեղքեր, **Ս-343**
- երկայնական վարնետք, **Ս-344**
- երկայնություն, **Դ-96**
- երկիր, **Յ-44**
- երկկենցաղներ, ամֆիբիաներ, **Յ-46**
- երկծություն, **Դ-72**
- երկնագույն ասբեստ (կտավաքար, լեռնային վուշ), **Դ-367**
- երկնագույն տիղմ, **Դ-368**
- երկնային ջրեր, **M-224**
- երկնաքար, **M-223**
- երկնաքարային խառնարան, **M-225**
- երկշաքիլավոր բույսեր, **Դ-21**
- երկշնչավոր (երկշունչ) ձկներ, **Դ-20**
- երկրապատյաններ, երկրաթաղանթներ, **Յ-48**
- երկտակ(ված) հրաբուխներ, **C-39**
- երկրաբանաերկրաֆիզիկական կտրվածք (տրամատ, պրոֆիլ), **P-37**
- երկրաբանաերկրաֆիզիկական հենակետային կտրվածք (տրամատ, պրոֆիլ), **P-40**
- երկրաբանական բաժին, **O-185**
- երկրաբանական բլոկների մեթոդ, **M-227**
- երկրաբանական բացարձակ հասակ, **B-191**
- երկրաբանական գործընթացներ, **Դ-96**
- երկրաբանական գործընթացների պարբերականություն, **Ս-94**
- երկրաբանական դար, **B-24**
- երկրաբանական դարակարգ (էպոխա), **Յ-46**
- երկրաբանական դարաշրջան, **Յ-48**
- երկրաբանական դիտարկումներ լեռնային փորվածքներում, **Դ-95**

- երկրաբանական թվականություն (հարաբերական և բացարձակ), **Ղ-80**
- երկրաբանական ժամանակաշրջան (պարբերաշրջան), **Ո-92**
- երկրաբանական խումբ, **Դ-478**
- երկրաբանական (տեկտոնական) կառուցվածք, **Դ-92**
- երկրաբանական կտրվածք (տրամատ, պրոֆիլ), **Ք-36**
- երկրաբանական համակարգ, **Շ-125**
- երկրաբանական հաշվետվություն, **Օ-214**
- երկրաբանական հասակ, **Բ-190**
- երկրաբանական հարաբերական հասակ, **Բ-192**
- երկրաբանական հարկ, **Կ-7**
- երկրաբանական հետախուզություն, **Դ-91**
- երկրաբանական հանույթ, **Դ-93**
- երկրաբանական հպում (հպատեղ), **Կ-240**
- երկրաբանական սերիա, **Շ-82**
- երկրաբանական փաստագրում, **Դ-90**
- երկրաբանական քարտեզագրում, **Դ-98**
- երկրաբանական քարտեզներ, **Դ-94**
- երկրաբանական ֆորմացիաներ (կազմավորումներ), **Փ-58**
- երկրաբանական ֆորմացիաների (կազմավորումների) քարտեզ, **Կ-99**
- երկրաբանահետախուզական աշխատանքներ, **Դ-116**
- երկրաբանություն, **Դ-100**
- երկրաբաշխություն, գեոդեզիա, **Դ-83**
- երկրաբլոկ, **Դ-71**
- երկրաբուսաբանություն, **Դ-72**
- երկրագիտություն, **Յ-42**
- երկրադինամիկա, **Դ-84**
- երկրաժամանակագրական սանդղակ, **Դ-186**
- երկրաժամանակագրական ստորաբաժանում, **Դ-187**
- երկրաժամանակագրություն, գեոխրոնոլոգիա, **Դ-188**
- երկրաժամանակաչափություն **Դ-192**
- երկրախզոթերներ (երկրահավասարաչերմագծեր), **Դ-86**
- երկրականարածալք (երկրաանտիկլինալ, գեոանտիկլինալ), **Դ-70**
- երկրակեղև, **Յ-45**
- երկրակեղևի ալիքային շարժումներ, **Բ-201**
- երկրակեղևի դարավոր շարժումներ, **Բ-27**
- երկրակեղևի ժամանակակից շարժումներ, **Շ-207**
- երկրակեղևի հորիզոնական շարժումներ, **Դ-381**
- երկրակեղևի ձևախախտում (ձևափոխություն), **Դ-51**
- երկրակեղևի նստվածքային շերտ, **Օ-157**
- երկրակեղևի շարժումներ, **Դ-11**
- երկրակեղևի տատանողական շարժումներ, **Կ-190**
- երկրակերպ, գեոիդ, **Դ-85**
- երկրակրկնակորություն, երկրաֆլեքտուրա, **Դ-160**
- երկրաձևաբանական (գեոմորֆոլոգիական) բոլորաշրջան (ցիկլ), **Դ-123**
- երկրաձևաբանական (գեոմորֆոլոգիական) շրջանացում, **Դ-124**
- երկրաձևաբանական (գեոմորֆոլոգիական) տրամատ. (կողապատկեր, պրոֆիլ), **Դ-122**
- երկրաձևաբանական (գեոմորֆոլոգիական) քարտեզներ, **Դ-121**
- երկրաձևաբանություն, գեոմորֆոլոգիա, **Դ-125**
- երկրամագնիսական դաշտ, **Դ-119**
- երկրամագնիսական դաշտի շրջում (հակադարձում, ինվերսիա), **Կ-80**
- երկրամագնիսականություն, **Դ-118**
- երկրային գնդարդ, **Շ-331**
- երկրային հոսանքներ, տեղուրային հոսանքներ, **Յ-49**
- երկրաշարժագիտություն (սեյսմոլոգիա), **Շ-59**
- երկրաշարժագիր (սեյսմագիր, ցնցագիր), **Շ-57**
- երկրաշարժագրիչ (սեյսմագրիչ, ցնցագրիչ), **Շ-58**
- երկրաշարժագումնաբանական բեկվածքներ, **Ք-31**
- երկրաշարժական (սեյսմիկ) ալիքներ, **Շ-52**
- երկրաշարժական (սեյսմիկ) կարոտաժ, **Կ-80**
- երկրաշարժական (սեյսմիկ) հետախուզություն, երկրաշարժահետախուզություն (սեյսմահետախուզություն), **Շ-50**
- երկրաշարժական (սեյսմիկ) հողոգրաֆ, **Շ-53**



- երկրաշարժական (սեյսմիկ) մանրաշրջանացում, **C-54**
- երկրաշարժական (սեյսմիկ) շրջանացում, **C-55**
- երկրաշարժական սանդղակ, **C-51**
- երկրաշարժաչափություն (սեյսմաչափություն), **C-60**
- երկրաշարժատեկտոնիկա (սեյսմատեկտոնիկա), **C-61**
- երկրաշարժեր, **3-43**
- երկրաշարժերի սանդղակ, **Մ-12**
- երկրաշարժի բալլայնություն, **Ե-27**
- երկրաշարժի նախանշաններ, **Ո-321**
- երկրաշարժի ուժաստիճան (մագնիտուդ), **M-46**
- երկրաշարժի ուժգնություն, **Ո-106**
- երկրաշարժի օջախ, **O-219**
- երկրաշրջան, ռեգիոն (տարածաշրջան), **P-64**
- երկրաշրջանային (ռեգիոնալ) հարկ, **P-68**
- երկրաշրջանային (ռեգիոնալ) ջրաերկրաբանություն, **P-66**
- երկրաշրջանային (ռեգիոնալ) փոխակերպություն, **P-67**
- երկրապատյաններ, **3-48**
- երկրաջերմագիտություն, երկրաջերմություն, **Դ-147**
- երկրաջերմային աստիճան, **Դ-148**
- երկրաջերմային գրադիենտ, **Դ-149**
- երկրաջերմային պաշարներ (ռեսուրսներ), **Դ-146**
- երկրասառցաբանական ֆորմացիա (կազմավորում), **Դ-88**
- երկրասառցաբանություն, **Դ-89**
- երկրասինկլինալ, գետսինկլինալ, **Դ-127**
- երկրասինկլինալային (գետսինկլինալային) մագմայականություն, **M-19**
- երկրասինկլինալային (գետսինկլինալային) գոտի, **Դ-135**
- երկրասինկլինալային ծալքավորություն, **C-166**
- երկրասինկլինալային (գետսինկլինալային) համակարգ, **Դ-133**
- երկրասինկլինալային (գետսինկլինալային) հրաբխայնություն, **Դ-134**
- երկրասինկլինալային (գետսինկլինալային) մարգ, **Դ-132**
- երկրասինկլինալային ֆորմացիաներ (կազմավորումներ), **Փ-59**
- երկրաստատիկ ճնշում, **Դ-146**
- երկրատարածքային (ռեգիոնալ) երկրաբանություն, **Դ-110**
- երկրատարածքային (ռեգիոնալ) երկրատեկտոնիկա, **Դ-144**
- երկրատեխնիկա, **Դ-150**
- երկրատեկտոնիկա (երկրակառուցվածքաբանություն), **Դ-138**
- երկրացամաքային ժամանակաշրջաններ, **Դ-87**
- երկրաքիմիա, **Դ-174**
- երկրաքիմիական անբնականոնություն (անկանոնություն, անոմալիա), **Դ-162**
- երկրաքիմիական գործընթացներ, **Դ-169**
- երկրաքիմիական էկոլոգիա, **Յ-10**
- երկրաքիմիական իրադրության ցուցիչներ, **Ո-89**
- երկրաքիմիական լանդշաֆտ (բնապատկեր), **Դ-171**
- երկրաքիմիական հանույթ, **Դ-164**
- երկրաքիմիական մոլուզահանում, **O-113**
- երկրաքիմիական պատվարներ (արգելքներ), **Դ-165**
- երկրաքիմիական պրովինցիաներ (գավառներ), **Դ-168**
- երկրաքիմիական տարաշարժ (միգրացիա), **M-242**
- երկրաքիմիական տրամատ (կողապատկեր, պրոֆիլ), **Դ-172**
- երկրաքիմիական ցիկլեր (բոլորաշրջաններ), **Դ-170**
- երկրաքիմիական քարտեզներ, **Դ-166**
- երկրաֆիզիկա, **Դ-151**
- երկրաֆիզիկական անբնականոնություն (անկանոնություն), **Դ-158**
- երկրաֆիզիկական մոլուզահանում, **O-112**
- երկրաֆիզիկական որոնումներ և հետախուզություն, **Դ-167**
- երկրաֆիզիկական պարամետրերի (հարաչափերի) գրաֆիկներ, **Դ-460**
- երկրաֆիզիկական քարտեզ, **K-101**
- երկրաֆորմացիա, երկրակազմավորում, **Դ-161**
- Երկրի երկրաշարժամետություն (սեյսմիկություն), **C-56**
- Երկրի ձգողության (գրավիտացիոն) դաշտ, **Դ-427**
- Երկրի մակերևույթի ձևաբանություն, **M-367**

Երկրի միջնապատյան (մանտիա, թիկնոցապատյան, միջնոլորտ), **M-66**  
 Երկրի միջուկ, **Я-3**  
 Երկրի շարժում, **Д-9**  
 Երկրի պտտումը (օրական), **B-218**  
 Երկրի սեղմում, **C-89**  
 Երկրի վերին միջնապատյան (միջնոլորտ, մանտիա), **B-39**  
 Երկրոլորտներ (երկրապատյաններ), **Г-137**  
 Երկրորդային աններդաշնակություն, **H-66**  
 Երկրորդային կլիված, **K-169**  
 Երկրորդային հարստացման զոնա, ցեմենտացման զոնա, **B-224**  
 Երկրորդային միներալներ, **B-226**  
 Երկրորդային քվարցիտներ, **B-225**  
 Երկրփեղկ փափկամարմիններ (կակղամորթներ), **Д-23**  
 Երջերախաբ, **P-109**  
 Երրորդական համակարգ (ժամանակաշրջան), **T-104**

## Ձ

զալբանդ (հպամակերևույթ), **3-26**  
 զանգված, **M-77**  
 զանգվածային փլեցում, **O-25**  
 զառիթափ հանքակուտակ, **3-23**  
 զատիչ, **C-71**  
 զարդաքար, **K-31**  
 Ջննիտ, հղկաքար, նաժդակ, **H-12**  
 զմրուխտ, **H-65**  
 զուլավորություն, **П-264**  
 զոնդում (խորագնում, ձողարկում), **3-105**  
 զուգահեռ աններդաշնակություն, **H-69**  
 զուգահեռ տեղադրում, **П-46**  
 զուգահեռականացում, **K-290**  
 զուգամիտություն (կոնվերգենցիա), **K-217**  
 զրահապատված ռելիեֆ, **P-84**  
 զրոյական նստվածքակուտակում, **C-43**

## Է

էգիրին, **Յ-4**  
 էթնոլիթ, **Յ-60**

էլեկտրական կարոտած (էլեկտրակարոտած), **Յ-16**  
 էլեկտրահետախուզություն, **Յ-17**  
 էլեկտրոնային մանրադիտակ, **M-259**  
 էյուվի (տեղակուտակ), **Յ-23**  
 էյուվիալ (տեղակուտակ) կավեր, **Յ-21**  
 էյուվիալ (տեղակուտակ) ցրոններ, **Յ-22**  
 էկլոզիտ, **Յ-8**  
 էկոլոզիա, **Յ-9**  
 էմսի հարկ, էմս, **Յ-24**  
 էյֆելյան հարկ, էյֆել, **Յ-5**  
 էնարգիտ, **Յ-25**  
 էնեոլիթ, **Յ-29**  
 էնստատիտ, **Յ-30**  
 էոլյան (հողմային) ավազներ, **П-103**  
 էոն, **Յ-33**  
 էոնոտենա, **Յ-34**  
 էոպլեյստոցեն, **Յ-35**  
 էոցեն, **Յ-36**  
 էոքսենթի, **Յ-31**  
 էպեյրոզեն (ցամաքաստեղծ) շարժումներ, էպեյրոզենեզ, **Յ-37**  
 էպիդոտ, **Յ-41**  
 էպիթերմալ հանքավայր, **M-177**  
 էստուար (զետաբերանածոց), **Յ-58**  
 էվապորիտներ, էվապորիտային նստվածքներ, **Յ-1**  
 էվդիալիթ, **Յ-3**  
 էվերկրասիակլինալ (էվգեսիակլինալ), **Յ-2**  
 էվոլյուցիայի անդարձելիության օրենք, **3-10**  
 էրատենա, **Յ-49**  
 էրոդիրովացված հրաբուխ, **Յ-50**  
 էքստերմիդներ, **Յ-12**

## Ը

ընդերք, **H-48**  
 ընդերքային (լեռնային) ամրակապում, հանքահորային ամրակապում, **K-342**  
 ընդերքային ճնշում, լեռնային ճնշում, **Д-3**  
 ընդերքի համալիր յուրացում, **K-211**  
 ընդերքի պահպանություն, **O-217**  
 ընդհանուր (միջազգային) շերտագրական սանդղակ, **C-250**  
 ընդհանուր երկրատեկտոնիկա, **Г-141**

ընդմիջումների և աններդաշնակությունների վերլուծություն, **A-160**  
 ընտրողական հողմահարում, **H-6**  
 ընտրողական ողողամաշում (երոզիա),  
**H-5**  
 ընկուզիկներ (լապիլներ), **Л-34**

**Թ**

թաքնված աններդաշնակություն, **C-185**  
 թաթարական հարկ, **T-13**  
 թալասկրատոն, **T-5**  
 թաղանթային ջուր, **B-131**  
 թաղված դարավանդ (դարատափ), **П-208**  
 թաղված հողեր, **П-209**  
 թաղված ջուր, **B-133**  
 թաղված ռելիեֆ, բրածո ռելիեֆ, **П-210**  
 թաղված սառույց, **Л-45**  
 թաղված սողանք, **O-100**  
 թանր, **C-48**  
 թանբարդ, **C-49**  
 թանկարժեք քարեր (զարդաքարեր),  
**Д-108**  
 թափանցելիության գործակից, **K-322**  
 թափառող գետ, **B-125**  
 թափոնակույտ, **O-184**  
 թաքնված աններդաշնակություն, **H-71**  
 թելքավոր գիպս, **Г-280**  
 թերթամաշկավորներ, թերթամաշկավոր  
 ձկներ, գրահապատ ձկներ, **П-152**  
 թերթավորության հարթություն, **П-184**  
 թերթավորություն, **C-189**  
 թերթատում (թերթավորում), **P-55**  
 թերթաքարեր (հերձաքարեր), **C-190**  
 թեփուկածն կառուցվածք (տեկտ.), **Ч-5**  
 թեփուկավոր գիպս, **Г-382**  
 թեք (շեղ) հարթավայր, **H-16**  
 թեք հանքափորվածք, **B-299**  
 թեք հորատում, **B-190**  
 թեք շերտավորություն, **C-198**  
 թեք վարնետք, **H-18**  
 թեք ծալք, շեղ ծալք, **H-17**  
 թթու ապարներ, **K-149**  
 թթու լավա, **K-146**  
 թթու մագմա (հրահեղուկ), գրանիտային  
 մագմա, **K-147**  
 թթու ջրեր, **K-148**  
 թթու ֆունարոլներ, **K-150**

թթվահողաբույսեր (օքսիլոֆիտներ),  
**O-66**  
 թիթեղածն անջատություն,  
 սալաքարային անջատություն, **П-162**  
 թիկնալարավորներ, քորդավորներ, **X-21**  
 թիկնոցանման տեղադրում, **O-14**  
 թորհանիտ, **T-91**  
 թռչուններ, **П-376**  
 թրթռահորատում, **B-181**  
 թուլատրելի լարում, **H-33**  
 թևավոր մողեսներ, պտերոզավրեր, **K-387**

**Ժ**

ժադեիտ, **Ж-1**  
 ժամանակ (երկրաբանական), **B-221**  
 ժամանակակից երկրասինկլինալ (գեո-  
 սինկլինալ), **Г-130**  
 ժամանակակից խոնավ (հումիդային)  
 նստվածքագոյացում, **O-148**  
 ժամանակակից ծովային նստվածքագո-  
 յացում, **O-151**  
 ժամանակակից կարբոնատային  
 ավազներ, **П-101**  
 ժամանակակից մագնետիտային  
 ավազներ, **П-102**  
 ժամանակակից չորային (արիդային)  
 նստվածքագոյացում, **O-147**  
 ժամանակակից ցամաքային նստված-  
 քագոյացում, **O-149**  
 ժամանակավոր հոսքերի նստվածքներ,  
**O-194**  
 ժայթքման խառը տեսակ, **C-205**  
 ժայթքման հավայան տիպ, **Г-8**  
 ժայթքման հրաբխային տեսակ, **B-276**  
 ժայթքման պելեյան տիպ, **П-60**  
 ժայթքումային (ժայթքման)  
 գործունեություն, **Э-56**  
 ժայթքումային երակ, **Ж-37**  
 ժայթքումային (ժայթքման) կենտրոն,  
**Э-57**  
 ժայթքումային (ժայթքման) փշոաքար  
 (բրեկչիա), **B-167**  
 ժապավենածն կավեր, **Л-75**  
 ժապավենային կավ, **Г-300**  
 ժառանգված ծալքավորություն, **У-21**  
 ժառանգված շարժումներ,  
 պոստումային շարժումներ, **У-22**

ժառանգված ռելիեֆ, **P-85**  
 ժողինյան հարկ, ժողին, **Ж-2**  
 ժեռո, **Ж-20**  
 ժիվետյան հարկ, ժիվետ, **Ж-24**

## Ի

իզնիմբրիտ, **И-2**  
 իզանոմալներ (հավասարաչեղունագծեր), **И-4**  
 իզոբազեր (հավասարաչափագծեր), **И-43**  
 իզոբաթներ, հավասարախորագծեր, **И-45**  
 իզոբարներ (հավասարաճնշումագծեր), **И-44**  
 իզոգամներ, **И-46**  
 իզոդինամներ, **И-48**  
 իզոկլինալ (հավասարաթեքվածք), հավասարաթեք ծալք, **И-49**  
 իզոկլիններ (հավասարաթեքումագծեր), **И-54**  
 իզոհիպսեր (համաբարձրագծեր), **И-47**  
 իզոմորֆիզմ (նմանաձևություն), **И-56**  
 իզոպախիտներ (համահաստագծեր), **И-57**  
 իզոսեյստեր, **И-58**  
 իզոստագիա, իզոստատիկ հավասարակշռություն, **И-59**  
 իզոտախեր (համաարագագծեր), **И-60**  
 իզոտոպային երկրաբանություն, **Г-102**  
 իզոտոպային հասակ, **И-62**  
 իզոտոպներ, **И-63**  
 իզոտոպների երկրաքիմիա, **Г-180**  
 իզոթրոններ (համաժամանակագծեր), **И-64**  
 իլլիտ, **И-73**  
 իլմենիտ (տիտանաքար), տիտանային երկաթաքար, **И-74**  
 իլմենառուտիլ, **И-75**  
 իմերսիոն (սուզման) հավաքածու, **И-1**  
 իմերսիոն (սուզման) հեղուկներ, **И-76**  
 իմերսիոն (սուզման) մեթոդ, **И-77**  
 իմպակտիտ, **И-78**  
 իյոլիթ, **И-66**  
 ինդոսի հարկ, **И-90**  
 իներտ (անգործուն) զագեր, **И-91**

ինիցիալ (սկզբնային) հրաբխայնություն, **И-102**  
 ինսոլյացիոն (արևահար) հողմահարում, **И-105**  
 ինոցերամ, **И-103**  
 ինսեկվենտ հովիտ, **И-104**  
 ինսկվենտ սողանք, **О-98**  
 ինտերնիդներ, **И-107**  
 ինտերֆերենցային (վերադրական) գունավորում, **И-108**  
 ինտրաերկրաանտիկլինալ (ինտրագետանտիկլինալ, ներերկրաանտիկլինալ), **И-109**  
 ինտրաերկրասինկլինալ (ինտրագետսինկլինալ, ներերկրասինկլինալ), **И-110**  
 ինքնաբեկորային փշրաքար (ավտոկլաստիկ բրեկչիա), **Б-162**  
 ինքնաբեկորասինկլինալ (ինքնագետսինկլինալ), **А-29**  
 ինքնաձև (իդիոմորֆ) ծալքավորություն, **С-170**  
 ինքնաձևություն (յուրաձևություն, իդիոմորֆություն), **И-3**  
 ինքնամետասոմատոզ (ինքնամետասոմատիզմ), **А-33**  
 ինքնամիզմատիտ (ավտոմիզմատիտ), **А-32**  
 ինքնանիստ (ադանիստ) լիճ, **С-6**  
 ինքնապնմատոլիզ (ավտոպնմատոլիզ), **А-34**  
 ինքնաջարդվածքներ, **А-30**  
 ինքնափշրաքար (ավտոբրեկչիա), **А-28**  
 ինքնափոխակերպություն, ինքնափոխակերպում, **А-31**  
 ինֆրաքեմերի, **И-133**  
 իպրյան հարկ, **И-137**  
 իջած թև, **О-122**  
 իջութային (դեպրեսիոն) մակերևույթ, **П-201**  
 իջույթ, **Д-44**  
 իջվածք, զոգավորություն, **В-209**  
 իսլանդական սպաթ, **И-146**  
 իրիդիում, **И-139**

## L

- լաբրադոր, **Պ-1**  
 Լաբրադորիտ, **Պ-2**  
 Լադինյան հարկ, **Պ-24**  
 Լազերային սպեկտրային (լուսապատկերային) տարրալուծություն, **Պ-25**  
 Լազուրիտ (լաջվարդ), **Պ-26**  
 Լախար, ցեխահոսք, **Պ-42**  
 Լակոլիթ, **Պ-27**  
 Լամպրոֆիլիտ, **Պ-28**  
 Լամպրոֆիրներ, **Պ-29**  
 Լայնական խորքային բեկվածքներ, **Գ-335**  
 Լայնական ծալքավորություն, **Ը-177**  
 Լայնական հովիտ, **Պ-267**  
 Լայնական ճեղքեր, **Պ-268**  
 Լայնական վարձետք, **Պ-269**  
 Լայնական տեղաշարժ (կողաշարժ), **Պ-270**  
 Լանդշաֆտային (բնապատկերային) հանույթ, **Պ-31**  
 Լանդշաֆտային (բնապատկերային) մեթոդներ, **Մ-235**  
 Լանդշաֆտային (բնապատկերային) քարտեզներ, **Պ-32**  
 Լանդշաֆտի (բնապատկերի) երկրաֆիզիկա, **Գ-152**  
 Լանդշաֆտի (բնապատկերի) հասակ, **Բ-193**  
 Լանդշաֆտի (բնապատկերի) շրջում (հակադարձում), **Ի-81**  
 Լանդշաֆտների (բնապատկերների) տարբերակում, **Դ-88**  
 Լանդշաֆտի (բնապատկերի) ձևաբանություն, **Մ-368**  
 Լանթան, **Պ-33**  
 Լանջ, դարալանջ, զառիվայր, **Ը-182**  
 Լանջային գործընթացներ, **Ը-183**  
 Լանջային նստվածքներ, **Օ-200**  
 Լապիլներ (ընկուզիկներ), **Պ-34**  
 Լավա (հրահոսք), **Պ-3**  
 Լավային ժայթքում, **Պ-15**  
 Լավային լիճ, **Պ-16**  
 Լավային լճի ժայթքում, **Ի-8**  
 Լավային ծածկույթ, **Պ-18**  
 Լավային խցան, **Պ-14**  
 Լավային կոն, **Կ-262**  
 Լավային հոսք, **Պ-310**  
 Լավային շթաքար (ստալակտիտ), **Ը-236**  
 Լավային սարավանդ, **Պ-17**  
 Լավափշրաքար (լավաբրեկչիա), **Պ-13**  
 Լավրասիա, **Պ-20**  
 Լատերիտ, **Պ-37**  
 Լատերիտային կեղև, երկաթե զրահ, **Պ-39**  
 Լատերիտային հողեր, **Պ-40**  
 Լատերիտային հողմահարման կեղև, **Կ-274**  
 Լատերիտային տրամատ (պրոֆիլ) (կտրվածք), **Պ-41**  
 Լատերիտացում, **Պ-38**  
 Լարանյան ծալքավորություն, **Պ-35**  
 Լեյաս, **Պ-69**  
 Լեյկո..., սպիտակավուն, սպիտակաերանգ, **Պ-70**  
 Լեյցիտ, **Պ-73**  
 Լենայի հարկ, **Պ-74**  
 Լեպիդոլիթ (թեփուկաքար), **Պ-76**  
 Լեպտիտ, **Պ-77**  
 Լեռնագագաթ, **Գ-384, Պ-126**  
 Լեռնագոյացման (օրոգեն) ճկվածք, **Պ-340**  
 Լեռնագոյացման (օրոգեն) մագմայականություն, **Մ-13**  
 Լեռնագոյացման իջվածքներ, **Բ-217**  
 Լեռնագոյացման մարզ, **Օ-10**  
 Լեռնագոյացման շարժումներ, **Օ-135**  
 Լեռնագոյացում, **Օ-134, Գ-409**  
 Լեռնագրություն, **Օ-136**  
 Լեռնազանգված, **Գ-403**  
 Լեռնակառույց, **Օ-133**  
 Լեռնահանքային արդյունաբերություն, **Գ-396**  
 Լեռնահանքային լավա, **Պ-6**  
 Լեռնամոմ, հանքամոմ, **Գ-399**  
 Լեռնային (հանքային) գործ, **Գ-394**  
 Լեռնային երկիր, **Գ-391**  
 Լեռնային (հանքային) երկրաբանություն, **Գ-386**  
 Լեռնային ամրակապ, **Կ-345**  
 Լեռնային անապատ, **Գ-388**  
 Լեռնային գետ, **Գ-389**  
 Լեռնային գոտի, **Գ-405**  
 Լեռնային Լանդշաֆտ (բնապատկեր), **Գ-401**  
 Լեռնային համակարգ, **Գ-390**  
 Լեռնային հանգույց, **Գ-406**  
 Լեռնային ճնշում, ընդերքային ճնշում, **Գ-393**

- Լեռնային սառցադաշտեր, **Գ-398**  
 Լեռնային վուշ, **Գ-402**  
 Լեռնային փլվածք, **Գ-404**  
 Լեռնաշարք, **Գ-392**  
 Լեռնաշխարհ, **Ի-4**  
 Լեռնաշղթա, **Գ-407**  
 Լեռնաշղթայի Լեռնաճյուղ, **Օ-211**  
 Լեռնաչափություն, **Օ-137**  
 Լեռներ, **Գ-411**  
 Լեռների հատակ, Լեռների ստորոտ,  
**Ս-229**  
 Լեռների հիմքային զոնա, **Ե-3**  
 Լեռների հորիզոնական մասնատում,  
**Գ-383**  
 Լերկացման (դենուդացիայի)  
 ազդակներ, **Ա-39**  
 Լերկացման (դենուդացիայի) աստիճան,  
**Դ-35**  
 Լերկացման (դենուդացիայի) լանջ, **Դ-41**  
 Լերկացման (դենուդացիայի) հատվածք,  
**Դ-42**  
 Լերկացման (դենուդացիայի) հարթա-  
 վայր, **Դ-39**  
 Լերկացման (դենուդացիայի) հիմնամա-  
 կարդակ, **Ե-12**  
 Լերկացման (դենուդացիայի) մա-  
 կերևույթներ, **Դ-38**  
 Լերկացման (դենուդացիայի) ռելիեֆ,  
 մշակված ռելիեֆ, **Դ-40**  
 Լերկացման (դենուդացիայի)  
 սարավանդ, **Դ-37**  
 Լերկացման (դենուդացիայի) ստորին  
 մակարդակ, **Ի-101**  
 Լերկացման (դենուդացիայի) վերին մա-  
 կերևույթ, **Ե-38**  
 Լերկացման (դենուդացիայի) դարա-  
 վանդ (դարատափ), **Դ-36**  
 Լերկացում (դենուդացիա, տեղատա-  
 րում, ողողատարում), **Դ-43**  
 Լերցուլիթ, **Լ-78**  
 Լիաբյուրեղային ապար, **Ս-289**  
 Լիաբյուրեղային կառուցվածք, **Ս-261**  
 Լիզնիտ, **Լ-85**  
 Լիթիումի հանքաքարեր, **Լ-106**  
 Լիփվինյան միջսառցադաշտային դարա-  
 կարգ, **Լ-132**  
 Լիճ, **Օ-38**  
 Լիմնիկական ածխաբեր ավազան, **Ե-51**  
 Լիմոնիտ, **Լ-91**  
 Լինեամենտ, **Լ-92**  
 Լիպարիտ, ռիոլիթ, **Լ-102**  
 Լիպոտրիոլիթներ, **Լ-103**  
 Լիստվենիտացում, **Լ-104**  
 Լիստվենիտներ, **Լ-105**  
 Լիքվացիա, **Լ-88**  
 Լիքվացիոն հանքավայրեր, **Լ-87**  
 Լիքվացիոն տարբերակում, **Լ-86**  
 Լլանդոլերիյան հարկ, Լլանդոլերի, **Լ-135**  
 Լլանվիրնյան հարկ, Լլանվիրն, **Լ-133**  
 Լլանդեյլյան հարկ, Լլանդեյլ, **Լ-134**  
 Լճագիտություն, **Օ-40, Լ-90**  
 Լճային գետ, **Օ-35**  
 Լճային գոգավորություն, **Օ-33**  
 Լճային դարավանդ, **Օ-36**  
 Լճային կավեր, **Գ-319**  
 Լճային հարթավայր, **Օ-34**  
 Լճային նստվածքներ, **Օ-37**  
 Լճուցք (լիման, գետաբերանի  
 ծովախորշ), **Լ-89**  
 Լյուս, փխրահող **Լ-82**  
 Լյուսանման (փխրահողանման)  
 ապարներ, **Լ-83**  
 Լյուսանման (փխրահողանման)  
 ավազակավ, **Լ-84**  
 Լյուտետյան հարկ, **Լ-151**  
 Լոդափ, **Ս-195**  
 Լոպարիտ, **Լ-144**  
 Լոպոլիթ, **Լ-145**  
 Լուդլովյան հարկ, Լուդլոու, **Լ-146**  
 Լույսի երկբեկում, **Դ-22**  
 Լուսին, **Լ-147**  
 Լուսնաքար, **Լ-148**  
 Լվացահանման (լվացագերծման, տար-  
 րալուծման) ջրեր, **Ե-186**  
 Լրիվ խոնավատարություն, **Ե-86**  
 Լցման երակ, **Ջ-28**

## Խ

- Խազարյան ծովարշավ  
 (տրանսգրեսիա), **Մ-1**  
 Խակկանթիտ (քալկանթիտ), **Մ-3**  
 Խակկոզին (քալկոզին, պղնձափայլուկ),  
**Մ-4**  
 Խակկոպիրիտ (քալկոպիրիտ), պղնձի  
 հրաքար, **Մ-5**  
 Խախտման գիծ (երկրբ.), **Լ-97**

խախտումների զոնա, **3-82**  
 խախտված շերտեր, դիսլոկացված  
 շերտեր, **H-36**  
 խախտված տեղադրում, **3-15**  
 խայտաբղետ պնդաքար (պղնձի  
 խայտաբղետ հանքաքար), **Π-107**  
 խաչածն (խաչվող) շերտավորություն,  
**Π-81**  
 խառնակազմ (պոլիմիկտային) ապար,  
**Π-258**  
 խառնաքար (կոնգլոմերատ, քարախառ-  
 նուրդ), **K-218**  
 խառնաքար-փշրաքար (կոնգլոմերա-  
 տաբրեկչիա), **K-221**  
 խարամային կոն, **K-264**  
 խարամային շղջաքար (բեկորաշեղջ),  
**A-45**  
 խեցգետնակերպեր, **P-49**  
 խեցեքար, **P-50**  
 խեցի, **P-48**  
 խզվածք, խզվածքային խախտում, **P-45**  
 խզվածքային ձևախախտում, **Д-53**  
 խզվածքային շարժումներ, **P-46**  
 խզվածքային տեղաշարժեր,  
 պարակլազներ, **P-47**  
 խզվածքի բարձրացված (վերին) թև,  
**K-389**  
 խզվածքի գիծ (երկրբ.), **Л-101**  
 խզվածքի իջած (ներքին) թև, **K-388**  
 խիճ, **Ц-1**  
 խճավազ, **Д-115**  
 խոնավ (հումիդային) քարագոյացում  
 (լիթոգենեզ), **Л-111**  
 խոնավ կլիմա, **Г-480**  
 խոնավածուծ (հիդրոսկոպիկ) ջուր, **B-112**  
 խոնավածուծային (հիդրոսկոպիկ) խո-  
 նավատարություն, **B-83**  
 խոնավաչափ, **B-87**  
 խոշորաբենթոս (խոշորահատակաբնակ,  
 մակրոբենթոս), **M-49**  
 խոշորածակոտկենություն  
 (մակրոծակոտկենություն), **M-51**  
 խոշորահատիկ ավազ (ավազաքար),  
**K-384**  
 խոշորապլանկտոն (մակրոպլանկտոն),  
**M-50**  
 խոր բացահանք, **Г-340**  
 խորածին գործընթացներ, **Г-268**  
 խորածին (ներքնածին, հիպոգեն)

հանքավայր, **Г-267**  
 խորաչափական քարտեզներ, **B-55**  
 խորաչափություն, **B-56**  
 խորջրյա (խորքահատակ, աբիսալ), **A-5**  
 խորջրյա (խորքահատակային, աբիսալ)  
 հարթավայր, **A-7**  
 խորջրյա (աբիսալ) ֆացիաներ, **Ф-13**  
 խորջրյա (խորքահատակային, աբիսալ)  
 մարզ, **A-6**  
 խորջրյա արդյունահանում, **Г-341**  
 խորջրյա կավեր, **Г-314**  
 խորջրյա կարմիր կավ, **Г-342**  
 խորջրյա հատակաբնակներ (բենթոս),  
**Г-346**  
 խորջրյա հորատում, **Г-343**  
 խորջրյա նստվածքներ, **Г-345**  
 խորջրյա փողրակներ (վիհեր), **Г-344**  
 խորջրյա (խորքահատակային,  
 աբիսալ), նստվածքներ, **A-8**  
 խորքախույս միներալներ, **A-10**  
 խորքակիզակետային (խորքաօջախա-  
 յին) երկրաշարժեր, **Г-348**  
 խորքային բեկվածքներ, **Г-332**  
 խորքային երկրաշարժական զոնդում  
 (խորագնում), **Г-331**  
 խորքային ծալք, **Г-329**  
 խորքային կառուցվածքներ, **Г-339**  
 խորքային ողողամաշում (երոզիա),  
**Г-330**  
 խորքային տարբերակման վարկած,  
**Г-270**  
 խորքասեր միներալներ, **A-9**  
 խվալինյան ծովարշավ  
 (տրանսգրեսիա), **X-7**  
 խտահանք (հարստանյութ), **K-267**  
 խտացման ջուր, **B-123**  
 խտացում, կոնդենս(աց)ում, **K-222**  
 խութ, **P-104**  
 խութային կրաքարեր, **M-34**  
 խութային ֆացիաներ, **Ф-22**  
 խունացած հանքաքարեր, **B-121**

## Օ

ծագում, գոյացում, զենեզիս, **Г-64**  
 ծագումնաբանական տիպ (տեսակ), **Г-69**  
 ծալք, **C-134**

- ծալքաբեկորային լեռներ, **C-164**  
 ծալքագոյացման շարժումներ, **C-161**  
 ծալքագոյացում, **C-160**  
 ծալքավոր գոտի, **C-180**  
 ծալքավոր լեռներ, **C-178**  
 ծալքավոր համալիր, **C-179**  
 ծալքավոր համակարգ, **C-163**  
 ծալքավոր հիմք, **C-181**  
 ծալքավոր մարզ, **C-162**  
 ծալքավոր մարզերի մետաղագոյացում, **M-195**  
 ծալքավոր մարզերի ներժայթքումներ (հնտրոլզիաներ), **H-120**  
 ծալքավոր մարզի մագնայականություն, **M-17**  
 ծալքավորության (տեկտոգենեզի) փուլեր, **F-3**  
 ծալքավորության տարաշարժ (միգրացիա), **M-245**  
 ծալքավորության դարակարգ (էպոխա), **Յ-47**  
 ծալքավորություն, **C-165**  
 ծալքերի մարում, **Յ-37**  
 ծալքի (ծայրա)փակում, **Յ-28**  
 ծալքի առանցք, **O-183**  
 ծալքի արմատ, **K-283**  
 ծալքի բարձրություն, **B-317**  
 ծալքի բնականոն թև, **H-117**  
 ծալքի թևեր, **K-391**  
 ծալքի լայնույթ, **A-144**  
 ծալքի ծայրաթեք (պերիկլինալ) վերջանալը, **O-59**  
 ծալքի կատար, **F-463**  
 ծալքի կատարի բարձրություն, **B-309**  
 ծալքի կենտրոնաթեք (ցենտրիկլինալ) վերջանալը, **O-60**  
 ծալքի հողակապ, **Մ-2**  
 ծալքի հողակապի խորասուզում, **Ս-211**  
 ծալքի միջուկ, **Կ-24**  
 ծալքի տարրեր, **Յ-20**  
 ծալքի փականք, **Յ-27**  
 ծախսի կոր, **K-349**  
 ծածկասերմ բույսեր, ծաղկավոր բույսեր, **Ս-247**  
 ծածկոցի ծալքեր, նստվածքային ծածկոցի ծալքեր, **C-157**  
 ծածկութային ծալքեր, **C-153**  
 ծածկութային կառուցվածք, **Ս-246**  
 ծածկութային սառցադաշտ, **Լ-49**  
 ծածկութային սառցապատման կենտրոն, **Լ-5**  
 ծակոտինային ջուր, **Ս-274**  
 ծակոտկեն կազմվածք, **Ս-271**  
 ծակոտկենություն, **Ս-272**  
 ծաղկափոշի, **Ս-378**  
 ծայրամասային ծով, **M-347**  
 ծայրամասային ծովի գոգավորություն, **K-313**  
 ծանծաղ ծով, **M-346**  
 ծանծաղուտ, **O-202**  
 ծանծաղուտային նստվածքներ, **M-129**  
 ծանր միներալներ, **M-295**  
 ծանր չափամաս (ֆրակցիա), **F-68**  
 ծանրաչափ, գրավիմետր, **F-422**  
 ծանրաչափական (գրավիմետրական) հանույթ, **F-423**  
 ծանրաչափական (գրավիմետրական) հետախուզություն, ծանրաչափահետախուզություն (գրավիմետախուզություն) **F-424**  
 ծանրաչափական (գրավիմետրական) վերլուծություն, **A-155**  
 ծանրաչափական աստիճան, **B-34**  
 ծանրության ուժ, **C-95**  
 ծանրության ուժի անկանոնությունների (անոմալիաների) քարտեզ, **K-95**  
 ծառակերպ, դեմդրիտ, **Դ-33**  
 ծավալային ակոս, **B-149**  
 ծավալային խոնավատարություն, **B-85**  
 ծավալային մեթոդ, **M-230**  
 ծարիր (անտիմոն), **C-324**  
 ծարրի (անտիմոնի) հանքաքարեր, **C-325**  
 ծիածանաքար, օպալ (արևակն, արևաքար), **O-89**  
 ծծանցման ակտիվություն, **A-85**  
 ծծանցման գործակից, **K-325**  
 ծծանցման ջրեր, **F-37**  
 ծծանցում, **F-38**  
 ծծնբաջրածնային ջուր, **B-147**  
 ծծնբաջրածնապարունակ գազեր, **C-85**  
 ծծնբի հանքաքարեր, **C-83**  
 ծծումբ, **C-72**  
 ծով, **M-343**  
 ծովալճակ, լազունա, **Լ-21**  
 ծովալճակային (լազունային) նստվածքներ, **Լ-22**  
 ծովալճակային (լազունային) ցրոններ, **Լ-23**



ծովալճակային (լագունային)  
 ֆացիաներ, **Փ-17**  
 ծովածոց, **3-25**  
 ծովակն, ծովաբյուրեղ, աքվամարին,  
**A-65**  
 ծովային բուսական աշխարհ (ֆլորա),  
**M-359**  
 ծովային երկրաբանություն, **M-355**  
 ծովային երկրաֆիզիկական  
 հետախուզություն, **M-356**  
 ծովային ծանծաղուտ, **B-28**  
 ծովային կավեր, **Դ-318**  
 ծովային կենդանական աշխարհ  
 (ֆաունա), **M-358**  
 ծովային կլիմա, **M-363**  
 ծովային հոսանքներ, օվկիանոսային  
 հոսանքներ, **M-361**  
 ծովային հորատում, **M-362**  
 ծովային նստվածքներ, **M-360**  
 ծովային ոգնիներ, ծովոգնիներ, **E-2**  
 ծովային ջուր, **B-128**  
 ծովային ջրի աղիություն, **C-214**  
 ծովային ցրոններ, **P-118**  
 ծովարշավ (ծովածավալում, տրանսպ-  
 րեսիա), **T-97**  
 ծովարշավային (ծովածավալային,  
 տրանսպեսիվ) տեղադրում, **3-18**  
 ծովափ (ծովեզերք), **Պ-198**  
 ծովի հատակի մետաղադոյացում, **M-193**  
 ծփանք (ալեծալք), **P-165**  
 ծփանքի նշաններ, **3-56**

#### Կ

կադաստր (ամփոփագիր), **K-2**  
 կադոնյան ծալքավորություն, **K-3**  
 կազանյան հարկ, **K-4**  
 կազանցյան միջսառցադաշտային դա-  
 րակարգ, **K-5**  
 կաթնասուններ, **M-311**  
 կաթոցք, **K-53**  
 կախնիտ, **K-6**  
 կալամիտներ, **K-10**  
 կալդերա, հրաբխագոգ, **K-16**  
 կալեդոնիդներ, **K-11**  
 կալեդոնյան ծալքավորություն, **K-12**  
 կալիում, **K-13**  
 կալիումային աղեր, **K-14**

կալցիում (կրածին), **K-17**  
 կալցիտ, կրասպաթ (կրածնաքար), **K-18**  
 կալցիտացում, **K-19**  
 կալցիֆիր, **K-20**  
 կախութային ջրաբերուկներ (ողողակու-  
 տակներ), **B-48**  
 կախված հովիտ, **B-68**  
 կախված ջրեր, **B-70**  
 կախված սառցադաշտ, **B-71**  
 կամար, **C-32**  
 կամարածալք (կորածալք,  
 անտիկլինալ), **A-195**  
 կամարածալքային (կորածալքային, ան-  
 տիկլինալ) լեռնաշղթա, **A-199**  
 կամարածալքային (կորածալքային, ան-  
 տիկլինալ) հովիտ, **A-198**  
 կամարածալքի (անտիկլինալի)  
 բարձրություն, **B-308**  
 կամարային բարձրացում, **Պ-227**  
 կամեր, **K-35**  
 կամպանի հարկ, կամպան, **K-34**  
 կայծքար (սիլիցաքար, գայլախազ),  
**K-336**  
 կայծքարացում, սիլիկացում, **O-60**  
 կայնոզոյան էրատեմա (դարաշրջան)  
 (նոր կյանքի դարաշրջան), կայնոզոյ,  
**K-8**  
 կայնոզոյան խումբ, **K-7**  
 Կանադական վահան, **K-41**  
 կանաչ ջրիմուռներ, **3-40**  
 կանաչ թերթաքար, **3-41**  
 կանաչքարային ապարներ, **3-39**  
 կանաչքարային երկրասինկլինալ  
 (գեոսինկլինալ), **Դ-128**  
 կանգասի սառցադաշտային  
 դարակարգ, **K-45**  
 կանխատեսումային քարտեզներ  
 (երկրաբանական), **Պ-341**  
 կանկրինիտ, **K-46**  
 կանյոն (խնձահովիտ), **K-47**  
 կաուլին, ճենակավ, **K-49**  
 կաուլինացում, ճենակավացում, **K-50**  
 կաուլինիտ, **K-51**  
 կաուլինիտային կավ, **K-52**  
 կաուստոբիոլիթներ (կաուստակենսա-  
 քարեր), **K-123**  
 կապար, **C-24**  
 կապարի հանքաքարեր, **C-27**  
 կապարի փայլ (արծնափայլ), **C-28**

- կապար-ցինկի հանքաքարեր, բազմամետաղական հանքաքարեր, **C-26**
- կապիտալ փորվածքներ, **B-305**
- կապված ջուր, **B-145**
- կապտականաչ ջրիմուռներ, **C-111**
- կառ, կրկես, **K-58**
- կառային դարավանդ, **K-72**
- կառային լիճ, **K-73**
- կառեր, շրատներ, **K-85**
- կառնալիթ, **K-69**
- կառնոտիտ, **K-71**
- կառուցվածք, **C-266**
- կառուցվածքալերկացման (կառուցվածքադեմոնտաժի) ռելիեֆ, **C-300**
- կառուցվածքամետաղագոյացման զոնա, **C-301**
- կառուցվածքային աններդաշնակություն, **H-73**
- կառուցվածքային եզրագծեր, **K-258**
- կառուցվածքային երկրաբանություն, **C-297**
- կառուցվածքային երկրաձևաբանություն (գեոմորֆոլոգիա), **C-298**
- կառուցվածքային երկրաֆիզիկա, **F-156**
- կառուցվածքային հարկ, **C-307**
- կառուցվածքային հորատում, **C-303**
- կառուցվածքային (կոնստիտուցիոն) ջուր, **K-239**
- կառուցվածքային սարավանդ, **C-304**
- կառուցվածքային քիթ, **C-306**
- կառուցվածքաֆորմացիոն (կառուցվածքակազմավորումային) զոնա, **C-302**
- կառուցվածքաֆորմացիոն (կառուցվածքակազմավորումային) համալիր, **K-209**
- կառուցվածքալերկացման դարավանդ, լերկացման (դեմոնտաժիոն) դարավանդ, կառուցվածքային դարավանդ, **C-299**
- կասիտերիտ, անագաքար **K-116**
- կավ, **F-295**
- կավագրունտ, կավազետին, **F-475**
- կավաթերթաքար, **F-307**
- կավամերգել (կավային կավակրաքար), **F-306**
- կավային անապատ, **F-302**
- կավային ապար, **P-282**
- կավային կախույթ (տուսպենզիա), **F-303**
- կավային հատիկախումբ (ֆրակցիա), **F-304**
- կավային միներալներ, **F-305**
- կավանման կրաքարեր, **H-32**
- կավավազ, **C-322**
- կավացում, արգիլացում, **A-223**
- կավաքար, արգիլիթ, **A-224**
- կավիճ գրելու, **M-122**
- կավճանման մերգել (կավակրաքար), **M-138**
- կավճի համակարգ (ժամանակաշրջան), կավիճ, **M-132**
- կատագենեզ, **K-117**
- կատագենեզի զոնա, **3-79**
- կատագենետիկական հանքավայր, **M-151**
- կատասիա, **K-118**
- կատար, զագաթ, **F-462**
- կատարածն ծալքեր, **F-465**
- կատարային գիծ, **F-464**
- կարբոնադո, **K-60**
- կարբոնատային ապարներ, **K-63**
- կարբոնատային հողեր, **K-64**
- կարբոնատացում, **K-61**
- կարբոնատիտներ, **K-62**
- կարբոնատներ, **K-65**
- կարելյան ծալքավորություն, **K-67**
- կարծրության միներալաբանական սանդղակ, Մոխսի սանդղակ, **M-278**
- կարծրության սանդղակ, **Ш-14**
- կարճ բազմագոգածալք, բրախիսինկլինորիում, **B-159**
- կարճ գոգածալք, բրախիսինկլինալ, **B-158**
- կարճ կամարածալք, բրախիանտիկլինալ, **B-156**
- կարճածալք, բրախիծալք, **B-160**
- կարմիր երկաթաքար, **K-334**
- կարմիր խորջրյա կավ, **K-330**
- կարմիր պղնձաքար, **K-331**
- կարմիր ջրիմուռներ, **K-333**
- կարմրահող, **K-332**
- կարմիյան հարկ, **K-70**
- կարոտաժ, **K-74**
- կարոտաժային դիագրամ (տրամագիր), **K-83**
- կարոտաժի զոնդ (զննածող, մխան), **3-104**
- կարպոդոներ, **K-84**

- կարստ, **K-86**  
 կարստային գոգավորություն, **B-211**  
 կարստային գոգահովիտներ, **K-90**  
 կարստային դատարկություններ, **K-91**  
 կարստային լանդշաֆտ (բնապատկեր),  
**K-92**  
 կարստային լիճ, **K-89**  
 կարստային ձագար, **K-88**  
 կարստային ջուր, **K-87**  
 կարստային ռելիեֆ, **K-93**  
 կելովեյի հարկ, կելովեյ, **K-133**  
 կեղևային խորքային բեկվածքներ, **F-333**  
 կեղծ աններդաշնակություն, **H-67**  
 կեղծիրաբխային ժայթքում, **П-367**  
 կենդանաաշխարհագրություն, **3-107**  
 կենդանաբեմնոս (կենդանահատա-  
 կաբնակ), **3-106**  
 կենդանական աշխարհ (ֆաունա), **Ф-10**  
 կենդանապլանկտոն, **3-108**  
 կենդանիների ու բույսերի տեղագաղթ  
 (միգրացիա), **M-243**  
 կենսաբերկորային ապար, **П-177**  
 կենսաբույր, բիոհերմ, **B-96**  
 կենսագրեր, բիոգլիֆներ, **B-97**  
 կենսատերկրացենոզ (բիոգեոցենոզ), **B-95**  
 կենսատերկրաքիմիա, **B-94**  
 կենսատերկրաքիմիական որոնումներ,  
**B-93**  
 կենսազանգված, **B-100**  
 կենսազոնա, **B-98**  
 կենսածագում, կենսածնություն, բիոգե-  
 նեզ, **B-87**  
 կենսածագումնաբանական օրենք  
 (Յեկկել-Մյուլլերի օրենք), **3-9**  
 կենսածին ապարներ, կենսաքարեր, օր-  
 գանածին ապարներ, **B-89**  
 կենսածին կազմվածք, օրգանածին  
 կազմվածք (տեքստուրա), **B-88**  
 կենսածին կրաքարեր, օրգանածին  
 կրաքարեր, **B-90**  
 կենսածին նստվածքներ, օրգանածին  
 նստվածքներ, **B-91**  
 կենսաշերտագրություն, **B-101**  
 կենսաշխարհագրություն, **B-92**  
 կենսաքարեր, բիոլիթներ, **B-99**  
 կենսաքիմիական (կենսաբանական,  
 օրգանական) հողմահարում, **B-281**  
 կենսաքիմիական նստվածքներ, **O-192**  
 կենսոլորտ, **B-103**  
 կենտրոնական ժայթքում, **И-13**  
 կենտրոնական հրաբուխ, **B-239**  
 կենտրոնական ներժայթքում  
 (ինտրուզիա), **И-129**  
 կեռն, հանուկ, **K-136**  
 կեռնաչափ, հանուկաչափ, **K-138**  
 կետագծային ակոս, **B-150**  
 կերատոֆիր, **K-135**  
 կերնիտ, **K-137**  
 կերոզեն, **K-139**  
 կիանիտ, դիստեն, **K-140**  
 կիզերիտ, **K-141**  
 կիմերիջի հարկ, կիմերիջ, **K-143**  
 կիմերյան ծալքավորություն, **C-171**  
 կինաբար (զինջարակ, կինովար), **K-145**  
 կիսատրոհման պարբերություն ( $T_{1/2}$ ),  
**П-93**  
 կիրառական երկրաբանություն, **F-109**  
 կիրառական երկրատեկտոնիկա, **F-143**  
 կիրճ, ձոր (խորածոր), **У-37**  
 կլանում, արսորբում, **A-22**  
 կլանված ջուր, **B-132**  
 կլարեն, **K-152**  
 կլիմայագիտություն, **K-177**  
 կլիմայական գոտիներ (զոնաներ), **K-175**  
 կլիմայական շրջանացում, **K-176**  
 կլիմայաշերտագրություն, **K-178**  
 կլիպներ, **K-179**  
 կլիված, **K-167**  
 կղզեաղեղներ, կղզեշարաններ, **O-176**  
 կղզիաձև լեռներ, **O-175**  
 կղզային հրաբխայնություն, **O-174**  
 կղկղանքաքար (կոպրոլիթ), **K-271**  
 կնճիթավորներ, **X-18**  
 կոագուլում (մակարդում,  
 կոագուլյացիա), **K-180**  
 կորալտ, **K-181**  
 կորալտի հանքաքարեր, **K-183**  
 կորալտի փայլ, **K-184**  
 կորալտին, **K-182**  
 կոլյուվի (լանջակուտակ), կոլուվիալ  
 (լանջակուտակային) նստվածքներ,  
**K-192**  
 կոլումբիտ, **K-195**  
 կողային ապարներ, պարփակող  
 ապարներ, **B-136**  
 կողային ժայթքում, **B-133**  
 կողային կարոտած, **B-135**

- կողային ողողամաշում (էրոզիա, ողողահանում), **Բ-132**  
կողային ջրբաժան, **Բ-134**  
կողային սառցաբերուկ (նորեն), **Բ-131**  
կողափորվածք, **Ք-53**  
կոմբինացված (համակցված) հորատում, **Բ-187**  
կոմպետենտ ապար, **Կ-204**  
կոնաձև հրաբուխ, **Բ-232**  
կոնաձև ներժայթքումներ (ինտրուզիաներ), **Ի-125**  
կոնդիցիային (լավորակության) եզրագիծ, **Կ-257**  
կոնդիցիաներ (լավորակություններ), **Կ-223**  
կոնդրատի մակերևույթ, **Կ-233**  
կոնկրեցիաներ, **Կ-228**  
կոնյակի հարկ, կոնյակ, **Կ-269**  
կոնոդոնտներ, **Կ-232**  
կոնսեկվենտ հովիտ, ներդաշնակ հովիտ, **Կ-236**  
կոնսեկվենտ սողանք, **Օ-99**  
կոնվեկցիա (ջերմա-լիցքա-զանգվածափոխանցում), **Կ-216**  
կոնտրակցիայի (կծկանքի) վարկած, **Կ-252**  
կոնք, բադյա, **Բ-2**  
կոորդինատներ, **Կ-270**  
կոպիճ, **Դ-421**  
կոպճախառն, **Դ-420**  
կոպճաքար (գրավելիթ), **Դ-419**  
կոռոզիա (ապարամաշում), **Կ-287**  
կովելին (պղնձի լեդակաքար, պղնձի ինդիգո), **Կ-185**  
կոտիլոզավրեր, **Կ-307**  
կորդախտներ, **Կ-279**  
կորդիլիերներ, **Կ-280**  
կոտորուքային հորատում, **Բ-185**  
կոտորման ճեղքեր, **Կ-106**  
կոտրվածք, **Ի-40**  
կորզման գործակից, **Կ-317**  
կորզում, **Ի-38**  
կորունդ, **Կ-294**  
կոմբինացված (համակցված) հորատում, **Բ-187**  
կոքս, **Կ-186**  
կոքսացող ածուխներ, **Կ-189**  
կվազիկրատոն, **Կ-124**  
կտրատված ծալք, **Ք-33**  
կտրվածքի շերտային (շերտ առ շերտ) նկարագրություն, **Օ-91**  
կտրվածքների հարաբերակցություն (կոռելյացիա), **Կ-291**  
կրակավ, **Դ-299**  
կրային կոնկրեցիաներ, **Ի-16**  
կրային մերգել (կավակրաքար), **Մ-137**  
կրային տուֆ, տրավերտին, **Ի-17**  
կրասպաթ, **Ի-18**  
կրատոն, **Կ-335**  
կրաքար, **Ի-19**  
կրիպտոզոյան (զաղտնակյանքի) եոն, կրիպտոզոյ, **Կ-357**  
կրկնաբյուրեղներ, **Դ-16**  
կրկնակման կար, **Դ-19**  
կրկնակման հարթություն, **Դ-17**  
կրկնակման օրենք, **Դ-18**  
կրկնակորություն (ֆլեքսուրա), **Փ-42**  
կրոկոիտ, **Կ-382**  
կուէստներ, **Կ-406**  
կուլիսանման (շարակարգանման) ծավալորություն, **Կ-400**  
կուլմ, **Կ-401**  
կուկերսիտ, **Կ-399**  
կուպրիտ, կարմիր պղնձի հանքաքար, **Կ-405**  
կուսական (յուվենիլ) ջուր, **Կ-1**  
կուտակման հիմնամակարդակ **Բ-11**  
կուտակում (ակումուլյացիա), **Ա-74**  
կուտակումային ափ, **Ա-72**  
կուտակումային դարավանդ, **Ա-69**  
կուտակումային լեռներ, **Ա-70**  
կուտակումային հարթավայրեր, **Ա-71**  
կուտակումային ռելիեֆ, **Ա-69**
- Յ**
- հագեցած լուծույթ, **Ի-39**  
հագեցման զոնա, **Յ-83**  
հազվագյուտ հողերի տարրեր, **Ք-75**  
հազվագյուտ մետաղներ, **Ք-74**  
հալիտ, քարաղ, **Դ-39**  
հալմիրոլիզ, **Դ-46**  
հալուազիտ, **Դ-40**  
համաթեք (համակլինալ), **Դ-371**  
համալեռնագոյացման (համաօրոգեն) շարժումներ, **Շ-122**

- համալեռնագոյացման մագնայակա-  
նություն, **M-16**
- համալեռնագոյացման ներժայթքումներ  
(ինտրուզիաներ), **H-119**
- համախառն հանում, **B-292**
- համալիր հանքաքարեր, **K-212**
- համածագում (համագոյացում), **C-108**
- համածալքավորման ներժայթքումներ  
(ինտրուզիաներ), **H-122**
- համածին (սինգենետիկ) հանքավայրեր,  
**C-109**
- համակարգություն, դասակարգում, **C-126**
- համակենտրոն ծալք, **K-268**
- համակենտրոն ծալքավորություն, **C-172**
- համահարթ (պենեպլենում), **P-66**
- համահարթում (պենեպլենացում), **P-67**
- համամագնատիտներ (համամագնայա-  
կան ապարներ), **K-202**
- համանստվածքակուտակումային ծալ-  
քավորություն, **K-234**
- համանստվածքակուտակումային  
ծալքեր, **C-145**
- համանստվածքակուտակումային  
տեկտոնական շարժումներ, **K-235**
- համանստվածքակուտակումային, **C-123**
- Համաշխարհային օվկիանոս, **M-309**
- համաչափության առանցք, **O-182**
- համաչափության հարթություն, **P-183**
- համաչափության տեսակ, **B-60**
- համաջերմագծեր (իզոթերմեր), **H-61**
- համասեռ հրաբուխ, **F-370**
- համասեռ ներառուկներ  
(ներփակումներ), **B-76**
- համատարած անրակապ, **K-347**
- համատեկտոնական ներժայթքումներ  
(ինտրուզիաներ), **K-138**
- հետընթաց (ռեգրեսիվ) տեղադրում, **P-71**
- հետընթաց (ռեգրեսիվ)  
փոխակերպություն, **P-72**
- հետընթացություն (ռեգրեսիա), **P-73**
- «համր» ապարներ, **H-52**
- հանգած հրաբուխ, **B-236**
- հանուկի (կեռնի) ելք, **B-321**
- հանքաքեր լուծույթներ, **P-153**
- հանքաքեր ստվարաշերտ  
(ապարախումբ), **T-86**
- հանքաքերություն, **P-154**
- հանքագագ, հանքային գագ, **F-12**
- հանքագոյացում (հանքածնություն,  
միներագենիա), **M-272**
- հանքագրություն, միներագրաֆիա,  
**M-273**
- հանքաերևակում (հանքադրստորում),  
**P-155**
- հանքախորշաճակատ, փորվածքաճա-  
կատ, հանքախորշ (փորվածքախորշ),  
**3-1**
- հանքակուտակ, **3-20**
- հանքակուտակի եզրագիծ, **K-256**
- հանքակուտակի ծածկան, **P-248**
- հանքակուտակի տանիք, **K-380**
- հանքակտոր, ապարակտոր, **Պ-28**  
(հանքա)հարստացում, **Փ-47**
- հանքահորային ջուր, **B-154**
- հանքահորի օդափոխում, **B-31**
- հանքամիջանցք, շտրեկ, **Պ-26**
- հանքային (հանքառքերող) անցուղի,  
**K-43**
- հանքային աղբյուրներ, **M-303**
- հանքային գոտի, **P-150**
- հանքային դաշտ, **P-146**
- հանքային երկրաֆիզիկա, **F-155**
- հանքային զոնա, **P-143**
- հանքային լճեր, **M-304**
- հանքային համալիր, **K-208**
- հանքային հանգույց, **P-152**
- հանքային հումք, հանքահումք, **M-301**
- հանքային մարմին (հանքամարմին),  
**P-147**
- հանքային շրջան, **P-151**
- հանքային պաշարներ, **M-305**
- հանքային ջրեր, **M-302**
- հանքային ջրերի հանքավայր, **M-157**
- հանքային ջրերի քարտեզ, **K-106**
- հանքային ֆորմացիաներ  
(կազմավորումներ), **P-149**
- հանքայնարարներ (միներալիզա-  
տորներ), **M-275**
- հանքայնացման (հանքագոյացման)  
փուլ, **Փ-2**
- հանքայնացման բաբախման զոնայա-  
կանություն, **3-101**
- հանքայնացման դիագենետիկական  
(ապարագոյացման) զոնայակա-  
նություն, **3-100**

- հանքայնացման հորիզոնական զոնա-  
յականություն, **3-99**
- հանքայնացման ուղղաձիգ զոնայակա-  
նություն, **3-98**
- հանքայնացման ջերմաստիճանային  
զոնայականություն, **3-103**
- հանքայնացման ռեգիոնալ (երկրաշր-  
ջանային) զոնայականություն, **3-102**
- հանքայնացում, **M-276, O-144**
- հանքաշերտ, **Ս-160**
- հանքաջուր, **Բ-142**
- հանքավայրերի բաց մշակում, **O-187**
- հանքավայրերի երկրաբանաարդյունա-  
բերական պարամետրեր, **Ս-50**
- հանքավայրերի երկրաբանատնտե-  
սական գնահատում, **Գ-117**
- հանքավայրերի ծովային  
հետախուզություն, **M-357**
- հանքավայրերի վերականգնում, **P-61**
- հանքավայրի գազազերծում  
(գազազրկում, ապագազացում), **Ճ-26**
- հանքավայրի երկրաչափացում, **Գ-120**
- հանքավայրի բացում, **Բ-222**
- հանքավայրի ծագում, **Գ-65**
- հանքավայրի ցրման առաջնային  
պսակներ, **Ս-76**
- հանքարան, **P-144**
- հանքարանային երկրաբանություն, **Գ-111**
- հանքարանային ջուր, **Բ-143**
- հանքափող, հանքահոր, հանքարան,  
**Ս-7**
- հանքափորվածք (ընդերքային  
փորվածք), **Բ-298**
- հանքափրկարարական  
աշխատանքներ, **Գ-397**
- հանքաքար (հանքանյութ), **P-129**
- հանքաքարային պալարներ, **Ջ-4**
- հանքաքարերի (հանքանյութերի)  
ներփակվածքային կազմվածք, **T-33**
- հանքաքարերի բակլայածն կազմվածք,  
**T-32**
- հանքաքարերի դասակարգում, **K-162**
- հանքաքարերի զանգվածային  
կազմվածք, **T-36**
- հանքաքարերի զոլավոր կազմվածք,  
**T-37**
- հանքաքարերի զոնայական կազմվածք,  
**T-35**
- հանքաքարերի կազմվածք  
(տեքստուրա), **T-31**
- հանքաքարերի հողանման կազմվածք,  
**T-34**
- հանքաքարերի ներփակվածքային  
կազմվածք, **T-33**
- հանքաքարերի նրբերակավոր կազմ-  
վածք, **T-38**
- հանքաքարերի շերտավոր կազմվածք,  
**T-40**
- հանքաքարերի ցանցածն կազմվածք,  
**T-39**
- հանքերակ, **Ջ-33**
- հանքուղի (շտոլնյա), **Ս-24**
- հաուսմանիտ, **Գ-53**
- հասուն գետային ցանց, **3-110**
- հասուն հովիտ, **3-109**
- հասպիս (հասնկաքար), **Կ-8**
- հասպիսանման ապար, **Ս-293**
- հաստություն, **M-377**
- հաստությունների վերլուծություն, **A-159**
- հաստությունների ու ֆազիաների  
մեթոդ, **M-229**
- հաստությունների քարտեզ, **K-107**
- հավայան տիպի հրաբուխ, **Բ-228**
- հավասարագծեր, **Ի-55**
- հավասարագծերի մեթոդ, **M-228**
- հավասարաթեք լեռնաշղթա, **Ի-53**
- հավասարաթեք հովիտ, **Ի-50**
- հավասարաթեք տեղադրում, **Ի-52**
- հատակաբնակներ, բենթոս, **Բ-66**
- հատակամերձ ջուր, **Բ-140**
- հատակային նստվածքներ, **Ճ-106**
- հատակային ջուր, **Բ-135**
- հատակային սառցաբերուկ (մորեն),  
**Ճ-105**
- հատիկաչափական (մեխանիկական)  
կազմի կոր, **K-348**
- հատիկաչափական տարրալուծում,  
**Գ-446**
- հատիկաչափություն, **Գ-456**
- հատիկավոր սառույց, **Ղ-44**
- հատիկավորում, **Գ-457**
- հատող հանքային մարմին  
(հանքամարմին), **T-65**
- հատող վրաշարժ, **Ի-9**
- հատույթի բարձրություն, **Բ-316**
- հատվածակողմ, պրիզմա, **Ս-329**
- հատվածոտանիներ, **Կ-6**

- հարաբերական բարձրություն, **O-205**  
 հարաբերական երկրաժամանակագրու-  
 թյուն, **F-190**  
 հարաբերակցություն (կոռեկցիա),  
**K-288**  
 հարբած անտառ, **L-79**  
 հարթագոգածալք (պլակոսինկլինալ),  
**P-153**  
 հարթականարածալք (պլականտիկլի-  
 նալ), **P-151**  
 հարթահատակ ծով, **M-348**  
 հարթավայր, **P-1**  
 հարթավայրային գետ, **P-2**  
 հարթավայրային լանդշաֆտ  
 (բնապատկեր), **P-3**  
 հարթեցման մակերևույթ, **P-200**  
 հարմարվողականություն  
 (ադապտացում), **A-52**  
 հարուստ հանքաքար, **P-131**  
 հարստանալիություն, **O-18**  
 հարստապոչեր, **X-8**  
 հարվածական հորատում, **B-195**  
 հարվածաճոպանային հորատում, **B-197**  
 հարվածապտտական հորատում, **B-196**  
 հարցբուրգիտ, **F-51**  
 հաուսմանիտ, **F-53**  
 հեղենբերգիտ, **F-54**  
 հելիկտիտներ, **F-58**  
 հելիում, **F-59**  
 հելվետյան հարկ, հելվետ, **F-60**  
 հեղեղաբերուկ (պրոլուվի), հեղեղաբե-  
 րուկային (պրոլուվիալ) նստվածքներ,  
**P-346**  
 հեղեղաբերուկ-գետաբերուկ նստվածք-  
 աներ, **P-345**  
 հեղեղահուն (հովտափոս), **T-6**  
 հեղեղատ, **B-25**  
 հեղեղատ, ձորակ, **O-32**  
 հեղուկ բյուրեղ, **K-360**  
 հեմատիտ (արյունաքար, կարմրաքար,  
 կարմիր երկաթաքար), **F-61**  
 հեմիմորֆիտ, կալամին, **F-62**  
 հեյդելբերգյան մարդ, **F-55**  
 հենակետային հորատում, **O-109**  
 հենակետային շերտագրական  
 կտրվածք, **P-43**  
 հեսանաքար, **K-33**  
 հետախուզական առու, **K-40**  
 հետախուզական գիծ, **L-100**  
 հետախուզական գործ, **P-25**  
 հետախուզական երկրաֆիզիկա, **F-154**  
 հետախուզական լեռնային  
 փորվածքներ, **P-26**  
 հետախուզական կտրվածք (տրամատ,  
 պրոֆիլ), **P-42**  
 հետախուզական հանքափորվածք,  
**B-302**  
 հետախուզական հանքուղի, **W-25**  
 հետախուզական ցանց, **P-24**  
 (հետախուզա)հոր, **W-30**  
 հետախուզության թրթռաներկաշարժա-  
 կան (թրթռաստյամիկական) մեթոդ, **B-54**  
 հետերկրասինկլինալային  
 (էպիգեսինկլինալային) լեռներ, **Z-40**  
 հետընթաց (ռեգրեսիվ) ողողամաշում  
 (երոզիա), **P-70**  
 հետխռիկավորներ, **Z-8**  
 հետծալքավորման ներժայթքումներ  
 (ինտրուզիաներ), **H-118**  
 հետմագմայական հանքավայր, **M-169**  
 հետմաստվածքակուտակումային  
 (հետսեդիմենտացիոն), **P-304**  
 հետողողամաշման (հետերոզիոն)  
 վրաշարժ, **H-7**  
 հետապլատֆորմային (էպիպլատֆորմա-  
 յին) լեռնագոյացում, **Z-44**  
 հետսառցադաշտային դարակարգ, **P-302**  
 հերցինիդներ, **F-193**  
 հերցինյան ծալքավորություն,  
 վարիսյան ծալքավորություն, **F-194**  
 հեքսագոնային (վեցանկյունային)  
 բուրգ, **P-131**  
 հիալիտ, **F-199**  
 հիալոբազալտ, **F-201**  
 հիդրավլիկական հորատում (ջրահորա-  
 տում), **B-184**  
 հիերոգլիֆներ, **F-256**  
 հիմնաժայռ, պլոտիկ, **P-185**  
 հիմնական զանգված, **O-167**  
 հիմքային ապարներ, **O-168**  
 հիմք, հիմնամակարդակ, **B-10**  
 հիմքային (հիմքի) խառնաքար (քարա-  
 խառնուրդ, կոնգլոմերատ), **B-4**  
 հիմքային լավա (հրահոսք), **O-165**  
 հիմքային մագմա, **O-166**  
 հիմքի ելուստ, **B-319**  
 հին լեռներ, **D-110**  
 հին հողմահարման կեղև, **K-273**

- հին պլատֆորմ, **Դ-111**  
 հին պլատֆորմների մետաղագոյացում, **Մ-192**  
 հին սողանք, **Օ-97**  
 հիոլիթներ, **Ճ-13**  
 հիպարիոն, **Դ-277**  
 հիպերբազիտներ, **Դ-261**  
 հիպերստեն, **Դ-266**  
 հիպուրիտներ, **Դ-278**  
 հոլանդություն, **Ա-12**  
 հոլոկ (շլիֆ), **Մ-16**  
 Հյուսիսային բևեռ, **Շ-40**  
 հնաբուսաբանություն, **Ս-6**  
 հնատերկրաձևաբանություն, **Ս-11**  
 հնաէկոլոգիա, **Ս-31**  
 հնակենդանաաշխարհագրություն, **Ս-17**  
 հնակենդանաբանություն, **Ս-18**  
 հնակենսաերկրաքիմիա, **Ս-5**  
 հնակենսաշխարհագրություն, **Ս-4**  
 հնակլիմայագիտություն, **Ս-19**  
 հնահողեր, **Ս-25**  
 հնահրաբխագիտություն, **Ս-7**  
 հնամազնիսական հարաբերակցություն (կոռելյացիա), **Կ-289**  
 հնամազնիսականություն, **Ս-21**  
 հնաշխարհագրական կտրվածք (տրամատ, պրոֆիլ), **Ս-41**  
 հնաշխարհագրական քարտեզներ, **Ս-9**  
 հնաշխարհագրություն, **Ս-10**  
 հնապալինոլոգիա, **Ս-26**  
 հնաջերմաստիճաններ, **Ս-27**  
 հնաջրագրություն, **Ս-13**  
 հնաջրաերկրաբանություն, **Ս-12**  
 հնասառցադաշտագիտություն, **Ս-14**  
 հնատիպ ապարներ, **Ս-28**  
 հնէաբանություն, **Ս-22**  
 հոլոմորֆ ծալքավորություն, **Շ-174**  
 հոլոտիպ, **Դ-365**  
 հոլոցեն, հետսառցադաշտային դարակարգ, **Դ-366**  
 հոծ կազմվածք (տեքստուրա), **Մ-79**  
 հողաբարելավում, **Մ-128**  
 հողաբարելավման (մելիորատիվ) ջրաերկրաբանություն, **Մ-126**  
 հողագիտություն, **Ս-319**  
 հողային ջուր (խոնավություն), **Յ-138**  
 հողանման (հողախառն) գիպս, **Դ-281**  
 հողապատմեշ (պատվար, արգելապատ, ամբարտակ), **Դ-6**  
 հողերի չորացում, **Օ-178**  
 հողի խոնավություն, **Յ-89**  
 հողի օդավորում (աէրացիա), **Ա-286**  
 հողնահարման երկրաքիմիա, **Դ-175**  
 հողնահարման զոնա, **Յ-71**  
 հողնահարման կեղև, **Կ-272**  
 հողնահարման հանքավայր, **Մ-143**  
 հողնահարում, **Յ-280**  
 հողնային (էոլյան) մստվածքներ, **Յ-32**  
 հողնային (էոլյան) ցրոններ, **Ս-122**  
 հողնային ծփանքի նշաններ, **Յ-59**  
 հողնային ողողամաշում (էրոզիա), **Յ-44**  
 հոմոնորֆ ծալքավորություն, **Շ-168**  
 հոսագրունտի (հոսագետնի պլիվունային) շարժումներ, **Դ-12**  
 հոսանստվածքներ, հոսակուտակներ, մակահոսուկներ, **Կ-40**  
 հոսանքի ծփանքի նշաններ, **Յ-58**  
 հոսքագրունտ (ապարալոդիկ), **Ս-193**  
 հոսքազուրկ (անհոսք, պարփակ) գոգավորություն, **Յ-210**  
 հոսքազուրկ ավազան, պարփակ ավազան, **Յ-83**  
 հոսքազուրկ իջվածք, **Յ-82**  
 հոսքազուրկ լիճ, **Յ-81**  
 հոսքազուրկ մարզ, **Օ-7**  
 հոսքային ջրեր (հոսքաջերր), **Շ-246**  
 հոսքի (ջրհոսքի) օդավորում (աէրացիա), **Ա-285**  
 հոսքի գործակից, **Կ-323**  
 հոսքի ծալքեր, **Շ-156**  
 հովիտ, **Դ-98**  
 հովիտ-գրաբեն, **Դ-101**  
 հովհարածն ծալք, **Յ-22**  
 հովհարածն կլիվաժ, **Կ-168**  
 հովտային սառցադաշտեր, **Դ-102**  
 հովտի լանջեր, **Շ-184**  
 հոտերիվյան հարկ, հոտերիվ, **Դ-415**  
 հոր (ջրհոր), **Կ-193**  
 հորատադուր, **Յ-208**  
 հորատանցք, **Յ-204**  
 հորատանցքերի երկրաֆիզիկական ուսումնասիրություն, **Դ-159**  
 հորատանցքի ամրակապում, **Կ-343**  
 հորատանցքի թեքում, **Մ-145**  
 հորատանցքի կոնսերվացում, **Կ-237**  
 հորատանցքի տամպոնում (ցեմենտացում), **Դ-8**



- հորատապայթեցման աշխատանքներ, **B-207**  
 հորատման ազրեգատ, **A-48**  
 հորատման աշտարակ, **B-202**  
 հորատման հենահարթակ, **B-203**  
 հորատման մատյան, **Ж-40**  
 հորատման սարք, **B-205**  
 հորատող, **B-200, B-206**  
 հորատում, **B-178**  
 հորիզոն, **Г-378**  
 հորիզոնագծեր, հորիզոնականներ, **Г-379**  
 հորիզոնական հանքակուտակ, **З-21**  
 հորիզոնական շերտավորություն, **Г-380**  
 հորիզոնական տեղադրում, **Г-382**  
 հորստ (բարձրատեղանք), **Г-410**  
 հպումային փոխակերպություն (կոն-  
 տակտային մետամորֆություն), **K-243**  
 հրաբեկորային ապարներ,  
 հրաբեկորներ, **П-136, B-271**  
 հրաբեկորային կառուցվածք, **C-291**  
 հրաբեկորային նյութ, **П-137, B-272**  
 հրաբեկորաբարեր  
 (պիրոկլաստոլիթներ), **П-138**  
 հրաբեկորներ, **П-139**  
 հրաբխաբեկորներ, **B-273**  
 հրաբխագետ, **B-274**  
 հրաբխագիտություն, **B-275**  
 հրաբխաերախային (փողաբերանային)  
 շեղջաքար (բեկորաշեղջ), **A-44**  
 հրաբխածին ֆացիաներ, **Ф-15**  
 հրաբխածին ֆորմացիաներ (կազմավոր-  
 ումներ), **Ф-57**  
 հրաբխածին-նստվածքային (հրաբ-  
 խանստվածքային) ապարներ, **B-270**  
 հրաբխածին-նստվածքային  
 հանքավայրեր, **B-269**  
 հրաբխածին-նստվածքային ֆորմացիա-  
 ներ (կազմավորումներ), **Ф-56**  
 հրաբխային ապար, **B-251**  
 հրաբխային ավազ, **П-104**  
 հրաբխային արտանետվածքներ, **B-279**  
 հրաբխային բնապատկեր (լանդշաֆտ),  
**B-260**  
 հրաբխային գագեր, **B-253**  
 հրաբխային գմբեթ,  
 արտանդաժայթքային գմբեթ, **B-259**  
 հրաբխային գոգավորություն, **B-250**  
 հրաբխային գոտի, **B-263**  
 հրաբխային երկրաշարժ, **B-265**  
 հրաբխային ժայթքում, **B-266**  
 հրաբխային լեռներ, **B-254**  
 հրաբխային լիճ, **B-267**  
 հրաբխային խառնարան, **B-258**  
 հրաբխային խարամ, **B-264**  
 հրաբխային կենտրոն, **Ц-4**  
 հրաբխային կղզիներ, **B-255**  
 հրաբխային կոն, **B-257**  
 հրաբխային մոխիր, **B-262**  
 հրաբխային շեղջաքար (բեկորաշեղջ),  
**A-43**  
 հրաբխային ողողամաշման  
 գոգավորություն, **K-309**  
 հրաբխային ջուր, **B-111**  
 հրաբխային ռելիեֆ, **P-81**  
 հրաբխային ռումբ, **B-248**  
 հրաբխային սարավանդ, լավային սա-  
 րավանդ, **B-268**  
 հրաբխային տիղմ, **И-70**  
 հրաբխային տուֆ (փխրաքար, հրափխ-  
 րաքար), **T-121**  
 հրաբխային (ֆունարոլային)  
 գնդանյութեր, **B-188**  
 հրաբխային փշրաքար (բրեկչիա), **B-249**  
 հրաբխային փոշի, **B-252**  
 հրաբխային օջախ, **B-261**  
 հրաբխայնություն, հրաբխականություն,  
**B-242**  
 հրաբխանստվածքային քարագոյացում  
 (լիթոգենեզ), **Л-110**  
 հրաբխապայթում (էքսպլոզիա), **Э-11**  
 հրաբխապայթում, **B-256**  
 հրաբխապայթումային փշրաքար  
 (բրեկչիա), **B-166**  
 հրաբխապայթումային կոներ, **K-266**  
 հրաբխատեկտոնական բարձրացում,  
**П-225**  
 հրաբխատեկտոնական իջույթ, **B-277**  
 հրաբխատեկտոնական  
 կառուցվածքներ, **C-308**  
 հրաբխաքար, **B-247**  
 հրաբխի մղանցք, **K-42**  
 հրաբխի փողաբերան (հրաբխաերախ,  
 հրաբխի բկանցք), **Ж-21**  
 հրաբուխ, **B-227**  
 հրակայուն կավ, **Г-301**  
 հրապարակային (մակերեսային)  
 ժայթքում, **П-189**

հրաքարային (կոլչեդանային)  
հանքավայրեր, **K-196**  
հրաքարեր, կոլչեդաններ, **K-197**  
հրեաքար, **E-2**  
հում, **P-157**  
հունային հոսք, **P-160**  
հունային նստվածքներ, **P-159**  
հունային ողողամաշում (էրոզիա), **P-158**  
հունային ցրոններ, **P-120**  
հումոլիթներ, հումուսաքարեր, **F-482**  
հումուս, բուսահող, **F-483**  
հումուսային (բուսահողային) հորիզոն,  
**F-484**  
հումուսացում, հումուսագոյացում, **F-481**

**Ձ**

ծայնագիտական (ծայնային) կարոտաժ,  
**K-75**  
ծարխտներ, պտերներ, **Π-37**  
ծգող(ական)ություն, գրավիտացիա,  
**F-432**  
ծգողական (գրավիտացիոն) անբնական  
նոնություն (անկանոնություն), **F-425**  
ծգողական (գրավիտացիոն)  
գործընթացներ, **F-428**  
ծգողական (գրավիտացիոն) լանջ, **F-431**  
ծգողական (գրավիտացիոն) ծալքավոր  
ություն, **C-169**  
ծգողական (գրավիտացիոն) ծալքեր,  
**F-430**  
ծգողական (գրավիտացիոն) կարոտաժ,  
**F-429**  
ծգողական (գրավիտացիոն) նստում,  
**O-161**  
ծգողական (գրավիտացիոն)  
նստվածքներ, **O-195**  
ծգողական (գրավիտացիոն)  
չարժումներ (տեղաշարժեր), **D-14**  
ծգողական (գրավիտացիոն) ջուր, **B-113**  
ծգողական (գրավիտացիոն)  
վարիոնետոր (փոփոխաչափ), **B-18**  
ծգողական (գրավիտացիոն)  
տարբերակում, **F-426**  
ծեռքով հորատում, **B-193**  
ծկնամողեսներ, իխտիոզավրեր, **H-153**  
ծկներ, **P-162**

ծնահյուս (ծնահոսք, ծնափլվածք), **Л-12**  
ծողային հորատում, **Б-199**  
ծորակ, **Л-138**  
ծորակային լիճ, **Л-139**  
ծնաբանական վերլուծություն, **M-366**  
ծնագոյացման (մորֆոգենեզի)  
ազդակներ, **A-40**  
ծնագոյացում (մորֆոգենեզ), **M-364**  
ծնագրություն (մորֆոգրաֆիա), **M-365**  
ծնախախտման (դեֆորմացիայի) մոդել,  
**M-316**  
ծնակառուցվածքներ (մորֆոստրուկտու-  
րաներ), **M-371**  
ծնաչափություն, **M-369**  
ծնատեկտոնական  
(մորֆոտեկտոնական) վերլուծություն,  
**M-373**  
ծնաքանդակներ, **M-370**  
ծնախախտման (դեֆորմացիայի)  
մոդուլ, **M-316**

**Ղ**

ղեկավարող բրածոներ, **P-156**

**Ճ**

ճալաքարեր, **F-45**  
ճալաքարախառնուրդ, ճալաքարուտ,  
ճալաքարաշերտ, **F-38**  
ճալաքարերի կողմնորոշում, **O-129**  
ճահիճ, **Б-142**  
ճահճագագ, **F-11**  
ճահճագիտություն, **Б-143**  
ճահճային բնապատկեր (լանդշաֆտ),  
**Б-141**  
ճահճային նստվածքներ, **Б-139**  
ճահճացում, **З-4**  
ճառագայթաածխածին  
(ռադիոածխածին), **P-18**  
ճառագայթաածխածնային (ռադիոած-  
խածնային) մեթոդ, **P-19**  
ճառագայթակտիվ (ռադիոակտիվ)  
իզոտոպներ, **P-7**  
ճառագայթակտիվ (ռադիոակտիվ)  
հանքաքար, **P-24**  
ճառագայթակտիվ (ռադիոակտիվ)  
միներալներ, **P-8**

ճառագայթակտիվ (ռադիոակտիվ) ջրեր, **P-9**  
 ճառագայթակտիվ (ռադիոակտիվ) կարոտաժ, **K-79**  
 ճառագայթագիտական (ռադիոգիտական) հասակ, ճառագայթաչափական (ռադիոչափական) հասակ, բացարձակ հասակ, **P-12**  
 ճառագայթաերկրաբանություն (ռադիոերկրաբանություն), միջուկային երկրաբանություն, **P-10**  
 ճառագայթաչափական (ռադիոչափական) հետախուզություն, **P-16**  
 ճառագայթաջրաերկրաբանություն (ռադիոջրաերկրաբանություն), **P-11**  
 ճառագայթավոր հրաքար, **L-149**  
 ճարտարագիտաերկրաբանական գործընթացներ, **I-97**  
 ճարտարագիտաերկրաբանական համալիր, **I-98**  
 ճարտարագիտաերկրաբանական հանույթ, **I-94**  
 ճարտարագիտաերկրաբանական հորատանցք, **C-130**  
 ճարտարագիտաերկրաբանական շրջան, **I-99**  
 ճարտարագիտաերկրաբանական շրջանացում, **I-101**  
 ճարտարագիտաերկրաբանական պայմաններ, **I-97**  
 ճարտարագիտաերկրաբանական ռեզիոն (երկրաշրջան), **I-110**  
 ճարտարագիտաերկրաբանական քարտեզ, **P-65**  
 ճարտարագիտական երկրաբանություն, **G-103**  
 ճարտարագիտական երկրաբաշխություն (գեոդեզիա) **I-92**  
 ճեղքային ծակոտկենություն, **Π-273**  
 ճեղքային ջուր, **B-152**  
 ճեղքավորվածության գործակից, **K-324**  
 ճեղքերի առաջացում (գեներացիա), **Γ-68**  
 ճեղքային ժայթքում, **I-12**  
 ճեղքային հրաբուխ, **B-238**  
 ճմլման զոնա, **3-93**  
 ճյուղավորվող երակ, **Ж-27**  
 ճյուղավորում, **B-63**  
 ճնշաչափ, բարոմետր, **Б-35**

ճնշման բարձրություն, **B-310**  
 ճնշման գրադիենտ (հիդրավլիկ գրադիենտ), **H-28**  
 ճնշումային (արտեզյան) աղբյուր, **H-29**  
 ճնշումային (վերընթաց) ջուր, **B-129**  
 ճնշումային բարձրություն, **B-312**  
 ճոպանաձև լավա, **K-44**

## Մ

մասստրիխտի հարկ, մասստրիխտ, **M-2**  
 մաար, հրաբխափոս, **M-1**  
 մագմա (հրահեղուկ) **M-3**  
 մագմայածին ծալքեր, **C-136**  
 մագմայածին հանքավայրեր, **M-23**  
 մագմայական ապարներ, **M-20**  
 մագմայական ապարների կառուցվածք, **C-271**  
 մագմայական ապարների ֆացիաներ, **Φ-18**  
 մագմայական գործունեության փուլ, **Φ-1**  
 մագմայական հանքավայրեր, **M-21**  
 մագմայական հպում (հպատեղ), **K-241**  
 մագմայական ֆորմացիա (կազմավորում), **M-19**  
 մագմայականություն, **M-8**  
 մագմայի (հրահեղուկի) տարբերակում, **Д-89**  
 մագնեզիում (մագնեսիոն), **M-28**  
 մագնեզիումի հանքաքարեր, **M-27**  
 մագնեզիտ, **M-24**  
 մագնետիտ, մագնիսական երկաթաքար, **M-26**  
 մագնիսական ազիմուտ, **M-37**  
 մագնիսական անկանոնություն (անբնականոնություն), **M-29**  
 մագնիսական բևեռ, **Π-265**  
 մագնիսական զատում, **M-32**  
 մագնիսական ընկալունակություն, **M-31**  
 մագնիսական թեքում, **M-34**  
 մագնիսական կարոտաժ, **M-40**  
 մագնիսական հակում, **M-36**  
 մագնիսական հանույթ, **M-33**  
 մագնիսական հրաքար, **M-41**  
 մագնիսական միջօրեական, **M-42**  
 մագնիսական տարրալուծություն, **M-38**  
 մագնիսական փոթորիկ, **M-30**  
 մագնիսական փոփոխարկումներ (վարիացիաներ), **B-15**

- մագնիսահետախուզություն, **M-44**  
մագնիսաչափ, **M-43**  
մագնիսացվածություն, **H-21**  
մագնիսոլորտ, **M-45**  
մադլեն, մադլենյան մշակույթ, **M-47**  
մազանոթային բարձրացման զոնա, **3-78**  
մազանոթային բարձրացման  
մակարդակ, **B-311**  
մազանոթային բարձրացում, **K-56**  
մազանոթային խոնավատարություն,  
**K-54**  
մազանոթային խոնավություն **B-84**  
մազանոթային ճնշում, **K-55**  
մազանոթային ջուր, **B-121**  
մազոտ ռնգեղջյուր, **B-203**  
մաթեմատիկական երկրաբանություն,  
**M-82**  
մաթեմատիկական քարտեզագրություն,  
**M-83**  
մալաքիտ (դահանակ, մոլոշաքար), **M-61**  
մածուցիկության գործակից, **K-316**  
մալմ, **M-62**  
մակաբացման աշխատանքներ, **B-223**  
մակաբույծ խառնարան, **Մ-44**  
մակաբույծ խառնարանի ժայթքում, **Մ-10**  
մակաբույծ հրաբխային կոն, կողմնակի  
(երկրորդական) հրաբխային կոն, **Մ-43**  
մակաբույծ հրաբուխ, **B-234**  
մակածին գոյացություններ, **O-23**  
մակածին (էպիգենետիկական) հանքա-  
վայրեր, **Յ-39**  
մակածին նստվածքային միներալներ,  
**M-298**  
մակածնություն (էպիգենետ), **Յ-38**  
մակակլանման (ադսորբման) ջուր, **B-105**  
մակակլանում, ադսորբում, **A-54**  
մակաողողահոունային դարավանդ, **H-11**  
մակամայրցամաքային  
(էպիկոնտինենտալ) ծով, **Յ-42**  
մակարդակաչափում, **H-100**  
մակերեսային ողողամաշում (երոզիա),  
մակերևութային ողողատարում, **Մ-182**  
մակերևութային (արտածին) ծալքեր,  
**C-151**  
մակերևութային հանքավայր, **M-164**  
մակերևութային հոսք, **Մ-199**  
մակընթացագուրկ ծով, **B-79**  
մակընթացություններ (և տեղատվու-  
թյուններ), **Մ-332**  
մակշեղերական հանույթ, **M-74**  
մակրո..., մեծա..., խոշորա..., **M-48**  
մակրոծակոտկենություն, **M-51**  
մակրոկառուցվածք, **M-55**  
մակրոռելիեֆ (մեծառելիեֆ), **M-52**  
մակրոֆաունա, **M-56**  
մակրոֆագիաներ, **M-57**  
մահացած պլանկտոն, **Մ-157**  
մամոնտ, **M-63**  
մամռակերպեր, **M-386**  
մայր ցամաք, **K-244**  
մայր ցամաքի ստորջրյա եզր, **Մ-213**  
մայրական ապար, **M-87**  
մայրցամաքային երկրակեղև, **K-245**  
մայրցամաքային լանջ, **M-87**  
մայրցամաքային ծանծաղուտ, **O-203**  
մայրցամաքային ծանծաղուտային  
(շելֆային) սառցադաշտ, **Մ-51**  
մայրցամաքային կրկնակորություն  
(ֆլեքսուրա), **K-246**  
մայրցամաքային ստորոտ, **K-247, M-85**  
մանգան (արջնաքար), **M-67**  
մանգանաքարեր (արջնաքարեր), **M-65**  
մանգանի (արջնաքարի)  
կոնկրեցիաներ, **M-68**  
մանգանի հանքաքարեր, **M-69**  
մանգանիտ, **M-64**  
մանրաբլուր, **M-131**  
մանրաբյուրեղներ (միկրոլիթներ) **M-253**  
մանրածալքավորություն, **Մ-180, Դ-417**  
մանրամասն հետախուզություն, **Մ-21**  
մանրամասշտաբ (մանրաչափացույց)  
քարտեզներ, **M-130**  
մանրափշրաքար (միկրոբրեկչիա),  
**M-251**  
մաշկոտնյաներ, մաշկոտանիներ, **Մ-36**  
մասնավոր երկրասինկլինալ (գետսինկ-  
լինալ), **Դ-131**  
մաստոդոնտ, **M-80**  
մարգարիտ, **Ջ-19**  
մարդաբանություն, **A-211**  
մարդակերպեր **A-210**  
մարկագիտ (լուսաքար), **M-71**  
մարկշեղերիա, **M-73**  
մարմար, **M-379**  
մարտիտ, **M-75**  
մաքրահարթում, **3-38**  
մաֆիտներ, **M-90**  
մեզա..., մեծա..., խոշորա..., **M-92**

- մեզառելիեֆ (մեծառելիեֆ), **M-95**  
 մեզո..., միջնա, միջն.... **M-112**  
 մեզոզավրեր, **M-113**  
 մեզոզոյան էրատեմա (դարաշրջան),  
 միջնակենդանաշրջան, մեզոզոյ, **M-116**  
 մեզոզոյան ծալքավորություն, **M-115**  
 մեզոլիթ (միջին քարի դար), **M-118**  
 մեզոռելիեֆ (միջնառելիեֆ), **M-120**  
 մեթան, ճահճագազ, հանքագազ, **M-216**  
 մելանժ (խառնուրդ), **M-123**  
 մեխանիկական հողմահարում, **B-283**  
 մեխանիկական հորատում, **B-188**  
 մեխանիկական նստում, **O-162**  
 մեխանիկական տարրալուծություն,  
**M-240**  
 մեծ կուտակումային հարթավայրեր, **B-28**  
 մեծաբազմազոգածալք (մեզասինկլինո-  
 րիում), **M-97**  
 մեծաբազմակամարածալք (մեզանտիկ-  
 լինորիում), **M-94**  
 մեծաբեկորային լեռներ, վարնետքային  
 լեռներ, **F-350**  
 մեծաբեկորային ծալքավորություն, **F-349**  
 մեծաբեկորային ծալքեր, դրոշմային ծալ-  
 քեր, անդրադարձված ծալքեր, **F-351**  
 մեծաբեկորներ (խոշորաբեկորներ), **F-352**  
 մեծագլաքար (վալուն), **B-7**  
 մեծագլաքարային (վալունային) ավազ,  
**B-8**  
 մեծագլաքարային (վալունային) կավ,  
**B-8**  
 մեծագոգածալք (մեզասինկլինալ), **M-96**  
 մեծաթեք վարնետք (տարէջք), **K-386**  
 մեծածալք, **M-53**  
 մեծակամարածալք (մեզանտիկլինալ),  
**M-93**  
 մեղեսիկ, ամեթիստ, **A-139**  
 մենաերկրասինկլինալ  
 (մոնոգեոսինկլինալ), **M-334**  
 միաթեք (վածք) (մոնոկլինալ), **M-335**  
 մենակամարածալքային  
 (մոնոնտիկլինալ) լեռներ, **M-331**  
 մենատիպ տեսակ, **B-57**  
 մենաքար, միաձույլ ապարանուշ, **M-339**  
 մետոխի հարկ, **M-389**  
 մեռյալ լիճ, **M-139**  
 մետա..., հետո..., **M-178**  
 մետաբազիտներ, **M-179**  
 մետաբյուրեղներ, **M-182**  
 մետազենեզ, **M-180**  
 մետադագիտություն, **M-184**  
 մետադազոյացման (մետադածնական)  
 զոտի, **M-189**  
 մետադազոյացման (մետադածնական)  
 դարաշրջաններ, **M-188**  
 մետադազոյացման (մետադածնական)  
 զոնա, **M-185**  
 մետադազոյացման (մետադածնական)  
 շրջանացում, **M-190**  
 մետադազոյացման (մետադածնական)  
 պրոլինցիա, **M-187**  
 մետադազոյացման (մետադածնական)  
 քարտեզ, **M-186**  
 մետադազոյացման գործոններ, **Փ-5**  
 մետադազոյացում, մետադածնություն,  
**M-191**  
 մետադազործություն, **M-198**  
 մետադական հանքավայրեր, **P-148**  
 մետադական հանքաքար, **P-134**  
 մետադական օգտակար հանածոներ,  
**M-183**  
 մետամիկտային միներալներ, **M-204**  
 մետասոմատիզմ, մետասոմատոզ (մի-  
 ներալատեղակալում), **M-217**  
 մետասոմատիկական (միներալատեղա-  
 կալման) զոնայականություն, **3-97**  
 մետասոմատիկական ապարներ, **M-219**  
 մետասոմատիկական հանքավայր,  
**M-156**  
 մետասոմատիկական (միներալատեղա-  
 կալման) գրանիտազոյացում, **F-449**  
 մերզել (կավակրաքար), **M-135**  
 մերզելային (կավակրաքարային) ավա-  
 զակավ, **M-134**  
 մերզելային (կավակրաքարային) կոնկ-  
 րեցիա, **M-133**  
 մերկասերմեր (մերկասերմ բույսեր),  
**F-364**  
 մերկացումների քարտեզ, **K-109**  
 մերծափնյա բենթոս (հատակաբնակ),  
**Ո-328**  
 մերծափնյա ժամանակակից նստված-  
 քազոյացում, **O-152**  
 մերծափնյա ծովահատակ (լիթորալ),  
**Ղ-123**  
 մերծափնյա ծովահատակային  
 (լիթորալ) ֆաունա, **Ղ-124**

- մերձափնյա ծովահատակային (լիթորալ) ֆլորա, **Л-125**  
 մերձափնյա ծովահատակային (լիթորալ) նստվածքներ, **Л-126**  
 մերձափնյա ծովային նստվածքներ, **П-327**  
 մերձբեկվածքային իջվածք, **В-215**  
 մերձբեկվածքային ծալքեր, **С-154**  
 մերձնակերևութային (սուբաերալ) հրաբուխ, **В-237**  
 մերձնակերևութային հանքավայր, **М-142**  
 մթնոլորտ, **А-270**  
 մթնոլորտային ճնշում, **А-271**  
 մթնոլորտային տեղումներ, **А-272**  
 մթնոլորտի աղտոտում, **З-7**  
 միաբյուրեղ, **М-338**  
 միաթեք (մոնոկլինալ) տեղադրում, **М-337**  
 միաթեք հովիտ, **М-336**  
 միածագումնային լեռներ, միացիկլային լեռներ, **М-332**  
 միածին ապար, **П-285**  
 միածին հրաբուխներ, **М-333**  
 միաջերմություն, հոմոթերմիա, **Г-372**  
 միատեսակ հովիտներ, **Г-373**  
 միզմատիտ, **М-241**  
 միլլերիտ, **М-267**  
 միլոնիտ, **М-268**  
 միկուլինյան միջսառցադաշտային դարակարգ **М-266**,  
 միկրոբրածոներ, **М-264**  
 միկրոկառուցվածք (մանրակառուցվածք), **М-261**  
 միկրոկենսաբանական (մանրէակենսաբանական) որոնումներ, **М-250**  
 միկրոկլին, **М-252**  
 միկրոհնէաբանություն, **М-255**  
 միկրոշերտավորություն (մանրաշերտավորություն), **М-260**  
 միկրոռելիեֆ (մանրառելիեֆ), **М-256**  
 միկրոտարրեր, **М-265**  
 միկրոօրգանիզմներ (մանրէներ), **М-254**  
 միկրոֆաունա, **М-263**  
 միկրոֆլորա, **М-262**  
 միոդելյան սառցադաշտային դարակարգ, միոդել, **М-271**  
 միներալ, **М-274**  
 միներալաբանական նմուշահանում, **О-114**  
 միներալաբանական որոնումներ, **М-279**  
 միներալաբանական տարրալուծություն, **М-280**  
 միներալաբանություն, **М-281**  
 միներալային խմբակցություն (ասոցիացիա), **М-299**  
 միներալային հումք, **С-323**  
 միներալային տարատեսակ, **М-300**  
 միներալների առաջացում (գեներացիա), **Г-66**  
 միներալների կայունություն, **У-33**  
 միներալների կարծրություն, **Т-20**  
 միներալների հերձում (հերձականություն, թերթականություն), **С-222**  
 միներալների սինթեզ, **С-124**  
 միներալներ-ցուցիչներ (ինդիկատորներ), **М-288**  
 մինչծալքավոր ներժայթքումներ (ինտրուզիաներ), **И-114**  
 մինչքեմբրի, **Д-94**  
 մինչքեմբրիյան ծալքավորության դարակարգեր, **Д-95**  
 միոերկրասինկլինալ (միոգենոսինկլինալ), **М-306**  
 միոցեն, **М-307**  
 միջադիր զանգված, **С-230**  
 Միջագային երկրաբանական վեհաժողով (կոնգրես) (ՄԵՎ), **М-107**  
 միջանցական խորքային բեկվածքներ, **Г-338**  
 միջավազաբլուրային (միջդյունային) ձորակներ, **М-109**  
 միջավայրի աղտոտում, **З-6**  
 միջատներ, **Н-37**  
 միջբեկորային խորքային բեկվածքներ, **Г-334**  
 միջին (միջնակազմ) ապարներ, **С-231**  
 միջին ջերմաստիճանային հանքավայր, **М-172**  
 միջին քարի դար, **С-232**  
 միջինօվկիանոսային լեռնաշղթաներ, **С-229**  
 միջլեռնային իջվածք, **В-213**  
 միջլեռնային հարթավայր, **М-105**  
 միջլեռնային ճկվածք, **М-106**  
 միջկղզային ծով, **М-345**  
 միջմայրցամաքային ծով, **М-111**  
 միջնագոնա, **М-117**  
 միջնամետազենեզ, **М-119**  
 միջնոլորտ, **М-121**

միջշերտային ջուր, **B-126**  
 միջուկատերկրաֆիզիկական մեթոդներ, **Я-2**  
 միջուկային երկրաֆիզիկա, **Г-157**  
 միջսառցաբերուկային (միջմորենային) ջուր, **B-125**  
 միջսառցադաշտային դարակարգ, **M-110**  
 միսսիայան բաժին, **M-310**  
 միրաբիլիտ, գլաուբերյան աղ, **M-308**  
 մնացորդային ապար, **O-170**  
 մնացորդային լեռներ, **O-172**  
 մնացորդային հանքավայր, **M-160**  
 մնացորդային հարթավայր, **O-171**  
 մնացորդային ձևախախտում, **Д-52**  
 մնացորդային մազմա (հրահեղուկ), **M-6**  
 մնացուկային ջուր, **B-141**  
 մնացուկային տեսակ, **B-59**  
 մնացուկային ֆաունա, **P-78**  
 մնացուկային ֆլորա, **P-79**  
 մշակութային շերտ, **K-402**  
 մշակված ռելիեֆ, **B-294**  
 մշակվածություն, կլորացվածություն, **O-46**  
 մշտականաչ (մշտադալար) բույսեր, **B-45**  
 մոբիլիզմ, **M-313**  
 մոբիլիզմի (շարժունակության) վարկած, **Г-272**  
 մոլաս, **M-318**  
 մոլեկուլային խոնավատարություն, **M-59**  
 մոլեկուլային ուժեր, **M-320**  
 մոլեկուլային ջուր, **M-319**  
 մոլիբդեն, **M-321**  
 մոլիբդենիտ, մոլիբդենային փայլ, **M-322**  
 մոլիբդենի հանքաքարեր, **M-323**  
 մոլորակային երկրաբանություն, **Г-107**  
 մոլորակներ, **П-155**  
 մոխիր (բրածո ածուխների), **3-60**  
 մոխրային կոն, **П-71**  
 մոխրային հոսք, **П-315**  
 մոխրայնություն, **3-68**  
 մոհորովիչիչի մակերևույթ, **M-376**  
 մոնացիտ, **M-328**  
 մոնիտորինգ, **M-329**  
 մոնո..., միա..., մենա..., **M-330**  
 մոնոգեոսինկլինալ, **M-334**  
 մոնսյան (մոնտյան) հարկ, **M-340**  
 մոնտմորիլոնիտ, **M-341**  
 մոնցոնիտ, **M-342**

մոհսի սանդղակ, **Ш-13**  
 մոսկովյան հարկ, **M-375**  
 մոսկովյան սառցադաշտային դարակարգ, **M-374**  
 մորիոն, **M-353**  
 մրրկային (տուրբուլենտ) հոսանքներ, **T-114**  
 մրրկային (տուրբուլենտ) հոսք, **П-316**  
 մուգավուն (մեկանոկրատ) ապարներ, **M-124**  
 մուգավուն միներալներ, **M-125**  
 մուլիտ, **M-380**  
 մուսկովիտ, **M-382**  
 մուստիե, մուստիերյան մշակույթ, **M-383**

## 3

յարոզիտ, **Я-6**  
 յուրայի համակարգ (ժամանակաշրջան), յուրա, **Ю-2**  
 յուրացում, ասիմիլացում, **A-257**

## Ն

նախաերկրասինկլինալ (նախագեոսինկլինալ), **П-359**  
 նախալեռնային իջվածք, **B-214**  
 նախալեռնային հարթավայր, լեռնաստորոտի հարթավայր, **П-221**  
 նախալեռնային սառցադաշտ, **Л-50**  
 նախակենդանիներ (ամենապարզ կենդանիներ), **П-354**  
 նախապլատֆորմ, **П-360**  
 նախնական հետախուզություն, **P-22**  
 նախալեռներ, **П-323**  
 նամյուրի հարկ, նամյուր **H-22**  
 նանոպլանկտոն, **H-23**  
 նանոռելիեֆ (գաճաճ ռելիեֆ), **H-24**  
 նաուտիլոիդներ, **H-43**  
 նավթ, քարյուղ, **H-93**  
 նավթաբերության (քարյուղաբերության) նշաններ, **П-331**  
 նավթագազ, նավթային գազ, նավթային ուղեկից գազ (քարյուղագազ, քարյուղային ուղեկից գազ), **H-98**  
 նավթագազաբեր (քարյուղագազաբեր) ավազան, **H-87**

- նավթագազաբեր (քարյուղագազաբեր) կառուցվածքներ, **C-309**  
 նավթագազաբեր (քարյուղագազաբեր) շերտ, **H-88**  
 նավթագազաբեր (քարյուղագազաբեր) ավազան, **H-87**  
 նավթագազաբեր (քարյուղագազաբեր) մարզ, **H-84**  
 նավթագազաբեր (քարյուղագազաբեր) շերտախումբ, **H-86**  
 նավթագազաբեր (քարյուղագազաբեր) պրովինցիա, **H-85**  
 նավթագազաբեր շերտախումբ, **C-30**  
 նավթագազաբերության չափանիշներ, **K-375**  
 նավթագազակուտակման (քարյուղագազակուտակման) զոնա, **H-83**  
 նավթագազամայրական (քարյուղագազամայրական) ապարներ, **H-82**  
 նավթագազային (քարյուղագազային) հանքակուտակ, **H-81**  
 նավթագազանշմարներ (նավթագազերևակումներ), քարայուղագազանշմարներ (քարյուղագազերևակումներ), **H-90**  
 նավթներկրաբանական (քարյուղաներկրաբանական) շրջանացում, **H-91**  
 նավթահագեցման (քարյուղահագեցման) գործակից, **K-319**  
 նավթային (գազային) շերտի ջրակալում, **O-4**  
 նավթային (քարյուղային) երկրաբանություն, **H-94**  
 նավթային (քարյուղի) (հանքա)կուտակ, **H-95**  
 նավթային (քարյուղի) հանքավայր, **H-97**  
 նավթային (քարյուղի) հորատանցք, **H-96**  
 նավթային շերտ, **П-159**  
 նավթային ջուր (քարյուղային ջուր), **B-130**  
 նավթատվություն (նավթատացք, քարյուղատացք), **H-92**  
 նավթարդյունահանության (քարյուղարդյունահանության) երկրաբանություն, **H-89**  
 նավթի (քարյուղի) ելք, **B-323**  
 նավթի և գազի ծուղակ, **Л-136**  
 նավթի (քարյուղի) և գազի ծովային հանքավայրերի մշակում, **P-35**  
 նավթի (քարյուղի) և գազի հանքակուտակ, **3-24**  
 նավթի (քարյուղի) և գազի հավաքիչներ (կոլեկտորներ), **K-191**  
 նավթի (քարյուղի) և գազի պաշարների հաշվարկում, **M-238**  
 նավթի (քարյուղի) և գազի տարաշարժ (միգրացիա), **M-244**  
 նավթի (քարյուղի) աղբյուր, **И-149**  
 նավթի (քարյուղի) գազագերծում, **Д-27**  
 նավթի (քարյուղի) երկրաքիմիա, **Г-181**  
 նավթի (քարյուղի) կուտակման գործակից, **K-314**  
 նավթի (քարյուղի) ու գազի երկրաբանություն, **Г-106**  
 նավթի (քարյուղի) ու գազի որոնման ջրաքիմիական ցուցանիշներ, **П-244**  
 նավթի (քարյուղի) ելք, **B-329**  
 նավթի ու գազի հանքավայրերի դասակարգումը ըստ պաշարների չափերի, **K-159**  
 նավթիդներ, **H-44**  
 նավթիդներ, **H-45**  
 նատրիում, **H-42**  
 նատրիումական բորակ (սելիտրա), չիլիական բորակ (սելիտրա), **H-41**  
 նեանդերթալցիներ, նեանդերթալյան մարդ, **H-46**  
 նեկ, **H-49**  
 նեկտոն, **H-50**  
 նեղացած (սեղմված) ծալք, **П-79**  
 նեոնատրոպներ, **H-54**  
 նեոգեն, **H-56**  
 նեոգենի համակարգ (ժամանակաշրջան), նեոգեն, **H-57**  
 նեոլիթ, նոր քարի դար, **H-59**  
 նեոկոն, **H-58**  
 նեոտեկտոնիկա, նորագույն տեկտոնիկա, **H-61**  
 նեոն, **H-60**  
 նեպտունիզմ, **H-62**  
 նետիչ, **C-17**  
 ներառուկներ (ներփակումներ), **B-76**  
 ներառուկներ (ներփակումներ) միներալներում, **B-77**  
 ներարկում, **И-136**  
 ներարկումային փշրաքար (բրեկչիա), **И-135**



- ներարկումային փոխակերպություն,  
**M-207**
- ներդաշնակ ափ (կոնկորդանտ ափ, երկայնական ափ), **C-210**
- ներդաշնակ ծալք, **Г-49**
- ներդաշնակ հանքային մարմին (հանքամարմին), **T-66**
- ներդաշնակ ներժայթքումներ (ինտրուզիաներ), **И-121**
- ներդաշնակ վրաշարժ, **H-10**
- ներդաշնակ տեղադրում (կոնկորդանտ տեղադրում, զուգահեռ տեղադրում), **C-209**
- ներդրված տեղադրում, **B-90**
- ներժայթքային (ինտրուզիվ) ապարներ, **И-112**
- ներժայթքային (կամ արտաժայթքային) համալիր, **K-206**
- ներժայթքային կուտակ, **3-22**
- ներժայթքում, ինտրուզիա, **И-128**
- ներժայթքվածք (ինտրուզիվ), **И-111**
- ներիտային նստվածքներ, **H-63**
- ներլեռնային իջվածք, **B-99**
- ներխեցիավորներ, **B-95**
- ներծին գործընթացներ, **Э-28**
- ներծին ծալքեր, **C-159**
- ներծին հանքավայրեր, ներքնածին (հիպոգեն) հանքավայրեր, **Э-27**
- ներծին մետաղագոյացում, **M-197**
- ներծին միներալներ, **M-297**
- ներծծ(անց)ման (ինֆիլտրացիոն) հանքավայրեր, **И-131**
- ներծծ(անց)ման (ինֆիլտրացիոն) ջրեր, **И-130**
- ներծծ(անց)ում (ինֆիլտրացիա), **И-132**
- ներծծանցման զոնա, **3-77**
- ներծծանցման մարզ, **O-9**
- ներհոսք (ինֆլուացիա), **И-134**
- ներմայրցամաքային ծով, **B-100**
- ներմղման ծալքավորություն, **C-175**
- ներմղման ծալքեր, **C-147**
- ներմուտ (ինգրեսիա), **И-86**
- ներմուտ (ինգրեսիվ) ծով, **И-85**
- ներմուտ (ինգրեսիվ) տեղադրում, **И-84**
- ներշերտային այրում, **B-101**
- ներփակվածություն, **B-80**
- ներփակվածքներ, ֆենոբյուրեղներ (բացահայտ բյուրեղներ), **B-79**
- ներփորված (խորացված) հովիտ, **B-219**
- ներքին ափային գիծ, **B-97**
- ներքին գործընթացներ, **B-96**
- ներքին ծով, **B-94**
- ներքին սառցաբերուկ (մորեն), **B-98**
- ներքնակենտրոն (հիպոկենտրոն), **Г-276**
- ներքնակող, **Б-130**
- ներքնաշարժ, **П-222**
- ներքնուղրտ (տրոպոսֆերա), **T-111**
- ներֆորմացիոն խառնաքար (կոնգլոմերատ), **K-220**
- նեֆելին, **H-78**
- նեֆելինային սիենիտ, **H-79**
- նեֆրիտ, **H-80**
- նիկելի հանքաքարեր, **H-105**
- նիկելին, նիկելի կարմիր հրաքար, **H-106**
- նիկոլի հատվածակողմ (պրիզմա), **П-330**
- նիվացիա, **H-99**
- նկարագրական երկրատեսկոոնիկա, **Г-142**
- նման ծալքեր, **C-152**
- նմուշ, **O-22, П-335**
- նմուշահանման (նմուշառման) մատյան, **Ж-41**
- նմուշահանման հսկում, **K-254**
- նմուշահանում (նմուշառում), **O-110**
- նստվածքակուտակման ռիթմականություն, **P-101**
- նշակորիզներ, **M-270**
- նշաքարային կազմվածք (տեքստուրա), **M-269**
- նորկասպիական ծովարշավ (տրանսգրեսիա, ծովածավալում), **H-112**
- նոր տեսակ, **B-58**
- նորագույն տեկտոնիկայի քարտեզ, **K-108**
- նորահրաբխայնություն, **H-55**
- նորսևծովյան ծովարշավ (տրանսգրեսիա, ծովածավալում), **H-113**
- նորատիպ (կայնոտիպ) ապարներ, **K-9**
- նորիյան հարկ, **H-114**
- նորիտ, **H-115**
- նունուլիթիդներ, **H-118**
- նռնաքարեր (կարկեհաններ, հաղարջակներ), **Г-435**
- նստվածքաառաջացման զոնա, **3-87**
- նստվածքագոյացում, **C-45**
- նստվածքակուտակումային ջուր, **B-146**
- նստվածքային ապարների թելավոր կառուցվածք, **C-277**

- նստվածքային ապարների դետրիտային կառուցվածք, **C-281**  
 նստվածքային ապարների երկրաքիմիա, **F-183**  
 նստվածքակուտակման զոնա, **3-86**  
 նստվածքակուտակման ընդմիջում, **Π-83**  
 նստվածքակուտակման իրադրություն, **O-28**  
 նստվածքակուտակման ռիթմականություն, **P-101**  
 նստվածքակուտակում, **O-146**  
 նստվածքային (նստվածքակուտակումային) ցիկլ (բոլորաշրջան), **U-13**  
 նստվածքային ապարներ, **O-153**  
 նստվածքային ապարների ալերիտային (փոշենման) կառուցվածք, **C-274**  
 նստվածքային ապարների ապարագրություն, **Π-116**  
 նստվածքային ապարների բակլայած կառուցվածք, **C-276**  
 նստվածքային ապարների բծավոր կազմվածք, **T-26**  
 նստվածքային ապարների գունավորում, **O-62**  
 նստվածքային ապարների դասակարգում, **K-160**  
 նստվածքային ապարների երկրաքիմիա, **F-183**  
 նստվածքային ապարների զուլավոր կազմվածք, **T-25**  
 նստվածքային ապարների թերթավոր կազմվածք, **T-27**  
 նստվածքային ապարների թեփուկավոր կազմվածք, **T-30**  
 նստվածքային ապարների խոշորաբեկորավոր կառուցվածք, **C-284**  
 նստվածքային ապարների կառուցվածք, **C-273**  
 նստվածքային ապարների կենդանածին կառուցվածք, **C-283**  
 նստվածքային ապարների կենսածն կառուցվածք, **C-275**  
 նստվածքային ապարների կոնկրեցիոն (պալարանման) կազմվածք, **T-24**  
 նստվածքային ապարների կոպճային կառուցվածք, **C-279**  
 նստվածքային ապարների կոպտաբեկորային (փսեֆիտային) կառուցվածք, **C-280**  
 նստվածքային ապարների հատիկավոր կառուցվածք, **C-282**  
 նստվածքային ապարների ճալաքարային կառուցվածք, **C-278**  
 նստվածքային ապարների մանրահատիկավոր կառուցվածք, **C-285**  
 նստվածքային ապարների միներալներ, **M-292**  
 նստվածքային ապարների շերտավոր կազմվածք, **T-28**  
 նստվածքային ապարների սյունածն կազմվածք, **T-29**  
 նստվածքային ապարների փսամիտային (ավազային) կառուցվածք, **C-289**  
 նստվածքային ապարների փսեֆիտային (կոպտաբեկորային) կառուցվածք, **C-290**  
 նստվածքային բոլորաշրջան (ցիկլ), **O-158**  
 նստվածքային երակ, **Ж-30**  
 նստվածքային կավեր, **F-320**  
 նստվածքային համալիր, **O-155**  
 նստվածքային հանքավայրեր, **O-154**  
 նստվածքային նյութ, **M-84**  
 նստվածքային ռիթմ, **O-156**  
 նստվածքային ստվարաշերտերի քարաբանաշերտագրական հարաբերակցության մեթոդներ, **M-236**  
 նստվածքառաջացման զոնա, **3-87**  
 նստվածքներ, **O-190**  
 նստվածքների բաղադրամասեր, **K-300**  
 նստվածքների տեսակավորում, **C-211**  
 նստում, **O-160**  
 նրբաշերտ, **Π-353**  
 նրբերակային հանքայնացում, **O-145**  
 նևադյան ծալքավորություն, **H-47**
- Շ**
- շահագործական հետախուզություն, **P-23**  
 շահագործման հանքափորվածք, **B-303**  
 շահագործման հորատանցք, **C-133**  
 շամոզիտ, **Ш-1**  
 շատրվանային հորատանցք, **C-132**  
 շարժուն(ակ) գոտի, **Π-212**  
 շարժունակ քարոլորտի վարկած, **F-273**  
 շարժվող սառցաբերուկներ (մորեններ), **D-15**

շափյուղա (լեղակաքար), **C-13**  
 շենլիթ, **Մ-8**  
 շել, **Մ-9**  
 շելֆ, մայրցամաքային ծանծաղուտ, **Մ-10**  
 շելֆային (մայրցամաքային ծանծաղուտային) ծով, **M-349**  
 շեղալիքավոր շերտավորություն, **K-306**  
 շեղանկյունային բուրգ, **P-132**  
 շեղանկյունանիստ, **P-114**  
 շեղջաքար (բեկորաշեղջ ազլոմներատ), **A-42**  
 շեղջաքարային (ազլոմներատային) կառուցվածք, **C-267**  
 շեղջաքարային (ազլոմներատային) տուֆ, **T-118**  
 շեղջաքարային (ազլոմներատային) հոսք, **A-46**  
 շեղջաքարացում, **A-47**  
 շերտավոր կառուցվածք, **C-195**  
 շերտ, **P-158, C-200**  
 շերտագրական աններդաշնակություն, **H-72**  
 շերտագրական երկրաբանություն, **F-112**  
 շերտագրական զոնա, քրոնոզոնա **C-248**  
 շերտագրական ընդմիջում, **C-253**  
 շերտագրական կոդեքս, **C-251**  
 շերտագրական կտրվածք, շերտագրական սյունակ, **C-254**  
 շերտագրական համալիր, **C-252**  
 շերտագրական հարաբերակցություն (կոռելյացիա), **K-292**  
 շերտագրական նմանակ, **A-162**  
 շերտագրական սահման, **C-247**  
 շերտագրություն, **C-256**  
 շերտադարսվածքային (շերտավորված) հանքավայր, **C-257**  
 շերտադարսում (շերտագայում), **P-84**  
 շերտախումբ, **C-29**  
 շերտահրաբուխ (ստրատոհրաբուխ), **C-259**  
 շերտաձև հանքավայրեր, **C-258**  
 շերտային (շերտ առ շերտ)կլիված, **K-172**  
 շերտային երակ, **Ж-31**  
 շերտային հանքավայր, **M-162**  
 շերտային ներժայթքում (ինտրուզիա), շերտային երակ, **P-165**  
 շերտային ճնշում, **Д-4**  
 շերտային ջրեր, միջշերտային ջրեր, **П-166**

շերտային վրաշարժ, **H-6**  
 շերտավորման մակերևույթ, **П-203**  
 շերտավորություն (նստվածքային գոյացությունների), **C-196**  
 շերտավորություն, **C-201**  
 շերտավորում, շերտադասավորություն, **H-26**  
 շերտատիպ (շերտատիպար), **C-262**  
 շերտատուփ, դարսաշերտ, **П-51**  
 շերտերի (նստվածքների) առաջնային թեքություն, **H-15**  
 շերտերի հարաբերակցություն (կոռելյացիա), շերտերի զուգահեռականացում, **K-290**  
 շերտի անկում, **П-1**  
 շերտի հատակ, **П-230**  
 շերտի ճեղքում, **P-58**  
 շերտի նեղացում (բարակում), **П-80**  
 շերտի նմուշահանում, **O-115**  
 շերտի սեպացում, **B-293**  
 շերտի տանիք, **K-381**  
 շթաքար (ստալակտիտ), **C-235**  
 շիթային (լամինար) հոսք, **П-311**  
 շինաքար, **K-32**  
 շլամային կրաքար, **И-37**  
 շլիռ, **Մ-15**  
 շլիռային կազմվածք, **T-42**  
 շպինել, **Մ-21**  
 շտոկվերկ, **Մ-23**  
 շրջապտույտ, **Ц-24**  
 շրջված (հակադարձ) ռելիեֆ, **И-79**  
 շրջված գոգածալք (սինկլինալ), **C-117**  
 շրջված թև, **O-120**  
 շրջված ծալք, **O-118**  
 շրջված կամարածալք (կորածալք, անտիկլինալ), **A-197**  
 շրջված տեղադրում, **O-119**  
 շունգիտ, **Մ-29**

## Ո

ողնաշարավորներ, գանգավորներ, **П-233**  
 ողնաշարավորների հնէաբանություն, **П-24**  
 ողողահոսք, **O-92**  
 ողողահուն (հեղեղահուն), մարգագետնային դարավանդ (դարատափ), **П-239**

- ողողահունային (հեղեղահունային) լիճ, **Ս-241**  
ողողահունային (հեղեղահունային) ճահիճ, **Ս-240**  
ողողահունային (հեղեղահունային) նստվածքներ, **Ս-242**  
ողողամաշման (էրոզիայի) ընդհանուր հիմնամակարդակ, ողողամաշման կայուն հիմնամակարդակ, ողողամաշման գլխավոր հիմնամակարդակ, **Օ-29**  
ողողամաշման (էրոզիայի) ցիկլ, **Ս-17**  
ողողամաշման (էրոզիոն) հովիտ, **Յ-51**  
ողողամաշման (էրոզիոն) դարավանդ (դարատափ), արմատական դարավանդ, **Յ-52**  
ողողամաշման (էրոզիոն) աններդաշնակություն, **Ի-76**  
ողողամաշման (էրոզիոն) լեռներ, **Յ-53**  
ողողամաշման (էրոզիայի) գլխավոր հիմնամակարդակ, **Դ-289**  
ողողամաշման (ողողահանման, էրոզիայի) ժամանակավոր հիմնամակարդակ, **Բ-220**  
ողողամաշման (ողողահանման, էրոզիայի) տեղական հիմնամակարդակ, **Մ-140**  
ողողամաշման (ողողահանման, էրոզիայի) հիմնամակարդակ, **Ե-14**  
ողողամաշում (էրոզիա, ողողահանում), **Յ-55**  
ողողաքայքայում, **Ք-32**  
ողողաքայքայման մակերևույթ, **Ս-205**  
ողողակ, ողողաբերուկ, ողողաբերուկային (ողողակային, դեյուվիալ) նստվածքներ, **Դ-32**  
ոչ լրիվ հաստություն, **Մ-378**  
ոչ կենսական (անկենսական) գործոններ, **Ա-4**  
ոչ կոնդիցիոն հանքաքար, **Ք-135**  
ոչ մետաղական հանքաքար, **Ք-136**  
ոչ մետաղական օգտակար հանածոներ, **Ի-51**  
ոսկեբեր ավազ, **Ս-105**  
ոսկեբեր շերտ, **Յ-66**  
ոսկի, **Յ-61**  
ոսկու արդյունահանման արդյունաբերություն, **Յ-65**  
ոսկու բնակտոր, **Շ-5**  
ոսկու հանքաքարեր, **Յ-67**
- ոսպնյակ, **Ս-96**  
ոսպնյակաձև շերտավորություն, **Շ-197**  
որոնողական աշխատանքներ, **Ս-237**  
որոնողական հատկանիշներ, **Ս-236**  
որոնողական հորատանցք, **Շ-131**  
որոնողական նախադրյալներ, որոնողական չափանիշներ, **Ս-235**  
որոնողական չափանիշներ, **Կ-376**  
որոնումների մագնայական նախադրյալներ, **Մ-22**
- Չ**
- չարնոկիտ, **Վ-1**  
չարոիտ, **Վ-2**  
չիրկիզվող կենսաքար (ամփիզակենսաքար), **Ա-64**  
չոր մնացորդ, **Շ-328**  
չորային (արիդային) քարագոյացում (լիթոգենեզ), **Ս-109**  
չորային զոնա, **Ա-228**  
չորային կլիմա, **Կ-174**  
չորային ռելիեֆ, **Ա-229**  
չորաջերմ(ային) ժամանակաշրջան, **Կ-397**  
չորասեր բույսեր, **Կ-398**  
չորացման ճեղքեր, **Թ-107**  
չորորդական երկրաբանություն, **Վ-3**  
չորորդական համակարգ (ժամանակաշրջան), քվարտեր, անտրոպոգենյան համակարգ (ժամանակաշրջան), անտրոպոգեն, **Վ-4**  
չտեսակավորված ապար, **Ս-286**  
չփոխհատուցված ճկվածք, **Ս-338**
- Պ**
- պալարանման հանքաքար, **Ք-133**  
պալարներ, **Ջ-3**  
պալեոանտրոպներ, **Ս-3**  
պալեոգենի համակարգ (ժամանակաշրջան), պալեոգեն, **Ս-8**  
պալեոգոյան երատեմա (դարաշրջան), պալեոգոյ, **Ս-16**  
պալեոգոյան խումբ, **Ս-15**  
պալեոլիթ, հին քարի դար, **Ս-20**  
պալեոցեն, **Ս-30**  
պալինոգեն գրանիտագոյացում, **Դ-450**

- պալինդրոմներ (կրկնածնություն), **Պ-32**  
 պալինդրոմներ, **Պ-33**  
 պահեստային հանքախորշ, **3-3**  
 պայթեցման աշխատանքներ, **Բ-52**  
 պայթման փողակ, դիատրեմա, **Դ-112**  
 պայթումային ժայթքում, **Բ-49**  
 պայթումային միջակայք, **Բ-51**  
 պայթումային քայքայում, **Բ-50**  
 պայթուցիկ նյութեր, **Բ-53**  
 պայմանական նշաններ, **Մ-31**  
 Պանգեյա, **Պ-34**  
 պանոնյան հարկ, պանոն, **Պ-35**  
 պաշարների կորզման գործակից, **Կ-317**  
 պառկած թև, պառկած կող, **Լ-68**  
 պառկած ծալք, **Լ-67**  
 պատմաերկրաբանական  
 վերլուծություն, **Յ-158**  
 պատմական երկրաբանություն, **Ի-148**  
 պատմական երկրատեկտոնիկա, **Դ-139**  
 պատվար. ամբարտակ, **Պ-186**  
 պարա..., **Պ-39**  
 պարագենետ (պարագենետիս), **Պ-40**  
 պարագենես (պարագենետիս), **Պ-42**  
 պարաերկրասինկլիալ, **Պ-41**  
 պարալիկական (ծովեզերային)  
 ածխաբեր ավազան, **Բ-52**  
 պարամագնիսականություն, **Պ-48**  
 պարամետրական (հարաչափական)  
 հորատում, **Պ-49**  
 պարարտ (ճարպոտ) կավեր, **Դ-316**  
 պարբերականության օրենք, **3-11**  
 պարզ երակ, **Ջ-32**  
 պարզ ծալք, **Ը-137**  
 պարփակող ապար, **Բ-91**  
 պեգմատիտ, **Պ-53**  
 պեգմատիտային գրանիտ, **Դ-437**  
 պեգմատիտային հանքավայր, **Մ-161**  
 պեդիմենտ, **Պ-54**  
 պեդիպլանացում, պեդիպլենիզացում,  
**Պ-55**  
 պեդիպլեն, **Պ-56**  
 պելագիալ կավեր, **Դ-321**  
 պելագիալ, պելագիալ մարզ, **Պ-57**  
 պելագիկ նստվածքներ, **Պ-59**  
 պելագիկ օրգանիզմներ, **Պ-58**  
 պելիտային (կավային) տիղմ, **Ի-84**  
 պելիտային (կավային) կառուցվածք,  
**Պ-61**  
 պելիտային հատիկախումբ (ֆրակցիա),  
**Պ-62**  
 պելիտացում (կավացում), **Պ-64**  
 պելիտներ, **Պ-63**  
 պեմզա (չեչաքար), **Պ-65**  
 պեմզային (չեչաքարային) հոսք, **Պ-314**  
 պեմզային (չեչաքարային) կոն, **Կ-263**  
 պենտլանդիտ, **Պ-70**  
 պեռլիտ (մարգարտաքար), **Պ-95**  
 պերիդոտ, խրիզոլիթ, **Պ-86**  
 պերիդոտիտ, **Պ-87**  
 պերիկլինալ (ծայրաթեք) անկում, **Պ-90**  
 պերիկլինալ (ծայրաթեք) տեղադրում,  
**Պ-89**  
 պերիկլինալ (ծայրաթեքվածք), ծալքի  
 ծայրափակում, **Պ-88**  
 պերիկրատոնային ճկվածք, **Պ-339**  
 պերլուլի, **Պ-96**  
 պերմի համակարգ (ժամանակաշրջան),  
 պերմ, **Պ-97**  
 պերովսկիտ, **Պ-98**  
 պերտիտ, **Պ-99**  
 պիեզոքվարց, **Պ-379**  
 պիզոլիթ (սիսեռաքար), **Պ-125**  
 պիլոու-լավա, բարձրկավոր լավա, գն-  
 դավոր լավա, **Պ-128**  
 պիկրիտ, **Պ-127**  
 պիտեկանտրոպներ (կապկամարդիկ),  
**Պ-148**  
 պիրարգիրիտ, կարմիր արծաթ,  
 սուտակի խաբուսակ, արծաթի  
 խաբուսակ, **Պ-129**  
 պիրիտ, ծծմբական հրաքար, երկաթա-  
 յին հրաքար, **Պ-134**  
 պիրոլուզիտ, **Պ-142**  
 պիրոնորֆիտ, **Պ-143**  
 պիրոպ, **Պ-144**  
 պիրոքսենիտներ, **Պ-140**  
 պիրոքսեններ, **Պ-141**  
 պիրոֆիլիտ, **Պ-145**  
 պիրրոտին, մագնիսական հրաքար,  
**Պ-146**  
 պլագիոգրանիտ, **Պ-149**  
 պլագիոկլավներ, **Պ-150**  
 պլանկտոն, **Պ-156**  
 պլաստիկ ձևախախտում, **Պ-163**  
 պլատին բնածին, **Պ-167**  
 պլատինի հանքաքարեր, **Պ-168**

պլատֆորմ, մայրցամաքային պլատֆորմ, **Փ-170**  
 պլատֆորմային ծալքավորություն, **C-176**  
 պլատֆորմային ծալքեր, **C-150**  
 պլատֆորմային ծածկոց, մստվածքային ծածկոց, **Փ-171**  
 պլատֆորմային հրաբխայնություն, **B-246**  
 պլատֆորմային մագմայականություն, **M-15**  
 պլատֆորմի հիմք, **Փ-73**  
 պլատֆորմի ներժայթքումներ (ինտրուզիաներ), **Մ-115**  
 պլեյստոսենյատ, **Փ-172**  
 պլեյստոցեն, **Փ-173**  
 պլիկատիվ տեղախախտումներ (դիսլուկացիաներ), **Փ-176**  
 պլինսբախի հարկ, պլինսբախ, **Փ-177**  
 պլիոցեն, **Փ-178**  
 պլյուվիալ (անձրևոտ) ժամանակաշրջան (դարակարգ), **Փ-194**  
 պլուտոն, **Փ-191**  
 պլուտոնիզմ, **Փ-192**  
 պոլիմ, **Մ-103**  
 պոլնոմոլիբդենային հանքաքարեր, **Մ-99**  
 պոլնոմոլիբդենային (պոլնոմոլիբդենային) ավազաքարեր և թերթաքարեր, **Մ-98**  
 պոլնոմոլիբդենային հանքաքարեր, **Մ-110**  
 պոլտոր հոսքեր, **Մ-385**  
 պոլնոմոլիբդենային, **Փ-196**  
 պոլնոմոլիբդենային հանքավայրեր, **Փ-197**  
 պոլիհալիտ, **Փ-253**  
 պոկվածք, **Փ-213**  
 պոլիլիտային կառուցվածք, **Փ-238**  
 պոնտոսի հարկ, պոնտոս, **Փ-266**  
 պոստոմային ծալքավորություն, **Փ-305**  
 պոստոմային շարժումներ, **Փ-306**  
 պորփյուր (ծիրանաքար, պորֆիր), **Փ-295**  
 պորֆիրային անջատումներ, **Փ-300**  
 պորֆիրային կառուցվածք, **Փ-299**  
 պորֆիրանման գրանիտ, **Գ-439**  
 պորֆիրանման կառուցվածք, **C-292**  
 պորֆիրիտ, **Փ-296**  
 պորֆիրիտիդներ, **Փ-297**  
 պորֆիրոբլաստիկ կառուցվածք, **Փ-298**  
 պորֆիրիդներ, **Փ-301**  
 պսեվդոլեյցիտ (կեղծ լեյցիտ), **Փ-368**  
 պսեվդոմորֆոզներ (կեղծ ձևեր), **Փ-369**  
 պտերազոգիներ, **Փ-38**

պտերոպոդային տիղմ, **Փ-373**  
 պտկաքար (ստալագմիտ), **C-234**  
 պտտական հորատում, **Բ-183**  
 պտտահարվածային հորատում, **Բ-182**  
 պրիմատներ (առաջնակարգեր), **Փ-333**  
 պտերոպոդային տիղմ, **Փ-375**  
 պրոմիլե, **Փ-347**  
 պրոպիլիտ, **Փ-350**  
 պրոպիլիտացում, **Փ-351**  
 պրոտերոզոյ, **Փ-356**  
 պրոտոզեյ, **Փ-358**  
 պրոտրուզիա, **Փ-361**  
 պրուստիտ, **Փ-363**

## Ջ

ջարդման (փշրման) զոնա, **Յ-76**  
 ջարդոտում (կոտրատում, կատակլիզ), **Կ-119**  
 ջեսպիլիտ, **Ժ-57**  
 ջերմային (թերմալ) փոխակերպություն (մետամորֆություն), **Մ-210**  
 ջերմային հաշվեկշիռը երկրաֆիզիկայում, **Ժ-68**  
 ջերմային հողմահարում, **Բ-286**  
 ջերմային հորատում, **Բ-194**  
 ջերմատողամաշում (ջերմատրոզիա), **Ժ-70**  
 ջերմաջուր (թերմալ ջուր), **Բ-151**  
 ջերմաջրեր (թերմալ ջրեր), **Ժ-69**  
 ջերմաջրերի (թերմալ ջրերի) քարտեզ, **Կ-110**  
 ջեսպիլիտ, **Ժ-57**  
 ջուր, **Բ-104**  
 ջր(ա)հավաք ավազան, **Բ-43**  
 ջրաբանական շրջանացում, **Գ-237**  
 ջրաբանական ռեժիմ, **Բ-76**  
 ջրաբանական քարտեզներ, **Գ-236**  
 ջրաբանություն (հիդրոլոգիա), **Գ-238**  
 ջրաբերուկներ ( ողողակուտակներ), **Ի-25**  
 ջրաբերուկների (ողողակուտակների) հոսք, **Փ-313**  
 ջրագազային հանույթ, **Բ-156**  
 ջրագիծ, **Կ-28**  
 ջրագրական ցանց, **Գ-226**  
 ջրագրություն (հիդրոգրաֆիա), **Գ-227**  
 ջրադինամիկ(ական) զոնա, **Յ-73**

ջրադինամիկ(ական) ճնշում, **Դ-1**  
 ջրադինամիկ(ական) ակտիվություն, **A-83**  
 ջրադինամիկ(ական) անբնականո-  
 նություն, **A-184**  
 ջրադինամիկա, **Դ-228**  
 ջրադինամիկ(ական) լարվածություն,  
**H-32**  
 ջրաերկրաբանական ավազան, **Բ-44,**  
**Դ-218**  
 ջրաերկրաբանական ծալքավոր մարզ,  
**O-13**  
 ջրաերկրաբանական կանխատեսում,  
**Դ-219**  
 ջրաերկրաբանական կտրվածք  
 (տրամատ, պորֆիլ), **P-38**  
 ջրաերկրաբանական հանույթ, **Դ-212**  
 ջրաերկրաբանական հետազննություն-  
 ներ, **Դ-214**  
 ջրաերկրաբանական հորատանցք, **Դ-211,**  
**C-129**  
 ջրաերկրաբանական մարզ, **Դ-209**  
 ջրաերկրաբանական նահանգ  
 (պրովինցիա), **Դ-210**  
 ջրաերկրաբանական նմուշահանում  
 (նմուշառում), **Դ-221**  
 ջրաերկրաբանական շրջանացում, **Դ-222**  
 ջրաերկրաբանական որոնումներ և հե-  
 տախուզություն, **Դ-216**  
 ջրաերկրաբանական ուսումնասիրու-  
 թյուններ, **Դ-215**  
 ջրաերկրաբանական պայմաններ, **Դ-217**  
 ջրաերկրաբանական տրամատ (կողա-  
 պատկեր, պրոֆիլ), **Դ-220**  
 ջրաերկրաբանական քարտեզ, **Դ-208**  
 ջրաերկրաբանական ֆորմացիա (կազ-  
 մավորում), **Դ-213**  
 ջրաերկրաբանություն, **Դ-223**  
 ջրաերկրադինամիկա, **Դ-207**  
 ջրաերկրաքիմիա, **Դ-224**  
 ջրազրկում, ապահիդրատ(աց)ում, **Դ-28**  
 ջրաթափանց (ջրանցիկ) ապարներ,  
**B-174**  
 ջրաթափանցելիություն (ջրանցիկու-  
 թյուն), **B-173**  
 ջրալակուլիթներ (հիդրոլակուլիթներ),  
**Դ-234**  
 ջրածին, **Y-28**  
 ջրակարբոնատային ջրեր, **Դ-233**

ջրակերպափոխում (հիդրատոմորֆիզմ),  
**Դ-204**  
 ջրակցում, **Դ-205**  
 ջրահագեցած ապարներ, **B-163**  
 ջրահագեցած գրունտ (գետին), **Դ-374**  
 ջրահամաբարձրագծեր,  
 ջրաիզոհիպսեր, **Դ-231**  
 ջրահամախորագծեր, ջրաիզոբաթներ,  
**Դ-230**  
 ջրահամաջերմագծեր, ջրաիզոթերմեր,  
**Դ-232**  
 ջրահավաք ավազան, **B-181, Բ-43**  
 ջրահավաք տարածք, **B-180**  
 ջրահեռացման առու, **K-37**  
 ջրամանրեային հանույթ, **B-155**  
 ջրամբար, **B-185**  
 ջրամերժ (անջրանցիկ) ապարներ, **B-184**  
 ջրամերժ (անջրանցիկ) առաստաղ, **B-182**  
 ջրամերժ (անջրանցիկ) մահիճ, **B-183**  
 ջրային հաշվեկշիռ, **B-160**  
 ջրային պաշարներ, **P-88**  
 ջրային ռեժիմ, **B-161**  
 ջրային ռեսուրսներ, **B-159**  
 ջրաողողամաշման (ջրաերոզիոն) ցիկլ  
 (բոլորաշրջան), **B-158**  
 ջրաչափություն, **Դ-239**  
 ջրաջերմային (հիդրոթերմալ) գործըն-  
 թացների երկրաքիմիա, **Դ-177**  
 ջրաջերմային (հիդրոջերմային, հիդրո-  
 թերմալ) հանքավայրեր, **Դ-244**  
 ջրաջերմային (հիդրոջերմային, հիդրո-  
 թերմալ) գործընթացներ, **Դ-247**  
 ջրաջերմային (հիդրոջերմային, հիդրո-  
 թերմալ) լուծույթներ, **Դ-245**  
 ջրաջերմային (հիդրոջերմային, հիդրո-  
 թերմալ) փոխակերպություն, **Դ-246**  
 ջրաջերմային (ջրաթերմիկ) անբնակա-  
 նոնություն, **A-185**  
 ջրաջերմեր (հիդրոջերմեր,  
 հիդրոթերմեր), **Դ-248**  
 ջրասառցադաշտային (ֆլուվիոգլյա-  
 ցիալ) գործընթացներ, **Փ-50, O-193**  
 ջրասառցադաշտային (ֆլուվիոգլյա-  
 ցիալ) նստվածքներ, **Փ-49**  
 ջրաստատիկ(ական) ճնշում, **Դ-2**  
 ջրավազան, ջրամբար, **B-162**  
 ջրատար ապար, **Մ-280**  
 ջրատար համալիր, **B-168**  
 ջրատար հորիզոն, **B-167**

ջրատար հորիզոնի եզրագծում, **O-57**  
 ջրատար հորիզոնի սնում, **Ս-147**  
 ջրատար շերտ, **B-169**  
 ջրատար շերտախումբ, **B-165**  
 ջրատար սերիա, **B-166**  
 ջրատարածք, **A-66**  
 ջրատարալուծում (հիդրոլիզ), **Դ-235**  
 ջրատեկտոնիտներ  
 (հիդրոտեկտոնիտներ), **Դ-243**  
 ջրատվության (ջրանջատման)  
 գործակից, **K-315**  
 ջրարբիացում, **O-3**  
 ջրափայլարային (հիդրոփայլարային)  
 կավեր, **Դ-313**  
 ջրափայլարներ (հիդրոփայլարներ),  
**Դ-241**  
 ջրաքիմիա (բնական ջրերի քիմիա, հիդ-  
 րոքիմիա), **Դ-254**  
 ջրաքիմիական անբնականոնություն,  
**A-186**  
 ջրաքիմիական զոտի, **Ս-320**  
 ջրաքիմիական զոնա, **3-74**  
 ջրաքիմիական որոնողական  
 չափանիշներ, **Դ-251**  
 ջրաքիմիական որոնումներ, ջրաերկրա-  
 քիմիական որոնումներ, **Դ-250**  
 ջրաքիմիական տարրալուծում, **A-154**  
 ջրաքիմիական տրամատ  
 (կողապատկեր, պրոֆիլ), **Դ-253**  
 ջրաքիմիական քարտեզ, **Դ-249**  
 ջրաքիմիական ֆացիաներ (դինապատ-  
 կերներ), **Դ-252**  
 ջրաքլորիտներ (հիդրոքլորիտներ), **Դ-255**  
 ջրբաժան տարածություն, **B-178**  
 ջրբաժան, **B-176**  
 ջրերի (ստորերկրյա ջրերի)  
 հանքայնացում, **M-277**  
 ջրերի աղիություն, **C-213**  
 ջրերի երկրաքիմիական տիպեր, **Դ-173**  
 ջրերի հայելի, **3-50**  
 ջրթողունակություն, **B-175**  
 ջրի խտություն, **Ս-187**  
 ջրի կոշտություն, **Ջ-23**  
 ջրի մնուլահանում (մնուլահանում), **O-111**  
 ջրի պլոտություն, **M-374**  
 ջրի քիմիական տարրալուծություն, **X-12**  
 ջրի օդավորում (աերացիա), **A-284**  
 ջրիմուռներ, **B-179**  
 ջրհավաք առու, **K-38**

ջրոլորտ (հիդրոսֆերա, ջրապատյան),  
**Դ-242**  
 ջրով գերհագեցած ապար, **Ս-289**

## Ռ

ռադիոլարիային տիղմ, **P-13**  
 ռադիոլարիաներ (ճառագայթավորներ),  
**P-14**  
 ռադիոլարիտ, **P-15**  
 ռադոն, **P-20**  
 ռամպ, **P-51**  
 ռապակիվի, **P-52**  
 ռեալգար, **P-59**  
 ռեգիոնալ աններդաշնակություն, **H-70**  
 ռեգիոնալ վրաշարժ, **H-8**  
 ռեզոլիթ, **P-69**  
 ռելիեֆ, **P-80**  
 ռելիեֆաձևավորում,  
 ռելիեֆակազմավորում, **Դ-325**  
 ռելիեֆի անհամաչափություն, **A-255**  
 ռելիեֆի առաջացում (գեներացիա), **Դ-67**  
 ռելիեֆի առաջնային ձևեր, ռելիեֆի  
 սկզբնական ձևեր, **Ս-77**  
 ռելիեֆի բացասական ձևեր, ռելիեֆի  
 գոգավոր ձևեր, **O-210**  
 ռելիեֆի դրական ձևեր, **H-262**  
 ռելիեֆի երիտասարդացում, **O-82**  
 ռելիեֆի հակադրականություն, **K-253**  
 ռելիեֆի հասակ, **B-194**  
 ռելիեֆի հոսքային (ֆլյուվիալ) ձևեր,  
**Փ-48**  
 ռելիեֆի ձևեր, երկրի մակերևույթի  
 ձևեր, **Փ-60**  
 ռելիեֆի սկզբնական ձևեր, **H-152**  
 ռելիեֆի վարընթաց զարգացում, **H-107**  
 ռելիեֆի վերընթաց զարգացում, **B-207**  
 ռեոլոգիա, հոս(ք)աբանություն, **P-87**  
 ռեոլոգիական (հոսքաբանական) գոր-  
 ժընթաց, **P-86**  
 ռետյան հարկ, ռետ, **P-163**  
 ռիթմ (նստվածքակուտակման մեջ), **P-99**  
 ռիթմական շերտավորություն, **P-100**  
 ռիթմաշերտագրություն, **P-103**  
 ռիոլիթ, **P-97**  
 ռիոլիթային լավա (իրահոսք), **Լ-9**  
 ռիսյան սառցադաշտային դարակարգ,  
 ռիս, **P-98**



ռիֆեյ, **P-105**  
 ռիֆտ, ռիֆտային զոնա, **P-107**  
 ռիֆտային իջվածք, **B-216**  
 ռիֆտային հովիտ, **P-108**  
 ռյուպեյվան հարկ, **P-164**  
 ռոտացիոն վարկած, **F-275**  
 ռոդոքրոզիտ, **P-113**  
 ռոդոնիտ (վարդաքար), **P-111**  
 ռոտորային հորատում, **B-192**  
 ռուբիդիում, **P-126**  
 ռուզոզներ (կնճռոտներ), քառաճառագայթավոր բոստեր (կորալներ), **P-128**  
 ռուդիստներ, **P-141**  
 ռուտիլ, **P-161**

## Ս

սաթ, **Я-5**  
 սալ (երկրբ.), **П-179**  
 սալավրաշարժ (օբդոկցիա), **O-5**  
 սալերի տեկտոնիկա, նոր գլոբալ տեկտոնիկա, **T-46**  
 սակնարայի հարկ, **C-2**  
 սահքապոկնման ծալք, **C-138**  
 սահքի հայելի, **3-52**  
 սանդղավանդ, հանքաստիճան, **У-34**  
 սանիդին, **C-8**  
 սանտոնի հարկ, սանտոն, **C-9**  
 սապրոհոմոլիթ, **C-10**  
 սապրոպել (նեխատիղմ), **C-12**  
 սապրոպելային տիղմ, **И-72**  
 սապրոպելիտ (նեխատղմածուխ), **C-11**  
 սառցբերուկային (մորենային) թմբաշար, **M-351**  
 սառեցման զոնա, **3-91**  
 սառնամանիքային հողմահարում, **M-354**  
 սառցաբերուկ (մորեն, քարակարկառ), **M-350**  
 սառցաբերուկային (մորենային) լիճ, **M-352**  
 սառցադաշտ, **Л-47**  
 սառցադաշտաբանություն, սառցադաշտագիտություն, **F-355**  
 սառցադաշտային ակոսներ, **B-152**  
 սառցադաշտային գոգավորություն, **B-212**  
 սառցադաշտային դարակարգ, **Л-59**  
 սառցադաշտային երկրաբանություն, **Л-53**

սառցադաշտային ժամանակաշրջան, **Л-64**  
 սառցադաշտային լերկացում (դենուդացիա), **Л-54**  
 սառցադաշտային լիճ, **Л-61**  
 սառցադաշտային ծալքեր, **C-142**  
 սառցադաշտային ծածկույթներ, **Л-63**  
 սառցադաշտային կուտակում, **A-76**  
 սառցադաշտային հերկում, **Л-60**  
 սառցադաշտային հղկում, **Л-58**  
 սառցադաշտային հովիտ, **Л-55**  
 սառցադաշտային մահիճ, **Л-140**  
 սառցադաշտային մեծազլաքարեր (վալուններ), **B-10**  
 սառցադաշտային նստվածքներ, **Л-62**  
 սառցադաշտային ռելիեֆ, **Л-65**  
 սառցադաշտային տեսություն, **Л-57**  
 սառցադաշտային փուլ, **Л-56**  
 սառցադաշտի շարժում, **Д-10**  
 սառցածին (կրիոգեն) կազմվածք, **K-352**  
 սառցածին (կրիոգեն) կառուցվածք, **K-351**  
 սառցածնություն (կրիոգենեզ), **K-350**  
 սառցային տիպի ժամանակակից նստվածքագոյացում, **O-150**  
 սառցային քարագոյացում (լիթոգենեզ), **Л-112**  
 սառցապատում, **O-69**  
 սառցատեղախախտում (սառցադիսլուկացիա), **F-354**  
 սառցաքերում (էկզարացիա), **Э-6**  
 սառցուլորտ (կրիոպատյան), **K-353**  
 սատելիտ, **C-16**  
 սար, լեռ, **F-377**  
 սարահարթ (քարծրավանդակ, լեռնահարթ), **П-181**  
 սարավանդ, **П-169**  
 սարդիոն, **C-74**  
 սարդոնիքս, **C-14**  
 սարմատի հարկ, սարմատ, **C-15**  
 սեզրեզացիա, **П-41**  
 սեզոնային շերտավորություն, **C-199**  
 սելավ (ցեխահեղեղ), **C-68**  
 սելավային (ցեխահեղեղային) նստվածքներ, **C-64**  
 սելեն, **C-66**  
 սելենիտ (լուսնաքար), **C-67**  
 սեղանասարեր (սեղանածն սարեր), **C-245**

- սենոմանի հարկ, սենոման, **C-69**  
սենոնի վերնահարկ, սենոն, **C-70**  
սեպագրատեսք գրանիտ, **F-438**  
սերիցիտ, **C-80**  
սերիցիտացում, **C-81**  
սերպենտին (օձաքար), **C-86**  
սերպենտինացում (օձաքարացում), **C-87**  
սերպենտինիտ, **C-88**  
սիալ, սիալային թաղանթ, **C-91**  
սիալիթացում, **C-90**  
սիդերիտ, երկաթասպաթ, **C-92**  
սիենիտ, **C-93**  
սիենիտ-պեզմատիտ, **C-94**  
սիլիկատերձում, ապասիլիկացում, **D-46**  
սիլիկահող (կայծքարահող), **K-337**  
սիլիկատներ, **C-96**  
սիլիմանիտ, **C-100**  
սիլիցիում, **K-338**  
սիլիցիումային ապարներ, սիլիցիտներ, **K-339**  
սիլիցիումային թերթաքար, **K-340**  
սիլիցիումային կոնկրետիաներ, **K-229**  
սիլիցիումային տուֆ, գեյզերիտ, ֆիորիտ, **K-341**  
սիլուրի համակարգ (ժամանակաշրջան), սիլուր, **C-101**  
սիլվին, **C-102**  
սիլվինիտ, **C-103**  
սիմա, **C-104**  
սիմայի համակարգ, սիմա, **C-114**  
սիմանտրոպ, **C-107**  
սինեկլիզ, **C-112**  
սինեմյուրի հարկ, սինեմյուր, **C-113**  
սինոնոմիկա, **C-121**  
սկապուլիթ, **C-127**  
սկառներ, **C-128**  
սկզբնական մագմայականություն, **M-12**  
սղկվածքային (սղկահանքային) ոսկի, **3-64**  
սղկվածքային (սղկահանքային) տարրալուծություն, **Մ-18**  
սղկվածք (հանքասիկ, սղկահանք), **Մ-17**  
սղկվածքային (սղկահանքային) նմուշահանում, **O-117**  
սղկվածքային (սղկահանքային) քարտեզ, **K-112**  
սմիթսոնիտ, **C-206**  
սյունակային հորատում, **B-186**  
սյունածև անջատություն, **C-244**  
սնդիկի հանքաքարեր, **P-124**  
սնկանման (քարա)ժայռեր, **F-469**  
սողալիթ, **C-211**  
սոլիֆլյուկցիա (ցեխահոսք, ցեղասողք), **C-215**  
սոլֆատարներ, **C-217**  
սողանք, **O-94**  
սողանքային գործընթացի ակտիվացում, **A-84**  
սողանքային դարավանդ, **O-102**  
սողանքային լեզվակ, **O-108**  
սողանքային կուտակումներ, **O-105**  
սողանքային կրկես, **O-107**  
սողանքային մարմին, **O-103**  
սողանքային սանդղավանդներ, **O-106**  
սողանքային տեղախախտումներ, **O-104**  
սողանքի ծալքեր, **C-148**  
սողանքի ծավալ, **O-30**  
սողանքի հիմք, **B-13**  
սողուններ, **Մ-324**  
սողք, **K-354**  
սողքի (կողաշարժի) մոդուլ (G), **M-317**  
ստրոմբոլյան տիպի ժայթքում, **H-11**  
սուբաերալ (մակացամաքային) գործընթացներ, **C-312**  
սուբդուկցիա (սալանթաքարժ), **C-314**  
սուբսեկվենտ մագմայականություն, **M-18**  
սուբսեկվենտ հովիտ, **C-316**  
սուլֆատային ջուր, **C-318**  
սուլֆատներ, **C-319**  
սուլֆիդային (ծծմբաջրածնային) ջրեր, **C-321**  
սուլֆիդային հանքաքարերի որոնման ջրաքիմիական ցուցանիշներ, **Մ-245**  
սուլֆիդներ, **C-320**  
սուպրալիթորալ, **C-323**  
սուտակ, **P-127**  
սուրանկյուն ծալք, **O-177**  
սուֆոգիա, **C-327**  
սպեսարտին, **C-224**  
սպիլիտ, **C-225**  
սպիտակավուն (սպիտակաերանգ, լեյկոկրատ) միներալներ, **Ղ-72**  
սպիտակավուն (սպիտակաերանգ, լեյկոկրատ) ապարներ, **Ղ-71**  
սպողումեն, **C-226**  
սպոնգոլիթ, սպոնգոլիթ (սպնզաքար), **C-227**  
սպունգներ, **F-479**  
սպրեդինգ (սալատարաշարժ), **C-228**

ստանին, անագային հրաքար, զանգի հանքաքար, **C-237**  
 ստավրոլիթ, **C-233**  
 ստեզոգավրեր, **C-239**  
 ստեզոցեֆալներ, **C-240**  
 ստիբնիտ, **C-242**  
 ստորգետնյա հորատում, **B-191**  
 ստորերկրյա հոսք, **C-243**  
 ստորերկրյա հոսքի գործակից, **K-320**  
 ստորերկրյա ջրերի ավազան, **B-47**  
 ստորերկրյա ջրերի բեռնաթափման մարզ, **O-12**  
 ստորերկրյա ջրերի դասակարգում, **K-161**  
 ստորերկրյա ջրերի դիմհարի զոնա, **3-90**  
 ստորերկրյա ջրերի դիմամիկա, **D-73**  
 ստորերկրյա ջրերի հանքավայրեր, **M-167**  
 ստորերկրյա ջրերի հաշվեկշիռ, **B-23**  
 ստորերկրյա ջրերի մակարդակ, **Y-29**  
 ստորերկրյա ջրերի պաշարների հաշվարկ, **Մ-231**  
 ստորերկրյա ջրերի ջրադինամիկա, **Г-229**  
 ստորերկրյա ջրերի ջրբաժան, **B-177**  
 ստորերկրյա ջրերի ջրհավաքում, **K-57**  
 ստորերկրյա ջրերի տարաշարժ (միգրացիա), **M-244**  
 ստորերկրյա ջուր, **B-134**  
 ստորջրյա արտահոսային (արտաբերման) կոն, **K-260**  
 ստորջրյա բեկվածք, **Մ-220**  
 ստորջրյա երկրաշարժ, **Մ-215**  
 ստորջրյա լեռնաշղթաներ, **Մ-218**  
 ստորջրյա լեռներ, **Մ-216**  
 ստորջրյա կանյոններ (խնձահովիտներ), **Մ-217**  
 ստորջրյա կուտակում, **A-77**  
 ստորջրյա հողմահարում, **B-285**  
 ստորջրյա հրաբխայնություն, ենթածովային հրաբխայնություն, **Մ-219**  
 ստորջրյա սողանք, **O-101**  
 ստորոնատուլիթներ, **C-264**  
 սովարաշերտ (ապարախումբ), **T-85**  
 սովերագծված գլաքարեր, **Մ-27**  
 ստրատոիզոհիպսեր, **C-260**  
 ստրոմբոլյան տիպի ժայթքում, **И-11**  
 ստրոնցիում, **C-265**  
 ստուգիչ հորատանցք, **K-255**  
 սֆալերիտ (ցինկախաբուկ), **C-329**  
 սև մետաղներ, **M-203**  
 սև սաթ, գիշերաքար գիշերակն, խեժածուխ, **Г-9**

## Վ

վադոզային ջրեր, **B-1**  
 վալախյան ծալքավորություն, **B-5**  
 վալանժինի հարկ, վալանժին, **B-4**  
 վալդայան սառցադաշտային դարակարգ, **B-6**  
 վահանագուրկներ, **B-85**  
 վահանածն հրաբուխ, **B-240**  
 վանադատներ, **B-11**  
 վանադինիտ, **B-14**  
 վանադիում, **B-13**  
 վանադիումի հանքաքարեր, **B-12**  
 վանակն (լեռնադրյուրեղ, լեռնային բյուրեղապակի), **Г-408**  
 վառելանյութի կալորիականություն, **K-15**  
 վատահողեր, **B-61**  
 վատտեր, **B-20**  
 վարընթաց աղբյուրներ, **H-108**  
 վարիոլիթ, բշտիկաքար, **B-17**  
 վարիոլներ, **B-16**  
 վարիսյան ծալքավորություն, **B-19**  
 վարնետք (տարեքք), **C-18**  
 վարնետքային հովիտ, **C-19**  
 վարնետքային սանդղավանդ, **C-21**  
 վարնետքի (տարեքքի) թև, **K-390**  
 վարնետքի մակերևույթ, վարնետքի հարթություն, **Մ-206**  
 վարնետքի շերտագրական բարձրություն, **B-315**  
 վարնետքի ուղղածիգ բարձրություն, **B-314**  
 վեգետների վարկած, **B-21**  
 վեզուվիան, **B-23**  
 վենդ, **B-29**  
 վենլոկի(յան) հարկ, վենլոկ, **B-30**  
 վեստֆալյան հարկ, վեստֆալ, **B-43**  
 վերաբյուրեղացած կրաքարեր, **И-33**  
 վերաբյուրեղացում, **Մ-82**  
 վերադիր դարավանդ, **H-20**  
 վերադիր իջվածք, **H-19**  
 վերածնված լեռներ, հետպլատֆորմային լեռներ, **B-195**  
 վերգետնյա դելտա, ցամաքային դելտա, **H-13**  
 վերգետնյա ժայթքում, **H-14**  
 վերընթաց աղբյուր, **B-208**  
 վերընթաց լեռնային (ընդերքային) փորվածք, **B-206**

վերընթաց ջուր, **B-110**  
 վերլուծություն, **A-158**  
 վերմիկուլիտ, **B-32**  
 վերնաթև, կախված թև, **B-69**  
 վերնածին (հիպերգեն) գործընթացներ, **Դ-265**  
 վերնածին (հիպերգեն) հանքավայրեր, **Դ-263**  
 վերնածին (հիպերգեն) միներալներ, **Դ-264**  
 վերնածնության (հիպերգենեզի) երկրաքիմիա, **Դ-177**  
 վերնածնության (հիպերգենեզի) զոնա, **3-75**  
 վերնածնություն (հիպերգենեզ), **Դ-262**  
 վերնակենտրոն (էպիկենտրոն), **Յ-45**  
 վերնակող, **Ե-129**  
 վերնաջուր, **B-40**  
 վերնետք, վերնետուկ, **B-46**  
 վերնետք-տեղաշարժ (վ. կողաշարժ), **B-47**  
 վերնոլորտ (ստրատոսֆերա), **C-261**  
 վերջնական (ավարտային) մագմայականություն, **M-11**  
 վերջնական սառցաբերուկ (մորեն), ճակատային սառցաբերուկ (մորեն), **K-224**  
 վերջնասառցաբերուկային (վերջնամորենային) ռելիեֆ, **K-226**  
 վերջնասառցաբերուկային (վերջնամորենային) լճեր, **K-225**  
 վիզելի հարկ, վիզել, **B-61**  
 վիլաֆրանկի հարկ (սերիա), **B-62**  
 վիմագրական քար, **K-28**  
 վիվիանիտ, **B-55**  
 վիտերիտ, **B-72**  
 վիտրեն, **B-73**  
 վիտրոկլաստային կառուցվածք, **C-268**  
 վիտրոֆիրներ, **B-75**  
 վիտրոֆիրային կառուցվածք, ապակենման կառուցվածք, **B-74**  
 վյուրմի սառցադաշտային դարակարգ, վյուրմ, **B-325**  
 վոլաստոնիտ, **B-197**  
 վոլգայի հարկ **B-196**  
 վոլֆրամի հանքաքարեր, **B-205**  
 վոլֆրամիտ, **B-204**  
 վտակ, **Մ-334**  
 վրաշարժ, **H-5**  
 վրաշարժի մակերևույթ, **Մ-202**  
 վոլֆենիտ, **B-278**

## S

տաբուլյատներ, **T-1**  
 տալկ, **T-7**  
 տախոմետրական (հեռաչափական) հանույթ, **T-19**  
 տանատոցենոզ, **T-9**  
 տանետյան հարկ, **T-10**  
 տանիքի թերթաքարեր, **K-378**  
 տանտալի հանքաքարեր, **T-12**  
 տանտալիթ, **T-11**  
 տաշտահովիտ (տրոգ), **T-110**  
 տաշտափոս (գոգվածք), **M-381**  
 տարաբերուկ, ալոխթոն, **A-107**  
 տարաբերուկ(ային) (ալոխթոնային) կրաքարեր, **A-109**  
 տարաբերուկ(ային) (ալոխթոնային) կավեր, **A-108**  
 տարածասահման, տարածաշրջան (արեալ), **A-226**  
 տարածման ազիմուտ, **A-59**  
 տարածման գիծ (երկրբ.), **Ղ-99**  
 տարածման ուղղություն, **H-31**  
 տարածում, **Մ-355**  
 տարածքի ճարտարագիտաերկրաբանական պայմաններ, **Մ-96**  
 տարածություն, **Դ-196**  
 տարամիտված (դիվերգենտ) ծալքեր, **C-143**  
 տարաշարժ (հեռաշարժ), **P-27**  
 տարբերակման ցուցանիշ (ինդեքս), **Մ-87**  
 տարրալուծման (լուծազատման) զոնայի ջուր, **B-117**  
 տարրալուծման (լուծազատման) զոնա, **3-72**  
 տարրերի երկրաքիմիական դասակարգում, **Դ-163**  
 տարրերի տարաշարժ (միգրացիա), **M-248**  
 տարրերի քլարկներ, **K-153**  
 տարրեր-ցուցիչներ, **Յ-19**  
 տաք աղբյուրներ, **Դ-414**  
 տաքսիտային կազմվածք (տեքստուրա), **T-3**  
 տաքսոն, **T-4**  
 տաֆոնոմիա, **T-14**  
 տաֆոցենոզ, **T-15**  
 տաֆրոգենեզ, **T-16**

- տաֆրոերկրասինկլինալ (տաֆրոգեոսինկլինալ), **T-17**  
 տաֆրոսինկլինալ, **T-18**  
 տեթիս, **T-74**  
 տեխնաժին երկրաքիմիա, **Գ-184**  
 տեխնաժին, **T-76**  
 տեկտիկներ, **T-43**  
 տեկտոգեոզ, **T-44**  
 տեկտոնական (երկրատեկտոնական) ցիկլ, **Ա-15**  
 տեկտոնական (կառուցվածքաբանական) բլոկներ, **Բ-123**  
 տեկտոնական ակտիվացում, **A-78**  
 տեկտոնական ամրապնդում (կոնսոլիդացում), **T-49**  
 տեկտոնական աններդաշնակություն, **H-74**  
 տեկտոնական ծածկույթ, շարիած (մակաշարժ), **T-57**  
 տեկտոնական ծածկույթի արմատներ, **K-285**  
 տեկտոնական կառուցվածքներ, **T-56**  
 տեկտոնական կավ, **Գ-308**  
 տեկտոնական կար, **Ա-20**  
 տեկտոնական հովիտ, **T-48**  
 տեկտոնական հպում (հպատեղ), **K-242**  
 տեկտոնական ձևափոխություններ, **T-53**  
 տեկտոնական ճկվածքներ, **T-55**  
 տեկտոնական մոդելավորում, **M-314**  
 տեկտոնական շարժումներ, **T-52**  
 տեկտոնական շրջանացում, **T-61**  
 տեկտոնական պատուհան, **O-56**  
 տեկտոնական ռեժիմ, **T-58**  
 տեկտոնական ռեժիմի շրջում (հակադարձում), **H-82**  
 տեկտոնական ռելիեֆ, **T-59**  
 տեկտոնական վարկածներ (հիպոթեզներ), **T-51**  
 տեկտոնական վերականգնում, **P-63**  
 տեկտոնական ցիկլ, **T-60**  
 տեկտոնական փշրաքար (բրեկչիա), շփման փշրաքար (բրեկչիա), **Բ-164**  
 տեկտոնական քարտեզներ, **T-54**  
 տեկտոնամազմայական ակտիվացում, **A-79**  
 տեկտոնամազմայական ցիկլ, **Ա-16**  
 տեկտոնոլորտ, **T-62**  
 տեկտոնաֆիզիկա, **T-63**  
 տեկտոնիկա (կառուցվածքաբանություն), երկրատեկտոնիկա, **T-45**  
 տեկտոնիտներ, **T-47**  
 տեղագրական հիմք, **T-88**  
 տեղագրական քարտեզներ, **T-89**  
 տեղագրություն (տոպոգրաֆիա), **T-90**  
 տեղադրման տարրեր, **Յ-18**  
 տեղախախտումներ (դիսլոկացիաներ), **Դ-84**  
 տեղախախտված (դիսլոկացված) տեղադրում, **Դ-85**  
 տեղաձին (աուտիզեն) կավ, **Գ-312**  
 տեղաձին (աուտիզեն) միներալագոյացում, **M-282**  
 տեղաձին (աուտիզեն) միներալներ, **A-275**  
 տեղային աններդաշնակություն, **Պ-143**  
 տեղային գետ, **A-36**  
 տեղային կավ, **A-35**  
 տեղային սառցաբերուկ (մորեն), **Պ-142**  
 տեղայիններ (էնդեմիկներ), **Յ-26**  
 տեղաշարժ (կողաշարժ), **C-35**  
 տեղաշարժի հորիզոնական լայնույթ, **A-146**  
 տեղաշարժի շերտագրական լայնույթ, **A-147**  
 տեղաշարժի ուղղածիզ լայնույթ, **A-145**  
 տեղաշարժիչ, նետիչ **C-203**  
 տեղաշարժ-վարնետք, **C-37**  
 տեղաշարժ-վերնետք, **C-36**  
 տեղափոխման ազդակներ, **A-41**  
 տեմանտիտ, զառիկի (արսենի) խունացած հանքաքար, **T-67**  
 տեշենիտ, **T-77**  
 տեսակ, **B-58**  
 տեսակավորում, **C-220**  
 տեսակավորված նստվածքներ, **O-212**  
 տերա ռոսա, կարմրահող, **T-71**  
 տեֆրա, **T-75**  
 տիեզերաբանություն, **K-302**  
 տիեզերաժամանակագրություն, **K-305**  
 տիեզերաձին միներալներ, **K-300**  
 տիեզերաժամական վարկածներ, **K-301**  
 տիեզերական հանույթ, **K-299**  
 տիեզերական նկարների վերծանում, **Դ-56**  
 տիեզերական փոշի, **K-298**  
 տիեզերաքիմիա, **K-304**  
 տիեզերք, **K-303**

- տիլլիտներ, **T-78**  
 տիղմ, **H-67**  
 տիպամորֆ միներալներ, **M-294**  
 տիտան, **T-79**  
 տիտանամագնետիտ, **T-82**  
 տիտանի հանքաքարեր, **T-81**  
 տիտանիտ, սֆեն, **T-80**  
 տիտոնի հարկ, տիտոն, **T-83**  
 տղմաջուր, **B-118**  
 տոարի հարկ, տոար, **T-84**  
 տոլեիտային կառուցվածք, **C-293**  
 տոհմածառ, **P-102**  
 տորտոնի հարկ, տորտոն, **T-92**  
 տորֆ, **T-93**  
 տորֆագոյացում, **T-94**  
 տորֆակուտակ, **T-95**  
 տորֆային բիտումներ (հանքածյութեր),  
**B-115**  
 տպազիոն, տոպագ, **T-87**  
 տրախիտ, **T-100**  
 տրախիտային լավա (հրահոսք), **J-10**  
 տրախիտային կառուցվածք, **C-294**  
 տրապներ (կծաքարեր), **T-98**  
 տրաս, **T-99**  
 տրավերտին, կրաքարային տուֆ, **T-96**  
 տրեմադոկի հարկ, տրեմադոկ, **T-101**  
 տրեմոլիթ, **T-102**  
 տրեպել, **T-103**  
 տրիասի համակարգ  
 (ժամանակաշրջան), տրիաս, **T-108**  
 տրիլոբիտներ, **T-109**  
 տուրբիդիտներ (պղտոր  
 հոսքանստվածքներ), **T-113**  
 տուրնեի հարկ, տուրնե, **T-116**  
 տուրմալին, **T-115**  
 տուրոնի հարկ, տուրոն, **T-117**  
 տուփածն ծալք, սունդուկածն ծալք,  
**K-286**  
 տուֆալավա, **T-127**  
 տուֆալկոլիթ, **T-124**  
 տուֆածին ավազաքար, **P-113**  
 տուֆածին կավեր, **G-323**  
 տուֆանստվածքային ապար, **P-294**  
 տուֆակոնգլոմերատ, տուֆախառնա-  
 քար, **T-126**  
 տուֆավազաքար, **T-128**  
 տուֆափշրաքար (տուֆաբրեկչիա),  
**T-125**  
 տուֆֆիտ, **T-129**
- Ց**
- ցածրալեռնային ռելիեֆ, ցածր լեռներ,  
**H-102**  
 ցածրաջերմաստիճանային հանքավայր,  
**M-158**  
 ցածրավայր, դաշտավայր, **H-103**  
 ցամաքալեզվակ, **K-297**  
 ցամաքածին (տերրիզեն)  
 բաղադրամասեր, **K-214**  
 ցամաքածին (տերրիզեն) կավեր, **G-322**  
 ցամաքածին (տերրիզեն) նստվածքներ,  
**T-73**  
 ցամաքալեզվակ, **K-297**  
 ցամաքային (ներցամաքային) ավազան,  
**K-249**  
 ցամաքային կավեր, **G-317**  
 ցամաքային կլինա, **K-250**  
 ցամաքային նստվածքներ, **K-248**  
 ցամաքեցման (դրենաժային) առու, **K-39**  
 ցամաքեցված մակերես, **P-190**  
 ցամաքի երկրաձևաբանություն, **G-126**  
 ցամաքի իջեցում, **O-121**  
 ցամաքուրդ (դրենաժ), **D-113**  
 ցամաքուրդային (դրենաժային)  
 փորվածք, **B-304**  
 ցամաքուրդային (դրենաժային) ջրեր,  
**D-114**  
 ցանավոր հանքաքար, **P-132**  
 ցանցածն երակ, **Ж-34**  
 ցելեստին, **Ա-1**  
 ցելսային կոն, **K-261**  
 ցելսային հրաբուխ, **B-230**  
 ցելստեյն, **Ա-11**  
 ցենենտացման զոնա, **3-95**  
 ցենենտացում, **Ա-2**  
 ցենտրիկլինալ (կենտրոնագոզվածք),  
**Ա-6**  
 ցենտրիկլինալ (կենտրոնագոզ) անկում,  
**Ա-7**  
 ցեոլիթներ, **Ա-8**  
 ցերատիտներ, **Ա-9**  
 ցերուսիտ, կապարի սպիտակ  
 հանքաքար, **Ա-10**  
 ցիկլայնություն, **Ա-18**  
 ցինկախաբուկ, **Ա-19**  
 ցինկալիտ, **Ա-21**  
 ցիստոլիդներ, **Ա-25**  
 ցիրկոն, **Ա-23**

ցնդող նյութեր, **Ղ-81**  
 ցնդող նյութերի ելք, **В-322**  
 ցոիզիտ, **Ա-26**  
 ցուցիչներ, ինդիկատորներ, **И-88**  
 ցրման պսակ, **О-128**  
 ցրոնային հանքավայրեր, **Р-123**  
 ցրոններ, **Р-115**  
 ցրված մետաղներ (կամ տարրեր), **М-200**  
 ցրված տարրեր, **Р-54**

### Ու

ուենլոկի հարկ, ուենլոկ, վենլոկ, **У-38**  
 ուժափոխակերպություն (դինամոմետա-  
 մորֆություն), **Д-76**  
 ուղեկից (ակցեսորային) միներալներ,  
**А-92**  
 ուղիղ ծալք, համաչափ ծալք, **П-364**  
 ուղղաձիգ լեռնային փորվածք, **В-296**  
 ուղղաձիգ մասշտաբ (չափացույց, չա-  
 փագիծ), **В-35**  
 ուղղաձիգ շարժումներ, **В-34**  
 ուղղաձիգ շրջապտույտ  
 (ցիրկուլյացիա), **В-33**  
 ուղղաձիգ ջերմաստիճանային գրա-  
 դիենտ (աստիճանափոխում), **В-37**  
 ուղղաձիգ վարմետք, **В-36**  
 ուշլեռնագոյացման ներժայթքումներ  
 (ինտրուզիաներ), **И-117**  
 ուշնագմայական (հիստերոմագմայա-  
 կան) հանքավայր, **М-146**  
 ուռչման ծալքեր, **С-155**  
 ուստամիներ, **Б-157**  
 ուվարովիտ, **У-1**  
 ուրանի հանքաքարեր, **У-27**  
 ուրանիմիտ, **У-26**  
 ուֆայի հարկ, **У-36**

### Փ

փակ (զոց) ծալք, **З-12**  
 փակ (կոյր) հանքավայր, **М-149**  
 փակ ճեղք, **З-13**  
 փայլատ ածուխ, **М-89**  
 փայլարներ, **С-202**  
 փայլաքարեր (բնագույն քարեր,  
 բնագունեղ քարեր), **С-7**  
 փաստացի նյութերի քարտեզ, **К-111**

փափկամարմիններ (կակղամորթներ),  
**М-324**  
 փեղկ, **С-238**  
 փենսիլվանյան բաժին, **П-69**  
 փիրուզ, **В-107**  
 փլուզման գոգավորություն, **К-311**  
 փլուզման զոնա, **З-84**  
 փլվածք, **О-1**  
 փլվածքային երկրաշարժ, **О-2**  
 փշամորթներ, **И-1**  
 փշրաբեկորային (կատակլաստիկ)  
 ապարներ, **К-121**  
 փշրաբեկորային (կատակլաստիկ) կա-  
 ռուցվածք, **К-120**  
 փշրաքար, բրեկչիա, **Б-160**  
 փշրաքարային կրաքարեր, **И-26**  
 փշրաքարանման (բրեկչիանման) երակ,  
**Ж-26**  
 փոխակերպածնային  
 (մետամորֆածնային)  
 գրանիտագոյացում, **Г-448**  
 փոխակերպածնային ծալքեր, **С-146**  
 փոխակերպածնային (մետամորֆածնա-  
 յին) հանքավայրեր, **М-215**  
 փոխակերպային (մետամորֆային)  
 ապարներ, **М-213**  
 փոխակերպային (մետամորֆային) հան-  
 քավայրեր, **М-214**  
 փոխակերպային ապարների  
 կառուցվածք, **С-272**  
 փոխակերպության աստիճան, **С-241**  
 փոխակերպության ֆացիաներ, **Ф-19**  
 փոխակերպություն (կերպափոխություն,  
 մետամորֆություն), **М-205**  
 փոխակերպված (մետամորֆացված)  
 հանքավայրեր, **М-212**  
 փոխարինման (տեղակալման) երակ,  
**Ж-20**  
 փոխհատուցման գոգածալք  
 (սինկլինալ), **С-116**  
 փոխհատուցված ճկվածք, **К-203**  
 փորձարարական երկրատեկտոնիկա,  
**Г-145**  
 փորոտանի փափկամարմիններ, փորո-  
 տանիներ, գաստրոպոդներ, **Б-172, Г-52**  
 փորվածքախորշային ամրակապ, **К-346**  
 փորվածքի առաստաղ, **К-379**  
 փորվածքի փլուզում, **З-5**  
 փուխր ապար, **П-291**

փոքր արագությունների զոնա, **3-81**  
 փսամիտային կառուցվածք, ավազային  
 կառուցվածք, **Պ-366**  
 փսամիտներ (ավազային ապարներ),  
**Պ-365**  
 փսեֆիտային կառուցվածք, կոպտաբե-  
 կորային կառուցվածք, խոշորաբեկո-  
 ղային կառուցվածք, **Պ-371**  
 փսեֆիտներ, **Պ-370**  
 փսիլոմելան, **Պ-372**  
 փսիլոֆիտներ, **Պ-373**  
 փրփրաքար, **Պ-68**  
 փքվածք, բուդինաժ, **Ե-174**

**Ք**

քաղկեդոն (խալցեդոն), **Ջ-2**  
 քաղցրահամ լիճ, **Պ-326**  
 քաղցրահամ ջուր, **Ե-139**  
 քայքայում (կոռոզիա, կերամաշում),  
**Կ-293**  
 քանդակագործական ռելիեֆ, **Ը-188**  
 քաշկռտման նշաններ, **3-55**  
 քատյան հարկ, **Ջ-6**  
 քարաբանական (լիթոլոգիական)  
 քարտեզ, **Պ-119**  
 քարաբանահնաշխարհագրական  
 քարտեզ, **Պ-121**  
 քարաբանաշերտագրական համալիր,  
**Կ-207**  
 քարաբանաշերտագրական շերտա-  
 տուփ (դարսաշերտ), **Պ-52**  
 քարաբանաֆացիալ կտրվածք  
 (տրամատ, պրոֆիլ), **Ք-39**  
 քարաբանաֆացիալ քարտեզներ, **Պ-122**  
 քարաբանություն (լիթոլոգիա), **Պ-120**  
 քարաբեկորներ (քարաբեկորային  
 արտանետուկներ), **Պ-118**  
 քարագոյացում (լիթոգենեզ), **Պ-108**  
 քարաթափվածք, ապարաթափվածք,  
**Օ-180**  
 քարաթափվածքային լանջ, **Օ-179**  
 քարածագումնաբանական սյունակ,  
**Պ-113**  
 քարածագումնաբանական  
 վերլուծություն, **Պ-114**  
 քարածին լանդշաֆտ (բնապատկեր),  
**Պ-117**

քարածխային կոքս, **Կ-187**  
 քարածխային համակարգ (ժամանա-  
 կաշրջան), կարբոն, **Կ-23**  
 քարածուխ, **Կ-26**  
 քարահոսք, **Պ-309**  
 քարաղ, **Կ-23**  
 քարայր, անձավ, **Դ-472**  
 քարանձավ (քարայր), **Պ-121**  
 քարանձավագիտություն, **Շ-223**  
 քարանձավային (քարայրային) նստ-  
 վածքներ, **Պ-122**  
 քարանձավային արջ, **Պ-123**  
 քարաշերտագրական ստորաբաժանում,  
**Պ-127**  
 քարասեր տարրեր, **Պ-130**  
 քարացուկներ, **Օ-44**  
 քարացում (լիթիֆիկացում), **Պ-107, Օ-45**  
 քարաքիմիական որոնումներ, **Պ-131**  
 քարե երկնաքար, օդաքար, **Կ-25**  
 քարի դար, **Ե-26**  
 քարոլորտ (քարապատյան,  
 լիթոսֆերա), **Պ-128**  
 քարոլորտի սալեր, **Պ-129**  
 քարոլորտի տեկտոնական շերտատվա-  
 ծություն, **Դ-50**  
 քարտեզ, **Կ-94**  
 քարտեզագիտություն, **Կ-113**  
 քարտեզաչափություն, **Կ-114**  
 քարտեզի բացատրագիր  
 (լուսանցագիր), **Պ-43**  
 քարտեզի մասշտաբ (չափացույց, չա-  
 փագիծ), **Մ-81**  
 քարքարոտ անապատ. համադա, **Կ-21**  
 քենբրիի համակարգ  
 (ժամանակաշրջան) քենբրի, **Կ-134**  
 քեթտիդներ, **Ջ-10**  
 քիմբեռլիթ, **Կ-142**  
 քիմիածին ապարներ, **Ջ-9**  
 քիմիածին կրաքարեր, **Ի-36**  
 քիմիական հողմահարում, **Ե-289**  
 քիմիական նմուշահանում, **Օ-116**  
 քիմիակենսաբանական նստում, **Օ-163**  
 բլուանտիտ, **Ջ-14**  
 բլորիդներ բնական, **Ջ-15**  
 բլորիտային թերթաքարեր, **Շ-193**  
 բլորիտացում, **Ջ-16**  
 բլորիտներ, **Ջ-17**  
 բյարիզ, ջրահավաք գետնուղի, **Կ-407**  
 բոնդրիտներ, **Ջ-20**



քսենոբլաստներ, **K-394**  
 քվարցային ավազ, **Պ-106**  
 քվարց, որձաքար, **K-125**  
 քվարցային (որձաքարային) դիորիտ, **K-127**  
 քվարցային (որձաքարային) պորփյուր (ծիրանաքար, պորֆիր,) **K-128**  
 քվարցային գնեյս (զոձաքար), **Դ-358**  
 քվարցիտ, **K-129**  
 քվերշլագ (լայնական փորուտ), **K-132**  
 քրիզոբերիլ, **X-22**  
 քրիզոլիթ (ոսկեքար), **X-23**  
 քրիզոպրագ, **X-24**  
 քրիզոտիլ-ասբեստ, **X-25**  
 քրոմիտային հանքաքարեր, քրոմիտներ, **X-27**  
 քրոմանյոնցի, քրոմանյան մարդ, **K-383**  
 քրոմատներ բնական, **X-26**  
 քրոմչպինելիդներ, **X-28**  
 քրոնոզոնա, **X-29**

## Օ

օբսիդիան (վանակատ, հրաբխային ապակի), **O-27**  
 օգտակար բաղադրամասեր, **K-213**  
 օգտակար հանածոներ, **Պ-250**  
 օգտակար հանածոներ հանելու համար պատրաստի պաշարներ, **3-33**  
 օգտակար հանածոյի ավազան, **Բ-48**  
 օգտակար հանածոների արդյունահանույթ, **Ճ-92**  
 օգտակար հանածոների արդյունաբերական պաշարներ, **3-35**  
 օգտակար հանածոների արտահաշվեկշռային պաշարներ, **3-34**  
 օգտակար հանածոների բացված պաշարներ, **3-31**  
 օգտակար հանածոների երկրաբանական պաշարներ, **3-32**  
 օգտակար հանածոների երկրաբանություն, **Դ-108**  
 օգտակար հանածոների կորուստներ, **Պ-307**  
 օգտակար հանածոների հանքավայր, **M-165**  
 օգտակար հանածոների

հանքավայրերի գնահատում, **O-218**  
 օգտակար հանածոների հանքավայրերի դասակարգում, **K-158**  
 օգտակար հանածոների հանքավայրերի եզրագծում, **O-58**  
 օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանական որոնում և հետախուզություն, **Դ-167**  
 օգտակար հանածոների հանքավայրերի զոնայականություն, **3-96**  
 օգտակար հանածոների հանքավայրերի մշակում, **P-34**  
 օգտակար հանածոների հանքավայրերի որոնում, **Պ-234**  
 օգտակար հանածոների հաշվեկշռային պաշարներ, **Բ-24**  
 օգտակար հանածոների հարստացում, **O-19**  
 օգտակար հանածոների պաշարներ, **3-29**  
 օգտակար հանածոների պաշարների դասակարգում, **K-157**  
 օգտակար հանածոների պաշարների հաշվարկ, **Պ-232**  
 օգտակար հանածոների փոխակերպված (մետամորֆացած) հանքավայրեր, **M-212**  
 օդաբանություն, աերոլոգիա, **A-291**  
 օդագամմահանույթ, **A-288**  
 օդաերկրաֆիզիկական հետախուզություն, օդաերկրաֆիզիկական հանույթ, **A-289**  
 օդաէլեկտրահետախուզություն, **A-296**  
 օդալուսանկարահանում, **A-295**  
 օդալուսանկարների վերծանում, **Ճ-55**  
 օդակյաց, աերոբ (օդակեցիկ) օրգանիզմներ, **A-287**  
 օդահագեցման զոնա, **3-70**  
 օդամագնիսական հանույթ, **A-292**  
 օդամեթոդներ, **A-393**  
 օդային հանույթ, **B-189**  
 օդանկարահանում, օդահանույթ, **A-294**  
 օդավորում, աերացիա, **A-283**  
 օդափոխության փորվածք, **B-295**  
 օդաքար, ասուպ, **A-290**  
 օդերևութաբանություն, **M-226**  
 օզոքերիտ (հանքամոմ, լեռնամոմ), **O-41**

- օգոնուորտ, **O-42**  
 օլենյոկյան հարկ, **O-70**  
 օլիգոկլազ, **O-73**  
 օլիգոմիկտային (սակավախառն)  
 ապար, **O-74**  
 օլիստոստրոմներ, **O-77**  
 օլիգոցեն, **O-75**  
 օլիվինիտ, **O-72**  
 օլիվին (ծիթակն), **O-71**  
 օկայի սառցադաշտային դարակարգ,  
**O-67**  
 օձաքար, սերպենտին, **3-54**  
 օդակաձև կառուցվածքներ, **K-200**  
 օդակավոր որդեր, **K-201**  
 օդակղզի, ատուլ, **A-273**  
 օնկոլիթներ, **O-85**  
 օուլիթ, ձվաքար, **O-86**  
 օուլիթային (ձվաքարային) հանքաքար,  
**P-138**  
 օուլիթային (ձվաքարային) ապար, **P-287**  
 օուլիթային (ձվաքարային) կառուցվածք,  
**O-87**  
 օուլիթային (ձվաքարային) կրաքար,  
**O-88**  
 օպալ, ծիածանաքար (արևակն,  
 արևաքար), **O-89**  
 օպալիտներ, **O-90**  
 օպոկ, **O-93**  
 օպտիկական առանցք, **O-181**  
 օպտիկական առանցքների անկյուն, **Y-12**  
 օպտիկական միներալներ, **M-291**  
 օպտիկական քվարց (ործաքար), **K-126**  
 օպտիկապես երկառանցք բյուրեղ, **K-361**  
 օպտիկապես իզոտրոպային բյուրեղ,  
**K-362**  
 օպտիկապես միառանցք բյուրեղ, **K-363**  
 օստրակոդերմեր (վահանակավորներ),  
**O-173**  
 օվկիանոս, **O-47**  
 օվկիանոսագիտություն, **O-54**  
 օվկիանոսագրություն, **O-53**  
 օվկիանոսային բեկվածքներ, **P-30**  
 օվկիանոսային բեկվածքների զոնա, **3-92**  
 օվկիանոսային գոգավորություն, **O-49**  
 օվկիանոսային երկրակեղև, **O-48**  
 օվկիանոսային թունք, **B-3**  
 օվկիանոսային լեռնաշղթաներ, **O-52**  
 օվկիանոսային նստվածքներ, **O-51**  
 օվկիանոսային սալ, **O-50**  
 օվկիանոսային փողրակ (վիհ, ակոս),  
**Ж-17**  
 օվկիանոսի երկրաքիմիա, **Г-182**  
 օվկիանոսի մահիճ, **Л-141**  
 օտարաբյուրեղներ, **K-395**  
 օտարածին միներալներ, **M-289**  
 օտարաքար, քսենոլիթ, **K-396**  
 օրբիտոլիդներ, **O-123**  
 օրգանածին ապարներ, **O-125**  
 օրգանածին կազմվածք, կենսածին  
 կազմվածք, **O-124**  
 օրգանածին ռելիեֆ, **O-126**  
 օրգանական հողմահարում, **B-284**  
 օրգանական մնացորդների  
 կողմնորոշում, **O-130**  
 օրդովիկի համակարգ (ժամանակա-  
 շրջան), օրդովիկ, **O-127**  
 օրթիտ, **O-138**  
 օրթոգնեսյա (օրթոգոծաքար), **O-141**  
 օրթոերկրասինկլինալ, **O-140**  
 օրթոկլազ, **O-142**  
 օրթոֆիր, օրթոկլազային պորփյուր,  
**O-143**  
 օրիկտոցենոզ, **O-131**  
 օրինյակ, օրինյակի մշակույթ, **O-132**  
 օքսիդացած հանքաքարեր, **P-137**  
 օքսիդացման զոնա, **3-85**  
 օքսիդացված նավթ (քարյուղ), **O-55**  
 օքսիդորդի հարկ, օքսիդորդ, **O-68**  
 օֆիոլիթային մագմայականություն, **M-14**  
 օֆիոլիթային ներժայթքում  
 (ինտրուզիա), **И-126**  
 օֆիոլիթներ, **O-215**  
 օֆիտային կառուցվածք, **O-216**
- Ֆ**
- ֆակոլիթ, **Փ-4**  
 ֆամենի հարկ, ֆամեն, **Փ-6**  
 ֆայալիթ, **Փ-23**  
 ֆաներոզոյան էոն, **Փ-9**  
 ֆաներոզոյան էոնոտեմա, ֆաներոզոյ,  
**Փ-8**  
 ֆանզոններատներ, **Փ-7**  
 ֆաունիստիկական համալիր, **Փ-11**  
 ֆացիալ նմանակ, **A-163**  
 ֆացիալ զոնա, **3-94**  
 ֆացիալ չափանիշներ, **K-377**

- ֆացիաներ (դիմապատկերներ) (երկրա-  
 բանական, նստվածքային), **Փ-12**  
 ֆացիաների տարաշարժ (միգրացիա),  
**M-247**  
 ֆելդսպաթացում, **Փ-24**  
 ֆելդսպաթոիդներ  
 (դաշտասպաթոիդներ), **Փ-25**  
 ֆելզա..., **Փ-27**  
 ֆելզիտ, **Փ-26**  
 ֆելզիտային կառուցվածք, **C-295**  
 ֆենակիտ, **Փ-28**  
 ֆեռոմագնիսական միներալներ, **M-296**  
 ֆեռոմագնիսականություն, **Փ-30**  
 ֆիզիկաաշխարհագրական գործընթա-  
 ցներ, **Փ-32**  
 ֆիզիկաաշխարհագրական  
 շրջանացում, **Փ-33**  
 ֆիզիկաաշխարհագրական  
 քարտեզներ, **Փ-31**  
 ֆիզիկական (մեխանիկական)  
 հողմահարում, **B-288**  
 ֆիզիկական երկրաբանություն, **Դ-115**  
 ֆիլիտ, **Փ-36**  
 ֆիքսիզմ, **Փ-35**  
 ֆլիշ (նրբառիթմ), **Փ-43**  
 ֆլիշոիդներ (ֆլիշակերպեր), **Փ-44**  
 ֆլուիդ, **Փ-51**  
 ֆլուիդալ կառուցվածք, **C-296**  
 ֆլուիդալ (հոսանուտ) կազմվածք,  
 շլիռային կազմվածք, **T-42**  
 ֆլուորիտ, ֆտորսպաթ, **Փ-52**  
 ֆլոգոպիտ, **Փ-45**  
 ֆոնոլիթ (զնգնգաքար, հնչուն քար),  
**Փ-53**  
 ֆոռլանդ, **Փ-55**  
 ֆոսիլացման (քարացուկագոյացման)  
 գործակից, **K-326**  
 ֆոսիլացում (քարացուկագոյացում),  
**Փ-63**  
 ֆոսֆատային հանքաքարեր, **Փ-64**  
 ֆոսֆատներ բնական, **Փ-65**  
 ֆոսֆորիտային կոնկրեցիաներ, **K-231**  
 ֆոսֆորիտներ, **Փ-66**  
 ֆորամինիֆերներ, **Փ-54**  
 ֆորշոկեր, նախազգուշացնող  
 ցնցումներ (նախահարվածներ), **Փ-62**  
 ֆորստերիտ, **Փ-61**  
 ֆուզուլինիդներ, **Փ-71**  
 ֆունարոլային գազեր, **Դ-35**  
 ֆունարոլներ, **Փ-72**  
 ֆրանի հարկ, ֆրան, **Փ-69**  
 U-ածն հովիտ, **Դ-100**  
 V-ածն հովիտ, **Դ-99**

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Աղամյան Յ. Յ., Երկրաբանահետախուզական հորատման տեխնոլոգիական և տեխնիկական տերմինների բացատրական բառարան, ԵՊՀ հրատ., Եր., 1976:
- Ավետիսյան Վ. Ա., Բոշնադյան Պ.Ա., Դավթյան Դ.Ե., Ջրաերկրաբանական և ինժեներաերկրաբանական ռուս-հայերեն բացատրական բառարան, ՀԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 1995:
- Բարսեղյան Յ. Խ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, «Լույս» հրատ., Եր., 1973:
- Երեմյան Սիմեոն, նոր հանքաբանություն, նկարագրական և պատմական, Վենետիկ, 1900:
- Խաչատրյան Գ. Ա., Լեռնատեխնիկական տերմինների ռուս-հայերեն բառարան, «Հայաստան» հրատ., Եր., 1985:
- Հայագործյան Զ. Ա., Հայկական ՍՍՀ քարային շինանյութեր (տերմինարան), Եր., 1976:
- Հայկական Սովետական հանրագիտարան (12 հատորով), Երևան Հայկ. սով. հանր. գլխավոր խմբագրություն, Եր., 1974-87:
- Ղարիբյան Ա. Ա., Ռուս-հայերեն բառարան, «Հայաստան» հրատ., Եր., 1982:
- Ռուս-Հայերեն պոլիտեխնիկական բառարան, ՀՍՀ ԳԱ հրատ., 1988:
- Սարգսյան Յ. Յ., երկրաբանական տերմինների ռուս-հայերեն բառարան, ԵՊՀ հրատ., Եր., 1984:
- Վարդյան Ա. Ղ., Երկրաբանության անգլերեն-հայերեն բառարան, ԵՊՀ հրատ., 1981:
- Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, ԵՊՀ հրատ., 1984:
- Большой англо—русский словарь, В 2-х т., Под общим рук. И. Р. Гальперина, “Сов. энциклопедия”, М., 1972.
- Геологический словарь, т. I, II, М. “Недра”, 1978.
- Горная энциклопедия, т. 1-5, Изд. “Советская энциклопедия”, М., 1984-1991.
- Исаев Е. Н., Бондаренко И. И., Русско—английский разговорник для геологов, изд. “Русский язык”, М., 1990.
- Палеонтологический словарь, “Наука”, М., 1965.
- Петрографический словарь, “Недра”, М., 1981.
- Софиано Т. А., Англо-русский геологический словарь, М., 1961.
- Софиано Т. А., Русско-английский геологический словарь, М., 1960.
- Таубе А. М., Литвинова А. Б., Миллер А. Д., Даглиш Р. С., Русско—английский словарь, изд. “Русский язык”, М., 1987.
- Тимофеев П. П., Алексеев М. Н., Софиано Т. А., Англо—русский геологический словарь, изд. “Русский язык”, М., 1988.
- Толковый словарь английских геологических терминов, под. ред. М. Гери, Р. Мак. Афи М., К. Вульфа, изд. “Мир”, М., 1977.
- Четырехязычный энциклопедический словарь терминов по физической географии, сост. И. С. Щукин, изд. “Советская энциклопедия”, М., 1980.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	5
Բառարանի տերմինացանկի ընտրության և կազմության հիմնական սկզբունքները	6
Համառոտագրություններ	8
А	9
Б	40
В	61
Г	92
Д	160
Е	177
Ж	178
З	183
И	200
К	218
Л	269
М	288
Н	348
О	368
П	398
Р	451
С	477
Т	531
У	554
Ф	561
Х	577
Ц, Ч	582
Ш	589
Щ	595
Э	597
Ю, Я	609
Հայերեն տերմինացանկ	612
Օգտագործված գրականություն	668



### **ՀՈՂՄԻԿ ՀՄԱՅԱԿԻ ՍԱՐԳՍՅԱՆ**

Երկրաբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան

Ծնվել է 1927 թ. Թալինի շրջանի Արեգ գյուղում:  
1950 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետը, 1957 թ.` ՀԳԱԱ ասպիրանտուրան: 1972 թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ վաստակավոր երկրաբանի կոչում, 1973 թ.` երկրաբանական գիտությունների դոկտորի աստիճան, 1978 թ.` պրոֆեսորի կոչում:

Պարզևատրվել է ԵՊՀ ոսկե մեդալով, ԿԳՆ պատվոգրերով: 1950–1956 թթ. աշխատել է ԵՊԻ լեռնային ֆակուլտետում: 1956 թ. մինչև օրս աշխատում է ԵՊՀ երկրաբանական (այժմ` աշխարհագրության և երկրաբանության) ֆակուլտետում` սկզբում ավագ դասախոսի, ապա` դոցենտի, իսկ 1978 թ.` պրոֆեսորի պաշտոնում: Եղել է երկրաբանական ֆակուլտետի դեկան, պատմական և ռեգիոնալ երկրաբանության ամբիոնի վարիչ, այժմ` ամբիոնի պատվավոր վարիչն է, ԵՊՀ գիտական տեղեկագրի (երկրաբանություն և աշխարհագրություն) գլխավոր խմբագիրը:

Հ. Սարգսյանը Հայաստանի ռեգիոնալ երկրաբանության նշանավոր մասնագետ է: Հայաստանի ու հարակից տարածքների տեկտոնիկային, շերտագրությանը, երկրաշարժատեկտոնիկային, հնաաշխարհագրությանը, երկրաբանական զարգացման պատմությանը նվիրված նրա 150 մենագրություններն ու գիտական հոդվածները կարևոր դեր խաղացին ռեգիոնի երկրաբանական կառուցվածքի, զարգացման պատմության, օգտակար հանածոների տարածական տեղաբաշխման առանձնահատկությունների ու օրինաչափությունների բացահայտման գործում: Հեղինակ է մի շարք բուհական դասագրքերի և թեմատիկ քարտեզների: Հ. Սարգսյանը հանրապետությունում մայրենի լեզվով երկրաբանական մասնագիտական տերմինաչինության հիմնադիրներից է, առաջին անգամ հրատարակել է «Երկրաբանական տերմինների ռուս-հայերեն բառարանը» (1984) և «Երկրաբանական տերմինների եռալեզու (ռուսերեն–հայերեն–անգլերեն) հանրագիտական բառարանը» (2007):

Մեծ է պրոֆեսոր Հ. Սարգսյանի ավանդը ՀՀ երկրաբանական կադրերի պատրաստման գործում: Նա վաստակաշատ մանկավարժ է, ուսումնական գործի հմուտ կազմակերպիչ, կրթել ու դաստիարակել է երկրաբանների սերունդներ:



## ՌՈՒՋԱՆՆԱ ՀՈՂՄԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆ Աշխարհագրագետ

Ծնվել է 1960 թ. Երևանում, 1977թ. ավարտել է Երևանի Չեխովի անվան №55 ռուսական դպրոցը, իսկ 1982 թ. ԵՊՀ աշխարհագրական (այժմ՝ աշխարհագրության և երկրաբանության) ֆակուլտետը՝ գերազանցության դիպլոմով: Համալսարանն ավարտելուց հետո աշխատել է երկրաբանական ֆակուլտետի ապարաբանության, միներալաբանության և երկրաքիմիայի ամբիոնում (1986–2000 թթ.), այնուհետև՝ ռեզիդնալ ու պատմական երկրաբանության ամբիոնում (2000 թ. մինչև այժմ)՝ որպես ավագ լաբորանտ: Եղել է լաբորատորիայի վարիչ (2003-2008 թթ.), իսկ 2009 թ.-ից նաև «Նավթի ու գազի երկրաբանություն» և «Հնաաշխարհագրական հետազոտությունների մեթոդները» առարկաների դասախոս:

ԵՊՀ գիտական տեղեկագրում հրատարակել է հոդված՝ նվիրված մայրենի լեզվով երկրաբանական մասնագիտական տերմինների հիմնախնդիրների քննարկմանը և այն սկզբունքներին, որոնք պետք է դրվեն տվյալ տերմինաչինության մշակման հիմքում: Ձբադվել է այդ տերմինների ստուգաբանությամբ, անգլերեն տերմինաբանությամբ, որը հնարավորություն տվեց կատարելու տերմինների ավելի հայեցի թարգմանություններ, ինչպես նաև ստեղծելու մայրենի լեզվին համահունչ բազմաթիվ նոր տերմիններ: Հեղինակ է նաև բառարանում ընդգրկված աշխարհագրական և բազմաթիվ այլ տերմինների իմաստային բացատրության:

ՀՈՂՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ, ՌՈՒՋԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԵՌԱԼԵԶՈՒ  
ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ**

ՌՈՒՄԵՐԵՆ–ՀԱՅԵՐԵՆ–ԱՆԳԼԵՐԵՆ

Հրատարակչության տնօրեն՝	Էմին Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝	Արա Բաղդասարյան
Համակարգչային ձևավորումը՝	Տաթևիկ Ալեքսանյանի
Սրբագրիչ՝	Գոհար Կարապետյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ:  
Ծավալը՝ 42 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 200:



ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28  
Հեռապատճեն՝ (+374 10) 23 25 95, էլ. փոստ՝ info@zangak.am  
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am